ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ

(Թարգմանությունը Սուսաննա Գրիգորյանի)

ԵՐԵՎԱՆ
«Տիգրան Մեծ» հրատարակչություն
2020

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Գ 885

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհուրդը

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գրիգոր Տաթևացի
Գ 885 Գիրք հարցմանց/ Գրիգոր Տաթևացի. Թարգմանությունը
Սուսաննա Գրիգորյանի.- Եր.: Տիգրան Մեծ, 2020.- 1016 էջ:

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը (1397 թվական) Ս.Գրքի երբևիցե գրված ամենահամակողմանի մեկնությունն է: Այն շուրջ 300 տարի անց միայն՝ 1729 թվականին լույս ընծայվեց Կ.Պոլսում, և շուրջ 300 տարի անց էլ հրատարակվում է նրա աշխարհաբար թարգմանությունը:

Շուրջ երկու տասնամյակում միայն ավարտին հասցված այս շարադրանքում հայ եկեղեցու մեծ նվիրյալը կատարել է անհավանական հսկայածավալ, այսօր արդեն կոթողային համարվող աշխատանք՝ ի մի բերելով Աստվածաշնչի հայտնի բոլոր մեկնությունները, վերլուծելով դավանաբանական վեճերն ու դրանց դրդապատճառները, և որ ամենակարևորն է՝ ապացուցելով հայոց եկեղեցու ընթացքի ճշմարիտ լինելը:

Գիրքը նախատեսված է աստվածաբանության, բանասիրության, հայագիտության մասնագետների, ինչպես նաև հասարակության լայն խավերի համար:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

ISBN 978-99941-0-962-3

© Գրիգորյան Ս. Մ., 2020

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՓԲԸ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ

Սուրբ Գրիգոր Տաթեւացի

ԱՌԱՋԱԲԱՆ

«Երեք ցերեկ և երեք գիշեր Յովնանը
կէտի փորում էր» (Հովն. Բ, 1):

Որպեսզի կատարվի Աստծո կամքը և փրկվի կործանման դատապարտված Նինվե քաղաքը, Յովնան մարգարեն ծովի հատակից երեք օր անց դուրս բերվեց:

1397 թվականին գրված Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ն անցնելով ալեկոծված հարյուրամյակների ծովերը՝ միայն շուրջ 300 տարի անց՝ 1729 թվականին լույս ընծայվեց Կ.Պոլսում՝ լույսի շող բերելով հայ եկեղեցու զավակներին: Եվ շուրջ 300 տարի անց էլ հրատարակվում է նրա աշխարհաբար թարգմանությունը, որ կարող է օգնության գալ յուրաքանչյուրին, ով ականջալուր է Աստծո Խոսքին:

Այսպես հարատևում են իրապես ազգային արժեքները:

«Գիրք հարցմանց»-ի հիշատակարանում ընթերցողը կկարդա Ս. Գրիգոր Տաթևացու հետևյալ տողերն իր գրքի վերաբերյալ. «Եվ ես բազմաթիվ պտուղներ հավաքող մշակի նման, իբրև անուշահոտ բազմերանգ ծաղիկների մի փունջ, կամ իբրև փոքրիկ թռչնի՝ մեղվի, մեղրահաց, կամ իբրև տառապալից կյանքով [ապրող] այրու մանրադրամ, **Ձերդ մեծության՝ իմաստասեր և ճշմարտասեր Հայաստանյայց եկեղեցու** և ընթերցասեր մտքերի ճոխ գանձարանը տուրք ընծայեցի»:

Սա, սակայն, սովորական մի տուրք չէր, այլ շուրջ տասնյոթ տարի տևած տառապալից ընթացք, որի ժամանակ Աստծո ճշմարիտ խոսքի մեծ նվիրյալը կատարեց անհավանական հսկայածավալ աշխատանք՝ ի մի բերելով Աստվածաշնչի հայտնի բոլոր մեկնությունները, վերլուծելով դավանաբանական վեճերն ու դրանց դրդապատճառները, և որ ամենակարևորն է՝ ապացուցելով Հայոց եկեղեցու ընթացքի ճշմարիտ լինելը: Ուստի անսպասելի չի հիշատակարանում և հատկապես նորկտակարանյան շարադրանքից առաջ հեղինակի արտահայտած չափազանց մեծ մտավախությունը, թե ինչ պատասխանատվություն է ստանձնել՝ ձեռնարկելով այս գործը:

Գրքի աշխարհաբար թարգմանությունը ձեռնարկելիս նմանատիպ մտավախություն ունեցել ենք նաև մենք, սակայն մեծ էր նաև ցանկությունը գրեթե երեք հարյուր տարվա կրկնվող լռությունից հետո **Ձերդ մեծության՝ իմաստասեր և ճշմարտասեր Հայաստանյայց եկեղեցու** սեղանին նորից դնելու մեծ Վարդապետի աշխատանքի աշխարհաբար թարգմանությունը, ուստի ընթերցողին դիմում ենք

Վարդապետի խոսքերով՝ հավանածը վերագրել Տիրոջ շնորհներին, սխալները՝ մեր տկարամիտ անոթ լինելուն:

Բարդ է եղել գրքի առաջին տպագրության ընթացքը, որ նախ ընդհատվել է առաջին տպագրիչի մահով, ապա գրքի հրաշալի հրատարակությունից դուրս է թողնվել «Ընդդէմ տաճկաց» գլուխը, քանի որ Կ.Պոլսում իրականցվող հրատարակության մեջ անհնար էր թույլատրվեր այդ գլխի առկայությունը: Այնուամենայնիվ, իբրև երախտագիտության դրսևորում, բերում ենք գրքի կոստանդնուպոլսյան տպագրիչի՝ կոստանդնուպոլսեցի մահտեսի Աստուածատուրի փոքրիկ հիշատակարանը, որ նաև գրքի առաջին տպագրության ընթացքի պատմությունն է.

«Փառք ու պատիւ եւ գոհութիւն, ամենասուրբ Երրորդութեան, Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, որ իր առատ գթութեամբ կարողութիւն տուեց մեզ՝ անարժաններիս, տպագրել եւ լոյս ընծայել պատուական եւ հոգեշահ այս մատեանը՝ ի փառս իր մեծ բարերարութեան, յօգուտ եկեղեցու զաւակների, որի համար գոհութիւն եւ երկրպագութիւն անվախճան յաւիտենութեանը, ամէն:

Եւ այս թող յայտնի լինի մեր սիրելիներին, որ Հայոց 1170 [1721] թուականին, Սուրբ Էջմիածնի նուիրակը՝ գիտնական եւ բարեկրօն մեծ վարդապետը՝ Պետրոս աստուածաբան Աստապատցին եկաւ Կոստանդնուպոլիս: Եւ իր բարեսէր բարութեամբ խիստ փափագում էր տպագրել այս սուրբ մատեանը՝ ի յիշատակ իր բարի հոգու: Եւ սկսելով իրագործել փափագը՝ հասաւ մինչեւ մի քանի տետրի: Ապա ինչ-ինչ պատճառներով խափանուեց գործը՝ այդպէս մնալով անկատար: Ապա սակաւ ժամանակ անց, կանչուեց Կոչողի կողմից՝ աւարտելով իր աշխարհական կեանքը, որի պատուական մահը եղաւ սուրբ Էջմիածնում 1178 [1729] թուականին: Որից յետոյ որոշ ժամանակ անց, բարի խորհուրդ մտայղացան արեւելքցի բարեպաշտ մահտեսի պարոն Շահնազարը եւ բիւզանդացի խոջա Դանիէլի որդի տիրացու Մովսէսը՝ ցանկանալով շարունակել ընդհատուած տպագրութեան գործը: Սակայն այն, ինչ տպագրուել էր մինչ այդ, ցրիւ ու պակաս [գտնուեց, այնպէս որ] նորից սկսեցին տպագրել՝ Աստծոյ ամենագութ կարողութեամբ եւ տպագրութիւնն աւարտեցին 1178 [1729] թուականին, մայիսի մէկին:

Արդ, թէ՛ վերոգրեալ հոգեսէր սուրբ վարդապետին, թէ՛ բարեպաշտ քրիստոսասէր երկու համամիտ ընկերներին, ոչ միայն պարտաւոր ենք գովել, այլեւ ըստ ամենայնի հետեւել նրանց բարեգնաց ընթացքին: Սրանց նմաններն են, որոնք Սիոնում զաւակներ ունեն երանութեան արժանի՝ ըստ Եսայի մարգարէի խօսքի: Որովհետեւ բարեգործութեան բոլոր տեսակներից ամենամեծը եւ երեւելին ինձ թւում է ճանաչողութիւնը յայտնի դարձնելն է, որի մեծութիւնը նա միայն գիտի, ով հասկանում է, թէ որքան ու ինչպիսի օգուտներ են ծնւում Սուրբ Գրքի ընթերցումներից: Եւ Տէրը մեզ բոլորիս գիտութեան հոգի է տալիս՝ ճանաչելու [Սուրբ] Գրքի անչափելի բարին եւ փափագելու աշխարհում մեր գնալուց յետոյ այսպիսի յիշատակ թողնելու, որն իբրեւ բարութեան առատ աղբիւր միշտ կընթանայ իր ստեղծողի հետեւից:

Այլ արդ, ցանկանալով նման գեղեցիկ [ընթացք], շտապեցինք օգտուել մեր սուրբ վարդապետի հանճարեղ երանելու՝ Գրիգոր Տաթեւացու, գրքի իմաստութիւնից:

Որ բազում չարչարանքներով իր մտքի հոգեւոր իմաստաբուխ ծննդեամբ արարեց գիրքն այս, որ կոչւում է Հարցմանց, 1397 թուականին: Իր աստուածատուր շնորհներով [նա] եկեղեցում ունի բազում այլ աշխատութիւններ.

Լուծմունք գրոց Արիստոտէլի,

[Լուծմունք] զՍտորոգութեանց,

[Լուծմունք] զՊէրիարմէնիասին եւ առաքինութեանց,

[Լուծմունք] Պորփիւրին,

[Լուծմունք] զՊարապմանց,

զՍաղմոսի քաղուածուն,

զԱռակաց քաղուածուն,

զԻմաստութեան,

զԺողովողին,

Ամառան եւ Ձմեռան հատորները [Քարոզգրքի],

զՅոբայ լուծմունքն,

զՅօհաննու աւետարանի քաղուածուն,

զԼուծմունք Արիստակէսի եւ Գէորգեայ գրչութեան,

զՓոքր հարցմունքն Գէորգ վարդապետի խնդրանքով,

զքաղուածուն Մատթէոսի աւետարանի,

զԵսայեայ քաղուածուն,

Ոսկեփորիկն եւ այլն:

Նրա գովքի եւ շնորհների առատութեան մաքրակենցաղ առաքինական ընթացքի մասին քեզ կպատմեն Յայսմաւուրքի ապրիլ քսանեօթի եւ այլ ճառերը, որի յիշատակը օրհնութեամբ լինի եւ նրա աղօթքներով մեզ՝ բոլորիս ողորմի Բարերարը բարձրեալ եւ միշտ մարդասէրը, Ամէն:

Եւ արդ, ովքեր այս սուրբ մատեանին դիպչելու առիթը կունենան, կամ կօգտուեն սրանից՝ ընթերցելով եւ կամ լսելով, հոգեւոր սիրով ձեր մաքուր աղօթքների մէջ յիշէ՛ք այս տպագրութիւնը ձեռնարկողին՝ Պետրոս աստուածաբան Աստապատցի վարդապետին եւ նրա բարեշնորհ ծնողներին:

Այլեւ՝ մահտեսի պարոն Շահնազարին եւ նրա եղբայր՝ պարոն Սէրատին. ծնողներին՝ պարոն Հախնազարին եւ Թագուհուն: Սրանց կողակիցներին՝ Հռիփսիմէներին, որդիներին՝ Հախնազարին եւ Ստեփանին: Իրենց կուսակրօն եղբօրը՝ տիրացու Ստեփանոսին, քոյրերին՝ Մարգարիտին, Կիւզէլին, Թամարին եւ արիւնակից միւս մերձաւորներին՝ կենդանի եւ ի տէր հանգուցեալներին:

Յիշէ՛ք եւ նրա միւս ջանակից եւ կամակից ընկերոջը՝ կոստանդնուպոլսեցի տիրացու Մովսէսին եւ նրա ծնողներին՝ խոջա Դանիէլին եւ Սիմային, մեծ մօրը՝ մահտեսի Փաշուկին, որդիներին՝ Ոնոփրիոսին եւ Միքայէլին, տասնվեցամեայ տարիքում մահացած Մատթէոսին եւ

միւս Ոնոփրիոսին, տիրացու Յակոբին, նրա մօրը՝ Ղօնճային եւ ընտանիքի միւս արիւնամերձ անդամներին՝ կենդանի եւ ի տէր հանգուցեալ:

Յիշէ՛ք եւ սրա տպագրողին՝ կոստանդնուպոլսեցի անարժան մահտեսի Աստուածատուրիս եւ իմ ծնողներին՝ խոջա Կարապետին, Մարիամին, որդուս՝ տիրացու Մինասին, միւս որդուս՝ տիրացու Յովհաննէսին, որ անձաձիր եւ անդադար տքնութեամբ գիշեր-ցերեկ անում էր գրքի շարուածքը: Նա այնպիսի ջերմեռանդութեամբ եւ տենչագին սէր ունէր այս սուրբ մատեանի նկատմամբ, որ կատարեց գրքի ամբողջ շարուածքը՝ առանց դադար առնելու, որի համար փափագում եմ ձեր հաճելի կենսանուէր աղօթքը հայցէք տիրոջից՝ նրան տալու շնորհ եւ կարողութիւն այսպիսի բաների վրայ տքնելու եւ հասնելու հոգեւոր կուսակրօնութեան, քանի որ մտքերով [հանապազ] սուրբ գրքերի մէջ է, եւ ջանում է տպագրել սրանց վերաբերեալ մեր հոգելից վարդապետների գրուածքներն ու լոյս ընծայել ի պետս եւ ի պարծանս հայկազեան ազգի՝ ի պայծառութիւն ընդհանրական եկեղեցու:

Եւ թող Տէրն ինքը՝ այս ամենի կամեցողը առաջնորդի [ձեզ՝] եղբայրներիդ, աղօթքներով, Ամէն:

Յիշէ՛ք նաեւ սրանց հանգուցեալ մօրը՝ Սիմային, եւ ի տէր մեր ննջեցեալներին:

Յիշէ՛ք, տպագրատան աշխատաւոր մշակներին՝ վանեցի Ասլանի որդի տիրացու Պետրոսին, Հանանավանցի Դաւթին: Արզրումեցի գրավաճառ եղբայր Մանուկին եւ նրա ծնողներին, որն իր վաստակը ունի գրքի գործածութիւնը [տարածելու] մէջ:

Յիշէ՛ք եւ ակնցի տէր Մարկոս Եալօվայուն, մահտեսի Մակարին, որ տուեցին այս գրքի երկու հին օրինակներ՝ ի օժանդակութիւն սրբագրական աշխատանքների, որոնք ընդօրինակուած էին դեռեւս եռամեծ սուրբ Գրիգորի գրչագիր օրինակից:

Եւ առատն ի բարիս բոլորի աստուածը յիշողներիդ եւ մեզ յիշողներին ողորմի, առհասարակ, Ամէն»:

Այսպիսով, տպագրիչի հիշատակարանից պարզ է դառնում, որ հրատարակվել է Տաթևացու գրչագիր օրինակին հարազատ տարբերակ, ուստի մեր աշխարհաբար թարգմանությունն էլ, ըստ էության, հարազատ է գրչագիր օրինակին:

Մինչ այս, Գրիգոր Տաթևացու միայն «Գիրք հարցմանց»-ի Համաբարբառի մեր հրատարակությամբ ոսկեղենիկ գրաբարի բառանյութը համալրվեց մի քանի հարյուր նոր բառերով: Այս հրատարակությամբ, լիահույս ենք, որ սա կդառնա սերունդների երախտագիտության խոսք հայ եկեղեցու մեծ սրբին, իսկ հայոց եկեղեցու սրբերի շարքին դասվելը այն վեհաշուք գնահատականն է, որին արժանացել է Գրիգոր Տաթևացին իր ծառայությունների համար, և կատարելով նրա կամքը, որով նա հորդորում էր «Գիրք հարցմանց»-ի ընդօրինակողներին արտագրել նաև գրքի հիշատակարանը, բերում ենք այն նաև գրքի սկզբում՝ համարելով, որ այն կարող է ծառայել իբրև լավագույն առաջաբան:

Նյութի խիստ ծավալուն լինելու պատճառով կարող են լինել չնկատված վրիպակներ, որի համար հայցում ենք ընթերցողի ներողամտությունը և խնդրում մեկ անգամ ևս աղոթք բարձրացնել առ Աստված՝ մեր անցյալի մեծերի և նրանց խոնարհաբար ծառայող որդիների համար:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի

«Արդ, ես՝ վերջին ծնունդս եկեղեցու և նվաստ ուսումնականս, Գրիգոր պիտակ անվամբ, հետամտողը խնդրի, ստեղծեցի «Գիրք հարցմանց»-ը եկեղեցու վարպետների լուսավոր գրքերից, Ատոմի՝ ուղղադավան ուսումնասերի խնդրանքով, որը վաղուց ի վեր բազմիցս թախանձում էր: Եվ իմ տկարության ու ժամանակի վրդովված լինելու պատճառով հապաղում էի կատարել խնդրանքը: Ապա ի սեր նրա, և քանի որ համառորեն խնդրում էր, ապաստանելով նրա մոտ, որ զորացրեց տկարիս, ձեռնարկեցի և ավարտեցի [գիրքն այս] մեծ ջանքերով, տեղից-տեղ փախչելով, շատ ճիգեր ներդնելով:

Եվ վերոնշյալ պատվիրատուն չհասավ գրքի ավարտին, այլ [այն ժամանակ, երբ գրված էր] գրքի կեսը, կիսվեց և նրա երկրային կյանքը, որտեղ նա հասել էր իմաստության գանձին ու գիտության աղբյուրին, որի հիշատակը օրհնությամբ լինի, Ամեն:

Արդ, գիրքն այս ավարտվեց Հայկազյան տոմարի 846 թվականին (1397թ.), Սյունյաց նահանգի երկնամատույց մեծահարգ Ուխտի, Սուրբ առաքյալների առաքելական աթոռի և շրջակա մյուս հրեշտակաբնակ սուրբ մենաստանների հովանավորությամբ, որոնց խնամածությամբ ամրանալով՝ փրկվում ենք բոլոր փորձություններից, Ամեն:

Իսկ հարցումների այս գրքում ամեն օտար բան չէ, որ խուզել ենք, ոչ էլ հարմարեցրել ենք գեղջուկ աշխարհական խոսքին, այլ հոգ ենք տարել միայն եկեղեցուն և վարդապետներին պիտանիի՝ հավատի խնդրի համար. [հոգ ենք տարել նաև] ուղիղ և ճշգրիտ, անթերի իմացման համար, շարադրելով ոչ թե այն, որ բոլորը գիտեն, այլ բազմապիսի բաներ, որ շատերին է պիտանի ու ցանկալի:

Արդ, սրա մեջ բաներ կան, որոնք քաղված են սուրբ վարդապետների լուսավոր թղթերից՝ [դիմելով] կամ գրքերին, կամ՝ [բանավոր] իմացությանը: Եվ բաներ էլ կան, որոնք [շարադրվել են] Աստծո Հոգու շնորհների ներգործությամբ, որոնք իմաստուններից թաքցնում և ժամանակ առ ժամանակ մանուկներին է հայտնում ըստ յուր կամքի: Եվ թե սա, թե նա, դու ընկալիր բոլորովին առանց երկբայելու քո մտքում, իբրև միևնույն Կենաց կենդանարար աղբյուրից զորացած և պտղավորված ի փառս և ի գովեստ նորին Տնկագործի և Առաջնորդի:

Եվ ես բազմաթիվ պտուղներ հավաքող մշակի նման, իբրև անուշահոտ բազմերանգ ծաղիկների մի փունջ, կամ իբրև փոքրիկ թռչնի՝ մեղվի, մեղրահաց, կամ իբրև տառապալից կյանքով [ապրող] այրու մանրադրամ, Ձերդ մեծության՝ իմաստասեր և ճշմարտասեր Հայաստանյայց եկեղեցու և ընթերցասեր մտքերի ճոխ գանձարանը տուրք ընծայեցի, որի համար աղաչում եմ բարեմիտ ընթերցողներիդ հավանություն տալ եղբայրական սիրով, պակասը լրացնել, իսկ ավելորդը մի կողմ թողնել և պիտանիի համար փառք տալ նրան, որ

փառավորն է իր պարգևների մեջ, իսկ անպիտանի համար ներել մեզ՝ փոքրընկալ անոթ և ծանրամիտ լինելու համար:

Ապա արտասվալից դեմքով երեսնիվայր ընկած հողի և փոշու մեջ և ձեր սուրբ ոտքերի առաջ, ի խորոց սրտի աղերսում եմ ձեր գութը՝ իմ հարազատ հոգևոր հայրե՛ր ու եղբայրնե՛ր, մի կաթիլ փոքրիկ արտասուքով ցողեք իմ տառապալից հոգու գերեզմանը և թրջեք մեռելային մեղքերով պղծված իմ թարալից ոսկորները, որ միգուցե ձեր գթառատ մաղթանքների շնորհիվ կարողանամ ողորմություն գտնել Ամենաողորմ մեր Փրկչից: Այլև իմ վարժապետի և Հայոց մեծ հռետորի՝ Հովհան Որոտնեցու, հիշատակի մաղթանքները թո՛ղ լինեն օրհնությամբ և լույսի վիճակն [ընկնի նրան] սրբերի ժառանգությունից, քանզի նա ծնեց մեզ Բանի նմանությամբ՝ բազմաջան չարչարանքով, կրթելով դպրության և կենդանի հույսի համար:

Եվ ձեզ էլ՝ հիշողներիդ և մեզ ուսումնասիրողներիդ առհասարակ թո՛ղ ողորմի բարերար և բազմաողորմ մարդասերն Աստված և Տերը մեր Հիսուս Քրիստոս, Ամեն:

Այլև երջանիկ օրինակողներիդ, ովքեր կընդօրինակեն «Գիրք հարցմանց»-ն այս, մաղթում եմ, այս փոքրիկ հիշատակարանն էլ գրել, որպեսզի դուք էլ գրվեք Կենաց գրքում, Ամեն»:

Տաթևացու ընդարձակածավալ այս աշխատության աշխարհաբար թարգմանությունը կատարված է Հայ եկեղեցու եռամեծ վարդապետի ժառանգությանը քաջագիտակ Սուսաննա Մակարի Գրիգորյանի տևական ջանքերի շնորհիվ: Երկը պարունակող բոլոր ձեռագրերում նրա անտրոհելի մաս է կազմում «Ընդդէմ տաճկաց» գլուխը, որը հայտնի պատճառներով դուրս էր թողնվել Կ.Պոլսում 1729 թ. իրականացված հրատարակությունից: Անտիպ մնացած այդ գլխի քննական բնագիրը կազմեց և հրատարակեց Բաբգեն եպս. Կյուլեսերյանը (Վիեննա, 1930): Վերականգնելու համար երկի բնագրային ամբողջականությունը՝ ներկա աշխարհաբար թարգմանության մեջ աշխատասիրողը զետեղել է նաև կոստանդնուպոլսյան հրատարակությունից դուրս թողնված և հետագայում հրատարակված «Ընդդէմ տաճկաց» գլուխն՝ իր իսկ կատարած աշխարհաբար թարգմանությամբ:

Հարցմանց գիրքը հարուստ տեղեկություններ է պարունակում հայ միջնադարյան մտքի ամենատարբեր մարզերի վերաբերյալ: Հասկանալիորեն նրանում գերակշիռ տեղ է զբաղեցնում աստվածաբանությունն իր երկու հիմնական գիտակարգերով՝ տեսական-վարդապետական և գործնական-ծիսաարարողական: Ըստ այսմ բովանդակությամբ թելադրված, Հարցմանց գրքի լեզուն աչքի է ընկնում իր որոշակի առանձնահատկություններով: Եթե մյուս երկերում Տաթևացու լեզուն համեմատաբար պարզ է, ապա այստեղ այդ պարզությանն անհրաժեշտապես փոխարինելու է գալիս դավանական ճշմարտությունների ճշգրիտ ձևակերպմամբ պայմանավորված մի իրավիճակ, որ հաղթահարված է աշխարհաբար թարգմանության մեջ: Տեսական բնույթի մանվածապատ դիտումները, որոնք մասնավորաբար վերաբերում են դպրոցական (սքոլաստիկ) փիլիսոփայությանն ու դավանական աստվածաբանությանը (երրորդաբանություն, քրիստոսաբանություն) հմտալի թարգմանության միջոցով ընթերցողի համար կդառնան հասկանալի: Ոչ հազվադեպ, անհրաժեշտության պարագային, խրթին նյութը դյուրընկալ դարձնելու նպատակով, թարգմանիչը փակագծում դնում է բնագրի, բացատրական բնույթի, իմաստային համարժեքը: Ըստ որում, սա արվում է առանց խախտելու երկի բովանդակային, լեզվաոճական ներդաշնությունը: Այսու թարգմանիչը խուսափում է երկի արդիաշունչ թարգմանությունից, այլ ջանում է աշխարհաբար թարգմանությունն իրականացնել՝ պահպանելով մտածողության, լեզվի և ոճի հնավանդ ձևերը: Պետք է գոհունակությամբ արձանագրել, որ թարգմանությունը հաջողված է նաև այս դիտանկյունից: Գրիգոր Տաթևացու «Գիրք

հարցմանց»-ի աշխարհաբար թարգմանության թվարկածս արժանիքները թույլ են տալիս այն հանձնարարել հրատարակության:

Խմբագիր Յակոբ Քէօսէեան
Փիլիսոփայական գիտութ. դոկտոր, պրոֆ.

ԱՄԲՈՂՋ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-ՈՒՄ

ա) Ընդդէմ բախտ եւ ճակատագիր ասողների:

բ) Աստծոյ ճանաչման մասին:

Ընդդէմ կորուսեալ ազգին տաճկաց, որ Նեռի կարապետն են եւ նոր հեթանոսներ՝ Արիոսի եւ Կերինթոսի հերձուածներով*:

գ) Հրէաների դէմ:

դ) Արիոսեանների դէմ:

ե) Ընդդէմ հոգէմարտների:

զ) Նեստորի եւ երկաբնակների դէմ:

է) Դիոնէսիոսի աստուածաբանութիւնը:

թ) Հրեշտակների եւ դեւերի մասին:

թ) Աստծոյ գործերի եւ արարչութեան մասին:

ժ) Արարածների եւ աշխարհի մասին:

ժա) Լուսատուների, օրերի եւ եղանակների մասին:

ժբ) Իւրաքանչիւր տարրի, բոյսի եւ կենդանու մասին:

ժգ) Դրախտի մասին:

ժդ) Մարդու կազմութեան մասին:

ժե) Մարդու հոգու մասին:

ժզ) Բոլոր մարդկանց մասին:

ժէ) Աբէլի եւ նախահայրերի մասին:

ժը) Աբրահամի եւ իւրայինների մասին:

ժթ) Ելից գրքերը:

ի) Ղեւտական:

իա) Թուոց:

իբ) Երկրորդ օրէնքը:

իգ) Յեսու Նաւեան:

իդ) Դատաւորաց:

իե) Առաջին թագաւորաց:

իզ) Երկրորդ թագաւորաց:

իէ) Երրորդ թագաւորաց:

իը) Չորրորդ թագաւորաց:

իթ) Փրկչի մարդեղութիւնը:

լ) Նոր օրէնքի մասին:

լա) Մեղքի մասին:

լբ) Առաքինութեան մասին:

լգ) Եօթը խորհուրդների մասին:

լդ) Առանձին մեր եկեղեցու մասին:

լե) Մարդու փոփոխման մասին:

լզ) Հոգու բաժանուելու մասին:

լէ) Նեռի մասին:

լը) Կրկին յարութիւն առնելու մասին:

լթ) Գալստեան եւ դատաստանի մասին:

խ) Գէորգի հարցերը:

Ահա սրանք են այս գրքի գլխաւոր հարցերը:

Ամենասուրբ Երրորդութիւն,

Դու եղի՛ր ինձ օգնական,

Ինչպէս շատերին ես ամէն ժամ առաջնորդում ի բարին,

Քանզի լինելով անգէտ եւ սրա արուեստին անհմուտ, խաւարեալ մեղքերով՝ քեզ ապաւինելով է, որ ձեռնարկել եմ իմաստուններին [վերապահուած] այս գործը:

ԱՌԱՋԱԲԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ

Դէպի վեր ծառացող հրի նման, վերելքին յատուկ մշտաշարժութեամբ, մարդու բանական իմացումը չի դադարում մինչեւ իր աւարտին հասնելը, եւ խօսքի մէջ նրա վախճանակէտը ճշմարտութիւնն է, իսկ գործի մէջ՝ բարին: Այսպէս է զարդարւում մեր հոգին զանազանապէս՝ տեսականօրէն եւ գործնականօրէն: Գործնականն էլ կախուած է մեր յօժար կամքից, իսկ տեսականը՝ իմացական մասն է: Առաջ է շարժւում տեսականը՝ հասնելով ճշմարտութեանը՝ յօժար կամքը տանելով ի բարին: Արդ, տեսականը ընդհանուր գիտութիւն է իրողութեան մէջ՝ ինչ-որ կերպ, ինչ-որ

* Կ. պոլսեան հրատարակութեան համարակալումները չխախտելու համար վերականգնուած գլուխը բերում ենք աստղանիշով:

չափ, որոնք երբեմն գերազանցում են իմացութեանը, երբեմն էլ գտնուում են տրամախոհութեան ներքոյ: Եւ սրանք մեզ համար զանազանուում են իբրեւ՝ անհասանելի, դիւրամատչելի եւ դժուարամատչելի: Անհասանելին այժմ քննելու չէ, դիւրամատչելին զգայութիւններից դուրս է, իսկ դժուարամատչելին երեք կերպ է իմացուում:

Առաջին, սահմանելով պարզը՝ տարաբաժանելով բաղադրեալը եւ ի մի բերելով ճշմարտութիւնը քննուող հարցի վերաբերեալ, քանի որ իւրաքանչիւր հարց պատասխան է պահանջում եւ իր մէջ պարունակում է որոնման միտում: Իսկ հարցումը երկու տեսակ է, ինչպէս եւ պատասխանը: Որովհետեւ կայ պարզ հարցում, եւ կայ՝ բաղադրեալ. կայ պարզ պատասխան, եւ կայ՝ բաղադրեալ:

Հարցման բնոյթն էլ երկու տեսակ է լինում. տրամաբանական եւ ապացուցական: Տրամաբանական հարցն այն է, երբ մէկը հարցնում է, միւսը՝ պատասխանում: Այդպիսին է նաեւ ապացուցականը, սակայն զանազանուում են: Նախ՝ տրամաբանականի սկիզբը ուրիշից է, այսինքն՝ հարց տուողից, այսինքն՝ ի՞նչ հարց է տալիս կամ որտեղից: Իսկ ապացուցականն իր մէջ [արդէն] պատասխան ունի՝ ինչպէս, որ կամենայ: Եւ բացի այդ, ապացուցականը միշտ ճշմարտի է հանգում, իսկ տրամաբանականը՝ [կարող է] մերթ ճշմարիտ լինել, մերթ՝ սուտ: Եթէ տեղեկացուած է պատասխանողը՝ ճշմարիտ է, եթէ՝ ոչ՝ սուտ է: Եւ մի բան էլ. տրամաբանական [հարցադրման] ժամանակ կամ հարց տուողը կամ պատասխանողը շփոթուում են, իսկ ապացուցականի ժամանակ՝ ոչ մէկը՝ ո՛չ ուսանողը, ո՛չ էլ՝ ուսուցանողը: Նաեւ՝ չորրորդը, ապացուցականը պարզ է. հարցնում են եւ պատասխանում, ինչպէս ասենք, մարդը կենդանի է. կենդանին գոյաւոր է, ուրեմն մարդը կենդանի է եւ գոյաւոր: Իսկ տրամաբանական [հարցերը] բաղադրեալ են, որի պատճառով երկու կողմերը հակադրուում են, քանի որ պատասխանը պէտք է լինի բաղադրեալ: Իսկ եթէ բաղադրեալ հարցին պարզ պատասխան ես տալիս, շփոթուում ես: Ինչպէս ասենք, եթէ մէկը հարցնում է՝ աշխարհը անապակա՞ն է, թէ ապականացու: Սա բաղադրեալ հարց է: Եթէ պատասխանես պարզով՝ անապական է, սուտ ես, որովհետեւ նա մասամբ ապականացու է: Իսկ եթէ [պատասխանես]՝ ապականուած է, դարձեալ սուտ ես, որովհետեւ երկինքը եւ տարրերը անապական են, հետեւաբար պէտք է տալ բաղադրեալ պատասխան, թէ՝ ըստ ընդհանուրի անապական է եւ մասամբ՝ ապականացու:

Սրանք զանազանուում են նաեւ այլ կերպ: Նախ, ըստ իմաստասէրի. ամէն մի իրողութիւն չորս հարցի է պատասխանում, այսինքն, թէ՝ կա՞յ, ի՞նչ է, ինչպիսի՞ն է, ինչի՞ համար է: Արդ, եթէ «կա՞յ» հարցն միայն տրամաբանական հարցումն է, ապա «ի՞նչ է» եւ «ինչպիսի՞ն է» հարցերն՝ ապացուցական են: Երկրորդ, չորս կերպ են զանազանուում անունը եւ առարկան. կայ, որ անունը

մէկն է, առարկաները՝ բազում, ինչպէս «կենդանի» կամ «բանական» [անունը] կամ՝ հոմանուն անունները: Կայ, որ անունը եւ առարկաները տարբեր են. Պետրոսը խօսում է, Պօղոսը քարոզում է: Կայ, որ անունները մի քանիսն են, առարկան՝ մէկը, ինչպէս՝ կենդանի, բանական, երկոտանի մարդ: Կայ, որ անունն էլ, առարկան էլ մէկն են. մարդ-Պետրոս: Ահա սրանցից երկուսը, այն, որ անունները մի քանիսն են, առարկան՝ մէկը եւ որ անունն ու առարկան մէկն են, սրանք տրամաբանական հարցադրումներ են: Իսկ երկուսը, այն է, որ անունն ու առարկան տարբեր են եւ անունը՝ մէկը, առարկաները՝ տարբեր, ապացուցական հարցադրումներ են:

Երրորդ, տրամաբանական հարցերը տրւում են երկկողմանի հակադրութեամբ, իսկ պատասխանը նրանցից մէկն է լինում, ինչպէս եթէ հարցնեն՝ Պետրոսը նստա՞ծ է, թէ՞ ոչ. պատասխանում են՝ այո կամ՝ ոչ: Իսկ ապացուցական հարցերը միակողմանի են տրւում, այսինքն՝ որոշակիութեամբ, ինչպէս օրինակ՝ ի՞նչ է մարդը, ի՞նչ է երկինքը:

Եւ չորրորդը եւս, տրամաբանական մէկ հարցին տրւում է մէկ պատասխան, ինչպէս ցոյց տուեցինք: Իսկ ապացուցական մէկ հարցին կարող են տրուել բազում պատասխաններ եւ բազում հարցերին՝ մէկ պատասխան: Ինչպէս, եթէ մէկը հարցնի՝ ի՞նչ է մարդը. [կարող ենք] պատասխանել սահմանումներ տալով, որ բազում են: Ի՞նչ է սահմանում, որ ասում է. «կենդանի, բանական»[1]. կասենք, որ մարդն է: Ապա ուրեմն, պարզորոշ է, որ առաջիկայ հարցադրումները աւելի ապացուցական են՝ լինելու՝ ճշմարիտը [ցոյց տալով], քան տրամաբանական՝ հակաճառութիւններով:

Իւրաքանչիւր առարկայ գործողութեան չորս պատճառ է պահանջում. արարողական, նիւթական, տեսական եւ կատարողական, այսինքն՝ արարողը, արարուածը, արարումը եւ դրա նպատակը, ինչպէս տուն կառուցելիս՝ արհեստաւոր հիւսնը, կառուցուած տունը, տան ձեւը՝ կլոր կամ քառանկիւնի, եւ նպատակը՝ մարդու բնակութիւնը:

Իսկ առաջիկայ իրողութեան նիւթական պատճառն ու ենթական Հարցմանց [գրքի]՝ տասը հատորներն են, որոնք պատշաճօրէն շարակարգուած են հետեւեալ կարգով.

առաջին՝ առարկութիւն այլազգիների դէմ եւ պատասխան նրանց ընդդիմախօսութիւնների, որոնք անհրաժեշտութիւնը, ճակատագիրը, չարն ու բարին Աստծուն են վերագրում: Նաեւ՝ ընդդէմ մանիքեցւոց եւ հրէաների:

Երկրորդ՝ ընդդէմ Արիոսի, հոգէմարտների, Նեստորի եւ երկաբնակների:

Երրորդ՝ Սուրբ Դիոնէսիոսի ճշմարիտ աստուածաբանութեան մասին՝ համառօտ վերլուծութիւններով:

Չորրորդ՝ [արարչագործութեան] վեց օրերի եւ ամբողջ աշխարհի արարման մասին:

Հինգերորդ՝ մարդու կազմաւորման ընթացքի մասին:

Վեցերորդ՝ արարածների մասին ի սկզբանէ՝ ըստ Մովսէսի հինգ գրքերի պատմութեան կարգի:

Եօթներորդ՝ Յեսուի եւ դատաւորների, հինգ թագաւորների մասին՝ համառօտ:

Ութերորդ՝ Աստծոյ մարդեղութեան մասին՝ ըստ Նոր կտակարանի:

Իններորդ՝ զանազան հարցումներ՝ Նոր եկեղեցու մասին:

Տասներորդ՝ աշխարհի փոփոխման եւ վախճանի, յարութեան եւ հատուցման դատաստանի մասին:

Ահա սրանք են տասը հարցերի նիւթական պատճառները: Իսկ տեսականը եւ գործնական [լինելու են այս հարցերի վերաբերեալ] հակընդդէմ խօսքերի հերքումը եւ հասնելը ճշմարիտ հաւատի խոստովանութեանը՝ իմաստասիրուած մեր եկեղեցու կողմից:

Իսկ [գրքի] հաւաքական լինելու պատճառը իմ՝ Գրիգոր բանասէրի, անկատար ձեռքը եւ տկար անձի ապիկարութիւնն է, [որ գրեցի] աշակերտներից մէկի՝ ուղղահաւատ Ատոմի խնդրանքով եւ անուանեցի գիրքս այս ըստ բովանդակութեան՝ Հարցմունք Գրիգորի սպասաւորի:

Եւ սրա [գրելու] մեր պատճառները երեքը եղան: Նախ՝ վերոյիշեալ Ատոմը, որ բազում անգամ աշակերտներիս կողմից խնդրեց որոշ հարցեր պարզաբանել, եւ հնար չեղաւ մերժել: Երկրորդ, երկիւղեցի Աստուածախօսի մօտ պատժի արժանանալ՝ հաւատացեալից քանքարը թաքցնելու համար, [որովհետեւ] ասում է, այն գանձը, որ կուլ են տուել, դուրս է բերուելու նրանց որովայնից, ովքեր Աստծոյ խօսքը սովեալներից թաքցրել են այն: Երրորդ, որպէսզի իմ աշխատութիւնը միայն ներկայիս լսողների համար չլինի, հոգ տարայ, որ գրչով աւանդեմ նաեւ հետնորդներին՝ աղերսելով, որ իւրաքանչիւր ոք, ով շրջագայի սրա ընթերցանութեան մէջ, թող ինձ համար Աստծուն մաղթանքներ մատուցի:

Արդ, թող այս աշխատանքի հիմքը հաստատուի Քրիստոսի անշարժ վէմի վրայ, եւ ողջ շինուածքը չորս սիւների վրայ հաստատուի: Առաջին սիւնը թող հաստատի առաքելական քարոզութիւնը, երկրորդը՝ մարգարէների վկայութիւնը, երրորդը՝ ճիշտ մեկնութիւնը, չորրորդը՝ ընթերցողների հաւանութիւնը եւ ճշմարտասիրութիւնը:

Եւ ո՛չ ոք թող չկասկածի՝ մտքում երկբայելով՝ սրբերի խօսքերից բիծ անգամ սխալ հաւաքած լինելու համար: Ասենք, որ [մենք վարուել ենք] ոչ թէ ըստ գիտութեան իմաստութեան, ուր բազում են սխալները, եւ իմ փորձով գիտեմ [նրանց] պակասն ու աւելորդաբանութիւնը, անկարգն ու կրկնողութիւնները, ինչպէս յայտնի է քննութեամբ հետախուզողներից, այլ հոգ եմ տարել ըստ ճշմարիտ դաւանութեան, որ չլինի ոչ մի նպատակադիր մեղադրանք մեր՝ միակարծիք իմացողներիս, համաձայնութեան [հանդէպ]:

Այլեւ աղերսում եմ պարտաւորեցնող վճռով՝ սրանում ոչինչ չաղաւաղել կամայականօրէն, ինչպէս նրանք, որ սովոր են եղծել եւ խեղաթիւրել Սուրբ Գիրքը եւ [այդպիսով] իրենց անձը դատապարտութեան մատնել, որովհետեւ գրուած է, որ եթէ մէկը խոտորուած մտքով որեւէ բան է աւելացնում դրանց, ապա Տէրը կաւելացնի նրա բոլոր այն հարուածները, որ գրուած է Գրքում, իսկ եթէ պակասեցնում է նոյն մտադրութեամբ, ապա կպակասի եւ ինքը Կենաց գրքում:

Ամէն եղիցի՜, եղիցի:

Թո՛ղ Կենաց գրքում անջնջելի յիշատակութեամբ գրուեն նաեւ ուշիմ մտքով եւ հոգացող ընդօրինակողների անունները:

Ամէն եղիցի՜, եղիցի:

ՑԱՆԿ
«Հարցմանց»-ի առաջին հատորի

Առաջին, ընդդէմ անհրաժեշտութիւն ասողների:

Երկրորդ, ընդդէմ նրանց, ովքեր ճակատագիրն են հռչակում՝ տասն առարկութիւններով:

Երրորդ, ընդդէմ նրանց, ովքեր բարին ու չարը Աստծուն են վերագրում՝ տասներկու առարկութիւններով:

Չորրորդ, մանիքեցւոց դէմ՝ տասը գլուխներով:

Հինգերորդ, վեց հարցումներ՝ չարի եւ բարու մասին, թէ ո՞րն է նրանց գործը: Եւ որ չարութիւնը էութիւն չէ եւ ոչ էլ գոյութիւն ու ոչ էլ անվերջանալի:

Վեցերորդ, Աստծոյ ճանաչողութեան մասին, եւ որ յայտնի չէ այժմ: Եւ Աստծոյ բանաւոր ցուցման մասին:

Որից յետոյ՝ առարկութիւններ հրէաների դէմ՝ տասը գլուխներով եւ պատասխաններ նրանց:

Այսքանն առաջին հատորում, որ ուղղուած է արտաքին [փիլիսոփաների] եւ հրէաների ստերի դէմ: Իսկ մնացած շարադրանքում ցանկերը դարձեալ հատորների սկզբում ենք դրել, որպէսզի հեշտութեամբ գտնես այն, ինչ փնտրում ես՝ առանց շփոթելու նրանց կարգը:

ԳԼՈՒԽ Ա՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ
Հատորիս առաջին պրակը
ԸՆԴԴԷՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԽՏ ԵՆ ԱՍՈՒՄ

Հարց. Ինչպէս ասում են հերձուածողները, մարդկանց ամէն ինչ տրւում է անհրաժեշտութեամբ, այսինքն՝ գործը, դիպուածները, մահը, կեանքը եւ մնացած ամէն ինչ:

Պատասխան. Նրանք, ովքեր քարոզում են բախտը եւ ճակատագիրը, հրամանը, ասում են, որ ոչինչ մեր կամքով չի արւում, այլ՝ անհրաժեշտութեամբ, որպէսզի զեխութեամբ անցկացնեն իրենց կեանքը: Իրենց ասածը հետեւեալ կերպ են փաստարկում: Առաջին պատճառն այն է, թէ Աստուած աստղերին զօրութիւն է տուել, եւ սրանք ազդում են մեզ վրայ՝ ենթարկելով մեզ իրենց շարժմանը՝ չար կամ բարի, եւ բախտն այլ բան չէ, եթէ ոչ աստղերի զօրութիւն, որ առնուել են առաջին պատճառից եւ իրենց են ենթարկում մեզ:

Ինչպէս այն, որ արեգակը չի այրում հեռու գտնուելու պատճառով, այլ այրում է հուրը՝ նրանից ջերմութիւն առնելով եւ մօտ գտնվելով՝ հայելու օրինակով, որ արեգակից մասնիկ վերցնելով՝ այրում է. այդպէս էլ մեր խօսքն է նրանց ազդեցութեամբ՝ հաստատող կամ բացառող լինում: Օրինակ, եթէ ասում ենք՝ անձրեւ կլինի կամ չի լինի, հարկաւ՝ մէկն է լինում: Այս է նրանց դատարկաբանութիւնը, ովքեր քարոզում են անհրաժեշտութիւնը:

Իսկ մենք ի՞նչ [ենք ասում] այս առթիւ: Նախ, առհասարակ հանդիպում ենք առարկութիւնների, որոնցով այսպէս ասողները մեղանչում են չորս կերպ: Նախ, ըստ սրանց ոչ մի զանազանութիւն չկայ մշտնջենաւորների եւ փոփոխականների միջեւ, որոնք երկնաւորներ ու երկրաւորներ են, որովհետեւ նրանք, որ միայն անհրաժեշտութեամբ են, միշտ միակերպ են, ինչպէս հրեշտակներն անմահ, երկնքի լուսատուները, հրի ջերմութիւնը, իսկ երկրաւորները՝ մերթ այսպէս եւ մերթ այնպէս են, լինում են եւ չեն լինում, ինչպէս մարդը, ձին, ծառը եւ այլն, որոնք չէին զանազանուի իրարից իբրեւ բանական եւ անբան, եթէ ամէն ինչ անհրաժեշտութեամբ լինէր:

Երկրորդ, տարբեր չէին լինի բնութեան բերքը եւ մարդու ձեռքով ստեղծածը, եթէ ամէն ինչ հարկադրանքով լինէր, որովհետեւ բնութիւնը եւ արհեստները զանազան արդիւնք են ունենում:

Երրորդ, եթէ ամէն ինչ հարկադրանքով տրուած լինէր, չէին լինի անձնիշխան կամքի գործերը, որ հաւասարապէս դրսեւորուում են՝ անելով կամ չանելով:

Չորրորդ, չէին լինի դիպուածները, ինչպէս օրինակ ոմանց յաջողութիւն կամ դժբախտութիւն պատահելը: Արդ, եթէ այս ամէնը ի հարկէ [լինէր], վերոնշեալները չէին կատարուի: Եւ քանի որ լինում են սրանք եւ կան, այստեղից յայտնի է, որ չեն կարող չլինել: Եւ եթէ չեն կարող չլինել, պէտք է լինեն եւ կան:

Հետեւաբար, պարտադրուած կարող է թուալ վերոասացեալներիս գոյութիւնը եւ սրանց լինելը, այսինքն՝ բնութեան գործերը, կամքի դրսեւորումները, պատահմունքները, եւ ոչ ոք չի կարող ուրանալ սա: Այժմ մէկ առ մէկ դառնանք սրանց: Եւ նախ նրանց մասին, որ ասում են, որ մեր խօսքը անհրաժեշտութեամբ է լինում կամ՝ չի լինում: Եւ փաստարկում են այսպէս. ըստ Արիստոտէլ իմաստունի [երկու] հակադիր կողմերից մէկը հարկաւ ճշմարիտ է[2], ինչպէս, եթէ ասենք վաղը արեւ կլինի կամ չի լինի, անձրեւ կլինի, թէ՝ չի լինի: Հարկաւ, սրանցից մէկն է ճշմարիտ: Պատասխանում եմ սրան, թէ՝ սուտ են ասածներդ եւ առերեւոյթ է դրանց ճշմարտութիւնը, ու դա յայտնի է իմաստուններին: Նախ, եթէ մեր խօսքն անհրաժեշտութեամբ ճշմարիտ լինէր, ապա ոչ միայն մի բանում, այլ ամէն ինչի մասին, ինչ էլ որ ասէինք, պէտք է ճշմարիտ լինէր, ինչպէս քաղաք կառուցելը կամ չկառուցելը, այգի տնկելը կամ չտնկելը: Արդ, եթէ ամէն ինչ

ճշմարիտ չէ, հետեւաբար, մի խօսք [միշտ] չի կարող ճշմարիտ լինել:

Երկրորդ, եթէ այս պահին քարին ասենք, թէ փայտ դարձի՛ր, չի դառնայ: Ուստի եթէ ասելը մեր ներկան չի փոխում, ուրեմն չի կարող փոխել եւ ապագան՝ ոչ մերձաւոր եւ ոչ հեռաւոր:

Երրորդ, եթէ ամէն մեր ասածը ճշմարիտ լինէր, ապա մեր խօսքը չէր հետեւի իրերին, այլ իրը կհետեւէր խօսքին, որը ակնյայտ սուտ է, քանի որ մնայունը փոփոխականին չի հետեւում, այլ հակառակը, ինչպէս հետքն է ոտքի ընթացքին հետեւում եւ ո՛չ ոտքը՝ հետքին, եւ ստուերը՝ մարմնին եւ ո՛չ մարմինը՝ ստուերին:

Ուրեմն, ակնյայտ է, որ ոչ թէ խօսքն է հաստատում իրը, այլ իրն է խօսքի հաստատումը՝ լինելը կամ՝ չլինելը. այն ժամանակ է ասւում էակը կայ, երբ կայ եւ [ասւում է] չկայ, երբ չկայ:

Չորրորդ, եթէ մեր բոլոր ասածները անհրաժեշտապէս ճշմարիտ լինէին, այդ դէպքում աւելորդ կլինէր մեր խորհելը, որովհետեւ խորհրդածելն անհրաժեշտութիւնից չէ, այլ՝ ցանկութիւնից եւ կարող է լինել կամ՝ չլինել, որովհետեւ եթէ կատարենք դա՝ կլինի դա եւ եթէ չկատարենք, չի լինի այն: Ուրեմն, պարզ է, որ ինչ խորհում ենք, ապա նոյնը կատարում ենք եւ մեր խօսքն անհրաժեշտապէս չէ, ինչպէս ցոյց տրուեց: Իսկ այն, որ Արիստոտէլն ասում է, թէ հակառակ կողմերից մէկն է ճիշտ, այսինքն հաստատումը կամ բացառումը, ասենք, որ իհարկէ, մէկն է ճիշտ եւ միւսը սուտ՝ ըստ իրադրութեան զանազանութեան:

Եւ մշտնջենաւորների համար էլ երեք ժամանակներից, այսինքն՝ անցեալ, ներկայ, ապագայ, մէկը ճշմարիտ է, միւսը՝ սուտ, ինչպէս հրի ջերմութիւնն ու արեգակի լոյսը: Իսկ փոփոխականների համար այդպէս չէ, որովհետեւ նրանք անցեալ ժամանակի կամ ներկայի մէջ մի դէպքում ճշմարիտ են, միւս դէպքում՝ սուտ. ինչպէս, եթէ ասենք, երէկ անձրեւ էր կամ՝ ոչ, այսօր անձրեւ է կամ՝ ոչ: Իսկ վաղուայ համար չգիտենք՝ անձրեւ կլինի թէ ոչ, գիտենք, որ մէկնումէկը կլինի: Ինչպէս, օրինակ, իրը, որ ազդեցութիւն կրող նիւթ է, ունի երկակի բնոյթ, ինչպէս հագուստը, որ կարող է պատռուել եւ չպատռուել, ջուրը կարող է տաք լինել եւ չլինել, կարող է այսպէս եւ այնպէս լինել՝ նայած ներգործութեան, ինչպէս որ պատահի: Այդպէս էլ այն, որ կարող է լինել ապագայում, ունի երկակի բնոյթ՝ լինելու կամ չլինելու, եւ պատահաբար նրանցից մէկը նախորդում է եւ կատարւում ազդեցութեամբ:

Նոյնպէս եւ մեր խօսքը անհրաժեշտապէս չէ, այլ՝ հանգամանքների բերումով:

Իսկ եթէ մէկը պնդի, թէ բազմաթիւ ասածներ կատարւում են ապագայում, ինչպէս այն, որ թագաւորն ասում է «քաղաք եմ կառուցելու» եւ կառուցում է, ասում ենք՝ «այսինչ մարդը մեռնելու է» եւ մեռնում է, աղօթում ենք եւ կատարւում է, նոյնպէս անէծքն ու օրհնութիւնը, այս մասին կասենք, որ այն, ինչ կայ

ներկայումս, մենք գիտենք նրան իր էութեան մէջ եւ թէպէտ ապագայում չգիտենք նրան իր էութեան մէջ, սակայն գիտենք նրա պատճառը: Իսկ պատճառը երեք տեսակ է լինում. կամ լինում է անհրաժեշտ պատճառից, ինչը լինում է անխուսափելիօրէն, ինչպէս [այն, որ] մարդը մեռնելու է: Կամ՝ ներգործական պատճառով է, որ կարող է խոչընդոտ եւ խափանում ունենալ. ինչպէս, եթէ ասենք թէ՝ այս մանուկը երկար է ապրելու, կամ թէ՝ այս մանուկը երաժիշտ է լինելու, եթէ չխափանուի ինչ-որ պատճառով: Կամ ունենում է իրեն յատուկ պատճառը, որ հաւասարապէս կարող է լինել կամ չլինել, ինչպէս զբօսանքի ելնելը կամ չելնելը, անձրեւ լինելը կամ չլինելը:

Եւ որովհետեւ իմացանք այսքանը, ուստի նրանց առարկութիւններին կարող ենք պատասխանել, թէ որքանով է պատճառն անհրաժեշտ բնոյթի, [այնքանով] ասուածը ճշմարիտ կլինի, ինչպէս թագաւորի խօսքը, մարդու մեռնելը, արեւի ծագելը, ձմեռուանից յետոյ գարնան գալը: Իսկ եթէ պատճառը ներգործական բնոյթի է, ապա կարող է արգելակուել, ինչպէս անէծքը, օրհնութիւնը, աղօթքը, մանկան երկար ապրելը կամ երաժիշտ դառնալը: Ներընդունական պատճառը, ինչպէս ասացինք, հաւասարապէս կարող է լինել եւ չլինել:

Առաջինի մասին այսքանը:

ԸՆԴԴԷՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԲԱԽՏ ԵՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՆ ԱՍՈՒՄ՝ ՏԱՍՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Հատորիս երկրորդ պրակը

Իսկ նրանք, ովքեր մարդկանց բախտ եւ ճակատագիր են վերագրում եւ ասում են ամէն ինչ անհրաժեշտութեամբ է, այսինքն՝ աստղերի զօրութեամբ, նախ այսպէս են հակաճառում: Այն ամէնը, ինչ կատարւում է, պատճառ ունի, եւ ամէն մի պատճառ անհրաժեշտութեամբ է: Այդ անհրաժեշտ պատճառը մեր խօսքը չէ, ինչպէս ցոյց տրուեց, ուրեմն աստղերի զօրութիւնն է՝ նրանց շարժման ազդեցութեամբ:

Ասենք այս առթիւ, որ այն ամէնը, ինչ կատարւում է, ունի պատճառ, եւ պատճառը նախորդում է պատճառուածին, եւ քանի որ ամէն մի պատճառ անհրաժեշտ պատճառ չէ, այլ կան նաեւ հնարաւոր պատճառներ, ուստի աստղերի շարժումն անհրաժեշտ պատճառ չէ:

Դարձեալ ասում են, թէ բոլոր երկրային մարմինները կառավարւում են վերին մարմիններով, ինչպէս յայտնի է տարուայ եղանակներից, այլեւ՝ ծնուելը, աճելը, բոյսերը, պտուղները նրանց շարժման պատճառով են, եւ նրանց շարժումը պարտադիր է, ապա ուրեմն ամէն ինչ լինում է պարտադրանքով: Ասենք այս մասին, որ թէպէտ երկրային մարմինները կառավարւում են վերիններով, սակայն մարդու գործերը կառավարւում են [նրա] անձնիշխան կամքով, եւ անձնիշխան կամքը չի ենթարկւում երկնային մարմիններին:

Դարձեալ ասում են, թէ մարդկանց մարմիններն էլ երկրային են եւ սնւում, աճում են աստղերի շարժմամբ: Ասենք աս մասին, որ մարմնի սնուելը, աճելը տնկականին է [պատկանում] եւ ոչ աստղերին, թէպէտ խթանւում է նրանց կողմից: Եւ թէպէտ մարդկային մարմինը տարրեղէն է, սակայն բարին եւ չարը կամքի արդիւնք են եւ ոչ բանականութեան:

Դարձեալ ասում են, թէ մարդկանցից շատերը գործում են ըստ մարմնի խառնուածքի, որն աստղերի շարժմամբ է պայմանաւորուած: Այս մասին ասենք՝ թէպէտ խառնուածքը աստղերի շարժմամբ է պայմանաւորուած, սակայն շատերը անձնիշխան կամքով յաղթահարում են խառնուածքի վատ [կողմերը] եւ գործում բարին:

Դարձեալ ասում են, որ շատ բան է պատահում մեզ մեր կամքից անկախ, ինչպէս վատ հիւանդութիւնը, դժբախտութիւնը, մահը եւ այլն, հետեւաբար, դրանք բախտով եւ ճակատագրով [եղած] հարկադրանք են: Ասենք, որ նախ՝ եթէ վատ հիւանդութիւնը եւ մնացեալը անհրաժեշտութիւն լինէին, ապա պարտադիր կլինէին բոլորի համար, որովհետեւ նոյն անհրաժեշտութիւնը բոլորին է վերաբերում: Իսկ եթէ այլ եւ այլ է բոլորի անհրաժեշտութիւնը, ապա բոլորին հաւասարապէս չարը չէր հանդիպի, մինչդեռ բոլորին տրուած են մահ, հիւանդութիւն եւ այլն, ուրեմն, անհրաժեշտութեամբ չեն:

Դարձեալ, եթէ անհրաժեշտութեամբ են, ապա չէր լինի անձնիշխան կամքը, իսկ եթէ ունենք կամք եւ գործի սկիզբը մեր մէջ է եւ առ մեզ է, ապա ուրեմն [կամքը] անհրաժեշտութեամբ չէ, որի սկիզբն ուրիշից է:

Եւ ունենք նաեւ խորհելու, [ունակութիւն, որով] ընտրում ենք պիտանին, խոտանում ոչ պիտանին, եւ բազում անգամ խորհելով՝ հանդիպում բարու, խուսափում չարից, իսկ խորհելը հնարաւորութիւնից է, ինչպէս ասուեց եւ ոչ անհրաժեշտութիւնից:

Եւ կամ՝ եթէ մարդիկ, անբանները, ամէն ինչ անհրաժեշտութիւնից լինէին, ապա ոչնչով չէին զանազանուի բանականն ու անբանը, որովհետեւ բանականը գիտակցութեամբ եւ կամքով է գործում, իսկ անբանը բնութիւնից է հարկադրուած, ինչպէս ասացինք:

Կամ եթէ անհրաժեշտութեամբ է, ապա ինչպէ՞ս են աղօթքը, պատարագը, ողորմութիւնը եւ այլն, հեռացնում ու մօտեցած չարը փոխում բարու, ինչպէս Նաբուգոդոնոսորի նուիրատուութիւնը (Դան. Գ-Դ), Եզեկիայի աղօթքը (տե՛ս Դ Թագ. Ի 1-3), որ ետ դարձրեց մահը եւ ուրիշ շատ [դէպքեր]: Ապա ուրեմն, չկայ անհրաժեշտութիւն:

Իսկ եթէ անհրաժեշտութիւնը լինէր աստղերի շարժումը, աստղերն իրենք չէին լինի այլոց հարկադրանքի տակ, իսկ եթէ իրենք էլ հարկադրանքի տակ են, ուրիշների պատճառ չեն կարող լինել, քանի որ իրենք հենց ենթարկուող են, ինչպէս այն, որ արեգակն ու լուսինը

կանգ առան Յեսուի օրոք (տե՛ս Յեսու Ժ), եւ արեգակը ետ դարձաւ Եզեկիայի օրոք (տե՛ս Դ Թագ. Ի 9-11):

Դարձեալ, ով որեւէ բան է գործում, ուրեմն եւ նրանն է ներգործութիւնը, թէ առնելիս, թէ՝ կրելիս. արդ, եթէ հոգին, մարմինը, ձեռքը մարդունն են, ուրեմն նրանց գործերն էլ մարդունն են՝ չար թէ բարի: Եւ ինչպէս, ցաւերի զգացումն է մարդունը, քանի որ զգում է կսկիծը, այդպէս էլ հեշտանքի զգացումն է նրանը՝ չար, թէ՝ բարի, հետեւաբար, մերն է ներգործութիւնը եւ ոչ անհրաժեշտութեանը:

Դարձեալ, եթէ անհրաժեշտութեամբ լինէր, ապա կվերանային բարոյական առաքինութեան բոլոր սկզբունքները, այսինքն խոհեմութիւնը, արիութիւնը, ողջախոհութիւնը, արդարութիւնը, որոնք տրւում են ոմանց եւ ոչ անհրաժեշտութեամբ:

Դարձեալ, եթէ անհրաժեշտութեամբ է, չէին լինի խրատների օգուտը, խստութիւնը, ուսումը, որոնցով շատերը հակւում են դէպի բարին եւ հեռանում չար կեանքից:

Դարձեալ, եթէ անհրաժեշտութեամբ է, ոմանց չեն գովի կամ պարսաւի, որովհետեւ սրանք կամաւոր են եւ ոչ ակամայ: Եւ եթէ [անհրաժեշտութեամբ լինի], պէտք է գովենք կամ պարսաւենք ոչ թէ գեղեցիկը եւ գարշելին գործողին, այլ՝ ով պատճառն ու անհրաժեշտութիւնն է գովասանքի եւ պարսաւանքի, այսինքն՝ բախտն ու ճակատագիրը:

Դարձեալ, եթէ կայ անհրաժեշտութիւնը, ուրեմն պէտք չեն դատելու եւ քննելու իրաւունքը, քաղաքացիական օրէնքները եւ ոչ էլ ըստ արժանւոյն բարուն կամ չարին հատուցելը, եւ եթէ անհրաժեշտութիւնն է ստիպել գործել այդ ամէնը, նրան են պատկանում պատիւներն ու պատիժները եւ ոչ մարդուն:

Դարձեալ, եթէ կայ անհրաժեշտութիւնը, ապա ինքնին անարդար են աստղերը, որովհետեւ ոմանց համար բարին են նախատեսում, ոմանց՝ չարը, ոմանց՝ հարուստներ եւ ոմանց՝ աղքատներ, ոմանց հեշտ կեանք եւ ոմանց՝ դժուար, ոմանց՝ երկարակեցութիւն եւ ոմանց՝ սակաւակեցութիւն. շատ անգամ անարժաններին բարի են խոստանում, արժանաւորներին՝ չար: Մանաւանդ առաջին պատճառի պարագային՝ պէտք է վերանայ այս անիրաւութիւնը, որ աստղերին զօրութիւն է տրուել այդպէս անարդար բաշխող լինելու:

Դարձեալ ասում են հակառակորդները, որ երկրի բոյսերը, ծաղիկները եւ պտուղները եթէ ազդելու զօրութիւն ունեն, երկնքի աստղերը չե՞ն ունենայ: Ասենք, որ թէպէտ զօրութիւն ունեն, սակայն այլ եւ այլ կերպ, որովհետեւ երկրի բոյսերը մարմինը ապաքինող եւ բժշկողներ են, իսկ երկնքի աստղերը լոյս տալու, ժամանակը եւ ապագայի կանխանշանները ցոյց տալու համար են, որպէսզի բոլոր կողմերից տեսնելով՝ մարդիկ նախապատրաստուեն. ինչպէս ասում է Գիրքը՝ լինելու են երկրի լու-

սատուները՝ ժամանակի եւ նշանների համար (տե՛ս Ծննդ. Ա 17):

Դարձեալ ասում են, թէ աստղերն ունեն ներհակ բնոյթ՝ չար ու բարի եւ մէկմէկու հանդիպելով՝ հակադրւում են եւ պատճառում չարութիւն կամ բարիք, խռովութիւն կամ խաղաղութիւն, աւեր կամ շինութիւն եւ այլն: Այս մասին ասենք, որ նախ երկնային մարմինները կազմուած են ոչ թէ չորս տարրերից, այլ կայ հինգերորդն էլ՝ էութիւնը՝ ըստ Արիստոտէլի. որոնք պարզ տարրերից են կազմուած եւ միմեանց չեն հակադրւում: Երկրորդ, եթէ անգամ կազմուած լինեն տարրերից եւ ունենան ներհակ բնոյթ, միշտ չէ որ կհակադրուեն մէկմէկու, այլ միայն, եթէ խնամողի կամքով հրաման տրուի, ինչպէս այն, որ երկու թշնամիներ թագաւորի ճնշմամբ չեն համարձակւում վնասել մէկմէկու, մինչեւ թագաւորը հրաման չտա:

Դարձեալ ասում են՝ հակառակ [ուղղութեամբ] շարժուելու [պատճառով] լինում է եւ ներհակ ներգործութիւնը, իսկ քանի որ մոլորակները շարժւում են հակառակ ուղղութեամբ, ուստի ներհակ ազդեցութիւն են ունենում: Ասենք, որ մոլորակները ոչ թէ հակառակ են շարժուելու եւ այդ պատճառով են կոչւում «մոլոր»-ակ, կամ որ չարի պատճառ են, այլ, որովհետեւ մենք ենք մոլորւում նրանց շարժումից, քանի որ ունեն թէ՛ ընդհանուր եւ թէ՛ մասնաւոր շարժումներ: Ընդհանուր շարժումը ութերորդ կամարով է՝ արեւելքից արեւմուտք, իսկ մասանաւորը՝ արեւմուտքից արեւելք: Իսկ նրանց շարժումը մարդկանց չար կամ բարի չի պատճառում, այլ, ինչպէս ասացինք, նրանք պատճառ են միայն օրերի եւ ժամանակի, եղանակների, ծնուելու եւ աճելու, ինչպէս նաեւ՝ ապագայի կանխանշանների: Իսկ նշանը չի կարող չարի կամ բարու պատճառ լինել, ինչպէս որ կենդանիներից շատերը իրականացող դէպքերի կանխանշան կարող են լինել, սակայն նրանք պատճառ չեն չարի կամ բարու:

Դարձեալ ասում են, եթէ անհրաժեշտութեամբ չէ, ինչպէ՞ս է, որ մի քաղաք կործանւում է, միւսները՝ ոչ, մի նաւը խորտակւում է, ոմանք էլ ընկնում են կռուի մէջ: Ասենք այս կապակցութեամբ, որ դու իսկ սրանով մեզ վկայում ես, թէ չկայ անհրաժեշտութիւն, որովհետեւ այդ ամբողջ քաղաքի բազմահազար մարդիկ՝ ծեր եւ երիտասարդ [պէտք է] աստղերի մի շարժմամբ ծնուէին, որ միասին կործանուէին, կամ ամբողջ զօրքը, կամ բոլորը, ովքեր գտնւում էին նաւի վրայ. [մինչդեռ] սրանք բոլորը տարբեր ժամանակներում էին ծնուել եւ աստղերի տարբեր շարժումների ընթացքում, ուստի հարկ չկայ բախտի եւ ճակատագրի [վերագրել այդ ամէնը]:

Դարձեալ ասում են, ըստ իմաստասէրի՝ ո՛չ Աստուած, ո՛չ բնութիւնը, ո՛չ արհեստները երբեք ոչինչ աւելորդ չեն ստեղծում, հետեւաբար, եթէ աստղերը ոչ մի դեր չունեն, ուրեմն իզուր են ստեղծուել Արարչի կողմից: Ասենք, որ նախ դու ինքդ խոստովանեցիր, որ անհրաժեշտութիւն չկայ, այլ [ամէն ինչ]

ստեղծում են Աստուած, բնութիւնը եւ արհեստները: Երկրորդ, պատասխանենք, թէ աստղերը իզուր չեն ստեղծուել, որովհետեւ կառավարում են տարրական մարմիններին, ինչպէս ասացինք, իսկ մարդու գործունէութիւնը կառավարւում է նրա անձնիշխան կամքով, իսկ վերջինս, որ աննիւթ է, չի կարող նուաճուել նիւթական աստղերի կողմից, այլ կառավարւում է առաջին պատճառի՝ նախախնամութեան կամքով, ինչպէս վկայում է սուրբ Գրիգոր Նիւսացին՝ իր «Մարդու բնութեան մասին»[3] գրքում:

Այսքանը երկրորդ մասում, ուր տասը պատասխաններ տուեցինք հակաճառութիւններին, ինչպէս նաեւ [ստորեւ] տասներկու գլուխներով՝ նոյնքան տհաճ [առարկութիւններին]:

ԸՆԴԴԷՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԲԱՐԻՆ ԵՒ ՉԱՐԸ ԱՍՏՇՈՒՆ ԵՆ ՎԵՐԱԳՐՈՒՄ՝ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Հատորիս երրորդ պրակը

Իսկ ոմանք աւելի են ամբարշտանում, իբր փախչելով ձախից՝ խոտորւում են աջ կողմը, ասելով, թէ ամէն ինչի պատճառը՝ չարի ու բարու, մենք չենք, այլ առաջին պատճառն ինքը՝ Աստուած, ովքեր խուսափելով վերն ասուած աստղերի բախտից եւ ճակատագրից՝ նրանց փոխարէն առաջին պատճառին են վերագրում անհրաժեշտութիւնը, որպէսզի Մանիքոսի նման երկու սկիզբ չասեն[4]:

Իսկ մենք՝ ուղղադաւանների դասը, ճշմարտասիրութեան հետեւողներս, ընդդիմանում ենք սրանց, ասելով, թէ Աստուած չարի պատճառ չէ, այլ միայն՝ բարու: Եւ սա բազում պատճառներով է:

Նախ որովհետեւ բարին էութիւն է, ինչից յայտնի է, որ [նրանք] հակառակ են իրար, քանի որ այն, ինչ բարի է՝ էութիւն է. այն, ինչ էութիւն է՝ բարի է, իսկ չարը էութիւն չէ: Արդ, Աստուած էութեան պատճառ է եւ ոչ՝ ոչ էութեան, ուրեմն չարն Աստծուց չէ:

Երկրորդ, բարին ունակութիւն է եւ չարը՝ դրա պակասութիւնը, ինչպէս խաւարը՝ լոյսի: Արդ, Աստուած պատճառ է ունակութեան եւ ոչ՝ պակասութեան, ուրեմն չարն Աստծուց չէ:

Երրորդ, բարին ճշմարիտ է եւ ճշմարիտը՝ բարի, իսկ սուտը չար է եւ չարը՝ սուտ, ապա ուրեմն՝ Աստուած պատճառ է ճշմարտութեան եւ ոչ ստի:

Չորրորդ, եթէ չարը Աստծուց է, ապա այն օտարամուտ եւ պատահական է, ուրեմն Աստծոյ մէջ [կլինէր] մի օտար եւ պատահական բան, ինչն անհեթեթ կլինէր:

Հինգերորդ, բարին կարգաւոր է, իսկ չարը՝ անկարգ, բայց արդ, եթէ չարն Աստծունն է, ուրեմն անկարգութիւնն էլ Աստծունն է, ինչը չի պատշաճում:

Վեցերորդ, եթէ չարն Աստծունն է, ուրեմն Աստուած է բոլոր չարիքների պատճառը: Արդ, ամէն մի պատճառ առաւել է, քան պատճառուածը՝ բարի թէ չար, ուստի, անկարելի հերձուածողութիւն է ասելը, [թէ] չարն Աստծուց է:

Եօթներորդ, եթէ չարն Աստծունն է, ուրեմն [նա] սիրում է չարին եւ եթէ սիրում

է չարին, սիրում է նաեւ չարագործներին, որոնք սիրեցին չարը:

Ութերորդ, եթէ չարն Աստծունն է, [նա] չէր պատժի սատանային, որ չար գործեց եւ չար մարդկանց, իսկ [քանի որ] պատժում է, ուրեմն չարն Աստծունը չէ:

Իններորդ, եթէ չարն Աստծունն է, ապա [նա] պէտք է կամենար չարը, այդ դէպքում Աստուած պէտք է երկու կամք ունենար՝ չար եւ բարի, քանի որ երկու [բնոյթի] գործերը երկու կամքից են առաջ գալիս: Իսկ եթէ կամքն ու գործն Աստծոյ մէջ երկուսն են՝ ապա նա պարզ մէկը չէ, այլ՝ բաղադրեալ, ինչն անկարելի է:

Տասներորդ, եթէ չարն Աստծոյ մէջ է, եւ նա կամենում է չարը, ապա նա չի կամենում բարին, իսկ եթէ նա չի կամենում բարին, ուրեմն բարին Աստծոյ մէջ չէ:

Տասնմէկերորդ, եթէ [նա] բարի չի կամենում, ուրեմն եղականներից ոչ մէկը՝ ո՛չ մարդ, ո՛չ հրեշտակ չեն կարող բարի լինել, քանի որ Աստծոյ կամքին ոչ ոք չի հակառակւում:

Տասներկուերորդ, եթէ չարն Աստծուց է, [նա] կամ գիտի, որ չարը չար է, կամ՝ չգիտի: Եթէ չգիտի՝ անգիտանում է, իսկ եթէ գիտի, ուրեմն իմանալով է կատարում չարը:

Տասներեքերորդ, եթէ չարն Աստծուց է, կարողութե՞ամբ է կատարում չարը, թէ՞ անկարողութեամբ: Եթէ անկարողութեամբ է անում, ուրեմն հարկադրուած է, եթէ կարողութեամբ է անում չարը, չի կարող կատարել բարին:

Տասնչորսերորդ, եթէ չարն Աստծուց է, ինքը բարի է եւ չա՞ր է գործում, թէ՞ չար է եւ չար է գործում: Եթէ բարի է եւ չար է գործում, ուրեմն իրեն հակառակ է գործում, իսկ եթէ չար է եւ չար է գործում՝ էակներից ոչ մէկը բարի չէ:

Տասնհինգերորդ, եթէ չարն Աստծունն է, եւ ամէն ինչի սկիզբն Աստուած է, ուստի, ըստ նրանց, եւ՝ չարի, ուրեմն եւ սկզբնաչար առաջին չարի գտնողը սատանան չէ, ինչպէս նրանք են բարբաջում:

Տասնվեցերորդ, եթէ չարն Աստծունն է, ինչպէս բարին, եւ երկուսի սկիզբն էլ Աստուած է, անհնար է, որ ներհակ բաներն ունենան մէկ միասնական սկիզբ, քանի որ այդ սկիզբը պարզ չէր լինի, այլ՝ երկատուած, եւ ոչ միասնական՝ բաժանուած եւ այլափոխուած, եւ կլինէր ինքն իրեն հակառակ, ինչպէս նաեւ նրանից առաջ եկածները: Իսկ եթէ երկուսի սկիզբը երկուսն է, ուրեմն Աստծոյ մէջ երկու սկիզբ է տեսնւում կամ երկու անսկիզբ, ըստ Մանիքոսի:

Տասնեօթներորդ, եթէ չարն ու բարին ունենային մի սկիզբ, որոնք ստորոգուէին, ինչպէս տեսակները սեռին, ապա չարը եւ բարին կլինէին Աստծոյ սեռի [տեսակներ], որ անհնար է:

Տասնութերորդ, եթէ չարն Աստծուց է, ապա չարի առաջացումը կամ հակակայութեամբ է, ինչպէս սպիտակի առաջ գալը ոչ սպիտակից, կամ էլ՝ նմանութեամբ, ինչպէս կենդանու [առաջանալը] կենդանուց: Արդ, եթէ հակա-

կայութեամբ լինէր, պէտք է առաջ գար նախ զօրութեամբ, ապա՝ ներգործութեամբ, իսկ Աստծոյ մէջ զօրութեամբ ոչ մի իր չկա՝ ո՛չ բարի, ո՛չ չար: Իսկ եթէ նմանութեամբ է, Աստուած բարի է, իսկ բարուց բարի է լինում եւ ո՛չ չար:

Տասնիններորդ, եթէ չարն Աստծուց է, ուրեմն կամ չար է ինքնըստինքեան, կամ ըստ պատահման: Ինքնըստինքեան չարն է չար, ինչպէս ասում ենք՝ չարը չար է, իսկ ըստ պատահման է՝ ինչպէս ասում ենք չար մարդ: Արդ, ցոյց տրուեց, թէ պատահականը Աստծուց չէ: Իսկ եթէ ինքնըստինքեան Աստծունն է չարը, ապա նա բարի չէր լինի Աստծոյ մէջ, որովհետեւ ինքնըստինքեանը անհրաժեշտութիւն է՝ գոյացական եւ անփոփոխ:

Քսաներորդ, Աստուած աներկբայ բարի է, ինչպէս եւ անհրաժեշտ էութիւն է. արդ, անհրաժեշտ բարին է միշտ բարի՝ ե՛ւ գոյացական բարի, ե՛ւ զուտ բարի: Եւ եթէ բարին անհրաժեշտապէս բարի է, չի կարող չլինել բարի: Եւ եթէ միշտ է բարի, չի կարող չլինել բարի: Եւ եթէ գոյացական է բարին, չի կարող լինել պատահականութեամբ չար: Եւ եթէ զուտ եւ իսկապէս է բարի՝ չի կարող խառնուել չարին:

Եւ այսքանը բաւական է, ինչքան, որ ցոյց տրուեց, որ Աստուած չարի պատճառ չէ, այլ՝ միայն բարու: Սակայն բե՛ր տեսնենք նրանց առարկութիւնները եւ ցոյց տանք նրանց զեղծարարութիւնը:

Եւ առարկում են այսպէս. նախ, եթէ պատճառն անհրաժեշտութեամբ է, ուրեմն՝ նրա ներգործութիւնն էլ է [անհրաժեշտութեամբ]: Արդ, եթէ Աստուած ամէնի պատճառն է եւ անհրաժեշտութեամբ է, ուրեմն նրա ներգործութիւնն էլ անհրաժեշտութեամբ է: Ասենք այս կապակցութեամբ, որ նախ, կան երկու պատճառներ՝ մերձաւոր եւ հեռաւոր: Արդ, մերձաւոր պատճառն անհրաժեշտութեամբ է, իսկ հեռաւորը՝ ոչ, ինչպէս ասացինք վերը: Արդ, Աստուած ամէնքի մերձաւոր պատճառը չէ, այլ՝ հեռաւոր, ուստի եւ անհրաժեշտութեամբ չի ներգործում: Դարձեալ ասենք, թէ Աստուած անհրաժեշտութեամբ չէ արարածների պատճառը, այլ՝ ըստ իր կամքի, որովհետեւ ոմանք եղել են անհրաժեշտութեամբ, ոմանք էլ՝ ոչ անհրաժեշտութեամբ: Երկրորդ, ասում են, թէ Աստուած նախքան մեր լինելն իր կանխատեսութեան մէջ ամէն ինչ նախատեսել էր. չարը՝ չար, բարին՝ բարի: Ուրեմն անհրաժեշտ է, որ ամէն ինչ լինի այնպէս, ինչպէս կանխատեսել եւ իրագործել է Աստուած: Եւ քանի որ Աստծոյ իմացութիւնն անսահման է, ուստի ամէն ինչ կատարւում է Աստծոյ իմացութեան անհրաժեշտութեամբ: Ասենք, որ պէտք է իմանալ, որ այլ է Աստծոյ ճանաչողութիւնը եւ այլ՝ մարդու ճանաչողութիւնը: Որովհետեւ Աստծոյ ճանաչողութեան մէջ չկայ առաջին եւ վերջին, այլ բոլորը՝ ամբողջական եւ կատարեալ: Իսկ մարդու ճանաչողութեան մէջ կայ առաջին եւ վերջին, քանզի անցեալը տեսնում է յիշողութեամբ, ներկան՝ իմացութեամբ, ապագան՝ իր պատճառներով՝ ըստ ժամա-

նակի փոփոխութիւնների, ինչպէս ասացինք: Ինչպէս օրինակ, եթէ բազմաթիւ մարդիկ ճանապարհ են գնում, մօտ գտնուողը նախ տեսնում է մէկին, ապա երկուսին, յետոյ՝ մնացեալին: Իսկ եթէ մէկը աշտարակից է նայում՝ բոլորին՝ տեսնում է միանգամից: Նոյնպէս եւ Աստուած բարձրացած յաւիտենական աշտարակի վրայ՝ ամէն ինչ տեսնում է ներկայօրէն:

Այժմ պատասխանենք [միւս] առարկութիւններին: Նախ՝ թէեւ Աստուած ամէն ինչ գիտի կանխատեսութեամբ, եւ ոչինչ դուրս չի մնում նրա կանխատեսութիւնից, սակայն ոմանց տեսնում է անհրաժեշտութեամբ, իսկ ոմանց՝ ըստ պատեհութեան: Սակայն, թէեւ Աստուած ամէն ինչ գիտի նախքան որեւէ բանի լինելը, սակայն Աստծոյ տեսնելը դրանց՝ անհրաժեշտութեամբ չէ չար կամ բարի: Ինչպէս, օրինակ, եթէ մի արհեստաւոր սայլ է պատրաստում, եւ մէկը հեռուից նայում է նրա աշխատելուն, տեսնելու պատճառով չէ, որ սայլը անհրաժեշտապէս այդպէս է ստացւում, այլ՝ արհեստաւորի կամքով: Նոյնպէս եւ Աստծոյ՝ մեզ տեսնելը չի պարտադրում մեր չար կամ բարի գործերը, այլ՝ մեր կամքը:

Երրորդ, ասում են, որ Աստծոյ կամքն անվերապահ է, եւ ոչ ոք նրա կամքին ընդդէմ չի գնում, այդ պատճառով էլ նա ինչ կամենում է, անում է՝ մէկին չար, մէկին բարի: Ասենք, նախ եթէ Աստծոյ կամքին ոչ ոք ընդդէմ չէ, ուրեմն նա ինչ որ կամենայ, այն էլ կանի, ուրեմն չար չի կամենայ եւ չի անի: Դարձեալ ասենք, եթէ Աստծոյ կամքն անվերապահ է, ինչ կամենում է, անում է, ուրեմն կամեցել եւ մեզ դարձրել է անձնիշխան ու մեր գործերի տէրը՝ չար թէ բարի:

Չորրորդ, ասում են, եթէ չարը Աստծուց չէ, ստացւում է, որ չարի սկիզբն ուրիշ է, բարունը՝ ուրիշ. այսպիսով լինում է երկու սկիզբ՝ բարի եւ չար, ըստ՝ Մանիքոսի: Ասենք այս կապակցութեամբ. նախ, որ չարը Աստծուց չէ, բնութիւնից չէ, բնութեան մէջ չէ եւ բնութիւնը չէ: Առաջինի վերաբերեալ ասենք, որ չարն Աստծուց չէ, քանի որ Աստուած բնութեամբ բարի է, եւ բարուց չար չի առաջանայ, ինչպէս լոյսից՝ խաւար: Եւ բնութիւնից չէ, քանի որ բոլոր հրեշտակների կամ մարդկանց բնութիւնը բարուց է առաջացել, իսկ չարն անձնիշխան կամքով օտարամուտ է բնութեան մէջ: Բայց նաեւ բնութեան մէջ չէ, որովհետեւ չարը ոչ թէ նրա մէջ որեւէ տեղ է, այլ բնութիւնից դուրս պատահականութիւն է: Եւ բնութիւն չէ՝ ո՛չ մաս եւ ո՛չ ամբողջ, այլ ունակութեան պակասութիւն, որովհետեւ բարին ունակութիւն է եւ չարը՝ նրա պակասութիւնը, ինչպէս խաւարը՝ լոյսի, հիւանդութիւնը՝ առողջութեան եւ մահը՝ կեանքի:

Այժմ պատասխանենք առարկութեանը: Արդ, թէեւ չարը Աստծուց չէ, սա չի նշանակում, թէ երկու Աստուած կայ, կամ երկու սկիզբ, որովհետեւ չարը ոչնչութիւն է, իսկ ոչնչի սկիզբը Աստուած չէ, քանի որ Աստուած էութիւնների սկիզբն է: Եւ երկու սկիզբ չկայ, քանի որ չարը

գործադրողները [արդէն] սկզբնաւորուած են: Ուրեմն չկայ երկու սկիզբ:

Հինգերորդ, ասում են թէ՝ քանի որ չարագործներն էլ Աստծունն են, ուրեմն եւ՝ կամքն է Աստծունը, ու նաեւ՝ չարը, որովհետեւ նա է ստեղծել կամքը: Ասենք, որ նախ Աստուած ստեղծել է բարի կամք եւ բարին է դրել կամեցողութեան մէջ, սակայն նա անձնիշխանութեամբ հեռանալով բարուց՝ չարի գիւտարարը դարձաւ[5], որովհետեւ չարն այլ բան չէ, քան հեռացում բարուց կամ բարու պակասութիւն, ուստի թէեւ գործը եւ կամքը Աստծունն են, սակայն չարի կամենալը եւ ընտրելը Աստծուց չեն, այլ կամքի եւ գործի [արդիւնք]: Ինչպէս, օրինակ, եթէ մի արհեստաւոր սուր պատրաստի բարի նպատակով, սակայն նա, ով դրանով չար գործեց՝ չարի պատճառ դարձաւ: Այսպէս էլ չնայած կամքի արարելը Աստծուց է, սակայն չար գործելը մեր կամքի պատճառով է: Դարձեալ, անձնիշխան կամքը Աստծուց է եւ ոչնչից է եղել, սակայն չարի պատճառ չէ իբրեւ Աստծուն պատկանող, այլ այնքանով է չարի պատճառ, որ ոչնչից է եւ ձգտում է ոչնչի, այսինքն չարի, ուստի մեղքը եւ չարը Աստծուց չեն, այլ՝ ոչնչից, որը եւ նրանց սկիզբն է: Դարձեալ ասենք, որ Աստուած հրեշտակների եւ մարդկանց համար եւս ստեղծեց բարի կամք եւ կամենում է բարին ու ստիպում է սիրել բարին: Ուստի ակնյայտ է, որ մեր բնութեան մէջ սերմանեց բարին եւ բարու օրէնքներ սահմանեց, այլեւ՝ բարու խրատներ, յորդորներ եւ պարգեւներ: Իսկ չար չի կամենում եւ չի պարտադրում չարը, այլ տանջանք եւ պատիժ է տալիս չար գործողներին, ուրեմն չարն Աստծունը չէ, եւ որեւէ մէկին չար չի կամենում:

Վեցերորդ, հակառակորդներն ասում են, որ եթէ չարը Աստծուց չլինէր, ապա Աստուած չէր իմանայ չարը, ինչպէս մենք, որ նմանով նմանին ենք ճանաչում, այսինքն՝ հոգով հոգեւորը, մարմնով՝ մարմնաւորը: Ասենք այս մասին: Նախ եթէ դա պարտադիր է, ապա պէտք է դու ջուր լինէիր, որ ջուրը ճանաչէիր, քար լինէիր, որ քարը ճանաչէիր, եւ մնացեալը նոյն կերպ: Սակայն սրա հարկը չկայ, որովհետեւ լինելով սա, ճանաչում ենք այլը: Նոյն կերպ, Աստուած լինելով բարի՝ գիտի չարը: Ասենք նաեւ, որ մենք իրերը ճանաչում ենք երկու կերպ, այսինքն՝ դրանց մի մասը ճանաչում ենք իրենց յատուկ տեսակով, միւսը՝ այլ տեսակների [միջոցով]: Այսպէս, յատկութեան առկայութիւնը ճանաչում ենք իր յատուկ տեսակով, պակասութիւնը՝ այլ տեսակների [միջոցով], քանի որ [պակասութիւնը] ունենալու հակակայութիւնն է: Արդ, առաջինով ճանաչում ենք լոյսը, երկրորդով՝ խաւարը, առաջինով ճանաչում ենք ճշմարիտը, երկրորդով՝ սուտը. այդպէս էլ առաջինով ճանաչում ենք բարին, երկրորդով՝ չարը: Նոյն կերպ եւ Աստուած՝ միակ միջնորդութեամբ ճանաչում է բարին ինքնին՝ իր իսկ տեսակով, իսկ չարը ճանաչում է երկակի միջոցով, այսինքն

որ հակառակ է բարուն եւ որ՝ նրա պակասութիւնն է, ինչպէս ասացինք:

Եօթներորդ, ասում են, եթէ չարը Աստծուց չէ, ապա նա ինչո՞ւ է ներում սատանային եւ չար մարդկանց: Նախ ասենք, որ չարը Աստծուց չէ բարու նման, քանի որ բարին ըստ կամքի է, իսկ չարը՝ թոյլ տալով է: Այլ է ըստ կամքինը, որ յօժարութեամբ է եւ այլ՝ թոյլ տալովը, որ կամքով չէ: Դարձեալ՝ թոյլ տալ եւ ներել չարը՝ յանուն բարու է, քանի որ նախախնամութեամբ բազմաթիւ բարութիւններ չարից էլ են առաջանում, ինչպէս որ սատանային թոյլ է տալիս փորձելու բարին եւ լրացնելու պակասութիւնները կամ չար մարդկանց թոյլ է տալիս, որ բարին ընտրեն կամ էլ յետոյ զղջան: Եւ պէս-պէս նախախնամութեամբ, ինչպէս Աստուած ինքը գիտէ, ներում է չարիքը, ինչպէս կտեսնենք առաջիկայում:

Ութերորդ, ասում են, եթէ Աստուած չարը չի կամենում, իսկ մենք կարողանում ենք անել այն, ինչ Աստուած չի կամենում, ապա ինչո՞ւ է Աւետարանն ասում՝ ծառից ոչ մի տերեւ չի ընկնում եւ գլխի վրայ ոչ մի մազ չի ճերմակում՝ առանց հրամանի (Մտթ. Ե. 36. Ղուկ. ԻԱ 18): Ասենք այս մասին: Նախ, չնայած ունենք անձնիշխան կամք եւ տէր ենք մեր գործերի՝ անենք կամ՝ չանենք, սակայն երբեմն սկիզբը, մէջտեղը, վերջը՝ Աստծոյ նախախնամութեամբ են: Երբեմն սկիզբը Աստծոյ մօտ է, աւարտը՝ մեր: Երբեմն էլ երկուսն էլ՝ սկիզբը եւ վերջը, Աստծոյ մօտ են: Եւ երբ սկիզբն ու աւարտը Աստծոյ մօտ են՝ աստուածային ներգործութիւնը եւ սքանչելիքները: Երբեմն էլ սկիզբը եւ աւարտը մեզ մօտ են, ովքեր մինչեւ աշխարհ գալը նախապէս ընտրեալներ են եւ այժմ բարի գործեր են կատարում, ինչպէս որ նախասահմանուած է նրանց համար: Իսկ երբ սկիզբը մեզնից է, աւարտը Աստծոյ նախախնամութեամբ, այսինքն՝ երբ սկսում ենք բարի, ապա նա բարի է աւարտում եւ եթէ չար ենք սկսում, դարձեալ փոխում է բարու ըստ իր բարի նախախնամութեան: Դարձեալ ասում ենք, թէ բարին առանց Աստծոյ կամքի չէ, եւ չարն էլ առանց նրա թոյլտուութեան չէ. այս է, որ ասում է՝ տերեւ չի ընկնում, եւ մազ չի ճերմակում՝ առանց Աստծոյ կամքի ու գիտութեան եւ առանց թոյլտուութեան (տե՛ս Մտթ. Ե 36, Ժ 30):

Իններորդ, ասում են, ինչո՞ւ է ապա Աստուած ինքն ասում՝ «Ես եմ, որ խաղաղեցնում եմ եւ հաստատում չարը. սպանում եւ ապրեցնում եմ» (Եսայի ԽԵ 7): Եւ կամ՝ «ես խստացրի փարաւոնի սիրտը» (Ելք Է 3): Ասենք այս մասին: Նախ՝ կրկին է չարը. կայ չարը գործերի մէջ եւ չարը պատիժների մէջ: Արդ, գործերի մէջ չարը Աստծուց չէ, իսկ չարը պատիժների մէջ՝ Աստծոյ արդարութեան համար է, որ արդարացի հատուցում է: Հատուցումներն էլ՝ չորս տեսակ են. բարին բարու դիմաց. չարը չարի դիմաց. բարին չարի դիմաց, որ անբաւ գթութիւնն ու ողորմածութիւնն է Աստծոյ եւ չարը փոխանակ բարու, որ անում է ոչ թէ անհիրաւութեամբ, այլ երբեմն նախախնամութեամբ, քանի որ չարից երբեմն բարի է լինում, թէպէտեւ մեզ չար է թւում,

ինչպէս հիւանդութիւնը, փորձութիւնը եւ այլն: Սա է, որ [ասում է]՝ հաստատել չարը, խստացնել սիրտը եւ այլն:

Տասներորդ, ասում են, ապա ինչո՞ւ է մարգարէն ասում՝ «քո գրքում գրուեցին բոլորը» (Սղմ. ՃԼԸ 16) եւ Աւետարանն ասում է՝ «Մարդու Որդին գնալու է, ինչպէս որ գրուած է նրա մասին» (Մրկ. ԺԴ 21), ապա ուրեմն ամէն ինչ այն գրուածով է լինում՝ չար թէ բարի: Ասենք այս մասին, թէ Կենաց գիրքը երկու երես ունի: Մէկը ներկայ կեանքի արդարութեանն է վերաբերում, որ փոփոխական է եւ որտեղից մէկը կարող է ջնջուել: Միւսը՝ Աստծոյ յաւիտենական նախասահմանմամբ է, որից ոչ ոք չի կարող ջնջուել: Արդ, յայտնի է, որ կեանքում արդարութիւնը անձնիշխան կամքով փոփոխվում է երբեմն չարի, երբեմն էլ՝ բարու եւ հասնում է փրկութեան կամ դատապարտութեան: Բայց Աստծոյ նախախնամութիւնը ճանաչում է փրկուածներին եւ տալիս փրկուելու հնարաւորութիւն, որով ընտրեալները փրկւում են: Իսկ մարդիկ անձնիշխան կամքով եւ գործով են հասնում այդ փրկութեանը, շնորհներին եւ փառքին: Այսպէս է գրուած ընտրեալների մասին եւ այս է նշանակում՝ «գնալու է, ինչպէս որ գրուած է նրա մասին» (Մրկ. Թ 12): Այսպէս է ընտրելը, կանչելը եւ արդարացնելը, ինչպէս եւ գրում է առաքեալը (տե՛ս Հռոմ. Ը 30): Նոյն կերպ, կանխագիտութիւնը չարի ճանաչումն է, որ չար գործերով եւ անձնիշխան կամքով շեղում են չարերը: Ուստի յիմար են նրանք, որ ասում են՝ ցանկանում եմ ստանալ իմ հաճոյքները, եթէ ընտրեալ եմ՝ կփրկուեմ, եթէ ոչ՝ կդատապարտուեմ: Ինչպէս յիմար հիւանդը, որ ասում է՝ ուտեմ եւ խմեմ իմ հաճոյքի համար, եթէ առողջանալու լինեմ՝ կառողջանամ, եթէ մեռնելու լինեմ՝ կմեռնեմ:

Տասնմէկերորդ, ասում են, որ ինչպէս կենդանիների մէջ ուղտը խոհեմ է, տատրակը՝ ողջախոհ, եւ այլ կենդանիներ՝ յիմար եւ բղջախոհ, այդպէս էլ ստեղծուելիս հոգիներն ի բնէ լինում են խոհեմ, անզգամ, ցանկասէր, ողջախոհ[6], բարեբարոյ, չարաբարոյ: Հետեւաբար, չարն էլ, բարին էլ Աստծունն են: Ասենք այս մասին: Նախ, որ ուշիմը, ապուշը եւ մնացեալն ըստ կարգի, որոնք թէ մարմնի խառնուածքով են այդպէս լինում եւ թէ հոգու բնական ունակութեամբ, առանց հոգու ներգործելու՝ ոչ չար են եւ ոչ էլ բարի. նրանց ոչ գովասանք, ոչ էլ պարսաւանք է հասնում, ինչպէս որ՝ կենդանիների բնական բարքին: Դարձեալ, ասենք նաեւ, որ Աստուած մէկին խոհեմ է ստեղծում, միւսին՝ տգէտ, որպէսզի մէկը միւսից սովորի. նոյնը՝ չարաբարոն, նոյն կերպ եւ ցանկասէրը, որ պէտք է բարիով ուղղուի, իսկ եթէ չկամենան, արդարացիօրէն պատժուեն: Դարձեալ ասում են, թէ սրանք ինքնըստինքեան չար չեն, այլ բարի, ինչպէս մեղք գործելու մէջ տգէտը, բարկութիւնը չարի դէմ, բարի ցանկանալը, քանի որ ըստ իմաստունի, ըստ բնութեան գործելով ոչ ոք չի մեղանչում: Հետեւաբար, այն ամէնն, ինչ

Աստծուց է, բարի է եւ ոչ չար: Դարձեալ ասենք, թէ, սրանք հոգու յատկանիշներ չեն, այլ՝ զանազան որակներ եւ տարբերութիւններ, ինչպէս դէմքերի պատկերները: Արդ, Աստուած սրանք տուել է [որպէս] հոգու մասերին յատուկ բնական յատկութիւններ: Տուել է նաեւ անձնիշխան կամք հոգու ներսում, որ տէր եւ իշխան է հոգուն, ու կառավարում եւ առաջնորդում է նրան, որ վատ կողմերը ի բարին փոխի, բարին նոյնութեամբ պահի կամ աւելացնի, որովհետեւ սա է անձնիշխան կամքի գործը: Իսկ եթէ այդպէս չի վարուում, անձնիշխան կամքով հետեւում է չարին, ինչը բնութիւնից չէ, որն Աստուած բարի է ստեղծել: Հետեւաբար, չարը Աստծուց չէ, այլ մեր մէջ, կամ թշնամու նենգութիւնն է, որ հրապուրում է մեզ:

Տասներկուերորդ, ասում են, թէ Աստուած մէկին աղքատ, միւսին մեծատուն, մէկին տէր, միւսին ծառայ, մէկին իշխան, միւսին հպատակ է ստեղծում: Այդպէս էլ մէկին արդար, միւսին մեղաւոր է ստեղծում, չար եւ բարի: Ինչպէս ասում է Գիրքը «Եսաւին ատեցի եւ Յակոբին սիրեցի մինչ կծնուէին» (Հռոմ. Թ13), ապա ուրեմն, մէկին չար, միւսին բարի է ստեղծում: Ասենք այս մասին, որ չնայած աղքատութիւնը եւ հարստութիւնը, տիրելը, ծառայելը Աստծուց է, սակայն ոմանց կամենալով, ոմանց ներելով եւ ոմանց թոյլ տալով է, այսինքն՝ բարի, հարուստ եւ աղքատ կամենալով է անում, իսկ չար՝ ներելով եւ թոյլ տալով: Այդպէս էլ արդարներին եւ մեղաւորներին, չարերին եւ բարիներին. ոմանց կամենալով է բարի ստեղծում, ոմանց թոյլ տալով՝ չար, հետեւաբար, Աստծոյ կամքով չեն չարութիւնները եւ մեղքերը: Ասենք դարձեալ, եթէ Աստուած հարուստ եւ աղքատ, տէր եւ ծառայ է ստեղծել, ապա միմեանց օգնելու նպատակով, եւ տէրերի ձեռքով խնամում է ծառաներին եւ հնազանդներին: Այսպէս վարուում է եւ չարի ու մեղաւորի հետ, որպէսզի բարիների միջոցով օգտուեն ու դէպի լաւութիւնը գան: Իսկ՝ «Եսաւին ատեցի եւ Յակոբին սիրեցի» (Հռոմ. Թ 13) [ասելը] նշանակում է, որ նախատես ճանաչողութեամբ սիրում է ընտիրը եւ անարգում խոտանը: Եւ այս ասածի ապացոյցն ընկալի՛ր օրինակով. ինչպէս արեգակը, որ ամէն ինչ լուսաւորում է, լուսաւորում է պարզ նիւթը եւ ոչ թանձրը: Նոյնպէս եւ Աստուած կամենում է բոլորի փրկութիւնը. նրանք, ովքեր անձնիշխան կամքով համակամ են Աստծուն՝ փրկւում են, իսկ ովքեր հակառակւում են կամքով՝ չեն փրկւում: Եւ մինչդեռ արեգակը առանց բանականութեան է տալիս լոյսը, Աստուած բանականութեամբ եւ իմացմամբ ընտրում է արժանիներին եւ փրկում, այնպէս՝ ինչպէս մարդիկ ընտիրն են ընտրում եւ ոչ խոտելին: Եւ եթէ մարդու ճանաչողութիւնը կապուած է իրի [առկայութեան] հետ, ապա Աստուած ճանաչում է յաւիտենականը եւ նախքան իրի լինելը: Եւ մինչդեռ մարդու ճանաչողութիւնը ըստ իրադրութեան փոփոխւում է, Աստծունը մնում է անփոփոխ:

Այսպէս է Աստծոյ նախասահմանումն ու նախընտրութիւնը եւ չի պարտադրում ոչ մէկին:

Եւ պէտք է իմանալ, որ եթէ Աստծոյ նախասահմանումը իշխէր մարդկանց գործերին, չարին ու բարուն, կլինէին բազմաթիւ անպատշաճութիւններ, որոնց մասին խօսուեց ճակատագրի կապակցութեամբ. ինչը թուարկենք նաեւ այստեղ:

Նախ, ունայն կլինէին խոստումները՝ բարին վարձատրելու եւ չարը պատժելու մասին:

Երկրորդ, անարդարացի կլինէին հատուցումները. բարուն՝ բարի, չարին՝ չար:

Երրորդ, Աստուած կլինէր մեր չարութիւնների պատճառը:

Չորրորդ, իզուր կլինէին մեր յոյսն ու աղօթքները:

Հինգերորդ, կխափանուէր մեր անձնիշխանութիւնը, որ իր մէջ երկու կողմ ունի:

Վեցերորդ, բարի կատարողները գովելի, իսկ չարերը՝ պարսաւելի չէին լինի:

Եօթներորդ, չէին լինի մարդկային կամ աստուածային առաքինութիւններ:

Ութերորդ, իզուր կլինէին ուսուցանելը եւ յորդորելն ի բարին, որոնցով խուսափում ենք չարից եւ հասնում բարուն:

Իններորդ, աւելորդ կդառնային դժոխքը եւ արքայութիւնը, որ չարերի եւ բարիների տեղերն են:

Տասներորդ, սուտ կդառնային բոլոր օրէնքները՝ բնական, գրաւոր, աւետարանական, որոնք բոլորը մեզ ուսուցանում են խուսափել չարից, բարի գործել եւ մնացած ամէն ինչը:

Այսքանը նրանց դէմ, որոնք Աստծուն են վերագրում բարին եւ չարը:

ԸՆԴԴԷՄ ՄԱՆԻՔԵՑԻՆԵՐԻ՝ ՏԱՍԸ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐՈՎ

Հատորիս չորրորդ պրակը

Իսկ ընդդէմ մանիքեցիների, որոնք ասում են երկու սկիզբ՝ չար եւ բարի, այսպէս ենք առարկում եւ համառօտ պատասխանում:

Նախ՝ երկեակը չի կարող սկիզբ լինել, որովհետեւ թուերի մէջ երկեակը միաւորներից է բաղկացած, հետեւապէս նախ բաղկացուցիչն է, յետոյ՝ բաղկացեալը:

Երկրորդ, երկեակը բաղադրեալ է, իսկ միակը պարզ, բայց ամէն բաղադրեալ պարզից է [գոյանում]: Ուստի երկեակը, որ բաղադրեալ է, չի կարող սկիզբ լինել, այլ՝ միակը, որ պարզ է:

Երրորդ, եթէ լինէր հակադիր երկու սկիզբ, ապա մէկը միւսի ստեղծածը կոչնչացնէր, եւ ոչ մի արարած չէր լինի:

Չորրորդ, դարձեալ եթէ լինէր հակադիր երկու սկիզբ, նրանք կմարտնչէին միմեանց դէմ հենց սկզբից եւ ոչինչ չէր մնայ խաղաղութեան մէջ:

Հինգերորդ, եթէ լինէր հակադիր երկու սկիզբ, նրանցից սկիզբ առածները անկարգ եւ միմեանց հակառակ կլինէին, մինչդեռ բոլոր էակներս միմեանց կապուած եւ բարեկարգուած ենք:

Վեցերորդ, եթէ նրանց միջեւ գժտութիւն լինէր, մեր մէջ ոչինչ անկախ չէր լինի, այլ դժուար ձեռնարկելի, ինչպէս մեզ, [այդպէս էլ] ընդհակառակը:

Եօթներորդ, եթէ երկու սկիզբ լինէր, պէտք է լինէին կամ համատեղուած, կամ՝ մէկը միւսից յետոյ: Համատեղ չեն կարող լինել, քանի որ երկու հակառակները միատեղ չեն կարող լինել: Իսկ եթէ մէկը յաջորդել է միւսին, ապա ակնյայտ է, որ նախորդն է սկիզբը:

Ութերորդ, եթէ երկու սկիզբ է, ապա կամ նրանք իշխում են միմեանց վրայ, կամ չեն իշխում: Եթէ չեն իշխում, նրանցից ոչ մէկը Աստուած չէ, իսկ եթէ իշխում է մէկը, ուրեմն նա է Աստուածը:

Իններորդ, եթէ երկու սկիզբ է՝ չար ու բարի, ապա պէտք է մէկը միւսի վրայ կամ ազդի, կամ ոչ: Եթէ չեն ազդում, ուրեմն մէկը նրանցից էակ է, հետեւաբար երկու սկիզբ չկայ: Իսկ եթէ ազդում են, ուրեմն չար չկայ նրանց մէջ, քանի որ չարը բարութեան պակասութիւն է, այսու՝ կայ մի սկիզբ:

Տասներորդ, երկու սկիզբները՝ գերագոյն բարին կամ ծայրագոյն չարը ինքնընստինքեան կամ հաստատւում են կամ ոչ: Եթէ չեն հաստատւում, ուրեմն սկիզբ չեն: Իսկ եթէ ինքնընստինքեան են հաստատւում, ոչ մէկը չար չէ, քանի որ հաստատուելը ինքնընստինքեան բարի է:

Այսքանն այս մասին:

ԲԱՐՈՒ ԵՒ ՉԱՐԻ ՄԱՍԻՆ
Հատորիս հինգերորդ պրակը

Հարց առաջին. Բարին եւ չարը ինչպէ՞ս են հակադրւում:

Պատասխան. Չորս կերպ. առարկայօրէն, ինչպէս մեծը եւ փոքրը. պակասաւորութեամբ, ինչպէս ունակութիւնը եւ պակասութիւնը. ներհակապէս, ինչպէս ջերմը եւ ցուրտը. հակասութեամբ, ինչպէս հաստատելը եւ բացառելը:

Արդ՝ բարին եւ չարը հակադիր չեն, ինչպէս առարկաները, քանի որ առարկաները ամբողջական են եւ բաղկացած մէկը միւսից. բարին եւ չարը ամբողջ չեն, եւ չարը բարուց չի գոյանում, եւ ոչ էլ բարին՝ չարից: Եւ հաստատելու ու բացառելու հարաբերութեամբ էլ չեն, քանի որ սրանք հակադիր են խօսքի մէջ, ինչպէս ճշմարիտը եւ սուտը, իսկ չարն ու բարին պատահում են ե՛ւ գործի, ե՛ւ խօսքի մէջ: Ներհակ էլ չեն, ինչպէս ջերմը ու ցուրտը, սպիտակն ու սեւը, քանի որ սրանք յատկութիւններ են, իսկ բարին էութիւն է, չարը՝ ոչ էութիւն, եւ ներկայանում են որպէս գոյութիւն ու պակասութիւն, քանի որ բարին ունակութիւն է, իսկ չարը՝ նրա պակասութիւնը, ինչպէս որ կուրութիւնը՝ աչքի եւ խաւարը՝ լոյսի պակասութիւնն է: Տարբերւում են նաեւ այսկերպ. գոյութիւնից պակասութիւնն է լինում, իսկ պակասութիւնից երբեւիցէ գոյութիւն չի լինում, մինչդեռ բարուց չարի եւ չարից բարու որեւէ մէկը կարող է փոխել: Իսկ եթէ մէկն ասի, որ ներհակութեան պատճառով են մէկը միւսի փոխւում եւ ոչ թէ գոյութեան կամ պակասութեան, ապա ասենք, որ բարին ու չարը՝ ըստ կրողի, ներհակ են մէկմէկու, իսկ ինքնընստին-

քեան՝ գոյութիւն եւ պակասութիւն են, ինչպէս ասացինք:

Հարց երկրորդ. Որո՞նք են բարու եւ չարի գործերը:

Պատասխան. Բարին գոյաւորող եւ խնամող է, իսկ չարը՝ կործանող եւ եղծող: Ապա ուրեմն եթէ չարը ապականողն է այլոց, ուր եւ պատահի, կապականի, ըստ որում ինքը չար է, ուրեմն էութիւն չի եւ չի կարող գոյութիւն ունենալ:

Իսկ եթէ մէկն ասի, որ տաքութիւնը վանում է ցուրտը, եւ ինքը մնում է [իբրեւ գոյացութիւն] եւ, ուրեմն չարն էլ, ապա ասենք, որ տաքութիւնը վանում է ցուրտը, եւ ինքը մնում է իբրեւ գոյացութիւն, որովհետեւ էութիւն եւ որակ է, իսկ չարը չի մնում, քանի որ չարը էութիւն չէ, այլ պակասութիւն:

Հարց երրորդ. Չարն ինչպէ՞ս է ոչ էութիւն, քանի որ ահա հակադրւում է բարուն, ինչպէս առաքինութիւնն ու չարութիւնը եւ էութիւնից է, ինչպէս հիւանդութիւնը՝ առողջութիւնից եւ ապականութիւնը՝ մարմնից:

Պատասխան. Ասենք այս կապակցութեամբ: Նախ չարը էութիւն չէ, էութեան մէջ չէ, էութիւնից չէ եւ ոչ էլ էութեան սկիզբ: Առաջինի վերաբերեալ ասենք, թէ չարը էութիւն չէ, քանի որ ապականող եւ կորուսիչ է, ինչպէս ցոյց տրուեց: Արդ՝ այլոց՝ ապականելիս, ապականւում է նաեւ ինքը՝ չմնալով որպէս էութիւն: Չարը նաեւ էութեան մէջ չէ, եւ այս ցոյց տանք [հետեւեալ] բաժանումներից: Կայ, որ էութիւն է եւ բարի է, ինչպէս բոլոր էութիւնները: Կայ, որ էութիւն չէ, բայց բարի է, ինչպէս անորակ նիւթը: Կայ, որ էութիւն է, բայց բարի չէ, ինչպէս չար կամքը: Եւ կայ, որ էութիւն չէ եւ բարի էլ չէ, ինչպէս էութիւնից եւ բարուց դուրս գտնուող չարը:

Նաեւ, չարը էութիւնից չէ, քանի որ այն ամէնը, ինչ էութիւն է, բարի է եւ ընդհակառակը «քանզի բարի ծառը բարի պտուղ է տալիս», ասում է Տէրը (Մտթ. է 17): Եւ այն ամէնը, ինչ էութիւնից է, ունի սկիզբ եւ պատճառ, իսկ չարը սկիզբ եւ պատճառ չունի, որովհետեւ էութիւնից չէ:

Եւ էութեան սկիզբ էլ չէ, քանի որ չարից բարի չի լինում:

Երկրորդ, չարը երկու տեսակ է. կայ, որ ինքնաչար է, որ պարզ եւ համակ չար է. [սա] բարուց եւ էութիւնից դուրս է, որ ոչ մի տեղ չէ եւ ժամանակի մէջ չէ. ոչ էր, ոչ է եւ ոչ էլ կարող է լինել, որը ոչինչն է: Այսպիսի չարը էութիւն չէ եւ էութեան մէջ չէ. [սա] ոչ սկիզբ ունի, ոչ պատճառ, եւ ինքը ուրիշների սկիզբ կամ պատճառ չէ. սա ինքնաչարն է:

Եւ կայ չար, որ բարու հետ խառն է եւ էութիւնից է գոյանում, ինչպէս հիւանդութիւնը՝ առողջութիւնից, ապականութիւնը՝ մարմնից, որովհետեւ առողջութեան նուազումից առաջանում է հիւանդութիւնը, իսկ մարմնի տկարանալով՝ ախտահարումն է լինում: Եւ իմացի՛ր սա, որքան նուազի առողջութիւնը, այնքան կաւելանայ հիւանդութիւնը, եւ որքան տկարանայ մարմինը, այնքան կաւելանայ ախտահա-

րումը: Իսկ երբ ամենեւին նուազի առողջութիւնը, կկորչի եւ հիւանդութիւնը: Այդպէս էլ՝ ախտահարումը, իսկ կեանքի լիովին նուազելով՝ կկորչի եւ մահը, որովհետեւ էութեան մէջ ունի ներհակաբար լինելը: Այսպէս եւ կայ բարի, որ պարզ է եւ միօրինակ, ինչպէս Աստուած, քանի որ անփոփոխ է եւ միշտ բարի, քանի որ էութեամբ է բարի, եւ բարին Աստծոյ էութիւնն է: Եւ կայ, որ խառը բարի է, ինչպէս մեր բարութիւնը, որ ունակութիւն է, քանի որ այլ է մեր էութիւնը եւ այլ՝ մեր էութեան մէջ գտնուող բարին: Այս բարին հրեշտակների մօտ անփոփոխ է եւ միաձոյլ, իսկ մեզանում փոփոխական է, քանի որ փոփոխական է եւ մեր հոգին, որ երբեմն բարի, երբեմն էլ չար է: Եւ այսպիսի առանձնայատկութիւն ունի. բարին մեր մէջ բնական ունակութիւն է, քանի որ բարուց ենք գոյացել, իսկ չարը օտարամուտ է եւ բարու պակասութիւն: Բարին պատճառ է մէկի, որ ինքը՝ Աստուած է եւ մէկն է, թէեւ մեզանում շատ ձեւերով է ներկայանում, իսկ չարը բազմատեսակ է եւ բազմաթիւ պատճառներից:

Այժմ պատասխանենք, թէ [ինչպէ՞ս է] առաքինութեանը հակադրւում չարութիւնը եւ արդարութեանը՝ անիրաւութիւնը. ինչպէս խաւարը՝ լոյսին: Իսկ լոյսը էութիւն է, խաւարը՝ ոչ էութիւն: Եւ ինչպէս օդն ընդունակ է լոյսի եւ խաւարի, այդպէս էլ հոգին էութիւն է, որ ընդունակ է բարու ու չարի, այսինքն առաքինութեան եւ չարութեան: Եւ ինչպէս լոյսը միշտ է լոյս է, թէեւ օդում նուազում է, քանի որ յայտնի է, որ նորից է լուսաւորելու, նոյնպէս եւ բարին միշտ բարի է, թէեւ հոգում պակասում է, դարձեալ մնում է էութիւն, ուստի էութիւն լինելով՝ բարին չի անհետանում: Մինչդեռ չարը կորչում է՝ հոգուց դուրս գալիս, քանի որ նա էութիւն եւ գոյութիւն չէ: Հետեւապէս, ակնյայտ է, որ բարին ըստ կրողների եւ ըստ ինքեան էութիւն է: Մինչդեռ չարը ըստ կրողների է գոյաւորւում եւ երեւում, իսկ ըստ ինքեան ոչնչանում եւ ապականւում է, քանի որ ոչ էութիւն է եւ ոչ գոյութիւն:

Հարց չորրորդ. Չարը ոչ էութիւն է եւ ոչ գոյութիւն. ինչպէ՞ս է զանազանւում պարզ ոչ էութիւնից, որ ամբողջութեամբ ոչինչ է:

Պատասխան. Ընդհանրապէս հաւասար են էութեամբ ոչինչ չարը, որ հակադրւում է բարուն եւ ոչինչը, որ հակադրւում է էութեանը:

Սակայն ունեն զանազանութիւն: Նախ՝ ոչ էութիւնը ձգտում է եւ ցանկանում է լինել էութիւն եւ գոյ: Իսկ չարը չի ձգտում բարի լինել: Երկրորդ, ոչ էութիւնը լծակցում է էութեանը եւ դառնում էութիւն: Իսկ չարը բարուն չի լծակցում եւ չի դառնում բարի: Երրորդ, ոչ էութիւնը ըստ ինքեան ոչ բարի է եւ ոչ չար, մինչդեռ չարն ըստ ինքեան չար է, եթէ նոյնիսկ բարի է: Չորրորդ, ոչ էութիւնը երբ էութիւն է դառնում, այլեւս ոչ էութեան չի փոխւում: Իսկ չարն իբրեւ էութիւն դրսեւորուելուց յետոյ էլ դարձեալ փոխւում է ոչնչի եւ անգոյութեան: Հինգերորդ, ոչինչը ըստ կրողների չի հակադրւում

էութեանը, թէեւ ինքնըստինքեան ներհակ է, իսկ չարը յայտնուելով կրողի մէջ՝ հակադրւում է եւ կորստի մատնում բարին, թէեւ ըստ ինքեան ոչինչ է եւ անգոյ:

Հարց հինգերորդ. Ինչպէ՞ս է, որ չարն անսպառ է եւ անսահման այլեւ՝ ոչ սկիզբ ունի, ոչ պատճառ:

Պատասխան. Սկիզբ եւ պատճառ ունի էութիւնը, նոյնպէս չափն ու սահմանը [պատկանում են] բնութեանը: Իսկ չարը էութիւնից եւ բնութիւնից դուրս է, ուստի անսպառ ու անպատճառ է: Դարձեալ, չափն ու սահմանը էութեան վերջին եզրեր են դիտւում, իսկ սկիզբն ու պատճառը՝ առաջին: Մինչդեռ չարը, որ ոչնչութիւն է, չունի սկիզբ ու վերջ, որի պատճառով չարն անչափ եւ անպատճառ է, ինչպէս ցոյց տրուեց վերը:

Հարց վեցերորդ. Աստուած անսահման է եւ անպատճառ, չարն ինքնըստինքեան է անպատճառ եւ անսահման: Ինչպէ՞ս են զանազանւում:

Պատասխան. Աստծուն վերաբերեալ ժխտական բառերը, ինչպիսիք են անճառելին, անսահմանը, կիրառում ենք ոչ թէ ըստ պակասութեան, այլ ըստ գերազանցութեան, քանի որ Աստծոյ անպատճառ ու անսահման գոյութիւնը գերազանցում է այլոց: Սա առաջին տարբերութիւնն է:

Երկրորդ, որովհետեւ Աստուած անսահման է եւ սահմանում է մեզ, անսկիզբ է եւ սկիզբ է տալիս մեզ, եւ պատճառն է մնացեալ ամէն ինչի: Իսկ չարն ինքնըստինքեան անսահման լինելով՝ ուրիշների սահմանողը չէ: Նոյնը վերաբերում է [նրա] անպատճառ ու անսկիզբ [լինելուն] եւ մնացեալ ամէն ինչին:

Եւ ամբողջ բնախօսութիւնը բարու ու չարի մասին կարող ես գտնել Դիոնէսիոսի «Գիրք աստուածային անունների մասին»[7] չորրորդ գլխում եւ Ընդդիմակայ ստորոգութեան ճառում, ինչպէս նաեւ Դաւթի «Սահմանք»-ի վերջում, որ կոչւում է «Ամենայն չար տանջելի»[8]:

Այսքանն այս մասին:

ԳԼՈՒԽ Բ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ
Հատորիս վեցերորդ պրակը
ԱՍՏԾՈՅ ՃԱՆԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց առաջին. Որքա՞ն է [հնարաւոր] ճանաչել Աստծուն:

Պատասխան. Իրեն ճանաչելու համար Աստուած ստեղծել է օրինակների երկու կարգ. իմացական եւ զգայական, ինչպէս հոգին, միտքը եւ սրանց նմանները եւ արեգակը, լոյսը եւ սրանց նմանները: Իսկ Աստծուն ճանաչելու եղանակները հինգն են: Նախ՝ բնական քննութեամբ, ինչպէս իմաստասէրներն են վարւում:

Երկրորդ, հաւատով, ինչպէս մենք՝ հաւատացեալներս ենք [ճանաչում]:

Երրորդ, շնորհներով, ինչպէս մարգարէները՝ երեւակայութեամբ կամ մարմնի զգայարանների միջոցով:

Չորրորդ, իմացական առանձնայատուկ տեսութեամբ, որ [տրւում] է առանձնայատուկ արժանաւորութեան պատճառով, ինչպէս Մովսէսին:

Սրանք այս կեանքում:

Իսկ հինգերորդը հանդերձեալ [կեանքում] դէմ յանդիման տեսնելով է՝ ըստ առաքեալի (տե՛ս Ա Կորնթ. ԺԳ 12): Ովքեր արժանանան այս տեսութեանը, նրանք երանելի կդառնան ու անքակտելիօրէն կմիանան նրա սիրուն, ինչպէս հրեշտակները:

Հարց երկրորդ. Ինչո՞ւ Աստուած չյայտնեց իր էութիւնն այս կեանքում մարդկային ցեղին:

Պատասխան. Չի կարելի չարափառների նման ուղղակի ասել, թէ նախանձութեան կամ փառասիրութեան պատճառով [չյայտնեց], որպէսզի անգիտութեամբ մեծարուէր. ընդունայն է այսպիսի կարծիքը, ասւում է [մի բան], որ վայել չէ Աստծոյ պարզ եւ անախտ բնութեանը, որ կամենում է, որ բոլոր մարդիկ ապրեն: Եւ գերազանց բարութեան պատճառով մարդուն ստեղծեց իր պատկերով եւ իր նման: Այլ [պատասխանենք] ըստ եկեղեցու ուղղահաւատ վարդապետների:

Սրա առաջին պատճառը պարզաբանել է Գրիգոր Աստուածաբանը[9]: Ամէն մի իր, որ դիւրին է գտնւում, դիւրին էլ արհամարհւում է, ուստի Աստուած կամեցաւ, որ իրեն տեսնելիս՝ անվերապահ սիրով միանանք նրան:

Երկրորդ պատճառն այն է, որ անվտանգ չէ սեւեռուն նայել արեգակի բոլորակին, քանի որ կարող է բթանալ տեսողութիւնը եւ եղածից էլ զրկուի: Ուստի Աստուած խնայեց մարդկային ցեղը, որ չյայտնուենք Արուսեակի[10] վիճակում, որ չկարողանալով տանել փառքի մեծութիւնը՝ զրկուեց նաեւ չափաւորից:

Երրորդ, Աստուած կամեցաւ, որ [վարձատրի] ոչ միայն ողորմութեամբ, այլեւ՝ ըստ արդարութեան, եւ նահատակութեան վարձը տա համբերելու աստիճանին համապատասխան:

Չորրորդ, մենք, որ բանտարկուած ենք մարմնին, անկարող ենք անմարմնապէս տեսնել նրան, ինչպէս որ անհնար է առաջ ընթանալով՝ տրորել [սեփական] ստուերը եւ կամ առանց օդի միջնորդութեան՝ տեսնել որեւէ բան: Այսկերպ եւ անհնար է, որ մարդն այս կեանքում տեսնի Աստծուն՝ առանց օրինակի եւ միջնորդի:

Հարց երրորդ. Եթէ մէկը կարդալ չգիտի եւ չի ընդունում Սուրբ Գրքի վկայութիւնները, ինչպէս ցոյց տանք նրան, որ Աստուած կայ:

Պատասխան. Եղած իրերով՝ կարող ենք ցոյց տալ, թէ Աստուած կայ եւ գոյութիւն ունի երեք եղանակով:

Նախ՝ լսելիքով, երկրորդ՝ իմաստուեամբ, երրորդ՝ տեսանելիքով: Որովհետեւ՝ կամ լսելով նախնիներից, թէ «ի սկզբանէ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը» (Ծննդ. Ա 1): Կամ եթէ ոչ՝ իրերի կարգից իմանում են մտքով, կամ եթէ ոչ՝ աչքով տեսնում են երկինքը, երկիրը: Այս կարգով է, որ Եսայի մարգարէն առաջինի վերաբերեալ ասում է. «Չլսեցի՞ք, եւ չպատմուեց ձեզ, որ «ես հաստատեցի երկրի հիմքերը» (Ես. Խ 21): Երկրորդի վերաբերեալ ասում է՝ «Չէք հասկանում եւ չէք գիտակցում» (Ես. Խ 21): Երրորդի

վերաբերեալ ասում է՝ «Վեր բարձրացրէ՛ք ձեր աչքերը եւ տեսէ՛ք, որ թոյլ չի տալիս իշխաններին իշխել» (Ես. ՕԱ 6):

Այս ձեւով, կամ՝ նախնեաց պատմութիւնը լսելով, կամ՝ իրերի կարգից, կամ՝ տեսնելով զգալի բաները՝ հանգում ենք ճշմարիտ Աստծոյ գաղափարին, որից լուսափայլում է հաւատը:

Արդ, առաջինը, լսելովը՝ ինքն իր մասին է եւ ուրիշից իր մասին, իրենից ուրիշի մասին եւ ուրիշից ուրիշի մասին: Ինքն իր մասին՝ «Ես եմ Տէր Աստուած, առաջինը եւ վերջինը» (Ես. ԽԱ 4). ուրիշից իր մասին՝ «Ուստի պէտք է հաւատալ, թէ կայ Աստուած» (Եբր. ԺԱ 6). իրենից ուրիշի մասին՝ «Չկայ ուրիշ Աստուած ինձանից բացի» (Ես. ԽԴ 6). ուրիշից ուրիշի մասին՝ «մարդկանց ձեռքով շինուածները աստուածներ չեն» (Գործք ԺԹ 26):

Իսկ երկրորդը՝ իրերի կարգից է ճանաչւում ճշմարիտ Աստուածը: Նախ՝ որպէս պատճառ, երկրորդ, որպէս սկիզբ եւ երրորդ, որպէս միակ: Նախ, որպէս պատճառ, քանի որ ամէն մի պատճառելին պատճառ ունի, եւ այդպէս պատճառ է դառնում ուրիշ պատճառի, իսկ այդպէս շարունակելով չի գիտակցուի անվերջը, ուստի պէտք է բոլոր պատճառուածների անպատճառ պատճառ լինի, որ ինքն Աստուած է: Երկրորդ, որպէս սկիզբ, քանի որ որեւէ իր ինքն իր սկիզբը չի կարող լինել, ուստի պէտք է բոլոր առաջացածները սկիզբ ունենան: Արդ, եթէ սկիզբն այն անսկիզբն է, գտանք փնտռուածը: Իսկ եթէ նա էլ է սկսուած, ուրեմն նա էլ պէտք է սկիզբ ունենայ: Եւ այսպէս շարունակելով՝ գտնում ենք անսկիզբը, որ ինքն Աստուած է: Երրորդ, որպէս միակ, քանի որ ցանկացած բազում [բաղկացած է] միակից, ինչպէս տեսակն անհատից, գիծը կէտից եւ մեծ թիւը՝ միաւորից: Արդ, երբ միակը միանում է շատերին, այլեւս չի մնում միակ, իսկ եթէ չմիանայ՝ չեն լինի բազումներ, այլ կլինեն միաւորներ: Ընդ որում միակը միաւորւում է իբրեւ պատկանելի, իսկ ինքնըստինքեան միաւորելի չէ: Ինչպէս բազումները, այնպէս էլ միաւորները զանազան են, եւ ոչ այնտեղ ու ոչ էլ միաւորներում չկայ [բացարձակ] միակ: Ուստի հարկ է, որ լինի այնպիսի միակ, որ այդպիսին լինի, ե՛ւ բազումների ե՛ւ միաւորների մէջ. այդպիսի միակն Աստուածն է:

Սա երկրորդն էր:

Իսկ երրորդով, որ զգալիների տեսնելով է ընկալւում երկինքը եւ երկիրը: Ա՛րդ, երկրի վրայ տեսանելի չորս երեւոյթներ կան: Նախ՝ երկրի հաստատութիւնը, ջրերի հոսքը: Երկրորդ՝ թագաւորների փոփոխուելը, աղքատների հարստանալը, ունեւորների աղքատանալը: Երրորդ՝ մարդկանց խորհուրդների եւ կամքի ձախողուելը, քանի որ խորհում ու կամենում ենք շատ բաներ, որոնք չեն կատարւում: Չորրորդ՝ օդի եւ բոյսերի փոփոխուելը:

Առաջինի մասին Դաւիթն ասում է՝ «Հաստատեցիր երկիրը իր հաստատութեան վրայ, որ յաւիտեանս չսասանուի» (Սղմ. ԺԳ 5): Կամ թէ՝ «Աղբիւր-

ները դէպի ձորերն ուղղեցիր»: Երկրորդի վերաբերեալ Առակն ասում է՝ «Ինձնով են թագաւորները թագաւորում» (Առակ. Ը 15): Եւ Աննան ասում է՝ «Տէրն աղքատացնում է եւ Տէրը՝ հարստացնում» (Ա Թագ. Բ 7): Երրորդի վերաբերեալ Դաւիթն ասում է՝ «Տէրը ցրում է մարդկանց խորհուրդները» (Սղմ. ԼԲ 10): Իսկ չորրորդի վերաբերեալ Դաւիթն ասում է՝ «Ձիւն է դնում ասրի պէս» (Սղմ. ճԽԷ 16): Կամ թէ՝ «Առաքում է իր խօսքը եւ հալում այն» (Սղմ. ճԽԷ18) կամ էլ՝ «Խոտ աճեցրիր լեռներում եւ կանաչ՝ մարդկանց հոգսերը հոգալու համար» (Սղմ. ճԳ 14):

Երկնքում նոյնպէս տեսանելի են չորս երեւոյթներ: Նախ՝ լայնածաւալ տարածութիւն եւ երկնքի հաստատուն կամարաձգութիւնը: Երկրորդ՝ նրա գեղեցկազարդ լինելը: Երրորդ՝ անդադար շարժուելը: Չորրորդ՝ լուսատուների փոփոխուելը, այսինքն երբեմն նրանց խաւարելը, ինչպէս խաչելութեան ժամանակ, երբեմն նրանց ետ դառնալն ու կանգնելը, ինչպէս Յեսուի եւ Եզեկիայի օրօք:

Առաջինի վերաբերեալ Եսային ասում է՝ «Ո՞վ հաստատեց երկինքն իբրեւ կամար» (Ես. Խ 22): Երկրորդի վերաբերեալ ասում է՝ «Ո՞վ է պատրաստում նրա զարդերը» (Ես. Խ 26): Երրորդի վերաբերեալ ժողովողն ասում է՝ «Գալարուելով գալարւում է երկինքը» եւ կամ՝ «Ծագում ու մայր է մտնում արեգակը եւ գնում է իր տեղը»[11] (Ժող. Ա 5): Չորրորդի վերաբերեալ Դաւիթն ասում է՝ «Արարեց խաւար եւ եղաւ գիշեր» (Սղմ. ճԳ 20): Եւ այս ամենից պէտք է հասկանալ, որ սրանց Արարիչը կայ:

Եւ մէկը բնախօս այրերից առաջնորդական [մտքի] վերաբերեալ յանգեց առաջին սկզբի [գաղափարին], որ կայ Մէկը, որ շարժում է երկնային մարմինները[12]: Եւ նա Միակն է, անմարմին է՝ անսահման զօրութեամբ, անեղ է, անպատճառ եւ անվախճան: Նա է Արարիչը բոլոր գոյաւորների եւ պէտք է նրան պաշտել:

Այսքանն այս մասին:

ԳԼՈՒԽ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԸՆԴԴԷՄ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԱԶԳԻՆ ՏԱՃԿԱՑ, ՈՐ ՆԵՌԻ ԿԱՐԱՊԵՏՆ ԵՆ ԵՒ ՆՈՐ ՀԵԹԱՆՈՍՆԵՐ՝ ԱՐԻՈՍԻ ԵՒ ԿԵՐԻՆԹՈՍԻ[13] ՀԵՐՁՈՒԱԾՆԵՐՈՎ*

Նախ՝ որովհետեւ ուրանում են անձերի Երրորդութիւնը:

Երկրորդ՝ բարին ու չարը Աստծուց են ասում:

Երրորդ, ուրանում են Բանի մարդեղութիւնը:

Չորրորդ՝ Քրիստոսին Աստուած չեն խոստովանում, այլ սոսկ մարդ եւ մարգարէ:

Հինգերորդ՝ չեն ընդունում Սուրբ Գրքերը, այսինքն՝ Հին եւ Նոր կտակարանները:

Վեցերորդ՝ «ոմն մարդու»՝ [Մահմեդին] մարգարէ են կոչում:

Եօթներորդ՝ յարութիւնը մարմնապէս են ասում:

Ութերորդ՝ հրեշտակներին եւ հոգուն մահկանացու են ասում:

---

* Կ. պոլսեան հրատարակութեան համարակալումները չխախտելու համար վերականգնուած գլուխը բերում ենք աստղանիշով:

Իններորդ՝ անարգում են խաչի նշանը եւ սուրբ պատկերները:

Տասներորդ՝ չեն առանձնացնում պիղծ կենդանիներին, այլ անխտիր ուտում են:

Տասնմէկերորդ՝ գինին անմաքուր են համարում:

Տասներկուերորդ՝ մշտապէս ջրով ցօղւում են եւ համարւում են սրբուած:

Տասներեքերորդ՝ թլփատւում են, որ անուանում են «սունաթել»:

Տասնչորսերորդ՝ պահք չունեն՝ ոչ Հնից եւ ոչ Նորից:

Տասնհինգերորդ՝ հայի մորթածը չեն ուտում:

Տասնվեցերորդ՝ անօրէն են, սակայն իրենց օրինաւոր են կարծում:

Եւ այլ բազմաթիւ հայհոյութիւններ ունեն, որ արժանի չեմ համարում յիշել, այլ միայն այդքանը՝ նրանց պատասխանելու համար: Եւ չնայած հաւատացեալը անհաւատին չի լծակցում, եւ ոչ էլ՝ լոյսը խաւարին, ինչպէս Առաքեալն է գրում (տե՛ս Բ Կորնթ. Զ 14), որովհետեւ եթէ մտքով կամ լեզուով խօսենք նրանց հետ, կմեղանչենք, էլ ուր մնաց յարաբերուել նրանց կամ սէր [տածել նրանց նկատմամբ], սակայն պէտք է անզգամին պատասխանել՝ ըստ Սողոմոնի (տե՛ս Առակ. ԻԶ 5), որպէսզի տգէտները չմոլորուեն նրանց հետ՝ կորստի [մատնուելով]:

Եւ այսպէս կպատահի իւրաքանչիւրին՝ Սուրբ Հոգու օգնութեամբ, որ տկարների զօրութիւնն է:

Ա
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Նախ ուրանում են Երրորդութեան անձերին, ինչպէս հերձուածող Սաբէլը[14] եւ ասում են՝ մի Աստուած: Եւ այսպէս են առարկում[15]. եթէ Աստծոյ մէջ է ծնունդը, ուրեմն եւ՝ մահը, որովհետեւ մէկի ծնունդը միւսի մահն է, եւ այս գարշութիւնը Աստծոյ մէջ է, ուրեմն ծնունդը Աստծոյ մէջ չէ[16]:

Ասենք սրա վերաբերեալ. ինչպէս չղջիկը չի կարող նայել արեգակի լոյսին, այդպէս էլ մարդկային իմացութիւնը չի կարող նայել աստուածների լոյսին, որ անմատչելի է, եւ չենք կարող հասնել [Նրան] գիտութեան բնական լոյսով, այլ առաջնորդուելով միայն հաւատի լոյսով՝ Սուրբ Գրքով: Եւ քանի որ նրանք չունեն հաւատի լոյս եւ ոչ էլ Սուրբ Գիրք, նրանց բոլոր առարկութիւնները, որ ըստ բնական գիտութեան են եւ ըստ զգայական իրերի՝ առոչինչ եզրակացութիւններ են Աստծոյ մասին:

Եւ միայն այս պատասխանը բաւական է նրանց բոլոր առարկութիւններին: Սակայն որպէսզի տգէտ չերեւանք, պատասխանենք իւրաքանչիւր [առարկութեանը][17]:

Նախ ասենք, թէ իմանալի ծնունդը ոչնչացում կամ ինչ-որ փոփոխութիւն չէ, որովհետեւ այնտեղ նիւթ չկայ, որ լինելով տեսակի մէջ՝ ոչնչացնում է միւսին: Դարձեալ ասում են, ամէն մի ծնունդ ժամանակաւոր է, քանի որ ծնունդը ոչ

էութիւնից փոփոխումն է՝ էութեան, իսկ Աստուած անփոփոխելի է:

Այս կապակցութեամբ ասենք, թէ աստուածային ծնունդը ժամանակի ներքոյ չէ, այլ յաւիտենական է, ու երբեք զօրութեամբ չէ, այլ՝ մշտական ներգործութեամբ[18]:

Դարձեալ ասում են. եթէ Որդին առնի Հօր բնութիւնը, ապա կպակասի Հօրից, կամ էլ կլինեն զանազան Աստուածներ:

Սրա վերաբերեալ ասենք. անհրաժեշտ չէ, որ Հօրից պակասի, կամ զանազան Աստուածներ լինեն, որովհետեւ մարմնական կամ նիւթական իր չէ, որ կարողանայ բաժանուել կամ՝ պակասել: Եւ քանի որ չի բաժանուում, չեն լինում զանազան Աստուածներ:

Դարձեալ ասում են՝ եթէ Աստուած ծնեց Աստծոյ, կամ [ինքն] իրեն ծնեց Աստուած կամ ուրիշի. անկարելի է որ մէկը ինքն իրեն ծնի, իսկ եթէ ծնեց այլ Աստծոյ, եղան երկու Աստուած:

Սրա վերաբերեալ ասենք, թէ համաձայն չենք երկուսին էլ, որովհետեւ եթէ ասում է՝ Աստուած իրեն Աստուած ծնեց, պէտք է իմանալ, որ Հայրը իրեն Հայր ծնեց, որովհետեւ երբ ասում ենք՝ թէ Աստուած ծնեց Աստծոյ, այնտեղ Աստուած հասկացւում է ոչ թէ բացարձակութեան իմաստով, այլ՝ Հօր անձի, որը ոչ թէ իրեն ծնեց, այլ Որդու անձը: Նաեւ այլ Աստուած չծնեց, որովհետեւ երբ ասենք «այլ Աստուած», այնտեղ «այլը» ցոյց չի տայ անձը, այլ՝ էութիւնը:

Դարձեալ ասում են, Հայրը տուեց Որդուն ամէն բան, ինչ ունի (Յովհ. Գ 35), հետեւաբար՝ իր անձը եւս, ուրեմն ուրիշ անձ չէ:

Ասենք թէ կեղծիք է այստեղ, որովհետեւ երբ ասում է «Հայրը տուեց ամէն ինչ», պէտք է հասկանալ «ծնուած էութեան» իմաստով, որ Որդին է եւ ոչ թէ Հօր անձը:

Դարձեալ ասում են, Հօր մէջ մէկն է հայրութիւնը եւ էութիւնը, ուստի եթէ տայ էութիւնը, պէտք է տայ նաեւ հայրութիւնը:

Ասենք, որ հայրութիւնը եւ էութիւնը Հօր մէջ մէկն են, սակայն զանազանւում են կայանալու ձեւով. էութիւնը հաղորդելի է, իսկ հայրութիւնը՝ ոչ:

Դարձեալ ասում են, երբ [ասում են] Պետրոսը մարդ է, Պօղոսը մարդ է, Մարկոսը մարդ է, եղան երեք մարդ եւ ոչ թէ՝ մէկը:

Այս կապակցութեամբ ասենք, որ նման չեն, որովհետեւ երբ ասում է Պետրոսը մարդ է, Պօղոսը մարդ է, Մարկոսը մարդ է, ոչ թէ մի մարդկութիւն է ըստ թուի, այլ՝ ըստ տեսակի, իսկ երբ ասում է՝ Հայր Աստուած, Որդի՝ Աստուած, Հոգի՝ Աստուած, երեքը մի աստուածութիւն են ըստ թուի:

Այժմ առարկութեամբ հաստատենք անձերի երրորդութիւնը[19]: Նախ այսպէս, որ ստեղծուածներից ոմանք ծննդական են, եւ ոմանք՝ անծնունդ: Եւ պատուական է ծննդականը, ինչպէս մարդը, քան՝ անծննդականը, ինչպէս քարը: Բայց այն, ինչ պատուական է, վայել է առաջին սկզբին, ուստի Աստուած ծնեց Որդուն,

որպէսզի պակաս չերեւայ, քան՝ ծննդա-կան ստեղծուածները[20]:

Դարձեալ՝ հրեշտակները եւ մարդիկ պատուական էութիւն են, որովհետեւ ունեն բանականութիւն եւ կենդանութիւն, իսկ սրանցից զրկուածները՝ անբան եւ անկենդան են, ինչպէս քարը: Իսկ Աստուած պատուական էութիւն է, որ ունի Բան եւ կենդանութիւն, որ Որդին եւ նրա Հոգին են:

Դարձեալ, իւրաքանչիւր բանական ունի իմացութիւն, որով ճանաչում է իրեն. ունի նաեւ կամք, որով կամենում է իրեն: Արդ, Աստուած իմանալով իրեն՝ ծնեց Որդի եւ կամենալով իրեն՝ բխեց Հոգի, ուրեմն Աստծոյ մէջ երեք անձ կայ:

Այլեւ հարցնում եմ. Աստուած բան եւ հոգի ունի՞, թէ՝ ոչ: Թէ չունի, անբան է եւ անկենդան, ինչպէս անբան եւ անկենդան կուռքերն են, որ կոչւում են աստուածներ: Իսկ եթէ ունի, ապա՝ Քրիստոս է Բանն Աստծոյ, այլեւ [ունի] Սուրբ Հոգուն, ինչպէս վկայում են բոլոր մարգարէները:

Իսկ եթէ ասեն Բանն արարած է եւ ծնունդ, ապա պատասխանենք, որ այստեղ չորս հերձուած կայ: Նախ՝ մեր խօսքը մեր մտքի ծնունդն է եւ ոչ՝ արարած: Երկրորդ՝ ուրեմն մինչ Բանի արարումն անբան էր: Երրորդ՝ ուրեմն մի մասն Աստծոյ արարածն է, միւսը՝ արարիչ: Չորրորդ՝ Բանը [նրա] բնու-թիւնից է, իսկ եթէ Բանն արարած է, ուրեմն նրա բնութիւնն էլ արարած է, հետեւապէս Աստծուն չեն խոստովանում արարիչ:

Իսկ [որպէս] մարմնացած Խօսքի օրինակ կարող ենք բերել արտա-բերուած խօսքը եւ թղթի վրայ գրուած խօսքը: Եւ վկայութիւններ Սուրբ Գրքից, որովհետեւ Մովսէսն ասում է. «Աստծոյ Հոգին շրջում էր ջրերի վրայ» (Ծնն. Ա 2): Եւ Յոբն ասում է. «Հոգին աստուածեղէն է, որ արարեց նրան» (Յոբ ԼԳ 4): Եւ Դաւիթն ասում է. «Աստծոյ խօսքով հաստատուեց երկինքը եւ նրա բերանի հոգով՝ նրա բոլոր զօրութիւնները (Սղմ. ԼԲ 6): Եւ Սողոմոնն ասում է. «Տիրոջ հոգին լցրեց տիեզերքը» (Իմաստ. Ա 7):

Եւ որպէս օրինակ Երրորդութեան միութեան՝ միտքը, իմացութիւնը եւ կամքն են՝ մի բնութեամբ եւ երեք յատկութեամբ: Դարձեալ, հոգին, խօսքը եւ շունչը մի են եւ երեք: Դարձեալ, մի է մարդը՝ հոգով, մարմնով ու մտքով՝ ըստ ոմանց: Դարձեալ, մի է արեգակը՝ իր լոյսով եւ ճառագայթով, այսինքն՝ սպի-տակ եւ դեղին լոյսը: Դարձեալ, մի է հուրը՝ լոյսով եւ նրանից [դուրս եկող] ջերմութեամբ[21]: Դարձեալ ծաղիկը մի է՝ գոյնով եւ [արձակած] հոտով[22]: Դարձեալ՝ Ադամը, Եւան եւ նրանից [ծնուած] Սէթը. մէկը ծնունդ է, միւսը՝ ոչ, [սակայն] երեքը մի բնութեամբ:

Եւ այլ բազմաթիւ օրինակներ կարող ենք տալ Երրորդութեան համար որպէս օգնութիւն մարդկային տկար մտքին: Մինչդեռ Նա՝ ինքը անօրինակ է եւ աննման, վեր քան բոլոր եղածները, նման միայն Ինքն իրեն. եւ Որդին միածին, եւ Հոգին Սուրբ, որում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Բ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Որ բարին ու չարը Աստծուց են ասում. [սրա վերաբերեալ] բաւականաչափ խօսուեց Առաջին գլխում[23]:

Գ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Ովքեր ուրանում են Բանի մարդեղութիւնը, նախ այսպէս են առարկում, թէ՝ Աստուած մարմին չէ, եւ ոչ էլ զօրութիւն մարմնում եւ անփոփոխելի, իսկ եթէ եղաւ մարդ՝ փոփոխելի է:

Պատասխանենք, որ Բանն Աստուած մարդ եղաւ անփոփոխելի, որովհետեւ Բանի բնութիւնը չխառնուեց մարդկայինի հետ, եւ ոչ էլ մարդկութիւնը աղաւաղուեց Բանի բնութեան մէջ, քանզի անփոփոխ է աստուածային էութիւնը. ինչպէս հոգին է միաւորւում մարմնի հետ, եւ լինում է մարդը, սակայն հոգի լինելով՝ չի փոփոխւում: Որովհետեւ թէպէտ անմարմինը միաւորւում է, սակայն չի դառնում մարմին:

Դարձեալ ասում են, եթէ անչափելի Բանը մարմին առաւ՝ ապա Բանի մասը մարմին եղաւ, կամ մարմինն անպարագրելի [եղաւ] Բանի հետ:

Ասենք, որ ամբողջութեամբ եւ կատարելապէս Բանը տեղաւորուեց մարմնի մէջ եւ մնաց անպարագրելի, եւ մարմինը Բանի հետ միաւորուելով՝ մնաց պարագրելի, որովհետեւ մարմին լինելուց չաղաւաղուեց, ինչպէս գրին միաւորուած խօսքը, կամ [ինչպէս] մարդու խօսքը՝ մարդկանց բազմաթիւ ականջներում կատարեալ եւ ամբողջական [է մնում]:

Դարձեալ ասում են. այն, ինչ գալիս է մէկին նրա կատարելութիւնից յետոյ, պատահականութիւն է նրանում, ապա եւ՝ մարմինը Բանի պատահականութիւն էր:

Այս կապակցութեամբ ասենք, թէ՝ Բանն Աստուած առաւ մարդկային բնութիւնը, որպէսզի լինի ճշմարիտ մարդ, իսկ մարդը գոյացական տեսակ է եւ ոչ թէ պատահական տեսակ:

Դարձեալ ասում են. Աստծոյ բնակուելն արգանդում՝ անվայել է եւ զառանցանք, ու շատերն այս լսելիս՝ գայթակղւում եւ մոլորւում են:

Ասենք, անվայել չէ, որովհետեւ ստեղծողն ապրում է ստեղծուածի մէջ, ինչպէս կառուցողն իր կառուցածում: Եւ ահա, երկնքում է բնակւում Աստուած, եւ լցնում է ամէն տեղ եւ բոլոր մարդկանց մտքերում է: Այդպէս եւ [Կոյսի] սուրբ արգանդում բնակուեց, եւ սա զառանցանք չէ, որ նախատիպը բնակուի [իր] պատկերում, որովհետեւ այն, ինչ [իր] ձեռքով է ստեղծել, չի խորշում անձամբ բնակուել դրանում: Իսկ եթէ շատերը մոլորւում կամ գայթակղւում են՝ չարութիւնից եւ հպարտութիւնից է, որ ո՛չ հաւատում են Սուրբ Գրքին, ո՛չ էլ կամենում ճանաչել բարութիւնը, եւ ահա [այդ պատճառով] ստեղծումից յետոյ բազում մոլորութիւններ եղան աշխարհում:

Դարձեալ ասում են, ինչպէս բարութիւնը չի միաւորւում չարին, այդպէս էլ Աստծոյ մեծ կարողութիւնը չի միաւորւում մարդու տկարութեանը:

Ասենք, որ մարդկային բնութեան տկարութիւնը չնուազեցրեց Աստծոյ մեծ կարողութիւնը, քանի որ անշփոթ միաւորեց մարդկային բնութիւնն իր աստուածութեանը, եւ [մարդու] տկար բնութիւնը մեծացաւ [այդ] միաւորութեամբ, որովհետեւ մեղաւորից՝ անմեղ, անմահ ու անապակ եւ Աստուած եղաւ: Եւ տկարութիւնը նման չէ չարութեանը, որովհետեւ չարութիւնը զուրկ է աւարտից, իսկ տկարութիւնը՝ ոչ:

Դարձեալ ասում են, Աստծոյ ողորմութիւնը մեծ է, քան արդարութիւնը, հարկ էր ողորմութեամբ քաւել եւ ոչ թէ մարդ լինել եւ չարչարուել:

Ասենք, որ վայել չէր Աստծոյ ողորմութիւնը հակադրել արդարութեանը, այլ միասին [պէտք] է լինէին, այդ պատճառով վճարեց պարտքն ըստ ողորմութեան եւ պատիժը կրեց ըստ արդարութեան:

Դարձեալ ասում են, Աստուած կարող էր միայն կամենալով փրկել մարդուն կամ որեւէ այլ ստեղծուածով հատուցել մարդկանց պարտքը:

Ասենք, որ կարող էր Աստուած կամենալով փրկել, սակայն պատշաճ էր, որ Աստուած մարդ լինի, որպէսզի նրա սէրը երեւայ մեր հանդէպ, այլեւ ցոյց տայ արդարութեան գործը: Եւ որեւէ այլ արարածով չհատուցեց մարդկանց պարտքը, որովհետեւ բոլոր արարածներն ունեն սահմանափակ զօրութիւն, մինչդեռ հարկ էր պարտքը վճարել անսահման զօրութեամբ: Եւ դարձեալ, որպէսզի ոչ մի ստեղծուածի շնորհապարտ կամ երկրպագող չլինենք, այլ՝ Աստուած փրկչին:

Դարձեալ ասում են, եթէ Քրիստոս բաւականաչափ հատուցեց պարտքը, անիրաւ է թւում, որ դեռեւս մարդիկ պատիժ են կրում, նաեւ հարկ չէր մեղքի համար աղօթել, ողորմութիւն եւ այլն:

Այս կապակցութեամբ ասենք, որ Քրիստոս բաւականաչափ հատուցեց պարտքերը եւ վերացրեց մեղքերը, սակայն պատիժները մնացին, որպէսզի Քրիստոսին չարչարանակից եւ նրա փառքին հաղորդակից լինենք (հմմտ. Հռոմ. Ը 17): Ու նաեւ եթէ ի Քրիստոս հաւատացեալներն անչարչարելի լինէին այս կեանքում, առաւել կգոհանային մարմնական բարիքների համար Քրիստոսի հաւատացեալները, քան հոգեւորի, եւ այնժամ չէր լինի հաւատի վարձ: Ու նաեւ [ասում են]՝ թէ անհրաժեշտ են բարի գործեր մեղքերի [թողութեան] համար: Պէտք է ասել, որ Քրիստոսի մահը բոլորի փրկութեան պատճառն է, ինչպէս մարդու առաջին մեղքն էր բոլորի դատապարտութեան պատճառը: Արդ, ինչպէս Ադամի մահն է [բաժին] հասնում իւրաքանչիւրին [ծննդեամբ, այդպէս էլ Քրիստոսի մահը պէտք է հասնի իւրաքանչիւրին], ովքեր փրկւում են աւազանից՝ վերածնուելով բարի գործերով:

Դարձեալ ասում են՝ մեղքը մեղքով չի սրբւում, այլ՝ աւելանում է, իսկ

Քրիստոսին սպանելով՝ շատերը մեղանչեցին:

Պատասխանենք, որ Քրիստոսի մահը հատուցողն էր մարդկանց մեղքերի մահուան: Եւ բնական մահը սկզբնական մեղքի պատճառով էր, իսկ ներգործական մեղքերի համար, որոնք կամաւոր էին, անհրաժեշտ էր մեռնել բռնադատական մահով: Այս պատճառով Քրիստոս մեռաւ սկզբնական մեղքի եւ այլոց ձեռքով բռնադատութեամբ՝ կամաւոր [գործած] մեղքերի համար: Եւ այն, որ ոմանք մեղանչեցին Քրիստոսի մահուան մէջ, նա չէր [դրա] պատճառը, ինչպէս սաղմոսն է ասում՝ «Ովքեր իզուր թշնամացել էին ինձ հետ» (Սղմ. Գ 8):

Դարձեալ ասում են, մեղքը ջնջւում է ապաշխարութեամբ, ինչպէս դուք էք ասում, այդ դէպքում ինչո՞ւ էր պէտք Աստծուն մարդանալ: Եւ կամ՝ մարմնանալու գործն աւելի մեծ էր, քան ստեղծելու գործը, ապա ինչպէս ստեղծելիս բոլոր մարդիկ ստեղծուեցին, այդպէս էլ մարմնանալիս բոլոր մարդիկ պէտք է փրկուէին, սակայն այդպէս չեղաւ:

Պատասխանենք առաջինին, որ ապաշխարութիւնը եւ այլ բարի գործերը չեն կարող ջնջել մեղքը, եթէ հաստատուած չեն Քրիստոսի չարչարանքների հանդէպ հաւատով: Միւսի կապակցութեամբ ասենք, որ պատճառն Աստծոյ կողմից չէ, որ բոլորը չեն փրկւում, այլ՝ իրենց: Ինչպէս օրինակ, եթէ մէկը ցերեկը աչքը փակելով մնայ խաւարում, ինքն է պատճառը եւ ոչ՝ արեւը: Եւ եթէ արուի եւ էգի զուգաւորութիւնից ոչ միշտ է զաւակ ծնւում, սա ստեղծողի պատճառով չէ, որովհետեւ ասաց՝ «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք», այլ կատարողի կամ կրողի նիւթի պակասութիւնից է:

Դարձեալ ասում են, թէ Բանի մարմին լինելը մարդկութեան փրկութեան պատճառ էր, [ուրեմն] պէտք է լինէր աշխարհի սկզբում, որպէսզի նախնիները եւս փրկուէին: Եւ դարձեալ ասում են՝ հրեշտակների եւ մարդկանց մեղքի տեսակը նոյնն էր, այսինքն՝ հպարտութիւնը, եւ [քանի որ] հրեշտակներին չփրկեց, չպէտք է փրկէր նաեւ մարդկանց:

Առաջինի համար ասենք, որ երկար ժամանակ մարդկանց թողեց բնական օրէնքներում, եւ [մարդն] ընկաւ անարգ մեղքի մէջ: Յետոյ տուեց գրաւոր օրէնքը, որպէսզի խուսափեն մեղքից, սակայն դրանով էլ չարդարացան: Ապա եկաւ շնորհների օրէնքը, որպէսզի ճանաչենք Քրիստոսով տրուած փրկութիւնը: Եւ դարձեալ, մարդկային կեանքի տեսակը միանգամից չի հասնում կատարելութեան, ինչպէս որ մանուկները նախ վարժւում են նուազագոյն ուսումով, այդպէս էլ չէր պատշաճում մարդուն նախ մեծամեծ պատուիրաններ տալ, այլ՝ փոքր, որպէսզի սովորի պարզագոյն ուսմամբ, ապա հասնի կատարեալ օրէնքներին: Երկրորդ, ասենք, որ հրեշտակներն անկարող են նորոգուել. այս է պատճառը, որ [նրանց կատարած] ընտրութիւնը հետեւում է կողմնորոշմանը: Հրեշտակներն անփոփոխ են իմանում եւ կարծում, ուստի անփոփոխապէս ընտրում են չարը կամ բարին,

որի պատճառով էլ անզեղջ են մնում: Եւ դարձեալ, հրեշտակներն իմացականով են կարողանում ուսանել, իսկ մարդը կարիք ունի զգայապէս ուսանելու: Եւ դարձեալ, հրեշտակների մի մասը կորստեան մատնուեց, եւ բոլորը մնացին, իսկ եթէ մարդը չփրկուէր, բոլորը կորստեան կմատնուէին:

Այսպէս եւ այս ձեւով հեթանոսները հակառակւում են սուրբ եկեղեցուս:

Այժմ դարձեալ ցոյց տանք, որ վայել էր Բանին մարդ լինել: Որովհետեւ թէպէտ Բանի մարդեղութիւնը յայտնի է Սուրբ Գրքով, սակայն նրանք չեն հաւատում, ուստի ցոյց տանք բանական իմացմամբ: Նախ բնութեամբ [տրուած] է մարդուն սիրել Աստծուն: Եւ յայտնի է, որ յետոյ մոլորուեց զանազան սուտ աստուածներով, ուստի Աստուած մարմնացաւ եւ երեւաց, որ ճանաչեն միակ եւ ճշմարիտ Աստծուն:

Դարձեալ, առաջին մարդը կամեցաւ աստուածանալ եւ չկարողացաւ, [որովհետեւ] ժամանակը չէր, որի պատճառով Աստուած մարդացաւ եւ աստուածացրեց նրան: Դարձեալ, չարախօսում էր սատանան, թէ՝ բնութեամբ չար եւ մեղանչական է մարդը. Աստուած մարդացաւ եւ ցոյց տուեց [մարդու] անմեղ եւ բարի բնութիւնը՝ սերուած բարի Արարչից: Դարձեալ նա, որ իր շնորհով արարեց, իր ողորմութեամբ էլ փրկեց: Դարձեալ, ինչպէս իր՝ Աստծունն է ստեղծելը, այդպէս էլ նրանն է նորոգելը եւ փառաւորելը: Ստեղծեց ոչնչից եւ նորոգեց ապականումից, եւ վախճանին էլ՝ փառաւորելու է: Դարձեալ, Արարիչն ինքը վճիռ կայացրեց եւ դատապարտեց Ադամին, այդ պատճառով էլ ինքը մարմնացաւ եւ չարչարուեց, վճիռ կայացրեց եւ ազատեց նրան: Դարձեալ, նրա սէրը եւ ամէնիմաստ գիտութիւնը երեւաց, այլապէս, եթէ չմարդանար, կասէին թէ՝ չկարողացաւ, չկամեցաւ, չգիտէր, որոնցից երեւում է տկարութիւն, տգիտութիւն կամ նախանձ, որ խիստ անպատշաճ է Աստծուն: Դարձեալ, սատանան յաղթեց մարմնին, եւ Աստուած նոյն մարմնով յաղթեց յաղթողին, եւ սա արդարութեան գործ է: Դարձեալ, որպէսզի [դրանով] սովորեցնի յաղթել չարին՝ մանաւանդ արդարութեամբ, քան հզօր բռնութեամբ: Դարձեալ, զօրացաւ մահը մարդկային բնութեան մէջ, ուստի անմահն Աստուած մարդ եղաւ եւ վերստին անմահացրեց: Այս պատճառներով եւ առաւել, քան այս, Բանն առաւ մարդկային բնութիւն եւ աշխարհի մէջ երեւաց իբրեւ մարդ եւ փրկեց մեզ:

Իսկ եթէ տաճիկն ասի՝ թէպէտ հաւատում ենք սրան, սակայն «Հայր եւ Որդի» ասելը անպատշաճ է, ասենք, որ Մովսէսի Թաւրէթը[24] բոլոր արարածներին Աստծոյ ծնունդ եւ արարած է ասում: Դարձեալ ասում է մարդու վերաբերեալ. «Սա ինքն է քո Հայրը, որ արարեց եւ ծնեց քեզ»: Եւ դարձեալ ասում է՝ «Իսրայէլն իմ անդրանիկ որդին է, սիրեցի նրան» (Ելք Դ 22): Եւ Դաւիթն ասում է. «Ես ասացի, թէ աստուած էք կամ բոլորդ Բարձրեալի որդիներ» (Սղմ. ՁԱ 6):

Եւ եթէ արարածների եւ մարդկանց Հայր է կոչւում Աստուած, որովհետեւ նրանից ստեղծուեցին, ինչո՞ւ է անպատշաճ նրան Քրիստոսի Հայր անուանել, որ ծնուեց Հօր բնութիւնից՝ նախքան յաւիտենականութիւնը, ինչպէս ասում է Դաւիթը՝ «Յաւիտենականութիւնից առաջ ծնեցի քեզ» (Սղմ. ՃԹ 3): Եւ մարմնի միութեան պարագայում ի՞նչն է օտար [թւում], եթէ արեւի ճառագայթը, որ միանում է օդին, ասենք արեգակի ծնունդ է, կամ եթէ՝ խօսքը, որ միաւորուած է գրին, ասենք՝ մտքի ծնունդ է: Այդպէս էլ Հօր Խօսքը՝ Կոյսի արիւնից, իբրեւ թանաք միախառնուած [գրին] ու երեւացած մարմնով: Եւ ինքը՝ Հայր Աստուած Յորդանան գետում վկայեց մարմնացեալ Բանի համար՝ «Դա՛ է իմ սիրելի Որդին» (Մտթ. Գ 17): Եւ ինքը՝ Փրկիչն ասում էր՝ «Ելայ Հօրից եւ եկայ աշխարհ, դարձեալ թողնելու եմ աշխարհը եւ գնամ Հօր մօտ» (Յովհ. ԺԶ 28): Արդ, եթէ դու հաւատում ես Աստծուն, ինչո՞ւ ես ուրանում Աստծոյ Որդուն եւ չես ասում՝ «Հայր եւ Որդի», քանզի ինքը՝ Հայր Աստուած վկայեց, եւ Որդին յայտնեց, [սակայն] դժուար ես լսում, եւ մարգարէները կանխաւ ուսուցանեցին, [սակայն] չես հաւատում:

Եւ դարձեալ ասեմ կարճ. դժուար ես լսում, թէ՝ Քրիստոս Որդին է Աստծոյ, այդ դէպքում ցոյց տուր թէ՝ ո՞վ է երկրում Քրիստոսի Հայրը, եթէ չկարողանաս ցոյց տալ, հաւատայ Հայր Աստծուն, որ ասաց. «Դա՛ է իմ սիրելի որդին», կամ հաւատա՛ Քրիստոսին, որ ասաց՝ «Աստծոյ որդի եմ», ըստ այդմ՝ դու կհաւատա՞ս Աստծոյ Որդուն: Ահա յայտնի վկայութիւնը՝ ասուած Սուրբ Գրքում. «Աստուած եւ Որդի Աստծոյ»:

Այսքանն այս մասին:

Դ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՉՈՐՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Սրանք Քրիստոսին Աստուած չեն խոստովանում, այլ՝ մարդ եւ «փեղամբար», այսինքն՝ «մարգարէ»[25]: Սրանք լոյսի ճշմարտութեան դէմ փակելով հաւատի աչքը՝ մնում են խաւարում եւ զրկում [իրենց] յաւիտենական փրկաւէտ կեանքից, ըստ որում վկայեց ճշմարտութիւնը Քրիստոս՝ «ո՛վ ուրանայ ինձ մարդկանց առաջ, ես նրան կուրանամ Հօր եւ հրեշտակների առաջ» (Ղուկ. ԺԲ 9): Եւ Յոհաննէսն ասում է. «Ով չի հնազանդւում Որդուն, նրա վրայ կմնայ Աստծոյ բարկութիւնը» (Յովհ. Գ 36), որը պատճառ է, որ հաւատացեալները փրկուեն, եւ յիրաւի՝ անհաւատները կորստի մատնուեն: Եւ ակնյայտօրէն Հին եւ Նոր կտակարանները Քրիստոսին Աստուած են ցոյց տալիս, բայց նրանք չեն հնազանդւում Սուրբ Գրքին[26]:

Եւ ասում են, թէ՝ ինչպէս մեր խօսքը մարդ չէ, այդպէս էլ՝ Աստծոյ Բանը:

Ասենք, որ մեր խօսքն անկատար է, եղական եւ թիւր, ուստի եւ մարդ չէ: Իսկ Աստծոյ Բանը կատարեալ է, անեղ եւ անեղծ, հետեւաբար Աստուած է:

Դարձեալ ասենք, եթէ Աստծոյ Բանն Աստուած չէ, եւ Հոգին Աստծոյ Աստուած

չէ, եւ զօրութիւնն Աստծոյ՝ Աստուած չէ, ինչպէս դուք էք ասում, ուրեմն Աստուած չկայ, որովհետեւ մասերի վերանալով՝ վերանում է եւ ամբողջը:

Եւ այստեղ՝ հարց. եթէ լոյս էք ասում Քրիստոսին, ինչպէս ասում էք՝ «Յիսէ նուր ի նուրդան», այսինքն՝ «լոյս ի լուսոյ», արդ հարցնում եմ՝ լոյսն այն եղակա՞ն է, թէ անեղ: Եթէ անեղ է, ապա ուրեմն Աստուած է եւ արարիչ, իսկ եթէ եղական է, ո՞ր մի լոյսից է՝ հրեշտակների՞ լոյսից, թէ՞ լուսատուների [կամ] տարրերի, որոնք Աստծոյ լոյս չեն ասում: Իսկ եթէ ասէք՝ նոր ստեղծուած է, ասենք, որ որեւէ ստեղծուած իր Աստծոյ մէջ չէ, որովհետեւ ամբողջը պարզ էութիւն է եւ անեղ: Այլ արդ, թէ լոյսն Աստծոյ ստեղծուած ասէք, Աստծոյ մի մասը կլինի եղական, այսինքն պատահականութիւն կլինի Աստծոյ մէջ, ինչն ակնյայտ սուտ է:

Ուրեմն Քրիստոս լոյս ի լուսոյ է, որ ինչպէս արեգակի լոյս, ունի միեւնոյն էութիւնը նրա, նոյնպէս եւ Որդի՝ Հօր էութիւնն ունի: Եւ ինչպէս ճրագի լոյսը յետոյ չէ, այդպէս էլ Որդին Հօր հետ է յաւիտեան:

Դարձեալ, լոյսն այն անեղ եւ արարիչ ծագեց Կոյս Մարիամի մէջ եւ առնելով մեր բնութիւնը, հոգին, մարմինը եւ միտքը՝ միաւորեց իր աստուածութեանը, ուրեմն՝ Աստծուն միացածը Աստուած է: Ինչպէս վառած մոմն է լոյս, ինչպէս հրացեալ փայտն է կայծ, ինչպէս հրացեալ երկաթն է հուր, այդպէս էլ Աստծուն միաւորուած մարմինն Աստուած է: Եւ ինչպէս իւրաքանչիւր մարդու հոգի ստեղծուած է Աստծուց, իսկ ծնողից միայն մարմինն է, Մարիամը կոչւում է Աստծոյ մայր եւ Աստուածածին, որովհետեւ Աստծոյ անմարմին լոյսը մարմնացած ծնուեց, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է: Եւ ինչպէս մարդը հոգուց եւ մարմնից մէկ անձ է եւ մարդը մի դէմք ու մի բնութիւն ունի, այդպէս էլ մարդացած եւ մարմնացած Աստուած՝ մարդացած Բանն Աստուած, մի անձ է, մի դէմք եւ մի բնութիւն, ապա ուրեմն՝ Քրիստոս Աստուած է:

Դարձեալ, ամէն մարդ հօրից եւ մօրից է ծնւում, արդ՝ Քրիստոս կուսական արգանդից անսերմ սաղմնաւորուեց եւ անապական ծնուեց, ինչպէս եւ դուք էք ասում՝ ծնուեց Կոյսից, ուրեմն Քրիստոս Աստուած է:

Եւ եթէ ասեն՝ Եւան էլ Ադամից եւ Ադամն էլ հողից՝ առանց սերմի ծնուեցին, [ապա] ասենք, որ սրանք Աստծոյ գործերն են եւ ոչ՝ մարդու: Եւ եթէ օրինակին հաւատում ես, ինչո՞ւ չես հաւատում ճշմարտութեանը, քանզի Բանն Աստուած ինչպէս Ադամին հողից մարդ արարեց, այդպէս էլ նոյն Բանն [Աստուած] Կոյսից մարդ եղաւ, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Իսկ եթէ ասեն՝ մարգարէներն էլ հրաշքներ էին գործում, ինչպէս Մովսէսն արեց փարաւոնի առաջ, իսկ Եղիան եւ Եղիսէն յարութիւն տուեցին մեռելներին, այդպէս էլ Քրիստոս հրաշքներ կատարեց, [ապա] ասենք, որ մարգարէներն ուրիշի զօրութեամբ էին գործում, այսինքն՝ Աստծոյ, իսկ Քրիստոս՝ ինքնիշխան հրամանով, եւ իշխանները

գործում են թագաւորի հրամանով: Եւ յայտնի է, ինչպէս մարգարէներն էին գործում Աստծոյ անունով, այդպէս էլ առաքեալները Քրիստոսի անունով կատարում էին բոլոր հրաշքները. ինչպէս Պօղոսը յարութիւն տուեց մեռեալին (տե՛ս Գործք Ի 7-12), Պետրոսը քայլեցրեց կաղին՝ Քրիստոսի անուամբ (տե՛ս Գործք Գ 2-10): Ապա ուրեմն Աստուած է Քրիստոս[27]:

Դարձեալ, մեղքին թողութիւն տալը միայն Աստծունն է, որի մասին վկայում էք նաեւ դուք: Բայց արդ՝ Քրիստոս թողութիւն էր տալիս մեղքին, ովքեր մօտենում էին նրան եւ մեզ տուեց իշխանութիւն՝ եկեղեցում թողութիւն տալ մեղքին, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Դարձեալ, մարդկանց խորհուրդներն իմանալ եւ կանխագուշակել ապագան՝ միայն Աստծունն է: Բայց արդ, Քրիստոս գիտէր մարդկանց խորհուրդները՝ թէ՝ ի՞նչ կայ նրանց մէջ եւ ասում էր լինելիքը, ինչպէս դուք էք ասում՝ «փեղամբար», այսինքն՝ «մարգարէ», իսկ «մարգարէն» թարգմանւում է «տեսնող»[28]: Եւ եթէ ասեն, թէ մարգարէները լինելիքն են ասում, ասենք, որ լինելիքը յայտնի է միայն Աստծուն եւ կամ [նրանց], ում յայտնում է Աստուած, ինչպէս հրեշտակներին եւ մարդկանց: Իսկ դեւերը սրամիտ եւ նրբամիտ են, աւելի արագ են տեսնում, քան մարդը, եւ թւում է, թէ կանխատեսում են առաջիկան: Իսկ ճարտարները [գուշակում են] ծանօթ նշաններով եւ շարժումներով, բախտագուշակները՝ կռահելով եւ կիսահարցականներով, իսկ ճշմարտութեամբ՝ միայն Աստուած, որովհետեւ անցեալն ու ապագան նրա համար ներկայ են:

Եւ եթէ ասեն, այդպէս եւ Քրիստոս գիտէր ինչպէս մարգարէները, ասենք, որ մարգարէները Բանն Աստծոյ եւ Սուրբ Հոգու յայտնութեամբ գիտէին եւ ժամանակ առ ժամանակ, երբ կամենում էր Աստուած: Իսկ Քրիստոս՝ միշտ եւ իրենից, որովհետեւ Աստծոյ Բանն էր, իմաստութիւնն ու լոյսը, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Իսկ եթէ ասեն՝ ձեր Աւետարանն ասում է «Մարգարէն իր գաւառում պատիւ չունի» (Մտթ. ԺԳ 57, Մրկ. Զ 4, Ղուկ. Դ 24, Յովհ. Դ 44), ասենք, որ Քրիստոսին «մարգարէ» կոչում են ոչ թէ պատուի, այլ խոնարհուելու համար, որովհետեւ, երբ Բանն [Աստուած] մարդ եղաւ, այդժամ կոչուեց մարգարէ կամ առաքեալ կամ քահանայ եւ այլն: Ոմանք էլ մարգարէ էին կարծում, ըստ նրանց խօսքի է ասում, [որի վերաբերեալ] պարզ ասում է. «Ի՞նչ են ասում մարդիկ իմ մասին: Ոմանք ասում են՝ Եղիան ես, ոմանք՝ Երեմիան կամ ոմանք էլ՝ մարգարէներից մէկը»: Եւ ասաց աշակերտներին. «Դուք ի՞նչ էք ասում»: Պետրոսն ասաց. «Դու Քրիստոսն ես, կենդանի Աստծոյ որդին» (Մտթ. ԺԶ 13-16), ապա ուրեմն՝ Քրիստոս Աստուած է եւ Աստծոյ Որդի. հաւատում ենք նրան ու երանի տալիս:

Դարձեալ, ստեղծելն Աստծոյ գործ է, որովհետեւ անսահման զօրութիւն է պէտք ոչ գոյը գոյի վերածելու: Արդ,

ինչպէս դուք էք ասում, թէ՝ Քրիստոս մանուկ հասակում խաղալիս ձեռքն էր առնում հողը եւ թռչուններ ստեղծում[29], ինչպէս՝ չղջիկ եւ այլն, այլեւ՝ ի ծնէ կոյրի աչքը բացեց, որ տեսնի: Արդ, եթէ Քրիստոս ստեղծում էր թռչուն եւ ի ծնէ կոյրին՝ աչք, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է: Եւ եթէ ասեն՝ կախարդներից ոմանք էլ մարդու կամ թռչնի կերպարանք են [առնում], ասենք, որ սրանցը թուացեալ է եւ ոչ իրական. նա, որ արարեց կերպարանքը, դարձեալ նա կարող է փոխել:

Դարձեալ, միշտ անմահ մնալն Աստծունն է: Արդ, դուք ասում էք, թէ՝ Քրիստոս ո՛չ խաչուեց, ո՛չ մեռաւ, այլ բարձրացաւ երկինք եւ միշտ կենդանի է: [Իսկ] մենք ասում ենք, թէ՝ խաչուեց, թաղուեց, յարութիւն առաւ եւ համբարձուեց երկինք եւ միշտ կենդանի է, ապա ուրեմն՝ Քրիստոս Աստուած է: Եւ եթէ ասեն՝ բոլոր մարգարէների հոգիներն էլ երկնքում են, ասենք, որ բոլոր մարգարէների հոգիներն առանց մարմնի են, այն էլ՝ մահից յետոյ են ելնում երկինք: Իսկ Քրիստոս՝ հոգով եւ մարմնով եւ անմահ կենդանութեամբ բարձրացաւ երկինք, ապա ուրեմն՝ Քրիստոս Աստուած է:

Եւ եթէ ասեն Խտրը եւ Ելիասը, որ Ենովքն ու Եղիան են, բարձրացան երկինք, նոյնպէս եւ Քրիստոս, ասենք, որ ոչ թէ երկնքում են, այլ դրախտում, որ մահուան եւ կենաց միջակայքում է եւ գոյութիւն կունենայ մինչեւ վախճան, յետոյ կմեռնեն Նեռի ձեռքով, որը Մահդի էլ զամանն է: Իսկ Քրիստոս բարձրացաւ երկինք եւ ոչ դրախտ, որի պատճառն է, որովհետեւ դրախտից չիջաւ, այլ Աստծուց իջաւ երկիր՝ որպէս նրա Խօսք եւ դարձեալ բարձրացաւ երկինք՝ առ Աստուած, ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Եւ եթէ ասեն, թէ Քրիստոս գալու է վախճանին, կգայ եւ կմեռնի, ասենք այս կապակցութեամբ, եթէ վախճանին գայ ու մեռնի, Քրիստոսը չէ, այլ Նեռը՝ սատանայի որդին: Այն է, որ դուք «դաճալ» էք կոչում: Եւ եթէ նա Քրիստոսն էր, ինչպէ՞ս էր քրիստոնեաներին [ետ] դարձնում հաւատից, որ սկզբնապէս նրան հաւատացին: Եւ եթէ ասեն, թէ՝ ապա ինչո՞ւ Եղիան ու Ենովքը կմեռնեն, իսկ Քրիստոս՝ ոչ: Ասենք, որ նրանք մեռնելու են, որպէսզի վկայեն Քրիստոսի ճշմարտութիւնը, իսկ Քրիստոս ո՞ւմ վկայութեան համար մեռնի: Եւ եթէ ասեն, թէ՝ Քրիստոս սկզբում մահացաւ աշխարհի կեանքի համար, որպէսզի փրկուեն հաւատացեալները, [ասենք, որ] այնժամ փրկութիւն չէր, որովհետեւ անցել է մարդկանց ժամանակը եւ հասել են դատաստանի: Դարձեալ, բոլորի դատաւորը Աստուած է, որ արարեց բոլորին: Բայց արդ, յայտնի է բոլոր մարգարէների խօսքերից, որ Քրիստոս է նստելու դատաւոր: Այդ պատճառով նա մարմին առաւ, չարչարուեց, նա էլ կդատապարտի անհաւատներին եւ կփրկի իր հաւատացեալներին, ինչպէս եւ դուք էք ասում՝ «Ղիամաթի ղատի Յիսէն է նստելու», ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Եւ եթէ ասեն մեզ՝ դու ասացիր այժմ, որ Քրիստոս չի գալու: Ասենք, որ նախ եկաւ քարոզելու եւ դարձի բերելու եւ յետոյ գալու է դատելու եւ փրկելու: Առաջին գալուստն անշուք էր, իսկ երկրորդը՝ հայրական փառքով: Եւ չի կարող մեռնել երկու պատճառով: Նախ բոլոր մեռեալները յարութիւն են առնելու, այդ դէպքում ողջը ինչո՞ւ մեռնի: Երկրորդ, եթէ մեռնի, այդ դէպքում դատաստանի վճիռն ո՞վ պէտք է հատուցի, եւ մեռեալն ինչպէ՞ս յաւիտենական կեանք կպարգեւի: Ապա Քրիստոս Աստուած է եւ բոլորի դատաւորը եւ յաւիտենական կեանքը:

Այսքանն այս մասին[30]:

Ե
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Որ ամենեւին չեն ընդունում Սուրբ Գիրքը, այսինքն՝ Հին եւ Նոր կտակարանները: Եւ ասում են չորս գիրք է եկել երկնքից. «Թավրէթ», «Զապուր», «Ընճիլ», «Ֆուրղան»: «Թավրէթ» Մովսէսինն են կոչում, «Զապուր»՝ Դաւթինը, «Ընճիլ»՝ Աւետարանը եւ «Ֆուրղան»՝ Մահմեդինը: Չորսն են ասում, մինչդեռ երեքը բոլորովին չգիտեն եւ չեն հաւատում, այլ միայն՝ իրենցը: Եւ ասում են՝ թէ միւս բոլորը սուտ են, այլ միայն Ֆուրղանն է ճշմարիտ օրէնք:

Ուստի նրանց հարց տամ նախ այսպէս. եթէ սրանք չորսն էլ երկնքից են իջել, ճշմարի՞տ են, թէ՝ սուտ: Եթէ ձերը ճշմարիտ ասէք, ապա նրանք էլ ճշմարիտ են, որովհետեւ երկնքից են իջել: Իսկ եթէ նրանք ճշմարիտ են եւ դուք չէք ընդունում, ապա ակնյայտ է, որ ճշմարտութիւնից դուրս էք եւ սուտ:

Դարձեալ, եթէ նախնիների հետ ճշմարիտը չխօսեց, դա կամ տգիտութիւնից, կամ տկարութիւնից, կամ՝ չկամութիւնից է, ինչն ակնյայտ սուտ է, որովհետեւ Աստուած ամենիմաստ է, ամենակարող եւ ամենագութ, ապա ուրեմն ճշմարիտ են Հին եւ Նոր կտակարանները:

Դարձեալ, եթէ Աստուած իր առաջին խօսքը սուտ տուեց եւ ձեզ տուեց նորը, ապա Աստուած սուտ է տուել իր խօսքը, եւ այսպէս խօսելը մեծ հայհոյութիւն է: Եւ եթէ սուտ են առաջինները, սուտ կլինի նաեւ ձերը:

Դարձեալ, եթէ իր առաջին խօսքը Աստուած փոխեց, ուրեմն զղջաց եւ փոշմանեց, իսկ զղջումը տգիտութեան հետեւանք է, ինչն անհնարին մեղք է [Աստծուն վերագրել]:

Դարձեալ, եթէ առաջին խօսքը սուտ ասաց եւ յետոյ՝ ճշմարիտ, ուրեմն նրա մէջ փոփոխութիւն կայ, իսկ փոփոխականը չի կարող Աստուած լինել:

Դարձեալ, եթէ առաջիններին սուտ ասաց, ուրեմն խաբեց նրանց եւ ստեց, իսկ խաբողը եւ ստախօսը չի կարող Աստուած լինել:

Դարձեալ, եթէ նրանց սուտ ասաց, եւ ձեզ՝ ճշմարիտ, ապա ատում էր նրանց եւ սիրեց ձեզ: Ուրեմն այժմ դուք աւելի սիրելի էք Աստծուն, քան Դաւիթը, Մով-

սէսը, Աբրահամը եւ միւս նահապետները, որ բնաւ սուտ է:

Դարձեալ եւ այլ կերպ. թէ նրանց օրէնքներն ու կտակարանները սուտ են, սուտ է նաեւ ձերը, որովհետեւ բազմաթիւ բաներ նրանցից ունէք, ինչպէս՝ թլփատութիւնը, լուացումը, զաքաթը եւ այլն, որովհետեւ եթէ անհաստատ է հիմքը, [անհաստատ է] նաեւ շինութիւնը:

Դարձեալ, բոլոր նախահայրերն ու մարգարէները չունէին ձեր կտակարանը[31], ապա ուրեմն բոլորը սուտ խօսեցին: Եւ դարձեալ, բոլորը կորստի մատնուեցին, քանի որ չունէին ձեր օրէնքները: Այդ դէպքում ինչո՞ւ էք դուք նրանց անունով «սալաւաթ» բերում եւ բարեխօս դնում՝ Դաւթին, Մովսէսին, Աբրահամին եւ այլոց:

Դարձեալ, հրով եւ միգով երեւաց Աստուած Մովսէսին եւ գրեց օրէնքները տախտակների վրայ: Եւ Դաւիթը Քրիստոսի հայրն է ըստ մարմնի, եւ Քրիստոս Բանն է Աստծոյ եւ լոյս. եթէ դրժում էք նրանց կտակարանները, դրժում էք եւ Աստծուն, որ խօսեց նրանց հետ եւ տուեց կտակարանների խօսքը: Եւ ո՞վ հաւանութիւն կտայ այս մտքին, թէ՝ Աստծոյ օրէնքը սուտ կարող է լինել[32]:

Ահա այս եւ այսպիսի բազում հայհոյութիւններ կան նրանց խօսքերում, ովքեր չեն ընդունում Հին եւ Նոր կտակարանները:

Եւ եթէ ասեն, ահա եւ դուք էլ Հին օրէնքները չունէք, այդպէս էլ մենք ձերը եւ նրանցը չունենք: Ասենք այս կապակցութեամբ, մենք ունենք Հին Կտակարանը, ինչպէս եւ Նորը՝ նոյն Հոգուց խօսուած եւ կոչում ենք Աստուածաշունչ: Այլեւ՝ չենք մերժում Հին օրէնքն իբրեւ չար եւ պիղծ մի բան, այլ Հնի կարիքն էլ ունենք: Նախ, որովհետեւ Հին օրէնքը տղայական [հասակի] համար էր եւ անկատար, իսկ Նորը՝ կատարեալ [հասակի] եւ կատարեալների համար: Երկրորդ, նա օրինակ [էր], իսկ սա՝ ճշմարտութիւն, իսկ կատարեալն անկատարի, հոգեւորը՝ մարմնաւորի, ճշմարտութիւնը՝ օրինակի կարիքը չունի եւ չի գործածում, սակայն այն ունենք ծածուկ եւ գաղտնաբար, ինչպէս օրինակ կապարն է ծածկուած նկարի տակ եւ դեղով պատուած, կամ ինչպէս աստղերն են ցերեկային [լոյսով] ծածկուած: Այդպէս էլ բնական օրէնքները Աստուած Ադամին տուեց, բանականը՝ Նոյին եւ Աբրահամին, գրաւորը՝ Մովսէսին եւ միւս մարգարէներին, [որոնց] այժմ ծածուկ կերպով ունենք Աւետարանում եւ ոչ յայտնի, ինչպէս ասացինք:

Եւ եթէ ասեն, այսպէս էլ մեր օրէնքը նոր է, իսկ ձերը հին եւ փոխուած, [ապա] ասենք, որ բոլոր օրէնքները երկու բնորոշ գիծ ունեն, այսինքն՝ կատարեալ եւ անկատար, որ օրինակը եւ ճշմարտութիւնն են: Եւ կատարեալն ու ճշմարտութիւնը Նորն է, իսկ անկատարն ու օրինակը՝ Հինը: Արդ, եթէ ձեր օրէնքը Նոր է, մերը պէտք է Հինը լինի, որ ձերը Նորը լինի, որովհետեւ նորը հնից յետոյ է ասւում: Իսկ եթէ մեր օրէնքը Նորն է, ապա ձերը չի կարող Նորը լինել, որովհետեւ

նորը նորի [համեմատութեամբ] չի ասւում:

Դարձեալ, կատարեալը չի կարող անկատար լինել, այլ կարող է լինել գերակատար, որ սրանից յետոյ է: Այլ արդ, ձեր օրէնքը գերակատար չէ, որ կեանքից անդինն է, եւ կատարեալ չէ, որ Նորն է, եւ անկատար չէ, որ Հինն է, ինչպէս ցոյց տրուեց: Ուրեմն ձեր օրէնքը բոլոր օրէնքներից դուրս է: Իսկ օրէնքից դուրսն անօրէնութիւնն է, եւ անօրէնութիւնը չի կարող փոխել օրէնքը եւ չի կարող լինել նոր օրէնք:

Զ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Եւ մի մարդ, որին «փեղամբար» են կոչում, այսինքն՝ «մարգարէ», կեղծ է, որ յայտնի է իրերից: Նախ «մարգարէութեան» սահմանումից: Մարգարէութիւն է իմանալ անցեալը, պատմել ապագան, ճշմարտօրէն խօսել ներկայի մասին: Իսկ Մահմէտն անցեալը չգիտէ, որն ակնյայտ է Աբրահամի եւ նախնիների մասին նրա սուտ պատմութիւնից, հետեւաբար առաւել եւս՝ ապագան, եւ չգիտէ նաեւ ներկան, ուստի մարգարէ չէ[33]: Երկրորդ, մարգարէն մարգարէներին սուտ չի համարում, այլ ասում է՝ մարգարէների հոգին հնազանդւում է մարգարէներին (Ա Կորնթ. ԺԴ 32): Իսկ Մահմէտը բոլոր մարգարէներին սուտ է համարում՝ թէ՛ Հնում, թէ՛ Նորում վկայութիւն տուողներին, եւ միայն իրեն է ճշմարիտ եւ վերջին մարգարէ համարում, ուստի եւ՝ մարգարէ չէ[34]: Երրորդ, մարգարէն ուրիշների համար է լինում եւ ոչ իր համար, ինչպէս յայտնի է Մովսէսից եւ ուրիշներից, որ այլոց համար մարգարէացան, իսկ Մահմէտն ինչ ասում է՝ իր վերաբերեալ է խօսում՝ ասելով. «Աստուած աշխարհն ինձ համար է ստեղծել» եւ այլ բազմաթիւ ճոռոմաբանութիւններ: Չորրորդ, մարգարէները նշաններով եւ սքանչելիքներով յայտնի դարձան, ինչպէս Մովսէսը՝ Եգիպտոսում, իսկ Մահմէտը՝ սպառնալիքներով, սրի կոտորածով եւ բռնութեամբ էր կատարել տալիս օրէնքները, ինչպէս բոլոր բռնակալները[35]:

Իսկ եթէ ասեն Մահմէտը այստեղ «քարամաթ»[36] չարեց, այլ անելու է այն «դունիայ»-ում[37], որ հանդերձեալ կեանքն է, ասենք, որ այժմ յանուն հաւատի է, իսկ այն կեանքում հաւատը խափանուած է, որովհետեւ դէմ յանդիման տեսակցութիւն է եւ ոչ թէ յուսացուող մի բան: Հինգերորդ, իւրաքանչիւր մարգարէ կանխախօսում է այն, որի մասին ոչ ոք չի խօսել, ինչպէս յայտնի է մարգարէների գրքերից: Իսկ Մահմէտը մի մասը Մովսէսից է առել, մի մասը՝ այլ գրքերից եւ իր անունից գրել: Որովհետեւ՝ թլփատութիւնը Մովսէսի [գրքից] էր, լուացումը, զաքաթը[38] եւ մնացածը եւ ոչ մի նոր պատգամ [չունի][39]: Վեցերորդ, ոչ մի մարգարէ իրեն հակառակ չի խօսում, իսկ նա իրեն հակառակ է խօսում, որովհետեւ չգրեց մարդու մեղքի մասին, այլ վերագրեց ում ինչ կարող է. ասում է՝ կինն ստեղծուած է

պոռնկութեան համար, կերակուրն ագահութեան համար: Եւ սա մեծ հայհոյութիւն է՝ Աստծուն չարի պատճառ ասելը[40]: Եւ այս ամէնի վրայ ասում է դատաստան է լինելու եւ հատուցում: Արդ, եթէ մեղքը մարդունը չէ, ի՞նչ է հատուցելու Աստուած[41]: Եւ բազմաթիւ այլ բաներ է ասել, որ այժմ պարտաւոր չենք յիշել: Այս պատճառով է, որ մարգարէ չենք ասում:

Եւ եթէ ասեն, ինչո՞ւ ձեր գրքում գրուած չէ «փեղամբար» անունը: Ասենք, որ մեր Աւետարանը եւ Գիրքը գրուել են եօթ հարիւր տարի առաջ, առաջին գրքում ինչպէ՞ս գրէին յետինի [անունը]: Եւ եթէ ասեն, յետոյ ինչո՞ւ այսքան ժամանակ չգրեցին: Ասենք, որ առաքեալների ժամանակ հերձուածողներ, սուտ առաքեալներ եղան, որ խեղաթիւրում էին օրէնքը եւ շեղում հաւատից, որի պատճառով առաքեալները կանոն եւ նզովք գրեցին՝ Աւետարանում եւ առաքեալների գրքերում չլսել ուրիշ մէկին եւ չգրել Գրքում: Ուստի երկնչում ենք նրանց նզովքից եւ այլ մարդու անուն եւ խօսք չենք համարձակւում գրել: Եւ եթէ ասեն, եթէ մարգարէ չէր, ինչպէ՞ս էր ամպհովանի լինում նրա վրայ: Ասենք, որ ամպհովանի չէր այլ կարուած կիսավրան էր, որ այժմ «սուքուր» են կոչում, այն էր գլխի վրայ պահում: Եւ քանի որ գողի վարքագիծ ունէր, ցանկանում էր իրեն մարգարէներին նմանեցնել՝ ուղտով էր շրջում, որպէսզի Եսայի [մարգարէի] խօսքն իրենով կատարուած [համարի][42]: Երբեմն կաշեայ վերարկու էր հագնում՝ Եղիայի նմանութեամբ (տե՛ս Գ Թագ. ԺԹ 13, 19), կիսավրան հովանի ունէր, որպէսզի նմանուի Մովսէսին (տե՛ս Թիւք Թ 16), որինը ամպհովանի էր ցերեկը, իսկ գիշերը՝ լոյս էր տալիս[43]:

Եւ այս է նրա պատմութիւնը[44]: Հայոց մեծ թուականի 97-ին [Փրկչական 648թ.], Եզրի կաթողիկոսութեան տասներորդ տարում, Մահմէտ անունով մէկը, Իսմայէլի ազգից, որդին Աբդլի՝ սակաւ ինչ տեղեկացուած Մովսէսի օրէնքներին, աշակերտեց Բխիրա անունով միայնակեցին՝ Արիոսի աղանդով, Սինա անապատում: Եւ սա հաւատաց Արիոսի աղանդին: Եւ մարմնաւոր ասաց արքայութիւնը՝ երկրի վրայ, իսկ յարութիւնից յետոյ՝ կերակուրներ եւ ամուսնութիւն[45]: Սովորեցրեց օրէնքներ հակառակ Հին ու Նոր օրէնքների: Եւ բազում անարժան եւ ծիծաղելի [բաներ] աւանդեց իր ազգին[46]: Ասում են սա քսան տարի տաճկաց օրէնսդիր, սուրհանդակ եւ զօրավար է եղել, որ բազմաթիւ կոտորածներից եւ տիրապետութիւն [հաստատելուց] յետոյ, այս մեծ Մահմէտը արգելեց կոտորածները եւ խրատական քարոզներով իրեն հնազանդեցրեց աշխարհի մեծ մասին: Եւ անխախտելի երդմամբ Հայոց աշխարհում մուրհակ կնքեց, որ այժմ կոչւում է «Մեծ Մանշուր»՝ անթաքոյց դաւանել քրիստոնէութիւն՝ [վճարով] եւ վաճառեց նրանց իրենց հաւատը՝ իւրաքանչիւր տնից գանձելով չորս դրամ, երեք սափոր գարի, մի ձիատոպրակ, մի մազէ պարան եւ մի անձեռոց: Իսկ քահանաներից, ազատներից եւ հեծեալներից հրաման չտուեց հարկ վերցնելու: Եւ Մահմէտի

քսան տարուց յետոյ տիրեցին Պուպաքրը, Օթմանը եւ այլք՝ երեսունուք տարի:

Սրանցից յետոյ միւս Մահմէտը՝ նոյն անուամբ եւ գործով, իշխան եւ պատգամաբեր է նստում նրա փոխարէն: Ասում են սրան ընդառաջ է գնում Տէր Սահակ կաթողիկոսը, սակայն ճանապարհին վախճանւում է, եւ դագաղով են տանում նրա մօտ: Եւ սա Հայոց ազգին Փոքր Մանշուրը տուեց՝ նախորդի օրինակով, որ գրեց առաջին Մահմէտը՝ ազատ լինելու քահանաներին, ազատներին, հեծեալներին ամէն տեսակի հարկերից եւ համարձակ եւ անթաքոյց պաշտելու իրենց հաւատը[47]:

Այսքանն այս մասին:

Է
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

[Այն], որ յարութիւնը մարմնական են ասում՝ կերակուր եւ վայելքներ, քառասուն եւ եօթանասուն կանայք, ինչպէս Արիոսը, Սակարինոսը եւ Կերինթոսն ասացին, որոնց նզովում է Սուրբ Գիրքը եւ Աստծոյ Եկեղեցին:

Եւ այժմ համառօտ դնենք [Աստծոյ] հրամանը, որ յարութեան ժամանակ կին չեն առնում կամ տղամարդուն չեն պատկանում, այլ՝ [լինելու են] իբրեւ Աստծոյ հրեշտակներ, եւ չեն կարողանալու նաեւ մեռնել: Եւ չնայած այսքանը բաւական է հաւատացեալներին, սակայն տեսնենք, ի՞նչ են առաջարկում[48] հեթանոսները:

Նախ, որ ասում են, թէ յարութիւնը վերադառնալն է դրախտի առաջին կեանքին, իսկ առաջին կեանքը դրախտում՝ ամուսնութեամբ էր, ինչպէս ասաց Աստուած՝ «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք» (Ծննդ. Ա 22), ապա ուրեմն յարութեանն էլ ամուսնութիւն է լինելու: Ասենք այս կապակցութեամբ, որ դրախտի առաջին կեանքում չկար ամուսնութիւն եւ մարմնական ցանկութիւն, այլ՝ հոգեկան եւ հրեշտակային հաւասարութիւն. այսպէս է լինելու եւ յարութեանը: Իսկ եթէ ասեն՝ ապա ինչո՞ւ արու եւ էգ, [ապա] ասենք, որ Աստուած գիտէր կանխապէս, որ չեն պահելու պատուիրանը եւ դուրս են գալու դրախտից՝ արու եւ էգ արեց, որ անասնաբար աճեն երկրի վրայ: Ուստի պարզ է, որ ասում է՝ «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք եւ լցրէք երկիրը»: Երկիրն ասաց լցրէք եւ ոչ դրախտը:

Դարձեալ ասենք, որ յարութեանը ոչ թէ դրախտ, որ միջանկեալ կեանք է, այսինքն՝ մահուան եւ կեանքի միջեւ է, այլ [տալու է] դրախտում խոստացուած փառքը՝ այն, որ չկարողացաւ ժառանգել մեղքի [պատճառով], առնելու է յարութեանը՝ անմահ կեանքով:

Դարձեալ ասում են, արդեօ՞ք ձեր Գիրքը չի ասում՝ առաջին յարութիւն եւ հազարամեայ արքայութիւն ու հանգիստ. իւղի եւ մեղրի գետ՝ ուտելու եւ խմելու ենք արքայութեան մէջ, ասում է ձեր Աւետարանը:

Ասենք, որ՝ խորհէ՛ք Գրքի մեկնութեան եւ իմաստի մասին, [որովհետեւ] Աստծոյ անտեսանելին տեսանելի բա-

ներով է երեւում (հմմտ. Հռոմ. Ա 20): Այն, որ ասում է առաջին յարութիւն՝ կրկին է յարութիւնը, ինչպէս եւ՝ կրկին է անկումը, այսինքն՝ հոգու եւ մարմնի: Արդ, առաջին յարութիւնը հոգունն է, որով ներւում են մեղքերը, որ եղաւ Քրիստոսով: Եւ հազար տարին կատարեալ թիւ է նշանակում, երբ սրբերը կհանգչեն հոգով իրենց գործերից եւ կթագաւորեն Քրիստոսի հետ՝ մինչեւ աշխարհի վախճանը: Ապա երկրորդ յարութիւնը մարմնինն է, [երբ] կառնեն կատարեալ փառք եւ յաւիտենական պսակ: Եւ «իւղի գետը» եւ «մեղրը» Աստծոյ մշտնջենաբուխ եւ առատ ողորմութիւնն ու քաղցրութիւնն են նշանակում, իսկ «կերակուրը» եւ «ըմպելիքը»՝ Աստծոյ գիտութիւնն ու իմաստութիւնը եւ ոչ թէ մարմնական կերակուր կամ ըմպելիք[49]:

Դարձեալ ասում են՝ Քրիստոսի յարութիւնը պատճառ եւ օրինակ է համայն մարդկութեան յարութեան, ինչպէս դուք էք ասում, այլ արդ՝ ձեր Քրիստոսը յարութիւնից յետոյ կերաւ եւ խմեց աշակերտների հետ, ապա ուրեմն ամէն մարդ էլ կուտի: Ասենք, որ Քրիստոս յարութիւնից յետոյ ոչ թէ կարիքի պատճառով կերաւ, այլ յանուն յարութեանը հաւատալու, քանզի շատերն ուրացան յարութիւնը, ինչպէս հրէաներն ու դուք: Իսկ բոլորի յարութիւնը բոլորին յայտնի եղելութիւն է, եւ ոչ ոք չի կասկածում, ուստի պէտք չէ կերակուր [ինչ-որ բան] հաստատելու համար: Եւ յայտնի է, որ ուտելիս երեք հանգամանք է գործում, այսինքն՝ առաջինը կծելը, երկրորդ՝ ծամելը, երրորդ՝ նիւթափոխանակութիւնը. կծելն ու ծամելը կատարեց Քրիստոս, իսկ մարմնի նիւթափոխանակութիւնը՝ ոչ, քանի որ ծամելիս բոլոր տարրերը լուծւում էին:

Դարձեալ ասում են, թէ՝ մարմինը կարիք ունի սնուելու. արդ, եթէ իսկապէս այս մարմինն է յարութիւն առնելու, պէտք է սնուի, այլապէս այլ մարմին է յարութիւն առնելու եւ ոչ թէ սա: Ասենք, որ ապականացու մարմինը կարիք ունի կերակրի, սակայն անապականները, ինչպէս որ երկնքի լուսատուները, կարիք չունեն կերակրի: Այլ արդ՝ յարութեան ժամանակ մարդկանց մարմիններն էլ անապական եւ անմահ կլինեն, ուստի կարիք չեն ունենայ կերակրի: Եւ թէպէտ հաստատապէս այս մամինը յարութիւն կառնի հողից, սակայն որակապէս այլ կլինի: Որովհետեւ հիմա ապականացու է՝ ապականացու հողից, իսկ այն ժամանակ՝ անապական՝ անապական տարրերից:

Դարձեալ ասենք, որ չնայած լինելու է նոյն մարմինը, սակայն նոյնը չի լինելու գործը: Թէպէտ լինելու են ոտք եւ ձեռք, չեն քայլելու եւ չեն գործելու մարմնով: Եւ թէպէտ լինելու է կենդանի, սակայն չի լինելու շնչառութիւն: Եւ չնայած իրական մարմին է [լինելու], սակայն կերակրման եւ աճելու [կարիք] չի ունենայ, հետեւաբար յարութեանը ո՛չ կերակուր կլինի, ո՛չ աճել, ո՛չ մարմնական հաճոյքներ, այլ՝ միայն հոգեկան, ինչպիսին հրեշտակներինն է:

Եւ քանի որ ժխտուեցին նրանց առարկութիւնները, այժմ հարց տանք նրանց:

Նախ հարցնում եմ ձեզ. յարութիւնը մահկանացո՞ւ է, թէ՝ անմահ: Եթէ մահկանացու է, մահկանացուներին ինչո՞ւ է յարութիւն տալու: Իսկ եթէ անմահ է, ապա ակնյայտ է, որ չի լինելու ո՛չ մարմնական կերակուր, ո՛չ հաճոյքներ, ո՛չ ծնունդ, ո՛չ ծերութիւն, ո՛չ մահ, ո՛չ ապականութիւն, եւ ընդհանրապէս ամէն ինչ, ինչ կայ այս կեանքում՝ կվերանայ յարութեան ժամանակ:

Դարձեալ ասում էք, յարութեան ժամանակ մի տղամարդու քառասուն կամ եօթանասուն կին հուրիներ են տալու[50]: Արդ, բոլորն ընդունել են, որ ինչ քանակով մեռնելու են, նոյն քանակով էլ յարութիւն են առնելու: Եւ այս կեանքում բազմաթիւ մարդիկ առանց կին են մեռնում: Ուրեմն՝ մի մարդու որտեղի՞ց կլինի քառասուն կամ եօթանասուն կին, ուրեմն սուտ է [որ ասում էք] «հուրիներ»:

Դարձեալ հարցնենք, փոփոխակա՞ն է յարութիւնը, թէ՝ անփոփոխ: Եթէ փոփոխական է, եւ այնտեղ կան հաճոյքներ եւ մարմնական վայելքներ, ինչպէս դուք էք ասում, ապա ուրեմն կայ նաեւ արտահոսում եւ քայքայում, ուրեմն կայ նաեւ ծնունդ եւ աճ, կայ եւ տկարութիւն եւ հիւանդութիւն ու մահ, ուրեմն դա յարութիւն չէ, այլ այս ծննդատու կեանքը: Եւ այն յարութեանը պէտք է մի այլ յարութիւն եւ հանդերձեալ կեանք, որ ամենեւին սուտ է: Իսկ եթէ անփոփոխ է, ապա չի լինելու ո՛չ վայելք, ո՛չ մարմնական կերակուր եւ փոփոխուող [ոչինչ]:

Դարձեալ հարց եմ տալիս. յարութիւնը ժամանակաւո՞ր է, թէ՝ յաւիտենական: Եթէ ժամանակաւոր է՝ նոյն այս կեանքն է եւ ոչինչ առաւել: Իսկ եթէ յաւիտենական է, ապա չեն [լինելու] ո՛չ երկնքի եւ լուսատուների շարժում, ինչով պայմանաւորուած է ժամանակը, ո՛չ ծնունդ եւ աճ, որ ժամանակի [ընթացքում է] կատարւում եւ ո՛չ այլ որեւէ մարմնական վայելք:

Դարձեալ, կերակուրն ու ըմպելիքները լինում են երկրից եւ տարրերից:

Արդ, եթէ տարրերը քայքայուեն, դրանք հնարաւոր չի լինի քաղել, չի լինի մարմնական կերակուր եւ ըմպելիք: Իսկ եթէ մնան ապականութեան մէջ, դա յարութիւն եւ յաւիտենական կեանք չէ:

Դարձեալ արքայութիւնը երկրո՞ւմ էք ասում, թէ՞ երկնքում: Եթէ երկրի վրայ էք ասում, այն արքայութիւն չէ, այլ՝ ժամանակաւոր կեանք: Իսկ եթէ երկնքում էք ասում, ապա այնտեղ չկայ մարմնական կերակուր եւ ըմպելիք, որովհետեւ սրանք բոլորը չորս տարրերից են [բաղկացած], իսկ երկինքը հինգերորդ էութիւնն է՝ ըստ Արիստոտելի[51]: Իսկ չորս տարրերը չեն կարող երկինք բարձրանալ եւ կազմել տարրերից [բաղկացած] կերակուր:

Դարձեալ, մեր կերակուրները եւ վայելքները բոյսերից եւ կենդանիներից են, ինչպէս հացը, միսը եւ այլն: Արդ, եթէ յարութեան ժամանակ [լինեն] վայելքներն ու կերակուրները, [ուրեմն] ոչ միայն

մարդիկ, այլեւ տունկերն ու զգայական կենդանիներն էլ պէտք է յարութիւն առնեն եւ մնան յաւիտենական:

Դարձեալ, եթէ այնտեղ լինեն մարմնական կերակուրներ, արհեստների եւ երկրագործութեան կարիք կունենանք, ինչպէս այստեղ, [եւ կլինեն] այնտեղ հարուստներ եւ աղքատներ, կլինի այնտեղ յափշտակութիւն եւ զրկում, անիրաւութիւն եւ մեղք: Եւ ինչպէ՞ս կլինի արդար դատաստան եւ ըստ գործերի հատուցում, եւ որտե՞ղ կլինի սրբութեան եւ արդար գործերի տեղը, որովհետեւ այս աշխարը մեղքի տուն է, իսկ դժոխքը՝ մեղաւորների տեղն է, եւ ըստ ձեր կարծիքի՝ արքայութիւնն էլ մեղքի եւ անիրաւութեան տեղ է լինելու:

Դարձեալ ասում եք, այնտեղ յարութեան ժամանակ մի տղամարդը քառասուն կին է ունենալու: Արդ, կինը որդեծնութեան համար է, իսկ [եթէ] հեշտանքի ախտի համար է՝ պոռնկութիւն է եւ շնութիւն: Մինչդեռ [հենց] դուք էք ասում, որ որդեծնութիւն չի լինելու, ուրեմն հեշտանքի ախտի եւ պոռնկութեան համար են լինելու բազմաթիւ կանայք, հետեւաբար ձեր արքայութիւնը պոռնկատուն է եւ ո՛չ սրբութեան տուն: Ապա [ուրեմն] Արարչի մօտ կվերանայ հեշտանքների եւ ախտասիրութեան մեր պատճառը, [քանի որ ինքն] այդչափ պոռնկութիւն տուեց մեզ:

Դարձեալ, դուք ասում եք, թէ՝ «յարութիւնը վերստին վերադառնալն է առաջին դրախտային կեանքին»: Արդ՝ առաջին մարդու համար մի կին ստեղծեց, ապա [ուրեմն] յարութեանը ձեզ էլ իւրաքանչիւրին մի կին կլինի, կամ էլ՝ որքան այստեղ կին առաք, այդքան էլ այնտեղ կունենաք, [սակայն] ո՛չ քառասուն եւ եօթանասուն, որովհետեւ այնքանով էլ կարող էք մեղկանալ եւ արքայութիւնը դարձնել պղծավայր եւ պոռնկատուն: Ո՛վ յիմարներ եւ կոյրեր, եթէ այստեղ ձեր մզկիթում պարկեշտութիւն էք պահում՝ տղամարդ, թէ կին, ամուսնութեան եւ իրար տեսնելու ժամանակ, [այդ դէպքում] ինչո՞ւ էք երկնքի արքայութեան մէջ ամուսնութիւն եւ հեշտասիրութիւն հռչակում: Թո՛ղ ձեզ բաժին ընկնի այդպիսի ամուսնութիւն եւ հեշտասիրութեան դրախտ [բէհեշտ][52] եւ պղծութեան տեղեր այս կեանքում եւ հանդերձեալում, իսկ մեզ լինի Սուրբ արքայութիւն, որ պատրաստել է Աստուած իր սիրելիների համար՝ մարգարէների, առաքեալների, մարտիրոսների, ճգնաւորների եւ այլ սրբերի:

Այսքանն այս մասին[53]:

Ը
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

[Այն], որ հրեշտակներին եւ մարդու հոգին մահկանացու են ասում: Սա առաւել, քան մնացած հերձուածները չարագոյնն է եւ հակառակ է աստուածային Գրքին: Սա ի չիք է դարձնում հաւատը՝ յարութեան եւ գործերի հատուցման նկատմամբ: Եւ կարծիք է ստեղծում անմարմին էութիւնների գոյութիւն չունենալու [վերաբերեալ], այլեւ

ցուցադրում է Աստծոյ կամքի տկարութիւնը, ինչպէս կտեսնենք առաջիկայում:

Սակայն ի՞նչ պատճառ են բերում իրենց տեսակէտը հիմնաւորելու համար: Եթէ միայն Աստուած է անմահ, որովհետեւ անեղ ու անսկիզբ է, եւ անսկիզբը՝ անվախճան է, իսկ բոլոր ստեղծուածները սկիզբ ունեն, հետեւաբար նաեւ վախճան, ապա ուրեմն հրեշտակները եւ մարդկանց հոգիները ստեղծուած են, ուրեմն՝ ունեն սկիզբ եւ վախճան[54]:

Ասենք, որ Աստուած է միայն անեղ եւ անմահ, սակայն հրեշտակներն ու հոգին՝ ստեղծուած եւ անմահ են, իսկ մնացեալ բոլորը՝ ստեղծուած եւ մահկանացու[55]:

Դարձեալ ասենք, որ բնութեամբ Աստուած է անմահ, իսկ հրեշտակներն ու հոգին Անմահի կամքով են անմահ, որովհետեւ կամեցաւ եւ նրանց անմահ արարեց, եւ Աստծոյ կամքի համար անհնարին ոչինչ չկայ:

Եթէ հարցնում ենք նրանց, թէ ո՞ր ժամի են մեռնելու, ասում են՝ թէ ժամանակի վերջին կէտում, աշխարհի վախճանին, մի ակնթարթում մեռնելու են հոգիներն ու բոլոր հրեշտակները եւ դարձեալ կենդանանան: Իսկ եթէ պատճառն ենք հարցնում, թէ՝ ինչո՞ւ են մեռնելու, այլ բան չեն ասում, քան այն, որ Աստուած է միայն անմահ, որովհետեւ անեղ եւ անսկիզբ է, իսկ անսկիզբն անվախճան է: Իսկ բոլոր ստեղծուածները սկիզբ ունեն եւ եթէ սկիզբ ունեն, հարկաւ՝ նաեւ վախճան:

Ասենք նախ, թէ հարկ է որ այն ամէնը ինչ չունի սկիզբ, չունենայ նաեւ վախճան: Սակայն պարտադիր չէ, որ այն ամէնն ինչ անվախճան է՝ անսկիզբ լինի, ինչպէս՝ մշտնջենաւորները, որովհետեւ սկզբնաւոր, սակայն անվախճան են, հետեւաբար կարող են հրեշտակներն ու հոգիները լինել սկզբնաւոր եւ անվախճան:

Դարձեալ ասենք, բնութեամբ [Աստուած] անմահ է եւ արարեց հրեշտակներին ու հոգիներին՝ իր պատկերի [նմանութեամբ՝] բնութեամբ անմահ՝ որպէս անձնիշխան եւ անմարմին, այդպէս էլ՝ անմահ բնութեամբ: Իսկ եթէ չես [ընդունում]՝ կամ ուրացի՛ր, որ նրա պատկերով է, կամ [ասա]՝ նախատիպն անմահ չէ, որ սոսկալի չարութիւն է:

Դարձեալ Աստուած հրեշտակներին արարեց որպէս իր անմահ եւ մշտական փառաբանիչներ, ինչը յայտնի է նրանց սահմանումից՝ անմահ էութիւն, անմարմին, Աստծոյ սպասաւոր: Արդ, եթէ հրեշտակները մահկանացու են, Աստծոյ փառաբանութիւնը մշտնջենաւոր չէ:

Դարձեալ ասենք, որ հոգին ինքնաշարժ է, ինքնաշարժը մշտաշարժ է, իսկ մշտաշարժը՝ անմահ, ապա ուրեմն հոգին անմահ է[56]:

Դարձեալ հարց տամ ձեզ. հոգին մարմի՞ն էք ասում, թէ՝ անմարմին: Եթէ մարմին[57]՝ ապա մահկանացու է, եթէ անմարմին, ապա եւ՝ անմահ, որովհետեւ անմարմին էութիւնը չի մեռնում:

Դարձեալ մահուան պատճառը տարրերի խառնուածքի ներհակութիւնն է, իսկ հոգին միեղէն է եւ պարզ էութիւն, ապա ուրեմն՝ անմահ է:

Դարձեալ հրեշտակները եւ դեւերը մի սեռի եւ տեսակի են: Արդ, ինչպէս դեւերն են անմահ եւ տանջուելու են յաւիտեանս, այդպէս էլ հրեշտակներն են անմահ եւ փառաւորուելու են մշտնջենապէս:

Դարձեալ, մահը հոգու անջատումն է մարմնից, իսկ յարութիւնը՝ դարձեալ միաւորուելը հոգու հետ: Ապա եթէ հրեշտակն ունի մահ, պէտք է [հոգի] էլ ունենայ, որ տարանջատուելով մեռնի եւ միաւորութեամբ կենդանանայ[58]:

Դարձեալ, երկինքը հինգերորդ էութիւնն է անապական, իսկ հրեշտակները երկնքից են եւ երկնքում, ուստի անմահ են եւ անապական:

Դարձեալ, եթէ հոգիները երկրում են մահկանացու, հրեշտակներն էլ՝ երկնքում, ուրեմն չկայ անմահութեան վայր[59]:

Դարձեալ, եթէ վախճանին մեռնելու են հոգիներն ու հրեշտակները, ինչպէս դուք էք ասում, իսկ աշխարհի վախճանը բոլորի նորոգումն ու կենդանութիւնն է, արդ, հոգին, որ կենդանի է, մեռնելու է, մեռեալ մարմինը ինչպէ՞ս կկենդանանայ: Եւ երբ բոլոր տարրերը վերակենդանանան, հրեշտակներն ինչո՞ւ պէտք է մեռնեն:

Դարձեալ, մարմնի յարութիւնը յանուն անմահութեան է: Արդ, եթէ հոգին մահկանացու է, մարմինն էլ յարութիւն չի ունենայ: Եւ եթէ չլինի յարութիւն, չի [լինի] դատաստան եւ գործերի հատուցում: Յիրաւի, այդ դէպքում բոլորը անխտիր մեղք կգործեն, որովհետեւ կասեն՝ հոգին մահկանացու է, մարմինն էլ՝ հողին լուծուած, ուրեմն չկայ ո՛չ հատուցում, ո՛չ դատաստան:

Իսկ եթէ ասեն՝ [եթէ] անփոփոխ եւ անմահ են հրեշտակները, իսկ հոգիներն իբրեւ աստուած են, ապա զանազանութիւն չդրուեց նրանց եւ Աստծոյ միջեւ, ասենք, որ մարմինները երկու փոփոխութիւն ունեն՝ սկիզբ եւ վախճան, իսկ անմարմինները՝ միայն մէկը, այսինքն սկիզբ, իսկ վախճան չունեն, իսկ Աստուած ամենեւին անփոփոխ է, որովհետեւ չունի սկիզբ եւ վախճան, ինչպէս վերն ասուեց:

Այդկերպ, մահն էլ կրկին է. զգալիներինը՝ բնական, իսկ իմանալիներինը՝ բարոյական: Արդ, բնական մահը կեանքից անջատուելն է, իսկ բարոյականը՝ շնորհից զրկուելը, որը մեղքն է: Արդ, մարդը երկու մահ ունի՝ բնական եւ բարոյական՝ ըստ մարմնի եւ ըստ հոգու, իսկ հրեշտակը բարոյական, որովհետեւ միայն հոգի է: Իսկ Աստուած ամենեւին անմահ է:

Նաեւ մարդն ունի երկու յարութիւն՝ մեղքերի թողութիւն եւ կեանքի անմահութիւն, մինչդեռ հրեշտակը մեղքերի թողութիւն չունի, ինչպէս՝ դեւերը: Իսկ Աստուած ամենեւին դուրս է այս բաժանումներից, որովհետեւ չի մեղանչում եւ չի կարօտանում թողութեան, այլ կեանք պարգեւող է եւ մեղքերին թողութիւն [տուող]:

Այսքանն այս մասին:

Թ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Որոնք անարգում են խաչի նշանը եւ սուրբ պատկերները՝ այսպիսի յիմար կարծիքով բամբասելով մեզ, թէ՝ ձեռակերտի եւ կուռքերի էք երկրպագում եւ [դէպի] արեւելք՝ արեգակին:

Ասենք որ՝ յիմարութիւն են խօսում, եւ նրանց սիրտը դատարկութեամբ է լցուած: Մենք ո՛չ արարածի, ո՛չ էլ կուռքերի ենք պաշտում, «որովհետեւ հեթանոսների կուռքերը դեւերն են» (Սղմ. ՂԵ 5), այլ մենք Աստծուն ենք պաշտում եւ քրիստոնեայ ենք:

Ա՛րդ, դուք միայն խաչի նիւթն էք տեսնում, իսկ նրա ծածուկ խորհուրդը չէք գիտակցում, ինչպէս մէկը, որ չգիտէ դպրութիւն, միայն գրի ձեւն է տեսնում, այլ պարունակող մտքերը, որ նրա մէջ են՝ չգիտէ:

Խաչը Քրիստոսի եւ մեր փրկութեան նշանն է եւ զէնք՝ թշնամու դէմ, ինչը դուք չգիտէք: Այլ պարզորոշ ասեմ ձեզ: Խաչն ունի նիւթ եւ ձեւ, եւ Աստծոյ զօրութիւնը՝ միաւորուած նրան: Նիւթը քար է, փայտ, երկաթ կամ այլ ինչ: Ձեւը քառակուսի է՝ ըստ նմանութեան խաչեալ Քրիստոսի: Եւ Քրիստոսի զօրութիւնը՝ գամուած նրա մէջ՝ յաւիտենապէս անբաժան է նրանից: Եւ որտեղ խաչն է, այնտեղ էլ խաչեալն է, այնտեղ էլ՝ խաչելութիւնը:

Եւ միայն նիւթը չենք երկրպագում եւ ոչ էլ՝ առանձին ձեւը: Եւ քեզ էլ յայտնի է, որ բազմաթիւ կենդանիներ եւ անկենդան նկարներ քառակուսի ձեւով են, սակայն մենք չենք երկրպագում: Այլ երկրպագում ենք Աստծոյ զօրութեանը, որ միացած է խաչին, այսինքն Քրիստոսին՝ ձեւի միջոցով նիւթի մէջ բեւեռուած: Եւ խաչ է կոչւում՝ քառակուսի ձեւաւորուած նիւթը՝ անբաժանելի ձեւից եւ նիւթից, որի պատճառով Խաչուածի հետ խաչն էլ ենք պաշտում եւ պատւում:

Եւ խաչի նշանը յետոյ ներմուծուած օտար մի բան չէ, այլ հայրերի ժամանակից է՝ Մովսէսի ձեռքի գաւազանը, որով նշաններ էր անում, խաչի խորհուրդն ունէր, ուստի ծովն էլ խաչաձեւ պատռեց, ասելով՝ «Այիա՛յ, շրայիա՛յ, անդոնիա՛յ»՝ «Եղի՛ր մեր առջեւում, Աստուած, աջից եւ ձախից»:

Դարձեալ, խաչաձեւ էին աստուածագիծ տախտակները, Ահարոնի գաւազանը, որ ծաղկեց, որին իսրայէլացիք պտտեցնում էին իրենց հետ եւ մեծարում: Սրանով Յորդանան գետը յետ դարձաւ (տե՛ս Յեսու Դ 18), եւ Երիքովի պարիսպը կործանուեց (տե՛ս Յեսու Զ 20):

Սրանք եւ այլ շատեր խաչի նախօրինակն էին:

Արդ, եթէ Մովսէսը, Յեսուն, Դաւիթը եւ այլ մարգարէները օրինակն էին այսպէս պաշտում, մենք ճշմարտութիւնն ինչո՞ւ չպաշտենք: Եւ եթէ դուք պայտն էք պատուի արժանացնում, որ Մելքիսեդեկի եղունգի օրինակն է, մենք ինչո՞ւ չպէտք է պաշտենք խաչը, որ Քրիստոսի նշանն է[60]:

Իսկ եթէ այլազգիներն ասեն մեզ, թէ՝ խաչը էշի թիկունքին էլ կայ, ապա ասենք, որ պայտն էլ ձեր ոտքերին կայ:

Եւ եթէ ասեն խաչը ձեր գործուածքներում են նկարում, ասենք, որ ձեր պայտն էլ դնում ենք հողաթափերի մէջ: Եւ եթէ մէկը չար խորհրդով անարգի կնոջը՝ խաչի ձեւ ունենալու պատճառով, ապա ասենք, որ կէսից վեր խաչաձեւ է, կէսից վար՝ մզկիթի խորան, որն էլ անարգում ես: Այսքանը խաչի մասին:

Իսկ եթէ այլազգիներն ասեն մեզ, թէ պատկերը կուռք է[61], ասենք, որ մենք Աստծոյ նկարն ենք նկարում եւ ոչ կուռքերի, եւ աստուածապաշտ ենք եւ ոչ՝ կռապաշտ: Եւ այլ է [այն] պատկերների նախատիպը, որ մենք ենք կանգնեցնում եւ այլ նրանցը, որ կուռքերին են բարձրացնում, որովհետեւ մեր նախատիպն Աստուած է, նրանց նախատիպը՝ դեւը[62]: Ուրեմն այլ է մեր պաշտամունքը, այլ՝ նրանցը:

Եւ եթէ ասեն այս եւ այն պատկերի նիւթը նոյնն է՝ ոսկի, քար կամ այլ ինչ, եւ նոյնն է ձեւը՝ մարդու, մանուկի եւ այլ ինչ, [ապա] ասենք, որ մի նիւթից զանազան առարկայ կարելի է պատրաստել, ինչպէս նոյն փայտից՝ աթոռ կամ անիւ, նոյն քարից կառուցւում է Աստծոյ տաճար եւ կուռքերի տաճար[63]: Ահաւասիկ նիւթը նոյնն է եւ կատարումները՝ տարբեր: Ուրեմն զարմանալու ոչինչ չկայ, որ նոյն նիւթը լինի սրբերի պատկեր կամ պիղծերի պատկեր:

Իսկ եթէ առասպելաբանեն, թէ նկարչից էլ[64] պահանջուելու է [նկարուածի] հոգին, ասենք, որ Աստուած այսպէս է ասում. «Հոգին ինձանից է ելնում եւ ամէն մի շունչ ես ստեղծեցի» (Ես. Ծէ 16): Եւ եթէ նա է հոգիների արարիչը, ինչո՞ւ պէտք է մարդուց պահանջի: Եւ Աստուած կարելին է պահանջում եւ ոչ անկարելին: Եւ եթէ ծնողը միայն երեխայի մարմնի նիւթն է տալիս եւ ոչ հոգին, նկարչից ինչո՞ւ պէտք է [նկարուածի] հոգին պահանջի:

Եւ եթէ այլ շնչաւոր կենդանի էք դուք նկարում, շունչ ունէ՞ք նրանց տալու[65]:

Եւ եթէ ասեն, մարգարէն ասում է՝ «Ո՞ւմ էք նմանեցնում Տիրոջը» (Ես. Խ 18), [ապա] ասենք, եթէ Սուրբ Գիրքը չէք ընդունում, ինչո՞ւ էք հիմա վկայակոչում: Նոյն այդ մարգարէն ասում է. «Բարձրեալը ձեռակերտ տաճարում չի բնակւում» եւ թէ՝ «Ի՞նչ տուն պիտի կառուցէք ինձ համար» (Ես. ԿՁ 1): Ապա՝ «Մի՛ կանգնեցրէք Աստծոյ տաճար», ապա՝ «Իզուր էին Մովսէսի խորանն ու Սողոմոնի տաճարը»: Եւ՝ «Եթէ մարմնական ճաշակելիք չունի, ինչո՞ւ էք յանուն Աստծոյ կենդանի զոհաբերում, եւ եթէ մարմնական հոտոտելիք եւ ականջ չունի, ինչո՞ւ էք կնդրուկ ծխում եւ ինչո՞ւ էք աղաղակում առ Աստուած»:

Եւ քանի որ [Սուրբ] Գրքից ես վկայակոչում, արի՛ Գրքով էլ պատասխանեմ քեզ: Մովսէսն ասում է. «Աստուած արարեց մարդուն իր պատկերով» (Ծննդ. Ա 27): Արդ, եթէ Աստուած արարեց իր պատկերով, անկարելի չէ լինի, որ մենք էլ Աստծոյ պատկերը գծենք:

Դարձեալ, մարգարէներին Աստուած երեւաց մարդկային կերպարանքով, ինչպէս Աբրահամին եւ Դանիէլին՝ ծեր եւ հինաւուրց (Դան. է 9), Եսայուն՝ բար-

ձունքում նստած աթոռին (Ես. Զ 1), Եզեկիէլին՝ նստած քառակերպ աթոռին (Եզեկ. Ժ 1), ուստի մենք էլ նկարում ենք երեւացած պատկերները[66]:

Դարձեալ, Բանն Աստուած մարդու կերպարանք առաւ Սուրբ Կոյս Մարիամից եւ իր պատկերը դրոշմեց դաստառակի վրայ եւ ուղարկեց Աբգար թագաւորին, որով [սա] բժշկուեց ցաւերից[67]: Ուստի [այստեղից էլ] առնելով՝ նկարում ենք նրան:

Դարձեալ, Տիրամայրը Վերափոխման օրն իր ձեռքով կենդանագիր թողեց մեզ՝ ի նշան բժշկութեան, որը կայ մինչ այսօր, որից հրաման առնելով՝ բազում տեղերում նկարուեցին սրբերի պատկերները: Տեսնելով մարմնական աչքով եւ իմանալի մտքով՝ դիտարկում ենք նախատիպը:

Այս է սրբերին նկարելու պատճառը: Այժմ պատասխանենք հարցին, որ ասում է՝ «Ո՞ւմ էք նմանեցնում Տիրոջը» (Ես. Խ 18):

Պէտք է իմանալ, որ Հին օրէնքն արգելում էր պատկերագրութիւնը, ասելով՝ «Մի՛ արա Աստծոյ նմանութիւնը՝ ո՛չ երկնքում, ո՛չ երկրի վրայ» (Ելք Ի 4): Նախ՝ որովհետեւ աննման է արարածների աստուածային էութիւնը: Երկրորդ՝ որպէսզի չմոլորուեն կռապաշտութեան մէջ, որովհետեւ դեռ անկատար էին, ինչի [պատճառով] Մովսէսի ոսկորները թաքցրեց, որպէսզի չպաշտեն: Երրորդ՝ դեռ չէր մարմնացել Բանն Աստուած, իսկ երբ մարդացած երեւաց, հրաման տուեց մեզ կատարեալների պատկերները նկարել, ինչպէս ասացինք:

Իսկ որ զրպարտում են մեզ, թէ՝ դէպի արեւելք արեգակին ենք երկրպագում, ասենք, որ ոչ թէ արեգակին ենք երկրպագում, այլ արեգակի արարչին: Որովհետեւ, յայտնի է, որ նրանք առաւօտեան արեւելքում արեգակին են պաշտում, երեկոյեան՝ արեւմուտքում են [նրան] երկրպագում, իսկ մենք՝ քրիստոնեաների ազգը միշտ արեւելքում ենք [երկրպագում]: Եւ պատճառն այն է[68], որ մեր Տէր Յիսուս Քրիստոս արեւելեան կողմից համբարձուեց երկինք եւ խոստացաւ միւս անգամ գալստեանը դարձեալ գալ արեւելքից: Ուստի ակնկալելով Փրկչի գալուստը՝ արեւելեան [կողմն] ենք երկրպագում:

Իսկ դուք ինչո՞ւ էք դէպի հարաւ երկրպագում՝ թողնելով Աստծոյ երկրպագութիւնը եւ պաշտելով Իսմայէլի տունը, ապա ուրեմն [դուք] մարդապաշտ էք եւ ո՛չ աստուածապաշտ:

Իսկ եթէ ասեն՝ իսրայէլացիներն էլ դէպի հարաւ էին երկրպագում, ապա ասենք, որ ջհուտ էք եւ ողջ մարդկութեան անէծքը:

Դարձեալ, ասենք, որ նրանք ո՛չ թէ դէպի հարաւ, այլ Երուսաղէմի բոլոր կողմերում էին երկրպագում Քրիստոսին, որ այնտեղ յայտնուելու էր մարմնով եւ այնտեղ վերջին դատաստանն է անելու, իսկ դուք մեռած մարդկանց եւ գերեզմաններն էք երկրպագում:

Այսքանն այս մասին:

Ժ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Որ առանց զանազանելու՝ անխտիր ուտում են բոլոր պիղծ կենդանիներին, բացի խոզից:

Եւ պէտք է իմանալ, որ մաքուր եւ անմաքուր կենդանիների զանազանութիւնը Աստուած դրեց բնական օրէնքների մէջ եւ Մովսէսի գրքում:

Բնական [օրէնքներում] տարբերակեց չորս [խումբ] կենդանիներ: Նախ՝ շաղղակերներն, իբրեւ գազաններ: Երկրորդ՝ անճռռնի խոշորները, ինչպէս ուղտը եւ փիղը: Երրորդ՝ վտիտ եւ գարշելիները, ինչպէս զեռունները: Չորրորդ՝ վնասատուները, ինչպէս օձն ու մողէսը եւ նրանց նմանները: Սրանք ի բնէ պիղծ էին համարուել՝ Ադամից սկսած:

Եւ խօսքով էլ Աստուած Նոյին ասաց՝ եօթը-եօթը մաքուր [կենդանիներից] եւ երկու-երկու անմաքուրներից ներս թողնի տապան: Եւ տապանից դուրս գալուց յետոյ մաքուրներից եօթնական պատարագեց Աստծուն, իսկ անմաքուրներից՝ ոչ:

Իսկ Մովսէսի գրքում յայտնի [խօսեց] եւ յստակ զանազանեց: Ունենալով բնական ընտրութիւնը՝ չորքոտանիների մէջ աւելացրեց նաեւ սրանց. նախ՝ որոճողներ. երկրորդ՝ կճղակաւորներ. երրորդ՝ որ պորտով են միզում. չորրորդ՝ եղջերաւորներ. հինգերորդ՝ որ կզակի տակ ատամներ ունի: Այս հինգը մաքուրներն են ցոյց տալիս, իսկ եթէ մէկը սրանցից պակաս է, անմաքուր է, ինչպէս ուղտը, որ միայն որոճող է, բայց միւսները պակասում են. խոզը բաժանուած կճղակներ ունի եւ պորտամէզ է, սակայն մնացածը չունի. նապաստակը որոճող է, այլ մնացածը պակաս են:

Իսկ թռչուններին [այսպէս]. ուղղակտուցներ, կոճաւորներ, երամագնացներ, եւ այն, որ կաշուեպատ քարաճիկ ունի մէջը եւ մորթելուց յետոյ մագիլները ուղիղ է պահում: Սրանք են մաքուր [թռչունների] հինգ նշանները: Նոյնպէս ձուկը, որ թեւ եւ թեփ ունի, ուտելի է:

Ահա սրանք Մովսէսի ձեռքով Աստուած ընտրեց եւ օրէնքներ սահմանեց, որ պահում ենք մինչ այժմ:

Եւ պարզ է, որ դուք օրէնքներ չունէք՝ ո՛չ բնական, ո՛չ խօսքով [սահմանուած], ո՛չ գրաւոր, ո՛չ էլ նոր, երբ անխտիր բոլոր կենդանիներին ուտում էք[69]:

Եւ եթէ ասեն, ինչո՞ւ էք դուք ձիու մազից մաղ պատրաստում եւ մշակում կաշին: Ասենք, որ դուք էլ խոզի մազով էք ձիթաղացի մաղը սրբում եւ ձէթը ուտում, մաշկում էք էշի կաշին: Եւ ջրաշունը, աղուէսը, գայլը պիղծ են եւ միսն՝ անմաքուր, [սակայն] մորթին հագնում էք: Պատճառն այն է, որ արհեստաւորը ինչ պատրաստում է, մաքուր է եւ պիտանի: Այդպէս էլ ձիու կաշին եւ ձիու մազը մաքրւում են արհեստի միջոցով:

Եւ եթէ ասեն. դուք ինչո՞ւ էք խոզի [միս] ուտում, ասենք՝ երկու պատճառով. նախ՝ որովհետեւ նախնիներից [եկած] աւանդութիւն է, որ մարդիկ սովորութեամբ են ուտում եւ բաց չեն թողնում խոզ ուտելը: Երկրորդ՝ ինչպէս հռոմն ու

ֆրանկը նապաստակ ու ճագար են ուտում, այդպէս էլ հայերը խոզ են ուտում: Սակայն [ճիշտը] չուտելն է, ըստ որում լաւ է միս չուտել եւ գինի չխմել, պահքով եւ պարկեշտութեամբ մնալ. այս է բարին եւ ընդունելին Աստծոյ եւ ոչ թէ ուտել-խմելը:

Իսկ դուք ինչո՞ւ էք ձի ուտում, որ մաքուր [կենդանու] նշան չունի, հետեւաբար պիղծ է:

Եւ եթէ նրանք ասեն մեր մարգարէն հրամայեց ուտել, ասենք, որ ձեր ասածը ոչ մի գրով վկայուած չէ, միայն ձմեռուայ եւ սաստիկ սովի ժամանակ, ասուեց ուտել եւ փրկուել, ոչ թէ ամեն ժամ ուտել:

Դարձեալ, եթէ Մովսէս մարգարէն պիղծ անուանեց ձին, ուղտը, նապաստակը, իսկ ձեր Մահմէտն ասաց թէ՝ մաքուր են, ապա հակառակ է Մովսէսին եւ մարգարէ չէ: Այդ դէպքում, ինչպէ՞ս էք ընդունում, որ Սուրբ Գիրքը երկնքից է իջած, եթէ Մովսէսի հին օրէնքներին հակառակում էք:

Դարձեալ ասենք, որ ոչնչով չեն զանազանւում ոչխարն ու այծը, որ մեզ համար ուտելի են [հաւասարապէս], այդպէս եւ ձին, ջորին ու էշն իրարից չեն զանազանւում, ինչո՞ւ չէք ուտում:

Ասենք, որ ձիու նմանակները՝ էշն ու ջորին անսուրբ են, ուրեմն ձին էլ անսուրբ է: Եթէ ձին մաքուր [կենդանի է], ինչո՞ւ չէք զոհաբերում եւ մատաղ անում, ինչպէս ոչխարը կամ եզը[70]:

Դարձեալ գինին պիղծ եւ անսուրբ էք ասում, որովհետեւ չարիքի պատճառ է, ձին էլ ուրեմն պիղծ է, քանի որ բազմաթիւ չարիքների պատճառ է, որովհետեւ պատերազմները, սպանութիւնները, թալանը, աւերածութիւնները նրանով են կատարւում, ուստի հարկ չէ այն ուտել[71]:

Այսքանն այս մասին:

ԺԱ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Որ գինին պիղծ է, [սակայն] խմում են[ք]: Արդ, նախ սա ասենք. բոլոր մարգարէները եւ Աւետարանը գինին ազնիւ եւ մաքուր վկայեցին, իսկ ձեր Մահմէտը՝ պիղծ, ուրեմն հակառակ է մարգարէներին եւ մարգարէ չէ:

Դարձեալ, Մովսէսն ասում է. «Ամէն ինչ, որ Աստուած արարեց, բարի է» (Ծննդ. Ա 31), որովհետեւ Աստուած բարի է եւ չար չի գործում: Արդ, եթէ գինին չար է, ուրեմն չարից է ստեղծուած եւ ոչ Աստծուց, եւ կլինի երկու աստուած՝ երբեմն՝ բարի, երբեմն չար արարող:

Դարձեալ, ամենայն տեղ, ուր ծնողը մաքուր է, ծնունդն էլ մաքուր է, ինչպէս ոչխարը եւ գառը: Արդ, գինու ծնողը խաղողն է՝ մաքուր է եւ ուտելի, [ուրեմն] ծնունդը՝ գինին էլ՝ մաքուր եւ ըմպելի է:

Դարձեալ, մաճառն [քաղցու] էլ, գինին էլ՝ խաղողից են. եթէ մաճառը ազնիւ է, ուրեմն գինին էլ ազնիւ է: Եթէ հակառակ փաստարկեն, թէ՝ ոչ ամէն բան, որ առաջանում են մի [աղբիւրից] մաքուր են, ինչպէս որ՝ մի մօրից կաթը եւ մէզը. մէկը մաքուր է, միւսը՝ պիղծ. այդպէս էլ

խաղողից՝ մաճառը մաքուր է, գինին՝ պիղծ:

Ասենք, որ ճիշտ օրինակ չես բերում՝ երկու պատճառով: Նախ, որովհետեւ մօր մէջ [ի սկզբանէ] զանազան էին մաքուրը եւ պիղծը, իսկ այստեղ մաճառը եւ գինին նոյնից են առաջանում: Երկրորդ, այնտեղ կաթը միշտ մաքուր է, իսկ մէզը՝ պիղծ, իսկ այստեղ միշտ չէ, այլ՝ ժամանակի մէջ: Որովհետեւ ահա երէկ ամբողջութեամբ մաճառ էր եւ մաքուր, նոյնն այսօր գինի է եւ պիղծ, իսկ վաղը [դառնալու է] քացախ եւ մաքուր, ուրեմն ինչպէս մաճառն ու քացախն են մաքուր, այդպէս էլ այսօր գինին է մաքուր:

Եթէ ասեն, կան բաներ, որ երէկ կամ ապագայում մաքուր են, [իսկ] այսօր՝ պիղծ, ինչպէս ոչխարի միսը ձեր պահքի ժամանակ, ապա ասենք, որ եթէ այդպէս է, ապա մենք միսը պիղծ չենք անուանում, այլ այսօր ենք [պահքի ժամանակ համարում] պիղծ: Այդպէս էլ դուք գինին պարզապէս պիղծ մի՛ յայտարարէք, այլ ասացէք, որ այսօր է պիղծ մեզ համար: Հետեւաբար գինին ձեզ համար պիղծ է, մեզ համար՝ մաքուր:

Եւ եթէ ասեն, բազմաթիւ մաքուր բաներ որակապէս փոխուելով՝ պղծւում են, ինչպէս հոտած միսն է փոխում որակը, այդպէս էլ մաճառը որակը փոխելով՝ դառնում է պիղծ գինի, ասենք, ըստ դրա՝ որակն է պիղծ եւ ոչ գինին, որովհետեւ գինին գոյացութիւն է, իսկ որակը՝ պատահականութիւն:

Դարձեալ ասենք, որ առարկայի որակի բնական փոփոխութիւնը ոչ թէ պղծում, այլ առաւել մաքրում է [այն], ինչպէս կենդանու արիւնը, որ պիղծ է, սակայն սպիտակ կաթի փոխուելով՝ մաքրւում է: Եւ ջուրը տնկիների մէջ փոխւում է պտղի որակի եւ մաքրւում: Այդպէս էլ [իր] բնական որակով մաճառը դառնում է գինի, ապա՝ քացախ եւ փոփոխուելուց չի պղծւում, ուստի ակնյայտ է, որ գինին ազնիւ է ըստ որակի եւ մաքուր՝ ըստ էութեան:

Եւ եթէ մեզ հարցնի տաճիկներից մի տգէտ մարդ կամ բռնաւոր. գինին ազնի՞ւ է, թէ պիղծ՝ ի՞նչ պատասխանենք: Կարծ պատասխանի՛ր, ասա՛, որ մեզ համար ազնիւ է, ձեզ համար՝ պիղծ:

Ասա՛ նաեւ, որ սակաւ գինին եւ չափաւորն օրինաւոր է, իսկ անչափը՝ պիղծ, որ հարբեցողութիւն է, որովհետեւ բազմաթիւ չարիքներ նրանից է, այսինքն՝ գինուց եւ հարբեցողութիւնից առաջ են գալիս հոգու եւ մարմնի [չար գործերը]: Նախ խափանում է բանականութիւնը, բռնկում ցանկութիւնները, առաջ բերում տրտմութիւն, որը պատճառ է դառնում շնութեան, սպանութեան, այլ բազում չարագործութիւնների, ուստի պիղծ է՝ ըստ գործերի, եւ այդ չար գործը լինում է հարբեցողութիւնից: Այս պատճառով արգելուած է հարբեցողութիւնը, որովհետեւ հարբեցողները Աստծոյ արքայութիւն չեն ժառանգում, ասում է մեր [Սուրբ] Գիրքը (տե՛ս Ա Կորնթ. Զ 10):

Դարձեալ ասա՛, որ գինու բնութիւնը ազնիւ է, իսկ գործը՝ պիղծ, ինչպէս սուրը, որի նիւթը երկաթն է, եւ բարի է, իսկ գործը՝ չար եւ մերժելի, որ սպանութիւնն

է: Այդպէս էլ գինու գործն է չար եւ վատթարագոյն, որովհետեւ թուլացնում է մարմինը, ծռում լեզուն, աչքը, ականջները, ոտքերն ու ձեռքերը գործի մէջ: Եւ այլ բազում վնասներ է գործում գինին:

Եւ պէտք է իմանալ, որ սակաւ գինին, երբ չափաւոր են խմում, շահաւէտ է եւ օգտակար: Նախ, տրտմութիւնն է անցկացնում, ամոքում հիւանդութիւնը (տե՛ս Ա Տիմ. Մ 23), աւելացնում ուժը, որի պատճառով էլ երեք խումբ մարդիկ են վայելում գինին. տրտմութիւն [ունեցողները], ծերերը, հիւանդները, ինչպէս որ Սողոմոնն է ասում՝ «գինին տուէ՛ք տրտմածներին, այլեւ ծերերին եւ հիւանդներին» (Առակ. ԼԱ 6): Սրանց է պատշաճում գինին:

Իսկ եթէ մէկն ասի, ինչպէս պիղծ է շատ գինին, [այդպէս] էլ պիղծ է քիչը, որովհետեւ միեւնոյն գինին է, ինչպէս որ մսեղէն պիղծ կերակուրը հաւասարապէս պղծում է մարդուն՝ [թէ՛] մի պատառը, թէ՛ մէկ լիտրը: Ասենք, որ երկու տեսակ է պիղծը. կայ, որ պիղծ է ըստ նիւթի, կայ, որ պիղծ է ըստ գործի: Այն, որ պիղծ է ըստ նիւթի, հաւասարապէս պղծում է մարդուն, ինչպէս որ մէկ ձուն եւ տասը ձուն միապէս են լուծում մեր պահքը: Իսկ որ ըստ գործի է պիղծ՝ սակաւը չի պղծում, այլ՝ շատը, ինչպէս որ փուշը, որ քիչ է ծակում, չի սպանում, իսկ նետը, որ առաւել է խոցում, սպանում է: Այդպէս էլ սակաւ գինին չի վնասում, իսկ անչափ շատը վնասում է:

Այլեւ Մովսէս մարգարէն, որի գիրքն ընդունում էք եւ կոչում «Թավրէթ», Աստծոյ հրամանով ամէն օր Տաճարում երկու գառ էր խորովում՝ սափորի չորրորդ մասով գինի, բաղարջ հացով, եւ գինին անապակ [էր]: Նոյնպէս եւ յետոյ Սողոմոնը, որ տաճարը կառուցեց, այդպէս էր անում: Եւ եթէ պիղծ էր գինին, ինչո՞ւ էին տանում Տաճար եւ խմում քահանաները:

Այսքանն այս մասին:

ԺԲ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Որ միշտ ջրով լուացւում են եւ համարում մեղքերից մաքրուած: Որի կապակցութեամբ ասենք, որ եթէ ջուրը մաքրում է բոլոր մեղքերը մարմնի, ապա չի մաքրում հոգու կեղտը, որը մեղքն է, որովհետեւ մարմինն անմարմինը չի կարող մաքրել:

Իսկ եթէ ասեն, ինչպէս մարմինն է պղծում անմարմին հոգին՝ մեղքերով, այդպէս եւ բարի մարմինը [մաքրում է] գործերով, ուրեմն կարող է ջուրը մաքրել հոգու մեղքը: Ասենք, որ մեր մարմինը միաւորուած է անմարմին հոգուն, ուստի մարմնի թէ՛ բարի գործը, թէ՛ չար, հասնում է հոգուն: Իսկ ջուրը մարմինն արտաքնապէս է լուանում եւ չի հասնում հոգուն, որն անմարմին է, ուստի եւ չի կարող մաքրել հոգու մեղքը:

Իսկ եթէ ասեն, դուք չէ՞ք մկրտւում, ասենք, որ մեր մկրտութիւնը սոսկ ջրով մարմնի լուացումը չէ, այլ զօրացած Սուրբ Հոգով՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի հրամանով, թէ՝ մկրտուէք Սուրբ հոգով եւ

ջրով: Արդ, ջուրը լուանում է մարմնի աղտը, իսկ Հոգին Սուրբ մաքրում է մեր հոգու թաքնուած մեղքերը, ապա ուրեմն նման չէ մեր մկրտութիւնը ձեր լուացմանը:

Դարձեալ, Քրիստոս մկրտուեց Յորդանան գետում եւ զօրացրեց ջուրը, բացուեց երկինքը, Հայր Աստուած վկայեց Քրիստոսի համար՝ «Դա՛ է իմ սիրելի Որդին», եւ Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ նրա վրայ, ուստի մենք հաւատալով Սուրբ Երրորդութեան եւ մի Աստուածութեան՝ մկրտւում ենք այդ ջրով եւ մաքրւում մեղքերից: Իսկ ձեր լուացումն այդպիսին չէ:

Դարձեալ, Քրիստոսի կողից ջուր դուրս եկաւ եւ արիւն՝ ի փրկութիւն հաւատացեալների: Եւ մենք հաւատում ենք Քրիստոսի խաչին, թաղմանը, նրա յարութեանը, եւ մկրտւում ենք Քրիստոսի կողի ջրով՝ նրա թաղման եւ յարութեան խորհրդով:

Այսպիսին չէ, սակայն, ձեր լուացումը:

Եւ եթէ ասեն, ձերն էլ նոյնպիսի տարրական ջուր է, ասենք, որ նման չեն մեր մկրտութիւնը եւ ձեր լուացումը, թէպէտ միեւնոյն ջուրն է, [որովհետեւ] տարբեր են կատարումները: Ինչպէս օրինակ, միեւնոյն կինը մի մարդու համար ազնիւ ամուսնութեամբ է, որ օրինուել է պսակադրութեամբ, իսկ ոմանց համար՝ շնութիւն է. ահա նոյն կինն է եւ նոյն գործը՝ սակայն կատարումները այլեւայլ: Այսպէս էլ թէպէտ միեւնոյն ջուրն է՝ մկրտութեան [դէպքում]՝ խառնուած է օրհնութեանը, իսկ լուացման [դէպքում]՝ ոչ:

Եւ ինչպէս քրտինքն էլ, մէզն էլ մարմնից են՝ մէկն առողջարար է, միւսը՝ ոչ: Եւ կարող է մի ջուրը քաղցր լինել, միւսը՝ դառը: Այդպէս էլ նոյն ջրով այլ են մեր մկրտութիւնը եւ ձեր լուացումը:

Նախ մեր մկրտութիւնը խորհուրդ է, որի ժամանակ յիշում ենք Սուրբ Երրորդութիւնը, [երբ] խօսքը հանգչում է ջրի նիւթին եւ դառնում խորհուրդ, իսկ ձերը՝ ոչ: Երկրորդ՝ մեր մկրտութիւնը ծնունդ է հոգով՝ Սուրբ Հոգուց, իսկ դուք չէք ծնւում հոգով, որովհետեւ չէք հաւատում Սուրբ Հոգուն: Երրորդ՝ մի անգամ է Հոգու ծնունդը, ինչպէս եւ մարմնինը, իսկ ձերը՝ բազում անգամ: Չորրորդ՝ մենք ուրիշի ձեռքով ենք մկրտւում, [իսկ] դուք [ինքներդ] էք ձեզ լուանում: Հինգերորդ՝ մկրտութիւնը մեր Քրիստոսի կողի ջրով է եւ Յորդանանի ջրով, որ յայտնի է աւազանում դրուած խաչով եւ ջրին խառնուող Սուրբ միւռոնով, իսկ ձերը այդպէս չէ:

Եւ եթէ ասեն, Մովսէսը եւ միւս մարգարէները այդպէս չլուացին ջրով, ասենք, որ Մովսէսը ջրի մաքրութեան կարգը սահմանեց մկրտութեան օրինակով՝ որպէս նախընթաց [օրինակ]: Եւ [քանի որ] չունէք Մովսէսին, չունէք [նաեւ] նոր մկրտութիւնը, ուրեմն ոչինչ է ձեր լուացումը[72]:

Եւ հարց եմ տալիս ձեզ. ձեր լուացումը սրբո՞ւմ է մեղքերը, թէ՝ չի սրբում: Եթէ սրբում է բոլոր մեղքերը, այլ [մնացած] բարութիւններն ինչո՞ւ էք անում,

ինչպէս ուխտի գնալը[73], ողորմութիւն տալը[74], պահքը, կամուրջը եւ այլն: Այլ բարի գործեր մի՛ արէք, որովհետեւ ահա ջուրը մաքրեց ձեզ, իսկ եթէ բարի գործերն են մաքրում մեղքերը, ուրեմն անօգուտ եւ աւելորդ է ջրով լուացումը:

Եւ եթէ ասեն, որ դուք նոյնպէս մկրտութիւնից յետոյ բարի գործեր էք կատարում, ասենք, որ մկրտութիւնը մաքրեց բոլոր մեղքերը՝ սկզբնական եւ ներգործական, մեծ ու փոքր՝ մի անգամ եւ ոչ թէ կրկին, որովհետեւ հոգեւոր ծնունդն էլ մէկ [անգամ է], ինչպէս եւ՝ մարմնաւորը, եւ մի անգամ Քրիստոս մկրտուեց, մի անգամ էլ խաչուեց: Իսկ երբ մկրտութիւնից յետոյ մեղանչում ենք բազմիցս՝ զղջումով, խոստովանութեամբ, ապաշխարելով եւ բարի գործերով ենք մաքրւում, եւ պահքը, ողորմութիւնը, աղօթքներն են քաւում մեղքերն ու ջնջում անօրէնութիւնները եւ ոչ թէ մկրտութիւնը:

Եւ եթէ ասեն՝ փոքր մեղքերը մեր լուացումն է մաքրում, իսկ մեծերը՝ բարի գործերը, ասենք որ ջուրը փոքր մեղքերն է սրբում, [ուրեմն] ինչո՞ւ ձեր առականքն էք լուանում, որ շնութիւն եւ պոռնկութիւն գործեց, որը մեծ մեղք է: Այդպէս էլ ձեռքը, որ յափշտակութիւն եւ սպանութիւն գործեց, ուստի փաստ է, որ անօգուտ է ձեր լուացումը:

Եւ դարձեալ, բարի գործերը, որ մեծամեծ մեղքեր են մաքրում, նրանք կարող են մաքրել նաեւ փոքրերը, ինչպէս կացինը, երբ հատում է ծառի արմատը, չորանում են նաեւ մանր ճիւղերը, ուրեմն եւ անիմաստ է ձեր լուացումը:

Եւ եթէ ասեն, ուրեմն ընդհանրապէս պէտք չէ լուացումը, ասենք, բնաւ ոչ՝ ոչ հնում եւ ոչ նորում, ինչպէս ցոյց տրուեց: Այլ է մարմնական մաքրութիւնը, ինչպէս որ մէկը բաղնիքում մարմնի կեղտերն է լուանում: Եւ մենք ամէն օր մեր ձեռքերն ու երեսն ենք լուանում, եւ հոգու համար մաքրութիւն չէ այն, այդպէս էլ ձեր լուացումը: Ապա թէ ոչ՝ նայի՛ր ջրերի գորտերին, որ մշտապէս լուացւում են եւ ոչ մի օգուտ չկայ դրանից:

Դարձեալ ասենք, որ ձեր լուացումը մեղքերի մաքրութիւն չէ. եւ [դա] ակնյայտ է [այն բանից], որ երբ գնում էք մաքուր կնոջ մօտ, յետոյ լուացւում էք, ինչպէս պիղծ կնոջ մօտ գնալուց [յետոյ]: Արդ, եթէ ջուրն է մաքրում՝ կամ ձեր մէջ ազնիւ կին չկայ, եւ ամէնը շնութիւն է, ուստի եւ լուացւում էք, կամ էլ՝ օրինաւոր արդար կին ունէք եւ լուացւում էք, եւ ջուրն այն մաքրութիւն է մարմնի, ինչպէս բաղնիքինը, եւ ոչ թէ՝ հոգու մաքրութիւն, ինչպէս ասացինք:

Այսքանն այս մասին:

ԺԳ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Թլփատման [մասին], որ «սուննաթ» են [կոչում] եւ անարգում մեզ, թէ՝ անթլփատ էք:

Նախ ասում են, թէ՝ Աբրահամի ուխտով էր թլփատութիւնը, եւ մենք էլ նրա որդիներն ենք՝ թլփատութեամբ:

Նախ պատասխանենք, որ մենք Աբրահամի հաւատն ունենք եւ հաւատով ենք նրա որդիները, որ առաւել է, քան թլփատութիւնը, որովհետեւ հաւատաց Աբրահամը Աստծուն եւ արդարացաւ, ասում է [Սուրբ] Գիրքը (տե՛ս Հռոմ. Դ 9) եւ ոչ թէ թլփատութեամբ:

Դարձեալ, Աստուած թլփատութեան ուխտ արեց Աբրահամի հետ, որ օրէնք էր անկատարների համար, եւ նոյն Աստուած փոխեց այն եւ տուեց մեզ մկրտութեան սրբութիւն՝ իբրեւ օրէնք կատարեալներիս[75]:

Դարձեալ, Աբրահամին տուեց մարմնաւոր թլփատութիւն, իսկ մեզ՝ հոգեւոր: Դուք աւելորդ մորթին էք կտրում, որ անօգուտ է՝ առանց հաւատի եւ բարի գործերի, իսկ մենք աւելորդ մեղքն ենք կտրում՝ հաւատով եւ բարի գործերով: Ապա ուրեմն հոգեւոր թլփատութիւն ունենք մենք եւ ո՛չ դուք:

Դարձեալ ասենք, որ թլփատութիւնն արդարութիւն չէ, այլ տարբերող նշան, որովհետեւ Աբրահամի որդիները տարբերուեցին այլազգիներից, ինչպէս մէկը իր ոչխարին է դրոշմում, որ առանձնանայ ուրիշի [ոչխարներից]: Եւ յայտնի վկայութիւն կայ, երբ քառասուն տարի անապատում էին, չէին թլփատւում, իսկ երբ մտան աւետեաց երկիրը, այդժամ թլփատուեցին, որ տարբերուեն այլազգիներից:

Դարձեալ թլփատութիւնը նշան էր այն ազգի եւ [այն] մասի, [որտեղից] ծնուելու էր Քրիստոս: Ուստի Աբրահամը երդուեցնում էր երանքով՝ ծածկապէս խորհրդանշելով Քրիստոսին: Իսկ մենք Քրիստոսից մարմնապէս չենք ծնւում, այլ հոգեպէս, ուստի թլփատւում ենք ոչ թէ մարմնապէս, այլ՝ հոգեպէս:

Դարձեալ, թլփատութիւնը նշանն էր հրեայ ազգի, որ բաժանուելու էր Ուխտից եւ Աստծոյ օրէնքներից եւ կտրուելու Քրիստոսի բոլոր անդամներից եւ դառնալու ողջ մարդկութեան խոտանը, ինչպէս այժմ են, որովհետեւ Աստծոյ աչքից ընկան, այլեւ դարձան ողջ մարդկութեան ատելիքը:

Դարձեալ, չենք թլփատւում, որպէսզի բաժանուենք [հրէաներից եւ մկրտւում ենք, որպէսզի բաժանուենք] հեթանոսներից: Իսկ դուք քանի որ թլփատւում եւ չէք մկրտւում, ակնյայտ է, որ հաւասարւում էք հրէաներին եւ բոլոր ազգերի անէծքն էք: Եւ չունէք Նոր օրէնքը, որովհետեւ չէք մկրտւում, [սրանով] էլ հաւասարւում էք կռապաշտներին:

Եւ եթէ ասեն, թէ՝ Քրիստոս թլփատուեց, դուք քրիստոնեաներդ ինչո՞ւ չէք թլփատւում, ասենք, նախ Քրիստոս թլփատութեամբ Հին օրէնքը կատարեց, իսկ մեզ որպէս Նոր օրէնք մկրտութիւնը տուեց՝ ասելով. «Մկրտուեցէ՛ք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Դարձեալ, Քրիստոս թլփատուեց, որպէսզի հակառակող չերեւայ Հին օրէնքին, այլ՝ հնազանդ եւ կատարող, ինչպէս քառասնօրեայ տաճար գալը եւ օրէնքը կատարելը:

Դարձեալ, որպէսզի երեւութական չերեւայ Որդու մարդեղութիւնը, ինչպէս Աբրահամին երեւաց (տե՛ս Ծննդ. ԺԸ 1),

այլ թլփատուեց, որովհետեւ ստոյգ մարդ եղաւ:

Դարձեալ, մինչեւ Վերնատուն եւ խաչելութիւնը ինչ որ կատարեց Քրիստոս, չաւանդեց մեզ, այլ [Վերջին] ընթրիքից յետոյ դրեց Նոր օրէնքի սկիզբը եւ աւանդեց մեզ՝ ասելով. «Այս կատարէ՛ք իմ յիշատակի համար» (Ղուկ. ԻԲ 9):

Դարձեալ, Քրիստոս թլփատուեց մարմնով, որպէսզի իր դրած ուխտը հաստատի եւ իրագործի, իսկ մեզ հրամայեց հոգեւոր թլփատութիւն, այսինքն՝ մեղքը կտրել հոգուց եւ մարմնից[76]:

Եւ եթէ ասեն, ապա Հապէշի հարաւային ազգը թլփատւում է ըստ օրէնքի, եւ քրիստոնեաներ են, ուրեմն դուք էլ պէտք է այդպէս վարուէք, ասենք որ նրանք յանուն օրէնքի չեն թլփատւում, այլ այն պատճառով, որ այդ երկիրն անբարենպաստ է, եւ այդ աւելորդ մորթը վնասում է, եւ մարդը մահանում է:

Իսկ եթէ ասեն, ինչպէս որ մկրտութիւնն է մաքրում սկզբնական մեղքը, այդպէս էլ թլփատութիւնը, ասենք, որ թլփատութիւնը Հին օրէնքում էր՝ սկզբնական մեղքի դէմ՝ որպէս նախօրինակ եւ նմանութիւն, իսկ մկրտութիւնը Նոր [օրէնքում] է սկզբնական մեղքի դէմ՝ որպէս իրական եւ ճշմարիտ:

Դարձեալ, ինչպէս ճրագը գիշերն է լուսաւորում, սակայն լոյսի բացուելով՝ խաւարում է, այդպէս էլ թլփատութիւնը Հին [օրէնքում] ուժ ունէր, սակայն երբ ծագեց մկրտութեան շնորհը, տկարացաւ թլփատութեան օրէնքը:

Դարձեալ, մկրտութիւնը Հին [օրէնքում] անօգուտ էր, քանի դեռ չէր մկրտուել Քրիստոս, իսկ թլփատութիւնը Նոր [օրէնքում] է անօգուտ, որովհետեւ վերացաւ Քրիստոսով, [եւ] ամէն ինչ իր ժամանակի մէջ է զօրաւոր: Ուստի ակնյայտ է, որ չնայած հնում էլ մկրտւում էին, ինչպէս Մովսէսը եւ Յովհաննէսը, սակայն չէր կատարւում մկրտութեան խորհուրդը: Այսպէս եւ եթէ մէկը նորում թլփատուի, չի կատարուի թլփատութեան խորհուրդը եւ չի սրբուի սկզբնական մեղքը:

Դարձեալ, թլփատութիւնը մաքրում է միայն սկզբնական մեղքից, ինչպէս ոմանք են ասում, սակայն մկրտութիւնը մաքրում է սկզբնականից եւ ներգործականից, որը յայտնի է նոր հաւատացեալների [օրինակով], որոնք մկրտւում են եւ մաքրւում բոլոր մեղքերից: Հետեւաբար, հաւասար չեն մկրտութիւնը եւ թլփատութիւնը:

Դարձեալ, թլփատութիւնը սկզբնականն էլ չի մաքրում, ինչը յայտնի է մարգարէներից, [որոնք] թէպէտ թլփատուեցին, սակայն դժոխք իջան՝ սկզբնական մեղքի պատճառով, ինչպէս որ յայտնի է այն, որ մկրտուածները չմտան դժոխք:

Դարձեալ, մկրտութիւնը բացում է երկնքի դուռը, որը չի կարող [անել] թլփատութիւնը, ըստ որում՝ «Ով չի ծնւում ջրով եւ հոգով, չի մտնում արքայութիւն» (Յովհ. Գ 5)՝ թող որ թլփատուած լինեն:

Դարձեալ, մկրտութիւնն ազատում է յաւիտենական պատժից, որ չի կարող անել թլփատութիւնը:

Դարձեալ, մկրտութեամբ մաքրում են ե՛ւ արուն, ե՛ւ էգը, իսկ թլփատութեամբ՝ միայն արուն, իսկ էգը՝ ոչ:

Դարձեալ, թլփատութիւնը մարմնաւոր կնիք էր՝ ժամանակաւոր եւ անցողիկ, եւ յայտնի է, որ փոխուել է, իսկ մկրտութիւնը հոգեւոր եւ յաւիտենական կնիք է, որովհետեւ անփոփոխ է մկրտութեան կնիքը հոգում:

[Եւ] այս համեմատութիւնն ըստ հին թլփատութեան է, իսկ ձեր «կրճատելը» թլփատութիւն չէ, որ Աստուած տուեց Աբրահամին: Եւ յայտնի է երկու [փաստով]: Նախ, որ Աբրահամի ուխտով ութօրեայ էին թլփատում, իսկ ձերն այդպէս չէ, այլ ե՛ւ ծերին, ե՛ւ տղային էք թլփատում: Երկրորդ՝ Աբրահամը ուզեց արու երեխաներին թլփատել, իսկ ձեր Մահմէտը՝ ե՛ւ արու, ե՛ւ էգ, որ Աստծոյ օրէնքին դէմ հակառակութիւն է[77]:

[Իսկ հիմա] ցոյց տամ, որ դուք՝ տաճիկներդ, թլփատութիւն չունէք: Եթէ թլփատում էք ե՛ւ արուին, ե՛ւ էգին, սա հակառակ է Աբրահամի ուխտին եւ խայտառակութիւնն է Աստծոյ օրէնքի: Եթէ միայն արուին էք թլփատում, ահա [ուրեմն] ձեր կանայք անթլփատ են: Եւ երբ դուք նրանց խառնակւում էք, դուք էլ նրանց հետ դառնում էք անթլփատ. նա, ով խառնակւում է պոռնիկ կնոջը՝ մի մարմին է դառնում պոռնիկի հետ: Ահա ակնյայտ է, որ ոչ մի կերպ չունէք թլփատութիւն, ինչպէս հրէաները եւ չունէք մկրտութիւն, ինչպէս քրիստոնեաները: Ուրեմն յայտնւում էք կռապաշտների եւ հեթանոսների դասում, որոնք չունեն թլփատութիւն եւ ոչ էլ՝ մկրտութիւն, ինչպէս որ դուք չունէք:

Այսքանն այս մասին:

ԺԴ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Այն, որ պահք չունեն, ո՛չ հնում հրէական, ո՛չ նորում՝ քրիստոնէական: Նախ տեսնենք կերակուրների տարբերութիւնը, ո՞րն է նրանցից պահքի, որը զատկական: Ասենք, որ բոլոր մարմինները բաժանւում են երկու [տեսակի]՝ շնչաւոր եւ անշունչ, այսինքն կենդանի եւ անկենդան: Արդ, ինչ որ կենդանի է, օրինակ՝ ոչխարը եւ կամ կենդանուց է առաջ եկել, օրինակ՝ կաթը եւ ձուն, սրանք ուտիքի եւ զատկի կերակուր են, իսկ որ անկենդան է եւ անշունչ, ինչպէս բոյսերը եւ պտուղները՝ պահքի կերակուր են[78]: Իսկ դուք այս ընտրութիւնը չունէք, ուրեմն պահք էլ չունէք:

Նախ, Մովսէսը քառասուն ցերեկ եւ գիշեր պահեց եւ ոչինչ չկերաւ[79]: Քրիստոսն էլ քառասուն ցերեկ ու գիշեր պահեց առանց ուտելու: Իսկ նորում քրիստոնեաները յիսուն օր են պահում եւ բաւարարւում պահոց ուտելիքներով: Իսկ ձեր պահքը այդպէս չէ. նախ, երեսուն օրով պակաս է, քան հնում եւ նորում, իսկ կերակուրը մսեղէն է, [որ] զատկական եւ բարիկենդանի է: Ապա ուրեմն պարզ է, որ չունէք պահք:

Իսկ եթէ ասեն՝ մինչ երեկոյ ոչինչ չենք ուտում, ասենք, որ պահքը երկու [հանգամանքով է] տարբերւում. ժամա-

նակի եւ կերակրի, ինչպէս մենք՝ քրիստոնեաներս մինչեւ երեկոյ ծոմ ենք պահում եւ երեկոյեան ուտում պահքի կերակուրը: Արդ, դուք պահում էք ըստ ժամանակի, իսկ ըստ կերակրի լուծում էք [այն], ուրեմն պահք չունէք:

Դարձեալ, ողջ տարին ցերեկը ուտում էք, գիշերը՝ ոչ, իսկ Ռամատան ամսին[80] գիշերն էք ուտում, իսկ ցերեկը՝ ոչ, եւ ակնյայտ է, որ ինչպէս միւս ամիսները չէք պահում, այս ամիսն էլ չէք պահում:

Դարձեալ, ձեր պահքը երեսուն օր չէ, այլ՝ մի օր, որովհետեւ եթէ այսօր պահեցողութիւն էք անում, երեկոյեան լուծում էք եւ բարիկենդան անում եւ նորից միւս օրը պահում էք:

Դարձեալ, մի ցերեկն ու գիշերը կազմում են մէկ օր, ինչպէս Մովսէսն է ասում՝ «եղաւ երեկոյ եւ եղաւ առաւօտ՝ մէկ օր» (Ծննդ. Ա 5): Արդ, դուք ցերեկը պահում, իսկ գիշերը լուծում էք, որից պարզ է, որ ձեր պահքը կէս օր է եւ ո՛չ ամբողջական:

Դարձեալ Աստծոյ մօտ՝ երկնքում, ցերեկ եւ գիշեր չկայ, այլ միշտ ցերեկ է: Իսկ մեզ մօտ արեգակի ընթացքից կէտից-կէտ դառնում է մէկ օր: Իսկ [քանի դեռ] արեգակը չի ժամանել [միւս] կէտը՝ միեւնոյնն է [թէ որ ժամին ես] լուծում [պահքը]՝ ցերեկը, թէ՝ գիշերը:

Դարձեալ, ցերեկը պահում էք, իսկ գիշերը լուծում՝ կարծելով, թէ ցերեկն Աստուած տեսնում է, իսկ գիշերը՝ ոչ, այլապէս ինչո՞ւ գիշերն էլ չէք պահում[81]:

Այսքանն այս մասին:

ԺԵ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Որ հայի մորթածը չեն ուտում:

Եւ նախ իմանալու է, որ երեք բան չեն պղծում. մէկը՝ լեզուն, եթէ այլազգիների հետ խօսի, երկրորդ՝ ձեռքը, եթէ անսուրբ կենդանի բռնի, երրորդ՝ սուրը՝ ինչ էլ որ կտրի, չի պղծում:

Արդ, հարցնում եմ ձեզ. ձեռքը եւ դանակը մաքուր են, ի՞նչն է, որ պղծում է կենդանուն:

Ասում են՝ «յանուն Հօր եւ Որդու եւ Հոգու». Աստծո՞ւն ենք անուանում, թէ՝ այլ մէկին: Նրանք ասում են, թէ՝ Աստուած էք ասում, սակայն երեքի [անուն էք տալիս]: Ասենք, հապա դուք յանուն Աստծոյ ինչո՞ւ էք ասում՝ «բա նամի խուտա, բսմիլա, ռահման ու ռահիմ»: Ահա դուք եւս Երրորդութեան անունն էք յիշում. եւ չնայած դուք ձեր լեզուով էք ասում՝ «բա նամի խուտայ», մենք՝ մեր [լեզուով] «յանուն Աստուծոյ», չի պղծում լեզուն: Արդ, հարցնում եմ, եթէ ձեր լեզուով ասում էք «բսմիլա»[82] անմաքուր կենդանու համար, ինչպիսին արջը կամ գայլն է եւ մորթում այն, մաքրո՞ւմ է, թէ՞ չի մաքրում. դուք ինչո՞ւ բոլոր կենդանիներն այսպէս չէք մորթում եւ ուտում: Իսկ եթէ ասում էք չի մաքրում, ասենք, որ ինչպէս «բսմիլայն» պիղծ կենդանին չի մաքրում, այդպէս էլ «Հայրը եւ Որդին եւ Հոգին» չի պղծում մաքուր կենդանին: Ուրեմն խոտելի չէ քրիստոնեայի մորթածը:

Իսկ եթէ ասեն, որովհետեւ դուք անթլփատ էք, ասենք, որ եթէ անթլփատի մորթածը պիղծ է, հայր Աբրահամն էլ դեռ անթլփատ լինելով՝ հրաման առաւ Աստծուց վերցնել երեքամեայ ոչխար, արջառ, նոխազ, տատրակ եւ աղաւնի եւ պատարագեց, ու երեկոյեան տեսաւ Աստծուն՝ մի՞թէ ընդունելի չեղաւ:

Եւ աւելի առաջ, երբ Նոյը դուրս եկաւ տապանից եւ զոհաբերեց մաքուր կենդանիներ ու Աստուած ընդունեց: Այդպէս եւ Աբէլի զոհաբերութիւնը, որ Աստուած ընդունեց կրակով: Եւ արդ, ի՞նչ էք ասում. պի՞ղծ էին նրանց զոհաբերութիւնները, քանի որ անթլփատ էին:

Իսկ եթէ ասեն, այն ժամանակ դեռ չէր գործում անթլփատութեան ուխտը, ասենք, որ այնժամ չէր գործում անթլփատութեան ուխտը, իսկ այժմ էլ այդ ուխտը վերացել է, եւ մեծագոյն ուխտ է տրուել մեզ՝ Քրիստոս: Եւ ինչպէս նրանց զոհաբերութիւնն էր մաքուր, որ անթլփատ էին, այդպէս էլ մերն է մաքուր:

[Աւելին], ձեր Դմշխ մեծ քաղաքում[83] սունի տաճիկներ չկան[84], ինչպիսին դուք էք. [նրանք դէմ չեն], որ մորթը քրիստոնեաներն անեն, եւ ոչ մի տաճիկ մարդ չի համարձակւում անասուն մորթել[85]: Եւ կարո՞ղ էք սա ուրանալ: Ապա փաստ է, որ նորագիւտ մոլեռանդութիւն է[86] [պատել] ձեզ՝ մերժելու հայի մորթածը:

Եւ դարձեալ, եթէ այս կերպ մերժում էք քրիստոնեայի մորթածը, ցորենն ինչո՞ւ էք ուտում, որովհետեւ քրիստոնեաները հնձում եւ հաց են թխում, խաղող եւ ամենայն միրգ [քաղում]: Քանզի սրանք էլ տնկական «կենդանիներ» են, որոնք արմատացած են հողի մէջ, եւ հատումը նրանց՝ մորթելն է, ինչպէս որ ցամաքային կենդանիների «արմատը» [նրանց] շնչի մէջ է, ձկներինը՝ ջրի մէջ[87]. այդպէս էլ տնկիներինն ու բոյսերինը՝ երկրի մէջ: Եւ որ բաժանում է կենդանուց շունչը եւ ձուկը՝ ջրից, նրանց մորթելն է. այդպէս էլ, որ բաժանում է բոյսը արմատից՝ նրա մորթելն է:

Իսկ եթէ ասեն, ապա ինչո՞ւ դուք տաճիկի մորթածը չէք ուտում, ասենք, որ մորթը երեք պարագայ ունի. այսինքն՝ մորթուողը, մորթողը, մորթելը: Մորթուողը պէտք է մաքուր կենդանի լինի, ինչպէս ոչխարը, աղաւնին. մորթելը յանուն Աստծոյ պէտք է լինի եւ ոչ թէ յանուն կուռքերի զոհաբերուի: Իսկ մորթողը երկու յատկանիշ պէտք է ունենայ. նախ պէտք է կատարեալ տղամարդ լինի՝ ո՛չ էգ կամ չէզոք, կամ անկատար մանուկ, որից սերմնական զօրութիւնը պակասում է, երկրորդ՝ պէտք է լինի հաւատացեալ, որովհետեւ անհաւատը մեղքով սպանել է իր հոգին եւ մորթածը գազանաբեկ է, ուստի ուտելի չէ: Ա՛րդ, տաճիկի յանուն Աստծոյ մորթելը բարի է, եթէ կենդանին մաքուր է, սակայն քանի որ անհաւատ է եւ իր հոգին սպանուած է մեղքով, ուստի սպանուածը չի կարող արիւն հանել:

Եւ դարձեալ տաճիկն ախտացեալ է սոդոմական պղծութեամբ. ե՛ւ կնոջ հետ է ամուսնանում, ե՛ւ չէզոքի, ուստի նրա կողմից մորթուածը ուտելի չէ եւ պիղծ:

Այս պատճառով մենք տաճիկի մորթածը չենք ուտում:

Այսքանն այս մասին:

ԺԶ
ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆԸ

Որ կարծում են, թէ իրենք օրինաւոր են[88]:

Ուստի իրերի բնական կարգով քննութեամբ ցոյց տանք նրանց սուտ լինելը:

Նախ այսպէս, պլատոնական քաղաքային օրէնքով պոռնիկներին ու շնացողներին հրամայուեց բացայայտօրէն նստել փողոցներում եւ հրապարակներում, որպէսզի միւսները զատուեն նրանցից եւ գարշեն այդ չարութիւնից: Իսկ Մահմէտը «գովելի» օրէնք է սահմանել, որ եթէ տասն անգամ կամ աւելի գնան այդ ճանապարհով, պատուելի են. եւ Մահմէտին իր ազգի մէջ գովում են, թէ մի գիշերում այսքան կնոջ մօտ գնաց[89]: Երկրորդ՝ իմաստասէրն ասում է, որ մարդու յոյսը պէտք է լինի այն, որ աւելին գտնուի, քան ինքն է: Այդ է պատճառը, որ աղքատը յոյս ունի թագաւոր դառնալ: Իսկ տաճիկների ազգը այնպիսի յոյս ունի Մահմէտով, իբրեւ թէ արքայութեան դուռը նա է: Եւ փաստ է, որ բազում անգամներ Աստծուն յիշատակելով՝ չեն երկրպագում, իսկ երբ Մահմէտին են յիշում՝ ընկնում են երեսն ի վայր: Երկրորդ՝ հռչակում են, որ Մահմէտը նոր օրէնք է գրել, եւ յոյժ ստում են սրանով, որովհետեւ նրանց թլփատութիւնը Մովսէսի օրէնքով է, ինչպէս նաեւ լուացումը եւ նրանց աղօթքը, քանի որ իսրայէլացիք բոլորը Երուսաղէմի դէմ դիմաց էին աղօթում, իսկ սրանք դէպի ուխտատեղի[90]: Այլեւ ամուսնական ընծայ եւ ի դէմս Աստծոյ ասելը եւ այլն[91]: Եւ միայն տարբերութիւնն այն է, որ սրանք Մահմէտին մարգարէ են համարում, իսկ հրէան՝ ոչ: Չորրորդ՝ Աստծոյ արքայութիւնը ուտել-խմելու [վայր] են քարոզում եւ ասում, թէ՝ իւրաքանչիւր ոք քառասուն կամ եօթանասուն կին է ունենալու, որ յայտնի սուտ է, որը բացայայտեցինք վերը: Բոլոր ազգերը խոստովանում են, թէ ովքեր մեռնում են, նրանք էլ յարութիւն են առնելու: Արդ, աշխարհում շատերը կան, որ առանց կնոջ են մեռնում, որտեղի՞ց նրանց այդքան [կին]: Եւ ընդունում են նաեւ, որ մարդկային բնութիւնն այնտեղ չի բազմանալու, ապա ուրեմն սուտ է նրանց օրէնքը, սուտ է այնտեղ կին առնելը, քանի որ կինը որդեծնութեան համար է:

Դարձեալ, ասում են՝ պաշտում ենք Աստծուն, սակայն ուրանում են Որդուն: Ընդունում են յարութիւնը, սակայն Հոգուն տեղ չեն տալիս: Ասում են գործերի հատուցում, սակայն ամէն տեսակ մեղք են գործում: Եւ այս եւս. գինին պիղծ են ասում, սակայն բոլորը հարբեցողութեամբ են զբաղուում: Դառնալով մեզ՝ զրպարտում են, ասելով, թէ՝ ձեր քահանաները մահուան ժամին աղօթք են կատարում եւ տանելով եկեղեցի՝ հրաժարուել տալիս հաւատից, թերեւս

նկատի ունենալով հրաժարումը յանձին ննջեցեալի:

Այլեւ ասում են, թէ՝ Յիսէն գալու է աշխարհի վախճանին[92] եւ հարսանիք է անելու, թերեւս նկատի ունենալով Աւետարանի հոգեւոր հարսին ու փեսային եւ անմտութեամբ մարմնաւոր են կարծում:

Ինչպէս եւ այն հարցին՝ թէ՝ ի՞նչ է գրուած դրախտի դռանը, ասում են, թէ՝ Մահմէտի անունը, քանի որ նրանք արքայութիւնը մարմնական են կարծում, ուստի դուռն ու գրածն էլ մարմնական են հասկանում, չիմանալով, որ արքայութիւնը Աստծուն տեսնելն է, եւ դուռը՝ Քրիստոս է, ինչպէս Ինքը հրամայեց (տե՛ս Յովհ. Ժ 9):

Հարցրէ՛ք նրանց, թէ առաջին հայրերը՝ Աբրահամը, Մովսէսը, Դաւիթը ինչպէ՞ս մտան արքայութիւն, որ դեռ չգիտէին Մահմէտի անունը:

Եւ Քրիստոս հրամայում է՝ «Ուր եմ ես, այնտեղ իմ պաշտօնեան է լինելու երկնքում» (Յովհ. ԺԲ 26): Ահա եւ այդպէս քրիստոնեաները մտնում են արքայութիւն եւ չգիտեն Մահմէտի անունը[93]:

Այսքանն այս մասին:

ԳԼՈՒԽ Գ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ
Հատորիս եօթներորդ պրակը
ՀՐԷԱՆԵՐԻ ԴԷՄ

Կուրացած՝ հրէաները առարկում են մեր դէմ, որ դեռեւս չի եկել Մեսիան: Նախ, Եսայու խօսքը, որ ասում է՝ «Վերջին օրը յայտնի կլինի Տիրոջ լեռը» (Ես. Բ 2), վերաբերում է [ըստ նրանց] Քրիստոսի գալստեանը: Ա՛րդ, բազում օրեր են անցել, [ասում են] ձեր Մեսիայից յետոյ՝ աւելի քան հազար չորս հարիւր տարի, հետեւաբար, նա Մեսիան չէր:

Սրան եկեղեցու վարդապետները պատասխանում են, եւ ես էլ յղելով նրանց՝ ասում եմ, «վերջին օրեր» [ասելով] նկատի ունի ոչ թէ աշխարհի աւարտը, այլ օրէնքների պակասաւորութիւնը եւ նրա արդարութիւնը, քանզի Քրիստոսի գալստեան ժամանակ պակասաւոր էին նրանց օրէնքները, ուստի չընկալեցին արդարութեան արեգակ Քրիստոսին՝ լոյսից ընկնելով խաւարը:

Երկրորդ, նոյն Եսային ասում է, թէ՝ «Դէպ նա կգան բոլոր ազգերը» (Ես. ԿԶ 18), եւ սա նոյնպէս տեսնում ենք չկատարուած: Սրա մասին ասենք, որ «բոլոր» բառը Սուրբ Գրքում չպէտք է հասկանալ նեղ իմաստով, ինչպէս իմաստասէրների գրքերում: Այնպէս, ինչպէս Թագաւորաց Երկրորդ գրքում ասում է՝ «Մտաւ Աբիսողոմը իր հօր հարճերի մօտ ամբողջ Իսրայէլի աչքի առաջ» (Բ Թագ. ԺԶ 22) եւ ինչպէս նոյն տեղում ասում է՝ «Իսրայէլի բոլոր այրերն ասացին, որ բարի է Քուսիի խորհուրդը» (Բ Թագ. ԺԷ 14), նշանակո՞ւմ է, թէ ամբողջ Իսրայէլն ասաց սա: Ոչ: Հետեւաբար, «բոլոր» նշանակում է շատերը: Եւ այսպէս, առ Քրիստոս եկան ոչ բոլոր ազգերը, այլ ազգերից շատերը:

Երրորդ, առարկում են, որ Եսային ասաց՝ «Կձուլեն իրենց սրերից խոփեր, եւ ոչ մի ազգ միւսի դէմ սուր չի վերցնի» (Ես. Բ 4), եւ սա էլ չեղաւ: Ասենք, որ

մարգարէն սա ասել է այն խաղաղութեան համար, որ եղաւ Քրիստոսի գալուստից ոչ շատ առաջ, Քրիստոսի եղած ժամանակ եւ նրանից յետոյ քառասուն տարի, քանի դեռ հրէաները չէին ապստամբել հռոմէական տէրութեան դէմ: Եւ երբ ծնուեց Քրիստոսը, այնպիսի խաղաղութիւն էր, որ ամբողջ աշխարհին մէկ մարդ էր տիրում: Եւ ի՞նչ կայ զարմանալու, որ այդպիսի խաղաղ օրերին իրենց սրերից խոփեր ձուլէին: Եւ, որ ասում է՝ թէ «Եւ այլեւս չեն չմղելու ոչ մի պատերազմ» (Ես. Բ 4), [ճիշտ] պէտք է հասկանալ «այլեւս ոչ»-ը: Իսկ որ Թագաւորաց առաջին գրքում ասում է՝ «Չեն աւելանայ այլազգիները Իսրայէլի սահմաններում» (Ա Թագ. է 13), խօսքը Սամուէլի օրերի մասին է, քանի որ նրա մահուանից յետոյ դուրս եկան Իսրայէլի դէմ: Նոյն կերպ Քրիստոսի եւ առաքեալների քարոզութեան ժամանակ խաղաղութիւն էր: Չնայած, ոմանք ասում են թէ՝ ասուածները վերաբերում են ոչ թէ Քրիստոսի առաջին գալստեանը, այլ՝ երկրորդ:

Չորրորդ, առարկում են, թէ Եսային Քրիստոսի գալստեան ժամանակի մասին է ասել՝ «Գայլը գառան հետ է բնակուելու, եւ ինձը ուլի հետ է մակաղելու» (Ես. ԺԱ 6), մինչդեռ այս ասածներից ոչինչ չենք տեսնում կատարուած:

Ասենք այս մասին, որ Սուրբ Գիրքը բազմիցս առակներով է խօսում, ինչպէս Դատաւորաց գրքում ասում է՝ «Կամեցան ծառերն օծել իրենց թագաւոր» (Դատ. Թ 8), նոյնպէս եւ Յակոբը օրհնելով Յուդային՝ նրան նմանեցրեց առիւծի (տե՛ս Ծննդ. ԽԹ 9): Այդ կերպ եւ այստեղ ամբարիշտներին նմանեցում է գազանների, քանի որ հրէաները Քրիստոսի ժամանակ ոչ մէկի կողմից չէին նեղւում, եւ Քրիստոսի գալստեան ժամանակ գազանաբարոյ շատ ամբարիշտներ հնազանդուեցին Քրիստոսին:

Հինգերորդ, Օրինաց երկրորդ [գիրքն] ասում է՝ «Տէր Աստուած ողորմի քեզ» (Բ Օր. ԺԳ 17) եւ «Ի մի կհաւաքի քեզ բոլոր ժողովուրդների միջից» (Բ Օր. Լ 3). նոյնն է ասում նաեւ Եզեկիէլը երեսունիններորդ [գլխում] (տե՛ս ԼԹ 28): Ասենք նաեւ, որ Աստծոյ խոստումը կատարուեց Զօրաբաբէլի եւ Եզրի օրօք, ինչպէս ասում էր Նէեմիան իր աղօթքում՝ «Յիշի՛ր, Տէր խօսքը, որ պատուիրեցիր քո ծառայ Մովսէսին, որն ասում էր՝ «թէ ցրուած կլինեն մինչեւ երկրի արեւելքը, այնտեղից ժողովելու եմ եւ բերելու այն տեղը, որն ընտրել եմ» (Նէեմ. Ա 8), որը եւ կատարեց: Սակայն հրէաներն ասում են, որ բոլոր հրէաներին չի հաւաքել, ինչպէս խոստացել էր: Իսկ Եզրը ցոյց է տուել նրանց սուտ եւ ապաշնորհ լինելը. Եզրը Առաջին [գրքում] ասում է՝ «Նստեցին քահանաները եւ երգիչները, դռնապան նաթանացիներն իրենց քաղաքում, եւ ողջ Իսրայէլը իւրաքանչիւր քաղաքում» (Եզր. բ 70)[93]:

Վեցերորդ, առարկում են, թէ Երեմիան ասում է՝ «Այդ օրերին կփրկուի Յուդան» (Երեմ. ԻԳ 6), իսկ ձեր Մեսիայի գալստեան ժամանակ աւելի ցրուեցին եւ կորան: Ասենք, որ սրան Թալմուտը պա-

տասխանել է այսպէս. քանի որ «ջհուդը» թարգմանւում է խոստովանող[94], ուստի Մեսիային խոստովանողները կփրկուեն:

Եօթներորդ, առարկում են, թէ Եզեկիէլն ասում է, թէ՝ «Մեսիան կպատերազմի Գոգի եւ Մագոգի դէմ» (Եզեկ. ԼԸ, ԼԹ), որ չարեց ձեր Մեսիան: Ասենք, որ Գոգը եւ Մագոգը հոգեւորապէս հասկացվում են եկեղեցու բոլոր հալածողները, որոնց բոլորին Տէրը սատկացնելու է, ինչպէս ասում է սաղմոսը՝ «Ինչպէս բրուտի անօթ փշրելու ես նրանց» (Սղմ. Բ 9):

Եւ Հետրիի գրքում գրուած է, որ Եղիան ու նրա աշակերտներն ասացին, թէ՝ «այս աշխարհը վեց հազար տարի է, որ կայ, որից երկու հազարը՝ տոհուինը, այսինքն ունայնութեանն է [պատկանելու], երկու հազարը՝ օրէնքներին եւ երկու հազարն էլ՝ Մեսիային»: Եւ այսպէս, պարզ է, որ Մեսիան եկել է: Իսկ սաղմոսի մասին, որ ասում է «զարթնի՛ր, փառք իմ» (Սղմ. ԾՁ 9), մեկնիչն ու հրէաների աւանդութիւնն ասում են, որ խօսքը չորս թագաւորների մասին է, որ հալածեցին Իսրայէլին: Առաջինի վերաբերեալ «զարթնի՛ր, փառք իմ» ասւում է Բաբելոնի համար, որ տուեց մեզ Միսայէլին, Անանիային եւ Ազարիային: «Զարթնի՛ր» գոչեց սգի մէջ, որ տուեց Մուրքէին եւ Եսթերին: «Զարթնի՛ր» [գոչեց] յոյների մէջ՝ տալով մեզ մակաբայեցիներին: «Զարթնի՛ր» [գոչեց] Հռոմում՝ տալով մեզ Մեսիային:

Դարձեալ Իօմայի գրքում ասում է՝ «Մեսիան չի գայ, մինչեւ չտիրի հռոմէացւոց չար թագաւորն ամբողջ աշխարհում ինն ամիս»[95]: Եւ Ծննդոց գրքի Առաջին գլխի մեկնութեան մէջ Բերեսիաթասն ասում է՝ «Տասը թագաւորներ կտիրեն մինչեւ աշխարհի աւարտը»: Նախ՝ Աստուած, երկրորդ՝ Նեբրօթը, երրորդ՝ Յովսէփը, չորրորդ՝ Սողոմոնը, հինգերորդ՝ Նաբուգոդոնոսորը, վեցերորդ՝ Դարեհը, եօթներորդ՝ Կիւրոսը, ութերորդ՝ Ալեքսանդրը, իններորդ՝ Օգոստոս կայսրը, որ երկաթի նման կփշրի բոլորին, տասներորդ՝ Մեսիան, որ Առաջինն ու Վերջինն է (տե՛ս Յայտ. ԻԲ 13):

Արդ, եթէ ինն ամիս առաջ թագաւորում էր չար թագաւորը, ուրեմն Օգոստոս կայսեր ժամանակ ծնուեց Քրիստոսը, որը եւ վկայում է Սուրբ աւետարանը (տե՛ս Մտթ. Ա, Ղուկ. Բ):

Դարձեալ պէտք է իմանալ նաեւ, որ ծնունդները չորս տեսակ են. նախ՝ որ ոչ հօրից է, ոչ մօրից, ինչպէս Ադամինը: Երկրորդ, հօրից, բայց ոչ մօրից, ինչպէս Եւայինը: Երրորդ, հօրից եւ մօրից, ինչպէս մարդունը, չորրորդ, միայն մօրից՝ առանց հօր, ինչպէս Քրիստոսինը: Եւ նրա մասին ասաց Աբրահամին Աստուած, թէ՝ չորրորդ ծնունդով կազատվեն քո բոլոր զաւակները:

Իսկ Քրիստոսի ծննդեան տարուայ եւ Դանիէլի [նշած] եօթներորդի մասին կարող ես գտնել Չորրորդ Թագաւորութեան վերջում, երեսուներորդ համարում, ուր կգտնես նաեւ հրէաների դէմ շարադրուածը:

Աւարտուեց առաջին հատորն Աստծոյ օգնութեամբ:

ՑԱՆԿ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՍ ԱՐԻԱՆՈՍԵԱՆՆԵՐԻ ՀԵՐՁՈՒԱԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ՝ ՔՍԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐՈՎ

Առաջին, որ ասում են կամքով ծնուեց, թէ ակամայ: Պատասխանը [սրան], այլեւ՝ ուղղահաւատների հարցերը նրանց:

Երկրորդ՝ էութիւնի՞ց է ծնուել, թէ ոչ էութիւնից:

Երրորդ՝ ծնուեց եւ վախճանուեց, թէ ոչ:

Չորրորդ՝ Հայրն անծի՞ն է, թէ ոչ:

Հինգերորդ՝ կարո՞ղ է Հայրը ծնուած համարուել, քանի որ նոյն բնութիւնից է:

Վեցերորդ՝ «Հայր» անունը արարչութեա՞ն, թէ՞ բնութեան համար է:

Եօթներորդ՝ «Հայրն իմ մեծ է, քան ես» [ասուածը] եւ պատասխաններ նրանց ութ գլխով:

Ութերորդ՝ «Տէրն ստացաւ ինձ» [ասուածը] եւ պատասխաններ նրանց չորս գլխով:

Իններորդ՝ «Անդրանիկն արարածների» եւ պատասխաններ նրանց հինգ գլխով:

Տասներորդ՝ «Թագաւորելու է մինչեւ ժամանակը գայ» ասելը եւ հնազանդութեան մասին:

Տասնմէկերորդ՝ «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» [ասուածը] եւ պատասխաններ նրանց ութ գլխով:

Տասներկուերորդ՝ «Իմ Աստուածը եւ ձեր Աստուածը»:

Տասներեքերորդ՝ «Չեմ կարող անել ես ինքս ինձանից» եւ պատասխաններ նրանց տասը գլխով:

Տասնչորսերորդ՝ Հայրը գործում է եւ Որդին էլ նրա նման:

Տասնհինգերորդ՝ Որդուն կեանք վերապահելը, դատաստանը եւ այլն:

Տասնվեցերորդ՝ ոչ իմ կամքը, այլ՝ առաքողի:

Տասնեօթներորդ՝ Քեզ են ճանաչելու միայն որպէս ճշմարիտ Աստուած:

Տասնութերորդ՝ չկայ մի բարի, բայց միայն՝ Աստուած:

Տասնիններորդ՝ բարեխօսելն Որդու եւ Հոգու:

Քսաներորդ՝ Որդու չիմանալը վախճանի մասին: Այլեւ «Որդի» եւ «Բան» է կոչւում տասը գլխով: «Հովիւ»՝ տասը գլխով: «Մելքիսեդեկ»՝ տասը գլխով: «Փչումն»՝ տասը գլխով:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՈԳԵՄԱՐՏՆԵՐԻ ԴԷՄ՝ ԻՆԸ ԳԼԽՈՎ

Նախ՝ որ Երրորդութեան աստիճաններ են դնում եւ այլ են ասում Հոգին, իբրեւ պատահում:

Երկրորդ՝ բնութեամբ օտար եւ արարած են ասում:

Երրորդ՝ Հոգին ծնուա՞ծ է, թէ՞ անծին:

Չորրորդ՝ ոչինչ չի արգելում Հոգուն լինել Որդի, եթէ նոյն բնութիւնից է:

Հինգերորդ՝ ծննդեան եւ բղխման օրինակը, եւ որ՝ երկրի ծնունդները վեց եղանակով են:

Վեցերորդ՝ ասում են ամէն ինչ Որդու միջոցով է եղել, ուրեմն նաեւ՝ Հոգին:

Եօթներորդ՝ Հոգին ասում էք չգրուած Աստուած:

Ութերորդ՝ բազմաստուածութիւն են ասում:

Իններորդ՝ ինչպէ՞ս էք մէկ եւ երեք ասում, եւ պատասխաններ սրանց բոլորին:

Այստեղ կգտնես՝ չկան եւ ասում են. կան եւ չեն ասում: Չկան եւ չեն ասում: Կան եւ ասում են: Հոգու չերեւալու պատճառը: Այլեւ նրանց դէմ, որ արարած են ասում աստուածային Բանը եւ Հոգին:

Տասներորդ՝ տասը վկայութիւններ Երրորդութեան համագոյ լինելու մասին:

Տասնմէկերորդ՝ քսան գլուխներով Սուրբ Հոգու Աստուած լինելու մասին:

Տասներկուերորդ՝ Մակեդոնի առարկութիւնները՝ հինգ գլուխներով:

Տասներեքերորդ՝ նրանց, որ Հոգին Հօրից եւ Որդուց են ասում՝ ութ գլուխներով:

Տասնչորսերորդ՝ այն, որ Հոգին բխում է միայն Հօրից՝ տասը գլուխներով, վեց օրինակներով եւ ինը վկայութիւններով:

Այսքանը հոգէմարտների դէմ:

Իսկ քաղկեդոնականների դէմ

Առաջին գլուխը՝ Նեստորի դէմ՝ քսան գլխով:

Երկրորդ՝ երկաբնակների դէմ՝ տասնչորս գլխով:

Երրորդ՝ որ Քրիստոս ճշմարիտ աստուած է՝ քսան գլխով:

Չորրորդ՝ որ մէկն է մեր Տէրը եւ Աստուած մարմնով՝ քսան գլխով:

Հինգերորդ՝ Հայրը եւ Հոգին մարմնացեալ չեն, թէպէտ մի բնութիւն է Երրորդութիւնը:

Վեցերորդ՝ մարդկային բնութեամբ Աստուա՞ծ է, թէ՞ աստուածութեամբն՝ մարդ:

Եօթներորդ՝ ինչո՞ւ են ուրանում քաղկեդոնականները բնութեամբ միաւորուած լինելը:

Իններորդ՝ Աստուած եւ մարդ:

Տասներորդ՝ Աստուած մարդացեալ:

Տասնմէկերորդ՝ ինչպէ՞ս է Աստուածաբանը երկու բնութիւն ասում:

Տասներկուերորդ՝ ընդդէմ նրան Երրորդութիւնն է:

Տասներեքերորդ՝ փախչել Եւտիքէսից եւ Նեստորից:

Տասնչորսերորդ՝ ի՞նչ է մի բնութիւնը, ի՞նչ երկուսը եւ ինչպէ՞ս երկուսը եղան մի բնութիւն:

Տասնհինգերորդ՝ երկաբնակների տասը հարցումները մեզ եւ այդտեղ՝ մի կամքի, մի գործի եւ մի էութեան մասին:

Տասնվեցերորդ՝ ուղղափառների տասը հարցումները նրանց:

Տասնեօթներորդ՝ ի՞նչ է նշանակում համանգամայն Աստուած եւ մարդ ասելը:

Տասնութերորդ՝ այն, որ Քրիստոսի անդամները՝ ոտքը, ձեռքը, գլուխը՝ Աստուած են:

Տասնիններորդ՝ ո՞րն է «Աստծուն հաւասարը եւ բարձրացրեց, շնորհեց» բառերի [իմաստը]:

Քսաներորդ՝ երկաբնակների հարցերը՝ Բանի մարդեղութեան վերաբերեալ:

Այսքանը երկաբնակների վերաբերեալ եւ գրքի երկրորդ մասը:

ԳԼՈՒԽ Դ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ
Երկրորդ հատորիս առաջին պրակը
ՀԵՐՁՈՒԱԾՈՂՈՒԹԵԱՆ ԹԻՒՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սրանք թիւր կամքով եւ խոտոր մտքով շուռ տուեցին իմաստութեան աչքերը իմանալի ճառագայթից՝ անուղիղը խորհելով, անպատշաճ բարբառելով, յարձակուելով սանձարձակ լեզուով, անդուռ բերանը բացելով երկնքի դէմ, ցոփ շուրթերով բարբաջելով Բարձրեալի դէմ եւ թափառելով երկրում՝ լեզուագարելով, որոնց դատաստանը լինելու է արժանիօրէն եւ կորուստը չի ուշանալու: Սրանք ինքնըստինքեան հերձուածող դարձան՝ փախչելով կեանքից եւ կորստի հերձուածը ուսուցանեցին շատերին:

Ուղիղ դաւանանքի հետեւորդները սրանց մոլորութեան պատճառները ուրն են ասում:

Առաջինը մարդկային մտքի անգիտանալն է՝ իր տկար լինելու եւ փոքրութեան պատճառով՝ կարծելով, թէ ամէն ինչ գիտեն եւ սահման չունի [իրենց միտքը]: Այդ իսկ պատճառով նրանց ճշմարիտ չի թուում այն, ինչ չի ընկալում [միտքը] եւ այլ կերպ չեն հաւատում, բայց միայն այն, ինչ հասկանում են: Ինչպէս օրինակ, զգայական մեր աչքը չի կարող ընկալել արեգակի եւ միւս լուսատուների մեծութիւնը, այլ մտքով ենք ընկալում նրանց մեծութիւնը: Նոյն կերպ իմացական խորհրդի եւ գիտութեան [դէպքում], երբ չի կարողանում ընկալել միտքը, կարողանում է տեսնել հաւատը, բայց նա չունի հաւատ, այլ միայն՝ մտաւոր տեսութիւն:

Երկրորդ պատճառը, հաւատը իմացմամբ փոխարինելն է, եւ այն վերլուծելը մարդու կողմից. այդ դէպքում մարդը խաբուած է, քանի որ բնութիւնից մարդուն [տրուած չէ] տեսնելու իր ապագան եւ տեսնելու առանց աչքերի: Նոյն կերպ չի կարող ընկալել, եթէ փորձի մտքով վերլուծել Սուրբ Գիրքը, այնտեղի սքանչելիքները, սուրբ վարդապետաց խօսքերը, եւ ինչպէս ասում է Առակը՝ պակասամիտը չի կարող ընդունել խոհեմ խօսքը, այլ միայն այն, ինչ թափառում է իր մտքում (հմմտ. Առակ ԺԸ 2):

Երրորդ [պատճառը] գիտելիքների խորիմաստութիւնն է եւ ընկալողների անհասկացողութիւնը, այնպէս, ինչպէս ճպռոտած աչքը հեռուից չի կարող տեսնել մազը եւ այն, ինչ տեսնում է արծուի աչքը, չի կարող տեսնել մարդու աչքը: Նոյնպէս եւ բթամիտը չի հասկանայ այն, ինչ գիտի գիտունը եւ Աստծոյ ուսեալը, որոնց Աստուած նշանակեց

այլոց ուսուցիչ, ինչպէս մարգարէներին, առաքեալներին, վարդապետներին:

Չորրորդ [պատճառը] հաւատից հեռու լինելն է, որովհետեւ նրանք, ովքեր չեն տիրապետում գործնական իմացութիւնների, այլ [առաջնորդւում են] միայն զգայութիւններով, հեռու են հաւատից, ինչպէս երկիրը՝ երկնքից: Այդ պատճառով չեն կարող հասկանալ, որոնց մասին Տէրն ասում է՝ «[Եթէ կոյրը կոյրին առաջնորդի, երկուսն էլ խորխորատը կընկնեն» (Մտթ. ԺԵ 14, Ղուկ. Զ 39): Նոյն կերպ, ով զգայարաններն է առաջնորդ դարձնում իմացութեանը, ընկնում է մոլորութեան մէջ: Եւ այդպիսիք չեն կարող տրամաբանել հոգեւորի մասին, ինչպէս ի ծնէ կոյրը՝ գոյների, քանի որ ըստ վարդապետների՝ Աստուած լոյս է ոչ թէ մարմնի, այլ՝ մտքի համար, նա, ով չի տեսնում՝ կոյր է:

Հինգերորդ [պատճառն] այն է, որ Աստծուց հաւատի համար օգնութիւն չեն խնդրում, քանի որ հաւատը բնականապէս [տրուած] չէ, այլապէս բոլորին միակերպ [տրուած] կլինէր. հաւատն Աստծոյ բարութեան անվարձահատոյց պարգեւն է: Ուստի պէտք է յաճախակի խնդրել, ըստ այդմ՝ «Հաւատում եմ, օգնի՛ր իմ անհաւատութեանը» (Մրկ. Թ 23): Քանի որ ինչպէս արեգակը չի տեսնուի, եթէ ոչ իր լոյսով, այդպէս էլ իմանալի Աստուած չի տեսնուի, եթէ ոչ իւրաքանչիւրի հաւատի շնորհի լոյսով: Ուստի, նա, ով ծուլանում է խնդրել այս պարգեւը, չի կարող հաւատալ:

Վեցերորդը՝ մեղքերի պատճառն է, քանի որ ոմանք չար գործով իրենցից հեռացնում են արդարութեան արեգակի լոյսը, որոնց մասին Յոբն ասում է՝ «Ցերեկը փակեցին իրենց անձը եւ չտեսան լոյսը» (Յոբ. ԻԴ 16):

Եօթներորդ [պատճառը] հպարտութիւնն է, որ մտքի փքուելու արտայայտութիւնն է եւ բաժանում է Աստծուց, քանզի՝ «Տէրը ամբարտաւաններին հակառակ է եւ շնորհ է տալիս խոնարհներին» (Առակ. Գ 34): Եւ Դաւթի միջոցով ասում էր՝ «ով ամբարտաւանն էր աչքով եւ ագահ սրտով, նրա մօտ հաց չէի ուտում» (Սղմ. Ճ 5): Եւ ինչպէս սատանան ամբարտաւանութեան պատճառով զրկուեց Աստծոյ լոյսից, նոյնպէս եւ հպարտը զրկուեց շնորհից, ըստ Երեմիայի. «Քո յանդգնութիւնը եւ քո սրտի ամբարտաւանութիւնը քեզ մոլորեցրին» (Երեմ. Խ 29):

Ութերորդ [պատճառն] անկարգ զգացումներն են, որ միտքը տանում են հաւատին հակառակ, այսինքն երկիւղը, սէրը եւ ատելութիւնը: Ինչպէս գիջակնութիւնը թոյլ չի տալիս յստակ տեսնել, այդպէս էլ երկիւղը ետ է պահում շատերին Քրիստոսին հաւատալուց, ինչպէս ասում է Յովհաննէսը՝ «Այդպէս ասացին կոյրի ծնողները, քանի որ հրէաներից վախենում էին ի Քրիստոս խոստովանել» (Յովհ. Թ 22):

Նաեւ աշխարհի եւ փառքի հանդէպ սէրը թոյլ չի տալիս հաւատալ, ըստ այդմ՝ «Դուք իրարից էք փառք առնում, եւ չէք որոնում Միակի փառքը, ուստի չէք

կարող հաւատալ» (Յովհ. Ե 44), որովհետեւ ունեցուածքի հանդէպ սէրը ագահների աչքն է, իսկ հեշտամոլութեան սէրը՝ ցանկասէրների աչքը: Ատելութիւնը նոյնպէս շատերի միտքը հեռացնում է հաւատից, ինչպէս որ փարիսեցիների ատելութիւնն ու նախանձը թոյլ չտուեցին հաւատալ Քրիստոսին, թէեւ տեսնում էին բոլոր այն նշանները, որ ցոյց էր տալիս, ինչպէս սաղմոսն է ասում՝ «Ատեցին ինձ անիրաւաբար» (Յովհ. ԺԵ 25):

Իններորդ [պատճառը], որ նրանց բանականութիւնն է մոլորուած եւ ոչ ցասումը կամ ցանկութիւնը: Նրանց մօտ խօսքն է բռնադատում խիղճը եւ նրան ուղղութիւն պարտադրում, իսկ բանականութիւնը որպէս կառավարող չի ուղղում մոլորուած խոհեմութիւնը: Եւ ինչպէս աչքը չի տեսնում իր պակասութիւնը, այդպէս էլ բանականութիւնը չի տեսնում իր մոլորութիւնը: Այդ իսկ պատճառով էլ հերձուածողները դարձի չեն գալիս, քանի որ չեն կարողանում ճանաչել իրենց ստահոդութիւնը:

Տասներորդ [պատճառը], որ իրենց չար ճանապարհում կամակոր են, եւ դժուար է նրանց բժշկել: Ինչպէս ասում է առակը՝ «Թիւր են նրանց ճանապարհները եւ քմահաճ շաւիղները» (Առակ. Բ 15): Ընդ որում յանցաւորի խղճի ճանապարհը շեղ չէ, այլ ինքն է շեղւում ճանապարհից. ով կամքով չարացած է, նրա ճանապարհը խոտորուած է եւ որքան առաջ գնա, այնքան աւելի կմոլորուի: Այս պատճառով էլ հերձուածողը չի կարող ուղղուել:

Տասնմէկերորդ [պատճառը], որ նրանք հարազատ են դարձրել աւանդականը եւ ձեռքբերովի բնութեան սովորութիւնը: Ուստի հեշտը եւ աւանդականը միմեանց խառնելով՝ առաջ են գալիս հակառակասիրութիւնը եւ ինքնահաճութիւնը, որոնցով զինւում են ճշմարտութեան դէմ, քանի որ իրենց աւելի ճիշտ են կարծում, քան միւսներին: Ուստի եւ չեն համաձայնում վարդապետների ճիշտ լինելու հետ:

Տասներկուերորդ, որ նրանք «ուրախ են չար շեղումների համար», ինչպէս ասում է առակը (Առակ. Բ 14): Եւ սա է անբժշկելի ցաւը, որովհետեւ տրտմութեամբ մեղանչելը հիւանդութիւն ու գայթակղութիւն է, եւ հիւանդը շտապում է առողջանալ եւ գայթակղուածը՝ [դուրս գալ] ճանապարհ: Մինչդեռ չարով ուրախանալը մահ է եւ անզգայութիւն եւ մրցակցութիւն բժշկողի դէմ, ինչպիսիք էին հեթանոսներն իրենց կուռքերով, հրէաները՝ [իրենց] օրէնքներով, հերետիկոսների լեգեոններն իրենց աղանդներով: Եւ ինչպէս ասում են վարդապետները՝ բոլոր մեղքերի մէջ ծայրագոյնը կուռքերի երկրպագութիւնն է՝ երկու պատճառով:

Նախ՝ իւրաքանչիւր մեղք Աստծոյ պատուիրանների խախտում է, իսկ կռապաշտութիւնը մեղանչում է Աստծոյ էութեան եւ փառքի դէմ:

Երկրորդ, ամէն մի մեղք որպէս սանձ ունի Աստծոյ երկիւղը, որի շնորհիւ զղջում են, իսկ կռապաշտները երկիւղ չունեն Աստծուց: Ուստի, ակնյայտ է

յանցանքի մեծութիւնը, քանզի հին [օրէնքում] փոքր կամ մեծ մեղանչողը սրբւում էր՝ զոհաբերելով թռչուն կամ կենդանի: Իսկ կռապաշտութեան [մեղքն] այնքան մեծ էր, որ մինչեւ իսկ Միածին Որդին պատարագուեց մարմնով, որից յետոյ միայն վերացաւ կռամոլութեան մեղքն աշխարհից:

Արդ, կռապաշտն ու հերձուածողը հաւասարապէս ամբարիշտ են, որովհետեւ շան նման վերադառնում է իր փսխածին (Բ Պետ. Բ 22), որոնցից մէկը զուրկ է [հաւատից], իսկ միւսն էլ ուրացել ու հեռացել է դրանից: Եւ [հերձուածողութիւնը] առաւելապէս վատթար է՝ վեց պատճառով:

Նախ՝ հեթանոսները անգիտութեան պատճառով կուռքերին պաշտեցին, իսկ հերձուածողները գիտութեամբ են ամբարշտութիւն անում, որոնց պատիժը աւելի ծանր է:

Երկրորդ՝ որովհետեւ նրանք զղջում էին, որ յայտնի է հեթանոս հաւատացեալների [բարքից], իսկ հերձուածողներն իրենց ճիշտ համարելով՝ չեն զղջում, ինչպէս սատանան:

Երրորդ՝ որովհետեւ նրանք բազմապատկում էին Աստծոյ փառքը, թէպէտ ճշմարտութեանն անգիտանում էին, իսկ հերձուածողները Աստծոյ ճշմարիտ փառքը նուազեցնում են:

Չորրորդ՝ որովհետեւ նրանցից իւրաքանչիւրն իր անձի կորստեան պատճառ էր եւ [որ սահմանափակուեց] իրենց ժամանակով, իսկ հերձուածողները դառնում են իրենց եւ բազմաց կորստեան պատճառ, այսինքն՝ Քրիստոսի հօտի՝ «յափշտակելով նրանից եւ դարձնելով իրենը»,- ասում է Սուրբ Կիւրեղը[96]: Յետոյ էլ գրով աւանդեցին չար աղանդը ուրիշներին՝ որպէս չար յիշատակ՝ ի կորուստ իրենց անձերի:

Հինգերորդ, հեթանոսների մոլորութեան պատճառը սատանան էր, մինչդեռ սրանցը՝ Բանի մարդեղութիւնը:

Վեցերորդ, նրանք՝ հեթանոսները, միայնակ էին մոլորուած, իսկ սրանք հրեշտակներին էլ են դասում մեր շարքը, ինչպէս պարզ է դառնում Կիւրեղի «Պարապմանց գրքից»[97]:

Նմանութեամբ հաւասարւում է հերձուածողների եւ հրէաների պաշտամունքը: Նախ, ասում է՝ «Նրանք, որ Աստծու աչքից ընկան եւ նրա Որդուն անարգեցին» (հմմտ. Եբր. Ժ 29): Իսկ սրանք միայն Տիրոջն ուրանալով՝ քրիստոսամարտ լեզուով իրենց անձը կորստի են մատնում:

Երկրորդ, նրանք հակառակում էին Քրիստոսին ասելով, թէ՝ «Դու մարդ ես, սակայն քո անձը աստուած ես համարում» (Յովհ. Ժ 33): Իսկ սրանք միայն իբրեւ մարդ դաւանելով՝ Աստուած են համարում կոչմամբ եւ անձով:

Երրորդ, հրէաները չեն ընդունում երեք անձ եւ մի բնութիւն: Իսկ սրանք ուրանում են անձերի Երրորդութիւնը մի բնութեան մէջ:

Չորրորդ, հրէաները դաւանում են Մովսէսին եւ ուրանում Քրիստոսին, խաչը ու նրա օրէնքները: Իսկ սրանք խաչի մարդադաւան ուրացողներն են եւ [ուրացողները] Նոր կրօնի:

Հինգերորդ, հրէաները տիրանենգ եւ աստուածասպան են: Իսկ սրանք ըստ առաքեալի՝ «Աստծոյ Որդու անձն են խաչ հանում եւ դարձեալ խայտառակւում» (Եբր. Զ 6):

Վեցերորդ, նրանք անգիտութեամբ խաչեցին՝ «Եթէ հասկանային, գուցէ փառքի Տիրոջը խաչ չհանէին» (Ա Կորնթ. Բ 8): Իսկ սրանք իմանալով՝ իրենց անձը անարգեցին. «Եւ լաւ կլինէր, որ նրանք բնաւ չճանաչէին արդարութեան ճանապարհը, քան թէ ճանաչեցին եւ ետ կանգնեցին Սուրբ պատարագից» (Բ Պետ. Բ. 21): Եւ այլ նման շատ բաներ:

Ըստ այս օրինակի՝ քաղկեդոնական նոր հերձուածողները Նեռի կարապետներն են, անիծեալ Նեստորի եւ պիղծ Լեւոնի հետեւորդները: Սէր են քարոզում եւ նենգութեամբ Կայէնի դաւն են նիւթում: Շրթունքներով խօսում են եւ լեզուով դաւաճանում: Պետրոսին գլուխ համարելով՝ ոտնակոխ են անում նրա դաւանանքը[98]: Ուրանալով հաւատը՝ գիտութեամբ են պարծենում: Աղօթքի մէջ ծոյլ, բայց ողջոյնների թիւն են համրում: Յուսով մեղանչում եւ անյոյս կորստի են մատնւում: Ցանկութեան ախտում հեշտանալով՝ նոյնի մէջ գլորուածին են կանգնեցնում: Կրօնաւորների հետ կանայք շնանում են, [սակայն] նրանց սրբութիւնն են համբաւում: Խեղդուածներից չեն խորշում եւ պղծւում են զազիր կերակուրներով: Պահքը լուծելիս՝ ձկան միս, իսկ նաւակատիքին առանց ոսկորի միս են ուտում: Բաժանուելով հաւատից՝ բաժանում են Քրիստոսին, իսկ այլ եկեղեցիներին հերձուածող են կոչում: Տիրոջ մասին վկայութիւններ տուողներին անիրաւութեամբ հայհոյում են եւ խռովարար դատ են կատարում ժողովների մէջ:

Եւ ինչի մասին ես այստեղ պարկեշտութեամբ լռեմ, ապա, Յովհաննէսի Ընդհանրական թղթում Նեռի մասին առակելով ասում է՝ «Արդէն իսկ եկել են նեռները, քանի որ նա, ով ուրանում է, թէ Փրկիչը Քրիստոսը չէ, նա իսկ Նեռն է» (Ա Յովհ. Բ 18): Եւ սրանք նեռ են կոչւում բազմաթիւ բաղդատութեամբ:

Նախ՝ Նեռին է բնորոշ ուրանալ Աստծուն, ինչպէս իր անունն է յայտնում[99], այդպէս էլ հերձուածողն է ուրանում Որդու կամ Սուրբ Հոգու աստուածութիւնը. «Ով չի ընդունում Որդուն, ուրեմն չի ընդունում եւ Հօրը» (Ա Յովհ. Բ 23):

Երկրորդ, Նեռը հայհոյում է Քրիստոսին՝ իրեն կոչելով այն, նոյն կերպ հերձուածողներից ոմանք հայհոյում են Քրիստոսի մարդեղութիւնը, ոմանք սոսկ մարդ ասելով՝ բաժանում են աստուածութիւնը երկու բնութեան, երկու կամքի, բաժանում գործերը եւ այլն:

Երրորդ, [Նեռը] մոլորեցնող է կոչւում. հերձուածողներն էլ նենգափոխում են քրիստոնեաների ուղիղ հաւատը եւ նրանց բարի գործերը՝ ուսուցանելով թիւր հաւատ եւ չար գործեր:

Չորրորդ, նա սուտ Քրիստոս եւ սուտ մարգարէ է կոչւում, իսկ սրանք՝ սուտ քահանաներ, սուտ վարդապետներ եւ սուտ առաքեալներ են կոչւում:

Հինգերորդ, նա տաճարի պղծութիւն է կոչւում (տե՛ս Մտթ. ԻԴ 15, Մրկ. ԺԳ 14): Այդպէս էլ հերձուածողները պղծում են Աստծոյ տաճարը եւ սուրբ հաւատը, որով Քրիստոսը բնակւում է մեր մէջ, իսկ մենք՝ նրա:

Վեցերորդ, [Նեռը] հակառակում է Քրիստոսին եւ քրիստոնեաներին, իսկ սրանք հակառակում են սուրբ եկեղեցուն եւ ուղղափառ հաւատին: Եւ Բանն Աստուած վերցնելով հոգին ու մարդկային բնութիւնը՝ միաւորեց դրանք իր աստուածութեան մէջ, [իսկ] սրանք նրան հակառակ՝ տարանջատում են Բանը մարմնից, որ ըստ նրանց՝ մէկը չլինի Աստուած մարդացած եւ մարմինը՝ Աստուած[100], ու զանազան պատճառներ բերելով՝ մոլորեցնում են մարդկանց:

Եօթներորդ, նրան փոքր եղջիւր է կոչում Դանիէլը (տե՛ս. Դան. է 8), քանի որ պոզահարում է եւ խօսում յոխորտալով. հերձուածողներն էլ պոզահարում են եկեղեցուն եւ իրենց հայհոյիչ բերանը բացում դէպի երկինք եւ լեզուագարում երկրում:

Ութերորդ, նրան անուանում են ճանապարհի դարանակալ օձ (տե՛ս. Ծնն. ԽԹ 17), եւ սրանք էլ առաջին օձին նմանուելով՝ հրապուրում են շատերին եւ արտաքսում եկեղեցու դրախտից՝ շրթունքների տակ ունենալով իժի թոյն ու խայթոց, ում մօտենում են՝ խօսքի սկզբում, կամ վերջում՝ սպանում են հոգին երկճիւղ նենգաւոր լեզուով՝ թէ՛ չար ու բարի, թէ՛ ծածուկ եւ բացայայտ:

Իններորդ, նա նստելու է տաճարում եւ ուսուցանելու, իսկ սրանք՝ եկեղեցու ներսում՝ ունենալով բարեպաշտի կերպարանք՝ գառան մորթով ծածկուած գայլի են նման:

Տասներորդ, Նեռը խաբելու է քարոզութեամբ եւ հրաշագործութիւնների մասին ցնդաբանութեամբ, իսկ սրանք խաբում անմեղների միտքը՝ քաղցրախօսութեամբ եւ օրհնութեամբ՝ ներկայացնելով իբրեւ լոյսի հրեշտակ, ինչպէս նրանց հայր սատանան. եւ այս ամէնը առերեւոյթ է եւ ոչ ճշմարտութեամբ, որի ողջ նպատակը մարդկանց խաբեութեամբ գրաւելն է եւ հաւատից շեղելը, որովայնը լցնելը, մեղքերով բեռնուած կանանց դէպի իրենց գրաւելը:

Եւ բազմաթիւ ուրիշ համեմատութիւններ կան Նեռի ու հերձուածօղների միջեւ: Եւ այն, ինչ Տէրը գնեց, սրանք ուրանում են՝ մարդկանց մատնելով արագահաս կորստի: Եւ ինչպէս Նեռն է գործում սատանայի ազդեցութեամբ՝ ըստ առաքեալի (տե՛ս. Ա Յովհ. Բ 18, 22), այնպէս էլ սրանք են խորհում սատանայի ազդեցութեամբ եւ բարբառում նրա չար խորհրդով, մանաւանդ, թէ ինչպէս եկեղեցում նախապէս պատմուեց Նեռի ու հերձուածողների մասին, որ զգուշանան, այդպէս էլ սրանց մասին նախապէս պատմուեց առաքեալներին եւ վարդապետներին, որ անտեղեակները նրանց հետ չխոտորուեն:

Ուստի մենք էլ՝ համաձայն լինելով ուղղադաւան մեր սուրբ հայրերին, բերե-

ցինք նրանց որոշ առարկութիւնները եւ պատասխանները դրանց:

ԳԼՈՒԽ Ե՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴԴԷՄ ԷՈՆՈՄԻՈՍԱՑԻՆԵՐԻ ԵՒ ԱՐԻՈՍԵԱՆՆԵՐԻ ԵՂԾՄՈՒՆՔ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պրակ եւ հարց առաջին

Հայրն [իր] կամքո՞վ ծնեց որդուն, թէ՞ ակամայ: Եւ այն, ինչ պատասխանում են սրան, տարակուսանք է առաջացնում, որովհետեւ չարափառների ասելով, եթէ կամքով է, ուրեմն կամքի որդի է, հետեւաբար եւ Աստծոյ թոռը, եւ ուրեմն արարած է, ինչպէս միւսները «ինչպէս կամեցաւ եւ արարեց Տէրը». այսպիսով, [նրանք] կամքը մօրով են փոխարինում:

Պատասխանենք, որ ամէն մի համաձայնութիւն, կամքի [դրսեւորում է]՝ խորհելուց եւ իմաստութիւնից յետոյ, իսկ ըստ առաքեալի՝ Քրիստոս Աստծոյ իմաստութիւնն է (Ա Կորնթ. Ա 24): Հետեւաբար, նախ Որդի է առաջ, քան՝ կամքը: Եւ ասում են, եթէ այդպէս է, ուրեմն կամքով չէ Որդին: Ի՞նչ տարակուսելի է սա, որ կայ աւելի հզօրը քան Հայրը, որ պարտադրեց նրան, ինչպէս որ յղիութիւնն է պարտադրում ծնել: Կամ էլ ասում են հակառակ էր Հօրը: Եւ կամ՝ Աստուած ինչպէ՞ս կարող է բռնադատուած լինել: Այս կապակցութեամբ պէտք է ասել, որ ոչ կամքով էր, ոչ էլ ակամայ, այլ Որդին Հօր պատկերն էր եւ էութեան նկարագիրը՝ ըստ առաքեալի (Եբր. Ա 3): Եւ չի կարող միեւնոյն էութեան մէջ կամք եւ չկամութիւն լինել: Դա նրանից դուրս է: Եւ եթէ ասեն տգիտութեամբ, որ եթէ քանդեն նկարը, կվերանայ եւ Հօր էութիւնը, ապա [ասենք] բնութեամբ եւ էութեամբ է Որդի եւ ոչ կամքով կամ ակամայ:

Հարցրու դու նրանց, դու, որ քո հօրից ես առաջ եկել, կամքո՞վ ծնուեցիր, թէ՞ ակամայ: Եթէ կամքով՝ կամքի որդին ես եւ ոչ հօրդ, իսկ եթէ այդպէս է, վերացրու քո պատճառ հօրդ, կվերանաս եւ դու մարդկային տեսակից: Իսկ եթէ կամքով չէ, ո՞վ է, որ նրան բռնադատեց, քանի որ բնութիւնը ողջախոհ է, եւ սա յայտնի է շատերի կոյս լինելով: Կամ բոլոր եղածներին Հայր Աստուած կամքո՞վ արարեց, թէ՞ ակամայ: Եթէ ոչ կամքով, ուրեմն բռնադատուել է այլ հզօրի կողմից, ուստի նա չէր լինի Աստուած, քանի որ բռնադատուողը չի կարող Աստուած լինել: Իսկ եթէ կամքով է, ուրեմն կամքի արարածներն են եւ ոչ Աստծոյ: Իսկ եթէ կամքը միջոց ես դիտում, ուրեմն դուրս թողեցիր Նրա ողորմածութիւնն իր արարածների նկատմամբ, քանի որ այլ ես դիտում կամենալը եւ կամքը: Մինչդեռ մեզ համար նոյնն է շարժելը եւ շարժումը, ինչպէս նոյնն է ասելը եւ խօսքը՝ «Ամէնը, ինչ կամեցաւ՝ արեց»՝ ըստ մարգարէի (Սղմ. ճԺԳ 3):

Եւ կամ [ասում են՝] Հայր Աստուած կամքո՞վ է, թէ՞ ոչ կամքով: Եթէ կամքով է, ուրեմն կամքը առաջ է, քան էութիւնը, որ անհնար է նաեւ ստեղծուածների համար: Եւ սրանով կիսում են էութիւնը, կարծես թէ կէսը առկայ էր եւ [միւս] կէսի լինելը կամեցաւ: Իսկ եթէ կամքով չէ [ասում են], ապա ուրեմն բռնադատու-

թեամբ աստուածութեան մէջ ընդ-գրկուեց, հետեւաբար, եւ վերացաւ նրա անսկիզբ լինելը: Իսկ եթէ ենթարկուեց բռնութեան, ուրեմն Աստուած չէ:

Պրակ եւ հարց երկրորդ

Չարափառների երկրորդ հարցը. էութի՞ւնը ծնեց, թէ՞ ոչ էութիւնը:

Այս տարակուսելի [հարցադրմամբ], որ երկկողմանի սուտ է, կասկածի տակ են առնում Հօր էութիւնը, եւ Որդին դառնում է արարած, քանի որ ասում են, եթէ էութիւնը առաջ էր, քան Որդու ծնունդը, իսկ Հօր էութիւնը հայրութիւնն է, ուրեմն եթէ Որդու Հայրը չէր, վերանում է նրա էութիւնը: Իսկ եթէ չէր եւ յետոյ ծնեց, արդեօք ո՞ւմ Հայրն էր, եթէ չկար Որդին:

Սա է մեր պատասխանը: Նախ ասենք, թէ՝ Որդին Հօր ծնունդն է ի սկզբանէ: Հարցի լուծումը եւ Հօր էութեան հաստատումը ի դէմս երկուսի է: Ասելով «ծնունդ Հօրից»՝ նշանակում է չլինել առաջ, քան Հայրը: Եւ «ի սկզբանէ» ասելը [նշանակում է՝] չլինել յետոյ, քան Հայրը: Եւ որքան Հայրն է Հայր, այնքան էլ Որդին է նրան Որդի: Եւ ոչ թէ յետոյ՝ ըստ Արիոսի կարծիքի:

Այս նոյն հարցը կարող է տրուել մեր վերաբերեալ, որովհետեւ ասում ենք՝ էութիւնից ենք եղել եւ ոչ էութիւնից. էութիւնից, ինչպէս Հօր մէջ էիր զօ-րութեամբ եղած եւ յետոյ ներգործու-թեամբ ծնուած: Եւ ոչ էութիւնից, քանի որ այն քիչ հեղուկը [որից առաջ եկանք] չունէր միս, ոսկոր, ջիլ կամ մաշկ: Դարձեալ, էութիւնից, քանի որ մենք տարրերից ենք: Եւ ոչ էութիւնից, որով-հետեւ այդ տարրերն իրենք ոչ էութիւնից են եղել:

Հարցրու եւ դու նրանց, թէ Հայրը որեւէ մէկի՞ց է եղել, թէ՞ ոչ մէկից չի եղել: Եթէ որեւէ մէկից է, ուրեմն մերժեցիր Հօր անսկիզբ եւ անծին լինելը: Իսկ եթէ ոչ մէկից չի եղել, ուրեմն կարգեցիր նրան ոչ էութիւնից գոյացածների մէջ:

Կամ՝ ժամանակը ժամանակի՞ց է եղել եւ այժմ էլ ժամանակի՞ց է, թէ՞ ոչ ժամանակից: Եթէ ժամանակից էր, ո՞վ էր, որ պարունակում էր այդ ժամանակը: Իսկ եթէ ժամանակից չէր, ի՞նչ էր նոյն այդ ժամանակը, որ գոյացաւ լինելութեան սկզբում:

Կամ թէ՝ երբ եղար, մո՞տ էիր դու քեզ, եւ այժմ էլ մօտ ես քեզ, թէ՞ ոչ:

Պատասխան. Երբ հիւանդանում ես՝ մօտ ես քո հիւանդութեանը, երբ մանուկ ես՝ մօտ ես քո մանկութեանը, ալեւորութեան ժամանակ մօտ ես ծերու-թեանդ: Սակայն սա բաւարար [պատաս-խան] չէ, որովհետեւ որեւէ իր ինքն իրեն մօտ է ասւում, ինչն անհնար է: Իսկ դրանք քեզ հանար պատահականու-թիւններ են, այլապէս, եթէ դու քեզ մօտ լինէիր, ինչպէս մէկը միւսին՝ բաժանուած կլինես երկու մասի, եւ ինչպէ՞ս կլինես մէկ: Իսկ եթէ ոչ այն ժամանակ էիր մօտ եւ ոչ էլ այժմ ես մօտ քեզ, ուրեմն չես եղել եւ չկաս:

Պրակ եւ հարց երրորդ

Հակառակորդների երրորդ հարցն այս է. Որդին Հօրից ծնուեց եւ դադարեց,

թէ՞ դեռ ծնուում է: Եթէ դադարել է, ուրեմն հարկադրանքով էր եւ սկիզբ ունէր: Իսկ եթէ դեռեւս ծնուում է, ուրեմն անկատար է ծնունդը:

Երկուսից էլ հարկ է խոյս տալ, որովհետեւ եթէ պատասխանենք, թէ հարկ չէ, որ սկսուածն ամէն ինչով դադարի, ինչպէս հրեշտակները եւ մարդկային հոգիները, որովհետեւ սկսւում եւ չեն դադարում, ապա սա էլ պատասխան է, բայց ոչ բաւարար: Որովհետեւ Յոհան Դամասկացին էլ ասում է, թէ հարկ է, որ առաջ եկած ամէն մի սկիզբ վախճան ունենայ, սակայն հրեշտակները եւ հոգիները չեն վախճանւում, քանի որ սրանք պահպանւում են Աստծոյ կամքով եւ ոչ իրենց բնոյթի [շնորհիւ], որովհետեւ անէութիւնից եղածները կարող են անէութեան փոխվել[101]:

Եւ մեր պատասխանը սրան այս է. Հօրից ծնուածը միշտ Որդի է բնութեամբ, բայց կատարեալ է անձով, ինչպէս լոյսն է միշտ կրակից ծնւում եւ անկատար չէ՝ Որդու օրինակով եւ միշտ ջերմութիւն է բխում՝ նման Հոգու անսպառ բխման օրինակի: Եւ հուրը նոյն Հօր օրինակն է, որ անհնար է լինի առանց լոյսի ու ջերմութեան, քանի որ [դրանք] հրի էութիւնն են:

Պրակ եւ առարկութիւն չորրորդ

Եւ դարձեալ առարկում են, որ եթէ Հայրն Աստուած է եւ բնութեամբ անծին է, իսկ Որդին ծնուած, ուրեմն Որդին Աստուած չէ, քանի որ ծնելը եւ անծնելութիւնը հակառակ են միմեանց, ինչպէս սեւը եւ սպիտակը, կամ լոյսն ու խաւարը: Առարկութիւնն այս ակնյայտօրէն Որդուն կամ Հօրը ճարտարօրէն օտարում է աստուածութիւնից, քանի որ Հօր վերաբերեալ չի ասում, թէ Աստուած չէ, այլ անծնելութիւնն է [պատճառ բերում]: Պատասխանենք, որ անծնելութիւն կամ ծնելութիւն չի ասւում միայն աստուածութեան համար, քանի որ աստուածութիւնը հաւասար է Երրորդութեանը: Իսկ սրանք Հօր եւ Որդու առանձնաւորութիւններն են, եւ անծնելութիւնն ու ծնելութիւնը բնութիւններ չեն, այլ միեւնոյն բնութիւնը: Այլապէս քեզ հարկ է ասել, թէ ըստ բազում անունների՝ Աստուած ունի բազում բնութիւններ: Եւ որ անծնելութիւնն Աստծոյ բնութիւնը չէ, ինչպէս ասել թէ՝ Աստուած է, նախ, եթէ Աստուած ինքն անծնելութիւն լինէր, պէտք է ունենար անծնելութիւնից ստեղծուած ինչ-որ բան, սակայն քանի որ չունի, ուստի հեթանոսներից ոչ մէկն [իսկ] չի ասում նման բան, այլ բոլորն էլ խոստովանում են, որ Աստուած Աստուած է եւ ոչ թէ անծնելութիւնն է Աստուած: Երկրորդ, եթէ անծնելութիւնը կամ ծնելութիւնը քո ասածի համաձայն բնութիւն լինէին՝ դրանով աստուածութեան մէջ հակառակութիւն դրած կլինես: Երրորդ, որովհետեւ աստուածութեան մէջ ունակութիւն եւ պակասութիւն դրած կլինես: Չորրորդ, նախ դրեցիր պակասութիւնը, ապա՝ ունակութիւնը, որ հակառակ է ասածներին: Հինգերորդ, քանի որ նախապէս դրուեց պակասութիւնը, ուրեմն մերժեցիք Հօր եւ Որդու էութիւնը:

Վեցերորդ, եթէ պէտք է պակասութիւնը զօրանայ եւ յաղթահարի ունակութիւնը, ուրեմն անծնելութիւնը եւ ծնելութիւնը առանձին-առանձին բնութիւններ չեն, այլ Աստծոյ միեւնոյն բնութեան մէջ են: Դարձեալ, ինչպէս որ յիմարութիւնը եւ իմաստութիւնն են մարդու մի բնութիւն, եւ միմեանց հակառակ չեն ասւում, այլ յիմարը միապէս ունի իմաստունի բնութիւնն ու յատկանիշները, այդպէս էլ, անծնելութիւնը եւ ծնելութիւնը միմեանց հակառակ բնութիւն չեն, այլ՝ միեւնոյն բնութիւնը:

Դարձեալ որովհետեւ անծին Ադամը չէր միայն մարդկութիւնը, այլեւ նրանից ծնուածն էլ մարդ է կոչւում: Այդպէս էլ, ոչ միայն Հայրն է Աստուած, այլեւ նրանից ծնուածն էլ է Աստուած:

Պրակ եւ առարկութիւն հինգերորդ

Հինգերորդ՝ առարկում են, եթէ Հօր ու Որդու բնութիւնը մէկն է, եւ Որդին ծնուել է նոյն բնութիւնից, ապա կարելի է ասել, թէ Հայրը ծնուել է Որդու նոյն բնութիւնից, քանի որ բնութեամբ մէկն են:

Պատասխանենք, որ յոյժ յիմարութիւն է հարցումդ, քանի որ եթէ Հայրը ծնող է Որդու՝ ըստ քո ասածի, ուրեմն չի կարող չլինել եւ չծնել: Չի կարող նաեւ Որդին ծնել Հօրը, թէեւ ունի Հօր նոյն բնութիւնը, ինչպէս այն, որ դու ծնուած լինելով քո հօրից՝ չես կարող ծնել նրան եւ լինել քո հօր հայրը, թէեւ ըստ ամենայնի ունես քո հօր բնութիւնը:

Պրակ եւ առարկութիւն վեցերորդ

Վեցերորդ՝ առարկում են, թէ՝ «Հայր» ասելն Աստծուն նրա բնութեա՞ն, թէ՞ արարչութեան անուանումն է: Եթէ բնութեանն է, ապա ասում են՝ Որդին չունի նոյն բնութիւնը, որովհետեւ Աստծոյ բնութիւնը միակն է: Եթէ որպէս Հայր միայն իրենն է հայրութիւնը, ուրեմն իրենն է եւ բնութիւնը: Իսկ եթէ արարչութեան համար է, ապա ասում են, թէ՝ Որդին եւս արարած է:

Պատասխանենք, որ «Հայր»-ը ո՛չ բնութեան եւ ո՛չ արարչութեան անուանումն է, այլ՝ իր առանձնաւորութեան, քանի որ դրանով է տարբերւում Հոգուց եւ Որդուց:

Հարցրո՛ւ եւ դու նրանց. ո՞վ արիանոսներ, եթէ Որդուն մեզ նման շնորհով է եւ արարած էք ասում, իսկ մենք իբրեւ այդպիսին մեր եւ Հօր միջեւ շաղկապ՝ իբրեւ լար ունենք Սուրբ Հոգին, մինչդեռ դուք ուրանում էք Հոգու հաւասար լինելը Հօրը եւ Որդուն եւ Որդուց կրտսեր էք համարում, [այդ դէպքում] ո՞վ է իբրեւ շաղկապ Որդու եւ Հօր միջեւ, որ նրան հրաւիրում է Հօր որդէգրութեանը: Եւ քանի որ՝ ոչ ոք, ուրեմն խոստովանէ՛ք Որդուն իբրեւ ծնունդ՝ Հօր բնութիւնից յաւիտենական:

Պրակ եւ հարց եօթներորդ

Հակառակորդների եօթներորդ հարցը. ինչո՞ւ է ասում Քրիստոսը, թէ՝ «առաքուեցի Հօրից» (Յովհ. Ը 16) եւ թէ՝ «Հայրն իմ մեծ է, քան ես» (Յովհ. ԺԴ 28):

Պատասխանենք նրանց. մի՛ մասնատիր Աստուածաշունչ Գիրքը եւ տե՛ս նաեւ խօսքի մեկնութիւնը՝ «Հայրը, որ ինձ առաքեց, ինձ հետ է» (Յովհ. ԺԴ 11):

Միւս խօսքի՝ «Հայրն իմ մեծ է, քան ես»-ի (Յովհ. ԺԴ 28) մէջ «քան»-ը ընդունիր իբրեւ չափ, այսինքն՝ մեծ է որքան ես, ինչպէս ասում է Որդին՝ «Ես եւ իմ Հայրը մէկ ենք» (Յովհ. Ժ 30). «եթէ տեսար ինձ, տեսար եւ իմ Հօրը» (Յովհ. ԺԴ 9): Ինչպէս գիտի Հայրը ինձ, այդպէս էլ ճանաչում եմ ես Հօրը» (Յովհ. ԺԴ 15): «Այն, ինչ իմն է, Հօրն է, եւ այն, ինչ Հօրն է, իմն է» (Յովհ. ԺԶ 15): Այս եւ նման խօսքերը ցոյց են տալիս Հօր հետ հաւասար լինելը: Դարձեալ ասում է՝ «Ես իմ Հօր մէջ եւ Հայրն իմ մէջ» (Յովհ. ԺԴ 10): Եւ եթէ Հայրը մեծ է, քան Որդին, ինչպէ՞ս է փոքրը կրում մեծին, եւ ինչպէ՞ս կարող է նուազը ձգտել մեծին՝ լիալրելով Հօրը: Եւ քանի որ սա անհնար է, ինչպէս ասացի, հետեւաբար Հայրը մեծ չէ, քան Որդին, քանզի կրում են միմեանց եւ լիալրում մէկը միւսին: Եւ դարձեալ, ըստ ձեզ, պէտք է ասէր՝ «ես՝ Հօր յետ միասին, եւ Հօր մասն իմ մէջ»: Դարձեալ «մեծ» է ասւում ըստ պատճառի եւ հաւասար՝ ըստ բնութեան: Դարձեալ չի ասւում թէ՝ անպատճառ պատճառն աւելի մեծ է, քան պատճառելին, որովհետեւ Որդին հաղորդակից է Հօր փառքին ու մեծութեանը: Դարձեալ ասւում է, թէ Բանն Աստուած մեծ է մեր մարդկային բնութիւնից, որ մեր ըստ արարման եւ հանդերձեալ աշխարհի Հայրն է, իսկ միաւորութեան դէպքում մեծ չէ, այլ հաւասար են երկուսն էլ՝ ինչպէս առնողը, այդպէս էլ՝ առնուածը, երկուսն էլ՝ Աստուած եւ մարդ[102]:

Հաւասարեցնում է նաեւ Պօղոսը՝ «ով Աստծոյ կերպարանքով էր, յափշտակութիւն չհամարեց Աստծուն հաւասար լինելը» (Փիլիպ. Բ 6): Սրա մեկնութիւնն այս է. Աստծուն հաւասարը յափշտակութիւն եւ զրկում չի համարում ծառայի կերպարանք առնելը, որովհետեւ կասկած չունէր, թէ ուրիշից է փառք խլում, քանզի այն իր սեփականն էր: Թէպէտ սա այլ կերպ են մեկնում՝ այսպէս. մարդկային բնութիւնը հաւասարեցրեց իր փառքին եւ հաղորդակից դարձրեց իր աստուածութեանը եւ զրկում չհամարեց, որովհետեւ մի բնութիւն է:

Դարձեալ քննենք ըստ մեզ, քանի որ հակառակ չեն առաքեալի եւ Աւետարանի ասածները, թէ Հայրը մեծ է, քան Որդին, որովհետեւ երկուսն էլ հասկացւում են որպէս նոյն աստուածութիւնը: Համաձայն այն բանի, որ մեր նուաստ ու տկար բնութիւնը միացրեց իրեն եւ անտեսանելին տեսանելի դարձնելով՝ ծառայի կերպարանքով շրջեց տնօրինելու համար, ահա այս միաւորութեան համար ասւում է՝ թէ փոքր էր, քան Հայրը: Իսկ համաձայն այն բանի, որ անճառ է եւ նախքան յաւիտենականութիւնը ծնունդ է Հօրից, [այստեղ էլ] հաւասար է Հօրը եւ ոչ փոքր: Սա վկայում է նաեւ առաքեալը, թէ՝ «Ով Աբրահամով խոստացաւ իր որդի Իսահակին պատարագելուց յետոյ եւ ասաց՝ «իմ անձով եմ երդւում» (Ծննդ. ԻԲ 16), այն բանի համար, ինչ խոստացաւ: Եւ մեծ չէր Հայրը, քան նա, որով երդւում էր, քանի որ ում երդւում են՝ աւելի մեծ է, քան երդուողը, ուստի հաւասար էր Որդին Հօրը եւ ոչ փոքր, ինչպէս ասում է առաքեալը (տե՛ս Փիլիպ. Բ 6):

Եւ հաւաստի գիտենք, թէ Որդին էր, քանի որ Գիրքը նրան հրեշտակ է անուանում, իսկ Հայրը երբեք հրեշտակ չկոչուեց, այլ՝ Որդին, ըստ Եսայի մարգարէի. «մեծ խորհրդի հրեշտակ» (Ես. Թ 6) է կոչում Որդուն, ով եղաւ այս մեծ խորհրդի սպասաւորը, այսինքն՝ մեր փրկութեան՝ իր մարդանալու միջոցով:

Իսկ որ ասում է «առաքուեցի», ոչ թէ մի տեղից միւսը, ինչպէս մենք՝ մի տեղ հաւաքուածներս ենք շարժւում մի տեղից միւսը, այլ նա զօրութեամբ եւ էութեամբ թափանցուած է բոլոր էութիւնները մէջ, եւ տեղ չկայ, որ թափուր է նրանից, ըստ այն խօսքի, թէ՝ «Ես եմ լցնում երկինքը եւ երկիրը»: Բայց խոնարհվելով՝ իր փառքի բարձունքից՝ միաւորուեց մեր նուաստ բնութեանը. այս մասին է, որ ասում է առաքեալը: Եւ քանի որ Հօր կամքով էր այս առաքումը՝ Հօր կողմից է ասում:

Պրակ եւ հարց ութերորդ

Արիանոսեանների ութերորդ հարցը. Սողոմոնն ասում է՝ «Տէրն ստեղծեց ինձ իր ճանապարհների սկզբում՝ իր գործերի համար», (Առակ. Ը 22) եւ քանի որ բազում տարիներով առաջ էր, քան Քրիստոսի մարմնական ծնունդը, ուստի առաջին լինելութեան համար ստեղծուած է ասում առաջ, քան բոլոր արարածները:

Սրա վերաբերեալ կարող ենք զանազան առարկութիւններով պատասխաններ տալ[103]: Նախ, ասենք, որ նա թագաւոր մարդ էր՝ ուտող, հարբեցող, ու վաւաշոտ: Ի՞նչ արժեն նրա ասածները, թէեւ աւելին ասել չենք կարող: Երկրորդ, նրա յետին կռապաշտ յանցանքների պատճառով չենք պարսաւում նրա իմաստութիւնը եւ չենք էլ ընդունում, թէպէտ կարելի է պատճառաբանել նաեւ, թէ աննախադէպ իմաստութիւնը նրան հաճելի չպահեց մնալ Աստծուն: Մինչդեռ Անտօնը, որ գրաճանաչ չէր եւ այդքան իմաստուն էլ չէր՝ որքան հաճոյ եղաւ Աստծուն[104], ուստի մենք ինչո՞ւ հաւատանք եւ ընդունենք այդ իմաստութիւնը: Երրորդ, կարելի է [ասածը հասկանալ] մարմնական իմաստութեան առումով՝ բանական արհեստների եւ բնական ներգործութիւնների [իմաստով] առարկայի բնութեան մէջ առաջ մղելով նրա էութիւնը, եթէ ասենք, թէ այս իմաստութիւնը ստեղծուել է ինչպէս ասուեց՝ «բոլոր գործերից» առաջ: Ինչպէս այլաբանօրէն ասում է՝ «Ծովը տեսաւ եւ փախաւ» (Սղմ. ՃԺԳ 3). ի՞նչ էին ծովը, լեռները, բլուրները, խոյերը եւ գառները եւ կամ՝ «Երկինքը պատմում է Աստծոյ փառքի մասին» (Սղմ. ԺԸ 2), թէեւ չունի զգայարաններ: Սակայն սրան չենք պատասխանում, այլ չորրորդ տեսութեամբ ասենք մարդեղութեան մասին, թէ երբ «ստեղծեց» եւ՝ ասաց, թէ՝ «Նախքան բոլոր բլուրները ծնեց ինձ» (Առակ. Ը 25): Արդ, քանի որ Աստուած առանց պատճառի է Աստուած, [այլապէս,] ո՞վ է պատճառն աստուածանալու: Եւ եթէ լինէր աւելի մեծը, ապա կլինէր եւ գերագոյն պատճառ, քան Աստուած է: Իսկ «ստեղծելը» ինչպէս երեւում է, ունէր իր պատճառը, այսինքն՝ մարդկութեան փրկութեան

համար էր: Ապա ուրեմն ծնունդը բոլոր բլուրներից առաջ էր՝ ի սկզբանէ, Հօր բնութիւնից, իսկ «ստեղծումը» մարմնանալու համար էր, որովհետեւ իրենն էր մարմինը:

Տեսնենք եւ այն գործը, որի համար օծուեց, այսինքն՝ միացաւ մարդկութեանը աստուածութեամբ, ըստ այդմ՝ «Նրա ձեռքի գործերը արդարութիւնն ու իրաւունքն են», այսինքն՝ ճշմարիտ ու անաչառ դատաստան արեց եւ իրաւացիորէն մարդկային գերուած բնութիւնը ազատ դարձրեց: Ուստի իմաստութիւնը ստեղծուած է ասւում ըստ խոնարհ ծնունդի, եւ ծնունդ ասւում է ըստ առաջնային անհասանելիի:

Իսկ ուրիշ վարդապետներ ասում են, թէ այս խօսքերով ցոյց է տրւում աստուածային ծնունդի կերպը, որովհետեւ ծնուելիս ծնուողը վերցնում է ծնողի բնոյթը, որ կատարելութիւնն է, մինչդեռ մեր ծնունդի [մէջ] այլափոխւում է ծնողը: Իսկ ստեղծումը սրան հակառակ է, քանզի ստեղծողը չի այլափոխւում, այլ՝ ստեղծուածը: Արդ, ասւում է, թէ՝ Որդին ծնուած եւ ստեղծուած է, որովհետեւ ստեղծումից իմացւում է Հօր անփոփոխութիւնը է, եւ այդ ծննդեամբ՝ Հօր եւ Որդու բնութեան միութիւնը:

Սա է երկրորդ ժողովի մեկնութիւնը[105]:

Պրակ եւ հարց իններորդ

Հակառակորդների իններորդ հարցը. Սիրաքն ասում է. «Ես բարձրեալի բերանով դարձայ բոլոր ստեղծուածների անդրանիկը»[106]: Եւ Պօղոսը Կողոսացների [թղթում] ասում է՝ Որդին՝ «անդրանիկը բոլոր արարածների» (Կողոս. Ա 15): Ասենք այս կապակցութեամբ, թէ Որդին անդրանիկ է ասւում ոչ թէ համաձայն ստեղծուածների կարգի, քանզի ստեղծուածներից ոչ մէկը չվերցրեց Աստծոյ բնութիւնը ինչպէս Որդին, այլ անդրանիկ է ասւում, որովհետեւ նա վերցրեց Հօրից այն ամէնը, որով ստեղծուեցին բոլորը. քանզի՝ «Ամէն ինչ նրանով եղաւ» (Յովհ. Ա 3): Ուստի Որդին ոչ միայն անդրանիկ է ասւում, այլեւ՝ միածին:

Անդրանիկ է ասւում նաեւ ըստ մարմնական ծնունդի, որովհետեւ ինչպէս նա առաջինը ծնուեց Կոյսից՝ առանց սերմի եւ Սուրբ Հոգուց, այդպէս էլ մենք ենք յետոյ Սուրբ Հոգու միջոցով ծնւում կոյս աւազանից:

Դարձեալ անդրանիկ էր ըստ Հոգու տուած շնորհների, որ ընդունեց ոչ թէ դրանց կարիքն ունենալու պատճառով, քանի որ դրանք բոլորը կատարելապէս ունէր, այլ որովհետեւ մեր գլուխն էր, եւ ընդունեց, որ սփռի իր անդամների մէջ:

Դարձեալ անդրանիկ եղաւ յարութեամբ, ըստ այդմ՝ «մեռեալների անդրանիկը եւ ննջեցեալների պտուղը» (Կողոս. Ա 18):

Պրակ եւ առարկութիւն Ժ

Արիանոսեաններին տասներորդ առարկութիւնը. ասում են՝ սա պէտք է թագաւորի մինչեւ ժամանակների փոփոխվելը՝ համաձայն առաքեալի: Պա-

տասխանում ենք, ո՞վ դու յանդուգն մեկնիչ, ի՞նչ վախճան պէտք է ունենայ նրա թագաւորութիւնը, ո՞վ կտապալի եւ ի՞նչ պատճառով: Չլսեցի՞ր հրեշտակից, [որ ասաց] «Նրա թագաւորութիւնը վախճան չունի» (Ղուկ. Ա 33): Սրանում երկբայում ես քո չիմանալու պատճառով, որ «մինչը» ամէն տեղ չի ապագայի հակառակ բաժանումը, թէեւ նշանակում է այն կէտը, ուր դրուած է «մինչը», սակայն դրանից յետոյ եղածն էլ չի ուրանում: Ըստ այդմ՝ «Ես ձեզ հետ եմ մինչեւ աշխարհի վախճանը» (Մտթ. ԻԸ 20), որից յայտնի է, որ աշխարհի վերջում էլ չի հեռանայ: Կամ թէ՝ «Ես եմ, ես եմ, մինչեւ խոր ծերութեան էլ հասնէք, ես եմ» (Ես. ԽՁ 4), այսինքն՝ մարդկութեան ծերութիւնից յետոյ էլ ինքն է դարձեալ Աստուածը. մնացածը նոյնպէս այդպէս հասկացիր:

Եւ այս խօսքը մենք այսպէս ենք մեկնում. որովհետեւ Գրքից իմացանք, թէ երկու թագաւորութիւն կայ. առաջինն ըստ արարչութեան, երկրորդն՝ ըստ տնօրինութեան: Այժմ բոլորի արարչութեամբ [նա] տիրում է ե՛ւ ցանկացողներին, ե՛ւ ոչ ցանկացողներին, քանզի Աստուած է, իսկ տնօրինութեամբ՝ ոչ [բոլորին], այլ միայն հնազանդներին: Բայց երբ բոլոր լեզուները Յիսուս Քրիստոսին խոստովանեն որպէս Տէր, ապա յաւիտենապէս կթագաւորի Հօր հետ՝ նաեւ տնօրինաբար:

Իսկ Որդու հնազանդուելը Հօրը [չի նշանակում], թէ այժմ անհնազանդ է հակառակութեան պատճառով, քանի որ սա աւազակներին է [բնորոշ], եւ հնարաւոր չէ ասել՝ միեւնոյն էութիւնն ինքն իրեն հնազանդ եւ անհնազանդ, քանի որ Բան է, այսինքն՝ պարզ աստուածութիւն, որ հնի փոխարէն եղաւ նոր Ադամ՝ եւ նզովք ու մեղք կոչուեց իմ պատճառով (Գաղատ. Գ 13), նա, որ մեղք չգործեց՝ լուծելով անէծքը եւ վերացնելով մեղքը:

Նոյն կերպ եւ մեր անհնազանդութիւնը, որ ոմանց ուրացութեան եւ ոմանց էլ ախտերի պատճառով, իրեն վերագրեց՝ դառնալով գլուխ անհնազանդ անդամներին: Իսկ երբ բոլոր անդամները հնազանդուեն գլխին՝ Քրիստոսին՝ գիտակցութեան գալով եւ փոխուելով, այնժամ եւ ինքը կլիալրի հնազանդութիւնը՝ հնազանդուածներին ընծայելով Հօրը:

Դարձեալ, մի այլ կերպ Որդին հնազանդ է ասւում Հօրը՝ գործով՝ կամքը կատարելով եւ Հայրը Որդու գործերին յօժարելով: Եւ սա՝ Հօր ու Որդու բնութեան ու կամքի միասնութեան պատճառով:

Պրակ եւ պատասխան ԺԱ

Իսկ [որ ասում է] «Աստուած, Աստուած իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մտթ. ԻԷ 46), ոչ թէ ինքն իրենով թողեց կամ Հօրից՝ չարչարանքներից վախենալու պատճառով, քանի որ յօժարութեամբ էր եկել եւ ոչ հարկադրանքով, այլ մենք թողնուեցինք եւ անտեսուեցինք Աստծուց՝ մեր մեղքերի պատճառով, [քանի որ] նա իր մէջ դրոշմում է

մեր անձը՝ բնութենակից լինելով մեզ եւ գլուխը [լինելով] մեր՝ անդամներիս: Նոյն կերպ եւ աղաղակը, արտասուքը, երկիւղը, տրտմութիւնը, աղօթելը եւ նման բաները յանձինս մեզ իմացիր, [ով] մեր գլուխը եւ լեզուն լինելով՝ մեր անդամների տկար բնութիւնը ցոյց տուեց Հօրը:

Իսկ չարչարանքներին Քրիստոսի հնազանդութեան վերաբերեալ բազմաթիւ բացատրութիւններ է տուել Գրիգորիոս Աստուածաբանը, [որ բերում ենք] այստեղ:

Նախ, ինչի համար, որ չարչարանքով տառապում էր, վերացնում էր իմ այդ չարչարանքը, այսինքն՝ երկնչելով՝ մեր երկիւղը, քաղցելով՝ մեր քաղցը, քամվելով՝ մեր քրտինքը. նոյն կերպ եւ մնացածը իմացիր, որովհետեւ չարչարանքը մեկնւում է իբրեւ՝ նախագործուած չարին չար հատուցում:

Երկրորդ, չարչարանքի փորձութեամբ իրագործում է հնազանդութիւնը՝ ցոյց տալով իր կատարեալ սէրը մեր հանդէպ՝ գործով եւ ճշմարտութեամբ, ըստ այդմ՝ «Կատարեալ սէր ոչ ոք չունի այնպէս, ինչպէս իմ անձը դրեցի» (հմմտ. Յովհ. ԺԵ 13):

Երրորդ, որպէս մեզ խրատ, որ ինչպէս [ինքը] չարչարանքով ազատ դարձրեց մարդկային բնութիւնը, այդպէս էլ իւրաքանչիւր ոք իր չարչարանքով [կարող] է ազատուել ներգործող մեղքերի պատժից:

Չորրորդ, իր չարչարանքով փորձում է մեր հնազանդութիւնը, այսինքն՝ [չափում] մեր կսկիծը եւ չարչարանքի ծանրութիւնը, որպէսզի իր [չարչարանքով] իմանայ մերը եւ ողորմի մեզ:

Հինգերորդ, [որոշում է] իր հետեւորդների չարչարանքի չափը, այսինքն՝ «Հնազանդ լինել մահու չափ եւ խաչին մահուան» (Փիլիպ. Բ 8):

Վեցերորդ, պահանջում է իրեն սիրողներից միշտ մտաբերել, որ ինչպէս ինքը յանուն սիրոյ իր անձը դրեց մեզ համար, մենք էլ նոյն կերպ նրա սիրոյ փոխարէն մեր անձը նուիրենք նրան:

Եօթներորդ, իր չարչարանքով յուսադրեց մեզ, որ տկարանալուց եւ փորձողի կողմից որոշ չարչարանքների [ենթարկուելուց] յետոյ, չհրաժարուենք նահատակութիւնից, այլ նրա չարչարանքը մեզ օրինակ համարենք եւ համբերենք, ինչպէս ասում է՝ «Որովհետեւ եթէ լոյսն իբրեւ զգեստ հալածուեց խաւարից, ապա որքա՜ն եւս խաւարը», որովհետեւ աւելի լաւ է հալածուել, քան վերջանալ թշուառութեամբ:

Իսկ մարմինը երբեմն-երբեմն զգեստ է անուանւում երկու պատճառով: Նախ, ինչպէս որ զգեստն է ծածկում մարմինը, այդպէս էլ Տէրն իր աստուածութիւնը փակեց մարմնով՝ փորձողին անհաս լինելու համար, ըստ այդմ՝ «Խաւարը հասու չեղաւ նրան» (Յովհ. Ա 5): Երկրորդ, ինչպէս իւրաքանչիւր ոք զգեստով է ճանաչւում, այդպէս էլ Քրիստոս մարմնապէս երեւալով յայտնուեց աշխարհին:

Ութերորդ, որպէսզի փորձ ունենալ չարչարանքի, օգնի նրանց, ովքեր

չարչարանքի մէջ են: Այս խօսքի յայտնի մեկնութիւնները դրուած են չորրորդ գլխում, բայց միւս տեղերում[107] նոյնպէս կան խոր ու գեղեցիկ բացատրութիւններ, որովհետեւ նա մեր սրբութեան համար չարչարուեց, եւ եթէ մէկը եւս սրբութեան համար չարչարուի, ուրեմն մէկն է երկուսի նպատակն էլ, այնժամ կօգնի նրան, այսինքն նրան կմիաւորուի սրբութեամբ եւ աստուած կդառնայ ըստ ամենայնի, այսինքն՝ կլիալրի նրան՝ աստուած դարձնելով, եւ բոլորը կդառնան աստուածներ, եւ ինքն Աստուած [կլինի] բոլորի վրայ՝ իբրեւ անդամները միաւորող գլուխ:

Այսքան պատճառներ ցոյց տրուեց Փրկչի չարչարանքների մասին այս տեղում:

Պրակ եւ պատասխան ԺԲ

Իսկ ինչո՞ւ է ասում է՝ «Իմ Հայրը եւ ձեր Հայրը, իմ Աստուած եւ ձեր Աստուած» (Յովհ. Ի 17):

Այս անունների տարբերութիւնը կողք կողքի դնելով՝ մոլորութեան մէջ են ընկնում հերձուածողները: [Մինչդեռ], մէկը մեր Աստուածն է էութեամբ եւ նրանը՝ մարմնով, միւսը, որ Հայրն է՝ նրանն է էութեամբ եւ մերը՝ անուանապէս, որովհետեւ նրա Հայրն է բնութեամբ, իսկ մերը՝ ըստ շնորհի, որ մեզ ճշմարտապէս ստեղծող է, ինչպէս եւ Նրան՝ (Որդուն), ոչ թէ իբրեւ Բանի (Խօսքի) ստեղծող, այլ՝ տեսանելիի[108]: Ինչպէս ասում է առաքեալը՝ «Աստուած՝ մեր տիրոջ Յիսուսի Քրիստոսի եւ փառքի Հայրը» (Եփես. Ա 3), այսինքն՝ Աստուած մարդկութեան համար եւ Հայրը փառքի, որ Բանն Աստուածն է՝ անմարմին ծնուած Հօր բնութիւնից, որ յետոյ միաւորուեց մարմնի մէջ:

Պրակ եւ պատասխան ԺԳ

Ի՞նչ է նշանակում՝ «Չեմ կարող յանձն առնել ոչինչ» (Յովհ. Ե 30):

Չկարողանալը բազմիմաստ է: Նախ՝ չկարողանալ՝ զօրութեան պակասութեան, ժամանակի եւ հասակի պատճառով, ինչպէս չի կարող մանուկը կռուել եւ կորիւնը տեսնել, ինչպէս որ չի կարող նուազ զօրութեամբը առաւելի հետ մրցել, այլ հաւասարի, ինչպէս որ Յովաբը մենամարտեց ոչ թէ Դաւթի, այլ Աբիսողոմի հետ:

Երկրորդ, ինչպէս բազմաթիւ [դէպքում], ըստ այդմ՝ «Չի կարող լեռան վրայ գտնուող քաղաքը թաքնուել» (Մտթ. Ե 14), նախ, որովհետեւ հոծ է երթեւեկութիւնը, երկրորդ՝ որ բարձր է տեղը:

Երրորդ, ըստ ոչ պատշաճութեան, ինչպէս չեն կարող պատանիները առաջաստ պահել, քանի դեռ նրանց հետ չի փեսան, որ Քրիստոսն է, որովհետեւ, երբ տեսնես մարմնով՝ գալստեան ուրախութեան ժամանակն է եւ ոչ՝ սգոյ, որ պահքն ու ապաշխարութիւնն են: Եւ եթէ իմանաս Բանը (Խօսքը), պահքը եւս չէր պատշաճի Բանով սրբուածներին, ըստ այն խօսքի, թէ՝ «Դուք սուրբ էք յանուն այն խօսքի, որ խօսեցի ձեզ հետ» (Յովհ. ԺԵ 3), քանի որ պահքը անսուրբներին է մաքրում, [իսկ սրանք], որ սուրբ էին,

պահքը պատշաճ չէր սրանց համար, ուստի եւ չէին կարող [պահել]:

Չորրորդ, հաւանութիւն չտուողների պատճառով, որոնց իբր չկարողացաւ հրաշքներ ցոյց տալ՝ նրանց անհաւատութեան պատճառով, քանի որ այստեղ երկու [բան] է անհրաժեշտ. բժշկուողի հաւատը եւ բժշկի զօրութիւնը: Եւ առանց մէկի միւսը չի կարող լինել, քանի որ կախուած են մէկը միւսից: Թւում է, թէ սա էլ անպատշաճ է ասւում, քանի որ սրանք վնասուած էին հաւատով, եւ պատշաճ չէր սրանց հրաշքներ ցոյց տալը: Ուստի [ցոյց չտուեց] չյօժարողների պատճառով, քանի որ աշխարհը, որ աշխարհասէրներն են, չեն կարող ատել աշխարհասէրներին: Ասում է, «Որ չար էք, չէք կարող բարին խօսել» (Մտթ. ԺԲ 34), իսկ եթէ ցանկանային՝ կարելի էր:

Հինգերորդ, որ անկարելի է բնութեամբ, ինչպէս ծնուածին կրկին ծնուել, եւ ուղտին ասեղի միջով անցնել: Սրանք մեզ համար անհնար են եւ անկարելի, սակայն [անհնար] չեն Աստծոյ համար, այլ՝ հնարաւոր եւ կարելի:

Բայց Աստծոյ համար անկարողութիւն է չարանալը եւ էութիւն չլինելը: Եւ այս ոչ թէ նրա անկարողութեան պատճառով է, այլ առաւել կարողութեան, որովհետեւ միշտ է էութիւն եւ երբեք չի անէանում, միշտ բարի է եւ լոյս, չի չարանում եւ խաւարում:

Իսկ այդ ոչ էութիւնը ու չարանալը կարող է դրսեւորուել մեր մէջ, քանի որ մասամբ ունենք կարողութիւններ եւ ոչ կատարեալ: Իմա՛, ինչպէս, բրուտը կարող է պատրաստել որեւէ անօթ, սակայն ոչ երկինք, ընդ որում՝ երբեմն լաւ, երբեմն էլ՝ վատ ու վնասուած եւ ըստ այդմ՝ չի կարող լինել աստուած: Եւ մենք ունենք անկարողութիւններ՝ անէութեանը գոյութիւն լինել, կամ չորսին՝ տասնչորս:

Այսպէս հասկացի՛ր եւ Որդու ինքն իրենից որեւէ չկարողանալ կատարելը, այսինքն՝ Հօրից օտար որեւէ բան: Եւ եթէ կարողանար՝ կլինէր բնութեանը օտար, կհետեւեր, որ նա Հօր Որդին չէ, եթէ նոյն բնութիւնից չէր, ապա [Հայրն էլ] Հայրը չէր լինի, քանզի Հայրը Հայր է Որդով: Նոյն ձեւով, եթէ [չկայ] Հայրը, չի լինի եւ Որդին, քանի որ Որդին Հօր համար է Որդի, ուրեմն այդ [դէպքում], չէր կայանայ աստուածութիւնը, որ անհնար է, ինչպէս ասացինք: Ուստի, Որդին ինքն իրենից որեւէ բան չի անում, որովհետեւ հնարաւոր չէր օտարել աստուածութիւնը: Այս է Որդու չկարողանալը:

Դարձեալ [ասելը] «Չեմ կարող ոչինչ անել»:

Առաջին միտքն այն է, որ ասաց, «Հայրը գործում է եւ գործում եմ ես» (Յովհ. Ե 17), որից չարացան հրէաները, իսկ այժմ ամէնապակասաւորն է ասում՝ նրանց բարկութիւնը իջեցնելու համար: Սակայն այս խօսքը պէտք է առաջինի նման հասկանալ, ովքեր միտք ունեն եւ չեն նուազում: Երկրորդ՝ «չեմ կարող ոչինչ», այսինքն՝ անօգուտ բան: Երրորդ՝ «չեմ կարող ոչինչ», այսինքն՝ մեղք եւ չարութիւն, որոնք ոչինչ են, քանի որ բարու պակասութիւն են. «առանց նրա

ոչինչ չեղաւ» (Յովհ. Ա 3): Չորրորդ՝ սրանով առաւելագոյնս միակամ [լինելն] է մատնանշում, որ մէկ է իր եւ Հօր կամքը, որի պատճառով էլ չի կարող առանց Հօր, որովհետեւ Որդին այլ կամք չունի, որ կամենայ եւ Հօրից դուրս գործի: Հինգերորդ՝ զօրութիւնը, կարողութիւնը, որ տրուած են Աստուածութեան կողմից, [ինչպէս եւ] տէրութիւնն ու իշխանութիւնը եւ այլք, առանձին անձնաւորութիւններինը չեն, այլ ընդհանուր են, եւ մէկը միւսից առաւել չէ, որի պատճառով էլ Որդին չի կարող անել ոչինչ առանց Հօր, ինչպէս ասացինք:

Տե՛ս, որ նոյն բնութեան մէջ օտարութիւն ոչինչ չի ասւում, այդ պատճառով Աստծոյ կամքն ու ներգործութիւնը մէկ է, որովհետեւ մէկ է բնութիւնը:

Այսու տարակուսելի է, որ եթէ հարկ է, որ նոյն բնութիւն ունեցողների կամքն ու ներգործութիւնները նոյնանան, ապա ինչպէ՞ս է, որ հայրերի ու որդիների մարդկային բնութիւնը նոյնանում է, իսկ կամքն ու գործերը տարբեր են, մինչդեռ այլ է Աստծոյ մօտ: Պատճառն այս է. որովհետեւ թէպէտ նոյնն է ծնողների եւ ծնուածների բնութիւնը, սակայն նոյն կամքը չունեն, որովհետեւ որդին զատուելով՝ բաժանուեց հօրից: Իսկ Բանն Աստուած՝ ծնուել է Հօրից, սակայն չի բաժանուել նրանից, ինչպէս խօսքը չի բաժանւում մտքից, թէեւ բազմաթիւ ականջներ է մտնում եւ թղթի վրայ մարմնաւորւում: Եւ ինչպէս լոյսը չի բաժանւում հրից, այդպէս էլ Որդին չի բաժանւում Հօրից: Ահա այս անբաժանութիւնը նրանց դարձնում է միակամ:

Պրակ եւ հարցումն ԺԴ

Ի՞նչ է նշանակում՝ «Ինչպէս գործում է Հայրը՝ նրա նման էլ Որդին» (Յովհ. Ե 19):

Սա չի նշանակում, ինչպէս չարափառներն են ասում, որ թէ ինչպէս իմաստուն նկարիչն է հօր պատկերը նկարում եւ եւ ապա անուսը նոյնն է ընդօրինակում: Ասում են՝ կատարում էր Հայրը, ապա Որդին՝ նոյնը ընդօրինակում: Եթէ այդպէս լինէր, ապա պէտք է Հայրը արարէր այլ աշխարհ եւ հանդերձեալ (կեանքը), շրջէր երկրում, մաքրէր բորոտներին, յարութիւն տար մեռեալներին, ծովի վրայով գնար, քանզի՝ հաստատուած ենք «եղած յաւիտենապէս Աստծոյ խօսքով»: Եւ թէ՝ «Տիրոջ խօսքով հաստատուեց երկինքը» եւ թէ՝ «ամէն ինչ նրանով եղաւ» (Յովհ. Ա 3) եւ թէ՝ «Աստուած իմաստութեամբ դրեց երկրի հիմքերը» (Առակ. Գ 19): Եւ Աստծոյ իմաստութիւն կոչւում է Քրիստոս, այսինքն թէ՝ Աստուած իմաստութեամբ դրեց երկրի հիմքերը: Եւ նոյն Բանն Աստուած մարմնացաւ եւ շրջեց երկրի վրայ (հմմտ. Բարուք Գ 13): Քանզի այն օրինակով արեց, ուրեմն հարկ էր, որ Որդին լինէր եւ [լինէին] չորս աշխարհներ:

Եւ եթէ Հայրն առանց Որդու՝ անէր, անիմաստ կլինէր, քանի որ Որդին է Հօր իմաստութիւնը՝ ըստ առաքեալի (տես Ա Կորնթ. Ա 24) եւ կամ մէկ այլ իմաստութեամբ [ասելն] ամբողջովին սուտ է:

Այլ այս է Հօր եւ Որդու միանման գործելը, այսինքն՝ Հօր կամենալը եւ Որդու նրա կամքը կատարելը, քանի որ մէկ է Հօր եւ Որդու կամքը: Այս է նշանակում [ասելը] «Հայրն իմ մինչեւ այժմ գործում է, գործում եմ եւ ես» (Յովհ. Ե 17): Գործում է ոչ թէ նոր տեսակ, այլ նախախնամութեամբ եղածը, եւ Հայրը կամենում է նոյնութեամբ մնալը, իսկ Որդին կատարում է, [սակայն] ոչ ծառայողաբար եւ չիմանալով, այլ՝ տիրաբար ու հանճարով:

Պրակ եւ հարցումն ԺԵ

Ի՞նչ է նշանակում հեթանոսների եւ բոլոր մարմինների վրայ Որդուն՝ կեանք, դատաստան եւ իշխանութիւն տալը: Թուում է, թէ նուազ էր, քան [Հայրը], քանի որ չունէր, եւ [Հայրը] տուեց: Սակայն սա ասում է մարդկութեան օրինակով, քանի որ չունէր մեր բնութիւնը, իսկ երբ միացաւ Բանին՝ եղաւ առնողի նման եւ առնուած իշխանն ու տէրը բոլորի: Իսկ եթէ աստուածութեան օրինակով իմանաս, դարձեալ տեղին է. ինչպէս որ էութիւն ունի Հօր գոյութիւնից, այդպէս էլ իշխանութիւն ունի Հօր իշխանութիւնից. այդպէս հասկացիր եւ մնացածի առնելը:

Դարձեալ ասում է՝ թէ՝ «տուեց ինձ Հայրը», որ նշանակում է, թէ՝ Հօրը հակառակ չէ Որդին, ինչպէս կարծում էին հրէաները՝ լուծելով շաբաթը: Իսկ երբ մարդկութեան օրինակով իմանաս, մի՛ կարծիր, թէ [խօսքը] պարգեւի կամ շնորհ տալու մասին է. սա ըստ Նեստորի է, որովհետեւ ինչպէս Բանին է յատուկ սեփական բնութիւնը եւ ոչ թէ ստացած լինելը, այդպէս էլ մարմնի վերաբերեալ իմացիր՝ նկատի առնելով Բանի եւ մարմնի անվերապահ միաւորութիւնը, ուստի այն, ինչ ասւում է Բանի վերաբերեալ՝ դա նաեւ մարմնինն է: Այս պատճառով է Սուրբ Կիւրեղը ասում՝ «Ո՛վ անճառելի միաւորութիւնից յետոյ կզատի մարդկութիւնն ու Աստուածութիւնը, թո՛ղ նզովեալ լինի»[109]:

Պրակ եւ հարցումն ԺԶ

«Ես եկայ ոչ թէ իմ կամքը կատարելու, այլ ինձ առաքողի» (Յովհ. Զ 38):

Սա չի նշանակում, թէ երկու միմեանց հակառակ կամք կայ, որովհետեւ խօսքը Արարչի մասին է եւ ոչ արարածների, այսինքն Բանի եւ ոչ թէ մարդկութեան: Եթէ մարդկութեանը վերաբերէր՝ կարելի էր ինչ-որ բան ասել: Բայց սա առաւելապէս Հօր եւ Որդու միակամութիւնն է ցոյց տալիս, քանզի ասում է. «Իմ կամքը չէ, այլ՝ տարբեր, այլ այդ կամքդ եմ կատարում, որովհետեւ ընդհանուր է»: Այս «ոչ»-ը ժխտական է, որ նշանակում է, թէ Աստուած Որդուն հոգին չափով չի տալիս, այսինքն՝ չի տալիս եւ չի չափում:

Սրա օրինակով է, որ մարգարէն Քրիստոսի մասին ասում է՝ «Ո՛չ իմ մեղքը եւ ո՛չ յանցանքը» (Սղմ. ՃԸ 4): Սրանց բացառելը նշանակում է, որ դրանք ոչ թէ կան, այլ բոլորովին չկան: Այդպէս էլ այժմ է ասում՝ «իմ կամքը չեմ կատարում», այսինքն ոչ թէ իմ, այլ ուրիշ կամք է, որ կատարում եմ, որ նոյն Հօր կամքն է եւ իմ կամքը: Նմանապէս եւ՝ «Ոչ իմ կամքը, այլ

քոնը թող լինի». սրանով ոչ թէ Հօրից բաժանուած առանձնայատուկ կամք է ցոյց տալիս, այլ՝ առաւելագոյն միակամութիւնը Հօր հետ:

Պրակ եւ հարցումն ԺԷ

Ի՞նչ է նշանակում, որ ասում է «Որպէսզի քեզ ճանաչեն իբրեւ միակ ճշմարիտ Աստծու, որ առաքեցիր Յիսուս Քրիստոսին» (Յովհ. ԺԷ 3), որի վերաբերեալ չարափառներն ասում են, ուրեմն Հայրն է միայն ճշմարիտ Աստուած, իսկ Որդին ու Հոգին՝ ոչ:

Պատասխանում ենք: Նախ, որ այժմ ասաց՝ «Հայրը միայն ճշմարիտ Աստուած», ինքն իրեն էլ ճշմարտութիւն անուանեց (Յովհ. ԺԴ 6): Եւ կամ ասւում է՝ «Նրան Հայրը Աստուած կնքեց» (Յովհ. Զ 27): Եւ առաքեալը Որդու մասին ասում է՝ «Միայն նա ունի անմահութիւն, ով բնակւում է անմատչելի լոյսերում» (Ա Տիմ. Զ 16), եւ այլն: Եւ եթէ միայն Հօրը ճշմարիտ համարես՝ Որդուն կորցրեցիր ստով, մահուամբ, խաւարով եւ այլն: Սակայն քանի որ Որդի է, ուրեմն ճշմարիտ Աստուած է, թագաւոր թագաւորաց եւ այլն՝ ըստ առաքեալի (Յովհ. ԺԹ 16):

Դարձեալ ասում է Բարուքը՝ «Սա է Աստուածը, ըստ որում ոչ ոք է դրանից յետոյ, որ երեւաց երկրում եւ շրջեց մարդկանց մէջ» (Բարուք Գ 38): Արդ, յայտնի է, որ սա Որդին էր, քանզի երկրի վրայ նա մարմնաւորուեց:

Ըստ քո ասածի այստեղ Հօրն ես վերապահում աստուածութիւնը եւ Որդուց վերցնում, եւ կամ ըստ մարգարէի՝ [եթէ] Որդուն համարես Աստուած, իսկ Հօրը՝ ոչ, ապա ուրեմն պէտք է դու անաստուած լինես, քանզի մէկի միջոցով յաղթանակ ես տալիս միւսին:

Մինչդեռ պատասխանն այս է. երբ լսում ես, որ Աստուած մէկն է՝ Աստուած ասելով՝ Երրորդութիւնը հասկացի՛ր, որովհետեւ ոչ թէ առանձին-առանձին, այլ միաւորեալ է աստուածութիւնը: Իսկ մի եւ ճշմարիտ ասելով՝ նրան առանձնացնում է բազում եւ սուտ հեթանոս աստուածներից, որ միայն անուամբ են [այդպիսին]: Եւ դարձեալ որովհետեւ այժմ Հօրն ասում է ճշմարիտ Աստուած, «եւ որ առաքեցիր». «եւ»-ը շաղկապ է, եւ շաղկապ գրով ցոյց է տալիս Հօր հետ իր [ընդհանուր] աստուածութիւնը:

Եւ ակնյայտ է, որ այստեղ [խօսքը] Երրորդութեան մասին է, որովհետեւ Հօրն ասում է՝ «Ճշմարիտ Աստուած» Հոգուն ասում է՝ «Որ առաքեցիր». իսկ ինքն անուամբ յայտնում է իր մասին՝ «Յիսուս Քրիստոս»:

Պրակ եւ հարցումն ԺԸ

Ի՞նչ է [նշանակում], որ փորձիչ օրինապաշտին ասաց. «Մէկն իսկ բարի չէ, բացի միակ Աստծուց» (Մարկ. Ժ 18): Ասենք, որ օրինապաշտը Քրիստոսի ունեցած բարութիւնը կարծում էր, թէ մարդու ունեցածի չափ է եւ ոչ աւելի, որովհետեւ մարդիկ էլ են բարի անուանւում, ինչպէս՝ «Տէրը բարիներին բարի է տալիս» (Սղմ. ճԻԴ 4), կամ՝ «Բարի մարդը իր սրտի բարի գանձերից բարութիւն է բխում» (Մտթ. ԺԲ 5): Մինչդեռ սա երկրորդաբար արտածուածն է առաջին բարուց, այսինքն՝

Աստծուց, որի պատճառով Տէրը դիմադարձեց օրինապաշտին, թէ՝ կատարեալ բարին միայն Աստուած է, եւ մարդկանցից ոչ մէկը չունի դա: Եւ դու ինչո՞ւ ես ասում ինձ մարդու նման երկրորդաբար բարի, քանզի աստուածութեամբս եմ Հօր հետ կատարեալ բարի:

Դարձեալ այս փորձողը փառասիրութեամբ առաջացաւ դէպի Քրիստոս, որովհետեւ իր խօսքից երեւում էր, թէ՝ բոլոր պատուիրանների պահպանող է, որ Տէրը պակասութեան համար յանդիմանեց: Յիսուսի մօտ գալով՝ ասաց՝ «Վարդապետ բարի», որ լսի՝ «աշակերտ բարի», որի պատճառով կատարեալ հեզը արհամարհեց նրա փառամոլ միտքը՝ խոնարհ պատասխանով, այլեւ՝ բացայայտեց ծածուկ երկդիմի խօսքերը նրա:

Պրակ եւ հարցումն ԺԹ

Իսկ երբ Հոգու եւ Որդու բարեխօսելն ենք լսում [ասենք], ոչ թէ Հօրից ցածր է, կամ բարեխօսում է ծառայի նման ծնրադրելով, այլ Հոգու բարեխօսելը [այսպէս է]. երբ աղօթքի ժամին չենք կարողանում պատշաճը խնդրել, ապա Հոգին լռելեայն մեզ իմաստութիւն է տալիս՝ պատշաճն աղօթելու: Ինչպէս ասում է առաքեալը՝ «Հոգին թիկունքից հասնում է մեր տկարութեան [պահին]» (Հռօմ. Ը 26): Եւ Քրիստոս, թէ՝ «Մի՛ հոգացէք, թէ ինչ ասէք, քանզի ձեր Հօր Հոգին կտա ձեզ այն ժամին» (Մտթ. Ժ 19): Ահա այդ աղաչանքը, որ ստանում էք Սուրբ Հոգու ծագելով՝ Սուրբ Հոգու բարեխօսել է կոչւում:

Այսպէս իմացի՛ր նաեւ Որդու բարեխօսելը, քանի որ նա մեր գլուխն է, մենք՝ նրա անդամները. երբ տեսնում է մեզ մեղքի մէջ, հոգ է տանում եւ ցաւում մեզ համար: Եւ քարոզողներով, այսինքն՝ հրեշտակներով կամ՝ վարդապետներով, կամ՝ Սուրբ գրքի գիտութեամբ շտապում է փրկել մեզ: Ըստ այդմ՝ «Ցանկանում է, որ ամէն ոք ապրի եւ ճշմարտութեան ճանաչողութեանը հասնի» (Ա Տիմ. Բ 4): Իսկ երբ դառնում ենք մեղքից, յորդորում է մեզ իր ծածուկ խորհուրդներով՝ ժուժկալ լինել փորձութեան մէջ եւ համբերել տանջանքներին, որոնցով ինքը փորձ ձեռք բերեց:

Այս է, ասում է Գրիգոր Աստուածաբանը Որդու բարեխօսելը, որովհետեւ մենք նեղութեան եւ փորձութեան մէջ համբերում ենք աղաչանքներով, իսկ մեր մաղթանքները նրան ենք ուղղում, քանի որ նրանն է յորդորելը, ինչպէս ասացինք Հոգու համար:

Պրակ եւ հարցումն Ի

Իսկ որ ասում են մեր հակառակորդները, թէ իբր Որդին անտեղեակ է ժամին եւ օրուան, այդպիսով պակաս ասելով Որդուն:

Անտեղեակ չէ, քաւ լիցի, քանի որ այն ամէնը, ինչ պիտի տեղի ունենար վախճանին, ասաց, ինչպէ՞ս կարող էր անգիտանալ ժամի վերաբերեալ: Առասպելի նման է, ինչպէս, եթէ մէկը քաղաքի պարիսպը կառուցելուց առաջ իմանայ այդ եւ կառուցած պարսպի մասին ասի, թէ՝ չգիտեմ: Կամ, եթէ մէկը օրուայ վերջը

իմանայ, սակայն գիշերուայ սկզբի մասին ասի՝ չգիտեմ: Ուստի [պատասխանն] այս է. ճանաչում է իբրեւ Աստուած, սակայն իբրեւ մարդ անգիտանում է, որովհետեւ Որդու անունը բացարձակ է, այսինքն՝ սահմանազատուած չէ, որովհետեւ ում էլ, որ էլ որ տաս՝ Բանն [Աստծուն], թէ՝ մարմնին, կարող է ասուել:

Դարձեալ, եթէ ոչ այսպէս, [հետեւեալ կերպ կարող] ենք ասել. ինչպէս բոլոր բարձրագոյն բաները Հօրը տուեց, երբ ասում է՝ «Իմ Հայրը մեծ է ինձանից» (Յովհ. ԺԴ 28), կամ՝ «Ոչ իմ կամքը, այլ առաքողի», նոյնպէս եւ մեծագոյն բաների իմացութեան պատճառը Հօրը վերագրեց՝ ի պատիւ ծնողի:

Դարձեալ, ինչպէս Աթանասն է ասում. «Որդին ոչ այլ կերպ գիտէ օրն ու ժամը, եթէ ոչ ինչպէս Հայրը», այսինքն՝ ոչ որպէս հրեշտակ կամ մարդ, այլ որպէս Աստուած գիտէ, այսինքն՝ նոյնն է իր եւ Հօր իմացութիւնը[110], որ նշանակում է, որ ժամն այն եղականներիցս ոչ մէկին հասանելի չէ, այլ՝ Աստծոյ առաջին անեղ բնութեանը:

ԱՍՏԾՈՅ ԱՆՈՒԱՆ ՄԱՍԻՆ

Աստուած անուանելի է Անանուն, որովհետեւ անունը սահմանում է, իսկ սահմանումը՝ բնութեան յայտնողը[111]: Թէեւ թուում է, թէ էութիւնն եւ Աստուածը ամենամօտն են Աստծոյ բնութեանը, քան միւսները, սակայն սրանցից էութիւնն առաւել է, քանի որ Աստուած նշանակում է՝ «յաստ էած զմեզ» (այստեղ բերեց մեզ)[112] կամ՝ «ստեղծող», եւ կամ՝ «ճանաչող»: Սրանք հարակից [անուանումներ] են եւ չեն շեշտում բնութիւնը: Իսկ էութիւնը նրա միշտ լինելն է ցոյց տալիս, ըստ այդմ՝ «Ես եմ ալֆան եւ օմեգան» (Յայտ. Ա 1), այսինքն՝ առաջինը եւ վերջինը: Իսկ մնացած անուանումները մեր արարման եւ հովանաւորման [հետ կապուած] գործողութիւն են արտայայտում, որոնք բոլորը բաժանւում են երկու խմբի. իշխանական, ինչպէս՝ Տէր Սաբաւոթ, ամենակալ Թագաւոր, եւ տնօրինական, ինչպէս՝ Աստուած, փրկիչ, կամ՝ [Աստուած] արդարութեան, կամ՝ խաղաղութեան, կամ Աբրահամի, կամ՝ Իսահակի եւ այլն: Եւ սրանք ընդհանուր են Երրորդութեան համար:

ՈՐԴԻ Է ԿՈՉԻՈՒՄ ՉՈՐՍ ԿԵՐՊ

Իսկ Որդի ենք ասում՝ [այն պատճառով՝] նախ՝ որ Հօր բնութիւնից է. երկրորդ՝ նրանից է եւ անմայր. երրորդ՝ միածին է, որովհետեւ ուրիշ մէկին չի ծնելու նրա նման. չորրորդ՝ անբաժանելի է Հօրից, ինչպէս՝ խօսքը մտքից:

ԲԱՆ Է ԱՆՈՒԱՆԻՈՒՄ ՏԱՍԸ ԿԵՐՊ

Իսկ Բան է անուանւում, նախ որովհետեւ բանը [խօսքը] մտքի ծնունդ է. երկրորդ, անախտ է ծնուել. երրորդ, միաւորուած է մտքի հետ. չորրորդ, մտքի թարգմանն է.

Հինգերորդ, միտքն է սահմանը, եւ ինչպէս սահմանումն է բացայայտում սահմանուողին, այնպէս էլ Որդին սահմանում է Հօր էութիւնը, ըստ այդմ՝ «ով տեսաւ ինձ, տեսաւ Հօրը» (Յովհ. ԺԴ 9):

Վեցերորդ, սահմանում է Հօր մեծութիւնը «Ես՝ իմ Հօր մէջ եմ, եւ Հայրն՝ իմ» (Յովհ. ԺԴ 10): Եւ ըստ առաքեալի թէ՝ «Ըստ Աստծոյ Որդու սահմանելու» (Հռոմ. Ա 4):

Եօթներորդ, եթէ անգամ խօսքը մտքում է եւ չի արտաբերւում, [նա] մտքի մէջ կայ:

Ութերորդ, խօսք է անուանւում՝ ամէն ինչը հաստատելու համար, ըստ այդմ՝ «Տիրոջ խօսքով հաստատուեց երկինքը» (Սղմ. ԼԲ 6):

Իններորդ, իր գալստեամբ վերացրեց մեր անբանութիւնն ու անգիտութիւնը եւ բերեց մեզ իր աստուածութեան ճշմարիտ գիտութեանը:

Տասներորդ, ինչպէս խօսքն է թարգմանն ու պատմողը մտքի, այդպէս էլ՝ Որդին՝ Հօր:

Կան եւ այլ բազում մտքեր խօսքի վերաբերեալ, մենք քիչը բերեցինք:

ՀՈՎԻՒ Է ԱՆՈՒԱՆՒՈՒՄ ՏԱՍԸ ԿԵՐՊ

Իսկ հովիւ է անուանվում՝ նախ, որովհետեւ հովիւը կանաչ վայրերում է հանգրուանում, ինչպէս գիտութիւնն է հանգրուանում Սուրբ Գրքի մէջ: Երկրորդ՝ ջրում խմեցնելով՝ հանգիստ է տալիս, ինչպէս Սուրբ Հոգով աւազանում մկրտուելիս: Երրորդ՝ որովհետեւ հոտի առջեւից է գնում: Չորրորդ՝ գազանների դէմ է պատերազմում: Հինգերորդ՝ մոլորուածներին վերադարձնում է: Վեցերորդ՝ կորածներին գտնում է: Եօթներորդ՝ վնասուածին վիրակապում է: Ութերորդ՝ զօրեղներին պահպանում է: Իններորդ՝ օրուայ վերջում փարախ է առաջնորդում: Տասներորդ՝ հովուական խօսքով հանդարտեցնում է նրանց:

ՔԱՀԱՆԱՅ Է ԱՆՈՒԱՆՒՈՒՄ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ՕՐԻՆԱԿՈՎ՝ ՏԱՍԸ ԿԵՐՊ

Որովհետեւ Քրիստոսը քահանայ է ըստ Մելքիսեդեկի կարգի՝ տասը կերպ. Նախ, որովհետեւ «մելքի» թագաւոր է նշանակում, եւ Քրիստոս՝ յաւիտենական թագաւոր է: Երկրորդ՝ «սեդեկ» նշանակում է արդարութիւն, եւ Քրիստոս արդարութիւն բերեց սատանայից գերուած մեր բնութեանը: Երրորդ՝ որովհետեւ թագաւորն էր Սաղիմի, որ [նշանակում է] «խաղաղութիւն». Քրիստոս էլ խաղաղութիւն հաստատեց երկնքում ու երկրում եւ իր խաղաղութիւնը տուեց մեզ (տե՛ս Յովհ. ԺԴ 27): Չորրորդ՝ անհայր էր, [ինչպէս] Քրիստոս երկրում: Հինգերորդ՝ անմայր էր, [ինչպէս] Քրիստոս՝ Հօրից: Վեցերորդ՝ անհամարելի ազգից՝ «Եւ ո՞վ կպատմի նրա ազգատոհմի մասին» (Գործք Ը 33): Եօթներորդ՝ հայրապետին տասանորդ տուեց[113], ինչպէս էլ Քրիստոս՝ հաւատացեալներին: Ութերորդ՝ որովհետեւ հաց ու ջուր էր պատարագում, այդպէս էլ՝ Քրիստոս: Իններորդ՝ անփոխարինելի էր նրա քահանայութիւնը, այդպէս էլ միայն մեր Քահանայապետը մտաւ վարագոյրի ետեւի կողմը (տե՛ս Եբր. Զ 19): Տասներորդ՝ որովհետեւ Աստծոյ կողմից էր նա կոչուած քահանայութեան, այդպէս էլ Քրիստոս Հօր կողմից ունէր իշխանութիւն:

ԿՈՉԻՈՒՄ Է ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻ ԵՒ ՄԱՐԴ

Իսկ Մարդու որդի է կոչւում, որովհետեւ Ադամի մարմնի արիւնից էր՝ իբրեւ նախահօրից եւ Կոյսից, իբրեւ իր մօրից:

Եւ մարդ է կոչւում, որովհետեւ իրենով սրբելով մեզ՝ եղաւ ամէն ինչ բոլորի համար, այսինքն՝ հոգի, միտք եւ մարմին, որպէսզի ինչպէս բոլորի համար մահ եղաւ, այդպէս էլ կեանք լինի:

Եւ ի՞նչ ասեմ, քանզի Ադամը հոգով հնազանդուեց, մտքով հրաժարեց եւ մարմնով գործն աւարտեց. իսկ այս բոլորով մարդը մեղանչում է: [Ուստի] Փրկիչը վերցրեց այս ամէնը, որ փրկի բոլորին, բացի մեղքերից, որովհետեւ մեղքը օտարամուտ է եւ ոչ բնութեամբ, քանի որ բնութիւնն անմեղ ստեղծուեց Աստծուց:

ՔԱՆԻ՞ ԵՂԱՆԱԿՈՎ Է ՓՉՈՒՄ ԿՈՉԻՈՒՄ

Նախ՝ Ադամին կենդանի շունչ փչեց եւ եղաւ: Երկրորդ՝ բոյսերին: Երրորդ՝ կենդանիներին: Չորրորդ՝ բանականներին: Հինգերորդ՝ մարգարէներին: Վեցերորդ՝ իջնելը Յորդանան, որտեղ Քրիստոսը դարձաւ մեր գլուխը, իսկ մենք՝ անդամներ: Եօթներորդ՝ նախքան խաչելութիւնը զօրութիւն տուեց առաքեալներին: Ութերորդ՝ փակ դռներից մտաւ: Իններորդ՝ վերնատանը [եղաւ]: Տասներորդ՝ մեր նման Հոգու իջնելը ջրի աւազան: Նաեւ, իբրեւ ճգնաւորներ նահատակւում են, ինչպէս Պօղոսը, Անտօնը եւ այլք, ովքեր գիր չգիտէին, սակայն ճգնելով՝ աստուածուսոյց եղան[114]: Այս է, որ ասում է մարգարէն. «Բացեցի բերանս եւ հոգի առայ», որովհետեւ առաւելագոյն նահատակութիւնը բերանը բացելն է:

ԳԼՈՒԽ Զ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Արդ, կատարեալ է աստուածութիւնը երեք անձով եւ մի աստուածութեամբ. լո՛յս, լո՛յս, լո՛յս՝ մի՛ լոյս, ինչպէս մի Աստուած, ըստ մարգարէի, թէ՝ «Քո երեսի լոյսով տեսնում ենք լոյսը» (Սղմ. ԼԵ 10): Իսկ որ անտեսում են մէկի աստուածութիւնը, կամ երկուսին էլ չեն տալիս աստուածութիւն, իմացի՛ր, սակայն, որ ըստ առաքեալի Հօր իմաստութիւնը եւ զօրութիւնը Որդին էր (տե՛ս Ա Կորնթ. Ա 24), իսկ ըստ Յօհաննու աւետարանի՝ Բանը (Յովհ. Ա 1): Արդ, եթէ Հայրը նախկինում առանց Բանի ու իմաստութեան էր, ինչպէ՞ս խորհեց յետոյ ծնել Որդի: Եւ եթէ առանց զօրութեան էր Հայրը, ինչպէ՞ս զօրացաւ Որդու ծննդեան ժամանակ: Եւ եթէ նախկինում առանց Հոգու էր՝ անկենդան ու անսուրբ, ինչպէ՞ս [յետոյ դարձաւ] կենդանացնող ու սրբող:

Տե՛ս, որ առանց Որդու անիմաստ ու տկար է Հայրը, ուրեմն չի կարող լինել Աստուած. նոյնպէս եւ Հոգին: Նոյնպէս եւ առանց Հոգու՝ անկենդանն ու անսուրբը Աստուած չէ, ուրեմն եւ՝ ոչ Որդի: Ուստի, մէկի բացակայութեամբ վերանում են երկուսն էլ, նաեւ ասում ենք՝ երեքը:

Նրանք, ովքեր Հոգին Աստուած չեն համարում՝ առաջին հերձուածողներն են, որովհետեւ [դրանով] ուրանում են Հօրը:

Երկրորդ, Հոգին, մեզ նման, արարած են համարում:

Երրորդ, եթէ արարած է, ինչպէ՞ս է մեզ աստուածներ դարձնում՝ Հօրը որդեգրուելով՝ աւազանի միջոցով:

Չորրորդ, ինչպէ՞ս է ինքը կարգւում Երրորդութեան մէջ, ըստ այդմ՝ «Մկրտեցէ՛ք Հօր, Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյ անունով» (Մտթ. ԻԸ 19), ապա ուրեմն, Հոգին կատարեալ Աստուած է:

Սակայն Հոգու վերաբերեալ կարծիքները զանազան են:

Ոմանք, ինչպէս սադուկեցիք, նրա գոյութիւնը չեն ընդունում, ինչպէս նաեւ՝ ոչ յարութեան եւ ոչ էլ հրեշտակի:

Իսկ հեթանոսների աստուածաբանները ասում են, որ բոլորի միտքը դրսում է՝ լցուած երկնքի փորուածքներում[115]: Եւ դրսում գտնուող այդ միտքը մեզ շնորհում է ամէն մի արհեստի տեսութիւնն ու շնորհքը: Այս է մեզ վայել ու պատշաճ:

Իսկ այլք [համարում են] արարած, որովհետեւ Գրքում չյայտնուեց, թէ Հոգին Աստուած է:

Ուրիշներն ասացին Աստծոյ մէջ եղած զօրութիւն:

Միւսները ո՛չ պաշտում են, ո՛չ անպատուում, որպէսզի չենենգափոխեն յաւիտենականի կարգը, ինչպէս ասացինք:

Իսկ այլք Աստուած են խոստովանում, ինչպէս եւ մեր դաւանանքը՝ Հօր ու Որդու հետ:

Մի մասն էլ Երրորդութեան աստիճաններ է դնում եւ անուանում՝ Արարիչ, գործակից, պաշտօն կատարող: Եւ ըստ անուանումների յարմարեցնում են շնորհները: Մէկն ասում են Արարիչ է զօրութեամբ եւ բնութեամբ անսահմանելի: Միւսը՝ գործակից է զօրութեամբ անսահմանելի, որովհետեւ ասում են՝ իրեն գործակից արեց եւ բնութեամբ՝ սահմանաւոր, որովհետեւ արարած է: Իսկ միւսը զօրութեամբ եւ բնութեամբ սահմանաւոր, որովհետեւ ասում են՝ արարած, պաշտօն կատարող եւ ծառայ:

Բայց մեր կարծիքը ոչ բոլորի [տեսակէտին] է համընկնում, այլ նրանց, ովքեր ասում են, որ Հոգին զօրութիւն եւ արարած է: Որովհետեւ, ըստ մեզ, Հոգին ինքնըստինքեան գոյացութիւն է, որ ուրիշի մէջ է տեսնւում, այսինքն՝ կատարեալ անձնաւորութիւն է՝ Հօր էութեան մէջ:

Ա

Սակայն երբ լսում են «ուրիշի մէջ»՝ մեզ վրայ են հարձակւում՝ ասելով, եթէ ուրիշի մէջ է, ապա պատահական յատկանիշն է Հօր, ինչպէս զօրութիւնը մեր մէջ:

Իսկ եթէ զօրացած է եւ զօրանալուց այլեւս դադարել է, ուրեմն շարժւում է [մէկի կողմից] եւ շարժող չէ:

Պատասխանենք, որ ոչ թէ զօրացած է, այլ զօրացնող, ըստ առաքեալի՝ նաեւ՝ ընտրող, «որովհետեւ մինչեւ աշխարհի լինելն ընտրեց» (Եփես. Ա 4): Եւ առանձնացնող՝ «Առանձնացրե՛ք Պօղոսին եւ Բառնաբասին» (Գործք ԺԳ 2), որ զայրանում եւ տրտմում է, ըստ այնմ՝ «Մի՛ տրտմեցրէք Սուրբ Հոգուն» (Եփես. Դ 30):

Եւ այս բոլորը շարժողինն են եւ ոչ թէ շարժուողինը, ուրեմն եւ Հոգին զօրութիւն չէ:

Ապա ասում են, թէ՝ գոյացութիւն է, սակայն ոչ ուրիշի մէջ, այսինքն՝ Հօր, օտար է [նրա] բնութիւնից, արարած եւ ոչ Աստուած:

Այս մասին պէտք է ասել, որ այլ էութիւն չկայ Արարչի եւ արարածների մէջ, որովհետեւ պէտք է կամ Աստուած լինի կամ արարած: Եւ սա չի կարող երկուսի խաչաձեւումը լինել, այսինքն՝ լինել Աստծուց ու արարածներից, եւ լինել մի էութիւն, ինչպէս որ եղջերուաքաղը էութիւն չէ, որ լինում է եղջերուից եւ քաղից[116] (այծից), ուրեմն եւ չկայ [ընդհանրական] էութիւն Արարչի եւ արարածների:

Եւ քանի որ համոզուեցինք, որ պարտադիր պէտք է էութիւն լինի, որ լինի Արարիչ կամ արարած, ե՛կ, նախ տեսնենք, ըստ քո կարծիքի, արարա՞ծ է Հոգին: Եւ եթէ արարած է, ինչպէ՞ս ենք հաւատում եւ ստանում, այսինքն՝ երբ խնդրում ենք՝ վերցնում, որովհետեւ հայցածը չեն տալիս արարածները, ինչպէս սոսկ անունով հեթանոս աստուածները: Եւ եթէ այդպէս է, ուրեմն Հոգին արարած չէ: Եւ քանի որ արարած չէ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ Աստուած, ինչպէս ասացինք: Իսկ եթէ Աստուած է, չի կարող ստեղծուած կամ արարած, կամ պաշտօնեայ, կամ ծառայ ասուել:

Բ

Դարձեալ հարցնում են. Հոգին անծի՞ն է, թէ՞ ծնուած:

Եթէ անծին է, ուրեմն երկուսն էլ անսկիզբ են եւ հակառակ միմեանց: Եթէ ծնուած է, ուրեմն պէտք է լինի Հօրից, կամ էլ՝ Որդուց: Եթէ Հօրից է՝ կլինեն երկու որդի ու եղբայր: Իսկ եթէ Որդուց է, ստացւում է, թէ Աստուած մի թոռ է մեզ համար: Իսկ եթէ երկուսից է, ապա չի կարող Հայրը ծնել եւ կարիք ունենալ որդու օգնութեան, եւ [այդպէս] Որդին կլինի անկատար: Իսկ անկատարից ծնուածն ինքը եւս կլինի անկատար: Եւ այսպէս, բոլոր կողմերից փորձում են մեզ կաշկանդել:

Ասենք մարմնապաշտներին, որ ծնունդը մեր օրինակով մարմնական մի՛ կարծէք, ո՞վ ծիծաղելիներ: Եթէ մեր օրինակով էք պատկերացնում ծնունդը, ուրեմն Հայրը պէտք է ունենար առականք ու գործիքներ, ինչպէս եւ Աստուած պէտք է ունենար այրութիւն եւ իգութիւն, իսկ որդիները պէտք է լինէին երկուորեակ՝ աւագ ու կրտսեր: Եւ ծնունդը քեզ համար աղճատուած կլինի, ինչպէս Մարկիոնի ութ աստուածների եւ ութ յաւիտենականների պարագային:

Սակայն [մենք] ոչ ծնուած, ոչ էլ անծին ենք ասում, այլ դուրս առաքուած Հօր կողմից, ինչպէս վկայում է Քրիստոսը, թէ՝ «Հոգին, որ ելնում է Հօրից», եւ թերեւս աւելի ճշմարիտ աստուածաբանութիւն կլինի, քան քոնը:

Գ

Դարձեալ հարցնում են, որ եթէ Հոգին հաւասար է Որդուն, ի՞նչն է խանգարում լինել Որդի, հակառակ դէպքում [ասում են] նուազ է, քան Որդին:

Պատասխանենք, որ Հոգին նուազ չէ, որովհետեւ աստուածութիւնը անկատար չէ, եւ Հոգին նուազութիւն չունի Որդի չլինելու պատճառով, այլ ունի իր դէմքն ու առանձնաւորութիւնները: Այլապէս, Որդին, որ ըստ ամենայնի պակասաւոր չէ, ինչո՞ւ Հայր չի լինում: Կամ, որ Հայրը ամենակատարեալ է, ինչո՞ւ Որդի չի լինում, թէեւ նոյն բնութիւնից է:

Դ

Դարձեալ ասում են, [այլ] օրինակ բերէք, որ նոյն բնութիւնից մէկը ծնունդով լինի, միւսը՝ անծնունդ: Այդ դէպքում կհաւատանք Հոգու Աստուած լինելուն:

Պատասխանենք, որ դուք էլ տուէք երեք նոյնպիսի անձանց [անուններ]՝ մի բնութեամբ, ես էլ ցոյց կտամ մէկին՝ ծնունդով, միւսին՝ անծնունդ: Իսկ եթէ ոչ, ինչո՞ւ ես անմարմնի [մասին] մարմնաւորների [օրինակով] դատում եւ մահացածից կենդանութիւն պահանջում, ըստ Եսայի [մարգարէի] (տե՛ս Ես. Ը 19): Օրինակ բերենք հուրը, որի ծնունդը լոյսն է, իսկ բխումը՝ ջերմութիւնը: Ապա՝ Ադամը, որ ունի ծնունդով Սէթին իբրեւ ծնունդ եւ Եւային իբրեւ անծնունդ, բայց զատուած նոյն բնութիւնից, եւ նոյն սահմանի մէջ են ծնողը, զատումը եւ ծնուածը:

Դարձեալ երկրի ծնունդները վեց տեսակ են լինում:

Նախ՝ նոյնից նոյնը, ինչպէս ձիուց ձի, արջառից արջառ:

Երկրորդ՝ այլից այլ, ինչպէս ջորին, գորտերն ու մկները՝ արեգակից ու երկրից:

Երրորդ՝ այլից նոյնը, ինչպէս կաքաւի ու սագի ձուից թռչուն է ելնում՝ կաքաւ կամ սագ:

Չորրորդ՝ նոյնից այլ, ինչպէս մեղուները բոռից, թէեւ այժմ ծաղիկներից են ելնում:

Հինգերորդ՝ արմաւ հաւի [ծնունդը], որ ուրիշները փիւնիկ են կոչում, որ Արաբիայում է [գտնւում]՝ ինքն իրեն այրում է հրով եւ դարձեալ կենդանանում[117]:

Վեցերորդ, երբ այլ [տեսակը] փոխւում է այլոց բնութիւնից՝ այդ բնութիւնն առատօրէն կրելու պատճառով, ինչպէս կերպասածին որդը, որ ծնում է իր նմանին, բայց եւ վերածւում կերպասի:

Այդպէս էլ միւսներն իմացիր, որ ծնում են իրենց նմանին եւ ծնունդից բացի, այլ ելքեր են ունենում, ինչպէս ձիուց՝ ձիակապիկը, բոռից՝ մեղուն, եւ որդից՝ կերպասը:

Իսկ այլ բազում օրինակներ Երրորդութեան վերաբերեալ վերը երրորդ համարում ասուեց:

Ե

Կրկին ասում են՝ Յոհաննու աւետարանում գրուած է՝ «Ամէն ինչ Որդով եղաւ» (Յովհ. Ա 2), ապա ուրեմն Հոգին էլ Որդու ձեռքով եղաւ. ինչպէ՞ս է հաւասար [նա] Որդուն կամ Հօրը:

Պատասխանենք, որ ուղղակի չի ասում, թէ՝ «ամէն ինչ», այլ հարում է նրա հետ, թէ՝ «այն ամէնը, ինչ որ եղաւ»: Իսկ եթէ ցոյց տաս Հոգու լինելը, ես էլ կհաւատամ, որ Որդու միջոցով է եղել:

Իսկ եթէ ոչ, ուրեմն ստում ես, քո իսկ խօսքերով, որովհետեւ Հոգին անեղ է: Այլապէս՝ քո ասածի համաձայն, Հայրն էլ պէտք է որ եղած լինի Որդուց:

Զ

Դարձեալ հարցում են, թէ ինչպէ՞ս էք մեկնաբանում, որ [Գրքում] չգրուած Հոգին Աստուած է, որովհետեւ եթէ ասում էք Հայր Աստուած, Որդի Աստուած, Հոգի Աստուած, [ուրեմն] բազմաստուած էք, ինչպէս հեթանոսները:

Պատասխանենք, նախ մակեդոնացիներին, որոնք Աստուած են խոստովանում Որդուն, ասելով, թէ՝ հիմնաւորէք ձեր [միւս] երկու աստուածներին: Քո բերած հիմնաւորումը [Որդուն իբրեւ Աստուած ընդունելու] կլինի հենց մեր կողմից քեզ տրուած պատասխանը[118]: Իսկ Արիոսին տրուած պատասխանը, որ միայն Հօրն է ընդունում իբրեւ Աստուած, կլինի այն, որ մենք երեք Աստուած չունենք, այլ մէկը՝ երեք անձով, երկուսն առաջ եկած միեւնոյն էութիւնից՝ մի կամքով եւ զօրութեամբ: Ինչպէս այն, որ արեգակի շրջանակին նայելիս՝ ասում ենք մի արեգակ, իսկ եթէ հաշուի առնենք լոյսն ու ջերմութիւնն էլ՝ երեքը պիտի ասենք:

Այդպէս էլ աստուածութիւնը մէկ է, եւ անձերը՝ երեք:

Է

Ասում են, որ հեթանոսներն էլ իրենց բազում կուռքերին մի աստուած էին անուանում, ինչպէս որ մարդկութիւնը մի բնութիւն է ասւում, թէեւ մարդիկ բազմաթիւ են, ուրեմն դուք էլ բազմաստուած էք:

Պատասխանենք, որ հեթանոսները մի աստուած չունեն, այլ՝ բազմաթիւ եւ հակառակ միմեանց՝ պաշտամունքի հարկադրանքով եւ զոհեր պահանջելով: Նոյնը եւ մարդիկ, որ ոչ միայն շատերից են գոյացել, այլեւ տարբերւում են միմեանցից ժամանակով, տարորոշ կամքով եւ միմեանց հանդէպ հակառակութեամբ: Իսկ Աստուած այդպէս չէ, այլ գոյութիւն ունի որպէս մէկը, որ բնութեամբ, կամքով եւ զօրութեամբ մէկ է: Եւ նրանց միաւորութեան մէջ որքան մէկն ունի այդ բնութիւնը, զօրութիւնն ու կամքը, այնքան էլ երկուսն ունեն՝ թէ՛ Հայրը, թէ՛ Որդին, թէ՛ Հոգին:

Այսպէս պէտք է [հասկանալ] միաւորութիւնը:

Ը

Դարձեալ հարց են տալիս, ինչպէ՞ս կլինի երեք [անձ] եւ մի բնութիւն, որովհետեւ երեքը չի յարաբերուի մի բնութեանը, այլ մէկը՝ մէկին, երկուսը՝ երկուսին, երեքը՝ երեքին, քանզի որքան թիւն է, այդքան [թուով] էլ բնութեանը պէտք է կարգակից լինի: Եւ մէկ այլ անուն բնութեան չի կարող կարգակից լինել՝ ոչ մէկը երկուսին, կամ երկուսը երեքին: Հետեւաբար, եթէ դուք ասում էք՝ Հայր, Որդի, Հոգի, ըստ թուի պէտք է յարաբերուի երեք բնութեան եւ ոչ թէ մէկին:

Պատասխանենք, որ ամէն մի թիւ բնութիւն յայտնող չէ, այլ՝ ենթակայ թուի պարունակած քանակը:

Ըստ Սողոմոնի սիգաճեմ են երեքը՝ առիւծը, նոխազը եւ աքաղաղը (Առակ. Լ 30-31): Տե՛ս, որ այլեւայլ են բնութեամբ, սակայն անուամբ [սիգաճեմութեամբ], թուակից է դարձրել: Իսկ Մովսէսը նոյն բնութեամբ եւ նոյն անուամբ հաղորդակից քերովբէների համար ասում է. թէ [դրանցից] մէկը աջից է, միւսը՝ ձախից (տե՛ս Ելք ԻԵ 19): Իսկ Քրիստոսը Աւետարանում յարաբերում է Աստծուն եւ մամոնային (տե՛ս Մտթ. Զ 24): Առաքեալը՝ հոգին, ջուրը, արիւնը բերում է իբրեւ Քրիստոսի երեք վկաներ (տե՛ս Ա Յովհ. Ե 8): Իմաստասէրներն էլ համանունն են յարաբերում, չնայած նոյն տեսակից չեն կամ նոյն բնութիւնը չունեն, ինչպէս համանուն է խեցգետինը՝ կենդանին եւ կենդանակերպը, շունը՝ ջրային, սովորական եւ համաստեղութիւնը[119]:

Նոյնը [հաստատւում է] եւ թուերի բնական քննութեամբ. երբ ասում ես մէկ եւ մէկ, լինում է երկու, որ կունենայ երկուսի բնութիւնը, իսկ երբ տրոհես, դարձեալ կդառնայ մէկ եւ մէկ. այժմ տրոհուեց առաջին բնութիւնից, ըստ քեզ, եւ տակաւին ունի նոյն թուակարգը: Ստացւում է, որ նոյն իրը մերթ բնութեամբ է, մերթ՝ առանց բնութեան, որ անհնար է: Ապա ուրեմն, Հայրը, Որդին, Հոգին թէեւ թուով երեքն են, սակայն երեք բնութեամբ չեն:

ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Որ չկան, բայց էութիւնների մէջ են ասւում, ինչպէս եղջերուաքաղը, արալեզը, յուշկապարիկը, եւ Աստծոյ [պարագային] բարկանալը, ննջելը, զարթնելը, գնալը եւ այլն:

Որ, կան, սակայն չեն ասւում էութիւնների մէջ. սրանք մարդկանց աչքին անհասանելի լեռների անկոխ վայրերում են եւ ծովերի խորքերում: Իսկ Աստծոյ [պարագային կայ], քանի որ անսկիզբ է, անծին, անմահ, անապական: Եւ Սուրբ Գիրքը [թէպէտ] այդ բառով չի ասում, սակայն այլ կերպ է մատնանշում, այսինքն, երբ ասում է՝ «Ես եմ ալֆան եւ օմեգան» (Յայտ. Ա 8), սրանով իմանում ենք անսկիզբն ու անվախճանը: Այսկերպ՝ եթէ Հոգին յայտնապէս Աստուած անուանելը թաքնուած մնաց, սակայն այլ բառով պարզ դարձաւ, նրա ճշմարտապէս կատարեալ Աստուած լինելը, ինչպէս՝ «Հոգի Աստծոյ, Հոգի Տիրոջ, Հոգի ճշմարտութեան, Հոգի բարի, Հոգի Սուրբ» (Յովհ. ԺԶ 13, Գործք Ժ 47, Ա Թեսաղ. Դ 8, Փիլիպ. Գ 3, Եփես. Դ 30 եւ այլուր):

Այս եւ նման բառերը Հոգուն պարզորոշ Աստուած են ցոյց տալիս:

Երրորդ եղանակ. չկայ ու չի ասւում էութիւնների մէջ եւ եղականների մէջ, ինչպէս որ [չի ասւում] գունդը քառանկիւնի կամ՝ ուղղակի՝ մարդ: Իսկ Աստծոյ պարագային չի ասւում, քանզի չար չէ, տգէտ չէ, անկարող չէ:

Կան եւ ասւում են, ինչպէս Աստուած, Արարիչ, ողորմած, բազմագութ: Կան եւ ասւում են էութիւնների պարագային, այսինքն՝ մարդու, հրեշտակների, երկնքի, երկրի, նրանց, որոնք սրանց մէջ են:

Եւ սրանք են, որ ասացինք. չկայ եւ ասւում է. կայ եւ չի ասւում. չկայ եւ չի ասւում. կայ եւ ասւում է, ինչպէս ցոյց տուեցինք:

Իսկ թէ ինչո՞ւ Հոգին բացայայտ չէ. [ասենք, որ] ինչպէս նախահայրերի եւ Որդու մօտ Հօրը ծանօթ լինելն աղօտ եղաւ, բայց յայտնուեց նրա մարմնանալով, այդպէս էլ Հոգին իր ժամանակին [յայտնուեց] Քրիստոսի խաչելութիւնից հետոյ՝ Հօր մօտ համբարձուելով եւ ապա՝ Հոգու իջնելու ժամանակ իր աստուածութիւնը յայտնելուց յետոյ:

ԴԱՐՁԵԱԼ ՆՐԱՆՑ ԴԷՄ, ՈՎՔԵՐ ԱՐԱՐԱԾ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ ԲԱՆՆ ԱՍՏԾՈՅ ԵՒ ՀՈԳԻՆ, ԻՆՉՊԷՍ ԱՐԻՈՍԸ, ՄԱԿԵԴՈՆԸ, ՀՐԷԱՆԵՐԸ ԵՒ ԱՅԼՔ

Մովսէսն ասում է՝ [Աստծոյ Հոգի] (Ծննդ. Ա 2), Դաւիթը՝ [Տիրոջ Խօսք] (Սղմ. ՃԴ 19) եւ Յոբը՝ [Հոգի աստուածեղէն] (Յոբ ԼԳ 4):

Արդ, նախ՝ Աստծոյ խօսքը եւ Աստծոյ Հոգին չեն պատշաճում արարածին, այլ՝ միայն Աստծուն, ինչպէս որ մարդու խօսքը եւ մարդու հոգին միայն մարդունն են, իսկ հրեշտակի հոգին ու խօսքը՝ միայն հրեշտակինը:

Երկրորդ՝ Խօսքը իմաստութիւնն է, Հոգին՝ կենդանութիւնը: Իսկ եթէ սրանք արարածներ են, ինչպէ՞ս սրանց դարձրեց անբան ու անկենդան:

Երրորդ՝ իմաստութեամբ արարեց Հոգին ու Խօսքը եւ ոչ անգիտութեամբ: Արդ, այն իմաստութիւնը, որով արարուեցին Խօսքն ու Հոգին, նա Աստծոյ Խօսքն է ու Աստծոյ Հոգին եւ ոչ արարած:

Չորրորդ՝ կարողութեամբ արարեց Խօսքն ու Հոգին եւ ոչ տկարութեամբ: Արդ, այդ կարողութիւնը Աստծոյ խօսքը եւ Հոգին է եւ ոչ թէ նրանից եղածները:

Հինգերորդ՝ եթէ Աստծոյ Խօսքն ու Հոգին արտաքին արարածներ են, ապա անկարելի է, որ արարածները Արարչի Խօսքն ու Հոգի լինեն:

Վեցերորդ՝ եթէ Աստծոյ Խօսքն ու Հոգին արարած են, ապա Աստծոյ էութեանը օտար են, օտարամուտ ու աւելորդ նրա համար:

Եօթներորդ, եթէ արարած են Խօսքը եւ Աստծոյ Հոգին ու նրա էութիւնից են, ապա ինքն էլ արարած է, որինն են այդ Խօսքն ու Հոգին:

Ութերորդ՝ եթէ արարած են Խօսքն ու Հոգին, ուրեմն երկակի են եւ ոչ մէկին [չեն պատկանում], այսինքն՝ խօսքը [թէ] արարած եւ [թէ] Արարչի Խօսք, Հոգին [թէ] արարած է եւ [թէ] Արարչի Հոգի՝ եղական ու անեղ, եւ այլն:

Իններորդ՝ եթէ Աստուած Արարիչ է, իսկ նրա Խօսքն ու Հոգին արարած, ապա ուրեմն ինքը պարզ ու միասնական չէ, այլ բաղադրեալ եւ բազմութիւններից գոյացած:

Տասներորդ՝ եթէ Աստծոյ Խօսքն ու Հոգին արարած են եւ տարբեր բնութեամբ, այդ դէպքում Աստուած մէկ չի լինի, այլ՝ բազում ու զանազան աստուածներ, որովհետեւ բազմութիւնը Աստծոյ բազմաթիւ լինելն է, ինչպէս որ երեք բնութեան դէպքում [կլինի] երեք աստուած, երկու բնութեան դէպքում՝ երկու աստուած:

Այսքանն այս մասին:

Թ
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՅԱԿԻՑ ԵՒ ՁՈՒԳԱՊԱՏԻՒ, ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԻՑ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՒ՝

Արարիչ է Հայրը, արարիչ է Որդին, արարիչ է նաեւ Սուրբ Հոգին, ինչպէս եւ գրուած է. «Տիրոջ ողորմութեամբ լիալրուեց երկիրը եւ Տիրոջ խօսքով հաստատուեց երկինքը ու նրա Հոգու բերանով՝ նրանց բոլոր զօրութիւնները» (Սղմ. ԼԲ 5): Ողջ աշխարհը լցրեց Հայրը, սակայն ոչ առանց Որդու, ըստ գրածի՝ «Երկինքը եւ երկիրը ես եմ լցնում»,- ասում է Ամենակալ Տէրը: Լցրեց եւ Որդին, որովհետեւ՝ «Ամէն ինչ նրանով եղաւ» (Յովհ. Ա 3): Իսկ Հոգու մասին ասւում է՝ «Տիրոջ Հոգին լցրեց տիեզերքը» (Իմաստ Ա 7): Պօղոսն ասում է՝ «Որ գործեց սրանք մեզ համար, Աստուած է, որը եւ օծեց ու կնքեց մեզ» (Բ Կորնթ. Ա 21): Կնքում է եւ Հոգին Սուրբ՝ «Մի՛ տրտմեցրէք Աստծոյ Սուրբ Հոգուն, որով կնքուեցիք ձեր փրկութեան օրը» (Եփես. Դ 30):

Մեծ է Հայրը, Մեծ է Որդին, անբովանդակելի է նաեւ Սուրբ Հոգին, ըստ հոգերգուի, որ ասում է. «Մեծ է մեր Տէրը, մեծ է եւ նրա զօրութիւնը» (Սղմ. ճԽՁ 5), իսկ Աստծոյ զօրութիւնը Քրիստոսն է: «Նրա իմաստութիւնը սահմաններ չունի» (Սղմ. ճԽՁ 5), այսինքն՝ Սուրբ Հոգու:

Խաղաղութիւն է Հայրը, որ յանձին իր ասում է. «Գետի նման է իմ խաղաղութիւնը»: Խաղաղութիւն է եւ Որդին՝ ըստ Պօղոսի. «Նա է մեր խաղաղութիւնը, որ երկուսը մէկ արեց եւ խաղաղութիւն հաստատեց իր խաչի արեամբ» (Կողոս. Ա 20): Խաղաղութիւն է նաեւ Սուրբ Հոգին. «Հոգու պտուղները սրանք են, ասում է. սէրը, խնդութիւնը, խաղաղութիւնը» (Գաղատ. Ե 22):

Աղբիւր է Հայրը, որովհետեւ նրանից է Կենաց աղբիւրը: Աղբիւր է եւ Որդին, որ ասաց՝ «Ինձ թողեցին կենդանի ջրի աղբիւրը» (հմմտ. Յովհ. Դ 10-11): Աղբիւր է եւ Սուրբ Հոգին, որովհետեւ մենք բոլորս նոյն Հոգուց խմեցինք:

Լոյս է Հայրը, որովհետեւ լոյսի Աստուած է ասւում: Լոյս է եւ Որդին, որ ասում է՝ «Ես եմ աշխարհի լոյսը» (Յովհ. Ը 12): Լոյս է եւ Հոգին Սուրբ, որի մասին Պօղոսն ասում է՝ «Մի՛ մարէք Սուրբ Հոգին» (Ա Թեսաղ. Ե 19):

Կեանք է Հայրը, ըստ այդմ՝ «Ես եմ սպանում եւ ես ապրեցնում» (Բ Օր. ԼԲ 39): Կեանք է եւ Որդին, որ ասում է՝ «Ես եմ յարութիւնն ու կեանքը» (Յովհ. ԺԱ 25): Կեանք է եւ Հոգին Սուրբ, ըստ այդմ՝ «Հոգին կենդանարար է» (Յովհ. Զ 64):

Տէր է Հայրն ըստ Եսայու. «Տէր է մեր Հայրը» (Ես. ԼԳ 22): Տէր է եւ Որդին ըստ Պօղոսի. «Մէկն է մեր Տէր Յիսուս Քրիստոսը»: Տէր է նաեւ Հոգին Սուրբ, «որովհետեւ Տէրը Հոգի է»,- ասում է Պօղոսը (Բ Կորնթ. Գ 17):

Բարի է Հայրը. «Չկայ բարի մէկը, բացի մի Աստծուց» (Մրկ. Ժ 18): Բարի է եւ Որդին, ինչպէս ասում է՝ «Դու, որ իմ բարերարն ես, Աստուած իմ Յիսուս»: Բարի է եւ Հոգին Սուրբ, ըստ այդմ՝ «Քո բարի Հոգին թող առաջնորդի է ինձ» (Սղմ. ճԽԲ 10)[120]:

Ժ
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՏՈՒԱԾ Է ԵՒ ՈՉ ՊԱՇՏՕՆ ՎԱՐՈՂ ԿԱՄ ՍՏԵՂԾՈՒԱԾ

Նախ, բացի Աստծուց ոչ ոք չունի Սուրբ տաճար, ինչպէս ասում է սաղմոսը՝ «Տէրն իր Սուրբ տաճարում է» (Սղմ. Ժ 5): Իսկ Պօղոսը Կորնթացւոց Առաջին թղթում ասում է՝ «Չգիտէք, թէ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու» (Ա Կորնթ. Զ 19): Ապա ուրեմն Սուրբ Հոգին Աստուած է:

Երկրորդ երկրպագութիւնը, որ Աստծուն է ուղղուած, միայն Աստծուն է վայել, ըստ այդմ՝ «քո Տէր Աստծուն երկրպագես եւ միայն նրան պաշտես»: Իսկ Փիլիպպեցւոց թղթում Պօղոսն ասում է. «Թլփատութիւնը մենք իսկ ենք, որ Աստծու Հոգուն ենք պաշտում» (Փիլիպ. Գ 3)[121]:

Երրորդ՝ մարդկանց մաքրելը միայն Աստծոյ գործն է, ինչպէս ասում է Ղեւտացւոց [գրքում]. «Ես եմ Տէրը, որ սրբում եմ ձեզ» (Ղեւտ. ԺԱ 44), իսկ Կորնթացւոց Առաջին թղթում ասւում է՝ «Սրբուեցիք եւ արդարացաք յանուն մեր Տէր Յիսուս Քրիստոսի եւ Աստծոյ Հոգու» (Ա Կորնթ. Զ 11):

Չորրորդ՝ կենդանի է Աստծոյ Հոգին, ըստ այդմ՝ «Կենդանի է Հայրը, կենդանի եմ եւ ես՝ Հօր շնորհիւ, եւ ինձնով կերակրուողները կապրեն յանուն ինձ» (Յովհ. Զ 58): Եւ այսպէս, կենդանի է Հոգին, ըստ այդմ՝ «Հոգին է, որ կենդանութիւն է տալիս» (Յովհ. Զ 64):

Հինգերորդ՝ յարութիւն տալը միայն Աստծոյ շնորհն է, ըստ այդմ՝ «Ինչպէս Հայրն է կենդանութիւն տալիս մեռեալներին եւ յարութիւն, նոյնպէս եւ Որդին, ում կամենում է՝ կենդանացնում է» (Յովհ. Ե 21): Այս զօրութիւնն ունի նաեւ Սուրբ Հոգին, ինչպէս ասում է Պօղոսը Հռոմէացւոց [թղթում]՝ «Այն Հոգին, որ յարութիւն տուեց Յիսուսին մեռելների միջից, նա կենդանացնում է նաեւ ձեր մահկանացու մարմինը» (Հռոմ. Ը 11):

Վեցերորդ՝ ստեղծելը նոյնպէս միայն Աստծոյ շնորհն է: Սիրաքն ասում է Աստծոյ մասին, թէ՝ «Նա ստեղծեց իմաստութիւնը՝ Սուրբ Հոգով»:

Եօթներորդ՝ Աստծոյ սիրտը ստեղծուածներից ոչ ոք չի կարող քննել, ըստ այդմ՝ «Ոչ ոք չգիտի Որդուն, բացի Հօրից, որ Աստուած է, եւ ոչ ոք չգիտի Հօրը, բացի Որդուց» (հմմտ. Յովհ. Ը 19):

Կորնթացւոց Առաջին [թղթում] Պօղոսն ասում է՝ «Հոգին է, որ քննում է ամէն բան, նաեւ՝ Աստծոյ խորքերը» (Ա Կորնթ. Բ 10):

Ութերորդ՝ ինչպէս մարդու հոգին է մարդու էութիւնից, այդպէս էլ Աստծոյ Հոգին է Աստծոյ էութիւնից: Սա ցոյց է տրւում նաեւ Կորնթացւոց Առաջին [թղթում]. «Ոչ ոք չգիտի մարդուն այնպէս, ինչպէս նրա մէջ գտնուող հոգին: Նոյնպէս մնացածի մասին ոչ ոք չգիտի Աստծու Հոգուց բացի» (Ա Կորնթ. Բ 11):

Իններորդ՝ Եսային ասում է՝ «Լսեցի Տիրոջ խօսքը, որ ասում էր՝ «որի՞ն ուղարկեմ», որից յետոյ ասում է՝ «Գնա եւ ասա այս ժողովրդին. լսելով կլսէք, բայց չէք հասկանայ» (Ես. Զ 9): Իսկ Պօղոսը Գործքում այս ասածը վերագրում է

Հոգուն՝ ասելով. «բարութեամբ խօսեց Հոգին Սուրբ Եսայու միջոցով մեր հայրերի հետ՝ ասելով. լսելով կլսէք եւ չէք հասկանայ» (Գործք ԻԸ 26): Ապա ուրեմն Աստուած է Սուրբ Հոգին:

Տասներորդ՝ յայտնի է Սուրբ Գրքից, որ Աստուած էր, որ խօսեց մարգարէների միջոցով, քանզի ասում է Թուոց [գրքում]՝ «Ես՝ Տէրը, տեսիլքներով, երազներով խօսեցի մարգարէների միջոցով» (Թիւ ԺԲ 6): Իսկ խօսողը Սուրբ Հոգին էր՝ մարգարէների միջոցով, ինչպէս ասում է Պետրոս առաքեալը Ընդհանրական թղթերում՝ «Ոչ թէ մարդկանց կամքով տուեց մարգարէութիւն, այլ կրելով Սուրբ Հոգուն՝ մարդիկ խօսեցին Աստծոյ հետ» (Բ Պետ. Ա 21):

Տասնմէկերորդ՝ Աստծոյ շնորհն է միայն իմանալ գաղտնիքները, ինչպէս ասում է Դանիէլը՝ «Աստուած երկնքից ինքն է տեսնում խորքերն ու գաղտնիքները» (Դան. Ս 22): Իսկ Կորնթացւոց Առաջին [թղթում] ասում է. «Հոգին է, որ բարձրաձայնում է խորհուրդները» (Ա Կորնթ. ԺԴ 2):

Տասներկուերորդ՝ դարձեալ ըստ սաղմոսի՝ միայն Աստծոյ [կարողութիւնն է] մարդու միտքը ներքուստ ուսուցանել. «Ով է ուսուցանում գիտութիւն» (Սղմ. ՂԳ 10): Սա յատուկ ասում է Սուրբ Հոգու համար, որի մասին ասում է Յովհաննէսը. «Սուրբ Հոգին, որ Հայրը կառաքի իմ անունից՝ նա կուսուցանի ձեզ ամէն ինչ» (Յովհ. ԺԴ 26):

Տասներեքերորդ՝ միայն Աստծոյ շնորհն է նաեւ բնակուել սրբերի սրտում, ինչպէս ասում է Կորնթացւոց Առաջին [թղթում]՝ «Չգիտէք, որ Աստծոյ տաճար էք եւ Աստծոյ Հոգին բնակւում է ձեր մէջ» (Ա Կորնթ. Զ 19):

Տասնչորսերորդ՝ ամենուրէք գտնուելը դարձեալ միայն Աստծոյ շնորհն է, ինչպէս ասում է Երեմիան. «Երկինքն ու երկիրը ես եմ լցնում» (Երեմ. ԻԳ 24): Բայց սա պատշաճում է Սուրբ Հոգուն, քանզի Սիրաքն ասում է. «Տիրոջ Հոգին լցնում է տիեզերքը» (Իմաստ. Ա 7):

Տասնհինգերորդ՝ Կորնթացւոց Առաջին [թղթում] ի դէմս Աստծոյ ասւում է. «Օտար լեզուներով եւ օտար շրթունքներով կխօսեմ այս ժողովրդի հետ» (Ա Կորնթ. ԺԴ 21): Իսկ Սուրբ Հոգին էր, որ խօսեց լեզուներով, ըստ այդմ Փրկիչն ասում է. «Ոչ թէ դուք էիք, որ խօսեցիք, այլ ձեր Հօր Հոգին, որ խօսեց ձեզ հետ» (Մրկ. ԺԳ 11):

Տասնվեցերորդ՝ սրտի գաղտնիքները միայն Աստուած կարող է իմանալ, ինչպէս ասում է Երեմիան՝ «Ես եմ՝ Տէրը, որ քննում եմ սրտերը եւ փորձում երիկամները» (Երեմ. ԺԷ 10): Եւ սա էլ է վերաբերում Սուրբ Հոգուն, քանզի Կորնթացւոց Առաջին [թղթում] ասւում է. «թէ բոլորը կմարգարէանան, եւ այնտեղ մտած անհաւատն ու տգէտը կյանդիմանուեն բոլորի կողմից. նրա սրտի գաղտնիքները յայտնի կդառնան ու ընկնելով երեսնիվայր՝ կերկրպագի Աստծուն եւ կխոստովանի, թէ՝ «արդարեւ Աստուած է ձեզ հետ» (Ա Կորնթ. ԺԴ 24):

Տասնեօթներորդ՝ դարձեալ միայն Աստուած կարող է մարդկանց որդեգրել

Աստծուն, ինչպէս ասում է Գաղատացիների [թղթում]՝ «Աստուած առաքեց իր Որդուն, որ մենք ընդունենք որդեգրութիւնը» (Գաղատ. Դ 5): Իսկ Հռոմեացւոց թղթում ասւում է. «առանք Հոգին որդեգրութեան» (Հռոմ. Ը 15):

Տասնութերորդ՝ եւ ոչ ոք բանականներից՝ ստեղծուած եւ մասնաւոր չի կարող հաղորդակից լինել շատերին, այլ միայն նոյն Հոգին կարող է հաղորդուել բոլոր հաւատացեալներին, ինչպէս ասում է Գործքը. «Բոլորը լցուեցին Սուրբ Հոգով» (Գործք. Բ 4):

Տասնիններորդ՝ Պետրոսն ասում է Գործքում. «Անանիա՛, ինչո՞ւ սատանան լցրեց սիրտդ ստելու Սուրբ Հոգուն» (Գործք. Ե 3): Եւ յետոյ ասում է՝ «Ստեցիր ոչ թէ մարդուն, այլ՝ Աստծուն» (Գործք Ե 4): Ապա ուրեմն Սուրբ Հոգին Աստուած է:

Քսաներորդ՝ Աւետարանն ասում է. «Հոգին Աստուած է» (Յովհ. Դ 24): Ծննդոց [գրքում] ասում է. «Աստծոյ Հոգին շրջում էր ջրերի վրայ» (Ծննդ. Ա 2): Յոբն ասում է. «Աստուածեղէն Հոգին արարեց ինձ եւ Ամենակալի շունչն է, որ ուսուցանում է ինձ» (Յոբ ԼԳ 4):

Իսկ այն, որ հակառակորդները ասում են, թէ այդ գործողութիւնները կատարում է Սուրբ Հոգին ոչ որպէս Աստուած, այլ իբրեւ պաշտօն վարող, ակնյայտ սուտ է, քանզի Կորնթացւոց Առաջին [թղթում] ասւում է, որ՝ «Թէեւ շնորհները զանազան են, բայց Հոգին նոյնն է: Եւ թէպէտ բաժինները պաշտօնների զանազան են, բայց Տէրը նոյնն է: Եւ թէպէտ բաժան են յաջողութիւնները, բայց Աստուած նոյնն է, որ յաջողում է ամէն ամեն ինչ» (Ա Կորնթ. ԺԲ 4-6): Եւ յետոյ ասում է. «Այս ամէնը յաջողում է միեւնոյն Հոգին եւ բաժանում է իւրաքանչիւրին, ինչպէս որ կամենում է» (Ա Կորնթ. ԺԲ 11):

Իսկ այժմ տեսնենք Սուրբ Գրքի մասին Մակեդոնի վկայութիւնները եւ տանք նրանց պատասխանները:

ԺԱ
ՄԱԿԵԴՈՆԻ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախ, Մակեդոնն ասում է, թէ աղօթելն ու բարեխօսելը պատշաճ չէ Աստծուն, եւ եթէ Քրիստոսի մասին է ասւում, մարդկութեանն է վերաբերում: Բայց Պօղոսը Հռոմէացւոց [թղթում] ասում է. «Սուրբ Հոգին աներեւոյթ բարեխօս է լինում հեծութիւնների ժամանակ» (Հռոմ. Ը 26):

Պատասխանենք. նախ, որ ինչպէս ասում է Ոսկէբերանը, աւազանով նորածինները ըստ պարգեւի չափի արժանի էին դառնում իմաստութեան, թարգմանութեան եւ այլնի համար[122], այդպէս էլ մէկն ընդունում է կարգաւորապէս աղօթելու շնորհ, որից եւ միւսները սովորում են աղօթել: Դրա օրինակը սարկաւագն է, որին հոգի են անուանում հոգեւորապէս խօսելու պատճառով: Իսկ ուրիշներ հոգի են անուանում հրեշտակական հոգին, որ տրւում է մեզ պահպանելու համար, որ նա ուղղի մեզ ի բարին եւ մեր աղօթքը մատուցի Աստծուն: Ինչպէս որ Տուբիթին է ասում. «երբ աղօթքի էի կանգնած եւ քո հարս Սառան էլ, ես ձեր աղօթքը մատուցեցի

սրբերին» (Տուբ. ԺԲ 12): Եւ նոյն մխիթարիչ Հոգու մասին դարձեալ ուղղակի է ասւում, որովհետեւ սովորութիւն է Սուրբ Գրքում Աստծունը համարել այն, ինչ գործում է մարդկանց համար: Ինչպէս ասում էր Աբրահամին՝ «Այժմ տեսայ, որ դու երկիւղում ես Աստծուց» (Ծննդ. ԻԲ 12), այսինքն՝ այժմ քո երկիւղը ցոյց եմ տալիս մարդկանց: Այսպէս էլ Հոգու բարեխօսելն է, որ մտնում է մեր սիրտը աղօթելիս՝ բարեխօս լինելու մեզ, եւ խնդրելու այն, ինչ ի փառս Աստծոյ է:

Երկրորդն ասում են առաքուել [նշանակում] է մեծի կողմից փոքրի [ուղարկուելը]: Իսկ Որդին ասում է՝ «Երբ գայ մխիթարիչ Սուրբ Հոգին, որին առաքելու է Հայրն իմ անունից» (Յովհ. ԺԴ 26):

Պատասխանենք, որ ինչպէս ասւում է Որդին առաքուած է Հօրից եւ Հոգուց, ըստ այդմ՝ «Տէրը, Տէրը առաքեց ինձ եւ նրա Հոգին» (Ես. ԽԸ 18), եւ սա ոչ փոքրութեան պատճառով, այլ կամքի միասնութեան նշան է: Նոյն կերպ եւ Հոգու ուղարկելը ոչ թէ նուազութիւն է ցոյց տալիս, այլ Հօր եւ Որդու հետ համակամ լինելը:

Երրորդն ասում են շարժուելը ստեղծուած է: Իսկ Ծննդոց [գրքում] ասում է՝ «Աստծոյ Հոգին շրջում էր ջրերի վրայ» (Ծննդ. Ա 2): Յովէլն ասում է՝ «Հեղելու եմ իմ հոգուց հեղելու եմ բոլոր մարմինների վրայ» (Յովէլ Բ 28):

Պատասխանենք, թէ ոմանք Աստծոյ Հոգի օդն են անուանում, որի բնական տեղը ջրերի վրայ է: Սակայն շարժում ասում է ոչ միայն Սուրբ Հոգու վերաբերեալ, այլեւ՝ Հօր եւ Որդու, ըստ այդմ՝ «Լսեցին Տէր Աստծու գնալու ձայնը դրախտում» (Ծննդ. Գ 8): Եւ կամ՝ «Իջնեմ եւ տեսնեմ, թէ իրենց աղաղակի համաձայն հատուցեցին» (Ծննդ. ԺԸ 21): Իսկ այս շարժումները չեն նշանակում, թէ Աստուած ստեղծուած է, ուրեմն եւ՝ Սուրբ Հոգին: Իսկ որ Յովէլն ասում է՝ «Հեղելու եմ իմ հոգուց» [ապա] «հեղելը» ոչ այլ ինչ է, եթէ ոչ առաքում, եւ նշանակում է մէկ հոգու շնորհների ծաւալուելը շատերի վրայ:

Չորրորդն ասում են՝ տրտմութիւնը կիրք է եւ չի կարող լինել Աստծոյ մէջ: Իսկ Եփեսացիների թղթում ասւում է՝ «Մի՛ տրտմեցրէք Սուրբ Հոգին» (Եփես. Դ 30):

Պատասխանենք, որ եթէ մարգարէն ասում է, թէ՝ «Տէրը սրտմտութեամբ բարկացաւ ժողովրդի վրայ» (Բ օր. ԻԹ 27), չի նշանակում, թէ Աստուած կիրք ունի, այլ՝ յանցաւորների գործի նկատմամբ [սահմանած] պատիժ: Եւ եթէ ասում է՝ Հոգու տրտմութիւն, նշանակում է, որ ինչպէս տրտմողն է հեռանում տրտմեցնողից, այդպէս եւ Հոգին Սուրբ՝ մեղաւորներից:

Հինգերորդն ասում են դարձեալ, որ եթէ Սուրբ Հոգին բնութիւնը վերցրել է Հօրից, ուրեմն նրա որդին է, որովհետեւ նա է կոչւում Որդի, որն ունի Հօր բնութեան նոյն տեսակը: Իսկ եթէ չունի Հայր Աստծոյ բնութիւնը, ուրեմն Աստուած չէ:

Պատասխանենք, որ թէեւ Հոգին ունի Հօր բնութիւնը, սակայն ոչ թէ ծննդեամբ, ինչպէս Որդին, այլ բղխմամբ,

ինչպէս շունչը եւ խօսքն ունեն Հոգու էութիւնը այլեւայլ կերպերով, ինչպէս որ Ադամը առաջ բերեց իրենից Սէթին եւ Եւային՝ մէկին ծնունդով, միւսին՝ անծնունդ եւ այնուամենայնիւ, երեքն էլ ունեն մարդու միեւնոյն բնութիւնը, այսպէս Սուրբ էլ Հոգին վերցրեց յաւիտենապէս Հօր էութիւնը բղխմամբ, իսկ Որդին՝ ծննդեամբ: Ապա ուրեմն Սուրբ Հոգին հաւասար Աստուած է Հօր եւ Որդու հետ՝ արարչակից, մշտնջենաւորակից եւ փառակից:

Այսքանը մակեդոնացիների ասածների վերաբերեալ:

ԺԲ
ԸՆԴԴԷՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՍՈՒՄ ԵՆ ՀՈԳԻՆ ԲԽՈՒՄ Է ՀՕՐԻՑ ԵՒ ՈՐԴՈՒՑ

Եկէք այժմ էլ տեսնենք նրանց մոլորութիւնը, ովքեր ասում են, թէ Սուրբ Հոգին բղխում է Հօրից ու Որդուց:

Նախ մերժենք նրանց վկայութիւնները եւ ապա արտածենք ճշմարիտ պատասխանները:

Առաջին՝ պատճառաբանում են, թէ ասւում է Քրիստոսի Հոգի:

Երկրորդ՝ թէ փչեց եւ ասաց առաքեալներին՝ «Առէ՛ք Սուրբ Հոգին» (Յովհ. Ի 22):

Երրորդ՝ [ասաց՝] «Գնամ եւ առաքեմ նրան» (Յովհ. ԺԶ 7):

Չորրորդ՝ թէ «Ինձնից է վերցնելու» (Յովհ. ԺԶ 14, 15):

Հինգերորդ՝ թէ՝ «Փառաւորեցի եւ դարձեալ փառաւորելու եմ» (Յովհ. ԺԲ 28):

Վեցերորդ՝ «Հոգին է կենդանարար» (Յովհ. Զ 64):

Եօթներորդ՝ թէ Աստծոյ մատ է կոչւում Սուրբ Հոգին, իսկ Որդին՝ աջ եւ բազուկ, ապա ուրեմն [Հոգին] Որդուց է:

Ութերորդ՝ ինչպէս խօսքը մտքի եւ լեզուի արդիւնք է, այդպէս էլ Հոգին Հօրից եւ Որդուց է:

Եւ այսպիսի այլ բաներ:

Պատասխանենք, «Քրիստոսի Հոգի», կամ «փչեց», «առաքեց», այն պատճառով է ասում, որ Սուրբ Հոգու ծաւալումը յանուն մարդկանց Քրիստոսի գալստեամբ եղաւ: Ըստ այդմ՝ «Հոգին չկար, քանի դեռ Յիսուս չէր փառաւորուել»: Եւ դարձեալ՝ Հոգին, որ ելնում է Հօրից, դրսեւորւում Որդու մէջ եւ նրա ձեռքով, իբրեւ հայրական բարութիւն բաշխւում է բոլոր երկնաւորներին եւ երկրաւորներին՝ նախքան նրա մարմնաւորուելն ու մարդեղութիւնը, որի պատճառով էլ Հոգի Քրիստոսի է կոչւում: Եւ կամ՝ այն ամէնը, ինչ [պատկանում է] Հօրը, նաեւ Որդունն է, ինչպէս ասում է Տէրը (տե՛ս Յովհ. ԺԶ 15), ապա ուրեմն Հօր Հոգին, նաեւ Որդու Հոգին է՝ միեւնոյն էութիւնն ունենալու պատճառով, որովհետեւ Հայրը Որդուն տուեց էականը եւ ոչ թէ հարակիցը:

Իսկ երկրորդի վերաբերեալ, որ ասում է [փչեց], բղխումն է ցոյց տալիս, հետեւաբար, Որդին ծնունդ է Հոգուց՝ ըստ հրեշտակի. «Նրանից ծնուածը Սուրբ Հոգուց է»,- ասում է: (Մտթ. Ա 20): Եւ սրանով իրար գործակից լինելն են յայտնում:

Երրորդի վերաբերեալ ասենք, որ՝ «Հոգին առաքուեց Որդու կողմից»

ասելը, նշանակում է նրանից է սկսուել: Նոյն կերպ, ասելը՝ «առաքուեց Որդին Հօր ու Հոգու կողմից», նշանակում է նրանցից է սկսուել: Ըստ այդմ՝ «Տէրը, Տէրը առաքեց ինձ եւ Սուրբ Հոգին»: Եւ սրանք սիրայօժար կամքն են ցոյց տալիս:

Չորրորդի վերաբերեալ, որ ասում է, թէ՝ «Ինձնից է վերցնելու», այսինքն՝ իմ սկզբից է վերցնելու եւ պատմելու ձեզ: Իսկ «ինձնից»-ը Որդու բխումն է նշանակում, որին այլուր մարմնացեալ Հայր ես կարծում, որի վերաբերեալ Որդուն ասաց. «Այն ամէնն ինչ քոնն է, նաեւ իմն է» եւ հակառակը. «ինչ իմն է, այն էլ քոնն է» (Յովհ. ԺՁ 15): Սրանք էլ միութիւնն են ցոյց տալիս մեզ:

Հինգերորդին պատասխանում ենք, եթէ Հոգին փառաւորում է Որդուն՝ ասում ես նրանից է սկսւում, սակայն, տե՛ս, որ Հայրը եւս փառաւորում է Որդուն, որ նրա սկիզբն է, ըստ այդմ՝ «փառաւորեցի եւ դարձեալ՝ փառաւորելու եմ» (Յովհ. ԺԲ 28): Սրանք էլ հաւասար պատուակից լինելն են յայտնում:

Վեցերորդին պատասխանենք, եթէ ասում ես՝ Որդին անկենդան է, եթէ Հոգին չի բխում նրանից. ուրեմն ըստ քեզ Հոգին անբան է, եթէ խօսք չի ծնում: Բայց այդպիսիներին մի գոյութեան մէջ ասելը կամ կարծելը յոյժ յիմարութիւն է:

Եօթներորդի վերաբերեալ ասենք, որ «Աստծոյ մատ» երբեմն նշանակում է անձանց Երրորդութիւնը, ըստ այդմ՝ «Ով է կշռում երեք մատով երկրի ծանրութիւնը»: Երբեմն՝ շնորհների զանազանութիւնը, որի մասին Երգ երգոցում ասւում է՝ «Իմ ձեռքերն զմուռս կաթեցրեցին, իմ մատներն զմռսուեցին փակաղակների վրայ» (Երգ Ե 5): Երբեմն՝ միայն մի անձը, ըստ այդմ՝ «Աստծոյ մատով հանում եմ դեւերին» (Ղուկ. ԺԱ 20): Երբեմն՝ առաւել զօրութիւնը, ըստ այդմ ասում էին եգիպտացի գիտունները՝ «Սա Աստծոյ մատն է» (Ելք Ը 19): Եւ Աստծոյ մատ է ասւում Սուրբ Հոգին, որովհետեւ ինչպէս մատն է մարմնի էութիւնից, այդպէս էլ Սուրբ Հոգին է Աստծոյ էութիւնից: Երկրորդ, որովհետեւ ինչպէս մատով ենք գրում եւ մնացած գործերն ենք կատարում, այդպէս էլ Սուրբ Հոգին գրում էր մարգարէների մէջ, ըստ այդմ՝ «Որտեղ եւ երբ էր ներգործում նրանց վրայ Քրիստոսի Հոգին» (Ա Պետ. Ա 11): Եւ Որդին Հոգու միջոցով էր կատարում բոլոր հրաշքները:

Ութերորդին պատասխանենք, որ եթէ իբրեւ խօսք հասկանանք Սուրբ Հոգին, ապա սա կլինի մերթ ճիշտ, մերթ՝ սխալ: Ճիշտ կլինի, որովհետեւ ինչպէս խօսքն է թարգման մտքի եւ լեզուի, այդպէս էլ Սուրբ Հոգին՝ Հօր եւ Որդու, ըստ այդմ՝ «Ոչ թէ խօսեց իր անձից, այլ, ինչ լսում էին»:

Իսկ սխալ կլինի այսպէս. նախ ինչպէս խօսքն է արտաբերուած միտք, սա էլ մտքում խօսք է, ուստի, այս օրինակով կմերժուի Հոգու անձ լինելը:

Երկրորդ, որովհետեւ խօսքը երբեմն միայն լեզուից է ձեւաւորւում եւ ոչ թէ մտքից, ուրեմն այդպէս կարծելը,

Հոգու միայն Որդուց լինելն է ցոյց տալիս եւ ոչ Հօրից, որ սարսափելի հերձուած է:

Իսկ որ Սուրբ Հոգին միայն Հօր բխումն է, սա տեսնենք նախ՝ հարցերից.

երկրորդ՝ օրինակներից.

երրորդ՝ վկայութիւններից:

ԵՒ ՈՐ ԱՌԱՋԻՆՆ Է՝ ՀԱՐՑԵՐԻՑ

ա) Նախ, եթէ ասում էք Հոգին Հօրից եւ Որդուց է, ա՞նձն էք ասում բխուած, թէ՞ բնութիւնը: Եթէ բնութիւնը, ուրեմն բաժանեցիք բնութիւնը բխողի եւ բխուածի, իբրեւ ծնողի եւ ծնուածի, որ Մակեդոնինն ու Արիոսինն է:

Իսկ եթէ ասում էք, թէ անձն է բխուած, ուրեմն ասում էք, թէ Հոգին երկու անձ ունի՝ մէկը բխած Հօրից, միւսը՝ Որդուց, եւ այսպէս Երրորդութիւնը կդառնայ չորրորդութիւն:

բ) Երկրորդ՝ հարցնում եմ. Երրորդութեան սկիզբը մէ՞կն է, թէ՞ երկուսը: Եթէ մի սկիզբ է, ուրեմն սուտ է, որ ասում են, թէ Հոգին Հօրից եւ Որդուց է բխել: Իսկ եթէ երկու սկիզբ է, ակնյայտ է, որ պէտք է լինեն նաեւ երկու ներգործութիւններ, եւ ըստ այսմ լինում են Մանիի (ասած) երկու աստուածներ, մէկը՝ բարու, միւսը՝ չարի արարիչ, որն անաստուածութիւն է:

գ) Դարձեալ հարցնում եմ. Հայրը կարո՞ղ է բխել Հոգուն, թէ՞ ոչ: Եթէ կարող է, ուրեմն Որդին կցորդ չէ: Իսկ եթէ չի կարող, ուրեմն նրանից առաջ եկածն էլ անկարող է, եւ նրանցից ոչ մէկն էլ Աստուած չէ:

դ) Դարձեալ հարցնում եմ. Սուրբ Հոգին մասամբ բխում է Հօրի՞ց, մասամբ էլ Որդո՞ւց, թէ՞ ամբողջութեամբ Հօրից կամ Որդուց:

Որովհետեւ եթէ մասամբ է, անկատար է Հոգու բխումը: Իսկ եթէ ամբողջութեամբ՝ կլինի երկու Հոգի, ինչպէս ասացինք, կամ էլ աւելորդ կլինի Որդու բխումը, որը խիստ հայհոյութիւն է:

ե) Դարձեալ հարցնում եմ. Հայրն ու Որդին միասի՞ն են բխում Հոգուն, թէ՞ առանձին-առանձին: Եթէ միասին ու հաւասար են, ապա նրանցից ոչ մէկը կատարեալ բխող չէ, որովհետեւ երկուսը միասին մէկի բխման աղբիւրն են: Իսկ եթէ միասին չեն [բխում], ուրեմն ով կատարեալ է բխում, նա է բխողը եւ ոչ անկատարը:

զ) Դարձեալ հարցնում եմ. Հայրն ու Որդին հերթականութեա՞մբ են բխում Հոգուն, թէ՞ անկարգ: Եթէ հերթականութեամբ, ապա բխում է նախ մէկը, յետոյ՝ միւսը, ուրեմն ով առաջինն է բխում, նա է բխողը եւ ոչ վերջինը: Իսկ եթէ անկարգ են բխում, ուրեմն նրանցից բխուածն էլ անկարգ է, ուրեմն նրանցից ոչ մէկն Աստուած չէ:

է) Դարձեալ հարցնում եմ. անսկզբի՞ց է բխում Հոգին, թէ՞ սկզբնաւորից. եթէ անսկզբից է առաջ եկել, ուրեմն անեղ է եւ անվախճան, ինչպէս Որդին եւ Հոգին են անսկիզբ Հօրից: Իսկ եթէ սկիզբ ունեցողից է առաջ եկել, ուրեմն ստեղծուած ու արարուած է, ինչպէս բոլոր արարածները Որդով ու Հոգով եղան: Իսկ եթէ անսկզբից եւ սկզբնաւորից է առաջացել Հոգին, ուրեմն

կլինի անեղ ու եղական, որ մակեդոնեան եւ ծանր հայհոյանք է:

Ապա ուրեմն, անսկիզբ Հօրից է միայն բխում անեղ ու անվախճան Սուրբ Հոգին:

ը) Դարձեալ հարցնում եմ. Հօրից բխուա՞ծն է բխում Որդին, թէ՞ չբխուածը: Որովհետեւ եթէ բխուածն է բխում, ուրեմն աւելորդ է Որդու բխելը, քանի որ Հայրն է բխել Հոգին, իսկ եթէ չբխուածն է բխում, ուրեմն Հօրից չպէտք է ասենք բխումը, այլ՝ միայն Որդուց, որ սուտ է:

թ) Դարձեալ հարցնում եմ. եթէ մէկն ամբողջ բխողն է Հոգու եւ ոչ մասամբ, ու եթէ Հայրն է այդ բխողը, ապա ուրեմն Որդին չի բխում, իսկ եթէ այդ մէկը Որդին է, ուրեմն բխուած Հոգին Հօր թոռն է դառնում եւ ոչ նրա բխումը:

ժ) Դարձեալ հարցնում եմ. Հայրն ու Որդին նո՞յն Հոգին են բխում, թէ տարբեր: Եթէ նոյնն են բխում, աւելորդ է մէկի բխելը, ինչպէս ասացինք: Իսկ եթէ տարբեր են բխում՝ Հայրը՝ այլ, Որդին՝ այլ, ուրեմն կրկնապատիկ է Հոգին եւ ոչ միակը:

Այսքանը հարցերով:

ԵՐԿՐՈՐԴԸ՝ ՕՐԻՆԱԿՆԵՐԻՑ

ա) Նախ, որ բխումը Հոգու ելնելն է, իսկ ելնելը շարժում է մէկից դէպ միւսը: Արդ, եթէ Հոգին ելնում է Որդուց, ուրեմն պէտք է ելնի Որդուց դէպ Հայրը կամ դէպ միւս անձը: Սակայն չի ելնում դէպ Հայրը, որովհետեւ Հայրը չունի որեւէ բան Որդուց: Եւ չի ելնում դէպ միւս անձը, որովհետեւ չկայ այդ անձը: Հետեւաբար չի ելնում Որդուց:

բ) Դարձեալ, Սուրբ Հոգին ելնում է իբրեւ արտաշնչուած եւ բխուած: Արդ, ինչպէս արտաշնչելը չի ելնում խօսքից, այդպէս էլ Հոգին չի ելնում Որդուց:

գ) Սուրբ Հոգին Հօրից է, ինչպէս կամքը՝ մտքից, եւ Որդին՝ իբրեւ իմացութիւն: Արդ, կամքը իմացութիւնից չէ եւ ոչ էլ Հոգին՝ Որդուց:

դ) Դարձեալ, Սուրբ Հոգին բխում է Հօրից, ինչպէս ջերմութիւնը հրից: Արդ, տեսնում ենք, որ ջերմութիւնը չի բխում լոյսից, այլ միայն հրից: Նոյնպէս եւ Սուրբ Հոգին չի բխում Որդուց, այլ՝ միայն Հօրից:

ե) Դարձեալ, Սուրբ Հոգին բխում է Հօրից, ինչպէս ծաղկի կամ խնձորի բոյրը: Արդ, բոյրը գոյնից չէ, այլ միայն մարմնից: Այդպէս էլ Հոգին Որդուց չէ, այլ՝ միայն Հօրից:

զ) Դարձեալ, Հոգին ելնում է իբրեւ երկու եզրերը շաղկապող ու միաւորող. մէկն իբրեւ միջնորդ, որ շաղկապում է երկու եզրերը եւ միւսն իբրեւ եզր: Արդ, եթէ ելնում է Հօրից եւ Որդուց՝ կլինի միայն եզր եւ կկազմի երրորդ եզրը՝ չլինելով միջնորդ: Հետեւաբար, չի ելնում Հօրից եւ Որդուց, այլ՝ Հօրից դէպի Որդին:

ԻՍԿ ԵՐՐՈՐԴ՝ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՅԱՅՏՆԻ Է, ՈՐ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԲԽՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՀՕՐԻՑ

Նախ, որ ասում է Փրկիչը Յոհաննու աւետարանում Հոգու մասին, թէ՝ «Ճշմարտութեան Հոգին, որ ելնում է Հօրից, նա ձեզ կուսուցանի ամէն ինչ» (Յովհ. ԺԵ 26): Եւ դարձեալ՝ «Հօր Հոգին խօսելու է ձեզ հետ»:

Երկրորդ՝ Պօղոսը Հռոմէացւոց [թղթում] ասում է. «Այն Հոգին է, որ յարութիւն տուեց Յիսուսին» (Հռոմ. Ը 11):

Երրորդ՝ վկայում են նաեւ մարգարէները. ինչպէս ասում է Դաւիթը Հոգու մասին՝ «Քեզնից է Տէր, կենդանութեան աղբիւրը» (Սղմ. ԼԵ 10) եւ ոչ թէ՝ ձեզանից: Եւ Եսային ասում է Հօր անունից՝ «Հոգին ինձանից է ելնում» (Ես. ԾԷ 16):

Չորրորդ՝ վկայ է եւ մեծն Դիոնէսիոսը, որ «Աստուածային անունների» մէջ ասում է՝ «Աննիւթ եւ անորոշ բարուց ծագեց երկու լուսափայլութիւն»: Արդ, երկու լոյսերը մէկից են ելնում, եւ ոչ թէ մէկը միւսից: Դարձեալ ասում է՝ «Աղբիւրեղէն աստուածութիւնը Հայրն է, իսկ Հոգին ու Որդին՝ աստուածածնութեանն են, որոնց վերաբերեալ պէտք է ասել՝ աստուածատունկ բողբոջներ կամ ծաղիկներ ու գերագոյն լոյսեր»[123]: Եւ դարձեալ ասում է՝ «Որ գերագոյնի աստուածածնութիւնից են, հակառակ չեն մէկը միւսին, քանզի գերագոյն գոյութեան աղբիւրն աստուածութեան Հայրն է»[124]:

Հինգերորդ՝ եւ ընդհանուր ժողովներն էլ, որ եղել են նրանց մօտ, նոյնպէս հաստատել են հաւատի դաւանանքով բաւարար տրուած կանոններ: Եւ այնտեղ Հաւատամքում ասւում է, թէ Սուրբ Հոգին Հօրից է, եւ չի յիշւում Որդին: Նաեւ երեք Սուրբ ժողովների [ընդունած] կանոնները[125], արգելք են դնում նրանց վրայ, ովքեր այլ կերպ կքարոզեն եւ այլ կերպ կուսուցանեն, քան իրենք են սովորեցնում:

Վեցերորդ՝ Քաղկեդոնի ժողովի վկայութիւնը, որ իրենք են ընդունել եւ ոչ մենք, այսպէս է գրուած, թէ ով կասի, որ Հօրից եւ Որդուց է բխում Հոգին, թող նզովեալ լինի: Ուրեմն, նրանք նզովուած են իրենց իսկ կանոնների կողմից:

Եօթներորդ՝ Դամասկացու վկայութիւնը, որն [ի դէպ] եւս քաղկեդոնական է, ասում է, թէ Սուրբ Հոգին ակնյայտօրէն Հօրից է, որն անուանում ենք Հօր Հոգի: Հոգին Որդուց չենք ասում, սակայն այն անուանում ենք նաեւ Որդու Հոգի[126]:

Դարձեալ, երբ ասում է, թէ լսելով, որ «Հօրից է» եւ կամ «վերցնելու է», մի՛ կարծիր, թէ Սուրբ Հոգու բխումը դեռ ապագայում է, որովհետեւ յաւիտենական էր: Այդպէս ասաց՝ ցոյց տալու համար անչափելի յաւիտենական աստուածութիւնը, որ ըստինքեան պարունակում է բոլոր ժամանակները. ընդ որում՝ աստուածային բխումները ապառնի ժամանակում են ու մի ձեւով գոյութիւն ունեն նաեւ ներկայի մէջ: Եւ ինչպէս այժմ կարող ենք ճշմարտօրէն ասել, որ Սուրբ Հոգին ելնում է Հօրից, ապագայի համար էլ կարող ենք ասել, որ Սուրբ Հոգին չի ելնում Որդուց, եւ դրանից առաջ եւս չի ելել, ու ինչպէս իր գոյութիւնն ու ճշմարիտ լինելը մինչեւ այժմ չի վերցրել ուրիշից, այսուհետեւ եւս երբեք չի վերցնելու:

Ութերորդ վկայութիւնը. Գրիգոր Աստուածաբանն ասում է, թէ՝ «Որդին եւ Սուրբ Հոգին զոյգ շառաւիղների նման են, որ մինչեւ մեզ են հասցնում իրենց պայծառութիւնը»[127]: Ապա ուրեմն Որդին

ու Սուրբ Հոգին Հօրից են ելնում իբրեւ երկու շառաւիղ, հետեւաբար չեն ելնում մէկը միւսից:

Դարձեալ Որդու մասին Ճառում ասում է՝ «Սրա վերաբերեալ մերոնց սահմանումների մէջ մնալով՝ անծինը համարում ենք ներսում եղածը, իսկ ծնուած՝ Հօր կողմից դուրս առաքուածը»[128]: Եւ կամ ասում է՝ «Միակը շարժուեց դէպի երկեակը՝ մինչեւ եկաւ երրորդին: Սրանք՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին են, որոնցից Միակին անուանում ենք անախտաբար եւ անժամանակ ծնող եւ առաքող»[129]:

Դարձեալ Հաւատի Ճառի մէջ ասում է. «Իմ խօսքը Հօր վերաբերեալ պահիր իբրեւ միակ Հայր Աստծու, որ միակ պատճառն է Որդու եւ Հոգու»[130]: Դարձեալ ասում է. «Ծնունդի մասին լսելով՝ մի՛ քննիր նրա որպիսութիւնը: Լսելով, թէ Սուրբ Հոգին առաջացել է Հօրից, մի՛ հարցուփորձիր որպիսութիւնը, որովհետեւ քննելը յանդգնութիւն է, հաւատալը՝ բարեգործութիւն, ճանաչելը՝ յաւիտենական կեանք»[131]:

Եւ մենք համաձայնելով սուրբ եւ ուղղահաւատ վարդապետութեանը՝ ընդունում եւ խոստովանում ենք, թէ Սուրբ Հոգին Աստուած է՝ իբրեւ բխում Հայր Աստծուց, ըստ այդմ՝ «Հոգին, որ ելնում է Հօրից» եւ Որդի Աստծուց վերցնող, ըստ այդմ՝ «Ինձանից կվերցնի»: Քանզի այլ է բխումը, այլ՝ առնելը:

Այսպիսով, Հոգին բխում է Հօրից, ինչպէս Որդին ծնւում է Հօրից, եւ այն ամէնը, ինչ ունի Հայրը՝ Որդունն է, ու՝ «Քրիստոս Աստծոյ զօրութիւնն ու իմաստութիւնն է» (Ա Կորնթ. Ա 24): Իսկ Հոգին վերցնում է Որդու իմաստութիւնից ու զօրութիւնից եւ բաշխում արարածներին: Ինչպէս օրինակ, Սուրբ Հոգին բխում է մեզ այն աղբիւրի նման, որը սկիզբ է առնում ծովից, հասնում ակունքին եւ ակունքից դուրս հորդում դէպի մեզ: Այդպէս Հոգու առաջ շարժուելու սկիզբը Հայրն է, ինչպէս ասւում է շարականում՝ «Հայրաշարժ աղբիւրից բխուած» եւ իբրեւ ակունք հասնում է Որդուն, եւ Որդուց դէպի մեզ հեղւում:

Այս է նշանակում Որդու Հոգի ասելը:

Դարձեալ, Սուրբ Հոգին ելնում է Հօրից եւ առաքւում դէպ Որդի, եւ ինքնիշխան կամքով շնորհում է իր պարգեւները՝ ում որ կամենում է, որքան որ կամենում է:

Առաջինի վերաբերեալ առակն ասում է՝ «Տէրը տալիս է իմաստութիւն» (Առակ. Բ 6):

Երկրորդի վերաբերեալ՝ «Նրա շնորհիւ՝ գիտութիւն» (Առակ. Բ 6):

Երրորդի վերաբերեալ՝ «Իմաստութիւնը կգայ դէպի քեզ» (Առակ. Բ 10):

Եւ պէտք է իմանալ, ինչպէս իմաստութիւն է կոչւում Աստծոյ Որդին, այդպէս էլ խօսք է կոչւում Սուրբ Հոգին, ըստ այդմ՝ «Լսողների համար կխօսի, եկողներին կպատմի» (հմմտ. Սղմ. ԻԱ 32): Նախ, որովհետեւ ինչպէս խօսքն է մտքից առաջանում, այդպէս էլ Սուրբ Հոգին բխում է Հօրից այնպէս, ինչպէս խօսքն է ծնւում:

Երկրորդ, այնպէս, ինչպէս խօսքն ունի մտածողութեան եւ մտքի իմաստը, այնպէս էլ Սուրբ Հոգին՝ Հօր եւ Որդու իմաստութիւնը:

Երրորդ, ինչպէս խօսքն է արտայայտում լեզուի ու մտքի գիտելիքները, այդպէս էլ Սուրբ Հոգին պատմում եւ ուսուցանում է Հօր եւ Որդու գիտութիւնը:

Չորրորդ, խօսքը նոյն բնութիւնն ունի, ինչ որ լեզուն ու միտքը. այդպէս էլ Սուրբ Հոգին ունի Հօր եւ Որդու բնութիւնը:

Հինգերորդ, ինչպէս որ այլ է անձը, այլ՝ խօսքը եւ այլ՝ միտքը, այդպէս էլ այլ է Հօր անձը, այլ՝ Որդունը եւ այլ՝ Սուրբ Հոգունը:

Այսքանը Սուրբ Հոգու մասին:

ԳԼՈՒԽ Է՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԸՆԴԴԷՄ ՄԱՐԴԱԴԱՒԱՆ ՆԵՍՏՈՐԱԿԱՆՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԱՍՈՒՄ ԵՆ ԲԱՆՆ ԱՊՐՈՒՄ Է ՄԱՐՄՆԻ ՄԷՋ, ԻՆՉՊԷՍ ՏԱՃԱՐՈՒՄ: ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ «ՊԱՐԱՊՄԱՆՑ ԳՐՔԻՑ»

Պրակ Ա

Ովքեր ուրանում են մարդեղացած Աստծոյ բնութեամբ միաւորուելը եւ [ընդունում Որդու] միայն [իբրեւ Աստծոյ] բնակարան եւ որդեգրութեան շնորհիւ աստուածութեան փառքին բարձրացած. ինչպէս ասում են նեստորականները:

Սրանց առաջին սխալն այս է. ինչպէս ասում է առաքեալը՝ «Այն պատճառով եմ ծունր դնում մեր սրտերում բնակուող Տէր Յիսուս Քրիստոսի Հօր առջեւ» (Եփես. Գ 14): Եւ ասում է՝ «Դուք տաճար էք Աստծոյ» (Բ Կորնթ. Զ 16), այսինքն՝ մենք Աստծոյ տաճար ենք: Եւ եթէ [Որդին] բնակարանն է, ապա առաւել չէ մեզանից ոչնչով:

Երկրորդ՝ եթէ նա իբրեւ շնորհ էր ստացել որդիութիւնը եւ ոչ էութեամբ [ունէր այն], ապա ուրեմն մասամբ է Որդի, եւ ոչ թէ աստուածութեան լրում, որովհետեւ շնորհը մասնաւոր պարգեւ է: Այդ դէպքում, ինչպէ՞ս է ասում Յովհաննէսը, թէ՝ «նրա լրումից յետոյ մենք բոլորս շնորհներ ստացանք» (Յովհ. Ա 16):

Երրորդ՝ սրանք ոչ թէ մի Որդի եւ Տէր են խոստովանում Յիսուս Քրիստոսին, ինչպէս ասում են առաքեալներն ու սուրբ հայրերը, այլ ասում են անհրաժեշտօրէն երկու է. մէկը բնութեամբ, միւսը՝ շնորհով, ուստի, ըստ նրանց, մէկը տուող է, միւսը՝ վերցնող. այսինքն՝ Բանն ու մարդը:

Չորրորդ՝ այն ամէնը, ինչ դրսից է ներմուծուում, դուրս է նետուում: Իսկ եթէ նա դրսից ունի որդիութիւնը եւ զանազան շնորհները, ապա կասկած կայ, թէ ինչ-որ ժամանակ նա կհրաժարուի նրանից, ինչ վերցրել է:

Հինգերորդ՝ Յոհաննէսի աւետարանն ասում է՝ «նրանց իշխանութիւն տուեց Աստծոյ Որդիներ լինելու» (Յովհ. Ա 12): Իսկ եթէ նա իբրեւ շնորհ ունէր որդիութիւնը, ինչպէ՞ս կարող է որեւէ մէկին տալ այն, ինչով հազիւ էր հարստացել:

Վեցերորդ՝ եթէ մենք՝ շնորհով որդեգրեալներս, բնութեամբ նմանւում ենք Որդուն, եւ եթէ նա էլ մեզ նման շնորհով է Որդի, ուրեմն պէտք է լինի նրանից բնութեամբ աւելի վեր գտնուող

մարմնացած Որդի, որին կնմանուի եւ սա նրա նմանութեամբ շնորհով Որդի կլինի:

Եօթներորդ՝ եթէ ինչպէս որ մենք ենք լծուած ծառայութեան, այդպէս էլ նա է, ապա ինչո՞ւ աւետարանի առակում ծառաներից յետոյ Որդին է ուղարկւում, որին տեսնելով՝ այգին բաժանողները ասում են. «Սա է ժառանգը եւ սպանում են նրան» (Մտթ. ԻԱ 38): Ինչո՞ւ է ասում ինքն իսկ, թէ՝ «Ճշմարիտ Որդին կազատի ձեզ» (Յովհ. Ը 32): Եւ Պետրոսին ասում է՝ «Ազատ են որդիները» (Մտթ. ԺԷ 25):

Ութերորդ՝ ասաց նոյն ինքը Որդին՝ «Ես եմ ճշմարտութիւնը» (Յովհ. ԺԴ 6): Եւ եթէ որդիութիւնը նրա օտարամուտ էր, ինչպէ՞ս է ինքն իր ճշմարիտ լինելն ասում: Ստեց ուրեմն, ըստ նրանց, որ ասաց՝ «Մեղք չգործեց, եւ նենգութիւն չեղաւ նրա բերանում» (Ա Պետ. Բ 22):

Իններորդ՝ «Բոլորը նրան են ծնրադրում» (Փիլիպ. Բ 10), ասում է առաքեալը: Արդ, եթէ երկրպագելի է եւ Աստուած, եւ Որդին իբրեւ Աստծոյ բնակութեան տաճար, ապա ուրեմն նրանք բնութեամբ օտար աստուածներ են: Սրանով ըստ մարդապաշտների պարտաւորուեցին ոչ միայն երկրայիններս, այլեւ՝ երկնայինները:

Տասներորդ՝ եւ եթէ նա Աստուած է եւ երկրպագութեան արժանի Աստծոյ բնակարան լինելու պատճառով՝ ուրեմն ոչ միայն նա կլինի Աստուած, այլեւ՝ բոլոր երկնայիններն ու երկրայիններս, ովքեր իրենց մէջ բնակուած ունեն Աստծուն եւ անուամբ աստուածներ են կոչւում:

Տասնմէկերորդ՝ եւ եթէ ինքն է բնակարան եւ տաճար, մենք էլ իր իր բնակարանն ու տաճարն ենք, այդ դէպքում չի լինի նա Աստուած իր տաճարում, այլ՝ տաճար տաճարում:

Տասներկուերորդ՝ եւ եթէ նրա բնակութեան պատճառով է նրա մարմինը կերակուր, ինչպէս ինքն ասաց՝ «Մարմինն իմ ճշմարիտ կերակուր է» (Յովհ. Ձ 56), ուրեմն ուտողները կդառնան մարդակեր գազաններ եւ ոչ թէ Աստծոյ Որդու մարմնով ու արիւնով [սնուողներ]:

Տասներեքերորդ՝ եւ եթէ բնակարան լինելու պատճառով է նրա մարմինը կենդանարար, ապա ուրեմն բոլոր մարմինները նոյն պատճառով կենդանարար կարող են լինել, որ անհնար է նոյնիսկ մտքով անցկացնել:

Տասնչորսերորդ, եւ եթէ մենք բոլորս նրա մահուան չարչարանքով փրկուեցինք, եւ սոսկ մարդու միջոցով էր մեր փրկութիւնը, ուրեմն Աստուծով չեղաւ այն, այլ՝ մարդով, որ սուտ է դարձնում փրկութեան մասին մարգարէի խօսքը, եւ դառնում է նա փրկուած Փրկիչ եւ ապրեցնող ապրուած:

Տասնհինգերորդ, համբարձուեց եւ նստեց Հօր աջ կողմում: Արդ, եթէ այլ էր Որդին եւ եղաւ Հօր աթոռակիցը, ուրեմն բացառւում է հաւասար նստելը Հօր աջ կողմում, քանի որ Հօր աջ կողմում նստողը պէտք է լինի Հօր սեփականը, նրան արժանավայել աթոռակից եւ գահակից:

Տասնվեցերորդ՝ մանաւանդ խիստ անպատշաճ է ծառային կարգել Տիրոջ

շարքին, ստեղծուածին՝ Ստեղծողի հետ, այն դէպքում, երբ տարբեր են բնութիւնները:

Տասնեօթներորդ՝ որովհետեւ եթէ մարմնով ծնուածը մասնայատկօրէն մարդ է, ապա նրան ծնողը ոչ թէ աստուածածին է, այլ՝ մարդածին:

Տասնութերորդ՝ ուրեմն ստում է Հայրը, որ ասում է՝ «Դա է իմ սիրելի Որդին» (Մտթ. ԺԵ 5), նաեւ աշակերտները, ինչպէս Պետրոսը, որ դաւանեց Քրիստոսին իբրեւ Աստծոյ Որդու (տե՛ս Մտթ. ԺԶ 16):

Տասնիններորդ՝ եթէ նա մասնայատկօրէն մարդ է, ապա սրան պէտք է հետեւեն առանձին բնութիւն, երկու կամք եւ կրկնակի ներգործութիւն. այնժամ կլինի ոչ թէ մարդացեալ Բան, այլ մարդ՝ բնակութեամբ՝ ի փառս Բանի բարձրացած:

Քսաներորդ՝ այդպէս երրորդութիւնը կլինի չորրորդութիւն. կաւելանան նաեւ բնութեան ու դէմքի թուերը, եթէ այլ է իբրեւ մարդ եւ այլ՝ իբրեւ Աստուած:

Եւ այլ բազում հայհոյութիւններ են հետեւում Նեստորի տեսակէտների մէջ, որ նզովելով՝ մերժել է Սուրբ եկեղեցին:

ՀԱՐՑԵՐ ԵՐԿԱԲՆԱԿՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ՀՐԱԺԱՐՈՒՄ ԵՆ ՄԷԿ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՄԱՐԴԱՑԵԱԼ ԱՍՏՈՒԱԾ ՀԱՄԱՐԵԼ, ԱՅԼ ԲԱԺԱՆՈՒՄ ԵՆ ԿԱՏԱՐԵԱԼ ԱՍՏԾՈՒ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼ ՄԱՐԴՈՒ
Պրակ Բ

Հարց առաջին. Անձի վերաբերեա՞լ էք ասում կատարեալ, թէ՞ բնութեան: Եթէ բնութեան վերաբերեալ էք [ասում], երկու կատարելութիւն էք մտցնում Երրորդութեան մէջ, այնինչ Երրորդութեան մէջ մի կատարեալ բնութիւն է եւ մի մարդկային բնութիւն: Իսկ եթէ անձի վերաբերեալ էք [ասում], ուրեմն Երրորդութիւնը չորրորդութիւն էք դարձնում, ինչպէս [արդէն] ասուեց:

Հարց երկրորդ. Կոյս Մարիամը միածի՞ն Որդի ծնեց ըստինքեան, թէ՞ անդրանիկ Որդի առանձին, թէ՞ երկուսին էլ: Եթէ երկուսին էլ, ուրեմն [նրան] համարեցիք երկու որդու մայր: Եթէ անդրանիկին առանձին [ծնեց], ապա կուսածին Որդուն Աստուած չէք համարում ըստ Նեստորի: Իսկ եթէ սոսկ Բանին [ծնեց], ապա սրանից կհետեւի, թէ գոյութեան սկիզբը մօրից է եւ ոչ թէ Հայր Աստծուց:

Հարց երրորդ. Ո՞վ երկաբնակներ, Քրիստոս Աստծուն մարդացեալ Աստուած էք համարո՞ւմ, թէ՞ աստուածացեալ մարդ: Եթէ մարդացեալ Աստուած, ապա ինչո՞ւ էք ուրանում եւ բաժանում բնութիւնը երկուսի՝ Աստծու եւ մարդու: Իսկ եթէ մարդ է աստուածացեալ, ուրեմն ստում է առաքեալը՝ ասելով, թէ լրութիւնից դէպ ունայնութիւն [իջաւ], որովհետեւ սա նրան հակառակ, խոնարհութիւնից վեր է բարձրացնում: Եւ կամ ասում էք՝ ոչ մէկին. ահա նոր չարափառ աղանդաւորութեան սկիզբ էք դնում եւ խափանում մեծ խորհրդի տնօրինութիւնը (տե՛ս Ես. Թ 6 ԺԱ 2):

Հարց չորրորդ. «Նրան են բոլորը ծնրադրում»՝ ասում է առաքեալը: Արդ, ո՞վ բաժանարարներ, ո՞ր բնութիւնն է

Քրիստոսի երկրպագելի: Եթէ աստուածային՝ ուրեմն հրէաբար երկրպագեցիր: Ստում է, ուրեմն առաքեալը, որ ասում է «Յիսուս Քրիստոս»: Իսկ եթէ միայն մարդկային [բնութիւնը], ուրեմն յարեցիր մարդապաշտ հայհոյողներին եւ Արարչի փոխարէն արարածի երկրպագեցիր՝ ընդդէմ գնալով աստուածային օրէնքներին:

Հարց հինգերորդ. Ասում է՝ «Մեզ համար մի է մեր Հայր Աստուածը եւ մի է Տէր Յիսուս Քրիստոսը» (Ա Կորնթ. Ը 6): Ո՜վ երկաբնակ, դու ո՞ր բնութիւնն ես Քրիստոսի համարում միակ Տէրը. աստուածայի՞ն, թէ՞ մարդկային: Եթէ միայն աստուածայինը՝ յարեցիր Արիոսին, որ համարում է Բանն առանձին Քրիստոս, այսինքն՝ օծուած եւ սրբուած Հօր կողմից, ապա ուրեմն՝ պակաս, քան Հայրը: Իսկ եթէ միայն մարդկային [բնութիւնը], ուրեմն զրկեցիր Բանը Տէր լինելուց եւ ամէն ինչ լոկ մարդով եղած համարեցիր, որն ասելն իսկ անկարելի չարութիւն է: Իսկ եթէ երկու [բնութիւնն էլ] համարում ես Տէր՝ հակառակ ես խօսում առաքեալին, որ ասում է՝ մէկն է Տէրը՝ Յիսուս Քրիստոս, ինչպէս եւ Հայրը:

Հարց վեցերորդ. «Դու ես Քրիստոս Որդին Աստծոյ» (Մտթ. ԺԶ 16): Հարցնում եմ, ո՜վ պառակտիչ, Քրիստոսի ո՞ր բնութիւնն ես ասում Աստծոյ Որդի: Եթէ աստուածութիւնն ես բնութեամբ ասում, ապա մարդ լինելը շնորհով պիտի ասես: Իսկ եթէ մարդեղութիւնն ես բնութեամբ Որդի համարում, ապա ուրեմն Բանը չես համարում Որդի: Իսկ եթէ երկուսը միասին, ապա ուրեմն ասացիր, թէ Հայրը երկու բնութիւն ունի:

Հարց եօթներորդ. «Սուրբ Հոգին իջաւ Քրիստոսի վրայ եւ հանգչեց նրա վրայ»:

Ո՜վ բաժանարար, ո՞ր Որդուն ես ասում սրբուած Սուրբ Հոգով: Եթէ նրան, որին ասում ես Հայր Աստծուց՝ Բան ստացած, ուրեմն կարգեցիր նրան ստեղծուածների մէջ՝ կարօտ սրբութեան եւ Որդի [դարձած] շնորհներով: Իսկ եթէ նրան, որ Դաւթի զաւակից առանձին էր, ինչպէ՞ս է, որ ինքը լինելով շնորհով սրբուած՝ Տիրոջ նման սրբում է իրեն հաւատացողներին, կամ էլ իր բարութիւնն էր շնորհում իւրայիններին՝ մարմնապէս ներազդելով նրանց վրայ եւ ասելով՝ «առէք Սուրբ Հոգին»:

Այժմ շնորհո՞վ ասենք Քրիստոսի Հոգի եւ ո՞չ բնութեամբ:

Հարց ութերորդ. «Մկրտեցէ՛ք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մտթ. ԻԸ 19):

Արդ, մկրտւում ենք հաւատացեալներս, ինչպէս յանուն Հօր եւ Սուրբ Հոգու, այդպէս էլ յանուն մարմնացեալ Որդու՝ մի Տէր, մի Քրիստոս: Եւ հարցնում եմ ես Քրիստոսի բաժանարարներիդ, ո՞ր բնութեան մէջ էք մկրտւում՝ Աստծոյ, թէ՞ մարդու: Եթէ միայն Աստծոյ, ապա անմահ բնութիւնը դնում էք մահուան տակ, որովհետեւ առաքեալն ասում է. «Ովքեր Քրիստոսի մէջ մկրտուեցին՝ նրա մահուն մէջ մկրտուեցին՝ թաղուելով նրա հետ» (Հռոմ. Զ 3): Իսկ եթէ միայն մարդու բնութեան մէջ ես [մկրտւում], ուրեմն տակաւին անկատար ես, որովհետեւ

սոսկ մարդու մահուան մէջ մկրտուեցիր: Եւ դարձեալ՝ Բանը հանեցիր Երրորդութեան կարգից՝ նրա տեղը դնելով միայն մարդուն: Ուստի մկրտւում ենք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով:

[Հարց] իններորդ. «Ինչպէս ինձ առաքեց կենդանի Հայրը, ես էլ կենդանի եմ Հօր համար, եւ ով ուտի ինձ՝ նա կապրի իմ միջոցով» (Յովհ. Զ 58):

Հարցնում եմ երկուսի բաժանողներիդ, Ո՞ր բնութեամբ էք կերակրուելու, որ կենդանանաք: Քանզի եթէ Աստծոյ՝ ահաւասիկ անուտելի է Բանի բնութիւնը, իսկ եթէ միայն մարդու՝ ինչպէ՞ս մարդու մարմինը կլինի կենդանարար, կամ ինչպէ՞ս առաքուեց նա Հօր կողմից եւ ինչպէ՞ս է կենդանի մնում Հօր համար:

[Հարց] տասներորդ. «Հա՛յր, փառաւորի՛ր ինձ քո փառքով, որ ունէի աւելի առաջ, քան աշխարհի լինելը» (Յովհ. ԺԷ 5):

Ասա՛, ո՞վ բաժանարարդ, Քրիստոսի ո՞ր բնութեանն է վերաբերում այս ասածը: Եթէ ասես Աստծոյ, ցոյց կտաս, թէ Բանը փառքի կարիք ունի, եւ քեզ հարկ է հետեւել Արիոսին: Իսկ եթէ ըստինքեան՝ մարդկային, ինչպէ՞ս ունէր փառք աշխարհի լինելուց առաջ, քանի որ ինքը ժամանակի մէջ եղաւ: Ուրեմն նա ստեց, նաեւ Հայրը՝ կոչելով իր Որդուն Դաւթի զաւակից եղած:

Այսքան հարցերն ընդդէմ երկաբնակների են, որոնք ուրանում են Քրիստոսի բնութեան միաւորութիւնը:

Դարձեալ տասնմէկերորդ [հարց]. առաքեալն ասում է՝ «Շնորհեց նրան անուն», այսինքն՝ «Աստուած, որ վեր է բոլոր անուններից» (Փիլիպ. Բ 9): Իսկ դու, բաժանարար, ո՞ր դէմքը նկատի ունես այս ասելով: Եթէ Բանի, ապա խորհում ես արտառոց, որովհետեւ նա բնութեամբ ունի [այն]. եւ մանաւանդ դարձար արիոսեան: Իսկ եթէ միայն մարդուն, ապա նորն ու ժամանակաւորն ես ներմուծում Աստծոյ մէջ՝ երկրպագելի հրեշտակների եւ մարդկանց կողմից, քանզի ոչ էութեամբ, այլ դրսից եւ օտարաբար ունի Աստուած անունը:

Տասներկուերորդ՝ «Բարձունքներում նստեց մեծութեան աջ կողմում» (Ղուկ. ԻԲ 69):

Սրան էլ դարձեալ պատասխանիր. բնութեամբ Որդի՞ն նստեց մեծութեան աջ կողմում, թէ՞ [ըստ քեզ] շնորհով որդիացածը: Եթէ ասես բնութեամբ [Որդին], ուրեմն ստեցին առաքեալն ու աւետարանը, որոնք ասում են՝ Քրիստոսը յարութիւն առաւ, համբարձուեց եւ նստեց Հօր աջ կողմում: Իսկ եթէ մարդը նստեց, ուրեմն Բանը զրկեցիր Հօր աթոռակցութիւնից, ո՞վ սիրողդ առանձնացնելու: Իսկ եթէ ասես երկու բնութիւնն էլ, ապա Հօր աթոռակիցները երկուսը կլինեն՝ մէկն Աստուած, միւսը՝ մարդ:

Տասներեքերորդ՝ «Իջայ ես երկնքից՝ ոչ իմ կամքը կատարելու» (Յովհ. Զ 38):

Ասա՛ ինձ, ո՛վ բաժանարար, ո՞ր դէմքի համար է ասուած սա: Եթէ առանձին մարդու, ինչպէ՞ս է իջել երկնքից, քանի որ Կոյսից է ծնուել մարմինը: Իսկ եթէ միայն Բանը, որ

երկնքից իջաւ, ուրեմն խոստովանում ես ընդդիմադիր երկու կամք՝ ծնողի եւ Բանի: Սրան էլ կիեսեւի կրկնակի գործ, մանաւանդ՝ երկու բնութիւն, որից էլ հակամարտութիւն՝ երրորդութեան մէջ:

Տասնչորսերորդ՝ «Իշխանութիւն ունեմ դնելու իմ անձը եւ առնելու» (Յովհ. Ժ 18):

Ասա՛, ո՛վ երկաբնակ, որի՞ն նկատի պէտք է ունենաս այդ ասածով: Եթէ լոկ Բանին, ուրեմն անմահին դատապարտեցիր մահուան: Իսկ եթէ միայն մարդուն, ինչպէ՞ս կարող է մարդն ինքն իրենով մեռնել եւ իր իշխանութեամբ դարձեալ յարութիւն առնել:

Ահա տասնչորս հարցեր երկաբնակների աղանդի դէմ, որ մի Քրիստոսին երկու բնութեան է բաժանում:

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՃՇՄԱՐԻՏ ԱՍՏՈՒԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Գ

Նախ հետեւեալը. Աստծոյ գործը ստեղծելն է, ըստ այդմ՝ «Աստուած սկզբում արարեց Երկինքն ու Երկիրը» (Ծննդ. Ա 1): Իսկ առաքեալը Քրիստոսի մասին ասում է. «Մի Տէր Յիսուս Քրիստոս եւ նրանով՝ ամէն ինչ»: Նա, ով ի ծնէ կոյրին աչք տուեց, ուրեմն Աստուած է Տէրը մեր Յիսուս Քրիստոս:

Երկրորդ՝ Աստուած կեանք տուող է, ըստ այդմ՝ «Ես եմ սպանում եւ ապրեցնում» (Բ օր. ԼԲ 39): Իսկ Յովհաննու աւետարանն ասում է՝ «Կլսեն Աստծոյ Որդու ձայնը եւ դուրս կգան» (Յովհ. Ե 25): Եւ Ղազարին կանչեց գերեզմանից ու խօսքով կենդանացրեց:

Երրորդ՝ «Աստուած արդար դատաւոր է» (Սղմ. ԽԹ 6), ասում է սաղմոսը: Իսկ Քրիստոսի մասին Յոհաննու աւետարանն ասում է. «Ոչ թէ Հայրն է դատում որեւէ մէկին, այլ բոլորի դատաստանը յանձնել է իր Որդուն» (Յովհ. Ե 22):

Չորրորդ՝ Աստուած ծածկագէտ է, ինչպէս Դաւիթն ասում է՝ «Ով ստեղծեց առանձին նրանց սրտերը՝ հասկանալու նրանց բոլոր գործերը» (Սղմ. ԼԲ 15): Եւ Տէրը, որ գիտէր նրանց մտածմունքները, ասաց՝ «Ի՞նչ էք խորհում ձեր սրտերում» (Մտթ. Թ 4):

Հինգերորդ՝ անիմանալի է Աստուած, ըստ այդմ՝ «Ոչ ոք չգիտի Հօրը, բացի Որդուց» (Ղուկ. Ժ 22): Իսկ ինքն իր մասին ասում է. «Ինչպէս գիտի Հայրն ինձ, այդպէս էլ ես գիտեմ Հօրը» (Յովհ. Ժ 15):

Ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Վեցերորդ՝ «Քո Տէր Աստծուն կերկրպագես» (Ելք. Ի 5), ասում է օրէնքը: Իսկ առաքեալն ասում է՝ «Նրան են ծնրադրելու բոլոր երկնաւորները, երկրաւորները եւ սանդարամետականներն ու բոլոր լեզուները խոստովանելու են, որ Տէր է Յիսուս Քրիստոս՝ ի փառս Հայր Աստծոյ» (Փիլիպ. Բ 10):

Եօթներորդ, աստուածային փառքը միայն Աստծուն է պատշաճ, ինչպէս ասում է Եսայու մօտ՝ «Իմ փառքը ոչ մէկին չեմ տա» (Ես. ԽԲ 8): Իսկ Մատթէոսն ասում է՝ «Մարդու Որդին կգայ Հօր փառքով» (Մտթ. ԺԶ 27):

Ութերորդ. «Մէկն է օրէնսդիրը եւ դատաւորը» (Յակ. Դ 12), ասում է Յակոբը: Եւ ինքը՝ Քրիստոս, օրէնքը սահմանելով, ասում է՝ «Առաջներն այսպէս ասացին, իսկ ես ասում եմ այսպէս եւ այս» (տե՛ս Մտթ. Ե 21):

Ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Իններորդ՝ հրաշագործում է միայն Աստուած, ըստ այդմ՝ «Դու ես, Աստուած, որ հրաշքներ ես գործում» (Սղմ. ՀԶ 15): Եւ Տէրն էլ մեր գործում էր սքանչելիքներ, ըստ այդմ՝ «Հայրն իմ գործում է մինչեւ այժմ, գործում եմ եւ ես» (Յովհ. Ե 17): Եւ կամ՝ «Ինչ անում է Հայրը, նոյնն անում է եւ Որդին» (Յովհ. Ե 19):

Տասներորդ՝ Աստուած է միայն թողութիւն տալիս մեղքերին, ըստ այդմ՝ «Ո՞վ կարող է մեղքերին թողութիւն տալ Աստծուց բացի» (Ղուկ. Ե 21): Եւ մարդու Որդին նոյնպէս իշխանութիւն ունէր թողութիւն տալու մեղքերին, ինչպէս ասում է՝ «Թող ներուեն քո մեղքերը» (Ղուկ. Ե 23):

Ապա ուրեմն Քրիստոս Աստուած է:

Տասնմէկերորդ՝ միայն Աստուած կարող է նորոգել, ինչպէս ասում է Դաւիթը՝ «Կառաքես քո Որդուն եւ կնորոգես երկրի երեսը» (Սղմ. ճԳ 30): Իսկ առաքեալն ասում է Քրիստոսի մասին՝ «Կփոխակերպուենք նրա նորոգուելով, երբ նորոգի մեր խոնարհ մարմինը ըստ իր մարմնի փառքի նմանութեան» (Փիլիպ. Գ 21):

Տասներկուերորդ՝ Աստուած կարող է լինել միայն յաւիտենական եւ անփոփոխ, ըստ մարգարէի՝ «Ես նոյն Աստուածն եմ եւ չեմ փոփոխւում» (Սաղ. Գ 6): Եւ Տէրն ասում է՝ «Շօշափեցէք ինձ եւ տեսէք, որ ես նոյնն եմ» (Ղուկ. ԻԴ 39):

Տասներեքերորդ՝ Ամենակալ միայն Աստուած է՝ ըստ մարգարէի. «Տէրն ամենակալ է եւ մեծանուն» (Ամովս Թ 6): Իսկ Պօղոսը Որդու մասին ասում է՝ «որ կրում է ամէն ինչ իր խօսքի զօրութեամբ» (Եբր. Ա 3):

Տասնչորսերորդ՝ միայն Աստծունն է ամենուրեք լինելը, ըստ այդմ՝ «Աստուած մեր՝ երկնքում եւ երկրում»: Նոյն կերպ եւ Որդին միածին Հօր ծոցում էր եւ Կոյսի արգանդում, խաչի վրայ անարգուած եւ փառքի աթոռին բազմած, ինչպէս ասում է՝ «Մարդու Որդին, որ երկնքում է» (Յովհ. Գ 13): Ուստի նա հաւատացեալների հետ է՝ մինչեւ աշխարհի վերջը:

Տասնհինգերորդ. տաճարը միայն Աստծով է սրբւում, ըստ այդմ՝ «Տէրն իր սուրբ տաճարում է» (Սղմ. Ժ 5), որ առաքեալը մեկնում է այսպէս. «Դուք էք Աստծոյ կենդանի տաճարը» (Ա Կորնթ. Գ 17): Եւ ինքն ասաց պատուիրանները պահողների մասին. «Ես եւ Հայրը նրա մօտ կգանք եւ նրա մօտ օթեւան կառնենք» (Յովհ. ԺԴ 23):

Տասնվեցերորդ՝ միայն Աստուած կարող է կամենալ եւ կատարել, ըստ այդմ՝ «Ամէնը, ինչ կամեցաւ, կատարեց Տէրը» (Սղմ. ճԺԳ 3): Իսկ ինքը՝ Տէրն ասում է. «Կամենում եմ, սրբուիր» (Ղուկ. Ե 13):

Տասնեօթներորդ՝ ամենասուրբ արդարութիւնը միայն Աստծունն է, ըստ

այդմ՝ «Չկայ սուրբ, ինչպէս Տէրը եւ արդար, ինչպէս մեր Աստուածը» (Ա Թագ. Բ 2): Իսկ մարգարէն Որդու մասին ասում է՝ «Մեղք չգործեց եւ նենգութիւն չգտնուեց նրա բերանում» (Սղմ. ԼԱ 2): Ինչպէս ինքն է ասում՝ «Աշխարհի իշխանն ինձ չի գտնի իւրայինների մէջ» (Յովհ. ԺԴ 30):

Տասնութերորդ՝ ճշմարիտ միայն Աստուած է, որ ինքն իր մասին վկայում է. «Ես եմ ճշմարտութիւնը» (Յովհ. ԺԴ 6): Ապա ուրեմն՝ Քրիստոս Աստուած է:

Տասնիններորդ՝ փառքի Տէրը միայն Աստուած է, ըստ այդմ՝ «Զօրութիւնների Տէրը՝ նոյն ինքը փառքի թագաւորն է» (Սղմ. ԻԳ 8): Իսկ առաքեալը փառքի Տիրոջ՝ Քրիստոսի մասին ասում է Կորնթացւոց Առաջին [թղթում]. «Եթէ ճանաչէին փառքի տիրոջը՝ արդեօ՞ք խաչ կհանէին» (Ա Կորնթ. Բ 8):

Քսաներորդ՝ հրաւիրելու առաքելութիւնը միայն Աստծունն է, ըստ Եսայու՝ «Ո՞ւմ առաքեմ կամ ո՞վ կգնայ այն ժողովրդի մօտ» (Ես. Զ 8): Իսկ ինքը՝ Տէրն ասաց. «Ինչպէս առաքեց Հայրն ինձ, ես էլ առաքում եմ ձեզ» (Յովհ. Ի 21):

Ապա ուրեմն Աստուած է Քրիստոս՝ հաւասար Հօրը եւ Սուրբ Հոգուն:

Իսկ որպէսզի որեւէ մէկը չառարկի, թէ վերոասացեալները Քրիստոսի խօսքի բնութեանն են պատշաճում եւ ոչ մարմնին, ուստի ես նոյնքան հարցադրումներով հարկադրուած եմ ցոյց տալ, որ Քրիստոս Աստուած է նաեւ՝ ըստ մարմնական միութեան՝ մարմնացեալ եւ մարդացեալ Աստուած:

ՈՐ ՄԷԿՆ Է ՄԵՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ Է՝ ՄԱՐՄՆԱՊԷՍ՝ ԾՆՈՒԱԾ ԿՈՅՍԻՑ
Պրակ Դ

Առաջին՝ «Բանը մարմին եղաւ» (Յովհ. Ա 14), ասում է Յովհաննէսը: Իսկ «եղաւ» նշանակում է Բանի եւ մարմնի միաւորուելը: Իսկ եթէ մէկն ասի, թէ «եղաւ» ցոյց է տալիս փոփոխուելը, ինչպէս այն, որ Մովսէսի գաւազանը օձ եղաւ, ապա ասենք, որ եթէ մարգարէն ասում է՝ «Տէրն ապաւէն եղաւ» (Սղմ. ՂԳ 22), չի նշանակում, թէ տէր լինելը փոխուեց ապաւինութեան, այլ մնաց Տէր եւ եղաւ ապաւէն: Նոյնպէս Բանն-Աստուած մնաց Բան եւ եղաւ մարմին: Եւ Բանը մարմին եղաւ միաւորութեամբ, ուստի պարզ է, որ մարմինն էլ Բան դարձաւ նոյն միաւորութեամբ: Հետեւաբար, Քրիստոսի մարմինը նոյնպէս Աստուած է:

Երկրորդ՝ Կորնթացւոց Առաջին [թղթում] ասւում է՝ «Մի Տէր, մի Յիսուս Քրիստոս, որով եւ ամէն ինչ»: Ա՛րդ, «որով եւ ամեն ինչ» վերաբերում է Բանին, ըստ այդմ՝ «Ամէն ինչ Բանով եղաւ» (Յովհ. Ա 2), եւ Յիսուս է կոչւում մարդը: Հետեւաբար, մի Տէրը եւ մի Քրիստոսը մարդացած Բանն է:

Երրորդ՝ Փիլիպպեցւոց [թղթում] ասւում է. «Իւրաքանչիւր ոք թող խորհի այն, ինչ Յիսուս Քրիստոսի մէջ է, որն Աստծոյ կերպարանքով էր» (Փիլիպ. Բ 6): Արդ, Բանն առանց մարմնի Քրիստոս չէ, ապա ուրեմն յայտնի է, որ մեր Տէր Յիսուս

Քրիստոս Աստծուն հաւասար է միացեալ մարմնով եւ կերպարանքով:

Չորրորդ՝ Գաղատացւոց [թղթում] ասւում է. «Աստուած առաքեց իր Որդուն, որ եղաւ կնոջից» (Գաղատ. Դ 4), ապա ուրեմն կնոջից եղած մարդը Աստծոյ Որդին է:

Հինգերորդ՝ Աստուած խոստացաւ Աբրահամին, թէ՝ «Երկրի բոլոր ազգերը կօրհնուեն քո զաւակից» (Ծննդ. ԻԲ 18): Իսկ Պօղոսը Հռոմէացւոց [թղթում] այդ զաւակ անուանում է Քրիստոսին. «Քրիստոս հայրերից է ըստ մարմնի՝ Աստուած օրհնուած յաւիտեան» (Հռոմ. Թ 5): Ապա ուրեմն Աստուած է Կոյսի որդին:

Վեցերորդ՝ Բանն-Աստուած ի սկզբանէ անմարմին էր, ըստ այդմ՝ «Ի սկզբանէ Բանն էր» (Յովհ. Ա 1): Իսկ Յովհաննէսն Ընդհանրական [թղթում] ասում է. «Որ սկզբից էր, որի մասին լսեցինք եւ ականատես եղանք, եւ ապա մեր ձեռքերը շօշափեցին Կենաց Բանը»: Ապա ուրեմն շօշափելի մարմին է Կենաց Բանը եւ Աստուած:

Եօթներորդ՝ երկնքից իջնելը Բանին է պատշաճում, որովհետեւ միաւորուեց մարմնին. այս է իջնելը: Իսկ Յովհաննէսը մարմնի մասին ասում է. «Ես եմ կենաց հացը, որ իջնում է երկնքից» (Յովհ. Զ 48): Ապա ուրեմն Աստուած է մարմինը եւ երկնքից իջած:

Ութերորդ՝ երկինք ելնելը պատշաճում է Քրիստոսի մարմնին, որ ի տես առաքեալներին համբարձուեց երկինք, իսկ իջնելը՝ Բանին, ինչպէս ասացինք: Եփեսացւոց [թղթում] առաքեալն ասում է. «Իջնողը նոյն ինքն էր, որ բոլոր երկինքներից աւելի բարձրացաւ» (Եփես. Դ 10):

Իններորդ՝ «Որ էն» Աստուած է կոչւում, ըստ այդմ Մովսէսին ասում է. «Ես եմ որ էնն» (Ելք Գ 14): Իսկ Յօհաննու աւետարանում ասւում է. «Ոչ ոք չելաւ երկինք, բացի նրանից, որ իջաւ երկնքից, որ մարդու Որդին էր՝ Որ էն երկնքում» (Յովհ. Գ 13): Ապա ուրեմն մարդու Որդին է, որ էութիւն է եւ երկնքում է:

Տասներորդ՝ դերանուններից ես, դու, նա-ն յատկապէս մի անձ են ցոյց տալիս: Իսկ Քրիստոս մարդն ասում էր՝ «Առաջ, քան Աբրահամի լինելը, ես էի»: Իսկ Պետրոսն ասում է խոստովանութեան մէջ. «Դու ես Քրիստոս Որդին Աստծոյ» (Յովհ. Զ 70): Ապա ուրեմն՝ Աստուած եւ Աստծոյ որդի է մարմնացեալ Քրիստոս:

Տասնմէկերորդ՝ Յօհաննու աւետարանն ասում է՝ «Ես եւ իմ հայրը մէկ ենք, ով տեսաւ ինձ՝ տեսաւ Հօրը» (Յովհ. ԺԴ 9): Եւ կոյրին ասում էր՝ «Ում տեսար եւ ով խօսում է հետդ, նա է Աստծոյ Որդին» (Յովհ. Թ 37): Ապա ուրեմն՝ մարմնով երեւացողը եւ խօսողն Աստծոյ Որդին էր եւ Հօր հետ նոյնը եղածը:

Տասներկուերորդ՝ նա, որ աշխարհի սկիզբն է, եթէ առաջ չլինէր, քան իր լինելութիւնն աշխարհում, չէր ասի՝ աշխարհ գալ: Ուստի Քրիստոսի մարմինն ու հոգին աշխարհի սկզբից են, եւ մարմնի հետ միաւորուելու պատճառով է Բան-Աստուած ասում՝ «Ելայ Հօրից եւ եկայ աշխարհ» (Յովհ. ԺԶ 28):

Տասներեքերորդ՝ Պօղոսն ասում է Եբրայեցւոց [թղթում]՝ «Աշխարհ մտնելով հաստատուեց իմ մարմինը» (Եբր. Ժ 5): Ուրեմն մարմինն այդ յատկապէս Բան-Աստծոյ մարմինն էր, եւ սա չէր կարող այդպիսին լինել, եթէ միաւորուած չլինէր նրան:

Տասնչորսերորդ՝ Պօղոսն ասում է Փիլիպպեցւոց [թղթում]՝ «Որ Աստծոյ կերպարանքով էր, ծառայի կերպարանք առաւ եւ մարդկանց նման եղաւ» եւ այլն (Փիլիպ. Բ 6): Ապա ուրեմն՝ մէկն է Աստծոյ Որդին, եւ Որդին մարմնացած եւ մարդացած Աստուած է:

Տասնհինգերորդ՝ Կողոսացւոց [թղթում] ասում է՝ «Նրանով հաստատուեց ամէնը, ինչ կար երկնքում եւ երկրում» (Կողոս. Ա 16): Եւ յետոյ ասում է՝ «Նա է եկեղեցու մարմնի գլուխը, որ սկիզբն էր եւ անդրանիկը մեռեալների» (Կողոս. Ա 18): Ապա ուրեմն՝ մէկն են Աստուած եւ Աստծոյ Որդին՝ ամէն ինչի հաստատողը եւ մեռեալների անդրանիկը:

Տասնվեցերորդ՝ ասում է՝ «Ես նրան յարութիւն կտամ վերջին օրը եւ նրան կտամ յաւիտենական կեանք» (Յովհ. Զ 40): Ապա ուրեմն, չէր կարող յարութիւն եւ կեանք տալ մէկին, որը միաւորուած չլինէր յաւիտենական կեանքի հետ:

Տասնեօթներորդ՝ Յօհաննու աւետարանն ասում է. «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդուն տուեց» (Յովհ. Գ 16), այսինքն՝ ի մահ: Ապա ուրեմն՝ չարչարուած եւ մեռած մարդը Աստծոյ Որդին է:

Տասնութերորդ՝ մարմնի բոլոր կրածները պատկանում են այն մարդուն, ով այդ մարմնի տէրն է: Ինչպէս եթէ Պետրոսի մարմինն է խոցւում կամ տանջւում, ասում ենք՝ Պետրոսը խոցուեց, Պետրոսը տանջուեց: Ապա ուրեմն, Քրիստոսի մարմինն Աստուած է, քանզի Աստուածաբանն ասում է՝ «Աստուած խաչուած, Աստուած՝ չարչարուած»:

Տասնիններորդ՝ թէեւ երբեմն մարդիկ տէր են անուանում իշխանութիւն ունեցողին, սակայն Տէր միայն Աստուած է, ըստ այդմ՝ «Զօրութիւնների Տէրը նա ինքն է փառքի թագաւորը» (Սղմ. ԻԳ 10): Իսկ Պօղոսը Կորնթացւոց Առաջին [թղթում] խաչուած Քրիստոսին փառքի Տէր է անուանում. ասում է՝ «Եթէ ճանաչէին, արդեօ՞ք փառքի Տիրոջը խաչ կհանէին» (Ա Կորնթ. Բ 8):

Քսաներորդ՝ ինչպէս միութեան միջոցով բարձրագոյն բաները կարող են ասուել մարմնի համար, ինչպէս՝ Աստուած, Յարութիւն, յաւիտենական կեանք, այդպէս էլ միաւորութեան միջոցով Բանն Աստուած կրում է խոնարհագոյն [անուններ], ինչպէս՝ ժամանակի մէջ կոյսից ծնուած մարդ, խաչուելը, մեռնելը, ինչպէս ասում է առաքեալը՝ «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյնն է եւ յաւիտեան» (Եբր. ԺԳ 8): Ապա ուրեմն ճշմարիտ Աստուած է Քրիստոս մարմնով՝ անբաժան միաւորուած յաւիտենապէս:

Պրակ Ե

Հարց. Եթէ Երրորդութեան բնութիւնը մէկն է եւ անբաժան է, ինչպէ՞ս պէտք է հասկանալ, որ Բանն է միայն մարմնացել եւ ոչ Հայրը կամ Հոգին:

Պատասխան. Այս հարցումը ընդհանուրն ու մասնաւորը չհասկացողների համար չէ: Արդ, քո անխոհեմութեամբ ինչպէ՞ս կարող ես իմանալ, որ մի ընդհանուր բնութեան մէջ Բանը ծնուած էր, իսկ Հոգին բխած, Հայրը՝ ոչ ծնուած եւ ոչ բխած: Ինչպէս, օրինակ, մի անհատ ունի ընդհանուր բնութիւն՝ իր առանձնայատկութիւններով հանդերձ: Յայտնի է եւ սահմանումից. «ամէն մի կենդանի մարդ, բանական, մահկանացու է՝ մտածելու եւ գիտութեան ընդունակ»[132]: Եւ դու [ասենք] Պետրոս, մարդ ես՝ կենդանի, բանական, մահկանացու՝ մտքի եւ գիտութեան ընդունակ: Արդ, դու քո առանձնայատկութիւններով ունես ընդհանուր բնութիւն, այսինքն՝ ծնուեցիր մօրից եւ մեռար. [բայց] այս աշխարհում չմեռաւ ամբողջ մարդկութիւնը [քեզ հետ միասին]: Նոյն կերպ իմացիր եւ Բանն Աստծոյ համար. ունենալով նոյն բնութիւնը՝ նա ունի առանձնայատկութիւններ, այսինքն՝ միայն ինքն է միացել մարմնին, իսկ Հայրն ու Հոգին՝ ոչ. ըստ առաքեալի՝ «Նրանում է բնակւում աստուածութեան ողջ մարմնական լրումը», այսինքն՝ էութեան (Կողոս. Բ 9): Եւ նա ոչ մի պակասութիւն չունի միւս երկուսի համեմատութեամբ, եւ այն երկուսն էլ առաւել չեն, քան այդ մէկը, սակայն բոլորն էլ ունեն առանձնայատկութիւններ: Սա ընդհանուր բնութեան մասին:

Իսկ անբաժան էութեան մասին դատիր այս օրինակով. ինչպէս մէկ խնձորը, որ ունի երեք յատկութիւն՝ համ, հոտ եւ գոյն՝ համապատասխան ձեւի հետ: Արդ, զանազան զգայարաններով այս [յատկութիւնները] տարբեր կերպ ենք ընկալում եւ ոչ թէ բոլոր [զգայարաններով] մէկ [յատկութիւնը] կամ մէկով բոլոր [յատկութիւնները], քանզի աչքը զգում է գոյնը՝ ձեւի յետ, իսկ համն ու հոտը չի զգում: Ռունգները հոտն են [զգում]: Ճաշակելու [օրգանները զգում են] միայն համը՝ չընկալելով հոտն ու գոյնը:

Նոյն կերպ եւ հուրը, որն իր էութեան մէջ ունի լոյս ու ջերմութիւն, շօշափելիքների կողմից ընկալւում է նրա [միայն] ջերմութիւնը, տեսողութեան կողմից միայն լոյսը՝ մէկ էութեան մէջ: Ահա այսպէս էլ մարդեղացած Բանը՝ անբաժան լինելով Հօրից եւ Հոգուց. ըստ այդմ՝ «Ես՝ Հօր մէջ եմ եւ Հայրն՝ իմ մէջ» (Յովհ. ԺԴ 11), կամ թէ՝ «Աստծոյ Հոգով հանում եմ դեւերին» (Ղուկ. ԺԱ 20): Եւ այսպէս, մարմին եղաւ միայն Բանը եւ ոչ Հայրը կամ Հոգին:

Պրակ Զ

Հարց. Քրիստոս ըստ մարդկային բնութեա՞ն է Աստուած, թէ՞ ըստ աստուածային բնութեան՝ մարդ:

Պատասխան. Երկաբնակների այս հարցումը նման է այն բանին, որ մարդ ըստ հոգու բնութեան մարմի՞ն է, թէ՞ ըստ մարմնի բնութեան հոգի: Եւ ահա նրանք կարծում են, թէ ուժեղ զէնք ունեն երկու կողմերի դէմ էլ, որովհետեւ [պատաս-

խանողը] կամ պարտադրուած պէտք է լինի բռնել Նեստորի կողմը՝ [ասելով] բնութիւն եւ բնութիւն, կամ Եւտիքեի նման շփոթի բնութիւնները:

Խոյս տալով երկու ծայրահեղութիւններից եւ բռնելով միջին ճիշտ ուղին՝ ասենք, որ Քրիստոս ըստ անշփոթ միաւորութեան աստուածային բնութեամբ մարդ է եւ մարդկային բնութեամբ՝ Աստուած: Որովհետեւ նոյն ինքը՝ Քրիստոս անունը ուսուցանում է, որ նա աստուածութեամբ մարդ է եւ մարդկութեամբ՝ Աստուած: Այսպիսով, Քրիստոս սոսկ մարդ չէ կամ լոկ Աստուած, այլ, ինչպէս ցոյց տրուեց, երկուսի միաւորութիւնը:

Սա ընդդէմ Նեստորի:

Իսկ ընդդէմ Եւտիքեի պէտք է ասել. անշփոթ է պահում բնութիւնների՝ մէկ էութեան մէջ խառնուած յատկութիւնները: Ուստի եւ՝ նա աստուածային բնութեամբ մարդ է եւ մարդկային բնութեամբ՝ Աստուած: [Եւ սա] ոչ թէ փոխարկութեամբ է[133], այլ՝ փոխանակութեամբ, այսինքն՝ միաւորութեան մէջ մնաց, ինչ որ էր եւ եղաւ այն[134], ինչ որ չէր, ուրեմն իր բնութեամբ Աստուած է, իսկ միաւորութեան բնութեամբ՝ մարդ: Ուստի եւ մարդկութիւնն էլ Աստուած է՝ ըստ բնութեան նոյն միաւորութեան եւ մարդ՝ ըստ իր յատկութիւնների: Այսպէս եւ Բանն անմահ է ըստ իր բնութեան եւ նոյնը մահկանացու՝ ըստ միաւորութեան: Ըստ որի նաեւ մարդկութիւնն է անմահ՝ ըստ միաւորութեան եւ մահկանացու՝ ըստ իր յատկութեան: Նոյն կերպ եւ՝ անընդգրկելի եւ ընդգրկելի, անմարմին եւ մարմնացած, անեղ եւ եղական, անչարչարելի եւ չարչարուած:

Այսպէս իմացիր ըստ Բանի միաւորութեան եւ անշփոթ խառնուելու: Որովհետեւ այս է մեր ուղիղ դաւանանքը Քրիստոսի միաւորութեան մասին: Եւ այսպէս ուսանեցինք մեր սրբազան առաջնորդներից: Իսկ [ասել] Աստուած է միայն աստուածութիւնը եւ մարդ՝ մարդկութիւնը, անմահ է աստուածութիւնը եւ մահկանացու՝ մարդկութիւնը, չարչարելի մարդկութիւնը եւ անչարչարելի աստուածութիւնը, ուրեմն եւ ծնուածը մօրից միայն մարդկային յատկանիշներով է եւ ոչ թէ աստուածային էութեամբ: Ահա այսպէս եւ սրա նման ասելով՝ տրոհում եւ ուրանում է Բանի միաւորուած լինելը: Իսկ ով ուրանում է միութիւնը, ուրանում է եւ Քրիստոսի գոյութիւնը, հետեւաբար ուրանում է եւ քրիստոնէութեան հաւատը: Իսկ հաւատարիմ մնալ քեզ եւ ուրանալ անձդ՝ չես կարող:

Եւ դու այսպէս դատիր ու հաստատիր մտքումդ եւ միասնական եղիր դէմքով ու շարժումներով միշտ պատշաճութեամբ դէպի ընդհանուր գլուխն՝ ի Քրիստոս:

Պրակ է

Հարց. Ինչո՞ւ են քաղկեդոնականները եւ նեստորականները ուրանում բնութեամբ միաւորուածութիւնը, այլ ասում են՝ միայն անձով եւ յատկութիւններով:

Պատասխան: Երեք պատճառով են սրանք ուրանում Բանի եւ մարդեղութեան միաւորութիւնը:

Նախ, որպէսզի չշփոթուեն բնութիւնները միաւորութեան մէջ, ինչպէս ասում է Եւտիքէսը:

Երկրորդ՝ որպէսզի աստուածային բնութիւնը մարդկայինի հետ չչարչարուի:

Երրորդ՝ որպէսզի Երրորդութիւնը մարմնացեալ չերեւայ, որովհետեւ եթէ բնութիւնը ընդհանուր է, ապա Որդու մայրը կլինի Երրորդութեան մայր:

Այսքանն [ասում են] նրանք: Իսկ մենք առաջինի վերաբերեալ համառօտ պատասխանենք. թէեւ Բանն-Աստուած բնութեամբ միաւորուել էր մարդկութեան հետ, սակայն չի կրել որեւէ շփոթ եւ խառնակումն, որովհետեւ անմարմին էր եւ խառնուեց մարմնի հետ, ինչպէս հոգին ու մարմինն են բնութեամբ միաւորւում, սակայն չեն շփոթւում:

Երկրորդի վերաբերեալ ասենք, որ ոչ թէ բնութեան բաժանուելն է Բանը զերծ պահում չարչարանքից, այլ՝ բնութեան անեղութիւնը: Քանի որ անեղ է, ուստի այդ պատճառով չի լուծւում ու չի փոփոխւում: Նրանք, որոնք միաւորւում են այլափոխուողներին, ինչպէս հուրը՝ երկաթին, հոգին՝ մարմնին, չարչարւում են առանց չարչարուելու:

Երրորդի վերաբերեալ ասենք, որ լիովին յիմարութիւն եւ մոլորութիւն է նոյնիսկ այդ լսելը: Որովհետեւ եթէ ընդհանրապէս անանձ բնութիւնը ասէինք միաւորուած, այս մասին նրանք կարող էին ասել ինչ-որ բան: Սակայն քանի որ ասում ենք, թէ անձնաւոր եւ անհատ բնութիւնն է մարմնացած, որովհետեւ միաւորութեան սկիզբը բնութիւնն է, իսկ լրումը կայացել է անձի մէջ, ուստի եւ յիմարների, ուրեմն եւ՝ ապուշներին է [համար է] նրանց հարցադրումը: Եւ ըստ այսմ՝ նրանք պէտք է ուրանան նաեւ նրա, իբրեւ մարդու, բնութեան անհատ լինելը, որպէսզի չմիաւորուի մեր ընդհանուր մարդկութեանը, ինչը չարչարուեց Քրիստոսի չարչարանքի ժամանակ, որով եւ, ըստ նրանց, մեռաւ մեր բովանդակ մարդկութիւնը: Այսպիսի չար հարցումն արտաքսում է ուղղափառ եկեղեցին:

Մինչդեռ մենք Բանն Աստուած ենք խոստովանում ոչ մասամբ, այլ լիովին մարմնացած եւ մարդացած. ըստ Պօղոսի՝ «Նրանում է մարմնապէս բնակւում ողջ լրումն աստուածութեան» (Կողոս. Բ 9)՝ ոչ թէ հեղումով կամ շփոթմամբ, այլ Բանը մարմին եղած անշփոթ միաւորութեամբ եւ կատարելապէս միաւորուած մեր բնութիւնն իր աստուածութեանը, եւ ըստ ուղղադաւան սուրբ հայրերի՝ մի բնութիւնից եւ մի անձնաւորութիւնից կազմուած երեւացող մարմնով՝ մի Տէր, մի Որդի: Եւ մի Տէր ենք ասում մեր Յիսուս Քրիստոսին եւ մէկ՝ նրա բնութեանը, որովհետեւ մարմնացեալ Բանի բնութիւնը մէկ է[135]:

Պրակ Ը

Հարց. Ի՞նչ է մարմնացած Բանի լիակատար միաւորութիւնը:

Պատասխան. Չորս եղանակներով է տեսնւում: Նախ՝ հրաշագործութիւններով է, որոնց սահմանն անիմանալի է եւ բնութիւնից վեր:

Երկրորդ՝ որովհետեւ անեղը միաւորուել է եղականին:

Երրորդ՝ միաւորուելով՝ անփոփոխ է մնացել:

Չորրորդ՝ որովհետեւ անբաժանելի է:

Պրակ Թ

Հարց. Ինչպէ՞ս է ասւում Աստուած եւ մարդ:

Պատասխան. Քրիստոսին Աստուած եւ մարդ ասելը երկու կերպ պէտք է հասկանալ: Ոմանք ամբողջը բաժանելով են ասում Աստուած եւ մարդ, ինչպէս նեստորականները: Ոմանք էլ մասամբ են բաժանուած ասում, ինչպէս քաղկեդոնականները: Իսկ մենք ամբողջն ենք անբաժան ասում՝ Աստուած եւ մարդ, այսինքն՝ մարդկութեամբ մարդ է, աստուածութեամբ՝ Աստուած, որից եւ պարզ է դառնում, որ կարելի է զանազանել միաւորութեան երեք եղանակ: Նախ՝ նոյն ինքը Բանն-Աստուած եւ մարդ, այսինքն՝ մարդկութեամբ մարդ, աստուածութեամբ՝ Աստուած: Եւ սա ոչ մասամբ կամ բաժանմամբ, այլ՝ ամբողջութեամբ եւ միաւորութեամբ: Սրանք վերաբերում են աստուածային անձի միութեանը:

Երկրորդ՝ միեւնոյն Աստծուն մարդ են ասում կամ միեւնոյն մարդուն՝ Աստուած ոչ փոխակերպութեամբ, այլ՝ փոխանակութեամբ:

Սրանք վերաբերում են էութեան միութեանը:

Երրորդ՝ ասւում է՝ միեւնոյն մարդը աստուածութեամբ մարդ եւ աստուածութեամբ Աստուած եւ միեւնոյն Բանն-Աստուած՝ աստուածութեամբ Աստուած եւ մարդկութեամբ Աստուած, որովհետեւ անբաժանելի է: Թէեւ նախքան մարդեղութիւնն Աստուած էր, սակայն անճառելի միաւորութիւնից յետոյ էլ մարմնով է Աստուած: Սրանք վերաբերում են բնութեամբ միաւորութեանը:

Իսկ թէ ինչպէ՞ս ենք ասում. [այնպէս] ինչպէս ասում ենք՝ Աստուածածինն կոյսն մայր եւ կոյս՝ ոչ երկու բնութեամբ եւ երկու անձով, որ [կլինի] մասամբ եւ բաժանուած, այլ միեւնոյնը, որն ունի ե՛ւ այս, ե՛ւ այն յատկութիւնը: Եւ կարող ենք ասել նոյնն է՝ կուսութեամբ կոյս եւ մայրութեամբ մայր: Եւ դարձեալ ասւում է՝ մայր կոյս եւ կոյս մայր. կամ՝ կուսութեամբ կոյս եւ կուսութեամբ մայր. կամ՝ մայրութեամբ կոյս եւ մայրութեամբ մայր: Այս օրինակով էլ իրենից ծնուածը ճշմարիտ Աստուած է եւ մարդ:

Դարձեալ ինչպէս որ ժխտումով ասւում է՝ Հայր Աստուած՝ անսկիզբ ու անվախճան՝ իր պարզ միութեան մէջ ունենալով թէ մէկը, եւ թէ միւսը, երկու անձ կամ երկու բնութիւն չէ: Այդպէս էլ ծնուած Որդին միաւորուած մարմնով ասւում է ե՛ւ Աստուած, ե՛ւ մարդ, այսինքն՝ բաղադրուած միաւորութեան մէջ չի ասւում երկու անձ կամ երկու բնութիւն:

Դարձեալ նոյն ձեւով Որդին, որ ունի ծնունդ Հօրից նախքան յայտնութիւնը եւ ունի ծնունդ Մօրից ժամանակ անց, չի ասւում երկածին, այլ միշտ՝ միածին, այպէս էլ նոյն Բանն ունի աստուածային բնութիւն՝ Հօրից եւ մարդկային բնութիւն

Մօրից, եւ չի ասւում երկու բնութիւն, այլ մի բնութիւն միաւորութեան մէջ:

Նոյն կերպ, ինչպէս նա Որդին էր Հօր՝ իր յատկութիւններով, դարձաւ եւ Կոյսի Որդին՝ դարձեալ իր յատկութիւններով: Եւ սակայն չի ասւում, թէ երկու Որդի կամ երկու անձ եւ այլն, այլ մի Որդի եւ մի անձ՝ իր անտրոհելի յատկութեամբ՝ մի դէմք, մի անձ, մի կերպարանք եւ այլն: Այսպիսին էր բնութեամբ Հօրից, այդպիսին էր բնութեամբ Մօրից եւ չի ասւում, երկաբնոյթ է կամ երկաբուն, այլ միաբնոյթ եւ միաբուն. մի Որդի՝ մի բնութեամբ՝ միատեսակ Աստուած մարդացեալ:

Ասուածը պարզաբանենք մանրամասներով:

ա. Ինչպէս արարածների Արարիչը մարդ դարձաւ, եւ չի ասւում արարած եւ ոչ էլ արարիչ ու արարած, այլ՝ լիովին անեղ եւ Արարիչ իր մարմնով.

բ. նաեւ չի ասւում անկատար եւ փոքր՝ հասակ առնելու պատճառով, այլ միշտ կատարեալ եւ միշտ հասուն իր մարմնով, ըստ այդմ՝ «Մեծ եւ կատարեալ անձեռակերտ խորան, որ այս արարածներից չէ» (Եբր. Թ 11).

գ. Եւ չի ասւում ժամանակաւոր՝ մարմնի պատճառով, այլ մշտնջենաւոր եւ յաւիտենական մարմնով, ըստ այդմ՝ «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր նոյնը եւ յաւիտեան» (Եբր. ԺԳ 8):

Այսպէս իմացիր եւ մնացածը.

դ. Չի ասւում հողեղէն եւ երկրային՝ հողեղէն մարմնի պատճառով, այլ միշտ երկնային իր մարմնով՝ ստեղծող հողեղէնների եւ երկրաւորների, ըստ այդմ՝ «Առաջին մարդը երկրից՝ հողեղէն, երկրորդը՝ Տէրը երկնքից» (Ա Կորնթ. ԺԵ 47).

ե. Եւ չի ասւում շնչաւոր՝ շնչաւոր մարմնի պատճառով, այլ ամբողջապէս հոգեւոր: Ըստ այդմ՝ «Առաջին մարդը կենդանի շնչից, երկրորդը՝ կենդանարար Հոգուց» (Ա Կորնթ. ԺԵ 45).

զ. Եւ չի ասւում ծառայ՝ իր ծառայող մարմնի պատճառով, այլ միշտ Տէր եւ ազատ, ըստ այդմ՝ «Ազատ են որդիներդ» (Մտթ. ԺԵ 25).

է. Եւ չի ասւում անիծուած՝ անիծեալ մարմնի պատճառով, այլ ամբողջապէս օրհնեալ մարմնով, ըստ այդմ՝ «Նրանով կօրհնուեն երկրի բոլոր ազգերը» (Ծննդ. ԻԲ 18).

ը. Եւ չի ասւում մեղաւոր՝ մեղաւոր մարմին առնելու պատճառով, այլ միշտ՝ անմեղ մարմնով, ըստ այդմ՝ «Մեղք չգործեց ու նենգութիւն չգտնուեց նրա բերանում» (Սղմ. ԼԱ 2).

թ. Եւ չի ասւում տգէտ ու տկար՝ մարմնի պատճառով, այլ ամենագէտ եւ ամենազօր մարմնով, ըստ այդմ՝ «Քրիստոս Աստծոյ զօրութիւնն է եւ Աստծոյ իմաստութիւնը» (Ա Կորնթ. Ա 24).

ժ. Եւ չի ասւում ապականուած՝ ապականացու մարմին առնելու պատճառով, այլ միշտ՝ անապական մարմնով, որովհետեւ՝ «Նրա մարմինը չտեսաւ ապականութիւն» (Գործք Բ 31), եւ մեզ էլ անապական դարձրեց իր երկրորդ ծննդեամբ.

ժա. Եւ չի ասւում մահկանացու՝ մարմնի պատճառով, այլ միշտ անմահ ու

կենդանարար մարմնով: Ըստ այդմ՝ «Ով ուտի իմ մարմինը՝ կապրի յաւիտեան» (Յովհ. Զ 57):

Ժբ. Եւ մարմնի պատճառով չի ասւում, թէ ընդգրկելի է, այլ՝ անընդգրկելի մարմնով, ըստ այդմ՝ «Պատարագւում է ամենուրէք»:

Այս կերպ իմացիր եւ մնացածը:

Եւ ինչպէս սրանք չէին ասւում, այդպէս էլ անհնար է երկատելով ասել՝ Քրիստոսը անեղ ու եղական. կամ՝ յաւիտենական ու ժամանակաւոր, կամ՝ կատարեալ ու անկատար, անգէտ ու ամենագէտ, հզօր եւ տկար, հոգեւոր ու շնչաւոր, անմեղ ու մեղաւոր եւ այլ ամենայն:

Եւ ինչպէս այս ամէնը պարզ դարձաւ քեզ ուղղահաւատ դաւանութեամբ, յիշի՛ր նաեւ այս, ինչ ասում եմ. Որդին չի ասւում պարզ եւ սոսկ մարդ՝ մարդկային կերպարանքի պատճառով, այլեւ չի ասւում առանձին Աստուած կամ առանձին մարդ, այլ Աստուած՝ մարդացեալ եւ մարմնացեալ: Իսկ եթէ առանձնացնես Աստծուն եւ մարդուն, ուրեմն եւ ծնող Կոյսին պէտք է անուանես Աստուածածին եւ մարդածին: Իսկ եթէ ոչ, այլ պարզօրէն Աստուածածին խոստովանելու դէպքում նրանից ծնուածին էլ խոստովանիր Աստուած մարմնացեալ եւ մարդացեալ:

Դարձեալ իմացիր ճշմարտապէս, որովհետեւ ասւում է՝ Աստուած մարմնացեալ եւ մարդացեալ, որ միաւորութիւնն է ցոյց տալիս եւ ոչ թէ մարդ աստուածացեալ եւ չմարմնաւորուած, որովհետեւ սա վերաբերում է փոխակերպութեանը: Ասւում է նաեւ մարմին հագած Աստուած, սակայն չի ասւում մարդազգեաց Աստուած կամ աստուածազգեաց մարդ, որովհետեւ սա տարանջատում է [միաւորութիւնը]:

Ասւում է դարձեալ՝ Աստուած մարմնացեալ եւ մարդացեալ եւ մարմին առած, սակայն չի ասւում մարդկութիւն ընդունած:

Ասւում է դարձեալ՝ մարմնով ծնուած եւ մարմնով երեւացած, մարմնով շրջած (հմմտ. Բարուք Գ 38) եւ այլն, սակայն չի ասւում մարդով ծնուած, մարդով երեւացած կամ մարդով շրջած եւ այլն:

Նմանապէս ասւում է՝ մարմնով չարչարուած եւ մարմնով մեռած, յարութիւն առած եւ համբարձուած: Սակայն չի ասւում՝ մարդկութեամբ չարչարուած եւ մարդկութեամբ մեռած, յարութիւն առած կամ համբարձուած:

Պրակ Ժ

Հարց. Ինչո՞ւ է Աստուածաբանն ասում, թէ՝ «Մէկն աստուածացրեց, իսկ միւսն աստուածացաւ»[136]: Իսկ Կիւրեղը ասում է՝ «Ոչ թէ աստուածացած մարդ, այլ մարդացած Աստուած»:

Պատասխան. Տարբեր վարդապետութիւնների եւ այլեւայլ հերձուածների դէմ են եւ ոչ թէ միմեանց դէմ: Քանզի մեծն Աստուածաբանը պատերազմում է ընդդէմ Արիոսի, որ արարած էր ասում Բանին՝ յետոյ աստուածացած: Որի վերաբերեալ ասում էր՝ մէկը բնութեամբ Բանն Աստուած էր՝ արարիչ եւ ստեղծիչ,

իսկ միւսը մարդ էր՝ բնութեամբ՝ արարուած եւ բնութիւնից ստեղծուած, եւ խառնուելով Բանին՝ կատարուածը դարձաւ կատարող՝ զոյգ ու հաւասար Աստծուն, ըստ այդմ՝ «Աստուած նրան Տէր եւ օծուած դարձրեց»[137]:

Իսկ Կիւրեղը գօտեմարտում էր Նեստորի դէմ, որն ասում էր, թէ՝ Բանը մարմնի մէջ բնակութեամբ է, եւ որ նախ մարդ ծնուեց Կոյսից, շրջեց երկրում եւ մկրտութիւնից յետոյ միայն Բանն Աստծոյ մէջ բնակուեց, ապա Յարութիւնից յետոյ փառաւորեց նրան եւ միաւորելով իրեն՝ զօրացրեց: Որի վերաբերեալ Սուրբ Կիւրեղն ասում է, որ ոչ թէ մարդը աստուածացաւ, այլ Բանն-Աստուած իջաւ Կոյսի արգանդը եւ առնելով հոգի ու մարմին նրանից՝ Աստուած մարդացաւ, ըստ այդմ՝ «Բանը մարմին եղաւ» (Յովհ. Ա 13):

Եւ այս երկու աստուածաբանների խօսքից պարզ է դառնում, որ եթէ Բանն-Աստուած մարմնացաւ ու մարդացաւ, ուրեմն մարդկութիւնն էլ աստուածացաւ՝ խառնուելով ու միանալով Բանին:

Պրակ ԺԱ

Հարց. Աստուածաբանն ինչպէ՞ս է ասում, թէ «Երկու բնութիւն»[138]: Եւ Սուրբ Կիւրեղը եւ Աթանասը ասում են՝ «Մէկն է մարմնացած Աստծոյ Բանի բնութիւնը»[139]:

Պատասխան. Ասենք, որ սա երկու հերձուածների դէմ է: Սուրբ Կիւրեղը ընդդէմ Նեստորի է, ով երկու բաժանուած բնութիւն է վերագրում Քրիստոսին, ասելով՝ մի միաւորեալ բնութիւն՝ Աստուած մարմնացեալ եւ մարդացեալ: Աստուածաբանն էլ՝ ընդդէմ Ապօղինարի է, ով միայն մարմին էր ասում՝ առանց Հոգի առնելու, ասելով՝ մարմինն առանց Հոգու անկատար մարդ էր, եւ միայն հոգի ու մարմին առնելով դարձաւ մարդու կատարեալ բնութիւն եւ երկու կատարեալ բնութիւն [ստացաւ]: Իսկ [սա] ասելով՝ երկու կատարեալ բնութիւն, ոչ թէ Ապօղինարի կարծիքին է հետեւում, այլ [ասում է] Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ՝ հոգով եւ մարմնով, ընդ որում մօտիկ է դնում դրանք, այսինքն՝ հոգին ու մարմինը, քանզի չի կարող մարդը առանց Հոգու գոյանալ: Հաստատելով սա, այսինքն՝ որ Հոգին ու մարմինը միաւորուած են Աստծոյ Բանին՝ սա էլ է հնչեցնում, սակայն չի ասում երկու որդիներ կամ երկու աստուածներ, այլ դէմքերի միաւորութեան վերաբերեալ է ասում: Ապա բարձրացնում է բնութիւնների միաւորութեան [մասին] վարդապետութիւնը, եւ ասում, թէ՝ դրանցում տարբեր է փրկիչը, իսկ եթէ ոչ՝ նոյնն է երեւացողն ու աներեւոյթը, անժամանակն ու ժամանակաւորը: Աներեւոյթ ու անժամանակ է ասում Բանը, իսկ ժամանակաւոր ու երեւացող՝ մարմինը: Եւ որպէսզի տրոհման խտրութիւն չլինի՝ ասում է, թէ երկուսը մէկ են, այսինքն Աստծոյ մարդանալով եւ մարդու աստուածանալով՝ միաւորւում են բնութիւնները. ահա այսպէս է ցոյց տալիս բնութեան միաւորութիւնը:

Պրակ ԺԲ

Հարց. Ի՞նչ է նշանակում Աստուածաբանի ասելը, թէ այլ եւ այլ են Երրորդութեան մէջ եղածները, որովհետեւ այնտեղ մէկն այլ է, միւսը՝ այլ՝ որպէսզի դէմքերը չխառնենք:

Պատասխան. Չարափառներն այս ասածը այսպէս են մեկնում, թէ՝ Բանի միաւորութիւնը հակառակ է Երրորդութեան միաւորութեանը, որովհետեւ ասում են այնտեղ մի բնութիւն է եւ երեք անձինք, իսկ այստեղ երկու բնութիւն է եւ մի անձ:

Սա սուտ կարծիք է, որովհետեւ սա Երրորդութեան մէկ բնութեան եւ Բանի տնօրինութեան դէմ է ասում, եւ սրանք «դէմ»-ը հասկանում են բաժանման իմաստով:

Իսկ ուղղափառների մեր դասը երկու կերպ է մեկնում այս ասածը: Նախ այսպէս է ասւում, որ Երրորդութեան մէջ եղած բաժանուածութիւնը միաւորութեան հնարաւորութիւն չտալու պատճառով է, որովհետեւ մէկն այլ է, միւսն՝ այլ, որպէսզի դէմքերը, այսինքն անձերը չշփոթենք: Իսկ Փրկչի բաժանումն սրան հակառակ է այնքանով, որ բնութեամբ միաւորեալ է, որն անկարելի է շփոթել: Եւ դարձեալ ասւում է, թէ Քրիստոսի այս միաւորութիւնը նոյնը չէ, ինչ Երրորդութեանը, որովհետեւ այնտեղ միութիւն է, բայց [կայ] անձերի բաժանում, իսկ այստեղ թէպէտ միութիւն է, սակայն չկայ անձերի բաժանում, այլ ըստ բնութեան միութեան՝ մէկն է անձը:

Պրակ ԺԳ

Հարց. Ինչպէ՞ս խուսափենք Նեստորի բաժանումից եւ Եւտիքեի շփոթումից:

Պատասխան. Մեզ Սուրբ գրքերը աստուածապաշտութեան միջին ընթացք են ուսուցանում. ինչպէս ասում է Սողոմոնը՝ «Արքունական ճանապարհով գնալիս ո՛չ աջ խոտորուիր, ո՛չ ձախ» (Առակ. Դ 27):

Արդ, աջ եւ ահեակ են խոտորւում հերձուածողները, ինչպէս Սաբէլը աջ խոտորուելով՝ մի բնութեան ու մի անձի մէջ մէկտեղեց Սուրբ Երրորդութիւնը, իսկ նրան հակառակ՝ Արիոսը ձախ խոտորուելով՝ երեք անձ ու երեք բնութիւն ասաց:

Սուրբ եկեղեցին չընդունելով Արիոսին՝ մի բնութիւն է ասում եւ չընդունելով Սաբելին՝ երեք անձ:

Նոյն կերպ եւ Նեստորը Քրիստոսի տնօրինութիւնը չարաչար բաժանում է անձերի եւ բնութիւնների, կամքերի ու գործերի: Իսկ սրան հակառակ Եւտիքէսը ամէն ինչ շփոթում ու խառնում է՝ անձը, բնութիւնը, կամքը, գործը: Իսկ ճշմարտութեան աշակերտները պատերազմում են երկու՝ թէ՛ աջ, թէ՛ ձախ կողմերի դէմ էլ. չընդունելով Նեստորին՝ անբաժանելին են խոստովանում, չընդունելով Եւտիքէսին՝ անշփոթ միաւորութիւնը:

Եւ այսպէս փախչելով թիւր ծայրահեղութիւններից, պահելով բարեպաշտութեան միջին ընթացքը, անշփոթ ու անբաժան միաւորութիւն եւ մարդացեալ Աստուած ենք խոստովանում

Քրիստոսին՝ մի անձ եւ մի բնութիւն, մի կամք եւ մի գործ՝ ըստ մտքի ճշմարիտ ուղղութեան:

Պրակ ԺԴ

Հարց. Ի՞նչ է տալիս Բանի եւ մարմնի մի բնութիւն ասելը. կամ երկու բնութիւն եւ կամ էլ՝ երկուսից եղած մի բնութիւն:

Պատասխան. Ծածուկ եւ անյայտ է աստուածաբանութեան տեսութիւնը հասարակ մտքին եւ հազիւ ճանաչելի են [նրան]՝ կիրթ խորհուրդներն ու նուրբ քննութիւնները սրբերի: Եւ ի՞նչ է նշանակում մի բնութիւն ասելը, կամ թէ՝ երկու, կամ էլ՝ երկուսից եղած մի բնութիւնը:

Արդ, Բանին եւ մարմնին պարզիպարզոյ մի բնութիւն ասելը կատարեալ ամբարշտութիւն է, որովհետեւ մարմինը Կոյսից է, Կոյսը Ադամի ցեղից, իսկ Ադամը՝ հողեղէն արարած: Արդ, հողի արարածին եւ Արարիչ Աստծուն միեւնոյն բնութիւնը վերագրելը ամբարիշտների կարծիքն է:

Իսկ նրանք, ովքեր միաւորութիւնից յետոյ երկու բնութիւն են վերագրում Քրիստոսին՝ բաժանում են կամքը, գործը, տկարութիւնները, թէեւ՝ ընդունում են մի անձ: Սրանք [փաստօրէն] չեն խոստովանում մարդացեալ Աստծուն եւ կամ [ընդունում են], որ նախագոյացած անձի մէջ բնակուեց աստուածային բնութիւնը, կամ էլ ինչպէս Նեստորին է թւում, շնորհով Որդի դարձաւ:

Իսկ ովքեր երկուսից՝ Աստծուց եւ մարդուց եղած մի բնութիւն են ասում՝ իբրեւ թէ՝ Աստծունն ու մարդունը մէկ դարձած բնութիւն, [դա] ոչ Աստծոյ եւ ոչ էլ մարդունն է: Նրանք սուրբ տնօրինութիւնը հռչակում են իբրեւ կիսաէշ, կամ առաչօք, ունայն, ինչպէս մանիքեցիներին ու Եւտիքէսին է թւում:

Հարց. Վարանեցի Տիրոջ յանդէպ Կոյսս, բացատրի՛ր խօսքդ:

Պատասխան. Ասենք, երբ Բանին եւ մարմնին մի բնութիւն ենք ասում, ապա վարւում ենք ըստ Արիոսի, որ Բանը եւ մարմինը արարածներ է համարում եւ այդ կերպ ասում, թէ երկուսի բնութիւնը մէկ է, ուրեմն եւ՝ Բանը մարմնի հետ չարչարելի ու մահկանացու:

Նոյն կերպ մի բնութիւն է ասում Ապօղինարը, որ ուրացաւ հոգին ու միտքը, եւ ասաց, թէ միայն մարմին է առել եւ [որ] հոգու փոխարէն [Քրիստոսի մէջ] Բանն է բնակւում:

Մի բնութիւն ասաց եւ Եւտիքէսը՝ շփոթելով ու խառնելով բնութիւնների յատկութիւնների տարբերութիւնները:

Մի բնութիւն ասաց նաեւ միւս Եւտիքէսը. ով ասաց, թէ ոչինչ չի առել Կոյսի մարմնից, այլ իբրեւ խողովակով անցաւ՝ իբրեւ կաղապարի միջով՝ կերպաւորուելով ըստ նրա ձեւի:

Դարձեալ մի բնութիւն են ասում նրանք, ովքեր ճշմարիտ մարդեղութիւնը համբաւում են առաչօք ու նմանութեամբ:

Մի բնութիւն են ասում նաեւ նրանք, ովքեր խոստովանում են մարմինը

երկնքից բերուած եւ կամ՝ Բանը մարմնում թանձրացած, ինչպէս սառած ջուրը:

Դարձեալ մի բնութիւն են ընդունում Մարկեղոսն ու Փոտինոսը[140], ովքեր ասում են, թէ՝ Բանը Կոյսից սկիզբ առաւ եւ ոչ թէ յաւիտենականութիւնից ծնուած Հօրից: Սրանք նաեւ մարմնացեալ Բանն անանձ եւ անգոյ են ասում, ինչպէս մեր խօսքը:

Մի բնութիւն են ասում նաեւ նրանք, ովքեր Քրիստոսին սոսկ մարդ են խոստովանում եւ ոչ թէ մարդացեալ Աստուած:

Ահա սրանք են այն չար աղանդաւորները, ովքեր հռչակում են Բանի եւ մարմնի մի բնութիւնը, եւ այսպէս խորհողներին նզովում է սուրբ եկեղեցին:

Իսկ նրանք, ովքեր միաւորութիւնից յետոյ երկու բնութիւն են ընդունում՝ բաժանւում են երկու խմբի: Ոմանք նմանւում են Նեստորին[141], Պօղոս Սամոսատցուն եւ Դիոթորոսին[142]: Սրանք Քրիստոսին բաժանում են երկու անձի, երկու բնութեան, երկու կամքի, երկու ներգործութեան եւ պարզապէս երկու որդի, երկու Քրիստոս են ասում՝ մէկը Տէր, միւսը ծառայ, մէկը բնութեամբ Աստծոյ Որդի, միւսը շնորհով եւ այլն:

Իսկ ոմանք էլ, ինչպէս քաղկեդոնականները մի անձ են հռչակում՝ մի Քրիստոսին եւ երկու բնութեան են բաժանում, եւ երկու կամք՝ երկու ներգործութիւն ընդունում, ինչպէս անիծեալ Լեւոնը եւ Փլաբիանոսը[143] ու նրանց ընկերները: Եւ սրանք չեն խոստովանում բնութեան եւ էութեան միաւորութիւնը, այլ՝ միայն անձով: Իսկ անձն առանց բնութեան սոսկ անուն է, ինչպէս «Որդի», կամ՝ «Քրիստոս», կամ՝ «Յիսուս»:

Արդ, սրանք անունը մէկ են ասում, իսկ յանուն միաւորութեան՝ երկու էութիւն, այսինքն՝ Աստուած եւ մարդ, որոնք մի անձ են. մի Որդի, մի Քրիստոս եւ այլն: Իբրեւ թէ Բանը եւ մարդը էութեամբ ու բնութեամբ բաժանուած են, իսկ որդիութեամբ՝ միացած, որովհետեւ եւ Բանն է Որդի կոչւում, եւ մարդն է Որդի կոչւում: Եւ Բանը Քրիստոս է կոչւում, եւ Յիսուս, եւ Տէր, եւ Աստուած. նոյն կերպ եւ մարդն է կոչւում Քրիստոս, եւ Յիսուս, եւ Տէր, եւ Աստուած: Այսպէս, սրանք կոչումով եւ անունով միաւորւում են, իսկ էութեամբ եւ բնութեամբ բաժանւում ու առանձնանում: Ապա ուրեմն որդիութեան եւ անուան միաւորութիւնը խոստովանելով՝ պարզամիտներին պատրանքի [մէջ են գցում, մինչդեռ] ուրանում են ճշմարիտ միութիւնը եւ փախչում [դրանից]:

Ահա սրանք էլ նզովուել են Սուրբ Հոգուց՝ Եփեսոսի[144] եւ այլ ժողովներում, նզովուած են նաեւ սուրբ եկեղեցուց:

Իսկ երրորդ դասը, որ երկուսից եղած մի բնութիւն է ասում, որ ոչ աստուածային է, ոչ մարդկային, սրանք էլ կամ շփոթելով են խոստովանում, ինչպէս Եւտիքէսը եւ այլք, կամ էլ ուրանում են մի բնութիւնը եւ կամ՝ համարում առերեւոյթ, որոնց նզովում է Աստծոյ սուրբ եկեղեցին:

Իսկ մենք՝ ուղղափառների դասը, գիտենք Բանի էութիւնը, որ նախքան

մարդեղութիւնը հեռու էր նրանից այնքան, որքան Աստուած եւ արարածները, անեղն ու եղականը, ժամանակաւորն ու յաւիտենականը:

Իսկ երբ կամեցաւ Արարիչը մարդ լինել՝ Բանն-Աստուած իր անձի ու էութեան կատարելութեամբ եւ ոչ մասամբ, այլ ամբողջութեամբ՝ անճառելիօրէն միացաւ մարմնին՝ ոչ թէ մարդուց ինչ-որ մասեր առնելով, այլ իր անձի մէջ ժողովելով մարդկային անտրոհելի բնութիւնը՝ բանական հոգին, միտքը, մեր մարմինը, որոնք միաւորեց իր Աստուածութեան մէջ՝ անշփոթ ու անանջատ միութեամբ:

Եւ երբեք ոչ խօսքով, ոչ իմացմամբ, ոչ գործով երկատումներ չունեցաւ՝ ո՛չ դէմքի, ո՛չ բնութեան, ո՛չ կամքի, ո՛չ էլ գործի, որովհետեւ միաւորեալը չի բաժանւում, քանզի իր միութեամբ նա վերացրեց երկակիութիւնը:

Եւ այս միաւորութիւնը մենք խոստովանում ենք իբրեւ մի անձ, մի դէմք, մի կերպ, մի բնութիւն, մի կամք, մի ներգործութիւն:

Եւ չնայած մեզ նման ուրիշներն էլ ասացին մի անձ, սակայն՝ թիւրելով: Մենք չենք խաբւում, ոչ էլ յօժարում ենք նրանց:

Եւ թէպէտ ոմանք մեզ նման մի բնութիւն են ասում, սակայն շփոթում են. մենք չենք մոլորւում նրանց նոյն կերպ խօսքերից, այլ հետեւում ենք սուրբ հայրերին, ովքեր առանց թիւրակարծութիւնների ու խոտորուելու՝ անշարժ են պահում Քրիստոսի միաւորութիւնը: Ինչպէս սուրբ Աթանասն է գրում Արիոսի դէմ հետեւեալ կերպ. «Աստծոյ Որդուն խոստովանում ենք Հօրից ծնուած յաւիտենութիւնից առաջ, եւ յետոյ ժամանակի մէջ ծնուած Մօրից: Նրա՝ նոյն Աստուած եւ Աստծոյ Որդի լինելն՝ ըստ Հոգու, իսկ մարդու Որդի՝ ըստ մարմնի: Եւ չենք [ասում] երկու բնութեամբ մի Որդի՝ մէկը երկրպագելի, միւսը ոչ երկրպագելի, այլ [ասում ենք] մէկն է Աստծոյ մարմնացեալ Բանի բնութիւնը»[145]:

Նոյնն է ասում եւ սուրբ Կիւրեղը, որ գրում է ի [պատասխան] Սուկեսոսի թղթի. «Քրիստոսին ասում ենք մի Աստուած՝ մարդացեալ մի բնութեամբ: Եւ ինչպէս ասացին սուրբ հայրերը՝ մէկ է Աստծոյ մարմնացեալ Բանի բնութիւնը»[146]:

Այլեւ մեծն Դիոնէսիոսը բազմաթիւ տեղերում խոստովանում է մարդացած Աստծոյ Բանի միաւորեալ եւ մի բնութիւն [լինելը]: Որ նախ, «Եկեղեցական քահանայապետութեան» երրորդ գլխում ասում է. «Կատարելութեամբ ու անշփոթ մարդանալով՝ մարդասիրաբար ըստ մեր բնութեան տարրացաւ ու մեր տրոհուածութեան մէջ առաջ եկաւ անայլայլաբար՝ ըստ մի բնութեան»[147]:

Դարձեալ նոյն տեղում ասում է՝ «Քանզի միութիւնը եւ պարզութիւնը Յիսուսի՝ աստուածապետական Բանի, ըստ մեզ մարդանալը, յարադրութիւնը ցոյց տալու համար՝ մեր նուաստութիւնը [նա] միաւորեց իր ծայրագոյն աստուածութեանը»[148]:

Նաեւ Սուրբ Յռեթէոսը «Աստուածային անունների» երկրորդ գլխում ասում է՝ «Որ եւ բնութեամբ չափաւորուեց մարդասիրութեան պատճառով եւ ճշմարիտ էութիւն ստացաւ եւ այր դարձաւ, որ գերագոյն Աստուած էր»: Եւ դարձեալ ասում է՝ «Բոլորի պատճառն ու լիալրողը Յիսուսի աստուածութիւնն է՝ ոչ թէ մասամբ կամ ամբողջապէս եւ ամբողջապէս ու մասամբ, [այլ] ինչպէս բովանդակ մասը եւ ամենայնը իր մէջ ընդունելով»[149]:

Դարձեալ ասում է Սուրբ Դիոնէսիոսը Չորրորդ թղթում. «Յիսուսը, որ բոլորի անդրանիկն է, էապէս շարակարգուած է բոլոր մարդկանց, ինչպէս եւ ըստ բոլորի ճշմարիտ մարդ է դարձել»[150]: Եւ դարձեալ ասում է. «Մենք Յիսուսին մարդկութեամբ չէ, որ զատորոշում ենք»[151]:

Եւ դարձեալ ասում է. «Էութեամբ վերնագոյնը, որ մինչ այս ինքն իրեն էր, ճշմարիտ գոյութեան եկաւ»[152]:

Եւ դարձեալ ասում է. «Էականացաւ գերագոյն քան էութիւնը եւ գերագոյն քան մարդը ներգործում է մարդու վրայ»[153]:

Եւ դարձեալ ասում է. «Ոչ մարդ էր Քրիստոս եւ ոչ որպէս ոչ մարդ, այլ որպէս մարդկանցից եղած, եւ վերնագոյն, քան մարդ եւ գերագոյն մարդ՝ ճշմարտապէս դարձած մարդ»[154]:

Եւ դարձեալ ասում է՝ «Ոչ ըստ Աստծոյ աստուածայինը գործեց եւ ոչ ըստ մարդու՝ մարդկայինը, այլ մարդացած Աստուած նորովի՝ իբրեւ Այր-Աստուած ներգործեց՝ կենցաղավարելով մեր մէջ»[155]:

Դարձեալ Սուրբ Յռեթէոսը դարձեալ ասում է՝ «Ուստի մարդասիրութեան պատճառով եկաւ, բնութեամբ ու ճշմարտապէս մարդ դարձաւ»[156]:

Եւ դարձեալ՝ «Քանի որ աստուածութիւնով միաւորուելը բաժանումներից վեր է, ոչինչ չնուազեց միաւորումից»[157]:

Արդ, մենք ոչ մի մտացածին բանով չհամարձակուեցինք աւելացնել կամ պակասեցնել [որեւէ բան], այլ հաստատեցինք սրբերի կամքը դաւանութեան վերաբերեալ, որոնք ուսուցանեցին մեզ աստուածապաշտութեան խորհուրդը, ինչպէս ցոյց տրուեց:

ԵՐԿԱԲՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ ՄԵՋ: ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ՄԻ ԱՆՁ ԵՆ ԱՍՈՒՄ ԵՒ ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄ ԵՆ ՔՐԻՍՏՈՍԻՆ
Պրակ ԺԵ

Հարց. Ինչո՞ւ չէք ասում Քրիստոսի երկու բնութիւն:

Ուղղափառների պատասխանը. Որպէսզի Քրիստոս երկու անձ չհամարուի, որովհետեւ եթէ երկու բնութեան բաժանենք, ստիպուած պէտք է եւ երկու անձի բաժանենք:

Հակառակորդն ասում է. Ինչպէ՞ս է մարդը երկու բնութիւն եւ մի անձ:

Ուղղափառն ասում է. Մարդը երկու բնութիւն չէ, այլ մէկն է բնութիւնը եւ մէկն է անձը:

Հակառակորդ. Երկուսից ո՞րն ես ուրանում եւ մէկը համարում բնութիւնը:

Ուղղափառ. Ոչ ուրանալով, ոչ էլ կորցնելով, այլ [ասում ենք] միաւորութեամբ մի բնութիւն:

Հակառակորդ. Բնութեա՞մբ ես ասում միաւորեալ, թէ՞ անձով:

Ուղղափառ. Բնութեամբ միաւորեալ եւ մի կատարեալ անձ:

Հակառակորդ. Ինչպէ՞ս ես ասում:

Ուղղափառ. Քրիստոսի միաւորութիւնն ունի սկիզբ, մէջտեղ եւ աւարտ: Սկիզբը երկու բնութիւնից է, մէջտեղը՝ մի բնութեամբ միաւորուելը, եզրը եւ աւարտը՝ մի անձ:

Հակառակորդ. Այդ դէպքում ինչո՞ւ չենք ասում մի անձ եւ երկու բնութիւն:

Ուղղափառ. Որովհետեւ միաւորուածը չի երկատւում, իսկ երկու բնութիւն ասել կամ ընդունելը Քրիստոսի երկատումն ու բաժանումն է:

Հակառակորդ. Բանի անձը մարդկային ա՞նձը վերցրեց, թէ՞ բնութիւնը:

Ուղղափառ. Բանն-Աստուած իր կատարելութեամբ վերցրեց մարդկային բնութիւնը, հոգին, մարմինը, միտքը, եւ միաւորելով [դրանք] իր աստուածութեան մէջ՝ եղաւ մի կատարեալ անձ ու դէմք:

Հակառակորդ. Այդ դէպքում ինչո՞ւ չենք ասում անձով միացած:

Ուղղափառ. Որովհետեւ անձն առանց բնութեան միայն անուանում է եւ ոչ էութիւն: Եւ դարձեալ անձի միաւորութեանը հետեւում է նաեւ բաժանումը, [մինչդեռ] բնութիւնն անբաժան է միանում: Երրորդ, եթէ միայն անձամբ միանայ ու ոչ բնութեամբ, ուրեմն Քրիստոս անձամբ ու անուամբ է միայն Աստծոյ Որդի եւ ոչ բնութեամբ: Եւ չորրորդ, իւրաքանչիւր իր՝ իր բնութեամբ է միաւորւում եւ ոչ բնութիւնից դուրս, ինչպէս միանում է հուրը երկաթին, հոգին՝ մարմնին:

Հակառակորդ. Եթէ միաւորուեցին բնութիւններով, ուրեմն վերացան [այդ] բնութիւնների տարբերութիւնները:

Ուղղափառ. Թէեւ բնութեամբ միաւորուեցին, սակայն տարբերութիւնները չվերացան, որովհետեւ տարբերութիւնների մնալը չի վերացնում միաւորութիւնը, ինչպէս հոգու եւ մարմնի, ոսկու եւ հրի: Եւ իմացի՛ր, որ երկու տարբերութիւն կայ. բաղկացական եւ բաժանական: Բաղկացական տարբերութիւնն այն է, որից տեսակներ են գոյանում, ինչպէս օրինակ՝ մարդու բնութեան մէջ բանական եւ մահկանացու լինելը: Իսկ բաժանական է, օրինակ, բանականի եւ անբանի բաժանուելը, որով տարբերւում են մարդն ու ձին: Արդ, դուք, որ երկու բնութիւն էք ասում Քրիստոսի՝ բաժանական տարբերութիւնների մասին էք խօսում, իսկ մենք ընդունում ենք մի միաւորութիւն՝ բաղկացական [տարբերութիւններով հանդերձ]:

Հակառակորդ. Ինչպէ՞ս էք ասում Աստծոյ եւ մարդու մի կամք եւ մի գործ:

Ուղղափառ. Ինչպէս որ միաւորեալ ենք ասում մարդու բնութիւնն ու Աստծոյ էութիւնը, այդպէս էլ միաւորեալ է եւ մէկն է մարդացած Բանի կամքը: Իսկ գործը հետեւում է կամքին: Ապա ուրեմն մէկն է մի Քրիստոսի՝ մի կամքից առաջ եկած ու գործի դրուած ներգործութիւնը:

Ինչպէս ասում է սուրբ Դիոնէսիոսը. «Ոչ ըստ Աստծոյ աստուածայինը գործեց եւ ոչ ըստ մարդու՝ մարդկայինը, այլ մարդացած Աստուած նորովի՝ իբրեւ Այր-Աստուած ներգործեց՝ կենցաղավարելով մեր մէջ»[158]: Նոյն կերպ եւ Աստուածաբանն ասում է Կլոդիանոսին ուղղուած Երկրորդ ճառում. «Ո՞ւր են այն ուրացողները, ովքեր Քրիստոսին յայտնապէս բաժանում են երկու կամքի ու երկու ներգործութեան՝ քաղցն ու ծարաւը մարդուն են վերագրում, իսկ բարձրագոյն բաները՝ աստուածութեանը եւ այլն»[159]:

Եւ դարձեալ հարցրեցիր մի ներգործութեան ինչպիսին լինելը: Չենք ասում, թէ իբրեւ չկայ մի ներգործութիւն՝ բարձրագոյն եւ նուաստագոյն, այլ մէկ ենք ասում ներգործութիւնը՝ ներգործութեան մէկ լինելու պատճառով, ինչպէս մի ձեռքը ե՛ւ կտրում է, ե՛ւ կարում, ե՛ւ գրում, ե՛ւ ջնջում:

Իմացի՛ր եւ այս. Քրիստոսի մի բնութիւն ենք ասում՝ աւարտը [նկատի ունենալով] եւ ոչ սկիզբը, եւ մի գործ ենք ասում՝ սկիզբը [նկատի ունենալով] եւ ոչ գործի աւարտը: Իսկ կամքը մէկ իմացի՛ր՝ կամենալու եւ միաւորուելու պատճառով, որ սկիզբն ու աւարտն է: Այսպէս ենք ասում ենք, թէ՝ մարմնացած Բանը մի բնութիւն, մի կամք եւ մի ներգործութիւն է:

Իսկ եթէ մէկն ընդդիմանայ՝ ասելով, թէ ինչպէս հրացեալ սուրը ե՛ւ կտրում է, ե՛ւ այրում, այդպէս էլ երկուսն են Քրիստոսի ներգործութիւնները, պատասխանենք. ինչպէս միեւնոյն հրացեալ նիւթը թէ՛ կտրում, թէ՛ այրում, այդպէս էլ մարդացեալ Բանի նոյն միաւորութիւնն ունի բարձրագոյն եւ նուաստագոյն [ներգործութիւններ]:

Նոյնպէս եւ Քրիստոսի մէջ անբաժանելի ենք ասում տկարութիւններն ու զօրութիւնները, եւ կիրքը, եւ զօրութիւնը, ինչպէս որ՝ կիրք (տկարութիւն) է քաղցելը, իսկ հազարներին կերակրելը՝ ներգործութիւն (զօրութիւն): Կիրք (տկարութիւն) է ծարաւը եւ [ծարաւ] յագեցնելը՝ ներգործութիւն (զօրութիւն), որ ասում էր՝ «Եթէ մէկը ծարաւի, թող գայ ինձ մօտ» (Յովհ. է 37): Կիրք (տկարութիւն) է ճանապարհին յոգնելը եւ ներգործութիւն (զօրութիւն) յոգնածներին հանգիստ տալը: Կիրք (տկարութիւն) է խաչին բեւեռուելը, ներգործութիւն (զօրութիւն)՝ արեգակը խաւարեցնելը: Կիրք է հոգին աւանդելը, զօրութիւն՝ երկիրը շարժելը: Կիրք է թաղուելը, զօրութիւն՝ դժոխքն աւերելը:

Իսկ զօրութեան ու կրքի մէկ լինելը նման է քնարի եւ քնար նուագողի, որ մի ներգործութիւն են կատարում եւ ոչ թէ երկու, եւ ինչպէս գրողն ու գրիչը մի գործ են կատարում, եւ ոչ երկու, եւ ինչպէս ձայնն ու խօսքն են մի գործ կատարում եւ ոչ երկու, եւ ինչպէս հոգին ու մարմինն են մի գործ կատարում եւ ոչ երկու: Եւ ինչպէս մարդը մէկն է հոգով ու մարմնով, այդպէս էլ մէկն է մարդու գործը: Նոյն կերպ եւ Բանն-Աստուած մի գործ է կատարում իր մարմնով, քանզի բնութիւնների միաւորութիւնն առանց փոփոխուելու եւ առանց տրոհուելու է:

Այսքանն այս մասին:

ՈՒՂՂԱՓԱՌՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ ԵՐԿԱԲՆԱԿՆԵՐԻՆ
Պրակ ԺԶ

Հարցնեմ եւ ես ձեզ՝ երկաբնակներիդ դասին, որ միաւորում էք անձով եւ բաժանում երկու բնութեան, մէ՞կն է Քրիստոսը, թէ՞ երկուսը:

Հակառակորդն ասում է. Ըստ անձի մէկն է, ըստ բնութեան՝ երկուսը:

Ուղղափառն ասում է. Անձն այն, որ մէկն ես ասում ես, ի՞ր է, թէ՞ ոչ իր: Եթէ իր է, ապա դու ստիպուած ես կամ ասել՝ Քրիստոս մի իր է՝ երկու բնութեամբ, կամ՝ մասամբ մէկ եւ մասամբ երկու, կամ ամբողջութեամբ մէկ եւ ամբողջութեամբ՝ երկու: Իսկ եթէ իր չէ, ապա միայն անուամբ է մէկը եւ ոչ գործով, ինչպէս համանունը, որ անունը [նոյնն] է ասում, սակայն բնութիւնները այլեւայլ են: Պատասխան տո՛ւր:

Ուղղափառի հարցը. Անձն այն էութի՞ւն եւ գոյացութի՞ւն է, թէ՞ ոչ:

Հակառակորդի պատասխանը. Էութիւն եւ գոյացութիւն է, ինչպէ՞ս ոչ:

Ուղղափառ. Եթէ էութիւն եւ գոյացութիւն է, ինչպէս սահմանումն է վկայում՝ «Անձը բանական բնութեան անբաժանելի գոյութիւն է», արդ, եթէ էութիւն է անձը եւ մէկ է ասւում նրա մարդկային բնութիւնը, ուրեմն մէկ է եւ այդ անձի էութիւնը. եւ եթէ մէկ է էութեան հետ եւ իբրեւ ճշմարիտ միութիւն, մէկ ասա եւ բնութիւնը, որովհետեւ էութիւնն ու բնութիւնը մէկ են:

Ուղղափառի հարցը. Անձն այն բաժանուո՞ղ է, թէ՞ միաւորուող: Եթէ ասես միաւորուող, ուրեմն դու անձը բնութիւն համարեցիր, որովհետեւ բնութիւնը միաւորող է՝ ըստ Պորփիւրի, եւ ըստ տեսակի միաւորւում են բազմաթիւ մարդիկ. եւ բնութեամբ մի են Հայրը, Հոգին ու Որդին: Հետեւաբար եւ, Երրորդութիւնն էլ միաւորեալ է, ըստ քեզ: Իսկ ինչպէ՞ս է Երրորդութիւնը տարբերակւում, եթէ ոչ՝ անձով:

Իսկ եթէ անձը բաժանուող է, ինչպէս յայտնի է սահմանումից, անհաղորդակից գոյութիւն է, ուրեմն եւ բաժանուած է մարդկային բնութիւնից եւ միաւորուած չէ օտար տարբերուող բնութեանը: [Այսպէս] եղար նեստորական՝ ասելով, թէ՝ Քրիստոսին երկու անձ եւ երկու բնութիւն է յատուկ:

Ուղղափառ. Անձն անհատ է եւ մասնաւոր, ինչպէս Պետրոսը, իսկ անհատը չի տրոհւում ու չի բաժանւում, ինչպէս ամբողջը՝ մասերի, որովհետեւ եթէ բաժանես, ինչպէս հոգին ու մարմինը, կամ ոտքը, ձեռքը եւ գլուխը՝ ամբողջութիւնը չի պահպանուի:

Այսպէս էլ Քրիստոս մի անձ է եւ մի անհատ, որովհետեւ եթէ նրան բաժանես Աստծու եւ մարդու, չի մնա նոյն ամբողջութիւնը, այլ՝ մի մասն ու մասը, կամ՝ ոմն եւ ոմն:

Ուղղափառ. Անձն ունի եօթ անբաժանելի [յատկանիշներ], ինչպէս ասում է Պորփիւրը՝ «Անհատը բաղկացած է յատկութիւններից, որոնք ամբողջութեամբ ուրիշի մօտ չկան»[160].

դրանք հետեւեալն են՝ նիւթը, ձեւը, այսինքն՝ կերպը, բնակավայրը, ազգականները, ժամանակը, տեղը եւ յատուկ անունը, որոնց առկայութեամբ են տարբերւում միմեանցից:

Արդ, ցոյց տանք, որ երկաբնակները սրանցից վեցը տրոհում են:

Նախ՝ **նիւթը**. մի բնութիւնն ընդունում են նիւթական, ինչպէս մարդունը, միւս բնութիւնը՝ աննիւթ, ինչպէս Աստծունը:

Ձեւը՝ մէկը քանակով ու որակով տարբերակուած, ինչպէս մարդունը, միւսը՝ կերպից ու ձեւից վեր, ինչպէս՝ Աստծունը:

Նոյն կերպ եւ **բնակավայրը**, մէկինը՝ Երկինքը, միւսինը՝ Երկիրը:

Եւ **ազգականները**. մէկինը՝ Հայրն ու Հոգին, միւսինը՝ Յովսէփն ու Մարիամը:

Եւ **ժամանակը**. մէկինը՝ յաւիտենական, միւսինը՝ ժամանակաւոր:

Նոյն կերպ եւ **տեղը**՝ պարունակող մարմինը. մէկինը՝ չափելի, միւսինը՝ անչափելի:

Այս էլ վեցերորդը:

Երբեմն էլ [անգամ] բաժանում են յատուկ անունը, այսինքն՝ Աստուած եւ մարդ. այսինքն մարդկային բնութեամբ մարդ է եւ աստուածային բնութեամբ՝ Աստուած, որ Նեստորի կարծիքն է: Երբեմն էլ միաւորում են անունը՝ մի Քրիստոս, մի Տէր, մի Որդի եւ մի անձ ասելով, ինչպէս Քաղկեդոնի երկաբնակների ժողովին է թւում[161]: Արդ, յատուկ անուամբ խոստովանում են միութիւնը եւ ոչ իսկական բնութեամբ:

Այս է նրանց մի անձ եւ երկու բնութիւն ասելը:

Ուղղափառ. Ութն են բաժանուելու եղանակներն ըստ իմաստասէրի, այսինքն՝ ինչպէս՝ սեռը տեսակների, տեսակը՝ անհատների, ամբողջը՝ մասերի, որը երկակի է՝ նման մասերի եւ ոչ նման մասերի. համանունը՝ զանազան նշանակութիւններով, էութիւնից՝ պատահականը, կամ՝ պատահականից էութիւնը, եւ կամ՝ պատահականից պատահականը. կամ էլ՝ մէկից մէկը:

Արդ, տեսնենք, թէ ըստ ո՞ր եղանակի էք բաժանում մի անձը երկու բնութեան: Եւ պէտք է գիտենալ, որ [սա] ինչպէս սեռը տեսակների չի կարող բաժանուել, նախ որովհետեւ սեռից տեսակների բաժանուածների մէջ չկայ առաջին ու վերջին, ինչպէս որ կենդանիները բաժանւում են բանականի եւ անբանի եւ չի կարելի ասել, թէ բանականն առաջ է, քան անբանը, այլ հաւասար ու համայնական են: Իսկ աստուածային բնութիւնն առաջ է, քան մարդկայինը, որպէս՝ ստեղծողի եւ ստեղծուածի:

Երկրորդ, հակակայութեամբ բաժանուած տեսակները մէկը միւսի կարիքը չունեն կազմուելիս, իսկ Քրիստոսի մարդեղութիւնը չի կարող կայանալ առանց աստուածային էութեան:

Երրորդ, որովհետեւ հակակայութեամբ բաժանուած տեսակները ոչ մի տեղ մէկը միւսի մէջ չեն տեսնւում, նաեւ՝ անբանը բանականի մէջ: Մինչդեռ մարդկային բնութիւնը տեսնւում է

աստուածութեան մէջ եւ աստուածայինը՝ մարդկութեան մէջ՝ թէ՛ բնութեան, եւ թէ՛ անձի միաւորութեամբ, որովհետեւ Քրիստոս ոչ թէ սոսկ մարդ է եւ ոչ՝ սոսկ Աստուած, այլ մարդացած Աստուած:

Այլեւ անհատի մէջ որպէս տեսակ չէ: Նախ, որովհետեւ անհատներն անթիւ ու անհամար են, իսկ այստեղ միայն երկու բնութիւն է, իսկ ըստ ոմանց էլ՝ երեք:

Երկրորդ, որովհետեւ անհատներն առանձնացուած են թուով, իսկ այստեղ երկու բնութիւն թուով մի անձի մէջ են, ինչպէս հռչակում են ոմանք: Երրորդ, որովհետեւ առանձին անհատներ ունեն տեսակին [յատուկ] նոյն բնութիւնը: Մինչդեռ երկաբնակներն ուրանում են երկու բնութեան միաւորութիւնը: Ապա ուրեմն, մէկ Քրիստոս իբրեւ տեսակ չի բաժանւում անհատների մէջ: Այլեւ ոչ իբրեւ ամբողջ մասերի մէջ՝ ոչ մասերի նմանութեամբ, որովհետեւ սրանք ամբողջին եւ միմեանց համանունաբար են ասւում, ինչպէս փայտը բազմաթիւ փայտերին, իսկ աստուածութիւնը եւ մարդկութիւնը ոչ միմեանց, ոչ էլ ամբողջին են նման չեն ասւում՝ ըստ ոմանց: Եւ ոչ էլ մասերի աննմանութեամբ, ինչպէս, [ասենք,] Պետրոսը՝ ոտքը, ձեռքը, գլուխը, որոնք ոչ միմեանց եւ ոչ ամբողջին համանուն չեն ասւում:

Իսկ այստեղ միմեանց եւ բոլորին նման է կոչւում Քրիստոս, ըստ որում ասւում է՝ Քրիստոս, որ Բանն է, իջաւ երկնքից. Քրիստոս դրուեց գերեզման, որ միայն աստուածային մարմինն էր. Քրիստոս իջաւ դժոխք, որ միայն աստուածային Հոգին էր:

Երկրորդ, որովհետեւ մասամբ չէ, ինչպէս Ապօղինարը կամ ուրիշներն են [ասում], այլ երկու կատարեալ բնութիւնների միաւորութիւնն է Փրկիչը: Ապա ուրեմն այն չի բաժանւում, ինչպէս ամբողջը՝ մասերի:

Եւ համանուն էլ չէ: Նախ, որովհետեւ համանունը միայն անուամբ է [նոյնը] եւ չի հաղորդւում առարկային: Իսկ մեր Տէրը անուամբ եւ բնութեամբ Աստուած է, ինչպէս խոստովանում է ուղղափառների դասը:

Երկրորդ, համանուան մէջ չկայ առաջին ու վերջին, իսկ այստեղ կայ, ինչպէս ցոյց տրուեց:

Այլեւ պատահական չէ էութեան մէջ, որովհետեւ Քրիստոսի մարդեղութիւնը գոյացութեան սեռից է եւ ոչ թէ պատահականութեան սեռից:

Այլեւ պատահական էլ չէ էութիւնից, որովհետեւ Բանն-Աստուած անանձ չէ եւ ինչ-որ ազդեցութիւն չէ, ինչպէս մեր խօսքը, ըստ ոմանց, ինչպէս բարբաջում են Մարկեղոսն ու Փոտինոսը, այլ՝ անձնաւոր գոյացութիւն՝ դրուած իր մարդեղութեան ենթակայութեան տակ:

Եւ պատահականի մէջ եղած պատահականութիւն էլ չէ, եւ սա յայտնի է քո ասածներից էլ:

Այլ է ինչպէս մէկից մէկը, այսինքն՝ մի Բանից՝ մի մարդկութիւն կամ աստուածութիւն, ինչպէս նրանք են կամենում: Արդ, նոյնն է, եթէ բնութիւնից բնութիւն բաժանեն եւ անձից՝ անձը,

ինչպէս Նեստորը, եւ եթէ անձից բնութիւն բաժանեն [կլինի] ըստ Քաղկեդոնի: Ինչ կերպ էլ որ լինի, թիւը ստացւում է մէկից՝ մէկ, եւ նոյնն է անձը որոշեալ թուով: Ահա, տես պարզօրէն. նրանք, ովքեր բաժանում են Քրիստոսին երկու բնութեան, չեն պահպանում միաւորութեան անբաժանելիութիւնը: Իսկ բնութեան բաժանումով Քրիստոսի անձերն էլ են բաժանւում, թէեւ փաստարկելով՝ անձը մէկն են համարում: Որովհետեւ ասում են, թէ Քրիստոսի մէջ չառնուածը մէկն է եւ չառնուածը, այսինքն՝ անձը, որ չի առնուել, մէկ են ասում, իսկ առնուած բնութիւնը առանձնացուած են դիտում ու երկատում:

Այս է նրանց ասելը՝ մի անձ եւ երկու բնութիւն:

ՆՐԱ՝ ԴԱՐՁԵԱԼ ՆՈՅՆԻ ՄԱՍԻՆ

Ինչպէս ասում է իմաստասէրը, ասածներիդ մէջ երեքն են բաժանման եղանակները, այսինքն՝ ինչպէս սեռը տեսակների, ամբողջը՝ մասերի, ինչպէս համանուն բառը:

Այժմ բեր, պարզ տեսութեամբ յարմարեցնենք այս երեք եղանակները Փրկչի միաւորութեանը, ինչը ախորժելի չէ այլոց:

Նախ, ինչպէս սեռը տեսակի մէջ նշմարւում է ամբողջապէս եւ ոչ մասամբ, այսինքն՝ այն, ինչ գոյացութիւն է, ամբողջական սեռ է մարմնաւորների ու անմարմինների մէջ, եւ կենդանին՝ բանականների եւ ամբողջական անբանների մէջ:

Նոյն կերպ եւ Բանն-Աստուած, ինչպէս իր աստուածութեան մէջ է ամբողջական, նոյնպէս եւ ամբողջական է իր միաւորեալ մարդեղութեամբ:

Կամ՝ ինչպէս ամբողջական է հոգեպէս, այդպէս էլ միաւորեալ մարմնով է կատարեալ, եւ ամբողջական է մարմնի իւրաքանչիւր մասը: Երկրորդ, ինչպէս սեռն է անբաժանելի մնում տեսակների մէջ, նոյնպէս եւ Բանն-Աստուած անբաժանելի է իր միաւորեալ մարդեղութեամբ:

Սա որպէս սեռի եւ տեսակի [յարաբերութիւն]:

Իսկ ինչպէս մասերի մէջ ամբողջը, մի մասի պակասելով էլ, անկատար է դառնում, նոյնպէս եւ Բանն-Աստուած, հոգին, մարմինը, որոնք միաւորուած են Քրիստոսի մէջ. եթէ պակասեն սրանցից մէկն ու մէկը, Քրիստոս չի մնա [որպէս այդպիսին]:

Իսկ ինչպէս համանուն, անունը հաւասարապէս նոյնական է նրանց, որոնց անուանում ենք, ինչպէս երկնային, երկրային, ջրային Խոյ եւ առաւել կամ պակաս չեն կոչւում, այլ՝ հաւասար, նոյնպէս եւ **Քրիստոս** անունը, եւ **Տէրը**, եւ **Աստուած** եւ այլն, որոնք զոյգ եւ հաւասար են թէ՛ իր մարդկութեանը, թէ՛ աստուածութեանը՝ ոչ առաւել կամ նուազ, կամ տկար ու հզօր, կամ անգէտ ու ամենագէտ եւ այլ նման բաներ: Ապա ուրեմն կատարելապէս զոյգ եւ հաւասար է Փրկչի միաւորութիւնը:

Ուղղափառի հարցը

Իսկ այս երեքից ո՞րն էք համարում մի Քրիստոս. աստուածային անձն ինքնի՞ն, թէ՞ աստուածային բնութիւնը:

Եթէ մարդկայինն էք ասում Քրիստոս, ահա նրան բնորոշեցիք ինչպէս Նեստորը եւ սոսկ մարդ էք ասում Քրիստոսին:

Եթէ աստուածային բնութիւնն էք ասում, ուրեմն Երրորդութիւնը մարմնացեալ համարեցիք, որովհետեւ երեք անձերի բնութիւններն էլ հաւասար են:

Իսկ եթէ աստուածային անձն էք ասում Քրիստոս, որ օծուածն է, ուրեմն օծեալին եւ միայն խաչի վրայ մեռածին համարեցիք Քրիստոս, ինչպէս որ երգում էք ձեր «Երեքսրբեան»-ում՝ «Քրիստոս, որ խաչուեցիր, ողորմիր մեզ»: Նաեւ ձեր «Լիթանիայի» մէջ ասւում է՝ «Քրիստոս, անօթ աստուածութեան, ողորմիր»[162]:

Ահաւասիկ նոր ուսմունք ու երրորդ կտակ: Իսկ եթէ սրանցից՝ իբրեւ բացայայտ զատումից, փախչէք՝ զանազան պատճառաբանումներով, իբրեւ գառան մորթով էք ծածկում ձեր գայլութիւնը:

Իսկ եթէ աստուածային անձը եւ նրա բնութիւնը ասէք մի Քրիստոս, ուրեմն դեռ կանգնած էք վերն ասուած տարակուսանքի առջեւ, որովհետեւ աստուածային անձը եւ բնութիւնը չարչարուած ու մեռած էք համարում, որովհետեւ ըստ Գրքի՝ Քրիստոս խաչուեց ու մեռաւ:

Իսկ եթէ ասէք աստուածային անձն ու մարդկային բնութիւնը մի Քրիստոս, ահա յայտնապէս Քրիստոսին բաժանեցիք աստուածային բնութիւնից, որովհետեւ Աստծոյ անձն ու մարդու բնութիւնն էք ասում մի Քրիստոս եւ առանձնացնում էք աստուածային բնութիւնը:

Իսկ եթէ աստուածային ու մարդկային բնութիւններն առանց անձի ասէք մի Քրիստոս, ահա Եւտիքէսի նման շփոթեցիք երկու բնութիւնները՝ առանց անձը միաւորելու եւ ընկղմուեցիք նոյն բանի մէջ, որի համար զրպարտում էիք ուրիշներին:

Իսկ եթէ աստուածային անձը, աստուածային ու մարդկային բնութիւնները մի Քրիստոս ասէք, սա պէտք է լինի կամ միաւորութեամբ, կամ՝ բաժանելով: Եթէ միաւորութեամբ [լինի], ահա [դարձեալ] շփոթութիւն եղաւ, որովհետեւ անձն ու բնութիւնը մէկ ասացիք: Եւ եթէ բաժանմամբ՝ կլինի երկու կամ երեք Քրիստոս՝ ըստ անձի եւ բնութեան: Եւ կամ կլինի մի Քրիստոս՝ ըստ կոչման եւ երեք՝ ըստ էութեան:

Այսպէս եւ Նեստորը մէկ էր ասում Քրիստոսին, ոչ թէ ըստ էութեան միաւորութեան, այլ ըստ անուան համաձայնութեան, ինչպէս համանունը, որ մի անուն է տալիս, սակայն մի անուան տակ զանազան են բնութիւնները:

Ուղղափառի հարցը

Դարձեալ հարց Քրիստոսին երկաբնակ դաւանողներիդ:

Երկու բնութի՞ւնն էլ պաշտելի են, թէ՞ մէկը: Եթէ երկուսն էլ՝ պէտք է ասէք՝ փառք Հօրը եւ երկու բնութեամբ Որդուն եւ Սուրբ Հոգուն: Եւ կամ [պէտք է ասէք]՝ մկրտւում ենք յանուն Հօր, երկու

բնութեամբ Որդու եւ Սուրբ Հոգու եւ [մնացեալը] սրանց նման:

Իսկ եթէ [պաշտելի է] մէկը, հարցնում եմ ձեզ, որի՞ն էք պաշտում եւ որի՞ն անարգում: Եթէ պաշտում էք աստուածային բնութիւնը, պէտք է որ անարգէք մարդկայինը եւ հրէական խտրութեամբ մոլեգնել, ովքեր ասում էին՝ «Դու մարդ ես եւ քո անձը աստուածացնում ես» (Յովհ. Ժ 33): Եւ ուրանալ [նրանց նման] տնօրինութեան բոլոր խորհուրդներն, նաեւ՝ հեռանալ նրա փրկութիւնից:

Իսկ եթէ մարդկային բնութիւնն էք պաշտում, ուրեմն եղաք կռապաշտ՝ Երրորդութեան կարգը ներմուծելով նոր ու ստեղծուած ոմն Աստծու եւ զրկելով Բանը փառքից եւ [այն] տալով մարդու՝ դառնալով մարդապաշտ, մարդու մարմին ուտող եւ մկրտուող յանուն մարդու: Ուրեմն եւ՝ սուտ է մարդու փրկութիւնը, որ մարգարէն հաստատեց (Սղմ. ճԷ 13):

Ահա սա է համառօտ բացայայտումը [այն] գաղտնի ամբարշտութեան, որ Քրիստոսի համար երկու բնութիւն է սահմանում, թէեւ մեզ նման՝ անձով մէկն են կոչում եւ սակայն, բնութիւնը բնորոշելիս՝ տարանջատւում են մեզնից ու Աստծոյ եկեղեցիներից:

Պրակ ժէ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ սուրբ Կիւրեղն ամենուրէք ասում է. «Համանգամայն Աստուած եւ մարդ»[163]:

Պատասխան. «Համանգամայն», այսինքն՝ ամբողջութեամբ կամ զոյգ ու հաւասար, եւ կամ էլ՝ միանգամայն:

«Ամբողջութեամբ»-ը ընդդէմ է երկաբնակներին, որոնք ասում են՝ Քրիստոս մասամբ Աստուած է եւ մասամբ մարդ, այսինքն՝ աստուածութիւնից եւ մարդեղութիւնից ի մի բերուած Աստուած ու մարդ, ովքեր բաժանում են մասերի եւ ժողովում ամբողջը:

Սրանց դէմ սուրբ Կիւրեղն ասում է՝ «համանգամայն», այսինքն՝ ամբողջութեամբ Աստուած եւ ամբողջութեամբ մարդ: Իսկ զոյգն ու հաւասարը ընդդէմ է նրանց:

Դարձեալ՝ ինչպէս որ ասում են՝ Աստուած ու մարդն անհաւասար, այսինքն՝ հզօր ու տկար, անեղ ու եղական, բնութեամբ ու շնորհով: Իսկ այստեղ ասւում է՝ Աստուած ու մարդ հաւասար եւ զոյգ, ըստ Գրիգոր Աստուածաբանի՝ «Զոյգ Աստուած. ինչպէս առնողն է Աստուած, այդպէս էլ առնուածն է Աստուած»[164]:

«Միանգամայն»-ը ընդդէմ է նաեւ նրանց, ովքեր Աստծուն եւ մարդուն զատում են միմեանցից՝ թէ բնութեամբ եւ թէ՝ անձով: Իսկ [Կիւրեղն] ասում է՝ «միանգամայն», այսինքն՝ համանգամայն փոխարինում են մէկմէկու եւ հետեւում իրար: Ինչպէս ասելը՝ Աստուած մարդ է եւ մարդն Աստուած է, այսինքն՝ ամբողջական, եւ հաւասար, եւ անբաժան են Աստուած ու մարդ:

Նոյն կերպ եւ ասելը՝ մէկ եւ նոյնն է Աստուած ու մարդ: Մէկն ընդդէմ է երկուսին ու բազումին, իսկ նոյնը ընդդէմ է այլին: Նոյն կերպ նրանց դէմ է, ովքեր ասում են մի անձ, սակայն երկու

բնութեան են բաժանում: Իսկ սուրբ Կիւրեղն անձի մասին ասում է՝ մէկն է, եւ բնութեան մասին ասում է՝ նոյնն է: Միտքն այս է՝ Աստուած եւ մարդ մէկն է եւ ոչ թէ երկուսը, եւ նոյնն է եւ ոչ այլեւայլ՝ Աստուած ու մարդ[165]:

Պրակ ԺԸ

Հարց. Ի՞նչ պատասխանենք երկաբնակներին, ովքեր մեզ ասում են, որ եթէ Քրիստոսի մասերն Աստծունն են, այսինքն՝ ոտքը, ձեռքը, գլուխը, ուրեմն դուք բազմաստուած էք:

Պատասխան. Ուրեմն յայտնապէս նրանք ուրանում են դա, ասելով թէ՝ Քրիստոսի ձեռքն Աստուած չէ, Քրիստոսի գլուխն Աստուած չէ եւ այլն, որպէսզի [իբր այդ կերպ] բազմաստուած չդառնան:

Հարց. Ասում են այսպէս՝ թէեւ մարդ չէ, այսինքն Քրիստոսի ձեռքն ու ոտքը եւ թող որ Աստուած, այլ ինչպէս մարդու ձեռքն ու ոտքը մարդ չեն, այլ՝ մարդու ձեռք եւ մարդու ոտք, այդպէս էլ Քրիստոսի մասին են ասում:

Պատասխան. Արդ, յայտնի դարձաւ նրանց մոլորութիւնը: Եթէ Քրիստոսի ձեռքը Աստուած չէ, ուրեմն եւ ողջ մարմինը Աստուած չէ, որովհետեւ ամբողջը մասերից է բաղկացած: Եւ եթէ Քրիստոսի մարմինն Աստուած չէ եւ հոգին էլ Աստուած չէ, ինչպէս նրանք են բարբաջում, ապա եւ Քրիստոսն ամբողջութեամբ Աստուած չէ, որովհետեւ Քրիստոսն իբրեւ ամբողջութիւն աստուածութեան եւ մարդեղութեան միաւորումից է լինում մի Քրիստոս, իսկ բաժանուածը Քրիստոս չէ:

Եւ դարձեալ, եթէ ինչպէս մարդու ձեռքն ու ոտքը մարդ չեն, նոյն կերպ եւ Քրիստոսի ձեռքը Քրիստոս չէ, եւ ոտքն ու մնացած մասերը Քրիստոս չեն, ուրեմն եւ ողջ մարմինը Քրիստոս չէ, եւ հոգին էլ Քրիստոս չէ: Եւ եթէ սրանք [բոլորը] Քրիստոս չեն, ուրեմն Բանն էլ ինքնըստինքեան Քրիստոս չէ: Ուստի պարզ է, որ սրանք ուրանում են Քրիստոսի գոյութիւնը եւ այսպիսի առարկութիւններով ուրանում եւ Աստծուն:

Հարց. Ասում են, եթէ ձեռքը մարդունն է, ուրեմն ոտքն էլ եւ միւս մասերն էլ մարդունն են, ուստի չի ասւում Աստծոյ մաս:

Պատասխան. Ուրեմն երեւում է, որ մասերն Աստծունը չեն ասում, այսինքն ձեռքն ու ոտքը, ապա եւ ըստ նրանց մարմինն էլ Աստծոյ մարմին չէ եւ արիւնն էլ Աստծունը չէ եւ ոչ էլ Հոգին. սրանք բոլորը մարդունն են:

Հարց. Ասում են, թէ՝ մարմինը Քրիստոսինն է, արիւնն էլ, հոգին էլ, սակայն չեն ասում՝ Աստծունը:

Պատասխան. Ապա ուրեմն պարզ է, որ եթէ մասերն ասում են Քրիստոսի եւ Աստծունը չեն, ուրեմն Քրիստոսին չեն ընդունում իբրեւ Աստուած: Սրան էլ հետեւում է, որ Մարիամը Քրիստոսի մայր է լինում եւ ոչ՝ Աստծոյ, ուստի լաւ է նրան կոչել Քրիստոսածին ու մարդածին[166], քան Աստուածածին:

Հարց. Շեղուեցիր խօսքիցդ. ու դժուարհասկանալի բաներ ես խօսում, եւ ինչ-որ հարցրեցի՝ պատասխանը չհասկացայ:

Պատասխան. Այս էիր հարցնում, որ եթէ մասերը Քրիստոսի Աստուած են, ուրեմն մենք բազմաստուած ենք, որովհետեւ մասերը բազում են: Արդ, ես էլ ասում եմ քեզ, եթէ Քրիստոսի մասերը Քրիստոսինն են՝ բազմաքրիստոս էք եւ դուք:

Հարց. Այս մասին ոչինչ չունեմ ասելու, սակայն դու ուղղակի պատասխանիր, խնդրում եմ:

Պատասխան. Սա է ուղիղ կարճ [պատասխանը]:

Քրիստոսի մարմինը միաւորութեան շնորհիւ ենք ասում Աստուած ու Աստծոյ մարմին. նոյնպէս եւ արիւնը՝ Աստուած եւ Աստծոյ արիւն եւ մնացեալը նոյնպէս: Որովհետեւ եթէ ասենք Աստուած չէ, այդ դէպքում բաժանուած՝ աստուածութիւնից չի լինի Աստծոյ ձեռք, Աստծոյ մարմին, կամ արիւն, որովհետեւ ամբողջից բաժանուած մասն ամբողջի մաս չէ այլեւս եւ [այդպիսին] չի դիտւում, ինչպէս որ [միւս] անդամներից կտրուած ձեռքը չի կոչւում ամբողջի մաս: Եւ եթէ ասես՝ առանձին մարմինն աստուած է, արիւնն Աստուած է, կլինի բազմաստուածութեան վկայութիւն:

Նաեւ՝ մասը բոլորի անունն է ստանում, իսկ ասելը՝ Աստուած է եւ Աստծոյ մարմին, հոգի եւ այլն՝ ուղղակի է:

Հարց. Ապա ուրեմն ամբողջութեան մէջ միասին լինելով՝ հակադիր են, ինչպէս ուղղականը եւ հոլովուածները, որովհետեւ ասել Աստուած՝ ուղղական է, իսկ Աստծոյ՝ սեռական հոլով:

Պատասխան. Մի՞թէ չենք ասում, թէ Քրիստոս Աստուած է եւ Աստծոյ Որդի, ուր Աստուած ուղղական է, իսկ Աստծոյ Որդի՝ հոլովուած: Այսպէս էլ, կարող ենք ասել՝ Քրիստոսի մարմինը թէ՛ Աստուած է եւ թէ՛ Աստծոյ մարմին. նաեւ՝ արիւնը եւ մնացեալ ամէն ինչ:

Հարց. Այսպէս ասելով ամբողջի անուանումը տրւում է եւ մասերին:

Պատասխան. Նախ ասենք անպատշաճ չէ, որովհետեւ մի իրը կարող է մի դէպքում լինել ամբողջ, մի այլ դէպքում՝ մաս, ինչպէս ասենք ձեռքը [իբրեւ] ամբողջ եւ [իբրեւ] մաս, որովհետեւ մարմնի [համեմատութեամբ] մաս է, իսկ մատների [համար]՝ ամբողջ: Նոյն կերպ եւ Քրիստոսի մարմինը Աստուած է մարմնի մասերի համար, եւ Աստծոյ մարմին՝ Քրիստոսի ամբողջութեան համար:

Երկրորդ, ասենք որ բոլոր մասերը ամբողջի գոյութիւնից են եւ եթէ նոյն գոյութիւնից են, [կարող են] ունենալ նոյն անուանումը: Ինչպէս որ ձեռքն ունի մարմնի նոյն գոյութիւնը եւ կոչւում է մարմին՝ Քրիստոսի ամբողջութեան մէջ: Այդպէս էլ մարմինն ու հոգին են Քրիստոսի գոյացութիւնից, եւ ինչպէս Քրիստոսն է Աստուած կոչւում, այդպէս էլ Քրիստոսի մարմինն է Աստուած եւ կոչւում է Աստուած ու Աստծոյ մարմին

Երրորդ, որովհետեւ մեզ նման չէ այս մասի ու ամբողջի [յարաբերութիւնը],

քանի որ թէպէտ մարդու մասերը չունեն ամբողջի անուանումը, բայց Քրիստոսի մարմնի մասերը կրում են ամբողջի անուանումը եւ ունեն ամբողջի էութիւնը, ինչպէս մարմնի նշխարի [օրինակով է] տեսանելի, եւ ամբողջն է ողջ Քրիստոսը, եւ իւրաքանչիւր մասնիկն է ողջ Քրիստոսը:

Ապա ուրեմն կարող ենք ասել Քրիստոսի մարմինը՝ Աստուած եւ Աստծոյ մարմին եւ մնացեալը նոյնպէս:

Այս է նշանակում «համանգամայն» ասելը՝ Աստուած եւ Աստծոյ մարմին:

Եւ եթէ որոշակիօրէն էլ ուղղափառ մտքով ասես, այն եւս սխալ չէ. երբ ասես Աստծոյ մարմին եւ Աստծոյ արիւն, այսինքն, ինչ որ Աստծոյ մէջ է՝ Աստուած է եւ Աստծուն օտար չէ:

Այդպէս էլ՝ մարմինը, արիւնը, ոսկորը եւ այլն Աստուած ասելը նշանակում է Աստուած: Իսկ եթէ առանձին ասես՝ մարմինն Աստուած է, հոգին Աստուած է, սրանով չես լինի բազմաստուած, որովհետեւ Աստուած մէկ է՝ իր միաւորեալ էութեամբ ու գոյութեամբ:

Եւ դարձեալ ինչպէս ասում ենք մարմինը, արիւնը, հոգին, Բանը Քրիստոս են, չի նշանակում բազում Քրիստոսներ [ընդունել], նոյնպէս եւ սրանց Աստուած ասելը չի նշանակում բազում աստուածներ:

Եւ նոյնն էլ, երբ ասում ես՝ Հայր Աստուած, Որդի Աստուած, Հոգի Աստուած՝ չի նշանակում բազմաստուածութիւն, այլ՝ մի Աստուած, նոյն կերպ եւ ասել, թէ մարմինը Քրիստոսի Աստուած է, արիւնը Աստուած է, հոգին Աստուած է, ոչ թէ բազում աստուածներ, այլ մի Աստուած է [նշանակում]:

Այսքանն այս մասին:

ԳԵՒՈՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ
Պրակ ԺԹ

Թէ ի՞նչ է [նշանակում]՝ «Աստծուն հաւասար լինել» (Յովհ. Ե 18):

Եւ ի՞նչ է [նշանակում]՝ «Նրան առաւել բարձրացրեց»:

Եւ ի՞նչ՝ «Նրան անուն շնորհեց»:

Եւ թէ ի՞նչ է՝ «Բոլոր անուններից վեր» (Փիլիպ. Բ 9)

Տարակուսածիս օգնի՛ր, աղաչում եմ:

ՆՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Երանելի Պօղոսն աստուածապաշտութեան խորհուրդը յայտնի եւ մեծ է ասում (Ա Տիմ. Գ 16), ըստ որում՝ «Բանը երեւաց մարմնով» (Յովհ. Ա 14), հետեւաբար, [նրան] մարմնից բաժանելը խօսքով, թէ իմացութեամբ՝ ամբարշտութիւն է: Եւ բաժակով ինչպէ՞ս կլինի կենդանաբուխ ջրհորի լրումը, եւ տխեղծ մատներով առարկութիւնների համար անհրաժեշտ տառատիպ գծեր քաշելը:

Առաջինը՝ թէ ի՞նչ է՝ «Աստծուն հաւասար լինելը»:

Եւ թէ ի՞նչ է՝ «Նրան առաւել բարձրացրեց»:

Եւ թէ՝ «Նրան անուն շնորհեց»:

Եւ թէ ի՞նչ է՝ «Բոլոր անուններից վեր»:

Արդ, Սուրբ գրքերի տեսութիւնը նոյնը լինելով շատերի մօտ՝ շատ [մեկ-

նութիւն] է ստացել, ինչպէս նոյն պարզ ջուրը՝ ամէն մի բոյսի բնութեան մէջ: Սակայն ճշմարտութեան աշակերտների խնդիրն է, որ ոչ թէ իրենցից մեկնութիւններ անեն, այլ հետեւեն սուրբ նախնիներին եւ նրանցով առաջնորդուեն:

Ասում է՝ Բանը, որ Աստծոյ կերպարանքով էր, այսինքն՝ Հօր էակիցը, նուաստութիւն չհամարեց իր ներգոյական փառքով մեզ հաւասար դառնալ:

Եւ դարձեալ մի՛ կարծիր, թէ անյարմարութիւնը միայն Հօր պատկերին [նման լինելն] էր, հարեց, որ լինելութեան մէջ եւս հաւասար էր Աստծոյ գոյութեանը՝ նոյն մարմնով իբրեւ առանց յատիշտակութեան [ձեռք բերելիք բան]:

Ինչպէս որ ներմտածումն է մտքի պատկեր ասւում, այդպէս էլ արտասանուած եւ նիւթականացած խօսքն է մտքի պատկեր եւ հաւասար մտքի:

Եւ նա, ով նուաստացրեց իրեն մարդկային ունայնութեան մէջ՝ ծառայի տեսք ստացաւ ու նմանուեց մարդկանց գործով ու տկարութիւններով, կերպարանքով էլ մարդ դարձաւ, մինչդեռ վեր էր, քան մարդը եւ աւելին, քան մարդու կերպարանքը:

Եւ ոչ միայն այս: Այլեւ նոյն Հօր կերպարանքով իրեն խոնարհեցրեց մինչ մահ, որ ամենացածրացնողն էր, եւ խաչի մահ, որ անէծք էր, եւ անօրէնների շարքը դրուեց, որ առաւելագոյն նախատինք էր: Սրանցով [ցոյց է տալիս] խոնարհ բաները, ապա աւելացնում բարձրագոյնները:

Այս պատճառով էլ խօսում է ընդդէմ աստծոյ խոնարհութիւնների. «Աստուած նրան առաւելագոյն բարձրացրեց» (Փիլիպ. Բ 9): Հայր Աստուած, որ առաքեց ու նուաստացրեց, նոյն կերպ եւ բարձրացրեց՝ «Փառաւորեցի» (Յովհ. ԺԲ 28),- ասում է: Եւ դարձեալ՝ «փառքով, որ ունէի առաջ, քան աշխարհի լինելը» (Յովհ. ԺԷ 24):

Իսկ «նրան» ասելը կամ ըստ միաւորութեան պէտք է հասկանալ, կամ էլ ըստ այլոց՝ բաժանման: Եթէ ըստ բաժանման, ուրեմն կամ ըստ Բանի կամ էլ ըստ մարմնի [պէտք է լինի], որոնցից մէկը ախորժելի է Արիոսի համար, միւսը՝ Նեստորի: Սրանք տեսնենք հետեւեալ կերպ:

Ինչպէ՞ս է, որ միայն յանձինս Բանի կայ այն, որը Հօր կերպարանքով էր եւ Աստծոյ հաւասար: Իսկ եթէ յանձինս մարդու էր, ապա ինչպէ՞ս ունէր յաւիտենական փառք նա, որ այսօր Կոյսից ծնուեց:

Իսկ «առաւել բարձրութիւն» [նշանակում] է, որ ինչպէս անհամեմատելի էր խոնարհութիւնը, այսինքն Աստծոյ մարդանալը եւ չարչարուելը, այդպէս էլ մարդու բնութեան համար անհամեմատելի բարձրութիւն է Հօր աջից նստելը եւ հաւասարուելը:

Մինչդեռ ըստ միաւորութեան՝ յոյժ վայելուչ է:

Որովհետեւ ինչպէս Բանը խոնարհուեց մարմնին, նոյն կերպ էլ բարձրացաւ մարմնով. նա, որ իջաւ ներքեւ՝ երկիր, նոյն կերպ ելաւ վեր, քան ողջ երկինքն էր եւ ով ունայնացաւ՝

բոլորից բարձրացաւ, որովհետեւ չենք ասում մարմինը մարմնացեալ, այլ ասում ենք՝ Բանը մարմին դարձած:

Իսկ՝ «շնորհեց նրան անուն» [ասելը վերաբերում է] Յիսուս Քրիստոսին: Եթէ սա էլ բաժանմամբ է՝ ապա Բանը մասնայատկօրէն Քրիստոս չէ, որովհետեւ չկայ նրանից աւելի բարձր օծող, որը ոչ առանց մարմնի փրկեց: Իսկ մարմինն էլ ուրիշ օծողից օծեալ չէր համարուի: Եւ ինչպէ՞ս կարող էր Ադամի բնութիւնից սերուած մարմինը ներգործել բոլոր անէ գոյաւորների վրայ, ըստ որի ասում էր՝ «Մէկն է մեր Տէր Յիսուս Քրիստոս, որով ամէն ինչ եւ մենք էլ նրանով»: Դարձեալ՝ հակառակ ես բերում «նրան շնորհեց» խօսքը:

Եւ սա ըստ միութեան է:

«Շնորհեց»-ը տալու փոխարէն է: «Ամէն ինչ Հայրն իմ տուեց» (Յովհ. Ձ 39) ասում է եւ այլն, որովհետեւ Հայրն առաքեց նրան: Ուստի եւ իրաւամբ Բանին է ասում շնորհուեց ու տրուեց թէ՛ անունը եւ թէ՛ գործը, որ ինչպէս նուաստացաւ ու եղաւ մարդ, նոյն կերպ շնորհներ տրուեց Աստծուց եւ մարդկանցից:

Իսկ այժմ զինուենք քո դէմ քո խօսքերով, որ ինչպէս ասում ես՝ շնորհով տուեց մարդուն օծութեան, որդիութեան, տէրութեան եւ իշխանութեան այն անունը: Եւ ասում ես՝ խոնարհ չարչարանքների համար Աստուած նրան առաւել բարձրացրեց:

Ո՜վ յիմարութեանդ: Որովհետեւ, եթէ դրանք նահատակութեան հատուցումն էին, ո՞ւր մնացին շնորհները: Իսկ եթէ շնորհով էր, ինչպէ՞ս պիտի ասես դրանց ներգործութիւններից յետոյ լինելը: Եւ դարձեալ, եթէ շնորհով էր եւ օծեալ, ուրեմն նա առաւել չէ, քան մենք, որովհետեւ մենք էլ ծառայ չենք, այլ՝ որդի. «Որ կնքեց մեզ եւ օծեց՝ նոյն Աստուածն է, ով մեզ տուեց որդեգրութեան հոգի» (Հռոմ. Ը 15)՝ ասում է առաքեալը: Այլապէս ինչո՞ւ է նա երկրպագում միայն երկնաւորներին եւ երկրաւորներին: Ինչո՞ւ ենք ապա ուտում նրա մարմինը, մկրտւում նրանով, նրանով յարութիւն առնում եւ այլն:

Իսկ ասելը՝ «Բոլոր անուններից վեր». թէեւ այսպէս էին անուանում Յեսուին եւ բազմաթիւ այլ օծեալների հնում ու նորերի մէջ, սակայն Տէրը բնութեամբ եւ էութեամբ միացաւ, իսկ սրանք՝ շնորհով ու ժամանակի մէջ: Նա օծուեց Աստուած, իսկ սրանք՝ մարգարէ կամ այլ բան: Իսկ եթէ որեւէ տեղ ասւում է, որ նա օծուել է Հոգուց եւ Հօրից՝ տնօրինութեան խորհրդի պատճառով է ասւում:

Ահա սրանով է նա բարձր, որովհետեւ իր էութեամբ Հոգուց է եւ բնութեամբ՝ Հօրից, իսկ սրանք՝ Աստծուց եւ սիրոյ գթութեամբ:

Եւ տե՛ս, համանունի օրինակները, ինչպէս կենդանի մարդու անունը եւ գրուածը. մի՞թէ չենք ասում, թէ մարդու կենդանի անունն աւելի վեր է, քան գրուածի:

Ահա համառօտ խօսքս [իբրեւ] փոքր ընծայ ընկալիր քո սրտի ընդարձակ գանձարանի մէջ, աւագագոյն

հարազատդ Գեւորգ: Եւ աղաչում եմ, պակասն ուղղիր, աւելորդը հանիր քո անձին յատուկ մեծահոգութեամբ:

Ողջ լե՛ր:

ԵՐԿԱԲՆԱԿՆԵՐԻ ՀԵՐՁՈՒԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԲԱՆԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՒՄ
Պրակ Ի

Հարց. Քրիստոսի մարդեղութիւնը տեսնո՞ւմ է աստուածութիւնը թէ ոչ:

Պատասխան. Երեւում է, որ անջատում ես մարդեղութիւնը, եւ ուրիշ ես հասկանում մարդուն եւ Աստծուն:

Հարց. Այո, բնութեամբ բաժանում եմ, իսկ անձով՝ միաւորում:

Պատասխան. Այդ անձը գոյացութի՞ւն է թէ լոկ անուն: Որովհետեւ եթէ գոյացութիւն է եւ միաւորուած է Բանի գոյացութեանը, ինչպէ՞ս չգիտի իր Աստուած լինելը: Իսկ եթէ միայն անուն է, առանց էութեան, ապա անուամբ ես համարում Աստուած Քրիստոսին եւ ոչ գոյացութեամբ ու հաւասարեցնում նրան Մովսէսին, որ անուամբ Աստուած կոչուեց ու ոչ էութեամբ:

Եւ դարձեալ «Քրիստոս» անունն էլ միաւորութիւն է նշանակում երկու բնութեան, ըստ որում Աստուածութիւնն օծեց մարդկութեանը, ինչպէս ասում են Աստուածաբանը եւ սուրբ Կիւրեղը:

Արդ, եթէ երկատում ես Քրիստոսին, բաժանւում ես հաւատիցդ եւ չես լինում քրիստոնեայ:

Այսպիսով, մեր «Հարցմանց գրքում» բազում են Բանի եւ մարմնի միաւորութեան մասին [մտածումները]՝ ընդդէմ Նեստորի ու երկաբնակների, եւ բաւականաչափ են խնդրիս պատասխանները:

Բայց, արդ, որ հարցնում ես, թէ Քրիստոս-մարդը տեսնո՞ւմ է Աստծուն թէ ոչ, համաձայնում ես հրէաների հետ, ովքեր ասում էին [Քրիստոսին]՝ «Դու մարդ ես եւ աստուածացնում ես անձդ» (Յովհ. Ժ 33): Հրէաներն այս հարցում գայթակղուեցին, իսկ հեթանոսները յիմարացան (հմմտ. Ա Կորնթ. Ա 23), ըստ այդմ՝ «Կկորցնեմ իմաստունների իմաստութիւնը եւ խորհրդականների խորհուրդները» (Ա Կորնթ. Ա 19), ասում է առաքեալը:

Եւ ինքը ճշմարտութիւնն էր ասում՝ «Գոհ եմ քեզնից, Հա՛յր, որ ծածկեցիր սա իմաստուններից եւ գիտուններից ու յայտնեցիր պարզամիտներին ու անմեղներին» (Ղուկ. Ժ 21): Որովհետեւ իմաստունները մաքառում են հաւատի դէմ եւ չեն կարողանում հասու լինել՝ մտքի քննութեամբ՝ զրկուելով իրենց փրկութիւնից: Եւ հաւատացեալները փրկւում են, իսկ հակառակորդները կորստի մատնւում:

Եւ մեր հաւատի հիմքը դրեց Քրիստոս՝ Հօրից, որի հաստատումն են Սուրբ գրքերի վկայութիւնները, վարդապետների խօսքը, օրէնքների կանոնները, որոնք ցանկանում եմ համառօտ վկայութեամբ հաստատել:

Նախ՝ ընտիր անօթը՝ Պօղոս առաքեալը, գրում է հաւատացեալներին. «Քրիստոս Աստծոյ զօրութիւնն ու իմաստութիւնն է» (Ա Կորնթ. Ա 24):

Արդ, Քրիստոս, որ օծեալ էր աստուածութեամբ, եւ նա Աստծոյ իմաստութիւնն էր, եթէ չէր ճանաչում Աստծուն, ապա տգիտութեամբ կորստի կմատնէր նրան, ում իմաստութիւնն էր:

Երկրորդ՝ վկայում է սիրելի աշակերտը՝ Յովհաննէսը. «Աստծուն ոչ ոք չտեսաւ, բացի միածին Որդուց, որը եւ պատմեց մեզ» (Յովհ. Ա 18): Եւ Միածին Որդուն իմացանք իբրեւ ծնուած Բանը՝ Հօրից եւ դարձած Կոյսի Որդի:

Արդ, մարդկանցից ոչ ոք չի տեսել Աստծուն, չի տեսել եւ Կոյսի Որդին, ինչպէս դու ես ասում. ուրեմն սուտ է եւ պատմութիւնը, որ ուսուցանել են մեզ, որովհետեւ չի տեսել եւ պատմում է. ահա եւ քեզ հայհոյութեան անդունդ, որի մասին լռում եմ՝ [ելնելով] կարգիցս:

Երրորդ՝ առաքեալը գրում է. «Բազում նշաններով եւ բազում օրինակներով Աստուած խօսեց մեր հայրերի հետ՝ մարգարէներով ու հրեշտակներով, իսկ վերջին օրերում մեզ հետ խօսեց Որդու միջոցով» (Եբր. Ա 2):

Արդ, եթէ Հայր Աստծոյ Որդին տգէտ էր եւ տգէտ Որդու միջոցով խօսեց մեզ հետ, ուրեմն տգիտութիւն պէտք է լինի եւ Նոր օրէնքը՝ հնի համեմատութեամբ:

Չորրորդ՝ նոյն առաքեալն ասում է. «Մենք Քրիստոսի միտքն ունենք եւ Աստծոյ խորհուրդների հազարապետն ենք» (Ա Կորնթ. Դ 1):

Արդ, եթէ Քրիստոս տգէտ էր, եւ նրանք էլ տգէտ միտք ունէին, ինչպէ՞ս կլինէին Աստծոյ խորհուրդների հազարապետ, կամ հազարապետներն առաւել են, քան Աստծոյ խորհուրդները:

Հինգերորդ՝ Մատթէոսի աւետարանն ասում է՝ խոստովանելով. «Ամէն ինչ ինձ տրուեց իմ Հօրից» (Մտթ. ԺԱ 27): Ի՞նչ է տուել, եթէ կատարեալ գիտութիւն չի տուել: Եւ եթէ ասես տուել է Բանին եւ ոչ մարմնին, ապա ուրեմն [Քրիստոսի] մարդկութիւնը սուտ է խոստովանում. «ամէն ինչ ինձ տրուեց», որովհետեւ գիտութիւն չտուեց: Եւ կամ Բանն իր մարդեղութիւնը զրկեց գիտութիւնից եւ չտուեց:

Վեցերորդ՝ նոյնում ասւում է՝ «Ոչ ոք չի ճանաչում Հօրը, եթէ ոչ Որդին, եւ ոչ ոք՝ Որդուն, եթէ ոչ Հայրը» (Մտթ. ԺԱ 27):

Արդ, եթէ Հօրը ոչ ոք օտարներից չի ճանաչում, եւ Որդին էլ չի ճանաչում ըստ քեզ, ուրեմն Որդին էլ օտար է Հօրը: Եւ դարձեալ, ինչպէս դու ինքդ ես կարծում, նաեւ ինքը՝ մարդու Որդին, իրեն չի ճանաչում: Եւ հրէաներն էլ Որդուն չէն ճանաչում՝ ասելով. «Ո՞վ է նա, մարդու Որդին»: Ապա ուրեմն մարդու Որդին էլ այդ հրէաների շարքում էր եւ առաւել չէր [նրանցից]:

Եօթներորդ՝ որ աւելացնում է. «Եւ ում կկամենայ Որդին յայտնել» (Մտթ. ԺԱ 27): Սակայն կամեցաւ եւ աշակերտներին նշաններ տալով՝ յայտնեց իր Որդի լինելն ու Հօրը, քանի որ պտղից յայտնի է եւ ծառը:

Արդ, եթէ իրեն յայտնեց իր աշակերտներին եւ իր մարդեղութիւնը չյայտնեց, նշանակում է ինքն աւելի տգէտ էր,

քան աշակերտները, կամ էլ ոչինչ չյայտնեց, որովհետեւ ինքն էլ չգիտէր:

Ութերորդ՝ Յոհաննէսն [աւետարանում] ասում է. «Ինչպէս գիտէ Հայրն ինձ, այդպէս էլ ես գիտեմ Հօրը» (Յովհ. Ժ 15): Պարզորոշ նշում է գիտութեամբ իր եւ Հօր հաւասարութիւնը:

Արդ, եթէ Հայրն աւելի գիտէ, իսկ Որդին՝ նուազ, ուրեմն նշանակում է, որ կամ Հայրը եւս նուազ գիտէ, ինչպէս Որդին, կամ էլ Որդին ճշմարիտ չի խօսում:

Իններորդ՝ Յոհաննէսն [աւետարանում] ասում է. «Հայրը սիրում է Որդուն եւ ամէն ինչ ցոյց է տալիս նրան» (Յովհ. Ե 20):

Ա՛րդ, ամէն ինչ ցոյց տալը Հօր սիրոյ նշանն է, այլապէս եթէ ոչինչ ցոյց չի տալիս՝ ատում է Որդուն:

Տասներորդ՝ Մատթէոսն ասում է. «Ի՞նչ էք մտածում ձեր սրտում» (Մտթ. Թ 4) եւ Յովհաննէսն ասում է՝ «Ինքը գիտէր, թէ ինչ կայ մարդու հոգու մէջ» (Յովհ. Բ 25): Իսկ սրտի գաղտնիքը իմանալ յատուկ է միայն Աստծուն, ըստ այդմ՝ «որ քննում է սիրտն ու երիկամները՝ Աստուած է» (Սղմ. է 10): Իսկ եթէ ուրիշների սրտինը գիտի, առաւել եւս իրենը գիտի:

Ա՛րդ, կամ ստում է Աւետարանը, կամ ես սուտ քո խօսքի մէջ, ինչպէս քո հայր սատանան:

Տասնմէկերորդ՝ Յովհաննէսն ասում է՝ «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը» (Յովհ. ԺԴ 6), այսինքն, որ տանում եմ դէպի Հայրը, եւ ճշմարտութեամբ եմ ցոյց տալիս ձեզ:

Ա՛րդ, եթէ ինքը չգիտի ճշմարտութիւնը, ինչպէ՞ս կարող է մեզ ցոյց տալ, եւ եթէ ինքը մոլորուած է, ինչպէ՞ս է տանում մեզ դէպի Հայրը:

Տասներկուերորդ՝ Ղուկասն ասում է. «Աճում էր ու զօրանում մանուկը՝ լի շնորհներով ու իմաստութեամբ» (Ղուկ. Բ 40): Եւ նրա շնորհի լիութեամբ մենք արդարացանք ու նրա իմաստութեամբ ճանաչեցինք Աստծուն, ինչպէս ասում է Յովհաննէսը՝ «Օրէնքները տրուեցին Մովսէսի ձեռքով, իսկ շնորհքն ու ճշմարտութիւնը Քրիստոսի ձեռքով եղան» (Յովհ. Ա 17): Ահա Աւետարանն ասում է՝ լի էր իմաստութեամբ, իսկ դու [ասում ես]՝ պակաս էր:

Արդ, եթէ պակաս են նրա շնորհքն ու իմաստութիւնը, մենք ինչպէ՞ս ստացանք դրանք լիութեամբ:

Տասներեքերորդ՝ Եսային ասում է Քրիստոսի մասին. «Լցրեց նրան իմաստութեան հոգով եւ գիտութեան հանճարով եւ խորհրդով» (Ես. ԺԱ 2): Եւ սրանք բոլորը պարունակում են ողջ ճանաչողութիւնը, որովհետեւ իմաստութեամբ է ճանաչւում ողջ աստուածայինը, հանճարով էլ ճանաչւում է ողջ աննիւթականը, գիտութեան մէջ ճանաչումը եզրակացութիւններն են, իսկ խորհրդով ճանաչւում է ողջ ձեռք բերելիքը:

Ապա ուրեմն, Քրիստոսի հոգին ունի ողջ ճանաչողութիւնը՝ լցուած Սուրբ Հոգով:

Տասնչորսերորդ՝ Պօղոսն ասում է Եփեսացւոց [թղթում]. «Հայրը երկնաւորների մէջ Քրիստոսին կարգեց [գլուխ]

բոլոր իշխանութիւնների, պետութիւնների, զօրութիւնների եւ բոլոր անունների վրայ, ոչ միայն աշխարհում, այլեւ՝ հանդերձեալում» (Եփես. Ա 21):

Եւ արդ, երկնաւոր փառքում գերագոյնը նա է, ում կատարեալ է տեսնում Աստուած: Ապա ուրեմն Քրիստոսի Հոգին Աստծոյ կողմից ճանաչուել էր որպէս ամենակատարեալը:

Տասնհինգերորդ՝ երբ համբարձուում էր երկինք, վերին զօրութիւնները տարակուսած ասում էին՝ «Ո՞վ է սա, որ գալիս է երկրից դէպի մեզ՝ գեղեցիկ պատմուճանով եւ լի զօրութեամբ» (Ես. ԿԳ 1): Պատասխանում է՝ «Ես եմ, որ խօսում եմ արդարութիւն եւ փրկութեան իրաւունք» (Ես. ԿԳ 1): Ասում են դարձեալ՝ «Ինչո՞ւ են կարմիր քո հանդերձները» (Ես. ԿԳ 2):

Պատասխանում է. «Հնձանում էի»: «Հնձան» ասում է խաչին, որ ներկուեց արեամբ:

Արդ, հրեշտակները, որ ուսուցանում են բոլոր մարդկանց, մարգարէներին ու սրբերին, նրանք էլ սովորում են Քրիստոսից: Ուրեմն ինչպէ՞ս կարող էր նա պակաս լինել գիտութեամբ, որ հրեշտակների ուսուցանողն էր:

Տասնվեցերորդ՝ Յոհաննու աւետարանում ասում է. «Գիտեմ նրան եւ պահում եմ նրա խօսքը, եւ եթէ ասեմ չգիտեմ նրան, ձեզ նման սուտ կլինեմ» (Յովհ. Ը 55):

Ա՛րդ, եթէ [Քրիստոս] գիտի Հօրը, ուրեմն գիտի եւ իրեն, եւ եթէ իրեն չգիտի, ինչպէ՞ս կիմանար Հօրը: Եւ եթէ չգիտէր Հօրը, ինչպէ՞ս էր իրենով պահում նրա խօսքը:

Տասնեօթներորդ՝ նրան հարցնելիս Պետրոսն ասում է. «Տէ՛ր, դու ամէն ինչ գիտես եւ ճանաչում ես ամէն ինչ, եւ այն, որ սիրում եմ քեզ» (Յովհ. ԻԱ 17): Ինչպէ՞ս է, որ ամէն ինչ գիտի, իսկ ըստ քեզ՝ իրեն չգիտի: Իսկ եթէ ամէն ինչ ճանաչում է եւ Պետրոսի սէրն էլ, ուրեմն պակաս չէ նրա գիտութիւնը:

Տասնութերորդ՝ ասում է առաքեալը Կողոսացւոց [թղթում]. «Նրանում է բնակւում աստուածութեան ողջ լրումը մարմնապէս» (Կողոս. Բ 9), այսինքն՝ էապէս:

Ա՛րդ, եթէ ողջ աստուածութիւնը Քրիստոսի մէջ էացել է մարմնապէս եւ [այնուամենայնիւ], նրանից ծածկում է գիտութիւնը, ուրեմն նա կամ մարմնացեալ ու մարդացեալ Աստուած չէ, կամ էլ [նրան] տրուած է էութիւն, բայց գիտութիւնից զրկուած, որը սուտ է:

Տասնիններորդ՝ Մատթէոսի [աւետարանում] ասում է. «Երկինքն ու երկիրը կանցնեն, սակայն չեն անցնի իմ խօսքերը» (Մտթ. ԻԴ 35):

Արդ, եթէ Քրիստոսի խօսքը լինէր մարդու եւ տգէտի [խօսք], ապա անցաւոր կլինէր: Իսկ եթէ Աստծոյ խօսք է եւ անանց, ապա չի կարող տգէտ կամ նուազ գիտութեամբ լինել:

Քսաներորդ՝ առաքեալն ասում է Կողոսացւոց [թղթում]. «Քրիստոսի մէջ են ծածկուած իմաստութեան ու գիտութեան բոլոր գանձերը» (Կողոս. Բ 3):

Արդ, տգէտն ամբարած չունի ամբողջ իմաստութիւնն ու գիտութիւնը:

Իսկ ինչպէ՞ս կարող էր երկնքի եւ երկրի իմաստութեան գանձն ու աղբիւրը կարօտ լինել գիտութեան կամ [այն] ստացած լինէր ուրիշից:

Թերեւս երկաբնակն ասի, թէ սրանք վերաբերում են Քրիստոսի անձին եւ ոչ թէ մարդեղութեանը: Այս մասին ասենք, որ եթէ մինչեւ այժմ բաժանում էիր բնութիւնը, հիմա էլ [բաժանում ես] անձը: Որովհետեւ եթէ խոստովանում ես Քրիստոսի մի անձը եւ մարդու բնութիւնը միացած Բանի անձի մէջ, ուրեմն այն, ինչ բնութեամբ Բանինն է, ամբողջութեամբ նաեւ մարմնինն է՝ իր միաւորութեամբ: Իսկ եթէ այլ է Բանի [էութիւնը] եւ այլ՝ մարմնինը, ապա ուրեմն բաժանում ես մարդեղութիւնը անձից եւ երկու անձ ու երկու բնութիւն ես ընդունում՝ ըստ ձեր առաջնորդ Նեստորի եւ Պօղոս Սամոսատցու: Եւ եթէ մինչեւ այժմ թաքնուած նեստորական էիր, հիմա բացայայտեցիր քեզ:

Ուստի եւ մենք հիմա, ո՞վ երկաբնակ նեստորական, մարդադաւանութեամբ Քրիստոսին տրոհող ու նրա շնորհներից տրոհուած, քեզ հետ կխօսենք ըստ վկայութիւնների, [քեզ,] որ ասում ես Քրիստոսի լոկ մարդ լինելը՝ տգէտ ու տկար, ապականացու մարմնով եւ մարդկային կարիքների մէջ ընկած:

Քսանմէկերորդ՝ արդ եթէ Քրիստոս տգէտ միտք ունէր ու տկար հոգի եւ ապականացու մարմին, ու եկաւ, որ վերացնի մեր տկարութիւնը եւ լուսաւորի խաւարի մէջ նստածներիս (հմմտ. Ես. Թ 2), եւ նա է Աստծոյ գառը, որ պէտք է վերացնէր աշխարհի մեղքն ու ապականութիւնը (տե՛ս Յովհ. Ա 29), արդ, [եթէ] տգէտ էր, չէր կարող տգիտութիւնը վերացնել, եթէ մեղաւոր էր՝ մեղքերը, եթէ ապականացու էր՝ ապականութիւնը: Եւ սոսկ մարդը չի կարող փրկել մարդուն, որովհետեւ սուտ է մարդու [տուած] այդ փրկութիւնը: Հետեւաբար տգիտութիւն վերացնողը տգէտ չէր, մեղք ու ապականութիւն վերացնողը՝ ոչ մեղք եւ ոչ ապականութիւն [ունէր]: Վկայում է նաեւ մարգարէն, որ ասում է. «Մեղք չգործեց» (Սղմ. ՃԲ 10) եւ «արդարացաւ հոգով» (Ա Տիմ. Գ 16). «նրա մարմինն ապականութիւն չտեսաւ» (Սղմ. ԺԵ 10, Գործք Բ 31):

Քսաներկուերորդ՝ Պօղոս առաքեալն ու Յոհաննէս աւետարանիչը վկայում են ապագայի մասին, որ՝ «Նրան տեսնելու ենք, ինչպէս ներկան» (Ա Յովհ. Գ 2), եւ «ճանաչելու ենք նրան, ինչպէս նա ճանաչեց ինձ» (Ա Կորնթ. ԺԳ 12):

Արդ, եթէ յարութեան ժամանակ բոլոր արդարները տեսնելու են Աստծուն դէմ յանդիման, ինչպէս ներկան, իսկ Քրիստոս չի կարողանալու տեսնել, ուրեմն գիտութեամբ զիջում է մարդուն, ինչը սուտ է:

Քսաներեքերորդ՝ Տէրն ասաց Սուրբ Հոգու մասին. «Աշխարհը չի տեսնում նրան ու չի ճանաչում, սակայն դուք ճանաչում էք, որովհետեւ բնակւում է ձեր մէջ» (Յովհ. ԺԴ 17):

Արդ, եթէ առաքեալները, որ Հոգու բնակարանն էին, ճանաչում էին Հոգի-Աստծուն, իսկ Քրիստոս մարդ-

կութիւնը չի ճանաչում, ուրեմն Քրիստոս փոքր է, քան [Հոգու] բնակարանները:

Քսանչորսերորդ՝ վարդապետները հրեշտակների մասին ասում են, թէ սրանք ունեն առաւօտեան եւ երեկոյեան ճանաչում: Առաւօտեան, որով տեսնում են Բանն-Աստծուն եւ նրանից վերցնում գիտութիւն, եւ երեկոյեան, որով տեսնում են արարածներին:

Արդ, եթէ հրեշտակները տեսնում են Բանն-Աստծուն եւ գիտութիւն են վերցնում նրանից, իսկ Քրիստոս մարդը չի տեսնում, ինչպէս ասում ես դու՝ Նեստորդ, ապա ուրեմն Քրիստոս գիտութեամբ փոքր է, քան հրեշտակները: Այդ դէպքում նա ինչպէ՞ս է «գլուխ եւ ուսուցիչ բոլոր իշխանութիւնների ու պետութիւնների» (Կողոս. Բ 10), եւ ինչպէ՞ս են երկրպագում նրան բոլոր երկնայինները, երկրաւորները, սանդարամետականները, ու բոլոր լեզուները խոստովանելու են, որ Յիսուս Քրիստոս Տէր է՝ ի փառս Հայր Աստծու (Փիլիպ. Բ 10):

Քսանհինգերորդ՝ Յոհաննու աւետարանում ասւում է. «Այս է յաւիտենական կեանքը՝ միայն քեզ ճանաչելը ճշմարիտ Աստուած, եւ որ դու առաքեցիր Յիսուս Քրիստոսին» (Յովհ. ԺԷ 3):

Ա՛րդ, եթէ ճանաչելը Հայր-Աստծուն եւ Յիսուս Քրիստոսին յաւիտենական կեանք է, իսկ Քրիստոս մարդը չի կարող ճշմարտութիւնը ճանաչել, ինչպէս դու ես ասում, ուրեմն նա զրկուել է յաւիտենական կեանքից: Այդ դէպքում ինչպէ՞ս է [ասում՝] «ով ուտի իմ մարմինը եւ ըմպի իմ արիւնը՝ յաւիտենական կեանք կունենայ» (Յովհ. Զ 55): Եթէ ինքը չունի յաւիտենական կեանք, ուրիշներին ինչպէ՞ս է տալիս: Եւ ինչպէ՞ս է ասում՝ «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յովհ. ԺԴ 6): Եւ Յովհաննէսն էլ ասում է՝ «Յաւիտենական կեանքը յայտնուեց մարմնով» (հմմտ. Յովհ. Ա 14):

Քսանվեցերորդ՝ տեսիլքում ասւում է. «Գառն արժանի է աստուածութիւն եւ գիտութիւն ստանալու» (Յայտ. Ե 12), որն ամէն ինչի ճանաչումն է:

Արդ, Աստծոյ գառը մարդու Որդին է: Նա է Բանի միաւորութեամբ ստացել Աստուածութիւն եւ ամէն ինչի ճանաչողութիւն:

Քսաներորդերորդ՝ Յոհաննէսի աւետարանում ասւում է. «Ոչ թէ Հայրն է դատում որեւէ մէկին, այլ բոլորի դատաստանը տուեց իր Որդուն» (Յովհ. Ե 22):

Արդ, Որդին դատում է ոչ միայն ըստ իր Աստուածութեան, այլեւ՝ ըստ իր մարդկութեան: Ըստ այդմ՝ «Երբ գայ մարդու Որդին Հօր փառքով, կնստի փառքի աթոռին» (Մտթ. ԺԹ 28): Իսկ դատաւորը պարտաւոր է ունենալ անհուն գիտութիւն, որպէսզի կարողանայ քննել հրեշտակների ու մարդկանց ողջ բնութիւնը, բոլոր եղած ու լինելիք գործերը, բոլոր խորհուրդներն ու մտքերը՝ առաջինը, միջինը ու վերջինը:

Ապա ուրեմն Քրիստոսի Հոգին ունի անհուն գիտութիւն, որովհետեւ ճանաչում է անհուն իմացումները:

Քսանութերորդ, ձեր Ալպերտ վարդապետն ասում է. «Իր յղութեան պահից՝

Քրիստոս կատարեալ ճանապարհորդ եւ ըմբռնող էր»[167]:

Ա՛րդ, ճանապարհորդ էր, որ ըստ մարմնի տնօրինութեան՝ մահուամբ եւ յարութեամբ մտնելու էր Փառքի մէջ: Եւ ըմբռնող էր, որովհետեւ աստուածային փառքին միանալով՝ զմայլուած էր մտքի բանական իմացութեամբ: Եւ այս փառքով Քրիստոս ըմբռնում էր ամէն մի սահմանուածին՝ գործով եւ ճանաչում ողջ Անսահմանն ու Անհունը՝ գերազանց տեսութեամբ:

Քսանիններորդ՝ նրանց Իսիդորոս վարդապետն ասում է, թէ՝ «Երրորդութիւնը միայն իր՝ մարդու, կողմից է ծանուցուել ու վերցուել»[168]: Իսկ երկաբնակների գլուխը՝ Յովհան Դամասկացին, ասում է. «Ողջ աստուածութիւնը միաւորուած է Քրիստոսի մարդկային բնութեան մէջ եւ տեսնւում է Քրիստոսի հոգով»[169]:

Եւ նրանց Օգոստինոս վարդապետը «Երրորդութեան» գրքի մէջ ասում է. «Աստուածային էութիւնն ըմբռնելը յատուկ է միայն Աստծոյ Որդուն՝ ըստ բնութեան եւ մարդու Որդուն՝ ըստ միաւորութեան շնորհների»[170]:

Նաեւ իրենց Թովմա վարդապետն ասում է. «Քրիստոսի հոգին ճանաչում է ողջ Անհունը»[171]: Այսպէս ուրեմն, Հոգին Քրիստոսի ճանաչում է իր բովանդակ կարողութիւնը եւ այն ամէնը, ինչ կարող է: Ուրեմն եւ կարող է սրբել անհուն մեղքերը, ինչպէս ասում է Յոհաննէսն «Ընդհանրականք»-ում. «Նա է մեր մեղքերի քաւութիւնը եւ ոչ միայն մեր, այլեւ՝ ողջ աշխարհի» (Ա Յովհ. Բ 2):

Ապա ուրեմն Քրիստոսի Հոգին ճանաչում է Անհունը:

Երեսուներորդ՝ եւ սուրբ վարդապետները Քրիստոսի մարդեղութեան [համար] օրինակ են բերում լոյսը օդին եւ հուրը երկաթին միաւորուելը[172]:

Արդ, ինչպէս լուսաւորուած օդը չունի խաւարի մաս, նոյնպէս եւ Քրիստոսի Հոգին միաւորուած Բանն-Աստծուն՝ չունի տգիտութեան մաս: Եւ ինչպէս երկաթին միաւորուած հուրը վերացնում է նրա սառնութիւնն ու սեւութիւնը, եւ մնում է միայն ծանրութիւնը, այդպէս էլ Քրիստոսի մարմինը միաւորուած Բանն-Աստծուն՝ ունի Բանի կարողութիւնն ու Աստուածութիւնը: Ինչպէս ասում է Գրիգոր Աստուածաբանը՝ «Համարձակւում եւ ասում եմ՝ հաւասար Աստուած՝ ինչպէս տուողը, այնպէս էլ վերցնողը, որովհետեւ անմարմինը մարմնացաւ, Բանը նիւթականացաւ, եւ Աստուած մարդ եղաւ՝ մի անձնաւորութեամբ եւ միաւորեալ բնութեամբ՝ մի Տէր, մի Քրիստոս, մի Որդի Աստծոյ եւ Որդի Կոյսի»[173՝] խոստովանուած երկնաւորների ու երկրաւորների կողմից եւ հաստատուած վկայութեամբ Սուրբ գրքերի, ինչպէս ցոյց տուեցինք:

Արդ, մտքով քննելը յանդգնութիւն է, իսկ հաւատալը՝ կեանք, որովհետեւ հաւատի մէջ է փրկութիւնը: Եւ դարձեալ, մտքի քննութեամբ անհնար է հասնել անհասանելիին, որն իմացւում է հա-

ւատով, ըմբռնում յոյսով եւ միաւորում սիրով:

Այսպէս պէտք է սրտով հաւատալ եւ բերանով խոստովանել, որովհետեւ՝ «ով ինձ խոստովանի մարդկանց առջեւ, ես էլ կխոստովանեմ նրան Հօր եւ Սուրբ հրեշտակների առջեւ, եւ ով ուրանայ ինձ, կուրացուի հրեշտակների առջեւ» (հմմտ. Հռոմ. Ժ 10, Մտթ. Ժ 32-33),- ասում է ճշմարտութիւնը: Որովհետեւ բոլոր ճշմարիտ դաւանողները Քրիստոսին Աստուած խոստովանեցին եւ նահատակուեցին յանուն նրա եւ յանուն Քրիստոսի ճշմարտութեան երկրից երկինք վերափոխուեցին:

Եւ մենք էլ նոյն դաւանութեան վրայ հաստատուն մնանք՝ կենաց եւ մահու անդրդուելի յոյսով եւ յետ մահու ու նրա խոստացած բարուն արժանի լինենք՝ ի Յիսուս Քրիստոս, ի Տէր մեր:

Որով եւ ընդ որում՝ Հօրը եւ Սուրբ Հոգուն փառք ու պատիւ եւ յաւիտենական անբաւ իշխանութիւն՝ բոլոր գոյաւորների մէջ:

Ամէն:

Այսքանը Բանի տնօրինութեան մասին: Եւ աւարտը «Գիրք հարցմանց»-ի երկրորդ հատորի:

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ
ՍՈՒՐԲ ԴԻՈՆԷՍԻՈՍԻ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ[174]

ա) Ճառելի եւ անճառելի: Եւ Աստծոյ անիմանալի բնութիւնը: Եւ թէ՝ Աստուած իմանալի է անգիտութեամբ: Եւ տգիտութիւնը մտքի խաւարն է:

բ) Ի՞նչ է մտքի հանգիստը:

գ) Միութիւն եւ բաժանում:

դ) Աստծոյ Բանի եւ մարդկութեան համեմատութիւնը:

ե) Ինչո՞ւ ենք կոչում Երրորդութիւն՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի:

զ) Մի, միակ եւ բազում:

է) Սկիզբ եւ պատճառ:

ը) Էութեան, ոչ-էի եւ նախագոյի մասին: Էր, է եւ եղիցի:

թ) Նախօրինակի մասին. մէկն է եւ բազում:

ժ) Անեղութեան եւ եղականի մասին:

ժ) Անժամանակ է Աստուած եւ յաւիտենական եւ հնօրեայ:

ժբ) Յաւիտենականի մասին:

ժգ) Կեանքի մասին: Աստծոյ, հրեշտակների, մարդկանց, կենդանիների զանազանութեան մասին:

ժդ) Աստծոյ հրեշտակների եւ մարդկանց տեսնելու մասին: Ամենատես է Աստուած:

ժե) Ի՞նչն է զանազանում եւ ի՞նչը նմանում Աստծոյ, այլեւ հրեշտակների, մարդկանց տեսնելուն:

ժզ) Մտքի եւ զգայութիւնների տեսնելու տարբերութիւնները: Բանականութեան սկիզբն ու վախճանակէտը:

ժէ) Այն մասին, որ Աստուած խօսք ունի: Ճշմարտութեան եւ հաւատի մասին: Բնական քննութեան եւ հաւատի զանազանութեան մասին:

ժը) Քանի՞սն են աստուածաբանութեան տեսակները:

ժթ) Ժխտականներն ու բացասականները տարբերւում են:

ի) Արեգակ է կոչւում Աստուած՝ քսան յատկանիշներով:

իա) Աստծոյ զարմանքի եւ նախանձի մասին:

իբ) Աստուած Սէր, Սիրելի ու Բարի է:

իգ) Լայն, երկար, խոր ու բարձր է ասւում Աստուած:

իդ) Ալֆա եւ օմեգա:

իե) Մարմինը ոտք է:

Այսքանն աստուածաբանութեան մասին:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ա) Իմացականը եւ իմանալին:

բ) Պարգեւն անհաւասար է ըստ հնչող ձայնի: Եւ թէ մեր խօսքը միաւորուած է ձայնին:

գ) Կենդանիների դրոշմուած տեսիլքը:

դ) Չորեքկերպեան կենդանիների մասին:

ե) Ինչպիսի՞ն են երեւում անմարմինները. մարմնո՞վ, իբրեւ ուրուակա՞ն, թէ՞ իսկութեամբ:

զ) Հրեշտակներն ինը դաս ունեն՝ զատորոշած երեք առանձին եռեակների, եւ ուրիշներ եօթն են ասում:

է) Դասերի կարգը:

ը) Հրեշտակների անունները. կոչւում են պարզ հրեշտակներ եւ զօրութիւններ:

թ) Նրանց մէջ որո՞նք են պարզերը եւ որոնք՝ առանձնայատուկները:

ժ) Նրանց եւ մարդկանց քահանայապետութիւնը:

ժա) Ի՞նչ են շնորհները եւ ո՞րն են քահանայութեան շնորհները:

ժբ) Տարբերւում են հրեշտակը, մարդու հոգին, հրեշտակների իմացութիւնը:

ժգ) Հրեշտակների թիւը:

ժդ) Նրանց շարժումը:

ժե) Մարդու զգայարանները:

ժզ) Սէրը եւ գութը:

ժէ) Հրեշտակների յատուկ անունները:

ժը) Հրեշտակների փառաբանութիւնը:

ժթ) Հրեշտակների խօսքի մասին:

Այսքանը հրեշտակների մասին:

ԴԵՒԵՐԻ ՄԱՍԻՆ

ա) Դեւերի անկման մասին. նրանց հակառակութիւնը, եւ լոյսի են նմանւում:

բ) Նրանց կորստի պատճառը:

գ) Ո՞ր դասից ընկան. կոչւում են օդի իշխաններ:

դ) Յաւերժահարսեր:

ե) Նրանց մեղքն աններելի է:

զ) Հրեղէն վիշապը եւ նրա պոչը:

է) Որքա՞ն է սատանայի անկումը:

Այսքանը գրքիս Երրորդ հատորում:

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ
ՍՈՒՐԲ ԴԻՈՆԷՍԻՈՍԻ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
ԳԼՈՒԽ Ը՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ

Պէտք է իմանալ, որ մտքի հիմքում ընկած է զգայական տեսողութիւնը, նրան մերձ է իմանալիների քննութիւնը, իսկ մտքից բարձր է աստուածաբանութիւնը: Որովհետեւ ներքինը զգայութիւնների

միջոցով ճանաչում է երեւացողը, ինչպէս քարը, ապա՝ կարծիքով հաստատում է նմանութիւնը եւ տարբերութիւնը, ասենք սպիտակ [լինելը]: Իսկ տրամախոհութեամբ քննում է իմանալիին, ինչպէս հրեշտակին: Եւ իմացութեան վերին գագաթով ձգտում է աստուածայինին՝ հաստատելով հաւատի լոյսով եւ Սուրբ գրքերի վկայութիւններով:

Դարձեալ, զգայարաններով ճանաչում ենք [այն ամէնը], ինչ մեզնից դուրս է, տրամախոհութեամբ, որ մեր մէջ է, իսկ բարձրագոյն խոկմամբ, որ վեր է մեզնից եւ ըստ կարողութեան լուսաւորուած՝ ճառում ենք անճառելի բաների մասին:

Պրակ Ա

Հարց. Ի՞նչ է անճառելի եւ ի՞նչ ճառելի աստուածաբանութիւնը[175]:

Պատասխան. Անճառելի են բնութեան եւ էութեան մտքերը, ճառելի են անունները:

Դարձեալ անճառելի է Անեղի անհաղորդ եւ կատարելապէս զատուած լինելը, եւ ճառելի՝ բոլոր եղանակների նախապէս ճառագայթուած հաղորդութիւնը:

Հարց. Ինչո՞ւ է Աստծոյ բնութիւնն անիմանալի:

Պատասխան. Երկու պատճառով: Նախ, որովհետեւ սահմանափակ ու չափաւորուած են գոյացել եղական արարածները՝ թէ՛ բանականները եւ թէ՛ զգայականները: Իսկ Աստծոյ բնութիւնը անեղ է, եւ քանի որ անեղ է՝ անչափ է:

Իսկ չափաւորը չի կարող չափել անչափը:

Երկրորդ՝ որովհետեւ մտքի տեսութիւնը միաւորւում է գոյութեան էութեանը, եւ որտեղ աւարտւում է բնութիւնը, այնտեղ էլ դադարում է միաւորութիւնը: Ուրեմն պարզ է, որ այն, ինչ վեր է էութիւնից, վեր է [նաեւ] գիտութիւնից, որի պատճառով էլ անանուն է Աստուած, որովհետեւ անունը յայտնում է բնութիւնը, ինչպէս մարդ [անունը յայտնում է մարդու բնութիւնը], մինչդեռ Աստծոյ բնութիւնն անյայտ է եւ անիմանալի:

Հարց. Ինչպէ՞ս է Աստուած անգիտութեամբ իմանալի:

Պատասխան. Անգիտութիւնը երկու կարգի է. մէկը ուսման պակասի պատճառով. այսպիսի տգիտութիւնը մտքի խաւար է եւ կուրութիւն: Եւ դարձեալ՝ անգիտութիւն է, երբ միտքը տարածում ենք բոլոր եղականների վրայ եւ չենք գտնում նրան, ապա հաւաքում ենք մէկի մէջ, որ դուրս է գտնւում սրանցից, եւ այսպէս անգիտութեամբ ճանաչւում է Աստուած:

Հարց. Ինչպէ՞ս է տգիտութիւնը մտքի խաւար:

Պատասխան. Ինչպէս որ զգայական խաւարը՝ մարմնի աչքին է [վերաբերում], այդպէս էլ տգիտութիւնը մտքի խաւարն է, նաեւ՝ մոլորութիւն, կապանք, ծանրութիւն, տրոհում, տգեղութիւն, որովհետեւ, երբ խաւարում է միտքը, մոլորւում է իմացութիւնը, խոչընդոտւում է ծաւալուն ընկալումը, ծան-

րանում թեթեւութիւնը, տարանջատւում ընդհանուրը եւ տգեղանում պատկերը: Իսկ հակառակ սրան, սուրբ գիտութիւնը լուսաւորում է եւ ուղղութիւն տալիս մտքին, ընդարձակում ընկալումը եւ մօտեցնում Վերինին, ժողովում մէկի շուրջը եւ ամբողջացնում պատկերը:

Պրակ Բ

Հարց. Ի՞նչ է մտքի հանգիստը:

Պատասխան. Իմանալու է, որ մտքի չարչարանքը սուտն է, տարակուսանքը եւ անհամապատասխանութիւնը: Մինչդեռ մտքի հանգիստը՝ ճշմարտութիւնն է, հաստատումն ու համապատասխանութիւնը:

Ինչը ցոյց տանք օրինակով՝ զգալի տեսութեամբ: Նախ, ինչպէս աչքի տեսնելը մարմնականին է հանգում, այդպէս էլ մտքի տեսութիւնն անմարմին բաներում է, որ նմանութիւնն է:

Երկրորդ՝ ինչպէս աչքը դէպի վեր նայելով է հաճոյք ստանում, որովհետեւ լոյսը վերընթաց է, այդպէս էլ միտքը՝ բարձրագոյնի մասին խորհելով:

Երրորդ՝ ինչպէս աչքը դիւրանում է՝ տեսակակից լինելով զգայական լոյսին, այդպէս էլ միտքը իմանալիին առնչուելիս, որովհետեւ տեսակակից է նրան:

Չորրորդ՝ աչքը գեղեցիկով է զուարճանում, միտքը՝ խօսքի գեղեցկութեամբ:

Հինգերորդ՝ աչքը զանազան տեսածներով է [գոհանում], միտքը՝ զանազան իմաստութիւններով:

Վեցերորդ՝ աչքը ախորժում է, որքան շատ է տեսնում, եւ միտքը՝ որքան աւելի շատ է իմանում:

Եօթներորդ՝ աչքը բաւարարւում է, եթէ հաստատւում է մէկ օրինակով, իսկ միտքը, եթէ ճշմարտութիւնը հաստատւում է բազում օրինակներով:

Ութերորդ՝ որքան շատ է տեսնում աչքը, այնքան աւելի է գոհանում, իսկ միտքը գոհանում է, երբ ձերբազատւում է տարակարծութիւնից:

Իններորդ՝ աչքը գոհանում է չափաւորով եւ անչափից տկարանում է, ինչպէս արեգակից. միտքը [գոհանում է] չափաւոր աստուածաբանութիւնից:

Տասներորդ՝ աչքը միշտ տեսնելով է գոհութիւն ստանում, միտքը՝ միշտ իմանալով:

ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ[176]
Պրակ Գ

Հարց. Ի՞նչ են միաւորութիւնը եւ բաժանումը, այսինքն՝ ընդհանուրը եւ յատուկ աստուածայինը:

Պատասխան. Նախ իմանալու է, որ գոյացութիւնների միութիւնը ստեղծում է նոյնութիւն, որակի նոյնութիւնը՝ նմանութիւն, քանակի միութիւնը՝ ընդհանրութիւն, յարաբերութեան միութիւնը՝ յատկանիշներ:

Դարձեալ ընդհանուրն այն է, որ պատկանում է երեքին էլ, եւ երկուսն աւելի չէ, [քան մէկը,] եւ մէկը թերի չէ նրանցից: Իսկ երեքի մէջ յատուկն այլ է եւ երկուսն աւելի է, եւ մէկից պակաս:

Արդ, Սուրբ Երրորդութեան միութիւնը բազում է եւ յայտնի, մանաւանդ որ ամէն ինչ ընդհանուր է՝ բնութիւնը, կամքը, թագաւորութիւնը եւ այլն, իսկ դէմքերի յատկութիւններն ու տարբերութիւնները շատ չեն, ուստի եւ տեսնւում են թուով: Նախ, որ ասում ենք՝ Հայր, Որդի, Հոգի. Հայրը ոչ Որդի է, ոչ Հոգի. նոյնը իմացիր եւ Որդու եւ Հոգու մասին:

Երկրորդ, ասում ենք՝ ծնող ու բխող Հայր, ծնուած ու ստացած Որդի, բխում եւ ստացում Հոգի: Տե՛ս, որ Հոգին Հօր բխումն է անձով, իսկ Որդու ստացումը՝ իմաստութեամբ, ինչպէս ցոյց ենք տուել վեցերորդ գլխի ԺԳ հարցում:

Դրան են պատշաճում նաեւ նոյն հարցի «փչող, փչուած, փչումն» եւ այլ բացատրութիւններ:

Երրորդ, Հայրն անպատճառ է եւ պատճառ: Որդին անպատճառից է եւ պատճառ: Հոգին անպատճառից է եւ ոչ պատճառ: Որովհետեւ Հայրը չունի Հայր, բայց ունի Որդի ու Հոգի: Որդին չունի Որդի, սակայն ունի Հայր ու Հոգի, քանզի ասում ենք Քրիստոսի Հոգի: Հոգին չունի որդի, չունի հոգի, այլ [որպէս] պատճառ [ունի] Հօրը: Եւ ըստ այսմ՝ առաքող եւ ոչ առաքուած, առաքուած եւ առաքող, առաքուած եւ ոչ առաքող եւ մնացեալը այս կարգի:

Չորրորդ, [ասում ենք] Հօր կարողութիւնը Որդու իմաստութիւնն ու Հոգու բարութիւնն է:

Նախ, չկարծես, թէ Հայրը տկար է ծերութեան պատճառով, Որդին տգէտ՝ երիտասարդութեան պատճառով, Հոգին զայրացող՝ ձայնի պատճառով: Եւ դարձեալ՝ կարողութիւնը նախորդում է իմաստութեանը, իմաստութիւնն էլ նախորդում է բարութեանը:

Այսպէս է [ըստ կարգի]՝ ստեղծելը, բաժանելը, զարդարելը, այլեւ՝ տալը, պարգեւելը, շնորհելը եւ մնացեալը այս կարգի:

Հինգերորդ, Հայրը նման է մէկին, որովհետեւ մէկը սկիզբն է բոլոր թուերի. Որդին՝ երկուսին, Հոգին՝ երեքին՝ ըստ Աստուածաբանի. «Մէկը շարժուեց դէպ երկուսը եւ եկաւ դէպ երեքը»[177]: Թիւ չեմ ասում, այլ մի Հայր, մի Որդի, մի Հոգի:

Վեցերորդ, որպէս յաւիտենականութիւն է Հայրը, որովհետեւ անսկիզբ ու անվախճան, որպէս մշտնջենութիւն է Որդին՝ Հօրից սկսուած ու անվախճան, որպէս ժամանակ է Հոգին՝ սկսուած Հօրից եւ հանգրուանած Որդու մէջ: Չեմ ասում ժամանակ, որովհետեւ արարիչն է ժամանակների եւ յաւիտենականի, եւ ինչպէս ոչ մի ժամանակում չի սկսուել, այդպէս էլ ոչ մի ժամանակում չի դադարելու:

Այսքանը յատկութիւնների տարբերութիւնների մասին:

Նոյն կերպ ընդհանրութիւններն էլ, թէպէտ բազմաթիւ են, սակայն արձանագրւում են տասներկու կէտերով:

Նախ, Բնութիւնը, որ նոյնն է, ինչ էութիւնը, ապա՝ Բարութիւնը, Կամքը, Անմահութիւնը, Իմաստութիւնը, Լուսաւորութիւնը, Գեղեցկութիւնը, Անփոփոխութիւնը, Ցնծութիւնը, Փառքը, Իշխանութիւնը եւ Արարչութիւնը: Սրանք են

տասներկու ընդհանրութիւնները, որոնց կարգին են եւ այլ անհամար [ընդհանրութիւններ]:

Այս իմաստով հաւատի աստիճաններն էլ տասներկուսն են: Աստուածային առաքինութիւնները եւս, այսինքն՝ Հաւատը, Յոյսը, Սէրը նոյն թուով են: Այսպէս էլ երեք անձերի՝ Հայր, Որդի, Հոգի անունները: Նոյնպէս եւ Երրորդութիւն ասելը նոյն թուով է բացայայտւում:

Այսքանը՝ ընդհանրական վարդապետների՝ միութեան եւ զանազանութեան վերաբերեալ սրբաբանութիւնները:

Դարձեալ՝ աստուածութեան ընդհանրութիւններն եւ առանձնայատկութիւնները բազում [ձեւերով են] բացատրւում Սուրբ Դիոնէսիոսի կողմից: Նախ, միասնական ու ընդհանուր են Գերադրականները, ինչպէս «Գերագոյն Աստուած», «Տէր տէրանց». ժխտականները, ինչպէս «անեղ», «անմահ». պատճառականները, ինչպէս «բարի», «իմաստուն» եւ այլն: Իսկ առանձնայատկութիւն է Հայր եւ անծին լինելը, Որդի եւ Բան, Հոգի եւ բխում, որովհետեւ աստուածայինն ընդհանուր է, բացի դէմքերի առանձնաւորութիւնից:

Երկրորդ՝ ընդհանուր է անձերի փոխյարաբերութիւնը, ինչպէս Որդին Հօր մէջ, Հայրը Որդու մէջ, Հոգին՝ Հօր եւ Որդու մէջ եւ ընդհակառակը:

Առանձնայատկութիւն է իրարից անշփոթ տարբերուելը, ինչպէս երեք լապտերների լոյսը միաւորուած է, բայց զատորոշմամբ առանձնացուած:

Երրորդ՝ Երրորդութեան մէջ ընդհանուր է Սուրբ Միութիւնը, որովհետեւ մէկ է Հայրը, մէկ է Որդին, մէկ՝ Հոգին:

Եւ առանձնայատուկ է, որովհետեւ մէկը ծնող է եւ բխող, մէկը ծնուած է եւ չբխած, եւ մէկը՝ բխած, բայց չծնուած:

Ինչպէս ասում է սուրբ Դիոնէսիոսը «Աստուածային անունների» երկրորդ գլխում՝ «Գերագոյն աստուածութեան աղբիւրը միայն Հայրն է, սակայն հակառակ չեն միմեանց»: Նաեւ ասում է. «Աղբիւրեղէն աստուածութիւնը Հայրն է, իսկ Որդին ու Հոգին՝ Հօր աստուածածնողութիւնից են, ինչպէս աստուածատունկ բողբոջներ իբրեւ ծաղիկներ եւ գերագոյն լոյսեր»[178]:

Չորրորդ՝ ընդհանուր է մի բարերար կամքից առաջ եկածների հաղորդական անհաղորդութիւնն՝ ըստ համեմատութեան, ոմանց միայն գոյութիւն, այլոց՝ կեանք եւ միտք եւ իմացութիւն, ինչպէս մոմի վրայ կնքուած դրոշմը: Իսկ առանձնայատկութիւն է, որովհետեւ տարբեր ու բաժանուած է արարածներից եւ նրանցից ոչ մէկի նման չէ. ոչ մասն է արարածների եւ ոչ էլ ամբողջը: Այսինքն՝ միաւորութեամբ տարբերւում եւ առանձնանում է, իսկ բազմութեամբ միաւորուած է, ինչպէս մատանու կնիքը՝ բազմաթիւ մոմերի վրայ:

Եւ ինչպէս «այբ» կոչուող գիրը, որ բազմաթիւ վանկերում բաժանւում է, սակայն միշտ մնում է նոյնը, այդպէս էլ Աստծոյ էութիւնն է, որ բազմանում է էակների մէջ: Իսկ «Աստուած» անունը տրուելով բազում աստուածութիւնների՝

մնում է միշտ նոյն մի Աստուած, ըստ Պօղոսի՝ «Հայր Աստուած մեր մէկն է, որից եւ ամէնքը» (Ա Կորնթ. Ը 6): Այս կերպ է, որ բոլոր արարածները լծակցւում են մէկին՝ մի սկզբի, մի Աստծոյ, մի խնամողի:

Հինգերորդ՝ ըստ այլ եղանակի է միութիւնն ու յատկութիւնը, համաձայն որի Սուրբ Երրորդութիւնից մէկը՝ Բանն-Աստուած, լուծուեց մեր բնութեան մէջ՝ անքակտելի միաւորութեամբ եւ կատարեալ Աստուած դարձաւ կատարեալ մարդ: Ահա այստեղ երեւում են երկու առանձնայատկութիւններն ու երկու ընդհանրութիւնները: Նախ, որ Սուրբ Երրորդութիւնից մէկը մարդացաւ: Երկրորդ՝ որ միայն մարդկային ցեղից էր: Իսկ ընդհանրութիւնն այն է, որ ողջ Բանն-Աստուած իր կատարելութեամբ ներառեց ամբողջ կատարեալ մարդկային բնութիւնը, եւ կատարեալ Աստուած դարձաւ կատարեալ մարդ:

Այսպիսին են միութիւններն ու զանազանութիւնները, որ ընդհանուրն ու առանձնայատուկն է Սուրբ Երրորդութեան մէջ:

Պրակ Դ

Հարց. Ինչպիսի՞ համեմատութիւն [կարելի է անել], որ Բանն-Աստուած վերցրեց մարդկային բնութիւնը:

Պատասխան. Բազմաթիւ:

Նախ, որ Բանն-Աստուած վերցրեց մարդկային բնութիւնը եւ միաւորեց իր աստուածութեանը՝ ոչ թէ մաս վերցնելով կամ մասամբ միաւորելով, այլ ամբողջն ամբողջին [միաւորեց], ըստ այդմ՝ «Նրանում է մարմնապէս բնակւում աստուածութեան բովանդակ լրումը» (Կողոս. Բ 9):

Երկրորդ՝ Բանն-Աստուած նախորդողն ու սկիզբն է արարածների, որովհետեւ նրանով եղան ամէնքը, իսկ մարդը վերջինն էր բոլոր եղականներից:

Արդ, առաջինը վերցնելով վերջինին՝ դարձրեց առաջին:

Երրորդ՝ Բանը Հօր պատկերն է, իսկ մարդը՝ Բանի պատկերը[179]. պատկերը վերցրեց պատկերը կամ նախատիպը՝ պատկերը:

Չորրորդ՝ Բանը գերագոյնն է իմացականների մէջ, մարդը գերագոյնն է զգայականների մէջ, որի պատճառով մարդ եղաւ [Բանը]:

Հինգերորդ՝ Բանից առաջացան երկու էութիւն, այսինքն՝ իմացական եւ զգայական, որովհետեւ եթէ վերցնէր միայն հրեշտակներից՝ կպակասէր զգայականը, իսկ եթէ վերցնէր միայն կենդանիներից՝ կպակասէր իմանալին: Այդ պատճառով էլ մարդ եղաւ, որ իրենից առաջ եկածներին միաւորի իր մէջ:

Վեցերորդ, Աստծոյ Որդին եղաւ մարդու Որդի, որպէսզի մեզ էլ Աստծոյ որդիներ դարձնի: Եւ քանի որ Աստծոյ Որդին բնութեամբ մարդու Որդի եղաւ, մի՛ երկմտիր, որ դու եւս կլինես շնորհով Աստծոյ Որդի:

Եօթներորդ, Աստուած մարդ եղաւ եւ իջաւ երկիր, որպէսզի դու էլ Աստուած լինես եւ բարձրանաս երկինք: Ըստ այդմ՝ «Ես ասացի, թէ աստուածներ էք» (Սղմ. ՀԱ 6), քանզի իզուր չէր նրա գալուստը, այլ որպէսզի մեծամեծ գործեր անի:

Ութերորդ, նա ծնուեց ըստ մարմնի, որպէսզի դու ծնուես ըստ Հոգու. նա [ծնուեց] Կոյսից, որպէսզի դու ծնուես կոյս աւազանից: Եւ նա, որ Հոգով էր ծնուած՝ ծնուեց մարմնով, որպէսզի դու, որ մարմնով ես ծնուել, վերստին ծնուես ըստ Հոգու:

Պրակ Ե

Հարց. Ինչո՞ւ ենք ասում Երրորդութիւն:

Պատասխան. Նախ, որովհետեւ երեք թիւը կատարեալ է, քանի որ ունի սկիզբ, մէջ, աւարտ: Նոյն կերպ եւ կատարեալ է Երրորդութիւնը. Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի:

Երկրորդ՝ մէկը սկիզբն է, երկուսը՝ մէկից: Նոյն կերպ Հայրը սկիզբն է, Որդին ու Հոգին՝ նոյն սկզբից:

Երրորդ՝ երեքը երեք մէկ է, այսինքն՝ մէկ, մէկ, մէկ. նոյն կերպ՝ մի Հայր, մի Որդի, մի Հոգի:

Չորրորդ՝ երեքն ունի եռեակի նոյն բնութիւնը, նոյնպէս Սուրբ Երրորդութիւնը նոյնն է բնութեամբ:

Իսկ Երրորդութիւն ենք կոչում՝ բաժանելով երեք թուի: Նախ, որովհետեւ երեք թիւը երեքից է [բաղկացած] եւ ոչ թէ մէկից, եւ Երրորդութիւնն էլ երեքի միութիւն է եւ մի Երրորդութիւն, այսինքն՝ մէկ երեք եւ երեք մէկ: Եւ ոչ թէ ինչպէս Պետրոս, Պօղոս եւ Յովհաննէս են, որ երեք մարդ են եւ մի բնութիւն, այլ մի են անհատականութեամբ, որն ունի երեք դէմքի յատկութիւն, ինչպէս մէկ է արեգակն՝ իր սպիտակ ու դեղին լոյսով: Եւ մէկն է [նրա] հուրը, լոյսը, ջերմութիւնը: Եւ ինչպէս որ մէկն է Աստծոյ Հոգին, Բանը եւ կենդանութիւնը, որ նրա խօսքն ու շունչն են, մէկն են նաեւ նրա միտքը, իմացութիւնը, կամքը: Ուստի եւ պարզ է, թէ ինչու ենք ասում Երրորդութիւն Աստուած, Երրորդութիւն Անեղ եւ ոչ թէ՝ երեք Աստուած, կամ երեք Անեղ, այլ մի Աստուած եւ մի Անեղ:

Երկրորդ՝ Երրորդութիւնը ցոյց է տալիս երեքի համագոութիւնը. նրանց մէջ չկան առաջին ու վերջին, այլ հաւասար ու համազօր են: Եւ երեք թիւը մէկը միւսի ետեւից է:

Երրորդ՝ Երրորդութիւնը ցոյց է տալիս եռեակի մի ընդհանուր բնութիւնը, ինչպէս ասում ենք՝ մարդ եւ մարդկութիւն, ձի եւ ձիութիւն, հակադրուելով Արիոսին, որ ասում է՝ երեք թիւն ունի երեք բնութիւն՝ մենք ասում ենք՝ երեք անձերի մի բնութիւն:

Եւ սրանով են զանազանւում.

Նախ, որովհետեւ թիւը պատահական քանակ է ու մեզ հասկանալի: Իսկ Երրորդութիւնը ոչ քանակ է, ոչ չափ, ոչ պատահականութիւն եւ ոչ էլ հասկանալի եղանակների մտքի համար:

Երկրորդ՝ երեք թուի մէջ մէկը պակաս է, քան երկուսը միասին եւ երկուսն աւելի, քան մէկը: Իսկ Սուրբ Երրորդութեան մէջ մէկը պակաս չունի, քան երկուսը, եւ ոչ էլ երկուսն աւելի, քան մէկը, որովհետեւ Հայրն ունի ամբողջ լրումը Որդու եւ Հոգու, նոյնպէս՝ Որդին եւ Հոգին:

Երրորդ՝ մէկ թիւը երկուսից անկատար է: Իսկ Սուրբ Երրորդութեան մէջ Հայրը կատարեալ է, Որդին կատարեալ, Հոգին կատարեալ, եւ կատարելութիւնը չի աւելանում կամ պակասում:

Չորրորդ՝ երեք թիւը փոփոխական է, երբ ասում ենք մէկ, երկու, երեք, փոխուեց մէկից եւ դարձաւ երկու, փոխուեց երկուսից եւ դարձաւ երեք: Իսկ Սուրբ Երրորդութիւնը անփոփոխ է, որովհետեւ Հայրը ծնեց Որդուն եւ բխեցրեց Հոգին եւ չփոխուեց Հօր գոյութիւնը: Նոյնպէս եւ Որդին, եւ Հոգին:

Հինգերորդ՝ որովհետեւ երեք թիւը տրոհւում է եւ երբ բաժանում ես նրանից մէկը՝ երկուսն արդէն մէկի հետ չէ: Իսկ Սուրբ Երրորդութեան մէջ անբաժանելի է Հայրը Որդուց եւ Հոգուց, Որդին՝ Հօրից ու Հոգուց, Հոգին՝ Հօրից ու Որդուց: Եւ սա ուղղակի ընկալիր՝ թէ՛ իբրեւ լծակցութիւն եւ թէ՛ իբրեւ բնութեամբ միաւորութիւն, ըստ այդմ՝ «Հայրն իմ մէջ է եւ ես՝ Հօր» (Յովհ. Ժ 38) եւ՝ «Սուրբ Հոգով եմ կատարում գործերս» (Յովհ. ԺԴ 12):

Հարց. Ընդհանուր է Երրորդութիւնը, ընդհանուր է նաեւ աստուածութիւնը: Ա՛րդ, եթէ ասում ենք Հայր-Աստուած, Որդի-Աստուած, Հոգի-Աստուած, ապա կարո՞ղ ենք ասել՝ Հայր-Երրորդութիւն, Որդի-Երրորդութիւն, Սուրբ Հոգի-Երրորդութիւն:

Պատասխան. Չենք կարող ասել, որովհետեւ աստուածութիւնն ընդհանուր է բնութեամբ, իսկ Երրորդութիւնն ընդհանուր է անձերով: Եւ քանի որ անձերով մասնայատուկ են եւ բնութեամբ՝ մէկ, ուստի եւ Երրորդութիւնը չի ասւում մի անձի [Երրորդութիւն], այլ Աստուած կամ աստուածութիւն՝ ըստ բնութեան միութեան:

Հարց. Ինչո՞ւ է կոչւում Հայր:

Պատասխան. Որովհետեւ նա է աղբիւրը եւ սկիզբը, որից բխում են ամէնքը:

Հարց. Ինչո՞ւ է կոչւում Որդի:

Պատասխան. Որովհետեւ ինչպէս ճառագայթը՝ արեգակից, Որդին ծնուել է Հօրից:

Հարց. Ինչո՞ւ է կոչւում Հոգի:

Պատասխան. Որովհետեւ յաւիտենապէս բխում է Հօրից առ Որդին եւ նրանով գալիս դէպի մեզ, ինչպէս ճառագայթի միջոցով արեգակի ջերմութիւնը:

Դարձեալ, որ ստեղծում է ամէն ինչը, Հայր է կոչւում. եւ որ ամէն ինչ ամբողջացնում է, որպէսզի չտրոհուեն, Որդի, իսկ որ շնչելով կենդանացնում է եւ զարդարում ամէն ինչ, կոչւում է Սուրբ Հոգի:

Հարց. Ինչո՞ւ մայր չի կոչւում իգական սեռից:

Պատասխան. Որովհետեւ ծնունդը սկզբնապէս Հօրից է:

Հարց. Ինչո՞ւ չի անուանւում դուստր:

Պատասխան. Որովհետեւ Որդին աւելի նման է Հօրը, քան դուստրը:

Հարց. Սուրբ Հոգին ինչո՞ւ չի կոչւում Որդի:

Պատասխան. Որովհետեւ ոչ թէ ծնունդ է, այլ բխում, ինչպէս շունչն ու կեանքը՝ մեր հոգուց:

Հարց. Ինչո՞ւ, երբ փառք ենք տալիս՝ նախ Հօրն է, նրա հետ Որդուն եւ ապա՝ Հոգուն:

Պատասխան. Համագոյ ու միասնական Սուրբ Երրորդութեան մէջ չկան առաջին ու վերջին, մեծ ու փոքր, երէց ու կրտսեր: Եւ ընդհանրապէս, նախնիները հինգ եղանակ են նշում՝ ժամանակով, բնութեամբ, դասով, պատուով, պատճառով: Ասածներիս մէջ Աստծուն ոչ մէկը չի պատշաճում, միայն ըստ պատճառինը: Ա՛րդ, քանի որ Հայրը պատճառ է Որդու ծննդեան եւ Հոգու բխման, ուստի Հայրը նախադաս է, իսկ նրա հետ՝ Որդին, եւ ոչ թէ, ինչպէս ոմանք են կարծում՝ Որդին Հոգու բխման պատճառն է: Ճիշտ պատասխանները երեքն են: Նախ, որ Հայրը պատճառ է Հոգու բխման եւ Որդուց վերցնելու, քանզի Սուրբ Հոգին բխում է Հօրից եւ առնում Որդուց:

Երկրորդ, որ Որդին յարաբերակից է Հօրը եւ համագոյակից բնութեամբ:

Երրորդ, Որդին ծնունդ է իբրեւ էութիւն, Հոգին իբրեւ կեանք, իսկ գոյութիւնն առաջ է, քան իրը, ապա յետոյ կենդանութիւնն է:

Պարկ Զ

Հարց. Ինչպէ՞ս է Աստուած մէկը, ըստ այնմ՝ «Քո Տէր Աստուածը մէկ Տէր է» (Ելք Ի 2), թէ՝ «Մէկն է Հայր Աստուած եւ մէկը Տէր Յիսուս Քրիստոս» (Ա Կորնթ. Ը 6):

Պատասխան. Պէտք է իմանալ, որ այլ է մէկը, այլ՝ միակը, որովհետեւ մէկն ընդհանուր է, իսկ միակը մասնաւոր ու առանձնայատուկ, որովհետեւ ամէն միակ՝ մէկն է, սակայն ամէն մէկը՝ միակ չէ. ինչպէս եթէ ասենք մի հոտ, մի շեղջ, մի լիտր. սրանք մէկն են, սակայն միակ չեն:

Իսկ Աստուած կոչւում է մէկը, նախ, որովհետեւ բազմաթիւ չէ, այլ մէկն է:

Երկրորդ՝ որովհետեւ պարզ է, ոչ՝ բաղադրեալ: Երրորդ՝ մէկն է, այսինքն՝ ամբողջ, եւ ոչ մաս եւ անկատար: Չորրորդ՝ մէկն է եւ միակ, որովհետեւ չի բաժանւում ու չի տրոհւում:

Հինգերորդ՝ կոչւում է մէկը, որովհետեւ ինչպէս միակն է թուերի սկիզբ եւ ոչ թիւ, այդպէս էլ Աստուած է արարածների սկիզբ, սակայն ոչ արարած:

Վեցերորդ՝ միակը կրկնուելով բազմանում է, եւ Աստուած շարունակողն է էակների բազմութեան:

Եօթներորդ՝ միակը բոլոր թուերի վախճանակէտն է, Աստուած՝ բոլոր գոյաւորների:

Ութերորդ՝ մէկը կրկնուելով դառնում է տասը, հարիւր, հազար, բիւր եւ անսահմանութիւն: Այդպէս էլ մէկ Աստծուց եղան հրեշտակների տասը դասերը՝ մարդկանց հետ, հարիւր գնդերը՝ ըստ ոչխարների մասին առակի եւ երկրի վրայ գտնուող հազար տեսակ կենդանիներն ու բիւրաւոր անկենդան բոյսերը, անթիւ գոյաւորները:

Իններորդ՝ մէկը երեւում է տասի մէջ, իսկ հարիւրի, հազարի, բիւրի մէջ աղօտ ու ծածկուած է [երեւում]: Եւ Աստուած տեսանելի է բանականների մէջ՝ իմացութեամբ եւ պատկերով, մինչ-

դեռ կենդանիների, բոյսերի, գոյացութիւնների մէջ [տեսանելի է] սակաւ նմանութիւններով:

Տասներորդ՝ ինչպէս մէկն է տասնեակի, հարիւրեակի, հազարեակի, բիւրաւորի հիմքում եւ այդպէս էլ նրանցից վեր, նոյնպէս եւ Արարիչն Աստուած ակունքում ու հիմքում է ամէն ինչի, որ կրում է իր զօրութեան՝ բոլոր կողմերով եւ բոլոր արարածներից վեր ու գերազանց է:

Տասնմէկերորդ՝ այնպէս, ինչպէս մէկը բազմանալով շատանում է, իսկ բազումից մէկը դուրս գալիս՝ պակասում է, այդպէս էլ մի Աստծոյ կողմից արարածների մէջ իջածը ընդարձակում է մեր ընկալումները, իսկ սրանցից դէպի նա՝ դարձեալ սեղմւում են:

Տասներկուերորդ՝ բազմութեան մէջ բազմանում է եւ իր մէկութեան մէջ կայ եւ մնում է ըստ մի օրինակի:

Նաեւ զանազանւում է թուով:

Նախ, թիւը պատահականութիւն է, իսկ Աստծոյ մէջ [պատահականութիւն] չկայ:

Երկրորդ, թիւը քանակ է, իսկ Աստուած չի չափւում:

Երրորդ, թիւը գիտելիքներով դառնում է մերը, իսկ Աստուած, ինչպէս ասացինք, չի պարունակւում մեր իմացութեան մէջ, հետեւաբար վեր է մէկից ու միակից:

Դարձեալ՝ իմանալու է, որ երկու կերպով է հասկացւում մէկը: Կայ մէկ, որ թուերի սկիզբն է. այս մէկը չի ասւում Աստծոյ պարագային, որովհետեւ քանակ է, իսկ Աստծոյ մէջ պատահականութիւն չկայ: Եւ կայ մէկ, որ էութեան հաստատումն է, եւ սրանով է, որ ասւում է «մի Աստուած», այսինքն թէ՝ «կայ», որը ցոյց չի տալիս պատահականութիւն:

Եւ սա է մէկի սահմանումը. մէկ է, եթէ ինքնին անբաժանելի է եւ միւսներից բաժանուած է: Այդպէս էլ Աստծոյ էութիւնն ինքնին անբաժանելի է, սակայն բաժանուած է արարածներից:

Հարց. Ինչպէ՞ս է բազմանում ու բազմապատկւում Աստուած:

Պատասխան. Նախ, Հօր մի անձը բազմացաւ Որդու անձով եւ բազմապատկուեց Սուրբ Հոգու անձով:

Երկրորդ՝ բազմանում է նախօրինակի մէջ եւ բազմապատկւում ստեղծուածների արարչագործութեան մէջ:

Երրորդ՝ բազմանում է ստեղծուածների էութեան մէջ եւ բազմապատկւում [նրանց] կեանքերով, շնորհներով եւ այլ պարգեւներով:

Չորրորդ՝ բազմանում է սեռի եւ տեսակի մէջ, բազմապատկւում դարձեալ տեսակներով նրանց ու անհատների մէջ:

Հինգերորդ՝ բազմանում է առաջինների ու սկզբնաւորների մէջ, բազմապատկւում՝ նրանցից ածանցուածների եւ առաջացածների մէջ:

Պրակ է

Հարց. Ի՞նչ է նշանակում Աստծոյ մասին ասելը, թէ՝ սկիզբ ու պատճառ է:

Պատասխան. Յանձին պառճառի՝ նոյնն է սկիզբը եւ պատճառը, այլ է սակայն պատճառուածների պարագային: Նախ, որպէս համաբուն՝ Հայրը

սկիզբն է Որդու եւ Սուրբ Հոգու, մինչդեռ բոլոր արարածների համար պատճառ է:

Երկրորդ՝ սկիզբն է նախօրինակի եւ պատճառն էակների, պատկերը եւ նմանը նոյն նախօրինակի:

Երրորդ՝ սկիզբն է իմանալիների եւ պատճառը զգայականների, որոնք յաւիտենականներն ու ժամանակաւորներն են:

Չորրորդ՝ սկիզբն է առաջինների եւ պատճառը վերջինների, որոնք գոյանում են միջնորդութեամբ, ինչպէս տարրերից կամ՝ ծնողներից:

Հինգերորդ՝ էութեան սկիզբն է եւ պատճառը կեանքի, շնորհների եւ այլնի:

Վեցերորդ՝ սկիզբն է ներգործելու եւ պատճառն աւարտի, որովհետեւ սկսուելով նրանից՝ աւարտւում ենք նրանով:

Պարկ Ը
ԷԻ ԵՒ ՈՉ ԷԻ ՄԱՍԻՆ[180]

Պէտք է իմանալ, որ «ոչ էն» բացատրւում է շատ եղանակներով:

Նախ, պարզ «ոչ էն», որը ոչ մի տեղ եւ ոչ մի ժամանակի մէջ չի, որ չկար, չկայ եւ չի լինի, ինչպէս ոչինչը:

Երկրորդ՝ «ոչ է» ասւում է գերագոյն էն եւ գոյը, որ էութիւնից է եւ ոչ էութիւնից, գերագոյն եւ ոչ գերագոյն:

Երրորդ՝ «ոչ է» ասւում է նաեւ անձեւ նիւթը, որը չունի ձեւ, տեսակ եւ որակ:

Չորրորդ՝ ասւում է «ոչ է» եւ հակառակ տեսակը, ինչպէս՝ անմարմինը, անկենդանը, անշունչը: Ոմանք սա նիւթի կարգն են դասում, սակայն ճիշտ չէ, որովհետեւ նիւթն առհասարակ անտեսակ է:

Հինգերորդ՝ «ոչ է» ասւում են նիւթական [տարրերը], որոնք հանդէս են գալիս լինելութեան եւ ոչնչանալու ժամանակ, որ երբեւէ չեն եղել եւ յետոյ չեն լինելու:

Վեցերորդ՝ «ոչ է» ասւում է եւ այն բացարձակը, որ լինելու են ապագայում, որովհետեւ դեռեւս չկան, սակայն լինելու են մշտապէս:

Եօթներորդ՝ «ոչ է» ասւում է չարը, որովհետեւ բարու պակասութիւնն է եւ բնութիւնից դուրս: Եւ պէտք է իմանալ, թէ քանի եղանակով, որ ասուեց «ոչ-էն», նոյնքան եղանակով էլ ասւում է «էն», որովհետեւ ներհակ են միմեանց:

Նախ «էն» երեքի է բաժանւում. էութիւնների էակը, որ նախագոյ պատճառն է ամէնքի: Եւ սկզբնականը, որ նախօրինակն ու նախագաղափարն է: Եւ եղականների էութիւնը, որ պատկերն ու նմանութիւնն է նախօրինակի:

Դարձեալ եղական էութիւնը բաժանւում է երկու տեսակի՝ գոյացութեան եւ պատահման: Գոյացութիւնն էլ՝ երկուսի. առաջին եւ երկրորդ, որ անհատն է, տեսակը եւ սեռը: Պատահմունքը՝ քանակը, որակը եւ այլն:

Հարց. Ինչո՞ւ է ասւում, թէ առաջին պատճառը նախագոն է:

Պատասխան. Երեք պատճառով: Նախ՝ որ նախորդում է բոլոր գոյաւորներին՝ թէ սկզբով, թէ էութեամբ:

Երկրորդ՝ նախ գոյ է եւ էութիւն, ապա՝ բարի, իմաստուն եւ այլն: Եւ «է-ն»

անդրանիկ անունն է եւ առաջ է, քան բարին, ազնիւը եւ այլն. այս պատճառով է, որ Մովսէսին ասաց. «Ես եմ որ էնն» (Ելք Գ 14):

Երրորդ՝ [Արարիչը] նախ «է-ին» եւ գոյին առնչակցեց եղականներիս, ապա՝ կեանքին, իմաստութեանը եւ այլնին, որովհետեւ նախ մեր գոյութիւնն է, ապա՝ բարի լինելը:

Հարց. Ինչո՞ւ են նրան կոչում՝ էր, է եւ եղիցի, ըստ այդմ՝ «Ես եմ որ էն» (Ելք Գ 14), «Ի սկզբանէ Բանն էր» (Յովհ. Ա 1), եւ՝ եղիցի Աստուած ամէն ամէնքի:

Պատասխան. Երեք պատճառով, որովհետեւ միշտ է եւ ոչ թէ՝ երբեմն կայ եւ երբեմն չկայ:

Երկրորդ, նա է սկիզբը, մէջտեղը, աւարտը:

Երրորդ, նրանում է անցեալը, ներկան, ապագան:

ՆԱԽՕՐԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ Թ

Հարց. Ի՞նչ է նախօրինակը:

Պատասխան. Ոմանք ասում են՝ սկզբնական տարրերն են, որոնցից եղան բոլոր մարմնաւոր էութիւնները:

Սա ճիշտ չէ:

Նախ, որովհետեւ նախօրինակը պարզ է եւ երկրպագելի, անապական եւ անփոփոխ: Իսկ տարրերը պարզ չեն, երկրպագելի չեն, անապական ու անփոփոխ չեն: Բացի այդ, նախօրինակը շօշափելի չի դառնում, ինչպէս տարրերը, եւ չի ձեւաւորւում իբրեւ նիւթ եւ տեսակ: Եւ նախօրինակը չէր, որ արարեց մեզ: Նախօրինակը Աստծոյ մէջ է, նրա տեսութեան եւ բարի կամքի մէջ:

Ա՛րդ, Աստծոյ մէջ անձնաւորուած էութիւն չկայ, ինչպէս Երրորդութեան անձերը, եւ բաժանուած չէ նրանից, ինչպէս հրեշտակների դասը, եւ ոչ էլ սոսկ մտածողութիւն է Աստծոյ տեսութեան մէջ, որովհետեւ Աստծոյ մօտ սոսկ արտաքին տեսութիւն չէ, այլ նա իր մէջ է տեսնում նախօրինակը ու մեզ՝ մեր նախօրինակում, այսինքն՝ նախապէս Աստծոյ մէջ մեր լինելու եւ յետոյ մեր էութեան մէջ լինելու, եւ ոչ թէ դէպի բարի կամք փոխուելու [իմաստով]: Ինչպէս որ նախքան մեր լինելը կար մեր սկիզբը եւ այժմ էլ կայ նոյն սկիզբը եւ յետոյ էլ՝ վախճանին անփոփոխ կմնայ իբրեւ գոյութեան սկիզբ:

Այս է պատճառը, որ երբեմն կոչւում է սկիզբ, եւ մենք էլ՝ նրանից սկսուածներ:

Երբեմն էլ [կոչւում է] նախօրինակ, որ միշտ կայ Աստծոյ տեսութեան մէջ: Երբեմն էլ՝ նախագաղափար, այսինքն՝ առաջին օրինակի իմաստով, եւ մենք՝ նրա պատկերը եւ նմանութիւնը: Երբեմն էլ՝ նախասահմանում, ըստ Պօղոսի՝ «Աստծոյ Որդուն սահմանելով» (Հռոմ. Ա 4), [համաձայն որի] Աստուած նախապէս սահմանեց մեզ իր կամքով՝ իբրեւ անփոփոխելի սահմանուածներ: Նոյնը եւ կեանքի դպրութեան գիրքը (տե՛ս Փիլիպ. Դ 3, Յայտ. Գ 5, ԺԳ 8), որ նախասահմանութեամբ անջնջելի է դարձել:

Եւ իմանալու է, որ նախօրինակի եւ նախասահմանութեան արարող պատճառն Աստուածն է, նիւթական պատ-

ճառը՝ այն իրը, որ նախասահմանուում է, իսկ տեսական պատճառը՝ հերթականութիւնը, որովհետեւ շնորհը այստեղ է տրուում, իսկ փառքը՝ ապագայում: Եւ կատարողական պատճառն [նպատակը] այն է, որ լինենք սուրբ եւ անբիծ:

Հարց. Այս նախօրինակը մէ՞կն է, թէ՞ բազմաթիւ:

Պատասխան. Նախօրինակը մէկն է եւ պարզ, ինչպէս որ մէկն են Աստծոյ էութիւնը, տեսութիւնը, ճշմարտութիւնը: Սակայն շատ են եւ զանազան նախօրինակի պատկերով ու նմանութեամբ բազմացածները, որովհետեւ Աստուած մի նախօրինակով տեսնում է բազումը, ինչպէս անմարմնութեամբ՝ մարմնաւորը, յաւիտենականով՝ ժամանակաւորը: Այսպէս էլ միեւնոյն սկզբից, որ նախօրինակն է, շատերն են սկիզբ առնում ըստ նախօրինակի: Այսպիսով, նախօրինակը մէկն է Աստծոյ մէջ, սակայն բազում է ըստ բազում պատկերների: Ինչպէս որ մէկ թիւը բազումի մէջ բազմանում է, սակայն մնում է նոյն մէկը: Եւ կամ, ինչպէս շրջանագծի շառաւիղները միանում են կենտրոնին, իսկ կենտրոնից հեռանալով՝ բաժանուում են միմեանցից: Կամ էլ ինչպէս նոյն սեռը, որ բազմաթիւ տեսակների է բաժանուում: Եւ ինչպէս Հոգու զօրութիւնը, որ մէկն է եւ ամէն մի մասի մէջ մասնաւորուած է: Եւ կամ ինչպէս մէկ է արեգակը եւ բազմանում է այն ամէնի մէջ, ինչի վրայ ներգործում է: Եւ կամ ինչպէս մէկ է ձայնը, որ բազմանում է բազմաթիւ ականջներում: Եւ կամ ինչպէս մէկ է մատանու կնիքը եւ բազմանում է կնքուած մոմերի վրայ:

Ահա, այսպիսինն է մէկ նախօրինակն ինքնին, որ բազմանում է իրենից բազմացածների մէջ:

Այսքանն այս մասին:

Իսկ մնացածը ցոյց կտանք առաջիկայում:

Պրակ Ժ

Հարց. Աստուած ինչպէ՞ս է անեղ եւ ինչպէ՞ս ենք անեղ ասում «ոչ-էին»:

Պատասխան. Իմանալու է, որ չորս կերպ է ասւում անեղը:

Նախ՝ ասւում է անեղ, որ դեռ չի եղել, ինչպէս այն, որ լինելու է ապագայում, ինչը կարիք ունի սկզբի:

Երկրորդ՝ անեղ է ասւում այն, որ չի աւարտուել, ունի սկիզբ եւ կարիք ունի աւարտի:

Երրորդ՝ անեղ է ասւում այն, որ մի բանից է եւ մի բանի մէջ չէ, ինչպէս հրեշտակները, որ յաւիտենականի համար են եղել, սակայն ժամանակի մէջ անեղ են. սա կարիք ունի եւ կարիք չունի երկուսի, այսինքն՝ սկզբի եւ աւարտի:

Չորրորդ՝ անեղ ասւում է այն, որ տարածութեան ու ժամանակի մէջ չէ, այսինքն՝ ոչինչը. սա ամբողջութեամբ կարիք ունի սկզբի եւ աւարտի:

Իսկ բացարձակ եւ գերազանց անեղն Աստուած է, որովհետեւ անեղ էութիւն է, մշտագոյ եւ ինքնակատար: Քանզի անեղ էութիւն լինելով՝ նա տարորոշուած է անեղ ոչնչից, մշտագոյութեամբ՝ հրեշտակներից, ինքնակա-

տար լինելով՝ նրանցից, ովքեր կարիք ունեն սկզբի ու աւարտի: Իսկ բացարձակը եւ գերազանցը բնորոշում է երրորդութեան նոյն անեղութիւնը:

Դարձեալ անեղ է ասւում Աստուած, իբրեւ անեղների պատճառ եւ նախորդող բոլոր անեղների, վախճանակէտը եւ ընդգրկումը բոլոր անեղների:

Հարց. Եթէ Աստուած անեղ բնութիւն ունի, իսկ արարածները՝ եղական, ինչպէ՞ս է, որ Անեղը եղականներ առաջ բերեց, եթէ եղականը եղականից, իսկ անեղը անեղից է առաջանում:

Պատասխան. Նախ, որ անեղ է Աստուած, ըստ որում՝ անսկիզբ եւ անեղ էին արարածներն ըստ անգոյութեան, որ մեծապէս կարգաւորեց, ինչպէս եւ դու ես ասում, որովհետեւ անեղ էութեամբ Աստուած անեղներին էութիւն տուեց:

Դարձեալ, քանի որ բնութեամբ անեղ է Աստուած, ապա եւ անհուն է զօրութեամբ, որովհետեւ եղանակ բնութեան զօրութիւնն անսահման չէ: Արդ, ըստ անեղ էութեան [Աստուած] առաջ բերեց Որդու եւ Հոգու անեղ էութիւնը, եւ ըստ անհուն զօրութեան՝ եղական էութիւնները, որովհետեւ անհուն զօրութիւնը կարող է ընդդիմադիրն էլ [առաջ բերել], որովհետեւ ամենազօր է, ինչպէս ասենք՝ անժամանակը ժամանակաւորին, անմարմինը մարմնաւորներին, անփոփոխը՝ փոփոխականներին, անսկիզբը՝ սկզբնաւորներին եւ մնացեալը՝ այս կերպ:

Աստուած նաեւ անեղ է բնութեամբ եւ անեղ գիտութեամբ, եւ որովհետեւ գիտութեամբ անեղ է, ուստի անփոփոխ է: Արդ, գիտութեամբ անեղը եւ անփոփոխը գիտէ եղականներիս եւ փոփոխականներիս: Եւ այս է Աստծոյ նախագաղափար տեսութիւնը, ինչպէս ասում է առաքեալը՝ «ընտրուած առաջ, քան աշխարհի լինելը» (Եփես. Ա 4):

Արդ, եղականներս, որ յետոյ էութիւն ստացանք՝ անեղացանք Աստծոյ տեսութեան մէջ: Արդ կարգաւորուած է, որպէսզի անեղ Աստուած՝ ըստ տեսութեան անեղին եղելութեան բերի՝ ըստ իրենց գոյացութեան:

Նաեւ, անեղ ու անսկիզբ Հայր Աստուած առաջ, քան յաւիտենութիւնը ծնեց ու բխեց անեղակից Որդուն ու Սուրբ Հոգուն: Արդ, Որդին ու Հոգին անեղակից լինելով՝ հաւասար են Հօրը: Սակայն քանի որ պատճառից են՝ սրանով առանձնանում են Հօրից, որովհետեւ Հայրը անպատճառ ու անսկիզբ է:

Արդ, Որդին ու Հոգին, որ պատճառից էին՝ սկիզբ ունեն Հօրը, ընդ որում առաջ, քան յաւիտենութիւնը՝ անսկիզբ են Հօր հետ: Եւ որովհետեւ իմացանք այս, պատասխանում ենք՝ ասելով, որ ամէնը խիստ կարգաւոր եւ օրինաչափ է:

Այսպիսով, անսկիզբ Հայրն ըստինքեան սկսելով Որդով ու Հոգով՝ արարեց բոլոր սկզբնաւորների սկիզբը, ինչպէս ասում է աւետարանը՝ «Ամէն ինչ նրանով եղաւ» (Յովհ. Ա 3), իսկ առաքեալն ասում է՝ «Որից, որով եւ որում»:

Ապա ուրեմն պարզ է, թէ ինչպէս Անեղից եղականներ եւ Անսկզբից սկիզբ ունեցողներ եղան:

Այսքանն այս մասին:

ԱՍՏՈՒԱԾ ԱՆԺԱՄԱՆԱԿ ԵՒ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ Է[181]
Պրակ ԺԱ

Հարց. Ինչպէ՞ս է անժամանակ Աստուած եւ անժամանակ է Հոգին:

Պատասխան. Անժամանակ է Աստուած, նախ որովհետեւ Արարիչն է ժամանակների:

Երկրորդ՝ առաջ է, քան ժամանակը:

Երրորդ՝ ժամանակից վեր է եւ ոչ թէ [նրան] ենթակայ:

Իսկ Հոգին ժամանակների արարիչ չէ եւ ոչ էլ առաջ է, քան ժամանակը, որովհետեւ ժամանակի մէջ է: Բայց անժամանակ է, որովհետեւ ենթակայ չէ ժամանակին, այլ՝ յաւիտենական է, իսկ ժամանակը ներառուած է յաւիտենականի մէջ:

Հարց. Աստուած ինչպէ՞ս է յաւիտենական եւ ինչպէ՞ս է յաւիտենական Հոգին:

Պատասխան. Նոյնպէս եւ սա: Որովհետեւ Աստուած է Արարիչը յաւիտենականի եւ առաջ է յաւիտենութիւնից եւ վեր, քան յաւիտենութիւնը, ուստի Աստուած ներառում է յաւիտենութիւնը, ինչպէս յաւիտենականը՝ ժամանակին եւ կոչւում մշտնջենաւոր Աստուած, որովհետեւ վախճան չունի: Նոյն կերպ [ասւում է] յաւիտենական, որովհետեւ չունի սկիզբ եւ չունի վախճան:

Իսկ մեր հոգին եւ հրեշտակներն անուանւում են յաւիտենականներ, որովհետեւ ենթակայ չեն ժամանակին, այլ՝ յաւիտենական: Ասւում են եւ մշտնջենաւորներ, որովհետեւ ունեն սկիզբ, սակայն չունեն վախճան:

Հարց. Ինչո՞ւ է կոչւում հնօրեայ Աստուած՝ ըստ Դանիէլի (տե՛ս Դան. է 9):

Պատասխան. Հնօրեան, որ ծերն է ունի չորս յատկութիւն:

Նախ՝ բազմամեայ է:

Երկրորդ՝ հնացած է:

Երրորդ՝ օրերը պակասած են:

Չորրորդ՝ փոփոխուած է:

Արդ, [սրանցից] երեքը Աստծուն չեն պատշաճում, որովհետեւ չի հնանում, չի ծերանում, եւ նրա տարիները չեն պակասում. ըստ մարգարէի՝ «Դու նոյն ինքդ ես, եւ քո տարիները չեն պակասում» (Եբր. Ա 12): Եւ չի փոփոխւում կամ այլափոխւում, ըստ այդմ՝ «Չկան փոփոխութիւններ կամ այլափոխման ստուեր» (Յակ. Ա 17), որովհետեւ բազմաժամանակեայ է ու յաւիտենական:

Դարձեալ՝ հնօրեայ [կամ]՝ վեցօրեայ Արարիչ: Պէտք է հասկանալ, որ հին օրեր նշանակում է ե՛ւ յաւիտենութիւնը ե՛ւ օր-ժամանակը: Սա է, որ կոչւում է ե՛ւ յաւիտեան, ե՛ւ ժամանակ, ե՛ւ օր, ըստ այսմ՝ «Յաւիտենից յաւիտեանը դու ես եւ քո տարիները չեն անցնում» (Սղմ. ճԱ 28): Եւ կամ՝ «Կգայ Տիրոջ օրը եւ մեր Աստծոյ հատուցման օրը» (Ես. ԿԱ 2): Եւ կամ՝ «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր», որ ժամանակ է նշանակում ե՛ւ «նոյնը եւ յաւիտեան» (Եբր. ԺԳ 8):

Եւ այսպէս է [ասւում] երեք պատճառով:

Նախ՝ որ կայ եւ գոյութիւն ունի Աստուած՝ յաւիտեանս յաւիտենից եւ

յաւիտենապէս բոլոր ժամանակներում եւ յաւիտենապէս ամէն օր: Երկրորդ՝ որովհետեւ առաջ է, քան յաւիտենութիւնը, քան ժամանակը, քան իւրաքանչիւր օրը: Երրորդ՝ որովհետեւ պատճառն է յաւիտենականի, ժամանակների, օրերի, ինչպէս որ եւ կոչւում է՝ Լոյս, Իմաստութիւն, Կեանք, որովհետեւ սրանց պատճառն է:

Դարձեալ իմանալու է, որ նրան հնօրեայ եւ ծեր տեսաւ Դանիէլը. «Նրա գլխի մազերը սպիտակ էին, ինչպէս ձիւն» (Դան. է 9), իսկ Աբրահամը՝ մանուկ, ըստ որի՝ «Երեք այրերը երեք մանուկներ էին»[182], ասում է Փիլոնը, որ նշանակում են՝ հնօրեայ ծերը եւ անծերանալի մանուկը:

Այսպէս են մեկնաբանում:

Նախ՝ ասում է «ծեր», որովհետեւ սկիզբն է ամէնքի, եւ «մանուկ», որովհետեւ անփոփոխ եւ անայլայլ է:

Երկրորդ՝ «ծեր», նշանակում է անսկիզբ լինելը եւ «մանուկ»՝ անվախճան լինելը, այսինքն՝ միմեանցով նոյնն են եւ ոչ թէ՝ այլեւայլ: Որովհետեւ, այն, որ անսկիզբն է՝ անվախճան է, եւ նոյն անվախճանն անսկիզբն է: Թէեւ մեզ թւում է, թէ անսկիզբը առաջին եզրն է, անվախճանը՝ վերջին, սակայն նրա մէջ չկայ առաջին ու վերջին, որովհետեւ պարզ ու միեղէն է:

Երրորդ, մեկնում են նաեւ այսպէս, որ հնօրեայ նշանակում է սկզբնական ժամանակները, իսկ մանուկ՝ սկզբնական թիւը, որովհետեւ մէկը սկիզբն է բոլոր թուերի եւ որը մօտ է մէկին՝ ամենասկզբնական է, քան հեռաւոր: Եւ քանի որ ժամանակը թուին է զուգորդւում, նշանակում է ծերն առաջ է ժամանակով, մանուկը՝ թուով:

Ուրեմն, պարզ է, որ հնօրեայ նշանակում է առաջ, քան ժամանակը ու յաւիտեանը. նաեւ՝ բարձրագոյնն ու ժամանակի եւ յաւիտեանի Արարիչը եւ յաւիտեանի պարունակողը, ինչպէս յաւիտեանը՝ ժամանակի: Ըստ այդմ ասում է՝ «Քո արքայութիւնը ամենայն յաւիտենականի արքայութիւնն է» (Սղմ. ճԽԴ 13), այսինքն՝ ողջ յաւիտենականի պարունակողը:

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ[183]
Պրակ ԺԲ

Հարց. Քանի՞սն են յաւիտենականները:

Պատասխան. Չորսը:

Նախ, որ ոչ սկիզբ ունի, ոչ աւարտ:

Երկրորդ՝ որ սկիզբ չունի, բայց ունի աւարտ:

Երրորդ՝ որ սկիզբ ունի, սակայն չունի աւարտ:

Չորրորդ՝ որ ունի ե՛ւ սկիզբ, ե՛ւ աւարտ: Եւ թէպէտ սրանք ընդհանրապէս յաւիտեան են կոչւում, սակայն առանձին անուններ ունեն:

Առաջինը կոչւում է յարաձգուող յաւիտեան, երկրորդը՝ սկզբնական յաւիտեան, երրորդը՝ միշտ յաւիտեան, չորրորդը՝ ժամանակաւոր յաւիտեան:

Սրանք համանունաբար կոչւում են յաւիտեան, ինչպէս դարերը:

Մովսէսի օրէնքների մասին Օրինաց [գիրքն] ասում է. «յաւիտենական կլինի», որ նշանակում է շատ ժամանակներ:

Այլ իսկապէս սրանք էին ասածներս: Սրանցով փառք ենք տալիս Հօրը, Որդուն, Սուրբ Հոգուն՝ [ասելով]՝ «այժմ եւ միշտ», որ ժամանակաւորն ու միշտն է, «յաւիտեանս յաւիտենից», որը սկզբնականն ու յարաձգականն է, որովհետեւ նա է պարունակում երեք յաւիտեանները, որ ոչ սկիզբ ունի, ոչ էլ՝ աւարտ:

Եւ իմանալու է, որ Աստուած կոչւում է յաւիտեան՝ անսկիզբ ու անվախճան, որովհետեւ պատճառն է անսկիզբ ու անվախճան յաւիտեանը պարունակողների: Այլեւ կոչւում է Աստուած յաւիտեան, եւ միշտ եւ ժամանակ, որովհետեւ սրանց պատճառն է, ինչպէս վերն ասուեց:

Իսկ հրեշտակները, հոգիները, աշխարհը կոչւում են յաւիտենականներ, որովհետեւ լծակից են յաւիտենականութեանը, այնքանով որ սկսուել են, սակայն անվախճան են: Եւ եթէ մէկն ասի, քանի որ Աստուած յաւիտենական է, անսկիզբ ու անվախճան, ուրեմն եւ յարաձգական է, ապա կստացուի երկու անսկիզբ ու անվախճան:

[Իսկ] մենք ասում ենք, որ մէկն է յաւիտեան անսկիզբն ու անվախճանը, որ նոյն ինքը Աստուած է՝ ամբողջովին համամասն ու կատարեալ եւ նախորդող յաւիտենութեանը ու բոլոր յաւիտենականների Արարիչը: Ըստ այդմ՝ «Որով եւ արարուեց յաւիտենութիւնը»: Եւ յաւիտենութիւնից առաջ ծնեց Բանին: Եւ այս ստեղծուած յաւիտենութիւնն ասում ենք, թէ՝ ոչ սկիզբ ունի, ոչ վախճան, որովհետեւ պարունակողն է այլ յաւիտեանների, որոնք ունեն սկիզբ կամ վախճան, եւ միայն ինքը՝ Աստուած է պարունակողը անստեղծ յաւիտենութեան:

Եւ դարձեալ իմանալու է, որ յաւիտեանը, միշտը, ժամանակը զանազանւում են վեց կերպ:

Նախ, որ յաւիտեանը ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վախճան: Միշտը սկիզբ ունի, իսկ վախճան՝ ոչ: Ժամանակն ունի ե՛ւ սկիզբ, ե՛ւ վախճան:

Երկրորդ՝ յաւիտեանը պարունակում է միշտը, միշտը պարունակում է ժամանակը, ժամանակը պարունակւում է երկուսի մէջ էլ:

Երրորդ՝ յաւիտեանը մասեր չունի, այլ ամբողջական ու կատարեալ է. այդպիսինն է եւ միշտը, իսկ ժամանակը երեք մաս ունի, այսինքն՝ անցեալ, ներկայ եւ ապագայ:

Չորրորդ՝ յաւիտենական է Աստուած, մշտնջենաւոր՝ հրեշտակները, ժամանակաւոր՝ մարդը:

Հինգերորդ՝ ժամանակը զգայականների համար է, միշտը՝ իմանալիների, յաւիտեանը՝ անիմանալիների:

Վեցերորդ՝ ժամանակը երկնքի տակ է, միշտը՝ երկնքից վեր, յաւիտեանը՝ վեր, քան ողջ երկինքը:

Այսքանն այս մասին:

ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ[184]
Պրակ ԺԳ

Հարց. Քանի՞ կեանք գոյութիւն ունի:

Պատասխան. Նախ՝ երեք. յաւիտենական, մշտնջենաւոր, ժամանակաւոր:

Յաւիտենական կեանքը ոչ սկիզբ ունի, ոչ վախճան, ինչպէս Աստուած:

Մշտնջենաւորն ունի սկիզբ, սակայն չունի վախճան, ինչպէս հրեշտակներն ու մարդու Հոգին:

Եւ ժամանակաւորը, որն ունի սկիզբ եւ վախճան, ինչպէս զգայականներն ու տնկականները:

Հարց. Ինչո՞վ են տարբերւում Աստծոյ կեանքն ու հրեշտակներինը:

Պատասխան. Երեք բանով:

Նախ՝ Աստուած ինքնակեանք է, որովհետեւ կեանքն իր միջից ունի. հրեշտակներն ունեն ուրիշից, այսինքն՝ Աստծուց: Երկրորդ՝ Աստուած կենդանարար կեանք է, իսկ հրեշտակներն ուրիշին կենդանացնող չեն, այլ միայն իրենք են մշտակենդան: Երրորդ՝ Աստուած անսկիզբ ու անվախճան կեանք է, իսկ հրեշտակները՝ սկսուած ու անվախճան, ինչպէս ասացինք, այսինքն՝ նոյնն է, ինչ առաջին մտքով ասուեց:

Հարց. Ինչո՞վ է տարբերւում եւ նմանւում Հոգու եւ հրեշտակների կեանքը:

Պատասխան. Իրար հաւասար են անմահութեամբ, որովհետեւ սկսուած եւ անվախճան են. տարբերւում են մի բանով, այսինքն՝ փոփոխութեամբ. հրեշտակը միշտ նոյն եւ անփոփոխ կենդանութիւն է, իսկ Հոգին փոփոխւում է, որովհետեւ նախ կենդանի է մարմնով, յետոյ՝ առանց մարմնի, յետոյ էլ յաւիտենականի միաւորութեամբ:

Իսկ Հոգու եւ հրեշտակների այլ յատկանիշներ, որոնք չորսն են, ցոյց կտանք առաջիկայում: Իսկ սրանք միայն նրանց կեանքի յատկանիշներն են:

Հարց. Ինչպէ՞ս են տարբերւում եւ հաւասարւում անմարմիններն ու մարմնաւորները:

Պատասխան. Նման են նրանով, որ սկսուել են միեւնոյն կենդանի պատճառից:

Տարբերւում են հետեւեալով: Նախ, որ անմարմինները անմահ կեանք ունեն, մարմնաւորները՝ մահկանացու են: Երկրորդ՝ անմարմինն անմիջականօրէն [առաջանում] է պատճառից, մարմնաւորները՝ տարրերի միջնորդութեամբ:

Հարց. Ինչո՞վ է տարբերւում եւ նմանւում մարմնաւորների եւ տնկականների կեանքը:

Պատասխան. Նախ, նման են նրանով, որ կազմուած են տարրերից, եւ երկրորդ, որ ենթակայ են քայքայման:

Տարբերւում են, նախ, որ բոյսերը միայն հրի ջերմութիւնից են, իսկ մարմնաւորները՝ ե՛ւ այդ ջերմութիւնից, ե՛ւ օդի շնչից:

Երկրորդ՝ բոյսերին [յատուկ] է սնուելը, աճելը, ծնելը, իսկ մարմնաւորներին՝ սրանցով հանդերձ՝ նաեւ զգալն ու շարժուելը: Սրանց մնացած տարբերութիւններն ամբողջութեամբ կուսուցանենք առաջիկայում:

ԱՍՏԾՈՅ ՏԵՍՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԴ

Հարց. Աստուած ինչպէ՞ս է անցեալն ու ապագան ամբողջութեամբ տեսնում ներկայաբար, իսկ մենք՝ ոչ:

Պատասխան. Մեր միտքը երկու պակասութիւն ունի, այսինքն՝ մոռացումն ու տգիտութիւնը, որովհետեւ մոռանում ենք անցեալը, իսկ ապագան էլ՝ չգիտենք:

Այս պակասութիւններն Աստծոյ մէջ չկան:

Դրանից բացի, մեր միտքը ժամանակի ենթակայութեան տակ է, եւ քանի որ ժամանակի երկու մասերը աչքի առաջ չեն, այսինքն՝ անցեալը կորած է, ապագան չկայ, ուստի այս մասերի բացակայութեամբ մեր մտքի իմացութիւնն էլ է բացակայում: Իսկ Աստծոյ միտքը վեր է ժամանակից, որի շնորհիւ, ինչպէս ներկայաբար տեսնում է նաեւ անցեալն ու ապագան:

Հարց. Ինչպէ՞ս է, որ Աստուած տեսնում է չկատարուածն ու չեղածը, իսկ մենք՝ եղածն ու կատարուածը:

Պատասխան. Աստծոյ իմաստութիւնն անեղ է, որի պատճառով էլ տեսնում է անեղը, այսինքն՝ ոչ եղականը: Իսկ մեր [միտքը] ստեղծուած է, ուստի եւ ընկալում ենք միայն եղականը, այսինքն՝ այնտեղ, ուր չի հասնում բնութիւնը, չի հասնում եւ մեր միտքը:

Իսկ անեղ ի դէմս երկու բանի է ասւում. անեղ՝ էութիւն Աստուած եւ անեղ, որ դեռեւս չի եղել ու գոյացել: Այս երկու անեղները միայն Աստծուն են հասու, որովհետեւ ինքը միայն գիտէ իրեն եւ ինքը միայն գիտէ դեռ չկատարուածը: Իսկ մենք երկուսին էլ հասու չենք:

Հարց. Աստուած ինչպէ՞ս է տեսնում էակներին, եթէ զգայարաններ չունի, որովհետեւ մենք ներքին զգայարաններով ընկալում ենք իմացականը, իսկ արտաքին զգայարաններով տեսնում ենք երեւացողները:

Պատասխան. Եթէ ասում ենք, որ Աստուած չունի միտք ու զգայարաններ, սա պէտք է դիտել ոչ թէ որպէս թերութիւն, այլ՝ գերազանցութիւն, ինչպէս եւ մեր խելքի ու իմացութեան համեմատութեամբ գերազանց է նրա անբան ու անիմաց լինելը: Եւ երբ ասում ենք՝ ունայնանալ, սա նրա առաւելագոյն զօրութիւնն է նշանակում: Կամ էլ խաչի վրայ տկարութիւնը, որ դարձեալ նրա առաւել զօրութիւնն է: Այդպէս էլ ասել՝ միտք ու զգայարաններ չունենալ՝ գերազանցութիւնն է ցոյց տալիս, քանզի ունի միտք ու հանճար, ինչպէս Սողոմոնն է ասում՝ «Աստուած իմաստութեամբ եւ հանճարով դրեց երկրի հիմքերը» (Առակ. Գ 19): Իսկ գերագոյն զգայութեան մասին Դաւիթը պատմում է. «Նա, որ ստեղծել է աչքը, ինքը չի՞ տեսնում եւ չի՞ լսում» (Սղմ. ՂԳ 9). «Եւ նրա ձեռքում են երկրի սահմանները» (Սղմ. ՂԴ 4):

Արդ, աստուածային մտքի տեսնելն ունի հետեւեալ չորս յատկանիշները. ամբողջական, ներկայաբար, կատարեալ, անփոփոխ: Ամբողջական, այսինքն՝ տեսնում է անցեալն ու ապագան, իբրեւ ներկայ՝ ներկայաբար, որովհետեւ նա իր մէջ տեսնում է ամէն ինչ, եւ ինքն իսկ ներկան է: Կատարեալ, այսինքն՝ առանց յաւելուածի եւ պա-

կասութեան, եւ անփոփոխ, որովհետեւ Աստծոյ տեսնելը միշտ նոյնն է:

Եւ այս բոլորը հակադիր է մեր տեսնելուն, որովհետեւ մենք տեսնում ենք մասամբ՝ մէկը միւսից յետոյ՝ առաւել կամ պակաս իմացութեամբ եւ ըստ առարկայի փոփոխութեան:

Դարձեալ յատկութիւն է, որ նախ Աստծոյ տեսութիւնն է, ապա միայն իւրաքանչիւր իրի էութիւնը յաջորդում է նրա տեսնելուն: Իսկ մեր տեսնելը հետեւում է էութեանը, որովհետեւ նախ իրն է լինում, ապա մենք ենք տեսնում: Մինչդեռ Աստուած առաջ, քան գործը եւ առաջ, քան կամենալը եւ առաջ, քան էանալը՝ տեսնում է, ըստ այդմ՝ «Քո աչքը տեսնում է իմ չկատարածները» (Սղմ. ՃԼԸ 16): Իսկ մենք տեսնում ենք միայն գործից, կամենալուց, էութիւնից յետոյ, ինչպէս ասացինք:

Դարձեալ, Աստուած տեսնում է ըստ պատճառի, որովհետեւ բոլորի պատճառն է եւ որպէս պարունակող, որովհետեւ բոլորին ունի իր մէջ եւ որպէս վախճանակէտ, որովհետեւ բոլորի վախճանն ու աւարտն է:

Դարձեալ, նիւթականը տեսնում է աննիւթաբար եւ բաղադրեալը՝ պարզ, ժամանակաւորը՝ յաւիտենական, բազումը եւ բաժանուածը՝ միասնական ու անբաժան:

Իսկ մենք այս բոլորը տեսնում ենք հակառակ ձեւով, որի պատճառը հետեւեալն է. Աստծոյ տեսնելն իրենից դուրս չէ, նա տեսնում է միայն իր մէջ եղածը, որովհետեւ իրեն տեսնում է իր մէջ եւ այլոց՝ նոյնպէս իր մէջ, ապա եղականներիս՝ նախօրինակի մէջ, որ Աստծոյ տեսնելն է, ինչպէս ասացինք:

Հարց. Ինչո՞ւ ենք Աստծուն ասում Ամենատես:

Պատասխան. Ամենատեսն ամբողջն է տեսնում, որ հակառակ է մեր տեսնելուն՝ չորս կերպ: Նախ, Աստծոյ թէ՛ տեսնելը, եւ թէ՛ լսելը եւ այլն՝ կատարւում է ամբողջութեամբ, իսկ մերը՝ մասնատուած:

Երկրորդ՝ նա տեսնում է բոլորին, այսինքն՝ թէ՛ արդարներին, թէ՛ մեղաւորներին, իսկ մենք [տեսնում ենք] մէկը:

Երրորդ՝ ամէն մի գործ տեսնում է թէ՛ ներսից, թէ՛ դրսից՝ մտքինը, խօսքինը եւ այլն: Մենք [տեսնում ենք] մէկը:

Չորրորդ՝ նա տեսնում է անցեալը, ներկան, ապագան, իսկ մենք՝ միայն ներկան:

Հարց. Մենք ինչպէ՞ս ենք տեսնում Աստծուն՝ իմացութեա՞մբ, թէ՞ զգայութիւններով:

Պատասխան. Թէ աստուածային էութիւնը, որ բնութիւն է, ի՞նչ եւ ինչպիսի՞ն է, մեզ հասու չէ՝ ոչ այս աշխարհում, ոչ էլ՝ հանդերձեալ: Սակայն, որ «էն» Աստուած է, երկու կերպով է տեսնւում, այսինքն՝ գիտութեամբ եւ անգիտութեամբ, հաստատելով կամ ժխտելով: Նախ [հարկ է] նայելով կերպարանքներին եւ նմանութիւններին, որոնք արարածների կարգաւորութիւնն են, եւ սրանք տեսնելով՝ հասնել նախօրինակին, որի միջոցով էլ՝ նախօրինակի նախատիպին, եւ այդկերպ

տեսնել, թէ Աստուած է, որ պատճառն է ամէն ինչի:

Աստուած տեսնուում է նաեւ այսպէս. երբ միտքը զատորոշուում է բովանդակ եղականից, նաեւ՝ ինքն իրենից, որովհետեւ եղական է, թողնելով ինքն իրեն, միաւորուում է աստուածային ճառագայթին, որ անքննելի լոյս եւ իմաստութիւն է: Առաջին ձեւով տեսնում են բոլորը, երկրորդով՝ կատարեալները, այսինքն՝ մարգարէներն ու առաքեալները:

Առաջինը տեսնելու բնական [եղանակն] է, երկրորդը՝ պայծառ հաւատով ու լուսաւորութեամբ տեսնելն է:

Հարց. Ինչպէ՞ս են տեսնում հրեշտակները:

Պատասխան. Նրանց տեսնելն էլ Աստծոյ տեսնելու պէս է, այսինքն՝ պարզ, միասնական ու գերամբարձ:

Պարզ ու միասնօրէն, որովհետեւ նիւթեղէններիս ու տրոհուածներիս տեսնում են միասնօրէն եւ պարզ: Գերամբարձ, քանի որ տեսնում են բարձր դիրքից՝ վեր ելնելով եւ ոչ թէ խոնարհուելով: Այսպէս է, որ Բանն-Աստծուն տեսնում են իր [իսկ] Աստծոյ մէջ ու եղականներիս նրա [իսկ] մէջ:

Այս պատճառով միասնօրէն ու պարզ են տեսնում, ինչպէս լոյսի ծագելն առանց ճանապարհորդութիւնը լուսաւորելու եւ միշտ բարձրանում են՝ տեսնելով:

Սա է նրանց առաւօտեան եւ երեկոյեան ճանաչումը, որովհետեւ Աստծուն տեսնելով՝ նրանց ճանաչումը միշտ նորանում է, ինչպէս առաւօտը: Եւ Աստծոյ մէջ տեսնելով արարածներիս՝ նորանում է արարածների ճանաչումը, որն երեկոյեան [ճանաչումն] էր:

Պրակ ԺԵ

Հարց. Ինչպէ՞ս է տարբերուում ու հաւասարուում Աստծոյ եւ հրեշտակների տեսնելը:

Պատասխան. Հաւասար են նրանով, որ սրանց տեսնելը պարզ է, միասնական եւ բարձրագոյն, ինչպէս ասացինք, որովհետեւ միեւնոյն Բանն Աստծոյ մէջ տեսնում են թէ՛ Աստծուն, թէ՛ արարածներին՝ իրենց նախօրինակի մէջ:

Տարբերուում են նրանով, որ Աստծոյ տեսնելն ինքնիմաստ է, այսինքն՝ իրենով՝ անսկիզբ եւ անվախճան, իսկ հրեշտակներինն իրենց միջից չէ, այլ սկսուած Աստծուց եւ անվախճան, որովհետեւ՝ երբեք չեն մոռանում: Դարձեալ՝ հրեշտակները տեսնում են աւելի ու աւելի շատ:

ՄԱՐԴՈՒ ՏԵՍՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչպէ՞ս է տեսնում մարդը:

Պատասխան. Երկու կերպ: Նախ, բնականօրէն, երկրորդը՝ շնորհով:

Բնականը երեք յատկանիշ ունի: Նախ՝ իմացումը ենթարկուում է իմացութեան առարկային, որ նրա առջեւ է: Երկրորդ՝ խառնուում է դրանց մէջ, երրորդ՝ առանձնացնում ու տարբերում է շատերից, եւ այդպէս շրջագայելով՝ գտնում ճշմարիտը. սա իմաստասէրների բնական քննութեան ճանապարհն է:

Իսկ շնորհովը սրան հակառակ է, որովհետեւ պարզ ու միասնական իմացութեամբ բարձրանում է աստուածային գիտութեան աստիճանին, եւ այնպէս զարմացումով է լինում նրանց տեսնելը: Այդպիսին է մարգարէների, առաքեալների եւ հաւատի տեսութիւնը:

Պրակ ԺԶ

Հարց. Ինչո՞վ է զանազանւում եւ նմանւում հրեշտակների եւ մարդկանց տեսնելը:

Պատասխան. Հաւասարւում են շնորհական տեսութեամբ, իսկ բնական տեսութեամբ՝ տարբերւում են, որովհետեւ նախ՝ հրեշտակների տեսնելն իմացական է եւ միասնական, իսկ մարդունը՝ բանական եւ մաս-մաս ժողովելու միջոցով:

Երկրորդ՝ հրեշտակները բարձրանում են Աստծոյ տեսնելու աստիճանին, իսկ մարդիկ իջնում ու թեքւում են դէպ իմացութեան [առարկան]:

Երրորդ՝ նրանց տեսնելը պարզ է, մերը՝ բաղադրուած ու նիւթական:

Չորրորդ՝ միասնական է նրանց տեսնելը եւ մէկից, մերը՝ բազմամասն ու ենթակայաշատ, որովհետեւ բաժանուած զգայարաններով իրերը տեսնում ենք բաժանուած:

Հինգերորդ՝ նրանք տեսնելով՝ չեն մոռանում, իսկ մենք մոռանում ենք եւ [յիշում ենք այնքան], որքան միտքը տեսնում է զգայարաններով: Եւ սրա պատճառը երեքն է:

Նախ, որովհետեւ սահում է մեր միտքը եւ մոռանում մտապահածը, որովհետեւ խոնաւ ու գէջ են ուղեղի թաղանթն ու գլխուղեղը:

Երկրորդ՝ որովհետեւ ախտահարուելով ու չարչարուելով մարմնի ախտերից՝ մոռանում է իմացածը:

Երրորդ՝ չարի պատրանքով՝ մոռանում է բարի բաները: Եւ մահից ու յարութիւնից յետոյ քանի որ չկան այս պատճառները, իմացութիւնն անմոռանալի է դառնում:

Հարց. Ինչո՞վ են զանազանւում եւ նմանւում մտքի տեսութիւնն ու զգայարանների տեսութիւնը:

Պատասխան. Նախ, որ միտքը տեսնում է անմարմինը, զգայարանները՝ մարմնաւորը:

Երկրորդ՝ միտքն առարկայի էութիւնն է տեսնում, որ ներքին բովանդակութիւնն է, զգայարանները՝ պատահական [յատկանիշները], որ արտաքինով են տրուած, այսինքն՝ որակը, քանակը եւ այլն:

Երրորդ՝ զգայարաններով ընկալւում է մասնաւորը, ինչպէս ասենք՝ այսինչ մարդը, որ անհատն է, իսկ միտքը տեսնում է ընդհանուրը, ինչպէս բնութիւնը կամ մարդկութիւնը:

Չորրորդ՝ զգայարաններով տեսնում են մերձակայ եղածը՝ ինչպէս այստեղը եւ այժմը, մտքով հեռաւորը, անցեալն ու ապագան:

Հինգերորդ՝ միտքը տեսնում է իբրեւ ներգործական պատճառ եւ արհեստաւոր, իսկ զգայարաններն՝ իբրեւ գործիական պատճառ եւ միջնորդ:

Հարց. Ո՞րն է բանականութեան սկիզբն ու վախճանը:

Պատասխան. Ինչպէս գործնականը, որ բարոյականն է, սկսուած է Աստծոյ բարուց եւ աւարտւում է բարով: Այսպէս էլ տեսականը, որ բանականն է, սկսուած է ճշմարտութիւնից, որ Աստծոյ խօսքն է, եւ հանգում է նոյն այդ ճշմարտութեանը:

Դարձեալ գործնականի սկիզբը կամքն է, տեսականինը՝ մտքի իմացական զօրութիւնը:

Պարկ ԺԷ

Հարց. Ինչո՞ւ ենք ասում Աստուած խօսք ունի, ըստ այդմ՝ «Տիրոջ խօսքով հաստատուեց երկինքը» (Սղմ. ԼԲ 6):

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ ամէն տեսակ խօսքի եւ իմաստութեան բաշխողն է:

Երկրորդ՝ որովհետեւ իր նախագաղափար խօսքի մէջ է ժողովել բոլոր էութիւններին, ըստ այդմ՝ «Իր խօսքի զօրութեամբ հաստատ է պահում ամենայն ինչ» (Եբր. Ա 3):

Երրորդ՝ որովհետեւ ինչպէս մեր խօսքն է ձայնի միջոցով անցնում բոլորի ականջներով եւ թղթի միջոցով ընթանում ամէն տեղ, այդպէս էլ Աստծոյ խօսքն է սուր ու հատու եւ թափանցելով անցնում է բոլոր էութիւնների միջով:

Չորրորդ՝ որովհետեւ մեր խօսքը զտւում է խռչափողի թրթռումով, այդպէս էլ, ասում է. «Տիրոջ խօսքը՝ եօթնապատիկ զտուած է, ինչպէս արծաթը հողից» (Սղմ. ԺԱ 7):

Հինգերորդ՝ ինչպէս մեր խօսքն է տարածւում աւելի, քան ուրիշ ամէն բան, այդպէս էլ Աստծոյ խօսքն է ընդարձակօրէն սփռւում ամէն ինչի վրայ՝ գոյացութեամբ եւ արարչութեամբ:

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՒԱՏԻ ՄԱՍԻՆ[185]

Հարց. Ի՞նչ է ճշմարտութիւնը:

Պատասխան. Ճշմարտութիւնը նոյն պարզ եւ աստուածային խօսքն է, որ չունի ստութիւն եւ իրեն հակառակ բան:

Եւ այսպէս են տարբերւում ճշմարիտն ու ճշմարտութիւնը, այսինքն՝ իբրեւ մաս եւ ամբողջ, ինչպէս մարդն ու մարդկութիւնը:

Եւ ճշմարիտ է մարդու խօսքը, իսկ ճշմարտութիւնը աստուածային խօսքն է: Եւ ճշմարիտը երբեմն փոխւում է ստի, ինչպէս իմաստասէրների խօսքը, իսկ ճշմարտութիւնը չի փոխւում, ինչպէս որ հաւատի լոյսը, որովհետեւ այս ճշմարտութիւնից հաւատի լոյսը ծագելով հաւատացեալի մտքում՝ անփոփոխ միասնութեամբ հաւատացեալին հաստատում է ճշմարտութեան մէջ եւ ճշմարտութիւնը՝ նրա մէջ:

Ինչպէս գիտութիւնն է միաւորում գիտեցողին ու գիտելիքը, այդպէս էլ հաւատը միաւորում է ճշմարտութիւնն ու հաւատացողին:

Հարց. Ինչո՞վ են հաւասարւում եւ զանազանւում բանական քննութիւնն ու հաւատի տեսութիւնը:

Պատասխան. Հաւասար են նրանով, որ երկուսն էլ իբրեւ չափանիշ ունեն ճշմարիտը: Բայց տարբերւում են

նրանով, որ նախ բանականն աւարտւում է երկրայինով եւ բազում ճշմարտութեամբ, իսկ հաւատը հանգում է մէկ եւ աստուածային ճշմարտութեան:

Երկրորդ՝ բանականութիւնը երբեմն մոլորւում է եւ շեղւում ճշմարտութիւնից ու տարակուսում: Իսկ հաւատն անմոլոր ու անտարակոյս է ճշմարտութեան մէջ:

Երրորդ՝ բանական քննութեանն է հետեւում հերձուածողութիւնը, հաւատին՝ ուղղադաւանութիւնը:

Չորրորդ՝ բանական քննութիւնը մտքից դուրս է բերում ճշմարիտը, իսկ հաւատի [դէպքում] միտքը հետեւում է ճշմարտութեանը:

Հինգերորդ՝ բանական քննութիւնը չի վարձատրւում, իսկ հաւատը վարձատրւում է եւ փառաւորւում:

Այսքանն այս մասին:

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԸ

Հարց. Որքա՞ն են աստուածաբանութեան տեսակները:

Պատասխան. Չորսը:

Առաջին՝ տպաւորական:

Երկրորդ՝ պատճառաբանական:

Երրորդ՝ նշանական:

Չորրորդ՝ խորհրդական աստուածաբանութիւն:

Առաջինը՝ տպաւորական աստուածաբանութիւնը՝ ի դէմս Սուրբ Երրորդութեան եւ մի աստուածութեան [ցոյց է տալիս], թէ ինչպէս է մէկ, ինչպէս է եռեակ, ծնողը, ծնունդը, բխումը, Քրիստոսի մարդեղութիւնը:

Սա առաջինն է, որ առաջ, քան յաւիտենութիւնը եւ ժամանակը՝ աստուածաբանում եւ քննում է,:

Երկրորդը՝ պատճառաբանականը, պատճառուածների, այսինքն՝ արարածներիս մէջ գեղեցիկը տեսնելով, վերակոչում եւ անուանում ենք պատճառին ու Արարչին, ինչպէս՝ բարի, գեղեցիկ, լոյս, կեանք, իմաստութիւն եւ այլն: Սա երկրորդն է, որովհետեւ այս աստուածաբանութիւնն առաջ է գալիս էութիւնների ստեղծման պատճառից:

Երրորդը՝ նշանական աստուածաբանութիւնն է, որ մարմնաւոր կերպարանքներին տալիս է խորհրդանշական բացատրութիւն, թէ ինչ է նշանակում մարդու տեսքով երեւալը, [կամ՝] առիւծի, գառան, հրի, լոյսի եւ այլն: Եւ թէ ինչպէ՞ս ենք ասում Աստծոյ ննջելը, զարթնելը, զայրանալը կամ տրտմելը: Ըստ կարգի սա երրորդն է, որովհետեւ սրանից է ծագում երեւացող եւ մարմնական բաների աստուածաբանութիւնը:

Իսկ չորրորդը՝ խորհուրդների աստուածաբանութիւնն է, երբ ողջ մարմնական եւ իմացական էութիւնները մի կողմ թողնելով՝ մտքով թափանցում ենք խորքերը եւ մտնում ըստ Մովսէսի ամպ ու մէգի մէջ (տե՛ս Ելք. Ի 21) եւ նրան տեսնում՝ զատուած բոլոր էութիւններից: Որովհետեւ ոչ մարմին է, ոչ հոգի, ոչ միտք եւ ոչ այլ ինչ, որ մենք գիտենք կամ կարող ենք իմանալ: Դրանից յետոյ նրան անուանում ենք՝ Անքննելի, Անճառելի, որ ոչ միայն հասու չէ մեզ, այլեւ բոլոր

եղական իմացողների համար անիմանալի ու անյայտ է, ինչպէս ասում է մարգարէն՝ «Խաւարն իրեն ծածկոյթ դարձրեց» (Սղմ. ԺԷ 12): Եւ առաքեալն ասում է. «Բնակւում է անմատչելի լոյսերում» (Ա Տիմ. Զ 16):

Եւ ինչպէս խաւարն է անյայտ, նոյն կերպ շատ լոյսն էլ անտեսանելի է դարձնում, այդպէս էլ նա տեսանելի չէ հրեշտակներին եւ անյայտ է մարդկային մտքի համար, թէ ինչպիսի՞ն է, կամ ինչ է աստուածութեան էութիւնն ու բնութիւնը:

Սա աստուածաբանութեան բարձրագոյն գագաթն է, եւ այս է իմանալիների երանութիւնը: Եւ սա բոլոր ընտրեալների տենչանքն է, այսինքն՝ անհասանելիին հասնել անհասութեամբ եւ անտեսանելիին տեսնել՝ չտեսնելով:

Սա կոչւում է խորհուրդների աստուածաբանութիւն, նախ, որովհետեւ խորհրդով ու հաւատով է տեսնւում եւ ոչ մտքի քննութեամբ:

Երկրորդ՝ որովհետեւ խորհրդաւոր ու ծածուկ է եւ ոչ թէ առակներով ու խորհրդանշաններով, ինչպէս միւս աստուածաբանութիւնները, ինչպէս վերն ասացինք:

Երրորդ՝ որովհետեւ խորհրդաւոր ու ծածուկ լինելու [պատճառով] անհասանելի է հերձուածողներին, հեթանոսներին, անմիտների անվարժ մտքին. «Մի՛ տուր սրբութիւնը շներին եւ մարգարիտները՝ խոզերին» (Մտթ. Է 6):

Իմացի՛ր եւ այս ուշիմ մտքով, որ ողջ աստուածաբանութիւնը նախ երկու մասի է բաժանւում, այսինքն՝ հաստատական եւ մերժողական: Սրանցից իւրաքանչիւրը երկատւում է եւ լինում են չորսն՝ ըստ Գրիգոր Աստուածաբանի՝ հետեւեալ կերպ. կայ եւ ասում է, չկայ եւ ասում է, կայ եւ ժխտւում է, չկայ եւ ժխտւում է[186]:

Նախ՝ հաստատականն է, որ կայ եւ ասւում է, ինչպէս՝ Հայր, Որդի, Հոգի, Լոյս, Կեանք եւ այլն: Սրանք այն են, որ կան Աստծոյ մէջ, եւ հաստատելով՝ անուանում ենք նրան:

Այսպիսին է տպաւորականն ու պատճառաբանականը:

Երկրորդ՝ չկայ եւ ասում է, ինչպէս նրան՝ մարմին, ձեռք, ոտք, ննջել, զարթնել [վերագրելը], որոնք չունի Աստուած, սակայն ասւում է ըստ ստեղծուած օրինակների նմանութեան:

Եւ սա նշանական աստուածաբանութիւնն է:

Իսկ մերժողականը խորհուրդների աստուածաբանութեանն է: Նախ, որ կայ եւ ժխտւում է, ինչպէս՝ անսկիզբ, անվախճան, ոչ Բան, ոչ միտք, ոչ էութիւն եւ այլն. եւ սա ոչ թէ ըստ պակասութեան է, այլ ըստ գերազանցութեան:

Երկրորդ՝ չկայ ու ժխտւում է, ինչպէս այլայլութիւն, ապականութիւն, չար, որ չկայ ու չի ասւում:

Այս է հաստատական եւ մերժողական աստուածաբանութիւնը, այսինքն՝ դրական եւ ժխտական, ճառելի ու անճառելի:

Պէտք է իմանալ, որ աստուածաբանութեան առաջին տեսակը՝ տպաւորականը, նեղ է ու սակաւախօս:

Երկրորդը՝ պատճառաբանականը, առաւել է, քան առաջինը, որովհետեւ քննում է աստուածային անունները:

Եւ երրորդը՝ նշանականն առաւել ընդարձակ ու բազմախօս է, որովհետեւ խառնւում է զգալի բաներին, որոնք շատ են ու տրոհուած: Եւ որքան վերեւից ներքեւ է իջնում, աւելի շատ է տրոհւում, ինչպէս սեռից դէպ տեսակները եւ անհատները՝ իջնելով բազմանում:

Եւ ինչպէս ծառի բունն է մէկ, իսկ ճիւղերն ու տերեւները՝ բազում, այդպէս էլ աստուածաբանութիւնը: Իսկ ներքեւից վերեւ, ինչպէս բազմութիւնից դէպ մէկն է ընթանում, այդպէս էլ խորհրդական աստուածաբանութիւնը մի կողմ թողնելով էութիւնների բազմութիւնը՝ դէպի մէկն է ընթանում, որ համակ լռութիւն է, անիմացութիւն, անճառելի, անիմանալի եւ լռութեամբ մեծարւում է բոլոր արարածներից:

Պարկ ԺԹ

Հարց. Ինչո՞վ են զանազանւում եւ հաւասարւում ժխտականները եւ ուրացականները, քանի որ թւում է, թէ նոյնն են. ինչպէս, երբ ժխտելով ասում ենք՝ ոչ էութիւն, ոչ խօսք, ոչ միտք, ոչ Որդիութիւն, ոչ Հայրութիւն եւ այլն: Նոյնպէս ովքեր ուրանալով՝ ասում են. Քրիստոս Աստուած չէ, Հայր չէ, Որդի չէ:

Ապա ուրեմն թւում է, թէ նոյնն են երկու պատճառով:

Նախ՝ որ նոյն ժխտական մասնիկը՝ «ոչ»-ը ցոյց է տալիս ե՛ւ ուրացումը ե՛ւ ժխտումը:

Երկրորդ՝ ժխտելու հակառակը հաստատումն է, ուրանալունը՝ ընդունելը, իսկ հաստատելն ու ընդունելը նոյնն են, ուրեմն եւ նոյնն են ժխտելը եւ ուրանալը:

Պատասխան. Ժխտելը եւ ուրանալը նոյնը չեն:

Նախ՝ որովհետեւ ուրացականն ըստ թերութեան է, այսինքն՝ ասել Քրիստոս Աստուած չէ, նշանակում է՝ թերի է եւ Աստուած չէ, եւ Հայր չէ, եւ Որդի չէ: Մինչդեռ ժխտականն ըստ գերազանցութեան է, այսինքն գերազանց խօսք է, գերունակ միտք, գերագոյն եւ առաւել Հայր ու Որդի, եւ ոչ թէ ինչպէս մեր խօսքն ու միտքն է:

Երկրորդ՝ ուրացականը Աստծոյ էութեան եւ փառքի դէմ է, որովհետեւ ստիպում է ուրանալ Աստծոյ էութիւնն ու փառքը: Իսկ ժխտականները ոչ թէ Աստծոյ էութիւնն ու փառքն են ժխտում, այլ այն, ինչ Աստծոյ էութիւնից յետոյ է, նրանից է ստեղծուած. ժխտում է նաեւ խոնարհութիւնը:

Առաջինին պատասխանենք. թէպէտ նոյն ուրացական մասնիկը, որ «ոչ»-ն է, իրականացնում է թէ՛ ուրացում, թէ՛ ժխտում, սակայն ուրացումն ու ժխտումը նոյնը չեն, որովհետեւ քանիցս պատահում է, որ գործիքը նոյնն է, ինչպէս օրինակ ձեռքը, սակայն գործը նոյնը չէ, ինչպէս կտրելն ու կարելը:

Այսպէս էլ «ոչ»-ը: Ինչպէս Արիստոտէլն է ասում՝ այնտեղ, ուր ասւում է, թէ «ոչ մարդ»-ն անորոշ անուն է եւ «ոչ նստի»-ն՝ ժխտում, [ըստ այսմ] այլ է

անորոշ անունը, այլ՝ հաստատման ժխտումը[187]:

Երկրորդին պատասխանենք, որ նոյնը չեն նաեւ հաստատումն ու ընդունումը, ինչպէս երբ հաստատելով ասում ենք՝ չար է, խաւար է, մեղք է. ահա սա ուրացում է եւ թերութիւն: Իսկ երբ ասում ենք՝ չար չէ, խաւար չէ, մեղք չէ, ահա սա ընդունում է եւ ո՛չ հաստատում:

Ապա ուրեմն այլ է ժխտականը եւ այլ՝ ուրացականը:

Այսքանն այս մասին:

ԹԷ ԻՆՉՊԷՍ Է ԱՐԵԳԱԿՆ ԱՍՏՈՒԱԾ ԿՈՉԻՈՒՄ
Պրակ Ի

Արեգակի յատկութիւնների մասին խօսուել է նախապէս տասներկուերորդ գլխի քսանմէկերորդ համարում՝ քսան հարցադրումներով: Տե՛ս եւ համեմատիր Աստծոյ յետ, եթէ հարկ ես [համարում]: Իսկ այստեղ Արեգակը Սուրբ Երրորդութեան յետ բաղդատւում է հետեւեալ օրինակով. մի արեգակը սկիզբ է երկու լոյսի՝ դեղին եւ սպիտակ: Եւ Հօր պատկերը բովանդակ արեգակն է, Որդու պատկերը՝ դեղին լոյսը, Հոգու պատկերը՝ սպիտակ լոյսը: Եւ արեգակի յատկութիւնը յայտնի է, քանզի երկու լոյսի սկիզբն է. նոյնպէս Հայրը սկիզբն է Որդու ծննդեան եւ Հոգու բխման:

Իսկ երկու լոյսերը հաւասար են, որովհետեւ նախ՝ մի սկզբից են. եւ թէ՛ Որդին, թէ՛ Հոգին էլ [մի] Հօրից են: Երկրորդ՝ դարձեալ երկու լոյսն էլ սփռուած ու տարածուած են. անմարմին են նաեւ ծնունդն ու բխումը[188]: Երրորդ՝ նոյնն են բնութեամբ: Չորրորդ՝ ամենուրէք են: Հինգերորդ՝ համամասն են: Վեցերորդ՝ լուսաւորիչ են: Եօթներորդ՝ խաւարահալած են: Ութերորդ՝ իրականացնում են օրը: Իններորդ՝ ծածկում են աստղերին: Տասներորդ՝ զուարթարար են:

Այս կերպ կան եւ այլ բազում ընդհանրութիւններ:

Եւ ա՛րդ, քանի որ ընդհանուր են էութեամբ եւ մասնայատուկ առանձնաւորութեամբ, ուստի տարբերւում են նաեւ ըստ երկու լոյսերի յատկութիւնների:

Նախ՝ որովհետեւ ինչպէս դեղին լոյսը առաջանում է երդիկից կամ լուսամուտից թափանցելով, իսկ սպիտակը՝ ոչ, այդպէս էլ Բանը մարմին եղաւ, Հոգին՝ ոչ:

Երկրորդ՝ ըստ մուտքի չափի շատ կամ քիչ են լինում. այդպէս էլ ըստ ընդունողի չափի՝ Քրիստոս ծնւում է մեր սրտում:

Երրորդ՝ դեղին լոյսը ստուեր ունի, սպիտակը՝ ոչ. այդպէս էլ ժամանակի մէջ մտաւ ու լրացրեց օրէնքների ստուերոտ [կողմերը]:

Չորրորդ՝ մանր փոշին երեւում է լոյսի շողերի մէջ, իսկ Բանը յայտնեց մասնաւոր խորհուրդները:

Հինգերորդ՝ արեւը ցոյց է տալիս արեգակին, եւ Որդին էլ Հօր յայտնողն է:

Վեցերորդ՝ դեղինը մարմնի առաքինութիւնն է, իսկ սպիտակը՝ Հոգու անմեղութիւնը:

Եօթներորդ՝ ջերմութիւնը դեղին լոյսի յետ է: Եւ առ Աստուած սէրն էլ Բանի

շնորհիւ բորբոքուեց, ըստ այդմ՝ «Եկայ կրակ գցելու երկրի վրայ» (Ղուկ. ԺԲ 49):

Ութերորդ՝ սպիտակ լոյսն աւելի թափանցիկ է, ինչպէս ամպի մէջ եւ այլ տեղերում: Այդպէս էլ Հոգու շնորհն իջնում է մեղաւորների մէջ եւ լուսաւորում:

Իններորդ՝ դեղին լոյսի մէջ տեսնում ենք սպիտակ լոյսը: Այսպէս էլ մարգարէն ասում է. «Քո լոյսով տեսնում ենք լոյսը» (Սղմ. ԼԵ 10), այսինքն՝ Սուրբ Հոգին Որդու միջոցով է ընծայւում երկնքի ու երկրի բոլոր արարածներին:

Տասներորդ՝ նախընթաց եւ վերջընթաց է սպիտակ լոյսը, որ տեսնում ենք առաւօտեան ու երեկոյեան: Այդպէս էլ Հոգին նախ եկաւ բոլորի մօտ՝ մարգարէների եւ սուրբ Կոյսի, ապա Բանը մարմնացաւ, եւ յետոյ միայն Սուրբ Հոգին իջաւ առաքեալների մէջ եւ մնաց եկեղեցում:

Այսքանը երեք անձերի մասին:

Իսկ համաձայն Մաղաքիայի՝ արեգակը բաղդատւում է միայն մարմնացեալ Բանի հետ. «Իմ երկիւղածների վրայ կծագի արդարութեան արեգակը» (Մաղ. Դ 2):

Եւ այս բազում յատկութիւնների պատճառով:

Նախ՝ որովհետեւ ինչպէս արեգակն ունի մշտնջենաւոր լոյս եւ երկրի վրայ պատճառն է ցերեկուայ ու գիշերուայ, այդպէս էլ Բանն-Աստուած մշտնջենաւոր է պահում վերին աշխարհը, իսկ ներքեւիններին պահում եւ խնամում է՝ չափելով ժամանակով:

Երկրորդ՝ ինչպէս միեւնոյն արեգակը կոչւում է լոյսի եւ հրի նիւթական անօթ, այդպէս էլ Բանն-Աստուած մի Քրիստոս է՝ մարմնի ամբողջութեան մէջ անբաժանելի:

Երրորդ՝ ինչպէս արեգակն է արեւելքից առ մեզ գալով լուսաւորում, այդպէս էլ մեր Տէրն արեւելքից Հօրով եւ երեւացած մօրով՝ լուսաւորեց մեզ: Ըստ այդմ՝ «Ես որպէս լոյս եկայ աշխարհ» (Յովհ. ԺԲ 46):

Չորրորդ՝ արեգակը չորս եղանակներով է լրացնում տարին: Եւ մեր Տէրն էլ չորսով լրացրեց իր տնօրինութեան տարին, այսինքն՝ արգանդում յղացմամբ եւ ծննդեամբ, քարոզութեամբ, մահուամբ, յարութեամբ եւ Հօր մօտ համբարձմամբ, իբրեւ տարուայ պսակ՝ մեր կատարեալ բնութեամբ մտնելով վարագոյրի հետեւի կողմը:

Հինգերորդ՝ արեգակն արեւելքից ելնելով՝ հարաւով թեքւում է դէպի արեւմուտք եւ պատում հիւսիսը եւ դարձեալ ելնում արեւելքից: Այդպէս էլ իմանալի արեգակը Քրիստոս, հայրական ծոցից անհասանելի բնութեամբ եւ սուրբ Կոյսից իբրեւ արեւելքից ծագեց, ջերմ սիրով դէպի մարդկային ցեղն իբրեւ արեւմուտք խոնարհուեց եւ պատեց մեր սառած բնութիւնը եւ գերեզմանից բարձրացաւ՝ դարձեալ բարձրանալով Հօր մօտ՝ դէպ արեւելք:

Վեցերորդ՝ լուսաւորում է աչքը՝ տարբերելու գոյները: Այդպէս էլ լուսաւորուելով Քրիստոսով՝ տարբերում ենք բարին ու չարը:

Եօթներորդ՝ իւրաքանչիւրին մղում է դէպ գործ: Եւ աստուածային սիրուց մղուելով, ոմանք իմաստասիրութիւնն են [ընտրում], ոմանք՝ ճգնաւորութիւնը, ոմանք կուսութիւնը եւ զանազան այլ առաքինութիւններ:

Ութերորդ՝ սիրելիներին եւ ատելիներին ընտրութեան հնարաւորութիւն է ընձեռում: Այդպէս էլ մենք ստացանք հոգի՝ տարբերելու հրեշտակներին ու դեւերին, մարդկանց մէջ չարն ու բարին:

Իններորդ՝ հալածում է վնասարարներին: Այդպէս էլ մենք եղանք հերքողները վատի:

Տասներորդ՝ բոյսերին ու տնկիներին աճ է պարգեւում. այդպէս էլ զանազան առաքինութիւնների ընձիւղուած ծիլերն է երեւան հանում:

Տասնմէկերորդ՝ տարին զարդարում է չորս եղանակներով. նոյնպէս չորս առաքինութիւններով զարդարեց:

Տասներկուերորդ՝ ժամի ու ժամանակի արարողն է. նոյնպէս [Տէրը] ընդհանուր կարգ ու սահման դնելով՝ լուսաւորեց բոլորին:

Տասներեքերորդ՝ տարրերին մղում է դէպ ծնունդ ու կեանք: Եւ Տէրն էլ մարդկանց առաքինութիւններին հոգի է տալիս եւ լրացնում թերութիւնները:

Տասնչորսերորդ՝ տօթի ու ցրտի ժամանակները խառնելով՝ բարեխառն է դարձնում: Եւ Տէրն էլ Հին կտակարանը, որ խստութիւն էր ու սպանող, խառնեց Նոր Կտակարանին, որ Հոգով է եւ ապրեցնող:

Տասնհինգերորդ՝ նախ տեսակն է, ապա նիւթը՝ անտրոհելի: Եւ նախ Բանն-Աստուած է, որ յետոյ միացաւ մարմնին՝ անբաժանելիօրէն. «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյնը եւ յաւիտեան» (Եբր. ԺԳ 8), որովհետեւ նրա աստուածութիւնը սկիզբ չունի եւ ոչ էլ վախճան նրա մարդկութիւնը:

Տասնվեցերորդ՝ արեգակը գտնուելով աստղերի մէջ՝ լուսաւորում է, ինչպէս եօթնաջահեայ լոյսի միջին ստեղն: Այդպէս էլ Քրիստոս՝ Աստծոյ ու մարդկանց հաշտութեան միջնորդն է, այլեւ՝ հրեշտակների ու մարդկանց, նաեւ՝ հրէաների ու հեթանոսների, ըստ այդմ՝ «երկուսը մէկ դարձրեց» (Եփես. Բ 14), որովհետեւ առաջինները խորհրդով ու օրինակով, վերջինները գործով ու ճշմարտութեամբ լուսաւորուեցին նրանից, ինչպէս նրա շնորհից բխուած ջուրը. «Կէսը յետոյ, քան նա էր, իսկ կէսն էլ առաջ» (Զաք. ԺԴ 8):

Տասնեօթներորդ՝ հաւասար է լոյսով եւ ջերմութեամբ, որովհետեւ որտեղ որ լոյսն է հասնում, այնտեղ էլ ջերմութիւնը: Եւ, մեր Տէրն էլ հաւասար է ողորմութեամբ ու արդարութեամբ, որովհետեւ, որքան որ ողորմութիւնն են տեսնում, այդքանն էլ ձգտում են արդարութեան շնորհին:

Տասնութերորդ՝ բազում անգամ մեծ է երկրից, սակայն մեծութեամբ փոքր է երեւում: Մեր Տէրը մեծ է եւ մեծ է զօրութեամբ, սակայն մարմնի մէջ տեղաւորուած՝ մեզ հաւասար է երեւում:

Եւ մեծ է հաւատացեալների համար, իսկ անհաւատներին չափուող է թւում:

Տասնիններորդ՝ ոմանց անմիջականօրէն, ոմանց էլ միջնորդով է լուսաւորում: Սրա նմանութեամբ եւ մեր Տէրն ընտրեց առաքեալներին եւ նրանցով դիմեց հաւատացեալներին: Նոյն կերպ եւ մարգարէներով, վարդապետներով, հրաշքներով եւ զանազան այլ ձեւերով:

Քսաներորդ՝ կոչւում է արդար, որովհետեւ երկուսն է արդարութիւնը, այսինքն՝ չափով եւ արժանապէս: Չափով, որ նման է լոյսի ծագելուն, իսկ արժանապէս, որովհետեւ առողջ աչքը լուսաւորում է, իսկ տկարը՝ խաւարեցնում: Նոյն կերպ եւ արդարութեան իմանալի արեգակը՝ Քրիստոս, հաւասարապէս է բաշխում մարմնաւորներին, ըստ այդմ՝ «Արեւը ծագեցնում չարերի ու բարիների վրայ, անձրեւ է բերում արդարների ու մեղաւորների վրայ» (Մտթ. Ե 45), այստեղ՝ կեանքում: Իսկ արժանաւորներին այս կեանքում շնորհ ու հաւատ, հանդերձեալում՝ անվախճան փառք է տալիս: Ոմանց տալիս ու հաւելում է, ոմանցից վերցնում եւ պակասեցնում՝ ըստ ընդունողների ունակութեան չափերի:

Այսքանն այս մասին:

Եթէ ցանկանում ես աւելին իմանալ արեգակի յատկանիշների մասին, առաջիկայում ցոյց կտրուի: Նոյնպէս եւ համեմատելով լոյսի ու հրի յատկութիւնների հետ՝ աւելի հեշտ կիմացուի ճշմարտութեան իմանալի լոյսը, ինչպէս գրուած է քսաներորդ գլխի երեսուն-հինգերորդ համարում, տե՛ս այնտեղ:

ԱՍՏԾՈՅ ՁԱՐՄԱՆՔԻ ԵՒ ՆԱԽԱՆՁԻ ՄԱՍԻՆ[189]
Պրակ ԻԱ

Հարց. Ինչպէ՞ս է զարմանում Աստուած:

Պատասխան. Զարմանալ եւ հիանալ ենք ասում մտքից զրկուելն ու արտահեղումը: Եւ սա կամ շշմելն ու ափշելն է, կամ էլ իրերի չափազանցումը: Օրինակ, զգայութիւնից զրկուելը կոչւում է թմրել կամ ընդարմանալ, իսկ մտքից զրկուելը՝ զարմանալ, ըստ Պօղոսի՝ որ յափշտակուեց (Բ Կորնթ. ԺԲ 2), ըստ Դաւթի՝ որ զարմացաւ (Սղմ. ճԺԵ 11), ըստ Ադամի՝ որ թմրեց (Ծննդ. Բ 21):

Զարմանքը լինում է սիրելիի նկատմամբ ունեցած սիրուց, որովհետեւ սիրողը թողնում է միտքը, կեանքը, ամէն ինչ եւ դրանք համարում սիրելիինը:

Ինչպէս որ առաքեալն իր կեանքը համարում էր Քրիստոսինը, ասելով՝ «Կենդանի եմ ոչ թէ ես, այլ կենդանի է Յիսուս Քրիստոս» (Գաղ. Բ 20): Այդպէս էլ էակների նկատմամբ Աստծոյ գերազանց սէրը զարմանք է անուանւում, այսինքն՝ ի յայտ բերել եւ յեղել էակների վրայ եւ միաւորուել նրանց անփոփոխ բնութեամբ[190]: Այս պատճառով Աստուած անուանւում է հիացական ձեւերով.

«Օ՜, խորք մեծութեան» (Հռոմ. ԺԱ 33),

«Օ՜, որ Արարիչդ ես ջրի» (Յուդիթ Թ 17), եւ այլն:

Հարց. Ինչպէ՞ս է նախանձն Աստծոյ մէջ, ըստ այդմ՝ «Ես նախանձոտ Աստուած եմ» (Ելք Ի 5), քանի որ նախանձը մեր մէջ եղած ախտն է:

Պատասխան. Ինչպէս որ ասւում է Աստծոյ զարթնելը, բարկանալը, զարմանալը, նոյնպէս եւ նախանձելը, որովհետեւ չկայ եւ ասւում է:

Դարձեալ, նախանձը համանուն է. նախանձ են չարակնութիւնը եւ ատելութիւնը, ըստ այդմ՝ «բանսարկութեան նախանձով մահը մտաւ աշխարհ» (Իմաստ. Բ 24): Նախանձ են նաեւ սիրելն ու փափագելը, ըստ այդմ՝ «Նախանձոտ եղէք լաւ շնորհների նկատմամբ» (Ա Կորնթ. ԺԲ 31): Եւ սէրն ու փափագը Աստծոյ նախանձ են ասւում:

Դարձեալ, նախանձը բնականօրէն պարունակում է սեփական անձի նկատմամբ սէր եւ այլոց նկատմամբ՝ ատելութիւն: Իսկ Աստծոյ նախանձը պարզապէս սէր է այլոց նկատմամբ եւ ոչ ատելութիւն, որովհետեւ Աստծոյ նախանձն առաւել սէրն է, ինչպէս հրի բոցը: Եւ ինչպէս զարմանալն է իմացութեան առաւելութիւն, այդպէս էլ նախանձն է կամքի առաւելութիւն:

Նաեւ նախանձոտ ու նախանձելի է, այսինքն՝ նախանձոտ է իբրեւ սիրող, նախանձելի՝ իբրեւ սիրելի, որ մեզ ձգում է դէպ իր սէրը:

Նաեւ ինքնանախանձ է, որովհետեւ ուրիշից չի մղւում դէպ սէրը, ինչպէս մենք, այլ իրենից է մղւում դէպ սիրելն ու սիրուելը: Իսկ՝ «Ես նախանձոտ եմ եւ չեմ կամենում իմ փառքն ուրիշի»՝ «իր փառք» է անուանում մարդուն, որ նրա պատկերն է եւ ապա՝ Աստծոյ փառաբանողը: Իսկ «ուրիշը» սատանան է՝ ապստամբ վիշապը, որ գերեց մարդկանց: Սրա պատճառով իջաւ դժոխք եւ հոգիներին կորզեց գազանի բերանից:

ՍԻՐՈՅ ԵՒ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԲ

Հարց. Ինչպէ՞ս է Աստուած կոչւում սիրող, սէր եւ սիրելի:

Պատասխան. Նախ, որպէս առաջացնող եւ ծնող: Երրորդութեան վերաբերեալ սա ոմանք մեկնում են այսպէս. սիրող է Հայրը, սիրելի՝ Որդին, սէր՝ Սուրբ Հոգին:

Երկրորդ՝ որովհետեւ Աստծոյ էութիւնը սէր է (տե՛ս Ա Յովհ. Դ 8, 16), եւ մղւում է մեզ սիրելու եւ մղում է մեզ սիրել իրեն:

Երրորդ՝ քանի որ ինքն իրեն առաջացնող է, ուստի կոչւում է սիրող: Եւ որովհետեւ ինքը բարի է ու գեղեցիկ, կոչւում է սիրելի: Եւ կոչւում է սէր, քանի որ մեզ մղում է դէպ իրեն: Եւ առաջ մղող զօրութիւն է, դրսեւորող, միաւորող, իսկ սրանք սիրոյ ներգործութիւններն են. այս պատճառով էլ կոչւում է սէր:

Չորրորդ՝ սիրող է իբրեւ մեր սկիզբ, սէր՝ իբրեւ մեզ հաստատող եւ սիրելի, իբրեւ ամբողջացնող: Այսպիսով, մեր սկիզբը, մէջտեղը, աւարտը բարին է, որովհետեւ առաջ ենք եկել բարուց, հաստատուել ենք բարու մէջ եւ ամբողջանում ենք բարիով: Ապա ուրեմն բարին մեր սկիզբն ու վախճանն է:

Իսկ ինքը՝ բարին անսկիզբ եւ անվախճան է: Նոյն կերպ եւ սէրը, ազնիւը, իմաստութիւնը եւ այլն:

Հարց. Աստծոյ մէջ առաջինը բարի՞ն է, թէ՞ սէրը:

Պատասխան. Աստուածութեան մէջ սրանք առաջին ու վերջին չեն ասւում, որովհետեւ համահաւասար զօրութիւններ են նրա մէջ: Սակայն ըստ մեր իմացութեան՝ բարին աւելի ընդհանրական է, քան սէրը, որովհետեւ [հենց] սէրն էլ ասում ենք բարի է, ազնիւը բարի է եւ այլն, ինչպէս որ ասում ենք՝ մարդը կենդանի է, ձին կենդանի է եւ այլն:

Եւ այնուամենայնիւ, էութիւնների արարման ճանապարհին սէրը նախորդում է բարուն, որովհետեւ սիրուց մղուեց արարածներին բարերարել ու խնամել:

Պրակ ԻԳ

Հարց. Պօղոս առաքեալն ասում է. «Ի՞նչ է նշանակում Աստծոյ լայնութիւնը, երկարութիւնը, խորութիւնը եւ բարձրութիւնը» (Եփես. Գ 18):

Պատասխան. Լայնութիւնը իմաստութիւնն է, երկարութիւնը՝ զօրութիւնը, խորութիւնը՝ անյայտութիւնը, բարձրութիւնը՝ անհասութիւնը:

Սուրբ Դիոնէսիոսն ասում է. «Իւրաքանչիւր մարմին եռաձեւ է», այսինքն՝ [ունի] լայնութիւն, երկարութիւն, խորութիւն: Լայնութիւն է Աստծոյ ընդարձակ ճանապարհը, որ նրա նախախնամութիւնն է բոլոր էակների նկատմամբ: Երկարութիւնը, որ ոչ լայն է, ոչ ընդարձակ, այլ միայն երկար, այսինքն՝ զօրութեամբ երկարում է [հասնելով] բոլորիս: Իսկ խորութիւնը, որ անբովանդակելի գաղտնութիւն եւ անգիտութիւն է բոլոր էակների համար, այսինքն՝ թաքնուած է ըստ խորութեան եւ բարձր՝ ըստ անգիտութեան:

Ուրիշներն ասում են, թէ Աստծոյ մէջ լայնութիւնը սէրն է, եւ այդ առաւել սիրով մեզ մոլորութիւններից հետ է պահում: Երկարութիւնը համբերութիւնն է, որով հանդուրժում է չարերին եւ ապաշխարութեան միջոցով ներում մեղքերը: Բարձրութիւնը իմաստութիւնն է, որ գերազանց է, ցանկացած մտքից, եւ ամէն ինչ մերկապարանոց է կանգնում նրա առջեւ: Իսկ խորութիւնը արդարութիւնն է, որով դատապարտում է չարը, ըստ այդմ՝ «Ինձանից հեռացէք, անիծուածնե՛ր, յաւիտենական կրակի մէջ» (Մտթ. ԻԵ 41): Եւ Դաւիթն ասում է. «Քո իրաւունքներն իբրեւ բազում խորութիւններ են» (Սղմ. ԼԵ 7):

Այս չորսը տեսնւում են նաեւ Բանի տնօրինութեան մէջ. այսինքն՝ երկարութիւնը նրա անվախճան սէրն է մինչեւ [աշխարհի] վերջը, լայնութիւնը՝ մարդկային բոլոր ազգերը, խորութիւնը, որ իջաւ մինչեւ երկիր եւ դժոխք, եւ բարձրութիւնը, որ բարձրացրեց երկինք:

ԱԼՖԱ ԵՒ ՕՄԵԳԱ
Պրակ ԻԴ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ ասւում է տեսիլքում՝ «Ես եմ ալֆան ու օմեգան», այսինքն՝ այբը եւ քէն (Յայտ. Ա 17):

Պատասխան. Նախ միտքն այս է, որ այբը առաջինն է, քեն՝ վերջինը, այսինքն՝ ես եմ առաջինն՝ աստուածութեամբս եւ ես եմ վերջինը՝ մարդկութեամբս, որովհետեւ մարդը արարածների մէջ վերջինն է:

Երկրորդ՝ ես եմ սկիզբն ու աւարտն ամէն ինչի, որովհետեւ Աստծոյ խօսքից եղան ամէնքը եւ նոյն խօսքով էլ կաւարտուեն:

Երրորդ՝ ես եմ սկիզբն արարչութեամբ եւ նախախնամութեամբ՝ բոլոր գոյաւորների աւարտը:

Չորրորդ՝ եւ քանի որ սկիզբն է ու վախճանը, ուստի նաեւ անսկիզբն է եւ անվախճանը:

Հինգերորդ՝ անսկիզբն է աստուածութեամբ եւ անվախճան մարդկութեամբ, որովհետեւ ինչպէս աստուածութիւնը սկիզբ չունի, այդպէս էլ մարդկութիւնը վախճան չունի:

Վեցերորդ՝ եկեղեցու սկիզբն է որպէս հիմք եւ աւարտը՝ որպէս գմբէթ ու լրում:

Եօթներորդ՝ սկիզբը եւ աւարտը նաեւ իբրեւ իմացութիւն է ասում, որովհետեւ էակների սկիզբը եւ վախճանը բովանդակւում են նրա ամենահաս գիտութեան մէջ:

Ութերորդ՝ սկիզբն է խոստումների է, աւարտն՝ արդիւնքների:

Իններորդ՝ սկիզբը՝ շնորհների՝ ներկայօրէն, աւարտը՝ փառքով՝ հանդերձեալ կեանքում:

Տասներորդ՝ սկիզբն է օրէնքների, աւարտը՝ ճշմարտութեան, ինչպէս հին, այդպէս էլ՝ նոր [Կտակարանում]:

Այսքանն այս մասին:

Պրակ Իե

Հարց. Ինչո՞ւ է Քրիստոսի մարմինը ոտք կոչւում:

Պատասխան. Նախ, Գրիգոր Աստուածաբանը ոտքը մարմնի հետ համարում է տնօրինութեան խորհրդանիշ, որովհետեւ մարմնով գալով՝ մեր փրկութիւնը իրագործեց եւ մարմնով համբարձուեց Հօր մօտ:

Երկրորդ՝ ոտքը մարմնի վերջին մասն է, եւ Քրիստոսն էլ երեւաց մարմնով վերջին ժամանակներում:

Երրորդ՝ երկու ոտքը հոգին ու մարմին են նշանակում:

Չորրորդ՝ ողջ մարմնի ներքեւի մասն է, ինչպէս Քրիստոսն է եկեղեցու հիմքը՝ ըստ առաքեալի (տե՛ս Ա Կորնթ. Գ 11):

Հինգերորդ՝ ոտք են հաւատացեալները եւ նրա առաքեալները, եւ գլուխ է Քրիստոս, որովհետեւ նրա անդամներն ու մարմինն ենք՝ ըստ առաքեալի (տե՛ս Եփես. Ե 30):

ԳԼՈՒԽ Թ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ[191]

Պրակ Ա

Հարց. Ի՞նչ են իմացականն ու իմանալին:

Պատասխան. Իմանալին իմացողն է, իսկ իմացականը՝ իմացուածը, որովհետեւ իմացականն իբրեւ սնունդ դրած է իմացողի առջեւ:

Իմացի՛ր եւ այս, որ Աստուած միայն իմացական է, սակայն ոչ իմանալի. հրեշտակները՝ իմացական եւ իմանալի, որովհետեւ իմացական են վերինները,

իսկ ներքեւիններն՝ իմանալի: Իսկ մարդու հոգին միայն իմանալի է եւ ոչ իմացական, որովհետեւ վերիններին իմացողներն իմանալի են, իսկ սրանից յետոյ՝ անմիտ զգայականն է, ուստի իմացական չէ այլնի:

Պրակ Բ

Հարց. Ինչո՞ւ է Աստուած տարբեր չափով տալիս պարգեւները եւ անհաւասար, ինչպէս ասենք, հրեշտակներին առաւել է տալիս, իսկ մարդկանց՝ պակաս, կենդանիներին, տնկիներին, անշունչներին՝ աւելի սակաւ:

Պատասխան. Նախ, դա Աստծոյ իմաստուն գործն է, որով զանազանւում են արարածները՝ առաւել ու նուազ ընկալելու [պատճառով] եւ ոչ թէ՝ խառնափնթոր եւ առանց զանազանութեան:

Երկրորդ՝ [Աստծոյ] արդար գործն է, որ ըստ արժանւոյն հատուցում է մեծերին ու փոքրերին, առաջիններին ու երկրորդներին:

Երրորդ՝ [նրա] նախախնամութեան գործն է, որպէսզի պարգեւներն ընդունեն ըստ իրենց ընկալելի կարողութեան, որպէսզի փոքրերը չվնասուեն մեծ բեռի տակ, եւ մեծերը թերի չմնան՝ քիչ ստանալով:

Իսկ թէ ինչու են նոյն պարզ պարգեւները զանազան կերպով ընկալւում, այսպէս է ասում սուրբ Դիոնէսիոսը. «Ինչպէս ձայնի հնչումը», որովհետեւ արտասանողից եկող ձայնը մէկն է, իսկ լսողներն ընկալում են ուժեղ եւ թոյլ: Եւ սա երկու պատճառով: Նախ, լսողի մօտ կամ հեռու գտնուելու, երկրորդ, լսելիքի առողջ կամ հիւանդ լինելու պատճառով:

Այսպէս էլ արարածներն են ըստ կարգի: Ոմանք էութեամբ մօտ են Արարչին, ոմանք՝ հեռու, ինչպէս իմացականներն աւելի, քան բանականները. վերջիններս աւելի, քան կենդանիները. սրանք էլ աւելի, քան տնկիները եւ ամենավերջում՝ անշունչ գոյացութիւնները, [որ] ըստ բնութեան մօտ կամ հեռու լինելու տարբեր պարգեւներ են ստանում:

Իսկ որպէս պատճառ առողջ ու տկար լսելիք ունեն դասակիցներն ու բնութեամբ հաւասարները. որ իմացութեամբ, սիրով եւ ներգործութեամբ առաւել կամ նուազ են, ուստի եւ առաւել կամ նուազ պարգեւներ են ընդունում, ինչպէս՝ հրեշտակների դասերում առաջին եռեակը փառքով առաւել է, քան միջիններն ու վերջիները, իսկ մարդկանց դասերում՝ մարգարէներն ու առաքեալները:

Հարց. Ի՞նչն է պատճառը, որ մեր արտաբերուած խօսքը միաւորուած լինելով ձայնին՝ բացականները լսում են ձայնը, իսկ խօսքը՝ ոչ:

Պատասխան. Այլ է խօսքը, այլ՝ ձայնը, որովհետեւ խօսքն անմարմին մտքի ծնունդ է, իսկ ձայնը օդի շարժումն է, որ [արդիւնք է] ձայնական գործիքների՝ օդի հետ բախուելու: Սրանք, այսինքն՝ խօսքն ու ձայնը, սրտում միաւորուած են եւ լեզուով օդի հետ բախուելով՝ հասնում են լսելիքներին, որտեղ ձայնը մնում է

դրսում, իսկ անմարմին խօսքը նստում է լսողների մտքում:

Արդ, ասենք, որ նախ ձայնը խօսքի ծածկոյթն է, որի պատճառով հեռու գտնուողները ընկալում են ծածկոյթը, իսկ ծածկուածը՝ ոչ:

Երկրորդ՝ ձայնի ընդունարանը ականջն է, որ մօտ է գտնուում օդին, իսկ խօսքի ընդունարանը միտքն է, որ խորն է եւ հեռու:

Երրորդ՝ բացակայողը աղօտ է լսում ոչ թէ բերանից դուրս եկած ձայնը, այլ օդի հետ բախուող ձայնը, ինչպէս արձագանքն է կրկնում ձայնը եւ ոչ թէ խօսքը: Այսպէս էլ ծիածանն է իր մէջ փոխում կերպարանքը եւ դառում այլ: Նմանապէս եւ այն թոյլ ձայնը առաջին ձայնի փոփոխումն է, ուստի եւ լսում են ձայնը եւ ոչ թէ խօսքը:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԵՐԵՒՄԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Գ

Հարց. Ինչո՞ւ աստուածաբան մարգարէները երկնայինների երեւումներն այդպէս անվայել ձեւով նկարագրեցին, իբրեւ առիւծ, եզ, աթոռ, կառք եւ այլն:

Պատասխան. Ասենք, որ տպաւորութիւնները երկու ձեւով են լինում. նման նմանութեամբ, ինչպէս լոյսի, հրի եւ այլնի, եւ երկրորդ՝ աննման նմանութեամբ, ինչպէս առիւծ, եզ եւ այլն:

Բայց բազմաթիւ պատճառներով աննման նմանութեամբ նկարագրեցին:

Նախ՝ որովհետեւ նիւթական միտքը նիւթի միջոցով հասնում է աննիւթին, ինչպէս տեսնելով գիրը՝ հասկանում ենք նրա իմաստը, տեսնելով որակը, քանակը՝ հասկանում իրի գոյացութիւնը:

Երկրորդ՝ որովհետեւ անարժաններից ծածկեցին՝ մտքով եւ գործով, ըստ այդմ՝ «Չտեսնեն աչքով, չիմանան սրտով»:

Երրորդ՝ որպէսզի մեզ յայտնուի ծածուկ խորհրդով, ըստ այդմ՝ «Ձեզ է տրուած իմանալու խորհուրդը»:

Չորրորդ՝ որովհետեւ եթէ ներկայացնէին պատուական նիւթով, [ասենք]՝ իբրեւ արեգակ, հուր, ոսկի, ակնեղէն, ապա կմտածէինք, թէ այդպիսինն է եւ նրանց բնութիւնը եւ ոչ աւելի գերազանց:

Հինգերորդ՝ որպէսզի տեսնելով այդ հասարակ կերպարանքները՝ փնտռենք ճշմարիտ իմացութիւնը:

Վեցերորդ՝ որովհետեւ թէպէտ պատուական չէին, այնուամենայնիվ՝ բարի էին իրենց ստեղծմամբ եւ նախախնամութեամբ:

Եօթներորդ՝ որովհետեւ նոյնիսկ աստուածպետական բացարձակի ճանաչողութեանը գալիս ենք աւելի շատ բացառելով, քան հաստատելով, ինչպէս, երբ ասում ենք՝ Լոյս, Կեանք, անհաղորդ ենք մնում գիտութեանը, իսկ երբ ասում ենք՝ Անժամանակ, Անիմանալի՝ աւելի ենք մօտենում էութեանը:

Այսպէս էլ անմարմին էութիւնների պարագային է:

Ութերորդ՝ որովհետեւ առաջին, երկրորդ, երրորդ խորանները վարագոյրներ էին, [որոնք] ե՛ւ ծածկում էին միմեանց, ե՛ւ յայտնում, որ առաջին խորանը աստուածայիններինն է, երկ-

որոդը՝ հրեշտակներինը, երրորդը՝ մերը, որ ծածկուած վարագոյրներով իրար էին ներկայացնում:

Իններորդ՝ որովհետեւ խորհրդանիշները երեւում էին իբրեւ վայրի գազաններ, հրեղէններ եւ թեւաւորներ՝ ցոյց տալով, որ դուրս ու հեռու են տեսանելի բնութիւնից, վայրի են եւ ոչ ընտանի:

Տասներորդ՝ որովհետեւ սրանց միջոցով իմանում ենք աննման նմանը, այսինքն՝ սրանք ունեն բարկութիւն եւ ցանկութիւն, իսկ նրանցն արիութիւնն ու սէրն է Աստծոյ նկատմամբ: Սրանք կոչւում են անբան ու անզգայ՝ ըստ պակասութեան, եւ նրանք իբրեւ առաւելութիւն ունեն իմացական միտք ու զգայութիւն:

Պրակ Դ

Հարց. Ի՞նչ էին նշանակում չորեքկերպեան կենդանիները, որ տեսաւ Եզեկիէլը (տե՛ս Եզեկ. Ժ 20-22):

Պատասխան. Նախ՝ երկրայինների բնական որակներն էին խորհրդանշում, այսինքն՝ մարդը՝ միտքը, առիւծը՝ ցասումը, եզը՝ ցանկութիւնը, արծիւը՝ արդարութիւնը, ըստ բարձր թռչելու [յատկութեան]:

Երկրորդ՝ ցոյց է տալիս նրանց վրայ նստածի՝ երկնքի, երկրի եւ ծովի Տէր լինելը, որովհետեւ երկնային է արծիւը, երկրային՝ մարդը, եւ ծովից են կենդանիները:

Երրորդ՝ որովհետեւ չորս կենդանիներն էլ արքայական են. Արծիւը՝ թռչունների, եզը՝ անասունների, Առիւծը՝ գազանների, Մարդը՝ բոլոր կենդանիների, իսկ սրանց վրայ նստածը Թագաւորաց թագաւորն է:

Չորրորդ՝ նշանակում են Փրկչի տնօրինութիւնը. առիւծը՝ որովհետեւ թագաւոր է, եզը՝ որովհետեւ քահանայ եւ պատարագ է, մարդը՝ որովհետեւ մարդացած Աստուած է, եւ արծիւը վերեւից պարգեւուած Հոգին է:

Հինգերորդ՝ նշանակում էին չորս աւետարանիչները. մարդը՝ Մատթէոսը, որովհետեւ նա ցոյց տուեց Բանի մարդեղութիւնը, առիւծը՝ Մարկոսը, որովհետեւ արիութեամբ քարոզեց Աւետարանը, [որի մասին] ասւում է՝ «գազանների հետ էր» (Մրկ. Ա 13). եզը՝ Ղուկասը, որ գրեց երկարաձիգ պատմութեամբ, որովհետեւ եզն էլ պարարտ կոչուեց, արծիւը՝ Յոհաննէսը, որ ի վերուստ աւետարանեց Բանը:

Վեցերորդ՝ այլ եղանակով է մեկնում Իրինոսը. թագաւորական առիւծը խորհրդանշում է Յովհաննէսին, որ ցոյց տուեց, որ ի սկզբանէ Բանն Աստուած էր եւ յաւիտենական թագաւոր:

Աշխատասէր եզը խորհրդանշում է Ղուկասին, որ նկարագրեց Տիրոջ ընդարձակ ազգատոհմի ցեղը: Արագընթաց արծիւը՝ Մարկոսին, որ ցոյց տուեց Հոգու մարգարէութիւնից արարուած սկիզբը: Մարդը՝ Մատթէոսին, որ յայտնի դարձրեց օրինաւոր ծնունդը[192]:

Եօթներորդ՝ մեր մէջ մարդը խօսքն է, առիւծը՝ ցասումը, եզը՝ ցանկութիւնը,

արծիւը՝ բարձրաթռիչ գիտութիւնը՝ միշտ խորհող վերինի մասին:

Պրակ Ե

Հարց. Ինչպէ՞ս են երեւում անմարմինները. մարմնո՞վ, առերեւո՞յթ, թէ՞ իսկապէս:

Պատասխան. Ասենք, որ նրանց երեւումներն առերեւոյթ չեն, ինչպէս նկարիչներն են ցոյց տալիս աչքի համար, քանզի նրանք չունեն էութիւն, այլ [սոսկ] աչքի համար երեւութական ուրուապատկերներ են, ինչպէս մտքի մէջ ցնորքը, մինչդեռ այստեղ հրեշտակների էութիւնը կերպաւորուած է իբրեւ տեսանելի մարմին:

Երկրորդ՝ այնտեղ աչքը տկարանում է երեւութականին տեսնելիս, իսկ այստեղ հրեշտակին տեսնելով՝ զօրանում է օդից կազմուած տեսանելի պատկերով:

Երրորդ՝ այնտեղ շատ կերպարանքներից աչքը շուարում է, իսկ այստեղ միայն զօրանում է մէկի տեսողական մասը, ինչպէս Եղիսէի աշակերտի:

Չորրորդ՝ այնտեղ փոփոխութիւն է կատարւում միայն տեսնելու հետ, այստեղ՝ իրի եւ տեսողականի հետ:

Հինգերորդ՝ այնտեղ հրաշքը միայն տեսողական խաբկանք է, այստեղ՝ տեսողական եւ իմացական հրաշք է:

Վեցերորդ՝ այնտեղ արուեստ է ըստ բնութեան կարգի, եւ սա հրաշք է, որ վեր է, քան բնութիւնը:

Եօթներորդ՝ այնտեղ երեւում եւ չեն կայանում, իսկ այստեղ՝ երեւում եւ կայանում են, ինչպէս, ասենք, եղջերուաքաղ կոչուածը, որ կայացած չէ, իսկ եղջերուն թէ՛ կոչուած է, եւ թէ՛ կայացած:

Ութերորդ՝ նրանց երեւալը ոչինչ չի նշանակում, իսկ սրանց երեւալը ապագայ իրողութիւնների նշան է:

Իններորդ՝ նրանց երեւալը ոչինչ չի աւելացնում, իսկ սրանց երեւալը՝ արդար խրատ, կամ պատիժ, կամ էլ՝ բարի պարգեւներ:

Տասներորդ՝ դարձեալ զանազանւում են հետեւեալ կերպ. երեւութականներն ազդում են միայն հասարակ զգայութիւնների վրայ, իսկ դեւերը փոխում են երեւակայութիւնն, ինչպէս ջերմ տենդը: Մինչդեռ հրեշտակներն ազդում են սրանց եւ իմացականի վրայ՝ յանուն բարու, ինչը դեւերը չեն կարող փոխել: Իսկ Աստուած կարող է փոխել նաեւ կամքը, որ ցանկութիւնն է՝ չարից առ բարին, որը հրեշտակները չեն կարող փոխել, սակայն [կարող են] միայն արթնացնել այդ ցանկութիւնը եւ օգնել: Որովհետեւ Աստուած բորբոքում է ցանկութիւնը, ինչպէս հուրը, որ վառում է փայտը: Իսկ ցանկութիւնը բորբոքւում է ախորժելի իրից, ինչպէս կրակը փայտից. հրեշտակն էլ արթնացնում է ցանկութիւնը, որ [նման] է փայտը կրակի մէջ դնելուն:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԴԱՍԵՐԻ ՄԱՍԻՆ[193]
Պրակ Զ

Հարց. Որքա՞ն է հրեշտակների դասերի թիւը:

Պատասխան. Դասերի ճիշտ թիւը ինն է՝ երեք եռեակներով, որոնցից առաջին եռեակը Աթոռներն են, Քերովբէները, Սերովբէները:

Սա քահանայապետութեան առաջին դասն է:

Երկրորդ եռեակը՝ Տէրութիւնները, Զօրութիւնները, Իշխանութիւնները, որ միջին դասն է:

Երրորդ եռեակը՝ Պետութիւնները, Հրեշտակապետերը, Հրեշտակները, որ վերջին կարգն են:

Առաջինները՝ իմացականներն են, վերջինները՝ իմանալիները. միջինները՝ ե՛ւ իմացական, ե՛ւ իմանալի, որոնց մասին վերեւում ուրիշ կերպ ասուեց:

Իսկ այն, որ ուրիշներն ասում են, թէ՝ տասը դասեր են, որոնցից մէկն ընկել է, պէտք է հասկանալ երկու կերպ:

Նախ, նրանց միջից ընկածը մի դաս է: Երկրորդ՝ մի դասի ընկնելով՝ դարձան ինը դաս: Սակայն ճիշտ եւ ընդհանուր է առաջին կարծիքը:

Նախ՝ որովհետեւ ըստ սուրբ Դիոնէսիոսի էլ սրանց կարգապետութիւնն ինը դասերով է: Երկրորդ՝ նրանց շարքում մարդը տասներորդն է կարգուել՝ ըստ [առակի] հարիւրերորդ մոլորուած ոչխարի եւ կորուսեալ տասը դրամի, այլապէս կլինէին տասնմէկը:

Դարձեալ՝ տասներորդը Աստուածպետութիւնն է եւ տիրապետութիւնը բոլորի վրայ:

Իսկ երեք եռեակի բաժանելը մի շարք բացատրութիւններ ունի. նախ, որովհետեւ ի դէմս երրորդութեան եւ համաբուն ճշմարտութեան է:

Երկրորդ՝ երեքը կատարեալ թիւ է[194], որովհետեւ ունի առաջին, միջին, վերջին:

Երրորդ՝ որովհետեւ էութիւն, զօրութիւն եւ ներգործութիւն են:

Չորրորդ՝ [օժտուած են] երեք յատկանիշով՝ բնութեամբ, շնորհով եւ փառքով:

Հինգերորդ՝ մաքրում, լուսաւորում եւ կատարելագործում են:

Վեցերորդ՝ գոյութիւն ունեն [յանուն] Աստծոյ, իրենց եւ ստեղծուածների մէջ:

Եօթներորդ՝ Աթոռների, Տէրութիւնների եւ Հրեշտակների:

Ութերորդ՝ ոմանք քահանայապետում են, ոմանք քահանայապետւում, միջինները՝ քահանայապետում եւ քահանայապետւում:

Իններորդ՝ ամէն մի դասի մէջ երեքն են, ինչպէս՝ Սերովբէները, Քերովբէները, Աթոռները:

Տասներորդ՝ իւրաքանչիւր դաս ունի դասապետ, միջին, վերջին [անդամ]:

Հարց. Ինչո՞ւ Դիոնէսիոսը հրեշտակների ինը դաս է ասում, իսկ Իրինոսն ու սուրբ Եպիփանն ասում են եօթն երկինք, եօթը դասեր[195]:

Պատասխան. Սուրբ վարդապետները համաձայն են իրար, որովհետեւ սուրբ Դիոնէսիոսը հրեշտակների ինը դաս է ասում, ընդ որում՝ առաջին դասը անմիջականօրէն [հաղորդակից] է Աստուածային իմացութեանը, համապատիւ եւ փառակից Աստծուն: Այդ

պատճառով Իրինոսն էլ սրանց նոյն կարգում է դնում: Իսկ եօթ երկինք ասում է հրեշտակների դասերին, որ մէկը միւսից բարձր են, ինչպէս երկինքները:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԴԱՍԵՐԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
Պրակ է

Հարց. Իսկ քահանայապետութեան առաջին դասում Սերովբէ՞ն է առաջին դասը, թէ՞ Աթոռները:

Պատասխան. Ասենք, որ երեքն էլ՝ Աթոռները, Քերովբէները, Սերովբէները հաւասարապէս նոյնակարգ, միապատիւ ու գերազանց էութիւններ են, որովհետեւ անմիջականօրէն Աստծոյ բոլոր լուսափայլ իմաստութիւնները եւ շնորհները հաւասարապէս նրանց վրայ են հեղուում, եւ ապա սրանցով՝ բոլոր երկնայինների ու երկրաւորների վրայ: Եւ սակայն դասերի առանձնացուածութեան պատճառով նրանցում կարգ կայ, ինչպէս Դիոնէսիոսն է կարգում. նախ՝ Աթոռները, ապա՝ Քերովբէները եւ յետոյ՝ Սերովբէները: Եւ այսպէս է երեք պատճառով:

Նախ, որովհետեւ Եզեկիէլն ու Եսային Աթոռներին մօտիկ տեսան նստողին եւ նրանց շուրջը՝ Քերովբէներին ու Սերովբէներին:

Երկրորդ՝ որովհետեւ Աթոռներն ի դէմս Հօր են ասւում, ըստ այդմ՝ «Աթոռը քո Աստուած յաւիտեան» (Սղմ. ԽԴ 7), եւ ապա՝ «Աթոռները դրուեցին եւ նստեց Հնօրեան» (Դան. է 9), որ Հայրն է:

Քերովբէն, որ բազում իմացութիւններ է, ի դէմս Որդու է ասւում, որովհետեւ Որդին է Հօր իմաստութիւնն ու գիտութիւնը՝ ըստ առաքեալի (տե՛ս Ա Կորնթ. Ա 24):

Եւ Սերովբէն, որ նշանակում է ջեռուցիչ, ի դէմս Սուրբ Հոգու է, որովհետեւ նա սիրոյ հուրն է, որ գցեց Տէրը մեր երկրի մէջ:

Երրորդ՝ Սերովբէ [նշանակում է] մաքրող եւ հրեղէն, ընդ որում՝ «մաքրեց մարգարէին» (տե՛ս Ես. Զ 6). Քերովբէն [նշանակում է] իմաստութեամբ լուսաւորող, իսկ Աթոռները՝ արդարութեան կատարողներ:

Եւ այժմ էլ եկեղեցում կայ նոյն խորհուրդը՝ Սերովբէի պատկերը՝ որ քշոցն է, սարկաւագի ձեռքում է դրւում, ինչը [խորհրդանշում է] մաքրողին, եւ երրորդ կարգն է քահանայից ու քահանայապետից յետոյ: Սրանով յայտնի է դառնում կարգի որպիսութիւնը:

Սակայն ոմանք ասում են, որ Սերովբէն է վերինը. նախ, որովհետեւ Սերովբէն խոկում է Աստծոյ բարութեան մասին, Քերովբէն՝ ճշմարտութեան, իսկ Աթոռները՝ արդարութեան:

Երկրորդ՝ որովհետեւ Սերովբէն բորբոքում է սէրը, որ անմիջական կապն է, Քերովբէն՝ ճշմարտութեան ճանաչողութիւնը, Աթոռները՝ արդարութեան: Եւ սրանք են արդար դատաստանի վերակացուները, ուստի եւ այդպէս են անուանում սրանց դասերի կարգը, եւ սրանց տարածայնութիւնները դասերի հաւասարազօրութիւնն են նշանակում:

Այլ տեղում էլ ասւում է՝ Քերովբէների մէջ էր նստած, որովհետեւ

բոլորն էլ աստուածակիր են եւ Աստծոյ կամքի հանգիստը:

Իսկ եթէ ըստ կարգի ես ուզում իմանալ, ապա պէտք է հետեւել սուրբ Դիոնէսիոսի վերն ասուածին, ինչպէս նրան աւանդուեց Պօղոս առաքեալից՝ երրորդ երկինք յափշտակուածից (տե՛ս Բ Կորնթ. ԺԲ 2):

Եւ քահանայապետութեան միջին կարգում առաջինը Տէրութիւններն են, ապա՝ Զօրութիւնները եւ նրանց հետ՝ Իշխանութիւնները: Թէեւ այս կարգը ոմանք փոխում են եւ Զօրութիւններն ու Պետութիւններն են դասում [այդ կարգում], որին մեզ հետեւելու յարկ չկայ, այլ ինչպէս ասացինք՝ Սուրբ Դիոնէսիոսին: Նախ, որովհետեւ Տէրութիւնն առնչւում է Հօրը, Զօրութիւնը՝ Որդուն, Իշխանութիւնը՝ իշխանակից Սուրբ Հոգուն:

Դարձեալ՝ առաջինում տիրում է Աստուած իբրեւ մեծութիւն, երկրորդում կառավարում է իբրեւ զօրութիւն, երրորդում պատսպարում է իբրեւ փրկութիւն:

Դարձեալ՝ առաջինները կարգաւորում են հրեշտակների գործերը եւ մարդկանց տիրապետութիւնը. երկրորդները զօրացնում են սքանչելի գործերի մէջ եւ հոգեւոր պատերազմում, երրորդները վանում են դեւերի ու չարերի իշխանութիւնը:

Սա է քահանայապետութեան միջին կարգը եւ նրանց գործերը:

Իսկ վերջինն այսպէս է կարգւում. նախ՝ Պետութիւնները, ապա՝ Հրեշտակապետերը, վերջում՝ Հրեշտակները: Եւ սա է նրանց ճշգրիտ կարգը: Նախ՝ որովհետեւ Պետութիւնները Հօրն են պատշաճում, Հրեշտակապետերը՝ Որդուն իբրեւ երկուսի միաւորում, իսկ Հրեշտակներն ի դէմս Հոգու են՝ իբրեւ նախապէս ամենուրէք եկածներ, ապա Որդու եւ Հօր մէջ բնակուածներ:

Դարձեալ՝ առաջինում կառավարում է Աստուած իբրեւ նախապետութիւն, երկրորդում յայտնւում է իբրեւ լոյս, երրորդում սնուցանում է իբրեւ ներգործող:

Դարձեալ՝ առաջինները կառավարում են ազգերին ու թագաւորութիւններին, ինչպէս Միքայէլը: Երկրորդները մեծագոյն բաներ են աւետարանում, ինչպէս Գաբրիէլը: Երրորդները պահպանում են իւրաքանչիւր անձի, ինչպէս Ռաֆայէլը:

Եւ բոլոր դասերի անուանումների մասնաւոր բացատրութիւնը կարող ես գտնել [նաեւ] այլ տեղ, ուր գրուած է. «Նա քամիները հրեշտակներ դարձրեց» (Սղմ. ՃԳ 4) խօսքի վերաբերեալ:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ը

Հարց. Ինչո՞ւ ապա բոլոր դասերը հաւասարապէս կոչւում են հրեշտակներ, ինչպէս այն, որ ասում է՝ «Նա քամիները հրեշտակներ դարձրեց իրեն» (Սղմ. ՃԳ 4):

Պատասխան. Ասենք, որ երեք պատճառով: Նախ, որովհետեւ հաւասար են բնութեամբ, անմարմին են, հրեղէն, իմացական եւ այլն: Երկրորդ՝ հրեշտակ նշանակում է պատգամաբեր եւ յայտնող,

եւ ընդհանրապէս գաղտնիքը առաջիններից վերցնում հաղորդում են երկրորդներին: Երրորդ՝ վերեւիններին ներքեւիններին կրում են իրենց մէջ ամբողջութեամբ, իսկ ներքեւիններին վերեւիններին՝ մասնակիօրէն՝ ըստ իրենց կարողութեան: Նոյն կերպ եւ քահանայապետութիւնն ունի ներքեւիններին բոլոր աստիճանները, իսկ ներքեւիններին վերին քահանայապետութեանը՝ մասնակիօրէն:

Ապա ուրեմն պարզ է, որ այլ է շնորհականների կարգը, այլ՝ բնականի, որովհետեւ բնական ներքեւիններն ունեն վերեւիններին ամբողջութեամբ եւ կոչմամբ, սակայն ոչ հակառակը. ինչպէս անհատն ունի տեսակի եւ սեռի ամբողջ նկարագիրը եւ անուանումը, ինչպէս՝ Պետրոսը մարդ է եւ կենդանի է եւ այդպէս է կոչւում: Իսկ կենդանին՝ մարդ կամ մարդը՝ Պետրոս չէ եւ այդպէս չի կոչւում:

Սրան հակառակ, քահանայապետը, որ վերինն է, իր մէջ կրում է նաեւ քահանային եւ այդպէս է կոչւում: Իսկ քահանան կամ սարկաւագը չունեն վերեւիններին եւ [այդպէս] չեն կոչւում:

Այս է պատճառը, որ նա, ով առաջինն է եւ վերինը, իր մէջ կրում է երկրորդին եւ ներքեւինին:

Եւ եթէ մէկն ասի, թէ ապա ինչո՞ւ են մարդիկ հրեշտակ անուանւում, իսկ հրեշտակներն՝ աստուած, որ վերեւինների անուններն են, ապա ասենք, որ նախ, ինչպէս ասացինք, ներքեւիններն իրենց մէջ մասնակիօրէն կրում են վերեւիններին, ինչպէս վերեւիններին՝ ներքեւիններին ամբողջապէս: Արդ, որքան սրբութեամբ եւ իմացմամբ աստուածատեսակ նկարագիր ունենան, [այնքան] աստուած [կարող են] կոչուել թէ՛ հրեշտակները, թէ՛ սուրբ այրերը, ինչպէս Մովսէսը:

Եւ դարձեալ աստուած են կոչւում ոչ թէ փաղանունաբար, այլ համանունաբար, այսինքն՝ միայն անուամբ եւ ոչ թէ բնութեամբ:

Հարց. Ինչո՞ւ են ընդհանրապէս Զօրութիւններո անուանւում երկնայիններ, ըստ այդմ՝ «Երկնքի զօրութիւնները շարժուեցին» (Ղուկ. ԻԱ 26):

Պատասխան. Երեք պատճառով:

Նախ՝ որովհետեւ ամբողջ դասը եւ իւրաքանչիւր անհատ ունեն էութիւն, զօրութիւն եւ ներգործութիւն, այսինքն՝ էաւորուած են, կարողութիւն ունեն եւ ներգործում են, որի պատճառով էլ խօսուն բառով կոչւում են էութիւններ, զօրութիւններ եւ այլն:

Երկրորդ՝ Զօրութիւններին առանձնայատուկ է աստուածային արիութիւնը, անփոփոխ լինելը եւ զօրացնելը. սա բնորոշ է բոլորին, որի պատճառով էլ առհասարակ կոչւում են Զօրութիւններ:

Երրորդ պատճառը՝ Զօրութիւնները դասակարգուած են միջին տեղում, իսկ ինչպէս ցոյց տրուեց, վերինները մինչեւ միջինները ներքեւիններին ունեն իրենց մէջ ամբողջապէս, իսկ ներքեւիններին նրանց՝ մասնակիօրէն, որի պատճառով էլ ընդհանրապէս Զօրութիւն են կոչւում:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ [ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ] ԵՒ ԱՌԱՆՁՆԱ-ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ[196]
Պրակ Թ

Հարց. Որո՞նք են երկնայինների ընդհանուր [յատկանիշները] եւ որոնք՝ առանձնայատկութիւնները:

Պատասխան. Նախ, ընդհանուր է անմարմին ու իմացական հոգի լինելը:

Երկրորդ՝ բոլորը կոչւում են հրեշտակներ՝ իբրեւ միմեանց ուսուցանողներ եւ յայտնողներ:

Երրորդ՝ բոլորը Զօրութիւն են կոչւում, որովհետեւ ունեն զօրութիւն, էութիւն եւ ներգործութիւն:

Չորրորդ՝ բոլորը մարմնաւորների խնամարկուներն են:

Հինգերորդ՝ անմահ են եւ մշտնջենաւոր:

Վեցերորդ՝ հնազանդ են Աստծոյ կամքը սպասարկելիս:

Եօթներորդ՝ երանուած են Աստծոյ սիրոյ եւ տեսութեան մէջ:

Ութերորդ՝ ազատ եւ անձնիշխան կամքով ընտրում են բարին եւ մերժում չարը, դիւրընկալ են բարու մէջ, դժուարաշարժ՝ չարի:

Իններորդ՝ բոլորը հրեղէն բնութեամբ են՝ շնորհների եւ անփոփոխ՝ փառքի մէջ:

Տասներորդ՝ մշտաշարժ են երեք ուղղութեամբ՝ շրջանաձեւ, ուղիղ, շեղակի, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում:

Իսկ նրանց առանձնայատկութիւնները սրանք են: Նախ, որ անձնապէս տարորոշուած են, քանզի անձով զանազանուած են իրարից:

Երկրորդ՝ [տարբերւում] են փառք ու պատուով, որովհետեւ ոմանք գերագոյն փառք ունեն, քան միւսները:

Երրորդ՝ [տարբերւում] են Աստծուն տեսնելու եւ իմանալու մէջ, որովհետեւ ոմանց տրուած է առաւել, ոմանց՝ պակաս:

Չորրորդ՝ մասնայատուկ է նրանց կարգը. ոմանք բարձր են, քան միւսները:

Հինգերորդ՝ որովհետեւ ոմանք իշխան են, ոմանք՝ իշխուող:

Վեցերորդ՝ ներգործութեամբ, [այսինքն] մաքրում կամ մաքրւում են, եւ այլն:

Եօթներորդ՝ ուսմամբ, որովհետեւ ուսուցանում եւ սովորում են:

Ութերորդ՝ խնամարկութեամբ, [այսինքն՝] ոմանք խնամում են ազգերի եւ պետութիւնների, ոմանք էլ անհատների ու անձերի պահապան են:

Իններորդ՝ ոմանք մեծամեծ իրողութիւնների արդար միջնորդներ են եւ ուրիշներ՝ ցածրակարգ բաների սպասաւորներ:

Տասներորդ՝ առանձնայատկութիւն է նաեւ նրանց խորհրդական կերպարանքները, ինչպէս ասենք՝ Քերովբէները՝ բազմաչեայ եւ ութաթեւ, Սերովբէները՝ սրբաբանող՝ քառակերպեան Աթոռների հետ:

Կան եւ ուրիշ ընդհանուր եւ յատուկ յատկանիշներ, սակայն առայժմ այսքանը բաւական է:

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ[197]
Պրակ Ժ

Հարց. Քահանայապետութիւնը ի՞նչ կարգով է հրեշտակների մօտ, ինչպէս մեզ մօ՞տ:

Պատասխան. Քահանայապետութիւնը, քանի որ կարգ է, նոյնն է թէ՛ մարդկանց մօտ, թէ՛ հրեշտակների եւ թէ՛ սուրբ Աստուածպետութեան մէջ:

Այսպէս, նախ սրանց բոլորին յատուկ է մաքրելը, լուսաւորելը, կատարելագործելը:

Երկրորդ՝ որովհետեւ նախ մաքրում են, ապա՝ լուսաւորում եւ յետոյ՝ կատարելագործում, եւ այս կարգը յատուկ է բոլորին:

Երրորդ՝ որովհետեւ անբաժանելի են կրողներից, այսինքն՝ Աստծուց, հրեշտակներից, ինչպէս եւ արժանաւոր մարդկանցից, որովհետեւ յարամնայ ունակութիւն են եւ անքակտելի կնիք: Այսքանն ընդհանրութիւնն էր:

Իսկ առանձնայատկութիւններն են, նախ՝ որովհետեւ Աստծոյ մէջ քահանայապետութիւնն ինքնակատար ու սկզբնակատար է, իսկ հրեշտակների ու մարդկանց մօտ՝ ուրիշից սկսուած ու ածանցաւոր:

Երկրորդ՝ Աստուած միշտ տալիս է ու չի վերցնում, հրեշտակը վերցնում եւ տալիս է, այսինքն՝ վերցնում առաջիններից, տալիս է վերջիններին, մինչդեռ մարդը միշտ վերցնում է:

Երրորդ՝ որովհետեւ Աստուած քահանայապետութիւնն ունի ի սկզբանէ եւ բնութեամբ, իսկ հրեշտակը՝ բնութեամբ եւ սկզբնառուած, մինչդեռ մարդիկ՝ ոչ բնութեամբ, այլեւ՝ յետոյ ստանալով եւ ունակութեամբ:

Այս տարբերութիւնները վերաբերում էին երեքին էլ, ինչպէս ցոյց տրուեց: Սակայն երկնաւորների մէջ էլ տարբերութիւններ կան:

Նախ՝ որովհետեւ առաջին դասն անընդմիջաբար վերցնում է Աստծուց, միջինը եւ վերջինը՝ միջնորդութեամբ:

Երկրորդ՝ որովհետեւ առաջիններն առանց տարակուսանքի են վերցնում իմացութիւնը, իսկ միւսները՝ նախ տարակուսում եւ ապա վերցնում են, որովհետեւ այն, որ նախ վերցրեց առաջին դասը տարակուսելի է նրանց համար, մինչեւ որ իրենք եւս վերցնեն:

Երրորդ՝ որովհետեւ առաջիններն աւելի են լուսաւորուում իմացութեամբ, մինչդեռ միւսներն ըստ կարողութեան:

Սրանք են երկնային քահանայապետութիւնների զանազանութիւնները: Իսկ հրեշտակների եւ մարդկանց [քահանայապետութեան տարբերութիւնները], որ նախ՝ մարդիկ հրեշտակների միջնորդութեամբ են ստանում ու ոչ հակառակը եւ՝ մարդացեալ Բանով:

Երկրորդ՝ մարդկանց քահանայութիւնը նիւթական խորհրդով է ներգործում, ինչպէս հացով, գինով եւ այլն, իսկ նրանցը աննիւթաբար է կատարուում:

Երրորդ՝ դրանով մարդիկ մաքրուում են աղտերից, իսկ հրեշտակները սուրբ են եւ առանց աղտերի: Նրանք լոյս լինելով են լուսաւորում, իսկ մենք խաւարից ենք

գալիս դէպի լոյսը: Նրանք մեծազարդ իմացումներով ու աստուածային հանճարով են կատարելագործւում, իսկ մենք հաւատի աստիճաններով ենք կատարելագործւում:

Դարձեալ՝ հրեշտակների մօտ նոյն աստուածային իմացութիւնը ե՛ւ սրբութիւն է, ե՛ւ լուսաւորութիւն, ե՛ւ նրանց կատարելագործում, որովհետեւ աստուածային գիտութիւնը մաքրում է առաջին տգիտութիւնից եւ լուսաւորում նրանց, եւ կատարելանում են նոյն հանճարով: Այդպէս էլ գիտութիւնը մարդկանց՝ սկզբում, մէջտեղում, վերջում նախ [նրանց] տգիտութիւնն է վերացնում, ապա՝ միտքը լուսաւորում եւ կատարելագործում:

Ուրեմն յայտնի է, թէ քահանայապետութիւնն ինչպէս է ընդհանուր եւ տարբեր Աստծոյ, հրեշտակների եւ մարդկանց մօտ:

Հարց. Ինչպէ՞ս են հրեշտակները մաքուր ու ազատ բոլոր չարերից:

Պատասխան. Տասը պատճառով:

Նախ, որովհետեւ Աստուած մօտիկ է նրանց:

Երկրորդ՝ որովհետեւ Աստծոյ կամքը հանգչել է նրանց վրայ եւ ուղղորդում է:

Երրորդ՝ որովհետեւ պարուրուած են ճշմարտութեամբ:

Չորրորդ՝ որովհետեւ սիրեցին բարին:

Հինգերորդ՝ որովհետեւ անշեղ է նրանց հայեացքը դէպ Աստուած:

Վեցերորդ՝ որովհետեւ էութեամբ անփոփոխ են:

Եօթներորդ՝ որովհետեւ կեանքով երանելիներ են:

Ութերորդ՝ որովհետեւ լոյսի մէջ են բնակւում:

Իններորդ՝ որովհետեւ բարձրում թեթեւացած են:

Տասներորդ՝ որովհետեւ չարն ինքնակամ ատեց նրանց ու հեռացաւ եւ մրուրի պէս նստեց երկրի վրայ, որի պատճառով բովանդակ աշխարհը լցուեց չարով ու խաւարեց զանազան մեղքերով: Եւ այն, որ ներսում է, կոչւում է չարութիւն ու ախտ, իսկ այն, որ դրսում է՝ կիրք եւ արատ: Իսկ նրանք անախտ ու անարատ են կոչւում:

ՇՆՈՐՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԱ

Հարց. Շնորհը ի՞նչ է նշանակում:

Պատասխան. Շնորհը երբեմն դրւում է ողջոյնի փոխարէն, ըստ այդմ՝ «Շնորհ ընդ ձեզ եւ խաղաղութիւն» (Տիտ. Ա 4), որով տրւում է Սուրբ Հոգին:

Երբեմն մարմնական օժտուածութիւնն է շնորհ կոչւում, ըստ այդմ՝ «Նրանց կառաքեմ՝ ձեր շնորհը տանելու Երուսաղէմ»:

Երբեմն գոհութիւնը արտայայտելու միջոց է, ըստ այդմ՝ «Շնորհ ունեմ նրանից, որ զօրացրեց ինձ» (Ա. Տիմ. Ա 12):

Երբեմն նեղութիւնն է ասւում, ըստ այդմ՝ «Պանդխտակից եղաւ այդ շնորհին» (Բ Կորնթ. Ը 19), այսինքն՝ նեղութեանն ու վշտին:

Երբեմն թողութիւն է նշանակում, ըստ այդմ՝ «Եթէ մէկին շնորհէք՝ ես էլ» (Բ Կորնթ. Բ 10):

Երբեմն օգնութիւն է նշանակում, ըստ այդմ՝ «Բազմապիսի շնորհների համար, որ արեցիք մեզ, բազում գոհութիւն ձեզ» (Ա Կորնթ. Ա 11):

Երբեմն քարոզ է նշանակում, ըստ այդմ՝ «Շատերի գոհութեամբ առատացած շնորհները աւելանում են ի փառս Աստծոյ» (Բ Կորնթ. Դ 15):

Երբեմն անուանում է հրաշքն ու արուեստը, ըստ այդմ՝ «Ոչ թէ մարմնաւոր իմաստութեամբ, այլ Աստծոյ շնորհով շրջեցիք երկրում» (Բ Կորնթ. Ա 12):

Երբեմն անուանում է հաւատն ու սէրը, ըստ այդմ՝ «Հաւատակից եմ ձեր շնորհին» (Բ Կորնթ. Ա 23), այսինքն հաւատին, եւ՝ «Նախանձաւոր եղէ՛ք շնորհների նկատմամբ, որոնք լաւն են» (Ա Կորնթ. ԺԲ 31), այսինքն՝ սիրոյ:

Երբեմն էլ նշանակում է Հոգու զանազան պարգեւներ, որ աւազանից տալիս է մարգարէութիւն, քահանայապետութիւն, լեզուների իմացութիւն, ըստ այդմ՝ «Թէեւ տարբեր շնորհներ են, սակայն նոյնն է Հոգին» (Ա Կորնթ. ԺԲ 4), որոնք եւ թուարկելով՝ ասում է. «Մէկին Հոգու կողմից տրւում է իմաստուն միտք, միւսին՝ գիտութիւն» (Ա Կորնթ. ԺԲ 8) եւ այլն:

Հարց. Ի՞նչ է քահանայապետութեան շնորհը:

Պատասխան. Ասենք, որ որեւէ բան ճանաչւում է կամ անուամբ, կամ էլ՝ սահմանումով: Անուամբ յայտնի է ինքնին: Իսկ [քահանայապետութեան մասին] սահմանումն ասում է. «Քահանայապետութեան շնորհը սրբազան կարգ է, հանճար ու ներգործութիւն, ըստ կարողութեան չափի՝ աստուածատեսակ նմանութիւն»[198]:

Սակայն սրա վերաբերեալ երեք հարցեր են ծագում: Նախ, թէ այս շնորհը անե՞ղ է, թէ՞ եղական: Երկրորդ՝ մէ՞կն է, թէ՞ բազում: Երրորդ՝ անչա՞փ է, թէ՞ չափաւոր:

Առաջինի վերաբերեալ պէտք է իմանալ, որ ամէն մի շնորհ Անեղ լոյսից իջած բխում ու ճառագայթ է՝ բոլոր իմանալի ու զգայական էակներին, որ զարդարում է նրանց՝ ըստ նմանութեան այն շնորհի, որ պարգեււում է՝ թէ՛ ըստ բնութեան եւ թէ՛ ըստ անձի՝ հրեշտակներին եւ մարդկանց:

Ուստի շնորհն ինքնին անեղ է, առաջացած անեղ էութիւնից, որ նախախնամութեամբ փոխանցւում է եղականներիս, սակայն իր էութիւնը չի փոխում:

Երկրորդի վերաբերեալ, այսինքն՝ մէկն է, թէ՞ բազում, ասենք, որ սկիզբն ըստ էութեան մէկն է, որովհետեւ առաջ է եկել մի պատճառից, իսկ բազում դարձել է ըստ զանազան որակների, ինչպէս ասենք՝ եօթնարփեան եւ ըստ աստիճանների:

Եւ դարձեալ՝ շատերին ըստինքեան միաւորում է իր պատճառի շուրջը, ինչպէս արեւի լոյսը բազում հայեացքներում:

Երրորդի վերաբերեալ՝ անչափ է, թէ՞ չափաւոր, ասենք, որ շնորհն ինքնին անսահմանափակ է, սակայն չափաւորուում է ըստ տուողի կամքի եւ ըստ ընդունողի կարողութեան, ինչպէս խօսքը մարդու ականջներում:

Նոյնը եւ պարզութիւնը, անփոփոխութիւնը եւ այլն:

ՀՈԳՈՒ ԵՒ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ
Պրակ ԺԲ

Հարց. Ինչո՞վ են տարբերւում հրեշտակն ու մարդու Հոգին եւ ինչո՞վ նմանւում:

Պատասխան. Նման են չորս [յատկանիշներով]. պարզ են իմացմամբ, ինքնիշխան են կամքով, իշխանական են ցասմամբ եւ ունեն բարու ցանկութիւն:

Սրանք են նմանութիւնները:

Եւ զանազանւում են չորսով:

Նախ՝ հոգին բանական է, հրեշտակն՝ իմացական:

Երկրորդ՝ հոգին միաւորւում է մարմնի հետ, հրեշտակը՝ ոչ:

Երրորդ՝ հրեշտակն ինքնին անձ է, իսկ հոգին մարմնով է կատարեալ անձ:

Չորրորդ՝ հրեշտակն անփոփոխ է, իսկ հոգին փոփոխական է, ինչպէս ասացինք ԼՁ գլխում:

Իսկ յարութիւնից յետոյ [հոգին] նմանւում է հրեշտակներին՝ իմացութեամբ, կատարեալ անձով, անքանակ, անփոփոխ մարմնով:

Հարց. Հրեշտակների եւ հոգու իմացութիւններն ինչո՞վ են զանազանվում:

Պատասխան. Չորս կերպ: Նախ՝ որ հրեշտակը միեղէն է եւ իմանում է ամբողջը, իսկ հոգին՝ բան, բան է ու մասնաւոր է, որի պատճառով էլ կոչւում է բանական:

Երկրորդ՝ հրեշտակը պարզ է ընկալում, իսկ հոգին՝ առարկայի ընկալումը համադրելով:

Երրորդ՝ հոգին իմանում է փոխանցուածներից եւ նախօրինակներով, իսկ հրեշտակը նախատիպն [իմանում է] առանց նախօրինակների:

Մնացեալի մասին ասել ենք Ը գլխում:

Եւ յարութիւնից յետոյ սրանք կփոխուեն, եւ հրեշտակն ու հոգին կհաւասարուեն:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԹՈՒԻ ՄԱՍԻՆ[199]
Պրակ ԺԳ

Հարց. Ի՞նչ է «հազար հազարաց»-ը եւ «բիւր բիւրաց»-ը, որ տեսաւ Դանիէլը (տե՛ս Դան. է 10):

Պատասխան. Սրանք մեր [իմացութեան] մէջ կատարեալ ու գերակատար թուեր են, որ գլխաւորում են ըստ չորս տարրերի. դրանք են՝ տասը, հարիւրը, հազարը, բիւրը, քանի որ տասն [անգամ] տասը հարիւր է, տասն [անգամ] հարիւրը՝ հազար է, տասն [անգամ] հազարը՝ բիւր է: Եւ կամ՝ հարիւր [անգամ] տասը հազար է, հարիւր [անգամ] հարիւրը տասը հազար է, որ մի բիւր է,

հարիւր [անգամ] հազարը տասը բիւր է, հազար [անգամ] հազարը հարիւր բիւր է, եւ հազար բիւրը տասն [անգամ] հարիւր հազար է:

Եւ այսպէս բազմապատկելով հազարը եւ բիւրը՝ հասնում ենք անսահմանին, որի պատճառով էլ, երբ ասում են հազար հազարաց եւ բիւր բիւրաց, ոչ թէ ինչ որ թիւ պէտք է հասկանալ, այլ՝ անսահմանութիւն:

Եւ գիտենք, որ ըստ սուրբ Դիոնէսիոսի հրեշտակների դասը ինն է եւ ի դէմս Երրորդութեան՝ երեք եռեակներով են: Դրանից բացի, տասներկու գունդ էլ մատնանշեց Տէրն Աւետարանում (տե՛ս Մտթ. ԻԶ 53)՝ ըստ տասներկու առաքեալների թուի եւ տասներկու կենդանակերպերի:

Իսկ առանձին, իւրաքանչիւրի թիւը մեզ անյայտ է, ինչպէս երկնքի աստղերինը, որովհետեւ թիւը մեր [իմացութեան մէջ] նիւթական է ու պակասաւոր, նաեւ չափաւոր, իսկ չափաւորը անսահմանին չի կարող չափել, ուստի ակնյայտ է, որ մեր թիւն էլ չենք կարող իմանալ:

Իսկ իրենց՝ վերին էութիւններին յայտնի է նրանց թիւը՝ շնորհիւ նրանց տրուած ամէնիմաց գիտելիքների: Նոյնը եւ յարութիւնից յետոյ [վերապահուած է] արդարներին:

Իսկ թէ Աստուած ինչպէ՞ս գիտէ բոլորի թիւը, ըստ այնմ՝ «Ով համրում է աստղերի բազմութիւնը» (Սղմ. ՃԽԶ 4), ասենք, որ երեք կերպ. նախ, որ ամէնքի սկիզբն ու պատճառն է, գիտէ իրենից սկսուածների [թիւը]:

Երկրորդ՝ բոլորին միասնական ունի եւ այդպէս գիտէ իր ունեցածներին ու պահում է:

Երրորդ՝ բոլորի իրականացումն ու բովանդակութիւնն է եւ այդպէս գիտէ բոլորին, որոնց սկիզբն ու աւարտն է, ու թափանցում է բոլորի մէջ եւ ունի [բոլորին]: Եւ մի է սկիզբը, մի է աւարտը, մի է թափանցումը, որի պատճառով մէկով եւ իրենով գիտէ բոլորին եւ ոչ թէ ինչպէս մենք, որ բազումով [գիտենք] բազումը:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՇԱՐԺՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԴ

Հարց. Ի՞նչ է հրեշտակների դադարն ու շարժուելը՝ ըստ Եսայու, որ ասում էր, թէ՝ «Սերովբէներ կային նրա շուրջը եւ թռչում էին» (Ես. Զ 2):

Պատասխան. Ամէն մի իր ունի դադարի եւ շարժման վիճակներ: Դադարն ըստ բնութեան է, շարժվելը՝ ըստ իմացման ու ներգործութեան: Իսկ շարժումն ըստ սուրբ Դիոնէսիոսի երեք տեսակ է՝ շրջանաձեւ, ուղիղ, միակողմանի, եւ սրանք [յատուկ] են հրեշտակներին էլ, հոգուն էլ, մարմնին էլ:

Հրեշտակների շրջանաձեւ շարժումը նոյնից [դէպ] նոյնն է, ինչպէս անւի [շարժումը], որ տեսաւ Եզեկիէլը (տե՛ս Եզեկ. Ա), այսինքն ինչպէս նոյնութեամբ սկսուել են Աստծուց, այդպէս էլ անվախճան մնում են: Իսկ ուղիղ շարժմամբ իջնում են երկրորդի մօտ նախախնա-

մութեամբ՝ ոչ թէ նոյնից նոյնը, այլ մէկից միւսը: Իսկ միակողմանի, որ խնամուողներին դէպի Աստուած են վերադարձնում՝ միացնելու առաջին սկզբին:

Այսպէս էլ հոգին է շարժւում շրջանաձեւ, միակողմանի եւ ուղիղ: Շրջանաձեւ է, երբ մտքի իմացումը բոլոր եղածների մասին ժողովում է իր մէջ եւ այնպէս ամբողջութեամբ հպւում ու միանում է Աստծուն. եւ սա է նշանակում ամբողջ սրտով եւ մտքով սիրել Աստծուն, որով օժտուած են ընտրեալները, մարգարէներն ու առաքեալները:

Իսկ հոգին միակողմանի կամ գնդակաձեւ է շարժւում [այն ժամանակ], երբ գիտութեան տեսութեամբ եւ մտածութեամբ բնականօրէն լուսափայլում է, եւ այնպէս հոգեպէս միաւորւում է Աստծուն, ինչպէս առաքեալների ու մարգարէների աշակերտներն էին:

Իսկ ուղիղ է շարժւում, երբ մեր զգայարանների միջոցով նախօրինակով ու օրինակներով հպւում ենք նախատիպին, որ է Աստուած:

Այսպէս եռակի շարժումներ ունի նաեւ մարմինը: Շրջանաձեւ, այսինքն՝ բնական ներգործութիւններից, ինչպէս հրի այրելն է կամ ձեան սառեցնելը. միակողմանի, ինչպէս փոխանցումն է միմեանց՝ հօրից որդի, ջրից ձկներին: Եւ ուղիղ, ինչպէս քայքայուածները փոխակերպւում են իրենց տարրերի մէջ:

Եւ այլ կերպ է զանազանւում մտքի տեսութիւնը: Նախ, որովհետեւ իմանում եւ տեսնում է ինքնըստինքեան: Երկրորդ՝ զգայարանների միջոցով: Սա ըստինքեան բաժանւում է երկուսի: Իսկ որ մտքի իմացումները հաւաքում է առ ինքը՝ յիշողութեամբ, տրամախոհութեամբ, կարծիքով եւ այլն, եւ այդպէս ներհայեցութեամբ հպւում է Աստծուն՝ սա գերագոյն իմացութիւնն է, որ կոչւում է իմացական տեսութիւն:

Եւ կայ, որ իմացութիւնն է բաժանւում յիշողութեան, տրամախոհութեան եւ այլնի, ու սրանցով իմանում ու տեսնում Աստծուն, որը նոյնպէս կատարեալ իմացութիւն է եւ կոչւում է բնական տեսութիւն:

Իսկ որ զգայարաններով է ընկալում, այսինքն՝ աչքով գոյնը, ականջով՝ ձայնը, սա էլ կոչւում է զգայական տեսութիւն: Եւ սա կարիք ունի երկու բանի, այսինքն, որ զգայարաններն առողջ լինեն, իսկ առջեւում եղած զգայուող առարկան՝ յստակ, որից յետոյ միտքը կարող է պարզօրէն ընկալել առարկան, այլապէս նա չի կարող տեսնել դրանցով:

Պրակ ԺԵ

Հարց. Ինչո՞ւ մարդը կարիք ունեցաւ գրի:

Պատասխան. Որովհետեւ ունի զգայարաններ, այսինքն՝ տեսողութիւն, լսողութիւն եւ այլն, [որոնց միջոցով] գրելով ու խօսքով, այսինքն՝ կարդալով, ժողովում ենք գիտելիքներ: Իսկ քանի որ հրեշտակները չունեն զգայարաններ, կարիք չունեն գրի եւ խօսքի, ապա ուրեմն պարզ է, որ գիրն ըստինքեան իմացութեանը նպաստող միջոց է, ինչպէս

վերն ասացինք: Իսկ որ գերակատար իմացութիւն է, եւ բնական ճանաչողութիւն ունի, կարիք չունի գրի ու վանկի:

ՍԻՐՈՅ ԵՒ ՍԻՐԵԼՈՒ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԶ

Հարց. Ինչպէ՞ս է դրսեւորւում սէրը:

Պատասխան. Սէրն էլ միեղէն ու բազմատեսակ է: Միեղէն է, երբ ժողովում է բոլոր զգացմունքները եւ ամբողջական ու միասնական սիրով հպւում է Աստծուն: Եւ սա գերակատար սէր է:

Իսկ բազմատեսակ է, երբ տրոհուելով զգայութիւնների մէջ՝ մասնատւում է: Սա լինում է երկու կերպ: Եթէ զգայարաններով ու մարմնով սիրում ես Աստծուն՝ կատարեալ սէր է, իսկ եթէ զգայութեամբ ես սիրում մարմնականներին՝ անկատար սէր է:

Այս է սիրոյ զանազանութիւնը. գերակատար, կատարեալ, անկատար:

Առաջինը հաճոյական սէրն է:

Երկրորդը՝ բնական:

Երրորդը՝ մոլի:

Առաջինը գովելի սէր է, վերջինը՝ պարսաւելի, իսկ միջինը, որ բնականն է՝ ո՛չ գովելի է, ո՛չ պարսաւելի:

Եւ սիրելը երկու կողմ է ունենում՝ ինքն իր հանդէպ եւ այլոց: Ինքն իրեն, որովհետեւ իւրաքանչիւր ոք սիրում է իրեն եւ ուզում է գոյութիւն ունենալ: Իսկ որ ուրիշին է սիրում, զատորոշւում է երեք կերպ. այսինքն՝ բարձրագոյն, որ սէրն է Աստծոյ, հրեշտակների եւ սրբերի: Ցածրագոյն, որ [սէր է] ենթարկուողների, զաւակների նկատմամբ: Եւ հաւասար, որ սէր է եղբօր, ընկերոջ նկատմամբ:

Ա՛րդ, ցածրագոյն սիրով Աստուած խնամում է արարածներին, եւ հրեշտակների առաջին դասը՝ վերջիններին, հայրերը՝ որդիներին, վարդապետը՝ աշակերտներին, իշխանը՝ իշխանութեան տակ եղածներին, տէրը՝ ծառաներին, եւ այս սիրով շարունակւում են նրանց հետ:

Իսկ բարձրագոյն սիրով արարածները սիրում են Արարչին եւ վերջին հրեշտակներն՝ առաջիններին, որդիները՝ հայրերին, նուազները՝ ուժեղներին, եւ այս սիրով միաւորւում են նրանց հետ:

Մինչդեռ հաւասար սիրով մարդը սիրում է մարդուն, ընկերն՝ ընկերոջը, այլեւ մարդը՝ հրեշտակներին, հրեշտակները՝ մարդկանց, որովհետեւ հաւասարապէս արարածներ են: Այլեւ մարդը՝ կենդանիներին եւ անկենդաններին, որովհետեւ համահաւասար գոյաւորներ են եւ այս սիրով շաղկապւում են իրար հետ:

Պրակ ԺԷ

Իսկ սէրն ու գութը այսպէս են զանազանւում:

Նախ, որովհետեւ գութը բնութեամբ է, սէրը՝ ստացական:

Երկրորդ՝ գութն բանական չէ, սէրը՝ բանական:

Երրորդ՝ գութը մերձաւորի նկատմամբ է, սէրը՝ օտարի:

Չորրորդ՝ գութը յատկապէս տեսնւում է կենդանիների մէջ, իսկ սէրը յատուկ է Աստծուն: Եւ քանի որ մարդը

երկուսից է գոյացել, ունի բնական գութ եւ աստուածային սէր:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ[200]
Պրակ ԺԸ

Հարց. Քանի՞ հրեշտակապետի անուն է ասւում եւ բացատրւում:

Պատասխան. Առաջինը՝ Գաբրիէլ, որ [նշանակում] է «պատկեր Աստծոյ»:

Երկրորդը՝ Միքայէլ, որ [նշանակում] է «ինչպէս Աստուած» կամ «հզօր»:

Երրորդ՝ Ռաֆայէլ, որ [նշանակում] է «բժշկութիւն»:

Չորրորդ՝ Անայէլ՝ որ [նշանակում] է «Աստծոյ լրումը»:

Հինգերորդ՝ Ուրիէլ, որ [նշանակում] է «Աստծոյ տեսնելը»:

Վեցերորդ՝ Դակուէլ [որ նշանակում է] «ինքն աստուածային»:

Եօթներորդ՝ Բարաքիէլ [որ նշանակում է] «աստուածայինի սկիզբը»:

Ութերորդ՝ Ադոնիէլ [որ նշանակում է] «իմ տէր Աստծուն»:

Իններորդ՝ Փանուէլ[201] [որ նշանակում է] «Աստծոյ յայտնութիւն»:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԹ

Հարց. Ի՞նչ է հրեշտակների ինը դասերի փառաբանութիւնը:

Պատասխան. Հրեշտակների ցածր դասը, որ պատգամաւորներն ու հրամանատարներն են, նրանց փառաբանութիւնն է՝ «Փառք ի բարձունս Աստծոյ» (Ղուկ. Բ 14):

Երկրորդ դասը՝ Հրեշտակապետերն են եւ նրանց փառաբանութիւնն է՝ «Ողորմի՛ր Տէր, քո արարածներին»:

Երրորդը՝ Պետութիւններն են, եւ ասում են՝ «Դո՛ւ ես յաւիտեան քահանայ»՝ ըստ Մելքիսեդեկի կարգի (Եբր. Ե 6):

Չորրորդ՝ Իշխանութիւններն են, եւ ասում են՝ «Քեզ տրուեցին հեթանոսներն իբրեւ ժառանգութիւն ու իշխանութիւն» (Սղմ. ՃԺ 6):

Հինգերորդ՝ Զօրութիւններն են, եւ ասում են՝ «Տէ՛ր, հզօր զօրութեամբ, Տէ՛ր, կարող պատերազմում»:

Վեցերորդ՝ Տէրութիւններն են, եւ ասում են՝ «Քո արքայութիւնը յաւիտենական արքայութիւն է եւ քո տէրութիւնը ազգից ազգ» (Սղմ. ՃԽԴ 13):

Եօթներորդ՝ Սերովբէներն են, եւ ասում են՝ «Սուրբ, սուրբ, սուրբ Տէ՛ր զօրութեանց» (Ես. Զ 3), ինչպէս լսեց Եսային:

Ութերորդ՝ Քերովբէներն են, որոնք հրեղէն վարսերով են եւ ասում են՝ «Օրհնեալ է Տիրոջ փառքն իր տեղում» (Եզեկ. Գ 12):

Իններորդ՝ Աթոռներն են, եւ ասում են՝ «Աթոռ քո, Աստուա՛ծ, յաւիտեանս յաւիտենից» (Սղմ. ԽԴ 7):

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԽՕՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Ի

Հարց. Ինչպէ՞ս են ասում վարդապետները՝ երեք տեսակ է խօսքը՝ մտքինը, բերանինը, գործինը:

Պատասխան. Մտքի խօսքով Աստուած խօսում է հրեշտակների հետ եւ հրեշտակներն էլ՝ Աստծոյ հետ: Նաեւ Աստուած՝ Հոգու, Հոգին՝ Աստծոյ հետ, այլեւ նաեւ՝ դեւերն Աստծոյ հետ, որովհետեւ մտադրութիւնը չի կարող թաքնուել Աստծուց:

Բերանի խօսքով մարդն է խօսում մարդու հետ, եւ մարմնի ձեւ ստացած հրեշտակները՝ մարդու հետ:

Իսկ գործի խօսքով Աստուած խօսում է դեւի հետ, հրեշտակները՝ սատանայի հետ, որ նրանց վրայ որոտի, կայծակի, հրի թափուելով է լինում, ըստ այդմ՝ «Որոտաց Տէրը երկնքից, Բարձրեալն իր ձայնը բարձրացրեց կարկտի, կայծակի, հրի ձեւով» (Սղմ. ԺԷ 14):

Այլեւ հրեշտակն է այդ ձեւով խօսում Աստծու հետ, որովհետեւ իր բաղձանքն է ընծայում նրան: Եւ հրեշտակը խօսում է հրեշտակի հետ՝ մտքի տեսութիւնը ցոյց տալով հոգեւոր ճառագայթների միջնորդութեամբ: Այսպէս են խօսում նաեւ հրեշտակները միմեանց հետ:

Դարձեալ՝ հրեշտակը վերցնում է միւս հրեշտակի իմացածը, որ մինչ այդ չգիտէր, եւ այսպէս խօսում են մեծերը՝ փոքրերի, փոքրերը՝ մեծերի հետ:

Եւ դարձեալ՝ հրեշտակները խօսում են աստուածային լոյսի միջոցով: Այսպէս խօսում են միայն վերինները ներքեւիններին հետ, որպէսզի նրանց հաղորդակից դարձնեն աստուածային յայտնութիւններին:

Եւ դարձեալ՝ հրեշտակներն ունեն առաւօտեան ու երեկոյեան ճանաչումներ, այսինքն Բանն Աստծուն տեսնելը կոչւում է առաւօտեան ճանաչում, իսկ Բան Աստծու մէջ արարածներին տեսնելը կոչւում է երեկոյեան ճանաչում:

Իսկ մարդկանց հետ հրեշտակը խօսում է երկու կերպ: Նախ՝ բարձրաձայն՝ կերպաւորուելով մարմնով, ընդ որում, կարծես [այդ դէպքում] հնչիւնները ձայնական գործիքներով չեն արտաբերւում, եւ չի տատանւում օդը, որովհետեւ երեւացած հրեշտակի խօսքը լսւում է, սակայն շրջապատում չեն տեսնում, ինչպէս յայտնի է պատանի Եղիսէի [օրինակով] (տե՛ս Դ Թագ. Բ-Թ):

Իսկ ուրիշներն ասում են, թէ հրեշտակը չի երեւում ձեւաւորուած մարմնով եւ չի խօսում մարդու հետ, այլ այնպէս է անում, որ մարդու աչքին թւում է, թէ տեսնում է կամ ականջին թւում է, թէ լսում է. այսպէս զգայութիւններն ընդունելով պատկերը՝ փոխանցում են երեւակայութեանն ու իմացութեանը. այսպէս են երեւում հրեշտակները եւ խօսում մարդկանց հետ:

Երկրորդ կերպն այն է, որ հրեշտակը մարդու հետ խօսում է երեւակայութեան տպաւորութեան միջոցով: Եւ այս կերպ խօսում է արթունների ու քնածների հետ:

Իսկ դեւի հետ հրեշտակը խօսում է՝ ցոյց տալով նրան իր իմացութեան մի տեսակը, որ առանց լոյսի նշոյլի է:

Իսկ դեւը խօսում է մարդու հետ՝ կամ փոխակերպուելով հրեշտակի նման, կամ որեւէ ծանօթ պատկերի եւ կամ էլ՝ տպաւորւում է երեւակայութեան մէջ: Եւ

այս չար խորհուրդները նոյնպէս իրականացուում են թէ՛ արթուն, թէ՛ քնած ժամանակ: Սակայն չի կարող գործել չար խորհուրդը, այլ միայն հաւանութեամբ:

Կայ նաեւ հոգու խօսք, որովհետեւ հոգին Աստծոյ հետ խօսում է բաղ-ձանքներով, որ բացէիբաց դրուած են նրա առջեւ:

Հոգին խօսում է նաեւ հրեշ-տակների հետ՝ մարմնական ձեւով, որ-պէսզի իմանայ, թէ հրեշտակը, ինչպէս այլ զգայականները որքան են մարմնում: Իսկ դուրս գալով մարմնից՝ նա կարիք է ունենում այլ զօրութեան, որով խօսի հրեշտակի հետ:

Հոգին խօսում է նաեւ դեւի հետ, որովհետեւ սրտի բաղձանքը դրոշմում է զգայութիւնների մէջ: Եւ դրանք իբրեւ թղթի վրայ գրուածք կարդում է դեւը եւ տեղեկանում դրանից:

Այսքանը սուրբ հրեշտակների մա-սին:

ԴԵՒԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ա

Բոլոր հրեշտակներին Աստուած բարի ստեղծեց, սակայն ոչ բացարձակ բարի, այլ՝ միջակ, որը փոփոխական եւ անփոփոխ բարու միջեւ է, այսինքն՝ եթէ դառնային ու սիրէին այն, որ իրենցից վեր է՝ կբարձրանային շնորհների ու փառքի աստիճանի, ինչպէս այժմ բարի հրեշ-տակներն են:

Իսկ եթէ թեքուէին դէպ ներքեւ, դէպ փոփոխական բարին, կընկնէին չար մեղքերի ու չար պատիժների մէջ, ինչպէս այժմ դեւերն են եւ կլինեն աշխարհի վախճանին:

ԴԵՒԵՐԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչպէ՞ս ընկան դեւերը:

Պատասխան. Դեւերի անկումը երկու կերպ էր, այսինքն՝ հոգեւոր եւ վայրով:

Հոգեւորն այն է, որ անձնիշխան կամքով ընկաւ բարուց՝ չարի մէջ, լոյսից՝ խաւարի, գիտութիւնից՝ անգիտութեան, անմեղութիւնից՝ մեղքի մէջ, երանու-թիւնից՝ թշուառութեան մէջ, սիրուց՝ ատելութեան մէջ: Եւ անկումից յետոյ դարձաւ խստասիրտ՝ չարի մէջ անզեղջ, ճշմարտութիւնից խոտորուած, բարուց շեղուած, զօրութիւնից տկարացած, աստուածային իմացութիւնից ար-տաքսուած, նաեւ՝ նրա ամբարիշտ կամքը դարձել է մարդու ատելութիւնն ու նախանձը, որովհետեւ բոլոր ջանքերով բազմադիմի փորձութիւններով մարդուն մղում է կործանման: Եւ այնքան է կուրացել, որ մինչեւ իսկ պատերազմում է Աստծոյ դէմ, չնայած գիտէ, որ այդ չարութիւնն իր միջից է, եւ այն չարը, որ անում է անձնիշխան կամքով, մահու չափ մեղանչում է:

Հարց. Ինչո՞ւ է մարդու դէմ:

Պատասխան. Չորս պատճառով է մարդկանց գայթակղում եւ խաբում:

Նախ՝ որովհետեւ հակառակ է Աստծուն, իսկ մարդը Աստծոյ պատկերն է եւ երբ հեռանում է նախօրինակից՝ հակադրւում է [Աստծոյ] պատկերին:

Երկրորդ՝ դրանով կամենում է Աստծոյ փառքն ու պատիւը տկարացնել:

Երրորդ՝ որպէսզի [դրանով] մեզ զրկի Աստծու սիրուց, որ կարողանայ յաղթել:

Չորրորդ՝ որպէսզի ներքաշի իր տանջանքների մէջ, որովհետեւ իր անկումը պատուից այնքան տրտմութիւն չէ նրա համար, որքան մարդու փառաւորելը:

Հարց. Ո՞րն է նրա ընկնելու տեղը:

Պատասխան. Դեւի ընկնելու տեղը եղաւ կա՛մ դժոխքը, կամ էլ՝ միգամած օդը[202], որն օդի միջին կայարանն է: Որովհետեւ դեւերն օդի վերին մասում չեն գտնւում, որպէսզի չուրախանան լոյսով: Եւ ոչ էլ ստորին մասում են, որ չափից դուրս չվնասեն մարդկանց: Քանզի դեւերի մօտ երեք բան է նկատւում, այսինքն՝ բնութիւնը, գործը, մեղքը: Ա՛րդ, բնութեամբ նրանց պատշաճում էր երկնքի բարձր տեղը, որտեղ որ ստեղծուեցին եւ եթէ մնային այնտեղ, կատարեալ կլինէին:

Նրանց գործը մարդկանց ուսուցանելն է, որի յարմար տեղը օդն է, որ մեզ փորձելու համար ամենամերձաւոր տեղն է եւ ոչ թէ լոյսը, որ չուրախանան:

Իսկ մեղքի տեղը ներքեւն է, որ դժոխքն է, որովհետեւ աշխարհի վախճանին, երբ դեւերը դադարեն գործել, բոլորը միանգամից կփակուեն դժոխքում:

Հարց. Կռահո՞ւմ էր իր անկումը, թէ՝ ոչ:

Պատասխան. Ամենեւին ոչ:

Հարց. Որքա՞ն մնաց երկնքում:

Պատասխան. Կատարելապէս՝ ոչ մի պահ, որովհետեւ Տէրն ասում է՝ «Ճշմարտութեան մէջ չմնաց» (Յովհ. Ը 44), այլ հենց որ ստեղծուեց, իսկոյն ընկաւ ու չմնաց, ոչ էլ յաւիտենականի քաղցրութիւնը ճաշակեց, որի պատճառով էլ երանելի չդարձաւ ու չմնաց բարու մէջ: Նոյն պահին հպարտութիւնից ուռելով եւ ճշմարտութեան լոյսից երես դարձնելով՝ խաւարեց:

Հարց. Ինչո՞ւ են այժմ լոյսով կերպարանաւորւում:

Պատասխան. Որովհետեւ այն, ինչ ստացել էին բնութեամբ՝ Աստուած թողեց նրանց յանցանքից յետոյ էլ եւ զրկեց [միայն] նրանից, որ ստանալու էին երանութեամբ: Իսկ նրանց բնութիւնն անմարմին է, լոյս է եւ անմահ, եւ նոյնն է մնացել: Անմարմին է, որպէսզի մասնաւորուի, լոյս է, որպէսզի խաբի, անմահ է, որպէսզի միշտ տանջուի:

Եւ թէեւ լոյսի կերպարանքով է այժմ, սակայն չի տեսնում իր լոյսը, ինչպէս մենք՝ մեր հոգունը:

ՍԱՏԱՆԱՅԻ ՅԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Բ

Հարց. Ո՞րն է [սատանայի] յանցանքը եւ նրա կորստի պատճառը:

Պատասխան. Բազում բաներ են ասում շատերը: Պօղոսը Կորնթացւոց երրորդ թղթում ասում է՝ «Անօրէն իշխանը կամեցաւ աստուածանալ»[203]: Նոյնն է ասում եւ մեր Լուսաւորիչը[204]: Այլք ասում են՝ լռեց եւ փառք չտուեց Աստծուն: Եւ սա

[ասւում] է կրկին իմաստով: Նախ, որ Սերովբէն ասաց՝ «Սուրբ», միւսը կրկնեց, իսկ սա լռեց [Աստծուն ուղղուած] ընկերոջ փառաբանութեան ժամանակ եւ չկրկնեց այն, որովհետեւ [մտքին կար], որ փառքը իր վրայ ընկնի եւ աստուածանայ, ինչպէս ասաց Պօղոսը:

Երկրորդ, ասում են, թէ աստղերի ստեղծումից յետոյ հրեշտակները օրհնեցին Աստծուն, ըստ Յոբի (տե՛ս Յոբ ԼԸ 7): Նոյնպէս մարդուն ստեղծելուց եւ կենդանիներին անուններ դնելուց յետոյ փառք տուեցին Աստծուն, իսկ նա լռեց:

Եւ ոմանք ասում են, թէ մարդու պատուին նախանձեց եւ խորհուրդ արեց, թէ սրա վերջը ի՞նչ պէտք է լինի, եւ չկարողացաւ հասկանալ: Որովհետեւ Աստուածաբանն ասում է. «Աստծուն մերձենանք եւ աստուած լինենք», որը տեղի ունեցաւ Քրիստոսի գալով, որ եւ եկեղեցում ուսուցանեցին հրեշտակներն՝ ըստ Պօղոսի: Իսկ Սողոմոնն ասում է. «Ժողովրդի մոլորուելու մէջ հզօրների կործանուելն է». (Առակ. ԺԴ 28): Իսկ Յօհաննն ասում է՝ «Ճանապարհին մոլորուելը վայրիվերոյ նայելու պատճառով է»: Իսկ նայելու պատճառը Իրինոսը համարում է մարդու այդպէս փառաւոր ստեղծուած լինելը, որի պատճառով էլ խորհուրդ արեց. ինչպէս ասում է Յոբը՝ «Իմ պատճառով թողեցին իրենց գործերը» (Յոբ ԻԴ 4): Իսկ Յօհաննու տեսիլքն (Յայտ. Ը 12) ու Մեթոդէոսը ասում են՝ «կամեցաւ աստղերի երրորդ մասը քաշել իրեն»[205], այսինքն՝ դասի երեք քառորդ մասը վայր ընկաւ, իսկ այնտեղ մնացած մէկ քառորդը խառնուեց իշխանութեան դասին, որի պատճառով սատանան կոչւում է չարի գիւտարար եւ հայր, քանզի ինքնագիւտ չարութեամբ նախ ինքը չարացաւ իբրեւ գտնող եւ ապա՝ այլոց չարացրեց: Եւ կոչւում է մայր, այսինքն՝ սկիզբ եւ սերմանող չարի՝ այլոց մէջ: Եւ իր կործանմամբ տանջանք պատճառեց վերին դասերին՝ սրտմտութեամբ, իսկ ներքին դասերին՝ սասանելով, եւ համակամներին քաշեց իր կողմը, այլեւ մեր նախնիներին խաբեց ու չարացրեց: Եւ նրան գործակցած մարդիկ անուանակից դարձան նրան ու կոչուեցին չար:

Սրա ճիշտ պատճառը բացատրում է Եսայի մարգարէն. «Ինչպէ՞ս երկնքից ընկաւ արուսեակը, որ ծագում էր առաւօտեան» (Ես. ԺԴ 12), որի մասին ասում է Տէրը. «Փայլակն ընկաւ երկնքից» (Ղուկ. Ժ 18):

Ա՛րդ, [ասել] «արուսեակն ընկաւ» նշանակում է՝ զրկուեց լոյսից եւ եղաւ խաւար, որովհետեւ [աստղերը] կազմուած են լոյսից եւ ունեն անապական ու մշտնջենաւոր բնութիւն: Այդ պատճառով էլ [սատանան] կոչւում է արուսեակ, որովհետեւ կուրացաւ ուրիշ լոյսերին գերազանցող իր լոյսի գեղեցկութեամբ: Եւ ցոյց է տալիս, թէ Սադայէլը իշխանն ու գլուխն էր իր դասի:

Իսկ [ասել] «առաւօտ» նշանակում է, որ աշխարհի ստեղծման սկզբում, երբ լոյսն ու խաւարը բաժանւում էին իրարից՝ ծագելով առաջին օրը, յան-

կարծակի ընկաւ երկնքից, թէեւ ոմանք ասում են [դա կատարուել է] երկրորդ օրը:

Եւ «առաւօտ» է կոչւում աշխարհի վերջին օրը, որ սկիզբն է լինելու աներեկոյ օրերի, որովհետեւ վախճանին մօտիկ դարձեալ բարձրանալու է մարդկանց վրայ՝ Նեռի ձեռքով: Ապա կընկնի երկիր, եւ կկորի նրա խաբեյութիւնը, ըստ Դաւթի՝ «Առաւօտեան սպանում էի երկրի բոլոր մեղաւորներին» (Սղմ. Ճ 8):

«Ընկաւ երկիր» նշանակում է, թէ ինչպէս է ընկնում անմարմինը, այսինքն՝ հպարտութեան մեղքը, որ երկրային ախտ է, ծանրացրեց եւ գցեց երկիր:

«Որ առաքում էր բոլոր ազգերին» (Ես. ԺԴ 12), այսինքն՝ ամբարտաւանութեան մեղքը սփռեց բոլոր մարդկանց մէջ, ինչպէս Ադամին, որին աստուածանալու ցանկութեան պատճառով երկիր նետեց, այդպէս եւ այլոց:

«Դու ասում էիր քո սրտում՝ ելնեմ երկինք» (Ես. ԺԴ 13): [Այս ասելով] նախ առարկում է սատանայի չար խորհրդին, ապա որպէսզի ցոյց է տա, թէ չար խորհրդի դէմ վրէժխնդրութիւն ու պատիժ կայ:

«Նստելու եմ բարձր լեռների վրայ» (Ես. ԺԴ 13). «մշտնջենաւոր լեռները» հրեշտակներն են:

«Հիւսիսի բարձր լեռների վրայ» (Ես. ԺԴ 13)՝ նշանակում է իր ցուրտ եւ սառնասառոյց չարութեան վրայ:

«Իմ աթոռը կդնեմ ամպերի մէջ» (Ես. ԺԴ 13): «Ամպ» նշանակում է բարձրութիւն այլոց վրայ: Դարձեալ՝ «ամպը» մարգարէներն են, այսինքն՝ հրամանատու լինել մարգարէների մէջ: Դարձեալ՝ «ամպ» նշանակում է երկինք, որովհետեւ ոմանք օդեղէն են ասում երկինքը: Եւ դարձեալ՝ որովհետեւ ասւում է, թէ՝ Աստուած շարժւում է ամպով եւ հողմով, եւ սրանով նման լինել Աստծոյ, այսինքն՝ ամպերի, հողմերի ու հրեշտակների վրայ շրջելով:

Ուրիշներն ասում են, որ այսպէս հակառակւում է Աստծուն, այսինքն՝ երբ տեսաւ, թէ փառքով ու վայելչութեամբ նա գերազանցում է բոլոր դասերին, կամեցաւ ամենամեծը լինել եւ հաւասարուել Աստծուն:

Հարց. Ի՞նչ է նշանակում հաւասար ու աւելի մեծ լինել:

Պատասխան. Լաւագոյն վիճակը, որ տրուած էր նրան, կամեցաւ Աստծուց շորթել եւ այդպէս բռնութեամբ տիրապետել եւ հրամայել, որի պատճառով էլ ընկաւ ու կորաւ:

Հարց. Միւսներն ի՞նչ մեղք ունէին, որ նրա հետ ընկան:

Պատասխան. Հաճելի թուաց նրանց նրա բարձրութիւնը. մտածում էին, որ եթէ սա յաղթում է Աստծուն, ուրեմն իրենք էլ կարող էին ուրիշներին իշխել, որի պատճառով էլ նրա հետ ընկան ու մատնուեցին տանջանքի:

Հարց. Ինչո՞ւ նրանց փոխարէն ուրիշ հրեշտակներ չստեղծեց:

Պատասխան. Այլ հրեշտակներ ստեղծելու կարիք չկար նրանց փո-

խարէն: Նախ՝ որովհետեւ կային այն հրեշտակները, որոնք մնացին բարու մէջ:

Երկրորդ՝ որովհետեւ կարիք կար, որ տեսնէին սրանց մեղքերը, պատիժները եւ մնային բարի:

Հարց. Ինչո՞ւ Քրիստոս չփրկեց նրանց, ինչպէս փրկեց մարդկանց:

Պատասխան. Բոլոր հրեշտակները հաւասարապէս ստեղծուեցին Աստծուց եւ ոչ թէ մէկը միւսից, ինչպէս մարդն է ծնւում մարդուց, ուստի եթէ Քրիստոս կամենար մի հրեշտակի փրկել, նա միայն կփրկուէր, իսկ միւսները դուրս կմնային փրկութիւնից: Եւ միայն մէկին էլ չէր կարող փրկել, որովհետեւ նրանք չեն մեռնում, քանզի Աստուած [մարդուն] ապաշխարութեան փոխարէն մահ կամեցաւ, [իսկ] հրեշտակներն անմահ են, որի պատճառով էլ մնացին առանց փրկուելու:

Հարց. Ինչո՞ւ նրանց չստեղծեց այնպէս, որ չկարողանային մեղանչել:

Պատասխան. Յանուն արդարութեան, որպէսզի արդարօրէն ընդունեն հատուցումը: Որովհետեւ եթէ այնպիսին լինէին, որ չկարողանային մեղանչել՝ կապուածի ու բռնադատուածի նման լինելով, վարձ էլ չէին ունենայ: Սակայն նրանց անձնիշխան կամք տուեց, որպէսզի ինքնակամ ընտրեն բարին եւ արդարութեամբ ընկալեն հատուցումը, որպէսզի երբեք չկարողանան մեղանչել:

Հարց. Եթէ Աստուած կանխագէտ էր, ինչո՞ւ ստեղծեց նրանց այնպէս, որ այդպիսին լինէին:

Պատասխան. Որպէս իր գործերի զարդ. ինչպէս որ նկարիչն է մուգ գոյները տակը դնում, որպէսզի սպիտակն ու այլ պատուական [գոյները] երեւան, նոյնպէս էլ չարի երեւալով՝ արդարները պայծառագոյն երեւան:

Հարց. Կարո՞ղ են ամէն ինչ անել, ինչ կամենան:

Պատասխան. Ամենեւին որեւէ բարի բան չեն կարող կամենալ եւ չեն կարող անել, իսկ չարի նկատմամբ խիստ ներգործուն են, սակայն դարձեալ ոչ այնքան, ինչքան կամենում են, այլ այնքան, որքան թոյլատրւում է իբրեւ հրեշտակների:

Պրակ Գ

Հարց. Ո՞ր դասից են ընկել:

Պատասխան. Ընդհանուր կարծիքն այն է, որ ընկել է հրեշտակների տասներորդ դասը, եւ մարդը լրացրեց ընկածների տեղը: Սակայն ընդհանուր չէ այն կարծիքը, ըստ որի հրեշտակները տասը դաս են ունեցել, որից մէկն է ընկել, որովհետեւ ոմանք ասում են, թէ՝ ընկաւ միջին դասի երեք մասը, իսկ մնացած մի մասը խառնուել է Իշխանութիւններին: Ուրիշներն ասում են, թէ Տէրութիւնների դասից [սկսած] վայր իջնելով մինչեւ Քերովբէներ՝ բոլոր դասերից ընկել է մէկական դաս: Իսկ Գրիգոր Նիւսացին «Բնութեան գրքում» ասում է, որ ընկել է հրեշտակների վերջին դասը[206]: Եւ ոմանք ասում են, որ նրա տեղը երկնքի հաստատութիւնն է եւ քանի որ փառք չտուեցին Աստծուն՝ ընկան:

Վկայում է եւ Դաւիթը. «Երկինքը պատմում է Աստծոյ փառքի մասին» (Սղմ. ԺԸ 2), որոնք վերին դասերն են, եւ «Հաստատութիւնը արարածների մասին է պատմում» (Սղմ. ԺԸ 2) ու ոչ թէ փառքի, ինչպէս ցոյց տրուեց:

Հարց. Ինչո՞ւ են կոչւում «երկնքի իշխաններ»:

Պատասխան. Հրեշտակները ջրերից վեր են, սակայն երկնքի տակ կարգուած են որպէս աշխարհի ու մարդկանց խնամածուներ, ինչպէս որ Յօհաննու Տեսիլքի մեկնութեան մէջ է ասում. «Մէկը ջրից, միւսը՝ հրից»[207]: Եւ Յովհաննէսը սրան օդից է համարում (Յայտ. ԺՁ 17), եւ նոյն կերպ Պօղոսը օդի իշխան է կոչում կամ՝ որովհետեւ օդում են բնակւում եւ իշխում մարդկանց վրայ (տե՛ս Եփես. Բ 2):

Պրակ Դ

Հարց. Յաւերժահարսները, քաջքերը, ալքերը ի՞նչ են:

Պատասխան. Յաւերժահարսներ չեն, ինչպէս կարծում են ոմանք՝ երկու տարրերից, այսինքն՝ հրից եւ օդից բաղկացած բանական կենդանիներ, որոնք ունեն ծնունդ եւ մահ: Սուտ է այսպիսի կարծիքը, ընդունայն եւ հակառակ սուրբ Գրքին, որովհետեւ բանական կենդանի եւ մահկանացու միայն մարդն է, որի համար կայ յարութիւն եւ դատաստան: Սրանք բոլորը դեւերի տեսակներ են, որ ըստ զանազան գործերի զանազան անուններ են ստանում, ինչպէս պոռնկութեան եւ հպարտութեան դեւը՝ Բէեղզեբուղ, Բէհմովթ եւ այլն: Այդպէս էլ յաւերժահարսները, որ միշտ մարդկանց խաբում են ուրախութեամբ: Եւ նրանք, որ իշխում են այրերում՝ քաջքեր են կոչւում: Իսկ նրանք, որ իշխում են ջրերի ու կանանց ծնունդների վրայ՝ ալքեր, որովհետեւ մարմնական ախտերով կորստի են մատնում հոգին, եւ ծնունդի ժամանակ՝ հոգին ու մարմինը: Այդպէս էլ մնացեալը:

Եւ ինչպէս Դաւթի երգով չարքը դադարում էր գործել Սաւուղի մէջ (տե՛ս Ա Թագ. ԺՁ 23), այդպէս եւ այստեղ:

Պրակ Ե

Հարց. Ինչո՞ւ է սատանայի մեղքն աններելի:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ ասում են վարդապետները, որ ոչ մէկի խրատով չի մեղանչել եւ ոչ մէկի օգնութեամբ չի նորոգելու:

Երկրորդ՝ որովհետեւ որպէս ծառայ մեղանչեց Տիրոջ աստուածակերպ իմացութեան դէմ: Իսկ որքան պատուական է ճանաչումը, այնքան աններելի է սխալմունքը:

Երրորդ՝ ըստ Դամասկացու հրեշտակն ապաշխարութեան ընդունակ չէ, նոյնպէս եւ՝ թողութեան[208]:

Չորրորդ՝ դեւի մէջ մշտնջենաւորը շուռ եկած է՝ ըստ ի բարին առաջանալու [ընթացքի]:

Հինգերորդ՝ որովհետեւ հոգեւոր բնութիւնը միայն մէկ անգամ է շրջելի, քանզի ամբողջութեամբ փոխում է իրեն, մի բան, որ մարդը չի անում, որովհետեւ

մարմինն անընդհատ մարտնչում է հոգու դէմ, ինչպէս ցոյց կտանք առաջիկայ ԼԲ գլխում:

Այստեղից պարզ է, որ հրեշտակներն ըստ երեք յատկանիշների են [դասակարգւում]. առաջին՝ ըստ անմեղութեան, երկրորդ՝ ըստ մեղքի, երրորդ՝ ըստ պատժի եւ թշուառութեան:

Դարձեալ ոմանք երկնքից են եւ երկնքում են, ինչպէս սուրբ հրեշտակները. ոմանք երկնքից չեն, սակայն երկրում են, ինչպէս մարդկանց մէջ սրբերը, ոմանք էլ երկնքից են, սակայն երկնքում չեն, ինչպէս դեւերը:

ՀՐԵՂԷՆ ՎԻՇԱՊԻ ՄԱՍԻՆ
Պրակ Զ

Հարց. Ի՞նչ է հրեղէն վիշապը, որի մասին ասում է ԼԳ գլխի տեսիլքը:

Պատասխան. Բանսարկուն է, ինչպէս ասում է Յոբը՝ «Սանձ դրեց նրա դէմքին եւ հրեշտակների առաջ խաղալիք դարձրեց» (Յոբ Խ 14): Եւ Դաւիթն ասում է. «Ստեղծեց վիշապին՝ խաղալու նրանով» (Սղմ. ԵԳ 26): Այս նոյն վիշապի մասին ասում է. «Փրկիչը ջախջախեց վիշապի գլուխը Յորդանանում» (Սղմ. ՀԳ 13), այսինքն՝ ողջ գետի ջուրը լցւում էր նրա ակնակապիճը:

Սրան ասում են հրեղէն. նախ՝ որովհետեւ ուրախանում է իր կողմից սպանուածների վրայ: Երկրորդ՝ իրեն մօտեցողներին տանջում ու այրում է յաւիտենական հրով: Երրորդ՝ այդպէս է ասւում իր գոյաւորուելու պատճառով, որովհետեւ ընկաւ հրեղէն դասից:

Եւ երեք ձեւով են դրանք առաջանում. անմարմին, անմահ ու հրեղէն, ըստ այդմ՝ «Ով արարեց հրեշտակներին իբրեւ քամի ու կրակի բոց» (Սղմ. ԵԳ 4):

Ու թէեւ ընկան, սակայն մնաց նրանց բնութիւնը, եւ կերպարանաւորւում են իբրեւ լոյսի հրեշտակներ՝ ըստ առաքեալի:

Հարց. Ի՞նչ են եօթ գլուխները եւ տասը եղջիւրները (տե՛ս Յայտ. ԺԷ 3):

Պատասխան. Եօթ գլուխները եօթ չար զօրութիւններն են, ինչպէս որ մարդու հոգին եօթ բարի զօրութիւններ ունի եւ եօթ առաքինութիւններ, ինչպէս ասում է Տէրը՝ «Այս եօթ չար հոգիները բնակւում են մարդու մէջ, հենց որ թափուր են գտնում բարի գործերից» (Մտթ. ԺԲ 45): Եւ Սողոմոնն ասում է՝ «Եթէ քեզ աղաչի թշնամին, մի՛ հաւատա նրան, որովհետեւ եօթը չարիքներ կան նրա սրտում» (Առակ. ԻԶ 25), որոնք են հպարտութիւնը, նախանձը եւ այլն:

Իսկ տասը եղջիւրները տասը պատուիրանների դէմ մեղանչելն է, որոնցով պատերազմում է մարդկանց դէմ, որովհետեւ օրէնքները պահպանելու համար մարդը եօթ զէնք ունի, իսկ օրէնքի դէմ մեղանչելը դեւի ձեռքին զէնք ու գործիք է, որով պատերազմում է մարդու դէմ:

Եւ տասը կատարեալ թիւ է, որ նշանակում է, թէ թշնամին կատարեալ զօրութիւն ունի, որով կռւում է մեր դէմ, որի խորհրդանիշն են եղջիւրները:

Իսկ տասը եղջիւրները եւ եօթ գլուխները այսպէս են [բաժանուած]. երեք գլուխների վրայ եղջիւրները

երկուսն են, որոնք ցոյց են տալիս հպարտութիւնը, նախանձը եւ բարկութիւնը, որոնցով պատերազմում է աջ ու ձախ թէ՛ ընտիրների մէջ, թէ՛ մերժելիների մէջ՝ բազմաթիւ տեղեր, որտեղ հանդիպում են այս երեք ախտերը:

Իսկ ծուլութիւնը, ագահութիւնը, որկրամոլութիւնը, բղջախոհութիւնը հանդիպում են միայն մոլիների մօտ:

Հարց. Ի՞նչ է նշանակում եօթ խոյրը, որ վիշապի գլխին է (տե՛ս Յայտ. ԺԲ 3):

Պատասխան. Եօթ խոյրը դիւական ազդեցութիւն է խորհրդանշում, որոնցով յաղթում է մարդուն ու պսակադրում: Եւ եթէ յաղթում է քրտնաջան աշխատանքով ու չարչարանքով, նոյն պսակը իր գլխին է դնում: Մեզանում էլ է այդպէս, ովքեր մենամարտում են եւ ջանք գործադրում բանսարկուի դէմ եւ սպանում են նրա եօթ գլուխները, ժուժկալութեամբ ու առաքինութեամբ իրենց գլխի վրայ են ընդունում այն պսակը, ում որ գետնում ու յաղթում են, ինչպէս ասւում է տեսիլքում. «Ով յաղթում է, կեանքի պսակը կընդունի իր գլխին» (Յայտ. Բ 10):

Հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Նրա պոչը քաշում է աստղերի երրորդ մասին» (Յայտ. ԺԲ 4):

Պատասխան. «Աստղեր» անուանում է հրեշտակներին՝ բարձրութեան եւ պայծառ լոյսի պատճառով, ինչպէս հրեշտակներն են երկնքում:

Իսկ «երրորդ մաս» ասելն, ըստ սուրբ Մեթոդէոսի, նշանակում է սխալուած ապստամբ հրեշտակների խումբը, որ խախտեցին երկնաւոր դասերի թիւը, որովհետեւ քանի դեռ չէին կործանուել, իւրաքանչիւր դասում չորս կարգ էին ներկայացնում[209], ինչպէս յայտնի է չորեքկերպեան կենդանիներից: Իսկ բանսարկու Սադայէլը երեք մասերից մէկին՝ չորրորդ [խմբին] քաշեց իր կողմը ու կործանեց, ինչպէս ասում է տեսիլքը ԼԴ գլխում՝ «Առիւծն ընկաւ երկիր ու նրա հրեշտակները նրա հետ»[210]:

Սրա մասին է ասում Եսային. «Ընկաւ արուսեակը, որ ծագում էր առաւօտեան» (Ես. ԺԴ 2):

Մկրտութեամբ պայծառացածները, ինչպէս աստղերը երկնքում, ունեն իրենց խորհուրդը, սակայն դեւերն անհաստատ միտք ունեցողներին ներքեւ են քաշում ու երկիր նետում՝ խորհրդածելով երկրայինը եւ իրենց հետ տանում դժոխքի յատակը:

Իսկ «պոչը» նշանակում է, նախ՝ նրա վերջին հետեւորդները, որովհետեւ նա չարի առաջին գիւտարարն էր, եւ միւսները հետեւեցին նրան:

Երկրորդ՝ պոչը սողունների զօրաւոր մասն է, [որ] նշանակում է բռնութեամբ դէպի իրեն քաշելը:

Երրորդ՝ վիշապի գլուխը մեղքն է, իսկ պոչը՝ մահն ու դժոխքը, որ ցոյց է տալիս հետեւորդներին մահուան ու դժոխքի մէջ քաշելն ու ընկղմելը:

Չորրորդ՝ «պոչ» նշանակում է Նեռը, որ վերջին ժամանակներում բռնանում եւ քաշում է աստղերի երրորդ մասին, որից ոմանք փախչում են եւ թաքնւում անապատում, ոմանք նահատակուելով են փրկւում, իսկ ոմանց էլ կորստի է

մատնում ու խաբում, որը կորչողների երրորդ մասն է:

Պրակ է

Հարց. Ինչքա՞ն է սատանայի ընկնելու չափը:

Պատասխան. Սատանայի ընկնելը հարկ է երեք կերպ հասկանալ. առաջին, միջին ու վերջին:

Առաջինը տեղով էր,

երկրորդը՝ յանդիմանութեամբ,

երրորդը՝ պատժով:

Դեւերի անկումը տեղով եղաւ նրանց ստեղծուելու սկզբում՝ Արարչի փառքի դէմ իրենց ամբարտաւանութեան ու նախանձի պատճառով, որի հետեւանքով ընկաւ երկնքից հրեշտակների դասից եւ իր փառքից, ինչպէս վերն ասացինք:

Իսկ յանդիմանութեամբ անկումը եղաւ խաչի միջոցով՝ Քրիստոսի գալստեամբ, եւ սա չորս կերպով: Նախ՝ դատապարտում էր անկումը, ըստ այդմ՝ «Աշխարհի իշխանը դատապարտուած է» (Յովհ. ԺԶ 11): Եւ սա այն պատճառով, որ չարախօսում էր մարդկանց, որ իբր՝ սրանք ինքնայօժար կամքով եւ բնութեամբ մեղանչեցին եւ ոչ թէ իմ պատրանքների պատճառով, ինչպէս որ չարախօսում էր Յոբի մասին, թէ՝ «Մի՞թէ Յոբն անշահախնդիր է պաշտում Տիրոջը» (Յոբ Ա 9): Եւ ասում է Դաւիթը՝ «Նստեցին իշխանները եւ չարախօսում էին իմ մասին» (Սղմ. ճԺԸ 23): Այդպէս էլ բոլոր մարդկանց:

Իսկ գալով՝ Տէրն անմեղ ու անապական մարմնով վանեց մեղքերը եւ արդարութիւն սփռեց մարդկանց վրայ ու դատապարտեց սատանային՝ իբրեւ մարդկութեան դէմ դաւ նիւթողի եւ ոտնակոխ արեց մարդկանց առաջ: Ըստ այդմ՝ «Տեսնում էի սատանային ընկած իբրեւ փայլակ եւ տուեցի ձեզ իշխանութիւն տրորելու նրան» (Ղուկ. Ժ 18):

Երկրորդ անկումը եղաւ փառքի յոյսի պատճառով, ըստ այդմ՝ «Աշխարհի Իշխանը կընկնի դուրս» (Յովհ. ԺԲ 31): Ինչպէս ասում է սուրբ Իրինոսը՝ բերելով Յուստիանոս Վկայի խօսքը, թէ՝ լաւ ասաց Յուստիանոս Վկան, թէ՝ «Մինչեւ Քրիստոսի գալուստը [սատանան] չէր յանդգնում հայհոյել Աստծուն, որովհետեւ յոյս ունէր, թէ կվերադառնայ փառքին, սակայն երբ լսեց իր պարտականութիւնների եւ փառքից զրկուելու մասին, չարութեան պատճառով իմաստութիւնից զրկուեց նրա սիրտը եւ անամօթաբար հայհոյեց նրան ու մատնուեց յաւիտենական տանջանքների»[211]:

Երրորդ՝ նրանց անկումը տանջանքների մտավախութիւնից էր, եւ մինչեւ Քրիստոսի գալը, չգիտէին, թէ ինչ տանջանքներ են սպասւում իրենց, իսկ երբ Քրիստոսից լսեցին գեհենի տանջանքների մասին, ասում էին՝ «Մի՛ տանջիր մեզ ժամանակից առաջ, Սուրբդ Աստծոյ, գիտենք, որ դու մեր տանջողն ես» (Մտթ. Ը 29):

Չորրորդ՝ անկումը իրենց զօրութիւնից էր՝ մինչ անգործութեան էին մատնուած: Եւ սա երկու պատճառով.

նախ՝ մարդկանց մեղքի եւ կռապաշտութեան մէջ գցելու պատճառով: Երկրորդ՝ Քրիստոսի գալստից առաջ հոգիներին տանջանքի մատնելու պատճառով: Իսկ գալով՝ Տէրն ինքն ասում է. «Կապուած է հզօրը» (Մտթ. ԺԲ 29): Եւ Քրիստոսի պատճառով կրկնակի նուազեց նրանց զօրութիւնը, ըստ այդմ՝ «Թշնամու զէնքը իսպառ պակասեց» (Սղմ. Թ 7), որը եւ Անտօնի տեսիլքում խոստովանում են իրենք՝ դա վերագրելով իրենց[212]:

Սա առաջինի մասին:

Իսկ երկրորդի մասին ինքը՝ Տէրն ասում է՝ «Կապուած է հզօրը, եւ նրա տունը աւարի մատնուած» (Մտթ. ԺԲ 29), որ դժոխքն է, ըստ այդմ՝ «Աւերուեց քաղաքը, եւ կորաւ նրանց յիշատակը՝ աղաղակներով» (Սղմ. Թ 7): Որովհետեւ Քրիստոսից յետոյ սատանան դադարեց հոգիներին դժոխք տանել, ինչպէս ասում է սուրբ Եպիփանը[213]:

Եւ դեւերի այս երկրորդ անկումը չորս կերպ էր:

Իսկ երրորդ անկումը տանջանքներն էին յաւիտենական հրով, ըստ այդմ՝ «Գնացէ՛ք յաւիտենական հրի մէջ, որ պատրաստուել է սատանայի եւ նրա հրեշտակների համար» (Մտթ. ԻԵ 41):

Եւ այս մասին ասում է Իրինոսը, որ եթէ յաւիտենական է հուրը, ինչպէ՞ս կսպառուեն յաւիտենական տանջանքներն ըստ ունայնամիտների՝ թերեւս ենթադրելով, թէ հուրը պէտք է մաքրի[214], որը չի կարելի խորհել իբրեւ ճշմարտութիւն եւ ասել աշակերտներին[215]:

Այսքանը դեւերի մասին:

Երրորդ հատորի՝ Դիոնէսիոսի աստուածաբանութեան վերջը:

ՑԱՆԿ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ՝ ԱՍՏԾՈՅ ԳՈՐԾԻ ԵՒ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին՝ Ի՞նչ է բնութեան գործը եւ կամքի գործը:

Երկրորդ՝ Աստծոյ եւ մարդու գործերի զանազանութիւնը:

Երրորդ՝ Արարչութիւն եւ նախախնամութիւն, որտեղ եւ՝ զանազան փորձութիւնների մասին:

Չորրորդ՝ Աշխարհը չի լինում ոչ էութիւն, եւ ոչ էլ ապականուածը՝ մաքուր, եւ թողութեան մասին, ուր եւ՝ Աստծոյ նախագաղափար տեսութեան մասին:

Հինգերորդ՝ Աշխարհը զօրութեամբ չի ասւում:

Վեցերորդ՝ Աստծոյ մէջ չկայ պատահականութիւն:

Եօթներորդ՝ Դարձեալ, թէ պատահականութիւն չկայ Աստծոյ մէջ:

Ութերորդ՝ Տասը ստորոգութիւններն այսպէս են դասաւորւում:

Իններորդ՝ Էակների ստեղծումը.

Տասներորդ՝ Աստուած բնութեա՞մբ է գործում, թէ՞ կամքով:

Տասնմէկերորդ՝ Էութիւն, բնութիւն եւ անձ. պարագրող եւ տեղ:

Տասներկուերորդ՝ Պարզ է Աստուած, որտեղ եւ՝ բնութեամբ միաւորութեան մասին:

Տասներեքերորդ՝ Գրի եւ իմաստների մասին. այբի մեկնութիւնը:

Տասնչորսերորդ՝ Կոչւում է ծնունդ եւ արարած:

Տասնհինգերորդ՝ Մէկն է աշխարհը եւ չունի զգայարաններ եւ թէ՝ ո՞ւր էր աշխարհը, ո՞ւր էր Աստուած եւ ի՞նչ պատճառով ստեղծեց:

Տասնվեցերորդ՝ Ընդհանուր տարրերը ինչպէ՞ս են անապական:

Տասնեօթներորդ՝ Ինչպէ՞ս է երկիրն անշարժ, իսկ երկինքը՝ շարժուող:

Տասնութերորդ՝ Ի՞նչ ձեւ ունի երկինքը եւ քանի՞սն է:

Տասնիններորդ՝ Երկնքի յատկութիւնների մասին. համանուն են արփին, եթերը եւ այլն:

Քսաներորդ՝ Լոյսի եւ նրա բարութեան մասին:

Քսանմէկերորդ՝ Արեգակի եւ աստղերի յատկութիւնները:

Քսաներկուերորդ՝ Լուսնի եւ նրա յատկութեան մասին:

Քսաներեքերորդ՝ Երկնքի լուսատուները եւ նրանց գոյութեան մասին. հրեղէններն ընթանում են ջրի մէջ:

Քսանչորսերորդ՝ Կենդանակերպներն ու մոլորակները:

Քսանհինգերորդ՝ Օր, ամիս, տարի, շաբաթ, ժամ, վերադիր, որպէ, ոլոմպիադ եւ այլն:

Քսանվեցերորդ՝ Այն մասին, որ ամէն ինչ ստեղծուեց վեց օրում:

Քսանեօթներորդ՝ Մէկ օրը, կիրակիի յատկանիշները, վերջին օրը:

Քսանութերորդ՝ Ո՞րն է օրուայ սկիզբը. լոյսի եւ խաւարի բաժանում:

Քսանիններորդ՝ Օրուայ նշանակութիւնները տասնհինգ կէտերով:

Երեսուներորդ՝ Առաւօտուայ եւ օրուայ, [այլեւ] երեկոյի եւ գիշերուայ յատկութիւնների մասին՝ տասական կէտերով:

Երեսունմէկերորդ՝ Գարնան, ամառվա, աշնան եւ ձմեռուայ յատկութիւնների մասին՝ նոյնքան կէտերով.

Երեսուներկուերորդ՝ Չորս եղանակների սերմերի մասին:

Երեսուներեքերորդ՝ Ժամանակի մասին եւ թէ ո՞ր մասն է սկիզբը:

Երեսունչորսերորդ՝ Տարեմուտ եւ ամիսների անունները.

Երեսունհինգերորդ՝ Հրի յատկութիւնները՝ քսան կէտերով, եւ նրա հակազդման մասին:

Երեսունվեցերորդ՝ Օդի յատկութիւնները՝ երեսուն կէտերով:

Երեսունեօթներորդ՝ Ծիածան, բակ, աստղերի թռիչք, լոյս, փայլակ եւ այլն:

Երեսունութերորդ՝ Ամպ, ձիւն, կարկուտ եւ այլն:

Երեսունիններորդ՝ Տասներկու հողմերը. երկրաշարժ:

Քառասուներորդ՝ Ամպի եւ մեղքի համեմատութեան մասին, ամպի եւ սուրբ Կոյսի, սուրբ Հոգու մէջ փայլելու յատկութիւնների մասին:

Քառասունմէկերորդ՝ Ջրի յատկութիւնների մասին՝ ութ կէտերով, եւ որ բազմատեսակ են ջրերը. ծովը դառն է եւ աղի:

Քառասուներկուերորդ՝ Տաք ջրերի եւ ձմեռային աղբիւրների մասին, եւ որ բխում են լեռներից:

Քառասուներեքերորդ՝ Ջրի նշանակութիւնների մասին՝ տասներկու կէտերով:

Քառասունչորսերորդ՝ Երկրի եւ նրա նշանակութեան մասին:

Քառասունհինգերորդ՝ Երկրի յատկութիւնների եւ լեռների մասին. լեռների ստորոտում լոյս է լինում:

Քառասունվեցերորդ՝ Բոյսերի եւ տնկիների, նրանց կանաչ լինելու, պտղի, համի, հոտի մասին:

Քառասունեօթներորդ՝ Ծառերի, նրանց ձեւերի եւ անունների մասին: Եւ որ բոյսերն աւելի արագ են աճում, քան ծառերը:

Քառասունութերորդ՝ Բոլոր կենդանիները չորս տարրերից են:

Քառասունիններորդ՝ Ջրային [կենդանիների], թռչունների, սողունների մասին, եւ թէ քանի՞ տեսակ են կենդանիները:

Հիսուներորդ՝ Այն մասին, որ կենդանիները բնական զգեստ ու զէնք ունեն, իսկ մարդը՝ ոչ: Ճանճեր եւ այլն:

Հիսունմէկերորդ՝ Գազանների, սողունների պիտանիութիւնը, եւ որ գազաններն ուժեղ են:

Հիսուներկուերորդ՝ Նմանուել օձին իմաստութեամբ, եւ թէ ջախջախում ենք [նրա] գլուխը. թոյնը նրա գլխում է:

Հիսուներեքերորդ՝ Ադամը բոլոր կենդանիներին անուններ տուեց:

Հիսունչորսերորդ՝ Ադամի իշխանութեան մասին. այժմ ապստամբ են.

Հիսունհինգերորդ՝ Դրախտի մասին, որ երկինք է կոչւում եւ իմանալի ծառ:

Հիսունվեցերորդ՝ Դրախտի լոյսի մասին, եւ որ անապական է դրախտը եւ նրա պտուղը:

Հիսունեօթներորդ՝ Ո՞րն էր Ադամի պտուղը, ու բարու եւ չարի գիտութիւնը:

Հիսունութերորդ՝ Անծորելի են պտուղները:

Հիսունիններորդ՝ Այն մասին, որ դրախտում ծնունդ չի լինում:

Վաթսուներորդ՝ Գլխաւոր արարածների թիւը:

Այսքանը վեցօրեայ արարչութեան մասին:

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ
ԳԼՈՒԽ Ժ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ
ԱՍՏԾՈՅ ԳՈՐԾԻ ՈՒ ՎԵՑՕՐԵԱՅ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Օտար տեսակէտները դուրս մղելուց, հերձուածողութիւնը բացայայտելուց եւ ճշմարիտ աստուածաբանութիւնը մեզանում հաստատելուց յետոյ, եկէ՛ք տեսնենք, թէ ինչպէս է եղել արարչութիւնը սկզբից մինչեւ իր կատարման աւարտն՝ առ այսօր՝ հետեւելով Հին ու Նոր կտակարանների կարգին:

Պրակ Ա

Հարց. Նախ հարցնենք, թէ ինչո՞վ է զանազանւում բնութեան գործն ու կամքի գործը:

Պատասխան. Ասենք, որ բազմաթիւ եղանակներով: Նախ, որ բնութեան գործը բնական է, իսկ կամքի գործը՝ պատահական: Երկրորդ՝ բնութեան գործը

անհրաժեշտ է, իսկ կամքի գործը՝ յաւուր պատշաճի: Երրորդ՝ բնութեան գործը ընդհանուր է, իսկ կամքինը՝ մասնաւոր: Չորրորդ՝ բնութեան գործը մշտական է, կամքինը՝ ժամանակ առ ժամանակ: Հինգերորդ՝ բնութեան գործը մէկն է բազումների հանդէպ, կամքինը՝ բազում՝ բազումների հանդէպ: Վեցերորդ՝ բնութեան գործը նոյնն է եւ նման է, իսկ կամքինը՝զանազան եւ տարբերուող: Եօթներորդ՝ բնութեան գործն անբաժանելի է, կամքինը՝ բաժանուող: Ութերորդ՝ բնութեան գործը չի աւելանում ու չի պակասում, իսկ կամքինը՝ աւելանում ու նուազում է: Իններորդ՝ բնութեան գործն առանց սովորեցնելու է, իսկ կամքինը՝ ուսմամբ ու կրթութեամբ: Տասներորդ՝ բնութեան գործում մեղք չկայ, որովհետեւ ըստ բնութեան գործելով՝ ոչ ոք չի մեղանչում, ասում է իմաստասէրը, իսկ կամքի գործը մեղանչական է, որի պատճառով կամաւորին գովում կամ պարսաւում են[216]:

ԱՍՏԾՈՅ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՋԱՆԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Բ

Հարց. Ինչո՞վ են տարբերւում Աստծոյ եւ մարդու գործերը:

Պատասխան. Պէտք է իմանալ, որ տասնհինգն են տարբերութիւնները:

Նախ՝ որ մարդու գործը շօշափմամբ է, իսկ Աստծունը՝ ոչ: Երկրորդ՝ մարդը նիւթի կարիք է զգում, իսկ Աստուած չունի նիւթի կարիք: Երրորդ՝ մարդկանց մէջ կան, որ հարկադրանքով են գործում, իսկ Աստուած՝ առանց որեւէ հարկադրանքի է: Չորրորդ՝ մարդու գործը պակասաւոր է, իսկ Աստծունը՝ առանց որեւէ պակասութեան: Հինգերորդ՝ մարդը թէ՛ բնութեամբ, թէ՛ կամքով գործելիս օգնականի կարիք ունի, իսկ Աստուած կարիք չունի օգնականի: Վեցերորդ՝ մարդը կարիք ունի ուսման եւ իմաստութեան, իսկ Աստուած կարիք չունի ուսման եւ իմաստութեան, որովհետեւ ինքն է աղբիւրը գիտութեան եւ իմաստութեան: Եօթներորդ՝ մարդը կարիք ունի ժամանակի, իսկ Աստուած կարիք չունի ժամանակի, որովհետեւ նաեւ յաւիտենականն արարեց: Ութերորդ՝ մարդու գործը չարչարանքով է, իսկ Աստծունը՝ առանց չարչարանքի: Իններորդ՝ մարդը սխալւում է գործի մէջ, իսկ Աստուած անսխալական է: Տասներորդ՝ մարդու գործը նախ զօրութեամբ, ապա ներգործութեամբ է լինում, իսկ Աստծունը՝ միշտ ներգործութեամբ է, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում: Տասնմէկերորդ՝ մարդու գործը մասերով է՝ մէկը միւսի ետեւից, իսկ Աստծունը՝ միանգամից եւ ամբողջական: Տասներկուերորդ՝ գործի սկզբում մարդը չգիտի դրա աւարտը, իսկ Աստծուն սկզբից եւեթ յայտնի է իր գործի աւարտը: Տասներեքերորդ՝ մարդ ամէն ինչ չի կարող անել, ինչ կամենում է, իսկ Աստուած ինչ կամենում է, անում է: Տասնչորսերորդ՝ մարդը չի կարող արարչագործ լինել, իսկ Աստուած արարչագործ է: Տասնհինգերորդ՝ մարդը ստեղծելուց յետոյ իր ստեղծածի հետ չէ այլեւս, իսկ Աստուած ստեղծելուց յետոյ էլ միշտ իր ստեղծածի հետ է՝ իր նախախնամութեամբ, ըստ այդմ՝

«Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի աւարտը» (Մտթ. ԻԸ 20):

ՍՏԵՂԾՄԱՆ ԵՒ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Գ

Հարց. Որո՞նք են արարչութեան եւ նախախնամութեան գործերի ընդհանրութիւններն ու տարբերութիւնները:

Պատասխան. Սրանք ընդհանուր են. նախ, որ մէկ բարերար կամքից առաջ եկաւ արարչութեան գործը, ըստ այդմ՝ «Ինչ որ կամեցաւ, արարեց Տէրը» (Սղմ. ՃԼԴ 6), այդպէս էլ նախախնամութեան գործը, որովհետեւ կամենում է, որ բոլոր մարդիկ ապրեն ու ճշմարտութեան գիտութեանը գան: Եւ Արարչի կամքը արարածներիս մէջ եղած նոյն նախախնամութիւնն է:

Երկրորդ՝ որովհետեւ, ուր հասնում է արարչութեան գործը, այնտեղ էլ նախախնամութիւնն է եւ հակառակը, որտեղ գործում է նախախնամութիւնը, այնտեղ գործում է եւ արարչութիւնը:

Իսկ անէ բաները ո՛չ արարչութիւն, ո՛չ էլ խնամակալութիւն ունեն:

Երրորդ՝ ինչպէս իմաստութեամբ արարեց, ըստ այդմ՝ «Աստուած իմաստութեամբ դրեց երկրի հիմքերը» (Առակ. Գ 19), այդպէս էլ իմաստութեամբ նախախնամում է բոլորին եւ ամէն մէկին՝ ըստ իր կարիքների:

Չորրորդ՝ ինչպէս որ անիմանալի են արարչութեան գործերը, ըստ այդմ՝ «Ո՞վ իմացաւ Տիրոջ միտքը, կամ ո՞ւմ հետ խորհրդակից եղաւ» (Ես. Խ 13), այդպէս էլ անիմանալի են նախախնամութեան գործերը, ըստ այդմ՝ «Օ՜, խորք մեծութեան եւ իմաստութեան, որովհետեւ անզննելի են նրա ճանապարհները եւ անքննելի՝ դատաստանները»:

Հինգերորդ՝ ինչպէս որ աղօտ նմանութեամբ ճանաչում ենք արարչութեան գործը, այդպէս էլ ստուերակերպ նմանութեամբ ճանաչում ենք նախախնամութեան գործը, այսինքն՝ անելն ու թոյլ տալը:

Սրանք, թէ որո՞նք են նմանութիւնները:

Իսկ որո՞նք են արարչութեան եւ նախախնամութեան գործերի տարբերութիւնները.

Առաջին՝ որովհետեւ արարչութիւն է անէ բաներ ստեղծելը, իսկ նախախնամութիւն է եղածը նոյնութեամբ պահելը:

Երկրորդ՝ նախ արարելն է, յետոյ՝ նախախնամելը. սա ստեղծուածների դէպքում: Իսկ Աստծոյ մօտ՝ նախ նախախնամութիւնն է, յետոյ՝ արարչութիւնը, որովհետեւ նախախնամական բարութեամբ նախ կամեցաւ ստեղծել արարածներիս, ինչպէս ասում է սուրբ Դիոնէսիոսը «Երկնային քահանայապետութիւնների մասին» գրքի Չորրորդ գլխում[217]:

Երրորդ՝ սկիզբ տալիս նախ նայում է ստեղծուած առարկային, որ լինի, վերջում՝ նախախնամելն է, որպէսզի կորստի չմատնուի:

Չորրորդ՝ արարչութիւնը մի անգամ է կատարւում, ըստ այդմ՝ «Հանգստացաւ Աստուած իր բոլոր գործերից» (Ծննդ. Բ

2), իսկ խնամելը միշտ է եւ ամէնօրեայ, ըստ այդմ՝ «Մինչ այժմ գործում է իմ Հայրը, գործում եմ եւ ես» (Յովհ. Ե 17), որը նախախնամութիւնն է:

Հինգերորդ՝ արարչութեան գործը միայն անելն է, իսկ խնամելունը՝ երբեմն-երբեմն թոյլ տալը՝ ըստ բարեգործութեան անհրաժեշտութեան: Որովհետեւ անելն առանց կասկածանքի հաճելի գործ կատարելն է, ինչպէս օրինակ, բարութիւն անելը բարիներին, որն Աստծոյ արդարութիւնն է, չար գործելը չարի դէմ, որը ճիշտ խրատելու համար է, բարութիւն անելը չարերին, որ ողորմութիւն ու գթութիւն է. սրանք են անելու տեսակները:

Իսկ չար գործելը բարու դիմաց անիրաւութիւն է, եւ Աստծոյ մէջ այն գոյութիւն չունի: Սակայն կարող է լինել թողտուութեամբ, որ թէեւ մեզ չար է թւում, [բայց] ծածուկ բարութիւն կա նրա մէջ, ինչպէս օրինակ, արդարների փորձութեան մէջ ընկնելը եւ զանազան վնասներ կրելը, որ յօգուտ իրեն է կամ՝ այլոց:

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ է Աստուած թոյլ տալիս, որ արդարներն ընկնեն փորձութեան մէջ:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ, որպէսզի արդարի չերեւացող առաքինութիւնն ի ցոյց դրուի բոլորին, ինչպէս Յոբինն ու Աբրահամինը, ըստ այդմ՝ «Այժմ իմացայ, թէ դու Աստծուց երկիւղում ես» (Ծննդ. ԻԲ 12), այսինքն՝ հիմա իմացայ:

Երկրորդ՝ որպէսզի ոչ տեղին գործերի շնորհիւ փրկուեն ուրիշները, ինչպէս Քրիստոսի խաչի շնորհիւ եղաւ աշխարհի փրկութիւնը:

Երրորդ՝ ինչպէս Պօղոսի մարմնին խայթ տրուեց, որ ի վերուստ ստացած շնորհն ու զօրութիւնը հպարտութեան պատճառով չկորցնի. ասում է՝ «Շատ է քո մէջ իմ շնորհը, Պօղոս, որովհետեւ իմ զօրութիւնը քո տկարութեամբ է իրագործւում» (Բ Կորնթ. ԺԲ 9):

Չորրորդ՝ որպէսզի արդարների փորձութիւնը թոյլ տայ ուղղուելու ուրիշներին, ինչպէս Ղազարին եւ մեծահարուստին, որովհետեւ տեսնելով Ղազարին եւ լսելով մեծահարուստի մասին (տե՛ս Ղուկ. ԺՁ)՝ վախենում ենք եւ ուղղւում:

Հինգերորդ՝ թոյլ տալով դա՝ ոմանց փորձութեան է ենթարկում ի փառս այլոց, ինչպէս ի ծնէ կոյրին, ըստ այդմ՝ «Ոչ թէ նրա պատիժն էր, ոչ էլ հօր կամ մօր, այլ յանուն Աստծոյ փառքի էր» (Յովհ. Թ 3):

Վեցերորդ՝ ոմանց փորձութեան է ենթարկում՝ ուրիշների նախանձը շարժելու համար, որովհետեւ տառապողների պատիւը յայտնի է դառնում ապագայի նկատմամբ ունեցած յոյսով, ինչպէս եղաւ վկաներինը: «Լսեցինք Յոբի համբերութեան մասին եւ Տիրոջ [արածի] աւարտը տեսանք» (Յակ. Ե 11),- ասում է Յակոբ առաքեալը:

Եօթներորդ՝ թոյլ է տալիս եւ ոմանց ընկնել մեղքի մէջ, որ այն հպարտութիւնը, որ ունէր առաքինի լինելու պատճառով՝ կոտրուի, ու նա Տիրոջ առջեւ ընկնի խոստովանութեամբ ու

թողութիւն խնդրի, որովհետեւ [հպարտութեամբ] սատանայի գործընկերն էր:

Ութերորդ՝ սրբերին չարչարանքի մէջ ընկնել թոյլ տալն աւելի մեծ պսակ ստանալու համար է, որովհետեւ այս կեանքը նահատակութեան մարտադաշտ է, եւ ըստ համբերութեան չափի է տրւում յաղթանակը, ինչպէս սուրբ Ստեփանոսին, որովհետեւ սարկաւագութեան եւ առաքելութեան պատիւ ունէր՝ ընդունեց մարտիրոսութեան պսակը եւ քարկոծուեց (տե՛ս Գործք է 54-59): Այսպէս էլ ուրիշները, ըստ այդմ՝ «Եթէ ընտիր գտնուի, կվերցնի կենաց պսակը» (Յակ. Ա 12):

Իններորդ՝ նահատակադիր Քրիստոս բոլորի Փրկիչն է, իսկ բոլոր սրբերը՝ նրա զինուորները, ուստի պարտաւոր են նմանուել զօրավարին եւ նահատակուել, ըստ այդմ՝ «Եթէ կցորդուենք տանջանքներին, ապա հաղորդակից կլինենք փառքին եւս» (Բ Կորնթ. Ա 7): Իսկ մի այլ տեղում ասում է. «Ոչ ոք զինուոր դառնալով՝ չի զբաղուի աշխարհիկ կեանքի գործերով, որպէսզի զօրավարին հաճելի լինի, իսկ մարտիկը չի յաղթի, եթէ կանոններով չմենամարտի» (Բ. Տիմ. Բ 4-5):

Տասներորդ՝ ցոյց է տալիս անկեղծ սէրը, որ ունեն Քրիստոսի հանդէպ, որի շնորհիւ կամենում են նրա փոխարէն կրել չարչարանքները եւ չհեռանալ նրա սիրուց, ինչպէս ասում է առաքեալը՝ «Ես Քրիստոսի չարչարանքները կրում եմ իմ մարմնում» (Գաղ. Զ 17): Եւ այլ տեղում ասում է. «Ո՞վ կբաժանի ինձ Քրիստոսի սիրուց» (Հռոմ. Ը 35) եւ այլն:

Տասնմէկերորդ՝ ինչպէս որ հայրն է որդուն ծեծում, որ սա զգաստանալով՝ չզրկուի հօր ժառանգութիւնից, այդպէս էլ Աստուած սրբերին եւ իր սիրելիներին է խրատում: Ինչպէս որ Մարիամը բորոտացաւ, Մովսէսին բամբասելու պատճառով (տե՛ս Թիւք ԺԲ 10), որ այս կեանքում մի քիչ տանջուեց, որպէսզի չզրկուէր երկնքի ժառանգութիւնից:

Տասներկուերորդ՝ դրանով սրբերը մեզ ուսուցանում են, քարոզելով, որ համբերենք նեղութիւններին ու փորձութիւններին, եւ իրենք էլ փորձում են նոյնը գործով կատարել, որ հաւատարիմ լինեն իրենց խօսքին. ինչպէս ասում էր առաքեալը՝ «Ճնշում եմ իմ մարմինը եւ հնազանդեցնում, որպէսզի այն բանում, ինչ ուրիշներին քարոզեցի, ես ինքս անպիտան չլինեմ» (Ա Կորնթ. Թ 27):

Տասներեքերորդ՝ որպէսզի տկար մարմնով յաղթեն անմարմին ու զօրաւոր հակառակորդին, որի համար Աստուած կփառաւորի՝ տեսնելով, որ տկարը յաղթել է զօրաւորին, ըստ այն բանի, որ իր գոհունակութիւնն էր յայտնում սիրելիին. «Շատ են իմ շնորհները քո մէջ, որովհետեւ իմ զօրութիւնը քո տկարութեամբ է իրականանում» (Բ Կորնթ. ԺԲ 9), այսինքն՝ ինչպէս ես աստուածային մարմնիս զօրութեամբ յաղթեցի փորձողին, նոյն կերպ եւ դու իմ շնորհով, տկար մարմնով կյաղթես եւ կնուաճես նրան:

Տասնչորսերորդ՝ որպէսզի իմանայ սատանան իր տկարութիւնը, այսինքն, որ պարտւում է ոչ միայն Աստծուց, այլեւ՝

մարդկանցից, ինչպէս ասում էր Տէրը՝ «Տեսնում էի, որ սատանան ընկնում է երկնքից եւ ձեզ իշխանութիւն տուեցի՝ տրորելու օձերին ու կարիճներին» (Ղուկ. Ժ 18-19):

Տասնհինգերորդ՝ ասում է սուրբ Դիոնէսիոսը, թէ՝ Աստուած այն պատճառով է սրբերին նեղութիւն տալիս ու փորձութեան մէջ դնում, որովհետեւ նրանց համար նեղութիւնը սիրելի եւ փափագելի է. սրբերն ուրախանում են այն ժամանակ, երբ հեռանում են մարմնական հաճոյքներից եւ արիանում փորձութեան մէջ եւ սակաւ նեղութեամբ մտնում մեծ հանգստի մէջ: Ըստ այդմ՝ «Բազմաթիւ նեղութիւններով է յարկ մտնել այդ հանգստի մէջ» (հմմտ. Եբր. Դ 11):

ԴԱՐՁԵԱԼ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ Տէրը հրամայում է աղօթել այսպէս. «Մի՛ տանիր մեզ փորձութեան» (Մտթ. Զ 13), եւ Յակոբ առաքեալն ուրախ էր ասելու՝ «Երբ տեսակ-տեսակ փորձութիւնների մէջ ընկնէք» (Յակ. Ա 2):

Պատասխան. Փորձութիւնը երկու տեսակ է. ներքին եւ արտաքին՝ ըստ գործած մեղքի ու պատժի:

Արդ, ներքինը փափկութիւններով ու հաճոյքներով փորձում է մեր բնութիւնը եւ այլայլւում է զանազան կարգի մեղքերով, ուստի պէտք է ամէն օր դիմել աստուածային Խնամողին, որ թոյլ չտա մեզ ընկղմուել այդպիսի փորձութիւնների մէջ: Իսկ արտաքին փորձութեան մասին առաքեալն ասում է, որ այն գալիս է մեր հալածիչի կողմից, եւ պէտք է ուրախանալ, թէ որքան յաճախ լինեն այդ փորձութիւնները, այնքան կաւելանա եւ պսակը: Ըստ այդմ՝ «Ով համբերի փորձութիւններին, կառնի կենաց պսակը» (Յակ. Ա 12):

Նաեւ այսպէս են մեկնում, թէ փորձութիւնը ինքնին բարի չէ, այլ պատահական է բարի դառնում, եթէ համբերութեամբ դիմանաս եւ յաղթես: Իսկ երբ համբերութիւն չունենաս, փորձութիւնը ինքնին չար է ու վատ: Այդ պատճառով Տէրը հրամայում է արգելել այն:

Եւ բարին բաժանւում է չորս տեսակի. նախ բարի, որ ինքն իր համար է խնդրում, ինչպէս առողջութիւնը: Այդպէս էլ խնդրում են արքայութեան համար, որ ինքնին բարի է: Երկրորդ՝ որ ինքը բարի չէ, սակայն պատճառ է այլ բարու, ինչպէս դառը դեղը առողջութեան համար: Այսպէս էլ ապաշխարանք են խնդրում, որ պատճառ է դառնում յաւիտենական կեանքի: Երրորդ՝ որ ինքը բարի է եւ պատճառ է բարու, ինչպէս օրինակ, քաղցր դեղը, որ վերականգնում է առողջութիւնը: Այսպիսինն են եւ նիւթական բարիքները՝ ոսկին եւ այլն, որ ողորմացող ձեռքում ապագայ բարու պատճառ են դառնում: Չորրորդ՝ որ ոչ ինքն է բարի, ոչ էլ բարի է պատճառում, այլ երբեմն պատահականութեամբ է դառնում բարի, ինչպէս իժի թոյնը, որ իր բնութեամբ չար է եւ չարիք է պատճառում, սակայն ոմանց համար երբեմն դեղ է լինում:

Այս կերպ էլ փորձութիւնն է բարի, որովհետեւ բնութեամբ չար լինելով՝ չար մեղք է պատճառում, սակայն երբեմն ոմանք կարողանում են յաղթահարել փորձութիւնը եւ ընտրեալ են դառնում: Ուստի եւ պէտք չէ ո՛չ խնդրել փորձութիւն եւ ո՛չ էլ դրա արգելումը, այլ՝ յաղթահարումը:

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ ասում է՝ «Աստուած փորձեց Աբրահամին» (Ծննդ. ԻԲ 1), եւ ասում է Յակոբը՝ «Աստուած չի փորձւում չարից, եւ ինքը էլ չի փորձում ոչ ոքի» (Յակ. Ա 13):

Պատասխան. Ոմանք ասում են, թէ փորձութիւնը երեք տեսակ է՝ մարդկանցից, սատանայից եւ Աստծուց:

Արդ, մարդիկ փորձում են, որ ճիշտն իմանան: Իսկ սատանան փորձում է, որ չարի մէջ գցի, ինչպէս օրինակ, տղան, որ ցից է տեսնում՝ մօտենում է, եթէ ամուր է, թողնում է, որովհետեւ չի կարող հանել եւ գնում է դէպի միւսը, եթէ շարժւում է, չարչարւում է, մինչեւ հանում է: Այսպէս էլ սատանան աներեւութապէս մօտենում է մարդուն, եթէ ամուր են հաւատն ու կամքը, չի մնում նրա մօտ, յուսահատւում է եւ թողնում: Իսկ եթէ երերուն է կամքը, ուրախանում է եւ մնում այնքան, մինչեւ որեւէ մեղք գործել տայ եւ շեղում է բարուց:

Իսկ Աստուած մարդուն փորձում է, քանզի գիտէ նրա հաւատարիմ եւ բարի լինելը, որ սակայն ծածկուած է ուրիշներից, փորձում է, որպէսզի աշխարհին ցոյց տայ նրա առաքինութիւնը: Այսպէս ահա Աբրահամը, Յոբը եւ այլ սրբեր փորձութեամբ երեւացին եւ գտնուեցին արդար, անարատ ու սուրբ:

Եւ այսպէս են զանազանւում Աստծոյ ու սատանայի փորձութիւնները: Նախ՝ ինչպէս ասացինք, Աստուած փորձում է, որ վեր հանի բարութիւնը, իսկ սատանան փորձում է, որ շեղի բարուց:

Երկրորդ՝ Աստուած փորձում է եւ համբերութիւն տալիս, սատանան փորձելիս՝ ձանձրոյթ է տալիս:

Երրորդ՝ Աստուած փորձում է եւ ելք տալիս, որպէսզի չյուսահատուի, սատանան փորձում է եւ ձանձրացնում, որպէսզի խորտակուի:

Չորրորդ՝ փորձութիւնից յետոյ Աստուած վարձատրում է պսակով, իսկ սատանան փորձութիւնից յետոյ իր մօտ սպանում է յաւիտենական կորստով:

Հինգերորդ՝ փորձելու ժամանակ սատանան չգիտէ առաջիկայում կյաղթի, թէ՞ կպարտուի, եւ եթէ իմանար՝ չէր մրցի աւելի ուժեղի հետ, որ պէտք է յաղթի իրեն, ասենք Ստեփանոսի, Անտօնի եւ այլոց հետ, որոնք յաղթեցին սատանային: Իսկ Աստուած գիտէ, թէ ինչ է լինելու առաջիկայում եւ իմանալով է փորձութեան ենթարկում: Իսկ եթէ մէկը հարցնի, որ եթէ Աստուած գիտէ վախճանը, ապա ինչո՞ւ է փորձութեան ենթարկում, ապա ասենք, որ երկու պատճառով. նախ, որ չվերանայ մեր միջից անձնիշխանութեան պատճառով: Երկրորդ, որպէսզի արդարօրէն կամ պսակ տայ, կամ տանջանք՝ եթէ յաղթեն կամ պարտուեն:

Հարց. Իմացանք, որ փորձութիւնից շահում ենք, ինչպէս վերն ասուեց, սակայն բոլոր մարդկանց ի՞նչ օգուտ կայ փորձութիւնից, որ ասում է՝ «Երանեալ է այն մարդը, որ համբերում է փորձութիւններին» (Յակ. Ա 12):

Պատասխան. Նախ՝ ինչպէս ասուեց՝ «Աստուած կտայ կենաց պսակը, որ խոստացաւ իր սիրելիներին» (Յակ. Ա 12): Իսկ եթէ ուզում ես իմանալ, թէ պսակը ինչից է լինում, [ապա ասենք], որ Աստուած, ինչ որ գտաւ իր աստուածութեան մեծութեան մէջ, պատրաստեց իր սիրելիների համար, որ չեմ էլ կարողանում անգամ պատկերացնել, ոչ էլ լսելիքով լսել, ինչպէս ասում է Պօղոսը. «Աչքը չտեսաւ եւ ականջը չլսեց» (Ա Կորնթ. Բ 9) եւ այլն:

Երկրորդ՝ համբերութիւն է սովորեցնում մեզ, ինչպէս ասում է Յակոբը՝ «Ուրախ եղէ՛ք, երբ կընկնէք փորձութեան մէջ, որովհետեւ ձեր հաւատի մարտահանդէսը ձեզ կօգնի համբերել» (Յակ. Ա 2): Իսկ թէ ի՞նչ է համբերութիւնը, [ապա դրա մասին] ասում է՝ «Որ կատարեալ գործ ունենալն է» (Յակ. Ա 3), այսինքն՝ Աստծոյ գործի նիւթը փորձութիւնն ու նեղութիւնն են, օգնողը՝ հաւատը, իսկ աւարտի բերողը՝ համբերութիւնը:

Երրորդ՝ Տէրը հրամայում է. «Այս աշխարհում նեղութիւն էք ունենալու», որով ձեզ անդորրութիւն կպարգեւի: Եւ կամ՝ «Նեղ է կենաց ճանապարհը» (Մտթ. է 14), եւ առաքեալն ասում է՝ «Բազում նեղութիւններով պէտք է մտնել այն հանգիստը» (հմմտ. Եբր. Դ 11):

Չորրորդ՝ եւ Ոսկեբերանն ասում է. «Նեղութեան առատութիւնն անկեղծ սիրոյ կապանք է», որովհետեւ կեղծաւոր եւ անկեղծ սէրն առ Աստուած երեւում է փորձութեամբ:

Հինգերորդ, որովհետեւ ասում է, թէ՝ «Առաջացնում է առաւել զղջում եւ առաքինութիւն», որովհետեւ նեղութեան մէջ լինելով՝ գործած մեղքի համար զղջում ենք ու սրբւում եւ ապագան զգուշութեամբ ենք պատսպարում, իսկ ներկայում կանգնում ենք արիութեամբ եւ պատրաստ: Եւ ինչպէս հուրը արծաթի ժանգը եւ խարտոցը երկաթի ժանգն են [մաքրում], նոյն կերպ էլ նեղութիւնը սրբում է մարդու մեղքերը:

Եւ փորձութեան օգուտի մասին գրուած է սաղմոսում, այն բացի՛ր, գտի՛ր եւ կարդա՛:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՆԿԱՐԵԼԻ Է ԱՇԽԱՐՀԸ ԴԱՐՁՆԵԼ ԱՆԷ
Պրակ Դ

Հարց. Այն մասին, որ ասում են, անկարելի է Աստծոյ համար աշխարհը դարձնել անէ, քանի դեռ չի երեւացել սրա լինելութեան սկիզբը:

Դարձեալ ասում են, թէ անկարելի է ապականուած կոյսին լինել կոյս:

Ի՞նչ է սրա պատճառը, խնդրում եմ:

Պատասխան. Հարցերդ տարբեր են եւ ոչ միօրինակ: Այդպիսին էլ պատասխաններն են՝ այլեւայլ եւ ոչ միօրինակ:

Նախ՝ պատասխանենք առաջին հարցին՝ ըստ բնականի եւ բարոյականի: Նախ, ըստ բնականի:

Առաջին պատճառին, որ Աստուած է, յատուկ է անհրաժեշտ էակ լինելը՝ մշտական եւ իսկական ներգործութեամբ, որոնցով եւ տարբերւում է սրանցից, որոնք հնարաւոր էակներ են՝ ժամանակաւոր ներգործութեամբ եւ զօրութեամբ հանդերձ: Որպէս այդպիսին, սրանք փոփոխական են, որ կարող են լինել եւ չլինել եւ երբեմն էլ՝ զօրութիւն ունենալ, որովհետեւ կամ զօրութիւնից է լինում՝ ներգործութեամբ, ինչպէս տղայի հիւսնութիւնը, կամ էլ ներգործութիւնից է լինում զօրութեամբ, ինչպէս շարժման դադարելը: Այլ արդ, սրանք յատուկ չեն աստուածային [էութեանը], որովհետեւ [նա] անհրաժեշտ էութիւն է, որ ունի միայն գոյութիւն, իսկ անգոյութիւն չունի, հետեւաբար, էութեամբ անփոփոխ է եւ միշտ ներգործում է, որովհետեւ անկարօտ է զօրութեամբ գոյութեան սկզբի ու աւարտի, ապա ուրեմն անսկիզբ է եւ անվախճան: Եւ իսկական են նրա գործերը, որովհետեւ զօրութեամբ էութիւն լինելով՝ նրա մէջ չկայ անկատար ոչինչ, այլ ամէն ինչ նախատեսուած է, այսինքն՝ տեսութեամբ եւ կամքով, ապա ուրեմն անդրդուելի է տեսութեամբ եւ կամքով:

Եւ քանի որ սա պարզ դարձաւ, այժմ պատասխանենք հարցին:

Նախ, ինչպէս ցոյց տրուեց, Աստուած մշտագոյ է էութեամբ եւ ներգործութեամբ. մշտագոյ առ ինքն եւ այլոց վրայ ազդելով, ինչպէս որ հուրը, որ միշտ ինքն իր մէջ այրւում է եւ միշտ ազդում ուրիշների վրայ, ուստի քանի որ [ինքն այդպիսինն է], աշխարհն էլ արարեց մշտնջենաւոր գործող, իսկ մշտնջենաւորն անհրաժեշտն է, եւ անհրաժեշտը կարող է [միայն] գոյութիւն ունենալ եւ չի կարող գոյութիւն չունենալ, որի պատճառով էլ աշխարհը ինչ-որ ժամանակ գոյացել է մշտնջենաւոր գոյութեան համար եւ երբեք չի կարող անգոյանալ:

Եւ դարձեալ, Աստծոյ կամքը անփոփոխ է, որովհետեւ չի վարանում ու չի զղջում, հակառակ դէպքում Աստուած, եթէ արարէր աշխարհը գոյատեւելու համար, իսկ հիմա դարձնէր անգոյ, կստացուէր, որ Անփոփոխելին փոփոխական է, զղջացող ու երկբայական, որ խորթ է Արարչի էութեանը: Ուստի կամեցաւ եւ արարեց գոյատեւելու համար եւ չի կամենում ու չի փոխի անգոյութեան: Իսկ եթէ կամենայ, կարող է առնել եւ կատարել, եւ եթէ չի կամենում՝ չի առնում եւ չի կատարում:

Իսկ թէ մէկն ասի, որ եթէ Աստուած չի կամենում, ուրեմն չի կարողանում, ուստի եթէ չար չկամենար՝ չէր անի, նոյնպէս եւ մեղքերը եւ այլն, ուրեմն Աստծոյ մէջ անկարողութիւն կայ, ապա պատասխանենք, որ նախ մեր մէջ կամքը եւ կարողութիւնն անհաւասար են, որի պատճառով ինչ որ կամենում ենք՝ չենք կարողանում, իսկ ինչ որ կարող ենք՝ այդ ենք կամենում: Մինչդեռ Աստծոյ կամքն ու կարողութիւնը հաւասար են, ուստի եւ հակադիր չեն իրար. ինչ որ կամենում է՝ կարողանում է, եւ ինչ որ կարող է՝ նոյնն էլ կամենում է, ուստի պարզ է, որ եթէ չարն ու մեղքը չի կամենում, չի կարող անել:

Ասենք նաեւ, որ ամենակարող եւ ամենազօր է Աստուած, իսկ նա, ով ամենակարող ու հզօր է, չի կարող անկարող լինել: Իսկ այն, որ չի կարողանում չար գործել, վկայում է նրա առաւելութիւնը եւ ոչ թէ անկարողութիւնը, ինչպէս, օրինակ, այն, որ արեգակը չի կարող խաւար լինել, որովհետեւ առաւելագոյն լոյս է:

Նոյն կերպ եւ Աստուած չի կարող չար լինել, որովհետեւ առաւել բարի է: Եւ չի կարող անէանալ, որովհետեւ առաւել է. մնացեալն էլ այսպէս: Նոյնպէս եւ բարի կամք ունենալու պատճառով չի կամենում եւ չի կարող աշխարհը դարձնել անէ:

Իսկ այն, որ ասում է, քանի դեռ չի երեւացել սրա լինելութեան սկիզբը, պէտք է իմանալ, որ աշխարհի լինելութեան սկիզբը երկուսն է: Առաջինը՝ Արարչի նախագաղափար տեսութիւնն է, որ մինչեւ ժամանակի ստեղծումը անսկիզբ յաւիտենականով էր, եւ երկրորդ սկիզբը՝ ժամանակի մէջ էր: Ինչպէս, օրինակ, եթէ մէկը կամենում է տաճար կառուցել, նախ դրա գաղափարը ձեւաւորւում է մտքում, ապա կառուցում է տաճարն ըստ այդ ձեւի: Հետեւաբար, այս տաճարը ունեցաւ երկու սկիզբ՝ նախ կառուցողի մտքում, եւ ապա՝ կառուցման սկզբով ու աւարտով:

Սա առաջին տարբերութիւնն է:

Երկրորդ տարբերութիւնը՝ առաջին սկիզբը մտքում միանգամից է, իսկ երկրորդի մէջ նախ սկիզբն է, ապա՝ աւարտը:

Երրորդ տարբերութիւնը՝ տաճարը կառուցւում է, թէ՝ ոչ, նրա առաջին սկիզբը, այսինքն՝ մտքում ծնուած գաղափարը, մնում է նոյնը, ո՛չ աւելանում է, ո՛չ պակասում:

Չորրորդ տարբերութիւնը՝ որ առաջին սկիզբը տաճարի՝ զօրութեամբ է, իսկ երկրորդը՝ ներգործութեամբ:

Հինգերորդ տարբերութիւնը՝ մտքում ձեւը անմարմին է, իսկ կառուցածը նիւթական է:

Այսքան են տարբերութիւնները:

Իսկ ընդհանրութիւնները սրանք են: Նախ՝ որ երկու սկիզբն էլ նոյն ներգործող պատճառն ունեն, որ կառուցողն է:

Երկրորդ ընդհանրութիւնը, որ ինչպէս նկարուածն է, այդպէս էլ կառուցուած տաճարն է չափսերով ու ձեւով նոյնը եւ հակառակը. սա օրինակ է, իսկ նա՝ ճշմարտութիւն: Եւ օրինակն ունի նմանութիւն եւ աննմանութիւն, այդ պատճառով էլ կոչւում է օրինակ:

Ե՛կ, այդ էլ քննենք: Նախ, ինչպէս տաճարը կառուցողը, որ տեսնում է սկիզբը եւ աւարտը. այսպէս էլ Արարիչ-Աստուած գործի երկու սկզբներում տեսաւ աշխարհի աւարտը:

Երկրորդ՝ արուեստաւորը գործում է մտայղացմամբ, այսինքն՝ իմաստութեամբ եւ կամքով, այդպէս էլ Արարիչ-Աստուած բոլոր եղածներին կամեցաւ ու արարեց. ասում է՝ «Եւ Տիրոջ խօսքով հաստատուեց երկինքը» (Սղմ. ԼԲ 6):

Երրորդ՝ թէպէտ կառուցելիս բազմաթիւ օգնականներ են լինում, սակայն

հիմնական արհեստաւորը եւ պատճառը մէկն է: Նոյնպէս, թէպէտ բազմաթիւ հրեշտակներ գոյաւորների ստեղծման ժամանակ օգնում էին, սակայն մի Աստուած է բոլոր գոյաւորների պատճառը:

Չորրորդ՝ ինչպէս նրանք, որ մօտ են գտնւում, չեն տեսնում կառուցողի մտքում եղածը, [այսինքն՝] առաջին սկիզբը, այդպէս էլ հրեշտակները չեն տեսնում այն նախագաղափար տեսութիւնը, որ պիտի իրականանար յետոյ:

Հինգերորդ՝ տեսնելով կառուցուածը՝ ճանաչում ենք կառուցողին: Մենք էլ տեսնելով արարածներին՝ ճանաչում ենք Արարչին, ըստ այդմ՝ «Երկինքը պատմում է Աստծոյ փառքը» (Սղմ. ԺԸ 2):

Սրանք են օրինակների նմանութիւնները:

Իսկ տարբերութիւնները նոյնպէս բազմաթիւ են: Նախ՝ սկզբում կառուցողն է, որ յետոյ տեսաւ կառուցուելիքը, իսկ Աստծոյ նախատեսութիւնը յաւիտենական անսկիզբն է:

Երկրորդ՝ կառուցելուց յետոյ կորչում է մտքով պատկերացրածը, իսկ Աստծոյ մօտ անջնջելի է նախատեսութեան գիրը:

Երրորդ՝ կառուցողը չգիտէ, թէ գործի ընթացքում ինչ կլինի, իսկ Աստծոյ կանխատեսութեան մէջ ամէն ինչ յայտնի է, ըստ այդմ՝ «Քո գրքում գրուեցին բոլորը» (Սղմ. ՃԼԸ 16):

Չորրորդ՝ կառուցուելիքը մտքում զօրութեամբ է եւ սոսկ միտք, իսկ Աստծունը՝ ներգործութեամբ ու զօրութեամբ է եւ ոչ երբեք միայն միտք:

Հինգերորդ՝ մտքինը պատահական է եւ ժամանակաւոր, իսկ Աստծոյ նախախնամութիւնը՝ գոյացական ու մշտագոյ, եւ Աստծոյ համար պատահականութիւն չկայ:

Վեցերորդ՝ [մտքինը] տատանուող է եւ զղջացող, իսկ Աստծոյ նախատեսութիւնն անսասան է եւ անզեղջ:

Եօթներորդ՝ մեր կանխատեսումները սովորելով են, իսկ Աստծունը՝ բնութեամբ եւ առանց ուսման:

Ութերորդ՝ մենք բազումով բազումն ենք տեսնում, կամ բազումով՝ մէկը, իսկ Աստծոյ նախատեսութիւնը մէկով տեսնում է բազումը եւ մէկով՝ մէկը:

Իններորդ՝ մեր նախատեսութիւնը ներսից դուրսը եւ դրսից ներսն է ճանաչում, իսկ Աստուած տեսնում է ներսից ներքինը եւ ներսից արտաքինը, որովհետեւ բոլորին իր մէջ ունի եւ իրենով է տեսնում, եւ ոչ մի բան նրանից դուրս չէ:

Տասներորդ՝ մենք տեսնում ենք էականը, իսկ ոչ էականը չենք տեսնում: Մինչդեռ Աստուած տեսնում է նաեւ ոչ էականը եւ ընտրում է, ըստ այդմ՝ «Քո աչքերը տեսան իմ թերութիւնները» (Սղմ. ՃԼԸ 16): Եւ կամ՝ «Նախքան աշխարհի լինելը ընտրեց մեզ, կանչեց ու արդարացրեց» (Հռոմ. Ը 30): Եւ այլ բազմաթիւ տարբերութիւններ կան մարդու եւ Աստծոյ գործերի մէջ. մենք կարիք ունենք նիւթի, ժամանակի, տեղի, օգնականի, իսկ Աստուած անկարօտ է սրանց:

Ահա այսքան համեմատութիւններ առաջին սկզբի վերաբերեալ, այսինքն՝ Աստծոյ նախագաղափար տեսութեան եւ ոչ երկրորդ սկզբի՝ արարչութեան վերաբերեալ:

Եւ քանի որ սա իմացուեց, ուստի հասկանալի է, որ չէր կարող չերեւալ աշխարհի լինելութեան սկիզբը, ըստ այն բանի, որ այն կար Աստծոյ նախագաղափար տեսութեան մէջ եւ ոչ թէ ըստ այն բանի, որ կայ աշխարհի գոյութեան սկիզբ, որովհետեւ [Տէրը] անփոփոխ կամքով կամեցաւ եւ արարեց գոյութիւնը, ու չի կարող փոխուել Անեղի կամքը ու եղականներիս էութիւնը վերածել անգոյութեան:

Այսպիսով պարզաբանեցինք ցուցումն առաջինի վերաբերեալ:

ՊՈՌՆԿԱՑԱԾ ԿՈՅՍԻ ՄԱՍԻՆ

Իսկ երկրորդ հարցի վերաբերեալ, թէ անկարող է ապականուած կոյսը կոյս լինել, ասենք, որ «կոյսն» ու «ապականուածը» հակառակ են միմեանց՝ ըստ առկայութեան եւ բացակայութեան, ինչպէս տեսնելը եւ կուրութիւնը, որոնց լինելուն անհրաժեշտ են երեք հանգամանքներ, այսինքն՝ ժամանակ, մաս եւ նոյնութիւն: Ժամանակ, որովհետեւ նախ ունակութիւնն է եւ յետոյ պակասութիւնը: Մասը, որովհետեւ նոյն մասը, որ ունէր ունակութիւն, յետոյ նոյն մասին եղաւ պակասութիւն[218]: Նոյնութիւն, որովհետեւ նոյն ունակութիւնը եղաւ նոյն պակասութիւնը: Եւ սրանք են սրանց հակադարձութեան արգելքը, այսինքն՝ կարող է ունակութիւնը պակասութիւն լինել, իսկ պակասութիւնը չի կարող ունակութիւն լինել: Իսկ ներհակ հակադիրները կարող են փոխուել մէկը միւսին, ինչպէս չարն ու բարին, ջերմն ու ցուրտը: Եւ եթէ կուսութիւնը ունակութիւն է, իսկ ապականութիւնը՝ նրա պակասութիւնը, ուրեմն կոյսը կարող է ապականուել, սակայն ապականուածը կոյս չի կարող լինել:

Նաեւ՝ կարելին ու անկարելին այլակազմ ու այլասեռ են, ուստի չեն կարող լինել միեւնոյնը: Եւ քանի որ այլասեռ [երեւոյթները] ներհակ են միմեանց, ուստի պարզ է, որ կարելին ունի [երկու կողմ]՝ թէ՛ լինելը, եւ չլինելը, մինչդեռ անկարելին միայն մէկը՝ կա՛մ լինելը, կա՛մ չլինելը: Այդ պատճառով էլ անկարելին չի հակադրւում կարելիին: Ուստի կուսութիւնը կարելին է, որ կարող է լինել եւ չլինել, իսկ ապականութիւնը անկարելին, որ պէտք է ունենայ մէկն ու մէկը եւ չի կարող հակադրուել միւսին:

Եւ քանի որ սա այսպէս է, ուստի եթէ պոռնիկ է, չի կարող չպոռնկանալ եւ [չի կարող] ապականուածը կոյս [լինել]:

Այս պատճառով էլ սուրբ հայրերը հաստատեցին, որպէսզի այսպիսիների համար նորից չկատարուի քահանայութեան կարգը[219]:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ ինչո՞ւ է թողութիւն տրւում զղջացողին, ապա ասենք, որ նախ՝ թողութիւնը լինում եւ իրականանում է զղջումից յետոյ. զղջումը յօժարումից, յօժարումը՝ կարողութիւնից, որի պատճառով թողութիւն է տրւում զղջումից յետոյ: Եւ քանի որ

պոռնկութիւնը ունակութեան պակասութիւն է, ուստի հակադրուող եզրեր չեն:

Ասենք նաեւ, որ կոյսն ու պոռնիկը առաքինութեան ու չարութեան կրող են, իսկ առաքինութիւնն ու չարութիւնը հակառակ են միմեանց, որովհետեւ փոխարինւում է մէկը միւսով, ուստի եւ արժանանում է թողութեան: Իսկ պոռնկութիւնը կուսութեան պատկերն է շրջում ու ապականում է բնութիւնը. ինչպէս ասում է սուրբ Դիոնէսիոսը «Երկնային քահանայապետութեան մասին» երկրորդ ճառում՝ «Թէ ցանկութիւնը այլայլում է բնութիւնը»[220], ուստի նրա հետ հակադարձութեան մէջ չէ:

Իսկ եթէ մէկն ասի, եթէ պոռնկացածը չի կարող քահանայական կարգի մէջ մտնել, ուրեմն նրա թողութիւնը ճշմարիտ չէ, ապա ասենք, որ նախ՝ թողութիւնը զղջման հետ է կապուած, իսկ կարգը՝ անձի ապականութեան, ուրեմն յիրաւի զղջմամբ թողութիւն ստանալով հանդերձ, չի կարող ապականուած, փոխուած անձով ու բնութեամբ մտնել [քահանայական] կարգի մէջ, ինչպէս որ կոտրուած ու կպցուած անօթը չի կարող անարատների շարքում դասուել:

Ասենք նաեւ, որ թէեւ իսկապէս թողութիւն ընդունեց եւ պատիժը կրեց հատուցմամբ, սակայն ապականութեան կնիքը մնաց անձի վրայ, ինչպէս ասացինք: Եւ սա ոչ թէ շնորհի քիչ լինելու պատճառով է, որ միշտ՝ սկզբում ու վերջում նոյնն է, այլ անձի տկարութեան փոխուելու պատճառով, ինչպէս, օրինակ այն, որ առողջ եւ հիւանդ աչքը նոյն լոյսը միակերպ չի տեսնում:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ ինչպէ՞ս են կուռքերն ու ամենայն չարիքները թողած եւ հաւատի նոր դարձածները դառնում քահանայ ու եպիսկոպոս[221], ինչպէս սուրբ Կիպրիանոսը, ապա ասենք, որ նախ՝ հաւատի նոր դարձածների վրայ քիչ սահմանափակ կանոններ էին դնում, ինչպէս պատուիրում է առաքեալը՝ «Հեռու պէտք է պահել չորս բաներից. զոհաբերութիւնից, պոռնկութիւնից, արիւնից, խեղդուածներից» (Գործք ԺԵ 29): Իսկ նրանց մէջ [հաւատը] հաստատելուց յետոյ, աւելանում էին եւ [նրանց վերաբերող] կանոնները:

Այսպէս նաեւ սահմանեցին սուրբ հայրերը Նիկիայի [ժողովում]:

Պէտք է նաեւ ասել, որ մեղքը շնորհից առաջ եւ յետոյ հաւասար չէ, որովհետեւ մինչեւ [շնորհ ունենալը] անգիտութեամբ էր, յետոյ՝ գիտութեամբ, ընդ որում առաջինը հաւատով է քաւութիւն ստանում, երկրորդը՝ ապաշխարութեամբ ու մաքրուելով: Հաւատովը առանձնայատուկ է, որովհետեւ մի անգամ է եւ նախկին կնիքը կայ հոգում: Իսկ ապաշխարութիւնը կրկին է, որովհետեւ կնիք չկայ եւ վերջին մաքրուելն է:

Եւ յիշի՛ր սրանց յայտնի դարձած որպիսութիւնը, որովհետեւ հաւատի եկած անհաւատը կարող է քահանայ լինել, իսկ չար հաւատացեալը չի կարող: Ինչպէս օրինակ խեցէ կոտրուած անօթը, եթէ կաւից է, ապա դարձեալ վերա-

կանգնում է, եթէ թրծուած է, չի վերականգնում. նոյն կերպ եւ պոռնկացած քահանան չի կարող քահանայ լինել:

Սա աղի օրինակով բերեց նաեւ Տէրը, որը երբ անհամանում է, ոչ մի բանի պիտանի չի համարում (տե՛ս Մտթ. Ե 13):

Իսկ եթէ մէկն ասի, թէ ինչո՞ւ մեղք գործածը, եթէ զղջացել է, կարող է կարգ մտնել, օրինակ՝ հպարտն ու ագահը, իսկ պոռնիկը՝ ոչ, ապա ասենք, որ նախ՝ ըստ առաքեալի՝ «Ամէն ոք, ով մեղանչում է, իր մարմնից դուրս է [մեղանչում], իսկ եթէ պոռնկանում է, իր մարմնում է մեղանչում» (Ա Կորնթ. Զ 18), ապա ուրեմն ապականուած մարմինը յիրաւի չի կարող կարգ մտնել:

Ասենք նաեւ, որ ամէն մի մեղքի մասին խորհրդածումը դրա զղջումն է, իսկ պոռնկութեան մասին խորհրդածումը՝ այդ ախտի վերանորոգումն է: Հետեւաբար, նման չեն բոլոր մեղքերի համար զղջումն ու ապաշխարութիւնը:

Ասենք նաեւ, որ մեղք է բոլոր մեղքերի անչափութիւնը, իսկ չափաւորը մեղք չէ, ինչպէս չափաւոր ագահութիւնը, չափաւոր բարկութիւնը եւ այլն: Իսկ պոռնկութեան չափաւորն էլ, անչափն էլ մեղք են, ինչպէս որ մի անգամ ապականուած կոյսը եւ մի անգամ պոռնկացածը կոչւում է պոռնիկ ու ապականուած:

Հետեւաբար նոյնը չէ բոլոր մեղքերին [տրուող] թողութիւնը, ինչպէս որ նոյնը չէ գործը:

Եւ եթէ մէկն ասի, որ այս բոլոր վերոասացեալները հանդիպում են աշխարհի ամուսնացած երէցների մէջ, որոնք քահանայագործում են, ապա ասենք, որ աշխարհի երէցները ազնիւ ամուսնութեամբ ու ողջախոհ ուխտով են քահանայագործում: Իսկ աբեղան ուխտում է կուսութեամբ քահանայագործել: Ուստի պարզ է եւ, որ երէցը երկրորդ ամուսնութիւնից յետոյ չի կարող քահանայագործել, ինչպէս եւ պոռնկացած երէցը կամ աբեղան իրաւամբ չեն կարող քահանայագործել, քանի որ ուխտազանց են:

Եւ եթէ մէկն ասի, որ ըստ երեւոյթին, պոռնկացածի քահանայութիւնը կատարեալ չէ, ուստի այդ պատճառով է արգելւում, ապա ասենք, որ այդ պատճառով չի արգելւում քահանայագործելը: Նախ, որովհետեւ իրաւունքի հարց է, որ չի խափանւում, ապա ներգործող խօսքն աստուածային է, որ երբեք չի խոչընդոտւում: Ըստ այդմ առաքեալն ասում է. «Անարժանը, որ մատուցում է պատարագ, ուտում եւ ըմպում է ի դատապարտումն իր անձի» (Ա Կորնթ. ԺԱ 29): Արդ, եթէ կատարեալ չէ պատարագը, ինչո՞ւ է դատապարտում անարժաններին:

Իրական պատճառն այս է. նախ՝ խորհուրդը բոլորի փրկութեան համար է, իսկ քանի որ անարժան մօտեցողը կորչում է, ուստի եւ արգելւում է նրա ծառայութիւնը:

Երկրորդ՝ շատերը կորստի են մատնւում գայթակղութեամբ, ուստի ըստ

անհրաժեշտութեան, ինչպէս ասուել է, կորստի են մատնուում մէկը կամ շատերը: Հետեւաբար, արդարօրէն եւ յիրաւի սուրբ հայրերը կանոն մշակեցին, որ այդպիսիներին արգելուի խորհրդին ծառայել[222]:

Սա տեսնենք եւ ճշմարիտ օրինակով. մի յանցանքից յետոյ Ադամը իր կեանքի բոլոր օրերին այլեւս պատարագ չմատուցեց, այլ իր որդիներին էր հրամայում մատուցել: Նոյնը եւ անառակի մասին առակում, որ վերադարձաւ հօր մօտ, որը ողջագուրուելով ընդունեց, հագցրեց նրան, զարդարեց մատները մատանիով եւ ոտքին կօշիկ հագցրեց, սակայն թոյլ չտուեց նրան պատարագել, այլ հրամայեց այլոց՝ «Մորթեցէ՛ք պարարտ եզը, կերէ՛ք եւ խմէ՛ք » (Ղուկ. ԺԵ 23): Սրանցով հաստատւում է, որ զղջացողը այսպէս կարող է թողութիւն ստանալ այլոց ձեռքով, սակայն ինքը չի կարող պատարագել:

Այսքանն այս մասին:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԸ ՁՕՐՈՒԹԵԱՄԲ ՉԷՐ ԱՍՏԾՈՅ ՄԷՋ ՊՐԱԿ Ե

Հարց. Խնդրում եմ վերը յիշատակուածը նորից բացատրել, թէ ինչո՞ւ Աստծոյ նախատեսութեան մէջ աշխարհը զօրութեամբ չի ասւում:

Պէտք է իմանալ, որ զօրութիւնը համանուն է, այսինքն [այսպէս է կոչւում] ե՛ւ կարողութիւնը, ե՛ւ մոլորութեան մայրը, որի պատճառով պէտք է դրանք տարբերել:

Ա՛րդ, զօրութիւն կայ, որ ներգործութեամբ է, եւ զօրութիւն, որ առանց ներգործութեան է: Այն զօրութիւնը, որ ներգործութեամբ է, անհրաժեշտ է, իսկ առանց ներգործութեան զօրութիւնը հնարաւորն է [ներընդունականը], որ կարող է լինել կամ չլինել:

Դարձեալ՝ այն զօրութիւնը, ներգործութիւնը եւ անհրաժեշտութիւնը մէկ են եւ յաջորդում են միմեանց, որովհետեւ այն ամէնն, ինչ անհրաժեշտ է՝ ներգործութեամբ է, իսկ ամէն մի ներգործութիւն զօրութեամբ է ներգործում: Իսկ միւս զօրութիւնը, կարելին եւ հնարաւորը, որ հաւանականն են, հերթագայում են իրարով պայմանաւորուած, որովհետեւ այն ամէնն, ինչ [այդ] զօրութեամբ է, կարելի է եւ հնարաւոր:

Դարձեալ՝ այն զօրութիւնն անփոփոխ է, որովհետեւ կարող է միայն լինել, չի կարող չլինել: Իսկ միւս զօրութիւնը, որ փոփոխական է, կարող է ե՛ւ լինել, ե՛ւ չլինել, ու ոչ մէկի հանդէպ անկարող չէ:

Դարձեալ՝ այն զօրութիւնը մշտագոյ է, որովհետեւ բնաւորուած է ներգործութեան հետ, իսկ միւս զօրութիւնը ժամանակ առ ժամանակ է, որովհետեւ կամ երբեմն նախորդում է ներգործութեանը, ինչպէս մանկան կազմուելուն, կամ յաջորդում է ներգործութեանը, ինչպէս շարժման դադարելը:

Ուրեմն բացայայտ են սրանց տարբերութիւնները. մի զօրութիւնը անհրաժեշտ է, ներազդում է, անփոփոխ է, մշտագոյ է, ինչպէս հրի տաքացնելը, արեգակի լուսաւորելը: Եւ այս զօ-

րութիւններն անուանում ենք Աստծոյ ամենազօր, ամենակարող եւ այլն: Իսկ միւս զօրութիւնը, որ հնարաւոր է եւ կարող է լինել, կամ՝ չլինել եւ ժամանակ առ ժամանակ է, ասւում է փոփոխական բնութեան դէպքում, ինչպէս ասենք՝ հագուստը, որ կարող է պատռուել եւ չպատռուել, ջուրը, որ կարող է սառչել եւ չսառչել: Ահա այս զօրութիւնը երբեք Աստծոյ վերաբերեալ չենք ասում, որովհետեւ մշտնջենաւոր էութիւն է եւ չի կարող լինել կամ չլինել: Այլապէս մշտնջենաւորը փոփոխական կդիտուի, ինչը սուտ է:

Եւ հասկանալով այս, այժմ ընկալի՛ր եւ խնդրի պատասխանը, որ աշխարհի լինելութիւնը Աստծոյ նախագաղափար տեսութեան մէջ զօրութեամբ չէ, այլ ներգործութեամբ՝ բազմաթիւ պատճառներով: Նախ, որովհետեւ Աստուած պարզ ներգործութիւն է, իսկ եթէ նրա նախագաղափար տեսութեան մէջ որեւէ բան զօրութեամբ է, ուրեմն բաղադրեալ է: Հետեւաբար, Աստծոյ նախատեսութիւնը զօրութեամբ չէ, այլ ներգործութեամբ:

Երկրորդ՝ Աստուած միշտ ներգործում է, այլապէս, եթէ նրանում մի բան զօրութեամբ լինէր, միշտ չէր գործի, այլ՝ ժամանակ առ ժամանակ:

Երրորդ՝ Աստուած անհրաժեշտ էութիւն է, իսկ անհրաժեշտութիւնն ունենում է միայն մէկ հակադիր կողմ, այսինքն՝ կամ լինելը կամ չլինելը: Արդ, եթէ նրա մէջ եղածը զօրութեամբ լինէր, նա անհրաժեշտ էութիւն չէր լինի, այլ՝ հնարաւոր էակ:

Չորրորդ՝ զօրութիւնն ու գործելը հակադիր են միմեանց, իսկ եթէ ե՛ւ զօրութեամբ է ե՛ւ ներգործութեամբ՝ կլինի ինքն իրեն հակառակ, որ սուտ է:

Հինգերորդ՝ զօրութիւնն ու ներգործութիւնը փոխարինում են մէկը միւսին: Արդ, եթէ Աստծոյ մէջ եղած զօրութիւնը փոփոխական է, ուրեմն այն անտեղի է:

Վեցերորդ՝ զօրութեամբ [եղածը] անկատար է, ներգործութեամբը՝ կատարեալ: Եթէ [Աստծոյ] մէջ կայ զօրութիւն, ուրեմն [այդ] կլինի անկատարութիւնից կատարելութեան եկած կամ հակառակը, ինչն աներեւակայելի հերձուածողութիւն է:

Եօթներորդ՝ ներգործութեամբ [եղածը] պատուական է զօրութիւնից, եւ եթէ լինէր զօրութեամբ, կլինէր ինքնին պատուական եւ [միաժամանակ] անպատիւ, որ անպատշաճ է:

Ութերորդ՝ ներգործելն ըստ բնական կարգի առաջինն է, ըստ ժամանակի՝ վերջինը, ինչպէս բոլոր արարածներս: Եւ եթէ Աստծոյ մէջ զօրութիւն լինէր, նա էլ կլինէր ստեղծուածների հետ ժամանակի մէջ, որ սուտ է:

Իններորդ՝ երբեմն լինում է, որ ժամանակով առաջինը ներգործութիւնն է, իսկ զօրութեամբը՝ վերջինը, ինչպէս շարժման դադարելը: Եւ եթէ այսպիսի զօրութիւն լինէր նրա մէջ, նա էլ կլինէր վախճանուող ու սկիզբ ունեցող, որ անպատշաճ է:

Տասներորդ՝ բոլոր գոյերը երեք կերպ են տարորոշւում. կայ, որ միշտ ներգործութեամբ է, ինչպէս Աստուած, կայ, որ միշտ զօրութեամբ է, ինչպէս նիւթն ու ժամանակը, կայ, որ երբեմն զօրութեամբ, երբեմն ներգործութեամբ է. սրանք լինում են, ապա՝ ոչնչանում: Այս բաժանումից պարզ է, որ Աստծոյ մէջ չկայ ոչինչ զօրութեամբ, այլ ամէն ինչ ներգործութեամբ է, ինչպէս ցոյց տրուեց:

Ա՛րդ, աշխարհի լինելութիւնն ինքնին ասւում է զօրութեամբ եւ ներգործութեամբ, որովհետեւ զօրութիւնից է գալիս ներգործութեան, որովհետեւ եթէ նախ զօրութեամբ չլինէր, յետոյ չէր լինի ներգործութեամբ: Իսկ Արարչի նախատեսութեան առումով միշտ ներգործութեամբ է, ուստի եւ պարզ է, որ աշխարհի լինելութեան ժամանակ նախագաղափար տեսութիւնը նոյնպէս եկաւ ու մնաց՝ առանց աւելորդութեան կամ պակասութեան, ինչպէս որ յղացուած միտքը նախ խորհրդածութեան մէջ է, յետոյ ժամանակի մէջ արտաբերւում է եւ գրւում, թէեւ նոյն միտքն է ե՛ւ արտաբերուածը, ե՛ւ գրուածը, ե՛ւ մտածուածը:

Նոյնպէս իմացի՛ր եւ արարածների լինելութիւնը, ինչպէս, ասենք որակազուրկ նիւթի մէջ, որ միշտ զօրութեամբ է, ներգործութեամբ եղած բոլոր մարմինները նրանում առկայ են զօրութեամբ: Այդպէս էլ աշխարհի զօրութեամբ լինելութիւնը Աստծոյ մէջ ներգործութեամբ է:

Այսքանն այս մասին:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՍՏԾՈՅ ՄԷՋ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ
Պրակ Զ

Հարց. Խնդրում եմ [խօսել] նաեւ այն մասին, ինչպէս վերն ասուեց, թէ Աստծոյ մէջ պատահականութիւն չկայ, այնինչ, թւում է, թէ արարածները պատահական են Արարչի մէջ, որովհետեւ յետոյ են եղել:

Պատասխան. Բնաւ ոչ: Նախ, որովհետեւ պատահականութիւն կարող են թուալ ըստ իրի էութեան, իսկ արարածները էութիւնից չեն, այլ Արարչի կամքով արարուած՝ ոչնչից: Երկրորդ՝ գոյացութիւնից անջատուած պատահականութիւնները չեն կարող առանձին գոյութիւն ունենալ, իսկ Արարչից անջատուած արարածները առանձին կարող են գոյութիւն ունենալ: Եւ այս բաժանումը ոչ թէ ըստ նախախնամութեան է, այլ ըստ գոյացութեան [կարգի]: Երրորդ՝ արարածները գոյացական տեսակից են եւ ոչ թէ պատահականութեան, ինչպէ՞ս կարող են պատահականութիւն լինել Արարչի մէջ:

Իսկ եթէ մէկն ասի, թէ բազմաթիւ երեւոյթներ կան, որոնք մի տեղ էութիւն են, մի այլ տեղ՝ պատահականութիւն, ինչպէս ասենք՝ հրի մէջ ջերմութիւնը էութիւն է, իսկ որեւէ մարմնի համար՝ պատահականութիւն. տերեւը ինքնին գոյացութիւն է, իսկ ծառի վրայ՝ պատահականութիւն, ինչպէս եւ մազը: Այս կապակցութեամբ պատասխանենք, որ եթէ առանց ջերմութեան որակազուրկ մարմինն անձեւ ու անկերպ է, իսկ

տերեւը ծառի համար զարդ է, այդպէս էլ մազը՝ մարմնի համար, ապա Արարիչն առանց արարածների անկերպ ու անզարդ չէ, որովհետեւ արարածներն Արարչի համար ոչ մի հաւելում չեն:

Այժմ պատասխանենք առարկողներին:

Թէեւ արարածները յետոյ եղան, սակայն պատահական չեն Արարչի մէջ, որովհետեւ նախ՝ իրենց գոյութիւնն ունէին Աստծոյ նախագաղափար տեսութեան մէջ, թէեւ յետոյ ընկալուեցին իրենց գոյացութեան մէջ, ինչպէս տաճարը կառուցողի մտքում:

Երկրորդ՝ թէեւ յետոյ եղան արարածները, սակայն պատահականութիւն չեն, որովհետեւ նախ Բանն էր, որ յետոյ եղաւ մարմին, իսկ մարմինը Բանի պատահականութիւն չէ, ինչպէս որ որդին հօր համար պատահականութիւն չէ, որովհետեւ թէեւ յետոյ է ծնւում, սակայն հօր առնչակիցն է: Այսպէս էլ արարածները Արարչի առնչակիցն են, իսկ այդպիսիք ունեն միասնական գոյութիւն:

ԴԱՐՁԵԱԼ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ ԱՍՏԾՈՅ ՄԷՋ Պրակ է

Հարց. Գոյացութիւնը եւ պատահականութիւնն անբաժանելի են, ուրեմն ինչո՞ւ Աստծոյ մէջ միայն գոյացութիւն է եւ ոչ պատահականութիւն:

Պատասխան. Էականութեան կարգում գոյացութիւնը նախապատիւ է, քան պատահականութիւնը, եւ որովհետեւ Աստուած նախապատիւ է բոլոր գոյերից, ուստի Աստուած գոյացութիւն է եւ ոչ պատահականութիւն:

Ա՛րդ, հետեւելով բնական [կարգին]՝ տեսնենք, թէ ի՞նչ է գոյացութիւնը, ի՞նչ՝ պատահականութիւնը: Գոյացութիւնն ինքնին էացած է եւ կարիք չունի այլ հաստատողի: Իսկ պատահականութիւնը ունի էութեան օտար [աղբիւր] եւ գոյութեամբ պարտական է ուրիշի, ինչպէս մարմնի գոյնը:

Եւ քանի որ սա պարզ դարձաւ, իմացի՛ր նաեւ այն, թէ ինչո՞ւ Աստուած միայն գոյացութիւն է եւ ոչ պատահականութիւն: Նախ, որովհետեւ Աստուած ինքնին կայ եւ ոչ թէ հաստատուած է ուրիշի կողմից, ինչպէս ասում էր Մովսէսին՝ «Ես եմ, որ էն» (Ելք է 14):

Երկրորդ՝ քանի որ պատահականութիւնը գոյութիւնից յետոյ է, իսկ Աստծոյ մէջ ոչինչ միւսից յետոյ չէ, այլ ինքը նախ է, քան ամէն ինչ, որովհետեւ «Ի սկզբանէ Բանն էր» (Յովհ. Ա 1) եւ այլն:

Երրորդ՝ եթէ պատահականութիւնը խառնուէր գոյացութեանը՝ բաղադրեալ կլինէր, ինչպէս [ներկայանում են] նիւթն ու տեսակը, իսկ Աստուած պարզ, անբաղադիր գոյացութիւն է, ըստ այդմ՝ բաղդատւում է լոյսի հետ:

Չորրորդ՝ պատահականութիւնը փոփոխական երեւոյթ է, իսկ Աստուած անփոփոխ է էութեամբ, զօրութեամբ, կամքով, գիտութեամբ, ըստ այդմ՝ «Ես նոյնն եմ եւ չեմ փոփոխւում» (Մաղ. Գ 6):

Հինգերորդ՝ գոյացութիւնը մէկն է, պատահականութիւնները՝ բազմաթիւ: Եւ եթէ պատահականութիւններ լինէին

Աստծոյ մէջ, կլինէին բազում [աստուածներ] եւ ոչ թէ մէկը, իսկ Աստուած մէկն է եւ ոչ բազում, ըստ այդմ՝ «Տէր Աստուած քո միակ Տէրն է»:

Վեցերորդ՝ պատահականութիւնը հակադիր է գոյացութեանը, իսկ Աստուած ներհակութիւններ չունի:

Եօթներորդ՝ պատահականութիւնը գոյացութեան համար աւելորդութիւն է, որովհետեւ իր գոյութեամբ չի գոյացնում, իսկ Աստծոյ մէջ աւելորդ ոչինչ չկայ:

Ութերորդ՝ պատահականութիւնները գումարուելով գոյացութեան շուրջը՝ մարմին են լինում, իսկ Աստուած անմարմին էութիւն է:

Իններորդ՝ պատահականութիւնը ինքնին այլ է գոյացութիւնից եւ ըստ տուեալ գոյացութեան տարբերակային փոփոխութեան է ենթարկւում, մինչդեռ Աստծոյ մէջ պատահականութիւն չկայ, որովհետեւ ինքնին այլ չէ եւ տարբերակային չէ:

Տասներորդ՝ պատահականութիւնը լինում է աւելի կամ պակաս, իսկ գոյացութիւնը ոչ աւելի է եւ ոչ պակաս: Եւ քանի որ Աստծոյ մէջ աւելի պակաս ոչինչ չկայ, ուստի նա միայն գոյացութիւն է եւ չունի պատահականութիւններ:

ԱՍՏԾՈՅ ՏԱՍԸ ՍՏՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ը

Հարց. Ինչպէս ասացիր, Աստծոյ մէջ պատահականութիւններ չկան, ապա ինչպէ՞ս են նրան համապատասխանում տասը ստորոգութիւնները:

Պատասխան. Այդ տասը ստորոգութիւններն իրապէս պատշաճում են եղական գոյերիս, որ նիւթ ու տեսակի, գոյացութեան ու պատահականութեան հանրագումար են: Իսկ անեղ ու պարզ էութեանը պատշաճում են միայն համեմատութեամբ, որովհետեւ Աստուած **Է**ութիւն է կոչւում, ըստ այդմ՝ «Ես եմ, որ **Է**ն» եւ ոչ թէ ըստ այնմ, որ բաժանւում է գոյացութեան ու պատահականութեան, ինչպէս համանունը կամ հոմանիշը, կամ ոչ թէ մէկից եւ առ մէկը, ինչպէս ընդհանուր էն, որ բաժանւում է մեր մէջ: Եւ կոչւում է **Է**, ըստ այնմ, որ միշտ կայ՝ չունենալով սկիզբ ու վախճան, այլ որ ինքն է բոլորի սկիզբն ու վախճանը, ինչպէս ասում էր՝ «Ես եմ ալֆան եւ օմեգան» (Յայտ. Ա 17):

Եւ դարձեալ՝ կոչւում է Աստուած, որովհետեւ միայն Ինքն է առանց նիւթի տեսակ:

Եւ դարձեալ՝ կոչւում է Աստուած գոյացութիւն, ոչ թէ մեզ նման, որ ընդունակ ենք ներհակ պատահականութիւնների, այլ որ տարանջատուած է պատահականութիւններից, որովհետեւ ինչպէս ասացինք, կայ իբրեւ պարզ գոյացութիւն:

Եւ Աստուած կոչւում է Գոյ բազմաթիւ համեմատութիւններով:

Նախ՝ որովհետեւ նախ գոյն է, քան պատահականութիւնը, ինչպէս որ նախ Աստուած է, յետոյ ամէն ինչ: Երկրորդ՝ գոյը սկիզբ ու պատճառ է, որովհետեւ իր գոյութեամբ է գոյացնում, այդպէս էլ՝ Աստուած ամէն ինչ: Երրորդ՝ գոյն ինքնին

անպատճառ է, եւ Աստուած էլ անսկիզբ է: Չորրորդ՝ գոյը զգայութիւններից ծածկուած է, ինչպէս Աստուած զգայականներից: Հինգերորդ՝ գոյը հասու է մտքին, Աստուած էլ՝ իմացականներին: Վեցերորդ՝ գոյն իմանում ենք պատահականութիւններով, իսկ աներեւոյթ Աստծուն՝ երեւացողներով: Եօթներորդ՝ գոյացութիւնը մէկն է, պատահականութիւնները՝ բազմաթիւ, [այդպէս էլ] մէկն է Աստուած, բազում ենք եղականներս: Ութերորդ՝ գոյը ամբողջի եւ մասերի մէջ է, ինչպէս եւ Աստուած բոլոր էութիւնների ու մասերի մէջ: Իններորդ՝ Արարիչն ու արարածներն անզատելի բաժանումներ են եւ աղերսակից իրար: Տասներորդ՝ գոյը պատահականութիւններից բաժանուած է միայն պարզ գոյացութեան մէջ, իսկ պարզ գոյացութիւն միայն անեղ գոյն է բոլոր եղականների մէջ:

Իսկ [երկրորդ ստորոգութիւնը] **քանակն** [է]. «Մեծ է Տէրը եւ մեծ է նրա զօրութիւնը»: Սա ըստ քանակի ու չափի չի ասւում, այլ՝ ըստ ամենազօր կարողութեան, անչափելիութեան, անհասանելիութեան: Ու ոչ թէ պատահական թիւ է ասւում կամ տարրալուծուող խօսք, այլ մէկ եռեակ կամ եռեակ եւ մէկ, ըստ որում [նա] թուերի սկիզբ է, սակայն թիւ չէ եւ բաժանուած է այլ էակներից, իսկ Բանը՝ ներհիւսուած ու անբաժան:

Եւ **որակ** է կոչւում, իբրեւ բարի, լոյս, քաղցր, գեղեցիկ, որ ըստ մեր զգայական ընկալումների կոչւում են գոյն, համ եւ այլն:

Եւ որակը գոյացական յատկութիւն է, ինչպէս ասենք՝ բանականը, անմահը, անմարմինը եւ այլն:

Եւ [կիրառւում է] յարանունաբար, ինչպէս Աստուած աստուածութիւնից, հայրութիւնից հայր, արդար, ողորմած եւ այլն:

Իսկ [յաջորդ ստորոգութիւնը] կոչւում է **առնչական**, ոչ թէ ըստ այն բանի, որ յարաբերակցւում է մեզ իբրեւ մակագոյացութիւն, այլ իբրեւ գոյացութիւն կամ համեմատութիւն, ինչպէս ծնող-ծնուած, բխող-բխած, կամ արարածների, ծառաների Արարիչ ու Տէր:

[Միւս կարգը] ասում ենք՝ «**ուր**», [սակայն] ոչ թէ ըստ Աստծոյ տեղի, որովհետեւ տեղ ասւում է ըստ բովանդակութեան եռաբար: Նախ, ասւում է տեղ՝ ըստ մարմնականի, որովհետեւ իւրաքանչիւր մարմնական մասնիկ տեղ ունի: Երկրորդ՝ տեղ ասւում է իբրեւ սահման, որը պարունակում է առարկայի բնութիւնը: Երրորդ՝ տեղ ասւում է եւ մտքի հասնելը, ըստ որում իմաստութեամբ պարունակում է իմանալի առարկայի էութիւնը:

Սրանցից ամբողջովին ձերբազատուած է աստուածային էութիւնը, որ անմարմին է, անսահմանելի եւ անհասանելի մտքին: Եւ չունի պատահական տեղ՝ ասենք այստեղ եւ այնտեղ, որովհետեւ չի պարունակում որեւէ բան սահմանների մէջ եւ ոչ էլ բացազատուած է որեւէ տեղից, քանի որ նա ինքն է բոլորի տեղը: Բայց տեղ է ասւում, որովհետեւ Հայրը Որդու մէջ է, Որդին՝ Հօր մէջ եւ

Հոգին՝ Հօր եւ Որդու մէջ ու հակառակը, ինչպէս ասում է՝ «Հայրը իմ մէջ եւ ես՝ Հօր» (Յովհ. ԺԴ 10):

Եւ [միւս ստորոգութիւնը]՝ «**երբ**»-ը, չի ասւում Աստծոյ համար, որովհետեւ նա անժամանակ է, չի փոփոխւում եւ ասւում է յաւիտենական, ընդ որում՝ համամասն է ու կատարեալ, որ կարիք չունի սկզբի ու վախճանի, ինչպէս ժամանակը, ու միայն սկզբի, ինչպէս մշտնջենաւորը, այլ իբրեւ անսկիզբ եւ անվախճան, որի համար էլ կոչւում է յաւիտենական:

[Միւս ստորոգութիւնը]՝ **ունենալն** է: Իմաստութիւն ու միտք ունի եւ արարածների մէջ, եւ ունի յատկութիւն, որով զանազանւում է արարածներից:

Միւսը՝ «**կայ**»-ն, ոչ թէ լինելը կամ նստելը մարմնապէս, այլ անփոփոխ էութեամբ հաստատուելը, որովհետեւ չի փոփոխւում ո՛չ բնութեամբ, ո՛չ կամքով, ո՛չ տեղով: Բնութեամբ չի փոփոխւում, որովհետեւ անփոփոխ է: Կամքով չի փոխւում, որովհետեւ չի զղջում: Եւ տեղով էլ չի փոխւում, որովհետեւ անընդգրկելի է: Սակայն երբեմն հանգիստն ակնարկելով՝ ասւում է Աստծոյ նստելու կամ օգնութեան հասնելու մասին: «**Կայ**», ըստ որի՝ «Կայ Աստծոյ աջ կողմում» (Հռոմ. Ը 34) եւ «Նստեց Հօր փառքով» (Մտթ. ԻԵ 31):

Իսկ **առնելը**, որ յայտնի է արարածներից եւ նրանց հաստատ **պահելն** ըստ իր խօսքի զօրութեան, ինչպէս առաքեալն է ասում (տե՛ս Եբր. Ա 3): Եւ թէպէտ իրենց էութիւնը յետոյ են ստանում, սակայն [կան] Աստծոյ նախագաղափար տեսութեան մէջ եւ կային առաջ, քան իրենց լինելն էութեամբ եւ յետոյ եղան ըստ նոյն նմանութեան:

Դարձեալ՝ առնելը [վերաբերում] է ստեղծմանը, իսկ պահելը՝ նախախնամութեանը:

Եւ այլ է ոչնչից ստեղծելը եւ այլ է ստեղծուածներին խնամելը, ինչպէս ասացինք: Դարձեալ, առնելն ուղղուած է իրենից ուրիշներին, իսկ հաստատ պահելը՝ ուրիշներից իրեն, ըստ այդմ՝ «Այժմ նրան տեսնում ենք իբրեւ հայելու մէջ օրինակով, իսկ այնժամ՝ դէմ յանդիման» (Ա Կորնթ. ԺԳ 12)՝ ըստ պարգեւների խոստման:

Այսքանը համառօտ այս մասին:

ԷԱԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Թ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ իմաստասէրներն ասում են՝ անուրից ու անժամանակից երբեք ոչինչ չի լինում, իսկ մենք ասում ենք, թէ ոչնչից ենք ստեղծուած Աստծոյ արարածներս:

Պատասխան. Նախ, ասենք, որ Աստծոյ համար ամէն ինչ հնարաւոր է, որովհետեւ կարող է անել այն, ինչ մտածում է մարդկային միտքը եւ այն, ինչ չի մտածում: Իսկ իմաստասէրների ասածները հակառակ չեն եկեղեցուն, այլ համաձայն են: Նախ, որ ասում ենք, թէ աշխարհն առաջ, քան իր լինելը կար նրա նախագաղափար տեսութեան մէջ, ուրեմն անուր ու անժամանակ չէ:

Երկրորդ՝ ասում ենք ոչ էութիւնը, այսինքն՝ ոչինչը, երկու տեսակ է: Առա-

ջինը, որ միշտ ոչինչ է, որովհետեւ ոչ զօրութեամբ, ոչ էլ ներգործութեամբ գոյութիւն չունի, եւ այս էութիւնից ոչինչ չի լինում: Եւ կայ ոչ էութիւն, որ թէեւ չի ներգործում, սակայն զօրութեամբ գոյութիւն ունի, եւ այս ոչնչից եղան բոլոր արարածները. ուրեմն պարզ դարձաւ հարցիդ [պատասխանը]:

Իմացի՛ր նաեւ այս, որ երկու տեսակ են էութիւնները. մէկը մշտնջենաւոր ու մշտական ներգործութեամբ, ինչպէս Աստուած, հրեշտակները, արեգակը, հուրը: Եւ միւսը, որ ժամանակաւոր զօրութեամբ է, որ լինում, ապա ոչնչանում է ու միշտ փոփոխւում է, ինչպէս մարդը, ոչխարը, ծառը, որոնք մի ժամանակ չկային, այժմ կան եւ յետոյ չեն լինելու:

Եւ այսպիսի էութիւններն ունեն երկու կարգի զօրութիւն՝ լինելու եւ չլինելու, գոյութեան եւ չգոյութեան եւ այլն:

Իսկ մշտնջենաւոր էութիւնն ունի միայն մէկ զօրութիւն, որն իր մէջ է՝ ներգործութեամբ, ինչպէս հրի ջերմացնելը, արեգակի լոյսը, հրեշտակի անապականութիւնը:

ՀԱՐՑ ԱՍՏԾՈՅ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Ժ

Հարց. Աստծոյ ներգործելը բնութեա՞մբ է, թէ՞ կամքով:

Պատասխան. Այս կապակցութեամբ ասենք, որ նախ պէտք է իմանալ, թէ՝ ի՞նչ է բնութեամբը եւ ի՞նչ կամքովը:

Արդ, կամքովն [այն է], որ իմացութիւնը եւ կամքը առաջնորդում են գործին եւ հնարաւոր է անել եւ այս, եւ այն, որը կամենայ, ինչպէս մարդն է տնօրինում իր գործերը՝ անելու եւ չանելու: Իսկ բնութեամբ է, եթէ գործին առաջնորդում է բնութիւնը, ինչպէս հուրը, որ այրում է բնութեամբ, ինչպէս սարդը, որ հիւսում է բնութեամբ: Եւ քանի որ բնութիւնը անհրաժեշտութիւն է եւ նոյն կերպ է [դրսեւորւում] ամէն ինչում, ուստի բոլորն անհրաժեշտաբար նոյն կերպ են գործում:

Եւ այդ հարցիդ՝ [կամքով է ներգործում, թէ բնութեամբ], եթէ պատասխանենք, որ կամքով, կասեն ուրեմն մարդու նման փոփոխական է ներգործում: Իսկ եթէ պատասխանենք, թէ՝ բնութեամբ, [այդ դէպքում] կասեն՝ չհասկանալով ու հարկադրուած է ներգործում:

Եւ այսպէս են դատում, որովհետեւ երկակի են ըմբռնում մեզ: Իսկ [մենք] այսպէս ենք պատասխանում, որովհետեւ հակառակ էակների՝ Աստուած ներգործում է բնութեամբ ու կամքով: Քանի որ այն էակները, որոնք բանական են, միշտ չէ, որ ներգործում են, ինչպէս մարդը, իսկ ոմանք էլ, որ միշտ ներգործում են, բանական չեն, ինչպէս հուրը: Իսկ աստուածայինը սրանց հակառակ է, որովհետեւ բանական է ու միշտ ներգործում է, ինչպէս ասուեց:

Իսկ եթէ մէկն ասի, քանի որ ներգործութիւնները հետեւում են բնութեանը, ինչպէս հուրը, որ միշտ այրում է,

ջուրը՝ սառչում ու տաքանում է, ուրեմն ճշմարիտ է թւում Դամասկացու ասածը, որ Քրիստոսի մէջ կայ ներգործութիւն, ինչպէս եւ երկու բնութիւն: Այս կապակցութեամբ ասենք, թէ ամէն գործ չէ, որ հետեւում է բնութեանը, այլ երբեմն կամքին, ինչպէս մարդու [գործը], որովհետեւ Քրիստոսի կամքը մէկն է, մէկն է եւ ներգործութիւնը:

Եւ ինչպէս մէկն է մարդացած Բանի բնութիւնն՝ ըստ սուրբ Կիւրեղի, այդպէս էլ մէկն է ներգործութիւնը՝ ըստ սուրբ Գրիգոր Աստուածաբանի եւ Դիոնէսիոսի: Եւ ոչ մի տեղ երբեք ուղղահաւատների միտքը երկատուած չի տեսնում ո՛չ բնութիւնը, ո՛չ կամքը, ո՛չ գործը, որի մասին փոքր-ինչ հարցախոյզ արեցինք վերը:

ԷՈՒԹԵԱՆ, ԲՆՈՒԹԵԱՆ, ԱՆՁԻ ԵՒ ԱՆՀԱՏԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԱ

Հարց. Ի՞նչ են էութիւնը եւ բնութիւնը, անձը եւ գոյացութիւնը:

Պատասխան. Էութիւնն ու բնութիւնը մէկն են, ինչպէս մարդկութիւնը, սակայն երբեմն էութիւնը ցոյց է տալիս անձը, որն այստեղ է եւ այժմ գոյութիւն ունի, իսկ բնութիւնը՝ ոչ: Իսկ գոյացութիւնը բնութեան կրողը կամ բնութեանը ենթարկուողն է, ինչպէս մարդը:

Իսկ ենթադրութիւնը բացորոշ յատկութեամբ զանազանուողն ու չզանազանուողն է, ինչպէս [օրինակ]՝ ոմն մարդ: Իսկ անձը որոշակի յատկանիշներով հանդերձ, զանազանուածն է, ինչպէս [օրինակ] Պետրոս: Եւ անձ է ասւում միայն ի պատիւ բանական բնութեան: Եւ յայտնի է, որ եզակի եւ անհատ մարդը զանազանուած է իրեն բնորոշ որակով:

Հարց. Ինչպէ՞ս է սահմանւում անհատը:

Պատասխան. Քանակով ու որակով, որովհետեւ սրանցով է ճանաչւում անհատ գոյացութիւնը:

Հարց. Քանի՞ յատկանիշներ են բնութագրում մարմինը:

Պատասխան. Հինգ, այսինքն՝ քանակը, որ չափն է, որակը, որ գոյնն է, ձեւը, տեղը, սահմանազատուածութիւնը:

Հարց տեղի մասին. Ի՞նչ է տեղը:

Պատասխան. Տեղն ընդգրկում է մարմինը, որովհետեւ ամէն մի մարմին ներառուած է տեղի [մէջ], իսկ ամէն մի տեղ պատահականութեան կարգին է [պատկանում]: Եւ կայ տեղ, որ մարմնի բաղկացական մասն է, եւ կայ, որ պատահականութեան կարգից է: Բաղկացական է, որ մարմնի կազմում իբրեւ մաս է գոյանում ներսից ու դրսից՝ դէպի վեր, ներքեւ ու շրջանաձեւ, որովհետեւ իւրաքանչիւր մաս որոշակի դիրք ունի եւ կայացած է ամբողջի մէջ: Իսկ պատահականութեան կարգից է, եթէ, օրինակ, որեւէ մէկը նստած տեղը թողնի ու գնա այլ տեղ, ասենք՝ վերեւ կամ ներքեւ: Իսկ անմարմինը չունի մարմնական տեղ, ինչպէս Աստուած, հրեշտակները կամ Հոգին, որովհետեւ անչափելի են: Եւ պատահական տեղում չեն, թէեւ ի նշան պատուի՝ նրանց տեղն ասւում է երկինքը, բայց ոչ իբրեւ մարմնական տեղ: Եւ

իմանալու սրանց զանազանութիւնը. հոգին ընդգրկուած ու սահմանափակուած է մարմնում, սակայն ոչ պարփակուած, իսկ հրեշտակը սահմանափակուած չէ մարմնով եւ ոչ էլ պարփակուած, սակայն սահմանազատուած է: Մինչդեռ Աստուած ազատ է սրանցից, որովհետեւ սահմանափակուած ու պարփակուած չէ եւ ոչ էլ բռնադատուած մէկի կողմից՝ ո՛չ իմացմամբ, ո՛չ տեղով, ո՛չ մարմնով:

ԱՍՏԾՈՅ ՊԱՐԶՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԻՒԹԱԿԱՆ ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԲ

Հարց. Ինչպէ՞ս է Աստուած պարզ ու աննիւթ, եթէ նիւթն առաջ ստեղծեց, քանի ըստ կարգի՝ նիւթը նիւթից առաջանում, աննիւթն՝ աննիւթից:

Պատասխան. Աստուած աննիւթ եւ պարզ էութիւն է՝ ըստ երկու եղանակի: Նախ, որովհետեւ չունի քանակ, որակ, ձեւ եւ այլն, որոնք նիւթական յատկանիշներ են: Երկրորդ՝ վեր է զգայական ընկալումներից, այսինքն՝ տեսողական, շօշափողական եւ այլն, որոնք մարմնաւորներին են յատուկ: Ու թէեւ Աստուած աննիւթ է, սակայն նիւթն առաջնագոյն արարեց ոչ առանց կարգի՝ ըստ հետեւեալ օրինակի. նիւթը, որ մարմնական գոյացութիւն է, ունի մարմնին յատուկ յատկանիշներ, ինչպէս քանակը, որակը եւ այլն: Եւ գոյացութիւն ենք անուանում, որպէսզի տարբերուի ոչ գոյացութիւնից եւ յատկանիշներով զատուի անմարմին էութիւններից, ուստի մարմինը կազմուած է գոյացութեամբ ու յատկանիշներով, որոնք ինքնըստինքեան անմարմին են, այսինքն՝ գոյացութիւնը, քանակը, որակը եւ այլն: Եւ գոյացութիւն եմ ասում, որով տարբերւում է ոչ գոյից եւ որակապէս զանազանւում անմարմին էութիւններից, ուստի իբրեւ մարմին ձեւաւորւում է գոյացութեամբ եւ որակապէս: Արդ, սրանք ինքնին անմարմին են, այսինքն՝ գոյացութիւնը, քանակը, որակը եւ այլն: Եւ եթէ մէկը ասի՝ ինչի՞ց է յայտնի դա, քանզի սրանց բաժանման հիմքում անմարմին բանն է, եւ յայտնի է, որ մարմինը մարմնականն է բաժանում, անմարմինը՝ ոչ մարմնականը [ապա ասենք] մարմնով չեն բաժանւում սրանք, եթէ նոյնիսկ մանր փոշի իսկ լինեն՝ ունեն քանակ, որակ եւ այլն, որովհետեւ անզատելի բաժանումներ են գոյացութիւնն ու պատահականութիւնը:

Այսպիսով, եթէ անմարմին բանով են բաժանւում սրանք, ուրեմն անմարմին են ու բաժանուած: Եւ որովհետեւ իմացանք, որ սրանք անմարմին են, պարզ է, որ սրանց բաժանումը անջատում է նիւթը մարմնից, ուրեմն եւ սրանց մի տեղ մէկտեղուելը ծնում է նիւթական մարմին:

Այժմ պատասխանենք առարկութիւններին:

Որովհետեւ Աստուած աննիւթ ու պարզ էութիւն է եւ ոչնչից առաջ բերեց աննիւթ էութիւններ, այսինքն՝ գոյացութիւնը, քանակը, որակը եւ այլն, ու իր զօրութեամբ ժողովելով՝ կազմեց մարմնական նիւթ, ուստի տարրերը ու տար-

ական մարմինները խառնուելով՝ միաւորուեցին եւ առաջացան միեւնոյն նիւթից:

Եւ սրանք ունեն բազմաթիւ զարմանալի դրսեւորումներ: Նախ, սրանք ինքնընստինքեան անմարմին են, այսինքն՝ քանակը, որակը եւ այլն, ու չեն տեսնւում անմարմին էութիւններում, ասենք, հրեշտակների կամ հոգիների մէջ, որովհետեւ վերջիններս չունեն ձեւ, որակ, քանակ եւ այլն:

Երկրորդ՝ մարմնական իր են ու էական են դառնում մարմնում, սակայն, մարմին չեն, այլ՝ անմարմին էութիւն, ինչպէս ասացինք:

Երրորդ՝ սրանց միաւորուելով՝ կազմւում է մարմնական էութիւն, իսկ տարրալուծուելով՝ ոչնչանում է մարմինը, ինչպէս տունը, որ կառուցւում է փայտի ու քարի համադրումից, եւ սրանց քանդուելով՝ կորչում է: Կամ ինչպէս հոգու ու մարմնի գումարից լինում է մարդ, եւ սրանց տարանջատումից՝ ոչնչանում է, այդպէս էլ սա իմացի՛ր:

Չորրորդ՝ սրանցից իւրաքանչիւրն առանձին սահմանագիծ ու բնութիւն ունի ու չեն միաւորւում միմեանց ու ոչ էլ մարմնում, այսինքն՝ քանակը, որակը, կշիռը եւ այլն, որովհետեւ քանակը որակ չէ ու չի ասւում, ու մարմնի ծանրութիւն եւ կարծրութիւն չէ:

Հինգերորդ՝ տարբեր բնոյթ ունենալով՝ սրանք խառնւում են մի էութեան մէջ եւ նիւթի նոյն բնութեամբ են հանդէս գալիս՝ չխառնուելով ու չփոփոխուելով իրենց բնութեամբ, ինչպէս որ հոգին ու մարմինն են միաւորւում մի բնութեան, մի դէմքի մէջ ու չեն շփոթւում:

Այսպէս էլ հասկացի՛ր այլեւայլ բնութիւնների մէջ միաւորուած Բանի մարդեղութիւնը՝ անձնաւորուած մէկ էութեան եւ մէկ դէմքի մէջ, ուր շփոթուած չեն բնութիւնների յատկութիւնները, որի պատճառով էլ խոստովանում ենք սուրբ հայրերի [ասածը]՝ մարդացեալ Բանն Աստծոյ մի բնութեամբ միաւորուելու մասին:

Իսկ եթէ կամենում ես բնութիւնների բաժանումը վկայակոչել, ո՛վ երկաբնակ, մի՛ ասա երկու բնութիւն, այլ՝ երեք, այսինքն՝ մարմնի, հոգու եւ բանի բնութիւն: Եւ ոչ միայն այս, այլ ըստ մարմնի չորս տարրերի չորս բնութիւն ունենալու՝ տաք, սառը, չոր, խոնաւ, ըստ դրա ասա, թէ՝ Քրիստոս եօթն բնութիւն ունի, առաւել եւս, որ իւրաքանչիւր տարր երկու որակ ունի՝ գոյացական ու պատահական, ըստ այդմ պէտք է՝ Քրիստոսի բնութիւնը տասնմէկ ասես: Եւ եթէ նկատի առնես, որ այլ է մարմնի բնութիւնը, այլ՝ ոսկորինը, այլ՝ ջլինը, երակինը, մաշկինը, մազինը, մաղձինը, ըստ այդմ՝ Քրիստոսի բազում բնութիւններ պէտք է ասես:

Ո՜վ մեծ աղէտ ու վշտալի տարակուսանք, որ այսպիսիները ուրանում են Տիրոջ միաւորութիւնը, ինչպէս գրում է առաքեալը՝ «Մարդկանց արագահաս կործանման են տանում» (Բ Պետ. Բ 1), որովհետեւ ուղղահաւատ ուսուցիչները Քրիստոսին խոստովանում են բաժանումից միաւորութեան եկած, իսկ սրանք՝ միաւորութիւնից բաժանման

եկած են համարում՝ պատճառաբանելով, որ եթէ միաւորեալ ենք ասում բնութիւնը՝ շփոթում կլինի: Այս դէպքում, ինչո՞ւ գոյացութիւնը, որակը, քանակը եւ այլն, եղական լինելով, չեն շփոթւում՝ խառնուելով մի բնութեան մէջ: Մինչդեռ Աստծոյ անեղ բնութիւնը զրպարտելով՝ շփոթութիւն ես աղաղակում:

Հակացի՛ր ասածս եւ այլ բաները եւս, որ սուր ես մտքով ու բաժանասէր. գոյացութիւնը, որ սկիզբն է ամէն ինչի ու սկզբնական սեռն է, նրանից են զուգաբաժանուել մարմինը, շնչաւորը, զգայականը, կենդանին, բանականը, մարդը. արդեօք տարբեր չե՞ն սրանց բնութիւնները, որ մի տեղ ժողովուելով՝ առաջ են բերում մի անհատականութիւն, [օրինակ] Պետրոսին՝ անշփոթ միաւորութեամբ: Իսկ որ անշփոթ են սրանց յատկանիշները, ակնյայտ է, ուստի ասում ենք՝ Պետրոսը մարդ է, բանական, կենդանի, զգայական, շնչաւոր, մարմին ու գոյացութիւն: Եւ սրանք մէկտեղուելով կազմում են Պետրոսի մի բնութիւնը: Եւ չենք ասում, թէ՝ Պետրոսը զանազան բնութիւն ունի, նրա մէջ եղած այլեւայլութեան պատճառով, այլ մէկն է Պետրոսը իբրեւ անհատ անձ եւ մէկն է Պետրոսի բնութիւնն ըստ Բանի միաւորութեան. ահա սրանք էլ օրինակները, որոնք [հաստատում են] ճշմարտութիւնը:

Այս մասին այսքանը:

ԳԼՈՒԽ ԺԱ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՀԱՐՑՈՒՄ ԱՐԱՐԱԾՈՑ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԻՑ Պրակ ԺԳ

Հարց. Ինչո՞ւ Աստուած գրով խօսեց մեզ հետ, ինչպէս Մովսէսի եւ այլոց:

Պատասխան. Սա սովոր են անել նաեւ մարդիկ. գալով մերձաւորների ու սիրելիների մօտ՝ խօսում են անմիջաբար, իսկ հեռաւորների կամ թշնամիների հետ՝ գրով կամ միջնորդով: Նոյն կերպ եւ Աստուած արժանաւորների յետ խօսեց դէմ յանդիման, ինչպէս Ադամի, Նոյի, Աբրահամի, Մովսէսի, իսկ յանցաւորների հետ գրով է խօսում[223]:

Եւ սա բազմաթիւ պատճառներով: Նախ՝ այն հեռաւորութեան պատճառով, որ մեղքի հետեւանքով հեռացանք Աստծուց: Երկրորդ՝ ատելութեան պատճառով, որ սէրը կորցրեցինք: Երրորդ՝ մեր տկարութեան ու մոռացութեան պատճառով: Չորրորդ՝ որովհետեւ գրով, որ մարմնական է, հասնում ենք անմարմին խօսքին: Հինգերորդ՝ որովհետեւ ինչպէս յետոյ պէտք է Աստծոյ Բանը դառնար մարմին, այդպէս էլ գիրն իր մէջ ունի խօսքը եւ խօսում է մեզ հետ:

Պէտք է իմանալ նաեւ, որ գրերի գաղտնի իմաստները փակուած են եօթը դռնով: Նախ՝ գիրը գծուածն է: Երկրորդ՝ տառը գրի անուանումն է, ինչպէս ասում ենք՝ «այբ»: Երրորդ՝ հեգը՝ ձայնաւորից ու բաղաձայնից է: Չորրորդ՝ վանկ կամ փաղառութիւն: Հինգերորդ՝ բառը: Վեցերորդ՝ ասուած միտքը հասկանալի իմաստով: Եօթներորդ՝ ամենախոր ներ-

քին իմաստները եւ բարձրագոյն ճանաչումը, որոնց միայն իմացումն է ընկալում եւ արտաբերում:

Իսկ թէ ինչո՞ւ մարդը կարիք զգաց այբուբենի, պատասխանել ենք «Հրեշտակների մասին» ԺԶ գլխում:

ԱՅԲԻ ԳՈՎԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՆ Է

Նախ՝ որ գիր է:

Երկրորդ՝ ձայնաւոր է:

Երրորդ՝ առաջինն է:

Չորրորդ՝ ձեւաւորուած է:

Հինգերորդ՝ անուանումը «այբ» է, որի բացատրութիւնը նոյնպէս իմացի՛ր: Նախ, որ իբրեւ գիր գովաբանելի է երեք կերպ:

Առաջին՝ որ ամէն մի գիր մտքի գործիք է եւ ունի իմաստ ու իր մէջ՝ ծածկուած խօսք: Երկրորդ՝ գրչի միջոցով մտնում է բառի մէջ ու առանց լեզուի խօսում. տեսնում ենք աչքով, լսում ականջով եւ ուսուցանում է միտքը: Երրորդ՝ ընթանում է առանց ոտքի, առանց թեւի թռչում, առանց լեզուի խօսում, առանց ձեռքի գործում: Դառնում է արբանեակ ու մեկնում թագաւորների խորհուրդը:

Եւ այս յատկանիշները այբն ունի իբրեւ գիր:

Երկրորդ՝ ձայնաւոր է: Ապա հնչեցնում է ձայնը: Երրորդ՝ ծնունդ է տալիս մտքին: Չորրորդ՝ ներառում է, այսինքն՝ ժողովում ու արտաբերում է միտքը:

Ա՛րդ, ձայնաւորը հնչում է ինքնուրոյն եւ ծնունդ է տալիս մտքին՝ հարադրուելով բաղաձայնի հետ, ինչպէս նիւթից ու տեսակից մարմինն է առաջանում, կամ հոգուց ու մարմնից՝ կենդանութիւնը, արուից ու էգից՝ ծնուածը. այսպէս էլ ձայնաւորից ու անձայնից՝ միտքը: Եւ ուրեմն, ձայնաւորը ձայնն է, տեսակը, հոգին, արուն, որ ժողովում ու տարանջատում է միտքը, այսինքն՝ հեգը, բառը, խօսքը, իմաստը:

Եւ այս բոլորն ունի այբը, որ ձայնաւոր է միւս ձայնաւորների հետ:

Երրորդ՝ որովհետեւ առաջինն է: Առաջինն է ու՝ հայր, ծնող բոլոր ձայնաւոր ու բաղաձայն գրերի: Երկրորդ, առաջինն է ու սկիզբը թուերի, ինչպէս մէկ թիւը բազմանում է ու խառնուելով միւսներին՝ կազմում տասը, հարիւր, հազար, բիւր եւ սակայն իր մէկ լինելուց չի դադարում: Նոյն կերպ եւ այբը, խառնուելով կոշտ եւ փափուկ, կարճ եւ երկար հնչիւններին՝ միանում է նրանց, սակայն իր բնութիւնը չի կորցնում ու չի փոփոխւում: Այլեւ իբրեւ թիւ կնքում է թագաւորների ունեցուածքը ու թոյլ չի տալիս, որ ծառաները գողանան, յայտնի է դարձնում [գողօնը] եւ յանդիմանում:

Չորրորդ՝ ունի ձեւ, այսինքն՝ երեք ստեղն՝ միաւորուած մէկով, որ նախ [ցոյց է տալիս] աստուածութիւնը՝ երեք անձով մի բնութեան մէջ: Երկրորդ՝ առաջին ստեղնը Հայրն է, որ ոչ մէկից չէ, երկրորդը Որդին է, որ ծնունդ է Հօրից, վերջինը Հոգու բխումն է Հօրից ու ելնելը Որդուց, որովհետեւ երեւում է Որդու միջոցով՝ հաւասար ու շիտակ աստուածութեամբ ու արարչութեամբ: Երրորդ՝ ներքեւում

կցուած է, իսկ վերեւից՝ բացատով, որովհետեւ նախախնամութեամբ հաղորդ են արարածներին եւ իր ճշմարիտ բնութեամբ զատուած եւ որոշուած՝ վերացած անհասանելի բարձունքներ:

Հինգերորդ՝ կոչւում է «այբ», որ նշանակում է «հայր»: Նախ, որովհետեւ ծնողն ու սկիզբն է բոլոր գրերի եւ իմաստների, ինչպէս Հայր Աստուած բոլորի համար:

Երկրորդ՝ երեք գծերից է կազմուած, ինչպէս մարդը՝ հոգուց, մարմնից, մտքից: Երրորդ՝ [անուանման տառերը] ձայնաւոր, կիսաձայն եւ բաղաձայն են, ինչպէս բանականը, զգայականը, տնկականը, կամ՝ միտքը, ցասումը, ցանկութիւնը:

Այլեւ, ի յաւելումն սրանց՝ վեցերորդ, որովհետեւ մտնում է բազում խօսքերի մէջ եւ աւելի յաճախ է կրկնւում, քան միւս ձայնաւորները եւ պարզ է, որ աւելի շատ իմաստներ է ծնում: Ու սրանով են ճանաչում Աստծուն ու յուսում արքայութեան մասին ու երկնչում դատաստանից:

Եւ դարձեալ՝ իմաստութեամբ տիրում ենք ծովերին ու ցամաքներին: Հոգու եւ մարմնի բազմաթիւ բարութիւններ նրանից են ծնւում:

Դարձեալ՝ ինչպէս ասում են իմաստունները, բոլոր պարգեւներից առաւել մարդկանց վրայ իջածը Աստծոյ իմաստութիւնն է, այսինքն՝ կեանքից, առողջութիւնից, հարստութիւնից եւ այլնից առաւել, նախ, որովհետեւ դրանք իմաստութեամբ կարող ենք ձեռք բերել, սակայն դրանցով իմաստութիւն՝ ոչ: Եւ դարձեալ՝ դրանք ունեն իրենց հակառակ երեւոյթները, ինչպէս հարստութեանը՝ աղքատութիւնը, առողջութեանը՝ հիւանդութիւնը, կեանքին՝ մահը: Իսկ իմաստութեան հակառակը չկայ, որովհետեւ եթէ իմաստունը հարստանայ, գիտէ ինչպէս կարգաւորի, եթէ առողջ է, գիտէ գոհանալ Աստծուց, եթէ հիւանդանում է, փառք է տալիս Աստծուն Յոբի նման: Եթէ ապրում է, արդարութիւնն է աւելացնում, եթէ մեռնում է, առանց խղճի խայթի է գնում աշխարհից:

Եւ այս բոլոր իմաստութիւնների մայրն ու սկիզբը Այբն է:

ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՐԱՐԱԾ ԿՈՉՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԴ

Հարց. Ինչո՞ւ Մովսէսի առաջին գիրքը կոչւում է «Ծննդոց եւ արարածոց»:

Պատասխան. Նախ սրանք յարաբերակից են, այսինքն՝ ծնունդը ցոյց է տալիս ծնողին, արարածը՝ Արարչին: Երկրորդ՝ որովհետեւ Աստծոյ կամքի ծնունդ ենք ու արարուած խօսքով: Երրորդ՝ արարած ասելով մի՛ կարծիր, թէ նրանից օտար ենք արարածներս, եւ ծնունդ է անուանում, ու երբ ծնունդ լսես, մի՛ կարծիր, թէ Աստծոյ էութիւնից եղածներիս նորից է արարում: Չորրորդ՝ որովհետեւ ծնւում ենք Աստծոյ բարի կամքից, նախ՝ նրա իմացութեան մէջ, ապա գոյանում ենք իրապէս եւ գոյացութեամբ՝ իւրաքանչիւրն ըստ տեսակի: Հինգերորդ՝ Քրիստոս եւս, որ

եղաւ մեր երկրորդ կտակարանն ու օրէնքը, կոչւում է ծնունդ ու արարած: Ծնունդ, որովհետեւ ծնունդ է Հօր բնութիւնից առաջ, քան յաւիտենականութիւնը եւ Արարած եղաւ, այսինքն՝ խառնուեց ու միաւորուեց մարդկային բնութեանը:

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԵ

Հարց. Ո՞րն է աշխարհի ստեղծման պատճառը:

Պատասխան. Աստծոյ բարութիւնը, որպէսզի լինեն [էութիւններ], որոնց հաղորդի իր բարութիւնը:

Հարց. Ինչո՞ւ մի աշխարհ ստեղծեց եւ ոչ երկու կամ աւելի:

Պատասխան. Նախ, ասենք, որ մէկը չէ, այլ երկուսը, այսինքն՝ ներկան եւ հանդերձեալը: Եւ ուրիշ աշխարհներ եւս, որովհետեւ աշխարհ են կոչւում աշխարհարարը, աշխարհը եւ մարդը՝ ըստ Հոմերոնի:

Աստուած իմանալի աշխարհն է եւ աշխարհը՝ զգայական, եւ մարդն էլ իմանալի ու զգայական աշխարհ է[224]:

Երկրորդ՝ պատասխանենք, որ յիրաւի, ինչպէս մէկն է Աստուած, այդպէս էլ մէկն է աշխարհը: Իսկ ուրիշ աշխարհը կամ այսպիսինը պէտք է լինէր, կամ էլ՝ այլ: Արդ, եթէ այսպիսինը լինէր, ուրեմն աւելորդ կլինէր, մինչդեռ Աստծոյ գործերում աւելորդ ոչինչ չկայ: Իսկ ուրիշ չէր կարող լինել, որովհետեւ այս [աշխարհն] ամէն ինչով կատարեալ է ու պակաս ոչինչ չունի: Ապա ուրեմն անհրաժեշտ էր, որ մի աշխարհ լինէր եւ ոչ բազում:

Հարց. Աշխարհը ինչո՞ւ չունի զգայարաններ, այսինքն՝ տեսողութիւն, լսողութիւն եւ այլն:

Պատասխան. Զգայարանների գործը ներսից արտաքինը զգալն է, ինչպէս աչքով՝ գոյնը, ականջով՝ ձայնը եւ այլն: Ա՛րդ, ամէն ինչ, ինչը, որ զգալի է, սրա ներսում է՝ ձայնը, գոյնը, հոտը, համը, ծանրը, թեթեւը, եւ ոչինչ սրանից դուրս չէ, ուստի եւ զգայարանների կարիք չունի:

Հարց. Առաջ, քան աշխարհի լինելը, Աստուած ո՞ւր էր:

Պատասխան. Այս բանը հարցրեց Սաբայի թագուհին Աստծուց իմաստնացած Սողոմոնից, թէ՝ «Ամէնարար Աստուած քանի դեռ չէր արարել ամէն ինչ, ինքն ո՞ւր էր, այժմ ո՞ւր է եւ որտե՞ղ է լինելու վախճանին»: Պատասխանեց նրան, թէ՝ «Աստուած նախքան աշխարհի լինելն ինքն իր հետ էր, այժմ էլ ինքն իր հետ է եւ վախճանին էլ ինքն իր հետ է լինելու»[225]:

Եւ թէպէտ այսպէս ասուեց, սակայն իմանալի երկնքում Աստուած գոյացաբար է եւ կարողութեամբ՝ ամենուրէք:

Եւ երեքն են երկինքները. առաջինը՝ մարմնական, որ տեսնում ենք, երկրորդը՝ հոգեւոր, որտեղ հոգեւոր գոյացութիւններն են, այսինքն՝ հրեշտակների բնակատեղին. երրորդը՝ իմանալի, որտեղ դէմ յանդիման Սուրբ Երրորդութիւնն է նրանցից տեսնւում:

Հարց. Այդ դէպքում ինչո՞ւ Մաղաքիայի միջոցով ասաց, թէ՝ «Երկինքն ու

երկիրը ես եմ լցնում», եւ Եսայու միջոցով՝ «Երկինքը իմ աթոռն է, իսկ երկիրը՝ ոտքերիս պատուանդանը» (Ես. ՀԶ 1):

Պատասխան. Այսպէս է ասում, որովհետեւ բնութեամբ անպարփակելի է, ու տեղով չի ընդգրկւում, որովհետեւ ինքն է ամէն ինչ պարունակում, որտեղ մենք կանք ու շարժւում ենք: Եւ ինչպէս իմաստունն է ասում՝ Աստուած ամենուրէք է եւ ոչ մի տեղ. ոչ որեւէ տեղում եւ ոչ էլ որեւէ տեղից դուրս. այլ՝ սրանից վեր, սրա տակ, սրա մէջ, սրանից դուրս, այլապէս սրանք ոչ Աստծոյ մարմին, ոչ էլ ոտք [կլինէին]:

Հարց. Հարց տամ եւ այս մասին. որտե՞ղ եւ ե՞րբ, այսինքն՝ աշխարհը գոյութիւն ունի՞ տարածութեան ու ժամանակի մէջ: Եթէ՝ ոչ, ուրեմն անուր եւ անժամանակ է աշխարհը ու յաւէտակից Աստծուն: Իսկ եթէ՝ այո, ասա՛, թէ եր՞բ եւ որտե՞ղ եղաւ:

Պատասխան. Կարծում եմ, որ քեզ համար էլ խրթին է թւում հարցը, սակայն լսի՛ր ուշիմութեամբ:

Աշխարհը անուր եւ անժամանակ չէ, ինչպէս Աստուած, սակայն մարմնական տեղ էլ չունի ու ոչ էլ ժամանակի երեք մասերը, այսինքն՝ անցեալը, ներկան ու ապառնին: Ուստի պարզ է, թէ ինչու էր Մովսէսն ասում՝ «Ի սկզբանէ Աստուած արարեց երկինքն ու երկիրը» (Ծննդ. Ա 1): Արդ, ժամանակի սկիզբը ժամանակը չէ, ուստի այդ պատճառով էլ չի ասւում, թէ երբ եղաւ[226]: Եւ անժամանակ էլ չէ, որովհետեւ ժամանակի սկզբում եղաւ: Եւ տարածութեան մէջ չի ասւում, որովհետեւ յայտնի է, որ տեղը լինում է վերին, ներքին, միջին, որոնք աշխարհից դուրս չեն դիտւում: Ու [միաժամանակ] տարածութեան մէջ է, որովհետեւ հիմնադրուեց ուրիշի կողմից, որի մասին եւ հարցնում է Յոբը. «Ինչի՞ վրայ հաստատուեցին դրա օղակները» (Յոբ ԼԸ 6): Ու պատասխանում են Դաւիթն ու Եսային. «Նրա ձեռքում է ողջ տիեզերքը» (Սղմ. ՂԴ 4), որ ունի երկրի շրջանակը երկաթեայ պատկերի նման, ինչպէս կրետացիների Կրիտէս թագաւորը տաճարի մէջ կախեց ադամանդեայ քարն այնպէս, որ ամէն կողմից բռնուած էր: Այսպէս էլ աշխարհը, «որ ըստ առաքեալի հաստատ է պահում իր խօսքի զօրութեամբ»[227] (Եբր. Ա 3):

ՏԱՐՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ
Պրակ ԺԶ

Հարց. Ինչո՞ւ են տարրերը չորսը:

Պատասխան. Տարրերը չորսն են, այսինքն՝ հողը, ջուրը, օդը, հուրը, որովհետեւ առանց հողի շօշափել չի լինի, առանց ջրի՝ պահել ու լուծել, առանց օդի՝ շարժել, առանց հրի՝ երեւալ: Եւ տարրերն այսպէս են տեղադրուած. հողը, որ աւելի ծանր է, քան ջուրը, ներքեւում է. ջուրը [ծանր է], քան օդը. օդը ծանր է, քան հուրը, որովհետեւ ամենապակաս խոնաւութիւնն ունի:

Եւ իւրաքանչիւր տարր երկու բնոյթ ունի՝ գոյացական ու պատահական, որովհետեւ հողը սառն է ու չոր, ջուրը՝ խոնաւ ու սառը, օդը՝ տաք ու խոնաւ,

հուրը՝ չոր ու տաք: Եւ այսպէս, տաքն ու սառը, չորն ու խոնաւը անհաշտելի թշնամիներ են, որոնք սակայն ներհակութիւններով միաւորուած են, եւ այդ կերպ էլ անքակտելի սիրելիներ են, ինչպէս օրինակ, եթէ չորս մարդ երկուական ձեռքերով միմեանց բռնեն: Քանզի ջուրը սառնութեամբ միաւորուած է հողին, իսկ խոնաւութեամբ՝ օդին: Եւ օդը ջերմութեամբ հրի հետ է, հուրը՝ չորութեամբ երկրի:

Ահա այսպէս, նրանց խառնուրդից գոյանում ու առաջ են գալիս մարմիններ:

Եւ տարրերի մասին աւելի մանրամասն կարող ես գտնել Նիւսացու «Մարդու բնութեան մասին» գրքում[228]:

Հարց. Ինչո՞ւ են իմաստասէրները տարրերը անուանում անապական ու անվախճան:

Պատասխան. Հինգ պատճառով:

Նախ, երկնային մարմինների շարժման պատճառով, որ միշտ նոյն կերպ ու անդադար շարժւում են՝ առաջ բերելով օրը, ամիսը, եղանակը, տարին՝ ճշգրտօրէն՝ առանց աւելացնելու կամ պակասեցնելու, եւ [ապահովում] էութիւնների մշտական ու անխափան գոյութիւնը, ինչպէս ասւում է Աշխարհի գրքի մէջ[229]:

Երկրորդ, որովհետեւ տարրերի հաւասարութիւնն ու միաւորութիւնն անխափան է, ընդ որում ներհակութեամբ հանդերձ՝ հաւասար հակադիր [երեւոյթներ են]՝ մէկը միւսով միաբան, այսինքն անհաշտելի թշնամիներ ու անքակտելի սիրելիներ:

Երրորդ՝ լինելութիւնն ու քայքայումն անդադար են, ըստ որում՝ քայքայումն սկիզբն է այլ էակների լինելութեան եւ նրանց քայքայումը լրացնում է տարրերի սպառումը: Եւ այսպիսի շրջապտոյտով մնում են անվախճան:

Չորրորդ՝ մասը ոչնչանում է, իսկ ամբողջը՝ մնում, ինչպէս որ իւրաքանչիւր անհատ մարդ ու ձի մեռնում են, սակայն ընդհանուրը մնում է. այսպէս էլ տարրերը: Ինչպէս ասում է առակը՝ «Ազգ է գալիս, ազգ գնում, իսկ երկիրը յաւիտեան կայ» (Ժող. Ա 4):

Հինգերորդ՝ անծերանալի է երկիրը, ըստ որում երկրաշարժով երկիրը ծերբազատւում է ներքին պատահմունքներից, իսկ հեղեղներով ողողում ու սրբւում է արտաքին պատահմունքներից:

Այս կերպ բոլոր տարրերը չեն ծերանում ու չեն թուլանում:

ԵՐԿՐԻ ԱՆՇԱՐԺ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ժէ

Հարց. Ինչպէ՞ս է երկիրը հաստատուած երկնքի մէջտեղում՝ եւ անշարժ է մնում:

Պատասխան. Նախ այսպէս են ասում. տարրերը գնդի նման կպած են միմեանց ու ամրացած են, որովհետեւ գնդաձեւ հուրը պատել է օդը, եւ օդը՝ ջուրը, եւ ջրի մէջ հաստատուած է երկիրը, ինչպէս հաւի ձուն. դեղնուցը ջրի մէջ է, եւ թաղանթն էլ կեղեւին է ամրացած:

Երկրորդ՝ օդը հողմով բաժանում է հուրը երկու կիսագնդերի՝ վերեւի ու

ներքեւի. ներքեւի հողմով երկիրը վերեւ է ձգւում, վերին հողմով՝ ներքեւ, եւ այսպէս երկիրը մէջտեղում մնում է հաստատուն:

Երրորդ՝ երկրի ծանրութիւնը ներքեւ է քաշում, իսկ հողմը վեր է ձգում:

Չորրորդ՝ երկիրը իր գնդաձեւութեամբ հաւասարակշռուած է ու բոլոր կողմերից ծանրութիւնը մէջտեղն է ժողովում, եւ այսպէս ինքն իրենով էլ հաստատուն է:

Հինգերորդ՝ երկինքը թեթեւ է, ուստի վեր է քաշում, իսկ ծանր երկիրը՝ ներքեւ, ու այսպէս մէկը միւսին ձգում են եւ հաստատուն պահում[230]:

Վեցերորդ՝ Աստուած իր խօսքով ամէն ինչ կրում է իր զօրութեան մէջ, ըստ այդմ՝ «Հաստատեց երկիրն իր զօրութեամբ, որ յաւիտեան չսասանուի» (Սղմ. ՃԺԱ 6):

ԵՐԿՆՔԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչն է երկնքի շարժուելու պատճառը:

Պատասխան. Երկուսն են. բնական ու բարոյական: Բնականը, նախ այսպէս. երկնքի շարժուելու պատճառը նրա մէջ մտած ու նրան երկու՝ ներքին ու վերին կիսագնդերի բաժանած օդն է[231]: Ապա, երկնքի շարժուելու պատճառն իբրեւ կէտ նրա մէջտեղում է, որ անշարժ երկինքն է, ինչպէս կարկինի կէտն է անշարժ, որի շուրջ գծւում է շրջանագիծը:

Իսկ Արիստոտէլն ասում է, որ երկու բեւեռներն են երկնքի շարժուելու պատճառը, ինչպէս սայլի սռնուն ամրացուած անիւները[232]:

Սա բնական պատճառը:

Իսկ բարոյականը սա է. երկինքը անապական է բնութեամբ, որին Աստուած շարժեց, մինչդեռ երկիրը անշարժ է տեղով, եւ թոյլ տուեց, որ սա մակերեւոյթով ապականուի, որպէսզի մարդիկ, [այդ] տեսնելով՝ հասկանան, որ դրանք արարած ու ծառայ են, որպէսզի աստուածներ չկարծեն դրանց ու չմոլորուեն, ինչպէս ասում է Նիւսացին «Մարդու կազմութեան մասին» գրքում[233]:

ԵՐԿՆՔԻ ՁԵՒԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԸ

Հարց. Երկինքը ի՞նչ ձեւ ունի:

Պատասխան. Վարդապետներն ասում են, թէ ամէն մի երկինք պէտք է շրջանաձեւ լինի:

Նախ՝ որ երկինքը պարզ մարմին է ու կազմուած չէ չորս տարրերից, այլ հինգերորդ էութիւնն է: Կլոր ձեւը բոլոր ձեւերի մէջ ամենապարզն է, որովհետեւ եռանկիւնին երեք գծից է բաղկացած, քառանկիւնին՝ չորս, եւ այդպէս՝ միւսները: Իսկ շրջանը միայն մի գծից է բաղկացած, հետեւաբար, պարզ էութիւնը պէտք է պարզ ձեւ ունենայ, որը շրջանն է:

Երկրորդ՝ շրջանն ընդգրկող ձեւ է, ու երկինքն էլ ամէն ինչ պարունակում է իր ծոցում, հետեւաբար անհրաժեշտ է, որ երկինքը շրջանաձեւ լինի: Երրորդ՝ շարժման մէջ շրջանը սրընթաց է, եւ երկինքն էլ իր շարժմամբ սրընթաց է, որն իր պտոյտի ժամանակ երկիրը շօշափում է իբրեւ մի կէտ: Ուրեմն շրջանի ձեւը

երկնքի համար ամենայարմարն է: Չորրորդ՝ երկինքը կատարեալ մարմին է, որովհետեւ ազդում է ներքեւի բոլոր մարմինների վրայ՝ պահպանելով նրանց:

Շրջանի ձեւը բոլոր ձեւերի մէջ ամենակատարեալն է[234]: Նախ, որովհետեւ չի կարող նրան աւելացուել կամ նրանից պակասեցուել: Երկրորդ՝ որովհետեւ չի երեւում նրա սկիզբն ու վերջը: Երրորդ՝ վեց թիւը բոլոր թուերի մէջ առաջին կատարեալ թիւն է, եւ վեց թուանշանն էլ շրջանաձեւ է, որովհետեւ, որքան որ հեռաւորութիւն կայ նրա միջին կէտից մինչեւ շրջանագիծը, վեց անգամ այդքան է նրա ողջ երկարութիւնը: Հետեւաբար, շրջանը, որ կատարեալ ձեւ է, վայել է երկնային կատարեալ մարմիններին:

Հինգերորդ՝ եթէ երկինքը շրջանաձեւ չլինէր, այլ քառանկիւն կամ եռանկիւն, անկիւնները շարժուելու դէպքում որտեղից որ շարժուէին՝ կմնային առանց տեղի, իսկ նրանց անկիւնների տեղը՝ առանց մարմնի: Վեցերորդ՝ եթէ երկինքը շրջանաձեւ չլինէր, այդ դէպքում, երբ արեգակն ու աստղերը անցնէին երկնքով, շատ մեծ կերեւային, որովհետեւ մեզնից մինչեւ երկնքի միջին կէտը ուղիղ գիծ է, իսկ արեւելքից դէպի մեզ՝ շեղակի, եւ ուղիղ գիծը կարճ է, քան շեղակին: Հետեւաբար, աստղը աւելի մեծ չի երեւում, երբ միջին կէտում է, քան երբ արեւելքում է կամ՝ արեւմուտքում:

Հարց. Քանի՞սն են երկինքները:

Պատասխան. Բազմաթիւ, ինչպէս ասում է մարգարէն՝ «Երկինքների երկինք» (Սղմ. ճԺԳ 16), իսկ առաքեալը Քրիստոսի մասին ասում է. «Բարձրացաւ աւելի վեր, քան բոլոր երկինքները» (Եփես. Դ 10): Արդ, երկինքը բաժանւում է երեքի, այսինքն՝ բնական, յատկական եւ նմանական:

Բնական երկինքները տասն են: Նախ՝ հրեղէն երկինքը, երկրորդը՝ ջրեղէնը, երրորդը՝ հաստատութիւնը: [Մնացած] եօթ երկինքները մոլորակների գօտիներն են, որ են՝ Զոհալը, Երեւակը, Հրատը, Արեգակը, Լուսնթագը, Փայլածուն, Լուսինը:

Յատկական երկինքները հինգն են: Առաջինը տարրեղէն հրի վերին մասն է, որ կոչւում է հրեղէն երկինք, որ համանուն է առաջին երկնքին: Սակայն սա հրեղէն է կոչւում հրից լինելու պատճառով, իսկ նա կոչւում էր հրեղէն հրի նման լինելու պատճառով: Երկրորդը հրի ներքեւի մասն է, որ կոչւում է Օլիմպիական երկինք՝ Օլիմպիոս լեռանը մերձ լինելու պատճառով: Երրորդը օդի վերին մասն է, որ կոչւում է եթերային երկինք, որովհետեւ մերձ է տարրեղէն հրին ու վառւում է նրանից, որ աստղերի թռիչք ենք կոչում: Չորրորդը օդի ներքեւի մասն է եւ կոչւում է օդեղէն երկինք. ինչպէս ասում է Սուրբ Գիրքը՝ «Երկնքի թռչուններ՛, օրհնեցէք Տիրոջը» (Սղմ. ճԽԸ 10, 12): Հինգերորդ՝ երկինք է կոչւում նաեւ դրախտը, որ բարձր է եւ լուսաւոր ու անմահութեան վայր, ինչպէս ասում է անառակ որդին՝ «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ» (Ղուկ. ԺԵ 18), այսինքն՝ դրախտի:

Սրանք են հինգ երկինքները, որ ունեն երկնային յատկանիշներ եւ սրանցով լինում է տասնհինգ երկինք:

Իսկ նմանական երկինքները հինգն են: Նախ՝ երկինք է կոչւում Սուրբ Երրորդութիւնը, որովհետեւ անհասանելի բարձրութեամբ գերազանցում է ողջ արարչութիւնը: Երկինք է կոչւում նաեւ Աստծոյ, հրեշտակների, սուրբ մարգարէների զգայապէս երեւալը: Երկրորդ՝ երկինքը նրանց երեւակայական տեսիլքներն են: Երրորդ՝ երկինքը իմացականի կատարեալ տեսութիւնն է, երբ դէմ յանդիման տեսնում են Աստծուն, ինչպէս Մովսէսն ու Դաւիթը: Եւ Պօղոսը հափշտակուեց այս երրորդ երկնքում: Չորրորդ՝ սրբերի հոգեւոր բարութիւններն ու վարձատրումը նոյնպէս կոչւում են երկինք, ըստ այդմ՝ «Ձեր վարձը բազում է երկնքում» (Մտթ. Ե 12): Հինգերորդ՝ երկինք է կոչւում Ամենասուրբ Երրորդութիւնը՝ լուսաւորութեան ու անհաս բարձրութեան պատճառով՝ ողջ ստեղծուածի համեմատութեամբ, ինչպէս ասացինք, որի մասին էլ ասում էր արուսեակը. «Ելնելու եմ երկինք ու դառնալու բարձրեալի նման» (Ես. ԺԴ 14): Եւ այն ժամանակ դեռ երկնքում հրեշտակների դասում էր: Իսկ հրեղէն երկնքի մասին ասում էր, թէ՝ ելնելու ու հաւասարուելու է նրան:

Այսքան է երկինքների թիւը. տասը բնական երկինք, հինգը՝ յատկական, հինգը՝ ըստ նմանութեան, որոնք միասին լինում են քսան:

ԵՐԿՆՔԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԹ

Հարց. Որո՞նք են երկնքի յատկութիւնները:

Պատասխան. Նախ՝ որ բարձր մարմին է, որն ունի իր սահմանները: Երկրորդ՝ փայլուն է ու լուսաւոր: Երրորդ՝ շրջանաձեւ է, որ կատարեալ է վեց թուանշանի նման: Չորրորդ՝ պարզ ու վճիտ է էութեամբ: Հինգերորդ՝ անապական է բնութեամբ: Վեցերորդ՝ լուսաւորուած է աստղերով: Եօթներորդ՝ հանդարտ վայրում է՝ լինելով հաւասար, ընդարձակ, դաշտաձեւ: Ութերորդ՝ զերծ է պղտորումից, այսինքն՝ ձիւնից, անձրեւներից, խորշակից, ցրտից: Իններորդ՝ իր պարունակութեամբ հաւերժական է, այսինքն՝ չի փոփոխւում ու այլայլւում՝ երկրի քայքայող փոփոխութիւնների նման: Տասներորդ՝ եւ որ վեհագոյնն է, Աստծուն վայել ապարանք ու հանգստի տեղ է, ուստի եւ նեղուածները աղերսելով՝ փափագում են ձեռքերը վեր պարզել: Ինչպէս վկայում է նաեւ մարգարէն՝ «Աստուա՛ծ մեր, որ նստում է երկինքների երկնքում» (Սղմ. Կէ 34):

Իսկ երկնքի այլ յատկութիւններ եւս, ինչպէս ասացինք՝ բարձր լինելը, նախ՝ որ խորն է: Երկրորդ՝ լայն է բոլոր կողմերից: Երրորդ՝ նրբագոյն մաս է: Չորրորդ՝ կարծր ու անբախելի: Հինգերորդ՝ թեթեւ ու սրընթաց: Վեցերորդ՝ քանակապէս շատ: Եօթներորդ՝ իր մէջ պարունակում է բոլորին: Ութերորդ՝ հաստատ է պահում միջի եղածին: Իններորդ՝ երկրին պարգեւում է անձրեւ,

լոյս, ջերմութիւն, զօրութիւն, եւ տասներորդ՝ միշտ տալիս է ու չի վերցնում:

Պէտք է իմանալ նաեւ սա. որ մեծ Ներսէսը հաստատութիւնը կոչում է արփի ու եթեր[235], ինչն օտարները հինգերորդ տարր են անուանում, որը տեսանելի չէ մեզ[236], իսկ աստղալից երկինքը ասում է խտացած ու թանձրացած օդն է եւ նրանով են ընթանում ստեղծուած աստղերը:

Պէտք է իմանալ նաեւ սա, որ ինչպէս համանուն էր հրեղէն երկինքը, այսինքն՝ լուսեղէն, որն ստեղծեց ի սկզբանէ շրջանաձեւ ու հրով, այդպէս էլ համանուն է արփին, որ [նշանակում է] լուսեղէն ու հաստատուն: Համանուն են նաեւ եթերը, այսինքն՝ հինգերորդ էութիւնը եւ տարրական էութիւնը: Համանուն է ջրի ներքեւի հաստատութիւնը, այսինքն՝ ութերորդ կամարը եւ մեր օդը, որ ջուր է պարունակում ամպի միջոցով:

Այսքանը երկնքի մասին:

ԼՈՅՍԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ի

Պէտք է իմանալ, որ լոյսն էլ համանուն է: Նախ, բաժանւում է անեղ ու եղական լոյսի: Անեղ լոյսը Սուրբ Երրորդութիւնն է՝ անմատոյց լոյսը ըստ մարգարէի. «Քո երեսի լոյսով ենք տեսնում լոյսը» (Սղմ. ԼԵ 10):

Իսկ եղական լոյսը բաժանւում է իմանալի ու զգայական [լոյսերի]: Իմանալի լոյսերը՝ հրեշտակներն են, մարդու հոգին, Աստծոյ պատուիրանները. «Տիրոջ պատուիրանները լոյս են» (Սղմ. ԺԸ 9),- ասում է մարգարէն:

Զգայական լոյսն էլ բաժանւում է երկնային ու երկրային լոյսերի: Երկնային լոյսերն են Արեգակը, Լուսինը, աստղերը: Երկրային լոյս են ճրագը, պայծառ օդը, աչքի լոյսը:

Հարց. Ո՞րն է լոյսի բարութիւնը, որ ասում է. «Աստուած տեսաւ, որ լոյսը բարի է» (Ծննդ. Ա 4):

Պատասխան. Լոյսը բազմաթիւ բարի յատկութիւններ ունի:

Նախ՝ որ քշում է խաւարը:

Երկրորդ՝ փարատում է տրտմութիւնը եւ ուրախութիւն պատճառում:

Երրորդ՝ փախցնում է գազաններին ու գողերին:

Չորրորդ՝ ճանապարհորդին, արհեստաւորին ու միւսներին գործի է կոչում:

Հինգերորդ՝ առանձնացնում է ընտիրն ու խոտանը:

Վեցերորդ՝ բարեկամին ու թշնամուն է վեր հանում:

Եօթներորդ՝ լուսաւորում է այլոց միջնորդութեամբ, ինչպէս օդի եւ ապակու միջոցով:

Ութերորդ՝ չի անցնում թանձր ու կարծր նիւթերի միջով, ինչպէս քարի ու հողի:

Իններորդ՝ լցնում է երկնքի խորշերը:

Տասներորդ՝ ըստ առողջ լինելու չափի՝ լուսաւորում է աչքը:

Այս կերպ լուսաւորում է եւ իմանալի լոյսը: Նախ՝ որ տգիտութեան խաւարն է քշում:

Երկրորդ՝ մեղքի տրտմութիւնն է փարատում:

Երրորդ՝ թշնամի սատանային ու չարին է փախցնում:

Չորրորդ՝ իմաստունին ու առաքինուն գործի է կոչում:

Հինգերորդ՝ զատորոշում է բարին ու չարը:

Վեցերորդ՝ ցոյց է տալիս բարեկամ հրեշտակին ու թշնամի սատանային:

Եօթներորդ՝ միջնորդութեամբ լուսաւորում է բոլորին, ինչպէս մեր Տէրն է ասում՝ «Ես եմ աշխարհի լոյսը» (Յովհ. Ը 12): Եւ ասում էր առաքեալներին. «Դուք էք աշխարհի լոյսը» (Մտթ. Ե 14), եւ նրանցով լուսաւորեց հաւատացեալներին:

Ութերորդ՝ ովքեր դաժան են դարձել անհաւատութեամբ ու թանձրացել մեղքերով, անմասն են մնում նրանից:

Իններորդ՝ հաւասարապէս լուսաւորում է մարդու երկնային եւ երկրային միտքը:

Տասներորդ՝ բաշխւում է ըստ [մարդու] ունակութիւնների ու կարողութեան, ինչպէս այս կեանքում, այնպէս էլ առաւելապէս հանդերձեալ կեանքում, որպէսզի ի վիճակի լինենք տանելու:

ԱՐԵԳԱԿԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԱ

Նախ՝ որ միատարր է եւ մէկը:

Երկրորդ՝ անփոփոխ է իր տեսակի մէջ:

Երրորդ՝ տեսակը նախորդում է նիւթին:

Չորրորդ՝ երեք յատկանիշ ու մի բնութիւն ունի:

Հինգերորդ՝ պատկեր եւ օրինակ է Քրիստոսի՝ Արդարութեան արեգակի:

Վեցերորդ՝ մեծ է, քան երկիրը:

Եօթներորդ՝ ջերմ զօրութիւն ունի:

Ութերորդ՝ լուսատու է:

Իններորդ՝ հաւասար ջերմութիւն ու լոյս ունի:

Տասներորդ՝ եղանակների արարիչ է:

Տասնմէկերորդ՝ ցերեկուայ ու գիշերուայ պատճառ է:

Տասներկուերորդ՝ պատճառ է ծնունդների:

Տասներեքերորդ՝ իջնում է եւ բարձրանում:

Տասնչորսերորդ՝ մօտենալով՝ վերակենդանացնում է, հեռանալով՝ կորստի մատնում:

Տասնհինգերորդ՝ անդադար գործում է իր սահմանուած կարգով:

Տասնվեցերորդ՝ բոլոր լուսատուները նրանից են լոյս առնում:

Տասնեօթներորդ՝ ժամանակների որոշող է:

Տասնութերորդ՝ լոյսով ու ջերմութեամբ շփւում է բոլորին, սակայն հեռու է նրա գունդը:

Տասնիններորդ՝ մի տեղ խաւարեցնում է, մի այլ տեղ՝ լուսաւորում:

Քսաներորդ՝ կանխանշանների, ժամանակի, օրերի, տարիների ցոյց

տուողն է, ինչպէս ասում է Գիրքը (տե՛ս Ծննդ. Ա 14):

Հարց. Ի՞նչ է նշանակում մեծ Իգնատիոսի ասածը արեգակի մասին՝ թէ ամէն օր տալիս է լոյսն ու ջերմութիւնը ու նորից վերցնում արփիից[237]:

Պատասխան. Տալը երկու տեսակ է. առաջինն ըստ տեսակի, երկրորդն ըստ ներգործութեան:

Ա՛րդ, ըստ տեսակի արեգակի լոյսն անփոփոխ է: Իսկ ըստ ներգործութեան՝ խաւարում է ու լուսաւորում: Եւ երբ ասում ենք, թէ արեգակը խաւարեց, ոչ թէ նրա բնական լոյսն է պակասում, այլ մեզ լուսաւորելը:

Այս այսպէս:

ԱՍՏՂԵՐԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախ, որ աստղերի բնութիւնը մէկն է:

Երկրորդ՝ լուսատու են:

Երրորդ՝ անվախճան են:

Չորրորդ՝ մշտաշարժ են:

Հինգերորդ՝ մեծ են չափերով, թէեւ մեզ փոքր են երեւում:

Վեցերորդ՝ հաստատ են իրենց տեղում:

Եօթներորդ՝ երկնքի զարդն են:

Ութերորդ՝ ժամանակի ցոյց տուողներն են:

Իններորդ՝ մեր փառքի օրինակներն են:

Տասներորդ՝ շրջանաձեւ են:

ԼՈՒՍՆԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ Պրակ ԻԲ

Հարց. Որո՞նք են լուսնի յատկութիւնները:

Պատասխան. Բազմաթիւ են:

Նախ, որ Արեգակի ու աստղերի միջինացուածն է: Ներքեւ է: Սրընթաց է: Փոքր է պարագիծը: Ամսուայ պատճառն է: Գիշերուայ լուսատուն է: Փոփոխուող է: Նուազում ու լրում է: Նրա խաւարելը մահուան ու յարութեան նշան է, ինչպէս նաեւ՝ մեղքի ու ապաշխարանքի եւ հին օրէնքի:

Երկնքին հակառակ է շարժում: Ունի հասարակ ու յատուկ շարժումներ: Խոնաւ է ու հով: Ունի բնական լոյս, առնում է նաեւ արեգակից: Մօտենալով՝ արեգակից լուսաւորուում ու եղջիւրաւորուում է, իսկ հեռանալով՝ նուազում լոյսով:

Խաւարեցնում է արեգակին: Ծածկում է նրա լոյսով: Իշխում է տարրեղէն մարմիններին: Ազդում է ծնունդների վրայ: Սնում է տնկիները: Ոմանց գունաւորում է, ինչպէս խնձորը, իսկ ոմանց գունատեցնում, ինչպէս մարդուն:

Աշխարհի հայելին է, ըստ որում՝ մակերեւոյթին ցոյց է տալիս [նրա] կեղտերը: Ունի բոլոր մոլորակների զօրութիւնը: Եւ սա երկու պատճառով: Նախ, որ բոլորից ներքեւ է գտնուում ու բոլորի զօրութիւնը ժողովում է իր մէջ: Եւ ապա արեգակը մէջտեղում լինելով՝ հաղորդում է բոլոր մոլորակների [զօրութիւնը] ու անցկացնում լուսնով՝ լոյսով հանդերձ: Այս պատճառով էլ նորելիս աւելի զօրաւոր ու ազդեցիկ է լինում սերմանելու եւ այլ բաներում, իր ազդեցութիւնն ուժեղացնում ու թուլանցում է

նաեւ ծովի, աղբիւրների, մազերի, ուղեղի վրայ:

Հարց. Ինչպէ՞ս ունի լոյս:

Պատասխան. Վարդապետներից, օրինակ, սուրբ Բարսեղն ասում է, որ երկբերան քսակ է լուսինը. մէկով ելնում է [լոյսը], միւսով ժողովում է վերին թիկունքում. պակասեցնում է մեր լոյսը եւ միւս կողմից՝ ներս մտնում ու լուսաւորում մեզ[238]:

Ուրիշներն ասում են, թէ արեգակից է առնում լոյսը: Մօտենալով՝ նոյն կենդանակերպում նրանից սակաւ լոյս է առնում արեւելեան կողմից, չնայած մեզ արեւմուտքից է երեւում: Եւ քանի դեռ արեգակի հետ է, լոյսը շատանում է: Իսկ երբ անցնում է միւս կիսագունդը՝ ամբողջանում է նրա լոյսը, որովհետեւ այդտեղ լոյսը ուղիղ է ընդունում: Այնուհետեւ նուազում է այնքան, որքան առաջ էր՝ արեգակից հեռանալուն համապատասխան:

Ուրիշներն էլ ասում են, թէ բնական լոյս ունի ու առնում է նաեւ արեգակից, եւ այսպէս, երկուսը խառնւում են նրա մէջ, որով սնում է երկրում եղածը:

Եւ պէտք է իմանալ, որ երբ լիովին հեռանում է՝ խաւարում է լուսինը, իսկ լիովին մերձենալով՝ նոյն կենդանակերպում եւ ուղիղ անցնելով արեգակի առջեւից՝ խաւարեցնում է նրան, որովհետեւ լուսնի անօթը դիմահար է:

Նոյն կերպ այլ մոլորակների էլ է ծածկում, երբ անցնում է նրանց առջեւով: Եւ ամէն օր չեն խաւարում, որովհետեւ միշտ նոյն հետագծով չեն շարժւում, թէեւ հանդիպում են նոյն կենդանակերպում:

Հարց. Ի՞նչ են լուսնի երեսի գորշութիւնները:

Պատասխան. Ոմանք ասում են Խաչելութեան խաւարումից է մնացել իբրեւ նշան: Ոմանք էլ ասում են, թէ երկրի ստուերն է: Ուրիշներ ասում են, թէ երկրի պատկերն է. ինչպէս հայելին մարդու պատկերն է արտացոլում, այդպէս էլ լուսինը. այն, որ պայծառն է, երկրի ցամաքի պատկերն է, գորշութիւնները՝ ծովերի:

Հարց. Նորելիս ինչո՞ւ է եղջիւրակերպ երեւում:

Պատասխան. Երկրի ստուերն անցնելով արեգակի առջեւով՝ խաւարեցնում է լուսնին: Եւ երբ արեգակից լոյս է առնում, քանի որ երկիրը կլոր է, եզրերը [լուսաւորւում են], մէջտեղը խաւար է մնում: Նոյն կերպ, երբ հնանում ու պակասում է լոյսը:

ԳԼՈՒԽ ԺԲ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ Պրակ ԻԳ

Հարց. Աստուած ինչո՞ւ լուսատուներին երկնքում դրեց:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ երկինքը բարձր է եւ նրանից աւելի շատ է երկրին լոյս հասնում:

Երկրորդ՝ լուսատուները հրից են, իսկ հրի տեղն իբրեւ տարրի, վերեւում է:

Երրորդ՝ աչքը մեր, որ [մարմնի] լոյսն է, գլխի վերին մասում է գտնւում, եւ

լուսատուներն էլ երկնքում են, որպէսզի մերձաւոր նմանը նմանին տեսնի:

Չորրորդ՝ վերը տեսնում ենք եւ մտքով խորհում ենք բարձրի մասին, ըստ առաքեալի՝ «Խորհեցէ՛ք վերին բաների մասին, որտեղ Քրիստոսը նստում է Աստծոյ աջ կողմում» (Կողոս. Գ 2):

Հինգերորդ՝ որպէսզի տեսնենք եւ իմանանք, որ եթէ երկնքի արտաքին սրահը այսքան զարդարուած է, ապա որքա՜ն առաւել [զարդարուած պէտք է լինի] իմանալի դասերի սրբութեան ներքին կողմը:

Վեցերորդ՝ որպէսզի յիշենք մեր առաջին փառքը ու ցանկանք այն եւ ոչ իբրեւ անասուն կորանանք դէպի երկիրը:

Հարց. Ի՞նչ է նշանակում սուրբ Բարսեղի ասածը, որ հրեղէնները ջրի միջով են գնում ու չեն մարում[239]:

Պատասխան. «Հրեղէն» ասում է լուսատուներին, իսկ «ջուր»՝ ջրային վերին կամարին: Ու չեն հանգչում Արարչի հրամանով՝ լինելով երկու ներհակ օդեղէն կամարների միջեւ, ինչպէս որ ներքեւի տարրերը՝ հուրը եւ ջուրը, կապակցուած են օդով:

Հրեշտակները նոյնպէս հրեղէն լինելով՝ ջրեղէն կամարով են գնում ու չեն հանգչում:

Հարց. Լուսատուները որտեղի՞ց գոյացան:

Պատասխան. Ոմանք, հետեւելով Արիստոտէլին, ասում են, թէ հինգերորդ էութիւնն են՝ չորս տարրերից յետոյ:

Եկեղեցու այլ վարդապետներ, հետեւելով Պլատոնին՝ ասում են, թէ դրանք հրի տարրից զրկուած լոյս են, որ գոյացան առաջին օրը:

Լուսատուները չորրորդ օրը կազմուեցին օդից, եւ իւրաքանչիւրը, լոյս ստանալով՝ դարձաւ լուսատու:

Եւ սա ընդունելի է թւում երկու պատճառով: Նախ՝ որովհետեւ մի մասի մօտ լոյսը շատ է, ինչպէս արեգակինը, մի մասի մօտ էլ՝ պակաս, ինչպէս լուսնի եւ այլ աստղերի: Իսկ հինգերորդ էութիւնը պարզ ու հաւասար է, ուստի չի կարող առաւել կամ պակաս ընդունել:

Եւ եթէ ասեն, թէ անօթից է, որ մէկը շատ է լոյս տալիս, միւսը՝ պակաս, եւ ոչ թէ լոյսից, ինչպէս ասենք, յստակ ապակին աւելի է լոյս տալիս, ապա ասենք, որ [իսկապէս] յայտնի է, որ լուսատուների անօթները բաղկացած են տարրերից, այսինքն՝ մէկը պարզ է, միւսը՝ թանձր: Եւ երկրորդ՝ պարզ է, որ ունեն ջերմութիւն ու սառնութիւն, չորութիւն ու խոնաւութիւն, այն ինչ յատուկ է տարրերին:

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԵՐԻ ՄԱՍԻՆ Պրակ ԻԴ

Հարց. Ի՞նչ բնոյթ ունեն կենդանակերպերը:

Պատասխան. Ասենք, որ կենդանակերպերի առանձնացած խմբերն ունեն չորս տարրերի յատկանիշները:

Խոյը, Առիւծը, Աղեղնաւորն ունեն հրի ջերմ ու չոր բնութիւնը:

Ցուլը, Կոյսը, Այծեղջիւրն ունեն հողի չոր ու սառը բնութիւնը:

Երկուորեակը, Կշեռքը, Ջրհոսն ունեն օդի ջերմ ու խոնաւ բնութիւնը:

Խեցգետինը, Կարիճը, Ձուկն ունեն ջրի սառն ու խոնաւ բնութիւնը:

Կենդանակերպերից վեցը երկնքի հիւսիսային կողմի կիսագնդում են՝ դէպ մեզ, վեցը՝ հարաւային կողմի՝ միւս կիսագնդում: Եւ այսպէս կենդանակերպերը ծածկում են երկինքը:

Կենդանակերպերի վերին ծայրում Խեցգետինն է, ներքեւում՝ Այծեղջիւրը: Եւ եօթ մոլորակները սրանց միջով անցնելով՝ բարձրանում եւ իջնում են:

ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Աստղերը շարժւո՞ւմ են, թէ՞ ամրացած են երկնքին:

Պատասխան. Ոմանք, ինչպէս Արիստոտէլը, ասում են, թէ աստղերը ամրացած են երկնքին ու շարժւում են նրա հետ:

Իսկ ուրիշներն ուղղակի ասում են, թէ անմոլոր աստղերը ամրացած են տիեզերքին, ինչպէս սպին մարմնի վրայ, ու նրա հետ են շարժւում:

Իսկ մոլորակները շարժւում են շառաւղով եւ բարձրանում ու իջնում են: Նրանք ունեն երկու շարժում՝ ընդհանուր եւ յատուկ: Ընդհանուր է արեւելքից արեւմուտք շարժուելը, իսկ յատուկ՝ արեւմուտքից արեւելք, ինչպէս որ տեսնում ենք, որ լուսինը ծնւում է արեւմուտքից, գալիս արեւելք՝ համապատասխան կենդանակերպով:

Մոլորակների մէջ առաջինն ու վերջինը Երեւակն է, որին պարսիկները Զոհալ են անուանում. սա սառն է ու չոր, որը երկուս ու կէս տարում է անցնում [իւրաքանչիւր] կենդանակերպը, երեսուն տարում անցնում բոլորը:

Երկրորդը՝ Լուսնթագը, որին Մուշթարի են անուանում, ջերմ է ու խոնաւ, մի տարում է անցնում կենդանակերպը եւ տասներկու տարում՝ բոլորը:

Երրորդը՝ Հրատը, որին Մարեխ են անուանում, ջերմ է ու չոր. [սա] քառասուն օրում է անցնում կենդանակերպը ու տարին [նրա հաւասար է] տասնվեց ամսուայ:

Չորրորդը՝ Արեգակը, որին Շամս են կոչում, ջերմ է ու լուսաւոր, որը երեսուն օրում եւ տասը եւ կէս ժամում է անցնում կենդանակերպը ու մէկ տարում անցնում բոլորը:

Հինգերորդը՝ Լուսաբերը, որ Արուսեակն է, որին Զոհրա են կոչում, ջերմ է ու խոնաւ. սրա ընթացքը քառասունութ օր է տեւում, ուրիշները ասում են, թէ վեց ամիս:

Վեցերորդ՝ Փայլածուն, որին Օտարիտ են կոչում, որ միշտ շրջում է Արեգակի հետ ու հազուադէպ հեռանում, շրջապտոյտը կատարում է երեսունութ օրում, տասը օր պակաս, քան Լուսաբերը, ուրիշներն ասում են, թէ՝ երեք ամսում:

Եօթներորդը՝ Լուսինը, որին Կամր են կոչում, հով է ու խոնաւ, երկուս ու կէս օրում է անցնում կենդանակերպը, քսանինն ու կէս օրում անցնում բոլորը:

ՕՐՈՒԱՅ, ԱՄՍՈՒԱՅ, ՏԱՐՈՒԱՅ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԵ

Հարց. Նշուած մոլորակներից ո՞րն է օրուայ, ամսուայ, տարուայ պատճառը:

Պատասխան. Ինչպէս նշեցինք վերը, լոյսի խաւարելու եւ ամսուայ պատճառը Լուսինն է, որին մարդիկ, տեսնելով նորացած ու հին՝ ասացին. «Մեզ համար ծննդեան ու մահուան օրինակ է» եւ կոչեցին ամիս:

Իսկ օրը՝ գիշերն ու ցերեկը, չորս եղանակը, տարին արեգակն է կազմում, որովհետեւ արեւելեան կէտից մինչեւ նոյն կէտին վերադառնալը մի օր է տեւում, որ քսանչորս ժամ է՝ երկու ժամ իւրաքանչիւր կենդանակերպում: Եւ ինչքան որ վերին կիսագնդում է, կոչւում է ցերեկ: Իսկ անցնելով ներքեւի կիսագունդ՝ [բերում է] գիշեր, որովհետեւ «գարշեցո՛յց զերր», այսինքն՝ [աղտեղեց] օդն ու երկրի երեսը:

Իսկ չորս եղանակները այսպէս է կազմում: Խոյի, Ցուլի, Երկուորեակի կենդանակերպերը գարուն են բերում, որի ժամանակ ցերեկն ու գիշերը տեւում են տասներկուական ժամ:

Խեցգետնի, Առիւծի, Կոյսի կենդանակերպերում ամառ է բերում, որի ժամանակ ցերեկը գիշերից երկար է վեց ժամ:

Կշեռքի, Կարիճի, Աղեղնաւորի կենդանակերպերում աշուն է բերում, որի ժամանակ նոյնպէս գիշերն ու ցերեկը տասներկու ժամ են:

Այծեղջիւրի, Ջրհոսի, Ձկան կենդանակերպերում ձմեռ է բերում, որի ժամանակ գիշերը ցերեկից վեց ժամ երկար է, որովհետեւ գիշերը դառնում է տասնհինգ ժամ, ցերեկը՝ ինը ժամ, ինչպէս որ ամառը ցերեկը տասնհինգ ժամ էր, գիշերը՝ ինը ժամ:

ՏԱՐՈՒԱՅ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ են կոչում տարի:

Պատասխան. Նախ, որ «տանում է» տասներկու կենդանակերպերը ու լրանում: «Տանում է» նաեւ եղանակները, ամիսը, շաբաթը, օրերը, ժամը, ժամանակը:

«Տանում է» նաեւ մեր ժամանակաւոր կեանքը, ուստի եւ կոչւում է տարի[240]:

ՇԱԲԱԹՈՒԱՅ ՄԱՍԻՆ

Իսկ շաբաթը, որ եօթ օր է, կոչուեց ըստ եօթ մոլորակների, որովհետեւ հնում եօթ մոլորակները եօթ աստուածների տներ էին կոչւում. Զօհալը՝ Կռօնոսի, Մուշթարին՝ Դիոնէսիոսի, Մառեխը՝ Արեսի, Արեգակը՝ Իլիոսի կամ Զեւսի, Զօհրան՝ Աֆրոդիտեի, Օտարիտը՝ Հերմեսի, Լուսինը՝ Սելինի:

Եւ սուրբ հայրապետները փոխեցին այս անունները եւ վերանուանեցին շաբաթուայ եօթ օրերը:

Արեգակի օրը կոչեցին Կիրակի, որ նշանակում է՝ «տէրունական»՝ Տիրոջ յարութեան պատճառով.

Լուսնի օրը՝ երկուշաբթի:

Արեսի օրը՝ երեքշաբթի:

Հերմեսի օրը՝ չորեքշաբթի:

Դիոնէսիոսի օրը՝ հինգշաբթի:

Աֆրոդիտեի օրը՝ ուրբաթ:

Կռօնոսի օրը՝ շաբաթ:

ԺԱՄԵՐԻ ԵՒ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Եւ պէտք է իմանալ, որ օրը ամսուայ ու տարուայ պատկերն է, որովհետեւ

տարին 365 օր է, ամիսը [երկու] 365 ժամ: Իսկ ցերեկը օրուայ միայն 365 մասն է, որովհետեւ արեգակը ամէն օր իր պտոյտը կատարում է 24 ժամում ու 10,5 մասում, եւ տասը գումարուելով՝ մէկ ամսում լինում է 10 ժամ. ամբողջ տարում դառնում է Յաւելեացի հինգ օրը: Կէս մասը մէկ ամսում լինում է կէս ժամ, մէկ տարում՝ վեց ժամ, չորս տարում՝ մէկ օր, այսինքն 24 ժամ, որ լինում է նահանջ տարի ու տեղաշարժում տօներն ու եղանակները:

ՎԵՐԱԴՐԻ ՄԱՍԻՆ

Իսկ Վերադիրը լուսնի պտոյտի համեմատութեամբ պակաս լինելու պատճառով է, այսինքն՝ արեգակի տարին 365 օր է, իսկ լուսնի տարին՝ 354 օր. տասնմէկ օր պակաս, քան արեգակինը, ուրեմն ամէն տարի պէտք է լուսնի տարուայ վրայ աւելացնենք տասնմէկ օր, որ հաւասարուի արեգակի տարուան. սա էլ հենց կոչւում է Վերադիր:

Իսկ, թէ ինչո՞ւ է պակաս, ասենք, որ լուսինը կենդանակերպով ընթանում է 29,5 օր եւ նորում է: Իսկ արեգակը կենդանակերպով անցնում է 30 օրում: Արդ, իւրաքանչիւր ամսուայ կէս օրը ամբողջ տարում դառնում է լուսնի տարուայ պակաս վեց օրը, որին եթէ աւելացնենք Յաւելեացի հինգ օրը, դառնում է տասնմէկ օր, որը եւ կազմում է Վերադիրը:

Իսկ սուրբ Եփրեմն ասում է, թէ տասնմէկ թիւը գտնւում է հենց երրորդ օրուայ մէջ՝ լուսնի ստեղծման օրը, որովհետեւ լուսինը երեկոյեան ստեղծուեց՝ տասնմէկ օրական[241]:

Այս է պատճառը, որ ամէն տարի աւելացնում ենք տասնմէկօրեայ Վերադիրը: Եւ տասնմէկ օրական ստեղծուեց, որովհետեւ ուրբաթ օրը, երբ ստեղծուեց Ադամը՝ լուսինը բոլորում էր ու դառնում տասնչորս օրական:

ՅԱՒԵԼԵԱՑԻ ԵՒ ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻ ՄԱՍԻՆ

Իսկ Յաւելեացի հինգ օրը արարչութեան հինգ օրերն են՝ նախքան Ադամի ստեղծուելը, իսկ գարնանամուտը, որ հասարակածն է՝ չորրորդ օրն է, երբ ստեղծուեցին լուսատուները:

Ըստ հռոմէացիների տոմարի՝ այսպէս է. մարտի 17-ը արարչութեան առաջին օրն է, երբ ստեղծուեց լոյսը, քսանին հասարակածն է, իսկ մարտի 22-ին մարդու կազմուելու օրն է: Այսպէս էլ մեզ՝ հին հայերիս մօտ, Արեգի ինն արարչութեան առաջին օրն է, տասներկուսը հասարակածն է, որը գարնանամուտն է, տասնչորսը մարդու կազմութեան օրն է:

Իսկ եբրայեցիների մօտ այսպէս չէ. արարչութեան առաջին օրը ըստ նրանց՝ Յաւելեացի առաջին օրն է. Յաւելեացի 5-ը նրանց գարնանամուտն է, Նիսանի մէկը՝ մարդու կազմութեան օրը, որովհետեւ Նիսան թարգմանւում է «կազմութիւն»[242]:

ՐՈՊԷԻ ՄԱՍԻՆ[243]

Իսկ րոպէն այս է:

Օրը ցերեկուայ ու գիշերուայ քսանչորս ժամն է: Մէկ ժամը երեսուն մաս է, մէկ մասը 60 րոպէն է, տասը մասը

600 րոպէ է, ուրեմն մէկ ժամը 1800 րոպէ է, տասը ժամը՝ տասն անգամ այդքան րոպէ: Մէկ օրը 24 ժամ է, ուրեմն կլինի չորս բիւր երեք հազար երկու հարիւր րոպէ[244]:

Մէկ մասը հաւասար է արեգակի մէկ հոլովին, այսինքն՝ մէկ թաւալին: Մէկ հոլովում [այն] ընթանում է 500 ասպարէզ:

Ոլոմպիաթը չորրորդ տարին է, որին հայերը նահանջ են անուանում: Ընդիքտիոնը տասնհինգ տարի է, որով առաջնորդւում են հռոմէացիները:

ՏԱՍՆԻՆՆԵՐԵԿԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԼՐՄԱՆ ՄԱՍԻՆ[245]

Տասնիններեկը այն է, որ լուսինը տարուայ մէջ ընթանում է 354 օր եւ տասնինը մաս, որ 19 տարում դառնում է 361 մաս: Երեսուն մասը արա՛ մէկ ժամ, եւ 12 ժամը մէկ օր, եւ սա կոչւում է տասնիններեկի տարի, որ աւելացնում է լուսնի տարուն մէկ օր: Գումարուելով՝ մասը 6840 տարում՝ դառնում է 360 մաս. 30 մասը մէկ ժամ է, տասներկու ժամը՝ մէկ օր: Ահա սա էլ լուսնի մասերի լրումն է, որ ոմանք լուսնի լրում են անուանում:

Եւ դարձեալ՝ երբ Վերադիրը դառնում է երեսուն, եօթներեկը՝ եօթ, միասին, նոյն տարում, սա կոչւում է լուսնի լրում, այսինքն՝ թուի մասերի եւ ոչ թէ [ըստ նրա] իրի: Լուսնի տասնիններեկը եւ արեգակի տասնութերեկը գումարուելով՝ կազմում են հինգ հարիւր շրջան 532-րդ տարում:

Եւ ինչպէս զատկի լրումն ունի տասնվեց օր, ըստ ուրիշների՝ տասնհինգ, որ ըստ մեր տոմարի է եւ համընկնում է լուսնի լրմանը, այսպէս էլ ըստ մեր տոմարի լուսնի մասերի լրում է եւ ոչ թէ [ըստ նրա] իրի:

Եւ լուսնի լրումը համընկնելու է աշխարհի վախճանին, երբ արեգակն ու լուսինը կխաւարեն, ինչպէս ասում է Աւետարանը:

ՎԵՑ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԶ

Հարց. Ինչո՞ւ Աստուած երկնայիններին միանգամից ստեղծեց, իսկ երկրայիններին՝ վեց օրուայ ընթացքում՝ ըստ կարգի:

Պատասխան. Վարդապետներն ասում են, թէ բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ իմանալիները մշտնջենաւոր են, ուստի սակաւ վայրկեաններում ստեղծուեցին, իսկ քանի որ երկրայինները ժամանակաւոր են, ուստի ունեն ժամանակի կարգերը՝ առաջին, միջին, վերջին: Երկրորդ՝ ասում են, թէ աշխարհի սկզբում բնութիւնը յանկարծակի արարեց, իսկ աշխարհը՝ դանդաղելով եւ ըստ կարգի՝ անկատարից բարձրանալով կատարեալը: Երրորդ՝ երկնայինների [միանագամից] կատարեալ ստեղծումն ամենակարող զօրութեան ցուցադրումն էր: Իսկ որ երկրայիններին ըստ կարգի ստեղծեց, ամենագութ մարդասիրութեան դրսեւորումն էր, որովհետեւ մարդուն անհրաժեշտ ամէն ինչ խնամքով ստեղծեց այդքան օրերում: Չորրորդ՝ երկրի այս կարգով ստեղծելը մեզ ուսուցանելու

համար էր, որպէսզի մենք էլ ամէն ինչ կարգով անենք, եւ ոչ՝ անկարգ ու շփոթ: Հինգերորդ՝ քանի որ մարդը տէր եւ իշխան էր երկրաւորներին, ուստի նա պէտք է իմանար իր իշխանութիւնը ճիշտ կարգաւորել, որպէսզի անկարգ ու անիրաւացի չլինէր: Վեցերորդ՝ Աստուած կամեցաւ, որ մենք խօսքով ու տեսնելով վայելենք Արարչի գործը: Այսպէս է լինում, երբ կարդում ենք ու լսում երկար պատմութիւն՝ կարծես տեսնելով աչքով ու վայելում մտքով:

Այս պատճառով էլ ձեռքը, ձայնը, խօսքը, թիւը, կարգը ըստ օրերի ստեղծուեցին: Այլապէս, եթէ միայն նրա կամքը լինէր, կարող էր բիւրապատիկը ստեղծել Աստուած, քան այս աշխարհն է: Եօթներորդ՝ ցոյց է տալիս, թէ նիւթական բնութիւնները սկզբում որքան անկատար էին ու անձեւ, եւ յետոյ ինչպէս կատարելագործուեցին Աստծուց: Նոյնպէս եւ հոգին, որ ինքնին անձեւ ու անկատար է, յետոյ դառնում է կատարեալ՝ Աստծոյ շնորհներով, առաքինութեամբ, գիտութեամբ: Նոյնպէս եւ հրեշտակների բնութիւնն է մատնանշւում, որ ճանաչումով եւ իմացութեամբ անկատար ստեղծուեցին, եւ երբ երանելի դարձան ու անմիջաբար տեսան Աստծոյ էութիւնը, այնժամ կատարեալ դարձան ճանաչողութեամբ ու իմացութեամբ: Ութերորդ՝ վեց թուի կատարելութիւնը ցոյց է տալիս, որ աշխարհի բոլոր կատարելութիւնները՝ երկինքը, երկիրը, մնացած ամէն ինչ ստեղծուել են Աստծոյ կողմից: Իններորդ՝ աշխարհը վեց օրում ստեղծուեց, որ խորհրդանշում էր վեց դարագլուխները, որոնցով հաստատուեց աշխարհը: Առաջին օրը առաջին դարն էր խորհրդանշում՝ Ադամից մինչեւ Նոյ: Այս կարգով եւ միւսները՝ Աբրահամը, Մովսէսը, Դաւիթը, Քրիստոսը: Սրանք են վեց դարերի դարագլուխները, իսկ եօթներորդը՝ հանգիստն է: Տասներորդ՝ վեց թիւը խորհրդանշում է բարեգործութեան ժամանակը, իսկ շաբաթը, երբ Աստուած դադարեց գործելուց, յաւիտենական հանգիստը:

ՄԻ ՕՐՈՒԱՅ ՄԱՍԻՆ
Պրակ Ի է

Հարց. Ինչո՞ւ է ասում Գիրքը՝ «Եղաւ մի օր» (Ծնն. Ա 5) եւ չի ասում՝ «առաջին» կամ այլ բան:

Պատասխան. Նախ՝ օրերի քանակն է մատնանշում, որ գիշերն ու ցերեկը քսանչորս ժամով մի բնական օր են կազմում:

Երկրորդ՝ որովհետեւ մի օրում արեգակը շրջապտոյտ է կատարում միեւնոյն կէտից դէպ այդ նոյն արեւելեան կէտը: Երրորդ՝ երբ լրանում են եօթ օրերը, նորից սկսում ենք առաջին օրից, որը նոյն մէկն է: Չորրորդ՝ մատնանշում է օրերի փութանցիկութիւնը, որովհետեւ մեր ողջ ժամանակն է աննկատելիօրէն անցնում, ինչպէս մի օր: Ըստ այդմ՝ «հազար տարին Տիրոջ աչքում նման է օրուայ, որն անցաւ, ու ինչպէս գիշերուայ մի պահ է» (Սղմ. ՁԸ 4): Հինգերորդ՝ այս նոյն օրն է, որ կրկնուելով՝ լրացնում է շաբաթը, ամիսը, տարին, այս կեանքի դարերը եւ հասնելու է վերջին օրուան,

որը կլինի աներեկոյ ու անփոխարինելի մէկ օր:

ՄԻԱՇԱԲԱԹԻ ՄԱՍԻՆ

Հարց. Որո՞նք են շաբաթուայ առաջին օրուայ՝ միաշաբաթի [կիրակիի] յատկանիշները:

Պատասխան. Նախ՝ որ սկիզբն է ու առաջին օրը բոլոր օրերի մէջ, որովհետեւ նրա կրկնուելով են առաջ գալիս միւս օրերը, ինչպէս ասուեց: Երկրորդ՝ մինչեւ այդ օրը եղան երկինքն ու երկիրը, հրեշտակները, լոյսը, միւս տարրերը՝ արարչութեան եօթ գործերը: Երրորդ՝ բազմաթիւ աստուածախօսութիւններ կիրակի օրն են եղել. Նոյի՝ տապանից դուրս գալիս, Աբրահամի եւ Մովսէսի հետ Սինա լեռան վրայ, օրէնքների տալը նոյնպէս կիրակի օրը եղաւ: Չորրորդ՝ պատուելի դարձաւ՝ Քրիստոսի յարութեամբ ու Սուրբ Հոգու՝ առաքեալների դասի մէջ իջնելով: Հինգերորդ՝ այն ընդհանուր օրն է, որ լինելու է մարդկանց յարութեան, Քրիստոսի գալստեան եւ իւրաքանչիւրին ըստ գործի հատուցելու օրը[246]:

ՎԵՐՋԻՆ ՕՐՈՒԱՅ ՄԱՍԻՆ

Հարց. Ո՞րն է վերջին օրուայ յատկութիւնը:

Պատասխան. Նախ, որ վախճան է եւ սկիզբ: Վախճանն է՝ ժամանակի ու սկիզբը՝ յաւիտենականի եւ մշտնջենաւորների: Երկրորդ՝ աներեկոյ է լինելու: Երրորդ՝ չի փոխարինուելու գիշերով: Չորրորդ՝ նրան երկրորդ օր չի յաջորդելու: Հինգերորդ՝ անշարժ ու անփոփոխ են լինելու նրա ժամերը, մասերը, որպէները:

Նաեւ այսպէս են զանազանւում այս օրերը, այսինքն ստեղծելու առաջին օրը, միջին օրերը՝ մինչեւ աւարտը եւ վերջին օրը՝ յարութիւնը. առաջին օրը եղաւ անառաւօտ, վերջինը կլինի աներեկոյ, իսկ միջին բոլոր օրերը ունեն առաւօտ ու երեկոյ:

ՕՐՈՒԱՅ ՍԿԶԲԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԸ

Հարց. Ո՞րն է օրուայ սկիզբը:

Պատասխան. Նախ՝ պէտք է իմանալ, որ օրը երկու տեսակ է՝ բնական ու սովորական:

Բնական օրն այն է, որ սկսւում է մի կէտից եւ աւարտւում նոյնով՝ քսանչորս ժամում: Իսկ սովորականը լոյսի ծագումից մինչեւ երեկոյ [ընկած] օրն է, որ ծագում է բոլորի վրայ:

Սրանց տարբերութիւնը երկուսն է:

Նախ՝ որ բնական օրը գիշեր ու ցերեկ ունի, իսկ սովորականը՝ միայն ցերեկ: Երկրորդ՝ բնական օրը հաւասարաչափ է՝ չի աւելանում ու պակասում, իսկ սովորականը աւելանում ու պակասում է:

Եւ տարբեր ազգեր տարբեր կերպ են ընկալում բնական օրը: Օրինակ, հրէաներն ու ասորիները բնական օրը սկսում են երեկոյից՝ ասելով. «Եղաւ երեկոյ եւ եղաւ առաւօտ՝ մէկ օր» (Ծննդ. Ա 5):

Իսկ աստղագէտներն [օրը սկսում են] այն պահից, երբ արեգակն իր կիզակէտում է:

Իսկ քրիստոնեաներն այժմ երկու կերպ են սկսում բնական օրը՝ կէսգիշերից եւ առաւօտից, [որովհետեւ] կէսգիշերին ծնուեց Քրիստոս ու յարութիւն առաւ կէսգիշերին գերեզմանից, որի պատճառով էլ առաջին օրուայ տօնը կէսգիշերից է սկսւում, իսկ մեծ տօները՝ երեկոյեան, ինչպէս ասենք, շաբաթ երեկոյեան՝ կիրակնամուտը: Իսկ միւսը՝ լոյսի ծագելու հետ, երբ տրոհում են պահքը եւ ուտիքը, այսինքն՝ լոյսը եւ գիշերը:

Եւ իմանալու է, որ աշխարհի սկզբից մինչ Քրիստոս՝ լոյսը առաջանում էր գիշերից, իսկ Քրիստոսից յետոյ մինչ աշխարհի աւարտը՝ գիշերն է առաջանում լոյսից: Ուստի, շաբաթ երեկոն, որ կոչւում է կիրակնամուտ, պատուական է, քան կիրակիին հաջորդող գիշերը:

Եւ այս է պատճառը, որ սկզբում ցերեկն էր առաջանում գիշերից: Ադամը շնորհների լոյսից ընկաւ մեղքի խաւարը: Քրիստոսի յարութեան գիշերով փոխուեց այս կարգը, որովհետեւ իր յարութեամբ մեզ դուրս բերեց շնորհների լոյսի եւ արդարութեան մէջ, որի պատճառով էլ մինչ աշխարհի աւարտը գիշերն է առաջանալու ցերեկից:

ԼՈՅՍԻ ՈՒ ԽԱՒԱՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է լոյսի ու խաւարի բաժանուելը:

Պատասխան. Նախ, առաւօտի եւ երեկոյի [բաժանուելն է], եւ առաւօտը գիշերուայ վախճանն է ու սկիզբը ցերեկուայ. երեկոն վախճանն է ցերեկուայ եւ սկիզբը գիշերուայ: Երկրորդ՝ [զանազանւում են] պատճառով. երրորդ՝ տեղով. չորրորդ՝ ժամանակով:

Լոյսի պատճառը արեգակն է, խաւարի պատճառը՝ երկրի ստուերը: Իսկ տեղերը [այսպէս են]. այս կիսագնդում լոյս է լինում, միւսում՝ խաւար: Ժամանակով [այսպէս]. այս ժամին այստեղ լոյս է, իսկ միւս ժամին՝ խաւար:

ԴԱՐՁԵԱԼ ՀԱՐՑՈՒՄ ՕՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԹ

Հարց. Քանի՞ եղանակով է օր ասւում:

Պատասխան. Տասնհինգ եղանակով:

Առաջին՝ ըստ հնութեան:

Երկրորդ՝ ըստ ճշմարտութեան:

Երրորդ՝ ըստ անփոփոխ լինելու:

Չորրորդ՝ իբրեւ դար:

Հինգերորդ՝ համապատասխանութեան [պատճառով]:

Վեցերորդ՝ իմաստութեան:

Եօթներորդ՝ յաջողութեան:

Ութերորդ՝ ունայնութեան:

Իններորդ՝ տանջանքների:

Տասներորդ՝ փառքի:

Տասնմէկերորդ՝ ժամանակի:

Տասներկուերորդ՝ բնական [կարգի]:

Տասներեքերորդ՝ սովորական [լինելու]:

Տասնչորսերորդ՝ ցերեկուայ:

Տասնհինգերորդ՝ ըստ սովորութեան:

Առաջինը Հայր Աստուած է, որի մասին ասւում է. «Խորհեցի առաջին օրուայ մասին եւ ողջ յաւիտենականը յիշեցի» (Սղմ. ՀԶ 6):

Երկրորդը Որդին է, որի մասին ասւում է. «Օրուայ ժամերը տասներկուսը չե՞ն»: «Օր» կոչում է իրեն, «ժամ»՝ առաքեալներին (Յովհ. ԺԱ 9):

Երրորդը Աստուածութիւնն է կամ՝ յաւիտենական կեանքը, ուստի ասւում է. «Թագաւորի կեանքի տարիներին օրեր աւելացրի» (Սղմ. Կ 7):

Չորրորդ՝ դար է նշանակում, որի մասին ասում է. «Հազար տարին Տիրոջ աչքում մէկ օրուայ երեկոյի պէս անցաւ» (Սղմ. ՁԸ 4):

Հինգերորդ՝ համապատասխանութեան համար, որովհետեւ ասում է. «Ով ցերեկն է գնում, չի սայթաքում, որովհետեւ տեսնում է աշխարհի լոյսը» (Յովհ. Ա 9):

Վեցերորդ՝ իմաստութեան համար, ուստի ասում է, «Օր աւուր բխում է միտքը ու գիշեր գիշերուայ վրայ գիտութիւն է ցոյց տալիս» (Սղմ. ԺԸ 3):

Եօթներորդ՝ յաջողութեան համար, ուստի ասում է մարգարէն. «Ցերեկը արեգակը քեզ չի վնասի» (Սղմ. ՃԻ 6):

Ութերորդ՝ աշխարհական գործերի համար, որի մասին ասում է. «Օրերս անցան ստուերի պէս» (Սղմ. ՃԱ 11):

Իններորդ՝ տանջանքի համար, որի մասին Յոբն ասում է. «Կորչի այն օրը, երբ ծնուեցի եւ գիշերը, երբ ասուեց՝ ահա արու» (Յոբ Գ 3):

Տասներորդ՝ իբրեւ անվախճանութիւն, որի մասին ասում է. «Այն օրը լեռները կբխեն քաղցրութիւն» (Յովէլ Գ 19):

Տասնմէկերորդ՝ իբրեւ ժամանակի, որի մասին ասում է. «Աստուած արարեց արեգակն ու լուսինը, աստղերը, որ լինեն նշաններ՝ ժամանակի, օրուայ, տարիների» (Ծննդ. Ա 14):

Տասներկուերորդ՝ իբրեւ բնական օր, որ քսանչորս ժամից է, ըստ որի ասում է. «Եղաւ երեկոյ եւ առաւօտ՝ մէկ օր» (Ծննդ. Ա 5):

Տասներեքերորդ՝ իբրեւ սովորական օր՝ արեւելքից մինչեւ արեւմուտք, որի մասին ասում է. «Աստուած անջատեց լոյսը խաւարից, ու կոչեց լոյսը ցերեկ եւ խաւարը՝ գիշեր» (Ծննդ. Ա 5):

Տասնչորսերորդ՝ իբրեւ ցերեկային օր. որի մասին ասում է. «Ինչո՞ւ էք պարապ օրը ցերեկով» (Մտթ. Ի 6):

Տասնհինգերորդ՝ օրէնքն ասում է օր՝ ըստ սովորութեան, ըստ այդմ՝ «Որ թօթափեցինք օրուայ ծանրութիւնն ու տօթը» (Մտթ. Ի 12):

ԱՌԱՒՕՏՈՒԱՅ ՏԱՍԸ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ
Պրակ Լ

Նախ՝ որ ցերեկուայ սկիզբն է ու գիշերուայ վախճանը:

Երկրորդ՝ խառնուրդ է լոյսի ու խաւարի:

Երրորդ՝ մերժումն է խաւարի:

Չորրորդ՝ փախչում են գողերն ու գազանները:

Հինգերորդ՝ ուրախութիւն է աչքի ու սրտի համար:

Վեցերորդ՝ որքան առաջանում է՝ լոյսը պայծառանում է ու խաւարը նուազում:

Եօթներորդ՝ հասցնում է արեգակին:

Ութերորդ՝ ունի լոյսի նոյն բնութիւնը:

Իններորդ՝ լոյսի սկիզբն է:

Տասներորդ՝ նուազում են գիշերային լուսատուները:

ՀԱՍԱՐԱԿ ՕՐՈՒԱՅ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԷՍՕՐԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախ՝ որ պայծառ է լոյսը:

Ջերմ է: Չոր է: Արեգակն իր ամենաբարձր կէտում է: Անստուեր է: Օրուայ կէսի հաւասար ու միջին պահն է: Կազմում է վեց ժամ, որ կատարեալ թիւ է: Ճաշելու ժամ է: Երբեմն կարիք են ունենում հովանու: Եւ սահմանազատուած ժամ է:

ԵՐԵԿՈՅԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՏԱՍԸ ԹՈՒՈՎ

Նախ՝ վախճանն է ցերեկուայ ու սկիզբը՝ գիշերուայ: Մերժումն է լոյսի եւ տարածում է խաւարը: Դադարում են գործելուց: Մշակները ստանում են իրենց վարձը: Բոլորը վերադառնում են բնակութեան վայրերը: Քնելու ժամ է: Փակում են տան դռները: Մարմնի զգայարանները դադարում են գործելուց: Ժամապահները բարձրանում են պարիսպների վրայ: Հովիւները հօտը արոտավայրից փարախ ու գոմ են բերում:

ԳԻՇԵՐՈՒԱՅ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՆՈՅՆ ԹՈՒՈՎ

Նախ՝ որ գազանները այդ ժամանակ են շրջում ու կերակրւում: Հանգստանում են գործաւորները, վերականգնում ուժերը՝ նորից աշխատելու համար: Երկրի ստուերն է, որ մեր եւ արեգակի միջեւ է ձեւաւորւում: Լոյսերը նուազ են երեւում: Աչքի համար վնասակար է: Չեն երեւում գոյները: Երկիւղի, երազի ու ցնորքների ժամ է: Ապաւէն է չարագործներին ու ամօթը վերացնող:

Եւ [կոչւում է] գիշեր որովհետեւ «գարշում է երր»[247], այսինքն՝ օդը:

ԳԱՐՆԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՊՐԱԿ ԼԱ

Տարուայ չորս եղանակներից գարունն այսպէս է աչքի ընկնում: Նախ՝ որովհետեւ արարածների սկզբնաւորուելը գարնանը եղաւ: Երկրորդ՝ համաշխարհային ջրհեղեղը գարնանը սկսեց եւ գարնանը դադարեց: Երրորդ՝ իսրայէլացիների դուրս գալը Եգիպտոսից գարնանը եղաւ: Չորրորդ՝ քանանացիների երկրին տիրելը: Հինգերորդ՝ ցերեկուայ ու գիշերուայ հաւասարուելը: Վեցերորդ՝ Նիսանը, որ ըստ եբրայեցիների, տարուայ սկիզբն է եւ մարդու կազմուելու սկիզբը: Եօթներորդ՝ բոյսերի, տնկիների եւ բոլոր կենդանիների ծննդի եւ բազմանալու [ժամանակը]: Ութերորդ՝ մեր Փրկչի ու Աստծոյ աւետիսի [ժամանակը], որ ծնուեց մարմնով յանուն մեզ: Իններորդ՝ կեանք պարգեւած չարչարանքի ժամանակն է, թաղման, յարութեան, նաեւ՝

համբարձման: Տասներորդ՝ օրինակ ու խորհրդանիշ ընդհանուրի յարութեան եւ վերածնման, տիեզերքի ու մարդկային բնութեան, որ ապագայում պէտք է լինի:

ՆՈՐԻՑ ԳԱՐՆԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախ՝ որ տարուայ սկիզբն է, երբ արեգակը մտնում է Խոյի կենդանակերպը: Ըստ ժամանակի՝ լինում է ջերմ ու խոնաւ: Հաւասարւում են ցերեկն ու գիշերը: Չորացած ծառերը դալարում ու կանաչում են: Դուրս են գալիս ծաղիկները, պտուղները, տերեւները: Արիւնն աշխուժանում է մեր մէջ:

Նորոգւում է երկրի երեսը, ծլում ու աճում են բոլոր սերմերը: Ամպերը անձրեւ են ցօղում: Կենդանիները սկսում են ծնունդ տալ: Զանազան թռչունների ձայներ են հնչում:

Եւ [կոչւում է] գարուն, որ [նշանակում է] «գայ ի յարումն»[248]:

ԱՄՌԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՆՈՅՆ ԹՈՒՈՎ

Նախ, որ արեգակը [առաւել] մերձ է մեզ: Իր բարձրակէտում է: Ջերմութեամբ ու չորութեամբ ցամաքում է երկիրը: Երկարում են օրերը: Կարճանում են ստուերները: Նոսրանում են ամպերը: Ցօղն իջնում է գիշերը: Հասնում են պտուղները: Մեր մէջ աւելանում է շէկ մաղձը: Թռչունների երգը բազմանում է:

«Ամառ» [նշանակում է] «յանօթ առնուն»[249]:

ԱՇՆԱՆ ՏԱՍԸ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախ՝ որ հաւասարւում են գիշերն ու ցերեկը: Խառնւում են ջերմն ու ցուրտը: Հողն ու ծառերը թօթափւում են պտուղներից: Ցրտից ու չորութիւնից տերեւները դեղնում ու թափւում են: Աճում է երկրի ամլութիւնը: Եղանակը արագութեամբ է փոխւում: Աւելանում են տենդն ու ջերմը: Կենդանիները սկսում են յղիանալ: Մեր մէջ աւելանում է սեւ մաղձը:

Կոչւում է աշուն, որովհետեւ «անշնչանում են»[250]:

ՁՄՌԱՆ ՏԱՍԸ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախ՝ որ արեգակը հեռանում է մեզնից ու ընթանում նեղ եզրով: Գիշերը երկարում է, ուժեղանում է ցուրտը, աւելանում է խոնաւութիւնը: Հողն [ամայանում է], ծառերը՝ չորանում: Սառնամանիք ու ձիւն է: Պատում են ամպը, մէգը, մութը: Կաւը, տիղմը, ցեխը շատանում են: Գերիշխում են մաղձն ու սպիտակ հիւթը: Մարդկանց համար անգործութիւն է, բոլոր կենդանիների պակասութիւն եւ տխրութիւն:

Ձմեռ է, որովհետեւ նշանակում է «ձիւնամեռ են լինում»[251]:

ՍԵՐՄԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՆ
Պրակ ԼԲ

Հարց. Ինչո՞ւ ամռանն ու ձմռանը սերմեր չեն բուսում:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ ամռանը շատ տաք է ու չոր, որը չորացնում է, ձմռանը խիստ ցուրտ է, որը սառեցնում է սերմերը, իսկ գարունն ու աշունը միջին ջերմութեամբ ու խոնաւութեամբ՝ աճ են [պարգեւում], որովհետեւ չորն ու ցուրտը ծննդին դէմ են, իսկ

ջերմութիւնն ու խոնաւութիւնը՝ օժանդակող:

Այնուհետեւ, ամառն ու ձմեռը զրկւում են ցերեկից ու գիշերից, այսինքն՝ ամառը [կարճ] գիշեր, ձմեռը [կարճ] ցերեկ ունի: Իսկ գարունն ու աշունը հաւասար ցերեկ ու գիշեր ունեն, ուստի սերմերը ծիլ են տալիս:

Դրանից բացի, գարնան եղանակը աշխարհի, բոյսերի, բոլոր ծնունդների ստեղծման սկիզբն է, ուստի այդ ժամանակ բոլորն աւելի շատ են բուսնում ու նորոգւում: Իսկ աշունը նման է գարնանը, ուստի նա էլ է աճեցնում: Մինչդեռ ձմեռը կենաց վախճանն ու աւարտն է, որի պատճառով բոյսերն ու ծնունդները դադարում ու չորանում են: Ամառն էլ սրա նման է, որովհետեւ հունձք է ու բարի գործերի աւարտ եւ ոչ թէ՝ սերմանելու կամ բուսնելու ժամանակ:

Եւ դարձեալ, գարնանը ցանում են, ամռանը՝ աւարտում, աշնանը հաւաքում են, ձմռանը՝ վայելում, եւ ամէն մի ժամանակ իր առաւելութիւնն ունի: Եւ երեք եղանակները ներկայ կեանքի օրինակով են, իսկ ձմեռը՝ հանդերձեալի, ինչպէս ասուեց:

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԳ

Հարց. Ի՞նչ է ժամանակը:

Պատասխան. Թէ ժամանակը ինչպէս է բաժանւում մշտնջենականի ու յաւիտենականի, ասացինք ութերորդ գլխի տասներկուերորդ համարում:

Իսկ թէ ի՞նչ է ժամանակը, այստեղ կպատասխանենք:

Եւ պարզ է, ժամանակը ո՛չ մեզ համար է եւ ո՛չ երկնքի, որովհետեւ առաջինը, որ շարժուեց, ինքն է ուրիշներին չափում, սակայն ոչ իրեն, եւ երկրի վրայ լինում են ամառ ու ձմեռ, որոնք երկնքում չեն լինում:

Ինչպէս ասում են իմաստասէրները, երկու չափ կայ՝ ինքնաչափ, ինչպէս ասենք, կանգունի վրայի գիծը, որ յայտնի է դարձնում ինքն իր չափը, իսկ երկրորդը պատահական չափն է, որ չափում է ուրիշներին, օրինակ՝ կտաւին, որում ինքը չկայ:

Ահա եւ ժամանակը, որ երկնքի առաջին շարժման մէջ էր, չի չափում երկինքը, այլ չափում է տարրերը ու մեր գործերը, որտեղ ինքը չկայ:

Ոմանք էլ ասում են, թէ ժամանակը գոյացութիւններից է, ըստ ոմանց էլ՝ անգոյներից: Ասում են գոյացականներից է, որովհետեւ երկնքի ու լուսատուների ընթացքն է ստեղծում: Եւ ասում են անգոյներից է, որովհետեւ անցեալը վախճանուած է, ապագան աչքի առաջ չէ, իսկ ներկան աննկատ անցնում է:

Հարց. Ժամանակի ո՞ր մասն է առաջինը. անցեա՞լը, ներկա՞ն, թէ՞ ապագան:

Պատասխան. Եթէ մէկն ես ընդունում ժամանակը, ապա ապառնին առաջ է, քան միւսները, որովհետեւ ժամանակը նախ ապառնի է, ապա՝ ներկայ, յետոյ՝ անցեալ: Իսկ եթէ զանազանուած ես ընդունում, ապա նախ՝ անցեալն է, ինչպէս երէկը, ապա՝ ներկան, ինչպէս

այսօրը եւ յետոյ՝ ապառնին, ինչպէս վաղը:

Իսկ եթէ ըստ պատուի ես բաժանում, ապա նախ՝ ներկան է, որովհետեւ ստոյգ ու ճշմարիտ է, ապա՝ անցեալը եւ յետոյ՝ ապառնին. այսպէս են դասակարգում քերթողները:

Եւ վարդապետներն ասում են, թէ ժամանակը չափումն է իրեղէն մարմինների, եւ ժամանակից աւելի պատուական բան չկայ: Նաեւ, ոչինչ աւելի ընդհանուր չէ, անցողիկ ու հոսուն, ոչ մնայուն, այլայլուող ու փոփոխական: Այսպիսինն է ակնյայտօրէն ժամանակի մէջ մեր կեանքը, որովհետեւ այն, ինչ մեր կեանքում ըստ բնոյթի ժամանակով չափելի է, վախճանւում ու փոփոխւում է, ինչպէս ասում է Դանիէլը՝ «Փոխում է ժամանակը, դարերը, փոխում է թագաւորութիւնը եւ վերականգնում»:

Եւ ոչինչ աւելի պատուական չէ, քան ժամանակը: Ամէն ինչ, որ գոյութիւն ունի աշխարհի վրայ, երկու բան կարող են միաժամանակ գոյութիւն ունենալ, բացի ժամանակից ու հասակից, որովհետեւ ժամանակի երկու մասին անհնար է միաժամանակ գոյութիւն ունենալ, ինչպէս որ երկու պահք միաժամանակ չի կարող լինել: Այս պատճառով էլ անհրաժեշտ է, որ կեանքի ժամանակը բարու վրայ ծախսուի, որովհետեւ անցած ժամանակը ոչ ոք չի կարող ետ ստանալ, որի մասին ասում է Յոբը. «Գնում ենք անդարձ շաւղով» (Յոբ ԺԶ 22):

Եւ ժամանակի նման անցողիկ ու հարահոս ոչինչ չկայ, որովհետեւ կեանքի ժամանակը անդադար հոսում է, որովհետեւ չափում է բնութիւնն ու իրեն: Ուստի երբ անցողիկ ու փոփոխուող երեւոյթներն է չափում, ինքն էլ նրանց հետ հոսում է, որովհետեւ ժամանակը անդադար է անցնում ու հոսում՝ անցեալից ներկայ, ներկայից՝ ապագայ, ցերեկից՝ գիշեր, գիշերից՝ ցերեկ: Ինչպէս ասում է Ծննդոց գրքում՝ «Բոլոր օրերին ամառ թէ ձմեռ, ցերեկ, թէ գիշեր չի դադարում» (Ծնն. Ը 22):

Եւ եթէ համառօտ ասեմ, մեր կեանքն ու ժամանակը, որքան աւելի երկարում ու ձգւում են, այնքան պակասում ու նուազում են, ինչպէս ասում է իմաստութիւնը՝ «Մեր ծնուելու պահից անդադար պակասում է մեր կեանքը»:

Եւ ժամանակի նման ոչինչ աւելի անկայուն ու անյայտ չէ, որովհետեւ ժամանակը ինքնին ճանաչելի չէ, այլ միայն մարդկային գործերով: Անգամ ներկայ ժամանակը, որ աչքի առաջ է, դարձեալ անյայտ ու անկայուն է, որովհետեւ ոչ ոք չի կարող ժամանակի մի վայրկեանը ստուգել, ինչպէս ասում է Ժողովողը՝ «Առաւօտից մինչեւ ցերեկ փոխւում է ժամանակը»:

Դարձեալ, ոչինչ, ինչպէս ժամանակը այլափոխուող չէ, որովհետեւ մերթ ցուրտ է, մերթ՝ ջերմ, ամպ ու պարզ: Այսպէս էլ մեր կեանքը փոխւում է մանկութիւնից ծերութեան, առողջութիւնից հիւանդութեան, ըստ Դանիէլի՝ «Եօթ ժամանակներ են փոփոխուելու քեզ վրայ» (Դան. Դ 29):

Եւ ժամանակի նման էլ ոչինչ ընդհանուր չէ, որովհետեւ ժամանակը բոլորին է տրուած եւ հաւասարապէս անցնում է: Նոյնպէս եւ մարդկային կեանքը բոլորին ընդհանուր է տրուած, եւ բոլորն էլ հաւասարապէս փոփոխւում ու վախճանւում են, ինչպէս ասում է Ժողովողը՝ «Ամէն ինչ իր ժամանակն ունի եւ իր ժամանակով անցնում է ամէն ինչ» (Ժող. Գ 1):

Այս մասին այսքանը:

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՄԱՍԻՆ[252]
Պրակ ԼԴ

Հարց. Ի՞նչ է տարեմուտը:

Պատասխան. Գիտենք իմաստուններից, որ երբ լեզուները բաժանուեցին եօթանասուներկու տանուտէրերին, որոնցից իւրաքանչիւրը պէտք է գնար իր տեղը՝ հեռաւոր կամ մօտ աշխարհներ՝ այդ օրը կարգեցին իբրեւ տարեմուտ եւ աւանդեցին իրենց որդիներին պատուել այդ օրը՝ իրենց ինչքերի նուիրատուութեամբ:

Մովսէսն էլ հրամայեց բոլորին տօնել ամսամուտը եւ փող հնչեցնել, ըստ այդմ՝ «Շեփոր հնչեցրէ՛ք ամսուայ գլխին՝ մեր տարուայ նշանաւոր օրը» (Թիւ Ժ 10):

Եւ երբ սատկեց Յուլիանոսը, ժողովելով նրա ինչքը՝ սուրբ Բարսեղը բաժանեց ժողովրդին՝ հռչակելով Կեսարիայում նոր տարի[253], որին հետեւելով բոլոր քրիստոնեայ ազգերս՝ [տօնում ենք] ամէն տարի:

ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ են նշանակում ամիսների անունները:

Պատասխան. Ամսանունների մի մասը նախնիների անունով է, մի մասը՝ եղանակների, իսկ մի մասը՝ չաստուածների:

Եբրայեցիք եւ մակեդոնացիք Յաւելեաց օրերով են սկսում տարին եւ ասում՝ օր առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ. վեցերորդով սկսում են Նիսան ամիսը, որ թարգմանւում է՝ «կազմութիւն», որովհետեւ [այդ օրը] Աստուած հողից ստեղծեց Ադամին: Մեզ մօտ էլ այդպէս է, որովհետեւ ուրբաթ նշանակում է «կազմութիւն», ասւում է նաեւ՝ «բօթ»[254], այսինքն՝ սուգ եւ տրտմութիւն՝ դրախտից ելնելու պատճառով եւ [խօսքերի], որ լսեց. «Հո՛ղ էիր եւ հո՛ղ ես դառնալու»:

Իսկ Իար նշանակում է՝ «Նոյ արդար». Սիւան՝ «Սեմ», Թամուզ՝ «Թարա», Ապ՝ «Աբրահամ»: Եւ մնացածն էլ ըստ մարգարէների դրած կարգի:

Իսկ հայերը Հայկի ու նրա տասը որդիների հետ են կապում. եօթ արու՝ Նաւասարդ, Հոռի, Սահմի եւ այլն եւ երեք դուստր՝ Արեգի, Ահկի, Մարերի: Երկուսն էլ ըստ եղանակի են ասւում՝ Մարգաց, Հրոտից:

Եւ սրանք այսպէս են ստուգաբանւում:

Նաւասարդ նշանակում է «նոր», այսինքն [նոր] տարուայ սկիզբ: Կամ էլ՝ այժմ օվկիանոսի վրայ «նաւելու» եղանակ է:

Հոռի, որովհետեւ «հորում» են երկրագործները եւ մշակները ցորենն ու

գինին ժողովում շտեմարաններում, որովհետեւ հոռին աշնանամուտն է:

Սահմի, այսինքն՝ գնում է հարաւայինը, գալիս հիւսիսայինը: Եւ կամ՝ իմաստուն այրերը «սահմանում» են իրենց տները՝ ձմռան գալու առիթով:

Տրէ, այսինքն՝ գիշերն առնում է օրից ժամեր ու մասեր՝ կրելով իր մէջ:

Քաղոց, ըստ իմաստունների՝ արձակում են խոյը հօտի մէջ: Եւ կամ՝ «քաղւում» են ժամերն ու մասերը, որովհետեւ քաղոցի տասը ձմեռնամուտ է:

Արանց՝ լեռների ու բլուրների ձիւնով պատուած ճանապարհները ասում են «արանց» ճանապարհ է եւ ոչ կանանց: Արի մարդկանց օրեր են եւ ոչ թոյլերի ու վատերի:

Մեհեկի, այսինքն՝ տնկիներն ու բոյսերը «մեռեալ» են՝ եղեամապատ ու ձիւնաթաղ լինելով. մեհեկի, այսինքն՝ «ածի»:

Արեգի, այսինքն աստուածային հրամանով բոյսերը, խոտերը «յառնում» են: «Արի՛ ասում է, հիւսիս եւ ե՛կ հարաւ» (Երգ Դ 16), որը գարնան ամիսն է, քանի որ մտնում է տասներկու [տանուտէրերի] մէջ:

Ահկի, այսինքն՝ «ահ անկանի» գետերի վարարելու ու ձեան հալելու պատճառով: «Ահ է»,- ասում են մարդիկ բոլոր տեղերում, որովհետեւ գետահալոց է:

Մարերի, այսինքն՝ ծանրաբեռնւում են մայրիները տերեւներով, ոստերով ու դառնում թռչունների, գազանների մայր:

Մարգաց, այսինքն ժամանակն է «մարգերը» մշակելու, որոնք դաշտերում ու հովիտներում են, այգեստաններում ու բուրաստաններում, եւ արեգակը Շան մօտ ու Շան հետ է, որովհետեւ տասներեքին ամառնամուտն է:

Հրոտից, ըստ դրուութեան է [ասւում], որովհետեւ ոտքերի տակ «հուր» է, որ այրում է ներքեւից վերեւ արեգակի ջերմութեամբ[255]:

Եւ Սուրբ Գրքում այլազգի մարգարէների անուններ չեն յիշատակւում, բացի հայերից:

Իսկ աղուանից «Նաւասարդուլ» ամիսը, որ նշանակում է «նաւասարդացի» կամ թոռներից է, կամ՝ որդիներից, կամ էլ՝ դուստրերից:

Իսկ վրացական «ախալծիլը» նշանակում է «Ախացայ», այսինքն՝ «մեծ պարոնացի»: Սեթալի, այսինքն՝ «սոնթեցի»: Սակայն ո՛չ սրանք, ո՛չ էլ հոյները սեփական ամսանուններ չեն գործածում, այլ ծառայակերպ հետեւում են օտարներին:

Իսկ յոյների ամսանունները աստուածների անուններով են, ինչպէս՝ Դիոս, որ Դիոնէսիոսի [անունով] է, որին խաղողի որթի եւ այլ զեխութիւնների արարիչ են ասում:

Ապէլիոսը Ապոլոնի [անունով] է, Պերիտոսը՝ նոխազոտն Պանի անունով:

Հռօմայեցիների ամսանունները նախնիների անուններով են. յունուար, այսինքն՝ որ Յովանն է՝ իրենց նախնին:

Սակայն ոմանք ասում են, թէ Մանասէի օրօք Նումաս Պումիլոսը աւելացրեց հռօմայեցիների տարուն երկու ամիս, որովհետեւ մինչեւ այդ տասը ամիս էր: Նա աւելացրեց յու-

նուարն ու փետրուարը: Իսկ մարտն ու ապրիլը իմաստասէրների անուններ են, օգոստոսը՝ թագաւորի:

Այսքանն այս մասին:

ԳԼՈՒԽ ԺԳ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՏԱՐՐԻ ՄԱՍԻՆ ՀՐԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԽԱ ԹՈՒՈՎ Պրակ ԼԵ

Նախ՝ որովհետեւ հուրը տարրական է: Ջերմ է: Փոխանցուող է: Ազդող: Մերձ [գտնուողի վրայ] առաւել [է ազդում], հեռուին՝ նուազ. նմանին՝ արագ, ընդդէմին՝ բուռն, հակառակին՝ միջնորդով: Ոչնչացնում ու սպառում է: Հալում է պինդը, ամրացնում թոյլը, նօսրացնում թանձրը: Այրում է: Մաքրում է: Տարրալուծում է: Միաւորում է: Ամէնուր է: Թաքնուած է, բացայայտ է: Վերընթաց: Նորոգուող: Մշտաշարժ: Ինքնաշարժ: Փոփոխուող: Անփոփոխ: Հատու: Սողացող: Անշեղ: Չթուլացող: Չպարփակուող: Թափանցիկ: Աննկատ: Աճող: Կլանող: Չբռնուող: Պարզ է: Զօրաւոր: Նորոգւում է: Ներառող է եւ լուսաւորում է:

Հարց. Ինչո՞ւ է հուրը հակառակ գործում, այսինքն՝ ամրացնում թոյլը, ինչպէս ձուն եւ պինդը հալում, ինչպէս երկաթը:

Պատասխան. Հուրը երկու յատկութիւն ունի. ջերմ ու չոր, որի պատճառով ջերմութեամբ տարրալուծում է ցրտութիւնը, ինչպէս երկաթն ու սառը իրերը եւ չորութեամբ ամրացնում հեղուկը, ինչպէս հաւի ձուի հիւթը եւ այլն: Այսկերպ ամրացնում է եւ լուծում, որովհետեւ ցուրտ ու խոնաւ է:

Հարց. Երբ փայտը այրւում է, ի՞նչ է լինում ծանրութիւնը:

Պատասխան. Ասենք, որ յայտնի է բոլորին, որ այն, ինչ այրում է հուրը, ոչնչացնում ու կորստի է մատնում բոլոր որակները, այսինքն՝ գոյնը, համը, հոտը, ինչպէս եւ ծանրութիւնը:

Ասենք նաեւ, որ փայտի ծանրութիւնը խոնաւութեան եւ սառնութեան մէջ է, որոնց հուրը ոչնչացնում է ջերմութեամբ ու չորութեամբ: Եւ եթէ որեւէ ծանրութիւն [նիւթի համար] պատահական յատկանիշ է՝ նիւթի սառելով, կորչում է: Օրինակ, եթէ մէկ կիլոգրամ շաքարը գցուի մէկ լիտր ջրի մէջ՝ դարձեալ կկշռի մէկ կիլոգրամ: Այդպէս էլ, եթէ մէկ կիլոգրամ ցորենը կամ այլ ինչ բաժան-բաժան անես ու հատիկներով ցրես, կշիռը չի պահպանուի: Նոյնպէս եւ փայտի ծանրութիւնն է պատահական ու օտարամուտ, որը եւ ոչնչացնում է հուրը:

Իսկ երկաթի ծանրութիւնը բնական է, ուստի չի կորչում: Այսպէս էլ ջուրը, թէեւ տաքանում է, սակայն չի թեթեւանում:

ՕԴԻ ԵՐԵՍՈՒՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ Պրակ ԼԶ

Նախ՝ որ հողմը արագընթաց է եւ այլոց տեղաշարժող: Կենդանարար է: Քշում է հոտերը: Ձգում է վերեւ ու բարձրանում: Անձրեւ է հեղում: Կարկուտ ու որոտ է բերում: Ցրում է ամպերը: Վարում է նաւերը: Տարանջատող է: Համանուն է հոգուն: Թռչունների կառքն է: Հոտերի ու համերի պարունակող է: Աճեցնում է տնկիները: Կենդանի շունչ է:

Խօսքի գործիք է: Ամենուրէք է: Լոյսի կրող է: Հաղորդում է բոլորին: Անցնելով երկրի միջով ու երկինքը բաժանելով՝ հաստատուն է պահում: Շարժում է ջրերը եւ երակների արիւնը: Նուրբ է: Յստակ է: Հովացնում է սիրտը: Զարդարւում է թռչուններով: Ներգործութիւնների տեղն է: Չարքերի օթեւանն է: Փոփոխւում է: Թեթեւ է: Թափանցիկ է ու լուսաւորող:

ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԴԻՏՒՈՒՄ ԵՆ ՕԴՈՒՄ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԾԻԱԾԱՆԻ, ՎԱՐՍԱՒՈՐ ԱՍՏՂԻ ԵՒ ԱՅԼՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊՐԱԿ ԼԷ

Հարց. Ի՞նչ է ծիածանը, որին աղեղ են կոչում:

Պատասխան. Խոնաւ օդը կորանալով եւ արեգակի դիմաց գտնուելով՝ նրանից լոյս է առնում ու ձեւաւորւում իբրեւ աղեղ:

Զանազան գոյները չորս տարրերից են, որ գտնւում են օդում. սեւը հողից է, կապոյտը՝ օդից, սպիտակը՝ ջրից, դեղինը՝ հրից, եւ սրանց խառնուրդից ստացւում են ծիրանի ու կարմիր գոյները: Իսկ այն, որ երկուսն են լինում՝ ներքեւինը պայծառ է արեգակի նմանութեամբ, իսկ վերեւինը նուազ է, որովհետեւ ներքեւից է ընկալւում: Եւ եթէ առաւօտեան է լինում մինչեւ կէսօր, կոչւում է արեւելեան, իսկ կէսօրից մինչեւ երեկոյ՝ արեւմտեան:

Հարց. Ո՞րն է կոչւում բակ, որ լուսնով ու արեգակով է:

Պատասխան. Ամպի մնացորդն է՝ աստղերի շուրջը, որ իրեն է ձգում մոլորակների սպիտակ լոյսը ու լուսաւորում[256]: Արիստոտէլը սա անուանում է պարզութեան նշան: Իսկ ուրիշներն ասում են, եթէ պարզուելուց է, ուրեմն խոնաւութեան նշան է եւ եթէ խոնաւութիւնից է, պարզուելու նշան է:

Հարց. Ի՞նչ է գիսաւոր աստղը:

Պատասխան. Աստղ չէ, այլ՝ հրի տարրից այրուող գոլորշի, երբ մօտենում է նրան: Ու այրւում է այնքան, որքան որ գոլորշու նիւթն է, եւ լուսեղէն բաշ է արձակում, որ նշանակում է, թէ բնական աստղ չէ: Այլեւ նշան է, որ թագաւոր է փոխուելու, պատերազմ եւ սով, կամ էլ երկրի վրայ որեւէ խռովութիւն է լինելու:

Հարց. Ի՞նչ է աստղի թռիչքը:

Պատասխան. Դարձեալ գոլորշի է՝ առաջացած հողմից, որ մօտենալով հրին՝ այրւում է, եւ քշուելով հողմի կողմից, թուում է, թէ՝ թռչող աստղ է, որ արագ մարում է:

Հարց. Լոյսը որտեղի՞ց է իջնում երկրի վրայ:

Պատասխան. Իջնում է երկնքի արփիից, որ ակնյայտ նշանն է երկնային փառքի:

Ոմանք ասում են, թէ հրի տարրից ջերմութիւնը տարանջատւում է եւ իջնում միայն լոյսը, ըստ այդմ՝ «Տիրոջ ձայնը կտրում է հրի բոցը» (Սղմ. ԻԸ 7)[257]:

ՓԱՅԼԱԿԻ, ՈՐՈՏԻ, ԿԱՅԾԱԿԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է փայլակը:

Պատասխան. Փայլակը հրից այրուող ամպի ջրի եւ հողմի խառնուրդն է, որ նորից բորբոքւում ու փայլատակում է:

Հարց. Ի՞նչ է որոտը:

Պատասխան. Երկրից բարձրացած խոնաւ ու չոր գոլորշիների խառնուրդն է: Խոնաւը ամպ է դառնում, իսկ չոր [գոլորշին] ամպի մէջ սեղմուելով՝ ճեղքում է ամպի շերտերը, որից լինում է որոտ ու փայլատակում: Ինչպէս ասենք այն, որ մէկը պատռի կտորը, ու թափուի փոշին, որովհետեւ նախ որոտն է, յետոյ՝ փայլակը: Ընդ որում՝ ձայնը, որ [աւելի] դանդաղ է շարժւում, քան փայլակը, աւելի ուշ է հասնում լսողութեանը:

Հարց. Ի՞նչ է ամպի միջի շանթը:

Պատասխան. Շանթը ամպի միջի գոլորշիներից է լինում, որ ջերմութիւնից չորացած եւ քարացած հուր է, որի թանձրը եւ ծանրութեամբ վայր իջածը կոչւում է կայծակ, որ լինում է ամառային եղանակներին: Եւ ըստ այն բանի, թէ ջերմութիւնը շատ է կամ քիչ՝ կայ, որ դուրս պրծնելիս այրւում է. կայ, որ օդի մէջ է գալիս ու այրւում. կայ, որ հասնում է երկրին, նոր է պայթում: Եւ մեծ ու հզօր ջերմութիւն ունենալու պատճառով, եթէ հանդիպում է մարդու կամ կենդանու՝ ոչնչացնում է, որոնցից մնում են պատահական [յատկանիշներ]՝ քանակ կամ որակ: Շատերն են տեսել պատեանի միջի սուրը այրուած, իսկ պատեանը անխանձ մնացած: Այդպէս էլ Եգիպտոսում հուրը, որ իջնում էր կարկտի հետ՝ հզօրութեան պատճառով սպանում էր կենդանիներին, իսկ մարմիններն անվնաս էին մնում (տե՛ս Ելք Թ 24):

Իսկ հուրը, որ երկրում կապուած է նիւթին, շատ ուժեղ չի այրում, որի պատճառով նախ ոչնչացնում է քանակն ու որակը, ապա՝ իրի գոյութիւնը:

Իսկ այն, որ գոլորշուց է բաղկացած, արտաքնապէս հով է ու խոնաւ, ներսից՝ ջերմ ու չոր, որի պատճառով արտաքինը անվնաս է թողնում՝ ոչնչացնելով ներսը[258]:

ԱՄՊԻ, ԱՆՁՐԵՒԻ, ՁԵԱՆ, ԿԱՐԿՏԻ ԵՒ ԱՅԼՆԻ ՄԱՍԻՆ Պրակ ԼԸ

Հարց. Որտեղի՞ց են լինում ամպն ու անձրեւը:

Պատասխան. Երկու գոլորշիներից, որոնք բարձրանում են երկրից. մէկը չոր ու ծխանման, միւսը՝ խոնաւ ու թաց իրերից գոլորշացած: Սրանից լինում են մառախուղ ու սառնամանիք, ձիւնաբեր ամպ եւ կարկուտ, իսկ չորից՝ հողմ ու զանազան բռնկումներ՝ որոտ, կայծակ, փայլակ եւ այլն, ինչպէս ասուեց:

Արդ, ամպ է լինում, երբ արեգակի զօրութեամբ ջրերից ու խոնաւ տեղերից վեր են բարձրանում գոլորշիները եւ բարձր խոնաւութեան պատճառով երեւում են ու խտանալով՝ դառնում ամպ: Մէգը անձրեւահոս ամպի մնացորդն է, ուստի այն [եղանակի] պարզելու նշան է:

Մառախուղը անբերրի ջրերի մթագոյն գոլորշին է, որ ծանր է օդից եւ նօսր՝ ամպից: Սա չի դառնում ամպ կամ անձրեւ, այլ քշւում է ցածր ու մնում երկրին մօտ:

Ցօղը թափանցիկ խոնաւութիւնն է՝ իջած ներքեւ, որ գիշերը աստղերն են վեր քաշել եւ առաւօտուայ ծագելով՝

նորից երկիր է իջել մանր շիթերով: Ապա նորից վերեւ ձգուելով գումարւում է խոտերի ծայրերին եւ ծանրացած կախւում իբրեւ մարգարիտ:

Եղեամը նոյն ցօղն է կիսասառած՝ երկրի վրայ:

Անձրեւը ամպից ներքեւ թափուած ջուրն է, որ խոնաւութեան թանձրացումն է:

Ձիւնը ծնւում է երկու ներհակ հողմերի միջեւ ջերմացած ամպից: Եւ լինում է փրփրատեսակ ու սպիտակագոյն: Սառելով ներհակ հողմերից՝ ամբողջովին փոխւում է ջրի, որի պատճառով էլ նրա մասնիկները չեն ամրանում, այլ նոսրանալով՝ ներքեւ են իջնում[259] եւ կոչւում ձիւն:

Կարկուտը ծնւում է ամբողջովին տաքացած ամպից, որ արեգակի զօրութեամբ վեր էր ելել եւ սառել հիւսիսային հողմից, որ կոչւում է Ապարքտիաս: Եւ ամրութեանը համապատասխան փշրուելով՝ ընկնում է, եւ ներքեւ իջնելով օդի ջերմացած գնդից՝ դառնում է կարկուտ:

Սրանք բոլորը լինում են խոնաւ գոլորշուց:

ԶԱՆԱԶԱՆ ՀՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԹ

Իսկ չորութիւնը, ցրուած դուրս մղուելով հոսանքից, դառնում է հողմ:

Եւ նախ, չորսի են բաժանւում բոլոր հողմերը, որոնցից իւրաքանչիւրը դարձեալ երեքի է բաժանւում, եւ բոլորը լինում են տասներկուսը. երեք արեւելեան, երեք արեւմտեան, երեք հարաւային, երեք հիւսիսային:

Նրանք, որ փչում են արեւելքից, կոչւում են եւրոսներ: Սրանք բարեխառն են եւ չորացնող:

Հարաւից փչողները նօտոս են կոչւում, որ ջերմ են լինում եւ հալեցնում սառոյցը: Եւ ծնում են փայլատակումներ ու յորդառատ անձրեւներ:

Արեւմուտքիցը զեփիւռ են կոչւում: Սրանք վերընձիւղում են ծաղիկները, ծնում ամպ, բերում անձրեւ ու կուտակումներ:

Հիւսիսիցը վօռէաս են կոչւում, որոնք սառն են: Սրանցից Թրասկիան ձիւն ու կարկուտ է բերում: Սրանք սեղմում են ամպերը եւ արգելակում անձրեւը[260]:

ՏԱՍՆԵՐԿՈՒ ՀՈՂՄԵՐԻ ԱՆՈՒԱՆՈՒՄՆԵՐԸ

Արեւելեանները, որ կոչւում էին եւրոսներ, բաժանւում են երեքի. որը հիւսիսին մօտ է փչում, կոչւում է Կիկիաս, որը չոր է ու ցամաքեցնող: Որը հարաւին մօտ է փչում, Եւրոս է կոչւում. սա խոնաւութիւն ու տեղատարափ է բերում: Միջինը Ապէլիոդն է, որը բարեխառն է, անձրեւաբեր ու արեւոտ:

Արեւմտեանները, որ կոչւում էին զեփիւռներ, դարձեալ երեքն են: Որ մերձ է հիւսիսին, Արգէստէս է կոչւում: Սա ամպեր է ստեղծում: Որ մօտ է հարաւին, Լիփս է կոչւում. սա անձրեւաբեր է: Միջինը Զեփիւռն է, որ ծաղիկներն է ճոճում:

Հիւսիսայինները կոչւում էին վօռէասներ: Նա, որ մօտ է արեւելքին եւ կոչւում է վօռէաս, սեղմում է ամպերը, արգելակում անձրեւը: Որ մօտ է արեւմուտքին՝ Թրասկիաս է կոչւում եւ ձիւնաբեր է: Միջինը Ապարքտիասն է, որ սառն է ու կարկտաբեր:

Հարաւայինները նօտոսներ են կոչւում: Այն, որ մօտ է արեւելքին, Եւրոնօտոս է կոչւում, որ հալեցնում է սառոյցը: Որ արեւմուտքին է մօտ՝ Լիւանօտոս, որ բերում է մառախուղ, մէգ եւ ամպերի խառնակում: Միջինը Նօտոսն է, որ բերում է որոտ, փայլակ, ուժեղ անձրեւ:

ՄՐՐԻԿ ՀՈՂՄԻ ՄԱՍԻՆ

Իսկ մրրիկը այն հողմն է, որ դուրս է գալիս ամպից եւ նորից ամպն իր մէջ առնելով՝ պտտեցնում է: Կամ էլ երկու հակառակ եկող հողմեր իրար են հանդիպում եւ խառնւում: Եւ կամ էլ ահագնանում են ուժեղ երկրաշարժից:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Երկրաշարժը թանձր գոլորշին է, որ երկրի կողմից ներս է քաշւում ու սեղմուելով՝ դուրս է ժայթքում եւ ցնցում երկիրը: Կամ էլ հողմ է, որ շեղուելով իր ճանապարհից՝ երկրի խոռոչներն է մտել ու երկրի ամրութեան պատճառով ցնցել նրան, մինչեւ որ ելք է գտնում դուրս գալու եւ դադարում:

Այսքանն այս մասին:

ԱՄՊԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՄԵՄԱՏՒՈՒՄ Է ՄԵՂՔԻ ՀԵՏ
Պրակ Խ

Նախ՝ որ ամպը բարձրանալով երկրի վրայ՝ խոչընդոտում է արեգակի լոյսին ու ջերմութեանը:

Երկրորդ՝ ամպն ու մէգը խառնում են պարզ օդը եւ մթնեցնում:

Երրորդ՝ ամպը կարճ ժամանակում է կազմաւորւում եւ մեծանում:

Չորրորդ՝ ամպից որոտ ու կայծակներ են թափւում:

Հինգերորդ՝ ամպից իջնում է սառնութիւն, ձիւն ու կարկուտ:

Վեցերորդ՝ ամպից իջնում է անձրեւ, որ դառնում է հեղեղ, ինչպէս Նոյի ժամանակ:

Եօթներորդ՝ ամպ կայ, որ շատ խիտ լինելու պատճառով ո՛չ որոտ է արձակում, ո՛չ կայծակ:

Ութերորդ՝ հողմը փչելիս ամպը արագ ցրւում է:

Իններորդ՝ ցրուելուց յետոյ բոլորովին հետք չի թողնում:

Տասներորդ՝ ամպի ցրուելուց յետոյ օդը վերստին վերականգնում է իր պայծառ մաքրութիւնը:

ԴԱՐՁԵԱԼ ԱՄՊԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԲԱՂԴԱՏՒՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻ ՀԵՏ[261]

Նախ, որ թեթեւ է այդ ամպը, որի պատճառով շատ է բարձրանում:

Երկրորդ՝ ամենեւին չունի խոնաւութիւն:

Երրորդ՝ պայծառ ու լուսաւոր է:

Չորրորդ՝ արագընթաց է եւ արագ է մեծանում:

Հինգերորդ՝ հովանի է լինում տօթի ժամանակ:

Վեցերորդ՝ ամպը խորհրդանշում է ծածուկն ու անտեղեակութիւնը:

Եօթներորդ՝ երբեմն ծածկում է արեգակին, ինչպէս գիշերը:

Ութերորդ՝ ամպը ծովից անտեսանելիօրէն վերցնում է եւ յայտնապէս ցօղում երկիրը ու լցնում այն շատ բարութիւններով:

Իններորդ՝ դառը ջուրը ամպի մէջ փոխւում է քաղցրի ու ախորժելիի:

Տասներորդ՝ ամպը ցօղում է ոչ միայն անձրեւ, այլեւ՝ ձիւն ու կարկուտ, կայծակներ է տեղում, ինչպէս նշեցինք վերը:

ՓԱՅԼԱՏԱԿՄԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ

Նախ՝ որ յանկարծակի է փայլատակում:

Երկրորդ՝ հրի նման է փայլատակում:

Երրորդ՝ լցնում է բոլոր խորշերը:

Չորրորդ՝ փայլատակուածը անբաժանելի է մնում:

Հինգերորդ՝ նախ որոտում է, ապա՝ փայլատակում:

Վեցերորդ՝ արագընթաց է:

Եօթներորդ՝ ուժգին է:

Ութերորդ՝ փայլում է ամպի միջից, որ ծածկում էր նրան:

Իններորդ՝ փայլատակում եւ դուրս է ժայթքում:

Տասներորդ՝ ահաւոր ու երկիւղալի է անզգոյշների համար:

Այսքանն օդի եւ հրի տարերքների մասին:

ՋՐԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ Պրակ ԽԱ

Նախ՝ որ Քրիստոսի կողից աղբիւր դարձաւ եւ բխեց առ մեզ:

Երկրորդ՝ մկրտութեան նիւթ շնորհեց:

Երրորդ՝ Քրիստոս այն գինու փոխեց:

Չորրորդ՝ ջրից կազմուեց երկինքների երկինքը:

Հինգերորդ՝ ձկներով է զարդարւում:

Վեցերորդ՝ օդին էլ իբրեւ զարդ թռչուններ տուեց:

Եօթներորդ՝ բոլոր աղբիւրները եւ գետերը նորից լցւում են ծովի մէջ, որից ելնում են:

Ութերորդ՝ անձեւ ու դիւրափոխ է:

Իններորդ՝ դառնութիւնը քաղցրութեան է փոխում երկրի խորշերում:

Տասներորդ՝ բազում կուտակումների ներքեւում է գտնւում:

Տասնմէկերորդ՝ ժամանակին աշխարհը մաքրեց:

Տասներկուերորդ՝ Կարմիր ծովի մէջ ճանապարհ բացեց:

Տասներեքերորդ՝ ժամանակին խորասուզեց լէգէօններին խորքերում:

Տասնչորսերորդ՝ ջուրը օդով վեր է բարձրանում, հողմով անձրեւում երկրի վրայ:

Տասնհինգերորդ՝ նոյն բնոյթով մտնում է բուրաստաններ եւ առաջացնում զանազան գոյներ, համեր, հոտեր:

Տասնվեցերորդ՝ ունի ջերմանալու եւ սառելու յատկութիւններ:

Տասնեօթներորդ՝ հեղուկ է ու փոփոխուող:

Տասնութերորդ՝ լոյսն արտացոլող նիւթ է:

Տասնիններորդ՝ թափանցիկ մարմին է:

Քսաներորդ՝ ընդհանուր է բոլորի համար:

Քսանմէկերորդ՝ սառչում է իբրեւ ապակի:

Քսաներկուերորդ՝ ամպի մէջ պատճառ է դառնում ծիածանի:

Քսաներեքերորդ՝ ոռոգում է հողը:

Քսանչորսերորդ՝ վարում է նաւերը:

Քսանհինգերորդ՝ լցուում է դատարկ տեղերը:

Քսանվեցերորդ՝ կենդանութիւն է տալիս տնկիներին:

Քսանեօթներորդ՝ տեղահանում է քարերը:

Քսանութերորդ՝ մաքրում է կեղտերը:

Քսանիններորդ՝ մարում է կրակը:

Երեսուներորդ՝ յագեցնում է ծարաւը:

ՀԱՐՑՈՒՄ ՋՐԵՐԻ ԲԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ է ջուրն այսքան շատ եղաւ:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով: Նախ, որպէսզի լուսատուների ջերմութիւնը չայրի երկիրն ու վնասի: Երկրորդ՝ որովհետեւ հողը չոր է ու ցամաք, այդ պատճառով անհրաժեշտ է, որ ջուրը շատ լինի, որպէսզի խառնուի հողին ու բերրի դարձնի: Երրորդ՝ որպէսզի բոլոր տեղերում՝ լեռներում, դաշտերում ջուր լինի, որ կենդանիները խմեն: Չորրորդ՝ որպէսզի տնկիները եւ բոյսերը ներքին հիւթի եւ դրսի անձրեւի շնորհիւ միշտ դալար մնան: Հինգերորդ, որովհետեւ շատ կենդանիներ ջրային վայրերում են բնակւում: Վեցերորդ՝ որովհետեւ պատուական քարերը, մարգարիտը, ազնիւ ոսկին ծովերում են գտնւում: Եօթներորդ՝ բոլոր գետերը դուրս գալով ծովից՝ նորից ծովն են լցւում: Ութերորդ՝ նաւերը ջրի վրայով արագ են ընթանում եւ բաւարարում են միմեանց կարիքները: Իններորդ՝ ջուրը պարիսպ է ծառայում՝ պաշտպանելով թշնամուց, գազաններից, գողերից: Տասներորդ՝ երփներանգ գոյներով գեղեցիկ է աչքի համար, վէտվէտումներով՝ ծալ-ծալ ծիծաղկոտ երեսով:

Այս ամէնը եւ առաւել քան այս ամէնը օգուտն է ջրերի բազմութեան:

ՋՐԵՐԻ ԴԱՌՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ են ծովերը աղի եւ դառը:

Պատասխան. Շատ պատճառներ են բերւում: Ոմանք ասում են, թէ զանազան գարշ կենդանիներ կան ծովերում, որոնք դառնացնում են:

Ուրիշներ ասում են, թէ բազմաթիւ աղբիւրներ են բխում ծովերում, ինչպէս Մեռայի ջուրը (տե՛ս Ելք ԺԵ 23) եւ ծովը դարձնում են դառը: Ոմանք էլ ասում են, թէ այն հողը, որի վրայ ծովն է, բնոյթով աղի է եւ դառը, իսկ եզերքի հողը անձրեւը քշում եւ լցնում է ծովը: Իսկ որ աւելի հաւանականն են, երկուսն են: Նախ, Արարիչ Աստուած բնական ծովերը աղի եւ դառը ստեղծեց, որ չհոտեն նրանում բնակուող կենդանիները, որոնց ծարաւը յագեցնում են գետերը եւ անձրեւները, որոնք լցւում են ծովը:

Երկրորդ՝ ասում է Արիստոտէլը, թէ լուսատուների, հրի, օդի ջերմութիւնը մտնում է ծով, քաշում քաղցր եւ պարզ հիւթը, որից յետոյ մնում են դառն ու աղին: Եւ օրինակ է բերում ստամոքսը, որ կերակուրը մարսելուց յետոյ՝ գոլորշիները գլուխ է ուղարկում, պարզ ջուրը՝ լեարդ, իսկ այն, որ մնում է՝ թանձր, աղի ու դառն է: Հրով այրուածն էլ դառն է ու աղի:

Իսկ այն, որ լուսատուները գոլորշին քաշում են հողից, յայտնի է առաւօտեան ցօղի ու եղեամի գոյութեամբ, այսինքն՝ այն, ինչ գիշերը քաշում են՝ լոյսի բացուելով դարձեալ վերադարձուում է հողին, որը ձմռանը եղեամի տեսքով է, ամռանը՝ ցօղի:

Հարց. Ծովերի ջրերն աղի են. ապա ինչո՞ւ աղբիւրներն ու գետերը, որոնք դէպի մեզ են բխում, քաղցր են:

Պատասխան. Դրանք անցնում են երկրի միջով եւ ազատւում ժանգից ու դառնութիւնից, այսինքն՝ հողը եւ աւազը իրենց մէջ են քաշում դառնութիւնը, եւ մնում է քաղցր ջուրը, նման այն մարդկանց, որ ուսանում ու կրթւում են եւ ապա օգտակար լինում Աստծուն եւ մարդկանց:

ՏԱՔ ՋՐԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԲ

Հարց. Տաք աղբիւրները որտեղի՞ց են ջերմութիւն առնում:

Պատասխան. Ինչպէս հողի, այդպէս էլ հողմի մէջ կան ջրի երակներ, որի պատճառով նրանք վեր են փչում, նոյն կերպ եւ հրի, ինչպէս արեւմուտքում գտնուող էտնա լեռան մէջ, կամ Կասպիական ծովի եզրին գտնուող Բագւում, որտեղ ծծումբը հուր է պարունակում:

Արդ, երբ ջրի աղբիւրները հրի երակի, այսինքն՝ ծծմբի մօտով են հոսում, տաքանում են ուժեղ կամ թոյլ՝ մերձակայքով կամ հեռուից անցնելիս:

ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ աղբիւրները ձմեռը տաք, իսկ ամառը՝ սառն են բխում:

Պատասխան. Նախ, որովհետեւ ձմռանը ջերմութիւնը կուտակւում է երկրի ներսում, իսկ ամռանը՝ սփռւում հողի երեսով մէկ: Ինչպէս, օրինակ, երբ մարդը մահանում է, ջերմութիւնը կուտակւում է սրտում, ապա մահանում է: Եւ ծառերն էլ ձմռանը [ջերմութիւնը] կուտակում են արմատներում: Նոյնը եւ հողը:

Արեգակն էլ ձմռանը հեռանում է երկրի վերեւի մասից եւ անցնում ներքեւի մասը, ինչպէս որ ամռանը մօտենում է երկրի վերեւի մասին՝ հեռանալով

ներքեւի մասից, որի պատճառով էլ [աղբիւրները] բխում են տաք եւ սառը:

Հարց. Ինչո՞ւ լեռների վրայ աղբիւրները աւելի շատ են բխում, քան դաշտերում:

Պատասխան. Չորս պատճառով:

Նախ՝ ոմանք ասում են, թէ որքան բարձր է երկրի վրայի հողը, այդքան էլ ներքեւի կողմը խորխորատներ են, ուստի ծովի ջրերը հեշտութեամբ են վեր ելնում:

Երկրորդ՝ ամենուրէք հողը խառնուած է ջրին, որ ակներեւ է ջրհորի [օրինակով], եւ այն ջուրը, որ հողից է բարձրացել, իջնում է ներքեւ եւ աղբիւր բխում:

Երրորդ՝ ծովի ջուրը բարձր է, քան հողը, որի պատճառով ճնշում գործադրելով՝ վեր է մղում եւ ապա հեղում երկիրը, ինչպէս այն, որ մարդիկ բարձր լեռներից իջեցնում են ջուրը եւ ըստ նոյն չափի միւս կողմում բարձրացնում՝ մի քիչ աւելի պակաս [թողնելով]:

Չորրորդ՝ ցուցադրումն է Արարչի ամենահրաշ խնամածութեան, որ ներքեւում հոսող ջրերը լեռների միջով վեր է հանում այնտեղ գտնուող կենդանիների համար եւ ոռոգում [այնտեղ], ուր գետերը չեն բարձրանում:

ՋՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԳ

Ջուր է ասւում տասներկու ձեւով:

Առաջին՝ բնական:

Երկրորդ՝ ժողովրդի [իմաստով]:

Երրորդ՝ բարեբախտութեան:

Չորրորդ՝ դժբախտութեան:

Հինգերորդ՝ ագահութեան:

Վեցերորդ՝ հեշտասիրութեան:

Եօթներորդ՝ լուանում է:

Ութերորդ՝ նեղութեան:

Իններորդ՝ հանգստութեան:

Տասներորդ՝ իմաստութեան:

Տասնմէկերորդ՝ լուսաւորութեան:

Տասներկուերորդ՝ կոչում կամ տեսութիւն:

Առաջինի մասին ասւում է. «Որ խմի մի բաժակ սառը ջուր» (Մտթ. Ժ 42):

Երկրորդի մասին ասւում է. «Բազում ջրերը բազում ժողովուրդներ են» (Ես. ԺԷ 13):

Երրորդի մասին ասւում է. «Մենք անցանք հրի ու ջրի միջով» (Սղմ. ՀԵ 12):

Չորրորդի մասին ասւում է. «Փրկի՛ր ինձ Աստուած, որովհետեւ ջրերը հասան ինձ» (Սղմ. ՀԸ 2):

Հինգերորդի մասին ասւում է. «Ով խմի այս ջրից, դարձեալ կծարաւի» (Յովհ. Դ 13):

Վեցերորդի մասին ասւում է. «Ռուբէնը հոսեց ջրի նման եւ այլն»:

Եօթներորդի մասին ասւում է. «Լուացուեն ջրով, որ չմեռնեն» (Ելք Լ 20):

Ութերորդի մասին ասւում է. «Ուղարկի՛ր քո ձեռքը եւ փրկի՛ր ինձ բազում ջրերից եւ օտար որդիների ձեռքից» (Սղմ. ՀԸ 2):

Իններորդի մասին ասւում է. «Բոլորը, ովքեր ծարաւ են, թող գան ջրի մօտ» (Յովհ. Է 37):

Տասներորդի մասին ասւում է. «Տիրոջ գիտութեամբ լցուեց երկիրը, ինչպէս ջրերն են լցնում ծովերը» (Ամբ. Բ 14):

Տասնմէկերորդի մասին ասւում է. «Իմաստութեան փրկարար ջրից կխմեցնի նրան»:

Տասներկուերորդի մասին ասւում է. «Ինչպէս եղջերուն փափագում է աղբիւրների ջրերը» (Սղմ. ԽԱ 2):

ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԴ

Հարց. Ինչո՞ւ է կոչւում երկիր:

Պատասխան. Նախ, որովհետեւ «Երկու իր» է, այսինքն՝ հող ու ջուր, որ նրա էութիւնն են:

Երկրորդ՝ որովհետեւ ունի կրկնակի ծայրեր. երկարութիւն, լայնութիւն, որ արեւելքից արեւմուտք ու հիւսիսից հարաւն են:

Երրորդ՝ որովհետեւ ջուր է պարունակում իր մէջ, եզրերում եւ երեսին:

Չորրորդ՝ երկիր [նշանակում է] «երերում» ու տատանում՝ փորձութիւնների մէջ:

Ասում է՝ «Երկի՛ր [երկնչի՛ր] եւ կաց կասկածանքների մէջ», որովհետեւ երկիւղ կայ սայթաքելու բարուց: Եւ եթէ սայթաքել ես, ուրեմն՝ երկի՛ր [երկնչի՛ր] պատժից»:

Նոյնպէս կոչւում է նաեւ Աշխարհ, այսինքն աշխար, սուգ եւ տրտմութեան հովիտ[262]:

ԵՐԿՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երկիրը վեց նշանակութիւն ունի:

Նախ՝ որ ոտքով տրորւում է:

Երկրորդ՝ որ հոգով է կառավարւում:

Երրորդ՝ ժամանակաւոր կեանք ունեն:

Չորրորդ՝ հաւատ են ձեռք բերում:

Հինգերորդ՝ հրամայում է փոխել:

Վեցերորդ՝ որտեղ մարդը սատանայ է լինում:

Երկիր, որը տրորւում է, նիւթական լինելն է նշանակում:

Երկիր, որը հոգով է կառավարւում, ուրեմն կայ մահկանացու մարմին:

Երկիր, որը կենցաղավարում է ժամանակաւորապէս, նշանակում է կայ բանական հոգի:

Երկիր, որտեղ հաւատը ձեռք են բերում, ուրեմն կայ նաեւ երկնային գաւառ:

Երկիր, որը հրամայում է փոխել, ուրեմն դատապարտելի յանցանք կայ:

Երկիր, որտեղ մարդը սատանայ է, ուրեմն կան դժոխքի տանջանքներ:

Առաջինում մենք տարագիրներ ենք:

Երկրորդում՝ մարմնականներ:

Երրորդում՝ Աստծոյ աշխարհականներ:

Չորրորդում՝ երկնաւորներ:

Հինգերորդում՝ Արարիչ Աստծուն ատելիներ:

Վեցերորդում՝ անվախճան տանջուողներ:

Առաջինում չարչարանքն է: Երկրորդում՝ ծանրաբեռնուածութիւնը: Երրորդում՝ պտղաբերութիւնը: Չորրորդում՝ փառքը: Հինգերորդում՝ դատապարտութիւնը: Վեցերորդում՝ խաւար մթութիւնը:

Առաջինը մարդու բնակարանն է:

Երկրորդը՝ հոգիների օթեւանը:

Երրորդը՝ առաքինութիւնների ընդունարանը:

Չորրորդը՝ վերինների գաւառը:

Հինգերորդը՝ դեւերի կերակուրը:

Վեցերորդը՝ դատապարտեալների բանտը:

Առաջինը արտասուքը եւ դատապարտութիւն է: Երկրորդը՝ նեղութիւն ու անձկութիւն: Երրորդը՝ արդարութիւն եւ ընտրութիւն: Չորրորդը՝ փառք ու մեծութիւն: Հինգերորդը՝ կարօտ ու տրտմութիւն: Վեցերորդը՝ ամօթ ու թշուառութիւն:

Առաջինի մասին ասում է Սաղմոսում. «Երկիրը Տիրոջն է՝ իր ամբողջութեամբ» (Սղմ. ԻԳ 1):

Երկրորդի մասին ասում է Արարածոց գրքում. «Երկիրը քեզ համար փուշ եւ տատասկ կբուսեցնի» (Ծննդ. Գ 18), իսկ Սաղմոսն ասում է. «Ճշմարտութիւնը երկրից բուսնեց» (Սղմ. ՁԴ 12):

Երրորդի մասին Աւետարանն ասում է. «Սերմը, որ ընկաւ բարեբեր հողի մէջ» (Մտթ. ԺԳ 24):

Չորրորդի մասին ասում է Մատթէոսի Աւետարանում. «Երանի հեզերին, որովհետեւ նրանք են ժառանգելու երկիրը» (Մտթ. Ե 5):

Հինգերորդի մասին ասում է Ծննդոց գրքում. «Հող կուտես քո կեանքի բոլոր օրերին» (Ծննդ. Գ 14):

Վեցերորդի մասին ասում է Յոբի գրքում. «Թոյլ տո՛ւր ինձ արտասուելու մի քիչ, որովհետեւ գնալու եմ այնտեղ, որտեղից չեմ դառնալու, երկիրն այն խաւարի ու մթին» (Յոբ Ժ 21):

ԵՐԿՐԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Խե

Նախ, որ մեր մայրն է, որից ծնւում ենք բոլորս: Եւ սեղան է ամենալիր, որից կերակրւում ենք բոլորս: Մեր դաստիարակն ու սնուցողն է: Արհեստների, առաքինութեան ու հանճարի իմաստութիւնը սովորելու վայրն է: Մեր գերեզմանն ու ընդունողն է: Տարրերի մէջ վերջինն ու խիտն է: Թանձր է: Ծանր է: Կլոր է: Անշարժ է: Արարածների համար միջին կէտ է: Մետաղների շտեմարան է: Անհարթ է: Պտղատու մայր է: Տնկիների արմատն է: Կենդանիների դայեակն է: Շինութիւնների հիմքն է: Շրջապատուած է այլ տարրերով: Իր մէջ է կրում դժոխքը: Սառն է ու չոր: Գոյնով սեւ է: Նսեմ է: Ոտնակոխ է լինում մարդկանց ու անասունների կողմից: Բոլոր կեղտերը նրա մէջ են թաղւում: Անշարժ կախուած է իր միջին կէտից: Ազատւում ու ցնցւում է գոլորշիներից, որ ներսում են գտնւում: Գեղեցկանում է մարդկանցով ու կենդանիներով: Զարդարւում է բոյսերով, ծաղիկներով, ծառերով: Փոփոխական է ու փոխւում է չորս եղանակներին: Նրա շուրջը շրջանաձեւ պտտւում են երկինքն ու աստղերը:

ԲԱՐՁՐ ԼԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ են պէտք բարձր լեռները:

Պատասխան. Նախ, որ աշխարհի հաստատութիւններն ու բուրգերն են:

Երկրորդ՝ երկրի բաժանողներն ու սահմաններն են:

Երրորդ՝ բարեխառն վայրեր են շոգին եւ ամրոցներ՝ խռովայոյզ օրերին:

Չորրորդ՝ բոյսերի եւ բժշկական խոտերի [վայրեր] են, ըստ այդմ՝ «Խոտեր բուսեցրիր լեռների վրայ» (Սղմ. ՃԽԶ 8):

Հինգերորդ՝ եղջերաւորների, մանր ու մեծ երէների բնակավայրեր են, ըստ այդմ՝ «Լեռները բարձունքներ են եղջերուների եւ ապաւէն վէմ՝ նապաստակների համար» (Սղմ. ՃԳ 18):

Վեցերորդ՝ աղբիւր ծնող են, ըստ այդմ՝ «Առաքեցիր աղբիւրներ հովիտները, եւ լեռների միջով գնացին ջրերը» (Սղմ. ՃԳ 10):

Հարց. Ինչո՞ւ լեռների ստորոտում աւելի տաք է լինում, քան կատարին, որն աւելի մերձ է արեգակին:

Պատասխան. Երեք պատճառով:

Նախ, որովհետեւ հողմերը վերեւում են փչում, եւ բարձունքում օդը բարեխառն է դառնում, իսկ դաշտերում հողմ չկայ, որի պատճառով աւելի ջերմ է: Երկրորդ՝ օդի վերին մասը պարզ է, իսկ ներքեւի մասը երկրին մօտ գտնուելով՝ թանձրանում է նրա չորութիւնից, եւ ջերմութիւնը խառնուելով նրա հետ՝ աւելի տաք է դառնում: Երրորդ՝ վերեւում մէկն է ջերմութիւնը, իսկ այստեղ՝ երկուսը, որովհետեւ հասնելով երկրի գոգաւորութեանը՝ անդրադարձութեամբ հաւաքւում են ներքեւում, եւ լինում է տաք:

ԲՈՅՍԵՐԻ ԵՒ ՏՆԿԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԶ

Հարց. Ինչո՞ւ է ասում՝ «Երկիրը թող բոյսեր ու ծառեր աճեցնի» (Ծննդ. Ա 11):

Պատասխան. Նախ՝ որ «աճեցնելը» ցոյց է տալիս կատարեալը, այսինքն՝ այն ամէնն, ինչ ստեղծուեց Արարչի կողմից, կատարեալ էր եւ լրիւ: Երկրորդ՝ աճեցնելը ցոյց է տալիս միաժամանակեայ ստեղծելը: Երրորդ՝ առատ բազմութիւնը: Չորրորդ՝ միշտ եւ հանապազ [ստեղծելը]:

ԲՈՅՍԵՐԻ ՊԻՏԱՆԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ է պէտք բոյսերի ու ծառերի այսչափ բազմութիւնը:

Պատասխան. Բազմաթիւ օգտակար կողմեր ունեն բոյսերը: Նախ, պէտք են իբրեւ բժշկական դեղեր եւ առողջարար են: Երկրորդ՝ պէտք են համի, հոտի, գոյնի եւ այլնի համար: Երրորդ՝ պէտք են իմաստութիւնների համար, որովհետեւ յաճախ առակաւոր խօսքում դիմում ենք նրանց օրինակին: Չորրորդ՝ դարձան երկնային խորհուրդների նիւթ, ինչպէս որ ծառի փայտից՝ խաչը, այլ բոյսերից՝ պատարագի հացը, գինին եւ միւռոնի ձէթը:

Դարձեալ, պտղաբեր ծառը, որն ունի պտուղ, ծաղիկ ու անուշ հոտ, խորհրդանշում է նրանց, ովքեր ունեն բարի գործերի պտուղներ, հաւատի ծաղիկ եւ իմացական բուրմունք՝ բոլոր մարդկանց ախորժելի:

Իսկ անպտուղ անտառները օգտակար են հետեւեալի համար. նախ՝ շինութիւնների համար, երկրորդ՝ իբրեւ հովանի, երրորդ՝ պատսպարում են, չորրորդ՝ գազանների բնակատեղի են,

հինգերորդ՝ թռչունների հանգստավայր, վեցերորդ՝ վառելանիւթ:

Այսպէս էլ երկրի այն թագաւորներն ու իշխաններն են, որոնք բարձրացել են փառքով, սակայն զերծ են առաքինութիւնից եւ հովանի լինելու համար են:

Այլեւ՝ աշխարհի շինութեան համար են, այլեւ՝ թշնամուց պաշտպանուելու, այլեւ՝ գազանի սիրտ ունեն, այլեւ՝ գոռոզ են հպարտութեամբ, դեւերի օթեւան են, իսկ վերջում՝ յաւիտենական գեհենի լուցկի:

ԲՈՅՍԵՐԻ ԿԱՆԱՉ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ են բոլոր բոյսերը կանաչ գոյնի:

Պատասխան. Ոմանք ասում են ջրից են կանաչում, որովհետեւ ջրի պակասելով՝ չորանում են ու սպիտակում: Ոմանք ասում են՝ օդից է, որովհետեւ կապոյտ օդը խառնւում է ջրին եւ ստացւում է կանաչ:

Իսկ ես ասում եմ, որ բնական գոյները չորսն են.

հողի սեւութիւնը,

ջրի սպիտակութիւնը,

օդի կարմիրը,

հրի դեղինը:

Եւ սրանց խառնուրդներից տարբեր գոյներ են լինում՝ կապոյտ, գորշ եւ այլն: Այսպէս էլ երկրի սեւն ու հրի դեղինը խառնւում են ու դառնում կանաչ:

ԾԱՂԿԻ ՈՒ ՊՏՂԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ նախ ծաղիկը, ապա պտուղն է երեւան գալիս

Պատասխան. Ծաղիկը պտղի նախաշաւիղն է, ինչպէս մեզանում նախ զգայականն է տեսանելի, ապա՝ բանականը: Ծաղիկը հրից է, որ աւելի առաջ է երեւան գալիս, իսկ պտուղը՝ ջրից, որ յետոյ է հասունանում. տերեւն էլ օդից է, իսկ փայտի թանձրութիւնը՝ հողից:

Այս երկուսը բնական պատճառն էին:

Իսկ հոգեւոր՝ ինչպէս ծաղիկները երկրի, այդպէս էլ աստղերը երկնքի զարդն են: Եւ ինչպէս երկնքում նախ աստղերն են տեսնւում, ապա երկնքի բարութիւնները, նոյնն էլ բոյսերի մէջ: Եւ մահից յետոյ մարդու հոգին ծաղկում ու գեղեցկանում է իր առաքինութեամբ ու բնական պայծառութեամբ: Իսկ յարութիւնից յետոյ պտուղ է ունենում, որ անվախճան կեանքի պարգեւների խոստումն է:

Հարց. Քանի՞ տեսակ են պտուղները:

Պատասխան. Բոլոր պտուղները չորս [խմբի] են բաժանւում.

Կայ, որ կեղեւն են ուտում, մէջը՝ ոչ, ինչպէս ծիրանը:

Կայ, որ մէջն են ուտում, կեղեւը՝ ոչ, ինչպէս նուռը:

Կայ, որ երկուսն էլ ուտում են, ինչպէս խաղողը:

Կայ, որ ոչ մէջն են ուտում, ոչ կեղեւը, ինչպէս գդբորը:

ՀՈՏԵՐԻ ՈՒ ՀԱՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Որտեղի՞ց են գոյանում համը, հոտը, գոյնը:

Պատասխան. Արեգակից եւ լուսնից, որովհետեւ արեգակը արու է, քանզի ջերմ է, իսկ լուսինը՝ էգ, որովհետեւ սառն ու խոնաւ է:

Արեգակը ամրացնում, իսկ լուսինը թուլացնում է, որից գոյանում են համը, հոտը եւ այլն: Մեր առջեւ խնձորի օրինակն է. այն գոյանում է չորս տարրից եւ աճում հողից, որի պատճառով նախ մարմինն է գոյանում, ապա ջրից՝ համը, օդից՝ հոտը, եւ վերջում հրից՝ գոյնը:

Եւ արեգակի ջերմութիւնն ու լուսնի խոնաւութիւնը կարմիր գոյն են առաջ բերում:

Այսպէս էլ իմացի՛ր միւսները:

Հարց. Ինչո՞ւ մարդը հասակ առնելով՝ սպիտակում է, իսկ պտուղները կարմրում են:

Պատասխան. Մարդն իր մէջ կրում է եղանակների կարգը, ուստի վերջում սպիտակում է. որովհետեւ տղայութիւնը օդի նման է, միջին հասակը՝ հրի եւ հողի, վերջինը՝ ջրի, ուստի սպիտակում է, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում՝ ԺԶ գլխի ԻԳ համարում: Իսկ պտուղը տարրերի կարգով է բացատրւում, ինչպէս ցոյց տրուեց՝ սկսած հողից, վերջացրած հրով, որի հետեւանքով մէկը հրից սեւանում է, ինչպէս խաղողը, միւսներն էլ կարմրում են կամ դեղնում, ինչպէս բոյսերն ու հրից չորացած տերեւները:

ԴԱՐՁԵԱԼ ՏՆԿԻՆԵՐԻ ԵՒ ԾԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ Պրակ Խէ

Հարց. Ինչո՞ւ են բոլոր տունկերը բոլորաձեւ բուսնում:

Պատասխան. Նախ, որովհետեւ սերմի զօրութիւնն է մէջը կարգաւորում, որի հետեւանքով աճը լինում է կլոր ու հաւասար:

Նաեւ՝ տնկականն օդի կրկին դուրս մղուելն է՝ երկրի խոնաւութեամբ հանդերձ, ուստի բոլորաձեւ է դուրս գալիս ու լինում ծառ: Այդպէս էլ պտուղներն են կլոր ձեւաւորւում:

Հարց. Ինչո՞ւ բոլոր բոյսերը դէպի վեր են ձգւում:

Պատասխան. Նախ, որովհետեւ օդը վերընթաց է, քաշում է վեր:

Երկրորդ՝ լուսատուների ջերմութիւնն է նրանց սնում ու դէպի վեր քաշում:

Երրորդ՝ կարիք ունեն երկնային մարմինների, ուստի վեր են ձգւում:

Չորրորդ՝ մատնանշում են իրենց ստեղծողի երկնքում գտնուելը, ուստի շտապում են դէպի վեր:

Հարց. Ինչո՞ւ բոյսերը աւելի արագ են աճում ու դալարում, քան տնկիներն ու ծառերը:

Պատասխան. Երկու պատճառով:

Նախ, որ բոյսերն ու խոտերը մօտ են հողին ու նրա փոփոխութիւնը արագ են զգում, իսկ ծառերը փայտի պատճառով դժուարութեամբ են զգում:

Երկրորդ՝ նրանք, որոնք երկարակեաց են, ինչպէս տնկիները՝ հապաղելով են աճում ու դանդաղ պտղաւորւում, իսկ սակաւակեացներն արագ, ինչպէս նարին խոտը, մանուշակը եւ այլն:

Հարց. Ինչո՞ւ են կոչում ծառ:

Պատասխան. Նախ, որ միշտ ծառայ են այլոց, ինչպէս որ մարդն է միշտ տէր, իսկ անասունները՝ տէր եւ ծառայ, որովհետեւ ծառայ են մարդուն, տէր՝ բոյսերին, իսկ բոյսերն ու տնկիները միշտ ծառայ են:

Երկրորդ՝ ծառ են կոչւում, այսինքն՝ որ ծուռ են, որովհետեւ հակառակ են աշխարհի ու մարդու ձեւին, քանզի մարդու գլուխը երկնքի նման վեր է, ոտքը երկրի նման ներքեւ, որովհետեւ բոլոր հոսքերը բնականօրէն դէպի ներքեւ են ուղղուած, մինչդեռ ծառը գլուխը ներքեւ է ծռում, ոտքերը վեր ձգում, եւ ծռուած են նրա ոտքերը, ճիւղերն այս ու այն կողմ:

Երրորդ՝ կոչւում է ծառ, այսինքն՝ ծեր, որովհետեւ ծեր են, քանի որ հենց սկզբից եղան արարչադիր հրամանով, ըստ այդմ՝ «Թող երկիրն աճեցնի պտղաբեր ծառ» եւ այլն:

Նոյնպէս եւ փայտ է կոչւում, որովհետեւ փտելուց ու ոչնչանալուց է գոյանում[263], այսինքն՝ երբ բորբոսնում է հողը, նա արմատը դէպի ներքեւ է ձգում, բոյսը՝ վեր:

Եւ զգայական մարմիններն էլ փտելուց ու քայքայումից են գոյանում, ուստի յետոյ նորից քայքայւում են:

ՀԱՐՑՈՒՄ ԲՈԼՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊՐԱԿ ԽԸ

Հարց. Եթէ Աստուած արարեց մարդուն հողից, անասուններին ու գազաններին էլ հողից, լողացողներին ու թռչուններին ջրից, նշանակում է, որ սրանք գոյացել են մի տարրից՝ կամ հողից, կամ՝ ջրից:

Պատասխան. Ասենք, որ բոլոր մարմնական կենդանիները չորս տարրերից են եղել, եւ սա յայտնի է բազմաթիւ փաստերով:

Նախ՝ թէեւ միայն ջուրը կամ հողն է յիշում Աստուած, սակայն երեքն էլ միասին կեանքի կոչուեցին, ինչպէս ասում է. «Ի սկզբանէ Աստուած արարեց երկինքն ու երկիրը» (Ծննդ. Ա 1): Երկիր ասելով՝ միւս տարրերն էլ նկատի ունի:

Երկրորդ, հողի մէջ երեք տարրերն էլ ամբարուած են, ինչպէս տեղ-տեղ հրի, տեղ-տեղ հողմի, տեղ-տեղ ջրի երակներ են երեւում: Նոյն կերպ եւ ջրի մէջ երեքը կան. հողմը երեւում է գոլորշիների մէջ, հուրը եւ հողմը կայծակի հետ վայր ընկնելով՝ քար են դառնում: Ապա ուրեմն, հողից կամ ջրից գոյացածները չորս տարրերից են բաղկացած:

Երրորդ՝ ինքը՝ երկիրն, ունի թանձրութիւն, որ հողից է, մածուցիկութիւն, որ ջրից է, շարժում, որ հողմից է, երեւալը, որ հրից է:

Ջուրն էլ ունի սրանք, որովհետեւ շօշափելի է, մածուցիկ է, շարժւում է, երեւում է:

Չորրորդ՝ կենդանիներն ունեն հինգ զգայարան. շօշափելիքը հողինն է, որ ներքեւում է, ճաշակելիքը՝ ջրինը, որ վեր է, քան [հողը], հոտոտելիքն ու լսելիքը՝ օդինը, որ սրանցից վեր է, իսկ տեսանելիքը՝ հրինը, որ ամենաբարձրն է:

Հինգերորդ՝ կենդանիներն ունեն չորս տեսակ մաղձ, որ չորս տարրերին են

[համապատասխանում]. սեւ մաղձը, որ փայծաղն է՝ հողին, խարտեաշը, որ լեղին է՝ հրին, կարմիրը, որ լեարդի արիւնն է՝ օդին, եւ սպիտակը, որ մաղասն է ամբողջ մարմնում կամ երիկամներում՝ ջրին:

Վեցերորդ՝ ըստ այլոց՝ ամբողջ թանձր մարմինը հողից է, բոլոր հեղուկներն ու մաղձերը՝ ջրից, թոքը՝ օդից, սիրտն իր ջերմութեամբ՝ հրից, որն ինչպէս հուրը ներքեւի կողմից լայն է, իսկ վերին ծայրերը՝ նեղ են:

Եօթներորդ՝ ոսկորներն իբրեւ քարուտ են, նեարդերը, ջղերը, արիւնը՝ հուր, շարժումը՝ օդ, մարմնի թանձրութիւնը՝ հող, փափկութիւնը՝ ջուր: Եւ սրանք բոլոր կենդանիներին տրուած են հաւասարապէս:

Ութերորդ, ինքը՝ շօշափելիքը, բոլոր տարրերն էլ [զգում] է. հրի ջերմութիւնը, ջրի սառնութիւնը, օդի խոնաւութիւնը, հողի չորութիւնը:

Իններորդ՝ ինքը՝ կենդանու մարմինը, շօշափւում է, բռնւում է, շարժւում, երեւում, ինչպէս ասացինք հողի մասին:

Տասներորդ՝ չորս ոտքերը նման են չորս տարրերին. թռչուններինը երկու թեւ ու երկու ոտք է, մարդունը՝ ձեռք ու ոտք: Ակներեւ է, որ կենդանութիւնը օդից եւ հրից է, մարմնի նիւթը՝ ջրից եւ հողից, այսինքն՝ հաւաստի է, որ բոլոր կենդանիները չորս տարրերից են:

ՁՐԱՅԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԹ

Եթէ մէկն ասի, թէ ջրայինները շունչ չունեն, ապա կասենք, որ ինչպէս ցամաքայիններն ունեն օդեղէն շունչ, այդպէս էլ ջրայինները՝ ջրեղէն շունչ: Երկուսն էլ նոյնն են, որովհետեւ կենդանու շունչը օդի թանձր մասն է՝ խառնուած ջրի հետ, իսկ սրանցը ջրի նօսր մասն է՝ խառնուած օդի հետ:

Եւ ձկների չորս տեսակ կա: Կան, որ թեւ ու թեփուկ ունեն: Կան, որ թեւ ունեն, թեփուկ չունեն: Կան, որ թեփուկ ունեն, թեւ չունեն: Կան, որ ոչ թեփուկ ունեն, ոչ թեւ:

Սրանք խորհրդանշում են մարդկանց չորս տիպերը: Կան, որ հաւատի թեւ ու բարի գործեր ունեն. սրանք պիտանի են Աստծուն: Կան, որ հաւատի թեւ ունեն, սակայն գործեր չունեն, ինչպէս չար հաւատացեալները: Կան, որ գործեր ունեն, հաւատ չունեն, ինչպէս կեղծաւորները. սրանք անպիտան են Աստծուն: Եւ կան, որ ոչ հաւատ ունեն, ոչ գործ, ինչպէս անօրէններն ու չարերը. սրանք ակնյայտօրէն անպիտան են: Սրանցից երեքը խոտելի են, ընտրելի է միայն մէկը:

Թռչուններն էլ չորս տեսակ են:

Ոմանք պարզաթեւ են, ինչպէս ճանճերը: Ոմանք պատենաթեւ են, ինչպէս մորեխը: Ոմանք մաշկաթեւ են, ինչպէս չղջիկները: Ոմանք էլ անթեւ են, ինչպէս որոշ թռչուններ:

Հարց. Ինչո՞ւ ջրային [կենդանիները] եւ սողունները ձայն չունեն:

Պատասխան. Ձայնին անհրաժեշտ է երկու բան. նախ, օդը, որ ձայնի էութիւնն է, երկրորդ՝ ձայնական գործիքները, որոնք եօթն են՝ շուրթերը, ատամ-

ները, լեզուն, մակալեզուն, բերանը, խռչափողը, թոքը:

Արդ, ցամաքային կենդանիներն այս երկուսն էլ ունեն, ուստի ձայն են արձակում: Մինչդեռ սողունները չունեն ձայնական գործիքներ, ուստի եւ զուրկ են ձայնից, իսկ ձկները օդ չլինելու պատճառով բոլորովին ձայնազուրկ են:

Եւ սողուն են կոչւում, որովհետեւ սողալով են գնում կամ սողացող ոտքերով կամ էլ «սուղ» են ձայնով:

Իսկ անասուն են [կոչւում], որովհետեւ «անխօսուն» են, կամ անսնունդ եւ անընտել:

Իսկ գազան, որովհետեւ «գզօղ» կամ պատառօղ են, կամ էլ ունեն «զանազան» ու ահազդու կերպարանք[264]:

Հարց. Կենդանների քանի՞ տեսակ կայ:

Պատասխան. Ասում են, թէ՝ հազար. վեց հարիւր՝ ցամաքի թռչուններով եւ չորս հարիւր՝ ջրայիններով:

Ջրայինների թագաւորը Լեւիաթանն է, թռչուններինը՝ Արծիւը, գազաններինը՝ Առիւծը, անասուններինը՝ Եզը, սողուններինը՝ արքայիկ Օձը, որին իժ ու քարբ են ասում:

Սրանք կենդանիների գլխաւորներն են, իսկ մարդը բոլորի իշխանն ու թագաւորն է:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԶԳԵՍՏԻ ՄԱՍԻՆ Պրակ Ծ

Կենդանիների զգեստները տարբեր են: Առաջին՝ թեւ, ինչպէս թռչուններինը: Երկրորդ՝ թեփուկ, ինչպէս ձկներինը: Երրորդ՝ մորթ, ինչպէս սողուններինը: Չորրորդ՝ շապիկ, ինչպէս օձերինը: Հինգերորդ՝ մազ, ինչպէս այծերինը: Վեցերորդ՝ բուրդ, ինչպէս ոչխարներինը: Եօթներորդ՝ կաշի, ինչպէս եզինը: Ութերորդ՝ խեցի, ինչպէս կրիայինը: Իններորդ, փուշ, ինչպէս ոզնունը: Տասներորդ՝ Ադամի մաշկեղէն հանդերձը: Իսկ միւս զգեստները ստեղծուեցին յետոյ՝ արհեստների միջոցով:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԶԷՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Բնութեամբ որո՞նք եւ ի՞նչ են կենդանիների զէնքերը:

Պատասխան. Ասենք, որ բազում:

Ոմանք իբրեւ զէնք ունեն ատամներ, ինչպէս շունն ու վարազը:

Ոմանք՝ կնճիթ, ինչպէս փիղը:

Ոմանք՝ սմբակ, ինչպէս ձին:

Ոմանք՝ խայթոց, ինչպէս մեղուն:

Ոմանք՝ թոյն, ինչպէս օձը:

Ոմանք՝ ճիրաններ, ինչպէս արծիւը:

Ոմանք՝ մագիլներ, ինչպէս աքաղաղը:

Ոմանք՝ կտուց, ինչպէս բազէն:

Ոմանք՝ թեւ, ինչպէս թռչունը:

Ոմանք՝ թեփուկ, ինչպէս կոկորդիլոսը:

Ոմանք՝ փշեր, ինչպէս ոզնին:

Ոմանք՝ աղբը, ինչպէս եփենոսը:

Ոմանք՝ խոշորութիւնը, ինչպէս ուղտը:

Ոմանք՝ արագութիւնը, ինչպէս նապաստակը:

Ոմանք՝ խորամանկութիւնը, ինչպէս աղուէսը:

Ահա, ինքնապաշտպանութեան համար բնութիւնից այսպիսի զէնքեր ունեն կենդանիները: Իսկ մարդիկ բանականութեամբ եւ արհեստներով երկաթեղէններից պատրաստեցին զանազան զէնքեր՝ ի պաշտպանութիւն իրենց: Եւ ոչ միայն սրանք, այլեւ բոյսերն ու տնկիներն էլ ունեն բնական պաշտպանական զէնքեր, ինչպէս վարդի փուշը, հասկի քիստերը, եղինջի խայթը: Ոմանք էլ՝ դառնութիւն, միւսները՝ վատ հոտ, մի մասն էլ՝ մահաբեր վնասակարութիւն, միւսներն էլ՝ այլ յատկութիւններ:

Հարց. Մարդն ինչո՞ւ բնական զէնք կամ ծածկոյթ չունի:

Պատասխան. Երեք պատճառով:

Եթէ մարդը բնութիւնից զէնք ունենար, ասենք՝ գլխին եղջիւր, սուր ժանիքներ, ձեռքին ճիրաններ, սմբակ կամ ոտքի կճղակներ եւ այլն, ապա նախ գազանադէմք եւ սարսափելի կլինէր բոլորին:

Երկրորդ՝ դրանք միշտ անհանգստութիւն եւ չարչարանք կպատճառէին իրեն, եթէ մարդը կրէր: Իսկ այժմ ձեռքին ունենալով արհեստներով ստացած զէնք, երբ պէտք է գալիս, այն ժամանակ էլ գործածում է, իսկ երբ ուզում է, դնում է մի կողմ եւ հանգստանում:

Երրորդ՝ եթէ բնական զէնք ունենար կամ ծածկոյթ, կարիք չէր ունենայ այլ կենդանիների ու չէր խնամի նրանց: Իսկ այժմ զգեստ ունենալու համար ոչխար ենք պահում, կերակրուելու համար՝ եզ, բեռի համար՝ էշ, բարձելու համար՝ ձի, թշնամուն հալածելու համար՝ շուն, թռչուն որսալու համար՝ բազէ, եւ միւսներն էլ այդպէս:

Հարց. Աստուած նախախնամութեա՞մբ ստեղծեց ճանճերին ու մժեղներին, թէ՞ պատահական առաջացան:

Պատասխան. Վարդապետներն ասում են, թէ Աստուած ճանճերին ու մրջիւններին ստեղծելիս այնքան հոգ տարաւ, որքան՝ հրեշտակներին: Նախ՝ որպէսզի լինեն իր փառքի գովքի համար: Երկրորդ՝ մարդու հպարտութեան համար, որ երբ նրան խայթեն, գիտակցի իր տկարութիւնը, [այսինքն] որ անգամ փարաւոնին ոչ թէ առիւծը կամ արջը վնասեցին, այլ ճանճն ու մժեղը տանջեցին: Երրորդ՝ սրանք ստեղծուեցին, որպէսզի դիտարկելով նրանց ջանասիրութիւնն ու բարի գործերը՝ օրինակ վերցնենք, ինչպէս մրջիւնից, սարդից եւ միւսներից: Ինչպէս ասում է Սողոմոնը, «Ո՛վ վատ, գնա՛ մրջիւնի մօտ եւ սովորի՛ր նրանից» (Առակ. Զ 6):

ԳԱԶԱՆՆԵՐԻ ՊԻՏԱՆԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԱ

Հարց. Գազանները, օձերը եւ միւս կենդանիները, որ վնասակար են, ինչո՞ւ են ստեղծուել:

Պատասխան. Այն բազմաթիւ օգտակար յատկութիւնների համար, որ կան նրանց մէջ:

Նախ՝ Աստծոյ փառքի համար ստեղծուեցին, որպէսզի երբ նրանց

զանազան կերպարանքները տեսնենք, փառք տանք Արարչին: Երկրորդ՝ որովհետեւ ամբողջացումն ու մասն են աշխարհի: Երրորդ՝ նրանց թոյնն ու խայթերը զէնք եւ պահապան են նրանց, քանզի առիւծը յօշոտելով է ապրում, նոյն կերպ եւ միւսները: Հինգերորդ՝ նրանցից ենք ստանում մարմնի համար բժշկական դեղեր, ինչպէս հակաթոյները, որ լինում են օձից ու գազաններից:

Հարց. Ինչո՞ւ գազաններն աւելի հնարամիտ եւ ուժեղ են, քան անասունները:

Պատասխան. Այս մասին երկու կարծիք կայ, նախ՝ վարդապետների, ապա՝ իմաստասէրների:

Վարդապետներն ասում են, թէ գազանների կերակուրն ուրիշ կենդանիներն են, որի պատճառով էլ նրանց պահպանելու համար Աստուած [նրանց] աւելի հնարքներ եւ զօրութիւն տուեց, որպէսզի կարողանան որսալ այլ կենդանիների եւ սովից չսատկեն:

Իսկ իմաստասէրներն ասում են, թէ անասունների կերակուրն անզօր խոտն է, ուստի նրանք յիմար ու անզօր են: Իսկ գազաններինը միսն է, որ սննդարար է, որը նրանց խելքը աւելի ճկուն է դարձնում եւ ուժեղացնում:

Այլեւ պէտք է իմանալ, որ Աստուած բոլոր կենդանիներին օգտակար բնական հնարամտութիւն տուեց՝ նրանց փրկութեան համար: Եւ որ դա բնութիւնից ունեն, ակնյայտ է, որովհետեւ իւրաքանչիւր տեսակ նոյն հնարամտութիւնն ունի, որովհետեւ բնութեամբ նոյնն են, ինչպէս որ բոլոր գայլերը խորամանկ են, աղուէսները՝ նենգ, միւսները՝ նոյնպէս: Իսկ մարդու հնարամտութիւնն ու իմաստութիւնը բանականութիւնն է, որի պատճառով նրա հնարամտութիւնները բազմաթիւ են՝ աւելի կամ պակաս, եւ ոչ հաւասար:

Այս պատճառով էլ ոչ բանական կենդանիներն աւելի շուտ են զգում օդի առաջին շարժումը կամ փոփոխութիւնը, քան մարդը եւ կանխագէտ են: Ինչպէս որ մրջիւնը անձրեւ գալուց առաջ կերակուր է հաւաքում, եւ աքաղաղը վաղ է կանչում, որովհետեւ մարդը մտովի զբաղուած է բազմաթիւ գործերով, իսկ նրանք միայն իրենց բնազդով անմիջապէս կանխազգում են:

ՕՁԻ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ, ԱՅԼԵՒ ՍՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԲ

Հարց. Ո՞րն է օձի իմաստութիւնը, որին մենք պէտք է նմանուենք:

Պատասխան. Նախ, որ դէմք ընդունեց եւ խօսեց Եւայի հետ: Երկրորդ՝ որ մաշկը փոխում է եւ ուժեղացնում տեսողութիւնը: Երրորդ՝ զգուշանում է գլխի համար: Չորրորդ՝ թոյնը լուանում է, ապա ջուր է խմում: Հինգերորդ՝ որ խորամանկ է ու հնարամիտ:

Եւ սրանք պէտք է խելացի մարդը մտապահի:

Առաջին՝ որ ընտրի դէմքը, այլեւ՝ տեղն ու ժամանակը եւ ապա խօսի: Երկրորդ՝ աշխատանքով միտքը լուսաւորի կամ ճգնութեամբ ապաշխարի:

Երրորդ՝ հաւատը, որ գլխաւորն է, պահպանի, որ չմոլորուի հերձուածողների հետքով: Չորրորդ՝ որ իր տգիտութիւնը լուանայ, ապա գիտութիւն ձեռք բերի: Հինգերորդ՝ հերձուածողների եւ սատանայի հետ ոչ թէ պարզամտօրէն, այլ հնարամտութեամբ խօսի:

Հարց. Ինչո՞ւ են օձի գլուխը ջախջախում:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ օձը այդ մասից է սատկում: Երկրորդ՝ օձի գլուխը թոյլ է: Երրորդ՝ որ մահաբեր թոյնի աղբիւրն է: Չորրորդ՝ որ բանական չէր, սակայն խօսքով խաբեց մարդուն: Հինգերորդ՝ որ մարդն էլ գլուխն է բոլոր կենդանիների եւ ջանում է նրան սպանել: Վեցերորդ՝ որ գլխին, այսինքն՝ Տէր Աստծուն իմանալի օձը հակառակուեց: Եօթներորդ օրինակը, որ Քրիստոս վիշապի գլուխը ջախջախեց: Ութերորդ օրինակ, որ օձի գլուխը չար խորհուրդն է, որ մտնում է մեր մէջ, ուստի հարկ է նրան ջախջախել:

Հարց. Ինչո՞ւ է մահաբեր թոյնը գլխում:

Պատասխան. Ցոյց տալու, որ մարդու մահուան սկիզբը օձը եղաւ: Եւ քանի որ երկիմաստ էր խօսքը, այսինքն՝ սուտ ու ճշմարիտ, ուստի լեզուն երկճիւղ եղաւ: Եւ քանի որ մարդուն հողեղէն դարձրեց[265], ուստի ինքն էլ հող է ուտում: Եւ քանի որ չարի թեւ ու ոտք եղաւ, ուստի իր թեւերն ու ոտքերը կտրուեցին: Եւ քանի որ ջանում է սպանել կենդանուն, ինքն էլ սպանւում է բոլոր կենդանիների կողմից: Եւ որովհետեւ օրհնութիւնը անէծքի փոխեց, ուստի ինքն էլ անիծուեց ու զրկուեց բոլոր կենդանիների օրհնութիւնից: Եւ քանի որ թշնամութիւն գցեց մարդու եւ Աստծոյ միջեւ, թշնամութիւն դրուեց մարդու եւ օձի միջեւ (տե՛ս Ծննդ. Գ 15): Եւ քանի որ պատերազմեց գլխի համար, սատկեց գլխից, [իսկ] քանի որ մարդն ընկաւ երկնքից երկիր, ընկնում է նրա ոտքի գարշապարի տակ: Եւ քանի որ բարեկամութեամբ եկաւ եւ շրջուեց թշնամութեան կողմը, ինքը շրջւում է խայթելիս: Եւ քանի որ նախանձեց մարդուն, կրծքի եւ որովայնի վրայ է սողում: Քանի որ նենգ է, ծուռումուռ է ընթանում: Եւ քանի որ մարդու հինգ զգայարաններն էլ մոլորեցրեց[266], հինգ գալար է անում գնալիս: Եւ քանի որ զրկեց նախաստեղծներին փառքից, ուստի ինքն էլ զրկւում է մաշկից:

Այսքանն օձի մասին:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԳ

Հարց. Ինչո՞ւ Ադամը բոլոր կենդանիներին անուն տուեց:

Պատասխան. Ամէն մի իրի անուն է հարկաւոր:

Նախ, որովհետեւ իրը մեր մտքում անուամբ է գոյանում, իսկ անանուն [իրը] մեզ համար գոյութիւն չունեցողն է:

Երկրորդ՝ «անունը համառօտ սահմանումն է, որ տրուած իրի բնութիւնն է յայտնում»[267], ինչպէս ասում է իմաստունը:

Երրորդ՝ որովհետեւ Ադամին Աստուած բնական իմաստութիւն տուեց եւ որպէսզի ընդգծի, որ նա Բանի լաւագոյն ծնունդն էր, հրամայեց նրան անուններ դնել:

Չորրորդ՝ որպէսզի ցոյց տայ մարդու ինքնիշխան գոյութիւնը, որի պատճառով թոյլ տուեց, որ ինչ որ կամենում է ունենալ, անուն դնի:

Հինգերորդ՝ այդ կենդանիներին նշանակեց մարդուն օգնական, ինչպէս ծառան՝ տիրոջը. անուամբ պէտք է ճանաչէր նրանց:

Վեցերորդ՝ բարերար Աստուած իր արարչութեանը կցորդակից դարձրեց Ադամին՝ անուններ դնելով:

Եօթներորդ՝ քանի որ նրա մէջ փչեց զանազան պարգեւների շնորհների հոգին, իսկ այժմ քահանայութեան շնորհը երեւան բերեց նրա մէջ, որովհետեւ քահանային է տրուած՝ ծննդեան աւազանից յետոյ անուններ դնել:

Ութերորդ՝ խոհեմութեան, խօսելու, ձայնի, տէր լինելու շնորհները այժմ երեւան բերեց Ադամի մէջ, որովհետեւ անուններ դնելիս այս չորս [յատկանիշները] դրսեւորւում են միանգամից՝ միտքը, խօսքը, ձայնը եւ տեսնելը. սրանցով Աստուած մարդուն կատարեալ ներկայացրեց:

Իններորդ՝ տեղին չէր լինի իրերն անանուն թողնել: Ուրեմն, եթէ Ադամը անուններ չտար, այլ կրտսեր թոռները՝ նախահօր համար նախատինք կլինէր: Իսկ Ադամի կողմից [անուանադրութիւնը] փառք էր որդիների համար:

Տասներորդ՝ անունը յարմարեցուած նշանակումն է՝ ըստ կենդանու [համապատասխան] բարքի ու զանազան կերպարանքների, որովհետեւ իւրաքանչիւր անուն դրւում է ըստ իրի, ըստ գործի եւ ըստ ձայնի: Ըստ իրի, ինչպէս՝ «սափոր», «երկինք», «երկիր», «գազան», «անասուն»: Ըստ գործի, ինչպէս՝ սողունը՝ «սողալուց», շունը՝ «շողոքորթելուց», եզը՝ «հեզից», առիւծը՝ «առնելուց», կատուն՝ «կայ [ի] տուն»-ից, խոզը՝ «խուզողից»: Ըստ ձայնի, ինչպէս ճնճղուկը, ծիծառը, խօսողը, ագռաւը եւ այլն:

Եւ պէտք է իմանալ, որ երեքն են գոյացական իրերը. սեռ, տեսակ, անհատ:

Գլխաւորների անունները որպէս սեռ կոչեց Աստուած, ինչպէս երկինքը, երկիրը, լոյսը եւ այլն, ընդհանուր տեսակներինը՝ Ադամը, ինչպէս եզը, ձին եւ այլն: Իսկ մասնաւոր անհատներինը դնում է Ադամի ծնունդներից իւրաքանչիւր ոք:

ԱԴԱՄԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԴ

Հարց. Ինչպէ՞ս ենք իմանում, որ մարդն իշխան է անբանների վրայ, եթէ ահա շատերը անհնազանդ են, ինչպէս վայրիները, գազանները եւ այլն:

Պատասխան. Այն, որ մարդը թագաւոր եւ իշխան է բոլոր կենդանիների, յայտնի է բազում [փաստերով]: Նախ, հենց նոյն աստուածային հրամանից, որ ասում

է. «Թո՛ղ իշխի ծովերի ձկներին, գազաններին, սողուններին» (Ծննդ. Ա 26):

Երկրորդ՝ որ մարդն Աստծոյ պատկերն է, այսինքն՝ ինչպէս որ Աստուած է իշխան եւ թագաւոր բոլոր արարածներին, նոյն կերպ եւ մարդն իշխան է բոլոր կենդանիների:

Երրորդ՝ [յայտնի է] մարդու կազմուածքի ձեւից, որովհետեւ ուղիղ կեցուածքը իշխանաւոր լինելն է ցոյց տալիս, իսկ կենդանիները գլխակորութեամբ՝ ծառայ լինելն են ցոյց տալիս:

Չորրորդ՝ յայտնի է հնազանդ [կենդանիների] գոյութեամբ, որ կան այժմ մարդու ձեռքի տակ, ինչպէս ոչխարը, պախրան եւ այլն:

Հինգերորդ՝ յայտնի է [նրանց] փախուստից, որ մարդկանցից վախենում են, ինչպէս ապստամբած ծառան:

Վեցերորդ՝ մարդը ինքնատիրապետող է, այսինքն՝ բանականով զսպում է ցասումն ու ցանկութիւնը, որոնք անասնական յատկանիշներ են, ուստի պարզ է, որ իշխում է եւ վայրի կենդանիներին[268]:

Իսկ որ այժմ ապստամբ են, երկու պատճառով է. Նախ, երբ մարդը անհնազանդ եղաւ իր Տէր Արարչին, իրաւացիօրէն անասուններն էլ անհնազանդ եղան մարդուն, որ տրուել էին նրան ծառայելու համար: Երկրորդ, այնքան [ժամանակ], ինչքան իշխում էր ինքն իր մէջ եղած անասնական յատկանիշների վրայ, ինչպէս ասացինք, իշխում էր եւ վայրի անասունների եւ գազանների վրայ, իսկ երբ ապստամբեց ներքին բանականութիւնը իր տիրոջ դէմ, ապստամբեցին եւ արտաքինները իրենց տիրոջ՝ մարդու, դէմ: Ուստի պարզ է, որ եթէ վերստին յաղթահարեն իրենց մէջ եղած ախտերը, այսինքն՝ ցասումն ու ցանկութիւնը, կյաղթեն ու կհնազանդեցնեն նաեւ վայրի գազաններին եւ անասուններին, ինչպէս Դանիէլը յաղթեց առիւծին (տե՛ս Դան. Զ), Պօղոսը՝ իժին (տե՛ս Գործք ԻԸ), եւ բազում ճգնաւորներ, որ անապատում էին, գազանները եւ անասունները սպասաւորում էին նրանց, ինչպէս Եղիային, Պօղոսին, Անտօնին եւ մեր Գրիգոր Լուսաւորչին[269]:

Այսքանը կենդանիների մասին:

ԳԼՈՒԽ ԺԴ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԴՐԱԽՏԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԵ

Հարց. Ինչո՞ւ Պօղոսը դրախտն անուանում է երրորդ երկինք (տե՛ս Բ Կորնթ. ԺԲ 2):

Պատասխան. Նախ, ինչպէս վերն ասել ենք, իրերը երեք կերպ են սրբերը տեսնում, այն է՝ զգայութեամբ, երեւակայութեամբ եւ իմացմամբ:

Արդ, դրախտը ոչ թէ զգայութեամբ եւ երեւակայութեամբ, այլ իմացմամբ են տեսնում, ուստի ասւում է երրորդ երկինք:

Երկրորդ՝ որովհետեւ երկինքն ունի երեք յատկանիշներ՝ բարձրութիւն, լուսաւորութիւն, անվախճանութիւն, եւ դրախտն էլ բարձր տեղում է, լուսաւոր եւ անապական:

Երրորդ՝ ըստ դիրքի են թուարկւում. առաջին երկինքը հրեղէնն է, երկրորդը հաստատութիւնն է, երրորդը դրախտն է:

Չորրորդ՝ ըստ օրերի կարգի են. առաջին օրը եղաւ ի սկզբանէ առաջին երկինքը: Երկրորդ օրը եղաւ երկնքի հաստատութիւնը: Երրորդ օրը եղաւ երկնքի դրախտը:

Հինգերորդ՝ առաջին երկինքը հրեղէն ու լուսեղէն է: Երկրորդը ջրեղէն եւ օդեղէն է: Երրորդը՝ հողեղէն ու տնկեղէն է:

Վեցերորդ, առաջին երկինքը իմանալին է, երկրորդը՝ զգայականը, երրորդը՝ զգայականն ու իմանալին:

Եօթներորդ՝ առաջին երկինքը անմարմին է, երկրորդը՝ պարզ մարմին է, երրորդը՝ թանձր մարմին է:

Ութերորդ՝ առաջին երկինքը հրեշտակների ու հրեշտակացածների բնակարանն է, երկրորդը՝ հոգիների կայանը, երրորդը՝ հոգիների ու սուրբ մարմինների:

Իններորդ՝ առաջին երկինքը անվախճան է տեսակով, երկրորդը անվախճան է իր տարրերով, երրորդը՝ ըստ զօրութեան՝ նրա ներգործողի:

Տասներորդ՝ առաջինն անփոփոխ է բնութեամբ եւ տեղով: Երկրորդը անփոփոխ է միայն բնութեամբ: Երրորդը անփոփոխ է տեղով եւ տեսակով, որի պատճառով Պօղոսը դրախտը կոչում է երրորդ երկինք: Այլեւ՝ Աւետարանն էլ անառակի մասին առակում երկինք է կոչում դրախտը, ուր մեղանչեց ու դուրս ելաւ. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի եւ քո առջեւ» (Ղուկ. ԺԵ 18):

Հարց. Ի՞նչ է նշանակում մեծն Ներսէս Շնորհալու ասածը զգայական երկրի ծառերի, տնկիների եւ իմացական տնկիների վերաբերեալ[270]:

Պատասխան. Նախ, պէտք է իմանալ, որ դրախտի մասին վարդապետները երեք կարծիք ունեն: Ոմանք աննիւթ եւ իմանալի են [համարում], այսինքն՝ այլաբանութիւն եւ օրինակ[271] եւ ոչ թէ էութեամբ գոյականացած: Ոմանք միայն զգայական, վախճանաւոր եւ փոփոխուող, ինչպէս այս երկիրը, որը մենք՝ ճշմարտութեան հետեւորդներս, չենք ընդունում: Իսկ ուրիշներ էլ [համարում են] իմանալի, զգայական եւ նիւթական մարմին, որը մենք էլ ենք ընդունում, եւ բազում վարդապետներ մեր եւ օտարների մէջ համաձայնում են սրա հետ[272], ինչպէս Յօհան Դամասկացին, Օգոստինոսը, ովքեր իմանալի եւ զգայական ասացին [դրախտը][273]: Այսպէս էլ Փետան: Նոյնպէս եւ Նիւսացին է անապական համարում:

Իսկ Ներսէսի ասածը պէտք է այսպէս հասկանալ: Նախ, եթէ մեզ համար իմանալի է, չենք կարող այժմ զգայութեամբ տեսնել:

Երկրորդ՝ իմանալի է, որովհետեւ իմացումն ու իմաստութիւնը մեզ այլ առարկայ են մատնանշում, ինչպէս [Կենաց] ծառը՝ Քրիստոսին, եւ բոլոր ծառերը՝ զուտ հոգեկան բարիքներ. գիտութեան ծառն էլ ակնարկում է մարմնական բարիքները:

Երրորդ՝ որովհետեւ իմանալիների տունկն է, այսինքն՝ բանականներինը՝

հրեշտակներինը կամ մարդկանցը, եւ ոչ թէ զգայական կենդանիներինը:

Չորրորդ՝ նոյն ինքը՝ դրախտը, իմանալի եւ զգայական տունկ է, ինչպէս որ վայելող մարդն էր իմացական ու զգայական, բայց ոչ թէ բանական հոգի ունէր, այլ՝ իմացական զօրութիւն:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԴՐԱԽՏՈՒՄ ՄԻՇՏ ԼՈՅՍ Է
Պրակ ԾԶ

Հարց. Ինչո՞ւ են ասում, թէ դրախտը արեգակի լոյսի կարիքը չունի:

Պատասխան. Որովհետեւ դրախտը լուսաւորուած է բնական լոյսով:

Ոմանք էլ ասում են, թէ [այնտեղ] ծաղիկները եւ տերեւները լուսընկալ են: Ոմանք էլ ասում են, թէ նրանց լոյսը իմանալի է, կամ էլ՝ եթերային:

Ոմանք էլ ասում են, թէ բարձր տեղում լինելու պատճառով արեգակի լոյսը երբեք չի հեռանում նրանից, թէեւ երկրի ներքեւով է անցնում՝ այնպէս, ինչպէս լուսինը, որ թէեւ վերին կամարում է լինում, սակայն արեգակից է լոյս առնում, որ ներքեւի կամարում է:

Հարց. Ինչո՞ւ են ասում, թէ հաւասար է լուսնի կամարին:

Պատասխան. Ոչ թէ այն պատճառով, որ հուր տարրից վերեւ է գտնւում, այլ այն, որ լուսինն ու արեգակը միշտ լեռան ստորոտի հարաւային կողմից են ելնում, որի ժամանակ լեռան հիւսիսային կողմում միշտ գիշեր է լինում, ինչպէս ասում է Ալեքսանդրի պատմութիւնը, վերին կատարին միշտ լոյս, իսկ հարաւային կողմում՝ ցերեկ եւ գիշեր[274]:

Ոմանք էլ ասում են, թէ դրախտում նոյնպէս ցերեկ եւ գիշեր է լինում, կամ գարուն եւ աշուն, որ մեզ համար ընդունելի չէ, այլ ինչպէս ասում է Յոբը՝ «Ի՞նչ երկիր է, որտեղ լոյս է իջեւանել» (Յոբ ԼԸ 19), որից պարզ է, որ այնտեղ գիշեր չի լինում, եւ չեն փոփոխւում եղանակները, որովհետեւ այնտեղ ո՛չ անձրեւ կայ, ո՛չ ձիւն եւ ո՛չ հողմ, քանի որ վերջին մասը մերձ է օդին, որ բարեխառն է, իսկ ամպերի եւ հողմերի շարժումները օդի միջին մասում են առաջանում եւ չեն հասնում դրախտին:

[ԱՅՆ ՄԱՍԻՆ], ՈՐ ԴՐԱԽՏՆ ԱՆԱՊԱԿԱՆ Է

Հարց. Արդ, ի՞նչ ասենք. դրախտը անապակա՞ն է, թէ ապականացու:

Պատասխան. Ինչպէս առաջին հայրերն ասացին, անապական է. այդպէս էլ մենք՝ նրանց հետեւողները, անապական ենք համարում: Սա յայտնի է եւ իրերի կարգից: Նախ, եթէ ապականուող լինէր, ինչպիսին այս երկիրն է, այդ դէպքում ինչո՞ւ մարդուն մեծարելով՝ Աստուած նրան դրախտում դրեց: Երկրորդ՝ երբ մարդը ապականուեց մեղքով, ինչո՞ւ նրան դրախտից հանեց, քանի որ ապականուած մարդը ապականուող դրախտին արժանի կլինէր: Երրորդ՝ որովհետեւ բոլորն էլ համաձայնում են այն բանում, թէ մինչեւ յանցանք գործելը մարդուն անապական են ասում: Արդ, եթէ մարդը անապական էր, ապա ապականացու տեղում չէր բնակուի, այլապէս տեղի պատճառով

կդառնար ապականուած եւ ոչ թէ գործած [մեղքի]:

Հարց. Որտեղի՞ց է երեւում նրա անապականութիւնը:

Պատասխան. Այն բանից, որ դրախտի փայտը չի փտում, տերեւը նոյնպէս, պտուղը չի թափւում, ծաղիկը չի թառամում, որ Աստուած իր ձեռքով տնկեց ձեռաշէն Ադամի անապական տեղում:

Եւ եթէ տկարանաս Աստծոյ զօրութիւնից, մեր մէջ էլ կգտնես [դրանք] հաստատող նշաններ՝ չփտող փայտ, անթառամ ծաղիկ, մշտականաչ սաղարթ, չթափուող պտուղներ:

Հարց. Պտուղը, եթէ քաղւում է եւ ծամւում ու փոխւում մարմնականի, ինչպէ՞ս կարող է անապական լինել:

Պատասխան. Դրախտի պտուղը շօշափուող է եւ կերակրող. քաղւում, ծամւում եւ փոխւում է պատահական յատկանիշներով, սակայն անապական է մնում ըստ գոյացութեան եւ ուտողի [վրայ ունեցած] ներգործութեան, ինչպէս Քրիստոսի մարմնի հացը ըստ գոյացութեան եւ ըստ ներգործութեան անապական է, թէեւ ըստ արտաքին յատկանիշների փոփոխւում է: Եւ անապատի մանանան էլ ուտելի էր, որ սափորի մէջ անապական մնաց:

Եւ Կենաց ծառն էլ ունէր ուտելի պտուղ, ինչպէս ասում է Գիրքը՝ «Գուցէ նա ձեռքը մեկնի, ուտի եւ անմահ դառնայ» (Ծննդ. Գ 22):

Արդ, ի՞նչ կասես կենաց պտղի մասին, որ ուտելի էր, քաղուող եւ [այդ դէպքում] ինչպէ՞ս էր կենաց պտուղ, ու եթէ կեանք էր պարգեւում, ինչպէ՞ս էր քաղւում:

Այսպիսով, ինչպէս կենաց պտուղն էր ուտելի եւ կեանք պարգեւող, այդպէս էլ մնացած պտուղներն էին ուտելի եւ անապական:

ԻՄԱՑՈՒԹԵԱՆ ՊՏՂԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ծէ

Հարց. Ո՞րն էր բարու եւ չարի իմացութեան պտուղը:

Պատասխան. Այն զգայական եւ ուտելի պտուղ էր, եւ ինչպէս կենաց պտուղը՝ անմահութեան պատճառ էր, իսկ մնացած պտուղները՝ լիութեան, սա էլ բարու եւ չարի իմացութեան պտուղն էր, ինչպէս ասում է սուրբ Գրիգոր Նիւսացին: Դարձեալ Աստուածաբանն ասում է. «Բարի պտուղ էր՝ գոյացած բարի Արարչից եւ ըստ իր ուտելու ժամանակի բարի էր միւս պտուղների նման, սակայն տարաժամ եւ առանց հրամանի ուտելը նրան չար դարձրեց»:

Ոմանք էլ ասում են, թէ մինչեւ այդ պտղի ուտելը Ադամը բարին գիտէր փորձով, իսկ չարը՝ գիտութեամբ, իսկ երբ կերաւ, իմացաւ չարը փորձով, իսկ բարին՝ գիտութեամբ. սա է բարու եւ չարի իմացութիւնը:

Ոմանք էլ ասում են, թէ այն բարու եւ չարի պատճառ էր ոչ թէ ինքնըստինքեան, այլ օրէնքներով, որովհետեւ եթէ հնազանդ լինէր օրէնքներին, կլինէր բարու պատճառ, իսկ քանի որ չհնազանդուեց, եղաւ չարի պատճառ:

Աստուածաբանն ասում է, թէ՝ «Իւրաքանչիւր ծառ բոլորի ուտելիքն է խորհրդանշում, ինչպէս մանուկների կաթը՝ հաւատի պարզ գիտութիւնը, իսկ գիտութեան ծառը կերակուր է կատարեալ մարդկանց համար, որ իմաստութեամբ կատարեալների՝ բարու եւ չարի ընտրութիւնն է:

Իսկ սուրբ Նիւսացին ասում է, թէ բարին երկուսն է. մէկը պարզ է եւ զուտ բարի թէ՛ ներքուստ եւ թէ՛ արտաքուստ, ինչպէս առաքինութիւնը, հոգեւոր գործերը, որոնց հրամայուած է մերձ լինել: Իսկ միւս բարին խառն է եւ կեղծ, ինչպիսին աշխարհական բարին է, որը գոյնով եւ արտաքնապէս բարի է, մինչդեռ ներսից քօղարկուած չարն է. սրանից մենք պէտք է հրաժարուենք եւ չմօտենանք, որովհետեւ այդպիսի բարին մահուան առիթ է դառնում[275]:

Հարց. Ի՞նչ պտուղ էր, որ Ադամը կերաւ:

Պատասխան. Ոմանք ասում են թուզ էր, որ երբ կերաւ, նոյն պահին մերկացաւ եւ նրա տերեւից [ծածկոց] արեց, որի պատճառով վկայակոչում են, թէ սրա համար [Տէրն] անիծեց թզենին Երուսաղէմում:

Ոմանք էլ ասում են, թէ խաղող էր, կամ ցորեն, որովհետեւ գինին տուեց իբրեւ կեանքի գրաւական, իսկ հացը՝ մարմնի:

Ոմանք էլ ասում են, թէ խնձոր էր, որովհետեւ բազում անգամ Երգ երգոցում խնձորն է յիշատակւում: Սակայն եթէ Սուրբ Գիրքը չի յայտնում, ինչպէ՞ս է մարդը համարձակւում անուններ տալ: Իսկ ճշմարտութիւնն այն է, որ մէկը Կենաց ծառ էր, միւսը՝ իմացութեան, եւ դրախտում նրա նման ուրիշը չկար, ուր մնաց թէ երկրում, եւ ինչպէ՞ս կարող ենք ասել, թէ այս էր, կամ՝ այն:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԴՐԱԽՏԻ ՊՏՈՒՂՆ ԱՆԹԱՓԵԼԻ Է Պրակ ԾԸ

Հարց. Այնպէս է թուում, թէ դրախտում էլ հին պտուղը նորով է փոխարինւում:

Պատասխան. Եթէ ամէն տարի հինը նորով փոխարինուի, ուրեմն պէտք է կամ ծառից պտուղը թափուի, կամ էլ հինը մնայ նորի հետ: Արդ, եթէ հինը նորի հետ մնայ, ապա ծառը կծանրանայ եւ չի կարողանայ տարիների պտուղների բազմութիւնը կրել, եւ այսպէս բոլոր ծառերը կկոտրատուեն եւ կոչնչանան: Իսկ եթէ հինը թափուի, ապա այն կամ ծառի տակ պէտք է թափուի եւ ոչնչանայ, կամ էլ պիտի ամբարուի, ժողովուի ու բարձրանայ աւելի, քան դրախտի ծառն է, որ յարմար չէ: Ուրեմն, ընդունելի է Փիլոն իմաստունի [կարծիքը], որ [դրախտի] պտուղները չեն պոկւում եւ անթափ են տերեւները[276]:

Հարց. [Այդ դէպքում] պտուղներն ինչպէ՞ս են ուտելի, եթէ քաղուող չեն:

Պատասխան. Զարմանալի չեն Աստծոյ հրաշքները, ինչպէս այն, որ իւրաքանչիւր ռունգ հոտն է ընկալում, աչքը՝ գոյնը, սակայն չեն պոկւում եւ անջատւում կրողից, եւ ինչպէս այն, որ ինչպէս Եղիայի պարագային՝ սափորում

չէր նուազում ալիւրը եւ ամանում կերակրելի էր իւղը:

Հարց. Դրախտի ծառերը ինչպէ՞ս են ոռոգւում, եթէ անապական են:

Պատասխան. Ինչպէս երկնքի լուսատուները, որ երկրից ու ծովերից ջուր են քաշում, սնւում, չնայած անվախճան են: Եւ ինչպէս ճրագի հուրը, որ իւղով է սնւում ու չի աւելանում, այսպէս էլ դրախտի տնկիներն են ջուր խմում այն գետից, որ ոռոգում է դրախտը:

Հարց. Միտքս վարանում է, եթէ դրախտն ապականացու երկրից է եւ մասն է կազմում երկրի, ինչպէ՞ս է անապական:

Պատասխան. Թէեւ ըստ նիւթի ապականացու երկրից է, սակայն ըստ նպատակի փոխուեց անապականի, ինչպէս որ Ադամի մարմինն էր երկրային եւ անապական, մանանան էլ օդից էր եւ անապական, որ երեւում էր սափորի մէջ պահուելուց:

Եւ Քրիստոսի մարմինն էլ անապական է, որով կերակրւում ենք: Ոսկին էլ երկրից է եւ դարձեալ անապական, կրակից կարծրացած քարերն էլ անապական են մնում: Եւ ինչպէս կենդանու աչքը մաս է [կազմում] ամբողջ մարմնի եւ լոյսը, այդպէս էլ դրախտն է ապականուող երկրի մասը, որին վիճակուած է անապական լինել:

Հարց. [Աշխարհի] վախճանին վերջին հուրը դրախտը փոփոխելո՞ւ է, թէ ոչ:

Պատասխան. Նախ, ասենք, որ՝ ոչ: Ինչպէս, որ ջրհեղեղը չմտաւ դրախտ, որովհետեւ [սա] ապականուած չէր մեղքով, այդպէս էլ վերջին հուրը ջրհեղեղի չափով նոյն տեղով է ընթանալու: Եւ քանի որ դրախտը ապականուած չէ, չի փոփոխուելու, որովհետեւ անիծուել եւ ապականուել է երկիրը, սակայն՝ ոչ դրախտը:

Ասենք նաեւ, որ դրախտը կազմուած է երկու բանից՝ նիւթից եւ անապականութիւնից: Արդ, վերջին հրով, որում վառուելու են երկինքն ու երկիրը, նիւթեղէն մասը պարզուելու է, իսկ ըստ անապականութեան մնալու է անփոփոխ: Այդպէս էլ՝ ըստ թանձրութեան:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԴՐԱԽՏՈՒՄ ԾՆՈՒՆԴ ՉԻ ԼԻՆՈՒՄ Պրակ ԾԹ

Հարց. Դրախտում մարմնական ծնունդ լինո՞ւմ է, ինչպէս այժմ երկրում, թէ՞ ոչ:

Պատասխան. Ոմանք կամենում են ցոյց տալ դրախտի ապականացու լինելը՝ արուի եւ էգի զուգաւորումը, ցանկասիրութիւնը, զաւակների ծնունդը եւ բազում [այլ] մտացածին բաներ են շարադրում, որ հակառակ է Գրքին եւ ուղղահաւատ հայրերին: Նախ՝ որովհետեւ աստուածային հրամանն ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք եւ լցէ՛ք երկիրը» (Ծնն. Թ 1), որ հրաման էր երկրում աճելու եւ ոչ դրախտում[277]:

Երկրորդ՝ քանի որ դրախտը անապական տեղ էր, [ուստի] մարդուց անմաքուր ոչինչ դուրս չէր գալիս, ինչպէս եւ տնկիներից: Եւ քանի որ չէր լինում արտահոսում, չէր լինում նաեւ մարմ-

նական ապականութիւն եւ ախտաւոր ծնունդ:

Երրորդ՝ սուրբ եկեղեցին օրինակն է դրախտի: Արդ, օրհնութեան պսակը եկեղեցին է դնում, սակայն ոչ որդեծնութիւնը: Նոյնպէս, դրախտում օրհնութեան պսակը եղաւ, սակայն ոչ որդեծնութիւն:

Չորրորդ՝ եթէ այնտեղ ախտաւոր ծնունդ լինէր, ինչպէս երկրում, մարդը կարիք կունենար բոլոր այն պարագաների, որ [անհրաժեշտ] են երեխային՝ սննդի, մեծանալու, խնամքի եւ այլն, իսկ սրանք դրախտում բացակայում են, չկայ [նաեւ] մարմնական զգեստ:

Հինգերորդ՝ մինչեւ յանցանք գործելը Ադամը եւ կինը մերկ էին եւ չէին ամաչում, որովհետեւ ախտաւոր ցանկութիւն չունէին:

Վեցերորդ՝ սուրբ Գրիգոր Նիւսացին ասում է [«Մարդու] կազմութեան մասին» գրքում, որ դրախտի առաջին կեանքը կուսութիւն, անապականութիւն եւ հրեշտակներին նմանութիւն էր, եւ յարութիւնից յետոյ նորից կվերադառնանք դրախտի առաջին կեանքին, [դէպի] անապականութիւն եւ հրեշտակների հետ հաւասարութեան[278]:

Արդ, եթէ առաջին կեանքը [լինէր] ամուսնութեամբ եւ որդեծնութեամբ, ինչպէս նրանք են շաղակրատում, ապա եւ վերջինը յարութիւնից յետոյ այդպիսին պէտք է լինի: Եւ գոյանում է նրանց աղանդը, ովքեր ասում են, թէ արքայութիւնը մարմնաւոր է, այնտեղ կան կերակուր եւ ամուսնութիւն եւ նման ցնդաբանութիւն: Եւ այսպէս ասողներին եւ ընդունողներին օտարելով՝ նզովում է Քրիստոս Աստծոյ եկեղեցին:

Իսկ եթէ մէկը հարցնի, եթէ դրախտում ծնունդներ չպէտք է լինէին, ինչո՞ւ ստեղծուեցին ծննդագործող անդամները, ապա ասենք, որ Աստուած կանխագէտ է, որովհետեւ նախապէս իմացաւ, որ չեն կարողանալու անմեղութեամբ աճել դրախտում, ինչպէս հրեշտակները, ուստի ստեղծեց նրանց մարմինը, որ երկրում կենդանիների նմանութեամբ աճեն:

Իսկ եթէ մէկը պնդի, թէ [ո՞րն է] օրինակը եւ նմանութիւնը անմեղ ծնունդին, ապա սուրբ վարդապետները պատասխանում են սրան, որ ինչպէս հրեշտակներն են աճում երկնքում, այդպէս էլ մարդկային ցեղը [կաճի] դրախտում[279]:

Իսկ եթէ ասեն, թէ հրեշտակները գոյացել են անէութիւնից եւ ոչ թէ միմեանցից, իսկ մարդկային ցեղը պէտք է մէկից ծնուէր, սրբերն ասում են, որ՝ մի լոյսից էլ բազում լոյսեր են վառւում:

Իսկ եթէ ասեն, թէ անկատար է այս ծնունդը, ապա սրբերն ասում են, որ ինչպէս Աստուածածին կոյս Մարիամը առանց սերմի կուսութեամբ կատարելապէս եւ ճշմարտապէս ծնեց, ապա այդպէս էլ դրախտում առանց սերմի եւ կուսութեամբ կարող էին ծնել կատարեալ մարդ Ադամի բնութիւնից, եւ կամ [այնպէս], ինչպէս Եւան [ծնուեց] Ադամի կողից: Կամ էլ ուրիշ եղանակով, որ յայտնի է իրեն՝ ամենագէտ Արարչին:

Իսկ [այն], ինչի մասին լռում է Սուրբ Գիրքը, մենք էլ պէտք է լռութեամբ պատուենք ու հեռու մնալով մտացածին բաներից՝ կորստեան վիհը չգահավիժենք:

Այսքանն այս մասին:

ԳԼԽԱՒՈՐ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Կ

Հարց. Քանի՞սն են գլխաւոր արարչագործութիւնները:

Պատասխան. Ոմանք ըստ եբրայական նշանագրերի ասում են քսաներկուսը, ուրիշներն ըստ օրուայ ժամերի [քանակի]՝ քսանչորսը:

Եւ այսպէս են թուարկում:

Առաջին օրը եօթ արարչագործութիւն արեց՝ հրեղէն երկինքը, չորս տարրերը, լոյսը եւ լոյսի հետ հրեշտակներին:

Երկրորդ օրը՝ [երկնքի] հաստատութիւնը, ջրային կամարները, ծովերը, երկրի ցամաքը:

Երրորդ օրը՝ բոյսերը, տունկերը, դրախտը:

Չորրորդ [օրը]՝ արեգակը, լուսինը, աստղերը:

Հինգերորդ [օրը]՝ ջրայիններին, թռչուններին:

Վեցերորդ [օրը]՝ ցամաքային կենդանիներին, այլեւ՝ Ադամին ուք Եւային:

Եօթներորդ օրը, որ արդարների հանգստեան [օր] են ասում, ցերեկը եւ գիշերը, որոնք լոյսի հետ եղան, որոնցով լինում է քսանչորս արարչագործութիւն:

Եւ սրանք են գլխաւորները: Իսկ ամպերը, հողմերը օդի [բաղադրութեան] մէջ են, ինչպէս քարերն ու մետաղները՝ երկրի, աղբիւրները, գետերը՝ ծովի:

Հարց. Ստեղծելիս ժամանակի մէջ դադար եղա՞ւ:

Պատասխան. Աչքը թարթելիս, որքան որ արագ ես բացում այն, այդպիսի ակնթարթութեամբ միանգամից ստեղծեց ամբողջը, սակայն մասերը զատեց վեց օրում. երեք օրում՝ տարրերը, երեք օրում էլ այն, ինչ տարրերի ազդեցութեամբ կայ: Առաջին օրը արարեց մշտնջենական լոյսը, երկրորդ օրը՝ հոգեւոր արարածներին զատեց մարմնականներից, երրորդ օրը՝ ծովը եւ երկիրը:

Այդպէս էլ միւս երեքի առաջին օրը արարեց ժամանակը [որոշող] լոյսը, արեգակը, լուսինը, աստղերը, որոնք վերեւում [գտնուող] հուր տարրից են: Երկրորդ օրը՝ միջին տարրից ջրի [արարեց] ձկներն ու թռչունները, [ընդ որում] ձկներին թանձր մասը թողեց, թռչուններին թեթեւ մասը բարձրացրեց, որ օդն է: Երրորդ [օրը արարեց] գազաններին ու մարդուն, որոնց ստեղծեց վերջին տարրից՝ հողից:

«Վեցօրեայ արարչագործութեան մասին» [գլխի] աւարտը:

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՑԱՆԿ ՄԱՐԴՈՒ ԿԱՋՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին՝ [այն մասին], որ հողից ստեղծուեց.

Երկրորդ՝ որ յետոյ արարեց.

Երրորդ՝ որ մարդն աշխարհ է կոչւում.

Չորրորդ՝ մարդու կեցուածքն ուղիղ է.

Հինգերորդ՝ դէմքը միակողմանի է.

Վեցերորդ՝ զգայարանների դասաւորութիւնը եւ այն մասին, որ երեսը [այլ] երեսի նման չէ.

Եօթներորդ՝ աչքը տեսնելով՝ հաստատում է լսածը. վերեւ նայելով՝ հեշտանում է: Աչքի պահապանները: Երիտասարդը մօտն է տեսնում, ծերը՝ հեռուն.

Ութերորդ՝ գլխի եւ մազերի մասին.

Իններորդ՝ չորս [տարրերից են] հողմը, ջուրը եւ մարդը.

Տասներորդ՝ տասներկու եւ եօթ անդամները: Այն մասին, որ երիկամը ճարպ ունի.

Տասնմէկերորդ՝ ստամոքսի պատճառով բերանի դառը եւ աղիի փոխուելու մասին: Այն մասին, որ աջ կողմը ուժեղ է.

Տասներկուերորդ՝ հոդերի, ջղերի, երակների մասին.

Տասներեքերորդ՝ տղամարդու, կնոջ եւ անսեռի զանազանման մասին: Դեղին եւ կարմիր երեսի, մարդկանց մի մասի սեւ, միւս մասի սպիտակ լինելու, շէկ, ծիծաղկոտ եւ այլ [արտաքին] ունենալու մասին:

Տասնչորսերորդ՝ մարդու բնոյթն ըստ մարմնի կազմութեան.

Տասնհինգերորդ՝ հոգու զօրութեան մասին՝ տասնինը կէտերով.

Տասնվեցերորդ՝ հոգու մասերը.

Տասնեօթներորդ՝ մասերի կազմութիւնը.

Տասնութերորդ՝ մարդն ինչպէ՞ս է ճանաչւում.

Տասնիններորդ՝ Հոգու եւ իմացման կատարեալ դառնալու մասին: Մանկան դաստիարակութեան մասին.

Քսաներորդ՝ Հոգու էութեան մասին. հակառակ կարծիքների վերլուծութիւնը եւ ճշմարտութեան հաստատումը զանազան հարցադրումներով.

Քսանմէկերորդ՝ ե՞րբ է ներգործում տնկականը, ե՞րբ զգայականը եւ ե՞րբ բանականը.

Քսաներկուերորդ, ինչո՞ւ մարդը ինն ամիս, իսկ միւս կենդանիները աւելի կամ պակաս են լինում արգանդում.

Քսաներեքերորդ՝ բեղմնաւորման, ծննդաբերելու մասին: Վեց փոփոխութիւնների եւ մարդու երեք հասակի մասին՝ համեմատութեամբ չորս տարրերի, եղանակների եւ օրուայ ժամերի.

Քսանչորսերորդ՝ այն մասին, որ միւս կենդանիները մօրից ծնուելուց յետոյ ոտքի են կանգնում, իսկ մարդը՝ ոչ.

Քսանհինգերորդ՝ խառնւո՞ւմ են արդեօք, կենդանիների սերմերը. յղացման պատճառը.

Քսանվեցերորդ՝ երազի մասին.

Քսանեօթներորդ՝ ո՞րն է գիտունը եւ իմաստունը.

Քսանութերորդ՝ մարդու մասին ընդհանրապէս եւ այն մասին, որ [նա] պատկերն է Աստծոյ՝ երեսուն կէտերով.

Քսանիններորդ՝ ի՞նչ է նշանակում պատկեր եւ նմանութիւն.

Երեսուներորդ՝ մենք ինչպէ՞ս ենք պատկեր եւ նմանութիւն: Մեր հոգու եւ Աստծոյ չորս տարբերութիւնների մասին.

Երեսունմէկերորդ՝ մարդու յատկանիշների մասին՝ երեսուն կէտերով.

Երեսուներկուերորդ՝ կնոջը կողից ստեղծեց: Կնոջ անուան մասին.

Երեսուներեքերորդ՝ ի՞նչ է պատուիրանը եւ մահով մեռնելը: Թշնամութեան մասին.

Երեսունչորսերորդ՝ մարդու նկարագրի մասին.

Երեսունհինգերորդ՝ այն մասին, որ չէին ամաչում.

Երեսունվեցերորդ՝ տասներկու պարգեւները, որոնք Ադամը կորցրեց.

Երեսունեօթներորդ՝ եօթ շնորհները եւ եօթ յանցանքները, Ադամի եօթ պատիժները.

Երեսունութերորդ՝ դրախտից ընկնելու տասը աստիճանները.

Երեսունիններորդ՝ մաշկեղէն հանդերձի եւ մարդու զգեստների մասին.

Քառասուներորդ, ինչո՞ւ է մեր մարմնի վրայ մաշկեղէն հանդերձ: Ինչպէս ասում է Աստուածաբան Գրիգորը, Ադամի անմեղ մարմինը անչարչարելի, արագաշարժ, պայծառ ու թեթեւ էր, եւ սա ցոյց տուեց Քրիստոս՝ նախքան խաչուելը: Եւ մեր յարութիւնից յետոյ դարձեալ այդպիսին կլինեն բոլոր սրբերի մարմինները:

Այսքանը մարդու կազմութեան մասին:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՐՔԻ ՍԿԻԶԲԸ ՄԱՐԴՈՒ ԼԻՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԳԼՈՒԽ ԺԵ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ

Պրակ Ա

Հարց. Մարդն ինչո՞ւ հողից ստեղծուեց:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ, ինչպէս վերը նշեցինք, հողն իր մէջ կրում է նաեւ միւս երեք տարրերը, եւ երբ ասում է հողից, նկատի են առնում չորս տարրերը:

Երկրորդ՝ հողն ունի բնական թանձրութիւն, իսկ միւսները խառնուելով նրան՝ ունեն [այդ], եւ մեր մարմինն էլ թանձր է՝ [հողից լինելու պատճառով]:

Երրորդ՝ հողը տարրերի մէջ վերջինն է, եւ որպէսզի իմացուի Աստծոյ շնորհի մասին, [վերջին տարրից] ստեղծուեց առաջինը եւ Աստծոյ պատկերը:

Չորրորդ, հողը խորհրդանշում է խոնարհութիւն, ինչպէս ասում էր Աբրահամը՝ «Ես հող եմ եւ մոխիր» (Ծննդ. ԺԸ 27): Եւ եթէ մեր մէջ տեսնելով Աստծոյ պատկերը՝ հպարտանանք, ապա հողը տեսնելով՝ խոնարհուենք[280]. ինչպէս ասում է մարգարէն՝ «Քո խոնարհութիւնը քո մէջ է»:

Հինգերորդ՝ որովհետեւ հողն ապականացու է, որ ցոյց է տալիս մեր մարմնի ապականացու լինելը:

Վեցերորդ՝ որպէսզի տեսնէր Ադամը, թէ ինչպէս ապականութեան [ենթակայ] հողից կազմուեց անապական մարմին՝ յանուն փառքի, իսկ երբ մեղքերով կորստի [մատնուեց], դարձաւ ապա-

կանացու, եւ ինքը եղաւ իր ապականութեան պատճառը:

Եօթներորդ՝ հողը հողմից փոշի է դառնում. այդպէս էլ երբ մեր մարմինը մահուան հողի շունչն է [առնում], ցրւում է եւ փոշի դառնում:

Ութերորդ՝ հողն առնուած է երկրից, եւ որովհետեւ մեր մարմինը երկիւղաշատ է, այդ պատճառով կոչւում է երկիր, ինչպէս ասում է առաքեալը՝ «Եթէ կանգնած լինես երկ[նչ]ի՛ր, կարող է ընկնես»: Որովհետեւ քանի դեռ մարմնով ենք, հարկ է միշտ երկնչել պատժից, սայթաքելուց, մահից եւ այլն:

Իններորդ՝ որովհետեւ հողը մեր մայրն է, մեր սեղանը, մեր տունն ու գերեզմանը, եւ թէպէտ միւս տարրերն էլ մեր «ազգականներն» են, սակայն մենք ծնւում ենք մօրից:

Տասներորդ՝ սրանով հաստատւում է մեր մէջ հաւատ՝ յարութեան նկատմամբ, որովհետեւ ինչպէս առաջինին հողից ստեղծեց, այդպէս էլ յարութեան ժամանակ հողում լուծուածներին եւ փոշիացածներին Աստուած նորից յարութիւն կտայ:

Սրանով մեր մէջ հաստատւում է նաեւ հաւատը Քրիստոսի մարդեղութեան նկատմամբ, որովհետեւ ինչպէս ապականութեան [ենթակայ] հողից ստեղծեց Ադամի անապական մարմինը, նոյնպէս եւ Բանն Աստուած մարդու հողեղէն եւ ապականացու մարմինը վերցրեց եւ միաւորելով իրեն՝ ծնուեց անապական մարմնով, անմեղ հոգով եւ մտքով, եւ եղաւ երկրորդ Ադամ Տէր երկնքից:

Եւ ստեղծեց հողից որպէս նախատինք սատանայի, որպէսզի ամաչի, որովհետեւ այս տկարը եւ կաւեղէնը փառքի արժանացաւ, երբ նա, որ փառաւորն էր, գահավիժեց[281]:

ԹԷ ԻՆՉՈՒ ՄԱՐԴԸ ՅԵՏՈՅ ԵՂԱՒ
Պրակ Բ

Հարցում. Մարդն ինչո՞ւ յետոյ արարուեց:

Պատասխան. Վարդապետներն ասում են, թէ ամէն մի առաջին չէ, որ պատուական է, եւ ոչ ամէն վերջին՝ անարգ, ինչպէս որ նախ կառքն է, յետոյ՝ կառապանը, նախ նաւն է, յետոյ՝ նաւապետը, իսկ մարդը պատուական է, քան նաւն ու կառքը: Այդպէս էլ նախ դուռն է, յետոյ՝ տաճարը. սպասաւորն աւելի շուտ է առաջ գալիս, քան՝ թագաւորը. նախ վաստակն է, ապա՝ պսակը: Նախ գալիս ենք երկիր, ապա՝ ելնում երկինք: Ահա այսպէս էլ, թէպէտ մարդը յետոյ ստեղծուեց, մեծ է եւ պատուական, քան բոլոր տեսանելի արարածները:

Եւ բազմաթիւ պատճառներով մարդը յետոյ ստեղծուեց:

Նախ, որովհետեւ մեծ եւ պատուական է համարւում, իսկ յարաբերութեան մէջ մեծը ցոյց է տալիս փոքրը եւ պատուականը՝ անպատիւը: Ուստի նախ հարկաւոր էր, որ լինէին փոքրերն ու անպատիւները, որպէսզի երեւար մեծը եւ պատուաւորը, այսինքն՝ մարդը:

Երկրորդ՝ իշխան եւ զօրավար է մարդը: Ուստի պէտք է նախ լինէին զօրքն

ու հպատակները, ապա իշխանն ու զօրավարը, այլապէս ո՞ւմ իշխանն ու զօրավարը պէտք է լինէր:

Երրորդ՝ Աստուած կամեցաւ մարդուն թագաւոր ստեղծել, ըստ այդմ՝ «Ամէն ինչ հնազանդ արարեց նրա ոտքերի տակ» (Սղմ. Ը 7): Ուստի [հարկ էր] նախ ըստ կարգի նախապատրաստել արքունիքը, որ երկինքն ու երկիրն էին, գահաւորանքը, որ դրախտն էր, սպասաւորներին, որ կենդանիներն էին, տնկիների, բոյսերի շքեղութիւնը եւ մանաւանդ՝ ոսկին, արծաթը, ակնեղէնը երկրի սրտում ամբարել եւ ապա բնակեցնել թագաւորին:

Չորրորդ՝ որպէսզի [մարդը] չլինէր նեղսիրտ ու տառապող բարքով՝ իրեն տեսնելով չքաւորութեան մէջ ստեղծուած, այլ տեսնէր ամէն ինչ կատարեալ, որպէսզի ազատ ու մեծասիրտ բարքով ապրէր եւ վայելէր:

Հինգերորդ՝ ինչպէս որ մեծատուն մէկը, եթէ ճաշկերոյթի է հրաւիրում, նախ պատրաստում է ուտելու եւ խմելու անհրաժեշտ պարագաները, ապա մեծարում հիւրերին, այդպէս էլ բոլորի հացատունը Աստուած է, ըստ այդմ՝ «Բոլորի աչքերը քեզ են ապաւինում, եւ դու ես տալիս նրանց կերակուր ժամանակին» (Սղմ. ՃԽԴ 15):

Մարդուն պատուեց մեծարելով, եւ նախ պատրաստեց զանազան կերակուրներ ու ըմպելիքներ, ինչպէս ասացինք, վառուեց լուսաւոր ճրագը, [հնչեցրեց] երգեցիկ թռչունների գեղեցիկ ձայնը, զանազան ծաղիկներ զուարթ վետվետացին, որից յետոյ մարդուն պատուի արժանացրեց, ըստ այդմ՝ «Մարդը պատուի մէջ էր, սակայն չիմացաւ» (Սղմ. ԽԸ 13):

Վեցերորդ, կան, որ գոյութիւն ունեն ուրիշների համար, որովհետեւ բնականից ոմանք իրենք իրենց համար են, ոմանք էլ՝ ուրիշների, ինչպէս որ բոյսերը անասունների համար են, այսինքն՝ ուրիշների, եւ անասուններն էլ կերակրուելով՝ ծառայում են մարդուն: Իսկ մարդը ինքնակալ է եւ ուրիշի համար չէ, որի պատճառով նախ ստեղծուեցին [նրանք, որոնք] այլոց համար են, ինչպէս բոյսերը, որ անասունների, իսկ անասունները, որ մարդու համար են:

Եօթներորդ՝ որովհետեւ երեք տեսակ հոգիներ են բացայայտելի. անկատար, միջակ, կատարեալ, որոնք են՝ տնկականը, զգայականը, բանականը, այսինքն՝ անկատարից ելնում ենք կատարեալը, ուստի նախ ստեղծուեց տնկական հոգին, ապա՝ զգայականը, վերջում՝ բանականը, որ կատարեալ մարդն է:

Ութերորդ՝ նախ մարդուն չարարեց, որպէսզի [սա] իրեն չհամարի արարչակից դեռ չարարուածին եւ գահավիժի հպարտութեան պատճառով, այլ [արդէն] գործող արարչութեան մէջ, որոնց պահապանը դառնայ, ինչպէս ասում է Գիրքը՝ «Գործել այնտեղ եւ պահպանել» (Ծննդ. Բ 15): Իսկ գործը հենց սա է, այսինքն՝ իմանալին վայելել հոգով, զգայականը՝ մարմնով: Ուստի նախ անհրաժեշտ էր, որ

գոյանային սրանք, ապա՝ գործողն ու վայելողը:

Իններորդ, արարչագործութեան սկզբում եղան լոյսի հետ գոյացած իմանալի բանականները, իսկ վերջում եղաւ զգայական բանականը, իբրեւ արարչագործութեան մատնահետք եւ կնիք, որն ունէր իմացութիւն եւ զգացումներ, որպէսզի իմաստութեամբ ընկալէր Արարչի իմաստութիւնը եւ զգալով՝ նրա ամենակարող զօրութիւնը, ըստ այդմ՝ «Աստծոյ աներեւոյթը երեւացողներով է իմացւում» (Հռոմ. Ա 20), կամ՝ «Պատմում է երկինքը Աստծոյ փառքի մասին» (Սղմ. ԺԸ 2), որովհետեւ մեծ է եւ անճառելի ու անպատմելի Աստծոյ զօրութիւնն ու իմաստութիւնը, ըստ այդմ՝ «Մեծ է Տէրը, եւ մեծ է նրա զօրութիւնը, եւ անբաւ է նրա իմաստութիւնը» (Սղմ. ՃԽԶ 5):

Տասներորդ՝ բոլոր գոյաւորների միջնորդն ու կապը մարդն է, որովհետեւ բոլոր արարածները երկու խմբի են բաժանւում՝ իմանալի եւ զգայական, որոնք սկզբում ստեղծուեցին: Յետոյ ստեղծուեց մարդը՝ միահիւսելով իմանալին եւ զգայականը, իբրեւ մի էութիւն, որպէսզի լինի միաւորող ու կապող մէկը բոլոր արարածներին: Եւ հենց սրանից էլ երեւում է, որ բոլոր գոյաւորների Արարիչը մէկն է: Ուստի, լինելով ըստ էութեան մէջտեղինը, նա բնակեցուեց դրախտի մէջտեղում՝ ունենալով մահուան ու կեանքի միջինը, երկու կեանքերի վայելման խառնուրդը՝ համաձայն իր միախառնուած էութեան, որպէսզի եթէ հակուի դէպի աստուածայինը, որի պատկերով եղաւ ինքը, վերափոխուի անմահ կեանքի՝ պատրաստուած ժառանգութիւն: Իսկ եթէ թեքուի դէպի մարմինը՝ դատապարտուի մահուան եւ մարմնաւոր վայրում ապրի, ինչպէս որ եղաւ:

Արդ, ահա այս եւ այլ պատճառներով մարդն արարչագործուեց բոլոր գոյերից յետոյ:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԱՐԴԸ ՆՄԱՆ Է ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ
Պրակ Գ

Հարց. Ինչո՞ւ է մարդն աշխարհ կոչւում, ըստ այնմ՝ «Աշխարհը նրան չճանաչեց» (Յովհ. Ա 10):

Պատասխան. Որովհետեւ մարդը նման է ամբողջ աշխարհին[282], որի պատճառով էլ այդպէս է կոչւում:

Նախ, որովհետեւ աշխարհը կամ իմանալի է, ինչպէս հրեշտակները, կամ՝ զգայական, ինչպէս մարմնականները, իսկ մարդն ունի իմանալի հոգի ու զգայական մարմին[283]:

Երկրորդ՝ [նա] հրեշտակների նման բանական է, կենդանիների նման զգայական, տնկիների նման աճում է, գոյաւորւում անշունչների նման:

Երրորդ՝ որովհետեւ աշխարհը որքան կայ հիւսիսային բեւեռից մինչեւ հարաւայինը, նոյնքան էլ կայ արեւելքից մինչեւ արեւմուտք. այդպէս էլ մարդու մարմինը որքան կայ երկարութեամբ գլխի գագաթից մինչեւ ոտքի ներբանը, այդքան էլ կայ լայնութեամբ՝ երկու ձեռքերի միջամատից միջամատը:

Չորրորդ՝ այլեւ ըստ տարրերի դասաւորութեան է. հողը ներքեւն է, ապա ջուրն է, օդը, հուրը: Այդպէս էլ մարմինը ներքեւն է, արեան հեղուկը՝ վերեւը, աւելի բարձր՝ շնչի օդը եւ լոյսի հուրը:

Հինգերորդ՝ հողի տարրը բոլոր ոսկորների ու ողջ մարմնի մէջ է, նաեւ՝ չորս տեսակ հեղուկները, այսինքն՝ արիւնը, աւիշը, սեւ ու շէկ մաղձերը[284], եւ թոքերի մէջ՝ օդը, որ անընդհատ շարժման մէջ է ու փչում է սրտի ջերմութեանը հակառակ. սրտի մէջ՝ հուրը, որովհետեւ սիրտը ջերմ է ու հրի նման, ներքեւում լայն, իսկ ծայրերով՝ բարակ:

Վեցերորդ՝ եւ ոսկորները նման են քարերի, մարմինը՝ հողի, արեան երակները՝ գետերի ու աղբիւրների, մազը՝ բոյսերի ու տնկիների, շունչը՝ հողմի, գլխի կլորութիւնը՝ երկնքին, աչքերը՝ լուսատուներին, գլխի եօթ անցքերը՝ եօթ մոլորակներին, տասներկու անդամները՝ տասներկու կենդանակերպերին եւ երկրի տասներկու մասերին[285]:

ՄԱՐԴՈՒ ՁԵՒԻ ՄԱՍԻՆ[286]
Պրակ Դ

Հարց. Ինչո՞ւ է մարդու կեցուածքը ուղիղ. գլուխը՝ վեր, միւս անդամները՝ ներքեւ:

Պատասխան. Բազմաթիւ պառճառներով:

Նախ, ըստ իմաստասէրների՝ հոգու ներքին մասերն արտացոլուած են մարմնի արտաքին մասերի մէջ: Ըստ Պլատոնի՝ հոգին եռամասն է, որոնք են՝ միտքը, ցասումը, ցանկութիւնը, որոնցից միտքը հոգու առաջին մասն է ու զօրութիւնը, ցասումը՝ միջին, ցանկութիւնը՝ վերջին: Այդպէս էլ գլուխը մարմնի առաջին մասն է, որ մտքի գործիքն է, սիրտը՝ միջին, երիկամները՝ վերջին:

Երկրորդ՝ մարդու [մարմնի] պատուական մասը գլուխն է, որի պատճառով նշանակուեց վերին եւ առաջին մաս, իսկ միւս անդամներն ըստ կարգի միջինն ու վերջինն են:

Ահա, այսպէս պէտք է սովորես քո կազմուածքի բարեկարգութիւնը եւ ըստ պատուի՝ վերինը, ներքինը եւ հաւասարը:

Երրորդ՝ մարդը նման է գնդաձեւ աշխարհին, եւ [ինչպէս] աշխարհի մասերից երկինքը վերինն է եւ բարձրը, իսկ տարրերը ներքեւի մասում են: Այդպէս էլ մարդու գլուխը նման է երկնքին, որովհետեւ կլոր է, աչքերը իբրեւ լուսատուներ են, իսկ իմացումը նրա մէջ՝ ինչպէս երկնքի միջի բանականներն են, որի պատճառով գլուխը վերին մասում է, խոչափողը, ինչպէս օդը, վերցնում ու տալիս է, իսկ ներքին օրգանները, արիւնը եւ միւս հեղուկները երկրի օրինակն են:

Չորրորդ՝ մարդու գլխում հողի [տարրը] սակաւ է, շատ է օդը, որի պատճառով այն վերեւում է, իսկ միւս կենդանիների [գլխում] հողը աւելի շատ է, որից ծանրացած՝ կախ են ընկնում:

Հինգերորդ՝ մարդը իշխան եւ տէր է բոլոր կենդանիների, ուստի բոլոր կենդանիները գլխիկոր են՝ իբրեւ ծառայ

եւ հնազանդ, իսկ մարդը ուղղաձիգ է՝ իբրեւ ազատ եւ թագաւոր:

Վեցերորդ՝ մարդը զատուած է միւս կենդանիներից եւ տնկիներից, որովհետեւ վերջիններս իրենց գլուխը՝ արմատը, հակառակ՝ դէպ ներքեւ, հողի մէջ ունեն, ոտքերն էլ դէպ երկինք, իսկ կենդանիները ծռուած ու թեքուած են, մինչդեռ մարդն ուղիղ է՝ դէպ վեր, [ընդ որում] գլխի մազերն իբրեւ արմատ են, ջղերը եւ ոտքերն իբրեւ ոստեր, ըստ աշխարհի օրինակի, գլուխն իբրեւ երկինք՝ դէպ վեր, ոտքերը որպէս երկիր՝ դէպ ներքեւ, որպէսզի ծանրն ու ծորացողը դէպ ներքեւ հոսեն:

Եօթներորդ՝ զգայութիւնների վերաբերեալ, որ ամէնից առաջ են հեղուում ուղեղից եւ ազատօրէն տեսնում ու իմանում: Իսկ եթէ գլուխն ու ուղեղը դէպի ներքեւ եւ կորաքարշ լինէին, ուղեղը չէր կարող ճիշտ զգալ եւ իմանալ, ինչպէս միւս կենդանիները:

Ութերորդ՝ արտաքին [աշխարհը] զգալու պատճառով, որ գլուխն է ընկալում, որովհետեւ միւս կենդանիները յագենում են սննդով եւ ցանկութեամբ, իսկ մարդն առաւելապէս յագենում է զգայարանների կողմից գեղեցիկի ընկալմամբ, երբ [օրինակ], աչքով տեսնում է երկինքն ու երկիրը, ժողովում ճշմարիտ գիտելիքներ, ապա՝ յագենում: Իսկ եթէ կորագլուխ լինէր, ինչպէս միւս կենդանիները, կխափանուէին զգայարանները, եւ պակաս [կլինէին] գիտելիքները:

Իններորդ՝ գլուխը վեր է, որովհետեւ լեզուն եւ ձեռքը մտքի սպասաւորներ եւ գործիքներ են, իսկ եթէ մարդը կորագլուխ լինէր, եւ երկու ձեռքերը գամուած երկրին՝ չէր կարող գործել: Եւ կարիք կունենար երկար լեզուի ու հաստ շրթունքների, որպէսզի սնունդ հայթայթէր, իսկ այդ դէպքում չէին կարող խօսքին ծառայել, ինչպէս այժմ:

Տասներորդ, որովհետեւ մարմնի կրքերը հեղուում են հոգու մէջ, երբ մարմինը ննջում է, հոգին թմրում ու պարապ է մնում, այդ պատճառով էլ ուղիղ արարուեց ձեւը, որպէսզի միտքը նրանում ուղղուի դէպի վեր՝ առ Աստուած, ըստ այդմ՝ «Խորհէ՛ք վերինի մասին, որտեղ Քրիստոս նստած է Աստծոյ աջ կողմը» (Կողոս. Գ 1), այլեւ՝ յիշեցէ՛ք երկնային կեանքի փառքը, որտեղից ընկաք, դէպի որը ձգտում ենք, որովհետեւ մտքի տեսութիւնը իր հետ դէպի վեր է տանում հոգուն, նաեւ՝ շունչը: Իսկ շունչը կապուած է արեան հետ, արիւնը՝ մարմնի, զգայարանները՝ մարմնի, եւ ստացւում է, որ մարդն ամբողջութեամբ երկնային է: Եւ քանի որ միայն ոտքի սակաւ մասով է երկրին դիպչում ու տրորում, ուստի եւ մենք մարմնի սակաւ պէտքերը, այսինքն՝ զգեստ, կերակուր, երկրից ենք ստանում, իսկ չափից աւելին ու աւելորդը տրորում ու անցնում ենք, ինչպէս ասում է առաքեալ՝ «Ունենք կերակուր եւ զգեստ. դրանցով էլ բաւարար ենք» (Ա Տիմ. Զ 8):

ՄԱՐԴՈՒ ԴԷՄՔԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Ե

Հարց. Ինչո՞ւ է մեր դէմքը միակողմանի, իսկ միւսը թիկունք է:

Պատասխան. Սա երկու պատճառով է՝ բնական եւ բարոյական:

Բնական, որ նախ՝ նման երկրին, որ երեսին է կրում բոյսերի գեղեցկութիւնը եւ ոչ թիկունքին:

Երկրորդ՝ ըստ տարրերի կարգի թիկունքը՝ թանձր ու պինդ, երկիրն է, փորոտիքը փափուկ՝ ջուրն է, շունչը օդն է, փորի երեսը հուրն է, որ երեւում է նաեւ մեռած մարդու [օրինակով] եւ [սատկած] ձուկն էլ ջրում փորն ի վեր է շրջւում:

Երրորդ՝ փափուկ ջղերն ու նեարդերը դէմքով են անցնում ու զգացմունքներ առաջացնում, իսկ ամուրները սփռուած են թիկունքում, որոնք հաղորդում են ուժ, ամրութիւն եւ շարժունակութիւն: Եւ սա հաստատւում է նրանով, որ ամէն մի կենդանի դէմքի կողմից է մեղկանում:

Իսկ բարոյական [պատճառն այն է], որ նախ երեսից փչեց կենդանիների շունչը, որի պատճառով էլ երեսին են մարմնի զգայարանները:

Երկրորդ՝ ցոյց է տալիս, որ ողջ մարմինը երկու մասից է բաղկացած. հոգին զգում է, տեսնում եւ այլն, իսկ մարմինը անզգայ եւ անշարժ է, որ ակնյայտ է մեռած մարդու օրինակով:

Երրորդ՝ որպէսզի դէմքներս միշտ դէպի երկինք եւ թիկունքը դէպի երկիր պահենք եւ միշտ ոտքով ու ձեռքով բարուն ընդառաջ գնանք եւ չդառնանք չարին:

Սա է ցոյց տալիս դէմքի միակողմանի լինելը, ոտքի ու ձեռքի դէպի առաջ փոխելը:

Հարց. Ինչո՞ւ է դէմքի կողմը աւելի ցանկալի:

Պատասխան. Սրա պատճառները ե՛ւ մարմնական, ե՛ւ հոգեւոր են:

Նախ՝ մարդու երեսին առաջին փչման պատճառով է: Երկրորդ՝ որովհետեւ մարդն արարուեց Աստծոյ պատկերով, որի պատճառով էլ ցանկալի է պատկերը: Երրորդ՝ որովհետեւ երեսը սրտի հայելին է, եւ նրա փոփոխութեամբ ընկալում ենք տրամադրութիւնը, ինչպէս տխրելիս, այնպէս էլ ուրախանալիս, ըստ այդմ Առակն ասում է. «Սրտի բերկրանքից երեսն է ծաղկում» (Առակ. ԺԵ 13): Չորրորդ՝ որովհետեւ երեսից ենք ճանաչում սիրելիին, որի պատճառով առաւել ցանկալի է: Հինգերորդ՝ որովհետեւ այնտեղ են հինգ զգայարանները: Վեցերորդ՝ ցանկութեան երակներն այնտեղ են սփռուած: Եօթներորդ՝ այնտեղ են ժողովուած տարրերի չորս գոյները՝ երկրի սեւը, ջրի սպիտակը, օդի կարմիրը, հրի դեղինը: Ութերորդ՝ այնտեղ է աչքին ցանկալի մասը՝ գեղեցկութեամբ զարդարուած: Իններորդ՝ այնտեղ են բերանը եւ լեզուն, որտեղից հոգու ներքին կիրքը եւ բոլոր բարութիւնները դէպի մեզ են գալիս:

Եւ ինչպէս սա է, այդպէս էլ հոգեւորն է, որի պատճառով Մովսէսը ցանկանում էր տեսնել Աստծոյ երեսը (տե՛ս Ելք ԼԳ 18, 20): Եւ Դաւիթն ասում էր. «Ե՞րբ պիտի գամ ու երեւամ Աստծոյ երեսին» (Սղմ. ԽԱ 3):

ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԻ ԴԻՐՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ Զ

Հարց. Ինչո՞ւ [մարմնի] անդամները [այսպէս են] դասաւորուած. աչքը՝ վե-

ռեւում, ականջները՝ կողքերից, հոտոտելիքները դէպի ներքեւ եւ մնացեալն էլ ըստ կարգի:

Պատասխան. Տարրերի կարգով է նաեւ մասերի դիրքը, որովհետեւ շօշափելիքները ներքեւ են, ինչպէս երկիրը, ճաշակելիքները՝ վերեւ, ինչպէս ջուրը, լսելիքն օդն է, տեսանելիքը վերեւում՝ հուրը: Եւ հոտոտելիքը դէպի ներքեւ է, որովհետեւ հոտը վերընթաց է եւ [նա] ներս է քաշում: Բացի դրանից, գլխի աւելորդ ծորումները դէպի ներքեւ են հոսում: Եւ այն մերձ է բերանին, որովհետեւ հոտն ու համը ազգակից են միմեանց, երկուսն էլ ջրով են գոյանում, ուստի նրանց զգայարանները մերձ են իրար: Իսկ այն, որ աչքը դէմքին է, ականջները կողքերից, պատճառն այն է, որ աչքը ուղիղ դիմացն է տեսնում, իսկ ականջը լսում է բոլոր կողմերից՝ վերեւից, ներքեւից եւ այլն:

Հարց. Հինգ զգայարաններից ո՞րն է պատուականը:

Պատասխան. Զգայարաններից երեքը՝ շօշափելիքը, ճաշակելիքը, հոտոտելիքը կոպիտ են, որովհետեւ խառնուելով են զգայելի իրը ճանաչում, իսկ երկուսն իշխանական են՝ տեսանելիքն ու լսելիքը՝ հեռուից են զգում: Իսկ սրանցից պատուականը տեսանելիքն է: Նախ, որովհետեւ սրա առարկան լոյսն է, որ վերին տարրն է, իսկ լսելիքինը՝ օդն է: Երկրորդ՝ որովհետեւ տեսածը աւելի հաստատ է, քան ականջի լսածը: Սակայն ականջն էլ ունի առաւելութիւն, որ չունի աչքը: Նախ, որ ցերեկ եւ գիշեր լսում է: Երկրորդ՝ որ բոլոր կողմերից է լսում: Երրորդ՝ որ աստուածային խօսքն ու հոգեւորը միայն ականջն է լսում:

ԴԷՄՔԵՐԻ ՈՉ ՆՄԱՆ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ բոլոր անհատ մարդիկ համատիպ են եւ [միաժամանակ] տարբեր մէկը միւսից, քանի որ տեսքով ու ձեւով ե՛ւ նման են, ե՛ւ ոչ նման:

Պատասխան. Այս հարցը տալիս նախ պէտք է իմանալ, թէ որտեղի՞ց են գոյանում պատկերն ու տիպը, եւ թէ՝ ո՞ր տեսակից է տարբերութիւնը, եւ ապա հարցնել:

Առաջինի մասին պէտք է իմանալ, որ առաւել ընդհանուրը հեռու եւ մեծ է, իսկ առաւել իւրայատուկը՝ մօտ է մեզ եւ քիչ: Ինչպէս, օրինակ, բնութեան մէջ յատուկը եւ անձը: Բնութեան մէջ տարբերութիւնները հեռաւոր են եւ մեծ, ինչպէս կենդանու եւ բանականի, իսկ դէմքերի տարբերութիւնը մօտ է եւ քիչ, ինչպէս պատկերը եւ տիպը: Եւ այսպէս է հաստատւում [մեր ասածը]. բնութիւնը սերումից է եւ տարբերութիւններից, որոնցից կազմուած է, անձը բնութիւնից է, որից գոյանում է, դէմքը՝ անձից է, կերպարանքը՝ դէմքից, պատկերը՝ կերպարանքից, տիպը՝ պատկերից եւ որակը բաղկացած է պատահական [յատկանիշներից]: Այսպիսով, ընդհանուրի մէջ նուազագոյն գոյը մարմնական տիպն է, եւ ընդհակառակը՝ առաջին եւ առաւել գոյացութիւնն անհատ անձը եւ դէմքն է. երկրորդը եւ նուազը՝ տեսակն ու սեռն են,

եւ միւսներն ըստ կարգի, որովհետեւ անձը մեր հիմքն ու ներքոդրեալն է, որից ձեւաւորւում են տեսակը, սեռը եւ բարձրագոյն սեռերը:

Սա [այն մասին], թէ որտեղից են գոյանում պատկերն ու տիպը:

Իսկ ինչ վերաբերում է երկրորդ [հարցին], թէ ինչի՞ց են գոյանում տարբերն ու ոչ նմանը, ապա իմանալու է, որ դէմքը եւ կերպարանքը չորս յատկանիշներից են գոյանում՝ գոյից, քանակից, ձեւից, տեղից, ըստ որում մարդու [դէմքը որպէս] մարմին գոյացութիւն է, երկարն ու կարճը շարունակական քանակ է, երկուական աչքն ու ականջն էլ տարբեր են: Ուղիղ կամ ծուռ կեցուածքը որակ է: Ըստ կարգի դիրքը տեղն է, եւ եթէ սրանցից մէկը մարմնից պակասում է, ապա գոյի, քանակի, ձեւի, տեղի զուգորդման [նոր] կերպաւորում է ձեւաւորւում, որ երեւում է հայելու մէջ: Սակայն կերպն ու կերպարանքը տարբերւում են, ինչպէս գաղափարն ու պատկերուածը: Եւ սրանցից զուրկ գոյի քանակից, ձեւից ու երեւացող տեղից մնում է պատկերը, ինչպէս յայտնի է մեռած մարդու [օրինակից]: Եթէ բացակայում է տեղը, մնում է քանակից ու ձեւից բաղկացած տիպը, օրինակ՝ մոմի վրայի կնիքը: Եթէ բացակայում է քանակը, մնում է մի [միաւոր], որ [միաժամանակ] նման է եւ նման չէ, ինչպէս գրուած տառն է, որն իր ձեւով նման է եւ նման չէ [միւսներին]: Իսկ ձեւից զատուած յատկանիշը աննման է երեւում, որովհետեւ նմանը յատկանիշի վերաբերեալ է ասւում, ինչպէս [օրինակ] ծանրութիւնը, ապա ուրեմն պարզ է, որ ոչ նմանը եւ տարբերը սեռի որակութեանն ու մասնաւոր ձեւի որակին են [վերաբերում]:

Իսկ երրորդ հարցին, թէ ինչո՞ւ բոլոր իրերը [միաժամանակ] նման եւ ոչ նման են, ինչպէս շնչաւորները եւ անշունչները, կենդանին եւ անկենդանը ու մնացած բոլորը, ապա ասենք, որ սրա պատճառները [երկուսն են]՝ բնական եւ բանական:

Բնական, որ նախ ամէն մի իր բաղկացած է մարմնական նոյն տարրերից, ուստի բոլորն ունեն միմեանց նմանութիւն եւ [միաժամանակ] նման չեն, որովհետեւ գոյացութիւնները զատորոշուած են միմեանցից:

Երկրորդ՝ որովհետեւ նոյնանում են իբրեւ սեռ, տեսակ, անհատ. սեռով՝ ինչպէս եզն ու ձին, տեսակով՝ ինչպէս Պետրոսն ու Պօղոսը. անհատաբար, ինչպէս նիւթն ու տեսակը: Եւ ըստ այս տարբերութեան է յատուկի եւ պատահականի նոյնը լինելը: Եւ ունեն զանազանութիւն ըստ սեռի, ինչպէս բանականն ու անբանը, ըստ տեսակի, ինչպէս մարդն ու քարը, ըստ անհատականութեան, ինչպէս դէմքը:

Նոյնպէս յատուկով եւ պատահմամբ տարբերութիւնները մտքի քննութեամբ են զանազանւում: Արդ, ինչպէս ցոյց տրուեց, ամէն իրի մէջ կայ նոյնութիւն եւ տարբերութիւն, այս պատճառով էլ միմեանց ե՛ւ նման են, ե՛ւ նման չեն:

Երրորդ՝ իւրաքանչիւր իր գոյանում է էական եւ ոչ էական [յատկանիշներից]. էական՝ ըստ նախածանօթ գաղափարի, տեսութեան, եւ ոչ էական՝ ինքնըստինքեան՝ ժամանակի մէջ հաստատուած:

Ինչպէս եւ ասում են իմաստունները, ամէն մի տեսանելի առարկայ իմացութեան դրսեւորում է, որ գոյ ու որակ են անուանում, եւ նիւթը՝ գոյի պատկեր, որովհետեւ որակը, գոյը անմարմին են եւ մտածողութեան մէջ աննիւթաբար են դրսեւորւում: Այսպէս եւ Արարիչը. նա պարզ է եւ վեր, քան ձեռակերտ նախօրինակը, այս պատճառով իւրաքանչիւր առարկայի մէջ կայ նմանն ու աննմանը, որոնք հաստատուած են էական եւ ոչ էական [յատկանիշներից]:

Իսկ բանականն այսպէս է:

Նախ, ցոյց է տալիս, որ բոլորի Արարիչը մէկն է, իսկ արարածները՝ շատ, որի պատճառով ե՛ւ նման են, ե՛ւ զանազանւում են:

Երկրորդ՝ ցոյց է տալիս, որ արարածները յարաբերւում են Արարչին, ըստ այդմ էլ նման են, եւ քանի այլ են ու զատուած են Արարչից, ըստ այդմ էլ նման չեն:

Երրորդ՝ մէկ այլ գերազանց իմաստ էլ է տրւում սրան. քանի որ սրանց Արարիչը մէկն է բնութեամբ եւ անձերով՝ զանազան, բնութեամբ հաւասար, անձով՝ մասնայատուկ: Նաեւ Սուրբ Երրորդութեան մէջ երեք դէմքերը նոյնն են եւ նման են միմեանց: Որովհետեւ Որդին Հօր պատկերը, տիպը եւ կերպարանքն է: Այդպէս էլ Հոգին: Ըստ այդմ էլ նման են: Եւ քանի որ Անծին, Ծնուած ու Բխած են, ըստ այդմ էլ՝ ոչ նման եւ յատուկ առանձնացած են, որի պատճառով էլ Նրա արարածներն էլ՝ մարմնաւոր եւ անմարմին, կենդանի ու անկենդան՝ Արարչի նմանութիւնը կերպաւորելով իրենց մէջ՝ նման եւ աննման են միմեանց:

Եւ ինչպէս մարմինների պատկերները նման են եւ ոչ նման միմեանց, նոյն կերպ եւ հոգիները, որ ստեղծուած են մի բնութեամբ՝ նման եւ աննման են միմեանց: Նախ, որ անմարմին դէմքերով զատւում են միմեանցից եւ այդ առանձնացած դէմքերով հոգիները ճանաչում են իրար, ինչպէս հարուստը՝ Ղազարի եւ Աբրահամի հոգիներին: Եւ հոգու դէմքը անփոփոխ է թէ՛ կեանքում, թէ՛ մահից յետոյ. չի աճում կամ նուազում:

Ըստ իմացութեան կայ նաեւ հոգու ոչ նմանութիւն՝ առաւել կամ նուազ [չափով]. ուշիմ եւ ապուշ, չկամ եւ կամեցող, հեզ եւ յանդուգն, ցանկասէր եւ ողջախոհ՝ ձեւաւորուած ըստ բնական, բարոյական յատկանիշների, որ նման ու ոչ նման են իրար, ուստի ասում է Առակը. «Ինչպէս նման չէ երեսը երեսին, սիրտը՝ սրտին» (Առակ. Իէ 19): Եւ սա Աստծոյ անճառելի խնամածութեան տեսութեամբ է, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում:

Իսկ եթէ մէկն ասի, թէ սա խառնուածքից է կամ առանձին տեսակ, ինչպէս որ միմեանց նման չեն ձայները, տերեւները, կենդանիները, ապա ասենք, որ տեսակները եւ մարմնի խառնուածքները Արարչի խնամքի տեսութեամբ են:

Իսկ եթէ ասեն, թէ [դրանք] պատահակա-նութիւնից են, կամ արհեստի ու բնութեան գործ, ապա ասենք, որ պատասխանը նոյնն է, որովհետեւ պա-տահականութիւնը մեզ է հանդիպում, սակայն Աստծոյ մօտ պատահական ոչինչ չկայ, այլ ամէն ինչ գիտութեամբ է, որովհետեւ եւ ոչ մի տերեւ անգամ ծառից չի ընկնում՝ առանց Աստծոյ գիտութեան, եւ նրանից են սկիզբ առել արհեստներն ու գիտութիւնները, որովհետեւ աւետա-րանիչն ասում է. «Առանց նրա չեղաւ ոչինչ» (Յովհ. Ա 3):

Իսկ եթէ մէկն ասի, թէ Աստուած ամէն ինչ բարի է ստեղծել, իսկ սրանք չար են երեւում, ապա նշենք, որ իբրեւ հոգու մաս սրանք՝ նախանձը, ցան-կութիւնը իբրեւ բարիք են բնաւորուած եւ յանուն բարու են տրուել, սակայն մարդն իր կամքով փոխում է բնական բարին՝ չարի, այլեւ բանսարկուի թոյնով նեն-գափոխւում ու չար են դառնում, եւ այդպէս մարդը հակւում է դէպ չարը՝ չարացած սատանայի խորհուրդներից, կամքից, թոյնից, ինչպէս ցոյց տրուեց գրքի սկզբում:

Այժմ տեսնենք, թէ ո՞րն է պատ-կերների՝ նման չլինելու օգուտը, քանի որ շատ վնասներ կլինէին, եթէ անհատները միմեանցից դէմքով չտարբերուէին: Նախ, որ ոչ ոք չէր ճանաչի իր հօրը կամ եղբօրը, այլ ես քեզ կընդունէի իբրեւ հայր, դու էլ ուրիշին՝ եղբայր, եւ կլինէր մեծ շփոթ: Երկրորդ՝ հարազատ որդին տէր չէր կանգնի հօր ժառանգութեանը, այլ օտարը կդառնար հարստութեան տէրը, իսկ իւրայինը չքաւորութեան մէջ կտառապէր: Երրորդ՝ չէին տարբերի ժամանակով աւագին ու կրտսերին, եւ նրանց վիճակները կշփոթուէին, ինչպէս Յակոբը վերցրեց Եսաւի անդրան-կութիւնը, իսկ Եփրեմը՝ Մանասէինը (տե՛ս Ծննդ. ՀԵ 29-34, ԽԸ 8-20), թէեւ սրանք Աստծոյ կանխատեսումով էին, բայց խաբէութեամբ եղան: Չորրորդ՝ ամուսինը չէր ճանաչի իր կնոջը, եւ ոչ էլ կինը իր ամուսնուն, եւ կլինէր անօրէն խառ-նակում, ինչպէս Յուդան իր հարս Թամարին չճանաչեց, իսկ Ղովտը՝ իր դուստրերին (տե՛ս Ծննդ. ԼԸ, ԺԹ 30-38): Հինգերորդ՝ եթէ մէկը գողանար կամ սպանէր, ապա անմեղին կդատա-պարտէին, եւ համակ անօրինականութիւն կլինէր: Եւ կամ պարտքը պարտք ունեցողից չէին պահանջի, ինչպէս այժմ անիրաւներն են գրաւը առնում այլ մէկից: Վեցերորդ՝ որովհետեւ պատուարժան-ները չէին մեծարուի, անարգները չէին դատապարտուի, այլ՝ հակառակը: Եւ չէին տարբերուի տէրն ու ծառան, ազատն ու անազատը: Ինչպէս ասում են Շամիրամի մասին, որ երբ սպանեց Արային պա-տերազմի ժամանակ, նրա նման մէկին մեծարման արժանացրեց եւ ասաց, թէ՝ աստուածները յարութիւն տուեցին[287]: Եօթներորդ՝ որովհետեւ չէին կարող ընտրել եւ խոտանել չարն ու բարին, սուրբն ու անսուրբը մարդկանց մէջ եւ այս կամ այն գործը նրանց, այլ անմեղ լինելով՝ կառնչուէին պղծի հետ ու կընդունէին նրա հոգու խեղդամահու-թիւնը, որի մասին եւ զգուշացնում է Առակը. «Մի՛ բնակուիր անզգամ մարդու հետ, որպէսզի նրա ճանապարհով չգնաս եւ չընդունես քո անձի մէջ նրա ոգու

խեղդամահութիւնը» (Առակ. ԻԲ 24-25): Այս է [ասում] եւ Դաւիթ մարգարէն. «Սրբի հետ սուրբ ես լինում եւ մեղանչողի հետ՝ կործանւում» (Սղմ. ԺԷ 27): Ութերորդ՝ չէին տարբերուի բարեկամն ու թշնամին, սիրելին ու ատելին. կլինէին բազում սպանութիւններ եւ աւերածութիւններ, քանի որ չէին զգուշանայ միմեանցից: Եւ ինչպէս պատմւում է Դատաւորաց գրքում, երբ Գեդէոնը փչեց փողը, այլազգիները գիշերը միմեանց սրերով կոտորեցին (տե՛ս Դատ. է 15-25): Իններորդ՝ եւ հոգեւորի մէջ նոյնպէս փոքրերը իրենց մեծամեծ անուններով կկոչէին եւ կմոլորեցնէին մարդկանց, ինչպէս Սիմոն կախարդն էր ասում, թէ՝ ինքը Քրիստոսն է, մինչեւ որ յանդիմանուեց Պետրոսից (տե՛ս Գործք Ը 9-24): Եւ սուտ առաքեալներն էլ ճշմարիտի կերպարանքով էին ներկայանում, եւ սա այն [դէպքում], երբ չունէին նոյն պատկերը, իսկ եթէ այն ունենային, ապա՝ որքա՞ն առաւել: Տասներորդ՝ որովհետեւ բանական մարդը աւելի, քան անբան կենդանին տգէտ կլինէր, որովհետեւ իւրաքանչիւր կենդանի բնական [յատկութիւն] ունի ճանաչելու իւրայիններին եւ օտարներին, ինչպէս արդար արագիլը կերակրում է միայն իր ծնողներին, տատրակը զրկուելով իր զուգակցից, այլ տատրակի հետ չի զուգաւորւում[288]: Չորքոտանիներն իրենց ձագերին են կերակրում ու խնամում:

Այսքանն այս մասին:

ԱՉՔԻ ՄԱՍԻՆ[289]
Պրակ է

Հարց. Ինչո՞ւ տեսնելն աւելի հաստատ է, քան լսելը:

Պատասխան. Նախ, բնականապէս, որովհետեւ աչքի առաջ եղածը առարկայօրէն անփոփոխ է, իսկ ականջին [հասնող] ձայնը եւ խօսքը փոփոխական են:

Երկրորդ՝ իբրեւ ցուցադրութիւն, որովհետեւ տեսնելը հաւատն է նշանակում, որը հաստատ է, իսկ լսելը՝ ճարտարութիւն ուսանելը, ընդ որում լսելը յարութեան ժամանակ խափանւելու է, իսկ տեսնելը մնալու է հաստատուն, ինչպէս որ այժմ է:

Հարց. Ինչո՞ւ մարդու աչքն աւելի հեշտութեամբ վեր է նայում, իսկ երբ ներքեւ է [նայում], դժուարանում է:

Պատասխան. Որովհետեւ աչքի լոյսն էլ հուր է, իսկ հուրը վերընթաց է, այդ պատճառով բնական բաներին նայելով՝ գոհանում է, մինչդեռ [պարտադրուածի պարագային] դժուարանում եւ ընկրկում, ինչպէս այն, որ ամէն ինչ թողնում ենք եւ ճրագի լոյսին նայում: Եւ քանի որ ազգական են [աչքը ճրագին], սիրում է այն ու տեսնում:

Հարց. Ինչո՞ւ է կոպը անընդհատ թարթում եւ բացուխուփ անում աչքը:

Պատասխան. Նախ պահպանում է աչքն արտաքին վտանգներից:

Երկրորդ՝ մաքրում է փոշին, որ օդից նստում է աչքի վրայ, ինչպէս մենք ձեռքով մաքրում ենք հայելու երեսը: Այդպէս էլ մարգարէն Աստծուց խնդրում էր պահպանութիւն, ըստ այդմ՝ «Պահպանի՛ր ինձ ինչպէս աչքի բիբը» (Սղմ. ԺԶ 8):

Հարց. Աչքի լոյսի քանի՞ պահապան կայ:

Պատասխան. Ասենք, որ եօթն են:

Նախ՝ հոնքը, որ վերեւից արգելում է քրտինքը:

Երկրորդ՝ կոպը:

Երրորդ՝ արտեւանունքը:

Չորրորդ՝ աչքի թաղանթը:

Հինգերորդ՝ սպիտակուցը, որն իր հով բնութեամբ աչքերի ջերմութիւնը բարեխառն է դարձնում, ինչպէս նաեւ գեղեցկացնում:

Վեցերորդ՝ ծիածանաթաղանթը, որպէսզի սպիտակուցը տեսնելուն չվնասի:

Եօթներորդ՝ լոյսի երակը, եւ ապա՝ միջի լոյսը:

Հարց. Ինչո՞ւ երիտասարդը մօտն է լաւ տեսնում, ծերը՝ հեռուն:

Պատասխան. Լոյսի երկու երակները, որ ասացինք, ուղեղից իջնում են աչքի մէջ՝ դատարկ ու անարիւն: Եթէ այս երկու երակները տաք են ու չոր, ապա մարդը մօտն է լաւ տեսնում, հեռուն՝ վատ, ինչպէս երիտասարդը: Իսկ եթէ սրանք հով ու խոնաւ են, հեռուն են լաւ տեսնում, մօտը՝ վատ, ինչպէս ծեր մարդը: Իսկ եթէ երկու երակներն էլ վնասւում են՝ մարդը կուրանում է:

ԳԼԽԻ ԵՒ ԱՅԼ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ը

Գլուխն էլ եօթ շերտ ունի. վրայի մազը, մաշկը, մկանները, վերին ոսկորը, ներքին պինդ ոսկորը, ուղեղի թաղանթը եւ ուղեղը: Եւ բոլոր անդամներն էլ եօթ շերտից են, որոնք են՝ մազը, մաշկը, մկանը, արիւնը, ջղերը, ոսկորը, ուղեղը:

Եւ սրանց դասաւորութիւնը այսպիսինն է. ուղեղը, որ ներսում է, սնուցում է ոսկորը. ջղերը կապում են մէկը միւսին, որ ոսկորները չտարանջատուեն. սրանց սնուցում է արիւնը: Ոսկորները մարմնի ներքին սիւնն են: Մաշկը մկանների եւ միւսների ծածկոյթն է, իսկ մազը արտաքին անզգայ ծածկոյթն է, որ ամէն ինչի զգեստն ու պահապանն է:

ՄԱԶԻ ՄԱՍԻՆ

Մազն այրուած արիւնն է, որ օդով դուրս է փչւում, ինչպէս երկրի բոյսերը, իսկ երբ մարդը տկարանում է, այրուած արիւնը շատանում է, եւ մազերը ծորում ու երկարում են: Առողջանալուց յետոյ մարդու արիւնը մաքրւում է ու մկան դառնում, եւ մազն այլեւս չի աճում: Իսկ երբ մաղձն է շատանում մարդու մէջ, մազը նօսրանում է, ուստի ծերութեան ժամանակ մարդը ճաղատանում է[290]:

Եւ մարմնի այն մասերում, որտեղ խոնաւութիւնն ու ջերմութիւնը շատ են լինում, այնտեղ մազ է աճում: Իսկ որտեղ ջերմութիւնը շատ է, մազն [այնտեղ] չի սպիտակում, ինչպէս աչքի արտեւանունքը կամ այլ տեղերինը:

Եւ մազը սպիտակում է մաղձից ու լորձից: Երբ մարդը ծերանում է, ու սպիտակ ջուրը, որ մաղձն է, շատանում է, այդ ժամանակ մազը սպիտակ ջրի հետ դուրս է գալիս եւ սպիտակում[291]:

ՄԱՐԴՈՒ ՄԷՋ ԵՂԱԾ ՉՈՐՍ ՀՈՂՄԵՐԻ ԵՒ ՉՈՐՍ ՋՐԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Թ

Երկրի չորս կողմերում չորս հողմեր կան. արեւելեանը տաք է ու խոնաւ, ինչպէս ասում են բժիշկները: Արեւ-

մտեանը, հակառակ սրան, հով է ու չոր: Հարաւայինը տաք է ու չոր: Հիւսիսայինը, սրան հակառակ, հով է ու խոնաւ: Այսպէս էլ մարդու չորս տարիքում փոխւում են չորս հողմերը: Նախ մանկութեան հասակում, երբ ծնւում է երեխան, արեւելեան հողմն է՝ տաք ու խոնաւ: Երիտասարդութեան [հասակում] հարաւային հողմն է՝ տաք ու չոր: Տարեց հասակում արեւմտեան հողմն է՝ հով եւ չոր: Իսկ ծերութեան ժամանակ հիւսիսային հողմն է՝ հով ու խոնաւ:

Եւ այսպէս ենք մեկնելու նաեւ առաջիկայում՝ կապուած տարուայ չորս եղանակների եւ օրուայ բնութեան հետ:

Իսկ մարդու մէջ չորս ջրերն ըստ չորս տարրերի են՝ աղի, դառը, քաղցր եւ հոտած: Աղի ջուրը աչքի մէջ է, որպէսզի կարգաւորի ջերմութիւնը: Դառը ջուրը ականջում է, որ պահպանի մուտքը: Քաղցր ջուրը բերանում է՝ համերը ճաշակելու համար, իսկ հոտած ջուրը մէջքում է, որպէսզի պահպանուեն ծնունդները:

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՒ ԵՕԹԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ժ

Հարց. Որո՞նք են մարդու տասներկու անդամները:

Պատասխան. Նախ՝ գլուխը: Երկրորդ՝ պարանոցը: Երրորդ՝ ուսերն ու ձեռքերը: Չորրորդ՝ թիկունքը: Հինգերորդ՝ կողերը: Վեցերորդ՝ որովայնը: Եօթներորդ՝ մէջքը: Ութերորդ՝ աճուկները: Իններորդ՝ [սեռական] անդամները: Տասներորդ՝ ազդրերը: Տասնմէկերորդ՝ սրունքները: Տասներկուերորդ՝ ոտքի թաթերը:

Եւ տասներկու անդամները բաժանւում են ըստ տասներկու կենդանակերպերի եւ երկրի տասներկու առանձին մասերի, ինչպէս ասում են տոմարագէտները՝ Խոյը, որ գլուխն է, Պարսկաստանն է:

Եւ մարդու մէջ էլ տասներկուսն են դռները՝ երկու աչքը, երկու ականջը, երկու քթանցքը, բերանը, պորտը, երկու ստինքը, միզանցքը, հետանցքը:

Ուրիշներն էլ ասում են մի ձեռքը երեք մաս ունի, այսինքն՝ մինչեւ դաստակի հոդը՝ մէկ, մինչեւ արմունկը՝ երկու, մինչեւ ուսահոդը՝ երեք. նոյնքան էլ միւս ձեռքը, որ կլինի վեց, եւ երկու ոտքերն էլ՝ վեցական, կլինի տասներկու անդամ:

Իսկ եօթ գլխաւոր անդամներն ըստ եօթ մոլորակների են՝ նրանց համապատասխան բնոյթով: Առաջինը սիրտն է, որ մարմնի թագաւորն է՝ տաք եւ չոր, որի տանուտէրը Արեգակն է:

Երկրորդը գլխուղեղն է՝ հով եւ խոնաւ, հակառակ սրտի ջերմութեանն ու չորութեանը, որ խառնուելով՝ կարգաւորւում է նրա հետ, որի տանուտէրը Լուսինն է:

Երրորդը լեարդն է, որ արեան աղբիւրն է՝ տաք ու խոնաւ, եւ ունի Մուշթարու (Լուսնթագի) բնութիւնը, որ նրա տանուտէրն է:

Չորրորդը թոքն է՝ հով եւ խոնաւ, որ մաղձի աղբիւրն է, որի տանուտէրը Փայլածուն է:

Հինգերորդը փայծաղն է, որ այրուած արեան «ախոռն» է՝ ցուրտ ու չոր, որի տանուտէրը Զոհալն է, այսինքն՝ Երեւակը, իր ցուրտ ու չոր բնութեամբ:

Վեցերորդը երիկամն է, որ սերմի տունն է՝ ջերմ ու խոնաւ, որի տանուտէրը Զօհրայն է, որ Լուսաբերն է:

Եօթներորդը լեղին է կամ խարտեաշ մաղձը՝ տաք ու չոր, որի տանուտէրը Մառեխն է, որ Հրատն է:

Եւ սրանք գլխաւոր անդամներն են, որովհետեւ եթէ միւս անդամները, այսինքն՝ աչքը, ականջը, ձեռքը, ոտքը կամ միւսները վնասուեն, մարդը կապրի, իսկ եթէ այս եօթ թուարկածներից մէկը վնասուի՝ մարդն իսկոյն կմեռնի:

Եւ ինչպէս եօթն են գլխաւոր անդամները եւ եօթն են երկնքի մոլորակները, այդպէս էլ եօթն են աշխարհի մասերը, որ կլեմ են կոչւում[292]:

Հարց. Ինչո՞ւ երիկամները պատուած են ճարպով, իսկ սիրտն ու լեարդը՝ ոչ:

Պատասխան. Նախ, որովհետեւ երիկամների ճարպը մեղմացնում է ցանկութիւնը, եւ երկրորդ՝ անվնաս է պահում [նրան], իսկ սիրտը քանի որ աւելի ջերմ է՝ հալեցնում է ճարպը: Այդպէս էլ լեղին, նաեւ լեարդը, որովհետեւ նրա մէջ արիւնն է գործում. թոքը, որովհետեւ անդադար շնչում է. փայծաղը, որ համեմատաբար սառն է: Սրանք ճարպը չեն պահում, որ օդի պարարտացուած մասն է:

ՍՏԱՄՈՔՍԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԱ

Ստամոքսը ջիլ է ու մկան, [ընդ որում] մկանը տաք է, ջիլը՝ սառը, որովհետեւ ջիլը ձգւում է, երբ յագենում է, ու կծկւում, երբ քաղցած է: Եւ մկանը, քանի որ տաք է, հալեցնում է սնունդը, որ հաւաքւում է նրա մէջ: Այդպէս էլ լեարդն ու լեղին են հալեցնում կերակուրը դրսից՝ աջ կողմից, իսկ փայծաղն էլ, որ սառն է, ձախ կողմից, որի պատճառով էլ, երբ մարդը քնած է ձախ կողմի վրայ, կերածը աւելի շուտ է մարսում, քան թէ պառկած աջ կողմի վրայ:

Ստամոքսն ունի չորս յատկութիւն. ներքաշող, պահող, հալող, դուրս մղող: Ներքաշող է, որովհետեւ երբ կծկւում է ու քաղցում, ներսից եւ դրսից սնուելու կարիք է ունենում: Պահող, որովհետեւ երբ հաւաքում է կերակուրը, ձգւում է, լայնանում ու փակում բոլոր դռները՝ ներսի ու վերեւի կողմից, որ սնունդը դուրս չթափուի: Հալող է, որովհետեւ երբ ջերմութեամբ մշակում է սնունդը, հալեցնում, ինչպէս ապուրը կաթսայում, եւ հալեցնում է ողջ սնունդը՝ վեց ժամուայ ընթացքում, կամ մի քիչ պակաս ու աւելի՝ նայած մարմնի առողջ կամ հիւանդ լինելուն: Արտամղող՝ որովհետեւ երբ մշակում ու հալում է կերակուրը, բացում է դռները եւ բաժանում այն. վերին դռնով գոլորշին առաքում է գլխուղեղի թաղանթին, որտեղ հրանման [գոլորշին] տրւում է տեսողական [անդամներին], ծխանմանը՝ գլխի մասերին: Աղին եւ դառը [տրւում է] աչքին ու

ականջին, ինչպէս ասել ենք, իսկ պարզն ու մաքուրը մնում է ուղեղին եւ գլխուղեղի փափուկ մասերին:

Այսպէս էլ միջին դուռն է բացում. մաքրուած կերակուրը ուղարկում լեարդին, որ ներկում է արիւնը եւ բաժանում դառը՝ լեղուն, հոտածը՝ երիկամներին, մրուրը եւ թթուն՝ փայծաղին, քաղցր արիւնը՝ սրտին. եւ սիրտը երակով ու օդով [այն] սփռում է ողջ մարմնով: Այս կերպ էլ ներքին դռնով աւելորդը մղում է դէպի աղիները, որտեղից [մնացած] ջուրը միզապարկի ցնցուղով իջնում է միզափամփուշտ եւ դառնում մեզ:

ԹՔԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ մարդու բերանը երբեմն քաղցր, երբեմն էլ դառը եւ թթու է լինում:

Պատասխան. Ջուրը, որ բերանն է գալիս, ծնւում է լեարդից: Մինչեւ խռչափողը արիւն է գալիս, իսկ այդտեղ փոխւում է սպիտակ ջրի, ինչպէս ջուրն է ամպի մէջ փրփրում ու դառնում սպիտակ ձիւն, եւ կամ ինչպէս արիւնը երակներով հոսելիս փոխւում է եւ դառնում սպիտակ կաթ, որ հաւաքւում է ստինքներում: Արդ, եթէ խարտեաշ մաղձից մնացած է լինում լեարդում, լերդի համը լեղուց է գալիս, եւ բերանը դառնանում է: Իսկ եթէ սեւ մաղձից է մնացել լեարդում, բերանը թթու է դառնում, իսկ եթէ խորխից է մնացել լեարդում, բերանն աղի է դառնում: Իսկ եթէ մաքուր արիւնն է լեարդում, լերդի համը քաղցր է լինում, որ բերանին անուշ եւ քաղցր համ է տալիս:

Հարց. Ինչո՞ւ բերանում ջուրը քաղցր է լինում, աչքի մէջ՝ աղի, քթում՝ հոտած, ականջում՝ դառը:

Պատասխան. Սրա պատճառները բնական եւ բարոյական են:

Նախ՝ բնական, որովհետեւ ներքին օրգանների չորս հեղուկները սրտի շնորհիւ վերածւում են արտաքին չորս հեղուկների: Այսպէս՝ սեւ մաղձից աղի արտասուքն է լինում, որպէսզի չհոտի աչքը, ինչպէս ասացինք: Լեարդից՝ բերանի քաղցր ջուրը, որպէսզի չզգայ համերը. երիկամներից՝ քթի հոտած [ջուրը], լեղուց՝ ականջի դառը [ջուրը] պաշտպանուելու համար միջատներից:

Բարոյական պատճառները [սրանք են]. աչքի ջուրն աղի է, որ տեսնի անձի եւ այլոց կսկիծն ու արտասուի: Բերանի ջուրը քաղցր է, որպէսզի ամէն ինչի մասին լաւ խօսի. քթինը՝ հոտած, որպէսզի մեղքերի հոտը դուրս մղի. ականջինը՝ դառը, որ չար բաները չլսի:

Հարց. Ինչո՞ւ մարդու աջ կողմն [աւելի] ուժեղ է, քան ձախը:

Պատասխան. Որովհետեւ սրտի արիւնը, լեարդը, լեղին, որոնք ջերմ են, մարդու աջ կողմում են: Իսկ փայծաղը, թոքը, որոնք սառն են՝ ձախ կողմում են, որի պատճառով եւ աջ [կողմը] զօրեղ է, իսկ ձախը՝ տկար:

ՀՈԴԵՐԻ ԵՒ ՈՍԿՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԲ

Հարց. Քանի՞սն են մարդու հոդերն ու ոսկորները:

Պատասխան. Բժիշկներն ասում են, թէ՝ մարդու ոսկորները երկու հարիւր քառասունութն են, որոնք ջլերով ամրացուած ու հանգուցուած են մարմնում: Դրանք հետեւեալն են. նախ մարդու գլուխը չորս ոսկոր [ունի]՝ ներքին կզակը, վերին, երկու քնատեղերինը՝ մի ոսկոր, եւ գագաթոսկորը: Ատամները երեսուներկու ոսկոր, որոնք միասին կլինեն երեսունվեց ոսկոր:

Պարանոցը հինգ լիսեռնաձեւ ոսկոր [ունի], ողնաշարը՝ տասնութ: Աջ եւ ձախ կողմերը իննական ոսկոր, որոնք [միասին] կլինեն քառասունմէկ: Թիկունքից մինչեւ դաստակի հոդը ութ ոսկոր է՝ հետեւեալ կարգով. թիկունքը երկու ոսկոր, ուսը՝ երկու, բազուկը՝ երկու, արմունկները՝ մէկ, դաստակի հոդը՝ մէկ, որ եղաւ ութ: Ձեռքի թաթը երեսուներկու ոսկոր՝ թիկունքից մինչեւ [մատ] ամբողջ ձեռքը լինում է քառասուն: Այդքան էլ միւս կողմը: Եւ ոտքն էլ [ազդրից] մինչեւ թաթ ութ ոսկոր է՝ հետեւեալ կերպ. զիստը երկու ոսկոր, ազդրը՝ երկու, ծունկը՝ երկու, սրունքը՝ երկու, ոտքի թաթը՝ երեսունչորս, որոնք միասին կլինեն քառասուներկու: Նոյնչափ էլ միւս ոտքը, որ կլինի երկու հարիւր քառասուն: Ութ ոսկոր էլ կուրծքը՝ կլինի երկու հարիւր քառասունութ ոսկոր: Սակայն կինը չորս ոսկոր աւելի ունի, քան տղամարդը, որոնք ծննդաբերող օրգաններում են:

Հարց. Ինչպէ՞ս է երեք հարիւր վաթսունհինգ հոդ:

Պատասխան. Ոմանք ասում են տասնեօթ հիմնական ջլերով կապուելով՝ կազմում են երեք հարիւր վաթսունհինգ հոդ: Կամ էլ ներքին ու արտաքին գլխաւոր անդամները, մաշկը, մկանը, արիւնը եւ այլն, միմեանց ագուցուելով՝ դառնում են այդքան: Կամ էլ երկու հարիւր քառասունութ ոսկորները եւ տասներկու անդամները, հինգ զգայարանները միմեանց ագուցուելով՝ լինում են երեք հարիւր վաթսունհինգ հանգոյց[293]:

Եւ ոսկորները բնոյթով սառն են եւ չոր, որովհետեւ խոնաւ դոնդողը չորութիւնից եւ սառնութիւնից մակարդւում ու դառնում է ոսկոր, ինչպէս տաքութիւնից ու խոնաւութիւնից մկանն է առաջանում:

ՋՂԵՐԻ ԵՒ ՈՍԿՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պէտք է իմանալ, որ սրանք երեք սկիզբ ունեն: Ջղերը սկիզբ են առնում ուղեղի թաղանթից, որ պարանոցից առանձին իջնելով՝ բաժանւում է թիկունքին, ձեռքերին, ողջ մարմնին, ինչպէս որ մի ծառի բունն է բաժանւում բազմաթիւ ճիւղերի: Եւ նոյն ջիղը միացնում ու ագուցում է ոսկորների բոլոր հոդերը, եւ նա է ոտքերի, ձեռքերի եւ այլ մասերի անդամների խաղալու եւ շարժուելու պատճառը: Նա զգայուն է եւ որ մասով, որ անցնում է, զգայունութիւն է հաղորդում: Եւ նա ենթարկւում է մտքին:

Ահա այս չորս յատկանիշներն ունի ջիղը: Ջիղը լինում է սառնութեան եւ

դոնդողի խառնուելուց, ինչպէս որ սառնութիւնից եւ խոնաւութիւնից՝ անօթները:

Իսկ շնչերակների սկիզբը սիրտն է, որովհետեւ սիրտն ունի երկու տուն. աջ կողմում արիւնն է հաւաքւում, որ վերցնում է լեարդից, ձախ կողմում՝ օդը, որ վերցնում է թոքից: Այս կողմում ունի չորս երակ՝ առանց արեան եւ լի ջերմութեամբ: Իւրաքանչիւր երակ բաժանւում է երեսուներկու երակի, որոնք միասին լինում են հարիւր քսանութ: Սրանցով էլ ամբողջ մարմնում սփռւում են ջերմութիւնն ու կենդանութիւնը: Այս երակները կոչւում են մէճաս, որոնք ցոյց են տալիս մարդու հիւանդ կամ առողջ լինելը:

Իսկ արեան անօթների սկիզբը լեարդն է. սրանից դուրս է գալիս եօթ երակ՝ լի արեամբ: Սրանցից երեքը խոշոր են. վերին երակը կոչւում է քալասիկէ, միջինը՝ ասայիկէ, ներքեւինը՝ կաթալիկէ, որոնցից ճիւղաւորւում են մարդու երակները: Եւ բաժանւում են բոլոր երակները լեարդից երկու հարիւր երեսունութ երակների, ընդ որում՝ տղամարդու մօտ բոլոր երակների [թիւը] երեք հարիւր վաթսունվեց է, իսկ կնոջ մօտ ութ երակ աւելին է՝ չորս երակ ծննդաբերող [օրգաններում] եւ չորս երակ երկուական ստինքներում:

Սրանցից բացի ուղեղից երկուական երակ է իջնում իւրաքանչիւր զգայարան. երկուսը՝ աչք, երկուսը՝ ականջ, երկուսը՝ քիթ, մէկը՝ բերան, մէկը՝ լեզու, երկուսը՝ ձեռք, երկուսը՝ ոտք, որ եղաւ տասներկու, երկու երակ էլ երիկամներում՝ լի սերմով:

Իսկ ջղերը բաժանւում են երեք հարիւր քառասունութի, ընդ որում տասնեօթը գլխաւոր ջղերն են, իսկ մէկը՝ մայր ջիղը. բոլորը միասին կազմում են երեք հարիւր վաթսունվեց ջիղ, [այսինքն՝ այնքան, որքան] երակների թիւն էր:

Եւ պէտք է իմանալ, որ այս երեքը, այսինքն՝ ջիղը, շնչերակը, արեան երակները, գոյակցում են մէկը միւսով, որովհետեւ արիւնը սնուցում է, ջիղը զգայութիւն է տալիս, իսկ շնչերակը ողջ մարմնին՝ ջերմ կենդանութիւն[294]:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԵՒ ԿՆՈՋ ՁԱՆԱՁԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԳ

Հարց. Ինչո՞վ են զանազանւում տղամարդը եւ կինը:

Պատասխան. Ասենք, որ երանքով, որովհետեւ եթէ անդամահատեն դրանք, տղամարդը կդառնայ կնոջ պէս, եւ մազ չի աճի:

Հարց. Ինչո՞ւ թաթարը այտամօրուս չունի:

Պատասխան. Հնդիկները մօրուք չունեն [բնակավայրի] սաստիկ տաք լինելու պատճառով, իսկ հիւսիսաբնակները չունեն խիստ ցրտի պատճառով: Միջերկրականները մօրուք ունեն [վայրի] բարեխառն [օդի] պատճառով: Իսկ ոմանք էլ անմազ ու անմօրուք են լինում, որովհետեւ երեսի մաշկը ձեռքի [մաշկի] նման ջլապինդ է լինում, որի պատճառով էլ մազ չի աճում:

ՄԱՐԴԿԱՆՑ [ՄԱՇԿԻ] ԳՈՅՆԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ, երբ մարդը վախենում է, դեղնում է, իսկ ամաչելիս՝ շառագունում:

Պատասխան. Սիրտը մարմնի տէրն է. երբ վախենում է, արիւնը հաւաքում է իր մօտ, ինչպէս թագաւորը՝ զօրքը, եւ մաշկը մնում է բնական դեղին գոյնով: Այդպէս էլ, երբ ամաչում է, արիւնը սփռում է ողջ մարմնով եւ ծածկւում ամօթի քողով. այդ ժամանակ էլ երեսի մաշկը արիւնից շառագունում է: Իսկ երբ բարկանում է, կապտում է, որովհետեւ խարտեաշ մաղձը խառնւում է արեան եւ մաշկի հետ:

Տրտմելիս էլ սեւանում է սեւ մաղձի պատճառով, որ երեսի մաշկին է տալիս:

Հարց. Ինչո՞ւ մի մարդ սեւ, միւսը սպիտակ, շէկ կամ այլ [գոյնի] է լինում:

Պատասխան. [Նայած, թէ] բեղմնաւորման պահին որ տարրն է տիրապետողը. ծնողակա՞ն, ժառանգակա՞ն, թէ՞ ախտաբանական. ըստ այդ գոյնի էլ ծնւում է երեխան: Եթէ հուրն է տիրապետողը՝ շէկ է լինում, եթէ օդը՝ կարմիր, եթէ ջուրը՝ սպիտակ, եթէ հողը՝ սեւ: Երբեմն էլ հրի ուժեղ ներգործութիւնից էլ է սեւ լինում, ինչպէս որ հնդիկներն են արեւի ջերմութիւնից սեւ:

Եւ պէտք է իմանալ, որ այս խառնուելու հետ կապուած են նաեւ մարդու բնոյթն ու հիւանդութիւնները: Եթէ, [օրինակ], հուրն է շատ, շէկ է լինում եւ բարկացող: Իսկ բարկանալու պատճառով մաղձը իջնում է ոտքերը: Իսկ եթէ օդն է շատ, թեթեւամիտ, արագաշարժ եւ ծիծաղկոտ է լինում: Իսկ եթէ հողն է շատ, տրտմակեաց, ծանրաշարժ ու մարմնով ծոյլ է լինում:

Ոմանք էլ ասում են, թէ տրտմութեան եւ սրտմտութեան պատճառը սեւ մաղձն է, խարտեաշը՝ բարկութեան եւ նախանձի, արիւնը՝ արիութեան եւ մարմնասիրութեան, թթու մաղձը՝ ծուլութեան եւ քնկոտութեան:

ԴԻՄԱԳԾԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԴ

Հարց. Երեւում է, որ ճշմարիտ են դիմագէտները, որ մարդու նկարագիրն են յայտնում:

Պատասխան. Ասենք, որ ճշմարիտ չեն՝ հինգ պատճառով:

Նախ, որ այս նշանները չեն պարտադրում մարդուն, այլ ցոյց են տալիս հակուածութիւն դէպ այդպիսի յատկանիշը:

Երկրորդ՝ որոնք ոչ թէ աւելի կամ պակաս են, այլ երբեմն-երբեմն են եւ հաւասար բոլոր մարդկանց մէջ:

Երրորդ՝ բանականութեամբ կարող են սանձել դրանք, եթէ կամենան:

Չորրորդ՝ շատերի մօտ այդ նշանները պատահական են եւ ոչ ի բնէ:

Հինգերորդ՝ մարդը կարող է հակառակ վարքագծով՝ պահքով, աղօթքներով, մարմինը մարզելով՝ իր մէջ սանձել այդ նշաններով [պայմանաւորուած] գործողութիւնները: Այս պատճառով էլ հարկ չկայ դատապարտելու մարդուն իբրեւ վատի, եթէ կրում է այդպիսի նշաններ: Միաժամանակ,

բոլորովին չի կարելի զանց առնել իմաստասէրների մտքերը, որոնք ասում են, որ արուի ոգին ժիր է եւ քաջասիրտ, իսկ կնոջը՝ ողորմած ու երկչոտ:

[Կամ]՝ փափուկ ու նօսր մազերը ցոյց են տալիս բթամիտին եւ մեծամիտին, աներկիւղին: Մազածածկ ճակատը ցոյց է տալիս գազանաբարոյին:

Մեծ գլուխը ցոյց է տալիս վատը, կարծրը՝ անխելքութիւնը: Տափակ գլուխը նշան է յանդգնութեան, երկար եւ փափուկ գլուխը՝ զգուշաւորութեան:

Նեղ ճակատը շատակեր է, լայնը՝ փոքրախելք. ուռուցիկը՝ բարկացող, փոս ընկածը՝ ամօթխած, քառակուսի եւ չափաւոր մեծը՝ իմաստուն է եւ մեծահոգի:

Կամարունքը, եթէ վերեւում միանում է՝ քիչ խելք ունի: Եթէ իջնում է դէպի քիթը՝ սրամիտ է, եթէ կամարաձեւ դէպ քունքն է գնում՝ ծոյլ է:

Աչքը, եթէ պայծառ շիթի նման է, ցոյց է տալիս համեստին: Անընդհատ պտտուողը նշանակում է չարիք կայ սրտում: Խաժակնը եւ փայլունը նշանակում է, որ համարձակ է չարութեան մէջ: Մեծ եւ մթագոյն աչքը ցանկասէր է: Թխակնը պակասուժ է եւ ագահ: Եթէ մի քիչ մեղուշագոյն է, արդարամիտ եւ շատ ուշիմ է: Եթէ թխակն է եւ կարմիր, աւելի, քան գազանը, չար է:

Կոկոնաձեւ աչքը նշան է անհաստատ սրտի: Դժուարահայեաց աչքը ճշմարտախօսինն է: Որ անընդհատ բացուխուփ է անում, երկչոտ է եւ թոյլ: Լայնաբաց աչքը յիմարինն է: Նեղակնը արագաշարժինն է:

Մեծ ականջը յիմարինն է եւ շատախօսինը, փոքրը՝ խորամանկինը: Կլորաւուն ականջը ցոյց է տալիս անխելքին, երկարը եւ բարակը՝ նախանձոտին, գլխին կպած ականջը ծոյլինն է:

Լիքը այտերը դանդաղաշարժին ու գինեմոլին են [ցոյց տալիս]. ցամաք այտերը՝ խորամանկին, կլորը՝ նախանձոտին:

Լայն ռունգերովը՝ զուարթ է եւ ուժեղ: Երկարաքիթը՝ թեթեւամիտ է, կարճունչը՝ գող, իսկ եթէ ճակատից ուղիղ իջնում է, ոչ բարձր եւ ոչ ցածր՝ արիութեան եւ խոհեմութեան նշան է:

Բարակ շուրթերը եւ մեծ բերանը՝ ուժեղ է եւ մեծասիրտ: Բարակ շրթունքները եւ փոքր բերանը թուլասիրտ է: Մի քիչ կախշուրթը դանդաղաշարժ է եւ նման էշի ու ձիու: Փոքր բերանը յատուկ է կանանց եւ կնաբարոյ թուլակամներին: Մեծ բերանովը՝ շատակեր է, անգութ եւ անհնազանդ:

Երկար կզակը բարկացկոտ է եւ նենգ: Կարճ կզակը նախանձոտ է եւ ոչ հեզ, որովհետեւ նման է օձի: Չափաւոր եւ քառակուսի կզակը օգտակար [մարդունն] է:

Եթէ ձայնը նման է ոչխարի կամ այծի [մկկոցին]՝ յիմար է: Եթէ արտաբերում է թռչնակերպ՝ թեթեւամիտ է: Բարակ ձայնը՝ տխրասիրտ եւ կասկածամիտ է: Ռնգային ձայնովները՝ ստախօս եւ չարախինդ են:

Երկար եւ բարակ վիզ ունեցողը չարախորհուրդ է: Լիքը վիզը արի է. կարճվիզը համարձակ է. հպարտ վիզը յանդուգն է եւ ապստամբ:

Հաստամէջքը յիմար է: Եթէ մէջքը երկար է, քան փորը՝ խոհեմ է: Եթէ մէջքը փորով մազածածկ է՝ անկրօն է, անկայուն, անգութ, իսկ եթէ միայն մէջքն է մազածածկ՝ սրտոտ է:

Բարակ եւ բարձր ուսերովը դարանակալ է: Եթէ բազուկը երկար է, որի միջին մատը հասնում է ծնկին՝ ուժեղ է: Իսկ եթէ իջնում է մինչեւ ազդրերը, չարակամ է ու չարախինդ:

Կարճ ու փոքր ձեռքը ուժեղ է եւ հնարամիտ: Հաստ ու կարճամատ ձեռքը նենգաւոր է եւ գող: Ծուռ ձեռքը շատախօս է եւ շատակեր:

Սպիտակ, տափակ, փափուկ, բարակ, կարմրագոյն, փայլուն եղունգովը՝ ուժեղ է: Կոր, ուռուցիկ եղունգովը՝ բթամիտ եւ յափշտակող է: Շատ կարճ եղունգներովը՝ չարակամ է:

Հաստ եւ վայրակոր մատներովը ագահ ու չարաբարոյ է: Փոքր եւ բարակ մատներովը՝ յիմար է: Փոքր, հաստ մատներովը՝ համարձակ է:

Բարակ կողերովը՝ խորագէտ է. մկանուտ կողերովը՝ անխելք:

Կարճ եւ հաստ ոտքերովը՝ թոյլ է: Շատ երկար ոտքերովը՝ նենգ է: Կարճ ու բարակ ոտքերովը՝ չարաբարոյ է: Արձակ քայլողը մեծասիրտ է: Որ արագ է քայլում՝ իրեն զսպելով, հայեացքը ներքեւ ձգած եւ ողջ մարմինը կծկած, երկչոտ է, ժլատ եւ աղուէսաբարոյ: Մանր եւ արագաքայլը ասում են չարաբարոյ եւ տկար է լինում:

Սեւամաշկը խորամանկ է: Ճերմակամորթը եւ դեղնագոյնը տկարուժ են: Ճերմակամորթը եւ կարմիրը սրտոտն է: Գոյնը հրէ՝ լուսափայլ աչքով մոլարութեան մէջ ընկնողն է: Միջին գոյնը՝ սպիտակի եւ սեւի՝ ցոյց է տալիս ուշիմը եւ բարեբարոն:

Խիտ եւ երկար մազերովը գազանաբարոյ է եւ մեծամիտ: Շէկ եւ խիտ մազերովը անխելք է: Կիսասեւ եւ ոչ շատ բարակ մազերը բարի բարքը եւ բարի էութիւնն են ցոյց տալիս:

Եւ առհասարակ պէտք է մտապահել հետեւեալը. եթէ անդամները չափաւոր են ըստ ձեւի, գոյնի, չափերի, կառուցուածքի, շարժումների, ուրեմն բարի մտքին [համապատասխան] նկարագիր ունեն, իսկ եթէ անհամապատասխան են, թիւրամիտն են ցոյց տալիս:

Եւ Պլատոնն ասում է, եթէ մարդը նման է որեւէ կենդանու, ապա ունի նրա նկարագրի նմանութիւնը[295]:

Այսքանը մարմնի մասին:

ՀՈԳՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԵ

Հարց. Քանի՞սն են հոգու զօրութիւնները:

Պատասխան. Ըստ իմաստասէրների, հոգու զօրութիւնները երկուսն են, այսինքն՝ իմացական եւ կենդանական: Եւ իւրաքանչիւրը հինգական զօրութիւն ունի:

Իմացական են միտքը, տրամախոհութիւնը, կարծիքը, երեւակայութիւնը եւ հասարակ զգայութիւնը:

Կենդանական են կամքը, ընտրողութիւնը, յօժարելը, բարկութիւնը, ցանկութիւնը:

Սրանց մի մասը բանական է, մի մասը՝ ոչ: Բանական են միտքը, տրամախոհութիւնը, կարծիքը, կամքը, ընտրողութիւնը:

Բանական չեն երեւակայութիւնը, զգայութիւնը, յօժարելը, բարկութիւնը, ցանկութիւնը: Սրանք լիալրւում են ե՛ւ տեսականով, ե՛ւ գործնականով, որովհետեւ բանական յատկանիշները տեսականով են զարդարւում, իսկ ոչ բանականները՝ գործնականով: Այդ իսկ պատճառով կատարեալ իմաստութիւնը բաժանւում է երկու տեսակի՝ գործնական եւ տեսական: Սա ըստ Դաւթի[296]: Իսկ Մաքսիմոս Իմաստասէրն ասում է, թէ մարդու հոգին երկու զօրութիւն ունի՝ միտք եւ բան[ականութիւն]: Սրանք էլ հնգական զօրութիւն ունեն: Միտքը՝ իմաստութիւն, տեսողութիւն, ուսում, յիշողութիւն եւ աւարտը՝ ճշմարտութիւնն է, իսկ բան[ականութիւնը]՝ խոկում, գործ, առաքինութիւն, հաւատ, որոնց աւարտը՝ բարին է[297]:

Եւ այսպէս են զուգորդւում միմեանց հետ. իմաստութիւնը՝ խոկման, տեսողութիւնը՝ գործի, ուսումը՝ առաքինութեան, յիշողութիւնը՝ հաւատի, ճշմարտութիւնը՝ բարու, որովհետեւ երբ միտքը շարժւում է դէպ իմաստը, հանգում է ճշմարտութեանը, իսկ բանականութիւնը, որ սկիզբ է առնում խոկումից, տեղի է տալիս բարուն:

Եւ երկուսի աւարտն Աստծոյ մէջ է, որովհետեւ ն՛ա է ճշմարտութիւնը եւ ն՛ա է Բարին: Եւ ճշմարիտը բարի է ու բարին ճշմարիտ՝ հակադարձօրէն, եւ սրանք են դարձնում մարդուն Աստծոյ կատարեալ պատկեր:

Իսկ ըստ ուրիշների՝ հոգու զօրութիւնները բաժանւում են երկուսի՝ իմացման եւ կամքի: Եւ իմացումն է, որ ընկալում է, եւ կամքն է, որ շարժում է:

Եւ հոգու զօրութիւնները տարանջատուած են մարմնից, ինչպէս իմանալն ու կամենալը: Սրանց ժամանակ հոգին կրում է ոչ թէ մարմնի հոգսերը, այլ կրող մարմնի տրամախոհութիւնը, որովհետեւ տրամախոհութիւնն իմացման վերաբերմամբ նոյնն է, ինչ տեսողութեան համար գոյնը:

Ըստ ուրիշների էլ հոգին ունի մարմնին անխառն զօրութիւններ, ինչպէս միտքը, կամքը եւ այլն:

Ըստ ոմանց էլ ունի [զօրութիւններ]՝ խառնուած մարմնի հետ, ինչպէս որ բնական կենդանական զօրութիւնն է, շնչելն է, որոնց մասին վերը նշել ենք:

Ըստ ոմանց էլ հոգին ունի զօրութիւն՝ յատուկ նաեւ անասուններին, ինչպէս՝ զգայականութիւնը, մասնաւոր զգայութիւններ, ընդհանուր զգայութիւններ, երեւակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, յիշողութիւն:

Իսկ ըստ ոմանց [հոգու զօրութիւնները] ընդհանուր չեն անասուն-

ների համար, ինչպէս միտքը, իմացումը, կամքը եւ այլն:

Եւ կան զօրութիւններ, որ անբաժան են հոգուց, ինչպէս տնկականը, զգայականը, որովհետեւ թէպէտ ըստ իրականացման երբեմն բաժանւում են մարմնից, այլապէս չեն կարողանայ դրսեւորուել, սակայն ըստ էութեան անբաժան են մնում մարմնից, ինչպէս ցոյց կտանք առաջիկայում:

Իսկ անասունների մէջ այդ երկուսը բոլորովին լուծւում են մարմնի հետ:

Եւ հոգու զօրութիւնների մի մասը ենթարկւում է մտքին, իսկ մի մասն անհնազանդ է: Մտքին ենթարկւում են զգայականը, ինչպէս ցասումն ու ցանկութիւնը, իսկ չեն ենթարկւում բանականն ու տնկականը:

Դարձեալ, հոգու զօրութիւնները բաժանւում են ներքին ու արտաքին զգայութիւնների: Արտաքին զգայութիւնները հինգն են, որոնք մասերի զգայութիւններ են, ինչպէս տեսողութիւնը, լսողութիւնը, հոտոտելիքը, ճաշակելիքը, շօշափելիքը: Իսկ ներքին զգայութիւններն ընդհանուր են, ինչպէս երեւակայութիւնը, կարծիքը, տրամախոհութիւնը, յիշողութիւնը, որ միտքն է, քանի որ ամէն ինչ մտնում է յիշողութեան մէջ:

Իսկ ներքին ու արտաքին զգայութիւնների մասին ասուեց վերը՝ «Հրեշտակների մասին» ութերորդ գլխում, տասնվեցերորդ պրակում:

Հոգու զօրութիւնները [ենթարկւում են] նաեւ եռակի բաժանման՝ ըստ երեք ներգործութիւնների. դրանք են՝ կենդանանալը, զգալը, բանական դառնալը:

Ըստ սրանց զանազանւում են հոգու երեք զօրութիւնները, այսինքն՝ տնկականը, զգայականը, բանականը, որովհետեւ տնկական հոգին յօժարում է գոյութիւն ունենալ, զգայականը՝ լաւ գոյել, բանականն՝ աւելի լաւ գոյել, որովհետեւ երբեք չի դադարում՝ մինչեւ չի միաւորւում է՛լ աւելի Լաւագոյնին:

Այս պատճառով [հոգին] սիրոյ զօրութեամբ պտտւում է Աստծոյ շուրջը, որպէս իր միջին կէտի, որովհետեւ գերազանցապէս գոհանում է միայն նրանով:

ՀՈԳՈՒ ՄԱՍԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԶ

Հարց. Ինչպէ՞ս են ճանաչւում հոգու մասերը:

Պատասխան. Ինչպէս Աստուած ճանաչւում է արարածների մէջ, այդպէս էլ կարելի է մարմնի օրինակով հոգին իմանալ:

Մարմնինը գլուխն է, հոգու գլուխը միտքն է: Փառքը պարանոցն է, արիւնը՝ սիրտը, սէրը՝ թոքը, խնդութիւնը՝ լեարդը, ստոյգ լինելը՝ փայծաղը, հանճարը՝ երիկամը, բնութիւնը՝ ոտքը, բանը՝ ձեռքը, հոգին՝ կեանքը, տեսողութիւնը՝ աչքը, լսողութիւնը՝ ականջը, խոհականութիւնը՝ խորհուրդը:

Հարց. Ինչպէ՞ս է [ճանաչւում] իմաստութիւնը:

Պատասխան. Լոյսը երկարութիւնն է: Կենդանութիւնը՝ աջ ձեռքը: Փառքը՝ ձախ ձեռքը: Մեծութիւնը՝ բերանը:

Խօսքը՝ արդարութիւնը: Օրէնքը՝ լեզուն: Կիրքը՝ ողորմութիւնը: Բարին՝ ճանապարհը, իսկ նրա շաւիղը զգուշութիւնն է:

ՄԱՍԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԷ

Ինչպէս օրինակներով բացատրուեցին հոգու մասերը, այդպէս էլ մարմնի մասերից իւրաքանչիւրն իր գործն ունի, որովհետեւ մտքի լոյսն ու պայծառախօսութիւնը խելքից են ծագում, իմացականը՝ գլխի միջին փորուածքում, խորհուրդը՝ սրտում, ցասումը՝ լեղու մէջ, գիտութիւնն ու ցանկութիւնը՝ երիկամներում, ճշմարիտ լինելը, որ ճարտարախօսութիւնն է՝ փայծաղում, հեշտութիւնը՝ լեարդում, սէրը՝ թոքում, ծաղրը՝ ստոծանիում, ագահութիւնը՝ ստամոքսում, հպարտութիւնը՝ բերանում, հանգստութիւնը՝ պարանոցում, ուժը՝ ուսերում, գործը՝ ձեռքերում, արհեստը՝ մատներում, քալուածքը՝ կոնքերում, ձայնը՝ լեզուում, բերանփակութիւնը՝ շրթունքներում, խօսքի հաճելիութիւնը՝ քիմքում, խնդութիւնը եւ թախիծը՝ աչքերում, լուրը՝ ականջներում:

Հարց. Մարդը որտե՞ղ է գտնում իմաստութիւնը:

Պատասխան. Իր խորհուրդների ու խօսքի մէջ:

ՄԱՐԴՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԸ

Հարց. Ինչպէ՞ս է ճանաչւում մարդը:

Պատասխան. Աչքերի նայուածքով, ձեռքի շարժումներով, քալուածքով:

Եւ ընդհանրապէս բոլոր մարդիկ ճանաչւում են նրանից, ում հետ յարաբերւում են, եւ իրենց գործից, որովհետեւ եթէ սուրբ մարդու են յարաբերւում, սրբւում են, եթէ պղծին՝ պղծւում են: Այդպէս էլ, եթէ գործը լաւ են կատարում, գովաբանւում են, եւ եթէ վատ՝ յանդիմանւում:

Դարձեալ մարդու խորհուրդը ճանաչւում է նաեւ երեք կերպ, այսինքն՝ արտաքինից, խօսելու ձեւից, ձայնից: Ըստ որում՝ «Սրտի աւելցուկից է, որ խօսում է նրա բերանը» (Ղուկ. Զ 45), կամ՝ դէմքի փոփոխութիւնից. ըստ որում՝ «Սրտի բերկրանքից ծաղկում է դէմքը» (Առակ. ԺԵ 13), եւ կամ՝ ոտքի ու ձեռքի շարժումներից. ըստ որում՝ «Նենգաւորի ոտքերը ծուռ են գնում» (Առակ. Զ 12),- ասում է առակը:

Հարց. Վատը ո՞րն է:

Պատասխան. Տէրն Աւետարանում չարը եւ վատը նոյնացնում է (տե՛ս Մտթ. ԻԵ 26): Եւ մարդիկ էլ սովոր են հիւանդն ու պակասաւորը նոյնացնել, ուստի ակնյայտ է, որ հոգեւոր եւ մարմնաւոր գործեր չկատարողին, վատ են ասում:

ՄԱՐԴՈՒ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԹ

Հարց. Ինչպէ՞ս պէտք է իմանալ մարդու հոգին:

Պատասխան. Հոգին Աստծոյ պատկերն է, եւ աստուածապաշտ մարդը չպէտք է քննի Աստծուն, թէ որտեղի՞ց է, ո՞ւր է, որքա՞ն է, կամ ինչպէ՞ս է, կամ էլ թէ՝ մինչեւ ո՞ւր է: Այդպէս էլ [չպէտք է քննել]

մարդու հոգին, այլ հարցեր [պէտք է] տալ [այն դէպքում], երբ մարդուն պէտք է հերձուածողութիւնից ազատել, ինչպէս որ առաջիկայում [մեր] որոշ հարցադրումներն են լինելու:

Հարց. Ինչպէ՞ս է մեր իմացական միտքը հասնում անիմանալի Աստծուն:

Պատասխան. Չորս պարզ [յատկանիշներով] է վերացարկւում մեր իմացութիւնը. դրանք են.

Նախ՝ մեղքերից մաքրուելը,

երկրորդ՝ զգայականից հեռանալը,

երրորդ՝ իմացութեան նրբութիւնը,

չորրորդ՝ հաւատի պայծառութիւնը:

Եւ սրանք որքան աւելանում են, այնքան առաւելին է ձգտում նաեւ իմացականը:

Սա էլ հենց իմացութեան հակամարտութիւնն է, որի մասին բազմաթիւ տեղերում նշում են վարդապետները:

Հարց. Ինչո՞ւ է երեխան աւելի հեշտ սովորում, քան մեծը:

Պատասխան. Չորս պատճառներով:

Նախ՝ որովհետեւ նրա զգայարանները փափուկ մոմի նման աւելի յստակ են ընդունում դրոշմը: Երկրորդ՝ ախտեր եւ հոգսեր աւելի պակաս ունի: Երրորդ՝ հնազանդ կամք ունի: Չորրորդ՝ բնութեամբ մերձ է բարուն:

Սրանց հակառակ [նկարագիր] ունի մեծը:

Նախ, զգայարանները պնդացած են: Երկրորդ՝ մեղքերի սերմերը եւ կեանքի հոգսերը սրտում շատ են: Երրորդ՝ կամքը կողմնակից է խոտոր ճանապարհին: Չորրորդ՝ մոռացել է բարին, ինչպէս ասում է Առակը. «Թողել է մանկութեան սովորածը եւ մոռացել աստուածային ուխտը» (Սղմ. ՃԼԱ 2), որի պատճառով էլ մեծահասակները խրատ եւ խորհուրդ չեն լսում:

Եւ պէտք է իմանալ, որ երեխաները բնական արհեստներն են շուտ սովորում, իսկ բանականը եւ իմաստութիւնը՝ հասակով կատարեալները, այն ժամանակ, երբ մարդու մէջ ձեւաւորւում է բանականութիւնը:

Հարց. Ինչո՞ւ մի երեխան ուշիմ եւ խելացի է լինում, միւսը՝ ապուշ եւ դժուարընկալ, մէկը՝ քչախօս, միւսը՝ ցոփ եւ արագախօս:

Պատասխան. Սրա երեք պատճառ են ասում:

Կամ տարրերի խառնուրդից է՝ [նայած] չար կամ բարի լինելուն: Կամ ժառանգական նմանութեամբ է: Կամ ըստ դաստիարակողների խրատների է, եւ կամ էլ չար ուսումնակիցների ու բարքերի պատճառով է:

Սակայն Մեծ Ներսէսը համաձայն չէ սրան, քանի որ այս պատճառաբանումները մարմնաւոր են, մինչդեռ հոգու տրամադրութիւնները մարմնի խառնուածքին չեն հետեւում:

Ճիշտը սա է. ինչպէս Աստծոյ նախախնամութեամբ մարմնի դէմքի հաւասարութեան մէջ պահպանուեց անհաւասարը եւս, եւ նմանութեան մէջ՝ աննմանը, այդպէս էլ հոգու բանական յատկանիշներն են բնութագրւում նման եւ աննման, հաւասար եւ անհաւասար,

այսինքն՝ խոհեմ եւ տգէտ, հեզ եւ բարկացող, ողջախոհ եւ ցանկասէր, եւ մարդու այլ զանազան բնական բարքեր:

Եւ սրա պատճառը հասու չէ մարդկային մտքին ու տրուած է միայն Աստծոյ անքննելի դատաստանին եւ նրա անհետազօտելի ճանապարհին, որ ինչպէս ոչ շատ առաջ նշուեց: Նշուել է նաեւ գրքի սկզբի երրորդ պրակում:

ԳԼՈՒԽ ԺԶ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՄԱՐԴՈՒ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Ի

Հարց. Խնդրում եմ բացատրել հոգու ամբողջական էութիւնը, թէ ինչպէ՞ս եւ ի՞նչ եղանակով է գոյանում:

Պատասխան. Մարդու հոգու մասին զանազան են օտարազգի իմաստուն-ների եւ եկեղեցու վարդապետների կարծիքները:

Ոմանք ասում են, թէ՝ հոգին աւելի առաջ է գոյանում, քան մարմինը, ըստ ոմանց էլ՝ մարմինն է [առաջ], քան հոգին:

Սրանք երկուսն էլ ընդունելի չեն եկեղեցու համար: Որովհետեւ նրանք, ովքեր ասում են, թէ հոգին առաջ է գոյանում, այսպէս են պատճառաբանում. իմանալի էակները աւելի առաջ ստեղծուեցին. քան զգայականները, հետեւաբար, մարդու էութեան մէջ էլ հոգին առաջ է, քան մարմինը:

Եւ ովքեր այսպէս են ասում, հետեւում են Պլատոնի մարմնափո-խութեան մոլորեցնող [ուսմունքին], որն ասում է, թէ՝ երկնքում քաղաք [կայ] եւ հոգիներն այնտեղ հաւաքուած են, ինչպէս զօրքերն ու դասակները եւ ունեն երկրպագութեան առաքինութիւն: Եւ նրանք, ովքեր ծուլանում են՝ սողոսկելով ընկնում են երկիր՝ պարուրուած մարդու մարմնով: Դրանից էլ փոխակերպւում են կենդանու մարմնի կամ բոյսի եւ ապա նորից վերադառնում մարդու մէջ:

[Սրա] անհիմն լինելը ցոյց է տալիս Սուրբ Գրիգոր Նիւսացին «[Մարդու] կազմութեան գրքում»[298]՝ հետեւեալ կերպ. ովքեր ասում են հոգին առաջ է գոյանում, քան մարմինը՝ մեղքի պատ-ճառով են [համարում հոգին] դրուած մարդու մարմնի մէջ՝ բանականութեան նման եւ երկնային կեանքի ենթա-կայութեամբ, որովհետեւ մարմնական է: Սակայն [հոգին] մարմնում աւելի է մեղանչում, քան երկնային կեանքում, որովհետեւ ընկնում է զգայական մարմին, որն ինչպէս ասում են՝ մարդուց ներքեւ է [գտնւում]՝ իրեն յատուկ ախտերով, որովհետեւ զգայական է: Եւ քանի որ անբանները առաքինութիւն չունեն, որ մաքրուեն մեղքերից, ուրեմն պէտք է փոխակերպուեն իրենից ստորինին, որ տունկն է, որը նման է կենդանուն, քանի որ աճում է: Սակայն տնկի մէջ էլ չի կարողանում մաքրուել, այլ ընկնում է անշունչի մէջ, որ տունկից ներքեւ է եւ նման նրան, որովհետեւ մարմին է: Ըստ կարգի, պէտք է, որ անշնչից էլ փոխուի անէութեան եւ անգոյի, որ անշունչ մարմիններին մերձաւոր եւ ստորինն է: Մինչդեռ ասում են, թէ մենք տունկից դարձեալ փոխւում ենք մարդու եւ ոչ թէ անշունչի, որի մասին ասենք հետեւեալը. ինչպէս դու

սահմանեցիր օրէնքդ, ըստ որի մեղքի պատճառով բարձրագոյնից փոխադրւում ես ստորին կեանք, արդ, եթէ տունկից փոխակերպւում է մարդու, ուրեմն մարդու կեանքը վատթար է, քան տունկինը, քանի որ մեծագոյնից նուաստի փոխուեց: Իսկ եթէ սա սուտ է, ուրեմն պէտք է դու ասես կա՛մ [հոգին] մնում է թփի մէջ, կա՛մ փոխւում անէութեան եւ անգոյի, ինչպէս ասացինք:

Իսկ այժմ պատասխանենք նրանց, որ ասում են իմանալի արարածներն աւելի առաջ ստեղծուեցին, քան զգայականները:

Ասենք, որ բոլոր արարածները միանգամից գոյացան Արարչից եւ ոչ թէ մէկը միւսից յետոյ, ըստ որի Մովսէսն ասում էր. «Սկզբում Աստուած արարեց երկինքը, ապա՝ երկիրը» (Ծննդ. Ա 1): Եւ Դաւիթն ասում էր. «Սկզբում Տէրը հաստատեց երկիրը, ապա՝ երկինքը» (Սղմ. ճԱ 25): Իսկ այն, որ ասում ենք վեցերորդ օրը ստեղծեց արարածներին, սրանով յաջորդական կարգը եւ դասն է նշանակւում, իսկ ստեղծումը միանգամից եղաւ:

Այսքանը նրանց մասին, ովքեր հոգին առաջ են ասում, քան մարմինը:

Իսկ նրանց, ովքեր մարմինն են առաջ ասում, քան հոգի՝ վկայաբերում են Մովսէսի ասածը, թէ՝ «Առաւ հողն ու շինեց մարմին եւ յետոյ փչեց նրա մէջ կենդանի շունչ» (Ծննդ. Բ 7), որ կենդանարար հոգին էր: Նաեւ՝ իւրաքանչիւր մարդու կառուցուածքում մարմինը հոգուց քառասուն կամ ութսուն օր առաջ է: Պատասխանենք, որ սուրբ հայրերը «փչում» ասելով բանական հոգին նկատի չունեն, որովհետեւ մարդ ասելով՝ նկատի է առնւում հոգին ու մարմինը, որովհետեւ մարմինը նիւթից՝ հողից է ասւում, այսինքն՝ չորս տարրերից, որոնք հողի մէջ էին, իսկ հոգու մասին չի ասւում, թէ որտեղից է, որովհետեւ այն ստեղծուեց անէութիւնից:

Արդ, հոգով ու մարմնով կատարեալ մարդու մէջ փչեց մարդկային ցեղի շնորհների հոգին, որ ունէին, քանի դեռ անմեղ էին եւ կորցրեցին, երբ մեղանչեցին. ըստ այդմ՝ «Իմ հոգին չի մնայ դրանց մէջ, որովհետեւ մարմին են» (Ծննդ. Զ 3): Եւ նորից հոգի շնորհեց յարութիւնից յետոյ առաքեալներին՝ ասելով. «Առէ՛ք Սուրբ հոգի» (Յովհ. Ի 22):

Եւ եթէ «փչումը» մեկնաբանենք բանական հոգու [հետ կապուած], ինչպէս ոմանք, ապա [կստացուի], որ հոգին դրանից յետոյ ճշմարտութեան դէմ աւելի է մեղանչում, քան մարմինը՝ հինգ պատճառներով:

Նախ՝ եթէ մարմնի համար եղաւ հոգին, որպէսզի կենդանութիւն տայ նրան, ուրեմն հոգին ցածր է, քան մարմինը, քանի որ ստեղծուել է յանուն նրա, եւ մեծ ու պատուական է մարմինը, քան հոգին, որի մասին ասում է առաքեալը. «Որի համար բոլորը», այսինքն՝ յանուն Աստծոյ են բոլոր արարածները, իսկ արարածը ցածր է, քան Արարիչը:

Եւ մարդու համար էլ ասւում է, որ յանուն նրա է ամէն ինչ, այսինքն՝

անասունները եւ բոյսերը, եւ ցածր է բոյսը, քան անասունը եւ անասունը, քան մարդը:

Եւ Տէրն ասում է. «Ոգին առաւել է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան հանդերձը» (Մտթ. Զ 25), որովհետեւ սրանք հոգու եւ մարմնի կարիքների համար եղան:

Այսպիսով, եթէ հոգին յետոյ ստեղծուեց յանուն մարմնի, ուրեմն ցածր է, քան մարմինը:

Երկրորդ՝ որովհետեւ մարդու մէկ գոյութիւնը բաղադրուած է հոգուց եւ մարմնից, եւ հարկ չկայ երկու սկիզբ [ասելու], այլ մի էութիւնը մի սկիզբ ունի:

Երրորդ՝ եթէ հոգին յետոյ լինէր մարմնից, ինքն իր նկատմամբ կլինէր խեղուած ու անկատար:

Չորրորդ՝ եւ հակամարտութեան մէջ կլինէր ինքն իր հետ, թէ՝ ով է աւագն ու կրտսերն իր մէջ:

Հինգերորդ՝ ուրեմն Աստծոյ զօրութիւնը տկար պէտք է լինէր, եթէ մի էութեան մասերը տարբեր ժամանակներում արարեց:

Այսպէս էլ իւրաքանչիւր մարդու կազմութեան մէջ մարմինը առաջ չէ, քան հոգին, ինչպէս ցոյց կտանք:

Եւ ճշմարտութեանը հետամուտ վարդապետները յանդիմանելով երկու կողմի ստախօսութիւնը՝ ոչ հոգին են ասում մարմնից առաջ ստեղծուած, ոչ էլ մարմինը՝ հոգուց առաջ, այլ [ասում են] երկուսն էլ միաժամանակ ստեղծուած՝ ո՛չ ժամանակով առաջ կամ յետոյ ստեղծուած, ո՛չ էլ բնութեամբ, այլ [ասում են] մէկն է սկիզբը մարդու միակ գոյութեան:

Եւ ինչպէս ընդհանուր մարդկութիւնն ամբողջութեամբ Աստծոյ տեսութեան մէջ իրականացաւ քանակով ու թուով, այդպէս էլ այժմ իւրաքանչիւր առաջ եկածն ամբողջական գոյութեամբ լրացնում է այն թիւը, որ նախապէս կար Աստծոյ տեսութեան մէջ:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ո՞րն է մարդու գոյութեան սկիզբը, ապա պատասխանենք, որ մեր մէջ եղած սերմի զօրութիւնն էլ հենց մարդու գոյութեան նոյն սկիզբն է: Որովհետեւ կայ նիւթական մարմնի կառուցուածքի սկիզբ եւ կայ հոգու ծննդեան սկիզբ, եւ այսպէս պէտք է ասել, թէ ի՞նչ է նշանակում մի սերմի զօրութեան մէջ երկու իրողութիւն տեսնել. [մի կողմից] մարմնական նիւթը եւ արարչագիր հրամանի ազդեցութիւնը, որի մասին ասաց, թէ՝ «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք» (Ծննդ. Ա 22). արդ, նիւթից եղաւ մարմնի կազմութիւնը, իսկ [միւս կողմից]՝ ազդու հրամանից գոյացած հոգին:

Եւ այսպէս մէկն է մարդու գոյութեան միակ սկիզբը:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ ի՞նչ է նշանակում, որ ասում են, թէ քառասուն կամ ութսուն օր յետոյ է ստեղծւում բանական հոգին[299], ապա ասենք, որ հոգին ոչ ժամանակով, ոչ էլ բնութեամբ յետոյ չէ, այլ դասով ու կարգով: Որովհետեւ կազմողական զօրութիւնը, որ նիւթի մէջ է արարչագիր հրամանի ազդեցութեամբ, նախ կազմում եւ պատրաստում է տնկականը եւ զգա-

յականն ընդունող նիւթը, ապա՝ Աստծուց ծագող բանականը:

Եւ սա ժամանակով յետոյ չէ՝ երեք պատճառով:

Նախ, որ այդ նիւթն իր մէջ ունի տնկականի բնական կենդանութիւնը, իսկ տնկականը զգայականի մասն է, զգայականն էլ՝ բանականի, եւ սրանք տարանջատուած չեն ամբողջութեան մէջ, քանի որ մարդու մէջ նոյն էութեամբ են, թէեւ տարբեր են դրսեւորումները:

Երկրորդ՝ որովհետեւ իր մէջ թաքնուած կրում է հոգու զօրութիւնը, որ յետոյ երեւում է դրսեւորումների մէջ:

Եւ եթէ մէկն ասի, թէ ինչպէս է բանական հոգին [հանդէս գալիս] նախ իբրեւ զօրութիւն, յետոյ իբրեւ՝ ներգործութիւն, ապա ասենք, որ նիւթի առումով կարելի է ասել, որովհետեւ մէկն ունի, իսկ միւսին ընդունում է, այսինքն՝ տնկականն ունի, իսկ բանականն ընդունում է, քանի որ այս նիւթն ի զօրու է ընդունելու բանականը, մինչդեռ անասունների միջի նիւթը չի կարող ընդունել: Իսկ հոգու առումով այդ սերմի զօրութիւնը յատուկ չէ ամբողջին, այլ՝ մասի ինքնութեանը, որ տնկականն ու զգայականն է:

Եւ երրորդ՝ յայտնի է նաեւ, որ նիւթի հետ կազմաւորուելիս միանգամից լինում է եւ հոգու երեւալը, որովհետեւ քանի դեռ նիւթը անկատար է, միայն երեւում է նրա կերակրուելը: Իսկ երբ կազմաւորւում են զգայութիւնները, երեւում է նրա շունչը: Իսկ երբ մարդու կերպարանք է ստանում, այնժամ Աստծոյ խնամածութեամբ երեւում է բանական հոգին:

Եւ այս կազմողական զօրութեան մէջ է նախ կեանքի համար նիւթ պատրաստւում, ապա՝ զգայութիւնների, յետոյ՝ բանականութեան: Մանաւանդ որ բնութիւնն էլ յանկարծակի չի կարող ներգործել, այլ քայլ առ քայլ՝ հետեւելով անկատարից կատարեալի վերընթացին: Հետեւաբար, հոգու եւ մարմնի լինելութեան միասնութիւնը միանգամից է, ինչպէս արեգակի ծագելու օրինակն է, որ նախ շողերն են երեւում եւ յետոյ ինքը՝ արեգակը: Այսպէս էլ բանական հոգու «շողերը» զգայականն ու տնկականն են: Ինչպէս որ նախ թագաւորի զօրքն է հասնում իջեւանատուն եւ ասւում է. թէ՝ թագաւորի իջեւանն է, թէեւ [սա] յետոյ է գալու: Այսպէս էլ հոգուն հնազանդ զօրքերը զգայականն են ու տնկականը, եւ նրանցով է հոգին մարմնի մէջ:

Սա առաջինի օրինակը:

Եւ յետոյ, ինչպէս ցորենի հատիկն ինքնին կրում է ծիլը, ծաղիկը, հասկը, եւ սրանք բոլորն էլ զօրութեամբ հաւասարապէս ներկայ են հատիկի մէջ եւ ժամանակի ընթացքում հերթականութեամբ են երեւան գալիս, այսպէս էլ իմացիր հոգին:

Սա էլ երկրորդի օրինակը:

Եւ ինչպէս, օրինակ, տունկը հողի մէջ տնկելուց յետոյ նախ դալարում է, ապա՝ ծաղիկ տալիս եւ ծաղկի հասունանալուց յետոյ պտղաբերում է, այդպէս էլ հոգին, իբրեւ անկատար նիւթ, ունի սնուելը. երբ հաստատւում է, ծաղկում է

զգայութիւններով եւ հասունանալով՝ բանականութեամբ պտղաբերում է՝ Վերին խնամածութեամբ, ինչպէս պտուղն այն՝ արեգակից:

Եւ ինչպէս նկարիչները քանի դեռ նկարում են ձեռքն ու ոտքը, չի երեւում մարդու պատկերը, այլ միայն ոտքերն ու ձեռքերը: Իսկ երբ ձեւաւորւում է դէմքը, նոյն պահին էլ երեւում է մարդու պատկերը. այսպէս էլ բանական հոգին միանգամից երեւում է ձեւաւորուած մարմնում:

Սա էլ երրորդ օրինակը:

Եւ ասում եմ, միանգամից երեւում է, ինչպէս որ նիւթն այն իր մէջ աննկատ կրում է մարմնի մասերը՝ ձեռքը, ոտքը, մկանը, մազը, որոնք յետոյ են երեւում: Այդպէս էլ նրա մէջ ծաղկած հոգին յետոյ է երեւում՝ [հետեւեալ] կարգով. նախ տնկականը, ապա զգայականը, եւ որտեղ Աստծոյ հրամանով սրանք երեւում են, այնտեղ երեւում է եւ բանականութիւնը: Եւ ինչպէս ծնուած մանուկն է իր մէջ ծածկուած կրում հոգին, նախ կերակրւում է, զգում, ապա՝ խօսում, այդպէս էլ իմացի՛ր ներարգանդային կեանքի մասին:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ ինչպէ՞ս ենք համոզւում, թէ այն հիւթն ունի կենդանութիւն, ապա ասենք, որ՝ վեց հանգամանքով:

Նախ, որ առաջ է եկել կենդանի մարմնից: Երկրորդ՝ կենդանի է եւ առաջացած: Երրորդ՝ կենդանի է երկիր գալիս: Չորրորդ՝ որովհետեւ միայն այն չէ մեռեալը, որ չունի բանականութիւն եւ շունչ, այլ նաեւ այն, որ չունի տնկական [յատկանիշներ], ինչպիսին քարն է: Այն իսկապէս մեռած է: Իսկ տնկականն արդէն իսկ այս հիւթի մէջ կայ, թէեւ դեռ չունի շունչ ու բանականութիւն:

Հինգերորդ՝ ունակութիւնը նախորդում է պակասութեանը, որովհետեւ որտեղ չկայ ունակութիւն, այնտեղ չկայ պակասութիւն: Ապա ուրեմն նախ այն հիւթն ունի կեանք, որ ունակութիւնն է եւ ոչ թէ պակասութիւն, որ մեռելութիւն է:

Վեցերորդ՝ կենդանութեան ընթացքն ենք տեսնում նրա մէջ՝ ջերմութեան, շարժումների, ներգործութիւնների [ձեւով], որ երեւում են հիւթի կազմուելու ժամանակ:

Ուրեմն բնականից [այն] ունի կենդանութիւն:

Իսկ եթէ մէկը հարցնի. եթէ այն սերմն ունի կենդանութիւն, վիժելուց յետոյ ինչո՞ւ է մեռնում. պատասխանենք, որ չորս բանի պակասութիւնն է խափանում նրա կենդանութիւնը:

Նախ՝ եթէ սերմը վնասուած է:

Երկրորդ՝ եթէ սերմանողը պակասաւոր է:

Երրորդ՝ սերմի՝ իր տեղում չգտնուելու պատճառով:

Չորրորդ՝ ժամանակի ոչ պատեհ լինելու պատճառով:

Սրա եւ սերմանելու վերաբերեալ պէտք է իմանալ [հետեւեալը]՝ ժամանակը ցուրտ է, թէ՞ տաք, հողը խոնաւ է, թէ՞ չոր, սերմը փտած է, թէ՞ չորացած, եւ եթէ սերմանող չկայ ու չի սերմանում, չի բուսնում:

Ասենք, որ ամէն մի սերմ իր մէջ ունի ինքն իրեն խնամող ջերմութիւն եւ խոնաւութիւն: Արդ, ջրի խոնաւութիւնը վնասում է ջերմութեանն ու չորութեանը, իրի ջերմութիւնը՝ խոնաւութեանը, եւ [սերմը] լինում է անպտուղ:

Դարձեալ ջերմը եւ խոնաւը չափաւորուած են այն հիւթի մէջ, իսկ դրսից մտածը վնասում է նիւթի սերմողական ունակութեանը:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ ինչո՞ւ ամէն մի սերմ մէջն է լինում, պատասխանենք, թէ ոմանք սերմն ունեն արմատներում, միւսները՝ ծայրերին, կէսը՝ տերեւներում, ուրիշները՝ կեղեւում, եւ թէպէտ սրանց սերմողական զօրութիւնը ներսում է, սակայն առաւել եւս կենդանիների մօտ: Եւ սա երեք պատճառով:

Նախ՝ մէջը գտնուելու պատճառով հաւասարապէս հպւում է բոլոր մասերին՝ զօրութիւն տալով [նրանց]: Երկրորդ՝ մէջն է գտնւում, որպէսզի չվնասուի արտաքին պատահարներից: Երրորդ՝ որովհետեւ զօրութեամբ [օժտուած] նիւթը պէտք է ծածուկ մնայ, որպէսզի երեւայ ներգործելիս:

Իմացի՛ր եւ այս, որ այս երեւոյթի մէջ բազմաթիւ զարմանահրաշ բաներ կան:

Նախ՝ որ ծնում է նմանին եւ անմանին, ինչպէս հատիկը՝ ցորեն եւ ծեղ: Երկրորդ՝ բոլոր մասերը միանգամից կրում է իր մէջ: Երրորդ՝ կենդանութիւն ունի ու չի երեւում: Չորրորդ՝ նախ զօրութեամբ է, ապա փոխւում է ներգործութեան: Հինգերորդ՝ նիւթը սպառւում է, իսկ զօրութիւնը՝ ոչ: Վեցերորդ՝ սպառուած նիւթի [փոխարէն] զօրութիւնն է գործում: Եօթներորդ՝ լինելով մէկը՝ սկիզբ է տալիս կրողի եւ կենդանութեան, ինչպէս ասացինք:

Եւ բազմաթիւ այլ այսպիսի բաներ:

Իսկ եթէ մէկն ասի, թէ, ինչպէս երեւում է, բանական հոգին ծնողներից է բաժանւում կամ գոյանում[300], ապա ասենք, որ բնաւ ո՛չ: Յիշի՛ր, մարմնի նիւթն է ծնողներից, իսկ հոգին ծնողներից չէ, այլ Աստծոյ հրամանով է գոյանում՝ թէ՛ տնկականը, թէ՛ զգայականը եւ թէ՛ բանականը: Եւ բաժանուելը չի ասւում հոգու վերաբերեալ, ո՛չ տնկականի, ո՛չ զգայականի, ո՛չ բանականի, այլ բաժանւում է նիւթը եւ ոչ հոգին. [սա] երեք պատճառով:

Նախ, հոգին անմարմին է, որի պատճառով չի բաժանւում՝ ո՛չ տնկականը, ո՛չ զգայականը, ո՛չ բանականը: Երկրորդ՝ բաժանողը վախճանւում է, իսկ հոգին անվախճան է եւ անմահ: Երրորդ՝ բաժանողը մասնատւում է, մինչդեռ զաւակի ծնուելով՝ ծնողից ոչինչ չի պակասում. բանականութիւնը, շունչը կամ կենդանութիւնը. [սրանք] ամբողջական են թէ՛ ծնողի, եւ թէ՛ ծնուածի մօտ: Հետեւաբար, հոգին չի բաժանւում, եւ այն չի գոյանում, ինչպէս մարմինը մարմնից:

Այլ բաժանւում է նիւթը, որն իր մէջ կրում է ողջ կենդանութիւնը ու դառնում է նիւթ այլ մարմնի համար՝ նոյն կենդանութեամբ, որ ունի իր մէջ. ինչպէս որ ծառից հատուած ճիւղը, որ տնկում ես

հողում, ծառից հատուած ճիւղ է եւ ոչ կենդանութիւն, ուրեմն նշանակում է, որ տնկուած ճիւղը աճում է նոյն կենդանութեամբ, որ կրում է իր մէջ:

Իսկ եթէ մէկն ասի, թէ՝ բացատրի՛ր հոգու լինելութիւնը նախախնամութեա՞մբ է, թէ՞ ստեղծելով, ապա ասենք, թէպէտ այլ է ստեղծման եւ այլ է նախախնամութեան գործը, որովհետեւ ստեղծելը որեւէ բան անելն է ոչնչից, իսկ նախախնամելը՝ եղածը փոխանցելով՝ նոյն տեսակը պահպանելն է:

Արդ, նախախնամութեամբ էին տնկականն ու զգայականը, որոնք ծերանալով եւ նմանին ծնելով՝ պահպանում են նոյն տեսակը: Իսկ բանական մարդը ամբողջովին նախախնամութեամբ չէ, որովհետեւ հոգին ծնողներից չէ, այլ Աստծոյ շնորհներով է տրուած եւ ամբողջովին ստեղծմամբ էլ չէ, քանի որ մարմինը նախախնամութեամբ է փոխանցւում:

Այսպիսով, ոչ նախախնամութիւնից է հեռու, ոչ էլ ստեղծումից, այլ մէջտեղում է, որովհետեւ նախախնամութեամբ ունի տնկականն ու զգայականը, իսկ ստեղծմամբ՝ բանական հոգին՝ Աստծոյ պատկերով:

Եւ բանական հոգին էլ ոչ նորաստեղծ է ու ոչ էլ հին: Հին չէ, քանի որ ամէն մի նոր մարմնի հետ միանգամից է ստեղծւում հոգին: Եւ նոր չէ, որովհետեւ ի սկզբանէ միեւնոյն արարչադիր հրամանով առանց տկարանալու գործում է մինչեւ աւարտը, եւ իւրաքանչիւր հոգու համար նոր հրաման չի արձակում: Իսկ եթէ այսպէս է, ուրեմն Աստծոյ հրամանի մէջ նոր չէ, այլ նոր է իր գոյանալով: Հետեւաբար, բանական հոգին նախախնամութեամբ եւ ստեղծմամբ է: Նախախնամութեամբ, որովհետեւ չի ծերանում եւ չի ծնւում, ինչպէս մարմինը մարմնից, այլ առաջ է բերում իր պատկերը, ինչպէս որ այն կայ: Եւ թէպէտ Աստծոյ նախախնամութիւնը արարածների համար մի երեւոյթ է, սակայն բոլորին միատեսակ չի պահպանում ու նախախնամում: Եւ ստեղծմամբ է, որովհետեւ ըստ իր գոյութեան՝ Աստծոյ շնորհով նոր տրուեց մարմնի լինելութեան հետ միասին:

Եւ պարզ ու հասկանալի է ասում այս մասին նաեւ սուրբ Գրիգոր Նիւսացին, մեր մարդկութիւնն ամբողջացնելիս բանականի շնորհը թափանցեց Աստծոյ տեսութեան միջով՝ որքանութիւնն ու որպիսութիւնը ցոյց տալով այն խօսքով, որ ասում է. «Աստուած արարեց մարդուն իր պատկերով»[301] (Ծննդ. Ա 27), այսինքն՝ ողջ մարդկային բնութիւնը: Եւ իւրաքանչիւր ոք, առաջ գալով ծնունդով՝ ստանում է նոյն պատկերի շնորհը աստուածային ծագումից, եւ լրացնում այն նոյն թիւը, որ Աստուած տեսել էր առաջ, քան աշխարհի լինելը, ինչպէս ասում է առաքեալը: Ինչպէս օրինակ, եթէ մի արհեստաւոր ցանկանում է քարից պատկեր քանդակել, նախ իր մտքում գծում է պատկերի ձեւը, ապա հատում քարը, տաշում ու քանդակում պատկերն

այն նմանութեամբ, որ ձեւաւորուել էր մտքում:

Նոյնպէս եւ արուեստաւոր Աստուած իր նախանկար տեսութեամբ մտքի մէջ առաջ, քան մարդու լինելն ունի նրա որպիսութիւնը, որքանութիւնը եւ այլն, իսկ արուեստով, որ արարչադիր հրամանն է, ներգործում է նիւթի վրայ: Եւ քանի որ նիւթն անկատար է, նրան տալիս է նաեւ անկատար տնկական հոգի, ապա աճելու հետ՝ շնչական, իսկ մարմնի ձեւաւորուելուց յետոյ՝ հեղում է նրա մէջ բանական հոգի, ըստ նախատես այն օրինակի, որ կար Արարչի մտքում առաջ, քան աշխարհի լինելը: Ուստի, նախախնամութեան գործն է առաջ բերել իւրաքանչիւր ոգի եւ պատկերակից դարձնել նախատիպին: Իսկ առաջացածը նոր գոյացաւ:

Ուրեմն, պարզ եղաւ հարցիդ [պատասխանը]:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ինչո՞ւ նախ տնկականն է տալիս, յետոյ՝ բանական հոգին, ապա [կասենք], որ սա երկու պատճառ ունի՝ բնական եւ բարոյական:

Բնական [պատճառն] այն է, որ անկատարից կատարեալն է բարձրանում, ինչպէս աստիճաններով սանդուղքի գլուխը, եւ քչից՝ շատը: Այսպէս էլ հոգին:

Իսկ բարոյականը սա է. քանի որ կորցրինք արարչական պատկերն ու դրախտի առաջին կեանքը եւ ընտրեցինք անասնական պատկեր եւ երկրորդ ու ախտաւոր կեանք, ուստի իրաւացիօրէն շրջուեց մեզանից եւ հոգու լինելութիւնը: Եւ անասուններին հաւասարութեամբ նախ գոյանում է անասնականը, որ տնկականն ու զգայականն են, յետոյ՝ բանականը:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ըստ երեւոյթին մարդու մէջ երեք հոգի կայ՝ տարբեր կերպ էականացած, երկուսը նախախնամութեամբ, որ տնկականն ու զգայականն են, մէկն էլ ստեղծմամբ, որ բանականն է, ապա ասենք, որ մարդու մէջ երեք հոգի չկայ, այլ՝ հոգու երեք զօրութիւն, իսկ մարդու հոգին մէկն է՝ առաջ եկած մէկ նախախնամութեամբ՝ անկատար նիւթի մէջ դրուած տնկական եւ զգայական [ձեւերով], իսկ կատարեալում ծագած բանական հոգով: Եւ թէպէտ տարբեր ժամանակներում են դրսեւորւում սրանք, բայց էութեամբ մէկ են, եւ ինչպէս նկատում են, սրանք տարբեր հոգիներ են ու տարբեր տեսակներ, այսինքն՝ մարդու մէջ բանականն է, անասունի մէջ՝ զգայականը, բոյսի մէջ՝ տնկականը:

Իսկ մարդու մէջ չպէտք է ասել երեք հոգի, այլ մէկ հոգի՝ երեք զօրութեամբ:

Այսպէս էլ զգայականում չպէտք է ասել երկու հոգի, այլ երկու զօրութիւն: Իսկ տունկի մէջ տնկականը ոչ թէ պէտք է ասել զօրութիւն, այլ՝ տնկական հոգի:

Այսպիսով, ուրեմն մէկն է հոգին՝ երկու պատճառով: Նախ, որ մարդը մի գոյութիւն է ու մի կենդանի, [ուստի] մէկն է մի մարդու հոգին եւ մէկը՝ կենդանութիւնը:

Երկրորդ՝ որովհետեւ եթէ լինէին տարբեր հոգիներ, մի հոգին չէր բնակուի

միւսի տեղում, [այլ] որպէս այլ հոգի՝ այլ կաղապարում, կամ՝ այլ դրոշմուածք այլ կնիքի մէջ, այլ մէկն է, քանի որ այն, ինչ հանդէս է գալիս յետոյ, կարող է բնակուել նախնական խառնուածքում:

Ապա ուրեմն, մէկն է մարդու մէջ հոգու էութիւնը:

Եւ տարբեր զօրութիւններ տարբեր կերպ են դրսեւորուում, որոնք են աճելը, զգալը, խորհելը: Միեւնոյն հոգին, որ դրսեւորուում է իբրեւ տնկական, ինչը սնուելու, աճելու, ծնելու [յատկանիշների դրսեւորումն] է, կոչւում է տնկական: Այդպէս էլ զգայականում դրսեւորուողը կոչւում է զգայական, իսկ որ հասկանում եւ խորհում է, կոչւում է բանական հոգի, որ այլ տեղերում բաժանւում է տեսողական, իմացական, յիշողական զօրութեան, որոնցում հանդէս գալով՝ մնում է անբաժանելի: Այսպէս էլ այստեղ իմացի՛ր: Եւ եթէ երեք տեսակ, կամ երեք զօրութիւն, կամ էլ բանական հոգու երեք մաս ասես, միեւնոյնն է իմաստը:

Այժմ օրինակով տեսնենք հոգու միութիւնը: Ինչպէս զգայականում կայ նաեւ տնկականը, սակայն զգայականի հոգին մէկն է եւ ոչ երկուսը, այդպէս էլ սրանք կան մարդու մէջ, սակայն մարդու հոգին մէկն է եւ ոչ երեքը:

Եւ ինչպէս օրինակ, իմացման էութիւնը մէկն է, սակայն նա դրսեւորուում է հինգ զգայարանների ընկալածով, այսպէս էլ հոգու էութիւնը ինքնըստ-ինքեան մէկն է, սակայն բաժանւում է երեք դրսեւորումների:

[Կամ մէկ այլ] օրինակ. ինչպէս մէկն է ամբողջն իր մասերով, այդպէս էլ ամբողջական հոգին մէկն է, իսկ դրանք նրա մասերն են:

Եւ ինչպէս Արիստոտէլն է ասում, երեք թիւը մի էութիւն ունի, որի մասերն են երկուսը եւ մէկը, որովհետեւ եթէ ասես՝ մէկ, [այն] մէկ երրորդ մասն է, երկուսը՝ երկու մասն է: Իսկ երբ ասում ես երեք, այդ դէպքում ընդգրկելով առաջին թուերն իր մէջ՝ ամբողջանում է:

Այսպէս էլ մարմնին նախ տրւում են բանականի մասերը՝ զգայականը եւ տնկականը, իսկ երբ բանականն է հեղւում մարմնի մէջ, այդ ժամանակ էլ դրանք միախառնւում են նրա հետ, որովհետեւ նրա զօրութիւններն ու մասերն են՝ բերուած նախորդ օրինակի, երեք թուի նման: Եւ արդ, զգայականն ու տնկականը չունեն կազմողական զօրու-թեան իրենց [առանձին] ներգործութիւնը, այլ այն միեւնոյն հոգուց է: Ու նոյն այդ հոգին է, որ գործի է դնում զգայական ու տնկական զօրութիւնները մարմնում, քանի դեռ մարմնի մէջ է:

Իսկ երրորդ գործը, որ իմանալն ու խորհելն է, հոգին հանդէս է բերում, երբ անջատուած է մարմնից: Եւ սրա համար դարձեալ յիշի՛ր արեգակի շողերի օրի-նակը, որ աւելի շուտ են երեւում, քան արեգակը: Եւ երբ ծագում է արեգակը, այնժամ նրա շողերն էլ են իր հետ ծագում ու լուսաւորում մեզ իրենցով, ու նախ եւ առաջ իբրեւ շող:

Ու երբ արեգակը, բաժանում է մեզ իր շողերը, անբաժան են մնում նրա

շողերն իրենից: Այսպէս էլ իմացի՛ր բանական հոգին, որ մարդու մէջ մէկն է, սակայն տարբեր կերպ է դրսեւորուում:

Եւ եթէ մէկը հարցնի, ինչպէ՞ս է մէկը, եթէ ահա մահուան ժամանակ բաժանուում է նրանից, ապա ասենք, որ մահուանից յետոյ էլ սրանք ըստ էութեան չեն բաժանուում հոգուց, քանի որ սրանց էութիւնը մէկն է, այլ ըստ ներգործութեան է, որովհետեւ մարմինը չկայ, [ուստի] չի կարող ներգործել: Այսպիսով, բաժանուած չէ հոգուց, այլ՝ մարմնից:

Եւ եթէ մէկն ասի, թէ երեւում է, որ ինքն իր մէջ հերթագայութիւն ունի եւ յետոյ է դառնում մէկը, ապա ասենք, որ հաւաստիօրէն հոգին մէկն է, եւ նրա մէջ չկան առաջին ու վերջին, քանի որ մէկն է էութիւնը, եւ միայն ըստ առաջին ու վերջին զօրութիւնների՝ առաջին ու վերջինն են նրա ներգործութիւնները:

Եւ եթէ մէկն ասի, եթէ ասենք, որ հոգու առաջին զօրութիւնը տնկականն է, իսկ վերջինը՝ բանականը, ապա յոյժ անպատշաճ կլինի, ապա ասենք, որ բանականը ըստ պատուի առաջ է, քան զգայականը, եւ զգայականը [առաջ], քան տնկականը: Սակայն ըստ կարգի եւ դասի հակառակն է, առաջ է տնկականը, քան զգայականը, եւ նա՝ քան բանականը, սակայն էութեամբ միասնական են, ինչպէս որ ասացինք հոգու եւ մարմնի մասին:

Այսպէս իմացի՛ր եւ այստեղ հոգու ու նրա զօրութիւնների մասին:

Եւ եթէ մէկն ասի, թէ երեւում է, որ հոգին առաջ է, քան մարմինը, որը յետոյ իր մասերով է երեւում, ապա պատասխանենք՝ դուրս գցի՛ր մտքիցդ հեթանոս կարծիքները, որովհետեւ հոգին առաջ չէ, քան մարմինը, եւ ոչ էլ մարմինը առաջ, քան հոգին, ինչպէս որ սկզբում ասացինք: Այլ նախ էացած է Աստծոյ խօսքի մէջ եւ միաժամանակ մարմնի հետ դրսեւորուած՝ իբրեւ նախատես խօսքի պարգեւ:

Եւ եթէ այս նախատեսութիւնը կարծես միայն հոգուն յատուկ էութիւն, ապա [ասենք], որ ոչ միայն հոգին տեսաւ, այլեւ՝ մարմինը, իւրաքանչիւրի ընտրութիւնը, մազերի թիւը, աստղերի թիւը, որոնք յետոյ գոյացան համաձայն Տեսնողի կամքի: Այսպէս էլ խնամողի կամքով հոգին յետոյ է պարգեււում ըստ իւրաքանչիւր ծնուող մարդու թուի, ինչպէս որ ինքն է սահմանել:

Այսքանն այս մասին:

Ե՞ՐԲ ԵՆ ՆԵՐԳՈՐԾՈՒՄ ՀՈԳՈՒ ԵՐԵՔ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊՐԱԿ ԻԱ

Հարց. Դարձեալ ըստ կարգի հարցնեմ. ե՞րբ եւ ո՞ր պահից են սկսում ներգործել տնկականը, զգայականը, բանականը:

Պատասխան. Սերմողական զօրութեան դանդաղ ընթացքի կամ արագ դրսեւորուելու պատճառները երեքն են՝ տեսակը, տեղը, ժամանակը, որ բոյսերի աճելու ժամանակ էլ է նկատւում: Մի մասն ըստ սառն ու ջերմ, չոր ու խոնաւ տեսակի եւ խմբի պատկանելու պատճառով է արագ կամ դանդաղ աճում: Մի այլ մասի պատճառը տեղն է՝ բերրի կամ

անբերրի. միւս մասինն էլ ժամանակը՝ ցուրտ կամ տաք: Իսկ այն, ինչ ընդհանուր է եւ յատուկ բոլորին, բոլոր բոյսերն էլ դրսեւորում են միաժամանակ:

Արդ, սա նկատի առնելով՝ այժմ թափանցենք այս մտքի խորքերը եւ քննենք, որովհետեւ սերմողական զօրութիւնը, որ կայ այն նիւթի մէջ, արգանդում խառնուելով սերմերին՝ հաւասարապէս ցոյց է տալիս տնկականը: Արական եւ իգական սերմերի մակարդուկը պանրի նման է լինում մինչեւ վեցերորդ օրը, ինչպէս որ Յոբն է ասում. «Կաթի նման կթեցիր ինձ եւ պանրի նման մակարդեցիր» (Յոբ Ժ 10): Եւ սա է մարգարէութեան իմաստը, որ ասում է. «Երկուսը կդառնան մի մարմին» (Ծննդ. Բ 24), այսինքն՝ երկու ծնողների սերմերից կլինի զաւակի մի մարմինը:

Դրանից յետոյ եօթներորդ օրը [սաղմը] սկսում է մօր արգանդից արիւնով սնուել պորտի միջոցով, ինչպէս դդումը եւ ձմերուկը՝ կոթի միջոցով:

Ապա մինչեւ քսաներորդ օրը կազմւում է զգայական ձեւը, որի մասին ասում է մարգարէն. «Ես որդ եմ եւ ոչ թէ մարդ» (Սղմ. ԻԱ 7): Եւ բոլոր անդամներից առաջ կազմւում է սիրտը, որովհետեւ սերմի ջերմութիւնը ժողովւում է եւ կազմում սիրտը: Ու սիրտն է, որ բոլոր անդամների մէջ ինչպէս կարկինի [միջա]կէտն է: Եւ ինչպէս բոլորից առաջ է սիրտը գոյաւորւում, այդպէս էլ նա վերջում է մեռնում՝ իր ջերմ լինելու պատճառով: Քսանմէկերորդ օրից յետոյ մինչեւ քառասուներորդ օրը շնչի երեւալով՝ ձեւաւորւում է արու զաւակը, եւ նոյն պահին էլ՝ բանական հոգին՝ հեղում է նրան՝ ծագած Աստծոյ շնորհից: Իսկ աղջիկը հոգի է առնում ութսուներորդ օրը, ինչպէս ասացինք, տեղի ցրտութեան պատճառով, որովհետեւ նա արգանդի ձախ կողմում է [ձեւաւորւում], որտեղ գտնուելով՝ ցուրտ փայծաղը կրկնապատիկ՝ մինչեւ ութսուն օր, երկարաձգում է նիւթի ձեւաւորուելը, ինչպէս, որ ցուրտ լեռներում պտուղները այնպէս չեն հասունանում, ինչպէս դաշտում: Այսպէս էլ աջ կողմում բեղմնաւորուած սաղմը լեարդի ու լեղու ջերմութեան պատճառով արագ է ձեւաւորում անդամներով:

Իսկ եթէ մէկն ասի՝ ինչո՞ւ մէկը վեց օրից, միւսը՝ քսան, երրորդը՝ քառասուն, ապա ասենք, որ քառասունը բաղկացած է չորս եւ տասը թուերից, որովհետեւ [այն] չորս [անգամ] տասն է: Արդ, տասը թիւը կատարեալ է, իսկ չորսը՝ տարրեղէն, այսինքն՝ կատարեալ բանական հոգին նոյն ժամին խառնուելով՝ միաւորւում է տարրեղէն մարմնին ու կերպաւորում մարդկային մէկ դէմք, մարդու մէկ բնութիւն՝ հոգուց եւ մարմնից, ինչպէս քառասունն է տասից եւ չորսից գոյանում:

Այսպէս էլ շնչականը, գոյաւորուած քսաներորդ օրը, իր կիսակատարեալ գոյութեամբ դարձեալ ունի բանականի նոյն խորհուրդը, որովհետեւ քսանը չորս հինգ է, եւ կենդանին էլ չորս տարրերից է, որն ունի հինգ զգայութիւն:

Իսկ տնկականը սնում է վեցերորդ օրից յետոյ, որովհետեւ վեցը կատարեալ թիւ է. եւ այն նիւթն էլ չորս տարրերից է եւ իր մէջ ունի կազմողական ու տնկական վեց զօրութիւններ: Կամ էլ չորս տարրերին յետոյ խառնւում են երկու նիւթ, այսինքն՝ արականը եւ իգականը:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲԵՂՄՆԱՒՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ Պրակ ԻԲ

Իսկ եթէ մէկն ասի՝ ինչո՞ւ յղացուած մանուկը արգանդում մնում է ինն ամիս, իսկ միւս կենդանիները՝ աւելի կամ պակաս, ապա ասենք, որ սրա պատասխանը կգտնենք վերը բացատրածի մէջ, որովհետեւ ամէն մի սերմնականի նիւթ կազմուած է չորս տարրերից եւ ունի կազմուելու զօրութիւն, որով գոյանում է տնկականը: Իսկ տնկականն ունի երեք զօրութիւն, այսինքն՝ կերակրողական կամ սնուցողական, աճողական, ծնողական: Ա՛րդ, կերակրելով՝ պահում է անհատին, աճելով՝ ենթակայ նիւթը, իսկ ծնելով՝ տեսակը:

Այսպէս էլ կերակրողականն ունի չորս զօրութիւն՝ ներքաշող, հաւաքող, հալող, վտարող: Եւ սա ունեն բոլոր բոյսերն ու տունկերը, որովհետեւ հողից հիւթ են վերցնում, ժողովում, իրենց մէջ հալելով՝ փոխում եւ աւելորդը մղում են դէպի կեղեւը, տերեւները եւ այլ մասերին:

Ա՛րդ, տնկական զօրութիւնը բնականոն [կարգով] կայ նիւթի մէջ, որը եւ նիւթը դրսեւորում է համապատասխան տեսակի առանձնայատկութիւններով: Այս է պատճառը, որ նոյն այդ զօրութիւնների, այսինքն՝ սնուելու, աճելու, ծնելու թուով էլ՝ երեք ամսում, իր սերունդն է տալիս բոյսը, ինչպէս օրինակ՝ ցորենը կամ միւսները: Այս թուով էլ՝ երեք տարին մէկ պտղաբերում են տնկիները: Այսպէս էլ որոշ կենդանիներ յղիանում են երեք տարին մէկ եւ ծնում: Ուստի բոյսերն ընդհանրապէս երրորդ ամսում են պտղաբերում, իսկ չորրորդում՝ յաւելեալ կազմողական զօրութեան շնորհիւ: Ուրիշները նոյնպէս չորս տարրերում [եղած] յաւելեալ [կազմողական զօրութեան] պատճառով պտղաբերում են եօթներորդ կամ ութերորդ ամսում, իսկ մի մասն էլ, ունենալով կերակրողական զօրութիւն, ձգում է մինչեւ տասներկուերորդ ամիսը:

Իսկ եթէ մէկն ասի, թէ բոլոր նիւթերի հիմքում չորս տարրերն են, ուրեմն պէտք է չորս ամսում աւարտէին, ապա ասենք, որ թէպէտ նիւթը չորս տարրերից է, սակայն տնկականը, որ գերազանցում է նիւթին, ըստ իր մասերի է ծնում, քանի որ ծնելը տնկականի [զօրութեան մասերից էր]: Սակայն ունի նաեւ տարրերի թիւը, որովհետեւ չորս ամսում էին աւարտում նրանք, որ արագ էին պտղաբերում: Եւ պատճառն այն է, որ ոմանք ուշ, ոմանք շուտ են պտուղ տալիս, ինչպէս ասացինք, կամ՝ ըստ իրենց տեսակի, կամ՝ տեղի, կամ՝ ժամանակի՝ ցուրտ կամ տաք լինելու: Այսպէս էլ ծառերն ու տնկիները, որոնք երեք կամ չորս ամսից յետոյ են պտուղ տալիս, դուրս չեն գալիս այս թուերի սահմաններից: Եւ նոյնիսկ պարզագոյն խոտը, որ ասում են նոյն

ժամին դուրս է գալիս, պտղաբերում ու թառամում, ժամանակով կամ մասերով դուրս չի գալիս այդ թուի սահմաններից: Եւ արմաւենին էլ, որ ասում են քառասուն ամսում է պտղաբերում, նա էլ այս թուի սահմաններում է մնում, որովհետեւ երեքը բազմապատկելով տասներեքով, լինում է երեսունինը, իսկ քառասուներորդում պտղաբերում է եւ կամ, ինչպէս կատարեալ մարդ, սեփականում է չորսի ու տասի խորհուրդները:

Եւ այսպէս, իւրացնելով տնկականի [մասին նիւթը]՝ կարգով անցնենք զգայականին:

Ա՛րդ, զգայականն էլ չորս տարրերից է եւ ունի [նաեւ] տնկականը: Եւ ունենալով մի զգայական յաւելում, լինում են վեց զգայարաններ, այս պատճառով էլ ընդհանրապէս [զգայականները] վեց ասում, կամ վեց շաբաթում, մի մասն էլ վեց օրում են ծննդաբերում: Իսկ նրանք, ովքեր քառասուն կամ քսան օրում են ծնում, ինչպէս թռչունները, նրանք ունեն չորս տասի կամ չորս հինգի, ըստ հինգ ներքին եւ հինգ արտաքին զգայարանների թուի, ինչպէս ասացինք:

Իսկ եթէ զգայականին աւելանում են նաեւ շնչականը, շարժողականը, ցասումը ցանկութեան հետ՝ լինում են ինը, ուստի եւ մի մասը ծնում է ինը կամ տասն ամսում:

Իսկ եթէ [գումարենք] տնկականի չորս տարրերը, երեք զօրութիւնները եւ հինգ զգայութիւնները, կլինի տասներկու, ուստի մի մասն էլ ծնում է տասներկու ամսում, ինչպէս օրինակ, ձին:

Իսկ շարժողականին, շնչականին, ցասմանն ու ցանկականին աւելացնելով կազմողական նիւթն ու տնկականը, կլինի տասնութ, ուստի մի մասն էլ մէկուկէս տարում է ծնում, ինչպէս ուղտը: Եւ աւելի ու պակաս է լինում այս նոյն երեք կամ չորս թուերի սահմաններում՝ թէ՛ օրերով եւ թէ՛ ժամերով մինչեւ ճանճն ու մժեղը, որ ըստ իրենց տեսակի, տեղի ու ժամանակի՝ շուտ կամ ուշ են ծննդագործում:

Այս էլ իւրացնելով, եկէ՛ք տեսնենք, թէ մարդը ինչո՞ւ է ինն ամսում ծնւում: Ա՛րդ, ինչպէս ասացինք, սա էլ մարմին է չորս տարրերից, որն ունի հինգ զգայութիւններ, ուստի եւ անդամները ձեւաւորւում են ինն ամսում, ապա ծնւում է: Նաեւ տնկականը ունի երեք զօրութիւն, մէկ նիւթ, հինգ զգայութիւններ, որ կլինի ինը, ուստի ծնւում է իննամսեայ:

Կամ ունի հինգ զգայութիւններ, նաեւ՝ շարժողականը, շնչականը, սրտմտականը, ցանկականը, որ դարձեալ լինում է ինը:

Կամ մարմին է չորս տարրերից եւ ունի հոգու երեք տեսակ՝ տնկական, զգայական եւ բանական, որի պատճառով եօթ ամսական ծնուածն էլ ապրում է ու լինում է շնորհալի՝ շնորհալի եօթ թուի պատճառով: Իսկ աւելացած կազմողականով ծնւում են ութ ամսական ու չեն ապրում, որովհետեւ անկատար են:

Կամ չորս տարր, տնկականը, զգայականը եւ հոգու երեք մասերը՝ բանա-

կանութիւն, ցասում, ցանկութիւն, որ դարձեալ կլինի ինը:

Եւ դարձեալ չորս տարրերի յատկանիշները ինն են, որպէս կրկնակի չորսի յատկութիւնների՝ աւելի կամ պակաս, իսկ իններորդը հաւասար է, որը մարդու մէջ է, ուստի նա ծնւում է իննամսեայ:

Եւ դարձեալ երեք ամիս տնկականինն է, երեքը՝ զգայականինը, երեքը՝ բանականինը:

Կամ ինը թիւը երեք եռեակ է, եւ երեքը կատարեալ թիւ է, որն ունի առաջին, միջին, վերջին՝ նման հրեշտակների ինը դասերին:

Եւ ինը պակաս է տասից, եւ մենք էլ դուրս մնացինք հրեշտակների ինը դասերից, որովհետեւ սկզբում հաւասար էինք դրախտում, սակայն մարմնական ծնունդի ապաւինեցինք՝ նմանուելով անասուններին, ըստ այդմ՝ «Մարդը պատուի մէջ էր, սակայն չիմացաւ՝ եւ հաւասարուեց անասուններին» (Սղմ. ԽԸ 21):

Իսկ անդրանիկ զաւակի հինգ օր ուշ լինելը առաջին մարդու լինելու նմանութեամբ է, որ ստեղծուեց հինգ օր յետոյ:

Եւ տասներորդ՝ աստղագէտներն ասում են, թէ ամէն մի մարդու յղացումը Զօհալի տիրապետութեամբ է, եւ թուարկելով իւրաքանչիւր մոլորակը՝ Մուշթարու ժամանակ լինում է ինն ամիս: Եւ եթէ Լուսնի օրօք է ծնւում, եօթն ամսականն ապրում է: Ութ ամիսը Երեւակինն է, ուստի չի ապրում:

ԲԵՂՄՆԱՒՈՐՈՒԵԼՈՒ ԵՒ ԾՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԳ

Հարց. Ըստ կարգի այստեղ կարող ենք հարց տալ. ինչո՞ւ անասունները նմանին կարող են առաջ բերել երրորդ տարում, իսկ մարդը՝ տասնչորս [տարեկանում]:

Պատասխան. Այս հարցին մասամբ պատասխանեցինք, սակայն ոչ համակողմանիօրէն:

Մանր բոյսերն ու մանր չորքոտանիները կարող են նոյն տարում ծնել նմանին, ըստ վերը նշուած երեք ամսուայ կամ կրկին վեցեակի: Իսկ խոշորակազմ տնկիները եւ չորքոտանիները միայն երրորդ տարում են առաջ բերում նմանին, որը երեք վեցերի կրկնապատիկ թիւն է. իսկ միւս աւելի կամ պակաս մանրերն ու խոշորակազմները՝ աւելի կամ պակաս: Որովհետեւ մանրակազմները նոյն ամսուայ, փոքր ժամանակահատուածի, շաբաթուայ, օրուայ, ժամի ընթացքում կարող են նմանին ծնել, իսկ խոշորանդամները՝ երկու կամ երեք տարի աւելի ժամանակից յետոյ:

Իսկ մարդու խորհուրդը ըստ չորս տարրերի եւ տնկականի երեք զօրութիւնների արդիւնքի՝ եօթով է կատարւում, որ շնորհալի ու մշտակոյս թիւ է ինչպէս Աթենասի[302] [պարագայում], որ ուրիշի ծնունդ չէ եւ այլ ծնունդի պատճառ էլ չէ: Ըստ այդմ էլ մանկան ատամները եօթներորդ ամսում են դուրս գալիս, իսկ եօթներորդ տարում դրանք փոխւում են: Ուսում ստանում է եօթնամեայ, քանի որ մինչեւ եօթ

տարեկանը երեխայ է կոչւում, որի հոգու մասերն են բանականը, ցասումը, ցանկութիւնը՝ ըստ Պլատոնի:

Եւ այսպէս, եօթի կրկնապատիկը տասնչորսն է, որում ցանկականը մասամբ [արդէն] հասունացած է եւ որում արդէն կարող է նմանին ծնել ու [այդ տարիքում] կոչւում է պատանի: Ուստի այս ժամանակի հասակի համար եկեղեցու հրամանը կայ՝ կատարելու այդ պատանիների պսակը:

Իսկ երեք անգամ կրկնուող եօթը տալիս է քսանմէկ, որում հասունանում է ցասման արիութեան մասը: Այս տարիքը կոչւում է երիտասարդ՝ ընդհուպ մինչեւ քսանութը: Այս տարիքում զինուորագրում են, որի պատճառով էլ Մովսէսը քսանից աւելի տարիք ունեցողներին էր զինուորագրում:

Եւ եօթը կրկնելով չորս անգամ, ստացւում է քսանութ, որը երիտասարդն է, որով ամբողջանում է բանական մասը:

Իսկ տնկականի ու զգայականի կազմողական զօրութիւնը մի քիչ աճելով մարմնի հետ՝ երկու տարի ու մօտենալով երեսուներեքի՝ հասնում ենք Քրիստոսի տարիքին, որում մկրտուեց մեր Տէրը: Այս տարիքում ստեղծուեց եւ նախահայր Ադամը: Եւ առհասարակ այս հասակում ենք առնականանում, որովհետեւ սա է մարմնի եւ հոգու մասերի հասունանալու կատարեալ հասակը: Այս պատճառով էլ այս տարիքից եւ սրանից առաջ են դրսեւորւում մարդու բանական միտքն ու իմացական կարողութիւնները՝ մինչեւ քառասունինը տարեկանը, որ եօթն անգամ եօթն է:

Իսկ յիսունից մինչեւ եօթանասունեօթը, որը տասնմէկ անգամ եօթն է, ծերութեան հասակն է, իսկ եօթանասունութից մինչեւ մահը կամ մինչեւ հարիւր տասներկու տարեկանը համարւում է զառամեալ, որ եօթ անգամ տասնվեցն է:

Ահա, այսպէս է ըստ ոմանց մարդու հասակը՝ վեց մասից, ինչպէս ասացինք, այսինքն՝ երեխայ, մանուկ, պատանեակ, երիտասարդ, ծեր, զառամեալ:

Եւ կամ էլ մարդու հասակը չորս մաս ունի, այսինքն՝ մանկութիւն, երիտասարդութիւն, ալեւորութիւն, ծերութիւն: Մանկութիւնն աւարտւում է տասնչորսերորդ տարում, որում կարող է լինել կատարեալ ծնող եւ ունենալ ծնունդ, որովհետեւ տասն էլ չորսից է ծնւում, եւ չորսը տարրեղէն է, այս պատճառով էլ այդ տարիքում մարդը կարող է իր նմանին ծնել:

Իսկ տասնհինգից մինչեւ երեսունը երիտասարդական հասակն է, որը կատարեալ է իբրեւ երեք տասնեակների ամբողջութիւն՝ ունենալով ցանկականի, ցասումի, բանականի յատկանիշները: Եւ սա կատարեալ ու առինքնող հասակ է, որովհետեւ սրանում, այսինքն՝ երեսունում, մարդը կարող է պապ դառնալ: Եւ միջին կատարեալ հասակն էլ ձգւում է մինչեւ քառասունվեցերորդ տարին, որը չորս տասը եւ վեց է, իսկ վեցը կատարեալ թիւ է: Եւ այս ժամանակ ճերմակն է տիրում, որից սկսում է

ծերութիւնը մինչեւ եօթանասուներկու տարեկանը, որում կեանքի ծայրերն են՝ ըստ Դաւթի (Սղմ. ՁԸ 10), ու խորհրդաւոր տասներկու անգամ վեցը:

Եւ տե՛ս, տասնչորսը երկուական անգամ է աւելանում՝ երեք հասակների փոփոխուելով:

Եւ Տէրն էլ մարդու հասակը չորս մասի է բաժանում՝ երեկոյ, կէսգիշեր, հաւախօս, առաւօտ (տե՛ս Մրկ. ԺԳ 35): Երեկոն մանկութիւնն է, կէսգիշերը՝ երիտասարդութիւնը, հաւախօսը՝ ալեւորութիւնը, առաւօտը՝ ծերութիւնը[303]:

Թէպէտ ոմանք փոփոխում են այս կարգը, սակայն ըստ էութեան դէմ չեն այս կարգին, եւ այսպէս են ասում. առաւօտը մանկութիւնն է, այն, որ լոյսին է մերձ. հաւախօսը պատանեկութիւնն է, կէսգիշերը՝ երիտասարդութիւնը, որ մեղքերի մէջ է թաղուած, երեկոն՝ ծերութիւնը, որ կեանքի երեկոն ու գերեզմանի մահիճն է նշանակում:

Ուրեմն պարզ է, որ մանկութեան ժամանակ չեն կարող նմանին ծնել, այլ՝ պատանեկութեան, ինչպէս ասացինք:

Մարդու հասակը որոշում են նաեւ ըստ չորս տարրերի, եղանակների, օրուայ ժամերի եւ նիւթերի փոփոխութեան. գարնան եղանակը՝ առաւօտից մինչեւ ժամը երեքը, արիւնը եւ մանկութեան հասակը՝ ծնունդից մինչեւ հասակ առնելը, նման են ջերմ ու խոնաւ օդին. այս պատճառով էլ մանկութեան հասակում հնարաւոր չէ ծնել նմանին: Իսկ ամառը, մինչեւ օրուայ վեցերորդ ժամը, խարտեաշ մաղձը եւ երիտասարդութիւնը նման են հրի ջերմ ու չոր տարրին, որի պատճառով էլ աւելի բարկացող ու ցանկասէր են լինում:

Աշունը, մինչեւ օրուայ ժամը ինը. սեւ մաղձը եւ ալեւորը նման են հողի ցուրտ ու չոր տարրին, ուստի ծոյլ ու ծանրաշարժ են բոլոր ուսումների եւ գործերի մէջ:

Ձմեռը, ժամը իննից սկսած երեկոն եւ ողջ գիշերը. դառը մաղձի սպիտակ հիւթը, ծեր մարդը նման են ջրի ցուրտ ու խոնաւ տարրին, ուստի եւ պակասում է զօրութիւնը:

Այսպիսով, պարզ դարձաւ, թէ մարդն ինչո՞ւ տասնչորս տարեկանում կարող է երեխայ ունենալ:

Այսքանն այս մասին:

ԹԷ ԻՆՉՈ՞Ի ԵՐԵԽԱՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ՈՏՔԻ ՉԻ ԿԱՆԳՆՈՒՄ Պրակ ԻԴ

Հարց. Խնդրում եմ, սա էլ բացատրել. ինչո՞ւ մարդը, որ կատարեալ կենդանի է, քան անասունը, երբ սա ծնւում է, անմիջապէս ոտքի է կանգնում ու քայլում, իսկ մարդը՝ ոչ:

Պատասխան. Վարդապետները բազում պատճառներ են ասում:

Նախ, ոմանք ասում են, թէ՝ անբանների ուղեղի թաղանթը չոր է ու սառը, եւ նրանից դուրս եկող ջղերը, որ տարածւում են մարմնի անդամներով, արագ ամրանում ու շարժուելու [հնարաւորութիւն] են տալիս: Իսկ մարդու ուղեղը, քանի որ խոնաւ ու սառն է եւ իր մէջ է առնում մտքի ընկալումները, նրանից դուրս եկող ջղերը խոնաւութեան

պատճառով չեն կարողանում ամրացնել անդամները, ուստի չի կարողանում [ոտքի] կանգնել ու քայլել:

Նաեւ ամէն մի իր առաւել զօրաւոր է իր տեսակի հետ, քան ուրիշի, ինչպէս ջուրը աւելի զօրաւոր է գետում, քան հողի հետ խառնուած. տնկականը՝ աւելի տունկի մէջ, քան անասունի: Ուստի պարզ է, որ աւելի շուտ կերակրւում, աճում եւ բազմանում են տունկերը, քան անասունները: Այդպէս էլ զգայութիւնները աւելի [ուժեղ են] զգայականների մէջ, քան մարդու: Այս է պատճառը, որ այծեամը աւելի լաւ է տեսնում, շունը՝ հոտոտում եւ այլն, որովհետեւ աւելի շուտ են շարժւում ու [ոտքի] կանգնում, քան մարդը:

Դարձեալ արգանդի յղացման կարգը դրսեւորւում է նաեւ այստեղ՝ ծնուելու, այսինքն՝ սնուելու, զգալու եւ բանականի դրսեւորման ժամանակ՝ հետեւեալ կերպ. ծնուելիս կարիք ունի միայն սնուելու եւ աճելու, որից յետոյ տեսնում է, [ոտքի] կանգնում ու քայլում: Այնուհետեւ խօսում է եւ գիտակցում:

Այս կարգը պահպանւում է նաեւ զարգացման հասակում. մինչեւ եօթ տարեկան ատամները դուրս են գալիս, ապա փոխւում, որ կերակրականի [շրջանն է]: Յետոյ, մինչեւ տասնչորս տարեկանը ծնելու [ունակութիւնն] է, որ դարձեալ կերակրական [շրջանն] է: Դրանից յետոյ մինչեւ երեսուն տարեկանը արիութեան շրջանն է, որից յետոյ բանականի դրսեւորման տիրապետութեան եւ առկայութեան շրջանն է:

Եւ նախախնամութեան կողմից է այսպէս սահմանուել, քանի դեռ մարդն ունի դայեակ ու սնուցող, կարիք ունի խնամքի մինչեւ չափահաս դառնալը: Իսկ անասունները «դրսից», քանի որ դաստիարակ չունեն, ուստի բնութիւնը նրանց պահպանում է «ներսից», որպէսզի հակառակութիւն չլինի նաեւ այն ասածին, ըստ որի ամէն մի մեծ փոքրի նկատմամբ գութ [պէտք է] ունենայ, որովհետեւ սա էլ նախախնամութեան [սահմանածն] է, որով բնութեան մէջ [կարգ] դրեց՝ խնամք տանել նրանց, մինչեւ հասակ առնեն եւ զերծ մնան վտանգներից:

Եւ հինգերորդ, որ սովորենք խոնարհ լինել, որպէսզի երբ տեսնենք մեզ անասունից աւելի տկար, մօրից ծնուած մերկ ու աղքատ, խոնարհուելով՝ հնազանդուենք Արարչին եւ ոչ օտարամուտ հպարտութեամբ կրենք արուսեակի անկումը:

ԽԱՌՆՈՒԱԾ ՍԵՐՄԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Իե

Հարց. Հնարաւո՞ր է, որ մարդու եւ այլ կենդանիների խառնակումից ծնունդ լինի, ինչպէս որ ասում են՝ կնոջից ու արջից ծնունդ է լինում:

Պատասխան. Ասենք, որ չի լինում երկու պատճառով:

Նախ, որ բանականի եւ անբանի սերմերը չեն խառնւում իրար:

Երկրորդ, ժամանակի [տեւողութեան] պատճառով, որովհետեւ մարդը ձեւաւորւում է ինն ամսում, իսկ արջը՝

երեք: Այսպէս էլ առիւծի եւ էշի խառնուրդից ծնունդ չի լինում, որովհետեւ մէկը մսակեր է, միւսը՝ խոտակեր: Այս կարգով էլ ընդհանրապէս պէտք է իմանալ, որ հակառակ [բնոյթի] սերմերը չեն խառնւում միմեանց: Իսկ ձիուց եւ էշից ջորի է լինում, որովհետեւ խոտակեր են եւ հաւասար ժամանակում են ծնում:

Իսկ եթէ հանդիպում են մարդակերպ կենդանիներ, վայրիներ եւ գազաններ, դրանք մարդու խառնակումից չեն: Եւ եթէ մարդը շան դէմքով է, ոչ թէ շան խառնածին է, այլ կամ ժառանգական [նմանութեամբ է], կամ էլ՝ դէմքի սպիների:

ՅՈՒԱՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հարց. Ինչո՞ւ բոլոր ծնունդները՝ բոյս թէ կենդանի, նախ յղիանում, ապա ծնւում են:

Պատասխան. Բնական կարգ է, որովհետեւ ամէն մի իր զարգանում է անկատարից կատարեալը, զօրութիւնից՝ ներգործութեան, ինչպէս վերը նշել ենք: Խորհրդանշում է նաեւ ժամանակի [կարգը], որովհետեւ անցեալն ու ապագան աչքի առաջ չեն, այլ՝ ներկան: Այդպէս էլ յղիանալը ապագան է, վախճանուելը՝ անցեալը, որոնք չեն երեւում, այլ երեւում է միայն ծնուելը, որը ներկան է:

Երկրորդ, ցոյց է տալիս աշխարհը, որ առաջ, քան լինելը կար Արարչի նախապատկերած ծրագրի մէջ, ապա եղաւ, յետոյ վախճանուելու է: Եւ սկիզբն ու վախճանը տեսանելի չեն մեզ, այլ միայն եղած արարածներս: Այսպէս էլ ստեղծագործութիւնը. նախ պատկերւում է մտքում, ապա իրագործւում եւ աւարտւում:

ԵՐԱԶԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԶ

Հարց. Խնդրում եմ բացատրել. ի՞նչ է երազը, որ տեսնում է մարդը:

Պատասխան. Զանազան են երազի տեսակները:

Կան, որ բնական են, կան, որ աստուածային եւ կան, որ դիւական են:

Այն, որ աստուածային է, կոչւում է տեսիլք, ինչպէս Աբրահամի, Յակոբի, Յովսէփի, Դանիէլի, որոնք մտքի խորհրդական մտածումներում ցոյց են տալիս լինելիք բաների օգուտը:

Իսկ սրան հակառակ, դիւականը մոլորեցնող, անմաքուր, զանազան գործեր է ցոյց տալիս, կամ ջանում խափանել բարին, ինչպէս որ կարդում ենք Տիրոջ չարչարանքի վերաբերեալ Պիղատոսի կնոջ [երազի] մասին[304], եւ ինչպէս գրում է սուրբ Եւագրիոսը[305]:

Իսկ բնական երազները ըստ սուրբ Նիւսացու «[Մարդու] կազմութեան մասին» գրքի բաժանւում են չորսի[306]:

Նախ՝ որ մնացած գործերը եւ մտածմունքները կերպաւորւում են հոգու յիշողութեան մէջ, այն, ինչ արուել է անցեալում, կամ ինչ մտածում է ապագայի մասին:

Երկրորդ՝ ախորժակը ինչի կարիք որ ունի, ըստ այդմ երազ է տեսնում,

ինչպէս քաղցածը ուտելիք է տեսնում, ծարաւածը՝ ջուր:

Երրորդ՝ ըստ աւելացած կամ պակասած մաղձերի հիւթի, ըստ ներսի կամ դրսի ջերմութեան կամ սառնութեան. սրանց համապատասխան էլ կերպարանքներ են երեւում մարդուն:

Չորրորդ՝ ըստ նկարագրի են տեսնում, այսինքն՝ այլ է արի մարդու, այլ երկչոտի երազը, այլ վաւաշոտինը, այլ պարկեշտինը: Այսպէս էլ խոհեմինն ու անզգամինը, տիրասէրինն ու անյագ անիրաւինը:

Եւ քանի որ բանական միտքը երազ չի տեսնում, այլ անբան մասը, որ մեր մէջ եղած տնկականն է, ուստի նա է երազ բերում: Եւ սա հաստատւում է երկու փաստով: Նախ, որ խորհրդածող միտքը կարգաւորուած եւ առանց տարակուսելու է տեսնում, իսկ երազը անկարգ, անհաստատ եւ անհնարին [բաներ] է տեսնում, ինչպէս օդով թռչելը, ծովի վրայով գնալը, աղքատի թագաւորելը եւ այլն: Երկրորդ՝ որովհետեւ երբ բանական միտքն ու զգայարանները դադար են առնում գործերից, մարդը ննջում է, գործում է միայն տնկականը՝ կերակրող ու աճ տուողը, եւ մարդն իր մէջ ըստինքեան տպաւորած զգայութիւնների եւ մտքի մէջ [եղածն], անկարգօրէն պատկերում է մտքի յիշողութեան մէջ, ինչպէս ասացինք:

Այսքանն այս մասին:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Իէ

Հարց. Ի՞նչ է իմաստութիւնը:

Պատասխան. Իմաստութիւնը համանուն է եւ բազում տեսակներ ունի, սակայն բոլորն էլ, քանի որ մտքի ներգործութիւններ են, կոչւում են իմաստութիւն, որ իմացութիւն է:

Նախ՝ իմաստութիւն է կոչւում նրանց [արածը], ովքեր բնութեան էութիւնը եւ լուսատուների շարժումը քննեցին, ինչպէս հոյն իմաստունները: Եւ սրանց իմացման միջոցը յիշողութիւնն է, իսկ ուսումնասիրութեան նիւթը՝ երկնային մարմիններն ու եղելութիւնների էութիւնը:

Երկրորդ՝ իմաստութիւն են կոչւում եւ զանազան արհեստները, ըստ այդմ՝ «Ո՞վ տուեց կանանց նկարակերտելու իմաստութիւն» (Յոբ ԼԸ 36): Սրանց իմացութեան միջոցը ձեռքերն ու մատներն են, առարկան՝ երկրային նիւթերը:

Երրորդ՝ իմաստութիւն է կոչւում եւ բանական քննութիւնը, ովքեր տեղեկանալով խօսքերին՝ ստոյգը զանազանում են ստից: Սրանց գործելու միջոցը տրամաբանութիւնն է, առարկան՝ մտքերի զանազանութիւնները:

Չորրորդ, որ կատարեալ իմաստութիւնն է, իմացութեամբ հպուել Աստծուն եւ աստուածայինին՝ հոգեւոր ու իմանալի կեանքում, նոյն բաների մասին խոկալով՝ Նրան սիրել ու զգայութիւնների հեշտանքը ատել: Եւ այս իմացման գործիքը հաւատի լոյսն է, իսկ

առարկան՝ աստուածայինն ու իմացականը:

Այս իմաստութիւնը Տէրը հաւատ է կոչում, Յովհաննէսը՝ լոյս, Սողոմոնը՝ իմաստութիւն, այն պատճառով, որ հաւատի լոյսը Աստծոյ կողմից հեղուում է մարդու իմացութեան մէջ, եւ այդ իմացութիւնն է իմաստութիւն կոչում, իսկ լոյսի շնորհները հաւատ եւ լոյս անուանում:

Այս իմաստութիւնը զանազանւում է միւս երեքից: Նախ՝ ըստ առարկայի. այստեղ աստուածայինն ու իմանալիներն են, իսկ նրանցը՝ մարմնականներն ու զգայականները:

Երկրորդ՝ ըստ պատուի, որովհետեւ սա երկնայինն է՝ վերեւից իջած, իսկ նրանք երկրաւորն ու շնչաւորը, ինչպէս առաքեալն է ասում (տե՛ս Յակ. Գ 15):

Երրորդ՝ ըստ արդիւնքի, որովհետեւ սա փոխուելուց յետոյ յոյս ունի լծակցելու անմահութեանն ու խնդութեանը, իսկ նրանք՝ կորուսեալին ու անցաւորին:

Հարց. Ի՞նչ է իմաստասիրութիւնը, ի՞նչ իմաստակը, ի՞նչ իմաստունը եւ ի՞նչ իմաստութիւնը:

Պատասխան. Իմաստասէրը նա է, որ տիրապետում է արտաքին (հեթանոս) իմաստասէրների ուսմունքներին, ինչպէս Պլատոնը, Արիստոտէլը եւ այլն:

Իմաստակ կոչւում են նրանք, որոնք տիրապետում են միայն մի գիտութեան, ինչպէս՝ քերականութեան, ճարտասանութեան, աստղաբաշխութեան եւ այլն, ինչպէս պիհռոնացի ճեմականները[307], ովքեր «հակառակ» են անուանւում:

Իմաստունները երկու խմբի են բաժանւում. առաջինները խոհեմ ու իմաստուն են բնականից, ինչպէս առաջին նահապետները՝ Աբրահամը, Իսահակը, Յակոբը, Յոբը, Կուռնելիոսը եւ այլք: Երկրորդները՝ շնորհի ընկալածներն են, ինչպէս Բեսէլիէլը, Եղիաբ Ուրիեանցը, Սողոմոնը, որովհետեւ Աստծուց ստացան եւ կոչուեցին իմաստուններ: Իսկ համաձայն Պօղոսի՝ իմաստութիւն է կոչւում միայն Քրիստոս. «Քրիստոս Աստծոյ զօրութիւնն ու Աստծոյ իմաստութիւնն է» (Ա Կորնթ. Ա 24):

ՀԱՆՃԱՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է հանճարը:

Պատասխան. «Ճար» նշանակում է կատարում. [հանճար] ստուգաբանւում է «անճար», քանզի անխափան է կատարումը նրա[308]:

Եւ «հանճար» է ասւում, որովհետեւ [ասածները] ապագայում է իրագործւում:

Իսկ ըստ սահմանման, հանճարը ճշմարիտ խորհրդին միացած կարծիքն է: Նախ, որովհետեւ իմաստունների համար ճշմարտութիւն է, անմիտների համար՝ կարծիք: Երկրորդ, ըստ զգայութիւնների կարծիք է, ըստ իմացման՝ ճշմարտութիւն:

Երրորդ՝ կարծիք է, որովհետեւ չկայ ներկայի մէջ, եւ՝ ճշմարիտ խորհուրդ, որովհետեւ լինելու է ապագայում:

Այսպէս է [ըստ] սուրբ Ներսէսի[309]:

ԴԱՐՁԵԱԼ ՀԱՆՃԱՐԻ, ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է հանճարը, ի՞նչ իմաստութիւնը, ի՞նչ գիտութիւնը:

Պատասխան. Նախ, հանճարը շնորհուած բնական իմաստութիւն է, գիտութիւնը՝ ձեռքբերովի:

Հանճարը բնականից է, գիտութիւնը՝ սովորելով, իմաստութիւնը՝ աստուածային:

Հանճարը հմտութեանն է, իմաստութիւնը՝ մտքինը, գիտութիւնը՝ երկուսինն էլ, այսինքն՝ հմտութեանն ու մտքինը:

Հանճարն ապագայինն է, իմաստութիւնը՝ ներկայինը, գիտութիւնը՝ անցեալ ժամանակինը:

Հանճարը տրամաբանութիւն է, որովհետեւ ունի կարծիք՝ միացած ճշմարիտ խորհրդին, իմաստութիւնը իմացութիւն է, գիտութիւնը՝ յիշողութիւն:

Հանճարը արտաքին (հեթանոս) գիտութիւնների մէջ է, իմաստութիւնը՝ Սուրբ Գրքի, գիտութիւնը նրանց մեկնութիւնն է:

Հանճարը սկիզբն է, իմաստութիւնը՝ միջինը, գիտութիւնը՝ աւարտը:

Իմաստութիւնը մտքինն է, որովհետեւ նրանը իմանալն է, գիտութիւնը՝ ցասմանը, որովհետեւ նրանն է ընտրելը. հանճարը ցանկութեանն է, որովհետեւ նրանն է հանճարին ցանկանալը:

Ոմանք էլ ասում են, թէ հանճարը ցասման արիութիւնն է, իմանալը՝ ցանկութեան, ըստ այդմ՝ «Չիմացաւ իր կնոջը»:

Ըստ այս կարգի էլ իմաստութիւնը հաւատն է, գիտութիւնը՝ յոյսը, հանճարը՝ սէրը:

Իմաստութիւնը պատշաճում է Հօրը, իբրեւ կարողութիւն, գիտութիւնը՝ Որդուն, իբրեւ Բան, հանճարը՝ Հոգուն, իբրեւ բխում: Ինչպէս ասում է իմաստունը՝ «Աստուած իմաստութեամբ դրեց երկրի հիմքերը, խորհրդով եւ իր հանճարով պատռեց անդունդները» (Առակ. Գ 19):

Կան եւ ուրիշ զանազանութիւններ հանճարի եւ իմաստութեան միջեւ՝ ասուած այլ վարդապետների կողմից: Սակայն այլ եղանակով են, քան բնականօրէն մեր ասածը:

Այսպէս են ասում իմաստութեան եւ հանճարի զանազանութիւնը. իմաստութիւնը Աստծոյ բացարձակ ճանաչումն է, իսկ հանճարը՝ համեմատական, այսինքն՝ այն, երբ ստեղծուածները համեմատւում են ստեղծողի հետ:

Միւս տարբերութիւնը, որ՝ հանճարով Աստուած ճանաչւում է լուսաւորութեամբ՝ ունկնդրելով Սուրբ Գիրքը, իսկ իմաստութեամբ Աստուած ճանաչւում է ինքնըստինքեան:

Դարձեալ հանճարով ճանաչում ենք Աստծուն, մինչդեռ իմաստութեամբ՝ նրա քաղցրութիւնը:

Դարձեալ ասում են, թէ հանճարով դառնում ենք կանխատես, իսկ իմաստութեամբ դառնում ենք հասու:

Այսքանն այս մասին:

ԳԼՈՒԽ ԺԷ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՄԱՐԴՈՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ Պրակ ԻԸ

Հարց. Ի՞նչ է [նշանակում այն, որ ասում է]. «Մարդուն ստեղծենք ըստ մեր պատկերի եւ մեր նմանութեան» (Ծննդ. Ա 26):

Պատասխան. Իմանալու է, որ երեք բանով է պատկերի գեղեցկութիւնը նմանւում նախատիպին:

Նախ՝ չափաւոր ձեւով: Երկրորդ՝ հաւասարաչափ մասերով: Երրորդ՝ համապատասխան ստուերով:

Արդ, աստուածային գեղեցկութիւնը այս գծերով չի զարդարւում, որպէսզի մեզ իր նմանութեամբ ստեղծի, այլ Աստծոյ գեղեցկութիւնը անճառելի երանութիւնն ու առաքինութիւնն է, որ պարգեւեց մեզ, այսինքն՝ մաքրութիւնը, անախտութիւնը, չարին օտար մնալը, ինչպէս ասում է սուրբ Գրիգոր Նիւսացին[310]:

Եւ արդ, չորս ձեւով է դրսեւորւում թագաւորի իշխանութիւնը:

Նախ թագով, որ [նշանակում] է գլուխն ու տէրն է բոլոր հնազանդների: Երկրորդ՝ ծիրանիով, որ [նշանակում] է արքայազն եւ թագաւորածին: Երրորդ՝ գաւազանով եւ մատանիով, որովհետեւ իշխում է իշխանների վրայ եւ տիրում: Չորրորդ՝ կարմիր կօշիկներով, որովհետեւ արեամբ մինչեւ ոտքի տակ բոլորը հնազանդ են:

Այս են նշանակութիւնները:

Եւ ինչպէս թագաւորի պատկերը նկարում են թագով ու ծիրանիով եւ այլն, եւ անուանում թագաւորի պատկեր, այդպէս էլ ամբողջ աշխարհի իրական թագաւորը մարդուն ստեղծեց իր պատկերով: Եւ ծիրանու փոխարէն առաքինութիւն հագցրեց, որ աւելի, քան որեւէ զգեստ, արքայական է: Եւ թագի փոխարէն զարդարեց ինքնիշխան կամքով: Եւ գաւազանի փոխարէն անմահ երանութեան արժանացրեց: Իսկ կօշիկի փոխարէն ամէն ինչ նրա ոտքի տակ հնազանդեցրեց:

Եւ այլ բազում եղանակներով է մարդն ասւում Աստծոյ պատկեր:

Նախ՝ որովհետեւ Աստուած անձնիշխան է ու ինքնակալ: Այդպէս էլ մարդը:

Երկրորդ՝ Աստուած արարածների Տէրն է, իշխանը եւ ինքնակալը: Այդպէս էլ բոլոր ստեղծուածներին հնազանդ ու ծառայ դարձրեց մարդուն:

Երրորդ՝ որովհետեւ անմարմին է հոգին:

Չորրորդ՝ անմահ է ինչպէս Աստուած:

Հինգերորդ՝ Աստուած ամէն ինչ տեսնում ու քննում է, այդպէս էլ մարդը՝ ներքին ու արտաքին զգայարաններով:

Վեցերորդ՝ Աստուած ունի միտք, իմացութիւն, կամք: Սրանք ունի նաեւ մարդը:

Եօթներորդ՝ Աստուած Երրորդութիւն է՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի: Այդպէս էլ մարդու մէջ միտքը, խօսքը, հոգին է, ինչպէս ասում է Երզնկացի Պլուզ վարդապետը:

Ութերորդ՝ կատարեալ է երեք անձով, եւ եթէ մէկը պակասէր, չէր լինի կատարեալ Աստուած: Այդպէս էլ մարդն է երրորդութեամբ կատարեալ՝ հոգով, մարմնով, մտքով, եւ եթէ մէկը պակասի, անկատար է մարդը, ասում է Վարդան Վարդապետը:

Իններորդ՝ իր մշտակայուն էութեամբ քննում է ամէն ինչ եւ իմանում: Այդպէս էլ միտքը գտնուելով մարդու մէջ՝ էութիւնների իմացութիւնն է քննում:

Տասներորդ, Աստծոյ մէջ մէկ միտք է, որով տեսնում է ամէն ինչ ու լսում իւրաքանչիւր խօսք: Այդպէս էլ մարդու մէջ մէկն է իմացումը, որ տրւում է զանազան զգայարաններով:

Տասնմէկերորդ, Աստուած անվայր եւ անուր է: Մարդու բովանդակ հոգին էլ բովանդակ մարմնի մէջ է, եւ բովանդակը իւրաքանչիւր մասում:

Տասներկուերորդ, անճառելի ու անպատմելի է Աստուած: Այդպէս էլ հոգու եւ մարմնի միութիւնն է վեր, քան՝ խօսքը:

Տասներեքերորդ՝ Աստուած ճշմարիտը իմացող ու սիրող է: Եւ զգալիների մէջ միայն մարդն է, որ գիտէ եւ սիրում է ճշմարիտը:

Տասնչորսերորդ՝ Աստուած սէր է եւ սիրոյ աղբիւր ու մեզ էլ պատուիրեց սիրել միմեանց:

Տասնհինգերորդ՝ այլեւ ողորմած ու գթած է Տէրը ու մեզ էլ հրամայում է. «Եղէ՛ք գթած, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն է գթած» (Ղուկ. Զ 36):

Տասնվեցերորդ՝ որովհետեւ բանական է:

Տասնեօթներորդ՝ որովհետեւ իմաստուն է:

Տասնութերորդ՝ որովհետեւ անմեղ է հոգին:

Տասնիններորդ՝ մարդու կեցուածքն ուղիղ է, ուղիղ է եւ մեր Տէր Աստուած:

Քսաներորդ՝ կանխատես է:

Քսանմէկերորդ՝ որովհետեւ ընդունեց քահանայութեան շնորհը:

Քսաներկուերորդ՝ որովհետեւ արարիչ է:

Քսաներեքերորդ՝ եռամասն է:

Քսանչորսերորդ՝ ըստ ունակութեան, զօրութեան եւ ներգործութեան է, սակայն մեր մէջ այլ կերպ է, Աստծոյ մէջ՝ այլ:

Քսանհինգերորդ՝ մեր Լուսաւորիչն ասում է, որ մարդու ձեւը երեւաց ստեղծելիս, քանզի առնելու էր նոյն մարմինը [որոշ] ժամանակ յետոյ եւ նոյն պատկերով էլ արարեց մարդուն[311]:

Քսանվեցերորդ՝ Աստուած ծնւում է Աստծուց, մարդն էլ՝ մարդուց:

Քսանեօթներորդ՝ փառաւորում է Աստծուն, որ ինքն էլ փառաւորուի:

Քսանութերորդ՝ յանուն նրա է ամենայն ինչ, այսինքն յանուն Աստծոյ եւ յանուն մարդու է արարուած աշխարհը:

Քսանիններորդ՝ բարի եւ բարեսէր է Աստուած: Այդպէս էլ մարդուն բարի ու բարեսէր ստեղծեց:

Երեսուներորդ՝ մի է մարդու պատկերը, մի է սկզբնատիպ Աստուած:

Սրանց մի մասը [վերաբերում է] միայն հոգուն, մի մասն էլ թէ՛ հոգուն, եւ թէ՛ մարմնին:

ՊԱՏԿԵՐԻ ԵՒ ՆՄԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԹ

Հարց. Ինչո՞վ են զանազանւում պատկերը եւ նմանութիւնը:

Պատասխան. Պատկերը եւ նմանութիւնը տարբերւում են, ինչպէս մարդն ու կենդանին, որովհետեւ իւրաքանչիւր մարդ ասւում է կենդանի, իսկ ամէն մի կենդանի մարդ չէ:

Մարդը կենդանուց առաւել է մի յատկանիշով՝ բանականութեամբ:

Այդպէս էլ ամէն մի պատկեր հարկաւ ասւում է նմանութիւն, սակայն ամէն մի նմանութիւն պատկեր չէ, որովհետեւ նմանութեանը [պէտք է] աւելանայ մի յատկանիշ, որը նոյնութիւնն է, որպէսզի լինի պատկեր, քանզի պատկերը համանուն է. կայ, որ նոյնութեամբ է պատկեր, եւ կայ, որ նմանութեամբ: Արդ, նոյնութեամբ պատկեր է ասւում Միածին Բանը Հօր, ինչպէս գրում է [Պօղոս] առաքեալը Թեսաղոնիկեցիների թղթում. «Քրիստոս Հօր պատկերը եւ էութեան կերպարանքն է» (Եբր. Ա 3, Ա Կորնթ. ԺԱ 7), որովհետեւ պատկեր է ոչ թէ նմանութեամբ, այլ ըստ բնութեան նոյնութեան: Ինչպէս, օրինակ, այն, որ չի ասւում մարդը նման է մարդուն մարդկութեամբ, որովհետեւ [սա] նոյնութիւն է եւ ոչ նմանութիւն, այլ ասւում է մարդը նման է մարդուն՝ դէմքով, գոյնով, ձեւով:

Իսկ մարդն Աստծոյ պատկեր է ասւում ըստ նմանութեան, որովհետեւ չունի նոյն էութիւնը, այլ՝ նմանութիւնն Աստծուն: Ինչպէս այն, որ թագաւորի որդին թագաւորի պատկերն է, որովհետեւ բնութենակից է նրան, իսկ դրամի եւ տախտակի վրայի թագաւորի պատկերը միայն ձեւով է նման թագաւորին, սակայն ոչ բնութեամբ: Այդպէս էլ հաւի ձուն եւ քարէ ձուն նման են ասւում, սակայն ոչ թէ պատկեր, որովհետեւ մէկը միւսից չի եղել, եւ նոյն էութիւնը չունեն:

Դարձեալ պատկերը կերպարանքին է [վերաբերում], իսկ նմանութիւնը՝ որակին կամ քանակին:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉՊԷ՞Ս Է ՄԱՐԴՆ ԱՍՏԾՈՅ ՊԱՏԿԵՐ ԵՒ ՆՄԱՆ
Պրակ Լ

Հարց. Մենք ինչպէ՞ս ենք Աստծոյ պատկեր եւ նման:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ Հայր Աստծոյ պատկերը Որդին է, եւ նման է Սուրբ Հոգին: Ասում են նաեւ, թէ մարդը կազմուել է ըստ Որդու պատկերի եւ ըստ Սուրբ Հոգու նմանութեան:

Սա ընդունելի [կարծիք] չէ, որովհետեւ մարդը երրորդութեան պատկերով է եղել, ինչպէս ցոյց տրուեց եւ ոչ թէ միայն Որդու ու Սուրբ Հոգու:

Իսկ ուրիշներն ասում են, թէ Աստծոյ պատկեր ենք եւ նման ենք նախագաղափար օրինակին: Սա եւս ընդունելի չէ, վերը ցոյց տրուեց, որ բոլորի նախօրինակը ինքը Աստուած է:

Մի մասն էլ ասում է, թէ պատկեր ենք ներկայում, սակայն նման կլինենք ապագայում՝ [ելնելով] Յովհաննէսի ասածից, թէ՝ «Նմանուելու ենք նրան, որովհետեւ տեսնելու ենք նրան՝ ինչպէս նա կայ» (Ա Յովհ. Գ 2):

Սա եւս ընդունելի չէ, որի պատասխանը տալիս է Սուրբ Կիւրեղ [Աղեքսանդրացին] «Գիրք Պարապմանցի» մէջ. «Պատկեր ասելով՝ հասկանում ենք պատկերի նմանութիւնը»[312], ինչպէս վերը ցոյց տրուեց, որովհետեւ ամէն մի պատկեր հարկաւ նման է:

Ուրիշներն էլ ասում են, թէ մարդը ոչ թէ Աստծոյ պատկեր է, այլ պատկերի պատկեր[313], որովհետեւ Որդին Հօր պատկերն է, իսկ մարդը՝ Որդու, որի պատճառով էլ ասաց նման եւ պատկեր: Սա էլ է սուտ համարում սուրբ Կիւրեղը, որովհետեւ եթէ Որդին Հօր ճշմարիտ պատկերն է, իսկ մարդն էլ Որդու պատկերով է եղել, ուրեմն մարդն էլ եղել է Հօր պատկերով[314]:

Եւ կամ ասում են, թէ Աստծոյ պատկեր է Հոգին՝ ըստ զօրութեան, որովհետեւ ունի միտք, իմացութիւն, կամք, իսկ Աստծուն նման է, որովհետեւ Աստուած անմահ է ու աներեւոյթ, եւ Հոգին էլ անմահ է ու աներեւոյթ:

Եւ կամ հոգու բնական երեք զօրութեամբ Աստծոյ պատկերն ենք, իսկ սրբութեամբ, արդարութեամբ, առաքինութեամբ՝ նման Աստծուն:

Դարձեալ պատկեր է մեր հոգին, որովհետեւ միտքը եւ կենդանութեան շունչը նրանից է գալիս: Եւ նման, որովհետեւ մէկն է երեքի էութիւնն ու բնութիւնը, որով էլ նման ենք Աստծուն:

Դարձեալ Աստծոյ պատկեր ենք, որովհետեւ ճանաչում ենք ճշմարտութիւնը: Եւ նման ենք Աստծուն, որովհետեւ սիրում ենք բարին, ինչպէս վերն ասուեց:

Դարձեալ ասում են երեք կերպ է մարդը պատկեր համարւում, այսինքն՝ բնական, շնորհի, փառքի: Բնական պատկեր է, որի շնորհիւ ընկալում ու կարողանում ենք սիրել Աստծուն: Եւ սա ընդհանուր է եւ բարիների, եւ չարերի [համար]: Իսկ շնորհի ու փառքի պատկեր է, երբ կատարելապէս ճանաչում է ու սիրում Աստծուն, եւ սրանով է, որ նման են կատարեալներն [Աստծուն] այստեղ եւ Վերին գաւառում:

Իսկ սուրբ Գրիգոր Նիւսացին գեղեցիկ մեկնաբանութիւն է տալիս. չի ասուել պատկերի նմանը լինել, [որովհետեւ] ամէն մէկը կմեծարուէր ու մարդուն պաշտելով՝ կռապաշտութեան մէջ կընկէր: Այս պատճառով ասաց նման, որ երբ տեսնեն մարդուն Աստծոյ պատկերակից՝ բանականութեամբ, անմահութեամբ եւ այն ամէնով, ինչ յատուկ է հոգուն, իմանան եւ Աստծոյ առանձնայատկութիւնները:

Եւ բերում է Աստծոյ եւ հոգու չորս առանձնայատկութիւնները:

Նախ այն, որ ընդունում է բոլորի կողմից, որ [Աստուած] հաստատուած չէ, այսինքն՝ ստեղծուած չէ, իսկ եթէ ստեղծուած չէ, ուրեմն չի գոյացել անգոյութիւնից, այսինքն՝ անեղ է: Իսկ եթէ անեղ է, ուրեմն իբրեւ անհրաժեշտութիւն մշտնջենաւոր ու անվախճան է:

Իսկ հոգու առանձնայատկութիւնները. նախ, որ բոլորն ընդունում են, այն է, որ նա ստեղծուած է: Եթէ ստեղծուած է, ուրեմն անեղ չէ: Եթէ անեղ չէ, ուրեմն գոյութիւն է ստացել ոչնչից: Իսկ եթէ ոչնչից է եղել, ուրեմն կարող է նորից նրան փոխուել, եթէ թոյլ տայ Աստծոյ կամքը:

Սակայն Աստծոյ կամքով մշտնջենաւոր գոյութիւն են ստացել հրեշտակներն ու մարդկանց հոգիները:

Այսքանն այս մասին:

ՄԱՐԴՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԱ

Հարց. Ի՞նչ յատկութիւններ ունի մարդը:

Պատասխան. Նախ, կարողանալ զանազանել բարին ու չարը, խոյս տալ չարից, գնալ բարու հետեւից, որ ըստ մարգարէի ասածի է. «Խուսափի՛ր չարից ու բարիք գործ ի՛ր» (Սղմ. ԼԳ 15, ԼԶ 27):

Անասուններին սա տրուած չէ, որովհետեւ նրանք միայն ցանկականն են ընտրում:

Նաեւ մարդն է ի վիճակի կարգաւորելու բարկութեան զգացումները, ցանկութիւնները՝ ըստ բանականների մասին կանոնների:

Մարդն է կարողանում նաեւ իր իմացականով բարձրանալ վեր, քան աշխարհն է, ինչպէս որ յարելով երկրաւորներին՝ վայր է իջնում, քան աշխարհը, որի դէպքում զրկւում է իր պատուից եւ նմանւում անասուններին, ինչպէս ցանկութեամբ՝ խոզին, բարկութեամբ՝ շանը, յափշտակելով գայլին եւ այլն, ըստ այդմ՝ «Մարդը պատուի մէջ էր, սակայն չիմացաւ եւ հաւասարուեց անասուններին ու նմանուեց նրանց» (Սղմ. ԽԸ 21):

Դարձեալ միայն մարդուն է յատուկ ունենալ բոլորի նկատմամբ սէր՝ վերիններին, ներքեւիններին, միջիններին, իսկ անասունները սիրում են միայն իրենց սննդակիցներին:

Դարձեալ միայն մարդուն է յատուկ օրինաւոր ամուսնութիւնը իր զուգակցի հետ:

Դարձեալ մարդուն է յատուկ ամաչել անարժան գործերի համար, որի պատճառով չարքին անամօթ են անուանում, այսինքն թէ՝ նա թողած մարդկային արժանապատուութիւնը, անասունի է նմանուել:

Մարդն է նաեւ հանրային կենդանի, որովհետեւ համատեղ բնակւում է, կարեկից լինում ու օգնում բարի [գործերում]:

Դարձեալ մարդն է ընդունակ ուսում ստանալու, լինելու հեզ եւ սրտով խոնարհ:

Միայն մարդուն է յատուկ ծիծաղը եւ սրտի ուրախութեան պատճառով փառաւորուելը:

Նաեւ մարդուն է յատուկ ուղղաձեւ կեցուածքը, ինչպէս ցոյց տրուեց:

Մարդն ունի լայն եղունգներ ու ճաղատութիւն:

Դարձեալ [միայն] մարդուն է յատուկ խօսելն ու խորհելը, որովհետեւ միւս կենդանիներինը թուացեալ է ու նմանութեամբ:

Եւ մարդն է, որ ընդհանրութիւն ունի ողջ ստեղծուածի հետ՝ գոյակցում է քարերի հետ, ապրում տնկիների նման, զգում է կենդանիների նման, հասկանում ինչպէս հրեշտակները, ինչպէս վերն ասացինք:

Դարձեալ, մարդն է, որ երկու բնութեան միաւորութիւն է, այսինքն հոգու եւ մարմնի:

Դարձեալ ողջ արարչագործութեան միջինն է եւ եզրագիծը, ինչպէս նշել ենք:

Դարձեալ մարդն է, որ պատուականն է բոլոր մարմնական ստեղծուածների մէջ:

Դարձեալ մարդն է, որ իշխան եւ տէր է բոլոր մարմնականներին, ինչպէս ասել ենք:

Դարձեալ, մարդն է, որ բանական եւ մահկանացու կենդանի է:

Դարձեալ, մարդուն է տրուած մարմնական մեղքերի թողութիւն, որ տրուած չէ հրեշտակներին:

Դարձեալ, [միայն] մարդուն է տրուած կենաց յարութիւն եւ դատաստան՝ յանուն հոգու, որ տրուած չէ այլ կենդանիների:

Դարձեալ [միայն] մարդն է, որ Աստծոյ պատկերով եղած՝ երեք կերպով առաւել, քան հրեշտակները, ներքինով եւ արտաքինով, որ չունեն հրեշտակները, որովհետեւ ինչպէս Որդին է Հօր նոյն բնութեամբ, այդպէս էլ մարդն է մարդուց նոյն բնութեամբ, ինչպէս Աստուած է իշխան բոլոր արարածների, այդպէս էլ մարդն է իշխան բոլոր մարմնաւորների, ինչպէս Աստուած էութեամբ կայ ամենուրէք, այդպէս էլ մարդու հոգին իբրեւ էութիւն կայ մարմնի իւրաքանչիւր մասում:

Եւ միայն մարդն ունի երեք աչք. մարմնով տեսնում է աշխարհը, մտքով տեսնում իմացականը, հաւատով ու խոկմամբ տեսնում Աստծուն:

Դարձեալ, մարդն է միայն, որ ունի կանոնների, բնութեան, կամքի, անհրաժեշտութեան կարգեր, իսկ անասուններինը միայն բնազդն է:

Դարձեալ, միայն մարդը կարող է լինել երկրից եւ երկնքում ու առաքինութեամբ ստանալ հատուցում:

Դարձեալ, միայն մարդն է տիրապետում հնարամիտ գործերի ու զանազան արհեստների՝ թռչուն որսալուն, ծովի վրայով անցնելուն, դեւերին սաստելուն, ձեռքով ուրիշի հետ խօսելուն: Եւ մարդու այլ գովաբանութիւնը, որ Նիւսացին դնում է «Բնութեան գրքում»[315], ներյատուկ է մարդուն:

Մարդն ունի նաեւ տկարութեան առանձնայատկութիւններ, որովհետեւ միշտ ունի հանապազօրեայ խնդիրներ, չի կարող անընդհատ կանգնել, հեշտ է սայթաքում, դժուարութեամբ նորից կանգնում. ծնւում է անարգ եղանակով եւ անստոյգ է մահուան օրը:

Բացի այդ, այն, ինչ ունենք՝ ուրիշից ենք ստանում, ունենք անկատար ձեւով եւ միշտ կարող ենք կորցնել:

Դարձեալ մարդը դատապարտուած է մահուան: Եւ սա Ադամից սկիզբ առաւ, եւ Քրիստոսով գնուեց եւ մտաւ մեր բնոյթի մէջ:

Այսքանն այս մասին:

ԿՆՈՋ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԲ

Հարց. Ինչո՞ւ կնոջը կողից ստեղծեց եւ ոչ հողից:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ, որպէսզի իրեն տղամարդուն հաւասար չկարծի, այլ իբրեւ ոչ հասակակից եւ ոչ համահողակից լինի:

Երկրորդ՝ որ անփոյթ չլինի տղամարդու նկատմամբ եւ չլինի անհնա-

զանդ, այլ ինչպէս նրա կողը, իբրեւ մարմին հնազանդ լինի գլխին:

Երրորդ՝ ինչպէս խօսելը գլխին է տրուած, այդպէս էլ լռելը կողինն է, այսինքն կինը պէտք է լուռ լինի ամուսնու իշխանութեան տակ:

Չորրորդ՝ որպէսզի իրեն տկար չկարծի, այլ ինչպէս կողոտ եւ հաստակող ենք ասում ըմբիշին, այդպէս էլ ուժեղ լինի կինը՝ տան գործերը տնօրինելու մէջ:

Հինգերորդ՝ կողը երիկամների պահողն ու պարունակողն է, որից առաջ է գալիս ցանկութիւնը, թէպէտ չի շարժում նրան, սակայն կրում է նրա ազդեցութիւնը:

Վեցերորդ՝ չստեղծուեց գլխից ու ոտքից, այլ մէջտեղից, որ մարդկանց համար դաս լինի՝ կնոջը ոչ թէ գլխին հաւասար պատուելու եւ ոչ էլ իբրեւ ոտք անարգելու, այլ նրան չափաւոր պատուի արժանացնելու:

Եօթներորդ՝ կողը պարունակաձեւ է, որ նշանակում է, թէ կինն ամուսնու տան եւ ունեցուածքի պարունակողն ու ժողովողն է:

Ութերորդ՝ կողը իր կեռ լինելով՝ ցոյց է տալիս կնոջ նենգ ու երկմիտ լինելը, կեռ՝ այսինքն ամուսնու դէմ ըմբոստ լինելը:

Իններորդ՝ ինչպէս որ կողը երեսը դէպի փորը ողորկ է եւ նրբամաշկ, սակայն մէջը փուչ է եւ մրուրախառը, այդպէս էլ ամուսնու նկատմամբ ցուցադրուող նուրբ սէրը միայն երեսից է, իսկ սրտում դառնութեան մրուրն է:

Տասներորդ՝ ինչպէս որ կողն է զօրութիւնն իր մէջ քաշում եւ թիկունքին փոխանցելով՝ նրան ամրացնում, այդպէս էլ կինն է ամուսնու փառքն ու ունեցուածքը սեփականելով՝ բազմապատկում եւ ապահովում իրեն:

Եւ կոչւում է կին, նախ որովհետեւ «առնուեց» առնից:

Երկրորդ՝ կին, իբրեւ մարդու «կէս»:

Երրորդ՝ կին, իբրեւ «կող», այսինքն՝ մէկ զօրութիւն:

Չորրորդ՝ կին, որովհետեւ կենդանուց առնուեց:

Հինգերորդ՝ կին, իբրեւ «կողաբոյս» կամ «կողածին»:

Վեցերորդ՝ կին, իբրեւ ամուսնու «կայան» եւ հանգիստ:

Եօթներորդ՝ կին, իբրեւ թէ ամուսնու զօրութեան եւ հարստութեան «կրող»:

Ութերորդ՝ կին, իբրեւ ամուսնու «կցորդ» եւ օգնական բոլոր գործերում:

Իններորդ՝ կին, որ նշանակում է թոյլ եւ տկար: Եւ տկար է երկու պատճառով. նախ, որ չունի արական զօրութիւն, ինչպէս բոլոր կենդանիների էգերը: Երկրորդ, որովհետեւ կինը ձախ կողմից արարուեց, իսկ մարդու ձախ կողմը թոյլ է:

Տասներորդ՝ կին, իբրեւ «կեանք», որովհետեւ ինչպէս յարատեւութիւնը կեանքով է, այդպէս էլ մարդկային ցեղը կնոջ ծնելով է յարատեւ ու կյարատեւի մինչեւ աշխարհի վախճանը: Այս պատճառով էլ կնոջ անունը կոչեց «կեանք», որովհետեւ նա է բոլոր կենդանիների աճ ու ծնունդ տուողը եւ մայրը:

ԱԴԱՄԻ ՊԱՏՈՒԻՐԱՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԳ

Հարց. Ինչո՞վ են տարբերւում օրէնքը, պատուիրանը, հրամանը:

Պատասխան. Նախ հրամանը ստեղծողի կողմից է ստեղծուածներին.

Օրէնքը՝ տիրոջից՝ ծառային:

Պատուիրանը՝ բարեկամից բարեկամին՝ քաղցրութեամբ, ինչպէս հօրից որդուն, եղբօրից եղբօրը:

Եւ օրէնքն ու հրամանը մարդու վրայ դրուած հարկադրանք են, իսկ պատուիրանն ըստ կամքի է:

Դարձեալ Սուրբ Գրքում, ուր Աստծոյ բարեգործելու մասին է խօսում, ասում է՝ հրամայել, որտեղ սպառնալիք կայ, օրէնք դնել է ասում, իսկ որտեղ սէր եւ քաղցրութիւն՝ ասում է պատուիրան, ինչպէս պատուիրեց Ադամին:

Իսկ թէ ինչո՞ւ մարդու համար օրէնքներ տուեց, նախ, որ ցոյց տալու համար մարդու անձնիշխանութիւնը, որ կարողութիւն ունի այն պահելու եւ չպահելու:

Երկրորդ՝ որպէսզի ցոյց տայ, որ ինքն է Տէրը եւ մարդու ստեղծողը:

Երրորդ՝ ցոյց է տալիս մարդու սէրն ու հնազանդութիւնը:

Չորրորդ՝ ցոյց տալու համար հատուցման արդար վճիռը. պահողներին դրախտի վայելում եւ անմահ կեանք, չպահողներին՝ արտաքսում եւ մահով մեռնել:

Հարց. Ի՞նչ է մահով մեռնելը:

Պատասխան. Նախ, ասում է մահով մեռնել, այսինքն թէ՝ կայ մի անձնաւոր մահ, որ բանսարկուն է, եւ ասում է նրանով ես մեռնում:

Երկրորդ՝ նշանակում է, որ մահկանացու անասուններին յատուկ մահով ենք մեռնում:

Երրորդ՝ մահով մեռնել, նաեւ հոգու մահուան մասին է ասում, որ մեղքերով մեռնելն է, որ առաւել մահ է եւ յաւիտենական չարը, ինչպէս ասում է քերթողը՝ «Դա քեզ ոչ թէ մահկանացու մահ է, այլ յաւիտենական չարիք»:

Չորրորդ՝ մահով մեռնելը այն է, որ հոգով ու մարմնով տրտմում են ու յաւիտեան չարչարւում, ինչպէս մեղաւորներն այս կեանքում եւ մահից յետոյ, որովհետեւ նա, ով մարմինն է մեռցնում, վճարում է պարտքերը, իսկ որ տրտմում է հոգով՝ յաւիտենական է մեռնում:

ԹՇՆԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թշնամութիւնն ութ կերպ է լինում:

Առաջին՝ մարդկային ցեղի իրական թշնամին սատանան է, իսկ միւս թշնամիները նրանից են առաջացել:

Երկրորդ՝ թշնամի են մարդիկ միմեանց:

Երրորդ՝ թշնամի են իրար հոգին ու մարմինն ու նրանց մասերը:

Չորրորդ՝ մարդկանց թշնամի եղան հրեշտակները, որոնք սրերով պահեցին [կենաց] ծառի ճանապարհը (տե՛ս Ծննդ. Գ 24):

Հինգերորդ՝ թշնամի եղաւ Աստուած, երբ արտաքսեց դրախտից:

Վեցերորդ, թշնամի եղան գազանները եւ անասունները, ըստ որում՝ «Թշնամութիւն եմ դնելու քո եւ կնոջ միջեւ» (Ծննդ. Գ 15):

Եօթներորդ՝ թշնամի եղաւ մեր արարքը, որ մեղքի պատճառ դարձաւ՝ զանց առնելով պատուիրանը:

Ութերորդ՝ թշնամի եղան պատժելու ձեւերը, այսինքն՝ մահը, ոչնչանալը, տանջանքը, հիւանդութիւնը, սովը, ծարաւը եւ այլն, որոնք բոլորը տկարութիւններ են:

Եւ այսպէս, ութ ձեւ ունի մեր թշնամութիւնը միմեանց հանդէպ, եւ այս ամէնի պատճառը սատանան եղաւ, որ մեր բնութեան թշնամին է:

Եւ սրանցից բացի, նաեւ բնական հակամարտութեան մէջ են չորս տարրերը, ինչպէս ցոյց տուեցինք վերը:

Կան նաեւ ստորին ու վերին վայրեր, մարմնաւորներ ու անմարմիններ, սակայն սրանք բնոյթի տարբերութիւններ են եւ ոչ թշնամիներ:

ԹԷ ԻՆՉՊԻՍԻՆ Է ԿԵԱՆՔԸ
Պրակ ԼԴ

Իմանալու է, որ մարդու կեանքը որակական երեք շրջանի է բաժանւում, ըստ մարդու երեք փոփոխութեան, այսինքն՝ մինչեւ մեղքը, մեղքից յետոյ եւ մահուանից յետոյ:

Բաժանւում է նաեւ ըստ երեք վայրերի, այսինքն՝ դրախտը, այս աշխարհը եւ հանդերձեալը, որովհետեւ մինչեւ մեղանչելը դրախտում մարդը կարող էր մեղանչել եւ չմեղանչել, կարող էր մեռնել եւ չմեռնել, իսկ մեղքից յետոյ այս աշխարհում կարող է մեղանչել եւ չի կարող չմեղանչել: Կարող է մեռնել եւ չի կարող չմեռնել:

Իսկ մահուանից յետոյ հանդերձեալում չի կարող մեղանչել ու անկարող է մեղանչել, չի կարող մեռնել ու անկարող է մեռնել:

Եւ մնացածն էլ այսպէս:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՉԷԻՆ ԱՄԱՉՈՒՄ
Պրակ ԼԵ

Հարց. Ինչո՞ւ Ադամն ու կինը չէին ամաչում:

Պատասխան. Նախ, պարզամտութեան պատճառով, ինչպէս որ երեխաները չեն ամաչում, երբ մերկանդամ են, այդպէս էլ նրանք:

Երկրորդ՝ անմեղութեան պատճառով, որովհետեւ ամօթը մեղք գործելուց յետոյ է:

Երրորդ՝ դեռ պատուիրան չէին ստացել, որ երկիւղ ու զգուշութիւն է ծնում, որովհետեւ զգուշութեան պակասի պատճառով է ամօթ լինում:

Չորրորդ՝ որովհետեւ դրախտի ծառերի ու անթառամ ծաղիկների եւ բազմաթիւ պտուղների մէջ զմայլուած էին ու ո՛չ երկնչել գիտէին, ո՛չ ամաչել:

Հինգերորդ՝ մտքով աստուածային խոհերի հետ էին, իսկ զգայարաններով՝ հրաշքի գործերի եւ զբաղուած չէին անձի քննութեամբ, որովհետեւ ասւում է, թէ՝ «Իմաստունի աչքն իր գլխի մէջ է» (Ժող. Բ 14):

Վեցերորդ՝ թէպէտ ձեռակերտ հագուստ չունէին, սակայն զարդարուած էին լոյսի շնորհներով:

ՄԱՐԴՈՒՆ ՏՐՈՒԱԾ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԶ

Դրախտում տասներկու պարգեւներ էին տրուած, որ կորցրեց Ադամը:

Նախ՝ Աստծուն տեսնելը:

Երկրորդ՝ խօսելը [Նրա հետ]:

Երրորդ՝ անմահութիւնը:

Չորրորդ՝ լուսեղէն հանդերձը:

Հինգերորդ՝ անախտաւոր կեանքը:

Վեցերորդ՝ անծերանալի հասակը:

Եօթներորդ՝ դրախտի անհոգ փափկութեան վայելչութիւնը:

Ութերորդ՝ Աստծոյ մշակածի, այսինքն՝ անմահ տնկիների երկրագործն ու պահապան լինելը:

Իններորդ՝ Աստծոյ սէրն ու գութը մարդու հանդէպ, որ նրա նկատմամբ կար պատուիրանին հնազանդուելու միջոցով:

Տասներորդ՝ ողջ ստեղծուածի վրայ թագաւորութիւնը:

Տասնմէկերորդ՝ քահանայութիւնը:

Տասներկուերորդ՝ մարգարէութիւնը:

Այս տասներկու պարգեւներից մեզ զրկեց Եւան:

Նախ՝ տեսնելուց, որովհետեւ ոչ ոք այլեւս չի կարող տեսնել Աստծոյ երեսը:

Խօսելը, որովհետեւ մինչեւ Յորդանան այլեւս չի ասւում Հայր Աստծոյ խօսելը մարդկանց հետ:

Անմահութիւնից, որովհետեւ վճիռ կայացրեց, թէ՝ «Հող էիր, եւ հող դարձի՛ր» (Ծննդ. Գ 19):

Լուսաւոր հանդերձից, որովհետեւ երբ կերան պտուղը եւ տեսան մերկ են, ծածկոց պատրաստեցին:

Անախտաւոր կեանքից. «Տրտմութեամբ եւ քրտինքով հաց ուտե՛ս» (Ծննդ. Գ 19):

Անծերանալի հասակից. «Փուշ ու տատասկ թո՛ղ բուսի երկիրը քեզ համար» (Ծննդ. Գ 18):

Պահապան լինելուց, «որից պատուիրեցի չուտել, արդեօք կերա՞ր նրանից» (Ծննդ. Գ 11):

Վայելչութիւնից. «Հանեց նրանց եւ բնակեցրեց փափուկ դրախտի դիմաց» (Ծննդ. Գ 24):

Եւ ատելութիւն եղաւ. «Գուցէ իր ձեռքը մեկնի» (Ծննդ. Գ 22):

Թագաւորութիւնից. «Մարդը պատուի մէջ էր, սակայն չիմացաւ, հաւասարուեց անբան անասուններին» (Սղմ. ԽԸ 21):

Քահանայութիւնից, որովհետեւ [Ադամը] չհամարձակուեց պատարագ մատուցել իր կեանքում:

Իսկ մարգարէութիւնը լռեց, որովհետեւ ոչ մի յիշատակութիւն չկայ նրա շնորհների վերաբերեալ:

ԴԱՐՁԵԱԼ ԱԴԱՄԻ ՇՆՈՐՀՆԵՐԻ ԵՒ ՅԱՆՑԱՆՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԷ

Հարց. Որո՞նք էին Ադամի շնորհները, որ տուեց Աստուած:

Պատասխան. Այսպէս են ասում վարդապետները:

Նախ, որ արարեց Աստուած:

Երկրորդ՝ հոգի:

Երրորդ՝ միտք:

Չորրորդ՝ կամք:

Հինգերորդ՝ գիտութիւն:

Վեցերորդ՝ բանականութիւն:

Եօթներորդ՝ գործ անել:

Հարց. Որո՞նք են եօթը յանցանքները:

Պատասխան. Նախ՝ որ ցանկացաւ աստուածանալ:

Երկրորդ՝ հաւատաց օձին:

Երրորդ՝ կնոջն աւելի հնազանդուեց, քան Աստծուն:

Չորրորդ՝ կերաւ պտղից:

Հինգերորդ՝ թաքնուեց:

Վեցերորդ՝ չզղջաց՝ «մեղայ» ասելով:

Եօթներորդ՝ Աստծուն պատճառաբանեց, թէ՝ «Այն կինը, որ տուեցիր ինձ, նա ինձ ուտել տուեց» (Ծննդ. Գ 12):

Հարց. Ի՞նչ եօթ պատիժներ կրեց:

Պատասխան. Նախ զրկուեց անմահութիւնից եւ անասունների շարքն ընկաւ:

Երկրորդ՝ զրկուեց կենաց ծառից եւ դրախտից արտաքսուեց:

Երրորդ՝ դրախտի դիմաց բնակեցուեց եւ միշտ նախանձից մաշուեց:

Չորրորդ՝ քրտինքով եւ տանջուելով վաստակեց:

Հինգերորդ՝ ցաւով ու հեծեծանքով ապրեց:

Վեցերորդ՝ առաջ, քան իր մեռնելը կնոջ եւ որդու մահը տեսաւ:

Եօթներորդ՝ քայքայուեց եւ մտաւ երկրի արգանդը, այսինքն՝ գերեզման:

ԱԴԱՄԻ ԱՆԿՄԱՆ ՏԱՍՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԸ

Սուրբ Գրիգոր Նիւսացին «Գիրք ի գովեստ կուսութեան» մէջ մարդու դրախտից իջնելու տասը աստիճաններ է նշում, որոնց պատճառով որդիներն էլ իրենց հօր արարքի հետեւանքով դուրս մնացին[316]:

Եւ եթէ մէկը կամենայ վերադառնալ նոյն աստիճաններով, նոյն կարգով էլ պէտք է կարողանայ բարձրանալ:

Արդ, իջնելու առաջին աստիճանը հեշտութիւնն է, որն իր մէջ պարունակում է երեք կարգ: Նախ, աստուածային փառքից ետ դառնալը, որի պատճառով զրկուեց դրախտում շրջելուց:

Երկրորդ՝ օձի հետ խօսելու ցանկութիւնը, որի պատճառով կամեցաւ լսել, որովհետեւ տենչաց աստուածանալու փառքին:

Երրորդ՝ տեսնելու եւ ճաշակելու հեշտանքը, ըստ որի՝ «Գեղեցիկ էին նայելու համար եւ քաղցր՝ ուտելու» (Ծննդ. Գ 6):

Չորրորդ՝ ամօթը. «Բացուեցին երկուսի աչքերն էլ եւ տեսան, որ մերկ են, որի պատճառով թզենուց ծածկոց պատրաստեցին» (Ծննդ. Գ 7):

Հինգերորդ՝ երկիւղը, որովհետեւ լսելով Տիրոջ կանչելու ձայնը՝ վախեցան:

Վեցերորդ՝ Աստծոյ առաջ համարձակութեամբ չկանգնելը:

Եօթներորդ՝ տերեւներով ու ուռիներով թաքնուելը, ըստ այդմ՝ «Լսեցի

կանչելու ձայնը եւ վախեցայ եւ քանի որ մերկ էի, թաքնուեցի» (Ծննդ. Գ 10):

Ութերորդ՝ մաշկեղէն հանդերձը, որ ըստ ոմանց ոչ թէ մարմնի մաշկի մասին է, որովհետեւ այն ունէր ստեղծուելու ժամանակից, այլ այս կաշուից մաշկը ստեղծեց եւ հագցրեց լուսեղէն պատմուճանի փոխարէն՝ ցոյց տալով նրա մահկանացու լինելը, ինչպէս ասում է. «Կաշուից հանդերձ պատրաստեց եւ հագցրեց նրան» (Ծննդ. Գ 21):

Եւ ապա իններորդ՝ այս ցաւերի երկիրը պանդուխտ ուղարկելով, ինչպէս ասում է. «Փուշ ու տատասկ թո՛ղ աճեցնի երկիրը քեզ համար եւ քո երեսի քրտինքով կուտես քո հացը կեանքիդ բոլոր օրերում» (Ծննդ. Գ 18):

Եւ տասներորդ՝ որ ամուսնութիւնը իբրեւ մխիթարութիւն տուեց մահկանացուներին, ըստ այդմ՝ «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք եւ լցրէ՛ք երկիրը» (Ծննդ. Թ 7): Նաեւ՝ «Տրտմութեամբ ծնե՛ս զաւակներ» (Ծննդ. Գ 16):

Տե՛ս, որ սուրբը պարզ ասում է, եթէ դրախտում [պատուիրանը] պահպանելով մնայիր՝ ամուսնութեամբ չէր լինի աճելը, այլ՝ կամ հրեշտակների նման, կամ ինչպէս մի լոյսից՝ շատերը, կամ էլ՝ կուսութեամբ ծնունդը, ինչպէս որ սուրբ կոյս Մարիամ Աստուածածինը սրբութեամբ եւ կուսութեամբ ծնելով՝ փոխեց ծննդի բնութեան կարգը, որ տղամարդու սերմից ու կնոջից էր, մինչդեռ նա ծնունդ էր միայն մօրից:

Արդ, եթէ մէկը կամենայ բարձրանալ նոյն [աստիճաններով] եւ առ Քրիստոս լինել, պէտք է վերջից սկիզբը բարձրանայ, ինչպէս սանդուղքով:

Կամ ինչպէս տնից հեռացած ճանապարհորդներ, որոնք երբ կրկին վերադառնում են իրենց տները, նախ թողնում են վերջին բնակատեղին, դէպի որը սկսել էին գնալ:

Արդ, դրախտի կեանքից մեր հեռանալուց յետոյ վերջինը ամուսնութիւնը եղաւ, ուրեմն պէտք է նախ այն թողնել, ապա՝ հեռանալ երկրաւոր հոգսերից ու տառապանքներից:

Երրորդ՝ մերկանալ մաշկեղէն հագուստից, այսինքն մարմնական եւ մեռելոտի խորհուրդներից:

Չորրորդ՝ խոստովանութեամբ յայտնել ամօթալի գաղտնիքները:

Հինգերորդ՝ չստուերոտուել թզենու տերեւով, այսինքն վատ արարքով, որովհետեւ թզենու տերեւը դառն է ու փշոտ՝ ըստ մեղքերի մասին առակի:

Վեցերորդ՝ որպէսզի զերծ լինենք վատթարագոյն երկիւղից, որի մէջ երկիղած չարչարւում են մեղքով բռնուածները:

Եօթներորդ՝ դարձեալ կանգնել Արարչի աչքի առաջ:

Ութերորդ՝ մերժել ճաշակելու եւ տեսնելու խաբկանքները եւ բոլոր զգայարանների հրամցրածները:

Իններորդ՝ ոչ թէ թունարկու օձին խորհրդակից ունենալ, այսինքն չարի արկածախնդրութիւնը, այլ՝ Աստծոյ պատուիրանները, որ Սուրբ Գրքում են:

Տասներորդ՝ մերձենալ առանձնայատուկ Բարուն, այսինքն Նրան, որ

համակ Բարին է, որ Աստուած է՝ խորհրդով, մտքով եւ ընթացքով:

ՄԱՇԿԵՂԷՆ ՀԱՆԴԵՐՁԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԹ

Հարց. Ի՞նչ էր մաշկեղէն հանդերձը, որ հագցրեց Աստուած Ադամին:

Պատասխան. Մաշկը կենդանական մորթ է, որ ստեղծեց Աստուած եւ հագցրեց Ադամին ու Եւային: Իսկ թէ որտեղի՞ց, ո՞ր կենդանուց առաւ թէ նորը ստեղծեց, մի՛ հարցրու, որովհետեւ Աստուած ամենակարող է:

Եւ զգեստ կրելը տասը պատճառ ունի:

Նախ՝ ամաչելու պատճառով: Երկրորդ՝ ցրտի: Երրորդ՝ տօթի: Չորրորդ՝ ցանկութիւնը զսպելու: Հինգերորդ՝ զինուելու եւ պաշտպանուելու: Վեցերորդ՝ դէմքերը տարբերելու: Եօթներորդ՝ սուգ կամ ուրախութիւն արտայայտելու: Ութերորդ՝ գործելու: Իններորդ՝ զարդարուելու: Տասներորդ՝ պճնուելու:

Սրանցից չորսը անհրաժեշտ են, չորսը պէտքական, երկուսը վայելչական:

Իսկ մաշկը, որ մահացած մորթն է, նախ նշանակում է մեղքի պատճառած սուգն ու տրտմութիւնը[317]:

Երկրորդ՝ մեղքի մեռածութիւնը:

Երրորդ՝ ախտերի մահացածութիւնը, որովհետեւ պէտք է մեր մէջ մեռցնենք մարմնական ախտը: Իսկ այն, որ ինքն է հագցնում, ցոյց է տալիս ինքնազգեստաւորուած անմահ փառքը, որ այժմ Քրիստոս հագցրեց շնորհներով, իսկ յարութիւնից յետոյ կհագցնի փառքով:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ ՄԱՇԿԵՂԷՆ Է ԿՈՉՈՒՄ
Պրակ Խ

Հարց. Ինչո՞ւ են մեր մարմինը մաշկեղէն հանդերձ ասում:

Պատասխան. Մաշկեղէն հանդերձն ունի առարկայական եւ խորհրդական իմաստներ:

Ըստ առարկայականի նշանակում է մաշկեղէն կաշի, որ հագցրեց:

Ըստ խորհրդականի ցոյց է տալիս, որ մեր մարմինը փոփոխական է, ինչպէս այն, որ մարդու երեսին կենդանի շունչ փչեց:

Ըստ առարկայականի ցոյց էր տալիս հոգու շնորհները, որ վերացրեց մարմին եղածներից[318] ու դարձեալ փչեց Վերնատան մէջ:

Իսկ իբրեւ խորհրդանիշ ցոյց էր տալիս բանական հոգին, որով մարդը կենդանացաւ:

Այսպէս մաշկեղէն հանդերձը ցոյց է տալիս տխրալի ու ախտաւոր մարմինը, որ յանցանքից յետոյ դարձաւ թանձր, ծանր, մահկանացու, ներհակ, աղտոտուած:

Ադամի մարմինը, որ անչարչարելի անմեղութիւն էր, արագաշարժ, պայծառ, թեթեւ, ինչպէս ասում է Աստուածաբանը, թէ՝ «Նրանց եւ Աստծոյ միջեւ ոչ մի ծածկոյթ չկար», մեղք գործելուց յետոյ փոխուեց, ուստի մաշկեղէն հանդերձով մարմնականն է ցոյց տալիս[319]:

Եւ եթէ մէկն ասի, թէ սրանք յարութեան ժամանակ մարմնի կարիք չեն ունենալու, ապա ասենք, որ այն, ինչ ունենալու են սրբերը յարութեան օրը, դրանց սկիզբը սերմանեց նախահայր Ադամի մէջ, եւ եթէ իր ժամանակին ուտէին Կենաց պտուղը, կլինէին կատարեալ անմահներ ու կտեղափոխուէին արքայութիւն:

Եւ այս է նշանակում, որ ասում են, թէ նրանց կեանքը միջին սահմանն էր մահուան ու անմահութեան, որովհետեւ անմահութեան եւ անվախճանութեան սկիզբն ու սերմը Ադամն ստացաւ, եւ իր առջեւ դրուած ունէր երանութիւնն էլ, թշուառութիւնն էլ, որ անմահութիւնն ու մահն էին: Եւ եթէ պահպանէր պատուիրանը՝ կատարեալ անմահութեամբ կհասնէր երկինք, մինչդեռ յանցանք գործելով՝ մահկանացու դարձաւ եւ ընկաւ երկիր[320]:

Իսկ եթէ մէկն ասի, ուրեմն երկրորդ Ադամն էլ՝ Քրիստոս, որ ունէր Ադամի մարմինը, թանձր էր ու ծանր, ապա կասենք, որ Քրիստոս Կոյս Մարիամից առնելով մեր թանձր ու մեղանչական մարմինը եւ միաւորելով իրեն՝ եղաւ Ադամի սկզբնական անմեղութեան նման, որ ունէր դրախտում:

Այս ենք [հասկանում]՝ ասելով, թէ Քրիստոս ունէր Ադամի մարմինը, որ անմեղ էր:

Եւ մինչեւ խաչուելը [Քրիստոս] չորս կերպ ցոյց տուեց իր մարմնի այդպիսին լինելը: Նախ, որ ծնուեց անապական Կոյսից, որը ցոյց տուեց ոչ ներհակ եւ թեթեւ լինելը. ծովով գնալը՝ թեթեւաշարժ եւ արագաշարժ լինելը. այլակերպուելով՝ պայծառութիւնը եւ անչարչար լինելը Վերնատանը, երբ առաջարկեց իր աշակերտներին ուտել իր մարմինը, որ անչարչարելի էր ներգործութեամբ եւ ոչ թէ զօրութեամբ:

Նոյնն իմացի՛ր Ադամի մասին:

Եւ մարդու կազմութեան մասին այսքանը:

«Գիրք հարցմանց»-ի հինգերորդ մատեանի աւարտը:

ՀԱՏՈՐ ՎԵՑԵՐՈՐԴ ՄՈՎՍԷՍԻ ՀԻՆԳ ԳՐՔԵՐԸ, ԱՅՍԻՆՔՆ՝ [ԳԻՐՔ] ԱՐԱՐԱԾՈՅ, ԵԼԻՑ, ՂԵՒՏԱՑԻՈՅ, ԹՈՒՈՅ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

Հարց առաջին. Աբէլի, Կայէնի եւ նրանց զոհաբերութեան մասին:

Երկրորդ՝ Ենովսի, այլեւ Ենովքի վերափոխուելու մասին:

Երրորդ՝ նահապետների եւ մեր կեանքի մասին՝ չափուած թուերով:

Չորրորդ՝ մեր մահուան օրը չիմանալու եւ ցաւագին կեանք ունենալու մասին:

Հինգերորդ՝ Նոյեան տապանի եւ եկեղեցու մասին: Եւ թէ ի՞նչ կերան, ի՞նչն էր լոյս տալիս: Ագռաւի մասին:

Վեցերորդ՝ կենդանիներին մորթելու մասին:

Եօթներորդ՝ աշտարակի, այլեւ եօթանասուներկու լեզուների բաժանման մասին:

Ութերորդ՝ նախահայրերի անունների եւ կանանց մասին:

Իններորդ՝ Մելքիսեդեկի մասին. համեմատութիւն Քրիստոսի հետ, այլեւ՝ Աբրահամի:

Տասներորդ՝ Ղովտի, նրա կնոջ եւ Սոդոմի մասին:

Տասնմէկերորդ՝ Աբրահամի եւ փորձութիւնների մասին: Իսահակի եւ Տիրոջ համեմատութեան մասին՝ քսան կէտերով:

Տասներկուերորդ՝ երեք ծնողների, այսինքն՝ Սառայի, սուրբ Մարիամի եւ եկեղեցու ու նրանց ծնունդների համեմատութեան մասին:

Տասներեքերորդ՝ քանի՞սն են յղիութիւնները եւ ծնունդները:

Տասնչորսերորդ՝ անդրանկութեան խորհրդի մասին:

Տասնհինգերորդ՝ Յակոբի գօտէմարտելն ու սքանչելի անուան մասին: Ռաքէլի եւ նրա որդիների մասին:

Տասնվեցերորդ՝ Յովսէփի եւ Տիրոջ համեմատութեան մասին՝ քսան կէտերով:

Տասնեօթներորդ՝ մահուան եւ յարութեան համեմատութեան մասին՝ տասը կէտերով:

Տասնութերորդ՝ առիւծի եւ Տիրոջ համեմատութեան մասին՝ քսան կէտերով:

Տասնիններորդ՝ կապերի տեսակները:

Քսաներորդ՝ ինչո՞ւ է մարմինը զգեստ կոչւում:

Քսանմէկերորդ՝ մշտնջենական լեռները:

Քսաներկուերորդ՝ Յոբի մասին զանազան հարցեր:

Քսաներեքերորդ՝ Մովսէսի եւ Տիրոջ համեմատութիւնը՝ երեսուն կէտերով: Աբրահամի ազգատոհմը:

Քսանչորսերորդ՝ մորենու մասին: «Որ էն»-ի նշանակութիւնը:

Քսանհինգերորդ՝ նշանների մասին:

Քսանվեցերորդ՝ տասը հարուածների մասին, եւ թէ ինչո՞ւ են այսքան տանջանքները:

Քսանեօթներորդ՝ կախարդների, դեւերի խօսքի, սրտի խստութեան մասին. եգիպտացիներին կողոպտելու մասին:

Քսանութերորդ՝ քանի՞ տարի ծառայեցին, ո՞ր օրը դուրս եկան: Լոյսի սիւնը: Մովսէսն ի՞նչ էր բարձել եւ ի՞նչ ասաց ծովի մօտ:

Քսանիններորդ՝ մանանան ճշմարիտ օրինակն է Քրիստոսի մարմնի:

Երեսուներորդ՝ տասնաբանեան օրէնքները: Իրաւունք եւ օրէնք: Տաճարում երեք անգամ երեւալը. մեծ երեւալը: Արիւնը ջրի հետ խառնելը:

Երեսունմէկերորդ՝ խորանի մասին ընդհանրապէս:

Երեսուներկուերորդ՝ տապանակի եւ նրա խորհրդի մասին, եւ թէ ո՞ւր է տապանակն այժմ:

Երեսուներեքերորդ՝ առաջաւորութեան հացը, գառը, աշտանակը եւ քահանայական զգեստը:

Երեսունչորսերորդ՝ տասներկու ակները եւ խունկը:

Երեսունհինգերորդ՝ քարեղէն տախտակները, նրանց խորտակելը եւ Աստծոյ թիկունքը: Մովսէսի առանձնայատկու-

թիւնները, որ Աստուած համարուեց: Հազար տոհմերի [նկատմամբ եղած] ողորմութեան եւ գթութեան մասին:

Երեսունվեցերորդ՝ [Մովսէսի] լուսափայլ երեսի, թէ քանի՞ անգամ բարձրացաւ լեռը եւ երեք [անգամ] քառասնօրեայ պահքի մասին. Մովսէսի չորս ծնունդները:

Երեսունեօթներորդ՝ հին եւ նոր օրէնքների տարբերութիւնների, Տիրոջ եւ հների քահանայութեան մասին: Եւ թէ ի՞նչն է փոխուելու հանդերձեալում:

Երեսունութերորդ՝ ինչո՞ւ պահանջեց անբան կենդանիների զոհաբերութիւն: Անխմոր եւ անմեղ զոհերի եւ աղի մասին: Նրանք գառ էին [զոհաբերում], մենք՝ ոչ: Եւ թէ ինչ են «պանը» եւ «մուրկը» եւ այլն:

Երեսունիններորդ՝ թէ հները քանի՞ պատարագ ունէին:

Քառասուներորդ՝ ի՞նչ էր նշանակում պատարագելը:

Քառասունմէկերորդ՝ կենդանիներ մորթելը եւ դրա իմաստը:

Քառասուներկուերորդ՝ նոր պատարագի մասին: Այն մասին, որ երեք պատարագ ունենք. ի՞նչ է նշանակում կրկին ողջակէզը:

Քառասուներեքերորդ՝ քահանաների իրաւունքի մասին: Նոր օրհնուած քահանաների եւ եկեղեցու մասին: Նաբադը եւ Աբիուդը այրուեցին: Եւ տասն էին բոլոր սեղանները միասին:

Քառասունչորսերորդ՝ սուրբ կենդանիների նշանները:

Քառասունհինգերորդ՝ կենդանիներ մորթելու մասին:

Քառասունվեցերորդ՝ բորոտութեան, դրա իմաստի եւ մաքրուելու մասին:

Քառասունեօթներորդ՝ սերմնակաթի եւ դաշտանի մասին: Եւ թէ ինչպէս փոխուեց հինը նորի: Եւ ինչպէս է օրէնքը յաւիտենական: Երկու նոխազների մասին:

Քառասունութերորդ՝ քահանաների տասներկու արատների մասին:

Քառասունիններորդ՝ պատարագի տասներկու արատների մասին: Այն մասին, որ արիւնը ծածկում էին:

Յիսուներորդ՝ տարբեր շաբաթների մասին, որ մեր հանգիստն է նշանակում:

Յիսունմէկերորդ՝ որո՞նք էին հնում տօները, որ փոխուեցին նորերի:

Յիսուներկուերորդ՝ ի՞նչ էր նշանակում «նաշիհը» եւ չորս քառորդ «դորակ» գինին նոր [օրէնքում]:

Յիսուներեքերորդ՝ որ չկայ արծաթի շահ:

Յիսունչորսերորդ՝ եօթ պատուհասների եւ տասանորդի մասին:

Յիսունհինգերորդ՝ թուերի, ծերերի, մարդու հասակի մասին:

Յիսունվեցերորդ՝ ժողովրդի խաչաձեւ բանակատեղին, մէջտեղի ժամի վրանը:

Յիսունեօթներորդ՝ հին քահանաները նոր աստիճանի օրինակ: Քահանաների եւ ժողովրդի օրհնութիւնը: Այստեղ նաեւ անդրանիկների մասին:

Եօթ բանակներով առաջ գնալու եւ տապանակը առջեւից տանելու [մասին]:

Յիսունութերորդ՝ տասներկու լրտեսների մասին, որոնք բերեցին [խաղողի] ողկոյզներ, նուռ եւ թուզ: Ժողովրդի տրտնջալու մասին:

Յիսունիններորդ՝ կորխացիների եւ ծաղկեալ գաւազանի մասին:

Վաթսուներորդ՝ երինջների մոխիրը եւ սուրբ ջուրը: Եւ այն մասին, որ Քրիստոսի մէջ ոչ մի աւելորդ ծորում չկար: Երրորդ օրը մաքրուելու, գողացածը խոստովանելու եւ մի խոյ նուիրելու մասին:

Վաթսունմէկերորդ՝ ո՞րն է ներելի մեղքը, որն աննելին:

Վաթսուներկուերորդ՝ տապանակը առաջ էր գնում, վէմը՝ ետ, որ Քրիստոսն էր:

Վաթսուներեքերորդ՝ պղնձի օձը, եւ թէ ի՞նչ եղաւ:

Վաթսունչորսերորդ՝ Բաղա[ա]մ մոգի մասին: Նզովք եւ անէծք: Այստեղ՝ նաեւ դիւթողների մասին:

Վաթսունհինգերորդ՝ ուխտաւորների մասին, որ միս չէին ուտում եւ գինի չէին խմում:

Վաթսունվեցերորդ՝ աւարը բաժանելու մասին: Երկու ցեղի, մէկի այն կողմում մնալու մասին, եւ թէ ո՞րն է դրա իմաստը: Հոգիների քառասուն իջեւան փոխելու վերաբերեալ:

Վաթսունեօթներորդ՝ քաղաք-ապաստանների եւ նրանց խորհրդի մասին:

Վաթսունութերորդ՝ Երկրորդ օրէնքը: Մեծ անապատը եւ այն մասին, որ դեւերը երեք տեղ են պատերազմում:

Վաթսունիններորդ՝ այն մասին, որ Մովսէսը տեսաւ երկիրը եւ չմտաւ: Բարձր ձեռք եւ հզօր բազուկ:

Ի՞նչ է նշանակում «Երկիր աւետեաց»: Ինչո՞ւ էր առաջին օրէնքը մարմնական:

Եօթանասուներորդ՝ «Աստծոյ սիրոյ մասին լսի՛ր, Իսրայէլ»:

Եօթանասունմէկերորդ՝ «Ո՛չ [միայն] հացիւ կեցցէ մարդ», ինչպէս եւ՝ «Նայի՛ր քեզ»:

Եօթանասուներկուերորդ՝ ինչո՞ւ միայն հրեայ ազգին սիրեց: Երկիրը, որ դուք էք մտնում: Գառը կաթով չեփելու մասին:

Եօթանասուներեքերորդ՝ «Ինձ նման մարգարէ»: Եւ ի՞նչ է՝ «Փայտից կախուածն անիծուած է»:

Եօթանասունչորսերորդ՝ ապահարզանի թուղթը: Այն մասին, որ մի կինը պէտք է բազում ամուսիններ չունենայ, բայց այրը [կարող է] ունենալ եւ եղբօր կնոջն առնել:

Եօթանասունհինգերորդ՝ հեթանոսներին օրէնք տալու մասին, օրհնութիւն եւ անէծք: Ընդդէմ հրէաների, որոնք մարմնաւոր օրհնութիւն ունեն: Մի ճանապարհ գալ եւ եօթ անգամ փախչել:

Եօթանասունվեցերորդ՝ կեանքից կախուած: Մեզ յայտնի բաները եւ Աստծոյ գաղտնիքները:

Եօթանասունեօթներորդ՝ Աստծոյ օրհնութեան մասին: Ապաշնորհ եւ

ապերախտ: Ի՞նչ է «նայելը» եւ «հայելը»: Քանի՞սն են հարստութեան աստիճանները եւ լոյսի նիւթերը: Վերջին աւագ օրինութեան մասին:

Եօթանասունութերորդ՝ ի՞նչ է բարկութիւնն Աստծոյ մօտ:

Եօթանասունիններորդ՝ վերջին կտակի մասին: Ռուբէնն օրինուեց, որովհետեւ ապաշխարեց: Եւ որ ապրելու է Ռուբէնը:

Ութսուներորդ՝ Մովսէսի մարմնի համար պատերազմի, նրա գերեզմանի մասին: Երեսուն օրուայ սուգը: Այն մասին, թէ քանի տարուայ պատմութիւն են ընդգրկում Մովսէսի հինգ գրքերը: Այն մասին, որ աւելի մեծ էր Քրիստոսի հրաշքը, որ հոգիներ արարեց, քան Մովսէսինը, որ մարմիններ [արարեց]:

Ութսունմէկերորդ՝ քանի՞ցս խօսեց Աստուած նախահայրերի հետ:

Ութսուներկուերորդ՝ Սուրբ Գրքում Արարչի անունների մասին:

Այսքանով է աւարտւում «Գիրք հարցմանց»-ի վեցերորդ հատորը:

ԳԼՈՒԽ ԺԸ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԱԲԷԼԻ ԵՒ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Դրախտի կեանքից Ադամի զրկուելուց յետոյ ըստ կարգի հարցնելու է նախահայրերի մասին:

ԱԲԷԼԻ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ա

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ ասում է Գիրքը. «Նայեց Աստուած Աբէլին եւ նրա պատարագին, իսկ Կայէնին եւ նրա պատարագին չնայեց» (Ծննդ. Դ 4):

Պատասխան. Այստեղ Աբէլի [զոհաբերութեան] մէջ եօթ կարգի բարեգործութիւնն է երեւում, որոնց համար էլ արժանացաւ եօթ պարգեւի:

Նախ՝ որ սուրբ եւ աննենգ սիրտ ունէր, ինչն ակներեւ էր եղբօր մօտ դաշտ գնալուց:

Երկրորդ՝ ըստ ամենայնի խոնարհ ու հնազանդ էր, ուստի սպասեց եղբօր [զոհաբերութիւն] անելուն, երբ իրենը երեք ամիս առաջ էր պատրաստ, քանի որ ոչխարների ծնունդը [առաջ] էր, քան երկրի պտուղների [երեւալը], ըստ մարգարէի՝ «Աստուած չի արհամարհում սուրբ սիրտը եւ խոնարհ հոգին» (Սղմ. Ծ 19):

Երրորդ, որովհետեւ յօժար կամք եւ զուարթ սիրտ ունէր, որ երեւում էր նուիրաբերութիւնից, ըստ այդմ՝ «Ես իմ կամքով պատարագ մատուցեցի» (Սղմ. ՃԳ 8) եւ «Աստուած սիրում է զուարթ նուիրաբերութիւնը» (հմմտ. Առակ. ԻԲ 9):

Չորրորդ, որովհետեւ նուիրաբերում էր անարատներին եւ պարարտներին, որպէս օրինակ անարատ գառի՝ Քրիստոսի, եւ ճարպաւորը որպէս [օրինակ] աստուածային լոյսերի:

Հինգերորդ՝ զոհաբերում էր անդրանիկներին, ինչպէս վկայում է Գիրքը. «Անդրանիկներին եւ պարարտներին էր մատուցում» (տե՛ս Ծննդ. Դ 4):

Վեցերորդ, սրանով եւ արդար գործն է երեւում, որովհետեւ ընտիրն իբրեւ տուրք նուիրում էր Աստծուն՝ իմանալով նրա մեծութիւնը, իսկ վատը թողնում էր իրեն:

Եւ սրանք բոլորը վերաբերում են եօթներորդին, որ սէրն է, որ կատարելապէս տածում էր առ Աստուած:

Այսպիսինն էր նա զոհաբերութեան ժամանակ, ինչպէս ասուեց:

Իսկ սրանց փոխարէն ստացած պարգեւներից առաջինի մասին Գիրքն ասում է. «Նայեց», այսինքն՝ Աբէլը հաճելի եղաւ Աստծուն:

Երկրորդի մասին ասում է. «Նրա զոհաբերութեանը», այսինքն ընկալեց նրա անուշահոտութիւնը:

Երրորդի մասին ասում է՝ սրտի բերկրանքը եւ դէմքի զուարթութիւնը, ըստ Սողոմոնի՝ «Բերկրալից սիրտն ուրախ երես ունի» (հմմտ. Առակ. ԻԲ 9):

Չորրորդի մասին՝ եղաւ առաջին քահանան որպէս օրինակ ճշմարիտ քահանայապետ Քրիստոսի:

Հինգերորդի մասին՝ ընդունեց անդրանկութեան օրհնութիւնն, ինչպէս Յակոբը՝ Եսաւից:

Վեցերորդի մասին՝ արդար հռչակուեց ամենաերանելի բերանից, ըստ այդմ. «Արդար Աբէլի արիւնից մինչեւ Զաքարիայի արիւնը պահանջելու եմ այդ ազգից», այսինքն՝ սպանողներիցդ, որովհետեւ սպանողի ազգը սպանող է:

Եօթներորդ, Աստուած այնքան սիրեց նրան, որ մահուանից յետոյ վրէժխնդիր եղաւ նրա արեան համար, ըստ այդմ՝ «Եղբօրդ արեան բողոքի ձայնը հասնում է ինձ» (Ծննդ. Դ 10), այսինքն՝ կամ գոչումն էր տեսնում, կամ հոգի է կոչում արեան անունով:

Դարձեալ՝ սիրուեց Աստծոյ կողմից, որովհետեւ նա եղաւ առաջին մարտիրոսը եւ թոյլ տուեց իջնել դժոխք, որպէսզի նրա պատճառով փրկուէին նաեւ միւսները, ինչպէս Ղովտի պատճառով փրկուեցին սոդոմայեցիները՝ Աբրահամի [միջնորդութեամբ]:

Իսկ Կայէնը, քանի որ այսպիսի յօժարութեամբ չմատուցեց, անարգուեց եօթ կերպ. հաճելի չեղան ո՛չ նա, ո՛չ էլ նրա զոհը. տրտմեցին նրա երեսները (Ծննդ. Դ 5) եւ այլն:

Եւ եօթ յանցանքներով մեղանչեց Կայէնը եւ եօթ պատիժ ստացաւ:

Առաջին յանցանքը անարժան զոհաբերութիւնն էր:

Երկրորդը՝ նախանձը եղբօր հանդէպ:

Երրորդը՝ խաբելով զբօսանքի տանելը:

Չորրորդը՝ սպանելը:

Հինգերորդը՝ որ առաջին մարդասպանը եղաւ:

Վեցերորդը՝ որ եղբայրասպան էր:

Եօթներորդը, որովհետեւ ստեց Աստծոյ առաջ, երբ հարց տրուեց զղջալու համար[321]:

Այնուհետեւ, ինչպէս Առակն է ասում՝ «Եօթը չարիքներ կան թշնամու սրտում» (Առակ. ԻԶ 25), այսինքն՝ սատանայի եւ մարդու: Եւ յայտնի են սատանայի եօթը չար խորհուրդները, որոնք կոչւում են գլխաւոր մեղքեր: Իսկ մարդու մէջ եօթը չարիքները երկու կերպ են [դրսեւորւում]:

Նախ՝ որովհետեւ հոգին երեք մաս ունի՝ բան, ցասում, ցանկութիւն եւ չորս

տարրերի խառնուածք, որոնցով մեղանչում է մարդը:

Երկրորդ՝ որ երեք մասերի աւելը եւ պակասը լինում են վեց չարիք ու մարմնի գործն էլ հետը միասին՝ լինում են եօթ նենգ խորհուրդներ:

Այս պատճառով էլ արդարադատ Աստուած եօթ պատիժներ տուեց Կայէնին, որովհետեւ եօթ չարութեամբ յանցանք գործեց[322]:

Իսկ եօթ պատիժները [սրանք] են.

Նախ՝ անէծքը:

Երկրորդ՝ [պատիժը] երկրից, որը ոռոգեց արեամբ:

Երրորդ՝ տանջանքով գործելը:

Չորրորդ՝ զօրութիւն չտալը:

Հինգերորդ՝ երերալը:

Վեցերորդ՝ տատանուելը (տե՛ս Ծննդ. Դ 11-15):

Եօթներորդ՝ նշանը, որ դրեց նրան չսպանելու համար, [որի մասին] ոմանք ասում են բորոտութիւն էր, ուրիշներն էլ ասում են դողդոջալն էր, որի [պատճառով] չէր կարողանում բերանը հաց ու ջուր տանել: Միւսներն էլ ասում են ճակատի եղջիւրն էր, որ իբրեւ փող փչում էր եւ [ասում], թէ՝ «Ահա՛ գալիս է եղբայրասպան Կայէնը»:

Անէծքն իրեն չտուեց, որ չսատկի, այլ հողին տուեց, որ մահաբեր զէնք է, չարչարանք եւ ապա՝ գերեզման: Եւ ասաց՝ «Երկրում աշխատե՛ս, որովհետեւ արժանի չեղաւ դրախտին: Եւ թող չտա՛յ իր զօրութիւնը», որովհետեւ՝ նախ արեամբ շաղախեցիր հողը:

Երկրորդ՝ զօրութիւնը, որ ունէր Աստծուց՝ չարաչար տանջանք պիտի դառնար:

Երրորդ՝ ասում է զօրութիւն չտուեց, որ չդադարի գործելուց:

Եւ չորրորդ՝ որովհետեւ աւելացրիր հողի վրայ եղած անէծքը քո հայր Ադամից յետոյ:

Եւ ասում է «երերաց», որ կարծես, թէ մարմնով ծառ լինէր:

Եւ տատանուեց իբրեւ ծով՝ անդադար մտածմունքով ալեկոծուած: Ու հոգին էլ, երբ հեռանում է Աստծուց, ինքն իրեն ալեկոծւում է, անհաստատ է [զգում] երկրի վրայ եւ չպատսպարուած՝ երկնքում:

Իսկ թէ ինչո՞ւ այսքան խիստ պատժուեց, առաջին պատճառն այն էր, որ յետոյ ուրիշ ոչ մէկը չյանդգնէր:

Երկրորդ՝ պատիժ կրի ըստ [գործած] յանցանքի:

Երրորդ՝ եթէ նոր չարիք գործի, առաւել՝ պատժուի, ինչպէս որ սոդոմայեցիները արտակարգ չարագործութիւնների համար արտակարգ էլ պատժուեցին՝ հրի թափուելով: Եւ ինչպէս փարաւոնը, որ մանկանց խեղդելու համար ջրասոյզ [լինելով]՝ կորաւ եւ մինչեւ այդ տասը հարուածներով պատժուեց, այդպէս էլ Կորխը, Դաթան եւ Աբիրոնը Մովսէսին եւ Ահարոնին հակառակուելու պատճառով պատժուեցին հրով եւ երկրի ճեղքուելով (տե՛ս Թիւք ԺՁ):

Նմանապէս նրանք, ովքեր նոր բարութեան սկիզբ են դառնում՝ առա-

ւելագոյն պարգեւի են արժանանում: Ինչպէս Ենովսը, որ յոյսով Տէր Աստծոյ անունն էր տալիս, այսինքն յոյսը կապեց հանդերձեալ կեանքի հետ, որ տեսանելի չէր, եւ իւրաքանչիւր գործի համար հատուցում եղաւ, եւ օգնութեան կանչեց Աստծոյ անունը (տե՛ս Ծննդ. Դ 26): Ուստի վկայուեց «Ենովս»[323], որ նշանակում է մարդ, որովհետեւ Աստծոյ պատկերը վերանորոգուեց նրա մէջ: Այս պատճառով էլ նրա որդիներին Գիրքն անուանում է Աստծոյ որդիներ:

Իսկ Ենովքն անպտուղ մնալու եւ զգայարանները լռեցնելու համար վերափոխուեց [երկինք]: Եւ Նոյը հինգ հարիւր տարուայ կուսութեան եւ սրբութեան ու արդար լինելու համար [հատուցուեց], որի մասին վկայում է Մովսէսը, թէ՝ «Նոյը կատարեալ արդար այր էր իր ազգի մէջ» (Ծննդ. Զ 9), որ փրկուեց, [փրկեց] եւ իր տունը ու եղաւ մարդկութեան եւ աշխարհի շինութեան երկրորդ սկիզբը:

Աբրահամն էլ աներկբայ հաւատի համար արդարացաւ, որի մասին ասում է. «Աբրահամը հաւատաց Աստծուն, եւ դա արդարութիւն համարուեց նրան» (Հռոմ. Դ 9), ըստ որում կրկնակի կեանքով առաւելագոյնս փառաւորուեց, որովհետեւ բազմաթիւ ազգերի հայր եղաւ, մանաւանդ որ նրանից էր Քրիստոս մարմնով: Իսկ հանդերձեալում գոգ եւ հանգիստ համարուեց արդարների համար՝ ըստ Ղուկասի. «Ղազարը Աբրահամի գոգում էր» (Ղուկ. ԺԶ 23):

Այսպէս էլ մեծը մարգարէներից՝ աստուածախօս Մովսէսը, որ կոչուեց փարաւոնի աստուած (Ելք Ը 19)՝ իշխելով տարերքների փոփոխութեանը, ով ջուր ծնող էր, եղաւ վիմածին ու կայծակնածին ու դէմքը պայծառափայլ [դարձաւ] (տե՛ս Ելք ԼԴ):

Եւ Աստծոյ նախանձախնդիրը՝ Եղիասը եւ ուրիշ շատեր: Այսպէս էլ նորերի մէջ Ստեփանոսը, որ եղաւ առաջին մարտիրոսն ու վկան Քրիստոսի՝ թափելով իր արիւնը, որ տեսնում էր բացուած երկինքը եւ Աստծոյ աջից՝ Քրիստոսին: Եւ կրօնաւորների նախնին՝ մեծ Անտօն [ճգնաւորը] եւ ուրիշ շատեր ըստ Տիրոջ հրամանի, որ՝ «Ով կատարի եւ սովորեցնի, նա մեծ կկոչուի» (Մտթ. Ե 19):

Այսքանն այս մասին:

ԵՆՈՎՍԻ ՄԱՍԻՆ
Պրակ Բ

Հարց. Ո՞րն էր Ենովսի յոյսը, որի մասին Գիրքն ասում է. «Յոյսը կապեց Տէր Աստծոյ անունը տալու հետ» (Ծննդ. Դ 26):

Պատասխան. Չորս կերպ պէտք է հասկանալ Ենովսի յուսալը:

Նախ՝ յոյսը կապեց անտեսանելի կեանքի ու հանդերձեալի հետ՝ արհամարհելով երկրաւորը, որ տեսանելի էր. «Որովհետեւ տեսանելի յոյսը յոյս չէ» (Հռոմ. Ը 24):

Երկրորդ՝ ձեռնարկեց գործերն ուղղելուն եւ յուսաց, որ կայ գործերի ու բարութիւնների հատուցում:

Երրորդ՝ յոյսը կապեց Տէր Աստծոյ անունը կանչելու հետ, որ մարդիկ յուսահատուած [չէին տալիս եւ ասում], թէ՝ մեր մեղքերի պատճառով թողեց Աստուած մեզ իր ձեռքից: Իսկ նա օգնութեան կանչեց Տէր Աստծոյ անունը, որովհետեւ քանի որ Տէր է, չի գարշի իր ծառաներից, որովհետեւ Աստուած «աստ էած»[324] է՝ ոչ թէ կործանելու, այլ ապրեցնելու համար:

Չորրորդ՝ երկու արձան կանգնեցրեց՝ պղնձէ եւ խեցէ ու ստեղծեց գիր, եւ այն բոլոր [անունները], որ իրերին տուեց Ադամը, գրեց նրանց վրայ, որպէսզի [դրանք] չայլայլուեն խառնախօս եւ անլեզու մարդկանց կողմից:

Եւ մարգարէացաւ, կանխագուշակելով, որ մեղքերի պատճառով երկիրը կոչնչանայ ջրով ու հրով: Եւ եթէ ջրով հեղեղուէր, կմնար պղնձէ սիւնը, իսկ եթէ հրով՝ աղիւսը:

Ահա սրանք յուսոյ նշանակներ էին, որ [նա] հոգաց ապագայի մասին եւ նախապատրաստուեց:

ԵՆՈՎՔԻ ԵՒ ԵՂԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ո՞ւր տեղափոխուեցին Ենովքը եւ Եղիան[325]:

Պատասխան. Դրախտ, որովհետեւ ծանր մարմիններով չէին կարող բնակուել իմանալիների կայանում, իսկ օդից կախուած մնալը պատշաճ չէր լինի: Ուրեմն դրախտ մտան, որովհետեւ դրախտն էլ երկինք է կոչւում եւ մարմնաւոր երկինք է ու անմահութեան վայր:

Իսկ սրանց երկուսի մտնելը հինգ պատճառով է:

Նախ՝ որ վերանան մարդկանց թերահաւատ երկու կարծիքները, որ իբր Ադամը դրախտում անմահ չէր կարող մնալ: Եւ այն, որ մեռեալները յարութիւն չեն առնում: Հակառակ առաջին կարծիքի Ենովքը փոխադրեց, իսկ ի հաստատումն վերջին յարութեան՝ Եղիային վերափոխեց:

Երկրորդ՝ մէկին առաջ, քան ջրհեղեղը, միւսին [դրանից] յետոյ, որ ցոյց տայ, թէ երկու ժամանակներում էլ ընտրեալները հաճոյ եղան Աստծուն:

Երրորդ՝ մէկն անաղարտութեամբ, միւսը ողջախոհ ամուսնութեամբ, որ ցոյց տայ, թէ երկնքի արքայութիւն կարող են մտնել ե՛ւ կոյսերը, ե՛ւ ամուսնացածները:

Չորրորդ՝ երկուսը դուրս եկան դրախտից մեղքով, իսկ այս երկուսը դրախտ մտան անմեղութեամբ:

Հինգերորդ՝ սատանայի տարածած մահը եւ բռնութիւնը իշխում էին մարդկանց վրայ, եւ Ենովքին անմահացնելն ու Եղիային վերափոխելը յուսադրեց հաւատը կորցրածներին, որովհետեւ տեղափոխուելը ցոյց է տալիս նախ տեղափոխողի կարող զօրութիւնը, երկրորդ՝ մահաբեր ու անցաւոր տեղերի կողքին անմահ եւ յաւիտենական տեղերի [գոյութիւնը]: Այդպէս էլ վերափոխելը նրա հզօր կարողութեան [վկայութիւնն] էր, ով վերափոխեց: Եւ երրորդ՝ ստորին տեղերից բարձր տեղեր վեր տանելը:

Հարց. Իսկ եթէ մէկը հարցնի, թէ ո՞րն էր սրանց առաքինութիւնը, որ այսպիսի պատուի արժանացան:

Պատասխան. Վարդապետներն ասում են, թէ Եղիայինը պարզ է:

Նախ՝ նախանձախնդիր էր Աստծուն:

Երկրորդ՝ անապատասէր էր:

Երրորդ՝ կուսութեամբ մնաց:

Սրանք երկնային [յատկանիշներ] են եւ մարդուն բարձրացնում են առ Աստուած:

Իսկ Ենովքի մասին թէպէտ Գիրքը [մանրամասներ] չի յայտնում, սակայն այն խօսքից, թէ՝ «Ենովքը, հաճելի լինելով Աստծուն՝ տեղափոխուեց երկինք» (Ծննդ. Ե 24): Եւ նշելի է, որ նախանձախնդիր էր Աստծուն՝ հակառակ Կայէնի գերդաստանի:

Երկրորդ՝ ստացաւ երկու հարիւր տարուայ առանձնացուած կեանք:

Երրորդ՝ չէր նայում վերեւ՝ գլխին դրուած ունենալով երկաթէ կապիճ:

Չորրորդ՝ չկերաւ այն պտղից, որն ուտելով՝ Եւան զրկուեց անմահութիւնից:

Ահա այս [յատկանիշները] մարդուն երկինք են բարձրացնում:

Եւ հինգերորդ՝ ըստ Եփրեմի՝ սրտով սուրբ էր[326]:

Վեցերորդ՝ կամքով միամիտ էր:

Սրանք էլ մարդուն մերձաւոր են դարձնում Աստծուն:

Սա եւս պէտք է իմանալ, որ Եղիայի վերափոխութիւնը տեսաւ Եղիսէն, որպէսզի չասեն, թէ սպանուեց Յեզաբէլի կողմից: Այդպէս էլ Ենովքի վերափոխութիւնը տեսան նրա եղբայրները, որդիները, դուստրերը, որ չասեն թէ՝ նրան սպանեց Կայէնի կուրացած թոռը՝ Ղամեքը[327]:

Որովհետեւ ասում են, թէ այն տղամարդուն ու երիտասարդին, որոնց սպանեց Ղամեքը եւ վերցրեց նրանց կանանց՝ Ադդային եւ Սելլային, նրանք արդար Ենովքի եղբայրներն էին, ուստի Աստուած փութաց եւ վերափոխեց Ենովքին, որ չսպանեն եւ [յետոյ] ասեն, թէ վերափոխուեց երկինք, ինչպէս որ Կայէնը, երբ որ սպանեց Աբէլին, ծնողներին բացատրութիւն տուեց, թէ Աստուած ընդունեց նրա զոհաբերութիւնը եւ տեղափոխեց [նրան] դրախտ:

Սրանք էին Ենովքի եւ Եղիայի վերափոխութեան պատճառները:

ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵԱՆՔԻ ԵՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Գ

Հարց. Ինչո՞ւ նահապետները հազար տարի չէին ապրում, այլ մինչեւ ինը հարիւր, կամ աւելի ու պակաս:

Պատասխան. Ասում են, թէ Ադամը հազար տարի մնաց դրախտում: Իսկ երբ զրկուեց դրախտի կեանքից, այլեւս [ոչ ոք] չհասաւ այդ նոյն [տարիքին]:

Ուրիշներն էլ հակառակ սրան ասում են, թէ դրախտից հազար տարի յետոյ պէտք է տեղափոխուէին արքայութիւն, եթէ պատուիրանը պահէին: Սակայն դրախտից զրկուելով՝ այլեւս չհասան այդ տարիքին:

Այս երկու [կարծիքներն էլ] սուտ են եւ ընդունելի չեն մեզ համար:

Առաջինի մասին վարդապետներն ասում են, թէ Ադամը դրախտում հազար տարի չմնաց, ոչ էլ աւելի կամ պակաս, այլ մէկ օր, ընդ որում՝ եօթ ժամ:

Իսկ երկրորդի մասին ասում են, թէ հաստատ ոչ ոք չգիտէ, երկուսն էլ միաժամանա՞կ պէտք է տեղափոխուէին, թէ՞ մէկը միւսից յետոյ. սա պարզ չէ մեզ համար:

Իսկ մենք ասում ենք. նախ՝ այն, ինչ մեզ համար հազար տարի է, Տիրոջ աչքում մէկ օր է (տե՛ս Սղմ. ՁԹ 4): Իսկ Ադամը երեկոյեան դուրս եկաւ դրախտից, եւ մէկ օրը չէր լրացել: Այս պատճառով էլ նախահայրերի տարիքը չէր հասնում հազարի:

Երկրորդ՝ ինչպէս մանուկն է արգանդում մնում ինն ամիս, իսկ անդրանիկները՝ հինգ օր աւելի, ապա ծնւում, այդպէս էլ աշխարհի անդրանիկ ծնունդները, որ նահապետներն էին նախքան ջրհեղեղը, այս կեանքում ապրում էին ինը հարիւր տարի կամ աւել եւ ապա ծնւում հանդերձեալ կեանքում՝ մահուանից յետոյ:

Երրորդ՝ երկնքում հրեշտակների ինը դաս կայ, իսկ տասներորդը մարդն է լրացնում նրանց թիւը: Այդ պատճառով էլ այս կեանքում չեն հասնում կատարեալ հազար տարուան, որովհետեւ այստեղ չեն լրւում դասերը, այլ՝ հանդերձեալում:

Չորրորդ՝ գլխաւոր թուերը չորսն են. տասը, հարիւրը, հազարը եւ բիւրը. բիւրը պարունակում է հազարը, սա՝ հարիւրը, հարիւրն էլ՝ տասը: Արդ, բիւրը Աստծոյ յաւիտենականութեանն է պատշաճում, որ մշտնջենաւորներինն է, այսինքն՝ հրեշտակներինը: Հարիւրը ժամանակաւորն է, որ հոգի ունեցող մարդունն է: Դրան յաջորդող տասը՝ կենդանիներինն է, որոնք բաղկացած են չորսից, ինչպէս տասը չորս թուերից:

Այս է պատճառը, որ նահապետները յաղթահարեցին հարիւրը, որ ժամանակաւորն էր, սակայն չհասան հազարին, որ մշտնջենաւորն է:

Հինգերորդն էլ պարզ է. այս կեանքում նահապետները ժամանակով բոլոր մարդկանց հետ էին, իսկ մահից յետոյ մշտնջենականով՝ հրեշտակների հետ, իսկ յարութիւնից յետոյ անվախճան յաւիտենութեան մէջ թագաւորելու են Աստծոյ հետ:

Այսքանն այս մասին:

Հարց. Ըստ կարգի այս էլ հարցնեմ. ինչո՞ւ նախահայրերը երկարակեաց էին, իսկ մենք՝ սակաւակեաց:

Պատասխան. Աստղագէտներն ասում են, թէ կեանքի եօթ դարերի վերակացուները եօթ աստղերն են, որ կոչւում են մոլորակներ:

Արդ, առաջին դարում, որի [իշխողը] Երեւակն էր, մարդիկ երկար էին ապրում, որովհետեւ Երեւակը երկար է ընթանում իր ճանապարհով՝ կենդանակերպը անցնելով երեսուն տարում:

Այնուհետեւ, ըստ կարգի, վերջին դարի [իշխողը] Լուսինն է, որի պատճառով մարդիկ սակաւակեաց են, որովհետեւ նա իր ուղեծիրն անցնում է երեսուն օրում:

Իսկ վարդապետներն ասում են, թէ նման չենք նախահայրերին ո՛չ [կեանքի] տեւողութեամբ, ո՛չ էլ վաստակով: Նրանք երկար էին ապրում, որպէսզի շատանան նրանց գործած բարիքները եւ ծնունդները, իսկ մենք պակաս, որ քչանան չարիքները եւ մարդկանց թիւը:

Այլ պատճառներ էլ կան. նրանք չունէին գրաւոր օրէնքներ, ուստի անհրաժեշտ էր, որ երկար ապրէին, որպէսզի բնական օրէնքներով կրթէին իրենց զաւակներին ու ազգերին: Իսկ այժմ ամէն մէկը գրաւոր է ուսուցանում Աստծոյ պատուիրանը եւ ոչ թէ իր հայրերից:

Եւ միւս պատճառը, որի [մասին] Սաղմոսն ասում է. «Իմ անձը մերձեցաւ հողին» (Սղմ. ՃԺԸ 25), մեկնիչը բացատրում է. այժմ ծերացել է մեր բնութիւնը, որի պատճառով գնում է դէպի հող: Իսկ նախնիները պատանի էին եւ բնութեամբ առոյգ, որի պատճառով երկար էին ապրում:

Հարց. Մարդու կեանքի տեւողութիւնը կանխորոշուա՞ծ է, թէ՞ պատահական են երկար ու կարճ ապրում:

Պատասխան. Իւրաքանչիւր մարդու կեանք կանխորոշուած է Աստծոյ մօտ, եւ ոչ ոք չի կարող անցնել նախատեսուած սահմանը, ըստ այդմ՝ «Սահման դրեց, եւ չեն անցնում» (Սղմ. ՃԳ 9):

Սակայն մեղքը պակասեցնում է եւ թոյլ չի տալիս հասնելու նախատեսուած սահմանին, ինչպէս որ մշակի վարձը մինչեւ երեկոյ աշխատելու համար է տրւում, իսկ եթէ հիւանդանում է, կամ այլ բան է պատահում, վարձը չեն տալիս եւ հանում են մշակութիւնից:

Եւ պէտք է իմանալ, որ մեղքը երբեմն էլ երկարեցնում է կեանքը, որպէսզի տառապի, ինչպէս Կայէնը:

Կամ ինչպէս Եգիպտոսում խոստացաւ չորս հարիւր տարի թողնել իբրեւ ծառայ, սակայն երեսուն տարի աւելացրեց՝ ժողովրդի մեղքերի պատճառով:

Երբեմն էլ կարճում է կեանքը, ինչպէս Նոյի ժամանակ, որովհետեւ նրանց խոստացաւ հարիւր քսան տարի, սակայն նրանց չարագործութիւնների պատճառով պակասեցրեց:

Երբեմն էլ արդարութիւնն է երկարեցնում կեանքը, ինչպէս Եզեկիայինը, երբեմն էլ կարճացնում է, ինչպէս Օվսիայինը:

Եւ սրանք էին կեանքը երկարեցնելու ու պակասեցնելու պատճառները, այսինքն՝ արդարութիւնը կամ մեղքը, ինչպէս ցոյց տրուեց:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ՉԳԻՏԵՆՔ ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ԿՈՐՃԱՆՄԱՆ ՕՐԸ
Պրակ Դ

Հարց. Ինչո՞ւ մարդը չգիտէ իր վախճանուելու եւ աշխարհի կործանման օրը:

Պատասխան. Ասենք, որ յարմար չէր, որ իմանայինք մահուան եւ աշխարհի կործանման օրերը, որի պատճառով Տէրն արգելեց այն. «Ձեզ տրուած չէ իմանալ ժամը եւ ժամանակը» (Գործք Ա 7):

Եւ սա՝ երեք պատճառով:

Նախ՝ եթէ մարդը իմանար մահուան օրը, չէր կառուցի ու չէր տնկի, չէր ծնի զաւակ եւ կդառնար աւերածութեան պատճառ:

Երկրորդ՝ մարդիկ բազմաթիւ տարիներ մեղք կգործէին՝ յոյսը դնելով վերջին ապաշխարութեան վրայ եւ սովորելով մեղք գործելուն՝ այլեւս չէին կարող ետ կանգնել, եւ բոլորը կկորչէին:

Երրորդ՝ եթէ մերձիմահ զղջային եւ ապաշխարելով մեռնէին՝ ոչ ոք արդարութեան պսակին չէր արժանանայ:

Նոյնն է նաեւ աշխարհի վերջը չիմանալու պատճառը:

Նախ, որ իւրաքանչիւր ոք պատրաստ լինի մահուան օրուան եւ Քրիստոսի յանկարծակի գալստեանը, ինչպէս ինքն էր ասում. «Այն ժամին, երբ չէք սպասի, կգայ մարդու Որդին» (Մտթ. ԻԴ 44):

Կործանման ժամանակը իմանալը անիմաստ կդարձնի նաեւ հաւատի վարձքը, որովհետեւ այն տրւում է հաւատալու եւ ոչ թէ իմանալու համար, որի պատճառով էլ հաւատով ենք ակնկալում վախճանը եւ ոչ գիտութեամբ:

Դրանից բացի, բնութեան ներգործածը [մարդն] ընկալում է բնական գիտելիքների միջոցով, իսկ աստուածային գործը գիտութեամբ չի ընկալւում, այլ՝ հաւատով: Արդ, ինչպէս հաւատով ենք իմանում հաստատուած յաւիտենականը (Եբր. ԺԱ 3), ինչպէս ասում է առաքեալը, նոյն հաւատով էլ գիտենք աշխարհի վախճանի, մեռեալների յարութեան եւ հատուցման դատաստանի մասին:

Հարց. Ինչո՞ւ ենք այսչափ շատ ցաւերի ու տրտմութեան մէջ, առաւել՝ քան նախահայրերը:

Պատասխան. Առաջին պատճառը, որ ինքնըստինքեան մարդկային բնութիւնը փոփոխական է եւ ցաւաշատ, եւ եթէ Աստուած էլ է աւելացնում, ո՞վ կարող է պատմել [այդ] աղէտը, ինչպէս ասաց նախամայր Եւային՝ «Շատանալով թող շատանա՛ն քո տրտմութիւնն ու հեծեծանքները» (Ծննդ. Գ 16): Եւ որքան օրեր է աւելացնում, այնքան բազմանում են մեր ցաւերը: Եւ որքան անցնում է ժամանակը, այնքան մաշում է երկիրը, գնում դէպի ծերութիւն ու տկարանում, ինչպէս պակասում է ծեր մարդու զօրութիւնն ու շատանում են ցաւերը:

Եւ որքան մօտենում ենք վախճանին, այնքան աւելի ենք մօտենում դժոխային ցաւերին, ինչպէս որ երեկոյեան քիչ-քիչ շատանում են խաւարն ու ցուրտը:

ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ե

Հարց. Ինչպիսի՞ն էր տապանի ձեւը:

Պատասխան. Գիրքն ասում է, թէ քառանկիւնի էր, որպէսզի շուռ չգար: Ներքեւով ու վերեւով՝ վեցակողմ էր, որ վեցօրեայ արարչագործութեան նշանակն էր, քանի որ սա էլ երկրորդ արարչագործութիւնն էր. «Խորշերով կկառուցե՛ս» (Ծննդ. Զ 14), այսինքն՝ միացնելով եւ կցկցելով միմեանց, եւ

նաւթով ու կուպրով ներքեւից ու վերեւից ծեփուած, որ չճաքի:

Երկարութիւնը երեք հարիւր կանգուն էր, լայնութիւնը՝ յիսուն, բարձրութիւնը՝ երեսուն, որովհետեւ բոլոր կենդանիների սերմը կրելու համար մեծ տուն էր անհրաժեշտ:

Իսկ պակասեցնելով գործելն այն է, որ տասնհինգ կանգուն հաւասար բարձրացրեց, որպէսզի բարձրահասակ կենդանիները տեղաւորուեն, իսկ տասնհինգերորդից յետոյ մի կանգուն նեղացրեց, որ ջրերը հոսեն ներքեւ:

Տապանը նմանուեց կոթողի կամ քարաշէն եկեղեցու: Դուռը կողքից էր, որպէսզի կենդանիները հեշտութեամբ մտնեն: Ներքեւի յարկաբաժնում չորքոտանիներն էին, միջինում՝ մարդը, վերեւում՝ թռչունները:

Կանգունը հաւասար է մարդու մի գրկաչափին, ուրիշներն էլ ասում են ութ թիզ է, որով այժմ առաջնորդւում են ֆրանկները:

Ոմանք տապանը բացատրելիս[328], այն իրաւամբ կապում են մարդու հետ, որովհետեւ տապանը ողջ աշխարհի նման էր, իսկ մարդը մասն է աշխարհի, ուստի մասը պէտք է նման լինի ամբողջին: Նախ, որովհետեւ փայտը փտող չէր, եւ մարդն էլ չփտող ու անապական է, որ ակնյայտ է յարութեան մէջ անմահ լինելու հանգամանքով: Կցկցուածութեամբ [էր], որովհետեւ հանգուցուած ու կցուած են [նաեւ] մարդու ոսկորները միմեանց՝ ներսից մկաններով, դրսից՝ պատուած մաշկով: Քառանկիւն, որովհետեւ խաչաձեւ է [նաեւ] մարդը: Վեց կողմերով է, որովհետեւ մարդն էլ եռակի է որոշարկուած[329]. ունի վերեւ-ներքեւ, ետ եւ առաջ, աջ եւ ձախ: Երեք հարիւր կանգուն երկարութեամբ, որովհետեւ կրունկից մինչեւ գագաթը չափող լարը երեք անգամ շրջան է կազմում է գլխի շուրջը: Եւ յիսուն կանգուն [լայնութեամբ], որովհետեւ արգանդում մանուկը քառասուներորդ օրն է հոգի առնում, իսկ յիսուներորդ օրը՝ խաղում է: Եւ երեսուն կանգուն բարձրութեամբ, որովհետեւ մարդու տարիքը բարձր է եւ պապ է դառնում երեսուն տարեկանում:

Իսկ այն, որ պակասեցնելով էր գործած [մեր մարմնի նմանողութեամբ էր], որովհետեւ մեր մարմինն էլ սկսելով գլխից՝ թիկունքում լայնանում է, իսկ կրունկների մօտ նեղանում եւ ամբողջանալով՝ դարձեալ աւարտւում է գլխով:

Ներքնատունն [իբրեւ] փորոտիքի վերջն էր. միջնատունը՝ փորոտիքը, վերնատունը՝ ստամոքսը, իսկ կողքից էլ դուռը՝ աւելորդ աղբի համար: Կամ լեարդը ներքեւում, սիրտը մէջտեղում, թոքն [իբրեւ] թեթեւ [անդամ] վերեւում: Եւ կամ՝ ցանկութիւնը ներքեւում, ցասումը՝ մէջտեղում, միտքը [իբրեւ] թռչուն՝ վերեւում:

Եւ Քրիստոսի կողմից կառուցուած սուրբ եկեղեցին էլ հոգեւոր տապան է մեզ համար աշխարհի ծովի մէջ, որ փրկում է մեր հոգիները մեղքերի ջրերից: Այն նման է տապանին, քանի որ վեցակողմ է, ընդհանրական է եւ դուռն էլ կողքից է:

Ներքնատունը ժողովրդի տեղն է, միջնա[տունը] սարկաւագների ու դպիրների, վերինը՝ պատարագներ մատուցելու համար քահանաների բեմն է[330]: Եւ բոլորի համար կերակուրը նոյնն է՝ սուրբ Մարմինն ու Արիւնը:

Նա ժողովում է ե՛ւ գազանաբարոներին, ե՛ւ հանդարտներին[331], որ չմեղանչեն միմեանց դէմ, ըստ այդմ՝ «Եզը եւ առիւծը միասին կկերակրուեն» (Ես. Կե 25) եւ այլն:

Եւ տապանն էլ քառակողմ էր, ինչպէս քառանկիւն խաչը[332], որ դէպի իրեն է ժողովում բոլոր ազգերի եւ լեզուների երկրպագութիւնը: Եւ ինչպէս [տապանն] էր երեք հարիւր կանգուն, [այդպէս էլ] երեք հարիւր տարի էր Քրիստոսից մինչեւ Մեծ Կոստանդիանոսը[333], երբ երեւաց փրկչական խաչը եւ յիսուներորդ տարում նրա որդու՝ Կոստանդիանոսի [օրօք] երկնքում լուսափայլեց[334՝] Ձիթենեաց լեռից մինչեւ սուրբ Գողգոթայ: Եւ երեսուն [տարի] մինչեւ Մեծ Թէոդոսն է[335], որ վերացրեց կուռքերի բոլոր մեհեանները, եւ սուրբ Խաչը բարձրացաւ գմբեթածեւ սուրբ եկեղեցիների գլուխը:

Հարց. Քանի՞ օր մնացին տապանում:

Պատասխան. Ամբողջ մէկ տարի, որովհետեւ Գիրքն ասում է, թէ՝ հարիւր յիսուն օր ջրերը բարձրացան, հարիւր յիսուն օր էլ իջան, որ լինում է տասը ամիս, իսկ քառասուն օր յետոյ արձակեց ագռաւին եւ երեք եօթ օրերից յետոյ աղաւնուն, որ կլինի քսանմէկ, հինգ օր էլ աւելացրած՝ կլինի մէկ տարի:

Եւ ասում է եբրայեցւոց երկրորդ ամսում էր, որ իարն է, եւ Նոյի եօթներորդ ամիսն էր, որ թշրին է: Եւ որ ամսում, որ մտան, միւս տարի նոյն ամսում էլ դուրս եկան տապանից:

Հարց. Տապանում կերակուր կերա՞ն, թէ՞ ոչ:

Պատասխան. Չկերան, թէեւ հաւաքել էր: Չկերան, որովհետեւ մնացին Աստծոյ շնորհով, ինչպէս մանուկն է ապրում մօր արգանդում:

Հարց. Ինչպէ՞ս էր լուսաւորւում տապանը:

Պատասխան. Ոմանք ասում են ապակուց պատրաստուած ձեղունից: Այլք [ասում են]՝ կայծքարով կամ բիւրեղներով: Ըստ ոմանց էլ՝ նախահայր Ադամի նշխարներով, որովհետեւ պատրաստուած լինելով Աստծոյ ձեռքով՝ լոյս էին տալիս նրանց: Իսկ եթէ չես հաւատում, տե՛ս փտած փայտը գիշերը:

Իսկ մեր տապանում լուսատու աչքը միտքն է:

Հարց. Ագռաւն ի՞նչ եղաւ:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ խեղդուեց ջրում, եւ զուգակիցը յղիացել էր նրանից կամ [տարուած էր] ինչ-որ կենդանու լեշով:

Կամ էլ ասում են Ներսէս անունով մի արհեստաւոր տապանի վերին կողմում իր համար տուն էր պատրաստել, եւ քանի որ այն Աստծոյ հրամանով չէր, այնտեղ սատկեց, եւ ագռաւն [այնտեղ] նրա դին էր ուտում:

Հարց. Տապանը ո՞ր աշխարհում է գտնւում:

Պատասխան. Ասում են, թէ գոյութիւն ունեն համանուն Մասիս եւ Արարատ, ինչպէս Կորդուաց լեռը Պաղէստինում եւ Գամիրքում[336]:

Սակայն ճշմարտութիւնը յայտնապէս մեր Մասիսն է մատնացոյց անում:

Նախ, որովհետեւ սա է Այրարատ կոչւում[337]:

Երկրորդ, որովհետեւ ոչ ոք չի կարողանում բարձրանալ եւ տեսնել:

Երրորդ, սուրբ Յակոբ Մծբնեցի հայրապետի նշանը Արկուռի գիւղում, որտեղ այգի տնկեց եւ Նախիջեւան քաղաքը, որտեղ ինքը՝ Նոյը հանգչում է տապանի մէջ[338]:

Չորրորդ յայտնի է, որ Հայոց աշխարհն իր երկու գետերով եւ տապանով շատերին է ետ թողնում: Նախ՝ որովհետեւ իմաստութիւնն են մատնանշում, քանի որ դրանք տեսնելով՝ յիշում ենք Աստծոյ արարչագործութիւնը: Երկրորդ՝ երեք բարեխօս ունենք Սուրբ Երրորդութեան առջեւ, եւ ինչպէս տապանով Հայր Աստուած պահպանեց Նոյի տունը, այդպէս էլ կպահպանի մեզ:

Իսկ երկու գետերը Բանն ու Սուրբ Հոգին են, որ բխում են Հօրից, որովհետեւ հրաւէրք են տալիս մեզ՝ դէպ այն ակունքը, որտեղից բխում են:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՄՈՐԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Զ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ ասում են. «Միսն արեան շնչով մի՛ կերէք» (Բ օր. ԺԲ 24):

Պատասխան. Հրամայում է կենդանուն մորթելուց յետոյ արիւնն ու շունչը հանել, ապա ուտել:

Եւ սա բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ արիւնը եւ շունչը կենդանութիւն են, որ Աստծոյ բաժինն է, ուստի արիւնը չի կարելի ուտել:

Երկրորդ՝ արիւնը եւ շունչը հոգու նշաններ են, իսկ հոգին անմահ է:

Երրորդ՝ արիւնը կենդանի է եւ կենդանի խօսում է, ինչպէս Աբէլինը, ուստի չի կարելի ուտել:

Չորրորդ՝ յարութեան ժամանակ պահանջելու է մարդու ողջ արիւնը եւ հաւաքելու է, ուստի այժմ չի կարելի ուտել:

Հինգերորդ՝ մարդը եւ անասունը արեամբ ազգակից են, ուստի մարդուն չի թոյլատրւում ուտել իր հարազատին:

Վեցերորդ՝ հսկաները անխտիր ուտում եմ թէ՛ մեռելներին եւ թէ՛ խեղդուածներին, ուստի նրանցից տարբերուելու համար ասում է՝ մի՛ կերէք արիւնը շնչով:

Եօթներորդ՝ արիւնը հուրն է, իսկ շունչը՝ օդը. պէտք է հանել այս երկու տարրերը, իսկ մնացածը ջուրը եւ հողն են, որոնք ուտելի են:

Ութերորդ՝ հուրը եւ օդը առաւել են արեան մէջ, որովհետեւ ստեղծարար են, որ յայտնի է նրանց միաւորման խառնուրդից, որովհետեւ հուրը միախառնում է, ջուրը եւ հողը միախառնւում են, իսկ օդը սնուցում է, ուստի չենք ուտում ստեղծողին եւ սնուցողին:

Իններորդ՝ արիւնը եւ շունչը մեր գոյաւորման սկիզբն են, որովհետեւ արիւնը մտնելով սաղմի մէջ, ջերմ օդով խառնում է սառը եւ խոնաւը, եւ մարմինն աճում ու սնւում է: [Սա] նոյն կերպ է դրսեւորւում թէ՛ մեր եւ թէ՛ կենդանիների մօտ, ուստի չենք կարող ուտել մեր գոյաւորման սկիզբը:

Տասներորդ՝ արիւնը ուտում են հումակեր գազանները, ուստի մենք չպէտք է լինենք անողորմ ու գազանասիրտ, [որի պատճառով] հրամայում է արիւնը հանել, ապա անզգայ մարմինը եփել եւ ուտել: Իսկ այն, որ ասում է՝ «ուտելու ես բանջարի նման» (Ծնն. Բ 25), [նշանակում է] նախ այն, որ ինչպէս բանջարն ենք քաղում եւ ապա ուտում, այդպէս էլ կենդանուն ենք մորթում, յետոյ ուտում: Ապա ինչպէս բանջարն ենք ընտրելով ուտում, այսինքն՝ վնասակարը, դառը, ժանտահոտը մի կողմ ձգում եւ ուտում չորրորդ մասը, այդպէս էլ կենդանիների մէջ սուրբն ու անսուրբն ենք ընտրում: Նախ, [նրանցից ոմանք] նշանազուրկ են, որոնց մերժում է օրէնքը, այսինքն՝ նրանք, որ չունեն կճղակներ, չեն որոճում եւ այլն, անսուրբ են: Երկրորդ, եթէ մսակեր է: Երրորդ՝ եթէ վնասակար է, մերժում ենք: Իսկ չորրորդ մասը, որ սրանցից դուրս է, ուտում ենք:

Այսպէս էլ սուրբ կենդանիների չորս մասերից մէկն ենք ուտում:

Նախ՝ հանում ենք արիւնն ու շունչը: Երկրորդ՝ աւելորդ նիւթերը եւ բուրդն ենք դեն գցում: Երրորդ՝ կարծր մասերը, ինչպէս ոսկորը կամ եղջիւրն է, չենք ուտում: Ուտում ենք չորրորդ մասը՝ փափուկ միսը:

Հարց. Ինչո՞ւ կնոջ մորթածը չեն ուտում:

Պատասխան. Որովհետեւ արիւնն ու շունչը արական են, ինչպէս ցոյց տրուեց, որի պատճառով էլ այն տղամարդն է հանում, եւ եթէ կնոջը արիւն չի տրուել, ինչպէ՞ս հանի:

Հարց. Ինչո՞ւ այլակրօնի մորթածն էլ չի կարելի ուտել:

Պատասխան. Նոյն այն պատճառով, որ կնոջ մորթածը չի կարելի ուտել:

Ու նաեւ այլակրօնը իր հոգին սպանել է մեղքով, իսկ մեռեալի մորթածը չի կարելի ուտել, ինչպէս որ գահավիժածին կամ կարկտահարուածին չի կարելի ուտել:

Հարց. Ինչո՞ւ քահանայի մորթածը չեն ուտում:

Պատասխան. Նախ, որովհետեւ քահանան արեան բարեխօս է եւ ոչ թէ արիւնը հեղող:

Երկրորդ՝ որովհետեւ հին օրէնքով քահանաներն էին մորթում, ուստի պէտք է տարբերուել նրանցից:

Երրորդ՝ որովհետեւ մատուցում է անարիւն պատարագ, որ հոգեւոր է եւ ճշմարիտ:

Հարց. Ինչո՞ւ ձուկը չենք մորթում:

Պատասխան. Ձկան մորթելը ջրից հանելն է, որովհետեւ ջրային շնչառութիւն ունի եւ ոչ թէ օդի:

Եւ ինչպէս այլասեռ են ցամաքայինները եւ ջրայինները, այլատեսակ

են նաեւ կենդանութեամբ ու տարբեր մորթելու [եղանակներով]:

Իսկ մորթելու մասին մի այլ քննութիւն կգտնես առաջիկայում, քառասունհինգերորդ պրակում:

ԱՇՏԱՐԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ է

Հարց. Աշտարակը ի՞նչ մտադրութեամբ էին կառուցում:

Պատասխան. Նախ, որովհետեւ ատում էին Աստծուն եւ վախենում պատժից ու հակառակւում էին Աստծուն:

Եւ ինչպէս եօթն են ձայնական միջոցները, որոնք են՝ թոքը, խռչափողը, մակալեզուն, բերանը, լեզուն, ատամները, շրթունքները, որոնք միաւորւում են խօսքի մէջ, այդպէս էլ եօթանասուն տանուտէրեր միաւորուեցին չար [խորհրդի մէջ]: Եւ ասացին. «Ջրհեղեղի օրինակն ունենք եւ երկիւղում ենք, որ պատուհասի մեզ»: Եւ փնտրեցին դրախտը, որ այնտեղ փրկուեն՝ չգտան, որովհետեւ ծովն ու շամանդաղը ծածկել էին: Եւ փնտրեցին տապանը, այն չգտան, որովհետեւ թոյլատրուած չէ, որ մարդը տեսնի իր մօր արգանդը: Եւ որպէսզի մարդիկ նրա պատճառով մեղք չգործէին, չէին կարող տեսնել տապանը:

Եւ ասացին՝ «Բարձր աշտարակ շինենք, որ ջրհեղեղը մեզ չկործանի» (Ծննդ. ԺԱ 4): Եւ թրծած աղիւսը քարի փոխարէն էր, կուպրը՝ շաղախի: Թրծուած աղիւսը հրի դէմ էր, կուպրը՝ ջրի: Եւ սկսեցին կառուցել՝ հաստահիմք, լայն, աստիճանաձեւ, [կրկնակի] սանդուղքներով: Եւ բարձրացրին տասնամսեայ վեր բարձրացող ու վայր իջնող ճանապարհ[339], այսինքն՝ այնպէս, ինչպէս ջուրը հարիւր յիսուն օր բարձրացաւ եւ հարիւր յիսուն օր էլ իջաւ: Ոմանք ասում են, թէ բարձրութիւնը երեսուն ստադիոն էր, լայնութիւնը՝ քառասունչորս հազար շրջանաձեւ քայլ, այսինքն՝ քառասունչորս մղոն ձգուածութեամբ: Իսկ պարսպի հաստութիւնը իննսուն կանգուն էր: Եւ երկու պատերի միջեւ յիսուն կանգուն լայնութիւն էր:

Եւ քառասուն տարի ամառ ու ձմեռ բարեխառն վայրում կառուցեցին, մինչեւ հասան օդի գոլորշուց թանձրացած եւ արեւից ջերմացած որոտացող [շերտին]:

Եւ գործի վերակացու իշխաններն էին Սեմի ազգից Լամսուրը, Յաբեթի [ազգից]՝ Հայկը, Քամի [ազգից]՝ Բէլը՝ նրանց որսորդը[340]:

Աշտարակի կառուցումն սկսեցին հինգ հարիւր եւ քսանհինգ տարի ջրհեղեղից յետոյ՝ Բաբելոն աշխարհի Քաղանէ դաշտում:

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եւ ասաց Աստուած. «Եկէ՛ք, իջնենք եւ խառնենք նրանց լեզուները» (Ծննդ. ԺԱ 7): Հայրը Որդուն եւ Սուրբ Հոգուն ասաց, որոնցով մարդկանց դարձրեց մի ազգ եւ մի լեզու:

Իսկ խառնելը ոչ թէ խառնակելն է ասում[341], որ անհաղորդ լինէին մէկը միւսի լեզուին, այլ բաժանելով խառնելը:

Պէտք է իմանալ եւ այն, որ երբ լեզուները բաժանուեցին՝ նախադասու-

թիւններ, բառեր եւ անուններ խառնուած գտան տարբեր լեզուներում, ինչպէս՝ «գաւազան»[342], «աւազան», «սապոն», «ամէն» եւ այլն:

Եւ խառնելն այն էր, որ մի ընդհանուր լեզուից քաղդէերէնից բաժանուեցին ու եղան զանազան, որովհետեւ փափուկ է հելլենացին, սաստիկ՝ հռօմայեցին, սպառնական՝ հոնին, ճըճուօղական՝ հնդիկը, պերճական՝ պարսիկը, համեղական՝ հայը[343], որն ամբողջապէս կարող է ճշտօրէն ուսանել ցանկացած լեզու, մինչդեռ օտարները հայերէնը սովորում են թիւր ու սխալ, որովհետեւ նրանց լեզուն մասնական է:

Լեզուների խառնելը նաեւ այն էր, որ պատուհասին բարութիւն խառնեց, որովհետեւ թէպէտ լեզուների բաժանումը պատուհաս է թուում, սակայն օգտակար եղաւ:

Նախ, լեզուների գեղեցկութեան համար, որովհետեւ ինչպէս գոյնն է գոյնով պայծառանում եւ արուեստը՝ արուեստով, այդպէս էլ լեզուն լեզուով է գեղեցկանում խօսքի մէջ:

Դարձեալ անհրաժեշտ է խօսքի իմաստը ճիշտ հասկանալու համար, որովհետեւ եթէ բոլոր լեզուներն իմանաս, ոչ մի բառի համար դժուարութիւն չես կրի:

Եւ այն էլ պէտք է իմանալ, որ լեզու է կոչւում ե՛ւ խօսքի միջոցը, ե՛ւ խօսելու կարողութիւնը, ինչպէս այն, որ զգայութիւն ենք կոչում եւ զգալը, եւ զգայարանները: Իսկ միտք կոչւում է մտածածը եւ արտաբերածը:

Եւ լեզուն ազգերի [բաժանման] սահման է, ինչպէս ասում է մարգարէն. «Երբ Բարձրեալը բաժանեց բոլոր ազգերին, դրեց հեթանոսների սահմանները», այսինքն՝ զանազան լեզուների՝ ըստ «Աստծոյ հրեշտակների թուի», այսինքն՝ ըստ ազգապետների եօթանասուն թուի, որոնց հրեշտակ է կոչում՝ ոչ թէ առաքինութեան համար, այլ որովհետեւ մեզ համար եղան Աստծոյ իմաստութեան պատգամաբերներ եւ թարգմաններ՝ գերազանց տիրապետելով լեզուներին:

Եւ սահման է կոչւում լեզուն, որովհետեւ բաժանում է ազգերն ու ազգութիւնները, ինչպէս որ պարսպով ու նշանով են սահման դնում ու անդաստանը բաժանում: Եւ դարձեալ ինչպէս սահմանն է այլ ազգի [բաժանման] նշան, այդպէս էլ լեզուն է իւրաքանչիւր ազգը [առանձնացնող նշան]:

Եւ ինչպէս անփոփոխելի է սահմանը՝ ասենք մարդու, ձիու եւ այլն, այդպէս էլ ոչ ոք՝ ո՛չ բռնաւոր, ո՛չ իշխան, չի կարող փոխել լեզուի սահմանը, այլ միայն Աստուած, որ տալիս է այն: Իսկ երբ փոփոխւում է, այսինքն՝ հանդերձեալում, այդ ժամանակ խօսում ենք հրեշտակների լեզուով եւ ոչ թէ Ադամի, ինչպէս ասում են ոմանք: Իսկ թէ ո՞րն է Ադամի լեզուն, ապա ասենք, որ քաղդէացունն է, որ արաբն է, որովհետեւ շարունակեց մնալ եբեր ու չխառնուեց:

Իսկ թէ ինչպէ՞ս բաժանուեցին, ապա վարդապետներն ասում են, որ հողմ փչեց, որից աշտարակը ցաքուցրիւ եղաւ, որպէսզի աւերելով՝ չվնասի մարդկանց:

Իսկ հողմը բուրում էր դրախտի անուշ բուրմունքով: Եւ [մարդիկ] իմանալի տեսիլք տեսան, իմանալի լուր լսեցին եւ նրա պատճառով մոռացան առաջին [լեզուն] եւ ինչպէս քնից արթնացած, չէին հասկանում միմեանց լեզուները:

Եւ այդտեղ հողմի տեսքով եկած Հոգին՝ մէկը եօթանասուներկու [լեզուների] բաժանեց եւ առաքեալներով դարձեալ եօթանասուներկուսին ի մի բերեց:

Եւ սա բազմաթիւ բարիքների պատճառ դարձաւ: Նախ, որ համոզուեցին, որ անյաղթ եւ ամենայաղթ է Աստծոյ զօրութիւնը: Երկրորդ՝ որպէսզի միաբանուելով՝ առանց այլեւս զղջալու չարիք չգործեն: Եւ երրորդ՝ որպէսզի մի աշտարակի պատճառով նոյն տեղում չմնան եւ աշխարհը աւերակի չվերածեն:

Ուստի օրհնութեամբ ցրեց նրանց երկրի վրայ, որպէսզի աճեն, բազմանան, լցնեն երկիրը ծնունդներով ու շինութիւններով, բարեգործութիւններով՝ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան, Ամէն:

ԵՒ ՍՐԱՆՔ ԵՆ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԼԵԶՈՒՆԵՐԸ

Եբրայեցիք, ասորիները:

Քաղդէացիք: Մարիանոսները:

Աղուանները: Բուսանացիները:

Տաճիկները: Ռուսները: Բուլղարները:

Պեծենեկները: Մունդերը: Ռիկոները:

Միաչքանիները: Թզուկները: Եթէովպացիները:

Մազորոտները: Գարգանացիները:

Արաբները: Լերդաբացիկները:

Քետացիները: Քանանացիները:

Փերեզացիները: Խեւացիները:

Ամուրիացիները: Գերգեսացիները:

Եմանացիները: Եբուսացիները:

Սամարացիները: Փիւնիկները:

Կիլիկեցիները: Մարերը: Գամիրները:

Հայերը: Տայգերեցիները: Վրացիները:

Սկիւթացիները: Կաղքացիները: Յոյները:

Ղեւոնացիները: Վեսդիացիները:

Գաղատացիները: Պանփիւլացիները:

Աքայեցիները: Տուրացիները:

Մուսասները: Նուսասները:

Գարգացիները: Սարմատները:

Գեմոնացիները: Պեմոնացիները:

Սպանդիացիները: Տիկիացիները:

Դաղմատները: Լամիմանացիները:

Ուղգիրացիները: Եղգոնացիները:

Կրէտացիները: Բուրաստանցիները:

Տարսացիները: Կիւրենացիները:

Մոտամնացիները: Դէտուղացիները:

Ղեւտացիները: Ղափիրացիները:

Մաղիացիները: Դամատրանները, որ բերդացիներն են:

Մայիմոնները: Հնդիկները: Եգիպտացիները: Հելլադացիները:

Ուղգարացիները: Աղգանացիները:

Իսկ որ գրականութիւն ունի եւ գիր է գործածում, տասներկու ազգ են, դրանք են՝

Եբրայեցիները: Քաղդէացիները:

Ասորիները: Պարսիկները:

Մարերը: Հնդիկները: Փիւնիկները:

Հռօմէացիները, որ իսպանացիներն են:

Իսկ ոմանք արաբներին ու մակեդոնացիներին եբրայեցի են համարում, ոմանք՝ ոչ:

Իսկ վրացիներն ու աղուաններն էլ կատարեալ գիր չունեն, այլ վերցրել են հայերից, ինչպէս ասորիները եւ իսմայելցիները՝ եբրայեցիներից[344]:

Եւ թուում է, թէ մարերն աւելորդ են յիշատակուած:

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՁԱՆԱՁԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Այսպիսինն է լեզուների գեղեցկախօսութիւնը.

փափուկ է հելլենը,

սաստիկ՝ հռօմայեցին,

սառնական՝ հոնին,

աղաչական՝ ասորին,

պերճական՝ պարսիկը,

գեղազան՝ աղուանը,

ծաղրական՝ մունդը[345],

խափարածայն՝ եգիպտացին,

Ճռուողող՝ հնդիկը,

համեղական հայը, որ կարող է բոլոր լեզուները իւրացնել ու խօսել, իսկ միւսները՝ ոչ, ինչպէս ասուեց վերը:

Հարց. Երբ լեզուները բաժանուեցին, ինչպէ՞ս էին կարդում առաջին գիրը:

Պատասխան. Կարդում էին եբրայական լեզուով, որ պահպանել էր առաջին [լեզուն], ինչպէս ասում է մեր Լուսաւորիչը եւ ինչպէս ասում են՝ ամէն մարդ կարծում էր, թէ ինքն է ճիշտ եւ ինքն է առաջին լեզու ունեցողը:

Եւ մինչ գրերն առաջ կբերէին եւ սկսեցին փորձել, դեռ ոչ ոք չէր կարողանում կարդալ, բացի եբրայեցուց, որի պատճառով կոչւում է եբեր, այսինքն թէ՝ «Առաջին լեզուն նա բերեց»:

Ուրիշներն էլ ասում են, թէ այն գետը, որի ափին նա բնակուել էր, փայտ էր բերում, այնտեղից կոչուեց եբեր:

ՆԱԽԱՀԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ
Պրակ Ը

Ադամ [նշանակում է] «երկիր»: Սէթ՝ «ջրարբ» կամ «չարի մոռացում»:

Ենովս՝ «ընտրեալ մարդ»:

Կայնան՝ «ընտրեալ ստացուած, օրհնեալ Աստուած»:

Յարեդ՝ «Աստծոյ վերհայեցողութիւն»:

Ենովք՝ «շնորհ»:

Մաթուսաղա՝ «առաքում»:

Ղամեք՝ «տառապանք»:

Նոյ՝ «հանգիստ»: Սեմ՝ «կատարեալ»:

Յաբեթ՝ «գեղեցկութիւն»:

Քամ՝ «իշխող»[346]:

Քանան՝ «դառնացող»:

ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Ադամինը՝ Եւա: Սէթինը՝ Ազերա:

Ենովսինը՝ Նուենա:

Կայնանինը՝ Մաղաղեդա:

Մաղաղիէլինը՝ Դինա:

Յարեդինը՝ Բառաքա:

Ենովքինը՝ Յադներա:

Մաթուսաղայինը՝ Յեդնա:

Ղամեքինը՝ Բեդիա:

Նոյինը՝ Զարա:

Սեմինը՝ Գեզեկ Ալիփաթա:

Արփաքսաթինը՝ Ռաբուիա:

Սաղայինը՝ Սուքա:

Եբերինը՝ Զուրա:

Փաղեկինը՝ Ղուբնա:

Ռագաւայինը՝ Սուրա:

Սերուքինը՝ Մելքա:

Նաքովրինը՝ Յեսքա:

Թարայինը՝ Յեդնա:

Աբրահամինը՝ Սառա:

Իսահակինը՝ Ռեբեկա:

Յակոբինը՝ Ռաքէլ եւ Լիա:

ՉՈՐՍ ԿԱՆԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Իսկ չորս կանայք, որ օրհնուելով խառնուեցին Իսրայէլի ազգի մէջ՝

Թամարը, որ ծնեց Փարէսին՝ Յուդայից.

Ռահաբը, որ ծնեց Բոյոսին՝ Սաղմանից.

Հռութը, որ ծնեց Օվբէթին՝ Բոյոսից.

Բերսաբէն, որ ծնեց Սողոմոնին՝ Դաւթից:

ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ Թ

Հարց. Մելքիսեդեկը որտեղի՞ց է:

Պատասխան. Հօր անունը Մելքի էր, մօրը Սաղա, քաղաքինը՝ Սաղիմ:

Մանուկ հասակից նուիրուեց կուռքերին, իսկ Աստծոյ հրեշտակը յափշտակելով նրան՝ սնեց անապատում մինչեւ չափահաս դառնալը: Ապա Թաբօր լեռան վրայ ամպը խոնարհուեց եւ ձեռքը կարկառելով՝ ձեռնադրեց նրան՝ ասելով. «Այս անհայր, անմայր Մելքիսեդեկն Աստծոյ Որդու նման անհամրելի ազգատոհմից», որովհետեւ երեխայ հասակում նրան ոչ ոք չէր ճանաչում եւ ոչ ոքի չգիտէր, որովհետեւ քանանացի էր եւ բարքով նման չէր նրանց: Բնակւում էր Գողգոթայի ներքեւում, ուր Ադամի գերեզմանն էր: Իր ձեռքով ցանում էր, [խաղողի] որթ էր մշակում, եւ բաւական վաստակում: Երբ այդտեղ եկաւ Աբրահամը, ջերմութեամբ ընդառաջ դուրս եկաւ նրան՝ բաղարջ հացով ու գինով՝ նման տէրունական խորհրդին: Այդտեղ օրհնեց Աբրահամին ու աւարից տասանորդ վերցրեց[347]:

Հարց. Ինչո՞ւ է Եփրեմը Կցուրդների գրքում ասում. «Մելքիսեդեկ, որ նոյն ինքը՝ Սեմն է»[348]:

Պատասխան. Սա ոչ երկանուն է, ոչ էլ այլ ինչ:

Իրին[ե]ոսը այսպէս է մեկնաբանում, թէեւ դժուար է հասկանալ. Նոյը օրհնեց Սեմին, Սեմի որդին չունէր իր նմանը, որ օրհնէր նրան: Աբրահամը որդի էր Սեմի տնից՝ արժանի օրհնութեան, սակայն Սեմը կենդանի չէր, որ օրհնէր նրան: Թարան էլ օրհնող չէր: Ուստի Մելքիսեդեկը նրան ընդառաջ դուրս գալով՝ լրացրեց նրա գործը եւ օրհնելով Աբրահամին՝ Սեմ կոչուեց[349]:

ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ԵՒ ԱԲՐԱՀԱՄԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ո՞րն է Մելքիսեդեկի եւ Աբրահամի քահանայութեան զանազանութիւնը:

Պատասխան. Երեք շնորհներով հաւասար են Մելքիսեդեկը եւ Աբրահամը, այսինքն՝ քահանայութեամբ, թագաւորութեամբ եւ մարգարէութեամբ, որովհետեւ երբ Աբրահամը սեղան կանգնեցրեց, դրանով քահանայութիւնը ցոյց տուեց: Երբ կոտորեց Սոդոմ Գոմորի թագաւորներին, ցոյց տուեց թագաւորների թագաւոր լինելը: Եւ երբ Աստուած խօսեց նրա հետ, մարգարէ լինելը ցոյց տուեց:

Այսպէս էլ Մելքիսեդեկն էր Սաղիմի թագաւոր, ինչը յայտնի է նաեւ անունից, որովհետեւ «մելքի» նշանակում է թագաւոր: Իսկ քահանայ [լինելը երեւաց], երբ հաց ու գինին պատարագ մատուցեց, իսկ մարգարէ [լինելը], երբ օրհնեց Աբրահամին:

Տարբերւում են զոհաբերութեամբ:

Նախ՝ որ Մելքիսեդեկը հաց ու գինի պատարագեց, որ չունէր Աբրահամը:

Երկրորդ՝ Աբրահամը յետոյ կենդանի զոհաբերեց, որ խորհրդանշում էր Ահարօնի ժամանակաւոր պատարագը, մինչդեռ Մելքիսեդեկինը խորհրդանշում էր Քրիստոսի յաւիտենական պատարագը, որովհետեւ հացով ու գինով էր:

Երրորդ՝ Աբրահամինը ուտւում էր, ընդ որում ուտւում էր շնչաւորն ու արիւնաւորը, մինչդեռ Մելքիսեդեկինը խղճի մտօք, որ մշտապէս անշունչ ու անարիւն [զոհաբերութիւն] էր:

Չորրորդ՝ Աբրահամին ծնեց սաղմով ու ախտերով, իսկ Մելքիսեդեկին ծնեց երկրից, սնեց երկնքում, իսկ առաւել ճշմարիտը իջած էր երկնքից ու ծնուած Կոյսից:

Հինգերորդ՝ Մելքիսեդեկին նուիրեց մարդկանց, ինչպէս Քրիստոսին եւ առաքեալներին՝ մեզ: Իսկ Աբրահամին՝ ոչ:

Վեցերորդ՝ Մելքիսեդեկը պատարագը մատուցեց եւ տասանորդ ստացաւ, ինչպէս Քրիստոսն է շնորհներ պարգեւում հաւատացեալներին եւ ստանում տասնեակ կատարեալ ու բարի գործեր կամ տասնաբանեայ օրէնքները՝ տասը զգայարանների [միջոցով]:

Եօթներորդ՝ Մելքիսեդեկն ինքը մատուցեց պատարագը քաղցածներին եւ ծարաւներին, ինչպէս որ Քրիստոսը ոչ թէ հրեշտակների կամ մարդկանց միջնորդութեամբ, այլ ինքն իսկ բաշխեց իր մարմինն ու արիւնը քաղցած ու ծարաւած մարդկանց:

Ութերորդ՝ ինչպէս Աբրահամը ճաշակելով Մելքիսեդեկի զոհաբերութիւնից՝ անհաղորդ մնաց Սոդոմի ինչքերին, այդպէս էլ նրանք, ովքեր հաղորդւում են Քրիստոսի մարմնին, չեն մօտենում մարմնական անթլփատութեան զանազան ախտերին ու դիւական զոհերին:

Իններորդ՝ Մելքիսեդեկի քահանայութիւնը եւ պատարագը առաջինն էր ու երկնաւոր էր, իսկ Աբրահամինը նրանից յետոյ եւ երկրաւոր, որի պատճառով մարգարէն ասում է. «Ճշմարտութիւնը աճեց երկրից» (Սղմ. ՁԴ 12), որն Աբրահամն է. «Արդարութիւնը երեւաց երկնքից» (Սղմ. ՁԴ 12), որը Մելքիսեդեկն

է, ըստ այդմ՝ «Քահանայ է,- ասում է,- Աստծոյ Բարձրեալի» (Եբր. է 1):

Տասներորդ՝ Մելքիսեդեկը ոչ միայն պատարագով, այլեւ անուամբ ու տեղով օրինակն էր Քրիստոսի, որովհետեւ «մելքի» նշանակում է թագաւոր[350], «սեդեկ»՝ արդար, «սաղիմ»՝ խաղաղութիւն: Եւ Տէրն էլ մեր Յիսուս Քրիստոս թագաւոր է յաւիտենական, որ արդարութիւն բերեց մեզ եւ հաշտեցրեց Աստծուն մարդկանց հետ:

Սրանք են Մելքիսեդեկի եւ Աբրահամի քահանայութեան զանազանութիւնները:

ԴՈՒ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՆ ԵՍ ԸՍՏ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ՕՐԻՆԱԿԻ (Եբր. է 17)

Մելքիսեդեկի եւ Քրիստոսի համեմատութիւններն օրինակներով

Նախ, ինչպէս Մելքիսեդեկն էր Քանանի յանցաւոր ու անիծեալ ազգից, այդպէս էլ մեր Տէրը մարմին առաւ դատապարտուած մարդկային ազգից, ըստ այդմ՝ «Մեր պատճառով անէծք կոչուեց» (Գաղ. Գ 13):

Երկրորդ, Մելքիսեդեկին առաջին քահանայ է վկայում Գիրքն ըստ Մովսէսի. «Քահանայ էր Աստծոյ Բարձրեալի» (Եբր. է 1): Իսկ Պօղոսն ասում է. «Մեր անդրանիկը եւ առաջին քահանայապետը մտաւ վարագոյրի ներքին կողմից» (Եբր. Զ 19):

Երրորդ՝ Մելքիսեդեկը քահանայ էր ոչ թէ մարմնական իւղով օծուած լինելու համար, ինչպէս ուրիշներ, այլ անմիջաբար՝ Հոգու շնորհներով: Եւ Քրիստոսն էլ օծուած էր ոչ թէ նիւթական իւղով օծուելու պատճառով, այլ օծուած է ասւում, համաձայն Բանի հետ միաւորութեան, ըստ այդմ՝ «Այդ պատճառով էլ օծել է քեզ Աստուած, Աստուածը քո» (Եբր. Ա 9):

Չորրորդ, ըստ անուան, որովհետեւ «մելքի» [նշանակում է] թագաւոր, եւ թագաւորն էր Սաղիմի: Եւ Քրիստոս էլ յաւիտենական թագաւոր է, ըստ հրեշտակի՝ «Նրա թագաւորութիւնը վախճան չունի» (Ղուկ. Ա 33):

Հինգերորդ՝ ինչպէս նա է ասւում «սեդեկ», այսինքն՝ արդար, այդպէս էլ Տիրոջ մասին մարգարէն ասում է. «Քո իրաւունքը արքային տուր եւ քո արդարութիւնը՝ թագաւորի որդուն» (Սղմ. ՀԱ 2): Եւ կամ՝ «Նրա ձեռքի գործերը արդարութիւնն ու իրաւունքն են» (Սղմ. ճԺ 7):

Այս է, որ վերականգնեց մարդկային ցեղը սատանայից զրկանքներ կրելուց յետոյ:

Վեցերորդ՝ ասում է «Սաղիմ», որ Երուսաղէմն է եւ նշանակում է «խաղաղութիւն»: Եւ Քրիստոսն էլ, որ թագաւորն էր Երուսաղէմի, նոյն խաղաղութիւնը տուեց առաքեալներին, որի մասին ծնունդի ժամանակ հրեշտակները երգում էին:

Եօթներորդ՝ Մելքիսեդեկը անհայր ու անմայր համարուեց մարդկանց մէջ: Եւ Տէրն էլ մեր անմայր է երկնքում, անհայր երկրում. «Ո՞վ կպատմի նրա ազգատոհմի մասին» (Ես. ՕԳ 8),- ասում է Եսայի մարգարէն:

Ութերորդ՝ Մելքիսեդեկը հացը եւ գինին պատարագ մատուցեց Աբրահամին: Տէրն էլ մեր նոյնով տուեց իր փրկչական մարմինն ու արիւնը:

Իններորդ՝ ոչ թէ ծառայի միջոցով, այլ ինքը ընդառաջ եկաւ Աբրահամին եւ մատուցեց: Եւ Տէրն էլ ոչ թէ հրեշտակների, սերովբէների, քերովբէների, ոչ էլ մարդկանց մէջից ընտրեալների՝ նահապետների, մարգարէների, առաքեալների կամ մարտիրոսների միջոցով, այլ ինքը իջնելով մեզ մօտ՝ իրենով իրագործեց մեր փրկութիւնը:

Տասներորդ՝ ինչպէս Մելքիսեդեկը մատուցեց պատարագ եւ տասանորդ ստացաւ Աբրահամից, այդպէս էլ մեր Տէրը հաւատացեալներին տալով իր կենարար մարմինն ու արիւնը՝ նրանցից պահանջում է տասնեակ գործեր, այսինքն՝ կատարեալ եւ տասնաբանեայ օրէնքների կատարումը, որոնք պահպանում են տասը զգայարանների մաքրութիւնը, ինչպէս ասուել է վերը:

Քրիստոսի եւ Մելքիսեդեկի մասին ասուած է եւ այլ տեղում՝ Աստուածաբանութեան գրքի Հինգերորդ գլխի Քսաներորդ համարում: Սակայն սա այլ եղանակով է, նա՝ այլ:

ՂՈՎՏԻ ԵՒ ՍՈԴՈՄԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ժ

Հարց. Ինչո՞ւ Ղովտը Սոդոմում բնակուեց:

Պատասխան. Չորս պատճառով:

Նախ՝ որպէսզի Ղովտի պատճառով Սոդոմը փրկուի գերութիւնից:

Երկրորդ՝ որպէսզի տեսնելով բարի օրինակը եւ չօգտուելը՝ առաւել եւս տանջուեն:

Երրորդ՝ որպէսզի Ղովտի առաքինութիւնն առաւել երեւայ չարերի մէջ, ըստ այդմ՝ «Օրըստօրէ նրա սուրբ հոգին աւելի էր տանջւում նրանց անօրէն արարքներից», որովհետեւ մեղքերի պատճառով ինքն էլ էր տանջւում եւ աւելի զօրանում բարու մէջ:

Չորրորդ՝ որ երբ Ղովտը փրկուէր Սոդոմի մէջ, աւելի յայտնի կդառնար Աստծոյ զօրութիւնը: Այսպէս էլ, երբ բարեպաշտներն են բնակւում անհաւատների մէջ, նախ՝ նրանց աղօթքը պահպանում է անհաւատներին: Երկրորդ՝ եթէ չօգտուեն չարերը, առաւել եւս պատժուեն: Երրորդ՝ որպէսզի բարեպաշտների հաւատը առաւել զօրանայ: Չորրորդ՝ բարութիւնը ամբողջութեամբ պահպանելով չարերի մէջ՝ աւելի ակնյայտ դառնայ Աստծոյ զօրութիւնն ու արդարութիւնը:

Հարց. Ինչո՞ւ Սոդոմը հրով այրուեց:

Պատասխան. Նախ, որովհետեւ հրեղէններին ցանկացան:

Երկրորդ՝ արտասովոր եւ բնութեանն ընդդէմ գործեցին, ուստի օտար եւ երկնքից տեղացող հրով այրուեցին:

Երրորդ՝ խիստ եւ բացէիբաց պատժուեցին:

Չորրորդ՝ քանի որ նորանոր չարիքներ գործեցին, առաւել ու խիստ պատուհասուեցին, ինչպէս Կայենը, որպէսզի երկիւղի եւ վախենալու օրինակ լինեն աշխարհին:

Հինգերորդ՝ Աստծոյ մեծ դատաստանի օրինակ էր, որովհետեւ նոյնն է լինելու բոլոր մեղաւորների հետ, ըստ այդմ՝ «Կտեղայ մեղաւորների վրայ հրի ու ծծումբի որոգայթը, եւ այդ մրրիկը [կլինի] նրանց վիճակուած բաժակը» (Սղմ. Ժ 7), որովհետեւ «Մեծ սարսափ է ընկնել կենդանի Աստծոյ ձեռքը» (Եբր. Ժ 31),- ասում է առաքեալը:

Վեցերորդ՝ սոդոմայեցիներին պատժեց մարմնով, որ թեթեւ լինեն նրանց հոգու տանջանքները: Ինչպէս ասում է Տէրը՝ «Որ սոդոմայեցիների համար հեշտ լինի դատաստանի օրը» (Մտթ. ԺԱ 24):

Եւ այս ամէնը նրանց խնայելու համար էր, որովհետեւ Աստուած մարդասէր եւ ոգեսէր է:

ՂՈՎՏԻ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Հարց. Ղովտի կինը ինչո՞ւ աղ եւ ոչ թէ մէկ այլ նիւթ դարձաւ:

Պատասխան. Աղը եւ մոխրացածը նոյն բանն են:

Նախ, որովհետեւ ետ նայելը վատ եւ ծուլութեան [նշան] էր: Երկրորդ՝ որովհետեւ գեղեցիկ էր, որպէսզի նրա պատճառով Ղովտին չսպանէին: Երրորդ՝ որպէսզի հալուէր եւ չպաշտուէր: Չորրորդ՝ անհաւատութեան պատճառով քար դարձաւ, որովհետեւ չհաւատաց հրեշտակներին: Ինչպէս ասում է Սիրեցէքը՝ «Անհաւատութեան յիշատակ եղաւ, դառնալով աղէ արձան, ինչպէս որ սոդոմայեցիք՝ չար գործերի» (Իմաստ. Ժ 7):

ԳԼՈՒԽ ԺԹ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԱԲՐԱՀԱՄԻ ԵՒ ԻՍԱՀԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԱ

Հարց. Աբրահամի որդիներից որո՞նք են նման աւազի, որո՞նք՝ աստղի:

Պատասխան. Մեղքերով ալեկոծուածները եւ ծանրացածները աւազ են կոչւում, ինչպէս Իսմայէլի որդիները, այլեւ նրանք, ովքեր խոտելի ու տհաճ եղան Իսահակին: Իսկ աստղ են [կոչւում] Իսահակի ծնունդները՝ պայծառ վարքագծով եւ երկնային ընթացքով, ինչպէս մարգարէները, քահանաները, ընտրեալ թագաւորները եւ այլն:

Եւ Քրիստոսն էլ՝ արեգակն արդարութեան, նրանից ծնուեց: Նաեւ տասներկու կենդանակերպերի օրինակով՝ տասներկու առաքեալները: Իսկ եօթ նշանաւոր աստղերը եօթանասուն աշակերտներն էին, իսկ հինգ բիւրը՝ հաւատացեալները եւ այլն:

Եւ դարձեալ՝ Աբրահամը մարմին ու հոգի ունէր եւ ունէր երկու զաւակ, այսինքն՝ մարմնից ու հոգուց: Նրանք, ովքեր հաղորդուեցին նրա մարմնին, եղան զաւակ ըստ մարմնի, ըստ թլփատութեան եւ ըստ նրա միւս օրէնքների: Իսկ ովքեր հաղորդուեցին հոգուն, այսինքն՝ նրա հաւատին, եղան նրա հաւատի որդիները, ինչպէս քրիստոնեաները, որովհետեւ Աբրահամը հաւատով արդարացաւ, եւ մենք էլ նրա հաւատով աւազանի միջոցով ենք արդարանում, ըստ այդմ՝ «Աստուած կարող է այս քարերից ստեղծել Աբրահամի որդիներ» (Ղուկ. Գ 8):

ԱԲՐԱՀԱՄԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աստուած Աբրահամին փորձեց՝ ասելով. «Վերցրո՛ւ քո սիրելի որդուն եւ բե՛ր ողջակէզ արա ինձ համար» (Ծննդ. ԻԲ 2):

Աստուած մարդուն գիտէ ոչ թէ փորձով, քանի որ «Նա, որ ստեղծեց նրանց մէջ սիրտը, գիտէ նրանց բոլոր գործերը» (Սղմ. ԼԲ 15), այլ Աստուած փորձում է մարդուն, որ յայտնուի նրան, ինչպէս Աբրահամին եւ Յակոբին: Իսկ մարդը փորձում է, որ իմանայ, մինչդեռ սատանան փորձում է, որ խաբի, ինչպէս նախահօրը:

Եւ պէտք է իմանալ, որ Աբրահամի տասը փորձութիւններից, որոնք նրա համար քուրայ եղան, մէկն էր եւ այս, որ նրան առաջինն ասուեց. «Ե՛լ քո երկրից եւ ազգից ու արի՛ այն երկիրը, որը ցոյց կտամ քեզ» (Ծննդ. ԺԲ 1):

Երկրորդ՝ Սառային տանելը փարաւոնի տունը:

Երրորդ՝ հովիւների վէճն ու Ղովտի բաժանուելը:

Չորրորդ՝ Սոդոմում եղած ինչքից ոչ մի աւար չառնելը:

Հինգերորդ՝ երբ ասուեց, նրա զաւակների՝ աստղերի պէս լինելը եւ նրա չերկմտելը:

Վեցերորդ՝ Հագար աղախնուն պատժելու համար Սառային յանձնելը, որից Հագարը փախաւ եւ հարցուեց հրեշտակից (տե՛ս Ծննդ. ԺԶ 8):

Եօթներորդ՝ ասելը «Դո՛ւրս հանիր աղախնածնիդ, որպէսզի ազնուածին Իսահակին ժառանգակից չլինի»:

Ութերորդ՝ որովհետեւ ասուեց Աբրահամին ծեր ժամանակ թլփատուել, երբ իննսունինը տարեկան էր (տե՛ս Ծննդ. ԺԷ):

Իններորդ՝ Սառային Աբիմելէքի տուն տանելը (Ծննդ. Ի):

Տասներորդ, եւ այս, որ ասուեց. «Բե՛ր քո սիրելի որդուդ ինձ համար ողջակիզելու» (Ծննդ. ԻԲ 2): Եւ «սիրելի» ասելով՝ աւելի է շարժում ծնողի սիրտը:

Իսկ այն, որ հրամայեց երեք օրուայ ճանապարհ գնալ, [պատճառն այն էր,] որ չասուէր, թէ [Աբրահամը] ապշահար էր:

Եւ Սառային ոչինչ չասաց, որ մայրական ողբով չխափանի գործը: Իսկ հօր մտքերն ամենեւին չպղտորուեցին, չտրտմեց [նրա] սիրտը, չտխրեց դէմքը, այլ ազատ լինելով սրանցից՝ Աստծոյ նկատմամբ առաւել սիրուց մղուած՝ իր որդուն տուեց զոհաբերութեան, որի փոխարէն Հայր Աստուած յանուն գերազանց սիրոյ՝ իր Որդուն տուեց աշխարհի փրկութեան համար:

Եւ հայր Աբրահամը նմանուեց Հայր Աստծուն, մանաւանդ, որ նրա Իսահակ որդին համեստութեամբ իրօք նման էր նրա Որդի Քրիստոսին:

Թէպէտ եւ բազմաթիւ եղանակներով այս համեմատութեան կարգը կարելի է խնամքով ու ջանասիրաբար [շարունակել], սակայն առկայ պատրաստ գտնում ենք պատմականօրէն [աւանդուած] քսան եղանակներ:

Նախ՝ ինչպէս Իսահակը ստուգապէս Աբրահամի որդին է, այդպէս էլ Քրիստոսը մարմնով Որդին էր Աբրա-

համի, ըստ Մատթէոսի [աւետարանի] «Գիրք ծննդեան Յիսուս Քրիստոսի՝ Որդի Դաւթի, Որդի Աբրահամի» (Մտթ. Ա 1):

Երկրորդ՝ Իսահակն աւետեալ որդի էր եւ խնդութեան զաւակ, ինչպէս «Իսահակ»[351] անունն է յայտնում, որ նշանակում է «ծաղր»: Եւ հրեշտակն էլ աւետեց Կոյսին. «Ուրախ եղի՛ր, բերկրեալ, Տէրը քեզ հետ է, քեզնից ծնուելու է որդի» (Ղուկ. Ա 28):

Երրորդ՝ Իսահակը ծնուեց ոչ բնութեան ընդունուած կարգով, քանի որ [ծնողները] զառամեալ էին, այլ Աստծոյ պարգեւ էր: Մեր Տէրն էլ ծնուեց բնութեամբ իբրեւ մարդ՝ քանդելով բնութեան օրէնքները, որովհետեւ ոչ թէ տղամարդուց էր կամ սերմից, այլ կուսական ծնունդ էր:

Չորրորդ՝ Իսահակն անդրանիկ որդին էր եւ Սառայի միածինը: Ասում է նաեւ աւետարանիչը. «Ծնեց իր անդրանիկ որդուն» (Ղուկ. Բ 7), մանաւանդ թէ՝ միածինը, ըստ այդմ՝ «Միածին որդին պատմեց մեզ» (Յովհ. Ա 28):

Հինգերորդ՝ Իսահակը անուն ստացաւ մինչեւ ծնուելը, որ յայտնի է երեք այրերի՝ Մամբրէի կաղնու մօտ երեւալով: Իսկ հրեշտակն էլ ասում էր. «Կծնուի որդի եւ կկոչուի Յիսուս, որ է Փրկիչ» (Ղուկ. Բ 11): Եւ Ղուկասն ասում է. Նա Յիսուս կոչուեց հրեշտակի կողմից մինչեւ յղանալը» (Ղուկ. Ա 31): Մանաւանդ եւ՝ մարգարէները:

Վեցերորդ՝ Իսահակն առաջինն էր, որով կատարուեց ութօրեայ ուխտի նշան դնելը: Իսկ Տէրն էլ վերջինն էր, որ լրացրեց օրէնքը՝ հիմնադրուած նոյն հրամանով, որովհետեւ ոչ թէ վերացրեց օրէնքը, այլ լրացրեց. ըստ այնմ՝ «Եկայ ոչ թէ վերացնելու, այլ լրացնելու» (Մտթ. Ե 17):

Եօթներորդ՝ ինչպէս Իսահակի փեսայաբերը՝ Եղիազարը, խօսեց հարսի հետ ջրհորի մօտ (տե՛ս Ծննդ. ԻԴ), այդպէս էլ Յովհաննէսը խօսեց Յորդանանի մէջ մեր Քրիստոս փեսային հարսնացած եկեղեցու մասին. ըստ այդմ՝ «Փեսան նա է, ով հարս ունի» (Յովհ. Գ 29):

Ութերորդ՝ ինչպէս Իսահակը հարս առաւ եւ ուրախացաւ իր մայր Սառայի վրանում, որ վեց տարի փակ էր ու ոչ ոք չէր մտել, այդպէս էլ Տիրոջը հարսնացած եկեղեցով դարձեալ բացուեց դրախտը, որ վեց դար արգելուած էր ու փակ: Ըստ այդմ՝ «Այսօր ինձ հետ դրախտում ես լինելու» (Ղուկ. ԻԳ 43):

Իններորդ՝ ինչպէս Իսահակը երկու ազգերի նահապետ եղաւ, այդպէս էլ Տէրը մեր գլուխ՝ հրէաների եւ հեթանոսների:

Տասներորդ՝ ինչպէս Իսահակը աւելի էր սիրում իր անդրանիկ որդուն, սակայն յետոյ օրհնութիւնը տուեց կրտսերին, նմանապէս ասում է մարգարէի միջոցով. «Անդրանիկ որդին իմ Իսրայէլն է, որին սիրեցի» (Ելք Դ 22): Իսկ մարդեղութեան մասին ասում է. «Ոչ մի տեղ չառաքուեցի, այլ Իսրայէլի տան կորուսեալ ոչխարի ետեւից» (Մտթ. ԺԵ 24): Իսկ քահանացուն ասում է. «Պէտք չէ վերցնել մանուկների հացը» (Մրկ. է 27): Իսկ յարութիւնից յետոյ ասում էր. «Մկրտեցէ՛ք բոլոր հեթանոսներին յանուն Երրորդութեան» (Մտթ. ԻԸ 19), որով հե-

տինները եղան առաջին, նոր իսրայէլներ եւ աստուածատեսներ:

Թողնելով համանման բազմաթիւ այլ օրինակները՝ այժմ դիտարկենք նրանք, որոնք առնչւում են մեր ասածներին:

Տասնմէկերորդ՝ ինչպէս Իսահակով յայտնի դարձաւ Աբրահամի կատարեալ սէրը Աստծոյ նկատմամբ, ըստ այդմ՝ «Այժմ համոզուեցի, որ երկնչում ես դու Աստծուց» (Ծննդ. ԻԲ 12), այսինքն՝ այժմ քեզ ճանաչեցի ողջ աշխարհում, այդպէս էլ Աստծոյ սէրը առաւել յայտնի դարձաւ Որդու միջոցով, ըստ այդմ՝ «Այնքան սիրեց Աստուած աշխարհը, որ մինչեւ իսկ տուեց իր միածին Որդուն» (Յովհ. Գ 16):

Տասներկուերորդ՝ ինչպէս Իսահակը հնազանդ տեսաւ հօրը մահի չափ, որ գերադասեց մեռնելը, քան անհնազանդ ապրելը, այդպէս էլ Պօղոսն է Տիրոջ մասին ասում. «Հնազանդ եղաւ Հօրը՝ մահուան չափ ու մահուան խաչի» (Փիլիպ. Բ 8):

Տասներեքերորդ՝ ինչպէս Իսահակի հետ գնացին ծառաներից երկուսը եւ մնացին հեռւում, այդպէս էլ Տիրոջ հետ՝ Պետրոսը եւ Յովհաննէսը՝ մինչեւ քահանայապետի սրահին [հասնելը]:

Տասնչորսերորդ՝ զոհաբերութեան ժամանակ Իսահակը սրով եւ հրով դարձաւ կատարեալ, եւ Տիրոջ վրայ էլ ջահերով ու սրերով եկան ձերբակալելու՝ ըստ աւետարանի:

Տասնհինգերորդ՝ ինչպէս Իսահակի վրայ դրուեց պատարագի փայտը մինչեւ զոհաբերութեան վայրը, այդպէս էլ Տէրը իր ուսին կրեց խաչափայտը մինչեւ Գողգոթայի նոյն վայրը, որտեղ զոհաբերւում էր Իսահակը:

Տասնվեցերորդ՝ ինչպէս Իսահակը ոտքերով ու ձեռքերով կապուեց զոհասեղանին, այդպէս էլ Տիրոջը գամեցին խաչի սեղանին:

Տասնեօթներորդ՝ ինչպէս Իսահակն ազատուեց երեք օր անց, քանի որ հօր կամքով այն օրուանից, երբ ճանապարհ ընկան, մահուան էր դատապարտուած, այդպէս էլ Տէրը յարութիւն առաւ մեռելներից երեք օր անց՝ ազատելով մեր բնութիւնը:

Տասնութերորդ՝ ինչպէս Իսահակի համար երկնքից ձայն լսուեց, որ ասում էր՝ «Օրհնուելով՝ օրհնուի» (Ծննդ. ԻԲ 17)՝ ի լուր երկնքի եւ երկրի, այդպէս էլ Տիրոջ համար ձայն լսուեց. «Փառաւորեցի, եւ նորից փառաւորելու եմ» (Յովհ. ԺԲ 28):

Տասնիններորդ՝ ինչպէս ասաց, թէ՝ «Իսահակով կբազմանան քո զաւակները երկնքի աստղերի նման» (Ծննդ. ԻԶ 4), այդպէս էլ Քրիստոսից՝ ողջ հաւատացեալների բազմութիւնը՝ սերուած նրա անդամներից իբրեւ անդամներ, մարմնից՝ իբրեւ մարմիններ, ծնւում են նրանից աւազանով, որովհետեւ մարգարէն նրան «հայր» է անուանում՝ հանդերձեալ աշխարհի (Ես. Թ 6) լուսաճաճանչ սլացմամբ աստեղափայլ պայծառացածների. ըստ այնմ՝ «Այնժամ արդարներն արեգակի պէս կծագեն երկնքի արքայութեան մէջ» (Մտթ. ԺԳ 43):

Եւ քսաներորդ՝ ինչպէս խոստացաւ թէ՝ «Քո զաւակները կժառանգեն քո հակառակորդների քաղաքները» (Ծննդ. ԻԲ 17), ու այդպէս էլ եղաւ, որովհետեւ ինչպէս ժառանգեցին ամոնացիների, մովաբացիների, քանանացիների մարմնաւոր երկիրը, այդպէս էլ հոգեպէս պարգեւելու է մեզ երկնքի բնակութիւնը, որից զրկուեց մեր հակառակորդ սատանան, որի մասին ասում է. «ընկած հրեշտակների փոխարէն», որ թէպէտ յետոյ է կատարելու, ինչպէս եւ նրանցը՝ բազմաթիւ տարիներից եւ չարչարանքներից յետոյ:

Այս եւ բազմաթիւ այլ օրինակներով՝ ստուերագրութեամբ [հաստատւում] է իրական ճշմարտութիւնը, որ յիրաւի անկարելի չէ երկասիրողիդ [հասնել] պարապ ժամուայ քննութեան այսօրինակ դեգերումներով:

ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԵՐԸ

Պէտք է իմանալ, որ ամէն մի զոհաբերութիւն բաղկացած է երեք մասից՝ մատուցողից, ընդունօղից, զոհաբերութիւնից:

Սրանք էլ բաժանւում են չորսի:

Լինում է, որ մատուցողը գերազանցում է զոհաբերուողին, ինչպէս հին օրէնքների ժամանակների զոհաբերութիւնը, որովհետեւ անասուններ էին [զոհաբերւում]:

Լինում է, որ զոհաբերուողն է գերազանցում մատուցողին, ինչպէս այժմ նոր օրէնքների [դէպքում], որովհետեւ Քրիստոսի մարմինը մեծ է քահանայի [մարմնից]:

Լինում է, որ մատուցողը գերազանցում է ընդունօղին, ինչպէս Մելքիսեդեկը Աբրահամին, եւ քահանան մեծ է ժողովրդից, որ ճաշակում է:

Իսկ չորրորդը մեր Տէր Քրիստոսի զոհաբերութիւնն է, որ անձնաւորութեան մէկ դէմքի մէջ բացայայտեց զոհաբերութեան երեք կողմերը, այսինքն մատուցողի, ընդունողի եւ պատարագի մեծ լինելը, որը նոր պատարագ էր, նոր քահանայ, նոր եղանակ.

Նախ՝ որովհետեւ Աստուած Աստծուն զոհաբերեց:

Երկրորդ՝ ինքն իրեն զոհաբերեց:

Երրորդ՝ դարձեալ ինքն ընդունեց: Ընդ որում, զոհաբերելով իրեն՝ մարդ էր տնօրինութեամբ, իսկ աստուածութեամբ Հօր եւ Հոգու հետ ընդունեց իր [զոհաբերութիւնը]:

Այսքանն այս մասին:

ԵՐԵՔ ԾՆՈՂՆԵՐԻ՝ ՍԱՌԱՅԻ, ՄԱՐԻԱՄԻ, ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ [ՆՐԱՆՑ] ԾՆՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԲ

Նախ՝ Սառան ամուլ էր, իսկ Մարիամը՝ կոյս, եկեղեցին՝ ամուլ եւ կոյս:

Երկրորդ՝ Սառան ամլութեամբ ծնեց Իսահակին, Մարիամը կուսութեամբ՝ Եմմանուէլին, իսկ եկեղեցին մշտապէս կուսութեամբ ծնում է աւազանի ծնունդներին:

Երրորդ՝ Սառա նշանակում է «առաքինութիւն», Մարիամ՝ «լուսաւորութիւն», իսկ եկեղեցին հաւատացեալ-

ների բազմութեամբ գործով առաքինի է եւ հաւատի լոյս:

Չորրորդ՝ Սառան եւ իր ծնունդը օրինակ էին, Մարիամը եւ իր ծնածը՝ ճշմարտութիւն, եկեղեցին՝ համանմանութիւն իր զաւակներով:

Հինգերորդ՝ Սառան ծնեց՝ երեք այրերի աւետումով, Մարիամին էլ աւետեց հրեշտակը, իսկ եկեղեցին՝ մարգարէի աւետիսով:

Վեցերորդ՝ Սառան ուրախութեամբ յղացաւ, ըստ այդմ՝ «ծիծաղեց» (Ծննդ. ԺԸ 12), ուրախ էր նաեւ Կոյսը, ըստ այդմ՝ «Ուրախ եղի՛ր, բերկրեալ, Տէրը քեզ հետ է» (Ղուկ. Ա 28). ուրախութիւն էր եւ եկեղեցու համար, ըստ այդմ՝ «Ուրախ եղի՛ր, ամուլ, որ չէիր ծնում» (Ես. ԾԴ 1):

Եօթներորդ, Իսահակը ցնծութիւն եղաւ իր ազգի համար, ըստ որում կոչուեց Իսահակ, որ նշանակում է «ծաղր»[352]: Եւ ճշմարիտ ցնծութիւն էր Քրիստոսը ողջ հաւատացեալների համար, ըստ այդմ՝ «Ձեզ մեծ ուրախութիւն եմ աւետարանելու, որ լինի ողջ ժողովրդինը» (Ղուկ. Բ 10): Մենք էլ խնդութեամբ ենք ծնւում աւազանից, յուրախութիւն երկնաւորների, ըստ այդմ՝ «Երկնաւորների համար ուրախութիւն է անգամ մի մեղաւորը, ով ապաշխարում է» (Ղուկ. ԺԵ 10):

Ութերորդ՝ յուսով երկրի ժառանգ ծնուեց Իսահակը: Այդպէս էլ մեր բոլորի ժառանգն էր մեր Տէրը, իսկ արքայութեան ժառանգներն են աւազանի ծնունդները, «որովհետեւ Քրիստոսի ժառանգակիցն ենք» (Հռոմ. Ը 17) ասում է. [նաեւ՝] «Ով կրկին չծնուի, չի մտնի Աստծոյ արքայութիւն» (Յովհ. Գ 3):

Իններորդ՝ Սառայի որդին միամայր էր, Կոյսի Որդին՝ միածին. մենք էլ աւազանից մէկն ենք ծնւում:

Տասներորդ՝ Սառան եղաւ բազմաթիւ նահապետների մայր. բազում հաւատացեալների մայր եղաւ եւ Կոյսը: Բազում վերածնուածների մայր է եւ եկեղեցին, որովհետեւ ասում է. «Բազում են ամուլիդ որդիները, քան՝ արամբիինը» (Ես. ԾԴ 1, Գաղ. Դ 27):

Եւ դարձեալ նոր [օրինակ] էր Սառայի ծնունդը եւ ոչ ըստ օրինաց կարգի: Նոր [օրինակ] էր եւ Կոյսի ծնունդը, որ մարդացած Աստուած էր երկրի վրայ: Նոր [կարգով] է ծնում նաեւ աւազանը՝ մարդկանց որդիներին՝ [ծնելով] իբրեւ Աստծոյ որդիներ:

Հայր Աբրահամն իր որդու անունը կոչեց Իսահակ: Երկնաւոր Հայրն իր Որդուն կոչեց «Անդրանիկ» (տե՛ս Կողոս. Ա 15, 18, Յայտ. Ա 5): Նոր անունով են կոչւում եւ մկրտուածները, «Որ անուանեց Տէրը» (Ես. ԿԲ 2),- ասում է մարգարէն :

Իսահակը անդրանիկ էր բազումների մէջ: Անդրանիկն էր եւ էմմանուէլն իր եղբայրների մէջ (Հռոմ. Ը 29): Մենք էլ անդրանիկ ենք եղբայրների, երկնքի անդրանիկների դասի մէջ:

Որդի ծնուեց Իսահակը: Որդի էր եւ միածին Յիսուսը: Իբրեւ որդի ենք ծնւում եւ մենք աւազանի աջ կողմից:

Երբ Իսահակը կրծքից կտրուեց, ապրեց հաստատուն կերակրով: Եւ հնի

«կրծքից» կտրուելով՝ հաստատուեցին նոր օրէնքները: Եւ աւազանից ծնուածներս հաստատւում ենք անմահ կերակրով՝ [ոգեղէն] հացով, որ իջնում է երկնքից, որի համար ասում է. «Արգանդից ծնուածը ետ չի դառնում» (հմմտ. Յովհ. Գ 4): Նոյնպէս եւ նա, ով կտրւում է կրծքից, եւ նա, ով ծնւում է աւազանից երկրորդ [անգամ դուրս չի գալիս այնտեղից]:

Այսքանն այս մասին:

ՅՂԻԱՆԱԼՈՒ ԵՒ ԾՆՈՒԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԳ

Հարց. Քանի՞ ձեւով են յղիութիւնը եւ ծնունդը:

Պատասխան. Շատ եղանակներ կան:

Նախ, մարմնականը, ինչպէս յղացուած մանուկն է ծնւում մօրից:

Երկրորդ՝ հոգեւորը, ինչպէս աւազանում ծնւում ենք Սուրբ Հոգուց, այսինքն՝ յղացուած Հաւատոյ Բանից, ծնւում ենք իբրեւ Աստծոյ որդիներ:

Երրորդ՝ ըստ առաքինութեան, որ յղացուած Տիրոջ պատուիրանից, առաքինութեամբ ծնում ենք հոգու փրկութիւնը, ինչպէս ասում է մարգարէն. «Քո ահի եւ երկիւղի մէջ յղանալով՝ երկնեցինք ու ծնեցինք փրկութեան հոգին քո» (Ես. ԻԶ 18):

Չորրորդ՝ ըստ գերազանցութեան, երբ յանկարծակի մեր մէջ բխում է Աստծոյ շնորհը՝ թէ՛ հաւատի եւ թէ՛ այլ գործերի մէջ՝ հաճելի Աստծուն:

Հինգերորդ՝ ըստ բանականութեան, յղացուած խոհեմութեամբ, ծնում ենք իմաստութիւն:

Վեցերորդ՝ ըստ արուեստի, յղացուած հանճարով, ծնում ենք գործեր:

Եօթներորդ՝ ըստ ուսման, ինչպէս որ աշակերտներն են կոչւում ուսուցչի ծնունդներ՝ թէ՛ մարմնապէս եւ թէ՛ հոգեպէս, ըստ այդմ՝ «Յիսուս Քրիստոսի մէջ աւետարանով ծնեցի ես ձեզ» (Ա Կորնթ. Դ 15):

Ութերորդ՝ ըստ մեղքի, որ սատանայից սերմ վերցնելով՝ յղանում ենք ցաւեր եւ ծնում անօրինութիւններ:

Իններորդ՝ ըստ փոփոխութեան էլ է ասւում, որովհետեւ սաղմնաւորուած՝ արդէն ունենք մահը, որ մօտենալով վախճանին՝ հասնում է ցաւագին տանջանքի, իսկ բաժանուելով մահուան պահին՝ ծնւում է հոգին:

Տասներորդ՝ վերջինը եւ կատարեալը յարութեան ծնունդն է, որովհետեւ մարմնի մահը սկիզբն ու յարութեան յղացումն է: Եւ դրանից յետոյ են լինում անմահ ու անվախճան ծնունդները եւ յարութեան որդիները, որովհետեւ ասում է՝ չեն կարող մեռնել, քանզի ծնւում ենք Աստծոյ անմահ զօրութիւնից եւ անապական տարրեղէն նիւթից, ուստի դառնում անմահ եւ անվախճան:

ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԴ

Հարց. Ո՞րն է անդրանկութեան խորհուրդը, որ վաճառեց Եսաւը:

Պատասխան. Բազում:

Նախ՝ որ անդրանիկը աւագ է կոչւում: Եւ աւագ է Աստուած, քան աշխարհը, ու [սրանով] անդրանիկը Աստծոյ պատկերն ունի, որովհետեւ հայր եւ խնամածու է միւս հարազատ եղբայրներին:

Երկրորդ՝ անդրանիկ էր Բանն Աստուած, որ ծնուեց Հօրից, իսկ միւս՝ եղականներս՝ գոյացել ենք Հօրից, քանզի Որդին Հօր ծնունդն է, եւ մենք՝ արարածներ, Նա՝ բնութիւնից եւ մենք՝ կամքից:

Երրորդ՝ անդրանիկ են հրեշտակները, քան մարդիկ ըստ կարգի եւ ըստ պատուի, թէեւ նրանց նման բանական ենք:

Չորրորդ՝ անդրանիկ է հոգին, քան մարմինը բնութեամբ եւ պատուով, թէեւ ըստ ժամանակի հաւասար են գոյաւորուել:

Հինգերորդ՝ անդրանիկն Աստծոյ բաժինն է, եւ Օրէնքում հաստատեց մարդկանց ու անասունների բոլոր անդրանիկներին իրեն բաժին տալ (տե՛ս Ելք ԻԲ 29):

Վեցերորդ՝ անդրանիկ են եւ Աստծոյ ընտրեալները, որ առաջ, քան աշխարհի լինելն ընտրուեցին (տե՛ս Եփես. Ա 4), թէեւ ըստ ժամանակի յետոյ ընդհանուրի նման գոյացան ու վախճանուեցին:

Եօթներորդ՝ անդրանիկ են հոգեւոր իշխանները՝ միւս հոգիների վերակացուները եւ խնամողները, ինչպէս քահանաները, ուսուցիչները եւ այլք, որի պատճառով էլ կոչւում են աւագներ:

Ութերորդ՝ անդրանիկ են մարմնական վերակացուները եւ տէրերը, ինչպէս թագաւորները, իշխանները, այդպէս էլ արգանդից ելած առաջին ծնունդները:

Իններորդ՝ իսկ անդրանկութեան մեծագոյն խորհուրդն այն է, որ Բանն Աստուած ծնուելով Հօրից՝ ստացաւ մեր բնութիւնը ու մեզ գլուխ եղաւ, իսկ մենք, իբրեւ նրա անդամներ, յարեցինք նրան ու անդրանիկ եղանք հրեշտակների [համեմատութեամբ], թէեւ կրտսեր էինք նրանցից, որովհետեւ բոլոր երկնաւորները ծնկի են գալիս Քրիստոսի առաջ ու նրան Տէր խոստովանում (հմմտ. Փիլիպ. Բ 10-11):

Տասներորդ՝ մկրտութեամբ Աստծոյ որդիներ եւ Քրիստոսին եղբայր ենք լինում եւ [դրանով] գերազանցում ենք երեք ազգերի. ոչ քրիստոնեաներին, իսրայէլցիներին եւ երկնքի հրեշտակներին, որովհետեւ մկրտութիւնը երեք բան է նշանակում.

Նախ՝ հաւատի դաւանանքը.

Երկրորդ՝ ջրով մկրտութիւնը.

Երրորդ՝ հոգուց ծնուելը:

Արդ՝ դաւանութեամբ գերազանցում ենք հեթանոս մարդկանց, մկրտութեամբ՝ հրէաներին, հոգու ծննդեամբ հրեշտակներին, քանի որ սրանք չեն ծնւում հոգուց ու եղբայր չեն դառնում Քրիստոսին:

Ահա անդրանկութեան այսքան մեծ պատիւն ու խորհուրդն անարգեց Եսաւը՝ պոռնկութեամբ եւ այն վաճառելով՝ փոխանակեց կերակուրով: Եւ թէպէտ լաց եղաւ, սակայն այլեւս ձեռք չբերեց,

որովհետեւ ամբողջ սրտով ու ջերմ սիրով չարեց:

Այսպէս էլ աւազանի սուրբ ծնունդները, որոնք անդրանիկ եւ Քրիստոսի անդամներ եղան, ագահութեամբ ու պոռնկութեամբ կորցնում են երկնային շնորհը ու չեն լալիս եւ զղջում, ինչպէս Եսաւը: Իսկ եթէ լաց լինեն ու զղջան ողջ սրտով ապաշխարելով՝ վերստին ձեռք կբերեն անդրանկութեան պատիւը եւ կհասնեն մեղքերի թողութեանը:

Հարց. Ինչո՞ւ էր անդրանիկին մերժում եւ կրտսերին ընտրում, ինչպէս Կայենին մերժեց ու Սէթին ընտրեց: Այդպէս էլ Յակոբին, Եփրեմին, Դաւթին, ովքեր եղբայրների ու թագաւորների մէջ կրտսեր էին:

Խնդրում եմ բացատրել:

Պատասխան. Աստուած պատշաճօրէն արժանաւորեց անդրանկութեան պատիւը:

Նախ, որ իր անդրանիկ տեսութեան մէջ նրանց ընտրեց աշխարհի լինելուց առաջ եւ ապա այդ անդրանիկներին պատուի արժանացրեց:

Երկրորդ՝ քանզի ծնողի առաջին զօրութիւնն է:

Երրորդ՝ առաջինն է բացում ծնողի արգանդը ու գալիս կեանք եւ հինգ օր աւելի կեանք ունի արգանդում:

Չորրորդ՝ անդրանիկը մէկն է եւ միակը բազում եղբայրների մէջ (տե՛ս Հռոմ. Ը 29), ինչպէս մէկն է գլուխը բազում անդամների մէջ:

Հինգերորդ՝ այս վերոասացեալ խորհուրդները տասը թիւ են կազմում, որի համար յիրաւի անդրանկութիւնը պատուի է արժանացել թէ՛ հոգեպէս, թէ՛ մարմնապէս:

Իսկ այն, որ անդրանիկը երբեմն խոտանում եւ կրտսերին էր ընտրում, բազմաթիւ խորհուրդ ու նշանակութիւն ունի:

Նախ՝ այն խորհուրդն ունի, որ ամենաառաջին ընտրեալները ժամանակի մէջ յետոյ եղան, որոնք մեզ կրտսեր ու վերջին էին թուում, փոխւում եւ դառնում էին նախկին ու առաջին՝ համաձայն Աստծոյ նախընտրութեան:

Երկրորդ՝ ըստ ստեղծման հրեշտակներն անդրանիկ են, քան մարդիկ, սակայն երբ մեղանչեցին դեւերը, մարդը բարձրացաւ նրանց տեղը եւ եղաւ անդրանիկ:

Երրորդ՝ Ադամն անարգեց դրախտի անդրանիկ կեանքը եւ ընտրեց երկրորդը, նրա անդրանիկն էլ անարգուեց եւ ընտրուեց կրտսերը:

Չորրորդ՝ մատնացոյց է անում հրէաներին, որ իբրեւ առաջին ժողովուրդ խոտանուեցին, իսկ հեթանոս հետին ժողովուրդները ընտրեալ դարձան ու եղան Աստծոյ անդրանիկ ժողովուրդ:

Հինգերորդ՝ ցոյց է տալիս մարդու կրկնակի ծնունդը, առաջինը՝ մարմնաւոր ու խոտելի, վերջինը՝ հոգեւոր եւ ընտրեալ:

Վեցերորդ՝ ըստ կարգի մարմինը առաջ է, քան հոգին, եւ փաստ է, որ քանի դեռ կենդանի ենք, առաջին հերթին

մարմինն ենք պատուում, իսկ մահից յետոյ [կարգը] փոխւում է. հոգին դառնում է առաջին եւ անդրանիկ՝ անմահ կեանքով. ըստ այսմ՝ անդրանիկների կատարեալ հոգիների մէջ երկնքում:

Այս է նշանակում մերժել անդրանկին եւ մեծարել կրտսերին:

Եօթներորդ՝ նշանակում է, որ անդրանկութիւնը բնական եւ անփոփոխ չէ, այլ՝ ստացական եւ փոփոխական, որովհետեւ ովքեր կամենում են, լինում են անդրանիկներ՝ իրենց գործերով, իսկ ովքեր չեն կամենում, փոխւում են ու լինում անարգ եւ վերջին, ինչպէս որ Եսաւը վաճառեց, իսկ Յակոբը գնեց նրա անդրանկութիւնը:

Ութերորդ՝ ժամանակը նախորդում է յաւիտենականութեանը, եւ ժամանակաւոր կեանքը խոտելի է ու անարգ, իսկ հանդերձեալը՝ պատուական ու ընտիր: Եւ ովքեր այստեղ պատուով են, փոխւում են եւ այնտեղ լինում անարգ, իսկ անպատիւները՝ պատուաւոր են դառնում, ինչպէս ցոյց տրուեց Եփրեմի ու Մանասէի [օրինակով], երբ փոփոխուեցին աջ եւ ձախ կողմեր (տե՛ս Ծննդ. ԽԸ 17-19): Ուստի ասում է Տէրը. «Շատերն են գալու արեւելքից ու բազմելու արքայութեան մէջ, եւ արքայութեան որդիները կհանուեն դրսի խաւար» (Մտթ. Ը 12):

Իններորդ՝ ցոյց է տալիս, որ նա չէ անդրանիկը, ով նախածին է եւ մարմնով քաջ, քանզի Տիրոջը հաճելի չէ հաստամէջք առնական հսկան, այլ անդրանիկն այն է, որ Աստծուն հաճելի բաներ է անում, ըստ այդմ՝ «Հաճելի եղան Տիրոջը երկիւղածը եւ նրանք, ովքեր յուսացին նրա ողորմութեանը» (Սղմ. ՃԽԶ 11), ինչպէս որ Դաւիթը կրտսեր է եւ հաճելի եղաւ Տիրոջը, իսկ նրա աւագ եղբայրները՝ խոտելի:

Տասներորդ, իսկ որ մեծագոյն խորհուրդն է, Բանն Աստուած, որ Հօր անդրանիկն էր, ժամանակի մէջ եղաւ կրտսեր մարդ ու փոքր, ընդ որում ինքն իրեն կոչեց «փոքրիկ» (Ղուկ. է 28), որովհետեւ մարդկային բնութիւնն իրեն խառնելով էր դարձնելու մեծ եւ անդրանիկ: Ըստ այնմ՝ «Նա, որ հարուստն էր, յանուն մեզ աղքատացաւ, որպէսզի մենք նրա աղքատութեամբ հարստանանք» (Բ Կորնթ. Ը 9):

Այսքանն այն խորհուրդների մասին, թէ ինչու անդրանիկները խոտելի էին դառնում, իսկ կրտսերները պատուի արժանանում:

ՅԱԿՈԲԻ ՀԵՏ ԳՕՏԵՄԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԵ

Հարց. Ինչո՞ւ գօտեմարտեց Յակոբի հետ եւ կաղ դարձրեց:

Գօտին զօրութիւնն է, որ մէջքին էր, այլեւ այն, որ աղօթքի մէջ էր ու գօտեպնդուած էր:

Եւ մենամարտեց նրա հետ՝ Եսաւի կերպարանքով դիմակաւորուած եւ նրա ուժով զգեստաւորուած մի այր, որպէսզի վարժուի ու չվախենայ նրանից[353]:

Նաեւ կարօտ էր մարդասէր Աստուած, որ ընդառաջ գայ իր համբոյրին ծարաւ արդարին:

Եւ վարժեցնում էր նրան գօտեմարտելու մեղքի ու մեղսասէր մարդկանց դէմ, որոնք կամենում են անմեղներին Աստծոյ օրէնքներից շեղել, ինչպէս ասում է. «Դիմացար Աստծոյ հետ մաքառելիս, ուստի մարդկանց հետ էլ զօրաւոր կլինես» (Ծնն. ԼԲ 28):

Իսկ թէ ինչու կաղ դարձրեց, նախ ասում են, թէ ծնուելու ժամանակ բռնել էր Եսաւի գարշապարից եւ այժմ փոխհատուցեց ու յիշեցրեց, որ ամէն ինչի համար փոխհատուցում կայ:

Երկրորդ՝ որովհետեւ Աստծուն խոստացած տասանորդը Եսաւին տուեց:

Երրորդ՝ որովհետեւ Աստծուն օգնական ունենալով՝ մարդուց վախեցաւ:

Չորրորդ՝ որպէսզի Եսաւը խղճայ ու չսպանի:

Հինգերորդ՝ որպէսզի երազ ու տեսիլք չհամարի տեսածը:

Վեցերորդ՝ որովհետեւ նրա որդիները կաղալու էին Աստծոյ շաւիղներում:

Եօթներորդ՝ կաղ դարձրեց նրան, որպէսզի գօտեմարտելիս չհպարտանայ:

Ութերորդ՝ ցոյց տալու, որ մարդկային միտքը աստուածային բաները քննելու համար կաղ է:

Իններորդ՝ ի յանդիմանութիւն մեր բնութեան, որ չկարծուի, թէ առաքինութեամբ եւ առ Աստուած սիրով կարող է հաւասարուել Աստծոյ՝ մեր նկատմամբ ունեցած սիրուն, այլ [գիտակցի] իր կաղ [լինելը]:

Տասներորդ՝ ցոյց տալու, որ աշխարհի համար պէտք է կաղ դառնալ եւ յետոյ Աստծոյ հանդէսը մտնել:

ԱՍՏԾՈՅ ԱՆՈՒԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Իսկ ինչո՞ւ անունը նրան չասաց:

Պատասխան. Ասենք, որ Յակոբը ոչ թէ Աստծոյ ներգործութեան անունն էր հարցնում, որովհետեւ գիտէր, որ Աստուած էր, եւ ինքն էլ կոչուեց Իսրայէլ, որ նշանակում է «աստուածատես», այլ կամենում էր անուամբ Աստծոյ բնութիւնն ու գոյութիւնը սովորել, որովհետեւ ի՞նչ լինելը գոյացութեան խնդիր է, ինչպէս երբ հարց է տրւում՝ ի՞նչ է. ասում ենք՝ մարդ է, կենդանի է եւ այլն: Այսպէս էլ անունը կարծ սահմանում է, որ յայտնում է իրի բնութիւնը, ինչպէս երբ ասում ենք՝ մարդ, քար, արդէն յայտնի է դառնում բնութիւնը[354]:

Արդ, ամէն մի անուն դրւում է ուրիշի կողմից, եւ ինքն իրեն անուն չի դրւում, որի պատճառով էլ անունը ուրիշների համար է, որ ճանաչենք միւսներին: Իսկ ինքն իրեն ոչ թէ անունով է ճանաչում, այլ էութեամբ: Այս պատճառով էլ մարդն ինքն իրեն անուն չի դնում, ինչպէս որ Աստուած ինքն իրեն անուն չի դնում:

Եւ ամէն մի անուն, որ դրւում է՝ կամ առաջ է լինում, քան կրողը, որին անուն է դրւում, ինչպէս հայրն է անուանում որդուն՝ իբրեւ հարազատի, կամ հաւասարներից է [անուանւում], ինչպէս [ասենք] Պետրոս, կամ էլ՝ վերջիններիս կողմից, ինչպէս [ասենք] հիւսն: Եւ

անուանելու երեք եղանակ կայ. բնութենական, որ նախնուց է անուանւում, անձնական, որ հաւասարից է [անուանւում], եւ ներգործական, որ վերջիններից է [անուանւում]: Ուրեմն պարզ է, որ Աստուած ինքն իրեն սկզբից, վերջում, հաւասար կամ անհաւասար չէր կոչի, ուստի իրեն անուն չի տալիս:

Իսկ ուրիշից էլ Աստծոյ անունը չէր կարող դրուել՝ ո՛չ ըստ բնութեան, ո՛չ ըստ անձնականութեան, որովհետեւ նրանից առաջ ոչ ոք չկար եւ նրան հաւասար էլ չկար: Իսկ այն, որ վերջում ենք նրա անունը տուել «Աստուած», «արարիչ» եւ այլն, սա ներգործութեան ցուցիչ է, եւ ոչ թէ գոյացութիւնը կամ բնութիւնը յայտնող:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ինչո՞ւ Մովսէսին ասաց՝ «Սա է իմ անունը յաւիտեան՝ Որէն» (Ելք. Գ 14), ապա ասենք, որ «է» ասելը ոչ թէ բնութիւնն է նշանակում, այլ անսկիզբն ու անվախճան գոյութիւնը: Եւ այս է բացատրութիւնը: Նախ «է»-ն ներկան է, որովհետեւ «էր»-ը եւ «եղիցին» անցեալը եւ ապառնին են:

Երկրորդ, «էր»-ը անցեալի աւարտն է ցոյց տալիս, «եղիցին»՝ ապառնու սկիզբը: Իսկ «է»-ն անսկիզբն ու անվախճանն է, որ մեզ բացորոշ է դարձնում երեք աստուածաբանութիւն. քանզի «է»-ն՝ անսկիզբ ու անվախճան՝ հակառակ է ժամանակին, որն ունի սկիզբ ու վախճան: Հակառակ է նաեւ մշտնջենաւորին, որ ունի սկիզբ ու չունի վախճան: Հակառակ է նաեւ յարաձգուողին, որն ունի վախճան, սակայն ոչ սկիզբ:

Այս էր նշանակում «է» անուանելը եւ ոչ թէ բնութիւն կամ գոյացութիւն:

ՀՌԱՔԷԼԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ ասում էր. «Հռաքէլը լալիս էր իր որդիների համար եւ չէր կամենում մխիթարուել, որովհետեւ չկային» (Մտթ. Բ 18):

Պատասխան. Երեք որդիների համար էր Հռաքէլի մօր ողբը:

Նախ, որ Բենիամինի ծնուելու ժամանակ մահացաւ մայրը եւ վշտի որդի եղաւ նրա համար:

Երկրորդ, որովհետեւ քառասուն քաղաք վերցրին Բենիամինից Յուդայի ցեղերը կնոջ հետ շնանալու պատճառով եւ կոտորեցին քսանհինգ հազար տղամարդկանց, որից յետոյ մնացին վեց հարիւր այր, որոնք յետոյ ստացան իրենց ժառանգութիւնը. այս մասին վկայուած է Դատաւորաց Գրքի վերջում (տե՛ս Դատ. Ի-ԻԱ):

Երրորդ՝ Բեթղեհէմի կոտորուած մանուկները Հռաքէլի զաւակներից չէին, ինչպէս ասուեց վերը, ուստի լալիս էր անմխիթար սգով, որ նահատակների մայր չեղաւ:

Արդ, այս երեք սգերի համար յետոյ մխիթարութիւն ստացաւ:

Առաջին՝ սգի համար մխիթարուեց Աստուածածին Կոյս Մարիամով, որ առանց երկունքի ու ցաւի ծնեց Միածին Որդուն, եւ Հռաքէլի մօր վշտի արցունքները մաքրեց:

Երկրորդ՝ մխիթարութիւնը ստացաւ Պօղոս առաքեալով, որ նրա որդին էր (տե՛ս Փիլիպ. Գ 5), որ Երուսաղէմից մինչեւ աշխարհի ծայրը՝ Լիւրիկէ, լցրեց աւետարանով եւ ստացաւ նրա ժառանգութիւնը (տե՛ս Հռոմ, ԺԵ 19):

Երրորդ՝ նրա ազգից յետոյ յանուն Քրիստոսի բազում նահատակներ եղան:

Ահա այսպէս մխիթարուեց այս երեք տրտմագին վշտերից:

ՅՈՎՍԷՓԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԶ
ՅՈՎՍԷՓԻ (տե՛ս Ծննդ. ԼԷ, ԼԹ-Ծ) ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՐԱՃՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ

Նախ, որ Յովսէփը տեսքով գեղեցիկ էր: Եւ մեր Տէրն էլ տեսքով գեղեցիկ է մարդկանց բոլոր որդիներից (տե՛ս Սղմ. ԽԴ 3), որովհետեւ ասում է. «Եղբօրորդին իմ կարմիր է եւ սպիտակ՝ շատերից ընտրուած» (տե՛ս, Երգ Ե. 10), այսինքն՝ մարդացեալ Աստուած է:

Երկրորդ՝ եղբայրներն ատում էին Յովսէփին, իսկ հայրը սիրում էր: Այդպէս էլ սատանան էր ատում մարդկային բնութիւնը, որովհետեւ Աստծոյ պատկերով էր արարուած: Եւ հրէաներն էլ ատում էին Քրիստոսին, որովհետեւ Հայրը վկայեց, թէ՝ «Դա՛ է իմ սիրելի Որդին» (Մտթ. Գ 17):

Երրորդ՝ Յովսէփը երկու անգամ փոս ընկաւ եւ փրկուեց: Եւ Քրիստոս էլ մարմնով գերեզման եւ հոգով դժոխք իջաւ ու վերացրեց մահը եւ վախճանը:

Չորրորդ՝ Յովսէփը պոռնիկ կնոջ փոխարէն ամուսնացաւ Ասանէթ գեղեցիկ կոյսի հետ: Այդպէս էլ մեր Տէրը շնացող ազգի փոխարէն կոյս եկեղեցին ընդունեց եւ իր սուրբ ժողովրդին:

Հինգերորդ՝ Յովսէփն իր հօր տանը ազատ էր, իսկ Եգիպտոսում ծառայ եղաւ: Եւ մեր Տէրն էլ երկնքում Հօր մօտ ազատ էր, իսկ երկրում ծառայ եղաւ՝ ընդունելով ծառայի կերպարանք:

Վեցերորդ՝ պոռնիկ կինը չկարողացաւ յաղթել ողջախոհ Յովսէփին: Եւ դժոխքն էլ չյաղթեց մեր Տիրոջը, որն ազատուեց դրանից իր բոլոր հաւատացեալներով:

Եօթներորդ՝ Յովսէփը մխիթարում էր բանտարկեալներին: Եւ մեր Տէրն էլ ծագած լոյս էր դժոխքի բանտում:

Ութերորդ՝ Յովսէփը երկու երազ տեսնողներից մէկին կեանք գուշակեց, միւսին՝ մահ: Եւ Տէրն էլ մեր երկու աւազակներից մէկին Աստծոյ փառքին արժանացրեց, միւսին՝ դատապարտեց:

Իններորդ՝ ինչպէս ուլը մորթուեց եւ Յովսէփը փրկուեց, այդպէս էլ մեր Տէրը մարմնով մեռնելով՝ միշտ կենդանի է աստուածութեամբ:

Տասներորդ՝ հայրը Յովսէփին ուղարկեց եղբայրների մօտ, որոնք հովիւներ էին, եւ աւագները նրան տեսնելով՝ Յուդայի խօսքով վաճառեցին, որ յետոյ տէր եղաւ երկրի ու կերակրող: Այդպէս էլ Քրիստոս եկաւ իր եղբայրների մօտ, որ որդիներն էին Դաւթի ու Աբրահամի եւ ժողովրդի առաջնորդներ, եւ Յուդան վաճառեց նրան, իսկ [նա] տէրը եղաւ ողջերի, մեռեալների եւ

նրանց սնուցող, որովհետեւ հոգիներին ազատեց դժոխքի սովից:

Տասնմէկերորդ՝ Յովսէփը տասնհինգ տարեկանում վաճառուեց երեսուն դահեկանով, ինչպէս ասւում է կտակարանում: Եւ Տէրն էլ մեր կրկնակի տարիքում, եւ քանի որ ե՛ւ Աստուած էր, ե՛ւ մարդ, վաճառուեց երեսուն արծաթով:

Տասներկուերորդ՝ Յովսէփը երեսուն տարեկանում իշխան դարձաւ երկրի: Եւ մեր Տէրն էլ երեսուն տարեկանում մկրտուեց, որի մասին հրամայեց Հայրը՝ «Բոլորդ լսէ՛ք դրան» (Ղուկ. Թ 35):

Տասներեքերորդ՝ Յովսէփը գաղտնիքներ իմացող կոչուեց: Եւ Տէրն էլ մեր գիտէր այն ամէնը, ինչ կար մարդու մէջ, այլեւ Հօր գաղտնիքները, որոնք յայտնեց մեզ:

Տասնչորսերորդ՝ եգիպտացիները, որոնք Յովսէփի թշնամիներն էին, յետոյ երկրպագեցին: Եւ ասւում է, որ վերջում Քրիստոսի թշնամիներն էլ կդրուեն նրա ոտքերի տակ:

Տասնհինգերորդ՝ նրանք, ովքեր այստեղ Քրիստոսին են երկրպագում, կերակրւում են կենաց հացով, ինչպէս Յովսէփի եղբայրները:

Տասնվեցերորդ՝ Յովսէփի եղբայրները երբեք չլիացան հացով, մինչեւ չեկան Յովսէփի մօտ: Այդպէս էլ մենք այստեղ քաղցում ենք ոգով, մինչեւ գնանք այնտեղ, որտեղ կրկնակի զգեստ կհագնենք, այսինքն՝ հոգու եւ մարմնի փառքը:

Տասնեօթներորդ՝ ինչպէս արծաթը եղբայրներին վերադարձուեց, մենք էլ առանց արծաթի, միայն Քրիստոսի ձրի շնորհներով ենք լինելու փրկուած եւ ազատուած:

Տասնութերորդ՝ [միայն] երկրորդ [հանդիպման] ժամանակ Յովսէփը ճանաչելի դարձաւ եղբայրներին: Եւ մեր Տէրն էլ երկրորդ գալստեամբ ճանաչելի կդառնայ տէգի ու սայրերի հարուածների հետքերով:

Տասնիններորդ՝ Յովսէփը ստացաւ եգիպտացի փարաւոնի ոսկին, արծաթը եւ երկիրը, այսինքն՝ սատանայի զէնքերը, որովհետեւ հարստութիւնը սատանայի մեծագոյն զէնքն է, որով կատարում է բոլոր պղծութիւնները, ինչպէս Սոդոմի երկիրը, որ շենութեան մէջ մեղքեր էր գործում: Այդպէս էլ Քրիստոս ի չիք դարձրեց սատանայի զէնքն ու զօրութիւնը, որ մեղքը եւ դժոխքի մահն էին:

Քսաներորդ՝ ինչպէս Յովսէփը թողեց քրմերին եւ նրանց երկիրը, որոնց մեծամեծ մեղքերն ու կռապաշտութիւնը վերացնելու էր Քրիստոսն իբրեւ մարդ իր զօրութեամբ եւ իբրեւ Աստուած իր գործերով, այդպէս էլ Տէրը մեր յետոյ վերացնելու է չարը՝ գազանին կորստեան որդուն եւ նրա պաշտողներին վախճանի ժամին:

Այսքանն այս մասին:

ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ
Պրակ ԺԷ

Բազմաթիւ համեմատութիւններ կան Իսրայէլի՝ Եգիպտոս մտնելու եւ

այնտեղից դուրս գալու վերաբերեալ, որովհետեւ քանանացիները ներկայանում են իբրեւ այս երկրի ու կեանքի [օրինակ], Եգիպտոսը՝ յետմահու [կեանքի], իսկ պարգեւների երկիրը՝ Վերին Երուսաղէմը՝ հետեւեալ կերպ: Նախ, ինչպէս Յակոբը պատարագ մատուցեց ջրհորի մօտ վերջին երդման ժամանակ եւ ապա ելաւ երկրից, այդպէս էլ մենք մահուան շեմին հաւատով խոստովանում ենք եւ հաղորդւում:

Երկրորդ՝ ինչպէս Աստուած նրան ասաց՝ «Ես կիջնեմ քեզ մօտ եւ կհանեմ այնտեղից» (Ծննդ. ԽՁ 4), այստեղ էլ ասում է. «Արդարների հոգին Աստծոյ ձեռքին է» (Իմաստ. Գ 1) եւ՝ «Ինքը՝ Տէրն իջնելու է, եւ Քրիստոսով մահացածները յարութիւն կառնեն» (հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 16-18):

Երրորդ՝ [ինչպէս] Քանանում ոչ ոք չմնաց նրանցից եւ ոչ էլ Եգիպտոսից ելնելիս, այդպէս էլ մենք բոլորս մեռնում եւ յարութիւն ենք առնում:

Չորրորդ՝ սայլերով իջան եւ նշաններով ու հրաշքներով բարձրացան: Այդպէս էլ այստեղ ժամանակի պտոյտի մէջ մենք ընթանում ենք՝ մինչեւ [կեանքի] անիւը կընկնի փոսը: Իսկ յարութիւնը կլինի հրաշքներով եւ ըստ կարգի: Համաձայն կարգի է, որովհետեւ նոյն հոգին եւ նոյն մարմինն են յարութիւն առնում՝ այն էլ ակնթարթօրէն, Աստծոյ կարող զօրութեամբ:

Հինգերորդ՝ նրա համար ասուեց. «Յովսէփն իր ձեռքը կդնի աչքերիդ վրայ եւ կսրբի մշուշը»: Այդպէս էլ սրբերի միտքը լուսաւորւում է Քրիստոսի աջով, որոնք այստեղ փառքը տեսնում էին մշուշի մէջ, իսկ այնտեղ կտեսնեն յստակ:

Վեցերորդ՝ վաթսունհինգ հոգով մտան, վեց հարիւր հազար դուրս եկան: Այդպէս էլ հոգու եօթ զօրութիւններով եւ մարմնի հինգ զգայարաններով մեռնում ենք եւ յարութիւն առնում երեք կատարելութիւններով: Վեցը մարմնի կատարելութիւնն է ցոյց տալիս, հարիւրը՝ հոգու, հազարը՝ յաւիտենական կեանքի փառքը:

Եօթներորդ՝ ո՛չ մտնելիս եւ ո՛չ էլ դուրս գալիս նրանց կանանց չի թուարկում, այլ միայն ծնունդները եւ տղամարդկանց: Եւ Տիրոջ գալստեամբ էլ կնատները եւ թոյլերը հաշուի չեն առնուելու, այլ՝ անխտիր միայն արիագոյնները, որովհետեւ Քրիստոսի մօտ չկան արուներ եւ էգեր՝ ո՛չ մկրտութեան եւ ո՛չ յարութեան մէջ:

Ութերորդ՝ ինչպէս Եգիպտոս իջածները հարաւից մտան Գեսեմի պարարտ երկիրը, այդպէս էլ սրբերն Աստծոյ ջերմ սիրով հաւաքուելու են հոգիների կայանում՝ լոյսի եւ հանգստի վայրում:

Իններորդ՝ Յովսէփը նրանց ընդառաջ եկաւ ու համբուրեց: Այդպէս էլ Քրիստոս այստեղ հոգու գնալուց եւ գալստեան օրը ընդառաջ է գալու սրբերին ու համբուրելու է իր սիրելիներին, ինչպէս երկնաւոր Հայրը՝ դարձի եկած անառակին:

Տասներորդ՝ Յովսէփը ռոճիկ էր տալիս նրանց, այսինքն՝ ընտիր զգեստներ եւ սնունդ: Քրիստոս էլ իր իմաս-

տուբեամբ կերակրելու է նրանց եւ հագցնելու, ինչպէս քսանչորս երէցներին, որոնց սպիտակ թիկնոցներ տուեց, սա էր մաքրութեան շնորհը, որ [նրանք] ընդունեցին Քրիստոսից:

Այսքանն այս մասին:

ԱՌԻԾԻ ԵՒ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ[355] ՊՐԱԿ ԺԸ

«Ես,- ասում է,- առիւծի նման եմ Յուդայի տան վրայ» (Ծննդ. ԽԹ 9), որի վրայ վստահ լինելով՝ նոյն անունով են կոչում, ինչպէս որ ասում էր Յակոբը. «Առիւծ եւ առիւծի կորիւն» (Ծննդ. ԽԹ 9):

Եւ սա բազմաթիւ պատճառներով է:

Նախ՝ որ առիւծը թագաւորական է: Եւ մեր Տէրն էլ յաւիտենական թագաւոր է:

Երկրորդ՝ որովհետեւ արի է: Եւ Տէրն էլ մեր արի եղաւ պատերազմելիս:

Երրորդ՝ վեհ է, այսինքն՝ անահ: Եւ Տէրն էլ մեր ոչ մէկից չի վախենում:

Չորրորդ՝ խրոխտ է եւ ցասկոտ: Եւ Տէրն էլ է մեր՝ թշնամու հանդէպ:

Հինգերորդ՝ չի ընտելանում: Եւ մեր Տէրն էլ անընմբռնելի է:

Վեցերորդ՝ հզօր է ուժով: Եւ Տէրն էլ մեր հզօր է զօրութեամբ՝ «Որ հաստատ է պահում բոլորին իր խօսքի զօրութեամբ» (Եբր. Ա 3):

Եօթներորդ՝ կտրուկ է եւ արագաշարժ պատառոտելիս: Եւ Տէրն էլ մեր փութացող է չարերին պատժելիս:

Ութերորդ, պոչով ծածկում է հետքը: Եւ Փրկչի տնօրինութիւնն էլ ծածուկ էր, «Որովհետեւ,- ասում է,- անքննելի են նրա ճանապարհները» (Հռոմ. ԺԱ 33):

Իններորդ, ահազդու է գազանների համար, եւ մեր Տէրն էլ չարերի համար:

Տասներորդ՝ ահեղագոյնն է գազաններից: Եւ Տիրոջ պատուհասն էլ բոլոր մեղաւորների վրայ ահեղ է, որովհետեւ՝ «մեծագոյն ահ է ընկնել կենդանի Աստծոյ ձեռքը» (Եբր. Ժ 31):

Տասնմէկերորդ՝ «առիւծ» է կոչւում[356], որովհետեւ «առնում է», այսինքն՝ առնում, գնում է առանց վախենալու միւսներից: Եւ մեր Տէրն էլ «աւար առաւ» մարդկային ազգը եւ գնաց երկինք:

Տասներկուերորդ՝ առիւծի հոտն առնելիս՝ շունը փախչում է: Եւ Քրիստոսի անունից ու նշաններից էլ փախչում է շողոքորթ սատանան:

Տասներեքերորդ՝ իր որսից ինքն ուտում է եւ տալիս նաեւ ուրիշներին: Եւ Տէրն էլ մեր իր մարմինն ու արիւնը տուեց ամբողջ աշխարհին. նախ ինքը կերաւ եւ ապա տուեց առաքեալներին, ինչպէս [այն] բժիշկը, որ հիւանդին դեղ տալուց առաջ՝ նախ ինքն է ընդունում, որ անհոգ լինի:

Տասնչորսերորդ՝ առիւծի մռնչոցից միւս կենդանիները սարսափում են եւ արիւն են միզում: Եւ խաչի վրայ մեր Տիրոջ գոչելուց սարսափեցին դժոխայինները՝ ահաբեկուելով կեանքից: Այդպէս էլ [աշխարհի] վախճանին սարսափազդու գոչելու է մեղաւորների վրայ՝ ասելով. «Հեռացէ՛ք ինձանից, անիծեալներ» (Մտթ. ԻԵ 41):

Տասնհինգերորդ՝ առիւծը երբ ննջում է, աչքը բաց է մնում: Եւ Տէրն էլ մեր ասում է Երգի մէջ. «Երբ ես ննջում եմ,

սիրտն իմ արթուն է» (Երգ Ե 2): «Սիրտ» անուանում է անմահ աստուածութիւնը, որը երբեք չի ննջում, եւ քուն չի մտնում Իսրայէլի պահապանը, որովհետեւ մարմնով մեռածը կենդանի է աստուածութեամբ: Սա հաստատում են երկու [կողահոս] վտակները, որոնք բխեցին արիւն եւ ջուր:

Տասնվեցերորդ՝ քնած առիւծին ոչ ոք չի համարձակւում արթնացնել, որովհետեւ պէտք է քնի ու արթնանայ իր կամքով: Եւ մեր Տէրն էլ ասում է. «Ես իշխանութիւն ունեմ տալու իմ անձը եւ իշխանութիւն ունեմ այն առնելու» (Յովհ. Ժ 18): Որովհետեւ թէպէտ հրէաները խաչեցին, սակայն մեռաւ իր կամքով, քանի որ յայտնի է, որ բարձր գոչելուց յետոյ հոգին տուեց, մինչդեռ մահուան պահին բոլոր մարդկանց ձայնը նուազում է: Եւ թէպէտ Յովսէփը խաչից իջեցրեց, յետոյ էլ Յովսէփն ու Նիկոդիմոսը պատանեցին, սակայն ինքն իր կամքով իջաւ Յովսէփի բազուկներին եւ պատուեց զմուռսով:

Այդպէս էլ իր կամքով յարութիւն առաւ:

Տասնեօթներորդ՝ առիւծի արթնանալուց սարսռում են բոլոր կենդանի ջրային ծնունդները: Եւ մեր Տիրոջ գերեզմանից յառնելուց էլ սարսափեցին նրա բոլոր թշնամիները՝ անդնդի որդիները: Եւ անգամ սակաւ զօրութիւնից նախքան յարութիւնը տանջւում էին դեւերը եւ աղաչում, թէ՝ «Ժամանակից առաջ մի՛ տանջիր մեզ» (Ղուկ. Ը 28):

Տասնութերորդ՝ Սողոմոնն ասում է, թէ չորսն են, որ հզօր են եւ պերճօրէն են ընթանում՝ աքաղաղը, նոխազը, հրապարակախօս թագաւորը եւ առիւծը, որ թիկունք չի դարձնում անասուններին (տե՛ս Առակ. L 31), այսինքն, մարդկանց, որ անբան տրտմութեամբ եւ անմիտ ցանկութեամբ աւելի ցածր գտնուեցին անասուններից, Տէրը մեր ամենավեհը եղաւ, որովհետեւ բարձր ու վեհ կանգնեց մեղքերից ու իբրեւ առիւծ ելաւ Յորդանանից (Եփրեմ. ԽԹ 19), ինչպէս ասում է Երեմիան. «Իբրեւ ախոյեան ելաւ փորձողի դէմ անապատում եւ յաղթեց նրան»: Այս է նշանակում [ասելը]՝ «թիկունք չդարձրեց անասուններին»:

Տասնիններորդ՝ առիւծը տեղից չի շարժւում մինչեւ չի հնազանդեցնում իր թշնամուն: Եւ Հայրն ասում է մեր Տիրոջը. «Նստի՛ր աջ կողմում մինչեւ քո թշնամին դրուի ոտքերիդ պատուանդանի տակ» (Սղմ. ճԹ 1):

Եւ վեցն են Քրիստոսի թշնամիները:

Նախ՝ սատանան, [ապա] նրա [Քրիստոսի] աստուածութեանը չհաւատացողները, մեղքերը, դժոխքը, որոնք հոգու թշնամիներն են, մահն ու վախճանը, որոնք մարմնի [թշնամիներն են]:

Եւ չի ասում, թէ քեզնից ներքեւ կդրուեն, որովհետեւ Քրիստոս ոտնակոխ էր արել սրանց: Նա հակառակորդին յաղթեց փորձութեան ենթարկուելով եւ անհաւատներին հաւատի բերեց: Մեղք չգործեց, դժոխքը աւերեց: Մահով մահը վերացրեց, յարութեամբ՝ վախճանը եւ

անվախճան մարմնով յարութիւն առաւ գերեզմանից:

Եւ «ոտք» ասում է իր հաւատացեալ անդամներին, որովհետեւ այս վեց թշնամիները ոտնակոխ են արուելու հաւատացեալների կողմից [աշխարհի] վախճանին:

Քսաներորդ՝ ոտքի կանգնած առիւծը ցաքուցրիւ է անում իր հակառակորդներին: Այդպէս էլ հայրական աթոռից ոտքի կանգնած մեր Տէրը գալու է դատելու երկիրը, ինչպէս ասում է Եսային. «Վեր կկենայ ցրելու երկիրը» (Ես. Բ 10): Եւ Դաւիթն ասում է. «Վեր կկենայ Աստուած եւ կցրուեն նրա բոլոր թշնամիները» (Սղմ. Կէ 2): Իսկ Տէրն ասում է. «Յանուն աղքատի տառապանքի եւ տնանկի հեծեծանքների եղաւ այժմ իմ յարութիւնը, դնելու եմ իմ փրկութիւնը եւ համարձակուելու նրանց մէջ» (Սղմ. ԺԱ 6). «աղքատ» եւ «տնանկ» մարդկային բնութիւնն է կոչում, որ հարստահարուեց ու զրկանքների ենթարկուեց սատանայի կողմից:

Արդար դատաստան է անելու եւ կանգնեցնելով օդի մէջ աջից՝ ասելու է. «Եկէ՛ք, իմ հօր օրհնեալներ» (Մտթ. ԻԵ 34), եւ նրանց յաւիտենական կեանք կտայ: Իսկ այծերին ձախում է [կանգնեցնելու] եւ ասելու. «Հեռացէ՛ք ինձնից, անիծեալներ» (Մտթ. ԻԵ 41), ու յաւիտենական տանջանք է տալու նրանց, որից փրկի մեզ եւ բոլոր հաւատացեալներին՝ իր անունով՝ յաւիտենական ու անելանելի հրի տանջանքից եւ աջակողմեան դասի մաս ու երկնքի արքայութեան ժառանգ դարձնի Յիսուս Քրիստոս՝ մեր Տէրը, որ օրհնեալ է յաւիտեանս. ամէն:

ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԹ

Հարց. Ի՞նչ է նշանակում կապը, երբ ասում է՝ «Կապելու ես որթից եւ ոստից» (Ծննդ. ԽԹ 11):

Պատասխան. Այն է, որ հրամայում է Տէրը. «Ես որթն եմ, դուք՝ ուռը» (Յովհ. ԺԵ 5), այսինքն՝ մեր հաւատի որթն ու հիմքը Քրիստոսն է, ուռը՝ նրան հաւատացող առաքեալները, իսկ ոստը՝ նրանց քարոզները, որոնք համակում են մերձաւորներին, իսկ ոստին կապուածը՝ հաւատացեալ ժողովուրդը:

Եւ պէտք է իմանալ, որ երեք կերպ են զանազանւում բանական կապերը՝ հոգեկան, մարմնական, միջակ:

Հոգեկանը բաժանւում է չորսի. Հաւատի ու յոյսի կապ, Սիրոյ կապ, Երկիւղի կապ, Աստծոյ պատուիրանների կապ:

Եւ այս չորս կապերով ենք ընկալում Աստծուն անքակտելիօրէն, ըստ այդմ՝ «Ո՞վ կարող է զատել մեզ Քրիստոսի սիրուց. նեղութի՞ւնը, թէ՞ անձկութիւնը» (Հռոմ. Ը 35) եւ այլն:

Մարմնական կապն էլ բաժանւում է չորսի. արիւնակցական կապ, ինչպիսին ընտանիքում է: Ամուսնութեան կապ, որ պսակի օրհնութիւնն է: Ցանկութեան կապ, ինչպիսին մեղքերինն է: Ունեցուածքի կապ, ինչպիսին վարձակալողներինն է:

Միջակ կապերն էլ չորս տեսակ են:

Ուսումնական, ինչպիսին աշակերտներինն է: Կրօնական, ինչպիսին կարգ ստացածներինն է: Ուխտի, ինչպիսին բարեկամներինն է: Հարկադրական կապ, ինչպիսին հնազանդուողներինն է:

Եւ հնարաւոր է միմեանց հետ ունեցած բոլոր այս կապերը փոխարինել Աստծոյ հետ ունեցած կապով, ինչպէս ասենք հաւատով, սիրով, երկիւղով եւ նրա օրէնքներով: Նոյն կերպ եւ՝ մարմնական կապերով, որովհետեւ [Տէրը] ազգակից է մեզ ու հոգեւոր փեսայ, եւ ձգտում ենք նրան՝ ակնկալելով հատուցման վարձ: Նաեւ՝ միջակ կապերով, որովհետեւ սովորում ենք Աստծուց ստացուած կրօնական կարգը եւ ունենք ուխտ, հաշտութիւն ու հնազանդութիւն նրա հանդէպ. «Որովհետեւ մեր անձի տէրը չենք, քանի որ գնով գնուեցինք» ըստ առաքեալի (Ա Կորնթ. Զ 20):

Սրանցից բացի կայ եւ այլ կապ. Անձնական, ինչպիսին հոգու եւ մարմնի [կապն] է. Բնութենական, ինչպիսին ցասման եւ ցանկութեան [կապն] է. Կենդանութեան, ինչպիսին ջերմութեան եւ շնչի [կապն] է. Մասնական, ինչպիսին մասի ու ամբողջի [կապն] է:

Կան նաեւ իմաստասէրների նախանշած կապեր.

Էական, ինչպիսին էականի եւ պատահականի [կապն] է.

Սեռի, որի [կրողը] կենդանին է.

Տեսակի, ինչպէս մարդն է.

Որակի, ինչպէս բանական լինելն է.

Պատահական, ինչպիսին ագռաւի սեւութիւնն է:

Իսկ առանձնայատուկ [կապերի] մասին ասուեց:

Կայ նաեւ մեղքերի կապ, ըստ այդմ՝ «Իրենց ձեռքի գործերով են կապուելու մեղաւորները» (Սղմ. Թ 17):

Եւ կայ պատժի կապ, ըստ այդմ՝ «Կապեցէ՛ք դրա ձեռքերն ու ոտքերը» (Մտթ. ԻԲ 13):

Թ՛է հոգու, եւ թ՛է մարմնի համար կան մեղք եւ պատիժ: այս մասին է ասում Տէրը, թէ՝ «Կապուած երկրում եւ երկնքում» (Մտթ. ԺԶ 19):

Այսքանն այս մասին:

ԶԳԵՍՏ Է ԿՈՉԻՈՒՄ ՄԱՐՄԻՆԸ
Պրակ Ի

Հարց. Ինչո՞ւ է զգեստ կոչւում փրկչական մարմինը:

Պատասխան. Այնպէս, ինչպէս մենք էլ «զգեստը» համանուն ենք [համարում], որովհետեւ զգեստ է կոչւում եւ արտաքին հանդերձը, որ ծածկում է մարմինը, զգեստ է կոչւում նաեւ մարմինը, որ ծածկում է հոգին, ընդ որում Ադամի մաշկեղէն հանդերձը, որ արտաքին զգեստն էր, մարմնի համար է ասւում:

Եւ այսպէս են զանազանւում դրանք. մարմինը մեր գոյացական զգեստն է, իսկ հանդերձը՝ պատահական: Մարմինը անփոփոխ է հանդերձը՝ փոփոխական: Այդպէս էլ եւ մեր Տիրոջը:

Նախ, [նրա] մարմինը զգեստ է կոչւում՝ գոյացական, անփոփոխ, անքակտելի միաւորութեամբ, որովհետեւ

մարմնի եւ Բանի տրոհման [դէպքում] չի լինի Քրիստոս, ինչպէս որ հոգին եւ մարմինը բաժանուելիս մարդը չի լինում:

Երկրորդ՝ Քրիստոսի, արտաքին եւ փոփոխական զգեստ են կոչւում նրա հաւատացեալ անդամները, սուրբ եկեղեցին, ըստ այդմ՝ «Կենդանի եմ ես,- ասում է Տէրը,- որովհետեւ ձեզ հագայ իբրեւ հանդերձ» (հմմտ. Յովհ. ԺԴ 19):

Եւ սրանցից բացի, զգեստ են կոչւում բնակութեան անմատոյց լոյսերը եւ անիմանալի խաւարը, ըստ այդմ՝ «Բնակուած է անմատոյց լոյսերում» (Ա Տիմ. Զ 16) եւ «Խաւարը դարձրեց իրեն ծածկոյթ» (Սղմ. ԺԷ 12):

Պէտք է իմանալ նաեւ սա, որ Տէրը մկրտութեան միջոցով մեզ համար կոչւում է փրկութեան զգեստ եւ ուրախութեան պատմուճան, ըստ այդմ՝ «Ի Քրիստոս մկրտուածներդ զգեստաւորուած էք Քրիստոսով» (Գաղ. Գ 27):

Մենք էլ նրա զգեստ ենք կոչւում, որովհետեւ նրա սեփական անդամները եւ մարմնի ոսկորներն ենք: Եւ նա մեզ կրում է սիրով, իսկ մենք զգեստաւորւում ենք նրանով՝ հաւատով ու յոյսով:

Իսկ Քրիստոսի գոյացական մարմինը վայելչական զգեստ է կոչւում, ըստ որում՝ «Տէրը թագաւորեց՝ վայելչութիւն հագաւ» (Սղմ. ՂԲ 1): Եւ որովհետեւ ծածկոյթ է աստուածութեան համար: Եւ որովհետեւ առանձին դէմքով է հանդէս գալից: Եւ որովհետեւ զգեստը յետոյ է հագնողից:

Այդպէս էլ ահա մարմնի զգեստն ենք կոչում, սակայն արտաքին զգեստը, ինչպէս թագաւորի ծիրանին, տարանջատուած է հագնողից եւ պատահականութիւն է նրա համար ու փոփոխական, մինչդեռ [այդպիսի] զգեստ չի ասւում նրա մարմինը, այլ՝ սուրբ եկեղեցի, ինչպէս ասուեց:

Ահա այսպէս ճիշտը իմացիր, որ երբեմն տաճար ենք կոչում մարմինը, որովհետեւ երկու [պատճառ] կայ տաճար [անուանելու]. նախ որովհետեւ տաճարը միաւորուած է, ինչպէս մեր մարմինն է տաճար անուանւում մեզ համար, ըստ այդմ՝ «Մեր շինուածքի տաճարը քանդուելու է» (Բ Կորնթ. Ե 1): Եւ տաճարը զատորոշուած է, ինչպիսին մեր առանձին բնակարաններն են: Այսպէս էլ մեր Տէրն է կոչւում տաճար, իբրեւ արտաքին բնակարան, ինչպէս Կոյս Մարիամը, հաւատացեալ ժողովուրդը եւ տաճարների շինութիւնները:

Եւ տաճար է կոչւում մարմինը՝ անբաժանելիօրէն միաւորուած Բանին: Նախ՝ քանի որ Աստծոյ մարմին է, ուստի տաճար է կոչւում իբրեւ սրբութիւններ բովանդակող եւ այդպէս է կոչւում անշփոթելի միաւորութեան համար:

Երկրորդ՝ որովհետեւ ամբողջութեամբ է Բանն-Աստուած՝ մարմնի մէջ եւ ոչ մասամբ, ըստ այդմ՝ «Նրանում է մարմնապէս բնակւում աստուածութեան ողջ լրումը» (Կողոս. Բ 9), այսինքն՝ էութիւնը: Իսկ արտաքին տաճար իբրեւ բնակարան եւ նրանից զատորոշուած [մաս]՝ չկայ ու չի ասւում:

Կայ նաեւ այս բանի մէկ այլ՝ պայծառ բացատրութիւն. ըստ այդմ

զգեստ եւ տաճար է կոչւում ոչ թէ ուղղակի Քրիստոսի՝ աստուածութիւնը, որ չբաժանուեց մարմնից ո՛չ մահուան ժամանակ, ո՛չ գերեզմանում, այլ տաճար ու զգեստ է կոչում բանական հոգու ամէն մի մարմին, ինչպէս իւրաքանչիւր մարդունը: Ուստի ակնյայտ է, որ այս կերպ մարմինը բաժանուեց հոգուց, իսկ աստուածութիւնը անբաժանելի մնաց հոգուց եւ մեռած մարմնից:

Այսքանն այս մասին:

ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ԼԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԱ

Հարց. Ի՞նչ է [նշանակում ասելը]՝ «Առաւել է քո օրհնութիւնը, քան մշտնջենաւոր լեռները եւ յաւիտենական բլուրները» (Ծննդ. ԽԹ 26):

Պատասխան. Նախ, մշտնջենաւոր լեռներ եւ բլուրներ են կոչւում երկինք բարձրացած եւ անդրդուելի մնացած հրեշտակների դասերը: Նրանց մասին ասում է. «Դու սքանչելի լուսատու ես յաւիտենական լեռների» (Սղմ. ՀԵ 5), եւ նրանք Աստծոյ կամքով օրհնուեցին անմահութեամբ:

Երկրորդ՝ նահապետները եւ մարգարէներն են կոչւում լեռներ ու բլուրներ՝ մշտնջենական վարքով եւ անդրդուելի աստուածապաշտութեամբ:

Երրորդ՝ արարչագործութիւնը լեռներով ու բլուրներով իրագործելն է, որովհետեւ լեռներն ու բլուրները աշխարհի հիմքն ու բուրգերն են, որի համար օրհնուեց նրանց անշարժութիւնը, ըստ այդմ՝ «Ազգ է գալիս, ազգ է գնում, իսկ երկիրը յաւիտեան կայ» (Ժող. Ա 4):

Չորրորդ, նախաստեղծներին օրհնեց Ադինայ լեռան վրայ եւ ասաց՝ «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք ու լցրէ՛ք երկիրը» (Ծննդ. Ա 22):

Հինգերորդ, երբ Մասիս լեռան վրայ Նոյը ելաւ տապանից, Աստուած օրհնեց նրան ու նրա որդիներին, ինչպէս վկայում է Գիրքը՝ դարձնելով նրանց հայր ու մարդկային ցեղի սերմ:

Վեցերորդ՝ Աբրահամին օրհնեց ամուրհացիների լեռան վրայ՝ Իսահակին զոհաբերելու ժամանակ եւ ասաց. «Այո՛, օրհնելով օրհնում են քեզ ու քո զաւակներին իբրեւ երկնքի աստղեր» (Ծննդ. ԻԲ 17):

Եօթներորդ՝ իր մարդեղութեան ժամանակ նստեց Ձիթենեաց [լեռան] վրայ եւ աւետարանեց երանութեան մասին:

Ութերորդ՝ իսկ Թաբոր լեռան վրայ յայտնեց իր աստուածութեան մասին եւ օրհնեց:

Իններորդ՝ Ձիթենեաց լեռան վրայ գիշերն անցկացնելով եւ աղօթելով օրհնեց:

Տասներորդ՝ լեռան վրայ փորձութեան ժամանակ կործանեց բոլոր անէծքների պատճառը եւ առաջին անէծքը օրհնութեան փոխեց:

Եւ այսպէս, սրանց օրհնութիւնների տեղերը կան եւ մնում են մշտնջենական յիշատակութեամբ:

Սրանցից բացի եւ սրանցից դուրս մարգարէն Սուրբ Երրորդութիւնը պարարտ լեռ է կոչում (Սղմ. ԿԷ 16), իսկ մեր

բնութիւնը՝ հողեղէն լեռ, վկայելով, որ Հօր կամքով նրա վրայ յօժարութեամբ իջաւ աղաւնակերպ Սուրբ Հոգին եւ անքակտելիօրէն միանալով Բանին՝ եղաւ ամուր մշտնջենական լեռ, որը բարձրացաւ ու վեր ձգուեց օրհնութեամբ եւ անեզր յաւիտենականութեամբ՝ «Որովհետեւ նրան են ծնրադրում բոլոր երկնաւորները եւ երկրաւորները, ու բոլոր լեզուները խոստովանում են նրան Տէր Յիսուս Քրիստոս՝ ի փառս Հօր Աստծոյ» (Փիլիպ. Բ 10):

Սա առաւել մեծ օրհնութիւն է, քան հրեշտակներինը եւ մարդունը:

ՅՈԲԻ ՄԱՍԻՆ[357]
Պրակ ԻԲ

Հարց. Ո՞ր դարում կամ ո՞ր ազգից էր համբերատար Յոբը:

Պատասխան. Երանելի Յոբը Մովսէսի ժամանակակիցն էր՝ հարիւր տարուց աւելի կամ պակաս: Եւ երկար ապրելով՝ հասաւ մինչեւ Եգիպտոսից դուրս գալու [ժամանակին]: Եւ Եսաւի ազգից էր՝ Բասեմաթ կնոջից, որ Իսմայէլի դուստրերից էր եւ Աբրահամի հինգերորդ ծնունդն էր հետեւեալ [կարգով]. Աբրահամ, Իսահակ, Եսաւ, Ռաքուէլ, Զարեհ, Յոբ: Նրա մօր անունը Բոսոր էր:

Եւ սկզբում կոչւում էր Յոբաբ, որ [նշանակում] է Աստծոյ սիրելի, եւ [յետոյ] կոչուեց Յոբ, որ նշանակում է հայր, եւ եղաւ համբերութեան հայր:

Հարց. Ո՞վ է գրել Յոբի գիրքը:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ նրա բարեկամները՝ Ելիփազը, Սովփարը, Բաղդատը, որ Եսաւի ազգից էին, ովքեր եկան մխիթարելու նրա վշտերը եւ յետոյ գրեցին [նրա պատմութիւնը], որի մասին ինքն ասում էր. «Ո՜վ կգրի իմ պատմութիւնն իբրեւ յաւիտենական յիշատակ» (Յոբ ԺԹ 23):

Ուրիշներն էլ ասում են, թէ Մովսէսը գրեց՝ ի յանդիմանութիւն Յակոբի որդիների, ովքեր օրէնքն ստացան, սակայն չպահպանեցին եւ Աստծոյ բոլոր երախտիքները մոռացան:

Ոմանք էլ վերագրում են Եզրին, մի մասն էլ՝ Երեմիային:

Ուրիշներն էլ, թէ՝ Սողոմոնն է, որովհետեւ շարադրանքը չափով տնատուած է Սողոմոնի գրուածքի նման: Ասում են նաեւ, որ երբ Յոբի սենեկապետը փախաւ Պարսկաստան, այնտեղ պատմեց Յոբի մասին զրոյցը, որը գրի առան իրենց գրով, իսկ Սողոմոնը յետոյ բերել տուեց եւ սուրբ մատեանի [մէջ դրեց]:

Իսկ որ ճշմարիտն է, ասում են Մովսէսն է շարադրել իբրեւ պատմութիւն, իսկ Սողոմոնը չափածոյի վերածել՝ ինչպէս իր խօսքը: Յետոյ, երբ գրքերը կորստեան են մատնուել հրէաների կողմից, Աստծոյ հոգով գրել է նաեւ Եզրասը:

Եւ սքանչելի Յոբն առաջ էր, քան օրէնքները, բայց [նրա գիրքը] գրուեց օրէնքներից յետոյ: Իր հետ նա բերեց Աւետարանի ճշմարտութիւնը, որովհետեւ նրա մասին վկայում է Աստուած՝

«Այր,- ասում է,- ճշմարիտ, արդար, անարատ, աստուածապաշտ եւ հեռացած ամէն տեսակ չարից» (Յոբ Ա 1), ով սատանայի փորձութիւնից յաղթանակած դուրս եկաւ:

Եւ ունէր եօթ որդի ու երեք դուստր՝ բարեպաշտութեամբ իրեն նման եւ ամէն օր ըստ նրանց թուի տասը զոհ էր մատուցում եւ մի արջառ էլ՝ մտքերի մաքրութեան համար:

Եւ նա նիւթապէս շատ հարուստ էր. ունէր եօթ հազար ոչխարի հօտ, երեք հազար ուղտ, հինգ հարիւր լուծ եզներ, դաշտի հինգ հարիւր մատակ էշեր: Նմանապէս ունէր բազում կահկարասի, արծաթեղէն, հարստութիւն:

Եւ փորձութեան ժամանակ երկնքից ընկած հուրը այրեց հօտը: Ասպատակողներն աւարի մատնեցին ուղտերի հօտը, էշերին, եզներին: Հողմը կործանեց տունը եւ սպանեց որդիներին սեղանի վրայ:

Իսկ նա գոհանում էր Տիրոջից ու ասում. «Տէրը տուեց, Տէրն էլ առաւ, ինչպէս որ հաճոյ է նրան: Մերկ եկայ մօրից, մերկ էլ կգնամ մայր գերեզման» (Յոբ Ա 21):

Հարց. Դեւերը կարո՞ղ են հուր վայր բերել եւ փոփոխել տարերքը:

Պատասխան. Ո՛չ, չեն կարող դեւերը փոփոխել տարերքը եւ հուր, շանթ, կամ մէկ այլ բան վերցնել տարրերից, ինչպէս կարծում են ոմանք: Սակայն իրենք են փոխւում հրի կամ հողմի, որովհետեւ ինչպէս ասում է առաքեալը՝ «Հրեշտակները նմանւում են լոյսի»՝ (Բ Կորնթ. ԺԱ 14) մարդկանց վնասելու համար, ինչպէս վարուեցին Յոբի տան հետ:

Հարց. Ի՞նչ է այն, որ Յոբի որդիներն իրենց ծննդեան օրը միասին հաւաքուելով՝ ուրախութիւն էին անում:

Պատասխան. Բազմաթիւ խորհուրդներ ունի:

Նախ այն, որ ինչպէս բոլոր շինական մարդիկ իրենց զաւակների ծնունդը մէկ օրում են նշում՝ այն անուանելով «տղարուք»: Իսկ թագաւորներն ամէն տարի նոյն օրը ուրախութիւն են անում՝ ուտում, խմում՝ ի վայելումն մարմնի, ինչպէս վարւում էին Փարաւոնն ու Հերովդէսը:

Երկրորդ՝ արդարները սա յամօթ չարի են անում, որ մեղքերի պատճառով հնարեց մահուամբ մարդկանց վերացնելու [միտքը], իսկ Արարչի հրամանով ծնունդով շարունակւում ու յարատեւում է բնութիւնը, որի պատճառով ծննդեան օրը հաւաքւում եւ օրհնում են Աստծուն եւ ուրախանում մարմնով, ինչպէս որ Յոբի որդիներն ու դուստրերն էին հաւաքուած գալիս եւ ուրախանում՝ ըստ Գրքի:

Երրորդ, հաւաքւում եւ գոհանում են Աստծուց, որ ոչինչից գոյաւորեց մարդուն եւ դուրս բերեց արգանդի խաւարի եւ մեզ մարմնական հարստութիւն տուեց:

Այս պատճառով էլ ունեցուածքից զոհաբերութիւն անելով եւ աղքատներին կերակրելով՝ գոհութիւն են յայտնում Աստծուն:

Չորրորդ՝ մեր յարութեանն խորհուրդն է [պարունակում], որ վերստին յարութիւն տալով գերեզմանի խաւարից՝ լոյսի մէջ է տանում՝ ուրախութեամբ զարդարելով ու փառաւորելով:

Ուստի այդ օրը հաւաքւում, փառք ու պատիւ ենք տալիս մեր Աստծուն, որ իր փառաւորողներին յաւիտեան փառաւորի:

Հարց. Ինչո՞ւ Յոբը ուրախութիւնից յետոյ տասը զոհաբերութիւններով մաքրում էր որդիներին եւ մի արջառ էլ մտքերի մեղքերի համար էր զոհաբերում:

Պատասխան. Նախ, որովհետեւ տասը զաւակ ունէր՝ եօթ որդի եւ երեք դուստր, ու նրանց թուին [համապատասխան զոհեր] էր մատուցում:

Երկրորդ՝ նրանց տասը զգայարանները մաքրելու համար:

Երրորդ՝ տասնաբանեան օրէնքի խորհրդով տասը զոհաբերութիւն էր անում, իսկ Քրիստոսի նմանութեամբ, որ մեր մեղքերի համար մեռաւ, մի արջառ էր զոհաբերում:

Չորրորդ՝ որովհետեւ գինարբուքի ժամանակ տասը մեղքեր էին գործւում: Նախ՝ շատակերութիւնը, երկրորդ՝ հարբեցողութիւնը, երրորդ՝ զգայական հրապուրանքը, չորրորդ՝ մարմնի հեշտանքը, հինգերորդ՝ մտքի անկայունութիւնը, եօթներորդ՝ խօսքի այլայլուելը, եօթներորդ՝ նաեւ գործինը, ութերորդ՝ իմաստունին յիմար է դարձնում, իններորդ՝ խռովում է հանդարտի [անդորրը], տասներորդ՝ Աստծոյ պատուիրաների դժուարութեամբ կատարելը, որի պատճառով առաքեալն ասում է. «Մի՛ արբէք գինով, որ զեխութեան պատճառ է» (Եփես. Ե 18):

Ահա սրա համար էր Յոբը տասը զոհաբերութեամբ մաքրում տասը մեղքերը, որոնք գործւում էին գինարբուքի ժամանակ ու մի արջառ էլ՝ ակամայ եւ մտքի մեղքերի համար: Այս պատճառով էլ մարգարէն աղօթում էր՝ «Իմ գաղտնիքներից մաքրի՛ր ինձ, Տէր» (Սղմ. ԺԸ 13):

Հարց. Յոբի որդիները, որոնք մեռան, արդա՞ր էին, թէ՞ ոչ:

Պատասխան. Երեւում է, որ՝ ոչ, քանի որ ուտելու եւ խմելու ժամանակ մեռան, որոնք մեղքեր են, սակայն ասեմ, որ նրանք արդարների շարքում են՝ երեք պատճառով:

Նախ՝ նրանց հայրը բարեպաշտութեամբ էր դաստիարակում նրանց, որ Աստծոյ մօտ արդար լինել է համարւում:

Երկրորդ՝ ամէն օր զոհաբերութեամբ մաքրում էր նրանց:

Երրորդ՝ թշնամու ձեռքով նահատակուեցին, ինչպէս բոլոր մարտիրոսները, այդպէս էլ նրա բոլոր սպասաւորները, ծառաները, որոնք սրի ու հրի զոհ դարձան:

Իսկ այն, որ ասում են, թէ հարբեցողութեան ժամանակ մահացան, ապա ասենք, որ եթէ ամէն օր նրանց մեղքերը մաքրւում էին զոհի արիւնով, ապա այդ օրը՝ իրենց արեամբ:

Հարց. Քանի՞սն էին Յոբի փորձութիւնները:

Պատասխան. Եօթն էին:

Նախ՝ եզների լծի եւ սպասաւորների մահուան գոյժը, եւ գուժկան էր ներկայանում մի դեւ՝ Յոբի ծառաներից մէկի կերպարանքով:

Երկրորդ՝ հուրը, որ այրեց հօտը: Երրորդ՝ ուղտերի երամակի կորելը: Չորրորդ՝ զաւակների մահը: Հինգերորդ՝ մարմնի հիւանդութիւնները:

Վեցերորդ՝ կնոջ չար խրատն ու վէճը:

Եօթներորդ՝ բարեկամների թշնամանքը՝ երկարատեւ հակառակութեամբ:

Այսպիսով, եօթն էին հարուածները. առաջին՝ եզները, երկրորդ՝ էշերը, երրորդ՝ ուղտերը, չորրորդ՝ անասունների ոչնչանալը, հինգերորդ՝ սպասաւորների մեռնելը, վեցերորդ՝ զաւակների մահը, եօթներորդ՝ մարմնի հարուածները:

Ոմանք էլ ասում են հինգն են. առաջին՝ առօրեայ ունեցուածքը, երկրորդ՝ զաւակների մահը, երրորդ՝ մարմնի հարուածները, չորրորդ՝ կնոջ վէճը, հինգերորդ՝ բարեկամների հակադրուելը:

Հարց. Ինչո՞ւ Յոբը նստեց մոխրի մէջ:

Պատասխան. Որովհետեւ ամբողջ մարմինը պատուել էր կեղով ու թարախով ծածկուած խոցերով, ու չէր կարողանում ոտքի կանգնել, ոչ սողալ, ոչ որեւէ տեղից բռնել, ուստի աննկարագրելի հարուածներ ստացած՝ նստել էր փողոցի մոխրի մէջ:

Իսկ համաձայն մտքի՝ խորհուրդները վեցն են:

Նախ, որ մոխիր է մարմինը եւ արագ անցնելով՝ դէպի մոխիրն է ընթանում. «Հող էիր, հող դարձի՛ր» (Ծննդ. Գ 19):

Երկրորդ՝ այնքան խոնարհուեց, որ իր աթոռից ընկաւ հեզութեան եւ մոխրի մէջ:

Երրորդ՝ որ մարմնին յիշեցնի, որ մոխրի բնոյթն ունի եւ ոչ աւելի:

Չորրորդ՝ արժանի եղաւ, որ ցորենի հատիկի նման թաղուի մոխրի, այսինքն՝ հողի մէջ, եւ պարարտանալով՝ հասնի պտղաբեր հունձքի:

Հինգերորդ՝ հպարտացողի դէմ էր, որ խորհեց իր աթոռը ամպերի մէջ դնել եւ ընկաւ երկիր: [Յոբը] խոնարհուեց հողին, յետոյ ելաւ երկինք:

Վեցերորդ՝ Ադամի խորհուրդն ունէր, որ ընկաւ փշաբեր երկիր. Յոբն էլ ընկաւ հողի ու մոխրի մէջ:

Իսկ, որ թարախը խեցիով մաքրեց, նախ, որ կաւով քերում էր կաւը, որ մարմնի նիւթն էր:

Երկրորդ՝ խեցիով մաքրում էր խեցեղէն անօթը, որ թրծուած էր Աստծոյ զօրութեամբ:

Երրորդ՝ տեսակով ապաքինում էր տեսակը եւ բժիշկ չէր խնդրում, որպէսզի մարդկանց կողմից իրեն օգնութիւն չլինի: Եւ չէին էլ գալիս, որովհետեւ ախտերից տկարացել էին նրանց հմտութիւնները:

Չորրորդ՝ խեցիով մաքրում էր մարմինը, իսկ աղօթքներով՝ միտքն ու հոգին:

Հարց. Ի՞նչ է նշանակում ասելը՝ «Կրկնելով այն» (Յոբ Բ 4):

Պատասխան. Նախ նշանակում է պատասխանը, որովհետեւ հարցի յարաբերութեամբ պատասխանը երկրորդն է:

Երկրորդ՝ նշանակում է հակադրուելը եւ կրկնելը:

Երրորդ՝ նշանակում է մտքի գողութիւն, նոյնը կրկնելը եւ պատասխանը իմաստափոխելը:

Չորրորդ՝ յաւելումն էր առաջին խօսքի:

Արդ, առաջինն ու վերջինը Յոբին ու Աստծուն էին վերաբերում, իսկ միջին երկուսը՝ Յոբի բարեկամներին եւ չար բանսարկուին:

Եւ պէտք է իմանալ, որ Յոբը, կրկնելով ասածը՝ ուղղում էր բարեկամներին, եւ սատանան ընկրկում էր, որովհետեւ այսկերպ ամէն ոք կարող է յաղթել սատանային, եթէ ընկերոջն ուղղի խօսքի, գործի կամ հաւատի եւ այլ բաների մէջ. այդ դէպքում սատանան կշփոթուի եւ կհեռանայ: Իսկ երբ ընկերոջը շեղում ենք չար յաղթութեամբ, այդ դէպքում սատանան է ուղղութիւն [տալիս] եւ ուրախանում:

Եւ Յոբը սատանային երկու կերպ յաղթեց՝ խօսքի գոհութեամբ եւ գործի համբերութեամբ: Այս երկուսը անհրաժեշտ են իւրաքանչիւր մարդու՝ թշնամու դէմ պատերազմելիս:

Նա յաղթեց սատանային նաեւ նրանով, որ գիտակցեց նրա չար հնարքները եւ ընդդէմ նրանց պատասխանեց, ինչպէս կնոջը, բարեկամներին, գուժկաններին, որովհետեւ գիտէր, որ [ուղարկուած էին] բանսարկուի կողմից: Եւ մենք էլ պէտք է իմանանք խորամանկի զանազան հնարքների չար խորհուրդները եւ պատասխան տանք Սուրբ Գրքի օրինակով, ինչպէս յայտնի է Եւագրի գրքից[358]:

Եւ հնարաւոր է պահքերով ու աղօթքներով յաղթել փորձողին, ինչպէս ասում է Տէրը, թէ՝ «Այս չարը ոչ այլ կերպ կհեռանայ, եթէ ոչ պահքերով եւ աղօթքներով» (Մտթ. ԺԷ 20):

Իսկ թէ մէկն ասի, եթէ այս ամէնը Յոբը կատարում էր, ինչո՞ւ [չարը] մօտեցաւ նրան, ապա ասենք, որ պահքերով ու աղօթքներով [չարը] հեռանում է մարդու մարմնից ու չի լլկում, իսկ մարդու հոգուց դեւերին հեռացնում է երկու բան. խոնարհութիւնը եւ ճշմարտութիւնը, որովհետեւ այս երկուսն էլ սատանան չունի ու խրտնած փախչում է [դրանցից] եւ ատում դրանք:

Այսպիսով եղաւ ընդամէնը հինգ զէնք, որով յաղթում ենք թշնամուն:

Նախ՝ ընկերներին ուղղելը:

Երկրորդ՝ գոհանալն ու համբերելը:

Երրորդ՝ սատանայի չար խորհուրդներն իմանալը:

Չորրորդ՝ աղօթքները եւ պահքերը:

Հինգերորդ՝ խոնարհութիւնն ու ճշմարտութիւնը, որ բոլոր զէնքերից գերագոյնն են եւ իսպառ ոչնչացնում են չարին, որ մայրն է ստի եւ հպարտութեան:

Այսքանն այս մասին:

Հարց. Ինչո՞ւ բարեկամներն այդքան հակառակուեցին Յոբին:

Պատասխան. Չորս պատճառով:

Նախ, որ նրանց դրդել էր բանսարկուն, ինչպէս երբեմն կնոջ ձեռքով է անում, եւ բարեկամների միջոցով պայքարում էր Յոբի դէմ:

Երկրորդ՝ կամենում էին ապացուցել, որ սուտ է Աստծոյ վկայութիւնը Յոբի մասին, որ նա արդար եւ անարատ այր է:

Երրորդ՝ կարծում էին, թէ բարի ու չար գործերի հատուցումը այստեղ՝ մարմնով է լինում:

Չորրորդ՝ կամենում էին իրենց արդար ցոյց տալ, իսկ Յոբին՝ յանցաւոր, ուստի վիճում էին Յոբի հետ: Իսկ երանելի Յոբը այս չորսի դէմ ընդդիմամարտում էր եւ պատասխան տալիս:

Նախ, առաջինի դէմ, որովհետեւ գիտէր, որ նրանք դրդուած էին չարասէրի կողմից եւ նրանց յաղթելով՝ յաղթեց բանսարկու սատանային, եւ դրանով մեզ օրինակ է տալիս յաղթելու սատանային նոյնպիսի արիութեամբ:

Երկրորդի համար հակառակում էր նրանց, որ սուտ չլինի Աստծոյ վկայութիւնն իր մասին, ուստի մենք էլ պէտք է սովորենք յանուն Աստծոյ վկայութեան ստանալ շատ նախատինքներ, սակայն չուրանալ, ինչպէս վկաների խմբերը նահատակուեցին:

Երրորդի մասին Յոբն ասում էր, թէ բարի եւ չար գործերի հատուցումը առհասարակ յետոյ է լինում, հանդերձեալ [կեանքում], որովհետեւ այստեղ մեղաւորներին եւ հարստութեան մէջ ապականուածներին Աստուած ներում է երկու պատճառով: Նախ՝ որ դարձի գան ու ապաշխարեն: Երկրորդ՝ եթէ չանեն՝ հանդերձեալում փակեն բերանները:

Իսկ արդարներն այստեղ նեղութեան մէջ են երկու պատճառով: Նախ՝ որ այնտեղ հեշտութեամբ մտնեն: Երկրորդ՝ յուսան այլ կեանք եւ գործերի հատուցում:

Չորրորդի մասին ասում է. «Մինչեւ մահ ձեզ արդար չեմ ասի, որպէսզի չմեղանչեմ» (Յոբ ԻԷ 5), այսինքն՝ նրանք կամենում էին, որ Յոբն իրենց արդար անուանէր, իսկ իրեն՝ յանցաւոր, սակայն չասաց, որովհետեւ եթէ նրանց, որ անիրաւ էին, արդար ասէր, կմեղանչէր ճշմարտութեան դէմ, իսկ եթէ իրեն մեղաւոր ասէր, կմեղանչէր Աստծոյ վկայութեան դէմ:

Եւ այստեղ պէտք է իմանալ, որ չորս տեսակ վնաս է հասցուում, երբ արդարին մեղաւոր են ասում ու մեղաւորին՝ արդար:

Նախ՝ ինչպէս ասում է մարգարէն՝ «Վա՜յ նրան, որ բարուն չար եւ չարին բարի է ասում»: Պատիժը, որ «վայ»-ն է, դնում է հաւասարապէս:

Երկրորդ՝ խեղաթիւրում է ճշմարտութիւնը՝ չարին բարի եւ բարուն չար ասելով:

Երրորդ՝ շողոքորթութիւն է մեղաւորին արդար ասելը, ընդ որում՝ «Տէրը ցրում է շողոքորթի ոսկորները» (Սղմ. ԾԲ 6):

Չորրորդ՝ կեղծաւորութիւն եւ խաբէութիւն է չարին եւ անիրաւին գովելը.

այդ պատճառով բարեկամներին բարի չանուանեց, որովհետեւ չար էին:

Եւ եթէ մէկն ասի, թէ՝ որ այդպիսի չար էին, ինչո՞ւ Սուրբ Հոգին նրանց խօսքերը գրեց, ապա ասենք, որ բազում շահ ու օգտակարութիւն կար նրանց խօսքերում աշխարհի արդարների ու մեղաւորների վերաբերեալ: Նախ՝ չնայած Յոբին ուղղուած նրանց խօսքերը սուտ էին, սակայն յանձինս բոլոր մեղաւորների՝ ճշմարիտ էին: Եւ ինչպէս Բաղամի էշով օգտակար բաներ ասաց եւ սուտ մարգարէի լեզուով անէծքը օրհնութեան փոխեց (տե՛ս Թիւք ԻԲ 22, 35), այդպէս էլ թէպէտ Յոբի բարեկամները դրդուած էին բանսարկուից, սակայն Աստծոյ Հոգով օգտակարն էին բարբառում: Այս պատճառով էլ գրուեցին նրանց խօսքերը Սուրբ Գրքում:

Հարց. Ինչո՞ւ բանսարկուն այդքան հակամարտութիւններ էր յարուցում Յոբի դէմ, ինչպէս կնոջ, բարեկամների, ծառաների եւ այլոց հետ:

Պատասխան. Նախ, նրան ամբարիշտ համարելով՝ վերացնի նրա ժուժկալութիւնը:

Երկրորդ՝ որպէսզի յետոյ եկող արդարները վիատուէին:

Երրորդ՝ որպէսզի Աստծոյ վկայութիւնը նրա մասին սուտ դուրս գար:

Չորրորդ՝ որպէսզի եւ բամբասողները պատիժ կրէին նրան նախատելու համար: Եւ այսպէս, ամենուրէք սատանան որոգայթներ է լարում եւ կորստի մատնում բամբասուածին կամ բամբասողին:

Հարց. Ինչո՞ւ սատանային թոյլ տրուեց մարտնչել Յոբի դէմ:

Պատասխան. Վեց պատճառով:

Նախ, որ աւելանային նրա վարձքերը: Երկրորդ՝ որպէսզի նրա գաղտնի համբերութիւնը յայտնի դառնար եւ դաս լինէր բոլորին: Երրորդ՝ որպէսզի խոնարհութիւն սովորեցնի: Չորրորդ՝ որ ախոյեան լինի եւ յաղթի հպարտացած սատանային: Հինգերորդ՝ հին Ադամի կերպարանքն իր մէջ ներկայացնի՝ անկման ախտերով: Վեցերորդ՝ եւ լինի պատկեր Քրիստոսի, որ անմեղութեամբ դատապարտուեց եւ վերադարձրեց նախաստեղծների առաջին փառքն իր ծնունդներով:

Հարց. Ինչո՞ւ Աստուած խօսեց Յոբի հետ:

Պատասխան. Վեց պատճառով:

Նախ՝ որ ունէր բոլոր առաքինութիւնները եւ դիմակայեց նախատողներին, ուստի Աստուած խօսեց նրա հետ ու մխիթարեց:

Երկրորդ՝ որպէսզի փարատի տարակուսանքը Աստծոյ դատաստանի մասին, որն անիմանալի է մարդկանց համար:

Երրորդ՝ որպէսզի սատանային յաղթելուց յետոյ չհպարտանայ, ուստի Աստուած խօսեց եւ յաղթեց խօսքով, որ տեսնի իր տկարութիւնն ու խոնարհուի:

Չորրորդ՝ որովհետեւ մարդուն ստեղծելիս Աստուած չասաց, թէ՝ բարի է,

ինչպէս մնացած բոլոր բաները ստեղծելիս: Եւ սա երկու պատճառով:

Նախ, որ բաւական էր ասել՝ «Աստուած արարեց մարդուն իր պատկերով» (Ծննդ. Ա 27), որովհետեւ Աստուած բարի է: Եւ երկրորդ՝ որովհետեւ գիտէր, որ մարդը եղծելու էր փառքը:

Արդ, այն, ինչ Ադամի մասին չասաց, ասաց Յոբի մասին ու հռչակեց նրա արդար եւ անարատ լինելը:

Հինգերորդ՝ ըստ առաջին կարգի, Յոբի բարեկամները դարձեալ պնդեցին, որ՝ «Եթէ հաճելի ես Աստծուն, կլսի ու կխօսի Աստուած» (Յոբ ԺԱ 5), այդ պատճառով էլ խօսեց նրանց առաջ ու վկայեց:

Վեցերորդ՝ Աստուած խօսեց եւ բոլոր անիմանալի գիտելիքներն արարչագործութիւնների մասին սովորեցրեց նրան՝ որ չգիտէին մարդիկ երկնքի, երկրի, ծովերի, կենդանիների լինելութեան մասին:

Հարց. Ինչո՞ւ ամպի եւ մրրիկի միջից խօսեց:

Պատասխան. Չորս պատճառով:

Նախ, որ Աստուած սովոր էր ամպերով երեւալ, ինչպէս Սինայի եւ Թաբօրի [վրայ], որովհետեւ ասում է՝ «Ամպերով էր ծածկում իր ճանապարհը» (Սղմ. ՃԳ 3):

Երկրորդ՝ ի նշան Յոբի քաղցրութեան. որտեղի՞ց են իջնում անձրեւները (հմմտ. Յոբ ԼԸ 25, 28):

Երրորդ՝ ամպի ծածկոյթը նշանակում էր Աստծոյ անճառելի բնութիւնն ու փառքը:

Չորրորդ՝ ամպերի որոտն ու մրրիկը նշանակում էին սպառնալիք բարեկամներին:

Հարց. Ինչո՞ւ երկու անգամ վկայեց Յոբի [մասին]:

Պատասխան. Երեք պատճառով:

Նախ՝ Յոբի մասին առաջին վկայութիւնն իմացան [միայն] անմարմինները, ուստի դարձեալ վկայեց, որպէսզի մարդիկ էլ լսեն: Երկրորդ՝ առաջին վկայութիւնն արդար գործերի համար էր, երկրորդը՝ նրա համբերութեան: Երրորդ՝ նշանակում է, որ արդարների գովեստն ու հատուցումը կրկնակի է լինում՝ այստեղ եւ հանդերձեալում:

Հարց. Որտեղի՞ց առաջ եկաւ Յոբի ունեցուածքը:

Պատասխան. Սուրբ Գիրքն ասում է՝ «Տէրը բազմացրեց՝ օրհնելով Յոբին» (Յոբ ԽԲ 10), եւ անպատշաճ է քննել, թէ՝ որտեղից, որովհետեւ ամենակարող է, քանզի հրաշագործեց խոյը սաբեկի ծառից (տե՛ս Ծննդ. ԻԲ 13), լորամարգը՝ ծովից (տե՛ս Ելք ԺՁ 13) եւ արծաթեայ դրամը ձկան բերանից (տե՛ս Մտթ. ԺԷ 26):

Ոմանք էլ ասում են, թէ հրեշտակի ձեռքով մէկ օրուայ ընթացքում հաւաքեց, ինչպէս որ մէկ օրում դեւերի ձեռքով ցաքուցրիւ եղաւ: Իսկ ճշմարտութիւնն այն է, որ բոլոր բարեկամները, երբ յետոյ հաւաքուեցին ու մխիթարեցին նրան, իւրաքանչիւրը բերեց մէկական միամեայ գառ եւ չորսական ոսկի եւ առանց գրութեան ընծայեց նրան՝ ցանկանալով խրախուսել, ու եղածից բազմացրեց Տէրը նրա հարստութիւնն ու անա-

սուններին, ինչպէս անապատում սակաւաթիւ նկանակները շատացրեց եւ կերակրեց բազմութեանը (տե՛ս Մտթ. ԺԵ 34-36):

Եւ այստեղ պէտք է իմանալ, որ փորձութիւններից յետոյ կրկնապատկուեց նրա ունեցուածքը. խաշները՝ մէկ բիւր եւ չորս հազար, ուղտերը՝ վեց հազար, եզների լուծը՝ հազար, արոտների էշերը՝ հազար. այդպէս եւ՝ եօթ որդիներ եւ երեք դուստրեր, որոնք առաջինների հետ եղան կրկին:

Նախ՝ որովհետեւ հոգի եւ մարմին էին:

Երկրորդ՝ յարութեան ժամանակ յարութիւն են առնելու:

Երրորդ՝ Աստծոյ մօտ կենդանի են նաեւ առաջինները:

Այսպիսով, զաւակները եղան կրկին, նոյնպէս եւ կեանքերն էին կրկին:

Հարց. Քանի՞ տարի ենթարկուեց փորձութեան:

Պատասխան. Ոմանք ասում են եօթ տարի, ըստ այդմ՝ փրկելու է վեց վշտերից, իսկ եօթներորդին չարն այլեւս չի փորձելու: [Սա] կեանքի եօթ վշտալի դարերի նմանութեամբ, իսկ ութերորդում բնութեան ազատութիւնն է[359]:

Ոմանք էլ ասում են երեսունինը տարի, ըստ այդմ, Քրիստոս բժշկեց անդամալոյծին (տե՛ս Մտթ. Թ 2-6, Մրկ. Բ 3-5):

Նրանք, ովքեր փորձութիւնների եօթ տարի են ասում, այսպէս են բերում թուերը. փորձութիւններից յետոյ Գիրքը նշում է հարիւր եօթանասուն տարի, իսկ փորձութիւնից առաջ՝ եօթանասուն տարի, ութ տարի էլ փորձութիւններն ու վերականգնուելը, այդպէս Յոբի կեանքը կլինի երկու հարիւր քառասունութ տարի:

Իսկ նրանք, ովքեր փորձութիւնների համար երեսունինը տարի են ասում, թուերը այսպէս են բերում. հարուածներից յետոյ Յոբն ապրեց հարիւր քառասուն տարի եւ դարձաւ երկու հարիւր քառասունութ, [որովհետեւ] հարուածներից առաջ եօթանասուն տարեկան էր, երեսունինը տարի տեւեցին փորձութիւնները, յետոյ կրկնապատկուեց նրա կեանքը, ինչպէս որ ողջ ունեցուածքը: Ոմանք էլ ասում են երկու հարիւր քառասունութ տարի՝ փորձութիւններից յետոյ:

Հարց. Ինչպէ՞ս է Յոբը հին եւ նոր ադամների օրինակ:

Պատասխան. Նախ, [իր] թագաւորութեամբ ունէր Ադամի փառքի պատկերը: Երկրորդ՝ թոյլ տուեց Տէրը փորձողին մարտնչել ինչպէս Ադամի, այդպէս էլ՝ Յոբի դէմ: Երրորդ՝ հակառակուեց կնոջ միջոցով: Չորրորդ՝ ընկաւ աղբանոցի մէջ, ինչպէս Ադամը՝ դրախտից՝ երկիր:

Իսկ նոր Ադամի խորհուրդը կրում էր բազում ձեւերով:

Նախ՝ փորձողին յաղթեցին ինչպէս Յոբը, այդպէս էլ մեր Տէրը:

Երկրորդ՝ որովհետեւ Յոբը եղաւ համբերութեան դիտարկուն, իսկ Տէրը մեր՝ կատարման. ըստ այդմ՝ «Լսէք Յոբի համբերութեան մասին եւ տեսէք Տիրոջ կատարածը» (Յակ. Ե 11):

Երրորդ՝ Յոբը զրկուեց պատիւներից, իսկ Տէրը մեր իջաւ երկիր եւ յանուն մեզ աղքատացաւ:

Չորրորդ՝ Յոբն Աստծոյ կողմից երկու անգամ վկայուեց արդար ու անարատ: Եւ Տէրն էլ մեր կրկնակի վկայուեց Հօր կողմից. «Դա՛ է իմ ընտրեալ Որդին» (Ղուկ. Թ 35):

Հինգերորդ՝ Յոբն ասում էր. «Իմ ձեռքում անօրէնութիւն չի եղել» (Յոբ ԺՁ 17), եւ Տէրը՝ «Ո՞վ կյանդիմանի ինձ մեղքերի մէջ» (Յովհ. Ը 46), որովհետեւ ասում է՝ «մեղք չգործեց» (Ա Պետ. Բ 22), թէեւ մեր մեղքերն իր վրայ առաւ, ինչպէս եւ Յոբը՝ ըստ բարեկամների կարծիքի ասում էր՝ «Ես մոլորուեցի» (Յոբ ԺԹ 4):

Վեցերորդ՝ Յոբը հարուած ստացաւ ողջ մարմնին, եւ մեր Տէրը՝ ձեռքերին, ոտքերին, կողերին, յետոյ էլ փշով պսակուած ապտակուեց ու գանահարուեց:

Եօթներորդ՝ Յոբը նախատուեց բարեկամներից: Եւ մեր Տէրն էլ իր ազգի կողմից տանջանքների ենթարկուեց ու չարախօսուեց:

Ութերորդ՝ Յոբը չէր անիծում, այլ աղօթքներով փրկում էր բարեկամներին: Եւ մեր Տէրն էլ յանուն խաչողների էր աղօթում:

Իններորդ՝ Յոբի մարմինը յետոյ վերականգնուեց: Եւ Տէրն էլ մեր խաչելութեամբ վերականգնեց Ադամի պատկերը, իսկ նրա ծնունդներինը՝ իր յարութեամբ:

Տասներորդ՝ Յոբի կեանքն ու պատիւները կրկնապատկուեցին: Եւ Տէրն էլ մեր առաջին փառքին տիրացաւ եւ մարմնով նստեց Հօր աջ կողմում:

Եւ Յոբի մնացած խօսքերն ու գործերը նոյնպէս նոր Ադամի օրինակով էին. չարչարանքը, թաղումը, յարութիւնը, ինչպէս ներկայացնում է նրա պատմութեան Գիրքը:

Հարց. Ո՞րն էր Օսիդ աշխարհը:

Պատասխան. Ոմանք ասում են Սիօնն է, ըստ այլոց՝ Եդոմը, ըստ ոմանց էլ՝ Արաբիան, որտեղ ասում են գտնւում է նրա գերեզմանը: Սակայն Օսիդ աշխարհը Եսաւի գաւառն է, որովհետեւ Օսիդը մէկն էր Եսաւի որդիներից, որի անունով էլ երկիրը կոչուեց Օսիդ:

Եւ [այն] գտնւում է Արաբիայի եւ Եդոմի միջեւ, որն այժմ անուանում են Թիլգուրան, որտեղ եւ նրա գերեզմանն է:

Այսքանը համառօտ Յոբի մասին:

ԳԼՈՒԽ Ի՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԵԼԻՑ ԳՐՔԻՑ ՄՈՎՍԷՍԻ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ՝ ԵՐԵՍՈՒՆ ԵՂԱՆԱԿՈՎ
Պրակ ԻԳ

Արդ, բազում եղանակներով է համեմատւում մեծն Մովսէսը մեր Փրկչի՝ Քրիստոսի հետ, ընդ որում ասում էր՝ «Տէրը ձեզ մարգարէ կտայ ինձ նման, նրան լսեցէ՛ք» (Բ օր. ԺԸ 15):

Առաջին, ինչպէս Մովսէսը ծնունդով փրկուեց Փարաւոնի արուախեղդ սպանդից, այդպէս էլ մեր Տէր Քրիստոս՝ Հերովդէսի մանկասպան ջարդից:

Երկրորդ՝ Մովսէսը քարոզում էր ժողովրդին, թէ՝ «Ձեր հայրերի Աստուած ուղարկեց ինձ» (Ելք Գ 15) եւ կոչ էր անում

երկրպագել նրան: Եւ Քրիստոսը քարոզում էր իբրեւ Հօր կողմից առաքուած եւ պատուիրում էր հաւատալ Հօրը:

Երրորդ՝ Մովսէսը տասը հարուածներով տանջեց եգիպտացիներին, իսկ Քրիստոս իսրայէլացիների մէջ իր խնամարկեալների մարմինները բժշկում էր տասը հրաշագործութիւններով, այսինքն՝ նախ՝ կոյրերին տեսողութիւն էր տալիս, երկրորդ՝ խուլերին՝ լսողութիւն, երրորդ, համրերին՝ խօսելու ունակութիւն, չորրորդ՝ ձեռքերին՝ շարժում, հինգերորդ՝ կաղերին՝ քայլել, վեցերորդ, անդամալոյծին՝ միանգամից ապաքինում, եօթներորդ՝ բորոտներին՝ մաքրութիւն, ութերորդ՝ հիւանդների եւ ջերմողների ողջ մարմնին՝ առողջութիւն, իններորդ՝ հանում էր դեւերին, տասներորդ՝ յարութիւն էր տալիս մեռեալներին:

Եւ ակնյայտ է, որ Քրիստոսի հրաշագործութիւններն առաւելագոյն մարդասիրական շնորհներ էին, քան Մովսէսինը, որովհետեւ սա խաւարով տանջում էր, իսկ Քրիստոս կոյր աչքը լուսաւորում էր:

Նա վէրքերով ու որդերով էր պատում նրանց մարմինները, իսկ Քրիստոս մարմինները մաքրում էր բորոտութիւնից ու ցաւերից: Նա մահ էր տալիս անդրանիկներին, Քրիստոս՝ մեռելներին յարութիւն: Սա երրորդ համեմատութիւնն է:

Չորրորդ՝ նա զատկին գառներ մորթեց, որով ազատուեցին փարաւոնից, իսկ Քրիստոս՝ Ճշմարտութեան Գառը, զոհաբերուեց եւ մեզ ազատեց սատանայից:

Հինգերորդ՝ Մովսէսը ծովը ճեղքեց, իսկ Քրիստոս՝ վրայով քայլեց:

Վեցերորդ՝ Մովսէսը դառը ջուրը քաղցրացրեց եւ գետը արիւն դարձրեց, իսկ Տէրը ջուրը գինու փոխեց, իսկ գինին՝ իր Սուրբ արեանը:

Եօթներորդ՝ Մովսէսը քառասուն օր պահքի մէջ էր լեռան վրայ, իսկ մեր Տէրը՝ քառասուն օր՝ փորձութեան լեռան վրայ:

Ութերորդ՝ Մովսէսը, քառասուն օր ամպերի մէջ մնալով՝ առաւ պատուիրանները, իսկ Տէրը յարութիւնից յետոյ քառասուն օր՝ օդի վրայ:

Իններորդ՝ նրա երեսը լուսաւորուեց Սինա լեռան վրայ, Տիրոջը՝ Թաբօրի:

Տասներորդ՝ Մովսէսը եռայարկ խորան կանգնեցրեց չորս նիւթերից, իսկ Քրիստոս՝ Դաւթի հարկը, որ եկեղեցին է, չորս առաքինութիւններով Աստծոյ եռաբնակ օթեւան կազմեց:

Տասնմէկերորդ՝ Մովսէսը ոչնչացրեց առաջին տախտակը եւ նոր օրէնքներ գրեց, իսկ Քրիստոս հրէաներին ցրեց եւ օրէնքները դրեց հեթանոսների՝ նոր ժողովրդի սրտում:

Տասներկուերորդ՝ Մովսէսը եօթանասուն ծերեր ընտրեց եւ աւանդեց հոգին, եւ Տէրն էլ՝ իր եօթանասուն աշակերտներին:

Տասներեքերորդ՝ նա տասներկու իշխաններով առաջնորդեց տասներկու ցեղերը, եւ Տէրն էլ տասներկու առաքեալներով քրիստոնեայ ազգերին երկինք հրաւիրեց:

Տասնչորսերորդ՝ Մովսէսը մանանայ հաց եւ ծովի լորամարգ տուեց, իսկ մեր Տէրը բազմացրեց հացը եւ ծովի ձուկը՝ ապերախտ ազգի համար:

Տասնհինգերորդ՝ նա վէմից ջուր բխեցրեց. եւ «Վէմ էր Քրիստոս» (Ա Կորնթ. Ժ 4)՝ ըստ առաքեալի: Ու Տիրոջ կողերից բխեցին աղբիւրներ՝ հագեցնելու ծարաւածներին եւ լուանալու համար ապականուած հոգիները:

Տասնվեցերորդ՝ Մովսէսը թլփատութիւնն ու ջրով լուացուելը տուեց, իսկ Քրիստոս խնայելով եկեղեցին՝ փոխեց մկրտութեան:

Տասնեօթներորդ՝ Մովսէսը մի անգամ պատարագեց, ապա փոխանցեց Ահարօնին ու որդիներին: Եւ մի անգամ էլ կատարեց Տէրը Վերնատանը, ապա փոխանցեց առաքեալներին ու եկեղեցու մանուկներին:

Տասնութերորդ՝ Մովսէսը օձը բարձրացրեց, որ օձահարներին բժշկի, իսկ Տէրն ինքը բարձրացաւ խաչ, որպէսզի բժշկէր դեւերից թունաւորուածներին:

Տասնիններորդ՝ Մովսէսը, ձեռքերը տարածելով՝ Ամաղէկին պարտութեան մատնեց[360], իսկ խաչի վրայ բազկատարած Տէրը կործանեց սատանային:

Քսաներորդ՝ նա աղօթում էր առ Աստուած հակառակուող ժողովրդի համար: Եւ մեր Տէրն էլ իրեն չարչարողների համար թողութիւն էր խնդրում Հօրից:

Քսանմէկերորդ՝ Մովսէսը չորս ծնունդ ունեցաւ. մօրից, ջրից, հրից, ժայռից: Եւ մեր Տէրն էլ ծնուեց հօրից, մօրից, Թաբոր լեռան վրայ՝ պայծառակերպութեամբ, մկրտութեամբ՝ ջրից, յարութեամբ՝ գերեզմանից: Սրանք մեզ էլ պարգեւեց. ծնուել ջրից, հրից, Հոգուց, մարմնի յարութեամբ, իսկ մօրից՝ բնականապէս:

Քսաներկուերորդ՝ Մովսէսը կոչուեց աստուած (Ելք է 1) եւ իշխում էր տարերքին: Եւ մեր Տէրն Աստուած է, որ կոչուեց Էմմանուէլ եւ իրօք աստուածային գործեր ցուցադրեց:

Քսաներեքերորդ, Մովսէսը հուր իջեցրեց, իսկ մեր Տէրը՝ Սուրբ Հոգին [իջեցրեց] առաքեալների մէջ. «Եկայ հուր գցելու» (Ղուկ. ԺԲ 49),- ասում է:

Քսանչորսերորդ՝ նա պատռեց երկիրը դադանեաների համար: Եւ մեր Տէրն էլ շարժեց երկիրը եւ բացեց գերեզմանները ու երեքժամեայ խաւար սփռեց՝ Եգիպտոսի երեքօրեայ խաւարի փոխարէն:

Քսանհինգերորդ՝ Մովսէսը կախարդների օձին կորստեան մատնեց: Եւ մեր Տէրն էլ իմանալի օձին կորստի մատնեց եւ ոտնակոխ արեց:

Քսանվեցերորդ՝ Մովսէսը Փարաւոնի դստեր որդի կոչուեց, որ փրկեց նրան, եւ Տէրը՝ հեթանոսների եկեղեցու եւ մաքրեց այն:

Քսանեօթներորդ, Մովսէսն իր վախճանուելուց առաջ կտակ գրեց եղելութիւնների մասին եւ եկեղեցին յանձնեց կոյս Յեսուին: Եւ մեր Տէրը Հոգու գալստեան եւ աշխարհի վախճանի մասին պատմեց ու յանձնեց իր կոյս տաճարը կոյս Յովհաննէսին:

Քսանութերորդ՝ Մովսէսը խաչակերպ գաւազանով ճեղքեց ծովը: Եւ մեր Տէրը խաչով աշխարհի մեղքերի ծովը [ճեղքեց], եւ ամպի սեան փոխարէն հովանաւոր Հոգին եւ աւետարանի լոյսը բացեց հոգիների վրայ:

Քսանիններորդ՝ Մովսէսը միայնակ մտաւ Եգիպտոս եւ դուրս եկաւ բազմութեամբ: Եւ Փրկիչն էլ միայնակ իջաւ դժոխք եւ ազատեց բոլոր հոգիներին սատանայի հրահալող տանջանքներից: Եւ ինչպէս նա գիշերը հանեց ժողովրդին, մեր Տէրն էլ գիշերը յարութիւն առաւ եւ բանտից ազատեց արգելափակուածներին:

Երեսուներորդ՝ Մովսէսը ձեռքը դրեց Յեսուի վրայ: Եւ Տէրն էլ ձեռքը դրեց առաքեալների վրայ:

Եւ ամպը ծածկեց Մովսէսին: Այդպէս էլ ամպը Նրան ծածկեց նրանց աչքերից, եւ համբարձուեց Հօր մօտ: Այս մասին է, որ ասում է. «Մարգարէ կտայ ձեզ ինձ նման»: Ինչպէս Մովսէսը լսեց պատգամը եւ տուեց ժողովրդին, այդպէս էլ մեր Տէրը. «Այն, ինչ լսեցի Հօրից, ծանուցեցի ձեզ» (Յովհ. ԺԵ 15):

Հարց. Աբրահամից մինչեւ Մովսէս քանի՞ ազգ է:

Պատասխան. Եօթ ազգ, այսպէս՝ Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Ղեւի, Կահաթ, Ամրամ, Մովսէս:

Մովսէսի հայրը Ամրամն է, իսկ մայրը՝ Յոքաբեթը: Փարաւոնի դստերը Մարի էին կոչում[361], որ Մովսէսին որդեգրեց:

Եգիպտոսի իշխանին, որ չարչարում էր իսրայէլցիներին, Քսանթիս էին կոչում, որին սպանեց Մովսէսը եւ փախաւ Մադիամ, ամուսնացաւ Սեփովրայի հետ եւ ունեցաւ երկու որդի՝ Գերսամը եւ Եղիազարը, որոնք թուարկուեցին ղեւտացւոց մէջ, ինչպէս պատմում է Մնացորդաց Գիրքը (տե՛ս Ա Մնաց. ԻԳ 15):

Եւ Սեփովրան դուստրն էր քուրմ Ռագուէլի եւ քոյրը Յոթորի, Աբրահամի ազգից հինգերորդը՝ հետեւեալ կերպ. Սեփովրան Ռագուէլ քրմի՝ Դեղանայի որդու դուստրն էր, որը Յեկտանի որդին էր. սա որդին էր Աբրահամի՝ Քետուրայ կնոջ, իսկ Աբրահամը Քետուրայից ունէր վեց որդի. Եմրանը, Յեկտանը, Մադանը, Մադիանը, որից՝ մադիանացիք, Եսբոկը, Սովիւէն, որից բազմանալով՝ լցրեցին արեւելքը՝ Պալիը, որտեղից եւ ծագում են պարսից թագաւորները եւ հայոց Արշակունիներ կոչւողները[362]:

Մովսէսը քառասնամեայ էր, երբ փախաւ: Քառասուն տարի էլ Մադիամում մնաց եւ, ժողովրդին դուրս բերելով [Եգիպտոսից]՝ քառասուն տարի էլ անապատում մնաց:

ՄՈՐԵՆՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԴ

Հարց. Ի՞նչ էր անկէզ մորենին:

Պատասխան. Ոմանք ասում են անթառամ, անուշահոտ եւ անպտուղ թուփ է, իսկ մոշավայրին նօսր եւ անպտուղ է: Եւ քանի որ այն պատկերուած չէր կուռքերի

նկարներում ու չէր պաշտում, ուստի Տէրը մորենու միջոցով երեւաց նրան:

Հարց. Ինչո՞ւ էր կրակի միջից երեւում:

Պատասխան. Հուրը լոյս ունի եւ այրում է: Արդ, լոյսը ցոյց է տալիս արժանաւորներին խնամելը, իսկ կիզելը՝ անարժաններին պատժելը:

Հարց. Ինչո՞ւ հրեշտակ անուանուեց եւ ասաց. «Ես Աբրահամի Աստուածն եմ» (Ելք Գ 6):

Պատասխան. Այս մասին վարդապետներն ունեն երկու կարծիք:

Ոմանք ասում են՝ Աստուած միշտ երեւում է հրեշտակների միջնորդութեամբ, ինչպէս ասում էր սուրբ Ստեփանոսը. «Նրանք օրէնքները ստացան հրեշտակների հրամանով» (Գործք Է 53):

Ուրիշներն էլ ասում են, թէ Բանն-Աստուած էր, որ խօսեց Աբրահամի, ապա՝ Մովսէսի հետ: Եւ նա կոչւում է Մեծ Խորհրդի հրեշտակ՝ ըստ մեծն Եսայու (Ես. Թ 6), որովհետեւ հրեշտակ նշանակում է «պատգամաբեր», իսկ Տէրն ասում էր. «Ա՛յն, ինչ լսեցի Հօրից, ծանուցեցի ձեզ» (Յովհ. ԺԵ 15):

Իսկ թէ ի՞նչ է նշանակում: Նախ, մորենին խորհրդանշում էր Իսրայէլի ժողովրդին Եգիպտոսում, որ վառուելով, տանջւում էր, սակայն չէր սպառւում. հակառակը՝ Աստծոյ օրհնութեամբ բարգաւաճում էր, անգամ, երբ նրանք տկար էին հաւատի մէջ եւ անպտուղ՝ բարի գործերում:

Մորենին նաեւ իբրեւ անտեսուած թուփ խորհրդանշում էր Մովսէսի խոնարհութիւնը, որում հանգաւ Աստուած, ինչպէս վկայում է՝ «Հեզ է իմ ծառայ Մովսէսը» (Թիւք ԺԲ 3):

Մորենին նաեւ Կոյս Մարիամն էր, որ Աստծոյ իմանալի հուրն իր մէջ կրելով՝ չայրուեց[363], այլ դալարեցրեց չորացած ճիւղը, այսինքն եթէ Ադամի մարմնից անգամ փոքրիկ մի փոշեհատիկ ունէր՝ մաքրուեց Սուրբ Հոգու հրով:

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ ասում է. «Հանի՛ր ոտքերիցդ կօշիկները»:

Պատասխան. Այսինքն, թէ նախ մեռելոտի մտքերը հանիր գլխիցդ: Երկրորդ, որ քո եւ Աստծոյ միջեւ անասնական ոչինչ չլինի՝ բարկութիւն, ցանկութիւն կամ այլ ինչ[364]:

Երրորդ՝ կօշիկի օրինակով հրամայում էր հրաժարուել կնոջից, որովհետեւ նա, ով սուրբ լեռան վրայ մօտենում է Աստծուն, չպէտք է հեշտանայ կնոջ անկողնում. «Որովհետեւ նա, ով կին ունի, հոգում է կնոջ եւ ոչ Տիրոջ մասին» (Ա Կորնթ. Է 33),- ասում է առաքեալը:

Ու նաեւ իւրաքանչիւր ոք, ով աստիճանաբար բարձրանում է լեռը, ինչպէս Մովսէսը, պարտաւոր է պաշտել սրբութիւնը:

Եւ կօշիկը ոտքից հանել նշանակում է երկրային վերջին խորհրդին մօտ գտնուելը, որովհետեւ մեր առաջին խորհուրդն այն է, որ միտքը բարձրանում է առ Աստուած՝ վերինի մասին խորհելով (հմմտ. Կողոս. Գ 2): Միջին խորհուրդն այն է, որ էութիւնների քննութեամբ է զբաղւում: Իսկ վերջին խորհուրդն այն է, որ անհրաժեշտ պէտքերի՝ կերակրի եւ

հանդերձի, պատճառով երկրաւորին ենք հպւում: Եւ անհրաժեշտ է աղտեղութիւնները հանել եւ մաքրել, ըստ այդմ՝ «Մեր ոտքերին կուտակուած փոշին թօթափենք» (Մտթ. Ժ 14): Ահա այս մտքով Տէրը աշակերտներին պատուիրեց կօշիկ չհագնել, այլեւ լուաց նրանց ոտքերը ամէն տեսակ մանր աղտեղութիւններից:

Իսկ որ ասում է՝ հողաթափ հագնել (Մրկ. Զ 9), նշանակում էր, որ նա, ով ցանկութեան դէմ տոկունութիւն չունի, հագնի օրէնքը: Եւ դրանք չունենալով էլ՝ տրորեն կամակոր օձի գլուխը:

Հարց. Ի՞նչ է նշանակում «որէն առաքեաց»:

Պատասխան. «Որէն»-ը Աստծոյ էութիւնը չի յայտնում, որովհետեւ այստեղ ժամանակի եւ մարմնի կապ հնարաւոր չէ դիտարկել, քանի որ ըստ իմաստասէրների հարցերը սրանք են. «եթէ է՞, ի՞նչ է եւ որպիսի ի՞նչ է»[365]:

Արդ, «եթէ է» Աստուած, ապա նրան այստեղ հաւատով ենք ճանաչում, ըստ այդմ՝ «Պէտք է հաւատալ, որ կայ Աստուած» (Եբր. ԺԱ 6): Իսկ «ինչ է»-ին հանդերձեալում ենք տեսնելու, որքան մեր կարողութիւնն է[366], ըստ այդմ՝ «Տեսնելու ենք նրան, ինչպէս որ կայ» (Ա Յովհ. Գ 2):

Իսկ Աստծոյ «որպիսի ի՞նչ է»-ն այստեղ եւ հանդերձեալում անիմանալի է մնում բոլոր եղական մտքերին՝ թէ՛ հրեշտակների եւ թէ՛ մարդկանց:

Իսկ «որէն» ասելը նշանակում է, նախ, որ կայ եւ գոյութիւն ունի Աստուած, ինչպէս ասացինք: Երկրորդ՝ ոչ էութիւնների դէմ է, որոնք միայն անունով են աստուած, սակայն ոչ էութեամբ, քանի որ եղական նիւթ են: Երրորդ, «է»-ն յարատեւն է ցոյց տալիս՝ իբրեւ անսկիզբ ու անվախճան:

Իսկ մնացեալն ասուեց այնտեղ՝ տասնհինգերորդ պրակում, Յակոբի գօտեմարտելու մասին խօսելիս. այնտեղ կտեսնես:

ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԵ

Հարց. Ի՞նչ էր գաւազանը, որ փոխուեց օձի:

Պատասխան. Նախ, պէտք է իմանալ, որ Մովսէսը երեք հրաշք ցոյց տուեց՝ ի դէմս Սուրբ Երրորդութեան:

Առաջինը՝ գաւազանը օձի փոխակերպուելն էր, որ նախ մատնանշում էր իրեն՝ սկզբնաչար սատանային, որ երկնքում արդարութեան գաւազան էր, սակայն գահավիժելով՝ դարձաւ օձ. ասում է՝ «Հրեղէն վիշապը քաշեց աստղերի երրորդ մասին» (Յայտ. ԺԲ 4):

Երկրորդ՝ օձն ինքը, սատանան էր, որ բարեկամ ձեւացաւ եւ խաբեց նախաստեղծներին:

Երրորդ՝ թագաւորական գաւազան էր Ադամը դրախտում, իսկ երբ մեղանչեց, ընկաւ երկիր ու դարձաւ մեղաւոր օձ: Եւ Բանն Աստուած Աբրահամի զաւակներին բուռն առաւ եւ դարձաւ թագաւորական անօթ:

Չորրորդ՝ երբ Յովսէփի ձեռքին էր, ժողովուրդն իջաւ Եգիպտոս եւ չարիք

դարձաւ, իսկ Մովսէսի ձեռքում դարձեալ եղաւ թագաւորական եւ քահանայութեան գաւազան:

Հինգերորդ՝ փարաւոնը խորհրդանշում էր դառնաշունչ վիշապին, ըստ այդմ՝ «Դու փշրեցիր վիշապի գլուխը ջրերի վրայ» (Սղմ. ՀԳ 14): Բռնելը յուսադրեց Մովսէսին՝ յաղթելու փարաւոնին եւ հանդարտեցնելու:

Վեցերորդ՝ ցոյց է տալիս Բանն Աստուած Հօր արդարութեան եւ թագաւորութեան գաւազանն է՝. նա եկաւ երկիր եւ վերցրեց մեր օձաբարոյ բնութիւնը եւ դարձեալ մարմին առած՝ ելաւ երկինք ու նստեց Հօր աջ կողմում:

Եօթներորդ՝ գաւազանը խորհրդանշում էր խրատ ու արդարութիւն, որ եթէ մէկն ընկնի, լինի երկրաքարշ ու մեղաւոր մարդ, յետոյ զղջալով՝ դարձեալ բռնի [այն], որ դառնայ կանգնելու եւ փրկութեան պատճառ:

Ութերորդ՝ Փրկչական խաչը սկզբում մահափայտ էր, որ Քրիստոս ձեռքն առնելով՝ դարձրեց կեանք պարգեւող: Եւ խաչի միջոցով կատարւում են բոլոր սքանչելիքները, ինչպէս Մովսէսի գաւազանով էին կատարւում:

Հարց. Ի՞նչ էր նշանակում ձեռքի բորոտելը (տե՛ս Ելք Դ 6):

Պատասխան. Նախ, ցոյց է տալիս, որ այդ ձեռքը գրում է օրէնքներ, որոնցով մաքրւում են օրինապահները եւ պղծւում չպահողները:

Երկրորդ՝ Ադամի բնութիւնը, դուրս գալով դրախտից՝ բորոտուեց զանազան մեղքերով, մինչեւ Բանն առաւ իր աստուածային ծոցը եւ վերահաստատեց առաջինը:

Երրորդ՝ ժողովուրդը չարաբարոյ եղաւ Եգիպտոսում, մինչեւ ընկաւ Աստծոյ խնամակալ ծոցը եւ առողջացաւ:

Չորրորդ՝ Մովսէսի մի ձեռքը մեռաւ բորոտութեամբ, որովհետեւ նա մի ազգ փրկեց, իսկ Տէրը բոլոր անդամներով մեռաւ, որովհետեւ մեր ողջ բնութիւնը փրկեց:

Հինգերորդ՝ բորոտութիւնը եգիպտացիների մահն էր նշանակում, իսկ առողջանալը՝ Իսրայէլի որդիների կենդանանալը, որ գերեվարուած էին մահից:

Վեցերորդ՝ ձեռքը Հօր Միածին Որդին է, որ ելաւ Հօր ծոցից եւ վերացնելով մեր օձաբարոյ բնութիւնը՝ նորից ելաւ Հօր մօտ՝ իր բնութիւնից դուրս չգալով:

ԵԳԻՊՏՈՍԻ ՏԱՍԸ ՀԱՐՈՒԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ Պրակ ԻԶ

Առաջինը՝ գետն արեան փոխուելն էր: Երկրորդը՝ գորտը: Երրորդը՝ մժեղները: Չորրորդը՝ շնաճանճը: Հինգերորդը՝ անասունների սատկելը: Վեցերորդը՝ խոցն ու վէրքերը: Եօթներորդը՝ կարկուտը: Ութերորդը՝ մորեխը: Իններորդը՝ խաւարը: Տասներորդը՝ անդրանիկների մահը՝ փոքրից հերթով դէպի խստագոյնը բարձրանալով:

Հարց. Ինչո՞ւ տկար զեռուններով տանջեց Եգիպտոսին եւ ոչ առիւծով, արջով կամ այլ հրաշունչ կենդանիներով:

Պատասխան. Այսպէս է պատասխանում իմաստունը «Սիրեցէք»-ում՝ բերելով չորս պատճառ.

Նախ՝ որ անմտացան եւ պաշտեցին ճանճին, սողունին, գետերին, անասուններին, ուստի հենց դրանցով էլ տանջեց նրանց, «Որպէսզի իմանան, որ ով ինչով մեղանչում է, նրանով էլ տանջւում է»:

Երկրորդ՝ եգիպտացիների տկարութեան ցուցադրումն է, որ չկարողացան ընդդիմակայել տկար զեռուններին:

Երրորդ՝ Աստուած չափով, թուով ու կշռով է տալիս մեղքերի տանջանքները, թէեւ մեզ համար անընկալելի է:

Չորրորդ՝ իբրեւ մարդ խնայեց նրանց, որպէսզի զղջան փոքր խրատից եւ զերծ մնան մեծ պատուհասից, սակայն նրանք խստացան, մինչեւ ամէն ինչ կրեցին:

Հարց. Ի՞նչ էր գետը արեան փոխելը:

Պատասխան. Նախ, խորհրդանշում էր Ադամին, որ ստեղծուեց անմեղ եւ մաքուր, իսկ մեղանչելուց յետոյ եղաւ զազրելի արիւն եւ անհոգի մարմին:

Երկրորդ՝ օրինակն էր Իսրայէլի ժողովրդի, որ մաքուր իջաւ Եգիպտոս եւ պղծուեց նրանց գործերից, մինչեւ մաքրուեց ամպով, ծովում եւ ճաշակեց մանանան:

Երրորդ՝ հեթանոսների օրինակն էր, որ զազիր էին դարձել մեղքերի մէջ, մինչեւ մաքրուեցին աւազանի ջրով եւ ճաշակեցին երկնքից իջած Կենաց մանանան:

Չորրորդ՝ օրինակ էր նրանց համար, ովքեր մաքրութիւնից մեղքերի կողմն են շրջւում՝ վերածուելով մարմնի ու արեան, որոնք «չեն ժառանգելու Աստծոյ արքայութիւնը» (Ա Կորնթ. ԺԵ 50), մինչեւ մաքրուեն ապաշխարութեան եւ արտասուքի միջոցով, ըստ այդմ՝ «Եթէ ձեր մեղքերը լինեն ինչպէս որդան կարմիր, ձեզ կմաքրեմ ինչպէս ճերմակ բուրդ» (Ես. Ա 18):

Հինգերորդ՝ ցոյց էր տալիս, որ մանուկների արիւնը Աստուած չէր մոռացել, որոնց խեղդեցին գետում, այն ըմպել տուեց նրանց:

Վեցերորդ՝ գետը ցոյց էր տալիս Բանն Աստծուն, որ հաղորդուելով մեզ՝ դարձաւ մարմին ու արիւն՝ իր սուրբ արիւնը տալով մեզ իբրեւ ըմպելիք, իսկ մարմինն իբրեւ կերակուր:

Եօթներորդ՝ ինչպէս որ գետը միատարր ջուր էր եւ դարձաւ արիւն, որ արժանաւոր իսրայէլացիների համար [մնաց] իբրեւ ջուր, իսկ անարժան եգիպտացիների համար՝ արիւն, այդպէս էլ մի Տէր Յիսուս Քրիստոս, որ Աստուած էր մէկ բնութեամբ, եղաւ մարդ՝ ի վերահաստատումն հաւատացեալների եւ ի գլորումն անհաւատների: Այդպէս էլ Քրիստոսի մարմինն ու արիւնը արժանաւորների համար կեանք եւ սրբութիւն է, անարժանների համար՝ մահ եւ ապականութիւն:

Երկրորդ հարուածը գորտն էր, որ բերեց գետը, նախ ցոյց էր տալիս, որ զազիր էին գործերով եւ բորոտուած

մեղքերով, որի պատճառով էլ գարշ կենդանիներով էր ոչնչացնում նրանց:

Երկրորդ՝ իբրեւ այն մանուկները, որոնց խեղդեցին գետում, կենդանացել եւ տանջում են նրանց:

Երրորդ հարուածը մժեղն էր, որ մանր տիզն է, կամ մոծակը, կամ էլ մժղուկը, որ ցոյց էր տալիս նրանց բարքով մանրախայթ եւ խօսքերով խոցող լինելը:

Չորրորդը շնաճանճն էր, որովհետեւ շնաբարոյ էին եւ ամուսնացած կանանց հետ շնութեան մոլուցքի մէջ էին, որովհետեւ միայն շներն են, որ միւս կենդանիների նման չեն զուգակցում: Այդ պատճառով էլ շնից ելած թունաւոր ճանճերն էին խայթում նրանց:

Հինգերորդը անասունների սատկելն էր, որովհետեւ հինգ զգայարաններով իբրեւ անասուն եղան եւ կորցրին բանականութիւնը, այսինքն՝ իգամոլները ձիու պէս եղան, անսանձները՝ էշի, խորամանկները՝ ուղտի: Եւ ի խրատ նրանց պատժում էր նրանց անասուններին, որպէսզի զգաստանալով՝ վախենան իրենց անձի համար:

Վեցերորդ հարուածը կեղն ու թարախապալարն էր, որովհետեւ տանջալից քորով քերթում էր նրանց մաշկը, թարախակալած խոցերը բացւում էին, եւ մորմոքւում էր նրանց մարմինը:

Եօթներորդը հրախառն կարկուտն էր, երբ երկու հակառակութիւն՝ ջուրը եւ հուրը, միաբանուած՝ ամբարիշտներին կորստի մատնելու համար, չէին չեզոքացնում մէկմէկու. կարկուտը փշրում էր, իսկ հուրն այրում փշրուածը, որ նախ ցոյց էր տալիս, թէ Աստծոյ սիրուց սառել էին եւ ջերմացել ի սէր ունայնութեան: Երկրորդ՝ կարկուտը նրանց հպարտ եւ հայհոյական խօսքերն էր ծանակում, իսկ հուրը՝ սրտի բարկութիւնը, որ ունէին Իսրայէլի որդիների նկատմամբ:

Ութերորդը ստուարաքանակ մորեխը, որ նախ ցոյց էր տալիս նրանց բազմապատիկ չարութիւնը: Երկրորդ, քանի որ անյագ եւ ամենակեր է մորեխը եւ մտնելով ուրիշի կուտակածի մէջ՝ ոչնչացնում է: Այդպէս էլ սրանք իրենց կախարդութեամբ Իսրայէլի որդիների վաստակի մէջ էին:

Իններորդը թանձրամած խաւարն էր, որ թանձրութեան պատճառով շօշափուելով՝ բռնւում էր եւ կամ՝ ձեռքերով շօշափելով ու գաւազանով էին կարողանում շարժուել: Եւ նստածը չէր կարողանում կանգնել: Ճրագի հուրը եւ լոյսը չէին կարողանում թափանցել թանձրութեան պատճառով, որ ցոյց էր տալիս նրանց անմտութեան խաւարը, որ առաւել էր, քան ողջ երկրինը, որովհետեւ պաշտում էին բոլոր գարշ կենդանիներին:

Իսկ իսրայէլացիների համար լոյս էր, որ խորհրդանշում էր նրանց աստուածապաշտութիւնը:

Տասներորդ հարուածը անդրանիկների մահն էր, որովհետեւ նախ Աստծոյ անդրանիկ որդիներին տանջեցին եւ սպանեցին, որի պատճառով իրենց անդրանիկները մահացան: Երկրորդ, որովհետեւ աստուածապաշ-

տութեան անդրանիկ խորհուրդը կորցրեցին իրենց անձի մէջ, ուստի նրանց անդրանիկները մահացան ու ոչնչացան: Երրորդ՝ որովհետեւ կորչելու էին սատանայի անդրանիկ ծնունդները, որոնք հպարտութիւնը եւ կռապաշտութիւնն են, որովհետեւ Քրիստոսի գալուստը խոնարհութեամբ էր, եւ կոչեց մի աստուածապաշտութեան՝ կորստի մատնելով դեւերի պաշտամունքը:

Հարց. Ինչո՞ւ հարուածեց տասը պատիժներով:

Պատասխան. Քանի որ հինգ տանջանքներով չարչարեց Իսրայէլին, ուստի կրկնակի եղաւ հատուցումը: Այդպէս էլ ամէն մի մեղաւոր կրկնակի է պատժուելու, այսինքն՝ հոգով եւ մարմնով, այստեղ եւ հանդերձեալում, ինչպէս ասում է Եսային՝ «Տիրոջ ձեռքից կրկնակի հատուցում ստացաւ» (Ես. Խ 2):

Եւ սրանք էին հինգ տանջանքները:

Նախ՝ որ ծառայ եւ գերի էին պահում: Երկրորդ՝ խեղդում էին արու զաւակներին: Երրորդ՝ կաւի եւ աղիւսի գործն էին պարտադրում: Չորրորդ՝ եղեգ էին տալիս յարդի փոխարէն: Հինգերորդ՝ հաւատաւորների հակառակորդն էին, ուստի տասը պատիժներով տանջուեցին:

Եւ իմաստունն ասում է՝ «Չարաչար օտարատեաց էին, ուստի չարաչար տանջանքներով տանջուեցին» (հմմտ. Իմաստ. ԺԹ 14): Նախ, որ օտար եւ հիւր էին Յակոբի որդիները, եւ ատեցին նրանց:

Երկրորդ՝ չորս հարիւր տարուայ ծանօթներ էին եւ ատեցին:

Երրորդ՝ Յովսէփին երախտիք ունէին տալու եւ ատեցին:

Չորրորդ՝ հիւրին իբրեւ գերի եւ ծառայ չարչարեցին:

Հինգերորդ՝ եւ որ առաւելագոյնն էր՝ զաւակներին նրանց ջրում խեղդեցին:

Այս հինգ ձեւերով չարաչար ատեցին հիւրին, որի պատճառով կրկնակի վրէժի տասը հարուածներ ստացան:

ԿԱԽԱՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Իէ

Հարց. Գիտունները ինչպէ՞ս են կատարում հրաշքը:

Պատասխան. Հրաշքը երկու տեսակ է լինում:

Կայ, որ էութիւնն է փոխում, ինչպէս Մովսէսը գետը արիւն դարձրեց եւ գաւազանը՝ օձ: Սա կոչւում է սքանչելագործութիւն:

Եւ կայ, որ փոխում է միայն կերպը եւ ձեւը, որ կոչւում է առաչօք, ինչպէս Յանէսն ու Յամրէսն էին դիւական կախարդութիւն անում (տե՛ս Ելք է 11, նաեւ՝ Բ Տիմ. Գ 8):

Եւ ինչպէս ստուերը մարդ չէ, այլ՝ մարդու նմանութիւն, ու ինչպէս սատանան է լուսոյ հրեշտակի նման կերպաւորւում, մինչդեռ էութեամբ այդպիսին չէ, այդպէս էլ նրան պաշտողները ցուցադրում են այն, ինչ ճշմարիտ չէ: [Եւ սա] ակնյայտ է չորս կերպ:

Նախ՝ որ կախարդներն անում էին այն, ինչ Մովսէսն էր անում: Եւ եթէ

ճշմարիտ էին, ինչո՞ւ նոր բան չէին անում. այլ քանի որ Մովսէսի ճշմարիտ հրաշքներից զարհուրած տեսնօղները տեսիլքներ էին կարծում, ուստի կախարդները նոյնն էին անում:

Երկրորդ՝ Մովսէսի գաւազանը մի վիշապ դարձած՝ կլանում էր նրանց բազում վիշապներին, որոնց հետքը անգամ չէր մնում, ինչո՞ւ ուրեմն նրանցը կուլ չտուեց Մովսէսին: Ուրեմն սուտ էին:

Երրորդ՝ վէրքերն ու խոցերը եղան նաեւ կախարդների վրայ, որոնք միւս պատիժներն էլ կրեցին եւ չէին կարողանում Մովսէսին եւ Ահարօնին պատճառել նոյնը:

Չորրորդ՝ յայտնի է, որ իրենք էլ խոստովանեցին, թէ «Սրա մէջ Աստծոյ մատը խառն է» (Ելք. Ը 19) եւ չկարողացան նոյնը անել:

Այս էլ պէտք է իմանալ, թէ կախարդները փոփոխում են զգայարանները եւ թուացեալ մտապատկերներ ցոյց տալիս, իսկ դեւերը փոփոխում են երեւակայութիւնը եւ զգայարանները, սակայն՝ ոչ միտքը:

Իսկ հրեշտակները կարող են փոփոխել եւ շրջել միտքը դէպի բարին, նաեւ՝ երեւակայութիւնն ու զգայարանները, սակայն ոչ կամքը: Մինչդեռ Աստուած փոփոխում է նաեւ կամքը՝ մղելով այն ի բարին եւ հեռացնելով չարից, երբեմն էլ թոյլ տալով անձնիշխան կամքին դառնալ չար: Այդ մասին է, որ ասում է. «Նրանց մատնեց անարգ մտքով անարժան գործեր անելու» (Հռոմ. Ա 28):

Հարց. Դեւերը ինչպէ՞ս են կանխագուշակում:

Պատասխան. Ապագան եւ մարդու միտքը ոչ ոք չգիտէ՝ ո՛չ հրեշտակները, ո՛չ դեւերը, ո՛չ էլ մարդիկ, այլ միայն՝ Աստուած, որ քննում է սիրտը եւ երիկամները (տե՛ս Սղմ. ԻԵ 2, Երեմ. ԺԱ 20): Եւ Աստծոյ յայտնութիւններով են հրեշտակները եւ մարդիկ ուսանում ապագայի լինելիքը, իսկ դեւերը կանխագուշակում են նախ մերձաւոր ապագան, որովհետեւ [տիրապետում են] գիտելիքների նրբիմաստներին: Երկրորդ՝ վերին հրեշտակների յայտնութիւններով [են կանխագուշակում]: Երրորդ՝ լսելով, ինչպէս Աբրահամի աւետիսը լսուեց, որ չորս հարիւր տարի յետոյ լինելիքի վերաբերեալ էր, եւ կախարդների պատճառով ուշանում էր փրկութեան ժամանակը:

Եւ Աստուած թոյլ է տալիս դեւերին եւ կախարդներին հրաշքներ գործել, նախ, որ մոլորուեն նրանց երկրպագողները եւ կորստի մատնուեն: Երկրորդ՝ հաւատացեալներն անդրդվելի մնան եւ վարձատրուեն:

ԽՍՏԱՍՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ ասում է. «Ես խստացրի Փարաւոնի սիրտը» (Ելք է 3):

Պատասխան. Նախ՝ Աստծոյ թոյլ տալն է, որ անձնիշխան կամքով ամրանայ մարդը չարի մէջ, եւ Աստուած ների ու ոչ վախեցնելով խրատի նրան, ինչպէս որ մարդու սովորութիւնն է

վատին ասել՝ ես այդպէս վարուեցի, այսինքն՝ քեզ քո կամքին թողեցի եւ չխրատեցի:

Երկրորդ՝ այն է, որ երբ մարդու կամքը լինում է չար, խիստ ծածուկ, Աստուած այն բացայայտում է, ինչպէս Նաբուգոդոնոսորինը, որ գազանի սիրտ ունէր եւ գազանի կերպարանք առաւ եւ, երբ զգաստացաւ, ասաց. «Մարդու սիրտ տուեց նրան» (Դան. է 4):

Երրորդ՝ ըստ մեր բնոյթի է վարւում Աստուած մեզ հետ. երբ բարի ենք, օգնում է. չարութեան մէջ թողնում է, որ խստանայ մարդու սիրտը: Եւ այդ է նշանակում մատնել անարգ մտքի, ըստ առաքեալի (տե՛ս Հռոմ. Ա 28):

Հարց. Ինչո՞ւ հրամայեց խաբել եւ կողոպտել եգիպտացիներին:

Պատասխան. Նախ, իրաւունք տուեց վարձու կաւագործութեան պատճառով, որ կատարում էին: Նաեւ իրենց մօր՝ Սառայի անարգանքներ կրելու պատճառով: Երկրորդ՝ որովհետեւ ագահ էին ու զարդերի պատճառով [թերեւս] դուրս գային Եգիպտոսից: Երրորդ՝ որ չհամարձակուեն Եգիպտոս վերադառնալ, քանի որ գողօնը իրենց ձեռքին էր:

Այդպէս էլ քրիստոնեաները, որոնք հեռանում են այս կեանքից, կողոպտում են դեւերին, ապա գնում:

Հարց. Եթէ մէկը զրկանքի է ենթարկում մեզ, արդարացի՞ է նրան խաբելը եւ նրա ինչքը գողանալը:

Պատասխան. Ոչ, արդարացի չէ, որովհետեւ նա իբրեւ զրկող կդատուի, դու՝ իբրեւ գող:

Իսկ վերն ասուածը նրանց մեղքը չէր՝ երկու պատճառով: Նախ՝ որ Աստծոյ հրամանով էր, ինչպէս մեղք չէին Ովսէի պոռնկութիւնը (տե՛ս Ովսէ Գ) եւ Փենեհէսի սպանութիւնը (տե՛ս Ա Թագ. Բ-Դ): Երկրորդ՝ նրանց հատուցումը մարմնական էր, իսկ մերը՝ հոգեւոր է:

ՃԱՌԱՅԵԼՈՒ ԵՒ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ Պրակ ԻԸ

Հարց. Քանի՞ տարի մնացին իբրեւ ծառայ:

Պատասխան. Ընդհանուր՝ չորս հարիւր երեսուն տարի էր Աբրահամի աւետիսը լսելուց մինչեւ Եգիպտոսից դուրս գալը, որից երկու հարիւր հինգ տարին հայրերը Քանանի երկրում ապրեցին, երկու հարիւր քսանհինգ տարի էլ նրանց որդիները՝ Եգիպտոսում:

Սրանցից հարիւր քառասունչորս տարին ծառայ եղան, մնացած տարիներին ազատ էին:

Իսկ կաւագործութեամբ հարստահարումը սկսուեց Մովսէսի ժամանակ քսաներկու տարուց յետոյ, ուստի նրանց ծառայելու ծանր տարիները կազմում են յիսունինը տարի:

Հարց. Ո՞ր օրը ժողովուրդը դուրս եկաւ Եգիպտոսից, եւ Ադամից յետոյ քանի՞ տարի էր:

Պատասխան. Ադամից մինչեւ Եգիպտոսից ելնելը երեք հազար ութ հարիւր ինը տարի էր՝ հետեւեալ կարգով.

Ադամից մինչեւ Նոյ երկու հազար երկու հարիւր քառասուներկու տարի էր, Նոյից մինչեւ Աբրահամի առաջին տարին՝ ինը հարիւր քառասուներկու տարի, այդտեղից մինչեւ Եգիպտոսից դուրս գալը՝ հինգ հարիւր հինգ տարի, որ ընդամէնը, ըստ Եօթանասնից թարգմանութեան, կազմում է երեք հազար վեց հարիւր ութսունինը տարի:

Իսկ ըստ Եւսեբեոսի երեք հազար ութ հարիւր ինը տարի է, որովհետեւ նա ներառում է նաեւ Կայնանի հարիւր քսան տարին, որ Արփաքսաթի որդին էր եւ Սաղայի հայրը[367], որին Աւետարանը յիշատակում է (տե՛ս Ղուկ. Գ 36), իսկ Մովսէսը՝ ոչ (տե՛ս Ծննդ. Ժ 24, ԺԱ 12, Ա Մնաց. Ա 24):

Իսկ գառը մորթեցին հինգշաբթի երեկոյեան եւ դուրս եկան ուրբաթ այգաբացին՝ նիսանի տասնհինգին, որ նրանց առաջին ամիսն է: Ծովն անցան կիրակի օրը, որ նիսանի տասնեօթին էր:

Նմանապէս թէ՛ Եզեկիան, թէ՛ Ովսիան, թէ՛ Զօրաբաբէլը:

Եւ մեր Տէրը, որ զատիկն արեց աւագ հինգշաբթի երեկոյեան, կէսգիշերին ձերբակալուեց՝ հարուածելով դեւերի անդրանիկներին. ուրբաթ օրը խաւարեց երկիրը, ինչպէս ամպը ժողովրդի վրայ, եւ երեկոյեան լոյս ծագեց հոգիներին, ինչպէս Իսրայէլի սեան լոյսը:

Եւ ինչպէս ժողովուրդը վերադարձաւ իր առաջին հանգրուանը, այդպէս էլ Տիրոջ մարմինը դրուեց երկրի հողում: Եւ շաբաթ երեկոյեան ճեղքուեց ծովը, կիրակի կէսգիշերին անցան ծովով, եւ խորտակուեց փարաւոնը:

Նոյն կիրակի օրը, գիշերը, առաւօտեան կողմ յարութիւն առաւ Տէրը գերեզմանից՝ հոգիներն ազատելով դժոխքից եւ խաչանշան գաւազանով ընկղմեց իմանալի փարաւոնին դժոխքի անդունդը:

Իսկ Փարաւոնի անունը, որ ընկղմուեց, Փեսիոս էր, ոմանք էլ անուանում են՝ Կանաքարիս[368]:

Հարց. Մովսէսն ի՞նչ ասաց ծովը ճեղքելիս:

Պատասխան. Գաւազանը խաչաձեւ պարզեց ծովի վրայ, դէպի առաջ եւ ասաց՝ «Այիա՜», որ նշանակում է՝ «Աստուած մեր առջեւում է»:

Ապա դէպի աջ. «Շրայիա՜»՝ «Դու հանիր մեզ, Աստուած»: Դէպի ձախ ասաց. «Ադօնիա՜»՝ «Տէրը տէրերի մեզ հետ է»: Եւ նախ Բենիամինի ցեղը մտաւ երկու մասի բաժանուած ծովը, ապա՝ Յուդայի, որի պատճառով թագաւորութիւն տուեց նախ Բենիամինի ցեղից Սաւուղին, ապա Դաւթի ցեղից՝ Յուդային:

Հարց. Ի՞նչ էր լոյսի սիւնը:

Պատասխան. Հրեշտակ էր, որ ցերեկը արեւի տապին հովանի էր լինում եւ ցոյց էր տալիս ողջ աշխարհին ժողովրդի ելնելը, իսկ գիշերը լոյս էր տալիս նրան եւ պահպանում լուսնի վնասներից ու առաջնորդում:

Այդպէս էլ Սուրբ Հոգին գիշերը աւետարանի կենաց լոյսով առաջնորդում է, մինչեւ հասցնում է գալիք օրուայ այգաբացին՝ ցօղաւոր ամպի մէջ,

որ մարմնացեալ Բանն է՝ բոլոր սրբերի հովանին եւ հանգիստը:

Հարց. Մովսէսն ի՞նչ էր բարձած տանում:

Պատասխան. Յովսէփի նշխարներն էին: Նախ՝ քանի որ ինքը կաւագործութեամբ չէր չարչարուել, ուստի Եգիպտոսի հարստութիւնից ոչինչ չառաւ: Երկրորդ՝ գերադասեց երկնաւոր գանձը ոսկուց եւ կորստի տանող արծաթից: Երրորդ՝ ննջեցեալի հաւատը յանդիմանանք էր կենդանի թերահաւատներին, ովքեր երազում էին Եգիպտոս վերադառնալ:

ՄԱՆԱՆԱՅԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԹ

Հարց. Ի՞նչ էր մանանան:

Պատասխան. Մանանան թարգմանւում է՝ «Ի՞նչ է սա»[369], որովհետեւ երբ ժողովուրդը տեսաւ այն, միմեանց հարցնում էին՝ «Ի՞նչ է սա», եւ կոչուեց մանանայ:

Եւ այն կլոր էր, ճերմակ՝ նման գինձի, քաղցր, ինչպէս մեղրը: Եւ ուտողն ինչ կամենում էր, այդ համն էր առնում բերանում:

Արդ, մանանան օրինակն էր Աստծոյ անճառ անուան: Նախ, որովհետեւ կոչւում է «Ի՞նչ է սա»: Որովհետեւ իւրաքանչիւր հարց պատասխան ունի եւ տրւում է, իսկ Աստծոյ ինչ լինելը անպատասխան է մնում, ինչպէս երբ Յակոբը հարցրեց՝ «Ի՞նչ է քո անունը», նա պատասխանեց. «Ինչո՞ւ ես հարցնում իմ անունը, քանզի սքանչելի է» (տե՛ս Ծննդ. ԼԲ 29):

Երկրորդ՝ կլոր էր՝ ոչ սկիզբ ունէր, ոչ վերջ, ինչպէս Աստուած է անսկիզբ ու անվախճան:

Երրորդ՝ քաղցր էր ու ցանկալի, որովհետեւ այն ամէնը, ինչ բարի է ստեղծուած, Ստեղծողի համար իբրեւ օրինակ ենք բերում, ասենք՝ լոյս, գեղեցիկ, քաղցր եւ այլն:

Եւ մանանան «հրեշտակների հաց» է կոչում Դաւիթ մարգարէն: Նախ՝ որովհետեւ հրեշտակացած սրբերի կերակուր է: Երկրորդ՝ երկնքից է իջնում: Երրորդ՝ հրեշտակների ձեռքով է պարգեււում: Չորրորդ՝ առանց չարչարանքի է: Հինգերորդ՝ զանազան համերի է փոխւում: Վեցերորդ՝ երկնքից իջած հացի օրինակ է, որ իմանալի հրեշտակների կերակուր է, քանի որ հրեշտակները մարմնական կերակրի կարիք չունեն:

Հարց. Ինչո՞ւ էր զանազան համերի փոխւում մանանան:

Պատասխան. Իմաստունը «Սիրեցէք»-ում չորս պատճառ է բերում:

Նախ՝ որ երեւար Աստծոյ քաղցրութիւնը Իսրայէլի վրայ: Երկրորդ՝ ըստ նրանց ախորժակի էր մատուցում, որ հասկանան, թէ Աստուած կատարում է նրանց կամքը: Երրորդ՝ որովհետեւ բազմաթիւ օրհնութիւններ էր փոխանակում զանազան համերի հետ: Չորրորդ՝ որ հասկանան, թէ տարբեր ուտելիքների եւ պտուղների գոյներն ու

համերը իրենք իրենց չեն առաջանում, այլ՝ Աստծոյ շնորհով:

Այդ պատճառով էլ մէկ նիւթի մէջ ժողովեց բոլոր տեսակի համերը:

Հարց. Մանանան ինչպէ՞ս է Քրիստոսի մարմնի օրինակ:

Պատասխան. Երեք կերպ:

Նախ, որ երկնքից է իջած, ինչպէս ինքն էր ասում՝ «Սա է երկնքից իջած հացը» (Յովհ. Զ 50): Երկրորդ, մանանան, երբ շատ հաւաքուեց, չաւելացաւ եւ չպակասեց, երբ քիչ էր: Քրիստոսի մարմնի հացն էլ, եւ նրանք, ովքեր ամբողջը, եւ նրանք, ովքեր մասն են ճաշակում, հաղորդւում են միեւնոյն կեանքին:

Երրորդ՝ մանանան անապական էր, ինչպէս անապական էր Քրիստոսի մարմինը: Եւ ակնառու էր, քանզի սափորի մէջ մնաց անապական:

Եւ եթէ մէկն ասի, թէ ինչո՞ւ առաջին օրը նեխեց եւ ինչո՞ւ ամէն օր հալչում էր, ապա ասենք, որ նեխեց թերահաւատութեան եւ ժողովրդի ագահութեան պատճառով: Իսկ ամէն օր հալչում էր Աստծոյ հրամանով, որ դադարեցնեն հաւաքելը եւ նորից իւրաքանչիւր առաւօտեան խնդրեն Աստծուց:

Հարց. Եթէ Քրիստոսի խորհրդաւոր մարմինն անապական է, որտեղի՞ց են գոյանում հացի որդերն ու բորբոսը:

Պատասխան. Հացի գոյացութիւնը փոխուած է Քրիստոսի մարմնի գոյացութեան եւ անվախճան է, իսկ նրա քանակն ու որակը դեռեւս փոփոխական են մնացել, այդ պատճառով էլ փոխակերպւում են այլեւայլ բաների:

Եւ այն, որ հացի գոյացութիւնը անվախճան է, պարզ է այն բանից, որ կեանք ու անմահութիւն է տալիս ուտողներին, իսկ այն, որ պատահական յատկանիշները փոփոխական են, պարզ է այն բանից, որ դրանք փոփոխւում եւ միաւորւում են ուտողների մարմնում:

Եւ դարձեալ մանանայի յատկանիշների մասին:

Նախ, որ կլոր է: Այդպէս էլ մարմնի նշխարն է կլոր՝ ի նշանակումն այն բանի, թէ անհրաժեշտ է ճաշակողին լիակատար հաւատ ունենալ: Երկրորդ՝ սպիտակ է: Այդպէս էլ նշխարը, որ անարատ եւ մաքուր է դարձում: Երրորդ՝ սառցանման է, որովհետեւ թափանցում է նաեւ նշխարի խաչը, որ լուսաւորում է մեր միտքը: Չորրորդ՝ քաղցրահամ է, որովհետեւ քաղցրանում է մեր մէջ մեղքերի դառնութիւնը: Հինգերորդ՝ ըստ ախորժակի փոփոխուելը արժանաւորների կեանքն է եւ անարժանների մահը: Վեցերորդ՝ նախ առաջինն իջնում էր ցօղը. մեզ համար էլ շնորհներն են նախապատրաստումը ճաշակման: Եօթներորդ, առաւօտեան [էր իջնում], որովհետեւ առաւօտ է բերում ճաշակողներին՝ հալածելով մեղքերի խաւարը: Ութերորդ՝ օրական մէկ անգամ է լինում. մենք էլ մէկ անգամ ենք պատարագում Քրիստոսին ըստ օրերի: Իններորդ՝ երկանքով աղալը հոգու կողմից աղալն է եւ մարմնի ուտելը: Տասներորդ՝ երեք կից ափ էր՝

Երրորդութեան հաւատով սրբելու հոգու եւ մարմնի տասը զգայարանները:

Հարց. Ո՞րն էր մանանայի՝ սափորի մէջ լինելու խորհուրդը:

Պատասխան. Այն, որ նրանց մէջ անմոռաց մնայ սքանչելիքների յիշատակը, եւ այն, որ անհետանալու էր նրանց մօտից չքնաղ կերակուրը:

Իսկ մեզ համար՝ տասը մասեր եւ երեք կից ափ էին, քանզի տասը սուրբ եւ Աստծոյ նուէր է, իսկ երեքը մեր Սուրբ Երրորդութեան նկատմամբ ունեցած հաւատի նշանակն է: Իսկ [սափորը] ոսկուց էր, քանզի անապական է Աստծոյ բնութիւնը:

Այլեւ ոսկէ սափորն անապական Կոյսն է[370], մանանան՝ Բանն-Աստուած՝ հոգով եւ մարմնով միաւորուած աստուածածին Կոյսի արգանդում:

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Լ

Հարց. Ինչո՞վ էին տարբերւում երկու տախտակները:

Պատասխան. Նախ, որ մի տախտակի հինգ օրէնքներն աստուածային էին, որտեղ ասում էր.

«Ես եմ քո Տէր Աստուածը».

«Կուռքեր մի՛ ստեղծիր».

«Սուտ մի՛ երդուիր».

«Պահի՛ր շաբաթ օրը».

«Պատուի՛ր հօրդ եւ մօրդ»:

Սրանք աստուածային են, որի պատճառով էլ առաջինը գրուեցին:

Իսկ միւս հինգը՝ «մի՛ սպանիր», «մի՛ շնանայ», «մի՛ գողանայ», «սուտ վկայութիւն մի՛ տուր», «մի՛ ցանկանայ». սրանք մարդկային են՝ ընկերոջ եւ յանցանքների վերաբերեալ:

Երկրորդ՝ հինգը յանձնառական են, հինգը՝ հրաժարական:

Երրորդ՝ հինգը դրական, հինդը՝ բացասական:

Չորրորդ՝ հինգը՝ հրամայական, հինգը՝ արգելական:

Հինգերորդ՝ հինգը՝ յաւիտենական, հինգը՝ մշտական, ինչպէս՝ «մի՛ սպանիր»-ը, «մի՛ գողացիր»-ը եւ այլն:

Եւ հինգը՝ մշտական, հինգը ոչ մշտական, որովհետեւ նոր օրէնքում ձեւափոխուեցին:

Հարց. Ինչո՞ւ է օրէնքները դնում եզակի թուով եւ մի դէմքով, ասելով՝ «մի՛ սպանիր» եւ այլն:

Պատասխան. Նախ, որ ամէն մէկն իրեն հասցէագրուած ընդունի օրէնքը եւ չծուլանայ՝ համարելով այն ընդհանուրի պարտականութիւն:

Երկրորդ՝ իւրաքանչիւրը, ով կկատարի օրէնքը, պատուական է Աստծոյ մօտ, քան ողջ աշխարհը, այդ պատճառով էլ եզակի է դիմում:

Հարց. Ի՞նչ են օրէնքը եւ իրաւունքը:

Պատասխան. Իրաւունքը ընտրութիւնն ու հատուցումն է դատաստանի՝ հետեւեալ կերպ. դատաստանը քննութեան վայր է, իսկ դատաստանի գործը՝ արդարութիւնը: Իրաւունքը քննութիւն կատարելն ու արդարացի հատուցումն է:

Իսկ օրէնքն ու պատուիրանը այսպէս են զանազանւում: Նախ՝ օրէնքը

կանոն եւ սահման է՝ կատարելու կամ չկատարելու: Պատուիրանը խրատ է սիրելիներին ու որդիներին:

Երկրորդ՝ օրէնքը հարկադրում է, պատուիրանը կամաւոր է:

Եւ օրէնքները տասն են, իրաւունքները՝ քառասուներեքը, միասին՝ յիսուներեք, որոնք Երրորդութեան նկատմամբ մեր հաւատով ունեցած ազատութեան խորհուրդն են պարունակում:

Հարց. Ի՞նչ էր նշանակում տարուայ մէջ երեք անգամ երեւալը:

Պատասխան. Հին օրէնքում երեք գլխաւոր տօն կայ:

Նախ զատիկը՝ [Եգիպտոսի] դուրս գալու ազատութիւնը, որ գարնանն էր: Երկրորդ, օրէնքի տալը՝ ամռան յիսուներեքերորդ օրը: Երրորդ՝ արմատների ժողովման օրը՝ աշնանը, որ նշանակուեց Թշրինի տասին:

Իսկ նորում մեր զատիկը զոհաբերուած Քրիստոսն է, որ ազատեց մեզ. Հոգեգալուստը, որ իջաւ առաքեալների մէջ եւ սուրբ Խաչի տօնը, որովհետեւ փրկչական Սուրբ Խաչը մեր արմատների ու պտուղների ժողովումն է:

Դարձեալ՝ երեք անգամ երեւաց, քանի որ այստեղ մարմնաւոր հաւատով ենք տեսնում Քրիստոսին, մահից յետոյ՝ յուսով, մեր հոգում, իսկ յարութիւնից յետոյ սիրով միաւորւում ենք Նրան. ըստ այդմ՝ «Ես արդարութեամբ եմ երեւալու քեզ եւ գոհանալու եմ քո փառքի երեւալով» (Սղմ. ԺՁ 15):

Հարց. Ինչո՞ւ Աստուած այդպիսի հզօրութեամբ եւ որոտով յայտնուեց Սինայի վրայ:

Պատասխան. Նախ, որովհետեւ ժողովուրդը չհաւան եւ անկատար էր, ուստի զգայական տեսիլքով եւ ձայնով զարհուրանք պատճառեց, որ այլեւս չմոռանան, հաւատան եւ յիշեն, քանի որ վախեցնելով խօսում են մանուկների հետ, իսկ մեզ՝ կատարեալներիս, աւանդեց խօսքով:

Երկրորդ՝ օրինակ էր յաջորդ գալստեան, քանզի փողով ու հրով է դատաստան գալու:

Երրորդ՝ որպէս կանխանշան Սուրբ Հոգու, որ նոյնպիսի որոտմամբ եւ հրեղէն լեզուով իջաւ առաքեալների մէջ:

Ահա այս պատճառով էլ այդպիսի ժամանակ զգալիօրէն ուժեղանում են որոտը, կայծակը, կարկուտը՝ ի յիշատակ Աստծոյ հրաշքների:

Հարց. Ի՞նչ էր նշանակում, որ զոհաբերութեան արեանը կիսով չափ ջուր խառնեց եւ ցանեց ժողովրդի վրայ, իսկ միւս կէսը լցրեց սեղանի շուրջը:

Պատասխան. Խորհրդանշում էր ժողովրդին, որ պիտի մաքրուէր աւազանով եւ հաղորդութեամբ խառնուէր Քրիստոսի արեանը: Այս է պատճառը, որ մկրտութիւնից յետոյ հաղորդութիւն ենք տալիս կնքուածին:

Իսկ այն, որ սեղանի շուրջը լցրեց, ցոյց էր տալիս քահանաներին, որ միշտ սպասաւորեն սեղանի մօտ գտնուողին, այսինքն՝ Քրիստոսին, եւ արեամբ միշտ պատերազմեն ախտերի ու դեւերի դէմ:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ անհրաժե՞շտ է ջուր խառնել խորհրդի ժամանակ, ինչպէս Մովսէսը, ապա ասենք, որ՝ ոչ:

Նախ՝ որովհետեւ Մովսէսը պարզորոշ արեան կէսն անխառնուրդ յեղեց սեղանով, որ ցոյց էր տալիս արեան անապական խորհուրդը, իսկ միւս կէսին ջուր խառնեց, ինչպէս ցոյց տրուեց մկրտութեան խորհրդի եւ հաղորդութեան մէջ խառնուած [լինելու հանգամանքով]:

Երկրորդ՝ մկրտութեան իմաստն այն է, որ խառնարանի մէջ նախ ջուրն է, որին յետոյ խառնւում է արիւնը, իսկ սրանք նախ հեղում էին արիւնը, ապա՝ ջուրը:

Երրորդ՝ նախ խառնուած ջուրը ցանեց ժողովրդի վրայ, որ հենց մկրտութիւն էր, ու սրանք ճաշակեցին ջուրը եւ արիւնը: Ահա բերուած օրինակով յայտնապէս այլ էր սրանց արարողութեան ձեւը: Եւ յայտնի է, որ մկրտութիւնից յետոյ պէտք է հաղորդուեն, մինչդեռ նրանք չէին կատարում, ինչպէս ցոյց տրուեց:

ԽՈՐԱՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԱ

Հարց. Ինչո՞ւ հրամայեց զանազան նիւթերից հրաշալի խորան կառուցել եւ այլ բաներ:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ, որ Աստուած հրամայեց գրել աշխարհի լինելութեան մասին եւ այն կերպաւորեց Մովսէսի մտքում, եւ որպէսզի հանգամանքները մոռացութեան չմատնուեն, հրամայեց կազմել տեսանելի խորան:

Երկրորդ՝ աշխարհի ինչպիսին լինելը եւ ձեւը ցոյց էր տրուած եռայարկ խորանով, որ չորս նիւթերից էր, իբրեւ չորս անապական տարրերի եւ ապականացու բնակիչների խորհրդանիշ:

Երրորդ՝ կամեցաւ, որ իր պատկերով մարդն աշխարհի երկրորդ ստեղծմանը արարչակից ու մասնակից լինի, ուստի հրամայեց դրանցից վերցնել պատրաստելու նիւթը:

Չորրորդ՝ ինքն անկարօտ լինելով՝ ստեղծեց արարածներին, որոնց վեր բարձրացնելով՝ կրում է ողջ էութեամբ եւ ինքն էլ հրամայեց խորան կազմել:

Հինգերորդ՝ մանուկ էր ժողովուրդը եւ զուարճանում էր տեսածով, այդ պատճառով էլ զանազան գոյներով զարդարեց:

Վեցերորդ՝ սովոր էին, որ կուռքերի տաճարները զարդարեն, ուստի առաւել, քան դրանց, խորանն է զարդարւում:

Եօթներորդ՝ քանի որ մի նոր չնաշխարհիկ բան ստեղծեց՝ նոր ժողովուրդ, նոր օրէնքներ, ուստի պէտք է նոր տաճար հռչակուէր ծովերի ու ցամաքների վրայ, որպէս պսակ ու փառք արդարների, որ մինչ այդ աչքը չէր տեսել, ականջը չէր լսել: Նոյնպէս եւ սա զգալի բաների մէջ անհասանելի էր մարդկային մտքին:

Ութերորդ, որ եթէ յանկարծ թողնեն այս խորանի վայելչութիւնը եւ հետեւեն այլոց, պատուհասի մէջ անօգնական մնան, ինչպէս թողեց ապերախտ ժողովրդին, առաւ Մողոքի վրանը (տե՛ս Դ

Թագ. ԻԳ 10, Եզեկ. Ի 26, 31) եւ Հռեմփի աստղը (տե՛ս Ամովս Ե 26, Գործք է 43)՝ ի դատապարտութիւն նրանց:

Իններորդ՝ քանի որ սրա միջոցով էր իրականանում երեւումը եւ աստուածախօսութիւնը, ինչպէս առաջ՝ երկնքից, այդ պատճառով էլ երկնազարդ կազմեց:

Տասներորդ՝ խորանը եկեղեցու օրինակն էր, որովհետեւ նա ստուեր էր, իսկ սա՝ ճշմարտութիւն, այդ պատճառով էլ գեղեցկազարդ էր:

ՀԱՐՑՈՒՄ ՉՈՐՍ ՆԻՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատասխան. Տարրերի բնական յատկանիշները հողինը սեւն է, ջրինը՝ սպիտակը, օդինը՝ կարմիրը, հրինը՝ դեղինը: Սակայն այստեղ խօսքը տարրերի ներգործող յատկանիշների մասին է: Կապոյտը օդի գոյնն է, որովհետեւ եթէ այլ գոյն լինէր, տեսողութեան համար վնասակար ու խանգարող կլինէր, ասենք սպիտակ կամ սեւ լինէր, իսկ կապոյտը հաճելի է աչքի համար: Կարմիրը հրինն է, իսկ հուրը երկու տեսակ է. կայ, որ գնդաձեւ է, կայ, որ սփռուած է: Ծիրանին ջրինն է], որովհետեւ կոնքիլոսը, որ ծիրանի է ներկում, ջրից է[371]: Սպիտակ բեհեզը երկրինն է, որովհետեւ վուշը երկրից է լինում[372]:

Հարց. Ի՞նչ էին խորհրդանշում խորանի տասը փեղկերն ու ձեւը:

Պատասխան. Տասնաբանեան օրէնքը եւ մեր տասը զգայարանները՝ հինգը հոգունը, հինգը՝ մարմնինը: Արարչագործութեան տասը մասերը, որ հինգ կերպ է ասւում: Նախ՝ այսպէս. երկինքն ու լուսատուները, օդը եւ օդեղէնները, ջուրը եւ ջրայինները, երկիրը եւ երկրայինները, մարդիկ եւ հրեշտակները:

Երկրորդ եղանակը՝ եօթը գօտիներով եւ ութերորդը՝ անմոլար [աստղերը], իններորդը՝ ներքեւում գտնուող լուսինը, տասներորդը՝ Բանն Աստուած, որ ղեկավարում է արարածներին:

Երրորդն՝ այսպէս. լուսնի ստորին տարրեղէն հուրը եւ սրա հետ լոյսի հետ կապուած երեւոյթները. օդը եւ թռչունները, ջուրը եւ լօղակաւորները, երկիրը եւ բուսականութիւնը, մարդը եւ անասունները:

Չորրորդը՝ եօթ մոլորակների գօտիները, ութերորդը՝ հաստատուն կամարը, ապա՝ ջրեղէն եւ լուսեղէն երկինքները:

Հինգերորդը՝ հրեշտակների ինը դասերը եւ ընտրեալ մարդկանց մէկ դասը, որ կլինի տասը:

Իսկ խորանը ձեւով նման էր քարաշէն եկեղեցու՝ երկարութիւնը՝ քսանութ կանգուն, բարձրութիւնը՝ տասը, լայնութիւնը՝ քսան, կամարը՝ ընդհանուր: Ընդ որում, տասը մանկութեան տարիքն է, քսանը՝ զինուորական պատանեկութեանը, քսանութը՝ երիտասարդութեանը, որը չորս եօթ է[373]:

Եւ արտաքին սրահի պատն իր մէջ բոլոր կողմերից ընդգրկում էր խորանը. հարիւր կանգուն՝ հիւսիսային եւ հարաւային կողմերից, յիսուն կանգուն՝ արեւելեան եւ արեւմտեան կողմերից,

տասնհինգ կանգուն՝ բարձրութեամբ, այնպէս, որ խորանը դրսից չերեւայ:

Եւ Սրբութեան սրբոցը արեւելեան կողմում էր, որովհետեւ Երուսաղէմը նրանց արեւելեան կողմում էր, սրբութիւնը մէջտեղում, իսկ սրահը՝ արեւմուտքում, ինչպիսին մեր եկեղեցին է:

Սա հաստատապէս է ասում նաեւ Ղեւտացւոց յիսուներորդ համարում, թէ՝ «Սրբութեան սրբոցը արեւելեան կողմում է»:

Եւ խորանը եռայարկ էր, որ նախ ցոյց էր տալիս աշխարհի ձեւը: Սրբութեան սրբոցը լուսեղէն երկինքն էր եւ հաստատուն [կամարի] անջրպետը, իսկ սրբութիւնը երկինքն է, որով ընթանում են լուսատուները: Վարագոյրն օդն էր: Իսկ արտաքին սրահը՝ երկիրը՝ մարմնական տեղը:

Երկրորդ՝ երկնայինների ձեւն ունէր: Առաջինում աթոռները եւ քերովբէները: Միջինում՝ տէրութիւնները: Վերջինում՝ հրեշտակների դասը:

Երրորդ՝ եկեղեցու ձեւով էր. բեմը, եկեղեցու մէջը, արտաքին գաւիթը կամ ժամատունը:

Չորրորդ՝ Սրբութեան սրբոցը մեր իմացումն էր. սրբութիւնը՝ հոգին, արտաքին սրահը՝ մարմինը:

Հինգերորդ՝ քահանաները եւ քահանայապետները՝ առաջին [մասը], սարկաւագներն ու սպասաւորները՝ միջին, ընդհանուր ժողովուրդը՝ արտաքին սրահը:

Իսկ եթէ հարցնեն, թէ քանի՞սն էին սիւները. յիսունը խորանի մէջ, ինը սիւն վարագոյրների, մէկը՝ միջանցիկ՝ արեւելեան եւ արեւմտեան կողմերի միջեւ, որ եղաւ վաթսուն, ութսուն ճարմանդ եւ քառասուն նիգ, բոլորն էլ ոսկեպատ, որ ներսում բոլորի թիւը լինում է հարիւր ութսուն:

Իսկ արտաքին սրահում եօթանասուն արծաթապատ սիւներ՝ իւրաքանչիւր սիւնը երկու խարսխով եւ երկծայր խոյակներով: Հարիւր արծաթէ խարիսխներ՝ իւրաքանչիւրը մէկ տաղանդ կշռով: Մնացածը՝ արծաթապատուած պղնձից, ինչպէս սիմքուֆտը կամ ոսկին են:

Խարիսխը՝ ժողովուրդը, սիւները՝ իշխանները, խոյակները՝ քահանաները:

Ամբողջ ոսկու չափը քսանինը տաղանդ էր, արծաթինը՝ հարիւր տաղանդ, պղնձինը՝ եօթանասուն: Իսկ տաղանդը հարիւր քսանհինգ լիտր է:

Սիկղը, սատերը եւ երկդրամեանը մէկ են. քսան դանկ են: Մէկ դանկը երկու գարու կշիռ է[374]:

Արծաթը դրամական չափերում կէս երկդրամի է, որը տասը դանկ է:

Կորխացիների բուրվառի պղինձը երկու հարիւր յիսուն էր, որից պատրաստուեց սեղանի պղնձէ կամարաձեւ ծածկոյթը՝ ի նշան նրանց յանդգնութեան: Իսկ ոսկին տուեցին ապաշխարելու համար, որ տուել էին ոսկի հորթի համար:

Եւ խորանի ճարտարապետները Բեսելիէլն էր՝ ոսկու եւ արծաթի մասերի, Ուրիասը՝ փայտի, Եղիաբը՝ ոստայնանկութեան[375]:

Եւ խորանը կառուցուեց եօթն ամսում եւ երկրորդ տարուայ առաջին ամսում կանգնեցուած էր:

Այսպիսով, յիսուն օր յետոյ օրէնքները տուեց, ութսուներորդ օրում՝ երեքօրեայ սուրբ պահքն էր: Նիսանի տասնհինգին անցան ծովը, որ հինգերորդ ամիսն էր եւ եօթներորդ ամսում էլ խորանի կառուցումն էր:

Բոլորը միասին տեւեց մէկ տարի:

Այսքանը խորանի մասին:

ՏԱՊԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԲ

Հարց. Ինչո՞ւ էր տապանակի չափը երկու կանգունուկէս երկարութեամբ, կանգունուկէս լայնութեամբ, կանգունուկէս բարձրութեամբ:

Պատասխան. Բազում են խորհուրդները: Սակայն նախ եւ առաջ տապանը հրեշտակների օրինակով էր, որովհետեւ նրանք անապական եւ անմահ են:

Իսկ չափերը. նախ՝ ամէն մի իր, որ ընտիր է, անշփոթելի չափ եւ սահման ունի, այդ պատճառով էլ այն կանգունով էր չափւում:

Երկրորդ՝ այդպիսի ձեւը հաստատուն է, որովհետեւ խորանարդաձեւ է, որը հաստատուն եւ յարամնայ է[376]: Իսկ երկարութիւնը նրանց անմահ կեանքն է, որովհետեւ գերազանց է, քան ժամանակը եւ պակաս, քան յաւիտենական Աստուած:

Այլ է մշտնջենաւորներինը: Ինչպէս մեր հոգին սկիզբ ունի, սակայն չունի վախճան, այդպէս էլ նրանք գիտութեամբ բարձր են, քան մարդիկ, սակայն պակաս, քան Աստուած: Այսպէս են նաեւ լայնութիւնները, որ իրենց էութեան մէջ աճում են իմաստներով:

Չորրորդ՝ ամբողջի հինգ կանգուն [լինելը], ցոյց է տալիս, որ նրանք միայն չորս տարրերից չեն, այլեւ հինգերորդ էութիւն են, ինչպէս բնութագրում են ոմանք՝ անմարմին, անփոփոխ եւ անմահ, որ տարրերի յատկանիշ չէ: Իսկ կէս, որովհետեւ կիսակատարեալ են եւ պակաս Աստծուց նրանով, որ եղական են եւ գոյաւորուած ոչ գոյից, ինչպէս ասել ենք:

Հինգերորդ՝ երեք չափերը, որ նշուեցին՝ երկարութիւն, լայնութիւն, բարձրութիւն, եւ չնշուեց խորութիւնը, որ թանձրութիւնն է, ըստ Փիլոնի նշանակում է, որ անմարմինները հասնում են երեքի, ինչպէս երկրաչափերն են ասում՝ նիշ, գիծ, մակերեւոյթ. որ իմանալիների չափումն է[377], իսկ չորրորդը, որ մարմնական է՝ թանձրացական զգայականներինն է:

Իսկ այն, որ ներսից եւ դրսից պատուած էր ոսկով, ցոյց էր տալիս նրանց աստուածատեսակ եւ մաքուր լինելը: Ներսից, որովհետեւ իրենց լինելու պահից բնութեամբ ստացան մաքրութիւն, դրսից, որովհետեւ օրըստօրէ իմաստնանում են լուսափայլ իմաստութիւններով՝ ըստ մեծ Դիոնէսիոսի:

Եւ շրջանաձեւ եզրն իբրեւ ծնօտ ցոյց էր տալիս նրանց իմանալի

կերակուրը, որովհետեւ ծնօտը կերակրուելու միջոց է:

Իսկ չորս օղակները եւ երկու լծակները ցոյց են տալիս, որ քառանիւթ աշխարհի խնամածուներն են՝ Աստծոյ խնամքի երկակի զօրութեամբ, այսինքն՝ արարչական եւ արքայական, որովհետեւ ե՛ւ պարգեւում են բարին, ե՛ւ պատուհասում՝ ոմանց պահելով խաղաղութեան մէջ:

Իսկ վկայութեան [տապանակը] (Ելք ԻԵ 22, ԼԴ 29) օրէնքների տախտակներն են, որ պահողների համար բարի են վկայում, չպահողներին՝ պատիժներ:

Իսկ իմանալիների դասերը վկաներ են, նախ, որովհետեւ Սուրբ Երրորդութեան դռների մօտ են եւ անճառելի փառքի ականատեսները: Երկրորդ՝ երբ երեւում են երկրի վրայ, տեսնօղները սարսափում են նրանց երեւալով ու դառնում Ամենազօրի փառքի վկաները:

Այդպէս եւ քերովբէները, որ հովանի են քաւութեան [խորանին] ու նրանց մէջ աստուածախօսութիւն կայ, որովհետեւ աթոռները եւ քերովբէները Աստծոյ շուրջն են եւ Սուրբ Երրորդութիւնից ուսանում են անմիջականօրէն եւ ուսուցանում ներքեւիններին:

Սրանք Սրբութեան սրբոցի մէջ են, որ լուսեղէն երկինքն է՝ անմարմին զօրութիւնների բնակարանը:

Դարձեալ՝ տապանակը խորհրդանշում էր Սուրբ Աստուածածնին, չփտող փայտը տապանակի՝ անապական կուսութիւնը, ներսի եւ դրսի ոսկին՝ հոգու եւ մարմնի մաքրութիւնը[378]: Ընդ որում, ըստ այն բանի, որ գրուած տախտակները երկուսն են, դրանով նշանակւում է հոգու եւ մարմնի միաւորութիւնը Բանի միջոցով: Մանանան՝ [Քրիստոսի] անապական մարմինն է:

Եւ նոյն գաւազանը Յեսուի արմատից է եւ Հօր բուրվառը՝ անուշահոտութիւններից:

Իսկ համաձայն Սուրբ Կիւրեղի տապանակը մեր Տէր Յիսուս Քրիստոսն է, անփուտ փայտը՝ անապական մարմինը: Ոսկով հոգին ու մարմինն են՝ միաւորուած աստուածութեամբ՝ վրան քաւութիւնը, որովհետեւ նա եղաւ մեր քաւութիւնը[379]:

Եւ վարագոյրի ներքին կողմում Սրբութեան սրբոցն է, ինչպէս որ առաջնորդում էր ժողովրդի երթը, եւ մեր Տէրն ասում է. «Որտեղ ես եմ, այնտեղ եւ իմ պաշտօնեան»:

Եւ տապանակը քառակուսի անփուտ՝ քառաթեւ խաչն էր[380]՝ անապական, աստուածընկալ: Եւ քանի որ խաչով քաւեց մեր մեղքերը, ուստի կոչւում է Սուրբ Խաչ:

Նաեւ տապանակը սուրբ եկեղեցին է՝ գաղջ մեղքերից չփտող, որ անապական բնոյթով ոսկեզարդուած պահպանում է երկու կտակարանները:

Իսկ խաչը հրաշագործ՝ կենսատու մանանան է, բուրվառը՝ աղօթքի խունկը, վէմը՝ սուրբ սեղանը, երկու քշոցները՝ քերովբէները:

Իսկ հինգուկէս կանգունը խորհրդանշում է Քրիստոսի գալուստը. Փրկչական խաչը եւ եկեղեցին եղան

հինգերորդ հազարամեակի կէսերին, վեցերորդի սկզբին, որովհետեւ Եօթանասնից [թարգմանիչները] հինգ հազար երկու հարիւրից երկու թիւ պակաս են գրում, իսկ ուրիշները հինգ հազար հինգ հարիւր են գրում, որը հինգ ու կէս հազարամեակ է: Այս իմաստով է, որ երբ խաչակնքւում ենք, աջի մատնեմատը բուռ մատին ենք մօտեցնում, որ հինգերորդ թիւն է՝ ցոյց տալով վեցի կէսը:

Այս է տապանակի խորհուրդը, որ Սրբութեան սրբոցի մէջ է:

Հարց. Այժմ ո՞ւր է տապանակը:

Պատասխան. Երեմիան եւ իր աշակերտները գիշերով տարան տապանակը Սինա լեռը, որի մօտ գտնւում էին, այնտեղ ժայռախորշում կնքեցին Աստծոյ անունով՝ ասելով. «Ո՛չ ոք չբացի սա, եթէ ոչ Մովսէսը, ով բերեց. ո՛չ ոք չբացի, եթէ ոչ Ահարօնը»[381]:

Եւ ցերեկը [այն] ծածկւում էր ամպով, իսկ գիշերը՝ լոյսով:

ԱՌԱՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՑԻ ԵՒ ՍԵՂԱՆԻ ԽՆԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԳ

Հարց. Ի՞նչ կար սրբութեան մէջ:

Պատասխան. Երեք իր:

Նախ՝ հիւսիսային կողմում առաջաւորութեան հացը եւ գառան սեղանը:

Երկրորդ՝ մէջտեղում խնկի սեղանը:

Երրորդ՝ հարաւում լոյսի աշտանակը:

Արդ՝ երեք հացը, խորոված գառը եւ գինու սափորի քառորդ մասը մատուցում էին ամէն առաւօտ եւ երեկոյ:

[Սա] եկեղեցու կենսատու հացի խորհուրդն է, որի պատճառով էլ նշխարը դնում ենք հիւսիսային կողմում, իսկ սկիհը՝ հարաւում, ինչպէս այնտեղ:

Եւ միշտ ամէն օր [տրւում է] նաեւ հանգուցեալների հոգեբաժինը:

Առաւօտեանը այստեղ Քրիստոսին պատարագելու խորհրդանիշն է, իսկ երեկոյեանը, որ այստեղից յետոյ էլ այնտեղ մեր վայելումը Քրիստոսն է: Եւ ինչպէս ներսից տապանակը իմանալիների օրինակն էր, այդպէս էլ խնկի եւ առաջաւորութեան հացի սեղանը ցոյց է տալիս սրբերի հոգիները, որ դուրս են եկել մարմիններից եւ կանգնել Աստծոյ երեսին դէմ յանդիման:

Նախ, անփուտ սեղանն անմահ հոգիներն են: Արտաքինից ոսկեպատ է, որովհետեւ մաքրուեցին արտաքին գործերով: Չորս կանգուն եւ կէս է, որ [նշանակում] էր ելած տարրեղէն կենցաղից:

Եւ այն, որ հինգի չի հասնում, [նշանակում է], որ պակաս ունեն մարմնականը: Գինին [ցոյց էր տալիս], որ արեամբ կատարեալ են: Խորոված [գառը]՝ անարատութիւնը, հացը՝ մարմնով, հոգով, մտքով ողջախոհ լինելը: [Խնկաղացը]՝ ցոյց է տալիս բազմազան առաքինութիւններով խնկարկուածներին, տուփը՝ բարիքների ժողովումը, ճաշերը՝ առաքինութիւնների չափն ու նուիրումն Աստծուն: Ահա այս պատճառով այստեղ երկնքի հաստատութիւնը համարում են հոգիների կայան, մինչեւ մարմինների յարութեան օրը:

ԱՇՏԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ աշտանակը դրուեց հարաւում:

Պատասխան. Եօթնաջահեան աշտանակը նախ ցոյց էր տալիս դէպի հարաւ ընթացող երկնային լուսատուներին:

Երկրորդ՝ ոսկեայ էր, որովհետեւ նրանք էլ անապական են բնութեամբ:

Երրորդ՝ վեցն էլ լոյս ունեն եւ իւղը առնում են միջից, ինչպէս բոլոր մոլորակները լոյս ունեն եւ մնացածն առնում են արեւից:

Չորրորդ՝ աշտանակի վրայի զանազան նկարները [ցոյց են տալիս] նրանց ուղեծրի զանազան ազդեցութիւնները երկրի՝ կենդանիների, տնկիների, անշունչների վրայ:

Հինգերորդ՝ աշտանակը սրբութեան մէջ էր լոյս տալիս, իսկ լուսատուները՝ երկրի:

Այս օրինակը տեսաւ Զաքարիա մարգարէն եւ ասաց հրեշտակին. «Տեսնում եմ ոսկեձոյլ աշտանակ, վրան՝ մի գունդ, եօթ ճրագներ եւ ճրագների եօթ բերաններ» (Զաք. Դ 2): Ոսկի աշտանակը Աստծոյ անապական զօրութիւնն էր, որով խնամում էր նրանց եւ կրելով՝ պահում: Վրայի գունդը՝ թագաւորութիւնն էր, եօթ ճրագները եւ նրանց բերանները՝ եօթ այրերը, թագաւորի մեծապատիւ աջակիցները, այսինքն՝ Յեսուն, Զաքարիան, Խոդէստուբիան, Յեդոյիան, Յեշոյիան եւ Եզր դպիրը, որը եւ ցոյց էր տալիս եօթանասուն տարի անց գերեվարութիւնից դառնալը եւ հրէական կարգի նորոգուելը:

Երկու ձիթենիները Զօրաբաբէլ ու Յեսու քահանաներն էին:

Եւ դարձեալ աշտանակը նշանակում է սուրբ եկեղեցին, գունդը՝ Տէրը, եօթ ճրագները՝ Սուրբ Հոգու եօթնարփեայ շնորհները, այլեւ՝ եկեղեցու եօթ խորհուրդները եւ հոգու եօթ զօրութիւնները՝ չորսը ստացուած, երեքը՝ աստուածային առաքինութեամբ եւ եօթնական՝ քահանայութեան աստիճանները:

Եօթ ճրագները եւ եօթ բերանները, որ կլինի տասնչորս, նշանակումն են նաեւ հաւատի տասնչորս աստիճանները՝ եօթը Աստծոյ անմարմին բնութեան, եօթը՝ ի տնօրինութիւն Բանի:

Երկու ձիթենիները երկու կտակարաններն են՝ իւղալից եւ պարարտ: Նաեւ նշանակում էր, որ անապական է եկեղեցու հաւատը, հաստատ է յոյսը ու ջերմ սէրն առ Քրիստոս:

Եւ ջահի գունդը մեր Տէրն է, որ լուսաւորում է իր հաւատացեալներին: Եւ գունդը կլոր է, Նախ, որովհետեւ կատարեալ է՝ միաւորուած աստուածութեամբ եւ մարդեղութեամբ: Երկրորդ, որովհետեւ Հօր ծնունդը՝ Բանն Աստուած, առաւ բնութիւնը մարդու, որ արարածների մէջ վերջինն էր: Երրորդ, որովհետեւ իջաւ երկնքից եւ ելաւ երկինք՝ կատարելով տնօրինութիւնը: Նրա շուրջը եղած եօթ ճրագները ընտրեալների եօթ դասերն էին՝ առաքեալները, մարգարէները, հայրապետները, այնուհետեւ՝ նահապետները, վար-

դապետներն ու թագաւորները, զինուորներն ու ճգնաւորները, որոնցից յետոյ՝ կոյսերն ու մարտիրոսները: Սրանք բոլորը մտքի ակունքով բացուած են դէպի միակ ու ճշմարիտ ջահը՝ ի Քրիստոս եւ նրանից լուսաւորուած՝ իրենց վարդապետութեամբ պայծառացնում են երկու ժողովուրդներին, որոնք հրէաներից կամ հեթանոսներից օծուեցին մկրտութեամբ:

Այս մասին է, որ ակնարկում է Պօղոս առաքեալը Հռօմէացիներին ուղղուած թղթի՝ ընտանի եւ վայրի ձիթենիների մասին առակում (տե՛ս Հռոմ. ԺԷ 17-24):

Աշտանակի լոյսը նաեւ արդար մարդն է, գունդը՝ բանական հոգին: Ճրագը՝ եօթ զգայարանները. երկու ձիթենիները՝ սրտի եւ բերանի մտքերը:

Դարձեալ՝ աշտանակը խաչն է, ճրագը՝ Տէրը նրա վրայ: Եօթ բերանները եօթ խօսքերն՝ ասուած խաչի վրայ: Ձիթենիները՝ խաչի երկու բարութիւնները՝ արքայութեան բացումն ու դժոխքի աւիրումը, կամ էլ, որ մեզ ազատեց եւ թշնամուն՝ կապեց:

Եւ կամ՝ աշտանակը Սուրբ Կոյսն էր: Նրանից վառուող ճրագը՝ եօթնաճաճանչ լոյսով ծնուածը: Եօթ բերանները Աւետարանում Կոյսի մասին պատմող եօթ խօսքերը: Երկու ձիթենիները՝ Հօր զօրութիւնն ու նրա հովանի Սուրբ Հոգին:

Այսքանն աշտանակի մասին:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԳԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ հրամայեց կրել այդպիսի զարդարուած զգեստ:

Պատասխան. Նախ, որովհետեւ մանուկ էին եւ զուարճանում էին արտաքին տեսքով, ինչպէս խորանի եւ այլ սրբութիւնների, այդպէս էլ քահանայական զգեստի:

Երկրորդ՝ որովհետեւ սուրբ գործին անհրաժեշտ էր նաեւ սուրբ զգեստ:

Երրորդ՝ տեսանելի մարմնական մաքրութեան հետ ցոյց է տալիս նաեւ հոգու անտեսանելի մաքրութիւնը:

Չորրորդ՝ ի խորհուրդ վայելչական մարմնի՝ մեր ճշմարիտ քահանայապետի՝ Քրիստոսի,:

Հինգերորդ, որպէս օրինակ նոր քահանայութեան զգեստի. հանդերձը սպիտակ շապիկն է, կապոյտ վտաւակը՝ նափորտը, վակասը ուրարն է, ակների տախտակը՝ կոնքեռը, կամարը՝ գօտին. լուսնածեւ վահանը թիկունքի եւ սրտի վրայ եւ դատաստանի երկու տախտակները ուսին՝ եմիփորոնն է: Խաչածեւ ապարօշը սրտի վրայ պատուած եմիփորոնն է: Խոյրը, վարշամակը, միթրը, ոսկեայ թիթեղը՝ նկարազարդուած սրբերի պատկերներով, եւ երկու բազպանները՝ անդրավարտիքի փոխարէն նոր օրէնքում, ահա, այսպէս են համեմատւում:

Իսկ հնի խորհուրդները [սրանք են]. չորս նիւթերը չորս տարրերն էին խորհրդանշում, իսկ անապական ոսկին՝ երկինքը: Քղանցաւոր բոլորապատ կապոյտը երկինքն էր: Բեհեզը՝ լոյսի տարածումը ներքեւում. երկու վահանակները՝ լուսատուները: Ուսերի երկու ակները՝ երկնքի երկու կիսագնդերը, որ ունեն վեցական կենդանակերպեր, տասներկու ակներով ուսնոցը երկնքի

լանջին սփռուած նոյն կենդանակերպերը, խոյրը՝ քահանայապետութեան պսակն է, թիթեղը՝ մտքի թեթեւութիւնը, այսինքն՝ քահանայապետը գլուխը լինելով, բոլոր արարածներին վերցնելով՝ նուիրում է Աստծուն:

Հարց. Ի՞նչ էին նշանակում տասներկու ակները:

Պատասխան. Իսրայէլի տասներկու ազգերը, որոնց անուններն էին գրուած, ինչպէս երկնքի տասներկու կենդանակերպերը, տարուայ ամիսները, այլեւ Յիսուսի լանջին՝ առաքեալները: Այսինքն թէ՝ սրանց վեր բարձրացրեցի եւ պահում եմ իմ սրտի սիրով, այլեւ սրանց հետ պատահածներն իմ սրտում եմ կրում:

ԱԿՆԵՐԻ, ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ԵՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ Պրակ ԼԴ

Եւ սրանք են տասներկու ակները եւ գրուած անունները.

Զմրուխտ. կանաչ է եւ դեղնագոյն: Գտնւում է Փիսոն գետում. Ղեւին եւ Յովհաննէսն են:

Սարդիոն. շիկագոյն է եւ արնանման: Գտնւում է Բաբելոնում: Թափանցիկ է եւ առողջութեան դեղ. Ռուբէնը եւ Փիլիպպոսն են:

Տպազիոն. կարմիր է: Գտնւում է Տոպազէ քաղաքում, Հնդկաստանում. Շմաւոնը եւ Մաթէոսն են:

Կարկեհան. որ կոչւում է կայծ քար: Հրագոյն է: Գտնւում է Աֆրիկայում: Գիշերը լոյս է տալիս իբրեւ հուր. Յուդան եւ Մատաթիան են:

Շափիւղայ. ծիրանագոյն է: Գտնւում է Հնդկաստանում. Դանը եւ Պօղոսն են:

Յասպիս. Նման է դեղնագոյն զմրուխտին: Գտնւում է Կասպից ծովի Թորգոմէտոս գետի եզերքին. Նեփթաղէմը եւ Պետրոսն են:

Գոճազմ. կապոյտ է: Գտնւում է Մեծ Սկիւթիայում. Ասերը եւ Անդրէասն են:

Սուտակ. լիգրոնն է, եւ ոչ ոք չգիտէ որտեղից լինելը, նման է կապոյտ աւազահատիկի: Ոմանք ասում են, թէ բերուել է ամազոնուհիների կանանց աշխարհից. Գադը եւ Թադէոսն են:

Ակատ. ակատի մասին ոչինչ չգտանք նրա կողմից ասուած: Ոսկեքարը նկատի ունի եւ ոսկեգոյն է այն կոչում: Գտնւում է քաղդէացիների մօտ. Զաբուղոնը եւ Բարդուղիմէոսն են:

Յակինթ. կարմիր է: Գտնւում է Բաբելոնում. Իսաքարը եւ Շմաւոնն են:

Եղնգնաքար. խարտեաշ է: Գտնւում է Հնդկաստանում: Բենիամինը եւ Յակոբոսն են:

Բիւրեղ. ծովագոյն է, օդանման: Գտնւում է Տորոսում, Եփրատ գետի անցումում[382]: Յովսէփը եւ Թուման են:

Ահա այսպէս են բացատրում սուրբ Եպիփանն ու Անդրէասը Յոհաննու տեսիլքի տասներկու ակների անունները:

Սրանցից բացի երկու պատուաւոր քարերը, որոնք կոչուեցին ադամանդեայ, տարուայ մէջ երեք անգամ ամրացւում էին քահանայի քղանցաւոր զգեստի ուսնոցին, երբ մտնում էր Սրբութեան սրբոցը՝ Զատկին, Յիսներեկին եւ Քաւութեան տօնին: Եւ տարուայ մէջ ինչ

լինելու էր՝ քարերը համապատասխանաբար փոխուում էին: Այսպէս, եթէ սեւանում էին, մահ էին գուշակում, եթէ կարմրում էին՝ արիւնահեղութիւն, եթէ սպիտակում՝ խաղաղութիւն:

Այս էր պատճառը, որ երբ Յովհաննէսի հայրը՝ Զաքարիան, մտաւ տաճարը եւ ելաւ, ժողովուրդը աչքը յառեց քարին եւ տեսաւ, որ լուսափայլ սպիտակել է, ինչպէս ձիւն եւ շատ ուրախացաւ, որովհետեւ երկնային արքայութեան ճառագայթները պայծառացրել էին քարերը:

ԻՒՂԻ ԵՒ ԽՆԿԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ո՞րոնք են խնկի նիւթերը:

Պատասխան. Անուշահոտ իւղը պատրաստուած էր չորս նիւթերից. զմռնենու ծաղկից, որ նման է կակաչ ծաղկին: Կինամոնից, որ հայոց Տմորիքում խոտարմատ է: Խնկեղեգից, որ ոչ բոլոր եղեգների արմատից է լինում: Եւ հիրիկից, որ ծառերի խեժ է: Ապա պտղի ձէթով եփում են, ինչպէս վարդաջուրը, եւ սրանով օծում թագաւորներին ու քահանաներին[383]:

Այդպէս էլ ծխելու խունկն է չորս նիւթից. ստաշխը, քաղբանը, եղնգնաքարը եւ կնդրուկը, որոնք խառնում ու աղում են՝ ի խորհուրդ մեր չորս առաքինութիւնների:

ՔԱՐԷ ՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԵ

Հարց. Տախտակներն ինչո՞ւ էին երկուսը եւ քարեղէն:

Պատասխան. Նախ այն օրէնքները, որ լսեցին ականջներով, տեսնեն նաեւ աչքերով, որովհետեւ տեսնելը հաստատ է, քան լսելը:

Երկրորդ՝ որպէսզի Մովսէսի հետ խօսի տախտակից:

Երրորդ՝ որպէսզի ամրակայուի նրանց մտքում:

Չորրորդ՝ քարի վրայ գրեց, որ չջնջուեն հրով կամ ջրով:

Հինգերորդ՝ երկուսն են հոգու եւ մարմնի օրէնքները, ուստի երկուսն էին տախտակները:

Վեցերորդ՝ երկու օրէնք էր տալու՝ հին եւ նոր, ուստի երկուսը գրեց:

Եօթներորդ՝ Տիրոջ մարդեղութեան օրինակով խօսքը գրուեց տախտակի վրայ, իսկ աստուածութեամբ կոչուեց կարծրացած վէմ՝ հող դարձած Ադամի փոխարէն:

Եւ երկուսն էր, որովհետեւ հոգով եւ մարմնով եղաւ մի Բանն-Աստուած:

Հարց. Ինչո՞ւ ոչնչացրեց [դրանք]:

Պատասխան. Նախ, որովհետեւ զայրացաւ յանուն Աստծոյ նախանձախնդրութեան, ինչպէս Փենեհէսն ու Եղիան:

Երկրորդ, որովհետեւ մատնուած էին կորստի, ուստի չպահպանեց դրանք, ինչպէս երբ մի թագաւոր լսում է իր որդու մահուան գոյժը, վայր է նետում թագը եւ այն ամէնն, ինչ կայ նրա համար:

Երրորդ՝ որովհետեւ հոգով մեռածներն արժանի չէին տեսնելու Աստծոյ կենդանի խօսքն այն աչքերով, որով

նայել էին հորթին ու համբուրել շրթունքներով:

Չորրորդ՝ խորհրդանշում էր այն, որ վերացրեց հին օրէնքն ու նորը տուեց:

Սա էր տախտակը ոչնչացնելու պատճառը, եւ ոչ թէ, ինչպէս ոմանք էին ասում՝ ջնջուած էին գրերը:

Իսկ այն, որ յետոյ ասաց, թէ՝ «Դու կոփի՛ր քեզ տախտակ» (Ելք ԼԴ 1), նախ այն էր նշանակում, որ եթէ դու չարչարուես գործի վրայ, հաստատ կպահես, որպէսզի հեշտութեամբ չարհամարհուի:

Երկրորդ՝ քո ձեռքի գործը ցոյց տուր անարժան ժողովրդին:

Երրորդ՝ խորհրդանշում էր նոր օրէնքը, որ հաստատուն մնաց:

Չորրորդ՝ Ադամին տրուած դրախտի օրինակն էր, որ ձրի տուեց եւ [սա] չպահպանեց, ուստի նրա սերունդներին գործի եւ չարչարանքի չափով է տալիս:

Հինգերորդ՝ սրբութեան օրինակով, որ առաջին անգամ պարգեւում է աւազանով, մեղանչելուց յետոյ նոյնը ապաշխարութեամբ ու վաստակով է պարգեւում:

ԱՍՏԾՈՒՆ ՏԵՍՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Ինձ կտեսնես թիկունքից» (Ելք ԼԳ 23):

Պատասխան. Աստծոյ դէմքը ճշմարտութիւնն է նշանակում, որ այս կեանքում ոչ ոք չի տեսնում, ինչպէս արեգակի բոլորակը, այլ տեսնում են ընտրեալները հանդերձեալում՝ ըստ [սրբութեան] չափի[384]:

Իսկ Աստծուն թիկունքից տեսնելը նախ հաւատով տեսնելն է: Երկրորդ՝ երեւալն արարածների մէջ, որովհետեւ Արարչից յետոյ արարածներն են: Երրորդ՝ Աստծուն թիկունքից իմանալը մարդն է: Նախ՝ որովհետեւ յետին պատկերն է: Երկրորդ՝ որովհետեւ յետոյ ստեղծուեց: Երրորդ՝ որովհետեւ արարչագործութեան աւարտն էր: Եւ մարդը, որ վերջինն էր, միայն նա գիտակցեց առաջին պատճառը: Չորրորդ՝ Տիրոջ մարդեղութիւնը, որ [եղաւ] յետին ժամանակներում:

Հարց. Ո՞րն էր զանազանութիւնը, որ Մովսէսը աստուած եւ տէր կոչուեց:

Պատասխան. Ճշմարիտ Աստուած բնութեամբ, գործով ու անուամբ է կոչւում Աստուած եւ տէր, իսկ Մովսէսը ոչ թէ բնութեամբ, այլ անուամբ ու գործով էր այդպէս կոչւում, որովհետեւ բարիքներ էր գործում եւ պատուհասում:

Իսկ կուռքը միայն անուամբ է եւ ոչ բնութեամբ ու ոչ էլ գործով:

Եւ պէտք է իմանալ, որ ովքեր Քրիստոսին բաժանում էին երկու բնութեան եւ երկու գործի, մէկին՝ Աստուած, միւսին՝ մարդ, հզօր ու տկար, կամ՝ մարդու գործի եւ Աստծոյ գործի, ինչպէս Քաղկեդոնի աղանդը, նրանք Քրիստոսին չեն դիտարկում Մովսէսին հաւասար աստուած, որովհետեւ Մովսէսին աստուած կոչեցին, մինչդեռ Քրիստոսին ընդամէնը մարդ են ընդունում: Եւ Մովսէսը զօրացել էր անունից, իսկ նրանք տկար ու տգէտ էին: Մովսէսն Աստծոյ գործեր էր կատարում, իսկ նրանք՝ մարդու որոշ գործեր եւ կամք:

Այս է երկաբնակների դաւանութիւնը:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Որին ողորմեմ կողորմեմ, որին գթամ՝ կգթամ» (Ելք ԼԳ 19):

Պատասխան. Այստեղ Աստծոյ գթութեան եւ ողորմութեան զանազանութիւնն է:

Նախ՝ մարդկանց [առումով է], որովհետեւ գութն անմեղ մնացողների նկատմամբ է, եւ ողորմութիւնը՝ մեղքերից դարձողների:

Նաեւ՝ գութը բնական եւ ներքին սէրն է, ողորմութիւնը՝ երկրորդաբար եւ արտաքին: Դարձեալ՝ գութը բովանդակ եւ կատարեալ սէրն է, ողորմութիւնը՝ մասնաւոր, որովհետեւ ողորմութիւնը առաջ է գալիս եւ սփռւում մեր վրայ գթութիւնից, ինչպէս ասում է՝ «Գթած առ որդիացածները, ողորմած առ զղջացածները, երկայնամիտ՝ առ չղջացողները, բազմողորմած՝ առ բազմապարտ մեղքերից դարձածները, իբրեւ պարտապան բիւր քանքարների եւ ճշտապահ իւր սիրեցեալներին խոստացած պարգեւներում»[385]:

Հարց. Ի՞նչ է նշանակում «Ողորմալ հազար ազգերի» (Ելք ԼԴ 7):

Պատասխան. Նախ ցոյց է տալիս Աստծոյ պարգեւների առատութիւնը, որ ոչ թէ գործերին զուգակշիռ է հատուցում, այլ՝ բազմապատիկն ու հազարապատիկը:

Երկրորդ՝ «հազար ազգ»՝ առաքինի հայրերի համար է [ասւում], որոնց զաւակներին բարիքներ է պարգեւում եւ թեթեւացնում է մեղքերի պարտքը, ինչպէս Միածին Բանն-Աստուած ողորմեց՝ յիշելով առաջին արդարին, ըստ այդմ. «Յիշեց իր յաւիտենական ուխտը եւ տուեց հազար տարուայ պատուիրան»:

Իսկ ասելը՝ «Հայրերի անիրաւութեան վրէժը հանում է որդիների երեք եւ չորս սերունդներից» (Թիւք ԺԴ 18), որ լինում է եօթ ազգ, որի մասին, եւ Ամովսն է ասում, թէ՝ «Երեք անիրաւութիւնների համար եւ [մանաւանդ] չորրորդի համար, չեմ շրջուելու նրանցից» (Ամովս Ա 3), այսինքն՝ ներելու եմ երեք ազգ կամ երեք դարաշրջան, իսկ չորրորդում ոչ թէ վրէժխնդիր եմ լինելու հայրերի բոլոր մեղքերի համար, այլ հատուցելու եմ որդիներին, [որ նշանակում է], որ ոչ թէ հայրերի մեղքերը որդիներից է հանելու, այլ երկայնամիտ է լինելու եւ ներելու է հայրերի մեղքերը որդուց որդի, որպէսզի դառնան մեղքերից: Իսկ երբ որդիներն ու թոռները չօգտուեն ներումից, այնժամ պատուհասելու եւ ջնջելու է չար սերնդի յիշատակը, ինչպէս որ երբ լցուեցին ամուրհացիների մեղքերը չորրորդ դարում, կոտորուեցին Յեսուի ձեռքով, որից յետոյ Աստուած երկիրը խոստացաւ Աբրահամին, որը ստացան չորս հարիւր տարի յետոյ: Որովհետեւ «Տիրոջ հայացքը չարագործների վրայ է եւ ջնջելու է երկրի երեսից նրանց յիշատակը» (Սղմ.

ԼԳ 17), եւ ոչ թէ հայրերի մեղքերի համար որդիներն են հատուցելու:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ինչո՞ւ ենք մենք կրում Ադամի պարտքը, ապա ասենք, որ երկու տեսակ մեղք կայ՝ բնութեան եւ անձի, որոնք սկզբնականն ու ներգործականն են: Արդ, մեր բնութիւնը ապականուեց Ադամի մէջ մեղքով, եւ ինչպէս նա պատժուեց, այդպէս էլ մենք ենք պատժուում, սակայն հօր անձի ներգործական մեղքը որդին չի հատուցում, այլապէս չար ծնողներից բարի զաւակ չէր ծնուի:

Եւ դարձեալ մեղանչելու ձեւերը չորսն են՝ մտքով, խօսքով, գործով եւ մեղքի մէջ մնալու յամառութեամբ: Եւ Աստուած մեղքերը փոխհատուցում է երրորդ կամ չորրորդ սերնդի ժամանակ, երբ գործերի համար մեղքի մէջ յամառողին պատժում է: Նաեւ՝ մարդու հասակը չորս փոփոխութիւն է անցնում՝ մանուկ, երիտասարդ, կատարեալ հասակ եւ ծեր: Երեք հասակում Աստուած ներում է մեղքերը, իսկ չորրորդում, երբ չեն զղջում, պատուհասում է:

Դարձեալ առաջին ծննդեան ժամանակ Աստուած բնական մեղքեր ունեցող յանցաւորներին ջնջեց ջրհեղեղով, երկրորդ ծննդեան ժամանակ կռապաշտութեան մէջ յանցաւորներին ընկղմեց Կարմիր ծովում, երրորդ ծննդեան ժամանակ գրաւոր օրէնքները ոտնահարողներին ոչնչացրեց պատերազմներով, չորրորդ ծնունդի մէջ դատապարտելու է մեղաւորներին եւ վերջին հրով այրելու Աւետարանն արհամարհողներին:

Այսքանն այս մասին:

ՄՈՎՍԷՍԻ ԵՐԵՍԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԵԼԸ
Պրակ ԼԶ

Հարց. Ինչո՞ւ լուսաւորուեց Մովսէսի երեսը:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով մեծահրաշ սքանչելիք կատարուեց Մովսէսի հետ:

Նախ՝ դրախտում գտնուող Ադամի կերպարանքն ունեցաւ, որին երեւաց ինչպէս որ էր, որը տեսաւ մահը եւ կորցրեց իր թագը, ըստ այդմ՝ «Մահը թագաւորեց Ադամից մինչեւ Մովսէս» (Հռոմ. Ե 14), որովհետեւ Մովսէսն օրինակով, իսկ Քրիստոս ճշմարտութեամբ կործանեցին մահը, իսկ յարութեան ժամանակ [կործանելու են] ընդհանրապէս բոլորինը:

Երկրորդ՝ դէմ յանդիման տեսաւ Տիրոջը եւ լուսէ նշան մնաց տեսնելուց յետոյ:

Երրորդ՝ որպէսզի օրէնքների տախտակների փառքը մեծանայ երեսի լոյսով:

Չորրորդ՝ որպէսզի ժողովուրդը զարհուրի եւ հնազանդուի Մովսէսին:

Հինգերորդ՝ Տէրը խնայեց նրան ցոյց չտալով իր դէմքը. նրան, որին Տէր անուանեց եւ նրա աչքը դարձրեց տէր եւ պատժող:

Վեցերորդ՝ որովհետեւ իմանալի լոյս ունէր, [ունէր նաեւ] զգայական լոյս, քանզի գիշերը դուրս գալով խորանից՝

ցրում էր խաւարը եւ լուսաւորում անապատը:

Եօթներորդ՝ նա, ով աշակերտէր Մովսէսին, լոյս ունէր իր մէջ, իսկ ով չէր աշակերտում, մնալու էր խաւարի մէջ, ինչպէս քանանացիք:

Ութերորդ՝ աչքերի տեսածն աւելի էր հասկանալի դարձնում նրա խօսքը, քան լեզուի ճարտարութիւնը:

Իններորդ՝ օրինակն էր արդարների [ունեցած] լոյսի, որոնք արտաքին լոյսի կարիք չունեն, ինչպէս չունէր Մովսէսը, որովհետեւ բնական լոյս չէր, քանզի աչքը բնական տեսնելու [յատկանիշ] ունի ու ոչ թէ լոյս:

Տասներորդ՝ նա, որ այդպիսի լոյս ստացաւ, Ադամի ամօթալի նախատինքները չստացաւ:

Տասնմէկերորդ՝ Տիրոջ օրինակն էր, որ պայծառակերպուեց Թաբօր լեռան վրայ: Եւ այսպէս են զանազանւում: Նախ՝ որ Տէրն ամբողջ մարմնով լուսաւորուեց, իսկ Մովսէսը՝ մասամբ: Տէրը բնութեամբ ունէր լոյսը, Մովսէսը դրսից ստացաւ: Տէրն այլոց էր տալիս լոյսը, ինչը Մովսէսը չէր կարող:

Տասներկուերորդ՝ լուսաւորուեց, որ քօղ ձգի երեսին, որ օրինակն էր Հին կտակարանի, որ նրանց մտքերը վարագուրող քօղն ու առագաստն է՝ մինչեւ հոգիները դառնան դէպի Տէրը, ինչպէս Մովսէսինը, որից յետոյ կվերանայ քօղը, եւ նրանց կյայտնուի գիտութեան լոյսը:

Հարց. Մովսէսը քանի՞ անգամ ելաւ լեռը:

Պատասխան. Բազմաթիւ: Սակայն նշանակալիցը երեքն են:

Առաջինը երեքօրեայ պահքով էր՝ Եգիպտոսից դուրս գալու յիսներորդ օրը, երբ տասնաբանեայ օրէնքը ստացաւ եւ պատմեց ժողովրդին:

Երկրորդը քառասնօրեայ պահքով առաւ երկու տախտակները եւ յետոյ ոչնչացրեց:

Երրորդը դարձեալ քառասնօրեայ պահքով էր, երբ նորից առաւ երկու տախտակները՝ գրուած Աստծոյ ձեռքով, ինչպէս առաջինը, եւ դրեց Վկայութեան տապանակի մէջ:

Եւ երեքն են Մովսէսի քառասնօրեայ պահքերը՝ բացի մառախուղից դուրս Յեսուի հետ [պահելը]: Մէկն օրինաց տախտակների համար: Երկրորդ անգամ լեռը ելաւ Ահարօնի հաշտութեան համար: Եւ երրորդը, երբ լրտեսներին ուղարկեցին Կադիսա, եւ քառասուն օր ուշացան, Մովսէսը քառասուն օր պահքի մէջ մնաց լեռան վրայ, ինչպէս ասում է Երկրորդ օրինաց [գիրքը] (տե՛ս Բ օր. Թ 9):

Մեծն Ներսէսն այսպէս է ասում Մովսէսի քառասնօրեայ երեք պահքերի[386] վերաբերեալ՝ դրանք համապատասխանեցնելով նրա կեանքի տարիներին: Մենք նոյնպէս երեք քառասնօրեայ պահք ենք պահում. մէկը հաւատի օրէնքների համար, երկրորդը՝ հոգու համար, իբրեւ Ահարօնի համար, եւ երրորդը մարմնի համար, ինչպէս երրորդը, որ ժողովրդի համար էր: Կամ,

որ պահում ենք Քրիստոսի, Մովսէսի, Եղիայի քառասունքները:

Հարց. Ի՞նչ էր վէմից ծնուելը:

Պատասխան. Մովսէսի համար չորս ծնունդ են նշում:

Առաջինը ծնողներից՝ ըստ բնական կարգի, իսկ երեքն ըստ շնորհների՝ ջրից, հրից, վէմից՝ Տիրոջ օրինակով, ինչպէս ասուեց:

Այլեւ մեր ծննդեան խորհրդով, նախ՝ մօրից, ապա՝ աւազանից, հրից, հոգուց: Եւ ծնուելու ենք նաեւ վերջին հրով ու յարութիւն առնելու հողից:

Սրան համաձայնելով՝ մեր Վանական Վարդապետն ասում է՝ մարդը չորս տարրեր ունի եւ չորս ծնունդ. Ադամը՝ հողից, Մովսէսը՝ ամպից, հաւատացեալներն աւազանով, իսկ Յարութեան ժամանակ՝ հրով, որից յետոյ մեր աչքը կպայծառանայ Աստծոյ հայեացքին դէմ յանդիման, որին թող արժանի դարձնի մեզ եւ բոլոր իր անուանը հաւատացողներին՝

Ամէն:

Այսքանը Ելից գրքի մասին:

ԳԼՈՒԽ ԻԱ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՂԵՒՏԱՑԻՈՑ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ Պրակ Լէ

Հարց. Ինչպէ՞ս են զանազանւում հին եւ նոր օրէնքները:

Պատասխան. Նախ, որ հինը ստուերն ու օրինակն էր, իսկ նորը՝ էութիւնը եւ ճշմարտութիւնը:

Երկրորդ՝ նա մարմնական, սա հոգեւոր փրկութիւն էր:

Երրորդ՝ այնտեղ պատկերելով էր մեր հոգեւորը, այստեղ՝ բացայայտուած մեր Աստծոյ՝ Քրիստոսի տնօրինութեան խորհուրդը:

Չորրորդ՝ նա անցաւոր էր, սա՝ յարատեւ:

Հինգերորդ՝ նա առանձին ազգինն էր, սա՝ ողջ աշխարհինը:

Վեցերորդ՝ այնտեղ երկրային խոստումներն էին, այստեղ՝ երկնային:

Եօթներորդ՝ այնտեղ մարդկայինը Մովսէսով էր, այստեղ՝ աստուածայինը Քրիստոսի միջոցով:

Ութերորդ՝ այնտեղ տան տնտեսն էր, այստեղ՝ տանտէրը:

Իններորդ՝ այնտեղ խոստացաւ, այստեղ Աստուած յայտնեց իր սէրը մեր հանդէպ:

Տասներորդ՝ նրանց հետ Աստծոյ ձայնը խօսեց, մեզ հետ՝ Բանն-Աստուած:

Եւ սա բազմաթիւ զանազանութիւններով: Առաջին, որ նախ ձայնն է հասնում, ապա խօսքն իբրեւ մտքի կարապետ: Երկրորդ՝ նրանք ձայնը հեռուից էին լսում, մենք խօսքը՝ մօտիկից: Երրորդ՝ նրանք միայն ձայնը լսեցին եւ չտեսան տեսնելիքը, մենք լսեցինք, տեսանք, շօշափեցինք Կենաց Բանը (Ա Յովհ. Ա 1): Չորրորդ՝ նրանք օդի եւ մարգարէների միջոցով լսեցին ձայնը, մեզ հետ Բանն-Աստուած խօսեց անմիջականօրէն: Հինգերորդ՝ նրանք [լսեցին] ձայնն ահազդու որոտմամբ, մենք՝ հանդարտ ու քաղցր խօսքը: Վեցերորդ՝ նրանք ձայնով [եւ] օրինակով, մենք՝ խօսքով [ու] ճշմարտութեամբ:

Եօթներորդ՝ նրանցը զգայարանների ձայնն էր, մերը՝ իմաստութեան խօսքը: Ութերորդ՝ ձայնը փոփոխւում է, իսկ խօսքը՝ մնում: Իններորդ՝ ձայնը լսում են նաեւ անասունները, իսկ խօսքը՝ միայն մարդը: Տասներորդ՝ ձայնը վախեցնում է մանուկներին, խօսքը՝ կատարեալներին:

Հարց. Ի՞նչ ընդհանրութիւններ եւ տարբերութիւններ ունեն մեր Տիրոջ քահանայութիւնը եւ հին քահանայութիւնը:

Պատասխան. Ընդհանուր է այն, որ ամէն մի քահանայ միջնորդ եւ հաշտարար է Աստծոյ եւ մարդկանց միջեւ՝ ժողովրդի ընծան Աստծուն նուիրելով, իսկ Աստծոյ շնորհներն ու քահանայութիւնը՝ ժողովրդին տալով: Իսկ տարբեր են, որովհետեւ նախ նրանք մարդիկ էին տկար բնութեամբ, ըստ այդմ՝ «Օրէնքը քահանայապետ է դարձնում տկար կարողութեամբ մարդկանց, իսկ օրէնքներից յետոյ երդման խօսքը՝ Որդուն» (Եբր. է 26):

Երկրորդ՝ նրանցը ժամանակաւոր էր եւ խափանման ենթակայ, իսկ մեր Տիրոջ քահանայութիւնը մշտնջենաւոր եւ յաւիտենական, ըստ այդմ՝ «Դու յաւիտենական քահանայ ես ըստ Մելքիսեդեկի կարգի» (Եբր. է 17):

Երրորդ՝ նրանք առանց գթալու պատժում էին մեղանչողներին, իսկ մեր Տէրը [ներում է] շնորհներով եւ ողորմութեամբ, ըստ այդմ՝ «Որովհետեւ ողորմած եւ հաւատարիմ պէտք է լինի քահանայապետը» (Եբր. Բ 17):

Չորրորդ՝ նրանք չէին կարող ցաւակից լինել տկարացածներին, իսկ Տէրը, որ փորձութիւնը վերցրեց, կարող է եւ փորձանքի մէջ գտնուողներին օգնել, ըստ այնմ՝ «Ոչ թէ քահանայապետ ունենք, որ չի կարող մեր տկարութեանը ցաւակից լինել, այլ ըստ նմանութեան փորձում է [կրել] ամէն ինչ՝ առանց մեղանչելու» (Եբր. Դ 15):

Հինգերորդ՝ նրանք զոհ էին մատուցում նախ իրենց համար, ապա՝ ժողովրդի անգիտութեան, իսկ մեր Տէրը մեղք չգործեց ըստ մարգարէի, այլ անմեղը յանուն մեղաւորների զոհաբերուեց, ըստ այնմ՝ «Նա մեր մեղքերի համար է չարչարւում» (Ես. ԾԳ 4):

Վեցերորդ, նրանք ամէն օր էին զոհ մատուցում ամէնօրեայ բազմօրինակ յանցանքների համար, իսկ մեր Տէրը՝ «Մէկ անգամ մտաւ յաւիտենական սրբարան՝ գտնելով փրկութիւնը» (Եբր. Թ 12):

Եօթներորդ՝ նրանք ուրիշներին էին զոհաբերում, այսինքն՝ զուարակ ու նոխազ, իսկ մեր քահանայապետը՝ Քրիստոս, իր անուշահոտ մարմինը զոհաբերեց Հօրը, ըստ այդմ՝ «Քրիստոս քահանայապետ եղաւ ոչ թէ նոխազների ու զուարակների արիւնով, այլ՝ իր արեամբ» (Եբր. Թ 12):

Ութերորդ՝ նրանք զոհ էին մատուցում ձեռակերտ խորանում, որ Մովսէսը կառուցեց, իսկ մեր Տէրը, անցաւ վարագոյրի ետեւը, այսինքն՝ մատուցեց անձեռակերտ խորանում, ըստ այնմ՝ «Սրբութեան ծառայողը եւ ճշմարտութեան խորանը, որ կանգնեցրեց Տէրը եւ ոչ թէ մարդը» (Եբր. Ը 2):

Իններորդ՝ նրանք իբրեւ ծառայ էին մատուցում, ուստի պարզ է, որ չէին կարող նստել Սրբութեան կամ Քաւութեան մէջ, իսկ մեր Քահանայապետը տիրաբար եւ աստուածաբար է նստած երկնքում՝ Աստծոյ աջ կողմում, ըստ այնմ՝ «Այնպիսի քահանայապետ ունենք, որ նստեց Մեծութեան աջից բարձունքում» (Եբր. Դ 14):

Տասներորդ՝ նրանք օրինակ եւ ստուեր էին, ըստ այդմ՝ «Օրէնքներն ունէին ապագայ բարութիւնների ստուերը» (Եբր. Ժ 1), իսկ մեր քահանայապետը ոչ թէ ճշմարտութեան օրինակի մէջ մտաւ, այլ բուն երկինք՝ դէմ յանդիման կանգնելու Աստծոյ հայեացքի առջեւ՝ յանուն մեզ:

Տասնմէկերորդ՝ նրանք չէին համարձակւում ճաշակել իրենց զոհաբերութիւնը, այլ այրում էին, իսկ մեր Տէրը եւ մենք ճաշակում ենք նոր զոհաբերութիւնը, ըստ այդմ՝ «Մենք ունենք սեղան, իսկ նրանք, որ խորանի պաշտամունք ունէին, չեն համարձակւում ճաշակել» (Եբր. ԺԳ 10):

Տասներկուերորդ՝ նրանք իբրեւ միջնորդ հին ուխտն ունէին, իսկ Տէրը՝ նորը, ըստ այնմ՝ «Սա իմ արեան նոր ուխտն է՝ հնի փոխարէն» (Մտթ. ԻԶ 28):

Տասներեքերորդ՝ նրանք փոփոխական էին՝ մահով ընդհատուելու պատճառով, իսկ մեր Տէրը անփոփոխ ու յաւիտենական քահանայ է՝ յաւիտենական եւ անմահ լինելու պատճառով:

Տասնչորսերորդ՝ նրանք երկրից էին եւ երկրում էին պատարագ մատուցում, իսկ մեր Տէրը երկնքից եւ երկնքում էր մատուցում, ինչպէս ասում է՝ «Եթէ երկրից էր, թերեւս երկրում կային քահանաներ» (Եբր. Ը 4):

Տասնհինգերորդ՝ նրանց քահանայապետ Մովսէսն ու Ահարօնը չկարողացան մտնել պարգեւների երկիրը, իսկ մեր քահանայապետն անցաւ երկինքների երկինքը, ըստ այդմ՝ «Մեծ քահանայապետ ունենք՝ Յիսուսին, Աստծոյ Որդուն, որ անցել է երկինքները, եւ նրան է ծնրադնում իւրաքանչիւր ոք, եւ իւրաքանչիւր լեզու նրան է խոստովանում Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Հօր. Ամէն» (Փիլիպ. Բ 11):

Հարց. Հինը օրինակ էր, նորը՝ ճշմարտութիւն, իսկ հանդերձեալում ի՞նչ է լինելու:

Պատասխան. Նախ, հինը օրինակ էր, նորը ճշմարտութիւն, իսկ հանդերձեալում [լինելու է] առաւել ճշմարիտ, իբրեւ Սրբութեան սրբոց: Երկրորդ՝ նա անկատար էր, սա՝ կատարեալ, այնտեղ լինելու է կատարելագոյն, որ գերակատարն է: Երրորդ՝ այն մարմնաւոր, սա մարմնաւոր ու հոգեւոր, իսկ այնտեղ՝ միայն հոգեւոր: Չորրորդ՝ այն հասակով մանուկ, սա՝ երիտասարդ, այնտեղ՝ ծեր: Հինգերորդ՝ նա զգայական, սա բանական, այնտեղ՝ իմացական: Վեցերորդ՝ այն՝ սկիզբ, սա մէջ, նա լինելու է եզր եւ աւարտ: Եօթներորդ՝ նա Հօրից, սա մարմնացեալ Բանից, այնտեղ՝ Սուրբ Հոգուց: Այլեւ մշտական ու անփոփոխ, առանց միջնորդութեան, դէմ յանդիման

քահանայագործութիւն՝ ըստ իմանալիների օրէնքների:

ԱՆԲԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ Պրակ ԼԸ

Հարց. Ինչո՞ւ Աստուած պահանջեց զոհաբերութիւն անբանների արեամբ:

Պատասխան. Երկու պատճառով:

Նախ, որովհետեւ սովոր էին Եգիպտոսում նման զոհաբերութիւն անել կուռքերին, ուստի այդ նուիրատուութիւններն իրեն վերցրեց: Երկրորդ՝ նոր զոհաբերութեան օրինակով վերցրեց, որովհետեւ այնտեղ ստուերն էր, այստեղ՝ ճշմարտութիւնը:

Կայ նաեւ երրորդ պատճառ. Եգիպտոսում խոզն ուտում էին, արջառն ու ոչխարը պաշտում, ուստի Աստուած հրամայեց մորթել նրանց, որովհետեւ աստուած չէին, իսկ խոզից ամենեւին հրաժարուել:

ԱՆԽՄՈՐ ԵՒ ԱՆՄԵՂՐ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ սեղանին մեղր չէր դրւում:

Պատասխան. Նախ, որովհետեւ մեղրը մարմնի հեշտանքն է խորհրդանշում: Երկրորդ՝ որովհետեւ աղ չի վերցնում: Երրորդ՝ մեղրը մեր վաստակը չէ, մինչդեռ Աստծուն պէտք է նուիրաբերուի մեր աշխատանքից: Չորրորդ՝ մեղուն բազմաթիւ անսուրբ իրերից է նեկտար վերցնում. մինչդեռ Աստծուն պէտք է նուիրաբերուի սուրբ իրերից: Հինգերորդ՝ մեռած կենդանուց է մեղուն, ինչպէս ոմանք են ասում՝ մեղուակն արջառներից: Վեցերորդ՝ խորհրդանշում է հեշտասիրութիւնը, ինչպէս որ առակն է ասում՝ «Մեղր է կաթում պոռնիկ կնոջ շուրթերից» (Առակ Ե 3):

Իսկ այն, որ մեղրով պտուղներ էին նուիրում քահանաներին, բայց սեղանին չէին դրւում, նախ ցոյց էին տալիս խոհեմ բարքերը՝ ընդունելի Աստծոյ եւ մարդկանց համար, այլեւ՝ պատարագի պարզութիւնը: Երկրորդ՝ այն, որ օրինաւոր ամուսնութիւնը պատուական է որդեծնութեան պատճառով, սակայն առաքինութիւն չէ, ինչպէս կուսութիւնը, պահքը, աղօթքը:

Իսկ խմոր չէր խառնւում, որովհետեւ նախ խմորը հին չարութիւնն էր խորհրդանշում, որից պէտք է նախ հրաժարուել, ապա՝ բարին գործել: Երկրորդ՝ հպարտացած փառքն է ցոյց տալիս, որը չպէտք է խառնել բարուն: Երրորդ նեխած հոտով եւ թթուահամ է, որոնք մեղքերի հոտն ու համն են: Չորրորդ՝ բազմաթիւ ամաններ է փոխադրւում՝ փոփոխական մեղքերի [նման]: Հինգերորդ՝ սրտի զայրացկոտութիւնն է ցոյց տալիս: Վեցերորդ, խմորիչովը կենդանի հաց չէ, այլ՝ տկար: Եօթներորդ՝ խմորի օրինակով սադուկեցիների եւ փարիսեցիների աղանդն ակնարկեց Տէրը (տե՛ս Ղուկ. ԺԲ 1): Ութերորդ՝ ապականութիւն է խմորը, որի պատճառով Տէրն իր անապական մարմինը բաղարջով աւանդեց: Իններորդ՝ խմորիչովը խառնուածն է, իսկ անխմորն անխառն է եւ պարզ, որը սրտի

սրբութիւնն է: Տասներորդ՝ անզգամութիւնն ու սուտն է խմորն ըստ առաքեալի, որն ասում է. «Մի՛ տօնէք հին անզգամութեան խմորով, այլ՝ անխմոր ճշմարտութեամբ» (Ա Կորնթ. Ե 8):

Եւ ոչ միայն սա, այլեւ եօթ օր անխմոր բաղարջ էր ուտում ողջ ժողովուրդը: Եւ Աբրահամն ու Ղովտը սկզբնաւորեցին բաղարջը՝ իբրեւ փրկչական մարմնի խորհուրդ, եւ Վերնատանը Տէրը բաղարջով աւանդ կապեց, ապա ուրեմն սուտ են հոյն եւ ասորի ազգերը, որոնք խմոր են դնում խորհրդի մէջ:

ԱՂԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ հին զոհաբերութիւններն աղով էին անում, իսկ նորը՝ ոչ:

Պատասխան. Աղը մրմռացնող է. խորհրդանշում է խրատը, այլեւ մտքի խոհեմութիւնն՝ ըստ առաքեալի. «Ձեր բոլոր խօսքերը թող համեմուած լինեն իբրեւ աղով» (Կողոս. Դ 6):

Աղը խորհրդանշում է նաեւ Բանն-Աստծուն, որ մեր անհամութիւնը համեմեց ու մեր ապականութեան նեխած վէրքերն առողջացրեց:

Արդ, հինը նորի օրինակն էր, ուստի ամբողջովին աղ էր խառնւում, իսկ նորում ունենք ճշմարտութիւնը, ունենք նաեւ օրինակը: Արդ, ճշմարտութիւնը օրինակ չէ, ուստի աղ չի խառնւում: Իսկ օրինակին աղ ենք խառնում, ինչպէս ագապին [ողորմահացին], հոգեհացին եւ տէրունական պատարագին:

Ասենք նաեւ, որ հնում երկու ընծայ կար զոհաբերութեան ժամանակ. նախ, մանանան, որին աղ չէր խառնւում, եւ երկրորդը՝ իւղով պատրաստուած սպիտակ ալիւրը, որին աղ խառնւում էր: Արդ, մանանան փրկչական խորհրդի օրինակն էր, որտեղ աղ չկար, իսկ հարած սպիտակ ալիւրը մարտիրոսների յիշատակն էր, որտեղ մասին աղ ենք խառնում եւ անուշ իւղ՝ ի խորհուրդ նրանց:

Իսկ նրանք, ովքեր յամառելով՝ օրինակի [նմանութեամբ] աղ են խառնում [հաղորդութեան] խորհրդին, նրանց անհրաժեշտ է խառնել նաեւ ձէթ, հատիկ, խունկ, գառան միս՝ խառնելով կաթսայում կամ տապակի մէջ, որպէսզի օրինակը կատարեն, որով եւ կհեռանան ճշմարտութիւնից:

Հարց. Ինչո՞ւ սեղանին գինի եւ գառ էին դնում, իսկ մենք գառ չենք դնում:

Պատասխան. Գառը Քրիստոսի օրինակն էր, որովհետեւ Աստծոյ գառ կոչուեց (տե՛ս Յովհ. Ա 29), սակայն կենդանական գառ չեղաւ, եւ մարմնաւոր հաց ու գինի աւանդեց, ուստի դրանք ենք պատարագում: Իսկ խառնուած իւղը օրհնութիւն է, որ միանում է խորհրդին եւ ներկայացնում է Քրիստոսի մարմինն ու արիւնը:

ՀԻՆ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ էր հին զոհաբերութիւնը:

Պատասխան. Պէտք է իմանալ, որ հին օրէնքում ամէն մի զոհաբերութիւն երկու մասից էր բաղկացած. կենդանի, ինչպէս ոչխարը եւ այլն՝ ոգու մաք-

րութեան համար, եւ անկենդան, ինչպէս սպիտակ ալիւրը, իւղը եւ այլն՝ զգայարանների մաքրութեան համար:

Եւ նախ ասենք, որ անկենդանը, որ կոչւում էր զոհ, մասնակի նուիրատուութիւնն էր, ինչպէս սպիտակ ալիւրը, խունկը: Սա նորում փոխարինուել է մարմնաւոր նուիրատուութեամբ, ինչպիսինք են պահքը, աղօթքը, ողորմութիւնը: Եւ իւղը՝ [դրանք] զուարթութեամբ եւ առանց տրտմութեան կատարելն է, ըստ այդմ՝ «Լուա՛ երեսդ եւ օծի՛ր գլուխդ» (Մտթ. Զ 17):

Կնդրուկը Աստծուն ընդունելի մասն է, սպիտակ ալիւրը նշանակում է խոնարհ մարմնի մաքրութիւնը, խունկը՝ հոգու առաքինութիւնը, իւղը՝ մտքի զուարթութիւնը:

Իսկ կլոր բաղարջը սպիտակ ալիւրով եւ իւղով եփուածն է, ինչպէս թոնրի մէջ եփած բոկեղը: Շօթը՝ թանձր թխած եւ ապա իւղի մէջ թաթախուած լաւաշն է: Կտոր-կտոր բաժանուած եւ իւղով եփուած քաքարը ցոյց է տալիս նահատակներին, որոնք համբերատար տարան բազում վշտեր ու փորձութիւններ: [Նոյնն է] երկանքով աղալը, մաղելը, հունցելը, կրակի ու իւղի մէջ եփելը, ըստ այդմ՝ «անցանք հրի եւ ջրի միջով» (Սղմ. ԿԵ 12):

Իսկ կասկարան պղնձէ կաթսան է: Սպիտակ ալիւրով եւ իւղով հունցածը եւ չեփուածը խորհրդանշում է նրանց, ովքեր փորձութեան մէջ ընկան, սակայն աղօթքների շնորհիւ արագ դուրս եկան, ըստ այդմ՝ «Աղօթքի մէջ եղէք, որպէսզի չընկնէք փորձութեան մէջ» (Մրկ. ԺԴ 38):

Իսկ մանրացրած մուրկը, որ ծեծած դեռահաս ցորենն է, խորհրդանշում է խրատով դաստիարակուած եւ կրթուած երեխաներին:

Երախայրիքը, որ կալի ու հնձանի առաջին բերքն է, խորհրդանշում է մեր բոլոր առաջին բարի գործերը՝ թէ՛ մարմնական, թէ՛ հոգեւոր եւ թէ՛ մտաւոր, որոնք պէտք է նուիրել Աստծուն:

Իսկ, որ մեղքի պատճառով սպիտակ ալիւր, իւղ եւ խունկ չէին դնում, [պատճառն այն է], որ տրտմութիւն եւ խաւար է մեղքը, եւ գարշահոտութիւն է գալիս խղճմտանքից, մինչեւ չապաշխարի:

Այս բոլորից քահանան ափով դնում էր ողջակէզի սեղանի վրայ՝ անուշ հոտ ուղարկելու Տիրոջը: Իսկ մնացած նշխարները սրբավայրում ուտում էին քահանաները եւ նրանց որդիները, ինչպէս որ այժմ մի նշխարը սուրբ մարմնի հաղորդութեան ժամանակ են ճաշակում, իսկ մնացորդը ճաշակում են արիութեամբ արժանացածները: Եւ խորհուրդն այն է, որ [նախ] առաքինութիւն է՝ ի փառս Աստծոյ, այլեւ պատիւ ու գովերգութիւն մարդու համար, որովհետեւ շատերն են հաղորդւում նրա սրբութեանը:

Սրանք են սպիտակ ալիւրով զոհաբերութեան տեսակները:

Իսկ կենդանիներից զոհաբերւում էր պարարտ եւ զօրեղ արջառ, որովհետեւ բարի գործերում արդիւնաւորուածները

եւ հզօրացածները պատարագ են Աստծուն՝ ոչխար՝ զգօն եւ հեզ, որն ունի պտուղ, բուրդ, կաթ, ծնունդ, որովհետեւ նրանք, ովքեր բարու պտղաբերողն են եւ ծննդկանները, հեզութեամբ նուիրւում են Աստծուն: Գառները՝ քրիստոնեայի որդիներն են. ուլերը՝ հեթանոսի որդիները, ովքեր գալով եկեղեցի, մաքրւում են եւ նուիրւում Աստծուն, այծը մեղաւորներին է խորհրդանշում, ովքեր դառնում են մեղքերից եւ նուիրւում Աստծուն. տատրակը ողջախոհներն են, եւ աղաւնին, որ միամիտներն ու աննենգ [մարդիկ] են:

ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ
Պրակ ԼԹ

Առաջին զոհաբերութիւնը ողջակէզն է: Սպանելը գլուխը կտրելն է, մորթելը՝ քերթելն է, կտրատելը՝ տասներկու անդամների բաժանելն ըստ ցեղերի քանակի, ոտքերը եւ փորը լուանալը եւ պղնձէ սեղանի վրայ ողջակիզելը:

Երկրորդը՝ անգիտութեան եւ ակամայ գործած մեղքերի համար մի արջառ քահանայի եւ մէկն էլ ժողովրդի համար զոհաբերելն է՝ քաւութեան տօնի ժամանակ, իբրեւ թէ հաւասարապէս ծանր են թէ՛ քահանայապետի եւ թէ՛ ժողովրդի մեղքերը, «որովհետեւ ում շատ է տալիս, շատ էլ պահանջում է» (Ղուկ. ԺԲ 48): Այսկերպ էլ արդարութիւնն է հաւասար տալիս, որովհետեւ գլխից է կենդանութիւնը եւ մահը: Ապա հանում են երիկամները, լեարդի ստորին ծայրը, ամբողջ ճարպը՝ Տիրոջը անուշ հոտ ընծայելու համար, իսկ մնացածը ողջ մորթով, փորոտիքով, գլխով, այրում են մոխրակոյտի մէջ, որ ցոյց է տալիս Քրիստոսի դրսում չարչարուելը:

Երրորդ՝ իշխանի եւ իւրաքանչիւր անձի անգիտութեան եւ ակամայ գործած մեղքերի համար այծերից նոխազ կամ էգ ուլ են զոհաբերում՝ մեղքերը քաւելու համար:

Չորրորդ՝ հիւանդութիւնից փրկուելու համար, նաեւ պատերազմից փրկուածները զոհ են մատուցում եւ անուշահոտ նուէրներ ընծայում սեղանին: Զոհի աջ կողմը ճաշակում է քահանան, լանջակողը՝ քահանայապետը, մնացածը՝ միւս քահանաները:

Հինգերորդ՝ մեղքի զոհաբերութիւնը կատարում է մեռելոտիին կամ պիղծին մերձեցածը, որ քաւում էին ոչխար, թռչուն կամ առանց իւղի եւ խնկի սպիտակ ալիւր զոհաբերելով:

Վեցերորդ՝ սրբութեան նուիրաբերութեան մէջ յանցանք գործելու կամ Աստծոյ օրէնքը խախտելու, կամ էլ ընկերոջը վնասելու համար զոհաբերութիւնը յիսուն սիկղով խոյ գնելն էր, գլուխը եւ հինգ մասերը յետ վերադարձնելն իբրեւ տուգանք հինգ զգայարանների, որ մոռացան ու չզգացին Աստծոյ օրէնքները, [որովհետեւ] մեղքը կամաւոր է, յանցանքն՝ ակամայ:

Եօթներորդը՝ զոհաբերութիւնն է սպիտակ ալիւրից եւ իւղից, ինչպէս վերն ասուեց:

Ութերորդը՝ գոհաբանութեան համար է, երբ հեռաւորն է գալիս կամ բարի

յաջողութիւն է լինում, որ իսկապէս արժանի լինենք եկած, դժոխքը աւերած եւ արքայութիւնը բացած Քրիստոսին:

Իններորդ՝ ուխտի զոհաբերութիւնը, որ ոչ թէ որեւէ երախտիքի համար էր արւում, այլ ուխտ է արւում իր կամքով, [որի ժամանակ] երկրորդ օրը նոյնպէս ուտում էին միսը:

Տասներորդ՝ քահանաների նուիրաբերութեան խոյը եւ նկանակը, որից վերցնում են, ասում է, սահմանուած բաժինը, իսկ մնացածը սրբավայրում քահանաները եփում եւ ուտում են եօթ օր: Իսկ սպիտակ ալիւրը պատարագում են առաւօտեան եւ երեկոյեան:

Տասնմէկերորդը ամբողջական ողջակէզն է, որ ամէնօրեայ խորոված գառն է՝ առաւօտեան եւ երեկոյեան՝ մէկ հացով եւ չորրորդ դորակի մաս գինիով: Սա դրւում է Սրբութեան սեղանի վրայ, իսկ եւս տասներկու հաց՝ առաջաւորութեան սեղանի վրայ՝ վեց-վեց հատ, որոնք կոչւում են Սրբութեան հացեր, որ դրւում էին շաբաթից շաբաթ:

Տասներկուերորդ՝ մէկ տարեկան գառ՝ Մեծ զատկին [ի յիշատակ] Եգիպտոսից ելնելու, որ ուտւում էր կրակով խորոված եւ եղեգի հետ՝ բաղարջով:

Սրանք տասներկու ազգերի զոհաբերութեան գլխաւոր նուիրաբերութիւններն են՝ կարգուած մեծ Մովսէսի կողմից:

Սրանցից բացի կան նաեւ մասնակի զոհաբերութիւններ. հատիկը, երախայրին: Քահանաների ամէնօրեայ մէկ գրիւ հունցածը՝ կէսը առաւօտեան, կէսը երեկոյեան: Ծննդաբերած կանանց համար տատրակ ու աղաւնի: Բորոտների մաքրուելու համար երկու թռչուն. մէկը մորթում են, միւսը՝ թաթախում արեան մէջ եւ բաց թողնում: Նաեւ՝ գառ, տատրակ, աղաւնի: Սերմնահոսի մաքրուելու համար՝ երկու թռչուն: Նոյնը եւ արիւնահոսի: Իսկ կանանց փորձութեան յիշատակի համար՝ գարու ալիւր: Ուխտաւորների համար զոհաբերութիւն՝ գլխի մազերի այրելով, այլեւ՝ Քաւութեան տօնին մէկ զուարակ եւ երկու նոխազ՝ նուիրաբերելով մէկը Տիրոջը, միւսը բաց թողնելով ամայի վայրում:

Իսկ Յիսներեկի տօնին եօթնական գառ, նորամուտի ժամանակ՝ նաեւ երկու հաց:

Այլեւ անդրանիկների համար երկդրամեան՝ հինգ սիկղ: Եւ դրամ՝ ուխտաւոր անձերի համար. այրերի համար յիսուն, կանանց համար երեսուն երկդրամեան: Այլեւ՝ նուէրներ Սրբութեան տօնի համար, անդաստան՝ պտղաբերութեան, անասուններ եւ այլ մասնաւոր նուէրներ:

Նաեւ՝ նուէրներ [ըստ] տասներկու իշխանների՝ սայլեր, եզներ:

Սրանցից բացի երկու հարիւր յիսուներկու գլուխ ոսկի տուփ՝ խնկով: Արծաթէ կոնք, որ երկունկանի գոգաւոր անօթ է: Եւ տաշտ թաս:

Քահանաներին նաեւ քառասունութ քաղաք-ապաստաններ տալը:

Վերոնշեալները գլխաւոր, իսկ սրանք մասնաւոր նուիրաբերութիւններ էին, որ հրամայեց տալ Մովսէսը[387]:

ԿԵՆԴԱՆՈՒ ՁՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Խ

Եւ այսպէս էին կատարում:

Նախ բերում էին խորանի ու տաճարի մուտքի եւ ոչ թէ զանազան մեհեանների մօտ, որ ցոյց է տալիս, որ Աստուած մէկն է եւ [մեկն է] յանուն նրան ընծայելը: Կենդանու գլխին ձեռքը դնելը նախ ցոյց է տալիս, որ անմեղ կենդանին պէտք է մեռնի ուրիշի մեղքերի համար, եւ ձեռքը գլխին դնելով՝ նրան են փոխանցւում մեղքերը: Երկրորդ՝ ցոյց է տալիս Քրիստոսի անմեղ մահը յանուն մեզ, որին մատնացոյց անելով՝ խաչօղներն ասում էին, թէ՝ խաչէ՛ք դրան: Երրորդ՝ նշանակում է, որ իւրաքանչիւրն իշխանութիւն ունի ինքնազոհաբերուելու Աստծուն. «Սպանէ՛ք,- ասում է,- ձեր անդամները» (Կողոս. Գ 5) եւ «Յանուն քեզ մեռնում ենք ամէն օր» (Ա Կորնթ. ԺԵ 31):

Եւ մորթում էին Տիրոջ առջեւ, որը տեսնում է անտեսանելին եւ ոչ մի կեղծիք [թաքուն չի մնում նրանից]: Այլեւ՝ մեղքերի [մաքրման] համար ողջակէզն [արւում էր] հիւսիսային կողմում, որովհետեւ մեր Տէրը Երուսաղէմում խաչուեց հիւսիսային կողմում: Կամ էլ՝ հարաւը հրէաների կողմն էր ցոյց տալիս, հիւսիսը՝ հեթանոսների, որոնք դառնալու էին զոհաբերութիւն եւ Աստծոյ ժողովուրդ, ըստ այդմ՝ «Այլեւս իմն են նաեւ այն ոչխարները, որոնք այս գաւթից չեն եւ նրանց էլ պէտք է այս կողմ բերեմ» (Յովհ. Ժ 16):

Իսկ սեղանի շուրջը արիւն ցօղելը կենդանութեան խորհրդանշումն է, որովհետեւ անմահացած Հոգին պտտւում է Աստծոյ շուրջ՝ աղօթքներ հեղելով նրա առջեւ:

Մատով արիւնը սեղանի ծայրերին քսելն էլ նշանակում է, թէ աղօթքներով մերձենալով Քրիստոսին՝ մենք քաւութիւն ենք ստանում: Իսկ եօթ անգամ վարագոյրին ցանելը նշանակում է եօթ զգայարանների քաւութիւնը Հոգու եօթ զօրութիւններով, եկեղեցու եօթ խորհուրդներով՝ կենաց եօթ դարաշրջանների ընթացքում:

Իսկ խնկի սեղանը քաւում էր արիւնը, որովհետեւ սրբերի աղօթքներն իբրեւ բարեխօսութիւն ունենք խորհրդաւոր արեան առաջ:

Կաշին հանելը մեղքերի ծածկոյթը [դեն գցելն է]:

Մաս-մաս անդամների բաժանելը նշանակում է տասներկու անդամների մաքրելը եւ մեղքից զատուելը: Բուրումնաւէտ ողջակէզը նշանակում է հաճելի լինել Աստծուն աստուածային սիրոյ հրով:

Փայտը [խորհրդանշում է] մարմնի ցամաք լինելն ու պարկեշտութիւնը, որ առաւել ընդունելի է դարձնում զոհաբերութիւնը:

Գլուխը միտքն է նշանակում: Ոտքը՝ վարքը: Փորոտիքը՝ ծածուկ խորհուրդները, որ հրամայում է ջրով լուանալ, այսինքն՝ բանականութեամբ մաքրել գարշելի մտքերը: Ճարպը՝ լուսաւոր եւ լիալիր առաքինութիւնը: Երիկամները՝

հոգու եւ մարմնի երկու ցանկութիւնները. լեարդի ստորին ծայրը՝ Աստծուն նուիրուելու մեր ուրախութիւնն ու բերկրանքը: Աջ թեւը՝ յաջողակ բարի գործը: Երբուծը կուրծքն է, որ կրում է սրտի մասը, որ մարմնի մէջտեղն է՝ կենդանութեան սկիզբը եւ կեանքի աւարտը: Այլեւ մեր արի համբերութեան կրողն է, որ ցոյց է տալիս առաջին, միջին, վերջին ժամանակների նուիրումն Աստծուն, որ մարդու երեք հասակներն են՝ մանկութիւնը, երիտասարդութիւնը, ծերութիւնը: Ապա ստանալով հաւատի սուրբ եւ գեղեցիկ սիրտը՝ այն խորովում ենք ի սէր Աստծոյ:

Սա է ողջակէզի եւ միւս զոհաբերութիւնների խորհուրդը:

Իսկ այն, որ ողջ ճարպը եւ ողջ արիւնը չէին ուտում իրենց բնակութեան բոլոր վայրերում, ցոյց է տալիս, թէ հոգեւոր եւ մարմնաւոր բոլոր յաջողութիւնները եւ Կենաց յուսոյ անմահութեան մաս ոչ թէ մեր արժանիքների արդիւնք պէտք է համարել, այլ Աստծոյ բարութիւն ու ողորմութիւն՝ ամենուրէք, այսինքն՝ թէ՛ դրախտում, թէ՛ այժմեան եկեղեցում եւ թէ՛ Վերին Երուսաղէմում:

Այսքանն այս մասին:

ՆՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԱ

Հարց. Կենդանիների զոհաբերութիւնը, որ Աստծու անունով էր, մաքրում էր մարդկանց, ապա ինչո՞ւ չէին մաքրում կռապաշտները, քանի որ նրանք էլ Աստծոյ անունով էին զոհաբերում եւ խնկարկում:

Պատասխան. Որովհետեւ ոչ միայն Աստծոյ անունով էր, այլ Նոր պատարագի օրինակն էր, եւ Քրիստոսի խորհրդով սրբուեցին:

Իսկ հեթանոսներինը, որ Աստծոյ անունով էին նուիրում՝ ընդունելի էր, ինչպէս ասում է Մաղաքիան. «Ամէն տեղ խունկ է մատուցւում իմ անուանը» (Մաղ. Ա 11): Սակայն նրանց համար դատապարտութիւն էր, երբ կուռքին Աստուած էին անուանում:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ո՞րն էր Քրիստոսի խորհուրդը, որով Իսրայէլը մաքրուեց մեղքերից, ապա ասենք, որ բոլոր մատաղները եւ զոհաբերութիւններն ի խորհուրդ եւ օրինակ Քրիստոսի էին:

Նախ՝ զոհաբերուած եզի [նման] Քրիստոս եւս կոչուեց պարարակ եզ՝ զօրեղ ու պարարտ: Խոյ կոչուեց, որովհետեւ ծնեց ու հագցրեց մեզ, եւ փեսայ է եկեղեցու: Ոչխար միամեայ, պատարագելի, զգայուն ու հեզ, արդիւնաւոր կաթ, բուրդ եւ ծնունդ: Գառ, որովհետեւ անմեղ եւ կերակրելի է եւ Աստծոյ Որդին: Նոխազ, որովհետեւ մեր մեղքն իր վրայ վերցրեց: Եւ ուլ, ե՛ւ գառ, որ երեք տարուց կէս տարի աւելի ունէր ծնունդից մինչեւ խաչելութիւնը: Տատրակ, որովհետեւ ողջախոհ եւ անմեղ էր. «Ո՞վ կյանդիմանի ինձ մեղքերի համար» (Յովհ. Ը 46): Աղաւնի՝ քաղցրաբարոյ, միամիտ, հեզ. «Սովորէ՛ք ինձանից, որովհետեւ հեզ եմ եւ խոնարհ սրտով» (Մտթ. ԺԱ 29):

Եւ չէին անդամահատում թռչուններին, որովհետեւ անբաժանելի է Նրա մէջ աստուածութիւնը եւ մարդկութիւնը, այլեւ շատերին իր հաղորդութեամբ արեց անբաժանելի միասնութիւն: Եւ զոյգ են [թռչունները], որովհետեւ հոգին եւ մարմինը աստուածութեամբ միատեսակ դարձան: Եւ մէկը յանուն մեղքերի, որի համար էլ տուեց իր մարմինն ու արիւնը՝ ուտելու, իսկ միւսը՝ ողջակէզի՝ սեղանի համար բուրումնաւետ հոտ եղաւ՝ Հօր եւ Սուրբ Հոգու համար: Նաեւ սպիտակ ալիւրը, որովհետեւ կենդանարար հաց եւ ցորենի հատիկ կոչուեց՝ չարչրկուելով տանջանքներով եւ զատուելով մեղքերի թեփից: Նոյն կերպ եւ՝ զուարթարար իւղ, լոյսի եւ շնորհների նիւթ: Անուշահոտ բուրող կնդրուկ եւ Գինի զուարթարար՝ հոգեւոր վայելքի համար: Եւ հունցուած էր իւղով եւ օծուած, որովհետեւ օծուեց Աստուածութեան իւղով, այլեւ Յորդանանում իր մէջ առաւ Սուրբ Հոգին:

Նաեւ՝ իւղով հունցած բաղարջ, ընդ որում հաւասար չափով իւղն ու գինին, որովհետեւ Բանն Աստծոյ օրհնութեան հետ Սուրբ Հոգին իջնում է հացի ու բաժակի վրայ՝ ամբողջացնելով Քրիստոսի մարմինն ու արիւնը:

Եւ Աղ կոչուեց, որովհետեւ համ տուեց մեր անհամութեանը եւ առողջացրեց մեր վէրքերը: Ու նաեւ՝ կսկիծ է անհաւատների համար եւ կուրացրեց կամակոր օձին:

Եւ նորահաս Ցորեն, կալի երախայրիք, որովհետեւ նորահաս պտուղ եղաւ՝ յարութիւն առնելով մեռելներից՝ նստելով Հօր աջ կողմը:

Այս էր հին զոհաբերութեան խորհուրդը եւ Քրիստոսով մաքրուելը:

ՆՈՐ ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԲ

Իսկ նորում ճշմարիտ զոհաբերութիւնը Քրիստոսն է, որ միշտ բաշխւում է եկեղեցում: Նա է ողջակէզը, փրկութիւնը, գոհութիւնը՝ մեղքերի եւ յանցանքների համար, նաեւ՝ բոլոր ընծաների աւարտն ու գլուխը:

Այլեւ ունենք բանական պատարագ, [երբ] մեր մարմինն ու հոգին սրբութեամբ փոխանակում ենք նրանով:

Ունենք նաեւ մարմնական պատարագի հնի օրինակը՝ զոհաբերութիւններ՝ ողջերի ու մեռածների համար, ինչպէս տէրունական Զատկին, տէրունական տօներին, այդ թուում եւ՝ դեզօրհնէքը, ագապը, հոգեհանգիստը, մարտիրոսների համար պատարագի մասը, յանուն կեանքի, փրկութեան, ուխտի, խաչի, եկեղեցու՝ պտուղներ, շօթ, սպիտակ ալիւր, ձէթ, մոմ, խունկ եւ այլն:

Եւ սրանք երեք խմբի են բաժանւում. առաջինը՝ հոգեւոր, երկրորդը՝ հոգեւոր եւ մարմնաւոր, վերջինը՝ մարմնաւոր: Առաջինը՝ պատարագ Հոգու համար, միջինը՝ մարմնի, վերջինը՝ ունեցուածքի: Եւ դարձեալ՝ առաջինը Քրիստոսն է պատարագւում յանուն մեզ, միջինը՝ մենք յանուն Քրիստոսի, վերջինը՝ [զոհաբերւում է] նիւթը՝ մեզ համար:

Հարց. Ո՞րն է երեք պատարագ ունենալու պատճառը:

Պատասխան. Նահապետները երկու զոհաբերութիւն ունէին՝ բանական եւ անբան, ինչպէս Աբէլը, Նոյը, Աբրահամը եւ միւսները: Հեթանոսները իւրացրին միայն անբան զոհաբերութիւնը, որ մատուցում էին կուռքերին: Եւ այդ սովորութեամբ Իսրայէլն Աստծուն զոհաբերում էր անբան կենդանիներ, մինչեւ եկաւ Քրիստոս, եւ ինքը եղաւ բանական զոհաբերութիւն ու նոյնն էլ աւանդեց մեզ:

Արդ, մենք երկու պատարագների օրինակն էլ ունենք՝ նախնիներինը եւ ճշմարիտը, [որ] Քրիստոսն է:

Հարց. Ի՞նչ է նշանակում նորում կրկնակի զոհաբերութիւն անելը, ինչպէս արջառ եւ նուիրագործութեան երկու խոյ:

Պատասխան. Ողջակէզը երկու տեսակ էր:

Մէկը, որ դրսում էին ողջակիզում, միւսը՝ սեղանին՝ բուրումնաւէտ հոտերով, որ ցոյց է տալիս Քրիստոսի զոհաբերուելը խաչի սեղանին՝ անուշահոտ բուրմունքով՝ յանուն Հօր եւ Հոգու՝ քաղաքից դուրս, հիւսիսային կողմում: Իսկ նուիրագործութեան միւս խոյը, որ քահանաների կերակուր էր եւ Մովսէսի նուէրը՝ խորհրդանշում էր Վերնատանն Իր մարմնի եւ արեան բաշխումն առաքեալներին:

Եւ կամ կրկին էր զոհաբերութիւնը՝ մէկը մեղքերի համար, որոնք կամաւոր են, միւսը՝ յանցանքների, որոնք ակամայ են: Իսկ Քրիստոսի քաւութեան պատարագը մէկն է՝ թէ՛ մեղաւորների եւ թէ՛ յանցաւորների համար:

Եւ էլի երկու տեսակ է ողջակէզը. մէկը մեղքերի համար, միւսը՝ մաքրուելու: Առաջինն այն է, որ խոստովանելով դուրս ենք գալիս մեղքերից եւ ապաշխարելով քաւում ներքին խորհրդով եւ արտաքին գործերով: Իսկ մաքրուելու զոհաբերութիւնն այն է, որ ապաշխարելուց յետոյ բարիք ենք գործում եւ բովանդակ հոգին ու մարմինը մեր նուիրում Աստծուն: Ու երբ մեր մեղքերի կաշին անջատւում է մեզանից, դա հաճելի է Աստծուն, ինչպէս անուշահոտութիւնը:

Եւ դարձեալ երկու տեսակ է զոհաբերութիւնը. մէկն այն է, որ պատարագում ենք Քրիստոսի մարմինը եւ արիւնը, միւսը, երբ մեր մարմինն ենք միշտ պատարագում՝ սուրբ սիրտ եւ խոնարհ հոգի ունենալով, որն Աստուած չի անտեսում (տե՛ս Սղմ. Ծ 19). դրանք են հանապազօրեայ աղօթքը, պահքը, ողորմութիւնը եւ այլն:

Հինգերորդ՝ երկու ողջակէզը. մէկն ամէնօրեայ պատարագն է, եւ միւսը՝ Խաչի չարչարանքի ու մահուան [օրուայ] յիշատակումն է, որն ամէն տարի նոյն խորհրդով կատարում է եկեղեցին:

Այսքանն այս մասին:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԳ

Հարց. Քահանաների հասոյթները եւ իրաւունքները մե՞ղք են, թէ ոչ:

Պատասխան. Երբ քահանայի գործն են կատարում, մեղք չէ, այլ՝

սրբութիւն: Նախ՝ որովհետեւ Աստծոյ հրամանով է: Երկրորդ՝ Աստծոյ նուէրներից են առնում քահանաները եւ ոչ մարդկանց, որովհետեւ իւրաքանչիւր ոք նուիրաբերում է Աստծուն եւ ոչ թէ մարդուն: Երրորդ՝ քահանայի սիրտը երկրորդ սեղանն է, որովհետեւ ինչպէս ողջակէզի սեղանն է մաքրում, այդպէս էլ քահանայի իշխանութիւնը: Չորրորդ՝ յայտնի է, որ Աստծոյ նուէրները սրբութիւն են, ով մօտենում է դրանց՝ մաքրւում է: Հինգերորդ՝ որովհետեւ ասում է. «Ժողովրդի մեղքերն ուտում են քահանաները եւ քաւում նրանց համար», ինչպէս ստամոքսն է հալում կերակուրը, այդպէս էլ քահանան՝ մեղքերը: Վեցերորդ, թիթեղը՝ ճակատին գրուած Սրբութիւնը, ցոյց էր տալիս, որ նուէր է Տիրոջը, որովհետեւ նուիրատուութիւնը քահանայի սրբութիւնն է, եւ այն բացերես կրում է իր ճակատին: Նոյնը եւ նորում հրամայում է Տէրը. «Մշակն արժանի է իր կերակուրին» (Մտթ. Ժ 10), «Ովքեր սերմանում են հոգեւորը, հնձում են մարմնաւորը» (Ա Կորնթ. Թ 11): Նաեւ սա. «Երէցները կրկնակի պատուի են արժանանում» (Ա Տիմ. Ե 17), այստեղ՝ հասոյթի, այնտեղ՝ յաւիտենական կեանքի: Որովհետեւ երկուսն է քահանայի գործը. նախ սրբել մարդու մեղքը, ապա ընծայել Աստծուն: Այս է խորհրդանշում [զոհի] մաշկի հանելը, ապա զոհաբերելը:

Սա վերաբերում էր նրանց, ովքեր սրբութեամբ են կատարում քահանայութիւնը, իսկ ովքեր անարժան են գործի մէջ, մեղք են աւելացնում իրենց մեղքերին:

ՆՈՐ [ՕՐԷՆՔՈՒՄ] ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՕՐՀՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ահարօնը եւ որդիները եօթ օր մնացին խորանում, ինչո՞ւ մենք քառասուն:

Պատասխան. Եօթը ցոյց է տալիս կենաց եօթ շրջանները, իսկ մենք [ըստ] Մովսէսի ենք քառասուն օր պահում, որ Սինա լեռան վրայ էր եւ Յեսուինը՝ մշուշից դուրս:

Կամ ինչպէս Քրիստոս մկրտութիւնից յետոյ լեռան վրայ քառասուն օր պահեց:

Կամ էլ ինչպէս մանուկը նախքան մկրտուելը քառասուն օր սովորում է խորհուրդը[388]:

Եւ կամ ինչպէս մանուկն արգանդում հոգով շնչաւորւում է քառասուներորդ օրը. նոյն խորհրդով էլ նոր մանուկներն են մայր եկեղեցու արգանդում սնւում, այլեւ պահում սուրբ զգեստով եօթ օր:

Հարց. Ո՞րն է խորհուրդը, որ եկեղեցու անկիւնում խունկ ենք ծխում:

Պատասխան. Հնում երկնքից հինգ տեղ սեղանի վրայ հուր իջաւ, եւ Աստուած անուշահոտութեան բոյրն առաւ նախ՝ Աբրահամի սեղանին, ապա՝ Մովսէսի, Դաւթի՝ Ուռնայի կալում, Սողոմոնի տաճարում եւ յետոյ Եղիայի սեղանին:

Ահա այս խորհուրդներն ենք պահում Նոր սեղանի վրայ:

Հարց. Ինչո՞ւ այրուեցին Նաբաթն ու Աբիութը՝ Ահարօնի որդիները (տե՛ս Ղեւտ. Ժ 1-2):

Պատասխան. Որովհետեւ կամ օտար հուր դրեցին բուրվառում, որ անօրինութիւն էր, կամ գինով հարբեցին, կամ հպարտացան սեղանի վրայ հուրը նորոգելուց, կամ անժամանակ խնկարկեցին, կամ էլ կրկնակի խնկարկեցին՝ առաւօտեան եւ երեկոյեան, մինչդեռ առաւօտեան Ահարօնը խնկարկել էր:

Իսկ որ ճիշտն է, Մովսէսը ամէն ժամ էր մտնում Սրբութեան սրբոց, Ահարօնը՝ տարին մէկ անգամ, իսկ քահանաները չէին մտնում: Սակայն քահանաները հպարտացան եւ օտար հրով խնկարկեցին վարագոյրի ետեւում, ուստի պատժուեցին՝ ի խրատ ուրիշների: Սակայն քահանայութեան զգեստը չայրուեց, ինչպէս որ այժմ հոգով դատապարտւում են, իսկ մարմինը մնում է:

Հարց. Քանի՞ սեղան կար խորանում:

Պատասխան. Բացի Քաւութեան սեղանից, որ Սրբութեան սրբոցում էր, ներսում եւ դրսում միասին տասն էին:

Առաջինը՝ մեծ զոհաբերութեան, երբ ընդհանուր տօն էր նշւում:

Երկրորդը՝ փոքր զոհաբերութեան, երբ մասնաւոր զոհաբերութիւն էր արւում:

Երրորդ՝ որի վրայ միսն էին բաժան-բաժան անում, ապա տեղափոխում մեծ սեղան:

Չորրորդ՝ որից ճարպն էին տեղափոխում սեղան:

Հինգերորդ, որի վրայ սափորը եւ միւս պարագաներն էին դնում:

Իսկ ներսում՝ ա) առաջաւորութեան հացի եւ գառան, բ) խնկի, գ) շօթի եւ վեց հացի, դ) միւս վեց հացի, քանի որ տասներկու հաց էր երկու սեղանների համար եւ հինգերորդը, որի վրայ խնկաղացն էր, նուիրանոցը եւ գաւաթը:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԴ

Հարց. Որո՞նք են սուրբ եւ անսուրբ կենդանիները:

Պատասխան. Բնութեամբ ամէն ինչ մաքուր է, եւ պիղծ ոչինչ չկայ Աստծոյ արարածների մէջ, ըստ այդմ՝ «Աստուած տեսաւ, որ յոյժ բարի են» (Ծննդ. Ա 8): Սակայն ըստ գործի զանազանւում են մաքուրն ու անմաքուրը: Ինչպէս որ առաջ, նախքան օրէնքը, մարդիկ բնական քննութեամբ էին զանազանում անճոռնի մեծը կամ սաստիկ փոքրը, տեսքով տգեղը կամ վնասակարը. սրանք ուտելու համար պիղծ էին ասւում: Եւ ըստ մարդկանց այս սովորութեան էր Նոյն ընտրում մաքուր կենդանիներից եօթնական, անմաքուրներից՝ երկուական, ինչպէս ասուեց ԺԶ գլխի վեցերորդ համարում:

Նաեւ՝ ինչ Եգիպտոսում պաշտում էին իբրեւ աստուած, մաքուր համարեց, ինչպէս [որոշ] անասունների: Իսկ այն, ինչ ուտում եւ զոհում էին դեւերին, պիղծ անուանեց, ինչպէս խոզը, ճագարը, նապաստակը (տե՛ս Ղեւտ. ԺԱ 6, Բ օր. ԺԴ 7):

Եւ ինչպէս որ կենդանիները ծառայ են եւ մարդկանց սպասարկու, այդպէս էլ մարդկանց ընտրութեան օրինակով զանազանուեցին մաքուրն ու պիղծը՝ հետեւեալ կերպ. որոճողը՝ իմաստութեան քննող, կճղակաւորը՝ հոգու եւ մարմնի ուղիղ վարքի համար, որ սուրբ են: Եւ սրան հակառակ, ոչ հաւատարիմները եւ չարերը պիղծ են: Եւ որոնք մի [կճղակ] ունեն, անսուրբ են, ինչպէս գիտելիքն առանց գործի, կամ գործն առանց հաւատի: Մաքուր են նաեւ այն ձկները, որ թեւ եւ թեփուկ ունեն. թեւը առաքինութիւն է, որով մարդն ազատւում է սատանայի որոգայթներից, իսկ թեփուկը ամօթը քօղարկելու միջոց է: Եւ լիրբն առանց ամօթի է, լերկը է եւ չարը պիղծ է:

Այսպէս էլ թռչունների մէջ. նրանք, որ կռակտուց եւ մսակեր են եւ յօշոտում են ընկերներին, պիղծ են: Ընդակերները սուրբ են:

Ձկնկուլները, որ մեծամեծ են, կլանում են մանրերին: Ցին ուրիշների վաստակն է ուտում: Ձայլամը, որ ըշտռտուրմուղն է[389], ցոյց է տալիս կեղծաւորներին եւ գործի համար անպիտաններին: Եւ միւսները նմանապէս: Սողունները որովայնամոլ են, մկները՝ գող, խլուրդը՝ մտքով կոյր: Այլեւ ցոյց է տալիս նրանց, ովքեր դարանակալ ու նենգաւոր են:

Եւ պէտք է իմանալ, որ սատկած՝ թէ՛ անսուրբ եւ թէ՛ մաքուր կենդանին, հաւասարապէս պիղծ են Աստծոյ առջեւ:

Այդպէս էլ քրիստոնեան եւ անհաւատը, եթէ մեղքով են մեռնում, հաւասարապէս պիղծ են Աստծոյ առաջ:

ԿԵՆԴԱՆՈՒ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԵ

Հարց. Ինչպէ՞ս կատարել կենդանու զոհաբերութիւնը:

Պատասխան. Վեց պայման պէտք է պահպանել, այսինքն՝ մորթողի, զոհաբերուողի, մորթելու, գործիքի, մասի, նպատակի:

Արդ, առաջին, որ մորթողը պէտք է արու լինի՝ աշխարհական, թէ հաւատացեալ, որովհետեւ մորթելու իրաւունք չունեն էգը, կիսատղամարդը, անկատարը, անհաւատը, արիւն հեղածը, կարգ ստացածը: Այս վեցը չեն կարող մորթել, որովհետեւ պիղծ է նրանց մորթածը:

Երկրորդ՝ զոհաբերուողը պէտք է լինի կենդանի, որովհետեւ մեռածը եւ անկենդանը ինչպէս որ քարը, մորթելու ենթակայ չեն: Եւ պէտք է մաքուր լինի ըստ օրէնքի ցուցումի, որովհետեւ անսուրբն ու պիղծը մորթելու ենթակայ չեն:

Երրորդ՝ մորթելը պէտք է լինի արեան, շնչի եւ բնական կենդանութեան զատում:

Չորրորդ՝ գործիքը պէտք է լինի սուր երկաթից եւ ոչ ուրիշ գործիք: Եւ եթէ լինի երկաթ, սակայն ոչ սուր, կամ սուր, սակայն ոչ երկաթ, դարձեալ պիտանի չէ:

Հինգերորդ՝ մասը, այսինքն՝ գլխի հատելն է, որտեղ բոլոր զգայարաններն են: Իսկ եթէ ուրիշ մաս կտրուի, կամ

գլուխը ջախջախուի, ուտելու պիտանի չէ:

Վեցերորդ՝ խնդրի նպատակը, այսինքն՝ ո՞ւմ համար է զոհաբերութիւնը. ողջի՞, թէ մեռածի, Աստծո՞յ, թէ մարդու:

Եւ այսպէս այս վեց պայմաններն անհրաժեշտ են, որպէսզի զոհաբերութիւնը սուրբ լինի: Եթէ սրանցից [մէկը] պակաս է, ուրեմն պիղծ է ու խոտելի, եւ ուտելու համար անպիտան զոհաբերութիւնը:

Ա՛րդ, բացատրենք պատճառները:

Առաջին, որ մորթողը պէտք է արու լինի եւ ոչ կին:

Նախ, որովհետեւ այրը կատարեալ է, իսկ կինը՝ կէս: Երկրորդ, արուն առնող է, կինը՝ կրող: Երրորդ, Աստուած տղամարդուց արարեց կնոջը: Չորրորդ, այրն է տալիս արիւնը: Հինգերորդ, այրն է գլուխը: Ուստի անհրաժեշտ է, որ տղամարդը հեղի արիւնը եւ անջատի կենդանու գլուխը: Չի կարող նաեւ կենդանու արիւնը հեղել կիսատղամարդը, որովհետեւ սերմ չունի: Նաեւ անկատար երեխան, որ անհաս է եւ խակ: Նախ, որ սերմի կատարեալ զօրութիւն չունի: Երկրորդ՝ դեռ ընտրեալ չէ:

Անհաւատն էլ հոգին է սպանել մեղքերով, իսկ կամ էլ իգացած է, պիղծ է:

Այդպէս էլ ով, արիւն է յեղել, արիւնապարտ մարդ է, որ չի կարող յեղել զոհաբերութեան արիւնը:

Իսկ նորում քահանաները արիւն չեն թափում, որովհետեւ նախ բարեխօս են արեան համար. երկրորդ՝ անարիւն է նրանց զոհաբերութիւնը եւ ոչ հին քահանաների նման: Ակնյայտ է նաեւ, որ միւս կարգ ստացածներն էլ՝ սարկաւագները եւ այլք, չեն կարող զոհին մորթել, որովհետեւ սպասաւոր են կարգուած անարիւն զոհաբերութեան համար:

Երկրորդը կենդանու ընտրութիւնն է: Նախ, որ ողջ լինի, որպէսզի արիւն ելնի, քանի որ սատկածը կամ անշունչ քարը արիւն չունեն: Եւ ջրային կենդանին, որ շնչաւոր արիւն չունի, այլ ջրային արիւն, չի զոհաբերւում, որովհետեւ նրան ջրից հանելը արդէն զոհաբերել է, եւ ով էլ, որ հանած լինի, ուտելու ենթակայ է: Մինչդեռ սատկածը, յօշոտուածը եւ թռչունների կողմից գիշատուածը մի՛ կեր:

Երկրորդ՝ կենդանին պէտք է մաքուր լինի, որովհետեւ պիղծը չի զոհաբերւում եւ ուտելու չէ: Իսկ մաքուրի եւ պիղծի նշանների մասին վերն ասուեց:

Երրորդ՝ մորթելը պէտք է ըստ կարգի լինի, այսինքն՝ նախ անջատուի արիւնը, նրա հետ՝ շունչն ու մարմնի ջերմութիւնը: Որովհետեւ եթէ նախ մարմնի ջերմութիւնը պակասի, կլինի բնական մահ, ենթակայ չի լինի ուտելու: Եթէ նախ շունչը առնուի, կլինի խեղդամահութիւն, որն ուտելու չէ [նոյնպէս]: Իսկ եթէ արիւնը դուրս բերուի, շունչն ու կենդանութիւնն էլ հետը, կլինի հարկադրուած մահ:

Այսպիսով, նախ պէտք է հանել արիւնը, որը կենդանութիւնն է եւ Աստծոյ մասը, ապա ուտել մնացածը, որն ընդամէնը նիւթ է:

Չորրորդ՝ պէտք է ընտրուի գործիքը, որ լինի սուր երկաթից, որովհետեւ երկաթը մասնատող գործիք է, իսկ եթէ լինի սուր քարից, ինչպիսին գայլախազն է, որով սպանուեց Աբէլը, պիտանի չէ. [պիտանի չեն] նաեւ՝ փայտն ու արծաթը: Ինչպէս նաեւ, եթէ երկաթ է, սակայն սուր չէ, ինչպէս օրինակ, կլոր երկաթի կտորը, եթէ հարուածի կենդանուն ու սպանի, ուտելու չէ, որովհետեւ թէպէտ արիւն է դուրս գալիս, սակայն հաւասարապէս չեն ելնում շունչն ու ջերմութիւնը: Պարզ է, որ ուտելու չեն նաեւ քարից ընկածը կամ վիհ [գահավիժածը] եւ սատկածը:

Հինգերորդը մասի ընտրութիւնն է, այսինքն՝ գլխի հատելը, որ նախ պէտք է լինի այնտեղ, ուր շնչերակներն են, արիւնը եւ այլն: Նախ, որովհետեւ բոլոր զգայարանները գլխի վրայ են եւ պէտք է անջատել դրանցից: Երկրորդ՝ այդպէս միանգամից բաժանւում են շնչերակը, արեան երակները եւ կենդանութիւնը: Իսկ եթէ ուրիշ անդամ կտրուի եւ կենդանին մեռնի, ուտելու չէ՝ ո՛չ հատուած անդամը, ո՛չ էլ ամբողջը: Իսկ եթէ գլուխը ջախջախուի, ուտելու չէ, որովհետեւ մորթուած չէ պարանոցից, ուրեմն խեղդամահ եղածի նման է:

Վեցերորդը զոհաբերութեան նպատակն է, թէ ու՞մ համար է արւում այն, որովհետեւ եթէ Աստծոյ համար է կամ Հոգու, բոլորի կողմից է, իսկ եթէ մարդու համար է կամ ողջերի՝ ըստ կամքի է: Եթէ յանուն Աստծոյ է զոհաբերութիւնը, նախ պէտք է օրհնուած աղով լինի, որ ցոյց է տալիս իմաստութիւնն ու սրբութիւնը: Երկրորդ՝ պէտք է արուի դէպի արեւելք՝ Սուրբ Երրորդութեան անունով, որ ցոյց տրուի, թէ ում է ուղղուած: Երրորդ՝ որ քահանաներին տրուի Աստծոյ բաժինը՝ ինը մասերը. ներքին անդամները՝ սիրտը, երիկամները, լեարդի ստորին ճարպոտ մասը, որ անուշահոտ բուրմունք լինի, ինչպէս հրամայեց Մովսէսը: Արտաքին անդամներից՝ կուրծքը քահանայապետին, որ սրտի բնակարանն է, աջ կողմն իր քահանային՝ ի նշան նրա գործերի յաջողութեան: Մորթը, որ մեղքերի ծածկոյթն է, տրւում է քահանաներին, որովհետեւ՝ «Իմ ժողովրդի մեղքերն,- ասում է,- ուտում են քահանաները եւ քաւում են յանուն նրանց» (հմմտ. Ղեւտ. ԺԹ 22): Նաեւ ոտքերը, ըստ չորս տարրերի եւ գլուխը, որովհետեւ մեղանչում ենք հինգ զգայարաններով: Սրանք պէտք է տալ քահանաներին, ինչպէս կարգադրեց Մովսէսը հնում եւ սուրբ Գրիգորը՝ նորում:

Այսքանն այս մասին:

ԲՈՐՈՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԶ

Բորոտութիւնը մեղքն է ցոյց տալիս: Նախ, պիսակաւոր բորոտութիւնը մարմնի մեռելոտի լինելն է եւ հոգու մեղքը: Երկրորդ՝ բորոտութիւնը պղծում է մարմինը, իսկ մեղքը՝ հոգին: Երրորդ, բորոտութիւնն առնում է [մարմինը]. այդպէս էլ մեղքն ամբողջ անձը: Չորրորդ՝ բորոտութիւնը փոխակերպւում է, մեղքերն էլ՝ մէկը միւսով: Հինգերորդ՝ [այն] կսկիծ է մարմնի համար, մեղքը՝ հոգու: Վեցերորդ՝ անընդհատ քորում է, եւ

մեղքն էլ երկարատեւ է: Եօթներորդ՝ գարշ է, եւ մեղքն էլ՝ զազիր: Ութերորդ՝ մարմնի վրայ է եւ մնում է այնտեղ: Եւ մեղքն էլ մարդունն է ու մնում է նրա մէջ: Իններորդ՝ բորոտութիւնը երեք տեսակ է. սպիտակ գծաւոր սպի, միատարր պալար եւ այս ու այնտեղ տարածուած բշտիկներ, որ ե՛ւ մտքի, ե՛ւ հոգու, ե՛ւ մարմնի մեղքերն են: Տասներորդ, բորոտութիւնը բուժւում է դեղով, մեղքն էլ մաքրւում է ապաշխարութեամբ:

Մարմնի համար բորոտութիւնը գործերի մեղքն է, գլխի համար՝ հաւատքի: Եւ մարմնինը ծածուկ մեղք է, իսկ հանդերձանքինը՝ յայտնի: Ջրով լուանալը խոստովանութիւնն է, իսկ հանդերձ այրելը՝ հանդերձեալում հրով պատժուելը:

Հագուստի բորոտութիւնը չորսն է:

Նախ՝ եթէ եօթ օրն անցնում էր, այրում էին, որ նշանակում է, որ եթէ եօթներորդ հասակում մեղքը աւելանում է, այրուելու է գեհենում: Երկրորդ՝ եթէ նոյնն էր մնում, այրում էին, որ չզղջացած մեղքի այրուելն է հրով:

Երրորդ՝ եթէ լուանում էին ու դարձեալ մնում էր բորոտութիւնը, այրում էին, ինչը խոստովանութիւնից յետոյ նորից մեղքին դառնալն է, «ինչպէս շունն է վերադառնում իր փսխածին» (Բ Պետ. Բ 22): Եւ սա նոյնպէս այրւում է հրով, որովհետեւ առաքեալն ասում է, որ պահանջուելու է նաեւ առաջինը: Չորրորդ՝ եթէ լուանալուց յետոյ գոյնը փոխում էր, պատռում էին եւ մաքրւում, այսինքն՝ երբ խոստովանում են ու ապաշխարութեամբ փոխում վարքը, պատռում են մեղքերը եւ մաքրւում գործած մեղքերից: Իսկ երբ նորից էր երեւում, նորից էին լուանում, որ նշանակում է, թէ նորից ենք խոստովանում եւ կրկնում երկնչելով ապաշխարելը՝ մինչեւ մեր մէջ վերականգնւում է Քրիստոսի պատկերը:

Եւ երեք տեղ է բորոտութիւնը հանդիպում. մարմնին, հանդերձի վրայ, տան մէջ, որ նշանակում է, թէ երեք մասով ենք սխալւում՝ բանականութեամբ, ցասմամբ եւ ցանկութեան հինգ զգայարաններով:

Եւ մենք մարմինն ենք Քրիստոսի ու նրա անդամները, ինչպէս եւ զգեստը, տունը, տաճարը՝ մկրտութեամբ, հաւատով, բարի գործերով, ըստ այդմ՝ «Դուք կենդանի Աստծոյ տաճարն էք, ինչպէս որ ասաց Աստուած, թէ բնակուեցի նրանց մէջ եւ գնացի նրանց հետ» (Ա Կորնթ. Գ 16, Բ Կորնթ. Զ 16):

Մենք պէտք է սրբութեամբ արժանաւորապէս պահենք նրա տաճարը, զգեստը եւ անդամները, իսկ եթէ մարմնով բորոտուենք ծածուկ մեղքերով, բերանը փակ՝ չխոստովանենք, արտաքսուելու ենք եկեղեցուց, հանգստից, արդարների փառքից:

Եւ եթէ հանդերձների մէջ յայտնապէս մեղանչենք՝ առանց ապաշխարելու, կրակի հրի բաժին է դարձնելու, ինչպէս ասուեց վերը: Իսկ եթէ տանը, նրա ժողովրդի մէջ կամ եկեղեցում մեղանչենք եօթ ժամանակներ փոխելուց յետոյ, որ մեր հասակի եւ կենաց եօթ շրջաններն են, այնժամ քանդելու է մեր տունը, որ

մեր հոգին է ու մարմինը եւ քաղաքից դուրս անսուրբ վայր է շպրտելու, որ արքայութիւնից դուրս գտնուող դժոխքն է՝ մեղքերի ու մեղաւորների անսուրբ վայրը, եւ այնտեղ է արտաքսելու մեղաւորներին, որից ազատի մեզ մեր Քրիստոս Աստուած, ամէն:

Հարց. Ի՞նչ է նշանակում բորոտութեան ժամանակ երկու թռչուն զոհաբերելը. մէկը մորթած, միւսը՝ արեամբ թաթախուած եւ բաց թողնուած:

Պատասխան. Երկու թռչունները՝ կենդանի եւ մաքուր, նշանակում են հոգու եւ մարմնի կենդանութիւնը՝ ապաշխարութեան շնորհիւ: Եղեւնու փայտը հաւատի զօրութիւնն է: Ջերմ մշտիկը՝ յոյսը: Կարմիրը՝ սէրը: Կենդանի ջուրը՝ ապաշխարութեան մաքրութիւնը: Մորթուած թռչունը՝ մեղքերից մեռած մարմինը: Արեան մէջ թաթախուած միւս թռչունը՝ կենդանի հոգին է, որ կարեկից լինի մարմնին եւ նրա մաքրութիւնը յուսով դուրս բերի դաշտ, որ երկինքն է:

Դարձեալ՝ երկու թռչունները ցոյց են տալիս Քրիստոսին: Փայտը՝ խաչը: Կարմիրը՝ արիւնը, որովհետեւ արիւնն Աստծունն է: Մշտիկը՝ Սուրբ Հոգին: Եւ կամ՝ մեռած եւ կենդանի երկու թռչունները՝ Քրիստոսը՝ մեռած մարմնով ու կենդանի աստուածութեամբ, որի հոգին իջաւ դժոխք եւ ազատեց այնտեղ գտնուողներին:

Եւ կամ՝ բորոտն Ադամն էր: Քահանան՝ Յովհաննէսը: Ջուրը՝ աւազանը, որ մաքրեց մեզ Ադամի մեղքերից[390]: Փայտը՝ մեր չարչարանքը, այլեւ հաւատը, յոյսը, սէրը, ինչպէս ցոյց տրուեց:

Երկու թռչունները մեր երկու զօրութիւներն են՝ տեսական եւ գործնական, որովհետեւ գործերով մեռնում ենք՝ ընդդիմանալով մեղքերին, իսկ տեսականով՝ մտքով թռչում ենք դրախտ, որ երկնային դաշտն է:

Այս էր բորոտի մարմնի եւ մեր հոգեւոր մաքրութիւնը:

ՍԵՐՄՆԱՀՈՍԻ ՄԱՍԻՆ
Պրակ Խէ

Հարց. Ի՞նչ պատճառով է լինում ծորումը:

Պատասխան. Նախ՝ աւելորդ կերակրից: Երկրորդ՝ գիրութիւնից, որ հալում է ջերմ ցանկութիւնից եւ հոսում: Երրորդ՝ ցաւից կամ ցրտից է աւելանում: Չորրորդ՝ անպատշաճ մտքերից եւ տեսածից:

Եւ սրանցից որն էլ որ լինի, եկեղեցուց կամ սրբարանից դուրս է [մնում]՝ մէկ, երկու կամ աւելի օր եւ մաքրւում է խոստովանութեան ջրով:

Իսկ հոգեւոր ծորումը եռակի է:

Նախ՝ բնական, երբ բարի իմացումներն ու խորհուրդները գործ չեն դառնում: Երկրորդ՝ Աստծոյ պատուիրանների սերմը, որ կենդանութիւն չի ստանում: Երրորդ՝ Աստծոյ կողմից յօգուտ ուրիշների տրուած որեւէ շնորհ, որ ախտով ապականւում է նրանցից:

Եւ տե՛ս, որ սերմը մեր մէջ չի պղծում մեզ, այլ պղծում է հոսելով՝ չորս կերպ: Նախ, որ սերմը գործ է, որը քանի դեռ մեր

մէջ է, պիղծ չէ, իսկ երբ գործւում է, պիղծ է: Եւ ինքը՝ գործն է պիղծ, որ պղծում է գործողին եւ պղծում նրան մօտեցողին:

ԴԱՇՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Այդպէս էլ դաշտանի արիւնն է պիղծ՝ չորս կերպ. այսինքն՝ ինչպէս արուից հոսելն է, այդպէս էլ՝ էգից բխելը:

Սա եւս խոստովանութեամբ է մաքրւում:

Եւ արիւնահոսում է, երբ արգանդում մանուկ չկայ եւ ստինքներում՝ կաթ, որ մանկան սնունդն է: Նաեւ արիւն է հոսում, երբ մաքրւում է բեղմնաւորման արդիւնքը: Նորում եւս պէտք է պահպանել դաշտանի եօթնօրեայ մաքրութիւնը:

Հարց. Ինչպէ՞ս է փոխուել հինը նորում:

Պատասխան. Ոմանք ասում են մեղաւոր գործերը մնացել են նոյնը, իսկ մաքրուելը հոգեւոր [բնոյթ] է ստացել:

Դարձեալ ասում են մարմնական մեղքերն են փոխուել, ինչպէս մեռածին մօտ գնալը: Իսկ հոգեկան մեղքերը նոյնն են՝ այստեղ եւ այնտեղ, ինչպէս շնանալը եւ գողանալը:

Եւ կամ ասում են բնական մեղքերի զանազանութիւն դնող գրաւոր օրէնքները նոյնն են մնացել նաեւ նորում, ինչպէս սերմնահոսութեան եւ դաշտանի մասին, միայն հին պատիժները փոխարինուել են նորերով:

Ուրիշներն էլ ասում են, թէ հինը ամբողջութեամբ խորհրդանիշ էր, նորը՝ իր եւ խորհրդանիշ, որովհետեւ իրը փոխուեց ճշմարտութեան, իսկ խորհուրդը մնաց նոյնը, ինչպէս ջուրը, խունկը, իւղը, սպիտակ ալիւրը: Այս կերպ ստուերը փոխուեց լոյսի, օրինակը՝ ճշմարտութեան:

Հարց. Ինչպէ՞ս է ասում, թէ օրէնքը յաւիտենական է լինելու (Ղեւտ. Զ 22):

Պատասխան. Ոմանք ասում են, թէ հազար տարին է յաւիտենական կոչում: Եւ կամ [ասում են]՝ օրէնքների յիշատակը յաւիտեան մնաց:

Սակայն ճշմարտութիւնն այն է, որ թէեւ օրէնքներն ըստ խորհրդի փոխուեցին, սակայն ըստ իրի յաւիտեան մնացին, որովհետեւ օրինակն անցաւ, սակայն մնաց ճշմարտութիւնը:

ԵՐԿՈՒ ՆՈԽԱԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ էին նշանակում վիճակ հանուած երկու նոխազները (Ղեւտ ԺԶ 8):

Պատասխան. Նոյնատեսակ երկու նոխազները խորհրդանշում են մեր Տիրոջը՝ երկուսը միաւորուած մէկ անձի մէջ եւ միաւորուած Աստծոյ եւ մարդու բնութեամբ:

Վիճակը սահմանումն է, եւ առաջ, քան յաւիտենութիւնը, սահմանեց Հայրը մարդկութեան փրկութեան համար, այլեւ քահանայապետը դատապարտեց երեւելի մարդուն խաչել:

Եւ նոխազները մեր մեղքերի համար են: Կենդանու ներկուած եւ կարմիր կապած պարանոցը ցոյց է տալիս Աստծոյ մեռնելը յանուն մեզ: Իսկ արիւնը՝ իրենով մեր մեղքը վերացնելը, իսկ դաշտ տանելը՝ Հօր մօտ երկինք տանելն է,

որովհետեւ ինչպէս մեռած մարմնով քաւեց մեր մեղքերը, այդպէս էլ անմահ աստուածութեամբ կենդանացրեց եւ երկինք բարձրացրեց: Իսկ, որ ասում են, թէ մէկ տարի յետոյ եկած նոխազը մաքրուել էր արիւնից, մէկ տարի յետոյ Պօղոսին երեւալն է նշանակում (տե՛ս Գործք Թ):

Իսկ արիւնից մաքրուելն այն է, որ աւազանով մկրտւում են եւ մաքրւում արիւնից, ինչպէս ասում են՝ «Մեր եւ մեր որդիների վրայ» (Մտթ. ԻԷ 25), որով եւ Սաւուղին ազատեց մեղքերից, այլեւ խաչօղներին, որոնք հաւատացին նրան:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԱՐԱՏՆԵՐԸ
Պրակ ԽԸ

Հարց. Որո՞նք են քահանայ դառնալու արգելք [հանդիսացող] արատները:

Պատասխան. Ղեւտացւոց [գրքում] նշւում են տասներկուսը (տե՛ս Ղեւտ. ԻԱ, ԻԲ):

Նախ՝ կաղ լինելը, որ նշանակում է կաղալ օրէնքներում:

Երկրորդ՝ կոյր, որ մտքով խաւար են:

Երրորդ՝ ակնախոռոչից դուրս ընկած աչքը, որ մտքում բիծ ունենալն է:

Չորրորդ՝ շիլը՝ թիւր ընկալելն է:

Հինգերորդ՝ կճատը, որ չի կարողանում ընտրել:

Վեցերորդ՝ ականջատը, որ ունկնդիր չէ կանոններին:

Եօթներորդ՝ սապատաւորը, կուզը կամ թիկունքին ելուստ ունեցողը, որ արժանապատուութեամբ չի կրում քահանայութեան բեռը:

Ութերորդ՝ ոտնաբեկը վարքի ուղու [թիւր լինելն է]:

Իններորդ՝ կռնատը, որ բարի գործեր չանելն է ցոյց տալիս:

Տասներորդ՝ քոսոտը, որ զազիր գործերն է [ցոյց տալիս]:

Տասնմէկերորդ՝ քաղցկեղը, որ մեղքի կերպարանափոխումն է:

Տասներկուերորդ՝ մի ամորձի ունեցողը, որ պակաս է զօրութեամբ եւ անգործ:

Հարց. Ինչո՞ւ էին մարմնի արատները խոտելի:

Պատասխան. Նախ, որպէսզի պակաս չերեւային, քան հեթանոսները, ուստի մարմնի արատները խոտելի էին համարում: Երկրորդ՝ որպէսզի ինչպէս մատուցուող զոհաբերութիւնն էր անարատ, այդպիսին էլ լինէին սպասաւորները: Երրորդ՝ օրինակն էին հոգու արատների նորում, ինչպէս ասացինք:

Հարց. Նոր քահանաների ո՞ր արատներն են խոտելի:

Պատասխան. Նորում կրկին է քահանայութիւնը:

Նախ, որ զոհաբերում է Քրիստոսին: Երկրորդ՝ իրեն: Այն, որ իրեն է զոհաբերում կամ առանձին կարգով է անում կամ՝ ընդհանուրի հետ աղօթքով:

Այն, որ առանձին կարգով է, մարմնի արատը խոտելի չէ, այլ միայն հոգունը: Իսկ որ ընդհանուրի հետ է, սրա ո՛չ մարմնականը, ո՛չ էլ հոգեւորն են խոտելի, որովհետեւ եղբայրաբար միմեանց

օգնելով՝ յաղթահարում են տկարութիւնները:

Իսկ որ Քրիստոսին է պատարագում, խոտելի են թէ՛ մարմնի, թէ՛ հոգու արատները, որովհետեւ պէտք է բոլորովին անարատ լինի, քանի որ Քրիստոս կատարեալ անթերի էր՝ աստուածութեամբ եւ մարդկութեամբ:

Եւ տե՛ս, որ ասում է. «Ո՛վ արատ ունի, կարող է զոհից ուտել, բայց սեղան բարձրանալ կամ վարագոյրի ետեւը մտնել չի կարող» (Ղեւտ. ԻԱ 22-23), որ նշանակում է, թէ քահանայութիւնից զրկուածները հաղորդութիւն են առնում այլոց ձեռքից եւ հասոյթի իրաւունք [ունեն]: Սակայն Քրիստոսին պատարագելու իրաւունք չունեն եւ ոչ էլ կատարելու եօթ խորհուրդները, որովհետեւ ասում է՝ «Բորոտը եւ սերմնահոսը սրբութիւնից ուտելու իրաւունք չունեն, մինչեւ մաքրուեն» (Ղեւտ. ԻԲ 4), որ նշանակում է, թէ քանի դեռ քահանաները մեղքի մէջ են, ո՛չ հասոյթից ուտելու իրաւունք ունեն եւ ո՛չ էլ սուրբ խորհրդին մօտենալու, այլապէս կպղծեն, ինչին մօտենան եւ չեն մաքրուի մինչեւ չզղջան ու չխոստովանեն մեղքերը:

ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՏՆԵՐԸ
Պրակ ԽԹ

Հարց. Ինչո՞ւ էին անարատ զոհ ընտրում:

Պատասխան. Երեք պատճառով:

Նախ՝ որովհետեւ հեթանոսները անարատներն էին զոհաբերում: Երկրորդ՝ իբրեւ օրինակ էր՝ մեծ եւ անարատ պատարագի: Երրորդ՝ ի խորհուրդ պատարագողի, որովհետեւ նուէրը նուիրօղի մասին է վկայում:

Եւ տասներկուսն են զոհաբերութեան արատները:

Նախ՝ կոյրը, որ մեզանում մտքի կուրութիւնն է: Երկրորդ՝ բարի գործերից զուրկը: Երրորդ՝ լեզուատը, որ անձայնն է: Սրանք խոստովանութիւն չանողներն են: Չորրորդ, խոցերով պատուածը, որի մաշկը ճաքճքած է եւ պատուած վէրքերով, որ ցոյց է տալիս մեղքերի խոցը:

Հինգերորդ՝ քոսոտը, որ յայտնին է:

Վեցերորդ՝ որքինոտը, բորոտը, որ անբուժելին է:

Եօթներորդ՝ այլատեսակին խառնուած իգաբարոն, խառնակ բարքն է նշանակում:

Ութերորդ՝ թաղիքամսաւորը, որի միսը թաղիքացած է կաշուի հետ ու պնդացած, որը զանազանութիւն չի դնում խառնակ կենցաղավարութեան մէջ:

Իններորդ՝ ականջատը, որ խուլ է մտքով:

Տասներորդ՝ ներքինացածը, որ թլփատուածն է՝ անամօթն է:

Տասնմէկերորդ՝ իգացածը, իգացողը, որ թերի տղամարդն է:

Տասներկուերորդ, փօշտանկը, որ աղիները կտրուած, դուրս թափուածն է՝ ի նշան հոգեկան ցաւերի մարմնի վրայ արտայայտուելու:

Եւ որ սրանցից վերն է եւ ընդունելի չէ՝ հիւանդն ու գիժը, որ մտքով մոլին է, մեղքերով հիւանդը:

Նոր պատարագում մարմնական այսպիսի ընտրութիւն չի կատարւում, որովհետեւ ճշմարիտ զոհաբերութիւնը, Քրիստոսն է: Իսկ [նախկին զոհաբերութիւնը] իբրեւ օրինակ էր եւ տուրք՝ աղքատներին տալու համար:

Սակայն մեզ համար հաճելին ընդունելի է [նաեւ] Աստծուն, որ առաւել սէրն է ցոյց տալիս, իսկ այն, ինչ անպիտան է մեզ համար, անպիտան է նաեւ Աստծոյ համար:

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ հրամայում է անասունի արիւնը ծածկել եւ չուտել (Ղեւտ. ԺԷ 13):

Պատասխան. Որովհետեւ արիւնը կենդանու շունչն է եւ կեանքը: Արիւն ուտելը, խեղդամահ անելը եւ յօշոտելը նոյն մեղքն է, ինչպէս ասուեց վերը, ԺԸ գլխի վեցերորդ պրակում:

Իսկ արիւնը հրամայում էր ծածկել, նախ որ՝ կենդանութիւնն իբրեւ բաժին տան կեանք տուողին: Երկրորդ՝ նշանակում է, թէ մեր բանական հոգին չի կորչում: Երրորդ՝ որ դժոխքում գտնուող հոգիները մոռացուած չեն նրա կողմից: Չորրորդ՝ երկնչում եւ անմեղ ենք պահում մեր հոգիները, որ պէտք է բարձրանան երկինք: Հինգերորդ՝ կենդանիների արիւնը, որ հողից է, հողին էլ յանձնւում է. մեր բանական հոգին էլ Աստծուց է եւ գնում է Աստծոյ մօտ. ըստ Սողոմոնի՝ «Հոգին վերադառնում է Աստծոյ մօտ, որ տալիս է այն» (Ժող. ԺԲ 7):

ՇԱԲԱԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ծ

Հարց. Ի՞նչ է շաբաթների շաբաթը (Ղեւտ. ԺԶ 31):

Պատասխան. Եօթներորդ ամսում, որ թշրին էր, տասը օր քաւութեան տօն էին անում, եւ եօթ շաբաթների շաբաթը այնտեղ էր [հանդիպում]. եւ եօթներորդ ամիսը, այլեւ՝ տասներորդ օրը շաբաթ էր, որ առաջին տօնն էր Եգիպտոսից դուրս գալուց յետոյ՝ երկրորդ տարուայ մէջ: Եւ կամ էլ՝ շաբաթների շաբաթ էր կոչւում, որովհետեւ մեղքերից հոգու քաւութեան շաբաթ էր, ինչպէս մարմնական [հոգսերից] ազատուելը:

Հարց. Ինչո՞ւ է հրամայում այդքան շաբաթներ պահել:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ խստասիրտ ու անողորմ էին եւ ծառաներին ու անասուններին հնարաւորութիւն չէին տալիս հանգստանալու:

Երկրորդ՝ որպէսզի ողորմութիւն եւ մարդասիրութիւն սովորեն եւ բաժին տան աղքատներին ու տնանկներին:

Երրորդ՝ որ հանգստանան հողը եւ տարրերը, որոնք մեր չար գործերից տառապում են. [հանգստանան] նաեւ նրանց պահապան հրեշտակները:

Չորրորդ՝ որ ցոյց տայ նրանց, որ եօթից մէկը պէտք է բաշխուի աղքատներին եւ կարիքաւորներին, ինչպէս որ ուրիշ դէպքում տասից մէկը Աստծոյ բաժին էր: Իսկ նորում հրամայեց ունեցուածքի կէսը աղքատներին տալ ըստ Աւետարանի (տե՛ս Ղուկ. ԺԹ 8), որը հոգու եւ մարմնի հաւասարութիւնն է, իսկ

կատարեալներին՝ «ամէն ինչ վաճառել եւ տալ աղքատներին» (Ղուկ. ԺԸ 22):

Հինգերորդ՝ որ եւ վայրի կենդանիներին բաժին մնայ մեր վաստակից, քանի որ երկիրն այս, որտեղ մենք բնակուեցինք, նրանցն է:

Վեցերորդ՝ իսկ թողութեան տարում (տե՛ս Ելք ԻԳ 11, նաեւ՝ Ղեւտ. ԻԵ 10) սովորեցնում է թողնել հոգեւոր եւ մարմնաւոր պարտքերը մեր պարտապաններին:

Եօթներորդ՝ այլաբանօրէն խորհրդանշում էր ազատութիւնը, որ մեզ տրուեց Քրիստոսի միջոցով, որն ազատեց օրէնքի դժուարութիւններից եւ մեղքերից՝ թողութիւն շնորհելով:

Պէտք է իմանալ նաեւ, որ հնում նշւում էին հինգ շաբաթներ.

Նախ՝ շաբաթ օրը:

Երկրորդ՝ շաբաթների շաբաթը:

Երրորդ՝ եօթներորդ ամսուանը:

Չորրորդ՝ եօթներորդ տարուանը:

Հինգերորդ, յոբելեանը՝ յիսուներորդ տարում, որ թողութեան եւ ազատութեան տարին էր:

[Սրանք] մեզանում ունեն հոգեւոր հինգ հանգստի նշանակութիւն: Առաջին՝ շաբաթ [օրը], երբ դադարում ենք վեց շարժումներից եւ հինգ զգայարաններով մեղքեր գործելուց: Երկրորդ՝ հանգստանում ենք խղճմտանքով: Երրորդ՝ մեղքերի թողութիւն ենք ստանում: Չորրորդ՝ մարմնից դուրս գալուց յետոյ, որի մասին ասում է՝ «Ինքն իրեն աճածը չպէտք է հնձել, այլ ուտել» (Ղեւտ. ԻԵ 11), որովհետեւ արդիւնքը եւ հունձքը վերջում են, իսկ հանգիստը՝ հոգում: Հինգերորդ՝ կատարեալ հանգիստը հոգով եւ մարմնով է, երբ փողերն են հնչելու եւ ազատուելու են ապականութիւնից, [երբ լինի] բոլորի թողութիւնը եւ իւրաքանչիւրի ստացուածքի իրեն վերադառնայ, որ գործերի հատուցումն է:

ՏՕՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԱ

Հարց. Քանի՞ տօն կար հնում:

Պատասխան. Հինգ տօն էր ամբողջ տարուայ մէջ:

Նախ՝ իւրաքանչիւր շաբաթ օրը, նորում՝ կիրակին:

Երկրորդ՝ ազատութեան բաղարջակերքը, նորում՝ «մեր զատիկը՝ Քրիստոսը զոհաբերուեց» (Ա Կորնթ. Ե 7):

Երրորդ, յիսուներորդ օրը՝ օրէնքների տուչութեան օրը, որ նորում՝ Հոգեգալուստն է:

Չորրորդ՝ քաւութեանը, որ [նորում] Խաչի տօնն է:

Հինգերորդ՝ տաղաւարահարաց տօնը, որ [նորում] եկեղեցու տօնն է, ուստի խաչի տօնն էլ եկեղեցու հետ միասին ենք տօնում:

Իսկ ընդհանրապէս հնում բոլոր տօները միասին ութն էին, որոնք մենք այժմ փոխարինել ենք նորերով:

Նախ՝ ամէնօրեայ գառը եւ առաջաւորութեան ու ողջակէզի սեղանների նուէրները, որ մենք փոխարինել ենք ամէնօրեայ սուրբ պատարագով, այլեւ

առաւօտուայ եւ երեկոյեան հանապազօրեայ աղօթքներով:

Երկրորդ՝ շաբաթ օրուայ կրկին նուէրները, նորում՝ մեր կիրակին, իսկ աւագ տօները շաբաթ օրը տօնելը:

Երրորդ՝ փողերի տօնը (տե՛ս Ղեւտ. ԻԳ 24), մեզ մօտ՝ առաքեալների տօնը, որովհետեւ նրանք են տիեզերքի փողերը:

Չորրորդ՝ նրանց ամսամուտը, որ լուսնի նորելով էին տօնում, իսկ մեզ մօտ՝ Կոյս Մարիամի տօնը, որովհետեւ ըստ ոմանց՝ Մարիամ «լուսաւորութիւն»[391] է նշանակում: Այլեւ ամսամուտը մենք իբրեւ ծննդեան տօն ենք տօնում, որովհետեւ Քրիստոս եղաւ մեզ համար ամիս՝ ծննդեամբ, մահուամբ, յարութեամբ:

Հինգերորդ՝ Պասքայն, որ բաղարջակերքն էր, իսկ մեզ մօտ՝ զատիկը, այլեւ շաբաթապահերը:

Վեցերորդ՝ յիսներեակը, որ մեզ մօտ Հոգեգալուստն է՝ Պենտակոստէն: Եւ տե՛ս, որ այս երեք տօները, այսինքն՝ ամսամուտը, պահքը, յիսներեակն իբրեւ մատուցուող տօներ հաւասար են, այսինքն՝ երկու արջառ, եւ Քրիստոսն էլ զոհաբերուեց Ադամի ու Եւայի մեղքերի համար, այլեւ հին ու նոր ժողովուրդների թողութեան համար. նաեւ՝ հոգու եւ մարմնի փրկութեան:

Եւ խոյը Քրիստոսն է, իսկ եօթ անարատ գառները՝ եօթ մաքուր զգայարանները:

Եւ երեք պատճառով ենք ութ օր տօնում սուրբ Հոգեգալուստը: Նախ՝ որովհետեւ ութն էին նուիրաբերուող զոհաբերութիւնները՝ եօթ գառ եւ մէկ խոյ: Երկրորդ՝ եօթն էին բաղարջակերաց տօնի օրերը: Եւ եօթ օր տօնում ենք Յարութիւնը, նոյնպէս եւ մէկ օր օրէնքի Տուչութեան տօնն էր, որի օրինակով, ութ օր տօնում ենք Հոգեգալուստը: Երրորդ՝ քանի որ հաւասար են երեք տօները, ուստի ինչպէս ծննդեան եւ յարութեան տօներն ենք նշում, այդպէս էլ ութ օր Հոգեգալուստն ենք տօնում:

Իսկ եթէ մէկը հարցնի. ինչո՞ւ ծննդեան եւ յարութեան տօներին եօթ օր պահեցողութիւն ենք անում, իսկ Հոգեգալուստին՝ ոչ, ապա կասենք, որ ծնունդն ու յարութիւնը մարմնական են, ուստի մարմնաւոր ենք տօնում, իսկ Հոգեգալուստը հոգեւոր պահքերով եւ հոգեւոր երգերով ենք տօնում:

Երկրորդ՝ Աստուածաբանն ասում է՝ «Երբ ստանում ես հոգին, պահի՛ր»:

Երրորդ, որովհետեւ աւետարանիչները պարզորոշ ասում են, թէ Տիրոջ մկրտուելու հետ նոյն պահից Հոգին նրան դուրս բերեց անապատ, որտեղ պահեցողութիւն արեց քառասուն օր ու գիշեր: Այդպէս էլ մենք, ստանալով Սուրբ Հոգին՝ պահքով ենք տօնում:

Եօթներորդը՝ Տաղաւարահարաց տօնը, որ մեզ մօտ փոխարինուած էր եկեղեցու տօնով, ամբողջ տարուայ մէջ եօթ օր էր տեւում: Եւ եկեղեցու օրհնութեան ժամանակ էլ եօթ օր նաւակատիք ենք կատարում:

Ութերորդը Քաւութեան տօնն էր, որը մեզ մօտ Սուրբ Խաչի տօնն է, որովհետեւ նա է մեր քաւութիւնը, այդ

պատճառով էլ միասին ենք տօնում խաչի եւ եկեղեցու տօները, ինչպէս ասուեց երեսունհինգերորդ գլխի երեսունութերորդ համարում:

Իսկ ըստ այլոց Քաւութեան, Որթագործութեան տօնը մեզ մօտ Մեծ քառասնօրեայ պահքն է, երբ ապաշխարելով՝ քաւում ենք գործած մեղքերը՝ պահքով ճնշելով մեր անձը, ինչպէս որ նրանք էին քաւութիւնից առաջ պահքով խոնարհեցնում անձերը: Այդպէս էլ մենք խոնարհ մտքով եւ ուրախ սրտով ենք տօնում Պահքի տօնը, ըստ այդմ՝ «Լուա՛ երեսդ եւ օծի՛ր գլուխդ» (Մտթ. Զ 17): Այլեւ խորհրդանշում է Աւագ ուրբաթ օրը Քրիստոսի չարչարանքը, որով քաւուեցին մեր մեղքերը, երբ պահում ու մեծ չարչարանքով ճնշում ենք մեր անձերը:

Իսկ Վարդավառի եւ Վերափոխման տօները նոր կերպ են աւանդուած, ինչպէս որ Ծաղկազարդը եւ քառասնօրեայ գալուստը:

Սրանք այլափոխուած նկատելի են նաեւ հնում, եթէ ուշադիր դիտարկուի: Որովհետեւ Վարդավառն այն էր, որ լեռան վրայ երկրորդ քառասնօրեայ պահքից յետոյ լուսաւորուեց Մովսէսի երեսը, որի պատճառով էլ այն երկու յիսներեակներից յետոյ ենք տօնում:

Իսկ Վերափոխումն այն էր, որ անապատում վախճանուեց Մարիամը՝ Ահարօնի քոյրը: Եւ Մովսէսը քառասնօրեայ օրէնք հռչակեց, որ եթէ՝ «Արու անդրանիկը, որ բացում է արգանդը՝ տատրակ եւ աղաւնի նուիրել Սրբութեան տաճարին» (Ղուկ. Բ 23-24): Եւ ինչպէս Տաղաւարահարաց տօնին ճիւղեր, տերեւներ եւ ոստեր էին մատուցում, այդպէս էլ Ծաղկազարդի օրը Քրիստոսին էին մատուցում, երբ նա Երուսաղէմ էր մտնում:

Հարց. Ինչո՞ւ էին Տաղաւարահարաց տօնին աստիճանաբար օրըստօրէ մէկական արջառ պակաս զոհաբերում, եւ ութերորդ օրը մէկն էր մնում (տե՛ս Ղեւտ. ԻԳ 36, Թիւք ԻԹ 12-35):

Պատասխան. Ըստ կարգի նշանակում էր օրերի պակասելու հետ արջառների պակասելը: Սակայն խորհուրդն ուրիշ էր:

Նախ այն, որ օրինակները շատ են, ճշմարտութիւնը՝ մէկը, որ նշանակում էր, թէ նուազելու են հինն ու օրինակը, գալու է նորը եւ Քրիստոսի ճշմարտութիւնը: Երկրորդ՝ պակասելու են եօթ զգայարանների մեղքերը, եւ հաստատուելու է արդարութիւնը, որ մէկն է զղջացողների համար: Երրորդ՝ փոփոխուելու են մեր եօթ հասակները, հաստատուելու է մէկը: Չորրորդ՝ կենաց եօթ հազարամեակները պակասելու են եւ մնալու է մէկը:

ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ
Պրակ ԾԲ

Հարց. Ի՞նչ են խորհրդանշում արջառը, խոյը, գառը, նոխազը եւ միւս նուէրները. սպիտակ ալիւրը, իւղը, գինին:

Պատասխան. Նախ՝ խորհրդանշում են Քրիստոսին: Երկրորդ՝ մեզ: Երրորդ՝ սրբերին, որոնց տօները կատարում ենք: Եւ նախ Քրիստոսին՝ հետեւեալ կերպ. արջառ է զոհաբերուած, մեզ համար

ծնուած խոյ, ուտելի գառ, մեր մեղքերը քաւող նոխազ: Այլեւ՝ սպիտակ ալիւր է սուրբ մարմինը, գինին՝ արիւնը, իւղը՝ օծումն աստուածութեան, ինչպէս ասուեց վերը:

Երկրորդ՝ խորհրդանշում է մեր բանական պատարագը, այսինքն՝ մեր հոգին, մարմինը, միտքը՝ անարատ մատուցուած: Սպիտակ ալիւրը՝ մարմնի ճգնելը եւ աւելորդութիւններից ազատուելն է: Իւղը՝ մտքի լոյսն ու զուարթութիւնը: Գինին՝ հոգեւոր ուրախութիւնը: Նոխազը՝ մեղքերից դառնալը:

Երրորդ՝ խորհրդանշում են սրբերի տօները. արդիւնարար եւ բազմավաստակ եզները, լուծ քաշող հաւատի զոյգ արջառները՝ սուրբ առաքեալներին, խոյերը՝ հայրապետների դասերին, գառները՝ աւազանով նորածիններին, նոխազները՝ մեղքերից դարձածներին եւ ապաշխարածներին, այլեւ երկրի թագաւորներին եւ իշխաններին: Իսկ սպիտակ ալիւրը՝ ճգնաւորներին եւ կուսակրօններին, որ երկաթեայ ճգնութեամբ ճնշում են իրենց մարմինը: Գինին՝ [խորհրդանշում է] սուրբ մարտիրոսներին, իւղը՝ ուղղադաւան լուսատու վարդապետներին, խունկը՝ սրբերի աղօթքները եւ այլն:

Դարձեալ գինու սափորի քառորդ մասը (տե՛ս Ղեւտ. ԻԳ 13) նշանակն է չորս առաքինութիւնների, երեք մասերը՝ աստուածային երեք առաքինութիւնների եւ կէս դորակին՝ այն, որ այժմեան մեր կեանքում բոլոր նուիրաբերութիւնները կիսակատար են՝ մինչեւ հանդերձեալը:

Եւ այն, որ մէկական դորակի չափով աւելացւում էր գինին, նշանակում է, թէ՝ աւելանում են հաւատը, յոյսը, սէրը, որովհետեւ այս կեանքում հաւատով ենք նուիրւում, յետմահու՝ յուսով, իսկ յարութիւնից յետոյ՝ կատարեալ սիրով միաւորւում ենք Քրիստոսին:

Հարց. Ի՞նչ էր նշանակում, որ ըստ տօների մեծութեան աւելացնում էին ալիւրը, իւղը, գինին:

Պատասխան. Մենք էլ տօների ժամանակ պատարագին ալիւր, գինի, ձէթ, մոմ, խունկ ենք նուիրաբերում եւ մատաղ անում: Եւ հոգեպէս ալիւրը մարմնական նուէրի խորհրդանիշն է կամ մարմնի չարչարանքը, երբ տօների ժամանակ ճգնում ենք: Գինին՝ քահանաների երկրպագութեան ուրախութեան ձայնը: Իւղը՝ հոգեւոր շնորհները, ընթերցումները, քարոզները, ներբողները եւ այլն, որ ըստ տօների անհրաժեշտ է աւելացնել:

Իսկ չորրորդ դորակի գինին ու իւղը ալիւրի եւ գառան հետ ցոյց են տալիս մեր բանական եւ կենդանի պատարագը. երկու տուն մեսեդի եւ երկու տուն «Ուղղիցի»՝ խունկ ծխելով: Այլեւ՝ «Ուղղիցին» չորս տուն է կիսամասնեայ՝ «Սուրբ Խաչեցարի»[392]՝ «հզօր ու անմահ» գառան հետ տրուած: Նոյն կերպ եւ առաւօտեան ժամերգութիւնը, ճաշու մեսեդին սպիտակ ալիւրի տասանորդով՝ մարմնի տասը զգայարանները ճնշելու [իմաստն ունեն]:

Սրանք են առաւօտեան եւ երեկոյեան գառ եւ նուիրաբերութիւններ անելու խորհուրդները:

ՏՈՒՐՔԵՐԻ ԵՒ ԱՐԾԱԹԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԳ

Հարց. Ի՞նչ է նշանակում հրամայելը, որ արծաթը տոկոսով չտրուի (տե՛ս Ղեւտ. ԻԵ 37):

Պատասխան. Նախ, ասում են, որ արծաթը վաճառքի միջոց է, դրանով իսկ էլ շահում է եւ ոչ տոկոսներով:

Երկրորդ՝ արծաթն անծին է, ուստի շահի [միջոց] չէ: Երրորդ՝ արծաթը Բանն է խորհրդանշում, ուստի չի կարելի իրաւունքի կամ քարոզի համար արծաթ առնել: Եւ ուրիշներն էլ այլ բաներ են [ասում]:

Իսկ մեր կարծիքով բոլոր տուրքերը բաժանւում են երեք տեսակի:

Նախ՝ որ ոչ հիմնականն է խնդրում, ոչ էլ՝ շահը, ինչպիսին ողորմութիւն տալն է:

Երկրորդ՝ դրամագլուխն է պահանջում եւ ոչ շահը, ինչպիսին փոխ տալն է:

Երրորդ՝ ե՛ւ դրամագլուխը, ե՛ւ շահը, ինչպէս առեւտրում:

Այս պատճառով արծաթի համար շահ չի պահանջւում, որովհետեւ փոխ է տրուած, ինչպէս հացը կամ այլ փոխ տրուող իրը:

Իսկ նրանք, որոնք ե՛ւ շահ, ե՛ւ դրամագլուխն են պահանջում, դարձեալ երեքի են բաժանւում: Նախ՝ երկրագործները, այգեգործները, հովիւները եւ նմանները: Երկրորդ՝ արուեստաւորները, մշակները, վարձկանները: Երրորդ՝ վաճառականները:

Արդ, առաջինների շահը արդիւնքից է:

Երկրորդներինը՝ արժէքից:

Երրորդներինը՝ պիտանիութեան չափից:

Առաջինն ամբողջովին արդար գործ է, երկրորդը՝ չարչարանքի արդիւնք, վերջինը՝ ժամանակի գործ:

ՊԱՏՈՒՀԱՍԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԴ

Հարց. Որո՞նք են չարի եօթնապատիկ պատիժներն, ըստ այդմ՝ «Մեր դրացիների նախատինքը, որով անարգեցին մեզ, եօթնապատիկ իրենց գիրկը վերադարձրու» (Սղմ. ՀԸ 12):

Պատասխան. Եօթնապատիկ նախ բազում է նշանակում, այսինքն՝ մեր բազում մեղքերի հետ աւելանում են պատուհասները:

Նաեւ՝ նկատի ունի եօթ ժամանակաշրջանները կամ եօթ հասակները, կամ մարմնի եօթ զգայարանները, կամ էլ՝ հոգու եօթ զօրութիւնները:

Եւ ըստ կարգի այսպէս է թուարկում դրանք:

Նախ՝ մտքի տարակուսանքը եւ աչքի ցաւը, որ մոլորուեն փախչելիս: Երկրորդ՝ երկաթէ երկինք եւ պղնձէ երկիր՝ այսինքն՝ երաշտից չորացած, ինչպէս Եղիայի օրօք էր: Կամ մեր աղաղակի չլսելն իբրեւ երկաթեայ երկնքի մէջ գտնուողների: Կամ տանջուողներին չողորմալը, իբրեւ

պղնձէ մարմին հագածների: Երրորդ՝ երկրի բոյս եւ ծառերի պտուղ չտալը: Չորրորդ՝ անասունների կոտորուելը գազաններից: Հինգերորդ՝ սուր եւ փախուստ թշնամուց: Վեցերորդ, մահ ամրոցների մէջ: Եօթներորդ, սովի մատնուած՝ զաւակների մարմիններն ուտելը եւ գերեվարուելը թշնամուց, որպէսզի երկիրը հանգստանայ չար բնակիչներից՝ հասնելով իր շաբաթ օրուան:

ՏԱՍԱՆՈՐԴԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ պահանջեց պտուղների եւ անասունների տասանորդը (տե՛ս Ղեւտ. Իէ 22):

Պատասխան. Որպէսզի Աստծուն մասնակից դարձնելով ունեցուածքին՝ մնացեալը խնամքով պահեն:

Իսկ տասը թիւը Աստծոյ կատարեալ եւ սուրբ նուէրն է, որի պատճառով էլ երկրի թագաւորներն իրենց հնազանդ մարդկանցից իննական ընծաներ են պահանջում, իսկ տասներորդը Աստծոյ բաժին է. մարդունը ինն է, որովհետեւ անկատար է: Եւ նշանակում է այն, որ [իբր] հրեշտակների տասը դասից մէկն ընկաւ, եւ մարդիկ ընկածի տեղն ու թիւն են լրացնում:

Սակայն ճշմարտութիւնն այն է, որ հրեշտակների բոլոր դասերը ինն են, իսկ նրանցից ընկածները մէկ դաս են, որոնց տեղը լրացնում են մարդիկ:

Եւ տասն են զգայական արարումները. եօթ մոլորակները, ութերորդը՝ չմոլորուողները, իններորդը՝ ներքեւ իջնող լոյսը, եւ տասներորդը՝ նրանցից վեր մարդը, որ բանական է եւ Աստծոյ բաժին:

Նաեւ ցոյց է տալիս լրման ժամանակ տասը դրամից մէկ կորածի եւ հարիւր ոչխարից մի մոլորուածի փնտրելը մեր Տէր Յիսուս Քրիստոսի կողմից (տե՛ս Ղուկ. ԺԵ 8, Մտթ. ԺԸ 12), որին փառք յաւիտեանս. ամէն:

Այսքանը Ղեւտական գրքի մասին:

ԳԼՈՒԽ ԻԲ՝ ՄԵԾ ՅԱՆԿԻՑ ԹՈՒՈՑ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ Պրակ Ծե

Հարց. Ինչո՞ւ Աստուած հրամայեց թուարկել Աբրահամի որդիներին, քանի որ յաւիտենականի խոստման ժամանակ ասաց, թէ՝ «Քո զաւակները լինելու են աստղերի ու աւազի նման անթիւ» (Ծննդ. ԻԲ 17):

Պատասխան. Քանի որ խոստման աւետիսի ժամանակ Աբրահամը ծեր էր, իսկ կինը՝ չբեր, չկամեցաւ, որ իրենց բնութեանը նայելով՝ յուսահատուէին, այլ հաւատային Աստծոյ խօսքին, որ ամենազօր է, այդ պատճառով էլ ասաց, որ զաւակներն անթիւ են լինելու, եւ այդպէս էլ եղաւ, քանզի քետուրա-ծինները[393] լցրին արեւելքը, իսմայէլցիները՝ հարաւը, Եսաւի [ժառանգները]՝ հիւսիսը եւ արեւմուտքը. եւ սրանք չպակասեցին թուով: Իսկ սառայածիններին հրամայեց թուարկել ինչպէս աստղերը, նախ որպէսզի ցոյց տրուի, թէ ո՞ր ազգից էր ծագելու Արեգակն արդարութեան՝ Քրիստոսը: Երկրորդ՝ [թուարկուեցին] ինչպէս գլխաւոր աստ-

ղերն են համրում, ինչպէս տասներկու ազգերը, տասներկու կենդանակերպերը եւ այլն: Երրորդ՝ ինչպէս ինքն է զգայական աստղերին թուարկում եւ անուամբ կոչում, այդպէս էլ իմանալիներին թուարկել տուեց: Չորրորդ՝ որպէսզի ցոյց տայ, որ եթէ Եգիպտոսում ծառայութեան մէջ նրանք այդքան բազմացան Աստծոյ խնամածութեամբ, ուրեմն այդպէս բազմացած իրենց խաղաղ բնակավայրերում որքա՜ն անսահման պիտի բազմանան:

Հինգերորդ՝ թիւը ընտրութիւն, դաս եւ կարգ է ցոյց տալիս, որովհետեւ նրա մէջ կայ առաջին, միջին, վերջին, ինչպէս զինուորների [դէպքում], իսկ անթիւը խոտանն ու անկարգն է, ինչպէս ծերերի եւ երեխաների [դէպքում]:

ԾԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ ծերերին չհամրեց:

Պատասխան. Նախ, որովհետեւ ծերը եւ երեխան պակաս են զօրութեամբ. մէկը պակաս է՝ անկատարութեամբ, միւսը պակաս է՝ թերի լինելով: Եւ կամ ծերերը, կանայք, երեխաները չէին համրւում, որովհետեւ պակաս են արիութեամբ, իսկ գիտութեամբ պակասաւորները, կնատները, բղջախոհները Աստծոյ զինուորների շարքում չեն կարգւում:

Եւ տե՛ս, որ այս պատճառով է ծեր հասակի անպատիւ լինելը:

Նախ, որ չի մտնում թուարկման մէջ: Երկրորդ՝ ծերերի գինը պակաս հրամայեց նշանակել, որովհետեւ հնգամեայ երեխան երկդրամեան գնահատուեց, քսան տարեկանը՝ քսան երկդրամեան, այդտեղից մինչեւ վաթսուն տարեկանը՝ յիսուն երկդրամեան, իսկ վաթսունից յետոյ՝ տասնհինգ երկդրամեան: Երրորդ՝ ծերունու մէջ քայքայուած են տարրերը եւ առողջութիւնը: Չորրորդ՝ զօրութեամբ նուազած են տեսողութիւնը, լսողութիւնը եւ այլ: Հինգերորդ՝ որովհետեւ պակասել են կենաց տարիները եւ մօտ է վախճանին: Վեցերորդ՝ որովհետեւ մեղքն է մարդուց հեռացած եւ ոչ թէ՝ մարդը մեղքից: Եօթներորդ՝ [ծերի] միտքն է ախտը տանում դէպի չարը եւ ոչ թէ ախտը՝ մտքին, ինչպէս ասում է՝ ծերի մտածումները քարեր են պատռում[394]:

Ութերորդ՝ պակասուժ է եւ պակասամիտ, ինչպէս երեխան, որովհետեւ կենաց անիւը թեքուած է դէպի մանկութեան ծայրը: Իններորդ՝ որովհետեւ մեր տարիների թեփն է, իսկ սպիտակ ալիւրը՝ երիտասարդութիւնն էր: Տասներորդ՝ ծուլացած է եւ ծանրացած՝ առաքինութիւնները՝ պահք, աղօթք եւ այլն, կատարելու մէջ, որի պատճառով մարգարէն աղերսում է Տիրոջը, թէ՝ «Տէր, մի՛ լքիր ինձ ծերութեան ժամանակ, իմ զօրութիւնը պակասելիս մի՛ թող ինձ» (Սղմ. Հ 9):

Իսկ ծերութեան առաւելութիւններն են. նախ՝ խափանուած են մեղքի պատճառ հանդիսացող շարժումները: Երկրորդ՝ որքան երկարացած է ժամանակը, այնքան խորն է իմաստութիւնը: Երրորդ՝ կարող է դառնալ ուրիշների խրատատու՝ ունենալով մեծ փորձ: Չորրորդ՝ ծե-

րութիւնը պատկառելի տեսքով է, որ Ծերունու օրինակն է[395]: Հինգերորդ՝ անխառն է եւ պարզ առաքինութեան մէջ, ըստ այդմ՝ «իմ ծերութիւնն առատ պարարտ ձէթով» (Սղմ. ՂԱ 11): Վեցերորդ՝ որովհետեւ հասել է կեանքի աւարտին: Եօթներորդ՝ ազատուել է ախտերից եւ աշխարհի ախտաւոր սիրուց: Ութերորդ՝ դէմքով դարձրել է դէպ Աստուած, իսկ թիկունքով՝ աշխարհին: Իններորդ՝ մօտ է տեսնում մահուան օրը եւ աչքի առաջ՝ թշնամուն ու նախապատրաստւում է: Տասներորդ՝ ծերանալով եւ նուազելով՝ մի ոտքը գերեզման է դրել:

Սրանք բոլորն ահա ծերութեան պատիւներն են:

ՄԱՐԴՈՒ ՀԱՍԱԿԻ ՄԱՍԻՆ

Հարց. Մարդը քանի՞ հասակ ունի:

Պատասխան. Ոմանք ասում են եօթ՝ ըստ եօթանասուն տարիների: Դրանք են. երեխայութիւնը, մանկութիւնը, պատանեկութիւնը, երիտասարդութիւնը, ալեւորութիւնը, ծերութիւնը, իսկ երեխան դեռածինն է, մանուկը՝ եօթնամեան, դեռահասը՝ տասնչորսամեան, պատանին՝ քսանամեան, որը կրկնապատկեց տասը, երիտասարդը՝ երեսնամեան է, իբրեւ թէ հասանք լրման եւ հասուն սահմանի: Մնացածը յայտնի են:

Իսկ ուրիշները բաժանում են երեքի՝ առաջին, միջին, վերջին, որոնք են՝ երեխան, կատարեալը, ծերը:

Առաջինը՝ մինչեւ քսան տարեկանը՝ երեխան է:

Երկրորդը՝ մինչեւ յիսուն տարեկանը՝ կատարեալ հասակը:

Եւ այդտեղից մինչեւ եօթանասուն տարեկանը՝ վերջին եւ ծերութեան հասակը:

Եւ յիսունը յոբելեան է եւ ազատութիւն, որովհետեւ այդ տարիքում մարդն ազատւում է ախտերից եւ աշխարհի ախտաւոր սիրուց ու դառնում դէպ Աստուած:

Ուրիշներն էլ չորսի են բաժանում ըստ տարրերի եւ գիշերուայ չորս մասերի, ինչպէս ասուել է ԺՁ գլխի ԻԳ համարում:

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԶ

Հարց. Ինչպէ՞ս բանակ դրեցին տասներկու ցեղերը:

Պատասխան. Բոլորն, ովքեր անցան փորձութեամբ, վեց հարիւր հազար, որ վաթսուն բիւր է եւ երեք հազար վեց հարիւր յիսուն էին: Իսկ տասներկու ցեղերը բանակեցին խորանի չորս կողմերում, որոնց մէջտեղում խորանն էր՝ [շրջապատուած] ղեւտական ցեղով:

Արեւելեան կողմից բանակում էր երեք ազգ՝ Յուդայի, Իսաքարի, Զաբուղոնի, որոնց զօրքը կազմում էր տասնուութ բիւր եւ վեց հազար չորս հարիւր մարդ:

Հարաւային կողմում երեք ազգ էին. Ռուբէնի, Շմաւոնի, Գադի. սրանց զօրքը տասնհինգ բիւր եւ հազար չորս հարիւր յիսուն մարդ էր: Եւ սրանց մէջտեղում էր տեղաշարժւում խորանը:

Արեւմտեան կողմում, որ ծովահայաց էր, միւս երեք ազգն էին՝ Եփրեմի, Մանասէի եւ Բենիամինի. տասներկու բիւր եւ ութ հազար երկու հարիւր էր սրանց զօրքը:

Հիւսիսային կողմից էլ երեք ազգ էին՝ Դանի, Ասերի, Նեփթաղիմի. տասնհինգ բիւր եւ հազար վեց հարիւր էր սրանց զօրքը:

Իսկ ղեւտացիք խորանի շուրջն էին բանակել՝ տասներկու ցեղերի մէջտեղում եւ խորանը շրջապատել էին այսպէս: Քանի որ Ղեւին երեք որդի ունէր՝ Գեթսոնը, Կահաթը, Մերարին, Գեթսոնի գունդը արեւմուտքից էր, Մերարինը՝ հիւսիսից, Կահաթինը, որ քահանաների ցեղն էր՝ հարաւից, ինչը նշանակում էր, թէ «Աստուած հարաւից է գալու», թագաւորի եւ քահանայի ցեղից, որովհետեւ Բեթղէհէմը Երուսաղէմից հարաւ է: Իսկ Մովսէսը, Ահարօնը, միւս քահանաները արեւելեան կողմում էին, որտեղ Սրբութեան սրբոցի երկրպագութեան վայրն էր:

Հարց. Ինչո՞ւ կոչուեց ժամի վրան:

Պատասխան. Երեք պատճառով:

Նախ՝ որովհետեւ պիտանի էր միայն այն ժամանակի համար, քանի դեռ անապատում էին: Երկրորդ՝ որովհետեւ միայն ժամերգութեան եւ աղօթքի համար էր այդ խորանը եւ ոչ մի ուրիշ բանի: Երրորդ՝ որ ժամին, որ Մովսէսը մտնում էր աղօթքի եւ խնդրելու, աստուածախօս էին լինում այն քերովբէները, ովքեր ներկայ էին այնտեղ:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ծէ

Հարց. Հին քահանաները ինչպէ՞ս էին ներկայացնում նոր քահանայութեան աստիճանները:

Պատասխան. Նախ՝ Ղեւիի երեք որդիները՝ Գեթսոնը, Կահաթը, Մերարին, օրինակ էին նորի երեք դասերի, որոնք են քահանայապետութիւնը, քահանայութիւնը եւ սարկաւագութիւնը:

Երկրորդ՝ նրանց երեք իշխանները՝ Եղիազարի գլխաւորութեամբ երեք պաշտօնեաների դասերն են՝ քահանայի առաջնորդութեամբ, այսինքն՝ սարկաւագները, դպիրները եւ կղերը:

Երրորդ՝ Ղեւիի երեք որդիները ութ գնդերով էին, իններորդը Մովսէսն էր, ինչպէս կաթողիկոսը:

Չորրորդ՝ Գեթսոնի ազգի մարդիկ դռնապան էին, Մերարինը՝ երդուեցնողներ՝ Իթամար քահանայի գլխաւորութեամբ, Կահաթի գունդը՝ աւագ պաշտօնեաներ, որովհետեւ նրանք, ովքեր առաջաւորութեան հացեր էին դնում սեղանի վրայ, սարկաւագներ էին. նրանք, ովքեր խունկն էին դնում, դպիրներ եւ ընթերցողներ. աշտանակ դնողները ջահընկալներն էին, իսկ Սրբութեան սրբոցի [սպասաւորները] քահանայապետեր եւ քահանաներ էին:

Եւ Սրբութիւնը երեք գոյնով էր ծածկւում. կապոյտը նշանակում էր Քրիստոսի յայտնութեան խորհուրդը, ծիրանին՝ թագաւորութիւնը, կարմիրը՝ փրկութիւնն արեամբ:

Հարց. Ինչո՞ւ բոլոր քահանաները քսանհինգում էին ձեռնադրում:

Պատասխան. Որովհետեւ աշխարհիկ զինուոր քսանամեայ տարիքում էին դառնում, իսկ հոգեւոր զինուորը՝ հինգ տարով աւելի՝ հինգ զգայարանների համար, որ մինչեւ յիսուն տարեկանը կատարէր իր բոլոր գործերը եւ ապա դադարէր:

Իսկ նորում քահանայի կատարեալ տարիքը երեսունն է համարւում՝ ըստ Քրիստոսի մկրտութեան հասակի: Եւ մինչեւ վաթսուն տարին քահանայութիւն են անում, ինչպէս կանոնել են սուրբ հայրերը:

Հարց. Ո՞րն էր հին քահանաների օրհնութիւնը:

Պատասխան. Կապելու եւ արձակելու իշխանութիւնը, ինչպէս որ առաքեալներին տուեց: Այդպէս էլ իրաւունք տուեց կապելու նզովքի թղթով եւ օրհնութեամբ ժողովրդին արձակելու:

Եւ այսպէս էին օրհնում. «Թո՛ղ օրհնի քեզ Տէր՝» Հայրը.

«Ցոյց տայ իր երեսը» Որդին.

«Եւ պահպանի խաղաղութեան մէջ» Սուրբ Հոգին:

Նաեւ՝ Իսրայէլինը հնում օրհնութիւն էր, նորում քրիստոնեաներին երեւալը, խաղաղութիւնը միւս անգամ՝ գալստեան ժամանակ: Այս էր հայցում մարգարէն. «Աստուած մեր, ողորմի՛ր եւ օրհնի՛ր մեզ, ցոյց տուր քո երեսը մեզ եւ ողորմի՛ր մեզ» (Սղմ. ԿՁ 2): Իսկ այժմ ասում ենք. «Օրհնեալ լինէ՛ք Սուրբ Հոգու շնորհներով»:

ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ սպանեց եգիպտացիների անդրանիկներին եւ ընտրեց իսրայէլացի անդրանիկներին, ապա այդ էլ փոխեց եւ ընտրեց ղեւտացիներին:

Պատասխան. Եգիպտոսի անդրանիկներին սպանելը նշանակում էր երկնքից սատանայի ընկնելը, որի փոխարէն ընտրուեց եւ անդրանիկ որդի կոչուեց Իսրայէլը, ապա սրանց փոխարինելով՝ ընտրեց քրիստոնեաների օծուած դասին:

Դարձեալ՝ զղջմամբ սատկում է չարի խորհուրդը, ապա խոստովանում ենք լեզուով եւ դրա փոխարէն բարի գործ կատարում:

Սա էր անդրանիկներին փոխելու խորհուրդը:

Հարց. Տասը հարուածներ հասցրեց Եգիպտոսին, ինչո՞ւ միայն անդրանիկների փոխարէն փոխհատուցում պահանջեց:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ այլ հարուածների փոխարէն տառապանքներ կրեցին Եգիպտոսում, իսկ անդրանիկներինը մնացել էր:

Նաեւ ցոյց է տալիս, որ արեան փոխհատուցումը պահանջում է մարդկանցից, ինչպէս օրէնքն էր հաստատում. «Անձի փոխարէն անձ, անասունի փոխարէն՝ անասուն» (Ղեւտ. ԻԴ 17-18):

ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ էր նշանակում երեք օր առաջ տապանակի չուելը՝ հանգստեան վայր գտնելու համար:

Պատասխան. Տապանակը մեր Տէր Յիսուս Քրիստոսն է, որ նախընթաց եղաւ՝ մեզ ասելով. «Գնամ եւ ձեզ համար տեղ պատրաստեմ» (Յովհ. ԺԴ 3):

Իսկ երեք օրը նրա երեք գոյացութիւններն էին, այսինքն՝ աստուածութիւնը, հոգին, մարմինը՝ միաւորուած մի անձի մէջ: Երկրորդ՝ խաչելութիւնը, մահը, յարութիւնը, որոնք երեք օր տեւեցին: Երրորդ՝ այն, որ Երրորդութեան հաւատի լոյսով ենք առաջնորդւում կեանքում: Չորրորդ՝ երեք օր զղջալով, խոստովանելով եւ փոխարինելով հանգստանում ենք: Հինգերորդ՝ հանգստանում ենք մեր կեանքում, յետմահու եւ յարութեամբ:

Հարց. Ի՞նչ էր նշանակում եօթ բանակների չուելը. նախ՝ տապանակի, ապա նրանից յետոյ մնացածի:

Պատասխան. Այն, որ եկեղեցին քահանայութեան եօթ դասեր ունի, որոնք բաժանւում են քահանայապետի ու քահանաների եւ միւս պաշտօնավարողների խմբերի:

Դարձեալ առաքեալը հրեշտակների եօթ դասեր է թուարկում Եփեսացւոց թղթում, որովհետեւ Աթոռները, Քերովբէները, Սերովբէները հաւասարապատիւ են, եւ մէկ դաս է համարում, իսկ վեցը՝ նրանցից յետոյ (տե՛ս Եփես. Ա 21):

ԼՐՏԵՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԸ

Հարց. Ի՞նչ էին խորհրդանշում տասներկու լրտեսները:

Պատասխան. Տասներկու լրտեսներից տասը չար լուր բերեցին, իսկ երկուսը աւետիս տուեցին երկրի բարիքների լիութեան մասին, ինչպէս որ հոգու եւ մարմնի տասը զօրութիւնները անգիտակից եւ երկրասէր են, իսկ միտքը եւ կամքը՝ բարեսէր են:

Կամ Քաղեբը եւ Յեսուն հին եւ նոր կտակարաններն են, որոնք մեզ հանդերձեալի եւ անմարմին թշնամուն յաղթելու մասին են պատմում, իսկ մնացած տասը՝ իմաստասէրների գործերն են, ինչպէս Պլատոնի, Արիստոտէլի, Պիւթագորի եւ միւսների, որոնք միայն այս կեանքի մասին են մեզ պատմում:

Եւ երեք պտուղ էին՝ խաղողի ողկոյզը, նուռը, թուզը:

Խաղողի որթը՝ Կոյսն է Յեսուի արմատներից, ողկոյզը՝ նրանից ծնուած մեր Տէրը, իբրեւ խնդագին կերակուր մեզ համար. որթը եւ լծակները՝ խաչը, որի հնձանի վրայ ճմլուեց ողկոյզն անապական եւ եղաւ ուրախարար գինի հոգով տրտմածների համար:

Իսկ նուռը բժշկարար է եւ դառնակեղեւ, որովհետեւ հոգու բժշկումը դառնութիւն է պատճառում մարմնին:Եւ հանդերձեալ կեանքը այստեղ դառնութեամբ ենք ձեռք բերում: Նաեւ՝ բոլոր կոյսերն ու մարտիրոսներն են նուռը:

Իսկ թուզը՝ քաղցր եւ մանրակորիզ, Աստծոյ քաղցր խօսքերն են, որ մեզ մանրաքնին զննում է, եւ ցոյց է տալիս, որ բազմազան են մեր առաքինութիւնները քաղցրութեամբ հանդերձ: Այլեւ գործերի թիւն ու չափն են, որ պահանջուելու են մեզանից Աւետեաց երկրում:

Հարց. Ի՞նչ է տրտնջալն ու ի՞նչ բամբասանքը:

Պատասխան. Տրտունջը դժգոհութիւնն է, իսկ բամբասանքը՝ ուրիշներին չարախօսելը:

Եւ երեք կարգի է տրտունջը, այսինքն՝ կարիքից դրդուած, փորձութիւնից եւ չարագոյն:

Կարիքից եղածն իր ունեցած պակասութիւնների պատճառով է:

Փորձութեանը, այսինքն՝ եթէ այսպէս անես, կլսենք, եթէ չանես, չենք լսի:

Չարագոյնը՝ հայհոյութեամբ տրտնջալն է:

Առաջինը աղքատների կողմից է:

Երկրորդը՝ վարձկանների:

Երրորդը՝ թշնամիների:

Եւ այս բոլորն էլ լսւում էին ժողովրդի միջից:

ԿՈՐԽԻ ԵՒ ԴԱԴԱՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԹ

Հարց. Ինչո՞ւ Կորխը եւ Դադանը խորտակուեցին (տե՛ս Ելք Զ 16-21, Թիւք ԺԶ):

Պատասխան. Կորխը Ղեւիի ազգից էր եւ քահանայութիւն էր ուզում:

Դադանն ու Աբիրօնը Ռուբէնի որդիներն էին, որոնք իշխանութիւն էին պահանջում, քանի որ անդրանիկներ էին:

Արդ, քահանայութիւնը երկնային իշխանութիւն է, ուստի Կորխը երկնքի հրով այրուեց, իսկ քանի որ իշխանութիւնը երկրաւոր է, ուստի երկիրը ճեղքուեց եւ կլանեց Դադանին:

Եւ քահանաների մեղքը շարժում է երկինքը, ինչպէս երկրաւոր իշխաններինը՝ երկիրը: Ինչպէս Առակն է ասում՝ «Չորս պատճառով է շարժւում երկիրը, երբ մանուկն է թագաւորում» (Առակ. Լ 21-22) եւ այլն:

Դարձեալ՝ քահանայութիւնը հրեշտակային կարգ է, ուստի պէտք է սրբութեամբ պահել, իսկ երբ չեն պահում, հրեշտակները զայրացած՝ հրով այրում են կա՛մ մարմինը կա՛մ հոգին: Իսկ Դադանը քրէօրէն մեղանչեց, այսինքն՝ յանցանք գործեց թագաւորի դէմ, որի համար անտանելի պատուհասի են ենթարկւում ու բնաջնջւում գոյութեամբ եւ ազգով:

Եւ որքան առաւել [պատժի էին արժանի] նրանք, ովքեր մեղանչեցին Աստծոյ եւ Մովսէսի դէմ, որ ժողովրդի աստուած եւ իշխան էր կոչւում:

Հարց. Ինչո՞ւ կորխեանները մաքրուեցին հոգով, իսկ դադանեանները, կենդանի գերեզման իջնելով՝ տանջուեցին:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ Դադանը քրէօրէն մեղանչեց, ուստի եւ դառնօրէն տանջուեց, իսկ Կորխը մեղանչեց քահանաների դէմ:

Ուրիշներն էլ ասում են, թէ կորխեանները այրուեցին մարմնով, ուստի եւ հոգով մաքրուեցին նաեւ նրանց բուրվառները: Իսկ Դադանը կենդանի դժոխք իջնելով՝ չմաքրուեց եւ սուզուեց իր անսուրբ ախտերով:

Իսկ որ ճշմարիտն է, Կորխը զղջման օրինակ ցոյց տուեց, որովհետեւ լսեց

Մովսէսի խրատը եւ մնաց Աստծոյ ընտրեալների մէջ՝ խորանի դռան առաջ: Իսկ Դաղանը բոլորովին անզեղջ մնաց ու թէպէտ Մովսէսը գնաց նրանց խորանը, չզղջացին: Եւ չնայած երկար սարսափազդու խօսքով խրատեց, չլսեցին, ուստի եւ չմաքրուեցին:

Ուրիշներն էլ ասում են դաղանեաների մասին, որ սրանց հոգիները եւ մարմինները տանջարանում էին, ուր ընկղմուեցին մինչեւ դժոխքի ցրուելը, Քրիստոսը նրանց ազատեց՝ իջնելով դժոխք, ըստ այդմ՝ «Արիութեամբ հանում է շղթայուածներին եւ դառնացողներին, որոնք բնակւում են գերեզմանում» (Սղմ. Կէ 7):

ԾԱՂԿԱԾ ԳԱՒԱԶԱՆԻ ՄԱՍԻՆ
(տե՛ս Թիւք ժէ 8)

Հարց. Ինչո՞ւ է որպէս ընտրեալի նշան բուրվառ եւ գաւազան տալիս:

Պատասխան. Բուրվառը Ահարոնի օրինակն էր, գաւազանը՝ Մովսէսի:

Երկրորդ՝ երկուսն էլ դարձեալ Ահարոնի, որովհետեւ ոսկեայ բուրվառը մաքուր քահանայութիւնն էր ցոյց տալիս, իսկ գաւազանը՝ իշխանութիւնը:

Երրորդ՝ որովհետեւ բուրվառով Աստծուն էր նուիրաբերում, իսկ գաւազանով շնորհներ պարգեւում ժողովրդին:

Չորրորդ՝ բուրվառը աղօթք է մեռեալների համար, գաւազանը՝ խրատ՝ ողջերի:

Սրանք են քահանաների գործերը:

Իսկ ծաղկած գաւազանը չորս յաւելեալ յատկանիշներ ունի. դալարում է, ընձիւղներ, ծաղիկ եւ ընկոյզ պտուղ ունի:

Նախ՝ որ տեղով ցոյց էր տալիս քահանաների լինելն Ահարոնից՝ որդիներով եւ թոռներով՝ ազգից ազգ: Երկրորդ՝ Կոյս Մարիամը Յեսուի ցեղից էր, որ յղացաւ եւ ծնեց Բանն Աստծուն՝ մարմնով: Երրորդ՝ Աստուածընկալ սուրբ խաչը դալար է զօրութեամբ, ընձիւղները թեւերն են, պտուղը՝ Քրիստոսը՝ ծաղկած արեամբ եւ ջրով: Չորրորդ՝ քրիստոսանուէր ժողովուրդն է՝ դալարացած մեղքերից, ընձիւղուած ծնունդներով, ծաղկած եւ պտղաբերուած հաւատով: Հինգերորդ՝ ըստ Փիլոնի, գաւազանն իմաստութիւնն է՝ դալարած մտքով եւ ծաղկած ուսմամբ, իսկ պտուղը ուսուցանած աշակերտները:

Իսկ այն, որ տասներկուսն էին ցեղերի իշխանների գաւազանները եւ Ահարոնինն էլ՝ տասներեքերորդը, ցոյց է տալիս տասներկու վիճակների առաքեալներին եւ Քրիստոսին նրանց մէջ եւ կամ՝ տասներկու արքեպիսկոպոսներին ու կաթողիկոսին նրանց մէջ, իսկ արքեպիսկոպոսները տասներկու գաւազան ունեն:

Իսկ այն, որ Մովսէսն ու Ահարոնը խորանից բերեցին ծաղկած գաւազանը, նշանակում էր, որ «Սիօնից են ելնելու օրէնքները» (Ես. Բ 3), որ եկեղեցու բովանդակ իշխանութիւնն է:

Այս խորհրդով է, որ վարդապետների գաւազանը եկեղեցուց դուրս ենք բերում զարդարուած:

ԵՐԻՆՋՆԵՐԻ ՄՈԽՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Կ

Հարց. Ի՞նչ էր խորհրդանշում անարատ եւ լուծ չկրած կարմիր երինջը:

Պատասխան. Կարմիր երինջը խորհրդանշում էր սուրբ Կոյսին[396]:

Կարմիրը նախ Կոյսի ողջախոհութիւնն էր:

Երկրորդ՝ սէրն առ Աստուած:

Երրորդ՝ անթառամ կուսական գեղեցկութիւնը:

Չորրորդ՝ դեղձան մազերը, անարատ մարմինը, այն անբիծ հոգին, որ մեղքերի լուծ չունէր՝ ո՛չ սկզբնականից, որովհետեւ արգանդից արդէն մաքրուած էր[397], ո՛չ ներելի, որովհետեւ հոգով մաքրուեց, ո՛չ էլ մահացու, որովհետեւ անապական Կոյս էր: Եւ նա ծնեց պարարակ եզին, որ ողջակիզուեց յանուն մեզ քաղաքից դուրս, տաճարի դիմաց: Եւ խաչօղներն անմաքուր էին մինչեւ հին օրէնքի երեկոյանալը եւ նորի ծագելը, որից յետոյ մաքրուեցին աւազանով եւ խոստովանեցին Քրիստոսին:

ԱՒԵԼՈՐԴ ՀՈՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է կղանքը:

Պատասխան. Կղանքը չկայ ճշմարտութեան, ինչպէս օրինակի մէջ:

Նախ՝ որովհետեւ Աստուածութեան հուրը կիզում էր նրան, ինչպէս ջուրն է ապակու մէջ արեւի տապից պակասում:

Երկրորդ՝ որովհետեւ քրտինքը հոսում էր:

Երրորդ՝ մարմինը հասունանում էր, եւ ոչինչ չէր աւելանում կերածից:

Չորրորդ՝ ինչպէս որ ցանկութեան աւելորդը չունէր, նոյնպէս եւ կերակրի:

Իսկ կղանքը մեր մեղքն է, որ իր վրայ վերցրեց եւ մաքրեց մեզ:

Իսկ այն, որ ասում են, թէ Քրիստոս կրեց անարգ կրքերը, ապա ասենք, որ կրքերը բաժանւում են չորսի՝ կամաւոր, ակամայ, անարգ, ոչ անարգ: Սրանք բոլորը մենք ունենում ենք: Իսկ Տէրը մարդեղութեան ակամայ կրքեր չկրեց, որովհետեւ ակամաև Աստծուց հեռու է: Եւ հարկադրանքովը նոյնպէս: Չկրեց նաեւ անարգը, որը մեղքի տեսակ է, իսկ Տէրը մեղք չի գործել: Ուրեմն պարզ է, որ կրեց կամաւորը, ոչ անարգը, ինչպէս քաղցն ու ծարաւը: Իսկ աւելորդ հոսումները թէպէտ անարգ չեն, այլ ակամայ, սակայն դրանք էլ չկրեց: Եւ եթէ աշակերտների թիկունքին մէկ անգամ հպուելով՝ մաքրեց այդպիսի կրքերից, որքան առաւել եւս ապականութիւնը վերացնելուց յետոյ ազատ կդարձնի այդպիսի կրքերից:

Հարց. Ինչո՞ւ էին մոխրով մաքրւում (տե՛ս Թիւք ԺԹ 1-10):

Պատասխան. Մոխրով, այսինքն՝ ոչնչով:

Նախ՝ երբ ճշմարտութեանն են գալիս, ընդունում են, որ Քրիստոսի արիւնն է, ինչպէս ասում է Պօղոսը՝ «Եթէ ցուլերի եւ նոխազների ու երինջների մոխիրը մաքրում էր պղծուածներին, որքա՜ն առաւել եւս Քրիստոսի արիւնը» (Եբր. Թ 13):

Եւ մոխիրն ու ջուրը ցոյց էին տալիս արտասուքն ու խոնարհութիւնը, որոնցով ապաշխարելիս մաքրւում ենք:

Հարց. Եթէ երնջի մոխիրը մաքրում էր, ինչո՞ւ նրան մօտեցողը պէտք է պղծուէր:

Պատասխան. Երինջն ըստ ընդունուած կարգի, կրում էր ժողովրդի մեղքերը եւ Քրիստոսի խորհրդի օրինակով մաքրագործում էր, որի պատճառով էր ջուր ցանողը պղծւում էր, իսկ ում վրայ ցանւում էր, մաքրւում էր:

Այդպէս էլ նորում խոստովանողը մաքրւում է, ընդունօղը՝ պղծւում, որի պատճառով նա եւս պէտք է խոստովանի, ինչպէս կանոնում են հայրերը:

Հարց. Սրբութեան երեք ջրերն ի՞նչ են խորհրդանշում նորում:

Պատասխան. Առաջինը՝ աւազանի ջուրը, որով լուանում էին մարմինները, մեր սուրբ աւազանի ջուրն է:

Երկրորդ՝ հանդերձները լուանալու ջուրը [նորում] խոստովանութիւնը եւ մեղքերի թողութիւնն է:

Երրորդ՝ մշտիկի ցանելու ջուրը՝ աջի տարածումն է եւ ժողովրդի օրհնութիւնը Սուրբ Հոգու շնորհներով, երբ ձեռքը դնում են մեղանչածի գլխին:

Առաջին ջուրը սրբում է առաջին մեղքը:

Երկրորդը՝ ներգործող մահացուն:

Երրորդը՝ ներելին:

Հարց. Ի՞նչ էր նշանակում երրորդ եւ եօթներորդ օրերին մաքրուելը, եւ եթէ երրորդ օրը չէին մաքրւում, ապա չէին մաքրւում եւ եօթներորդ օրը:

Պատասխան. Բազում են իմաստները:

Նախ՝ երեք օրը հաւատալն է Սուրբ Երրորդութեանը եւ ապա եօթ զգայարանների մաքրութեամբ գործերը:

Երկրորդ՝ մկրտութեան երեք օրերը, որովհետեւ մկրտութիւնն ունենում է հրաժարուելու, դաւանելու եւ մաքրուելու [մասեր], եւ ապա եկեղեցու եօթ խորհուրդները:

Երրորդ՝ նախ խոստովանութեան զղջումը եւ թողութիւնն են, ապա ապաշխարութեան զանազան գործերը:

Չորրորդ՝ եթէ մինչեւ օրէնքները, օրէնքների մէջ եւ օրէնքներից յետոյ չենք արդարացել, ապա կենաց եօթներորդ շրջանում ոչ ոք չի արդարանալու:

Հինգերորդ՝ եթէ չենք արդարանում մեր երեք հասակներում, ապա եօթներորդ հասակում էլ չենք արդարանայ, որի ժամանակ մարմինը քայքայուած՝ ծանրանում է:

Հարց. Երբ խոստովանում են գողացուածը, ինչո՞ւ է ասում մէկ խոյ նուիրել Աստծուն:

Պատասխան. Գողութեան մեղքը միայն խոստովանելով չի քաււում, այլեւ պէտք է հատուցել գողութեան փոխարէն՝ կամ տիրոջը կամ նրա ազգականներին, կամ էլ քահանային, որը միջնորդ է մեռեալների եւ ողջերի: Եւ հինգից մէկ բաժինը տուգանք է տրւում, որովհետեւ մեղանչել է հինգ զգայարաններով: Եւ խոյ են նուիրում Աստծուն, որովհետեւ մեղանչեց նոր օրէնքի դէմ: Եւ խոս-

տովանութիւնը՝ եկեղեցու բաժինն է, որովհետեւ նրա կանոնները խախտեց:

Եւ տե՛ս խոստովանութեան շնորհը, քանի որ զղջաց եւ խոստովանեց, հինգից մէկն է տուգանք տալիս, իսկ եթէ չխոստովանէր, գողութեան չորս կամ հինգ մասն էր մուծելու:

Այդպէս էլ նորում պէտք է խոստովանել եկեղեցու կանոնների համար եւ գողացուածը վճարել կա՛մ Տիրոջը, կա՛մ քահանային, կա՛մ աղքատներին: Իսկ տուգանքի հինգերորդ մասը եւ խոյը ցոյց են տալիս, որ հինգ զգայարաններով ապաշխարում ենք, որովհետեւ պահքն ու աղօթքը Աստծոյ խոյն են, իսկ ողորմութիւնը՝ տուգանքը: Եւ ողջ ապաշխարութիւնը սրանցով է կատարւում:

ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԿԱ

Հարց. Ի՞նչ էր, որ ակամայ մեղանչողին քաւել էր տալիս զոհաբերութեամբ, իսկ կամաւոր յանցագործին՝ ժողովրդի կողմից սպանել էր տալիս:

Պատասխան. Ակամա անգիտութեամբն է, որ ներելի է եւ թողելի, իսկ կամաւորը՝ անթողելին ու մահու չափ ծանրը, որի մասին ասում է նաեւ առաքեալը. «Կամաւոր մտքով մեղանչողը ոչ թէ մեղքերի համար զոհաբերութիւն պէտք է անի, այլ ակնկալի Ահեղ դատաստան» (Եբր. Ժ 27) եւ այլն:

Եւ երեքն են ներելի մեղքերը:

Նախ՝ իբրեւ այդպիսին ներելի եւ փոքր են դատարկաբանելն ու յիմար-յիմար խօսելը:

Երկրորդ՝ ներելի մեղք է նաեւ անգիտութեամբ եւ ակամայ գործածը, ինչպիսին մանկութեան եւ չիմացութեան մեղքերն են:

Երրորդ՝ երբ խոստովանում եւ ապաշխարում է, դառնում է ներելի եւ ակամայ, որովհետեւ եթէ մինչեւ մեղանչելն էր ակամայ, եւ մեղքն էլ անկախ իր կամքից է եղել, զղջմամբ ներւում եւ թողութիւն է տրւում:

Երեքն են նաեւ աններելի մեղքերը:

Նախ՝ աններելի է, եթէ մեղքը ստոյգ չարութեամբ է արւում, այսինքն՝ գիտակցուած, դիտաւորեալ, ուժի գործադրմամբ:

Երկրորդ՝ որ անզեղջ է մնում ու չի խոստովանւում, աններելի է:

Երրորդ՝ ներելին ու փոքրը, եթէ չեն ապաշխարում, դառնում են մահու չափ աններելի:

Իսկ երկու զոհաբերութիւնները [կատարւում են] մէկը ողջ ժողովրդի, միւսը՝ անձի ակամայ [գործած մեղքի համար] եւ խորհրդանշում են երկու խոստովանութիւնները. մէկն արւում է բացայայտ, ընդհանրապէս եկեղեցում, միւսը ծածուկ, առանձին՝ մեղքերի համար:

Իսկ քարկոծելը նշանակում էր, որ նա, ով չի խոստովանում, արտաքսւում է եկեղեցուց եւ անիծւում:

ՎԷՄԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՒՄ ԷՐ ՔՐԻՍՏՈՍԻՆ
Պրակ ԿԲ

Հարց. Ինչո՞ւ էր տապանակը ժողովրդի առջեւից ընթանում, իսկ վէմը՝ հետեւից (տե՛ս Ելք Ժէ, Թիւք Ի):

Պատասխան. Տապանակը Քրիստոսն էր, որ կրում էր տախտակների օրէնքները: Եւ վէմն էլ Քրիստոսն էր՝ ըստ առաքեալի (տե՛ս Ա Կորնթ. Ժ 4):

Եւ բազում են իմաստները:

Նախ՝ ցոյց էր տալիս, թէ Քրիստոսն է սկիզբն ու վերջը եկեղեցու ոչ միայն աստուածութեամբ, այլեւ՝ մարդեղութեամբ:

Երկրորդ՝ պահպանում է առաջին ու վերջին թշնամիներից, որոնք սատանան ու մեղքն են:

Երրորդ՝ առաջնորդում է մեզ աշխարհ մտնելիս եւ ելնելիս, ըստ այդմ՝ «Տէրը կպահպանի քո մուտքն ու ելքը» (Սղմ. ՃԻ 8):

Չորրորդ՝ նախ օրէնքը [եղաւ], ապա՝ [վէմի] ջուրը, որովհետեւ նախ հոգով է խնամում, ապա՝ մարմնով:

Հինգերորդ՝ առաջ տապանակն էր գնում հանգստի վայր գտնելու, իսկ յետոյ վէմը ջուր էր տալիս, որովհետեւ հիմա հանգիստն է նախապատրաստում, իսկ յետոյ վայելք է տալու:

Վեցերորդ՝ թէպէտ համբարձուեց երկինք, մեզ հետ է ամէն օր, ինչպէս [ինքն] ասաց (տե՛ս Մտթ. ԻԸ 20):

Եօթներորդ՝ նախ օրէնքն ենք կատարում, ապա մխիթարութիւն ստանում:

Ութերորդ՝ նախ օրինակն է, ապա՝ ճշմարտութիւնը:

Իններորդ՝ նրանք արդարացան գործերով, որ օրէնքն էր նախատեսում, իսկ մենք՝ հաւատով (տե՛ս Գաղատ. Գ 8), որ ցոյց էր տալիս հետեւում գտնուող վէմը:

Տասներորդ՝ տապանակը, տախտակները, մանանան եւ միւսները ցոյց էին տալիս Քրիստոսի առաջին գալուստը, իսկ աղբիւրացած վէմը՝ վերջինը՝ յաւիտենական կեանքը:

Հարց. Ինչպէ՞ս էր վէմը Քրիստոսը:

Պատասխան. Ինչպէս սափորը Կոյսն էր, գաւազանը՝ խաչը, այդպէս էլ վէմը՝ Քրիստոսը:

Եւ վէմ է կոչւում, որովհետեւ Ադամը նախ հող դարձաւ մեղք գործելով, իսկ Քրիստոս՝ վէմ՝ անմեղութեամբ: Երկրորդ՝ որովհետեւ կարծրացաւ աստուածութեամբ: Երրորդ, որովհետեւ անապական էր մարմնով: Չորրորդ, որովհետեւ հիմքն էր եկեղեցու: Հինգերորդ՝ որովհետեւ անկեան գլուխն էր (տե՛ս Ա Պետ. Բ 6, Եփես. Բ 20). սրանցով էր վէմ:

Եւ ջուր էր բխում. որովհետեւ նախ ջուր բխեց լուացուելու եւ խմելու համար, ինչպէս Փրկչի կողից՝ ջուրը եւ արիւնը: Երկրորդ՝ իբրեւ քարոզ տասներկու ազգերի: Երրորդ՝ [ի խորհուրդ] Սուրբ Հոգու, որ Քրիստոսով ծաւալուեց: Չորրորդ՝ կրկին շատրուանելը նշանակում էր, որ ոմանց տալիս է, ոմանց՝ մերժում, այսինքն՝ մաքուրներին եւ անմաքուրներին: Հինգերորդ, բխեց գաւազանի հարուածով, որովհետեւ իշխանութեամբ է բաշխում իւրաքանչիւրին:

Հարց. Ինչո՞ւ բարկացած հարուածեց:

Պատասխան. Նախ, որովհետեւ կամենում էին քարկոծել: Երկրորդ՝ կարծում էին, թէ Մովսէսն է տալիս ջուրը: Երրորդ՝ տրտմել էր Մարիամի մահուան

պատճառով: Չորրորդ՝ որովհետեւ անհաւատ էին: Հինգերորդ՝ որովհետեւ Քրիստոս տանջուելու էր քահանաների ձեռքով: Վեցերորդ՝ Մովսէսը խորհրդանշում էր հին օրէնքը, որը բարկութեամբ էր բարութիւն անում: Եօթներորդ՝ կոչեցեալ աստուած էր (տե՛ս Ելք է 1), որ ցոյց տար մարդու տկարութիւնը: Ութերորդ, եթէ Փրկիչը տկարացաւ, երբ մարդ եղաւ, որքան առաւել եւս՝ սրբերը: Իններորդ, որ ցոյց տայ, թէ՝ Աստուած բարկացողներին չի երեւում, ինչպէս չերեւաց Եղիային: Տասներորդ՝ բարկութեամբ զրկուեց Աւետեաց երկրից, որպէսզի երեւայ, որ արդար է Աստուած եւ ոչ մէկի համար բացառութիւն չի անում. ով էլ յանցանք գործի, պատուհասուելու է, լինեն թէ՛ հրեշտակներ, թէ՛ մարդկանց միջից սրբեր:

ՊՂՆՁԷ ՕՁԻ ՄԱՍԻՆ
(տե՛ս Թիւք ԻԱ 4-9)
Պրակ ԿԳ

Հարց. Ինչո՞ւ էր ժողովրդին օձով հարուածում:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ Աստուած օձին հողը տուեց իբրեւ կերակուր, եւ սա չտրտնջաց, իսկ նրանց երկնքի մանանայ տուեց, սակայն տրտնջում էին եւ «խղճուկ հաց» անուանում (Թիւք ԻԱ 5), որի պատճառով Աստուած բարկացաւ եւ անբուժելի լարը արձակեց նրանց վրայ:

Երկրորդ՝ ըստ Փիլոնի, օձը ցանկասիրութեան օրինակն է[398], որով եւ սպանում էր ցանկասէր ժողովրդին, այսինքն՝ իրենց ախտին համապատասխան պատիժ տուեց: Իսկ Մովսէսն Աստծոյ հրամանով պղնձէ օձ պատրաստել տուեց եւ կանգնեցրեց խորանի դռանը, եւ ով նայում էր նրան, փրկւում էր օձի թոյնից:

Այս խորհուրդն իրենը դարձրեց Տէրը՝ ասելով. «Ինչպէս Մովսէսն անապատում կանգնեցրեց օձը, այդպէս էլ պէտք է բարձրանայ մարդու Որդին» (Յովհ. Գ 14): Որովհետեւ նախ, ինչպէս օձը բարձրացուեց ձողի վրայ, այդպէս էլ մեր Տէրը՝ խաչի վրայ:

Երկրորդ՝ ով նայում էր օձին, բժշկւում էր, եւ ով հաւատայ Խաչեալին, բժշկուելու է մահաբեր օձի թոյնից:

Երրորդ՝ հակառակատիպ գործեցին, որովհետեւ այնտեղ պղնձէ օձն իր թշնամի մարդկանց էր փրկում եւ օձերին՝ սպանում, իսկ մեր Տէրն իր ազգակից մարդկանց էր փրկում եւ թշնամի սատանային՝ հալածում:

Չորրորդ, պղինձը ոսկէտեսակ է, իսկ Տիրոջ մարմինը՝ աստուածատեսակ՝ փառքով ու գործերով:

Հինգերորդ, պղինձը չի փտում, անմահ է եւ Քրիստոսի մարմինն՝ անապական:

Վեցերորդ՝ առանց դառնութեան եւ թոյնի էր պղնձէ օձը, եւ մեր Տէրն էլ՝ առանց մեղքերի դառնութեան:

Եօթներորդ՝ անշունչ օձը սպանում էր օձերին, իսկ խայթուածներին փրկում էր: Եւ մեր Տէրն էլ մեռած մարմնով սպանում էր մեղքերը, իսկ կենդանի աստուածութեամբ մարդկանց կեանք էր տալիս:

Ութերորդ՝ օձի հինգ գալարը մեր հինգ զգայութիւններն են, որոնք առաւ Տէրը[399] եւ մաքրեց:

Իններորդ՝ գլուխը եւ պոչը ցասումն են, որից յետոյ տրտմութիւնն է, եւ ամէն մի մեղաւոր գործին հետեւում է տրտմութիւնը: Տրտմեց նաեւ Տէրը մինչեւ մահը (տե՛ս Մտթ. ԻՁ 38), որ վերացնի մեր տրտմութիւնը եւ զայրացաւ մահուան վրայ Ղազարի գերեզմանի մօտ:

Տասներորդ՝ ինչպէս ասում է Փիլոնը, օձը հեշտասիրութեան խորհրդանիշն է, ուստի սպանում էր ցանկասէր ժողովրդին՝ իրենց ախտին համապատասխան պատուհաս տալով[400]: Եւ Տէրն էլ արդար դատաստանով մեղքերին համախատասխան է պատժելու մեղապարտներին:

Օձի մասին տե՛ս նաեւ Եգիպտոսի հարուածների մասին քսաներորդ գլխի համապատասխան պրակում, իսկ առաջին օձի մասին տասնչորսերորդ գլխում, եթէ պէտք լինի:

Հարց. Ի՞նչ եղաւ պղնձէ օձը:

Պատասխան. Թէեսթան անուանեցին, այսինքն՝ «կաղապարով սարքուած արարած» եւ պաշտեցին: Եզեկիան սղոցեց, ինչպէս Մովսէսը հորթի գլուխը եւ ոչնչացրեց:

ԲԱՂԱԱՄ ՄՈԳԻ ՄԱՍԻՆ
(տե՛ս ԻԲ-ԻԴ)
Պրակ ԿԴ

Հարց. Ինչո՞ւ Բաղաամը եօթն անգամ մարգարէացաւ:

Պատասխան. Երկու պատճառով:

Նախ՝ որովհետեւ եօթ զոհաբերութիւններ արեց՝ եօթ արջառ ու եօթ խոյ մատուցեց, ուստի եօթ մարգարէութիւններ անելու շնորհ ստացաւ:

Երկրորդ՝ եօթ անգամ արժանացաւ Երրորդութիւնը տեսնելուն, երկու անգամ Հօրը՝ գիշերը, երկու անգամ Որդուն՝ ցերեկը, նրանց վրայ երկու անգամ Հոգի Աստծուն եւ մի անգամ էլ հրեշտակին: Եւ երկուական անգամ տեսաւ, որովհետեւ նախ երկուսն էր զոհաբերութիւնը՝ խոյ եւ արջառ: Երկրորդ՝ յանուն հոգու եւ մարմնի: Երրորդ, նշանակում էր ներկան եւ հանդերձեալը:

Հարց. Ինչո՞ւ տեսաւ Աստծուն:

Պատասխան. Բաղաամը մոգ էր ու կախարդ եւ սովոր էր դեւերի հետ խօսել, որի պատճառով Աստուած երեւաց ու խօսեց, որ նախ՝ այլեւս չխօսի դեւերի հետ եւ չուսուցանի չարը: Երկրորդ՝ հասկանայ, որ Աստծոյ զօրութիւնը բոլորից առաւել է: Երրորդ, որովհետեւ նրա մարգարէութեամբ բազմաթիւ հեթանոս ազգեր օգուտ ունեցան, քանզի նրանց մօտից եկան մոգերն ու երկրպագեցին Քրիստոսին:

Չորրորդ՝ որ իմանանք, թէ ոչ միայն բարութեամբ, այլեւ ոմանց չարութեամբ էլ Աստուած բարութիւն է գործում:

Հինգերորդ՝ քանի որ ուղիղ եւ առանձին էր ընթանում, տեսաւ Աստծուն, որ նշանակում է, թէ մեր ճշմարիտ ճանապարհին էլ կերեւայ Աստուած, իսկ խոտորուողին՝ ոչ:

Հարց. Էշն ինչո՞ւ խօսեց:

Պատասխան. Նախ՝ որպէսզի Բաղաամը չհպարտանայ, որովհետեւ էշն էլ տեսաւ հրեշտակին:

Երկրորդ՝ որպէսզի էշի միջոցով յանդիմանի նրա անմտութիւնը եւ թոյլ չտայ անօրէն արարքը, ինչպէս «Կաթողիկէ»-ում է ասւում (տե՛ս Բ Պետ. Բ 16):

Երրորդ՝ որովհետեւ ողորմեց Աստուած անբան կենդանուն, որ անողորմաբար չծեծէր, որովհետեւ ասում է. «Արդար այրը ողորմում է իր գրաստին» (հմմտ. Սիր. Է 24):

Հարց. Ինչո՞ւ ասաց՝ «մի՛ գնա», յետոյ ասաց՝ «գնա եւ մի՛ անիծիր»:

Պատասխան. Նախ՝ որպէսզի մեղաւորի բերանը չբացուի Աստծոյ ժողովրդի վրայ: Երկրորդ՝ որպէսզի չար խրատ չտայ: Երրորդ՝ որ ցոյց տայ, նրա խօսքի ոչ մի զօրութիւն չունենալը, որովհետեւ եթէ անիծէր, ժողովուրդը Բելբէքովրում կոտորուելու ժամանակ կասէր, թէ նրա անէծքից եղաւ:

Եւ անվիճելի է, որ նրա խօսքը զօրութիւն չունէր, որովհետեւ նախ բարկանալով էշի վրայ՝ կամենում էր սրով սատակել նրան. եթէ զօրութիւն ունէր, ինչո՞ւ խօսքով չսատկեցրեց:

Նրա խօսքը զօրութիւն չունէր նաեւ այն պատճառով, որ այդքան օրհնելուց յետոյ, ժողովուրդը չփրկուեց մահից եւ կոտորուեց: Ուրեմն ակնյայտ է, որ անօրէնի ոչ անէծքն ունի զօրութիւն, ոչ էլ օրհնութիւնը՝ շնորհ:

Հարց. Ի՞նչ են նզովքն ու անէծքը:

Պատասխան. Նզովքը զատորոշում է նշանակում, ըստ այդմ՝ «Կուզէի նզովեալ լինել յանուն իմ ազգի» (հմմտ. Հռոմ. Թ 3), իսկ անէծքը ոչնչանալն է, ըստ այդմ՝ «Ովքեր անիծեն, կոտորուելու են նրա ձեռքով» (Սղմ. ԼԶ 22):

Նզովքը մարմնին է վերաբերում, անէծքը՝ հոգուն:

Նզովքը մեր կողմից է, անէծքը՝ Տիրոջ, ըստ այդմ՝ «Տիրոջ անէծքը ամբարշտի տան վրայ է» (Առակ. Գ 33):

ԴԻՒԹՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Այստեղ նաեւ հարցնեմ. ովքե՞ր են դիւթողը, հմայողը, կախարդը եւ այլն:

Պատասխան. Դիւթողը գործում է ձեռքերով ու նիւթերով, ինչպիսիք գարին են, ալիւրը, աւազը, ջուրը, քարը եւ այն ամէնը, ինչ թզով է չափւում եւ այլն:

Հմայողը գուշակում է աչքի տեսիլքները կամ ձայնը, հաւքերի թռիչքն ու կռինչները, կրակի, հողերի կամ դռան ձայները, աքիս տեսնելով կամ բուէճ, կօշիկ կամ այլ այսպիսի բաներ:

Կախարդը նա է, որ հողում ինչ-որ անօթներ է թաղում, կապեր, մոմ կամ երկաթ ու տեսակ-տեսակ նիւթերով կախարդութիւններ է անում:

Վհուկը նա է, որ վիհերից եւ անդունդներից մեռեալներ է կերպարանաւորում, ու երբ դեւերը երեւում են մարդկային կերպարանքով, սրանց անուանում են դեւակոչ եւ հազիմաթ[401]:

Նշանագէտը նա է, որ ննջում է գերեզմաններում եւ կերպարանաւորում նշանաւոր մարդկանց, ինչպէս հարցուկ կինը[402] Սաւուղին երեւացրեց Սամուէլին (տե՛ս Ա Թագ. ԻԸ 7-8):

Իսկ երազահանը նա է, ով գիշերները դեւերի է տեսնում ու մարգարէութիւններ անում՝ խաբելու նպատակով:

Հարց. Ինչո՞ւ է Աստուած թոյլ տալիս նման նշանների գոյութիւնը:

Պատասխան. Երկու պատճառով:

Նախ՝ որպէսզի փորձուեն ու իրարից զատուեն հաւատի մէջ կայուններն ու տկարները:

Երկրորդ՝ որպէսզի այսպիսիներին համագործակցողները եւ հաւանութիւն տուողները պատժուեն, ինչպէս որ «Երկրորդ օրինաց»-ում էր (տե՛ս Բ օր. ԺԸ 10-14) հրամայում սպանել դրանց, իսկ հաւատի մէջ հաստատունները վարձատրուեն իրենց հաւատի համար:

Եւ սրանց մոլորուելու ակնյայտ նշանն այս է. նման գործերով զբաղուողները վատթարագոյնն են ու մոլի եւ մարդկանց բռնութեամբ տանում են դէպի դիւականը, ըստ այդմ Պօղոսն ասում է. «Քանի դեռ հեթանոս էիք, ինչպէ՞ս էիք անմռունչ կուռքերի մօտ երթեւեկում» (Ա Կորնթ. ԺԲ 2). չի ասում «գնալ», որ կամաւորն է, այլ ասում է «երթեւեկում», որ ակամայ, քարշ տալով գնալն է:

Եւ կախարդների մասին գրուած է նաեւ քսաներորդ գլխի քսանեօթներորդ պրակում:

ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԿԵ

Հարց. Ի՞նչ է ուխտը եւ ի՞նչ է օրինադրուածը:

Պատասխան. Ուխտը խօսքով է, օրինադրուածը՝ գործով: Ուխտը ապառնին է, օրինադրուածը՝ ներկան: Ուխտը բարութիւն գործելն է, օրինադրուածը՝ չար չգործելը:

Եւ եօթն են նրանք, որոնց ուխտի խախտումներն անմեղադրելի են:

Նախ՝ զաւակների, եթէ ծնողների հրամանով է: Երկրորդ՝ կանանց, եթէ տղամարդու հրամանով է: Երրորդ՝ ծառաների ու վարձկանների, եթէ տէրերի հրամանով է: Չորրորդ՝ աշակերտների, եթէ վարդապետների ու դատաւորների հրամանով է: Հինգերորդ՝ առաջնորդներին հնազանդուողների, ինչպէս կրօնաւորները եւ հաւատացեալներն են: Վեցերորդ՝ շնորհընկալները, ինչպէս խոստովանորդիները, ժողովուրդը եւ հայրապետների քահանաները: Եօթներորդ՝ Աստծոյ արարածները:

Եւ այս է սրանց չմեղադրելու պատճառը, որովհետեւ գոյաւորուած մարմին, հոգի ու միտք ենք՝ կարիքներ, ինչք, շնորհներ, հաւատամք ունեցող: Եւ հոգին Աստծունն է, մարմինը՝ ծնողներինը, միտքը՝ ուսուցիչներինը:

Իսկ կարիքը լինում է երկու տեսակ՝ ներքին՝ ամուսնական եւ արտաքին՝ ունեցուածքի:

Շնորհները հոգու զարդերն են, հաւատամքը՝ մտքի: Կամքը սրանց կառավարողն ու իշխանն է, ուստի պէտք է մնալ սրանց հրամանի ներքոյ, նայած թէ վերը նշուածներից ո՞ր մէկի հետ ենք կապուած: Եւ ինչպէս կնոջ՝ ամուսնուն չենթարկուելը պոռնկութիւն է, այդպէս էլ՝ զաւակների, ծառաների, աշակերտների, հնազանդուողների, ժողովրդի [չեն-

թարկուելը], ինչպէս եւ Աստծոյ սահմանածից մեր հոգու դուրս գալն է պոռնկութիւն՝ թէ՛ գործի եւ թէ՛ հաւատի դէպքում:

Եւ ինչպէս Օվսէէն պոռնիկ չէր (տե՛ս Օվս. Գ) եւ Սամուէլն էլ՝ մարդասպան (տե՛ս Ա Թագ. Է 9), որովհետեւ Աստծոյ հրամանով էր, այդպէս էլ իւրաքանչիւր ոք, եթէ ենթարկւում է առաջնորդի ուխտին, բարի է, եւ եթէ խախտում է, չի դատապարտւում:

Եւ Աստուած ուխտաւորին հրամայեց պահպանել այս օրէնքները:

Ուխտաւոր է, եթէ ապաշխարում է մեղքերի համար: Նախ կտրում է մազերը եւ յետոյ, ինչ աճում է մինչեւ ուխտի օրը դնում է սեղանի վրայ՝ ի կատարումն ուխտի: Իսկ կտրելու իմաստն այն է, որ առաջին գործած մեղքը մաքրում է խոստովանութեամբ եւ ապաշխարութեան պտուղը մատուցում Աստծուն:

Գինուց եւ օղուց հրաժարւում է, որովհետեւ գինին դարձնում է մոռացկոտ, քնկոտ, ծոյլ եւ ապուշ: Եւ քացախ չի ուտում, որովհետեւ այն ապականութիւն է, կորիզ, որովհետեւ դեն գցելու է: Եւ ոչ էլ խաղող, որովհետեւ զուարճանք է. չամիչ, որովհետեւ արեւակէզ է ու զօրութեամբ պակաս:

Եւ սրանք բոլորը ուխտաւորին յարմար չեն, որովհետեւ անապատում էլ միս ուտելու հրաման չունէին, ինչպէս եւ դրախտում:

Պարզ է, որ ապաշխարելիս կրօնաւորն էլ պէտք է հրաժարուի գինուց, մրգից, մսից: Այս դէպքում գլխի [մազերին] չի դիպչի ածելի, ինչպէս Սամսոնինը (տե՛ս Դատ. ԺԶ 17): Իսկ գլուխը մտքի կրողն է, որ պէտք է ո՛չ աւելի եւ ո՛չ էլ պակաս լինի, ինչպէս որ մուրճով սեղանի վրայ գործ չէին անում, որ չպղծեն:

Իսկ երկարած մազը անզգայ է. ոչ գրգռւում է, ոչ էլ ցաւ է զգում. այդպէս էլ կրօնաւորը ցաւ չի ապրում ու չի տրտմում եւ չի ցանկանում աշխարհը:

Եւ մազերն Աստծուն զոհաբերել նշանակում է մատուցել նախ ինքնածին աճածն իր անձից, իսկ մնացածը՝ կենդանիներից: Եւ ուխտաւորը սգի տուն չի գնում, այսինքն՝ այլեւս չի վերադառնում մեղքին, ոչ էլ մեղսասէր գործակիցներին: Եւ եթէ ուխտաւորի տանը մարդ է մեռնում, ուխտը պղծւում է, եւ չեղեալ են համարւում առաջին օրերը, ու պէտք է նորից սկսի, որ նշանակում է, եթէ մեղանչել է հոգու եւ մարմնի մասերով, այսինքն՝ մտքով, ցասմամբ, ցանկութեամբ, աչքով, ականջով եւ մնացած մասերով՝ ուխտը չի կարող կատարեալ լինել, ուստի պէտք է նորից ապաշխարի. ըստ այդմ՝ «Եթէ մէկը բոլոր օրէնքները կատարի եւ մէկով մեղանչի, կդառնայ պարտական միւս բոլոր օրէնքներին» (Յակ. Բ 20):

Այսքանն այս մասին:

ԱՒԱՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԿԶ

Հարց. Պէ՞տք է աւարից եկեղեցուն բաժին տալ կամ մատաղ անել, թէ՞ ոչ:

Պատասխան. Գողից եւ աւազակից չի կարելի ընդունել, որովհետեւ պիղծ է:

Իսկ թագաւորի աւարից, որ բերում է թշնամու երկրից՝ արդար է եկեղեցուն նուէրներ մատուցելը, որովհետեւ թշնամուն սպանելը արդար գործ է, իսկ աւարը արդարութեան մի մասն է, ինչպէս որ մադիանացիների աւարից Մովսէսը մաս հանեց Աստծոյ խորանին:

Եւ այսպէս են բաժանում աւարը. հարիւրից մէկը տալիս են քահանայապետին, յիսունից մէկը՝ քահանային եւ աղքատներին. հինգից մէկը թագաւորի բաժինն է, աւարի կէսը՝ բերող զինուորներինը, միւս կէսը՝ հեծեալներինը, ինչպէս Մովսէսը բաժանեց: Իսկ աւարի ոսկին թագաւորի բաժինն է, արծաթը՝ թագուհունը կամ իշխաններինը:

Մնացած աւարը զօրքինն է:

ԲՆԱԿՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ էր նշանակում այն, որ երկուսուկէս ցեղերը մնացին Յորդանանից այն կողմ եւ ժառանգ դարձան, իսկ միւսներն անցան Քանան:

Պատասխան. Բարի թուարկութեամբ է:

Նախ՝ ցոյց է տալիս նահապետներին, որոնց քսանհինգ ցեղեր բնական օրէնքներով նախ արդարացան, ապա բնականով զօրացած՝ գրաւոր [օրէնքն] արդարացրեց նրանց:

Երկրորդ՝ [ցոյց է տալիս] հին օրէնքը եւ մարգարէներին, որ մինչ մկրտութիւնը այլաբանութեամբ եւ օրինակներով Նորի նախակարապետը դարձան:

Երրորդ՝ հեթանոսների ազգը, որ նախքան մկրտուելը բնածին բարութեամբ եւ երկիւղով աստուածապաշտ դարձան, ապա՝ մկրտուեցին:

Չորրորդ՝ հաւասարապէս Յորդանանով անցած եւ մկրտուած քրիստոնեաները, որոնց մի մասը մնաց մարմնական, իսկ շատերը ժամանեցին Վերին օթեւան: Եւ տե՛ս, որ ասում է. «Եղբայրների մէջ առաջապահ եղէ՛ք եւ նրանց յետ ժառանգէ՛ք մեզ վիճակուածը» (Թիւք ԼԲ 17), քանի որ առաջին ընտրեալները եւ վերջին արդարները միասին են ժառանգելու աւետուածը, ըստ այդմ՝ «Սրանք բոլորը՝ հաւատի վկաները, մեզ համար լաւագոյն համարուող Աստծոյ աւետիսը դեռեւս չեն ընդունել, որպէսզի առանց մեզ դրանք չկատարուեն» (Եբր. ԺԱ 39):

Սրանք են ընդհանուր եւ ընդունելի կարծիքները:

Իսկ ոմանք էլ [ասում են] Յորդանանի այն կողմը մնացած երկու ցեղերը եւ Քանանի ինը ցեղերը ցոյց են տալիս երկնքի հարիւրին, դրախտի վաթսունին եւ երկրի երեսունին (տե՛ս Մտթ. ԺԳ 8): Սա բոլորի համար ընդունելի կարծիք չէ:

Ինը ցեղերն էլ նշանակում են ինը աստիճաններով կարգաւորուած նոր օրէնքի եկեղեցին, իսկ կէսը նրանք են, ովքեր հաւատի, կամ վարքի եւ կամ էլ ուսումնառութեան մէջ ինչ-ինչ թերութիւն ունեն:

Իսկ ի դէմս վերջին գաւառի մասնակիօրէն նկատի են առնում ընտրեալ կուսակրօնները, որոնք լրացնում են ընկած դասերը:

Իսկ միւս ինը պարիսպները, համաձայն իմանալի դասերի, փառաբանողներ են: Իսկ հրեշտակները, մարդիկ, մշտնջենաւորները պակասաւոր են յաւիտենական աստուածապետութեան համեմատութեամբ, եւ սրանով է տասներորդը համալրւում՝ անսկիզբ եւ անվախճան գոյութեամբ:

Եւ քառասուն իջեւանները ոմանք բացատրում են որպէս հոգու՝ մարմնից դուրս գալուց յետոյ քառասուն օրուայ ընթացքում օթեւաններ հասնելը: Վկայակոչում են նաեւ Քրիստոսի համբարձումը քառասուն օր յետոյ: Այլեւ Փիլիպպոսը քառասուն օր դրախտից դուրս մնաց[403]: Այս իմաստով են նշում ննջեցեալների քառասունքը: Եւ ասում են, թէ քառասուն օր էր Ադամի պայմանը, եւ եթէ քառասուն օր յետոյ ուտէր գիտութեան ծառից եւ սրբութեամբ որդի ծնէր, ապա կուտէր կենաց ծառից եւ կվերափոխուէր: Եւ այսպիսի բազմաթիւ այլ բաներ են շարադրում:

Ոմանք էլ ասում են եօթ օր յետոյ են հասնում եօթներորդ գօտուն[404], որի պատճառով են նշում եօթը: Իսկ ոմանք էլ ասում են նոյն ժամին է իւրաքանչիւրը հասնում օթեւան:

Իսկ մեր ուղղադաւան եկեղեցուն միջինն է ընդունելի, որովհետեւ քառասունքը կատարում ենք այն պատճառով, որ հները ննջեցեալների վրայ քառասուն օր անմխիթար սգում էին, ինչպէս Յակոբ նահապետի համար քառասուն օր սգացին (տե՛ս Ծննդ. Ծ 3): Այլեւ ամսագլուխն ենք նշում, որովհետեւ Ահարօնի եւ Մովսէսի համար երեսուն օր լաց եղան (տե՛ս Թիւք Ի 29): Իսկ եօթը նշելու խորհուրդն այն է, որ անմաքուրին մօտեցածը բանակատեղից եօթ օր դուրս մնալով՝ երրորդ եւ եօթներորդ օրերը մաքրւում էր (տե՛ս Թիւք ԺԹ 19), ապա ներս էր գալիս, ուստի նշում ենք երրորդ եւ եօթներորդ օրերը:

Հարց. Ի՞նչ էին խորհրդանշում Եղիազար քահանան (տե՛ս Թիւք ԺԹ), Յեսուն, իշխանները, որոնք բաժանեցին երկիրը:

Պատասխան. «Եղիազար»[405] նշանակում է «Աստծոյ զօրութիւն», որ Քրիստոսն է՝ քահանան եւ մեր փրկիչը: Իշխանները՝ տասներկու առաքեալներն էին՝ Քրիստոսի աթոռակիցները, իսկ սրանց կողմից մեզ պարգեւած երկրի բաժանումը այստեղ Նոր օրէնք տալն է, իսկ այնտեղ՝ Վերին Երուսաղէմը:

ՔԱՂԱՔ-ԱՊԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(տե՛ս Թիւք Լե 9-34, Բ օր. ԺԹ)
Պրակ Կէ

Հարց. Ի՞նչ էին նշանակում քաղաք-ապաստանները:

Պատասխան. Տէրը հրամայեց վեց քաղաքներ առանձնացնել ապաստանի համար եւ տալ քահանաներին. երեքը Քանանի երկրից, երեքը՝ Յորդանանի այն կողմում, եւ քառասուներկուսն էլ՝ երկրի շրջակայքում, որոնք միասին կազմեցին քառասունութ, որպէսզի ակամայ սպանութիւն կատարածներն այնտեղ պատսպարուեն, քանի դեռ քահանան կենդանի էր, իսկ եթէ մեռնէր, պէտք է վերադառնային իրենց տեղերը, որ

նշանակում էր, թէ քահանայի մեռնելը ազատութիւն էր նրանց համար, ինչպէս Քրիստոսինը, որ մեռնելով աշխարհի համար՝ ազատեց մահապարտներին:

Եւ ակամայ սպանութիւն կատարողը մեղքերի համար զղջացողի օրինակն էր: Իսկ այն, որ ծերերը քննութեան էին ենթարկում, ապա տեղափոխում քաղաք՝ ապաշխարութիւնն էր: Իսկ քահանայի մահը Քրիստոսի զոհաբերուելն էր՝ մինչեւ ապաշխարութեան կանոնների կատարելը եւ հաղորդութեան արժանանալը:

Դարձեալ քառասունութ քաղաքները քառասնօրեայ մեծ պահքն են, վեց քաղաքները՝ շաբաթապահքը. երեքական քաղաքները՝ ապաշխարութեան երեք տեսակները, այսինքն՝ պահքը, աղօթքը, ողորմութիւնը եւ կամ՝ զղջումը, խոստովանութիւնը, հատուցումը[406]:

Նաեւ՝ սուրբ եկեղեցին քաղաքն է ապաստանի, քահանայապետը՝ նրանում կատարուող պատարագը, ուր մտնելով՝ աղօթում ենք եւ թողութիւն ստանում:

Եւ վրաց ազգը դեռեւս պահպանել է այդ [սովորութիւնը]. մեղանչածը եկեղեցի մտնելով՝ ազատւում է:

Իսկ մահից յետոյ այն հոգիների համար, որոնք կզղջան կամ կխոստովանեն մեղքերը, քաղաք-ապաստան են հոգիների կայանները, [որտեղ] կփոխարինուեն տրտմութիւններն ու ցաւերը՝ մինչեւ Մեծ քահանայի մեռնելը, երբ սուրբ եկեղեցին պատարագով, աղօթքներով եւ ողորմութեամբ կհատուցի նրանց պարտքերը եւ կազատագրուեն:

Իսկ նրանք, ովքեր քաւարան են քարոզում, այս նրանց դէմ է. նախ, որովհետեւ ակամայ սպանօղը չի տանջւում: Երկրորդ, ոչ թէ իր, այլ քահանայի միջոցով էր ազատւում:

Նոյնպիսին կլինի եւ ճշմարտութիւնը:

Եւ այստեղ վերջում հարցնեմ. ինչո՞ւ կրկին թուարկեց ժողովրդին:

Պատասխան. Նախ, այնտեղ թուարկեց հայրերին, որոնք կոտորուեցին, իսկ այստեղ՝ որդիներին, որոնք ժառանգելու էին երկիրը:

Ու նաեւ, որպէսզի մեծաթուին շատ բաժին տայ երկրից, սակաւաթուին՝ քիչ:

Ցոյց է տալիս նաեւ այն, որ թուերը, որոնցով մենք վարում ենք կեանքը, ժամանակաւոր ու փոփոխական են: Իսկ անփոփոխ է յաւիտենականը, որ Աստծոյ ընտրեալների թիւն է, որտեղ եւ մեզ է թուարկում ի թիւս իր սրբերի՝ անջինջ դպրութեամբ:

Եւ Նրան փառք յաւիտեանս, ամէն:

ԳԼՈՒԽ ԻԳ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԷՆՔԸ ՊՐԱԿ ԿԸ

Հարց. Ինչո՞ւ գրեց Երկրորդ օրէնքը:

Պատասխան. Նախ՝ ինչպէս վաղ անձրեւը աճեցնում է, իսկ ուշը՝ սնուցում եւ պտղաբերում, այդպէս էլ Առաջին օրէնքից նրանք ազդակ ստացան ծլարձակելու, իսկ Երկրորդով աճեցին եւ պտղաբերեցին: Երկրորդ՝ որովհետեւ Առաջին օրէնքը չկատարեցին, [ուստի] տուեց երկրորդը, որ կատարեն: Երրորդ՝ առաջինը տուեց հայրերին, որոնք կո-

տորուեցին, երկրորդը՝ որդիներին, որ չար եւ դառնացող չլինեն, ինչպէս իրենց հայրերը: Չորրորդ՝ առաջինն իբրեւ բնաբան տուեց, երկրորդն՝ իբրեւ մեկնութիւն, որ ընկալեն մտքով: Հինգերորդ՝ որովհետեւ երկուսն են օրէնքները՝ հինը եւ նորը, որոնք օրինակը եւ ճշմարտութիւնն են: Վեցերորդ՝ առաջինը կանոնաւորող օրէնք է, որովհետեւ կարգաւորում է հոգին, իսկ երկրորդը՝ դատաստանի, որ կարգաւորում է մարմինը:

Սա է մեզ տրուած Երկրորդ օրէնքը:

Հարց. Ի՞նչ էր խորհրդանշում մեծ եւ սարսափելի անապատը:

Պատասխան. Մեծ, որովհետեւ քառասուն տարի շրջեցին, իսկ՝ սարսափելի, որովհետեւ նախ թշնամիներով էր շրջապատուած եւ լցուած էր գազաններով, սողուններով, ծով էր, ամայի, անպարիսպ: Երկրորդ՝ քաղցն ու ծարաւն [էին տիրում] եւ վաստակելու հնարաւորութիւն չկար: Երրորդ՝ սարսափազդու տեսարաններ [կային], որոտ ու կայծակ:

Արդ, Եգիպտոսն այս երկրի նշանակն էր, ծովը՝ այս կեանքի, անապատը՝ հոգիների կայանի[407]:

Նախ՝ շուրջը թշնամի դեւերն էին՝ խղճմտանքի գազանները, մեղքերի ծովը, բարիքներ չունեցող ամայութիւնը: Երկրորդ՝ մեղաւորների քաղցը եւ ծարաւը՝ առանց վաստակելու եւ գործելու: Երրորդ՝ Դատաւորի սարսափազդու երեւալը, փողերի ձայնը եւ նախընթաց հուրը:

Հարց. Ինչո՞ւ չհրամայեց Ղովտի ու Եսաւի որդիների դէմ կռուել, այլ՝ ամուրհացիների:

Պատասխան. Նշանակում է, որ պէտք չէր կռուել մարդկանց դէմ՝ թէ՛ չար, թէ՛ բարի, որովհետեւ մեր ցեղից են եւ Ադամի որդիները, այլ պէտք է միշտ կռուել դեւերի դէմ, եւ ո՛ր դեւին էլ որ յաղթի մարդը՝ թէ՛ հպարտութեան, թէ՛ պոռնկութեան՝ նրանց տեղը կժառանգի երկնքում:

Հարց. Ի՞նչ էր նշանակում այն, որ երկու թագաւորներին՝ Սեհոնին եւ Օվգին Յորդանանի այն կողմում կորստի մատնեց, իսկ միւսներին՝ Քանանում:

Պատասխան. Խորհրդանշում է երկու դեւերին, որոնք պատերազմում են մտքի եւ զգայութիւնների դէմ: Եւ հինգ մադիանացի թագաւորներն ու այս երկուսը եօթ գլխաւոր մեղքերի եօթ դեւերն են, որոնք մենամարտում են կեանքի դէմ, իսկ մահուանից յետոյ՝ բազում հոգիների դէմ:

Դարձեալ իմանալու է, որ երեք նշանաւոր տեղերում եղան նրանց պատերազմները: Նախ՝ Եգիպտոսում Փարաւոնի դէմ, որ այս կեանքն է խորհրդանշում: Երկրորդ՝ անապատում Ամաղէկի եւ այլոց, որոնք խորհրդանշում էին յետմահու կեանքում հոգիների դէմ պատերազմելը, ովքեր ըստ առաքեալի չար դեւերն են երկնքի տակ (տե՛ս Եփես. Զ 12): Երրորդ՝ Քանանում, որ խորհրդանշում է յարութիւնից յետոյ դիւական ոսոխների դէմ պատերազմելը:

Եւ ովքեր այստեղ պարտւում են, պարտւում են նաեւ յետամահու եւ յարութիւնից յետոյ, որոնց կորստի կմատնի մեր Փրկիչն Յիսուս:

Հարց. Ինչո՞ւ են այս երեք տեղերում պատերազմում դեւերը:

Պատասխան. Նախ, որովհետեւ մեր բնոյթը եռատեսակ է. առաջինն այս կեանքում մարմնի եւ հոգու փոփոխուելն է. յետմահու միայն անմարմին հոգի է, իսկ յարութիւնից յետոյ՝ անփոփոխ հոգի եւ մարմին, որ ցոյց են տալիս, որ միշտ թշնամի են մեզ եւ հակառակ:

Երկրորդ՝ պատերազմում են մեր գոյութեան երեք ձեւերի դէմ. այստեղ մարմնի դէմ, մահուան ժամանակ՝ հոգու, յարութեան ժամանակ՝ մտքի ճանաչողութեան:

Երրորդ՝ այստեղ օգուտ ստանալու առիթ են դառնում, որովհետեւ փորձում են ընտրեալներին, ովքեր յետմահու [արժանանում են] շնորհների, յարութեան ժամանակ՝ փառքի:

Չորրորդ՝ այստեղ չար գործերի մեղքերով են տանջւում, յետմահու՝ հաւաստիօրէն մասնաւոր, յարութիւնից յետոյ՝ յաւիտենական տանջանքներով:

Հինգերորդ՝ այստեղ զրկւում են խոստման լուրից, մահից յետոյ՝ տեսնելուց, յարութիւնից յետոյ՝ կատարումից:

Վեցերորդ՝ այստեղ խոտորւում են ճշմարիտ գործերից, յետոյ՝ ընթացքից, յարութեան ժամանակ՝ յաղթանակի պսակից:

Եօթներորդ՝ այստեղ ծածուկ են չարախօսում, յետմահու՝ բացայայտ, յարութեան ժամանակ նոյնպէս բացայայտ՝ Դատաւորի եւ դատախազների առջեւ:

Ութերորդ՝ այստեղ եկեղեցու ամօթը լինելու, այնտեղ սուրբ հոգիների, յարութեան ժամանակ Աստծոյ եւ հրեշտակների առաջ՝ ոսոխ լինելու պատճառով:

Իններորդ՝ սատանան ինքն ունի բնութիւն, մեղք, պատիժ. այստեղ բնութեամբ է զինւում, յետմահու՝ մեղքերով, յարութեան ժամանակ պատժակիցներ ձեռք գցելով:

Տասներորդ՝ նա երեք տեղ ունի՝ երկինքը, որից զրկուեց, օդը, որտեղ ընկաւ, հուրը, որտեղ տանջուելու է: Եւ երեք տեղում էլ մարտնչում է. երկրում, որ զրկի երկնքից, օդում, որ խափանի, յարութեան ժամանակ, որը հուրը գցի, որից փրկի մեզ Քրիստոս Աստուած, մեր Փրկիչը: Ամէն:

ՄՈՎՍԷՍԻ ԵՐԿԻՐԸ ՏԵՍՆԵԼՈՒ ԵՒ ԱՅՆՏԵՂ ՉՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (տե՛ս Բ օր. ԼԴ) Պրակ ԿԹ

Հարց. Ինչո՞ւ Մովսէսը երկիրը տեսաւ, սակայն չմտաւ:

Պատասխան. Նախ, Մովսէսը խորհրդանիշն էր հին օրէնքի, որ հասաւ մինչեւ մկրտութիւն եւ աւարտուեց:

Երկրորդ՝ խորհրդանշում էր սուրբ հոգիներին, ովքեր տեսնում են փառքը, սակայն այն ստանում են յարութեամբ: Նոյնն էին խորհրդանշում Յորդանանի այն կողմում մնացած երկու ցեղերը,

որոնք պատերազմակից եղան այլոց, իսկ յետոյ միասին ստացան ժառանգութիւնը:

Հարց. Ի՞նչ էր նշանակում այն, որ Մովսէսը նախ տեսաւ ծովը, որ արեւմուտքում էր, ապա՝ հիւսիսը, հարաւը եւ արեւելքը:

Պատասխան. Բազում են խորհուրդները:

Նախ, արեգակի նման էր Մովսէսի տեսնելը, որ նախ արեւմուտքին է նայում, ապա բարձրանալով՝ հիւսիսին, հարաւին, յետոյ՝ արեւելքին:

Երկրորդ՝ խորհրդանշում էր հրէաների երկրպագութիւնը, որ բոլոր կողմերից Երուսաղէմն են երկրպագում:

Երրորդ՝ իւրաքանչիւր ազգ երկրպագում էր դէպ որեւէ կողմ, իսկ յետոյ քրիստոնեաները՝ դէպ արեւելք:

Չորրորդ՝ մարմնով օրինակը տեսաւ, ապա հոգով՝ ճշմարիտ երկիրը պարգեւեց:

Հինգերորդ՝ արեւմուտքը հին օրէնքն էր, իսկ արեւելքը՝ յետոյ [եկած] նորը:

Վեցերորդ՝ նախ այս կեանքն ենք տեսնում, որ արեւմուտքն է, ապա մահից յետոյ՝ հանդերձեալը, որ արեւելքն է:

Եօթներորդ՝ արեւմուտքը մեղք է եւ տգիտութիւն, որ թողնում եւ ապաշխարութեամբ դառնում ենք դէպ Աստուած:

Ութերորդ՝ մկրտութեան ժամանակ նախ հրաժարւում ենք արեւմուտքից, ապա՝ հաւատում արեւելքին:

Իններորդ՝ թաղումն արեւմուտքում է, յարութիւնը՝ արեւելքում:

Տասներորդ՝ հոգիների կայանում նախ պատիժն են տեսնում, ապա՝ փառքը:

Հարց. Ի՞նչ էին բարձրացրած ձեռքը եւ հզօր բազուկը:

Պատասխան. Նախ՝ զօրաւոր նշաններն ու հնարքները Եգիպտոսում:

Երկրորդ՝ ժողովրդին մեծամեծ փառքով անպարտելի թշնամուց ազատելն էր:

Երրորդ՝ Եգիպտոսում եղած զօրաւոր հարուածները, որ ոչ ոք չէր կարող հասկանալ եւ կանգնեցնել պատիժը, ինչպէս երբ մէկը հարուածում եւ նորից բարձրացնում է ձեռքը:

Չորրորդ՝ ձեռքը գործերն է ցոյց տալիս, բազուկը՝ զօրութիւնը, որ գործում է առանց ջանք թափելու: Եւ Աստուած էլ գործում է առանց ջանքի ու չի յոգնում:

Առաջինն՝ ի դէմս Մովսէսի նշանների: Երկրորդն ի դէմս ժողովրդի: Երրորդն ի դէմս եգիպտացիների: Չորրորդն ի դէմս Աստծոյ նշանների:

ԴԱՐՁԵԱԼ ՕՐԻՆԱՑ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ էր նշանակում Աւետեաց երկիրը:

Պատասխան. Խորհրդանշում էր քրիստոնէական օրէնքները հետեւեալ կերպ. նախ՝ եգիպտացիք երկրի հեթանոսներն էին: Եւ նահապետներն աւելի առաջ էին, քան նրա օրէնքները: Անապատը՝ գրաւոր օրէնքն էր Մովսէսի ձեռքում, իսկ Աւետեաց երկիրը՝ նոր օրէնքները Յիսուս Փրկչի ձեռքում:

Եւ սա բխում է կաթ ու մեղր, որ քաղցրութիւն է եւ մեղքերի թողութիւն: Այդպէս էլ տասնաբանեան օրէնքը: Նախ, բանաւոր ասաց, որովհետեւ նահապետները՝ Աբրահամը, Նոյը եւ միւսները բնական օրէնքներ ստացան, ապա Մովսէսի խորտակուած տախտակով, իսկ մնացածը նոր օրէնքի մէջ:

Հարց. Ինչո՞ւ առաջին օրէնքն ու օրհնութիւնը մարմնական էին, իսկ վերջինն ամբողջովին հոգեւոր:

Պատասխան. Բազմաթիւ են իմաստները:

Առաջին՝ որ նախ դրսից մարմնին ենք հանդիպում, ինչպէս դռանը, ապա ներսում՝ հոգուն, ըստ այդմ էլ նախ մարմնաւոր օրէնքը տուեց, ապա՝ հոգեւորը:

Երկրորդ՝ հոգեւոր կենաց դրախտից ընկանք մարմնաւորը եւ սրանից նորից վերադառնալու ենք հոգեւորին:

Երրորդ՝ նախ անկատար բնութիւնն է եւ մանուկ լինելը, ապա՝ կատարեալը:

Չորրորդ՝ նախ օրինակն է, ապա՝ ճշմարտութիւնը:

Հինգերորդ՝ նախ երկիր ենք գալիս, ապա՝ ելնում երկինք:

ԱՍՏԾՈՅ ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ
Պրակ Հ

Հարց. Ի՞նչ էր «Լսի՛ր, Իսրայէլ, որ քո Տէր Աստուած միակ Տէրն է. եւ սիրի՛ր նրան ամբողջ սրտով» (Մրկ. ԺԲ 29-30) եւ այլն:

Պատասխան. Նախ, հաւատով ճանաչելն է երրորդութեան մէկ բնութիւն լինելը[408] եւ ապա գործով նրան սիրելը, ինչպէս նախ ուսանելն է, ապա՝ ստանալը:

Իսկ «սիրտ» հոգուն է ասում, որ թաքնուած է եւ տեղն է խորհուրդների, մէկն է ու մարմնի կենդանութիւնը: Նոյնպէս եւ անձը: Եւ զօրութիւն է, որովհետեւ զգայարանները հոգու զօրութիւններն են եւ միտքը:

Իսկ որ ասում է՝ «Ամբողջ սրտով եւ անձով» եւ այլն, երկու իմաստով է ասում. մէկը, որ հոգին եռամասնեայ է՝ զգայութիւնները, միտքը, խոհականութիւնը, եւ ասում է՝ սիրի՛ր Աստծուն բոլոր մասերով: Եւ սիրի՛ր հոգով, ամբողջ մարմնով, մտքով եւ ոչ մասամբ:

Դարձեալ նշանակում է սիրոյ երեք տեսակները՝ սիրել Աստծուն մարմնով, հոգով եւ մտքով, որովհետեւ մարմնովը երկիւղած սէրն է, ըստ այդմ՝ «Բեւեռի՛ր քո երկիւղն իմ մարմնին» (Սղմ. ՃԺԸ 120). «հոգովը»՝ վարձկականն է՝ խոստացած բարիքների համար: Եւ «մտքովը» յօժարութեամբ սիրելը եւ նրա՝ որդիութեան հասնելը[409]:

Կայ նաեւ այլ բացատրութիւն. այն, որ կամենում է մեր պաշտամունքը բաժանել կռապաշտութիւնից, որովհետեւ ստայօդ աստուածները պահանջում էին զոհաբերել որդիներին, դուստրերին, արջառներ, ոչխարներ եւ սպանել օտարներին: Իսկ ճշմարիտ Աստուած սրանք չի պահանջում, այլ կամենում է, որ երկիւղ ունենան մանուկները, որով խորշեն չարից, սրտի սէր՝ անասունների [զոհաբերութեան]

փոխարէն եւ խաղաղութիւն՝ առ ընկերն ու օտարը. ինչպէս ասում է՝ Իսրայէ՛լ, ի՞նչ է խնդրում քեզնից Տէրը. միայն երկնչել նրանից, սիրել նրան ամբողջ անձով, եւ դատաստանի իրաւունք:

Միւս նշանակութիւնն այդ խօսքի, որ ասում է՝ «սիրի՛ր քո ողջ անձով», այն է, որ հին ժողովուրդը զոհաբերում էր անասուններ, ոչխարներ, արջառ եւ այլն, իսկ նոր օրէնքը հրամայում է բանականը մատուցել, որոնք են՝ հոգին, մարմինը, կամքը, ըստ այդմ՝ «Լսելիքդ հաստատեցիր իբրեւ զոհաբերութիւն, սուրբ սիրտ եւ խոնարհ հոգի, որոնք Աստուած չի արհամարհում» (Սղմ. Ծ 19):

Վեցերորդ՝ ասուածի նշանակութիւնը նաեւ այն է, որ պէտք է կատարեալ սիրով սիրել Աստծուն: Իսկ կատարեալ սիրոյ յատկանիշները չորսն են:

Առաջին՝ առաջինը սիրել եւ առանց փոխհատուցման: Երկրորդ՝ ամբողջովին սիրել եւ միշտ սիրել, որովհետեւ եթէ յետոյ է սիրում՝ փոխհատուցումով, մասնաբար եւ ժամանակաւոր, անկատար է սէրը եւ մարմնական:

Եօթներորդ՝ «սիրի՛ր Աստծուն ամբողջ սրտով», այսինքն՝ անմոլար իմացմամբ: Բոլոր անձով, այսինքն՝ անվերապահ կամքով: Բոլոր մտքով, այսինքն՝ չմոռացուող յիշողութեամբ:

Հարց. Այստեղ Աստծոյ սիրոյ մասին է խօսում, իսկ ընկերոջ սիրոյ մասին որտե՞ղ ասաց Փրկիչը, թէ՝ «Այս երկու պատուիրաններից են կախուած բոլոր օրէնքները» (Մտթ. ԻԲ 40):

Պատասխան. Ղեւտացւոց գրքի եօթանասունութերորդ պարբերութիւնում ասում է. «Սիրի՛ր ընկերոջդ, ինչպէս քո անձը» (Ղեւտ. ԺԹ 18):

ԱՍՏԾՈՅ ՀԱՑԸ ԵՒ ԽՕՍՔԸ
Պրակ ՀԱ

Հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Ոչ միայն հացով է ապրում մարդ, այլ Աստծոյ ամէն խօսքով» (Մտթ. Դ 4):

Պատասխան. Նախ, ասում է ժողովրդի համար, որ ոչ միայն հացով է ապրելու մարդը, ինչպէս Ադամին ասաց՝ քրտինքով հաց ուտել, այլեւ Աստծոյ խօսքը նրանց կերակրեց ծովի լորամարգով, ժայռի ջրով եւ երկնքի մանանայով, որովհետեւ ամենակարող է Աստծոյ զօրութիւնը:

Երկրորդ՝ որովհետեւ քառասուն տարի անապատում հաց չտուեց, այլ մանանայ եւ այլ բաներ, ու կերակրուեցին Աստծոյ ոգեղէն խօսքով եւ ոչ մարմնական հացով:

Երրորդ՝ այն էր նշանակում, որ անապատում նրանց վերադարձրեց դրախտի կեանքը՝ կարիք չունենալով որեւէ բանի, որովհետեւ զգեստը չէր մաշում, այլ մեծանում էր երեխաների հետ, բոկոտն լինելով՝ չէր ճաքճքում, ինչպէս Մովսէսին ասաց. «Հանի՛ր քո կոշիկները» (Ելք Գ 5), ոչ էլ հաց ուտելու կարիք ունէին, այլ ինչպէս ասուեց, Աստծոյ խօսքն էր կերակրում նրանց: Այս պատճառով է, որ ոմանք ասում են, թէ՝ երեք տարի կամ քառասուն օր ապրեց Ադամը դրախտում, ինչքան որ ժողո-

վուրդն էր անապատում կամ Մովսէսը՝ լեռան վրայ:

Չորրորդ՝ երկնքից իջած հաց էր կենարար մանանան՝ Աստծոյ Խօսքը, նոյն ինքը՝ մեր Տէրը, որ փորձողին ասաց, թէ՝ Ինձնով են կերակրւում բոլոր սրբերը եւ ոչ հացով:

Հինգերորդ՝ նոյն ինքը՝ Սուրբ մարմինը, ոչ միայն հացով էր ապրում իբրեւ սովորական մարդ, այլ նրան միաւորուած կենդանի Խօսքով:

Վեցերորդ՝ հացը ոչ միայն հաղորդութիւն է, այլեւ Սուրբ Հոգով օրհնուած եւ միաւորուած է Աստծոյ Խօսքին, որով անմահ կենդանութիւն է տալիս ճաշակողներին:

Եօթներորդ՝ ինչպէս հացը մարմինն է կերակրում, այդպէս էլ Աստծոյ իմաստուն խօսքը՝ հոգին, որի պակասելու մասին ասում էր. «Ձեզ ոչ թէ հացի սով կամ ջրի ծարաւ է տալու, այլ Աստծոյ խօսքը լսելու սով» (Ամոս Ը 11):

Ութերորդ՝ Մովսէսը լեռան վրայ մնաց քառասուն գիշեր ու ցերեկ պահեցողութեամբ եւ կերակրւում էր Աստծոյ խօսքով. այդպէս էլ Եղիան, մեր Տէրը եւս՝ լեռան վրայ փորձուելիս:

Իններորդ՝ մանուկն արգանդում հացով չի ապրում, այլ Աստծոյ հրամանով ինն ամիս կերակրւում է պորտով, ինչպէս բոյսը, ինչպէս Նոյը՝ տապանում, մինչեւ որ դուրս է գալիս արգանդից, ապա մայրը կերակրում է նրան կրծքով՝ Աստծոյ խօսքով, որի մասին աշխարհում ասում են, թէ՝ երբ Աստուած մի դուռը փակում է, բացում է երկուսը, ինչպէս որ պորտի մէկ դուռը փակելուց յետոյ բացում է երկու ստինքները:

Տասներորդ՝ յարութեան ժամանակ չկան մարմնական կերակուր եւ ըմպելիք, այլ Աստծոյ խօսքն է կերակուրը, ինչպէս որ այժմ հրեշտակներն են ապրում երկնքում:

ՆԱՅԻ՛Ր ՔԵԶ

Հարց. Ի՞նչ է «Նայի՛ր քեզ» (Բ օր. Դ 9) ասելը:

Պատասխան. Մտքին է ասում՝ նայել հոգուն:

Նախ, իմանալու է, որ մարմնական աչքն իրեն չի տեսնում, այլ՝ ուրիշներին, իսկ միտքը տեսնում է իրեն եւ ուրիշներին:

Ապա, ինչպէս աչքով տեսնում ենք մարմնի մասերն ու գեղեցկացնում ենք տգեղ կողմերը, այդպէս էլ մտքով պէտք է տեսնել եւ զարդարել հոգու մասերը՝ խօսքը, ցասումը, ցանկութիւնը:

Եւ ինչպէս քնած մարդն իրեն չի տեսնում, եւ ինչպէս աւելորդ կերածն է բթացնում զգայարանները, այդպէս էլ ագահութիւնը, հարստութիւնը, հպարտութիւնը մոռանալ են տալիս իրեն. այս պատճառով են ասում, թէ՝ իրենք իրենց ճանաչողներն իմաստուն են:

Դարձեալ՝ «Նայի՛ր քեզ», այսինքն՝ նախ քեզ քննիր ու տես, յետոյ՝ ուրիշներին եւ մի՛ մոռանայ քո տկարութիւններն ու պակասութիւնները: Եւ մի՛ մոռանայ Աստծոյ զօրութիւնը եւ երախ-

տիքները, որ արեց բոլորի եւ իւրաքանչիւրի հանդէպ[410]:

ԱՍՏԾՈՅ ԵՐԱԽՏԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ՀԲ

Հարց. Ինչո՞ւ բոլորի մէջ Արարիչը սիրեց միայն հրէայ ժողովրդին՝ այդպիսի օրէնքներ, նշաններ եւ այլ բաներ պարգեւելով, ըստ այդմ՝ «Ո՛չ բոլոր ազգերին այդպէս արեց Տէրը»:

Պատասխան. Աստծոյ ակնառութիւն չէր սա. Աստուած սիրեց նախ հայրերին, որովհետեւ արժանի էին, եւ երեւաց նրանց եւ ուխտի խոստում տուեց՝ նրանց զաւակների միջից յետոյ մարդանալու:

Արդ, նախ հայրերի սիրոյ համար Աստուած ընտրեց նրանց զաւակներին:

Երկրորդ՝ մեծ բարութեան պատճառով իր մարդեղութեան հիմքերը հեռուից դրեց, որ նրանց զաւակներից լինի:

Երրորդ՝ վերջում եկած լաւերի պատճառով ընտրութեամբ անցան նաեւ վատերը, ինչպէս որ ոսկու, արծաթի, մարգարիտի պատճառով ուշադրութեան ենք արժանացնում հողը, քարը, խեցեմորթին: Այդպէս էլ Իսրայէլի ժողովուրդը ընտրուեց՝ Աստուածածին կոյս Մարիամի պատճառով, այլեւ մարգարէներ, առաքեալներ, բազում սրբեր եւ արդարներ եղան սրանց ազգի միջից:

Իսկ ընդհանուր առմամբ՝ աւելի շատ խնամքի արժանացրեց բոլորին, քան սրանց, որովհետեւ սրանց մէջ օրինակով էր, իսկ մեր մէջ՝ ճշմարտութեամբ. նրանց համար ամպհովանի էր, մեզ համար՝ Սուրբ Հոգի. ոչնչացուեցին նրանց մարմնական թշնամիները, մեր՝ իմանալի թշնամիները. ըստ այդմ՝ «Ձեզ իշխանութիւն տուեցի տրորելու օձերին եւ կարիճներին» (Ղուկ. Ժ 19): Իսկ այս ամէնից բարձր անասելի բարութիւնն այն էր, որ իր արիւնը տուեց մեզ փրկելու համար, որի պատճառով արգելեց հին կարգով զոհաբերութեան արիւն թափել, իր արիւնը տուեց մեզ ի ճաշակումն, որ ոչ միայն հրէաները կամ հեթանոսները, այլեւ նրանք, ովքեր նուիրւում են իրեն ամբողջովին մաքուր հաւատով՝ արժանի լինեն նրա շնորհներին:

ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է ասելը՝ «Երկիրը, որ մտնելու էք դուք, անձրեւից է ջուր առնում» (Բ օր. ԺԱ 11) եւ այլն:

Պատասխան. Յայտնի է, որ իրականում եգիպտացիների երկիրը դաշտ է, որը ոռոգում է Նեղոս գետը, իսկ Երուսաղէմը լեռ ու դաշտ է, որ ոռոգւում է անձրեւով, այսինքն՝ Աստծոյ խնամածութեամբ էր լինելու շատ կամ քիչ անձրեւ, ժամանակին կամ անժամանակ՝ նրանց արժանիքների համեմատ:

Եւ նոր օրէնքների երկիրն էլ ոչ թէ հեթանոսների բնական իմաստութեամբ է ոռոգւում, այլ Աստծոյ շնորհով եւ հաւատով է դալարում, նաեւ նրանք, ովքեր առաքինութեամբ են լեռնացել կամ իբրեւ դաշտ հերկուել՝ աւելի կամ պակաս՝ Աստծոյ աչքը տնօրինութեան սկզբից մինչեւ աւարտը նրանց վրայ է

լինելու: Նոյն կերպ եւ Վերին Երուսաղէմի երկիրը ոռոգւում է մի անեզր ծովից՝ Հոգու ամպից եւ իմաստութեան շնորհներից, [որտեղ] հրեշտակների եւ մարդկանց վերին ու ստորին դասերն են:

Եւ տարին այնտեղ յաւիտենական է եւ միշտ, որ ընդգրկում է իր մէջ ժամանակը, որովհետեւ օրը երկրի ժամանակին է վերաբերում, շաբաթը՝ մահուան հանգստին, ամիսը մինչեւ յարութիւնն է. եւ յարութիւն ենք առնելու երեսնամեայ, ինչպէս որ լուսինն է նուազում եւ նորից նորում, իսկ տարին յաւիտենական փառքն է, որի սկիզբը խնամակալութիւնն էր՝ մինչեւ աշխարհի լինելը, իսկ աւարտը՝ անվախճան փառքը:

Հարց. Ի՞նչ է ասելը՝ «Մի՛ եփէք գառն իր մօր կաթի մէջ» (Ելք ԼԴ 26):

Պատասխան. Նախ, որպէսզի սնուցօղը չլինի նրա եփօղը՝ ի խրատ այն բանի, որ սնուցօղը չդառնայ տանջող, եւ օրինութեան խօսքը ոչ ոք չանիծի:

Երկրորդ՝ քանի դեռ որովայնում յղիութիւն է կրում, ոչ ոք չմորթի:

Երրորդ՝ չմորթեն նաեւ քանի դեռ գառը մօր կաթն է ուտում, որովհետեւ այդ ժամանակ մայրական գութը ամենաուժեղն է, ըստ այդմ ասում է՝ «Անդրանիկին եօթ օր թող մօր մօտ» (Ելք ԻԲ 30): Եւ կամ՝ «Ութօրեայ թլփատի՛ր մանկանը եւ ոչ պակաս» (Ղեւտ. ԺԲ 3), որպէսզի երեխայի ճիչը մօր խիղճը չտանջի:

Չորրորդ՝ նշանակում է ծնողի յանցանքների պատճառով չտանջել զաւակին:

Հինգերորդ՝ եւ որ վեհագոյն [իմաստն] է՝ գառը Քրիստոսն է, կաթը՝ օրէնքը, մայրը՝ ժողովուրդը, եւ ասում է՝ մի՛ տանջէք Քրիստոսին օրէնքներով, ինչպէս որ ասում էին. «Մենք օրէնք ունենք, եւ նա պէտք է մեռնի» (Յովհ. ԺԹ 7):

ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ՀԳ

Հարց. Որո՞նք էին մարգարէի նշանները, որի մասին ասում էր. «Ինձ նման մարգարէ է տալու ձեզ, լսեցէ՛ք նրան» (Բ օր. ԺԸ 15):

Պատասխան. Այստեղ մարգարէն խօսում է վեց նշանների մասին, որոնք ճշմարտապէս մեր Տէր Քրիստոսին են մատնացոյց անում:

Նախ՝ որ ասում է՝ «ձեր եղբայրներից», այսինքն՝ ոչ օտարներից, այլ Յուդայի եւ Ղեւիի եղբայրների ազգից:

Երկրորդ՝ որ ասում է՝ «ինձ նման». «նման»-ը օրինակն է, ինչպէս Մովսէսը աստուած կոչուեց, իսկ մեր Տէրը՝ էմմանուէլ (տե՛ս Ես. է 14, Ը 8, Մտթ. Ա 23), որին Հայրը կնքեց Աստուած: Եւ ինչպէս Մովսէսն էր իշխում տարրերին, Տէրն էլ ծովով եւ օդով գնաց, անապատում բազմացրեց հացը եւ ձուկը, ջուրը գինու փոխեց, ժայռերը ճեղքուեցին, լոյսը խաւարեց, քառասնօրեայ պահք պահեց, Թաբօր լեռան վրայ պայծառակերպուեց: Այս բոլորն ուրիշ մարգարէ չարեց,

ինչպէս գրուել է վերը՝ քսաներորդ համարում:

Երրորդ՝ որովհետեւ ասում է՝ Աստծոյ պատգամն ունէր եւ ոչ օտար Աստծոյ: Եւ Քրիստոսն ասում էր՝ «Ինչ լսեցի Հօրից, պատմում եմ ձեզ» (Յովհ. Ը 26): Եւ եկաւ Հօր անունով եւ պատուիրեց միայն Հօրը փառաւորել՝ իբրեւ ճշմարիտ Աստուած:

Չորրորդ՝ նշանն այն էր, որ ասածը պէտք է կատարուէր, եւ մեր Տէրը կատարում էր Աստծոյ գործեր՝ կաղերի, կոյրերի, հիւանդների, մեռածների նկատմամբ. այն, ինչ ասում էր խօսքով, կատարում էր գործով:

Հինգերորդ՝ այն, որ նրանք խնդրում էին երեւալ մարմով, որովհետեւ անկարող էին տանել աստուածային հուրը լեռան վրայ:

Վեցերորդ՝ այն, որ ասում էր, թէ ըստ Աստծոյ հրամանի գնալ: Եւ Հայրը վկայեց՝ «Դա՛ է իմ սիրելի Որդին, նրան լսեցէ՛ք» (Մրկ. Թ 6):

Եւ վկայութեան այս բոլոր նշաններն աչքով տեսան, ականջով լսեցին եւ չհաւատացին, ուստի Աստուած վրէժ պահանջեց նրանցից. կոտորուեցին եւ ցանուցիր եղան. «Աստծոյ աչքից ընկան եւ բոլոր մարդկանց ատելի եղան»:

Այլ տե՛ս, յայտնապէս, որ վկայութեան այդպիսի ակնյայտ նշաններ ո՛չ Յուդան, ո՛չ Դեւդասը[411] չունէին, եւ ո՛չ էլ սուտ Քրիստոս Նեռն է ունենալու, որովհետեւ մարգարէներ չեն, այլ մոլորեցնողներ եւ չարքեր:

Հարց. Ի՞նչ է, որ ասում է. «Անիծեալ է նա, որ կախուած է փայտից» (Բ օր. ԻԱ 23):

Պատասխան. Անառակ որդուն, ով չէր հնազանդւում ծնողներին, օրէնքը քարկոծել էր տալիս (տե՛ս Բ օր. ԻԱ 21): Եւ հայրանարգին, որ ծեծում էր ծնողներին, կախում էին անէծքի փայտից եւ նոյն օրը գերեզման իջեցնում, որ չպղծուեն, որովհետեւ փայտն ու հողը Ադամի պատճառով անիծուել էին. ըստ այդմ՝ «Անիծեա՛լ լինի երկիրը քո գործերում եւ փո՛ւշ բուսնեցնի քեզ համար» (Ծննդ. Գ 18):

Արդ, անիծեալ հայրանարգին նոյն օրը բարձրացնում էին անէծքի փայտի վրայ՝ յանուն հօր եւ դնում անիծուած հողը՝ յանուն մօր: Անառակ որդին մարդկային բնութիւնն է ցոյց տալիս, [իսկ] բոլոր տարրերը մօր փոխարէն հեծեծում եւ հոգոց են հանում մեր ապականութեան պատճառով՝ ըստ առաքեալի (տե՛ս Հռոմ. Ը 22):

Եւ Հայր Աստուած, որի կամքը մենք չենք կատարում, իր մեծ գթութեան պատճառով այնժամ իր Միածին Որդուն ուղարկեց, որ մեր փոխարէն կախուեց փայտից եւ մեզ ազատեց օրէնքի անէծքից, ինչպէս առաքեալն է ասում՝ «Գնեց մեզ օրէնքի անէծքից, յանուն մեզ անէծք եղաւ, ինչպէս գրուած է, թէ անիծեալ է իւրաքանչիւրը, որ կախուած է փայտից» (Գաղատ. Գ 13):

Եւ անէծքն այս չհասաւ նրան երեք պատճառով:

Նախ՝ ինչպէս մեղք եղաւ եւ վերացրեց մեղքը, այդպէս էլ անէծք եղաւ եւ վերացրեց անէծքը:

Երկրորդ՝ անէծքի դատապարտութեան տակ չէր, սակայն յանուն մեզ անիծուեց, ինչպէս չի անիծւում ոչ պարտական մէկը:

Երրորդ՝ որովհետեւ ինքն օրհնութիւն էր, եւ անէծքը նրան հասնելով՝ օրհնութեան փոխուեց, ինչպէս խաւարն է լոյսի փոխւում, մեղքն արդարութեան եւ մահը՝ կեանքի: Ուստի պարզ է, որ փոխեց անէծքի փայտն ու գերեզմանը եւ փայտի ու գերեզմանի օրհնութեան աղբիւր արարեց:

Իսկ ուրիշները մեկնաբանում են, թէ՝ ամէն մի անիծուած կախւում է փայտից, սակայն ամէն մի կախուած չէ, որ անիծուած է, ինչպէս որ սաբեկի ծառից կախուած խոյը անիծուած չէր, անիծուած չէր նաեւ պղնձէ օձը: Այդպէս էլ մեր Տէրն անիծուած չէր:

ԿԱՆԱՆՑ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ՀԴ

Հարց. Ո՞րն էր արձակման թուղթը (տե՛ս Բ օր. ԻԴ 1):

Պատասխան. Մովսէսն օրէնք հռչակեց, որ բաժանման թուղթ տան ամուսնուն եւ կնոջը: Եւ սա նրանց սրտի դաժանութեան պատճառով էր, որպէսզի սպանութիւն չլինի: Եւ արձակուած կինը, սակայն, չպէտք է այլեւս վերադառնար նախկին ամուսնու մօտ, եթէ անգամ վերջին ամուսինը մահանար: Եւ եթէ սա էլ թողնէր, ուրիշները կարող էին ամուսնանալ արձակուած կնոջ հետ:

Իսկ նորում այդպէս չէ, որովհետեւ Քրիստոս հրամայում է՝ «Եթէ Աստուած զուգաւորեց եւ միացրեց, մարդը չպէտք է բաժանի: Եւ նա, ով արձակում է իր կնոջը՝ շնանալու պատճառ է դառնում: Իսկ այն մարդը, ով ամուսնանում է արձակուած կնոջ հետ, շնանում է նրա հետ» (Մտթ. ԺԹ 6-9, Մրկ. Ժ 9): Եւ եզրափակեց, որ օրհնուած պսակն ամենեւին չպէտք է բաժանուի մինչեւ մահ, ինչպէս քահանայի օծումը հոգուց յաւիտեան չի բաժանւում, այդպէս էլ պսակի օրհնութիւնը, որ մարմնի հետ է, չի բաժանւում մինչ մարմնի մահը:

Իսկ, որ բացառութիւն է անում, թէ՝ «եթէ պոռնկութեան չի եղել», այն է նշանակում, որ եթէ որեւէ պատճառով՝ պոռնկութեան կամ այլ բանի, բաժանւում են, ապա երկուսն էլ չպէտք է ամուսնանան, մինչ հաշտուեն: Իսկ եթէ մէկի պատճառով է՝ լինի ամուսինը, թէ կինը, չպէտք է ամուսնանայ, իսկ միւսը, որի պատճառով չի եղել բաժանութիւնը, կարող է ամուսնանալ:

Հարց. Ո՞րն էր [այդ օրէնքի] խորհուրդը:

Պատասխան. Մովսէսի համար պատճառը ժողովրդի խստասրտութիւնն էր, ինչպէս Տէրն ասաց, որ՝ սպանութիւն չլինի:

Իսկ որ արձակուածին առնում էին, սակայն առաջին բաժանուածին կրկին չէին տալիս, նպատակը տղամարդուն եւ

կնոջը վախեցնելն էր, որ բաժանման պատճառ չդառնային:

Իսկ խորհուրդը նրանց օրէնքով էր [պայմանաւորուած], այսինքն՝ փոփոխութիւն էր [սահմանում] էր նրանց օրէնքը, որ եթէ փոխւում էր, այլեւս չէր վերադառնում նրանց օրէնքին: Նոյնն էլ նորի խորհուրդն է, քանի որ կինը անբաժանելի է, որովհետեւ քրիստոնեութիւնը, ինչպէս մկրտութիւնը եւ այլն, անբաժանելի են հոգուց, եթէ անգամ ուրանան լեզուով ու գործով: Եւ եթէ վերադառնում է առաջինի մօտ, ուրեմն ներում եւ թողութիւն է շնորհւում:

Հարց. Ինչո՞ւ, եթէ մի կին բազում տղամարդ էր ունենում, պոռնիկ էր, իսկ եթէ մի այր բազում կանանց յետ էր ամուսնանում, պոռնիկ չէր, ինչպէս հին օրէնքն էր [ասում]:

Պատասխան. Պոռնիկին, որ շնացողն է՝ կին թէ այր, օրէնքը քարկոծել էր տալիս:

Իսկ այն, որ տղամարդուն թոյլատրւում էր բազմաթիւ կանանց յետ ամուսնանալ, իսկ կնոջը՝ ոչ՝ պատճառն այս էր: Նախ, բնական, որ Աստուած կամենում էր ծնունդները շատացնել: Եւ մի տղամարդը կարող է բազմաթիւ կանանցից զաւակներ ունենալ, իսկ մի կինը բազմաթիւ տղամարդկանցից բազմաքանակ ծնունդներ չի կարող ունենալ:

Երկրորդ՝ բարոյական, որովհետեւ կինը եթէ բազմաթիւ ամուսիններ ունի, հարազատ զաւակը չի ճանաչուի, մինչդեռ մի տղամարդը բազմաթիւ կանանցից կարող է ունենալ հարազատ զաւակներ եւ սիրել նրանց:

Երրորդ՝ օրինական, որովհետեւ մի գլուխը կարող է ունենալ բազմաթիւ անդամներ, մինչդեռ հակառակը լինել չի կարող: Այդպէս էլ գլուխ է տղամարդը եւ կարող է բազմաթիւ կանայք ունենալ:

Չորրորդ՝ խորհրդանշական, որովհետեւ մէկն է Քրիստոս փեսան, որ հրէաների ու հեթանոսների եկեղեցուն առաւ իբրեւ իրեն սուրբ հարս: Եւ մէկն է Աստուած, իսկ արարածները՝ բազում: Եւ մէկն է հաւատը, իսկ հաւատացեալները՝ բազում: Ըստ այդմ՝ «Մէկ է Հայր Աստուած եւ մէկ՝ Տէր Քրիստոս, մէկ՝ հաւատը եւ մէկ՝ շատերի մկրտութիւնը» (Եփես. Դ 5),- ասում է առաքեալը:

Իսկ մի մարդը եւ բազում հաւատները, բազմաթիւ աստուածները՝ հոգեւոր շնութիւն է, ըստ այդմ՝ «Շնանում էր Երուսաղէմը քարի ու փայտի հետ» (Երեմ. Գ 9),- որ կուռքերին էր ասում:

Հարց. Ինչո՞ւ սկզբում ասաց, թէ՝ «Քո եղբօր կնոջը մի՛ մերձեցիր» (Ղեւտ. ԺԸ 16), իսկ այժմ ասում է՝ «Թող առնի իր եղբօր կնոջը» (Մտթ. ԻԲ 24):

Պատասխան. Երեքն են բացառութիւնները:

Նախ՝ եթէ եղբայրը մեռնի:

Երկրորդ՝ եթէ եղբայրը կրտսեր է, ինչպէս եօթ եղբայրների մասին առակն է, որ առաջինի հետ ամուսնացաւ, մեռաւ, ապա երկրորդի եւ այս կարգով (տե՛ս Մտթ. ԻԲ):

Երրորդ՝ որ չջնջուի եղբօր յիշատակը:

Իսկ կենդանի եղբօր, կամ փոքր եղբօր կնոջը կամ զաւակ ունենալու դէպքում առնելն անօրէնութիւն էր, ինչպէս Հերովդէսինը, որի մասին Յովհաննէսն ասաց. «Քեզ վայել չէր առնել եղբօրդ կնոջը» (Մրկ. Զ 18), որովհետեւ աղջիկը, որ պարեց, նրա դուստրն էր:

Հարց. Ի՞նչ խորհրդով էին եղբօր անունով զաւակ ունենում:

Պատասխան. Յարութեան խորհուրդն էր ցոյց տալիս, որին նրանք չէին հաւատում, որն առկայ էր «ունենալ» («յարութիւն») անուանման մէջ, այսինքն ունեցի՛ր («յարութիւն տուր») ասելով:

Երկրորդ՝ խորհրդանշում էր կրտսեր եղբօրը՝ Քրիստոսին, որ երկրորդ Ադամն էր, որով մարդիկ յարութիւն կառնեն երկրից:

Երրորդ՝ նոր օրէնքում հին անուան նորոգումով կոչուեցինք Իսրայէլ:

Չորրորդ՝ բնութեամբ Որդին եւ աւազանի շնորհներով նորածնուածները կոչւում են Աստծոյ որդիներ՝ շնորհներով:

Իսկ ոմանք Քրիստոսի մասին ասում են բնութեամբ եւ շնորհներով Որդի, ինչպէս անիծեալ նեստորականները եւ քաղկեդոնականները, որովհետեւ այդ ձեւով լինում են երկու որդի եւ երկու անձ, մինչդեռ մենք Քրիստոսին ընդունում ենք Որդի՝ Աստծոյ բնութեամբ եւ նոյն Որդին՝ մարդու բնութեամբ, որովհետեւ բնութեամբ միաւորուեց մարմնի մէջ եւ բնութեամբ Աստուածը մարդեղացաւ, եւ բնութեամբ Աստուած՝ մարմնով ու ոչ օտար շնորհներով:

Իսկ որ ասում է՝ «Նրան անուն շնորհեց» (Փիլիպ. Բ 9), այն է, որ ասում է՝ «Աստծոյ շնորհը երեւաց իբրեւ Փրկիչ ամբողջ մարդկութեան» (Տիտ. Բ 11), որովհետեւ պարգեւով եւ ողորմութեամբ Աստուած մարդեղացաւ ու փրկեց մեզ:

Այսքանն այս մասին:

ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻՆ ՕՐԷՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Հե

Հարց. Ինչո՞ւ հրամայեց Յորդանանն անցնելիս օրէնք գրել:

Պատասխան. Հեթանոսների համար էր գրել տալիս եւ ոչ հրէաների, որովհետեւ [սրանք] ստացել էին: Նախ՝ որպէսզի հեթանոսներն էլ ողորմութեան արժանանան:

Երկրորդ՝ որպէսզի հրէաների աչքում օրէնքը բարձրանայ: Երրորդ՝ որպէսզի սեղանի փշրանքներից հեթանոսներն էլ կերակրուեն (տե՛ս Մտթ. ԺԵ 27, Մրկ. է 28): Չորրորդ՝ որպէսզի ամբողջովին չօտարուեն: Հինգերորդ՝ որպէսզի յետոյ չպատճառաբանեն, թէ չգիտէին: Վեցերորդ՝ որ փութան ուսումնառութեան եւ դպրութեան: Եօթներորդ՝ որպէսզի Յորդանանն անցնելուց մկրտուեն: Ութերորդ՝ որպէսզի չարի խորխորատներից ելնեն օրէնքների օգնութեամբ, քանի որ Գեբաղ թարգմանւում է՝ «հին ձոր»: Իններորդ՝ ազատուեն կուռքերի հանդէպ ունայն ջանքերից, որ չէին օգնում, քանի որ Գեբաղ նշանակում է «ունայնութիւն»[412]: Տասներորդ՝ որպէսզի ելնելով Գարեզին, որ թլփատութեան եւ հաւատի լեռն է, ազատուեն աւելորդ մեղքերից եւ ստանան Աստծոյ օրհնութիւնը:

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԷԾՔԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ են օրհնութիւնն ու անէծքը:

Պատասխան. Անիծուած ասում է [հոգով] մեռածին եւ սպանուածին, որ օտարացածը եւ հեռացածն է Աստծոյ կեանքից, ըստ այդմ՝ «Ովքեր քեզնից հեռանան, կորչելու եւ սպանուելու են» (Սղմ. ՀԲ 27): Իսկ օրհնուածը Աստծուն ընդունողը եւ նրան փարուողն է, որը կեանք է եւ երանութիւն, Աստծոյ կեանքին օրհնութեամբ ու երանութեամբ հաղորդուելը:

Իսկ թէ որտեղի՞ց են օրհնութիւնն ու անէծքը, [ապա ասենք,] որ Աստծոյ նոյն բարի էութիւնից են առաջ գալիս երկու զօրութիւնները՝ արարչական եւ արքունական, ինչպէս աջ եւ ձախ ձեռքերը:

Սրանցից ողորմութիւնն ու արդար գործն են լինում, որոնք եւ օրհնութիւնն ու անէծքն են Աստծոյ նոյն պատուիրանի ենթակայութեամբ, եւ այս նոյն պատուիրանը պահողին օրհնութիւն է տալիս, չպահողին՝ անէծք, ինչպէս, օրինակ, ճրագը տեսնողին լուսաւորում է, իսկ կոյրին՝ ոչ: Կամ, ովքեր նայում են ճրագին, լոյսը տեսնում են, իսկ հեռացողները, խաւարի մէջ են ընկնում: Իսկ միասին է կարգում, որպէսզի կամ երկնչեն անէծքից, կամ էլ օրհնութիւն ուզեն եւ պահպանեն Աստծոյ օրէնքները:

Հարց. Ինչո՞ւ նախ անէծքը, ապա օրհնութիւնն է դնում:

Պատասխան. Որովհետեւ նախ ծառայական երկիւղն է, ապա՝ մշակի վարձը:

Երկրորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր ոք առաւել սպառնալիքից է երկնչում, քան խոստումներից:

Երրորդ՝ որովհետեւ նախ պէտք է հեռանալ չարից, ապա բարուն մօտենալ:

Չորրորդ՝ Ադամին նախ օրհնութիւն, ապա՝ անէծք տուեց, իսկ այժմ դարձի բերելով՝ աւարտում է օրհնութեամբ:

Հարց. Մենք, որ Մովսէսի օրէնքները չենք կատարում, ի՞նչ ենք լինելու:

Պատասխան. Թէեւ Մովսէսի օրէնքները չենք կատարում, սակայն անէծքի տակ չենք՝ երեք պատճառով: Նախ՝ որովհետեւ ոչ թէ օրինակն ունենք, այլ ճշմարիտ օրէնքը: Երկրորդ՝ ինչպէս որ նրա մարմնաւոր օրհնութիւնը չունենք, այդպէս էլ չունենք անէծքը: Երրորդ՝ այս անէծքը Քրիստոս վերացրեց՝ նախ, բոլոր օրէնքները կատարելով: Երկրորդ՝ գամուելով խաչափայտին՝ անէծքը վերացրեց եւ մեզ օրհնութիւն տուեց, ըստ այդմ՝ «Օրհնուեցինք հոգեւոր օրհնութեամբ երկնաւորների մէջ ի Քրիստոս» (Եփես. Ա 3): Եւ օրհնութեան սկիզբն աւազանն է, վերջը այն, որ ասում է. «Եկէ՛ք իմ հօր օրհնեալներ» (Մտթ. ԻԵ 34): Իսկ անէծքը ակնյայտօրէն հրէաներին է վերաբերում, որոնք չեն կատարում օրէնքը եւ չունեն Քրիստոսի մկրտութիւնը:

Հարց. Ինչպէ՞ս են տարբերւում օրհնութիւնները:

Պատասխան. Աստծոյ օրհնութիւնը երկու տեսակ է՝ երկնաւորների եւ երկրաւորների, որոնք հոգեւորն ու մարմնաւորն են, անցաւորը եւ անանցը:

Արդ, երկու օրհնութիւնը երկու կտակարաններով բաշխեց մարդկանց. ըստ որում՝ մարմնի եւ ունեցուածքի աճը տուեց Իսրայէլին, իսկ հոգու աճը մաքրութեամբ եւ աղքատութեամբ՝ քրիստոնեաներին:

Իսկ եթէ հրէան ասի, թէ Աստուած Աբրահամին մարմնով օրհնեց, նրան ասա, որ դա ընդհանուր է բոլոր հեթանոսների համար, որոնք փարթամանում են մարմնով եւ ունեցուածքով, իսկ մերն ընդհանուր չէ, որովհետեւ արժանաւորներին ու ընտրեալներինն է:

Իսկ եթէ ասեն, թէ օրհնեց ամուսնութիւնը, ապա ասա, որ քահանաներին հրամայեց հրաժարուել ամուսնութիւնից, եթէ տաճարում կամ խորանում ծառայութեան էին մտնում եւ երբ հնազանդւում էին Աստծոյ օրէնքին, երեք օրում մաքրւում էին:

Իսկ եթէ ասեն՝ ինքն է ձեւաւորում սաղմը, ապա ասա, որ բոլոր սաղմերն էլ Աստուած է ձեւաւորում, նաեւ՝ անասունների եւ գազանների, իսկ կոյսերի մօտ հանգստանում է, որոնք մաքրութեամբ նման եղան հրեշտակներին: Այդ պատճառով են ասում, թէ Աստուած բնակւում է երկնքում, ուր կոյս հրեշտակներն են եւ ոչ երկրում, ուր ամուսնացածներն են:

Եւ Եղիան ու Եղիսէն զարմանալի եղան կուսութեամբ, նաեւ աղքատութեամբ, ուստի պարզ է, որ Գէեզիի վրայ եղած անէծքը Նէեմանի ունեցուածքի պատճառով էր (տե՛ս Դ Թագ. Ե 20-27):

Իսկ եթէ ասեն, թէ չափաւոր ամուսնութիւնն ու ունեցուածքը ընդունելի են Աստծուն, ապա ասա, որ չափաւորն ընդունելի է, իսկ անչափը պոռնկութիւն է եւ ագահութիւն, իսկ կուսութիւնն ու աղքատութիւնը որքան աւելանում, այնքան աւելի են գեղեցկանում:

Իսկ եթէ ասեն, թէ բոլոր մարգարէները ամուսնութեամբ ծնուեցին, ասա, որ մարգարէների Տէրը Կոյսից ծնուեց, ինչպէս Եսային է ասում. «Կոյսը յղիանալու եւ ծնելու է» (Ես. է 14):

Եւ եթէ ասեն, թէ՝ ամուսնութիւնը դրախտում օրհնուեց, ապա ասա, թէ կուսութիւնն էլ երկնքում օրհնուեց, որովհետեւ հրեշտակները կուսութեամբ բազմացան, իսկ մարդը զրկուելով հրեշտակների աճելու ձեւից՝ Աստծոյ հրամանով ժառանգեց անասունների բազմանալու ձեւը:

Եւ ի յաւելումն սրա կուսութեամբ ծնուեց մարդ Ադամը հողից, մենք էլ կուսութեամբ ծնւում ենք աւազանից [իբրեւ] Աստծոյ որդիներ եւ կուսութեամբ ծնուելու ենք յարութեան ժամանակ՝ [ստանալու] անմահ կեանք:

Այսքանն այս մասին:

Հարց. Ի՞նչ է նշանակում ասելը՝ «Մի ճանապարհով գալիս, եօթով փախչում են» (Բ օր. ԻԸ 25):

Պատասխան. «Մի ճանապարհը» գալուն է ասում, եօթը՝ փախչելու բազմաթիւ ճանապարհներին:

Նաեւ՝ մէկն է թշնամական խորհուրդը, եօթներորդը փախուստն է այլեւայլ՝ վեց շարժումներից դուրս[413]:

Մէկն է բոլորի չար կամքը, ինչպէս ասուել է, եօթներորդը մեռնելն ու կորստի մատնուելն է, որովհետեւ կեանքը վեց շարժումներով է, իսկ մահը եօթներորդն է՝ սրանից դուրս:

Իսկ մտքում մահու չափ ծանր մեղքերի եօթ իշխաններն են եւ դեւերի գնդերը, որոնց Տէրը քսան հազար նշեց (տե՛ս Ղուկ. ԺԴ 31), տասը զգայարաններում՝ երկու երկու հազարական: Եւ Դաւիթ մարգարէն ասում է՝ ձախ կողմում՝ հազար, իսկ աջ կողմում բիւրաւոր են ընկածները (տե՛ս Սղմ. Ղ 7): Եւ սրանք համերաշխօրէն մարդու վրայ են յարձակւում՝ նրա հոգին կորստի մատնելու համար: Եւ երբ հոգու եօթը զօրութիւնները յաղթում են նրանց, սրանք փախչում են մարդու եօթը զգայարաններից եօթնակի մահացու մեղքերով [հանդերձ]: [Սակայն] սրան կատարեալներն են տիրապետում եւ ոչ թէ մենք՝ տկարներս:

ԿԱԽՈՒԱԾ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ՀԶ

Հարց. Ի՞նչ է նշանակում ասելը՝ «Տեսնելու էք ձեր կեանքը, կախուած փայտից մինչ լուսաբաց ու ցերեկ եւ չէք հաւատալու» (Բ օր. ԻԱ 23, ԻԸ 66):

Պատասխան. Նախ՝ այն, որ մարդու խղճմտանքից է կախուած մահուան արժանացած կեանքը, որ միշտ տեսնում է, սակայն չի հաւատում ու չի դադարում մեղք գործելուց:

Երկրորդ՝ հրէաները գերութեան մէջ պահեցին կտակարանները՝ կախելով ճիւղերից ու չհաւատացին կեանքին, որն ասում էր՝ պահել Աստծոյ պատուիրանների կտակարանները եւ ապրել:

Երրորդ՝ յայտնի եւ ճշմարիտ կեանքը Քրիստոսն է, ըստ այդմ՝ «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յովհ. ԺԴ 6), որին կախեցին մինչ լուսաբաց, ուրբաթ օրուայ ցերեկը եւ չհաւատացին Մովսէսին ու Զաքարիային, որն ասաց. «Նայելու են նրան, ում խոցելու են» (Զաք. ԺԲ 10): Եւ օրուայ մասին ասաց՝ ցերեկ եւ գիշերուայ խաւարում [է լինելու] եւ երեկոյեան՝ դարձեալ լոյս:

Չհաւատացին նաեւ, որ ասաց. «Ինչպէս Մովսէսը օձը բարձրացրեց անապատում, այդպէս էլ պէտք բարձրանայ մարդու Որդին, եւ ով հաւատայ նրան, չի կորչելու, այլ ընդունելու է յաւիտենական կեանք» (Յովհ. Գ 14):

Այլեւ չհաւատացին, որ ասաց. «Երբ ես երկինք բարձրանամ, բոլորիդ տանելու եմ ինձ մօտ» (Յովհ. ԺԲ 32):

Չհաւատացին նաեւ, որ ասաց. «Երբ բարձրացնէք մարդու Որդուն, այնժամ կիմանաք, թէ Ես եմ» (Յովհ. Ը 28), այսինքն՝ կեանքը, որի մասին ասաց Մովսէսը, «տեսնելու էք կախուած», որովհետեւ՝ Մովսէսն իմ մասին գրեց այդ: Եւ եթէ Մովսէսին չհաւատացիք, որ ձեր միջի փառաւորն էր, ինչպէ՞ս էք հաւատալու ինձ, որին թշնամի էք կարծում:

Չորրորդ՝ այժմ էլ աչքով տեսնում են սուրբ եկեղեցին, որ հաւատում է նրանց կողմից կախուած Աստծուն՝ նոյնին՝ մեռած եւ կենդանի, ու դարձեալ չեն

հաւատում. «Որովհետեւ նրանց յիմարութեան ոգի տուեց, աչք, որ չի տեսնում, ականջ, որ չի լսում, քանզի սրտով չեն ընկալում, եւ դարձի են գալու ու բժշկելու է նրանց» (Հռոմ. ԺԱ 8): Որովհետեւ Մովսէսի երեսի քօղը միշտ առագաստ է նրանց սրտերի վրայ, ու չեն հասկանում Խօսքի իմաստը, ուստի չեն հաւատում: Իսկ մենք միշտ պէտք է Քրիստոսին մեր աչքի առջեւ յանուն մեզ խաչուած տեսնենք եւ հաւատանք ու չարչարակից լինենք նրան ամէն ժամ. ըստ որի՝ «Քրիստոսի մահը մեր մարմնով ենք կրելու, որպէսզի Յիսուսի կեանքը մեր մահկանացու մարմիններում յայտնուի» (Գաղատ. Զ 17): Եւ թէ՝ «Քրիստոս մարմնով չարչարուեց յանուն մեզ, դուք էլ նոյնով զինավառուէք» (Ա Պետ. Դ 1),- ասում է առաքեալը:

Հարց. Ի՞նչ է, որ ասում է. «Գաղտնին Տէր Աստծունն է, յայտնին՝ մերը եւ մեր որդիներինը» (Բ օր. ԻԹ 29):

Պատասխան. Այսինքն՝ այն ամէնի մասին, որ ծածկուած է մեզնից՝ չար կամ բարի, չենք կարող ասել: Իսկ ինչ մեզ յայտնեց, սովորեցնում ենք մեր որդիներին: Չենք կարող քննել նաեւ աստուածայինը, այլ՝ «Ինչ յայտնում է ինձ, պատմում եմ ձեզ» (տե՛ս Յովհ. ԺԶ 13-15):

Դուք էլ մի՛ համարձակուէք քննել աստուածային գաղտնիքը, այլ այն, ինչ յայտնում է ձեզ, սովորեցրէք ձեր որդիներին:

Մի՛ քննէք նաեւ Սուրբ Գրքի խրթին եւ ծածուկ իմաստները, այլ ինչպէս ուրիշ տեղերում է ասում՝ «Նրա ոսկորը մի՛ կոտրէք» (հմմտ. Սղմ. ԽԱ 11), այլ յայտնէք մատչելին, որովհետեւ եթէ ամէն ինչը քննենք, Աստծուն ի՞նչն ենք թողնելու յետոյ:

Եւ օրէնքում էլ յայտնին էր, որ սովորեցրեց, իսկ աւետարանուող խօսքը ծածկիմաստն է, որ յայտնում է Սուրբ Հոգին՝ Աստծոյ խորքերը քննելու համար (Ա Կորնթ. Բ 10), եւ «Բանը, որ կրում է իր ամբողջ զօրութեամբ» (Եբր. Ա 3):

Իսկ մեր մէջ նախ ծածկուած խոհուն միտքն է, որովհետեւ Աստուած քննում է սրտերը, ապա առաջ բերուած, արտաբերուած խօսքը, որովհետեւ ասում է՝ «Լսելով ենք դատում» (հմմտ. Հռոմ. Ժ 17): Երկրորդ՝ ծածուկ է ապագայի գործը, յայտնի՝ անցեալը եւ ներկան: Երրորդ՝ երեքն են Գրքի իմաստները՝ անհասանելի, դժուարամատչելի եւ մատչելի: Անհասանելին անիմանալին է եւ մեզնից ծածկուածը: Դժուարամատչելին, որ որոշ չափով է յայտնում մեզ: Մատչելին պատմում ենք միւսներին: Չորրորդ՝ ծածուկ են բոլոր աստուածայինները, յայտնի՝ արարածների գիտելիքները: Հինգերորդ՝ ծածուկ է աստուածային բնութեան էութիւնը, յայտնի՝ դէմքերինը եւ անձերինը, որովհետեւ հաւատում ենք, որ էն է, սակայն ինչ եւ ինչպիսին լինելը, գաղտնի է մնում:

Նոյնպէս եւ այն, ինչ պատրաստել է սիրելիների փառքի եւ չարերի տանջանքի համար, այս կեանքում անիմանալի է:

ԱՍՏԾՈՅ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Հէ

Հարց. Ի՞նչ է Աստծուն օրհնելը:

Պատասխան. Երեք իմաստ ունի Աստծուն օրհնելը:

Նախ շնորհակալ լինելն է եւ գոհանալն Աստծոյ տուած երախտիքի փոխհատուցումով, որի կարիքը նա չունի, որովհետեւ անկարօտ է՝ իբրեւ Աստուած:

Երկրորդ՝ խոստովանութիւն եւ վկայութիւն է, իբրեւ թէ բնութեամբ բարի ես, երջանիկ եւ այլն:

Երրորդ՝ յայտնել նշանակում է, որ Աստուած յայտնի է եւ ոչ ծածուկ կամ թաքուն:

Եւ երեք կերպ է յայտնի Աստծոյ գոյութիւնը. Նախ՝ բանական պարգեւների միջոցով, ինչպիսին հրեշտակները եւ մեր հոգին են: Երկրորդ՝ Աստուած տեսանելի է արարչագործութիւնների մէջ, որովհետեւ երեւացող արարչագործութիւնները յայտնում են նրա մասին: Երրորդ՝ մարդու եւ կենդանիների խնամածութեամբ, որ ցոյց է տալիս, թէ նա է Արարիչը, որ խնամում եւ հոգ է տանում սրանց:

Այդպէս եւ մարդկանց օրհնութիւնը, որ գերագոյնն է մեզանում, շնորհակալութիւն եւ գոհութիւն է, ինչպէս սրբերին կամ թագաւորներին եւ այլն: Եւ ամենակարող չեն, քանի որ արարած են եւ Աստծոյ կարիքն ունեն: Այդ պատճառով ի Աստուած օրհնում ենք սրանց եւ գոհանում:

Երկրորդ՝ ներքեւիններին օրհնելով՝ հաղորդակցւում ենք Աստծոյ բարութիւններին՝ ողորմութեանը, պարգեւներին կամ միւս շնորհներին. այս կերպ օրհնում ենք քահանաներին, ժողովրդին, մեռեալներին, ողջերին:

Երրորդ՝ յայտնում ենք նրանց փառքը, պատիւը, հանգիստը եւ այլն: Այս եղանակով օրհնում ենք հրեշտակներին, սրբերին, խաչը եւ այլն:

Հարց. Ովքե՞ր են ապաշնորհն ու ապերախտը:

Պատասխան. Հակառակ կողմից գանք:

Նախ՝ շնորհակալ ենք լինում հոգով, գոհանում ենք մարմնով: Երկրորդ՝ հոգեւորին՝ շնորհակալութիւն, նիւթականի համար՝ գոհութիւն: Երրորդ՝ խոստումներին՝ շնորհակալութիւն, պարգեւների համար՝ գոհութիւն:

Իսկ չանելով սրանք՝ ապաշնորհ եւ ապերախտ են գտնւում թէ՛ Աստծոյ, եւ թէ՛ մարդկանց նկատմամբ:

Հարց. Ի՞նչ են նայելը, հայելը, տեսնելը:

Պատասխան. Նայելը վերեւից դէպի ներքեւ է, ինչպէս ասում է՝ «Երկինք նայի՛ր» (Բ օր. ԼԲ 1), իսկ հայելը՝ ներքեւից վերեւ, ըստ այդմ՝ «Հայեացք նետեցի դէպ բարձունքներ» (Ես. ԼԸ 14), տեսնելը՝ հաւասարներին:

Եւ նայելն ու հայելը հոգեւոր են, ըստ այդմ՝ «Հայեացք ուղղի՛ր քո մէջ» (Բ օր. Դ 9) եւ «Ժողովուրդ, նայեցէ՛ք իմ օրէնքներին» (Սղմ. Հէ 1), իսկ տեսնելը

մարմնաւորն է, ըստ այդմ՝ «Տե՛ս քո աչքերով» (Բ օր. Գ 27):

Բացի այդ, նայելն ու հայելը առանձնայատուկ տեսնելն են, իսկ տեսնելը՝ միայն զգայականն է, որովհետեւ ասում ենք՝ «տե՛ս համն ու հոտը», «խօսքդ տե՛ս», «տե՛ս, ջե՞րմ է կամ ծա՞նր է»:

Հարց. Որո՞նք են պարարտութեան տեսակները:

Պատասխան. Չորսը:

Նախ՝ անմիջապէս երկրից, ինչպէս նաւթը: Երկրորդ՝ բոյսերից եւ պտուղներից, ինչպէս ձէթը եւ այլն: Երրորդ՝ կենդանիներից կիթը, ինչպէս կաթն ու ձուն: Չորրորդ՝ կենդանիների մարմինները, որոնք պարարտ են, քան մնացած ամէն ինչը, ուստի պարկեշտները մսից հրաժարւում են, որպէսզի աւելի չգիրանան ու չգազանանան:

Նոյնքան էլ լոյսի աղբիւրներն են:

Նախ՝ անմիջապէս հողից, ինչպէս փայտը: Երկրորդ՝ պտուղներից, ինչպէս ձէթը: Երրորդ՝ ծաղիկներից, ինչպէս մոմը: Չորրորդ՝ կենդանիներից, ինչպէս ճարպը, որ ուրիշներից աւելի զուլալ եւ լուսաւոր է:

Հարց. Ինչո՞ւ է բնաբանը բնագրում ուրիշ, սաղմոսներում՝ ուրիշ:

Պատասխան. Երկու՝ յունական եւ ասորական թարգմանութիւն ունենալու պատճառով է, որովհետեւ յունարէնում «սէ» է, ասորերէնում՝ «շա», եւ նոյն բանն է ասելը «անգոսնեաց» կամ «անգուշնեաց»:

Եւ որոշ բաներ էլ կան մեկնիչների կողմից ուղղուած, սակայն իմաստը նոյնն է:

ՎԵՐՋԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ է կոչւում աւագ օրհնութիւն (տե՛ս Բ օր. ԼԳ 1-43), որովհետեւ Յակոբը եւս օրհնեց իր որդիներին, ինչպէս եւ Իսահակը եւ ուրիշներ:

Պատասխան. Աւագ է կոչւում, նախ որովհետեւ Մովսէսն աւագ էր եւ բոլոր մարգարէներից առաջինը: Եւ օրհնութիւնն էլ էր աւագ, որովհետեւ նրա բերանից օրհնութիւնն առաջ եկաւ այն բանից, որ Աստուած դէմ յանդիման խօսել էր նրա յետ եւ ոչ թէ առակներով:

Երկրորդ՝ որովհետեւ միայն Մովսէսը աստուած կոչուեց (տե՛ս Ելք է 1) եւ ոչ միայն անուամբ, այլեւ գործով իշխում էր տարերքին՝ վերեւում ու ներքեւում. ուստի [նրա] օրհնութիւնը կոչւում է «աւագ օրհնութիւն»:

Երրորդ՝ աշխարհի վախճանի ու վերջին օրհնութեան մասին էր պատմում՝ արդարներին պատուի եւ մեղաւորների տանջանքի:

ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՍ Է ԲԱՐԿԱՆՈՒՄ ՊՐԱԿ ՀԸ

Հարց. Մեր բարկութիւնը ախտաւոր է եւ չար, իսկ Աստուած բնութեամբ բարի է եւ անախտ, այդ դէպքում ինչպէ՞ս է բարկանում:

Պատասխան. Աստուած բնութեամբ բարի է եւ այն բարութիւնը չէ, որ մերն է՝ փոփոխական ու ախտաւոր, այլ անփոփոխ եւ յաւիտենական եւ համակ

բարի: Եւ պարզ է սրանից, որ բարկութիւնը բորբոքուած հուր է՝ ոչ էութիւնից է եւ ոչ իր կամքից, այլ՝ բարկութիւնից, որովհետեւ Աստծոյ թէ՛ կամքը, թէ՛ բնութիւնը, եւ մնացած ամէն ինչ բարի են: Եւ այս երկուսը մեզ այցելելով՝ երբ չարերին բարիք է անում, ողորմութիւն է, երբ բարիներին՝ բարի ու չարերին՝ չար, արդարութիւն է: Իսկ բարուն չար անելը անիրաւութիւն է, որ երբեք Աստուած չի անում ո՛չ այս կեանքում, ո՛չ էլ հանդերձեալում:

Եւ ուրեմն բարկութիւն չկայ Աստծոյ մէջ, այդպէս են ասում սուրբ վարդապետները:

Նախ՝ որ Աստուած բնութեամբ բարի է եւ բարկութիւն չունի, որովհետեւ բարի պտղով ծառը չար չի կարող լինել, այլ մենք ենք մեր գործերով զայրացնում նրան ու բարկութիւն գցում նրա բարի կամքի մէջ:

Երկրորդ՝ ինչպէս որ մեր բնութիւնն էր բարի՝ բարու պատկեր լինելով, եւ մենք մեր կամքով ախտաւոր դարձրեցինք՝ չարը ներմուծելով, այդպէս էլ Աստուած, որ անախտ է, բարկացած եւ սրտմտած է ձեւանում, որ մեզ վերադարձնի սկզբնական բարուն:

Երրորդ՝ պարզ է սրանից, որ եթէ այդ բարկութիւնը գործ չի դառնում, չար չէ, ըստ որում մեզ էլ ասաց՝ «Եթէ բարկանաք խօսքով, գործով մի՛ մեղանչէք» (Եփես. Դ 26). Աստծոյ բարկանալն էլ սպառնալն է, սրտմտելը՝ գործը:

Չորրորդ՝ պարզ է, որ թէպէտ սրտմտում է, իր միջից չէ, այլ մենք ենք հրահրում դէպի գործը՝ մեր դարձի չգալով: Եւ հասկանալի է, որ երբ սպառնալուց յետոյ դառնում ենք մեղքերից, նա չի սրտմտում:

Իսկ սրտմտութիւնը գործի է վերածում չորս պատճառով:

Նախ՝ որպէսզի չարհամարհենք սաստելը՝ իբրեւ թէ լոկ խօսքեր են:

Երկրորդ՝ ի խրատ մեղաւորների, որպէսզի երբ տեսնեն, որ մեղաւորների ճանապարհը չի յաջողւում, հրաժարուեն մեղքերից:

Երրորդ՝ որպէսզի մասնակիօրէն ստանան հանդերձեալի առհաւատչեան՝ տանջուելով այս կեանքում սովից, պատերազմներից, գերութիւնից:

Չորրորդ՝ այս ամէնից պարզ է, որ բարկութեան սպառնալիքը բարի է եւ դարձի բերող: Բարի է նաեւ սրտմտութիւնը եւ խրատող: Այդպէս էլ հանդերձեալի պատուհասն է լինելու բարի եւ արդար:

Եւ նման չեն Աստծոյ եւ մարդկանց սպառնալիքները, որովհետեւ մարդունը դատարկաբանութիւն է, իսկ Աստծոյ սպառնալիքը զարհուրելի խօսք է, որից լսողները կազատուեն, իսկ չլսողները կընկնեն մէջը:

ԿՏԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ ՀԹ

Հարց. Մահամերձ հայրերն ու առաջնորդներն ինչո՞ւ են օրհնում մնացողներին, ինչպէս Մովսէսը, Յակոբը եւ միւս նահապետները:

Պատասխան. Կտակ են գրում եւ օրհնում:

Նախ՝ որպէսզի կտակով մարմնաւորը կարգաւորեն, իսկ օրհնութեամբ՝ հոգեւորը: Երկրորդ՝ որովհետեւ վերջին խրատն ու օրհնութիւնը մնայուն են: Երրորդ՝ որովհետեւ սկսելով մարմնաւորից՝ վերջանում է հոգեւորով: Չորրորդ՝ մարմնաւոր մահը վախճանն է մարմնական կեանքի եւ սկիզբը՝ հոգեւորի, որի համար էլ օրհնում է: Հինգերորդ՝ ցոյց է տալիս, որ մարմնական օրէնքների վերջը հոգեւորն է եւ օրհնութիւնը, որ Քրիստոսով եղաւ: Վեցերորդ՝ Քրիստոսի խորհրդով, որ օրհնեց աշակերտներին եւ համբարձուեց: Եօթներորդ՝ վախճանին ասելու է. «Եկէ՛ք իմ Հօր օրհնեալներ» (Մտթ. ԻԵ 34), որոնք մտնելու են փառքի մէջ:

Այս են նշանակում կտակն ու օրհնութիւնը վախճանուելու ժամանակ:

Հարց. Յակոբն անիծեց Ռուբէնին. Մովսէսն ինչո՞ւ օրհնեց:

Պատասխան. Նախ՝ ամբողջը անէծք չէր, այլ մի մասը օրհնութիւն էր: Երկրորդ՝ որովհետեւ Ռուբէնն ապաշխարեց: Երրորդ՝ որովհետեւ անէծքը Դադանն ու Աբիրոնը կրեցին: Չորրորդ՝ որովհետեւ Յակոբն արդէն վախճանուել էր: Հինգերորդ՝ Մովսէսը բարձր էր Յակոբից կամ հաւասար նրան:

Եւ տե՛ս, որ Ղեւին էլ օրհնուեց, որովհետեւ ապաշխարեց սիկիմացիների արիւնից՝ կռապաշտ եղբայրների արեան փոխարէն: Իսկ Շմաւոնը չէր ապաշխարել, որի պատճառով էլ չօրհնուեց: Ու Զամբրին եւս Շմաւոնի ազգից էր:

Այս ամէնից պարզ է, որ եթէ մերժուածն ապաշխարի, կամ եթէ անիծողը վախճանուած է, եւ կայ մէկը, որ բարձր է կամ հաւասար անիծողին, կարող է արձակում տալ:

Հարց. Ի՞նչ է [նշանակում] ասելը՝ «Ռուբէնը թող ապրի՝ չմեռնի» (Բ օր. ԼԳ 6):

Պատասխան. Նախ, Ռուբէնի ցեղի մասին է ասում՝ փոխելով անէծքն օրհնութեան: Երկրորդ, ի դէմս անդրանիկի՝ Քրիստոսի, ըստ որի՝ «Չենք մեռնելու, այլ ապրելու»: Երրորդ, ընդհանուր յարութեանն է վերաբերում, որի մասին, երբ սատանան լսեց, ողնաշարը կոտրուեց. ինչպէս առաքեալն է ասում՝ «Մահը թագաւորեց Ադամից մինչ Մովսէս» (Հռոմ. Ե 14):

Եւ նախ այն է միտքը, թէ յարութեան մասին այստեղ ասաց: Երկրորդ՝ որ երեսները լուսաւորուեցին, ինչպէս Ադամինը՝ դրախտում եւ յարութեան ժամանակ: Երրորդ՝ օրէնքը, որ Մովսէսի ձեռքին էր, խափանիչ էր մեղքերի ու մահուան: Չորրորդ՝ մահը, այսինքն՝ սատանան, յաղթեց Ադամին, իսկ Մովսէսի մարմնին չկարողացաւ յաղթել, որին օգնեցին հրեշտակները, ինչպէս կասուի առաջիկայում: Հինգերորդ՝ Մովսէսն օրինակ էր, Քրիստոսը՝ ճշմարտութիւն, որով ջախջախուեց մահը, եւ թագաւորեց կեանքը: Վեցերորդ, [նաեւ] ըստ իմաստի է, որովհետեւ Մովսէս նշանակում է «ջրից ծնուած»[414], այսինքն՝ նրանք, ովքեր

աւազանով չեն ծնուում, մահուան իշխանութեան տակ են:

ՄՈՎՍԷՍԻ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ Չ

Հարց. Ի՞նչ էր նշանակում պատերազմը Մովսէսի մարմնի համար:

Պատասխան. Փեգովրան կուռքերի վայր էր, եւ դեւերը թոյլ չէին տալիս թաղել մարմինը, մինչեւ որ Միքայէլ հրեշտակապետը սաստեց՝ ասելով՝ «Տէրը սաստելու է քեզ» (Յուդա Ա 9), որ յայտնի է Ընդհանրական վերջին թղթից:

Եւ սրա վերաբերեալ բազմաթիւ տեսակէտներ են արտայայտել եկեղեցու վարդապետները:

Նախ՝ ասում են, թէ նիւթն աստուած կարծեցին. սատանան, իբրեւ նիւթի տէր, խաբում էր, թէ իմն է այս մարմինը, որի պատճառով ասաց՝ «Սաստելու է քեզ» նա, ով Տէրն է հոգիների ու բոլոր մարմինների:

Երկրորդ՝ Մովսէսի հոգին սատանան չէր կարող յափշտակել, ուստի ջանում էր հոգու փոխարէն մարմինը յափշտակել եւ վիճում էր հրեշտակի հետ, թէ՝ իմն է, իսկ երբ հրեշտակապետը սպասաւորութեան [իջաւ] Տիրոջ անունից՝ սաստելով: Այդ ժամանակ ամպի նման լոյս ծագեց այդ տեղում ու մարեց չարի երեւումը: Ապա նրա մարմինն իր մէջ պարուրելով՝ առանձնացրեց ժողովրդից, որ չիմանան ուր թաղուելը:

Ասում են, այդ օրուանից էլ ամպի հովանին վերացաւ նրանց միջից:

Երրորդ՝ լեռան վրայ վախճանուած Մովսէսի մարմինը, երբ Միքայէլ հրեշտակապետը փոխադրում էր, սատանան սկսեց սրբին հայհոյել ու սպանող անուանել, եգիպտացիներին հարուածներ տալու համար, որի պատճառով հրեշտակապետը սաստեց նրան:

Չորրորդ՝ տեսնելով Մովսէսին աւելի փառաւորուած՝ նրա վախճանուելուց յետոյ Աստծոյ կամքով թոյլ տրուեց յանդգնելու բանսարկուին, որ մեղքերի մէջ զրպարտի Մովսէսին, որպէսզի նրան գերազանց պատիւ չտան՝ Աստծոյ տեղ դնելով:

Հինգերորդ՝ սրա մասին է, որ ասում է Պօղոսը. «Թագաւորեց մահը Ադամից մինչ Մովսէս» (Հռոմ. Ե 14). այն, որ Ադամի յետ պատերազմեց ու յաղթեց, այստեղ թոյլ գտնուեց ու պարտուեց: Եւ Հոգու փոխարէն հրեշտակային օգնութեան կարիքը եղաւ՝ ցոյց տալու բնութեանը տիրապէս իշխողին, որը եւ կշտամբեց բռնութեամբ նրա թագաւորելը:

Վեցերորդ՝ Մովսէսի թաղման ժամանակ Միքայէլն էր սպասաւորում, որին սատանան հակառակում էր Աստծոյ թոյլտուութեամբ[415]: Սա նշանակում է, թէ մարմնից հոգու դուրս գալու եւ վերին տարածքները գնալու ժամանակ սատանան հակառակում է, եւ չար զօրութիւններն էլ՝ նրա յետ, որպէսզի իրենց հետ տանեն չար գործածներին եւ արդարներին էլ են յաղթեն հրեշտակի օգնութեամբ, ինչպէս Անտօնը տեսաւ[416],

եւ որի մասին իմանալով՝ մենք զգուշանում ենք դրանից:

Եօթներորդ՝ ոմանք էլ ասում են, թէ Մովսէսի մարմինն օրէնքն էր, որին բերելու ժամանակ սատանան հակառակում էր, որպէսզի ժողովուրդը խոտան ու անարժան լինի, որի համար էլ Միքայէլը՝ ժողովրդի վերակացուն, հալածում էր նրան:

Ութերորդ՝ ոմանք էլ ասում են, թէ Մովսէսի մարմինը Եգիպտոսից ելնող ժողովուրդն էր, որ հակառակում էր Եգիպտոսից նրանց ազատելու համար:

Իններորդ՝ Տիրոջ այլակերպութեան ժամանակ, երբ հրեշտակապետը բերեց Մովսէսին, սատանան ասաց հրեշտակին, թէ Աստուած ստեց՝ Մովսէսին երկիրը մտցնելու [հարցում], ուր երդուել էր չմտցնել նրան:

Տասներորդ՝ ի սկզբանէ հայհոյիչ ու աստուածամարտ էր սատանան, որի պատճառով մարդկանց կործանում է մեղքերով, ուստի Տէրը վճիռ եւ սաստ կարդաց նրան ու դատապարտեց մեղքն իր իսկ մարմնում (հմմտ. Հռոմ. Ը 3) եւ իր մահով վերացրեց մահը եւ որ մահուան վրայ իշխանութիւն ունէր:

Այսքանն այս մասին:

Հարց. Ինչո՞ւ չգիտեն Մովսէսի գերեզմանի տեղը:

Պատասխան. Նախ, որպէսզի չարհամարհուի մեռած աստուածը:

Երկրորդ՝ որ չտկարանայ օրէնքը, երբ տեսնէին երեսի լոյսը նուաղած:

Երրորդ՝ որ ժողովուրդն ըստ իր սովորոյթի արձան չկանգնեցի վրան:

Չորրորդ՝ որ այլազգիները ոսկորները ցիրուցան չանեն:

Հինգերորդ՝ որ ժողովուրդը նշխարներից չվերցնի ու պատկերներ պատրաստի, այդ պատճառով էլ ամպով ծածկեց նրան, ինչպէս որ մեր Տիրոջ համբարձման ժամանակ ամպը նրան ծածկեց նրանց աչքերից (տե՛ս Գործք Ա 9): Այս խորհրդով է, որ քահանաներին թաղելիս վարագոյրով ծածկում ենք:

Հարց. Ինչո՞ւ երեսուն օր սգացին:

Պատասխան. Երեսուն օրը լուսնի [լրման] օրերն են, երբ փոխում է տխրութիւնը ու գալիս դէպ լոյս: Եւ իր փոփոխմամբ նախ ցոյց է տալիս այս փոփոխական կեանքը, իսկ արեգակը անփոփոխ է, որ հանդերձեալն է:

Երկրորդ՝ խորհրդանշում է մեր մահն ու յարութիւնը, որ երեսուն տարեկան հասակով ենք յառնելու, ինչպէս որ Ադամը երեսնամեայ ստեղծուեց: Եւ եթէ պատուիրանը պահպանէր, յաւիտեան անծերանալի կմնար:

Արդ, սգոյ օրերը տարուայ մէջ երեսուն օր էին: Նախ սգում էին երեսնամեայ այն հասակը, որից մեղքի պատճառով զրկուեց: Երկրորդ՝ փոփոխական կեանքն են սգում եւ հանդերձեալ յարութեան յոյսով դադարում սգալուց եւ ուրախանում: Երրորդ՝ որովհետեւ երեսունը երեք տասն է, քանի որ տասն են զգայարանները՝ մարմնի, հոգու, մտքի, որոնք քայքայւում են, ուստի երեսուն օր են սգում:

Հարց. Ինչո՞ւ չթորշոմեցին Մովսէսի ծնօտները:

Պատասխան. Նախ, որովհետեւ Աստծոյ յետ խօսեց, տեսաւ եւ լսեց խօսքը:

Երկրորդ՝ աստուած էր յորջորջուել (տե՛ս Ելք է 1), ուստի զգայարանները չպէտք է տկարանային:

Երրորդ՝ հանդերձեալ յարութեան խորհուրդն էր իրենով ցոյց տալիս, որից մեզ բոլորիս մաս կհասնի՝ ի փառս երկնքի արքայութեան Յիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ մէջ. ամէն:

Հարց. Քանի՞ տարուայ պատմութիւն են ընդգրկում Մովսէսի հինգ գրքերը:

Պատասխան. Ըստ Եօթանասնից՝ երեք հազար եօթ հարիւր երեսուն տարուայ պատմութիւն, իսկ ըստ Եւսեբիոսի՝ երեք հազար ութ հարիւր յիսուն[417]. պակաս թիւը Արփաքսաթի որդու եւ Սաղայի հօր Կայնանի հարիւր քսան տարին է, որին յիշում է Ղուկասի աւետարանը եւ Մնացորդաց գիրքը (տե՛ս Ղուկ. Գ 36, Ա Մնաց. Ա 24), սակայն չի յիշում Մովսէսը, որովհետեւ ասում են կռապաշտութեան սկիզբը նրանից է եղել:

Հարց. Մովսէսը մեծամեծ նշաններ ցոյց տուեց, ինչպէս եւ միւս մարգարէները. մեր Փրկչի նշանները ինչո՞վ են առաւել նրանցից:

Պատասխան. Մարմնական այն նշանները, որոնք կատարեց, պակաս չէին, քան նրանցը, ինչպէս որ կաւով աչքը բացելը, մեռեալին յարութիւն տալը, անշունչ նկանակը բազմացնելը, որոնք Մովսէսը չարեց: Եւ սակայն ամենաառաւելն այն էր, որ Քրիստոս հոգիներն ազատեց դժոխքից եւ Աստուած լինելով՝ մարդեղացաւ ու խաչուեց, որ գերազանց է, քան միւսները:

Եւ Մովսէսն էլ, երբ եկաւ Թաբոր լեռան վրայ, վկայեց նրա մասին եւ աղերսեց խաչի վրայ բարձրանալ ու բանալ արքայութեան դուռը, որին սպասում էին մարգարէները:

ԹԷ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ ԽՕՍԵՑ ԱՍՏՈՒԱԾ
Պրակ ՁԱ

Հարց. Աստուած քանի՞ անգամ խօսեց բոլոր հայրերի հետ:

Պատասխան. Ադամի եւ Եւայի հետ՝ հինգ:

Կայենի հետ՝ չորս:

Նոյի հետ՝ վեց, [նրա] որդիների հետ՝ երկու:

Աբրահամի հետ՝ ութ:

Իսահակի հետ՝ երեք:

Յակոբի հետ՝ հինգ:

Լաբանի հետ տեսիլքով՝ մէկ:

Մովսէսի հետ՝ հարիւր վաթսուն չորս:

Ահարօնի հետ առանձին՝ եօթը:

Մովսէսի եւ Ահարօնի հետ՝ տասնհինգ:

Մովսէսի, Ահարօնի եւ Մարիամի հետ՝ մէկ:

Մովսէսի եւ Եղիազարի՝ երկու:

Հագարի հետ՝ չորս:

Բաղաամի հետ՝ վեց. հրեշտակի միջոցով՝ երկու, էշի միջոցով՝ մէկ:

ԱՐԱՐՉԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ՁԲ

Հարց. Քանի՞ անուններ են տրւում Արարչին Մովսէսի գրքերում:

Պատասխան. Արարչի բոլոր անունները միանգամից տրւում են հենց սկզբում՝ Արարածոց գրքի հինգ գլուխներում.

«Աստուած»՝ հինգ հարիւր հինգ անգամ, «Տէր»՝ հազար հարիւր հինգ անգամ, «Աստծոյ»՝ երկու հարիւր իննսունմէկ, «Տիրոջ» հազար ութսուներեք, «Աստուածով»՝ մէկ, «Տիրոջից»՝ քառասունվեց անգամ:

Աւարտուեց «Գիրք հարցմանց»-ի վեցերորդ հատորը՝ Մովսէսի հինգ գրքերի մասին՝ ի փառս Յիսուս Քրիստոսի, մեր Աստծոյ, որ յաւիտեանս օրհնեալ է, Ամէն:

«ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ, ՈՐՆ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է ՅԵՍՈՒԻ, ԴԱՏԱՒՈՐԱՑ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱՑ ՉՈՐՍ ԳՐՔԵՐԸ

Առաջին՝ գետի բաժանուելու մասին:

Երկրորդ՝ գայլախազով թլփատելու եւ Աքարի մասին:

Երրորդ՝ լուսատուներին կանգնեցնելու մասին: Այն մասին, որ չկոտորեց բոլոր թագաւորներին եւ Ղեւիի ցեղին բաժին չտուեց:

Չորրորդ՝ Յեսուի եւ Տիրոջ համեմատութիւնը երեսուն կէտով:

Հինգերորդ՝ դատաւորների եւ նրանց տարիների մասին:

Վեցերորդ՝ գեղմի, ցօղի եւ Գեդէօնի մասին:

Եօթներորդ՝ Սամսոնի եւ Տիրոջ համեմատութիւնը՝ երեսունհինգ կէտով:

Ութերորդ՝ ի՞նչ են վակասը, տան կուռքը, եւ որո՞նք էին Հեղիի որդիների մեղքերը:

Իններորդ՝ տապանակի գերեվարումը. Դագոնի կործանումը. նստատեղի ուռուցքները. [տապանակի] վերադարձումը եօթ ամսից:

Տասներորդ՝ Սաւուղի եւ Տիրոջ համեմատութիւնը՝ տասը կէտով: Թիկնոցի պատռելը եւ հարցնելը՝ «Ո՞ւմ որդին է Դաւիթը»:

Տասնմէկերորդ՝ Դաւթի սուրբ հաց ուտելը. Աբիմելէք եւ Աբիաթար:

Տասներկուերորդ՝ այն մասին, որ սուտ են վհուկները, եւ դեւերը չգիտեն ապագան:

Տասներեքերորդ՝ կոյրերը եւ կաղերը Դաւթին հակառակ եղան:

Տասնչորսերորդ՝ տապանակի վերադարձը՝ եօթ տեսակ պարով:

Տասնհինգերորդ՝ Դաւթի մեղքերի եւ թողութեան մասին: Խոստովանած մեղքը ոչնչանում է:

Տասնվեցերորդ՝ Բերսաբէի զաւակի մեռնելը: Դաւթի փախչելը: Սիմէին պատասխան չտալը, որ նախատում էր նրան, որովհետեւ ըստ սուրբ Եփրեմի՝ ապաշխարութիւնն է մեղքերի հատուցումն ու նիւթեղէն պսակը: Եւ թէ՝ ովքե՞ր են նման Ադամին մարմնով: Եւ Բեթղէհէմի ջուրը:

Տասնեօթներորդ՝ մահի սատակելը. երեք պատուհասից մէկն ուզելը:

Տասնութերորդ՝ Դաւթի եւ Տիրոջ համեմատութիւնը՝ ութսուն կէտով:

Տասնիններորդ՝ Դաւթի սառչելը. Աբիսակին չմերձենալը. Յովաբին եւ Սիմէին սպանելու հրամանը:

Քսաներորդ՝ Դաւթին հրաման չտալը տաճարը շինելու վերաբերեալ: «Հազարի միջից մի տղամարդ գտայ, իսկ կանանց միջից՝ ոչ մէկ»: Վաթսուն թագուհիներ եւ ութսուն հարճեր:

Քսանմէկերորդ՝ Սողոմոնի եւ Տիրոջ համեմատութիւնը երեսուն կէտով:

Քսաներկուերորդ՝ Հարաւի թագուհին: Սողոմոնից առաւել լինելը. տասական կէտերով:

Քսաներեքերորդ՝ այլ մարգարէների մասին: Մարգարէի սպանուելը առիւծից: Ծեր մարգարէն, որ վերադարձրեց: Ով միզում է պատի վրայ:

Քսանչորսերորդ՝ Եղիայի մասին, որին կերակրեց ագռաւը. հեղեղատով գնալը, ջրի նուազելը:

Քսանհինգերորդ՝ այրի կնոջ որդու յարութիւնը. ալիւրի եւ իւղի չպակասելը: Բահաղի մարգարէների կոտորելը: Եօթն անգամ աղօթելը: Եւ աթոռին նստելով՝ Աքայաբին խաբելը:

Քսանվեցերորդ՝ Եղիայի վերանալը ցնցումով, նկատած կառքերը եւ հեծեալները, ծալուած կաշուէ հանդերձը եւ նոր կուժը:

Քսանեօթներորդ՝ Եղիսէի ցուպը խաչն էր: Եօթ անգամ կծկուելը: Եղիսէի հիւանդանալը: Գիշերը Ռափսակի զօրքերի կոտորուելը: Յովսիայի մասին, որ խոցուեց եւ մեռաւ:

Քսանութերորդ՝ Իսրայէլի եւ Հրէաստանի գերութիւնների մասին:

Քսանիններորդ՝ գերեվարութիւնից երեք անգամ վերադառնալը: Դրանց նշանակութիւնները:

Երեսուներորդ՝ Դանիէլի եօթնեակը: Եւ թէ նախ դատաւորները եւ թագաւորները, ապա քահանաները տիրեցին Իսրայէլին:

Երեսունմէկերորդ՝ քանի՞ գիրք ունի Աստուածաշունչը:

Երեսուներկուերորդ՝ քանի՞ տուն է Սուրբ Գիրքը:

Երեսուներեքերորդ՝ Ադամից մինչ Քրիստոս տարիների քանակը:

Երեսունչորսերորդ՝ Աբրահամից սկսած սերունդների թիւն ըստ հերթականութեան:

Երեսունհինգերորդ՝ Քրիստոսի ծննդեան մասին՝ համառօտակի:

«Գիրք հարցմանց»-ի եօթներորդ հատորի աւարտը:

ԳԼՈՒԽ ԻԴ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՅԵՍՈՒ ՆԱՒԵԻ ՄԱՍԻՆ

Մովսէսի վախճանուելուց յետոյ ժողովրդին առաջնորդեց նրա փոխանորդ Նաւեի որդի Յեսուն՝ Եփրեմի ցեղից, որն առաքեց լրտեսներին առաքեալների նմանութեամբ, փոխեց գետի ընթացքը բնութեան օրինակով, կործանեց Երիքովը դժոխքի խորհրդով[418]: Փրկեց Ռահաբ պոռնիկին ի խորհուրդ հեթանոսների եկեղեցու: Այլեւ Աքարին կործանեց: Ժողովրդին թլփատեց: Արեգակի եւ լուսնի ընթացքը կանգնեցրեց: Կոտորեց քանանացիների քսանինը թագաւորներին, նաեւ՝ Մադիամի հինգ

թագաւորներին եւ Սեհոնին ու Ովգին՝ Յորդանանից այն կողմ. բոլորը միասին երեսունվեց թագաւոր: Վերցրեց Աւետեաց երկիրը, որ խոստացել էր Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը, որ բաժանեց տասներկու ցեղերին՝ Յիսուսի փրկչական խորհրդով:

Եւ քսանեօթ տարի առաջնորդն էր Աւետեաց երկրի, իսկ նրա կեանքի տարիները հարիւր տասն էին, երբ վախճանուեց:

Հարց. Ինչո՞ւ Մովսէսից յետոյ զօրավար եղաւ Յեսուն:

Պատասխան. Նախ, Յակոբի օրհնութեան պատճառով, որ անդրանկութիւնը տուեց Եփրեմին: Եւ երկրորդ՝ որովհետեւ Մովսէսի չարչարակիցը եղաւ՝ նրա քառասնօրեայ երեք պահքերի ժամանակ:

ԳԵՏԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Ա

Հարց. Ինչո՞ւ գետը ոչ միայն բաժանուեց, այլեւ ետ դարձաւ:

Պատասխան. Նախ՝ գետը ետ դարձաւ, որ ահ եւ երկիւղ լինի քանանացիներին, որպէսզի չհակառակեն Յեսուին ու ընկնեն նրա սրից:

Երկրորդ՝ որպէսզի ժողովուրդն առանց երկիւղի անցնի, որովհետեւ եթէ բարձր ու առատ լինէր, կվախենային:

Երրորդ՝ որպէսզի ոչ միայն մօտ, այլեւ հեռու՝ ակունքի մօտ գտնուողները տեսնեն հրաշքը:

Չորրորդ՝ որպէսզի չլճանայ երկրի վերին կողմում ու վնաս պատճառի:

Հինգերորդ՝ որպէսզի դէպի ներքեւ դառնալիս չողողի գետի եզերքի ներքեւի կողմը:

Վեցերորդ՝ աւելի մեծ հրաշք էր յետ դառնալը, քան ցամաքելը, որովհետեւ եղիան էլ ճեղքեց ու անցաւ, ինչպէս եւ Եղիսէն, սակայն գետի հոսանքը չփոխուեց:

Եօթներորդ՝ որպէս օրինակ մեր՝ բնութեան, որ վերադառնում է այնտեղ, որտեղից դուրս էինք եկել, ինչպիսիք հաւատացեալներն են:

Իսկ գետի բաժանուած կէսի աղի ծով մտնելը ցոյց էր տալիս մեղաւորների եւ անհաւատների կործանուելը դժոխքի յատակում: Այդպէս էլ ցամաք հանուած ու իբրեւ սեղան կանգնեցուած տասներկու քարերը հաւատացեալներն են, որոնք տասներկու առաքեալների միջոցով հաւատքի եկան եւ ազատուեցին մեղքերից, եւ Աստծոյ սրբութեան սեղան եղան՝ տասներկու անդամներով եւ տասներկու առաքեալներով:

Գետը նետուած տասներկու քարերը նաեւ ցոյց են տալիս խոր անդունդում ընկղմուած մեղքերը: Այլեւ վերեւում եւ ներքեւում բազում քարեր կային, բացի հունից, որով անցնում էին, որոնք յղկուած ու սրբուած էին: Քարերը վերցրեց որպէս օրինակ աշակերտների կրթութեան, որ յետոյ պիտանի է լինելու:

Իմանալու է նաեւ այս. ժողովուրդը երեք պարգեւ ստացաւ, այսինքն՝ Ամպը, Վէմը, Մանանան: Իսկ Մարիամի մահից յետոյ նուազեց վէմի ջուրը, որովհետեւ բարկութեամբ հարուածեց վէմին: Ահա-

րօնի մահից յետոյ նուազեց մանանան, երբ տրտնջացին ու կոտորուեցին օձից: Իսկ Մովսէսի մահից յետոյ էլ վերացաւ ամպը, եւ հրամայուեց ժողովրդին երկու հազար կանգուն հեռու մնալ՝ յանուն փառքի տապանակի եւ յանուն նրա զօրութեան:

Նուազելը չեմ ասում ամենեւին պակասել, որովհետեւ մեծ ջրհորի ժամանակ անյայտացաւ վէմը, եւ Յորդանանն անցնելուց յետոյ մանանայ չգտնուեց:

ԹԼՓԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Բ

Հարց. Ինչո՞ւ գայլախազով թլփատեց եւ ոչ երկաթով:

Պատասխան. Նախ, որովհետեւ վէրքի ցաւը թեթեւ է լինում: Երկրորդ՝ որովհետեւ արագ է բժշկւում: Երրորդ՝ որովհետեւ միշտ կար: Չորրորդ՝ կուռքերի պատկերներ չէին դրուագւում նրա վրայ, քանի որ երկաթով անխազելի էր: Հինգերորդ՝ երկաթը քանանացիների սպանող գործիքն էր: Վեցերորդ՝ կուռքերի պատկերները երկաթով էին պատրաստում: Եօթներորդ՝ երկաթը շինականների եւ հողագործների գործիք է՝ անարժան համարուեց: Ութերորդ՝ որպէսզի նրանց կարծր սրտերը թլփատի վէմի վրայ գրուած օրէնքներով: Իններորդ՝ ասում են Աբէլին սպանող գործիքն է եղել, ուստի գայլախազ է կոչուել, որ մաքրուի դրուագուելով: Տասներորդ՝ սրտերի նոր թլփատութեան վէմը լինելու էր Քրիստոսը, որ կարծրացաւ աստուածութեամբ եւ սուրը երկիր գցելով եւ՝ բաժանեց (տե՛ս Մտթ. Ժ 34):

ԱՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ Աքարը ընտանիքով եւ անասուններով պատժուեց:

Պատասխան. Զարմեան Աքարը, Կիսեան Սաւուղը եւ Սիմոնեան Յուդան «մեղայ» ասելով չարդարացան:

Նախ՝ որովհետեւ կամովին չէր ու հարկադրաբար էր: Եւ անցել էր ժամանակը: Նաեւ թերի էր ու առանց թողութեան յոյսի: Պատժուեց նաեւ Աքարի ընտանիքը, որովհետեւ նրանք էլ չխոստովանեցին գողօնի մասին:

Եւ եօթ պատճառով է Աստուած պատժում մարդուն եւ ունեցուածքը:

Նախ՝ որ մարդը տէր ու թագաւոր է, անասունները ծառայ՝ անցաւոր տէրերի համար, ուստի պատուհասւում են նաեւ ծառաները, ինչպէս ջրհեղեղի ժամանակ: Երկրորդ՝ որպէսզի անբաններն աւելի պատուական չթուան Աստծոյ մօտ, քան բանականները: Երրորդ՝ եղծելու պատճառով Աստծոյ պատկերը, որը ստեղծուեց Աստծոյ փառքի համար, [մինչդեռ] այդ պատկերով եղծեցին եւ ապականեցին միւս արարածներին էլ, որոնք մարդու փառքի համար ստեղծուեցին, եւ ոչ միայն անասունները, այլեւ երկրի հողը, ջուրը, օդն են կորցնում պտղածնութիւնը, ինչպէս սոդոմայեցիներինը: Չորրորդ՝ որովհետեւ անասուններն էլ մեղքում մաս ունեն, ուստի կորստի են մատնւում մարդու հետ, ինչպէս Սոդոմում: Հին-

գերորդ՝ որովհետեւ աստուածամարտ մեղքերը ազգի բնաջնջման պատճառ են դառնում, ինչպէս Դադանինը եւ Աբիրոնինը, որոնք Մովսէսին եւ Աստծուն հակառակ եղան, ուստի ազգով իրենց ունեցուածքով խորտակուեցին, որպէսզի միւսները վախենան: Վեցերորդ՝ եթէ մէկը կարիք չունի, սակայն գող է ու զրկող, նրա տան հետ ոչնչանում է նաեւ ունեցուածքը, ինչպէս Աքարինը, որ մեծ հարստութեան տէր էր, սակայն գողացաւ Երիքովի նզովուած [ստացուածքից], եւ ողջ ժողովուրդը տեսնելով՝ զայրացաւ նրա վրայ եւ իրաւունք տուեց սատկեցնելու: Եօթներորդ՝ եթէ մէկը պիղծ է, նրա ունեցուածքն էլ պիղծ է, ուստի միասին է կործանում, որովհետեւ պղծի ամէն ինչն է պիղծ, ինչպէս պիղծ կենդանու՝ շան, մորթը, մազերը, միսը եւ այլն. այդպէս էլ մաքուրի ամէն ինչն է մաքուր (հմմտ. Տիտ. Ա 15), ինչպէս ոչխարի բուրդը, միսը եւ այլն:

ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ԿԱՆԳ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ Պրակ Գ

Հարց. Ինչո՞ւ կանգ առան լուսատուները:

Պատասխան. Նախ՝ որպէսզի թշնամիները չփախչեն, քանի որ երեկոյանում էր: Երկրորդ՝ որպէսզի լուսատուների պաշտողները տեսնեն կուռքերի տկարութիւնը: Երրորդ, Փրկիչ Յիսուսի օրինակով, որ կատարուեց խաչի վրայ եղած ժամանակ:

Հարց. Ինչպէ՞ս կանգնեցրեց արեգակը եւ լուսինը:

Պատասխան. Ոմանք ասում են միայն լուսատուներին կանգնեցրեց եւ երկնակամարից յետ տուեց, մինչ հասան նոյն կէտը:

Սակայն սուրբ Եփրեմն ասում է երկնքի բոլորակը կանգնեցրեց լուսատուների հետ[419], նախ որպէսզի առաւել զօրաւոր լինէր եւ որպէսզի երկնքի այն մասը, որտեղ լուսատուներն էին, չհեռանար: Եւ այս է հաւանականը, որովհետեւ Յեսուի ժամանակ էլ հրաշք եղաւ երկնքի կամարում. մէկ ցերեկը [տեւեց] երեսունվեց ժամ (տե՛ս Յեսու Ժ 12-13): Եզեկիայի ժամանակ արեգակը հետ դարձաւ, ցերեկը տեւեց երեսուներկու ժամ (տե՛ս Դ Թագ. Ի 8-11): Աւագ ուրբաթի խաչելութեան ժամանակ լուսինն ընթացաւ, իսկ արեւը ուշացաւ եւ հետ դարձաւ, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում, խաչելութեան մասին երեսուներորդ գլխի քսանվեցերորդ պրակում:

Հարց. Ինչո՞ւ չկոտորեց բոլոր թշնամիներին:

Պատասխան. Նախ՝ Աստուած խնայեց նրան ծերութեան համար, ինչպէս Մովսէսին:

Երկրորդ՝ [մարդիկ] չէին բաւականացնում երկիրը բնակեցնելու համար:

Երրորդ՝ որպէսզի նրանք յետագայում Իսրայէլին փորձութիւն լինէին:

Չորրորդ՝ որպէսզի նրանք գայթակղութեան պատճառ լինեն նրանց համար եւ աչքի փուշ:

Հինգերորդ՝ որ նրանցով խրատուեն ու տանջուեն:

Վեցերորդ՝ որ իրենց որդիները նրանցից պատերազմել սովորեն:

Եօթներորդ՝ որպէսզի յետոյ ուրիշներն էլ կոտորեն նրանց:

Ութերորդ՝ Յիսուս Փրկչի օրինակով, որ թշնամու բռնութիւնը խորտակեց եւ խաբեութիւնը վանեց, որպէսզի փորձուեն ընտրեալները, իսկ վատերը մերժուեն:

Իններորդ՝ Սիրեցէքն ասում է. «Աստուած խնայեց նրանց, որովհետեւ մարդիկ էին ու ստեղծուել էին նրա կողմից, որպէսզի փոքր պատուհասով զղջան ու յաւիտենական մեծ պատժից ազատուեն»:

Տասներորդ՝ որպէսզի նրանք սրանցից սովորեն բարին եւ մնան իբրեւ երկրի ժառանգներ, ինչպէս գաբաւոնացիք:

Տասնմէկերորդ՝ կրճատեց նրանց իշխանութիւնը, որպէսզի նրանց չարութիւնն էլ կրճատուի, ու թեթեւանան տանջանքները:

Տասներկուերորդ՝ որպէսզի մեզ մարդասիրութիւն սովորեցնի եւ միմեանց ներել, ինչպէս որ Աստուած երկայնամիտ գտնուեց քանանացիների հանդէպ, որոնք պատժապարտ էին, իսկ փղշտացիներին ներեց Աբրահամի եւ Աբիմելէքի ուխտի պատճառով:

Հարց. Ինչո՞ւ Ղեւիի ցեղին բաժին չտուեց:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ Տէրն ինքն էր նրանց բաժինը, եւ բոլոր իրաւունքները քահանաներին էին տալիս:

Երկրորդ՝ որպէսզի ժողովրդից չզատուեն, այլ սփռուեն քաղաք-ապաստարաններով՝ եւ ուսուցանեն նրանց:

ՅԵՍՈՒԻ ԵՒ ՏԻՐՈՋ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՍՈՒՆ ԿԷՏՈՎ
Պրակ Դ

Բանն-Աստծոյ բարձրամեծար գործերը բազմաթիւ նախատիպեր են ունեցել համապատասխան խորհրդով, ինչպէս Մովսէսը, Յովսէփը, Իսահակը: Այդպէս էլ Յեսուն, որ Յիսուսի անուանակիրն էր եւ ճշմարիտ օրինակը:

Նախ՝ համանուն էին, որովհետեւ եւ «Յեսու»[420] եւ «Յիսուս» «փրկիչ» են նշանակում՝ ըստ հրեշտակի. «Կոչուելու է Յիսուս, որովհետեւ նա է փրկելու իր ժողովրդին մեղքերից» (Մտթ. Ա 21):

Երկրորդ՝ ըստ գործի, որովհետեւ Յեսուն փրկեց ժողովրդին մարմնաւոր թշնամուց, իսկ Յիսուս փրկեց մեզ իմանալիի ձեռքից[421]:

Երրորդ՝ Մովսէսը ձեռքը դրեց Յեսուի վրայ եւ առաջնորդ կարգեց: Եւ Յիսուս Փրկիչն էլ Հօր կողմից մաքրուեց ու առաքուեց, որի մասին վկայեց Յորդանանում. «Դա՛ է իմ սիրելի Որդին, լսեցէ՛ք նրան» (Մտթ. ԺԷ 5):

Չորրորդ՝ Մովսէսը բերեց ժողովրդին մինչ Յորդանան, որտեղ նրան փոխարինեց Յեսուն: Եւ հին օրէնքն էլ հասաւ մինչ մկրտութիւն եւ փոխարինուեց Քրիստոսով:

Հինգերորդ՝ Յեսուն օրէնքները գրեց հեթանոսների քարէ արձանների վրայ: Եւ մեր Տէրն էլ նոր օրէնքները անջինջ գրեց հեթանոսների սրտերում:

Վեցերորդ՝ Յեսուն լրտեսներ առաքեց, իսկ մեր Տէրը՝ առաքեալներին՝

աշխարհի ծագերը, որոնք համբաւեցին սատանայի եւ դժոխքի պարտութիւնը:

Եօթներորդ՝ Ռահաբը թողեց կուռքերին եւ բազմաթիւ հոմանիներին ու փափագեց Յեսուին: Եւ եկեղեցին էլ թողեց իր պաշտամունքն ու չարը եւ սիրեց Քրիստոսին:

Ութերորդ՝ նա տապանակով գետի հոսանքը փոխեց: Եւ մեր Տէրն էլ խաչով՝ բնութիւնն իր տեղը [վերադարձրեց]:

Իններորդ՝ նա գետից հանուած տասներկու քարերից սեղան պատրաստեց եւ նոյն թուով էլ սուզելով՝ ընկղմեց: Եւ մեր Տէրն էլ իր հաւատացեալներին մեղքերից հանելով՝ սեղանն ու սուրբ եկեղեցին պատրաստեց, իսկ [մարմնի] տասներկու անդամների մեղքերը ընկղմելով՝ կորցրեց:

Տասներորդ՝ նա Իսրայէլին գայլախազով թլփատեց, իսկ մեր Տէրը՝ հաւատի վէմով քրիստոնեաների սրտերը, որովհետեւ թլփատութիւնը նրանց դրոշմը եւ զատողն էր, իսկ հաւատացեալների նշանը եւ զատողը հաւատն է:

Տասնմէկերորդ՝ [Յեսուն] նախ երիքովը կործանեց, ապա երկիրը մտաւ: Եւ մեր Տէրն էլ աւերեց դժոխքի ամրոցները՝ մահն ու մեղքը, ապա երկինք բարձրացնելով [հոգիներին]՝ անմահացրեց:

Տասներկուերորդ՝ նա Ռահաբին փրկեց կարմիր նշանով, եւ Տէրն էլ եկեղեցուն՝ խաչով եւ արեամբ:

Տասներեքերորդ՝ Յեսուն անիծեց նրան, ով նորից կկառուցէր Երիքովը՝ անդրանիկներով ու կրտսեր որդիներով: [Անիծեալ է] եւ նա, ով հոգով ու մարմնով կառուցում է դժոխքը՝ անդրանիկ խորհրդով ու մարմնի գործերով, որովհետեւ մեղքի սկիզբը դժոխքի հիմքն է, աւարտին հասցնելը՝ դուռը, յապաղելը՝ փակելը, որոնց [գործողների] մասին Տէրն ասում է. «Հեռացէ՛ք ինձնից, անիծեալներ» (Մտթ. ԻԵ 41):

Տասնչորսերորդ՝ նա քարկոծեց Աքարին ազգականներով, իսկ Ռահաբին իր ազգականներով փոխանակեց: Եւ Տէրն էլ ազգովին կորցրեց Իսրայէլին եւ փոխարէնը օրէնքներով գտաւ իր ժողովրդին՝ հեթանոսներից:

Տասնհինգերորդ՝ Յեսուն ներեց Աքարին ցերեկը եւ գիշերը ու առաւօտեան լուսաբացին պախարակելով՝ յանդիմանեց: Եւ մեր Տէրն էլ մեղաւորներին ներում է այս կեանքում եւ յետմահու՝ գիշերը, իսկ երբ ծագի յարութեան լոյսը, ստուգապէս դատապարտելու է:

Տասնվեցերորդ՝ Յեսուն տեսաւ օգնութեան եկած Աստծոյ հրեշտակին: Եւ Տիրոջ մասին էլ ասւում է. «Հրեշտակները մօտենալով՝ զօրացնում էին նրան» (հմմտ. Ղուկ. ԻԲ 43), որ սպասաւորելով օրհնաբանելն է:

Տասնեօթներորդ՝ Յեսուն գայիսոնը պահեց Գայիի վրայ՝ մինչ կոտորուեցին թշնամիները, ինչպէս Մովսէսը ձեռքերը տարածելով՝ Ամաղէկին: Եւ մեր Տէրն էլ մնաց խաչին Գողգոթայի վրայ՝ մինչ երեկոյ եւ հալածեց մեր թշնամիներին:

Տասնութերորդ՝ Յեսուն նրանց թագաւորներին կախեց երկճիւղ ծառից, իսկ

երեկոյեան փոսը գցեց: Եւ մեր Տէրն էլ գլխաւոր սատանային բեւեռեց խաչափայտին, իջաւ գերեզման եւ յաւիտենական անդունդը գցեց նրան:

Տասնիններորդ՝ փրկեց գաբաւոնացիներին, որոնք վախեցան ու ապաւինեցին նրան: Եւ մեր Տէրն էլ յաւիտենական մահուան սրից կորզեց իրեն ապաւինած հեթանոսներին:

Քսաներորդ՝ Յեսուն կանգնեցրեց լուսատուներին (տե՛ս Յեսու Ժ 12) եւ մէկ օրը դարձրեց երկու: Եւ մեր Տէրն էլ խաչելութեան ժամանակ խաւարեցրեց նրանց, եւ մէկ օրը դարձաւ երկու:

Քսանմէկերորդ՝ Յեսուն յաղթեց դիցերին եւ հեթանոսների անկենդան [չաստուածներին], որովհետեւ լուսատուներին էին պաշտում: Եւ մեր Տէրն էլ խաչով կործանեց կուռքերին եւ նրանց պաշտամունքը:

Քսաներկուերորդ՝ կարկուտի նման քարեր թափեց մարտի ժամանակ: Եւ Տէրն էլ իմանալի հարուածով խոցեց, որի համար աղաղակում էին. «Ժամանակից առաջ մի՛ տանջիր մեզ» (Մտթ. Ը 29): Եւ խաչելութեան ժամին ժայռերը պատռուեցին. «Կարկուտի ձայն եղաւ, եւ հրէ կայծակներ եղան» (Սղմ. ԺԷ 14), դժոխք իջնելիս:

Քսաներեքերորդ՝ Յեսուն ազատեց Գաբաւոնը հինգ թագաւորներից, որոնք պաշարել էին: Եւ մեր Տէրն էլ փրկելու է իրեն յուսացողներին, ովքեր պաշարուած են հինգ զգայարաններին իշխող դեւերի կողմից[422]:

Քսանչորսերորդ՝ Յեսուն թագաւորների պարանոցները ոտնակոխ անել տուեց իր իշխաններին եւ զօրքին (Յեսու Ժ 24): Եւ մեր Տէրն էլ իր առաքեալներին հրամայում էր. «Ձեզ իշխանութիւն եմ տուել ոտնակոխ անելու օձերին եւ կարիճներին» (Ղուկ. Ժ 19):

Քսանհինգերորդ՝ Յեսուն նախ թագաւորներին սպանեց, ապա աւերեց նրանց քաղաքները: Եւ մեր Տէրն էլ նախ կապեց հզօրին խաչից, ապա աւերեց նրա տունը, որ դժոխքի ամրոցն էր:

Քսանվեցերորդ՝ նա սպանեց թագաւորներին եւ Քանանի հսկաներին, իսկ մի մասին թողեց՝ ընտրեալներին փորձելու համար: Եւ մեր Տէրն էլ յաղթեց դեւերի իշխանին, կտրեց աջի վրայ նրա բռնութիւնը, սակայն ոմանց թողեց ձախից թիւրելու եւ ընտրեալներին առանձնացնելու համար:

Քսանեօթներորդ՝ դարանակալեց Գայիում եւ յաղթեց նրանց: Եւ Տէրն էլ գործերի ծածուկ տնօրինութեամբ յաղթեց բանսարկուին:

Քսանութերորդ՝ Մովսէսն ինչպէս պատուիրել էր, Յեսուն նոյնութեամբ կատարեց: Եւ ինչ պատուիրեց Հայրը, նոյնութեամբ Որդին ի կատար ածեց:

Քսանիններորդ՝ Աւետեաց երկիրը տալու խոստումը կատարուեց Յեսուի օրօք, իսկ զաւակների օրհնութեան խոստումը եւ օրէնքների իրագործումը Փրկչով եղաւ:

Եւ երեսուներորդ՝ Յեսուն երկիրը բաժանեց բոլոր ցեղերին, որոնց թուում էին Եղիազար քահանան եւ իշխանները:

Եւ մեր Փրկիչն էլ բաժանեց Հօր ժառանգութիւնը, որի մասին ասում է. «Ինչպէս Հայրը ուխտ կապեց ինձ հետ, այդպէս էլ ես եմ ձեզ հետ ուխտ անում» (Ղուկ. ԻԲ 29): Եւ այստեղ տասներկու առաքեալներով բաշխեց Նոր օրէնքը, իսկ այնտեղ վերին ժառանգութիւնն է [բաշխելու] իր հաւատացեալներին:

Եւ Յեսուն օրհնեց Ռուբէնի զինուորներին եւ արձակեց՝ գնալու իրենց տեղերը, ինչպէս ասում է՝ «Եկէ՛ք իմ Հօր օրհնեալներ» (Մտթ. ԻԵ 34), ապա վկայութեան արձան կանգնեցրեց իբրեւ նախօրինակ Քրիստոսի հանդէպ եղած հաւատի եւ վախճանուեց:

Եւ իմանալու է, որ Յորդանանն անցնելիս կոտորեցին Ենակիմի որդիներին, ապա ժառանգեցին երկիրը: Նմանապէս, անցնելով մկրտութիւնը, յաղթելով փորձութիւնները՝ գալիս են քրիստոնէութեան, ու նաեւ անցնելով ապաշխարութիւն ու սատկեցնելով Բելիարի որդիներին՝ յետոյ միայն ժառանգելու ենք երկնքի արքայութիւնը՝ ի փառս Քրիստոսի, մեր Աստծոյ, որ օրհնեալ է յաւիտեանս: Ամէն:

Այսքանն այս մասին:

ԳԼՈՒԽ ԻԵ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԻՍՐԱՅԷԼԻ ԴԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ՆՐԱՆՑ ԿԱՐԳԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԸ Պրակ Ե

Յեսուից յետոյ Իսրայէլում առաջնորդութեամբ չորս հարիւր տասը տարի դատում էին դատաւորները՝ ըստ Եօթանասնից (թարգմանութեան)՝ թուով տասներեք դատաւորներ մինչ Հեղի քահանան:

Այս մասին Պօղոսը «Գործք»-ում վկայում է, որ Յեսուից յետոյ մինչ Սաւուղ իշխեցին դատաւորները՝ չորս հարիւր յիսուն տարի այսպէս. չորս հարիւր տասը տարի դատաւորները, քառասուն տարի էլ Հեղիից մինչ Սաւուղ, որ միասին կլինի չորս հարիւր յիսուն տարի (տե՛ս Գործք ԺԳ 20):

Եւ այսպէս միմեանց յաջորդեցին առաջնորդները, երբ Յեսուից յետոյ ութ տարի տիրեցին այլազգիները:

Առաջինը դատաւորներից Գոդոնիէլն էր՝ Կենեզի որդին, Քաղեբի եղբայրը՝ Յուդայի ազգից, քառասուն տարի (տե՛ս Դատ. Գ 7-11), իսկ այլազգիները՝ տասնութ տարի:

Երկրորդը Աւովդն էր, երկու ձեռքից յաջողակ եմինացի Եփրեմից՝ ութսուն տարի, այլազգիները՝ քսան տարի (տե՛ս Դատ. Գ 12-30):

Երրորդը Սամէգարն էր, որդին Անաթի, որ մաճով վեց հարիւր այր սպանեց չորս տարում եւ Դեբովրան՝ հինգ տարի այլազգիների հետ միասին (տե՛ս Դատ. Գ 31):

Չորրորդը Բարակը, որդին Ամենեմի, Նեփթաղէմի Կեդեսից՝ քառասուն տարի: Սա սպանեց Սիսարին եւ Աբէին Կիսոնի ձորում, եւ այլազգիները՝ եօթը տարի (տե՛ս Դատ. Դ):

Հինգերորդը Գեդէոնն էր, որդին Յովասի՝ Եփրատացի Մանասէից, քառասուն տարի: Սա տեսաւ իմանալի գեղմը, երբ կալում ցորեն էր ծեծում, որ

ըստ ջուր խմելու եղանակի զօրք ընտրեց եւ սափորներում թաքցրած վառուող ջահերով երեք հարիւր այրերով կոտորեց հարիւր քսան հազար հոգու:

Սա սպանեց Օվրէբին, Զէբին, Զեբէին, Սաղմանին եւ այլոց (տե՛ս Դատ. Զ-Ը):

Վեցերորդը Աբիմելէքն էր՝ Գեդէօնի հարճորդին՝ երեք տարի (տե՛ս Դատ. Թ):

Եօթներորդը Թովլան[423], սամարացի Իսաքարից՝ քսանչորս տարի:

Ութերորդը Յայիրը Գաղայադացի՝ քսաներկու տարի, եւ այլազգիները՝ տասնութ (տե՛ս Դատ. Ժ):

Իններորդը գաղայադացի պոռնկորդի Յեփթային՝ վեց տարի: Սա էր, որ իր դստերը զոհաբերեց Աստծուն (տե՛ս Դատ. ԺԱ):

Տասներորդը Եսեբոն Բեթղէհէմացին՝ հինգ տարի: Սա երեսուն որդի եւ երեսուն դուստր ունեցաւ:

Տասնմէկերորդը Ելոնն էր զաբոդոնացին՝ տասը տարի: Սրա երրորդ տարում Իլիոնն առնուեց:

Տասներկուերորդը Աբդոնն էր, որդին Ելէք Փարաթոնացու՝ ութ տարի: Սա քառասուն որդի եւ երեսուն թոռներ ունեցաւ: Այլազգիները՝ քառասուն տարի (տե՛ս Դատ. ԺԲ 8-15):

Տասներեքերորդը Դանից Մանովէի որդի Սամփսոնն էր, որ երեք հարիւր աղուէս բռնեց, նրանց ջահեր կապեց եւ այրեց այլազգիների բնակավայրը: Այլեւ էշի ծնօտով հազար մարդ սպանեց, ու նոյն ծնօտով ջուր առաւ եւ խմեց: Եւ քաղաքի փակ դռները տեղահան արեց եւ ուսերի վրայ լեռան գլուխը հանեց:

Սա դատաւոր եղաւ Իսրայէլում՝ քսան տարի (տե՛ս Դատ. ԺԳ-ԺԶ):

Սրանից յետոյ Իսրայէլում դատաւորեց Հեղի քահանան՝ Իթամարի ազգից քառասուն տարի (տե՛ս Ա Թագ. Բ-Գ), իսկ Եօթանասնիցն ասում է քսան տարի, ապա Սամուէլն ու Սաւուղը՝ քառասուն տարի (տե՛ս Ա Թագ. Ժ-ԼԱ):

Յետոյ ըստ կարգի թագաւորեցին Դաւիթը, Սողոմոնը եւ այլք՝ մինչ գերութիւն: Իսկ գերութիւնից յետոյ քահանաները իշխեցին ժողովրդի վրայ, որովհետեւ հրէաների իշխանութիւնը երեք կարգով եղաւ. առաջինը՝ դատաւորները մինչ Սաւուղ: Երկրորդը՝ թագաւորները մինչ Զօրաբաբէլ եւ Յեսու քահանայ: Այդտեղից՝ քահանաները մինչ ճշմարիտ Յիսուս Փրկիչը, երբ դադարեցին հանդէս գալ օծեալ առաջնորդները ու եկաւ ճշմարիտ Օծեալը՝ Քրիստոս:

Իսկ թէ ո՞րն էր խորհուրդը, կգտնես Չորրորդ թագաւորաց գրքի վերջում, քսանիններորդ գլխի երեսուներորդ պրակում:

ԳԵՂՄԻ ԵՒ ՑՕՂԻ ՄԱՍԻՆ
Պրակ Զ

Հարց. Ի՞նչ էին նշանակում Գեդէօնի գեղմը եւ ցօղը:

Պատասխան. Գեղմը եւ ցօղը մէկն էին, սակայն նշանը երկուսն էր:

Նախ՝ հենց իրեն՝ Գեդէոնին էին խորհրդանշում, որ հրեշտակի երեւալով

Իսրայէլի դատաւոր եղաւ, եւ ո՛չ ինքը, ո՛չ էլ երեք հարիւր այրերը չքաքախուեցին մադիանացիների արիւնով, որոնք կոտորուեցին:

Երկրորդ՝ խորհրդանշում էր Երուսաղէմ քաղաքը, որովհետեւ միայն այնտեղ եղան մարգարէութիւնը եւ օրէնքը, իսկ Աստծոյ սեղանը՝ Սիօնում: Իսկ յետոյ ողջ աշխարհում Աստծոյ եկեղեցին, օրէնքը եւ Աստծոյ սեղանները կանգնեցուեցին, բայց Երուսաղէմը ցամաքեց:

Երրորդ՝ գեղմը մարգարէներն էին, ցօղը՝ մարգարէութեան շնորհը նրանց վրայ: Իսկ այն, որ քամելով կուժը լցրեց եւ ոչ հողի վրայ՝ ցոյց է տալիս, որ մնացին եւ կատարեցին մարգարէութեան բոլոր խօսքերը եւ չեղծուեցին, ապա Տիրոջ հոգին տիեզերքը լցրեց մարգարէութեամբ եւ Քրիստոսի շնորհներով:

Չորրորդ՝ Դաւիթն ասում է. «Իջնելու է գեղմի վրայ անձրեւի նման» (Սղմ. ՀԱ 6): Եւ եբրայեցիք այս սաղմոսը Սողոմոնի համար են ասում: Եւ ցօղը իմաստութիւնն էր, որ տուեց նրան Աստուած եւ Արաբիայի ու Սաբայի թագաւորները՝ նրա ընծայաբերները: Եւ այն չէ իմաստը, թէ Սողոմոնը երբ եկաւ ու մնաց մինչ արեգակի դուրս գալը կամ լուսնից առաջ, այլ [խօսքը] նրա Տիրոջ մասին էր:

Հինգերորդ՝ գեղմ էր Կոյս Մարիամը, ցօղը՝ Բանն Աստուած, որ հրեշտակապետի աւետումով առանց ոտնաձայնի եւ ծածուկ իջաւ նրա վրայ: Եւ նրանից յետոյ էլ իջնում է հաւատացեալների սուրբ սրտերի վրայ:

Վեցերորդ՝ նշանակում է եւ այն, որ մեր Տէր Յիսուս Քրիստոս իր հաւատացեալների համար զգեստ եղաւ, մկրտուեց Յորդանանում եւ նրա մասին վկայեց Հօր ձայնը, ու աղաւնակերպ Հոգին իջաւ նրա վրայ:

Այդպէս էլ մկրտւում են բոլոր հաւատացեալները եւ ընդունում պարգեւների նոյն շնորհները:

Այսքանն այս մասին[424]:

ՍԱՄՍՈՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՅԻՍՈՒՍԻ ՀԵՏ

Պրակ է

Քաջ Սամսոնը բազմաթիւ յատկանիշներով մեր Տիրոջ՝ Ամենազօր փրկողի խորհուրդն ու օրինակն էր:

Նախ՝ ըստ անուան, քանի որ Սամսոն[425] «արեգակ» կամ «փրկութիւն» է նշանակում: Եւ մեր Տէրն էլ իբրեւ արդարութեան արեգակ ծագեց իր երկիւղածների եւ ժողովրդի փրկութեան համար:

Երկրորդ՝ Սամսոնը ծնուեց հրեշտակի աւետումով ամուլ մօրից: Եւ Փրկիչն էլ կուսական արգանդից ծնուեց՝ հրեշտակապետի աւետումով:

Երրորդ՝ հրեշտակը երկիցս երեւաց կնոջը, ապա՝ Մանովէին: Այդպէս էլ կրկին աւետուեց Կոյսին, ապա՝ Յովսէփին:

Չորրորդ՝ Սամսոնը դեռ որովայնից ուխտաւոր էր: Եւ մեր Տիրոջ լուրն էլ աւետուեց նախահայրերի հետ կապուած ուխտում եւ առաջ, քան սկիզբը աշխարհի ուխտով աւետուեց՝ ի փրկութիւն մարդկանց:

Հինգերորդ՝ Տիրոջից օրհնուած մանուկ Սամսոնը շրջում էր հոգու զօրութեամբ: Ասում է՝ «Եւ մանուկ Յիսուսն էր աճում Աստծոյ շնորհներով եւ մարդկանցից» (Ղուկ. Բ 40):

Վեցերորդ՝ եօթնածամ էր Սամսոնը՝ ինչը նշանակն էր [Սուրբ] Հոգու եօթնարփեան [շնորհների], որ մեր Տէրն իբրեւ գլուխ կրեց առանց կարիքի ու պարգեւեց իր անդամներին:

Եօթներորդ՝ Սամսոնն արիութեամբ սպանեց առիւծին: Եւ մեր Տէրն էլ ոսոխին՝ սատանային, առիւծ պատառողի նման ձեռքերի տարածմամբ խաչի վրայ ոչնչացրեց:

Ութերորդ՝ նա զայրացողից քաղցր կերակուր առաւ, ըստ այդմ ասում էր. «Ուտողից կերակուր դուրս եկաւ եւ հզօրից էլ՝ քաղցրութիւն» (Դատ. ԺԴ 14): Եւ մեր Տէրն էլ սպանելով հոգին պատառատող սպանարար մարմինը՝ քաղցր կեանք էր գտնում՝ մարդկային ցեղի որդիներին պարգեւելու համար:

Իններորդ՝ քաղցր մեղրը տուեց ճաշակելու հօրը եւ մօրը: Եւ մեր Տէրն էլ Հօրը երկնքում եւ Մօրը՝ երկրի վրայ քաղցրացրեց՝ փրկելով մարդկանց:

Տասներորդ՝ Սամփսոնը կամեցաւ այլազգի կին առնել: Եւ Տէրն էլ կամեցաւ մարդկային ցեղի մարմնով լինել:

Տասնմէկերորդ՝ առաջին կնոջից հրաժարուեց, ամուսնացաւ երկրորդի յետ, որին կոչում էին Դալիլա: Եւ մեր Տէրն էլ հրաժարուեց հրեշտակներից եւ ժողովեց հեթանոսներին, որոնք աղքատ էին բարութիւններից:

Տասներկուերորդ՝ հարսնախօսեցին առաջինի հետ՝ փեսայի հաւանութեամբ: [Եւ Տէրն էլ] նախ խօսեց օրէնքներով, ապա նշանեց Սուրբ եկեղեցուն՝ իբրեւ երկնաւորի հարս:

Տասներեքերորդ՝ եօթնօրեայ հարսանեաց խրախճանք եղաւ: Եւ հարսնանալու եօթ դարերից յետոյ՝ ութերորդում միաւորուելու են[426]:

Տասնչորսերորդ՝ փեսաւէրներին զգեստաւորեց՝ հանելուկը մեկնելուց յետոյ: Եւ նրանք, ովքեր գիտեն Փրկչի տնօրինութիւնը, զգեստաւորւում են նրա փրկութեամբ, որովհետեւ նա է Հզօրը, որից եղաւ քաղցր կերակուրը:

Տասնհինգերորդ՝ նա այլազգիներին կոտորելով՝ հագցրեց նրանց: Եւ Տէրն էլ մեր ընկածների զարդն ու պսակը խոստացաւ մեզ ու տուեց:

Տասնվեցերորդ՝ հարսանիքի եօթներորդ օրուայ երեկոյեան յայտնեց հարսին առակի գաղտնիքը: Եւ վախճանի եօթներորդ օրը երեկոյեան հրէաները կճանաչեն նրա մարդեղութիւնը:

Տասնեօթներորդ՝ երեսուն այրերը եօթ օր յետոյ զարդարուեցին: Եւ այդ երիտասարդ հասակով էլ յարութեան օրը պսակադրուելու են:

Տասնութերորդ՝ Սամսոնից կինը բաժանուեց եւ ամուսնացաւ կնքահօր հետ, որի պատճառով հրով տուժեցին: Հրէաներն էլ թողեցին մեր Տիրոջը եւ հաւատալու են Նեռին եւ այրուելու են նրա հրով:

Տասնիններորդ՝ Սամսոնը իջեւանեց Գազայում, պոռնիկի տանը: Եւ Տէրն էլ մեր իջաւ երկիր ու դժոխք:

Քսաներորդ՝ Սամսոնը կէսգիշերին փակուած դռները տեղահան արեց եւ բարձրացրեց լեռան գլուխը: Եւ մեր Տէրն էլ կէսգիշերին դժոխքի դռները եւ նիգերը խորտակելով՝ յարութիւն առաւ գերեզմանից եւ մարդկանց հոգիները բարձրացրեց երկինք:

Քսանմէկերորդ՝ զարմանալին, որ կատարեց Սամսոնը, այն էր, որ փրկեց իր անձը: Իսկ Տէրը փրկեց մարմիններն ու իր հաւատացեալներին դեւերի այլազգի իշխանից:

Քսաներկուերորդ՝ աղուէսներով այրեց այլազգիների վաստակածը: Եւ մեր Տէրն էլ հրդեհեց հեթանոսների գործերն՝ իր հետեւորդների ճարտար հնարքներով:

Քսաներեքերորդ՝ նա բռնուեց Յուդայի ազգի կողմից եւ յանձնուեց այլազգիներին: Եւ մեր Տէրը նոյն ազգի մարդուց բռնուեց եւ մատնուեց Պիղատոսի զինուորներին:

Քսանչորսերորդ՝ Սամսոնը երիցս եօթ կապերով փորձուեց կնոջից: Եւ Տէրն էլ մեր եօթ տեղում եօթնակի ձաղկահարուած՝ երիցս կապուած էր, որ մինչ խաչուելն էր, խաչին էր եւ գերեզմանում դրուած:

Քսանհինգերորդ՝ նա էշի ծնօտով կոտորեց հազար հոգու: Եւ մեր Տէրն էլ խաչով ու մարմնով կործանեց բոլոր թշնամիներին: Եւ քանի որ ծնօտը ուտելու գործիք է՝ անմաքուր եւ անբան կենդանական մաս, ուստի նշանակում է, թէ ադամական մարմինը պտուղը ուտելու պատճառով հաւասարուեց անբաններին՝ մեղքի բեռով: Եւ մեր Տէրը նոյն այդ մարմինն առնելով՝ մաքրեց ու դրանով կատարեց բոլոր հրաշքները:

Քսանվեցերորդ՝ ծնօտը զէնք եղաւ եւ խմելու աղբիւր: Եւ մեր Տէրը մարմնով պատերազմ մղեց ու նոյն մարմնով էլ կեանք բխեց մեզ համար:

Քսաներեօթներորդ՝ ծնօտը թշնամիների արիւնն էր թափում եւ պաղ ջուր էր բխում, որի մասին վկայում է մարգարէն՝ «Իր սուրը թաթախեց թշնամու արեան մէջ» (հմմտ. Սղմ. Կէ 24): [Եւ Տէրն] էլ ջրով հանգցնում է նախաստեղծ կողի հուրը: Եւ կամ՝ նոյն մեռած մարմնով խաչ եղաւ ու նոյնով կենդանի էր աստուածութեամբ:

Քսանութերորդ՝ միեւնոյն ծնօտը այլազգիներին կեանքից զրկում էր, իսկ Սամսոնին ուժ էր տալիս: [Եւ Տէրն] էլ խաչը տարածելով՝ ոմանց ոտքի էր կանգնեցնում, ոմանց՝ գլորում: Այլեւ օտարներին մերժում, իսկ իւրայիններին՝ մօտեցնում էր:

Քսանիններորդ՝ մենամարտելիս ծնօտը դատարկ էր եւ լի էր ծարաւը [յագեցնելիս]: Եւ ովքեր կծարաւեն [Տիրոջը]՝ կյագենան, իսկ հակառակորդներն ունայնաբար կմերժուեն:

Երեսուներորդ՝ Տիրոջ կամքով ծնօտի զօրութեամբ յաղթեց, եւ նրանով յագեցաւ Սամսոնի անյագ ծարաւը: Եւ ինքը Որդին է Հօր զօրութեան, մարդկանց ծարաւի փրկութիւնը՝ զօրացած Նրանից,

որի մասին ասում էր. «Ծարաւ եմ» (Յովհ. ԺԹ 28), եւ «Կատարուած է» (Յովհ. ԺԹ 30):

Երեսունմէկերորդ՝ կարծր ծնօտից փափուկ ջուր եղաւ, երբ փափագեց: Եւ արդարութեան մէջ ողորմութիւնը մեծանում է՝ խնդրողների անձանձիր աղաչանքով:

Երեսուներկուերորդ՝ իշխանների կառափնարանը խորտակեց եւ արեամբ լուաց մարմինները: Եւ Խաչուածի զօրութեամբ ջախջախուեց չարի գլուխը ու մաքրուեցին մեր անդամները: Այսպէս է [ասում] սուրբ Եփրեմը[427]:

Երեսուներեքերորդ՝ Սամսոնը սկզբում թշնամու սրունքները եւ երանքներն էր ջախջախում, ապա՝ գլուխը: Եւ մեր Տէրն էլ՝ նախ խորհուրդները, գործերը, ապա՝ մեղքերի պատիժն է ջնջում:

Երեսունչորսերորդ՝ Սամսոնը երկու սիւները շարժեց եւ տունը կործանեց: Եւ մեր Տէրն էլ կործանեց սկզբնական եւ ձեռքբերովի մեղքերը, ապա՝ միւս մեղքերն ու մահը, այլեւ քայքայումը, դժոխքը, մարմնով եւ հոգով՝ սատանայի ամրոցը:

Երեսունհինգերորդ՝ Սամսոնը մեռնելիս աւելի շատ կոտորեց, քան կենդանութեան ժամանակ: Եւ Տէրն էլ մեր մահուամբ աւելի շատ թշնամի կորստի մատնեց, քան կեանքում հրաշքներ գործեց. Այլեւ չեմ խօսում խաչի վրայ մերկութիւնից թուլանալու անարգանքից եւ տկարութիւնից թօշնելու, խաչողներից ծաղրուելու, լուսատուների խաւարելու մասին եւ այլ կողմ շրջեմ խօսքս:

Պէտք է իմանալ, որ ինչպէս Սամսոնի զօրութեան մէջ Տիրոջ զօրութիւնը պատկերուեց, այդպէս էլ նրա տկարութեամբ ցոյց տրուեց մարմնական աշխարհի կորստաբեր խոնարհուելը, որովհետեւ ինչպէս Սամսոնն էր գլուխը սափրելուց յետոյ՝ թմրելով խոնարհուել Դալիլայի ծնկներին, այդպէս էլ ամէն մի մեղք եւ առաւելապէս տռփական ցանկութիւն՝ անարգում է մարդուն:

Նախ՝ որովհետեւ խաբւում է մեղքերից եւ յայտնի դարձնում սրտի գաղտնիքը: Երկրորդ՝ որովհետեւ խախտում է Աստծոյ ուխտը: Երրորդ՝ ծառայում է մեղքերին: Չորրորդ՝ թմրում է եւ թուլանում: Հինգերորդ՝ վերանում են Աստծոյ շնորհները: Վեցերորդ՝ տգեղանում է աստուածեղէն պատկերը: Եօթներորդ՝ տկարանում է զօրութիւնը: Ութերորդ՝ ուրախանում են թշնամիները: Իններորդ՝ մատնւում է նրանց ձեռքը: Տասներորդ՝ խղճմտանքի եւ յոյսի աչքն են փորում: Տասնմէկերորդ՝ բանտարկւում եւ կապւում են մեղքի շղթաներով: Տասներկուերորդ՝ մարմինը սպասարկող երկանքները անդադար գործում են, եւ մեռնում է մարդը նոյն կերպ, ինչպէս Սամփսոնը[428]:

Այսքանն այս մասին:

ԳԼՈՒԽ ԻԶ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ
ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ
Պրակ Ը

Հարց. Ի՞նչ են եփուտը եւ թերափը:

Պատասխան. «Եփուտը» հոմանուն է, որովհետեւ այդպէս է կոչւում թէ՛ ուսանոցը, թէ՛ ծածկոցը: Ուսանոցը

քահանայի վակասն է, ինչպէս որ Սամուէլի մայրը պատրաստեց (տե՛ս Ա Թագ. Բ 19): Իսկ այն, որ ծածկոցն է՝ ծիրանագոյն հանդերձ է, որով ծածկում են առաջաւորութեան հացի եւ խնկի սեղանները եւ թարգմանւում է՝ «տեսութիւն» կամ «փրկութիւն»:

Իսկ «թերափը» տապանակի կլորաւուն ծածկոցն էր, որն օգտագործւում էր հմայութիւն անելու համար եւ թարգմանւում է «քաւութիւն»: Այլեւ նշանակում է «դիւթ», իսկ «թերափիմք»-ը՝ «տունահմայք»[429]:

Հարց. Ի՞նչ մեղք գործեցին Հեղիի որդիները:

Պատասխան. Նախ երեքժանի մսահանով կաթսայից միս հանեցին, որ չէր թոյլատրւում:

Երկրորդ՝ խորովելու միս էին առնում եւ աղով համեմում:

Երրորդ՝ մինչ ճարպի այրուելը ուտում էին, այսինքն՝ առաջ, քան պատարագի ժամը:

Չորրորդ՝ ուտելով եւ ըմպելով անսեսում էին հեռուից եկած ուխտաւորներին՝ քառասնօրեայ նորածիններով եւ այլ ուխտերով, եւ վաստակում էին թէ՛ անձրեւին, թէ՛ արեւին, թէ՛ ցրտին:

Եւ ասում է՝ Հեղին տեսաւ առ Աստուած եղած այսքան մեղքերը: Այս պատճառով էլ սրից ընկան Ոփնի եւ Փենէհէզ ծոյլ քահանաները՝ զրկուելով երեսուն հազար հետեւակ զօրքից, եւ տապանակն էլ գերեվարուեց:

Եւ քանի որ Հեղին չէր խրատում նրանց՝ սաստելով կամ պատժելով, ուստի ինքն էլ պատժուեց ու մեռաւ (տե՛ս Ա Թագ. Բ-Դ), եւ քահանայութիւնը նրա ազգից Սողոմոնի օրօք վերցուեց:

ՏԱՊԱՆԱԿԻ ԳԵՐԵՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Թ

Հարց. Ինչո՞ւ է Աստուած աւիրում սրբութիւնները եւ գերեվարում, ինչպէս տապանակը եւ տաճարը այլազգիների կողմից:

Պատասխան. Նախ, երբ անարժան են լինում սպասաւորները, ինչպէս Ոփնին, Փենէհէզը՝ Հեղիի որդիները. այդպէս էլ նորում՝ քահանաները, ժողովուրդը. ինչպէս որ Մովսէսը ջարդուփշուր արեց աստուածագիր տախտակը՝ ժողովրդի յանցանքների պատճառով:

Երկրորդ՝ որպէսզի նրա պատճառով չարիք չգործէին, որովհետեւ ասում էին՝ «Տիրոջ տաճարը մեզ յետ է», սակայն անօրէնութիւններ էին անում (Երեմ. է 4):

Երրորդ՝ ցոյց է տալիս խիստ բարկութիւնը, երբ նոյնիսկ իր սրբութիւնը չի խնայում մարդկանց մեղքերի պատճառով:

Չորրորդ՝ ցոյց է տալիս, որ եթէ իր սրբութիւնը չի խնայում, չի խնայի նաեւ ձեզ՝ յանցաւորներիդ, եթէ չզղջաք:

Նոյն պատճառով էլ նորում խաչը, սրբութիւնը, եկեղեցին եւ մնացած բաներն է տալիս այլազգիների ձեռքը:

Հարց. Ինչո՞ւ կործանուեց Դագոնը տապանակի առջեւ:

Պատասխան. Կրկնակի էր Դագոնի կործանումը:

Նախ՝ Մովսէսի օրէնքով ընկաւ, ապա՝ Քրիստոսով կործանուեց ու

կտրուեցին գլուխը, ձեռքերը, ոտքերը (տե՛ս Ա Թագ. Ե 1-9), որպէսզի նախ այլազգիները չկարծեն, թէ իրենց կուռքերն առջեւից ընթացան, գլխաւորեցին զօրքերը եւ պատերազմեցին:

Երկրորդ՝ որովհետեւ ժողովուրդը ոտքով գալիս, ձեռքերը տարածում եւ գլուխը խոնարհելով՝ երկրպագում էր, ուստի հենց այդ անդամներն էլ կտրուեցին:

Երրորդ՝ որովհետեւ ոտքերն ու ձեռքերը կապած բազմաթիւ զաւակներ էին զոհաբերել նրան, ուստի դրանք կտրատուեցին:

Չորրորդ՝ Դագոնի հովանաւորի պատճառով, որն իր գլուխը Աստծոյ դէմ բարձրացրեց ու բռի մէջ հաւաքեց եւ ոտնակոխ արեց մարդկային ցեղը, որին խորտակեց մեր Տէրը:

Հինգերորդ՝ մեղքերի ընթացքը, հետեւանքները, այսինքն՝ սկզբնականն ու ձեռքբերովի մեղքերը, ապա գլուխը, որ մահն ու ապականութիւնն էր, կործանեց Քրիստոսը, ըստ այդմ՝ «Փրկիչը ջախջախեց վիշապի գլուխը» (հմմտ. Սղմ. ՀԳ 14):

Հարց. Ինչո՞ւ թութք առաջացրեց ու շատացրեց մկներին (Ա Թագ. Ե 6 -12):

Պատասխան. Նախ՝ որովհետեւ գարշելիներին տանջում էր գարշելի բաներով: Երկրորդ՝ այդ կերպ տանջուեցին որկրամոլներն ու չարերը: Երրորդ՝ Աբիմելէքի ժամանակ էլ նոյնը պատահեց, եւ Եգիպտոսում գորտն էր, այստեղ՝ մուկը: Չորրորդ՝ մէկը պատիժ էր տեսակի համար, միւսը՝ անհատի:

Հարց. Ի՞նչ էր նշանակում տապանակի եօթ ամսից վերադարձնելը (տե՛ս Ա Թագ. Զ):

Պատասխան. Գերելը խորհրդանշում էր օրէնքի ու աւետարանի առաքուելը հեթանոսների մէջ, իսկ վերադարձը՝ որ կենաց եօթ դարաշրջաններից յետոյ բոլոր սրբութիւնները վերստին կժողովուեն այնտեղ, որտեղից դուրս են եկել:

Իսկ անդրանկածին երինջները մարգարէներն ու առաքեալներն են, որոնք ծնեցին անդրանիկ հաւատացեալներին. նրանք են Աստծոյ ամոլները եւ զոհերը:

Իսկ սայլը երկու կտակարաններն են, որ անընդհատ հոլովւում են մեզանում՝ ինքնապտոյտ իջնելով եւ բարձրանալով:

ՍԱՒՈՒՂԻ ՄԱՍԻՆ (տե՛ս Դատ. Թ-ԼԱ)
Պրակ Ժ

Սաւուղը՝ առաջին թագաւորը, համեմատւում է մեր Տիրոջ հետ:

Նախ՝ ինչպէս Սաւուղն էշը փնտրելու ելաւ ու թագաւորութիւն գտաւ, այդպէս էլ մեր Տէրը մարդկային ազգին (գտաւ), որ հաւասարուել էր անբաներին եւ թագաւորեց նրա վրայ:

Երկրորդ՝ Սաւուղը լեռն անցաւ, սակայն չգտաւ, մինչ հասաւ տեսնօղին: Եւ մեր Տէրն էլ անցաւ հրեշտակների լեռները ու եկաւ մարգարէների մօտ, եւ նրանք աւետեցին երեքօրեայ կորած էշի գտնուելը, այսինքն՝ բնական, բանաւոր,

գրաւոր օրէնքով չգտնուած, այլ գտնուած աւետարանի միջոցով:

Երրորդ՝ նա Բենիամինի կրտսեր ցեղից լինելով՝ թագաւորեց ողջ Իսրայէլի վրայ: Եւ մեր Տէրն էլ մարմին առնելով մարդկային կրտսեր ցեղից՝ թագաւորեց երկնքի ողջ զօրութիւնների վրայ:

Չորրորդ՝ [Սաւուղը] նախ ծածուկ օծուեց, ապա Գաղգաղայի վրայ՝ բացայայտ: Եւ մեր Տէրն էլ նախ օծուեց արգանդում, ապա՝ Յորդանանում՝ Յովհաննէսից:

Հինգերորդ՝ չարերից ոմանք չէին հնազանդում նրան: Եւ հրէաներն էլ ասում էին. «Չենք ուզում, որ նա թագաւորի մեզ վրայ» (Ղուկ. ԺԹ 14): Եւ այժմ էլ որոշ անհաւատներ չեն հնազանդում:

Վեցերորդ՝ նա վկայւում է իբրեւ բարի ու լաւ անձ Իսրայէլի մէջ, եւ մեր Տէրն էլ բարի եւ ընտրեալ՝ բիւրաւոր արարածների մէջ:

Եօթներորդ՝ Սաւուղ է կոչւում[430], որ [նշանակում է] «ընտրեալ հայցում»: Եւ մեր Տէրն էլ հայցումն ու ակնկալութիւնն է բոլոր արարածների:

Ութերորդ՝ նա բոլորից ուսով բարձր էր: Եւ մեր Տէրն էլ ոչ միայն աստուածութեամբ, որ գլուխն է, այլեւ իր տանջանքներով բարձրագոյն եւ գերագոյն եղաւ, որովհետեւ փրկեց բոլորին:

Իններորդ՝ եօթն օր անց կորստի մատնեց խռովարար Նաասին, որ փորում էր իսրայէլցիների աջ աչքը (տե՛ս Ա Թագ. ԺԱ 2), եւ մեր Տէրը՝ խռովարար բանսարկուին, որ հանում է մարդկանց իմացական աչքը, երեք զօրութեամբ, երբ խաչի վրայ էր, այն է՝ ձայնով, մարմնով եւ հոգով, երբ իջաւ դժոխք, կամ էլ երեք գոյացութեամբ, այսինքն՝ աստուածութեան, հոգու եւ մարմնի:

Տասներորդ՝ դրանից յետոյ նրան հնազանդուեցին բոլոր իսրայէլցիները: Եւ մեր Տիրոջ խաչելութիւնից յետոյ հաւատի եկան եւ մանաւանդ կենաց եօթ շրջաններից յետոյ բոլոր լեզուները խոստովանելու են նրան Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստծոյ Հօր. Ամէն:

Այսքանն այս մասին:

Հարց. Ի՞նչ էր նշանակում վերարկուի պատռուելը:

Պատասխան. Նախ, այն, որ Սաւուղի օրօք թագաւորութիւնը բաժանուեց:

Երկրորդ՝ Դաւիթը, որ պատռելու էր Սաւուղի վերարկուն, նա էր թագաւորելու:

Երրորդ՝ թագաւորութիւնը բաժանուելու էր երկու մասի՝ Իսրայէլի եւ Յուդայի:

Հարց. Ինչո՞ւ հարցրեց, թէ՝ «Ո՞ւմ որդին է Դաւիթը» (Ա Թագ ԺԷ 55), քանի որ կապարճակիրն էր ու ծանօթ էր Սաւուղին:

Պատասխան. Ասում են, թէ նախ՝ փոխել էր պատուական զգեստները եւ հովւի ձորձեր էր հագել ու փոխակերպուել:

Երկրորդ՝ կամենում էր իմանալ, թէ ու՞մ ազգից է. Յուդայի ցեղից, թէ՞ փարիսեցի, եթէ սպանելու լինէր:

Երրորդ՝ ի նախատինք իր զօրքերին, որովհետեւ մի մանուկ հովիւ եւ որդին Յեսսեի սպանեց Գողիաթին, իսկ

նրանք՝ իշխաններն ու մեծամեծները, չկարողացան:

ԴԱՒԻԹԸ ԿԵՐԱՒ ՍՈՒՐԲ ՀԱՑԸ
Պրակ ԺԱ

Հարց. Ինչո՞ւ է կոչւում սուրբ հաց:

Պատասխան. Նախ, որովհետեւ պատարագ է Աստծուն: Երկրորդ՝ որովհետեւ խորանի սուրբ տեղում է դրւում: Երրորդ՝ որովհետեւ սրբերի կերակուր է: Չորրորդ՝ անխմոր է, քանի որ թթխմորով [թխուած] եւ ընդհանուր հացը պիղծ է համարւում:

Հարց. Դաւիթն ինչո՞ւ համարձակուեց ուտել սուրբ հացից:

Պատասխան. Երեք պատճառով:

Նախ՝ որովհետեւ մանուկները սուրբ էին: Երրորդ՝ որովհետեւ ճանապարհորդ էին: Երրորդ՝ երկնաւոր հացի օրինակով էր, որ բաշխուելու է քրիստոնեաներին:

Հարց. Ինչո՞ւ բնագրում ասւում է՝ «Աքիմելէք» (տե՛ս Ա Թագ. ԻԱ 1-6), իսկ Աւետարանը՝ «Աբիաթար» (տե՛ս Մրկ. Բ 26):

Պատասխան. Աբիաթարը Աքիմելէքի որդին էր, որ որդին էր Աքիտովբի, որդին՝ Փենէհէսի, որդին՝ Հեղիի: Կամ երկուսն էլ քահանայապետ էին: Կամ էլ որովհետեւ Աքիմելէքը երեք հարիւր քահանաներով սպանուեց Սաւուղից, եւ Աբիաթարը փախաւ Դաւթի մօտ ու նրա յետ էր՝ նրա թագաւորելու ողջ ընթացքում (տե՛ս Ա Թագ. ԻԲ 11-23, ԻԳ 9, Լ 7), եւ անուանապէս նրան է յիշատակում:

ՎՀՈՒԿՆԵՐԻ ԵՒ ԴԻՒԹՈՂՆԵՐԻ ՍՈՒՏ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԲ

Հարց. Վհուկ կինը ինչպէ՞ս յարութիւն տուեց Սամուէլին կամ ինչպէ՞ս էր գուշակում ապագան:

Պատասխան. Վհուկները եւ դեւերը ոչ ապագան գիտեն, ոչ էլ յարութիւն են տալիս մեռեալներին: Նրանց յարութիւն տալը նմանակում է եւ իրական չէ, ինչպէս որ խօսքն է սուտ ու ոչ ճշմարիտ:

Եւ դեւերն էլ ոչ միայն ապագան չգիտեն, այլեւ ներկայի խորհրդին էլ հասու չեն: Չգիտեն նաեւ ճշմարիտ անցեալը եւ բարին չեն մտապահում:

Սա պարզ դարձաւ Սաւուղի [օրինակով], որը փոխելով հանդերձանքը՝ գնաց վհուկի մօտ եւ ասաց. «Սամուէլի ոգին կանչի՛ր» (Ա Թագ. ԻԸ 11):

Եւ այն, որ վհուկը չճանաչեց Սաւուղին, պարզ է այն բանից, որ գովեց նրան, ապա պարսաւեց Սաւուղին՝ ասելով, թէ՝ «Սաւուղը կոտորեց վհուկներին, դու էլ կամենում ես ինձ սպանել» (Ա Թագ. ԻԸ 9-10): Եւ եթէ դէմքը չճանաչեց, ինչպէ՞ս կարող էր հասկանալ մտքինը:

Երկրորդ՝ վհուկն անչափ վախեցաւ մեռնելուց, մինչդեռ կեանք էր խոստանում այլոց:

Երրորդ՝ եթէ իր օրհասը չգիտէր, ուրեմն չէր կարող եւ ուրիշներինը իմանալ, որովհետեւ ասաց. «Կամենում ես ինձ կորստի մատնել», մինչդեռ Սաւուղի ձեռքով կորստի չմատնուեց:

Չորրորդ՝ մինչ Սաւուղը չերդուեց, չհամոզուեց:

Հինգերորդ՝ կանխագէտ լինելով՝ չասաց Սաւուղին, թէ դու ո՞վ ես, որ ինձ փրկես Սաւուղից:

Վեցերորդ՝ որովհետեւ հարցրեց Սաւուղին, թէ «Ո՞ւմ ոգին կանչեմ»: Իսկ եթէ գիտէր ապագան, ինչո՞ւ չկռահեց ներկայի միտքը:

Եօթներորդ՝ կինը չէր ցանկանայ, որ Սամուէլը իրապէս կենդանանար, որովհետեւ նրանց կործանողն էր, եւ գիտէր, որ Սամուէլի նմանութիւնն է:

Ութերորդ՝ որովհետեւ ճչաց, թէ «Ինչո՞ւ խաբեցիր ինձ, դու Սաւուղն ես» (Ա Թագ. ԻԸ 12): Արդ, եթէ խաբէութիւնը չիմացաւ, ինչպէ՞ս պիտի իմանար ճշմարիտ խորհուրդները: Ուրեմն պարզ է, որ ինչպէս Սաւուղն էր կնոջը խաբում, այդպէս էլ կինն էր Սաւուղին խաբում՝ Սամուէլի կերպարանքը ձեւացնելով:

Իններորդ՝ Սաւուղի երդումից յետոյ ինչո՞ւ զարհուրեց կինը եւ ընկաւ երեսի վրայ, մինչ որ Սաւուղը քաջալերեց ու հարց տուեց:

Տասներորդ՝ ասաց՝ «Աստծուս տեսայ», որովհետեւ տեսնում էր Սաւուղին ու Սամուէլին: Եւ եթէ նա յարութիւն էր տալիս, ինչո՞ւ երկուսին կանչեց, քանի որ նա միայն Սամուէլին էր ուզում:

Տասնմէկերորդ՝ ինչո՞ւ չճանաչեց Սամուէլին, որովհետեւ ասաց, թէ՝ «Տեսնում եմ մի ծերունի իր թիկնոցով» (Ա Թագ. ԻԸ 14): Եթէ ինքը ձեւ տուեց մարմնին, շունչ, եւ կենդանացրեց, ինչպէ՞ս չճանաչեց:

Տասներկուերորդ՝ կինն ինչո՞ւ յետոյ խաբեց տեսիլքի մասին եւ մորթեց իր խնամած հորթին, որովհետեւ եթէ գիտէր Սաւուղի ստոյգ մահուան վերաբերեալ, չէր կաշառի նրան: Ապա ուրեմն, ակնյայտ է այս տասներկու կէտերով, որ վհուկը ապագան չգիտէր:

Այժմ գանք Սաւուղի պարագային:

Նախ, որ չտեսաւ Սամուէլին, այլ՝ միայն [տեսաւ] կինը, ուրեմն պարզ է, որ կեղծ նմանութիւն էր:

Երկրորդ՝ որտեղի՞ց իմացաւ, թէ Սամուէլն է, քանզի միայն կինն ասաց՝ «ահա», եւ ինչպէս կինը ներկայացրեց, այդպէս էլ Սաւուղն ընդունեց:

Երրորդ՝ երկրպագում էր նրան, սակայն չէր տեսնում: Արդ, երբ կենդանի էր, դառնութեամբ եւ սգով իջեցրեց գերեզման, իսկ հիմա մեռելին երկրպագում էր:

Չորրորդ՝ որովհետեւ ասաց՝ «Տէրը հեռացաւ ինձնից» (Ա Թագ. ԻԸ 15), եւ պատասխան չտուեց: Արդ, եթէ Աստուած ծածկում էր նրանից, իսկ Սամուէլը հակառակ Աստծոյ կամքի յայտնում էր նրան լինելիքը, ուրեմն բարկացնում էր Աստծուն. հետեւաբար, սուտ էր, թէ նա Սամուէլն էր:

Հինգերորդ՝ որովհետեւ [Սաւուղը] սարսափած ընկաւ երեսի վրայ: Եթէ կինը իսկապէս կենդանացրել էր Սամուէլին, Սաւուղը չէր վախենայ մահից, որովհետեւ իրեն էլ յարութիւն կտար, իսկ եթէ

վախեցաւ, ուրեմն սուտ էր մեռեալի կենդանութիւնը:

Վեցերորդ՝ եթէ Սաւուղը հաւատար, չէր գնայ պատերազմ, այլ խոյս կտար ու կփախչէր, պատերազմ կանէին որդիներն ու սպարապետը, քանի որ նրան ոչ թէ յաղթանակ, այլ մահ գուշակեց:

Ուրեմն պարզ է, որ նա երկ-ընտրանքի մէջ էր, որովհետեւ եթէ վհուկին սուտ համարէր, չէր վախենայ մահից, իսկ եթէ ճշմարիտ համարէր՝ չէր գնայ պատերազմ:

Ուստի պարզ է, որ սա Սաւուղի ժամանակի ընդհանրական ընկալումն է, ովքեր թերի կարծիքով հաւատում էին երազներին, վիճակահանութեանը, ռամ-տեսներին եւ այլոց: Իսկ ովքեր անվերապահ հաւատում են, վհուկ են, որոնց եկեղեցին արտաքսում է: Իսկ մեր ճշմարիտ փրկութիւնը յուսով է եւ աղօթքներով:

Այժմ գանք յարութիւն տալու պարզաբանմանը:

Նախ՝ եթէ Սամուէլը իրապէս յարու-թիւն առաւ, ինչո՞ւ չհարուածեց վհուկին ու չսպանեց եւ ինչո՞ւ չյանդիմանեց Սաւուղին, որ եկել էր վհուկի մօտ:

Երկրորդ՝ ինչո՞ւ Սաւուղին չերեւաց, այլ միայն կնոջը, ինչպէս վերը նշուեց:

Երրորդ՝ ինչո՞ւ ինքը չասաց, թէ «Ես Սամուէլն եմ», այլ նրանք նմանեցրին:

Չորրորդ՝ ինչո՞ւ համաձայնեց Աստուած կոչել իրեն եւ երկրպագել նրան, քանզի նա մարդ էր:

Հինգերորդ՝ ինչո՞ւ հակառակ Աստծոյ եւ այլ մարգարէների գաղտնիքը յայտնում էր Սաւուղին:

Վեցերորդ՝ ինչո՞ւ չէր քաջալերում Սաւուղին, որ՝ «Եթէ մեռնես, վհուկը քեզ էլ կկենդանացնի, ինչպէս ինձ»:

Եօթներորդ՝ ինչո՞ւ նրանց յետ չկե-րաւ, չնստեց եւ չշօշափուեց:

Ութերորդ՝ ինչո՞ւ սուտ խօսեց:

Ուրեմն պարզ է, որ սուտ էր Սա-մուէլի երեւալը եւ կեղծ:

Բե՛ր քննենք նաեւ խօսակցութեան էութիւնը, քանի որ թուում է, թէ դեւերը ճիշտ են պատմում ապագան:

Նախ, այն, որ հարցրեց, թէ՝ «Ինչո՞ւ կանչեցիր ինձ»: Չէր հարցնի, եթէ իմա-նար խորհուրդը:

Երկրորդ՝ այստեղ էլ սուտ խօսեց, որովհետեւ եթէ Սամուէլն էր, չէր սովորի Սաւուղից, իսկ դեւը հողի տակից չի բարձրանում:

Երրորդ՝ որովհետեւ նոր բան չասաց, այլ ինքը երկրորդեց այն, ինչ լսեց Սաւուղից, հետեւաբար, ապագայի մասին ոչինչ չասաց:

Չորրորդ՝ եթէ Սամուէլը լինէր, չէր ասի թէ՝ Տէրը հեռացել է քեզնից, որովհետեւ սա մարգարէութիւն չէր, քանի որ սա նրա ասածի կրկնութիւնն էր: Իսկ եթէ Սամուէլը չէր, այլ այդ անունով հանդէս եկաւ ու դեւ էր, ուրեմն սուտ խօսեց:

Հինգերորդ՝ այն, ինչ ասաց Սա-ւուղին, պէտք է կամ հրաման լինէր, կամ՝ մարգարէութիւն: Եթէ հրաման էր եւ հատու վճիռ, ուրեմն Աստուած էր ու ոչ

մարգարէ, ուստի Սամուէլը սուտ ասաց իր ով լինելը: Իսկ եթէ մարգարէութիւն էր ու լինելիքն էր, ուրեմն աստուած չէր եւ սուտ կոչուեց այդ անունով: Իսկ եթէ մի այլ բան էր՝ խօսքերը, տեսիլքը սուտ էին ու ոչ ճշմարիտ:

Վեցերորդ՝ որ ասաց՝ «Վաղը կընկնես ինձ մօտ» (Ա Թագ. ԻԸ 19), արդ, եթէ Սամուէլը յարութիւն առնէր ու մեռնէր, կամ էլ՝ կինը, ասածը ճշմարիտ կլինէր: Իսկ եթէ կինը չմեռաւ, եւ Սաւուղը մեռաւ, ուրեմն սուտ խօսեց:

Եօթներորդ՝ որովհետեւ ասաց՝ «Վաղը ընկնելու ես պատերազմում» (Ա Թագ. ԻԸ 19), սակայն ոչ երկրորդ, ոչ երրորդ օրը պատերազմ չեղաւ, հետեւաբար սուտ գուշակեց:

Ութերորդ՝ ինչպէս որ սուտ էր կենդանացնելը, այդպէս էլ կեղծ էին խօսքերն ու կերպարանքը, ուստի պարզ է, որ դեւերը չգիտեն ապագան եւ չգիտեն ներկայի խորհուրդը, ոչ էլ յարութիւն են առնում մեռեալները, այլ սուտ կերպարանք են ստանում:

Իսկ եթէ մէկն ասի, թէ աստղագուշակները գիտեն ապագան, ապա ասենք, քանի որ ժամանակը լուսատուների շարժումով է պայմանաւորուած, ապա ըստ նրանց ընթացքի ապագան ասելը սովորական բան է: Այդպէս էլ դեւերը մանրամասները նկատելու իրենց հմտութեամբ կամ լսելով, խաբում են՝ պատմելով ապագայի մասին: Մինչդեռ ապագան ու մարդու սիրտը գիտէ միայն Աստուած եւ ուրիշ ոչ ոք, ինչպէս ասել ենք գրքի սկզբում: Իսկ մարգարէութիւն շնորհելու մասին Նոր օրէնքում է ասուել:

Այսքանն Առաջին թագաւորաց գրքի մասին:

ԳԼՈՒԽ ԻԷ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐԱՑ Պրակ ԺԳ

Հարց. Ի՞նչ է [նշանակում] ասելը՝ «Իւրաքանչիւրը, ով մարտնչի յեբուսացիների, կաղերի, կոյրերի դէմ՝ Դաւթին ատելի է» (Բ Թագ. Ե 8):

Պատասխան. Այն է նշանակում, որ կաղերն ու կոյրերը Դաւթին դէմ եղան եւ անարգելով՝ ասում էին. «Թող Դաւիթը քաղաք չմտնի» (Բ Թագ. Ե 6), որ ինքը՝ Երուսաղէմն էր, որ եղաւ Տիրոջ տունը: Կամ որովհետեւ Դաւիթն աղքատասէր էր, ու շատերն էին նրա շուրջը պտտւում, որի պատճառով յեբուսացիք նախանձեցին: Կամ էլ քանի որ օրէնքում գրուած էր, թէ կոյրին ու կաղին գայթակղելու առիթ մի տայ (հմմտ. Ղեւտ. ԻԲ 22), այդ պատճառով նախատելով ասում էին, որ ինչպէս չես կարող դրանց տրորել, այդպէս էլ չես կարող վերցնել Յեբուսի ամրոցը:

Ուստի Դաւիթն ասաց. «Իւրաքանչիւր ոք, ով սրով մարտնչի կոյրերի ու կաղերի դէմ, ինչպէս ասացին յեբուսացիները, նա ատելի է Դաւթի անձին», եւ այդպէս խնայեց ու փրկեց նրանց, ինչպէս որ յետոյ էլ նրա Որդին էր տաճարում բժշկում կաղերին ու կոյրերին: Եւ այդպէս էլ յիշատակում էին. «Որդի Դաւթի, ողորմեա՛ մեզ» (Մտթ. Ի 30), այսինքն՝ ինչպէս քո հայրը վարուեց:

ՏԱՊԱՆԱԿԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԴ

Հարց. Ինչո՞ւ մեռաւ Ոզիան (Բ Թագ. Ձ):

Պատասխան. Նախ, որովհետեւ պարտաւոր էր ուսով բերել տապանակը, ինչպէս որ հրամայել էր Աստուած, մինչդեռ սայլով էին բերում՝ այլազգիների նման:

Երկրորդ՝ որովհետեւ վայել չէր բերել գիշերը:

Երրորդ՝ որովհետեւ քահանայ չէր, որի համար Դաւիթն յետոյ ասում էր քահանաներին. դո՛ւք, ղեւտացիներդ, սրբուեցէ՛ք ու բարձրացրէ՛ք տապանակը, որպէսզի չլինէք Ոզիայի նման:

Եօթը դաս երգ ու պար էին կատարում, որոնցից երեքը ուղեկցւում էին երգով, սրնգի, փողի նուագով, իսկ չորսը ձեռքերով էին նուագում. տաւիղը, քնարը, թմբուկը, ծնծղան, ինչպէս որ մեր ձայնական գործիքներն են եօթը, որոնցով սաղմոսում ենք: Այդպէս էլ եօթն են հոգու զօրութիւնները եւ եօթը՝ առաքինութիւնները՝ չորսը՝ մարմնական, երեքը՝ աստուածային:

Այս իմաստով է, որ սեղանին ընծայաբերելիս քահանայական եօթ դասեր են սպասարկում ու եղանակով երգում. այդտեղ նաեւ քշոցը, բուրվառը, զանգի հնչելը: Եւ սարկաւագը սպիտակ զգեստով իբրեւ հովանի՝ Դաւթի նման. եւ ջահերը վառուած, ըստ որի ասում էր. «Ես որպէս աշխարհի լոյս եկայ» (Յովհ. ԺԲ 46): Ապա նշխարի բաշխումը, ինչպէս որ Դաւիթը ամբողջ Իսրայէլին բաժանեց մի բլիթ հաց ու մի-մի պատառ տապակից եւ կասկարայից:

ԴԱՒԹԻ ՅԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԵ

Հարց. Ինչո՞ւ Աստուած յանդիմանեց Դաւթին Նաթան մարգարէի միջոցով:

Պատասխան. Նախ՝ որպէսզի չար եւ անողորմ մարդիկ չյանդիմանեն, ուստի Աստուած յանդիմանեց եւ ողորմաց:

Երկրորդ՝ որովհետեւ Աստուած գիտէր, որ Դաւիթը կզղջայ:

Երրորդ՝ որպէսզի նրանք, ովքեր լսեցին Դաւթի մեղքերի մասին, տեսնեն նաեւ զղջումը:

Չորրորդ՝ որպէսզի ցոյց տայ, որ քառասուն տարի թագաւորեց եւ միայն մէկ անգամ մեղանչեց:

Հինգերորդ՝ ցոյց տալու համար, որ եթէ իր սիրելի Դաւթին չխնայեց, ուրեմն յանդիմանելու է բոլոր մեղաւորներին:

Վեցերորդ՝ իբրեւ յոյս եւ օրինակ բոլոր մեղաւորների համար, որպէսզի զղջան եւ մեղքերի թողութիւն ստանան:

Հարց. Երբ «Մեղայ» ասաց, ինչո՞ւ պատիժը չվերացրեց, ու խայտառակուեցին նրա կանայք:

Պատասխան. Նախ, որովհետեւ Դաւթի «մեղայ»-ն յաւիտենական պատիժը ժամանակաւոր խրատ դարձրեց: Այդպէս էլ իւրաքանչիւր խոստովանողի հետ է վարւում:

Երկրորդ՝ որովհետեւ երկու պատիժ էր. սուրը տան մէջ եւ կանանց խայ-

տառակութիւնը, եւ «մեղայ» ասելով՝ փրկուեց սրով մեռնելուց:

Եւ քանի որ Նաթանը մղեց զղջման՝ կրեց պատժի կէսը, որովհետեւ կան զղջում եւ խոստովանութիւն, որոնք վերացնում են մեղքը ու նրա յետ միասին՝ պատիժը, ինչպէս այն, որ հատած ծառի հետ չորանում են ճիւղերը, երբ զղջումը ամբողջ սրտով է լինում, խոստովանում է ու այլեւս մեղք չի գործում:

Եւ խոստովանողի ամաչելն ու արտասուքները հատուցման գրաւական են:

Եւ կայ, որ մեղքը ներւում է, սակայն պատիժը կրում է. [սա այն դէպքում], երբ խոստովանում են ուրիշի պարտադրմամբ եւ պատահաբար ու նորից սխալւում են: Այսպիսիների միայն մեղքն է ներւում:

Եւ կայ, որ խոստովանում է, սակայն մեղքը չի ներւում, որովհետեւ թերի սրտով է եղել, եւ մեղքն էլ թերի է խոստովանել, ու մտքում կայ, որ դարձեալ գործի: Այսպիսիների ո՛չ մեղքն է ներւում, ո՛չ էլ պատիժն է հանւում, որովհետեւ շան նման վերադառնում է իր փսխածին (հմմտ. Բ Պետ. Բ 22): Չնայած բարի է, քան բոլորովին չխոստովանելը, որովհետեւ ըստ կանոնների՝ թեթեւացնում է, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում՝ խոստովանութեան ճառի մէջ:

Եւ պէտք է իմանալ այս, որ ամէն մի խոստովանող՝ կատարեալ թէ անկատար, պէտք է ապաշխարի, այսինքն՝ հատուցի փոխարէնը:

Նախ՝ որպէսզի հեռանայ չարից: Երկրորդ՝ որպէսզի յաւիտենական պատիժ չկրի: Երրորդ՝ որովհետեւ արդարների ու կատարեալ խոստովանողների համար դա փառք ու պսակ է:

Ապա ուրեմն, պէտք է իւրաքանչիւր մարդու վրայ ըստ կարգի եւ ըստ մեղքի չափի լուծ դնել:

Հարց. Ինչպէս Դաւթի զղջումից յետոյ մնաց մեղքի յիշատակը, այդպէս էլ իւրաքանչիւր մարդո՞ւնն է մնում, եթէ անգամ խոստովանում է:

Պատասխան. Ասենք, որ ոչ, որովհետեւ կատարեալ խոստովանութեամբ մեղքերը ներւում են, վերանում է պատիժը ու ջնջւում մեղքերի յիշատակը ու չի երեւում մինչ իսկ Աստծոյ դատաստանի ժամանակ:

Եւ այս է պատճառը, որ քահանայի դատաստանով քննուածը այլեւս Քրիստոսի դատաստանում չի քննւում. ասում է՝ «Այն, ինչ արձակէք, արձակուած կլինի» (Մտթ. ԺՁ 19): Եւ Քրիստոսի նոյն իշխանութեամբ է, որ այստեղ քահանայի ձեռքով արձակւում է, եւ նրա իշխանութիւնը երբեք չի պակասում, ինչպէս որ [պատարագելիս] հացն ու գինին ու մնացած խորհուրդները կատարելիս, նոյնն էլ այս պարագայում:

Իսկ ֆռանկների հերձուածող ազգն այս մասին ասում է, որ չնայած այստեղ խոստովանում են, սակայն դատաստանի ժամանակ մեղքը յիշատակւում է:

Իսկ Դաւթի մեղքը յիշատակուեց երկու պատճառով:

Նախ՝ որպէսզի մեղանչածները թողութեան յոյս ունենան, եւ մենք էլ զղջալով՝ ապաշխարենք մեղքերը:

Երկրորդ՝ օրէնքի պակասաւորութիւնն էր ցոյց տալիս, որովհետեւ հին օրէնքը չէր կարող մեղքը ի չիք դարձնել՝ առանց մարմնական փոխհատուցումների եւ յիշատակութիւնների: Իսկ նոր [օրէնքի] շնորհն այն է, որ կարող է մարդուն այնպէս արդարացնել, որ մեղքերի սպիները ջնջի ու ծածկի յիշատակները, որին փափագում էր Դաւիթը. «Երանի նրան, ում մեղքերին թողութիւն տրուեց, եւ ծածկուեցին նրա բոլոր յանցանքները» (Սղմ. ԼԱ 1):

Եւ ինչպէս մկրտութեան շնորհը առաւել է նրանց թլփատութիւնից, որովհետեւ մաքրում է մեղքերը եւ բացում արքայութեան դռները, այդպէս էլ ապաշխարութեան շնորհը նորում առաւել է, քան հնում, որովհետեւ նրանք առանց հատուցման գործերի չէին կարող արդարանալ, իսկ այստեղ միայն թողութեան շնորհով կարող են արդարանալ:

Եւ եթէ ասեն՝ խոստովանած մեղքը այլեւս չպէ՞տք է յիշենք, ապա ասենք, որ պէտք է յիշել թէ՛ մտքում, թէ՛ լեզուով. ցաւել, անընդհատ հոգալ անցեալի մեղքերի եւ չգործած բարութիւնների համար: Եւ քննութեան դատաստանում ջնջուելու են այն մեղքերը, որոնք մենք միշտ մտապահել ենք, ինչպէս նշեցինք վերը:

ԲԵՐՍԱԲԷԻ ԱՌԱՋԻՆ ՁԱՒԱԿԻ ՄԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԶ

Հարց. Բերսաբէի առաջին զաւակը ինչո՞ւ մեռաւ:

Պատասխան. Նախ, որովհետեւ շնութեան պտուղ էր: Երկրորդ՝ որովհետեւ պատժի սուրը նրա վրայ իջաւ: Երրորդ՝ որ խրատ լինի շնացողներին: Չորրորդ՝ որ նախատինք չլինէր ծնողների համար: Հինգերորդ՝ որովհետեւ բամբասանքի առիթ էր լինելու: Վեցերորդ՝ չէր կարող թագաւորել: Եօթներորդ՝ չէր կարող կառուցել սուրբ տաճարը: Ութերորդ՝ առանց մեղք գործելու հեռացաւ աշխարհից:

Սրանք են իւրաքանչիւր երեխայի մահուան պատճառներն ըստ Աստծոյ խնամակալութեան:

Հարց. Դաւիթն ինչո՞ւ չպատասխանեց Սիմէի անարգանքներին:

Պատասխան. Նախ, որպէսզի մեզ օրինակ լինէր չպատասխանելու նախատողներին, ասելով՝ «Փակ դրեցի բերանիս» (Սղմ. ճԽ 3): Եւ Տէրն ասում է՝ «Ցնծացէ՛ք եւ ուրախ եղէ՛ք, որովհետեւ բազում է ձեր վարձը երկնքում» (Մտթ. Ե 12): Երկրորդ՝ որովհետեւ արդարացի նախատինք էր, քանի որ սպանել էր Ուրիային: Երրորդ՝ որովհետեւ Տէրը մղեց Սիմէին, ինչպէս որ Նաթանին: Չորրորդ՝ այն, ինչ ծածկեց Նաթանը, յայտնի դարձրեց Սիմէն ու մէջտեղ բերեց: Հինգերորդ՝ խօսքով ու գործով [Դաւիթն] սպանեց Ուրիային, որոնք հատուցուեցին Սիմէի նախատական խօսքերով ու Աբիսողոմի գործողութիւններով: Վեցերորդ՝ լռեց, որ Տէրը բարին հատուցի դրա փոխարէն, ինչպէս որ եղաւ, որովհետեւ խօսքով սաղմոսներ երգեց, իսկ գործով իր թագաւորութեան աթոռը հաստատեց, ինչպէս ասում է յիսուներորդ սաղմոսում՝ «Քո հոգու իշխանութեամբ հաստատիր

ինձ» (Սղմ. Ծ 14) եւ «Բերանն իմ քո օրհնութիւնն է երգում» (Սղմ. Ծ 17):

Իսկ սուրբ Եփրեմն այս մասին ասում է, որ Դաւթի խրատը մեղքերի հատուցումը եղաւ, իսկ պարտքերը բարի գործերով հատուցելն առ Աստուած՝ ի ցոյց օրէնքի բոլոր ապաշխարողների համար, որովհետեւ նոյն ապաշխարութիւնը ե՛ւ մեղքերի հատուցում է, ե՛ւ բարի գործ առ Աստուած[431]:

Եւ պէտք է իմանալ, որ այս կեանքում ապաշխարելը հատուցում եւ պսակն է բարի գործերի, իսկ մահից յետոյ՝ պաշտամունքը եւ աղքատներին [տրուող] ողորմութիւնը միայն պատժի հատուցում է, բայց յարութիւնից յետոյ՝ անվճար է եւ առանց հատուցման տանջանք. «Մինչեւ,- ասում է,- վերջին լումայի հատուցումը» (Մտթ. Ե 26), այսինքն՝ ոչ հատուցում է եւ ոչ էլ վերջանում տանջանքը:

Հարց. Ովքե՞ր են նմանուել Ադամին մարմնի մասերով:

Պատասխան. Դաւիթն՝ աչքերով, Աբիսողոմը՝ մազերով, Ասայէլը՝ քայլուածքով, իսկ մեր Տէրն ամբողջովին եղաւ երկրորդ Ադամը:

Հարց. Ի՞նչ էր [նշանակում] Դաւթի՝ Բեթղէհէմի ջրին կարօտելը:

Պատասխան. Նախ, ինչպէս Գեդէօնը ջրով փորձեց զօրքի հաւատարմութիւնը (տե՛ս Դատ. է), այդպէս էլ Դաւիթը:

Երկրորդ՝ դրանով էր իմացւում թշնամու պարտութիւնը:

Երրորդ՝ Բեթղէհէմի ջուրը մեր Տէրն է, որ զովացնում է մեր ծարաւը:

Չորրորդ՝ Քրիստոսի օրինակով էր, որ ասում էր՝ «ծարաւ եմ» (Յովհ. ԺԹ 28), ու չխմեց, ինչպէս որ Դաւիթը Տիրոջը նուիրեց այդ ջուրը:

ՄԱՀՈՒԱՄԲ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԷ

Հարց. Ինչո՞ւ հրամայեց հաշուել ու կոտորել ժողովրդին:

Պատասխան. Նախ՝ հրամայեց համրել, ինչպէս որ Իսրայէլին թոյլ տուեց մարտնչել Բենիամինի դէմ, ու կոտորուեցին նրանց երեսուն հազար հետեւակ զօրքերը:

Երկրորդ՝ ինչպէս Դովեկը քահանաներին հաշուեց, որ չազատուեն սրից (տե՛ս Ա Թագ. ԻԱ-ԻԲ), այդպէս էլ սա էր վրէժխնդրութիւն քահանաների համար, որովհետեւ ժողովուրդը կամեցաւ փրկել նրանց:

Երրորդ՝ սա վրէժ էր նաեւ նրանց դէմ, ովքեր Աբիսողոմի կողմի հաշուի մէջ էին էին եւ [կամենում] էին սպանել Դաւթին:

Չորրորդ՝ նրանց համրեց, որպէսզի, երբ ժանտամահ լինէին, իմանային մեռածների քանակը եւ մեղքերի ծանրութիւնը:

Հինգերորդ՝ որովհետեւ կատարուած էր Աստծոյ խոստումը, թէ՝ «Ձեր զաւակներն անթիւ են լինելու» (հմմտ. Ծննդ. ԺԳ 16), սակայն նրանք ուխտազանց եղան, որի պատճառով Աստուած մահ ուղարկեց:

Եւ յայտնի է, որ Իսրայէլի ցեղերը ութ հարիւր հազար էին, Յուդայինը՝ հինգ հարիւր հազար, իսկ քահանաների եւ Բենիամինի ցեղերը հաշուի մէջ չմտան:

Եւ սրանք պատերազմողներն էին՝ չյիշելով այլ խառնիճաղանճը:

Հարց. Ինչո՞ւ երեք պատուհասներից մէկն ընտրեց:

Պատասխան. Նախ, որովհետեւ երեքամեայ սովը եւ երեքամսեայ պատերազմը սաստիկ կլինէին, քան երեքօրեայ տարաժամ մահերը:

Երկրորդ՝ սովն ու սուրը բարուն եւ չարին միապէս են պատժում, իսկ մահը Աստծոյ ընտրութեամբ էր ու թափւում էր յանցաւորների գլխին: Ուստի պարզ է, որ Դաւիթը յանցաւոր չէր, այլապէս կպատժուէր:

Եւ այն, որ առաւօտուանից մինչ ժամը երեքը եօթանասուն հազար մարդ մեռաւ, ըստ արդար վճռի էր, որովհետեւ Աստուած ողորմաց եւ այնուհետեւ արգելեց միւս օրերին, այլապէս, մէկ օրում կարող էր հինգ հարիւր եւ վաթսուն հազար կոտորել նոյն հերթականութեամբ, եւ ժողովրդից ոչ ոք չէր մնայ:

Եւ կոտորող հրեշտակին տեսաւ միայն Դաւիթը, որպէսզի միջնորդի: Եւ մինչ Դաւիթը գնաց հասաւ Ուռնայի կալը, որտեղ եզներ գնեց ու զոհաբերեց (տե՛ս Բ Թագ. ԻԴ 16), դարձաւ ժամը վեցը, երբ դադարեց կոտորածը, որ նախ խորհրդանշում է Քրիստոսի խաչելութիւնը, որ ժամը երեքից մինչ ժամը վեցը խաչուեց, ապա հաշտուեց Աստուած:

Երկրորդ, այն պահին, երբ մարդ ուխտ է անում, այդ պահից էլ դադարում է Աստծոյ ցասումը, իսկ երբ կատարում ենք, երեւում է մեզ:

Եւ տե՛ս, երբ կոտորեց եօթանասուն հազարին, հրեշտակին հրամայեց դադարեցնել, որ նշանակում է, թէ տարաժամ մահը Աստծոյ կամքով է լինում եւ ոչ պատահական, ինչպէս ասում են ոմանք:

Տե՛ս նաեւ, որ երկրպագութեամբ եւ պատարագով յետ է դառնում բարկութեան սուրը:

ԴԱՒԹԻ ԵՒ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ
Պրակ ԺԸ

«Գտայ Դաւթին՝ այր իմ սրտով, որ կատարում է իմ ողջ կամքը», այսինքն՝ կառնի իրաւունք եւ արդարութիւն ինչպէս իմ սիրտը, որի օրինակով ակնարկում է մեր Տիրոջը՝ մարդեղացած Բանին, որի ձեռքի գործերը արդարութիւնն ու իրաւունքն են:

Եւ բազմաթիւ յատկանիշներով է օրինակը համեմատւում ճշմարտութեան յետ:

Նախ, որ որդին էր Յեսսէի, որ [բացատրւում է] «կղզու պտուղ»[432]: Եւ մեր Տէրն էլ եղաւ Մարիամի պտուղը՝ ցամաք լինելով այս կեանքի խոնաւութիւնից:

Երկրորդ՝ Դաւիթ է կոչւում, որ [նշանակում է] «սիրեցեալ»[433] եւ «ձեռքով բաւական»: Եւ մեր Տէրն էլ Հօր սիրեցեալն էր եւ իբրեւ մարդկանցից միեղջերու (հմմտ. Սղմ. ԻԸ 6) Որդի, եւ նա

է բոլոր գործերի ու պարգեւների բաւարարումը:

Երրորդ՝ նա հօտի հովիւ էր: Եւ մեր Տէրն էլ հովիւ կոչուեց Վերին իմանալիների եւ մոլորուած մարդկանց համար:

Չորրորդ՝ հովւից օծուեց թագաւոր: Եւ մեր Տէրը նախ քարոզեց, ապա ժողովեց ու տիրեց երկինքն ու երկիրը:

Հինգերորդ՝ նա փոքրն էր եւ կրտսերը եղբայրներից: Եւ մեր Տէրը երկրորդ Ադամն էր եւ փոքր կոչուեց, քան հրեշտակները, սակայն առաւելագոյն պատուի արժանացաւ:

Վեցերորդ՝ Սաւուղը վտարուեց ու ընտրուեց Դաւիթը. այդպէս էլ խոտանուեց հին օրէնքը, ընտրուեց նորը:

Եօթներորդ՝ [Դաւիթն] առաջինն էր, որ օծուեց Բեթղէհէմում: Եւ մեր Տէրն էլ ծնուելիս «Օծեալ» (Ղուկ. Բ 11) կոչուեց հրեշտակների կողմից:

Ութերորդ՝ Սամուէլի ձեռքով ու իւղով օծուեց: Եւ մեր Տէրն էլ Հօրից եւ Սուրբ Հոգով օծուեց:

Իններորդ՝ Հոգին ճախրեց Դաւթի վրայ, իսկ աղաւնակերպ Հոգին՝ Քրիստոսի վրայ:

Տասներորդ՝ Դաւիթը խարտեաշ մանուկ էր, «տեսքով գեղեցիկ»: Եւ՝ «Եղբօրորդին իմ կարմիր է եւ սպիտակ» (Երգ Ե 10), որ ցոյց են տալիս անմեղութիւնն ու մահը, այլեւ՝ միաւորեալ աստուածութիւնն ու մարդեղութիւնը: Իսկ՝ «տեսքով գեղեցիկ», որովհետեւ նստում է երկնքում, նայում ներքեւ, այլեւ նայելով բուժում հիւանդներին եւ մաքրում մեղաւորներին:

Տասնմէկերորդ՝ Դաւիթը գազանների բերանից կորզում էր իր հօտը: Եւ մեր Տէրը, փշրելով մեղաւորների ժանիքները, կորզեց իր հաւատացեալներին:

Տասներկուերորդ՝ ոչխարները թողեց խաշնարածին: Եւ մեր Տէրն էլ իննսունիններին՝ անապատում:

Տասներեքերորդ՝ սպանեց Գողիաթին՝ Իսրայէլի նախատողին, եւ մեր Տէրն էլ սատանային՝ մարդկային ցեղի նախատողին:

Տասնչորսերորդ՝ ցուպով եւ պարսատիկով ելաւ Գողիաթի դէմ, եւ մեր Տէրն էլ՝ խաչով, որն անուանուեց «վէմ», բարձր ձայնով աղաղակեց եւ հոգին տուեց:

Տասնհինգերորդ՝ հինգ ողորկ քար գցեց պարկի մէջ: [Եւ Տէրն էլ] հինգ անբիծ զգայարաններով էր եւ անարատ մարմնով[434]:

Տասնվեցերորդ՝ քառասուն օր արձանացաւ Գողիաթը, եւ Տէրն էլ քառասուն օր փորձուեց սատանայից:

Տասնեօթներորդ՝ այնտեղ մի քարով սպանեց, այստեղ բերանի մի խօսքով՝ լեզուի պարսատիկով:

Տասնութերորդ՝ Դաւիթը զօրացաւ Աստծու անունով, եւ մեր Տէրն էլ զօրութիւնն է Հօր Աստծոյ:

Տասնիններորդ՝ սրով Գողիաթի սպանեց նրան, եւ մեր Տէրն էլ մահուան սրով սպանեց մահուան իշխանին:

Քսաներորդ՝ Իսրայէլը եւ Յուդան ոտնակոխ արեցին այլազգիներին, եւ

Քրիստոսին խոստովանողներն էլ կոխոտում են այլադաւան դեւերին:

Քսանմէկերորդ՝ հալածեցին մինչ Գեթի դռները, եւ հաւատացեալներն էլ մինչ դժոխքի դռները եւ ի տես դրուեցին բոլոր մարմնաւորներին:

Քսաներկուերորդ՝ Սաւուղի երկու դուստրերը հարսնախօսուեցին Դաւթի համար, եւ տրուեց կրտսերը: Եւ Քրիստոս փեսային էլ հարսնախօսուեցին երկու եկեղեցիները, եւ տրուեց Նորը:

Քսաներեքերորդ՝ Դաւիթը զօրավար նշանակուեց, եւ մեր Տէրն էլ եկեղեցու զինուորների գլուխ կանգնեց:

Քսանչորսերորդ՝ Դաւիթը հալածուեց Սաւուղից, իսկ նրա Որդին՝ նրա որդիներից:

Քսանհինգերորդ՝ չարքը խեղդում էր Սաւուղին, եւ նոյն չարքը՝ Սաւուղի որդիներին՝ Տիրոջ օրօք:

Քսանվեցերորդ՝ Դաւիթը բարի էր գործում Սաւուղի համար, նրա Որդին էլ՝ Սաւուղի որդիների համար:

Քսանեօթներորդ՝ Սաւուղը պատիւ տալու փոխարէն չարիքներ էր խորհում Դաւթի դէմ, եւ Սաւուղի որդիներն էլ Դաւթի Որդուն երկրպագելու փոխարէն, ասում էին. «Եկէ՛ք փայտ գցենք նրա մարմնի հացի մէջ եւ ջնջենք նրա յիշատակը» (Երեմ. ԺԱ 19):

Քսանութերորդ՝ Սաւուղը նետեց Դաւթի գեղարդը, խփեց պատին, սակայն Դաւիթը փրկուեց: Սաւուղի որդիներն էլ խփել տուեցին Տիրոջ կողերին, սակայն նրա աստուածութիւնը չվնասուեց:

Քսանիններորդ՝ խոցուած պատը վկայեց, որ Սաւուղը Դաւթին սպանել [կամեցողն] էր, եւ Տիրոջ տանջահար եւ մեռած մարմինը վկայում է, որ աստուածասպան են հրէաները:

Երեսուներորդ՝ Սաւուղը պահակներ դրեց Դաւթի վրայ, եւ Քրիստոսի գերեզմանին էլ պահակներ նշանակուեցին:

Երեսունմէկերորդ՝ գիշերը պատուհանից ելնելով՝ Դաւիթը շապիկը թողեց անկողնում, եւ մեր Տէրն էլ գիշերը յարութիւն առնելով՝ թողեց պատանը կնքուած գերեզմանում:

Երեսուներկուերորդ՝ յետոյ գնաց Սամուէլի մօտ Նաւաթ, եւ խաղաց Աստծոյ Հոգին: Եւ մեր Տէրն էլ երկինք գնաց եւ առաքեց Հոգին առաքեալների մէջ:

Երեսուներեքերորդ՝ Դաւիթ մարգարէով մարգարէանում էին, եւ Դաւթի Որդուն «օրհնութիւն» էին աղաղակում:

Երեսունչորսերորդ՝ Դաւիթը երեք օր թաքնուեց ժայռի մէջ, եւ Տէրն էլ երեք օր՝ գերեզմանում:

Երեսունհինգերորդ՝ ուխտ հաստատեց Յովնաթանի եւ Մելքօղի հետ, եւ մեր Տէրն էլ՝ իր եղբայրների ու եկեղեցու հետ. ասում է. «Ինչպէս Հայրն ուխտեց ինձ յետ, այդպէս էլ ես եմ ուխտում» (Ղուկ. ԻԲ 29):

Երեսունվեցերորդ՝ Գողիաթի սուրը պահուեց խորանում, եւ փրկչական խաչը՝ եկեղեցում:

Երեսունեօթներորդ՝ սրբութեան հացը բաշխեց մանուկներին, եւ Տէրն էլ

երկնային ու սուրբ հացը՝ հաւատացեալներին:

Երեսունութերորդ՝ հինգ հաց էր եւ սուր, այսինքն՝ կեանքի միջոցն ու անարժանների եւ արժանաւորների մահը:

Երեսունիններորդ՝ Դաւիթը փոխակերպուեց այլազգիների մէջ, եւ Տէրն էլ անարգուեց խաչի վրայ:

Քառասուներորդ՝ Սաւուղը բազմիցս հետապնդեց Դաւթին, սակայն չկարողացաւ բռնել, եւ Սաւուղի որդիներն էլ՝ Տիրոջը, որովհետեւ դեռ չէր հասել նրա ժամը: Իսկ Դաւիթը Սաւուղին եւ նրա զօրքին քնած գտաւ, սակայն չվնասեց, այլ միայն զէնքերը վերցրեց: Եւ Տէրն էլ մահ չի կամենում նրանց, ովքեր ննջում են մեղքի մէջ, այլ վերացնում է մեղքի պատճառը:

Դաւիթը բարի գործեց Սաւուղի չարութեան փոխարէն, եւ Դաւթի Որդին էլ՝ իրեն չարչարողներին:

Դաւիթը պաշարուեց քարայրում, եւ մեր Տէրն էլ՝ դժոխքում ու քանդեց այն:

Դաւիթը բարձր տեղ ելաւ եւ ձայն տուեց Սաւուղին. «Ո՞ւր է քո գեղարդը» (Ա Թագ. ԻԶ 16): Եւ մեր Տէրը ելաւ երկինք ու աղաղակեց. «Ո՞ւր է քո յաղթութիւնը, մահ» (Ա Կորնթ. ԺԵ 55):

Դաւիթը թողեց Հրէաստանը եւ բնակուեց այլազգիների մէջ: Եւ նրա Որդին թողեց հրէաներին ու հանգրուանեց հեթանոսների մօտ:

Դաւիթը չորս տարի բնակուեց Գէթայում մինչ Սաւուղի մեռնելը, եւ մեր Տէրը՝ Եգիպտոսում, մինչ Հերովդէսը մեռաւ:

Սաւուղը քահանաներին կոտորեց Դաւթի պատճառով, եւ Հերովդէսը՝ Բեթղէհէմի մանուկներին:

Դաւիթը սպանեց Ամաղէկին, որ գերել էր հրէաներին եւ այլազգիներին, եւ մեր Տէրը ոչնչացրեց հրէաների ու հեթանոսների գերողին:

Դաւիթը վերադարձրեց երկու կանանց ու ողջ աւարը, իսկ նրա Որդին ազատեց հաւատացեալների երկու դասերին եւ բոլոր հոգիներին:

Յիսուներորդ՝ այն անուանեցին «Դաւթի աւար» (Ա Թագ. Լ 20), իսկ սա՝ Քրիստոսի ազատութիւն: Եւ [Դաւիթը] օրհնութիւն բաշխեց այդ աւարից բոլոր ծանօթներին, իսկ մեր Տէրն՝ առնելով աւարը, իբրեւ պարգեւ բաշխեց մարդկանց որդիներին:

Դաւիթը թագաւորեց երեսուն տարեկանում, եւ մեր Տէրը երեսնամեայ մկրտուեց եւ յարութիւն առաւ գերեզմանից:

Դաւիթն օծուեց երեք անգամ, եւ նրա Որդին էլ՝ արգանդում, Յորդանանում, խաչի վրայ՝ արեամբ:

Դաւիթը թագաւորեց երեսուներեք տարի, եւ մեր Տէրը մարմնով՝ երկրի վրայ [նոյնքան]:

Եօթ տարի թագաւորեց նախ Յուդայում, ապա՝ ամբողջ Իսրայէլում: Եւ մեր Տէրը կեանքի եօթ շրջաններում թագաւորելու է հաւատացեալների վրայ, իսկ յարութիւնից յետոյ՝ բոլորի, ըստ այդմ՝ «Բոլոր լեզուները Տէր են խոս-

տովանելու Յիսուսին» (Հռոմ. Ժ 9),- ասում է առաքեալը:

Քառասուն տարի թագաւորեց Դաւիթը, որ չորս տասն է, եւ ամէն ինչի սկիզբն ու աւարտը մեր Տէրն է:

Եւ ժամանակը բաղկացած է երեք մասերից, նաեւ՝ մշտնջենականը: Յաւիտենական է նաեւ Բանը, ժամանակաւոր՝ մարմինը եւ մշտնջենաւոր՝ հոգին, որոնք մեզ են ներկայանում չորս թուերի անքակտելի միասնութեամբ, եւ ամբողջութեան մէջ՝ կատարեալ գոյացութեամբ:

Դաւիթը ողորմաց յեբուսացի կաղերին եւ կոյրերին, եւ մեր Տէրը բժշկեց կաղերին ու կոյրերին, որոնք աղաղակում էին՝ «Որդի Դաւթի» (Մրկ. Ժ 47, Ղուկ. ԺԸ 38-39):

Դաւիթը գրաւեց Երուսաղէմը եւ կառուցեց իր տունը, եւ Տէրը Վերին Երուսաղէմը եւ իւրայիններին տուեց խաղաղութիւն:

Վաթսուներորդ՝ [Դաւիթը] պատերազմեց Ադրիազարի դէմ, սպանեց նրան, քանդեց նրա կառքը եւ նրա թագը դրեց իր գլխին: Եւ մեր Տէրն էլ կռուեց Բելիարի դէմ, յաղթեց մահին, քանդեց դժոխքը, աւար առաւ գերեալներին եւ բարձրացրեց երկնքի արքայութիւն՝ տալով նրանց անթառամ պսակ:

[Դաւիթը] հալածուեց Աբիսողոմից, եւ Տէրն էլ՝ իր ժողովրդի որդիներից:

Դաւիթը երկու տարի յետոյ տեսաւ Աբիսողոմին: Եւ Տէրն էլ մեղաւորներին [տեսնում է] հոգու եւ մարմնի ապաշխարելուց յետոյ, ինչպէս եւ՝ այս կեանքից եւ մահից յետոյ, տեսնելու է Դատաստանի ժամանակ:

Ակիտոփէլը Դաւթի դէմ չարիք էր նիւթում, սակայն խեղդուեց, եւ Յուդան էլ Տիրոջ դէմ նիւթեց եւ խեղդուեց:

Սիմէին անարգեց Դաւթին, եւ Տիրոջն էլ՝ «Դո՛ւ, որ քանդում էիր տաճարը» (Մրկ. ԺԵ 29):

[Դաւիթը] հետիոտն փախաւ, ծածկուած գլխով, եւ մեր Տէրն էլ խաչի վրայ [անարգուեց]:

Դաւիթը երեք անգամ սգաց մեռեալներին, եւ Տէրն էլ՝ Երուսաղէմի վրայ, Ղազարի գերեզմանի մօտ եւ խաչելութիւնից առաջ:

Սիբայինը երկու աւանակներն էին, Յիսուսինը՝ էշը եւ աւանակը:

Սադովկը եւ Աբիաթարը. Աննան եւ Կայիափան, նաեւ փնտրուած աղջիկը:

Դաւիթը հալածուեց Սաւուղից եւ Աբիսողոմից. եւ մեր Տէրը՝ անհաւատներից ու հերձուածողներից:

Եօթանասուներորդ՝ Դաւիթը երեք անգամ առաջնորդեց զօրքին եւ յաղթեց թշնամուն, եւ մեր Տէրն էլ մարմնով, հոգով եւ աստուածութեամբ յաղթեց:

Դաւիթը անյիշաչար եղաւ Սիմէի նախատինքների հանդէպ, եւ մեր Տէրն էլ իր խաչողների համար էր աղօթում:

Յորդանանից դարձրեց Բերզելիին, որ տասնիցս կերակրեց Դաւթին՝ հին տասնաբանեան օրէնքի օրինակով, որ Քրիստոս ի կատար ածեց:

Եփրեմեանների մարտնչելը Յուդայի դէմ՝ ի ցոյց հրեշտակների, երբ մարդկային ցեղի փրկութիւնը կատարեց:

Սաբէն ընդվզեց եւ կործանուեց կնոջից. սատանան կործանուեց իմաստուն Կոյսից:

Դաւիթը յաղթեց հինգ հսկաներին, իսկ մեր Տէրը՝ զգայութիւնների իշխաններին:

Դաւիթը ծարաւեց Բեթղէհէմի ջրին, որ ծնուելու էր Կոյսից, իսկ Տէրը խաչի վրայ ծարաւեց մարդկային ցեղի փրկութեանը:

Երեք այրերը Բեթղէհէմից ջուր բերեցին, իսկ երեք աւետարանիչները Քրիստոսի ծնունդի մասին [գրեցին]:

Դաւթի երեք անուանի այրերը եւ նրանց յետ չորրորդը՝ Աբեսեան. երեք աւետարանիչները եւ Յովհաննէսը՝ որդին Սողոմեի:

Դաւթի զօրավարները երեսունեօթն էին եւ երեսունեօթն էր հին օրէնքների թիւը, այլեւ նոր օրէնքներինը: Եւ կամ՝ քսաներկու հիմնական հին գրքերը, տասնաբանեան, չորս աւետարանները եւ մէկ առաքելական [թուղթը]:

Դաւիթը սեղան պատրաստեց եւ կանգնեցրեց հրեշտակի սուրը, եւ Տէրը մեր խաչի սեղանին զոհաբերուեց յանուն աշխարհի եւ կեանքի փրկութեան:

Նաեւ վերջում գոհացաւ իր յաղթանակների համար, եւ Տէրն էլ մեր իր բոլոր գործերի համար, որի պատճառով էլ բոլոր օրհնութիւնները Տիրոջն են ուղղուած, որ գլուխ եղաւ հեթանոսներին, յաղթեց մահին եւ յարութիւն առաւ գերեզմանից[435]:

Նրան փառք եւ գոհութիւն յաւիտեանս, Ամէն:

ԳԼՈՒԽ ԻԸ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԵՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐԱՑ Պրակ ԺԹ

Հարց. Ինչո՞ւ սառեց Դաւիթը ծերութեան ժամանակ:

Պատասխան. Ոմանք ասում են Գողիաթն իր դիակով անիծեց, որ կատարուեց: Ասում են նաեւ, որ Յեսսեի ծերութեան օրերի զաւակն էր, ուստի ծերանալով՝ սառեց: Այստեղից պարզ է, որ ծնողների յատկանիշները բեղմնաւորման ժամանակ խառնւում են. [նշանակութիւն ունեն] նաեւ դաշտանի օրերը, հիւանդութիւնները, գոյնը եւ այլն, ինչպէս որ Ադամը տրտմութեամբ ծնեց Կայէնին. ցաւագար ծնողից՝ ցաւածին որդի:

Սա կատարւում է բոլորի հետ:

Հարց. Դաւիթն ինչո՞ւ չմերձեցաւ Աբիսակին:

Պատասխան. Նախ, որովհետեւ պարկեշտ ու զգաստ էր: Երկրորդ՝ որպէսզի սովորութիւն չդառնայ այլ կոյսերին մերձենալը: Երրորդ՝ որպէսզի [Աբիսակի] նկատմամբ անարատութեամբ հատուցի Բերսաբէի հետ շնանալը: Չորրորդ՝ աստուածահայր Յովսէփի օրինակով անարատ մնաց կոյսի նկատմամբ, ուստի Դաւիթն էլ աստուածահայր է կոչւում Յովսէփի օրինակով:

Հարց. Ինչո՞ւ հրամայեց սպանել Յովաբին եւ Սիմէին, եթէ վերջինիս երդում էր տուել:

Պատասխան. Սիմէին երդուել էր չորս պայմանով:

Նախ, որ ինքը չի սպանելու: Երկրորդ՝ որ նոյն օրը չի մեռնելու: Երրորդ՝ աբեսեանները չեն սպանելու: Չորրորդ՝ առանց ուրիշ մեղք գործելու չի մեռնի:

Եւ ճշտութեամբ կատարեց խօսքը:

Եւ յետոյ ուխտեց սպանել, որովհետեւ ըստ [հին] օրէնքի արդար գործ էր անում. օրէնքն ասում էր. «Արիւն արեան դիմաց» եւ՝ «Ով հայհոյում է իշխանին, պէտք է մեռնի» (հմմտ. ԵԼՔ ԻԲ 28): Եւ եթէ մեղքը գործուած էր, սակայն չէր պատժւում, հաւասարաչափ յանցանք էր:

Եւ պէտք է այս իմանալ, որ հին օրէնքների դատաստանն Աստծոյ արդարութեամբ եւ Դատաստանի օրուայ ակնկալութեամբ է, իսկ նոր օրէնքի շնորհներն՝ Աստծոյ ողորմութեամբ եւ ի փառս Վերին Երուսաղէմի, ինչպէս վերն ասուեց:

Եւ Սիմէին հրամայուեց Երուսաղէմից դուրս չգալ, եւ մեռաւ, երբ դուրս եկաւ. սա նոր օրէնքն էր մատնանշում, այսինքն՝ ով չիմանալով է մեղանչում՝ Աստուած թողութիւն է տալիս, իսկ եթէ կրկնում է, առաջինի հատուցումն էլ է պահանջում:

Երկրորդ՝ մատնանշում է նաեւ ապաշխարութեան կանոնը, որ կարգում է խոստովանահայրը. ով յանցանք է գործում, մեղանչում է:

ՏԱՃԱՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ի

Հարց. Ինչո՞ւ Դաւթին հրամայուեց չկառուցել տաճարը:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ Դաւիթը արիւն շատ էր հեղել: Սակայն ասենք, որ Մովսէսն էլ շատ արիւն հեղեց, Յեսուն էլ, Սամուէլն էլ, եւ չմեղանչեցին, որովհետեւ Տիրոջ թշնամիներին սպանելը նրանց արդարութեան գործն էր:

Եւ Ուրիայի դէմ գործած յանցանքի պատճառով էլ չէր:

Այլ ճշմարտութիւնն այն է, որ Դաւթի օրօք պատերազմ ու խռովութիւն էր, մինչ ոչնչացրեց թշնամիներին: Իսկ նրա որդին խաղաղ ժամանակներում կառուցեց Տաճարը, որ նշանակում է, թէ քանի դեռ խռովութեան մէջ ենք թշնամու եւ մեր անձի յետ՝ չենք կարող լինել Աստծոյ տաճար, այլ հոգու, մարմնի եւ այլոց խաղաղութեան [դէպքում]:

Եւ Աստուած կամեցաւ նաեւ, որ Դաւիթը մի բանով մեծարուի, որդին՝ մէկ այլ բանով: Եւ սա Փրկչի օրինակով էր, որովհետեւ Միածին Որդին մեր բնութեան տաճարը կառուցելու էր՝ իր մարդանալով:

Եւ տե՛ս, որ հրէաները ոչինչ չունէին տաճարում, որովհետեւ յեբուսացիների տեղը Դաւիթը գնեց: Ճարտարապետ Քիրամը, որ կառուցեց, տիւրացի էր, եւ փայտն առաքեց Քիրամ արքան:

Հարիւր յիսուն հազար քարհատներն ու բեռնակիրները եկել էին այլազգիների միջից: Նոյնը եւ նրանց երեք հազար եւ վեց հարիւր վերակացուները:

Եւ նիւթը՝ ոսկի, արծաթ, պղինձ եւ երկաթ, այլեւ խունկը, պատուական քարերը հեթանոսներից էին [վերցրել]: Եւ ոչինչ չկար հրէաներից, բացի Սողո-

մոնից, որի հրամանով կառուցուեց [տաճարը]՝ հեթանոսների եկեղեցու օրինակով, որ կառուցելու էր մեր Տէրը:

Հարց. Ի՞նչ էր նշանակում [ասելը]. «Հազարի մէջ մի տղամարդ գտայ, իսկ կանանց մէջ՝ ոչ մէկին» (Ժող. է 29):

Պատասխան. Ասում են, թէ Սողոմոնը հազար կին ունէր, եօթ հարիւր տիկնայք եւ երեք հարիւր հարճ եւ նրանց՝ հազար պահակներ, իսկ փորձելիս խաբեց հազար կանանց, բայց տղամարդկանցից ոչ մէկը չի խաբուեց. սա առասպել է: Այլ ակնարկում է այն, որ բոլոր ազգերի տղամարդկանց մէջ գտնուեց մի Քրիստոս՝ ազատ սկզբնական մեղքի պարտաւորութիւնից, իսկ կանանց մէջ՝ ոչ մէկը:

Իսկ որ ասում է վաթսուն թագուհի եւ ութսուն հարճ էին եւ անթիւ հարսնացուներ, այն է, որ վաթսունը վեց տասն է՝ խորհրդանիշը նրանց, ովքեր տասնաբանեան օրէնքը կատարեցին կենաց վեց շրջաններում, այսինքն՝ մանկութիւնից մինչ մահ, եւ նրանք են արքայութեան թագուհիներն ու ժառանգները:

Իսկ ութսուն հարճերը [նրանք են], ովքեր կատարում են ութ օրէնքները, սակայն զանց առնում Աստծոյ եւ ընկերոջ սէրը: Եւ սրանք հարճերն են, ովքեր կարող են զրկուել ժառանգութիւնից, որովհետեւ սէրն է կապը եւ լարը շարոցի, որ թոյլ չի տալիս ցանուցիր լինել:

Իսկ հրաւիրուածներն անունով քրիստոնեաներն են, որոնք չեն կատարել բարի գործեր, եւ նրանք էլ փութով դուրս են թողնուելու:

ՍՈՂՈՄՈՆԻ ԵՒ ՏԻՐՈՋ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ
Պրակ ԻԱ

Առաջին, որ կոչուեց «Աստծոյ սիրեցեալ սիրելի» (տե՛ս Նէմ. ԺԳ 26): Եւ մեր Տիրոջ մասին Հայրն ասում էր. «Դա՛ է իմ սիրելի որդին, որին յօժարեցի» (Մտթ. ԺԷ 5):

Երկրորդ՝ աւետեց Դաւթին Սողոմոն որդու մասին: Եւ աւետեց Աբրահամին եւ Դաւթին՝ «Քո զաւակով օրհնուելու են երկրի ազգերը» (Ծննդ. ԻԲ 18):

Երրորդ՝ Սողոմոն նշանակում է «խաղաղութիւն»[436]: Եւ մեր Տէրը խաղաղութիւն բերեց երկնքին եւ երկրին:

Չորրորդ՝ «իմաստուն» կոչուեց: Եւ Քրիստոսից եկան Աստծոյ զօրութիւնն ու իմաստութիւնը:

Հինգերորդ՝ նա [բարձրացրեց] Դաւթի աթոռը: Եւ մեր Տէրն էլ վերականգնեց մեր կործանուած բնութիւնը:

Վեցերորդ՝ Սողոմոնին օրինակ, իսկ Քրիստոսին ճշմարտութիւն համարեց Հայր Աստուած:

Եօթներորդ՝ խոստացաւ յաւիտենական թագաւորութիւն: Եւ «Քրիստոս վախճան չունի» (Ղուկ. Ա 33),- ասում է հրեշտակը:

Ութերորդ, նա կառուցեց տաճարը, իսկ Տէրը եկեղեցին՝ կենդանի Աստծոյ տաճարը:

Իններորդ՝ Սողոմոնի երդման ուխտերը երեքն էին, եւ Հայրը երիցս վկայեց Որդուն:

Տասներորդ՝ Սողոմոնն օծուեց Սելովում եւ թագաւորեց Երուսաղէմում: Եւ մեր Տէրը երկրում մարդացաւ, երկնքում թագաւորեց՝ նստելով ջորու վրայ, այսինքն խաչի, որովհետեւ վրացիները խաչին անուանում են «ջուարի»[437]:

Տասնմէկերորդ՝ Սողոմոնը փողերով եւ ցնծութեամբ բարձրացաւ Երուսաղէմ. «Աստուած համբարձուեց օրհնութեամբ եւ փողերի ձայնով» (Սղմ. ԽԶ 6):

Տասներկուերորդ, ծերացած Դաւիթը նրան նստեցրեց աթոռին: Եւ ծեր ու հին օրերի Հայրը (տե՛ս Դան. է 9) թագաւորութիւն տուեց Որդուն:

Տասներեքերորդ՝ [Սողոմոնը] ներեց Ադոնիայի առաջին մեղքը, իսկ երկրորդի ժամանակ սպանեց: Եւ Տէրն էլ զղջացողներին փրկում է, իսկ չզղջացողներին՝ մատնում կորստի:

Տասնչորսերորդ՝ մարդասպան Յովաբին եւ նախատող Սիմէին Սողոմոնը սպանեց: Եւ Տէրն էլ սպանում է չարագործներին ու հերձուածողներին:

Տասնհինգերորդ՝ Սողոմոնի աջից բազմեց մայրը: Աջից է նստում նաեւ Որդու մայրը՝ Աստուածածին Կոյսը: Այս խորհրդով է, որ Կոյսը պատկերւում է Փրկչի պատկերը ձախ գրկում, իսկ խաչի մօտ աջ կողմից է լինում[438]: Պատճառը նաեւ այն է, որ տղայ զաւակը արգանդի աջ կողմում է ձեւաւորւում, ուստի եւ նստում է նրա աջ կողմից: Իսկ Որդին Հօր աջն է եւ բազուկը (տե՛ս Ղուկ. Ա 51), ուստի Հօր աջ կողմում է նստում:

Տասնվեցերորդ՝ Սողոմոնի գործավարները տասներկուսն էին, այդքան էլ Տիրոջ առաքեալներն էին:

Տասնեօթներորդ՝ Սողոմոնին երեք հազար առակ եւ հինգ հազար օրհնութիւն են վերագրւում: Ոմանք էլ երեք հազար գիրք են ասում, ինչպէս «Առակաց»-ը եւ «Ժողովող»-ը եւ հինգ հազար օրհնութիւն, ինչպէս Երգ երգոցը, ինչպէս Դաւթի հարիւր յիսուն սաղմոսները: Եւ մեր Տէրն էլ ամբողջովին առակներով էր խօսում ժողովրդի հետ եւ առանց առակի՝ ոչինչ [չէր ասում]:

Տասնութերորդ՝ Սողոմոնը հեթանոսներին կառուցել տուեց Տաճարը: Եւ մեր Տէրը եկեղեցուն էր ասում՝ քարոզել եւ մկրտել:

Տասնիններորդ՝ երկու քերովբէները խաչատարած, որ խաչը եւ խաչուածն է: Նաեւ խաչը ե՛ւ երկրպագելի է, ե՛ւ մարդկանց չարչարանքի խաչ:

Քսաներորդ՝ ինչպէս տասներկու եզներն են ծովը կրում, առաքեալներն էլ՝ աշխարհի չորս կողմերի աւազանը, իսկ տասը աշտանակները՝ տասը կոյսերն են ճրագներով:

Քսանմէկերորդ՝ Սողոմոնը ձեռնատարած աղօթեց, եւ Տէրը բազուկները [տարածեց] խաչի վրայ:

Քսաներկուերորդ՝ Սողոմոնն աղօթեց օտարների համար, եւ Տէրն էլ՝ աշխարհի հեթանոսների:

Քսաներեքերորդ՝ Սաբայի թագուհին, որի անունն էր Նըսա, փափագեց Սողոմոնի իմաստութեանը, եւ հեթանոսների եկեղեցին՝ Քրիստոսին:

Քսանչորսերորդ՝ բազմաթիւ զոհաբերութիւններ արեց Սողոմոնը՝ ոսկի, ակնեղէն, խունկ: Եւ մոգերի թագաւորներն էլ ընծաներ բերեցին Քրիստոսին. ոսկի որ անբիծ հաւատն էր, ակնեղէնը՝ պատուական վարքը եւ աղօթքների խունկը:

Քսանհինգերորդ՝ երանի տուեց [Սաբայի թագուհին] Սողոմոնի կանանց եւ ծառաներին: Երանելի են նաեւ Քրիստոսի հարսները եւ հնազանդուողները:

Քսանվեցերորդ՝ Սողոմոնը գանձեր տուեց՝ առնելով իմաստութիւն եւ աստուածային գիտութիւն: Եւ եկեղեցին էլ բարութեան դիմաց շնորհներ եւ փառք է [տալիս]:

Քսանեօթներորդ՝ հռչակուեց իմաստութեամբ եւ փառքով: Եւ մեր Տիրոջը տրուեց ամբողջ իշխանութիւնը երկնքում եւ երկրում (հմմտ. Մտթ. ԻԸ 18):

Քսանութերորդ՝ իշխող եղաւ բոլոր թագաւորներին: Եւ մեր Տիրոջն է ծնրադրում իւրաքանչիւր ոք՝ երկնքում եւ երկրում:

Քսանիններորդ՝ բոլոր թագաւորները ցանկանում էին տեսնել Սողոմոնին, եւ մարդկանց մէջ բոլոր սրբերը՝ Քրիստոսին, ինչպէս ասում էր՝ «Շատերը ցանկացան տեսնել այն, ինչ դուք էք տեսնում եւ լսում» (Ղուկ. Ժ 24):

Երեսուներորդ՝ Թարսիսի նաւերը նրան հարստութիւն էին բերում, եւ նա պատրաստել տուեց ամենազարմանալի աթոռը, եւ մեր Տիրոջը փառք եւ մեծութիւն՝ հեթանոսներից, որ նստելու է Դատաստանի անզուգական աթոռին՝ տասներկու թագաւորներով դատելու բոլորին եւ նրան փառք յաւիտեանս. Ամէն:

ՀԱՐԱՒԻ ԹԱԳՈՒՀՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԲ

Եւ «Հարաւի թագուհին դատապարտում էր հրէաներին» (հմմտ. Մտթ. ԺԲ 42) տասը պատճառով: Նախ, որովհետեւ այլազգի էր: Երկրորդ՝ կռապաշտ: Երրորդ՝ հեռուից եկաւ: Չորրորդ՝ երկրի իմաստութեան համար: Հինգերորդ՝ որովհետեւ կին էր եւ անհամբեր: Վեցերորդ՝ որովհետեւ թողեց փառքը եւ բարեկամների սէրը: Եօթներորդ, կարօտ էր ընտանիքի: Ութերորդ՝ շատ չարչարանքներ պատճառեց իրեն: Իններորդ՝ բազմաթիւ նուէրներով եւ հարստութեամբ եկաւ: Տասներորդ՝ երբ եկաւ, հեզութեամբ լսում էր Սողոմոնին: Իսկ այս ամէնը համեմատելով հրէաների արածների յետ՝ յիրաւի դատապարտելու է նրանց Դատաստանի ժամանակ:

Եւ տասը պատճառով է ասում թէ՝ «Առաւել է, քան Սողոմոնն այստեղ» (հմմտ. Մտթ. Ձ 28, Ղուկ. ԺԲ 27):

Նախ՝ որովհետեւ Սողոմոնը միայն աշխարհի մի մասի եւ քչերի տէրն էր, իսկ Քրիստոսը՝ բոլորի:

Երկրորդ՝ նա երկրաւոր թագաւոր էր, Քրիստոսը՝ երկնային:

Երրորդ՝ նրա գիտութիւնը անցողիկ էր, Քրիստոսինը՝ մնայուն:

Չորրորդ՝ նա քարի եւ փայտի մասին էր պատմում, Քրիստոս՝ արքայութեան:

Հինգերորդ՝ Քրիստոս մարգարէութիւնը տուողն էր, նա՝ Քրիստոսից առնողը:

Վեցերորդ՝ նա պատուիրանները պահողներին խոստանում էր երկրային պարգեւներ, Քրիստոս՝ երկնային:

Եօթներորդ՝ նա հոգու փրկութիւն չկատարեց, իսկ Քրիստոս՝ ողջ աշխարհին [փրկեց]:

Ութերորդ՝ եւ նա էլ յանուն Քրիստոսի էր մարգարէանում:

Իններորդ՝ նա Դաւթի մարմնաւոր որդին էր՝ հասարակ մահկանացուների կարգով, իսկ Քրիստոս ակնկալութիւնն էր եւ աւետիսը, վեր, քան բնութեան կարգով [ստեղծուածները]՝ Աստուած մարդացեալ:

Տասներորդ՝ Սողոմոնը քարերից Աստծոյ ձեռակերտ տաճար կառուցեց, իսկ Քրիստոս մարդկանց բանական հոգին օթեւան դարձրեց Սուրբ Երրորդութեան: Եւ նա իր սիրելիներին հրաւիրում էր անձեռակերտ խորան:

Այսքանը համառօտ Սողոմոնի մասին:

ՄԻՒՍ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԳ

Հարց. Ի՞նչ էին նշանակում Սամէ մարգարէի նշանները Ռոբովամի սեղանի մօտ:

Պատասխան. Սեղանի ճեղքուելը նշանակում էր դիցերի սեղանի կործանումը, ձեռքի գոսանալը՝ թագաւորութեան կործանումը, նոյն ճանապարհով չդառնալը՝ անդառնալի պատուհասը, հաց չուտելը եւ ջուր չխմելը այն, որ անընդունելի են զոհաբերութեան մարմինն ու արիւնը: Հաց չուտելը նաեւ բարկութիւնն էր ցոյց տալիս եւ այն, որ պիղծ ու գարշելի էին կուռքերի զոհերն ու հեթանոսների կերակուրը:

Հարց. Ինչո՞ւ մարգարէն զոհ դարձաւ առիւծին, քանի որ նրան խաբել էր ծեր մարգարէն:

Պատասխան. Չէր կարելի պարզամտութեամբ խաբուել, պէտք էր հարցնէր, թէ նա մարգարէ՞ է, թէ ոչ: Կամ նրանից հրաշքներ խնդրել, եւ կամ Աստծուն հարցնել եւ ապա գնալ: Իւրաքանչիւր մարդու օրինակով պէտք է նախ ստուգել ամէն բան եւ դիւրապատիր չլինել ու մոռանալ Աստծու հրամանը:

Հարց. Ծեր մարգարէն, որ յետ դարձրեց նրան, արիւնապա՞րտ էր, թէ՞ ոչ:

Պատասխան. Ոչ, որովհետեւ նախ հեզութեամբ եւ քաղցրութեամբ մեծարեց նրան, որ քաղցից չմեռնի: Եւ երկրորդ՝ Սուրբ Գիրքը չի պարտաւորեցնում նրան իբրեւ մահապարտի:

Հարց. Ինչո՞ւ է ասում՝ «Մի՞թէ չեն գրուել Մնացորդաց գրքերը»:

Պատասխան. Նշանակում է, որ այն ամէնն, ինչ այստեղ գրուած չէ, գրուած է այնտեղ, որ Յուդայի թագաւորների մասին մնացեալն է:

Սակայն այնտեղ էլ ամէն ինչ գրուած չէ, այլ Թագաւորութեանց գրքում, որ թարգմանուած չէր մեր լեզուով, այլ Մնացորդաց երկու գրքերը,

որոնք Եզրն է գրել: Իսկ մնացածը կորան նրանց գերեվարութեան ժամանակ:

Հարց. [Ի՞նչ էր նշանակում ասելը՝] «Որ միզում է պատին» (Ա Թագ. ԻԵ 34):

Պատասխան. Այսինքն՝ կապողին եւ արձակողին, կամ մարդուց մինչ շուն եւ այլն:

Հարց. Ինչո՞ւ թագաւորների թիւը մէկով պակաս է ստացւում:

Պատասխան. Որովհետեւ նոյն տարում էր լինում [մէկի] վախճանուելը եւ [միւսի] թագաւորելը:

ԵՂԻԱՅԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԴ

Հարց. Ի՞նչ էր, որ Եղիան ագռաւի միջոցով կերակրուեց, եւ որտեղի՞ց էր:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ տաճարի առաջաւորութեան սեղանից էր, որտեղից առաւօտեան եւ երեկոյեան բերում էին ագռաւները:

Իսկ սուրբ Եփրեմն ասում է՝ ոչ, որովհետեւ չի ասւում, թէ նա կերակրուեց քահանաների միջոցով, այլ՝ ագռաւների: Եւ երբ ագռաւները գալիս էին, մէկի բերանին հացն էր լինում, միւսինը՝ միս: Եւ ուտելուց յետոյ մնացորդը տալիս էր նրանց: Եւ տե՛ս, որ [սրանով] Մովսէսին տուած վրիժառութեան օրէնքը նախ ինքն էր լուծում, որովհետեւ ըստ այդ օրէնքի ագռաւը պիղծ էր: Իսկ պիղծ ագռաւները հեթանոսների խորհրդանիշն էին, որոնք Յորդանանը անցան եւ աւազանով մաքրուեցին[439]: Եւ փոխանակ հայհոյելու, օրհնութեան պատարագ են մատուցում Աստծուն: Այլեւ խորհրդանշում է նոր պատարագը, որ ինչ մատուցում ենք Աստծուն՝ նրանով էլ հաղորդւում ենք:

Եւ խրատում է նաեւ առաքեալներին, որ ամէն մի գործ իրենց տէրերի համար ամբողջութեամբ կատարեն, եւ նրանք կմասնաւորեն դրանք:

Հարց. Ինչո՞ւ գնաց հեղեղատով:

Պատասխան. Որպէսզի այնժամ չսպանեն Եղիային: Կամ էլ երկինքը փակուած մնայ, կամ էլ, որ սուտ լինի մարգարէի խօսքը:

Հարց. Ինչո՞ւ պակասեց ջուրը:

Պատասխան. Ջուրը պակասեց եւ առանց ուտելիք թողեց, որ ողորմի Իսրայէլին: Այդ պատճառով գնաց Սարեփթայ, այլազգիների մօտ, որ նրանց նեղութիւնն էլ տեսնի, որոնք Մովսէսի օրէնքները չէին խախտել: Տեսնելու նաեւ հեթանոսների առաւել գութը, ինչպէս Յովնանը՝ նինվէացիների ապաշխարութիւնը:

ԱՅՐՈՒ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԵ

Հարց. Ի՞նչ էր ցոյց տալիս այրու որդու յարութիւնը:

Պատասխան. Այրին աշխարհի տարրերի խորհրդանշումն էր, որոնք այրի դարձան պտղի անէծքից, կամ էլ փոփոխուեց նրանց բնութիւնը լինելութեան ընթացքում: Իսկ այրու որդին մարդկային ցեղն էր [խորհրդանշում]. երեք անգամ փչելը Երրորդութեան խորհուրդն էր. աղաղակի ձայնը՝ փողի հնչելը. ոչ մէկին մօտ չթողնելը, այն, որ ոչ

ոք չի մասնակցելու մեր յարութեանը, ինչպէս որ [չի մասնակցել] ստեղծմանը:

Հարց. Ի՞նչ էր նշանակում, թէ չպակասեցին ալիւրն ու իւղը (տե՛ս Գ Թագ. ԺԷ 14, 16):

Պատասխան. Չասաց, թէ՝ «աւելանայ», այլ՝ «չպակասի»:

Նախ՝ խորհրդանշում էր մեր պահանջմունքների չափաւորութիւնը, որովհետեւ աւելին՝ հեթանոսների ագահութիւնն է, պակասը՝ անհաւատներինը, իսկ միջինը՝ քրիստոնեաներինն է, ըստ առաքեալի՝ «Կերակուր եւ հանդերձներ ունենք եւ գոհանում ենք նրանցով» (Ա Տիմ. Զ 8): Երկրորդ՝ խորհրդանշում էր մանանան, որ նոյնպէս չաւելացաւ ու չպակասեց: Երրորդ՝ դրախտի պտուղն էր ցոյց տալիս, որ չնայած կերակրում էր, սակայն չէր պակասում կամ աւելանում: Չորրորդ՝ փրկչական մարմնի օրինակով էր, որ չի աւելանում՝ բազմիցս պատարագուելով ու չի պակասում՝ ճաշակուելով: Հինգերորդ՝ Հոգու բազմապատկուած եօթ շնորհները, որ չեն աւելանում՝ չտրուելով եւ չեն նուազում՝ բաշխուելով: Վեցերորդ՝ Սուրբ Գրքի գիտութիւնը: Եօթներորդ՝ առաքինի վարքը: Ութերորդ՝ անբիծ հաւատը: Իններորդ՝ ականջի լսածը եւ աչքի տեսածը: Տասներորդ, իմացական խոկումը:

Սրանք ըստ էութեան ոչ աւելանում, ոչ պակասում են, այլ միայն հաղորդակցուողներն են աւելի կամ պակաս [հաղորդակցում]՝ ունակութեան համապատասխան:

Հարց. Ինչո՞ւ կոտորեց Բահաղի մարգարէներին:

Պատասխան. Նախ, վրէժխնդիր եղաւ Աստծոյ օրէնքների համար, ինչպէս Փենէհէզը սպանեց Զամբրիին եւ Քասբիին, եւ Սամուէլը՝ Ագագին:

Եւ արդար էր վարւում, որ հաշտեցնի Աստծուն, որի պատճառով որոշում կայացրեց սպանելու բոլորին՝ ութ հարիւր յիսուն հոգու, Աստծոյ մարգարէների փոխարէն, որոնց սպանեց Եզաբէլը:

Հարց. Ինչո՞ւ եօթ անգամ աղօթեց:

Պատասխան. Նախ, որ դաս լինի, որ եթէ մի անգամ աղօթելով չի լսում, հարկ է անձանձիր աղօթել, ինչպէս որ այրին պաղատելով ստացաւ (տե՛ս Ղուկ. ԺԸ 1-8):

Եւ եօթ անգամ էր սաստիկ սովը, ուստի եօթ անգամ աղօթելով բացեց, որովհետեւ երեք ու կէս տարուայ մէջ եօթ անգամ սով էր լինում:

Իսկ գլուխը ծնկների արանքում պահելն այն էր, որ ծունկը գետին դրեց, իր գլուխը նրա կողքին եւ ձեռքերը այս ու այն կողմ խաչաձեւ գետնին տարածեց, խաչի խորհրդով աղօթեց եւ անձրեւ բերեց:

Իսկ աթոռին նստելն այն էր, որ ինչպէս Աքայաբին մոլորեցրեց, Աստուած թոյլ է տալիս մարդուն, որ նա իր կամքով յօժարի չարին եւ պատժուի:

Իսկ նրա շուրջը գտնուող բոլոր հրեշտակները հաւանութիւն չտուեցին, որովհետեւ նրանք բոլորը ճշմարիտն են խօսում ու բարի գործում մարդկանց

համար, ուրախանում ապաշխարութեամբ: Իսկ սուտ խօսքով, չար գործերով, վշտով ուրախանում են դեւերը, որոնք չար հոգիներն են:

Այսքանը Երրորդ թագաւորութիւնների գրքի մասին:

ԳԼՈՒԽ ԻԹ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՉՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ Պրակ ԻԶ

Հարց. Ի՞նչ էր Եղիայի՝ մրրիկով երկինք բարձրանալը (տե՛ս Դ Թագ. Բ 11):

Պատասխան. «Մրրիկ» ոմանք յափշտակելն են անուանում, ուրիշներն էլ՝ հողմը, ոմանք էլ՝ հրեշտակների ձայնը: Իսկ այն, որ առարկում էր, թէ՝ «Մնա Երիքովում եւ Բեթէլում» (տե՛ս Դ թագ. Բ 1-5), աշակերտին էր փորձում՝ նախ, թէ արդեօ՞ք ուզում է հրաժարուել եւ երկրորդ՝ գիտէ՞ իր համբարձուելու մասին:

Հարց. «Թող քո ոգին կրկնապատիկ չափով ինձ վրայ լինի» (Դ Թագ. Բ 9):

Պատասխան. Այսինքն թէ՝ մարգարէութեան շնորհ ունի եւ հրաշք է պահանջում: Կամ՝ առաջինը Եղիան է, երկրորդը՝ առաւել, քան նա՝ լինելու է Եղիսէն: Կամ էլ ուզում է գործեր եւ արդիւնք, որոնք հրաշքներն ու պատիժն են, ինչպէս Եղիան [տեսաւ], որի համար ասաց՝ «Դժուարինը խնդրեցիր» (Դ Թագ. Բ 10), այսինքն՝ ժողովրդի պատուհասը:

Եւ պայմանն այն էր, որ եթէ տեսնէր Եղիայի համբարձուելը, ապա կտեսնէր եւ նրանց պատիժը, իսկ եթէ չտեսնէր, ուրեմն չպէտք է պատժի արժանանային, այլ շնորհով խնայելու էր նրանց:

Հարց. «Իսրայէլի կառքը եւ դրա հեծեալները» (Դ Թագ. Բ 12):

Պատասխան. Հրեղէն կառք եւ հեծեալներ երեւացին: Նախ իբրեւ թագաւոր վեր բարձրացաւ՝ կառքով ու շքախմբով: Երկրորդ՝ ցոյց տուեց, որ մեզ յետ էլ է լինելու հրեղէնների զօրքը՝ նոյն կազմով: Երրորդ՝ ցոյց տուեց այսերի դէմ օդում լինելիք ակնբախ պատերազմը, որի համար անհրաժեշտ էին հեծեալներ: Եւ այս, եւ յանուն մովսիսեան մարմնի պատերազմը ցոյց է տալիս մարմնից դուրս գալուց յետոյ հոգիների պատերազմը:

Իսկ ծալուած թիկնոցը նշանակում էր, որ այդպէս ծալուելու է ջուրը: Եւ երկրորդ՝ Յորդանանի ծածուկ խորհուրդն էր:

Հարց. Ի՞նչ էին նոր կուժն ու աղը, որով բժշկուեցին ջրերը (տե՛ս Դ Թագ Բ 20-22):

Պատասխան. Յեսուն անիծեց Երիքովը եւ նրա վերականգնողին, եւ այդ անէծքը անզաւակ ու վաղամահ էր դարձնում: Իսկ Եղիսէն նոյն հոգու միջոցով օրհնեց եւ վերացրեց անէծքը:

Նոր կուժը Աստուածածին Կոյսի խորհուրդն էր, որ նոր յղացում եւ ծնունդ ունեցաւ, իսկ աղը Բանն Աստուած էր, որ բժշկեց մեր վէրքերը:

Ու նաեւ այն, որ առաջին մեղքը խառնուելով հիւթի աճումին՝ մահ եւ ոչնչացում բերեց, իսկ մկրտութիւնը վերացնում է երկուսն էլ, այսինքն՝ մեղքը եւ մահը:

ԵՂԻՍԷԻ ՑՈՒՊԻ ՄԱՍԻՆ
Պրակ Իէ

Հարց. Եղիսէի ցուպը օրինակն էր խաչի: Ինչո՞ւ յարութիւն չտուեց մեռեալին:

Պատասխան. Նախ, որովհետեւ Գեէզին անարժան էր (տե՛ս Դ Թագ. Դ 14-37): Երկրորդ՝ որովհետեւ սոմնացին չհաւատաց նրան: Այդպէս էլ խաչի ողջ զօրութիւնը Քրիստոսն է, որ հրաշքներ է գործում միայն արժանաւոր եւ կատարեալ հաւատ ունեցողների միջոցով, իսկ անարժաններից թաքցնում է զօրութիւնը:

Հարց. Ի՞նչ էր կծկուելը եւ եօթ անգամ յօրանջելը մեռած պատանու վրայ (տե՛ս Դ Թագ. Դ 34):

Պատասխան. Խաչանման տարածուեց մանկան վրայ եւ կծկուեց, այսինքն փոքրացաւ մանկան չափ, ապա եօթ անգամ բարձրաձայն յօրանջելով եւ կծկուելով՝ կենդանացրեց նրան:

Արդ, Եղիսէն խորհրդանշում էր Բանն Աստծուն, որ փոքրացաւ եւ տեղաւորուեց Կոյսի ծոցում՝ միաւորուելով մարմնի յետ, ապա խաչ բարձրանալով՝ կեանք շնորհեց մարդկանց: Նաեւ՝ առաջին գալստեամբ ծածուկ փրկութիւն եւ կեանք շնորհեց, երկրորդով բացայայտօրէն յարութիւն է տալու:

Եւ երբ հիւանդացաւ, Եղիսէն ձեռքը դրեց Յովաս արքայի ձեռքերին եւ նրա վրայ լաց լինելու փոխարէն՝ զօրացրեց նրան ասորիների դէմ պատերազմում:

Արդ, վրան դրուած Յովասի նետն ու աղեղը փրկչական խաչն էին խորհրդանշում՝ ուղղուած ասորի իմանալի սատանայի դէմ: Իսկ մահուան ժամանակ, որ մեռեալին կենդանացրեց, երբ սա մօտեցուեց Եղիսէի ոսկորներին, Քրիստոսի մահուան օրինակն էր, ով իր մահուամբ կեանք եւ յարութիւն շնորհեց մեզ:

Հարց. Ռափսակի զօրքերը ինչո՞ւ գիշերը կոտորուեցին (տե՛ս Դ Թագ. ԺԹ):

Պատասխան. Նախ, որ Երուսաղէմը չզարհուրի՝ տեսնելով սուրը, որ կոտորեց նրանց. երկրորդ՝ որ ոչ ոք չփախչի. երրորդ՝ որ չկարծեն, թէ ինքնուրոյն ընկան սրով, այլ՝ հրեշտակի [ձեռքով]:

Եւ դարձեալ Քրիստոսի օրինակով էր, որ գիշերով հարուածեց սատանային եւ հոգիներն ազատեց դժոխքից:

Հարց. Ինչո՞ւ հարուածեց Ովսիային, այն դէպքում, որ խոստացել էր խաղաղ մահ տալ:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ նա չհարցրեց Աստծուն, այլ աճապարեց պատերազմի դաշտ: Երկրորդ՝ որպէսզի գերեզման իջնէր եւ չտեսնէր այն չարիքը, որ գալու էր Նաբուգոդոնոսորի ձեռքով Երուսաղէմի վրայ, ինչպէս յայտնի է պատմութիւնից:

ԳԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԸ

Արդ, երբ հրէական թագաւորութիւնը բաժանուեց երկու մասի՝ Իսրայէլի եւ Յուդայի, Յուդայի թագաւորները նստավայր դարձրին Երուսաղէմը. Ռոբովամը, Աբիսը, Ասափը եւ մնացած քսաներկուսը՝ չորս հարիւր տարի մինչ Սեդեկիան, որ գերեվարուեց Բաբելոն,

իսկ տաճարն ու Երուսաղէմը հրկիզուեցին:

Իսկ Իսրայէլի թագաւորները նստեցին Սամարիայում. առաջինը Նաբատի որդի Ռոբովամն էր, եւ նրանից յետոյ քսան թագաւորներ՝ երկու հարիւր յիսուն տարի մինչ Ելի որդի Յովսէէն, որ գերեվարուեց Ասորեստան, եւ այդպէս վերացաւ Իսրայէլի թագաւորութիւնը:

Եւ Իսրայէլի գերութիւնից մինչ Յուդայի գերութիւնը հարիւր յիսուն տարի էր:

Արդ, Իսրայէլի գերութեան սկիզբը Յուդայի արքայ Ոզիայի օրօք եղաւ:

Նախ, Ասորեստանի Փուա արքան յարձակուեց Իսրայէլի վրայ: Ապա Իսրայէլի Մանայէն թագաւորը նրան չորս տաղանդ արծաթ տուեց եւ ազատուեց գերութիւնից: Տասնհինգ տարի յետոյ Աքազիի օրօք Ասորեստանի Թագլաթփաղսար արքան ելաւ Իսրայէլի եւ Ռոմելի որդի Փակէի արքայի դէմ ու գերեց Նեփթաղէմին, Գալիլեային, Գաղայաթին՝ Իսրայէլի վեց ցեղերով եւ տարաւ Ասորեստանի երկիր:

Եւ դարձեալ աւելի քան երեսուն տարի յետոյ Յուդայի Եզեկիա արքայի վեցերորդ տարում ելաւ Ասորեստանի Սալմանասար արքան Սամարիայի վրայ եւ երեք տարի պաշարելով՝ գրաւեց այն՝ գերեվարելով Ելի որդի Ովսէին եւ տասը ցեղերի ամբողջովին տարաւ Ասորեստան:

Եւ ի պահպանութիւն հրէից երկրի, Սալմանասարը ասորի երկրից վերաբնակիչներ առաքեց, որոնք բնակուեցին Սամարիայում եւ կոչուեցին սամարացիներ: Յետոյ երկրի վայրենութեան պատճառով հնազանդուեցին Մովսէսի օրէնքին, ապա ծածկեցին իրենց աստուածներին Սոմորոն լեռան վրայ, եւ այնտեղ էին երկրպագում սամարացիները:

Եւ Իսրայէլի գերութիւնից հարիւր երեսունհինգ տարի յետոյ Երուսաղէմի վրայ ելաւ բաբելացիների Նաբուգոդոնոսոր արքան՝ Յովակիմի թագաւորութեան տասներորդ տարում, եւ հարկեր առաւ նրանից ու աւերեց տաճարի սրբութիւններ մեծ մասը: Ապա Դանիէլին, երեք պատանիներին եւ տասը հազար մարդկանց գերեվարեց Բաբելոն: Երեք տարի անց կրկին ելաւ Երուսաղէմի վրայ ու գերեց Յեքոնիային եւ Եզեկիէլին:

Երկու տարի անց դարձեալ հարձակուեց Երուսաղէմի վրայ, ինը տարի պաշարուեց քաղաքը սաստիկ սովով: Եւ բռնելով Յուդայի Սեդեկիա արքային՝ հանել տուեց աչքերը եւ տարաւ Բաբելոն:

Եւ հինգ ամիս յետոյ Նաբուզարդան դահճապետը կրակի մատնեց Երուսաղէմը, տաճարը, թագաւորական պալատը, կործանեց պարիսպը, պղնձէ սիւները, աւազանը, եւ ողջ պղնձէ կահկարասին ու արծաթեղէնը տարաւ Բաբելոն:

Եւ եօթանասուն տարի բաբելացիները գերութեան մէջ պահեցին Յուդան եւ ոչ Իսրայէլը, ինչպէս ասում էր Երեմիան (տե՛ս Երեմ. ԻԵ 11):

Եւ այս թիւը ոմանք սկսում են Մանասէի գերութիւնից, որ աւելանում է, ոմանք էլ Յովակիմի առաջին գերութիւնից, որի դէպքում էլ պակասում է: Իսկ որ ճիշտն է, գերութիւնը եօթանասուն տարի էր, ըստ Երեմիայի, որ սկսուեց Յուդայի բարեպաշտ արքայ Ովսէի թագաւորութեան տասներեքերորդ տարուց:

Այնուհետեւ Քեղկի քահանան, որ Երեմիայի հայրն էր, գտաւ Երկրորդ օրինաց գիրքը, յանձնեց Ովսէին, ապա գնաց Ողդի կին մարգարէի մօտ հարցնելու, որը գուշակեց ժողովրդին գերութիւն տանելու մասին, սակայն Ովսէի բարեպաշտութեան շնորհիւ չգերեվարուեց:

Ա՛րդ, Ովսէի տասներեքերորդ տարուց մինչ Սեդեկիայի տասնմէկերորդ տարին, երբ վերջինս գերեվարուեց, լինում է քառասուն տարի. Նաբուգոդոնոսորինը՝ քսան տարի, նրա որդինեերինն ու թոռներինը՝ տասը տարի, որ միասին կազմում է եօթանասուն տարի՝ մինչ Կիւրոսի առաջին տարին, որն ազատ արձակեց գերիներին: Եւ Սեդեկիայի վերջին գերութիւնից մինչ Դարեհի երկրորդ տարին կազմում է եօթանասուն տարի, երբ ազատ արձակուեց Զօրաբաբէլը:

Եւ տաճարի շինութիւնից այդքան տարի էլ յետոյ՝ աւելի կամ պակաս, նախ ազատ արձակուեց Եզր դպիրը, նրանից յետոյ՝ Նէեմին:

Ահա այսպէս են համրւում գերութեան եօթանասուն տարիները:

Հարց. Ինչո՞ւ Երեմիայի կողմից եօթանասուն տարի սահմանուեց Բաբելոն գերի տարուելը:

Պատասխան. Նախ՝ որովհետեւ եօթանասուն տարի է մարդու կեանքի սահմանն ըստ Դաւթի (տե՛ս Սղմ. ՁԹ 10):

Եւ գերութեան մատնեց չարերին, որ այնտեղ վախճանուեն, իսկ նրանց արդար ծնունդներին վերադարձրեց իրենց տեղերը:

Երկրորդ՝ որովհետեւ եօթանասուն տարին մէկ օր համարուեց նրանց համար, որ դադար առնեն չար գործերից եւ երկիրը՝ չարագործութիւններից, քանզի Ռոբովամից, որի ժամանակ եղաւ երինջների դէպքը մինչ գերութիւն՝ վեց եօթանասուն տարուց մի քիչ պակաս է, որի պատճառով էլ եօթանասուն տարում ամփոփեց նրանց գերութիւնը:

Երրորդ՝ ինչպէս կուրծք ուտող մանկանն է դայեակը եօթ տարի խնամում, այդպէս էլ ժողովրդին, որ ելաւ իր երկրից, բաբելացիների երկիրը եօթանասուն տարի իր գրկում խնամեց եւ սնուցեց, որպէսզի վերադառնալով իրենց երկիրը՝ բարիք գործեն:

Չորրորդ՝ Բաբելոն գերի տանելը խորհրդանշում է մեր բնութեան գերի լինելը, իսկ եօթանասուն տարին՝ կենաց եօթ շրջանները, ապա՝ վերադարձը մեր հայրենի բնակավայր՝ մեր Փրկչի եւ Աստծոյ միջոցով:

ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԹ

Կիւրոսն իր թագաւորութեան առաջին տարում ազատ արձակեց հինգ հազար գերիների Երուսաղէմ՝ Սալմա-

նասար իշխանի յետ՝ տաճարը կառուցելու, որը խափանուեց շրջապատող ազգերի պատճառով՝ քառասուներկու տարի: Դարեհի երկրորդ տարում ազատ արձակուեց Զօրաբաբէլը, իսկ չորրորդ տարում վերակառուցուեց տաճարը, որի մասին Աւետարանն ասում է. «Քառասունվեց տարի կառուցուեց տաճարն այս» (տե՛ս Յովհ. Բ 20):

Իսկ տաճարի կառուցելուց եօթանասուն տարի անց ազատ արձակուած Նէեմին կառուցում է Երուսաղէմի պարիսպը՝ Արտաշէսի երեսուներկուերորդ տարում, ինչպէս վկայում է Եզրի գիրքը (տե՛ս Նէեմ. Գ):

Այսպիսով աւերածութիւնից եւ գերութիւնից յետոյ նախ կառուցուեց տաճարը, ապա վերականգնուեց պարիսպը՝ մեղքերի կողմից գերուած եւ եօթ զգայարաններով աւերուած մեր սրբութեան տաճարի խորհրդի օրինակով:

Եւ երբ զղջում ենք մեղքերի համար՝ նախ խոստովանութեամբ, ապա՝ ապաշխարութամբ, կառուցում ենք մեր սրբութեան տաճարը, մեղքերը փոխարինելով բարի գործերով եւ վերականգնում ենք մեր հոգու պարիսպը՝ եօթ զգայարաններով: Եւ եօթ ժամանակաշրջանների փոփոխութեամբ, եօթ հասակներով, կեանքի եօթ շրջաններով դառնում ենք տաճար եւ քաղաք Քրիստոսի՝ մեր Աստծոյ:

Եւ դարձեալ՝ երեք փուլերով ազատ արձակուելը Բաբելոնից՝ Կիւրոսի ժամանակ Սալմանասարը, Դարեհի ժամանակ՝ Զօրաբաբէլը, Արտաշէսի ժամանակ՝ Եզր դպիրն եւ Նէեմին, նախ խորհրդանշում են առաջին մարգարէներին եւ արդարներին, որոնք չկարողացան արդարութեամբ վերականգնել մարդու կործանուած էութիւնը: Երկրորդ՝ Զօրաբաբէլը, որ Կիւրոսի վեցերորդ տարում վերակառուցեց տաճարը, այն է ցոյց տալիս, որ Քրիստոս եղաւ երկրորդ Ադամը, որը կենաց վեցերորդ շրջանում վերականգնեց մարդու կործանուած բնութիւնը: Երրորդ՝ Նէեմին եւ Եզր դպիրը, որոնք կանգնեցրին պարիսպն ու դարպասները, խորհրդանշում են առաքեալներին, հայրապետներին, վարդապետներին, որոնք օրէնքներով պարսպապատում են եկեղեցին եւ անդադար ուսուցանում դպրութիւն:

Խորհրդանշում են նաեւ երեք կոչումները՝ մարգարէներին, առաքեալներին եւ վերջում վախճանին՝ հրեշտակներին:

Ցոյց են տալիս նաեւ կուռքերից երեք կարգով ազատուելը. նախ մասամբ՝ հրէաների միջոցով, ապա՝ մեր եկեղեցով, իսկ աւարտին՝ ամբողջութեամբ. «Երբ հեթանոսների լրումն աւարտուի, կփրկուի ողջ Իսրայէլը» (Հռոմ. ԺԱ 25):

Ցոյց են տալիս նաեւ երեք օրէնքները՝ բնականը[440], գրաւորը եւ Աւետարանը:

ԴԱՆԻԷԼԻ ԵՕԹՆԵԱԿՆԵՐԸ
Պրակ Լ

Իսկ Դանիէլի եօթնեակներում ասւում է՝ «Եօթը եօթնեակ եւ վաթսուներկու եօթնեակ է վճռուած ժողովրդի

համար. դրանից յետոյ կսպանուի Օծեալը եւ իրաւունք չեն ունենայ նրա մօտ, ու կապականուեն քաղաքն ու սրբութիւնը» (Դան. Թ 26): Այդ եօթ վաթսուներկուն [եւ եօթ եօթնեակը] այն է՝ եօթ վաթսունինը՝ չորս հարիւր ութսուներեք տարի է անում: Եւ սա համրւում է Վշտասպի որդի Դարեհից, որ ազատ արձակեց Զօրաբաբէլին, եւ որի երկրորդ տարում շինուեց տաճարը:

Ապա առաջնորդեցին օծեալ քահանաները՝ վերադարձից յետոյ չորս հարիւր ութսուներեք տարի, մինչ վերացան հրէայ օծեալները, եւ ծնուեց ճշմարիտ Օծեալը՝ Քրիստոսը:

Արդ, սկսած Դարեհի օրօք վաթսունհինգերորդ օլիմպիադայի տարուց մինչ հարիւր ութսունվեցերորդ օլիմպիադան, Հիւրկանոս քահանայապետի պարթեւների կողմից գերի տարուելով՝ դադարում են [օծեալ քահանաները]: Հիւրկանոսից յետոյ քահանաների ցեղից այլեւս չեղան օծեալ առաջնորդներ, այլ ոմանք աննշան՝ ամսով կամ տարով[441]:

Իսկ հեթանոս Հերովդէսի տիրակալութեան երեսուներկուերորդ տարում էր, որ ծնուեց մեր Տէր Յիսուս Քրիստոս:

Իսկ ոմանք էլ Դանիէլի եօթնեակները սկսում են Դարեհի որդու՝ Արշուրեի առաջին տարուց, որում մարգարէն տեսիլք տեսաւ. մինչ Քրիստոսի ծնունդը՝ չորս հարիւր ութսուներեք տարի: Եւ այդ ժամանակ, ասում է, կսպանուի Օծեալը, երբ չեն լինի ո՛չ քահանայ եւ ո՛չ իրաւունք, այսինքն՝ թագաւոր եւ դատաւոր[442]:

Իսկ թուերի տարբերութիւնն այն պատճառով է, որ Բանն Աստուած մարդեղացաւ ութսուներեք տարի շուտ, քան կանխագուշակել էին մարգարէները:

Հարց. Ինչո՞ւ նախ դատաւորները, ապա թագաւորները, յետոյ քահանաներն առաջնորդեցին մինչ մեր Տէր Յիսուս Քրիստոս:

Պատասխան. Այս է խորհուրդը:

Մեր Տէրը նախ եկաւ իբրեւ դատաւոր, ըստ այդմ՝ «Աշխարհի եկայ դատելու համար»: Ապա՝ իբրեւ թագաւոր՝ Թաբօր լեռան վրայ աւանակով [Երուսաղէմ մտնելիս]: Յետոյ իբրեւ քահանայ՝ Վերնատանը եւ խաչի վրայ:

Եւ երկրորդ Գալուստով էլ նախ դատելու է, ապա անվախճան թագաւորելու, եւ իր քահանայագործութեամբ մաքրելու է եւ լուսաւորելու՝ դարձնելով յաւիտեանս անվախճան ու միշտ կատարեալ. ըստ այդմ՝ «Կատարեալները մէկ կդառնան»:

Եւ Նրան փառք ու պատիւ, հարակայ. Ամէն:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԱ

Հարց. Քանի՞սն են եւ որո՞նք են Սուրբ գրքերը՝ Հին եւ Նոր կտակարանները:

Պատասխան. Հին կտակարանում Մովսէսի հինգ գրքերը սրանք են. առաջինը՝ Ծննդոցն է, ապա՝ Ելիցը, Ղեւտացոցը, Թուոցը եւ Երկրորդ օրինացը: Յեսուի, Դատաւորաց, Հռութի եւ Թագաւորութեանց չորս գրքերը, որոնք

միասին կազմում են տասներկու: Սրանցից առաջին [«Թագաւորութեանց»]-ը պատմում է Սաւուղի թագաւորելու մասին. երկրորդը՝ Դաւթի, երրորդը՝ Սողոմոնի, չորրորդը՝ Յուդայի եւ Իսրայէլի թագաւորութիւնների մասին՝ մինչ գերութիւնը: Ապա Մնացորդաց երկու գրքերը, Եզրասի երկու, Նէեմիի, Եսթերի, Յուդիթի, Տուբիթի եւ Տուբիայի գրքերը, որ կկազմեն քսան:

Մակաբայեցւոց երեք գրքերը, Սաղմոսացը, Սողոմոնի չորս գրքերը, որոնք են՝ Առակացը, Ժողովողինը, Երգ երգոցը, Իմաստութեանը. Սիրաքը, Յոբը՝ միասին եղան երեսուն: Եսային, տասներկու մարգարէները, որոնցից առաջինը Ովսէն, [ապա՝] Ամովսը, Միքիան, Յովէլը, Աբդիուն, Յովնանը, Նաւումը, Ամբակումը, Սոփոնիան՝ որ եղաւ քառասուն: Անգէն, Զաքարիան, Մաղաքիան, Երեմիան, Բարուքը, «Ողբերը»[443], Դանիէլը, Եզեկիէլը եւ վերջին կտակները՝ որ լինում է յիսուն՝ մէկ թիւ պակասը նոյնպէս համրուած: Իսկ տասներկուսը՝ մէկ եւ Երեմիան էլ մէկ գիրք համարելով՝ Հին կտակարանն ամբողջութեամբ կլինի երեսունվեց գիրք:

Իսկ Նոր կտակարանի գրքերը յայտնի են:

Չորս աւետարանները՝ Մատթէոսինը, Մարկոսինը, Ղուկասինը եւ Յովհաննէսինը, Յովհաննու Յայտնութիւնը եւ «Ննջումն էր ընդ եղբարսն», [Առաքեալների] գործերը, եօթ Ընդհանրական թղթերը, որոնցից մէկը Յակոբինն է, երկուսը՝ Պետրոսինը, երեքը՝ Յովհաննէսինը եւ վերջինը՝ Յուդայինը, որ եղան տասնչորս: Պօղոսի տասնչորս Թղթերը, որ եղաւ քսանութ, որոնցից առաջինը՝ Հռոմէացիներին, երկուսը՝ Կորնթացիներին, [ապա]՝ Գաղատացիներին, Եփեսացիներին, Փիլիպպեցիներին, Կողոսացիներին, երկուսը՝ Թեսաղոնիկեցիներին, Եբրայեցիներին, երկուսը՝ Տիմոթեոսին, Տիտոսին, Փիլիմոնին: Ապա Կորնթացւոց երրորդ թուղթը, Թադէոսին, որ եղաւ երեսուն[444]:

Եւ ինչպէս ասում են Կղէմեան[445] ու Անանիա Դամասկացին, եկեղեցին ընդունել է եւս վեց գիրք. դրանք են՝ Յակոբի ընթերցուածը, Առաքելական երկու կանոնները, Յոստոսի թղթերը, Դիոնէսիոս Արիսպագացու գրքերը եւ Պետրոս առաքեալի քարոզութիւնը:

Այսպիսով, Հին կտակարանը երեսունվեց գիրք է, նորը՝ նոյնպէս [այդքան]. բոլորը միասին՝ եօթանասուներկու:

Պէտք է իմանալ նաեւ, որ Հին կտակարանը ամբողջութեամբ բաժանվում է երեք մասի՝ Օրէնքներ, Մարգարէներ, Իմաստութեան գրքեր:

Օրէնքները Մովսէսի հինգ գրքերն են, որ ասուեցին:

Մարգարէները՝ ութը, որոնցից

Առաջինը՝ Յեսուն:

Երկրորդը՝ Դատաւորները եւ Հռութը:

Երրորդը՝ երկու Թագաւորութիւնները:

Չորրորդը՝ միւս երկու Թագաւորութիւնները:

Հինգերորդը՝ Եսային:

Վեցերորդը՝ Երեմիան:

Եօթներորդը՝ Եզեկիէլը:

Ութերորդը՝ տասներկու մարգարէները:

Երրորդը Իմաստութեան գրքերի ժողովածուն է, որ ընդգրկում է՝

Յոբի գիրքը:

Երկրորդը՝ Դաւթինը:

Երրորդը՝ Առակացը:

Չորրորդը՝ Ժողովողինը:

Հինգերորդը՝ Երգ երգոցը:

Վեցերորդը՝ Դանիէլը:

Եօթներորդը՝ երկու Մնացորդացը:

Ութերորդը՝ Եզրը:

Իններորդը՝ Եսթերը, որ միասին եղան քսաներկու, ըստ այնմ, որ քսաներկու տառ ունի եբրայեցիների այբուբենը, եւ քսաներկուսն են գլխաւոր արարչագործութիւնները: [Այդ պատճառով է], որ աստուածակերտ գիրքը ժողովել է քսաներկու գրքեր: Իսկ Սիրաքը, Իմաստութիւնը, Յուդիթը, Տուբիթը, Տուբիան, Մակաբայեցիք, Կտակները չեն թուարկւում սրանց յետ, սակայն ընդգրկուել են Աստուածաշունչ գրքում[446]:

ՏՆԵՐԻ ԹՈՒԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԲ

Հարց. Քանի՞ տուն կայ ողջ Աստուածաշունչ գրքում:

Պատասխան. Բովանդակ Հին կտակարանում՝ տասնինը հազար հարիւր քսանինը, Նորում՝ տասնութ հազար հինգ հարիւր իննսունմէկ. երկու կտակարանում՝ երեսունեօթ հազար եօթ հարիւր քսան տուն[447]:

ՏԱՐԻՆԵՐԻ ԹՈՒԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԳ

Ադամից մինչ Քրիստոսի ծնունդը՝ ըստ Եպիփանի, հինգ հազար հինգ հարիւր տարի է, ըստ ասորիների եւ յոյների՝ վեց հազար տարի, ըստ այլոց՝ հինգ հազար երկու հարիւր վաթսուներեք տարի: Ըստ հրէաների եւ շամրտացիների՝ չորս հազար տարի: Ըստ Եօթանասնից՝ հինգ հազար հարիւր իննսունութ տարի: Ըստ Անանիա Շիրակացու հայոց թուականութեամբ՝ Ադամից հինգ հազար ինը հարիւր եօթանասունվեց տարի է[448]:

Քրիստոսի ծննդից մինչ մեծ թուականը՝ հինգ հարիւր յիսուներեք տարի է:

Եւ Փրկչի մարդեղանալը ութսուներեք տարով առաջ է մարգարէների կանխագուշակումից, որովհետեւ ինչպէս Ադամը շտապեց աստուածանալ, այդպէս էլ Բանն Աստուած՝ մարդեղանալ, որի պատճառով էլ տարեթուերը տարբեր են բերւում: Իսկ հրէաներն ընդհանրապէս շաբաթ օրերը չէին ընդգրկում թուագրութեան մէջ, որի պատճառով [նրանց տարիները] պակասում էին:

ԴԱՐՁԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԻ ԹՈՒԻ ՄԱՍԻՆ ԸՍՏ ԵՕԹԱՆԱՍՆԻՑ ԿԱՐԳԻ[449]
Պրակ ԼԴ

Աբրահամի հարիւրերորդ տարում ծնուեց Իսահակը: Իսահակը վաթսուն տարեկանում ունեցաւ Եսաւին ու Յակոբին: Յակոբն ութսունինը տարեկանում ունեցաւ Յուդային: Յուդան քառասունութ տարեկանում ունեցաւ Փարէսին՝ Թամարից: Փարէսը յիսունինը

տարեկանում ունեցաւ Եզրօնին: Եզրօնը յիսունուք տարեկանում ունեցաւ Արամին: Արամը քառասունհինգ տարեկանում ունեցաւ Ամինադաբին: Ամինադաբը քառասունհինգ տարեկանում ունեցաւ Նայասօնին: Եւ ասում են Ամինադաբը Յուդայի զօրքի հազարապետն էր, երբ Մովսէսը Իսրայէլի որդիներին հանում էր Եգիպտոսից: Նայասօնը քառասունչորս տարեկանում ունեցաւ Սաղմոնին: Եւ Նայասօնը անապատում Յուդայի բիւրաւորների իշխանն էր: Եւ սրա քոյր Եղիսաբեթը եղաւ Ահարօն քահանայի կինը, որից ծնուեցին Նաբաթն ու Աբիուդը, Եղիազար եւ Իթամար քահանաները: Եւ այսպէս, խնամիական կապերով խառնուեցին Յուդայի եւ Ղեւիի ցեղերը:

Սաղմոնը երեսունհինգ տարեկանում ծնեց Բոյոսին: Եւ Սաղմոնը Յուդայի ցեղի իշխան էր, երբ Յեսուն ժողովրդին անցկացրեց Յորդանանով: Սաղմոնը իրեն կին առաւ Ռահաբին, որ Երիքովից էր, որին աւետարանիչը Ռեքաբ է կոչում: Եւ սա կառուցեց Բեթղէհէմ քաղաքը Յուդայի երկրում:

Բոյոսը հարիւր ութ տարեկանում ունեցաւ Ովբէթին՝ կին ունենալով Հռութ Մովաբացուն: Ովբէթը հարիւր մէկ տարեկանում ունեցաւ Յեսսէին. Յեսսէն հարիւր երեսուն տարեկանում՝ Դաւթին: Դաւիթը յիսունուք տարեկանում ունեցաւ Սողոմոնին: Նա երեսուն տարեկանից թագաւորեց քառասուն տարի՝ ապրելով եօթանասուն տարի: Սողոմոնը տասներկու տարեկանում ունեցաւ Ռոբովամին: Նա իր թագաւորութեան չորրորդ տարում տաճարը ձեւաւորեց եւ աւարտեց եօթ տարում:

Մովսէսի ժողովելուց, Եգիպտոսից ելնելուց մինչ տաճարի կառուցումը, չորս հարիւր ութսուն տարի է, Ադամից՝ չորս հազար հարիւր վաթսունինը տարի:

[Սողոմոնը] տասներկու տարեկանից թագաւորեց քառասուն տարի՝ ապրելով յիսուներկու տարի:

Սողոմոնից յետոյ Իսրայէլի թագաւորութիւնը երկու մասի բաժանուեց. Սամարիայի տասը ազգերին տիրեց Նաբաթի որդի Ռոբովամը, որոնք կոչուեցին Իսրայէլի չար թագաւորներ եւ ոչ բարի: Իսկ Երուսաղէմում թագաւորեց Սողոմոնի որդի Ռոբովամը, որոնք կոչուեցին Յուդայի թագաւորներ՝ որոնցից ոմանք [կատարեցին] բարի [գործեր]:

Ռոբովամը Իսրայէլում թագաւորեց տասնեօթ տարի, Աբիան՝ չորս. Ասափը՝ քառասունմէկ, Յովսափաթը՝ քսանեօթ, Յովրամը՝ ութ, Ոքոզիան՝ մէկ, մայրը՝ Գոդողիան՝ եօթ տարի, Յովասը՝ քառասուն, Ամեսիան՝ քսանինը:

Այս չորսը՝ Ոքոզիան, մայրը՝ Գոդողիան, Յովասը, Ամեսիան, ազգահամարում չեն թուարկւում աւետարանչի կողմից՝ լինելով Եզաբելի դուստրն ու թոռները: Իսկ Յովսաբեթը Յովրամի եւ Գոդողիայի դուստրն է եւ Ոքոզիայի քոյրը: Նրան կին առաւ Յովիդա քահանան, եւ իրար խառնուեցին թագաւորների եւ քահանաների ցեղերը:

Ազարիան, որ եւ Ոզիան՝ [թագաւորեց] յիսուներկու տարի: Սա

բորոտուեց, քանի որ յանդգնեց տաճարում խնկարկել: Յովաթամը՝ տասնվեց տարի: Աքազը՝ տասնվեց տարի: Աքազի տասնմէկերորդ տարում իսրայէլցիները գերի տարուեցին Սալմանասարի կողմից: Եզեկիան՝ քսանինը տարի: Մանասէն՝ յիսունհինգ տարի: Ամովսը՝ տասներկու տարի: Յովսիան՝ երեսունմէկ տարի: Յովաքազը՝ երեք ամիս: Յովաքազին գերի տարաւ Նեքաւով փարաւոնը եւ թագաւոր դրեց Եղիակիմին: Եղիակիմը, որ եւ Յովակիմն է՝ տասներկու տարի: Սրա տասներորդ տարում Նաբուգոդոնոսորը նուաճեց Հրէաստանը եւ հարկ առնելով Եղիակիմից՝ գնաց: Յովակիմը, որ եւ Յեքոնիան էր՝ երեք ամիս: Դարձեալ ելնելով՝ Նաբուգոդոնոսորը գերի տարաւ Յովակիմին: Մատթանին, որ եւ Սեդեկիան էր՝ տասնմէկ տարի: Սեդեկիայի տասներկուերորդ տարում Նաբուգոդոնոսոր Քաղդէացին նուաճեց Երուսաղէմը եւ տաճարը կրակի մատնեց: Տաճարը կանգուն մնաց՝ չորս հարիւր քառասուներկու տարի: Գերեվարուբեան քսաներորդ տարում Նաբուգոդոնոսորը վախճանուեց:

Գերութիւնը տեւեց եօթանասուն տարի:

Իսկ ըստ Մատթէոսի՝ ազգաբանութեան Յեքոնիան Սաղաթիէլին ունեցաւ յիսունվեց տարեկանում: Զօրաբաբէլը՝ յիսունվեց տարի, Աբիուդը՝ քառասունհինգ, Եղիակիմը՝ վաթսուն, Ազովրը՝ երեսունինը, Սադովկը՝ երեսունմէկ: Սադովկի առաջին տարում՝ Ալեքսանդր Մակեդոնացին էր: Աքին՝ երեսունչորս. Եղիուդը՝ երեսուն, Եղիազարը՝ վաթսուներկու, Մատթանը՝ երեսունութ, Յակոբը՝ վաթսուն, Յովսէփը՝ եօթանասունվեց տարի:

ԴԱՐՁԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԻ ԹՈՒԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ Պրակ ԼԵ

Յիսուսը ծնուեց Հրէաստանի Բեթղէհէմ [քաղաքում]: Եւ տաճարի նորոգումից մինչ Քրիստոսի ծնունդը հաշուում են հինգ հարիւր տասնութ տարի. Տաճարի առաջին կառուցումից մինչ երկրորդը՝ հինգ հարիւր տասներկու տարի: [Եգիպտոսից] դուրս գալուց մինչ Սողոմոն՝ չորս հարիւր ութսուն տարի. Աբրահամից մինչ [Եգիպտոսից] դուրս գալը՝ հինգ հարիւր հինգ տարի: Զրհեղեղից մինչ Աբրահամ՝ ինը հարիւր քառասուներկու տարի: Եւ Ադամից մինչ ջրհեղեղ՝ երկու հազար երկու հարիւր քառասուներկու տարի: Իսկ Ադամից մինչ Քրիստոսի ծնունդը՝ ընդամէնը՝ հինգ հազար հարիւր իննսունութ տարի՝ ըստ Եօթանասնից, ինչպէս վերն ասուեց[450]:

Եւ սրանով եղաւ Հին կտակարանի եւ «Գիրք հարցմանց»-ի եօթներորդ հատորի աւարտը, ի փառս Քրիստոսի, մեր Աստծոյ, օրհնութիւն յաւիտեանս. Ամէն:

[ԳԻՐՔ] ՀԱՐՑՄԱՆՑԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ ՓՐԿՉԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին՝ նախաբան: Եւ հաւատարիմ է Աստուած:

Երկրորդ՝ Աստծոյ ողորմութեան եւ արդար գործերի մասին:

Երրորդ՝ Կոյսի եւ Յովսէփի ազգաբանութեան մասին: Եւ թէ ինչո՞ւ հարսնախօսն այր եղաւ:

Չորրորդ՝ Կոյսի սրբութեան մասին զանազան ձեւերով:

Հինգերորդ՝ Հրեշտակի աւետիսի եւ ողջոյնի մասին: Եւ թէ քանի՞սն են ողջոյնները:

Վեցերորդ՝ Կոյսի պատասխանի մասին: Նրա եօթ պատասխանների մասին:

Եօթներորդ՝ Տասը կէտով այն մասին, որ Աստուածածին է Կոյսը:

Ութերորդ՝ Ժամանակների եւ մարդեղութեան մասին: Եւ վեց օրերի մասին:

Իններորդ՝ Բանը մարմին եղաւ տասը պատճառով:

Տասներորդ՝ Արգանդից ծնուեց: Յղիութեան սքանչելիութեան եւ Քրիստոսի հրաշքների մասին:

Տասնմէկերորդ՝ Թէ քանի՞սն էին Քրիստոսի ծնունդները:

Տասներկուերորդ՝ Տասը կէտով Միածին Որդու մասին: Անդրանկութեան մասին երեք կէտով:

Տասներեքերորդ՝ Կոչւում է Յիսուս եւ Փրկիչ: Փրկեց վեց բաներից:

Տասնչորսերորդ՝ Բազում եղանակներով՝ Օծեալ եւ Քրիստոս լինելու մասին:

Տասնհինգերորդ՝ Միաւորութեան եղանակների մասին:

Տասնվեցերորդ՝ Հոգու եւ մարմնի միաւորութեան տասը եղանակների մասին:

Տասնեօթներորդ՝ Նրանցից տարբերւում է տասը կէտերով:

Տասնութերորդ՝ Դեռահաս լինելու մասին:

Տասնիններորդ՝ Որ ծեր չէր կարող լինել՝ հինգ պատճառով:

Քսաներորդ՝ Թէ Քրիստոսը արու ծնուեց՝ տասը կէտով:

Քսանմէկերորդ՝ Գիրքը ձեռքին եւ խաչը՝ գլխավերեւում:

Քսաներկուերորդ՝ Ադամի ձեռքի գիրը:

Քսաներեքերորդ՝ Ծնունդը յունուարի վեցին լինելու տասնհինգ պատճառների մասին:

Քսանչորսերորդ՝ Տիրոջ թլփատութեան մասին՝ տասը կէտերով: Թէ ո՞վ թլփատեց Յիսուսին: Թլփատում է նաեւ եկեղեցին այժմ իր քառաթեւ սրով:

Քսանհինգերորդ՝ Քրիստոսի մկրտութեան մասին՝ տասը կէտերով: Եւ մկրտութեամբ մեր գոյատեւելու մասին: Եւ թէ քանի՞սն են մկրտութեան եղանակները:

Յովհաննէսի եւ Տիրոջ մկրտութեան մասին:

Վիշապի գլուխը ջախջախելու մասին:

Քսանվեցերորդ՝ Խաչելութեան եւ չարչարանքների մասին: Խաչելութեան նշանները եւ լուսատուների խաւարումը:

Խաչի անօթը քառակի էր: Խաչի զոհաբերութիւնների մասին: Յուդայի

մատնութեան, փայտի վրայ մեռնելու մասին: Ի՞նչ եղաւ Քրիստոսի մահով:

Եօթ խօսքերը խաչի վրայ:

Եօթ տեղից խիստ անարգուելը:

Քառաթեւ էր խաչը եւ փայտից էր խաչը:

Քանի՞սն են խաչի մասերը եւ քանի՞սն են գամերը:

Աւազակների, խաչողների եւ կանանց անունների մասին:

Քրիստոսի եւ մեր մահուան տարբերութիւնների մասին:

Խօսքեր՝ տկարութիւնների, մահուան եւ ապականութեան մասին:

Քսանեօթներորդ՝ Քրիստոսի անապական մարմնի մասին՝ բազմազան վկայութիւններով:

Քսանութերորդ՝ Դժոխքի մասին: Եւ թէ որտե՞ղ է գտնւում դժոխքը: Քանի՞սն էին դժոխքները, որոնք ընդհանրապէս աւերելով՝ ազատեց հոգիներին:

Քսանիններորդ՝ Աւագ շաբաթուայ նաւակատիքի մասին: Խօսքեր ձկան մասին:

Երեսուներորդ՝ Քրիստոսի յարութեան մասին: Քսան վկայութիւններ այն մասին, թէ գիշերուայ ո՞ր ժամին յարութիւն առաւ եւ թէ քանի՞ ժամ մնաց գերեզմանում. երեք օր եւ երեք գիշեր:

Մարիամների եւ վարշամակի մասին: Եւ որ Մարիամին թոյլ չտուեց մօտենալ: Եւ՝ «Աստուած իմ, Աստուած ձեր»:

Երեսունմէկերորդ՝ Տիրոջ համբարձման մասին: Եւ թէ ինչո՞ւ քառասուն օր յետոյ համբարձուեց: Աջից նստելու մասին:

Երեսուներկուերորդ՝ Խաչի հետ Սուրբ Հոգու գալստեան տասը պատճառների մասին:

Հոգու էջքը փայլատակումով:

Ո՞րն է իջնելու օրը պատուելու պատճառը:

Քանի՞սն են զատիկները: Այն օրը, երբ օրէնքը տրուեց եւ իջաւ Սուրբ Հոգին:

Վեց պարգեւներ տուեց Սուրբ Հոգին:

Ինչպէ՞ս էին խօսում առաքեալները:

Ինչո՞ւ յանուն Հօր չենք տօնում, ինչպէս Քրիստոսի եւ [Սուրբ] Հոգու:

Ինչո՞ւ [Սուրբ] Հոգին Յորդանանի վրայ աղաւնակերպ իջաւ, իսկ վերնատանը՝ հրի [տեսքով]:

Այս է նոր օրէնքի ցանկը:

ԳԼՈՒԽ Լ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԱՅՍ ՀԱՏՈՐԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Անսկիզբ սկզբի գոյի սկզբից դէպ մեզ [ուղղորդուած] Միածին Խօսքի անճառելի գաղտնութիւն եւ անհասանելի խորութիւն, որ արտայայտել է բազմօրինակ մասերով եւ բիւրադէմ ստուերակերպութեամբ:

[Որ] առաջնագոյնն էր ըստ տարիների, նախադասը ժամանակով: Լայն եւ ընդարձակ շրջանով, անխախտելիօրէն հիմնաւորուած, անշարժ խարսխուած, ամուր պարսպուած, որին յուսացին խոստմամբ, ուխտեցին աւետիսով:

Պաշտպանեցին հրեշտակները:

Սնուցեցին օրէնքները:

Նկարագրեցին օրինակները:

Կանխաճառեցին պայծառատեսները:

Նախապատմեցին մարգարէները:

Հնչեցին ձայները:

Ճշմարտեցին խօսքերը:

Սերմանեցին քարոզները:

Հրաշակերտեցին սքանչելիքները:

Իրականացան արդիւնքները:

Առջեւից ընթացողները կարապետեցին:

Քարոզեցին ինքնատեսները:

Սպասաւորեցին հետեւողները:

Ուղղեցին առաջնորդները:

Եւ վկաները հաստատեցին Միածնի փրկագործութեան հրաշալի խորհրդի մեծ եւ ծածուկ լինելն առ երեւումն մարդկանց. «Օ՜, խորք մեծութեան եւ իմաստութեան». ընտիր անօթը նրան էր քարոզում՝ առանց դատաստանի քննութեան եւ մարմնով աշխարհ գալու ճանապարհի:

Որովհետեւ եթէ նրանք՝ աստուածայինները, որ Աստծոյ շուրջն են, անհպելի են, ապա որքա՞ն առաւել եւս անզննելի են իր էութիւնը եւ աստուածային Բանի եղելութիւնը:

Ուստի վեհագոյն իմացութիւնների էութեան Սերովբէն սքօղել էր երեսը եւ պարուրուել մարդեղութեան խորհրդի ոտքը:

Եւ որովայնի ծնունդներից մեծագոյնը, արժանի չէր արձակելու նրա կօշիկի կապը: Եւ եկեղեցու վէմը եւ պետը իշխանաւորների գնդի՝ խուսափում էր [նրանից], ուրեմն որքա՞ն առաւել եւս մենք՝ մեր անկիրթ մտքով եւ գործերով պէտք է հրաժարուէինք եւ հեռու փախչէինք, ինչպէս ծեղակոյտը հրից, աչքացաւ ունեցողը՝ լոյսից: Սակայն յուսալով ճշմարիտ Բանին, որի համար [յօրինեցինք] հարցուպատասխանի [այս] գիրքը, հետեւելով ուսուցիչների ճշմարտութեանը եւ նպաստամատոյց լինելով յոյսից սովորողներիդ՝ բացեցինք մեր մտքի դուռը եւ դէպ մեզ ձգեցինք շնորհների հոգին:

Ուստի Տէրը, Տէրը թող տայ ինձ խրատող լեզու եւ այդժամեայ սիրտ, որ Նրանով Նրան, Նրա մասին խօսենք՝ հասնելով Նրա փառքի մեծութեան գովաբանութեանը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՒԱՏԱՐԻՄ Է ԱՍՏՈՒԱԾ
Պրակ Ա

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ ասում է. «Աստուած իր բոլոր խօսքերին հաւատարիմ է» (Ա Կորնթ. Ժ 13):

Պատասխան. Սուրբ գրքում «հաւատարիմ» բառը չորս իմաստ ունի: Նախ, իբրեւ հաւատի դաւանանքի հաստատում, ըստ այնմ՝ «Հարկ է հաւատալ, որ կայ Աստուած» (Եբր. ԺԱ 6):

Երկրորդ՝ գործածւում է պարզասրտութեան իմաստով, [ըստ] տնտեսի, որ «Հաւատարիմ էր եւ իմաստուն» (Ղուկ. ԺԲ 42):

Երրորդ՝ գործածւում է հնազանդ սպասաւորութեան իմաստով, ըստ որի՝ «Հաւատարիմ է իր Արարչին» (Եբր. Գ 2):

Չորրորդ՝ անփոփոխ ճշմարտութեան իմաստով, ըստ որի՝ «Հաւատարիմ

է Աստուած իր խօսքերին» (Սղմ. ՃԽԴ 13),- ասում է Դաւիթը:

Եւ իմանալու է, որ եթէ Աստծոյ մասին է ասւում «հաւատարիմ», ըստ այնմ՝ «հաւատարիմ է Աստուած» եւ այլն, պէտք է ընկալուի ըստ չորրորդ իմաստի, իբրեւ անփոփոխ ճշմարտութիւն, իսկ միւսները չեն պատշաճում:

Իսկ ըստ Քրիստոսի տնօրինութեան պատշաճում է եւ երրորդ եղանակը, որովհետեւ հնազանդօրէն կատարեց Հօր կամքը: Իսկ բոլոր [իմաստները] հաւասարապէս պատշաճում են բանական արարածներին, ըստ համապատասխան դիպուածի:

Ապա ուրեմն հաւատարիմը եւ ճշմարիտը՝ Աստծոյ անսուտ խոստումն է, որի մասին առաքեալն ասում է եբրայեցիներին. «Երկու անփոփոխելի բաներ կան, որոնցով անհնար է ստել Աստծուն» (Եբր. Զ 18), այսինքն Աբրահամի եւ Դաւթի երդումը՝ երկրի վրայ նրա որովայնի պտղից Բանի մարդ լինելու, եւ նրա՝ Հօր Աթոռին նստելու ու բոլոր ազգերի նրանից օրհնուելու մասին:

ԱՍՏԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԴԱՐ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Բ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ մարգարէն ասում է. «Տէ՛ր, քո ողորմութիւնը երկնքում է, քո ճշմարտութիւնը մինչ ամպերը» (Սղմ. ԼԵ 6):

Պատասխան. Բարերար եւ բնութեամբ բարի է Աստուած, ուստի եւ նրա բարերարութիւնից մեզ են հասնում ողորմութեան եւ արդար գործերը. ըստ մարգարէի՝ «Ողորմած եւ արդար է Տէրը» (Ողբ Ա 18): Եւ նրա ողորմութիւնը ձրի շնորհներով եւ պարգեւներով է, իսկ արդարութիւնը՝ փոխարինման եւ հատուցման տուրք: Եւ սրանք երկուսն էլ Աստծուց իջած բարիք են, ըստ այդմ՝ «Բարութեան բոլոր կատարեալ տուրքերը եւ պարգեւները վերեւից են իջած» (Յակ. Ա 17):

Սրանք երկու զօրութիւն ունեն՝ արարչական եւ արքայական, ըստ Փիլոնի՝ ինչպէս մարդու աջ եւ ձախ ձեռքերը[451]: Այդպէս էլ Գրիգոր Նիւսացին ստեղծելու եւ նախախնամութեան գործերը բաժանում է ըստ Աստծոյ ողորմութեան եւ արդարութեան բնոյթի[452]:

Նոյն կարծիքին է նաեւ մեծ Դիոնէսիոսը, որ ասում է, թէ Աստծու նախախնամութեամբ են եղել բոլոր արարածները[453]: Եւ իմանալու է, որ բազում եղանակներով են դրսեւորւում Աստծոյ ողորմութեան եւ արդարութեան գործերը:

Նախ՝ Աստծոյ միութիւնից. ողորմութիւնն առաջանում է կամքից, արդարութիւնն՝ իմաստութիւնից:

Երկրորդ՝ երեք անձերից: Երբեմն արդարութիւն է կոչւում Միածին Բանն, ըստ այդմ՝ «Արդարացրեց մեզ» (Ես. Ծ 8): Ողորմութիւն եւ շնորհք է Սուրբ Հոգին, ըստ այդմ՝ «Շնորհքը եւ ողորմութիւնն Աստծոյ ձեզ հետ լինի» (Բ Յովհ. Ա 3): Եւ հակառակը՝ երբեմն ողորմութիւն է կոչւում Որդին, որովհետեւ ողորմաց մեզ, իսկ արդարութիւն՝ Սուրբ Հոգին, ըստ որի՝ «Գալով՝ յանդիմանելու է այս աշխարը

արդարութեան եւ դատաստանի համար» (Յովհ. ԺԶ 8):

Երրորդ՝ ողորմութիւն է աշխարհի ստեղծման սկիզբը, ըստ որի «Աշխարհը ողորմութեամբ արարուեց» (Սղմ. ՁԸ 3): Եւ արդարութիւն է լինելու աւարտին, որ այն, ինչ սկսուել է արդարութեամբ աւարտուի, եւ [ինչ] շարժւում է՝ կանգ է առնելու:

Չորրորդ՝ Աստծոյ ողորմութիւնը այս երկրային կեանքն է, եւ արդարութիւնը՝ հանդերձեալը:

Հինգերորդ՝ ողորմութիւնը երեւաց Բանի մարդեղութեամբ եւ արդարութիւնը՝ նրա մահով, որովհետեւ եթէ մարդացաւ, իրաւացիօրէն պէտք է մահանար:

Վեցերորդ՝ մեզ համար [Աստծոյ] ողորմութիւնը հաւատի եւ յոյսի մէջ է, նրա արդարութիւնը՝ գործերի եւ սիրոյ:

Եօթներորդ՝ ողորմութիւն է նոր օրէնքը, ըստ որի՝ «շնորհք եւ պարգեւ», արդարութիւն է հինը, ըստ որի՝ «ակն ընդ ական» (Պետ. ԻԴ 20):

Ութերորդ՝ ողորմութիւն է մեղքերի թողութիւնը, արդարութիւն՝ պատժի ներելը:

Իններորդ՝ ողորմութիւն է մարդու բնութեան հանդէպ, արդարութիւն իւրաքանչիւր անձի հանդէպ:

Տասներորդ՝ արդարութիւն է մեր մեռնելը, ողորմութիւն՝ բոլորի յարութիւնը:

Այսպիսով, բազում կերպերով են մեկնաբանւում Աստծոյ ողորմութեան եւ արդարութեան գործերը:

Իսկ որ ասում է. «Տէ՛ր, մինչ երկինք է քո ողորմութիւնը եւ մինչ ամպեր՝ քո արդարութիւնը» (Սղմ. ԼԵ 6), ըստ ոմանց Աստծոյ ողորմութիւնը երկնքում հրեշտակների հանդէպ է, իսկ արդարութիւնը երկրում՝ մարդկանց:

Սակայն այդպէս չէ, որովհետեւ երկնքում էլ են եղել արդար գործեր հրեշտակների նկատմամբ, որոնցից հպարտացածները կործանուեցին, իսկ մարդկային ցեղը ողորմութեան արժանացաւ Աստծոյ մարդեղութեամբ:

Իսկ այս խօսքի ստոյգ տեսութիւնն է, [այս է] թէ՝ «երկնքում է ողորմութիւնը», որ առաւել մեծ լինելն է նշանակում, իսկ «մինչ ամպը ճշմարտութիւնը»՝ չափաւոր լինելը, ինչը ուրիշ տեղերում էլ է նշւում. «Մեծ եղաւ քո ողորմութիւնը մինչ երկինք, քո ճշմարտութիւնը՝ մինչ ամպեր»:

Եւ սա երկու իմաստով է:

Նախ՝ որովհետեւ ողորմութիւնը աշխարհի սկիզբում է, միջնամասը եւ աւարտը՝ մարդկութեան յարութեամբ է, ինչպէս ասուեց, իսկ արդարութեան գործով սկսուել է աշխարհի աւարտը:

Երկրորդ՝ որովհետեւ ողորմութիւնը բացարձակ եւ պարզ բարին է, արդարութիւնը՝ խառնուած բարին, որովհետեւ բարուն բարի է հատուցում, չարին՝ տանջանք:

Այս պատճառով էլ արդարութիւնը աւելի նուազ եւ փոքր է համարւում, քան ողորմութիւնը:

Ուրիշ վարդապետներ էլ ասում են, թէ Աստծոյ արդարութիւնը երեք կերպ է դրսեւորւում:

Նախ, երբ հատուցում է ըստ արժանիքների: Երկրորդ, երբ խոստացածն է հատուցում: Երրորդ, երբ անկատարը կատարւում է:

Առաջինի կերպը բարու հատուցումն է եւ չարերի պատժուելը, որ արդարութեան գործն է:

Երկրորդով Քրիստոսի մարդեղութիւնն է, որովհետեւ այն խոստացուել էր մարգարէների եւ նահապետների միջոցով:

Երրորդը երեւում է, երբ Աստուած արդարացնում է մեղաւորին, երբ նրան նախապատրաստում է շնորհին՝ գործելով բարին:

Այդպէս էլ Աստծոյ ողորմութիւնն է երեք կերպ ասւում: Նախ ողորմութիւն է ասւում իբրեւ սրտի թշուառութեան որոշիչ: Եւ դա հետեւեալ ձեւակերպումն ունի. «Տիրոջ ողորմութեամբ լիալիր եղաւ երկիրը» (Սղմ. ԼԲ 5), որովհետեւ երկնքում ողորմութեան կարիք չունեն, քանի որ այնտեղ ողորմելիներ չկան:

Երկրորդ՝ թուլացնում է սրտի խստութիւնը, որն այսպէս է ասւում. «Ողորմութիւնը եւ ճշմարտութիւնը պիտի հանդիպեն, արդարութիւնն ու խաղաղութիւնը պիտի համբուրուեն» (Սղմ. ՁԴ 11), որովհետեւ ճշմարտութիւնը խստութեան հետեւանք է, իսկ ողորմութիւնը բարի է դարձնում խստութիւնը՝ հատուցելով աւելի, քան արժանի է եւ պատժելով պակաս, քան արժանի է: Այսպիսի ողորմութիւնը երկնքում եւ դժոխքում է:

Երրորդ, ասւում է ողորմութիւն, իբրեւ թէ՝ զարմանալի ձեւով քաղցրութեամբ ոռոգել սիրտը:

Այսպիսով ողորմութիւնը առաւելագոյնն է երկնքում: Եւ պէտք է իմանալ, որ Աստծոյ բոլոր գործերում տեղ են գտնում արդարութիւնը եւ ողորմութիւնը, ընդ որում արդարութիւնը երբեմն ծածուկ, ողորմութիւնը՝ յայտնի, ինչպէս ասենք ամբարշտին արդարացնելը, Քրիստոսի առաջին գալուստը:

Երբեմն էլ արդարութիւնը յայտնի է, ողորմութիւնը՝ ծածուկ, ինչպէս առանց մկրտուելու մեռած մանուկների պատիժը, Քրիստոսի երկրորդ գալուստը:

Երբեմն էլ երկուսն էլ ծածուկ են լինում, ինչպէս իւրաքանչիւր արդարի եւ անմեղի նեղութեան, երեխաների հիւանդութեան ժամանակ:

Երբեմն էլ երկուսն էլ յայտնի են լինում, ինչպէս արդարների հատուցումը, անարգների պատիժը, որովհետեւ առաջիններին փառաւորում է աւելի, քան արժանի են, երկրորդներին պատժում պակաս, քան արժանի են. սրանք ողորմութիւն են:

Իսկ ընդհանրապէս իւրաքանչիւրին հատուցում է ըստ արժանիքների, այսինքն՝ բարուն բարի, չարին՝ չար: Սրանք արդարութիւնն են:

Ու թէպէտ Աստուած արդար է եւ ողորմած, սակայն առաւելապէս ողորմած է, քան արդար, որովհետեւ արդար լինելու դէպքում պահանջ է դրւում նաեւ

մարդու հանդէպ, այսինքն պահանջ՝ ըստ արժանւոյն: Իսկ ողորմութեան դէպքը ոչինչ չի պահանջում, այլ թողնում է մարդու կամքին, ինչպէս յայտնի եղաւ Բանն Աստծոյ մարդեղութեամբ՝ սուրբ Կոյս Մարիամից:

ԿՈՅՍԻ ԵՒ ՅՈՎՍԷՓԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ
Պրակ Գ

Հարց. Ո՞ւմ ցեղից էր կոյս Աստուածածինը:

Պատասխան. Փառաւորեալ եւ միշտ կոյս Աստուածածին Մարիամը Դաւթի թագաւորական ցեղից էր, ըստ այդմ՝ «Տէրը երդուեց ճշմարտութեամբ եւ չստեց. քո որովայնի պտղից նստեցնելու եմ քո աթոռին» (Սղմ. ՃԼԱ 11):

Եւ դարձեալ՝ «Նրա զաւակը յաւիտեան ապրելու է, եւ նրա աթոռն իբրեւ արեգակ եւ իբրեւ լուսին իմ առջեւ է լինելու, որովհետեւ հաստատուած է երկնքում» (Սղմ. ՁԸ 37):

Եւ Եսային ասում է. «Գաւազանը ելնելու է Յեսսեից եւ ծաղիկը՝ նրա արմատից» (Ես. ԺԱ 1):

Արդար Յովսէփը թագաւորական ցեղից էր, ինչպէս պատմում են Մատթէոսի եւ Ղուկասի աստուածախօս [մատեանները]: Մատթէոսը Սողոմոնից իջնում է մինչ Յովսէփ, Ղուկասը՝ Նաթանից: Եւ այսպէս տալով Կոյսի ազգաբանութիւնը՝ լռում են, որովհետեւ ընդունուած չէր կանանց ազգահամարն անել, այլ միայն նրանց նշել, ով իր ազգից էր կին առնում եւ ոչ օտար:

Եւ Յովսէփին արդար է վկայում Աւետարանը, իսկ արդար չէր լինի, եթէ խախտէր Աստծոյ օրէնքները, այլեւ քահանաներն էլ չէին խախտում օրէնքները եւ օտար ազգից նրան կին տալիս:

Ուրեմն պարզ է, որ ըստ մարմնի կոյսը Յովսէփի ազգից էր, իսկ Յովսէփը՝ Դաւթի որդին, ինչպէս ասուեց:

Եւ այս է յայտնի պատմութիւնը:

Դաւթի որդին՝ Նաթանի ցեղից, Ղեւի անունով մի մարդ ունեցաւ երկու որդի՝ Մելքի եւ Պանթեր: Մելքին ունեցաւ Հեղիին: Հեղին՝ Յակոբին: Յակոբը՝ Յովսէփին: Պանթերը ունեցաւ Վերապանթերին: Վերապանթերը՝ Յովակիմին, Յովակիմը ծնեց կոյս Մարիամին:

Յովսէփի մասին պէտք է իմանալ նաեւ, որ Դաւթի որդու՝ Սողոմոնի ցեղից Մատթանը կին առնելով՝ ունեցաւ Յակոբ որդուն: Մատթանի մահից յետոյ Մելքին՝ Նաթանի ցեղից, որ Ղեւիի որդին էր եւ եղբայրը Պանթերի՝ առնելով նոյն Մատթանի կնոջը՝ ունեցաւ Ելին:

Եւ Յակոբն ու Ելը մօրով եղբայրներ էին. Յակոբը Սողոմոնի որդի Մատթանի ցեղից, Ելը՝ Նաթանի որդի Մելքիի ցեղից: Եւ Ելը մեռաւ անորդի, որ Նաթանի ազգից էր: Իսկ Յակոբը, որ Սողոմոնի ազգից էր՝ օրէնքի համաձայն առնելով եղբօր կնոջը, որպէսզի եղբայրը զաւակ ունենայ, ունեցաւ Յովսէփին:

Այսպիսով, Յովսէփը բնութեամբ որդին էր Յակոբի՝ Սողոմոնի ցեղից, իսկ օրէնքով որդին էր Ելի՝ Նաթանի ցեղից, այսինքն երկու եղբօր թոռներ էին կոյս Մարիամը եւ Յովսէփը հայրական

կողմից՝ Մելքի եւ Պանթերի, որ Նաթանի ցեղից էին:

Իսկ մայրական կողմով Մարիամը քահանայական ցեղից էր, որովհետեւ Մատթան քահանան էր, որ բնակւում էր Բեթղէհէմում, երեք դուստր ունէր, առաջինը՝ Մարիամը, երկրորդը՝ Սովիէն, երրորդը՝ Աննան:

Մարիամն ամուսնացաւ Բեթղէհէմում եւ ծնեց Սողոմին՝ Յիսուսի մանկաբարձին. ոչ նա, որ մայր եղաւ Զեբեթեի որդիներին, որովհետեւ այն Սողովմէն դուստրն էր Աստուածահայր Յովսէփի:

Սովիէն նոյն Բեթղէհէմում ծնեց Եղիսաբեթին՝ Մկրտչի մօրը: Իսկ Աննան ամուսնացաւ Գալիլեայում Յովակիմի հետ եւ ծնեց Աստուածածին Մարիամին՝ Պրոպատիկէում, Յովակիմի տանը եւ այնտեղից տարուեց Տիրոջ տաճարը:

Այսպիսով Սողոմին, Եղիսաբեթը եւ Մարիամ Աստուածածինը երեք քոյրերի դուստրեր էին:

Իսկ արդար Յովակիմը, Յուդայի թագաւորութեան երեսունութերորդ ցեղից էր, փառաւոր եւ շատ հարուստ Դաւթի որդի Նաթանի թոռներից, որպէսզի կոյս Մարիամը լինի թագաւորական ցեղից՝ հօր ազգի կողմից, իսկ մօր կողմից՝ քահանայի [ցեղից]:

Եւ չնայած օրէնքն արգելում էր երկու ցեղի խառնել միմեանց, սակայն քանի որ ղեւտացիները չունէին ժառանգութիւն եւ բաժին, ուստի երբեմն խառնւում էին Յուդայի թագաւորական ցեղին, ինչպէս Ահարօնի կինը Ամինադաբի դուստրն էր, որ Յուդայի իշխան Նայասոնի քոյրն էր:

Այլեւ Յովիդա քահանայապետն [առաւ] Յովրամ արքայի դստերը, Ոքողի քրոջը: Այսպէս էլ Յովակիմը, որ Յուդայից էր, կին առաւ Աննային՝ Ղեւիի ցեղից Մատթանի դստերը, որի պատճառով էլ Գաբրիէլը Եղիսաբեթին ասում էր՝ Մարիամի ազգական:

Եւ երկու ցեղերը խառնուեցին միմեանց, որպէսզի նրանցից ծնուած Քրիստոսը մարմնով թագաւոր եւ քահանայ լինէր, ըստ այդմ՝ «Դու յաւիտենական քահանայ ես» (Եբր. Ե 6), եւ «Նրան եմ տալու Դաւթի տան թագաւորական փառքը», որովհետեւ օծեալները սրանք էին՝ քահանաները եւ թագաւորները, որոնցից եւ եղան բազմաթիւ մարգարէներ:

Այդպէս էլ Քրիստոս եղաւ երկու զարմերից՝ քահանայի եւ թագաւորի՝ ճշմարիտ եւ մշտնջենաւոր քահանայ եւ յաւիտենական թագաւոր: Սրա մասին է, որ ասում է՝ «Նրա աթոռն իբրեւ երկնքում հաստատուած արեգակ եւ լուսին, կայ եւ կմնայ» (Սղմ. ՁԸ 37):

Հարց. Ինչո՞ւ էր սուրբ Կոյսը նշանուած տղամարդու հետ:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ սուրբ Կոյսը խորհրդանշելու էր կոյս եկեղեցուն, որ նշանուած էր Քրիստոսի հետ, որ նմանապէս կոյս է:

Երկրորդ՝ որովհետեւ Յովսէփով ցոյց էր տրուելու Կոյսի ազգաբա-

նութիւնը, որ շարակարգւում է ամուսնու [ցեղով]:

Երրորդ՝ որ Յովսէփը վկայ լինի Կոյսի ողջախոհութեանը:

Չորրորդ՝ որ վատահամբաւ չլինէր, երբ ծննդաբերէր ու չունենար այր:

Հինգերորդ՝ որ չդատապարտուի իբրեւ անզուսպ, որովհետեւ քահանայական ցեղից էր, եւ այդպիսիներն այրւում էին, իսկ մնացած շնացողները՝ քարկոծւում:

Վեցերորդ՝ որպէսզի Կոյսը սփոփուէր եւ կազդուրուէր ամուսնու սպասաւորութեամբ:

Եօթներորդ՝ որ Քրիստոսի ծնունդը թաքուն մնար սատանայից:

Ութերորդ՝ որպէսզի հրէաները չկարողանան Քրիստոսի ծնունդը օրինական չհամարելով՝ իրաւացի երեւալ նրան հալածելիս:

Իններորդ՝ որպէսզի մեր օրէնքին հակառակ չհամարուէր, որ գովում է պսակը:

Տասներորդ՝ որովհետեւ դրախտում Ադամը եւ Եւան մերկ էին ու չէին ամաչում, քանզի անմեղ էին: Այդպէս էլ Յովսէփն ու Մարիամն էին մերկ մեղքերից եւ առանց խղճի ամօթի:

Եւ իմանալու է, որ տաճարում տասնչորս տարեկան էր, իսկ երբ Յովսէփը նշանուեց, երեք ամիս անց հրեշտակը աւետիս տուեց: Քրիստոսի համբարձման ժամանակ քառասունութ տարեկան էր: Իսկ երբ փոխադրուեց Քրիստոսի մօտ՝ վաթսունամեայ էր:

ԿՈՅՍԻ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Դ

Հարց. Ո՞րն է Կոյսի սրբութիւնը, որի մասին մարգարէն ասում է. «Սուրբ է քո տաճարը սքանչելի արդարութեամբ»:

Պատասխան. Սրբութիւնը բաժանւում է չորս տեսակի:

Նախ՝ ընդհանուր սրբութիւն, ինչպէս մկրտութեան շնորհն ու խոստովանութիւնն են, եւ ովքեր անցնում են դրանցով, մաքրւում են:

Երկրորդ՝ առանձնայատուկ շնորհներ, ինչպէս Երեմիասի եւ Յովհաննէս Մկրտչի սրբանալն էր դեռ արգանդից, ինչպէս Գիրքն է ասում. «Արգանդից մաքրեցի քեզ» (Երեմ. Ա 5):

Երրորդ՝ կուսութեան շնորհը, որ առանձնայատուկ եղանակ է, ինչպիսին [տրուեց] սուրբ Կոյսին:

Չորրորդ՝ հրեշտակային սրբութիւն, որ երկնային է՝ ամենահաստատունը եւ անդրդուելին:

Հարց. Ինչո՞վ են զանազանւում սրանք:

Պատասխան. Սրանք զանազանւում են իրենց հետեւանքներով:

Առաջինը՝ որ ընդհանուր սրբութիւնն էր մկրտութեամբ, մաքրում է մեղքերը եւ տալիս շնորհներ, սակայն մեղքերի արմատները, որոնք ցանկութիւնն ու մեղանչելու հեշտութիւնն է, մնում են, ինչպէս յայտնի է մկրտուածների [պարագայից], որոնք դարձեալ մեղանչում են:

Երկրորդը՝ արգանդի սրբութիւնը մերժում է մեղքերը եւ ժխտում մահու չափ մեղանչելու դիւրահասութիւնը, ինչպէս Երեմիայի եւ Յովհաննէսի [պարագային էր]:

Երրորդը՝ առանձնայատուկ սրբութիւնը, ինչպիսին սուրբ Կոյսինն էր, վերացնում է առաջին մեղքը, [մեղանչելու] արմատը, մահու չափ եւ ներելի մեղքերի դիւրահասութիւնը:

Եւ իմանալու է, որ թէպէտ ինքնին արգանդի սրբութիւնը մեծ է, քան մկրտութիւնը նրանով, որ վերացնում է մեղանչելու դիւրահասութիւնը, սակայն ըստ ներգործութեան աւելի մեծ է մկրտութեան սրբութիւնը, որովհետեւ դրոշմում է կնիքը եւ բացում արքայութեան դուռը. այլեւ մարդուն նախապատրաստում է բոլոր խորհուրդներին, մի բան, որ չեն կատարւում [վերոնշեալ] երկու առանձնայատուկ շնորհների դէպքում:

Իսկ չորրորդ սրբութիւնը լիակատար շնորհների բարձրակէտն է, որ հրեշտակայինն է՝ բոլորին գերազանցող, որն ունի դրսեւորման երեք ձեւ. նախ բանականի անբաժանելի միաւորութիւնն Աստծոյ հետ: Երկրորդ՝ բանականի ստորին մասերի լիակատար նուաճումը: Երրորդ՝ բովանդակ մարդու անմնացորդ, հանապազօրեայ ներգործական դարձն առ Աստուած, որով մարդը զմայլւում է աստուածային քաղցրութեամբ, ինչպէս հրեշտակներն ամբողջ սրտով, անձով, զօրութեամբ միշտ ներգործաբար դիմում են Աստծուն, եւ իւրաքանչիւրի մէջ ճառագայթում է Աստուած:

Արդ, սուրբ Կոյսն ունէր եւ մկրտութեան ընդհանուր շնորհները, որովհետեւ մկրտութեան խորհուրդն էր նրա՝ ջուր վերցնելը[454], «Սուրբ Հոգին, Բարձրեալի զօրութիւնը» (Ղուկ. Ա 35), Հօր ողջոյնը հրեշտակի միջոցով, որ հերքում էր առոչինչ էր դարձնում մեղքերն ըստ մկրտութեան [կարգի]:

[Կոյսն] ունէր նաեւ արգանդի սրբութեան շնորհը, որովհետեւ մաքրուեց որովայնում արգանդից, որի մասին ասում է Երգ [երգոցը]. «Տէրն արարեց քեզ, հաստատեց քեզ եւ նախապատրաստեց քեզ՝ արգանդից՝ գեղեցիկդ կանանց մէջ» (Երգ Ը 6): Եւ շնորհով արգելք ունէր մահացու եւ ներելի մեղքերի վրայ, ինչպէս Յովհաննէսի եւ Երեմիայի պարագայում էր:

Այլեւ սրանցից բացի ունէր եւ երրորդ սրբութիւնը, որ յատուկ էր իր կուսութեանը՝ սկզբնական մեղքի եւ մեղքերի արմատներից մաքրուելը: Սա հաստատում է Աւետարանը, որն ասում է. «Սուրբ Հոգին կգայ քեզ վրայ» (Ղուկ. Ա 35): Որովհետեւ Սուրբ Հոգու գալը երկու ներգործութեան պատճառով էր, այսինքն մեղքերի արմատները մաքրելու եւ կուսածին զաւակի պտղաբերութեան, ծնելու եւ ծնունդից յետոյ կոյս մնալու, որն ունեցաւ մայրական խնդութիւն՝ կուսութեան պատուով հանդերձ[455]:

Իսկ չորրորդ սրբութիւնը, որ բանականների միաւորումն է Աստծոյ հետ, եւ միշտ ներգործապէս դիմելն Աստծուն,

ինչպէս հրեշտակները, Աստուածածին կոյսն ընդունեց Աստծոյ Որդուն՝ յղանալով եւ ինն ամիս արգանդի տաղաւարում կրելով Աստծոյ Բանին ու զմայլուելով ամբողջ սրտով, անձով, զօրութեամբ, միշտ ներգործապէս դիմելով Աստծուն՝ զօրացաւ:

Եւ նա սրանով գերազանցեց հրեշտակներին, որովհետեւ նրանք գոյաւորման ընթացքում ոչ կարող են բազմանալ, ոչ նուազել, մինչդեռ երանուհի Կոյսը կարողացաւ պտուղ ունենալ եւ չնուազել:

Երկրորդ՝ որովհետեւ հրեշտակները մաքրութիւն ունեն ըստ իրենց տրուած բնութեան, իսկ Աստուածածինն այն պահեց մաքրութեամբ, մարմնով՝ ողջախոհութեան կուսութիւնը:

Երրորդ՝ իսկ որ գերազանց է, քան մնացած ամէն ինչը, պատիւն է Աստծոյ մայրը լինելու:

Այսպէս, նա գերազանց է, քան արարածների վրայ հեղուած շնորհները, այսինքն գերագոյն շնորհը, որ Կոյսին նախապատրաստեց Աստծոյ մայրութեան:

Ուստի պարզ է, թէ ինչպիսին էր Կոյսի սրբութիւնը:

ՀՐԵՇՏԱԿԻ ԱՒԵՏԻՍ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Ե

Հարց. Ինչո՞ւ հրեշտակապետ Գաբրիէլը աւետեց Կոյսին եւ ոչ ուրիշ մարդ:

Պատասխան. Հինգ պատճառով:

Նախ, ծնուողը Աստուած էր լինելու, ուստի աւետողը պէտք է Աստծոյ հրեշտակ լինէր:

Երկրորդ՝ Կոյսին տեսակակից լինելու պատճառով՝ շնորհով Կոյսի մօտ ուղարկեց բնութեամբ կոյսին:

Երրորդ՝ որովհետեւ նորոգումը, որ լինելու էր Կոյսի ծննդաբերութեամբ, ոչ միայն մարդկանց էր վերաբերում, այլեւ հրեշտակներին, ուստի պէտք է հրեշտակը սպասաւորէր Կոյսին:

Չորրորդ՝ որպէսզի բոլորովին անկասկածելի եւ հաւաստի լինի Կոյսի չարից զատուած լինելը, ուստի հրեշտակի միջոցով աւետեց յղիութիւնը եւ ոչ թէ մարդու:

Հինգերորդ՝ որովհետեւ հիւանդութեան պատասխանը դեղն է. ինչպէս սատանան օձի միջոցով խօսեց կոյս Եւայի հետ, այդպէս էլ մեր Տէրը հրեշտակի միջոցով՝ Կոյս Մարիամի հետ, էութիւնն էութեան հետ, ծառան ծառայի հետ, խօսքը խօսքի հետ:

Հարց. Ի՞նչ է նշանակում ողջոյնը, որ ասաց. «Ուրախ եղի՛ր, բերկրեալդ, Տէրը քեզ հետ է» (Ղուկ. Ա 28):

Պատասխան. Ողջոյնը բաղկացած էր բերողից, առաքողից եւ կոյսից, որ ցոյց է տալիս Կոյսի տասը առաւելութիւնները:

Նախ՝ Աստուած էր ողջոյն առաքողը, որ Կոյսին տեղեկացրեց կուսութեամբ հարսնանալու, պտղով կուսաբեր լինելու մասին:

Երկրորդ՝ ողջունաբերը հրեշտակ էր՝ կոյս եւ անապական բնութեամբ:

Երրորդ՝ ողջոյն ստացողը կոյս էր եւ գերազանց բոլոր կոյսերից, ինչպէս ասուեց:

Չորրորդ՝ որովհետեւ «ուրախ եղի՛ր» ասելը, այլ թարգմանութիւններում «ողջ եղի՛ր» է, որ նշանակում է Կոյսի ողջութիւնն ու անմեղ լինելը:

Հինգերորդ՝ նշանակում է շնորհը, որ ասում է՝ «լի շնորհներով»՝ ըստ այլ թարգմանիչների:

Վեցերորդ՝ եւ գերազանց յղիութիւնը՝ «Տէրը քեզ հետ է»:

Եօթներորդ՝ «ուրախ եղի՛ր»-ն ընդդէմ տրտմութեան է, որ ասաց Եւային. «Տրտմութեամբ զաւակ ծնես» (Ծնն. Գ 16): Իսկ ինքն ասում էր. «Ցնծաց իմ հոգին՝ իմ փրկիչ Աստծով» (Ղուկ. Ա 47):

Ութերորդ՝ իսկ որ ասում է. «Տէրը քեզ հետ է» [«Տէրն ընդ քեզ»], այդ «ընդ» բառն ընդունողին է մատնացոյց անում: «Ընդ քեզ», այսինքն ծնունդից յետոյ Տէրը քեզ հետ է լինելու՝ յաւիտեանս յաւիտենից, ինչպէս ասաց աշակերտներին. «Ես ձեզ հետ եմ լինելու բոլոր օրերին» [«Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս»] (Մտթ. ԻԸ 20):

Իններորդ՝ եւ մարգարէների միջոցով չյայտնեց Կոյսի մասին, որ հրեշտակների համեմատութեամբ աղօտ գիտելիքներ ունեն, այլ հրեշտակապետի միջոցով՝ վկայուած եւ աւետուած հաւաստի իմացութեամբ:

Տասներորդ՝ այնքան գերազանց էր Կոյսի պատիւը, որ այն, ինչ գուշակում էին մարգարէները լինելիքի մասին, այնուհետ հրեշտակի խօսելով՝ իրականութիւն դարձաւ:

Հարց. Որքա՞ն են ողջոյնները:

Պատասխան. Երկրի վրայ ընդունուած ողջոյնները հինգն են, որոնք բոլորի համար երկկողմանի են:

Նախ՝ ողջոյն է տրւում՝ ցանկանալով առողջութիւն, ըստ այդմ՝ «Ո՛ղջ եղի՛ր, արքա՛յ» (Մտթ. ԻԷ 29):

Երկրորդ՝ շնորհ են ցանկանում. «Շնորհ ընդ ձեզ» (Հռոմ. Ա 7):

Երրորդ՝ ուրախութիւն են ցանկանում, ինչպէս Տուբիթը. «Խնդութիւն քեզ» (Տուբ. ԺԱ 18):

Չորրորդ՝ օրհնութիւն են մաղթում, ինչպէս Հռութն էր ասում. «Օրհնի քեզ Տէրը» (Հռութ Բ 4):

Հինգերորդ՝ խաղաղութիւն տալը, ըստ այդմ. «Խաղաղութիւն ձեզ, ես եմ, մի՛ երկնչէք» (Ղուկ. ԻԴ 36):

Իսկ այս ողջոյնը բոլորի համադրումն էր, որովհետեւ պարունակում էր եւ ողջութիւն [ցանկանալը], քանի որ ասաց «ողջոյն». ապա ասելով՝ «շնորհներով լի»՝ [ասաց] «շնորհ». «ուրախ եղի՛ր, բերկրեալդ» [ասելով]՝ խնդութիւն, եւ խաղաղութիւն՝ [ասելով] «Տէրը քեզ հետ»: Իսկ օրհնութիւնը Եղիսաբեթի խօսքերի մէջ էր, որ ասաց. «Օրհնեալ ես դու կանանց մէջ» (Ղուկ. Ա 42):

Նաեւ այս ողջոյնը ցոյց է տալիս Կոյսի գերազանցութիւնը՝ բնութեամբ, շնորհներով, փառքով: Բնութեամբ, որ ասում է. «Ողջոյն»: Շնորհով, որ ասում է. «Լի շնորհներով»: Փառքով, որ ասում է. «Օրհնեալ ես դու կանանց մէջ», ինչպէս

ինքն էր ասում. «Այսուհետ ինձ երանի են տալու բոլոր ազգերը» (Ղուկ. Ա 48):

Հարց. Ի՞նչ է նշանակում հրեշտակի պատգամը:

Պատասխան. Հրեշտակի այդ պատգամը վեց բան է մեզ յայտնում:

Նախ՝ թէ ինչպիսի պատուով ողջունեց Կոյսին՝ ասելով. «Ուրախ եղի՛ր, լի շնորհներով»:

Երկրորդ՝ թէ ինչպիսի գնահատանքով գովաբանեց նրան՝ ասելով. «Տէրը քեզ հետ, օրհնեա՛լդ կանանց մէջ» (Ղուկ. Ա 28):

Երրորդ՝ թէ ինչպիսի քաղցրութեամբ գօտեպնդեց նրան՝ ասելով. «Մի՛ երկնչիր, Մարիամ» (Ղուկ. Ա 30):

Չորրորդ՝ թէ ինչպիսի զգուշաւորութեամբ կատարեց պատգամը [ասելով]՝ «Ահա յղիանալու ես եւ ծնես որդի» (Ղուկ. Ա 31):

Հինգերորդ՝ թէ որքան գեղեցիկ մեկնաբանեց յղիութեան եղանակը՝ ասելով. «Սուրբ Հոգին գալու է քեզ վրայ» (Ղուկ. Ա 35):

Վեցերորդ՝ դրեց Ընդհանրական եկեղեցու հաւատի արմատը՝ ասելով. «Քեզնից ծնուողը սուրբ է եւ կոչուելու է Աստծոյ Որդի» (Ղուկ. Ա 35):

ԿՈՅՍԻ ԵՕԹ ԽՕՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Զ

Հարց. Ի՞նչ էին նշանակում Կոյսի պատասխանները:

Պատասխան. Սուրբ Գրքում երկու երկխօսութիւն կայ. Եւայի եւ բանսարկուի, որով ներմուծեց մահը, միւսը՝ Մարիամի եւ հրեշտակի միջեւ, որով եղաւ կեանքը:

Արդ, Կոյս սրբուհին հրեշտակապետի ողջոյնից յետոյ երեք բան կատարեց:

Նախ՝ ընտրողութիւն, որովհետեւ՝ «մտածում էր, թէ ի՞նչ էր նշանակում այդ ողջոյնը»: Երկրորդ՝ քանզի հարց տուեց, թէ «ինչպէ՞ս է կատարուելու դա ինձ հետ»: Երրորդ՝ հաւանութիւն տուեց, որովհետեւ պատասխանեց. «Ահաւա՛սիկ, Տիրոջ աղախինն եմ»:

Այլեւ իմացի՛ր, որ այդ ընտրութիւնը վաղաժամ չէր, ինչպէս Եւայինը (Ծննդ. Գ): Հարցը տալիս չերկբայեց, ինչպէս Զաքարիան (տե՛ս Ղուկ. Ա 18): Եւ լռութեամբ չհամաձայնեց, ինչպէս Սառան (տե՛ս Ծննդ. ԺԸ 12):

Այդպէս էլ իւրաքանչիւր մարդու, երբ բան է ասւում, պէտք է նախ խորհի, ապա հարցնի, յետոյ հաւանութիւն տայ: Խորհի, որ ընտրի ճշմարիտը: Հարցնի ինչպէս լինելը: Եւ հաւանութիւն տայ, այսինքն հնազանդուի եւ սովորի:

Իսկ եթէ առանց ծանրութեթեւ անելու ամէն բանի հաւանութիւն տան՝ կկորչեն, ինչպէս Եւան: Իսկ եթէ բոլորովին չհաւատան եւ համր լինեն, կպատժուեն, ինչպէս Զաքարիան: Ուրեմն ուղիղը եւ բարին միջինն է:

Իսկ սրբուհի կոյս Մարիամի հաւանութեան տալու խօսքերը չորսն էին, որ ցոյց են տալիս նրա չորս առաքինութիւնները.

Նախ՝ «ահաւասիկ» ասելը նշանակում է յօժարակամ հնազանդութիւն:

«Տիրոջ աղախին» նշանակում է կատարեալ խոնարհութիւն: «Թող լինի ինձ»՝ ջերմեռանդ սէրն է յայտնում: «Ըստ քո խօսքի»՝ նշանակում է կատարեալ հաւատը:

Այլեւ յիշի՛ր, որ Սուրբ Գիրքը եօթ խօսք է յիշատակում, որ արտաբերեց Աստուածածին կոյսը: Առաջինը՝ որ ասաց. «Ինչպէ՞ս այդ կպատահի ինձ, եթէ տղամարդ չգիտեմ» (Ղուկ. Ա 34): Երկրորդ՝ «Ահաւասիկ Տիրոջ աղախինն եմ» (Ղուկ. Ա 38): Երրորդ՝ երբ ողջոյն տուեց Եղիսաբեթին (Ղուկ. Ա 40): Չորրորդ՝ «Իմ անձը կփառաւորի Տիրոջը» (Ղուկ. Ա 46): Հինգերորդ՝ «Որդի՛, այս ի՞նչ արեցիր դու մեզ» (Ղուկ. Բ 48): Վեցերորդ՝ «Գինի չունեն» (Յովհ. Բ 3): Եօթներորդ՝ «Ինչ որ ասի ձեզ, կատարէ՛ք» (Յովհ. Բ 5):

Առաջինը նշանակում էր մեծ խոհեմութիւնը:

Երկրորդը՝ խորին խոնարհութիւն:

Երրորդը՝ քաղցր մարդասիրութիւն:

Չորրորդը՝ գոհութեան աղօթք:

Հինգերորդը՝ մեծագոյն սէր:

Վեցերորդը՝ լայնատարած գութ:

Եօթներորդը՝ օգտակար սովորեցնելու մէջ:

Եւ տե՛ս, որ Կոյսի բոլոր խօսքերը կարճ են, իսկ աղօթքն ու գոհութիւնը՝ երկար, եւ պարտաւոր ենք մենք էլ նոյնութեամբ վարուել եւ յատկապէս՝ կանայք:

ԿՈՅՍՆ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ Է
Պրակ է

Հարց. Ինչո՞ւ ենք ասում Աստուածածին:

Պատասխան. Բազում պատճառներով եկեղեցին սուրբ է խոստովանում Աստուածածին Կոյսին:

Նախ՝ Աստուածածին ենք ասում, որովհետեւ նրանից ծնուածը Աստուած էր: Արդ, եթէ ծնուածն Աստուած էր, ուրեմն ծնողը Աստուածածին է եւ հակառակը:

Այլեւ Սուրբ Գիրքն է վկայում եւ ճշմարիտ հաւատն է ստիպում Կոյսից ծնուածին Աստուած խոստովանել, հետեւաբար [նրան] ծնօղը Աստուածածին է:

Երկրորդ՝ Եսայի մարգարէն ասում է. «Կոյսը յղիանալու է եւ ծնելու Էմմանուէլ որդուն» (Ես. է 14), իսկ «Էմմանուէլ» նշանակում է «մարդացեալ Աստուած»: Ուրեմն Էմմանուէլին ծնած Կոյսը մարդացեալ Աստծոյ մայրն էր:

Երրորդ՝ հրեշտակապետն աւետեց Կոյսին, թէ՝ «որ քեզնից ծնուածը սուրբ է եւ Աստծոյ Որդի»: Իսկ եթէ նրանից ծնուողը Աստծոյ որդի էր, ապա ծնօղը ճշմարիտ Աստուածածին էր:

Չորրորդ՝ առաքեալն ասում է Գաղատացւոց [թղթում]. «Աստուած առաքեց իր Որդուն, որ եղաւ կնոջից» (Գաղ. Դ 4): Արդ, եթէ Աստծոյ Որդին եղաւ կնոջ որդի, ուրեմն Կոյսը Աստծոյ Որդու սուրբ մայր է եւ Աստուածածին»:

Նոյնպէս այն, որ ասում է. «Բանը մարմին եղաւ» (Յովհ. Ա 14), որ յայտնի է, որ կնոջից էր, ուրեմն մայր էր մարմնացած Բանի:

Հինգերորդ՝ կնոջ որդի է ասւում նա, ով մարմին է առնում նրանից, թէպէտ հոգին Աստծուց է: Այդպէս էլ Աստծոյ որդին Կոյսի որդին է, որ մարմին առաւ

նրանից, թէեւ աստուածութիւնը Հօրից է: Ուրեմն Կոյսը Աստուածածին էր:

Վեցերորդ, մայր է համարւում նա, ով ծնում է մանուկ, թէեւ հոգին մօրից չէ, այլ մարմնին միաւորուելու պատճառով մարդածին է կոչւում: Այդպէս էլ կոյսը Սուրբ Աստուածածին է՝ աստուածացած մարմնի պատճառով:

Եօթներորդ՝ Եղիսաբեթն ասաց. «Ինձ սա որտեղի՞ց եղաւ, որ ինձ մօտ գայ իմ Տիրոջ մայրը» (Ղուկ. Ա 43), իսկ Տէրը եւ Աստուած նոյնն են: Ուրեմն Կոյսը սուրբ մայրն էր Տիրոջ եւ Աստծոյ:

Ութերորդ՝ հրեշտակն ասաց ծննդեան [օրը]՝ «Այսօր ձեզ փրկիչ ծնուեց, որ օծեալ Տէրն է» (Ղուկ. Բ 11): Արդ, ծնուած Տէրը ծնուել է Կոյսից, ուրեմն Կոյսը Տիրամայր է եւ Աստուածածին:

Իններորդ՝ Աբրահամին ասաց, թէ «քո զաւակով օրհնուելու են բոլոր ազգերը» (Ծննդ. ԻԲ 18): Իսկ առաքեալը ցոյց է տալիս, որ այդ զաւակը Քրիստոսն է, ինչպէս Հռոմայեցւոց [թղթում] ասում է. «Քրիստոս մարմնով հայրերից է, որ բոլորի Աստուածն է» (Հռոմ. Թ 5): Արդ, եթէ Քրիստոս Կոյսի որդին չէ, ուրեմն Աբրահամի Որդին չէ, ոչ էլ հայրերի: Հետեւաբար, Քրիստոս մարմնով Աստուած է, եւ Աստուածածին է ծնողը, եւ մայր է՝ ըստ Քրիստոսի մարմնի:

Տասներորդ՝ յայտնի է ծննդեան հրաշքներով, որովհետեւ անսերմ էր յղացումը, անապական ծնունդը, անխախտ կուսութիւնը: Ուրեմն այսպիսի հրաշքներով ծնուածը Աստուած է, իսկ ծնողը՝ սուրբ Աստուածածին:

Այսքանն այս մասին:

ՄԱՐԴԵՂԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ը

Հարց. Ինչո՞ւ ոչ առաջ կամ յետոյ մարդեղացաւ:

Պատասխան. Այսպէս է պատասխանում եկեղեցու պայծառ ջահը՝ Յովհան Ոսկեբերանը, որ ինչպէս այն, որ բժիշկը հիւանդին դեղ է տալիս՝ ո՛չ ցաւերի սկզբում, ո՛չ էլ շատ յետոյ, որովհետեւ անօգուտ եւ վնասակար կլինի, այլ պատեհ ժամին, որ առողջանայ, այդպէս էլ Բանն Աստուած, եթէ շուտ՝ առաջին իսկ ժամանակաշրջանում մարմնանար, ասենք Նոյի ժամանակ, Աբրահամի կամ Մովսէսի, կրկնակի վնաս կլինէր:

Նախ՝ որ կարիքը չէին ունենայ եւ չէին ցանկանայ: Եւ երկրորդ՝ չէին հաւատայ, որովհետեւ չգիտէին:

Իսկ եթէ շատ յետոյ, վերջին ժամանակաշրջանում [լինէր], կրկնակի պակասութիւն կլինէր:

Նախ՝ որ յուսահատութեան պատճառով կվրիպէին: Երկրորդ՝ հաւատացեալների այնպիսի մեծ քանակ կկորչէր, որ վայել չէր լինի Աստծոյ ամէնիմաց գիտութեանը: Ուստի այն ժամանակ, երբ ցաւը ուժեղացաւ եւ կարիք զգացինք բժշկութեան, եկուորը երեւաց, այսինքն մարդացաւ մարդասէր բժիշկը եւ առողջացրեց կարեվէր խոցուածներիս, ըստ որում՝ ինքն իրեն

աւազակների ձեռքն ընկած հիւանդի բժիշկ էր անուանում, ինչպէս որ ասաց Եսայու բերանով. «Ընդունելու ժամանակ լսելու եմ քեզ, փրկութեան օրը՝ օգնելու» (Ես. ԽԹ 8):

Իսկ ուրիշ վարդապետներ ասում են, թէ Նոյին եւ աւելի առաջ, քան նա, բնական օրէնքներ տուեց, Աբրահամին՝ բանաւոր, իսկ Մովսէսին՝ գրաւոր: Եւ եթէ այն ժամանակ փրկէր, կարծելու էինք, թէ այն օրէնքներով եղաւ փրկութիւնը:

Իսկ երբ թերի դուրս եկան բոլոր օրէնքները եւ չկարողացան փրկել, յետոյ եկաւ ու երեւաց նոյն ինքը՝ օրէնսդիրը եւ փրկեց մեզ, որովհետեւ ոչ թէ օրէնքներից, այլ Քրիստոսի շնորհներից իմացանք արդարութեան եւ մեր փրկութեան մասին:

Ինչպէս Պօղոսն է գրում Գաղատացւոց [թղթում]՝ «Մարդն արդարանում է ոչ թէ օրէնքի գործերով, այլ Քրիստոսին հաւատալով» (Գաղ. Գ 8):

Իսկ մեր վարդապետներն, օրինակ մեծն Ներսէսը, ասում են, թէ վեցերորդ օրն արարեց առաջին Ադամին՝ Տիրոջ պատկերով, որ պատուիրանը խախտելուց յետոյ կործանուեց ոչնչանալու կորստեամբ: Իսկ նոր Ադամը նոյն վեցերորդ դարաշրջանում բարձրացաւ եւ վերականգնեց կորուսեալ պատկերը, նոյն խորհրդաւոր կատարեալ վեցերորդում[456]:

Ընդ որում, առաջին դարը Ադամինն էր, երկրորդը՝ Ենովքինը, երրորդը՝ Նոյինը, չորրորդը՝ Աբրահամինը, հինգերորդը՝ Մովսէսինը, վեցերորդը՝ մեր Փրկչինը՝ Քրիստոսինը: Երբ ծնուեց նա, փրկեց եւ բժշկեց մեզ, ինչպէս ասում է Աստուածահայր Դաւիթը՝ առաքեց իր խօսքը եւ բժշկեց նրանց ու փրկեց նրանց ոչնչացումից:

Ոմանք էլ այսպէս են թուարկում:

Առաջին դարը Ադամից մինչ Նոյն էր, երկրորդը՝ Նոյից մինչ Աբրահամը, երրորդը՝ Աբրահամից մինչ Դաւիթը, չորրորդը՝ Դաւթից մինչ բաբելացիների կողմից գերուելը, հինգերորդը՝ գերութիւնից մինչ Քրիստոս, վեցերորդը՝ Քրիստոսից մինչ աշխարհի աւարտը, եօթներորդը՝ մեռելոց դարաշրջան, ութերորդը՝ յարութեան:

ԲԱՆԻ ՄԱՐԴԵՂԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Թ

Հարց. Ինչո՞ւ Բանը մարմին եղաւ եւ ոչ թէ Հայրը կամ Հոգին:

Պատասխան. Այն, որ Աստուած մարդ եղաւ, ցոյց տրուեց այլ տեղում, իսկ որ Երրորդութեան համագոյակից [անդամներից] մէկը՝ Բանը մարմին եղաւ, ցոյց կտրուի այժմ:

Նախ, անպատշաճ էր, որ Հայրը մարմնանար, որովհետեւ Հայրը անսկիզբ է, իսկ այդ դէպքում ոչ մէկը չէր լինի առանց սկզբի:

Երկրորդ՝ եթէ Սուրբ Հոգին մարմնանար, այդ դէպքում կլինէին երկու որդիներ:

Երրորդ՝ եթէ Հայրը մարմնանար, մէկ կլինէր Հայր եւ Որդի, այդպէս էլ Սուրբ Հոգին՝ որդի եւ հոգի: Ուստի Որդին Որդի

եղաւ, եւ անշփոթ մնացին Երրորդութեան դէմքերը:

Չորրորդ՝ միտքը եւ հոգին չեն երեւում, իսկ խօսքը երեւում է եւ արտաբերւում, մարդիկ տեսնում են ու գրում, այդ պատճառով էլ Խօսքը մարմնացաւ եւ ոչ թէ Հայրը կամ Հոգին:

Հինգերորդ՝ Բանը Հօր էութեան պատկերն է (Եբր. Ա 3), իսկ մարդը պատկերը՝ նմանութեամբ, այդ պատկերով էլ Բանը Աստծոյ պատկեր եղաւ մարդու պատկերով:

Վեցերորդ՝ մարդուն Աստծոյ որդեգիրը դարձնելը բնականօրէն պատշաճում էր Որդուն, որի պատճառով էլ Աստծոյ Որդին մարդու Որդի եղաւ, որ մեզ Աստծոյ որդիներ դարձնի:

Եօթներորդ՝ Բանին էր պատշաճում պատմել Հօր մասին եւ երեւալ մեզ, ինչպէս խորհուած խօսքն է արտաբերւում, բարբառւում եւ գրուելով թղթի վրայ, երեւում եւ շօշափւում:

Ութերորդ՝ որպէսզի այն, ինչ եղաւ գլորման պատճառ, փրկութեան պատճառ դառնայ, որովհետեւ մարդը ձգտեց Աստծոյ գիտութեանը, որ Որդուն էր յատուկ, եւ ընկաւ, ուստի նոյն գիտութեամբ էլ անհրաժեշտ էր ոտքի կանգնեցնել: Այլեւ Հօր իմաստութեանը հարկ էր նորոգել իմաստութիւն խնդրողին, որ մարդն է:

Իններորդ՝ հաստատուն ժառանգութիւն խոստանալու պատճառով, որպէսզի մէկը չասի Հօրը. Տէ՛ր, դու որդի ունես եւ ժառանգ: Ուստի եկաւ Որդին, հաստատեց մեր ժառանգութիւնն՝ ասելով. «Ես ուխտ եմ կապում ձեզ հետ, ինչպէս Հայրը ուխտեց ինձ արքայութիւնը» (Ղուկ. ԻԲ 29):

Տասներորդ՝ որպէսզի Հօր սէրը երեւար առ մեզ. ինչպէս ասում էր Յովհաննէսը. «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչ իսկ տուեց իր միածին որդուն» (Յովհ. Ա 4.9), որ նշանակում է, թէ ուրիշ ոչ մի բարիք էլ չի խնայի, եթէ խնդրենք նրանից: Ինչպէս ասում է առաքեալը. «Եթէ իր որդուն չխնայեց, նրանով հանդերձ ամէն ինչ կշնորհի մեզ» (Հռոմ. Ը 32):

Այսքանը Բանի մարդեղութեան մասին, որ չնայած բազմազան եղանակներով են մեկնաբանում վարդապետները, սակայն մենք համառօտը շարադրեցինք այստեղ:

ԱՐԳԱՆԴԻՑ ԾՆՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Ժ

Հարց. Ինչո՞ւ ծնուեց արգանդից:

Պատասխան. Ասենք, որ բնութեան օրէնքով եւ ոչ օրէնքով Բանի՝ Կոյսի արգանդում յղանալուց յետոյ, համբերելով ինն ամիս եւ հինգ օր, ըստ ընդհանուրի եւ անդրանիկների, ըստ նախաստեղծի հինգ յաւելեալ թուերի եւ նախարարչական թուերի, որից յետոյ ծնուեց նոյն կուսական արգանդից եւ ոչ այլ մասից, [որովհետեւ հակառակ պարագային] չէր լինի որդի ըստ ծնողի բնութեան, ինչպէս [նման] չեղաւ Եւան Ադամին, ուստի ծնուեց արգանդից եւ եղաւ Կոյսի որդի:

Երկրորդ՝ մարդու ոչ մի անդամը զազրելի չէ, այլ բոլորն արդարացիօրէն հաւասար են, եթէ օտարամուտ ոչինչ չունեն:

Երրորդ՝ որովհետեւ Աստծոյ ստեղծածներից մի բան չկայ, ուր գարշում է բնակուել [Աստուած], մանաւանդ կուսութեամբ զարդարուած արգանդում, որովհետեւ նրան, ում ստեղծեց ձեռքով, բնակւում է իրեն ձեռակերտողի տան մէջ:

Չորրորդ՝ որովհետեւ արգանդը առաւելագոյն օգնողն է մեր բնութեան, որ աճով մարտնչում է ընդդէմ մահուան պակասեցրածի, ուրեմն անհրաժեշտ էր, որ Կենաց Բանը ելնէր այն անդամից, որ պատերազմում է մահուան դէմ:

Հինգերորդ՝ որովհետեւ սրբում է մեր բովանդակ բնութիւնը մեղքից՝ սկզբում, միջնամասում, վերջում, որի պատճառով որովայն, կեանք ու մահ է: Ուստի, որպէսզի մաքրի սկզբնական մեղքը, կուսական արգանդից նրան ծնեց Սուրբ Հոգով. ըստ այդմ՝ «եւ արեց մեր մեղքերի սրբութիւնը» (Եբր. Ա 3), համաձայն առաքեալի:

Հարց. Ո՞րն էր յղիութեան հրաշքը:

Պատասխան. [Այդ յղիութեամբ] բնութիւնն իր բազմաթիւ օրէնքների կորուստն ունեցաւ, այսինքն՝ մօր, զաւակի եւ եղանակի տեսանկիւնից, որոնք եղան ոչ թէ բնութեան [ընդունուած] կարգով, այլ ըստ միակ Աստծոյ անպարփակելի զօրութեան կարողութեան:

Արդ, հրաշալի բաները Քրիստոսի մօր մէջ էին, ինչպէս ասում են վարդապետները, որովհետեւ պտղաբերութիւնը եղաւ առանց կնիքի ապականութեան, յղացաւ առանց ծանրութեան, ծնեց առանց երկունքի, որովհետեւ կրեց իր մէջ արեգակի աստղը, ուռը՝ որթին, առուն՝ աղբիւրին, ստեղծուածը՝ ստեղծողին, դուստրը՝ հօրը, որովհետեւ նա եղաւ հօր մայր եւ դուստր զաւակի: Եւ ի վերջոյ փոքր է զաւակից, առաւել փոքր, քան իր պարունակածը: Նա միայն մայր էր եւ կոյս, որ Աստծոյ հետ Որդի ունէր: Եւ զերծ մնաց անէծքից, որովհետեւ անիծուել էին կոյսերն ու ամուսնացածները. կոյսերը, որովհետեւ չծնեցին, ամուսնացածները, որովհետեւ ցաւով ծնեցին: Աստուածածինը չունեցաւ նաեւ երկունքի [ցաւեր], որովհետեւ ծնեց կուսութեամբ եւ ցաւեր չզգաց: Եւ ինչպէս ասուեց, մայրական խնդութեամբ հանդերձ ունեցաւ կուսութեան պատիւ, որովհետեւ ինչպէս հայելին չի բեկւում արեգակի ճառագայթից, այդպէս էլ կուսութիւնը չխախտուեց Բանն Աստծոյ ելումուտով:

Զաւակն էլ օժտուած էր բազմաթիւ հրաշալիքներով, որովհետեւ միաժամանակ ունեցաւ արեան զատուելը, թանձրանալը, ձեւաւորուելը, հոգեւորուելը ու աստուածանալը, եւ սրանք եղան ոչ թէ հաջորդականութեամբ, այլ միանգամից՝ յանկարծ, ժամի նոյն վայրկեանում՝ Սուրբ Հոգու զօրութեամբ, որովհետեւ ակնթարթային է Աստծոյ ներգործութիւնը:

Եւ չնայած կատարեալ, լիարժէք, անթերի էին Քրիստոսի մարմնի մասերը,

սակայն այնքան փոքր, որ հազիւ տեսանելի էր մարդուն: Եւ այն էլ հրաշալիք էր, որ այդ փոքրիկ մարմինն ընդունեց բանական հոգուն՝ նմանուելով քառասնօրեայ մանկանը:

Եւ հենց յղիութեան սկզբում բանական հոգով իմացաւ ամէն ինչ՝ Բանի հետ միաւորուած լինելու մասին:

Եւ կատարեալ էր ի զմայլումն ոչ միայն իբրեւ ճանապարհորդ, այլեւ միշտ եւ յաւիտեան ընդունօղ: Այլեւ զերծ բոլոր մեղքերից եւ լի բոլոր շնորհներով ու առաքինութեամբ, որովհետեւ ըստ Յովհաննէսի՝ «Նրա լիութիւնից մենք ամէնքս շնորհներ առանք» (Յովհ. Ա 16):

Եւ ունէր Հայր՝ երկնքում, Մայր՝ երկրում, իսկ Հայրն այնտեղ առանց Մօր, Մայրն այստեղ առանց Հօր:

Եւ մարդեղութեամբ Տէրը եղաւ ծառայ, յաւիտենականը՝ ժամանակաւոր, անչափելին՝ փոքրիկ, վեհագոյնը՝ ստորին, անպարագրելին՝ ընդգրկելի, պարզը՝ բաղադրեալ, խօսքը՝ թանձրացեալ, անտեսանելին՝ տեսանելի, անշօշափելին՝ շօշափելի, անմահը՝ զոհաբերուած եւ այլն:

Եւ ո՞վ կարող էր խորհել, որ աշխարհը կրօղին կինը կկրէր: Հրեշտակների հացը՝ կկերակրուէր: Նա, որ նստում էր քերովբէների մէջ, մսուրի մէջ կդրուէր: Կապերի արձակօղը՝ խանձարուրում կբարուրուէր: Այլեւ աշխատողների հանգստութիւնը՝ կչարչարուէր, երկնքի զօրութիւնը՝ տկարանայ եւ բոլորի կեանքը՝ մահանայ:

Եւ բազմաթիւ այլ բաներ ասուած սրբերի կողմից:

Այլեւ հրաշալիքներ եղան [յղացման] կերպի տեսակէտից եւս, որովհետեւ Տիրոջ յղացումը չեղաւ տղամարդու սերմից:

Նախ՝ որպէսզի կազմուի Բարձրեալի զօրութեամբ Սուրբ Հոգու կողմից եւ ոչ թէ մարդու միջոցով: Երկրորդ՝ [այնպէս] որպէսզի ապականութիւնը ոչնչացնողի մարմինը ապականութիւն չկրի: Երրորդ՝ որպէսզի ենթակայ չլինի սկզբնական մեղքին:

Նաեւ կնոջ սերմն էլ չեղաւ Քրիստոսի մարմնի նիւթ: Նախ՝ որովհետեւ վայել չէր լինի կոյսի մաքրութեանը: Երկրորդ՝ որովհետեւ անձեռակերտ վէմը հատուեց կուսական լեռան կողմից ըստ Դանիէլի (Դան. Բ 35): Երրորդ՝ որպէսզի ընդհանուր կարգով չլինի, այլ վեր, քան բնական [կարգը], ինչպէս ասուեց:

Ու նաեւ [չեղաւ] մսից կամ ոսկորներից, ինչպէս Եւան՝ կողից, որովհետեւ նախ նա ծնունդ չունէր, երկրորդ՝ ներգործող մասը ամբողջ զօրութեամբ չէր, որի պատճառով ծննդեան նիւթ չէր: Ուստի պատշաճ էր, որ Քրիստոսի մարմնի նիւթը Կոյսի մաքուր արիւնը լինէր, ըստ այդմ՝ «Մանուկները հաղորդուելու են մարմնի եւ արեան, իսկ ինքը կցուելու է նրանց» (Եբր. Բ 14),- ասում է առաքեալը:

Նախ՝ որպէսզի չապականէր կուսական ամբողջութիւնը: Երկրորդ, որովհետեւ զօրութեամբ ունի եւ ներգործող մաս չէ, որի պատճառով Հոգու

զօրութեամբ կազմուած արեան նիւթ պատրաստեց, որով լինէր Քրիստոսի ճշմարիտ մայրը: Եւ սա ժամի վայրկեանի [ընթացքին], ինչպէս ասուեց վերը:

Քրիստոսի նշանների մասին վարդապետներն ասում են նաեւ հետեւեալը.

Նախ՝ անսերմ յղիութիւնը:

Երկրորդ՝ արգանդ մտնելու պահից շնչաւորուելը եւ քառասնօրեայ [մանկան տեսք] ստանալը:

Երրորդ՝ Յովհաննէսի խաղալը [Եղիսաբեթի արգանդում]:

Չորրորդ՝ հովիւների եւ մոգերի գալը:

Հինգերորդ՝ դռնբացէքը՝ քառասուն օրականում տաճար մտնելիս:

Վեցերորդ՝ Սիմէօնի ողջագուրուելը:

Եօթներորդ՝ եգիպտական կառքերի խորտակուելը:

Ութերորդ՝ տասներկու տարեկանում վարդապետելը:

Իններորդ՝ Հոգու իջնելը Յորդանանում եւ Հօր ձայնը:

Տասներորդ՝ փորձչին յաղթելը:

ԹԷ ՔԱՆԻ՞ ԾՆՈՒՆԴ ՈՒՆԵՑԱՒ ՔՐԻՍՏՈՍ Պրակ ԺԱ

Հարց. Քանի՞ եղանակով են ասւում Քրիստոսի ծնունդները:

Պատասխան. Ոմանք եռակի են ասում, այսինքն՝ աստուածային, մարդկային եւ շնորհով:

Առաջինը՝ Հօրից, երկրորդը՝ մօրից, երրորդը՝ սրբերի մտքում: Եւ երեք ծնունդներն էլ ըստ Քրիստոսի երեք գոյաձեւերի են, այսինքն՝ աստուածութինը, մարմինը եւ հոգին, որովհետեւ Հօրից միշտ Աստուած է ծնւում. մօրից մէկ անգամ ծնուեց մարմինը, իսկ մտքով ծնւում է բազմաթիւ անգամ:

Ոմանք չորրորդն էլ են ասում՝ երեքը եղած սկզբից, իսկ չորրորդը Փրկչի ծնունդը:

Առաջին ծնունդը ոչ տղամարդուց եւ ոչ կնոջից, ինչպէս Ադամինը:

Երկրորդը տղամարդուց՝ առանց կնոջ, ինչպէս Եւայինը:

Երրորդը տղամարդուց եւ կնոջից, ինչպէս բոլոր ծնունդները:

Չորրորդը, որ կատարեալն է մնացեալից՝ կնոջից առանց տղամարդու, ինչպէս Քրիստոսի ծնունդն էր Սուրբ Հոգու զօրութեամբ:

Իսկ եկեղեցու վարդապետները ընդհանրացնելով՝ Քրիստոսի վեց ծնունդ են նշում:

Նախ Հօրից ծնուեց Բանն Աստուած առաջ, քան յաւիտենութիւնը՝ անճառելի եւ անպատմելի, ինչպէս ասում է. «Առաջ, քան Արուսեակը, ծնեցի քեզ» (Սղմ. ՃԹ 3):

Երկրորդ ծնունդը՝ Բանի իջնելն էր Կոյսի արգանդը՝ նախքան մօրից ծնուելը, ըստ հրեշտակի՝ «Նա, որ ծնուելու է Կոյսից, Սուրբ Հոգուց է» (հմմտ. Ղուկ. Ա 35):

Երրորդ ծնունդը մօրից էր, ըստ այդմ՝ ծնուեց մարմնով եւ երեւաց մեզ. ըստ հրեշտակի. «Այսօր ձեզ փրկիչ ծնուեց՝ Օծեալ Տէրը» (Ղուկ. Բ 11):

Չորրորդ եղանակով ծնունդ է ասւում մկրտութիւնը, որովհետեւ մեր մէջ օրինադրեց վերստին ծնունդը, ըստ այդմ՝

«Եթէ մէկը նորից չծնուի ջրից եւ Հոգուց, չի մտնի Աստծոյ արքայութիւնը» (Յովհ. Գ 5):

Հինգերորդ ծնունդը յարութիւնն էր գերեզմանից, որովհետեւ ինչպէս կոյսի արգանդից [ծնուեց], այդպէս էլ ծնուեց վէմով կնքուած կոյս գերեզմանից:

Այդպէս էլ հանդերձեալ կեանքի մեր յարութիւնն է կոչւում ծնունդ, ըստ այդմ՝ «Յարութեան որդիներ են եւ հրեշտակներին հաւասար»:

Վեցերորդ շնորհով ծնունդը՝ յաւատացեալների սրտերի մէջ, ըստ Պօղոսի՝ «Եթէ ունէք փորձ ինչ Քրիստոսից, ինձնով կխօսի ձեզ հետ» (Բ Կորնթ. ԺԳ 3): Եւ ինքն ասում էր. «Ով պահում է իմ խօսքը, նա է իմ մայրը»: Եւ Աստուածաբանն ասում է. «Կանա՛յք, կոյս եղէք, որպէսզի լինէք Քրիստոսի մայրը»[457]:

Կան եւ Տիրոջ ծննդեան այլ եղանակներ՝ բաղդատելի Մովսէսի հետ, ինչի մասին խօսել ենք վերը՝ քսաներորդ գլխի քսաներեքերորդ պրակում:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԻԱԾԻՆ Է ՈՐԴԻՆ
Պրակ ԺԲ

Հարց. Ինչպէ՞ս է միածին, որ այսքան ծնունդ ունի:

Պատասխան. Աւետարանն ասում է. «Միածին Որդին, նա պատմեց մեզ» (Յովհ. Ա 18):

Նախ՝ Միածին է ասում, որովհետեւ նա ծնօղին համագոյակից միակ ծնունդն է, ըստ այդմ՝ «Բանն էր ի սկզբանէ առ Աստուած» (Յովհ. Ա 1), իսկ մնացած բոլոր ծնօղները առաջ են, քան ծնուածները:

Երկրորդ՝ որովհետեւ նա է միայն ծնուել Հօրից առանց մօր, ըստ այդմ՝ «Ելայ Հօրից եւ աշխարհի եկայ» (Յովհ. ԺՁ 28):

Երրորդ՝ որովհետեւ նա միակն է Հօրից ծնուած եւ չունի եղբայր: Եւ Հոգին էլ Հօրից է, սակայն բխում է եւ ոչ թէ ծնունդ, ինչպէս ցոյց է տրուել:

Չորրորդ՝ որովհետեւ նա ծնօղից անբաժան միակ ծնունդն է, ըստ այդմ՝ «Բանն էր առ Աստուած» (Յովհ. Ա 1):

Հինգերորդ՝ նա միակ ծնունդն է համահաւասար Հօրը՝ կատարելութեամբ, զօրութեամբ եւ իմաստութեամբ, ըստ այդմ՝ «Ինչպէս Հայրը գիտէ ինձ, ես էլ գիտեմ Հօրը» (Յովհ. Ժ 15):

Վեցերորդ՝ նա միակ ծնունդն է անսկիզբ եւ անժամանակ, ինչպէս ասում է. «Բլուրներից առաջ ծնեց ինձ» (Առակ. Ը 25), եւ «Արեւից առաջ էր նրա անունը» (Սղմ. ՀԱ 17):

Եօթներորդ՝ նա է միակ մշտակայ եւ անդադար ծնունդը, որովհետեւ չսկսուեց ժամանակի մէջ եւ չի դադարի ժամանակի ընթացքին, այլ ինչպէս լոյսը հրից միշտ եւ անընդհատ ծնւում է:

Ութերորդ՝ նա Հօր միակ ծնունդն է եւ երբեք չի հայրանայ, որովհետեւ չունի իրենից ծնուած, ինչպէս նա, որ Հօրից է:

Իններորդ՝ Միածին է ասւում նաեւ մօրից՝ առանց Հօր մարմնով ծնուելու համար, ըստ այդմ հրեշտակն ասաց. «Քեզնից ծնուողը Սուրբ Հոգուց է» (Ղուկ. Ա 35):

Տասներորդ՝ ոմանք ասում են, թէ Քրիստոսի ծննդեան ժամին ուրիշ ոչ մի ծնունդ չեղաւ, մինչ ծնուեց բոլոր ծնունդների երկունքը վերացնողը, որովհետեւ նա էր լինելու բոլոր ծնունդների անդրանիկը:

Հարց. Իսկ ինչպէ՞ս է անդրանիկ. «Ծնեց,- ասում է,- իր անդրանիկ որդուն եւ դրեց մսուրում» (Ղուկ. Բ 7):

Պատասխան. Անդրանիկ անունը երկու իմաստ ունի:

Նախ՝ բազում եղբայրների մէջ է: Երկրորդ՝ աւագն է եւ առաջինը:

Այստեղ իմանալու է, որ ինչպէս Միածին է կոչւում անմարմնաբար եւ ըստ մարմնի, նոյնպէս եւ անդրանիկ ծնունդ է Հօրից:

Եւ իբրեւ առաջին անդրանիկ կոչուեց, երբ եղաւ բազում եղբայրների մէջ՝ լինելով մարդ եւ մարդու որդի:

Այլեւ իբրեւ անդրանիկ ծնուեց մօրից՝ լինելով առաջին ծնունդը եւ, չնայած եղբայր չունէր Կոյսից, սակայն նրա անդրանկութիւնը չի խափանւում:

Իսկ իբրեւ աւագ եւ առաջին անդրանիկ չորս կերպ է ասւում:

Նախ՝ որովհետեւ նա Հօրից է սկսուել եւ մենք՝ եղականներս էլ Հօրից ենք, սակայն երեք տարբերութեամբ: Նախ՝ որ նա առաջ էր, քան յաւիտենութիւնը, իսկ մենք՝ ժամանակի մէջ: Նա ծնունդ էր Հօրից, մենք՝ արարածներ: Նա բնութեան ծնունդ, մենք՝ կամքի:

Երկրորդ՝ անդրանիկ է սրբութեամբ, որ մեղք չգործեց եւ արդարացրեց մեզ:

Երրորդ՝ անդրանիկ է կոչւում ըստ Հոգու շնորհների, որին նախ ընդունեց իբրեւ գլուխ եւ տարածեց իր անդամների մէջ:

Չորրորդ՝ յարութեամբ, ըստ որում՝ «Եղաւ մեռեալների անդրանիկը եւ ննջեցեալների պտուղը» (Կողոս. Ա 18):

Եւ պէտք է այստեղ իմանալ, որ երեք բան յատուկ է միայն մարդացեալ Քրիստոսին եւ մարդկային ազգից ուրիշ ոչ մէկին չի պատշաճում:

Նախ՝ որ ծնուեց սկզբնական արդարութեամբ եւ անսերմ յղացմամբ:

Երկրորդ՝ նա միայն արդարացաւ գործերով. «Որ երեւաց մարմնով, արդարացաւ հոգով» (Ա Տիմ. Գ 16), մինչդեռ բոլորը մեղանչեցին եւ փառքից ընկան ըստ առաքեալի (տե՛ս Հռոմ. Գ 23):

Երրորդ՝ նա միայն ունեցաւ մտքի մաքրութիւն՝ ըստ առաքեալի. «Մենք Քրիստոսի միտքն ունենք» (Ա Կորնթ. Բ 16), մինչդեռ իւրաքանչիւր մարդու միտք հաստատուած է չարի խնամքի մէջ, որի մասին վկայում է Աստուած. «Ո՞վ կարող է պարծենալ, թէ սուրբ միտք ունի» (Առակ. Ի 9),- ասում է Առակը: Իսկ մենք ոչ թէ գործերով, այլ ի Քրիստոս հաւատով ստացանք սկզբնական արդարութիւնը, մարմնի ներգործութիւնը եւ մտքի մաքրութիւնը:

ՅԻՍՈՒՍ Է ԿՈՉՒՈՒՄ ԵՒ ՓՐԿԻՉ
Պրակ ԺԳ

Հարց. Այդպէս կոչուեց ըստ էութեա՞ն, թէ գործով:

Պատասխան. Յիսուս նշանակում է փրկիչ, ինչպէս հրեշտակն ասաց Յովսէփին:

Արդ, ի դէմս Փրկչի՝ փրկիչ է էութեամբ, իսկ յանձինս փրկուածների՝ գործով է [այդպէս կոչւում]:

Հարց. Ինչի՞ց փրկեց մեզ:

Պատասխան. Փրկութիւնն իրագործեց գլխաւորաբար վեց բաներից. համաձայն Յոբի՝ վեց բանից փրկուեցինք նրա միջոցով:

Նախ՝ փրկեց մեղքերից, ըստ այդմ՝ «Նրա անունը Յիսուս է կոչուելու, որովհետեւ նա է փրկելու իր ժողովրդին իրենց մեղքերից» (Մտթ. Ա 21):

Երկրորդ՝ փրկեց օրէնքի անէծքից, ըստ այդմ՝ «Երբ լրացաւ գալու ժամանակը, Աստուած առաքեց իր Որդուն, որ եղաւ կնոջից, ով եկաւ օրէնքներով, որպէսզի նրանք, ովքեր օրէնքի տակ են, փրկուեն» (Գաղ. Դ 4) եւ կամ՝ «Քրիստոս փրկեց մեզ օրէնքի անէծքից» (Գաղ. Գ 13):

Երրորդ՝ փրկեց սատանայի բռնի ծառայութիւնից, ըստ այդմ՝ «Մեզ փրկեց խաւարի իշխանութիւնից եւ տեղափոխեց իր սիրելի Որդու արքայութիւն» (Կողոս. Ա 13):

Չորրորդ՝ փրկեց մահից, ըստ այդմ՝ «Որովհետեւ մանուկները արեանն ու մարմնին են հաղորդուելու, իսկ ինքը կցորդն է լինելու նրանց, քանզի իր մահով խափանելու է այն իշխանութիւնը, որ ունէր մահը, այսինքն սատանային եւ փրկելու է նրանց, ովքեր մահուան երկիւղով վտարանդի ծառայութեան մէջ էին» (Եբր. Բ 15):

Հինգերորդ՝ փրկեց հոգիներին դժոխքի բանտերից, ինչպէս ասում է մարգարէն՝ «Ելաւ բարձունքը, գերեց գերութիւնը, աւար առաւ եւ բաշխեց պարգեւները» (Եփես. Դ 8):

Նաեւ՝ «Նախ կապելու է Հզօրին, ապա աւերելու նրա տունը» (Մտթ. ԺԲ 29):

Վեցերորդ՝ փրկեց կռամոլ դեւերից եւ տարածեց աստուածապաշտ հաւատը, ինչպէս ասում էր յարութիւնից յետոյ՝ «Գնացէ՛ք, մկրտեցէ՛ք բոլոր հեթանոսներին եւ սովորեցրէ՛ք նրանց պահել ամէն ինչ» (Մտթ. ԻԸ 20):

Այսպիսով, վեց բաներից փրկեց մեզ Քրիստոս իր մարդեղանալով:

Իսկ ոմանք աւելացնում են նաեւ ամօթը, տրտմութիւնը, մարմնական ցաւը, որոնցից եւս ազատեց, որովհետեւ արտասուքի տրտմութիւնը մահուան հետ վերացրեց, մարմնական ամօթն ու ցաւը՝ մեղքերի հետ, ինչպէս որ արմատները հանելով՝ ճիւղերը չորանում են:

Այսպիսով, մեզ փրկեց վեց գլխաւոր վշտերից:

Եւ Յիսուս անունը վեց գրից է բաղկացած, որոնք կարող են հետեւեալ բառերի սկզբնատառերը լինել.

Յարազուարճութիւն տրտմողներին.

Իրաւունք սրբերին.

Սրբութիւն երանեալներին.

Ուղղութիւն մոլորեալներին.

Իիւթ անուշ եւ ցանկացողներին փրկութիւն.

Սանդուղք՝ ելնելու երկինք:

ՕԾԵԱԼ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ
Պրակ ԺԴ

Հարց. Ի՞նչ են նշանակում Քրիստոս եւ Օծեալ:

Պատասխան. Մեր լեզուով նշանակում է Օծեալ, յունարէնով՝ Քրիստոս, եբրայերէնով՝ Մեսիա:

Եւ բազում ձեւերով էր օծումը:

Նախ՝ մարմնական օծումը, ինչպէս փափկութիւն սիրողներինը:

Երկրորդ՝ մարտական օծումը, ինչպէս ըմբշամարտիկներինը:

Երրորդ՝ մաքրելու օծումը, ինչպէս հիւանդներինը:

Չորրորդ՝ զմուռով օծումը, ինչպէս ննջեցեալներինը:

Հինգերորդ՝ քահանայական օծումը՝ միջնորդութեան համար:

Վեցերորդ՝ թագաւորական օծումը տիրելու համար:

Եօթներորդ՝ օծումն ըստ զօրութեան, ինչպէս Կիւրոսինն էր, համաձայն Եսայու՝ «Այդպէս է ասում Տէրն իր Օծեալին՝ Կիւրոսին» (Ես. ԽԵ 1):

Ութերորդ՝ օծումը Հոգուց, ինչպէս մարգարէների. «Մի՛ մօտեցէք իմ օծեալին եւ մի՛ մեղանչէք իմ մարգարէների դէմ» (Սղմ. ՃԴ 15):

Իններորդ՝ որդէգրութեան օծումը, ինչպէս մկրտութիւնը:

Տասներորդ՝ որ գերագոյնն է բոլորից՝ ըստ բնութեան միաւորումը, ինչպէս Աստծոյ Բանի եւ մարդկութեան, որի պատճառով կոչւում է Օծեալ եւ Քրիստոս:

Եւ տե՛ս, որ բնութեան միաւորութեամբ է ընկալւում իբրեւ Քրիստոս, ուստի պարզ է, որ եթէ ըստ ոմանց՝ տարանջատուէր, չէր մնայ Քրիստոս:

Եւ պէտք է իմանալ, որ Բանն Աստուած իր տնօրինութեան ժամանակ ունեցաւ օծման բոլոր այս եղանակները:

Մարմնական օծումն ընդունեց պոռնիկ կնոջից, երբ վերջինս իւղի շիշը կոտրեց [ու հեղեց] նրա գլխին Սիմոնի տանը:

Մարտական օծումն ստացաւ, երբ անապատում հոգով մենամարտեց ու յաղթեց հակառակորդին: Իսկ հիւանդների օծումը ցոյց տուեց անձամբ այլոց, երբ աւազակների ձեռքով ընկածին ձէթով ու գինով բժշկեց:

Զմուռսով օծուելը, երբ թաղուեց:

Քահանայութեան օծումը Թաբոր լեռան վրայ էր, որտեղ Սուրբ Հոգին ամպիովանի եղաւ, իսկ Հայրն ուրախութեամբ վկայեց:

Թագաւորական օծումը Մարիամից էր՝ Ղազարի քրոջից, երբ նստեց աւանակի վրայ:

Զօրութեամբ օծումը եղաւ, երբ օծուեց խաչի վրայ, քանդեց հզօրի ամրոցը եւ աւար առաւ:

Սուրբ Հոգու օծումը եղաւ, երբ աղաւնակերպ իջաւ նրա վրայ: Իսկ նրա մկրտութիւնը ոչ թէ մեր որդեգրութեան նման էր, այլ ճշմարիտ որդիութեան

յայտնութիւն՝ Հօր ձայնի վկայութեամբ. «Դա՛ է իմ սիրելի որդին» (Մտթ. Ժէ 5):

Իսկ բնութեամբ միաւորուելու օծումն ընդունեց կուսական արգանդում, որտեղ նրա աստուածութիւնը միախառնուեց մեր բնութեանը, եւ ծնուեց Քրիստոս, որ նշանակում է՝ «Օծեալ»:

Եւ պէտք է իմանալ, որ օծեալը ենթադրում է երեքի՝ օծեալի, օծման եւ օծողի առկայութիւն: Օծողը Հայրն էր: Օծումը որպէս իւղ Սուրբ Հոգով էր. Օծեալը՝ մարմնացեալ Բանը: Ինչպէս մարգարէն է ասում՝ «Քեզ օծեց Աստուած, Աստուած քո՝ ուրախութեան իւղով, առաւել քան քո ընկերներին» (Սղմ. ԽԴ 8):

Եւ յայտնի է, որ հերձուածողներից ոմանք Քրիստոսին օծեալ են ասում առաջ, քան յղացումը: Ինչպէս Արիոսն էր բերում վկայութիւն, թէ՝ «Ո՞վ ելաւ երկինք եւ իջեցրեց Քրիստոսին» (Հռոմ. Ժ 6) եւ կամ՝ «Հայրը սրբեց եւ առաքեց» (Յովհ. Ժ 36):

Ոմանք էլ Կոյսից ծնուելուց յետոյ են ասում Քրիստոսին Օծեալ՝ մկրտութեամբ, վկայաբերելով հետեւեալը, թէ՝ «Յիսուս, որ Նազարեթից էր, որին օծեց Աստուած հոգով եւ զօրութեամբ» (Գործ. Ժ 38):

Որովհետեւ Արիոսը կամենում էր Բանն Աստծուն ցոյց տալ եղական եւ օծման կարօտ: Իսկ Նեստորը ցանկանում էր մարմինն առանձնացնել եւ նրան դաւանել սոսկ մարդ: Եւ այսպէս մտածողներին ու խօսողներին նզովում է ուղղափառների ողջ եկեղեցին, ամէն:

Որովհետեւ եթէ մկրտութիւնից յետոյ օծուեց Քրիստոս, ինչո՞ւ աւետարանեց հրեշտակը, թէ՝ «Այսօր ձեզ Փրկիչ ծնուեց, Օծեալ Տէր»: Եւ ոչ էլ յղացումից առաջ օծուեց, որովհետեւ սրբուելը, առաքուելը, երկնքից իջնելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Բանի մարմին լինելը եւ երեւալը մարմնով:

Մենք այսպէս ենք խոստովանում, որ Բանն Աստուած օծուեց Սուրբ Հոգուց, երբ որովայնում յղացուել էր մեր նմանութեամբ, այդ պահին իջաւ Սուրբ Հոգին անարատ Կոյսի որովայնը, մաքրեց նրան, նրանից կազմեց արիւնը, սրբեց ու օծեց նրան՝ միաւորելով պատկերով:

Այսպէս միաւորութեամբ Բանն Աստուած օծուեց, սրբուեց Հօրից՝ Սուրբ Հոգու միջոցով, որի մասին ասում է. «որ ծնուել է նրանից, Սուրբ Հոգուց է»:

Այսքանը փոքրիշատէ օծման մասին:

ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ժե

Հարց. Որքա՞ն են միաւորութեան եղանակները:

Պատասխան. Միաւորութիւնը բաժանւում է երեք տեսակի. անշաղկապ, շաղկապուած եւ յարադրեալ:

Արդ, անշաղկապ միաւորութիւնն էլ իր հերթին բաժանւում է երեք տեսակի. կամ միաւորւում է էութիւնը էութեան հետ. կամ պատահականը պատահականի հետ. կամ էլ էութիւնը պատահականի հետ: Ըստ որում, էութիւնը պատահականի հետ անշփոթելի է միաւորւում, ինչպէս ասենք որակը եւ քանակը գոյացութեան մէջ, որովհետեւ չեն կարող

տարորոշուել: Իսկ պատահականը պատահականի հետ խառնուելով է միաւորուում, ինչպէս սեւից եւ սպիտակից լինելը: Իսկ երբ էութիւնն է էութեանը միաւորուում, լինում է, որ խառնուելով է, ինչպէս ջուրը գինուն, կամ՝ չորս տարրերը, եւ լինում է, որ անշփոթելի են միաւորուում, ինչպէս հուրը եւ երկաթը, հոգին ու մարմինը, սեռը՝ տեսակի մէջ, տեսակը՝ անհատի:

Շաղկապուած միաւորութիւնը նոյնպէս բաժանուում է երեք տեսակի:

Կան, որ միաւորուողներն էութիւն են, շաղկապումը՝ պատահական, ինչպէս որ իրարից անջատ երկուսը պատահմամբ սիրով շաղկապուում են, ինչպէս ասենք, շրջանի ձեւը եւ նիւթով ընդհանուր գոյնը: Կամ ինչպէս քնարի զանազան հնչիւններն են միաւորուում մի ընդհանուր օդով:

Կան, որ էութիւն են եւ շաղկապուում են դարձեալ էութեամբ, ինչպէս երկու նիւթերը՝ սոսնձով կամ երկաթով:

Եւ յարադրեալ միաւորութիւնն էլ բաժանուում է երեքի, այսինքն՝ ըստ դիրքի, ըստ ժողովման, ըստ կոչման:

Առաջինն ըստ դիրքի, ինչպէս կէտն է, գիծը, մակերեսը, մարմինը: Կամ [ինչպէս] ոսկորը, մկանը, ջիղը, մաշկը՝ համադրուած մէկ մարմնում:

Ըստ ժողովման միաւորութիւն է, ինչպէս եկեղեցին, անձը, թեմը, քաղաքը:

Ըստ կոչման, ինչպէս քրիստոնեաները, մկրտեալները, ծառաները, ստեղծուածները:

Այս ասածներից ոչ մէկը յարմար չի գալիս Փրկչի միաւորութեանը, բացի առաջինի երրորդից, այսինքն էութիւնների անշփոթելի միաւորութիւնը, ինչպիսին է հոգունը եւ մարմնինը, որ առաջիկայում ցոյց կտրուի:

Բայց վարդապետները միաւորութեան հինգ եղանակ են նշում:

Առաջին միաւորութիւնը ստոյգ եւ ճշմարիտ, որ մասնաւորաբար համանիւթ զատորոշուածներն են, որոնց մէջ որեւէ տարանիւթ բան չի երեւում, ինչպէս երկու վառուած ջահերի լոյսի միաւորումն է. կամ երկու ջրերի, երկու հողերի, երկու օդերի միաւորութիւնը. այդպէս էլ միւս համանիւթերի:

Սա ստոյգ եւ ճշմարիտ միաւորութիւնն է:

Այնուհետեւ սովորել ենք երկրորդ միաւորութիւն համարել, թէեւ ոչ ճշմարիտ, որոշ անհամանիւթ նիւթերի միաւորութիւնը, կամ էլ համանիւթ մարմինների յարադրութիւնը, որ սոսկ մակերեսային է:

Երրորդ՝ եւ սրանց թուում միաւորութիւն ենք համարում, երկու հեղուկ նիւթի խառնուրդը՝ տարբեր՝ յատկանիշներով. այս դէպքում խառնուելիս նիւթերից ոչ մէկը իր էական յատկանիշը չի պահպանում, այլ միախառնուելով՝ կորցնում է այն, ինչպէս ջրի, գինու եւ մեղրի խառնուրդը:

Չորրորդ՝ միաւորութիւնը համարում ենք հեղուկ եւ պինդ մարմինների միախառնումը, որի դէպքում ամբող-

ջաբար չեն պահպանւում յատկանիշ-ները:

Եւ սովորեցինք հինգերորդ միաւորութիւն կոչել այն, երբ աննիւթով կերպաւորուած մի նիւթ երեւում է տեսակի մէջ: Եւ կամ՝ աննիւթ եւ անկերպ որեւէ բան նիւթական ձեւաւորում է ստանում, որի մէջ անշփոթ երեւում է իւրաքանչիւրի էութիւնը, ինչպէս գնդացած կամ խորանարդի ձեւ ստացած պղինձը, կամ ինչպէս հուրը՝ գնդի ձեւ ստացած պղնձի հետ:

Այսքանը միաւորութեան մասին:

ՀՈԳՈՒ ԵՒ ՄԱՐՄՆԻ ՄԻԱՒՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԶ

Հարց. Հոգու եւ մարմնի միաւորութիւնը ինչպէ՞ս է նմանւում Քրիստոսին:

Պատասխան. Սուրբ Աթանասը, Կիւրեղը եւ այլոք Հոգու եւ մարմնի միաւորութիւնն ասում են մարմնացեալ Բանի վերաբերեալ, ուստի մենք էլ այդպէս ենք վարւում:

Նախ, ինչպէս մարդը, տարբեր բնութիւնների միաւորումով դառնում է մէկ անձ, մէկ դէմք եւ մէկ բնութիւն, որովհետեւ մէկ ենք ասում մարդուն եւ մէկ՝ նրա բնութեանը, այդպէս էլ տարբեր բնութիւններով Բանը մարմին լինելով՝ եղաւ մէկ անձ ու մէկ դէմք:

Եւ «մէկ է մարմնացած Աստծոյ Բանի բնութիւնը»,- ասում է սուրբ Կիւրեղը: Նոյն կերպ եւ մեզ հետ միասին մէկ բնութիւն է խոստովանում ուղղադաւանների օտար ժողովուրդը, ըստ մեծ Դիոնէսիոսի «Եկեղեցական քահանայապետութեան մասին» գրքի երկրորդ գլխի ուսուցման, որտեղ ասում է՝ «Կատարելապէս եւ անշփոթ մարդասիրութեամբ մեր նմանութեամբ մարդանալով, տեսակ կազմելով ըստ մեր բնութեան՝ եւ մեր տրոհական [բնութիւնը] առանց այլայլութեան մէկ բնութեան մէջ հանդէս բերեց»[458]:

Երկրորդ, ինչպէս ամբողջ հոգին միաւորուած է ողջ մարմնին, եւ մարմնի իւրաքանչիւր մասում կայ ամբողջը, այդպէս էլ Բանն Աստուած ամբողջն է՝ միաւորուած ամբողջին, եւ ամբողջն առկայ է մարմնի իւրաքանչիւր մասում. ըստ առաքեալի՝ «Մարմնապէս նրանում է բնակւում աստուածութեան ողջ լրումը» (Կողոս. Բ 9):

Երրորդ, ինչպէս տարրալուծուածը մարդ չէ, այլ մեռած մարմին կամ մերկ հոգի, այդպէս էլ իրարից զատուած Աստուածը եւ մարդը, ինչպէս ոմանք են անում, Քրիստոս չէ, այլ միայն մարդ, կամ միայն Աստուած:

Չորրորդ՝ իսկ եթէ կոչենք կամ հոգու մասով, կամ մարմնի, ինչպէս որ՝ «Եօթանասունհինգ Հոգիներ մտան Եգիպտոս» (Ծննդ. ԽԶ 27) եւ՝ «Ամէն մի մարմին փրկութիւն է տեսնելու» (Ես. Խ 5), միեւնոյնն է ամբողջ մարդուն նկատի ունենք:

Այդպէս էլ եթէ որեւէ տեղ Քրիստոս միայն մարդ է անուանւում եւ «ճշմարտութիւն խօսող» (հմմտ Յովհ. Ը 45) եւ կամ՝ «կնքեալ Աստուած» (Յովհ. Զ 27), չի նշանակում քանդել միաւորութիւնը՝ նկատի ունենալով միայն մարդուն, կամ

միայն Աստծուն, այլ հաւասարապէս Աստուած եւ մարդ է խոստովանւում:

Հինգերորդ՝ ինչպէս որ զգայական մարմինը միաւորուած բանական հոգուն՝ չէ եւ չի ասւում զգայական, այլ ասւում է բանական մարդ, այդպէս էլ Բանին միաւորուած մարդեղութիւնը չունի մարդկային տգիտութեան նշոյլ անգամ, այլ ամէն ինչ գիտէ աստուածօրէն. ըստ այդմ՝ «Ինչպէս գիտէ Հայրն ինձ, այդպէս էլ ես գիտեմ Հօրը» (Յովհ. Ժ 15):

Վեցերորդ՝ ինչպէս անկենդան մարմինը միաւորուած Հոգուն՝ կենդանի է ասւում, այդպէս էլ Բանի հետ միաւորուած մարմինը կայ եւ միշտ ասւում է կենդանի եւ կենդանարար. ըստ այդմ՝ «Ես կենդանի եմ յանուն իմ Հօր» (Յովհ. Զ 58) եւ՝ «Ով ճաշակի ինձ, նա կապրի յանուն ինձ» (Յովհ. Զ 58):

Եօթներորդ՝ ինչպէս այլայլուող եւ փոփոխական մարմինն անփոփոխ եւ անապական է մնում, քանի դեռ անջատուած չէ Հոգուց, առաւել եւս Բանը մարմին լինելով՝ անփոփոխ եւ անապական է դարձնում մարմինն՝ ըստ մեր բնութեան անբաժանելի միաւորութեամբ: Ըստ այդմ՝ «Ես նոյնն եմ եւ չեմ փոփոխւում» (հմմտ. Մաղ. Գ 6):

Ութերորդ՝ ինչպէս որ հոգու եւ մարմնի միաւորմամբ մէկ կամքից միակ զօրութեամբ առաջ են գալիս հանճարն ու ներգործութիւնը, այդպէս էլ մարդացեալ Բանի ամբողջ տնօրինութիւնը՝ միակ զօրութեամբ եւ կարողութեամբ ըստ կամաւոր միաւորութեան հանդէս է գալիս իբրեւ մէկ գործողութիւն. ըստ այդմ՝ «Այն, ինչ Հայրն է գործում, նոյնը եւ Որդին» (հմմտ. Յովհ. ԺԴ 10): Եւ ինքը «Հնազանդ եղաւ մահուան չափ եւ խաչի մահուան» (Փիլիպ. Բ 8):

Իններորդ՝ մարդու միաւորութիւնը միաժամանակ ե՛ւ անմահ է, ե՛ւ մահկանացու, յաւիտենական եւ ժամանակաւոր, այսինքն՝ հոգի եւ մարմին: Այդպէս էլ Քրիստոսի միաւորութիւնը յաւիտենական է եւ ժամանակաւոր, անմահ եւ մահկանացու, Աստուած եւ մարդ, նոյն ինքը՝ Բանը մարմին եղած:

Տասներորդ՝ եւ ինչպէս մեր միաւորութեան ծննդի պարագային չեն ասւում ծնուած մարմին, այլ ասում են՝ մարդ ծնուեց աշխարհում, նոյնպէս ասւում է՝ այսինչ մարդը չարչարուեց եւ վախճանուեց, որ մասնաւոր մարմինների վերաբերեալ ասուած բաներ է. այդպէս էլ ծնուած Փրկչին մարդացած Աստուած ու ծնօղին Աստուածածին ենք դաւանում, ինչպէս որ չարչարանքն ու մահը խոստովանում ենք մարդացած Աստծոյ, որով փրկուեցինք:

Այսքանն այս մասին:

ՀՈԳՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ժէ

Հարց. Եւ որո՞նք են տարբերութիւնները:

Պատասխան. Ասենք, որ ապացոյցը ամէն ինչով չէ, որ նման է, ապա թէ ոչ՝ կլինէր նոյնը, այս պատճառով է տեսնւում [նաեւ] օրինակի նոյնքան ոչ նման լինելը ճշմարտութեանը:

Նախ՝ որովհետեւ մարդկանց միաւորութիւնը եղականների միաւորութիւնն է միմեանց հետ, իսկ բոլորի Փրկչինը՝ Անեղի [միաւորութիւնը] եղականի հետ:

Երկրորդ՝ որովհետեւ հոգին եւ մարմինը գոյակիցներ են անընդհատական ժամանակի մէջ, իսկ Բանն Աստուած անսկիզբ Հօրից էր, յետոյ՝ սկսուած Կոյսից:

Երրորդ՝ հոգու միաւորութիւնը մարմնի հետ ընդմիշտ չէ, որովհետեւ անջատւում, ապա նորից միանում է: Իսկ Բանն Աստծոյ խորը սիրով միախառնուելը մարմնի հետ անբաժանելի եւ անանջատելի գործերի միաւորութիւն է, որովհետեւ ինչպէս նրա աստուածութեանը սկիզբ չկայ, այդպէս էլ վախճան չունի նրա մարդկութիւնը եւ աստուածութիւնը. «Որովհետեւ Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյնը եւ յաւիտեան» (Եբր. ԺԳ 8):

Չորրորդ՝ միայն մարդուն է յատուկ մէկ միաւորութիւն ունենալը, այսինքն՝ հոգու եւ մարմնի: Իսկ Քրիստոսի մէջ եռակի միաւորութիւն կայ, այսինքն հոգու հետ, հոգու եւ մարմնի, Աստծոյ եւ մարմնի:

Հինգերորդ՝ որովհետեւ հոգու միաւորումը մարմնի հետ գոյութիւն ունի, ըստ էութեան, մարմնում եւ ոչ ուրիշ տեղ, թէեւ մտքով շատ բաներ են տեսանելի: Իսկ մարդեղացած Բանն Աստուած էութեամբ միաւորուած է Հօր հետ՝ բոլոր էակների պահպանութեամբ, շնորհներով բոլոր սրբերի մէջ, բնութեամբ՝ մարմնի հետ:

Վեցերորդ՝ որովհետեւ հոգին ու մարմինը մասին լինելով՝ մի կատարելութիւն են գոյաւորում: Իսկ Բանն Աստուած կատարեալ է ամբողջ մարդեղութեամբ հանդերձ, որն ունի հոգի, մարմին, միտք՝ անշփոթ կատարելութեամբ եւ անբաժանելի ենթակայութեամբ:

Եօթներորդ՝ որովհետեւ բազմացողների մէջ է հոգին միաւորւում մարմնին՝ ըստ Նիւսացու: Իսկ աստուածային անեղական էութիւնն ամբողջապէս պարզ եւ մաքուր է, առաւել քան եղական գոյութեամբ որեւէ իմացական բնութիւն, թէեւ վերջիններս միաւորուած չեն մարմնին:

Ութերորդ՝ որովհետեւ այստեղ հոգու եւ մարմնի միաւորութեան մէջ նրանք զգայակից եւ ախտակից են մէկմէկու՝ լինելով տկար: Մինչդեռ Բանն Աստուած միաւորեալ մարմնով կրում է մեր տկարութիւնները յանուն մեզ՝ համածայն իր բնութեան լինելով ոչ տկար:

Իններորդ՝ հոգին տարբեր կերպ է գործում նման եւ ոչ նման մասերի մէջ, ըստ որում աչքը տեսնում է ու չի լսում, բերանը ճաշակում է եւ չի հոտոտում: Իսկ Քրիստոս համակ աչք եւ ունկ լինելով՝ աստուածաբար ներգործում է Հօր եւ Հոգու հետ:

Տասներորդ՝ թէեւ հոգին ու մարմինը միաւորւում են, սակայն հոգին մարմին, ու մարմինը հոգի չի ասւում: Իսկ Փրկչի՝ բոլորի հետ միաւորութեան մէջ նա կոչուեց անդրանիկ բազում եղբայրների մէջ (տե՛ս Հռոմ. Ը 29), եւ մարդը՝ Հօր միածին, ըստ

այդմ՝ «Միածինը, որ Հօր ծոցում էր, նա պատմեց մեզ» (Յովհ. Ա 18):

Այսքանը հոգու եւ մարմնի զանազանութիւնների մասին:

ԱՆԿԱՏԱՐ ՀԱՍԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԸ

Հարց. Ինչո՞ւ Քրիստոս չծնուեց կատարեալ հասակով, ինչպէս Ադամը:

Պատասխան. Չորս պատճառով:

Նախ՝ որպէսզի անսովոր չթուայ մարդկանց, որովհետեւ եթէ այդ պահին ծնունդով աշխարհ գար երեսնամեայ հասակով, տեսիլք կհամարէին կամ այլ բան:

Երկրորդ՝ որովհետեւ Արարիչը բնական կարգի մէջ մտաւ, ինչպէս մարդ լինելն ու Կոյսից ծնուելը: Ինչպէս նաեւ ընդունեց հասակի ճանաչողութիւնը՝ փոքրութիւնից մինչ մեծութիւն:

Երրորդ՝ որպէսզի վերացնի իւրաքանչիւր հասակի մեղքերը, ինչպէս ծնունդով երկունքը վերացրեց, մահուամբ՝ մահը. այդպէս էլ արդարացրեց մանուկ, երեխայ եւ երիտասարդ հասակները:

Չորրորդ՝ հասակով զարգացաւ ցոյց տալու համար, որ մեր բնութիւնը նուազագոյնից հասնելու է մեծութեան, ապա՝ փառքի:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՉԷՐ ԿԱՐՈՂ ԾԵՐ ԼԻՆԵԼ
Պրակ ԺԹ

Հարց. Եթէ Քրիստոս չխաչուէր, մարմնով կծերանա՞ր:

Պատասխան. Ասենք, որ ոչ՝ հինգ պատճառով:

Նախ՝ որովհետեւ ծեր եւ հնօրեայ Հայրը երեւաց Դանիէլին (տե՛ս Դան. է 22), իսկ Որդին՝ նորաթուխ եւ երիտասարդ հասակով:

Երկրորդ՝ որովհետեւ ծերութիւնը կատարեալ հասակ չէ, այլ դարձ դէպի պակասելը, որովհետեւ մինչ երեսուն տարեկանը աճում են, իսկ դրանից յետոյ՝ նուազում: Իսկ Քրիստոս ոչ մի անկատարութիւն չունէր, այդ թուում եւ՝ ծերութիւն:

Երրորդ՝ որովհետեւ Քրիստոս Ադամի հասակն ունէր, իսկ նախքան մեղանչելը Ադամն էլ չունէր ոչ մի հիւանդութիւն, կամ ծերութեան որեւէ փոփոխութիւն: Եւ մեր Տէրն էլ չէր ունենալու ոչ մի հիւանդութիւն ու ծերութեան փոփոխութիւններ:

Չորրորդ՝ ծերութիւնը եւ մարմնի փոփոխութիւնները յանցանքի [պատճառով տրուած] պատիժ էին, ինչպէս որ ասաց՝ «Փուշ եւ տատասկ թող բուսցնի [երկիրը] քեզ համար» (Ծննդ. Գ 18): Արդ, մեր Տէրը մեղք չգործեց եւ չդատապարտուեց մեղքերի համար:

Հինգերորդ՝ ուրիշներն էլ ասում են, թէ մինչ Աբրահամը չկար ծերունական ալեւորութիւն, որովհետեւ նրանից յետոյ է վկայում Գիրքը, թէ՝ «Ծեր եղաւ եւ օրերով լի» (Ծննդ. ԻԵ 8):

Արդ, եթէ մեր բոլոր նահապետները, որոնք ապրում էին ինը հարիւր տարի կամ աւելի ու պակաս, չէին ծերանում, ապա նոյնը եւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս:

ԹԷ ԻՆՉՈՒ ԱՐՈՒ ԾՆՈՒԵՑ ՔՐԻՍՏՈՍ
Պրակ Ի

Հարց. Ինչո՞ւ Քրիստոս արու ծնուեց:

Պատասխան. Նախ, ըստ վկայութեան, որ ասաց. «Դու իմ որդին ես, եւ ես ծնեցի քեզ» (Սղմ. Բ 8):

Եւ Եսային ասում էր՝ «Յղացուեց Հոգուց եւ արու ծնուեց մարգարէ կնոջից» (Ես. Ը 3):

Երկրորդ՝ քանի որ եղաւ երկրորդ Ադամը եւ վճարեց նրա պարտքերը, ուստի հարկ էր, որ Ադամի սեռից լինէր:

Երրորդ՝ որովհետեւ արուն զօրաւոր է, քան էգը, եւ [քանի որ] նախաստեղծները գահավիժել էին իրենց ցանկասիրութեան պատճառով, անհրաժեշտ էր, որ արու լինէր եւ վերականգնէր նրանց:

Չորրորդ՝ որպէս արու զօրացաւ Տէրը՝ քանդելու բնութեան օրէնքները եւ խզելու կուսութեան ու մայրութեան միջեւ եղած կապը, այսինքն [մինչ այդ] ով մայր էր, կոյս չէր, իսկ ով կոյս էր, մայր չէր. մինչդեռ սրբուհի Աստուածածինը Որդու մայր էր եւ անապական Կոյս, որի պատճառով արու ծնուեց եւ ոչ էգ:

Հինգերորդ՝ Քրիստոս պէտք է լինէր քահանայ եւ յաւիտենական թագաւոր, իսկ էգը չէր կարող քահանայ օծուել ու թագաւոր՝ ո՛չ իբրեւ օրինակ, ո՛չ էլ ճշմարտապէս:

Վեցերորդ՝ անմարմին բնութեամբ էգ չէր կոչւում, այլ արու որդի, իսկ եթէ մարդեղութեամբ էգ լինէր, ապա պէտք է փոխուէր անձն ու սեռը:

Եօթներորդ՝ Սուրբ Գիրքը Բանը կոչում է մարդացեալ, իսկ մարդ անուանումը արական է եւ ոչ թէ իգական, թէեւ բոլորին է վերաբերում:

Ութերորդ՝ մարդկութեան սկիզբը տղամարդուց էր, իսկ կինը՝ նրանից էր, որի պատճառով էլ այր եղաւ[459], որ կարողանար առնել ու փրկել բոլորին:

Իններորդ՝ այնժամ տղամարդկանց համար ոչ ոք չէր լինի միջնորդ եւ բարեխօս, որովհետեւ ծնողը [բարեխօս կլինէր] կանանց համար եւ ծնուածը [նոյնպէս] կանանց: Ուստի այր եղաւ, որ իբրեւ ծնող Աստուածածինը կանանց ցեղի, իսկ նրանից ծնուած Աստուած տղամարդկանց համար [բարեխօս լինէր] եւ բոլորի համար փրկութեան պատճառ:

Տասներորդ՝ Քրիստոս կոչւում է փեսայ, իսկ եկեղեցին հոգեւոր հարս, եւ նա գլուխն է, մենք՝ [նրա] անդամները եւ ժառանգակիցները: Արդ, փեսան էլ, գլուխն էլ, ժառանգն էլ արուի միջոցով են լինում եւ ոչ էգի, որի պատճառով էլ արու ծնուեց:

Այսքանն այս մասին:

[ԹԷ ԻՆՉՈՒ Է] ԳԻՐՔԸ ՁԵՌՔԻՆ ԵՒ ԽԱՉԸ ԳԼԽԻՆ [ՊԱՏԿԵՐՈՒՄ]
Պրակ ԻԱ

Հարց. Ինչո՞ւ են Փրկչին պատկերում գիրքը ձեռքին, խաչը՝ գլխին:

Պատասխան. Վարդապետներն ասում են, որ ինչպէս մարգարէներն ու առաքեալներն են իրենց ձեռքին կրում իրենց քարոզած բաներն իբրեւ Աստծոյ կողմից մարդկանց մօտ ուղարկուած

պատգամաբերներ, այդպէս էլ Փրկիչն իր աւետարանն է պահում ձեռքում:

Եւ այն գալարուած է համաձայն հրէական օրէնքի, որովհետեւ փաթաթուած եւ գալարուած էր նրանց գիրքը, որ նշանակում էր, թէ մարգարէների խորհուրդը ծածկուած եւ թաքուն էր նրանցից:

Այդպէս էլ, եթէ Քրիստոսի մինչ տղայական հասակն է պատկերուած, ապա թուղթը փաթաթուած ձեռքին է, իբրեւ խորհրդանիշ այն բանի, որ հրէաներից ծնուածը ամէն ինչ օրէնքով կատարեց: Իսկ եթէ կատարեալ հասակն են նկարում, ապա քառակողմ են պատկերում աւետարանը՝ ձեռքում եւ գրկում:

Ահա այդպէս էլ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, Կոյսի միջոցով Կենաց Գիրքը տուեց մարդկային ազգին, սակայն յայտնի չդարձաւ գրուածը, մինչ որ խաչով եւ չարչարանքով նախաստեղծների պատրանքների գիրքը չպատռեց, ապա այս մէկը յայտնապէս տուեց:

Իսկ որ գլխին խաչ են նկարում, նախ նշանակում է, թէ նրա տնօրինութեան կատարելութիւնը խաչը եղաւ:

Երկրորդ՝ որ խաչն է մեր Փրկչի փառքը, ըստ այդմ՝ «Դեռ հոգին չկար, քանզի Յիսուս տակաւին փառաւորուած չէր» (Յովհ. է 39), այսինքն դեռ խաչուած չէր:

Երրորդ՝ քանի որ քահանայ եւ թագաւոր է, ուստի թագի եւ խաչի հետ է պատկերւում:

Չորրորդ՝ քանի որ իր կամքով հնազանդուեց խաչին եւ չարչարանքներին, ուստի [խաչը] գլխին է պատկերւում:

Հինգերորդ՝ խորհրդանշում է փշէ պսակը, որ խաչելութեան ժամանակ գլխին էր:

ԱԴԱՄԻ ՁԵՌՔԻ ԳԻՐՔԸ
Պրակ ԻԲ

Հարց. Ո՞րն էր Ադամի ձեռքի գիրը, որ պատռեց Քրիստոս:

Պատասխան. Երկու տեսակ է գիրը, այսինքն կենաց եւ մահու, որովհետեւ բարի գործերով գրւում ենք կենաց գրքի մէջ, իսկ մեղքերով՝ մահուան եւ դատապարտութեան գրքում, ինչպէս այն, որ ասում ենք, թէ՝ Աստուած կջնջի քո յանցանքների գիրը:

Եւ գիրն ու դպրութիւնն էլ երկու տեսակ են. մէկը անջինջ եւ յաւիտենականն է, որ առ Աստուած է, միւսը ժամանակաւորը եւ ջնջելի, որ մեզ մօտ է, որոնք մեր գործերով ու կամքով ենք գրում ու ջնջում՝ չար, թէ բարի:

Այս դպրութիւններն ըստ Դանիէլի, յայտնի են դառնալու վախճանին, ինչպէս գրուած է այստեղ՝ այլ դրուագում, այնտեղ կտեսնես: Իսկ այժմ պատասխանենք հարցին:

Եւ իմանալու է, թէ պարտաւորագիրը երեք տեսակ է լինում:

Նախ՝ Ադամինը, որ ասաց Աստուած. «Այն օրը, որ ուտես դրանից, մահուամբ կմեռնես» (Ծննդ. Բ 17): Եւ Ադամն ասաց կնոջն ու երկրորդեց, եւ կինն էլ՝ օձին, եւ պարտաւորագիրը

եռակի եղաւ: Եւ եթէ պահուէր Աստծոյ պատուիրանը, կլինէր Կենաց դպրութեան գիր, սակայն քանի որ չպահեց, դարձաւ մեղքի եւ դատապարտութեան գիր: Սա իբրեւ ձեռքի գիր ունէր սատանան, որով չարչարում էր մարդկանց, ասելով, թէ Աստուած ասաց՝ մի՛ կեր, իսկ դու կերար ու մեռար. ես ի՞նչ մեղք ունեմ:

Երկրորդը հրէաների ձեռքի գիրն էր, որն ասուեց Մովսէսին Եգիպտոսից դուրս գալու ժամանակ. «Այն, ինչ հրամայի Աստուած, լսէ՛ք եւ կատարէ՛ք»:

Երրորդը քրիստոնեաների ձեռքի գիրը՝ աւազանով, որով հրաժարւում ենք սատանայից եւ դաւանում Քրիստոսին:

Արդ, պարտաւորագիրն Ադամի, որի որդին եղաւ Տէրը, խաչի վրայ իր անմեղ մահուամբ ձեռքերը տարածելով՝ պատռեց, ասելով. «Նա մեղանչեց եւ մեռաւ, ես ի՞նչ մեղք եմ գործել, դու ես պատճառը»: Ուստի Փրկչի պատկերը նկարւում է մի ձեռքին գիրք, միւսին՝ խաչ:

Իսկ հրէաների պարտաւորագիրը նոյնպէս պատռեց Քրիստոս՝ կատարելով Աստծոյ բոլոր օրէնքները: Եւ երբ հաւատում են Քրիստոսին եւ մկրտւում, այդ ժամանակ ջնջւում է նրանց պարտաւորագիրը եւ անէծքը:

Իսկ քրիստոնեաների պարտաւորագիրը, երբ մկրտութիւնից յետոյ մեղանչում ենք եւ պարտագրւում յանցանքների [գրքում], այդ էլ պատռւում է ապաշխարութեամբ, որը սրտի զղջումն է եւ լեզուի խոստովանութիւնը եւ հատուցումը մարմնի գործերով:

Այսքանն այս մասին[460]:

ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ՄԱՍԻՆ[461]
Պրակ ԻԳ

Հարց. Որ այնքան էլ ուշացած չէ. ինչո՞ւ հայ ազգը Քրիստոսի ծննդեան եւ մկրտութեան տօնը նոյն օրն է նշում:

Պատասխան. Սկզբում քրիստոնեայ բոլոր ազգերը՝ սկսած առաքեալներից, այդպէս էլ տօնում էին՝ յունուարի վեցին ծնունդը, նոյն օրն էլ մկրտութիւնն ըստ Աւետարանի վկայութեան, եւ ինչպէս կարգեց Տիրոջ եղբայրը՝ Յակոբոսը՝ Ընթերցուածներում. նոյն օրը երկու տօն:

Նաեւ Աստուածաբանը Քրիստոսի ծննդեան ճառում ասում է. «Այսօր Աստծոյ Յայտնութեան տօնն է»[462]:

Եւ Բարսեղն էլ Քրիստոսի ծննդեան մասին իր ճառում ասում է. «Այս տօնի անունը Աստուածայայտնութիւնն է»[463]: Իսկ Յայտնութիւնն այն է, որ Հայրը վկայեց Որդու մասին, եւ Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ:

Եւ այս ամէնից պարզ է, որ սրբերը ծնունդն ու յայտնութիւնը միասին են տօնել: Յետոյ միայն բաժանուեցին ոմանք Բեթղէհէմի, միւսները Յորդանանի պատճառով, որովհետեւ չէին կարող մէկ օրում երկու ուխտի տօնակատարութիւն անցկացնել, քանի որ [ուխտատեղերը] հեռու էին գտնւում միմեանցից: Այդ պատճառով էլ երուսաղէմացիները փոխեցին [օրը] եւ աստիճանաբար տարածուելով՝ ուրիշ եկեղեցիներ էլ նոյն կերպ վարուեցին:

Իսկ հայաստանեան [եկեղեցիները] ինչպէս սովորել էին սուրբ Գրիգորից, այդպէս էլ անփոփոխ պահեցին այն:

Մի մասն էլ ըստ Արտեմոնի [շարժուեցին], որը ծնունդը տեղափոխեց դեկտեմբերի քսանհինգին՝ ասելով՝ թէ առաքեալները թաքցրել էին մեզնից Փրկչի ծնունդը: Իսկ այս Արտեմոնը առաքեալներից յետոյ էր երկու հարիւր տարուց շատ քիչ պակաս[464]:

Իսկ ուրիշներն էլ ասում են, թէ երեսուն տարի յետոյ էր, եւ իբր սրա մասին է Յովհաննէս աւետարանիչի խօսքերը, որ ասում է. «Մեզնից եղան, որ մեր մէջ չէին»: Եւ բացայայտ ստում են սրանք: Այս տօնը հաստատեցին դեկտեմբերի քսանհինգին Քաղկեդոնի ժողովում՝ պատճառաբանելով, թէ Հռօմում արեւադարձի տօնն են կատարում [այդ օրը], որը Պետրոսը փոխեց Արդարութեան Արեգակի տօնի: Եւ տարբեր պատճառաբանութեամբ փոխեցին առաքեալների կարգած Ծննդեան եւ Տեառնընդառաջի տօնը:

Արդ, ցոյց տանք մեր եւ նրանց տոմարի [տարբերութիւնը]:

Նրանք Յայտնութեան տօնի հաշուարկն այսպէս են կատարում: Սկսում են սեպտեմբերի քսանեօթից, որ համարում են Զաքարիայի պապանձուելու օրը. նոյն օրը՝ Եղիսաբեթի յղիանալու օրը: Այդտեղից մինչ մարտի քսանհինգը համարում են վեց ամիս եւ այդ օրը դնում են Աւետումը: Ապա մարտի քսանհինգից մինչ դեկտեմբերի քսանեօթը համարում են ինն ամիս եւ հինգ օր եւ այդպէս դնում Ծնունդը: Իսկ փետրուարի երկուսին կատարում են Տեառնընդառաջը:

Իսկ մենք այս կերպ ենք հաշւում:

Ինչպէս ասել ենք թշրին մէկը նուիրեալ սուրբ օրն էր Տիրոջ, որ սեպտեմբերի տասնուքն է: Թշրին տասը միշտ Քաւութեան առաջին օրն է, երբ քահանայապետը մտնում էր Սրբութեան սրբոց. այդ օրն էլ եղաւ Զաքարիայի պապանձուելը. թշրին տասը համընկնում է սեպտեմբերի քսանեօթին:

Թշրին տասնհինգը Տաղաւարահարաց տօնի սկիզբն էր, որ հոկտեմբերի երկուսին էր, եւ այդտեղից մինչ թշրին քսաներկուսը, այսինքն՝ հոկտեմբերի ինը, տօնն աւարտւում էր: Իսկ Եղիսաբեթի յղիութիւնը շաբաթ օրն էր, ամսի տասի լուսադէմին, որ թշրին քսաներեքն էր: Այդտեղից մինչ նիսանի տասնեօթը, այսինքն՝ ապրիլի եօթը, դառնում է եօթ ամիս, երբ առաքուեց Գաբրիէլ [հրեշտակապետը] Կոյս Մարիամի մօտ՝ չորեքշաբթի օրը: Այդտեղից էլ մինչ տբէթի քսանմէկը եւ յունուարի վեցը լրանում է ինն ամիս եւ հինգ օրը, երբ ծնուեց Բանն Աստուած՝ հինգշաբթի օրը:

Տեառնընդառաջն էլ կատարւում է փետրուարի տասնչորսին:

Եւ բազմաթիւ վկայութիւններով կարգեր են սահմանուել, որպէսզի աներկբայօրէն ծնունդը տօնենք յունուարի վեցին:

Նախ Ղուկասի աւետարանն ասում է. «Երբ լրացան երկրպագութեան օրերը, Զաքարիան գնաց իր տունը» (Ղուկ. Ա 23): Իսկ երկրպագութեան օրերը տասներկուսն էին. հինգ օրը Քաւութեանը՝ անապատի հորթին պաշտելու

համար, եօթ օրը Տաղաւարահարաց [տօնին]՝ ի յիշատակ քառասուն օր անապատում խորաններով բնակուելու եւ այլ սքանչելիքների, որ տեղի ունեցան այնտեղ: Ուստի տասներկու օր յետոյ կատարում ենք ծնունդը:

Երկրորդ՝ նոյն Ղուկասն ի հաստատումն դրա՝ երկրորդում եւ ասում է. «Այդ օրերից յետոյ յղիացաւ Եղիսաբեթը» (Ղուկ. Ա 24):

Երրորդ՝ հրեշտակապետը Զաքարիային ներկայ ժամանակով չասաց, թէ՝ «Ահա Եղիսաբեթը կյղիանայ եւ որդի կծնի քեզ», ինչպէս որ ասաց՝ «Ահա համր կլինես», կամ Կոյսին թէ՝ «Կյղիանաս», այլ ապառնիով ասաց, թէ՝ «Եղիսաբեթը ծնելու է որդի, եւ նրան կանուանես Յովհաննէս» (Ղուկ. Ա 13):

Չորրորդ՝ երբ վեցերորդ ամսում հրեշտակապետը եկաւ Կոյսի մօտ, ասաց, որ Եղիսաբեթի յղիութիւնը վեցամսեայ է, սակայն աւետիս չտուեց, ըստ այդմ՝ «Եղիսաբեթը, ազգականը քո, ծերութեան հասակում յղի է, եւ հիմա նրա վեցերորդ ամիսն է» (Ղուկ. Ա 36):

Հինգերորդ՝ յայտնի է նաեւ այն բանից, որ հասարակ ժողովուրդը Քաւութեան տօնին եռօրեայ սրբութեամբ մօտենում էր Տաճարի դռանը, որքա՞ն եւս քահանայապետին հարկ էր տասներկու օր խնկով երկրպագել Տաճարի մէջ աղօթքի ժամին, թէեւ տարուայ մէջ մէկ անգամ էր լինում Սրբութեան Սրբոցում: Իսկ եթէ ոչ, ուրեմն սուտ կլինի Աւետարանի վկայութիւնն այն մասին, թէ՝ «Երկու արդարներ Աստծոյ առջեւ էին» (Ղուկ. Ա 6):

Ուրեմն ըստ ձեզ [քահանայապետը] նոյնիսկ ժողովրդին չնմանուեց:

Վեցերորդ՝ անհրաժեշտ էր, որ ժողովրդի նուիրաբերութիւնների մատուցումը երկրպագութեան մէկ օրում կատարուէր, որովհետեւ անկարելի էր ժողովրդին թողնել Տաճարի դռանը մերձենալ անկողիններում, ապա օրէնքով նախատեսուած եռօրեայ սրբութիւնը ստանալ, որ բոլորովին անհնարին էր, չնայած ասում են, այլ քահանայապետ կար, որ պաշտամունքի ծիսակատարութիւնը կատարում էր, սակայն ոչ երեք օրուանը միասին:

Եօթներորդ՝ Աւետարանն ասում է, թէ՝ «Յիսուսը երեսնամեայ եկաւ մկրտութեան» (Ղուկ. Գ 23), որ ճիշտ ծննդեան օրն էր ակնարկում, այլապէս պէտք էր ասել թէ՝ «Յիսուսն իր ծննդեան օրուանից սկսած երեսունմէկամեայ եկաւ մկրտութեան», որովհետեւ թէպէտ տասներկու օրը պակասում է տարուայ թուի մէջ, սակայն տարուայ սկիզբն է, ինչպէս օրինակ, եթէ [շաբաթ] օրից մէկ ժամ էլ անցած է լինում, կիրակի ենք ասում, թէեւ դեռ քսաներեք ժամ պակաս է: Եւ սա բոլոր ազգերին յայտնի է, որ յունուարի վեցին տօնում են մկրտութիւնը, հետեւաբար այդ օրն է նաեւ ծնունդը:

Ութերորդ՝ եթէ հաւատում են, որ չի ստում Աւետարանը, թէ Քրիստոս երեսնամեայ եկաւ մկրտութեան, ուրեմն պարտաւոր են մկրտութիւնը նշել ծննդեան նոյն, իրենց նշուած օրը՝ դեկ-

տեմբերի քսանհինգին, [որի դէպքում] բացարձակ սուտ դուրս կգան:

Իններորդ՝ նոյնիսկ իրենք էլ ասում են, որ յունուարի վեցի ճրագալոյցը մեզ հետ են անում, իսկ ճրագալոյցը ոչ թէ մկրտութեանն է, այլ ծննդեան կէս-գիշերինը:

Տասներորդ՝ մինչ իսկ հռօմէացիք մինչ այսօր յունուարի վեցին երեք տօների յիշատակ են կատարում. նախ՝ ծննդեան, երկրորդ՝ մկրտութեան, երրորդ՝ Կանայում ջուրը գինու փոխելու:

Տասնմէկերորդ՝ յայտնի է եւ նրանց ամիսներից, որովհետեւ նրանց առաջին ամիսը սեպտեմբերն էր, եւ Քրիստոսի ծննդեան պատճառով փոխեցին ու առաջինը դարձրին յունուարը:

Տասներկուերորդ՝ յայտնի է նաեւ ամսուայ անունից, որ կոչւում է «յունուար», իսկ «յունուար» հռոմերէն նշանակում է «ծննդեան ամիս»:

Տասներեքերորդ՝ Տիրոջ Տնօրինութեան ականատեսը՝ նրա եղբայր Յակոբոսը, Ընթերցուածներում կարգեց, որ յունուարի վեցին ծննդեան տօնն է եւ այդ նոյն օրն էլ՝ մկրտութեանը:

Նոյն կերպ եւ Երուսաղէմի Կիւրեղը համակարծիք է նրա հետ: Այդպէս էլ նրանցից օրինակ վերցնելով, Նիկիայի ժողովականները նոյն կարգը հաստատեցին մեզանում, որի աւանդները կրում է հայաստանեայց սուրբ եւ ճշմարիտ աւանդապահ եկեղեցին, ըստ վկայութիւնների, որոնք ստացաւ:

Տասնչորսերորդ՝ նոյնն են հաստատում նաեւ մեծն Գրիգոր Աստուածաբանը եւ սուրբ Բարսեղ Կեսարացին, ինչպէս նշեցինք:

Տասնհինգերորդ՝ յայտնի է նաեւ, որ Տեառնընդառաջի տօնի համար Յուստիանոս կայսրը երեք անգամ Երուսաղէմ առաքեց մեծաքանակ զօրք, որպէսզի քառասնօրեայ գալուստը Տաճար ըստ ծննդի տօնեն եւ ոչ ըստ յայտնութեան, որ յունուարի վեցին է, որը մենք տօնում ենք քառասուն օր յետոյ, փետրուարի տասնչորսին, այն օրը, երբ սքանչելի հրաշքներ եղան. առաջին տարին ջուր բխեց մատուռի սեան մօտ, երկրորդ տարում Աստուածածնի պատկերը երեւաց սեան վրայ՝ քառասնօրեայ մանուկը գրկում, երկուսի ձեռքում էլ բոցագոյն խաչ[465]:

Եւ առաջին տարում Յօստոսն էր Երուսաղէմի հայրապետը, երկրորդում՝ սուրբ Մակարը[466]:

ԹԼՓԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԴ

Հարց. Ինչո՞ւ թլփատուեց [Տէրը]:

Պատասխան. Քրիստոս մեզ համար թլփատուեց եւ ոչ թէ իրեն էր պէտք, քանի որ ո՛չ սկզբնական, ո՛չ էլ ներգործական մեղք ունէր, քանզի անսերմ յղացումից էր եւ Կոյսի մաքրուած արիւնից գոյացած մարդ: Եւ ոչ էլ օրէնք էր դնում մեզ համար, ինչպէս մկրտութիւնը:

Եւ այնուամենայնիւ, թլփատութիւնը բազմաթիւ պատճառներով արուեց:

Նախ՝ որ Աստուած մարդեղացաւ, ուստի պէտք էր ցոյց տալ, որ նա չի

գարշում մարդկանց համար իր դրած օրէնքներից:

Երկրորդ՝ որպէսզի ցոյց տայ իր մարդեղութեան ճշմարտացիութիւնը, եւ ոչ ոք չկարծի, թէ տեսիլք է, ինչպէս նրա շնորհներից զրկուածներն ասացին:

Երրորդ՝ անհրաժեշտ էր անձամբ կատարել իր իսկ դրած օրէնքը, որ հաւատային, որ ինքն է հիմնել:

Չորրորդ՝ որովհետեւ բոլոր սրբութիւնների պատճառն ինքն էր, ուստի անհրաժեշտ էր, որ անձամբ սրբօրէն կատարէր գործերը:

Հինգերորդ՝ որպէսզի չհամարէին Աստծոյ օրէնքներին հակառակ, ինչպէս հրէաներն ու խաչողներն էին ասում. «Այդ մարդը Աստծուց չէ, որովհետեւ շաբաթ օրը չի պահում» (Յովհ. Թ 16):

Վեցերորդ՝ որպէսզի ցոյց տայ, որ ինքն Աբրահամի որդին է, որին թլփատութեան հրաման տրուեց եւ օրհնեալ զաւակի խոստում: Այդպէս էլ Աստծոյ խոստման կատարումը Քրիստոս իրենով ցոյց տուեց:

Եօթներորդ՝ որպէսզի ինքը կրելով թլփատութեան եւ այլ օրէնքների ծանրութիւնը՝ թլփատութեան եւ օրէնքների ծանրութիւնից մեզ ազատի:

Ութերորդ՝ որովհետեւ իր թլփատութեամբ ցոյց էր տալիս, որ հրէաների եղբայրն է, ըստ այդմ՝ «Տէրը նրանց եղբայրներից քեզ նման մի մարգարէ դուրս կբերի» (Բ օր. ԺԸ 18), որպէսզի նրան չմերժէին իբրեւ օտար եւ մարգարէների կողմից չվկայուած:

Իններորդ՝ որպէսզի հայրերի աւետիսը հաստատի, որովհետեւ ճշմարիտ է Աստծոյ աւետած խոստումը: Եւ ինչպէս այս ուխտի աւետիսը կատարեց, այդպէս էլ միւսներն է կատարելու, այսինքն՝ ծառայութիւնից ազատումը եւ արքայութեան խոստումը:

Տասներորդ՝ «Օրէնքների կատարումը Քրիստոսն է» (Հռոմ. Ժ 4),- ասում է առաքեալը: Արդ, հին [օրէնքները] բոլորը կատարեց ու հատուցեց եւ ապա՝ նորի սկիզբը դրեց մկրտութեամբ եւ շնորհներով, որպէսզի ինքը լինի սկիզբը եւ վախճանը՝ ոչ միայն ըստ աստուածութեան, այլեւ ըստ մարդկութեան, ինչպէս ասւում է. «Երբ լրացան ութ օրերը, եկան թլփատելու նրան» (Ղուկ. Բ 21):

Հարց. Ո՞վ թլփատեց Յիսուսին:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ Յովսէփը թլփատեց: Ըստ ուրիշների էլ՝ Յովհաննէսի հայր Զաքարիան:

Եւ այսպէս եղաւ: Զաքարիան Յովսէփի ձեռքերում նրան թլփատեց եւ ոչ թէ հատելով, որովհետեւ անպատշաճ էր նրա մարմնից կամ արիւնից առանձնացնել, այլ՝ ճեղքելով, ինչպէս օրէնք էր անդրանիկներին ոչ թէ հատելով, այլ ճեղքելով [թլփատել], ինչպէս Իսահակի անդրանիկը՝ Եսաւը, կպցնող դեղամիջոցներով առողջացրեց մարմինն իր եւ դարձրեց անթլփատ, որպէսզի չեղեալ դարձնի Աստծոյ ուխտը: Իսկ մեր Տէրը անդրանիկն էր Հօր եւ անդրանիկ էր մօրից, անդրանիկը շնորհների եւ արդարութեան, անդրանիկը մեռեալների յարութեան, ուստի

իբրեւ անդրանիկ կատարեց թլփատութեան օրէնքը:

Եւ այստեղ պէտք է իմանալ, որ թլփատութիւնը լինում է մարմնաւոր եւ հոգեւոր: Եւ ինչպէս մարմնական թլփատութիւնն աւանդեց Աբրահամին, այդպէս էլ հոգեւոր թլփատութիւնը, որ սրտինն է, հրամայեց Մովսէսի միջոցով, ինչպէս Երկրորդ օրինացում է ասում՝ «Թլփատեցէ՛ք ձեր սրտերի խստութիւնը»[467] (Բ օր. Ժ 16):

Եւ Քրիստոս ոչ միայն օրէնքով, այլեւ հոգով թլփատուեց, որովհետեւ վարդապետները Քրիստոսի թլփատութիւնը չորսի են բաժանում:

Նախ նրան թլփատեց հայրը՝ ծննդի ժամանակ աղքատութեան սրով: Երկրորդ՝ նրան թլփատեցին ութերորդ օրը օրէնքի սրով: Երրորդ՝ ինքն իրեն թլփատեց ամբողջ կեանքով խոնարհութեան սրով: Չորրորդ՝ նրան թլփատեցին հրէաները եւ Պիղատոսի զինուորները չարչարանքով եւ խաչելութեան սրով:

Քրիստոս թլփատւում է նաեւ այժմ՝ իր եկեղեցով չորս կերպ:

Նախ՝ բամբասողներով, ովքեր բարեկամներին եւ բարի համբաւն են ի չիք դարձնում:

Երկրորդ՝ յափշտակողներով, ովքեր յափշտակում են ժամանակաւոր բարիքները:

Երրորդ՝ հերետիկոսներով, ովքեր սպանում են հոգին:

Չորրորդ՝ բռնաւորներով, ովքեր սպանում են մարմինը:

ՏԻՐՈՋ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԵ

Հարց. Ինչո՞ւ մկրտուեց Քրիստոսը:

Պատասխան. Քրիստոսի մկրտութիւնն իր կարիքների համար չէր, որովհետեւ ամենամաքուրն ու [ամենա]սուրբն էր բնութեամբ եւ բոլորին մաքրողը:

Վարդապետները, սակայն, բերում են բազմաթիւ պատճառներ:

Նախ՝ որպէսզի յանձն առնի մեզ մաքրելը, ինչպէս [յանձն առաւ] մնացած ողջ տնօրինութիւնը: Երկրորդ՝ որպէսզի խորտակի վիշապի գլուխը ջրում: Երրորդ՝ որպէսզի լուանայ մեղքերը եւ հին Ադամին թաղի ջրում: Չորրորդ՝ որպէսզի մաքրի մկրտողին եւ ջուրը: Հինգերորդ՝ որպէսզի զօրացնի ջուրը՝ մեզ վերստին ծնելու համար: Վեցերորդ՝ որպէսզի կատարի եւ լրացնի օրէնքը: Եօթներորդ՝ որպէսզի օրինակ լինի մեզ՝ մկրտութեան գալիս: Ութերորդ՝ որպէսզի յայտնի այնտեղ Երրորդութեան խորհուրդը: Իններորդ՝ որպէսզի ցոյց տայ մեզ օգտակարութիւնը[468]: Տասներորդ՝ որպէսզի ցոյց տայ իր խոնարհութիւնը:

Արդ, Քրիստոսի խոնարհութիւնը չորս կերպ երեւաց, ինչպէս Աւետարանն է ասում. «Եկաւ Յիսուսը Յորդանան՝ Յովհաննէսի մօտ՝ մկրտուելու նրանից» (Մտթ. Գ 13): Նախ ասում է՝ «Եկաւ Յիսուսը», այսինքն՝ [եկաւ] փրկութիւն տուողը եւ ոչ թէ փրկութեան կարօտը: Երկրորդ՝ «Յորդանան», [այսինքն նա, ով] ստեղծողն էր տարրերի, ինքն իր անձը

խոնարհեց ջրին: Երրորդ՝ «Յովհաննէսի մօտ», այսինքն Տէրը ծառայի մօտ, թագաւորը՝ սպասաւորի, Արեգակն՝ Արուսեակի: Չորրորդ՝ «մկրտուելու նրանից», այսինքն՝ աղբիւրն առուից, լիութիւնը՝ մի կաթիլ ջրից, մաքուրը՝ կաւից սրբուելու, Արեգակն արեգական՝ ճրագից լուսաւորուելու[469]:

Այլեւ մեր մկրտուելու օգտակարութիւնն է երեւում Քրիստոսի մկրտուելով, որովհետեւ աւետարանն ասում է՝ «Երբ մկրտուեց Յիսուս ջրով, իսկոյն ելաւ ջրից, եւ այդ պահին բացուեց երկինքը, եւ Սուրբ Հոգին իբրեւ աղաւնի իջաւ նրա վրայ», եւ Հօր ձայնը [հնչեց], որ ասում էր՝ «Դա՛ է իմ սիրելի որդին» (Մտթ. Գ 16-17):

Նախ՝ որ ասում է՝ «իսկոյն ելաւ ջրից». ամէն ոք, ում մկրտում էր Յովհաննէսը ջրում, խոստովանում էր իր մեղքերը, ապա ելնում, իսկ Քրիստոս մեղքեր չունէր, այդ պատճառով իսկոյն դուրս ելաւ, որով մեզ ցոյց էր տալիս շնորհների հեղումը, այսինքն՝ մկրտուածը ազատւում է մեղքերից եւ իսկոյն ձեռք բերում առաքինութիւն:

Երկրորդը՝ որ ասում է՝ «բացուեց երկինքը», նշանակում էր, թէ մկրտութեան պահին բաց են արքայութեան դռները:

Երրորդ՝ որ ասում է՝ «իջաւ Հոգին նրա վրայ», նշանակում էր, թէ մկրտութեամբ Սուրբ Հոգու տաճար ենք դառնում:

Չորրորդ՝ «Հօր ձայնը» նշանակում է մկրտութեամբ դառնում ենք շնորհով Աստծոյ որդի, ինչպէս ասում է Յովհաննու աւետարանը՝ «Որոնք ո՛չ արիւնից եւ ո՛չ տղամարդու կամքից, այլ Աստծուց ծնուեցին» (Յովհ. Ա 13):

Քրիստոսի մկրտութեան ժամանակ ցոյց տրուեցին նաեւ մեր մկրտութեան մասերը, այսինքն՝ մկրտողը, մկրտուողը, նիւթը, տեսակը եւ նպատակը:

Մկրտողը Յովհաննէսն էր իբրեւ սպասաւոր քահանայ: Մկրտուողը Քրիստոսն էր, որ սրբեց ջուրն ու զօրացրեց՝ մեզ վերածնելու համար: Նիւթը ջուրն էր, որ առաւել յարմար է մկրտութեան համար, քան որեւէ ուրիշ հեղուկ նիւթ: Տեսակը Սուրբ Երրորդութեան կոչը, որ այնտեղ եղաւ, այսինքն՝ Հօր վկայութիւնը, Որդու մարմնացած եւ Սուրբ Հոգու աղաւնակերպ [լինելը]: Իսկ նպատակը հետեւելն էր [նրա] ձայնին, յանուն որի մկրտուեց:

Իսկ Որդու մասին Հօր ձայնը Քրիստոսի գերազանցութիւնն էր ցոյց տալիս: Նախ, որ ասաց՝ «Դա», որ նշանակում է Բանի՝ մարմնի հետ միաւորութիւնը, որովհետեւ չասաց, թէ՝ «որ դրա մէջ է» կամ՝ «դրանք» ըստ բաժանողների [կարծիքի], այլ՝ «դա», որ ցոյց է տալիս բնութեամբ միաւորուած մէկ անձը, որովհետեւ կան անուններ, որոնք բնութիւնն են նշանակում, ինչպէս՝ «մարդ». կան, որ՝ անձը, ինչպէս՝ «Պետրոս»: Եւ կան, որոնք անձն ու բնութիւնն են նշանակում, ինչպէս՝ «դա», «սա», «նա»:

Երկրորդ՝ ասելը՝ «է» նշանակում է մշտնջենաւոր գոյութիւնը, ըստ այդմ՝

«Յիսուս Քրիստոս երէկ, այսօր եւ յաւիտեան» (Եբր. ԺԳ 8):

Երրորդ՝ որ ասում է «որդի», նշանակում է հաւասարութիւնը Հօրը, որովհետեւ Որդին Հօրը հաւասար է ասւում:

Չորրորդ՝ որ ասում է՝ «իմ» ցոյց է տալիս այն, որ Քրիստոս համագոյակից է Հօրը:

Հինգերորդ՝ «սիրելի», ինչպէս այն, որ ասում է. «Հայրը սիրում է Որդուն եւ ամէն ինչ տուել է նրա ձեռքը» (Յովհ. Գ 35):

Վեցերորդ՝ որ ասում է «յօժարեցի», նշանակում է միաւորութիւնը Հօր հետ: Եւ յօժարութիւն է նաեւ միաւորուած կամքը, այսինքն՝ Սուրբ Հոգով իջայ մարմին առած Որդու մէջ:

Հարց. Քանի՞սն են մկրտութեան եղանակները:

Պատասխան. Վարդապետների ասելով՝ ութը:

Առաջին մկրտութիւնը ջրհեղեղն էր, որ կտրեց-մաքրեց աշխարհի մեղքերը:

Երկրորդ մկրտութիւնը ջրով եւ ամպով եղաւ Մովսէսի ժամանակ, ըստ Պօղոսի՝ «Հայրերը մեր ամպով եւ ծովով մկրտուեցին» (Ա Կորնթ. Ժ 2), որտեղ ամպը՝ Հոգու, իսկ ծովը ջրի օրինակն էր:

Երրորդ օրինակը, երբ բոլոր անմաքուրները ջրով լուացուելով մաքրւում էին, ապա հանդերձները ողողում, յետոյ մտնում բանակ եւ խոստովանութեան ջրի աւազանը:

Չորրորդը Յովհաննէսի մկրտութիւնն էր ապաշխարելու համար, որ կարողանան [յետոյ] ընդունել Հոգու մկրտութիւնը, այդ պատճառով էլ նախակարապետ էր եւ մաքրում էր ջրով:

Հինգերորդը Տիրոջ մկրտութիւնն էր, այն, որով մկրտուեց ինքը, եւ մկրտւում ենք մենք՝ Տիրոջ կատարեալ մկրտութեամբ, ջրով եւ հոգով:

Այլեւ հրով մկրտիչ է ասում Քրիստոս, ըստ այդմ՝ «Յովհաննէսը մկրտեց ջրով, դուք կմկրտուէք Սուրբ Հոգով եւ հրով, սրանից ոչ շատ օրեր յետոյ» (Գործք Ա 5), որով նկատի ունէր այն, որ Սուրբ Հոգու շնորհները հրեղէն լեզուով սփռեց առաքեալների մէջ (տե՛ս Գործք Բ 4):

Վեցերորդ մկրտութիւն է ապաշխարութիւնը՝ արցունքները եւ տաժանելի չարչարանքները:

Եօթներորդը [մկրտութիւնն է]՝ արեամբ եւ նահատակութեամբը, որով մկրտուեց ինքը՝ Քրիստոսը, յանուն մեզ, որ չափազանց գովելի ու երանելի է, քան նախորդները:

Ութերորդը [լինելու] է աշխարհի վախճանին, այն, որ կատարուելու է ոչ թէ փրկութեան, այլ բոլոր չարութիւնները տանջանքների միջոցով ջնջելու համար, ինչը լինելու է անշէջ կրակով: Եւ այս կրակով իմացուելու է, որ Քրիստոսի գալստեամբ ոմանց ներելի մեղքերին մաքրութիւն է լինելու եւ առաւել պայծառութիւն է լինելու նրանց, ովքեր շինել են ոսկի, արծաթ եւ մեծագին ակնեղէն, իսկ ովքեր ծեղակոյտ են խմբել՝ փայտ, խոտ, եղեգ, այրուելու են անշէջ հրով:

Հարց. Քրիստոսի եւ Յովհաննէսի մկրտութիւնները ինչո՞վ են նմանւում եւ զանազանւում:

Պատասխան. Նման են ջրի նիւթով եւ ընկղմելու ձեւով:

Զանազանւում են՝ նախ՝ ձեւով, որովհետեւ Յովհաննէսի մկրտութիւնն արւում էր նրա անունով, որ դեռ գալու էր, իսկ Քրիստոսինը յանուն Երրորդութեան էր:

Երկրորդ՝ հետեւանքներով, որովհետեւ Քրիստոսի մկրտութիւնը արդարացնում եւ երկնքի դուռն էր բացում, իսկ Յովհաննէսինը՝ ոչ:

Երրորդ՝ աւարտով, որովհետեւ Յովհաննէսինը ունէր Քրիստոսի մկրտութեամբ կարգաւորումը, որովհետեւ դրանով էր ուսուցանւելու ժողովրդին, որ կատարեալ մկրտութիւն էր:

Հարց. Ի՞նչ էր նշանակում՝ «Վիշապի գլուխը ջախջախեց Յորդանանում» (հմմտ. Յոբ ԻԶ 13),- ինչպէս ասում է Յոբը:

Պատասխան Ադամին խաբողը օձ էր, իսկ Յորդանանինը՝ վիշապ, որովհետեւ օձը ժամանակի ընթացքում վիշապ է դառնում:

Եւ օձը երկրի երեսին է լինում, իսկ վիշապը՝ խորքերում եւ անդունդներում:

Վիշապը չարաթոյն է, քան օձը:

Եւ գլուխը Յորդանանում ջախջախեց, իսկ պոչը՝ գերեզմանում եւ դժոխքում՝ վերացնելով ապականութիւնն ու մահը, կործանելով նրան եւ ազատելով հոգիները:

Պոչն այն էր, որ աստղերի երրորդ մասին իր կողմը քաշեց եւ այն է, որ ասաց առաքեալներին. «Ոտնակոխ անել օձերին եւ կարիճներին» (Ղուկ. Ժ 19). օձի գլուխը մեղքն է, կարիճի խայթոցը՝ մահը:

Եւ վիշապը բնաւորուել էր Յորդանանում, ինչպէս Յոբն է ասում՝ «Բեհմովթը ննջում է խոնաւ տեղերում եւ ջուրը կլանում է ակնախոռոչներում» (հմմտ. Յոբ Խ 18-19), այսինքն՝ ախտաւոր ցանկութիւններում, իսկ սկզբնական մեղքը ցանկասիրութեան միջոցով է տարածւում:

Եւ իր մկրտութեամբ Քրիստոս մաքրեց ջուրը ու դարձրեց սրբութեան եւ կեանքի նիւթ:

Այժմ էլ մենք ենք մկրտութեան ջրով ջախջախում գլուխը, այսինքն՝ սկզբնական մեղքը, իսկ այլ առաքինութիւններով ոտնակոխ անելով՝ ճզմում ենք խայթը, որ ներգործական մեղքն է, հոգու մահը եւ դժոխքը:

Այսքանն այս մասին:

ԽԱՉԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԶ

Յիշի՛ր, որ չարչարանքների մասին ասուել է վերը՝ տասնմէկերորդ պրակում Գրիգոր Աստուածաբանն ընդդէմ Արիոսի [գրութեան մէջ]:

Իսկ այժմ խաչի մասին նախ պէտք է իմանալ, որ Քրիստոսի չարչարանքը եօթ մոլորեցնող մեղքերի դէմ է եւ վերացնօղն է [նրանց]. գլխի խոնարհելը Ամբարտաւանութեան, բազուկների տարածելը՝

Նախանձի, որ խորհրդանշում է սիրով գրկում ընդունելը, մեղմ պատասխանելը՝ Բարկութեանը, չարչարանքներին ընդառաջ գնալը՝ Ցուլութեանը, բազմաբաշխ լինելը՝ Ագահութեանը, քանի որ իր մարմինը տուեց ճաշակելու, իսկ իր արիւնն՝ ըմպելու, հոգին իբրեւ գին, կողի ջուրը լուացուելու համար, հանդերձները խաչողներին, մարմինը՝ աշակերտներին, Մօրը՝ Յովհաննէսին: Քացախն ու լեղին խմելով՝ Որկրամոլութեանը, կողերի խոցմամբ՝ Բղջախոհութեանը:

Քրիստոսի այս չարչարանքների մէջ իմացի՛ր նաեւ ութ քաղցրութիւններ:

Առաջին՝ գլխի խոնարհելը համբոյրի եւ ի նշան մեր հաշտութեան էր:

Երկրորդ՝ բազուկների տարածելը՝ գիրկը բացելը եւ մեղքերից դարձածներին ընդունելը:

Երրորդ՝ կողի բացուելն ի նշան ամենաթանկ գնով մեզ փրկելու:

Չորրորդ՝ արեան եւ ջրի դուրս հորդելը մեզ լուանալու եւ խմեցնելու համար:

Հինգերորդ՝ ոտքերի եւ ձեռքերի գամուելը մեզ միշտ իր մտքում յիշելն է, ըստ այնմ՝ «Քեզ գրեցի իմ ձեռքում»:

Վեցերորդ՝ մարմնի մերկ լինելը ի նշան մեր խոստովանութեան, որպէսզի միշտ ազատ լինենք [մեղքերից]:

Եօթներորդ՝ խաչը կրելը ի նշան նրանով մեզ հետեւելուն:

Ութերորդ՝ փշէ պսակով թագադրուելն ի նշան մեր փառաւորութեան:

Դարձեալ ձեռքերի տարածումը՝ թշնամիներին մերժելն ու հերքելն էր, այլեւ նրա իշխանութեան արտաքսումը, ըստ այդմ՝ «Այժմ աշխարհի այս իշխանն արտաքսուելու է» (Յովհ. ԺԲ 31): Այլեւ դիւապաշտների պատճառով հեռացածներին իր մօտ ժողովելը. նաեւ իր գրկում մեղքերով չարչրկուածներին հանգիստ տալը, ըստ այդմ՝ «Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ» (Մտթ. ԺԱ 28):

Հարց. Ի՞նչ նշաններ եղան խաչելութեան ժամանակ:

Պատասխան. Վեց: Նախ երկրաշարժ եղաւ: Երկրորդ՝ ժայռերը ճեղքուեցին: Երրորդ՝ բացուեցին գերեզմանները: Չորրորդ՝ պատռուեց վարագոյրը: Հինգերորդ՝ խաւարեցին լուսատուները: Վեցերորդ՝ ջուր եւ արիւն բխեցին կողից:

Հարց. Որո՞նք էին խաւարման նշանները:

Պատասխան. Չորսը:

Նախ լուսինը, որ տասնչորսօրեայ էր, ներքին կիսագնդից բարձրացաւ վերին կիսագունդ եւ ծգուեց արեգակի վրայ: Երկրորդ՝ անցաւ վեց կենդանակերպերով, որ տասնհինգօրեայ ճանապարհ էր՝ Կոյսից մինչ Խոյը: Երրորդ՝ երեք ժամ արեգակի հետ ընթացաւ եւ խաւարեցրեց նրան մինչ ժամը ինը: Չորրորդ՝ ժամը իններից մինչ երեկոյ վերադարձաւ իր տեղը:

Իսկ արեգակի խաւարելը խորհրդանշում էր բոլոր հրէաների կոյր լինելը: Նշանակում է նաեւ եկեղեցու մէջ գտնուող բոլոր նիւթապաշտների կուրութիւնը: Նշանակում էր Քրիստոսի մահը. Արեգակն Արդարութեան կամեցաւ

թաքնուել իր մարմնի մէջ, որպէսզի մեզ լուսաւորի: Դարձեալ ցոյց էր տալիս այն ժամանակների խաւարումը, եթէ գուցէ հնար լինէր՝ մոլորուել ընտրեալներին:

Հարց. Ինչո՞ւ եղան այս հրաշքները:

Պատասխան. Նախ, որպէսզի ճանաչեն, որ անարգուածը Արարիչն էր սրանց, ուստի խաւարեցին լուսատուները, օդը, երկինքը, ջուր բխեց կողից, երկրաշարժ եղաւ:

Երկրորդ՝ ի յանդիմանութիւն խաչողների, որովհետեւ լուսատուները տեսնելով իրենց Տիրոջը մերկացած, պատկառեցին եւ խաւարը քող դարձրեցին, որպէսզի անարժանները չտեսնեն:

Եւ նրա ձայնից ժայռերը պատռուելով եւ երկիրը շարժուելով՝ տեղ տուեցին իրենց մէջ, սակայն նրանց քարացած սրտերը չշարժուեցին:

Եւ բացուեցին գերեզմանները, որովհետեւ ննջեցեալները կարօտ էին նրան, իսկ նրանք փակեցին իրենց սրտերի գերեզմանները:

Եւ պատռուեց վարագոյրը, որովհետեւ փեսայի անարգուելու պատճառով հարսը պատռեց իր քողը, եւ կողը աղբիւր բխեց, սակայն նրանք դարձեալ չարտասուեցին ու դարձան արեան պարտապաններ, [որի համար] վճարելու են:

Իսկ ամօթը քառակի էր:

Նախ, որովհետեւ երեւելի մէկն էր եւ ոչ թէ անարգ մէկը, որ ոչ շատ առաջ փառքով մտաւ քաղաք: Երկրորդ՝ որովհետեւ թագաւորական քաղաքի բարձունքում էր: Երրորդ՝ ծանօթների եւ սիրելիների մէջ էր: Չորրորդ՝ որովհետեւ Զատկի տօնի ժամանակ էր՝ բազում ժողովրդի մէջ:

Առաջինն ի դէմս իրեն էր, երկրորդը՝ տեղի համար, երրորդը՝ ժամանակի, չորրորդն ի դէմս ականատեսների: Եւ այս չորս պատճառով ամօթը սաստիկ էր: Իսկ հինգերորդը՝ չարագործ աւազակներին հաւասարեցուեց: Վեցերորդ՝ որովհետեւ անարգ մահ էր խաչելը:

Եւ այս ամէնը կրեց յանուն մեզ:

Այլեւ ասում են վարդապետները ամբարշտի մօտ ծաղկւում է գթութիւնը. յիմարի մօտ ծաղրի է ենթարկւում իմաստութիւնը. ստի մօտ մեռնում է ճշմարտութիւնը. անօրէնի մօտ դատապարտւում արդարութիւնը. անողորմի մօտ տանջւում ողորմութիւնը. թշուառականի մօտ մերժւում է երջանկութիւնը. քացախն ու լեղին խեղդում են քաղցրութիւնը. մահուան պատճառով մեռնում է կեանքը:

Եւ յանուն մեր հիւանդութեան Քրիստոս վերցրեց դեղը եւ բժշկեց մեզ՝ քառասնօրեայ ծոմի պահքով, քրտինքով, երբ այն հոսեց երկիր, կտրուած երակով, երբ գամեցին եւ գեղարդով խոցեցին. ըմպելով, երբ խմեցրին լեղու հետ խառնած քացախը, սպեղանիով, երբ նրա երեսը թքով պատեցին, օշարակի գաւաթով, երբ իր մարմինն ու արիւնը տուեց աշակերտներին՝ ընթրիքից յետոյ:

Այլեւ պէտք է իմանալ, որ ամէն մի զոհաբերութեան մէջ կայ մատուցող, ընդունող եւ զոհ: Եւ սրանք բաժանւում

են չորսի, որովհետեւ կայ, որ մատուցողը առաւել է զոհից, ինչպէս հին օրէնքի զոհաբերութիւնների [ժամանակ], որովհետեւ [զոհը] անասուն էր: Կայ, որ զոհն է առաւել մատուցողից, ինչպէս նոր օրէնքում Քրիստոսի մարմինն առաւել է, քան մատուցողը: Կայ, որ մատուցողն է առաւել, քան ընդունողը, ինչպէս Մելքիսեդեկը Աբրահամից, կամ ինչպէս քահանան է առաւել, քան ժողովուրդը, որ ճաշակում է:

Իսկ չորրորդը մեր Տիրոջ՝ Քրիստոսի, զոհաբերութիւնն էր, որի ժամանակ ի դէմս մի անձի դրսեւորուեցին զոհաբերութեան երեք կողմերը, այսինքն՝ [հաւասարապէս] մեծ էին մատուցողը, ընդունողը, զոհը՝ նոր պատարագ, նոր քահանայ եւ նոր եղանակ: Նախ որովհետեւ Աստուած Աստծոյ պատարագուեց:

Երկրորդ՝ որովհետեւ ինքն իրեն պատարագեց:

Երրորդ՝ եւ ընդունեց դարձեալ ինքը, ընդ որում տնօրինութեամբ մարդ լինելով՝ պատարագեց [ինքն] իրեն, իսկ Հօր եւ Հոգու հետ աստուածութեամբ ընդունեց ինքն իրեն:

Հարց. Եթէ Հայրը մատնեց Որդուն, ըստ այդմ՝ «Ով չխնայեց իր Որդուն, իսկ այլ յանուն մեզ բոլորիս մատնեց նրան» (Հռոմ. Ը 32), այլեւ [ինքն իրեն] մատնեց Որդին՝ «Մատնեց իր անձը մեզ» (Գաղատ. Բ 20),- ասում է առաքեալը, ապա ո՞րն է Յուդայի մեղքը:

Պատասխան. Հայրը նրան մատնեց սիրելու պատճառով, Որդին մատնեց իր անձը մեր փրկութեան համար, իսկ Յուդան մատնեց ագահութեան պատճառով:

Հարց. Ինչո՞ւ կամեցաւ փայտի վրայ խաչուել ու մեռնել:

Պատասխան. Որպէսզի նրան, ով յաղթեց փայտով, յաղթի եւ փրկի նրան, ով փայտով պարտուեց:

Հարց. Ի՞նչ արդիւնք ունեցաւ Քրիստոսի մահը:

Պատասխան. Ադամի յանցանքը երեք հարուած էր հասցրել [մարդու] բնութեանը:

Նախ՝ որ դատապարտուեց մահուան:

Երկրորդ՝ որ անհաշտ թշնամութիւն մտաւ Հայր Աստծոյ եւ մարդու միջեւ:

Երրորդ՝ որովհետեւ վերցուեց շնորհների հոգին:

Արդ, Բանն Աստուած մարդանալով՝ անմեղ պահեց բնական կրքերը, իսկ ներգործական կրքերով «հնազանդ եղաւ Հօրը՝ մահու չափ եւ խաչի մահուան» (Փիլիպ. Բ 8), որովհետեւ իր անմեղ մարմինը ինքնակամ պատարագեց յանուն մեզ:

Եւ երեք կողմ ունէր Քրիստոսի մահը. մեռնելը, անմեղ մեռնելը եւ ինքնակամ մեռնելը:

Եւ ինքնակամ մեռնելով՝ դատապարտեց մահը: Անմեղ մահով Հայր Աստծուն հաշտեցրեց մարդկանց հետ: Իսկ Որդու մահուան պատճառով Հայրը Սուրբ Հոգի պարգեւեց մարդկանց:

Հարց. Մարդկային ազգը գերուել էր սատանայից, ինչո՞ւ Քրիստոս արեան գինը Հօրը տուեց:

Պատասխան. Չնայած մարդը գերուել էր սատանայից, սակայն նրան գերութեան յանձնեց Հայրը, երբ պատժեց նրան, ինչպէս օրինակ թագաւորը հրամայում է դահճին բանտ նստեցնել մահապարտին, դարձեալ երբ աղերսում են նոյն թագաւորին, եւ նա հրամայում է ազատ արձակել բանտից:

Այդ պատճառով էլ մեր Տէրը արեան գինը Հօրը տուեց, չնայած մարդիկ գերուել էին սատանայից եւ նա չարչարում էր մարդկանց[470]:

Հարց. Որո՞նք էին եօթ խօսքերը, որ ասաց խաչի վրայ:

Պատասխան. Առաջինը՝ «Հայր, ների՛ր սրանց» (Ղուկ. ԻԳ 34):

Երկրորդ՝ «Այսօր ինձ հետ դրախտում ես լինելու» (Ղուկ. ԻԳ 43):

Երրորդ՝ «Կի՛ն, ահա քո որդին» (Յովհ. ԺԹ 26):

Չորրորդ՝ «Ծարաւ եմ» (Յովհ. ԺԹ 28):

Հինգերորդ՝ «Էլի՛, էլի՛ լա՞մա սաֆաքթանի» (Մտթ. ԻԷ 46):

Վեցերորդ՝ «Քո ձեռքն եմ յանձնում իմ հոգին» (Ղուկ. ԻԳ 46):

Եօթներորդ՝ «Ամէն ինչ կատարուած է» (Յովհ. ԺԹ 30):

Առաջինը ուսուցանում էր թողնել մեր դէմ արուող անիրաւութիւնները: Երկրորդով՝ ունկնդիր լինելու աղաչանքին: Երրորդով՝ պատուել ծնողներին: Չորրորդով՝ ցանկանալ մեր փրկութիւնը: Հինգերորդով՝ աղերսել Աստծուն նեղութեան ժամանակ: Վեցերորդը՝ մեր բոլոր հոգսերը թողնել Աստծոյ [յոյսին]: Եօթներորդը՝ աւարտել մեր կեանքը պատշաճ վախճանով:

Եւ եօթ տեղից բխեց Քրիստոսի արիւնը. առաջինը թլփատութեան ժամանակ: Ապա քրտինքի հետ արեան շիթ հորդեց: Եւ կողից, երկու ձեռքերից ու ոտքերից:

Հարց. Չարչարանքի ժամանակ քանի՞ տեղ յոյժ անարգուեց Քրիստոս:

Պատասխան. Եօթ տեղ շատ անարգուեց:

Նախ՝ անարգուեց պարտէզում արեան քրտինքից յետոյ, երբ մատնուեց Յուդայից, ձերբակալուեց իբրեւ աւազակ եւ շղթայուեց:

Երկրորդ՝ կապուած տարուեց Աննայի տուն, ապտակուեց ծառայից, ապա Պետրոսը երեք անգամ ուրացաւ:

Երրորդ՝ կապուած տարուեց Կայիափայի տունը, որտեղ թքեցին երեսին, եւ մնաց հսկողութեան տակ մինչ յաջորդ օրը:

Չորրորդ՝ Պիղատոսի ապարանքում, որտեղ տարուեց իբրեւ չարագործ:

Հինգերորդ՝ երբ տարուեց Հերովդեսի մօտ՝ հրէաներից յոյժ չարախօսուելով եւ իբրեւ նախատինք կրելով սպիտակ հանդերձներ:

Վեցերորդ՝ երբ նորից տարուեց Պիղատոսի մօտ եւ այնտեղ պահանջեցին խաչի վրայ բարձրացնել՝ դարձեալ ձաղկուելով եւ թքի ենթարկուելով, ապա դատապարտուեց խաչելութեան:

Եօթներորդ՝ տարուեց կառափնարան եւ այնտեղ խաչուեց:

Արդ Պիղատոսի ապարանքը մէկ վայր հաշուելով, չնայած երկու անգամ եղաւ այնտեղ, խաչելութեան տեղի հետ կլինի վեց, իսկ գերեզմանի հետ, որտեղ թաղուեց՝ եօթ:

Հարց. Ի՞նչ էր խորհրդանշում քառաթեւ խաչը՝ երկար, խոր, լայն, բարձր:

Պատասխան. Նախ, Քրիստոսի տարբեր զօրութիւններն էր ցոյց տալիս, որ ժամանակ առ ժամանակ մեծ բաներ էր գործում, երբեմն էլ իրեն պահում էր նուաստագոյնս:

Երկրորդ՝ ցոյց էր տալիս Աստծոյ խնամածութիւնը մեր հանդէպ. երկարութիւնը՝ աստուածային Գթութիւնը. լայնութիւնը՝ աստուածային Բարութիւնը. խորութիւնը՝ աստուածային Իմաստութիւնը. բարձրութիւնը՝ աստուածային Իշխանութիւնը:

Երրորդ՝ դրանով ցոյց է տալիս եւ պարգեւում մեզ յուսոյ Բարձրութիւնը, հաւատի Խորութիւնը, այն, որ յոյժ իմաստուն եւ խոնարհ է, հոգեւոր սիրոյ Լայնութիւնը եւ աստուածային շնորհի Երկարութիւնը:

Չորրորդ՝ իսկ խաչի չորս թեւերը նշանակում են Քրիստոսի չորս բարերարութիւնները. վերին թեւը երկնքի արքայութեան բացուելն է նշանակում, ներքեւինը՝ դժոխքի աւերումը, աջը՝ շնորհների բաշխումը, ձախը՝ մեղքերի թողութիւնը:

Հինգերորդ՝ խորհրդանշում են չորս առաքինութիւնները, որ պարտաւոր է կրելու իւրաքանչիւր մարդ, այսինքն վերին թեւը ցոյց է տալիս սէրը, ներքեւինը՝ խոնարհութիւնը, աջը՝ հնազանդութիւնը, ձախը՝ համբերութիւնը:

Վեցերորդ՝ խորհրդանշում էր դրախտից մեր ընկնելը, եւ այն, որ աջ էինք եւ դարձանք ձախ:

Եօթներորդ՝ գլուխը եւ պատուանդանը խորհրդանշում էին աստուածութեան եւ մարդկութեան միաւորումը Քրիստոսով, որ խաչուած էր նրան. աջը՝ արդարների շնորհները, ձախը՝ մեղաւորների պատուհասը: Աջը նաեւ՝ մարդկանց փրկութիւնը, ձախը՝ դեւերի սաստումը:

Ութերորդ՝ նշանակում է նրանով փրկուածների չորս տարբեր [խմբերը], այսինքն՝ երկնայինները, երկրայինները, ողջերը, մեռեալները:

Իններորդ՝ ցոյց էին տալիս մեր չորս խորհուրդները. վերին թեւը՝ միշտ խորհելը վերինի մասին, որտեղ նստում է Քրիստոս (տե՛ս Կողոս. Գ 1-2), ներքեւինը՝ կեանքի աւարտը, աջը եւ ձախը՝ դատաստանի ընտրութիւնը. աջակողմեանների փառքը, ձախակողմեանների պատիժը:

Տասներորդ՝ նշանակում են մեր չորս առաքինութիւնները. վերեւինը՝ խոհեմութիւնն ու համեստ խօսքը, իբրեւ աղով համեմուած, ներքեւինը արի եւ զուսպ վարքը՝ համբերութեամբ շահելու հոգիներ, աջը՝ արդարութիւն բոլորի եւ Աստծոյ օրէնքների նկատմամբ, ձախը՝ անձի ողջախոհ եւ սուրբ կեանք ունենալը:

Դարձեալ խաչի չորս թեւերը նշանակում են փրկութիւնը եւ հոգու լոյսը, որոնք աշխարհի չորս կողմերում գտնուող հաւատացեալներն են: Այլեւ [նշանակում են] մարմնի մեղքերից ըստ չորս նիւթերի ազատուելը: Այլեւ չորս զգայութիւնների մաքրութիւնն՝ ըստ չորս տարրերի: Իսկ չորս թեւերի [հատման] կէտը՝ զգայութիւնների եւ մտքի խառնուելը: Այլեւ մարդու չորս հասակներում զգայական երկիւղը՝ մանկութեան [ժամանակ], երիտասարդ տարիներին, տարեց հասակում եւ ծերութեան ժամանակ:

Այլեւ օրէնքի չորս կարգերի քառակի կատարումը. բնականը, որ Ադամի ժամանակ էր, բանաւորը՝ Աբրահամի, գրաւորը՝ Մովսէսի, իսկ չորրորդը՝ Աւետարանը՝ խաչի միջոցով:

Քառաթեւ խաչը նշանակում է նաեւ Եզեկիէլի քառադէմ կառքը՝ վրան բազմած Տէրը (Եզեկ. Ա 5-28): Այլեւ Յակոբի [տեսած] սանդուղքը, եւ Տէրը հաստատուած նրա վրայ (տե՛ս Ծննդ. ԻԸ 12): Նաեւ աղիւսաձեւ շափիւղեայ ակը՝ նրա ոտքերի տակ:

Այլեւ ձեռքերի տարածելը՝ [ինչպէս] Մովսէսի Ամաղէկի դէմ[471] (տե՛ս Ելք ԺԷ 8-16): Այլեւ Նոյեան տապանը, Մովսէսի տապանակը եւ նրա վրայ՝ Քաւութիւնը. ողջակէզի սեղանը, Սրբութեան եւ խնկի սեղանները, այլեւ բոլոր քառանկիւնները խորհրդանշում են Յիսուսի քառաթեւ խաչը:

Խաչաձեւ են նաեւ աշխարհի չորս կողմերը՝ արեւելքը, արեւմուտքը, հիւսիսը, հարաւը: Չորսն են նաեւ բոլոր մարմինների տարրեղէն սկզբունքները: Խաչաձեւ է նաեւ մարդը՝ գլուխը տարրեղէն կենդանիների: Խաչաձեւ են թռչում նաեւ թռչունները, որոնք [խորհրդանշում են] տեսական միտքը՝ երկու կողմ պարզած երկու թեւերով: Խաչաձեւ է ընթանում նաեւ նաւը ջրի վրայ, երբ քամին ուռեցնում է առագաստը, կամ թիակները պարզած, երբ հասնում են նաւահանգիստ, ինչպէս որ լինելու է այն ժամանակ, երբ մարդիկ երկու թեւերով հասնեն յաւիտենական կեանքի փառքին:

Եւ պատշաճում էր, որ մեր փրկութիւնը լինէր փայտի միջոցով, որ խորհրդանշում էր դրախտում գտնուող Կենաց ծառը, այլեւ Նոյեան տապանը ջրերի վրայ, այլեւ՝ էշին բարձած փայտն Իսահակի, այլեւ սաբեկի ծառը, որից կախուած էր խոյը, այլեւ Յակոբի ցուպը Յորդանանն անցնելիս եւ յիշատակուած սանդուղքը: Այլեւ աւազանում դրուած սեւ եւ սպիտակ պատերով փայտը (տե՛ս Ծննդ. Լ 32-39): Նաեւ Յուդայի գաւազանը՝ գրաւականը՝ Թամարի մօտ (տե՛ս Ծննդ. ԼԸ): Այլեւ հրաշագործ գաւազանը Մովսէսի ձեռքում: Եւ փայտը, որով քաղցրացրեց ջուրը Մեռայում եւ վէմից ջուր բխեցրեց (տե՛ս Ելք ԺԵ 23-25): Այլեւ Ահարոնի գաւազանը, որ ծաղկեց (տե՛ս Թիւ ԺԷ): Եւ սիւնը, որի վրայ պղնձէ օձը բարձրացուեց (տե՛ս Թիւ ԻԱ 9): Եւ ճիւղը, որի վրայ [խաղողի] ողկոյզը բերեցին (տե՛ս Թիւ ԺԳ 24): Այլեւ Յեսուի գայիսոնը (տե՛ս Յեսու Ը): Ռահաբ պոռնիկի նշանը

(տե՛ս Յեսու Զ): Այլեւ Յայելի ձեռքի ցիցը, որ խրեց Սիսարի ծնոտի մէջ (տե՛ս Դատ. Դ, Ե): Այլեւ հրեշտակի ձեռքի գաւազանը, որ ընդունեց Գեդէոնի զոհաբերութիւնը (տե՛ս Դատ. Զ 21): Այլեւ Դաւթի հովուական ցուպը, որով գնաց Գողիաթի դէմ: Այլեւ Եղիսէի գաւազանը: Նաեւ այն փայտը, որով երկաթը հանեց Յորդանանից:

Նոյն խաչն է, որի մասին գրուած է. «Եկէ՛ք փայտ գցենք նրա հացի մէջ»[472] (Երեմ. ԺԱ 19): Իսկ Սողոմոնը՝ «Արդարութեան պտղից կենաց ծառն է աճում» (Առակ. ԺԱ 30): Իսկ Իմաստութեան գրքում [ասւում է]. «Օրհնեալ է փայտը, որով արդարութիւն է լինում» (Իմաստ. ԺԴ 7):

Այսքանը Սուրբ Խաչի իմաստների մասին:

Հարց. Ի՞նչ են ցոյց տալիս խաչի չորս մասերը:

Պատասխան. Վարդապետներն ասում են, թէ բունը վերեւից ներքեւ կիպարից էր: Խոտորնակը՝ արմաւենուց: Թեւից թեւ եւ պատուանդանը՝ նոճուց: Վերնագիր տախտակը՝ ձիթենուց:

Արդ, կիպարին անուշահոտ վարսերն է նշանակում, արմաւենին՝ արդարութեան պտուղը, նոճին՝ խոկման վեհութիւնը, ձիթենին՝ ողորմութեան փափկութիւնը:

Հարց. Խաչը քանի՞ ծայր ունի:

Պատասխան. Ոմանք ասում են՝ չորս եւ թուարկում են. Ատուր, Թատուր, Գատուր, Սատնատուր: Իսկ խաչի վրայ ինը բեւեռներ էին հաշուում հետեւեալ կերպ. երկուսը ոտքերին, երկուսը ձեռքերին, մէկը ուսի վրայ, մէկը խաչի թեւին, մէկը Պիղատոսի տախտակին, երկուսը այն տախտակին, որ պատուանդան էր եւ ոտքերի վրայինը:

Հարց. Ո՞րն էր դրախտը, որ խոստացաւ աւազակին:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ Քրիստոսի հոգին աւանդելու ժամանակ աւազակը մտաւ երկրային դրախտ, որտեղից դուրս էր արուել Ադամը, սակայն սա հաւանական չէ, որովհետեւ այնտեղ մտաւ մարմնով յարութիւն առնելուց յետոյ:

Ոմանք էլ ասում են, թէ երկրաւոր դրախտ մտաւ հոգով՝ մինչ կիրակի կէսգիշեր եւ նոյն ժամին իջաւ դժոխք՝ ազատելով հոգիներին՝ յարութիւն առաւ գերեզմանից:

Սակայն սա էլ թէական է, որովհետեւ Պետրոսն ասում է, թէ քարոզում էր, որ բազում ժամերում է լինում, եւ որքան տարի քարոզեց [Տէրը] երկրի վրայ, նոյնքան ժամ էլ [մնաց] դժոխքում հոգիների մօտ:

Ուրիշներն էլ ասում են, թէ «դրախտ» անուանում էր Աստծուն տեսնելը, որին հոգին աւանդելուց յետոյ տեսաւ աւազակը: Եւ ճշմարիտը սա է, որովհետեւ չասաց, թէ՝ «կլինենք», այլ ասաց՝ «կլինես»:

Աջից խաչուած աւազակի անունը Դէմաս էր, ձախինը՝ Կոստաս:

Ոմանք էլ ասում են, թէ աջակողմեան աւազակը հեթանոսներից էր, ձախինը՝ հրէայ:

Նրան ապտակ տուողի անունը Մաղքոս էր, թքողինը՝ Ոչքոր, լեղի տուողինը՝ Ռաքոս, խոցողինը՝ Ղունկիանոս, որի մի աչքը ասում են կոյր էր, եւ խոցեց, որ [Քրիստոս] սուտ մահացած չձեւանայ: Նա խոցեց տէգով, ու ջուր եւ արիւն բխեցին, որ ցայտեց նրա աչքին, որն սկսեց տեսնել, ինչպէս որ գրուած է. «Տեսաւ եւ հաւատաց» (Յովհ. Ի 8):

Իսկ սամարուհի կնոջ անունը Լուսինա էր, արիւնահոսող կնոջ անունը՝ Փոտինա: Քանանուհունը՝ Վերինէ, անդամալոյծինը՝ էնիա: Դպիրինը Նիկոմիկոս, ներքինիինը, որին Փիլիպպոսը մկրտեց, Փոթամոս էր. հարաւի թագուհունը՝ Նըսա:

Այսքանն այս մասին[473]:

Հարց. Ինչո՞վ են զանազանւում Քրիստոսի եւ բոլոր մարդկանց մահերը:

Պատասխան. Պէտք է իմանալ, որ առհասարակ մահը մարդկային բնութեան համար պարտադիր է կրելը, որովհետեւ իւրաքանչիւր ոք, ով ծնւում է, պէտք է մեռնի:

Եւ այնուամենայնիւ, տարբերութիւն կայ նախաստեղծ մարդու, մեր Տէր Քրիստոսի մահուան եւ առհասարակ մարդկային ցեղի մահուան միջեւ:

Նախ, որովհետեւ Ադամի մահը ներգործական էր, մերը՝ բնական, Քրիստոսինը՝ յանձն առնուած:

Բացի այդ, Ադամի մահը պատժողական էր, Քրիստոսինը՝ կամաւոր, մերը՝ անհրաժեշտ:

Նաեւ՝ Ադամի մահը իր պատիժն էր, Քրիստոսինը՝ պատիժ ուրիշներին, իսկ մերը՝ պատիժ մեզ եւ ուրիշներին, որովհետեւ մեր եւ Ադամի պատճառով ենք մահանում:

Բացի այդ, Ադամի մահը բնութիւն ներմուծեց մահը, Քրիստոսի մահը քանդեց մահը եւ վերացրեց այն, մերը ո՛չ ներմուծել է, ո՛չ էլ վերացնում:

Սրանք էին երեք մահերի՝ Ադամի, Քրիստոսի եւ մարդկային ազգի, տարբերութիւնները:

Եւ իմանալու է, որ կան բնական եւ օտարամուտ կրքեր:

Բնական են քաղցը, ծարաւը, քնելը, աշխատելը եւ այլն: Եւ սրանք բնական էին ասւում նաեւ մինչ դրախտում յանցանք գործելը, եւ Ադամը սրանք բնականօրէն կրում էր: Սրանք անդատապարտելի կրքեր են, որոնք գործեց նաեւ Քրիստոս, որովհետեւ իր կողմից էին ստեղծուել:

Իսկ օտարամուտ կրքերը երեքն են. մեղքը, մահը, քայքայումը:

Մեղքը գործն է, մահը՝ պատիժը, ոչնչանալը՝ պատժի հետեւանքը:

Մեղքը Ադամը գործեց: Պատիժը Աստուած տուեց, իսկ քայքայումը՝ բանսարկու սատանան:

Եւ սրանք դարձեալ այսպէս են տարբերում. մեղքը առաջին սկիզբն է՝ սկզբնաւորուած Ադամի անձնիշխան կամքից, իսկ քայքայումը՝ վերջին, որ հետեւանքն է բանսարկուի հնարամտութեան: Իսկ միջին պատուհասը՝ մահը, Աստուած տուեց:

Արդ, երկու ծայրերը՝ մեղքը եւ քայքայումը, պարզորոշ եւ ամենեւին չար

են՝ անուամբ եւ էութեամբ, որովհետեւ մեղքը մահուան է տանում, ոչնչացումը դէպի չգոյութիւն ճանապարհում: Իսկ մահը զուտ չար չէ, այլ խառնուած բարուն՝ անուամբ եւ էութեամբ, որովհետեւ այն, ինչ կոչւում է մահ, Սուրբ Գիրքն անուանում է նաեւ նինջ, ըստ այդմ՝ «Աստուած ննջեցեալներին տալու է Յիսուսի ձեռքը»: Այդպէս էլ բարին խառնուած է մահուան էութեանը, որովհետեւ այն, ինչ կենաց վախճանն է, նոյնը եւ կենաց սկիզբն է, այսինքն՝ վախճան ժամանակաւորի եւ սկիզբ մշտնջենականի:

Այսպիսով, պարզ եղաւ մեղքի, մահուան եւ քայքայուելու էութիւնը:

Իսկ Տէրն իր մարդեղութեան ժամանակ օտարամուտ կրքերից միայն մահը կրեց, իսկ մեղք եւ ապականութիւն չունեցաւ: Առաջինն այն պատճառով, որ վկայում է մարգարէն՝ «Մեղք չգործեց» եւ՝ «Նրա մարմինն ապականութիւն չտեսաւ» (Գործք Բ 31),- եզրափակում է միւս մարգարէն:

Իսկ մահ ունեցաւ, ինչպէս վկայում է նոյն մարգարէն. «Մահուան մատնուեց նրա անձը, եւ մեռաւ մեր անօրինութիւնների պատճառով» (Ես. ԾԳ 5):

Երկրորդ՝ մահ ունեցաւ, որովհետեւ ինքն էր տուել մահը մեզ իբրեւ պատիժ, իսկ մեղքն ու քայքայումը՝ բանսարկուն եւ Ադամը ներմուծեցին բնութեան մէջ, ուստի այն, ինչ ինքը չէր տուել, իր մարմնով չկրեց:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ինչո՞ւ Աստուած Ադամին իբրեւ պատիժ տուեց քայքայումը, ըստ որի ասաց. «Հող էիր, հող ես դառնալու» (Ծննդ. Գ 19), ապա ասենք, որ սա ասաց ոչ թէ հրաման տալով, այլ պատմողաբար, որովհետեւ չասաց, թէ՝ «դարձի՛ր», այլ ասաց՝ «դառնալու ես»: Ինչպէս այն, որ մի բարձր տեղից քար գլորուի, եւ մօտ կանգնած մէկն ասի, թէ՝ «Գնալու ես մինչ ներքեւ եւ այնտեղ կանգնես»: Այդպէս էլ Աստուած ասաց Ադամին՝ հողից սկսեցիր եւ հողում էլ կամենում ես վերջացնել: Հետեւաբար, օտար դիպուած էր ապականութիւնը, ուստի [Տէրը] չկրեց այն իր սուրբ եւ անապական մարմնում:

Երրորդ պատճառը. Բանն Աստուած կամեցաւ մեզ ազատել մեղքերից եւ ապականութիւնից, ուստի ինչից որ պէտք է ազատէր մեզ, աւելորդ էր, որ ինքը կրէր, որովհետեւ եթէ կրէր մեղքը եւ ապականութիւնը, չէր կարող ազատել մեզ՝ գտնուելով դրանց ծանրութեան տակ:

Իսկ եթէ մէկն ասի, թէ մեզ մահից էլ ազատեց, ինչո՞ւ կրեց մահը, ապա ասենք, որ ոչ թէ անհրաժեշտ մահը կրեց, այլ կամաւորը, ինչպէս նշել ենք. ինչպէս այն, որ բժիշկը երբ հիւանդին դեղ պէտք է տայ, նախ ինքն է խմում, որ հաւատ ներշնչի: Այդպէս էլ կամաւոր մահը, որ դեղ է եւ յաւիտենական կեանքի գրաւական, նախ ինքը ճաշակեց եւ ուսուցանեց իր հետեւորդներին:

Եւ տարբեր են կամաւոր մահը տարբերւում է անհրաժեշտից, որովհետեւ յայտնի է, որ անհրաժեշտ մահը պատիժ էր, իսկ կամաւորը՝ պսակ եւ

պարգեւ, ինչպէս նրանցը, ովքեր զօրացան այս մահուամբ՝ որդեգրութեամբ ընդունելով շնորհը, նահատակուելով ու չարչարակից լինելով Քրիստոսին եւ հաղորդակից դառնալով փառքին:

Արդ, այս կամաւոր մահը կրեց Քրիստոս:

Դարձեալ ասենք, թէ մահը մեղք չէ, ոչ էլ ապականութիւն, այլ մեղքն ու ապականութիւնը լուծարող, ինչպէս որ հուրն է հալում ոսկին, եւ բոցը ջնջում վրայի ժանգը: Այդպէս էլ, ահա, Քրիստոս կրեց մահը՝ ջնջելով մեր բնութիւնից մեղքն ու ապականութիւնը:

Դարձեալ ասենք, որ մեղքն ու ապականութիւնը կրքերի առաջին ու վերջին ծայրերն են, իսկ մահը՝ միջինը: Եւ մահն ունի երկու յատկութիւն, որ այս երկու ծայրերին հակառակ է, այսինքն կեանքի վախճանն է եւ կեանքի սկիզբը:

Կեանքի սկիզբն է. ըստ այնմ՝ որ կեանքի վախճանը մեղքերի վախճանն է: Եւ ըստ այնմ, ինչը կեանքի սկիզբն է՝ ապականութեան դէմ է, որովհետեւ ապականումը տանում է չգոյութեան, իսկ մահը տանում է դէպի կեանք, որի պատճառով էլ Քրիստոս կրեց մահը, որպէսզի այսպէս երկուստեք վերացնի մեղքն ու ապականութիւնը:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ինչպէս մահով մահը վերացրեց, այդպէս էլ [կարող էր] ապականուելով վերացնել ապականութիւնը, ապա ասենք, որ հերձուածողին արժանի եւ յատուկ անմտութեամբ դատեցիր, որովհետեւ [ոչ թէ] մահով մահը, ապականուելով ապականութիւնը, անէծքով անէծքը, մեղքերով մեղքը վերացրեց, ինչպէս դու ես դուրս տալիս, [այլ] ինչպէս այն բժիշկն էր, որ երբեմն նմանով եւ երբեմն հակառակով է բուժում. նմանով, ինչպէս հրով հուրը, սառնութեամբ սառնութիւնը, եւ հակառակով, ինչպէս ջերմը սառն է անցկացնում, խոնաւը՝ չորը: Այդպէս էլ մեր Տէրը նմանով, այսինքն՝ անէծքը անէծքով եւ մահուամբ մահը վերացրեց, իսկ հակառակով՝ անապական եւ անմեղ մարմնով, վերացրեց մեղքերն ու ապականութիւնը:

Եւ ինչպէս վերը նշուեց պատճառը, այն, ինչ իբրեւ պատիժ էր տուել, նմանութեամբ էլ վերացրեց, իսկ այն, ինչ մարդու անձնիշխան կամքի եւ բանսարկուի արկածախնդրութեամբ էր, դրանք հակառակ ձեւով լուծարեց մեր Տէր Յիսուս Քրիստոս, որին փառք եւ զօրութիւն, յաւիտեանս, ամէն:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԱՊԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ Պրակ Իէ

Հարց. Ինչպէ՞ս ենք Քրիստոսի մահկանացու մարմինն ասում անապական:

Պատասխան. Բոլորին աներկբայ յայտնի է, որ Քրիստոս մեռաւ ըստ Գրքի եւ մահով վերացրեց մահն ու ապականութիւնը:

Իսկ հերձուածողներից ոմանք՝ երկաբնակների դասը, ապականացու են համարում Կենարարի անապական մարմինը, որի պատճառով պէտք է ապա-

ցուցել, որ նախ՝ նոյնը չեն մահն ու ապականութիւնը, ապա՝ հիմնաւորել, որ Փրկիչի մարմինն անապական է:

Եւ այն, որ տարբեր են մահն ու ապականութիւնը, յայտնի է նախ [նրանց] դրսեւորումներից, որովհետեւ ներս սպրդելով՝ մահն ինքնըստինքեան անջատում է հոգին ու մարմինը, եւ այս է նրա գործը: Իսկ ապականութիւնն այլայլութեամբ է սպրդում, նորից քայքայում եւ այլակերպում տարանջատուածը, մինչ որ մարմինը հասցնում է բուն տարրերին, իսկ հոգին՝ աներեւոյթ տեղեր: Ինչպէս եթէ մէկը ծառը կտրի եւ մէկ ուրիշը դարձեալ հատի, բաժանի եւ այրի: Այդպէս մահը միայն անջատում է կեանքից, իսկ ապականութիւնը վերստին այլայլում: Ուստի, դրսեւորումներից էլ պարզ է, որ ապականութիւնը դժնդակ է, քան մահը:

Յայտնի է նաեւ, որ մահը տրոհում եւ տարանջատում է անձը, իսկ ապականութիւնն՝ ապականում եւ այլայլում բնութիւնը:

Եւ սկզբում էլ ցոյց տուեցինք, որ մահը Արարչի կողմից տրուած պատիժ էր, իսկ ապականութիւնը՝ ներմուծուած բանսարկուից՝ իբրեւ մահուան հետեւանք:

Եւ մահը խառնուած է բարու հետ, իսկ ապականութիւնն ամբողջապէս չար է, ինչպէս ցոյց տրուեց քառասնօրեայ գալստեան եւ Սիմոնի մահուան մասին հատուածում:

Հետեւաբար, տարբեր են մահն ու ապականութիւնը:

Եւ կարելի է ասել, որ Կենարարի մարմինը չարչարելի եւ մահկանացու է, սակայն չի կարելի ասել ապականացու, որովհետեւ անապական մարմինը անապական Կոյսից եւ Հօր անապական էութիւնից էր, որոնք միաւորեց:

Եւ այն, որ Կենարարի մարմինն անապական է, մեր հաւատի դաւանանքն է, որ ունենք եւ անվերապահ ենք:

Սակայն, բնախօս քննութեամբ ապացուցենք [ասուածը] բազմազան եղանակներով:

Նախ՝ ինչպէս ասուեց, ապականութիւնը ծնունդ էր մեղքի, իսկ մեղքը չար էր, եւ մեղք չկրեց Քրիստոսի սուրբ մարմինը, ուստի, նա անապական էր:

Երկրորդ՝ ապականութիւնը եւ մեղքը Արարչի գործերը չէին, այլ մեղանչած Ադամի եւ արկածախնդիր բանսարկուի, որի պատճառով էլ Տէրը բանսարկուի յօրինածին չդիպցրեց իր մարմինը, ուստի, Տիրոջ մարմինը անապական է:

Երրորդ՝ ապականութիւնը գործում է հակառակ Արարչի, որովհետեւ Արարիչը գոյացնում է անգոյութիւնից, իսկ ապականութիւնը գոյը տարրալուծում է անգոյութեան եւ այլայլում, ուստի Արարչի մարմինն անապական է:

Չորրորդ՝ ապականութիւնը ո՛չ բնութիւն է, ո՛չ բնութեան մաս, իսկ Բանն Աստուած վերցնելով մարդկային բնութիւնը՝ միաւորեց եւ նրա մասերը, սակայն ոչ ապականութիւնը, որովհետեւ այն բնութիւն չէր, ուստի, անապական է նրա մարմինը:

Հինգերորդ՝ մեր մարմնի ապականութիւնը հօր եւ կնոջ սերմերի խառնուրդի պատճառով է, իսկ Տիրոջ մարմինը հօր եւ մօր սերմից չէր, այլ բեղմնաւորուած կուսական արգանդում՝ անապական արիւնից, ինչպէս ասել ենք տասներորդ պրակում: Ուստի, Տիրոջ մարմինն անապական է:

Վեցերորդ՝ Մարիամին՝ Փրկչի մօրը, կոյս եւ անապական են խոստովանում ուղղադաւան հայրերը ոչ թէ ըստ բնութեան գոյացութեան, այլ որովհետեւ Բանն Աստծուն ծնեց անապական մարմնով: Արդ, եթէ ծնողն անապական է ինչպէս եւ է, ինչպէ՞ս կարող է նրանից ծնուածը լինել ապականացու: Ուստի, անապական է Բանն Աստուած՝ ծնուած մարմնով:

Եօթներորդ՝ Աստուած տարրեղէն հողից ստեղծեց Ադամի անապական մարմինը եւ դրեց դրախտում, որը մեղանչելով՝ դարձաւ ապականացու:

Էլ ինչո՞ւ ես դու երկբայում, թէ Ադամի ապականացու բնութիւնը անապական Բանն Աստուած միաւորեց իրեն եւ ծնուեց անապական մարմնով:

Ութերորդ՝ անապատի մանանան օրինակն էր Փրկչի անապական մարմնի, որ մինչ այսօր պահպանւում է ոսկեայ սափորում՝ առանց այլայլուելու: Ուրեմն, Քրիստոսի ճշմարիտ մարմինն Աստուածածին Կոյսի անապական կուսական արգանդից էր:

Իններորդ՝ խորհրդաւոր սուրբ մարմինը, որ բաշխեց Վերնատանը, անապական էր ու կենարար, ըստ այդմ՝ «Ով ուտի մարմինն իմ, կապրի յաւիտեան» (Յովհ. Զ 59), ապա ուրեմն մինչ խաչուելը անապական էր Քրիստոսի՝ մեր Փրկչի մարմինը:

Տասներորդ՝ ուղղափառների բոլոր սուրբ վարդապետները, ինչպէս Եփրեմը, Ոսկեբերանը, Կիւրեղը, Աթանասը եւ ուրիշներ, գրում եւ ընդունում են, որ նրա սուրբ մարմինն անապական է: Եւ նզովքով եզրափակում են՝ ասելով. «Եթէ մէկը նրա անճառելի միաւորութիւնից յետոյ ապականացու ասի նրա անապական սուրբ մարմինը[474], նզովեալ լինի». սա յայտնի է նրանց գրքերից, եւ կամեցողը դիւրութեամբ կգտնի, ուստի, անապական է Քրիստոսի մարմինը:

Տասնմէկերորդ՝ նաեւ Սուրբ Գրքում Սուրբ Հոգու մասին խօսողները վկայում են [նոյնը], ինչպէս Դաւիթն ասում է սկզբում, ապա Պետրոսը կրկնում է նոյնը Գործքի գրքում. «Նրա մարմինն ապականութիւն չտեսաւ» (Գործք Բ 31), հետեւաբար, անապական է մարմինը սուրբ[475]:

Տասներկուերորդ, յայտնի է նաեւ այն երեք փաստերից, որ «ապականացու» ասելն ակնարկ է ապագայի վերաբերեալ, այսինքն թէ՝ «ապականութեան ենթակայ», ինչպէս որ ասում ենք՝ մահկանացու եւ չարչարելի, եւ ահա չարչարուեց ու մեռաւ: Սակայն մինչ խաչուելը ապականացու չէր ո՛չ խաչի վրայ, ո՛չ էլ գերեզմանում, ինչպէս մենք ենք խոստովանում: Իսկ յարութիւնից յետոյ էլ դուք էք ասում, թէ փոխուեց ապականութեան, հետեւաբար, ձեր

«ապականացու» ասելը սուտ դուրս եկաւ:

Եւ քանի որ, սուտ է «ապականացու» ասելը, ճշմարիտ է ուրեմն «անապական» խոստովանելը:

Եւ չնայած, տեսանք, որ իսկապէս անապական է Տիրոջ մարմինը, սակայն այժմ տեսնենք, թէ ինչո՞ւ են նրանք ասում «ապականացու», եւ տանք պատասխանը:

Նախ՝ ասում են, որ Փրկչի մարմինը եթէ անապական լինէր՝ անմահ եւ անչարչարելի կլինէր, իսկ եթէ մահկանացու եւ չարչարելի է, ուրեմն եւ ապականացու է:

Սրան պատասխանենք, որ նախ նոյն բանը չէ մահկանացու եւ ապականացու ասելը, որովհետեւ, ինչպէս վերը նշուեց, մահն ու ապականութիւնը տարբեր բաներ են: Եւ ահա մահը կամաւոր կրեց [Տէրը] ու տանջուեց, իսկ ապականութիւն չունեցաւ՝ ո՛չ յօժարակամ, ո՛չ էլ հարկադրուած, հետեւաբար նրա մարմինը կարելի է ասել չարչարելի եւ մահկանացու էր յանուն մեզ, սակայն՝ անապական ու անմեղ:

Ասում են նաեւ, եթէ ապականացու չէ, ուրեմն անկատար է իբրեւ մարմին: Ասենք, որ եթէ ապականութիւնն է դարձնում կատարեալ, իսկ անապականութիւնն՝ անկատար, ապա նշանակում է Ադամը մինչ մեղանչելը անկատար էր, որովհետեւ ունէր անապական մարմին, իսկ մեղանչելուց յետոյ դարձաւ ապականացու եւ կատարեալ: Ստացւում է, որ ապականութիւնը, որ այլայլող եւ կործանող է, մարդուն դարձնում է կատարեալ:

Ըստ ձեզ ստացւում է նաեւ, որ եթէ խաչելութիւնից յետոյ Տիրոջ մարմինը դարձաւ ապականացու, ապա մինչ խաչելութիւնը կատարեալ էր, որովհետեւ ապականացու էր, իսկ խաչելութիւնից յետոյ անկատար դարձաւ, քանզի անապական եղաւ, ինչպէս դուք էք ասում: Եւ այժմ ու յաւիտեանս անկատար է, որովհետեւ մարմնով անապական է:

Նրանք ասում են նաեւ, որ մեր մարմինը ապականացու է. ուստի, եթէ Քրիստոս անապական մարմին վերցրեց, ուրեմն մեզ չփրկեց, այլ [փրկեց] միայն Ադամի առաջին բնութիւնը, որ անապական էր դրախտում:

Ասենք, որ ոչ թէ Տէրը մեր ապականակիր մարմինը, մեղանչական հոգին ու միտքն առաւ եւ մեզնով իրագործեց փրկութիւնը, այլ միաւորելով իրեն՝ անջատեց մեղքը հոգուց, ոչնչացումը՝ մարմնից, ինչպէս որ հուրն է ոսկուն միաւորուելով՝ նրանից անջատում ժանգը: Եւ Կոյսից ծնուեց անմեղ հոգով ու անապական մարմնով մարդացեալ Աստուած:

Դարձեալ ասենք, որ ոչ թէ Ադամի առաջին բնութիւնն առաւ, այլ՝ մեր ապականացուն Ադամի զանգուածից եւ միաւորելով իրեն՝ դրեց Ադամի առաջին անմեղ եւ անապական բնութեան մէջ:

Այդ պատճառով Աստուած մարդացաւ, որպէսզի մեզ հասցնի առաջին փառքին եւ որպիսութեանը:

Հակառակորդներն ասում են նաեւ, որ եթէ մարմինն անապական է՝ տարրեղէն չէ եւ բերուած է երկնքից, կամ էլ թանձրացած է ինքն իր բնութեան մէջ, ինչպէս Եւտիքէսն է ասում:

Ասենք, որ չնայած Տէրը մարմին առաւ Կոյսից, իսկ Կոյսը հողից ստեղծուած Ադամի բնութիւնն ունէր, սակայն չենք ասում, թէ Տէրը թանձրացած բնութիւն ունէր, կամ էլ իր մարմինը բերել էր երկնքից, այլ երկնքից իջած Տէրը միաւորուեց մարմնին, որի պատճառով մարմնի մասին ասում էր. «Սա է երկնքից իջած հացը» (Յովհ. Զ 59): Այդպէս եւ Անապական Բանին միաւորուած՝ Բանն [Աստծոյ] մարմինն անապական էր:

Նրանք ասում են նաեւ, որ Քրիստոսի մարմինը փոփոխւում էր աճելու հետ, որն ապականութեան յատկանիշ է:

Ասենք, որ մարմնի աճելը ոչ թէ ոչնչանալու յատկանիշ է, այլ հակառակը, որովհետեւ աճը զգայութիւններն է զարգացնում, իսկ ապականութիւնը հակառակ՝ գոյը նուազեցնում եւ չգոյութեան է փոխում:

Ուստի, աճելն ապականութիւն չէ:

Ասենք նաեւ, որ հասակի փոփոխութիւնն ու աճելը ոչ թէ ապականութեան նշաններ էին, այլ որպէսզի ընտանի սովորութեամբ հաստատի ճշմարիտ մարդեղութիւնը, ինչպէս մենք ենք աճում մանկութիւնից: Այլապէս նա, որ Ադամին երեսնամեայ ստեղծեց, կարող էր նոյն հասակով ծնուել, սակայն այն չէր լինի մեր սովորութեան համաձայն, ինչպէս ցոյց տրուեց վերը:

Նրանք ասում են նաեւ, որ կաթնակեր եղաւ եւ կերակուր կերաւ, որը նոյնպէս մաս է ապականութեան:

Ասենք, որ սնուելը ամենեւին էլ մաս չէ ապականութեան, որովհետեւ յայտնի է, որ Ադամն էլ դրախտում մինչեւ մեղանչելը կերակրւում էր, սակայն ապականացու չէր եւ անապական էր:

Այդպէս էլ Քրիստոս կերակրւում էր՝ անապական մարմնով:

Իսկ եթէ մէկն ասի, թէ Ադամն էլ դրախտն էլ ապականացու էին, ապա կասենք, որ ապականութիւնը յանցանք գործելուց յետոյ ներմուծուեց բնութեան մէջ:

Արդ, եթէ Ադամն անմեղութեան մէջ ապականացու էր, ուրեմն առաջ, քան մեղանչելը, դատապարտուած էր ապականութեան: Իսկ ապականացուն ինչո՞ւ կդատապարտուէր ապականութեան:

Ասենք նաեւ, եթէ կերակուրը մասն է ապականութեան, ապա ի՞նչ ասենք [այն մասին], որ անմարմին լինելով՝ [Աստուած] կերաւ Աբրահամի ժամանակ (տե՛ս Ծննդ. ԺԸ 8):

Նաեւ յարութիւնից յետոյ կերաւ [Տէրը] աշակերտների հետ անապական մարմնով, որպէսզի ցոյց տայ, թէ խաչելութիւնից առաջ կերել է՝ դարձեալ ունենալով անապական մարմին:

Նրանք ասում են նաեւ՝ ինչպիսի՞ն էր Քրիստոսի մարմինը. կիրք ունեցո՞ղ, թէ չունեցո՞ղ: Եթէ ունէր, ապա ապակա-

նացու էր, եթէ չունէր, ուրեմն եղաւ առաջին փորձառութիւնը:

Եւ այս է Բանի մարմնի մասին նրանց զազրախօսութեան զէնքերի զէնքը:

Ասենք, որ կիրքը երկու տեսակ է՝ կամաւոր եւ ակամայ: Ակաման [իր հերթին]՝ հարկադիր եւ ծառայական է, մինչդեռ Աստուած ակամայ կրքեր չունի:

Տէրն իր մարդեղութեան ժամանակ իր կամքով կրեց կամաւոր կրքերը եւ ոչ ակաման, որովհետեւ նա հարկադրուած չէր եւ բնութեամբ ծառայ չէր, ինչպէս մենք, այլ տէր եւ ազատ բոլոր կրքերից:

Ուստի պարզ է, որ քաղցում եւ ծարաւում էր, երբ կամենում էր:

Եւ սա յայտնի է մեզ բաժանումից, որովհետեւ Աստծոյ անեղ էութիւնը չի կրում ո՛չ կամաւորը, ո՛չ էլ ակաման, քանի որ կիրքը եղականներին է յատուկ, իսկ մարդիկ՝ բոլորը, կրում են թէ՛ կամաւորը, թէ՛ ակաման՝ բնութեամբ եւ կամքով:

Եւ քանի որ մեր Տէրը մարդացեալ Աստուած էր, չունէր ակամայ կիրք, այլ [կրեց] միայն կամաւորը, ըստ որում իբրեւ Աստուած չէր կրում ակաման, իսկ իբրեւ ճշմարիտ մարդ եւ Բանն [Աստծոյ] մարմին կրում էր կամաւորը:

Ասենք նաեւ, որ մեր Տէրը մարդեղութեամբ եկաւ մեր ապականացու [բնութիւնը] փոխարինելու անապականի. էլ ինչո՞ւ պէտք է ինքը կրէր ապականութիւն, քանի որ ապականութեան ենթական չի կարող մաքրել ապականութիւնից, իսկ մեր Տէրն իր անապական մարմնով մաքրեց մեր ապականութիւնը:

Նրանք ասում են նաեւ, եթէ Տիրոջ մարմինը չէր կրում ակամայ կրքերը, ուրեմն թերի էր նրա մարդեղութիւնը:

Ասենք, որ անմտութիւն է կարծել, թէ մարմինը թերի է առանց ակամայ կրքի: Նախ, որովհետեւ բանական մարդը կամաւորով է բանական եւ ոչ թէ ակամայ [կրքերով], ինչպէս որ Ադամի մարմինն էր կատարեալ նախքան մեղանչելը:

Եւ յետոյ, ակամայ [կրքերը] մարդու բնութեան մէջ յետագայում մտան, որոնք անասնական են եւ ոչ ներյատուկ բանական բնութեանը:

Եւ Տէրն իր մարդեղութեան ժամանակ ընդունեց այն, ինչ յատուկ էր մարդու բնութեանը եւ ոչ օտարամուտ անասնականը:

Նրանք ասում են նաեւ, թէ ակամայ [կրքերը] կրեց անարգ արտածորման հետ:

Ասենք, որ Ադամը մարմնական արտածորում չունէր մինչեւ մեղանչելը դրախտում, ինչպէս Նոյը տապանում եւ իննամսեայ մանուկը արգանդում: Այդպէս էլ մեր Տէրը:

Եւ սա ցոյց տրուեց վերը՝ հինգ կէտերով, քսաներկուերորդ համարում:

Իսկ այժմ այն մասին, որ բոլոր կրքերը բաժանւում են չորսի. կամաւոր, ակամայ, անարգ եւ ոչ անարգ: Եւ պարզ է, որ մենք այս բոլորը կրում ենք: Իսկ մեր Տէրն իր մարդեղութեամբ չկրեց ակաման, որ հարկադիրն էր եւ ծառայականը: Չկրեց նաեւ անարգը, որը մեղքի տեսակ

է, հետեւաբար, կրեց կամաւորն ու ոչ անարգը, ինչպէս քաղցն ու ծարաւը:

Իսկ աւելորդ արտածորումը, թէեւ անարգ չէ, սակայն ակամայ է, ուստի այն Քրիստոս չկրեց:

Ասենք նաեւ, որ եթէ Յիսուսի կրծքին մէկ անգամ հպուելով՝ աշակերտը մաքրուեց այսպիսի կրքից (տե՛ս Յովհ. ԺԳ 25), որքա՞ն առաւել եւս ապականութիւն վերացնողն ազատ կլինի այդպիսի կրքից:

Ասենք նաեւ, որ անապատում հրամայուեց զուսպ լինել մանանայի սրբութեան հանդէպ, որ սուրբ մարմնի՝ ճշմարիտ մանանայի, օրինակն էր, որպէսզի ափիբերան փակուեն բացուող բերանները՝ երկնքում եւ լեզուագարութիւնը երկրում:

Նրանք ասում են նաեւ, որ խոցուելը, արիւնը եւ այլն, նոյնպէս ապականութեան նշաններ են:

Ասենք, որ եթէ խոցուելը, արիւնը ապականութեան [յատկանիշների] ցանկում են, ապա այս խոցուելը ցոյց տուեց յարութիւնից յետոյ, եւ ցոյց է տալու նաեւ աշխարհի վախճանին բոլոր խոցուած վէրքերը, որովհետեւ ասում է. «Նայելու են նրան, ում խոցեցին» (Յովհ. ԺԹ 37):

Եւ դեռ շարունակում ես Կենարարի մարմինը ապականացու համարել:

Եւ եթէ անգամ սրանք՝ կերակրուելը, արիւնը, խոցուելը, մահը ապականութիւն են, ինչպէս դու ես ասում, իսկ աշխարհի փրկութիւնը սրանցով իրագործեց, այսինքն՝ չարչարանքով, մահուամբ, խոցուելով, ապա ուրեմն ապականութիւնը փրկեց մեզ, այն պէտք է համարուի Փրկիչ, այսինքն՝ ապականութիւնը եւ՝ ո՛չ Քրիստոս:

Աւա՜ղ, նրանց անբան մտահաճութեանը, որ միակ Տիրոջն ուրացած, իրենց վրայ բերում են արագահաս կործանում:

Իսկ մենք, եղբայրնե՛ր, իմ ուղեկիցն ու դաւանակիցը եղէ՛ք, որ շինուած ու հաստատուած էք հաւատի հիմքերի վրայ, անշարժ խարսխուած Քրիստոսի ուսին, մերձաւորագոյն, յստակ ու կատարեալ սիրով Սուրբ Հոգու, որին փառք յաւիտեանս, ամէն:

ԴԺՈԽՔԻ ՄԱՍԻՆ
ՊՐԱԿ ԻԸ

Հարց. Ինչո՞ւ մեր Տէրը Քրիստոս հոգով իջաւ դժոխք:

Պատասխան. Նախ՝ որպէսզի ցոյց տայ, որ ազատելու է [նրանց] հոգիները, ում համար մարդացաւ եւ մեռաւ:

Երկրորդ՝ որովհետեւ Ադամը միջակ ծանրութեան լծով, այսինքն՝ անձնիշխանութեամբ ստեղծուեց, ապա մեղքով ծանրանալով՝ իջաւ դժոխքի ստորին կէտը եւ այլեւս չէր կարող բարձրանալ, մինչ վերին կէտից Բանն աստուած իջաւ ներքեւ, ապա Ադամը ելաւ վերին կէտը երկնքի:

Երրորդ՝ ինչպէս մարմնի միջոցով լոյս ծագեց մարմինների վրայ, եւ փրկութիւն քարոզուեց, այդպէս էլ դժոխքում հոգիների վրայ լոյս ծագեց հոգու միջոցով, եւ փրկութիւն քարոզուեց: Ինչպէս Պետրոսն է ասում՝ «Գնաց քարոզեց ապստամբ հոգիներին,

երբ Աստծոյ երկայնամտութիւնը ներեց նրանց» (Ա Պետ. Գ 20):

Չորրորդ՝ ինչպէս անիրաւութեամբ սատանան կապեց մարդկանց հոգիները, [այդպէս էլ] արդարութեամբ Քրիստոս ազատելու է նրանց:

Հինգերորդ՝ Տէրը խաչի վրայ տարածեց իր ադամաստեղծ ձեռքը եւ դուրս նետեց չարութեան իշխանին՝ մարդկանց կորզելով նրա իշխանութիւնից. ըստ որում ասաց. «Այժմ աշխարհի այս իշխանն արտաքսուելու է, եւ ես երբ բարձրանամ խաչ, բոլորին ձգելու եմ ինձ մօտ» (Յովհ. ԺԲ 32)[476]:

Այնժամ իբրեւ ապստամբ ծառայ փախչելով՝ սատանան մտել էր դժոխքի որջը եւ կարծում էր այնտեղ կամրանայ՝ իշխելով հոգիներին: Ուստի Տէրը ժամանեց այնտեղ ու կապեց հզօրին, աւերեց կարծրացած ամրոցը, խլեց նրանից մարդկանց հոգիները, որ Ադամից յետոյ բռնութեամբ պահում էր. «Աւար առաւ, մարդկանց պարգեւներ բաշխեց» (Սղմ. ԿԸ 19, Եփես. Դ 8)՝ հոգիներն ազատելով դժոխքից:

Եւ Քրիստոսի տանջանքը երկու հետեւանք ունեցաւ. նախ մեղքերի պարտքերը վճարեց, ապա՝ երկնքի դռները բացեց:

Նոյնը գործեց նաեւ դժոխքում: Նախ՝ պարտքերը վճարելու համար քանդեց դժոխքի կապանքները, ինչպէս ասում է Դաւիթը. «Խորտակեց դժոխքի դռները եւ փշրեց նիգերը» (Սղմ. ՃԶ 16): Դռները եւ նիգերը յետոյ եղան, այսինքն՝ կամ սկզբնական ու ներգործական մեղքերով յետոյ կապեց, կամ մեղքերով ու յուսահատութեամբ, որոնք երկուսն էլ Տէրը խորտակեց՝ նրանց մօտ իջնելով:

Երկրորդ՝ երկնքի դռների բացուելու պատճառով՝ լոյս ծագեց բանտում, ըստ Եսայու. «Ելէ՛ք դուք, որ շղթայուած էք եւ որ խաւարում էք, յայտնուէ՛ք» (Ես. ԽԲ 7):

Հարց. Որտե՞ղ էր դժոխքը, որ աւերուեց:

Պատասխան. Հարց տրուեց Բենեդիքտոսի գրքում[477], թէ որտե՞ղ էր [գտնուում] դժոխքը, եւ պատասխան տրուեց, թէ՝ անկիւնում, ծովի եզերքին, երկրի ներսում, խաւարամած մի վայրում, որտեղ իր իշխանութեան աթոռն էր դրել սատանան եւ Ադամից յետոյ այնտեղ արգելափակել հոգիներին՝ մինչեւ գնաց այնտեղ մեր Անմահ թագաւորը եւ Աստուած՝ Յիսուս Քրիստոս: Եւ վկայում է սաղմոսի խօսքը, թէ՝ «Փրկելու ես իմ անձը ստորին դժոխքից» (Սղմ. ՁԵ 13), որից ազատեց Քրիստոս՝ այնտեղ իջնելով, այն աւերելով յաւիտենապէս եւ ընդհանրապէս ազատելով հոգիներին: Հարց. Նիւթեղէն վայրում անմարմին հոգիները ինչպէ՞ս են արգելափակւում:

Պատասխան. Ինչպէս նիւթեղէն հուրն անմարմին հոգիներին եւ դեւերին տանջում է, այդպէս էլ [նիւթեղէն] տեղն է արգելափակում: Եւ ինչպէս որ Աստծոյ կարողութիւնն է կրակով տանջել անմարմին հոգին եւ մարմինն անմեռ պահել կրակի մէջ, նոյնպէս Աստծուց լքուած հոգիներին արգելքի մէջ են պահում դեւերը:

Բացի այդ, նրանց ծանրացնում էր մեղքը եւ փակուած պահում դժոխքում:

Հարց. Այդ դէպքում ինչո՞ւ են ասում, թէ դժոխքը Երուսաղէմում է, եւ իբր մի քարանձաւ կայ դիւահոտ, [որտեղից] լսւում են դեւերի այրուելու չարաչար աղաղակի, տանջանքի ձայներ:

Պատասխան. Այն ասում են դժոխքի դուռն է, եւ ամէն ինչ հնարաւոր է Աստծոյ համար:

Հարց. Եթէ ասում էք դժոխքը յաւիտեան աւերուած է, նշանակում է, որ այլեւս դժոխք չկա՞յ:

Պատասխան. Այն դժոխքը, որում սատանան արգելափակում էր հոգիներին մինչեւ Քրիստոս, աւերուեց յաւիտեան: Եւ յաւիտենական հուրն է այժմ դժոխք սատանայի եւ մեղաւորների համար, որովհետեւ ինչպէս Յեսուն աւերեց Երիքովը ու անիծեց, որ այլեւս չկառուցուի, այդպէս էլ դժոխքը աւերեց Քրիստոս եւ անիծեց չար գործերով կառուցողին, որի պատճառով ասում է. «Հեռացէ՛ք ինձնից յաւիտենական կրակի մէջ, անիծեալնե՛ր» (Մտթ. ԻԵ 41):

Հարց. Քանի՞ դժոխք կայ:

Պատասխան. Ոմանք ասում են՝ չորս, ըստ ուրիշների էլ՝ բազում, որովհետեւ ասում են տանջւում են գերեզմանում, օդում, ծովում, քարանձաւի մէջ:

Եւ նրանք, ովքեր ասում են չորսն է, ասում են ներքին դժոխքը մահու չափ մեղապարտներինն է, քաւարանը՝ ներելի մեղաւորներինը, լիմպոսը[478]՝ արդարներինը, դժոխքը՝ չմկրտուածներինը:

Սա տեսակէտը չեն ընդունում ուղղադաւան վարդապետները, [ըստ որոնց] դժոխքը մէկն է, ինչպէս մէկն է արքայութիւնը, որովհետեւ սրանք հակակշիռ են, եւ որքան ասւում է մէկը, այդքան էլ պէտք է ասուի միւսը: Եւ ինչպէս մէկն է արքայութիւնը, սակայն բազում են օթեւանները, բազում են փառքերն ըստ գործերի, այսինքն՝ երեսնաւոր, վաթսունաւոր, հարիւրաւոր (տե՛ս Մրկ. Դ 8), այդպէս էլ մէկն է դժոխքը՝ բազում տանջանքների վայրերով:

Եւ ինչպէս նոյն կրակը տարբեր չափերով է այրում դալար փայտը, չոր խոտը, եղէգը, այդպէս էլ դժոխքի նոյն հուրը զանազան կերպով է տանջում մեղաւորներին:

Հարց. Ինչո՞ւ է ասւում «դժոխք», յոգնակերտով եւ չի ասւում՝ «դժոխ»՝ եզակիով:

Պատասխան. «Դժոխք» նշանակում է դժուար[479], նեղ եւ անձուկ [տեղ]: Եւ անեզական է ասւում, նախ որովհետեւ բազմաթիւ գործողութիւններ են կատարւում՝ լաց, ատամների կրճտել, ներքին ու արտաքին խաւար եւ այլն:

Երկրորդ՝ բազմաթիւ մասեր ունենալու պատճառով, որովհետեւ [տանջանքը] կրում են մարմնի եւ զգայարանների մասերով, հոգու զօրութեամբ եւ մտքի իմացումով:

Հարց. Իսկ ո՞րն է ներքին դժոխքը, որի մասին մարգարէն ասում է. «Հոգիս փրկեցիր ներքին դժոխքից» (Սղմ. ՁԵ 13): Արդ, եթէ կայ ներքին, ուրեմն կան եւ վերին ու միջին դժոխքներ:

Պատասխան. Իմաստունները տեղը երկու մասի են բաժանում՝ վերին եւ ներքին, որովհետեւ սրանք հակակշիռ եւ յարաբերակից են, իսկ միջին տեղ չկայ, որովհետեւ վերինը ներքին է, իսկ ներքինը՝ վերին, հետեւաբար, սուտ է, թէ գոյութիւն ունեն ներքին, վերին ու միջին դժոխքներ:

Ասենք նաեւ, որ ներքին դժոխքը հոգիներինն է, վերինը՝ գերեզմանը, մարմիններինը, եւ նա էլ Սուրբ Գրքում դժոխք է անուանւում, ինչպէս ասաց Դաւիթը. «Սիմէի արիւնով հանդերձ դժոխք իջեցրու», որ գերեզմանն էր, ուստի պարզ է, որ գոյութիւն ունի հոգիների մէկ դժոխք:

Իսկ եթէ այնուամենայնիւ, ըստ քո մտքի, հարկադրես եւ պահանջես երեք դժոխք, ապա կասենք, որ ներքին դժոխքը հոգիներինն է, միջինը՝ գերեզմանը, վերինը՝ մեղքը, որ հոգում է, որովհետեւ նա է, որ չարչարում է հոգին եւ մեզ հետ կենդանի շրջում է դժոխքում:

Ընդհանրապէս նաեւ կարծիք կայ, որ ներքին դժոխքը համարւում է դժոխքի յատակը, ինչպէս Սողոմոնն է ասում. «Մեղր է կաթում պոռնիկի շուրթերից եւ վախճանին [նա] նայելու է դժոխքի յատակին» (Առակ. Ե 3): Այս է անուանում Դաւիթը ներքին դժոխք, որտեղ առաւել չարագործներն ու ամբարիշտներն են տանջւում եւ դեւերից գլխաւորները:

Իսկ միջին դժոխք կոչւում է դժոխքի բանտը, որտեղ միջին [ծանրութեան] մեղաւորներն են, որոնք ունեցել են հաւատ, սակայն չեն գործել, ինչպէս չար հաւատացեալները, կամ էլ գործ [կատարել են], սակայն հաւատ չեն [ունեցել], ինչպէս թերահաւատներն ու անհաւատները:

Իսկ վերջին դժոխքում, որ կոչւում է անջրդի հոր, նրանք են, ովքեր ո՛չ բարի, ո՛չ էլ չար գործեր ունեն, ինչպէս չմկրտուած մանուկները, որոնք չեն տանջւում, որովհետեւ չեն մեղանչել եւ արդարացուած էլ չեն, այլ ինչպէս սկզբում էին, մնում են անջրդի հորում խաւարի:

Հարց. Քրիստոս ո՞ր դժոխքը իջաւ:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ չորրորդ դժոխքը, որտեղ արդարների հոգիներն էին եւ միայն այն աւերեց ու դուրս բերեց միայն արդարներին, իսկ մնացեալին թողեց վերը յիշուած միւս երեքում:

Սակայն այսպէս ասողները երեք կերպ հակադրւում են Սուրբ Գրքին:

Նախ, ասում են գնաց չորրորդ դժոխք, որ վերինն է եւ ոչ ներքինը:

Երկրորդ՝ ասում են, թէ աւերեց միայն այն, միւսները թողեց:

Երրորդ՝ ասում են տարաւ արդարներին, միւսներին թողեց:

Առաջինի վերաբերեալ ասենք, որ Քրիստոս ոչ թէ վերին, այլ ներքին դժոխք իջաւ: Նախ՝ որովհետեւ Դաւիթ մարգարէն ասում է՝ «Հոգիս փրկեցիր ներքին դժոխքից» եւ ոչ վերինից:

Երկրորդ՝ որովհետեւ Աստուած Մովսէսի միջոցով ասաց. «Հուր բորբոքուեց իմ բարկութիւնից եւ իջնելու է մինչ ներքին դժոխքը» (Բ օր. ԼԲ 22):

Հետեւաբար, սուտ է նրանց ասած լիմպոսը:

Երրորդ՝ որովհետեւ ասում է Պետրոսը Կաթողիկէում. «Գնաց քարոզելու երբեմնի ապստամբներին» (Ա Պետ. Գ 20), իսկ ապստամբները մեղաւորներն էին եւ ոչ թէ մարգարէները:

Չորրորդ՝ որովհետեւ Դաւիթն ասում է. «Արձակել մահապարտների որդիներին» (Սղմ. ճԱ 21), իսկ մահապարտները մեղաւորներն են եւ ոչ արդարները:

Հինգերորդ՝ Ադամը ներքին դժոխքի առաջին յանցաւորն էր, որովհետեւ նրա պատճառով էր մահուամբ մեռնելը, իսկ եթէ Քրիստոս ներքին դժոխք չգնաց, ուրեմն չազատեց Ադամին:

Վեցերորդ՝ սատանայի ամրոցը ներքին դժոխքն է, որտեղ պղնձէ դռներ եւ երկաթէ նիգեր են, այսինքն մեծամեծ մեղքեր եւ յուսահատութիւն, որը եւ նրա ամրոցն է: Եւ Քրիստոս գնաց այնտեղ, կապեց Հզօրին եւ քանդեց նրա ամրոցը՝ աւար առնելով հոգիներին (տե՛ս Մտթ. ԺԲ 29, Սղմ. ճՁ 16):

Արդ, եթէ Քրիստոս ներքին դժոխքը չիջաւ, ուրեմն չկապեց Հզօրին, ինչպէս Աւետարանն է ասում, չխորտակեց դռները եւ գերիներին աւար չտարաւ, ինչպէս Դաւիթն է ասում:

Սա առաջինի վերաբերեալ:

Իսկ երկրորդի վերաբերեալ, որ ասում են, թէ միայն լիմպոսը աւերեց, իսկ մնացեալը թողեց, նախ ասենք, որ հոգիների առաջին դժոխքը ոչ թէ ընդհանուր ներգործական մեղքերի համար էր, այլ Ադամի մեղքի պատճառով, ուստի պարզ է, որ արդարներն էլ, մեղաւորներն էլ դժոխքում էին:

Արդ, եթէ այդ դժոխքը չէր աւերել, ուրեմն Քրիստոս մեզ առաջին մեղքից չի ազատել:

Երկրորդ՝ այդ դժոխքը սատանայի հզօրութեան միջնաբերդն էր, եւ Քրիստոս կապեց Հզօրին ըստ Աւետարանի (տե՛ս Մտթ. ԺԲ 29), ուրեմն եւ Քրիստոս աւերեց դժոխքը:

Երրորդ՝ դժոխքը մեղքն էր եւ մեղաւորների տանջանքը, եւ Քրիստոս վերացրեց մեղքը, ապա ուրեմն աւերեց դժոխքը:

Չորրորդ՝ առաջին մարդու անէծքը եղան տանջանքն ու դատապարտութիւնը, եւ «Քրիստոս գնեց մեզ օրէնքի անէծքից՝ մեր պատճառով անէծք դառնալով» (Գաղատ. Գ 13), ապա ուրեմն Քրիստոս աւերեց դժոխքը:

Հինգերորդ՝ մահուան մահն էր դժոխքը, որտեղ մարմնի մահը ոչնչացումն էր, իսկ հոգու մահը՝ դժոխքը, ընդ որում վճիռ եղաւ, որ Ադամը մահով է մեռնելու:

Արդ, Տէրը մահուամբ մեռցրեց մահը, որ դժոխքն է այժմ, իսկ յարութեամբ վերացրեց մարմնի ապականութիւնն ապագայում, ուրեմն աւերեց դժոխքը:

Վեցերորդ՝ եթէ դժոխքի մի մասը աւերեց, մահուան մի մասը վերացրեց, անէծքի մի մասը, մեղքի մի մասը, արարքի մի մասը եւ այլն, ապա ուրեմն

մասնակի եղաւ փրկութիւնը եւ ոչ բոլոր մարդկանց:

Այսքանը երկրորդի մասին:

Իսկ երրորդի մասին, որ ասում են, թէ միայն արդարներին դուրս բերեց, իսկ միւսներին թողեց, նախ ասենք, որ եթէ դժոխքը մեղքերի պատիժն է, իսկ մեղքերը երկու տեսակ են, այսինքն՝ սկզբնականն ու ներգործականը, եւ սկզբնական մեղքի պատիժը առաջին դժոխքն էր, իսկ ներգործական մեղքերինը՝ վերջին. «որ նշանակեց մէկ օր, երբ դատելու է բոլորին» (Գործք ԺԷ 31), ինչպէս ասում է Պօղոսը առաքեալների մասին գրութեան մէջ, ապա ուրեմն ազատուեցին բոլորը, ովքեր առաջին դժոխքում էին:

Երկրորդ՝ եթէ սկզբնաչարը եւ բոլոր մեղքերի պատճառը սատանան է, ու նա չի տանջուելու մինչեւ դատաստան, ուրեմն [չեն տանջուելու] նաեւ

մարդիկ:

Երրորդ՝ մեղապարտութեան պատճառն Ադամն էր, իսկ նա ազատուեց, հետեւաբար [ազատուեցին], նաեւ պատճառի բոլոր կրողները:

Չորրորդ՝ ինչպէս Ադամի պատճառով առհասարակ մահկանացու դարձան բոլոր արդարներն ու մեղաւորները, այդպէս էլ Քրիստոսով փրկուեցին բոլոր արդարներն ու մեղաւորները՝ ըստ առաքեալի:

Հինգերորդ՝ ինչպէս մեղքը բոլորին մահ պատճառեց, այդպէս էլ շնորհը առաւելապէս բոլորին ապրեցրեց, որովհետեւ գերազօր է մեղքերից:

Վեցերորդ՝ Պետրոսն ասում է՝ «Դո՛ւք, որ կապանքներում էք, ելէ՛ք եւ որ խաւարում էք, յայտնուէ՛ք», իսկ արդարները մեղքերի կապանքներ չունէին եւ ոչ էլ նախնական խաւարը, այլ միայն՝ մեղաւորները:

Եօթներորդ՝ ինչպէս առաջին պատասխանում ասացինք, մահապարտների որդիները եւ ապստամբները Աստծոյ մեղաւորներն էին, [ուստի] նրանց քարոզեց եւ ազատեց:

Ութերորդ՝ մարգարէն ասում է. «Աւար առաւ ու պարգեւներ բաշխեց մարդկանց» (Սղմ. ԿԷ 19): Արդ, աւարն ընդհանուր է եւ ոչ մասնաւոր:

Իններորդ՝ յայտնի է օրինակից, որովհետեւ Եգիպտոսն երկաթի հալոցք է անուանուում, որ խորհրդանշում էր դժոխքը, որտեղ տանջուում էին հոգիները: Արդ, Մովսէսը ողջ ժողովրդին դուրս բերեց անապատ: Այդպէս էլ Քրիստոս ընդհանրապէս ազատեց հոգիներին եւ դուրս բերեց հոգիների կայան:

Տասներորդ՝ Քրիստոսի առաջին գալուստը ողորմութեամբ եւ շնորհներով էր, երկրորդն արդարութեամբ եւ հատուցմամբ: Արդ, ինչպէս ողջերին թողութիւն շնորհեց, այդպէս էլ հոգիներին ընդհանրապէս՝ ազատութիւն, ինչպէս ասում է սուրբ Եպիփանը, որովհետեւ շնորհների եւ ազատութեան ժամանակ էր, եւ հարկաւոր էր մեղաւորներին արդարների հետ [հնարաւորութիւն տալ] վայելելու շնորհը, ինչպէս որ շատ անգամ մեղքը պատժելու ժամանակ ար-

դարներն էլ են մեղաւորների հետ կրում պատուհասը:

Իսկ եթէ մէկն ասի, թէ նրանք, ովքեր երկրում էին եւ հաւատացին, փրկուեցին, իսկ անհաւատները՝ ոչ, այդպէս էլ դժոխքում, ապա ասենք, որ նրանք ոչ մի պատճառ չունէին չհաւատալու, որովհետեւ Քրիստոս լոյս բացեց դժոխքում:

Իսկ եթէ մէկն ասի, թէ հաւատն այստեղ է, իսկ հանդերձեալում խափանւում է, ապա ասենք, որ հանդերձեալում հաւատը խափանւում է դէմ դիմաց տեսնելու առումով, մինչդեռ մեռեալները դէմ յանդիման չեն տեսնում, ուստի նրանց հաւատը պէտք է լինի: Եւ բացի այդ մեռեալների մօտ էլ յոյս կայ, ըստ այդմ՝ «Նրանց յոյսը լի է անմահութեամբ» (Իմաստ. Գ 4), իսկ յոյսը հաւատի մի մասն է:

Իսկ որ ճշմարիտն է, ինչպէս մարմնով տեսնում են երկրի վրայ, այդպէս էլ անհրաժեշտ էր, որ դժոխքում հոգով հաւատային Քրիստոսի հոգուն եւ ազատուէին:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ըստ մարգարէի՝ «դժոխքում չէ, որ պէտք է քեզ խոստովանեն» (Ես. ԼԸ 18), ասենք, որ խոստովանելը կրկին է՝ ներքին իմացմամբ եւ լեզուով արտաբերելով, ինչպէս Պօղոսն է ասում առաջինի մասին՝ «սրտով հաւատալ արդարութեանը», երկրորդի մասին՝ «բերանով խոստովանել փրկութիւնը» (Հռոմ. Ժ 10): Արդ, ողջերից երկուսն էլ պահանջւում է, իսկ հոգիներին բաւական է միայն ներքին իմացումը, որովհետեւ մարմին չունեն:

Եւ եթէ մէկն ասի, բոլոր հոգիներն ուրեմն կարող են յետմահու խոստովանել, ապա ասենք, որ չեն կարող՝ երկու պատճառով:

Նախ, որովհետեւ անցած է ժամանակը եւ փրկութեան օրն ըստ առաքեալի. «Ահա ընդունելի ժամանակը, ահա փրկութեան օրը» (Բ Կորնթ. Զ 2):

Երկրորդ՝ որովհետեւ փոխւում է մարդու բնոյթը, որ ինչպէս չի կարող մեռնել, այդպէս էլ չի կարող ինքն իրեն արդարանալ ու մեղանչել:

Եւ ինչպէս դեւերն իրենց անկումից յետոյ չեն կարող ինքնուրոյն արդարանալ, որովհետեւ անկումը նրանց մահն է, այդպէս էլ մարդու հոգին ինքնուրոյն չի կարող արդարանալ, եւ միայն այլոց ձեռքերով են վճարւում նրանց պարտքերը, ապա հասնում ողորմութեան:

Սա ընդհանրապէս բոլոր հոգիների մասին:

Իսկ հոգիները, երբ դժոխքում տեսան Քրիստոսին, դա էր նրանց փրկութիւն եւ ողորմութիւն ստանալու ժամանակը, որի պատճառով նրանք նոյն պահին հաւատով արդարացան:

Իսկ եթէ մէկն ասի, թէ՝ «Փրկեցիր քո ընտրեալներին», ապա ասենք, որ փրկութիւնը երկու տեսակ է՝ յաւիտենական եւ ժամանակաւոր. ովքեր հաւատացին, յաւիտենապէս փրկուեցին, ովքեր [չնայած] չհաւատացին՝ ժամանակաւոր, քանի որ Աստծոյ Որդին էր դժոխք իջել:

Իսկ թէ դարձեա՞լ մեղաւորները վերադարձան դժոխք, թէ՝ ըստ ոմանց նոյն տեղը մնացին, կամ տանջանքի այլ տեղե՞ր [տեղափոխուեցին]՝ համաձայն գործերի հատուցման, ապա յայտնի է դառնում օրինակից, որովհետեւ թէեւ ընդհանրապէս դուրս եկան Եգիպտոսից անապատ, սակայն միայն մի մասը մտաւ պարգեւների երկիր:

Այսքանը դժոխքի մասին:

ԱՒԱԳ ՇԱԲԱԹՈՒԱՅ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԹ

Հարց. Ինչո՞ւ ենք [պահքը] լուծում շաբաթ երեկոյեան:

Պատասխան. Շաբաթ երեկոյեան ենք լուծում ոչ թէ այն պատճառով, որ Քրիստոսի յարութիւնը շաբաթ օրն է, ո՞չ, քա՛ւ լիցի: Քրիստոսի յարութիւնը միաշաբթի կէսգիշերին էր: Այլ շաբաթ օրը Քրիստոսի յարութեան նախատօնակն ենք անում: Որովհետեւ ըստ վարդապետների երկու օր կայ. մէկը՝ բնական, միւսը՝ շնորհական:

Բնական օրուայ սկիզբը լուսաբացն է, իսկ շնորհականինը՝ կէսգիշերը:

Բնական օրը մարմնաւորն է, որ բաժանւում է պահքի եւ ուտիքի, իսկ շնորհականը՝ հոգեւոր է, որով սկսում ենք բոլոր սուրբ տօնները՝ բնական օրուանից վեց ժամ առաջ:

Իսկ տէրունական տօնը երեկոյեան ժամը ինից ենք օրը սկսում, որն ընդհանուր տօներից ինը ժամ առաջ է: Եւ միասին տասնհինգ ժամ առաջ նախորդ օրը սկսում ենք նախատօնակը, եւ սա ամենուրէք:

Այդպէս էլ շաբաթուայ այս օրը, որ տօնում ենք յարութեան կիրակիի համար, ինը ժամ առաջ անում ենք Քրիստոսի յարութեան նախատօնակը, եւ սա բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ Քրիստոսին Աստուած ենք խոստովանում եւ նրա տօնն իբրեւ տէրունական տօն կատարում: Իսկ նրանք, ովքեր Քրիստոսին Աստուած չեն խոստովանում, նրա տօնը սովորական մարտիրոսի նման կէսգիշերից են անում:

Երկրորդ՝ որովհետեւ սուրբ Կիւրեղն ասում է «Պարապմանց գրքում», որ «շաբաթ օրը երեկոյեան շաբաթը լուծում ենք, քանզի վաղ առաւօտ Քրիստոս յարութիւն առած է»:

Երրորդ՝ վկայում է սուրբ Եւագրիոսը. «Քո պահքը մինչեւ աւագ շաբաթուայ ժամը ինը»:

Եւ տե՛ս, որ Եփեսոսի ժողովից յետոյ բոլոր ազգերը այսօր էին կատարում Նաւակատիքը մինչեւ Քաղկեդոնի ժողովը, ուր փոխուեցին տօները, պահքերը, դաւանանքը:

Չորրորդ, վկայ է նաեւ զգայական լոյսը, որ ակնյայտօրէն բոլոր մարդկանց համար գերեզմանից ծագում է ժամը ինին, եւ սա չեն կարող ուրանալ ժխտողների ազգը, քանի որ աչքի տեսնելը աւելի հաստատ է, քան ականջի լսելը:

Եւ այս բանն ի պատիւ մեր ազգի սուրբ Լուսաւորչի միջոցով [հաստատուեց մեզանում]:

Եւ տե՛ս, երբ Լուսաւորիչը կարգեց [այդ տօնի] նաւակատիքը[480], Նիկիայի ժողովի օրերն էին, [կարգ] որ առաջ ընդհանուր էր բոլոր ազգերի համար, նոյնը կարգեց նաեւ մեզանում:

Եւ ինչպէս ուրբաթ օրուայ ժամը իննին լոյս ծագեց հոգիների վրայ դժոխքում, այդպէս էլ շաբաթ օրուայ ժամը իննին [որպէս] լոյս ճառագում է Արեգակն արդարութեան՝ Քրիստոս, եւ մինչեւ առաւօտ լրւում է նրա՝ մեռեալներից յարութիւն առնելը:

Հինգերորդ վկայութիւնը, որ տարուայ բոլոր շաբաթ երեկոները բոլոր ազգերը կիրակնամուտ են անուանում, այդպէս էլ մենք շաբաթ երեկոյեան «Լոյս զուարթ»-ն ենք ասում եւ «Սուրբ Աստուած, որ յարեար»-ը՝ օրն սկսելով շաբաթից:

Վեցերորդ վկան իրենք՝ ֆռանկների ազգն են, որ ամէն շաբաթ օրը «Վիջիլ»[481] են անուանում, միս չեն ուտում՝ ի խորհուրդ Աւագ շաբաթուայ նաւակատիքի: Թէպէտ այսօր, մարդկանց խաբելու եւ տօնը փոխելու համար նաւակատիքի [ուտեստից] ոչինչ չեն ուտում, որ ձուկն է, սակայն միշտ քառասնօրեայ պահքը պղծում են ձկով եւ հարբեցողութեամբ:

ՀԱՐՑ ՆԱՒԱԿԱՏԻՔԻ ՄԱՍԻՆ

Ինչո՞ւ են նաւակատիքին ձուկ ուտում, իսկ միս՝ ոչ:

Պատասխան. Նաւակատիք նշանակում է «նորոգում»[482], «տօն» կամ «ուրախութիւն»:

Եւ խորհուրդ այն է, որ առանց արեան կատարենք, որովհետեւ հեթանոսները զոհում էին մանուկների արիւնը, հրէաները անբան անասունների արեամբ էին կատարում իրենց նաւակատիքը, իսկ առաքեալները մեր նաւակատիքը դարձրեցին առանց արեան, որպէսզի տարբերուենք նրանցից:

Եւ քանի որ մեր զգայարանները հինգն են, որոնցով մեղանչում ենք, տարուայ մէջ նաւակատիքի հինգ օրեր են նշանակուած, որպէսզի քաւեն հինգ զգայարանների [մեղքերը]:

Եւ նաւակատիքի խորհուրդը աւանդուեց [հենց] դրախտում՝ ուտել բոլոր պտուղներից եւ մէկից՝ ոչ: Այդպէս էլ մեզ աւանդուեց բոլոր կերակուրներից ուտել եւ միս՝ ոչ:

Եւ ինչպէս Ադամը բոլորից չկերաւ, սակայն մէկից կերաւ ու դատապարտուեց, նոյնպէս եւ նրանք, ովքեր այս օրը պահեն, ոչ մի ուտելիք չուտեն, սակայն միս ուտեն՝ կդատապարտուեն:

Եւ տարուայ բոլոր օրերը երեք կարգի են բաժանւում. բացարձակ պահք, ուտիք եւ միջակ, ինչպիսին նաւակատիքն է, ըստ այն բանի, որ մարդն ամբողջութեամբ կազմուած է երեք մասից. հոգի, մարմին, եւ երկուսի միջինը՝ խառնուրդը, որ շունչն է:

Պահքը պատշաճում է հոգուն, ուտիքը՝ մարմնին, նաւակատիքը՝ խառնուած շնչին:

Այդպէս էլ քրիստոնեաների ուտելիքները բաժանւում են երեք խմբի. կենդանական միսը, որ կատարեալ կենդանուց է, այսինքն այն, որ ունի հինգ զգայարաններ, շունչ եւ շարժւում է. սա ուտիքի եւ զատկի կերակուր է: Իսկ որ բանջարեղէն է, ընդեղէն, պտուղ՝ պահքի ուտելիք է, որովհետեւ անզգայ է, տեղով անշարժ եւ անշունչ:

Իսկ նաւակատիքի ուտելիքն այն է, որ այս երկուսի միջինն է, այսինքն՝ կենդանական եւ բուսական, ինչպիսիք ձուկն են, ձուն, կաթը, որովհետեւ ձուն եւ կաթը կենդանուց են, սակայն առանձին կենդանի չեն, իսկ ձուկը կատարեալ կենդանի է՝ շարժումով եւ զգայարաններով, սակայն չունի շունչ եւ ոչինչ չի տալիս, այդ պատճառով էլ պակասաւոր է:

Կամ էլ ինչպէս ոմանք են ասում՝ երկու աւազից եւ մի սերմից է գոյանում ձկան մարմինը, ուստի պարզ է, որ նաւակատիքի կերակուր է, որովհետեւ կենդանուց է եւ ոչ կենդանուց: Որովհետեւ ձուկը կենդանի է եւ կենդանուց չէ. եւ ձուն կենդանի չէ եւ կենդանուց է:

Եւ տե՛ս ու յիշի՛ր, որ սրանք մի կարգում են դրուած, այսինքն՝ ձուկը, ձուն, կաթը, եւ եթէ կարելի է ուտել մէկը, ուրեմն կարելի է եւ միւսը:

Եւ վա՜յ, որովայնամոլ ազգերին, ովքեր պահքերը բոլորն են անխտիր լուծում ձկով, որոնց աստուածն իրենց որովայնն է, իսկ փառքը՝ ամօթն՝ ըստ առաքեալի (տե՛ս Փիլիպ. Գ 19):

Եւ անօրէնութիւն անողները պատճառ են դառնում մեղքերի պատճառների այսպէս [ասելով]. եթէ Քրիստոս Վերնատանը ձուկ կերաւ, անհրաժեշտ է այդ նոյն օրը ձուկ ուտել:

Ասենք, որ Վերնատանը [Քրիստոս] հին [օրէնքը] կատարեց նախքան իր մարմինը բաշխելը եւ նորը կարգելը, իսկ հնի համար մենք պարտաւորուած չենք, այլապէս գառ էլ կերաւ Վերնատանը, դո՛ւ էլ կեր պահքին:

Պատճառաբանում են նաեւ այն, որ Քրիստոս, երբ բազմապատկեց հացն ու ձուկը, արդէն մօտ էր զատիկը: Սակայն ասենք, որ այս եւս կեղծ պատճառաբանութիւն է, որովհետեւ ըստ հրէաների նախ զատիկն էր, ապա բաղարջակերի պահքը, ուստի ուտիք էր, երբ բաժանեց ձուկը:

Եւ բացի այդ, իր քառասնօրեայ [պահքում] ձուկ չկերաւ, իսկ մենք Քրիստոսի քառասնօրեայ պահքն ենք պահում եւ ոչ թէ հրէաների:

Պատճառաբանում են նաեւ, որ յարութիւնից յետոյ ձուկ կերաւ աշակերտների հետ, երբ կրակի մէջ տեսան թէ՛ խորոված ձուկ եւ թէ՛ հաց: Եւ օրը չորեքշաբթի էր, իսկ հինգշաբթի օրը համբարձուեց:

Ասենք, որ կրկնակի սուտ է եւ նորայայտ աւետարան:

Նախ՝ որովհետեւ յարութիւնից յետոյ պահք չէր, այլ զատիկ, քանի դեռ նրանց հետ էր Փեսան, ինչպէս ինքը կարգադրեց (տե՛ս Ղուկ. Ե 34):

Եւ երկրորդ սուտն այն է, որ այնտեղ, ուր ձուկը կերան, Գալիլիայում՝ Տիբերական ծովեզրը, չորսօրեայ ճա-

նապարհի [չափ] հեռու էր Երուսաղէմից եւ Ձիթենեաց լեռից, որտեղից Քրիստոս համբարձուեց: Ուստի յայտնի է, որ ձուկ կերաւ ոչ թէ չորեքշաբթի օրը, այլ նախորդ կիրակի: Եւ որովհետեւ հինգ անգամ հինգ կիրակի Քրիստոս երեւաց աշակերտներին մինչեւ Համբարձում եւ հինգ անգամ՝ նոյն օրը, երբ յարութիւն առաւ գերեզմանից, որ միասին եղաւ տասն անգամ:

Ապա ուրեմն, սուտ է, որ չորեքշաբթի օրը կերան ձուկը:

Հակառակորդները ասում են նաեւ, որ եթէ ձուկը կատարեալ կենդանի է, ինչո՞ւ չենք մորթում: Ասենք, որ օդով չշնչելու պատճառով, այլ՝ ջրով, որովհետեւ ջրից հանելով՝ շունչը կտրւում է, ինչպէս ասել ենք տասնութերորդ գլխի, վեցերորդ պրակում: Եւ ինչպէս բոյսերի հատելն է, այդպէս էլ ձկների՝ [ջրից] հանելն է ու կենդանիների մորթելը: Եւ պատճառն այն է, որ բոյսն ապրում է արմատով, ձուկը՝ ջրով, կենդանիները՝ շնչով եւ արեամբ:

Տարբերւում են նաեւ հետեւեալ կերպ. տնկիները, այսինքն՝ բոյսերն ու պտուղները ում կողմից էլ, որ պոկւում են՝ մարդու, թէ կենդանու, սնունդ են, իսկ սատկած կամ յօշոտուած [կենդանին]՝ ոչ: Եւ կարելի է ուտել միայն տղամարդու մորթած կենդանին, իսկ կնոջը՝ ոչ:

Սա ըստ բնական կարգի:

Իսկ ըստ եկեղեցու ունեցած տարբերութիւնների ասուել է քսանմէկերորդ գլխի քառասունհինգերորդ պրակում:

Հինգերորդ, ասում են նաեւ, քանի որ ձուկը չենք մորթում, ուստի պահքին ուտում ենք:

Ասենք, որ հաւի ձուն էլ, կաթն էլ չենք մորթում, կե՛ր եւ դրանք պահքի ժամանակ, քանի որ նոյնատեսակ են:

Վեցերորդ, ասում են նաեւ, թէ ձուկն արիւն չունի:

Ասենք, որ մողէսն ու կոկորդիլոսն էլ, որին քարթոշ[483] են ասում, եւ երկրի վրայի տեսակ-տեսակ այլ զեռուններ արիւն չունեն, նաեւ բազմաթիւ [տեսակներ], որոնք ջրում եւ օդում են, ինչպիսին չղջիկն է, ուրեմն կե՛ր բոլորը:

Եւ դարձեալ ձուն ու կաթը չես ուտում, որովհետեւ արիւն ունեն, եւ դարձեալ ասում ես, թէ արիւն չունեն:

Իսկ ես ասում եմ, որ հաստատապէս արիւն ունեն, թէեւ արագ ցամաքում է: Եւ ձուկը գազան է՝ վիթխարի ու խառնակեր, քան բոլոր գազանները:

Եօթներորդ, ասում են, թէ ձուկը ջուր է:

Ասենք, որ Պօղոսը մարմին է ասում, իսկ դու՝ ջուր. «Այլ է ձկների մարմինը, այլ՝ թռչունների, այլ՝ գազանների» (Ա Կորնթ. ԺԵ 39):

Եւ այսքան երկարաբանեցի, որ եթէ որեւէ մէկը հակառակի, այսպէս պատասխանես նրան եւ յիշես եղկելի անձն իմ ի Տէր, ուղղակից եղբա՛յր իմ ի Քրիստոս:

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Լ

Հարց. Ո՞ր ժամին յարութիւն առաւ Քրիստոս եւ քանի՞ ժամ մնաց մահացած:

Պատասխան. Ասենք, որ յարութեան օրը կիրակի էր՝ ըստ աւետարանիչների: Իսկ թէ ո՞ր ժամին յարութիւն

առաւ, սրա մասին կարծիքները զանազանւում են:

Նախ՝ որ աւետարանը որոշակի ժամ չի նշում յարութեան, ինչպէս նաեւ խաչելութեան եւ թաղման համար, որովհետեւ գերեզմանը փակուած էր, եւ յարութիւն առաւ: Ապա յարութիւնից յետոյ իջած հրեշտակը գլորեց վէմից կափարիչը, նստեց նրա վրայ եւ աւետիս տուեց իւղաբեր [կանանց]:

Երկրորդ՝ եկեղեցու վարդապետներն էլ համաձայնութեան չեն գալիս ժամի հարցի շուրջը, որովհետեւ ոմանք ասում են, ինչպէս մեծն Ներսէսը «Մեկնութիւն սաղմոսաց»-ի մէջ[484], թէ՝ «Եօթ անգամ օրուայ մէջ օրհնելու եմ քեզ» (Սղմ. ՃԺԸ 164) ասելը շաբաթ երեկոյ լոյս կիրակիին է վերաբերում, երբ յարութիւն առաւ Քրիստոս, ըստ Մատթէոսի՝ «շաբաթ երեկոյեան, երբ բացւում էր կիրակին» (Մտթ. ԻԸ 1):

Իսկ այլ վարդապետներ ասում են, թէ առաւօտ արշալոյսին է յարութիւն առել՝ ըստ Մարկոսի եւ միւս աւետարանիչների (տե՛ս Մրկ. ԺԶ 1)[485]:

Իսկ նրանք, ովքեր որդեգրուել են ճշմարտութեանը, ասում են կէսգիշերին էր Քրիստոսի յարութիւնը գերեզմանից, որին հետեւում ենք նաեւ մենք՝ հաստատելով բազմաթիւ վկայութիւններով եւ օրինակներով:

Նախ՝ որովհետեւ Մատթէոսը շաբաթ երեկոյեան եւ կիրակի լուսանալն է յիշատակում, այսինքն գիշերուայ սկիզբը եւ վախճանը, որ երկուսի միջեւ է. հետեւաբար, կէսգիշերն է յարութեան ժամը:

Երկրորդ՝ ի դէմս Տիրոջ, Դաւիթն ասում է. «Կէսգիշերին ելնում էի խոստովանելու Տիրոջը» (Սղմ. ՃԺԸ 62), որովհետեւ սովորութիւն ունէր այլ օրերին առաւօտեան աղօթել, իսկ կիրակի օրը՝ կէսգիշերին:

Երրորդ՝ որովհետեւ կէսգիշերին ծնուեց կուսական արգանդից, որ յայտնի է հովիւների եւ հրեշտակների [այցելութիւնից]: Եւ նոյն ժամին էլ անապական գերեզմանից ծնուեց:

Չորրորդ՝ կէսգիշերին ձերբակալուեց ու դատապարտուեց մահուան, եւ կէսգիշերին էլ յարութիւն առաւ ու ազատուեց մահուանից:

Հինգերորդ՝ մեր յարութեան պատճառը Քրիստոսի յարութիւնն է: Արդ, մեր յարութիւնը լինելու է վերջին կիրակի օրը՝ կէսգիշերին, ըստ այդմ՝ «Կէսգիշերին ձայն հնչեց, թէ՝ ահա՛ գալիս է Փեսան, եկէ՛ք ընդառաջ ելնենք նրան» (Մտթ. ԻԵ 6), ուրեմն Քրիստոսի յարութիւնը կիրակի օրը կէսգիշերին էր, ինչպէս ասուեց:

Վեցերորդ՝ կէսգիշերին հրեշտակը հարուածեց Եգիպտոսին, Մովսէսը դուրս բերեց Իսրայէլի որդիներին, որ դժոխքի աւերման եւ հոգիների ազատելու օրն էր:

Այդպէս էլ Քրիստոս կէսգիշերին հարուածեց սատանային ու կապեց [նրան]: Եւ որ ժամին Մովսէսը դուրս բերեց ժողովրդին Եգիպտոսից, նոյն ժամին էլ Քրիստոս յարութիւն առաւ մեռեալներից եւ դուրս բերեց ազատուած հոգիներին հրահալոց չարութեան

դժոխքից եւ բռնութեան իմանալի Փարաւոնի [գերութիւնից]:

Եօթներորդ՝ դարձեալ կիրակի օրը Մովսէսն անցաւ Կարմիր ծովը, եւ ընկղմուեց Փարաւոնը՝ Քրիստոսի յարութեան եւ սատանայի կորստեան օրինակով:

Եւ այսպիսինն էր օրուայ պատկերը. հինգշաբթի օրը երեկոյեան լուսնի տասնչորսերորդ օրը մորթեցին գառը եւ ուրբաթ օրը այգաբացին ամսուայ տասնհինգերորդ օրը դուրս եկան, իսկ կիրակի օրը անցան ծովը, որ նիսանի տասնեօթին էր:

Այդպէս էլ ըստ օրինակի՝ մեր Տէրը զատիկը կատարեց աւագ հինգշաբթի երեկոյեան եւ կէսգիշերին, երբ բռնուեց, հարուածեց դեւերի անդրանիկներին (տե՛ս Ելք ԺԲ), իսկ ուրբաթ օրը խաւարեց երկիրը, ինչպէս ամպն էր [Մովսէսի] ժողովրդի վրայ (տե՛ս Ելք Ժ): Երեկոյեան լոյս ծագեց հոգիների վրայ, ինչպէս Իսրայէլի սեան լոյսը (տե՛ս Ելք ԺԳ):

Եւ ինչպէս ժողովուրդը վերադարձաւ իր առաջին հանգրուանը, [այդպէս էլ] Տիրոջ մարմինը դրուեց երկրի հողի մէջ:

Եւ շաբաթ երեկոյեան ճեղքուեց ծովը, կիրակի գիշերն անցաւ այն, եւ ընկղմուեց Փարաւոնը: Նոյնպէս կիրակի օրը կէսգիշերին յարութիւն առաւ Տէրը գերեզմանից՝ դուրս բերելով հոգիները երկնքի անապատ, ու խաչանշան գաւազանով[486] Փարաւոնն ընկղմուեց դժոխքի անդունդը:

Ութերորդ՝ արի Սամսոնը, որ մեր ամենազօր Տիրոջ օրինակն էր, իջաւ Գազա, որ աշխարհի օրինակն էր, ու հանգրուանեց պոռնկատանը, որ դժոխքի օրինակն էր, երբ այլազգիները պաշարեցին քաղաքը: Եւ կէսգիշերին արթնացաւ եւ նիգերով ու սեմով փակուած դուռը ուսով տեղահան արեց եւ ելաւ լեռը: Որ նշանակն է, թէ Քրիստոսի յարութիւնն էլ կէսգիշերին էր, երբ խորտակեց դժոխքի դռները եւ հոգիներին դուրս բերեց երկնային լեռան վրայ:

Իններորդ՝ Գեդէոնը, նա, որ [Աստծոյ նշանը]՝ ցօղը, տեսաւ գեղմի վրայ, որն իր հօր պարարտ եզը հրեշտակի հրամանով կէսգիշերին զոհաբերեց եւ Բահաղի անտառն ու սեղանը կործանելով՝ դուրս պրծաւ նրանց ձեռքից, օրինակն էր Փրկչի, որ զոհաբերուած պարարտ եզն է, որ կէսգիշերին կործանեց դժոխքի բագինը եւ յարութիւն առաւ՝ ազատուելով մահից:

Տասներորդ՝ մի օր այսահարուած Սաւուղը կամենում էր Դաւթին նիզակով բեւեռել պատին, որից [սա] փրկուեց ու գնաց տուն: [Նա, որ] պահակներով շրջապատուած էր, հանդերձով փաթաթուած անկողնում, այծի լեարդն ու մազը սնարին, գիշերը իջաւ պատուհանից, բարձրացաւ Սամուէլի մօտ եւ ազատուեց Սաւուղի ձեռքից:

Այդպէս էլ Սաւուղի որդիները նախանձից կուրացած՝ բեւեռեցին Տիրոջը եւ խոցեցին նիզակով ու պահում էին գերեզմանում, որը կէսգիշերին թողեց պատանքը գերեզմանում եւ յարութիւն առնելով՝ ելաւ Հօր մօտ՝ երկինք:

Տասնմէկերորդ՝ Դաւիթը փախստական ապրում էր ներքին այրում, իսկ Սաւուղը քուն մտաւ արտաքին այրում: Եւ կէսգիշերին Դաւիթը կտրեց Սաւուղի դրոշակը, իսկ առաւօտեան ձայն տուեց նրան:

Արդ, ներսի այրը խորհրդանշում է դժոխքը, արտաքինը՝ գերեզմանը, Սաւուղը՝ սատանան, որ գերել էր մարդկանց:

Եւ Տէրն էլ գիշերը ելնելով գերեզմանից՝ բաժանեց եւ առաւ նրանից հոգիներն ու իրեն հանդերձ դարձրեց իր սուրբ ժողովրդին, որի մասին ասում էր. «Ձեզ բոլորիդ հագնելու եմ իբրեւ հանդերձ» (հմմտ. Սղմ. ԾԸ 19), ապա ուրեմն յարութիւն առաւ գիշերն ու երեւաց առաւօտեան:

Տասներկուերորդ՝ երբ Սաւուղը նորից փորձեց շրջապատել ու եկաւ իր զօրքով դաշտում գիշերեց, Դաւիթը մտաւ, վերցրեց նրա սնարի գլխից սուրը ու գիշերը ելնելով լեռան վրայ՝ ձայն տուեց. «Ո՞ւր է քո սուրը»[487]:

Այդպէս էլ մեր Տէրն իջաւ ննջեցեալների մօտ գերեզման եւ դժոխք ու յարութիւն առնելով՝ գիշերը ելաւ երկնային լեռը եւ աղաղակելով ասաց. «Ո՞ւր է, մահ, քո յաղթանակը, ո՞ւր է դժոխք, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55):

Ապա ուրեմն գիշերն էր Քրիստոսի յարութիւնը:

Տասներեքերորդ՝ ամաղեկացիները գերեցին Հրէաստանի կողմը եւ այլազգիներին, իսկ Դաւիթը երեք օր անց կէսգիշերին մտաւ ու հարուածեց, մինչեւ միւս օրը երեկոյեան վերադարձրեց իր երկու կանանց ու չթողեց ոչ մի գերի եւ աւարից բաշխեց իր բոլոր սիրելիներին:

Ամաղէկը խորհրդանշում էր սատանային, որ գերեց հրէայ եւ հեթանոս մարդկանց հոգիները, իսկ մեր Տէրը երեք օրէնքներից յետոյ, այսինքն՝ բնական, բանաւոր, գրաւոր, երեւաց կեանքի գիշերին, իջաւ դժոխք, աւերեց այն՝ վերադարձնելով իր երկու ժողովուրդներին՝ ոչ մէկին չթողնելով դժոխքում եւ բոլորին ազատեց՝ յարութիւն տալով ու բաշխելով մարդկանց որդիներին պարգեւներ, ինչպէս մարգարէն է ասում՝ «Ելաւ բարձունքի վրայ, գերեց գերութիւնը, աւար առաւ, բաշխեց պարգեւները մարդկանց որդիներին» (Սղմ. Կէ 19):

Տասնչորսերորդ՝ այլեւ գիշերը Տիրոջ հրեշտակը հանեց Ռափսակի զօրքը, որ պաշարուած էր Երուսաղէմում ու փրկեց նրանց, իսկ առաւօտեան տեսան բոլոր մարմինները մեռած եւ աւար ժողովեցին՝ Քրիստոսի խորհրդով, որ հարուածեց սատանայի զօրութեանը, իսկ առաւօտեան երեւաց իր աշակերտներին եւ իր հետ յարութիւն առածներին:

Այսքանը Սուրբ Գրքի վկայութիւնների մասին:

Տասնհինգերորդ՝ կէսգիշերին է յարութիւնը, ինչպէս ասում են [Յովհան] Ոսկեբերանը «Յարութեան» ճառում[488], սուրբ [Գրիգոր] Նիւսացին, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Սկեւռացին եւ այլք, քանզի կէսգիշերին յարութիւն առաւ Քրիստոս, որպէսզի այցելի մարդկային

ազգին եւ խաւարի ու մահուան ստուերի մէջ ընկածներիս իմացութեան լոյսի եւ շնորհների մէջ յարութիւն տայ:

Տասնվեցերորդ՝ կէսգիշերին յարութիւն առաւ, որպէսզի հոգիներին խաւարի բանտից դուրս բերի կենաց լոյս:

Տասներեքներորդ՝ կէսգիշերին յարութիւն առաւ, որպէսզի ստուերօրինակները փոխի ճշմարտութեան լոյսի:

Տասնութերորդ՝ կէսգիշերին էր Փրկչի յարութիւնը, որի պատճառով էլ երեկոյեան կողմ գիշերամուտին ճրագալոյց ենք անում ու պատարագ, ինչպէս Ծննդեան [տօնին]: Իսկ եթէ լոյս կիրակի լինէր յարութիւնը, ուրեմն պէտք է առաւօտեան պատարագէինք եւ ոչ թէ [նախորդ] երեկոյեան:

Տասնիններորդ՝ եւ պատշաճում էր կէսգիշերին յարութիւն առնել, որովհետեւ նոյն պահից սկսում է արեգակը բարձրանալ եւ առաւօտեան ծագում մեզ վրայ: Այդպէս էլ իմանալի Արեգակը՝ Քրիստոս, նոյն ժամին յարութիւն առաւ գերեզմանից, իսկ արշալոյսին երեւաց իւղաբեր [կանանց] եւ առաքեալներին:

Քսաներորդ՝ յայտնի է նաեւ այն բանից, որ մինչեւ Քրիստոս օրուայ սկիզբը լոյսի ծագումն էր, իսկ Քրիստոսի յարութիւնից յետոյ օրուայ սկիզբը կէսգիշերից է սկսւում, որովհետեւ այժմ խաւարից դէպի լոյսն ենք գնում:

Այս խորհրդով էլ բոլոր սուրբ մարտիրոսների տօնը կէսգիշերին ենք սկսում՝ վեց ժամ առաջ, քան սովորական օրուայ լոյսի ծագելը:

Իսկ եթէ մէկն ասի, թէ Աւետարանն ասում է, որ լուսաբացին եղաւ կանանց գալն ու Քրիստոսին տեսնելը, ապա ասենք, որ նախ յարութիւնը կէսգիշերին էր, ինչպէս ցոյց տրուեց, իսկ երեւալը՝ արշալոյսին:

Ասենք նաեւ, որ իւղաբեր կանայք չորս անգամ եկան գերեզման եւ զանազան տեսիլքների հանդիպեցին, որոնցից իւրաքանչիւրի մասին գրում են չորս աւետարանիչները:

Մատթէոսը առաջինի մասին գրում է, որ երբ կէսգիշերին եկան, մի հրեշտակ տեսան, որ վէմը նրանց առաջ գլորեց եւ նստեց վրան (տե՛ս Մտթ. ԻԸ 2):

Երկրորդը պատմում է Ղուկասը, որ վաղ առաւօտեան էր, երբ տեսան երկու լուսազգեստ տղամարդու, իսկ վէմը՝ գլորուած (տե՛ս Ղուկ. ԻԴ 4):

Երրորդը՝ Մարկոսը պատմում է Ղուկասից յետոյ առաւօտուայ եւ արեւածագի մասին, երբ ներսում գերեզմանի աջ կողմում նստած մի երիտասարդ տեսան (տե՛ս Մրկ. ԺԶ 5):

Չորրորդը՝ Յովհաննէսը պատմում է միայն Մագդաղենացու մասին, որ երկու հրեշտակ տեսաւ՝ սնարի ոտքերի մօտ նստած (տե՛ս Յովհ. Ի 12):

Ահա, այսպէս խառն են երեւում նրանց շարադրանքը եւ տեսածները, սակայն բոլորն էլ պատմում են նոյն յարութիւնը:

Եւ հարցնելու է այս. եթէ Մագդաղինացին առաջին կանանց հետ եկաւ, որոնց մասին պատմում է Մատթէոսը, եւ համբուրեց Քրիստոսի ոտքը, ապա ինչո՞ւ

է ասում. «Տարան իմ Տիրոջը, եւ չգիտեմ, որտեղ դրեցին նրան» (Յովհ. Ի 13):

[Պատասխանն] այս է. երբ կէսգիշերին հրեշտակը հրամայեց գնալ ու պատմել աշակերտներին, մնացած կանայք, որոնք նրա հետ էին, գնացին, սակայն Մագդաղենացին, որ ջերմեռանդ սէր ունէր Քրիստոսի հանդէպ, մնաց, որ նորից որեւէ բան լսի կամ տեսնի:

Ոմանք էլ ասում են, թէ երկու Մագդաղինացիներ կային. մէկը գնաց եւ ճանապարհին տեսաւ Տիրոջը, միւսը մնաց եւ տեսաւ պարտէզում:

Իսկ եթէ մէկն ասի, թէ մարգարէն [ինչո՞ւ] է ասում. «Զարթնի՛ր փառք իմ, եւ ես զարթնելու եմ առաւօտեան» (Սղմ. ԾԷ 3), ապա ասենք, որ վաղ առաւօտն ու խոր երեկոն գիշերուայ կէսն են նշանակում, ինչպէս ասում է սուրբ Կիւրեղը՝ «Վաղ առաւօտն ու խոր գիշերը նոյն համընթաց ժամանակն են»[489]:

Այսքանն այն մասին, թէ ո՞ր ժամին յարութիւն առաւ Քրիստոս:

Իսկ թէ քանի՞ ժամ մնաց մահացած, ոմանք ասում են քառասուն ժամ, ուրիշներն՝ աւելի կամ պակաս: Իսկ [նրանք, ովքեր] ճիշտն են յայտնում, [ասում են] երեսուն ժամ մարմինը մնաց գերեզմանում, իսկ հոգին՝ երեսուներեք ու կէս ժամ՝ դժոխքում: Որովհետեւ ուրբաթ օրը ժամը իննին հոգին աւանդեց եւ իջաւ դժոխք, իսկ երեկոյեան մայրամուտին մարմինը մտաւ գերեզման:

Արդ, շաբաթ գիշերն ու ցերեկը քսանչորս ժամ, եւ վեց ժամ կիրակիից մինչեւ կէսգիշեր, որ կլինի երեսուն ժամ, իսկ հոգին երեքուկէս ժամ արդէն իջել էր դժոխք, որ կլինի երեսուներեքուկէս ժամ:

Իսկ խորհուրդն այն էր, որ քանի տարի մարմնով քարոզեց մարմնաւորների համար, նոյնքան ժամ էլ հոգով քարոզեց հոգիների համար, այսինքն՝ երեսուներեք ու կէս տարի երկրի վրայ, երեսուներեք ու կէս ժամ՝ դժոխքում: Իսկ մարմինն երեսուներորդ ժամին գերեզմանից յարութիւն առաւ, որովհետեւ երեսնամեայ մկրտուեց մարմնով ու ելաւ ջրից: Եւ Ադամը երեսնամեայ ստեղծուեց: Եւ մենք էլ ընդհանուր յարութեան ժամանակ երեսնամեայ ենք յարութիւն առնելու:

Հարց. Ապա ինչպէ՞ս էր երեք օր եւ երեք գիշեր Տիրոջ թաղումը:

Պատասխան. Տարբեր կերպ են պատասխանում:

Նախ, այլաբանօրէն, որ հինգշաբթի օրը երեկոյեան թաղուեց առաքեալների սրտում՝ մարմնի ճաշակմամբ, իսկ կիրակի երեկոյեան տեսան Տիրոջը, երբ փակ դռներով մտաւ նրանց մօտ:

Երկրորդը հետեւեալ կերպ. ուրբաթ գիշերը ձերբակալեցին մինչեւ ժամը վեցը, ապա մինչեւ ժամը ինը խաւար եղաւ: Յետոյ դարձեալ լոյս եղաւ երեք ժամ մինչեւ երեկոյ, ըստ մարգարէի՝ «Արեգակը մայր կմտնի միջօրէին, իսկ երեկոյեան լոյս կլինի եւ դարձեալ՝ ոչ ցերեկ կլինի ու ոչ գիշեր, եւ կլինի մէկ օր» (Զաք. ԺԴ 7):

Եւ վեց ժամ անց, ուրբաթ գիշերը լինում է երկու օր: Ապա շաբաթ գիշերն ու ցերեկը լինում են երեք օր եւ երեք գիշեր:

Եւ շաբաթ երեկոյեան լոյս կիրակի, ըստ Մատթէոսի, եղաւ Քրիստոսի յարութիւնը:

Երրորդ՝ այսպէս են ասում. ցերեկը եւ գիշերը՝ երեք օր, այսինքն՝ ուրբաթը, շաբաթ գիշերը, շաբաթ ցերեկը, իսկ երեկոյեան՝ յարութիւնը:

Չորրորդ՝ այսպէս էլ ասում. ուրբաթ օրը եւ գիշերը չարչարանքն էր, շաբաթ օրը եւ գիշերը թաղումն էր, կիրակի օրը եւ գիշերը յարութիւնն է, որ ժամին, որ եղաւ:

Հինգերորդ՝ իսկ ճշմարիտ բացատրութիւնն այն է, որ երկու տեսակ է օրը. բնական եւ ըստ իրադարձութեան, ու վերը ասածները բոլորն ըստ իրադարձութեան օրեր էին եւ նաեւ չարչարանքի [ժամանակը], մինչդեռ պէտք է բնական երեք ցերեկ եւ երեք գիշեր լինէր երկրի սրտում (Մտթ. ԺԲ 40), ինչպէս ասաց Քրիստոս:

Եւ այսպէս է. ամբողջի անուամբ պէտք է ճանաչել մասնաւորը. որովհետեւ առաջին օրն անկատար է եւ մասնակի, անկատար եւ մասնակի է նաեւ երկրորդը, իսկ միջինը կատարեալ է: Եւ սովորաբար այսպէս ենք ասում, եթէ մէկը մի տեղից դուրս է գալիս ուրբաթ կէսօրին եւ կիրակի լուսաբացին կամ առաւօտեան հասնում է մեզ մօտ՝ ասում ենք երեքօրեայ ճանապարհ է անցել:

Այսպէս է եւ Քրիստոսի յարութիւնը:

ՄԱՐԻԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Քանի՞ Մարիամ է յիշում Աւետարանը:

Պատասխան. Վեց: Նախ՝ Աստուածածին կոյս Մարիամին:

Երկրորդ՝ Մարիամ Մագդաղինացուն, որի միջից եօթ դեւեր ելան (տե՛ս Մրկ. ԺՁ 9):

Երրորդ՝ միւս Մարիամ Մագդաղինացին:

Չորրորդ՝ Մարիամը՝ Յակոբի եւ Յովսէփի մայրը, որ կինն էր Աստուածահայր կոչուող Յովսէփի:

Հինգերորդ՝ Կղէոպեանց Մարիամը, որ ներկայ էր խաչելութեանը: Կղէոպոսը Յովսէփի եղբայրն էր, իսկ Մարիամը՝ նրա դուստրը, եւ այս մօտ ազգակցութեան պատճառով Աստուածամօր քոյր կոչուեց:

Վեցերորդ՝ Մարիամը՝ Ղազարոսի քոյրը, որ իւղով օծեց Տիրոջը:

Հարց. Ի՞նչ էր նշանակում այն, որ կտաւը ծալուած էր, պատանքը՝ ոչ:

Պատասխան. Ծալուած կտաւը խորհրդանշում էր աստուածութիւնը, որ գլուխն է, պատանքը՝ մարդկութիւնը:

Եւ ինչպէս ծալուածը ծածկուածն է, եւ մի կողմն է երեւում, այդպէս էլ ծածուկ է աստուածային էութիւնը եւ անհաս բոլոր եղականներին. միայն խնամածութեամբ երեւում է նրանց, ում կամենում է: Իսկ պատանքը ծալուած չէր, որովհետեւ Տնօրինութեան խորհուրդը ո՛չ ամբողջութեամբ էր յայտնի, ո՛չ էլ անյայտ էր, ինչպէս որ պատանքը բազմաթիւ ծալքեր ունի:

Եւ սրանք բոլորը հաստատում էին նրա յարութիւնը, եւ այն, որ չէր գողացուել, որովհետեւ գողը չէր ծալի կտաւը եւ զմռսուած պատանքը:

Հարց. Ինչո՞ւ թոյլ չտուեց, որ Մարիամը մօտենայ, այն դէպքում, երբ ճանապարհին ուրիշ կանայք մօտեցան եւ համբուրեցին նրա ոտքերը:

Պատասխան. Նախ՝ ոմանք ասում են, թէ իբրեւ մարդ կամենում էր հարցուփորձել նրան, իմանալ խաչի, դժոխքի, յարութեան մասին, իսկ դրա համար կատարեալ միտք եւ շատ ժամանակ էր պէտք:

Երկրորդ՝ ասելը, թէ՝ «Ես դեռեւս չեմ բարձրացել իմ Հօր մօտ» (Յովհ. Ի 17), նշանակում էր, որ՝ այն, ինչի համար այժմ խնդրում ես, Հոգին կգայ եւ այդ ամէնի մասին կուսուցանի ձեզ:

Երրորդ՝ արգելեց, որպէսզի ցոյց տար, որ այդ մարմինն արդէն յոյժ պատուելի էր, եւ անթոյլատրելի էր, որ նրան նախկինի պէս մօտ գնային մաքսաւորներն ու պոռնիկները:

Չորրորդ՝ ոմանք էլ ասում են, թէ Մարիամը դեռեւս մկրտուած չէր, իսկ չմկրտուածների համար անձեռնմխելի էր, անգամ եթէ իւրային լինէին:

Հինգերորդ՝ ոմանք էլ ասում են, քահանայութեան շնորհ հայցեց, որ արգելուած էր կանանց:

Վեցերորդ՝ ոմանք էլ ասում են, թէ հոգեւոր պարգեւ էր խնդրում, որի պատճառով էլ ասաց, թէ՝ ելնեմ իմ Հօր մօտ, եւ կիջնի Հոգին ու ձրի պարգեւներով կլցնի ձեզ, իսկ հիմա դրա համար մի՛ մօտենայ:

Եօթներորդ՝ կամ էլ նրա մէջ ինչ-որ երկիւղած թերահաւատութիւն նկատեց յարութեան նկատմամբ՝ կարծես ասելով՝ «այս գիշեր մօտեցաք իմ ոտքերին եւ չհաւատացիք», ուստի երկրորդ անգամ թոյլ չտուեց մօտենալ:

Ութերորդ՝ որովհետեւ նա նոր եւ գլխաւոր ծնունդ էր, եւ նա էր, որի պատճառով կորչելու էին ազգեր, տոհմեր, ժամանակներ, եւ դրանով յայտարարում էր, որ յարութեան ժամանակ որեւէ մէկը չի դառնալու միւսին՝ ո՛չ հայրը որդու մօտ, ո՛չ էլ որդիներն իրենց հօր, այլ բոլորը գալու են դէպ իրեն, որպէսզի արժանի լինեն ողորմութեամբ ելնելու Հօր մօտ:

Իններորդ՝ այն, որ ասաց՝ «մի՛ մօտենայ» (Յովհ. Ի 17), [նշանակում էր], որ մարմինն այդ դժոխքի վաղ պտուղ էր, իսկ մեր Տէրն իբրեւ նոր քահանայ զգուշութեամբ պահպանում էր [նրան] ամէն տեսակ ձեռքերից, որպէսզի նրան ձեռքում պահի, որ կարող է ընդունել այնպիսի զոհաբերութիւն:

Տասներորդ՝ որպէսզի ցոյց տայ որ նրա թշնամիներին իշխանութիւն չունեն իր վրայ, մինչդեռ բարեկամները նրա իշխանութիւն ունեն այլ կերպ մօտենալու իրեն, այսինքն՝ սիրով եւ երկիւղով, ինչով ճաշակում են իրեն:

Տասնմէկերորդ՝ որովհետեւ Եւայի մեկնած ձեռքն այդ մարմինը դրեց մահուան իշխանութեան տակ, ուստի թոյլ չտուեց Մարիամին մօտենալ, այլ

պահեց նրան այն բազուկով, որը նրան նստեցրեց իր աջ կողմում:

Տասներկուերորդ՝ «մի՛ մօտենայ» նշանակում է, ովքեր յարութիւնից եւ երկինք բարձրանալուց յետոյ կամենան մօտենալ նրա մարմնին առաքինութեամբ եւ սրբութեամբ, հոգու ախտերը դէն պէտք է նետեն եւ չպէտք է մօտենան նրան ունայնութեամբ[490]:

Տասներեքերորդ՝ որովհետեւ Մարիամը միւս կանանց նման խոնարհութեամբ չկամեցաւ մօտենալ նրա ոտքերին, այլ դիմեց նրան հպարտութեամբ համբուրելու, մինչդեռ Տէրը կամենալով նրան խոնարհութիւն ուսուցանել՝ արգելեց մօտենալ:

Տասնչորսերորդ՝ որպէսզի ցոյց տայ, որ հետ այդու միայն տղամարդիկ իրաւունք ունեն նրան մօտենալու պատարագելիս, իսկ կանայք այդ գործում իշխանութիւն չունեն:

Տասնհինգերորդ՝ որովհետեւ բաւարար համարեց կանանց այն պատիւը, որ առաջինը մօտեցաւ նրան իր ծննդեամբ, իսկ յարութիւնից յետոյ կամենում էր, որ նախ տղամարդիկ մօտենան իրեն, քանի չէր բարձրացել Հօր մօտ:

Իսկ ասելը՝ «Ես դեռ չեմ բարձրացել իմ Հօր մօտ», նշանակում էր, որ ինչպէս որ մինչեւ չարչարանքներն ու յարութիւնը ասաց դրանց մասին, այդպէս էլ այստեղ նախօրօք ասաց իր համբարձման մասին:

Եւ ինչպէս միւս կանանց դարձրեց իր յարութեան աւետաբերներ, այդպէս էլ Մագդաղենացուն՝ Հօր մօտ բարձրանալու [աւետիս տուող]:

ՀԱՅՈՑ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

«Արդ, մի՛ դիպիր ինձ քո անկատար էութեամբ, ինչպէս քո մայրը՝ Եւան, իմացութեան ծառին: Եւ երբ մարմնով բարձրանամ Աստծոյ՝ բնութեամբ իմ Հօր եւ շնորհով ձեր [Հօր] մօտ, Հոգին կիջնի որոտմամբ՝ կատարեալ դարձնելու ձեզ, եւ այնժամ արժանի կլինէք մօտենալու ինձ»[491]:

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ ասում է՝ «Իմ Հայրը եւ ձեր Հայրը, իմ Աստուածը եւ ձեր Աստուածը» (Յովհ. Ի 17):

Պատասխան. Նախ, ինչպէս ասաց սուրբ Ներսէսը, Հայրը Քրիստոսինն էր բնութեամբ, մերը՝ շնորհով, մեր բոլորի Աստուածը եւ նրանը՝ մարմնով: Եւ Քրիստոսի Հայրն էր բնութեամբ, ու Աստուած՝ հաւասարութեամբ, իսկ մեր Հայրն է կոչմամբ եւ Աստուած՝ բնութեամբ:

Եւ դարձեալ՝ Քրիստոսի Հայրն է ըստ էութեան, իսկ Աստուած՝ միաւորութեամբ, որովհետեւ Հայրը միաւորուեց Բանին՝ մարմնով, ըստ որում ասում է. «Աստուած նրան Տէր եւ Օծեալ դարձրեց» (Գործք Բ 36):

Եւ մնացած բացատրութիւններն էլ կարող ես գտնել Աստուածաբանի ճառում, այս գրքի սկզբնամասում՝ եօթներորդ գլխի տասներեքերորդ համարում:

Այսքանը Քրիստոսի յարութեան մասին:

ՏԻՐՈՋ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԱ

Հարց. Ի՞նչ զանազանութիւն կայ վերափոխուելու, համբարձուելու եւ թռչելու միջեւ:

Պատասխան. Համբարձումը վերաբերում է Քրիստոսի յատուկ զօրութեանը, վերափոխումը՝ Կոյս Աստուածածնին, որպէսզի Որդին յատուկ սպասաւորէր Մօրը, իսկ թռչելը՝ բոլոր սրբերին հրեշտակների օգնութեամբ:

Սրանք տարբերւում են նաեւ տեղով, որովհետեւ թռչել նշանակում է ընտրեալների զանազան դասերի [տեղը]: Իսկ Կոյսի վերափոխման վայրը վեր է, քան բոլոր հրեշտակաց դասերինը: Մինչդեռ Քրիստոսի համբարձման տեղը միտքը չի կարող ցոյց տալ, որովհետեւ բնակւում է անմատչելի լոյսերում եւ վարագոյրից այն կողմ՝ ըստ առաքեալի (տե՛ս Եբր. Զ 19):

Համբարձում նշանակում է նաեւ մտքով աւելի բարձր լինել, քան իմանալիների բոլոր դասերը, որովհետեւ նրան են երկրպագում բոլոր երկնայինները: Եւ բարձր է տեղով, քան Տիրամայրը, որովհետեւ իր Միածին Որդուց է խնդրում մարդկութեան փրկութիւնը:

Հարց. Ինչո՞ւ համբարձուեց Քրիստոս:

Պատասխան. Վարդապետները բազմաթիւ պատճառներ են նշում: Նախ, որպէսզի հանգստանայ այն չարչարանքներից, որ երեսուներեք տարի կրեց երկրի վրայ:

Երկրորդ՝ որպէսզի բարեխօսի հաւատացեալների համար, ըստ այդմ՝ «Բարեխօս ունենք Հօր մօտ Յիսուս Քրիստոսին՝ արդարին եւ անարատին» (Ա Յովհ. Բ 1), որպէսզի իր անպարտ արիւնը եւ մեխերի խոցուածքները ցոյց տայ Հօրը, որ ստացաւ յանուն մեզ:

Երրորդ՝ ամբաստանելու [նրանց], որոնց համար զուր չարչարուեց, ըստ Եսայու՝ «Զուր չարչարուեցի» (Ես. ԿԵ 23):

Չորրորդ՝ որպէսզի մեզ համար տեղ պատրաստի, ըստ որի ասում էր. «Գնամ եւ տեղ պատրաստեմ ձեզ համար» (Յովհ. ԺԴ 2):

Հինգերորդ՝ որպէսզի մեզ համարձակութիւն տայ յուսալու իրեն, այսինքն՝ մարմնով յաւիտենական ժառանգութիւն մտնելու:

Վեցերորդ՝ որպէսզի Սուրբ Հոգուն առաքի մեզ մօտ, ըստ այդմ՝ «Եթէ ես չգնամ, մխիթարիչը չի գայ ձեզ մօտ, իսկ եթէ գնամ՝ կուղարկեմ նրան» (Յովհ. ԺԵ 26):

Եօթներորդ՝ որպէսզի մեր բաղձանքն իր հետ վեր տանի, ինչպէս ասում է «Երգ երգոցում»՝ «Զգի՛ր ինձ քեզ հետ» (հմմտ. Երգ Ա 3, Ե 4), իսկ առաքեալն ասում է. «Խորհէ՛ք վերին բաների մասին, որտեղ Քրիստոս նստած է Հօր աջ կողմում» (Կողոս. Գ 2):

Ութերորդ՝ որպէսզի երկնքի ճանապարհը ցոյց տայ մեզ, ըստ Միքիայի, որ ասում է՝ «Համբարձուեց՝ մեզ ճանապարհ ցոյց տալու համար» (Միք. Դ 2): Ինչպէս որոշ ժամանակ առաջ ասաց՝ «Դե՛հ, վեր կացէ՛ք, գնանք այստեղից»

(Յովհ. ԺԴ 31), որովհետեւ այս աշխարհում նեղութեան մէջ էք, ինձ հետ խաղաղութիւն էք ունենալու (տե՛ս Յովհ. ԺՁ 33): Այդ խորհրդով աշակերտներին դուրս բերեց Բեթանիա քաղաքից, որպէսզի դրանով ցոյց տայ, որ այստեղ մնացողը քաղաք չի ունենալու:

Եւ նրանց բարձրացրեց Ձիթենեաց լեռ, որպէսզի լեռով խորհրդանշի մտքի համբարձուելը՝ աստուածայինը խոկալու համար: Իսկ ձիթենին պարարտութիւն է՝ ջերմեռանդ օծման եւ ողորմած սրտի համար:

Եւ սրանցից յետոյ ոչինչ չի մնում, քան հոգու բարձրանալը երկինք:

Ա՛րդ, եռակի է Քրիստոսի համբարձումը. երկրում, երկրի վրայ եւ երկնքից վեր:

Նախ՝ երկրում՝ բարի վարքի գործերով: Երկրի վրայ՝ խաչ բարձրանալով: Երկնքից վեր՝ հիասքանչ համբարձմամբ:

Իսկ վարդապետներն ասում են, թէ Քրիստոսի համբարձման մէջ ութ տեսանելի բաներ կային, որոնք համբարձման պարագաներն էին:

Առաջինը՝ որ աշակերտների աչքի առաջ համբարձուեց, որպէսզի խրախուսի իր մօտ գնալու նրանց ցանկութիւնը:

Երկրորդ՝ ամպով ծածկեց նրանց աչքերը, որ նշանակում է, թէ մահկանացու մարմնով չենք կարող տեսնել Քրիստոսին բարձունքներում:

Երրորդ՝ ձեռքերը վեր պարզած էր գնում երկինք՝ երկու պատճառով. նախ, որպէսզի իրեն ընծայի Հօրը եւ երկրորդ՝ որպէսզի թշնամուն հարուածի բարձրացրած զօրաւոր ձեռքերով:

Չորրորդ՝ օրհնեց նրանց, որ զինուեն թշնամու դէմ եւ զօրանան երկնային բարութեամբ:

Հինգերորդ՝ համբարձուեց ուրախութեամբ, որ վերաբերում էր նրանց, ովքեր փրկուեցին դժոխքից եւ ելան երկինք, քանզի երկու բանակով ելաւ երկինք՝ սպասաւոր հրեշտակներով եւ փրկուած մարդկանցով:

Վեցերորդ՝ համբարձուեց փողի ձայնի ուղեկցութեամբ, որ առաքեալներին էր հասցէագրուած, որովհետեւ յանձնարարեց նրանց գնալ քարոզելու բոլոր հեթանոսներին, ովքեր աշխարհի փողհարները եղան եւ՝ «ամբողջ աշխարհով հնչեց նրանց խօսքը» (Հռոմ. Ժ 18):

Եօթներորդ՝ որովհետեւ «ելաւ բարձունք՝ գերելով գերութիւնը» (Եփես. Դ 8), այսինքն մարդկանց հոգիներն ամենակարող զօրութեամբ ազատելով դժոխքից՝ հանեց երկինք:

Ութերորդ՝ պարգեւներ տուեց մարդկանց որդիներին, որովհետեւ՝ «Բոլոր պարգեւները վերեւից են» (Յակ. Ա 17), ուր համբարձուեց Քրիստոս:

Հարց. Ի՞նչ կերպարանքով համբարձուեց:

Պատասխան. Մինչ ամպն այն տեսքով, որ նախքան չարչարանքն էր, իսկ ամպից յետոյ՝ նրանով, որով պայծառակերպուեց լեռան վրայ:

Հարց. Ինչո՞ւ յարութիւնից յետոյ անմիջապէս չհամբարձուեց, այլ քառասուն օր յետոյ:

Պատասխան. Վեց պատճառով: Նախ՝ որ ապացուցի իր յարութիւնը բազմազան ձեւերով, ինչպէս ասւում է Գործքում՝ «Նրա բազմաթիւ կարողութիւնները երեւացին քառասուն օրում» (Գործք Ա 3):

Երկրորդ՝ որպէսզի մեզ համբերելու օրինակ տայ, որ սպասենք հանդերձեալ վարձատրութեանը եւ ոչ թէ շուտափոյթ ձգտենք օգտուելու այս կեանքից, որովհետեւ մշակն էլ սերմանելուց անմիջապէս յետոյ չի հնձում, այլ համբերում է մինչեւ պտղի հասնելը:

Երրորդ՝ աշակերտների մխիթարութեան համար, որպէսզի քառասուն օր մխիթարի նրանց այն քառասուն ժամի փոխարէն, որ տրտմեցին նրա մահուան ժամանակ, ինչպէս որ ասուեց, թէ՝ յարութիւնը կէսգիշերին էր, իսկ արշալոյսին երեւաց առաքեալներին, որպէսզի ցոյց տայ, որ աստուածային ուրախութիւնը գերազանց է, քան մարմնաւոր տրտմութիւնը:

Չորրորդ՝ ընդամէնը երեսուներեք տարի մնաց երկրի վրայ, որպէսզի ուսուցանի ողջերին, երեսուներեք ժամ էլ դժոխքում, որ փրկի հոգիներին եւ քառասուն օր՝ օդում, որպէսզի երեսուներեք օր մաքրի օդը կուռքերի ճենճահոտից, իսկ եօթ օրն էլ՝ հոգիների կայանի եօթնաստեղեան խորանի խորհրդով էր[492]:

Իսկ ուրիշներն էլ ասում են, թէ քառասուն օր երկրի դրախտում մնացին ինքը եւ իր հետ յարութիւն առածները եւ մխիթարեց Եղիային ու Ենովքին:

Հինգերորդ՝ քառասուն օր յետոյ համբարձուեց՝ ցոյց տալու, որ երկինք կարող են բարձրանալ նրանք, ովքեր տասնաբանեայ օրէնքը լրացնում են չորս աւետարաններով:

Վեցերորդ՝ որպէսզի եկեղեցին, որ Քրիստոսի մարմինն է, Նեռից չարչարուելուց յետոյ, ինչը լինելու է ապագայում, երկինք համբարձուելուց քառասուն օր յետոյ հաւատացեալ լինի:

Իսկ որ ասում է՝ «Նստեց Հօր աջ կողմում» (Եբր. Ժ 12), «աջ»-ով իմացւում է Հօր աստուածութեան փառքին հաւասար լինելը:

Եւ դարձեալ [ցոյց է տալիս] բարութեան եւ հանգստի հասնելը՝ ձախողակ կեանքից յետոյ: Նստելն էլ հանգիստն է ցոյց տալիս, այլեւ՝ Հօրը եւ Սուրբ Հոգուն աթոռակից լինելը:

Իսկ, որ Սուրբ Ստեփանոսն ասում է՝ «Յիսուսը Հօր աջ կողմում է կանգնած» (Գործք է 55), «կանգնածը» նշանակում է պատերազմակից դառնալ եւ օգնութեան գալ նրանց, ովքեր նահատակւում են նրա անուան համար:

Այսքանը Քրիստոսի համբարձման մասին:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԲ

Հարց. Ինչո՞ւ մինչեւ խաչելութիւնը եւ համբարձումը չպարգեւուեց Սուրբ Հոգին՝ տեսանելի նշաններով:

Պատասխան. Վարդապետներն ասում են եօթ պատճառով: Նախ՝ որովհետեւ Քրիստոսի չարչարանքը պատճառ

եղաւ Սուրբ Հոգու պարգեւների համար, ուստի, պէտք է աւելի շուտ լինէր, ինչպէս որ ամէն մի պատճառ նախորդում է պատճառուածին:

Երկրորդ՝ որովհետեւ եթէ Քրիստոս այնպէս փառաւորուէր, ինչպէս խաչելութիւնից յետոյ, կարգելակուէր ու կխափանուէր մարդկութեան փրկութիւնը, որ նրա չարչարանքներով եղաւ:

Երրորդ՝ որովհետեւ հարկ էր Քրիստոսին հովուել իր պարզասիրտ աշակերտներին, ինչպէս թռչունը՝ ձագերին, մայրը՝ մանուկներին, իսկ եթէ ի սկզբանէ ընդունէին Հոգին, նրանք այդ խնամածութեան կարիքը չէին ունենայ:

Չորրորդ՝ որովհետեւ աշակերտներն իրենց տկարութիւնը փորձով պէտք է ճանաչէին ու ընկալէին, որ ոչ թէ իրենց արժանիքների համար ընտրուեցին, այլ որպէսզի սովորեն վերացնել ուրիշների տկարութիւնը, ինչպէս Քրիստոս՝ իրենցը: Իսկ եթէ մինչեւ Հոգին ընկալէին [շնորհները]՝ չէին կարող ուրիշների տկարութիւնը վերացնել:

Հինգերորդ՝ որպէսզի հասկանան, որ Քրիստոսի միջոցով պարգեւուեց, որովհետեւ եթէ մինչ այդ ստանային, պարզապէս կկարծէին, որ Հոգին Աստուած է տուել եւ ոչ թէ Քրիստոսից է:

Վեցերորդ՝ ինչպէս սերմանելն է առաջ, քան պտղի հասնելն ու հնձելը, այդպէս էլ պէտք էր, որ նրանք հաւատի սերմն ընդունէին Քրիստոսով, ապա աստիճանաբար աճելով՝ հասնէին Հոգու պարգեւներին, պտղաբերէին եւ այլն:

Եօթներորդ՝ անհրաժեշտ էր, որ այս պարգեւի մեծութիւնը յայտնի դառնար երեք կերպ: Նախ՝ պարգեւողի կողմից, որ երբ Քրիստոս նստէր մարմնով Հօր աջ կողմում իբրեւ թագաւոր իր թագաւորութեան փառքի Աթոռին, այնժամ մեծ կլինէր Հոգու պարգեւը, որովհետեւ տրուելու էր փառաւոր Աստծուց՝ Քրիստոսից: Երկրորդ՝ ընդունող առաքեալների [առումով], որոնք պատշաճ գտնուեցին Սուրբ Հոգուն, որովհետեւ փորձով գիտէին Քրիստոսի վարդապետութիւնը, նրա մահն ու յարութիւնը: Երրորդ՝ Սուրբ Հոգու առումով, որ առաւել հռչակաւոր եւ փառաւոր եղաւ այս ձեւով, որովհետեւ ընդունելով Սուրբ Հոգի՝ առաքեալներն անմիջապէս հրաշքներ էին կատարում՝ վկայելով Քրիստոսին եւ առատօրէն լցուելով՝ [շնորհները փոխանցում էին] այլոց:

Կարելի է բերել եւ ութերորդ պատճառը՝ ցոյց տալու համար, որ Հոգին առատութեամբ ոչ մէկին չի տրուելու, եթէ Յիսուս նրա սիրտը մասնաւորաբար չփառաւորի, քանզի ոչ միայն մեծ ու փառաւոր է համարելու նրա աստուածութիւնը, այլեւ աղքատութիւնը, անարգանքը, մահը, եւ այնժամ [նա] է արժանանալու լիութեամբ ընդունելու Սուրբ Հոգի:

Իններորդ՝ ինչպէս որ թագաւորները մահապարտների հետ նախ հաշտւում են, ապա պատուի արժանացնում, այդպէս էլ Քրիստոս նախ եկաւ եւ իր խաչով ու իր մահով հաշտեցրեց Հօր

հետ, ապա Հայր Աստուած առաքեց Սուրբ Հոգուն իբրեւ պարգեւ մարդկանց:

Եւ քանի որ խաչի պարգեւն է Սուրբ Հոգին, ուստի յիշատակելով Սուրբ Հոգին՝ դրանով՝ խաչակնքում ենք մեր դէմքերը:

Տասներորդ՝ թէեւ ամէն ինչ Երրորդութեան համար ընդհանուր է՝ տէրութիւն, իշխանութիւն, աստուածութիւն եւ այլն, սակայն եկեղեցու վարդապետները ստեղծումը վերագրում են Հօրը, տրոհումը՝ Որդուն, զարդարելը՝ Սուրբ Հոգուն: Որովհետեւ նախ պէտք է սկզբից Հօրը յայտնի լինէր, ապա՝ Որդուն եւ Սուրբ Հոգուն, ինչպէս որ ասաց ստեղծելիս: Եւ ինքը՝ Տէրն, այսպէս ուսուցանեց. «Գնացէ՛ք եւ մկրտէ՛ք բոլոր հեթանոսներին՝ յանուն Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու» (Մտթ. ԻԸ 19): Այդպէս էլ մենք ենք փառք տալիս Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հարց. Ինչո՞ւ փայլակի նմանեցուեց Սուրբ Հոգու իջնելը:

Պատասխան. Նախ, որովհետեւ յանկարծակի է փայլատակում, ինչպէս Սուրբ Հոգին յանկարծօրէն իջաւ:

Երկրորդ՝ հրի նման է փայլատակում, ինչպէս Սուրբ Հոգին՝ հրեղէն լեզուներով:

Երրորդ՝ լցնում է բոլոր անկիւնները, ինչպէս որ Հոգին լցրեց բովանդակ տունը, ուր նստած էին (տե՛ս Գործք Բ 3):

Չորրորդ՝ փայլատակումն անբաժանելի է նրանից, իսկ ինչպէս որ Սուրբ Հոգու շնորհներն անբաժանելի մնալով նրանից՝ տրուեցին առաքեալներին:

Հինգերորդ, նախ որոտում է, ապա՝ փայլատակում, ինչպէս որ Հոգին որոտմամբ իջաւ. «Երկնքից յանկարծ ձայն հնչեց» (Գործք Բ 2): Եւ ըստ մարգարէի՝ «Տէրը որոտաց երկնքից» (Սղմ. ԺԵ 14):

Վեցերորդ՝ որովհետեւ սրընթաց է փայլակը, ըստ Տիրոջ՝ «Ելնում է արեւելքից ու երեւում մինչեւ արեւամուտը մի ակնթարթում» (Մտթ. ԻԴ 27), [այն դեպքում], երբ արեգակը տասներկու ժամ է ընթանում մինչեւ մայրամուտ: Եւ Սուրբ Հոգին արագօրէն իջաւ առաքեալների մէջ, իսկ Արեգակ Քրիստոս բազում տարիներ երկարելով մարմնով՝ բարձրացաւ երկինք:

Եօթներորդ՝ որովհետեւ ուժգին է, քանզի իւրաքանչիւր ոք հարկադրուած աչքը փակում է, որ միշտ տեսնի լոյսը: Եւ շատերն էլ ի վիճակի չեն ընդունելու Սուրբ Հոգին՝ «որովհետեւ չեն ճանաչում եւ չեն տեսնում նրան» (Ա Յովհ. Գ 6), ինչպէս ասաց Տէրը: Մինչդեռ մեր Տիրոջ հետ բազմաթիւ խօսացողներ եւ նրան տեսնողներ եղան:

Ութերորդ՝ փայլատակելով՝ փախչում է, այդպէս էլ՝ «Սուրբ Հոգին փախչում է նենգութիւնից» (Իմաստ. Ա 5), եւ «Չարանենգ անձի մէջ իմաստութեան շնորհը չի բնակւում»,- ասում է Սողոմոնը (Իմաստ. Ա 4):

Իններորդ՝ փայլատակում է ամպի միջից, որ ծածկում է նրան: Եւ Սուրբ Հոգին Քրիստոսից իջաւ առաքեալների մէջ, եւ նա է Հօր իմաստութիւնը: Ու Հոգին

Սուրբ բխում է Հօրից, առնում Որդու իմաստութիւնը եւ բաշխում բոլոր արարածներին:

Տասներորդ՝ ահ ու երկիւղ է անզգոյշ [գտնուածների] համար: Եւ մարմնասէր մարդու համար յիմարութիւն է Հոգին (հմմտ. Ա Կորնթ. Բ 14), որի պատճառով պատժեց Անանիային եւ Սափիրային (տե՛ս Գործք Ե 1-10):

Ուստի Սուրբ Հոգու իջնելը նմանեցուեց փայլակի, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Նրանց առջեւ նրա փայլատակելու ժամանակ» (հմմտ. Սղմ. ՀԶ 19) եւ այլն:

Այսքանն այս մասին:

Հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Բացեցի բերանն իմ եւ Հոգի առայ» (Սղմ. ճԺԸ 131):

Պատասխան. Մտքի բերանն է ակնարկում, այսինքն՝ հոգին յօժար է ընդունելու Սուրբ Հոգի, ըստ այդմ ասում էր. «Բաց քո բերանը եւ լցրու այն» (Սղմ. Ձ 11):

Եւ սա բազում համեմատութեամբ: Նախ՝ որ օդ շնչելը մարմնի համար կենդանութիւն է: Եւ Սուրբ Հոգին կենդանութիւն է ներքին մարդու համար, ըստ այդմ՝ «Հոգին կենդանարար է» (Յովհ. Ձ 64):

Երկրորդ՝ որքան բերանը մեծ է բացւում, այնքան շատ օդ է ներս գնում: Եւ որքան փափագում են Հոգուն, այդքան էլ ստանում են:

Երրորդ՝ օդը զովացնում է սրտի տապը: Եւ Սուրբ Հոգին հերկում է չարութիւնը եւ մաքրելով՝ բարեզարդում հոգին:

Չորրորդ՝ որքան էլ շնչում են, դարձեալ օդի կարիք ունեն, այդպէս էլ, որքան ընդունեն Հոգին, դարձեալ փափագում են նրան, ինչպէս որ ասում է. «Քո պատուիրաններին փափագեց անձն իմ» (Սղմ. ճԺԸ 131):

Հինգերորդ՝ որքան էլ շնչեն, օդը չի պակասի: Եւ Սուրբ Հոգին էլ բազմաբաշխ է, եւ անպակաս է հեղումը մարմնի վրայ:

Վեցերորդ՝ լցնում է բոլոր անկիւնները եւ բոլորին, ով մօտ է: Եւ՝ «Տիրոջ Հոգին լցրել է տիեզերքը» (Իմաստ. Ա 7). եւ՝ «Այցելում է փնտրողների դռները» (հմմտ. Առակ. Ա 27):

Եօթներորդ՝ մեռած մարմինը չի շնչում եւ արտաշնչում օդը: Այդպէս էլ՝ «Մարմնասէր մարդը չի ընդունում հոգին» (Ա Կորնթ. Բ 14) եւ՝ «Սուրբ հոգին փախչում է նենգութիւնից» (Իմաստ. Ա 5):

Ութերորդ՝ նրանք, ովքեր շնչում են, դարձեալ դուրս են փչում հակառակ գործողութեամբ, այսինքն՝ ջերմացնում կամ զովացնում են, այրում կամ հանգցնում են: Այդպէս էլ Սուրբ Հոգի ստացածները բխում են, ոմանց մահուան համար, ոմանց՝ կեանքի, ինչպէս Տաբիթայի եւ Սափիրայի պարագան էր (տե՛ս Գործք Ե 1-10, Թ 36-42): Սառածներին բորբոքում են հաւատի մէջ, չարութեամբ բորբոքուածներին՝ մարում, ինչպէս Ելիմասին ու Սիմոնին (տե՛ս Գործք Ը 9-24, ԺԳ 6-12):

Իններորդ՝ խօսքն էլ առաջ է բերում օդ. նոյնը եւ Սուրբ Հոգին, ըստ այդմ՝ «Իմ Հօր Հոգին կխօսի ձեզ հետ» (Մտթ. Ժ 20): Պօղոսն էլ այդ էր խնդրում աշա-

կերտներից. «Որպէսզի ինձ խօսք տրուի բերանս բանալու» (Եփես. Զ 19):

Տասներորդ՝ եւ այդ նոյն օդը տարբեր մարդկանց մօտ տարբեր ձայն ու խօսք է առաջ բերում: Այդպէս էլ՝ «Հոգին մէկին տուել է իմաստութիւն, միւսին՝ գիտութիւն» (Ա Կորնթ. ԺԲ 8) եւ այլն:

Այսքանն այս մասին:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԻՋՆԵԼՈՒ ՕՐՈՒԱՅ ՄԱՍԻՆ

Հարց. Ո՞րն է Սուրբ Հոգու իջնելու օրուայ պատիւը:

Պատասխան. Այս օրը իսրայէլացիները պատուում են երեք պատճառով: Նախ՝ այս օրը Աստուած երեւաց Մովսէսին Սինա լեռան վրայ: Երկրորդ՝ այս օրը Մովսէսի ձեռքով նրանց տուեց օրէնքը: Երրորդ՝ եւ այս օրն Աստուած ուխտ կապեց ողջ Իսրայէլի ժողովրդի հետ:

Մենք էլ երեք պատճառով ենք պատուում այս օրը: Նախ՝ որ այս օրը Սուրբ Հոգին իջաւ առաքեալների մէջ, եւ չեղեալ եղաւ այն ասածը, թէ՝ «Իմ հոգին յաւիտեան չի բնակուելու ձեր՝ մարդկանց մէջ», (Ծննդ. Զ 3) եւ առաքեալներին զօրաւոր պարգեւներ եւ շնորհներ տուեց: Երկրորդ՝ այս օրը մեզ նոր օրէնք եւ սուրբ Աւետարանի քարոզութիւնը տուեց: Երրորդ՝ որովհետեւ օրինակն է եօթներորդ օրուայ, երբ երկիրը հիմնուեց, նաեւ կեանքի եօթ շրջանների: Այլեւ ապագայի, որովհետեւ Քրիստոսի յարութիւնից եօթ շաբաթ անց էր, որի մասին Պօղոսն ասում է. «Քրիստոս՝ մեր զատիկը, մորթուեց» (Ա Կորնթ. Ե 7): Իսկ եօթ շաբաթը յիսուն օր է, որն ազատարար թիւ է եւ ապագայի օրինակը:

Հարց. Քանի՞սն էին զատիկները:

Պատասխան. Առաջինը բաղարջակերն էր, որ հինգշաբթի էր: Երկրորդ՝ յարութեան զատիկը: Երրորդ՝ կրկնազատիկը՝ փակուած դռներով երեւալը: Չորրորդ զատիկը՝ ցնծութեամբ եւ փողերով Հօր մօտ համբարձուելը: Հինգերորդ զատիկը նոյն ինքն է՝ Հոգու իջնելը Վերնատուն:

Եւ յիսուն [օրուայ] ընթացքում տասական օրով կատարում էին հինգ գլխաւոր տօները: Եւ հինգ զատիկ էր նախկինում, որ այժմ էլ յոյներն ու ասորիները «Պենտակոստ» են կոչում[493], որ նշանակում է «հինգերորդ», այլ՝ ոչ թէ «եօթներորդ»: Եւ Պենտակոստը Հոգեգալուստն է՝ խոստումների կատարումն ու աւետիսի լրումը:

Հարց. Ինչո՞ւ օրէնքը տալու օրը առաքեալներին Սուրբ Հոգի տուեց:

Պատասխան. Երեք պատճառով:

Նախ՝ որ ցոյց տայ, որ նա, ով օրէնքը տուեց, նա է Հոգին առաքողը՝ նոյն որոտով, հողմով, փայլատակումով եւ հրի երեւալով, ինչպէս որ եղաւ այնտեղ՝ լեռան վրայ:

Երկրորդ՝ նա, ով այնտեղ ծածուկ էր իրեն ճանաչել տալիս մարգարէներին, նոյն ինքը այստեղ Երրորդութիւնը ցոյց տուեց առաքեալներին:

Երրորդ՝ որովհետեւ այնտեղ չէր կարող արդարանալ, քանզի հիւանդ էր սիրտը, իսկ այստեղ նոր օրէնք դրեց մեր

սրտերում, որը կարող է արդարացնել ժողովուրդներին եւ հեթանոսներին:

Հարց. Քանի՞ տեսակ պարգեւներ տուեց Սուրբ Հոգին առաքեալներին:

Պատասխան. Հիմնականում վեց պարգեւներ բաշխեց նրանց: Նախ՝ մաքրութիւն ծանրամեղ մեղքերից ազատուելու համար, որպէսզի Հոգու իջնելուց յետոյ այլեւս նրանց վրայ չիշխեն: Երկրորդ՝ հրաշքներ կատարելու կարողութիւն: Երրորդ՝ համարձակ քարոզութիւն՝ առանց երկիւղի ազգերի, ցեղերի եւ թագաւորների առաջ խօսելու համար, ինչպէս որ Պետրոսը մէկ ժամում երեք հազար հոգու հաւատքի բերեց (տե՛ս Գործք Բ 41): Չորրորդ՝ բոլոր մարգարէների խօսքերի իմաստների կատարեալ իմացութիւն, ըստ այդմ՝ «Մեզ Սուրբ Հոգին յայտնեց, որովհետեւ Հոգին է քննում ամէն ինչ եւ Աստծոյ խորութիւնները» (Ա Կորնթ. Բ 10): Հինգերորդ՝ անբաժանելի միաւորութիւն ի սէր Քրիստոսի, որովհետեւ [նրանք, ովքեր] խաչելութեան ժամին թողեցին եւ փախան, Հոգու իջնելուց յետոյ բոլորը յանուն նրա չարչարուեցին եւ մեռան, ըստ այդմ՝ «Ո՞վ կարող է մեզ հեռացնել Քրիստոսի սիրուց. նեղութի՞ւնը, թէ չարչարանքը» (Հռոմ. Ը 35) եւ այլն: Վեցերորդ՝ բոլոր ազգերի լեզուների իմացութիւն, ըստ այդմ՝ «Խօսում էին այլեւայլ լեզուներով, ինչպէս որ Հոգին թելադրում էր բարբառել նրանց» (Գործք Բ 4):

Հարց. Ինչպէ՞ս էին խօսում բոլոր լեզուներով:

Պատասխան. Իմանալու է, որ առաքեալներից ամէն մէկը, ուր ժողով էր լինում, խօսում էր մէկ լեզուով, իսկ իւրաքանչիւր ոք լսում էր իր լեզուով: Այսպէս է ասում Նիւսացին: Իսկ Աստուածաբանն ասում է, թէ ինչ լեզուով պէտք էր, այդ լեզուով էլ խօսում էին, որովհետեւ շնորհը տրուած էր խօսողներին եւ ոչ թէ լսողներին:

Հարց. Ինչո՞ւ Հօր Աստծոյ տօներ չենք կատարում, ինչպէս Քրիստոսինը եւ Սուրբ Հոգունը:

Պատասխան. Նախ, որովհետեւ միաբուն եւ միապատիւ է Սուրբ Երրորդութիւնը, եւ մէկի փառքը երեքինն է, իսկ երեքինը՝ մէկինը: Նաեւ, Հայրը չերեւաց մարմնով, ինչպէս Որդին մարմնացաւ, կամ ինչպէս Սուրբ Հոգին աղաւնակերպ եւ հրակերպ իջաւ:

Հարց. Ինչո՞ւ Յորդանանում Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ, իսկ Վերնատանը՝ հրեղէն լեզուով:

Պատասխան. Աղաւնին շնորհների աւետաբեր է, ինչպէս որ Նոյի տապանում ձիթենու շիւղ բերեց, որ խորհրդանշում էր մկրտուածների շնորհը:

Իսկ հուրը երկու յատկանիշ ունի. լոյսը եւ հաւատացեալներին մաքրելը, պատիժը եւ անհաւատներին այրելը:

Իսկ թէ ինչո՞ւ ութ օր ենք տօնում, ասել ենք քսանմէկերորդ գլխի յիսունմէկերորդ համարում:

Այսքանը Փրկչի մարդեղութեան մասին եւ «Գիրք հարցմանց»-ի ութերորդ հատորի աւարտը:

ՀԱՏՈՐ ԻՆՆԵՐՈՐԴ
ԶԱՆԱԶԱՆ ՀԱՐՑԵՐ ՆՈՐ ՕՐԷՆՔԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Առաջին՝ օրէնքի եւ նոր օրինութեան մասին:

Երկրորդ՝ մէ՞կն է, թէ բազմաթիւ են Աստծոյ եւ Սուրբ Գրքի խօսքերը: Եւ թէ ինչո՞ւ այդչափ գրքեր ու թղթեր գրուեցին:

Երրորդ՝ Քրիստոս եկեղեցու գլուխն է եւ հիմքը: Եւ թէ ինչպէ՞ս է մէկ ընդհանրական եկեղեցի: Եւ թէ որո՞նք են եկեղեցու մասնաւոր անդամները:

Չորրորդ՝ եկեղեցու սպասաւորների մասին. առհասարակ առաքելութեան, մարգարէութեան եւ վարդապետութեան մասին:

Հինգերորդ՝ երկու իշխանութիւնների եւ կանոնների մասին:

Վեցերորդ՝ անիծելու եւ արձակելու մասին:

Եօթներորդ՝ ընդհանուր ժողովների մասին:

Ութերորդ՝ հայոց առանձին ժողովների մասին:

Իններորդ՝ թէ ինչպէ՞ս է Պետրոսն [առաքեալների] գլուխ: Չորս աթոռների մասին: Լուսաւորչի Հռօմ եւ Կեսարիա գնալը: Թադէոս առաքեալի մասին:

Տասներորդ՝ [այն մասին], որ հայերն առանձնացած են:

Տասնմէկերորդ՝ իւրաքանչիւր ժողովրդի եկեղեցու միաբանութեան եւ բաժանման մասին: Հայոց ազգիս մասնաւոր շնորհների մասին:

Տասներկուերորդ՝ մեղքերի եւ անօրինութիւնների մասին: Մտքի յանցանքների մասին:

Տասներեքերորդ՝ Եւագրիոսը մեղքի ութ խորհուրդներ է նշում, ուրիշները՝ եօթ:

Տասնչորսերորդ՝ թէ ո՞րն է առաջին մեղքը:

Տասնհինգերորդ՝ սատանայի աներելի մեղքի մասին:

Տասնվեցերորդ՝ մարդկանց մեղքերի մասին:

Տասնեօթներորդ՝ մեղքի չափերի մասին:

Տասնութերորդ՝ ո՞րն է աներելի մեղքը:

Տասնիններորդ՝ մեղքերի տարբերութիւնների մասին:

Քսաներորդ՝ սովորական մեղքերի սահմանումը:

Քսանմէկերորդ՝ աստուածային առաքինութիւնների մասին: Թէ ո՞րն է հաւատի սահմանումը եւ թէ հոգու ո՞ր մասն է կազմում: Նրա աստիճանների մասին:

Քսաներկուերորդ՝ յոյսի եւ նրա ներգործութիւնների մասին:

Քսաներեքերորդ՝ սիրոյ, նրա սահմանման, նշանների, աստիճանների եւ այլնի մասին:

Քսանչորսերորդ՝ աստուածային առաքինութիւնների տարբերութիւնների մասին:

Քսանհինգերորդ՝ մարդկային առաքինութեան սահմանումը: Եւ ըստ կարգի՝ Արդարութեան, Խոհեմութեան, Արիութեան եւ Ողջախոհութեան մասին:

Քսանվեցերորդ՝ եօթնաճաճանչ շնորհների մասին:

Քսանեօթներորդ՝ ինը երանիների՝ Աղքատութեան, Սգի, Տրտմութեան եւ այլնի մասին՝ ըստ կարգի:

Քսանութերորդ՝ եկեղեցու եօթ խորհուրդների մասին:

Քսանիններորդ՝ մկրտութեան մասին: Ընդդէմ երկաբնակների, որոնք կանանց մկրտելու իրաւունք են վերապահում: Այն մասին, որ չի կարելի կրկնակի մկրտել:

Երեսուներորդ՝ դրոշմի եւ միւս արարողակարգերի մասին:

Երեսունմէկերորդ՝ հաղորդութեան մասին: Այն մասին, որ ջուրը կանոններից դուրս է: Եւ մէկ նշխար ենք օրհնում իբրեւ [օրինակ] Քրիստոսի մարմնի:

Միաւորութեան եւ թաթախուած պատառների մասին: Այն մասին, որ Քրիստոսի օրհնեալ մարմինը ժողովրդին չեն տալիս:

Երեսուներկուերորդ՝ ապաշխարութեան եւ մեղքերի թողութեան մասին: Թէ ինչի՞ համար է ապաշխարութիւնը:

Երեսուներեքերորդ՝ վերջին օծման մասին՝ մանրամասն բացատրութեամբ:

Երեսունչորսերորդ՝ քահանայական եօթ կարգերի մասին: Տէրը որտե՞ղ կատարեց եւ ինչպէ՞ս ձեռնադրեց առաքեալներին:

Այն մասին, որ ըստ յոյների ինը աստիճաններ են: Մեծ Դիոնէսիոսի [բաժանումների մասին. թէ ինչո՞ւ] մինչեւ չորրորդ կարգը կրտսեր է:

Ամուսնութեան թոյլտուութիւնը:

Երեսունհինգերորդ՝ պսակի եւ նշանի, պսակադրութեան եւ պսակով միաւորուելու մասին:

Երեսունվեցերորդ՝ ո՞րն է եօթ ազգը, որ «պորտ» ենք անուանում, եւ թէ ինչո՞ւ հին օրէնքով իրենց ազգից էին [կին] առնում, իսկ նորով՝ ոչ:

Երեսունեօթներորդ՝ մեր առաձնաշնորհ եկեղեցու մասին՝ ըստ կարգի: Ինչպէ՞ս են բաղդատւում եկեղեցի-մարդն ու [եկեղեցի-]շինուածքը:

Երեսունութերորդ, ինչո՞ւ ենք օրհնում եկեղեցին: Ութ օր նաւակատիք կատարելու մասին: Թէ միասին է Խաչի եւ Եկեղեցու տօնը:

Երեսունիններորդ՝ այն մասին, որ ոչխարին չի կարելի եկեղեցի մտցնել եւ ննջեցեալին՝ եկեղեցում թողնել:

Քառասուներորդ՝ ժամհարի եւ խնկի մասին:

Քառասունմէկերորդ՝ աղօթքի եւ արտասուելու մասին:

Քառասուներկուերորդ՝ թէ աղօթքի քանի՞ ժամ կայ:

Քառասուներեքերորդ՝ առանձնական աղօթքի մասին:

Քառասունչորսերորդ՝ մասնաւոր աղօթքներ, օրհնութիւն, խաղաղութիւն, քարոզ, մաղթանք, գոհութիւն:

Քառասունհինգերորդ՝ կանոնի, գլխի եւ մնացած կարգերի մասին. սաղմոս եւ անբիծք:

Քառասունվեցերորդ՝ Երեքսրբեանի մասին՝ բազմաթիւ հարցադրումներով: Փառք ի բարձունս:

Քառասունեօթներորդ՝ երկրպագութեան երկու խմբերի մասին: Ո՞վ է հեղինակել շարականը. նրա համառօտ վերլուծութիւնը:

Քառասունութերորդ՝ ութ ձայների գիւտը: Այն մասին, որ մարգարէները երգում էին քնարով: Ձայների փոփոխութիւնը. շարականների քաղումը:

Քառասունիններորդ՝ Գրքերի կարդալը. Սաղմոս. Կցուրդ. Որթի. Ալէլուա. Տէր ողորմեա:

Յիսուներորդ՝ բուրուառի, գրականի, նախատօնակի մասին:

Յիսունմէկերորդ՝ շաբաթուայ տօների մասին. ութօրէքի եւ ժամատեղերի փոփոխութեան մասին:

Յիսուներկուերորդ՝ ամբողջ տարուայ պահքերի մասին: Առաջաւորաց պահք: Չորեքշաբթի օրուայ մասին: Այն մասին, որ պահքին տօն չենք կատարում: Հանգստեան [օրեր] չկան Աղուհացից պահքին: Այն մասին, որ ֆռանկները երկու օր են [պահքը] լուծում:

Յիսուներեքերորդ՝ վկայութիւնն Մեծ պահքի մասին. շաբաթ եւ չորեքշաբթի օրերը, եւ որ յինանց [շրջանում] չենք պահում:

Յիսունչորսերորդ՝ սեղանը օրհնելու, աղուհացը կտրելու, գինին օրհնելու, ըստ կարգի բաժանելու, գինին թափելու, ընթրիքի եւ բարիկենդանի [մասին]:

Յիսունհինգերորդ՝ մատաղի եւ աղի [մասին]:

Յիսունվեցերորդ՝ թէ որտեղի՞ց է եկեղեցու կարգերի օրհնութիւնը: Այս հարցադրմամբ «Գիրք հարցմանց»-ի ինններորդ հատորի աւարտը:

Եւ Քրիստոսին փառք յաւիտեանս. Ամէն:

ԳԼՈՒԽ ԼԱ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԴԱՐՁԵԱԼ ՆՈՐ ՕՐԷՆՔԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ ՁԱՆԱՁԱՆ ՀԱՐՑԵՐ

Այսքանից յետոյ կարգով հարցնելու է նոր օրէնքի եւ եկեղեցու մասին՝ ներդաշնակուած Բանի մարդեղութեամբ՝ շարադրանքի մէջ՝ հետեւելով նրան, ինչպէս պատճառուածը պատճառին:

ՕՐԷՆՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ա

Հարց. Քանի՞սն են օրէնքները:

Պատասխան. Օրէնքներն ըստ առաջացման երեքն են. բնական, գրաւոր, աւետարանական:

Սրանցից բացի կան երեք մասնաւոր օրէնքներ՝ բարոյական, բանաւոր, վարդապետական:

Ա՛րդ, ըստ կարգի: Բնականը տրուեց Ադամին: Բարոյականը՝ Նոյին, որ ուսանելով բարոյական [սկզբունքներին], բնակուեց անապատում եւ հինգ հարիւր տարի պահպանեց կուսութիւնը:

Բանաւորը [տրուեց] Աբրահամին՝ բանականութեամբ ճանաչելու Աստծուն՝ արարչագործութեան գործերով:

Գրաւորը տրուեց Իսրայէլին՝ Մովսէսի միջոցով: Աւետարանականն՝ աշխարհին: Վարդապետականը՝ եկեղեցու մանուկներին, որպէսզի վարդապետները ըստ ամենայնի տիրապետելով [դրան]՝ զգուշացնեն սուրբ Սիօնի մանուկներին:

Եւ Պօղոսն այդպէս էլ վարւում է՝ առաքեալների եւ մարգարէների կողքին դնելով վարդապետներին (տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 28):

Կայ նաեւ եօթներորդը՝ մարգարէական օրէնքը, որովհետեւ Տէրն ինքը մարգարէական օրէնք անուանեց Դաւթի խօսքերը. «Ձեր օրէնքում գրուած չէ՞ իմ ասածը, թէ աստուածներ էք» (Սղմ. ՁԱ 6, Յովհ. Ժ 34):

ՆՈՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ո՞րն է նոր օրհնութիւնը, որ Դաւիթն ասում է. «Օրհնեցէ՛ք Տիրոջը նոր օրհնութեամբ» (Սղմ. ՂԱ 1, ՂԷ 1):

Պատասխան. Սուրբ եկեղեցին կոչուեց Աստծոյ նոր ժողովուրդ, որովհետեւ ոչ թէ հին օրէնքով, այլ հաւատով արդարացանք եւ դարձանք ժողովուրդ:

Դարձեալ աւազանի ծննդեամբ կոչուեցինք Աստծոյ նոր որդիներ ու Քրիստոսի համահայր ու համամայր եղբայրներ, որովհետեւ նա Աստծոյ Որդին էր բնութեամբ, մենք՝ շնորհներով. նա՝ կոյս մօրից, իսկ մենք՝ ծնուած [կուսական] աւազանից, որի պատճառով եւ նոր օրհնութիւն ենք տալիս նորածին Աստծուն եւ Տիրոջը, մենք՝ Աստծոյ նոր ժողովուրդս: [Սրանով] նախ փառաբանում ենք եւ օրհնում Որդուն՝ Հօր եւ Սուրբ Հոգու հետ՝ երեք անձ մի բնութեամբ եւ ոչ թէ ինչպէս հները հրէական օրհնութեամբ, որոնք Որդուն եւ Հոգուն չէին օրհնում:

Երկրորդ՝ Վերնատանը առաքեալների դասը նորովի հաղորդակցուելով [Աստծոյ] մարմնին եւ արեանը՝ նոր օրհնութեամբ [օրհնեց] Քրիստոսին, եւ ելան Ձիթենեաց լեռը, ինչպէս Աւետարանն է ասում:

Երրորդ՝ Ձիթենեաց լեռան վրայ տեսնելով երկինք բարձրացող Տիրոջը՝ երկրպագեցին նրան եւ ամէն օր տաճարում գովերգում ու օրհնում էին Աստծուն նոր օրհնութեամբ, Տիրոջ եւ Աստծոյ համբարձումը երկինք, որ կանխաճառել էր մարգարէն. «Աստուած համբարձուեց օրհնութեամբ, եւ մեր Տէրը՝ փողերի ձայնով» (Սղմ. ԽՁ 6):

Չորրորդ՝ այժմ էլ հաւատաւոր զաւակները եկեղեցում նոր օրհնութեամբ օրհնելով՝ երեքսրբեան խօսքով[494] աստուածաբանում են խաչեալ Քրիստոսին ու օրհնում արքայութեան խաչի աթոռի վրայ:

Հինգերորդ՝ որովհետեւ ամէն մի լեզու խոստովանում է, որ՝ Տէր է Յիսուս Քրիստոս՝ բազմած ի փառս Հայր Աստծոյ (տե՛ս Փիլիպ. Դ 11). այժմ հաւատացեալներն են [խոստովանում], յետոյ՝ ընդհանրապէս երկինքը, երկիրը եւ բոլոր ազգերը: Ըստ այդմ՝ «Բոլոր ազգերը, որոնց արարել էր» (Սղմ. ՁԵ 9), այսինքն՝ հրեշտակները, մարդիկ կամ էլ մարդկային բոլոր ազգերն ու բոլոր լեզուները վերջում գալու են երկրպագելու Քրիստոսին եւ անեզր յաւիտենականութեամբ փառաւորուելով՝ օրհնելու են նրան:

Սա է նոր օրհնութիւն ասուածը:

ԱՍՏԾՈՅ ԽՕՍՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ Բ

Հարց. Աստծոյ խօսքը մէ՞կն է, թէ մի քանիսը, որովհետեւ շատ են երեւում Հին եւ Նոր կտակարաններում գրուածները եւ

[զանազան] թղթերը: Եւ եթէ մէկն է, ինչպէ՞ս կարող էինք ասել՝ նոյնն է Աստծոյ խօսքը ասուած առաջ, քան յաւիտենութիւնը եւ այսօր՝ թղթի վրայ գրուածը:

Պատասխան. Մէկն է Աստծոյ Խօսքը՝ անձնաւորուած էութեամբ եւ գոյացութեամբ, որ անմարմին Հօր ծոցից էր, որով ամէնքը լինելութեան եկան: Եւ նոյն խօսքով խօսեց նախահայրերի, մարգարէների հետ՝ առանց մարմնի: Եւ նոյն խօսքն է՝ մարմնաւորուած, որ երեւաց մեզ եւ թղթի վրայ գրուեց իւրաքանչիւր Աւետարանում:

Սակայն նոյն խօսքը կարող է բազմանալ, ինչպէս հրեշտակների եւ մարդկանց մէջ, Հին եւ Նոր օրէնքներում ու այնուամենայնիւ, չի տրոհուում [նրա] միասնականութիւնը:

Եթէ մեկն ասի, այսպէս ասելով էլ ստացւում է, որ ե՛ւ մէկն է, ե՛ւ բազում. բայց այս ինչպէ՞ս է լինում: Նկատենք, թէ սա չի շեղւում ուղիղ տեսութիւնից, թէ մէկ է Հօր մօտ եւ բազում՝ մեզ մօտ, քանզի մէկ է ըստ իր անձնաւոր գոյութեան եւ բազմանում է շատերին երեւալով: Եւ այն, որ բազում ձեւերով երեւաց մեզ, բազմաթիւ թղթերի վրայ գրուեց՝ նոյն Խօսքն է, որ նախքան յաւիտենութիւնը ծնուել էր Հօրից, նման այն բանին, որ մտքում եղած խօսքը մէկն է, որ արտաբերուելով՝ բազմանում է լսելիքի ու գրուածքների մէջ, եւ նոյն խօսքն է, որ մտածւում է սրտի մէջ, քանզի որպէս խօսք չի զանազանւում, բայց ըստ որակի [զանազանւում է], որովհետեւ սրտում անմարմին էր եւ այժմ մարմնացաւ թղթի վրայ:

Դարձեալ, ինչպէս օրինակ, մէկն է թագաւորի խօսքը, որ բազմանում է բազմաթիւ բերաններում եւ ականջներում, թղթի վրայ, սակայն չի տրոհում իր միասնականութիւնը:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ընդունեցինք մէկը լինելը, սակայն թուում է, թէ Աւետարանի խօսքն անկատար է, քան Աստծոյ խօսքը, ապա նկատենք, որ անմարմին իրն անկատար լինել չի կարող, իսկ Աւետարանի խօսքը Աստծոյ նոյն կատարեալ Խօսքն է՝ մարմին առած ու ծնուած նախքան յաւիտենութիւնը: Որովհետեւ անմարմնին յատուկ է, որ բազմանայ եւ իր միասնականութիւնը չկորցնի, ինչպէս նաեւ մասերի բաժանուի ու չկորցնի ամբողջականութիւնը, որպէս այն, որ մարդու խօսքը իւրաքանչիւրի ականջին առանձին է հասնում, սակայն ամբողջական ու կատարեալ է մնում եւ չմասնատուած:

Ահա այսպէս էլ Աստծոյ խօսքը իւրաքանչիւր Աւետարանում ամբողջական է, կատարեալ եւ չմասնատուած:

Կամ ինչպէս օրինակ, մատանու դրոշմը, որ ամէն անգամ մոմի վրայ կնքելիս նոյն ամբողջականութիւնն ունի՝ ո՛չ աւելի կամ ո՛չ պակաս: Այդպէս էլ նոյն Խօսքն է իւրաքանչիւր Աւետարանում մարմնաւորուած եւ Հօր աջ կողմում նստած՝ ո՛չ աւելի եւ ո՛չ պակաս:

Իսկ եթէ մէկն ասի, որ այդ դէպքում, եթէ Աստծոյ նոյն անձնաւորուած Խօսքն է Աւետարանում խօսուած, ուրեմն բազ-

մացած է անձերով ու գոյացութեամբ, ապա ասենք, որ Աստծոյ նոյն անձնաւորուած Խօսքն է Աւետարանում խօսուած, սակայն բազում չեն Խօսքի անձերն ու գոյութիւնները: Ինչպէս օրինակ այն, որ մէկն է արեգակն իր անձով եւ գոյութեամբ եւ բազում պատուհանների ու հայելու մէջ երեւում է մէկ անձով ու գոյութեամբ եւ ոչ թէ բազում:

Դարձեալ օրինակ, մէկն էր Քրիստոսի մարմինը՝ գամուած խաչին եւ նոյն մարմինն է՝ բազում նշխարներով միաւորուած եւ ոչ թէ բազմաթիւ, որովհետեւ նոյնն է թէ՛ հացի գոյացութիւնը, թէ՛ Քրիստոսի մարմնի գոյացութիւնը, բայց որակը եւ պատահական յատկանիշները ցոյց են տալիս տարբեր բաներ:

Այդպէս էլ մէկն է Աստծոյ Խօսքը՝ անձով եւ իր գոյացութեան բնութեամբ եւ գրուած Աւետարանների գրքերում, որովհետեւ բազմանում եւ մնում է միասնական, բովանդակում է անբովանդակելիօրէն, բաժանւում է անբաժանելիօրէն, որ [նշանակում է], թէ տեսակով եւ գոյութեամբ մէկն է, ինչպէս ցոյց տրուեց:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ընդունեցի նոյնը լինելը, սակայն ինձ այնպէս է թւում, թէ Աւետարանը Քրիստոսի խօսքն է եւ Քրիստոս Աստծոյ Խօսքն է, ուրեմն Աւետարանը Խօսքի խօսքն է, պատասխանենք, որ ասուածը նման է այն բանին, որ ասում են՝ Բանն Աստուած Հօր պատկերն է, մարդը պատկերն է Բանի, ապա մարդը ոչ թէ Աստծոյ պատկերն է, այլ՝ պատկերի պատկերը:

Այնպէս, ինչպէս գրուած է «Գիրք պարապմանց»-ում, թէ մարդը պատկերն է Բանի, եւ Բանն Աստուած է, ուրեմն մարդը պատկերն է Աստծոյ, այդպէս էլ հիմա ենք ասում, որ զանազանութիւն չկայ, որովհետեւ եթէ Աւետարանը Քրիստոսի ճշմարիտ Խօսքն է, իսկ Քրիստոս ճշմարիտ Աստուած է, ապա ուրեմն Աւետարանն Աստծոյ ճշմարիտ խօսքն է. ինչպէս այն, որ Սուրբ Հոգին խօսեց մարգարէների մէջ (տե՛ս Յայտ. ԺԹ 10), իսկ Սուրբ Հոգին ճշմարիտ Աստուած է, հետեւաբար Սուրբ Հոգու խօսքերը Աստծոյ ճշմարիտ Խօսքն է:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ինչպէ՞ս է Աստծոյ խօսքը մէկը, որովհետեւ խօսքը մարմնացաւ, եւ Հայրը վկայեց, որ դա իր Որդին է (տե՛ս Մտթ. ԺԷ 5), ուստի անյարմար կլինէր, որ ինքն իրեն վկայէր, ապա ասենք, որ Սուրբ Երրորդութեան մէջ մէկն է Խօսքը, մէկը՝ իմաստութիւնը, բնութիւնը՝ կեանքը, ներգործութիւնը եւ մնացած ամէն ինչ. տարբերւում են միայն նրանով, որ մէկը ծնող, միւսը ծնուած, երրորդը բխած է:

Ա՛րդ, եթէ ամէն ինչ նոյնն է Սուրբ Երրորդութեան մէջ, պարզ է, որ՝ Հայրը խօսի, թէ Որդին կամ Սուրբ Հոգին՝ միեւնոյն բանն են ասում, ուրեմն եւ անյարմար չէ, որ Հայրը նոյն խօսքով վկայի իր Որդու համար, որովհետեւ Որդին ու Հայրը անձերով տարորոշուած են:

Յայտնի է նաեւ, որ Խօսքը միանալով մարմնին՝ անբաժան էր Հօրից, ինչպէս որ մեր խորհած միտքը, որ գրւում է թղթի վրայ: Արդ, անյարմար չէ, որ Հայրը

անբաժանելի խօսքով վկայի Խօսքի մասին, որ մարմնի մէջ էր, ինչպէս այն, որ թագաւորը վկայում է, որ թղթի վրայ գրուածը ստոյգ իր խորհած միտքն է եւ իր գրածը:

Այսպէս էլ Հայրն է վկայում Որդու մասին:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉՈ՞Ի ԱՅՊՔԱՆ ՇԱՏ ԵՆ ԳՐՔԵՐԸ

Հարց. Ինչո՞ւ են այդքան գրքեր, թղթեր, խրատներ գրուել:

Պատասխան. Պատճառը երեքն են. նախ՝տգիտութիւնը, երկրորդ՝ փոփոխութիւնները, երրորդ՝ հիւանդութիւնները:

Ա՛րդ, մարդու տգիտութիւնը բնական է, փոփոխութիւնը՝ ձեռքբերովի, հիւանդութիւնը՝ դիւական:

Առաջինի մասին պէտք է իմանալ, որ դիւրին է գազանին ընտելացնել, քան տգէտ մարդուն գիտուն դարձնել:

Երկրորդի մասին պէտք իմանալ, որ ինչպէս դժուար է ծուռ փայտն ուղղել, այդպէս էլ դժուար է փոխել մարդկանց չար սովորութիւնները:

Երրորդի մասին պէտք է իմանալ, որ ինչպէս կայ մարմնի հիւանդութիւն, այդպէս էլ կայ հոգու հիւանդութիւն: Եւ ինչպէս բազմաթիւ սպեղանիները, բժշկական դեղերը, զանազան խոտաբոյսերն ու ամատները, տերեւներն ու պտուղներն են վկայում, թէ բազմաթիւ են մարմնի հիւանդութիւնները, նոյնպէս եւ հայրերի եւ իմաստունների խօսքերի եւ խրատների բազմութիւնը, սուրբ գրքերը՝ Հին եւ Նոր Կտակարանները՝ ցոյց են տալիս հոգու հիւանդութեան ահագնութիւնը, որպէսզի սրանցով առողջանան:

Իսկ հիւանդութիւնների մասին կխօսուի առաջիկայում. գտի՛ր [այն] երեսունվեցերորդ գլխի երկրորդ համարում:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՔՐԻՍՏՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԼՈՒԽՆ ՈՒ ՀԻՄՔՆ Է Պրակ Գ

Հարց. Ո՞րն է հիմքը, որ դրել է Յիսուս Քրիստոս, եւ շինուածքը՝ ոսկի ու արծաթ եւ այլն:

Պատասխան. Հիմքը եւ շինուածքը ցոյց են տալիս, որ կամենում է մեզ Աստծոյ տաճար դարձնել, ըստ այդմ՝ «Դո՛ւք կենդանի Աստծոյ տաճար էք» (Ա Կորնթ. Գ 16):

Ա՛րդ, առաջին հիմքը եւ գլուխը ինքը՝ Քրիստոս է, իսկ հաւատացեալները՝ նրա կառոյցը. կառուցողը՝ Հայրը, ըստ այդմ՝ «Ես դնում եմ Սիօնի հիմքը որպէս պատուական անկեան գլուխ, եւ ո՛վ նրան հաւատայ, չի ամաչի յաւիտեան» (Հռոմ. Թ 33):

Երկրորդ հիմքը Պետրոսի դաւանանքն էր, կառոյցը՝ դաւանողները, կառուցողը՝ Քրիստոս:

Երրորդ հիմքը իւրաքանչիւրի հաւատն է, կառոյցը՝ գործերը, կառուցողները՝ մենք:

Իսկ թէ ինչո՞ւ երեքն են հաւատի հիմքերը, ապա ասենք, որ հաւատը երեք կողմ ունի. հաւատը, հաւատալը, հաւատալիքը: Այդպէս էլ դաւանանքն է, ինչպէս օրինակ՝ իմացումը, իմանալը, իմանալին, կամ էլ՝ ինչպէս զգայութիւնը,

զգալը, զգալին: Այդպէս էլ հաւատալիքը Քրիստոսն է, հաւատալը՝ դաւանելը, հաւատը, որ մեր մէջ է:

Այս պատճառով էլ հաւատի հիմքը եւ գլուխը ամէն մի հաւատացեալի մօտ երեքն է:

Իսկ եթէ երբեմն առաքեալներին եւ մարգարէներին հիմք են անուանում, ապա [դա այն պատճառով], որ նախ իրենք ժողովուեցին հաւատի շուրջը ու եղան եկեղեցու հիմքը, ապա ժողովեցին այլոց: Կառոյց են նաեւ արդարների բոլոր դասերը, ովքեր մարմնով դարձան բնակիչներ, իսկ հաւատով՝ կառոյց:

Իսկ կառոյցի մասին կասուի առաջիկայում՝ երեսունհինգերորդ գլխի երեսունեօթներորդ պրակում:

Հարց. Ինչո՞ւ է Քրիստոս գլուխ կոչւում, իսկ եկեղեցին՝ անդամ:

Պատասխան. Գլուխը երկու յատկանիշ ունի:

Նախ, սկիզբն է մարմնի, ապա՝ նրա էութիւնն է: Ինչպէս ասում է առաքեալը՝ «Կնոջ գլուխը տղամարդն է» (Ա Կորնթ. ԺԱ 3), որովհետեւ կինը տղամարդուց է եւ նրա բնութիւնն ունի: «Իսկ բոլորի գլուխը Քրիստոս է» (Ա Կորնթ. ԺԱ 3), որովհետեւ Քրիստոսի անդամներն ենք եւ նրա բնութենակիցները. «Եւ Քրիստոսի գլուխը Հայր Աստուած է» (Ա Կորնթ. ԺԱ 3), որովհետեւ սկիզբն է Որդու եւ նրա էակիցը:

Եւ պէտք է իմանալ, որ Քրիստոս գլուխն է եկեղեցու, իսկ հաւատացեալները՝ նրա մարմինն ու անդամները, ինչպէս գրում է առաքեալը. «Ով անեռեւոյթ Աստծոյ պատկերն է» (Բ Կորնթ. Դ 4). «Նրան դրեց իբրեւ գլուխ մարմնի՝ եկեղեցու» (Կողոս. Ա 18):

Եւ սա գլխի բազմաթիւ յատկանիշների պատճառով: Նախ, ինչպէս մէկն է գլուխը, իսկ անդամները՝ բազում, այդպէս էլ մէկն է մեր Տէր Յիսուս Քրիստոս եւ ոչ թէ երկուսը ըստ որոշ բաժանողների, իսկ հաւատացեալները՝ բազում:

Երկրորդ, նոյն գլխի բոլոր անդամները միակերպ են հաղորդակցւում նրան: Այդպէս էլ մէկն է Քրիստոս եւ մէկը նրա մարմինը, որ կոչւում է ընդհանրական եկեղեցի, ինչպէս ասւում է «Հաւատամքի» մէջ:

Երրորդ՝ գլխից են իջնում կենդանութիւնը, զօրութիւնը, առողջութիւնը եւ բոլոր անդամների շարժումը՝ ջղերի միջոցով: Այդպէս էլ Քրիստոսից մեզ են գալիս հոգեւոր կենդանութիւնը, զօրութիւնը, առողջութիւնը, յօդերի շարժուելը՝ հաւատի միաւորող ուժի ձեռքին խաղալով. «Որովհետեւ նրանով կանք եւ շարժւում ենք» (Գործք ԺԷ 28),- ասում է առաքեալը:

Չորրորդ՝ գլխի վրայ են տեսողութիւնը, լսողութիւնը, համի ու հոտի ճաշակելիքները: Այդպէս էլ Քրիստոսով ենք տեսնում Հայր Աստծուն եւ ստանում նրա կամքը, կերակրւում ու զմայլւում հոգէպէս:

Հինգերորդ՝ գլխի վրայ են փառքն ու խնդութիւնը, խօսքն ու իմացութիւնը: Այդպէս էլ Քրիստոս եկեղեցու փառքն է եւ ցնծութիւնը, խօսքն ու իմաստութիւնը,

որով արքայութեան որդեգիրն ու ժառանգը դարձանք, որ անտրտում ուրախութիւնն է: Եւ իմաստութեան շնորհը ծաւալուեց մեր մէջ, ըստ այդմ՝ «Իւղի է նման, որովհետեւ իջնում է մեր գլխին, քահանայական կարգ [ստանալիս]՝ մօրուքին եւ ժողովրդի զգեստի քղանցքներին» (Սղմ. ՃԼԲ 2):

Այսքանը եկեղեցու հիմքի եւ գլխի մասին:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷԿՆ Է

Հարց. Ինչպէ՞ս է ընդհանրական եկեղեցին մէկ աշխարհի բոլոր ծագերի համար:

Պատասխան. «Կաթողիկէ» նշանակում է ընդհանրական, իսկ «եկեղեցին»՝ «ժողովում»: Եւ [սա] համանուն է, որովհետեւ եկեղեցի է քարերից շինուածը, նաեւ եկեղեցի է հաւատացեալ ժողովուրդը:

Եւ սրանք նմանութիւններ ունեն: Նախ՝ երկուսն էլ Աստծոյ տաճար են, այսինքն՝ կառոյցն ու մարդը. «Դո՛ւք կենդանի Աստծոյ տաճար էք» (Ա Կորնթ. Գ 16),- ասում է առաքեալը: Եւ Քրիստոս երկուսի հիմքն է, չորս անկիւնները առաքեալներն ու մարգարէներն են եւ նրանց շարադրած Հին ու Նոր կտակարանները, իսկ կառոյցը բոլոր հաւատացեալներն են:

[Նման են] նաեւ այն բանով, որ ինչպէս մենք ենք մկրտութեամբ եւ հաղորդութեամբ դառնում Աստծոյ տաճար, այդպէս էլ՝ օրհնութեամբ կառուցուած [եկեղեցին], որ օծում ենք նախ ջրով, ապա գինով:

Եւ բազմաթիւ այլ զուգահեռներ կան, որոնք ցոյց կտրուեն առաջիկայում՝ երեսունութերորդ համարում:

Իսկ տարբերւում են, որովհետեւ եկեղեցին կոչւում է ժողովարան, իսկ մենք՝ ժողովուածներ: Նա դուստրն է, իսկ մենք երկնային Փեսայի հարսը:

Այժմ պարզօրէն համառօտ պատասխանենք, թէ ինչպէ՞ս է կոչւում մէկ եկեղեցի:

Մէկ է կոչւում ոչ թէ տեղով, այլ մէկ հաւատով եւ կոչման յոյսով, որ մի մօրից եւ մէկ աւազանի որովայնի ծնունդ է ու մէկ կերակուր, որ աստուածային գրերի տեսութիւն է ու մէկ մարմին եւ փրկչական արիւն, եւ իբրեւ մէկ գլուխ եւ զգեստ ունենք Քրիստոսին:

Իսկ ըստ իմաստասէրների մէկն է ասւում երեք կերպ՝ իբրեւ դաս, տեսակ, անհատ:

Ինչպէս որ ըստ դասի մէկն են բոլոր կենդանիները, տեսակ է մարդը, անհատ, ասենք Պետրոսը, այդպէս էլ մէկն է ընդհանուր եկեղեցին, որ ըստ հաւատի եւ յուսոյ կոչի միաւորում է բոլոր քրիստոնեաներին մէկ դասի մէջ:

Մէկն է նաեւ խորհրդով, այսինքն՝ մկրտութեամբ, պատարագելով, կարգով եւ այլ բաներով, իբրեւ տեսակ:

Իսկ իբրեւ անհատ է արարողութեան ձեւով, պահքով եւ աղօթքներով:

Միութիւնը դարձեալ այլ կերպ երեւում է երեք եղանակների բաժանումից. կամ ինչպէս ամբողջը մասերի

մէջ, կամ ինչպէս համանունը, կամ էլ՝ մէկից առ մէկը [գնալու առումով]:

Նախ, ինչպէս մարմին է ամբողջը եւ իւրաքանչիւր մասը, նոյնպէս եւ մէկ եկեղեցի է ամբողջը եւ իւրաքանչիւրը, նմանապէս քրիստոնեայ են թէ՛ բոլորը, թէ՛ մէկ մարդը, որոնք թէ՛ նման են միմեանց, եւ թէ՛ ոչ նման:

Երկրորդ՝ ինչպէս նոյն անունը, որ ցոյց է տալիս տարբեր առարկաներ, ինչպէս խոյը երկնքում, [խոյը] երկրում եւ [խոյը] ծովում, այդպէս էլ եկեղեցի է կոչւում թէ՛ կենդանի մարդը, թէ՛ քարէ կառոյցը, թէ՛ երկնքում անդրանիկների եկեղեցին, որոնք սակայն տարբեր են:

Երրորդ՝ մէկից մէկին անցնելու առումով, ինչպէս բժշկական դեղը եւ գործիքը, այդպէս էլ իւրաքանչիւր ազգի մէջ եկեղեցին մէկն է՝ ունենալով միեւնոյն գործը, մի գլխից դէպի իւրաքանչիւր անդամն է գնում, մի Քրիստոսից դէպ իւրաքանչիւր քրիստոնեան, մի հաւատից դէպ մի հաւատացեալը, եւ նմանապէս այլ ձեւերով եկեղեցին այս երրորդ [իմաստով] կարող է միաւորել երկրի բոլոր ծագերը, ու կլինեն միահաւատ մէկ հաւատացեալ, ինչպէս ասացինք:

Չորրորդը՝ Վերին Սիօնի անդրանիկների եկեղեցին է, որոնք սրբերի ժողովուած հոգիներն են, որ Պօղոսն անուանում է արդար ու կատարեալ որդիների եկեղեցի (տե՛ս Եբր. ԺԲ 23):

Այսպիսով, եկեղեցին համանուն է, որ ունի չորս նշանակութիւն. ներքին, Վերին եկեղեցի, մեր կողմից կառուցուածը եւ հաւատն իբրեւ մեր ժողովարան:

Այսքանն այն մասին, թէ քանի՞ եղանակով է կոչւում եկեղեցի:

ԴՈՒՍՏՐ ԵՒ ՀԱՐՍ ԿՈՉՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ երբեմն եկեղեցին կոչւում է իգականով՝ հարս եւ դուստր, երբեմն էլ՝ արականով՝ որդի:

Պատասխան. Հարս է կոչւում երեք պատճառով:

Նախ՝ Քրիստոսի կատարեալ սիրոյ պատճառով, ինչպիսին ունենում են փեսան եւ հարսը: Երկրորդ՝ Քրիստոսի՝ եկեղեցու հետ գերագոյն եւ ծայրագոյն միաւորման պատճառով: Երրորդ՝ բարի ծնունդ լինելու պատճառով:

Որդի կոչւում է դարձեալ երեք պատճառով: Նախ՝ որովհետեւ եղբայր ու ժառանգակից ենք Քրիստոսին (տե՛ս Հռոմ. Ը 17): Երկրորդ՝ որովհետեւ աջակողմեան ենք: Երրորդ՝ արի գործերի պատճառով:

Հարց. Ինչպէ՞ս է կոչւում հարս եւ դուստր:

Պատասխան. Քրիստոսին միաւորուելու պատճառով, քանի որ փեսան Հայր Աստծոյ Որդին է, իսկ հարսը դուստր է կոչւում: Ինչպէս որ մեզանում որդու կինը [որդու] հոր դուստր է կոչւում՝ մի մարմին դառնալու պատճառով:

Եւ դարձեալ չնայած Քրիստոսի ու եկեղեցու հայրը եւ մայրը մէկն են, բայց տարբեր կերպով են, որովհետեւ նա՝ բնութեամբ է, մենք՝ շնորհով: Այդպէս էլ Ադամը իրենից ծնուածի հետ այլ կա-

պերով կապուեց, եւ ինչպէս Ադամի կողը եղաւ իրեն կին, այդպէս էլ կառուցուած եկեղեցին դարձաւ Քրիստոսի հարս:

Եւ եկեղեցին մայր է իբրեւ անդամակից Քրիստոսի, եւ կին՝ նրան փեսայ անուանելու պատճառով:

Եւ մնացեալն էլ այս կարգով ուղղապէս ընկալիր:

ՄԱՍՆԱՒՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Որո՞նք են եկեղեցու մասնաւոր անդամները:

Պատասխան. Եկեղեցու գլուխը մեր Տէրն է՝ Յիսուս Քրիստոս, ինչպէս ասուեց: Եւ նրան փոխարինողը երկրի վրայ հնում քահանայապետն էր, ինչպէս Ահարոնը, իսկ նորում՝ իւրաքանչիւր ազգի կաթողիկոսը:

Տեսնող աչքերը՝ մարգարէներն են, իսկ առաքեալները՝ Աստծոյ Խօսքի ինքնատեսները: Այլեւ եպիսկոպոսները տեսուչ եւ դիտող են կոչւում, բերան՝ Աւետարանիչները, լեզու՝ Կենաց Խօսքի քարոզները, ատամներ՝ վարդապետները, ովքեր հոգեւոր կերակրի մեկնիչն ու ծամողն են: Հոտոտելիք են նրանք, ովքեր ընտրում եւ տարորոշում են չարն ու բարին: Ականջները ճշմարիտ Խօսքի աշակերտներն են, մարմինը՝ բոլոր հաւատացեալները եւ Քրիստոսի անդամները, ձեռքերը՝ քահանաները, որոնք սուրբ Խորհուրդների իրականացնողներն են, ոտքերը՝ կրօնաւորները եւ ապաշխարողները, ովքեր կրում են օրէնքի ծանրութիւնը:

Եւ դարձեալ՝ գլուխ է Քրիստոս, վարսեր՝ Վերին Զօրութիւնների դասերը, որոնք դէպ մեզ են իջեցնում շնորհները: Մօրուք կոչւում են մարգարէները, առաքեալները, հայրապետները, որոնք մերձ լինելով [նրա] բերանին՝ մեզ պատմում են Աստծոյ օրէնքների պատգամների մասին: Իսկ ուսանոց կոչւում են վարդապետներն ու քահանաները, որոնք պահպանում են ժողովրդին՝ կրելով Քրիստոսի բոլորակ զգեստ [անունը]:

ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԿԻՆ ՍՊԱՍԱՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Դ

Հարց. Ի՞նչ է նշանակում ասելը. «Նրանց, ում Աստուած դրեց եկեղեցում, սրանք են: Նախ՝ առաքեալները, երկրորդ՝ մարգարէները, երրորդ՝ վարդապետները» (Ա Կորնթ. ԺԲ 28):

Պատասխան. Նախ, որովհետեւ մարգարէները ճանաչեցին Հօրը, ապա առաքեալները՝ Որդուն, իսկ վարդապետները՝ Սուրբ Հոգուն:

Երկրորդ՝ սրանք Սուրբ Երրորդութեան պատկերն են եկեղեցում. ի դէմս Հօր՝ մարգարէները, ի դէմս Որդու՝ առաքեալները, ի դէմս Հոգու՝ քննող վարդապետները, որովհետեւ՝ «Հոգին քննում է ամէն ինչ եւ խորքերն Աստծոյ» (Ա Կորնթ. Բ 10):

Երրորդ՝ մարգարէներն իբրեւ մտածուած խօսք են, առաքեալները՝ արտաբերուած խօսք, վարդապետները՝ գրուած:

Իսկ առաքեալն այս բնական կարգը փոխում է ըստ իրադրութեան՝ առաջինը

դնելով արժանաւորներին. առաջինները՝ շնորհի եւ ճշմարտութեան պատճառով. ապա՝ մարգարէները՝ ստուեր եւ օրինակ լինելու պատճառով, եւ վարդապետները՝ ըստ նրանց օգտակարութեան չափի:

Երկրորդ՝ ինչպէս ամբողջն է նախորդում մասերին, այդպէս էլ առաքեալները ողջ աշխարհի լոյս կոչուեցին, իսկ մարգարէները՝ մի ազգի: Նաեւ՝ մարգարէներն հոգի չէին կարող տալ այլոց, մինչդեռ առաքեալները միայն ձեռքները դնելով՝ Սուրբ Հոգի էին տալիս եւ խօսում լեզուներով, եւ ընդունողները մարգարէանում էին: Իսկ սուրբ վարդապետները, որոնք նրանց քարոզի հետեւողներն էին եւ որդիները ծնողների, նրանցից յետոյ երրորդ կարգում են:

Երրորդ՝ որովհետեւ առաքեալներն անձամբ տեսան Քրիստոսին, մարգարէները՝ հեռուից, միջնորդութեամբ, վարդապետները՝ նրանցից յետոյ:

Չորրորդ՝ որովհետեւ եկեղեցու կառուցողներն ու հաստատողները առաքեալներն են: Նրանց ձեռքը նիւթ տուողները՝ մարգարէները, սահմաններն ու պարիսպները՝ վարդապետները:

Հինգերորդ՝ առաջինը առաքեալներն են իբրեւ խօսքն իրականացնողներ, երկրորդը մարգարէները, իբրեւ նրանց նախաձայնողներ, երրորդը վարդապետներն՝ իբրեւ մեկնիչներ եւ թարգմանիչներ առաջին երկուսի քարոզների[495]:

ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ո՞րն է առաքելութեան էութիւնը:

Պատասխան. Առաքելութիւնը վեց կերպ է իրականանում. մեծից, կամքից, իշխանութիւնից, փոքրից, հնազանդութիւնից, գործից:

Սրանց փոխկապակցութեամբ է բոլոր տեղերում իրականանում առաքելութիւնը:

Հարց. Առաքելութեան քանի՞ եղանակ կայ:

Պատասխան. Վեց եւ սրանք են.

Մարդը մարդուց առաքուած, կամ՝ մարդը՝ հրեշտակից, մարդը՝ Աստծուց, հրեշտակը՝ հրեշտակից, հրեշտակն՝ Աստծուց:

Իսկ սրանցից ամենաբարձրը՝ Աստծոյ առաքուելն է Աստծուց:

Առաքելութեան գործերի բազմաթիւ օրինակներ կան: Առաջին՝ պատգամի համար, ինչպէս Գաբրիէլը՝ սուրբ Կոյսի մօտ: Երկրորդ՝ միջնորդելու համար. «առաքեալ եւ քահանայապետ մեր խոստովանութեան» (Եբր. Գ 1): Երրորդ՝ մշակելու, ինչպէս՝ «ծառաներն այգում» (Մտթ. Ի 2): Չորրորդ՝ յօժարութեամբ չարչարուելու համար, «իբրեւ սպանդանոց քշուած ոչխար» (Ես. ԾԳ 7) եւ՝ այլոց, ինչպէս «տանջանք չար հրեշտակի ձեռքով» (Սղմ. ՀԷ 49): Հինգերորդ՝ բժշկելու. «Առաքեց իր Խօսքին եւ բժշկեց նրանց»: Վեցերորդ՝ իշխելու համար. «Նրանց իշխաններ առաքեց ամբողջ երկրով մէկ»: Եօթներորդ՝ քարոզելու Աւետարանը, ինչպէս առաքեալներին առաքեց: Ութերորդ՝ մարգարէներին [առաքելը]: Իններորդ՝ մաքրելու համար՝ մարգարէի կայծակի օրինակով (տե՛ս Ես.

Զ 6): Տասներորդ՝ մեկնութեան տեսութեան համար, ինչպէս՝ Դանիէլի մօտ:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է մարգարէութիւնը:

Պատասխան. Մարգարէութիւնը անցեալի, ներկայի եւ ապագայի կանխագիտութիւնն է՝ բարի հոգու միջնորդութեամբ:

Եւ այսպէս է հանդէս գալիս. երկու հանգամանք է անհրաժեշտ ճշմարիտ մարգարէ լինելու համար. նախ՝ որ յայտնում է ծածկուածը եւ հեռաւոր ժամանակների լինելիքը, որովհետեւ եթէ մօտ գալիքը եւ ակնյայտը գուշակի՝ մարգարէ չէ:

Երկրորդ՝ որ հեռաւորը գուշակի բարի հոգու միջնորդութեամբ, եւ եթէ [գուշակի] չար հոգու միջնորդութեամբ մարգարէ չէ, եւ կեղծ մարգարէութիւն է արածը, ուստի [սրանք] ոչ թէ պարզիպարզոյ ճշմարիտ մարգարէ են կոչւում, այլ՝ կեղակարծ, ինչպէս Բահաղի մարգարէն, կամ բարձունքի ու անտառի մարգարէն (տե՛ս Գ Թագ. ԺԱ 7, ԺԳ 32, Դ Թագ. ԺԷ 10, 11, 29): Ինչպէս որ մեռած մարդը պարզապէս մարդ չի ասւում, այդպէս էլ՝ սրանք, ինչպէս ասուեց Թագաւորաց գրքի վեցերորդ գլխի տասներկուերորդ պրակում:

Հարց. Քանի՞ տեսակ մարգարէութիւն կայ:

Պատասխան. Հինգ: Առաջին՝ բնական, ինչպիսին գազաններինը, թռչուններինը, մրջիւններինն է, ինչպէս նշուեց վերը՝ տասներեքերորդ գլխի յիսունմէկերորդ պրակում:

Երկրորդ՝ հմտութեամբ, ինչպիսին բժիշկներինն է, նաւավարներինը: Բժիշկները կանխորոշում են հիւանդի առողջանալը, ցաւը, նաւավարները՝ ալիքների խռովքն ու հանգիստը:

Երրորդ՝ դիւական, ինչպէս կուռքերի սուտ մարգարէները՝ Սեդեկիան (տե՛ս Գ Թագ. ԻԲ 11-37, Երեմ. ԻԹ 21-22) եւ բազմաթիւ ուրիշներ, որոնք այժմ էլ երեւում են ի պատասխան կախարդների. նաեւ՝ հաւակռինչները, գարեդիւթերը, որոնք առաւել եւս սուտ են եւ դատարկախօս:

Չորրորդ՝ գռեհիկ, որ սովորութեամբ լսելով, ասում են՝ ձմեռ է գալու, դրանից յետոյ՝ գարուն, ամառ, աշուն. առաւօտեան եւ երեկոյեան երկնքի կարմիր դառնալով՝ փորձով հմտացածները երաշտ եւ անձրեւ են կանխագուշակում, ըստ այդմ՝ «Կեղծաւորներն ասում են եւ այդպէս է լինում»:

Հինգերորդ՝ հոգեւոր մարգարէութիւնը եւ աստուածային գիտութեամբը, որոնք Սուրբ Հոգու յայտնութեամբ ընկալողները յայտնում են մարդկանց՝ զգուշանալու եւ հոգէպէս ամրանալու համար:

Եւ սրանք չորս կերպ են լինում. նախ՝ երազով, ինչպէս Սողոմոնինն էին: Երկրորդ՝ տեսիլքով, ինչպէս՝ Եսայունը: Երրորդ՝ երեւակայութեամբ, ինչպէս՝ Եղիսէինը, որ տեսաւ հրեշտակների խմբին, իսկ մանկանը՝ ոչ: Չորրորդ՝ միտքն առանց երեւակայութեան հոգու

շնորհներով լուսաւորելու միջոցով, ինչպէս Մովսէսին ասաց. «Ոչ թէ տեսիլքներով եւ երազներով խօսեցի քեզ հետ կամ երեւացի, այլ դէմ յանդիման կանգնեցի ու խօսեցի» (Թիւք ԺԲ 8):

Այդպէս էլ Դաւթի մարգարէութիւնն էր, որ մտքի լուսաւորութեամբ երգում էր բոլոր սաղմոսները՝ Սուրբ Հոգու միջոցով[496]:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Վարդապետելու ի՞նչ եղանակներ կան:

Պատասխան. Չորս, այսինքն՝ սահմանող. բաժանող. ապացուցող. վերլուծող: Եւ սրանց մասին համառօտ կայ գրքի առաջաբանում:

Իսկ ըստ իմաստութեան երեքն են: Նախ, բնական խելքով, որ հանդիպում է բարի նկարագրով մարդկանց մօտ, ինչպէս Ակիտոփէլի եւ Դաւթի բարեկամի՝ Քուսիի (տե՛ս Բ Թագ. ԺԵ 32-37, ԺԶ 16-19, ԺԷ):

Երկրորդ՝ ուսումնառութեամբ, որ կրթութիւն առնելով են ստանում, ինչպէս Պլատոնը եւ ուրիշներ:

Երրորդ՝ հոգու շնորհով, ինչպէս մարգարէներինն ու առաքեալներինը:

Եւ ոմանց էլ մասնաւոր պարգեւ է տրւում այս շնորհը, թէեւ ամբողջութեամբ համապատասխան չէ նրանց:

Չորս կարգի են նաեւ գիտունները:

Նախ, որ գիտէ եւ չնայած գիտէ, ասում է, թէ՝ չեմ կարող խօսել: Սա իմաստունն է եւ հեզը, սովորի՛ր նրանից:

Երկրորդ՝ նա, որ գիտէ, որ չգիտէ եւ խոստովանում է, որ չգիտէ: Սա էլ բարին է, սրանից էլ սովորի՛ր:

Երրորդ՝ որ չգիտէ եւ չգիտէ, թէ չգիտէ եւ խօսում է անգիտութեամբ: Սա յիմարն է, որ չգիտէ իր տկարութիւնը, ինչպէս վատ հիւանդը, արթնացրո՛ւ նրան:

Չորրորդ՝ որ չգիտէ եւ գիտէ, որ չգիտէ, սակայն սնափառ հպարտութեամբ պղծում է եւ յանդգնում խօսել այն ամէնի մասին, ինչ չգիտէ: Այսպիսինը տգէտ է եւ լիրբ, փախի՛ր նրանից:

Եւ ոմանք խօսում են, բայց գործ չեն անում. սա չար է: Ոմանք գործում, սակայն չեն խօսում. սա բարի է: Ոմանք էլ խօսում եւ գործում են. սա բարեգոյնն է: Ոմանք էլ ո՛չ խօսում, ո՛չ գործում են. սա չարագոյնն է:

Այդպէս էլ նրանք, ովքեր լսում են ու չեն գործում, չար են: Ովքեր չեն լսում, սակայն գործում են, բարի են: Ովքեր լսում եւ գործում են, բարեգոյն են: Ովքեր չեն լսում եւ չեն գործում, չարագոյն են:

Այդպէս էլ իմանալը եւ չասելը չար է: Չիմանալը եւ ասելը չարագոյնն է: Չիմանալը եւ չասելը միջակ է: Իմանալը եւ ասելը բարի է:

Այսքանը եկեղեցու նախկին սպասաւորների մասին, այսինքն՝ առաքեալների, մարգարէների, վարդապետների:

Իսկ իմաստունն ու հանճարը զանազանուած են վերը՝ տասնվեցերորդ գլխի քսանեօթներորդ պրակում, այնտեղ տե՛ս:

ԿՐԿՆԱԿԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Ե

Հարց. Քանի՞սն են բոլոր իշխանութիւնները:

Պատասխան. Բոլոր իշխանութիւններն Աստծուց են տրուած մարդկանց՝ կարգաւորելու [յարաբերութիւնները], ինչպէս ասում է առաքեալը. «Իշխանութիւնը այլ տեղից չէ, այլ՝ Աստծուց, եւ որոնք կարգուած են, կարգուած են Աստծուց» (Հռոմ. ԺԳ 1):

Եւ երկու իշխանութիւն կայ. հոգեւոր եւ մարմնաւոր, որովհետեւ մարդն էլ հոգուց եւ մարմնից է՝ ուստի հոգեւոր իշխան կարգեց քահանաներին, որպէսզի հոգէպէս ուղղեն մարդկանց եւ արգելեն մեղքերը, իսկ մարմնաւոր իշխանութեան համար՝ թագաւորներին, բռնակալներին, որպէսզի մարմնապէս կառավարեն մարդկանց եւ խրատեն մեղքերի համար:

Եւ այն, որ քահանաները իշխան են, հաստատում է օրէնքը. «Քո ժողովրդի իշխաններին մի՛ հայհոյիր» (Ելք ԻԲ 28):

Եւ այս երկու իշխանութիւններն այսպէս են զանազանւում. նախ մարմնաւորին հնազանդւում ենք ոչ մեր կամքով, այլ բռնութեամբ եւ հարկադրուած, իսկ հոգեւորին հնազանդւում ենք կամաւոր, ինչպէս Աստծուն, որովհետեւ սա որդիական երկիւղ է, իսկ նա՝ ծառայի. սա՝ բանական, նա՝ անասնական:

Երկրորդ՝ որովհետեւ մարմնաւորն իշխում է, քանի դեռ մերձ է եւ ձեռնահաս, իսկ հոգեւորը իշխում է եւ՛ մերձաւորներին, եւ՛ հեռաւորներին, որովհետեւ ո՛չ տեղը, եւ ո՛չ էլ սուրը չեն արգելափակում նրա իշխանութիւնը. նաեւ՝ ո՛չ ամրոցը, ո՛չ պարիսպը, կամ զօրքը, կամ այլ ինչ:

Երրորդ՝ մարմնաւորն իշխում է միայն մարմնի եւ կեանքի վրայ, սակայն ոչ յետմահու, ըստ այդմ՝ «Մի՛ վախեցէք, երբ մարմինն են սպանում, իսկ հոգին՝ ոչ» (Մտթ. Ժ 28):

Իսկ հոգեւորը իշխում է եւ՛ հոգու, եւ՛ մարմնի վրայ, ուստի պարզ է, որ եթէ պատժում են մարմինը, ապա՝ նաեւ կապում է հոգին թէ՛ կեանքում, թէ՛ մահից յետոյ: Եւ չնայած մեռնում են իշխանն ու իշխուողը, սակայն իշխանութիւնը նրա չի խափանւում, ըստ այդմ՝ «Ինչ կապէք երկրի վրայ, կապուած պիտի լինի երկնքում» (Մտթ. ԺԶ 19):

ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է կանոնը:

Պատասխան. Ստուգաբանութեամբ կանոնը նշանակում է «քանոն», այսինքն՝ ուղղութիւն, կարգ եւ օրէնք: Իսկ բացատրութեամբ նշանակում է «սահման»:

Նախ՝ որովհետեւ սահմանը պարունակում է ընդհանուր սահմանուածը, ինչպէս մարդու սահմանը մարդն է: Այդպէս էլ կանոնը պարունակում է ընդհանուր կանոնուածը: Երկրորդ՝ ինչպէս սահմանն է տարանջատում մարդուն ձիուց, այդպէս էլ կանոնն է բաժանում հաւատացեալներին անհաւատներից: Երրորդ՝ ինչպէս որ նոյն սահման ունեցողները չեն նոյնանում, այդպէս էլ

նոյն կանոնին պատկանողները չեն, որ պատկանում են քրիստոնէութեան կարգին:

Եւ զանազանւում են այսպէս. նախ՝ որ սահմանը վերաբերում է բնութեանը, կանոնը՝ անձին:

Երկրորդ՝ սահմանը գոյացութիւն է, կանոնը՝ պատահում:

Երրորդ՝ սահմանն առարկայինն է, կանոնը՝ գործողութեանը: Իսկ ուխտի եւ սահմանի մասին ասուել է վերը՝ քսաներկուերորդ գլխի վաթսունհինգերորդ համարում:

ԿԱՊԵԼՈՒ ԵՒ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Զ

Հարց. Ի՞նչ են կապելն եւ արձակելը:

Պատասխան. Երկուսն էլ իրաւունք են, որոնք տրուած են քահանային: Կապելը տարորոշելն է, որով սարկաւագը զատում է եկեղեցու անմաքուրներին, իսկ արձակելը մօտենալն ու հաղորդուելն է, ինչը տրուած է քահանային: Եւ քանի որ քահանան վերնագոյնն է, երկու [իրաւունք էլ] ունի:

Եւ սրանք այն երկու բաւարար սրերն են, որոնց մասին Պետրոսն ասաց. «Այստեղ կայ երկու սուր» (Ղուկ. ԻԲ 38):

Եւ սրանք երկու երկսայրի սրեր են՝ տրուած քահանաներին՝ Քրիստոսի զինուորներին, որ աջ ու ձախ հարուածեն, այսինքն՝ սատանային եւ բարուն հակառակող չար մարդկանց, հերձուածօղներին եւ հեթանոսներին, ովքեր զինուած են ընդդէմ հաւատի եւ գործի:

Եւ պէտք է իմանալ, որ քահանան զինուոր է եւ ոչ թէ ում կամենում ու ախորժում, նրան է արձակում, այլ որը հաճելի է զօրավարին՝ Քրիստոսին, որովհետեւ քահանան Աստծոյ արդարութեան հրեշտակն է, այսինքն՝ յայտնողը եւ թարգմանողը, ըստ այդմ՝ «Ամենակալ Տէր Աստծոյ հրեշտակն է» (Մաղ. Բ 7): Եւ միայն Տիրոջ կամքի յայտնելով պէտք է զատել կամ լուծարել: Այս է միտքը, որ երբ Տէրը խոստացաւ իշխանութիւն տալ Պետրոսին, ասաց. «Մարմինն ու արիւնը չէ, որ յայտնեցին քեզ, այլ իմ Հայրը, որ երկնքում է» (Մտթ. ԺԶ 17):

Իսկ երբ առաքեալներին տուեց, նախ նրանց մէջ փչեց Սուրբ Հոգին, ապա կապելու եւ արձակելու իրաւունք տուեց, որ նշանակում էր, թէ Աստծոյ յայտնութեամբ, Սուրբ Հոգու շարժմամբ պէտք է կիրառել այդ իշխանութիւնը:

Եւ եթէ մէկն ասի, թէ իւրաքանչիւր ոք չի՞ կարող կապել կամ արձակել, այսինքն՝ անիծել կամ օրհնել, ասենք, որ՝ ոչ: Նախ, եթէ առանց կարգի կապի, ասենք՝ քահանան եպիսկոպոսին կամ կաթողիկոսին, կամ սարկաւագը քահանային, չի լինի, ինչպէս որ կիսասարկաւագ Դիմոփիլոսը եկեղեցուց արտաքսեց մի քահանայի եւ յանդիմանուեց սուրբ Դիոնէսիոսի կողմից նրա ութերորդ թղթում[497]:

Երկրորդ՝ եթէ անմեղին նզովի:

Երրորդ՝ եթէ ախտաւոր պատճառով, այսինքն փառասիրութեան կամ նախանձի, ագահութեան կամ այս կարգի

բաներից [դրդուած]՝ լինի, որովհետեւ չնայած քահանան եւ խօսքերը նոյնն են, սակայն [նոյնը] չէ նպատակը, ինչպէս այն, եթէ ասենք մի քահանայ շուկայում բոլոր հացերին ու գինիներին ասի. «Այս է իմ մարմինն ու արիւնը» (Մտթ. ԻԶ 28), չի կատարուի, քանի որ բովանդակազուրկ է:

Այդպէս էլ այս դէպքում:

Իսկ եթէ մէկն ասի, թէ անպատշաճ է, որ Աստծոյ իշխանութիւնը չկատարուած մնայ, ապա ասենք, որ չկատարուած է մնում, եթէ անիծելիս չի կատարւում, այլ դառնալով՝ անիծողի հանդէպ է կատարւում. ըստ Սողոմոնի՝ «Ինչպէս թռչունն է բնից թռչելով՝ նորից բոյնը վերադառնում, այդպէս էլ անզգամի անէծքը» (Առակ. ԻԷ 8):

Այդպէս էլ արձակելը, այսինքն օրհնանքը չի կատարւում, եթէ անկարգաբար է լինում, եթէ ասենք բարձրաստիճան լինելու, կամ անարժանին, կամ ախտաւոր լինելու պատճառով է օրհնել կամ ձեռնադրել: Այլ միայն այն ժամանակ է նրա [խօսքը] կատարւում, երբ Հոգին յայտնի է դարձնում արժանին:

Իսկ եթէ մէկն ասի, թէ Աստուած, որ բարձրագոյնն է, մենք հանապազ օրհնում ենք նրան եւ նրա սրբերին, ապա ասենք, որ օրհնանքը երկու տեսակ է. առ վերինը եւ առ ներքինը: Վերինը, որ առ Աստուած է եւ նրա սրբերին, երբեմն յայտնութիւն է, երբեմն գոհութիւն եւ բարեբանութիւն, երբեմն էլ մաղթանք ու աղաչանք: Եւ այսպէս պէտք է անընդմէջ օրհնել Աստծուն. «Տիրոջն օրհնենք ամէն ժամ» (Սղմ. ԼԲ, 2), որովհետեւ մեզ շահ եւ օգուտ է: Սակայն այս էլ սրբօրէն պէտք է [արուի] եւ ոչ անարժանօրէն, որովհետեւ անարժանին ասում է. «Ինչո՞ւ ես պատմում իմ արդարութիւնը» (Սղմ. ԽԹ 16) եւ այլն:

Այդպէս էլ սրբերին օրհնելիս:

Իսկ ներքեւիններին օրհնելը նշանակում է իշխանութիւն կամ շնորհներ տալ, որ քահանան կամ եպիսկոպոսն են տալիս, ինչպէս ցոյց տրուեց քսաներեքերորդ գլխի եօթանասունհինգերորդ պրակում:

Իսկ եթէ մէկը հարցնի, որ եթէ ախտաւոր կամ ագահութեան պատճառով է անարժանին ձեռնադրում, չի՞ օրհնւում, ապա ասենք, որ եթէ ձեռնադրուածը արժանի չէ, շնորհ չի ստանում, եւ դատապարտւում են թէ՛ ինքը, թէ՛ ձեռնադրուողը, որովհետեւ սրբութիւնը շներին են տալիս (հմմտ. Մտթ. է 6): Իսկ եթէ ձեռնադրողն է անարժան լինում, ապա դատապարտւում է միայն նա, իսկ ձեռնադրուողը շնորհ է ստանում, ինչպէս այն, որ անարժան քահանայի պատարագին ներկաները հաղորդւում են սրբութեանը, իսկ ինքը՝ դատապարտւում է: Իսկ եթէ երկուսն էլ անարժան են, շնորհը ոչ մէկին չի տրւում, ինչպէս որ արեգակի լոյսը տկար աչքերին վնասում է եւ օգուտ չի տալիս, ջուրն էլ՝ չորացած տնկիներին:

Նոյնպէս եւ օրհնութեան պարագայում իմացի՛ր, որ պէտք է արժանաւորներն արժանաւորներին օգնեն արժանաւորութեամբ: Իսկ սրանից դուրս

անկատար է թէ՛ օրհնութիւնը, թէ՛ արձակելը:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ ո՞ւմ պէտք է կապել կամ արձակել, ապա ասենք, որ նրանց, ովքեր թերութիւն ունեն հաւատի հարցում, ինչպէս եկեղեցու հերձուածողները եւ վնասարարները, ովքեր զազիր վարքով պղծուած են գործերով ու վնասում են իրենց եւ չեն զղջում մէկ, երկու անգամ խրատելուց յետոյ, նրանք հեռացւում են եկեղեցուց ու պատժւում, ըստ այդմ՝ «Հեռացէ՛ք ինձնից, անիծեալնե՛ր, յաւիտենական կրակի մէջ» (Մտթ. ԻԵ 41):

Իսկ նրանք, ովքեր անբիծ են հաւատով եւ սուրբ՝ գործով, կամ որոնք զղջալով դարձել են մեղքերից ու հերձուածողութիւնից՝ նրանցն է արձակումն ու օրհնութիւնը:

Սրանցից բացի ու սրանցից դուրս ո՛չ օրհնւում, ո՛չ էլ անիծւում են, ո՛չ բանադրւում, ո՛չ էլ արձակւում են:

Եւ նա, ով իրաւացիօրէն է կապւում, պէտք է ենթարկուի կապողին, իբրեւ Աստծոյ կամքը կատարողի: Իսկ եթէ անհնազանդ է, ուրեմն հնազանդ չէ Աստծուն, ըստ այդմ՝ «Ո՛վ արհամարհի ձեզ, ինձ է արհամարհում» (հմմտ. Ես. ԼԳ 1): Եւ տե՛ս Սիմէի [օրինակը]. որքան որ Սողոմոնի հրամանով, երեք տարի մնաց քաղաքում, չմեռաւ, իսկ երբ դուրս եկաւ քաղաքից՝ արհամարհելով Սողոմոնի արգելքը, սպանուեց (տե՛ս Գ Թագ. Բ 36-46):

Այսպէս կլինի իւրաքանչիւր զանցառուի հետ, որը կրելու է կրկնակի պատիժ՝ մէկը կապանքի, միւսը՝ հակառակութեան համար:

Այդպէս էլ արձակմանը հնազանդուածները կրկնակի պսակի են արժանանում:

Իսկ կապանքը մեղքի եւ մեղսասիրութեան համար է, ինչպէս մեր Տէրը բեւեռեց մեղքն ու սատանային խաչափայտին: Իսկ արձակելը շնորհների եւ սրբուելու համար է: Եւ դարձեալ մեղքը կապւում է, իսկ արձակուածն ազատում է իր անձը, որ կապուած էր: Դարձեալ արձակւում է մեղքերից եւ կապւում պատժուելու համար:

Եւ նախ մեղքերից մաքրուելն է, ապա՝ շնորհներով լուսաւորուելը, ինչպէս որ նախ սարկաւագ են լինում, ապա՝ քահանայ: Կամ՝ նախ զգայականը, ապա բանականն է, նախ զօրութեամբ է, ապա՝ ներգործութեամբ: Այս կարգով էլ նախ կապելն է, ապա՝ արձակելը, ինչպէս ասաց Պետրոսին (տե՛ս Մտթ. ԺԶ 19):

Իսկ սրանք բոլորն աւելի բարձր ու պատուական են, այսինքն՝ քահանան սարկաւագից, բանականը զգայականից, ներգործութեամբ եղածը զօրութեամբ եղածից, ինչպէս արձակելը կապելուց: Այդ պատճառով էլ, երբ Վերնատանը Հոգին շնորհեց առաքեալներին, նախ հրաման տուեց արձակելու, ապա՝ կապելու:

Իսկ կապելն ու արձակելը երկրում եւ երկնքում, այսինքն կեանքում եւ յետմահու այսպէս պէտք է իմանալ. երկրում՝ գործերով, երկնքում՝ պատժով,

երկրում՝ վախճանից, երկնքում՝ իշխանութեան սկիզբից:

Եւ պէտք է իմանալ, որ եթէ մի քահանայ կապի իր ժողովրդին, ապա մէկ այլ քահանայ չի կարող արձակել: Եւ եթէ եպիսկոպոսն իր քահանային կապի, այլ եպիսկոպոս չի կարող արձակել: Այդպէս էլ չորս աթոռների[498] աթոռակալները չեն կարող մէկը միւսի վիճակներին կապել կամ արձակել. այդպէս էլ նոյն աթոռում վերջինը չի կարող առաջինի կանոնները կամ կարգը փոխել:

Իսկ եթէ մէկն ասի, որ այլավիճակ ամէն մի աթոռ ճշմարիտ է երեւում, որովհետեւ ինքնագլուխ է, իսկ համակարգակից վերջինը ինչո՞ւ չի կարող փոխել առաջինի կանոնները, ապա ասենք, որ չնայած համակարգակից եւ իշխանակից են վերջինն ու առաջինը՝ կարգով ու օծմամբ, սակայն ո՛չ թիւրելու եւ քանդելու [իրաւունքով], որովհետեւ առաջինն աւանդապահ է, եւ վերջինն էլ [պէտք է լինի] նոյն մտքով եւ կամքով: Ուստի չենք կարող առաջին հայրապետների կարգը, կանոնը, պահքը կամ այլ օրէնքներ թիւրել ու փոփոխել, այլ համապատասխան ուղղութեամբ եւ կարգով կարելի է նոյնատիպ յաւելումներ անել, ինչպէս որ Եփեսոսի ժողովում Նիկիական ուղղութիւնից չխոտորուեցին, այլ նոյնատեսակ նոր կանոններ կարգեցին ճշմարիտ հաւատի մէջ:

Այդ պատճառով էլ այս երեք տիեզերական ժողովներն ընդունում ենք իբրեւ մէկմէկու համաձայն, իսկ Քաղկեդոնի ժողովը չենք ընդունում, որովհետեւ ընդդէմ էր առաջիններին եւ հիմնաւորապէս քանդում էր դաւանութեան, տօների կարգը, կանոնները:

Եւ կարող է նաեւ վերջինը առաջինի սխալն ուղղել կամ էլ ոչ իրաւացի կապուածին արձակել, ինչպէս Գրիգոր Աստուածաբանն արիոսականներին եւ սուրբ Յովհան Օձնեցին[499]՝ Եզր կաթողիկոսին եւ նրանց, ովքեր խոտորուել էին Քաղկեդոնից յետոյ:

Եւ թէ մէկը հարցնի. եթէ վերջինը կարող է առաջինին ուղղել, սակայն՝ ոչ թիւրել, ինչո՞ւ ուրեմն կարգակից քահանաները եպիսկոպոսները չեն կարող կապել կամ արձակել հաւասար մէկին, ապա ասենք, որ թէեւ համակարգակից են քահանաներն ու եպիսկոպոսները, ինչպէս առաքեալները, սակայն տարբեր-տարբեր թեմ եւ ժողովուրդ ունեն: Իսկ եպիսկոպոսը փեսայ է, թեմը՝ հարս, եւ նա է միայն իշխում: Մինչդեռ քահանան ժողովրդի համար կանոններ դնող է, քանի որ խոստովանահայրն է եւ գիտէ կարողութեան ու մեղքի չափերը: Եւ նա ինչ կապում է, ուրիշները չեն կարող արձակել, ինչպէս նա, ով հոգիները կապել է մարմնին՝ նա էլ արձակելու է: Եւ ինչպէս Բանն Աստուած անիծեց Ադամին եւ դարձեալ նոյն Բանն օրհնեց մարմնով, թէեւ մէկն էր Երրորդութեան գործը, կամ ինչպէս Եղիան կապեց երկինքը եւ փախաւ Սիդոն, եւ դարձեալ Աստուած հենց նրան հրամայեց բանալ երկինքը, նոյն կերպ էլ սա:

Իսկ յանիրաւի կապուածը արձակւում է, եւ կապողը պատժւում է՝ ոչ

միայն կարգակիցներից, այլեւ ստորադրեալներից:

Այսքանն այս մասին:

ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ է

Հարց. Ե՞րբ տեղի ունեցան ժողովները, որտե՞ղ եւ ի՞նչ նպատակով:

Պատասխան. Սուրբ հայրերի առաջին ժողովը տեղի ունեցաւ Նիկիայում[500] Քրիստոսի ծնունդից 318 կամ 330 տարի յետոյ՝ Կոստանդիանոսի թագաւորութեան քսաներորդ տարում:

Եւ այնտեղ էին Հայոց Արիստակէս պատրիարքը, Մակարը՝ Երուսաղէմից, Եւստաթէոսը՝ Անտիոքից, Սեղբեստրոսը՝ Հռօմից, Մետրոփանոսը՝ Կոստանդնուպօլսից. Ալէքսանդրոսը՝ Ալէքսանդրիայից՝ երեք հարիւր տասնուութ սուրբ հայրեր՝ Արիոսի կատաղութեան դէմ:

Երկրորդ ժողովը վաթսունհինգ տարի յետոյ տեղի ունեցաւ Կոստանդնուպօլսում՝ Մեծ Թէոդոսի թագաւորութեան չորրորդ տարում: Եւ ներկայ էին պատրիարքներ՝ Հայաստանից Ներսէսը, Երուսաղէմից Կիւրեղը, Հռօմից Դամասոսը, Կոստանդնուպօլսից Նեքտառիոսը, Ալէքսանդրիայից Տիմոթէոսը, Անտիոքից Մելիտոսը. հարիւր յիսուն հայրեր՝ ընդդէմ Սուրբ Հոգին հայհոյող Մակեդոնի[501]:

Քառասուներկու տարի յետոյ տեղի ունեցաւ երրորդ ժողովը Եփեսոսում՝ Կրտսեր Թէոդոսի թագաւորութեան տասնմէկերորդ տարում: Եւ ներկայ էին պատրիարքներ՝ Հայաստանից Սահակը՝ միաբանուելու Թղթով, Երուսաղէմից Յոբնաղը, Հռօմից Կելէստիանոսը, Ալէքսանդրիայից Կիւրեղը, Անտիոքից Յովհանը՝ միաբանուելու Թղթով. երկու հարիւր հայրեր՝ ընդդէմ Նեստորի, որ երկու բնութիւն եւ երկու որդի էր ասում, Քրիստոսի երկու կամք եւ երկու գործունէութիւն, իսկ Աստուածածնին՝ մարդածին[502]:

Չորրորդ՝ նոյն թագաւորի օրօք քսանչորս տարի յետոյ տեղի ունեցաւ Եփեսոսի արժանաւոր ժողովը[503] Եւտիքէսի դէմ, որ Տիրոջ մարդեղութիւնը թուացեալ էր համարում եւ Փլաբիանոսի դէմ, որ երկու բնութիւն էր ասում:

Եւ ժողովը գլխաւորում էր սուրբ Դէոսկորոս Ալէքսանդրացին: Եւ [ներկայ էին] Երուսաղէմից Յոբնաղը, Անտիոքից՝ Դոմնասը, Հռօմից՝ Լեւոնը: Եւ թղթով նզովեցին Եւտիքէսին, Փլաբիանոսին, Դոմնասին եւ Լեւոնի տոմարը:

Հինգերորդ՝ Մարկիանոսի թագաւորութեան երկրորդ տարում տեղի ունեցաւ Քաղկեդոնի ժողովը: Որովհետեւ Պողքէրը՝ Թէոդոս թագաւորի քոյրը, որ կուսանաց վանքում պոռնկութեամբ պղծուեց Մարկիանոսից, ապա դարձաւ նրա կինը, եւ ասում են, թէ մկրտուել էր Նեստորից ու սիրելին էր Փլաբիանոսի, Լեւոնի ու Թէոդորիտոսի, որոնք նզովուել էին Եփեսոսում: Սրանց վրէժը հանելու համար գումարուեց վեց հարիւր երեսունվեց եպիսկոպոսների ժողով, եւ ընդունեցին Լեւոնի թուղթը, ընդունեցին նաեւ Եփեսոսում նզովուած Փլաբիանոսին, իսկ ժողովը գլխաւորող կար-

գեցին Թեոդորիտոսին՝ թագուհուն եւ թագաւորին հաճոյանալու համար: Եւ մերժեցին Ալեքսանդրիայի Դէոսկորոս հայրապետին, Անտիոքի Պետրոսին, Տիմոթէոսին, Անատոլին եւ ուրիշ շատերին, ովքեր վկայեցին ճշմարտութիւնը: Յետոյ շատերը զղջացին ու խոստովանեցին, թէ՝ պատռեցինք հաւատի կանոնը, ապա ապաշխարութեամբ խոստովանութիւն գրեցին, որ դրեցին Գադի տապանում՝ սուրբ վկայ Դեմետրեի եկեղեցում:

Եւ Յովսէփ Փալանացի (Պաղնացի)[504] եւ Եզնակ Կողբացի թարգմանիչները, որ վերադարձել էին Աթենքից եւ Կոստանդնուպօլսում էին, լսելով ժողովի մասին, գնացին Քաղկեդոն, որովհետեւ հեռու չէր այն ճանապարհից, որ բերում էր Հայաստան, եւ նրանք ծածուկ ամէն ինչին տեղեկացան, որովհետեւ Քաղկեդոնում հաւաքուածները զգուշանում էին թագաւորից ու նրա կնոջից եւ զարհուրած էին նրանց սպառնալիքներից:

Հաստատեցին [ժողովում] Նեստորի կարծիքը՝ երկու բնութիւն եւ երկու կամք, երկու ներգործութիւն: Եւ միայն խաբեութեան նպատակով էր, որ Աստուածածին ասացին սուրբ Կոյսին եւ Նեստորին էլ նզովեցին: Ու քաջատեղեակներից շատերը հարց տուեցին. եթէ Նեստորի հաւատքը հաստատում էք, ինչո՞ւ էք նզովում:

Իսկ Յովսէփն ու Եզնակը գալով Հայաստան՝ ամէն ինչ ճշտութեամբ պատմեցին:

Եւ Անտիոքի Պետրոս պատրիարքն ու սուրբ Պարսամը [նամակ] գրեցին Հայաստան ու զգուշացրեցին՝ նզովելով Մարկիանոսին հաւանութիւն տուողներին:

Եւ սուրբ Սիմոն Սիւնակեացը այրեց Քաղկեդոնի դաւանանքի թուղթը[505], որ գրել էր Մարկիանոս թագաւորը՝ աղաչանքով [դիմելով] նրան, ապա նզովեց թղթատարին, որ ժողովը գլխաւորող Թէոդորիտոսն էր:

Եւ սուրբ Ղուկիոս սքանչելագործն ու մարգարէաշնորհը գրեց Մարկիանոսին, թէ՝ «Սուգ բերեցիր առաքեալներին ու մարգարէներին, որովհետեւ քանդեցիր նրանց կառուցածը», եւ Սուրբ Հոգու համար արգելք եղաւ՝ օրհնելու պատարագն ու մկրտութեան աւազանը:

Եւ Քաղկեդոնի չար ժողովի մասին մնացած մանրամասները կարող ես գտնել պատմագիր Միխայէլի մօտ[506]:

Հինգերորդ ժողովը տեղի ունեցաւ Յուստի[նիա]նոսի թագաւորութեան ժամանակ, Կոստանդնուպօլսում:

Եւ ներկայ էին հայրապետներ՝ Եւտիգէսը Երուսաղէմից, Աբիլիդոսը Հռօմից, Եւտիգոսը Կոստանդնուպօլսից, Ապօլինար Ալէքսանդրացին, Սոմնասը Անտիոքից, որտեղ մերժեցին Որոգինէսի գրածները եւ նզովեցին սուրբ Եւագրիոս Միայնակեացին ու Աստծոյ հրաշալի այր Դիդիմոսին:

Վեցերորդ ժողովը գումարեց Հռօմի Ագաթոն պապը՝ Յուստիանոսի հօր թագաւորութեան ժամանակ, Կոստանդնուպօլսում:

Եւ ներկայ էին պատրիարքներ՝ Կոստանդնուպօլսից Գէորգէոսը, Անտիոքից՝ Թէոփիլոսը, Ալէքսանդրիայից՝ Պետրոսը: Եւ աքսորեցին Փարանի Թէոդորոս եպիսկոպոսին, Հռօմի Ոնորիոսին, Ալէքսանդրիայի Կիւրղոսին, Եւպրամի Սարգսին, Անտիոքի Մակարիոսին եւ նրա աշակերտ Ստեփանոսին: Եւ Պոլոքոնոսին, որ վարդապետ էր բազմաթիւ աշակերտների ու ծեր էր եւ յարութիւն էր տալիս մեռեալներին բազմաթիւ հրաշագործութիւններով:

Եւ սրանց [աքսորելու] պատճառն այն էր, որ Քրիստոսին մէկ բնութեամբ էին ասում, իսկ իրենք սահմանեցին երկու բնութիւն, երկու գործ, երկու կամք:

Իսկ եօթներորդ ժողովը տեղի ունեցաւ միւս Կոստանդին թագաւորի ժամանակ, որի մայրը Եռինէն էր՝ Նիկիայում՝ պատկերներն անարգելու պատճառով: Եւ ներկայ էին պատրիարքներ Եղիան Երուսաղէմից, Ադիանոսը՝ Հռօմից, Տարատոսը՝ Կոստանդնուպօլսից, Պօղիտիանոսը՝ Ալէքսանդրիայից, Թէոդորոսը՝ Անտիոքից, երեք հարիւր վաթսունհինգ եպիսկոպոսներ, որոնք նզովեցին պատկերներն անարգողներին:

Սրանք են ազգերի յայտնի ժողովները:

ՀԱՅՈՑ ԱՌԱՆՁԻՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊՐԱԿ Ը

Եւ ինչպէս ընդհանուր ժողովներ եղան հերձուածողների դէմ, այդպէս էլ Հայաստանում[507] եօթ առանձին ժողովներ գումարեցին, [որովհետեւ] ժամանակ առ ժամանակ, տեղ-տեղ ներս էին սպրդում հերձուածողները եւ աղանդի մոլախոտ սերմանում:

Եւ սուրբ հայրերը՝ ապականութեան արմատախիլ անողները, հաւաքւում եւ մաքրում էին սուրբ եկեղեցին[508]:

Եւ սրանցից չորրորդը տեղի ունեցաւ սուրբ Գրիգորի ընդհանուր աթոռակալութեան թեմում[509], իսկ հինգերորդը նոյն Հսկողի շառաւղի՝ սուրբ Գրիգորիսի աթոռակալութեան թեմում՝ Աղուանքում:

Առաջին ժողովը տեղի ունեցաւ Թորգոմեան տան արեւելեան կողմում, Մեծ Սահակի վախճանուելուց եօթ տարի յետոյ: Հաւաքուել էին քառասուն եպիսկոպոսներ, բազմաթիւ վարդապետներ, կուսակալներ, մարզպաններ, հայոց մեծամեծներ եւ սպարապետ Վարդանն իր ազգակիցներով:

Եւ վերահաստատեցին Սուրբ Գրիգորի, Ներսէսի, Սահակի ու Մեսրոպի հիմնադրած կարգը: Եւ գրեցին կանոնների գրքի քսան գլուխներ՝ ընդդէմ օտարամուտ շեղումների:

Եւ ասում են նոյն ժամանակ եղաւ անիծեալ Քաղկեդոնի ժողովը[510]:

Երկրորդ ժողովը տեղի ունեցաւ Թէոդուպօլսում, որ այժմ Կարին քաղաքն է, ոչ այն, որ յետոյ Հերակլ քաղկեդոնիկը հաւաքեց ու խաբեց Հայոց Եզր կաթողիկոսին, այլ Յուստիանիոս մեծ թագաւորի հրամանով հաւաքուեցին Յունաց, Հռօմաց, Հայոց, Վրաց, Աղուանից եպիսկոպոսները եւ Հայոց Սահակ կաթողիկոսը ու հաստատեցին երեք

սուրբ ժողովների՝ Նիկիայի, Կոստանդնուպօլսի, Եփեսոսի կանոնները: Ապա նզովեցին Մարկիանոսի, Արտեմոնի աղանդներն ու Լեւոնի տոմարը ու միաբանուեցին սուրբ առաքեալների հաւատի շուրջը: Եւ լրացրեցին սուրբ ժողովների կանոնները անհրաժեշտ ինը գլխով՝ եկեղեցու զգուշութեան համար[511]:

Երրորդ ժողովը տեղի ունեցաւ Դվինում, Հռօմի Կոստանդին թագաւորի չորրորդ տարում, հայոց մեծ կաթողիկոս Ներսէս Շինողի հրամանով՝ եօթանասուն եպիսկոպոսների, բազմաթիւ վարդապետների եւ իշխանների [մասնակցութեամբ], որոնք ամրացրին թուլացած եկեղեցին եւ [վերացրին] ինչ-ինչ երկպառակութիւններ ու հաստատեցին կանոնական տասներկու գլուխներ[512]:

Չորրորդ՝ մեծ եւ արժանայիշատակ ժողովը տեղի ունեցաւ Մանազկերտում 726 թուականին, հրամանով արդիւնաշատ գիտնական եւ մեծ իմաստասէր Հայոց կաթողիկոս սուրբ Յովհան Օձնեցու[513], որ կանոնական գրքով պայծառացրեց եկեղեցու կարգը եւ հաւատի ուղղութիւնը, որոնք իննսուն տարի առաջ եղծուել էին Եզր կաթողիկոսի կողմից, որ դարձաւ ճշմարիտ հաւատի «եզր» եւ Հերակլի հրամանով հաւանութիւն տուեց Քաղկեդոնի ժողովին:

Եւ այս աղանդին ենթարկուեցին վեց կաթողիկոսներ, որոնք էին՝ Եզրը, Մովսէսը, Անաստասը, Իսրայէլը, Սահակը, Եղիան, մինչեւ եկաւ հայոց Երկրորդ Լուսաւորիչը[514] եւ երկրորդ սուրբ Կիւրեղը՝ իմաստասէրը Յովհանն ու լուսաւորեց եկեղեցին:

Այլեւ հարիւր յիսուն տարի առաջ Հայաստան էին եկել ասորի պերճախօս այրեր՝ կամենալով սերմանել Նեստորի աղանդը, որոնց նզովելով՝ հեռացրեցին: Եւ այնուամենայնիւ, ոմանք կողմնակից էին դարձել՝ թարգմանելով նրանց դատարկախօս գրքերը՝ «Գօրտոսակը», «Կիրակոսակը», «Պ[օ]ղ[ոս]ի տեսիլքը», «Ադամի ապաշխարութիւնը», «Տիրոջ մանկութեան կտակարանը», «Սեբիոսը», «Օրհնութեան ողկուզակը», «Անթաքչելի մատեանը» եւ Աւետարանի Մանիի մեկնութիւնը[515]: Եւ [Օձնեցին] նզովեց նրանց, ովքեր կհաւատային սրանց:

Այսպէս, ահա՛, սուրբ Յովհանը եկեղեցին սրբեց բոլոր աղանդներից, որի յիշատակն օրհնութեամբ լինի, ամէն:

Իսկ հինգերորդ ժողովը տեղի ունեցաւ Գրիգորիսի թեմում՝ Աղուանից Պարտաւ մայրաքաղաքում:

Եւ Հայոց կաթողիկոս տէր Սիոնը այնտեղ հասաւ բազմաթիւ եպիսկոպոսներով ու հայոց մեծամեծ ազատներով եւ իշխաններով, եւ հանդէս եկան այն ժամանակի աղանդների, եկեղեցու կարգերի թերացումների եւ իշխանների բռնութիւնների դէմ:

[Նա] գրեց նաեւ քսանչորս կանոնական գլուխներ եւ ամրացրեց եկեղեցին պայծառ կարգով եւ ճշմարտութեամբ[516]:

Վեցերորդ ժողովը տեղի ունեցաւ Աղուանքի Վաչագան թագաւորի օրօք:

Ժողովվեցին բազմաթիւ եպիսկոպոսներ բոլոր կողմերից, իշխաններ, հայոց մեծամեծներ, որոնք կանոնական սահմանումներ գրեցին քսաներկու գլխով՝ պայծառացնելով սուրբ եկեղեցին[517]:

Եօթներորդը Աղուանքի Սիմէօն կաթողիկոսի[518] եւ Հայոց Տէր Եղիա կաթողիկոսի ժողովն էր, որի ժամանակ անէծքով աքսորեցին Ներսէս եպիսկոպոսին, որ Ներսէսի աղանդով աղաւաղել էր հաւատի կարգն ու ճշմարտութիւնը: Եւ երբ առաջին տարում նստեց տէր Սիմէօն կաթողիկոսը՝ տէր Եղիայի ձեռքով ու մեծահանդէս ժողովով, պայծառացրեց եկեղեցին կանոնական հաստատութեամբ ի փառս Քրիստոսի, մեր Աստծոյ օրհնութեան, յաւիտեանս, ամէն:

ԹԷ ԻՆՉՈ՞Ի Է ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԳԼՈՒԽ ԱՍԻՈՒՄ ՊԵՏՐՈՍԸ
Պրակ Թ

Հարց. «Պետրոսը գլուխն է առաքեալների, այսպէս է գրում Դիոնէսիոսը «Եկեղեցական քահանայապետութեան»[519] վեցերորդ գլխում:

Պատասխան. Այն, որ կարդացիր, թէ «գլուխ» է, ինչո՞ւ չկարդացիր կարգակից լինելը, քանի որ ասում է՝ «գլուխ եւ կարգակից էր նրանց»:

Եւ գլուխ է կոչւում երեք պատճառով: Նախ՝ առաջինը դաւանելու պատճառով: Երկրորդ՝ առաւելագոյն սիրոյ պատճառով: Երրորդ՝ մեծահասակը լինելու պատճառով:

Իսկ կարգակից է իբրեւ առաքեալ եւ քահանայապետ, որովհետեւ բոլորն առաքելութեան եւ քահանայապետութեան համահաւասար իշխանութիւն ունէին:

Եւ սա յայտնի է չորս [հանգամանքով]:

Նախ, որ յարութիւնից յետոյ հաւասար իշխանութիւն տուեց, հոգի շնորհեց նրանց եւ ասաց. «Ո՛ւմ կապէք, կապուած լինի» (Մտթ. ԺԸ 18) եւ այլն: Եւ կամ՝ «Գնացէ՛ք ուսուցանէք բոլոր հեթանոսներին» (Մտթ. ԻԸ 19), ինչը քահանայութեան իշխանութիւն տալն էր:

Երկրորդ՝ համբարձմանը մօտ ձեռքը դրեց նրանց վրայ, օրհնեց եւ դարձրեց նրանց ընդհանուր եպիսկոպոսներ:

Երրորդ՝ երբ համբարձումից յետոյ Սուրբ Հոգին իջաւ, նրանց դարձրեց ընդհանուր կաթողիկոսներ:

Եւ յայտնի է, որ կաթողիկոսը չի կարող կաթողիկոս ձեռնադրել, այլ՝ եպիսկոպոս: Եւ առաջինի փոխուելուց յետոյ նստում է երկրորդ կաթողիկոսը, ինչպէս եւ Քրիստոս արեց. քանի դեռ մարմնով նրանց հետ էր, եպիսկոպոսներ դարձրեց, իսկ համբարձումից յետոյ Սուրբ Հոգու միջոցով ձեռնադրեց կաթողիկոսներ:

Չորրորդ՝ յայտնի է, որ իւրաքանչիւր առաքեալ գնալով իր թեմը՝ ձեռնադրեց եպիսկոպոսներ, ինչպէս Թադէոսը Ադդէին եւ Թէոփիլոսին Հայաստանում, Թովմասը՝ Հնդկաստանում, Յովհաննէսը՝ Եփեսոսում: Իսկ ոչ մէկը չգնաց Պետրոսի մօտ Հռոմ, եւ ոչ էլ Պետրոսը այլ թեմերում ձեռնադրեց որեւէ մէկին:

Ուրեմն պարզ է, որ տասներկուսը հաւասար են իշխանութեամբ, որովհետեւ տասներկուսին էլ հաւասարապէս տրուեց կառավարելու աթոռներ. «Դուք,- ասում է,- նստելու էք տասներկու աթոռներ՝ կառավարելու Իսրայէլի տասներկու ազգերին» (Մտթ. ԺԸ 28):

Իսկ եթէ մէկն ասի, թէ ո՞րն է տասներկուսի խորհուրդը, ապա ասենք, որ հրեշտակների իւրաքանչիւր դասում տասներկու գունդ ասաց Տէրը: Երկնքում էլ տասներկու կենդանակերպ է: Տարին տասներկու ամիս ունի: Օրը՝ տասներկու ժամեր: Մարմինը տասներկու անդամներ եւ դռներ ունի: Իսրայէլը՝ տասներկու ազգեր: Տասներկուսն էին մարգարէները:

Ուստի Տէրն էլ առաքեալների տասներկու թիւ ընտրեց եւ տուեց կառավարելու տասներկու աթոռներ:

Իսկ թէ մէկն ասի, եթէ տասներկուսն էլ հաւասար են իշխանութեամբ, ինչպէ՞ս է Պետրոսն առաքեալների գլուխ, ասենք, որ Պետրոսն առաքեալների գլուխ է ոչ թէ ինչպէս եպիսկոպոսը քահանաների, կամ կաթողիկոսը՝ եպիսկոպոսների, այլ՝ կարգակից քահանաների մէջ մէկը հայր է լինում, ինչպէս կենդանակերպի մէջ խոյն է գլուխը եւ առաջինը, եւ ինչպէս մէկն է հրեշտակների դասում տասներկու գնդերի գնդապետը:

Իսկ եթէ մէկն ասի. երեւում է, թէ միւսներից տարբերուող իշխանութիւն ունի, նախ որովհետեւ նրան ասաց. «Քեզ եմ տալու բանալին», ապա՝ «Դու կվերադառնաս եւ կհաստատես քո եղբայրներին» եւ «Արածեցրո՛ւ իմ ոչխարներին», ապա ասենք, որ ինչպէս Սերովբէների, Քերովբէների, Աթոռների մէջ չկան վերին ու ստորին, որովհետեւ հաւասար են Աստծոյ շուրջը, եւ ինչպէս աւետարանիչների մէջ չկայ մեծ ու փոքր, այդպէս էլ առաքեալների մէջ չկան իշխանութեամբ մեծ ու փոքր:

Սակայն նրանց մէջ կայ կարգ, պատիւ, հնազանդութիւն եւ սէր, չնայած համահաւասար են իշխանութեամբ: Իսկ ինչ վերաբերում է՝ «Քեզ եմ տալու բանալին» ասելուն, ապա ոչ թէ այն պահին տուեց, այլ խոստացաւ ու յետոյ տուեց, ինչպէս որ խոստացաւ նստեցնել տասներկու աթոռներին եւ կատարեց. այդպէս էլ դա:

Եւ դաւանութեան վէմն էր, որ Քրիստոսին խոստովանեց իբրեւ կենդանի Աստծոյ որդի եւ այդ դաւանանքի վրայ կառուցուեց քրիստոնէական եկեղեցին:

Երկրորդի մասին ասենք, որ Պետրոսի ուրանալով՝ բոլոր առաքեալների սրտերը տրտմեցին եւ կոտրուեցին, իսկ երբ նա զղջաց, բոլորը նորից վերահաստատուեցին, եւ նրա դարձն ու վերահաստատուելը բոլոր ուրացողների եւ մեղաւորների վերահաստատումը եղաւ:

Երրորդի մասին ասենք, որ սիրոյ վերաբերեալ երեք հարցերը եւ ոչխարներին արածեցնելու [պատգամը], երեք ուրացումները բժշկելու համար էին, որովհետեւ այն մասում, որ խոցուած է, պէտք է բուժող դեղ դնել եւ ոչ թէ առողջ մասում:

Իսկ եթէ մէկն ասի, երեւում է, որ պէտք չէ հնազանդուել Պետրոս առաքեալին եւ նրա աթոռին, ապա ասենք, որ ծանր բաներ ես ասում, որովհետեւ Պետրոս առաքեալին հնազանդում ենք, ինչպէս Քրիստոսին, նաեւ՝ Պօղոսին եւ միւս առաքեալներին, աշակերտներին, հետեւորդներին եւ նրա աթոռներին: Եւ իբրեւ Քրիստոսի աթոռակիցների հնազանդում ենք չորսին էլ:

Նաեւ՝ երեք սուրբ ժողովներին՝ Նիկիայի, որ տեղի ունեցաւ Մեծ Կոստանդիանոսի օրօք, ուր Արիոսի դէմ ժողովուեցին երեք հարիւր տասնուութ հայրեր: Ապա Մեծն Թէոդոսի օրօք [տեղի ունեցաւ] հարիւր յիսունի ժողովը Կոստադնուպօլսում՝ ընդդէմ հոգու դէմ մարտնչող Մակեդոնի: Իսկ Եփեսոսում երկու հարիւրի ժողովը [եղաւ]՝ ընդդէմ չարափառ ու մարդադաւան Նեստորի:

Այսպիսով հնազանդ ենք Սուրբ հայրերին եւ ժողովներին, ունենք նրանց կանոնները եւ դաւանանքը ու պահպանելու ենք մինչեւ մեր վերջին շունչը:

Իսկ չար եւ աստուածուրաց Քաղկեդոնի ժողովը, որ [տեղի ունեցաւ] Մարկիանոսի եւ անիծեալ Պօղքերի ձեռքով, չենք ընդունում եւ ընդունողներին նզովում ենք, որովհետեւ այնտեղ բաժանեցին Բանը մարմնից եւ պատռեցին սուրբ հայրերի կանոններն ու փոխեցին տէրունական տօները:

Եւ պահքն էլ լուծում են ձկով ու մսով, եւ սպանում ուղղափառ դասի երեսունվեց բիւրին, ինչպէս ցոյց է տրւում սուրբ Միխայէլի[520] պատմութեան մէջ:

Եւ երեք հարիւր տարուց աւելի Ֆռանկների բազմաթիւ ազգեր չհնազանդուեցին Քաղկեդոնի չար ժողովին:

Արդ, արի՛ ես ու դու փորձենք ցոյց տալ, որ նա, ով ունի առաքելական դաւանանք ու կանոններ, նա է հնազանդ նրան:

Ես Քրիստոսին խոստովանում եմ իբրեւ ճշմարիտ Աստուած եւ բնութեամբ Աստծոյ որդի, իսկ դու բաժանմամբ դաւանում ես մարդուն եւ շնորհով՝ Աստծոյ որդուն:

Ես Քրիստոսին անապական եմ պատարագում, ինչպէս առաքեալների եւ Կղեմէսի կանոնն է, դու ապականում ես ջրով եւ այլնով, որի մասին ասուելու է առաջիկայում:

Արդ, ի՞նչ ես կամենում, եթէ հնազանդուենք Պետրոսին՝ պէտք է ուրանա՞նք Քրիստոսին, որպէսզի հնազանդ լինենք Պետրոսին, թէ՞ եղծենք պահքը եւ ամէն տեսակ պիղծ ուտելիքներ ուտենք, թէ երկու քոյրերի երկու եղբայրների հետ ամուսնացնենք, կամ սանիկի քրոջը՝ միւս եղբօր հետ, ինչպէս քո սուտ Պետրոսի կանոնն է, ոչ ճշմարիտ Պետրոսի, իսկ միւս ամօթալի բաների մասին լռում եմ:

Իսկ եթէ մէկն ասի, թէ շատ բարկացար, չեմ ասում, թէ սրան հնազանդուիր, այլ ինչպէս Լուսաւորիչը գնաց Հռօմ ու հնազանդուեց, ապա ասենք, որ Լուսաւորիչը Հռօմ գնաց ոչ թէ ձեռնադրուելու, այլ երկու ազգերի եւ երկու ուղղափառ թագաւորների՝ Տրդատի եւ Կոստանդիանոսի սիրոյ եւ միաբանութեան համար:

Սա յայտնի է նրանից, թէ [նա] արդէն ստացել էր քահանայութիւն ու մկրտել թագաւորին, լուսաւորել մեր ազգը եւ կառուցել եկեղեցիներ: Եւ իբրեւ փոխանորդ նստեցրեց սուրբ Արիստակէսին, ով իր առաքինութեամբ նման էր նրան եւ որդին էր ըստ մարմնի, եւ ապա գնաց Հռոմ:

Իսկ եթէ մէկն ասի, թէ Կեսարիայում ձեռնադրուեց Ղեւոնդիոս պատրիարքից, ապա ասենք, որ սուրբ Գրիգորը Կեսարիայում ձեռնադրուեց ոչ թէ ուրիշ առաքեալից, այլ Սուրբ Թադէոսից, որի թեմն էր Հայաստանը, որովհետեւ երբ Թադէոս առաքեալն Ուռհայում ձեռնադրեց Ադդէին, յետոյ եկաւ Կեսարիա եւ առաջին եպիսկոպոս ձեռնադրեց Թէոփիլոսին, նրան, որի անունով Ղուկասը գրեց՝ Աւետարանը ու Գործք առ Թէոփիլոսին:

Եւ այսպէս նրանից պատրիարք ձեռնադրուեց Ղեւոնդիոսը, որից էլ ձեռնադրուեց մեր Լուսաւորիչը:

Եւ այս էր պատճառը, որ հայերը այնտեղ էին գնում ձեռնադրուելու, նոյն պատճառով եւ այնտեղ թեմ սահմանուեց, իսկ Կեսարիան բնիկ հայկական քաղաք է:

Եւ սուրբ Գրիգորն այնտեղ ծնուեց ու մեծացաւ. նա յղացուել էր այնտեղ, որտեղ Թադէոսի գերեզմանն էր, իսկ սնուեց այնտեղ, որտեղ առաքեալն սկսեց քահանայագործել, որի շնորհը փոխանցուեց իրեն՝ այնտեղ եպիսկոպոս դառնալով:

Ապա Հռոմ գնալով՝ դարձաւ հայրապետ ու պապ: Որովհետեւ այսպէս սահմանեցին, որ մի ինքնակալ թագաւոր եւ մի ինքնուրոյն հայրապետ նստի Հայաստանում, եւ մի ինքնակալ թագաւոր ու ինքնուրոյն հայրապետ էլ՝ Հռոմում, ու իրենց անձերը ցմահ միմեանց կապեցին եւ ահեղագոյն գրով եղբայրներ դարձան՝ գրիչները թրջելով ահաւոր խորհրդի մէջ: Ապա բաժանելու տրուեցին տնօրինական սրբազան վայրերը՝ սուրբ Յակոբ պատրիարքարանը, Գողգոթան, Սուրբ Կարապետը եւ սնարը: Եւ վիճակ գցելով՝ յարութեան հատուածն ընկաւ հայերին, որի պատճառով նրանց ազգից ոմանք տրտմեցին:

Եւ ամենայնի մէջ հեզը սուրբ՝ Գրիգորը, յանձնարարեց, որպէսզի կառուցեն ընդարձակը, որովհետեւ դեռ կառուցուած չէր: Ապա որոշելով տեղը՝ կախեց կանթեղը յանուն ազգերի եւ խնդրեց Աստծուն լոյս իջեցնել՝ ի նշան Քրիստոսի յարութեան: Եւ քանի որ մինչեւ նա չկար [այդ նշանը], եւ այլազգիները չէին հաւատում՝ առաւելապէս դրա համար կոչուեց Լուսաւորիչ[521]:

Այս էր Կեսարիա եւ Հռոմ գնալու պատճառը:

Այլեւ սա էլ իմացի՛ր, որ ըստ չորս աւետարանիչների ամբողջ աշխարհում չորս գլխաւորագոյն աթոռներ նշանակուեցին՝

Անտիոքում՝ Մատթէոսի համար,

Ալեքսանդրիայում՝ Մարկոսի,

Հռոմում՝ Ղուկասի,

Եփեսոսում՝ Յովհաննէսի, որ յետոյ մեծ Կոստանդիանոսը փոխադրեց Կոստանդնուպօլիս:

Իսկ առաջին ժողովում երեք ինքնուրոյն աթոռներ հաստատուեցին՝ Երուսաղէմում՝ Քրիստոսի գերեզմանի համար, Կիպրոսում՝ Ղազարոսի գերեզմանի[522], Հայաստանում՝ սուրբ Գրիգոր Լուսաւորչի գերեզմանի համար:

Սրանք, ինչպէս ասուեց, եկեղեցու եօթ սիւներն ու եօթ խարիսխներն են՝ կարգուած ամբողջ աշխարհում:

Իսկ եթէ մէկն ասի, թէ Հայոց ազգը ուշ է հաւատացել, ապա ասենք, որ դա ամենեւին էլ նախատինք չէ մեզ համար, որովհետեւ հեթանոսներն էլ ուշ հաւատացին, սակայն աւելի լաւն են հրէաներից, եւ վերջին մշակներն առաջինների հետ առան վարձը, իսկ [նրանք], ովքեր նախանձեցին, կորան:

Բացի այդ ասենք, թէ՝ ինչո՞ւ ուշ, քանզի հայոց Աբգար թագաւորը մինչեւ խաչելութիւնը հաւատաց Քրիստոսին եւ երանելի համարուեց նրանից:

Եւ նախ Տրդատը հաւատաց, ապա՝ Կոստանդիանոսը: Եւ յայտնի է, որ Ագաթանգեղոսը գրում է, թէ՝ «Այնժամ լսեց Տրդատը, որ Կոստայի որդի Կոստանդիանոսը հաւատաց Քրիստոսին»[523]:

Այլեւ յայտնի է սուրբ Հռիփսիմեանների գալով:

Եւ հայերն ունեն երեք առաքեալներ. Թադէոսը, Բարդուղիմէոսը եւ Յուդայ Յակոբեանը, որը Որմիից էր, որը բնիկ հայոց քաղաք է:

Եւ կենսաբուխ սուրբ Աւետարանը[524] մեր Թադէոս առաքեալի համար ասում է, թէ տասներկուսից էր. «Ղէբէոսը, որ կոչուեց Թադէոս» (Մտթ. Ժ 3): Եւ յայտնի է, որ Քրիստոս փոխեց անունը, ինչպէս Պետրոսի եւ Որոտման որդիների:

Իսկ այն, որ ոմանք ասում են, թէ «եօթանասունից» է, պատճառն այն է, որ եօթանասուն աշակերտների գլուխ ու վարդապետ էր, ինչպէս Պետրոսը՝ տասներկուսի, իսկ առաջինները միշտ բոլոր տեղերում հետեւորդների անունով էին կոչւում: Այս է ստոյգ պատճառը: Եւ երբ գալիս էր Հայոց երկիր, նրան իբրեւ օգնական տուեցին օծման իւղը, որ օրհնել էր Քրիստոս եւ գեղարդը: Եւ ուրիշ ոչ մի ազգ չունի այսպիսի պարծանք, որովհետեւ մեր մեռոնն անդադար է եւ միշտ նոյն շնորհն ունի:

Եւ որ մեր ազգը գիր չունէր, տե՛ս որ Աստուած գիր տուեց, ինչպէս Մովսէսի ձեռքով՝ Իսրայէլին:

Իսկ ուրիշ ո՞ր ազգը կարող է պարծենալ դրանով:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԻԱՅՆ ՀԱՅԵՐՆ ԵՆ ԱՌԱՆՁՆԱՅԵԼ
Պրակ Ժ

Հարց. Ի՞նչ պատասխան տանք նրանց, ովքեր բամբասում են, թէ իբր հայ ազգը չի միաբանւում միւսներին: Այլեւ պնդում են, թէ ընդհանրական կանոններն աւելի ճիշտ են, քան մասնաւորները, որոնք ամէն մի ազգի համար տարբեր են:

Պատասխան. Ասենք, որ նախ ոչ միշտ է, որ ընդհանրականը ճիշտ է, իսկ մասնաւորը՝ սուտ, ինչպէս ասելը՝ բոլոր

մարդիկ արդար են, եւ՝ ոչ մի մարդ արդար չէ: Ահա սրանք ընդհանուր են ասւում, սակայն ճշմարիտ չեն եւ սուտ են: Եւ մի մարդ արդար է, իսկ միւսը՝ ոչ: Ահա սրանք [չնայած] մասնաւոր են [ասւում, սակայն] ճշմարիտ են՝ համաձայն իմաստասէրների:

Եւ դարձեալ, թէպէտ ըստ Պորփիւրի մասն է ամբողջին հետեւում[525], ինչպէս անհատը՝ տեսակին, բայց ըստ Արիստոտէլի սեռն ու տեսակն են անհատին հետեւում, քանի որ երկրորդ գոյացութիւն են, իսկ անհատը՝ առաւել, իրական եւ առաջին գոյացութիւն է, որն առանձինն ու մասնաւորն է, ինչպէս մեր ազգը:

Բացի այդ, գոյութիւն ունի առաւել կամ պակաս ճշմարիտ, ինչպէս որ կայ առաւել բարի եւ նուազ բարի:

Այսպէս, ասում են. այն, ինչ ինքնըստինքեան ճշմարիտ է եւ բարի՝ առաւել է, իսկ որ պատահական է ճշմարիտ կամ [պատահական] բարի՝ նուազ է, որովհետեւ ինքնըստինքեանը գոյացութեամբ եւ անհրաժեշտութեամբ է, այսինքն անփոփոխ եւ միշտ, իսկ ըստ պատահմանը հնարաւորն է եւ ներունակը, այսինքն՝ փոփոխական եւ երբեմն: Ինչպէս օրինակ այն, որ եթէ մէկն ասի բարուն, թէ բարի գոյացութիւն է. սա ինքնըստինքեան ճշմարիտ է: Իսկ եթէ ասի, թէ բարին չար գոյացութիւն չէ, ճշմարիտ է նաեւ սա, սակայն պատահականութեամբ է, ինչպէս նշուեց:

Ուրեմն ակնյայտ է, որ նուազ ճշմարիտը պէտք է հետեւի առաւել ճշմարտին, ինչպէս նուազ բարին՝ առաւել բարուն՝ թէ՛ ընդհանուրի, թէ՛ մասնաւորի դէպքում:

Ա՛րդ, հայոց ազգն իր դաւանութեան եւ կարգերի մէջ, այսինքն՝ հաւատի եւ գործերի մէջ, առաւել ճշմարիտ եւ առաւել բարի է, հետեւաբար, բոլոր քրիստոնեայ ազգերը պարտաւոր են հետեւել նրան:

Բացի այդ ճշմարտութիւնը մէկն է, սուտը՝ բազում, բարին մէկն է, չարը՝ բազում, առաքինութիւնը մէկն է, մոլութիւնը՝ բազում:

Արդ, հնարաւոր է, որ մէկը հակառակի եւ յաղթի շատերին, ինչպէս հայոց ազգը բոլոր մնացեալներին, որ բազում են եւ ոչ թէ մէկ:

Եւ բացի այդ, ով աւելի մերձ է ճշմարտութեանը, նա առաւել ճշմարիտ է, ինչպէս որ, ովքեր աւելի մօտ են լոյսին ու ջերմութեանը, աւելի են լուսաւորւում եւ ջերմանում:

Արդ, ճշմարտութիւնը առաքելական, հայրապետական եւ երեք սուրբ ժողովների կանոններն են, եւ եթէ կայ մէկը, որ աւելի մերձ եւ անփոփոխ է մնացել [սրանց հանդէպ]՝ հայոց ազգն է:

Նաեւ, զուտ է եւ անխառն իսկապէս ճշմարիտը, քան ստին խառնուածը: Արդ, բոլոր ազգերից հերձուածօղներ եղան, որոնք խառնուեցին ճշմարտութեան հետ, իսկ հայոց ազգից ոչ ոք չհամարձակուեց հերձուածողութեամբ հանդէս գալ, եւ ուրիշներինն էլ չընդունեցին. այդ պատճառով էլ ճշմարտութիւնը մեզանում մնաց ճշմարտապէս եւ զերծ ստից:

Եւ դարձեալ, կարիք չկայ բացայայտ պնդելու, թէ բոլոր բազումներն աւելի պատուական են, քան մէկը, որովհետեւ ահա գոյացութիւնը մէկն է, իսկ պատահականութիւնները՝ բազում. արեգակը մէկն է, աստղերը՝ բազում. գլուխը մէկն է, անդամները՝ բազում: Աւելի պատուական է վարդապետը, քան աշակերտները, զօրավարը, քան զօրքը, կառապանը, քան կառքը:

Այդպէս էլ չնայած ազգս հայոց թէեւ մէկն է, սակայն կարող է պատուական լինել շատերից:

Ահա այդպէս էլ նախաստեղծների մէջ մարդը միակն էր, իսկ կենդանիները՝ բազում: Ապրեց միայն Նոյը, իսկ բազումները կորան: Եբերը (տե՛ս Ղուկ. Գ 35) միայն անաղարտ պահեց նախնական լեզուն: Աստուածապաշտ Աբրահամը մէկն էր, իսկ քանանացիք՝ բազում: Համբերող Յոբը մէկն էր, ազգերը՝ բազում: Յովսէփը մէկն էր, եգիպտացիք՝ բազում:

Եւ ի՞նչ կարիք կայ երկարեցնելու, ցոյց տալու համար, որ մի ճշմարիտը չպէտք է հետեւի բազում ստերին:

Եւ լաւ է միակը պատուական, քան բազում քարերն անպիտան:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ապա ուրեմն լաւ է տարաձայնութիւնը, քան համաձայնութիւնը. բաժանումը, քան միութիւնը, ապա ասենք, որ սա ամէն տեղ չէ, որ անհրաժեշտ է: Որովհետեւ կայ եւ բարի տարաձայնութիւն, քան համաձայնութիւն՝ [ասենք համաձայնութիւն] հերձուածողների հետ: Եւ լաւ է հեռացումը չար ժողովներից, քան միաբանուելը [նրանց հետ]:

Եւ ինչպէս օրինակ այն, որ շատերը մի ճանապարհով ընթանալիս, մէկին թողնում են, իսկ իրենք բոլորը հեռանում, մէկը գնում է նոյն ճանապարհով, [այս դէպքում] չենք ասում, թէ մէկը բաժանուեց ճանապարհից, այլ՝ շատերը:

Այսպէս էլ քրիստոնեայ բոլոր ազգերն ունէին դաւանութեան եւ առաքելական աւանդութեան նոյն ճանապարհը՝ մինչեւ Քաղկեդոնի ժողովը, դրանից յետոյ բաժանուեցին բոլոր ազգերն ամէն ինչով, ինչպէս ակնյայտ է իւրաքանչիւրի եկեղեցուց:

Իսկ մեր դաւանանքը ամէն ինչով մնաց նոյնը՝ ինչ որ ունէր սուրբ Գրիգոր Լուսաւորչից սկսած եւ նրա հետեւորդներից [աւանդուած]:

Հետեւաբար, պարզ է, որ թողնողն ու բաժանուողը հայոց ազգը չէր, այլ նրանք, որ թողեցին ճշմարիտն ու հեռացան:

Բացի այդ, մարդկանց յատուկ է, որ իւրաքանչիւր ոք իրեն ճշմարիտ ու արդար կարծի, մինչդեռ նա է ճշմարիտն ու արդարը, ով ճշմարտութեանն է հետեւում, ինչպէս այն, որ երկու դատախազներից իւրաքանչիւրը կամենում եւ իրեն է ճշմարիտ կարծում, մինչդեռ դատաւորի մօտ եկած վկաներով յայտնի է դառնում ճշմարտութիւնը:

Այդպէս էլ իւրաքանչիւր քրիստոնեայ ազգ իրեն ճշմարիտ է համարում, սակայն միտքը դատաւոր դարձնելով՝ երկու անաչառ վկաներով՝ [որոնք]

հաւատն ու օրէնքն են, այսինքն՝ հաւատն ու գործերը, ո՞րի կողմը կլինի Քրիստոս, նա էլ կլինի ճշմարիտը:

Եւ քանի որ սրանք են ճշմարիտ վկաները, մեր Տէրն էլ սրանց վկայ կարգեց կուրացած հրէաների համար՝ ասելով. «Եթէ ինձ չէք հաւատում, ապա հաւատացէք գործերին» (Յովհ. ԺԴ 11):

Արդ, սրանք վկայ բերելով եւ միտքը դատաւոր կարգելով, եկէ՛ք ուղիղ դատենք եւ չզրպարտենք:

Այդ կերպ վարուելով, [կարող եմ] ասել, որ այն, ինչ անօրէնութիւն է հայ ազգի համար, նոյնը այլ քրիստոնեայ ազգերի համար օրէնք է. այն, ինչ մեզ համար երկբայութիւն է, նրանց համար նոյնը դաւանութիւն է: Ինչպէս օրինակ, համառօտ ասեմ. մեզ համար թերութիւն է բանի եւ մարմնի բաժանումը երկու բնութեան եւ երկու դէմքի, երկու կամքի եւ երկու գործի: Բայց նրանց դաւանանքն այս է, որպէսզի ըստ նրանց չլինի մարդացեալ Աստուած կամ մեր բնութիւնը՝ միաւորուած աստուածութեանը, ինչի մասին ընդարձակ խօսում է աստուածաբան Կիւրեղը «Գիրք պարապմանց»-ում:

Իսկ մեզ համար անօրէնութիւն է խախտումն առաքեալներից աւանդուած պահքերի՝ երեք յիսնեակների, չորեքշաբթիների, ուրբաթ [օրերի] եւ միւս շաբաթապահքերի, որոնք Նիկիական ժողովը [ցուցեց] սրբութեամբ պահել, մինչդեռ այս պահքերի խախտումը նրանց օրէնքն է՝ ձկով, ձէթով ու այլ այսպիսի բաներով: Մի՞թէ առաքեալներն իզուր պատուիրեցին խորշել չորս բանից՝ արիւնից, զոհաբերութիւնից, խեղդուածից, պոռնկութիւնից: Մինչդեռ խեղդուածը նրանց համար սուրբ է եւ կերակրելի, եւ հաւասարաչափ ներում են [բոլոր] պոռնկութիւնները:

Եւ իզո՞ւր էր, որ Մովսէսը առանձնացրեց սուրբն ու անսուրբը, մանաւանդ, որ Նոյի ժամանակ էլ կար այս ընտրութիւնը, եւ այսպէս մեզ եւս ցոյց տրուեց պահելու [այն] իբրեւ բնական օրէնքը: Իսկ սրանց համար ոչ մի պիղծ կենդանի չկայ, որովհետեւ ասում են այն, ինչ բերանն է մտնում, դուրս է գալիս:

Եւ այլ բազում եւ զանազան ազգապղծութիւններ են անում՝ հոգեւոր եւ մարմնաւոր բաներում՝ [ամուսնացնելով] երկու եղբայրներ եւ երկու քոյրեր, հոգեւոր մօր քոյրերի հետ: Անխտիր են նաեւ բազմանկողնութեան եւ բազմաթիւ այլ բաների մէջ, որոնց մասին խօսելն իսկ զազրելի է. նրանց համար օրէնք, իսկ մեզ համար՝ անօրէնութիւն:

Ապա ուրեմն պարզ է, որ եթէ մէկը ճշմարիտ է հաւատի ու օրէնքների մէջ, նա է ճշմարիտը եւ ոչ միւսները, թո՛ղ որ բաժանուած լինի նրանցից:

ԴԱՐՁԵԱԼ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԱ

Ազգը ազգից բաժանւում է սահմանով, լեզուով, կանոնական սահմանումներով, որոնք եկեղեցու աւանդութիւններն ու հաւատն են:

Եւ բաժանումներից ամրագոյնը կանոնական սահմանումներովն է աս-

ւում, քան [բաժանումը] սահմանով ու լեզուով:

Այդպէս էլ միաբանութեան խնդրում է. եթէ միաբանութիւնը կանոնական սահմանումներով է ամրապնդուած, առաւել է, քան գաւառովն ու լեզուովը: Եւ այս միաբանութիւնը, որ կանոններով է, պէտք է հասկանալ որպէս յաւիտենական միաբանութիւն, որ լինում է ըստ օրինադրութիւնների սահմանումների կամ ըստ գլխաւոր բաների, եւ ոչ թէ մասնակիօրէն միաբանուած եւ բազմաթիւ բաներով զանազանուած, մանաւանդ, եթէ հակառակ ու ընդդիմադիր են:

Իսկ եթէ գլխաւոր [հարցի շուրջը] չէ միաբանութիւնը, ո՞վ կարող է դա միաբանութիւն անուանել:

Եւ ի՞նչ է սա, եթէ քրիստոնեաների ազգն ահա տեսնում ենք, որ ո՛չ ըստ անուան, ո՛չ էլ միութեամբ չունեն կանոնական [միասնական] սահմանումներ, որովհետեւ, օրինակ, լատիններն ունեն առանձին աւանդոյթներ, նախ, որ բաժակից ժողովրդին չեն տալիս:

Երկրորդ՝ մի քահանան մէկ օրուայ մէջ երեք անգամ պատարագ է մատուցում:

Երրորդ՝ այն էլ անխտիր մի եկեղեցում:

Չորրորդ՝ երկու ճրագալոյցով պատարագ չեն անում:

Հինգերորդ՝ «բուրգաթուր» կոչուածը[526]:

Վեցերորդ՝ Հոգու՝ Հօրից եւ Որդուց բխելը[527]:

Եօթներորդ՝ սրբոց տօներն այլ կարգով կատարելը եւ ոչ թէ ըստ Յայսմաւուրքի:

Ութերորդ՝ ամբողջ աղուհացի շրջանում պատարագելը:

Իններորդ՝ քահանաների կին չառնելը, մօրուքը ածիլելը, գայթակղուածին անխտիր արդարացնելը:

Տասներորդ՝ [թոյլատրելը] կանանց մկրտութիւն անել, աշխարհականներին խոստովանութիւն ընդունել, այլեւ՝ կրկին մկրտել:

Եւ բազմաթիւ այլ տարբերութիւններ, մանաւանդ վիճելու մէջ կեղծաւորելը, չորեքշաբթին չպահելը, պահքի սկիզբը լուծելը, առանց զղջալու խոստովանելը, պիղծ եւ խեղդուած կենդանիներ ուտելը եւ այլ բազում բաներ:

Իսկ յոյները, որ նախ նախասրբող պատարագ են անում:

Երկրորդ՝ երկու՝ տաք եւ սառը ջրով՝ [պատարագելը]:

Երրորդ՝ ամբողջ հացի պատարագի ժամանակ սեղան չհանելը, այլ միայն մի մասի:

Չորրորդ՝ պատարագելը մնացորդով, որն իրենք քաջ գիտեն:

Հինգերորդ՝ երկսեռներին աբեղայ կարգելը:

Վեցերորդ՝ զգեստի այլաձեւ ընտրութիւնը:

Եօթներորդ՝ պահքերը, աղօթքները, այլ աւանդութիւնները բազմաթիւ տարբերութիւններով կատարելը:

Ասորիները, նախ ուրբաթազեն են[528]:

Երկրորդ՝ ոմանց խոստովանութիւնը չեն առնում:

Երրորդ՝ մի մատով են նշանը դրոշմում:

Չորրորդ՝ հրաման են տալիս աւագ սարկաւագներին կին առնելու եւ քահանայ լինելու:

Հինգերորդ՝ ոմանց թլփատում են:

Վեցերորդ՝ պատարագի հացը օծում են ձէթով:

Եւ բազմաթիւ այլ զանազանութիւններ, որ ո՛վ [կամենայ] քննել՝ կգտնի:

Ահա՛, այսպէս իւրաքանչիւրն ունենալով իր առանձին սահմանումները՝ նախատում են միայն հայերին, թէ՝ միաբան չեն միւս քրիստոնեաների հետ, այլ միայնակ եւ առանձին են ընթանում եւ յանդիմանւում են իբրեւ հակառակորդ:

Ուստի պէտք է նրանց, ովքեր չգիտեն, կամ էլ միտումնաւոր անգիտանում են, ցոյց տալ հայերի եւ միւս քրիստոնեաների ընդհանրութիւնները, որպէսզի իմանալով՝ ամօթահարուեն՝ ընկրկելով ճշմարտութեան առջեւ:

ԼԱՏԻՆ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախ՝ բաղարջն իբրեւ պատարագի հաց վերցնելը:

Երկրորդ՝ տօներին գառ մորթելը:

Երրորդ՝ ննջեցեալների հոգու համար կենդանի մորթելը եւ աղքատներին ողորմութիւն տալը:

Չորրորդ՝ սրբերի տօնն առաջիկայ օրերում կատարելը:

Հինգերորդ՝ ըստ յոյների Յայսմաւուրքով չտօնելը, այլ ուրիշ օրինակներով կատարելը:

Եւ բազմաթիւ այլ նմանութիւններ կան, որ վեր են հանւում քննութեամբ:

ԱՍՈՐԻՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Նախ՝ ճրագալոյցը լուծելը պանրով, իւղով եւ այլ այսպիսի կերակուրներով, բացի մսից:

Երկրորդ՝ Քրիստոսի բնութեան հետ միաւորումով՝ մէկ բնութիւն ասելն ըստ սուրբ Աթանասի եւ Կիւրեղի:

Երրորդ՝ Երեքսրբեանին «Խաչեցար»-ի յաւելումը:

Չորրորդ՝ Քաղկեդոնի ժողովից խորշելը:

Այսքանն ասորիների հետ [եղած ընդհանրութիւնների մասին]:

ԻՍԿ ՀՈՅՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՅԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԵՆ.

Նախ՝ ըստ աղօթքի դիրքի [ընդունուած] կարգը, որ նրանց եկեղեցում էլ նոյնն է:

Երկրորդ՝ Աղուհացին բացի շաբաթ եւ կիրակի օրերից պատարագ մատուցելու հրաման չունենալը:

Երրորդ՝ քահանաների նկատմամբ զգուշաւոր օրէնքներ ունենալը, թէեւ ոմանք կաղում են այս հարցում:

Չորրորդ՝ ներկայումս ոմանց տօները Յայսմաւուրքով [կատարելը], որոնցով եւ յոյները:

Եւ այնուամենայնիւ, ոմանք բերանները բացած հակառակում են, որ բոլորը

բացի հայերից՝ ծնունդը միաբան են կատարում: Սակայն սա աւանդութիւն է եւ ոչ հաւատ, ու եզակի եւ մասնակի միաբանութիւն է եւ ոչ ամբողջական:

Այսպիսի մասնաւոր միաբանութիւն մեր եկեղեցին էլ ունի միւս քրիստոնեաների հետ, ինչպէս օրինակ, երկու՝ ծննդեան եւ յարութեան ճրագալոյցերով, հայերը միաբան են յոյներին եւ ասորիներին, իսկ լատինները՝ ոչ, որովհետեւ սրանք պատարագ են մատուցում ծննդեան եւ յարութեան նախատօնակին, մինչդեռ լատինները՝ ոչ:

Պատարագի հացն ամբողջութեամբ եւ ոչ թէ մասով են մատուցում լատինները, հայերը, ասորիները, իսկ յոյները՝ ոչ:

Սարկաւագի աստիճան ստանալիս կին առնելու հրաման չեն տալիս լատինները, հայերը, յոյները, իսկ ասորիները թոյլատրում են:

Եւ սրանք թէպէտ եւ ոմանց փոքր չեն թուում, սակայն աւանդութիւն են եւ ոչ հաւատ, ինչպիսին որ ծննդեան տօնն է, որի մասին ասում են, որ բոլոր քրիստոնեաները միաբան են տօնում հայերից բացի, որ նոյնպէս աւանդութիւն եւ տօնախմբութիւն է, սակայն ոչ հաւատ:

Եւ Քրիստոս չի բարկանում տարբեր ժամերին տօնելու համար, ինչպէս որ չի բարկանում Պայծառակերպութիւնը տարբեր ժամերին տօնելու համար, որովհետեւ սա մէկն է մեր Կենարարի խորհրդական տօներից: Այս տօնախմբութեան հարցում միաբան չէ ողջ հաւատացեալ ժողովուրդը:

Իսկ ի՞նչ ասել ջրի մասին, որովհետեւ յոյները թերի են համարում լատինների խառնումը իրենց կրկնակի խառնելու համեմատութեամբ՝ այն իբրեւ խորհուրդ դիտելով:

Այսքանն այս մասին:

ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՆՁԻՆ

Իսկ հայ ազգին Աստծուց այսպիսի առանձին բարիքներ են շնորհուել:

Առաջին՝ հրաշքով դարձը:

Երկրորդ՝ եկեղեցի կառուցելու մասին սուրբ Գրիգորի տեսիլքը[529]:

Երրորդ՝ տասներկու առաքեալներից երեքի Հայաստանում քարոզելն ու վախճանուելը[530]:

Չորրորդ՝ Աբգար թագաւորի նախընծայ հաւատալն ի Քրիստոս:

Հինգերորդ՝ աստուածապարգեւ գիրը:

Վեցերորդ՝ Նոյեան տապանի [նստելն] Արարատի՝ Մասիս լեռան վրայ:

Եօթներորդ՝ եղեմաբուխ երեք գետերի [Հայաստանով] հոսելը:

Ութերորդ՝ հայերի արեւելեան կոչուելը:

Իններորդ՝ այս կողմերում աստուածատունկ դրախտի [լինելը]:

Տասներորդ՝ այս կողմից լուսատուների ընթացքի սկսուելը, որ կարապետն են Մեծ Լոյսի ծագելու, որովհետեւ Արեգակն Արդարութեան՝ Քրիստոս, հայրական փառքով եւ աստուածագումար դասերով, եւ նախընթաց աստուածային նշանով այդ կողմից է գալու, ըստ Տիրոջ՝ «Ինչպէս Փայլակը, որ

ելնում է արեւելքից, այդպէս էլ լինելու է մարդու Որդու գալուստը» (Մտթ. ԻԴ 27), որին փառք ու զօրութիւն ընդ Հօր եւ Սուրբ Հոգու, Ամէն:

ԳԼՈՒԽ ԼԲ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԱՅԺՄ ՀԱՐՑԵՐ ՄԵՂՔԵՐԻ ՄԱՍԻՆ Պրակ ԺԲ

Հարց. Ինչպէ՞ս են զանազանւում մեղքը, անօրէնութիւնը, յանցանքը:

Պատասխան. Երկու կերպ:

Նախ, որ մեղքը մարմնին է վերաբերում, որ մեղկանում եւ թուլանում է: Անօրէնութիւնը հոգունն է, որովհետեւ օրէնքները հոգեւոր են, իսկ յանցանքը մտքին է վերաբերում:

Երկրորդ՝ յանցանք է օրէնքը ոտնակոխ անելը ու զանցառելը:

Մեղք է չհասնելն օրէնքի կատարմանը: Իսկ այս երկուսը անօրէնութիւն են:

Եւ մինչեւ օրէնքը կատարուածները մեղք էին կոչւում, ինչպէս Նոյի եւ այլոց ժամանակներում, իսկ օրէնքից յետոյ՝ անօրէնութիւն, ինչպէս ժողովուրդն անապատում անօրէնութիւն արեց:

Բացի այդ, մեղքը կամաւոր է, յանցանքն ակամայ, եւ զոհաբերութիւն էին կատարում ինչպէս մեղքի, այնպէս էլ յանցանքի համար:

ՄՏՔԻ ՅԱՆՑԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ոմանք մտքի յանցանքն ամբողջութեամբ մեղք են համարում՝ բերելով Տիրոջ վկայութիւնը, թէ՝ «շնացաւ իր սրտում» (Մտթ. Ե 28):

Ոմանք էլ ոչինչ են համարում մտքի յանցանքը եւ չեն դասում մեղքերի շարքին՝ իբրեւ օրինակ բերելով դատարկ սեղանը, որ ոչ մէկին չի կարող կերակրել կամ՝ ծառի պտուղը, որին միայն տեսնելով են վայելում:

Ահա, սրանցից ո՞րն է ճշմարիտ, կամ թէ միմեանց հակառակ են, թէ՞ ոչ, խնդրում եմ վերլուծել:

Ասենք, որ միմեանց հակառակ չեն, եւ երկուսն էլ ճիշտ են, ինչպէս որ ցոյց կտանք յետոյ:

Սակայն նախ ցոյց տանք, որ մտքի մեղքն ամբողջապէս իրագործուած մեղք է՝ բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ Տէրունական իրաւացի հրամանի պատճառով, թէ՝ «Ո՛վ կնոջը նայի ցանկանալով, արդէն շնացաւ իր սրտում» (Մտթ. Ե 28): Եւ յիրաւի այդպէս է, որովհետեւ ո՛վ նայեց ցանկասէր մտքով, իր կամքով մեղք գործեց: Եւ եթէ [անգամ] խափանուեց մարմնի գործը, սակայն ժամանակի մէջ, տեղով կամ անձի պատճառով: Հետեւաբար, մտքի մեղքն էլ իրագործուած է:

Երկրորդ՝ բաժանումից էլ յայտնի է, որովհետեւ մեղքը երեք տեսակ է. մտաւոր, բանաւոր եւ մարմնական, որովհետեւ մարդն էլ երեքից՝ մտքից, հոգուց եւ մարմնից է բաղկացած:

Արդ, չնայած մտքի մեղքը բանաւորի եւ մարմնականի նման չի կատարւում, սակայն իր տեսակի մէջ կատարւում է, ինչպէս այն, որ կանաչ բոյսը թէեւ ցօղունով եւ հասկով դեռ ձեւաւորուած չէ, սակայն իր տեսակի մէջ ամբողջական է: Ուստի խօսելով շնութեամբ ցանկանալու մասին՝ Տէրն

աւելացնում է՝ «իր սրտում», որպէսզի չկարծուի, թէ մարմնականն է [միայն] շնութիւն, այլ՝ հոգեկանն ու մտաւորն էլ:

Ապա ուրեմն, մտքի մեղքը լիարժէք է:

Երրորդ, հպարտութիւնը, նախանձը եւ սրանց նմանները մեղք են, որոնք ոչ թէ մարմնով, այլ մտքով են կատարւում, ինչպէս յայտնի է բանսարկու սատանայից, որ յանցանք գործեց՝ հպարտանալով եւ նախանձով:

Արդ, ովքեր այսպէս ախտաւորւում են մտքով, նրանք մեղանչում են եւ պատժւում, ինչպէս ասում է առակը. «Բանսարկուի նախանձի պատճառով մահն աշխարհ եկաւ, եւ ով նրա հետեւից ընթանայ, նրա բաժինն է» (Իմաստ. Բ 24):

Ուրեմն, մտքի մեղքն էլ կատարեալ [մեղք] է:

Չորրորդ՝ [յայտնի է] եւ զղջումից, որովհետեւ այն ամէնը, ինչ մեղք է, զղջալու եւ խոստովանելի է, ըստ այդմ՝ «Մեղքն ատեցի եւ անարգեցի» (Սղմ. ՃԺԸ 113), իսկ եթէ մտքի յանցանքը խոստովանելի է, ուրեմն մեղք է:

Ուստի պէտք է զղջալ եւ խոստովանել հպարտութիւնը, նախանձը, ատելութիւնը եւ այլն, ապա՝ թողութիւն ստանալ, ըստ այդմ՝ «Նախ դո՛ւ քո անօրէնութիւնները խոստովանիր, որ արդարանաս» (Ես. ԽԳ 26), հետեւաբար, [դրանք] կատարեալ մեղք են:

Հինգերորդ՝ քանի որ մեղքը լինում է կամայ եւ ակամայ, գիտակցելով կամ անգիտանալով, ուստի տարբեր են նաեւ մեղքի պատիժները, ըստ այդմ Տէրն ասում է. «Քիչ ծեծ կուտի կամ՝ շատ ծեծ կուտի» (Ղուկ. ԺԲ 48):

Եւ սրանց տարբերութիւնը մեղքի չափն է: Ուստի, մտքի մեղքերը կատարեալ են, որովհետեւ ոմանց առաւել է պատժում, ոմանց՝ քիչ:

Վեցերորդ՝ բոլոր մեղքերի սկիզբն ու արմատը Տէրը համարում է միտքը, ըստ այդմ՝ «Սրտից են առաջ գալիս նախանձը, ցանկութիւնը եւ այլն» (Մրկ. է 21): Եւ կամ՝ «Սրտի աւելցուկից է խօսում բերանը» (Մտթ. ԺԲ 32, Ղուկ. Զ 45):

Արդ, եթէ ծնունդը մեղք է, առաւել եւս այդպիսի մեղքի ծնողն է մեղաւոր: Եթէ աւելցուկը չար է, չար է նաեւ կուտակուածը, ուստի չար ծառը չար պտուղ է տալիս (Մտթ. է 17):

Եօթներորդ՝ յայտնի է Տիրոջ յանդիմանութիւնից, որ երբեմն աշակերտներին ասում էր. «Ի՞նչ խորհեցիք ձեր սրտում, թերահաւատնե՛ր» (Մտթ. ԺԶ 8): [Յանդիմանում էր] նաեւ փարիսեցիներին. «Ինչո՞ւ էք ինձ փորձում, կեղծաւորնե՛ր» (Մտթ. ԻԲ 18, Մրկ. ԺԲ 15):

Եւ տե՛ս, որ ոչ թէ խօսքով եւ ոչ էլ գործով, այլ միայն մտքում ունենալու պատճառով յանդիմանուեցին Տիրոջից:

Նոյն պատճառով Տէրը Պետրոսին ասաց. «Թերահաւա՛տ, ինչո՞ւ երկմտեցիր» (Մտթ. ԺԴ 31): Եւ կամ՝ «Դու չես խորհում Աստծունը, այլ՝ մարդկանցը» (Մտթ. ԺԶ 23):

Հետեւաբար, կատարեալ է մտքի խորհուրդների մեղքը:

Ութերորդ՝ [յայտնի է] հակառակ փաստից, այսինքն՝ միայն մտքում աղօթելը, մտքում սրբութիւն պահպանելը

կատարեալ առաքինութիւն է, ըստ առաքեալի. «Սաղմոս եմ ասելու մտքով» (Ա Կորնթ. ԺԴ 15): Եւ Տէրը, թէ՝ «Սրտով սրբերը տեսնելու են Աստծուն» (Մտթ. Ե 8):

Այդպէս էլ մտքում հայհոյելը, նախանձելը, նենգելը կատարեալ չարութիւն եւ մեղք են, որոնց մարդասպանների շարքն է դասում մարգարէն՝ ասելով. «Արիւնահեղ եւ նենգ մարդուն դու պիղծ ես համարում, Տէ՛ր» (Սղմ. Ե 7):

Իններորդ՝ եւ եթէ հաւատը, յոյսը, սէրը աստուածային առաքինութիւններ են եւ լաւագոյնները բոլոր առաքինութիւններից, ըստ որում Պօղոսն ասում է. «Սրանք երեքն են, իսկ սրանց մէջ աւելի մեծը սէրն է» (Ա Կորնթ. ԺԳ 13), եւ սրանք մտքով են, ըստ այդմ՝ «սիրի՛ր քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով եւ քո մտքով» (Բ օր. Զ 5), եւ սրտով հաւատալն արդարութիւն է, ասում է առաքեալը (հմմտ. Հռոմ. Ժ 10), ուրեմն անհաւատութիւնը, յուսահատութիւնը, ատելութիւնը, որ մտքում են, մեծ են, քան բոլոր չարիքները, ինչպէս ուսուցանում է Սուրբ Գիրքը: Հետեւաբար, կատարեալ է մեղքը:

Տասներորդ՝ յայտնի է նաեւ փոխազդեցութիւնից, որովհետեւ երբեմն ախտն է միտքը տեղաշարժում, երբեմն էլ միտքն է ախտաւոր գործի պատճառ դառնում, ինչպէս ասում է երանելի Եւագրիոսը՝ եթէ մինչեւ երեսուն տարեկանն ախտն է տեղաշարժում միտքը դէպ ցանկութիւն, ապա դրանից յետոյ միտքն է դառնում ախտի պատճառ:

Արդ, եթէ մեղք է ախտերից շարժուելը, ինչը յիրաւի մեղք է, ապա մեղք է նաեւ մտքի շարժուելը [դէպ ախտը], ինչպէս ասուեց:

Նաեւ բոլոր գլխաւոր մեղքերը ութ հզօր խորհուրդներ է համարում սուրբ Եւագրիոսը, որովհետեւ բոլոր մեղքերի սերմը նախ խորհրդի մէջ է ծլարձակում[531], ապա բուսնում մարմնի մէջ եւ աճում:

Եւ դարձեալ վարդապետներն ասում են, թէ խորհուրդների մեղքերը, որոնք ընտրում եւ կամովին հեշտանում են դրա մէջ, առաւել չար են, քան գործերը, որ լինում են պատահմունքով:

Եւ սա յայտնի է չորս [հանգամանքով].

Նախ՝ որ մտքի չարութիւնը տարածւում է ողջ հոգով եւ մարմնով, ինչպէս օձի թոյնը, իսկ մարմնի գործը այն մասին է վերաբերում, որի հետ պատահում է:

Երկրորդ՝ ինչպէս կառքն ու կառապանը. եթէ մարմինը սխալւում է, միտքն ուղղում է նրան, իսկ եթէ կառապանը սխալուի, կառքը չի կարող ուղղել, եւ երկուսն էլ կգահավիժեն:

Երրորդ՝ մտքերով արբեցածը արհամարհում է օրէնքը, ամօթը, մարդկանց խրատները, մինչդեռ գործի մեղքը իր հետ բերում է տրտմութիւն, տառապանք, ափսոսանք, երկիւղ:

Չորրորդ՝ մեղքերի խորհուրդը ճշմարիտ եւ բարի է պատկերում գործը՝ սիրելի եւ հեշտ, որի պատճառով յօժարում եւ տենչում է կատարելու: Մինչդեռ գործը հակառակ դրան՝ դատարկ, չար ու զազրելի է ներկայացնում

խորհուրդը, որի պատճառով յետոյ տրտմում եւ նեղւում է, ատում մեղքի պատճառը եւ դարձի գալիս, ինչպէս Ամնոնի հետ կատարուեց[532]:

Ապա ուրեմն աւելի չար է արբեցած խորհուրդը, որ [չար] գործերի պատճառ է դառնում, քան գործը, որ յետոյ զղջման պատճառ է դառնում, որի համար առաքեալն ասում է. «Լաւ է ամուսնանալ, քան կրքով այրուել» (Ա Կորնթ. է 9):

Յայտնի է նաեւ, որ ով մտքով է պղծուած, իրեն մեղաւոր չի համարում, իսկ մարմնով չար գործ արածը զղջում եւ ապաշխարում է:

Ուրեմն պարզ է, որ ինչպէս մարմնի գործն է չար ուրիշի համար, մտքի մեղքն էլ առաւելս չար է իր համար, ուստի պէտք է զգուշանալ՝ պահպանելու համար աւելի սրտի սրբութիւնը, քան մարմնի, քանզի՝ «Աստուած հոգի է» (Յովհ. Դ 24), որ բնակւում է ե՛ւ իմացական մտքում, ե՛ւ հոգում: Եւ անօգուտ է մարմնի սրբութիւնը, եթէ միտքը զբաղուած է չարով, որովհետեւ այդպիսինը հեռանում է Աստծոյ սիրուց եւ նրա բնակութիւնից. «Որովհետեւ Սուրբ Հոգին փախչում է նենգութիւնից» (Իմաստ. Ա 5):

Այժմ պատասխանենք հարցին:

Մտքի յանցանքը երկուսն է: Առաջինը փոքր իսկ զանցառութիւնն է՝ ցանկացած պարագայում մտքի բնոյթին համապատասխան, որի անհաշիւ լինելու մասին է աղերսում մարգարէն. «Ո՞վ կարող է յիշել իր յանցանքները» (Սղմ. ԺԸ 13), եւ որից՝ մարդկային մտքից, անփախչելի [լինելու մասին] է քարոզում Սողոմոնը. «Ո՞վ կարող է պարծենալ, թէ սուրբ միտք ունի» (Առակ. Ի 9):

Իսկ երկրորդն այն յանցանքն է, որ մտքով հեշտանալով՝ մեղկանում է տեսնելիս, եւ նոյն կերպ մտածողները հաւանութիւն են տալիս:

Եւ այսպէս է իրագործւում. մեղքը օտար [մեղքին] խառնւում է գաղտնօրէն, իսկ մտածողութեանը՝ բնականօրէն, որի համար էլ մարգարէն աղօթում էր. «Իմ գաղտնիքներից ինձ մաքրի՛ր, Տէր եւ քո ծառային պահպանի՛ր օտար բաներից» (Սղմ. ԺԸ 13):

Այսպիսով, ըստ կարգի փարատուեցին տարակուսանքներդ եւ դրանք միմեանց հակառակ չեն, ինչպէս ցոյց տրուեց:

Իսկ դո՛ւ, ո՞վ մաքրամիտ եւ ճգնազգեստ միայնակեաց այր Աստծոյ, սուրբ հայրդ, Սահակ[533], թէեւ եղբայրական սիրով յորդորելով՝ խնդրեցիր սա մեզանից, սակայն կարող ես թերին լրացնել եւ աւելորդը դեն նետել ու օգնել մեզ քո պայծառամիտ սրտի սրբութեամբ, որով միշտ երանութեամբ տեսնում ես Աստծուն՝ նայելով նրա օրէնքներին օր ու գիշեր, որով եւ յարազուարճ բարերջանկութեամբ լցուած, Հոգուն հարազատ զանազան քաղցր պտղատու եւ բարձրաբերձ ծառեր ես տնկում հայկազեան ազգի թորգոմեան տան եկեղեցու մէջ, ողջ եղի՛ր ի Տէր, ի պարծանս մեր:

ԵՒԱԳՐԻՈՍԸ ՈՒԹՆ Է ԱՍՈՒՄ ՄՏՔԻ ՄԵՂՔԵՐԸ
Պրակ ԺԳ

Հարց. Ինչո՞ւ Եւագրիոսը մտքի ութ մեղք է նշում[534], իսկ այլ վարդապետներ՝ եօթն են ասում մահացու մեղքերը:

Պատասխան. Նախ, ասենք, որ սրանք չեն հակասում միմեանց, որովհետեւ Եւագրիոսը եւս եօթն է ասում, որովհետեւ տրտմութիւնն ու ձանձրոյթը նոյնն են, որովհետեւ տրտմութիւնը բարու պակասից է լինում, իսկ ձանձրոյթը բարու աւելցուկից:

Այդ պատճառով էլ այս ախտը ուրիշ վարդապետներ ծուլութիւն են կոչում, որովհետեւ ծուլութիւնը երկու կերպ է դրսեւորւում. մէկը, որ հեռանում է հոգեւոր բարուց եւ դանդաղում գործերում, այսինքն՝ պահքի, աղօթքի եւ այլ հարցերում, որի պատճառով էլ այն տրտմութիւն է կոչւում:

Իսկ միւսը, որ ձգտում է թեթեւութեան, այսինքն մարմնի հանգստի, կոչւում է ծուլութիւն:

Եւ այն, ինչ նրանք նախանձ են կոչում, սա ասում է՝ «ամբարհաւաճ», որ փառասէրն է, որովհետեւ փառասէրը սիրում է իր փառքն ու իր բարիքը, իսկ ուրիշների փառքին ու բարիքին նախանձում եւ ատում է:

Ուստի, նոյնն են նրանց ասածները:

Եւ խորհուրդ անուանում է դեւերի պատճառով, որովհետեւ դեւն անմարմին է, որովհետեւ ամէն մի մեղք նախ մտքի մէջ է սերմանւում, ապա ծլարձակում եւ աճում՝ գործելով:

Եւ այլ վարդապետներ եօթն են ասում մեղքերը, որովհետեւ մարմնի տարրերը չորսն են, իսկ հոգու զօրութիւնները՝ երեքը, այսինքն՝ բանականութիւնը, ցասումը, ցանկութիւնը:

Եւ հպարտութիւնը բանականութեան [մեղքն է], նախանձը՝ ցանկութեան, բարկութիւնը՝ ցասման, ծուլութիւնը՝ հոգունը, ագահութիւնը՝ հրինը, որկրամոլութիւնը՝ օդինը, ցանկասիրութիւնը՝ ջրինը:

Այդ պատճառով էլ եօթն են գլխաւոր մեղքերը:

Եւ ըստ հոգու երեք մասերի դարձեալ եօթն են, հետեւեալ կերպ. հպարտութիւնը եւ նախանձը բանականութեան [մեղքն են], որ ներքեւինների եւ վերեւինների հանդէպ է: Բարկութիւնը եւ ծուլութիւնը ցասմանն են՝ առաւել կամ նուազ: Իսկ մնացեալը ցանկութեանն են, որովհետեւ ցանկանում է ագահանալ, որկրամոլութեամբ զբաղուել, պոռնկանալ եւ այլն:

Ոմանք էլ ասում են, թէ այս եօթից հինգը մարմնական են, երկուսը՝ հոգեկան, որովհետեւ սատանան հպարտացաւ երկնքում եւ նախանձեց մարդուն: Իսկ մնացածը մարմնական են ասում:

Ոմանք էլ միայն երկուս են ասում մարմնական. որկրամոլութիւնն ու ցանկասիրութիւնը, իսկ մնացեալը՝ հոգեկան:

Իսկ ես ասում եմ, եօթից երկուսը պարզ հոգեկան են, այսինքն հպարտութիւնն ու նախանձը: Եւ հպար-

տութիւնը՝ իմացութեանն է, իսկ նախանձը՝ կամքինը: Երկուսը պարզ մարմնական են, այսինքն որկրամոլութիւնը եւ ցանկասիրութիւնը: Եւ երեքը խառն են, այսինքն հոգեկան եւ մարմնական, որոնք են բարկութիւնը, ծուլութիւնը, ագահութիւնը: Բայց այս երեքում հոգունը եւ մարմնինը հաւասար են բարկութեան մէջ, առաւել՝ մարմնինը՝ ծուլութեան եւ առաւել՝ հոգունը ագահութեան մէջ:

Սա ըստ նրանց, ովքեր եօթն են ասում մահու չափ մեղքերը:

Իսկ սուրբ Եւագրիոսն ասում է ութ հզօր խորհուրդներ, որոնք են.

առաջին՝ որկրամոլութիւնը,

երկրորդ՝ պոռնկութիւնը,

երրորդ՝ արծաթասիրութիւնը,

չորրորդ՝ տրտմութիւնը,

հինգերորդ՝ բարկութիւնը,

վեցերորդ՝ ծանձրոյթը,

եօթներորդ՝ սնափառութիւնը, որ փառասիրութիւնն է,

ութերորդ՝ հպարտութիւնը:

Եւ այս հինգ պատճառով է:

Նախ, ըստ չորս տարրերի այլեւայլ որակների՝ դառնում են մեղքի ութ խորհուրդներ. օդից՝ որկրամոլութիւնն ու հպարտութիւնը, որ վերընթաց է եւ ձգող: Ջրից՝ պոռնկութիւնը եւ փառասիրութիւնը, որովհետեւ խոնաւ է եւ թոյլ, իսկ փառասէրն էլ այլ բաներում է մեղկանում եւ թուլանում: Հրից՝ ագահութիւնը եւ բարկութիւնը, որովհետեւ ընդգրկող է եւ տաք: Հողմից՝ տրտմութիւնն ու ծանձրոյթը, որովհետեւ սառն է եւ թեքօղ:

Երկրորդ՝ որովհետեւ չորսն են տարրերը եւ միաւորութեան մէջ իւրաքանչիւր տարր իր կերպով է ազդում հոգու վրայ՝ հետեւեալ օրինակով. որկրամոլութիւնը՝ օդից, պոռնկութիւնը՝ ջրից, ագահութիւնը՝ հրից, տրտմութիւնը՝ հողից, ինչպէս [արդէն] ասացինք:

Եւ ըստ հոգու ու տարրերի միաւորութեան՝ հոգուց եւ հրից՝ բարկութիւնը, հոգուց եւ օդից՝ ամբարտաւանութիւնը, հոգուց եւ ջրից՝ փառասիրութիւնը, հոգուց եւ հողից՝ ծանձրոյթը, եւ այսպէս դառնում են ութը:

Երրորդ՝ քանի որ հինգն են զգայարանները եւ բոլորը՝ նոյն մարմնինն են, ուստի դրանցից ծնւում են վեց մեղքեր հետեւեալ կերպ.

որկրամոլութիւնը՝ ճաշակելիքից,

պոռնկութիւնը՝ շօշափելիքից,

արծաթասիրութիւնը՝ տեսանելիքից,

բարկութիւնը՝ լսելիքից,

տրտմութիւնը՝ հոտոտելիքից,

ծանձրոյթը՝ ողջ մարմնից:

Իսկ փառասիրութիւնն ու հպարտութիւնը հոգունն ու մտքինն են, որոնց հետ դառնում են ութը:

Չորրորդ՝ վեցն են մարմնի շարժումները՝ վեր, վար, աջ, ձախ, առաջ, ետ: Սրանց հետ էլ այսպէս են միաւորւում. հպարտութիւնն ու փառասիրութիւնը ի վեր են, որովհետեւ սրանց յատուկ է վեր ձգուելը, չնայած տարբերւում են, որովհետեւ հպարտը ներքուստ է բարձրամիտ, իսկ փառասէրը դրսից՝ ուրիշի բերանից է ընդունում փառքի գովաբանութիւնը:

Տրտմութիւնն ու ծանձրոյթը դէպ ներքեւ են, որոնք ծուլութիւնն են, որովհետեւ մէկը ծանրանում եւ բարիք չի գործում, միւսը տրտմում եւ քիչ է անում:

Աջ շարժման հետ է արծաթասիրութիւնը, որովհետեւ բարիք պատճառելով է հարստանում:

Առաջ շարժուելու հետ է բարկութիւնը, որովհետեւ ասում է՝ չարի պատճառով եմ բարկանում:

Իսկ ետը եւ ձախը որկրամոլութիւնն ու պոռնկութիւնն են, որովհետեւ այն ետ դառնալն է ճշմարիտ բարուց, ու ետ գնալը դէպ ձախ եւ սուտ բարին:

Այսպէս են կապւում շարժումների հետ ութ մեղքերը:

Հինգերորդ՝ ինչպէս ասում են ուրիշ վարդապետներ, մեղքերը լինում են կամքի անկարգութիւնից, իսկ կամքի անկարգութիւնը երկու տեսակ է, այսինքն կամ ցանկանում է անցանկալիին, կամ հրաժարւում [նրանից, որից] չպէտք է հրաժարուի:

Արդ, առաջինը, որ ներսում է ցանկանում, հպարտութիւնն ու փառասիրութիւնն են, իսկ եթէ ցանկանում է արտաքնապէս՝ արծաթասիրութիւնը եւ ագահութիւնն է:

Իսկ եթէ ցանկանում է դէպ ներքեւ՝ հեշտանքների ցանկանալն է, որ երկու տեսակ է. եթէ անձի պաշտպանութեան համար է, որկրամոլութիւն է, որովհետեւ անկարգաբար ձգտում է ուտելիքների: Իսկ եթէ տեսակի պահպանութեան համար է, բղջախոհութիւնն է, որովհետեւ անկարգ ձգտում է պոռնկութեան:

Սա ըստ առաջինի, որ ցանկանում էր ոչ ցանկալիին:

Իսկ կամքի երկրորդ անկարգութիւնն այն է, որ հրաժարւում է նրանից, որից չպէտք է հրաժարուի:

Եւ սա ըստ հոգու մասերի եռակի է լինում, որովհետեւ կամ հրաժարւում է եւ սխալւում բանականօրէն, որը նախանձն է: Կամ սխալւում է ցասմամբ, որ բարկութիւնն է: Կամ սխալւում է ցանկութեամբ, որ ծուլութիւնն է, այսինքն՝ տրտմութիւնն ու ծանձրոյթը:

Այսու յայտնի է, թէ ինչու են խորհուրդներն ութ:

ԹԷ Ո՞ՐՆ Է ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔԸ
Պրակ ԺԴ

Հարց. Ինչո՞ւ ուրիշ վարդապետներ առաջին մեղքը համարում են հպարտութիւնը, իսկ Եւագրիոսն ասում է՝ որկրամոլութիւնը:

Պատասխան. Որովհետեւ առաջին մեղքը, որով սատանան մեղանչեց երկնքում եւ ընկաւ, հպարտութիւնն էր, ապա նախանձն էր, որով մարդկանց դէմ [չարիք] նիւթեց:

Ասում են նաեւ, թէ Ադամն աստուածանալու փառքի պատճառով մեղանչեց, եւ ամուսնուն նախանձելու պատճառով կինը կերաւ պտուղը, որի պատճառով էլ առաջին [մեղքը] ամբարտաւանութիւնն է, նրանից յետոյ նախանձը, ապա մնացեալներն ըստ կարգի:

Իսկ Եւագրիոսը որկրամոլութիւնն է ասում երեք պատճառով[535]:

Նախ՝ առաջին մարդը դրախտում որկրամոլութեամբ մեղանչեց, եւ դա եղաւ մարդկային բնութեան առաջին մեղքը:

Երկրորդ՝ որովհետեւ մանկութեան հասակում նախ որկրամոլութիւնն է իշխում, իսկ երիտասարդութեան հասակում զօրանում է պոռնկութիւնը, կատարեալ հասակում՝ ագահութիւնը, որից յետոյ գալիս են տրտմութիւնը, ծուլութիւնը եւ այլն:

Երրորդ՝ մեղքի շղթան այսպիսի յաջորդականութիւն ունի. նախ որկրամոլութեամբ լցնում է որովայնը, որից յետոյ պոռնկութեամբ թափում այն, ապա արծաթ ժողովում, որպէսզի լցնի որովայնն ու պոռնկանայ, յետոյ սրանք պակասելուց՝ տրտմում է: Եւ երբ մէկը հակառակում է, բարկանում է, ապա ամէն ինչից ձանձրանում:

Իսկ փառասիրութիւնն ու հպարտութիւնն այս կարգում չեն, այլ, երբ այդ վեցը յաղթում են, այն ժամանակ փառասէր է դառնում եւ հպարտանում:

Եւ սա խոտորուելն է դէպ աջ, իսկ առաջինները ձախակողմեանն էին:

Իսկ հպարտութիւնն առաւել մեղք է, քան մնացածը՝ բազմաթիւ պատճառներով: Նախ՝ որովհետեւ ամէն մի մեղք կա՛մ իր մարմնի դէմ է, կա՛մ ընկերոջ, իսկ հպարտութիւնը մեղանչում է Աստծոյ դէմ, ինչպէս սատանայինն էր:

Երկրորդ՝ որովհետեւ միւս բոլոր մեղքերը մարմնական են, եւ գիտենք, որ մեղք են, իսկ հպարտութիւնը անմարմին է եւ անշօշափելի, եւ չենք կարող տեսնել մեղանչումը:

Երրորդ՝ որովհետեւ մնացած մեղքերը մեղսասէրն է գործում, իսկ հպարտութիւնը՝ սրբերն ու ընտիրները, ինչպէս երկնքի հրեշտակները:

Չորրորդ՝ որովհետեւ միւս մեղքերով մեր կամքն անկարգանում է, իսկ հպարտանալիս գիտելիքներով յիմարանում եւ ապշում ենք, ապա կամքով՝ անկարգանում:

Հինգերորդ՝ որովհետեւ ամէն մի մեղքի մէջ էլ հպարտութիւն կայ, ինչպէս առանց սիրոյ ոչինչ են բոլոր առաքինութիւնները, այդպէս էլ հպարտութեան համեմատութեամբ բոլոր մոլորութիւններն են ոչինչ:

Եւ բոլոր մեղքերի մէջ հպարտութիւնն այսպէս է դրսեւորուում. ամէն մի մեղք Աստծոյ պատուիրանի զանցառումն է եւ խոտորուելը մարմնական հեշտանքով: Այսպէս, հպարտութեամբ է, որ զանցառում ենք եւ անարգում ճշմարիտ բարին, ապա խոտորուում եւ ընթանում բարու խեղաթիւրումների հետեւից:

Այդպէս էլ հպարտութիւնը միւս մեղքերի մէջ է երեւում:

Վեցերորդ՝ որովհետեւ բոլոր բարութիւնները, որոնք մեր մէջ են, դուրս են մղուում, ինչպէս օրինակ, խաւարի գալով՝ դուրս է մղուում լոյսը: Նոյն կերպ, հանդիպելով հպարտութեանը՝ դուրս են մղուում մեր բոլոր բարութիւնները:

Եօթներորդ՝ նրանք, ովքեր հպարտութեամբ են [տառապում], չունեն ո՛չ մտքի եւ ո՛չ մարմնի հանգիստ, որով-

հետեւ որքան մարդը խոնարհ է, այնքան հանգիստ է:

Ութերորդ՝ որովհետեւ բոլոր ախտերն իրեղէն ապացոյց են ունենում, ինչպէս գողութիւնը՝ գողօնը, պոռնկութիւնը՝ հեշտանքը, իսկ հպարտութիւնն ոչ մի երեւակում չունի:

Իններորդ՝ որովհետեւ իւրաքանչիւր ոք, ով գնում է պոռնիկի մօտ, հաստատապէս գիտէ, որ վրիպում է ճշմարիտ արդարութիւնից, իսկ ամբարտաւանը չգիտէ, որ հպարտութիւնը մեղսաւոր գործ է, այլ գիտէ, թէ առաքինութիւն է:

Տասներորդ՝ Աստուած բոլոր մեղաւորներին որոշ ժամանակ զղջալուց յետոյ ներում է, իսկ հպարտին՝ ոչ, որովհետեւ մարգարէն ասում է. «Տէրը հակառակ է ամբարտաւաններին» (Յակ. Դ 6, Ա Պետ. Ե 5), եւ՝ «Տեսայ ամբարշտին վերեւ բարձրացած, անցայ եւ ահա չկար, փնտրեցի, սակայն չգտնուեց նրա տեղը» (Սղմ. ԼՁ 35):

ՍԱՏԱՆԱՅԻ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԵ

Հարց. Ինչո՞ւ սատանայի մեղքը աւելի մեծ է եւ աններելի, քան մարդունը:

Պատասխան. Սատանան եւ մարդը այսպէս են մեղանչում. Աստծոյ լոյսը անձնիշխան կամքով եւ իմացմամբ մերժում են եւ սիրում խաւարը, ինչպէս այն, որ մէկը փակում է աչքը եւ զրկում իրեն լոյսից՝ ընկնելով խաւարի մէջ: Սակայն երկու կերպ են զրկւում լոյսից. մէկը, որ լոյսի ճառագայթի առաջ է փակում աչքը եւ խաւարի մէջ ընկնում, եւ երկրորդը, ով նայում է արեգակի բոլորակին դէմ յանդիման, կորցնում [աչքի] լոյսը եւ կուրանում:

Արդ, մարդու մեղանչելը նման է նրան, որ աչքը փակում է լոյսի առաջ եւ խաւարի մէջ ընկնում, սակայն լոյսը [շարունակում է] ծագել աչքերի վրայ եւ սակաւ լուսաւորում է ներսը, եւ հենց աչքերը բացում է, անմիջապէս տեսնում է:

Այդպէս էլ մարդ մեղքով զրկում է իրեն լոյսի շնորհից, սակայն Աստծոյ խնամածութեան լոյսը հեռացած չէ եւ տրտմական, թոյլ նուազած՝ փայլում է ներսից: Եւ երբ դառնում է մեղքերից, իսկոյն արժանանում է շնորհների լոյսին:

Իսկ սատանայի մեղանչելն արեգակին դէմ յանդիման նայելու նման է, երբ կորցնում է լոյսը եւ կուրանում: Այդպէս սատանան Աստծոյ դէմ հպարտացաւ, երբ ասաց. «Աթոռը դնեմ ամպերի եւ աստղերի մէջ» (Ես. ԺԴ 13). ամպը մարգարէները եւ հրեշտակներն են, աստղերը՝ վերին դասերը: Այդ ժամանակ էլ կորաւ իմացական լոյսը եւ խաւարեց սատանայի մէջ, եւ շնորհների լոյսը չգործեց նրա վրայ, ու նոյնը սեպելով՝ առանց զղջալու անդրդուելի մնաց, որի պատճառով էլ մեծ է սատանայի մեղքը, եւ թողութիւն չի տրուելու:

Ահա այսպէս, մարմնական բոլոր մեղքերից մեծ է հպարտութեան մեղքը:

ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵՂՔԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԶ

Հարց. Ինչո՞ւ մարդու եւ կենդանու շատ գործեր ընդհանուր են, սակայն մեղք միայն մարդն է գործում:

Պատասխան. Բանականութեան եւ անձնիշխան կամքի պատճառով է, որովհետեւ անասուններն անձնիշխան կամք չունեն, այլ միայն բանականները, որի պատճառով թէպէտ գործը նոյնն է, սակայն բանականութիւնն ու կամքը նոյնը չէ:

Արդ, իմանալու է, որ հրեշտակները մեղանչում են, որովհետեւ բանական եւ անձնիշխան են:

Այս իմանալով՝ երկու բան յիշի՛ր:

Նախ, առաւել է, երբ մեղանչում են կամքով եւ իմացութեամբ, քան ակամա եւ տգիտութեամբը, որովհետեւ չնայած բոլորն էլ մեղք են, սակայն պատիժը նուազ է, ինչպէս անասուններինը մարդու համեմատութեամբ:

Երկրորդ, յիշի՛ր նաեւ այն, որ ո՛վ առաւել իմացութեամբ եւ կամքով է մեղանչում, նա առաւել է պատժւում, քան նա, ով նուազ իմացութիւն եւ կամք ունի, ինչպէս առաւել ծանր է հրեշտակի մեղքը, քան մարդունը: Այս պատճառով էլ՝ մի քահանայի մեղքն այնքան է, որքան ամբողջ ժողովրդինը, որ ակնառու է հների զոհաբերութեան [օրինակով], որովհետեւ ողջ ժողովրդի համար [զոհաբերւում էր] մի արջառ եւ մի քահանայապետի համար էլ մէկը, իսկ քահանայի շնացած դստերը այրում էին (տե՛ս Ղեւտ. ԻԱ 9), իսկ ժողովրդինը՝ քարկոծում (տե՛ս Բ օր. ԻԱ 21):

Եւ վա՜յ ինձ, եթէ անձն իմ յօժարակամ դատապարտեալ դարձնեմ:

Հարց. Ի՞նչն է պատճառը, որ սրտմտութիւնը, ցանկութիւնը եւ այլն, անբան կենդանիների համար գործ են, իսկ մեզ համար՝ ախտ եւ մեղք:

Պատասխան. Սրանք ոչ միայն կենդանիների համար գործ են, այլեւ՝ ինքնապաշտպանութիւն, որովհետեւ գիշատիչ կենդանիները ուժով են ապրում, բազմածին կենդանիները աճում են հեշտասէր ցանկութեամբ, իսկ երկչոտութեամբ փրկւում են նապաստակները, ինչպէս տկարները հզօրներից, որկրամոլութեամբ գոյատեւում են յաղթամարմին [կենդանիները]. ատելութեամբ ոչխարը մազապուրծ է լինում գայլից, ձիուն մեծարգոյ է դարձնում իր խրոխտ [կեցուածքը], եւ միւսներն էլ այսպէս: Մինչդեռ այս յատկանիշները, որոնք նրանց ինքնապաշտպանութեան միջոցներն են, մեզ համար կորստաբեր են եւ մեղք:

Եւ սա երկու պատճառով է:

Նախ, որովհետեւ նրանց մօտ այդ ախտերը չափաւոր են, իսկ մարդու մէջ՝ առաւելագոյն եւ անչափ: Եւ միտքն իբրեւ մշակ սրանք վերցնում եւ առնելով սերմերը՝ բազմաբեղուն աճեցնում է: Այդպէս էլ միտքը չարը խորհելով՝ բազմացնում է այդ ախտերը մեր մէջ, ինչպէս երեւում է տրտմելու ժամանակ, որովհետեւ միտքը մշակի նման յետոյ աւելացնում է ոխը, քէնը, նախանձը:

Այդպէս էլ ցանկութիւնը տեւապէս աւելացնում է շնութիւնն ու պոռնկութիւնը, որոնք անասուններն ունենում են իրենց խառնակուելու ժամանակ:

Նոյնկերպ միտքն աւելացնում է որկրամոլութիւնը՝ յօրինելով զանազան կերակուրներ եւ ըմպելիքներ: Այդպէս եւ միւս բաներն է աւելացնում անչափելիօրէն, որի պատճառով մեզանում դրանք մեղք են համարւում:

Երկրորդ պատճառը, որ անասունները սրանք գործում են բնականօրէն, իսկ մենք հակառակին ենք փոխում: Ինչպէս անպտուղ հողն է փչացնում բարի սերմը եւ փուշ աճեցնում, այդպէս էլ մեզ տուած Աստծոյ բարի սերմը մենք չարի ենք փոխում: Ինչպէս, ասենք, բարկութիւնը, որ չարի դէմ բարի է, մենք փոխում ենք բարու դէմ: Կամ ցանկութիւնը, որ տրուած է բարու համար, փոխում ենք եւ ցանկանում չարը:

Այդպէս էլ խոհեմութիւնը, որ պէտք է ունենանք չար խորհուրդների դէմ, փոխում ենք խորամանկութեան, Աստծոյ նկատմամբ ունենալիք սէրը փոխարինում ենք երկրաւորով եւ մեղաւորով:

Պէտք էր ատել մեղքը, հիմա ատում ենք արդարութիւնը:

Պէտք էր ծառանալ չարի դէմ եւ չհնազանդուել, հիմա անհնազանդ ենք Աստծոյ օրէնքներին եւ մեծամիտ՝ ընկերոջ նկատմամբ:

Անարգում ենք հոգին, որ պատկերն է Աստծոյ եւ պատւում մարմինը, որ պատկերն է կենդանու, ինչպէս ասում է՝ «Մարդը, որ պատուի մէջ էր, թողեց եւ հաւասարուեց անասուններին» (Սղմ. ԽԸ 21):

Հարց. Որո՞նք են մեղքը, մահը եւ դառը մահը:

Պատասխան. Մեղքն այն է, որ հաւատացեալ մէկը մեղանչում է եւ դարձեալ ապաշխարում: Եւ մահն այն է, որ մեղանչում է տգիտութեամբ, թէպէտ անտեղեակ է մնում, որ հոգին մահանում է:

Իսկ դառը մահը մահացու մեղքն է, որ մեղանչում է գիտակցաբար: Եւ սա յաւիտենական դառը մահն է (հմմտ. Ժող. է 27, Սիր. ԽԱ 1):

Հարց. Ո՞րն է իմացութեամբ մեղանչելը:

Պատասխան. Այն է, որ գիտէ ճշմարիտը, սակայն սուտն է կատարում, որ երեք կերպ է բնորոշւում:

Նախ, գործով եւ պատժով, այսինքն, որ կատարողը գիտէ, որ դա մեղք է եւ գործում է, գիտէ նաեւ, որ այդ մեղքի պատիժը ծանր է:

Երկրորդ՝ գործողը, որ գիտէ ճշմարտութիւնը որն է, թողնում է այն եւ մեղք գործում:

Երրորդ՝ աստուածգիտութեան մէջ [մեղանչելն է], այսինքն որ եկել էր ճշմարիտ հաւատի, եւ գիտէ, որ Քրիստոս ճշմարիտ Աստուած է, սակայն թողնում է նրան՝ գործելով մեղք կամ [ան]հաւատութիւն:

Այսպիսով, երեքն է իմացութեամբ մեղանչելը, որի մասին Յովհաննէսն ասում է. եթէ մեղանչէք անգիտութեամբ, Աստուած ձեզ թողութիւն կտայ, իսկ եթէ

այն իմանաք եւ մեղանչէք, առաջինը եւս կպահանջի:

Իսկ կամաւոր մեղքի մասին գրուած է հին օրէնքներին [նուիրուած] քսաներկուերորդ գլխում, [այնտեղ] տե՛ս:

ՄԵՂՔԵՐԻ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԷ

Հարց. Ինչպէ՞ս են չափւում մեղքերը:

Պատասխան. Ոմանք բազմաթիւ եղանակներ են ասում. պատճառով մեծ, ինչպէս Արուսեակի մեղքը, Ընդհանրութեամբ, ինչպէս Ադամինը, Տգեղութեամբ, ինչպէս Յուդայինը, Դժուարներելի, ինչպէս մեղքը Սուրբ Հոգու դէմ, Վտանգաւորութեամբ, ինչպէս տգիտութիւնը, Անբաժանելիութեամբ, ինչպէս ագահութիւնը, Դիւրասահութեամբ, ինչպէս ցանկասիրութիւնը, Դժուարյաղթահարելիութեամբ, ինչպէս հպարտութիւնը, Մտաւոր կուրութեամբ, ինչպէս բարկութիւնը, կամ Աստծուն բարկացնելով, ինչպէս կռապաշտութիւնը: Եւ ուրիշ այլ բաներ են ասւում:

Իսկ ես համամիտ եմ նրանց, ովքեր ասում են, թէ մեղքերը տասն են. եւ դրանք համեմատւում են տասը ստորոգութիւնների հետ:

Նախ, ըստ գոյացութեան եւ ըստ տեսակի, որովհետեւ մարդը տեսակ է, իսկ տեսակը՝ գոյացութիւն: Ըստ գոյացութեան այսպէս է. տասը պատուիրաններում եօթ մահացու մեղքերը մեղքեր են՝ ըստ գոյացութեան, ինչպէս «մի՛ շնացիր»-ը, «մի՛ գողացիր», «մի՛ սպանիր»-ը, «սուտ մի՛ վկայիր»-ը: Եւ եթէ երկու մարդ գործեն այս մեղքերը, ապա սպանելը մեծ է, քան սուտ վկայելը, եւ մնացեալն էլ՝ այդպէս:

Երկրորդ՝ ըստ որակի, որովհետեւ եթէ երկու մարդ որովայնամոլութեամբ են զբաղւում՝ մէկը՝ քաղցը յագեցնելու համար, իսկ միւսը՝ յօժարութեամբ եւ փափագելով, վերջինիս մեղքն աւելի մեծ է, քան առաջինի:

Այդպէս էլ դատի՛ր միւս մահացու մեղքերի մասին:

Նաեւ որակ են կամքով եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, կարողութեամբ եւ տկարութեամբ [գործողութիւնները]:

Երրորդ՝ ըստ քանակի: Եթէ մէկը մի անգամ պոռնկութիւն արեց, միւսը՝ հազար, նա, որ շատ գործեց, աւելի է պատժւում:

Չորրորդ՝ ըստ յարաբերութեան, այսինքն թէ ում հանդէպ է կատարւում մեղքը, որովհետեւ մարդը ի դէմս չորսի է մեղանչում, այսինքն՝ Աստծոյ, եկեղեցու, ընկերոջ եւ իր անձի:

Աստծոյ դէմ գործած մեղքի մասին Աւետարանն ասում է. «Մարդկանց կներուեն բոլոր մեղքերը, սակայն չի ներուի Սուրբ Հոգու դէմ հայհոյելը» (Ղուկ. ԺԲ 10):

Ահա՛ բոլոր մեղքերից ամենամեծը:

Նոյնպէս եւ եկեղեցու [դէմ գործածը], քան միւսները:

Հինգերորդ՝ ըստ տեղի, թէ որտե՞ղ է գործւում մեղքը. վանքո՞ւմ, եկեղեցո՞ւմ,

որ Աստծոյ տունն է, գիւղո՞ւմ, քաղաքո՞ւմ, թէ պոռնկատանը:

Ամենամեծը եկեղեցում [գործած] մեղքն է:

Վեցերորդ, ըստ ժամանակի, այսինքն՝ ե՞րբ է կատարւում մեղքը. մանկութեա՞ն, թէ ծերութեան հասակում, որը մեծ մեղք է. սովորական օրերի՞ն, թէ՞ տէրունական տօներին, որովհետեւ ո՛վ տօներին է մեղք գործում, աւելի է պատժւում, քան միւսը:

Այդպէս էլ ըստ բոլոր մահացու մեղքերն ունենալու եւ պահելու, գործե՞լ է, թէ՞ թողել է, որովհետեւ ո՛վ մեղքն ամրացրել է ինքն իր մէջ, աւելի է մեղանչում:

Այդպէս էլ՝ ըստ անելու ու կրելու. բնութեան դէմ անելն աւելի ծանր է, քան ըստ կարգի բնութեան կրելը:

ԱՆՆԵՐԵԼԻ ՄԵՂՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԸ

Հարց. Ո՞րն է Սուրբ Հոգու դէմ գործած մեղքը, որին թողութիւն չի տրւում:

Պատասխան. Բոլոր գործած մեղքերն առհասարակ Աստծոյ դէմ են, [ի դէմս] Երրորդութեան եւ մէկի:

Իսկ յատկապէս Երրորդութեան դէմքերի [դէմ]՝ այսպէս է. տկարութեամբ մեղանչողը Հօր դէմ է, տգիտութեամբը՝ Որդու, չարութեամբը՝ Սուրբ Հոգու, այսինքն երբ կամքը կամենում է, եւ ինքը իմանալով չարին դիմակայելու ձեւը, սակայն չար լինելու պատճառով ընտրում է այդ:

Ա՛րդ, Սուրբ Հոգու դէմ մեղքը յատկապէս անձնիշխան չար կամքից է ելնում եւ ուղղակի մարտնչում է Սուրբ Հոգու շնորհների դէմ, եւ յիրաւի անները՝ելի է: Այս մասին է ասում առաքեալը, թէ՝ «Յօժար մտքով մեղանչելը զոհաբերութեամբ չի ներւում, այլ՝ [մնում է] Դատաստանի ահեղ ակնկալութիւնն ու հրով այրուելը» (Եբր. Ժ 26):

Եւ բազմազան մեկնութիւններ ունի այն, որ ասում է. «Ով մարդու Որդու դէմ բան ասի, նրան ներուելու է» (Ղուկ. ԺԲ 10):

Նախ՝ ի դէմս հրէաների է, որ գիտէին, որ Սուրբ Հոգին է բաշխում շնորհները, որովհետեւ Հոգին լցրեց Բէսէլիէլ ճարտարապետին [շնորհներով] (տե՛ս Ելք ԼԱ 2, ԼԵ 30), եւ եօթնաճաճանչ շնորհներ է թուարկում Եսային (տե՛ս Ես. ԺԱ 2): Եւ զրկում էին Հոգու զօրութիւնները, որոնց մասին Քրիստոս ասում էր. «Աստծոյ Հոգով եմ հանում դեւերին» (Մտթ. ԺԲ 28), եւ նրանք դեւերին էին վերագրում, ինչը նրանց չի ներուելու:

Երկրորդ՝ մարգարէների միջոցով գիտէին, որ նա Աստուած էր, եւ տրուել էր նրանց օրէնք, որ ով Աստծուն անարգի, կքարկոծուի: Եւ քանի որ խիստ էին նրանց հայհոյանքները, ուստի խստագոյնս քարկոծուելու են յաւիտենական տանջանքով:

Երրորդ՝ որովհետեւ պատճառ չունէին հայհոյելու Հոգուն, ինչպէս Որդուն, քանզի տեսնում էին մարմնով հագնուած լինելը, ուտելը, ըմպելը, տքնելը, ննջելը:

Չորրորդ՝ ովքեր միայն Որդուն են Բան ասում, քիչ կպատժուեն, որովհետեւ

մէկն է Երրորդութիւնից, իսկ եթէ նաեւ՝ փառակցին՝ կրկնապատիկ հատուցում է տրուելու:

Հինգերորդ՝ սատանայի նման են վարւում, ովքեր ուրանում են իրենց հոգու գոյութեան պատճառը: Եւ յիրաւի, ինչպէս սատանային չի տրուելու թողութիւն ո՛չ այս կեանքում, ո՛չ էլ հանդերձեալ, [այդպէս էլ՝] նրան համագործակցողներին:

Վեցերորդ՝ Քրիստոս երբեմն բարիքներ էր պարգեւում, երբեմն՝ պատժում, իսկ Սուրբ Հոգին միշտ շնորհաբաշխ է եւ պարգեւատու:

Եօթներորդ՝ եթէ մարդու դէմ են մեղանչում, բարեխօսում են առ Աստուած, եւ հաշտւում է, իսկ եթէ Աստծոյ դէմ են [մեղանչում], ո՞ւմ աղաչեն. հետեւաբար անհաշտ են մնում: Եւ քանի որ մեղքը չի ներւում, անհաշտութիւն է լինում, ուստի մեղքը մնում է անջնջելի եւ աններելի:

Ութերորդ՝ չասաց թէ՝ ապաշխարելով խնդրիր՝ բացառելով գութն ու ողորմութիւնը, այլ ասաց՝ «չի ներուելու», որ նշանակում է, թէ առանց զղջման եւ տանջանքի թողութիւն չի ներուելու:

Իններորդ՝ ով չի խոստովանում, թերի եւ անկատար է լինում: Յիրաւի, նրանք, ովքեր չեն հաւատում խոստովանութեանը, թողութիւն չի տրուելու նրանց՝ այստեղ կամ այնտեղ:

Տասներորդ՝ Հոգու դէմ մարտնչող Մակեդոնին, որ հայհոյում էր Սուրբ Հոգուն՝ նրան նուազ անուանելով Հօրից եւ Որդուց, թողութիւն չի տրուելու:

Իսկ աններելի մեղքերն ունեն վեց պարագաներ, այսինքն՝ յուսահատութիւն, յանդգնութիւն, ճշմարիտ ճանաչողութեան դէմ մարտնչում, եղբայրական սիրոյ դէմ նախանձ, խստասրտութիւն եւ անզեղջ մնալը մինչեւ վերջ:

Սրանց թիւն այսպէս է առնւում. թողութեան մէջ երեք կողմ կայ, այսինքն՝ թողութիւն տուողը, նա, որին թողութիւն է տրւում եւ [թողութեան] պատրաստութիւնը:

Արդ, թողութեան մէջ էլ՝ երկու. ողորմութիւնն ու արդարութիւնը, որոնցից առաջինի դէմ յուսահատութիւնն է, երկրորդի դէմ՝ յանդգնութիւնը:

Եւ թողութիւն ստացածն էլ երկու բան պէտք է ունենայ. ցաւ գործածի համար եւ այլեւս չգործելու մտադրութիւն. առաջինի հակառակը խստասրտութիւնն է, երկրորդի դէմ՝ անզեղջ մնալը:

Եւ թողութեան պատրաստութիւնն էլ երկու կողմ ունի, այսինքն՝ ճշմարտութեան ճանաչելը եւ սէր բարու նկատմամբ. ընդդէմ առաջինի ճշմարտութեան ճանաչողութեան դէմ մարտնչելն է, ընդդէմ երկրորդի՝ եղբայրական սիրոյ նկատմամբ նախանձը:

ՄԵՂՔԵՐԻ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԹ

Հարց. Որո՞նք են մեղքերի զանազանութիւնները:

Պատասխան. «Մեղք» անուանումը մէկն է, որը երեքի է բաժանւում. սկզբնական, մահացու, ներելի:

Ա՛րդ, չնայած Հոգին սերուած չէ Հօրից, ինչպէս մարմինը, սակայն առաջին մեղքն Ադամի հոգուց անցել է յետնորդների հոգուն՝ ծնուող մարմնի ցանկութեան միջնորդութեամբ, որովհետեւ ինչպէս հոգու մեղանչումով ապականուեց Ադամի մարմինն ու դարձաւ դիւրասահ եւ վաւաշոտ ցանկութեան նկատմամբ, այդպէս էլ սերուած մարմինը դէպ իրեն ձգելով ապականութիւնը՝ ապականում է նաեւ հոգին: Եւ պարզ է, որ սկզբնական մեղքը թէ՛ մարմնում է, թէ՛ հոգում՝ մարմնի մէջ՝ նիւթեղէն եւ սկզբնաբար, իսկ հոգում՝ իբրեւ տեսակին յատուկ եւ ներունակ:

Իսկ ներելի մեղքը փոքրագոյն յանցանքն է, որովհետեւ մկրտութիւնից յետոյ մանուկների մէջ նախ գլուխ են բարձրացնում ներելի մեղքերը, ապա՝ մահացու:

Եւ ներելի են կոչւում որպէս թողութեան արժանի ու ներելի, որովհետեւ ակամայ եւ անգիտութեամբ են արւում:

Իսկ մահացու մեղքերը, ինչպէս ասացինք, գլխաւորապէս եօթն են կամ՝ ութը: Եւ մահացու են կոչւում, որովհետեւ մարդուն յաւիտենական մահուան են դատապարտում:

Այսքանն իմանալով՝ այժմ տեսնենք սրանց զանազանութիւնը:

Արդ՝ առաջին մեղքը չորս տարբերութիւն ունի միւսների համեմատութեամբ, այսինքն՝ մահացուից եւ ներելիից՝ ըստ միաւորութեան, ըստ ընդհանրութեան, ըստ հաւասարութեան եւ ըստ որակական տարբերութեան:

Նախ, ըստ միաւորութեան, որովհետեւ առաջին մեղքը մէկն է եւ չի բաժանւում, ինչպէս եօթ մահացու մեղքերը եւ երեք ներելիները:

Երկրորդ՝ ըստ ընդհանրութեան, որովհետեւ առհասարակ ո՛վ հաղորդակից է բնութեանը, նա մասնակից է նաեւ առաջին մեղքին, քանզի Երեմիան էլ կամ Յովհաննէսը, որոնք մահացու մեղքեր չունէին եւ սրբուեցին որովայնից, սակայն ներելի մեղքից զերծ չմնացին: Եւ Աստուածածին կոյս Մարիամն էլ չնայած ազատ էր մահացուից եւ ներելիից, սակայն ո՛չ սկզբնական մեղքից, որից մաքրուեց Սուրբ Հոգով:

Եւ միայն մեր Փրկիչը՝ Քրիստոսն էր ազատ սկզբնական մեղքից այն պատճառով, որ ոչ թէ սերմից, այլ Կոյսի մաքուր արիւնից առաւ մարմին:

Երրորդ՝ ըստ հաւասարութեան, որովհետեւ սկզբնական մեղքը հաւասարապէս բոլոր մարդկանց մէջ կայ եւ մեծ ու փոքր չէ, ինչպէս մահացու մեղքերը, որտեղ շնութիւնը մեծ է, քան պոռնկութիւնը, մարդասպանութիւնը՝ մեծ, քան գողութիւնը:

Չորրորդ՝ ըստ որակական տարբերութեան, նախ որովհետեւ սկզբնականը պարտադիր եւ ակամայ է տիրում, իսկ սրանք՝ ըստ կամքի: Երկրորդ՝ որովհետեւ սկզբնականը բնութեանն է հետեւում, սրանք՝ անձին, որի պատճառով էլ այն, ինչ մեղք է ըստ բնութեան, [ըստ բնութեան էլ] որդուն է անցնում, իսկ որ անձինն է՝ չի անցնում, որովհետեւ ներգործութեամբ է ստացել դրանք:

Իսկ մահացուն եւ ներելին զանազանւում են՝ ըստ շատ եւ նուազ լինելու, ինչպէս այն, որ օձի խայթոցը աւելի ուժեղ է, քան լուի, նետի [խոցածը], քան փշի [ծակոցը], այդպէս էլ մահացուն առաւել է, քան ներելին:

Դրանք զանազանւում են նաեւ ըստ քանակի, որովհետեւ մահացու մեղքերը եօթն էին, որոնք գլխաւորներն են, իսկ ներելին չնայած ըստ մեծութեան եւ նուազութեան երեքն են [ասւում], սակայն մանրատելիս անթիւ են դառնում, ինչպէս ծիծաղելը, զրախօսելը եւ այլն:

Սրանք մեղքերի բաժանումն են ըստ տեսակի:

Մեղքերը բաժանւում են նաեւ ըստ կրողի, այսինքն [կան] սրտի մեղք, բերանի մեղք, մարմնի մեղք:

Սրտինը մտքի մեղքն է:

Բերանինը՝ լեզուի մեղքը:

Մարմնինը՝ բոլոր զգայարանների մեղքերը:

Սրանք տարբերւում են նաեւ [նրանով], որ մտքի մեղքը կայանում է տեսնելով, հաւանութիւն տալով, կամենալով:

Լեզուի մեղքը՝ սուտը, զրախօսութիւնը, անիրաւութիւնն են, որովհետեւ սուտ է այն, ինչ վերագրւում է: Զուր է այն, ինչ բացակայում է: Իսկ անիրաւելը խօսքով է՝ վերինների, ներքեւինների, հաւասարների նկատմամբ:

Մարմնի մեղքը հեշտանալով է, սովորութեամբ եւ մեղքի հետ կապուելով: Այսպէս են զանազանւում մեղքերն ըստ նիւթի եւ ըստ կրողի:

Եւ ըստ կատարման էլ մեղքերը բաժանւում են երեքի, այսինքն՝ մեղք գործելը, ունենալը, պատիժը:

Եւ սրանք այսպէս են զանազանւում:

Նախ՝ մեղքը գործւում է զգայութիւններով՝ ներքին կամ արտաքին: Ունենալը կա՛մ մտքում է կա՛մ՝ կամքում: Պատիժը կա՛մ հոգունն է կա՛մ՝ մարմնինը:

Բաժանւում են նաեւ այսպէս. մեղքի գործը անցած-գնացածի մէջ է. ունակութիւնը միշտ մնայունն է, պատիժը հանդերձեալում է, այսինքն՝ ապագայում:

Զանազանւում են նաեւ այս կերպ. մեղքի գործը կամ ուրիշից դէպ մեզ է, կամ մեզնից՝ ուրիշին, այսինքն կա՛մ բանսարկուի խաբեութեամբ կա՛մ՝ չար մէկից մեզ, կա՛մ էլ մեզնից՝ մեր ընկերներին:

Իսկ մեղքի ունակութիւնը մեր մէջ է եւ առ մեզ է, որովհետեւ կամաւոր ենք կրում եւ կամաւոր պահում մեր մէջ:

Իսկ պատիժը ուրիշից մեզ է, այսինքն՝ Աստծոյ արդար իրաւունքը՝ բաժին հասած անիրաւներին:

Սրանք տարբերւում են նաեւ ըստ ներգործական, կրաւորական եւ չէզոք սեռերի, որովհետեւ մեղքի գործը կատարելու սեռի մէջ է, պատիժը՝ կրելու, ունակութիւնն ունենալու: Եւ ինչպէս տարբեր են ունենալը, կատարելը, կրելը, այդպէս էլ տարբեր են մեղքի ունակութիւնը, մեղք կատարելը եւ պատիժ կրելը:

Այսքանը մեղքերի զանազանութիւններն՝ ըստ տեսակի, ըստ նիւթի եւ ըստ իրականացման:

ՄԵՂՔԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ի

Հարց. Ի՞նչ է մեղքը:

Պատասխան. Մեղքի սահմանումն այս է. մեղք է երես դարձնելը անփոփոխ Բարուց, որ առ Աստուած է եւ դառնալը դէպ փոփոխական բարին, որ արարածներինն է:

Դարձեալ մեղք են խօսքը, գործը, ցանկութիւնը, որոնք դէմ են Աստծոյ օրէնքներին, որի պատճառով մարդն Աստծոյ բարկութեանն է արժանանում, չնայած անպատեհ է ասել՝ «Աստծոյ բարկութիւն», որ Անփոփոխ Քաղցրութիւն է, սակայն այն կամքը, որով մեղաւորները չար գործերի համար տանջւում են, Աստծոյ բարկութիւն է կոչւում:

Հարց. Ի՞նչ է ամբարտաւանութիւնը:

Պատասխան. Ամբարտաւանութիւն է, եթէ փափագում է իր առանձնայատուկ բարձրանալը եւ անկարգ ու անսանձ է լինում: Եւ բոլոր մեղքերի սկիզբն ամբարտաւանութիւնն է, ասում է Սիրաքը (տե՛ս Սիր. Ժ 14):

Եւ պէտք է զգուշանալ ամբարտաւանութիւնից, որովհետեւ նա կարողացաւ խաբել հրեշտակին եւ հրեշտակին սատանայ դարձրեց, քանի որ սատանան այլ բան չխորհեց, այլ փափագեց իր առանձնայատուկ բարձրանալը. ինչպէս ասում է Եսային՝ «Ելնելու եմ ամպերի վրայ, աթոռն իմ դնելու աստղերի մէջ եւ նմանուելու Բարձրեալին» (Ես. ԺԴ 14):

Եւ երբ այսպէս խորհեց, արտաքսուեց երկնքից:

Ընտրեալների յատկանիշը խոնարհութիւնն է, անարգներինը՝ ամբարտաւանութիւնը:

Հարց. Ի՞նչ է նախանձը:

Պատասխան. Նախանձն այլոց բարեբախտութեանը նախանձելն է: Եւ ինչպէս ամբարտաւանութիւնը մարդուն հանում է Աստծու միջից, այդպէս էլ նախանձը մարդուն հանում է ինքն իր միջից: Եւ ինչպէս օձը այգու ծաղկից մեռնում է, այդպէս էլ նախանձոտը սատկում է՝ տեսնելով ընկերոջ բարեբախտութիւնը:

Հարց. Ի՞նչ է բարկութիւնը:

Պատասխան. Բարկութիւնը հոգու ցասումն է, որով մէկը միւսի դէմ է լցւում:

Եւ ինչպէս նախանձը կորստի է մատնում ինքն իրեն, այդպէս էլ բարկութիւնը փախցնում է ընկերոջը:

Պէտք է զգուշանալ բարկութիւնից, յատկապէս դատ անելու ժամանակ, որովհետեւ բարկացած մարդը չի տեսնում ճշմարտութիւնը. այս պատճառով Արիստոտէլն Ալեքսանդրին ասաց՝ «Յապաղի՛ր վրէժխնդիր լինելիս, մինչեւ բարկութիւնդ անցնի»:

Եւ բարկանալով՝ կորցնում ենք աստուածային մեր պատկերը, եւ Սուրբ Հոգին փախչում է բարկացած հոգուց, որովհետեւ նրա տեղը խաղաղութիւնն է: Իսկ երբ Սուրբ Հոգին ելնում է, նրա տեղը բնակւում է պիղծ հոգին, այսինքն՝ սատանան:

Հարց. Ի՞նչ է ծուլութիւնը:

Պատասխան. Ծուլութիւնը հոգու դանդաղելն է՝ բարին չսկսելու, կամ էլ՝ տաղտուկով բարին սկսելը, սակայն չկատարելը:

Այս է սնուցիչը բոլոր մեղքերի, մայրը՝ դատարկապորտութեան:

Հարց. Ի՞նչ է ագահութիւնը:

Պատասխան. Ագահութիւնն ինչք ունենալու անզուսպ ցանկութիւնն է:

Եւ սա աշխարհի մեծագոյն չարիքն է, եւ չկայ աւելի աղքատ, քան նա, ով ցանկանում է աւելին ունենալ, որովհետեւ նա նման է ջրդողեալ հիւանդի, որ որքան շատ է խմում, այնքան աւելի է ծարաւում:

Սա բոլոր չարիքների արմատն է, ասում է առաքեալը. «Ագահութիւնը կռապաշտութիւն է, որովհետեւ ոմանք փափագելով այն՝ վրիպեցին հաւատից եւ իրենց անձը բազում ցաւերի մէջ ձգեցին» (Կողոս. Գ 5):

Այս ագահութիւնն էր, որ վաճառեց Քրիստոսին:

Հարց. Ի՞նչ է որկրամոլութիւնը:

Պատասխան. Որկրամոլութիւնն ուտելու եւ խմելու անյագ բաղձանքն է:

Սրա պատճառով նախաստեղծները մահով մեռան, եւ այս մեղքի պատճառով է, որ հիմա էլ մենք ենք մեռնում, որովհետեւ կերակուրը պէտք է իր ժամանակին ուտել, այսինքն երբ քաղցած ես, եւ ոչ թէ բոլոր ժամերին յագեցած լինել:

Հարց. Ի՞նչ է բղջախոհութիւնը:

Պատասխան. Բղջախոհութիւնը ամենայն ժամ վաւաշոտութեանը յագուրդ տալու ցանկութիւնն է: Նման կարգի վարքը խոզերին է յատուկ եւ ոչ թէ մարդուն:

Այս է, որ մարդուն հեռացնում է Աստծուց, որովհետեւ միայն սրբերն են տեսնում Աստծուն: Սա քաղց է, որ կշտանալ չունի: Արբեցած է եւ ծարաւ, քաղցր դառնութիւն, կենդանի մեռել:

Սա է ծառը չար, որ չար պտուղ է տալիս, իսկ յետոյ կտրւում է եւ նետւում յաւիտենական կրակը, որից փրկի մեզ Քրիստոս Աստուած եւ բոլոր՝ նրա անուանը հաւատացեալներին, ամէն:

Այսքանը համառօտ մեղքերի մասին:

ԳԼՈՒԽ ԼԳ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ Պրակ ԻԱ

Եւ ասուած այս տկար մեղքերը առողջացնող բուժիչ եօթ զօրութիւններ կան, որոնք կոչւում են առաքինութիւններ. դրանք հետեւեալն են. Հաւատ, Յոյս, Սէր: Սրանք երեքը կոչւում են աստուածային առաքինութիւններ: Իսկ չորս զօրութիւնները սրանք են. Խորագիտութիւն, որ խոհեմութիւն է, Արիութիւն, Ողջախոհութիւն, Արդարութիւն, որոնք կոչւում են մարդկային առաքինութիւններ:

Հարց. Ինչո՞ւ են հաւատը, յոյսը, սէրը կոչւում աստուածային:

Պատասխան. Աստուածային են կոչւում, որովհետեւ նախ երեքն էլ Աստծուն են վերաբերում, որովհետեւ **հաւատով տեսնում ենք Ծայրագոյն բարին, յուսով ակնկալում Գերագոյն բարին, սիրով ցանկանում Վերին բարին:**

Եւ սրանք բոլորը գտնւում են Աստծոյ մէջ:

Նաեւ՝ հաւատով հաւատալի է դառնում, յոյսով ըմբռնւում, սիրով՝ միաւորւում Աստուած:

Եւ հաւատով հաւատում ենք, որ բացառապէս իր բարութեամբ մեզ ստեղծեց, վերստին փրկեց՝ հարկադրուած չլինելով: Յուսով ակնկալում ենք նրա ողորմութիւնը, որ խոստացաւ, որովհետեւ գթառատ եւ ճշմարիտ է: Սիրով սիրում ենք նրան, որովհետեւ ինքնին բարի է: Եւ այն պատճառով ենք սիրում ընկերոջը, որ արարած եւ Աստծոյ պատկեր է:

Այսքանն այն մասին, թէ ինչո՞ւ էին կոչւում աստուածային [առաքինութիւններ]:

Հարց. Ինչպէ՞ս է սահմանւում հաւատը:

Պատասխան. Հաւատի սահմանումը տալիս է Պօղոսը՝ Եբրայեցւոց [Թղթում]. «Հաւատը յուսացած բաների հաստատումն է եւ չերեւացողների ապացոյցը» (Եբր. ԺԱ 1): Կամ՝ «Հաւատը բոլոր առաքինութիւնների հիմքն է»: Կամ՝ «Հաւատը հոգեւոր կեանքի սկիզբն է»:

Իսկ Դամասկացին ասում է. «Փաստազիս իրերի [նկատմամբ] է, որոնք տեսանելի չեն»[536]:

Իսկ Ոսկէբերանը սահմանում է. «Հաւատը սրբազան կրօնի հիմքն է»[537]:

Մեթոդիոսն ասում է. «Հաւատն առաքինութիւն է, որով հաւատում են անտեսանելիին»:

Ըստ այլոց՝ «Հաւատը մտքի լոյսն է, որով ճանաչում են բարձրագոյն ճշմարտութիւնը»:

Իսկ սուրբ Եպիփանը սահմանում է. «Հաւատը կամաւոր եւ ստոյգ նախաճաշակումն է այն ճշմարտութեան, որը բացայայտ չէ»[538]:

Իսկ մեծ Դիոնէսիոսը «Աստուածային անուններ» գրքում սահմանում է. «Հաւատը հաւատացեալների հաստատուն կեցութիւնն է, որ արդարներին բնակեցնում է ճշմարտութեան մէջ, իսկ ճշմարտութիւնը՝ նրանց»: Կամ՝ «Հաւատն Աստծոյ մասին անախտաւոր մտածութիւնն է, յոյսի ուղղուելը դէպ յուսացեալը, մտքի աչքով համբերութեամբ եւ չպակասող զսպուածութեամբ աներեւոյթը տեսնելը»: Եւ կամ՝ «Հաւատն առաջին լոյսով լցուելու բանական անձի ունակութիւնն է՝ հոգեւոր բարին ճանաչելիս»[539]:

Եւ պէտք է իմանալ, որ ամենակատարեալ սահմանումը առաքեալինն է, իսկ մնացած սահմանումները, որոնք տալիս են վարդապետները, [այս կամ այն կերպ] պարունակում են Պօղոսի սահմանումը, քանի որ դրանք Պօղոսի սահմանման մեկնաբանութիւնն ու պարզաբանումն են:

Հարց. Հաւատը հոգու ո՞ր մասն է իբրեւ ենթակայ:

Պատասխան. Արիստոտէլը հոգու երեք զօրութիւն է նշում. մէկն անհնազանդ բանականին, միւսը՝ հնազանդ, երրորդն ինքը՝ էութեամբ բանականը[540]:

Բանականին անհնազանդ են տնկականը, լուծուելը, աճելը եւ այլն, որոնք չեն կարող ենթարկուել առաքինութիւններին:

Երկրորդ տեսակը՝ ցասումը, ցանկութիւնը, հնազանդ են բանականութեանը, եւ սրանք չեն կարող ենթարկուել իմացական առաքինութիւններին:

Երրորդը, որ նոյն ինքը՝ բանականութիւնն է, ենթարկւում է աստուածային առաքինութիւններին:

Վերջինս բաժանւում է երկուսի. իմացութեան եւ կամքի:

Հաւատն իբրեւ ենթակայ իմացութեան մէջ է եւ ենթարկւում է կամքին՝ իբրեւ հրամանատարի, որովհետեւ կամքն է թելադրում հաւատի գործը, քանզի հաւատում է ոչ այլ ոք, քան կամեցողը:

Եւ ինչպէս հաւատն իմացութեան մէջ է, այդպէս էլ յոյսն ու սէրը կամքի մէջ են՝ երկու պատճառով.

Նախ՝ որովհետեւ իմացութեան առջեւ ճշմարիտն է, կամքի առջեւ՝ բարին: Եւ քանի որ հաւատի առջեւ ճշմարիտն է, ուստի հաւատն իբրեւ ենթակայ իմացութեան մէջ է: Իսկ քանի որ յոյսի եւ սիրոյ առջեւ բարին է, ուստի յոյսը եւ սէրը կամքին են ենթարկւում:

Երկրորդ՝ որովհետեւ երկնքի արքայութեանը հետեւում է հաւատի պայծառ տեսութիւնը, ըստ Պօղոսի՝ «Այժմ օրինակով ենք տեսնում, իսկ այնժամ կտեսնենք դէմ յանդիման» (Ա Կորնթ. ԺԳ 12):

Իսկ փառքն ու պսակը հետեւում են յոյսին եւ սիրուն: Հետեւաբար, հաւատը ենթարկւում է իմացութեանը, յոյսն ու սէրը՝ կամքին:

ՀԱՒԱՏԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Հաւատի քանի՞ աստիճան կայ:

Պատասխան. Ինչպէս օրէնքն է [բաղկացած] տասը խօսքից, եւ «Հայր մեր»-ն էլ՝ տասը խօսքից, այդպէս էլ մեր հաւատամքն է տասը խօսքից, որ այսպէս է.

Նախ՝ Հօր աստուածութեան մասին:

Երկրորդ՝ Քրիստոսի առաջին ծնունդի մասին, որ Հօրից է:

Երրորդ՝ Կոյսից մարմնով ծնուելու մասին:

Չորրորդ՝ Փրկչի չարչարանքների մասին:

Հինգերորդ՝ գերեզմանում թաղուելու մասին:

Վեցերորդ՝ մեռեալներից յարութիւն առնելու մասին:

Եօթներորդ՝ միւսանգամ գալստեան մասին:

Ութերորդ՝ Սուրբ Հոգու մասին, որ հաւասար է Հօրը եւ Որդուն:

Իններորդ՝ մարդկանց հոգիների մասին:

Տասներորդ՝ մարմինների մասին, որ պէտք է յարութիւն առնեն մեռեալներից:

Եւ սա ըստ Սուրբ Կիւրեղի է, որ Երուսաղէմից է[541]:

Իսկ հաւատի աստիճանները, որոնք հաւատի էութիւնից են, եթէ նկատի

առնուեն նրանք, ովքեր կատարեցին հաւատի ժողովումը, տասներկու աստիճան են՝ ըստ տասներկու առաքեալների: Իսկ եթէ նկատի առնենք հաւատի արմատները, ապա տասնչորսն են, որոնցից եօթը վերաբերում են աստուածութեանը, եօթը՝ Քրիստոսի մարդեղութեանը:

Առաջինը հաւատալն է աստուածային բնութեան միութեանը:

Երկրորդ՝ հաւատալը Հօր անձին, որի մասին ասում է. «Հաւատում ենք մէկ Աստծոյ, Ամենակալ Հօրը»: Սա ասաց Պետրոս առաքեալը:

Երրորդ՝ Որդու Աստուած լինելը, որի մասին ասում է. «Ի մի Տէր՝ Յիսուս Քրիստոս»: Սա ասաց Անդրէասը:

Չորրորդ՝ որ Սուրբ Հոգին Աստուած է, որի մասին ասում է. «Հաւատում ենք Սուրբ Հոգուն»: Սա ասաց Բարդուղիմեոսը:

Հինգերորդ՝ Սիմոնն ասաց. «Հաւատալ եկեղեցուն, քաւութեանը եւ մեղքերի թողութեանը»:

Այս աստիճանները պարունակում են եկեղեցու խորհուրդները՝ Մկրտութիւնը, Դրոշմը, Պատարագը, Ապաշխարութիւնը, Քահանայական կարգը, Պսակը, Օծումը:

Վեցերորդ՝ «մեռեալների յարութեանը»՝ ասաց Թադէոսը:

Եօթներորդ՝ բարու հատուցմանը, որով եւ պատժում է չարին, ինչի մասին ասում է՝ «յաւիտենական կեանքին»: Սա ասաց Մատաթիան:

Եւ այս վերջին երեք աստիճանները վերաբերում են աստուածութեանը, որովհետեւ մեղքերի թողութիւնը, որ Հոգու կենդանութիւնն է, աստուածային զօրութեամբ է լինում. նաեւ մարմնի յարութիւնը: Ու նաեւ՝ հոգու եւ մարմնի փառաւորութիւնը:

Իսկ Քրիստոսի մարդեղութեանը հաւատալու եօթ աստիճանները սրանք են:

Առաջին՝ հաւատալ, որ Աստծոյ Որդին յղացուած է Սուրբ Հոգուց:

Երկրորդ՝ ծնուած է Կոյս Մարիամից:

Այս երկուսն ասաց Զեբեթիայի Յակոբոսը:

Երրորդ՝ Աստծոյ Որդին յանուն մեզ չարչարուեց, խաչուեց եւ մեռաւ: Սա ասաց Յովհաննէսը:

Չորրորդ՝ Աստծոյ Որդին հոգով դժոխք իջաւ: Սա ասաց Թովմասը:

Հինգերորդ՝ յարութիւն առաւ երրորդ օրը: Սա ասաց Մատթէոսը:

Վեցերորդ՝ երկինք ելնելով՝ նստեց Հօր աջ կողմում, որ Հօրը հաւասար լինելն է: Սա ասաց Ալփեան Յակոբոսը:

Եօթներորդ՝ ողջերի եւ մեռեալների դատաստանը, այսինքն՝ բարու եւ չարի: Սա էլ ասաց Փիլիպպոսը:

Սրանք են հաւատի աստիճանները:

Իսկ որ հաւատն առաւել է, քան գիտութիւնը, ցոյց տրուեց Դիոնէսիոսի աստուածաբանութեան մասին տասնեօթներորդ պրակում, այնտեղ տե՛ս:

Հարց. Այդ դէպքում ինչպէ՞ս է մէկ հաւատ՝ ըստ առաքեալի:

Պատասխան. Չորս կերպ:

Նախ՝ ի մի Աստուած է եւ ի մի Քրիստոս:

Երկրորդ՝ մի ամբողջ եւ ո՛չ մասեր:

Երրորդ՝ որովհետեւ մէկն է բոլորի համար:

Չորրորդ՝ բաժանուածներին միացնում է Տիրոջ մէջ եւ միմեանց հետ:

ՅՈՅՍԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԲ

Հարց. Ո՞րն է յոյսի սահմանումը:

Պատասխան. Յոյսը հանդերձեալ երանութեան ստոյգ ակնկալիքն է՝ առաջ եկած Աստծոյ շնորհից եւ յատուկ գործերից:

Այստեղ «ստուգութիւն» ասւում է ոչ թէ ապացուցուողը, այլ՝ ակնկալուող ստուգութիւնը:

Եւ յոյսի պատճառը նախ Աստծոյ շնորհն է, ապա մեր գործերը, որովհետեւ յուսալ ինչ-որ բան՝ առանց գործի, ոչ թէ յոյս է, այլ՝ յանդգնութիւն:

Նաեւ, յոյսը մտքի ունակութիւնն է՝ յղացուած Աստծոյ առատաձեռնութիւնից՝ յուսալու յաւիտենական կեանք՝ [կատարած] բարի գործերով:

Եւ պէտք է իմանալ, որ հաւատն ու յոյսը զանազանւում են հետեւեալով. հաւատը անցեալի եւ ապագայի համար է, յոյսը՝ միայն ապագայի:

Եւ հաւատը բարուց է իրեն եւ ուրիշներին, իսկ յոյսը բարուց՝ միայն իրեն:

Եւ նման են, որովհետեւ երկուսն էլ՝ հաւատն ու յոյսը [միտում] են աներեւոյթ բաների: Բայց եւ յոյսը տարբերւում է. որովհետեւ նրանք, ովքեր այս կեանքի ճանապարհին են, նրանց յոյսը ակնկալուող ստուգութեան հետ է, ինչպէս ասուեց: Իսկ ովքեր արդէն լքել են մարմինը, նրանց յոյսը իմանալի ստուգութեան հետ է, որովհետեւ ստոյգ գիտեն լինելիք հատուցումը:

Եւ յոյս էր, որ սուրբ Ստեփանոսն ունէր, երբ տեսաւ երկինքը բացուած (տե՛ս Գործք է 55), եւ երբ Պօղոսն ասաց. «Գիտեմ, ում եմ հաւատացել» եւ յոյս էր, որ ունէր Ադամը, քանի դեռ չէին մեղանչել՝ ստոյգ տեսնելու շնորհիւ:

Այդպէս եւ այժմ սրբերի եւ երանելիների յոյսը ստոյգ տեսնելու միջոցով է, որովհետեւ չնայած դեռեւս ապագայում է նրանց մարմինների յարութիւնն ու ըստ գործերի փառք ու պսակի [արժանանալը], սակայն ըստ ճանաչողութեան տեսնելը ներկայում է, որ յայտնի է այն բանից, թէ յարութիւնից յետոյ Վերին գաւառում յոյս չի լինելու, այլ՝ երանութիւն, որ ստացումն է ամէն տեսակ բարիքի՝ միանգամից եւ կատարելապէս, որտեղ ոչ մի բան ապառնի չէ, որպէսզի յուսալով լինի:

Իսկ այժմ մեր յոյսը կրկին է:

Նախ սրբերի նկատմամ՝ օգնական եւ բարեխօս լինելու համար: Երկրորդ՝ առ Աստուած է՝ [իր] առանձնայատուկ իշխանութեան համար:

Եւ սա եռակի է, այսինքն՝ թողութեան [յոյսը], ըստ սաղմոսի՝ «Տէ՛ր, քեզ յուսացի, որ յաւիտեան չամաչեմ» (Սղմ. Հ 2). շնորհի, ինչպէս ասում է. «Ովքեր Տիրոջն են յուսում, Տիրոջ ողորմութիւնը

նրանց շուրջն է լինում» (հմմտ. Իմաստ. ԺԶ 10), եւ փառքի [յոյսը], ինչպէս Առակն է ասում. «Ո՛վ Աստծուն է յուսում, փրկուելու է» (Առակ. ԻԹ 25):

Եւ բազում են յոյսի գործերը:

Նախ՝ ազատում է նեղութիւնից, ըստ այդմ՝ «Քեզ յուսացին մեր հայրերը, եւ փրկեցիր նրանց» (Սղմ. ԻԱ 5):

Երկրորդ՝ զօրացնում է, որ յայտնի է մակաբայեցի կնոջ օրինակով, որ եօթ որդի ունէր, բայց մէկ օրուայ մէջ սպանուած տեսաւ, սակայն տանում էր դա՝ յուսալով Աստծուն (տե՛ս Բ Մակ. է):

Այդպէս էլ նահատակների բոլոր դասերը յուսով զօրացան:

Երրորդ՝ մտքով վեր են բարձրանում, ինչպէս ասում է Եսային. «Ովքեր Տիրոջն են յուսում, զօրաւոր են դառնում եւ թեւ առնում, ինչպէս արծիւ» (Ես. Խ 31):

Չորրորդ՝ փրկում է թշնամիներից, ինչպէս սաղմոսն է ասում՝ «որ փրկում ես քեզ յուսացողներին» (Սղմ. ԺԶ 7):

Հինգերորդ՝ տալիս է ժամանակաւորը, ըստ այդմ՝ «Բոլորի աչքերը քեզ են յուսում, եւ դու տալիս ես նրանց» (Սղմ. ՃԽԴ 15):

Այսքանը յոյսի մասին:

ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԳ

Հարց. Ի՞նչ է սէրը:

Պատասխան. Ըստ առաքեալի սէրն այսպէս է սահմանւում. «Սէրը պատուիրանների կատարումն է սուրբ սրտով, բարի խղճմտանքով եւ անկեղծ հաւատով» (Ա Տիմ. Ա 1):

Ըստ այլոց՝ «Սէրը անխոտոր կամքն է՝ ողջ երկրայինից յետ դարձածի եւ Աստծոյ յետ Սուրբ Հոգով անտրոհելիօրէն միաւորուածի»:

Իսկ ըստ ներգործութեան չորս կերպ է սահմանւում:

Նախ՝ «Սէրը սիրելն է, որով Աստուած սիրում է իր համար, ընկերը՝ Աստծոյ համար եւ Աստծոյ մէջ»:

Երկրորդ՝ «Սէրը կեանք է, որ միաւորում է սիրողին սիրեցեալի հետ»:

Երրորդ՝ «Սէրը առաքինութիւն է, որով ցանկանում ենք տեսնել Աստծուն եւ զմայլուել նրանով»:

Չորրորդ՝ «Սէրը առաքինութիւն է, որ միանգամայն ուղիղ է պահում մեր հոգու փափագը»:

Եւ պէտք է իմանալ, որ սէրը երեք տեսակ է. բնական, բարոյական, շնորհական:

Բնականը, որ իր նկատմամբ է,

բարոյականը՝ ընկերոջ նկատմամբ,

շնորհականը՝ Աստծոյ նկատմամբ:

Եւ տարբերութիւն կայ Աստծուն եւ ընկերոջը սիրելու մէջ, որովհետեւ Աստծուն սիրում ենք նրա մէջ եւ նրա համար, իսկ ընկերոջը՝ Աստծոյ մէջ եւ յանուն Աստծոյ:

Արդ, երբ ասում ենք երկու սէր՝ Աստծոյ եւ ընկերոջ, սա ոչ թէ ըստ ունակութեան, այլ ըստ ներգործութեան է, քանզի սիրոյ նոյն ունակութեամբ սիրւում է Աստուած եւ ընկերը:

Սէրը բազմաթիւ իմաստներով է ասւում:

Երբեմն [սէրը է] ասւում ունակութիւնն ըստ առաքեալի. «Աստծոյ սէրը սփռուած է մեր սրտերում» (Հռոմ. Ե 5):

Երբեմն ցոյց է տալիս շարժումը, ինչպէս ասւում է «Երգ երգոց»-ում. «Կարգեց իմ մէջ սէրը» (Երգ. Բ 4):

Երբեմն՝ սիրոյ նշանը, ըստ այդմ՝ «Մեծագոյն սէր ոչ ոք չունի» (Յովհ. ԺԵ 13), այսինքն սիրոյ մեծ նշան:

Երբեմն էլ ցոյց է տալիս պարփակութիւնը, ինչպէս ասում է՝ «Աստուած սէր է» (Ա Յովհ. Դ 16), եւ սա առաւել անձնապէս եւ էապէս է:

Երբեմն սիրոյ եռանդն է ցոյց տալիս, ըստ այդմ. «Թող ներուեն նրա մեղքերը, որովհետեւ յոյժ սիրեց» (Ղուկ. է 47):

Եւ սէրը սկիզբն է բարութիւնների, որովհետեւ Աստծուց է եւ բարու մէջ է, ըստ Աստծոյ է եւ բարու եզրագիծն է, քանզի յանուն Աստծոյ է:

Կամ էլ այսպէս. սէրը բարի գործերի սկիզբն է, որովհետեւ դէպ դրանց է մղում, ինչպէս վարդապետներն են ասում՝ սէրը մեծամեծ բաներ է գործում, եթէ կայ, իսկ եթէ դադարում է, ուրեմն սէր չէ: Եւ մէջն է ասւում, որովհետեւ տեսակաւորում է գործերը: Եւ վախճան է ասւում, որովհետեւ ուղղութիւն է տալիս գործերին եւ բերում պատշաճ աւարտի:

Հարց. Որո՞նք են սիրոյ նշանները:

Պատասխան. Բազում են:

Նախ՝ որպէսզի սիրելին յօժարութեամբ լսի սիրեցեալին:

Երկրորդ՝ յօժարութեամբ խօսի նրա մասին:

Երրորդ՝ բազմաթիւ անգամ մտաբերի:

Չորրորդ՝ անձանձրոյթ ծառայի նրան:

Հինգերորդ՝ մարմինն ու ինչքն ի սպաս դնի նրան:

Վեցերորդ՝ զգուշանայ նրան վիրաւորելուց:

Եօթներորդ՝ եթէ վիրաւորուած է, հաշտեցնի նրան:

Ութերորդ՝ նեղութեան մէջ սատար լինի նրան:

Իններորդ՝ ուրախ լինի, եթէ նրա մօտ է:

Տասներորդ՝ տխրի, եթէ հեռանում է:

Տասնմէկերորդ՝ սիրի [այն], ինչ նա է սիրում:

Տասներկուերորդ՝ ատի [այն], ինչ նա է ատում:

Տասներեքերորդ՝ ջանայ, որ հաճելի լինի նրան:

Տասնչորսերորդ՝ վախենայ տհաճ լինել:

Տասնհինգերորդ՝ ուրիշներին էլ գրաւի նրան սիրելի դարձնելու համար:

Տասնվեցերորդ՝ նրա տուած ընծաներին անտարբեր չլինի:

Տասնեօթներորդ՝ հաւանութիւն տայ նրա խրատներին:

Տասնութերորդ՝ համարձակ յոյսով խնդրի նրանից:

Տասնիններորդ՝ սիրելիի ամէն ինչը իրենը համարի, իրենը՝ սիրելիինը:

Քսաներորդ՝ ամէն տեղ պարծենայ իր սիրելիով:

Քսանմէկերորդ՝ երբ գովաբանում են նրան, ուրախանայ:

Քսաներկուերորդ՝ խուսափի նրանցից, ովքեր նշաւակում են իր սիրելիին:

Եւ եթէ մէկը կամենայ, սրանցից իւրաքանչիւրը կարող է Աստծոյ սիրուն ուղղել:

Հարց. Որո՞նք են սիրոյ աստիճանները:

Պատասխան. Երեքը, այսինքն՝ անկատար, կատարեալ, գերակատար:

Անկատար է մարմնաւոր սէրը:

Կատարեալ է հոգեւորը:

Գերակատար է Աստծունը:

Կամ՝ անկատար սիրով [սիրում ենք] մեզ, կատարեալով՝ ընկերոջը, գերակատարով՝ Աստծուն:

Դարձեալ՝ անկատար սէր է ծառայի [սէրը], որ պատժի երկիւղով է:

Կատարեալ է վարձկանական [սէրը], որովհետեւ պատուախնդրութեամբ է:

Գերակատար է որդիական սէրը՝ բնութեամբ բարի լինելու պատճառով:

Ուրիշներ սիրոյ չորս աստիճան են ասում: Նախ՝ երբ ինքդ քեզ ես սիրում յանուն քեզ, սա բարի չէ: Երկրորդ՝ երբ Աստծուն սիրում ես յանուն քեզ, սա վարձկանական սէր է: Երրորդ՝ երբ սիրում ես Աստծուն յանուն նրա, որովհետեւ բարի է, սա բարի սէր է: Չորրորդ՝ երբ սիրում ես քեզ յանուն Աստծոյ, սա նոյնպէս լաւ է, որովհետեւ մարդը իրենը չի խնդրում, այլ միայն Աստծունը:

Հարց. Որո՞նք են կատարեալ սիրոյ նշանները:

Պատասխան. Երեքը, այսինքն, որ ամբողջ սրտով սիրի, միշտ սիրի եւ առանց հատուցման սիրի, ինչպէս ասուեց Երկրորդ օրինացում (Բ օր. Զ 5):

Եւ կատարեալ սէր է, եթէ մեծ է ունակութեամբ, ուղիղ՝ ներքին շարժումով, ժիր՝ արտաքին գործերում, արմատներով՝ հաստատուն՝ ջերմեռանդութեամբ՝ խոհեմ եւ քաղցրութեամբ՝ մխիթարող:

Հարց. Ինչպիսի՞նն է սիրոյ կարգը:

Պատասխան. Սիրոյ կարգի մասին ասուել է Դիոնէսիոսի Աստուածաբանութեան մասին իններորդ գլխի տասնվեցերորդ համարում:

Այլ վարդապետներն էլ ասում են, պէտք է սիրել նախ նրան, որ մեզնից վեր է, այսինքն՝ Աստծուն, ապա՝ մեզ, որից յետոյ՝ ընկերոջը, ապա մեր մարմինը, նոյնչափ էլ ընկերոջ մարմինը, որովհետեւ հոգուց յետոյ երկրորդը մարմինն է:

Ուրիշներն էլ ասում են, թէ նախ պէտք է սիրել Աստծուն, ապա ծնողներին, յետոյ որդիներին, յետոյ ընտանիքը, վերջում՝ թշնամիներին:

Եւ չորս պատճառով աւելի լաւ է սիրել, քան սիրուել:

Նախ՝ այն, ինչ սիրում ենք, գիտենք, իսկ եթէ սիրւում ենք, չգիտենք:

Երկրորդ՝ այն, որ սիրում ենք, մեր առանձնայատուկ առաքինութիւնն է, իսկ եթէ սիրւում ենք, ուրիշի առաքինութիւնն է:

Երրորդ՝ երբ սիրում ենք, պարտաւորեցնում ենք ուրիշին, իսկ երբ սիրւում ենք, պարտական ենք դառնում ուրիշին:

Չորրորդ՝ երբ սիրում ենք, մեր անձն է շահում, երբ սիրւում ենք, ուրիշներն են շահում:

Հարց. Որտեղի՞ց ենք ուսանում սիրել ընկերոջը:

Պատասխան. Երեք տեղից:

Նախ՝ բնական իրաւունքով, ըստ այդմ՝ «Այն, ինչ կամենում էք, որ մարդիկ ձեզ անեն, նոյնը արէք նրանց եւ դուք» (Մտթ. է 12):

Երկրորդ՝ գրաւոր օրէնքից, որ ասում է. «Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպէս քո անձը» (Ղեւտ. ԺԹ 18):

Երրորդ՝ արարածների մէջ, որովհետեւ իւրաքանչիւր նմանը սիրում է իր նմանին եւ ուրախանում նրա հետ:

Հարց. Ինչո՞ւ ասաց. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց» (Յովհ. ԺԳ 34), քանզի հնում էլ էր տուել:

Պատասխան. Հնում ասաց՝ սիրել ընկերոջը, նորում աւելացրեց՝ սիրել թշնամուն:

Հարց. Ո՞րն է առաւել. ընկերոջը սիրելը, թէ՞ թշնամուն:

Պատասխան. Սիրելիին սիրել պարտաւոր է ամէն ոք, իսկ թշնամուն սիրելը առաւել արդիւնաւոր է, նախ որովհետեւ աւելի է մօտենում կատարելութեանը, քանզի մեծագոյն առաքինութիւն է:

Երկրորդ՝ առաւել է պատիժներին թողութիւն տալիս, որովհետեւ առաւել դժուարյաղթահարելի է:

Երրորդ՝ սիրոյ շատ ակնառու նշան է, որովհետեւ ընդդէմ է բնութեան շարժմանը:

Հարց. Ո՞ր թշնամուն պէտք է սիրել:

Պատասխան. Պէտք է սիրել մեր թշնամուն եւ աղօթել նրա համար, իսկ Աստծոյ թշնամուն ատել, ըստ այդմ՝ «Տէ՛ր, ատեցի քո ատելիներին» (Սղմ. ՃԼԸ 21):

Եւ երկու թշնամի կայ մեր անձի եւ եկեղեցու:

Անձնական թշնամուն պէտք է բարութիւն անել, իսկ եկեղեցու թշնամուն՝ ո՛չ բարութիւն, ո՛չ էլ չարութիւն:

Եւ պէտք է մեր մարմնի թշնամուն սիրել, իսկ հոգու թշնամուն՝ ատել:

Այսքանը սիրոյ մասին:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԴ

Հարց. Ինչո՞վ են զանազանւում հաւատը, յոյսը, սէրը:

Պատասխան. Պէտք է իմանալ, որ ինչպէս աստուածութեան պատկերն է կայանում մէկ էութեամբ եւ երեք անձով, այդպէս էլ մեր վերաստեղծուած պատկերն է կայանում շնորհի եւ երեք ունակութեան, այսինքն՝ հաւատի, յոյսի, սիրոյ միութեամբ:

Եւ այս երեքը աստուածային շնորհների հեղումն են բանական հոգու վրայ, որով դէպ երկնային կեանքն ենք ուղղւում:

Սրանով դրանք հաւասարազօր են:

Իսկ տարբերութիւնները հետեւեալն են: Նախ, ինչպէս սուրբ Եւագրիոսն է ասում[542], հաւատը Հօր հանդէպ է, յոյսը՝ Որդու, սէրը՝ Սուրբ Հոգու, եւ այսպէս են ոչ թէ բաժանմամբ, այլ ըստ անձերի յատկութեան, որովհետեւ Հայրը սկիզբն է, Որդին՝ փրկութիւնը, Հոգին՝ ջերմութիւնը:

Երկրորդ՝ հաւատը հիմքն է, յոյսը՝ պատը, սէրը՝ կառոյցը:

Երրորդ՝ հաւատը ծառի արմատն է, որ Հայրն է, յոյսը՝ ճիւղերը, որ Որդին է, սէրը՝ Սուրբ Հոգին, որ ծաղիկն ու պտուղն է ըստ Դիոնէսիոսի[543]:

Չորրորդ՝ հաւատն անցեալի եւ ապագայի համար է, ինչպէս ասուել է, յոյսը՝ միայն ապագայի, սէրը՝ ներկայի, որ մշտական է:

Հինգերորդ՝ ըստ մեր որպիսութեան, հաւատը ներկան է, յոյսը՝ մահից յետոյ, որի մասին ասում է. «Նրանց յոյսը լի է անմահութեամբ» (Իմաստ. Գ 3), իսկ սէրը՝ յարութիւնից յետոյ՝ ըստ առաքեալի. «Սրանք երեքն են՝ հաւատը, յոյսը, սէրը, իսկ սրանց մէջ ամենամեծը սէրն է» (Ա Կորնթ. ԺԳ 13):

Վեցերորդ՝ հաւատն Աստծոյ էութեան նկատմամբ է, ըստ այդմ՝ «Պէտք է հաւատալ, որ կայ Աստուած» (հմմտ. Եբր. ԺԱ 6), յոյսը՝ բարութեան, ըստ այդմ՝ «Ակնկալենք Աստծոյ յոյսն ու բարութիւնը» (հմմտ. Տիմ. Բ 13), սէրը՝ ճշմարտութեան եւ գեղեցկութեան նկատմամբ:

Ոմանք այս կարգը այսպէս են փոփոխում. սէրը՝ բարութեան հանդէպ է, յոյսը՝ բարձրութեան, հաւատը ճշմարտութեան:

Եօթներորդ՝ հաւատով համբերում ենք, յուսով հաստատւում, սիրով՝ զօրանում: Եւ սա ասում է Եւագրիոսը:

Ութերորդ՝ հաւատը տեսնում է, յոյսը՝ կառչում, սէրը՝ միաւորում:

Իններորդ՝ ըստ հոգու մասերի՝ հաւատը բանականութեանն է, յոյսը՝ ցասմանը, սէրը՝ ցանկութեանը: Սրանց մէջ եղած համանման գործերի պատճառով է, որ այսպէս է կարգւում, սակայն յոյսն ու սէրը կամքին են ենթարկւում:

Տասներորդ, ըստ իրենց գործերի առանձնայատկութեան՝ հաւատով յօժարում ենք Աստծուն, յուսով ապաստանում Աստծոյ մօտ եւ սիրում Աստծուն:

Այսքանն աստուածային առաքինութիւնների մասին:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԵ

Հարց. Ի՞նչ է առաքինութիւնը:

Պատասխան. Առաքինութեան սահմանումները տարբեր են, որովհետեւ «Հոգիների մասին» գրքում ասւում է. «Առաքինութիւնը մտքի բարեկարգուած ունակութիւնն է»[544]:

Կամ՝ «Առաքինութիւնը մտքի ունակութիւնն է՝ ըստ բնութեան կերպի համակամ բանականութեանը», քանի որ բնութիւնն ու բանականութիւնն են մեզ մղում առաքինի գործերի, իսկ բնութեանը մղում է շնորհը:

Իսկ Արիստոտէլն ասում է. «Առաքինութիւնը մեր մտքի ունակութիւնն է, որ մեր կողմից զբաղեցւում է մէջտեղում»[545], որտեղ «մէջտեղ» նշանակում է աւելորդի եւ նուազի միջեւ գտնուելը:

Իսկ ըստ ուրիշների՝ առաքինութիւնը հաւասարակշռուած կեանքն է՝ ներդաշնակուած բանականութեանը, քանզի բոլոր հաջողութիւնների եւ թշուառութիւնների մէջ պահպանում է միտքը՝ անյաղթելի ու անփոփոխ կերպով:

Կամ՝ «առաքինութիւնը մտքի բարի ունակութիւնն է, որով պահպանում է ուղղութիւնը, եւ ոչ մէկը չարաչար չի կիրարկում, որովհետեւ Աստուած ներազդում է մեզ՝ առանց մեզ»:

Սա վերաբերում է Աստծոյ շնորհի լոյսով հեղուած առաքինութեանը:

Կամ՝ «առաքինութիւնը երանութիւն եւ փառք է այս կեանքում եւ իր մէջ կրում է լոյս ու խնդութիւն»:

Եւ պէտք է իմանալ, որ առաքինութեամբ է ուղղւում Յոգին դէպ իր զօրութիւնը, քանի որ խոհեմութիւնը դէպ բանականին է տանում, արիութիւնը՝ ցասմանը, ողջախոհութիւնը՝ ցանկութեանը, իսկ արդարութիւնը՝ բոլոր զօրութիւններին, որովհետեւ նա է պարունակում այն առաքինութիւնները, որոնք կարգաւորում են մարդու [հարաբերութիւնները] ընկերների հետ, ինչպէս [ասենք], արդարութիւնը եւ առատաձեռնութիւնը. մարդու ներքին կարգաւորուածութիւնը, ինչպէս ապաշխարութիւնն ու անմեղութիւնը, եւ նրանք, որ մարդուն ուղղորդում են դէպ Աստուած, ինչպիսին աստուածապաշտութիւնն ու հնազանդութիւնն են, որի պատճառով էլ արդարութիւնը կամքի ուղղութիւն է կոչւում, որովհետեւ ոչ թէ առանձին զօրութիւն է կամ առաքինութիւն, այլ հոգու ընդհանուր եւ ներունակ ուղղութիւն:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է արդարութիւնը, եւ որո՞նք են նրա գործերը կամ մասերը:

Պատասխան. Արդարութիւնը մարդկանց ընտրութիւնը պահպանող զօրութիւն է, որի գործը իւրաքանչիւրինը իրեն տալն է. Աստծուն՝ պարտաւոր ենք երկիւղ եւ պատկառանք, իշխաններին՝ հնազանդութիւն, հաւասարին՝ սէր եւ խաղաղութիւն, փոքրերին՝ ողորմել եւ ուղղութիւն տալ:

Եւ արդարութիւնը վեց մաս ունի, որոնք են՝ կրօնաւորութիւնը, գթութիւնը, շնորհը, նախանձախնդրութիւնը, պահպանութիւնը եւ ճշմարտութիւնը:

Կրօնաւորութիւնը Աստծոյ պաշտամունքն է եւ առանձնայատուկ սպասաւորութիւն մատուցելը:

Գթութիւնը արիւնակիցներին եւ բարեկամներին փութով օգնելն է:

Շնորհը բարեկամութեան յիշատակը [պահելը] եւ այն հատուցելու կամքն է:

Նախանձախնդրութիւնը պաշտպան կանգնելն է, որ բացառում է բոլոր բռնութիւնները, անիրաւութիւնները եւ վնասակար գործերը:

Պահպանութիւն է, երբ մարդուն պատուի եւ պաշտամունքի են արժանացնում:

Ճշմարտութիւնն այն է, որ առանց փոփոխութեան ասում են այն, ինչ կայ, կամ՝ կար, կամ էլ՝ լինելու է:

Եւ ինչպէս Սիրեցէքն է ասում, արդարութիւնը մշտնջենաւոր է, [որովհետեւ] նախ, մշտնջենաւոր է դարձնում հոգին՝ հաստատելով ի բարին:

Երկրորդ՝ ըստ էութեան եւ գործերով մնում է Վերին գաւառում, իսկ միւս առաքինութիւնները մնում են միայն ըստ էութեան, սակայն ոչ ըստ գործերի, որովհետեւ խոհեմութիւնն [օրինակ], չի կարող զգուշանալ դարանակալումից. արիութիւնը տեղի է տալիս զարհուրելիս. ողջախոհութիւնը չի սանձահարում անպատեհ շարժումը:

Եւ արդարութիւնը երեք կերպ է խեղաթիւրւում:

Նախ, անձի կամ արծաթի [հանդէպ ունեցած] սիրով, ըստ Եսայու՝ «Վա՜յ ձեզ, եթէ արդարացնէք ամբարշտին կաշառքով»:

Երկրորդ՝ երկիւղի պատճառով, որի մասին Տէրն ասում է. «Մի՛ վախեցէք նրանցից, ովքեր սպանում են մարմինը»:

Երրորդ՝ ատելութեան եւ նախանձի պատճառով, ըստ այդմ՝ «Իմացաւ, որ նախանձի պատճառով մատնեցին նրան»:

Այսքանն արդարութեան մասին:

ԽՈՀԵՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է խոհեմութիւնը, որո՞նք են նրա գործերը եւ մասերը:

Պատասխան. Խոհեմութիւնը հոգու զօրութիւնն է, որով ընտրութիւն է կատարւում չարի եւ բարու միջեւ:

Սրա գործն այն է, որ մարդկանց նենգութիւն չի անում եւ չի խաբւում ուրիշ մարդուց: Այդ պատճառով հրամայեց Քրիստոս՝ «Եղէ՛ք օձի նման խորագէտ եւ աղաւնու պէս միամիտ» (Մտթ. Ժ 16)՝ խորագիտութեամբ սեփական անձը պաշտպանելու, իսկ միամտութեամբ ուրիշին վնաս չպատճառելու համար:

Խոհեմ մարդը չպէտք է շտապի որեւէ բան գործել, այլ պէտք է նախ խորհի, որ չխաբուի:

Եւ երեքն են խոհեմութեան մասերը. իմացութիւն, կանխատեսութիւն, յիշողութիւն:

Իմացութիւնը նկատելն է այնպէս, ինչպէս կան:

Կանխատեսութիւնը լինելիքը տեսնելն է:

Յիշողութիւնը վերյիշելն է եղածը:

Եւ իմացութեան ու գիտութեան մասին ասուել է հինգերորդ հատորի քսանեօթներորդ համարում:

Խոհեմութիւնը նաեւ առաքինութիւնների ուղղորդումն է՝ ըստ բարոյական իմաստասիրութեան, որ [լինում է] բարոյական, տնտեսական եւ քաղաքական:

Առաջինն ուսուցանում է կարգաւորել բարութիւններն ինքն իր նկատմամբ: Երկրորդը սովորեցնում է կարգաւորել ընտանիքը, երրորդը՝ կառավարել քաղաքներն ու թագաւորութիւնները:

Դարձեալ եռակի է խոհեմութիւնը: Նախ, սրտի խոհեմութիւնը, որ [դրսեւորուում է] ներկան կարգաւորելով, անցեալը յիշելով, ապագան կանխատեսելով, ինչպէս Երկրորդ օրինացում է ասում՝ «Երանի թէ իմանային», որ ներկան է. «եւ մտաբերէին», որ անցեալն է. «կանխատես լինէին հետագաների»:

Երկրորդ՝ խոհեմութիւնը խօսքը չափաւորելու համար է, ինչպէս Առակում է ասում՝ «ով հանդարտ է շուրթերով, խոհեմագոյն է» (հմմտ. Առակ. ԺԳ 3), եւ սաղմոսում՝ «Տէ՛ր, բերանիս պահապան դիր եւ շրթունքներիս՝ ամուր դուռ» (Սղմ. ՃԽ 3) եւ այլն:

Երրորդ՝ խոհեմութիւնն է գործերի մէջ, որ դրսեւորուում է չարից խուսափելու եւ բարին ընտրելու մէջ, ըստ այդմ՝ «Հեռացի՛ր չարից եւ բարին գործիր» (Սղմ. ԼԳ 15):

Եւ յիշի՛ր, որ տարբեր են երկրաւոր, մարդկային եւ աստուածային խոհեմութիւնները. առաջինով ստանում են ժամանակաւորը, երկրորդով՝ մարմնական օգուտը, երրորդով՝ աստուածային պաշտամունքը:

Այսքանը խոհեմութեան մասին:

ԱՐԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է արիութիւնը, որո՞նք են նրա գործերն ու մասերը:

Պատասխան. Արիութիւնը այն զօրութիւնն է, որով հեշտութեամբ տանում է ամէն ինչ՝ յանուն սիրելի բաների, որ դրսեւորուում է այսպէս. տեղի չի տալիս նեղութեան առջեւ ու չի մեղկանում հեշտասիրութեամբ:

Արիութեան մասերը չորսն են. մեծագործութիւնը, պատսպարուելը, համբերութիւնը, մշտակայութիւնը:

Արդ, մեծագործութիւնը մեծ եւ վեհ գործեր խորհելն է եւ իրականացնելը՝ հոգու ընդարձակ մտադրութեամբ:

Պատսպարուելն այն է, որ հոգին մեծ եւ համեստ բաներում ստոյգ յուսով հաստատուում է ինքն իր մէջ:

Համբերութիւնը մեծամեծ եւ դժուարին բաների կամաւոր եւ մշտակայ տեսնելն է օգուտի եւ համեստութեան համար:

Մշտակայութիւնը բանական քննութեան մէջ հաստատուն եւ միշտ բարի մնալն է:

Եւ արիութիւնը կայանում է հինգ կերպ, այսինքն՝ նախ վեհ ձեռնարկումներով, ինչպէս ասում է սաղմոսը՝ «Քաջալերուէ՛ք եւ թող զօրանան ձեր սրտերը» (Սղմ. Լ 25):

Երկրորդ՝ հեռանալը երկրաւորից, ինչպէս ասում է Պօղոսը՝ «Մովսէսը հրաժարուեց կոչուել որդի Փարաւոնի դստեր՝ գերադասելով չարչարանքը» (Եբր. ԺԱ 24) եւ այլն:

Երրորդ՝ նեղութիւններին համբերելով, ինչպէս «Երգ երգոց»-ում է ասում՝ «Զօրաւոր է սէրը, ինչպէս մահը» (Երգ. Ը 6)[546]:

Չորրորդ՝ փորձութիւնների դէմ մարտնչելով, ըստ առաքեալի՝ «Ո՛չ ոք չի յաղթի, եթէ չմարտնչի օրէնքներով» (Բ. Տիմ. Բ 5):

Հինգերորդ՝ մոլութիւններին յաղթելով, որի մասին Յոբն ասում է. «Մարդու

կեանքը երկրի վրայ պատերազմ է» (Յոբ Ը 9)[547]:

Այսքանն արիութեան մասին:

ՈՂՋԱԽՈՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է ողջախոհութիւնը, որո՞նք են նրա գործերն ու մասերը:

Պատասխան. Ողջախոհութիւնը հոգու հաստատակամութիւնն է, որով արգելում է զգայական ցանկութիւններն ու մարմնական հեշտանքները:

Եւ նրա գործն այս է. գիտէ շատի մէջ նուազել, գիտէ աղքատութեան մէջ համբերել, ինչպէս առաքեալն է ասում՝ «Գիտեմ աւելանալ եւ գիտեմ պակասել» (Փիլիպ. Դ 12):

Ողջախոհութեան մասերը երեքն են. զսպուածութիւնը, անոխակալութիւնը, համեստութիւնը:

Արդ, զսպուածութիւնն այն է, որով բոլոր ցանկութիւններն ուղղւում են՝ կառավարուելով խրատներով: Անոխակալութիւնն այն է, որ կարողանում է ատելութեան կուտակումը արգելել զուարթութեամբ եւ գթութեամբ: Համեստութիւնը պարկեշտ ամօթխածութիւն եւ նազելի պատկառանք ունենալն է:

Եւ երեքն են ողջախոհութեան տեսակները. զգաստութիւն, զսպուածութիւն, համեստութիւն:

Զգաստութիւնը դրսեւորւում է ճաշակելիս, երբ չափ ու սահման է դրւում: Զսպուածութիւնը դրսեւորւում է շօշափելիքների [գործողութիւններում]՝ ըստ ծնող զօրութեան, երբ եղանակի ընտրութիւն է կատարւում, որովհետեւ իբրեւ անհատ գոյատեւելիս մարդն աւելի հակուած է դէպ սնուելը, իսկ իբրեւ տեսակ գոյատեւելիս՝ դէպ ծնելը. ահա այս հակումներն են զսպւում զգաստութեամբ եւ զսպուածութեամբ: Իսկ համեստութիւնը դրսեւորւում է խօսքի, այլեւ լսելու, հոտոտելու, ձեռքի շարժումների, բռնելու, քայլելու մէջ. համեստութիւնը այս բոլորի մէջ ձեւ ու կարգ է մտցնում:

Այսքանը ողջախոհութեան մասին:

Հարց. Ինչո՞ւ են այս չորս առաքինութիւնները տարբեր անուններով կոչում:

Պատասխան. Նախ, մարդկային առաքինութիւններ են կոչւում, որովհետեւ սրանցով կարգաւորւում են մարդկանց հոգիները եւ ոչ ուրիշ կենդանիների:

Կամ կոչւում են ծառայական, որովհետեւ մարմնի խառնուածքից են գոյանում, եւ կապուած չեն մէկը միւսին, որովհետեւ կարող է մէկը խառնուածքով ողջախոհ լինել, սակայն խոհեմ չլինել, կամ արդար, կամ էլ՝ արի: Եւ սրանք կոչւում են ծառայական, որովհետեւ մարմնի խառնուածքին համապատասխանելով են ողջախոհ, արի կամ այլ [նկարագրով]:

Եւ կոչւում են ոչ բանական, որովհետեւ պատճառաբանուած չեն, այլեւ յատուկ են ոչ բանական կենդանիներին, ինչպէս ուղտն է խոհեմ, առիւծը՝ արի, տատրակը՝ ողջախոհ, արագիլն՝ արդար:

Կոչւում են նաեւ բարոյական, տնտեսական, քաղաքական առաքինութիւններ, ինչպէս նշեցինք վերը՝ խոհեմութեան մասին ճառի մէջ:

Նաեւ կամաւոր են կոչւում, որովհետեւ որեւէ մէկի պատուէրով ողջախոհ չեն եւ պատճառը չգիտեն, այլեւ մէկը միւսին չի հետեւում:

Եւ վեցերորդ, կոչւում են վերստացուած, որովհետեւ ձեռք են բերւում ջանքեր թափելով, որտեղ մէկը կապուած է միւսին, ինչպէս չարի շղթայում, այսինքն, նա, ով ողջախոհ է, գիտէ, որ անառակ կեանքից ծնւում են անյագուրդ [ախտեր]. նա հարկադրուած նաեւ արի է լինում՝ ստորադասելով ախտը. այդպիսինը պէտք է նաեւ խոհեմ լինի՝ իմանալով, թէ անիրաւութիւնները ծնւում են մարմնական վաւաշոտ ախտերից:

Այսքանը համառօտ բոլոր առաքինութիւնների մասին:

ՀՈԳՈՒ ԵՕԹ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԵՕԹՆԱՑԱՑԱՆՉ ՇՆՈՐՀՆԵՐ ԵՆ Պրակ ԻԶ

Եւ քանի որ մարդու հոգու համար դժուար է ինքնակարգաւորումն ու ինքնամաքրումը, ուստի Աստուած մարդու հոգուն օգնելու համար՝ պարգեւում է Սուրբ Հոգու եօթ շնորհները, որոնք հետեւեալն են.

Առաջին՝ իմաստութիւն:

Երկրորդ՝ հանճար:

Երրորդ՝ խրատ, որ խորհուրդն է.

Չորրորդ՝ զօրութիւն:

Հինգերորդ՝ գիտութիւն:

Վեցերորդ՝ գթութիւն, որ աստուածապաշտութիւնն է:

Եօթներորդ՝ երկիւղ:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐՈՎ

Իմաստութիւնն Աստծոյ բարութիւնը ճանաչելն է, որ տրւում է յիմարութեանը հակառակ: Այս իմաստութեան մասին է ասում սաղմոսը. «Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, որ քաղցր է Տէրը» (Սղմ. ԼԳ 9):

Հանճարը ճանաչելն է փրկութեան նշանները, որի մասին Տէրն ասաց. «Ո՛վ ականջ ունի լսելու, թող լսի» (Մրկ. է 16): Եւ սա տրուած է Աստծուց՝ բթամտութեանը եւ տհասութեանը հակառակ:

Խրատը հոգու լոյսն է Հոգին ունենալիս, որ չի շաղախւում երկրայինին ու մարդկայինին:

Զօրութիւնը չարչարանքները տանելու կարողութիւնն է: Եւ սա տրուած է Աստծուց ընդդէմ երկիւղի, որով նմանւում են Քրիստոսին, որովհետեւ նա չէր վախենում բնական մահից եւ ասում էր. «Հոգիս յօժար է, սակայն մարմինս՝ տկար» (Մտթ. ԻԶ 41): Եւ սակայն մահուան դէմ զօրացաւ եւ ասաց. «Հա՛յր, ոչ թէ իմ, այլ քո կամքը լինի» («Ղուկ. ԻԲ 42), որ իմն է:

Գիտութիւնն այն ամէնի ճանաչումն է, ինչին հաւատում են, որ Աստծոյ կողմից տրուած է տգիտութեան դէմ:

Գթութիւնն ընկերոջ նկատմամբ հոգածութիւն դրսեւորելն է եւ նրան սիրելը, որովհետեւ [նա] Աստծոյ պատկերով է. Աստծոյ կողմից տրւում է խստասրտութեան դէմ:

Երկիւղը հոգեպէս չարից փախչելն է, որպէսզի չկորցնի այն, ինչ սիրում է, եւ տրւում է մարդուն ընդդէմ ամբարտաւանութեան:

Հարց. Ինչո՞ւ են այս պարգեւները եօթը:

Պատասխան. Նախ՝ որպէսզի սրանցով մաքրուեն եօթ մոլութիւնները, ինչպէս ասուեց: Երկրորդ՝ որպէսզի օգնական լինեն Հոգու բնական զօրութեանը: Երրորդ՝ գործնականով ու տեսականով կեանքը կառավարելու համար. սրան էին [ուղղուած] աստուածային եւ մարդկային առաքինութիւնները, ինչպէս ասացինք: Իսկ թէ ինչպէ՞ս, Գիրքը յայտնում է հետամուտ եղողներին, այնտեղ կարող ես գտնել:

Դարձեալ վարդապետներն ասում են, թէ՝ իմաստութեամբ ենք հասու լինում.

հանճարով՝ կանխատես.

խորհրդով՝ ողորմած.

երկիւղով՝ խոնարհ.

զօրութեամբ՝ քաջասիրտ.

գիտութեամբ՝ ընտրող.

աստուածապաշտութեամբ՝ ցաւակից:

Այսքանը Հոգու պարգեւների մասին[548]:

ԻՆԸ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ՈՄԱՆՔ ԵՕԹՆ ԵՆ ԱՍՈՒՄ Պրակ Իէ

Արդ, ինը երանութիւնները, որ քարոզեց Փրկիչը լեռան վրայ, ըստ էութեան ութն են, սակայն ըստ աստիճանների՝ եօթը, այսինքն՝

հոգու աղքատութիւնը.

սուգը.

հեզութիւնը.

արդարութեան քաղցը.

ողորմածութիւնը.

սրտի սրբութիւնը.

խաղաղութիւնը:

Այս եօթ երանութիւններով արտաքսւում են եօթ մոլութիւնները, քանզի հոգու աղքատութիւնը դուրս է վանում հպարտութիւնը եւ նախանձը: Ով սգում է ուրիշների մեղքերի համար, չի նախանձում նրանց: Հեզութիւնը [դուրս է վանում] բարկութեանը: Արդարութեան քաղցը՝ ծուլութեանը: Ողորմածութիւնը՝ ագահութեանը: Սրտի սրբութիւնը՝ որկրամոլութեանը, որովհետեւ սրտի սրբութիւնը անբան անասունի օրինակով չի ծառայում որովայնին: Խաղաղութիւնն արտաքսում է բղջախոհութիւնը, որովհետեւ հոգեւորը ճաշակելիս նրա համար անհամանում է ողջ մարմնաւորը:

Եւ եթէ պարգեւների թուարկումն արհեստական կարգով է, որովհետեւ նախ դրւում են արժանաւորները, ապա երանութիւնների թուարկումը բնական կարգով է, քանի որ արժանաւորները վերջում են դրւում:

Ա. ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հոգու աղքատութիւնը աշխարհից հրաժարուելն է, այսինքն՝ [հրաժարուելը] մարմնական հեշտանքները սիրելուց, շռայլութիւնից, պատուից, քանի որ աշխարհի սէրը պարունակում է այս երեքը:

Եւ հոգով աղքատ են, ովքեր չեն ձգտում ցանկասէր ախտերի:

Եւ հոգով աղքատ են խոնարհները, որ երկիւղած են:

Եւ հոգով աղքատ են մարմնով աղքատները, որոնք ոչինչ չունեն եւ ամէն ինչ ունեն:

Բ. ՍԳԱՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սուգը մեղքերի համար սգալն է եւ դրանք ատելը՝ մինչ դրանցից ձերբազատուելը: Իսկ չարի համար սգում են, որպէսզի խուսափեն նրանից: Ըստ այդմ, ով ետ է պահում սիրեցեալին [չարից, այդ անում է] միայն սիրուց [մղուած], իսկ յատուկ չարի համար սգալը իւրաքանչիւր առաքինութեան մէջ կայ, որովհետեւ իւրաքանչիւր առաքինութիւն սգում է ներհակի գոյութեան պատճառով:

Հարց. Քանի՞սն են տրտմութիւնը եւ ուրախութիւնը:

Պատասխան. Տրտմութիւնը երկուսն է եւ երկուսն է ուրախութիւնը, քանզի աստուածային են եւ դիւական:

Աստուածային տրտմութիւնն ու խնդութիւնը հոգեւոր եւ բարի են, իսկ դիւականը՝ մարմնաւոր եւ չար:

Եւ այսպէս են զանազանւում:

Այն, որ աստուածային տրտմութիւնն է, չորս յատկանիշ ունի. նախ, հոգու մէջ է: Երկրորդ՝ հոգու համար է տրտմում եւ ցաւում: Երրորդ՝ արտասուք է թափում: Չորրորդ՝ վերջին դատաստանն ու տանջանքներն է մտապահում, որոնց հետեւում են կեանք եւ հոգեւոր խնդութիւն, որի մասին առաքեալն ասում է. «Ուրախ եղէ՛ք Տիրոջով, դարձեալ ասում եմ, ուրախ եղէ՛ք Տիրոջով» (Փիլիպ. Դ 4):

Իսկ սրան հակառակ, դիւական տրտմութիւնը մարմնում է եւ մարմնի համար, որ ցամաքեցնում է արտասուքը, տրտմում եւ խռովւում, որին հետեւում են ոխ եւ ատելութիւն, այլեւ մահ է պատճառում, ինչպէս ասում է առաքեալը (տե՛ս Բ Կորնթ. է 10):

Աստուածային խնդութիւնն էլ չորս յատկանիշ ունի. նախ, հոգուց հանում է տրտմութեան, ձանձրութեան, կարճամտութեան դեւին, սրտմտութիւնը եւ ոխը:

Երկրորդ՝ մարդու մէջ հաստատում է երկայնամտութիւն, համբերութիւն, յոյս եւ արիութիւն:

Երրորդ՝ անընդհատ եւ անխափան գոհութեան աղօթք է անում:

Չորրորդ՝ խաղաղութիւն մէջ է բնակւում, որովհետեւ այնտեղ, որտեղ խնդութիւն է՝ խաղաղութիւն է, եւ որտեղ խաղաղութիւն է՝ խնդութիւն է: Իսկ եթէ մարմնական խնդութիւն է եւ դիւական, վերոնշեալին հակառակ է եւ վերջում տրտմութիւն է բերում, ինչպէս ասում է սուրբ Եւագրիոսը[549]:

Գ. ՀԵԶԵՐԻ ՄԱՍԻՆ

Հեզը չի չարչրկւում[550] եւ չի բռնադատում: Իսկ հեզութիւնը նոյնանում է իմաստութեան հետ, որովհետեւ ասում են, թէ՝ իմաստութիւնն է, որ ոգու ոչ մի դառնութիւն չի զգում: Իսկ իմաստութիւնը նոյնական է համբերութեանը, որովհետեւ համբերութիւնը տոկալն է

մարմնական նեղութիւններին, իսկ իմաստութիւնը տոկալն է նախատինքներին:

Հարց. Ի՞նչ է հեզութիւնը, ի՞նչ խոնարհութիւնը:

Պատասխան. Հեզութիւնը ցասմանն է հակառակ, խոնարհութիւնը՝ հպարտութեանը:

Դ. ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՂՑԻ ՄԱՍԻՆ

Մարմնական քաղցը ստամոքսում պակասութիւնն է, իսկ ծարաւը՝ ջերմութեան տապը. արդարութեան քաղցն էլ արդարութեան կամ ծայրագոյն բարու սաստիկ տենչումն է:

Արդ, արդարութեան քաղցը աւելի մեծ երանութիւնն է, քան միւս ձեռքբերովի առաքինութիւնները, որովհետեւ արդարութեամբ անմիջականօրէն միաւորւում ենք Աստծոյ հետ, որ ուրիշ առաքինութիւններով չի լինում, քանզի արդարութիւնը, որ ասւում է այստեղ, պարունակում է հաւատ, յոյս, սէր, որոնք անմիջականօրէն մեզ միաւորում են Աստծոյ հետ:

Ե. ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ողորմութիւնն այն է, որով երկրաւորներս շահում ենք երկնաւորներին:

Ողորմութիւնը յօժարական կարեկցանք է ուրիշների թշուառութեանը: Իսկ ողորմութեան գործերը տասնչորսն են, որոնցից եօթը մարմնաւոր են, եօթը՝ հոգեւոր:

Արդ, մարմնաւորը սրանք են.

ա. քաղցողներին կերակրելը,

բ. ծարաւածին ջուր տալը,

գ. մերկին հագցնելը,

դ. օտարներին ժողովելը,

ե. գերուածներին փրկելը,

զ. հիւանդներին այցելելը,

է. մեռածներին թաղելը:

Առաջին վեցն ունենք Աւետարանից, եօթներորդը՝ Տուբիթի [գրքից]:

Իսկ հոգեւոր գործերը սրանք են.

Նախ՝ յանցաւորին ներելը,

բ. մեղաւորին յանդիմանելը,

գ. տգէտներին ուսուցանելը,

դ. երկմիտներին խրատելը,

ե. տրտմածներին մխիթարելը,

զ. ընկերոջ փրկութեան համար աղօթելը,

է. համբերել սեփական անձի դէմ գործած անիրաւութիւններին:

Այս վերջինը ողորմութեան գործ է ասում, որովհետեւ փափուկ եւ խոնարհ պատասխանը խորտակում է ընկերոջ բարկութիւնը եւ շահում նրան:

Զ. ՍՐՏԻ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սրտի սրբութիւն է, երբ պայծառանում եւ մաքրւում է սիրտը՝ Աստծուն տեսնելիս եւ ուժգին, ջերմեռանդ սիրելիս: Այս դէպքում սրտի սրբութիւնը ոչ թէ առաքինութեան առումով է ասւում, այլ իբրեւ մաքրուած հոգու յատկանիշ:

Է. ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խաղաղութիւնը առաքինութեան մէջ հաստատուն մնալն է, որ Աստծոյ մէջ երանական [վիճակում լինելն է]՝ առանց մարմնին՝ աշխարհին եւ սատանային հաւասարուելու, եւ եթէ մի բան իսկ լինի՝ անզօր է [խափանել այն]: Ուստի պարզ է,

որ խաղաղութիւն կարող է ունենալ յոյժ մաքրուած հոգին:

Արդ, խաղաղարարներն աւելի շատ են Աստծոյ որդի ասւում, քան այլք, որովհետեւ թէպէտ ողորմութիւնը տեսանելի գործերով աւելի է մարդուն նմանեցնում Աստծուն, սակայն ըստ ներքին [էութեան] աւելի նմանեցնում է խաղաղութիւնը:

Խաղաղութիւն է նաեւ ցեղակիցների հետ սիրով ապրելը:

Եւ խաղաղութիւնը երեք տեսակ է:

Նախ՝ ով խաղաղեցնում է ուրիշներին իբրեւ միջնորդ:

Երկրորդ՝ իրենք այլոց հետ, ինչպէս հեզերն ըստ առաքեալի խրատի. «Բոլորի հետ խաղաղութեան մէջ եղէ՛ք» (Հռոմ. ԺԲ 18):

Երրորդ՝ ինքն իր հետ, ինչպէս առաքինիներն են ունենում հոգու, մարմնի, մտքի [ներդաշնակ] խաղաղութիւն եւ չէզոքացնում այն հակամարտութիւնը, որն ունի մարմինը հոգու դէմ:

Սրանք բոլորը կոչւում են երանելիներ, քանզի Աստծոյ որդիներ են համարւում:

Հարց. Ի՞նչ է Աստծոյ Որդու խաղաղութիւնը:

Պատասխան. Այն, որ մէջտեղից դուրս բերեց մեղքը, չար կամքը եւ սատանային, որոնք խաւար էին, եւ խաղաղութիւն հաստատեց երկնքի եւ երկրի միջեւ:

Նախ՝ խաղաղութիւն հաստատեց իր անձի մէջ, որովհետեւ աստուածային եւ մարդկային բնութիւնը միաւորեց իր մէջ՝ մի կամքով եւ մի անբաժանելի ներգործութեամբ:

Երկրորդ՝ հաշտեցրեց Հայր Աստծուն արարածների հետ եւ պարգեւեց Սուրբ Հոգուն:

Երրորդ՝ [հաշտեցրեց] հրեշտակներին եւ մարդկանց՝ վերացնելով հրեղէն սուրն ու թշնամանքը:

Չորրորդ՝ հրէաներին եւ հեթանոսներին մի եկեղեցում ժողովեց:

Հինգերորդ՝ խաչողների եւ չարչարողների համար աղօթք արեց[551]:

Արդ, առաջինն ինքն իր հանդէպ խաղաղութիւնն էր, վերջինը՝ իր եւ ուրիշների միջեւ, իսկ միջինը՝ երրորդը, ուրիշների միջեւ խաղաղութիւն հաստատելը:

Ը. ՀԱԼԱԾՈՒԵԼՈՒ ԵՒ ՆԱԽԱՏՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ութերորդ երանութիւնն է՝ «[Երանի նրանց,] ովքեր հալածուելու են յանուն արդարութեան, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը» (Մտթ. Ե 11):

Այս առաքինութիւնը ցոյց է տալիս, որ յանուն արդարութեան հալածանքներին դիմանալը կապուած է խաղաղութեան հետ, քանի որ խաղաղարարը չունի մարմնի, աշխարհի եւ սատանայի հակամարտութիւնը, ուստի պարզ է, որ պատրաստ է յաղթել մահուան փորձութեանը, քանզի մահն ընդունելը յանուն Քրիստոսի խաղաղութեան համահաւասար աստիճան է:

Այս պատճառով էլ վարդապետներն ասում են, թէ ըստ էութեան ութն են

երանութիւնները, իսկ եօթ՝ ըստ զանազանութեան աստիճանների, որովհետեւ խաղաղութիւնից բարձր առաքինութիւն չկայ, քանզի խաղաղութիւնն է վախճանն ու իրագործումը բոլոր առաքինութիւնների:

Եւ ութերորդ երանութիւնը դառնում է առաջինը՝ երկու կերպ. նախ, որովհետեւ նրան էլ խոստացւում է նոյն վարձատրութիւնը, այսինքն՝ երկնքի արքայութիւնը: Եւ երկրորդ, որովհետեւ մնացեալ բոլորին, վերջից մինչեւ առաջին փորձում է, որ [տեսնի], ճշմարի՞տ են արդեօք:

Քանզի վարդապետներն ասում են, որպէսզի իւրաքանչիւր մարդ պարսպուած լինի ինքն իր մէջ, իբրեւ փորձութիւն տուել է նախատինքը, այդ պատճառով էլ իբրեւ իններորդ յաղթանակ նշում է. «Ձեր վարձքը բազում է լինելու երկնքում» (Մտթ. Ե 12):

Եւ տե՛ս, որ բամբասանքի եւ նախատինքի համար «բազում է» ասում հատուցումը: Իսկ ասելը «երկնքում», նախ ցոյց է տալիս, որ երկրաւոր բաներ չեն: Երկրորդ՝ մշտնջենաւոր եւ անանց են: Երրորդ՝ դասակից են հրեշտակներին: Չորրորդ՝ միշտ լոյսի մէջ են: Հինգերորդ՝ եթէ միշտ Աստծուն նայեն, կտեսնեն նրան: Վեցերորդ՝ հրեշտակների հետ նոր իմաստութիւն եւ նոր գիտութիւն կստանան: Եօթներորդ՝ «երկնքում» ասելով՝ ցոյց է տալիս նաեւ, թէ այս կեանքից յետոյ է լինելու փոխհատուցումը եւ ոչ թէ մարմնում գտնուելով: Ութերորդ՝ նշանակում է մեր վերադարձը երկինք եւ [այն] ստանալը: Իններորդ՝ [ասում է՝] «երկնքում». ուրեմն Աստուած է վարձատրողը: Տասներորդ՝ ինչպէս երկնքի աստղերն են տարբեր, այդպէս էլ փառքով տարբեր են վարձատրութիւններն՝ ըստ առաքեալի. «ինչպէս աստղը աստղից առաւել է փառքով» (Ա Կորնթ. ԺԵ 41): Եւ Տէրն ասում է. «արդարները փայլելու են երկնքի արքայութիւնում իբրեւ արեգակ» (Մտթ. ԺԳ 43):

Իսկ սկզբում ասածներից եզրակացնելու է, թէ մարդկային առաքինութիւնների ունակութիւնները նախապատրաստում են վարժուելու գործնական կեանքին, իսկ պարգեւների ունակութիւնները նախապատրաստում են վարժուելու տեսական կեանքին: Մինչդեռ երանութիւնների ունակութիւնները նախապատրաստում են երկուսի կատարելութեանը:

Այսքանն այս մասին:

ԳԼՈՒԽ ԼԴ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՕԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊՐԱԿ ԻԸ

Հարց. Որո՞նք են եկեղեցու եօթ խորհուրդները:

Պատասխան. Նախ՝ մկրտութիւնը:

Երկրորդ՝ դրոշմը:

Երրորդ՝ հաղորդութիւնը:

Չորրորդ՝ ապաշխարութիւնը:

Հինգերորդ՝ վերջին օծումը:

Վեցերորդ՝ քահանայութեան կարգը:

Եօթներորդ՝ պսակը:

Հարց. Ինչո՞ւ են եկեղեցու խորհուրդները եօթը:

Պատասխան. Վարդապետները բազում պատճառներ են նշում:

Նախ, ըստ եկեղեցում մարդկանց [պատրաստուածութեան] զանազանութիւնների:

Առաջին խորհուրդը մկրտութիւնն է, որ եկեղեցի նոր մտածների համար է:

Երկրորդը դրոշմն է, որ թշնամի սատանայի դէմ պատերազմողներինն է:

Երրորդը հաղորդութիւնն է, որ պատերազմում վերստին զօրացողներինն է, ինչպէս նաեւ՝ հոգեւոր կերակուր:

Չորրորդը ապաշխարութիւնն է, որ վերստին ոտքի կանգնածներինն է, ովքեր ընկնում են մեղքով, սակայն ապաշխարութեան գործերով վերստին ոտքի կանգնում:

Հինգերորդ, վերջին օծումը, որ կեանքին հրաժեշտ տուածներինը եւ պատերազմից ազատուածներինն է:

Վեցերորդը, այս խորհուրդներին սպասաւորողների կարգն է, ովքեր եկեղեցու քահանաներն ու միւսներն են:

Եօթներորդը պսակն է, որ մարմնաւոր ծնունդով նոր զինուորի ներս մտնելու խորհուրդն է:

[Միւս պատճառը.] եօթն են խորհուրդները, որոնք մեզ նախապատրաստում են ընդունելու եօթ առաքինութիւնները՝ հաւատը, յոյսը, սէրը, խոհեմութիւնը եւ այլն, քանզի մկրտութիւնը հաւատի խորհուրդն է, որովհետեւ յայտնի է, որ նախ հաւատում ենք, ապա՝ մկրտւում:

Դրոշմը յոյսի խորհուրդն է, որովհետեւ Սուրբ Հոգու զօրութեանը յուսալով, կարող ենք դիմադրել թշնամուն:

Հաղորդութիւնը սիրոյ խորհուրդն է, որովհետեւ սիրով ենք միաւորւում եւ հաղորդւում գլխին՝ Քրիստոսին, մարմնով՝ նրա մարմնին, անդամներով՝ նրա անդամներին:

Ապաշխարութիւնը արդարութեան խորհուրդն է, որովհետեւ զղջման եւ խոստովանութեան միջոցով արդարացւում են մեր մեղքերը:

Օծումն արդարութեան լրման խորհուրդն է, որովհետեւ մաքրում ենք պատերազմից դուրս եկածների վրայի փոշին եւ քրտինքը, ինչպէս մարմնական պատերազմից դուրս եկածներինը:

Կարգը խոհեմութեան եւ գիտութեան խորհուրդն է, որովհետեւ իմաստութեամբ եւ գիտութեամբ ենք սպասաւորում խորհուրդներին՝ խրատելով ուսուցանում ժողովրդին:

Իսկ պսակը ողջախոհութեան խորհուրդն է, որովհետեւ ողջախոհ ամուսնութեամբ զսպում ենք վաւաշոտ ցանկութիւնները եւ հրաժարւում շնութիւնից ու պոռնկութիւնից:

Այս պատճառով էլ եօթն են եկեղեցու խորհուրդները:

Եօթն են նաեւ այն պատճառով, որ կարգուած են երեք մեղքերի եւ չորս պատիժների դէմ. մկրտութիւնն սկզբնական մեղքի դէմ է.

ապաշխարութիւնը՝ ներգործական մահացու մեղքերի դէմ.

օծումը՝ ներելի մեղքերի դէմ.

կարգը՝ իմացութեան դէմ.

հաղորդութիւնը՝ չարութեան.

դրոշմը՝ անկարողութեան.

պսակը՝ ցանկութեան, որ բարեխառնում եւ անմեղադրելի է դարձնում:

Սա [այն մասին], թէ ինչո՞ւ են եօթը:

Ա. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԹ

Հարց. Ի՞նչ է մկրտութիւնը:

Պատասխան. «Մկրտութիւնը ջրով արտաքնապէս մարմինը լուանալն է եւ Աստծոյ խօսքով մեղքերի մաքրուելը»:

Եւ միւսը. «Մկրտութիւնը վերստին մաքրութիւն եւ աստուածային ծնունդ տալն է»:

Միւսով՝ «Մկրտութիւնը վերստին ծնուելն է, պահպանութեան եւ լուսաւորութեան կնիքը»:

Միւսով՝ «Մկրտութիւնը Սուրբ Հոգու առհաւատչեան է, այլ կեանքի սկիզբը»:

Եւ մկրտւում են հետեւեալ կերպ.

«Քրիստոսի արեամբ գնուած այս անունով Աստծոյ ծառան երախայութիւնից յօժար կամքով գալով մկրտութեան՝ այժմ մկրտւում է իմ ձեռքով՝ յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու», որ այլայլելով՝ ֆռանկների ազգն ասում է. «Ես կմկրտեմ քեզ յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու», որ անյարմար շարադասութեամբ ցոյց են տալիս, թէ «կ»-ն են մկրտում եւ ոչ թէ նուիրեալին:

Եւ երկրորդ անպատշաճութիւնը, որ «կմկրտեմ» ասելով, թուում է, ցոյց են տալիս, թէ նուիրեալն իր կամքով չի եկել մկրտութեան, այլ՝ բռնութեամբ եւ հարկադրուած, [որովհետեւ ասում է՝] «կմկրտեմ»: Իսկ այս կերպ մկրտողից մկրտուողին Հոգու շնորհ չի տրուի, որովհետեւ Հոգու պարգեւները տրւում են ոչ թէ արհամարհողներին եւ չկամեցողներին, այլ հաւատով խնդրողներին, ըստ այդմ՝ «Ամէն ոք, ով խնդրի, կստանայ» (Յովհ. ԺԶ 24): Հետեւաբար, վայել չէ ասել, թէ՝ «ես կմկրտեմ»:

Իսկ առաջին ձեւով ասելու դեպքում արժանաւորապէս է տրւում Հոգու շնորհը եւ այդ կերպ ասելիս ոչինչ չպէտք է բաց թողնել եւ ոչ մի բան չաւելացնել, ոչ էլ կարգը փոխել, ինչպէս ասենք, եթէ առաջինը Հոգու անունը տրուի, ապա Որդու, յետոյ՝ Հօր:

Իսկ խօսքի էութիւնը, որ է՝ «յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու», պէտք է մէկ անգամ ասել եւ ոչ թէ տգիտաբար կրկնել:

Իսկ լուանալ պէտք է ողջ մարմինը, իսկ հարկ եղած պարագային՝ միայն պատուաւոր մասերը կամ էլ՝ միայն երեսը:

Դարձեալ պահանջւում է, որ մկրտողն ունենայ դիտաւորութիւն մկրտելու այն մտքով, ինչը որ՝ բովանդակ եկեղեցին: Եւ եթէ հասակով մեծ է, յատուկ հաւատ պահանջել, իսկ եթէ երեխայ է՝ բաւական է եկեղեցու խորհուրդը:

Եւ պէտք է իմանալ նաեւ, որ ֆռանկների հերձուածող ազգն այստեղ էլ ասում է, թէ՝ չնայած մկրտութիւնը քահանայի գործն է, սակայն հարկ եղած դէպքում, եթէ քահանայ չկայ, իւրաքանչիւր ոք, ով գիտէ մկրտութեան ձեւը,

կարող է մկրտել: Եւ եթէ տղամարդ չլինի, եւ մանուկը մահամերձ լինի, կինը կարող է մկրտել, եթէ գիտէ մկրտութեան խօսքերը, որոնք ուսուցանեց Քրիստոս. «յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու», ապա ցանի ջուրը եւ ասի՝ «մկրտուած լինի»:

Եւ սա մեծագոյն հերձուածողութիւն է ու յանդուգն հայհոյութիւն ընդդէմ եկեղեցու կարգի: Նախ՝ որովհետեւ այսպիսի չար աղանդ ուրիշ ո՛չ մի քրիստոնեայ եկեղեցում չկայ[552]:

Երկրորդ՝ որովհետեւ Աստուած արարածների մէջ որպէս այս խորհրդի նշանակ Ադամին կարգեց եւ ոչ կնոջը, երբ կենդանիներին բերեց Ադամի առջեւ, որ անուններ տայ նրանց:

Երրորդ՝ եւ եթէ հնարաւորութիւն լինէր այս շնորհը կնոջ ձեռքը տալու, ապա ինչո՞ւ Աստուածածին կոյս Մարիամը մօտ չգտնուեց իր Որդու մկրտութեանը՝ Յորդանան գետում:

Չորրորդ՝ որովհետեւ եթէ Փիլիպպոս առաքեալի միջոցով, որ այն եօթ սարկաւագներից մէկն էր, Հոգին չիջաւ ներքինու վրայ, մինչ չյափշտակուեց Ազովտոսը, որից յետոյ միայն Հոգին իջաւ նրա մկրտածի վրայ, ինչպէ՞ս կարող են Հոգու շնորհները կնոջ միջոցով տրուել՝ ջրով լուանալով:

Հինգերորդ՝ եթէ հնարաւորութիւն կար հարկ եղած դէպքում քահանայի դեր կատարել, ինչո՞ւ չկարողացաւ Նունի կոյսը մկրտել վրացիներից գէթ մէկին, երբ աստուածահաւատ դարձրեց, այլ առաքեց սուրբ Գրիգորի մօտ եւ նրանց մկրտելու համար քահանայ խնդրեց[553]:

Վեցերորդ՝ եթէ կինը հարկ եղած դէպքում կարող է մկրտել, իսկ որքա՜ն աւելի պատուական էր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, քան մի կին, ինչո՞ւ ոչ մի հաւատացեալի չմկրտեց, մինչեւ գնաց Կեսարիայում ձեռնադրուեց, ապա վերադառնալով՝ հազար-հազարների եւ բիւրաւորների մկրտեց գետում[554]:

Եօթներորդ՝ որովհետեւ մկրտելը քահանայի գործ է, իսկ քահանայութիւնը Աստծոյ սպասաւորութիւն է, եւ նոյնիսկ կռապաշտներն էլ սովորութիւն չունէին կանանց միջոցով զոհաբերութիւն անելու իրենց սնոտի կուռքերին. այդ կերպ վարւում էին նաեւ բոլոր հեթանոսները: Իսկ եթէ հեթանոսներն այդպիսի պարկեշտութիւն էին դրսեւորում, որքա՜ն առաւել եւս եկեղեցին է պարտաւոր, որտեղ ճշմարիտ կարգն է եւ սուրբ օրէնքը:

Ութերորդ՝ եւ եթէ հրաման չկայ, որ կենդանին զոհաբերուի կնոջ միջոցով, որը [լոկ] մարմնական սրբութեան սահմանափակում է, ինչպէ՞ս կարող էր հրաման տալ մօտենալ հոգեւոր կարգի սրբութեանը:

Իններորդ՝ եւ մկրտութիւնը քահանայութեան գործ է, իսկ քահանայութիւնը ազատ է եւ ոչ մէկի հարկադրանքի տակ չէ, մինչդեռ կինը ծառայ է եւ տղամարդու ոտքը, իսկ Տիրոջ գործը ծառային չի թոյլատրւում անել, ինչպէս որ գրուած է Նիկիական կանոնների գրքում[555], որը չի թոյլատրում ծառային եկեղեցու ժա-

ռանգութեան մէջ կարգ ստանալ, այլ միայն այն դէպքում, եթէ տիրոջ կամքով ազատուած լինի, ինչպէս Ոնեսիմոսը (տե՛ս Կողոս. Դ 9, Փիլիպ. 10)[556]:

Իսկ եթէ ծառայ տղամարդուն սուրբ հայրապետները թոյլ չտուեցին եկեղեցում աստիճան ստանալ, որքա՞ն առաւել եւս մեծ հերձուածողութիւն կլինի կանանց թոյլատրել քահանայի գործ անել, որ ազատներին է [վայել] եւ ոչ ծառային, որին Աստուած ասաց, թէ՝ «Քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ» (Ծննդ. Գ 16),:

Տասներորդ՝ որովհետեւ մկրտութիւնը քահանայի գործ է, որ աղօթքով է կատարում, իսկ եթէ առաքեալը կանանց պատուիրում է աղօթքի ժամին գլխաշոր գցել հրեշտակների համար (տե՛ս Ա Կորնթ. ԺԱ 10), այսինքն՝ քահանաների համար, որոնք գրքում հրեշտակ են անուանւում, ապա որքա՞ն դատապարտելի է նրանց թոյլատրելը եւ քահանայի գործ կատարելու համարձակութիւնը:

Սուրբ գրքում կան նաեւ բազմաթիւ այլ վկայութիւններ, որոնք այսպիսի հերձուածողութիւնը սուտ եւ ընդունայն են դարձնում: Եւ պէտք է իմանալ, որ մկրտութեան գործը հոգին մաքրելն է բոլոր մեղքերից, թէ՛ բնական, եւ թէ՛ ներգործական, եւ մեղքի պատիժներից, որովհետեւ եթէ նոր մկրտուածը մեռնի, հոգին անմիջապէս յաւիտենական կեանք կթռչի:

Եւ մկրտութեամբ գոյաւորուածների մասին ասուել է վերը՝ Տիրոջ մկրտութեան մասին քսանհինգերորդ պրակում:

Հարց. Մէկ անգամ մկրտուածին պէ՞տք է արդեօք կրկին մկրտել:

Պատասխան. Ասենք, որ չի կարելի կրկին մկրտել՝ չորս պատճառով: Նախ՝ որովհետեւ մարմնաւոր ծնունդը նշանակում է հոգեւոր ծնունդ, եւ ինչպէս մէկն է մարմնաւոր ծնունդը, այդպէս էլ մէկն է հոգեւորը:

Երկրորդ՝ որովհետեւ մկրտութիւնը առաջին մեղքի դէմ է, իսկ առաջին մեղքը մէկն է եւ ոչ թէ երկուսը:

Երրորդ՝ ո՛վ մկրտւում է, մկրտւում է Քրիստոսի մահուան մէջ, իսկ Քրիստոս մէկ անգամ մեռաւ: Եւ եթէ մէկը նորից է մկրտւում, նորից խաչ է հանում Աստծոյ Որդուն եւ դարձեալ [խաղք ու] խայտառակ դարձնում, ինչպէս առաքեալն է ասում (տե՛ս Եբր. Զ 6):

Չորրորդ՝ որովհետեւ մկրտութիւնը անքակտելի կնիք է հոգու վրայ, ինչպիսիք կարգն ու դրոշմն են, ուստի կրկնակի [չեն մկրտւում], ովքեր յանուն Սուրբ Երրորդութեան մկրտուեցին: Սակայն արիոսեաններին, մակեդոնեաններին կամ նեստորականներին [կարելի է] մկրտել, որոնք չեն ընդունել Սուրբ Երրորդութեան միասնութիւնը, եւ մկրտելի են նրանց մկրտուածները՝ ի փառս ամենասուրբ Երրորդութեան:

Եւ պէտք է իմանալ, որ սուրբ աւազանով ծնունդի ժամանակ հինգ զարմանալի բաներ են երեւում, որոնք մարմնաւոր ծնունդի ժամանակ չեն

լինում: Նախ՝ որ միանգամից կարող է ծնուել մի ամբողջ ազգ, եւ թէ՛ հազար, թէ՛ բիւր, ըստ այդմ՝ «Ո՞վ տեսաւ եւ լսեց, թէ Սիօնը երկնեց ու ծնեց մի ողջ ազգ» (Ես. ԿՁ 8): Եւ սա քահանայի զօրեղ իշխանութեան եւ ջրի առաւելութեան պատճառով է:

Երկրորդ՝ որովհետեւ ծնում է կուսութեամբ եւ անապականութեամբ, որի պատճառը Սուրբ Հոգին է եւ ջրի նիւթը, քանի որ հեղուկ է:

Երրորդ՝ միշտ անդրանիկ է ծնում եւ ոչ թէ կրտսեր, քանզի Քրիստոսի պատկերն ենք ստանում, որ Հօր անդրանիկն է (հմմտ. Կողոս. Ա 15):

Չորրորդ՝ միշտ Աստծոյ որդի ենք ծնւում եւ ո՛չ դուստր եւ էգ, որովհետեւ Քրիստոսի մօտ արու եւ էգ չկան, ասում է առաքեալը (տե՛ս Գաղ. Գ 28), որ ցոյց է տալիս աւազանի եկեղեցու աջ կողմում [գտնուելը]:

Հինգերորդ՝ բոլորը ծնւում են հաւասար պատուով եւ այլ՝ ոչ մէկը պատուով, միւսը՝ անպատիւ, իշխան կամ ենթակայ, ինչպէս առաքեալն է ասում՝ «Տարբերութիւն չկայ ո՛չ հրէայի ու հեթանոսի, ո՛չ ծառայի եւ ազատի միջեւ», քանզի դուք բոլորդ միապատիւ էք Յիսուս Քրիստոսի մէջ եւ արքայութեան համաժառանգներ: (Գաղ. Գ 28): Սա էլ ցոյց է տրուած այն նոյն անուանումով, որով կոչում ենք Երրորդութիւնը, հաւատի նոյն դաւանանքը եւ այլն:

Իսկ աւազանով ծնուելու մասին ասուել է Սառայի մասին [հատուածում՝ տասնիններորդ գլխի, տասներկուերորդ պրակում:

Հարց. Այլազգիների զաւակներին կարելի՞ է մկրտել, թէ ոչ:

Պատասխան. Անհրաժեշտ է մկրտել այլազգիների զաւակներին, որպէսզի մահից յետոյ ազատուեն սկզբնական մեղքից եւ դժոխքի պատժից:

Իսկ կնքահայր չի կարելի այլազգուն ընտրել, որովհետեւ սուրբ հաւատ չունի եւ չի հրաժարուել սատանայից, ուստի չի կարող մանկան լեզուն դառնալ, կամ՝ երաշխաւորը, որովհետեւ նա, ով հաւատ չունի, ուրիշի համար չի կարող միջնորդել:

Հարց. Կինը կարո՞ղ է կնքահայր լինել:

Պատասխան. Չի կարող, որովհետեւ ասում ենք կնքահայր եւ ոչ թէ կնքամայր, որովհետեւ նորածինների կնքամայրը եկեղեցին է: Եւ պատճառն այն է, որ կինը երաշխաւոր կամ վկայ լինել չի կարող, ուստի չի կարող լինել եւ կնքահայր:

Եւ բացի այդ, քանի որ կանայք քահանայելու իրաւունք չունեն, չեն կարող եւ կնքահայր լինել:

Եւ ոչ միայն սա, այլեւ մկրտութեան ժամանակ կինը չպէտք է մնայ եկեղեցում, որովհետեւ Տիրամայր կոյսն էլ մկրտութեան ժամանակ Քրիստոսի հետ Յորդանանում չէր, ինչպէս ասուեց վերը:

Հարց. Ինչո՞ւ ենք ջրով մկրտւում:

Պատասխան. Ջուրը ներհակ է հրին, իսկ մեղքը այլ բան չէ, քան հուր, ինչպիսին հոգու բարկութիւնն է, մարմնի

ցանկութիւնը, յայտնի նաեւ նրանով, որ տանջանքներն էլ կրակով են պատժւում:

Եւ քանի որ հուրը ջրով է հանգչում, ուստի ջրով ենք մկրտւում:

Եւ ջուրն է լուանում կեղտերը, յագեցնում ծարաւը, արտացոլում պատկերը: Այդպէս էլ Սուրբ Հոգու շնորհը մկրտութեան ժամանակ լուանում է մեղքերի կեղտերը, Աստծոյ խօսքով յագեցնում հոգու ծարաւը եւ վերադարձնում աստուածային կորուսեալ պատկերը:

Հարց. Ո՞րն է փոքրիկ մանկան մեղքը:

Պատասխան. Ադամից յետոյ մնացած սկզբնական մեղքը:

Հարց. Մանուկն իր կամքով չի գործել, ինչո՞ւ է Ադամի պատճառով մեղապարտ:

Պատասխան. Ադամի մեղքն այն է, որ կորցրեց արդարութիւնը եւ մեղքով ու ցանկութեամբ որդի ծնեց, որը եւ կոչւում է սկզբնական մեղք, որը չի ներւում, մինչեւ Քրիստոսի մահուան մէջ չմկրտուի (հմմտ. Հռոմ. Զ 3):

Հարց. Գրուած է՝ «Որդին պատասխանատու չէ հօր անօրէնութեան համար», ինչո՞ւ պէտք է ծնողների մեղքերի համար որդին տանջուի:

Պատասխան. Ոչ մէկի մեղքը միւսից չի պահանջւում, եւ ամէն մի մարդ իր մեղքի համար է պատժւում: Աստուած իւրաքանչիւր մարդուց արդարութիւն է պահանջում, որ ի սկզբանէ տուել էր, իսկ Ադամն արհամարհեց այն:

Արդ, փոքրիկ մանուկը ոչ թէ տանջւում է Ադամի արհամարհանքի պատճառով, այլ որովհետեւ ինքն էլ չունի այն արդարութիւնը, որի համար էլ տանջւում է: Ապա ուրեմն, իրաւամբ, քանի որ մանկան մէջ չկայ բնական արդարութիւն, ուստի իրաւացիօրէն մերժուած է Աստծոյ արդարութիւնից եւ տանջւում է անիրաւների հետ:

Այս նոյն պատճառով էլ բոլորը կրում են սկզբնական մեղքը, որովհետեւ մեր ողջ բնութիւնը Ադամի անձի մէջ մեղանչող դարձաւ ցանկասիրութեամբ, եւ առանց այդ մեղաւոր ցանկութեան ոչ ոք չի կարող ծնուել, եւ միայն մեր Տէրը ծնուեց առանց այդ ցանկութեան՝ կուսական արգանդից՝ չկրելով այդ սկզբնական մեղքը:

Հարց. Քրիստոնեայի զաւակը ինչո՞ւ է մեղաւոր համարւում, եթէ հայրը մկրտութեամբ մաքրուած է:

Պատասխան. Որովհետեւ որդին յղացուած է անմաքուր սերմից, ըստ այդմ՝ «Ո՞վ կարող է սուրբ դարձնել անսուրբ սերմից յղացուածին»: Եւ ասում է՝ «Անօրէնութեամբ յղացաւ եւ մեղքերի մէջ ծնեց ինձ մայրն իմ» (Սղմ. Ծ 7):

Հարց. Եթէ մարդը մկրտութեամբ ամբողջովին մաքրւում է, ինչպէ՞ս է նրա սերմն անմաքուր:

Պատասխան. Մարդը մկրտութեամբ ներքուստ եւ արտաքուստ ամբողջովին մաքրւում է, եւ այնուամենայնիւ, սերմը մարմնի ցանկութեան պատճառով պղծւում է, ինչպէս որ ցորենի

հատիկն է մաքուր սերմանւում, սակայն բուսնում է խոտերով եւ մոլախոտերով:

Հարց. Եթէ հօր մեղքը մկրտութեամբ ներւում է, ինչո՞ւ են նրանից ծնուածները [նորից] մկրտւում:

Պատասխան. Ինչպէս, որ խմորի որեւէ զանգուած թունաւորուած է լինում, նրանից թխուած բոլոր հացերն էլ մահաբեր կլինեն, այդպէս էլ ապականուած հայր Ադամից բոլոր ծնուածներն ապականուած են:

Արդ, երկու ծնող ունենք. ըստ մարմնի՝ Ադամը, ըստ հոգու՝ Քրիստոս: Եւ անհրաժեշտ է, որ ամէն ոք Քրիստոսի մկրտութեամբ ծնուի, որպէսզի մաքրուի ու ազատուի մահից: Եւ այսպէս՝ «Ինչպէս Ադամի պատճառով մահացան բոլորը, ովքեր ծնուեցին նրանից, այդպէս էլ Քրիստոսով բոլորը կենդանութիւն կստանան, ովքեր ծնուեն նրանից» (Ա Կորնթ. ԺԵ 22):

Հարց. Եթէ Ադամի պատճառով բոլորը մեռան, ապա ինչպէ՞ս են կենդանի ծնւում:

Պատասխան. Ինչպէս այն, որ մէկը իրեն մի պահ աշխարհին ցոյց տայ պատուհանից եւ փութով դառնայ դէպ մահը:

Հարց. Եթէ մկրտութիւնը պատժից ազատում է, ինչո՞ւ է մկրտուածը մեռնում:

Պատասխան. Մեղքերը երկու կերպ են պատժւում. մէկը մարմնի մահն է, միւսը՝ հոգու դժոխքը:

Արդ, Քրիստոսի մէջ մկրտուածը յանուն հոգեւոր Հօր ազատւում է հոգու պատժից, իսկ մարմնական հօր պատճառով կրում է մարմնաւոր պատիժը:

Եւ կրկին էր նաեւ Քրիստոսի գալուստը. առաջինով հոգիների պատիժը վերացրեց, երկրորդով՝ մարմնի, քանզի մարմինը հոգուց յետոյ է:

Եւ դարձեալ ինքը՝ Քրիստոս, նախ մեռաւ մարմնով, ապա կենդանացաւ մկրտութիւնից յետոյ: Այդպէս էլ մենք նախ մեռնում ենք մարմնով, ապա՝ յարութեամբ կենդանանում ենք:

Հարց. Եթէ Քրիստոսի մահով մեղքը ներուեց, ինչո՞ւ ենք մենք մկրտւում:

Պատասխան. Քրիստոսի մահով մեղքերը ներուեցին, սակայն մենք Քրիստոսի մահուան հաւատով ենք մկրտւում, որպէսզի նրա մահուան մասնակիցը լինենք, որով եւ հաղորդուենք նրա շնորհներին եւ ներմանը (հմմտ. Հռոմ. Զ 5):

Հարց. Եթէ յղի կինը մկրտուի, օգո՞ւտ է մանկանը, եթէ մօր արգանդում մեռնի:

Պատասխան. Ո՛չ, որովհետեւ չծնուեց իբրեւ երկրորդ Ադամ, քանի որ անհրաժեշտ է նախ մարմնով ծնուել, ապա վերածնուել հոգով:

Հարց. Եւ ո՞րն է անկնունք երեխայի պատիժը:

Պատասխան. Միայն խաւարը, թէ՛ այժմ, թէ՛ հանդերձեալում, որովհետեւ հրով տանջւում է ներգործական մեղքը եւ ոչ թէ պատժւում սկզբնականը:

Հարց. Ի՞նչ վտանգ է սպառնում երեխային, եթէ նա ծնուել է ոչ թէ արդար ամուսնութեամբ, այլ պոռնկութեամբ:

Պատասխան. Ոչ մի, եթէ մկրտւում է, ինչպէս որ վտանգ չկայ այն ցորենից, որ գողացւում եւ ցանւում է գողի ձեռքով:

Հարց. Ծնողի մեղքը վտանգո՞ւմ է որդուն, կամ որդու մեղքը՝ ծնողին:

Պատասխան. Գրուած է. «Իւրաքանչիւրն իր բեռն է տանում, եւ որդին իր հօր բեռը չի կրում եւ ոչ էլ որդու մեղքը» (հմմտ. Գաղ. Զ 5): Ինչպէս որ Յովսիային վնաս չեղաւ հօր սխալի պատճառով, [չնայած,] որդին նոյնպէս անհիրաւ եղաւ (տե՛ս Դ Թագ. ԻԲ, ԻԳ, Բ Մնաց. ԼԴ, ԼԵ):

Սակայն եթէ որդիների ծնողները, կամ ծնողների որդիները մեղքի կամակից եւ համախոհ են լինում, չարակից են եւ ոչ թէ ուրիշի, այլ իր մեղքերի համար է յետոյ պատժւում իւրաքանչիւրը: Այդ պատճառով է գրուած, թէ մինչեւ երրորդ կամ չորրորդ սերունդը վրէժխնդիր է լինում, եթէ հայրը, որդին եւ թոռները նոյն մեղքն են գործում (տե՛ս Ելք ԼԴ 7):

Այսքանը մկրտութեան մասին:

Բ. ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ
Պրակ Լ

Հարց. Ի՞նչ է դրոշմը:

Պատասխան. Դրոշմը խորհրդի հաստատումն է, որ տրուած է զօրացնելու եւ քաջալերելու մարդուն: Այն տրւում է մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգու միջոցով, որով մեղքը քաււում է: Եւ սա քահանան է դնում նուիրեալի ճակատին՝ սուրբ մեռոնով, ըստ այլազգեաց եկեղեցու ասելով՝ այսպէս. «Այս ձեւի ներքոյ ես նշանում եմ քեզ խաչի նշանով եւ այսօր քեզ խառնում եմ Քրիստոսի հաւատին», իսկ մեր եկեղեցին ասում է. «Յիսուսի անունով անոյշ իւղը հեղում է քեզ վրայ իբրեւ կնիք երկնաւոր պարգեւների»:

Հարց. Ի՞նչ է նշանակում օծել սուրբ մեռոնով[557]:

Պատասխան. Ցոյց է տալիս, որ երբ Քրիստոս մկրտուեց, Սուրբ Հոգին իջաւ նրա վրայ, որովհետեւ ընդունեց իբրեւ մեր գլուխ եւ հեղեց անդամների՝ իր հաւատացեալների մէջ, ըստ այդմ՝ «Իւղի նման, քանզի իջնում է գլխի վրայ» (Սղմ. ՃԼԲ 2). այդպէս էլ ջրով մկրտւում ենք Քրիստոսի մէջ եւ կոչւում Աստծոյ որդի ու իւղով միաւորւում Սուրբ Հոգու շնորհներին:

Եւ պէտք է իմանալ, որ օծում է ճակատը, սիրտը, թիկունքը, դա է դրոշմը, իսկ որ հինգ զգայութիւններն է օծում, դա ծածուկ օծման խորհուրդն է, եւ որ այլ մասերն է օծում, այն խորհուրդն ունի, որ մինչ մկրտութիւնն օծում են այլ քրիստոնեայ ազգերը:

Իսկ եթէ մէկն ասի, թէ դուք դրոշմ չունէք, որովհետեւ եպիսկոպոսն է դնում, ինչպէս ֆռանկների ազգը, ապա ասենք, որ մենք դա կատարում ենք յոյների նման, որովհետեւ քահանան ինչպէս պատարագում եւ մկրտում է, այդպէս էլ դրոշմում է՝ ըստ սուրբ Դիոնէսիոսի: Եւ քահանայապետ է ասում նրան, ով պատարագում է, մկրտում եւ դրոշմում, որովհետեւ նա է պետը, աւագը՝ խորհուրդը կատարելիս, իսկ միւս քահանաները ընկերակից եւ սպասաւոր են այն կատարելու ժամանակ:

Նաեւ ասենք, որ եթէ մեր քահանան իրաւունք ունի դրոշմելու, ինչը նրանց եպիսկոպոսն է անում, ուրեմն մեր քահանան եւ նրանց եպիսկոպոսը իրաւահաւասար են:

Սա նրանց հակառակասիրութեան համար է ասւում, իսկ, որ ուղիղն է, քահանան իրաւունք ունի կատարելու եկեղեցու եօթ խորհուրդները, իսկ եպիսկոպոսն առաւելապէս իրաւունք ունի միայն կարգ տալ, եկեղեցի օրհնել եւ սեղան:

Եւ իմանալու է, որ օծելուց յետոյ պայծառ զգեստ են հագցնում, որ խորհրդանշում է լուսաւոր վարքը, պայծառ հաւատը եւ անմեղութիւնը: Կարմիր նարօտն ու սպիտակ մանուածքը ցոյց են տալիս Քրիստոսի կողից [բխած] արիւնն ու ջուրը, իսկ խաչը, որ վերցնում է՝ պարանոցի լուծը, բեմ բարձրանալը [նրա դէմ գործուած] բոլոր անօրէնութիւններից յետոյ Քրիստոսի երկինք բարձրանալը եւ Հայր Աստծոյ աջ կողմում նստելը, հաղորդուելը՝ իբրեւ գլուխ իր բոլոր անդամներին միաւորուելը, որովհետեւ բոլոր կատարումների կատարումը հաղորդութիւնն է, այսինքն՝ կարգի, պսակի, խոստովանութեան, մկրտութեան եւ այլն:

Գ. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԱ

Հարց. Ո՞րն է հաղորդութեան խորհուրդը:

Պատասխան. Հաղորդութեան խորհրդի ներքոյ ի դէմս հացի եւ գինու Քրիստոսն է, եւ [այդ] երկու մասերը ողջ Քրիստոսն է:

Այս խորհրդի նիւթերն են՝ ցորենի հացը եւ խաղողի գինին: Եւ այսպէս է ասւում. հացի համար՝ «Սա է մարմինն իմ», գինու համար՝ «Սա է արիւնն իմ՝ նոր ուխտի քաւութեան համար» (Մտթ. ԻԶ 28):

Եւ այս խորհրդի սպասաւորը միայն քահանան է:

Իսկ նպատակն է՝ աւելացնել շնորհը եւ հանապազօրեայ մեղքերի բժշկումը:

[ԱՅՆ ՄԱՍԻՆ,] ՈՐ ՉԻ ԹՈՅԼԱՏՐՈՒՄ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴԻՆ ՋՈՒՐ ԽԱՌՆԵԼ

Բայց իմանալու է, որ չար աղանդի հետեւորդներից ոմանք Քաղկեդոնից յետոյ խոտորուելով ճշմարտութիւնից՝ Քրիստոսի անապական արեան բաժակին ջուր են խառնում[558]:

Այսպիսի կարծիքը սուտ է բազում վկայութիւններով:

Նախ, վկայութիւն կայ հենց թշնամիներից, քանզի Ալբերտն իր Առաջին գրքի տասնմէկերորդ համարում ասում է, թէ՝ հոգին սրբութեան [համար է], արիւնը՝ փրկութեան, ջուրը՝ լուացման: Իսկ Չորրորդ գրքի քսաներորդ համարում ասում է՝ մարմինը տուեց ճաշակելու, արիւնը՝ ըմպելու, հոգին իբրեւ գին, կողի ջուրը՝ լուացուելու: Եւ նոյն ճառի մէջ, որտեղ թուարկում է Քրիստոսի չարչարանքների ութ քաղցրութիւնները, չորրորդ կէտում ասում է, թէ՝ արիւնն ու ջուրը ելան մեզ լուանալու համար[559]:

Երկրորդ, վկայութիւն ունենք Քրիստոսից, որ գինին տուեց իբրեւ արեան խորհրդանիշ եւ ասաց. «Այլեւս չեմ խմելու այդ որթի բերքից, մինչեւ որ խմեմ

իմ Հօր նոր արքայութեան մէջ» (Մտթ. ԻԶ 29): Իսկ ջուրը որթի բերք չէ:

Երրորդ, վկայ ունենք մարգարէներին եւ առաքեալներին. ինչպէս Դաւիթ մարգարէն է ասում՝ «Քո անապական բաժակը արբեցրեց ինձ» (Սղմ. ԻԲ 5):

Եւ կամ՝ «Գինին զուարթացնում է» (Ժող. ԻԲ 5) եւ ջրի անուն չի տալիս:

Եւ Յակոբն օրհնելով Յուդային ի դէմս Քրիստոսի՝ ասում է՝ «Կապելու է որթից աւանակին եւ գինով լուանալու իր պատմուճանը» (Ծննդ. ԽԹ 11) եւ [դարձեալ] ջուր չի յիշատակում:

Եւ Մովսէս մարգարէն էլ առաջաւորութեան սեղանին դնում էր մի խորոված գառ, հաց եւ չորրորդ դորակի մասով գինի, սակայն ջուր չէր դնում (տե՛ս Ելք ԻԹ 40), որով խորհրդանշւում էր Անմահ Գառը, հացն ու գինին՝ նրա մարմինն ու արիւնը սուրբ:

Հետեւաբար ճշմարտութեան համար ջուր պէտք չէ:

Եւ Մելքիսեդեկն էլ հաց ու գինի պատարագեց Աբրահամին, սակայն ոչ ջուր (տե՛ս Ծննդ. ԺԴ 18-20), որ խորհրդանշում էր Քրիստոսի ճշմարիտ պատարագը. հետեւաբար, ջուր չպէտք է խառնել:

Սրանք Հնի [վկայութիւնները]:

Իսկ Նոր կտակարանն ասում է՝ «Բաժակն առաւ ձեռքը, օրհնեց եւ ասաց. ա՛յս է արիւնն իմ» (Մտթ. ԻԶ 28) եւ ջուր չի յիշատակում:

Այդպէս էլ առաքեալն է ասում. «Բաժակը, որ ըմպում էք, Քրիստոսի արեան հաղորդութիւնը չէ՞» (Ա Կորնթ. Ժ 16):

Իսկ Պետրոս առաքեալն ասում է. «Գնուեցինք ոչ թէ ապականացու արծաթով ու ոսկով, այլ Քրիստոսի անապական արեամբ» (Ա Պետ. Ա 19):

Չորրորդ վկայութիւնը՝ կանոններից[560], որովհետեւ առաքելական կանոնները՝ Կղեմինը, Մակարինը եւ այլք ասում են, թէ պէտք է ամէն օր սեղանի վրայ տաք հաց դնել եւ անապական [գինով] բաժակ, որովհետեւ փրկուեցինք Քրիստոսի անապական արեամբ: Եւ ո՛վ ջուր խառնի, ասում են՝ նզովեա՛լ լինի:

Հինգերորդ՝ հայրապետների վկայութիւնները, որոնք պատարագի խորհուրդը նկարագրեցին[561]: Մեծն Աթանասը, Յովհան Ոսկեբերանը, սուրբ Բարսեղը, մեր Լուսաւորիչը, բոլորն էլ նկարագրում են պատարագի խորհուրդը, սակայն ջուր չեն յիշատակում:

Վեցերորդ վկայութիւն. Քրիստոսի կողը բացուելիս նախ ջուր բխեց, ապա՝ արիւն եւ չխառնուեցին, հետեւաբար, այլ է ջրի խորհուրդը, այլ՝ արեան:

Իսկ եթէ ըստ քեզ խառն են բխել եւ այդ պատճառով ես պատարագին ջուր խառնում, ապա մկրտելիս էլ ջրին գինի խառնի՛ր: Իսկ եթէ ոչ, ուրեմն պարզ ջրով մկրտութիւն արա, անապական արեամբ՝ հաղորդութիւն:

Եօթներորդ վկայութիւնն ըստ իրերի, այսինքն՝ առաւել յարմար է անապական բաժակը Քրիստոսի անապական արեանը, քան ջրին խառնուածը եւ ապականուածը:

Իսկ եթէ մեր հակառակողները ասեն, թէ չի ապականում գինին, քանզի սակաւ է ջուրը, ապա ասենք, որ թէեւ նիւթը սակաւ է, սակայն բնութիւնը նոյնն է, որովհետեւ մի կաթիլ ջուրը եւ մի սափոր ջուրը բնութեամբ նոյնն են:

Ուստի, թէպէտ քիչ է խառնում ջուր, բայց ապականում են գինու եւ ջրի էութիւնը, որովհետեւ [արդէն] ոչ անապական գինի է, ոչ էլ՝ պարզ ջուր:

Իսկ եթէ մէկն ասի, թէ Երուսաղէմում առանց ջրի գինի չեն խմում, ապա ասենք, որ նախկինում ջրի խառնելը խորհուրդ չունէր եւ ոչ էլ մեզ մօտ, եթէ վաճառողն է ջուր խառնում, սակայն Քրիստոս չխառնեց:

Իսկ եթէ ասեն, թէ ջուրն այն խորհրդանշում է եկեղեցին, ապա ասենք, որ եկեղեցին սիրով ու հաւատով հաղորդուելով է միաւորուել Քրիստոսին եւ ոչ թէ ջրով:

Իսկ եթէ ասեն, թէ հաղորդութիւնը խորհրդանշում է Քրիստոսի մահը, որից արիւն եւ ջուր բխեց, ապա ասենք, որ արիւնը հաղորդութեան խորհուրդն է, ջուրը՝ մկրտութեան, որով ցոյց է տրւում Քրիստոսի մահն ըստ առաքեալի. «Ովքեր մկրտուեն Քրիստոսի մէջ, մկրտւում են նրա մահուան մէջ՝ թաղուելով նրա հետ» (Հռոմ. Զ 4):

Իսկ եթէ ասեն, ջուրը երկու յատկանիշ ունի, այսինքն՝ զովացնում է եւ մաքրում, ապա ասենք, որ յատկանիշները պատահականութիւն են, իսկ խորհուրդն էութիւն է, որ մէկն է եւ ոչ պատահականութիւն, որ բազմաթիւ են:

Եւ եթէ մէկն ասի, թէ՝ «Գինին խառնեց խառնարանում» (Առակ. Թ 2), ապա ասենք, որ խօսքը ոչ թէ ջրի եւ գինու խառնելու մասին է, այլ «խառնել» ասելով նկատի ունի, որ գինի է լցւում խառնարան, ինչպէս որ մի այլ տեղում ասում է. «Լիքը գինին անապական լցուած» (Սղմ. ՀԴ 9), որ նշանակում է խառնուած, որովհետեւ լցնել նշանակում է խառնել, իսկ խառնելը գինու լցնելն է անօթի մէջ:

Խառնել նշանակում է նաեւ միաւորել արիւնը մարմնի հետ, ինչպէս մենք ենք ընկալում:

Դարձեալ խառնելն է նաեւ Աստծոյ իմաստութիւնը մարդկանց հետ, որոնք խօսքով խառնուելով՝ միաւորուեցին, ինչպէս սուրբ Դիոնէսիոսն է ասում[562]:

Այլեւ հին իմաստութիւնը նորին խառնելով՝ միաւորեց Քրիստոս, այսինքն օրինակը ճշմարտութեան հետ, եւ խորհուրդն իրի հետ:

Այս է գինու՝ իմաստութեան խառնարանում խառնելու [իմաստը]:

Իսկ եթէ հակառակն ես պնդում եւ ջրի խառնելը մարմնական ես ասում, ապա ասենք քեզ, որ ոչ միայն ջրի, այլեւ կաթի ու մեղրի եւ գինու խառնելն է ասւում խառնարանում, ինչպէս գրում է սուրբ Դիոնէսիոսը Տիտոսին յղած թղթում[563]: Եւ դո՛ւ խառնիր սրանք պատարագի խորհրդին, որպէսզի ճշգրիտ մեկնիչն ու գրքի հետեւողը լինես: [Կարծես] առաքեալներն ու նրանց հետեւող սուրբ հայրերը չգիտէին խառնելը, եւ դու սովորեցիր եւ ջուր ես

խառնում ու մնալու ես նրանց անէծքի տակ, ինչպէս ցոյց տրուեց վերը:

Այլեւ հարց տամ ձեզ. ջուրը ի՞նչ խորհուրդ էր կատարում, որովհետեւ ասելով՝ «Ա՛յս է մարմինն իմ», հացի խորհուրդը կատարեց եւ ասելով՝ «Այս է արիւնն իմ»՝ գինու, իսկ ջուրը մնաց սոսկ ջուր եւ չիրականացուած:

Հարց. Իսկ ինչո՞ւ ոմանք ջուր են խառնում եւ խմոր:

Պատասխան. Այս է իրական պատճառը. նրանք, ովքեր կամենում են Քրիստոսի մարմինը ապականացու ասել, խմոր եւ ջուր են խառնում, թէեւ զանազան այլ պատճառաբանութիւններ են բերում:

Իսկ մենք՝ ուղղահաւատների դասս, Քրիստոսի կուսածին մարմինը խոստովանում ենք առանց ապականութիւնների, որի պատճառով անխմոր հացով եւ անապական բաժակով ենք կատարում նրա մարմնի եւ արեան խորհուրդը:

Իսկ խորհուրդն անխմոր բաղարջով կատարելու մասին ասել ենք քսանմէկերորդ գլխի երեսունութերորդ պրակում:

Հարց. Որո՞նք են պատարագի գոյացական մասերը:

Պատասխան. Չորսը, որոնցից մէկը եթէ պակաս լինի, խորհուրդը չի կատարուի:

Առաջին՝ քահանան.

երկրորդ՝ տեսակաւոր հացն ու գինին.

երրորդ՝ օրհնողի նպատակը.

չորրորդ՝ Քրիստոսի խօսքը, որ ասում է. «Ա՛յս է մարմինն իմ եւ ա՛յս է արիւնն իմ»:

Հարց. Ինչո՞ւ ենք մեր եկեղեցում մէկ նշխար օրհնում, իսկ այլազգիները՝ բազում:

Պատասխան. Որովհետեւ մէկ նշխարն է խորհուրդ կրողը եւ ոչ բազումը:

Նախ, որովհետեւ Քրիստոս սեղանից ձեռքով մէկ հաց վերցրեց եւ օրհնեց, ինչպէս եւ՝ մէկ գինի:

Երկրորդ՝ հրաման տուեց եզակիով, այսինքն՝ «Ա՛յս է մարմինն իմ եւ ա՛յս է արիւնն իմ», որ նշանակում է, թէ մէկն էր հացը:

Երրորդ՝ առաքեալն ասում է Կորնթացւոց [թղթում]. «Մէկ հաց, որովհետեւ մէկ մարմին ենք բոլորս եւ բոլորս այն մէկ հացից ենք վայելում» (Ա Կորնթ. Ժ 17):

Չորրորդ՝ օրինակում էլ մէկ հաց եւ մի խորոված գառ էր լինում, որ գինու մասի հետ դնում էին սեղանի վրայ[564]:

Այսպէս էլ ճշմարտութեան մէջ պէտք է մէկ նշխար դնել եւ մի բաժակ գինի:

Իսկ եթէ մէկն ասի, թէ քահանան կարող է բազմաթիւ հացեր օրհնել, ապա ասենք, որ կարողանալը նպատակն է, իսկ նպատակը՝ որոշուած սահմանը, որ մի հացն է, որի մասին ասաց՝ «Ա՛յս է մարմինն իմ», հետեւաբար, չի կարող բազմաթիւ հացեր օրհնել:

Եւ եթէ ասեն, մի քահանան կարող է մէկ ժամում շատ մանուկների մկրտել, ուրեմն կարող է եւ շատ հացեր օրհնել,

ապա ասենք, որ Քրիստոս շատերին օրհնելու իրաւունք տուեց, ըստ այդմ՝ «Նրանց մկրտեցէ՛ք յանուն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու» (Մտթ. ԻԸ 19), իսկ այստեղ մէկի համար հրամայեց՝ ասելով. «Սա կատարէ՛ք իմ յիշատակին» եւ ոչ թէ՝ «սրանք»:

Եւ դարձեալ ասենք, որ եթէ այսօր բոլոր հացերն օրհնեն, վաղն ինչպէ՞ս են օրհնելու. կամ պէտք է օրհնած հացը նորից օրհնեն, որ սուտ է, կամ էլ բոլոր հացերը չպէտք է օրհնել, այլ՝ մէկը:

Հարց. Ինչպէ՞ս է լինում Քրիստոսի մարմին եւ արիւն:

Պատասխան. Պատահականը եւ յատկանիշները մնում են հացի եւ գինու մէջ, իսկ էութիւնը փոխարկւում է Քրիստոսի մարմնին եւ արեանը չորս պատճառով[565]:

Նախ՝ որովհետեւ մենք մեր զգայարաններով, պատահականութիւնների միջնորդութեամբ ենք հասնում էութեանը, որովհետեւ դրանք էութեան անբաժանելի մասեր են:

Երկրորդ՝ որպէսզի մենք կարողանանք մօտենալ սրբութեանը, մնում են իբրեւ պատահական յատկանիշներ, իսկ եթէ լինէին իրական միս ու արիւն, ոչ ոք չէր համարձակուի մօտենալ:

Երրորդ՝ որպէսզի վարձատրուենք հաւատով, իսկ հաւատը աներեւոյթի մէջ է, որ էութիւնն է, ուստի պէտք է աչքով տեսնել զգայականը, իսկ մտքով նայել իմանալիին եւ երանի տալ: Ըստ այդմ ասաց Թովմասին՝ «Արդ, տեսար ինձ եւ հաւատացիր, երանի նրանց, ովքեր չեն տեսնի եւ կհաւատան» (Յովհ. Ի 29):

Չորրորդ՝ որովհետեւ սրանով ենք իմանում Բանի մարդեղութիւնը՝ երկու կերպ. նախ ինչպէս հացը նոյնն է մնում ըստ ձեւի, սակայն այլ գոյացութիւն է ստանում՝ դառնալով Քրիստոսի մարմին, նոյնպէս տեսանելի կերպարանքով ըստ ձեւի մնալով նոյնը, բայց բնութիւնը միաւորուած լինելով Աստծոյ Խօսքին՝ եղաւ Աստուած:

Եւ ինչպէս ամբողջ նշխարն է մէկ մարմին եւ երբ մասերի է բաժանւում, իւրաքանչիւրի մէջ առկայ է Քրիստոսի ամբողջական ու կատարեալ մարմինը, այդպէս էլ ամբողջ մարմինը եւ հոգին մէկ Աստուած են՝ միաւորուած Խօսքին, եւ բաժանուած ամբողջական մասունք էլ՝ ամբողջական եւ կատարեալ Աստուած է:

Ուստի, Քրիստոսի Հոգին Աստուած է, մարմինը՝ Աստուած է, Աստուած է նաեւ արիւնը, որի պատճառով էլ ճաշակում ենք Աստծոյ մարմինն ու արիւնը եւ ոչ թէ մարդու, ու ճաշակելով՝ դառնում ենք Աստուած՝ ըստ կարողութեան եւ ոչ թէ դառնում մարդ:

ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻԱՒՈՐՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ ենք միաւորւում մարմնի եւ արեան խորհրդին:

Պատասխան. Երեք պատճառով:

Նախ՝ որովհետեւ արիւնը հեղուկ նիւթ է, եւ կամ չպէտք է [այն] տալ՝ զրկելով ժողովրդին փրկչական արիւնից, ինչպէս այլազգիներն են անում, կամ էլ միաւորուելով մարմնին՝ պէտք է տալ,

որովհետեւ ինչպէս մարմինն է բաշխում, այդպէս էլ արիւնն է տալիս բոլորին:

Երկրորդ՝ ցամաք հացը երբեմն խորհրդանշում է երկնքից իջած Խօսքը, իսկ գինին՝ մարդկութիւնը, ըստ այդմ՝ «Հաղորդուեց մարմնին եւ արեանն իր մերձաւորութեամբ» (Եբր. Բ 14):

Երբեմն էլ հացը նշանակում է սուրբ մարմինը, իսկ արիւնը՝ անմահ կենդանութիւնը:

Եւ ինչ էլ որ լինի, միաւորւում ենք իրար հետ եւ խոստովանում Աստծոյ Բանը մարմնացած՝ անբաժանելի է իր մարմնից:

Իսկ ովքեր չեն խոստովանում միաւորեալ, [նրանք] բաժան եւ անջատ են համարում Բանն իր մարմնից, ինչպէս երկաբնակ քաղկեդոնականները:

Երրորդ՝ առանձին-առանձին օրհնում ենք հացն ու բաժակը, յետոյ ճաշակելիս՝ միաւորում, որովհետեւ արեան աղբիւրը բաժանուելով մարմնից՝ վերստին միաւորեց իր հետ եւ գումարուեց իր մարմնում՝ այլեւս երբեք չտրոհուելով:

Այդ պատճառով էլ մենք միաւորւում ենք խորհրդին:

Իսկ նրանք, ովքեր շաղակրատում են, թէ թացեալ պատառը Յուդային է, ապա ասենք, թէ՝ «Յիմարը յիմարութիւն է ասում, իսկ նրա սիրտը ունայնութիւն է խորհում» (Ես. ԼԲ 6), եւ դուք աւելի լաւ կանէք ժողովրդին հաղորդութիւն չտալ, որ Յուդայ չդառնան: Իսկ երբ դուք՝ անօրէն քահանաներդ, արիւնը մարմնի յետ էք խառնում, ուրեմն բոլորդ Յուդայ էք, որովհետեւ միանման էք միաւորւում թէ՛ դրսում, թէ՛ ներսում, քանի որ բոլոր կերակուրները եւ ըմպելիքները ներսում են միաւորւում:

Մենք այսպէս գիտենք Սուրբ գրքից, որ անարժան ուտելն է Յուդայ դարձնում եւ ոչ թէ միաւորութեամբ մարմինն ու արիւնը ճաշակելը:

Արդ, սուրբ խորհուրդը միաւորելը նորագիւտ բան չէ եւ ներմուծուած չէ մեր կողմից, այլ սուրբ Աթանասից, որ աւանդեց պատարագի խորհուրդը եւ այսպէս սովորեցրեց[566]:

Եւ սուրբ Լուսաւորիչն էլ, որ այդ ժամանակ էր, նոյնը կարգեց մեր եկեղեցու մէջ, որին [հաւատարիմ] ենք հաստատապէս:

Եւ սուրբ Բարսեղ Կեսարացին այդպէս էր բաշխում ժողովրդին, ինչպէս գրուած է նրա յունուարի մէկի պատմութեան մէջ. եւ ոմն հրէա տեսաւ, որ նա արիւնաթաթախ հում միս էր տալիս ժողովրդին, զղջաց եւ ընկաւ սրբի ոտքերն ու մկրտուեց[567]:

ԹԱՑԵԱԼ ՊԱՏԱՌԻ ՄԱՍԻՆ

Իսկ թացեալ պատառի մասին զանազան կարծիքներ կան:

Ոմանք ասում են, երբ բոլորը բազմեցին ընթրելու, ընդհանուր սեղանից թացեալ պատառը տուեց Յուդային եւ դրանից յետոյ լուաց աշակերտների ոտքերը, ապա՝ բոլորին բաշխեց իր մարմինը, ու գոհացած բարձրացան Ձիթենեաց լեռը:

Այդպէս են պատմում Մատթէոսն ու Մարկոսը, իսկ Ղուկասն ու Յովհաննէսը ընթրիքից յետոյ են ասում թացեալ պատառի մասին:

Ոմանք էլ ասում են, թէ ջրում թրջեց եւ լուաց օրհնութիւնից, որ ընդունելի կարծիք չէ[568]:

Եւ ուրիշներ ասում են, թէպէտ ընթրիքից յետոյ էր, սակայն օրհնուած չէր ո՛չ հացը, ո՛չ գինին, այլ սեղանից հաց վերցրեց, թրջեց ջրով կամ միայն գինով ու տուեց, որովհետեւ եթէ բոլորին օրհնած հացի ցամաք մասը տար, նրան՝ թրջուածը, պատճառ կլինէր Յուդայի մատնութեան համար եւ յիրաւի:

Այլ այսպիսինն է թացեալ պատառի [պատմութիւնը]. մատնիչը փութաց լիրբ դէմքով եւ արհամարհական մտքով ձեռքը տանել դէպի Վարդապետի սկուտեղը, եւ այն պատառը, որ ձեռքին ունէր Քրիստոս, տուեց նրան:

Այսպէս են մեկնում առհասարակ եկեղեցու վարդապետները:

Այսպէս է ասում նաեւ Ֆռանկների Օգոստինոս վարդապետը՝ Խորհուրդների գրքի ութսունմէկերորդ համարում, թէ՝ սկզբում մարմնի եւ արեան խորհուրդը բաշխեց ու տուեց Յուդային, յետոյ թացեալ պատառով ցոյց տուեց մատնիչին[569]:

Եւ այս է ճշմարիտը, որովհետեւ օրհնուած հացը բաշխեց բոլոր առաքեալներին՝ առանց մնացորդի. այդպէս էլ օրհնեալ բաժակից անմնացորդ բաժանեց առաքեալներին, ուստի, պարզ է, որ թացեալ պատառը ո՛չ մարմնից էր, ո՛չ էլ՝ արիւնից, այլ սեղանից վերցրած ուրիշ կտորից, որ թրջեց եւ տուեց՝ մատնիչին ցոյց տալու համար:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՉԵՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Այժմ հարց եմ տալիս ձե՛զ, ֆռանկների անօրէն ազգ, ինչո՞ւ էք ժողովրդին զրկում Քրիստոսի մարմնին եւ արեանը հաղորդուելուց, որովհետեւ ո՛չ բացայայտօրէն արիւնն էք տալիս, ո՛չ էլ՝ ծածկապէս մարմինը, եւ քանզի օրհնուած մարմնից չէք տալիս, ուստի սոսկ այն հացն է, որ բեմում է:

Իսկ եթէ ասեն, թէ բեմի բոլոր նշխարները օրհնուած են, ապա ասենք, որ բոլոր նշխարները, որոնք բեմում եւ խորհրդանոցում օրհնուեցին այսօր, վաղը նոյնը վերցնելու էք եւ դարձեալ օրհնելու. եթէ օրհնուած է, ինչո՞ւ էք օրհնում եւ եթէ օրհնուած չէ, ինչո՞ւ էք տալիս ժողովրդին իբրեւ օրհնուած մարմին եւ մոլորեցնում նրան:

Եւ եթէ ընդունենք, թէ այն օրհնուած է, արիւնն ինչո՞ւ չէք տալիս:

Իսկ եթէ ասեն, թէ ժողովրդին բաւական է նաեւ միայն մարմինը, որովհետեւ պէտք է հաւատալ, որ Քրիստոսի մարմինն է, ուրեմն արիւնն էլ հետն է՝ Հոգու համազուգութեամբ եւ աստուածային միաւորութեամբ, նոյնպէս միաւորուած համարել նաեւ արիւնը, ապա ասենք, որ նախ, ոչ թէ մարմինն են տալիս ժողովրդին, այլ սոսկ հաց եւ գինի, քանի որ Քրիստոսի մարմինն այն մէկն էր, որ օրհնւում էր, ինչպէս վերը ցոյց տրուեց:

Ասա՛ նաեւ, ինչո՞ւ ես ժողովրդին հաւատ քարոզում, թէ՝ [բաւական է միայն մարմինը], երբ դու չես հաւատում եւ ճաշակում ես արիւնը. դո՛ւ էլ մի՛ ճաշակիր եւ հաւատայ, որ մարմնի հետ նաեւ արիւնն է:

Բացի այդ, Տէրն ինչո՞ւ է հրամայում՝ «Ո՛վ չուտի իմ մարմինը եւ չըմպի իմ արիւնը, կեանք չի ունենայ, որովհետեւ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, իմ արիւնը՝ ճշմարիտ ըմպելիք: Ո՛վ ուտի իմ մարմինը եւ ըմպի իմ արիւնը, նա կբնակուի իմ մէջ, ես՝ նրա» (Յովհ. Զ 57):

Եւ եթէ դու հաւատում ես, թէ մարմնի մէջ նաեւ արիւն է, արեան խորհրդապատկերը բեմ մի՛ հանիր, այլ օրհնի՛ր միայն նշխարը, որ կլինի Քրիստոսի մարմին ու արիւն:

Իսկ ասուած խօսքերդ, թէ մարմինն ու արիւնը միաւորուած են, այլ բան են նշանակում, որովհետեւ նմանապէս եւ արեան մէջ են միաւորուած մարմինը, հոգին՝ համազուգակից, աստուածութիւնը միաւորուած:

Եւ երբ ժողովրդին զրկում ես արիւնից, զրկում ես նաեւ դրանցից, որ կապուած են արեանը, այսինքն՝ մարմնից, հոգուց, աստուածութիւնից: Հետեւաբար՝ գաղտնի թէ բացայայտ, զրկում ես ժողովրդին Քրիստոսի հաղորդութիւնից, որովհետեւ արիւնը չես տալիս բացայայտօրէն, իսկ գաղտնի՝ մարմինը եւ սոսկ հաց ես տալիս, այն էլ՝ չօրհնուած:

Եւ եթէ պատճառաբանեն, թէ ահա մանուկներն էլ չեն հաղորդւում մինչեւ տասներկու տարեկան դառնալը, եւ շատերն էլ անհաղորդ են մեռնում եւ զրկւում Քրիստոսից: Կամ եթէ պատճառաբանեն, [բերելով] Սողոմոնի խօսքերը, թէ՝ «Թո՛ղ ուտեն իմ սիրելիները եւ խմեն իմ նազելիները»[570], ապա ասենք, որ Սողոմոնի խօսքը ոչ թէ ոմանց զրկում է արեան հաղորդութիւնից, որովհետեւ նրանք, ովքեր արժանի են մարմնին, արժանի են նաեւ արեանը, այլ սիրելի են բոլոր բարիք գործած հաւատացեալները, կուսութեամբ ճգնած հեզերը եւ նահատակները:

Արդ, բոլորին է հրամայում բարի գործեր կատարել եւ կերակրել, իսկ սրբութիւն եւ մարտիրոսութիւն հրամայում է հեզերին, ովքեր կամաւոր են յանձն առնում, որովհետեւ դա ճգնելն է մինչեւ մահ:

Այս մտածումով Տէրը բաշխեց իր մարմինը ու Վերնատանը տուեց առաքեալներին:

Եւ առաջին օրհնուած բաժակը տուեց նրանց, ովքեր յօժարութեամբ կըմպէին, ուստի հարցրեց Զեբեթիայի որդիներին՝ «Կարո՞ղ էք ըմպել բաժակը» (Մրկ. Ժ 38), եւ ոչ թէ միայն նրանց տուեց, իսկ միւս առաքեալներին արգելեց:

Այսքանը հաղորդութեան մասին:

Դ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԲ

Հարց. Ի՞նչ է ապաշխարութիւնը:

Պատասխան. Ապաշխարութիւնը ցաւելն է գործած մեղքի համար եւ ինքն իրեն պատժելը չար գործելու համար: Դարձեալ՝ ապաշխարութիւնը արտասուելն է անցած չարագործութիւն-

ների համար եւ արտասուելը՝ նորից ուրիշը չգործելու համար:

Ապաշխարութիւնը երեք մաս ունի, այսինքն՝ սրտի զղջալը, բերանի խոստովանելը եւ գործով ապաշխարելը: Որովհետեւ ինչպէս մեղանչում ենք երեք ձեւով, այսինքն՝ մտքով, խօսքով եւ գործով, այդպէս էլ պարտաւոր ենք ապաշխարել:

Եւ անհրաժեշտ է, որ ապաշխարանքը լինի քահանայի մօտ: Եւ բոլոր մեղքերը պէտք է վերոգրեալ կարգով խոստովանել, նայել շրջակայքը, թէ որտե՞ղ, ե՞րբ գործեց մեղքը, որքա՞ն մնաց մեղքի մէջ, թեթե՞ւ փորձութեամբ է ընկել, թէ՞ մեծ, ի՞նչ հասակում էր, որքա՞ն գիտութեամբ էր, կնոջ տէ՞ր էր, ե՞րբ մեղանչեց, ազա՞տ էր, քահանա՞յ էր, թէ՞ սարկաւագ:

Ապա թէ՝ ո՞ւմ խոստովանեց. քահանայի, հերձուածո՞ղի, թէ՞ ուղղահաւատի:

Եւ գիտո՞ւն էր այնքան, որ կարողանար ճանաչել մահացու մեղքն ու ներելին: Եւ պէտք է զգուշանալ, որ ամօթի կամ երկիւղի պատճառով քահանայից յուսահատութեամբ չթաքցնի մեղքը կամ մասամբ խոստովանի եւ կէսը մի քահանայի խոստովանի, միւս կէսը՝ ուրիշ, որովհետեւ Աստծոյ շնորհը մաս-մաս չէ, այլ՝ ամբողջական եւ կատարեալ:

Եւ պէտք է իմանալ, որ մարդը մեղքի մէջ ընկնելուց յետոյ եթէ հասկանում է, որ մեղք է գործել եւ պատրաստակամ, ուղղադաւան ու գիտուն խոստովանահայր ունի, այդ իսկ պահին պարտաւոր է խոստովանել, որովհետեւ ինչպէս հուրն է [ամէն ժամ] դէզի համար վտանգաւոր, այդպէս էլ մեղքը՝ հոգու:

Իսկ երբ մեղաւորը խոստովանում է, քահանան պէտք է նկատի ունենայ կրօնաւո՞ր է, թէ աշխարհական: Եթէ կրօնաւոր է, հարցնի արդեօք ծուլացե՞լ է աղօթք անելու, անհնազա՞նդ է եղել, կամ բղջախոհ, առանձնայատուկ խնդիրներ ունեցո՞ղ, պճնուո՞ղ, թէ լաւ կերակուրների եւ ըմպելիքների երկրպագու, քնկո՞տ, թէ կռուարար, կամ թէ անպատկառութեամբ մտել եկեղեցի եւ կանգնել աղօթքի:

Իսկ եթէ աշխարհական լինի, քահանան պէտք է նկատի ունենայ, թէ՝ խոստովանողը՝

իմաստո՞ւն մարդ է, որ չունի բարի գործեր,

ծեր է եւ յանդո՞ւգն,

մանուկ եւ անհնազա՞նդ,

անխիղճ հարո՞ւստ,

ամբարտաւան եւ աղքա՞տ,

մեղաւոր եւ դատաւո՞ր,

ունեւոր եւ անողո՞րմ,

թագաւո՞ր եւ անօրէն,

ամուսնացած եւ պոռնի՞կ:

Քահանան պէտք է ամէն ինչ ճշտութեամբ հարցնի եւ այնպէս չլինի, որ հարցեր տալիս [աննրբանկատութեամբ] մեղքեր սովորեցնի ժողովրդին:

Իսկ երբ քահանան լաւ քննի խոստովանողի խղճմտանքը, յետոյ պէտք է խորհի ապաշխարութեան մասին, թէ ինչպէ՞ս կարող է ապաշխարել, խրատի ու զգուշացնի, որ այլեւս մեղք չգործի,

գործած մեղքերի համար ցաւի եւ խոստանայ, որ այլեւս չի կրկնի գործած մեղքը: Ապա այսպէս թողութիւն տայ. «Թո՛ղ քեզ ողորմի մարդասէր Աստուած եւ խոստովանուած ու մոռացուած բոլոր յանցանքներիդ թողութիւն շնորհի: Եւ ես քահանայական կարգով, իշխանութեամբ եւ աստուածային հրամանով, թէ՝ «Ի՛նչ արձակէք երկրի վրայ, արձակուած կլինի երկնքում» (Մտթ. ԺԶ 19), նոյն խօսքով քեզ արձակում եմ մեղքերի ամէն տեսակ մասնակցութիւնից, մտածումներից, խօսքերից ու գործերից՝ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Եւ դարձեալ քեզ տալիս եմ սուրբ եկեղեցու խորհուրդը, որ ինչ էլ անես՝ թող քեզ բարեգործութիւն համարուի՝ ի փառս հանդերձեալ կեանքի, ամէն»:

Ա՛րդ, սրա մի մասը աղօթք է, մի մասը՝ հրաման, որովհետեւ մեղանչել ենք մասամբ եկեղեցու կանոնների դէմ, մասամբ՝ Աստծոյ պատուիրանների, ուստի աղօթքը ի դէմս եկեղեցու է, իսկ արձակումը՝ ի դէմս Աստծոյ իշխանութեան:

Յետոյ [քահանան] ապաշխարանք է դնում, ինչը որ յարմար է՝ պահք, աղօթք, ողորմութիւն, պատարագ եւ այլ, ինչ կարող է լինել, որովհետեւ յարկ է նմանը նմանով բժշկել:

Հարց. Եթէ խոստովանութեամբ մեղքերին թողութիւն է տրուել, ինչո՞ւ է ապաշխարանք դրւում:

Պատասխան. Ասենք, որ խոստովանութեան շնորհն այն է, որ յաւիտենական պատիժը ժամանակաւոր է դարձնում, ինչպէս որ Դաւիթն ասաց սպանութեան եւ շնութեան մասին. «Թո՛ղ քո տնից յաւիտեան չպակասի սուրը»: Եւ Աստուած ներեց մեղքերը՝ «մեղայ» ասելուց յետոյ, այսինքն՝ յաւիտենական պատուհասն անցաւ, փոխարինուեց ժամանակաւորով, որ սակաւ ինչ խրատուեց Աբիսողոմի ձեռքով (տե՛ս Բ Թագ. ԺԵ):

Եւ պատճառն այն է, որ անջնջելի է Աստծոյ հրամանը, եւ երբ մեղանչում ենք, գրւում ենք յաւիտենական պատժի մէջ, իսկ զղջալով եւ մեր փոխուելով՝ Աստուած պատիժը դարձնում է ժամանակաւոր:

Այժմ նախ պատասխանենք, որ երբ խոստովանութեամբ թողութիւն է տրւում բոլոր մեղքերին, մնո՞ւմ է Աստծոյ պատիժը, որ ինչպէս ոմանք են ասում՝ պահքերով եւ աղօթքներով մարւում է:

Դարձեալ խոստովանութիւնը մաքրում է մեղքերը, որ չտանջուի, իսկ ապաշխարութիւնը հոգում ամբարում է բարին, որ պսակի արժանանայ:

Նաեւ՝ խոստովանութիւնը մաքրում է գործած մեղքերը, իսկ ապաշխարութիւնը ցանկապատ ու պարիսպ է, որ ապագայում այլեւս չգործի:

Իսկ եթէ մէկն ասի, թէ ինչո՞ւ երբ խոստովանում են, յետոյ հաղորդւում են, ապա ասենք, որ խոստովանութիւնը կրկին է. մէկը, որ նախ խոստովանում են, յետոյ ապաշխարում, սրանք դեռեւս ապաշխարութեան պատժի տակ են եւ չեն հաղորդւում, ինչպէս նրանք, ովքեր խոստովանում են քառասնորդական պահքից առաջ, որի մասին Եսային

ասում է. «Լուացուէ՛ք, սրբուէ՛ք եւ եկէ՛ք խօսենք միմեանց հետ» (Ես. Ա 16, 18):

Եւ երկրորդ՝ խոստովանութիւն է, որ նախ պահքով եւ ճգնութեամբ ապաշխարում են, ապա խոստովանում եւ հաղորդւում, ինչպէս նրանք, ովքեր զատկի մօտ օրերին խոստովանում են եւ արժանաւորւում սրբութեանը:

Դարձեալ երկուսն է խոստովանութիւնը, նոյնպէս եւ թողութիւնը:

Կայ, որ խոստովանում են մեղքը, սակայն [մեղքի] արմատները հաստատուն են, այսինքն՝ միտք ունի խոստովանելու եւ դարձեալ մեղանչելու, ինչպէս ֆռանկների ազգի քահանան եւ ժողովուրդը միշտ այսպիսի խոստովանութիւն են անում, որն անկատար է դարձնում թողութիւնը, քանզի խոստովանուած մեղքը վերանում է, իսկ պատիժը՝ ոչ:

Եւ կայ խոստովանութիւն, որ սրտից արմատախիլ է անում մեղքերը, եւ մեղքերը զղջալով, հաստատուն է կամքով եւ մտքով այլեւս չմեղանչել: Սա կատարեալ խոստովանութիւն է, եւ այսպիսի մեղքը թողնւում է քահանայական իշխանութեամբ եւ նրա հետ էլ՝ պատիժը, որովհետեւ պատժի արմատը մեղքն է. մեղքի վերանալու հետ վերանում է եւ գեհէնի պատիժը, ինչպէս մեր Տէրը թողութիւն տուեց անդամալոյծի մեղքերին (տե՛ս Մտթ. Թ 2), եւ վերացան պատիժները. այդպէս էլ քանանացուն, նոյն կերպ եւ՝ աւազակին (տե՛ս Ղուկ. ԻԳ 42-43):

Եւ կատարեալ խոստովանութեան ապաշխարութիւնը երեք մաս ունի, քանի որ մեղքերն ատելը սրտի զղջումն է. խոստովանութիւնը բերանով է եւ ամօթ է կրում պատժի փոխարէն:

Յիրաւի, այսպիսի խոստովանութիւնը կատարելապէս ազատում է մեղքերից եւ պատժից, ինչպէս ասուել է սկզբում, «Թագաւորաց [գրքի]» քսանեօթներորդ գլխում, տասնհինգերորդ համարում, այնտեղ տե՛ս:

Հարց. Նրանք, ովքեր մահացու մեծամեծ մեղքեր ունեն, օգո՞ւտ է նրանց խոստովանութիւնը, թէ ոչ:

Պատասխան. Վարդապետներն ասում են, թէ՝ խոստովանութիւնը հնարաւորութիւն է եւ հրաման: Ա՛րդ, եթէ հնարաւորութիւն է, օգուտ չէ, քանի դեռ մարդը մեղքի մէջ է, սակայն կանոնական հրամաններով ազատւում է:

Հարց. Խոստովանած մեղքը նորից պէ՞տք է խոստովանել:

Պատասխան. Վարդապետներն ասում են, թէ մէկ անգամ բարի հաւատով խոստովանածը եւ կատարեալ զղջածը պէտք չէ կրկնել, եթէ առկայ չէ հետեւեալ չորս պատճառներից մէկը. երկուսը խոստովանահօր կողմից, երկուսը՝ խոստովանողի: Նախ՝ եթէ խոստովանահայրը արձակելու հրաման չունի կամ բանադրանքով արգելուած է:

Երկրորդ՝ եթէ քահանան տգէտ լինի եւ չկարողանայ մեղքի չափը որոշել եւ զանազանել:

Երրորդ՝ եթէ խոստովանողը մասամբ է խոստովանում եւ թաքցնում,

որովհետեւ պարտաւոր է մտքում ինչ ունի՝ ամբողջութեամբ մի քահանայի խոստովանել:

Չորրորդ՝ եթէ անփոյթ է գտնուել եւ մոռացել նշանակուած ապաշխարութեամբ [պատիժը] փոխարինել, պէտք է նորից խոստովանի, որովհետեւ առանց խոստովանութեան թողութիւն չի տրւում մեղքին[571]:

Իսկ թողութեամբ ներելու մասին ասուել է Թուոց գրքի քսաներկուերորդ գլխի վաթսունմէկերորդ համարում:

Այսքանը համառօտ ապաշխարութեան մասին:

Ե. ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԳ

Հարց. Ի՞նչ է վերջին օծումը:

Պատասխան. Վերջին օծումը եկեղեցու խորհուրդներից է, որ տրւում է հիւանդին հոգեվարքի օրը՝ աչքերին, ականջներին, բերանին, ձեռքերին, կողերին, ոտքերի ներբաններին՝ հետեւեալ կերպ. «Այս սուրբ օծմամբս եւ իւր գթութեամբն Աստուած թողնի քեզ, ինչ մեղանչեցիր տեսնելով». նոյնը ասում է նաեւ միւս զգայարանների համար:

Սա ըստ այլազգիների եկեղեցիների:

Իսկ ըստ մեր եկեղեցու այժմ այսպէս է. «Յիսուսի անունով այս կնիքը թո՛ղ լուսաւորի քո աչքերը, որպէսզի չննջես մահուան մէջ». այսպէս, հերթականութեամբ ասւում է իւրաքանչիւր զգայութեան համար:

Այս խորհրդի իմաստն այն է, որ մնացեալ ներելի մեղքերին թողութիւն տրուի, եթէ մարդն այդժամ մահանայ: Իսկ եթէ մահից ազատուի, շուտափոյթ առողջանալու պատճառ դառնայ, ինչպէս Յակոբոս առաքեալն է ասում՝ «Եթէ մէկը հիւանդանայ, թող կանչի եկեղեցու երէցներին, եւ աղօթեն նրան օծեալ իւղով. եթէ մեղք ունի, թողութիւն տան, եւ քահանայի աղօթքը կթեթեւացնի տկարութիւնը» (Յակ. Ե 14):

Իսկ եթէ մէկն ասի օծումը [եկեղեցու] խորհուրդ է, ինչո՞ւ մենք չունենք, ապա ասենք, որ օծման խորհուրդը մենք էլ ունենք, սակայն ծածկուած, ինչպէս մկրտութեան ժամանակ, որի մասին ասացինք, թէ մկրտուածի վրայ կատարում ենք դրոշմը, առաջին եւ վերջին օծումները:

Այս օծումը ունենք նաեւ ոտնլուայի ժամանակ, այլեւ՝ Տիրոջ մկրտութեան ժամանակ՝ յայտնութեան օրը: Այլեւ այս օծումը կայ ննջեցեալ քահանայի [թաղման կարգի] մէջ:

Իսկ ինչո՞ւ յայտնապէս չէ, ինչպէս այլազգիների մօտ է:

Ասենք, որ չարի հնարամտութեան պատճառով մարդիկ դադարեցրին անհրաժեշտ խոստովանութիւնը, ապաւինելով [այն բանին], թէ վերջին օրը օծուելով՝ ձէթով եւ բալասանով՝ կարդարանան, ինչպէս որ յոյն, վրացի, ասորի ազգերն են վերացրել խոստովանութիւնը, մինչդեռ անհնար է մարդու արդարանալն առանց խոստովանութեան: Ուստի եկեղեցու հայրապետները

գերադասեցին արժանավայել չափաւորել այն, որ ո՛չ աւելորդ դառնայ լինելու դէպքում, ո՛չ էլ ապականի եկեղեցու կարգը՝ չլինելու դէպքում, [գերադասելով հանել] վերջին օծումը, քան թէ վերացնել խոստովանութիւնը, որ անհրաժեշտ է, առանց որի անկարելի է թողութիւն տալ ներգործական մեղքերին:

Դարձեալ հիւանդների օծումը չի մաքրում մահացու մեղքերից, այլ [մաքրում է] միայն ներելիները: Իսկ խոստովանութեամբ մաքրւում են ե՛ւ մահացու, ե՛ւ ներելի [մեղքերը], ինչպէս այն, երբ արմատը կտրելով՝ չորանում են ճիւղերը:

Ուստի աւելի պիտանի է խոստովանելը, քան օծելը:

Բացի այդ, մահացու մեղքը քահանայի խօսքով մաքրւում է, երբ քահանայի խօսքով եւ աղօթքով մաքրւում է ներելին, ինչպէս Յակոբոսն է ասում. «Թո՛ղ կանչեն երէցին, աղօթք անի եւ թողութիւն տայ» (Յակ. Ե 14):

Այս իմաստով ենք ժողովում քահանաներին, երկրպագում երեկոյից մինչեւ լոյս, պատարագում, խաչն օրհնում, նաեւ՝ ողջերին եւ ննջեցեալներին: Հետեւաբար, քահանայի խօսքը Աստծոյ անունով մաքրում է ներելի [մեղքերը][572]:

Իսկ եթէ մէկն ասի, թէ պէտք է քահանայի ձեռքը մօտենայ զգայարաններին, ապա ասենք, որ քահանայի աջը յարաժամ քրիստոնեայի գլխի մօտ է, որտեղ բոլոր զգայարանների արմատներն են, եւ քահանայի ձեռքը օծուած ու մաքրուած է միւռոնով եւ այն ամէնին, ինչին մօտենում է, մաքրութեան շնորհ է տալիս:

Եւ ինչպէս բազում են ներելի [մեղքերը], անթիւ՝ զգայարաններում եւ մտքում, այդպէս էլ բազմաքանակ թողութիւններ է շնորհում քահանայական կարգը՝ ձեռքը դնելով եւ խօսքի շնորհներով մաքրելով:

Իսկ եթէ մէկն ասի, թէ մինչեւ մկրտուելը առաջին օծումը չունենք, ապա ասենք, որ սա էլ ծածկուած ունենք, ինչպէս այն, որ աւազանի ջրին խաչանման միւռոն են խառնում, որ նախ եւ առաջ այդ խորհուրդն ունի: Եւ երկրորդ, մեր մկրտութիւնը ոչ թէ Յովհաննէսի ջրով է, այլ Քրիստոսի մահով: Այդ պատճառով էլ զանազան իւղեր չունենք, այլ միայն սուրբ միւռոնը, որպէսզի քահանաները չհամարձակուեն մեր եկեղեցին կրկին օրհնուած ձէթ մտցնել: Եւ միայն աւագ շաբաթուայ հինգշաբթի օրն ենք օրհնում իւղը, որպէսզի սուրբ միւռոնը բոլորի ոտքերին մատչելի չլինի:

Օծման խորհուրդն ունենք նաեւ ննջեցեալ քահանային [թաղելիս], որին օծում ենք իբրեւ ըմբշամարտիկի, որը պէտք է մենամարտի դուրս գայ օդեղէն չար այսերի դէմ[573]:

Իսկ եթէ մէկն ասի, թէ՝ ննջեցեալների օծումն առաջի՞նն է, թէ վերջինը, ապա ասենք, որ ինչպէս մահն է կենաց վախճանը եւ հանդերձեալի սկիզբը, այդպէս էլ այս օծումը վերջինն է, որ սրբում է բոլոր աննկատելի ու ներելի

մեղքերը եւ առաջինն է՝ յանուն առաջիկայ նոր պատերազմի:

Իսկ եթէ ասեն, եթէ միայն մարմինն է օծւում, ի՞նչ օգուտ հոգուն, ապա ասենք, որ քանի դեռ մարմնի հետ միաւորուած էր՝ միասնական էին ներգործում նրա վրայ ամէն մի մարմնական, իսկ այժմ, երբ անջատուած է, բաժանմամբ է նրան հասնում ամէն մի սրբութիւն: Իսկ եթէ ոչ, ուրեմն պահն է, որ դու ասես, թէ՝ ամէն մի կարգ մարմնի թաղման օգուտ չէ ննջեցեալի հոգուն, ուրեմն եւ աղօթքը, եւ քահանայի երկրպագութիւնը, տուրքը, պատարագը՝ ոչինչ օգուտ չէ հոգուն ըստ քեզ, որ ամենեւին սուտ է եւ չար հերձուածողութիւն:

Այսքանն օծման մասին[574]:

Զ. ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԴ

Հարց. Ի՞նչ է քահանայական կարգը:

Պատասխան. Կարգն այն իշխանութիւնն է, որ եպիսկոպոսը տալիս է նրան, ով կարգ է ստանում եւ եկեղեցու խորհուրդներին սպասաւորելու [իրաւունք]:

Եւ եօթն են կարգերն՝ ըստ Սուրբ Հոգու եօթը պարգեւների:

Առաջինը Դռնապանութիւնն է, որի գործը եկեղեցու դուռը բացելն ու փակելն է: Եւ այս գործը կատարեց Քրիստոս, երբ հանեց Տաճարից գնորդներին եւ վաճառողներին:

Երկրորդ կարգը Ընթերցողութիւնն է: Եւ ընթերցողի պարտականութիւնն է եկեղեցում կարդալ մարգարէների [գրքերը], հին օրէնքները: Եւ այս գործը Քրիստոս կատարեց, երբ Տաճարում կարդաց Եսայուն՝ ասելով. «Տիրոջ հոգին ինձ վրայ է, որի պատճառով էլ օծեց ինձ» (Ղուկ. Դ 18):

Երրորդը Երդուեցնողներն են, որոնց գործը դիւահարներին եւ չմկրտուածներին երդուեցնելն է՝ հրաժարուելու սատանայից: Սա Քրիստոս կատարեց, երբ բժշկեց դիւահարին (տե՛ս Մտթ. Թ 32):

Չորրորդ կարգը Ջահ վառողինն է. սրանք աշակերտողներն են եւ վառում են սեղանի մոմերը: Սա կատարեց Քրիստոս, երբ իրեն տուեց իբրեւ լոյս ի յայտնութիւն հեթանոսների՝ ասելով. «Ես եմ լոյսն աշխարհի» (Յովհ. Ը 12):

Հինգերորդը Կիսասարկաւագն է, որի գործը սկիհը եւ մատուցարանը սեղանի մօտ տանելն է, գինու բաժակը եւ նշխարը աւագ սարկաւագին մօտեցնելը եւ սեղանի հանդերձները լուանալը: Այս գործը Քրիստոս կատարեց, երբ գոգին գցեց մի սրբիչ եւ լուաց աշակերտների ոտքերը (տե՛ս Յովհ. ԺԳ 5):

Վեցերորդ Աւագ սարկաւագն է, որի գործը քահանային եկեղեցու խորհուրդները կատարելու [ընթացքում] սպասաւորելն է. սկիհը պատրաստելը, բեմի վրայ Աւետարան կարդալը: Սա է առնում խաղաղութեան Ողջոյնը եւ տալիս ժողովրդին: Եւ այս կարգը առաքեալները հաստատեցին, երբ եօթը սարկաւագներ կարգեցին սպասաւորելու համար (տե՛ս Գործք Զ 1-8): Տէրն

էլ այս կարգը հաստատեց, երբ լեռան վրայ նրանց աւետարանեց երկնքի արքայութիւնը (տե՛ս Մտթ. Ե 3-11, Ղուկ. Զ 20-23):

Եօթներորդը Քահանայութիւնն է, որի գործը մարմնի եւ արեան խորհուրդը սեղանի վրայ օրհնելն է: Այս կարգը Քրիստոս կատարեց, երբ ընթրիքի ժամին հացն իր մարմնով, գինին իր արեամբ փոխարինեց, եւ երբ խաչի վրայ իրեն պատարագեց Հօրը:

Եւ ութերորդը Եպիսկոպոսն է:

Իններորդը՝ Պապը, որ Կաթողիկոսն է՝ գերագոյնը վերը նշուածներից:

Սա ըստ հռօմէական եկեղեցու:

Իսկ ոմանք այսպէս են ասում:

Մկրտութեան ժամին Քրիստոս ցոյց տուեց քրիստոնէութեան խորհուրդը, որովհետեւ մենք մկրտութեամբ ենք դառնում քրիստոնեայ:

Նազարեթցիների ժողովարանում յանձին իր ցոյց տուեց դպիրին՝ կարդալով Եսայի մարգարէից՝ ոտքի վրայ եւ բաց գլխով:

Զատկի տօնին, երբ պարանը խարազան դարձրեց եւ հանեց վաճառականներին (տե՛ս Յովհ. Բ 15), ցոյց տուեց սարկաւագի գործը:

Թաբոր լեռան վրայ Հօր ձայնով եւ Հոգու հովանիով քահանայ եղաւ՝ ցոյց տալով աջից եւ ձախից Մովսէսին եւ Եղիային իբրեւ սարկաւագներ (տե՛ս Մտթ. ԺԷ 2):

Երուսաղէմ գալով՝ պատարագեց իր մարմինը: Եւ խաչով չարչարուելով՝ մեռեալներից յարութիւն առնելով եւ աշակերտների մէջ մտնելով՝ իրենով ցոյց տուեց եպիսկոպոսին. «Փչեց նրանց վրայ եւ ասաց՝ առէ՛ք Սուրբ Հոգին» (Յովհ. Ի 22), եւ նրանց քահանայ կարգեց, որովհետեւ եպիսկոպոսներն են հոգի տալիս քահանային եւ կապելու կամ արձակելու իրաւունք: Սրանք են բոլոր աստիճանները, որի պատճառով էլ հնգապատիկ պատմուճան է հագնում եպիսկոպոսը:

Եւ համբարձուելու ժամանակ վերին հրաման առան նրանից [առաքեալները]՝ գնալու աշխարհի ծայրերը, ապա օրհնուեցին նրանից՝ ցոյց տալով կաթողիկոսներին ու հայրապետներին:

Հարց. Ինչպէ՞ս աստիճանաւորեց առաքեալներին:

Պատասխան. Առաքեալները հրամանով դպիրներ եղան՝ սպասաւորելով ժողովրդին, սարկաւագները՝ օծելու հիւանդներին, նրանց հրաման տալով իր [անունից] օրհնելու իւղը:

Եւ առաջինը նրանց իրաւունք տալով ուտելու արտերի պտուղը, որ ուտում էին քահանաները՝ նրանց քահանայ կարգեց:

Յարութիւնից յետոյ Հոգի փչելով՝ նրանց եպիսկոպոս կարգեց, իսկ Ձիթենեաց լեռը բարձրացնելով՝ կարգեց կաթողիկոս եւ հայրապետ՝ նրանց տալով բոլոր շնորհները:

Իսկ ըստ Յունաց եկեղեցու՝ առաջին դասը Պատրիարքներն են, որ թարգմանւում է «հայրապետ», որոնք ունեն չորս աւետարանիչների աթոռները, երբ չորեքկերպեան կենդանիների (հմմտ.

Եզեկ. Ա) փոխարէն կարգուեցին աւետարանիչները[575]:

Եւ նրանց զգեստը բազմախաչ նափորտն է՝ վրան հնգակի խաչերով զարդարուած ուսնոցով: Եւ նրանց գործը արքեպիսկոպոսներ ձեռնադրելն է, որոնք իրենց թեմերով ընդգրկում են աշխարհի չորս մասերը: Եւ նա է հրաման տալիս ժողով անելու:

Երկրորդը՝ Արքեպիսկոպոսները, որ թարգմանւում է՝ «եպիսկոպոսապետ», կրում են քականօթ եւ ծոպաւոր սքեմ, փիլոն՝ վրան քառակի խաչերով ուսնոց: Եւ սրանց գործը մետրոպոլիտ ձեռնադրելն է եւ մկրտութեան ձէթը օրհնելը: Եւ երեք արքեպիսկոպոսներ իրաւունք ունեն կաթողիկոս ձեռնադրելու:

Երրորդը Մետրոպոլիտներն են, որ [նշանակում է] «մայրաքաղաքացի» եւ նոյն սքեմն են կրում, սակայն ուսնոցը եռակի խաչերով է: Սրանց գործը եպիսկոպոս ձեռնադրելը եւ մկրտութեան ձէթն օրհնելն է՝ աւելացնելու համար՝ լցնելով առաքելական ձէթի մէջ, որովհետեւ եկեղեցին օրհնում է աւելացրածով:

Եւ երեք մետրոպոլիտ իրաւունք ունեն ձեռնադրելու իրենց արքեպիսկոպոսներին:

Չորրորդը Եպիսկոպոսներն են, որոնց «այցելու» են կոչում: Սրանք կրում են նոյն սքեմը, սակայն կրկնակի ուսնոցով: Սրանց գործը իրենց եկեղեցիների բոլոր աստիճանաւորներին ձեռնադրելն է: Եւ նրանցից երեք հոգի ձեռնադրում են իրենց մետրոպօլիտին:

Հինգերորդ դասը Քահանաներն են, որոնք լինում են քաղաքներում, վանքերում եւ գիւղերում երէցներ: Կրում են կրկնակի նափորտ: Եւ որտեղ եպիսկոպոս չի լինում, այնտեղ [քահանան է] օրհնում եկեղեցին եւ կնքում խաչը:

Վեցերորդը Սարկաւագներն են, որոնց սքեմը ձախ ուսնոցով է. կրում են բազպան եւ ձախ ուսին՝ բազկուրար: Նրանց զգեստը անթեւ պատմուճանն է՝ առանց գօտու: Նրանք քահանայի հրամանով Աւետարան են կարդում, քարոզում, բռնում քշոցն ու բուրվառը եւ բոլորովին չեն նստում [պատարագելիս]:

Եօթներորդը Կիսասարկաւագներն են: Սրանց զգեստը անթեւ եւ անգօտի պատմուճանն է, ձախ ուսին բազկուրար՝ կապուած արմունկի վրայ եւ եզրերը բաց թողնուած: Նրանց գործը առաքեալներին կարդալն է, մոմերը, գրակալը, խաչագլուխ գաւազանը պահելը: Եւ դռներն էլ նրանք են պահում ու զարդարում եկեղեցին:

Ութերորդը Անագանոսներն են, որ ընթերցողներն են: Եւ նրանց գործը բոլոր գրքերը կարդալն է:

Իններորդը՝ Փսալտներն են, որ սաղմոսասացներն են. Եւ նրանց գործը ալէլուիայ, մեսեդի եւ սաղմոս կարդալն է:

Սրանք են եկեղեցու ինը դասերը:

Իսկ մեծ Դիոնէսիոսը այսպէս է [կարգում]:

Առաջինը՝ Կաթողիկոսը, որ կոչւում է «եպիսկոպոսապետ»: Եպիսկոպոսին եւ քահանային մի կարգում է թուում՝ ի դէմս երկնաւորների վերին դասերի, որոնք

Աթոռները, Քերովբէները եւ Սերովբէներն են:

Երկրորդը՝ Սարկաւագը, Դպիրը, Կղերիկոսը, որոնց բոլորին հոմանունաբար կոչում է «պաշտօնեայ»:

Երրորդ, Միայնակեացները, որոնք կոչւում են «կամարարներ»[576]:

Իսկ սուրբ ժողովրդին եւ չմկրտուածներին, որոնք դեռ պէտք է մկրտուեն, կոչում է նուիրեալներ: Եւ եթէ թուես նաեւ ապաշխարողներին, կաթողիկոսը կլինի տասներորդը, ինչպէս որ Աստուած է տասներորդը հրեշտակների ինը դասերի վրայ[577]:

Հարց. Ինչո՞ւ է հինգ կարգ մինչեւ սարկաւագը, իսկ նա վեցերորդն է:

Պատասխան. Ըստ սուրբ Դիոնէսոսի հինգ դասեր կան, որոնք մաքրում են, որոնց վրայ իշխում է մաքրումն իրագործող սարկաւագը: Առաջինը եկեղեցուց պէտք է հանի չմկրտուածին եւ մեղքով ախտաւորին. սա կատարում է դռնապանը:

Երկրորդն ուրացողներն են. սրանց ընթերցողն է քարոզում:

Երրորդը դիւահարներն են. սրանց բժշկում է երդուեցնողը:

Չորրորդը կիսով չափ մեղքից դարձածներն են. սրանց լուսաւորում է ջահընկալը:

Հինգերորդը բոլորովին զղջացածները եւ մեղքից ազատուածները, որոնք բարի են գործում, եւ սրանց ժողովում է դպիրը՝ սաղմոսներով եւ ալէլուիաներով:

Իսկ վեցերորդը սարկաւագն է սրանցից վեր՝ բոլորին հրաման տուողը, որ իշխում է ժողովրդի ներքին դասերին, ինչպէս ասացինք:

Հարց. Ինչո՞ւ մինչեւ փոքր կարգերից չորրորդը՝ ջահընկալը, կարող են ամուսնանալ, դրանից յետոյ՝ ոչ:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ Մովսէսը դատաւորներին ամբողջ ժողովրդի մէջ չորս [աստիճանների] բաժանեց, այսինքն՝ տասնապետ, յիսնապետ, հարիւրապետ եւ հազարապետ: Ստորին չորս դասերը այդ դատաւորներն են: Ապա Ղեւիի, Գեթսոնի, Կահաթի, Մերարիի ցեղերին այլ աստիճաններ տուեց:

Երկրորդ՝ ասում են չորս դաս էին ժողովրդին իշխողները, այսինքն՝ ցեղերի իշխանները, ծերերը, դատաւորները, ատենադպիրները եւ բացի սրանցից՝ Ղեւիի քահանայական ցեղը:

Երրորդ՝ ասում են, թէ Գեթսոնի երկու ազգը եւ Մերարեի երկու գնդերը խորանում չորս փոքրիկ աստիճաններ ունէի՝ պահպանողից մինչեւ ջահընկալը, որոնք պահում էին աշտանակը, եւ Կահաթի որդիներն ամենաբարձրն էին:

Չորրորդ՝ ասում են, չորս աստիճանները կարգուած են ըստ չորս տարրերի.

դռնապանը՝ հողի.

ընթերցողը՝ ջրի.

երդուեցնողը՝ օդի.

ջահընկալը՝ հրի:

Այդ պատճառով էլ մինչ այդ աստիճանը կարող են ամուսնանալ, իսկ հինգերորդից վեր բարձրացածները՝ ոչ:

Այսքանը կարգի մասին:

Է. ՊՍԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԵ

Հարց. Ի՞նչ է պսակը:

Պատասխան. Պսակը մեծ խորհուրդ է, որով կատարեալ է դառնում Աստծոյ օրհնութիւնը, քանզի ասաց՝ «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք եւ լցէ՛ք երկիրը» (Ծննդ. Ա 28):

Եւ պսակը արուի եւ էգի զուգաւորութիւնն է, որոնք ունենում են անբաժան կենցաղավարութիւն:

Եւ աճի սկիզբը պսակն է, երբ միանում է հարսը փեսայի հետ եւ ըստ Աստծոյ սահմանածի՝ ծնունդներ են լինում: Այս մտքով է Պօղոսն ասում՝ «Պատուական է ամուսնութիւնը եւ սուրբ անկողինը» (Եբր. ԺԳ 4)՝ ըստ Աստծոյ օրէնքների, որոնցով լինում է պսակն այդ դաշինք եւ կապ տղամարդու ու կնոջ միջեւ՝ անքակտելի միութեամբ, ըստ այդմ՝ «Թո՛ղ թողնի տղամարդն իր հօրն ու մօրը եւ գնայ կնոջ ետեւից, եւ երկուսը լինեն մի մարմին» (Ծննդ. Բ 24): Եւ այս միութիւնը հաստատւում է պսակով: Եւ ինչպէս Քրիստոս է ասում՝ «Այն, որ Աստուած միաւորեց, մարդը թո՛ղ չբաժանի» (Մտթ. ԺԹ 6): Եւ այս միութիւնը տեղի է ունենում պսակի միջոցով՝ տրուած ըստ խորհրդի:

Եւ պէտք է իմանալ, որ պսակը սկսւում է նշանադրութիւնից՝ հաստատուած սրտերի հաւանութեամբ, որն արտայայտւում է խօսքով, որովհետեւ երկուսի յօժարակամ հաւանութեամբ է հաստատւում պսակը:

Իսկ պսակը կատարւում է քահանայի օրհնութեամբ եւ մարմնական զուգաւորութեամբ:

Իսկ թէ ինչո՞ւ են նշան դնում, ապա ասենք, որ ինչպէս ծառը նախ ծաղկում է, ապա պտղաբերում, այդպէս էլ պսակի նշանը ծաղիկն է, որից յետոյ հարսը դառնում է փեսայի նշանածը, իսկ փեսան՝ հարսի յատկացեալը:

Եւ ինչպէս Գաբրիէլ հրեշտակապետը նախ աւետիս տուեց սուրբ Կոյսին, եւ վերջինս խորհեց մտքում, ապա՝ հաւանութիւն տուեց եւ ասաց՝ «Տիրոջ աղախինն եմ» (Ղուկ. Ա 38), ապա յղացաւ ու ծնեց մարմնացեալ Բանն Աստծուն, այդպէս էլ նախ նշան են դնում հարսին, իսկ երկուսի յօժարակամ հաւանութեամբ հաստատում է պսակը, որովհետեւ բռնութեամբ եւ առանց մէկը միւսի հաւանելու, այսինքն՝ փեսայի ու հարսի, պսակը չի հաստատւում: Եւ ինչպէս Գիրքն է ասում՝ «Կողը, որից կնոջը ստեղծեց, Ադամի առջեւ բերեց» (Ծննդ. Բ 22), այսինքն միմեանց տեսնելով՝ հաւանեցին:

Այս է խորհուրդը, որ հարսն ու փեսան պսակից առաջ տեսնում են միմեանց, հաւանում սրտով, կամքով, որից յետոյ միայն ամուսնանում:

Իսկ ի կատարումն պսակադրութեան՝ նախ քահանայի օրհնութիւնն է, ապա՝ մարմնական զուգաւորումը, ինչպէս որ Քրիստոս վախճանին նախ օրհնելու է, ասելով՝ «Եկէ՛ք իմ Հօր օրհնեալներ» (Մտթ. ԻԵ 34) եւ ապա՝

միաւորելու է սուրբ եկեղեցուն՝ ժառանգելու արքայութիւնը:

Այդ իսկ պատճառով էլ նախ քահանան օրհնում է հոգեւորապէս, ապա մարմնապէս զուգաւորւում են:

Նոյնպէս եւ դրախտում նախ Աստուած օրհնեց, ասելով՝ «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք եւ լցէ՛ք երկիրը», որից յետոյ ասաց՝ «Երկուսը լինեն մէկ մարմին»:

Սա է պսակի օրհնութիւնը:

Եւ ինչպէս Աստծոյ խօսքով կատարւում է հաղորդութիւնը, որ ասում է՝ «Ա՛յս է իմ մարմինը, ա՛յս է իմ արիւնը» (Մտթ. ԻԶ 26, 28), այդպէս էլ Աստծոյ խօսքն է միաւորում երկուսին՝ տղամարդուն եւ կնոջը:

Ա՛րդ, բարի պսակը երեք կերպով է. հաւատարմութեամբ, զաւակով, խորհրդով: Հաւատարմութեամբ, որ երկուսից ոչ մէկը չի պղծւում օտար անկողնով, ինչպէս նրանք, ովքեր հաւատուրաց են դառնում խօսքով, կտրում հաւատի կապը եւ պղծում հաւատով. այդպէս էլ օտար անկողնով պղծւում է պսակի կապը, հեռանում են օրհնութիւնից եւ պղծում սուրբ անկողինը:

Զաւակով, որովհետեւ նա ծնւում եւ սնւում է՝ ի երկրպագութիւն Աստծոյ, քանզի զաւակածնութեան համար է պսակի հրամանը:

Իսկ խորհուրդն այն է, որ չբաժանուեն, չնայած սուրբ եկեղեցին կարող է բաժանել արգելքներ լինելու դէպքում, քանի որ պսակը արգելող շատ հանգամանքներ կան, ինչպէս՝ հոգեւոր կամ մարմնաւոր ազգակցութիւնը, բնոյթով տկար կամ պոռնիկ լինելը, դիւահար լինելը կամ ծառայելը, բռնութիւն [լինելու դէպքում] եւ այլ ուրիշ պատճառներ, որոնց [առկայութեամբ] բաժանում են տղամարդուն եւ կնոջը, իսկ օրինական պսակը չի կարելի բաժանել, ըստ այդմ՝ «Այն, ինչ Աստուած միաւորեց, մարդը թո՛ղ չբաժանի» (Մտթ. ԺԹ 6):

Եւ մահն է միայն, որ արձակում եւ քանդում է պսակի կապը:

Եւ կրկին է պսակի կապը, կրկին է նաեւ մահը, որ ի պատասխան սրա է, որովհետեւ ինչպէս կապն է հոգեւոր, այսինքն՝ սրտի, եւ մարմնաւոր, այսինքն՝ [երկու] սէրերի խառնուելով, այդպէս էլ մահն է կրկին՝ հոգեւոր եւ մարմնաւոր:

Հոգեւոր մահուամբ հոգեւոր կապն է քանդւում, երբ մարդ մեռնում է աշխարհի համար՝ մտնելով կրօնաւորութեան մէջ: Իսկ մարմնաւոր կապը քանդւում է մարմնական մահուամբ, որի պատճառով էլ քանի դեռ կենդանի են, չի կարելի քանդել օրինաւոր պսակը:

ԱԶԳԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԶ

Հարց. Ո՞րն է ազգակցութիւնը, որ եօթը պորտ ենք անուանում:

Պատասխան. Նախ, պէտք է իմանալ, որ ազգակցութիւնը բաժանւում է բնականի, օրինականի, հոգեւորի:

Բնականը մարմնովն է, օրինականը՝ խնամիականը, հոգեւորը՝ որդեգրութեամբ, որովհետեւ ունենք մարմին, հոգի, օրէնք:

Մարմնական ազգակցութիւնը տրոհուած է երեք կերպերի մէջ, այսինքն՝ ի վեր, ի վայր, դէպի կողք: Ի վեր՝ հետեւեալ կերպ. նախ՝ մենք, յետոյ հայրը, մեր պապը, հոր պապը, պապի հայրը, պապի պապը եւ ապուպապը, որ եղաւ եօթ:

Նոյնն էլ մօր կողմից:

Դէպ վայր՝ նախ մենք, ապա որդին, թոռը, թոռան որդին, թոռան թոռը, նրա որդին եւ թոռը, որ եղաւ եօթ:

Իսկ դէպ կողք, ինչպէս մեր եղբայրը, քոյրը եւ նրանց ծնունդները. կամ էլ՝ հօրեղբայրը, հօրաքոյրը, մօրաքոյրը, մօրեղբայրը եւ նրանց ծնունդները մինչեւ եօթն ազգ:

Սա եօթը պորտ հաշուելու առաջին եղանակն է:

Երկրորդ եղանակը. երկուսը մեր հայրն ու մայրն են, երկուսը՝ ծնունդները՝ որդին եւ դուստրը, երկուսն են եղբայրն ու քոյրը, եւ մենք էլ նրանց մէջ՝ եօթներորդը:

Երրորդ եղանակը. հայրը, որդին, թոռը, որ երեքն են, մինչեւ թոռան թոռը՝ չորս, որ կլինի եօթն եւ արիւնակցութեան եզրը:

Չորրորդ եղանակը. չորսը մարմնական ազգակցութիւնն է, որովհետեւ մարմինը չորս տարրերից է բաղկացած եւ երեքը՝ հոգեւոր, քանզի հոգին եռամասնեայ է, որոնք միասին լինում են եօթն ըստ մեծ Ներսէսի[578]:

Հինգերորդ՝ նորում ազգակցական վեց կապ է, ինչպէս Վարդան մեկնիչն է ասում, որովհետեւ ըստ չորս տարրերի ներսում չորս ծնունդներ են. առաջինը ծնողը, որից առաջ են գալիս չորս ծնունդները, իսկ հինգերորդը խնամական ազգակցութիւնն է. միասին լինում է վեց: Սա բնական ազգակցութիւնն է եւ օրէնքի աստիճանները:

Իսկ օրէնքինը խնամիութեամբ է, որովհետեւ օտար ազգեր փեսայի եւ հարսի միջնորդութեամբ, որոնք մի մարմին են դառնում, միաւորւում են եւ դառնում մէկը:

Եւ ինչպէս արիւնակցական ազգակցութեան մինչեւ չորրորդ ծնունդը չպէտք է խնամիութիւն լինի, այդպէս էլ խնամիների միջեւ մինչեւ չորրորդ ծնունդը չպէտք է [կրկնակի խնամիութիւն] լինի:

Իսկ հոգեւոր ազգակցութիւնը կրկին է. նախ ծնւում ենք աւազանով, ապա՝ որդեգրութեամբ, ինչպէս Մովսէսը եղաւ փարաւոնի դստեր որդեգիրը:

Ա՛րդ, սուրբ հայրերը ընդհանուր կանոններն այսպէս կարգեցին. հոգեւոր ազգակցութեան մէջ էլ մինչեւ երրորդ ծնունդը խնամիութիւն չպէտք է լինի[579], որովհետեւ կնքահայրն ու սանամայրը մի ծնունդ են, նրանց զաւակները երկրորդը, նրանց թոռները՝ երրորդը, իսկ թոռան թոռը, որ չորրորդն է, կարող է խնամի դառնալ: Սրա պատճառն այն է, որ հոգին եռամասնեայ է, այսինքն՝ բանականութիւն, ցասում, ցանկութիւն, ուստի, երբ լրանում է երրորդ ազգակցութիւնը, սպառւում են [նաեւ] երեք մասերը:

Իսկ որդէգիրը, որ խօսքով ու կամքով է լինում, խնամի չի լինում մինչեւ

երկրորդ ծնունդը, որովհետեւ զաւակ է խօսքի ու կամքի. իսկ խօսքն էլ կրկին է՝ խորհուածը եւ արտաբերուածը, ինչպէս որ կրկին են մտքի մասերը. իմացումը եւ կամքը:

Իսկ օրինական ազգակիցները, որ խնամիականն է եւ բնականը, որ նաեւ մարմնականն է, խնամի չեն լինում մինչեւ չորրորդ ծնունդը, որովհետեւ մարմինը չորս տարրերից է, եւ չորս ծնունդները փոխում են չորս տարրեղէն արիւնները հետեւեալ կերպ. եղբայրը եւ քոյրն ունեն ծնողի ամբողջական արիւնը. նրանց որդին, որ հոր թոռն է, ունի արեան կէսը, թոռան որդին՝ երրորդ մասը, իսկ թոռան թոռը՝ չորրորդ մասը: Եւ այստեղ եզրագծւում է արիւնակցութիւնն ու ազգակցութիւնը. նրանցից յետոյ հինգերորդ ծնունդները կարող են խնամի դառնալ:

Այսպէս էլ օրինական խնամիական ազգակցութիւնը պէտք է պահպանի չորս ծնունդները, որովհետեւ նրանք էլ ազգակիցներ են մարմնով ու արեամբ:

Այսքանն այս մասին:

Հարց. Ինչո՞ւ հին օրէնքը պարտադրում էր իր ազգից հարս առնել, իսկ նորը՝ օտար ազգից:

Պատասխան. Հին օրէնքն իր ազգից էր պարտադրում կին առնել, որպէսզի Աստծոյ մարդեղանալը Յուդայի ազգից անխառն եւ անշփոթ լինի, ինչպէս ասուել է երեսուներորդ գլխի երրորդ համարում:

Իսկ նորով պէտք է խնամիանալ օտար ազգի հետ, որպէսզի սէրը սփռուի եւ տարածուի բազմաթիւ ազգերի մէջ, որի պատճառով էլ օտար ազգերն են խնամի դառնում եւ օտար ազգից՝ հոգեւոր որդիներ:

Եւ Բանն Աստուած էլ հարս եկեղեցու փեսայ է կոչւում, որ մարդկանց օտար բնութիւնը միաւորեց իրեն:

Սրանից դաս առնելով՝ քրիստոնեայ ազգերը օտար ազգից են հարս առնում: Եւ ինչպէս հնում հեթանոսները խնամի չէին դառնում չթլփատուածների հետ, այդպէս էլ մենք խնամի չենք դառնում չմկրտուած այլազգիների հետ:

Հարց. Կարելի՞ է մէկից աւելի կին ունենալ, թէ ոչ:

Պատասխան. Մի տղամարդուն մի կին է օրինադրուած եւ ո՛չ աւելի՝ բազում պատճառներով: Նախ՝ որովհետեւ Աստուած մէկ կին տուեց Ադամին որպէս օգնութիւն եւ այդպէս կարգեց բոլորի համար: Երկրորդ՝ որովհետեւ մի կող վերցրեց եւ նրանից [կնոջը] պատրաստեց: Երրորդ՝ որովհետեւ ասում է՝ «Երկուսը լինեն մէկ մարմին», եւ ոչ թէ՝ երեքը կամ շատերը: Չորրորդ՝ յայտնի է նաեւ արարչագործութիւնից, ինչպէս ասում է՝ «Արու եւ էգ արարեց նրանց» (Ծննդ. Ա 27): Հինգերորդ՝ որովհետեւ զոյգ արարեց նրանց, ինչպէս ասում է՝ «Այն, որ Աստուած միացրեց, թո՛ղ մարդը չբաժանի»: Վեցերորդ՝ եւ չնայած նախահայրերը բազում կանայք էին առնում՝ զաւակներ ունենալու համար, սակայն կրկնակի հարսանիք չէր ընթերցւում: Եօթներորդ՝ եւ Քրիստոսն էլ ոչ բազում, այլ մի Կաթողիկէ եկեղեցի է միաւորուել:

Այդպէս էլ աստուածային օրէնքով մի տղամարդը պէտք է մէկ կնոջ հետ զուգաւորուի եւ ընկերակցի:

Իսկ այժմ քրիստոնեաները, մէկի մեռնելուց յետոյ, ուրիշին են բերում, որ ոչ թէ աստուածային հրամանով է, այլ՝ առաքելական ներողամտութեամբ է՝ յանուն ժուժկալութեան, որ պոռնկութեան անդունդը չընկնեն:

Իսկ որ երրորդ անգամ է ամուսնանում, ըստ սուրբ հայրերի կանոնների, պոռնկութիւն է համարւում[580]:

Հարց. Ինչո՞ւ է այժմ պոռնկութիւնը արգելւում, այն դէպքում, երբ նահապետները բազմաթիւ կանայք եւ հարճեր ունէին: Եւ բացի այդ, դրանով աստուածային հրամանն էր կատարւում, որ ասում էր՝ «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք» (Ծննդ. Ա 28):

Պատասխան. Ասենք, որ սակաւ հեշտանքով կապուեց ամուսնութիւնը, նախ, որպէսզի տղամարդիկ դրա պատճառով կենդանու նման խոնարհուեն, ապա կանայք կրեն երկունքի ցաւերը:

Եւ հեշտանքը որդեծնութեան, իսկ որդէծնութիւնը հեշտանքի կամ Աստծուն երկրպագելու համար է, եւ որդեծնութիւնը բարի է, իսկ հեշտանքը՝ չար:

Արդ, նահապետները բազում կանայք էին առնում որդեծնութեան եւ մարմնական օրհնութիւնն ի կատար ածելու համար, իսկ նորում փոխուել է հոգեւոր օրհնութեան ու ծնունդի, եւ մարմնաւորը սկզբում չափաւորութեամբ կապուեց, ինչպէս Ադամի եւ Եւայի ժամանակ:

Իսկ պոռնկութիւնը թէ՛ բնական, թէ՛ գրաւոր, թէ՛ նոր օրէնքներով պախարակւում է. նախ, որովհետեւ զուգակիցները անընդհատ հեշտանք են փափագում: Եւ երկրորդ՝ Աստծոյ օրէնքին ընդդէմ կորչում է բեղմնաւորելու ունակութիւնը՝ յաճախ մերձենալու պատճառով, որի պատճառով էլ բոլոր օրէնքներով խոտելի եւ պիղծ է համարւում:

Այսքանն այս մասին:

ԳԼՈՒԽ ԼԵ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ Պրակ Լէ

Այսքանից յետոյ հարցնելու է մեր եկեղեցու մասին՝

Հարց. Ի՞նչ է նշանակում «եկեղեցի»:

Պատասխան. Եկեղեցին համանուն է եւ երկու իմաստ ունի. կառուցուածը եւ կառուցողը, մէկը՝ բնակութիւնը, միւսը՝ բնակուողը, որ ժողովուրդն ու ժողովարանն են, որովհետեւ եկեղեցի նշանակում է՝ «ժողովել», ինչպէս որ Աստուած Մովսէսին հրամայեց՝ «Ժողովրդին «եկեղեցացո՛» խորանի դռան մօտ» (Ղեւտ. Ը 4), այսինքն՝ ժողովիր[581], այսինքն թէ՝ եկեղեցու անունը առաջինն Աստուած տուեց:

Արդ, երկու եկեղեցիներն էլ մէկ անուն ունեն եւ ըստ մէկ անուան ունեն բազմաթիւ համեմատութիւններ:

Նախ՝ ինչպէս նա քարից եւ այլ նիւթերից է ժողովուած, այդպէս էլ մարդ եկեղեցին՝ ոսկորներից, երակներից, մկաններից. կամ՝ տարբեր անձերից,

ազգերից եւ այր, կին, ծեր, տղա՝ բոլորը ժողովուելով, կոչւում են մէկ եկեղեցի:

Երկրորդ՝ ինչպէս նա եռայարկ խորան ունի՝ գաւիթը, մէջը, բեմը, այդպէս էլ մարդ [եկեղեցին] է եռայարկ. մարմինն արտաքին, հոգին՝ միջին, իմացութիւնն՝ առաջին:

Երրորդ՝ խաչանման է ձեւը, արեւելեան կողմում՝ գմբէթարդ: Եւ մարդն էլ խաչաձեւ է եւ երկրպագում է դէպի արեւելք, որտեղից ակնկալում է Փրկչի գալուստը, որի պատճառով էլ լուսամուտը արեւելեան կողմից է դրւում: Իսկ գմբէթն [ակնարկ է] Վերինի մասին խորհելու, որտեղ Քրիստոս նստած է Հօր աջ կողմում (տե՛ս Կողոս. Գ 2):

Չորրորդ՝ սա կոչւում է Աստծոյ տաճար եւ բնակարան, ըստ այդմ՝ «Տէրն իր սուրբ տաճարում է» (Սղմ. Ժ 5), իսկ առաքեալն ասում է՝ «Դուք աստծոյ կենդանի տաճարն էք» (Բ Կորնթ. Զ 16), «եւ Աստծոյ հոգին բնակուած է ձեր մէջ» (Բ Կորնթ. Գ 16):

Հինգերորդ, սրա հիմքի տասներկու քարերը եւ տասներկու պատուհանները մարգարէների ու առաքեալների խորհրդով են, որոնք եկեղեցու հիմքերն ու լոյսի ծագողներն են: Մեր մարմինն էլ տասներկու անդամ ունի եւ զգայութիւնների տասներկու դռներ, ինչպէս աչքերն են, ականջները, քիթը, բերանը եւ այլն:

Վեցերորդ՝ սա երկու դուռ ունի՝ հարաւից եւ արեւմուտքից, որ ցոյց են տալիս Աստծոյ ողորմութեան եւ արդարութեան դռները՝ հարաւից եւ արեւմուտքից, որովհետեւ մեղքն անտեսող ողորմութեան դուռը հարաւինն է, իսկ արդարութիւնը դէմ յանդիման, որ ուղիղ դատաստան է անում՝ արեւմուտքինը:

Իսկ երկրին եւ խաւարին նայող մեր մարմնական դուռն արեւմտեանն է, եւ մտքի դուռը, որ երկնքին ու լոյսին է նայում՝ հարաւայինը:

Եօթներորդ՝ նրանում են եկեղեցու եօթը խորհուրդները ներգործւում ու կատարւում մեր մէջ եւ ընդունւում [մեր մէջ], որովհետեւ մենք ենք կատարում խորհուրդները եւ դարձեալ մենք ենք ընդունում, ինչպէս մկրտութիւնը, դրոշմը, պատարագը եւ այլն:

Ութերորդ՝ այն կոչւում է «եկեղեցի», այսինքն «զոր կամիս, լիցի»[582] եւ՝ դուստր Սիօնի (հմմտ. Ողբ Բ 13): Եւ եկեղեցին է սուրբ, յաւիտենական հարս եւ անարատ թագուհի փեսայի՝ Քրիստոսի աջից, ըստ այդմ՝ «Կկանգնի թագուհին քո աջից՝ ոսկէկուռ հանդերձներով զարդարուած եւ զուգուած» (Սղմ. ԽԴ 10): Այլեւ, սա կոչւում է մայր հոգեւոր ծնունդների, եւ մենք էլ բարու հոգեւոր զաւակների մայրն ու ծնողն ենք:

Իններորդ՝ եւ իբրեւ մաս սրանում է փրկչական խաչը, եւ մենք էլ կրում ենք Քրիստոսի չարչարանքների խաչն ու մահը: Սրա մէջ է Սուրբ սեղանը, եւ մեր սուրբ սրտում՝ նուիրաբերութեան սեղանը: Այստեղ անարիւն պատարագ է մատուցւում, իսկ մեր մէջ բանական պատարագն է՝ անընդհատ նուիրաբերուող հոգին ու մարմինը: Այստեղ պաշտօնեաների երեք դասերն են՝

պետերը, քահանաները, սարկաւագները, իսկ մեր մէջ՝ իշխանութիւնն է, իմացումը, բարու խորհուրդները: Այստեղ՝ Աւետարանը, մեզանում՝ գրուած պատուիրանները: Այստեղ՝ խնկի բուրվառը, մեզանում՝ աղօթքի բուրումը: Այստեղ՝ վառուած մոմերը, մեզանում՝ խղճմտանքի լոյսը եւ անշէջ Սուրբ Հոգին. «Մի՛ հանգցրէք,- ասում է,- Սուրբ Հոգին» (Ա Թեսաղ. Ե 19):

Տասներորդ, սա մաքրւում է ջրով եւ օծւում, ապա դառնում եկեղեցի, իսկ մարդ-եկեղեցին մկրտւում է ջրով, կնքւում սուրբ միւռոնով, ապա դառնում եկեղեցի եւ Քրիստոսի ժողովուրդ, ինչպէս ասուել է երեսունմէկերորդ գլխի երրորդ համարում:

ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԸ

Հարց. Ինչո՞ւ ենք եկեղեցին օրհնում:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ, որովհետեւ տարրերը՝ հողը, ջուրը եւ այլն, դատապարտուեցին մարդ Ադամի պատճառով, ըստ այդմ՝ «Անիծեալ լինի՛ երկիրը քո արածի պատճառով» (Ծննդ. Գ 17), իսկ եկեղեցին նոյն նիւթերից է կառուցւում, ուստի աստուածային նոյն խօսքով օրհնում եւ մաքրում ենք առաջին անէծքից:

Երկրորդ՝ որովհետեւ սրա նիւթը արտաքնապէս քարն ու փայտն են, որոնք ոտնակոխ են եղել անասունների եւ անբանների կողմից, որի պատճառով էլ օրհնում ենք եւ մաքրում:

Երրորդ՝ որովհետեւ Մովսէսը կանգնեցնելով օրինակի խորանը[583]՝ նոխազների արեամբ, ջրով, իւղով օծեց ու մաքրեց. այդպէս էլ մենք ճշմարիտը օծում ենք ջրով, գինիով եւ սուրբ միւռոնով:

Չորրորդ՝ որովհետեւ երբ Սողոմոնը կառուցեց տաճարը, աղօթքի կանգնեց, օրհնեց եւ օծեց, ինչպէս Մովսէսը, որի պատճառով Աստծոյ փառքով լցուեց տաճարը եւ հուր իջաւ զոհաբերութեան ժամանակ: Այս մտքով ենք մենք սեղանի վրայ խունկ ծխում, ինչպէս ասուել է քսանմէկերորդ գլխի քառասուներեքերորդ համարում:

Հինգերորդ՝ եկեղեցին օրհնում ենք, որպէսզի Վերնատան օրհնութիւնը, որտեղ Տէրը պատարագեց ու Սուրբ Հոգին իջաւ առաքեալների մէջ, այդ նոյն օրհնութիւնը իջնի սուրբ եկեղեցու մէջ:

Վեցերորդ՝ օրհնում ենք, որպէսզի բաժանուի նաեւ այն աշխարհական տներին, որոնք օծուած չեն սրբութեամբ:

Եօթներորդ՝ որովհետեւ Աստուած Սուրբ է, որ բնակւում է Տաճարում, ուստի եւ եկեղեցին պէտք է սրբուի՝ լինելու Սուրբ Աստծոյ տաճար, «որովհետեւ Տէրն իր սուրբ տաճարում է» (Սղմ. Ժ 5):

Ութերորդ՝ եկեղեցին օրհնում ենք, որ լինի Սրբութեան սրբոց, որպէսզի նրան մօտեցողները մաքրուեն:

Իններորդ՝ օրհնում ենք, որովհետեւ նրա բնակիչները եւ պաշտօնեաները

պէտք է մաքուր լինեն, որպէսզի չպղծեն սրբութիւնը:

Տասներորդ՝ օրհնում ենք եւ օծում եկեղեցին մեր օրինակով, որովհետեւ մենք էլ եկեղեցի ենք կոչւում, ինչպէս վերն ասացինք:

Արդ, ջուրը, գինին եւ միւռոնը ցոյց են տալիս սուրբ աւազանի ջուրը. եւ միւռոնով օծւում եւ կնքւում ենք, ապա մեղսաքաւիչ արեան ճաշակմամբ մաքրւում:

Նաեւ՝ խոստովանութեան ջրով մաքրւում ենք, թողութեան գինով՝ զմայլւում, շնորհների իւղով՝ զուարթանում եւ լուսաւորւում:

Այս խորհուրդներն ունի եկեղեցու օրհնութիւնը: Իսկ այն, որ պղծուած տաճարում ժամերգութիւն ենք կատարում, կամ տեղաշարժ եղած սեղանն ենք հաստատում, [պատճառն այն է,] որ երբ մեր սրբութիւնը որեւէ մեղքով ապականւում է կամ շեղւում ենք հաւատից, նորից կարող ենք հաստատուել հաւատի մէջ, դարձեալ կրկնել խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը, որպէսզի առաջին սրբութեան նման Աստծոյ Հոգու տաճար եւ բնակարան լինի:

ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱՒԱԿԱՏԻՔԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ հները նաւակատիքը, որ տաճարի խորանի նորոգումն էր, կատարում էին տասներկու օր եւ ամէն տարի՝ քաւութեան եւ տաղաւարահարաց տօնը, իսկ մենք՝ ութ օր:

Պատասխան. Նախ, ոչ թէ տասներկու, այլ մէկ օր էին կատարում, որովհետեւ իւրաքանչիւր իշխան եւ ցեղ մէկական օր էին նաւակատիք կատարում:

Իսկ մենք ութ օր, որովհետեւ նախ մէկը նրանց տօնն ենք կատարում, իսկ եօթը լրացուցիչ՝ եօթը զգայարանների եւ եօթնապատիկ մեղքերի քաւութեան համար: Երկրորդ՝ որովհետեւ եօթն են եկեղեցու խորհուրդները եւ եօթնարփեան է Հոգու շնորհը, եւ մեր մէջ կայ մէկ իրականացում, որ կլինի ութ: Երրորդ՝ այս կեանքի եօթը շրջանների համար, իսկ ութերորդը՝ հանդերձեալի համար ենք տօնում:

Ասենք նաեւ, որ տարուայ մէջ մենք եկեղեցու տասներկու տօներ ենք տօնում, որոնք հետեւեալն են. Աշխարհամատրան եւ կիրակին Հոգեգալուստից յետոյ, Տապանակինը, Շողակաթինը, Խաչի չորս տօները, Երկրորդ գալստեանը, Վերնատանը եւ Նոր կիրակին:

Եւ թէ՛ տօնողները, թէ՛ տօները տասներկուսն են, քանզի տասներկու առաքեալների տօներն ենք կատարում, տասներկու անդամների եւ հոգու հինգ ու մարմնի հինգ զգայութիւնների համար՝ մտքով եւ կամքով:

Ու նաեւ ութ օր եկեղեցու համար ենք տօնում, մէկը՝ եկեղեցու գլխի եւ նրա անդամների, ապա հին ու նոր եկեղեցիների համար, որ եղան տասներկու:

Այսքանն այս մասին:

Հարց. Ինչո՞ւ խաչի եւ եկեղեցու համար միասին ենք տօնում:

Պատասխան. Նախ, որովհետեւ հնում քաւութեան եւ տաղաւարահարաց

տօնը միասին էին կատարում՝ թշրինի տասին, իսկ մեր քաւութեան տօնը խաչն է, տաղաւարահարը՝ եկեղեցին, ուստի խաչինն ու եկեղեցունը միասին ենք տօնում:

Երկրորդ՝ երբ աշնանը ժողովում էին արմատները, այնժամ երկու տօն էին կատարում, իսկ մեր արմատները եւ պտուղները խաչով ժողովուեցին սուրբ եկեղեցում:

Երրորդ՝ երբ բանակ խփեցին տասներկու ցեղերը՝ խաչաձեւ դրեցին, իսկ խորանը՝ մէջտեղում, ինչը նշանակում էր եկեղեցու խորանը՝ խաչի խորհրդով քարոզուած աշխարհի չորս կողմերում:

Չորրորդ՝ որովհետեւ Մովսէսի խորանը խաչաձեւ էր կանգնեցուած, ինչպէս մեր եկեղեցին՝ արեւելեան, արեւմտեան, հարաւային, հիւսիսային կողմերով:

Սա հին օրինակով էր:

Իսկ հինգերորդը նորում Քրիստոսի խաչով գնուած եւ ազատուած սուրբ եկեղեցին է:

Վեցերորդ՝ որովհետեւ նոյնն է խորհուրդը, որ այնտեղ խաչի վրայ պատարագուեց, իսկ այժմ եկեղեցում սուրբ՝ խաչի սեղանին:

Եօթներորդ՝ որովհետեւ եկեղեցու պսակն ու փառքը տէրունական սուրբ խաչն է, որպէս գլուխ կանգնեցուած:

Ութերորդ՝ որովհետեւ եկեղեցու բոլոր խորհուրդները խաչով են կատարւում՝ Մկրտութիւն, Կնունք, Պատարագ եւ այլն:

Իններորդ՝ որովհետեւ հաւատացեալների եկեղեցին մարմնի նման խաչի ձեւ ունի, եւ խաչը միշտ կրում են իրենց հետ եւ խաչի լոյսով ելնում են Քրիստոսին ընդառաջ:

Տասներորդ, որովհետեւ Հեղինէ տիկինը, որ կառուցեց Սուրբ Յարութիւնը Երուսաղէմում եւ փրկչական խաչը կանգնեցրեց Սուրբ Գողգոթայի վրայ սեպտեմբերի տասնչորսին, ութ օր նաւակատիք կարգեց խաչի եւ եկեղեցու համար միասին տօնելու, որի պատճառով էլ մենք միշտ նոյն ամսի նոյն օրը Սուրբ խաչի եւ եկեղեցու տօնն ենք կատարում[584]:

Հարց. Ինչո՞ւ տաճարում ճարպ էին վաճառում, իսկ եկեղեցում՝ մոմ:

Պատասխան. Հնում պատարագն անբան կենդանիներն էին, որի պատճառով էլ ճարպ էին այրում տաճարում, իսկ նորում պատարագը խօսքով է եւ անարիւն, որի համար էլ անարիւն կենդանու լոյսն են վառում, որովհետեւ այն կենդանին, որից մոմ է գոյանում, անարիւն է:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՉԽԱՐԸ ԵԿԵՂԵՑԻ [ՉԻ ՄՏՑԻՈՒՄ]
Պրակ ԼԹ

Հարց. Ինչո՞ւ ոչխարը եկեղեցի չեն մտցնում:

Պատասխան. Նախ, որովհետեւ եկեղեցին դրախտի խորհուրդն ունի, որտեղ անասուն չէր մտնում. նոյնպէս եւ եկեղեցի չի մտնում:

Երկրորդ, եթէ Սինա լեռանը անասուն էր մօտենում, քարկոծում էին, իսկ

եկեղեցին անմատչելի լեռ է, որի պատճառով էլ չեն մտնում անասունները, անարժանները, այլեւ՝ հերձուածող գազանները:

Երրորդ՝ հին տաճարում գառ էին զոհաբերում, որ օրինակն էր Աստծոյ Գառի, իսկ եկեղեցին ճշմարիտ Գառն է պատարագում, որի պատճառով եւ արգելւում է օրինակին ներս մտնել:

Չորրորդ՝ մենք էլ արտաքսում ենք Քրիստոսի օրինակով, որ խարազանով Տաճարից հանեց ոչխարներին եւ արջառներին (տե՛ս Յովհ. Բ 15):

Հինգերորդ՝ զգուշանում ենք, որ ոչխարների փարախ եւ գոմ չդառնայ եկեղեցին:

Վեցերորդ՝ որովհետեւ եկեղեցին բանական հօտի փարախ է եւ ոչ անբանների:

Եօթներորդ՝ որովհետեւ ոչխարը լիրբ է, իսկ լիրբը եկեղեցուց արտաքսելի է, ինչպէս լրբացած Յուդան արտաքսուեց:

Նոյն պատճառով էլ մեռեալին եկեղեցում չենք թաղում: Նախ՝ ինչպէս հոգով մեռածին ենք արտաքսում եկեղեցուց, այդպէս էլ՝ մարմնով մեռածին:

Երկրորդ՝ եկեղեցին դրախտի օրինակ է, որ արտաքսեց մեղքերով մեռածներին: Այդպէս էլ արքայութիւնից արտաքսուելու են բոլոր մեղքերով մեռածները:

Եւ եթէ մէկն ասի, թէ՝ սրբերի մարմիններն ինչո՞ւ ենք արգելում, պատասխանենք, որ սովորութիւն չդառնայ եւ պատուաւորներին, բռնաւորներին եւ միւսներին էլ [այնտեղ] թաղեն:

Երկրորդ՝ որովհետեւ հին տաճարում էլ սրբերին չէին թաղում, այլ՝ գերեզմանատանը, ուստի առաւել եւս սրբութիւնը պէտք է պահպանուի նոր տաճարում: Երրորդ՝ որովհետեւ սրբերի մարմինները գաւթում են պահում եւ ոչ եկեղեցում, այն հոգիների օրինակով, որոնք հոգու պահեստում են՝ լոյսի եւ հանգստեան վայրում եւ երկնքի արքայութեան փառքը վերջում կժառանգեն հոգով ու մարմնով՝ անվախճան յաւիտենութեամբ:

ԺԱՄԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ Խ

Հարց. Ի՞նչ է խորհրդանշում ժամկոչը:

Պատասխան. Ի լրումն պատմւում է, թէ Նոյը փայտէ կոչնակ պատրաստեց եւ կենդանիներին կանչեց տապան: Եւ տապանը խորհրդանշում է եկեղեցին, որտեղ հաւաքւում են ժամհարի ձայնով եւ փրկւում մեղքերի ջրհեղեղից:

Իսկ Մովսէսը Թուոց գրքում օրէնք սահմանեց երկու արծաթեայ փողեր ունենալու, որոնք անուանեց «ազդարարող փողեր» (Թիւք Ժ. 2), որոնք իբրեւ զոյգ փողեր դեռեւս պահպանւում են արքունիքի դռների մօտ: Դրանք ազդարարում էին կա՛մ բանակի մեկնելը, կա՛մ հիշխանների ժողովը, կա՛մ ամսամուտը եւ այլ տօները: Եւ երկու փողերը խորհրդանշում էին երկու զանգերը, կամ

զանգն ու ժամհարին, կամ էլ՝ փայտեայ եւ երկաթեայ լինելը:

Եւ հնում հնչեցնում էին քահանաները, ինչպէս այժմ կանչում են եկեղեցի ամէնօրեայ աղօթքի:

Եւ ունի նաեւ փողի գոչման խորհուրդը, որ ի բարձունս է, որովհետեւ նախ գոչելու է Գաբրիէլի փողը ու ժողովելու հոգիներին, ապա երկրից յարութիւն տալու մարմիններին, ինչպէս որ հրեշտակապետը այն նստած վէմին՝ աւետեց Քրիստոսի յարութիւնը (տե՛ս Մտթ. ԻԸ 2):

Եւ կիրակի գիշերը երեք փող է հնչում, որ նախ ցոյց է տալիս երեք ժամերը՝ կէսգիշերը, առաւօտը, արեւագալը: Երկրորդ՝ որովհետեւ երեքն են աշխարհի փողերը՝ մարգարէները, առաքեալները, իսկ վերջին փողը հրեշտակապետինն է: Երրորդ՝ որովհետեւ երեք անգամ է հնչում փողը. նախ երկնքից հոգիներին է կանչում, ապա երկրից՝ մարմինը, որից յետոյ յարութիւն առած հոգուն եւ մարմնին հրաւիրում է դատելու:

Այս մտքով են կիրակի գիշերը երեք անգամ Աւետարան կարդում:

ԽՆԿԻ ՄԱՍԻՆ

Հարց. Եկեղեցում քանի՞ անգամ են խնկարկում:

Պատասխան. Հնում քահանայապետն ու քահանան երկու անգամ էին խնկարկում՝ առաւօտեան եւ երեկոյեան՝ ինչպէս առաւօտեան զոհը սեղանին դնելիս, այդպէս էլ երեկոյեան դնելիս եւ աշտանակի լոյսը վառելիս:

Իսկ նորում երեք անգամ է, այսինքն՝ առաւօտեան, ճաշին, երեկոյեան, իւրաքանչիւր դէպքում երեք անգամ, որովհետեւ առաւօտեան մէկ անգամ շրթունքները խնկարկում են Տիրոջը, եւ սա երեք անգամ պտտեցնելով. մի օրհնութիւնը՝ եւս երեք անգամ եւ մի «Փառք ի բարձունս»՝ դարձեալ երեք անգամ:

Եւ երեք անգամն էլ Աւետարանը մօտ է դրւում խնկի բուրվառին:

Եւ ճաշին էլ երեք անգամ է արւում. մէկը քահանան, երկուսը սարկաւագը:

Եւ երեկոյեան նոյնպէս երեք անգամ են խնկարկում՝ «Լոյս զուարթ»-ի, «Ուղղեցին»-ի, Երեքսրբեանի ժամանակ, իսկ ոմանք [խնկարկում են նաեւ] արձակման ժամանակ:

ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԱ

Հարց. Ամէնից առաջ հարցնեմ, աղօթքի քանի՞ եղանակ կայ:

Պատասխան. Ասենք, որ վեց:

Նախ՝ մտքով աղօթելը, ըստ այդմ՝ «Սաղմոս պիտի ասեմ մտքով» Ա Կորնթ. ԺԴ 15):

Երկրորդ՝ խօսքով, ըստ այդմ՝ «Ունկնդիր եղի՛ր իմ բերանի խօսքին» (հմմտ. Եբր. Բ 1):

Երրորդ՝ ձայնով, ըստ այդմ՝ «Իմ ձայնով ես Տիրոջը կանչեցի» (Սղմ. Գ 5):

Չորրորդ՝ երկրպագութեամբ, ըստ որի՝ «Եկէ՛ք երկրպագենք նրան» (Սղմ. ՂԴ 6):

Հինգերորդ՝ արտասուքով, ըստ այդմ՝ «Վայր ընկնե՛նք եւ լա՛նք Տիրոջ առջեւ» (Սղմ. ՂԴ 6):

Վեցերորդ՝ աղօթք են նաեւ եկեղեցուն ընծայուած նուէրները եւ զոհաբերութիւնները, ըստ այդմ՝ «Քեզ աղօթք են մատուցելու Երուսաղէմում» (Սղմ. ԿԴ 2):

Եւ [վեցն] են, որովհետեւ Աստուած մեզ տուել է միտք, խօսք, ձայնի գործիքներ, մարմնի մասեր եւ ունեցուածք, որոնց բոլորից էլ պէտք է նուիրաբերել Աստծուն, իսկ արտասուքը ամէնօրեայ [աղօթք] է եւ առաւել է, քան հաշտութեան բոլոր ընծաները[585]:

Հարց. Արտասուքն ինչո՞ւ է առաւելագոյնս լուանում եւ ջնջում մեղքը, ինչպէս Դաւիթն էր ասում՝ «Ամբողջ գիշեր լուացի մահիճն իմ եւ անկողինն իմ արտասուքով թրջեցի» (Սղմ. Զ 7): Եւ պոռնիկ կինն էլ արտասուքով թրջեց Յիսուսի ոտքերը (տե՛ս Ղուկ. է 38):

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ դառը մաղձը հոսում է որովայնի մէջ, սրտի ստորին մասը եւ ցաւ է պատճառում սրտի ներքին թաղանթին եւ կսկծացնող ծխանման հիւթը բարձրանալով գլուխը՝ լցւում է աչքերը եւ դառնում արցունք:

Ա՛րդ, ինչպէս սրտից են բխում հեշտասիրութեան մեղքերը՝ շնութիւնը, ագահութիւնը եւ այլն, ինչպէս Աւետարանն է վկայում (տե՛ս Մտթ. ԺԵ, 18-19), այդպէս էլ սրտից է ելնում արտասուքի կսկիծը եւ քաւում նրա հեշտասիրութիւնը:

Երկրորդ՝ մեղքը բարձրանում է հոգուց եւ մարմնից, իսկ արտասուքը հոսում է վերից վար եւ կորստի մատնում նրան:

Երրորդ՝ որովհետեւ արտասուքի ջուրը հանգցնում է մեղքի կրակը:

Չորրորդ՝ որովհետեւ արտասուքը ջերմ է եւ հալեցնում է սառնութիւնն ու ջերմացնում սէրը:

Հինգերորդ՝ որովհետեւ արտասուքի դառնութիւնը ետ է դարձնում աչքի ցանկալին:

Վեցերորդ՝ արտասուքն ի նշան զղջման եւ սգի է, որ ունենում ենք մեղքերի պատճառով, որի հետեւանքով էլ արտասուքը աչքերին է տրուած, որպէսզի մեր պակասութիւնը տեսնելով՝ արտասուենք եւ լանք, որ թողութիւն ստանանք, ինչպէս Տէրն է հրամայում. «Երանի՛ սգաւորներին, որովհետեւ նրանք մխիթարուելու են» (Մտթ. Ե 4):

Եւ տարակուսելի է, թէ ինչո՞ւ տրտմութեան արտասուքը դառն է, ուրախութեանը՝ քաղցր:

Վարդապետներն ասում են, թէ ուրախ լուր լսելիս լեարդը լայնանում է, եւ շունչը հորդելով դէպի շնչերակ՝ զուարթանում է, որից գլուխը բարձրացած հիւթը քաղցր արտասուք է դառնում, այսինքն լեարդի քաղցրութեան պատճառով: Իսկ տխուր լուրի ժամանակ մարմինը խուճապի է մատնւում, եւ դառը մաղձը, որ լեղին է, հոսում է դէպի

միզապարկի բերանը եւ գլուխ բարձրացած հիւթը լեղու պատճառով լինում է դառը արտասուք: Դառնանում եւ չորանում է նաեւ տխրողի բերանը, եւ երեսը դառնութեան պատճառով գունատւում է, ապա՝ կապտակարմիր դառնում:

Սա ըստ մարմնի:

Սակայն պէտք է իմանալ, որ հոգեւոր արտասուքը երեք տեսակ է. մէկը մեղքերի համար, որ ապաշխարութիւնն է, երկրորդը ընկերոջ համար, որ ողորմութիւնն ու առաքինութիւնն է, երրորդը արքայութեան համար, որ երանութիւնն է, ըստ այդմ՝ «Երանի նրանց, որ լալիս են երկնքի արքայութեան համար» (հմմտ. Ղուկ. Զ 21):

Եւ արտասուքը Աստծուն էլ ստիպում է ողորմել այն մօր նման, որ բազմաթիւ որդիներ ունի՝ մէկը սապատաւոր եւ հաց մուրող, միւսը՝ մօրը աղերսող, միւսը լեզու չունեցող, որ միայն լաց է լինում, եւ մայրը գթում է արտասուքները եւ կերակրում:

Այդպէս էլ հրեշտակները, որ կատարեալ որդիներն են, Աստծուց անընդմիջաբար են ստանում: Սրբերն աղօթքներով են խնդրում Աստծուց եւ ստանում են: Իսկ մենք ո՛չ ոտք, ո՛չ էլ լեզու ունենք եւ տհաս ու տգէտ ենք, եւ միայն արտասուքով ենք ողորմութիւն խնդրում, եւ [նա] հարկադրուած գթում եւ տալիս է:

Եւ իմաստուններն ասում են, թէ երկնքից երկիր բազում տարիների ճանապարհ է, իսկ աչքից մինչեւ այտը՝ կարճ, որով անցնում է արտասուքը, սակայն այս կարճ ճանապարհը յաղթում է այն տարիների երկարաձիգ ճանապարհը:

Եւ իմացի՛ր, որ աղօթքին երեք կերպ են պատրաստւում. մարդը իրեն նախապատրաստում է եւ աղօթում, այսինքն՝ մարմնով, ապա մտքով, յետոյ՝ կամքով. երբ սրանք պատրաստ են, աղօթքն Աստծուն ընդունելի է լինում:

Մարմնով [նախապատրաստւում] են երեք կերպ. նախ եթէ չգիտէ աղօթքի ձեւը, կամ ծնկի գալը, կամ ձեռքերը տարածելը, ապա սրանք ո՛չ մեղք են, ո՛չ արդարութիւն: Եւ եթէ գիտէ ու մոռացել է, ներելի մեղք է: Իսկ եթէ քամահրանքով եւ նախանձով է զանց առնում, մահու չափ ծանր մեղք է գործում:

Իսկ մտքով, երբ աղօթում է եւ մտքով ցրուած է՝ ո՛չ մեղք է, ո՛չ էլ արդարութիւն: Եթէ միտքն ուղղուած է աշխարհական հոգսերին՝ թէ ինչ ուտենք, ինչ խմենք՝ դարձեալ ներելի է: Իսկ եթէ միտքը մեղաւոր բաների է ուղղուած՝ մահացու մեղք է:

Եւ կամքով, երբ յօժարակամ է տրւում աղօթքը, փոխհատուցւում է: Երբ ակամայ է՝ ո՛չ փոխհատուցւում է, ո՛չ էլ մեղք է: Իսկ երբ լիովին կամքին հակառակ է՝ մահացու մեղք է:

Եւ իւրաքանչիւր ոք, ով աղօթքի է կանգնում, պէտք է յիշի սրանք, ապա աղօթի, որի պատճառով էլ սկզբից խրատը տուեցի:

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԲ

Հարց. Որո՞նք են աղօթքի ժամերը եւ քանի՞սն են:

Պատասխան. Պէտք է իմանալ, որ հին օրէնքում Մովսէսի կար աղօթքի եօթը ժամ, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Եօթն անգամ օրուայ մէջ պիտի օրհնեմ քեզ» (Սղմ. ՃԺԸ 164): Եւ առաջին ժամը երեկոյեան էր, որովհետեւ օրուայ սկիզբը երեկոն էր համարւում, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Ես առ Աստուած աղօթեցի, եւ Տէրն ինձ երեկոյեան լսեց» (Սղմ. ՃԺԷ 5):

Ապա հանգստեան ժամինն էր: Ապա կէսգիշերինը: Առաւօտեան, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Կէսգիշերին ելնում էի [գոհութիւն մատուցելու քեզ»] (Սղմ. ՃԺԸ 62), եւ՝ «Եւ առաւօտ կանուխ ելայ» (Սղմ. ԿԲ 7):

Եւ այս չորս աղօթքները գիշերն էին անում, իսկ երեքը՝ ցերեկուայ հետեւեալ ժամերին. նախ ժամը երեքին, ապա վեցին, իննին, որ նրանց աղօթքի աւարտաժամն էր:

Իսկ քրիստոնեայ ազգի նոր եկեղեցին աւելացրել է երկու ժամ, այսինքն՝ առաւօտից յետոյ արեւագալին եւ երեկոյից յետոյ՝ խաղաղականին: Այսպիսով, լինում են ինը աղօթքներ՝ ըստ հրեշտակների ինը դասերի: Եւ ինն են նաեւ եկեղեցու աստիճանները, եւ սա էլ է ուսուցանում մարգարէն. «Օրհնեցէ՛ք մեր Աստծուն եւ սաղմոս ասացէ՛ք նրա անունով, ճանապարհ բացէ՛ք նրա համար, որ նստում է արեւմուտքում» (Սղմ. ԿԷ 5):

Դարձեալ ասում է. «Երկրի թագաւորութիւններ, օրհնեցէ՛ք Աստծուն, ճանապարհ բացէ՛ք նրա համար, որ նստում է երկինքների երկնքում արեւելքում» (Սղմ. ԿԷ 34): Իսկ երկինքների երկնքում Բանն Աստուած էր՝ օրհնաբանուող պայծառ եւ լուսաւոր հրեշտակների դասից, որ եկաւ երկիր, որ արեւմուտքն էր ու խաւարը, եւ եղաւ մարդու Որդի:

Այս մտքով ենք մենք՝ քրիստոնեայ ազգերս, արեւածագին եւ մայրամուտին ինչպէս վերին հրեշտակները աղօթում Աստծուն:

Եւ աղօթքի առաջին ժամը կէսգիշերին է, որովհետեւ կէսգիշերին յարութիւն առաւ Քրիստոս, եւ կէսգիշերին է լինելու ընդհանրապէս մեր յարութիւնը, որի պատճառով էլ այս ժամը սկիզբն է ամբողջ օրուայ աղօթքների, որ Տիրոջն ենք ուղղում շրթունքներով եւ զանազան սաղմոսներն՝ ի դէմս Հօր Աստծոյ:

Եւ այս է միտքը, որ մեղքով կապուեց, ինչպէս նախաստեղծները՝ ճաշակելու պատճառով, եւ բերանի, հոգու, մարմնի արձակում ենք խնդրում: Եւ չորս փոխերը՝ [ասւում են] յանուն քառատարր մեր բնութեան եւ գիշերուայ չորս պահերի, որի ընթացքում մեզ բազմիցս նեղում է թշնամին. գանգատւում ենք նրան եւ փրկութիւն խնդրում: Եւ հարիւր «Տէրողորմեայ»-ն ըստ հարիւր ոչխարների թուի, որոնցից մէկը մոլորուեց (տե՛ս Մտթ. ԺԸ 12, Ղուկ. ԺԵ 4), եւ յիսունը՝ մարտիրոսների, քանզի ազատութիւն է[586]: Եւ երեք «Տէրողորմեայ»-ն տէրունական տօներին:

Երկրորդ ժամը երից մանկանց օրհնութիւնն է (տե՛ս Դան. Գ)՝ ի դէմս Որդու, որովհետեւ նա իջաւ աշխարհի հնոցի մէջ եւ փրկեց մեզ: Եւ ի դէմս Սուրբ

Երրորդութեան՝ «Աստուա՛ծ, քաւիր ինձ՝ մեղաւորիս»-ը, ինչպէս Տէրը սովորեցրեց մաքսաւորին (տե՛ս Ղուկ. ԺԸ 10-14): Եւ մենք էլ ուսանելով՝ նոյնն ենք երգում:

Երրորդ ժամը արեւագալինն է՝ ի դէմս Սուրբ Հոգու:

Այս երեք [աղօթքները] գիշերուայ ժամերին ենք կատարում:

Իսկ չորրորդը ցերեկուայ երրորդ ժամի առաջին Ողորմեան է՝ ի դէմս Սուրբ Հոգու, որ երրորդ ժամին իջաւ առաքեալների մէջ:

Հինգերորդը միջին Ողորմեան է եւ պատարագը ի դէմս Հօր, որ առաքեց Որդուն խաչուելու, իսկ Պատարագը ի դէմս Որդու է, որ խաչուեց յանուն մեզ:

Վեցերորդը վերջին Ողորմեան է՝ ժամը իննի աղօթքը, երբ Քրիստոս աւանդեց Հոգին՝ Հօր միջոցով: Եւ այժմ երեք Ողորմեան եւ պատարագը միասին ենք կատարում:

Եօթներորդ ժամին կատարւում է «Խոնարհեցո»-ն եւ «Ապրեցո»-ն՝ ի խորհուրդ Քրիստոսի թաղման:

Ութերորդը խաղաղականն է՝ երեկոյից յետոյ, ի դէմս Սուրբ Հոգու, երբ Քրիստոսի հոգին իջաւ դժոխք եւ խաղաղեցրեց նրանց:

Իններորդը հանգստեան ժամինն է՝ ի դէմս Հօր, երբ ասում ենք «Եկեսցէ»-ն եւ քուն մտնում, որով աւարտւում են օրուայ բոլոր աղօթաժամերը:

Իսկ «Եկեսցէ»-ն ունի սաղմոսներ՝ ինը բոլոր փոխերով՝ ողջ գիշերուայ ինը ժամերի պահպանութեան համար եւ վեց կիսափոխ՝ մնացեալ ժամերի համար մինչեւ հանգստեանը[587]:

Նաեւ խաղաղականին կարդացւում է եօթը փոխ՝ եօթը զգայարանների պահպանութեան եւ անցած գործերի մաքրութեան համար:

Եւ պէտք է իմանալ, որ գիշերուայ մէջ կատարւում է չորս անգամ[588], այսինքն՝ հանգստեանինը, կէսգիշերինը, առաւօտեանը, արեւագալինը, որովհետեւ գիշերը չորս պահ ունի: Առաջինը, երբ ասում ենք «Եկեսցէ»-ն:

Երկրորդը կէսգիշերն է:

Երրորդը՝ հաւախօսը:

Չորրորդը՝ լուսաբացը:

Եւ Տէրը զգուշացրեց այս ժամերին արթուն լինել եւ աղօթել, ինչպէս ասում է՝ «Ոչ ոք չգիտի, թէ ո՞ր ժամին կգայ գողը՝ երեկոյեա՞ն, կէսգիշերի՞ն, թէ՞ առաւօտեան» (Մտթ. ԻԴ 43, Ղուկ. ԺԲ 39):

Եւ որովհետեւ մարդու հասակը չորս փոփոխութիւն է կրում. երեկոն տղայութիւնն է, երբ ժամանում ենք կենաց խաւարը. կէսգիշերը երիտասարդութիւնն է, երբ առաւելագոյնս ենք թմրում մեղքերի մէջ. հաւախօսը ալեւորութիւնն է, իսկ առաւօտը՝ ծերութիւնը, որը մօտ է հանդերձեալ աշխարհի ծագմանը:

Եւ մեր մարմնի կազմն էլ քառանիւթ է, որոնցով մեղանչում ենք, ուստի գիշերը աղօթում ենք չորս անգամ՝ յանուն մեր մարմնի:

Իսկ ցերեկն աղօթում ենք հինգ անգամ ի դէմս մեր հոգու: Նախ, որովհետեւ հոգին եռամասն է՝ բանա-

կանութիւն, ցասում, ցանկութիւն եւ ունի իմացում ու կամք:

Բացի այդ, հոգին ունի հինգ զգայութիւններ, որոնք են՝ ընդհանուր զգայութիւնը, երեւակայութիւնը, կարծիքը, տրամաբանութիւնը եւ միտքը, որ յիշողութիւնն է: Եւ հինգ արտաքին զգայութիւններ, այսինքն՝ տեսողութիւնը, լսողութիւնը, հոտոտելիքը, ճաշակելիքը, շօշափելիքը:

Եւ սրանցով է մարդը կատարում չարն ու բարին, ուստի եւ ցերեկը հինգ անգամ ենք աղօթում[589]:

Սա ընդհանրապէս աղօթքի մասին:

ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԳ

Հարց. Ինչո՞վ են զանազանւում ընդհանուր եւ առանձնական աղօթքները:

Պատասխան. Նախ՝ ընդհանուր աղօթքները պարտադիր են, իսկ առանձնականը՝ կամաւոր: Երկրորդ՝ ընդհանուրը պարտքն է մարում, առանձնականը պսակ է պատրաստում: Երրորդ՝ ընդհանուրը զգայարաններով է կատարւում, առանձնականը լուսափայլում է մտքի մէջ: Չորրորդ՝ ընդհանուր աղօթքը մէկ պատիւ ու փառք է, առանձնականը՝ կրկնակի:

Եւ չնայած առանձնականը կամաւոր է, սակայն վանականների՝ աբեղաների, կրօնաւորների համար պարտադիր է՝ չորս պատճառով: Նախ տէրունական խօսքից է յայտնի, որ ինչպէս ընդհանուր աղօթելը սովորեցրեց՝ «Որտեղ ձեզնից երկուսը կամ երեքը միաւորուեն եւ խնդրեն» (Մտթ. ԺԸ 19), այդպէս էլ սովորեցրեց առանձնականը, ըստ այդմ՝ «Մտի՛ր սենեակը քո եւ ծածուկ աղօթի՛ր» (Մտթ. Զ 6): Եւ ինքը բազմիցս առանձին աղօթքի մէջ էր:

Երկրորդ՝ որովհետեւ եթէ քահանայ են, պէտք է ընդհանուր աղօթք անեն, եթէ աբեղայ՝ առանձնական:

Երրորդ՝ քանի որ ընդհանուր բնութիւն ունենք, ուստի պէտք է ընդհանուր աղօթք անել, եւ [միաժամանակ] քանի որ անհատ ենք եւ առանձին դէմք՝ պէտք է առանձին աղօթք անել:

Չորրորդ՝ ընդհանուր եւ երեւացող մեղքերի համար պէտք է ընդհանուր եւ յայտնապէս աղօթել, իսկ սեփական սայթաքումների համար պէտք է առանձին աղօթել եւ ապաշխարել:

Եւ իմանալու է, որ ոմանք միշտ ընդհանուր աղօթքից յետոյ նաեւ առանձին են աղօթում:

Եւ նրանք, ովքեր ներկայ չեն լինում, պէտք է օրուայ մէջ երկու անգամ աղօթեն, այսինքն՝ առաւօտեան եւ երեկոյեան, նախ որովհետեւ մարդը հոգի եւ մարմին է: Եւ դարձեալ որովհետեւ մէկը գիշերուայ սկիզբն է եւ աւարտը, միւսը՝ ցերեկուայ: Երրորդ՝ մեր մտնելու եւ դուրս գալու, այսինքն՝ կեանքի եւ մահուան համար: Չորրորդ՝ այս եւ հանդերձեալ աշխարհների համար առանձին ենք աղօթում, որպէսզի փրկուենք փորձանքներից:

Իսկ աւելի կատարեալներից ոմանք երեք անգամ են առանձին աղօթում.

կէսգիշերին՝ ընդհանուր աղօթաժամից առաջ, լուսաբացին եւ ցերեկը:

Եւ սա հետեւեալ խորհուրդներն ունի:

Նախ՝ որովհետեւ գոյաւորուել ենք մարմնից, հոգուց, մտքից, ինչպէս ոմանք են ասում, ուստի երեք անգամ առանձին ենք աղօթում: Ապա երեք ժամանակ կայ՝ անցեալ, ներկայ, ապագայ: Երեքն են նաեւ մեր լինելութիւնն ու փոփոխութիւնները, այսինքն՝ այս կեանքում, յետմահու, յարութիւնից յետոյ:

Այլ խորհուրդ էլ ունի, երեք առանձնականը եւ ինն ընդհանուրը միասին լինում են տասներկու աղօթք, որովհետեւ գիշերը եւ ցերեկը միասին քսանչորս ժամ ունեն, եւ երկու ժամը մէկ՝ մի աղօթք է լինում, որից յայտնի է դառնում, որ օրուայ կէսը, այսինքն ամէն օր պէտք է աղօթենք տասներկու ժամ, միւս կէսը զբաղուենք մարմնական հոգսերով, գործերով, ննջելով եւ մնացեալ գործերով:

Բացի այդ, ունենք տասներկու անդամներ եւ իւրաքանչիւրի համար մէկական ժամ աղօթում ենք: Այլեւ՝ երկնքի հրեշտակների տասներկու գնդին եւ տասներկու առաքեալներին խնդրում ենք բարեխօսել առ Աստուած:

Սրանցից բացի տասներկուսը երկու վեց է, եւ մենք անընդհատ վեց շարժումներով՝ հոգով եւ մարմնով մեղանչում ենք, որի համար էլ տասներկու ժամերի աղօթքով թողութիւն ենք խնդրում սրանց համար:

Սա էլ առանձնական աղօթքի մասին:

ԴԱՐՁԵԱԼ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
Պրակ ԽԴ

Հարց. Ինչո՞ւ ենք օրուայ սկզբում ասում՝ «Օրհնի՛ր այս անուն...» եւ ոչ թէ՝ հրամայի՛ր կամ աղօթի՛ր:

Պատասխան. Աստծուն օրհնելը երեք կերպ է: Նախ՝ գոհութիւն է եւ շնորհակալութիւն մեզ տրուած բազում երախտիքների համար:

Երկրորդ՝ ասում է յայտնել, այսինքն, որ ծածուկ չէ, այլ նրա աստուածութիւնը բացայայտ է իր արարածների վրայ:

Երրորդ, խոստովանութիւն եւ վկայութիւն է, որ բարի է, երջանիկ, անմահ իր բնութեամբ եւ այլն, ինչպէս ասուել է վերը:

Եւ առաջինի համար գոհանում ենք, որ մեզ հասցրեց աղօթքի ժամի: Երկրորդով յայտնում նրա փառքը եւ մեծութիւնը: Երրորդով վկայում եւ կցորդւում նրա բարութեանն ու երանութեանը: Այս է միտքը, որ ասում ենք՝ «Օրհնի՛ր», այսինքն գոհացի՛ր Աստծուց եւ յայտնի՛ր նրա փառքը, որովհետեւ հաղորդւում ենք նրա բարութեանը:

ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ երկուսը սաղմոսում են, իսկ օրհնութիւնը ուրիշներն են տալիս:

Պատասխան. Նախ, ըստ մարդկանց սովորութեան, որ աղերսանքով դիմում են մեծամեծներին, իսկ սրանք մատուցում են թագաւորին: Այդպէս էլ մենք սաղմոսի եւ այլ երգերի ընծա-

յաբերումը տալիս ենք քահանաներին, որոնք նուիրում են Աստծուն եւ մեզ հաշտութիւն բերում, քանզի քահանան միջնորդ է Աստծոյ եւ մարդկանց միջեւ:

Երկրորդ՝ ինչպէս հներն էին զոհաբերութիւն մատուցում քահանաներին, եւ սրանք նուիրաբերում էին Աստծուն, այդպէս էլ մենք մեր բանական զոհաբերութիւնն ենք մատուցում քահանաներին՝ Աստծուն ընծայելու եւ շնորհներ բերելու համար, ըստ այդմ՝ «Խաղաղութիւն ամենեցուն» եւ՝ «Քո հոգու հետ», եւ քահանաները ճաշակում էին Աստծոյ նուիրաբերութիւններից:

Երրորդ՝ ինչպէս երկնքում երեք եռեակ դասեր կան, այսինքն առաջինն Աթոռները, միջինը՝ Տէրութիւնները, վերջինը՝ Հրեշտակները, որոնք Աստծուն օրհնաբանում են՝ վերջինը փոխանցելով միջինին, միջինն առաջինին, առաջինը՝ Աստծուն, այդպէս էլ եկեղեցում պաշտօնեաների երեք դաս կայ. առաջինը քահանաները, միջինը՝ սարկաւագները, վերջինը՝ սաղմոսասացները:

Ա՛րդ, սաղմոսասացները տալիս են սարկաւագին, սարկաւագը՝ քահանային, եւ սա օրհնութիւնը մատուցում է Աստծուն, ինչպէս քերովբէների առաջին դասը:

Չորրորդը եւ ճշմարիտն այն է, որ ինչպէս Տեսիլքն է պատմում, հրեշտակներն առնում էին խունկը, որ սրբերի աղօթքն է եւ նուիրում ոսկի սեղանին, որ Քրիստոսն է, եւ նրանից ծուխը բուրում էր առ Հայրը (տե՛ս Յայտ. Ը 4): Այդպէս էլ եկեղեցում ոմանք սաղմոսում են, իսկ սարկաւագը հրեշտակի օրինակով օրհնութիւնը տալիս է քահանային, եւ սա օրհնութիւնը վերընծայում է Աստծուն եւ իբրեւ պարգեւ մեզ խաղաղութիւն բերում:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ քահանան աղօթում է, իսկ եպիսկոպոսը խաղաղութիւն մաղթում:

Պատասխան. Ոչ ամբողջ [ընթացքում], այլ միայն իւրաքանչիւր ժամերգութեան առաջին աղօթքին է եպիսկոպոսը խաղաղութիւն մաղթում, մնացածներին՝ քահանան, որ աղօթում է:

Եւ պատճառն այն է, որ քահանան ի դէմս Քրիստոսի է, եպիսկոպոսը՝ Հօր Աստծոյ, իսկ խաղաղութիւնը՝ Սուրբ Հոգու, որ առաքուեց Հօրից, ըստ այդմ՝ «Ես կաղաչեմ Հօրը եւ այլ մխիթարող կտայ ձեզ» (Յովհ. ԺԴ 16): Որի պատճառով էլ քահանան աղերսում է եպիսկոպոսին, եւ նա խաղաղութիւն է տալիս, քանի որ քահանան միջնորդ է Աստծոյ եւ մարդկանց միջեւ: Եւ ինչպէս մեր աղօթքն է նուիրում Աստծուն, այդպէս էլ նրանից վերցնում է շնորհներ եւ հաշտութեան պարգեւը:

Հարց. Ինչպէ՞ս պէտք է ասել. «Խաղաղութիւն ամենեցո՞ւն», թէ՞ «ընդ ամենեսեան»:

Պատասխան. Ասենք, որ տարբեր են «ամենեցուն»-ն ու «ընդ ամենեսեան»-ը, որովհետեւ «ընդ ամենեսեան» անձ է նշանակում, իսկ՝ «ամենեցուն» Սուրբ Հոգու շնորհն է ցոյց

տալիս: Եւ քահանային առաւել յարմար է Սուրբ Հոգու շնորհները բաշխել, քան անձը:

Եւ սա հաստատեց Տէրը, որ ժամանակին ասում էր՝ «Իմ խաղաղութիւնը ձեզ եմ տալիս» (Յովհ. ԺԴ 27), որ Հոգու շնորհն էր, եւ մերթ՝ «Ձեր հետ է բնակուելու եւ ձեր հետ է լինելու» (Յովհ. ԺԴ 16), որ անձնաւոր հոգին է: Նաեւ՝ «ընդ ձեզ» երբեմն նշանակում է մէկը միւսի հետ, ինչպէս որ ասում էր՝ «Ես ձեզ հետ եմ բոլոր օրերին» (Մտթ. ԻԸ 20): Իսկ «ամենեցուն» մշտակայ եւ անբաժանելի Սուրբ Հոգին է:

Հետեւաբար, պէտք է ասել՝ «խաղաղութիւն ամենեցուն» եւ ոչ թէ՝ «ընդ ամենեսեան»:

Հարց. Ինչո՞ւ խաղաղութիւն [մաղթելիս] խաչակնքում ենք:

Պատասխան. Նախ, որովհետեւ Սուրբ Հոգին Քրիստոսի խաչի պարգեւն է, քանզի Վերնատանն էլ լուսեղէն խաչով իջաւ առաքեալների մէջ: Ապա ուրեմն պէտք է Սուրբ Հոգուն յիշատակելու ժամանակ միշտ խաչակնքել դէմքը եւ երկրպագել, որովհետեւ «Աստուած հոգի է եւ պէտք է նրան երկրպագել հոգով եւ ճշմարտութեամբ» (Յովհ. Դ 24),- ասում է Տէրը:

Հարց. Ինչո՞ւ բոլոր աղօթքներն աւարտում ենք ի Քրիստոս:

Պատասխան. Որովհետեւ Որդին մարմնացաւ, եւ նա է մեր բարեգործութիւնները նուիրում Հօրը:

Հարց. Ինչո՞ւ բոլոր քարոզների վերջում աղօթքի ձեւը փոխելով՝ սարկաւագն ասում է. «Կեցո՛ եւ ողորմեա՛, օրհնեա՛ այս անուն…»:

Պատասխան. Որովհետեւ սարկաւագը մեր քարոզողն ու ուսուցիչն է ի դէմս Հոգու եւ առաքեալների, ուստի երբ քարոզում է, սովորեցնում է նաեւ այդկերպ աղօթել:

Հարց. Ի՞նչ է նշանակում, որ սարկաւագը աղօթքի ձեւով է ասում առաւօտեան քարոզը, այսինքն՝ «Երկրպագեմք»-ը, Պատարագի գոհութիւնը եւ երեկոյեան «Հասեալքս ի ժամ»-ը:

Պատասխան. Սարկաւագը մեզ քարոզողն է եւ աղօթքի հրաւիրողը, ուստի եւ դառնում է մեր լեզուն եւ մեր անունից գոհութիւն յայտնում Աստծուն ամէն ժամի, այսինքն՝ առաւօտեան, ցերեկը, երեկոյեան, որ գոհացում է եւ ոչ աղօթք:

Եւ ա՛յլ է քարոզը, որ մեզ համար է, ա՛յլ աղօթքն առ Աստուած, ա՛յլ մաղթանքը սրբերին, ա՛յլ գոհութիւնը, որ յայտնի է նաեւ առաքեալի ասածից. «Աղօթել, խնդրել, պաղատել եւ գոհանալ» (Ա Տիմ. Բ 1):

Եւ քարոզն ինքնին յայտնի է, որովհետեւ յորդորանք է մեզ:

Աղօթքն ապագայի համար է:

Մաղթանքը՝ ներկայի:

Գոհութիւնը՝ անցեալի առաւելագոյն պարգեւների համար:

ԴԱՐՁԵԱԼ ԳՈՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եւ գոհութեան մասին պէտք է իմանալ ըստ առաքեալի ասածի. «Ըստ ամենայնի գոհացող եղէ՛ք Տիրոջից» (Ա Թեսաղ. Ե 18):

Եւ պէտք է գոհանալ բազմաթիւ պատճառներով: Նախ՝ որովհետեւ գոհութիւնը բարու մասից տրուած օրինաւոր պարգեւ է, եւ ինչպէս ամէն ինչի մի մասը նուիրաբերելի է Աստծուն, այդպէս էլ բարի գործերի համար գոհութիւնը:

Երկրորդ՝ որովհետեւ գոհութիւնը կործանում է հակառակ մեզ գործող չարին:

Երրորդ՝ մեր բարիքների գանձը անվնաս է մնում:

Չորրորդ՝ որովհետեւ Աստծուն ենք ճանաչում իբրեւ բարիքների պատճառ եւ նրան վերագրում:

Հինգերորդ՝ որովհետեւ՝ «Գոհութիւնը միախառնելով բարի գործերին՝ ամրանում ենք կրկնակի պարսպով»,- ասում է սուրբ Եւագրիոսը:

Վեցերորդ՝ գոհութիւնն Աստծոյ բոլոր գործերի փոխհատուցումն է:

Եօթներորդ՝ որովհետեւ Աստծուն կրկնակի պարտական է դարձնում տալու համար:

ԺԱՄԱՏԵՂԻՆԵՐԻ ԵՒ ԿԱՆՈՆԱԳԼԽԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԵ

Հարց. Ի՞նչ խորհուրդ ունի այն, որ կանոնագլուխը ձայնով ենք ասում:

Պատասխան. Հները կեանքի եօթը շրջանների խորհրդով եօթն առաւել չափով էին պատուի արժանացնում: Եօթի խորհրդով էր նրանց ամսուայ օրերի շաբաթանալը: Տարուայ եօթն օրը բաղարջակերքն էր եւ տաղաւարահարաց տօնը, եօթնական գառների մորթելը, եօթն անգամ արեան ցօղելը, որ մաքրուեն եօթը զգայարանները, օրուայ մէջ եօթն անգամ Աստծուն օրհնելը: Եօթն էին սաղմոսների կանոնները, եօթն անգամ եօթը կանոնների գոբղաները, որ գիշեր ու ցերեկ խորանում երգում էին:

Այլեւ եօթն օր շրջեցին տապանակով, եւ կործանուեց Երիքովի պարիսպը:

Սա նրանց մասին:

Իսկ նորում՝ մեզանում, մի քիչ աւելի խորանալով եօթի [խորհրդի] մէջ, այլեւ փոյթ տանելով ութերորդի համար՝ մեր եկեղեցու աւանդապահները կարգեցին ութ կանոնները ութական գոբղաներով եւ վերջին կանոնն իբրեւ վերելք աստիճաններով, որ այս կեանքից դէպ հանդերձեալն է:

[Կարգեցին] նաեւ եղանակի ութ ձայները եւ գլխաւոր տօների ութ օրերը, ինչպէս Ծննդեան ութ օրը, Յարութեանը, Հոգեգալստեանը, Խաչինը, Եկեղեցունը եւ այլն:

Այլեւ ութ խորհրդով է սատանայի պատերազմը[590], ինչպէս գրում է սուրբ Եւագրիոսը:

Այլեւ աղօթքի ինը կարգերն այժմ ութ անգամ ենք կատարում հետեւեալ ձեւով. երեքը գիշերը, երկուսը ճաշին, երեքը՝ երեկոյեան: Այս մտքով էլ առաքեալները շաբաթուայ եօթներորդ օրը տեղափոխեցին կիրակի, որ ըստ հերթականութեան ութերորդը եղաւ, ինչպէս ասացինք:

Իսկ այն, որ կոչում ենք «կանոնագլուխ»՝ վեց գոբղաներ հանդարտ թիւ ասելով, իսկ եօթներորդը՝ երգելով, Յեսուի օրինակով է, որ տապանակով, քահա-

նաներով, ժողովրդի հետ վեց օր լուռ շրջեցին, իսկ եօթներորդ օրը փողերը բարձրաձայն հնչեցրին քահանաները, եւ ժողովուրդը բարձրաձայն աղաղակեց, որից կործանուեց Երիքովի եօթնաշերտ պարիսպը (տե՛ս Յեսու Զ, 20):

Նոյն ահագնութեամբ էլ այժմ մեր Յիսուս Փրկչի ձեռքով՝ խաչի տապանակով եւ եկեղեցում սուրբ աղօթքներով իսպառ կործանուելու է մեզ եւ Աստծուն բաժանող եօթը զգայարանների մեղքերով բարձրացուած չարութեան պարիսպը:

Այս մտքով ենք վեց գոբղան թուերգով ասում, իսկ եօթներորդը՝ երգելով: Մինչդեռ փոխը աւելի բարձր է [ասւում], քանզի ժողովրդի աղաղակի [խորհրդանիշն] է:

Իսկ ութերորդը օրհնութիւն է կոչւում, նախ, որովհետեւ գոհութիւն եւ շնորհակալութիւն է Աստծուն մեզ զօրացնելու համար: Երկրորդ՝ որովհետեւ իր յարութեամբ Քրիստոս յարութիւն տուեց նաեւ մեզ: Երրորդ՝ ութերորդի խորհրդով այստեղ՝ աշխարհի աւարտին ազատուածներս, գոհութիւն ենք տալու Աստծուն եւ օրհնելու Օրհնողին, որ ասաց՝ «Եկէ՛ք իմ հօր օրհնեալներ» (Մտթ. ԻԵ 34):

Իսկ այն, որ սկսուածին յետոյ երգն է խառնւում, նշանակում է, նախ, որ նոր եկեղեցին միախառնուած ժառանգել է ե՛ւ մարգարէների, ե՛ւ առաքեալների խօսքերը: Երկրորդ՝ խորհրդանշում է ե՛ւ փողի ձայնը, ե՛ւ յարութիւն առածների օրհնութիւնը: Երրորդ՝ ե՛ւ դատաւորին, ե՛ւ դատելու խօսքերը: Չորրորդ՝ մարդկանց եւ հրեշտակների միախառնուած երգը:

Իսկ օրհնութեան համար մեր վերյառնելը նշանակում է՝ նախ մեղքերի մեռելութիւնից եւ ծառայութիւնից յառնելը: Երկրորդ՝ Քրիստոսի հետ գերեզմանից յարութիւն առնելը: Երրորդ՝ երբ յարութեան ժամանակ հնչի փողը, յարութիւն առնենք եւ ընթանանք Քրիստոսին ընդառաջ:

Յետոյ «Ալէլու»-ն է, որ հրեշտակների օրհներգն է, որովհետեւ կիրակի օրերին եւ տէրունական տօներին բարեխօսի կարիք չունենք, այլ սերովբէների երգն ենք նուագում:

Իսկ առաջին ու վերջին «Թագաւորք»-ը [նշանակում են], որ կիրակին Աստծոյ թագաւորելու համար է, որ այժմ առաջինն է, իսկ աւարտին վերջինն է լինելու, կամ էլ՝ այստեղ միայն կամեցողների համար, այնտեղ՝ կամեցողների եւ չկամեցողների:

Եւ պահքի երեք «Թագաւորք»-ը եւ երեք ուտիքի երեք տները ի դէմս Սուրբ Երրորդութեան են: Սաղմոսի տները երկուսն են, որովհետեւ Բանը դարձաւ հոգի ու մարմին: Եւ ինը տները հրեշտակների ինը դասերն են: Եւ պահքի ժամանակ աւելի երգեցիկ, քան ուտիքի, որովհետեւ պահքի ժամանակ հրեշտակի ենք նմանւում, ուտիքի ժամանակ՝ մարդկանց:

Ապա սրբերի՝ յիշատակի ընթերցումներն են, որոնք նահատակուեցին այստեղ, իսկ այնտեղ պսակադրուած՝ թագաւորում են Քրիստոսի հետ, այլեւ

որպէսզի մենք էլ փափագենք նրանց, դառնանք նրանց գործակիցները, նրանց ունենանք իբրեւ բարեխօս եւ օրինակ, ովքեր Աւետեաց երկրի լրաբերները եղան:

Իսկ կիրակի օրը խնկարկելը եւ տասը օրհնութիւնները խորհրդանշում են տասը քաղաքների վրայ իշխանութիւն ունենալը եւ տասը քանքարները. ինչպէս նաեւ իւղաբեր կանանց խունկը եւ հանդերձեալի բուրումն առ մեզ: Նաեւ՝ խունկն է սրբերի տօների, որոնք անուշահոտ վարքով հաճելի եղան Աստծուն եւ աղօթքի բուրմունքով բարեխօսում են մեզ համար:

Իսկ պահքին ո՛չ խունկ [կայ] եւ ո՛չ օրհնութիւն, որովհետեւ ապաշխարում ենք եւ չենք համարձակւում գոհանալ եւ ոչ էլ մեր վարքն է անուշահոտ: Իսկ ոմանք հանդերձեալում էլ պատասխան չունեն Քրիստոսի ահաւոր բեմի առաջ:

Ապա Երից մանկանց աղօթքից յետոյ, որով քաւում ենք մեր մեղքերը, փառք տալով ի Բարձունս՝ նուիրաբերւում ենք անուշահոտ բուրմամբ:

Իսկ կիրակի օրուայ «Մեծացուսցէ»-ն ողջ Տնօրինութեան մասին է պատմում, որովհետեւ եթէ չծնուէր, չէր խաչուի, յարութիւն չէր առնի եւ մեզ չէր փրկի:

Այլեւ առընթեր Յարութեան Աւետարանն է, որովհետեւ նոյնն է թէ՛ կոյս Մօրից ծնուելու խորհուրդը, թէ՛ [յառնելը] կոյս գերեզմանից:

Իսկ դռան փակելը գերեզմանում թաղելն է:

«Եղիցի անուն»-ը ցածր ձայնով Ադամի համար է [ասւում]. «Արի, Տէ՛ր»-ը յարութեան աղերսն է: «Թագաւորեսցէ»-ն իւղաբեր կանանց հանդիպելը:

Երկու ճրագները՝ երկու հրեշտակներն են, այլեւ՝ Աւետարանի լոյսը: Աւետարանի սրբութեամբ ձեռքերի վերամբարձումը բարի գործերի նշանակն է, որով փառաւորւում է Աստուած, այլեւ՝ յարութիւնից յետոյ մեզ երեւալը:

Աւետարանը համբուրելը միայն Պետրոսին յանուանէ կանչելն է:

Իսկ «Ողորմեայ»-ն ինչպէս հայրերի համար է՝ Ադամի յանցանքների պատճառով, այլեւ ի դէմս Եւայի է:

Ծնկի գալը մեղքերի կործանման համար է: Կուրծք ծեծելը, որ կանանց է յատուկ՝ կոծելով կուրծք բախելն ու ողբալն է:

Իսկ «Տէր երկնից»-ը հրեշտակների հետ Սուրբ Երրորդութեանը օրհնաբանելն է, քանզի առաջին փոխը ի դէմս Հօր է, միջինը՝ Որդու, վերջինը՝ Սուրբ Հոգու:

Եւ սրանցից յետոյ միասին համաձայն երգելը փառք տալն է ի Բարձունս Աստծոյ, որ փրկեց մեզ, այլեւ ցոյց տալն է մարդկանց եւ հրեշտակների, հրէաների եւ հեթանոսների միախառնուելը մէկ եկեղեցում:

Իսկ առաւօտեան ժամերգութիւնն ի դէմս Խաչի է. «Երեքսրբեան»-ը՝ յանուն մեզ զոհաբերուած անմահ Գառան:

Եւ Ճաշի ու երեկոյեան մեսեդին, [ակնարկում է] գինու դորակի չորրորդ մասը, ինչպէս ասուեց քսանմէկերորդ գլխի յիսուներկուերորդ համարում: Ճաշի

վեց մեսեդիները կեանքի վեց շրջանների խորհրդով են, երեկոյեանը՝ ութերորդի: Եւ հնում էլ Առաջաւորութեան վեց հացեր էին դնում եւ շաբաթ օրն էլ՝ դարձեալ վեց:

Իսկ այն, որ մեսեդին երկու ձայներից է, ցոյց է տրւում, որ Ադամի ու Ենովքի ժամանակներում միանման բնական օրէնքներով էին առաջնորդւում: Այդպէս էլ Նոյը եւ Աբրահամը մէկ օրէնք ունէին:

Իսկ հինգերորդը, որ Մովսէսի օրօք մեծ եղաւ զօրութիւնը, Դաւթի օրօք մուտք գործեց հեթանոսութեան խորհուրդը, մեր Տիրոջ ժամանակ՝ սուրբ եկեղեցին, իսկ վերջինը յաւիտենական օրուայ [խորհուրդն] է:

Եւ այն, որ մեսեդիի կամ կցուրդի մէջ նախ վերջին տունն է, այն է, որ Քրիստոսով դարձանք առաջինն ու բարձրագոյնը, քանզի Ադամի պատճառով խոնարհուել էինք. ըստ այդմ՝ «Առաջինները յետին կդառնան եւ յետիններն՝ առաջին» (Մտթ. ԺԹ 30):

Իսկ Աղուհացի շրջանում ուխտադրումն է, որ նախ մանկունքները ուխտեն հրաժարուել սատանայից՝ Մեծ Զատկին Իսրայէլի մկրտուելով, ապա՝ պահքի ապաշխարութեան ուխտը եւ յարութեամբ Քրիստոսին տեսնելը՝ ե՛ւ այստեղ, ե՛ւ այնտեղ[591]:

Իսկ սաղմոսը մանուկների մկրտութեամբ որդիացածներին հրամայում է օրհնել երկնային Հօրը, որին փառք յաւիտեանս, ամէն:

Եւ մնացեալի մասին էլ համառօտ ասուել է:

Սակայն անհրաժեշտ է, որ տեսնենք նաեւ կանոնագլխի՝ կանոնների հետ կարգաւորուած լինելը: Առաջին կանոնը երանելիներինն է, որոնք դառնում են չարից եւ օրինաւոր ճանապարհով ընթանում. նրանք սիրում են Տիրոջը եւ նրանից զօրացած՝ ոտնակոխ անում անմարմին թշնամուն, ինչպէս ժողովուրդը՝ Փարաւոնին: Եւ անցնելով չարերի անդունդներից՝ օրհնում են Տիրոջը եւ փառաւորում:

Սա առաջինը:

Իսկ երկրորդը, թէ՝ «երկինքը պատմում է Աստծոյ փառքը» (Սղմ. ԺԸ 2), այն է, որ դատելու է հակառակորդին մեր, որովհետեւ երկնքում է նրա ողորմութիւնը, քանզի եթէ նայեն երկնքին եւ երկրին, [կտեսնեն] անչափելի ողորմութիւնն ու արդարութիւնը մեր նկատմամբ:

Նոյնպէս եւ երրորդը, որ ասում է չնախանձել չարերին (Սղմ. ԼԶ 8), որոնք անզգամներն են, եւ նրանց մեղքերին այստեղ հատուցում չկայ, որի պատճառով էլ յաւիտենական հրով է այրելու նրանց:

Իսկ չորրորդով քառանիւթ բնութեամբ ողորմելիներս յոյս ենք տածում Տիրոջը եւ երկրպագում նրան ու դրանով Տիրոջ մէջ հաստատում մեր սրտերը:

Հինգերորդը Աստծոյ բարի եւ ողորմած լինելն է Հոգու հինգ զօրութեամբ Աստծուն տեսնողների համար, որի պատճառով էլ կենաց գիշերուայ մէջ լուսաւորում է հոգիներին՝ վանելով թշնամիներին:

Այդպէս էլ վեցերորդով ապաւինելով Տիրոջը՝ նրան խոստովանենք եւ խոնարհուենք նրա ձեռքի տակ, որպէսզի մեզ մահից կեանք վերադարձնի:

Իսկ եօթներորդը Տիրոջ բարութիւնն ու արդարութիւնը խոստովանելն է եւ աղերսանքով մօտենալը, Աստծուն օրհնելը նոր օրհնութեամբ այս կեանքից յետոյ:

Ութերորդը նեղութեան ժամանակներում հոգով օրհնելն է եւ գովելը Վերին Երուսաղէմը, երբ զարհուրած եւ տագնապած կլինեն բոլոր մեղաւորները Ահեղ ատեանի եւ անաչառ դատաստանի առջեւ:

Դարձեալ, ըստ մեր վարդապետների առաջին կանոնի ութերորդ գոբղան ակնարկում է հանդերձեալի օրհնութիւնը, որովհետեւ այդ օրն արդարների համար ուրախութիւն, իսկ ամբարիշտների համար կործանում է, ինչպէս Երգն այն, որ ե՛ւ ուրախութիւն է, ե՛ւ Եգիպտոսի սուգը: Երկրորդ էլ ե՛ւ խնամակալութիւն է, ե՛ւ կշտամբանք: Երրորդը ե՛ւ հրի սպառնալիք է, ե՛ւ ոչնչացնում է, նաեւ՝ աւետեաց հրաւէրը: Չորրորդը պարտաւորութեան գոհութիւն գոյաւորների փոփոխութեան համար, իսկ ոմանց էլ՝ պատկառանքով ամաչելը: Հինգերորդը հրի այրելը եւ ամբարիշտների ոչնչանալը, ոմանց համար էլ բժշկարար ցող՝ ցողուած Տիրոջից: Վեցերորդը չարաչար պատիժ չարչարողներին, իսկ ապաշխարողներին՝ թողութիւն եւ ասելը՝ «Ետ վանեցիր իմ բոլոր թշնամիներին»: Եօթներորդը հրեշտակների օրհնութիւնը եւ փրկութիւնը: Ութերորդը դարձեալ երկու կողմերին յայտնելը՝ փրկուածներին եւ կորստի մատնուածներին. «Նրա օրհնութեամբ լցուեց տիեզերքը» (Սղմ. ԽԷ 11, Ես. ԻԷ 6) եւ դարձեալ՝ «Նետածիգ եղար չարերին» (Ամբ. Գ 12-13):

Այսքանը կանոնագլուխների մասին[592]:

ՀԱՐՑ ՍԱՂՄՈՍԻ ՄԱՍԻՆ

Ո՞րն է առաջին սաղմոսը:

Պատասխան. «Օրհնի՛ր հոգի իմ, Տիրոջը» (Սղմ. ճԽԵ 2), «Տէր Աստուած իմ, մեծ եղար յոյժ» (Սղմ. ՂԵ 4):

Իսկ վերջին սաղմոսը՝ «Քեզ եմ մեծարում, Աստուած ի՛մ եւ թագաւոր ի՛մ» (հմմտ. Սղմ. ճԺԷ 28):

Հարց. Ի՞նչ խորհուրդ ունի «Ամբիծքը»[593]:

Պատասխան. Վերջին եւ առաջին գոբղան անմեղութեան համար է ասւում, միջինը՝ մեղքերից յետոյ. այսպէս նրանք միաւորւում են: Այդպէս եւ մարդը մանկութեան ժամանակ անմեղ է, մեռնելիս մոռանում է աշխարհը, իսկ միջին տարիքում ապաշխարութեամբ քաւելով՝ միաւորում:

Հարց. Ինչո՞ւ «ալէլու» չի ասւում:

Պատասխան. Եբրայեցիների առաջին դասերը «ալէլու» չէին ասում, այլ միայն քահանաներն էին «ալէլու»-ով երգում, ինչպէս որ մենք սաղմոսաքաղ փոխերին չենք ասում, եւ սա այլ [տեղերում] սաղմոսերգութեան հաշիւ է:

Նոյնպէս եւ, որ անէծքի փոխն է, «ալէլու»-ն, որ օրհնութիւն է, նրան չենք խառնում: Վերջին գոբղայի ժամանակ էլ «ալէլու» չենք ասում, որ այլ մարգարէներինն է:

«Ալէլու»-ն միայն սաղմոսինն է:

Ուրիշ պատճառ էլ կայ:

Օրէնքը թոյլ չէր տալիս խունկ եւ իւղ [գործածել] մեղքի պատարագին, որ տրտում եւ ժանտահոտ է, իսկ «ալէլու»-ն եկեղեցու խունկը եւ իւղն է: «Ամբիծք»-ը մեղքի համար արուող պատարագն է, այդպէս էլ յիսուներորդ «Ողորմեայ»-ն մեղքերի համար է. «ալէլու» չի ասւում:

Հարց. Ինչո՞ւ «Աստուած» անուն չկայ:

Պատասխան. Որովհետեւ թէ՛ մանկութիւնը, թէ՛ մահը երկիւղի ժամանակ են, ինչպէս ծառան է [երկիւղում] տիրոջից:

Հարց. Ո՞վ է հաստատել սաղմոսների կարգը:

Պատասխան. Առաքեալները՝ ցերեկն ու գիշերը լրացնելով, ինչպէս նաեւ երեկոյինը, երբ նեղութեան ժամանակ առաքեալները կարգեցին «օրուայ ելքը», որովհետեւ աստիճանների ելք է ասւում, իսկ օրերը մեր կեանքի ելքի աստիճաններն են:

Եւ «կանոնը» սահման է կոչւում, ինչպէս Պօղոսի Թուղթը: Եւ «գոբղան» ընթերցուածի նման է, «փոխն» իբրեւ գլուխ, «հանգիստն» իբրեւ մաս, նոյնպէս եւ «տները»:

Իսկ «փառքը», «ալէլուն», «օրհնութիւնը եւ փառքը», «ամէնը», «ընդհոգւոյդ քումն», «խաղաղութիւնը». այս բոլորը Առաքելադիր են:

ԵՐԵՔՍՐԲԵԱՆԻ ՄԱՍԻՆ[594]
Պրակ ԽԶ

Հարց. «Սուրբ Աստուած»-ն ո՞վ է ասել:

Պատասխան. Յովսէփ Արեմաթացին, որովհետեւ այսպէս է ասում Հռօմի Նեքտարիոս հայրապետը՝ թէ անհնարին էր իջեցնել Տիրոջ մարմինը խաչից՝ խոցուած տեղի փայլատակելու պատճառով: Ապա հեռու կանգնելով եւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ [Յովսէփն] ասաց. «Սո՛ւրբ Աստուած, Սո՛ւրբ եւ հզօր Սո՛ւրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»: Եւ սա երեք անգամ ասելուց յետոյ՝ սուրբ մարմինն իջաւ Յովսէփի բազուկների վրայ[595]:

Եւ Սոկրատ պատմագիրն[596] ասում է, մեծ Իգնատիոս Աստուածազգեացը տեսաւ երկնային զօրութիւններին եւ լսեց նրանցից ու Անտիոքի եկեղեցում կարգեց առաւօտեան եւ երեկոյեան ասելու «Սո՛ւրբ Աստուած, որ խաչեցար»-ը:

Իսկ Յովհան Ոսկեբերանը կարգեց օրը երեք անգամ ասել «Սուրբ Աստուած»-ը:

Եւ սուրբ Կիւրեղ Աղեքսանդրացի հայրապետը Եփեսոսի ժողովում ասաց Միածին Որդու ժամերգութեան սկզբի համար «Սո՛ւրբ Աստուած, որ խաչեցար»-ը եւ այսպէս է գրում, թէ՝ Եսային տեսաւ Քրիստոսին աթոռին նստած, որ խաչն է, եւ երգում էին Երեքսրբեանը: Եւ

վկայում է Յովհաննէս աւետարանիչը, որ գրում է. «Այս ասաց Եսային, որ տեսաւ նրա փառքը եւ խօսեց նրա մասին» (Ես. Զ 1-3, Յովհ. ԺԲ 41): Ուստի «Սո՛ւրբ Աստուած»-ը ի դէմս Որդու ենք ասում՝ կարգուած սուրբ Կիւրեղից[597]:

Այլեւ Պետրոս Անտիոքացին, Տիմոթէոս Ալէքսանդրացին Յուստիանոս կայսեր հրամանով հաստատեցին ասել «Սո՛ւրբ Աստուած, որ խաչեցար»-ը:

Եւ սա, որ սովորութիւն էր հների մօտ, յետոյ թուլացաւ:

Իսկ Հայաստանում Դվինի ժողովում հաստատեցին ճշտութեամբ ասելու «Սո՛ւրբ Աստուած, որ խաչեցար»-ը[598]:

Կղեմեսն [ասում է] «Մեր ամէնօրեայ աղօթքում ասում ենք. Սո՛ւրբ Աստուած, Սո՛ւրբ եւ հզօր, Սո՛ւրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»:

Իսիդորոսն ասում է. «Միշտ յարակայ ձայնով գոչում ենք. Սո՛ւրբ Աստուած, Սո՛ւրբ եւ հզօր, Սո՛ւրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»:

Գրիգոր Աստուածաբանը՝ «Աստուած խաչեալ, արեգակը՝ խաւարեալ»[599]:

Բարսեղը[600]՝ «Տեսնելով Աստծուն խաչուած եւ նրան աւազակների հետ»:

Եւ Դաւիթն ասում է. «Որ անձը դրեց, սրանով դրեց եւ սրա մէջ դրեց. եւ որ սրա մէջ դրեց, նոյն սրա հետ է եւ չհեռացաւ, հետեւաբար, սա յիրաւի Աստծոյ զօրութիւնն է»:

Ստեփաննոսն [ասում է.] «Եսային Երեքսրբեանը Որդու վրայ տեսաւ»: Եւ վկայում է Յովհաննէս աւետարանիչը, որ ասում է՝ Եսային տեսաւ նրա փառքը եւ խօսեց նրա մասին. նրան տեսանք վերջին օրերին խաչուած, որի սրբութեան մասին եւ երգում ենք»[601]:

Եւ սուրբ Աթանասը Պատարագում ասում է. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց, լի են երկինքն ու երկիրը քո փառքով»[602]:

Եւ սուրբ Կիւրեղը Եփեսոսի ժողովում Նեստորի դէմ բարձրաձայն ասաց՝ «Միածին Որդին»: Եւ նոյն ժողովում երեք անգամ՝ «Փառքը բարձունքներում, օրհնեալ Տէ՛ր, սովորեցրո՛ւ ինձ քո արդարութիւնը»:

Եւ կիրակի օրը երեք անգամ ասում ենք. «Քրիստո՛ս, չենք դադարում քեզ օրհնել»:

Այլեւ ասորիները մեր օրինակով մինչեւ այսօր ասում են «Սո՛ւրբ Աստուած, որ խաչեցար»-ը:

Եւ այս է մեկնութիւնը, որ չնայած հրէաներն իբրեւ յանցաւոր մարդու սպանեցին, սակայն Սուրբ Աստուած ես եւ ոչ թէ սոսկ մարդ. թէեւ յօժարակամ տկարացար եւ քեզ յանձնեցիր խաչողների ձեռքը, հզօր ես ըստ ամենայնի. թէեւ մեռար մարմնով եւ դրուեցիր գերեզման, սուրբ ես եւ անմահ եւ անվախճան: Եւ ինչպէս կամաւոր խաչուեցիր յանուն մեզ, նոյն սիրով էլ ողորմի՛ր մեզ:

Այսպէս ամէն օր յիշատակում ենք երախտիք նրան, ով խաչուեց յանուն մեզ, որովհետեւ խաչը Քրիստոսի փառքն ու պսակն էր եւ քրիստոնեաների պարծանքը եւ ոչ նախատինք. ըստ Սողոմոնի՝ «Նայե՛նք արքայի պսակին, որ

դրուեց նրա գլխին՝ Երուսաղէմում՝ իր սրտի ուրախութեան օրը» (Երգ. Գ 11):

Եւ ինքն ասում էր. «Հա՛յր, փառաւորիր քո որդուն», եւ երկնքից ձայն էր լսւում. «Փառաւորելու եմ» (Յովհ. ԺԲ 28). ինչը, խաչի մասին էր:

Եւ առաքեալն ասում է. «Քաւ լիցի՛, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի խաչով» (Գաղատ. Զ 14):

Եւ այս ամէնի վկան Մամեստիայում գտնուած քարն է, որի վրայ յունարէն գրով գրուած էր. «Սո՛ւրբ Աստուած, Սո՛ւրբ եւ հզօր, Սո՛ւրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»[603]:

Եւ ամէն օր երեք անգամ ասում ենք՝ մեր հոգու, մարմնի, մտքի մաքրութեան համար: Եւ երեք անգամ կրկնելով՝ լինում է ինն անգամ՝ ըստ հրեշտակների ինը դասերի, եւ ըստ եկեղեցու ինը դասերի, որ անընդհատ աստուածաբանում են՝ պաշտելով Խաչեալին, նրան, որ առաւօտեան մատնուեց չարչարանքների, ցերեկը խաչուեց եւ երեկոյեան թաղուեց:

Հարց. Ինչո՞ւ են այլազգիները ի դէմս Երրորդութեան ասում [դա]՝ վկայաբերելով սերովբէների երեք անգամ «Սուրբ» եւ մէկ անգամ՝ «Տէր» ասելը:

Պատասխան. Մարգարէն սա ի դէմս Հօր է ասում, որովհետեւ այն ժամանակ դեռ միայն Հօր մասին էին պատմում:

Իսկ Պօղոս առաքեալը «Գործք»-ում յանձին Հոգու է ասում. «Բարի խօսեց Սուրբ Հոգին Եսայի մարգարէի միջոցով, եւ ասում է՝ «Գնա՛ ժողովրդի մօտ եւ ասա. լսելով կլսէք եւ չէք իմանայ» (Գործք ԻԸ 26) եւ այլն:

Իսկ Յովհաննէս աւետարանիչն յանձին Որդու է ասում. «Սա Եսային ասաց, որովհետեւ տեսաւ նրա փառքը եւ խօսեց նրա մասին» (Յովհ. ԺԲ 41), ինչպէս ասուեց վերը:

Եւ չնայած բազմաթիւ տեղերում այս ասուածը երեք անձերի եւ մի բնութեան դաւանութեան վերաբերեալ ենք ընդունում, սակայն այն, ինչ ընդհանուր է երեք անձերին՝ «աստուած», «հզօր», «անմահ» եւ այլն, սրանք կարելի է ասել մի անձի վերաբերեալ եւ յանձին մէկի՝ «աստուած հզօր» եւ այլն: Այդ պատճառով էլ այն, ինչ սերովբէները ի դէմս երեքի էին երգում, այստեղ աւետարանիչն յանձին Որդու ասաց, ուստի սուրբ եկեղեցին ուսանելով աւետարանիչից եւ սուրբ հայրապետներից՝ Երեքսրբեանը երգում է յանձին Որդու:

Իսկ նրանք, ովքեր Երրորդութեան համար են ասում, նրանց խօսքում երեք վնասակար բան կայ. նախ, որ Հօրը Աստուած են ասում, սակայն ո՛չ հզօր եւ ո՛չ անմահ. Որդուն հզօր են ասում, սակայն ո՛չ Աստուած եւ ո՛չ անմահ. Հոգուն անմահ են ասում, սակայն ո՛չ Աստուած եւ ո՛չ հզօր:

Երկրորդ, որովհետեւ այսպէս ասելով՝ «Սո՛ւրբ Աստուած, սո՛ւրբ եւ Հզօր, սո՛ւրբ եւ անմահ Քրիստոս, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ», ակնյայտօրէն բաժանում են խաչուած

Քրիստոսին եւ ընդունում իբրեւ սոսկ մարդ:

Երրորդ, որովհետեւ չորրորդութիւն են ներմուծում Սուրբ Երրորդութեան մէջ, երբ ասում են՝ Սուրբ Աստուած Հայր, Սուրբ եւ հզօր Որդի, Սուրբ եւ անմահ Հոգի եւ մի դէմք էլ խաչեալ Քրիստոսը, որ կլինի չորրորդ դէմք եւ անձ՝ ըստ նրանց:

Եւ պէտք է իմանալ, որ աղօթքի բոլոր ժամերին [սա] ե՛ւ ընդհանուր է ասւում, ե՛ւ մասնաւոր: Ընդհանուր է, երբ սկզբից մինչեւ վերջ Սուրբ Երրորդութեանն ենք աղերսում: Մասնաւոր է, նախ եթէ Երեքսրբեանը յանձին Որդու է [ասւում], որովհետեւ նա է առաջնորդը, որով տեսնում ենք Հօրը. ապա երբ աղերսում ենք Հօրն իբրեւ մեր Հայր, որ երկնքում է, ապա՝ Սուրբ Հոգուն իբրեւ շնորհների բաշխման դրոշմողի:

Եւ աղօթքի սկիզբը Հօրն է ուղղուած. միջին մասը, որ խաղաղութիւնն է՝ Սուրբ Հոգուն, իսկ ամբողջ աղօթքի աւարտը՝ մարմնացեալ Որդուն, ինչպէս ասել ենք:

Եւ առաջին ողորմեան Սուրբ Հոգունն է, որի պատճառով սկզբում ասում ենք՝ «Օրհնեալ Հոգիդ, Սո՛ւրբ Աստուած ճշմարիտ»: Եւ աւարտելով Հոգու մասին՝ «խաղաղութեամբ Հոգին»:

Երկրորդը առ Հայրն է, որի պատճառով աղերսում ենք մէջտեղում «օրհնեալ Հայր, Սո՛ւրբ Աստուած ճշմարիտ»: Եւ աւարտելով Հօր մասին՝ «Հայր գթութեան»:

Երրորդն առ Որդին է, որի պատճառով էլ ասում ենք. «օրհնեալ Որդիդ, Սո՛ւրբ Աստուած ճշմարիտ», եւ աւարտելով Որդու մասին՝ «Քրիստոս Որդին»:

Եւ տե՛ս, որ ամենուրէք Սուրբ Հոգուն Հօր հետ ենք աղերսում, որովհետեւ բխում է Հօրից:

Հարց. Ո՞վ է հեղինակել «Զփառաւորեալն»:

Պատասխան. Թովմաս առաքեալն է ասել Տիրամօր թաղման ժամանակ, ինչպէս գրուած է «Կանոնական լրմունք» կոչուող գրքում[604]:

Նախ, որպէսզի մարմնացեալ Որդին եւ Մօր գութը բարեխօս լինեն մեզ համար: Ապա, որպէսզի Մօրը Որդու հետ պատուի արժանացնենք:

Հարց. Ինչո՞ւ Պատարագի ժամանակ «Զփառաւորեալը» չենք ասում:

Պատասխան. Նախ, որովհետեւ Պատարագը խաչելութեան ժամն է, որի ժամանակ Յովսէփի [խօսքն] էլ չէր ասուել. [«Զփառաւորեալ»-ը] տասներկու տարի յետոյ Կոյսի թաղման օրն ասուեց: Երկրորդ՝ որովհետեւ պատարագը Քրիստոսին դէմ յանդիման լինելն է, եւ բարեխօսի կարիք չունենք:

Հարց. Ինչո՞ւ Երեքսրբեանը, որ «Սուրբ Աստուած»-ն է, առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութեան վերջում ենք երգում, սակայն պատարագի ժամանակ՝ սկզբում:

Պատասխան. Այսպէս է բացատրում մեր մեծ իմաստասէրը, երկրորդ աւետարանիչը եւ կաթողիկոսը՝ սուրբ Յովհան Օձնեցին, թէ՝ պատարագի ժամը Քրիստոսի խաչելութեան խորհուրդն է՝ անհրաժեշտ է պատուական խօսքով

հիմքը դնել, որ Երեքսրբեանն է, իսկ պատուական գործով էլ աւարտը դնել, որ փրկչական սուրբ արիւնն ու մարմինն են:

Իսկ քանի որ առաւօտեան եւ երեկոյեան պատարագ չի մատուցւում, ուստի բոլոր աղօթքները, երկրպագութիւնները, աւարտը եզրափակում ենք խաչի մասին ճառով, որովհետեւ այն պատուական է թէ՛ Աստծոյ, թէ՛ մարդկանց համար, եւ Քրիստոսի փառքն է խաչը ու նրա բոլոր տնօրինութիւնների կատարումը:

Հարց. Ինչո՞ւ ենք վերջում «Հայր մեր»-ն ասում:

Պատասխան. Որովհետեւ ինչպէս ասացինք, սա գերապատիւ կատարումն ու աւարտն է բոլոր աղօթքների, ուստի այդ ենք երգում: Որովհետեւ նախ, Քրիստոսով ճանաչեցինք Հօրը, եւ ինչպէս [նա] իր ողջ տնօրինութիւնից յետոյ ելաւ առ Հայրը եւ պարգեւուեց Սուրբ Հոգուն, այդպէս էլ մենք բոլոր խորհրդաւոր աղօթքներից յետոյ ելնում ենք առ Հայրը եւ աղերսում մեզ բաշխել Սուրբ Հոգի, որ յետոյ տալիս է քահանան, ասելով. «Օրհնեալ եղերո՛ւք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն», ինչպէս ասացինք վերը:

Հարց. Ամբողջ տարուայ ընթացքում քանի՞ անգամ է ասւում «Սուրբ Աստուած»-ը:

Պատասխան. Տասը. ինը՝ յանձին Քրիստոսի, մէկը՝ Սուրբ Հոգու, Հոգեգալստեան ժամանակ:

Առաջինը՝ աւետեաց, ծննդեան, մկրտութեան, թլփատութեան ժամանակ այսպէս ասա. «[Սուրբ Աստուած…] որ յայտնեցար»:

Երկրորդը՝ Քառասնօրեայ գալստեանը, Ճաղկազարդին, բուն յինանց կիրակնամուտին ասա՝ «...որ եկիր եւ գալոց ես»:

Երրորդը՝ Աւագ ուրբաթ առաւօտեան ասա «…որ մատնեցար»:

Չորրորդը նոյն ուրբաթի ճաշին ասա՝ «…որ խաչեցար»:

Հինգերորդը երեկոյեան եւ Աւագ շաբաթուայ առաւօտեան ասա «…որ թաղեցար»:

Վեցերորդը Աւագ շաբաթուայ երեկոյեան, բոլոր կիրակնամուտերին եւ կիրակի օրերը՝ «…որ յարեար»:

Եօթներորդ՝ «…որ համբարձար փառօք առ Հայր»:

Ութերորդ՝ «…որ եկիր եւ հանգեար յառաքեալսն»:

Իններորդը՝ «…որ եկիր կամ երեւեցար ի Թաբօր լերինն»:

Տասներորդը՝ «…որ եկիր ի փոխումն Մօր քոյ եւ Կուսի»: Ահա այսքանն են կարգել սուրբ հայերը:

Իսկ որ սրանցից բացի ասում են՝ «տնօրինեցիր», «ընծայուեցիր» կամ՝ «քո տէրութեամբ», «որ եկար Բեթանիա», կամ՝ «Վերնատուն», սրանք աւելորդ եւ խորթ են՝ ասուած տգէտների կողմից:

Իսկ նրանք, ովքեր ասում են՝ Հայր, Որդի, Սուրբ Հոգի կամ՝ Քրիստոս, որ խաչուեցիր, սրանք քաղկեդոնականներն են, որոնք բաժանում են մարմինը Բանից եւ խաչեալին ընդունում սոսկ իբրեւ մարդ՝ տկար եւ մահկանացու:

Իսկ այն, ինչ մեզ են ուսուցանում, Եփեսոսի [ընդունածն] է, որտեղ հաստատուեց Երեքսրբեանը, ինչպէս եւ «Փառք ի բարձունս»-ը, որ Քրիստոսի ծնունդին հրեշտակներից սկիզբ դրուեց եւ հաստատուեց երեք սուրբ ժողովներում:

«Փառք ի բարձունս»

Իսկ այն, որ ասում է՝ «Փառք ի բարձունս Աստծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14), հրեշտակներից ասուած երգ է:

Եւ մինչեւ Նիկիայի ժողովը այսպէս էին ասում: Եւ այնտեղ կիրակի օրը առաւօտեան հրեշտակների երգին աւելացրեցին համանման, համաբան հետեւեալը. «Օրհնութիւն քեզ ի բարձունս» [տողից] մինչեւ՝ «Բարձրեալ ես դու միայն, Տէր մեր Յիսուս Քրիստոս»:

Եւ մինչեւ Կոստանդնուպոլսի ժողովը այդպէս էին ասում: Եւ այստեղ հոգէմարտի դէմ աւելացրեցին հետեւեալ հատուածը. «Եւ Հոգիդ Սուրբ որ ի փառս Աստծոյ, որ ընդ Հօր, Ամէն»՝ մինչեւ՝ «Օրհնեալ Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւն քո» [տողը]:

Ապա Եփեսոսի ժողովում վերստին հաստատեցին «Փառք ի բարձունս»-ը՝ սաղմոսից, Աւետարանից, մարգարէներից վերցրած հետեւեալ համալրումով. «Տէր, ապաւէն եղեր մեր յազգէ ազգ»՝ մինչեւ՝ «Ծագեա՛ զողորմութիւն քո, որ ճանաչեն զքեզ Տէր»-ը:

Եւ չորս հարիւր երեսուն թուին կամ ուշ աւարտին հասցուեց:

Հարց. Ինչո՞ւ ենք «Սուրբ Աստուած»-ը գլխաբաց երգում:

Պատասխան. Ոչ միայն գլխաբաց, այլեւ ձեռքերը վեր տարածած, ինչպէս որ Յովսէփն արեց: Այդպէս էլ՝ «Հայր մեր»-ը. նոյն կերպ՝ «Ի տես սրբութեանց»-ը: Այլեւ Աւետարանն ենք այդպէս ընթերցում, որովհետեւ այս չորս դէպքերում ժողովուրդը պէտք է գլխաբաց լինի, իսկ քահանան՝ երբ աղօթում կամ պատարագում է, սարկաւագը, երբ քարոզում, խնկարկում կամ ընթերցում է:

Եւ այս է խորհուրդը, որ ամէն ինչ յայտնի է եւ պարզ Գաղտնատեսին. կամ թէ՝ այդպէս մաքուր են մեր միտքն ու հոգին. կամ թէ՝ այդպէս էր Քրիստոս խաչի վրայ, եւ մենք բաց գլխով ու բազկատարած՝ նրա նմանութեամբ ենք դառնում:

Սակայն կինը չպէտք է բացի գլուխը, եւ եկեղեցում աւելի ծածկուած լինի:

Իսկ որ այժմ ոչ մի աղօթքի ժամանակ աբեղաները գլխաբաց չեն լինում, պատճառն այն է, որ աբեղայութիւնը խստակրօնութիւն է, իսկ խստակրօնը պէտք է բոլոր զգայարանները փակ պահի:

Իսկ պատարագի ժամանակ պէտք է պատարագողը գլխաբաց լինի, ով էլ որ լինի՝ քահանայ, եպիսկոպոս, թէ այլ ոք, որովհետեւ՝ «ո՛վ ծածկած գլխով է աղօթում, անպատուում է [իր] գլուխը՝ Քրիստոսին»,- ասում է Պօղոս [առաքեալը] Կորնթացւոց [թղթում] (Ա Կորնթ. ԺԱ 5):

Իսկ որ եպիսկոպոսը ձեռնադրութեան ժամանակ ուսնոց, խոյր եւ մատանի է կրում եւ պատարագի ժամանակ հանում, այն է, որ Աստուած Ահարօնին հրամայեց ժողովրդի առաջ դուրս գալիս կրել քղանցքով փիլոն, ուսնոց, խոյր եւ այլն, սակայն Սրբութեան սրբոցում դրանք հանել եւ հագնել միայն սպասաւորի զգեստ, [որ] սպիտակ կտաւն էր, ապա՝ խնկարկել այնտեղ (տե՛ս Ելք ԻԸ 4):

ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍԵՐԻ ՄԱՍԻՆ Պրակ Խէ

Հարց. Ինչո՞ւ են երկու դասեր երկրպագում եկեղեցում:

Պատասխան. Երկու դասեր էին երգիչները Տաճարում, որոնց Դաւիթը կարգեց գիշեր ու ցերեկ ամէն օր քսանչորս ժամ երկրպագել, որ յայտնի է Ասափի, Կորխի եւ այլոց սաղմոսից, որոնք դաս-դաս երգում էին Դաւթի սաղմոսները:

Այդ կերպ էլ եկեղեցին կարգեց:

Այլ խորհրդանշում է հրէաներին եւ հեթանոսներին, նաեւ՝ վերին եւ ստորին պաշտօնեաներին:

Այլեւ երկու պարիսպներ են լինելու հանդերձեալում, այսինքն՝ մէկը հրեշտակների, միւսը՝ սուրբ մարդկանց՝ յաւիտենական փառաբանողների:

Իսկ որ երբեմն միասին են հանդէս գալիս երկու դասերը, «Փառք ի բարձունս»-ը կամ այլ երգեր կատարելիս, ցոյց է տալիս հրէաների ու հեթանոսների մի հօտում եւ մի երկրպագութեամբ միաւորուելը: Նաեւ՝ երբ հանդերձեալում հրեշտակները եւ մարդիկ խառնուեն, լրացնելու են ընկած կոյս սրբերի տեղերը:

Իսկ շարականը երկու անգամ ենք ասում, որովհետեւ հոգի եւ մարմին ենք: Երեք անգամ [ասելը] ի դէմս Սուրբ Երրորդութեան է:

Հարց. Ինչո՞ւ երբեմն «Փառքը» եւ «Այժմ»-ը միասին ենք երգում, երբեմն՝ ոչ[605]:

Պատասխան. Հաստատուած կարգ է, որ այն դասը, որը սկսում է երգը, նա էլ աւարտում է «Փառքով». կամ մէկը, կամ միւսը: Եւ խորհուրդն այս է, որ ով կատարում է երգը, նա էլ ըստ արժանւոյն փառք է տալիս:

Իսկ որ շարականների սկզբում մարգարէներից ենք ասում, պատճառն այն է, որ հինն ու նորը միախառնում ենք, քանզի մարգարէները սկիզբը դրեցին, իսկ առաքեալները՝ շինուածքն աւարտեցին:

Եւ պէտք է իմանալ, եթէ շարականների սաղմոսը տասներկու տուն ունի, «Փառքն» ու «Այժմ»-ը միասին ենք երգում, ինչպէս «Օրհնութիւն»-ը, «Հարց»-ը, «Ողորմեայ»-ն, «Տէր յերկնից»-ը: Իսկ եթէ պակաս է, ինչպէս «Մանկունքը», «Ճաշու»-ն, «Համբարձի»-ն՝ առանձին ենք ասում «Փառքն» ու «Այժմ»-ը: Եւ պատճառն այն է, որ շարականի մի տան մէջ սաղմոսի չորս տուն պէտք է լինի՝ երկու խմբով, եւ մէկ շարականն ամբողջանում է տասներկու տնով: Եւ եթէ սաղմոսը ութ տուն է կամ աւելի պակաս, ապա «Փառքը» եւ

«Այժմ»-ը տալիս ենք շարականի վերջին տնում:

Նոյնն է եւ «Մեծացուսցէ»-ի [կատարման] պատճառը:

Կայ նաեւ այլ պատճառ. այն շարականները, որոնց «Փառք»-ը եւ «Այժմ»-ը միասին են, նրանք յետոյ «Փառք» կամ կցորդ ունեն, իսկ որոնք առանձին են, նրանց հետ կցորդ չի ասում:

Հարց. Բոլոր շարականները կրկին անգամ ենք ասում, ինչո՞ւ «Հարց»-ը երեք անգամ ենք ասում:

Պատասխան. Որովհետեւ «Հարց»-ը երեք մանկանց երգն է: Այլեւ երեք նահապետներին, այսինքն Աբրահամին, Իսահակին եւ Յակոբին է իբրեւ միջնորդ դիմում: Եւ մեր հոգու, մարմնի եւ մտքի աղերսանքն է, եւ ի դէմս Սուրբ Երրորդութեան է, ինչպէս ասացինք:

Երկու անգամ է ասում նաեւ «Գործատուն»-ը, որովհետեւ բոլոր արարածները բաժանւում են երկու խմբի. իմանալի եւ զգալի, որոնք օրհնում են Արարչին:

Այդպէս էլ ամէն մի շարական երեք տուն է, իսկ «Հարց»-ը՝ վեց, որովհետեւ վեցը երկու անգամ երեք է: Այլեւ վեց փոխ է այդ սաղմոսը եւ վաթսուն տուն, որ խորհրդանշում է վաթսուն կանգուն երկարութեամբ եւ վեց [կանգուն] լայնութեամբ ոսկեայ պատկերը (տե՛ս Դան. Գ 1):

ԴԱՐՁԵԱԼ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Շարականները ովքե՞ր են հեղինակել:

Պատասխան. Նրանք, ովքեր Հոգու ծորումից ըմպեցին եւ ժամանակ առ ժամանակ եղանակով երգեցին շարական-երգերը, սրանք են: Նախ Մեծ Մեսրոպը՝ «Ապաշխարութեան կարգը» եւ Սուրբ Սահակը՝ «Աւագ շաբաթեան» [շարականը]:

Մովսէս Քերթողը՝ ծննդեանը, Մեծացուսցէք-ը, Տեառնընդառաջին-ը, Վերափոխման առաջին պատկերը, այլեւ «Յարութեան կարգն» էլ սրան է վերագրում Մեծ Վարդանն «Ի տեսութիւն Անթառամ ծաղկի» մէջ[606], սակայն ուրիշներն էլ ասում են, թէ Անանիա Շիրակացին է յօրինել:

«Պէնտակոստէի», «Վարդավառի», «Սուրբ Գրիգորի», «Յովհաննու», «Մարգարէից», «Վարդանանց», «Առաքելոց», «Թագաւորաց», «Անտօնի». այս բոլոր [շարականները] ոմանք Անանիային են վերագրում, ոմանք՝ Խորենացուն:

«Մեղաք յամենայնին», «Կարգ մեծ տօնից»՝ Յոհան Օձնեցին, «Հռիփսիմեանց անձինքն», «Հարց»-ը՝ Տէր Կոմիտասը:

«Անսկիզբը»՝ Յովհան Մանդակունին, ոմանք էլ ասում են, թէ՝ Օձնեցին:

«Հանգստեան»-ը, «Մարտիրոսացը»՝ Պետրոս Գետադարձը, եւ մանկտիներից շատերը:

«Խաչինը» եւ «Եկեղեցունը»՝ Սահակը, որ ընդդէմ տաճկաց գնաց:

«Զորս ըստ պատկերին»՝ Գրիգոր Մագիստրոսը. Եօթնածայն «Աւագ օրհնութիւնները»՝ Ստեփանոս Սիւնեցին.

«Վառին»[607]՝ Ներսէս Կլայեցին.

Իսկ «Աղցից կիրակէիցն», «Նինուէացւոցն», «Ծաղկազարդի հարցն», «Հոգեգալստեան» չորս պատկերը, «Վարդավառի» երկու պատկերը, «Վերափոխման» երկրորդ պատկերը, «Հրեշտակապետացը», «Եօթանասնիցը», «Ղեւոնդեանցը», «Մարգարէից ԴՁ հարցն», «Նորահրաշն», «Նայե՛ա սիրովն», «Ի քէն հայցեմք»-ը, «Արեւագալի շարականները», «Օրհնեմք զքեզ»-ը, «Այսօր անճառն», «Արարչակներ»-ը, «Աստուած անեղ»-ը, եւ ոմանցից էլ լսեցինք, թէ «Սուրբ Յակոբինն» էլ. սրանք բոլորը հեղինակել է Ներսէս Կլայեցին:

Իսկ «Այսօր յարեաւ»-ն, «Նորոգեալ կղզիք»-ն եւ «Թոռանց»-ը՝ Ներսէս Լամբրոնացին:

«Խորհուրդ անճառ»-ը, «Մեծահրաշ»-ը՝ Գրիգոր Վկայասէրը:

«Արեգական»-ը Գրիգոր Սկիւռացին:

«Երգեցէք»-ն Տէր Յակոբ Կլայեցին:

«Որ նախիմացն», «ի յանսահման ծովէն», «Թարգմանչաց օրհնութիւն»-ը, «Սուրբ Սարգսի օրհնութիւն»-ը՝ Վարդան վարդապետը:

«Ներսէս Մեծին»-ը, «Խոտաճարակաց»-ը՝ Յովհաննէս Պլուզը:

«Ղեւոնդեաց մանկունքն ԴՁ»՝ Հաղպատի Սարկաւագ վարդապետը:

«Սրբութիւն սրբոցն խաչի»՝ Ստեփանոս Սիւնեցին:

Այս շարականներն ընդունելի են եկեղեցուն, իսկ սրանցից դուրս եղածները խոտելի են եւ անպիտան[608]:

ԴԺՈՒԱՐԻՄԱՍՏ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Հարց. Ի՞նչ [խորհուրդ] ունի ծննդեան հինգերորդ օրուայ՝ «Ովսաննա ի բարձունս»-ը:

Պատասխան. Արարչագործութեան հինգերորդ օրն ի խորհուրդ մկրտութեան [ստեղծուեցին] ջրային կենդանիները եւ օդ բարձրացան թռչունները:

Եւ հինգերորդ շրջանում էին Մովսէսի ու Սողոմոնի գործերը:

Այլեւ Կոյսի Վերափոխումն էր հինգշաբթի օրը, եւ ծնուելն իր մօրից: Եւ Փրկչին նոյն օրը ծնեց: Այլեւ նոյն օրն էր Տաճարին ընծայելը, որտեղ մանուկները երգում էին «Ովսաննա», ինչպէս Ծաղկազարդին:

Եւ այսպէս էր. երբ բացուեցին Երուսաղէմի դռները, քաղաքը դղրդաց, եւ իւրաքանչիւր ոք լոյս ու կրակ վառած, նրան երկրպագում էր իբրեւ Արարչի: Եւ երբ հարցնում էին՝ ի՞նչ է կամ ո՞վ է սա, քաջատեղեակները պատասխանում էին, թէ սա նա է, որ հրաշքներ գործեց մորենու եւ ծովի վրայ: Եւ նրանք ասում էին՝ «պահպանի՛ր եւ փրկի՛ր»:

Հայրը Յորդանանում բնութեամբ նրան իր Որդի հռչակեց, իսկ [եկեղեցու] մանուկները՝ Քառասնորդական [պահքին] եւ Ծաղկազարդին:

Հարց. Ի՞նչ է նշանակում այն, որ ամլորդին[609] քարոզեց չորեքկերպեան կենդանիների խորհուրդը:

Պատասխան. Չորեքկերպեան կենդանիները խաչն է, իսկ նրա վրայ

տեսնուածը՝ Գառը, որ «վերցնում է աշխարհի մեղքերը» (Յովհ. Ա 29):

Հարց. «Տէրը Դաւթից մեզ եղջիւրներ տուեց»:

Պատասխան. Նկատի ունի Քրիստոսին, որ Դաւթի ազգից մեզ համար զօրութիւն եղաւ՝ մեր մէջ եւ ոչ նման մեզ, քանզի Աստուած է բնութեամբ:

Հարց. «Ոստաբեկ եղայ ես ինչպէս արմաւենի»:

Պատասխան. [Արմաւենու] տարեկան ոստերը ջարդում են բնի վրայ, եւ որն աճում է, կտրում եւ հիւսում են:

«Պտղակորոյս իբրեւ ձիթենի». որովհետեւ [ձիթենու] ծաղիկը հեշտութեամբ է պոկւում, նոյնիսկ ամենափոքր պատճառից՝ անձրեւից, հողմից, ուժեղ որոտից, որի պատճառով էլ պտուղը կորչում է:

Հարց. «Հաստատուած անփակ գրով»:

Պատասխան. Աստծու համար են ասում, որովհետեւ քահանայապետի մատանու վրայ Աստծոյ անունն էր գրուած եւ հաստատում է, որ Աստուած է: Նաեւ, որ՝ «է»-ն եւ «Օ»-ն անփակ գրեր են, ինչպէս որ ասում է՝ «Ես եմ Աստուած, որ էն»[610] եւ բացարձակը:

Հարց. «Հոլաթեւեան սերովբէն»:

Պատասխան. Հոլաթեւեանը եւ սաւառնողը պարզած եւ շրջանաձեւ [թեւեր ունեցողն է], ոմանք էլ ասում են՝ վեցթեւեանն է:

«Եւ քահանաները հոլոնեալ», այսինքն՝ ժողովուած եւ խորհող: Իսկ՝ «Հոլանի եւ անգօտի»՝ գլխաբացն է եւ առանց գօտունը:

Հարց. «Ողջոյն տո՛ւր փողերին»:

Պատասխան. «Փողերն» առաքեալներն են, որովհետեւ «ողջ երկրով տարածուեց նրանց ձայնը» (Սղմ. ԺԸ 5):

Հարց. «Հարաշարժ աղբիւրից»:

Պատասխան. Այսինքն՝ Հօրից Հոգին նախ բխում է առ Որդին, ապա նրա միջոցով բաշխւում մեզ:

Հարց. «Աղիւսանման ակը պատուական» (տե՛ս Ելք ԻԴ 10):

Պատասխան. Ժողովուրդը տեսնում էր, որտեղ կար Աստուած, ոտքերի տակ կարծես հիւսած աղիւսաձեւ շափիւղայ էր, իսկ շափիւղան պատուական քար է, աղիւսը՝ խաչաձեւ:

Հարց. «Էակից անմարմին դասերը»:

Պատասխան. Հրեշտակներն առան մշտնջենական էութիւն:

Հարց. «Որոնք ըստ քո պատկերի են»[611]:

Պատասխան. Գրիգոր Մագիստրոսը Տարօնում եկեղեցի է կառուցել եւ մեծ ծախսերով բերել պատկերը եւ այնտեղ դրել: Եւ ասում են, թէ քարերը մարդաչափ էին: Գրիգոր Լուսաւորիչը Հռօմի գահից պատուի արժանացաւ[612]: Կենդանագիրը՝ Տիրամօր պատկերն է[613]:

Հարց. «Ժողովում է կարծեցեալ ճաճանչները»:

Պատասխան. Իւրաքանչիւր խաչ նոյն զօրութիւնն ունի, ինչ արեւի բազմաթիւ ճառագայթները. երբ ժողո-

վում է իր մէջ եւ ծագում՝ փարատւում է ամէն մի կասկած:

Հարց. «Կնքում էր աստղերի դէմ»:

Պատասխան. Հաստատելով խաւարեցրեց, այսինքն՝ վկաներին ցոյց տուեց, որ աստուածներ չեն: Եւ ընկած դասի մնացեալ մասին, որ ընկաւ երկիւղից, կնքեց եւ հաստատեց:

Նաեւ՝ իր հոգին աւանդելով, մկրտեց բոլոր հոգիները Հօր միջոցով:

Հարց. «Անտրամադրելի տառիցն»:

Պատասխան. Այն է, որ անձեռակերտ էր առաջին աստուածագիծ տախտակը, Կոյսը եւս առանց սերմի յղացաւ:

Նաեւ՝ որ այն անհաստատ էր, ինչպէս ստուերը, իսկ դու՝ ճշմարիտ:

Հարց. «Երկնքի դուռը եւ արքայութեան ճանապարհը»:

Պատասխան. Առաջաւորաց պահքն է անուանում երկնքի դուռ եւ արքայութեան ճանապարհ[614]:

ՉԱՅՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԸ

Հարց. Ինչո՞ւ է ութ ձայն [եղանակ]:

Պատասխան. Խօսքի բոլոր եղանակները հինգի են բաժանւում: Նախ՝ բոլորովին անձայն, ինչպէս մտքում խորհուածը:

Երկրորդ՝ միայն ձայն առանց մտքի, ինչպէս գոչիւնը:

Երրորդ՝ որտեղ միտքն առաւել է, քան ձայնը, ինչպէս շարական երգերում:

Չորրորդ՝ ձայնը գերակշիռ, քան միտքը, ինչպիսին ձայնական երգերն են:

Հինգերորդ՝ երբ ձայնն ու միտքը հաւասար են լեզւում, ինչպէս արտաբերուած խօսքն է:

Իսկ ութ ձայներն, ըստ չորս տարրերի չորսի են բաժանւում՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, որոնք իրենց չորս «կողմերի» հետ կազմում են ութ [ձայն]:

Այլեւ երկու ստեղիները՝ մէկը աւագ «կողմինը», միւսը՝ վերջին, միասին կազմում են տասը [ձայն], ըստ արարածների տասը մասերի:

Եւ տասը թիւը կատարեալ է:

Եւ մի ձայն է, իսկ մնացեալը տաղեր եւ երգեր են:

Եւ ոմանք ութ ձայն են ասում, ըստ ութ ձայնաւոր գրերի եւ տասը ձայն՝ ըստ տասը առոգանութիւնների: Կամ ութ ձայն՝ ըստ կենաց ութ շրջանների: Եւ առաջին եւ վերջին՝ ըստ առաջին ու վերջին գալստեան: Եւ տասը, որովհետեւ մեզնով լրացնում ենք հրեշտակների ինը դասերը, եւ՝ տասը մնասն (տե՛ս Ղուկ. ԺԹ) ու տասը քաղաքներին իշխելն է [ցոյց տալիս]:

Եւ քանի որ բնական ձայները չորսն են ըստ չորս տարրերի, հոգեւոր խորհուրդ ունեն. առաջին՝ իմանալիների ձայնը. երկրորդ՝ բանականների. երրորդ՝ զգայականների. չորրորդ՝ նիւթեղէնների: Կամ հակառակը ներքեւից. հողի ձայնը տարրերինը. ջրինը՝ կենդանիներինը. օդինը՝ մարդունը, հրինը՝ հրեղէններինը:

Մէկ ուրիշ կարծիք:

Առաջինը Աստծոյ ձայնը, երբ մարդուն էր ստեղծում հողից:

Երկրորդը՝ օրէնքներում՝ ջրինը.

Երրորդը՝ Աւետարանը՝ հոգու [ձայնը].

Չորրորդը՝ աւարտին՝ հրի [ձայնը]:

Մէկ ուրիշն էլ. Ադամի հետ խօսեց հողից. Նոյի հետ՝ ջրով, մարգարէների՝ ամպով, առաքեալների՝ հրով:

Կամ՝ առաջին ձայնը հողից մարմնական ծնունդի ժամանակ էր, երկրորդը՝ ջրով մկրտուելու ժամանակ, երրորդը՝ Վերնատանը՝ հոգով, չորրորդը՝ հրեղէն լեզուներով:

Եւ դարձեալ՝ վերջին յարութիւնը, եւ կրակի լիճը, ամպերով բարձրանալը եւ ընտրեալների փառքը:

Սրանք են չորս ձայների խորհուրդները[615]:

Հարց. Ովքե՞ր գտան ձայները:

Պատասխան. Ասում են, թէ Ստեփանոս անունով մի երաժիշտ գոյաւորների բոլոր ձայները բաժանեց քսանվեցի, որոնցից են բառաչելը, կռնչալը, խխնջալը եւ այլն: Եւ այս Ստեփանոսը յօրինեց քսանվեց տարբեր գործիքներ եւ նրանցով նուագում էր:

Իսկ Թիմգիանոսը յօրինեց մէկ գործիք՝ քսանվեց աղեղով:

Ապա նրանից յետոյ Թովնաս երաժիշտը մի այլ գործիք յօրինեց, որով վերարտադրում էին բոլոր կենդանիների ձայները:

Իսկ նրանից յետոյ Սինիգրէսը ստեղծեց առաջին ձայնը՝ այն յայտնաբերելով հիւսնագործութեան մէջ: Փոկեղէդէսը՝ նրա եղբայրը, դարբինների աշխատանքում գտաւ երկրորդ ձայնը: Սրանց եղբայր Սոփէկղիդէսը ջրի հոսքերի մէջ գտաւ երրորդ ձայնը: Ապա քեռորդին սրանց՝ Պապիանոսը ծովի ծփանքներում գտաւ չորրորդ ձայնը:

Յետոյ Քինոսփէնէսը, որ հմուտ էր գազանների եւ թռչունների ձայներին, առանձնացրեց առաջին ձայնի «կողմը»: Երկրորդ ձայնի կողմը, որ կոչւում է «աւագ կողմ» եւ երրորդ ձայնինը, որ կոչւում է «վառ» առանձնացրեց Աքիլեւսը:

Իսկ Նոմինոսն առանձնացրեց չորրորդ ձայնի կողմը, որ «վերջին [կողմն]» է:

Սակայն Արքեղայոսը ամէն ինչ վերամշակեց, ինչ սովորել էր ծովային կենդանիներից:

Եւ թէոփիլեան կոչուողներից ոմանք յօրինեցին երկու ստեղներ ասուածը, եւ այսպիսով լրացան տասը ձայները[616]:

Ու սրանք ոգեխառնեց Դաւիթը եւ սովորեցրեց երգիչներին:

Ասափը (տե՛ս Ա Մնաց. ԺՁ 5, ԻԵ 1-2, Սղմ. Ծ, ՀԳ-ՁԳ) եւ Դիթամը ծնծղաներ էին երգում. Զաքարիան, Սիման, Ելիան, Մովսէսը՝ տաւիղներով. Բանէասը, Մանէոն եւ այլք՝ քնարներով. Անանիասը, Եղիան՝ փողերով:

Ոմանք էլ երգում էին առանց գործիքների: Առանց գործիքի [կատարումը] կոչւում է երգ, իսկ գործիքովը՝ սաղմոսարան:

Հարց. Ինչո՞ւ Դաւիթը հոգեւոր երգերում միահիւսում էր երգն ու քնարի [երաժշտութիւնը]:

Պատասխան. Նախ, որովհետեւ մարդը հոգի է եւ մարմին, ուստի ձայնով եւ ձեռքով էր նուագում, երկու մատները իրար միացրած՝ օրհնութիւն ասելու Աստծուն:

Երկրորդ՝ քանի որ քնարն ու տաւիղը սատանայագիւտ էին՝ մարդկանց իգացնելու համար, ուստի խառնեց դրանց [ձայնը] հոգու խօսքին, որ իր իսկ սրով խոցի նրան ու հալածուի, ինչպէս Սաւուղի [պարագային] (տե՛ս Ա Թագ. ԺԶ):

Երրորդ՝ որպէսզի քաղցր ձայնից հմայուած՝ մարդիկ հեշտութեամբ սովորէին Հոգու խօսքը:

Չորրորդ՝ քանի որ արարածների մի մասը ձայն ունի, իսկ խօսք՝ ոչ, Աստծուն ընծայելու համար, իսկ մարդը արարածների գլուխն է, ուստի խառնում է նրանց ձայնն իր խօսքին եւ մատուցում Աստծուն:

Հինգերորդ՝ Աստծոյ նկատմամբ ունեցած ջերմ սիրոյ պատճառով բաւական չհամարեց միայն խօսքով Աստծուն գովերգել, ուստի յօրինեց տասնաղի գործիք, որպէսզի տասը մատներով, ինչպէս խօսքով, ներբողի Աստծուն:

Եւ նրանց երկու աղեղը մեր խօսքը եւ ձայնն են, հոգին ու մարմինը: Չորս աղեղը չորս տարրերն են եւ չորս առաքինութիւնները: Եօթնաղին՝ եօթը զգայարանները, [կենաց] եօթը շրջանների եօթը փոփոխութիւնները, Հոգու [եօթ] զօրութիւնները: Տասնաղին՝ հոգու եւ մարմնի տասը զգայութիւնները, արարչութեան տասը մասերն ըստ [տասնա]բանեան օրէնքի:

ՁԱՅՆԻ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչպէ՞ս իմանանք, ձայնը ո՞ր դասին է [պատկանում][617]:

Պատասխան. Եթէ թուով առաջինն է, որ Ֆարտն է[618], առաջին ձայնը աջ դասինն է, ձախ «կողմով»:

Եթէ թուով երկրորդն է, որ զոյգն է, առաջին ձայնը ձախ դասինն է, աջ «կողմով»:

Հարց. Ինչո՞ւ ենք Բուն բարեկենդանին ձայնը փոխում վերջինի:

Պատասխան. Որովհետեւ Մեծ Զատկի կիրակին առաջին ձայն է լինում, որ յարութեան խորհուրդն ունի:

Ունի նաեւ Ադամի անկման խորհուրդը, որի հետ վերջին անգամ խօսեց Աստուած եւ արտաքսեց դրախտից: Եւ մենք էլ արտաքսւում ենք եկեղեցուց:

Այլեւ վերջին օրուայ խորհուրդն ունի, որ վախճանն է աշխարհի:

ՇԱՐԱԿԱՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչպէ՞ս ենք կատարում շարականը:

Պատասխան. Նախ՝ ըստ օրերի:

Երկրորդ՝ ըստ համանմանութեան:

Երրորդ՝ ըստ կարգի:

Նախ՝ ըստ տօների օրերի, ինչպէս մեծ Ներսէսն է երգեր յօրինել[619]: Եւ այդպէս էլ Պահքի օրերին «Թագաւորքն»[620] են կատարում:

Կիրակի օրը՝ յարութեանը:

Երկուշաբթի օրը՝ հրեշտակների:

Երեքշաբթի օրը՝ մարգարէների:

Չորեքշաբթի օրը՝ աւետեացը:

Հինգշաբթի օրը՝ առաքեալների:

Ուրբաթ՝ խաչի: Շաբաթ՝ մեծամեծ սրբերի տօները, որոնք երկնքում հանգստեան մէջ են, որովհետեւ շաբաթ նշանակում է «հանգիստ»:

Եւ սա է բացատրութիւնը. կիրակին նշանակում է «տէրունական» եւ աշխարհի ստեղծման, Քրիստոսի յարութեան եւ Երկրորդ գալստեան օրն է, որի պատճառով միշտ իբրեւ տէրունական տօնւում է, եւ ասում ենք Խաչի շարականը, որովհետեւ յարութեան փառքը խաչով ցոյց տրուեց: Այլեւ «Հանգստեան» ենք ասում[621] ի նշան առհասարակ յարութեան եւ ննջեցեալների հանդէպ մեր յարգանքի:

Իսկ երկուշաբթին հրեշտակներինն է, որովհետեւ առաջին օրը ստեղծուեցին լոյսի հետ: Այլեւ Արարչից յետոյ երկրորդ լոյսն են եւ առաւել, քան մարդիկ, ուստի երկրորդ ամէնից առաջ նրանց տօնն ենք կատարում:

Երեքշաբթին ըստ կարգի՝ մարգարէներինը եւ Յովհաննու, որ օրէնքների եւ շնորհների միջնորդն է:

Չորեքշաբթին աւետմանը եւ ծննդեանը:

Հինգշաբթին, Քրիստոսի վկաներինը եւ առաքեալներից կառուցուած եկեղեցունը: Ուրբաթ՝ խաչինը եւ ննջեցեալներինը: Շաբաթ՝ մեծ տօները, ինչպէս ասացինք:

Սրանք ըստ տօների օրերի:

Երկրորդն ըստ համանմանութեան էր: Եւ երկու համանմանութիւն կայ. նախ, որ ձայնի եղանակով են նման միմեանց, ինչպէս նոյնին տրուող Ողորմեաները եւ նոյնին ուղղուած «Տէր յերկնից»-ը:

Երկրորդն ըստ կարգի է, իսկ կարգը կրկին է. կամ առաջինից ըստ հերթականութեան մինչեւ վերջ կարդալ, կամ վերջից՝ առաջինը:

Եւ կամ այսպէս: Նախ ասել Աւետեացը, ապա՝ Ծննդեանը, Գալստեանը, Խաչինը, Յարութեանը, Համբարձմանը, Հոգեգալստեանը, Վարդավառինը, Վերափոխմանը. եթէ տէրունական տօներ են՝ այս կարգով: Իսկ եթէ սրբերինն են՝ հետեւեալ. նախ, մարգարէներինը, ապա՝ առաքեալներինը, հայրապետներինը, մարտիրոսներինը:

Իսկ «Մեծացուսցէք»-ը[622], «Խաչին»-ը, «Հանգստեանը»՝ ամէն օր, որովհետեւ մշտական բարեխօսներ են:

Հարց. Նախ Աստուածածնի՞ շարականը պէտք է ասել, թէ՝ «Խաչինը»:

Պատասխան. Երկուսն էլ նախընտրելի են, եւ սա է բացատրութիւնը: Նախ, ծնուեց, ապա խաչուեց: Եւ ծննդեամբ ազատուեց նախամայրը, որ առաջինը մեղանչեց. ապա խաչով՝ նախահայրը, որ նրանից յետոյ [մեղանչեց]:

Սակայն սուրբ Ստեփանոս Սիւնեցին եւ մեծ Ներսէսն իբրեւ պատուական նախ խաչի տօնն էին կատարում, ապա՝ Աստուածածնի: Եւ այս նախապատուութիւնն ակներեւ է երեք [բաներից].

Նախ՝ որովհետեւ Կոյսին [ուղղուած] աղօթքում մաղթում ենք բարեխօս լինել, իսկ Սուրբ խաչին՝ պահապան:

Երկրորդ՝ Կոյսի մէջ եղաւ ինն ամիս, իսկ խաչի հետ՝ յաւիտեանս յաւիտենից:

Երրորդ՝ եւ ինքը՝ Տիրամայրը, միշտ երկրպագում էր խաչին:

Այսքանն այս մասին:

ԳԻՐՔՆ ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԹ

Հարց. Գիրքն ինչպէ՞ս պէտք է ընթերցել եկեղեցում:

Պատասխան. Աւետարանը՝ առաջին ձայնով. առաքեալներին՝ երկրորդ, մարգարէներին՝ չորրորդ, ներբողեանը՝ վերջին:

Այլեւ ընթերցողը պէտք է կարդայ գրուածին եւ պատճառին համապատասխան առոգանութեամբ. խրատական, ափսոսանքով, սպառնական, աղերսական, ըղձական եւ այլն[623]:

Հարց. Ինչո՞ւ նախ Մարգարէներին, ապա՝ Առաքեալներին, յետոյ Աւետարանն ենք ընթերցում:

Պատասխան. Որովհետեւ նախ մարգարէները իբրեւ կանխասացներ պատմեցին Բանի մարդեղանալու եւ մարդկութիւնը փրկելու մասին: Իսկ առաքեալները վկայեցին իբրեւ ականատեսներ: Եւ ասելն առաջ է, քան վկայելը:

Բացի այդ, մարգարէները հեռուից տեսան, առաքեալները՝ մարմնացած Բանին մօտենալուց յետոյ որի տեղափոխութիւն ենք կատարում. մարգարէներին կարդում ենք եկեղեցու մէջտեղից, իսկ առաքեալներին՝ բեմի մօտ կանգնած:

Նաեւ՝ մարգարէները սերմանեցին, առաքեալները՝ հնձեցին, մարգարէներն ասացին, առաքեալները՝ կատարեցին:

Ապա՝ նախ օրինակը, յետոյ ճշմարտութիւնն ենք սովորում այստեղ, իսկ այնտեղ անմիջականօրէն Տիրոջից ենք [սովորելու]՝ «քանզի,- ասում է,- ուսանելու են Աստծուց» (Յովհ. Զ 45):

Հարց. Ինչո՞ւ նախ Սաղմոսը, ապա՝ Մարգարէներին կամ Առաքեալներին ենք [կարդում]:

Պատասխան. Մովսէսից յետոյ առաջին մարգարէն Դաւիթն էր եւ նրա սաղմոսն էր Տաճարում [առաջինը], ապա միւսներինը: Եւ նոյն կարգն այժմ ունի եկեղեցին:

Բացի այդ, Դաւիթը Աստուածահայր է կոչւում[624], որի պատճառով էլ նախ նա է հրաւիրում ուրիշներին՝ իր Որդուն մեծարելու եւ վկայելու:

Իսկ [սաղմոսի] կցորդն ու սկիզբը օրուան համապատասխան [ընտրուած] խորհրդական տունն է, եւ ամբողջ սաղմոսը համաձայնեցուած է այդ տանը եւ վկան, որի պատճառով էլ կոչւում է սաղմոս-կցորդ:

Եւ սա էլ պէտք է իմանալ, որ սաղմոսը բոլոր ժամերին երգւում է. առաւօտեան, ճաշին, երեկոյեան, այլեւ բոլոր խորհուրդների ժամանակ՝ կնքելու, պատարագելու, կարգ [շնորհելու], պսակի եւ այլն:

Եւ սա երեք պատճառով:

Նախ՝ որովհետեւ սաղմոս նշանակում է «երգ», եւ հները բոլոր ժամերին սա երգում էին Տաճարում, իսկ մնացեալ

մարգարէներին ընթերցում էին շաբաթ օրը: Ուստի եկեղեցում սաղմոսը միշտ երգւում է:

Երկրորդ՝ իր մէջ ունի բոլոր գրքերի զօրութիւնը, որովհետեւ Սուրբ Գիրքը կամ առաջինների մասին է պատմում, ինչպէս Մովսէսինը, կամ կանխագուշակում վերջինների մասին, ինչպէս Եսայունը կամ միւսներինը: Իսկ սաղմոսը թէ՛ անցեալի, թէ՛ ներկայի, թէ՛ ապագայի մասին է, որի պատճառով էլ, եթէ որեւէ մէկն այն սրբութեամբ է երգում՝ լցւում է Սուրբ Հոգու շնորհներով[625]:

Երրորդ՝ [Դաւիթը] Աստուածահայր կոչուեց, ուստի եկեղեցու տանը առաւելապէս պէտք է Հօր ունեցուածքն օգտագործել:

Իսկ «Քեզ վայել է»-ն, քանի որ ունի արարչութեան, այլեւ Տնօրինութեան եւ աւարտի խորհուրդը, ուստի այն երգում ենք կիրակի օրը:

Այդպէս էլ Եսայի [մարգարէին] միշտ կիրակի օրն ենք կարդում, քանի որ մարգարէների մէջ Աստուածաբան կոչուեց առաւել, քան մնացեալը՝ Քրիստոսի տնօրինութեան, ծննդի, խաչելութեան եւ այլնի մասին պատմելու պատճառով: Եւ կիրակին տէրունական օր է, եւ յարութիւնն էլ տնօրինութեան աւարտն է, ուստի [այդ օրը] Եսայի [մարգարէ] ենք կարդում:

Այդպէս էլ, քանի որ Պօղոս [առաքեալը], որ հրէաների եւ հեթանոսների վարդապետն էր, պատմողն էր բովանդակ տնօրինութեան մասին, ուստի բոլոր տօներին, պահքին եւ ուտիքին, շաբաթ եւ կիրակի նրան ենք կարդում:

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ ենք Աւետարանն [ընթերցելիս բացականչում]՝ «Օ՜րթի», մոմ վառում եւ բուրվառը ճոճում:

Պատասխան. Օրէնքը [տալու] օրինակով է, երբ Տէրը իջաւ Սինա՝ փողի [ձայն էր], որոտ, հուր, ծուխ եւ այլն, ու Մովսէսի միջոցով տուեց օրէնքները:

Իսկ այստեղ որոտի փոխարէն բարձրաձայն [ասւում է]՝ «Օ՜րթի», որ նշանակում է՝ առաջ գնանք, եւ ինչպէս ժողովուրդը գնաց լեռան մօտ, այդպէս էլ մենք պէտք է ոտքի կանգնենք, գնանք եւ լսենք:

Բուրվառի ձայնը փողի [օրինակով է]: Վառուող ճրագը՝ հուրը: Խունկը՝ ծուխը: Գրականները, բեմը՝ բազմութեան համար անմատչելի Սինա լեռը: Ընթերցող սարկաւագը հրեշտակ միջնորդն է կամ Մովսէսը, որ պատմեց Աստծոյ օրէնքների մասին, ինչպէս ժողովուրդն էր ասում՝ «Թո՛ղ մեզ հետ խօսի Մովսէսը եւ ո՛չ թէ Աստուած» (Ելք Ի 19): Այս իմաստով է, որ սարկաւագը նախ քահանայի առաջ է կարդում, իբր նրանից է ուսանել, ապա շուռ է գալիս դէպ ժողովուրդը:

Իսկ վերջում ասեն ենք՝ «Փա՛ռք քեզ Աստուած», եւ ինչպէս ժողովուրդն ասաց ու երկրպագեց, այդպէս էլ մենք ենք երկրպագում եւ համբուրում Աւետարանը, իբրեւ թէ ընդունեցինք եւ մարմնով հնազանդուեցինք կամ քեզ միացանք հոգով:

Կամ էլ ինչպէս յարութիւնից յետոյ նախ Պետրոսը տեսաւ Քրիստոսին, ապա աւետեց առաքեալներին, այդպէս էլ մեզնից իւրաքանչիւրը համբուրում է Աւետարանը եւ գլուխը խոնարհելով՝ մեզ աւետիս է տալիս:

ԱԼԷԼՈՒԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է [նշանակում] «ալէլու» [ասելը] մինչեւ Աւետարան [կարդալը][626]:

Պատասխան. «Ալէլու»-ն հրեշտակների երգն է, որոնք աւետեցին Տիրոջ գալուստը:

Իսկ եբրայերէն «ալ» նշանակում է «գալու է, յայտնուելու է», «էլ»՝ «Աստուած», «ուիայ»՝ «Օրհնեցէ՛ք եւ գովեցէ՛ք ք կենդանի Աստծուն»[627]:

Իսկ սաղմոսի տունը մարդու երգն է, այսինքն հրեշտակները եւ մարդիկ միաբանուած օրհնում են Աստծուն՝ մեր Փրկչին, որ խօսում է մեզ հետ: Ուստի ակնյայտ է, որ այնտեղ, որտեղ «ալէլու» ենք ասում, նրա հետ սաղմոսի տուն է ասւում:

Հարց. Օտար լեզուով ի՞նչ է նշանակում «ովսաննա», «պռօսխումէ» եւ այլն:

Պատասխան. «Ովսաննա» եբրայերէնից մեր լեզուով թարգմանւում է՝ «փրկութիւն»[628]:

«Պռօսխումէ» յունարէն է, որ նշանակում է «Նայեցէ՛ք վեր»[629]:

«Օթէօս» նշանակում է «Աստուած», որ երեք լեզուով՝ եբրայերէնով, յունարէնով, լատիներէնով խաչի վրայ գրուածի մասին է: Այս է պատճառը, որ պատարագի ժամանակ յիշատակւում է եբրայերէն եւ յունարէն, իսկ լատիներէնի փոխարէն այն լեզուով, որով պատարագւում է:

Իսկ երեք եռեակներով բաժանուած ինը «Տէր ողորմեաները» եւ ինը «Երեքսրբեանները» ի խորհուրդ վերին ինը դասերի են:

Նմանապէս եւ քշոցը [խորհրդանշում է] վեցթեւեան սերովբէներին: Եւ Մովսէսն էլ պատկերեց քերովբէներին իբրեւ հովանի Քաւութեան վրայ (տե՛ս Ելք Իե, 20):

Իսկ թէ ի՞նչ է այն, որ վերընծայման խորհուրդը կատարւում է երկրպագութեամբ եւ զանգեր հնչեցնելով. այն է, երբ Դաւիթը ուխտի տապանակը բերում էր Երուսաղէմ, եօթը դասերով էին՝ քահանաների, սրնգահարների, փողահարների, քնարահարների եւ այլն, իսկ ինքը՝ Դաւիթը հանդերձազուրկ եւ կանգնած երգում էր տաւղով, ինչպէս սարկաւագները: Եւ բերեց ու ամրացրեց խորանում, ինչպէս ասել ենք Երկրորդ Թագաւորաց [գրքի] տասնչորսերորդ համարում:

ԲՈՒՐՎԱՌԻ ՄԱՍԻՆ
Պրակ Ծ

Հարց. Ո՞րն է բուրվառի խորհուրդը:

Պատասխան. Բազմաթիւ են:

Նախ, ինչպէս ասում են ոմանք, բուրվառը խորհրդանշում է Քրիստոսի մարդեղութիւնը, հուրը՝ աստուածութիւնը, ծուխը՝ Սուրբ Հոգու բուրումը: Երեք պարանները՝ երեք գոյացութիւնը: Վերին հանգոյցը՝ միասնութիւնը: Զան-

գակները՝ առաքեալները, այլեւ քարոզիչների պատկերները, եւ Ադամինը՝ գոյութեան սկիզբը:

Դարձեալ բուրվառը [խորհրդանշում է] Կոյս Մարիամին[630] եւ նրա մէջ բնակուած աստուածային հուրը, իսկ հրի մէջ գտնուող խունկը եւ բուրումնաւէտ հոտը՝ Բանին միաւորուած մարմինն է, որ անուշահոտ բուրեց աշխարհում:

Երեք պարանները նրա եռակի պատիւն են. իբրեւ Կոյս, Մայր եւ Աստծոյ ծնող, որի մասին շուրջբոլորը քարոզեցին առաքեալները:

Եւ մեր սիրտն էլ բուրվառ է, աղօթքը՝ խունկ, եւ հուր էլ՝ բուրվառի նիւթը, ջերմ սէրն է: Ոսկի է մեր մէջ եղած հաւատը: Արծաթ՝ մաքուր վարքը: Պղինձ՝ Աստծուն ներբողուող երգերի հնչող ձայնը: Երկաթ՝ միտքը, որ կոտրում է ստորադասուած ախտերը: Մէկմէկու եռակցուած երեք պարանները՝ մեր քառանիւթ բնութիւնը միախառնուած տարրերին, կամ էլ՝ մարմնի շնչի եւ հոգու խառնուելը: Վերին հանգոյցը՝ իմացական հոգին, ներքեւի կառոյցը՝ մարմնի բնութիւնը: Վերին ծայրի բռնիչը՝ մեր յիշողութիւնը:

Եւ այս ամէնը՝ Աստծուն ուղղուած մեր կատարեալ ընթացքն է, որ մեր ձեռքն առնելով՝ մշտապէս մատուցում ենք Աստծուն:

Այլեւ խորհրդանշում է բոլոր արարածներին՝ երկինքը, երկիրը եւ այլն, ինչպէս որ ասուել է:

Այսքանն այս մասին:

ԳՐԱԿԱԼԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է նշանակում գրակալը:

Պատասխան. Նախ, նշանակում է Մովսէսին, որ Աստծոյ պատգամն առնելով՝ խօսեց ժողովրդի հետ:

Ծածկոցը օրէնքի քողն է:

Նշանակում է նաեւ մարգարէներին ու առաքեալներին եւ որպէս նրանց գլուխ երեւացած ու խօսած Բանն Աստծուն:

Նաեւ՝ վախճանին առաքեալների ու մարգարէների միջոցով խօսելն ու դատելը:

Իսկ մի տախտակը երկու մասի բաժանուած եւ հնգակի փակուած, [նշանակում է] Մովսէսի երկու տախտակները՝ միաւորուած յանձնարարող եւ արգելող օրէնքներով:

Մի տախտակը նաեւ միեւնոյն առաքելական քարոզութիւնն է՝ աշխարհի չորս կողմերում տարածուած, իսկ զանազան նկարները՝ հոգու զանազան շնորհների նշանակներն են:

Դարձեալ՝ խաչի խորհրդանշումն է եւ նրա վրայ խաչով քարոզող Քրիստոսը:

Այլեւ ցոյց է տալիս աստիճանաւորներին՝ ցածր լինելը, քան քահանաները, որի պատճառով էլ նրանք միշտ աւելի մօտ են կանգնած գրակալին, երբ կարդում են:

Եւ խորհրդանշում է նաեւ Աստծոյ ժողովրդին, որի ականջում միշտ հնչում է աստուածային խօսքը՝ եռակցուած հոգու եւ մարմնի հինգ զգայարաններին:

Այս է մտքով է, որ այլազգիները մշտապէս գրակալի վրայ գիրք են

պահում, որովհետեւ արժանի է անդադար ուսանել:

Այլեւ՝ [նշանակում է] դատաստանի ժամանակ, երբ գրքերը բացուեն, այստեղ որոնք մարմնի ձախից են, փոխուելու են աջ, իսկ որոնք աջից են՝ ձախ:

Տասներորդ, եւ այստեղի ընտրեալները միշտ աջից են նշանակւում, իսկ խոտելիները՝ ձախից:

Այսքանն այս մասին:

ՏՕՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է նախատօնակը, որի [ժամանակ] երեկոյեան սուրբ զգեստով, Խաչով, Աւետարանով եւ մոմեր վառած՝ միաձայն երկրպագութիւն ենք կատարում:

Պատասխան. Ինչպէս թագաւորի գալուց առաջ նախ առաջապահներն ու լրաբերներն են մտնում, եւ քաղաքացիները նախ իրենց, ապա փողոցներն են զարդարում, ապա պատրաստ սպասում, այդպէս էլ հոգեւորի մէջ այսօր փոքր ինչ ուրախանում ենք եւ նախապատրաստում մեզ:

Եւ երկուսն են տօները. տէրունական եւ ընդհանուր սրբերինը:

Արդ, տէրունական տօներին նախորդ [երեկոյեան] նախատօնակն ենք անում, իսկ յաջորդ օրը՝ ամբողջական տօնը: Եւ այս է խորհուրդը. երեկոն ցոյց է տալիս այս կեանքը, որ Փրկչի տնօրինութեամբ հաւատի միջոցով մի քիչ տեսանք, իսկ յաջորդ օրը կատարեալ տօնելը խորհրդանշում է հանդերձեալը, երբ դէմ յանդիման տեսնելու ենք նրան: Այդ իսկ պատճառով էլ Սրբութիւնը, Խաչը, Աւետարանը դուրս ենք բերում, որովհետեւ Քրիստոսի տնօրինութեան պատմողն ու իրագործողն են: Եւ նոյն ինքը՝ Քրիստոս, երեւում է մեզ Խաչով ու Աւետարանով, եւ լոյսերի մէջ է մեզ տանում, որ ցոյց են տալիս վառուող մոմերը: Եւ նա մեզ հաշտեցրեց Աստծոյ հետ եւ միաւորեց երկինքն ու երկիրը, հրէաներին եւ հեթանոսներին, որ ցոյց է տրւում միասնական երկրպագութեամբ:

Ապա գիշերը բոլոր սրբութիւնները դրւում են բեմի գահաւորակին, որոնք անշարժ [մնում են] մինչեւ առաւօտ, ինչպէս ասացինք:

Իսկ ընդհանուր սրբերի նախատօնակը ոչ թէ այսօր ենք կատարում, այլ նրանց տօնը սկսում ենք յաջորդող կէսգիշերից յետոյ:

Եւ այս է խորհուրդը. քանի դեռ սրբերը կենդանի են երկրի վրայ, չենք տօնում նրանց համար մինչեւ նահատակութիւնը, իսկ յետմահու եւ յարութիւնից յետոյ կատարեալ փառքի են արժանանում, ուստի կէսգիշերից է սկսւում նրանց նահատակութեան տօնը: Իսկ գլխաւոր սրբերի նախատօնակը, ինչպէս աւագ տօներինը, կատարում ենք այնպէս, ինչպէս տէրունական տօներինը, որովհետեւ նրանք եղան Քրիստոսի առաջապահները, աթոռակիցները, զինուորները, ուստի երեկոյեան ենք կատարում նրանց տօները, այսինքն երկրից դուրս գալու ժամանակ եւ յաջորդ օրը, իբրեւ նրանց պսակի եւ փառքի տօն: Եւ նրանք այստեղ հարիւրապատիկը,

իսկ այնտեղ բիւրապատիկն են ստանալու, որի պատճառով էլ երեկոյեան դարձեալ դուրս ենք բերում այն սրբութիւնները, որոնց բաղձացին նրանք եւ ելան աշխարհից՝ բնակուելով լոյսերի մէջ:

Եւ առաջին կատարեալների հոգիները ժողովուած [են], ուստի երկրպագում ենք նրանց միահամուռ, վառուող մոմերով:

ՇԱԲԱԹ [ՕՐՈՒԱՅ] ՏՕՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԱ

Հարց. Ինչո՞ւ ենք սրբերի տօնը շաբաթ օրը կատարում:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ, որովհետեւ շաբաթ օրուանից է սկսւում սրբերի հանգիստն ու երանութիւնը, այն օրը, երբ իր գործերից հանգստացաւ Աստուած, քանի որ վեց օր արարեց աշխարհի ժամանակաւորն ու մահկանացուն, իսկ եօթներորդ օրը սկսեց իմանալի աշխարհի [արարումը], որ սրբերի հանգիստն է:

Եւ այս աշխարհն արարեց վեց օրում ու հանգստացաւ, իսկ այն աշխարհը՝ տեսութեամբ ու իմացութեամբ, [որ] միշտ, յաւիտենական, անվախճանօրէն պատրաստում է իբրեւ նրանց հանգստավայր եւ երանութիւն:

Եւ տե՛ս, թէ որքան եւ ինչպիսի անիմանալի, անճառելի երանութիւն է սրբերի համար, որը միշտ եւ յաւիտեան պատրաստում եւ կազմում է Աստուած, որի մասին առաքեալն ասում է. «Աչքը չտեսաւ, ականջը չլսեց այն, ինչ Աստուած պատրաստեց իր սիրելիների համար» (Ա Կորնթ. Բ 9):

Երկրորդ՝ այս օրն Աստուած աւարտեց իր բոլոր բարի գործերը: Եւ ինչպէս Աստուած իր գործերն ամփոփեց, այդպէս էլ սրբերն են հանգստանում իրենց գործերից: Եւ ինչպէս Աստուած միախառնուած է բարուն, այդպէս էլ մեր բարի գործերը հանգիստ են Աստծոյ եւ մեզ համար:

Երրորդ՝ շաբաթը «հանգիստ» կոչեց Աստուած եւ օրէնք սահմանեց, որ այդ օրը մարդը հանգստանայ իր մարմնական գործերից՝ շաբաթուայ, ամսուայ, տարուայ [բոլոր այդ] օրերին, որ ցոյց է տալիս սրբերի հանգիստն ու վարքը:

Չորրորդ՝ Քրիստոս մարմնով դարձաւ օրէնքների լրումը, որ դարձեալ շաբաթ օրը դադարեց ուրբաթի չարչարանքներից եւ դրուեց գերեզման:

Այդպէս էլ սրբերը Քրիստոսի չարչարակիցը եղան եւ Քրիստոսի չարչարանքների պակասը իրենց մարմնի վրայ կրեցին, որի պատճառով էլ Տէրը՝ Քրիստոս, մարմնով հանգչեց գերեզմանում, իսկ սրբերը՝ հոգով Աստծոյ մօտ, երկնքում:

Հինգերորդ՝ ինչպէս վեց օր յետոյ են գալիս շաբաթը եւ հանգիստը, այդպէս էլ սրբերը ակնկալում են կենաց վեց շրջանների աւարտից յետոյ յաւիտենական հանգստութիւն ժառանգել, ինչպէս առաքեալն է ասում՝ «Ձանանք մտնել այն հանգիստը» (Եբր. Դ 11), որից հրաժարուեցին հրէաները եւ չմտան, ըստ

այդմ՝ «Երդուեցի իմ բարկութեան պահին, արդեօք մտնելո՞ւ են իմ հանգիստը» (Եբր. Դ 3), այսինքն՝ անհաւատները, ուրացողները եւ չար հաւատացեալները:

Վեցերորդ՝ չարչարանքի ուրբաթից յետոյ շաբաթ օրը կատարում ենք սրբերի տօնը, որոնք տեսան չարչարուած Քրիստոսին, եղան նրա չարչարակիցը, ուստի հաղորդակցուելու են նրա փառքին, ինչպէս առաքեալն է ասում՝ «Եթէ մասնակից ենք չարչարանքներին, ուրեմն եւ հաղորդակցուելու ենք փառքին» (Հռոմ. Ը 17):

Եօթներորդ՝ շաբաթ օրն ենք կատարում սրբերի տօնը եւ պատարագ մատուցում ըստ Նիկիական կանոնի, որը նշանակում է ապաշխարողների հանգիստը, որովհետեւ ուրբաթ օրը մեղանչեցինք Ադամի հետ, իսկ շաբաթ օրը հանգստանում ենք Քրիստոսի հետ: Այս մտքով էր մեր Տէրն ուրբաթ օրուայ հարուածուածներից բժշկում շաբաթ օրը:

Ութերորդ՝ ինչպէս շաբաթին հաջորդում է կիրակին, նոյնպէս եւ սրբերը, ովքեր այժմ հանգստեան մէջ են, [երկրորդ] գալստեան ժամանակ տեղափոխուելու են կատարեալ փառքի եւ մշտնջենաւոր հանգստեան մէջ՝ հանգչելու խաղաղութեամբ՝ փառքից փառք:

Եւ ինչպէս շաբաթուայ եւ կիրակիի միջեւ ուրիշ օր չկայ, այդպէս էլ նրանց մարմիններից հոգու դուրս գալուց յետոյ որեւէ պատնէշ, արգելք կամ պսակ ստանալու ոչ մի խոչընդոտ չկայ, որովհետեւ իրենց մօտիկ կամ հենց իրենց մէջ են տեսնում փառքն ու հանգիստը:

Իսկ եթէ մէկը հարցնի, թէ այժմ ո՞ր հանգստի մէջ են, որ [յետոյ] փոխադրուելու են, ապա ասենք, որ այժմ գործերի հանգստի մէջ են, իսկ այնժամ փոխադրուելու են փառքի ու պսակի հանգստեան մէջ: Որովհետեւ ինչպէս Աստուած է իր գործերից հանգստանում, այդպէս էլ բոլոր սրբերն են իրենց գործերից հանգստանում, եւ փառաւորուելու ու սպասելու են Քրիստոսի գալստեանն ու վարձքի հատուցմանը, ինչպէս մարգարէն է ասում՝ «Քեզ են սպասում արդարները» (Սղմ. ՃԽԱ 8):

Եւ առաքեալն ասում է. «Կայ եւ կմնայ իմ արդարութեան պսակը, որ հատուցելու է արդար դատաւորը՝ Տէրը» (Բ Տիմ. Դ 8), որովհետեւ այժմ հոգիները լցուած են իրենց գործերի փառքի եւ պայծառութեան յոյսով:

Այս մտքով էր, որ նրանց սպիտակ հագուստ կրելու պատուիրան տրուեց, այսինքն՝ գործերի պայծառութիւն եւ հոգու անմեղութիւն, որ ընկալեցին Քրիստոսի շնորհներից: Եւ նրանց ասուեց, որ հանգստանան, մինչեւ լիալրուեն նրանց ծառայակիցներն ու ընկերները:

Ահա այս պատճառով շաբաթ օրն ենք կատարում մեծ սրբերի տօները:

ՈՒԹՕՐԵԱՅԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ են ութօրեաները առանց չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի

պահքի՝ միայն ծննդեանն ու յարութեանն [տօներին]:

Պատասխան. Ասենք, որ ծննդեան պահքը ութ օր է. քանի որ շաբաթ եւ կիրակի օրերին պահք է, նրանց փոխարէն լուծւում են ուրբաթ եւ չորեքշաբթի օրերը:

Նոյնն է նաեւ յիսներեկի պարագային, որովհետեւ աղուհացին պահք է շաբաթ եւ կիրակի օրերին, նրանց փոխարէն լուծւում են ուրբաթ եւ չորեքշաբթի օրերը:

Իսկ որ Յինանցը պահում է մինչեւ Համբարձում՝ հակառակ է հայրերի կանոններին եւ Աւետարանին, քանզի ասում է. «Քանի դեռ փեսան նրանց հետ է, մանուկները չպէտք է սուգ անեն, իսկ երբ համբարձուի, այնժամ այդ օրը պէտք է պահեն» (հմմտ. Մտթ. Թ 15):

Հարց. Ամբողջ տարուայ մէջ քանի՞ ութօրեայ տօներ կան:

Պատասխան. Մեր եկեղեցում այժմ տասն են:

Առաջին երկուսը Ծննդեանն ու Մկրտութեանն են, որոնք միասին ենք տօնում՝ ըստ սուրբ հայրերի կանոնների եւ համաձայն տեառնեղբայր Յակոբի:

Երրորդը՝ Գալստեանն է, թէեւ այլ օրերի էլ [յիշատակւում են], ինչպէս քառասնօրեային, աւանակով [մուտքի] եւ յինանց կիրակնամուտի [ժամանակ]:

Չորրորդը՝ չարչարանքի աւագ շաբաթին:

Հինգերորդը՝ Յարութեան եօթ եօթնեակին:

Վեցերորդ՝ Տիրոջ համբարձմանը երկինք:

Եօթներորդ՝ Հոգեգալստեանը, որի պատճառն ասուեց քսանմէկերորդ գլխի յիսունմէկերորդ համարում:

Ութերորդ՝ [Վերա]փոխման:

Իններորդ՝ Եկեղեցու:

Տասներորդ՝ Խաչի չորս տօների. Սուրբ խաչի, Երեւման, Վարագայ խաչի եւ Խաչգիւտի:

Նաեւ՝ Աշխարհամատրան ու եկեղեցու տօնին՝ կիրակի օրը: Տապանակի եւ Շողակաթի: Եւ չորս օր [կատարւում է] Սուրբ խաչի կարգը:

Սրանք են մեր ութօրեայ տօները[631]:

Հարց. Ամբողջ տարուայ մէջ քանի՞սն են ժամատեղեաց կարգի փոփոխութիւնները:

Պատասխան. Այժմ մեզ թուում է մեր եկեղեցում տասն են, այսինքն երեքը մի շաբաթուայ մէջ, որ՝ Պահքի, Մարտիրոսաց եւ Կիրակիի այլածեւ կարգերն են. Առաջաւորաց, Աղուհացից եւ Յինանց կարգերը: Երկու ճրագալոյցները, որ եղաւ ութ. ապա տէրունական տօներինը եւ խաչի ու եկեղեցու կարգը:

Այսքանն այս մասին:

ԱՅԺՄ ՀԱՐՑ ՊԱՀՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ Պրակ ԾԲ

Տարուայ մէջ քանի՞ օր է պահք:

Որքան ուտիք է, այդքան էլ՝ պահք է, քանզի հոգի եւ մարմին ենք՝ ուտիքը մարմինն է, պահքը ցանկալի է հոգուն: Ուստի առաքեալները եւ հայրերը հարիւր ութսուն օր սահմանեցին պահք, նոյնքան

էլ՝ ուտիք, քանզի բովանդակ տարին վաթսուն օր ուրբաթ եւ չորեքշաբթի է եւ երեք քառասունք պահք է:

Այս [սահմանումը] առաքելադիր է:

Իսկ հայրապետները զատում են երկու քառասնօրեայ շաբաթապահքեր: Այժմ տասնեօթ շաբաթապահքեր կան եւ վաթսունի մէջ ինը շաբաթներ, որ ամբողջ տարուայ մէջ լինում է քսանվեց շաբաթապահք: Նոյնքան էլ ուտիք է՝ մի քիչ աւելի կամ պակաս:

Դարձեալ տասը շաբաթապահքն այն է, որ Ներսէս Մեծը կանոնեց ամէն ամսամուտի շաբաթը պահել, ըստ որի այժմ տասը ամսուայ տասը շաբաթ օրը պահում ենք: Երեք ամիս էլ աղուհացք է եւ յիսնական:

Հարց. Պահքի օրերը ինչո՞ւ տօն չենք դնում:

Պատասխան. Տօնը ուրախութիւն է, ինչպէս հոգու, այդպէս էլ՝ մարմնի, ուստի երբ տօնում ենք հոգով, ուրախանում ենք [նաեւ] մարմնով: Իսկ պահքը սուգ է եւ ապաշխարութիւն՝ նախաստեղծների յանցանքի պատճառով՝ չորեքշաբթին Եւայի, ուրբաթը՝ Ադամի, միւս բոլոր պահքերն էլ մեր գործած մեղքերի համար:

Եւ դարձեալ քանի դեռ պահք է, ապաշխարութեան մէջ ենք եւ արժանի չենք սրբերի տօները կատարել եւ երբ ապաշխարութեամբ քաւում ենք [մեղքերը], ապա՝ տօնում ենք թէ՛ տէրունականները, թէ՛ սրբերինը:

Հարց. Ինչո՞ւ ենք ասում Սուրբ Սարգսի, կամ Սուրբ Գրիգորի եւ կամ՝ Սուրբ Յակոբի կամ այլոց պահք:

Պատասխան. Բոլոր պահքերն Աստծունն են եւ ոչ մարդունը, սակայն պահքերն անուններով ենք ճանաչում, ինչպէս Աղուհացի առաջին շաբաթը կոչում ենք Թէոդորոսի [պահք], միւսը՝ Ղազարոսի եւ այսպէս միւսները: Եւ պահքի աւարտին նրանց տօնն ենք կատարում, եւ այդ պատճառով պահքը նրանց անունով է կոչւում:

Եւ երբ շաբաթուայ պահքը կատարում ենք, աւարտին աղաչում ենք նրանց միջնորդութիւնը, որպէսզի նրանց բարեխօսութեամբ ընդունուի մեր պահքը:

ԱՌԱՋԱՒՈՐԱՑ ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ[632]

Հարց. Ինչո՞ւ է Առաջաւորաց պահքն [ընթանում] առանց ընթերցումների:

Պատասխան. Քանզի այս պահքը մինչեւ գիրն էր եւ մինչեւ մարգարէները, եւ դրուեց նախահայրերի համար: Եւ որովհետեւ երբ դուրս եկան դրախտից, հինգ օր ծոմ պահեցին: Այսպէս եւ նինուէացիք երեք օր պահեցին, ինչպէս նաեւ՝ երկուսը՝ չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը:

Եւ երբ մեր Լուսաւորիչը Վիրապից դուրս եկաւ, հինգ օր պահք կարգեց, ապա բժշկեց [հարուածից] պատժուածներին, ուստի այն կոչւում է Առաջաւոր եւ Առաջապահք եւ ընթերցում չի կատարւում:

Դարձեալ Առաջաւոր է կոչւում, քանի որ Մեծ պահքի Աղուհացի առաջին շաբաթն է սա, եւ նրանից մինչեւ Ձատիկ եօթանասուն օր է, որը սկզբում բոլոր քրիստոնեայ ազգերն ունէին, եւ դեռեւս պահում են ղպտիները եւ հաբեշները: Եւ երբ սուրբ հայրերը հետագայում միջանկեալ երկու շաբաթը բարեկենդան սահմանեցին, այս շաբաթը մնաց անփոփոխ՝ Առաջաւորաց պահք եւ Աղուհացից պահքի մուտք:

Հարց. Ինչո՞ւ «Աղուհացից»-ի ընթացքում «Հանգստեան» չենք ասում:

Պատասխան. Քանի որ ապաշխարութեան մէջ ենք՝ մեր յանցանքների պատճառով, ուստի այլոց համար չենք կարող բարեխօսել, ինչն ակնյայտ է եկեղեցու դռների փակ լինելուց, որից դուրս ենք [այնպէս], ինչպէս Ադամը դրախտից եւ սգի մէջ ենք: Նոյն պատճառով էլ պատարագ չենք մատուցում, քանի որ անարժան ենք: Եւ եկեղեցի էլ չենք մտնում:

Սակայն շաբաթ եւ կիրակի Պատարագ է մատուցւում, քանի որ նախկինում, երբ Առաջաւորաց պահքից [սկսեալ] պահում էին եօթանասուն օր՝ այս [երկու օրը] լուծում էին: Սակայն Նիկիոյ ժողովը սահմանեց Պահքը [պահել], բայց Պատարագ մատուցել: Եւ այժմ ասորի եւ յոյն ազգից ոմանք շաբաթը եւ կիրակին լուծում են ձկով:

Հարց. Ինչո՞ւ է ֆռանկների ազգը Պահքի երկու օրերը լուծում:

Պատասխան. Ամենեւին սուտ են, եւ դա նրանց մոլորութիւնն ու անօրէնութիւնն է:

Մեծ պահքի սկիզբը կիրակին է, որը սակայն Յիսուսի յարութեան պատճառով որպէս Բուն բարեկենդան կարգուեց եւ փոխադրուեց երկուշաբթի օր: Եւ սա բոլոր քրիստոնեայ ազգերն ընդունում են որպէս Պահքի սկիզբ եւ հիմք, մինչդեռ նրանք լուծում են: Եւ պատճառաբանում են, թէ ինչ-որ ժամանակ հեծեալների զօրքը չհասաւ Բարեկենդանին, եւ Պապը նրանց հրամայեց երկու օր ուտել: Եւ այս որովայնամոլ անօրէն ազգի համար օրէնք կարգուեց:

Իսկ եթէ մէկն ասի, թէ «Տէր Ամենակալը» չորեքշաբթի է մտնում, ապա ասենք, որ Աղուհացիցը երկու կարգ ունի՝ մեծ եւ փոքր: Մեծ կարգը կանոնել է Յակոբոս տեառնեղբայրը, որ կարգեց ընթերցուածները. սրա սկիզբն է չորեքշաբթին եւ աւարտը՝ ուրբաթը:

Փոքր կարգը [կանոնեց] մեծ Կիւրեղը՝ Երուսաղէմի հայրապետը. սկիզբն է երեքշաբթին եւ աւարտը՝ հինգշաբթին: Այս պատճառով էլ «Տէր Ամենակալը» մեծ կարգով է սկսում[633]: Ուստի դու պէտք է փոքր կարգին ուտես ամէն օր, իսկ մեծը պահես:

Եւ եթէ մէկն ասի, թէ քառասուն օր է Պահքը, որովհետեւ Քրիստոս քառասուն օր պահեց, եւ կիրակին չի հաշւում դրա մէջ, ասենք, որ Քրիստոս քառասուն օր պահեց, եւ քառասուն օր է մինչեւ Ղազարոսի տօնը: Եւ Աւագ շաբաթը Քրիստոսի չարչարանքներն են, որ քառա-

սունի յետ կարգելով՝ դառնում է յիսնեակ՝ ըստ առաքելական կանոնի: Եւ եթէ շաբաթ-կիրակին դուրս ենք թողնում, երբ պատարագ է մատուցւում, հինգ օր էլ՝ Առաջաւորացն Աղուհացիցի հետ հաշուելով՝ լինում է քառասուն օր, ապա թէ ոչ դառնում է երեսունհինգ օր, ինչպէս գրում է Ընթերցուածների մեկնիչը՝ Գանձակեցին[634]:

Նաեւ՝ Մովսէսը ամպից եւ կրակից դուրս վեց օր մնաց, ապա ներս մտնելով՝ քառասուն օրում աւարտեց Աստծոյ յետ խօսելը: Նմանապէս մեզ համար պահքի առաջին շաբաթը քառասուն օրուայ մուտքն է, որի պատճառով թեթեւ է ընթերցումներով:

Դարձեալ՝ Եղիայի եւ Մովսէսի քառասնորդաց սկիզբն է առաջին շաբաթը, եւ աւարտը՝ Ղազարոսի տօնը: Իսկ մեր Տիրոջ քառասնօրեայի սկիզբն է երկրորդ շաբաթը եւ աւարտը՝ Աւագ ուրբաթի չարչարանքը, ուստի Ընթերցումը սկսւում է «Թագաւորաց»-ից, ինչը յայտնի է նրա մեկնութիւնից:

Եւ այսպէս բազում են քառասնորդացի խորհուրդները, եւ պահքը ըստ խորհուրդների չպէտք է լուծուի: Եւ [Բարեկենդանի] կիրակին պահք չէ, որը լուծում են, ինչպէս [այն] երկու օրերը: Եւ ոչ միայն լուծում են Մեծ պահքի սկիզբը, այլեւ իւրաքանչիւր չորեքշաբթի, որ կանոնակարգուած է առաքեալների կողմից, լուծում են ողջ տարուայ ընթացքում եւ ընկնում նրանց անէծքի տակ:

Եւ որ չորեքշաբթին, ինչպէս եւ ուրբաթը ճշմարիտ պահքի [օրեր] են, յայտնի է, քանի որ նախ աւանդուած է առաքեալներից, ինչպէս որ հները պահում էին երկուշաբթին եւ հինգշաբթին[635]. ըստ այդմ՝ ասում է. «Շաբաթուայ երկու օրերը պահում եմ» (Ղուկ. ԺԸ 12): Իսկ նորում առաքեալները փոխեցին չորեքշաբթի եւ ուրբաթ, ինչպէս յայտնի է առաքելական կանոններից, նաեւ՝ Նիկիոյ [ժողովից][636]:

Երկրորդ՝ Մեծ ճգնաւոր Բենեդիկտոսը[637], որ նրանց ազգից է, ասում է. «Պէտք է պահել չորեքշաբթին մինչեւ ժամը ինը»:

Երրորդ՝ սուրբ Եւագրիոսն ասում է. «Ամէն շաբաթ պահի՛ր չորեքշաբթին եւ ուրբաթը»[638]:

Չորրորդ՝ յայտնի է եւ հաստատուած, որ քրիստոնեայ ազգերը պահում են չորեքշաբթին եւ ուրբաթը՝ Խաչելութեան պատճառով, որ սուգ է եւ պահք:

Հինգերորդ՝ [սրա վերաբերեալ] կանոն է սահմանուել եւ հաստատուել Նիկիոյ [ժողովում], Բարսեղից, Եփրեմից եւ այլոց կողմից, որ՝ «Եթէ մէկն անգիտութեամբ միս ուտի չորեքշաբթի կամ ուրբաթ՝ երեք շաբաթ սրբօրէն պահեցողութիւն անի եւ տասը հարուած ուտի, տնանկներին ողորմութիւն [տայ], ապա հաղորդութիւն ստանայ: Իսկ եթէ արհամարհելով առաքելական կանոնները՝ լուծեն չորեքշաբթին եւ ուրբաթը, երեք տարի ապաշխարեն, կրկին քառասուն հարուած ուտեն եւ երեսուն

դրամ տուգանք տան եկեղեցուն: Եւ այն օրը, որ պղծեց, սրբութեամբ մինչեւ մահ պահեցողութիւն անի, ապա հաղորդութիւն ստանայ: Իսկ եթէ ազատ մէկն է եւ չի կարող ապաշխարել, յիսուն դրամ եկեղեցուն տայ, երեսուն դրամ՝ աղքատներին, ապա հաղորդութիւն ստանայ:

Եթէ նոյն չարիքը գործի քահանան՝ չքահանայագործի, այլ եօթը տարի ապաշխարի, ապա եպիսկոպոսի թոյլտուութեամբ մատուցի քահանայութիւնը»[639]:

Ահա այս է չորեքշաբթի եւ ուրբաթ օրերի պահեցողութեան կանոնը:

Իսկ եթէ մէկը չպահի, ինչպէս ֆռանկների ազգը՝ առաքելական եւ հայրապետական կանոնների անէծքի տակ է:

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՀՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԳ

Հարց. Որտեղի՞ց ունենք վկայութիւններ Պահքի մասին:

Պատասխան. Պահքի խորհուրդը նախ դրախտում տրուեց մարդուն՝ ամէն ինչից ուտել, չուտել՝ մէկից:

Դարձեալ՝ Ենովքի պտուղ չուտելը իր ողջ երկու հարիւր տարիների ընթացքում: Եւ դարձեալ՝ Նոյն ու բոլոր կենդանիները մի ամբողջ տարի տապանում էին եւ ոչինչ չկերան, ինչպէս մանուկն արգանդում:

ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅԻ ՄԱՍԻՆ

Իսկ քառասնօրեայ պահքի մասին [ասենք]. նախ Մովսէսը երկու քառասնօրեայ պահեց լեռան վրայ. նրա յետ եւ՝ Յեսուն, որ չկերաւ եւ չխմեց քառասուն ցերեկ եւ քառասուն գիշեր:

Պահեց նաեւ Եղիան:

Դարձեալ, քառասունութ քաղաք-ապաստանները խորհրդանշում են Մեծ պահքի քառասունութ օրը[640]: Դարձեալ, երեք յիսնեակը քանանացիների երկրի երեք քաղաք-ապաստաններն են: Երեք տաղաւարները, ինչպէս Պետրոսն ասաց (տե՛ս Մտթ. ԺԷ 4, Մրկ. Թ 4, Ղուկ. Թ 33) խորհրդանշում են երեք յիսնեակները. մէկը՝ Քրիստոսի, որ Աղուհացիցն է. մէկը՝ Մովսէսի, որ Վարդավառինն է, եւ միւսը՝ Եղիայի, որ Ծննդեան քառասնօրեան է:

ՇԱԲԱԹԱՊԱՀՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսկ շաբաթապահքը բազմաթիւ խորհուրդներ ունի: Նախ՝ արարչութեան շաբաթը սուրբ էր եւ պահք, մինչեւ ստեղծուեց Ադամը եւ լուծուեց պահքը: Երկրորդ՝ դրախտից դուրս գալուց յետոյ հինգ օր սուգ պահեց՝ ծոմով, մինչեւ հրեշտակը յուսադրեց, եւ ապա կերաւ: Երրորդ՝ եօթն օրում կենդանիների հաւաքուելը տապանի դռան մօտ՝ առանց ուտելու, մինչեւ անձրեւ տեղաց եւ եօթ-եօթ մաքուր կենդանիներ [ներս թողեց]: Չորրորդ՝ եօթնօրեայ բաղարջակերքը Եգիպտոսից դուրս ելնելիս: Հինգերորդ՝ բորոտների եօթնօրեայ մաքրուելը եւ բանակատեղիից դուրս լինելը՝ մօտեցողներին չպղծելու համար (տե՛ս Թիւք Ե 2): Վեցերորդ՝ վեց քաղաք-ապաստաններն առանձին: Եօթ-

ներորդ՝ վեց-վեց առաջաւորաց հաց դնելն ըստ շաբաթների: Ութերորդ՝ եօթնական գառ զոհաբերելը տօներին: Իններորդ՝ շաբաթների շաբաթ օրերը, որ հրամայեց պահել: Տասներորդ՝ հինգ օր Քաւութեան տօնը:

Այլեւ տաղաւարահարաց եօթն օրերը նշանակում են շաբաթապահքի սրբութիւնը, որով դառնում ենք տաղաւար եւ բնակարան Աստծոյ: Սա որպէս օրինակ:

Իսկ ճշմարտապէս՝ հինգ զգայարանները մաքրելու համար են, որոնցով մեղանչում ենք. պահքով սրբւում, ապա տօնում ենք սրբերին՝ ի բարեխօսութիւն մեզ:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻԻ ԵՒ ՈՒՐԲԱԹԻ ՄԱՍԻՆ

Իսկ չորեքշաբթին եւ ուրբաթը յատուկ պահելը նախ այն է, որ Մովսէսը հրամայեց պիղծերին՝ լուանալ մարմինները եւ ողողել հանդերձները եւ մինչեւ երեկոյ հեռու մնալ (տե՛ս Ղեւտ. ԺԴ 47):

Երկրորդ՝ ինչպէս ասաց փարիսեցին՝ «պահում եմ շաբաթուայ երկու օրը» (Ղուկ. ԺԸ 12), որ նրանց երկուշաբթին եւ հինգշաբթին էր եւ մեր՝ չորեքշաբթին եւ ուրբաթը:

Երրորդ՝ չորեքշաբթին ի խորհուրդ Եւայի խաբուելուն էր, երբ օձը յորդորեց ուտել պտղից, իսկ ուրբաթը՝ Ադամի պտուղ ուտելը, [ուստի] մենք պահում ենք երկու [օրն էլ]:

Չորրորդ՝ ի խորհուրդ Կոյսի է, որին աւետեց հրեշտակը մեր փրկութիւնը. ուստի պահում ենք չորեքշաբթին եւ ուրբաթը [ի խորհուրդ] Քրիստոսի խաչելութեան, որպէսզի կցորդուենք խաչին:

Հինգերորդ, ըստ անուան [խորհրդի]՝ չորեքշաբթին պահելով չորս չարերից ենք մեզ պահում, որ նշանակում է չորս թիւը, իսկ ուրբաթը մեկնում են որպէս սուգ եւ բոթ[641], ուստի [անհրաժեշտ է] պահել:

Վեցերորդ՝ ըստ թուի [խորհրդի], քանի որ քառանիւթ բնութեամբ ենք մեղանչում, ուստի չորեքշաբթին պահում ենք, եւ վեց շարժումներով ենք կատարում մեղքը[642], ուստի պահում ենք նաեւ ուրբաթը:

Եօթներորդ՝ ի դէմս մեր հոգու եւ մեր մարմնի պահում ենք շաբաթուայ երկու [օրը]:

Ութերորդ՝ որովհետեւ ունենք երկու առաքինութիւն՝ տեսական եւ գործնական. տեսականի համար մաքրում ենք չորեքշաբթին, իսկ ներգործականի համար՝ ուրբաթը, եւ այդ սրբասիրութեամբ՝ Աստծոյ միջոցով հասնում ենք ճշմարտին եւ բարուն:

Իններորդ՝ երկու օրէնք ստացանք՝ հին եւ նոր, ուստի սրբութեամբ պահում ենք երկու օր:

Տասներորդ՝ բանականները երկու տեսակ են՝ մէկը նիւթական, միւսը՝ վերերկրային՝ աւելի վեր, քան երկնային հինգերորդ էութիւնները[643]. նրանց բարեխօսութեան համար պահում ենք չորեքշաբթին եւ ուրբաթը:

Հարց. «Յինանց»-ի ընթացքում ինչո՞ւ չենք պահում ո՛չ ուրբաթը եւ ո՛չ չորեքշաբթին:

Պատասխան. Նախ, ինչպէս որ «Աղուհացի» շաբաթն ու կիրակին պահանջուեց պահեցողութիւն անել, ինչպէս ասուեց վերեւում: Երկրորդ՝ ինչպէս յիսուն օր պահեցինք հոգու համար, յիսուն օր էլ ուտում ենք մարմնի համար:

Երրորդ՝ «Աղուհացից»-ը այս կեանքն է խորհրդանշում, որ սգի մէջ ենք մեղքերի պատճառով, իսկ «Յինանց»-ը Յարութեան խորհրդով է, որ ո՛չ սուգ է, ո՛չ տրտմութիւն, ո՛չ ցաւ:

Չորրորդ՝ առագաստի մանուկներն ենք, եւ Քրիստոս փեսան մեզ յետ է՝ սուգ չենք պահում մինչեւ հեռանայ, ապա պահում ենք, ինչպէս Աւետարանն է ասում:

Ուստի Համբարձումից յետոյ պէտք է պահել չորեքշաբթին եւ ուրբաթը, եւ կամ՝ ինը օրը մինչեւ Հոգեգալուստը:

Այսքանը աղօթքի, եկեղեցու կարգի եւ պահքի մասին:

Իսկ ողորմութեան վերաբերեալ ասուեց երեսուներորդ գլխի առաջին համարում:

ԿԵՐԱԿՈՒՐԻ ԵՒ ՍԵՂԱՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԴ

Հարց. Ի՞նչ է սեղանի օրհնութիւնը:

Պատասխան. Բազում են խորհուրդները:

Նախ՝ ինչպէս մարգարէն է ասում. «Բոլորի աչքերը քեզ վրայ են՝ յուսով» (Սղմ. ՃԽԴ 15), այսինքն, խնդրում են քեզ, մենք էլ ենք խնդրում աղօթքներով, ինչպէս մանուկն է խնդրում, ապա՝ ծնօղը կերակրում:

Երկրորդ՝ աղօթքը հոգու կերակուրն է, իսկ հացը՝ մարմնի. նախ անհրաժեշտ է հոգին կերակրել, ապա՝ մարմինը:

Երրորդ՝ սա Քրիստոսից սովորեցինք, որ նախ Հօրը գոհութիւն յայտնեց, ապա բաշխեց գարու նկանակները, որոնք շատացան. այսպէս էլ Աստծոյ օրհնութիւնը ամենայն ուտելիքի առատութիւնն է:

Չորրորդ՝ որպէսզի մեր ուտելիքը առանձնանայ կենդանիների [ուտելիքից], որ լցնում են իրենց որովայնը՝ առանց օրհնութեան, իսկ քրիստոնեաներինս օրհնութեամբ է եւ շնորհով:

Հինգերորդ՝ քրիստոնեայի մարմինը Աստծոյ մաքրամաքուր տաճար է, ուր ոչինչ պիղծ չի մտնում: Եւ անգամ մաքուր կերակուրը դարձեալ Աստծոյ անունով պէտք է սրբել, որ եթէ նոյնիսկ ինչ-որ կեղտ դրսից խառնուած լինի՝ կալից կամ հնձանից, մեր խղճմտանքով մաքրուի:

Վեցերորդ՝ մեր ուտելիքին եւ ըմպելիքին մեր թշնամին՝ դեւը, բազում վնասակարութիւն է խառնում, ինչպէս նրանք, որ մահաբեր դեղ են խառնում, ուստի խաչի նշանով այն կնքում ենք, որպէսզի փախչեն դեւերը:

Հարց. Ուտելուց յետոյ կրկին օրհնելը ի՞նչ է նշանակում:

Պատասխան. Սա էլ Քրիստոսից սովորեցինք, երբ Վերնատանը ընթրիքից յետոյ օրհնեցին եւ ելան Ձիթենեաց լեռը: Այդպէս էլ մենք ուտելուց յետոյ օրհնութիւն ենք տալիս Աստծուն:

Նախ՝ որովհետեւ մեզ երկու պարգեւ տուեց՝ հոգեւոր եւ մարմնաւոր,

ուստի օրհնութիւն ենք տալիս երկու անգամ:

Երկրորդ՝ կրկնակի մարդ ենք, այսինքն՝ հոգի եւ մարմին, [ուստի] պարտաւոր ենք Արարչին կրկնակի օրհնութիւն տալ: Ոմանք էլ երեք անգամ են օրհնաբանում. սկզբում, մէջտեղը, ուտելուց յետոյ, քանի որ մարդը հոգու, մարմնի եւ մտքի գոյացութիւն է: Ոմանք էլ իւրաքանչիւր պատառի յետ են մտաբերում մահը եւ դատաստանը. մէկական տուն սաղմոս էլ են ասում, որպէսզի ուտելիքը պարկեշտութեամբ ընդունուի եւ միշտ աղօթքից անպակաս լինեն:

Երրորդ՝ կրկին օրհնութիւն ենք տալիս, [որից] առաջինը խնդրելն է, վերջինը՝ գոհաբանելը, ինչպէս աղքատն է նախ խնդրում եւ երբ ստանում է՝ գոհութիւն է յայտնում, նոյն կերպ մենք ենք վարւում, որովհետեւ գոհութիւնը կրկին զօրութիւն ունի. նախ ստանալով պարգեւը՝ հատուցում է եւ դարձեալ պարտաւորեցնում, ինչպէս ասուեց վերը՝ երեսունհինգերորդ գլխի քառասունչորսերորդ համարում:

Չորրորդ՝ ուտելիքի եւ ըմպելիքի վաստակը շատերի աշխատանքով է, պէտք է բոլորի համար աղօթել եւ [դրանով] նրանց չարչարանքը փոխհատուցել:

ԱՂՈՒՀԱՑ ԿՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է Աղուհաց կտրելը:

Պատասխան. Սա էլ Քրիստոսից սովորեցինք, որ խաչանման կտրեց հացը երկու ձեռքով: Յարութիւնից յետոյ այդ սովորութեամբ ճանաչեցին նրան, ըստ այդմ՝ «Նրանց ճանաչել տուեց հացը կտրելով» (Ղուկ. ԻԴ 35): Եւ քրիստոնեայ ազգերս սովորեցինք, որ մի հացը բաժանւում է երկու [մասի], ապա նորից է ձեռքով բաժանւում ու դառնում է խաչ: Եւ խորհուրդն այն է, որ նախ այս խաչով հաղորդւում ենք Քրիստոսի խաչին եւ սուրբ հացին, որ բաժանեց Վերնատանը: Երկրորդ՝ այս կերպ սովորում ենք մեր ամէն ինչն ի սպաս բերել կարօտեալների պէտքերին, միմեանց մեծարել, օժանդակել եւ պատուել սիրով: Երրորդ՝ այսպէս հաղորդւում ենք Վերին Երուսաղէմին, որ երկնքի արքայութիւնն է: Այս պատճառով է, որ քրիստոնեաների յետ պէտք է կիսել հացը, որ հաղորդ դառնանք Քրիստոսի մարմնին եւ բաժին ունենանք երկնքի արքայութիւնից:

ԳԻՆՈՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Հարց. Ի՞նչ է [խորհրդանշում] այն, որ գինի խմելիս օրհնում ենք եւ միմեանց շնորհակալ լինում. [մինչդեռ] այլ կերակրի եւ ըմպելիքի [դէպքում] այդպէս չենք անում:

Պատասխան. Քրիստոնեաներս սա եւս Քրիստոսից ունենք, ինչպէս որ հարսանիքի ժամանակ [Քրիստոս] ջուրը գինու փոխեց եւ օրհնեց: Կամ Վերնատանը բաժակը օրհնեց, որը եւ դարձաւ քրիստոնեաների ըմպելիքը եւ օրհնութեան բաժակը: Եւ երբ ըմպում ենք, յիշատակում ենք Քրիստոսի նոյն օրհնութիւնը:

Եւ սա որեւէ ազգ չունի եւ սովորել են մեզանից: Սրա համար է, որ Սուրբ Եւագրիոսը միայնակեացներին դիմելիս ասում է[644]. «Գինի ամենեւին մի՛ խմիր», ապա դառնալով աշխարհականներին՝ ասում է. «իսկ երբ խմես, օրհնի՛ր Արարչին»: Սա Ստեղծիչն է, որ արարեց ոչնչից, այլեւ գինու օրհնութեան արարիչը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսը:

Եւ խորհուրդը հետեւեալն է: Նախ, որ զատուենք նրանցից, որ ըմպում են մեղքի գինին եւ արբենում ու շուայտանում՝ մեղսագործելու համար: Մինչդեռ մենք չափաւոր ճաշակում ենք օրհնութեան բաժակը եւ ո՛չ չափից դուրս, որ մեղք է ու հարբեցողութիւն: Այդ պատճառով էլ մինչեւ խմելը օրհնում ենք եւ խմելուց յետոյ՝ կրկին շնորհակալ լինում, որպէսզի այն մեղքի կամ մահի չդառնայ:

Երկրորդ, այս կերպ հաղորդւում ենք երկնային գինուն, որ Աստծոյ իմաստութիւնն է, ըստ այդմ՝ «կերէ՛ք եւ խմէ՛ք իմ Հօր սեղանից» (Ղուկ. ԻԲ 30)՝ ասում է մեր Տէրը:

Հարց. Ինչո՞ւ են գինին խմում եւ թափում ննջեցեալների անունով:

Պատասխան. Հեթանոսական սովորութիւն է, որ ննջեցեալի յետ նրա իրերն էլ էին դնում գերեզման, իսկ յետոյ էլ նրանց բաժինը լցնում վրան, այդպէս էլ տանը կամ դրսում յիշատակելիս: Սա սովորութեամբ [շարունակում են] անել, որ չպէտք է անեն, քանի որ յուսահատութեան նշան է եւ հեթանոսի գործ, որովհետեւ քրիստոնեայ ննջեցեալի բաժինը արքայութիւնն է եւ կեանքը՝ Քրիստոս:

Հարց. Ինչո՞ւ յանկարծ հանդիսարանում մի ժամի լռում են:

Պատասխան. Երբ Յովհաննէս Մկրտչի ահագնատեսիլ գլուխը բերեցին Հերովդէսի մարդկանց մէջ, բոլորը սարսափեցին եւ լռեցին: Եւ այս խորհուրդը մնաց ամէն տեղ:

Հարց. Ի՞նչ է նշանակում բաժանել բաժակն ըստ կարգի:

Պատասխան. Նախ, [այն] որ միմեանց նկատմամբ ունենք հաւասարութիւն եւ կարգ, որ առաջինն է, միջինը եւ վերջինը:

Եւ դարձեալ՝ երկնքի արքայութեան մէջ այսպէս ըստ իւրաքանչիւր չափի եւ արժանիքների Աստուած պարգեւում է իմաստութիւն ըստ կարգի եւ ոչ թէ անկարգ, կամ՝ զրկելով, կամ՝ խտրականութիւն դնելով: Յոտնկայս մատռուակը խորհրդանշում է գործի սպասաւոր ծառային, իսկ հանգիստ վայելող բազմածները՝ տէրերին:

Եւ դարձեալ ինչպէս Տէրն է ասում՝ «բազմեցնելու եմ ձեզ իմ Հօր սեղանին եւ ծառայութեան անցնելով» (հմմտ. Ղուկ. ԻԲ 26-27, 30), որին եւ մեզ արժանաւորի Քրիստոս, ամէն:

ԸՆԹՐԻՔԻ ԵՒ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ են ճաշը եւ ընթրիքը:

Պատասխան. Մինչեւ ժամը վեցը կոչւում է կերակուր, դրանից յետոյ՝ ընթրիք:

Եւ ճաշը խորհրդանշում է այս [աշխարհը], ընթրիքը՝ հանդերձեալը:

Եւ դարձեալ՝ ճաշը խորհրդանշում է բարեգործների երեք հասակը, իսկ ընթրիքը՝ վերջին հասակը, երբ արդէն ննջում ենք գերեզմանում:

Հարց. Ի՞նչ է նշանակում բարեկենդանի խորհուրդը, որ ամէն տեղ վանքերում եւ անապատներում սահմանափակ է՝ սակաւ ու չափաւոր ճաշակելու մէջ:

Պատասխան. Ինչպէս հրեշտակն ասաց Եղիային՝ «Արի՛ կեր ու խմի՛ր, քանզի բազմօրեայ ճանապարհ ես գնալու» (Գ Թագ. ԺԹ 7), որ քառասնօրեայ պահքն է: Սրանից է առնուել բարեկենդան կատարելու հրամանը: Եւ ինչպէս լեռան ստորոտին հասնելով, գրաստի բեռը առնելով՝ մի քիչ թողնում ենք արօտավայրում, այդպէս էլ բարեկենդանն է, որպէսզի բարձրանանք] պահոց լեռը:

Եւ խորհուրդն այն է, որ նախ նշանակում է բարեկենդանին ազատ լինելը պահքի նեղութիւնից, երբ ուտելուն ու խմելուն հակադրւում է ծոմը եւ ծարաւը, ծիծաղին՝ սուգը, հեշտութեանը՝ տքնութիւնն ու չարչարանքը եւ այլն:

Բարեկենդանը նշանակում է նաեւ դրախտի կեանքը՝ ամենայն ինչով լիառատ, իսկ պահքը՝ այս կեանքի դժուարութիւնները:

Բարեկենդանը նշանակում է նաեւ հոգու առաքինութիւնն ըստ ամենայնի փարթամացած, իսկ պահքը՝ չարութիւնը, որ պակասեցնում եւ աղքատացնում է հոգին բոլոր բարիքներից, ինչպէս պահքին՝ մարմինը:

ՄԱՏԱՂԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԾԵ

Հարց. Ի՞նչ է [նշանակում] մատաղի օրհնած աղը:

Պատասխան. Մատաղը ստուգաբանւում է [իբրեւ] «մատո՛ աղ»[645]: Եւ աղի օրհնութիւնը կարգեց Լուսաւորիչը[646]:

Մատաղը նախ՝ զոհաբերութիւն եւ նուէր է Աստծուն, ինչպէս մատուցում էին Աբէլը, Նոյը եւ Աբրահամը:

Երկրորդ՝ փրկութեան յոյս է եւ մեղքերի թողութիւն:

Երրորդ՝ աղքատասիրութիւն է եւ ողորմութիւն:

Չորրորդ՝ ննջեցեալների յիշատակի [համար] է:

Նաեւ՝ մատաղը ստուեր եւ օրինակ է ճշմարիտ պատարագի՝ Քրիստոսի, որ Գառն Աստծոյ եւ Պարարակ եզ կոչուեց, ուստի պէտք է մատաղ անել ընտիրը եւ գէրը՝ նախ, որպէսզի Աստծոյ բաժինը ընտիր լինի եւ ոչ անարգ:

Երկրորդ՝ որպէսզի հաճելի լինի, ինչպէս Աբէլինն էր եւ ոչ ինչպէս Կայենինը:

Երրորդ՝ որպէսզի օրինակը նման լինի ճշմարտութեանը, որ պարարտ էր աստուածութեամբ եւ կատարեալ մարմնով:

Չորրորդ՝ քանի որ հոգու եւ հանդերձեալ կեանքի մաս է կազմում, ուստի պէտք է առանձնացնել պատուականը, քան մարմնինն է:

Հինգերորդ՝ ընտիրը մեր աչքի համար էլ սիրելի է, ինչպէս Իսահակը՝ Աբրահամին: Նաեւ՝ ճշմարիտ Պատարագը՝ Քրիստոս նախ կենդանի աղ կոչուեց, որովհետեւ համեմեց մեր անհամութիւնը եւ մեր նեխող վէրքերը մաքրեց: Երկրորդ՝ ողջակիզուեց խաչի վրայ: Երրորդ՝ ընդունելի եղաւ Հօրն անուշահոտութեամբ (հմմտ. Եփես. Ե 2, Փիլիպ. Դ 18): Չորրորդ՝ [որպէս] անմահ կերակուր տուեց իր մարմինը: Հինգերորդ՝ մեղքերի քաւութիւն շնորհեց: Ուստի՝ նախ կենդանուն տալիս ենք օրհնած աղը: Երկրորդ, ողջակիզում ենք՝ հրի վրայ խորովելով: Երրորդ՝ մատուցում ենք անուշ իւղը: Չորրորդ՝ կերակրւում ենք նրանով: Հինգերորդ՝ ազատւում ենք մեղքերից:

Իսկ աղի օրհնութիւնը [անում ենք], որ տարբերուի կռապաշտների զոհաբերութիւնից եւ սովորական մորթից, ինչպէս ցոյց տրուեց քսանմէկերորդ գլխի քառասունհինգերորդ համարում:

Դարձեալ մատաղի չորս յատկութեամբ հարկ է մեր անձերը պատարագել: Նախ, ինչպէս մաքուր կենդանի ենք [ընտրում], մենք էլ սրտով եւ վարքով մաքուր պէտք է լինենք, քանի որ Աստծոյ պատարագը մաքուր սիրտը եւ խոնարհ հոգին է, որ Աստուած չի արհամարհում: Ինչպէս աղն է կենդանուն [լեզուին], այդպէս էլ մեր կեանքի ընթացքում պարտաւոր ենք մեր լեզուի վրայ անընդհատ կրել Աստծոյ օրհնութիւնը եւ փառաբանութիւնը: Երրորդ՝ ինչպէս նրան [տրուող] ողջակէզը, մեզ էլ անհրաժեշտ է զանազան փորձութիւններով եւ նեղութիւններով մեր անձը սիրով մատուցել Աստծուն: Չորրորդ՝ ինչպէս [մատաղի] մի մասը քահանաներինն է, մի մասն էլ՝ աշխարհականներինը, այդպէս էլ մեր մէջ մի մասը բարունն է եւ Աստծունը, մի մասը՝ աշխարհինը, մի մասը՝ հոգունը եւ մի մասն էլ՝ մարմնինը՝ այս եւ հանդերձեալ կեանքում, ինչպէս Սողոմոնն է ուսուցանում. «Տուէ՛ք եօթ, այլեւ ութ բաժինները» (Ժող. ԺԱ 2):

Հարց. Ի՞նչ է [նշանակում]՝ «Լսելիքով հաստատեցիր ողջակէզը», եւ Սամուէլն էլ ասում է. «Լաւ է հնազանդութիւնը, քան զոհաբերութիւնը» (Ա Թագ. ԺԵ 22):

Պատասխան. Ինչպէս լեզուն՝ մտքի եւ ձեռքը՝ սրտի գործիք են, այդպէս էլ ականջը՝ կամքինն է՝ հնազանդուող կամ ոչ: Իսկ Աստծոյ համար հաճելի է կամք տալը, քան զոհ[աբերութիւն]՝ չորս պատճառով:

Նախ լսելով՝ Աստծոյ կամքն ենք կատարում, իսկ զոհաբերելով՝ մերը: Երկրորդ՝ զոհաբերութիւնը կամքի մասն է, իսկ կամքը՝ ամբողջն է: Երրորդ՝ որովհետեւ այն արտաքուստ կենդանու մարմին է, իսկ [կամքը] ներքուստ՝ իր [իսկ] նախաձեռնութեամբ իրեն մատուցում է Աստծուն: Չորրորդ՝ [կամքը] խօսուն եւ բանաւոր զոհաբերութիւն է, իսկ այն՝ անբան զոհ, որ կարգադրեց հների համար, իսկ այս ընտրուեց նորի եւ ճշմարտութեան համար:

Այսքանը մատաղի մասին:

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՅՈՒՅՈՒՄ Պրակ ԾԶ

Հարց. Օրհնութեան այս կարգաւորուածութիւնը ո՞վ է արարել եւ ո՞վ է բերել հայոց մէջ:

Պատասխան. Երանելի Մովսէս Խորենացին, որ սուրբ Սահակ Պարթեւի գրիչն էր, սուրբ Գրիգորից յետոյ հարիւր տասներորդ տարում դարձաւ հայոց լեզուով թարգմանութեան սկզբնաւորողը: Թարգմանութեան երկրորդ տարում սուրբ Սահակը ուղարկեց եւ բերել տուեց Կալի եւ Հնձանի սերմնօրհնէքի [կարգը], որ արարել էր սուրբ Գրիգոր Աստուածաբանն իր հայրապետութեան եօթներորդ տարում:

ՁՐՕՐՀՆԷՔ

Իսկ Ձրօրհնէքի կանոնը սուրբ Բարսեղն է ստեղծել՝ իր հայրապետութեան եօթներորդ տարում, Երուսաղէմում, երբ այնտեղ առիթ եղաւ: Եւ Հայաստան բերեց Խոսրով թարգմանիչը, որ գնացել էր Երուսաղէմ՝ սուրբ Սահակի հրամանով:

ԱՊԱՇԽԱՐՈՂԻ [ԿԱՐԳ]

Իսկ Ապաշխարողներին կարգել ու դարձեալ Աւագ հինգշաբթի օրը արձակելը հաստատել է սուրբ Կիւրեղը՝ սուրբ Սիօնի դռանն՝ իր հայրապետութեան քսանմէկերորդ տարում, եւ Հայաստան են բերել Արջեւան եւ Կորիւն թարգմանիչները:

ՄԱՅՐՕՐՀՆԷՔ

Իսկ Մայրօրհնէքի կարգը [սահմանել է] սուրբ Կիպրիանոս Կարգեդոնացին, որն էլ Ուստիանէ սրբուհի կոյսին, բոլոր հաւատաւոր կանանց մայր հռչակեց:

ԱԳԱՊԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Իսկ ագապը՝ որ հոգեհանգիստն է եւ քահանայի թաղումը, որն տասնութ աւետարանական [ընթերցումն] է, արարուել են սուրբ Եփրեմ Խուրի Ասորու կողմից, Նիկոմիդացուց քաղաքում: Հայաստան է բերել Ղազար թարգմանիչը՝ սուրբ Սահակի՝ Աստծոյ մարդու, թարգմանութեան տասներեքերորդ տարում, որ նախանձախնդիր էր եկեղեցու կարգերին. սա տասներորդն էր սուրբ Գրիգորից յետոյ՝ նրանից հարիւր տասնմէկ տարի յետոյ: [Այս ժամանակ էր], երբ այս ամէնը հաստատուելով նորոգուեց՝ սուրբ Սահակ Պարթեւի հրամանով՝ ի փառս Քրիստոսի՝ Սահակի գրիչ իմ Մովսէսի ձեռքով:

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԵՒ ԱՂՕՐՀՆԷՔ

Իսկ Տէրունականը եւ աղօրհնէքը սուրբ Յոստոսը սահմանեց, որ Յակոբ առաքեալից յետոյ չորրորդ եպիսկոպոսն էր Երուսաղէմում:

Սուրբ Սահակի երկրորդ տարուց մինչեւ տասներեքերորդ տարին այս բոլորն արուեց ի փառս մեր Աստծոյ:

ՍՔԵՄԻ [ԿԱՐԳԸ]

Իսկ սքեմի կարգը [սահմանել է] պամփիլացուց քաղաքի սուրբ Դիոդորոս եպիսկոպոսը՝ իր առաջին տարում՝ մեծ Անտօնի հրամանով՝ երկուսը՝ թեբայեցիների եւ երկուսը՝ սկիւթացիների լեռներում:

ԳՐԱԿԱՐԴԱՑԻ ԵՒ ԱՅԼ [ԿԱՐԳԵՐ]

Իսկ գրակարդացի, եկեղեցու նկարների եւ նշխարը ննջեցեալի յետ դնելու [կարգերը]՝ այս ամէնը մեզ յիշատակ է մնացել մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչից:

ԵՐԷՑՕՐՀՆԷՔ

Իսկ քահանայօրհնէքը սահմանել է սուրբ Սահակը՝ իր եպիսկոպոսութեան առաջին տարում՝ նաւասարդ ամսուայ օրերից մէկում՝ ի յիշատակ սուրբ Կարապետի սահմանելով քահանայօրհնէքը:

ԵՐԻՑԱԹԱՂ

Եւ նաեւ քահանայաթաղէքը, որ եօթն աւետարանական [ընթերցում] ունի, եւ աշխարհական թաղումը [սահմանուեց]՝ Այրարատ գաւառի Վաղարշապատ քաղաքում՝ սուրբ Հռիփսիմէի վկայարանում՝ սուրբ Գրիգորից հարիւր տասնմէկ տարի անց, իսկ մինչ այդ վարում էին հին [կարգով]:

ՔԱՐՈԶ

Սա սահմանուեց գիշերուայ քարոզները եւ նրանց չորս աղօթքները. «Ի վերուստ»-ը, «Գիշերայինը»: «Տէր Տուընջեան» առաջին կանոնը, սրան յաջորդող աղօթքները եւ նրանց փոխելը:

ՀԻՄՆԱՐԿԷՔ

Իսկ սուրբ տաճարի հիմնարկէքը, ժամհարի, սկիհի եւ մաղզմայի օրհնութիւնը[647], կնունքը, խաչօրհնէքը, քառասնորդականի երեք ժամերի քարոզները եւ աղօթքները արարել է Յովհան Մանդակունին, որ սուրբ Գրիգորից յետոյ տասնչորսերորդ [հայրապետն] էր:

Եւ այս էլ պէտք է իմանալ, որ բոլոր կարգադրութիւնների մէջ առաջին աղօթքը հարկ է «Գոհանամք»-ը դնել, սակայն առաւելապէս մեռեալին կնիք դնելու եւ թաղելու ժամանակ, քանզի առաքելական այր Դիոնէսիոսն ասում է. երբ եպիսկոպոսին ասում են, թէ մէկը եկել է, եւ խնդրում է կնքել, նա ձեռքերը վեր բարձրացնելով գոհանում է Աստծուց. նմանապէս, եթէ մէկի վախճանի մասին է խօսւում[648]:

Իսկ աղօթքը, որ Յովհաննէսը ուսուցանեց իր աշակերտներին՝ այս էր.

«Հայր Սուրբ, ուսո՛ մեզ զբան քո:

Որդի Սուրբ, ցո՛յց մեզ զերեսս քո:

Հոգի Սուրբ, սրբութեամբ քո սրբեա՛ զմեզ» [649]:

Իսկ Եփրեմի ներբողեանն էլ այս է ցոյց տալիս, թէ դահիճը բանտում տեսաւ, որ այսպէս էր աղօթում:

Ոմանք էլ ասում են՝ «Օրհնեալ տէ՛ր, որ բնակեալդ ես ի բարձունս»:

Այսքանը մինչեւ այստեղ՝ ներկայիս եւ եկեղեցու կարգերի մասին:

Հարցմանց [գրքի] իններորդ [հատորի համար այսքանը] թող բաւարար լինի՝ ի փառս Քրիստոսի՝ մեր Աստծոյ:

Ամէն:

ՀԱՏՈՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ «[ԳԻՐՔ] ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի

Առաջին՝ ինչո՞ւ Աստուած նախ այս կեանքն է տալիս, ապա հանդերձեալը:

Երկրորդ՝ մարդու եօթը փոփոխությունների, հարստութեան եւ աղքա-

տութեան, հիւանդութեան եւ բժշկութեան մասին:

Երրորդ՝ ճանապարհի եւ սպառուելու [մասին]: Մահուան եւ հոգեվարքի [մասին], թէ ի՞նչ է լինելու:

Չորրորդ՝ հոգու, կարգ կատարելու, պատանքի եւ այլնի մասին:

Հինգերորդ՝ Քահանայաթաղ. նրանց օծումը, ողջոյնը տասական թուով: Գերեզման տանելը: Ճանապարհին երեք անգամ դնելը: Ուղեկիցների [մասին] առհասարակ: Հողի օրհնութիւնը եւ այլն:

Վեցերորդ՝ գերեզմանի մասին եւ հողում թաղելը: Գերեզմանի անուանումը: Գերեզմանի քարը եւ կնքելը:

Եօթներորդ՝ երկրորդ օրուայ մասին. այգալացը՝ տասը խորհրդով:

Ութերորդ՝ երեք օրերի մասին տասը խորհրդով:

Իններորդ՝ «եօթի» մասին. մեռելոց. գերեզման օրհնելը, տուն օրհնելը: Մեծ բարեկենդանին չորեքշաբթի եւ ուրբաթ հանգստանալը:

Տասներորդ՝ հոգիների զանազանուելու մասին, եւ [արդեօ՞ք] ճանաչում են մէկմէկու. գիտե՞ն մեր մասին, աղօթո՞ւմ են մեզ համար: Ինչպէ՞ս են երեւում մեզ, նրանց ուրախութիւնը եւ օթեւանները:

Տասնմէկերորդ՝ որտե՞ղ է բոլոր հոգիների կայանը: Սպիտակ հանդերձանքը եւ այն:

Տասներկուերորդ՝ այն [մասին], որ վախճանին հատուցումն ըստ գործերի է [լինելու], ըստ երեսուն վկայութիւնների:

Տասներեքերորդ՝ վկայութիւններ ախթարմացուց դէմ, եւ նրանց՝ թուով տասնհինգ պատասխանները:

Տասնչորսերորդ՝ այն [մասին], որ չկայ կրակի քաւարան՝ տասնհինգ կէտով:

Տասնհինգերորդ՝ քաւարանի [մասին] վկայութիւններ եւ նրանց պարզաբանումը տասը թուով:

Տասնվեցերորդ՝ հազար տարի սատանային կապելու մասին: Նեռի եւ նրա պատրանքների մասին: Գօգ եւ Մագօգ: Եղիայի եւ Ենովքի գալու մասին:

Տասնեօթներորդ՝ հոգիների առաջին յարութեան մասին: Եւ հազարամեայ արքայութեան:

Տասնութերորդ՝ քսանչորս երէցները, սպիտակ զգեստը, պսակը եւ քնարը:

Տասնիններորդ՝ փողի գոչման մասին:

Քսաներորդ՝ մարմնի յարութեան մասին եւ նրա ձեւերը:

Քսանմէկերորդ՝ միահամուռ յարութիւն առնելու, կերակուրի, գազաններին կեր [դարձած] մարդու մասին:

Քսաներկուերորդ՝ հոգին ճանաչելու եւ մարդու բնոյթի [վերաբերեալ]:

Քսաներեքերորդ՝ սերմերի օրինակի եւ հարսի զարդի վերաբերեալ:

Քսանչորսերորդ՝ անմահութիւն փոխադրուելու մասին:

Քսանհինգերորդ՝ ամբողջութեամբ եւ բոլոր անդամներով յարութիւն առնելու [մասին]:

Քսանվեցերորդ՝ տարիքի վերաբերեալ:

Քսանեօթներորդ՝ [աշխարհի] վերջում ո՞ր մարմիններն են մնալու, որոնք՝ ոչ: Արարածների վերակենդանանալու [մասին]:

Քսանութերորդ՝ երկնքի գալարուելու եւ աստղերի թափուելու մասին:

Քսանիններորդ՝ գալստեան, նրա նշանների եւ վախճանի կրակի մասին:

Երեսուներորդ՝ խաչի երեւալու եւ անապական [լինելու] մասին:

Երեսունմէկերորդ՝ դատաստանի ժամի [վերաբերեալ]: Եւ Հայրը չի դատելու, այլ միայն՝ Որդին:

Երեսուներկուերորդ՝ Աթոռի եւ փառքին նստելու մասին:

Երեսուներեքերորդ՝ որտե՞ղ է լինելու Դատաստանը: Աջ եւ ձախ կողմերի եւ դատի ահագնութեան մասին:

Երեսունչորսերորդ՝ դատաւորները եւ դատապարտեալները: Դատաւորի խօսքի եւ վճռի վերաբերեալ: Ինչպէ՞ս է երեւալու Քրիստոս:

Երեսունհինգերորդ՝ կենաց գիրքը:

Երեսունվեցերորդ՝ վկաները եւ ոսոխները:

Երեսունեօթներորդ՝ Աստծոյ դատաստանն արդար է. յաւիտենական տանջանքի, դատաստանի կշեռքի մասին:

Երեսունութերորդ՝ հնձանի եւ դժոխքի, ծխի մասին, եւ որ անվախճան է կրակը եւ անդադար՝ տանջանքը:

Երեսունիններորդ՝ որքա՞ն է տանջանքների քանակն այնտեղ: Արտաքին խաւարը: Անքուն որդը: Տեսնո՞ւմ են [արդեօք] արդարները մեղաւորներին:

Քառասուներորդ՝ արքայութեան մասին՝ ծաւալուն:

Քառասունմէկերորդ՝ երեսնաւորները, վաթսնաւորները եւ այլն:

Քառասուներկուերորդ՝ այնտեղ բնակուելու, ընտրեալների թուի եւ նրանց լոյսի վերաբերեալ:

Քառասուներեքերորդ՝ նրանց ուրախութեան եւ փառքի մասին:

Քառասունչորսերորդ՝ կենաց ծառը եւ նրա տասներկու պտուղները: Հաւատի վերաբերեալ:

Քառասունհինգերորդ՝ գրքի յիշատակարանը:

Քառասունվեցերորդ՝ Գէորգի հարցումները՝ տասնչորս գլխով:

Եւ այստեղ աւարտւում է Հարցմանց [գրքիս] տասներորդ հատորը՝ ի փառս Քրիստոսի՝ մեր Աստծոյ, յաւիտեանս, Ամէն:

ԳԼՈՒԽ ԼԶ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ [ԿԵԱՆՔԻ] ԵՒ ՄԱՐԴՈՒ ՓՈՓՈԽՈՒԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Պրակ Ա

Այսքանից յետոյ հարց ենք տալու հանդերձեալի վերաբերեալ:

Հարց. Աստուած ինչո՞ւ նախ այս, ապա այն կեանքն է տալիս մարդուն[650]: Եւ ապա՝ պատուականը նախապատիւ է, քան նուաստը:

Պատասխանենք, որ այն ամէնը ինչ արեց եւ անում է Աստուած՝ բարի է եւ յօգուտ մեզ, թէպէտ մենք չենք ընկալում խորհուրդները, ինչպէս տկարատեսը:

Նաւի ղեկը ջրում բեկեալ է թուում, իսկ ցաւ ունեցող գլխին՝ լեռները՝ շարժուող, մինչդեռ նրանք հաստատուն են: Այդպէս էլ սա կարգաբերուած է եւ ճիշտ՝ բազում պատճառներով:

Նախ՝ այն կեանքը անապական է եւ անմահ, իսկ մարդը՝ մահկանացու եւ ապականուող. յարմար չէր լինի, եթէ ապականացուն անապական տեղում բնակուէր. մինչեւ [բնակեցնելը] նա եւս անապականութեան կփոխադրուի:

Երկրորդ՝ այն տեղը անմարմինների համար է, չէր կարող մարդը մարմնով այնտեղ բնակուել, նախ պէտք է հոգով բնակուի, ապա յարմարուելով՝ մտնի նաեւ մարմնով:

Երրորդ՝ երկուսն է մարդունը, այսինքն՝ հոգին եւ մարմինը եւ երկու աշխարհները, այսինքն՝ երկինքն եւ երկիրը: Արդ, նախ մարմնի համար տուեց երկիրը, իսկ յետոյ հոգու համար տալու է երկինքը, քանի որ նախ մարմինն է, ապա հոգին՝ ոչ թէ ժամանակով եւ պատուով, այլ՝ նիւթով եւ զօրութեամբ:

Չորրորդ՝ այնտեղ անփոփոխ է, այստեղ փոփոխական: Արդ, եթէ նախ այն տրուէր, կստացուէր հետեւեալը. [եթէ այնտեղ] մնար անփոփոխ՝ կզրկէր երկիրը: Իսկ եթէ այնտեղից տեղափոխէր երկիր՝ երկինքը կլինէր փոփոխական, իսկ երկիրն անփոփոխ: Իսկ եթէ սրանից էլ փոխէր, անփոփոխ չէր լինի ոչ մէկը:

Հինգերորդ՝ մարդուն անհրաժեշտ էր ժամանակի մէջ աճել, որովհետեւ թուով է կատարելու ընտրեալների վերջնական լրումը, իսկ այնտեղ ժամանակը գոյութիւն չունի, յաւիտենութիւն է: Եւ քանի որ չկայ ժամանակ եւ ոչ էլ ծնունդ, ապա եւ չկայ թուի համալրում, քանի որ մէկը առաջին է, քան բազումը: Ուստի երկրի վրայ բազմանում են թուով, իսկ այնտեղ մտնելու են բոլորը միանգամից, որպէս հրեշտակների բազմութիւն:

Վեցերորդ՝ ամենայն պատուական իր բարձր տեղում է դրուում, ինչպէս գլուխը, որ պատուական մասն է, լուսատուները, երկինքը, քան երկիրը: Եւ բնական է, որ նախ անկատարից բարձրանում են դէպի կատարեալը, եւ ըստ աստիճանի ներքեւն է, ապա ելնում են վերեւ:

Եօթներորդ՝ այստեղ պատերազմի թատերաբեմ է, իսկ այնտեղ՝ յաղթանակի պսակ: Արդ՝ ըստ կարգի առաջ է սերմը, քան պտուղը, նահատակը, քան պսակը, ուստի նրանք, ովքեր այստեղ փորձութեան են հանդիպում, այնտեղ կենաց պսակ են ստանում:

Ութերորդ՝ ինչպէս ողորմած, այդպէս էլ արդար է Տէրը: Արդ, շնորհեց այս կեանքը եւ խոստացաւ միւսը, որ ոչ միայն ողորմութեամբ, այլեւ արդարութեամբ վայելենք, ուստի ոգի ի բռին յափշտակում, եւ շատ նեղութիւններով են մտնում:

Իններորդ՝ առաւելագոյն, ամենահնար գթութիւն է ցոյց տալիս, որովհետեւ մեր եղական բնութիւնն անմեղ չի կարող մնալ, քանզի անեղն է անմեղ:

Ա՛րդ, եթէ երկնքում լինէին մեղանչած՝ չէինք կարող բժշկուել, ինչպէս դեւերը: Ուստի երկրի վրայ մեղանչելով՝

ապաշխարութեամբ դարձեալ կարող ենք ժամանել այնտեղ:

Տասներորդ՝ այն ուշացրեց, որպէսզի աւելանայ փափագը՝ հաւատով եւ յուսով ակնկալելու [այն] եւ ապա դէմ յանդիման կանգնելու, որպէսզի հեշտ գտնուածը հեշտութեամբ չարհամարհուի:

Տասնմէկերորդ՝ նախ այս կեանքը տուեց, որ ցաւերով լիքն է եւ բազմաչարչար, եւ երբ տեսնենք այս անցաւոր կեանքը, այն կեանքի պատուի մեծութիւնը պատկերացնենք:

Տասներկուերորդ՝ եւ մարդասէր է Աստուած, քանզի կամեցաւ Միածնին միաւորել մարմնին եւ մարդանալ աշխարհում եւ նրանով մեզ արժանի դարձնել Վերին գաւառին, ըստ իր անհաս իմաստութեան:

Իսկ որ ասում են նախապատիւ է պատուականը, քան նուաստը, բայց ես կասեմ՝ ատելութիւն եւ անարգանք ցոյց կտար, եթէ նախ պատուականը տար, ապա փոխարինէր նրանով:

Սա փոքրիշատէ՝ ձեզ համար թող իմաստների բացատրութիւն դառնայ, քանզի իմաստունն ասում է. «Իմաստունին պատճառը բացատրի՛ր, եւ նա կդառնայ աւելի իմաստուն» (Առակ. Թ 9):

ՄԱՐԴՈՒ ՓՈՓՈԽՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Բ

Հարց. Քանի՞սն են մարդու փոփոխութիւնները:

Պատասխան. Ընդհանուր՝ չորսը: Նախ ըստ տարրերի՝ ողջութիւն եւ քայքայում: Երկրորդ՝ ըստ տնկականի՝ մանկութիւն եւ ծերութիւն: Ըստ կենդանականի՝ առողջութիւն եւ հիւանդութիւն: Չորրորդ՝ ըստ բանական հոգու՝ առաքինութիւն եւ չարութիւն:

Եւ երեքն էլ մասնաւոր: Նախ ըստ իմացութեան՝ տգիտութիւն եւ գիտութիւն: Երկրորդ՝ ըստ տրամադրութեան՝ տրտմութիւն եւ ուրախութիւն: Երրորդ՝ ըստ արտաքին ունեցուածքի՝ աղքատութիւն եւ փարթամութիւն, եւ բոլորը միասին լինում է կենցաղի եօթը փոփոխութիւն. ըստ Դանիէլի, որ ասում է. «Քեզ վրայ կփոխուեն եօթը ժամանակներ» (Դան. Դ 13):

Եւ իմացի՛ր, այս փոփոխութիւնները հրեշտակները չունեն, քանի որ նիւթեղէն չեն եւ ոչ էլ ժամանակաւոր, այլ աճում են իմացական գիտելիքներով, որը ոչ թէ նրանց փոփոխութիւնն է, այլ իմաստութեամբ աճելը:

Այսպէս էլ յարութեան ժամանակ սրբերը չեն փոփոխուելու, այլ [լինելու են] հրեշտակների հաւասար՝ զերծ փոփոխութիւններից, եւ աճելու են միշտ Աստծոյ լուսափայլ իմաստութեամբ:

Փոփոխութիւնների մէկ այլ՝ չորս եղանակ էլ [նշւում]՝ համաձայն իմաստասէրների. ըստ մարմնի՝ ջերմ եւ սպիտակ, ըստ հոգու՝ բարի եւ չար, ըստ մտքի՝ իմաստութիւն եւ տգիտութիւն, եւ ըստ բովանդակ անձի՝ ողջութիւն ու հիւանդութիւն. եւ սրանցից էլ տալիս են բոլոր համադրութիւնները:

Ա՛րդ, բոլոր փոփոխութիւնների մասին խօսուել է վերը՝ զանազան տե-

ղերում, սակայն ողջութեան եւ հիւանդութեան, հարստութեան եւ աղքատութեան մասին կխօսենք հիմա:

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ ոմանք հարուստ են, ոմանք էլ՝ աղքատ:

Պատասխան. Հարստութիւնը մարդուն չորս կերպ է տրւում: Նախ՝ իբրեւ չարչարանքի հատուցում, ըստ այդմ՝ «Ձեռքի գործերն են հարստացնում» (Առակ. Ժ 4), եւ այս բարի է:

Երկրորդ՝ զրկելով եւ յափշտակելով, եւ այս չար է:

Երրորդ՝ պատահական դիպուածով, եւ այս միջակ է:

Չորրորդ՝ աստուածատուր, ըստ այդմ՝ «Տէրն է աղքատացնում, Տէրը՝ հարստացնում» (Ա Թագ. Բ 7), եւ «իմն են արծաթն ու ոսկին, ում կամենում, նրան էլ տալիս եմ» (Անգ. Բ 8):

Եւ Աստուած հարստութիւնը տալիս է չորս պատճառով: Նախ, եթէ մարդը բարի է, Աստուած ընտրում եւ տալիս է հարստութիւն, որ օգտագործի ըստ կարիքի, եւ այս կեանքով այն կեանքը շահի:

Երկրորդ՝ եթէ չար մարդ է, Աստուած հարստութիւնը տալիս է, որ Դատաստանի ժամանակ պատասխան չունենայ, թէ՝ ինձ ինչ տուեցի՞ր, որ քեզ սիրեմ:

Երրորդ՝ վատ մարդուն էլ է տալիս հարստութիւն, որ եթէ պատահի ճշմարտօրէն դառնայ Աստծուն՝ իր մտքում ասի, թէ՝ ես անարժան էի եւ [սակայն] Աստուած ինձ սա տուեց, [ուրեմն] եթէ նրա պատուիրանները պահեմ, այն կեանքն էլ կտայ:

Չորրորդ՝ նրանց էլ է հարստութիւն տալիս, ովքեր շատ չար եւ մասամբ բարի [գործեր] ունեն, եւ այդ սակաւ բարի [գործերի] համար այստեղ վճարում է, որպէսզի Դատաստանի ժամանակ չակնկալի բարիք, ինչպէս հարուստը, որ այս կեանքում ստացաւ իր բարիքը:

Աղքատութիւնն էլ ըստ բնոյթի չորսի է բաժանւում: Առաջին՝ ծուլութիւնից, ըստ այդմ՝ «ո՛վ ծոյլն է՝ ցնցոտիներ է հագնում» (Առակ. ԻԳ 21): Երկրորդ, ովքեր կամաւոր են աղքատանում՝ յանուն Քրիստոսի: Երրորդ՝ պատահական է լինում: Չորրորդ՝ լինում է Աստծոյ կողմից տրուած:

Եւ սա չորս պատճառով է լինում: Նախ, ոմանց Աստուած աղքատ է դարձնում, որպէսզի հարուստներին արքայութիւն վաճառեն. «Որովհետեւ ով ողորմում է աղքատին՝ Աստծուն է փոխ տալիս» (հմմտ. Առակ. ԺԴ 21, ԺԴ 31), եւ ինքն է հատուցում ողորմածին:

Երկրորդ՝ տալիս է աղքատութիւն եւ փորձում մարդուն, ինչպէս հրով փորձում են ոսկին՝ լա՞ւն է, թէ վատը. այդպէս էլ մարդը համբերող է, թէ՝ ոչ:

Երրորդ՝ լաւ մարդուն աղքատացնում է եւ փորձում՝ ինչքի համա՞ր էր սիրում Աստծուն, թէ՞ աղքատութեան մէջ էլ նոյնն է, ինչպէս Յոբը:

Չորրորդ՝ որի բոլոր գործերը բարի են եւ մի մեղք է գործել, Աստուած նրան աղքատութիւն է տալիս, որ դրանով

չարչարուի եւ այդ մի մեղքն էլ հատուցի եւ միւս կեանքի սուրբ եւ արժանաւոր ժառանգորդ լինի:

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է հիւանդութիւնը:

Պատասխան. Հիւանդութիւնը մարմնի տարրերի անհաւասարակշռութիւնն է. ոմանց շատ, ոմանց էլ՝ քիչ լինելը. տաքութիւն եւ սառնութիւն, խոնաւութիւն եւ չորութիւն:

Հիւանդութիւնը չորս պատճառով է լինում: Նախ՝ անհրաժեշտ պէտքերի անպատրաստութիւնից կամ պակաս լինելուց. կամ՝ օդի վատորակ լինելուց: Երկրորդ՝ ովքեր մեղքի մէջ անզեղջ են՝ Աստուած հիւանդութիւն է տալիս, որպէս խրատ ուղղուելու համար: Երրորդը՝ ընտրեալների հիւանդանալն է, որ իբրեւ փորձութիւն է՝ չարին ամօթանք տալու համար, ինչպէս Յոբինը: Չորրորդ՝ նախախնամութեամբ, որ չհպարտանայ, ինչպէս Պօղոս առաքեալի հիւանդութիւնը[651]: Եւ որպէսզի մարդիկ չսայթաքեն՝ շեղուելով բնութիւնից:

Հարց. Պէ՞տք է բժշկական դեղերով բուժել հիւանդութիւնը, թէ ոչ:

Պատասխան. Այստեղ զանազան ցաւերի համար արարիչն Աստուած զանազան դեղեր կազմեց, ինչպէս արմատներից, ծաղիկներից, պտուղներից եւ այլն: Եւ բժշկութիւնն էլ բազմիցս ժուժկալութիւն է խորհուրդ տալիս անչափ ուտելու դէմ, որովհետեւ այն է հիւանդութիւնների հիմնական պատճառը: Եւ բժշկութեան մէջ պէտք է ապաւինել ոչ թէ դեղին, այլ՝ Աստծուն, որ կարող է բժշկել դեղով եւ առանց դեղի, ինչպէս, երբ մշակը սերմանում է, ոչ թէ գործին, այլ Աստծուն է ապաւինում: Նաեւ չոր թուզ դրուեց Եզեկիայի վէրքերի վրայ եւ ապաքինուեց (տե՛ս Դ Թագ. Ի 7):

Եւ եթէ հիւանդութիւնը բնական է, պէտք է առողջանալ բժշկական դեղով, իսկ եթէ այլ երեք [պատճառով] է, պէտք է քննես քեզ՝ ո՞ր յանցանքն է առաւել շատացել մէջդ՝ պակասեցնես, ո՞ր արդարութի՞ւնն է նուազել մէջդ՝ վերականգնես. այդ դէպքում կլինի հոգու եւ մարմնի բուժում Աստծոյ կողմից եւ ոչ՝ դեղերով:

Դարձեալ հիւանդութեան մասին պէտք է իմանալ, որ [այն] մահուան եւ կենաց միջակէտն է: Եւ չնայած մարդն իր մահուան օրը չգիտէ, այնուամենայնիւ Աստուած երեք միջոց է տուել զգուշանալու եւ մահը զգալու համար:

Նախ՝ մազերի ճերմակելը: Երկրորդ՝ ուժի, տեսողութեան եւ այլնի պակասելը: Երրորդ՝ հիւանդութիւնը: Ահա տեսնելով սրանք՝ մահուան մօտիկ լինելը կիմանաս:

Եւ կեանքի երկարութեան ու մահուան ու [աշխարհի] վերջի մասին չիմանալու վերաբերեալ խօսել ենք վերը՝ նահապետների [վերաբերեալ] գլխի չորրորդ համարում:

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԱՍԻՆ
Պրակ Գ

Հարց. Որո՞նք են ճանապարհները:

Պատասխան. Բազում կերպերով են:

Նախ՝ ճանապարհ է կոչւում ծնունդը, որով գալիս ենք կեանք՝ ըստ մարդու բնորոշ ընթացքի:

Երկրորդ՝ ճանապարհ է կոչւում կուսական եւ անմեղ լինելը, որով մեր Տէրը եկաւ առ մեզ՝ Մարիամի կուսութեամբ. ուստի՝ «Աստուա՛ծ իմ, անբիծ են քո ճանապարհները» (Սղմ. ԺԷ 31):

Եւ անմեղութեան [ճանապարհը], որ չկայ մէկն առանց մեղքի, բացի Նրանից, որ ծնուեց առանց մեղքի, ըստ այդմ՝ «Ծնուելու է նա որպէս հսկայ՝ ընթանալու իր ճանապարհով» (Սղմ. ԺԸ 6):

Երրորդ՝ ճանապարհ են կոչւում շնորհները եւ մաքրութիւնը, ըստ այդմ՝ «Ճանապարհ բացէ՛ք նրա համար, որ երկնքում է» (Սղմ. ԿԷ 34): Եւ՝ «Ճանապարհը, որ աջակողմեան է՝ գիտէ միայն Աստուած» (Առակ. Դ 27):

Չորրորդ՝ ճանապարհ է կոչւում այս կեանքը, ըստ այդմ՝ «Փութով հաշիւդ տուր քո ճանապարհին» (Ղուկ. ԺԲ 58):

Հինգերորդ՝ ճանապարհ է կոչւում հաւատացեալների բարեպաշտութիւնը, ըստ այդմ՝ «Երանելի են նրանք, որ անբիծ ճանապարհ են բռնել» (Սղմ. ՃԺԸ 1):

Վեցերորդ՝ ճանապարհ են կոչւում օրէնքներն ու պատուիրանները, ըստ որի՝ «Պահել պատուիրանները եւ գնալ նրա ճանապարհով», որով ընթանում ենք դէպ Աստուած, եւ Աստուած գալիս է դէպ մեզ, եւ սա արքայական ճանապարհն է:

Եօթներորդ՝ կուրութեան եւ անհաւատութեան ճանապարհը, ըստ այդմ՝ «Նրանց ճանապարհը լինելու է դէպ խաւար եւ գայթակղութիւն» (Սղմ. ԼԴ 6) եւ՝ «Սա նրանց գայթակղութեան ճանապարհն է» (Սղմ. ԽԸ 14):

Ութերորդ՝ անառակ կեանքի ճանապարհն, ըստ որի՝ «Գնալով գնում էին, եւ չար էր նրանց ճանապարհը», եւ սա ձախակողմեան եւ թիւր ճանապարհ է: Սրա վերաբերեալ է ասում՝ «Նեղ է կեանքի ճանապարհը եւ լայն՝ կորստեանը» (Մտթ. Է 13-14):

Իններորդ՝ ճանապարհը է կոչւում եւ մահը, որով մեկնում ենք դէպ հանդերձեալ կեանք, ըստ որի՝ «Ես գնում եմ բոլոր մարդկանց ճանապարհով»:

Տասներորդ՝ փառքի եւ երանութեան ճանապարհ է կոչւում մեր Տէրը, որովհետեւ առաջնորդում է դէպ Հայրն, ըստ որի՝ «Ո՛չ ոք չի կարող գալ Հօր մօտ, եթէ ոչ՝ ինձանով» (Յովհ. ԺԴ 6): Այլեւ [կոչւում է] դուռ, որով մտնում ենք երկինք, ըստ այդմ՝ «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յովհ. ԺԴ 6):

Այսքանն այս մասին:

Հարց. Ի՞նչ են [նշանակում] չորս բառերը, որ ասում ենք՝ պակասած, աւելացած, լցուած եւ օրերով լիալիր:

Պատասխան. Նախ՝ ի դէմս մեզ է [ասւում], որ պակասում ենք մարմնականով՝ աւելանում հոգեւորով: Անցնում ենք երկրով եւ լցնում երկինքը:

Երկրորդ՝ տարիների թիւն է [վերաբերում], որքան երկար ենք [ապրում], անցնում, պակասում է վերին մասը եւ աւելանում ներքեւի մասը, եւ ժամանելով [վերջին] կէտը՝ լցւում է ամբողջը:

Երրորդ՝ ժամանակին է [վերաբերում], որովհետեւ անցեալ մասը աւելանում է, ներկան՝ անցնում, ապագան՝ պակասում, իսկ բոլորն ամբողջանում եւ լցւում է:

Չորրորդ՝ հասակին է վերաբերում, որովհետեւ տարիներն անցնում են, զօրութիւնը եւ ուժը պակասում են, աւելանում սրանց հակոտնեան, լցնում է մահը, եւ դադարում ամէն ինչ:

Իսկ «վախճանեալ» նշանակում է «աւարտուած», այսինքն ինչպէս այն, որ մէկը սկսում է ճանապարհ գնալ կամ մի գործ անել, [ապա] վերջացնելով, ասում է՝ «աւարտուած»: Այսպէս էլ նրանք, ովքեր աւարտում են կեանքի ճանապարհը եւ բարի գործերը, կոչւում են վախճանուած:

Իսկ «լիալիր օրերը» ոչ թէ [ապրած] տարիներին կամ ամիսներին է վերաբերում, այլ սրբերինն է, որոնց բոլոր օրերը լիալիր են բարի գործերով:

ՄԱՀՈՒԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է մահը:

Պատասխան. Մահը հոգու զատումն է մարմնից: Վարդապետներն ասում են, [այնպէս] ինչպէս նրանց միաւորութիւնը կեանք է, այդպէս էլ նրանց անջատումը՝ մահն է: Սողոմոնն ասում է, որ զատուած մարմինը խառնւում է հողին, որից առնուել էր, իսկ հոգին գնում է առ Աստուած, որ տուել էր այն (տե՛ս Ժող. ԺԲ 7): Սա անձի տրոհումն է, իսկ մարմինը՝ ոսկորը, ջլերը եւ այլն քայքայւում եւ խառնւում են հողին:

Սա մարմնի բնութեան կազմալուծումն է:

Եւ կամ՝ մահը ժամանակաւորի փոխուելն է եւ մուտքը յաւիտենականութիւն, որովհետեւ քանի դեռ ժամանակի մէջ էր, հոգին փոփոխումների մէջ էր, իսկ մահը մուտքն է անփոփոխ յաւիտենականութեան, որը յարութեան օրը անփոփոխ միաւորում կստանայ:

Եւ կամ՝ մահը պայքարի եզրափակումն է, քանի դեռ այս կեանքի պատերազմում մէջ են: Եւ մահը սկիզբն է պսակի եւ յարութեան աւարտը, ինչպէս սուրբ Դիոնէսիոսն է ասում՝ բոլոր հոգիները եւ մարմինները վեր կյառնեն յարութեան ժամանակ[652:]

Եւ տե՛ս որպիսութիւնը:

Նախ՝ այստեղ հոգին չարի եւ բարու միջեւ է, իսկ մահից յետոյ՝ միայն բարու մէջ, իսկ յարութիւնից յետոյ՝ բարու եւ փառքի միջեւ:

Նաեւ այստեղ պսակի խոստումն է, մահը սկիզբ է եւ ճանապարհ, իսկ յարութիւնը՝ պսակի կատարումը եւ երանութիւնը:

Եւ այստեղ ըստ հաւատի է, մահից յետոյ՝ յուսով, իսկ յարութեան ժամանակ՝ սիրով:

Եւ այստեղ անփոփոխ հաւատով ենք հաւատում, թերեւս ակնկալելով յոյսի եւ սիրոյ փոփոխութիւն, իսկ մահից յետոյ հաստատուն յուսով տեսնում եւ ուրախանում ենք, ըստ Սողոմոնի՝ «Նրանց յոյսը լի է անմահութեամբ» (Իմաստ. Գ 4), իսկ յարութիւնից յետոյ սերտ եւ անքակտելի սիրով միաւորւում

ենք, ըստ առաքեալի՝ «Հաւատ, յոյս, սէր, եւ սրանց մէջ մեծագոյնը սէրն է» (Ա Կորնթ. ԺԳ 13), որ յաւիտենական է եւ անքակտելի:

Չորրորդ յատկանիշն [այն է, որ] այստեղ հոգին կարող է մեղանչել եւ չմեղանչել, իսկ մահից յետոյ՝ կարող է չմեղանչել: Իսկ յարութիւնից յետոյ չի կարող մեղանչել, քանի որ անկարող է մեղանչել:

Այդպէս էլ մեղաւոր հոգին այստեղ կարող է արդարանալ եւ չարդարանալ: Եւ մահից յետոյ կարող է չարդարանալ: Եւ յարութիւնից յետոյ չի կարող արդարանալ, քանի որ անկատար է, սակայն պէտք է դատապարտել, ինչպէս դեւերի մեղանչումը եւ անկումը, ինչը մահն է եւ դատապարտումը, որ պատիժն է: Որովհետեւ նախ երկնքում մեղանչեցին, ապա գահավիժեցին եւ մահացան, քանզի նրանց անկումը նրանց մահն է՝ ինչպէս ասում է սուրբ Գրիգոր Նիւսացին[653]:

Ապա [աշխարհի] վերջում յաւիտենական հրով կտանջուեն [ինչպէս] ասում է Տէրը: Այսպէս էլ մեղաւոր մարդը այստեղ մեղանչում է, ապա մեռնում եւ բաժանւում է հոգուց, ապա կտանջուի սատանայի յետ՝ յաւիտենական հրով, որ պատրաստւում է նրանց համար:

Այսպէս է ըստ ուղղափառ վարդապետների:

Հարց. Քանի՞ մահ կայ:

Պատասխան. Երկու, այսինքն՝ իմանալի եւ զգալի, ինչպէս եւ կեանքն է իմանալի եւ զգալի:

Արդ՝ իմանալի մահը առաքինութեամբ մարմինը մահացնելն է եւ չարութեամբ՝ հոգին: Որովհետեւ երբ առաքինութեամբ մարմնի ախտերը մեռնում են, զօրանում է հոգին, եւ մարդը դառնում է հոգեւոր եւ աստուածային, ըստ այդմ՝ «մեռէ՛ք եւ ձեր կեանքը պահուած է Քրիստոսի հետ՝ Աստծոյ մօտ» (Կողոս. Գ 3): Իսկ երբ չարութեամբ տկարանում է հոգին, մարմինը զօրանում է, եւ մարդը դառնում է [միայն] շնչող եւ անբան, [ուստի]՝ «Ոչ հոգեւոր մարդը չի կարող ընդունել աստուծոյ հոգին» (Ա Կորնթ. Բ 14),- ասում է առաքեալը:

Իսկ մարմնաւոր մահը չորս տեսակ է. բնական, պատահական, անձնիշխանական եւ նախախնամութեամբ: Եւ սրանք բազմիցս վերլուծել են վարդապետները: [Կարող ես] գտնել նաեւ Քրիստոսին խաչելութեան եւ մահուան մասին [այս գրքի] երեսուներորդ գլխում, քսանչորսերորդ համարում:

ՀԱՐՑ ՀՈԳԵՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Ինչո՞ւ ոմանք երկար են հոգէվարքի [մէջ գտնւում], իսկ ոմանք մեռնում են յանկարծակի:

Պատասխան. Երկար հոգեվարքը երեք պատճառով է լինում: Նախ՝ մարմնի պնդակազմ լինելու պատճառով դժուար են քայքայւում տարրերը:

Երկրորդ՝ ցաւի թուլութեան պատճառով:

Երրորդ՝ Վերին տեսչութեան [կամքով]: Եւ սա պատահում է ե՛ւ բարիներին, ե՛ւ չարերին: Բարիները, որպէսզի քաւեն

անգամ մանր յանցանքները, կամ բազ-մանան պարգեւները: Իսկ չարերինը, որպէս տանջանքների օրինակ կամ թեթեւացում [դրանցից]:

Ինչ էլ որ լինի, Աստուած մեզ խրատում է, որ տեսնենք եւ մտաբերենք մեր մարմնից դուրս գալու օրը: Եւ չորս դժուարին իրողութիւններ կան, ոչ մեր կամքից դուրս են:

Նախ՝ հիւանդութիւնը:

Երկրորդ՝ ալեւորութիւնը:

Երրորդ՝ մահուան օրը:

Չորրորդ՝ դատաստան գնալը:

Եւ քանի որ չենք տնօրինում սրանց, պէտք է զգուշանալ:

Նոյնն էլ յանկարծամահ լինելու [պարագային է]: Կամ ցաւի խստութիւնից է, երբ [ցաւը] վիճակւում է գլխաւորագոյն անդամներին՝ սրտին, լեարդին, ուղեղի թաղանթին: Կամ ինչ-որ տեսիլքի երեւումից: Կամ՝ նախախնամութիւնից, որպէսզի արդարները հեշտութեամբ փոխադրուեն այս կեանքից: Կամ էլ՝ խիստ պատիժ է չզղջացող չարերին, որոնք միանգամից են սատկում:

Հարց. Մերձիմահ գտնուողները տեսնո՞ւմ են կեանքի այն կողմը:

Պատասխան. Երբ սուրբ եւ մաքուր հոգին է հասնում վախճանին, ցնծում է ուրախութեամբ, որ աւարտել է պայքարը եւ [պատրաստւում է] ընդունել պսակը, որին հետեւելու է անփոփոխ կեանքը: Եւ այն ամէնն, ինչ մշուշում եւ հեռուում էր տեսնում, այժմ տեսնում է պարզ եւ մօտիկից՝ բոլոր փառքերը եւ պսակները, որոնք ընդունելու են նրանք Յարութեան օրը, ինչպէս սուրբ Դիոնէսիոսն է ասում[654]: Նախ, որովհետեւ, ասում է համընթաց են վաստակի մէջ հոգին եւ մարմինը, եւ միասին էլ հանգչում են ու պսակ [ընդունում], որ զուգագրուած են յաւիտենական մատեանում, [ուստի] եւ ժամանումն էլ միասին է:

Դարձեալ՝ հոգին եւ մարմինը զոյգ եւ միասին ստեղծուեցին եւ ծնուեցին մարմնաւոր կեանքում, զոյգ եւ միասին էլ մտնելու են հոգեւոր կեանք: Այսպէս է ասում սուրբ Դիոնէսիոսը: Այսպիսին է վախճանը մաքուր եւ սուրբ հոգիների՝ ուրախութեամբ ընթացող դէպի պսակը եւ ազատագրուած մարմնի խաւար բանտից: Ինչպէս նրանք, որ դուրս են գալիս խաւար բանտից եւ ազատուելով՝ տեսնում լոյսը, այդպէս էլ հոգիները բաժանուելով մարմնից՝ [յայտնւում] են լոյսի եւ երանութեան հանգստի մէջ: Այլեւ հաւաքուած սպասում են Քրիստոսի մեծ հարսանիքին եւ վերջին օրուան, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Քեզ են սպասում արդարները մինչեւ հատուցես» (Սղմ. ԵԽԱ 8):

Իսկ երբ մեղաւոր հոգին է հասնում վախճանին՝ տրտմութեամբ եւ ակամայ, ինչպէս սպանդանոց տարուող անա-սունը, այնժամ տեսնում է այլ աչքով, այսինքն՝ մտքով. նախ՝ արդարների երա-նելի կեանքը, որից մեղքերի պատճառով զրկուեց, ապա իր հատուցումը եւ գեհէնի տանջանքը, եւ դառնացած հոգոց է հանում, երեսը այս ու այն կողմ շրջում, սակայն անկարող է թաքնուել: Եւ այսպէս մշտապէս տեսնում է իրեն մերձիմօտ

ցաւը եւ իրենից անբաժան իր չար գործերը՝ մինչեւ յարութեան օրը, երբ կկրի յաւիտենական տանջանքի անդադար պատիժ կրելու վճիռը:

Սակայն տարբեր է մեղաւորի եւ արդարի մահը: Որովհետեւ «արդարի մահը Տիրոջ առջեւ պատուական է» (Սղմ. ՃԺԵ 15), ինչպէս ասում է մարգարէն. «Բազում են արդարների նեղութիւնները. նրանց բոլորից փրկում է Տէրը» (Սղմ. ԼԳ 20):

Իսկ «մեղաւորի մահը չար է» (Սղմ. ԼԳ 22), որովհետեւ չարութեամբ ապրող ոգին չարութեամբ էլ մեռնում է, քանի որ չար կեանքից դէպի չար տանջանք են գնում՝ չունենալով ո՛չ փրկութեան յոյս, ո՛չ օգնական, ո՛չ բարեխօս, ո՛չ ողորմութիւն եւ ո՛չ այլ որեւէ բան, որ ունեն արժանաւորները:

Այլ երբ չար հոգին բաժանւում է չարացած մարմնից, ընդառաջ են գալիս չար հոգիները եւ պատնէշում ճանապարհը, որովհետեւ նրանց գործընկերն ու կամակատարն էր: Հուր են բորբոքում, տանջանքներ կազմակերպում, ցուցադրում ատամների կրճտոցը՝ յաւիտենական տանջանքը, հասկանալու եւ աշխարհի վերջում իր բաժինը տեսնելու համար: Սակայն հոգին տանող հրեշտակը սաստում է նրանց եւ վերցնում-տանում հոգիների կայան, եւ նրա շուրջը հրապարակում պտտւում են կոծողները եւ ողբացողները, իսկ նա ցաւով եւ տրտմութեամբ հեծում է այդ խաւար բանտում՝ մնացեալ խաւարասէր հոգիների հետ, որովհետեւ զգայական լոյսը չի լուսաւորում նրանց, իսկ իմանալի լոյսի շնորհ նրանք չունեն: Եւ տեսնում են մօտ կանգնած պատիժը ու մնում դառնացած տրտմութեամբ եւ սարսռալի երկիւղով յուսահատ, քանի որ առաւօտի մեծ ծագմանը կրելու են իրենց պատիժը՝ համաձայն գործերի:

Եւ ինչպէս արդարները դեռ չեն ընդունել իրենց փառքը, այդպէս էլ մեղաւորներն ամբողջական չեն ընդունել իրենց պատիժը, այլ երկուսն էլ հոգով տեսնում են այն, ինչ յարութեան օրը առնելու են անձամբ՝ հոգով եւ մարմնով, ինչպէս Աւետարանն է ասում՝ «Կլսեն Աստծոյ Որդու ձայնը եւ դուրս կելնեն, ոմանք՝ կեանքի յարութեան, ոմանք էլ՝ դատաստանի» (Յովհ. Ե 29): Եւ առաքեալն ասում է. «Հաստատել է մի օր, երբ դատելու է բոլորին» (Գործք ԺԷ 31): Եւ ինչպէս սուրբ Կիւրեղն է ասում՝ «Դատաստանին կհետեւի հատուցումը, եւ դատաւորի գալուստը կլինի վախճանի վերջին օրը»[655]: Ապա ուրեմն այդ օրը կլինի արդարների եւ մեղաւորների հատուցումը, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում՝ բազում վկայութիւններով:

ՀԱՐՑ ՄԵՌԵԱԼՆԵՐԻՆ ՍԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ Դ

Ի՞նչ է նշանակում սուգն ու կոծը, հանդերձները պատռելը:

Պատասխան. Նախ մեր սրտի ջերմեռանդ բորբոքուած այրումն է նշանակում, որ պատառոտում է օձիքը եւ արտասւում, հառաչանք արձակում եւ աղէողորմ ողբում: Ապա նշանակում է մեռեալից հետոյ մեր ուրախութեան

փոխուելը սգի՝ մերկութեան, սեւ հանդերձների, տան խաւարելուն եւ այլն:

Ցոյց է տալիս նաեւ, որ սիրելիի մահուան հետ կարծէք կցորդւում ենք նրան եւ չարչարւում մարմնով՝ մերկանալով, սովով, ծարաւով, խաւարով, հողով, ինչպէս նա գերեզմանում եղաւ, ոչ միայն մարմնով, այլեւ՝ հոգով, [իբրեւ նա էլ] զուրկ է վայելքներից: Նշանակում է նաեւ ցանկութիւնների բացակայութիւնը եւ պակասութիւնը, քանի դեռ յիշում եւ սգում ենք:

Կայ նաեւ այլ, վերին բացատրութիւն: Սգոյ արարողութիւնը խորհրդանշում է մեր գահավիժելը լուսեղէն կեանքից՝ խաւարի աշխարհ՝ տրտմութեամբ, մահուան վախճանի ցաւով եւ հող դառնալով: Եւ սա պտուղը ճաշակելու [պատճառով] է, որի հետեւանքով էլ չենք ուտում, հանում ենք [լաւ] զգեստները, կտրում մազերը, հող լցնում գլխին, բնակւում խաւարի մէջ եւ այլն:

Իսկ գլխին հող լցնելը [այն է], որ գլուխը միտքն է նշանակում, որ ինքնիշխան եղաւ Աստծոյ հանդէպ եւ հողակեր օձի խրատին հնազանդուելով՝ մահացաւ, ուստի մարդը սգալուց հողը գլխին է լցնում, ինչպէս եւ ննջեցեալի վրայ: Այս մտքով է, որ երբ զղջում ենք մի բանի համար կամ տրտմում, կծում ենք մատը, իբրեւ թէ այսպէս սխալուելը պտուղը ճաշակելու պատճառով եղաւ, քանի որ ձեռքը հասցրեց բերանին: Նաեւ, երբ տխրելիս ձեռքը դնում ենք ծնօտի տակ, ձեռքերը իրար զարկելով, ծնկները, գլուխը, երեսը, կուրծքը ծեծելով ցոյց է տրւում, թէ իբր սիրտը ցանկացաւ, ոտքը ընթացաւ դէպ ծառը, ձեռքը պոկեց, գլուխը խոնարհուեց, դէմքն ամաչեց:

Եւ սա դարձաւ մարդու բնոյթը: Այս է նշանակում մեռելի վրայ սգալը:

Սուգը խորհրդանշում է նաեւ Տիրոջ մերկութիւնը խաչի վրայ, ապտակուած, նախատուած, գամուած, լուսատուները՝ խաւարած եւ այլ բաներ, որ մենք ննջեցեալի վրայ ենք ցոյց տալիս:

Նշանակում է նաեւ մեղաւորների մահը աշխարհի վերջում՝ զրկուած բարութիւնից, որ է լացը, ատամների կրճտոցը, զղջալը, տխրելը, սակայն ոչ մի օգուտ [այդ ամէնից], որովհետեւ անցել է ողորմութեան ժամանակը, դատաւորը դրսում կանգնած է, դժոխքի տանջարանն է սպասում, ինչպէս այստեղ մարմինը՝ գերեզմանը:

ՀԱՐՑ ԿԱՐԳ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է կարգ կատարելը:

Պատասխան. Կարգ է կոչւում, նախ՝ որովհետեւ քրիստոնեաների այս կարգը՝ ննջեցեալների վրայ կատարուողը, ի յաւելումն եօթը խորհուրդների է՝ ութերորդ խորհուրդն ու կարգը՝ ութերորդ շրջանի համար:

Երկրորդ՝ կարգ է կոչւում, որովհետեւ իւրաքանչիւրի համար իր կարգն ենք ստեղծում եւ կատարում, այսինքն՝ այլ է քահանայական կարգը, այլ՝ կրօնաւորինը, այլ՝ աշխարհականինը, այլ՝ մանուկներինը:

Երրորդ՝ կարգ է կոչւում, որովհետեւ այն, ինչ մենք կատարում ենք որպէս

ննջեցեալի մարմնի կարգ, նոյնը կատարում են հրեշտակները հոգիների համար՝ այժմ եւ յարութեան օրը, քանի որ տեսանելիները անտեսանելիների տիպն ու գաղափարն են:

Ա՛րդ, եթէ ննջեցեալը հասարակ ժողովրդից է, հանում են հին հանդերձը, պատում մաքուր կտաւով, գլուխը՝ գլխաշորով եւ սրբիչով, ոտքին՝ կօշիկներ: Տանում են աւագերէցի մօտ, որին սուրբ Դիոնէսիոսը քահանայապետ է կոչում: Նա դնում է [ննջեցեալին] եկեղեցում՝ դռան մօտ եւ աղօթում:

Իսկ եթէ [ննջեցեալը] կրօնաւոր է, իր հագուստներն են հագցնում, մազեղէն [քուրձը], վեղարը՝ ինչպէս որ գրուած է, եւ դնում են եկեղեցու մէջ՝ բեմի ներքեւի [մասում]: Եւ նոյնն են [անում], եթէ քահանայ է՝ զգեստաւորում են ըստ կարգի եւ դնում են բեմի վրայ՝ սեղանի առաջ[656]:

ՊԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Արդ, զգեստները հանելը նախ նշանակում է, թէ աշխարհի կեանքից հեռացաւ եւ հագաւ լուսեղէն զգեստ, որ դրախտում է: Եւ կամ՝ մերկ եկաւ եւ մերկ գնաց՝ մարմնական զգեստից, ինչպէս ասաց Յոբը (տե՛ս Յոբ Ա 21):

Եւ կամ՝ հոգեւորով մերկ եկաւ եւ գնաց սուրբ հանդերձներով զգեստաւորուած: Եւ «պատանք» է կոչւում, որովհետեւ պատում եւ կապում է բոլոր զգայարանները, եւ ոչինչ չի կարող անել՝ ո՛չ չար, ո՛չ բարի: Եւ կտաւը երկրից է եւ արուեստաւոր, որ նշանակում է այն, որ ինչ գործեցինք երկրի վրայ, նոյնով էլ զգեստաւորւում եւ զարդարւում ենք:

Խունկը ռունգերին՝ նշանակում է անուշահոտ վարքը, երեսի բամբակը՝ պայծառ հաւատը, կրօնաւորի գլխի վեղարը, ոտքի կօշիկը, մէջքի գօտին՝ սպառազինուելն ու արիութեամբ պատերազմ գնալը:

Իսկ որ չորսով են բարձրացրած տանում, խորհրդանշում է, որ երկու պահապան հրեշտակներ տանում են հոգին, իսկ երկուսը յարութեան օրը կբերեն երկիր: Եւ ինչպէս հրեշտակները հոգին տանում են Աստծոյ մօտ, այդպէս էլ [այստեղ] մարմինը տանում են քահանայապետի մօտ: Եւ նա դնում է եկեղեցում՝ դռան մօտ, որ նշանակում է երկնքում հոգիների կայանը վերջին տեղից մինչեւ յարութեան օրն է:

ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂ
Պրակ Ե

[Ննջեցեալ] քահանային դնում են բեմի վրայ սեղանի առաջ, կրօնաւորին՝ եկեղեցու մէջ, աշխարհականին՝ դռան մօտ, որ խորհրդանշում է զանազան տեղեր. քահանաները [նշանակում են]՝ սերովբէների եւ քերովբէների առաջին դասը՝ վերին զուարթունները, կրօնաւորները՝ տէրութիւնների վերջին դասը, հասարակ ժողովուրդը՝ հրեշտակաց դասը՝ համաձայն սուրբ Դիոնէսիոսի:

Քահանայաթաղի ժամանակ քահանայապետը իւղը հեղում է [նրա] մարմնի վրայ, այսինքն՝ ճակատին, ձեռքերին եւ ընդհանրական ողջունում են եւ պա-

տանուած մարմինը դնում պատուական տան մէջ:

ՔԱՀԱՆԱՅԻ ՕԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ ենք միայն քահանաներին օծում, եւ ի՞նչ է օծման պատճառը:

Պատասխան. Նախ, որովհետեւ միայն նա օծուեց կարգ ստանալիս:

Երկրորդ՝ որովհետեւ քահանան գլուխն է եւ գլխի օծումը խորհրդաւորապէս իջնում է անդամներին, ըստ այդմ՝ «ինչպէս իւղը, որ իջնում է Ահարօնի գլխին եւ մօրուքին» (Սղմ. ՃԼԲ 2):

Եւ օծւում է բազում պատճառներով: Առաջին՝ ինչպէս Քրիստոս նախ օծուեց իւղով, ապա թաղուեց, այդպէս էլ քահանան, նախ օծւում է, ապա՝ թաղւում: Երկրորդ՝ ցոյց է տալիս, որ ինչպէս մկրտուելիս նախ օծուեց, ապա թաղուեց ջրի մէջ, այդպէս էլ այստեղ նախ օծւում, ապա թաղուեց հողի մէջ: Երրորդ՝ այնտեղ ցոյց է տալիս մարտի ելնել եւ թոյլ չտալ թշնամուն, որ դիպչի նրան, իսկ այստեղ էլ մինչեւ օդային թշնամիների դէմ[657] մարտի մէջ մտնելը նախ օծւում է հոգեւոր իւղով: Չորրորդ՝ ինչպէս այնտեղ մարտի սկիզբն էր եւ այստեղ՝ աւարտը, [այդպէս էլ] ցոյց է տալիս, որ նոյն մարտը ճգնութեամբ անցաւ եւ նահատակութեան վախճանն ընդունեց, ինչպէս այն, որ մարտիկին մրցամարտից յետոյ լուանում են փոշուց եւ օծում:

Հինգերորդ՝ ցոյց է տալիս, որ ինչպէս մարմինն է օծւում քահանայապետի կողմից անուշահոտ իւղով, այդպէս էլ հոգին է զմայլւում Սուրբ Երրորդութիւնը տեսնելով, որովհետեւ քահանայապետը Հօրն է խորհրդանշում, իւղը՝ Քրիստոսին, իսկ անուշահոտութիւնը՝ Սուրբ Հոգուն, որ Քրիստոսով ընծայուեց մեզ:

Վեցերորդ՝ ողջ մարդկութեան յարութիւնը եւ բոլորի փրկութիւնն ու սրբութիւնն է նշանակում, որ հոգով եւ մարմնով է, որի համար էլ նրա հոգու համար աղօթքով սրբութիւն եւ փրկութիւն ենք խնդրում, իսկ մարմինն օծում ենք սուրբ իւղով:

Եօթներորդ, ցոյց է տալիս, որ Սուրբ Հոգին եւ Քրիստոս հանգչում են սրբերի նշխարներում, ինչպէս կեանքում, այդպէս էլ մահուան ժամանակ:

Ութերորդ՝ ցոյց է տալիս քահանայութեան իշխանութիւնը, որ անբաժանելի է նրանից, որովհետեւ դրոշմուած է հոգու մէջ եւ անքակտելի է, որ ունի ինչպէս կեանքում, այդպէս էլ՝ յետմահու:

Իններորդ՝ օծւում է երեք անգամ՝ մկրտուելիս, կարգ ստանալիս եւ թաղման ժամանակ, ինչպէս Դաւիթն օծուեց երեք անգամ՝ Բեթղէհէմում, Քեբրօնում, իսկ եօթը տարի յետոյ օծուեց ողջ Իսրայէլի վրայ:

Տասներորդ՝ նշանակում է վերջին օծումը, որովհետեւ ամէն կարգ, որ մարմնի [համար] ենք անում, ինչպէս ասացինք, հոգունն ու մարմնինն է:

ՀԱՐՑ ՈՂՋՈՅՆԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է ողջունելը բոլորին, նախ՝ քահանայապետին եւ ապա՝ այլոց:

Պատասխան. Նախ մեր անվախութիւնն է ցոյց տալիս մահուան հանդէպ:

Երկրորդ՝ տալիս ենք վերջին ողջոյնը, քանզի հեռու ճանապարհ է գնում:

Երրորդ՝ որովհետեւ կամաւոր եւ ուրախութեամբ ենք ուղարկում Քրիստոսի մօտ եւ ոչ ակամայ կամ տրտմութեամբ:

Չորրորդ՝ ցոյց է տալիս սէրը եւ հաշտութիւնը, որ ունենք նրա հետ, որովհետեւ ինչպէս հոգեւոր սիրոյ մէջ էինք, այդպէս սիրով էլ բաժանւում ենք, եւ եթէ անգամ աննշան քէն ունէինք, ներում ենք միմեանց:

Հինգերորդ՝ փափագում ենք մասնակիցը դառնալ նրա սրբութեան եւ փառքի:

Վեցերորդ՝ միմեանց համար յանձնառութիւն ենք կատարում՝ մենք նրա, նա՝ մեզ, որովհետեւ նա կարօտ է ողջերի աղօթքին, իսկ մենք նրա բարեխօսութեանը առ Քրիստոս, ուստի նա ողջոյն է տալիս բոլոր հաւաքուածներիս, իսկ մենք ողջունում ենք նրան:

Եօթներորդ՝ որովհետեւ սիրելի եւ համբուրելի են սուրբ նշխարները, որ միացան ի Քրիստոս եւ օծուեցին, ու դարձան Քրիստոսի բաժինը:

Ութերորդ՝ ողջունումը ողջոյնն է ամբողջ հոգուն եւ մարմնին, որ անբիծ եւ անարատ են:

Իններորդ՝ ինչպէս Եղիայի հոգին իջաւ Եղիսէի վրայ, այդպէս էլ մենք ողջագուրուելով՝ նրա հոգին եւ շնորհները ընդունում ենք մեր մէջ:

Տասներորդ՝ եւ այսպէս էլ այնտեղ է ողջոյն ստանում հոգին, ինչպէս մարմինն՝ այստեղ, նախ աստուածապետութիւնից, ապա նոյնակարգ սուրբ հոգիներից:

Իսկ ի դէմս նրա յուղարկաւորուածներին օրհնելն [այն է], որ նոյն երկիւղով կան ու սպասում են այն սոսկալի օրուան՝ միշտ մտապահելով եւ պատրաստ գտնուելով սահմանուած ժամանակին:

Իսկ եկեղեցու չորս անկիւններ նրան տանելը վկայում է, թէ չորս աւետարանիչների խրատով շրջեցին եկեղեցով մէկ՝ այն խորհրդով, որ աւետարանեցին աշխարհի չորս ծագերում: Իսկ նախ արեւելեան [կողմ տանելը] ցոյց է տալիս, որ Միածինը Հօր ծոցում ծագեց արեւելքում՝ իբրեւ Արեգակն արդարութեան եւ օգնեց մեզ քրիստոնէութեան անունով, որի համար էլ ասում ենք՝ «օգնութիւն է մեզ՝ Տիրոջ անունից» (Սղմ. ՃԻԳ 8):

Ապա հարաւ [տանելը] այն է, որ հարաւային հողմով Սուրբ Հոգին մեզ՝ հոգեւոր ազգի հաւատացեալներիս համար, գարուն բերեց, որի համար ասում ենք՝ «Երանի՜ ազգին, որին Յակոբի Տէր Աստուածն օգնական է» (Սղմ. ՃԽԵ 5):

Ապա՝ արեւմուտք, որովհետեւ արեւմուտքում է նստում, որ մեր մարդկային սրբութիւնն է եւ քահանայութեան աստիճանի փառքի աթոռը, որի համար ասում ենք՝ «Այնտեղ պատրաստեց Տէրն օրհնութիւնը» (Սղմ. ՃԼԲ 3):

Եւ վերջինը՝ հիւսիս, որ ցոյց է տալիս շնորհը, որ հին Սիօնից հնչեց հեթանոսների եկեղեցում, որի համար ասում ենք՝ «Օրհնելու է մեզ Տէրը Սիօնից» (Սղմ. ՃԻԷ 5):

Իսկ նրան քահանայական [հագուստով] զգեստաւորելը [այն է], որ փակեղն ու վարշամակը գլխին՝ որպէս սաղաւարտ են. բաճկոնն ու փիլոնը՝ որպէս զրահ. գօտին մէջքին՝ ի նշան արիութեան, մաշիկը կամ կօշիկը ոտքին՝ խիստ զինավառուած՝ ընդդէմ օդային թշնամու. անդրավարտիքը հին կարգով, որովհետեւ Սրբութիւն է մտնում, բուրվառ՝ ձեռքին եւ աւետարանական գիրը՝ «Ելայ Հօրից եւ եկայ աշխարհ» (Յովհ. ԺՁ 28) եւ մնացեալը, ի նշան նրա, որ անուշահոտ վարքով եւ աւետարանական խրատներով ընթացաւ նրա կեանքը: Այլեւ գերեզմանի վրայ յանձին նրա կարդում են գրուած ընդհանրական թողութիւնը: Իսկ վարագոյր-ծածկոյթը՝ որպէս թէ Մովսէսի թաղման [ժամանակ] ամպի ծածկելն է, կամ համբարձուելիս ամպի ծածկելը Տիրոջը նրանց աչքերից:

Եւ նրան իջեցնում են գերեզման դասակից [հոգեւորականները], այսինքն եթէ եպիսկոպոս է՝ եպիսկոպոսներ, եթէ քահանայ կամ սարկաւագ՝ [նրա դասակիցները], նմանապէս եթէ աշխարհական է՝ աշխարհականներ:

Այսպէս էլ ըստ կարգի են գերեզմանները՝ եպիսկոպոսների, քահանաների, կրօնաւորների, թագաւորների, աշխարհականների, ինչը ցոյց է տալիս, որ նոյն կերպ էլ լինելու է յարութիւնից յետոյ նրանց հանգիստը՝ համաձայն իրենց կարգի:

Իսկ մարմինը դնել պատուական տան մէջ՝ գերեզմանն է. «Գերեզմանները նրանց տունը կլինեն» (Սղմ. ԽԸ 12), կամ՝ «Մարդը գնաց իր յաւիտենական տունը»[658] (Ժող. ԺԲ 5): Եւ ինչպէս եկեղեցու Հիմնարկէքն է՝ Խաչով եւ Աւետարանով՝ եօթն աստիճան փորուած, ինչը ցոյց է տալիս, որ նրա մարմինը միշտ եկեղեցում է՝ մահուանից յետոյ եւս, ըստ Դաւթի՝ «Երանելի են, որ բնակւում են Տիրոջ տան մէջ յաւիտեանս յաւիտենից» (Սղմ. ՁԳ 5), այդպէս էլ եօթն օր աստիճաններով ծածկում են հողը, որովհետեւ եղաւ եօթն աստիճանաւորների սպասաւոր եւ կատարեց եկեղեցու եօթը խորհուրդները: Եւ ի խորհուրդ կեանքի եօթը դարաշրջանների՝ քահանաներին թաղելիս եօթն օր նաւակատիք են կատարում:

Այսպիսինն է սուրբ քահանաների, կրոնաւորների եւ ընդհանրապէս՝ ժողովրդի թաղման կարգը:

Հարց. Արժանաւոր թէ անարժան, պէ՞տք է [հաւասարապէս] կատարել կարգը:

Պատասխան. Այո՛, պէտք է բոլորինը կատարել: Նախ, որովհետեւ ամենատես Աստուած գիտէ լաւը եւ վատը. ուրեմն մեզ հարկ է ենթարկուել այդ շնորհին եւ կատարել կարգը:

Երկրորդ՝ եթէ արժանաւոր է, կաւելանայ պսակը, եթէ անարժան է՝ տանջանքները կթեթեւանան: Այդպէս էլ բոլոր աշխարհականների համար պէտք է

կատարել իրենց կարգը, որովհետեւ քահանայական աղօթքներով եւ պատարագով կա՛մ պսակներն են աւելանում, կա՛մ նրանց մեղքն է ջնջւում:

Իսկ եթէ մէկն ասի, թէ անմեղ երեխան ի՞նչ պէտք ունի թաղման կարգի, ասենք, որ նրանց աւելի է պէտք, որովհետեւ նրանք ո՛չ չար են գործել, ո՛չ բարի, ո՛չ տանջւում են, ո՛չ պսակի արժանանում, քանզի սրանք են բարու եւ չարի հատուցումները: Իսկ արարողութիւնը, ողորմութիւնը եւ պատարագը նրանց պսակի արժանանալու առիթ են, ուրեմն առհասարակ բոլորին պէտք են քահանայական արարողութիւնները եւ նուիրաբերումները, գերեզման այցելելը եւ մնացեալը:

Սա է [թաղման] կարգի խորհուրդը:

ՀԱՐՑ ԳԵՐԵԶՄԱՆ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Որո՞նք են երեք հանգրուանները եւ ի՞նչ խորհրդով են:

Պատասխան. Նախ այն, որ բերում են քահանայապետի մօտ, երկրորդ, երբ դնում են եկեղեցու մէջ, երրորդ՝ գերեզմանի դռան մօտ. [այս օրինակով է], որ այժմ սովորութիւն կայ ճանապարհին դագաղը երեք անգամ դնել: Նախ նշանակում է երեք հանգիստը. մէկը մարմնի, միւսը հոգու եւ միւսն էլ՝ հոգու եւ մարմնի:

Երկրորդ՝ գոյացել ենք երեք [բանից]՝ մարմնից, հոգուց եւ մտքից, ինչպէս ոմանք են ասում, այս պատճառով ենք երեք հանգիստ տալիս եւ Աւետարան կարդում:

Երրորդ՝ մարդը երեք [բանով] է մեղանչում, այսինքն՝ մտքով, խօսքով եւ մարմնի գործով, ուստի սրանց համար ենք թողութիւն խնդրում:

Չորրորդ՝ երեք ժամանակների մէջ ենք մեղքը գործում՝ անցեալում, ներկայում, ապագայում, ուստի երեք անգամ ենք թողութիւն խնդրում:

Հինգերորդ՝ մարդը երեք հասակ ունի՝ մանկութիւն, երիտասարդութիւն եւ ծերութիւն, որոնց ընթացքում փոխւում է վարքով, եւ սրանց համար էլ երեք անգամ հանգիստ ենք տալիս:

Վեցերորդ՝ մեր կեանքի բնոյթը երեքն է, այսինքն՝ ներկայ կեանքը, յետմահու եւ յետյարութեան, որովհետեւ հիմա կարող ենք մեռնել, մահից յետոյ կարող ենք յառնել, յարութիւնից յետոյ ո՛չ կարող ենք մեռնել, ո՛չ յառնել. ուստի երեք անգամ հանգիստ ենք տալիս:

Եօթներորդ՝ երեքն են սրբերի հանգիստն ու վարձքը, ինչպէս ասում է Տէրը. հարիւրաւոր, վաթսնաւոր եւ երեսնաւոր (հմմտ. Մտթ. ԺԳ 8), ուստի հանգիստ ենք տալիս երեք անգամ, որ սրանցից դուրս չթողնի նրանց:

Ութերորդ՝ Աստուած արդարներին երեք պսակ է տալիս. կուսութիւն, ողջախոհութիւն, ապաշխարութիւն, ուստի երեք անգամ աղաչում ենք, որպէսզի այս պսակներին արժանացնի:

Իններորդ՝ փողի երեք գոչման պատճառով երեք անգամ կարդում ենք Աւետարանը:

Տասներորդ՝ [հոգիները] երեք տեղ ունեն. հոգիների կայանատեղին, դժոխ-

քը, արքայութիւնը, ուստի երեք անգամ խնդրում ենք, որ այժմ բաժանուած հոգին խաղաղութեամբ ժամանի լոյսի օթեւան, որտեղ բոլոր սրբերը սպասում են Փրկչի մեծ հարսանեաց գալստին: Ապա խուսափի դժոխքից եւ պարգեւի երկնքի արքայութիւնը. ամէն:

Հարց. Ի՞նչ է, որ բոլորը՝ այր ու կին, ծեր եւ երեխայ, ննջեցեալի ետեւից գնում են գերեզման:

Պատասխան. Նախ, ցոյց է տալիս, որ բոլորս ընթանում ենք Քրիստոսի առջեւից:

Երկրորդ՝ ննջեցեալը մեր եղբայրն է, որ բազում պատերազմներ ունի տալու, [եւ մենք] օգնական ենք նրան:

Երրորդ՝ հեռու ճանապարհ է գնում՝ երկրից երկինք, յուղարկաւորում ենք մինչեւ գերեզման:

Իսկ չափաւոր արտասուել պարտաւոր է իւրաքանչիւր ոք՝ ննջեցեալ տեսնելիս, ինչպէս արտասուեց Քրիստոս Ղազարի վրայ: Նախ արտասւում ենք մեր բնութեան համար, որ մեղքի պատճառով ինչպիսի դրախտային կեանքից մահկանացու եղաւ եւ հող դարձաւ: Երկրորդ՝ արտասուքով լուանում ենք նրա մեղքերը, որովհետեւ արտասուքը ջերմ ջուր է եւ մաքրարար, ինչպէս ցոյց տրուեց վերը՝ երեսունհինգերորդ գլխում՝ աղօթքի կարգում, քառասունմէկերորդ համարում: Երրորդ՝ արտասւում ենք, որ մեզ էլ է պատահելու: Չորրորդ՝ արտասուքով թողութիւն ենք խնդրում, որ մեղանչեցինք նրա դէմ մարմնաւոր կեանքում, որպէսզի նա ների մեզ մեր պարտքերը:

Իսկ խաչվառը եւ առջեւում ժամահարը՝ նշանակում են հրեշտակապետի փողի վերջին գոչումը, եւ բարձրացուած խաչը՝ ի նշան Քրիստոսի խաչի, որ ծագելու է երկնքի վրայ եւ լցնելու աշխարհի չորս կողմերը:

Եւ [խաչ]վառը նիւթեղէն շոր է, [ինչը նշանակում է,] թէ Խաչը գալու է լուսեղէն ամպի վրայ [բազմած]՝ օդի մէջ վերհառնած ու ցոլացած, որ ակնարկւում է վառվռուն փոքրիկ դաստառակով:

Եւ ինչպէս նրանք, որ հասնելով ծովեզր՝ իջեցնում են նաւի առագաստը, [նոյնպէս սրանք] հասնելով գերեզմանին՝ իբրեւ աշխարհի ծովից ելածներ՝ խոնարհեցնում են [խաչ]վառը:

ՀՈՂՆ ՕՐՀՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եւ երբ դնում են գերեզման, քահանան նախ երիցս ափով օրհնում է հողը եւ նետում գերեզման՝ ասելով. «Օրհնութեան հողը թո՛ղ իջնի Աստծոյ այս ծառայի գերեզմանին՝ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ», երեք անգամ, ինչպէս մկրտութիւնը՝ ջրով:

Մարմինը դնելուց յետոյ դարձեալ օրհնում է հողը՝ ասելով. «Յիշի՛ր, որովհետեւ հող էիր եւ հող ե՛ս դառնալու» (Ծննդ. Գ 19), ապա ժողովուրդը հողով ծածկում է մարմինը:

Իսկ թէ ինչո՞ւ են օրհնում հողը, այս է. Ադամի յանցանքի պատճառով անիծուեց երկիրը նրա գործերով, իսկ քրիստոնեայի սուրբ մարմինը չպէտք է

դնել անսուրբ հող, այլ նախ պէտք է օրհնուի եւ սրբուի Սուրբ Երրորդութեան անունով: Եւ այս իմաստով է, որ նախ օրհնում ենք ջուրը, ապա մկրտում երեխային: Դրանից յետոյ յիշում ենք Աստծոյ հրամայուած պատիժը, որ կատարուեց նրա հանդէպ, այսինքն՝ «Հող էիր եւ հող ե՛ս դառնալու» (Ծննդ. Գ 19):

Հարց. Ինչո՞ւ ենք մեռեալին ոտքերն առաջ տանում:

Պատասխան. Նախ, որովհետեւ մահուամբ յետ ենք դառնալու, այսինքն՝ դրախտ եւ մեր մօրը, ուստի նախ պէտք է ոտքը գնայ: Երկրորդ՝ որովհետեւ Քրիստոսով վերականգնուեց մեր ընկած բնութիւնը, որի պատճառով էլ մկրտութիւնը կատարում ենք ուղիղ՝ գլուխն ի վեր եւ ոչ թէ արիոսեականների նման՝ ի վայր: Նոյնպէս գերեզման ուղղուած ենք տանում:

Իսկ ննջեցեալի դէմքը դէպի վեր լինելը, նախ նշանակում է, որ առ Աստուած սպասելիքներ ունենալը:

Երկրորդ՝ այլեւ ցանկութիւն [ունենալը] վերին Երուսաղէմ՝ երկինք [գնալու]:

Երրորդ՝ մարմինը խաչաձեւ է դրւում գերեզման, ձեռքերն էլ խաչաձեւ՝ սրտին: Իսկ երեսը եւ գերեզմանը ուղղուած են արեւելք, նախ՝ ակնարկելով դրախտը, որից արտաքսուեց մարդը: Երկրորդ՝ ակնարկելով Փրկչին, որ գալու է արեւելքից, ըստ այդմ՝ «Ինչպէս փայլակն է արեւելքից, այդպէս էլ մարդու Որդու գալուստը կլինի» (Մտթ. ԻԴ 27): Երրորդ՝ եկաւ լոյս հաւատով եւ հաւատի լոյսով էլ գնաց փառքով առ Աստուած, որովհետեւ արեւելեան կողմում լոյս է:

ՀԱՐՑ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԵՒ ԹԱՂՄԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Զ

Հարց. Ինչո՞ւ ենք ննջեցեալին թաղում:

Պատասխան. Նախ՝ մեծարում ենք մարդուն, որ Աստծոյ պատկերն է, եւ պահում ենք մարմինն իբրեւ պատուական գանձ: Երկրորդ՝ որ չտեսնենք մարմնի գարշահոտութիւնը, եւ ինչպէս կեանքում ենք զգեստով ծածկւում, այդպէս էլ մահուան մէջ՝ հողով: Երրորդ՝ որ կոխան չլինի եւ կերակուր գազաններին՝ իբրեւ անասունի մի լէշ: Չորրորդ՝ որպէսզի մեր փողոցները եւ տները չդառնան մեռելների գերեզմանատուն, ուստի թաղում ենք նրանց: Հինգերորդ՝ որպէսզի զազիր հոտերից եւ որդերից չգարշենք եւ շէները աւերակ դարձնենք: Վեցերորդ՝ ինչպէս կեանքով փոխուեց, այդպէս էլ փոխուեց տեղով, որովհետեւ ողջերը ապրում են երկրի վրայ, իսկ մեռեալները՝ հողի տակ: Եօթներորդ՝ որպէսզի ողջերն անընդհատ չտեսնեն նրանց եւ նրանց սրտերը չմորմոքուեն: Ութերորդ՝ որպէսզի ամէնօրեայ հոգսերը դատարկ չթուան, երբ միշտ տեսնեն մեռեալներին: Իններորդ՝ որպէսզի չպաշտեն մեռեալ սիրելիների դիերը, որը սկիզբ դարձաւ պատկերապաշտութեան, երբ սիրելի զաւակների պատկերները ստեղծեցին եւ պաշտեցին (տե՛ս Իմաստ. ԺԴ 15): Տասներորդ՝ թաղելը յարութիւն է նշա-

նակում, ինչպէս թաղուած սերմը կենդանանում եւ բուսնում է, այդպէս էլ՝ մարդու մարմինը, ինչպէս ասում է առաքեալը՝ «Սերմանւում է տկարութեամբ եւ հասնում զօրութեամբ» (Ա Կորնթ. ԺԵ 43), այդ պատճառով էլ թաղում ենք նրանց:

Հարց. Ինչո՞ւ ենք հող լցնում եւ ոչ այլ նիւթ:

Պատասխան. Նախ, որպէսզի դատապարտութեան պարտքը վճարեն, ինչպէս ասաց Ադամին՝ «Հող էիր եւ հող ե՛ս դառնալու» (Ծննդ. Գ 19):

Երկրորդ՝ որովհետեւ հողն առաւելագոյնս մեր մայրն է, քան այլ տարրերը, որ ծածկում է մեր գարշութիւնը, ինչպէս մայրը՝ մանկանը, ուստի կարեւոր է, քան մնացեալը:

Երրորդ՝ մարմինը փոխւում է հողի՝ մինչ հոգին հաստատւում է անապական եւ անփոփոխ խոկութեան մէջ, ուստի մարմինն էլ հոգու հետ անապական եւ անփոփոխ կմնայ:

Չորրորդ՝ մարմինը հանգչում է հողում, իսկ հոգին՝ հոգիների կայանատեղում, որպէսզի յարութիւնից յետոյ միասին պսակադրուեն եւ փառաւորուեն:

Հինգերորդ՝ մարմինը դրւում է հող, մինչեւ քայքայուող տարրերը անապականութիւն ստանան. ըստ Պօղոսի՝ «Արարածներն ազատագրուելու են ապականութեան ծառայ լինելուց» (Հռոմ. Ը 21), ապա մարմինն անապական եւ հոգին՝ անփոփոխ կմնան յաւիտեան՝ նմանուելով Քրիստոսի անապական եւ անփոփոխ մարմնին:

Այսքանը սրբերի մարմնի մասին էր:

Իսկ վեցերորդ պատճառը, որ առհասարակ բոլոր մարդկանց է վերաբերում, այն է, որ հողից սկսուեց եւ դարձեալ հողում է վախճանւում մարմինը, չնայած հողի մէջ նաեւ այլ զօրեղ տարրեր կան:

Եօթներորդ՝ հողը տարրերի մէջ ստորնագոյնն է, ուստի այնտեղ է դրւում մարմինը:

Ութերորդ, հողի որակը խաւար է ու սեւ եւ չունի պայծառութիւն, ինչպէս միւսները. «Ինձ նստեցրեց խաւարի մէջ, ինչպէս յաւիտենական մեռեալ» (Սղմ. ՃԽԲ 3),- ասում է Դաւիթը:

Իններորդ՝ երկիրն անշարժ է տեղադրութեամբ, որովհետեւ այն անուանում են «կիբիկոն»[659], որ ցոյց է տալիս, թէ մեռեալ մարմինն ամբողջութեամբ զուրկ է կենդանական շարժումից:

Տասներորդ՝ քանի որ հողն օձի կերակուրն է (տե՛ս Ծննդ. Գ 14), պատժեց մարդուն եւ նրան տուեց օձին իբրեւ կերակուր, ուստի եւ հողում ենք թաղում:

Հարց. Ի՞նչ վտանգ կայ, եթէ արդարն օրհնուած հողում չթաղուի:

Պատասխան. Ոչ մի, որովհետեւ Քրիստոսի գերեզման դրուելուց յետոյ ողջ հողն օրհնուեց, որ Քրիստոսի արեան գինն էր: Այլեւ ողջ աշխարհը Աստծոյ տաճարն է՝ թէ՛ դաշտում, թէ՛ ագարակում, թէ՛ տիղմի մէջ, կա՛մ ջրում սուզուած, կա՛մ պատառոտուած գազանից, կա՛մ ձկնակուր եղած, արդարութեանը ոչինչ չի վնասում:

Հարց. Իսկ ի՞նչ օգուտ է օրհնեալ տեղում թաղելը:

Պատասխան. Նախ՝ այնտեղ թաղուած սրբերից օգնութիւն են ստանում նրանց գերեզմանակիցները: Երկրորդ՝ նրանց սիրելիները, երբ հաւաքւում են այնտեղ, տօնում եւ յիշում են նրանց՝ Աստծուն յղած աղօթքներում:

Հարց. Չարերի օրհնեալ տեղում թաղուելը օգո՞ւտ է նրանց:

Պատասխան. Ո՛չ: Այլ աւելի վնաս է նրանց, որովհետեւ բազմիցս դեւերի ձեռքով դուրս են նետւում նրանց մարմինները: Իսկ թէ ինչո՞ւ եկեղեցում չենք թաղում, ասացինք վերը՝ երեսունհինգերորդ գլխի երեսունհիններորդ համարում:

ԳԵՐԵԶՄԱՆԻ ԱՆՈՒԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է [նշանակում] «գերեզման»:

Պատասխան. «Գիր իմ», կամ «գերւոյ աման», կամ «գերէ զամէն»: Պարսկերէն բառ է, որ նշանակում է՝ «հողի տակ»[660]:

Իսկ «շիրիմ»՝ [նշանակում է] «յիշատակ» այն տեղի, ուր ազգի մեռեալներն են դրւում: Կամ ստուգաբանւում է թէ՝ «այստեղից եմ շարժւում», կամ՝ «շինիմ», որովհետեւ մարմինը յարութեան օրը [այստեղից է] շարժուելու եւ «շինուելու»[661]:

Իսկ «դիրք» է կոչւում[662], որովհետեւ մարմինը նրա մէջ է դրւում իբրեւ մի անօթի մէջ: Այլեւ «դիրք» է, քանզի տեղն է մատնանիշ անում: Իսկ «դամբարան», այսինքն՝ պահարան, որովհետեւ դարձեալ վերցուելու է այնտեղից, ինչպէս եւ դրուեց: Եւ «պահում է», որպէսզի գազաններին կեր չդառնայ, ջրից չքայքայուի, քամուց չքշուի եւ այլ բաներից պաշտպանուի: Այլեւ՝ «գանձարան» է մարմնի, որովհետեւ պահում եւ նորից Տիրոջն է տալիս:

Իսկ կոչւում է «հանգիստ», նախ որովհետեւ հանգիստ առաւ մարմնի չարչարանքներից, այլեւ՝ չար գործերից: «Հանգիստ» է, որովհետեւ այն, ինչ մինչ այժմ արդարութեամբ ժողովել է, հիմա կամենում է վայելել:

Հարց. Ինչո՞ւ է գերեզմանը «դժոխք» կոչւում, որպէս Դաւիթն էր ասում՝ «արեամբ կիջեցնես Սիմէին դժոխք» (Գ Թագ. Բ 9):

Պատասխան. Նախ, որովհետեւ նեղ եւ անձուկ է, քանի որ դժոխքը «դժուար եւ նեղ» է նշանակում[663]: Երկրորդ՝ որովհետեւ շուրջ բոլորը վիշտ է: Երրորդ՝ այստեղ կրում է առաջին պատիժը, հող է դառնում գեղեցկայարմար շինուածքը: Իսկ տանջանքների տեղը, որտեղ Բելիարն է նստում, «ներքին դժոխք է» (Սղմ. ՁԵ 13) անուանում մարգարէն. որը Քրիստոս աւերեց, սակայն վերակառուցում են մեղսասէրները[664]:

Եւ սրանք զանազանւում են, նախ որովհետեւ սրանից դուրս ենք ելնելու, նրանից՝ ոչ: Երկրորդ՝ այստեղ միայն մի տանջանք է, այնտեղ՝ բազում եւ բազմապիսի: Երրորդ՝ այստեղ միայն մարմինն է տանջւում, այնտեղ՝ մարմինն ու հոգին:

ԳԵՐԵԶՄԱՆԻ ՔԱՐԸ

Հարց. Ի՞նչ է գերեզմանաքարը:

Պատասխան. Նշանաքարերը երկու ցոյց են տալիս բաժանուած հոգին ու մարմինը: Դարձեալ ցոյց է տալիս ննջեցեալի մարմնի հասակը: Դարձեալ պահապան հրեշտակի օրինակով է, որ մէկը նստել էր Տիրոջ գերեզմանի վերեւում, միւսը՝ ոտքերի տակ (տե՛ս Յովհ. Հ 12), քանի որ հրեշտակները խաչածեւ երեւացին Տիրոջ գերեզմանի մօտ:

Իսկ տապանաքարը, նախ, որպէսզի այդ հողը չօգտագործուի այլ գործի համար, կամ [նորից] փորուի ուրիշ ննջեցեալի համար: Երկրորդ՝ անպտուղ քարը խորհրդանշում է ննջեցեալի անգործութիւնը: Երրորդ՝ եւ ինչպէս այն քարն է անպիտան գործի համար, այդպէս էլ ննջեցեալն անպիտան է աշխարհի համար: Չորրորդ՝ անշարժ է քարը, որ ցոյց է տալիս անշարժ ննջեցեալին, ուստի խաչակնքելով ասում ենք՝ «անշարժ լինի»: Հինգերորդ՝ քանի որ նախահայրերի գերեզմանն էլ քարից էր՝ Աբրահամինը, Իսահակինը, Յակոբինը, նաեւ՝ Տիրոջ գերեզմանը եւ վէմ-կափարիչը, ուստի մեր տապանաքարն էլ պէտք է քարից լինի, որ խորհրդանշում է անապական յարութիւնը, որ լինենք վիմածին եւ առանց ապականութեան, ինչպէս Քրիստոս, այլ ոչ թէ հողածին ապականացու, ինչպէս առաջին Ադամը:

Հարց. Ի՞նչ է [նշանակում] խաչով եւ աւետարանով անշարժօրէն գերեզման կնքելը:

Պատասխան. Երիցս գերեզմանը կնքելը՝ նախ Սուրբ Երրորդութեան խորհրդով է, ապա՝ իբրեւ հոգու, մարմնի եւ շնչի պահապան: Այլեւ՝ մտքի, խօսքի եւ գործերի մեղքերի քաւութեան [համար է]:

Եւ այս երկու պատճառով է:

Նախ՝ որ այն չսասանի չար ուժը, ինչպէս անհաւատների մարմինը: Ապա ցոյց է տալիս, որ այսպէս էլ նրա հոգին անշարժ կայ եւ կմնայ յաւիտենական փառքի եւ մշտնջենաւոր հանգստի մէջ, ամէն:

Այսքանը [թաղման] կարգ կատարելու առաջին օրուայ մասին:

ՀԱՐՑ ԵՐԿՐՈՐԴ ՕՐՈՒԱՅ ՄԱՍԻՆ
Պրակ է

Հարց. Ի՞նչ [խորհրդով] են երկրորդ օրը դարձեալ գալիս գերեզման:

Պատասխան. Մարգարէն ուսուցանում է մեզ, որ սգի չափը մինչ երեկոն է, եւ առաւօտն ուրախութիւն է. «Երեկոյեան լացը կդադարի, իսկ առաւօտեան ուրախութիւն կլինի» (Սղմ. ԻԹ 6):

Եւ ինչպէս նախ իւղաբեր կանայք եկան գերեզման եւ տեսան յարութիւն առած Քրիստոսին, ապա՝ առաքեալները, այդպէս էլ երկրորդ օրը, նախ պէտք է կանայք գան գերեզման, ապա՝ տղամարդիկ, որպէսզի հոգեւոր տեսակցութեամբ ուրախանան:

Եւ քանի որ նախորդ օրը ննջեցեալի պատճառով մեծ կոծով ողբացինք, եւ այն դժուար էր Աստծոյ համար, ուստի այսօր

թեթեւացած ենք գալիս գերեզման եւ գոհանում Աստծուց:

Եւ ինչպէս սերմը թաղելով հողում՝ յետոյ ոռոգում ենք, այդպէս էլ այս բանական սերմը երէկ թաղեցինք հողում, իսկ այսօր հոգեւոր ջրով ոռոգում ենք, որպէսզի գարնանաշարժ յարութեան ժամանակ նորից ծլարձակի:

Կամ ինչպէս բժիշկն է դեղ տալիս հիւանդին եւ միւս օրը հարցնում [որ-պիսութիւնը], այդպէս էլ մենք նախորդ օրը կենաց հոգեւոր դեղը տուեցինք ննջեցեալին, իսկ այսօր հարցնում ենք որպիսութիւնը:

Եւ ինչպէս երէկ թաղման խորհուրդն էր, այս առաւօտ յարութեան խորհուրդն է՝ վերջին առաւօտի:

Եւ արեգակի ծագելը մեր ծնուելն է նշանակում, իսկ մայրամուտը՝ մահը, իսկ այս առաւօտը՝ բոլորի յարութիւնը:

Դարձեալ երկուսն է կեանքը՝ ներ-կան եւ եկողը, երկու անգամ էլ մենք սխալուեցինք, ուստի կրկին անգամ ենք գալիս եւ թողութիւն խնդրում:

Եւ երկուսն է նաեւ մահը՝ հոգու եւ մարմնի, որովհետեւ մեղքերով էլ հոգին է մեռնում դժոխքում, ինչպէս մարմինը, ուստի երկու անգամ ենք գալիս եւ աղօթում:

Դարձեալ բոլոր մեղքերին պատիժ կայ. այլ է մեղքը եւ այլ՝ պատիժը, որ հետեւում է մեղքին, որովհետեւ մեղքը կատարելն է, իսկ պատիժը՝ կրելը, ուստի երէկուայ օրը մեղքի համար խնդրեցինք, այսօր՝ պատժի:

Դարձեալ գիտութեամբ եւ կամաւոր ենք գործում մեղքը, այլեւ մեղքով է մարդը կապւում երկրում եւ երկնքում, ուստի կրկին անգամ երկու մեղքերի եւ կրկնակի կապանքների արձակումն ենք խնդրում:

Եւ երկուսն է մարդու օրը, չնայած երկար է ապրում, այսինքն ծննդեան օրը եւ մահուան օրը. մէկով մտնում ենք աշխարհ, միւսով՝ ելնում աշխարհից, քանզի այս կեանքը երկդռնանի քաղաք է՝ մէկով մտնում, միւսով դուրս ենք գալիս, ուստի կրկին անգամ ենք գալիս գերեզման:

ԵՐՐՈՐԴ ՕՐՈՒԱՅ ՄԱՍԻՆ
Պրակ Ը

Ննջեցեալների յիշատակի երրորդ օրն էլ բազմաթիւ խորհուրդներ ունի: Նախ երեք թիւը խորհրդաւոր է, որ ունի սկիզբ, մէջ եւ աւարտ: Եւ ամէն բան, ինչ աշխարհում է՝ սրանից դուրս չէ՝ ո՛չ ժա-մանակաւորը, ո՛չ կեանքը, ո՛չ էլ մեր փոփոխութիւնները:

Երկրորդ՝ մարդու բոլոր օրերը երեքն են, այսինքն ծննդեան օրը, սնուելու եւ մահուան օրը:

Երեքն են նաեւ մեր փոփո-խութիւնները. նախ անէութիւնից գալիս ենք գոյութեան, գոյութեան ընթացքում անվերջ փոփոխւում ենք ըստ հարկի, իսկ յետոյ մարմնով գոյութիւնից փոխւում ենք անէութեան: Այս երեք փոփո-խութիւնները Աստծուն [բոլորովին չեն վերաբերում], քանզի նա ամենեւին անփոփոխ է, իսկ հրեշտակներին վե-րաբերում է մէկը, որովհետեւ նրանք

անէութիւնից եղան, իսկ միւս երկուսը չունեն: Մինչդեռ դեւերը երկուսն ունեն, քանզի անէութիւնից եղան եւ փոխուեցին բարուց չարի, [ուստի] չունեն մէկը: Իսկ մարդը երեքն էլ ունի, ուստի երեքօրեայ յիշատակ ենք կատարում:

Երրորդ՝ երեքն են հոգու տեսակները. տնկական, զգայական, բանական. սրանցով ենք մեղանչում: Եւ երեքն են տնկականի զօրութիւնները, այսինքն կերակրուելը, աճելը, ծնուելը, որոնք մենք ունենք: Երեքն են նաեւ բանական հոգու զօրութիւնները. միտքը, ցասումը, ցանկութիւնը: Երեքն է նաեւ մեղքի թողութիւնը, այսինքն՝ զղջում, խոստովանութիւն, ապաշխարութիւն, որ իրականացուում են մտքով, խօսքով, գործով:

Չորրորդ՝ մարմնական [կեանքում] հարսանիքը երեք օր է տեւում, իսկ մաքուրները հոգեւոր հարսն են Քրիստոսի. հաւատը նրանց նշանադրութիւնն է, բարի գործերը՝ զարդերը, իսկ մահը հարսանիքը, երբ յարութեամբ սիրով կմիանան Քրիստոս փեսային եւ կմտնեն առագաստ, ինչպէս իմաստուն կոյսերը:

Հինգերորդ՝ Քրիստոսի թաղումից երեք օր յետոյ եկան առաքեալներն ու կանայք եւ տեսան Քրիստոսին յարութիւն առած. այս խորհրդով էլ [երրորդ օրը] գալիս ենք ննջեցեալների գերեզման եւ յարութեան աւետիսը տալիս նրանց եւ հոգեւոր տեսակցութեամբ ուրախանում:

Վեցերորդ՝ Աստուածածին Կոյսի Վերափոխումից երեք օր անց դադարեցին հրեշտակների ձայները, եւ երբ բացեցին գերեզմանը, սուրբ մարմնի տեղը թափուր գտան, որովհետեւ Աստուած նրան վեր տարաւ մի տեղ, որն ինքը գիտէ, ուստի երեք օր յիշատակ ենք կատարում եւ գերեզման գալիս:

Եօթներորդ՝ այս երեք օրով նշանակուեցին այն երեքը, որ նախքան լուսատուներն էին, երբ անմարմին լոյսն էր սփռուած երկնքում եւ լուսաւորեց մինչեւ երեկոյ եւ դրախտում ամփոփեց նաեւ գիշերը: Այսպէս էլ մարմնից բաժանուած հոգին ընթանում է երկնքով եւ ամփոփուում հոգիների լուսաւոր օթեւանում, մինչեւ կրկին միաւորուի մարմնին եւ իբրեւ պայծառ արեգակ ծագի Քրիստոսի հետ:

Ութերորդ՝ այս երեք օրերը խորհրդանշեցին Իսահակին զոհաբերելու օրերը, որովհետեւ հայր Աբրահամը փայտը եւ սուրն առած՝ երեք օր անց հեռուից նշմարեց տեղը, ինչպէս պատմութիւնն է պատմում: Ա՛րդ, հայր Աբրահամը խորհրդանշում է Հայր Աստծուն, հուրը, սուրը՝ տանջարանները[665], որ հանդիպում են օդի ճանապարհին, իսկ երկու ծառաները՝ սպասաւոր հրեշտակներին[666]: Փրկուած Իսահակը եւ զոհաբերուած խոյն այն է, որ հոգին փրկւում է տանջանքներից եւ մեռնում է մարմինը: Հեռուից տեղը նշմարելը [այն է], որ յարութիւնից յետոյ իւրաքանչիւր ոք կստանայ փառք կամ տանջանք:

Իններորդ՝ մարդկանց երեք տեղերը խորհրդանշուեցին Մովսէսի եռայարկ խորանով. առաջին, միջին, վերջին, այսինքն՝ Սրբութեան սրբոցը երկնքի

արքայութիւնն է, որտեղ Աստուածութիւնն է բնակւում, եւ սպասաւորում են քերովբէները: Միջին սրբութիւնը հոգիների կայանատեղին է, որտեղ լոյսի աշտանակն է, խունկը եւ Առաջաւորաց հացը, որոնք սրբերի անուշահոտ հոգիներն են՝ Քրիստոսի հայեացքի առաջ՝ մշտնջենաւոր լոյսի մէջ, իսկ վերին եւ արտաքին սրահները, որտեղ զոհաբերութիւնը եւ ողջակիզումն էին կատարւում, մարմնական աշխարհն է, որտեղ արդարները եւ մեղաւորները միասին են բնակւում՝ ուտելու եւ խմելու կարիքներով: Ապա աղօթքներով եւ զանազան մաքրութեամբ սրբագործւում ենք եւ այստեղից յետոյ մտնում հոգիների կայանատեղի, ապա յարութիւնից յետոյ միանգամից կմտնենք Սրբութեան սրբոց, այսինքն՝ երկնքի արքայութիւն:

Տասներորդ՝ այս երեք օրով խորհրդանշուեցին այն [օրերը], որ Մովսէսը Փարաւոնին ասաց՝ «արձակի՛ր Իսրայէլը» (Ելք Դ 23), որ երեքօրեայ ճանապարհ անցնեն եւ երկրպագեն իրենց Աստծուն, երբ բազում հարուածներ [պատճառելով]՝ ժողովրդին հանեց, եւ անցան երեքօրեայ ճանապարհը՝ ցերեկը ամպիովանիով, գիշերը՝ լուսաւորուած, երբ ծովը ճեղքուեց, փարաւոնը ջրի տակ մնաց, եւ նրանք մնացին անապատում քառասուն տարի եւ այլն:

Արդ, Եգիպտոսը խորհրդանշում է աշխարհը, որ չարութեան հալոցքի, մեղքի ծառայութեան եւ սատանայի [վայրն է], որ փարաւոնն է: Եւ հրեշտակի ձեռքով բազում պատուհասներ եւ հարուածներ է այստեղ կրում մարմինը, իսկ հոգին մնում է անվնաս, ինչպէս Իսրայէլը. ապա ելնելով մարմնից՝ անցնում է օդով, իսկ մկրտութեան շնորհն ու սուրբ դաւանութիւնը հոգու լուսատուն են դառնում: Մովսէսի ձեռքով ճեղքուած ծովը [խորհրդանշում է] առաջնորդ հրեշտակի ձեռքով [ճեղքուած] օդի խաւարային անդունդը, զօրքով ջրի տակն անցած փարաւոնը, որ ոչնչով չեն կարող վնասել չար դեւերը քրիստոնեայ հոգիներին, իսկ անապատը հոգիների կայանատեղին է, որ կարիք չունի մարմնական պէտքերի:

Նրանց մանանան Աստծոյ խօսքն է, ջուրը՝ Սուրբ Հոգին, անմաշելի զգեստը՝ իւրաքանչիւրի գործը, իսկ քառասուն տարին չորս տասն է, այսինքն մինչեւ քառանիւթ կեանքի աւարտը:

Յետոյ Յիսուսի ձեռքով արժանաւորները կմտնեն երկնքի արքայութիւն եւ կժառանգեն այն, ըստ այդմ՝ «Եկէ՛ք իմ Հօր օրհնուածներ, ժառանգեցէ՛ք երկնքի արքայութիւնը» (Մտթ. ԻԵ 34): Իսկ անարժանները, որ Եգիպտոսի սիրտն ունէին, սատկեցին անապատում եւ չմտան պարգեւների երկիր: Այսպէս էլ քրիստոնեայի հոգին, եթէ անարժան է՝ չնայած հրեշտակի ձեռքով հասնում է հոգիների կայանատեղի նոյնակերպ սքանչելիքներով, սակայն եթէ սիրտը կապուած է մեղաւոր աշխարհին եւ չի կարող ապաշխարել, չի մտնի երկնքի արքայութիւն:

Իսկ եթէ մէկը հարցնի [ողորմութիւն] տալը, աղօթքը, պատարագը օգո՞ւտ չէ նրանց համար, ապա ասենք, որ եթէ Սուրբ Երրորդութեան հաւատն ունեն, սակայն աշխարհի սխալների մէջ ընկան եւ զղջացին, ու խոստովանեցին մեղքերը եւ չկարողացան ամբողջութեամբ ապաշխարել, նրանց համար օգուտ է աղօթքը, պատարագը եւ այլն, որովհետեւ նրանց պարտքը մենք մարում ենք եւ ազատում այնտեղի պատժից:

Իսկ եթէ անզեղջ կամքով եւ առանց խոստովանութեան մեղքի մէջ մեռան, անօգուտ է [այս ամէնը], եթէ նոյնիսկ մկրտուած են եւ հաւատացեալ, որովհետեւ «հաւատն առանց գործերի մեռած է» (Յակ. Բ 26):

Սրանք էին ննջեցեալի երեքօրեայ յիշատակի խորհուրդները: Իսկ մնացածի մասին ասուեց սկզբում՝ [յուղարկաւորելիս] երեք անգամ դադար առնելու [առիթով]:

Այսքանն այս մասին:

ՀԱՐՑ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐՈՒԱՅ ԵՒ ԱՅԼՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ Թ

Հարց. Ի՞նչ է եօթը [տալը], ամսագլուխը, տարեբոլորը:

Պատասխան. Նախ, ինչպէս ասուեց քահանայաթաղի մասին [խօսելիս]՝ հոգու եօթը շնորհների, եկեղեցու եօթը խորհուրդների, եօթն առաքինութիւնների, եօթը գլխաւորագոյն մեղքերի, եօթը զգայարաններով մեղանչելու, հասակի եօթը փոփոխութեան, եօթն աստիճանների, խորանի եօթն աստղերի [խորհրդով] ենք [ննջեցեալի] եօթը կատարում:

Իսկ ամսագլուխը եւ տարեբոլորը ի դէմս երեք [խորհրդի] են: Նախ [ի դէմս] ժամանակի, որ երեքը, եօթը, ամիսը եւ տարին՝ չորսն են, սկզբի երեք օրուայ յետ կդառնան եօթ, այսինքն ժամանակը երեքն է, եօթով են չափւում շաբաթուայ օրերը, եօթն են կեանքի դարաշրջանները: Այլեւ՝ հաւաքւում են ամսուայ եւ տարուայ մէջ: Ամիսը խորհրդանշում է մինչեւ դատաստանը, տարին՝ յաւիտենական յարութիւնը, որի խորհրդով էլ յիշատակում ենք ննջեցեալներին նշանակուած օրերին:

Երկրորդ՝ մեր [խորհրդով], որովհետեւ հոգու երեք զօրութիւններով եւ մարմնի չորս նիւթերով ենք մեղանչում: Իսկ ամիսը, որ երեք տասն է՝ մենք տասը զգայութեամբ՝ մտքով, խօսքով եւ գործով ենք մեղանչում: Մեղանչում ենք նաեւ երեք հարիւր վաթսունհինգ յօդերով[667] եւ մարմնի տասներկու անդամներով: Այս մտքով էլ ամսագլուխ եւ տարեբոլոր ենք նշում:

Եւ երրորդը, ի դէմս Երրորդութեան եւ հոգու եօթը շնորհների է, որ ընդունեցինք աւազանով: Եւ ամիսը բաղկացած է երեք տասից՝ այսինքն՝ թէ Սուրբ Երրորդութեան հաւատի եւ տասնաբանեան օրէնքի մէջ մեղանչեցինք: Եւ տարին Քրիստոս է, եւ Տիրոջ տարին ընդունելի, իսկ տասներկու ամիսները՝ առաքեալները, որովհետեւ նա է արեգակն արդարութեան, եւ նրա մասին է ասւում՝ «Տարուայ պսակը պիտի

օրհնուի քո քաղցրութեամբ, Տէ՛ր» (Սղմ. ԿԴ 12):

Այս օրերի խորհրդով են կատարուում ննջեցեալների յիշատակման արարողութիւնները: Եւ ոչ թէ, ինչպէս ոմանք են մտացածին բաներով շաղակրատում, թէ՝ երեք օրը կամ եօթը կամ ամիսն ու տարին քաւարանի խորհրդով են կատարում, որովհետեւ այդ օրերը մեզանով են չափւում եւ ոչ թէ ննջեցեալներով, ու մենք ենք քաւում նրանց մեղքերը եւ ոչ նրանք: Եւ չնայած իւրաքանչիւր մեղաւոր զղջում է մահից յետոյ, սակայն չի կարող ապաշխարել, քանզի անցել է ժամանակը, ինչպէս յիմար կոյսերինը, որովհետեւ առաքեալն ասում է. «Ա՛յս է ընդունելի ժամանակը եւ ա՛յս է փրկութեան օրը, ուստի ոչ մի առիթով պատճառ մի՛ եղէք, որ ծեր պաշտօնն արատաւորուի» (Բ Կորնթ. Զ 2-3):

ԴԱՐՁԵԱԼ ՄԵՌԵԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է [նշանակում] զատկի երկուշաբթի օրը «մեռելոց» կատարելը:

Պատասխան. Նախ, ինչպէս մենք կիրակի օրը ուրախացանք եւ վայելեցինք Քրիստոսի յարութեան շնորհները, յաջորդ օրն էլ նրանց ենք յատկացնում:

Եւ ինչպէս կիրակի Քրիստոսի յարութիւնը տօնեցինք, երկուշաբթի էլ այն սրբերինը, որոնք Քրիստոսի հետ յարութիւն առան եւ մտան սուրբ քաղաքը (տե՛ս Մտթ. ԻԷ 53):

Հարց. Գերեզմանը ո՞ր օրը պէտք է օրհնել:

Պատասխան. Աւագ ուրբաթ, որովհետեւ երկուշաբթին մեռելոց է եւ ոչ գերեզմանօրհնէք: Եւ խորհուրդն այն է, որ այդ օրը խաչուեց Քրիստոս, գերեզմանները բացուեցին եւ այլն: Նոյն օրն էլ գերեզման մտաւ եւ իջաւ դժոխք ու քարոզեց, ուստի Խաչով եւ Աւետարանով աւետում ենք ննջեցեալներին նրանց աւետիսի մեծ օրը եւ կնքում գերեզմանները:

Հարց. Ի՞նչ է գերեզմանօրհնէքը:

Պատասխան. Ողորմութիւն է ննջեցեալներին եւ ոչ Աւետարանի շնորհների գինը:

Այդպէս էլ թաղման, ոտնլուայի, խաչհամբոյրի [ժամանակ ստացուածը] Քրիստոսի գանձանակն է, որ յիշատակում ենք: Այդպէս էլ տնօրհնէքի [ժամանակ] Խաչի եւ Աւետարանի ընծաները, քանի որ նրանց հետ [օրհնութիւնը] տուն է մտնում: Նոյնպէս եւ միւս խորհուրդներին՝ կնունքի, պսակի եւ այլնի [ժամանակ ստացուածները], լուսացուի կամ խնկոց գին են: Նրանք, ովքեր [այս] շնորհները առան, պարտաւոր են իրենց միջոցներով ութ օր եկեղեցու լոյսերը վառել: Իսկ որ ասում են՝ հաղորդադրամ կամ խոստովանադրամ, խորթ է, որ սահմանել են ագահ երէցները եւ ոչ թէ ըստ կանոնների է, եւ սրանք Քրիստոսի մեծ ատեանում իրենց անձով դատաստանի կարժանանան:

Հարց. Իսկ ի՞նչ է տուն օրհնելը զատկին եւ յայտնութեանը:

Պատասխան. Այն է, որ յարութիւնից յետոյ Քրիստոս մտաւ վերնատուն եւ

օրհնեց աշակերտներին, եւ քարայրում ծննդեամբ մարմնացաւ Բանն Աստուած, ուստի նոյն Խաչն ու Աւետարանը տուն տանելով՝ օրհնում ենք մեր բնակավայրը:

Հարց. Ի՞նչ է, որ Բուն բարեկենդանին երկու չորեքշաբթին եւ երկու ուրբաթը «հանգստեան» ենք ասում:

Պատասխան. Նախ ասում են, թէ այդ օրերին Եփեսոսի մանուկները[668] նահատակուեցին, որը եւ յիշատակում ենք: Եւ ապա՝ պահքի քառասուն օրուանից մինչեւ Ղազարոսի յարութիւն այլեւս հանգստեան օր չենք ասում:

Այսքանը ննջեցեալների թաղման եւ վախճանի խորհրդի մասին:

ԳԼՈՒԽ ԼԷ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ [ՄԱՐՄՆԻՑ] ԲԱԺԱՆՈՒԱԾ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ Պրակ ժ

Մարմնական [կեանքի] վախճանից յետոյ բաժանուած հոգու մասին հարցնում եմ՝ «Մարմնից բաժանուած հոգիները զգայակա՞ն են եւ մտաւոր, թէ՝ ոչ»:

Պատասխան. Մարմնից բաժանուած հոգիների [աչքը] պայծառանում է, ինչպէս նրանց, որ խաւար բանտից են ազատւում: Եւ պահպանւում են իմացութիւններն ու յուշերը, ինչպէս Թադէոս առաքեալն է ասում[669], եւ նրանց յոյսը լի է անմահութեամբ եւ սիրով՝ միացած Աստծոյ հետ:

Սակայն սրբերի պայծառատեսութիւնը շնորհների լոյսի եւ մաքրութեան [շնորհիւ] աւելանում է՝ ազատուելով մարմնի թանձրութիւնից: Իսկ մեղաւորների [հոգին] մարմնից ազատուելով՝ աւելի են տեսնում, քան այժմ, սակայն մեղքերի խաւարը թոյլ չի տալիս տեսնել աւելին, եւ չար է նրանց միտքն ու տանջանքների երկիւղը:

Հարց. Հոգիները միմեանց ճանաչո՞ւմ են, թէ՝ ոչ:

Պատասխան. Արդարների հոգիները միմեանց ճանաչում են անուամբ, ծննդեամբ, գործերի արդիւնքով, որոնք արդիւնքը միշտ մօտիկից են տեսնում: Իսկ չար հոգիները առաւել չարութիւնն են տեսնում, որովհետեւ տանջուելու են ըստ արժանւոյն, բարիներն էլ պսակ են առնելու [ըստ արժանւոյն]:

Եւ թէ՛ չարերը, թէ՛ բարիները ճանաչւում են անուամբ, ինչպէս հարուստը՝ Աբրահամին եւ Ղազարին:

Հարց. Նրանք գիտե՞ն, թէ մենք այստեղ ինչ ենք անում, թէ ոչ:

Պատասխան. Արդարների հոգիները գիտեն այն ամէնն, ինչ կատարում ենք նրանց համար եւ բարեխօսում են մեզ համար եւ կատարում խնդրանքը, իսկ չարերը ոչինչ չգիտեն, այլ այն, ինչ նրանց պատմում են հրեշտակները կամ դեւերը:

Հարց. Հոգիները աղօթո՞ւմ են իրենց սիրելիների համար, թէ՝ ոչ:

Պատասխան. Արդարները միշտ աղօթում են իրենց սիրելիների համար, որպէսզի ազատուեն փորձանքներից, ուղղուեն մոլորութիւններից եւ նրանց փառքի ընկերը դառնան: Իսկ մեղաւորները՝ ոչ, որովհետեւ չարակամ եւ նախանձ են: Հարուստը աղօթում էր

եղբայրների համար, որ իր տանջանքները նրանց պատճառով չաւելանային:

Հարց. Ինչի՞ մասին է նրանց աղօթքը:

Պատասխան. Նրանց աղօթքը նրանց ցանկութիւնն է, որովհետեւ «Տէրը կատարում է իր երկիւղածների կամքը» (Սղմ. ՃԽԴ 19):

[Արդարների] աղօթքը նրանց չարչարանքն ու բարի գործերն են, որ յանուն Քրիստոսի կրեցին. դրանց համար են աղերսում, սակայն Աստծուն հաճելի կամքն են խնդրում եւ ոչ՝ հակառակը:

ՀՈԳՈՒ ԵՐԵՒԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Հոգիները ինչպէ՞ս են երեւում մարդկանց:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ սրբերի հոգիները միշտ են երեւում, երբ կամենում են եւ ում կամենում են: Մեղաւորների հոգիներն ամենեւին չեն երեւում[670]: Իսկ մեծ Ներսէսն ասում է, թէ սրբերը պահապան հրեշտակների միջոցով են երեւում թէ՛ երազում, թէ՛ արթմնի, եւ օգնում են մեզ, խօսում, լսում մեր աղօթքները[671]: Իսկ մեղաւոր հոգին դարձեալ հրեշտակի միջոցով է [երեւում], որովհետեւ աղաչում էր երեւալու համար, կամ էլ դեւերի միջոցով են նրանք ուրուագծւում: Սակայն մինչ դատաստանի օրը չար հոգիները չեն կարող գալ մեզ մօտ, ըստ այդմ՝ «Հոգին, որ դուրս է գալիս, այլեւս չի վերադառնում» (Սղմ. ՀԷ 39): Իսկ թէ չերեւալու պատճառը որն է, կասենք առաջիկայում՝ «Գէորգի հարցումների» մէջ, տե՛ս երկու համարներում:

Հարց. Արդարները լիակատար ուրախութիւն ունե՞ն, թէ՝ ոչ:

Պատասխան. Ո՛չ, որովհետեւ չարից խուսափելու առումով միայն նրանց հոգին ունի ուրախութիւն, բայց մարմնով վախճանուելու համար [տրուելիք] պսակների եւ դեռ չհաւաքուած ընկերների պատճառով՝ բացակայում է նրանց մէջ, որ լինելու է վախճանին, Քրիստոսի գալստեան ժամանակ, ըստ այդմ՝ «դարձեալ կտեսնեմ ձեզ եւ ուրախ կլինէք, որը ոչ ոք ձեզանից չի խլի» (Յովհ. ԺԶ 22):

Հարց. Ի՞նչ է Հօր տունը եւ բազում օթեւանները:

Պատասխան. Աստծուն տեսնելն է, ովքեր ըստ իրենց գործերի տեսնում են եւ փառաւորւում, ինչպէս տան մէջ:

ՀՈԳԻՆԵՐԻ ԿԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԱ

Հարց. Որտե՞ղ է հոգիների կայանը եւ հաւաքատեղին:

Պատասխան. Սուրբ վարդապետները հոգիները պահելու երեք փոփոխութիւն գիտեն. մինչեւ Քրիստոս, Քրիստոսից յետոյ եւ դատաստանից յետոյ:

Նախքան Քրիստոս բոլորը դժոխքում էին, Քրիստոսից յետոյ՝ հոգիների կայանում, եւ երրորդը՝ դատաստանից յետոյ, երբ բաժանուեն բարիները եւ չարերը, [կլինեն] երկնքի արքայութիւնը եւ յաւիտենական դժոխքը:

Առաջինը Ադամի պատժի պատճառով էր. երկրորդը՝ Քրիստոսի շնորհների, երրորդը՝ ըստ իւրաքանչիւրի առանձին

գործերի: Սրանց եւ այլնի մասին ասուած է «Գէորգի հարցումների» երրորդ համարում:

Հարց. Իսկ այժմ որտե՞ղ է հոգիների կայանատեղին:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ իբր իւրաքանչիւր մեղաւոր հոգի իր գերեզմանում կամ հողի մէջ է տանջւում, ըստ այդմ՝ «գերեզմանը նրանց տունը կլինի» (Սղմ. ԽԸ 12): Ֆրանկների ազգն ասում է՝ չարերի հոգին դժոխք է իջնում, բարիներինը՝ ելնում երկինք, միջակները գնում են քաւարան՝ մաքրւում, ապա ելնում երկինք:

Որոշներն էլ ասում են հոգիների՝ թէ՛ արդարների, թէ՛ մեղաւորների կայանատեղին, մինչեւ աշխարհի վերջը դրախտում է: Իսկ մեր վարդապետներն ասում են երկնքում եւ երկնքի տակ է, ինչպէս Կալիստրատոսն է վկայում՝ ութերորդ կամարի տակ, որտեղ լուսատուներն են եւ եթերային լոյսը[672]: Ասում են աջակողմեան եւ ձախակողմեան խորաններ [կան], այսինքն՝ Քրիստոսի քաղցր հայեացքը, որ աջն է եւ դառը, ահարկու, որ ձախն է:

Իսկ մերոնցից ոմանք, ինչպէս Վարդան վարդապետը եւ ուրիշներ, ասում են, որ բոլոր հոգիները միեւնոյն տեղում են[673], այլ զանազանութիւնը նրանց գործերի ու [նրանց] տեսնելու մէջ է. մէկը լի է անմահութեամբ եւ խնդութեամբ, միւսը՝ դառնութեամբ եւ յուսահատութեամբ, ինչպէս ասուեց վերը:

Իսկ ոմանք, որ վեցերորդ կարծիքն է, ասում են, որ համակ կատարեալ բարի հոգիները հաւաքուած են հրեշտակաց դասում, ինչպէս առաքեալն է ասում՝ «կատարելութեան հասած անդրանիկների հոգիները» (Եբր. ԺԲ 23): Իսկ որո՞նք են կատարեալները. նրանք, ովքեր հրամայուած օրէնքներից աւելին կատարեցին, ինչպէս առաքեալները, մարգարէները, մարտիրոսները, կուսակրօնները եւ ուրիշներ: Իսկ համակ չարերը [հաւաքւած են] դժոխքում, որոնք անհաւատները, չարերը, կռապաշտներն են, որ հին օրէնքի մէջ են եւ ո՛չ նորի, եւ մնացել են սկզբնական մեղքի տակ. նրանք տանջանքների մէջ են: Իսկ միջակ արդարներն ու մեղաւորները, որոնք ընդունեցին օրէնքը եւ ըստ օրինաց՝ գործեցին բարի գործեր կամ սխալուեցին, նրանց բոլորի հոգիները մի խորանում են՝ մինչ Դատաստանը, որտեղ կկատարուի նրանց ընտրութիւնը եւ բաժանումը, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում:

Եւ այս տարբեր կարծիքների պատճառն այն է, որ Սուրբ Գիրքը բացայայտ չի խօսում սրանց մասին: Նախ, նորընծայ հաւատացեալների կատարեալ տեսութիւններին անտեղեակ լինելու պատճառով, եւ երկրորդ՝ հաւատին ապաւինելու պատճառով, որին հետեւում է վարձքը, ոչ թէ մտքերի քննութեանը: Այս իսկ պատճառով էլ իւրաքանչիւրն ըստ վկայութիւնների արտայայտում է այս կամ այն կարծիքը:

Հարց. Սրանցից ո՞րը պէտք է համարել ճշմարիտ:

Պատասխան. Առաջին [կարծիքը] նոյնն է, թէ ասեն՝ հոգին մարմնի հետ լուծւում է հողում եւ այնտեղ տանջւում, ինչպէս ոմանք հոգին մահկանացու են համարում. սա անընդունելի է, իսկ [որ ասում է]՝ «գերեզմանները նրանց տունն է», մարմնի վերաբերեալ է ասում:

Երկրորդը՝ որ ասում են, թէ Բերգաթուրում մաքրւում եւ երկինք են բարձրանում, նման է Պլատոնի մարմնափոխութեանը, համաձայն որի բանական [հոգին] մարդուց անցնում է զգայականին, ապա տնկականին, յետոյ տնկականից անցնում երկինք. սրանք էլ, ասում են, անցնում են հրի միջոցով, այնտեղից էլ՝ երկինք վերափոխւում:

Երրորդը տգէտներից է ասուած, որովհետեւ մարմնաւոր կայանները պիտանի չեն անմարմին հոգիներին:

Չորրորդը եւ հինգերորդը ընդունելի են, եւ քիչ են տարբերւում, այլ ասում են, թէ դատաստանի համար նոյն կերպ են ընտրւում:

Իսկ վեցերորդը նման է երկրորդին եւ մերձ է ճշմարտութեանը այնքանով, որ արդարն ու մեղաւորն ասում են, թէ դատաստանի ժամանակ են զանազանուելու:

Սրանք այսպէս:

Իսկ Յոհաննու տեսիլքի վերաբերեալ ուղիղ են դատում՝ եկեղեցու վարդապետներ մեծն Անդրէասը[674], նրա համախոհները՝ սուրբ Իրինոսը, Եպիփանը, Բասիլիոսը, մեր վարդապետներից Գրիգոր Սկիւռացին՝ Աստուածածին կոյսի Վերափոխման [առիթով], Ներսէս հայրապետը «Հրեշտակապետաց մասին» ճառում, եւ միւս Ներսէսը՝ Յոհաննու ննջելու առթիւ, եւ սուրբ Կալիստրատոս վկան՝ իր ճառում[675]:

Ասում են, թէ երկուսն են հոգու ընթացքի ճանապարհները. մէկը դէպ վեր՝ երկինք, միւսը՝ երկնքի տակ: Նրանք, ովքեր թողեցին ամէն ինչ եւ գնացին Քրիստոսի հետ, որոնց խոստացաւ հարիւրապատիկն այստեղ եւ յաւիտենական կեանք, ընդհանուր բոլոր վարդապետները համաձայն են սրան, որ նրանք անմարմինների երկնային խորաններում են՝ լոյսի զանազան օթեւաններում: Իսկ հաւատացեալների հոգիները, որ սրանց նման չհետեւեցին Նրան, այլ ընդունեցին սատանայի ներգործութիւնը եւ աշխարհային տկարութիւնները, Աստծոյ արդար իրաւունքը թոյլ չի տալիս նրանց, որ երկինք բարձրանան, այլ կան եւ մնում են երկնքի տակ՝ ակնկալելով հանդերձեալ դատաստանը, որտեղ ողորմութեամբ, գութով, դիւրութեամբ քաւութիւն կստանան եւ կարժանանան ներման:

Իսկ, թէ այս երկուսը որտե՞ղ են, յայտնապէս ցոյց է տալիս Յոհաննու տեսիլքը: Սրբերի խորանները, ասում է, վերին Սիօնն ու հրեշտակների դասն է, որտեղ տեսաւ երէցների քսանչորս դասերին՝ Աստծոյ աթոռի շուրջը եւ այնտեղ հաւաքուած բոլոր ազգերի սուրբ հոգիների բազմութիւնը: Եւ այդ է երկնքում կատարեալ անդրանիկների եկեղեցին, ինչպէս ասում է Պօղոսը (տե՛ս Եբր. ԺԲ 12): Եւ Յոհաննու Հանգստեան

մէջ[676] ասում է՝ «Օ՜, դու, որ հա՛յրդ ես նրանց, ովքեր վեր են, քան երկինքը, այսինքն՝ կատարեալ սուրբ հոգիների, որ վեր են, քան հրեշտակների դասը, մերձ Քրիստոսին այնպէս, ինչպէս քահանան՝ քահանայապետին, [մարմնի] անդամները՝ գլխին, որդին՝ հօրը. ինչպէս աղօթում էր՝ «կամենում եմ, թէ որտեղ ես լինեմ, սրանք էլ ինձ հետ լինեն» (Յովհ. ԺԷ 14), եւ կատարուած է Քրիստոսի կամքը, որովհետեւ այժմ հոգով նրա հետ են, իսկ յարութիւնից յետոյ՝ [կլինեն] հոգով եւ մարմնով: Եւ այն է Աստծոյ քաղաքը եւ Վերին Երուսաղէմը եւ արդարների եկեղեցին, ըստ Պօղոսի (տե՛ս Եբր. ԺԲ 22):

Եւ պէտք է իմանալ, որ այդ եկեղեցու հիմքը եւ սկիզբը եղաւ մեռեալներից յարութիւն առած մեր տէր Յիսուս Քրիստոս, որ իր հետ վերցրեց եւ վեր հանեց սուրբ նահապետների եւ մարգարէների հոգիները: Այնտեղ են հաւաքուած առաքեալները եւ սուրբ վկաները, կատարեալները՝ մինչեւ վախճանը, եւ միւսանգամեայ գալուստը. սրանք դատաստան չեն գալու, այլ դատելու են հրեշտակներին եւ մարդկանց՝ ըստ առաքեալի (տե՛ս Ա Կորնթ. Զ 3): Իսկ երկնքի տակ, երկնքին մօտիկ կիսաարդար հոգիների կայանն է, որոնց արդարութիւնը մեղքերից պակաս կամ աւելի է: Ասում են նրանք երկնքի ութերորդ կամարում են՝ ազատուած սատանայի իշխանութիւնից, որը տարածւում է միայն օդի եւ տարրերի վրայ: Սա խորան է երկնքի տակ, որտեղ հաւաքւում են արդար եւ մեղաւոր հաւատացեալների հոգիները, որոնք դատաստանի են սպասում՝ ակնկալելով Աստծոյ ողորմութիւնը:

Ասում են սրանք աջակողմեան խորանում են, իսկ ձախակողմեան խորանում՝ օդում, աներեւոյթ տեղում հաւաքւում են չարերի ու մեղաւորների հոգիները, որոնք կդատապարտուեն դատաստանի ժամանակ:

Եւ այնտեղ հաւաքուելու սկիզբը լինելու է Քրիստոսի՝ անարժան հոգիներին ժամանակաւորապէս արձակելը, որտեղ կմնան, իսկ այնտեղից կգնան դժոխք՝ ըստ մարգարէի: Այնտեղ չարերի եւ ամբարիշտների հոգիները հաւաքուելու են չար հրեշտակների ձեռքով, ոչ թէ ըստ բնութեան, այլ արդէն իսկ տանջանքների սրտմտութեամբ դատապարտուած կլինեն, ըստ Աւետարանի ձայնի:

Այս վայրի մասին Տեսիլքն ասում է՝ «մահ եւ դժոխք տուեցին իրենց մեռեալներին», այսինքն մեղքերով մեռած հոգիները դատաստանի ենթարկուեցին ըստ [իրենց] գործերի:

Սրանք են աջակողմեան եւ ձախակողմեան խորանները:

Ովքեր այստեղ բարի գործեր ունեն կամ չար, ըստ այդմ էլ՝ այնտեղ դասուելու են Քրիստոսի աջ կամ ձախ կողմում:

Հարց. Ուրեմն ինչպէ՞ս է հոգիների կայանը մէկը, ինչպէս վերն ասուեց:

Պատասխան. Ասում են մէկն է՝ երկնքի ներքեւում գտնուող արդարների

եւ մեղաւորների խորանը, ովքեր զատորոշելու են դատաստանով, սակայն չնայած տեղով մէկն է, այնուամենայնիւ, արդարները յուսով ուրախ են, իսկ մեղաւորները տանջւում են, ինչպէս փարաւոնի ծառաները, որ Յովսէփի հետ բանտում էին. մատռուակը ուրախ էր, իսկ խոհարարը՝ տրտում՝ ըստ երազի մեկնութեան (տե՛ս Ծննդ. Խ):

Նաեւ՝ մի կայան է ասւում, որովհետեւ երկու կողմն էլ մի ակնկալիք ունեն. արդարները՝ պսակի, մեղաւորները՝ տանջանքի: Եւ որեւէ մէկը դեռ ըստ գործի հատուցում չունի՝ մինչեւ Դատաւորի գալուստը, ինչպէս ասում է Աւետարանը: Այլապէս, մեղաւոր հոգին չէր կարող երկինք բարձրանալ, որտեղից ընկան հրեշտակները մեղքի պատճառով. եւ մարդը՝ դրախտից: Այդպէս էլ արդարների հոգիները չեն մնում դատապարտեալ տարրերի [իշխանութեան] ներքոյ, որովհետեւ ազատուեցին պատժից եւ տրուեցին Հօրը, ինչպէս մեր Տիրոջ, որ ասում էր. «Հա՛յր, քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին» (Ղուկ. ԻԳ 46), այսինքն՝ իմ բոլոր հաւատացեալների:

Եւ սրբերի հոգիները բարձրանում են երկինք, որ անբնակ է չարերի համար, ինչպէս Տեսիլքում փախաւ կինը, որ արու մանուկ ծնեց եւ հրեղէն վիշապը չկարողացաւ հասնել[677] (տե՛ս Յայտ. ԺԲ 6), «Քանզի արդարների հոգիները Աստծոյ ձեռքին են, եւ չարերը չեն մօտենում նրանց», ինչպէս Սողոմոնն է ասում, եւ խաղաղութեան մէջ են: Եւ այժմ յուսով են երկնքում եւ երկնքին մօտ, իսկ մահից յետոյ՝ հոգով, յարութիւնից յետոյ՝ հոգով եւ մարմնով՝ անպատմելի փառքի մէջ [կլինեն]:

Հարց. Արդարների կամ մեղաւորների հոգին ունի՞ այժմ փառք կամ տանջանք, թէ՝ ոչ:

Պատասխան. Այստեղից յետոյ երանելիների փառքը կրկին է, այսինքն ինքնին փառքն՝ ըստ կատարած գործի, եւ հատուցման փառքը: Այժմ սրբերի հոգիները առնում են գործի փառքը, ըստ կատարածի, որովհետեւ հանգչում եւ ուրախանում են իրենց գործերով, իսկ յարութեան ժամանակ կստանան հատուցման փառքը՝ հոգով եւ մարմնով, եւ այդպէս էլ փառքից փառք կբարձրանան, ինչպէս ասում է «Երգ երգոց»-ը: Եւ այսպէս ամէն տեսակ առաքինութիւն այստեղ խաղաղեցնում է միտքը, մահից յետոյ՝ հոգին, յարութիւնից յետոյ՝ հոգին եւ մարմինը:

Բայց առայժմ՝ ըստ գործի է, յարութիւնից յետոյ՝ ըստ հատուցման:

Այդպէս էլ կրկին է չարերի տանջանքը, այսինքն՝ տանջանք՝ ըստ իրենց գործերի եւ տանջանք [ըստ] հատուցման, որովհետեւ ըստ գործերի տանջանք են կրում մահից յետոյ, իսկ յարութիւնից յետոյ՝ հոգով եւ մարմնով՝ [ըստ] հատուցման: Եւ չարութեան գործերը այժմ նրանց խղճմտանքն են տանջում, մահից յետոյ՝ հոգին, յարութիւնից յետոյ՝ հոգին եւ մարմինը, ինչպէս ասուեց:

Հարց. Իսկ ի՞նչ էր սպիտակ հանդերձը եւ ոսկեղէն պսակը, որ Տեսիլքն է ասում (տե՛ս Յայտ. Դ 4):

Պատասխան. Նախ ասեմ, որ թէ՛ սպիտակ հանդերձը, թէ՛ պսակը, թէ՛ աթոռները եւ մնացած ամէն ինչը, որ տեսաւ Տեսիլքում՝ ներկային [չի վերաբերում], այլ՝ հանդերձեալին, այն՝ ինչ լինելու է վախճանին, ինչպէս որ Նեռի եւ դատաստանի վերաբերեալ տեսաւ՝ այդպէս եւ սրբերի հատուցման:

Ասենք նաեւ, որ թէպէտ ներկայում տեսաւ, սպիտակ հանդերձը հատուցման փառքի նշանը չէ, այլ [կատարած] գործերի փառքը եւ հանգիստը, քանի որ սրբերի հոգիները առանց մխիթարութեան չեն, այլ հանգստանում եւ ուրախանում են իրենց գործերով եւ փառքով հատուցուելու յոյսով, ինչպէս Տեսիլքի մեկնիչն է ասում՝ թէ սպիտակ հանդերձը Քրիստոսի շնորհների մաքրութիւնն է, որոնցով Քրիստոս մեր մեղքերի մաքրութիւնը կատարեց, ինչը կվայելենք բոլորս, երբ մաքրուեն հոգիները եւ ստանան բնական պայծառութիւն[678]: Իսկ արմաւենին խորհրդանշում է յաղթանակ, որով [յաղթահարուեց] մարմնի ցանկութիւնը եւ յաղթուեց սատանան:

Հարց. Չմկրտուածները կամ չարերը ունե՞ն տանջանքներ՝ սկզբնական կամ ներգործական մեղքերի համար:

Պատասխան. Նրանք, ովքեր չթլփատուեցին հնում կամ չմկրտուեցին նորում, կամ մարդկանցից չարերը դատապարտուած են տանջանքներ կրելու դատաստանին եւ ոչ այժմ: Պատճառն այն է, որ Ադամի դատապարտութիւնը Քրիստոսով վերացաւ, իսկ չարերի տանջանքը դատաստանով է, հետեւաբար երկուստեք այժմ զանազան տանջանքներ չեն կրում, այլ՝ հանդերձեալում: Քանզի առաքեալն ասում է՝ «Հաստատեց մի օր, երբ բոլորին կդատի» (Գործք ԺԷ 31):

Հարց. Այդ դէպքում ինչպէ՞ս են մեղաւորների հոգիները դժոխքում, ինչպէս Տեսիլքում է ասում, «Դժոխքը տուեց իր մեռեալներին» (Յայտ. Ի 13): «Դժոխք» նշանակում է «դժուարին» եւ «նեղ» տեղ, որ ձախակողմեան խորանն է, որտեղ մեղաւորները կրկնակի տանջանք ունեն: Նախ, որ տանջւում են իրենց չար գործերի պատճառով, ըստ այդմ՝ «իրենց ձեռքի գործերի պատճառով կապուեցին մեղաւորները»:

Երկրորդ՝ հատուցման հեռանկարն է նրանց տանջում, որ կլինի վախճանին:

Հարց. Ո՞րն է մեղաւորների աներեւոյթ տեղը:

Պատասխան. Նրանց «աներեւոյթը» երեք կերպ [պէտք է հասկանալ]: Նախ, որ աներեւոյթ են մեր մէջ, Աստծոյ մտքում, մոռացուած են նաեւ հրեշտակների եւ սրբերի կողմից:

Երկրորդ՝ աներեւոյթ է նրանց ընկալումը, որովհետեւ զրկուած են լոյսի այն շնորհից, որով տեսում են երանութիւնները:

Երրորդ՝ աներեւոյթ են մեղքերի մէջ եւ չունեն բարութեան պայծառութիւնը, ինչպէս նա, որ չունէր հարսանեկան հանդերձ (Մտթ. ԻԲ 12): Եւ, այնուամենայնիւ, հիմա չեն ստանում գործերի հատուցում եւ յաւիտենական տանջանք, այլ հոգով եւ մարմնով կստանան դատաստանի օրը, ինչպէս առաջիկայում

պարզ կլինի սուրբ վարդապետների զանազան վկայութիւններից եւ հին ու նոր աստուածաշունչ կտակարաններից:

ՈՒՂՂԱՓԱՌՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԲ

Արդ, առաջին վկայութիւնը, որ տալիս է սուրբ Կիւրեղը «Գիրք պարապմանցս»-ում[679]՝ Տիբերիոսի հարցումի մէջ, այն է, որ հատուցումները հետեւելու են դատաստանին եւ դատաւորի գալուստը [լինելու է] դատաստանին՝ վախճանին:

Արդ, դեռ չի եկել դատաւորը եւ չի եղել դատաստանը, նաեւ հատուցումները՝ ո՛չ բարիների, ո՛չ չարերի, ինչպէս ասուեց վերը:

Երկրորդ՝ սուրբ Դիոնէսիոսը «Ննջեցեալների մասին» գլխում ասում է, որ մաքրուած հոգին հասնելով վախճանին՝ պարզորոշ եւ մօտիկից է տեսնում ամբողջ փառքը եւ պսակը, որ ընդունելու են արդարները յարութեան օրը, որի համար երեք պատճառ է նշում: Նախ, որովհետեւ, ասում է համընթաց են իրենց վաստակի մէջ: Երկրորդ՝ գրուել են յաւիտենական մատեանում: Երրորդ՝ մարմնաւոր կեանքում հոգին եւ մարմինը հաւասարապէս[680] ու միասին ստեղծուեցին եւ ծնուեցին, հաւասարապէս ու միասին էլ կմտնեն հոգեւոր կեանք, ինչպէս վերն ասուեց:

Երրորդ՝ Թադէոս առաքեալն ասում է, երբ մարդու մարմնից հոգին դուրս է գալիս, ստանում է օթեւան եւ հանգստի բնակատեղի, սակայն չի կարող ստանալ հատուցման վարձը՝ առանց մարմնի, որովհետեւ վարձը ոչ միայն հոգունն է, այլեւ՝ մարմնինը[681]:

Չորրորդ՝ սուրբ Եպիփանն ասում է Հաւատի գրքում, որ ինչպէս ըստ հերձուածողների, միայն հոգին է դատուելու, քանի որ նա է վկայելու մարմնի յանցանքի մասին, նոյնպէս եւ հոգին կարող է պատճառ գտնել, թէ մարմնից դուրս գալուց յետոյ չի մեղանչել, այդ իսկ պատճառով արդար դատաւորը հոգուն եւ մարմնին միասին է դատի կանչում՝ թէ՛ մեղքերի համար տանջանք եւ թէ՛ արդարութեան համար երկնքի արքայութիւն [տալու] համար[682]:

Հինգերորդ՝ Գրիգոր Աստուածաբանն ասում է՝ հաւանում եմ իմաստունի խօսքը, թէ՝ երբ բարի եւ աստուածասէր հոգին դուրս է գալիս մարմնից՝ նրա հետ շարունակում է մնալ բարին: Եւ գնում է իր Տիրոջ մօտ հեշտութեամբ, այնտեղ շուտով երեւալով ու տեսնելով շահում է առաջիկայ երանութիւնների պտուղը: Եւ որոշ ժամանակ անց մարմնով, որ կրելու է, կժառանգի իր փառքն այնպէս, ինչպէս չարչարանքներին մասնակցեց, նոյն կերպ էլ [կմասնակցի] վայելքներին[683]:

Վեցերորդ՝ Դաւիթ մարգարէն ասում է. «Քեզ են սպասում արդարները, մինչեւ հատուցես» (Սղմ. ՃԽԱ 8), ինչպէս այժմ ակնկալում եւ սպասում են Քրիստոսի գալստեանը եւ վարձքերի հատուցմանը:

Եօթներորդ, Յոբն ասում է. «Իմ մարմնով տեսնելու եմ փրկիչ Աստծուն եւ ոչ այլ բանով» (Յոբ ԺԴ 14-15):

Ութերորդ՝ ասում է [Պօղոս] առաքեալը. «Եբրայեցիներին [յղած թղթում]»՝

«Եւ սրանք ամէնքը հաւատի մէջ վկայուած լինելով հանդերձ՝ չընդունեցին խոստումը: Աստուած մեզ համար աւելի լաւն էր նախատեսել, որպէսզի առանց մեզ դրանք չկատարուեն» (Եբր. ԺԱ 39): Այսինքն՝ առաջինները չեն [լինելու] առանց մեզ՝ վերջիններիս, եւ մարմիններն առանց հոգիների չեն պսակուելու:

Իններորդ՝ «Կորնթացիների» երկրորդ թղթում էլ ասում է. «Մենք բոլորս կանգնելու ենք Քրիստոսի ատեանի առջեւ եւ իւրաքանչիւրն ընդունելու է [հատուցումն] իր մարմնով՝ բարի թէ չար» (Բ Կորնթ. Ե 10), այսինքն այդժամ առնելու են գործերի հատուցումը:

Տասներորդ՝ «Տիմօթէոսին» յղած թղթում գրում է. «Կայ եւ մնում է ինձ արդարութեան պսակը, որ հատուցելու է Տէրը այդ օրն [իբրեւ] արդար դատաւոր եւ ոչ միայն ինձ, այլեւ ամէնքին, որ սիրում են նրան» (Բ Տիմ. Դ 8):

Տասնմէկերորդ՝ նոյն Պօղոս [առաքեալն] ասում է «Գործք»-ում. «Հաստատեց մի օր, որում դատելու է բոլորին» (Գործք ԺԷ 31): Ապա ուրեմն մէկն է դատաստանի օրը եւ ոչ թէ մշտական:

Տասներկուերորդ՝ Դաւիթ [մարգարէն] ասում է. «Առաւօտեան սպանում էի երկրի բոլոր մեղաւորներին» (Սղմ. Ճ 8), իսկ «առաւօտը»՝ դատաստանի օրն է, որովհետեւ անընդհատ է առաւօտ լինելու եւ երեկոյ չի լինելու:

Տասներեքերորդ՝ Տէրն ասում է՝ «Երբ լսեն Աստծոյ Որդու ձայնը, ոմանք կեանքի յարութեան համար [կլսեն], ոմանք էլ՝ դատաստանի յարութեան» (Յովհ. Ե 28-29):

Տասնչորսերորդ՝ Յոհաննէս [առաքեալն] ասում է «Կաթողիկէ»-[ում]՝ «Գիտեմ, այնժամ, երբ նա յայտնուի, տեսնելու ենք նրան, ինչպէս նա կայ» (Ա Յովհ. Գ 2):

Տասնհինգերորդ՝ Տէրն ասում է. «Դարձեալ կտեսնեմ ձեզ, եւ ուրախ կլինեն ձեր սրտերը, եւ ձեր ուրախութիւնը ոչ ոք չի կարող խլել» (Յովհ. ԺՁ 22): Արդ՝ «դարձեալ տեսնելը» միւս գալուստն է նշանակում, որն ուրախութիւն կպատճառի՝ առանց տրտմութեան:

Տասնվեցերորդ՝ Յոհաննու Աւետարանում ասւում է՝ «Գնամ, ձեր տեղերը պատրաստեմ, դարձեալ գամ եւ առնեմ ձեզ ինձ մօտ», այսինքն՝ նախ կլինի Քրիստոսի վերստին գալը, ապա՝ սրբերին իր մօտ տանելը:

Տասնեօթներորդ՝ Մատթէոսի Աւետարանում ասւում է, թէ՝ «Երկնքի արքայութիւնը նման է տանուտէր մարդու, որ վաղ առաւօտեան [ելաւ] իր այգու համար մշակ վարձելու, իսկ երեկոյեան յանձնարարեց կառավարչին՝ նրանցից իւրաքանչիւրին մէկական դահեկան տալ» (Մտթ. ԺԳ 52):

Ա՛րդ, այստեղ «տանուտէր» Աստծուն է կոչում, «այգի»՝ եկեղեցին, «կառավարիչ» կոչում է Քրիստոսին, «առաւօտ»-ը՝ սկսած առաջին արդարից՝ Աբելից, «երեկոյ»-ն դատաստանի օրը, երբ կհաւաքուեն բոլոր ընտրեալները եւ կստանան երանութեան դահեկանը,

ուստի պարզ է, որ մինչեւ դատաստանի օրը չեն ստանալու:

Տասնութերորդ՝ Մատթէոսի [Աւետարանում] ասում է. «Մի մարդ, [որ պիտի] գնար օտար աշխարհ՝ կանչեց իր մշակներին եւ նրանց ինչքեր տուեց» (Մտթ. ԻԱ 33): Օտար աշխարհ գնացած մարդը Քրիստոսն է, որ մարմնով համբարձուեաց երկինք, քանի որ մարմնին յատկացուած տեղը երկիրն է, [ուստի] երկնքի վերաբերեալ ասում է. «օտար աշխարհ գնալ»: Ապա շարունակում է. «Որոշ ժամանակ յետոյ գալու է մշակների տէրը՝ հատուցելու բարեգործութեան վարձքը եւ դատապարտելու ծոյլերին» (Մտթ. ԻԱ 41): Ապա ուրեմն՝ Քրիստոսի գալուստով յաւիտենական է [լինելու] հատուցումը:

Տասնիններորդ՝ դարձեալ Մատթէոսի [Աւետարանում] ասում է. «Արքայութիւնը նման է մարդու, որ բարի սերմ է ցանում իր ագարակում» (Մտթ. ԺԳ 44): «Բարի սերմը» սրբերն ու ընտրեալներն են, որոնց Աստուած ցանեց եկեղեցիներում: Իսկ որոմը, չարերն են եւ անպիտանները: Եւ քանի որ դժուարութեամբ են արմատախիլ լինում չարերը, որպէսզի բարիներին չվնասի, թողեց [նրանց] մինչեւ հնձի ժամանակը, երբ որոմը արմատախիլ կարուի, այրելու համար, իսկ ցորենը կժողովուի շտեմարանում՝ կեանքի համար:

Ապա ուրեմն մինչ դատաստանը ո՛չ ընտրեալները կեանք կստանան, ո՛չ էլ մեղաւորները՝ տանջանք:

Քսաներորդ, Մատթէոսի [Աւետարանում] ասում է՝ «Արքայութիւնը նման է թագաւորի, որն իր որդու հարսանիքն արեց եւ հաւաքեց բոլոր չարերին ու բարիներին, եւ լցուեցին» (Մտթ. ԻԲ 2): Արդ, «փեսան» Քրիստոսն է, «հարսը»՝ հաւատացեալ ժողովուրդը: Այժմ մկրտութեամբ հաւատի նշան է դնում «հարսին», մահից յետոյ յուսով կկանչի հարսանիք, իսկ յարութիւնից յետոյ սիրով կմիաւորուի փեսային: Ապա ուրեմն՝ փեսայի գալով՝ կլինի հոգեւոր պսակն ու հարսանիքը:

Քսանմէկերորդ՝ առակում, որտեղ տնտեսին կարգեց ծառաներին կերակրելու, որպէսզի յետոյ, երբ տէրը գայ, գտնի նրան այնպէս արած՝ երանի է տալիս այդ ծառային, ապա թէ ոչ՝ կկոտրի մէջքից:

Այդպէս էլ [այն] առակում, որ քանքար ու մնաս տուեց, յետոյ եկաւ եւ պահանջեց: Նոյնպէս էլ միւս գալստեանն, ովքեր հոգեւոր արծաթ շահեցին՝ փառք եւ մուտքի ուրախութիւն կստանան, որոնք [չեն շահել]՝ տանջանք:

Քսաներկուերորդ՝ եւ տասը կոյսերի [մասին] առակն էլ ասում է, որ «հինգ յիմար եւ հինգ իմաստուն [կոյսեր] կային» (Մտթ. ԻԵ), այսինքն՝ արդարներ ու մեղաւորներ, որոնք բոլորն էլ հինգ-հինգ զգայարաններով նիրհեցին եւ քուն մտան: «Մահուան քուն է» ասում մինչեւ վախճանը եւ «կէսգիշեր»՝ յարութեան օրը, երբ արթնացան կոյսերը եւ վառեցին լապտերները: Եւ այդ օրը իմաստունները

մտան փեսայի առագաստը, իսկ յիմարները դուրս մնացին:

Քսաներեքերորդ՝ նոյն տեղում ասում է. «Երբ գայ մարդու Որդին իր հօր փառքով, այնժամ նստելու է փառքի աթոռին» (Մտթ. ԺԹ 28), որ դատաստանի աթոռն է, եւ «այնժամ աջից կդնի ոչխարներին եւ ձախից՝ այծերին» (Մտթ. ԻԵ 33), այսինքն՝ կբաժանի արդարներին եւ մեղաւորներին, եւ արդարներին կասի՝ «Եկէ՛ք իմ Հօր օրհնեալներ», իսկ մեղաւորներին՝ «Անիծեալներ, գնացէ՛ք ինձնից յաւիտենական կրակը» (Մտթ. ԻԵ 41):

Ապա ուրեմն մինչեւ վերջին օրը չի լինելու արդարների եւ մեղաւորների բաժանում: Իսկ մինչ այդ ո՛չ արդարները փառք կստանան, ո՛չ էլ մեղաւորները՝ տանջանք:

Քսանչորսերորդ՝ այժմ ցոյց տանք բնական քննութեամբ, որ անկատարը չի կարող վախճանի կատարելութիւնն ընդունել, քանի դեռ իր յատուկ կատարելութեանը չի հասել, իսկ մարմնից բաժանուած հոգին տակաւին կատարեալ չէ՝ իր յատուկ կատարելութեամբ: Ապա ուրեմն հոգին չի կարող ստանալ կատարեալ վարձատրութիւն կամ տանջանք:

Քսանհինգերորդ՝ ամէն ազդեցութիւն կամ առարկայի վրայ է, կամ անձի, իսկ բաժանուած հոգին ո՛չ անձ է, ո՛չ էլ՝ իր: Ապա ուրեմն հոգին առանց մարմնի չի կարող ստանալ վարձ կամ պսակ՝ իբրեւ ստացող, իսկ երբ հոգին միաւորուի մարմնին եւ միասին դառնան անձ, այնժամ կարող է ստանալ փառք կամ տանջանք իբրեւ ստացող:

Քսանվեցերորդ՝ Աստծոյ արդարութիւն չի լինի, եթէ այժմ հատուցի, որովհետեւ մարմինն ու հոգին միասին են բարի կամ չար գործում: Եւ եթէ մարդու մասը, որ հոգին է, այժմ տանջուի մեղքերի պատճառով, իսկ մարմինը հանգստանայ, արդար չի լինի. այդպէս էլ՝ [եթէ] փառաւորուի: Այլ ինչպէս այս կեանքում հոգին եւ մարմինը միասին գործեցին, այդպէս էլ [միասին] այն կեանքը կընդունեն:

Քսանեօթներորդ՝ եթէ բոլորը ստանան վարձք կամ տանջանք, ապա [ուրեմն] չկայ յարութիւն, քանի որ յարութիւնը գործերի հատուցումն է: Նաեւ չկայ դատաստան, ո՞ւմ դատաստանն է լինելու, եթէ բոլորինը հատուցուած լինի:

Եւ սրան է հետեւում սադուկեցիների աղանդը, որ ասում էին՝ յարութիւն չկայ: Սրան յաջորդում է նաեւ նրանց այն կարծիքը, թէ մարմինն այլեւս չի կրելու տանջանք, որովհետեւ յարութիւն չի առնելու:

Քսանութերորդ՝ պարզորոշ է, որ այն կեանքի տանջանքը եւ փառքը յաւիտենական են լինելու եւ ոչ ժամանակաւոր: Ա՛րդ, եթէ արդարներն այժմ ստանան փառքը եւ դատաստանի ժամանակ դարձեալ դրանից փոխադրուեն, ուրեմն այն կեանքում ամէն ինչ անցաւոր է եւ փոփոխական, այսինքն՝ փառքն ու տանջանքը: Եւ սրան կհետեւի Որոգինեսի [ասած] հազարամեայ

արքայութիւնը[684], նաեւ տանջանքներից ազատուելը:

Քսանիններորդ, Տեսիլքում ասում է «Աթոռներից ներքեւ տեսայ յանուն Աստծոյ խօսքի եւ Յիսուս Քրիստոսի վկայութեան սպանուածների հոգիները, որոնք աղաղակում էին բարձր ձայնով՝ «Մինչեւ ե՞րբ, Սուրբ եւ ճշմարիտ Տէ՛ր, չես դատելու եւ չես առնելու մեր արեան վրէժը» (Յայտ. Զ 10): Արդ, եթէ Աստծոյ սիրելիները, որոնք յանուն Քրիստոսի հեղեցին իրենց արիւնը, [առայժմ] չեն առնում իրենց վարձը, ուրեմն այդպէս էլ՝ իւրաքանչիւր մարդ:

Երեսուներորդ՝ յայտնի է չորսի որպիսութիւնից, ինչպէս ասուեց վերը, որ այստեղ մարդու հոգին բարու եւ չարի մէջ է, մահից յետոյ՝ միայն բարու մէջ, յարութեանը՝ բարու եւ փառքի մէջ, իսկ մեղաւորների [հոգին] յարութիւնից յետոյ՝ չարի եւ տանջանքի մէջ:

Այսքանն այս մասին:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ
Պրակ ԺԳ

Հիմա տեսնենք հակառակորդների վկայութիւնները եւ պատշաճ պատասխաններ տանք, որպէսզի առձեռն պատրաստ ունենաք:

Նախ՝ որ հակառակում են՝ բերելով մեծատան եւ Ղազարոսի պատմութիւնը, որ մէկը Աբրահամի գոգին էր, միւսը՝ տանջանքների մէջ:

Ասենք, որ ինչպէս սուրբ Կիւրեղն է ասում «Գիրք Պարապմանց»-ում[685], սրանք իբրեւ առակ-օրինակ են՝ արդարների եւ մեղաւորների մասին, թէ ինչպէս է լինելու [աշխարհի] վախճանին:

«[Նրանք] հակառակը ստացան, ինչ, որ այստեղ ունէին»,- ասում է սուրբ Ներսէսը[686]: Ուստի պարզ է, որ մինչ Քրիստոս արդարներն էլ, մեղաւորներն էլ դժոխքում էին:

Պօղոսի խօսքում էլ է ասւում՝ «Ուզում եմ ելնել մարմնիցս եւ մտնել Աստծոյ մօտ» (Բ Կորնթ. Ե 8): Իսկ «Աստծոյ մօտ մտնելը» այն է, որ հեռանայ չարութիւնից եւ մտնի բարութեան մէջ եւ ոչ թէ փոխուի չարի, [քանի որ] Աստուած պահում է, ըստ այդմ՝ «Արդարների հոգիները Աստծոյ ձեռքին են, եւ չարը չի կարող նրանց մօտենալ»:

Դարձեալ նոյն գլխում ասում է. «Տաճար ենք Աստծոյ շինուածքով, ուստի խորշում [ենք այստեղից] եւ փափագում երկնքի բնակութեամբ զգեստաւորուել» (Բ Կորնթ Ե 2): «Տաճարի շինուածք» եւ «երկնքի բնակութիւն» ասելով՝ նկատի ունի երանելի մարմինը, որովհետեւ հոգով չենք կարող երանելի լինել, եթէ մարմնով երանելի չենք: Իսկ «փառքում բնակուելու» փոխարէն մէկ այլ տեղ ասում է «պատրաստ է» եւ ոչ թէ՝ «տրուած»: «Աչքը չի տեսել եւ ականջը չի լսել այն, ինչ պատրաստեց Աստուած իր սիրելիների համար» (Ա Կորնթ. Բ 9):

Դարձեալ՝ յղում են Սողոմոնի ասածին, թէ՝ «Մարմինը հող է դառնում, իսկ հոգին գնում է Աստծոյ մօտ, ով տուեց այն» (Ժող. ԺԲ 7): Սրան պատասխանենք. իսկ դու ինչպէ՞ս ես ասում՝ «գնում է դժոխք»: Ասենք նաեւ, որ Աստուած

ամենայն տեղ է, ուստի հոգիների կայանը որտեղ էլ, որ լինի՝ Աստծոյ մօտ է: Եւ թէպէտ այնտեղ ո՛չ փառք, ո՛չ տանջանք եւ ո՛չ չարչարանք կայ, այնուամենայնիւ ասում է՝ «Աստծոյ մօտ», որտեղ հոգիները պահելու տեղն է:

Դարձեալ [պատճառաբանում են]՝ «Կատարեալ անդրանիկների հոգին երկնքում է» [խօսքով]: Ասենք, որ «անդրանիկ եւ կատարեալ» ոչ թէ փառքի համար է ասում, որ դեռեւս ստանալու են, այլ՝ ըստ իրենց կատարեալ գործերի, որոնցով դարձան անդրանիկ՝ երանութեամբ եւ հանգստութեամբ:

Կամ բերում են օրէնքի խօսքը, թէ՝ «Քո վարձկանի վարձքը վաղուան մի՛ պահիր» (Ղեւտ. ԺԹ 13): Այս մասին ասենք, թէ ինչպէս այժմ չի կարելի պահել մարմնի մէջ, չեն ստանալու վախճանին եւս, այլ իրենց հոգու մէջ ընդունել են անմահութեան ու երանութեան յոյսը:

Կամ ասում են, ըստ Սողոմոնի «Յոյսի ուշացումը տանջում է հոգին»: Սակայն Գրիգոր Նիւսացին ասում է, որ նրանց յոյսը ոչ թէ տանջանք է, այլ՝ վայելչութիւն, քանզի Խոստացողը հաւատարիմ է եւ ճշմարիտ:

Կամ ասում են՝ «Տեսանելի յոյսը յոյս չէ» (Հռոմ. Ը 24)՝ ըստ Պօղոսի: Սակայն ասենք, որ նախ՝ կրկին է յոյսը: Յոյս կայ, որի ակնկալիքը հեռւում է եւ յոյս կայ, որ մօտ է տեսնւում:

Ա՛րդ, այս կեանքում յոյսը ակնկալում է հեռաւորը, իսկ յետմահու՝ յոյսը ընկալում է մերձական: Այլեւ՝ այս կեանքում յոյսը ստոյգ կարծիքի հետ է, յետմահու՝ ստոյգ գիտութեամբ է կամ ակներեւ, ինչպէս ասուեց վերը՝ երեսուներեքերորդ գլխի քսանչորսերորդ համարում:

Դարձեալ ասում են, թէ հոգին է սկզբից բարի գործում, քանի որ աւելի շուտ է իմանում եւ կամենում: Այս մասին ասենք, որ չնայած բարին հոգում աւելի առաջ է՝ մտքի եւ կամքի շնորհիւ, սակայն գործելիս՝ հոգին եւ մարմինը միասին են, այսինքն՝ հոգին նախ տեսնելով է ուրախանում եւ փառաւորւում, ապա՝ մարմնով կատարելապէս պսակադրւում:

Դարձեալ ասում են՝ «Նրանց սպիտակ հանդերձներ տուեց եւ ասաց, որ հանգստանան մի փոքր ժամանակ, մինչեւ նրանց ծառայակիցները եւ եղբայրները հաւաքուեն, ովքեր պատրաստւում էին վախճանուել նրանց նման» (Յայտ. Զ 11):

Տե՛ս տասներեքերորդ գլուխը:

Պատասխանենք, ըստ սուրբ Անդրէ մեկնիչի, սրբերը աշխարհի վախճանի [բացատրութիւնը] խնդրեցին, որոնց երկայնամտութեան [շնորհիւ] ցոյց է տալիս պատճառը, որովհետեւ Աստուած լաւագոյնը համարեց առանց մեզ պսակ չընդունել: Իսկ «սպիտակ հանդերձը» երեւան է հանում նրանց ծաղկած առաքինութիւնը, որ ցոյց է տալիս մարմնի պայծառութիւնը [նիւթական] թանձրութիւնից ազատուելուց յետոյ, որով զգեստաւորուած էին՝ նախքան խոստացուած փառքը, իսկ Աստծոյ մօտ հանգստի մէջ են, ինչպէս լսել ենք, եւ ճշմարիտ է ախտաւոր կրքերից զերծ

[նիւթական] թանձրութիւնից հանգստանալը եւ Աստծոյ մօտ գտնուողների մէջ:

Սակայն առայժմ դեռ չեն ընդունել փառքը մինչեւ սքանչելի երկրորդ գալուստը. այսպէս է [ըստ] մեծն Անդրէասի[687]:

Դարձեալ ասում են, թէ նոյն գլխում ասում է. «Տեսայ բոլոր ժողովուրդներին, որ կային աթոռի եւ Գառան առջեւ՝ իրենց սպիտակ հանդերձներով եւ ձեռքերում՝ արմաւենիներ» (Յայտ. է 9):

Մեկնիչն ասում է, թէ սպիտակ հանդերձը, որ կրում էին, Քրիստոսի շնորհների մաքրութիւնն է[688], որ բոլորս վայելեցինք, ինչպէս ասում է առաքեալը, քանզի հոգին, երբ մաքրւում է, ստանում է բնական պայծառութիւն: Իսկ պարզած արմաւենիները յաղթանակն են խորհրդանշում:

Դարձեալ ասում են՝ Մատթէոսի [Աւետարանում] ասւում է՝ «Տանուտէրն ասաց՝ կանչի՛ր մշակներին եւ տո՛ւր նրանց վարձը» (Մտթ. Ի 8). «կանչելը» մահուանն է ասում, «վարձը»՝ իսկոյն հատուցումը: Նկատենք, որ այս պատասխանի վերաբերեալ նախապէս ասուել է, որ առակում ուղղակի իմաստով չէ, այլ երեկոն՝ աշխարհի աւարտն է, որովհետեւ «Հազար տարին Տիրոջ աչքում մի երեկոյեան օր է» (Սղմ. ՁԹ 4), իսկ «կանչելը» հոգու եւ մարմնի միաւորումով կատարուող մեռեալների յարութիւնն է ցոյց տալիս: Նաեւ «մշակ» է ասում, որովհետեւ հոգին առանց մարմնի չի կարող վաստակել, ուստի վարձը հոգուն եւ մարմնին է տալիս, ինչպէս որ վարձը տուեց բոլոր մշակներին:

Դարձեալ վկայում են Ղուկասի Աւետարանը, ուր ասւում է. «Մէկը, որ բարեկամ ունէր, գնաց նրա մօտ գիշերով եւ ասաց՝ երեխաներս ինձ հետ են» (Ղուկ. ԺԱ 7), [որտեղ] անկողնի երեխաները [խորհրդանշում են] Քրիստոսի կողքի արդարներին, իսկ «կէսգիշերը»՝ այս կեանքն է, ապա ուրեմն վարձը ստացել են [ըստ նրանց]: Սակայն, սխալ են ընկալում առակը, որովհետեւ մեծն Իգնատիոս մեկնիչն այս խօսքի վրայ ասում է, որ եկած բարեկամը պահանջող հրեշտակն է, որ գալիս է մահուան օրը, իսկ առաջին բարեկամը Աստուած է[689]: Արդ, եկած հրեշտակը նրանից բարի գործերն է խնդրում, որով կերակրւում է, իսկ մարդու հոգին ծանր կացութեան մէջ մտնելով՝ դիմում է մտքին, որ երրորդ բարեկամն է, եւ խնդրում բարի [գործերը յիշատակել, սակայն] միտքը պատասխանում է, թէ՝ «փակ են դռները», այսինքն զգայարանները խցանուած են եւ մեղքի երեխաներն իր հետ են եւ թոյլ չեն տալիս: Սակայն հոգին թախանձում է, որ թերեւս ստեղծուած կացութիւնից մի ելք գտնուի, քանի որ յոյժ պնդելու հետեւանքով արթնացած միտքը հաւատոյ խոստովանութիւն է անում Սուրբ Երրորդութեանը, որի [մասին] առակեց երեք նկանակներով (տե՛ս Ղուկ. ԺԱ 5): Իսկ «գիշեր» անուանում է մահուան օրը, հետեւաբար առակն արդարների հատուցման մասին չէ:

Դարձեալ փաստարկում են, որ Տէրն ասաց աւազակին՝ «այսօր ինձ հետ դրախտում ես լինելու» (Ղուկ. ԻԳ 43), ուրեմն հատուցեց, որովհետեւ «այսօրը» ներկան է: Եւ ասում է Տեսիլքում՝ «Նրանց սպիտակ հանդերձներ տուեց» (Յայտ. Զ 11): Առաջինի վերաբերեալ ասենք, որ ինչպէս Քրիստոսի հետ ոչ ոք խաչ չի բարձրացել, բայց միայն աւազակը, այդպէս էլ ոչ ոք պատիւ չի առել, բացի աւազակից: Կատարուածը ոչ թէ Դատաստանի կարգից է, այլ Միածնի հրաշքներից, ինչպէս արեգակի խաւարելը, գերեզմանների բացուելը եւ այլն: Երկրորդի վերաբերեալ ասենք, որ Տեսիլքում ոչ թէ հատուցման մասին է խօսում, այլ գիտելիքն է յայտնի դարձնում, որով արդարներն իմանում են, որ նրանց համար այդպիսի փառք է պատրաստուած, որպէսզի յուսով վայելեն մինչեւ Դատաստանի օրը:

Դարձեալ իբրեւ փաստարկ բերում են երկնային ձայնը, թէ՝ «Եկէ՛ք իմ ծառաներ եւ հանգստացէք», նաեւ լուսեղէն պսակը, որ իջնում էր նրանց վրայ (Յայտ. Դ 4), յայտնապէս ցոյց է տալիս իմանալի պսակները:

Ասենք, որ ձայնով եւ պսակով մարդկանց ցոյց տուեց, աչքին եւ ականջին յայտնի դարձրեց, որ այսպիսի կեանք է վիճակուելու նրանց, ովքեր մարդկանց մէջ սուրբ են՝ մահուան սկզբով եւ յարութեան աւարտով, ինչպէս ասուեց:

Իսկ այն, որ ասում են, ի՞նչ են արդարների փառքն ու պսակը, եթէ ոչ Աստծուն տեսնելը, որ ունեն հոգիները, ապա ասենք՝ եթէ չգիտես՝ ի՞նչ է արդարների փառքն ու պսակը, ապա գնա՛ առաքեալից սովորիր, [քանզի ասում է]՝ «ուզում եմ ելնել մարմնից եւ մտնել Աստծոյ մօտ» (Բ Կորնթ. Ե 8), որ տեսնելն է եւ հանգիստը: Եւ՝ «Կայ եւ մնալու է ինձ արդարութեան պսակը, որ հատուցելու է ինձ արդար դատաւորը այդ օրը» (Բ Տիմ. Դ 8). այս էլ սրբերի փառքը եւ պսակն է:

Եւ որ սա եւ այն տարբեր են, յայտնի է երկու [հանգամանքով]: Նախ որ առաքեալը տարբերեց մահից յետոյ տեսնելը եւ յարութեան պսակը: Երկրորդ՝ տեսնելը հաւատի փոխարէն է, որ ստանում է հոգին, իսկ պսակը՝ գործերի, որ առնում է մարմինը: Սա կատարեալների համար է, որ երկնքում են, իսկ միջակ արդարները, որ հոգիների կայանում են պայծառութեամբ կընկալեն տեսնելը յարութեան ժամանակ՝ դէմ յանդիման, ինչպէս որ կան. ըստ Յոբի՝ «իմ մարմնով եմ տեսնելու Աստծուն դէմ յանդիման» (տե՛ս Յոբ ԺԹ 25-26):

Այսքանը հակառակորդներին առարկութիւններն են եւ ուղղափառների պատասխանները:

ԿՐԱԿԻ ՔԱՒԱՐԱՆ ՉԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԴ

Հարց. Ովքե՞ր են, որ ասում են կրակի քաւարան [կայ] եւ ինչ պատճառով:

Պատասխան. Ուղղափառ բոլոր վարդապետները համաձայն լինելով

աստուածային Գրքին՝ ընդհանրապէս չեն խօսում կրակի քաւարանի մասին[690], այլ միայն ֆռանկ վարդապետները տարաբաժանուած բոլորից՝ բարձրաձայնում են Բերգաթուրի մասին:

Մենք չորս պատճառով ենք փաստարկում հրի քաւարանի չլինելը:

Նախ՝ որովհետեւ հակառակ է Սուրբ Գրքին եւ ուղղափառ վարդապետներին, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում:

Երկրորդ՝ ի չիք է դարձնում երկրորդ գալուստը եւ դատաստանի հատուցումը, որովհետեւ, երբ ոմանք քաւեն եւ մտնեն արքայութիւն, իսկ ոմանք էլ յաւիտենական տանջանքի [դատապարտուեն], դա կլինի հատուցումը: Իսկ հատուցումը մի օր է լինելու եւ ո՛չ ամէն օր, ինչպէս ասուեց վերը:

Երրորդ՝ իզուր են դառնում աղօթքները, նուիրատուութիւնները եւ այլ օժանդակութիւնները եկեղեցուն, եթէ ինքնըստինքեան կարող են քաւել:

Չորրորդ՝ ակնյայտօրէն զրկում է ժողովրդին փրկութիւնից եւ ընկղմում մեղքի ծուլութեան մէջ, որովհետեւ այն քաւարանի [յոյսով] այստեղ պահեցողութիւն չեն անում եւ չեն աղօթում, իսկ յետոյ մատնւում են դժոխքի:

Իսկ նրանք, ովքեր պնդում են քաւարանի [գոյութեան] մասին, մեղանչում են չորս կերպ: Նախ՝ անիմաստ են դարձնում խոստովանութիւնը եկեղեցում, որովհետեւ ապաւինելով քաւարանին՝ կորստեան են մատնւում:

Երկրորդ՝ առանց ահի եւ ամօթի մեղքեր են գործում, որովհետեւ [նրանք] ովքեր այս կեանքի պատիժները ստանալու ակնկալութեամբ են՝ երկնչում են չարից կամ քիչ են գործում, իսկ եթէ դա հեռւում են տեսնում, ոչնչից չեն վախենում:

Երրորդ՝ դատաստանի ահը, որ վախեցնում է բոլորին, նրանց քաւարան ասածը վերացնում է դատաստանի երկիւղը:

Չորրորդ՝ ոչնչի են հաւասարեցնում [այն] աստուածային իշխանութիւնը, որ տրուած է եկեղեցուն. «Ինչ մի անգամ կապեցիք երկրում, կապուած կլինի երկնքում, եւ որ արձակւում է երկրում՝ արձակուած լինի երկնքում» (Մտթ. ԺԸ 18), իսկ [սրանք] քաւարանի զօրութիւնը առաւել են ասում, քան՝ Քրիստոսի:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐ ԿՐԱԿԻ ՔԱՒԱՐԱՆ ՉԿԱՅ

Նախ ասում է Եսայի մարգարէն, եւ նոյնը երկրորդում առաքեալը, որ՝ «Ահա ընդունելի ժամանակը, ահա փրկութեան օրը, այլ պատճառներ մի՛ բերէք, որպէսզի չարատաւորուի պաշտամունքը» (Ես. ԽԹ 8, Բ Կորնթ. Զ 2): Արդ, եթէ ճշմարիտ են մարգարէն եւ առաքեալը, թէ՝ ահա այստեղ է ընդունելի ապաշխարութիւնը եւ հոգու փրկութիւնը, ապա սուտ են նրանք, ովքեր ասում են, որ այլ տեղ են ասում փրկութիւնը եւ քաւարանը:

Երկրորդ՝ Պետրոսն ասում է «Կաթողիկէ»-ում. «Տէրը գիտէ աստուածապաշտին փրկել փորձութիւնից, իսկ անիրաւներին պահել տանջանքի մէջ՝ դատաստանի օրը» (Բ Պետ. Բ 9): Եւ

մեկնիչն ասում է, որ աստուածապաշտ են [նրանք], ովքեր խոստովանում են մեղքը, որոնց գիտէ Տէրն այս աշխարհում փրկել՝ առանց քաւարանի կրակի[691]: Եւ անիրաւները, ովքեր չեն խոստովանում մեղքը, նրանք դուրս չեն պրծնելու ձեռքից, այսինքն՝ Աստծոյ պատժից, որովհետեւ մեծագոյն «ահ է ընկնել կենդանի Աստծոյ ձեռքը» (Եբր. Ժ 31) անաչառ դատաստանի ժամանակ եւ ո՛չ այժմ:

Երրորդ՝ ասում է Եսային. «Ասա՛ քո անօրէնութիւնը եւ կարդարանաս, եւ քո մեղքն այլեւս չի յիշուի» (Ես. ԽԳ 26): Նոյնը երկրորդում է Դաւիթը. «Ասացի, եթէ պատմեմ իմ մեղքերի մասին, դու կներես իմ մեղքերի բոլոր ամբարշտութիւնները» (Սղմ. ԼԱ 5): Ապա ուրեմն, խոստովանութեամբ են քաւում մեղքերը եւ ո՛չ կրակով:

Չորրորդ՝ Տէրն ասում է՝ «Ինչ կապուի երկրում, թող կապուած լինի երկնքում, եւ որ արձակուի երկրում, թող արձակուի երկնքում» (Մտթ. ԺԸ 18): Ապա ուրեմն, այստեղ խոստովանութեամբ մեղքից արձակուածներն այնտեղ կազատուեն տանջանքից:

Հինգերորդ՝ հոգին եւ մարմինը միասին են մեղք գործում, ինչպէս վերն ասուեց, իսկ հոգին միայնակ չի կարող քաւել անչափելի մեղքերը, [առաւել եւս] որ մեղքի պատճառ աւելի յաճախ մարմինն է լինում, քան հոգին, ուստի պատշաճ չէ, որ հոգին մարմնի փոխարէն միայն ինքը վճարի, ուստի այնտեղ քաւարան չկայ:

Վեցերորդ՝ մահն անփոփոխելի կեանքի սկիզբն է, ուստի չի կարող փոխուել մեղքից արդարութեան, ինչպէս որ հրեշտակներն անկումից յետոյ չկարողացան փոխուել արդարների, որովհետեւ նրանց անկումը նրանց մահն է, ասում է Գրիգոր Նիւսացին[692]: Այդպէս էլ հոգին մարմնից բաժանուելուց յետոյ չի կարող քաւել [մեղքերը]:

Եօթներորդ՝ մարգարէն ասում է. «Մեռեալները չէ, որ խոստովանելու են քեզ, [նրանք չեն] որ օրհնելու են քեզ» (Ես. ԼԸ 18): Արդ, եթէ մեռեալները չեն խոստովանելու եւ օրհնելու, ապա չեն էլ ինքնուրոյն ապաշխարելու կամ քաւելու [իրենց] մեղքերը: Եւ Դաւիթն ասում է, «Եթէ հոգին, ելնում է, այլեւս չի վերադառնում» (Սղմ. ՀԷ 39), այսինքն չի դառնում ներքեւ՝ ներկայիս աշխարհը, եւ ո՛չ էլ կարող է ապաշխարել, ասում է մեկնիչը:

Ութերորդ՝ ապաշխարութիւնն ակնկալում է մարմնական տանջանք՝ մարմնական գործերի համար, իսկ դատարկ հոգին քաւարանում աչք չունի, որ լացի, որով արատին նայեց, մարմին չունի, որ պահեցողութիւն անի եւ աղօթի, կամ՝ զղջայ, ուստի հոգին ինքնուրոյնաբար չի կարող զղջալ: Ու նաեւ՝ ապաշխարութիւնը պէտք է կամաւոր լինի, իսկ քաւարանում հարկադրաբար է տանջւում, հետեւաբար քաւարան չկայ:

Իններորդ՝ քաւարանի հուրն ըստ նրանց՝ պատիժ է, ուստի եթէ մարմինն էլ է մեղք գործել, նա էլ պէտք է պատիժ կրի, եւ յայտնի է, որ մահը մեր բնութեան

պատիժն է եւ ոչ թէ մարմնի, իսկ յարութեան ժամանակ [եթէ քաւարան կայ]՝ հարկ է լինելու, որ մի անգամ տանջուած հոգին մի անգամ եւս մարմնի հետ տանջուի, ինչն անհնար է: Եւ կամ՝ արժանի չէ միաւորուելու մարմնին, որովհետեւ նա քաւել է, սա՝ ոչ, մինչ մարմինը եւս տանջուի եւ քաւի, որ երկուսի համար էլ պատշաճ չէ:

Տասներորդ՝ նրանք [ովքեր] կենդանի կգտնուեն դատաստանի օրը, քաւարան չեն կարող գնալ, որովհետեւ մինչ այդ օրն են ասում քաւարանը[693], եւ նոյն ժամին փառքի մէջ [կլինեն] կամ տանջանքի: Այդպէս էլ այժմ, քանի որ դեռ մարմնի մէջ ենք՝ քաւութեան հնարաւորութիւն ունենք, մահից յետոյ քաւարան չկայ:

Տասնմէկերորդ՝ պատժին մեղքի չափ եւ ժամանակ կայ՝ ըստ իւրաքանչիւրի, որ յայտնի է Կանոնագրքից, սակայն քաւարանում ժամանակ չկայ, որովհետեւ ժամանակը արեգակի եւ լուսնի հետեւանք է, իսկ այնտեղ սրանք չկան, ապա ուրեմն այնտեղի պատիժը դժոխքն է, որ յաւիտենական է եւ անվրէպ, եւ քաւարան չկայ:

Տասներկուերորդ՝ հարց եմ տալիս՝ քաւարանի կրակը ժամանակաւոր է, թէ՞ յաւիտենական: Եթէ յաւիտենական է, ապա տանջանք է եւ ոչ քաւարան, իսկ եթէ ժամանակաւոր է՝ [այդ նշանակում է] աստուածային խօսքին հակառակ էք ասում, որովհետեւ Տէրը մէկ հուր ասաց եւ այն էլ՝ յաւիտենական, ըստ այդմ՝ «գնացէ՛ք ինձանից յաւիտենական կրակը», ապա ուրեմն քաւարան չկայ, ո՛չ էլ ժամանակաւոր տանջանքի կրակ:

Տասներեքերորդ՝ Աստծոյ ողորմութեամբ իւրաքանչիւրը կարող է մեղքից խուսափել եւ արժանանալ արքայութեան: Ա՛րդ, ողորմութիւնն Աստծունն է այս աշխարհում, քանի դեռ կենդանի ենք, իսկ մեռածի եւ այնտեղ գնացածի համար՝ այնտեղ բացորոշ կերպով արդարութիւն է եւ ո՛չ ողորմութիւն: Ապա ուրեմն դրանից խուսափելու հնար այնտեղ չկայ: Եւ որ այնտեղ ողորմութիւն չկայ, յայտնի է [նաեւ] յիմար կոյսերի մասին [առակից], եւ որ ազատում չկայ տանջանքներից, յայտնի է մեծատան մասին [առակից]:

Տասնչորսերորդ՝ եթէ մեղաւորները կարող են կրակից դուրս գալ եւ մտնել արքայութիւն, ուրեմն պէտք է ենթադրել, որ արդարներն էլ կարող են դուրս գալ Աստծոյ արքայութիւնից եւ գնալ դժոխք: Սակայն, որ այդ անհնար է, ասաց Աբրահամի եւ մեծատան մասին [առակում]. «Չեն կարող այստեղից այդտեղ գալ եւ ոչ այդտեղից՝ այստեղ» (Ղուկ. ԺԶ 26): Ապա ուրեմն հրի քաւարան չկայ:

Տասնհինգերորդ՝ եթէ այժմ կայ հոգիների քաւարան, ուրեմն վախճանի դատաստանը լիակատար չէ, որովհետեւ [ըստ նրանց] այժմ քննութիւն է հոգու մասի համար, իսկ այնժամ մարմնի մասի, մինչդեռ, եթէ վախճանին դատաստանը լիակատար եւ բոլորինն է լինելու, ուրեմն հիմա մասնաւոր քննութիւն հոգիների չի կարող լինել: Ուրեմն եթէ քաւարան կայ, չկայ դատաստան, որովհետեւ դատաս-

տանի գործը այժմ [քաւարանն] է կատարում, ինչպէս վերն ասուեց: Իսկ եթէ դատաստան չկայ, չկայ ուրեմն մարմնի յարութիւն եւ գործերի հատուցում, ուրեմն եւ ո՛չ էլ Քրիստոսի գալուստ, ինչպէս սուրբ Կիւրեղն է ասում: Իսկ եթէ հիմա հոգու դատաստան կայ եւ հատուցում՝ ըստ գործերի, արդարների փառք եւ մեղաւորների տանջանք, իսկ այնժամ [լինելու է] մարմնի [դատաստան], ինչպէս նրանք են ասում, ապա յարութեան ժամանակ կլինի ոչ թէ ամբողջ մարդու հատուցումը, այլ միայն մարմնի, ինչպէս ցոյց տրուեց:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔԱՒԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԵՒ ՆՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ
Պրակ ԺԵ

Հարց. Ի՞նչ պատճառաբանութեամբ են քաւարան ասում:

Պատասխան. Երկու պատճառով:

Նախ, իրենց հեշտասիրութեան պատճառով, որից չեն ուզում դառնալ, իրենց գործերի համար բացատրութիւններ են հնարում, որ իբր թէ ակամայ խուսափեն տանջանքից: Երկրորդ՝ վկայութիւններ են բերում Սուրբ Գրքից եւ մեկնում են ըստ իրենց կամքի, եւ շատերը մոլորւում են նրանց մեկնութիւններին [հետեւելով] ու կործանւում նրանց առասպելների պատճառով: Եւ այսպէս են ասում. նախ՝ թէ մեղքի խոստովանութիւնից յետոյ պատիժը մնում է, ինչը քաւում է ապաշխարութիւնը, ինչպէս յայտնի է կանոններից, սակայն եթէ մէկն այստեղ չի հասցնում պատիժ կրել, մահից յետոյ կրում է այնտեղ կրակի մէջ եւ քաւութիւն ստանում:

Ասենք, որ չարի պատիժը, որ մեղքի պտուղ է, եւ մեղքը խոստովանելով, եթէ լուծւում է նաեւ չար պտուղը, ինչո՞ւ են կանոնները սահմանում ապաշխարութիւնը, որը ցանկապատ եւ պարիսպ է մեղաւորի համար, ինչպէս վերն ասուեց՝ խոստովանութեան ճառում:

Դարձեալ ասենք, որ ննջեցեալի պատիժը, որը նա չի կարող քաւել, սուրբ եկեղեցին եւ քահանաների աղօթքը հատուցում են նրա պարտքը եւ քաւում. ինչպէս Գրիգոր Աստուածաբանն է ասում՝ Մաքսիմիանոսին [ուղղուած թղթում]՝ «Մենք՝ ողջերս, քաւում ենք ննջեցեալների պարտքերը, որ նրանք չեն կարող [քաւել], եւ հատուցում»[694]:

Երկրորդ՝ ասում են Աստծոյ արդարութիւնը պահանջում է, որ մեղքին պատիժ տրուի, ինչպէս մարդկային օրէնքը պատժում է յանցաւորներին: Եւ եթէ այստեղ կամաւոր չեն կրում պատիժը, այնտեղ Աստուած պատժում է կրակով եւ քաւում: Նախ ասենք, որ մեղքը երեք տեսակ է՝ անգիտութեամբ, գիտութեամբ եւ չարութեամբ: Եւ ա՛րդ, անգիտութեամբը ներելի է, գիտութեամբը՝ ապաշխարելի, իսկ չարութեամբը պատժելի է այստեղ՝ ժամանակաւոր, այնտեղ՝ յաւիտենական: Եւ ասենք, որ խոստովանողի պատիժն ամօթն է, որ կրում է քահանայի առջեւ եւ յաւիտեան չի կրում: Ա՛րդ, որոնք [արդէն իսկ] կրեցին քահանայի առջեւ, նրանց

պատիժը չի կարող կրկնուել, որովհետեւ ամէն ոք մի անգամ է սպանւում, ոչ երկու:

Երրորդ՝ ասում են, որ ամբողջ աշխարհը նորոգուելու է կրակով, ինչպէս Պետրոսն է ասում՝ նոր երկինք եւ նոր երկիր է լինելու (տե՛ս Բ Պետ. Գ 13), ապա ուրեմն հոգիներն էլ նորոգուելու են քաւարանի կրակով: Նախ ասենք, որ նիւթական լինելով՝ երկինքն ու երկիրը նորոգուելու են նիւթական կրակով, իսկ հոգին, քանի որ աննիւթ է, նորոգուելու է Քրիստոսի շնորհով եւ Սուրբ Հոգով: Ասենք նաեւ, որ հաւասարապէս բոլորս էլ անցնելու ենք վախճանի կրակով, սակայն ո՛չ քաւարանի հրով, քանի որ քաւարան չկայ:

Չորրորդ՝ վկայակոչում են [մարգարէի խօսքը], թէ՝ «Անցանք կրակով եւ ջրով, բայց մեզ անդորր տուեցիր» (Սղմ. ԿԵ 12): Նախ ասենք, որ Դաւիթ մարգարէն ամբողջ աշխարհին ասում է, որ անցնելու է ջրով եւ կրակով, ապա լինելու է յաւիտենական խաղաղութիւն, որովհետեւ յայտնի է, որ քաւարանում ջուր չկայ: Ասենք նաեւ, որ «ջուր» մկրտութիւնն է անուանւում, իսկ «կրակը»՝ մեղքերի խոստովանութիւնը:

Հինգերորդ՝ [վկայակոչում են] առաքեալին, որ ասում է՝ «Ով կառուցում է փայտի, խոտի, եղեգնեայ հիմքի վրայ, տուժում է: Եւ որ ոսկու, արծաթի, ակնեղէնի...» (Ա Կորնթ. Գ 12) եւ այլն: Ա՛րդ, նախ պէտք է իմանալ, որ հիմքը մեր միջի հաւատն է, շինութիւնը՝ գործերը, ոսկին՝ հաւատքի մտածումները, արծաթը՝ քարոզութեան նիւթը, պատուական ակները՝ բարի գործերը: Եւ անհրաժեշտ է, որ սրանք լինեն հաւատով, որովհետեւ ով առանց հաւատի է խորհրդածում, նոյնն է, թէ մէկը փորձի տեսնել արեգակն՝ առանց աչքի: Եւ նա, որ քարոզում է առանց հաւատի, չի յայտնում Աստծոյ հաւատարիմ խօսքը: Եւ որ բարի գործ է կատարում առանց հաւատի, նա է, որ կառուցում է աւազի վրայ:

Նաեւ՝ ոսկին հաւատը եւ անապական դաւանաբանութիւնն է, արծաթը՝ անբիծ մաքրութիւնը մեղքից, պատուական քարերը՝ զանազան առաքինութիւնները:

Դարձեալ՝ արծաթը սրտի եւ մտքերի մաքրութիւնն է, ոսկին՝ ճշմարիտ եւ արդար խօսքը, պատուական քարերը՝ մարմնական գործերը, պահքը, աղօթքը, ողորմութիւնը եւ այլն:

Դարձեալ՝ ոսկին սուրբ հաւատն է, արծաթը՝ պայծառ յոյսը, պատուական քարերը՝ սէրն է Աստծոյ եւ ընկերոջ հանդէպ, որով կատարւում են բոլոր բարեգործութիւնները:

Իսկ նրանք, ովքեր փայտ[ով] են կառուցում՝ ժամանակաւոր կրքոտ սէրն է, խոտը՝ մարմնական ցանկութիւնների ծուխը, եղէգը՝ դատարկաբանութիւնը եւ տկար գործերը:

Ա՛րդ, այս նիւթերով են փրկում հաւատի հիմքերը, իբրեւ թէ կրակով, սակայն շինուածքը [կարող է] այրուել, եւ [ամենեւին] պատշաճ չէ հաւատին այդպիսի հիմքը:

Նաեւ՝ այլ վարդապետներ փայտ, խոտ եւ եղէգ ներելի մեղքերն են անուանում՝ առաւել, նուազ կամ միջակ: Ոմանք էլ՝ մեղքի երեք տեսակներ են [ցոյց տալիս]. սկզբնականը, որ խոտն է, ներելին՝ եղէգը, մահացուն՝ փայտը: Դարձեալ՝ խոտը խորհուրդների մտաւոր մեղքն է, եղէգը՝ յանցաւոր խօսքերը, փայտը՝ մարմնական մեղքերը:

Եւ բոլորն էլ անցնելու են կրակի միջով եւ ընդառաջ գնալու Քրիստոսի գալստեանը՝ «Եւ երկինքն ու երկիրը կվառուեն հրով», այսինքն՝ տարրերը կմաքրուեն դիւական եւ մարդկային մեղքերից: Եւ այս կրակով անցնողները, որ զգեստաւորուած են ոսկով, արծաթով, ակնեղէնով, աւելի կպածառանան, իսկ նրանք, որ ծղոտ ու խոտ են, կայրուեն հրով:

Վեցերորդ՝ ասում են ահա սա է քաւարանի կրակը: Ասենք, որ՝ ոչ: Նախ, որ այստեղ այժմեան կեանքի շնորհն է, իսկ այնտեղ՝ փառքը, ինչպէս այստեղ մեղքն է, այնտեղ՝ պատիժը եւ ոչ թէ քաւարան: Ասենք նաեւ, որ սուրբ Ոսկեբերանը չորս կերպ է հակադարձում եւ սուտ [համարում] նրանց: Նախ, որ նրանք ժամանակաւոր են ասում հուրը եւ հոգու տանջանքը, իսկ Ոսկեբերանը՝ մի հուր է ասում եւ յաւիտենական տանջանք: Երկրորդ՝ նրանք ասում են, որ արդարները չեն անցնելու հրով, իսկ Ոսկեբերանն ասում է բոլորն են անցնելու, եւ [արդարները] աւելի են պայծառանալու: Երրորդ՝ նրանք փայտը, խոտը, եղէգը ներելի են կոչում, որ այնտեղ վճարում եւ ազատւում են, իսկ Ոսկեբերանը մահացու է կոչում փայտը, խոտը, եղէգը եւ [համարում] յաւիտենապէս այրուելու նիւթ: Չորրորդ՝ սրանք իւրաքանչիւրի հոգու բաժանելու հետ են ասում, իսկ Ոսկեբերանը՝ վերջին օրն է [ասում] ամէնքի այրուելը[695]:

Ասում է նաեւ Մաղաքիա մարգարէն. «Գալու է Տիրոջ օրն իբրեւ հալոցքի բոց եւ լուացող օճառի նման մաքրելու է ղեւտացիներին, ինչպէս ոսկին եւ արծաթը» (Մաղ. Գ 2):

Ապա ասում է. «Տիրոջ օրն իբրեւ հնոցի բոց այրելու է անօրէններին եղէգի նման, եւ չի մնալու նրանցից ո՛չ ճիւղ եւ ո՛չ արմատ» (Մաղ. Դ 1), որ փայտն ու խոտն են: Ահա փայտը, խոտը, եղէգը, որ նրանք ակնյայտօրէն քաւարանի վերաբերեալ են ասում, Մաղաքիան մեծամեծ մեղքերի վերաբերեալ է ասում: Նոյնը մեր վարդապետներն են ասում, ինչպէս Տեսիլքի երեսունչորսերորդ գլխի վերաբերեալ՝ մեկնիչը[696]:

Ինչպէ՞ս են ունայնախոհներն ասում, թէ՝ տանջանքները վերջ ունեն, թերեւս կարծելով, թէ մաքրուելու են կրակի մէջ, ինչը թո՛ղ որ չխորհեն ճշմարտութեան աշակերտները: Եւ մի փոքր անց նոյն գլխում այն խօսքի վրայ, թէ՝ «Կինը փախաւ անապատ, որպէսզի կերակրուի այնտեղ» (Յայտ. ԺԲ 6) ասում է, թէ դրոշմուածները մարմնից դուրս գալուց յետոյ թռչում են երկնքի մեղքի անապատ՝ յուսով կերակրուելու այնտեղ, մինչ հասնի աշխարհի վախճանը: Իսկ քառասուներկուերորդ գլխում «Նրանք

տանջուելու են հրով եւ ծծմբով եւ նրանց ծուխը ելնելու է յաւիտեանս յաւիտենից» (Յայտ. ԺԴ 10), խօսքը մեկնաբանում է, թէ ինչպէս արդարների փափկութիւնն է յաւիտենական, այդպէս էլ՝ մեղաւորների տանջանքը: Քիչ անց, նոյն գլխում ասում է, որ հրեշտակի տեսքը ոչ թէ զգայական է լինելու, այլ բոլորի սրտերում ամբարիշտների խորհուրդների պատուհասը այդպէս է կերպարանաւորուելու, իսկ պատիժ [կստանան] արդար դատաստանից յետոյ:

Իսկ քառասունհինգերորդ գլխում «Ոչ ոք չի կարող մտնել տաճար մինչեւ չհասցուեն եօթը հրեշտակների եօթը հարուածները» խօսքը մեկնաբանում է, թէ՝ [չի լսուելու] ո՛չ արդարների հանգստանալու աղաչանքը եւ ո՛չ մեղաւորների տանջանքների հառաչանքը, մինչեւ վերջանան Աստծոյ բարկութեան հարուածները երկրի վրայ, որով կփորձուեն արդարները եւ մեղաւորները, ապա բնակութեան համար սրբերին կտրուի վերին տաճարը:

Տեսէ՛ք, եղբայրներ, սուրբ վարդապետների մեկնութիւնները, որ այնտեղ կրակի քաւարան չկայ:

Եօթներորդ, հարցնում են, թէ ի՞նչ է նշանակում Յովհաննէսի [խօսքը] թէ՝ «Քեզ մօտ իմ գալու ժամանակ ընկրկելու է կրակը» եւ այլն:

Նախ ասենք, որ Քրիստոսի մօտ գնալը յարութեան մասին է ասում եւ վերջին հրի, ինչպէս որ մեր բոլոր աղօթքները վախճանի եւ յարութեան վերաբերեալ է: Եւ չի ասում «հոգու գալը», այլ «իմ գալը», որ հոգին եւ մարմինն են [միասին]:

Դարձեալ, թէպէտ այս բոլորը հոգու վերաբերեալ ենք ասում, ինչպէս սա, Անտօնի տեսիլքը եւ այլն, սակայն սա ոչ թէ քաւարան է, այլ դեւերի պատերազմ, որ այստեղ մարմնով, իսկ մահից յետոյ հոգով է լինում, ըստ առաքեալի՝ «Մեր պատերազմը իշխանութիւնների եւ պետութիւնների դէմ է, որ երկնքի տակ են» (Եփես. Զ 12), որովհետեւ տանջարաններ են ստեղծում, սառնամանիքներ անում, հուր բորբոքում, եւ ինչ որ լինելու է վախճանին, ցոյց են տալիս այնտեղ, սակայն պատգամաբեր հրեշտակը արգելում է, ասելով՝ «Սաստելու է ձեզ Տէրը» (Յուդա Ա 9), ինչպէս Միքայէլ [հրեշտակապետը][697] Մովսէսի մարմնի դէպքում, եւ կորչում են դեւերը: Եւ սա քաւարան չէ:

Ութերորդ՝ ասում են «Բանտ է նետելու մինչեւ հատուցի վերջին լուման» (Մտթ. Ե 26), հետեւաբար քաւարանը նկատի ունի: Նախ ասենք, որ սուրբ Ոսկեբերանը սա մեկնում է իբրեւ դատաւորի եւ հատուցման [յարաբերութիւն] հետեւեալ կերպ. այս կեանքը ճանապարհ է, մարմինը՝ ոսոխ, միտքը՝ դատաւոր, խղճմտանքը՝ դահիճ, որ հոգին չարչարում է եւ ազատութիւն չի տալիս՝ մինչեւ պարտքերը հատուցի ապաշխարութեամբ: Նմանապէս, ով իր եղբօրը յիմար է ասում, այստեղ պարտաւոր է դառնում խղճմտանքի դատաստանի եւ գեհենի[698]:

Ասենք նաեւ, որ այլ վարդապետներ էլ [հետեւեալ կերպ են] մեկնաբանում դատաստանի օրը, ինչպէս սուրբ Եւագրիոսը՝ «Լուսաւոր պատերազմի» մէջ ասում է. «Երբ սատանան գեհենի կրակում կկախուի քեզնից եւ կպահանջեն վերջին լուման»[699]: Դատաւորը Աստուածն է, դահիճները՝ հրեշտակները, բանտը՝ դժոխքը: Եւ այնտեղ «մինչեւ»-ը ոչ թէ ժամանակի ակնթարթ է, այլ՝ յաւիտենութեան, ինչպէս այն, որ ասում է՝ «Չիմացաւ նրան մինչեւ ծնուեց անդրանիկ որդին» (Մտթ. Ա 25), որովհետեւ ոչ առաջ եւ ոչ յետոյ չիմացաւ նրան: Եւ որ ասում է՝ «Յաւիտենից յաւիտեանս դու ես» (Սղմ. ՁԹ 2), մի՞թէ այս յաւիտենականից յետոյ էլ չէ: Եւ Տէրն ասում է. «Ես ձեզ յետ եմ մինչեւ աշխարհի վերջը» (Մտթ. ԻԸ 20), մի՞թէ դրանից յետոյ էլ չէ: Եւ այն որ ասում է. «Նստի՛ր իմ աջ կողմում՝ մինչեւ քո թշնամուն դնեմ ոտքերիդ տակ» (Սղմ. ՃԹ 1), մի՞թէ դրանից յետոյ Որդին չի նստելու Հօր աջ կողմում:

Այսպէս էլ այստեղ՝ «մինչեւ»-ը նշանակում է մինչեւ ինքը եւ եւ չի լքելու ապագայում:

Իններորդ՝ ասում են, ապա այն կեանքում թողութիւն չկա՞յ:

Ասենք, որ ոչ՝ երկու պատճառով: Քանի որ այնտեղ մեղքի գործեր չկան, ուրեմն չկայ եւ թողութիւն: Այս կեանքում են գործերը, իսկ այնտեղ՝ հատուցում բարի կամ չարի: Այս կեանքում սերմ են գցում, այնտեղ հնձում եւ ժողովում: Այստեղ չարչարւում են, այնտեղ՝ հանգստանում:

Երկրորդ՝ ինչպէս մարմինը չի փոխւում բարուց չարի կամ հակառակ, այդպէս էլ հոգին, ըստ Սողոմոնի՝ «Փայտը որտեղ էլ ընկնի՝ նոյնն է՝ «հարաւ», որ Աստծոյ ջերմ սէրն է եւ լոյսը, «թէ հիւսիս» (Ժող. ԺԱ 3), որ սառն է՝ Աստծոյ ատելութիւնը եւ խաւարը:

Տասներորդ՝ ասում են «Չի ներելու ո՛չ այս աշխարհում եւ ո՛չ էլ հանդերձեալում» (Մտթ. ԺԲ 32), ինչը նշանակում է, թէ հանդերձեալում կայ թողութիւն: Ասենք, որ եթէ այնտեղ չներուի մեղքը, այստեղ էլ չի ներուելու, սակայն իւրաքանչիւր մեղք, որ այստեղ ներուի, այնտեղ էլ կներուի. «Ի՛նչ կապելու էք երկրում, կապուած կլինի երկնքում, ի՛նչ արձակուելու է երկրում, արձակուած կլինի երկնքում» (Մտթ. ԺԶ 19): Ասենք նաեւ մեղք այստեղի պատիժն է ասում, որովհետեւ եթէ մէկը մեղքի պատիժը չի հատուցում, այնտեղ է հատուցելու եւ ներուելու: Եւ սա յայտնի է, որ այստեղի ամէն ինչը աւարտւում է հանդերձեալում՝ այսինքն մեղքը եւ արդարութիւնը, պատիժը եւ պարգեւը, կապուած լինելը եւ արձակուելը: Այս պատճառով է ասում՝ «Ո՛չ այս աշխարհում եւ ո՛չ հանդերձեալում»:

Իսկ որ ասում է՝ «Հարիւրապատիկ կառնի եւ յաւիտենական կեանք կժառանգի» (Մտթ. ԺԹ 29):

Աստծոյ դատաստանը միաձեւ է, բազմաձեւ եւ ամենաձեւ: Եւ բերում են վկայութիւններ ու մտացածին բաներով հաւանութիւն տալիս, [ապա ասենք,] որ այս կեանքից յետոյ հոգին մտնում է

գործերի քննութեան շրջան, եւ իւրաքանչիւրն ըստ դրանց տեսնում է փառքը եւ վայելում յուսով, մինչեւ որ յարութիւնից յետոյ ամբողջութեամբ առնի ողջ փառքը եւ Աստծոյ տեսութեան անվախճան պսակը: Որովհետեւ այժմ կարծում ենք, մահից յետոյ ամէն ինչ պարզորոշ տեսնում ենք, յարութիւնից յետոյ՝ ստանում ամէն ինչ: Ինչ այժմ հեռուից դիտւում եւ կարծւում է, մահից յետոյ մօտիկից է տեսնում եւ ճանաչում, յարութիւնից յետոյ ստանում եւ աւարտում: Եւ սրա մասին է ասում սուրբ Դիոնէսիոսը՝ «Այստեղ մաքրւում է, մահից յետոյ լուսաւորւում, յարութիւնից յետոյ կատարելագործւում՝ ի փառս ամենասուրբ Երրորդութեան, ամէն»[700]:

Իսկ դժոխքի մասին ասուեց վերը՝ Մարդեղութեան մասին ճառում, կասուի նաեւ առաջիկայում՝ վախճանի մասին խօսելիս: Իսկ յետոյ էլ կգտնես «Գէորգի հարցերի» մէջ:

ԳԼՈՒԽ ԼԸ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՆԵՌԻ, ՍԱՏԱՆԱՅԻՆ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԿԱՊՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ Պրակ ԺԶ

Հարց. Ի՞նչ է [նշանակում] կապել սատանային հազար տարի:

Պատասխան. Այն է, որ սատանան խաբէութեամբ եւ բռնութեամբ զօրացել էր եւ դարձել մարդկանց իշխանը՝ [այս] կեանքում՝ զանազան չարութիւններով եւ կռապաշտութեամբ, մահից յետոյ՝ դժոխքում հոգիները տանջելով: Իսկ մեր Տէրն անմեղ մարմնով նրան դատապարտեց իբրեւ մեղքի պատճառ եւ խաչի պատարագով հաշտեցրեց Հօր յետ. եւ իջնելով դժոխք՝ կապեց հզօր սատանային ու արձակեց կապուած հոգիներին, ինչպէս Տէրն ասաց՝ «Այսուհետեւ աշխարհի իշխանը դատապարտուած է եւ դուրս նետուած» (Յովհ. ԺԶ 11): Եւ «Երբ բարձրանամ, բոլորին դէպ ինձ կձգեմ» (Յովհ. ԺԲ 32):

Եւ առաքեալն այսպէս է ասում, թէ՝ մարմնի մերկութեամբ մերկացրեց իշխանին եւ խայտառակեց գլխաւորին, ձեռքերի գամուելով՝ գամեց սատանային եւ մեր մեղքերը, դժոխք իջնելով՝ կապեց նրան եւ բանտեց անդունդում, իսկ իր յարութեամբ ազատեց կապուած հոգիներին (հմմտ. Գաղ. Բ 14):

Այլ եղանակով կապեց նաեւ հրեղէն վիշապին. վիշապի գլուխը Յորդանանի ջրերում ջախջախեց, որ ըստ Յոբի մեղքն է (հմմտ. Յոբ ԻԶ 13), խաչով վերացրեց մահուան զօրութիւնը եւ յարութեամբ վերացրեց մահը, որ նրա խայթոցն էր, ու տուեց մեզ իշխանութիւն՝ ոտնակոխ անելու օձին ու կարիճին, որ տկարացած ու կապուած էր: Սատանայի կապուած լինելու մասին գրուած է նաեւ իններորդ գլխում, քսանվեցերորդ համարում:

«Հազար տարին» (Յայտ. Ի 2) ոմանք ասում են, թէ մկրտութիւնից մինչեւ համբարձում՝ երեք ու կէս տարին է: Եւ ոմանք [ասում են] վեց հազար տարուց յետոյ եօթներորդն է, որ վախճանն է, եւ միայն սրբերի յարութիւնն ու սատանայի կապուելն է: Իսկ Որոգինէսն [ասում է, թէ դա] սրբերի հազարամեայ արքայութիւնն է:

Բոլոր [այս] կարծիքները թերի են եւ եկեղեցու համար՝ ոչ ընդունելի. որովհետեւ հազար տարին Քրիստոսի առաջին գալուստից մինչեւ երկրորդն է, եւ սրբերը գալու են մարմնով եւ յաղթելով թշնամուն՝ թագաւորելու Քրիստոսի յետ, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում:

Հարց. Կապուածին յետոյ ինչո՞ւ է արձակելու:

Պատասխան. Նախ՝ արձակելու է ժամանակաւոր կապանքներից, ապա նետելու յաւիտենական տանջանք:

Երկրորդ՝ կապելով՝ տանջանքի հաւաստիքն է նրան տալիս եւ բաց է թողելու չարիքով զօրանալու համար, որպէսզի արդարութեամբ կրի յաւիտենական տանջանքը: Երրորդ՝ ներելով արձակելու է սատանային, որով կփորձուեն ընտրեալները իբրեւ արքայութեան շտեմարանի ցորեն եւ կկորչեն անհաւատներն իբրեւ կրակի մէջ այրուած հարդ:

Չորրորդ՝ արձակելու է սատանային, որ [սա] տեսնի տանջանքի իր ժամանակը մօտեցած, եւ մոլեգնի, ինչպէս գազան, որ մօտ է սատկելու, եւ իբրեւ կատաղած շուն:

Հինգերորդ՝ ինչպէս ջախջախուած վիշապի պոչն է շարժուում, իսկ սատկած վիշապի պոչը՝ Նեռն է, որ վերջին ժամանակներում իրեն կքաշի աստղերի երրորդ մասը, այսինքն մի մասը անապատ փախչելով՝ կազատուի, ոմանք արեամբ վկայելով՝ կպսակուեն, իսկ նրան հաւանութիւն տուողները կկորչեն յաւիտենական տանջանքում:

Հրեղէն վիշապի եւ նրա պոչի մասին ասել ենք վերը՝ իններորդ գլխի քսանհինգերորդ համարում:

ՆԵՌԻ ՄԱՍԻՆ

Հարց. Նեռը որտեղի՞ց է լինելու:

Պատասխան. Թովմասն ասում է, որ Եգիպտոսից է գալու մի կին, որ ննջելու է այնտեղ, որտեղ Ղովտի կինն էր: Մեր Ներսէսը տալիս է անունը՝ Հռասիմ[701]:

Այնտեղ, քնած ժամանակ ձայն է լսելու, թէ դու կին ծնելու ես երեւելի մէկին: Ասում են յղանալը ապականութեամբ եւ կուսութեամբ է լինելու, իբրեւ թէ ներքինուց առանց խառնակուելու յղիանալու է: Եւ ծնունդը [լինելու է] Քորազինում, մեծանալը՝ Բեթսայիդայում, թագաւորելը՝ Բիւզանդիայում: Հօր անունը՝ Ռոմելոս են ասում՝ մի ձեռքն ու ոտքը՝ երկար, միւսը՝ կարճ, մի աչքը՝ խաժ, միւսը՝ սեւ:

Այլ վարդապետներն էլ ասում են՝ Նեռը սերմից է ծնուելու եւ ծնուելու է բոզից: Սակայն յղիութեան ժամանակ մօր որովայն է իջնելու չար ոգին, եւ նրա զօրութեամբ եւ նրա ներգործութեամբ է ծնուելու մանուկը, սնուելու եւ հասնելու երիտասարդութեան, որի պատճառով էլ ասւում է «սատանայի որդի»:

Ա՛րդ ծնուելու է Բաբելոնում՝ Դանի ցեղից, գալու է Երուսաղէմ եւ թլփատուելու: Եւ ասելու է հրէաներին, թէ՝ ես եմ խոստացուած Փրկիչը, եւ հրէայ ժողովուրդն ընդունելու է նրան:

Նեռը լինելու է բղջախոհ՝ կանանց ցանկալին, բայց առերեւոյթ ցոյց է տալու,

որ սրբակենցաղ է՝ դիւրութեամբ խաբելու համար: Իր սիրտը հպարտացնելու է, ինչպէս Դանիէլն է ասում. «Իշխանաց իշխանի դէմ է դուրս գալու» (Դան. ԺԲ 1), այսինքն՝ ընդդէմ Աստծոյ, ու ջանալու է փոխել օրէնքը եւ հաւատքը: Եւ յանդուգն է լինելու, որովհետեւ չի համարելու, թէ պատժուելու է Աստծուց, քանզի յապաղելու է դատաստանը, ըստ սաղմոսի՝ «Վերացել է արդարութիւնը նրա պատճառով» (հմմտ. Սղմ. Թ 5): Այլեւ հայհոյող է լինելու, որովհետեւ խօսելու է ընդդէմ Բարձրեալի: Երկրպագել է տալու իր պատկերին եւ բոլորի ճակատին եւ աջ ձեռքին դրոշմ է խփելու, ինչպէս Յօհաննու տեսիլքն է ասում (տե՛ս Յայտ. ԺԳ 16), եւ հռչակելու է իրեն Քրիստոս ու Աստծոյ ճշմարիտ որդի: Նստելու է տաճարում, որ նրա համար կառուցելու են հրէաները եւ ասելու է, որ իրենից առաջ ոչ մի ճշմարիտ քրիստոնեայ չի եղել, այլ նեռ են բոլորը: Եւ ինչպէս Քրիստոսի մէջ բնակեցուած է աստուածութեան ողջ լրումը, ինչպէս ասւում է Թեսաղոնիկեցիների թղթում (Կողոս. Ա 19), այդպէս էլ Նեռի մէջ անօրէնութեան ողջ լրումն է [լինելու], որովհետեւ նրա մէջ է ապրելու գլուխն ամենայն չարի: Սկզբում ի պաշտպանութիւն Նեռի կարգուելու է բարի հրեշտակ, սակայն երբ չարիքների մէջ խստանայ՝ մինչեւ Աստծոյ երկրպագութիւնը իրեն վերագրի, այնժամ հրեշտակը կլքի նրան, որովհետեւ նա է ծովից դուրս եկած գազանը, որ եօթ գլուխ ունէր, այսինքն՝ ողջ իշխանութիւնը, եւ տասը՝ եղջիւր, այսինքն նրանք, որ տասնաբանեան օրէնքի դէմ են մարտնչում:

Հարց. Ի՞նչ է Նեռի անունը:

Պատասխան. Եբրայերէն կոչւում է «Արնաւիմէ», այսինքն՝ «ուրանամ», յունարէն՝ «անթէվիոս», այսինքն՝ «հակառակ», դաղմատերէն՝ «տիտան», այսինքն՝ «արեգակ» կամ «հսկայ»:

Պէտք է իմանալ նաեւ, որ Նեռի անունը ջնջուած եւ կորած է Սուրբ Գրքում, որի պատճառով էլ նրան տարբեր անուններ են տալիս, որովհետեւ Տէրը նրան պիղծ է անուանում եւ սուտ Քրիստոս (Մտթ. ԻԴ 24, Մրկ. ԺԳ 22), իսկ Դանիէլը՝ փոքր եղջիւր, Տեսիլքը՝ «գազան» (Յայտ. ԺԳ 18), Յակոբ նահապետը՝ «ճանապարհի դարանակալ օձ» (Ծննդ. ԽԹ 17), Երեմիան՝ «Դանի ազգի արշաւող երիվար» (Երեմ. Ը 16), եւ Յօհաննէսը կոչում է «Նեռ», Պօղոսը՝ «անօրէն մարդ, ապստամբ եւ որդի կորստեան»: Իսկ անուան թուական [նշանակումը] հոյներից թարգմանելով՝ ստացւում է ՈԿԶ [666], որ [նշանակում է]՝ «Կամաւոր ուրանում եմ երկնքի եւ երկրի արարչին»[702]: Եւ սա է դրոշմելու [մարդկանց] ճակատին եւ աջ ձեռքին:

Հարիւրեակ վեցը, տասնեակ վեցը եւ միաւոր վեցը. սա է վեց հազար տարում լինելիք գլխաւոր ապստամբութիւնը, այսինքն քանի օրում արարչագործութիւնը եղաւ, այդքան [հազարամեակում] աւարտին կհասնի[703]: Խորհրդանշում է նաեւ բոլոր՝ առաջին, միջին եւ վերջին ժամանակներում լինելիք ապստամբութիւնները: [Խորհրդա-

նշում է] նաեւ Նոյի վեց հարիւր տարին, երբ ջրհեղեղով բնաջնջուեցին ապստամբները: Իսկ վաթսունը Բաբելօնի պատկերն է՝ վաթսուն կանգուն երկարութեամբ եւ վաթսուն՝ լայնութեամբ, որի ժամանակ կռապաշտութիւնը տիրեց (տե՛ս Դան. Գ 1): Իսկ վեցը վեցերորդ դարաշրջանի աւարտին նոր ապստամբի ելնելն է ցոյց տալիս, որ կորստի է մատնելու շատերին, ինչի մասին ասում է՝ «Հրեղէն վիշապը պոչով իրեն է քաշելու աստղերի երրորդ մասը» (Յայտ. ԺԲ 4), որ ասուեց այնտեղ, ուր խօսուեց դեւերի անկման մասին:

ՆԵՌԻ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչպէ՞ս է գայթակղելու մարդկանց:

Պատասխան. Չորս կերպ է իրեն քաշելու, ինչպէս Տեսիլքն է ասում՝ «Եւ նրա պոչը քաշում տանում էր երկնքի աստղերի մէկ երրորդ մասը, ու դրանք գցեց երկրի վրայ» (Յայտ. ԺԲ 4): Ա՛րդ չարերին՝ տրուածով կքաշի, բարիներին՝ տանջանքներով, յստակամիտներին՝ քարոզութեամբ եւ սքանչելիքներով, քանզի նա ճանապարհի դարանակալ օձ է Դանի ազգից, ինչպէս Յակոբն ասաց:

Եւ զինուած է լինելու չորս եղջիւրներով. նախ՝ խաբելու է եկեղեցուն խորամանկ քարոզութեամբ եւ հակառակ խօսելու Աւետարանին եւ արգելելու է ուղղափառ վարդապետներին, որ չքարոզեն:

Երկրորդ՝ սուտ հրաշքներով եւ կախարդութեամբ դիւթելու է կրոնաւորներին՝ նոյնիսկ խօսեցնելով բագիններին, շարժել տալով լեռները, ծաղկեցնելով ու չորացնելով ծառերը, յարութիւն տալով մեռեալներին, հուր իջեցնելով երկնքից, չար հոգիներին այլ լեզուներով խօսել տալով: Անգամ կախարդութեամբ իրեն մեռած եւ երեք օր անց յարութիւն առած է ցոյց տալու: Եւ այս ամէնը կատարելու է դիւական պատրանքներով եւ կախարդական հմտութիւններով:

Երրորդ՝ առատ պարգեւատրութիւններով խաբելու է մեծամեծներին եւ ագահներին, քանզի Նեռն ինքը թաքցրած գանձ է գտնելու, որպէսզի սրանց սուտ յաջողակութեամբ խաբի այլոց:

Չորրորդ՝ խաժամուժին եւ մարմնասէրներին ահ ու սարսափի եւ տանջանքների է մատնելու, որովհետեւ մեծագոյն եւ խստագոյն չարչարանքների է մատնելու Աստծուն պաշտողներին: Եւ ինչպէս Նեռն աւելի ու աւելի անողորմ է լինելու, քան նախորդ հալածիչները, այդպէս էլ այդ ժամանակ սրբերն են լինելու զօրեղագոյն, քան նախկին մարտիրոսները:

ԳՕԳԻ ԵՒ ՄԱԳՕԳԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է Գօգը եւ Մագօգը:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ Իսրայէլի այն տասը ցեղերը, որ փակուեցին Կասպից լեռներում, ըստ հրէաների սրանք են վախճանին ելնելու եւ գալու Երուսաղէմ:

Ոմանք էլ ասում են Գօգը եւ Մագօգը Նեռի զօրքերն են, որոնք վախ-

ճանին մարտնչելու են եկեղեցու դէմ. «գօգը» նրանք են, որոնցով գաղտնաբար սատանան կհալածի հաւատացեալներին, «մագօգը»՝ նրանք, ովքեր բացայայտ կհալածեն եկեղեցին: Ըստ ոմանց էլ՝ «գօգը» հեթանոսներն են, «մագօգը»՝ սատանան[704]: Եւ վախճանին մարդիկ աւելի կարճահասակ են լինելու, քան մենք, ինչպէս [կարճ է] մերը [հասակը]՝ քան նախնիներինը:

ԵՂԻԱՅԻ ԵՒ ԵՆՈՎՔԻ ՄԱՍԻՆ

Նեռի յայտնուելով եւ Երուսաղէմում թագաւորելու ժամանակ կգան Ենովքը եւ Եղիան, ինչպէս Մաղաքիան է ասում եւ կդարձնեն հայրերի սիրտը դէպ որդիները (տե՛ս Մաղ. Դ 5), որպէսզի ուսուցանեն վերջիններիս Փրկչի հաւատը, որին եւ իրենք հաւատացին:

Հարց. Ո՞ր հասակով են գալու:

Պատասխան. Նոյն հասակով, որով վերափոխուեցին [երկինք]: Նրանք [այն] երկու ձիթենիներն են (տե՛ս Յայտ. ԺԱ 4), այսինքն Սուրբ Հոգով օծուածները եւ երկու աշտանակները, որ լոյս են տալու բոլորին: Եւ քարոզելու են հազար երկու հարիւր վաթսուն օր, այսինքն երեք ու կէս տարի, ինչպէս Տեսիլքն է ասում (տե՛ս Յայտ. ԺԱ 3), այնքան, որքան քարոզեց Քրիստոս: Որից յետոյ կսպանուեն Երուսաղէմում՝ Նեռի ձեռքով եւ նրանց մարմինները նետուած կլինեն հրապարակում՝ երեք օր ու գիշեր: Ապա նրանց սպանողները ձայն են լսելու, թէ՝ «Եղիա եւ Ենովք, ելէ՛ք այստեղից» (տե՛ս Յայտ. ԺԱ 12), եւ նրանք վեր կկենան եւ կբարձրանան երկինք՝ ամպով: Նրանց մահից եւ յարութիւնից յետոյ Նեռը կթագաւորի եւս տասնհինգ օր:

ՆԵՌԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Որքա՞ն է թագաւորելու Նեռը:

Պատասխան. Նեռը թագաւորելու է հազար երկու հարիւր եօթանասունութ օր, որ քառասուներկու ամիս է եւ երեք ու կէս տարի՝ ըստ Դանիէլի (տե՛ս Դան. ԺԲ 11), քանզի՝ «ժամանակ» նշանակում է մէկ տարի, «ժամանակներ» նշանակում է երկու տարի, եւ՝ «կէս ժամանակ» (Դան. ԺԲ 7), այսինքն՝ կէս տարի[705]: Եւ այսքան էլ կտեւի եկեղեցու հալածանքը:

Եւ Աստծոյ ողորմութեամբ կկարճուեն այն օրերը, կկարճուեն, ասում է, ոչ թէ օրուայ ժամերը, այլ թիւը: Այնուհետեւ, Ձիթենեաց լեռան վրայ, որտեղից համբարձուեց Քրիստոս, Տէրն իր իշխանութեամբ կսպանի Նեռին, կսատակի կամ իր, կամ Միքայէլի ձեռքով՝ վրանի մէջ՝ իր աթոռի վրայ: Եւ գլորելու է նրա մարմինն ի ցոյց ժողովրդի, ինչպէս մարգարէն է ասում՝ «Տէրը գահավէժ է անելու երկրի վրայ յարութիւն առածին՝ սուրբ լեռան վրայ»:

Դրանից յետոյ Տէրն անմիջապէս չի գալու դատաստանի, այլ քառասունհինգ օրուայ խաղաղութիւն է տալու՝ սրբերին հանգստանալու եւ սխալուածներին ապաշխարելու համար: Իսկ թէ քառասունհինգ օրերի միջեւ տեւողութիւնը ինչքա՞ն է, ոչ ոք չգիտէ:

Նեռի մահից յետոյ նրա համախոհներն ուրախանալու են եւ առնելու են նրա կանանց: Ասելու են՝ «Թէպէտ մեր իշխանը մեռաւ, սակայն մենք անհոգ ենք եւ խաղաղ»: Եւ հենց այս ասեն, յանկարծ վրայ է հասնելու նրանց սատակումը, ինչպէս Նոյի օրերում կատարուեց Փրկչի հրամանով: Այդժամ հրէաները դառնալու են Քրիստոսի հաւատին, եւ հանգստանալու է սուրբ եկեղեցին խաղաղութեամբ՝ մինչեւ աշխարհի վերջը, որովհետեւ նուազելու են դժնի արարքները, մարդկանց եւ սատանայի կախարդանքները:

Այսքանը Նեռի օրերի մասին:

ԳԼՈՒԽ ԼԹ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ ժէ

[Հերթական] հարցն ըստ կարգի. Ի՞նչ է առաջին եւ երկրորդ յարութիւնն ըստ Տեսիլքի:

Պատասխան. Որոշ հերձուածողներ, ինչպէս Որոգինէսը, առաջին յարութիւն անուանեց հազարամեայ արքայութիւնը, երբ այստեղ չարչարուած սրբերը յարութիւն կառնեն եւ մարմնով կհանգստանան հազար տարի, եւ յետոյ [կյաջորդի] ողջ մարդկութեան յարութիւնը:

Եւ այս ասաց տգիտութեամբ, որովհետեւ մարմնական երկու յարութիւն կարծեց, որին հակառակ է Աւետարանը, որտեղ սադուկեցիներին ուղղուած [խօսքում] Տէրը շեշտեց. «Մեռեալներից յարութիւն առածներն Աստծոյ հրեշտակների նման են» (Մրկ. ԺԲ 25): Եւ առաքեալն ասում է. «Աստծոյ արքայութիւնը կերակուր եւ ըմպելիք չէ» (Հռոմ. ԺԴ 17), որը եկեղեցու վարդապետները հասկանում են այսպէս, որ յարութիւնը կրկին է, այսինքն՝ կեանքը: Եւ սրան ի պատասխան կրկին է անկումը, այսինքն՝ մահը, քանի որ մարդն էլ կրկին է՝ հոգի եւ մարմին: Առաջին յարութիւնը հոգեւոր է, երկրորդը՝ մարմնաւոր: Առաջին յարութիւնը եղաւ Քրիստոսի առաջին գալստեամբ, որ դարձեալ կրկնակի է: Նախ շնորհով յարութիւնն է, որ մեղքի թողութիւն եւ Քրիստոսի հաւատը ստացանք: Ապա հոգու յարութիւնն է՝ մարմնից դուրս եկած եւ ազատուած՝ Աստծոյ մօտ մտնելու [իրաւունքով], որ կատարեալ արդարների հոգին է:

Երկրորդ յարութիւնը՝ մարմնաւորը, նոյնպէս կրկին է: Նախ կենաց յարութիւնն է, ապա փառքի, երբ հոգին միաւորուի մարմնին եւ մարմնով ժառանգի փառքը եւ յաւիտենական կեանքը:

Ուրեմն այս չորս յարութիւնների յետ չորս մահ կայ, այսինքն՝ մեղքի եւ անհաւատութեան մահը: Երկրորդ՝ հոգու եւ մարմնի բաժանումը, սրանք կոչւում են առաջին մահ: Երրորդ՝ մահ է դատաստանի երկիւղը: Չորրորդը յաւիտենական տանջանքը մշտնջենական մահ է, եւ սրանք կոչւում են երկրորդ մահ, որից փրկի Քրիստոս Աստուած առհասարակ իր անուամբ բոլոր հաւատացեալներին, ամէն:

Հարց. Ի՞նչ է Քրիստոսի յետ հազար տարի թագաւորելը:

Պատասխան. Հազարը կատարեալ թիւ է, որովհետեւ ունի տասը հարիւրեակ: Այլեւ հազար տարի է Քրիստոսի առաջին գալուստից մինչեւ երկրորդը, որովհետեւ շատը եւ առաւելն է նշանակում: Ցոյց է տալիս սրբերի կատարեալ եւ առաւել հանգիստը, այժմ՝ յուսով, մահից յետոյ՝ հոգով թագաւորելով Քրիստոսի յետ, յարութիւնից յետոյ՝ հոգով եւ մարմնով արդէն ոչ միայն հազար տարով, այլ՝ անվախճան կեանքով, ինչպէս առաքեալն է ասում՝ «Եթէ համբերենք, նրա յետ էլ կթագաւորենք» (Բ Տիմ. Բ 12):

Եւ պէտք է իմանալ, որ Քրիստոսի ամենակալ թագաւորութիւն երեք կերպ է ասւում:

Եւ առաջինը երեք տեսակ է:

Նախ աստուածութեամբ է թագաւորում՝ Հօր եւ [Սուրբ] Հոգու յետ: Երկրորդ՝ մարմնով տիրեց երկրային ցանկութիւններին ու դեւերի իշխաններին եւ իր մարմնով ոտնակոխ արեց ու հալածեց նրան, որ ասում էր՝ «Ինձ է տրուած այս ամէնը» (Ղուկ. Դ 6): Երրորդ՝ հոգով տիրեց դժոխայիններին, կապեց հզօրին եւ արձակեց կապուած հոգիներին, ինչպէս ասում էր՝ «Տուեց ինձ ողջ իշխանութիւնը երկնքում եւ երկրում»: Այդպէս էլ սրբերը, այժմ թագաւորում են եւ տիրում ախտերին, յետոյ՝ դեւերին, ապա՝ մահուանը:

Երկրորդ եղանակով ամենակալ թագաւոր է Քրիստոս, ընդ որում՝ անվախճան մարդկութեամբ, ինչպէս հրեշտակն էր ասում՝ «Նրա թագաւորութեանը վախճան չկայ»: Այդպէս էլ սրբերը թագաւորելու են Քրիստոսի յետ՝ յաւիտեան, ինչպէս ասում է՝ «Եկէ՛ք իմ օրհնեալներ, ժառանգեցէ՛ք յաւիտենական կեանքը» (Մտթ. ԻԵ 34):

Երրորդ եղանակով՝ ամենակալ է, ըստ այդմ՝ «աստուածների Աստուած եւ տէրերի Տէր» (Սղմ. ՃԼԵ 2), այսինքն աստուած եւ տէր կոչւում են հրեշտակների երկնային դասը եւ երկրի թագաւորները, ինչպէս առաքեալն է գրում՝ «Շատերն են կոչւում աստուած թէ՛ երկնքում, թէ՛ երկրի վրայ» (Ա Կորնթ. Ը 5): Մինչդեռ Քրիստոսին երկրպագելու են բոլոր երկնաւորները եւ երկրաւորները եւ բոլոր սուրբ հոգիները: Այդպէս էլ, երբ գայ Աստուած աստուածացների մէջ եւ դառնայ համայն եւ համայնի Աստուած, հրեշտակների զօրքերը եւ մարդիկ երկրպագելու են սրբերին, որովհետեւ թագաւորների թագաւորներ են եւ տէրերի տէր, եւ այս է սրբերի թագաւորելու էութիւնը:

ՔՍԱՆՉՈՐՍ ԵՐԷՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԸ

Հարց. Ի՞նչ է նշանակում քսանչորս երէցը, որ ասում է Տեսիլքը (տե՛ս Յայտ. ԺԱ 16):

Պատասխան. Երէցը նախ՝ քահանայ է նշանակում, որն իր անձով Աստծուն պատարագ է մատուցում: Երկրորդ՝ երէցներ են ծերերը, որ հասել են կատարելութեան ծայրագոյն գծին: Երրորդ՝ երէց են անդրանիկները եւ երանելի նախնիները:

Իսկ քսանչորս թիւը ոչ թէ սահման կամ եզրագիծ է, այլ Գրքի սովորութիւնն է՝ փոքր թուով մեծը ցոյց տալ: Եւ ինչպէս տասներկու բիւր հրեշտակները (Մտթ. ԻԶ 53), եօթանասուն անգամ եօթը թողնելը (Մտթ. ԺԸ 22), ամուլի [իբրեւ] եօթին ծնելը (Ա Թագ. Բ 5) վճիռ չէ, այդպէս էլ [Տեսիլքի] քսանչորս երէցներ [թիւը]:

Նախ՝ ինչպէս հրեշտակների տասներկու գնդերը եւ չորս կենդանիները ողջ երկնային զօրքն են խորհրդանշում, այդպէս էլ քսանչորս երէցները՝ սրբերի ողջ դասը:

Երկրորդ՝ ինչպէս չորս կենդանիները վեհագոյն եւ նախամեծար երկնայիններին խորհրդանշեցին, այդպէս էլ քսանչորս երէցները՝ նախամեծար մարդկանց, որոնք աստիճանով վեհագոյն են, քան սովորական արդարները, ինչպէս Աբէլը, առաքեալները, մարգարէները եւ այլն:

Երրորդ՝ ինչպէս քսանչորսը աւելին է, քան չորսը, այդպէս էլ մարդկանց մէջ վեհագոյններն աւելի են կարծւում, քան երկնայինների մէջ:

Չորրորդ՝ խորհրդանշում է օրուայ ժամերի քանակը, որոնց մէջ նրանք վաստակեցին եւ զարդարուեցին:

Հիգերորդ՝ ըստ քսանչորս տառերի թուաքանակի, որոնցով իմաստնացան եւ հասան ճշմարիտ գիտութեան:

Վեցերորդ՝ հնում տասներկու ցեղապետ էին եւ տասներկու առաքեալ նորում, երկու խմբի նահապետներին դնելով՝ ամբողջ ազգի թիւն է ցոյց տալիս:

ՍՊԻՏԱԿ ՀԱՆԴԵՐՁԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է սպիտակ հանդերձը:

Պատասխան. Պայծառ հանդերձը, որ կրում էին, Քրիստոսի շնորհների մաքրութիւնն է [խորհրդանշում], որ վայելեցին բոլորը, ինչպէս առաքեալն է ասում՝ «Մեր մեղքերի մաքրութիւնը կատարեց» (Եբր. Ա 3), որովհետեւ երբ հոգին մաքրւում է մեղքից, բնական պայծառութիւն է ստանում: Եւ այն, որ սպիտակ հանդերձը սրբերի արդարութեան [խորհուրդն է], հաստատում է Տեսիլքի յիսունեօթներորդ գլուխը. «Հարսին սպիտակ, մաքուր եւ լուսափայլ բեհեզ հագնել տուեց» (Յայտ. ԺԹ 8), եւ բեհեզը՝ սրբերի արդարութիւնն է: Բեհեզը նաեւ վեց յատկութիւն ունի, որոնք խորհրդանշում են մարմնից դուրս եկած սուրբ հոգիների վայելչութիւնը: Նախ բեհեզը անօսր է, որ խորհրդանշում է սրբերի աննիւթ էութիւնը եւ մտածողութիւնը՝ առանց մարմնական թանձրութեան: Երկրորդ՝ սպիտակ է, որ խորհրդանշում է նրանց առաքինութիւնը: Երրորդ՝ անխառն է, որ ցոյց է տալիս նրանց մաքրութիւնը՝ զերծ աղտեղութիւնից: Չորրորդ՝ լուսափայլ է, որ խորհրդանշում է բարձրագոյն խորատեսութիւնը, որով լուսափայլւում են գիտելիքների [շնորհիւ]: Հինգերորդ՝ կոշտ է, որ խորհրդանշում է նրանց ամուր եւ խիստ առաքինութիւնն անտրոհելի: Վեցերորդ՝ ճերմակ գոյն է ստանում՝ մշակուելով, այդպէս էլ սրբերն այս կեանքի ընթացքում ճգնելով չար-

չարուեցին, ապա արժանի գտնուեցին այն կեանքին:

ԱՐՄԱՒԵՆՈՒ ԵՒ ՊՍԱԿԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ էր [խորհրդանշում] նրանց ձեռքի արմաւենին (Յայտ. է 9):

Պատասխան. Նրանց յաղթանակը, որ յաղթեցին նիւթական աշխարհին եւ սատանային, իսկ ոսկեայ պսակը՝ Քրիստոսի յետ թագաւորելը, ինչպէս ցոյց տրուեց:

Իսկ որո՞նց է տրուելու ոսկեայ պսակը: Վարդապետներն ասում են՝ երեք դասի. կոյսերին, մարտիրոսներին եւ վարդապետներին: Եւ սա [տրւում է] նախ գերազանց գործերի համար՝ ըստ հոգու երեք մասերի [խօսք, ցասում, ցանկութիւն], որովհետեւ խօսքի գերազանց գործն է ճշմարտութիւն ուսուցանելը, եւ այս ունեն վարդապետները: Ցասման գերազանց գործն է չարչարանքներին համբերելը. սա մարտիրոսներինն է: Գերազանց գործ է ցանկութիւններին տոկալը ողջախոհ մաքրութեամբ, որ ունեն կոյսերը: Այս պատճառով է այդ երեք [դասին] վայելում ոսկեայ թագը:

Եւ Քրիստոսն էլ վարդապետ էր, որ ճշմարտութիւն քարոզեց, մարտիրոսուեց՝ չարչարանքներին համբերելով եւ կոյս էր՝ մաքրութիւնը պահելով, որի պատճառով էլ նրան նմանուողները նրա յետ պսակադրւում են թագով:

ԲՈՒՐՎԱՌԻ ԵՒ ՔՆԱՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ են խորհրդանշում նրանց ձեռքի ոսկեայ բուրվառը եւ քնարը (Յայտ. Ե 8):

Պատասխան. Ոսկեայ բուրվառը եւ խունկը [խորհրդանշում են], որ սրբերը եւ հրեշտակները երկրայինների աղօթքն են մատուցում Քրիստոսին:

Իսկ քնարը նախ խորհրդանշում է Աստծոյ փառաբանութեան քաղցրաձայն երգը: Երկրորդ՝ որ աստուածային երգում համահունչ են եւ [միմեանց են] պատկանում, [ինչպէս որ] միմեանց եւ Աստծոյ հանդէպ սիրոյ մէջ: Երրորդ՝ որ նրանց գիտելիքները ուղիղ են եւ անխոտոր: Չորրորդ՝ կրկնակի ամուր կապուած լինելը սիրուն: Հինգերորդ՝ ցոյց է տալիս նրանց մարմնի անկենդան լինելն ու չարչարանքներին տոկալը:

Այսքանը հոգեւոր եւ առաջին յարութեան մասին:

ՓՈՂԻ ՀՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԺԹ

Հարց. Ի՞նչ է [նշանակում ասելը] «Վերջին փողով մեռեալները առ Քրիստոս յարութիւն կառնեն» (Ա Կորնթ. ԺԵ 52):

Պատասխան. Չորս կերպ պէտք է հասկանալ վերջին փողը: Նախ առաջին փողը մարգարէներն էին, որ ձայնեցին օրինակներով: Միջին փողը առաքեալներն էին, որ բարձրաձայնեցին ճշմարտութիւնը: Վերջին փողը հրեշտակներինն է, որ կանչելու է ի դատաստան:

Երկրորդ՝ ըստ ոմանց էլ՝ փողի հնչելը երեքն է. առաջինով հոգիները սլանալու են երկնքում: Միջինով մարմիններն են հաւաքուելով կուտակուելու: Վերջինով՝ յարութիւն են առնելու հոգւով եւ մարմնով:

Երրորդ՝ ասում են [նաեւ], որ մէկով արթնացնելու է, ինչպէս քնից, միւսով յարութիւն են առնելու, երրորդով՝ բարձրանալու են Քրիստոսին ընդառաջ:

Չորրորդ՝ ըստ ոմանց չորսն է փողի հնչելը, որովհետեւ չորս անգամ էր հնչում Իսրայէլի բանակի մեկնումն ազդարարող փողը: Նախ կոչելով երկնքին վերից, ուր հոգիներն են եւ երկրին, ուր մարմիններն են: Եւ իշխան են առաքեալներն ու մարգարէները, որ տիեզերական փողերն են, [ուստի] նախ նրան է կանչում: Երկրորդ, քահանաներին՝ հին եւ նոր, որ սեղանի վրայ դնեն ուխտի պատարագը: Երրորդ՝ նահապետներին եւ սրբերին: Չորրորդ՝ առհասարակ՝ բոլորին:

Այս է յետին փողը:

Հարց. Ի՞նչ է փողի ձայնը:

Պատասխան. Երկու կարծիք կայ: Նախ՝ որ փողի ձայնը Քրիստոսի հրամանն է, որ կարգադրում է յարութիւնը: Երկրորդ՝ հրեշտակապետի ազդեցիկ ձայնը, ինչպէս Սինա լեռան վրայ փողի ձայնը, եւ Քրիստոսի զօրութեան ներգործութիւնը: Իսկ որ ասում է՝ «գաբրիէլեան փող»՝ [այն է], որ Գաբրիէլը հրեշտակապետաց դասի պետն է, [ուստի նրանք են], ովքեր մեծամեծ բաներ են աւետարանում եւ միջնորդ են մահուան եւ յարութեան մարդկանց:

Հարց. Որտե՞ղ է հնչելու փողը:

Պատասխան. Առասպել մի՛ համարիր, որ ասում են, թէ վիրապից է հնչելու, որովհետեւ Դիոնէսիոսը հաստատում է Մովսէսի խօսքը, թէ՝ «Հեթանոսների սահմանները դրեց՝ ըստ Աստծոյ հրեշտակների թուի» (Բ օր. ԼԲ 8), որովհետեւ հրեշտակապետն իր հրեշտակներով ազգի վերակացու է, որտեղ ազգի սկիզբն է եւ գլուխը, այնտեղ էլ հնչեցնելու է, որպէսզի առաջնորդի ազգին, եւ առնելով իր ժողովրդին՝ ընդառաջ է գնալու՝ ասելով. «Ահաւասի՛կ ես եւ իմ մանուկները»:

Ու նաեւ՝ նա, ով հրի վերակացուն է, նրա մէջ է հնչեցնելու, եթէ՝ օդի, ջրի կամ երկրի, իւրաքանչիւրն իր տարերքի վրայ:

Հարց. Ե՞րբ եւ ո՞ր օրն է հնչելու փողը:

Գարնանը, զատկի կիրակիի գիշերուայ կէսին՝ նոյն ժամին, երբ ծնուեց Քրիստոս եւ հրեշտակը գլորեց քարը եւ ազդարարեց Քրիստոսի յարութիւնը. նոյն ժամին՝ կէսգիշերին կհնչի փողը, ինչպէս Մատթէոսի Աւետարանն է ասում՝ «Կէսգիշերին հնչեց խօսքը՝ «Ահա՛ գալիս է փեսան, եկէ՛ք ընդառաջ նրան» (Մտթ. ԻԵ 6): Իսկ մեր վարդապետերն ասում են՝ Պենտակոստէի կիրակիին՝ նոյն կէսգիշերին, ինչպէս Երգ երգոցն է վկայում քսանչորսերորդ համարում:

Հարց. Այդժամ աշխարհում մարդ լինելո՞ւ է:

Պատասխան. Մարդկանցով այնքան լիքն է լինելու, ինչպէս այժմ եւ շարունակուելու է իւրաքանչիւր գործ, ինչպէս այժմ. ոմանք՝ վար ու ցանք [անելիս], [ոմանք] նաւարկելիս եւ այլ գործեր [անելիս]:

Հարց. Ինչո՞ւ է փողը երկնքում եւ երկրում հնչելու. ըստ այնմ՝ «Կանչելու է երկնքին եւ երկրին»:

Պատասխան. Նախ կանչելու է երկնքից սուրբ հոգիներին, երկրից՝ [նրանց] մարմիններին, որ մէջտեղ բերեն այն, ինչի աւանդապահն են: Եւ եթէ չգոյութիւնից կոչ է անում է գոյութեան, եւ լսելու են նրան, որքա՜ն եւս գոյութիւնից ողջերին կժողովի ու կնորոգի:

Երկրորդ՝ չորսն են աշխարհը սկզբնաւորող [տարրերը]. երկինքը, որ երկուսից է՝ հրից եւ օդից, երկիրը, որ [դարձեալ] երկուսից է՝ հող եւ ջուր: Եւ ինչպէս մեր մարմինն են սրանք ընդունում որպէս աւանդ, այդպէս էլ սրանցից մեր գործերն է խնդրելու, որ ցոյց տան, որովհետեւ ջերմ սէրը խորհրդանշում է հուրը՝ թէ՛ Աստծոյ, թէ՛ մարմնականի նկատմամբ: Իսկ խօսքը օդ է պարունակում, որ թէ՛ հոգեւորն է, թէ՛ մարմնաւորը, որովհետեւ խօսքը օդի միջոցով է արտաբերւում: Եւ զգայարանների պտուղը հասունանում է ջրի միջոցով՝ թէ՛ բարի, թէ՛ չար: Եւ մարմնի բոլոր գործերը հաստատւում են երկրի վրայ՝ թէ՛ երկնաւոր, թէ՛ երկրաւոր: Այսպէս չորս տարրերը, մեր չորս գործերը մեր էութեան մէջ մնում են իբրեւ աւանդ եւ առաջ են բերում [համապատասխանը]: Ինչպէս օրինակ, աշնանը արմատախիլ ենք անում դժնիկը եւ փոխարէնը տնկում վարդենին: Իսկ գարնանը դուրս է գալիս ոչ թէ քաղհանուած դժնիկը, այլ տնկուած վարդը, եթէ դժնիկի արմատը չի մնացել: Նոյնպէս կատարեալ խոստովանութեամբ կորչում են մեղքերը եւ բուսնում է արդարութիւնը, ինչպէս որ մկրտութիւնից յետոյ անհետանում է սկզբնական մեղքը, այդպէս էլ ապաշխարութիւնից յետոյ ծածկւում է գործած մեղքը եւ կորչում, ըստ այդմ՝ «Երանի՜ նրան, ում մեղքերին թողութիւն տրուեց, եւ ծածկուեցին նրա բոլոր յանցանքները» (Հռոմ. Դ 7):

ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Ի

Հարց. Կա՞յ մարդկանց յարութիւն, թէ ոչ:

Պատասխան. Թէպէտ յարութեան խորհուրդը հաւատի շրջանակում է, ինչպէս աշխարհի սկիզբն ու վախճանը, որովհետեւ ըստ առաքեալի՝ «Հաւատով ենք ճանաչում Աստծոյ խօսքով հաստատուած յաւիտենականը» (Եբր. ԺԱ 3) եւ նոյն հաւատով էլ՝ աշխարհի վախճանն ու յարութիւնը, սակայն յարութիւնը հաստատուած է բնական քննութեամբ եւ Սուրբ գրային վկայութիւններով:

Եւ բնական քննութեամբ նախ հետեւեալն է, որ տեսնում ենք քաղաքացիական օրէնքով, որ գործում է դատարանում, այսինքն՝ բարուն՝ պատիւ, չարին՝ պատիժ, ապա եւ Աստծոյ մօտ էլ կայ արդար դատաստան:

Ա՛րդ, այս կեանքում յաճախ ենք տեսնում, որ բարին նեղութեան մէջ է, իսկ չարը՝ հանգստութեան, ուստի մի այլ կեանք է պէտք, որ հատուցուի բարուն՝ բարի, չարին՝ չար, իսկ սա տեղի չի ունենայ, եթէ յարութիւն չլինի: Նաեւ հոգին ու մարմինը միասին են գործում բարի կամ չար, եւ եթէ հոգին առանց մարմնի պսակ առնի կամ պատժուի, արդար դատաստան չի լինի, ուստի

պէտք է մարմինն էլ յարութիւն առնի, որ միասին ստանան հատուցումը՝ բարութեան կամ չարութեան:

Երկրորդ՝ մարդու հոգին անմահ է երկու պատճառով: Նախ՝ բաղկացած չէ չորս տարրերից, որ կազմալուծուելով մահանայ: Հոգին՝ նաեւ ինքնաշարժ է, իսկ ինքնաշարժը՝ մշտաշարժ է, իսկ մշտաշարժը՝ անմահ, ապա ուրեմն անմահ է, ինչպէս իր սահմանումի մէջ է բացայայտւում. «Անմարմին էութիւն մշտաշարժ եւ շարժող մարմնի»[706]: Այլ արդ, անմահ հոգուն անհրաժեշտ է, որ լինի նրանից անմահութեամբ շարժուող մարմին, եւ սա չի լինի, եթէ մարմնի յարութիւն չլինի:

Երրորդ՝ մարդն աշխարհի մաս է եւ [նրա] եզրափակումը, ըստ որում աշխարհը երեք կերպ է ներկայանում. իմանալիներ, ինչպիսիք հրեշտակներն են, զգալիներ, ինչպիսիք տարրեղէններն են, եւ [այդ] երկուսից, այսինքն՝ հոգուց եւ մարմնից բաղկացածը, ինչպիսին մարդն է, իսկ եթէ մարդը յարութիւն չառնի, աշխարհը կմնայ անկատար, որովհետեւ բոլորը մասերով է ամբողջանում: Հետեւաբար, կայ յարութիւն, եւ սա՝ բնական [քննութեամբ է]:

[Ի միջի են] նաեւ Սուրբ գրքի վկայութիւնները, ինչպէս Աստուած պատուիրեց, թէ՝ «Միսը մի՛ կերէք արեան շնչով, որովհետեւ ձեր արիւնը պահանջելու եմ գազաններից. եւ իւրաքանչիւրից, ով կթափի մարդու արիւնը, նրա արիւնը կթափուի [այդ մարդու] արեան փոխարէն, քանի որ մարդուն ես արարեցի Աստծոյ պատկերով» (Ծննդ. Թ 4-6): Գազաններից պահանջելն այս յարութիւնը նկատի ունի, քանզի յարութիւն կառնեն մարմինները, որ գազանակուր են եղել: Եւ Մովսէսին էլ ասում էր. «Ես եմ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը»: Եւ մեռեալների Աստուածը չէ, այլ ողջերի, որոնց հոգիները կենդանի են նրա ձեռքում, իսկ մարմինները կկենդանանան նրա ձեռքով: Եւ աստուածահայր Դաւիթն ասում է. «Նրանցից հանում ես հոգին, սպառւում եւ հող են դառնում» (Սղմ. ՃԳ 29): Այստեղ մարմնի մասին է ասում, որ հող է դառնում: Ապա՝ «Առաքում ես քո հոգին, ստանում նրանց եւ նորոգում երկրի երեսը» (Սղմ. ՃԳ 30): Սա էլ յարութեան մասին է:

Եւ Եսային ասում է. «Յարութիւն կառնեն մեռեալները եւ կկենդանանան, որ դրուած են գերեզմանում» (Ես. ԻԶ 19): Իսկ նոր [կտակարանում] բազմաթիւ անգամ Պօղոս առաքեալը գրում է յարութեան մասին, ինչպէս որ՝ «Փողը հնչելու է եւ մեռեալները յարութիւն են առնելու ի Քրիստոս՝ անապական մարմնով» (Ա Կորնթ. ԺԵ 52): Կամ՝ «Մարդով է մահը, եւ մարդով՝ մեռեալների յարութիւնը» (Ա Կորնթ. ԺԵ 21): Եւ ինքը՝ Տէրը պարզորոշ ասում է մարմնի յարութեան մասին, թէ՝ «Բոլորը, որ դրուած են գերեզմաններում՝ լսելու են Աստծոյ Որդու ձայնը եւ դուրս են ելնելու (Յովհ. Ե 28):

Եւ անառարկելի ապացոյց տուեց ընդհանուր յարութեան՝ չորս օր անց

գերեզմանից Ղազարին յարութիւն տալով: Եւ մեր յարութեան էութիւնը ցոյց տուեց՝ իր աստուածային մարմնով երեք օր անց գերեզմանից անապական մարմնով յարութիւն առնելով. իր յետ յարութիւն տուեց նաեւ շատերին, եւ մտան սուրբ քաղաքը, ինչով ինքը դարձաւ պտուղ՝ ննջեցեալների (տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 20): Ուստի մենք էլ ակնկալում ենք, որ Փրկիչը կնորոգի մեր խոնարհ մարմինները, ինչպէս իր փառաւոր մարմինը: Եւ սակաւ [փաստերն էլ] բաւական են սուրբ գրային բազմաթիւ վկայութիւններից, թէ ճշմարտապէս գոյութիւն ունի մարդկանց յարութիւնը:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է յարութիւնը:

Պատասխանում են վարդապետները եւ տալիս երեք սահմանում: Ոմանք ասում են, թէ յարութիւնը այլ բան չէ, քան վերստին կենդանանալը: Ոմանք էլ ասում են՝ հոգու եւ մարմնի վերստին նորոգուելն է: Այս երկու սահմանումները յայտնի են ըստ ինքեան: Սակայն ոմանք էլ ասում են, թէ յարութիւնը ննջեցեալների վերստին յառնելն է՝ յաւիտենական անմահ կենդանութիւն ստանալու համար: Սա է կատարեալ սահմանումը:

Պէտք է իմանալ նաեւ, որ մարմնի յարութիւնը կրկին է: Նախ կարող է յարութիւն առնել եւ նորից մեռնել, ինչպէս վեց մեռեալները, որ յարութիւն առան մինչեւ Քրիստոս, եւ սա անկատար յարութիւն էր, որովհետեւ դարձեալ մեռան: Երկրորդը այն յարութիւնն է, որ կլինի մէկ անգամ, եւ այլեւս չեն մեռնի: Սա կատարեալ յարութիւնն է: Սրա սահմանումը հետեւեալն է. յարութիւն է այն, որ մարմնաւոր մահուամբ ընկածը վերստին յառնում է անմահ յաւիտենական կեանքով: Այսպիսինն էր Քրիստոսի յարութիւնը, ինչպէս Պօղոս [առաքեալն է ասում] Կորնթացիներին գրած [թղթում]՝ «Գիտենք, որ Քրիստոս յարութիւն է առել մեռեալներից, եւ այսուհետեւ չի մեռնելու, եւ մահը նրան չի տիրելու» (Հռոմ. Զ 9):

Այդպիսինն է լինելու նաեւ մեր յարութիւնը վերջին օրում:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԱ

Հարց. Ինչո՞ւ են բոլորը յարութիւն առնելու միանգամից՝ վերջին օրում:

Պատասխան. Աստուած առաջին մարդուն ասաց. «Աճեցէ՛ք եւ բազմացէ՛ք եւ լցրէ՛ք երկիրը» (Ծննդ. Ա 28): Արդ, մարմնի աճելը բնութեամբ է, իսկ բնութիւնը համընթաց է ժամանակի փոփոխութիւններին: Այդ ժամանակ նախատես տեսչութեամբ տեսաւ նաեւ մարդկանց քանակը, բարու եւ չարի որակը, ժամանակի այն տեւողութիւնը, որի ընթացքում կլցուի մարդկանց թիւը. այդ նոյն [լրման] կէտում էլ ժամանակի վախճանը եւ յաւիտենականի սկիզբը կլինի՝ մարդկանց համընդհանուր յարութիւնը, ինչպէս առաքեալն է գրում Կորնթացիների [թղթում]. «Աչքի թարթելու տեւողութեամբ, յանկարծակի վերջին փողով

մեռեալները կյառնեն ի Քրիստոս» (Ա Կորնթ. ԺԵ 32):

Եւ սա բազմաթիւ պատճառներով: Նախ աստուածային պատկերի շնորհն ունենալու [պատճառով], որ բոլորին կամեցաւ ողջ բնութեամբ՝ հրեշտակների օրինակով ներմուծել կեանք, սակայն չարի մուտք գործելով՝ ժամանակաւորապէս յապաղեց, իսկ ժամանակի դադարելով՝ բոլորը հաւասարապէս վերանորոգուելով՝ առաջին կեանք կմտնեն՝ ըստ խոստման:

Երկրորդ՝ մարդն աշխարհի մաս է, որովհետեւ չորս տարրերից է, եւ չէր կարող մասը փոփոխուել՝ առանց ամբողջի, եւ երբ բոլոր արարածները ազատուեն ապականութեան ծառայական [վիճակից], ինչպէս գրում է Հռովմեացիներին [յղած թղթում], այդժամ մարդկանց մարմինները կվերափոխուեն անապականութեան:

Երրորդ՝ որքան յապաղում է ժամանակը, այնքան աճում է հաւատքի վարձքը, որովհետեւ հաւատը վարձք չի ունենայ, եթէ վկայութեամբ հաստատուի: Եւ եթէ ամէն օր իւրաքանչիւրը յարութիւն առնէր՝ յարութեան [նկատմամբ] հաւատը կխափանուէր, որովհետեւ հաւատն անտեսանելի է:

Չորրորդ՝ բոլոր մարդկանց մարմիններն առաջին նիւթի կողմից ստեղծուեցին միանգամից, այսինքն, որ Աստուած մարդուն արարեց հողից: Եւ «Գործք»-ում ասում է «Մի արիւնից արարեց մարդկանց բոլոր ազգերին» (Գործք ԺԷ 26): Հետեւաբար, մարդկանց բոլոր մարմինները միանգամից էլ պէտք է յարութիւն առնեն վերջին օրը:

Հինգերորդ՝ մեծ ուրախութիւն եւ տօն կլինի, երբ միանգամից մի ակնթարթում բոլոր մարդիկ յարութիւն առնեն, քան եթէ դա լինէր տարբեր ժամանակներում, ինչպէս Պօղոսն է ասում Եբրայեցիների [թղթի] մէջ. «Աստուած մեզ համար լաւագոյնն էր նախատեսել, որ առանց մեզ դրանք չկատարուեն» (Եբր. ԺԱ 40):

Վեցերորդ՝ յարութիւնը Աստծոյ հրաշագործութիւնն է եւ ոչ բնութեան, որովհետեւ բնութեան զօրութիւնը դրուած է սահմանների մէջ, որ գործում է երկար ժամանակ, իսկ Աստուած անհուն է զօրութեան մէջ, եւ անսպասելի վայրկեանի մի ակնթարթում յարութիւն է տալու:

Հարց: Իսկ ինչո՞ւ էր Եզեկիէլը յարութիւնը երկար ժամանակի մէջ ցոյց տալիս. ինչպէս ասում է՝ «Մերձեցաւ ոսկորը ոսկորին, յօդը, ջլերը, մաշկը, եւ ապա չորս հողմերից եկաւ շունչը» (Եզեկ. Լէ 28): Վարդապետները պատասխանում են, թէ ինչպէս Մովսէսն էր Իսրայէլի թանձրամիտ ժողովրդին պատմում արարման՝ լինելութեան մասին՝ վեց օր, որպէսզի կարողանան ըմբռնել, որ միանգամից են ստեղծուել երկինքն ու երկիրը, այդպէս էլ Եզեկիէլը թանձրամիտ ժողովրդին ննջեցեալների յարութիւնը բազում մասերի տրոհեց [առ այն], որ հոգու միաւորութիւնը եւ մարմնի նորոգումը յարութեան նոյն պահին է լինելու:

Հարց. Ապա ինչո՞ւ է ասում Պօղոսը, թէ «Եթէ մենք ողջ մնանք, չպիտի կանխենք ննջեցեալներին» (Ա Թեսաղ. Դ 14):

Պատասխան. Պօղոս առաքեալը չի ասում, թէ յարութիւնը յապաղելով է կայանալու, այլ ցոյց է տալիս ննջեցեալներին չխառնուելու կարգը:

Եւ այսպէս երկու կերպ պէտք է հասկանալ առաքեալի խօսքը: Նախ, որ միանգամից է յարութիւնը՝ միաժամանակ, սակայն նախ յառնելու են ննջեցեալները, ապա նրանց յետ՝ ողջերը, այսինքն՝ ննջեցեալների յետ մի գործողութիւն է կատարուելու՝ միայն յարութիւն, իսկ ողջերի յետ՝ մահ եւ յարութիւն՝ նոյն պահին մեռնելով եւ յառնելով: Դարձեալ ողջերը չեն խառնուելու ննջեցեալներին, այսինքն նրանք, ովքեր մահացած են՝ փտել են հողում եւ փոշիացել, իսկ [ողջերը] այդ պահին մեռնելու եւ իսկոյն յարութիւն են առնելու, ընդ որում մարմինը չի մտնելու հողի մէջ եւ չի քայքայուելու:

Իսկ թէ ինչո՞ւ չգիտենք աշխարհի եւ մեր կեանքի վերջին օրը, գրել ենք վերեւում՝ նահապետների [մասին] տասնութերորդ գլխի չորրորդ համարում:

Հարց. Ինչպէ՞ս է հողում կամ այլ տարրերի մէջ քայքայուած, կամ գազանների կողմից կերած մեր մարմինը ամբողջանալու:

Պատասխան. Ասենք, որ [երբ] մարդու մարմինը հոգուց բաժանւում է, հոգին գնում է հոգիների կայան՝ Աստծոյ մօտ, որը տուել է այն, իսկ մարմինը՝ հողում, թէ այլ տարրերում լուծուած, գազանների, թռչունների, ձկների կամ թէ մարդու կողմից կերուած, [միեւնոյն է] տրոհւում է տարրերի: Իսկ բոլոր տարրերը Աստծոյ շտեմարաններն են, եւ ողջ տիեզերքը նրա ձեռքին է, ըստ մարգարէի (տե՛ս Ես. Ժ 14): Եւ ինչպէս դու ես կարողանում քո ափի մէջ տեսակաւորել զանազան սերմեր եւ դնել ամբարում՝ իւրաքանչիւրն իր անկիւնում, առաւել եւս Աստծոյ համար հնարաւոր է երկնքից հոգիները եւ տարրերից մարմինները մի տեղ ժողովել եւ յարութիւն տալ:

ԿԵՐԱԿՈՒՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ուտելիքը, որ ուտում ենք, յարութիւն առնո՞ւմ է մարդու յետ:

Պատասխան. Նկատենք, որ ոմանք ասում են, որ ինչ ուտում ենք, յարութիւն չի առնում մարդու յետ, այլ միայն այն սակաւ հիւթը, որ մեր գոյաւորման սկզբին ստացել ենք մեր ծնողներից, այլապէս եթէ [ողջ] կերածը յարութիւն առնի մարդու յետ, մարդու մարմինը չափազանց անհեթեթ մի բան կդառնայ: [Որոշներն էլ] ասում են, որ ոչ միայն մարդու մարմինը, այլեւ անշունչ եւ շնչաւոր, ինչ ուտում ենք, յարութիւն են առնելու, սակայն [սա] անպատշաճ է: Բերում են հետեւեալ վկայութիւնը, թէ՝«իւրաքանչիւր ուտելիք, որ բերանն է մտնում, դուրս է գալիս»: Սակայն ասենք, որ կան նիւթեր, որ մարդու յետ յարութիւն կառնեն եւ կան, որ՝ ոչ: Այն նիւթը, որ ծնողներից ունենք՝ յարութիւն կառնի ամբողջութեամբ, որովհետեւ [այն] մեր գոյութեան սկիզբն է, եւ այն նիւթը, որ

կերակրի այն մասն էր, ինչն անցաւ մեր գոյաւորմանը՝ յարութիւն է առնելու, քանի որ [այն] մարդու մարմին դարձաւ, իսկ [մնացեալ] աւելորդը՝ չի յառնի: Որովհետեւ եթէ միայն այդ սկզբնական նիւթը յառնէր, մարդու մարմինը շատ փոքրիկ եւ անկատար կլինէր: Եւ Տէրը ուտելիքի մասին չասաց, թէ՝ մարդու մարմնում հաւասարակշռուած չէ, այլ, որ դառնութիւնն ու ծանրութիւնն դուրս են ելնում, իսկ քաղցրութիւնն ու թեթեւութիւնը անցնում են մարմնին: Ուրեմն կենդանական մարմինը չի յառնում մեզ յետ՝ իր բոլոր տարրերով, այլ միայն այն զօրութեան չափով, որ փոխանցուեց մեզ եւ դարձաւ մարդու մարմին. սա է յարութիւն առնելու:

ՉԿԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐՈՎ ԿԵՐԱԿՐՈՒԵԼ Է ՄԱՐՄԻՆԸ

Հարց. Եթէ մարդն ուտում է այն ձուկը, որ կերել է մարդու մարմին, եւ նրա սերմից ծնւում է այլ մարդ, որի՞ մարմնից է յարութիւն առնելու [կերուածը]:

Պատասխան. Մարդու մարմինը, որ կերել է ձուկը, յարութիւն է առնելու ոչ թէ ծնուածից, այլ նրան կերածից: Այսպէս էլ, եթէ մարդը մարդու մարմին ուտի եւ [նրանից] ծնուի մէկը, կերուածի մարմինը յարութիւն կառնի ո՛չ ծնուածի, ո՛չ ծնողի յետ, [որը կերել էր], այլ կերուածի մէջ: Այսպէս է, որովհետեւ կերուած մարդու մարմնի նիւթը գոյացական էր, որ [յետոյ] եղաւ պատահական նիւթ: Այդպէս էլ սկզբնաւորման նիւթը յարութիւն է առնում ոչ թէ ծնողից, որը նրանց արտահոսումն էր, այլ ծնողի մարմնում, որ շինուածքի հիմքն է:

Այսպէս էլ կողը, որ առնուեց Ադամից եւ պատրաստուեց կինը, ոչ թէ Ադամի մէջ է յառնելու, այլ՝ Եւայի, որ կազմուեան հիմքը դարձաւ սերմի փոխարէն: Այս կերպ էլ հողը, որով Ադամը կազմուեց, ոչ թէ տարրերի մէջ է մնալու, այլ յառնելու է Ադամի մէջ, որ դարձաւ նրա գոյութեան սկիզբը: Իսկ արգանդից վիժուածը, որ մօր սերմն է եւ արիւնը, մօր մէջ է յառնելու:

ՀՈԳԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԲ

Հարց. Ինչպէ՞ս է հոգին անվրէպ ճանաչում մարմինը:

Պատասխան. Սա երկու պատճառով է. նախ՝ Աստծոյ ամենակարող զօրութեան եւ արարչագործութեան դրուածքով է, որ անէութիւնից արարեց, գիտէ ուրեմն անխառնապէս զատել իւրաքանչիւր փոշեհատիկը՝ արդարի եւ մեղաւորի, որպէսզի իւրաքանչիւրին հատուցի ըստ գործերի: Երկրորդ՝ գոյութիւն ունի դիմագծի խառնուածքի առանձնայատուկ դրոշմ, որն անքակտելի է մարմնի եւ հոգու ամբողջութիւնից. երբ հոգին բաժանւում է, սա չի բաժանւում հոգուց եւ չի քայքայւում մարմնի յետ: Եւ չնայած մարմինը փոխւում է հասակի յետ կամ հիւանդութեան պատճառով, կամ հոգին է հիւանդանում մեղքով, դիմային նշանները [միեւնոյնն է] անփոփոխ են մնում: Այս կերպ հարուստի հոգին ճանաչեց

Աբրահամի եւ նրա գրկում հանգչող՝ Ղազարի հոգին: Իսկ այս նշանն անմարմին է, մնայուն եւ ծածկուած՝ յայտնի միայն ինքնին, ինչով եւ իւրաքանչիւր հոգի անվրէպ ճանաչելու է իր մարմինը եւ միաւորուելու: Ինչպէս օրինակ, այդ դրոշմի նշանը առկայ է քո մէջ, [քո ընտանի] կենդանիների եւ [քո] տան մէջ, որովհետեւ ելնելով քո տնից՝ [կենդանին] գնում խառնւում է ընդհանուր նախրին, իսկ վերադառնալով՝ այս նշանով ճանաչում է քեզ եւ [քո] տունը, իսկ դու էլ քո դրոշմով ճանաչում ես նրան:

Նոյնպէս եւ բաժանուած հոգին եւ տարրերի մէջ քայքայուած մարմինը այս դրոշմով անվրէպ ճանաչելու են միմեանց:

Հարց. Ինչպէ՞ս է ընդհանուր տարրերին խառնուած մարդու մարմինը ճշտութեամբ ժողովուելու:

Պատասխան. Ասենք, ինչպէս սնդիկը, որ խառնւում է հողին գնդերով եւ փոշոտւում, երբ ժողովում ես մի տեղ, ազատւում է փոշուց, որին խառնուած էր, եւ միայն մաքուր սնդիկն է հաւաքւում[707]: Այսպէս էլ մարդու մարմնին ընդհանուր տարրերից ոչինչ չի խառնւում, որի մէջ քայքայուել էր, այլ ինքն իբրեւ մարմնի գոյացութիւն խառնւում է հոգուն՝ նման այն բանին, որ ցորենի, կորեկի եւ այլ զանազան սերմեր, երբ ընդհանուր մի տեղ են սերմանւում, սնւում են ընդհանուր ջրով եւ ջերմութեամբ, սակայն դուրս են գալիս՝ ըստ իրենց տեսակի՝ ցորենից ցորեն եւ այլն: Այսպէս էլ մարդկանց մարմիններն առհասարակ մեռնում են, եւ լուծւում հողում եւ այլ տարրերի մէջ, սակայն յառնելիս չեն ունենայ ընդհանուր տարրերից ոչինչ իրենց մէջ, եւ ոչ էլ որեւէ այլ մարմնից՝ ինչ-որ բան:

Հարց. Ինչպիսի՞ մարմնով են յարութիւն առնելու մեռեալները:

Պատասխան. Ասենք, որ հերձուածօղներից ոմանք մոլորուեցին մեռեալների յարութեան հարցում եւ ասացին, թէ մարմինը պարզ է լինելու[708] եւ ոչ թէ բաղկացած չորս տարրերից:

Եւ սրանք բաժանւում են դարձեալ երեքի: Ոմանք ասում են, թէ յարութեան ժամանակ մարդկանց մարմինը հոգու է փոխւում: Եւ վկայաբերում են Պօղոսի խօսքը, թէ՝ «Սերմանում է շնչաւոր մարմին, յարութիւն է առնում հոգեւոր մարմին»: Սակայն Պօղոսի խօսքն ասում է, ոչ թէ մարմինն էութեամբ է հոգի լինում, այլ նման հոգու, որ անմահ է եւ կերակրի կարիք չի ունենայ հոգու նման:

Ասում են նաեւ, որ յարութեան ժամանակ մարդկային մարմինները օդային կամ հողմային են լինելու, որովհետեւ [Սուրբ] գրքում երբեմն հոգի, հողմ, երբեմն էլ՝ օդ է կոչւում: Ոմանք էլ ասում են, թէ մարդկային մարմինները երկրային չեն լինելու, այլ՝ երկնային, ինչպէս որ Պօղոսն է ասում յարութեան մասին Կորնթացիներին յղած [թղթում], թէ՝ «Այլ է երկնաւորների մարմինը, եւ այլ է երկրաւորների մարմինը» (Ա Կորնթ. ԺԵ 40): Իսկ Յոբը սրանց բոլորի խօսքը սուտ է հանում, ասելով՝ «Քանզի գիտեմ, որ

կենդանի է, ով փրկելու է ինձ՝ յարութիւն տալով մարմնիս, որ համբերեց, տարաւ այս բոլորը» (Յոբ ԺԹ 25):

Հերձուածողներից ոմանք էլ ասում են, որ այս մարմինը չի յարութիւն առնելու եւ ոչ այս մարդը, որ մեռնելու է, այլ սրանց փոխարէն նոր մարդ է յարութիւն առնելու: Իսկ Յոբը սրանց էլ է սուտ հանում, ասելով, թէ՝ «Իմ մարմնով եմ տեսնելու Աստծուն՝ իմ փրկչին եւ ոչ ուրիշ մարմնով» (տե՛ս Յոբ ԺԹ 25-26):

ՍԵՐՄԻ ՕՐԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԳ

Յայտնի է, որ Պօղոսը Կորնթացիների [թղթում] սերմի հատիկի օրինակով մարդկանց յարութիւնն է ցոյց տալիս եւ ասում. «Անմի՛տ, դու, որ սերմանում ես, չի ծլի, եթէ չմեռնի» (Ա Կորնթ. ԺԵ 36):

Եւ երեք պատճառով է այս օրինակին դիմում: Նախ՝ ծանօթ է բոլորին, քանի որ ամէն տեղ կայ: Երկրորդ՝ իր Վարդապետն էլ ցորենի հատիկն օրինակ բերեց: Երրորդ՝ առաւելագոյն ձեւով հարմար օրինակ է ճշմարտութեան [համար]: Որովհետեւ նախ սերմանւում, ապա բուսնում է. այդպէս էլ մարդը նախ մեռնում, ապա կենդանանում է, ինչպէս ասում է Կորնթացիների [թղթում]. «Դու, որ սերմանում ես, չի բուսնի, եթէ չմեռնի» (Ա Կորնթ. ԺԵ 36): Երկրորդ՝ ինչպէս հատիկն է մերկ թաղւում, [սակայն] բուսնում է՝ ծաղկելով եւ տերեւներով զարդարւում, [այդպէս էլ] մեռեալի մերկ մարմինը ոչ թէ մերկ է յարութիւն առնելու, այլ փառքով, ինչպէս առաջիկայում ցոյց կտանք:

Երրորդ՝ ինչպէս որ ցանուած հատիկից բուսնում է նոյն տեսակին [պատկանող] հատիկ, [այդպէս էլ] մեռած մարմինն է յառնելու ճշտութեամբ ինքը, եւ ոչ թէ ըստ տեսակի նմանօրինակ [մէկը], համածայն առաքեալի, որն ասում է. «Իւրաքանչիւրը կստանայ իր մարմնով՝ բարին կամ չարը» (Բ Կորնթ. Ե 10):

Չորրորդ՝ սերմանւում է տարբեր ժամանակներում եւ ծլարձակում է միաժամանակ. այսպէս էլ բոլոր մեռեալների մարմինները, որ Ադամից յետոյ են, յանկարծակի, մի ակնթարթում վերջին փողով յարութիւն կառնեն, ասում է առաքեալը (տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 52):

Հինգերորդ՝ նախ ծաղկում, ապա պտղաբերում է, քանզի ծաղիկը նախանշանն է պտղի, իսկ սրբերի հոգիները նախ իրենց բնական պայծառութեամբ են ծաղկելու, ինչպէս վերեւը պարզաբանեցինք, իսկ յետոյ պտուղների արդիւնքով կայացած [կմտնեն] հանդերձեալ կեանք:

Վեցերորդ՝ [ինչպէս] մի մասը պարարտ է, միւս մասը վտիտ եւ կամ անպտուղ, [այդպէս էլ] ընտրեալների մարմինները եւ ոչ այդպիսինները ըստ այդմ կզանազանուեն:

Եօթներորդ՝ ոմանք ոռոգուած, միւսները՝ անջրդի. ոռոգուածները հաւատաւորները եւ յուսով ննջածներն են, ու եկեղեցին մշտապէս կատարում է նրանց սուրբ յիշատակութիւնը, իսկ անյոյս մահացածները՝ անջրդիներն են:

Ութերորդ՝ բարի եւ չար սերմերը միասին են բուսնում եւ մնում մինչեւ հունձը եւ յատկապէս մինչեւ կալում [հաւաքելը], ըստ Տիրոջ առակի (տե՛ս Մտթ. Գ 12, Ղուկ. Գ 17), այդպէս էլ երկրում մեռածների մարմինները եւ հոգիները [իրենց] կայանում բոլորը միասին են՝ արդար թէ մեղաւոր, մինչեւ դատաստանով բաժանուեն բարիներն ու չարերը:

Իններորդ՝ բոլոր բուսած սերմերը հասունացած մի պահի, այսինքն իրենց կատարութեան [ժամանակ], հասնում են հնձին, այդպէս էլ ննջեցեալները՝ ծեր թէ երիտասարդ, յարութիւն են առնելու երեսնամեայ հասակով, որ կատարեալ տարիք է, ինչպէս առաջիկայում ցոյց կտրուի:

Տասներորդ՝ ինչպէս սերմանուած հատիկը՝ բուսնում, մշակւում, կրակի միջով անցնում, ապա դրւում է սեղան՝ պատուի արժանանալով, այդպէս էլ մեռեալների յարութեան ժամանակ «Կընտրուի օրը» (Ա Կորնթ. Գ 13), ասում է առաքեալը, որ յայտնի կդառնայ հրով, [որովհետեւ] եթէ փայտ, խոտ, եղէգ են, որ մեղաւորներն են՝ կայրուեն, իսկ եթէ ոսկի, արծաթ կամ ակնեղէն են, որ արդարներն են՝ առաւել կպայծառանան եւ կբազմեն երկնաւոր Հօր սեղանին՝ պատուի արժանանալով Քրիստոսից:

ԴԱՐՁԵԱԼ ՍԵՐՄԻ ՕՐԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Եւ ինչպէս հատիկն է «սերմանւում մերկ, [սակայն] մերկ չի բուսնում, այլ զարդարուած խոտով եւ տերեւով՝ եօթնակի թուով, այսինքն՝ արմատը, խոտը, ծղօտը, ծունկը, տերեւը, պատեանը, քիստը եւ ապա լեցուն ցորենը հասկի մէջ, այսպէս էլ մարդկային մարմինները մերկ թաղւում են, սակայն յարութիւն կառնեն ոչ մերկ, այլ յոյժ գեղեցիկ եւ պատուական զգեստներով զարդարուած: Ինչպէս Պօղոսն է ասում նոյն գլխում. «Այս ապականացուն պէտք է անապականութիւն հագնի, իսկ մահկանացուն՝ անմահութիւն» (Ա Կորնթ. ԺԵ 53):

ՀԱՐՍԻ ԶԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Եւ զարդարուած կլինի եօթ զարդերով՝ երեքը հոգեւոր, չորսը՝ մարմնաւոր, ինչպէս վարդապետներն են ասում: Սա մարմնաւոր հարսի օրինակով է, որ զարդարւում է եօթ զարդերով՝ երեքը գլխին, չորսը՝ ընդհանրապէս մարմնին: Այդպէս էլ հոգեւորը: Եւ սուրբ սեղանն էլ եօթ զարդերով է ծածկւում:

Եւ եօթ զարդերը լիալիր պատճառն հոգու երեք մասերի եւ մարմնի չորս տարրերի, քանի որ մարդն այս աշխարհում եօթ պակասութիւն ունի՝ երեք՝ հոգեւոր, չորս՝ մարմնաւոր: Այս եօթ պակասութիւնները յարութեան ժամանակ վերանում են եւ [փոխարէնը] եօթ զարդարանք կստանան:

Առաջին պակասութիւնը հոգու իմացական խաւարն է եւ տգիտութիւնը, իսկ յարութեան ժամանակ սա վերանալու է, եւ հոգին դառնալու է պայծառ լոյս եւ [կստանայ] Աստծուն տեսնելու գիտութիւն, որովհետեւ Աստծուն դէմ

յանդիման կտեսնի եւ կընկալի աստուածայինը:

Երկրորդ պակասութիւնը մտքի թուլութիւնն է եւ մոռանալը, որովհետեւ այստեղ Աստծուն ենք մոռանում եւ հեռանում նրանից մեղքերով. սա էլ կվերանայ հոգուց, եւ կլինի ամուր եւ հաստատուն [կամք], որովհետեւ Աստծուն հաստատապէս կընդունենք եւ երբեք չենք բաժանուի նրանից եւ չենք մոռանայ:

Երրորդ պակասութիւնը հոգու տրտմութիւնն է, որովհետեւ շատ բան է ուզում, սակայն չի կարողանում ստանալ, շատ բան էլ չի ուզում, սակայն կատարւում է նրա հետ. այն էլ կվերանայ հոգուց, եւ կընդունի ուրախութիւն եւ հոգեւոր ցանկութիւն Աստծոյ նկատմամբ, ըստ այդմ՝ «Դարձեալ կտեսնէք եւ ուրախ կլինէք, եւ ձեր ուրախութիւնը ոչ ոք չի խլի ձեզանից» (Յովհ. ԺԶ 12):

Իսկ մարմնական առաջին պակասութիւնը այստեղ [այն է], որ մահկանացու է, ապականացու եւ տառապող՝ քաղցի, ծարաւի, հիւանդանալու [պատճառով]. սրանք բոլորը մարմնից կվերանան, եւ կտայ անմահութիւն, անապականութիւն եւ անախտութիւն, որովհետեւ երբեք չի տառապի, ինչպէս Պօղոսն է ասում՝ «Սերմանւում է ապականութեամբ, յարութիւն է առնում անապականութեամբ» (Ա Կորնթ. ԺԵ 45):

Մարմնի երկրորդ պակասութիւնը սեւութիւնը եւ աղտեղութիւնն է, որ կվերանայ մարմնից եւ կզարդարուի լոյսով, իբրեւ արեգակ, ինչպէս Տէրն է հրամայում՝ «Կփայլատակեն արդարներն ինչպէս արեգակ արքայութեան երկնքի մէջ» (Մտթ. ԺԳ 43):

Մարմնի երրորդ պակասութիւնը ծանր եւ ծոյլ լինելն է բոլոր հոգեւոր գործերում: Այս էլ կվերանայ, կդառնայ արագընթաց եւ արի բոլոր բարեգործութիւններում, որովհետեւ որտեղ հոգու կամքը թելադրի, այնտեղ անարգել կընթանայ մարմինը՝ մի ակնթարթում, ինչպէս Պօղոսն է ասում՝ «Սերմանւում է տկարութեամբ, յարութիւն է առնում զօրութեամբ» (Ա Կորնթ. ԺԵ 43): Սողոմոնն էլ [ասում] է, թէ՝ «Կպայծառանան արդարները եւ կընթանան կայծակի նման եղէգի միջով» (Իմաստ. Գ 7):

Չորրորդ պակասութիւնն այն է, որ այժմ մեր մարմինը թանձր է եւ կոպիտ, երբ այնժամ այս էլ կվերանայ, կդառնայ անօսր եւ թափանցիկ, որին ո՛չ պարիսպը, ո՛չ էլ բանտը կորսայ: Ինչպէս արեգակի լոյսն անցնում է երկինքը՝ առանց վնասուելու, եւ ինչպէս Քրիստոս յարութիւն առաւ մարմնով՝ քարով փակուած գերեզմանից եւ մտաւ աշակերտների մօտ՝ փակ դռների միջով, այդպէս էլ սրբերի մարմինները անցնելու են ամբողջ երկինքը՝ Աստծոյ զօրութեամբ մինչեւ հրեղէն երկինք, ինչպէս Պօղոսն է ասում՝ «Սերմանւում են շնչաւոր մարմնով եւ յարութիւն առնում հոգեւոր մարմնով» (Ա Կորնթ. ԺԵ 44):

Յայտնի է նաեւ, որ մեր Տէրը՝ Քրիստոս, նախքան յարութիւնը [դրանք] չորս կերպ ցոյց տուեց իր մարմնով. թափանցութիւնը՝ ծնուելով կուսու-

թեամբ, թեթեւութիւնը՝ ծովի վրայով քայլելով եւ լեռան բարձունքում, պայծառութիւնը՝ Թաբոր լեռան վրայ, անչարչարելի լինելն՝ իր մարմինը օրհնելով եւ աշակերտներին տալով Վերնատանը, եւ Քրիստոսի մարմինը անչարչարելի էր ներգործելու [կարողութեամբ] եւ ոչ զօրութեամբ:

Հարց. Մեղաւորների մարմիններն չունե՞ն այս զարդերը:

Պատասխան. Ասենք, որ՝ ոչ: Ինչպէս Պօղոսն է ասում. «Բոլորս էլ ննջելու ենք, սակայն բոլորը չեն նորոգուելու» (Ա Կորնթ. ԺԵ 51): Այս պատճառով է, որ վարդապետներն ասում են, թէ երկու բան կայ ընդհանուր՝ մաքուրների եւ անմաքուրների համար, այսինքն՝ յարութիւնը, որովհետեւ բոլորն են յառնելու, եւ անմահութիւնը, որովհետեւ բոլորը յարութիւն են առնելու անմահ եւ չքայքայուող մարմիններով, սակայն այն եօթ զարդարանքները, որ կունենան սրբերը՝ Քրիստոսի հարսները, չեն ունենայ անմաքուրները, որոնք սատանայի հարսներն են: Այս պատճառով մեղաւորների հոգիները կլինեն անգիտութեան խաւարի եւ յաւիտենական տրտմութեան մէջ՝ Աստծուց հեռացած: Իսկ նրանց մարմինները կլինեն շատ թանձր, ծանր եւ գարշելի, ինչպէս այստեղ: Եւ նրանց աչքին իրենց մարմինը կթուայ իբրեւ մեծ բլուր՝ սեւ եւ աղտեղի ու տառապալից, որովհետեւ անչափ չարչարանքներ կկրեն, կցանկանան մեռնել, սակայն չեն մեռնի, ինչպէս Տեսիլքն է ասում՝ «Այն օրը մարդիկ մահ կփնտրեն եւ չեն գտնի» (Յայտ. Թ 6):

ՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ ԱՆՄԱՀ ԵՆՔ ՄՆԱԼՈՒ ՊՐԱԿ ԻՆ

Հարց. Ինչո՞ւ պէտք է յարութիւնից յետոյ անմահ եւ անապական լինենք:

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով՝ բնական եւ բարոյական: Նախ՝ բնական: Հոգին այժմ փոփոխական է՝ խորհրդով, կամքով եւ այլն, որի պատճառով էլ մարմնի յետ միաւորութիւնը փոփոխական է, իսկ յարութիւնից յետոյ անփոփոխ կերպով է հաստատուելու, ասում է Դիոնէսիոսը, ուստի անփոփոխ եւ անմահ կմիաւորուի մարմնին:

Երկրորդ՝ այժմ մեր մարմինն ապականացու հողից է եւ տարրերից, ուստի յետոյ էլ քայքայւում է, իսկ այնժամ հողը եւ տարրերը անապական են լինելու, ըստ Պօղոսի՝ «Արարածները կազատուեն ապականութեան ստրկութիւնից» (Հռոմ. Ը 21), ուստի անապական տարրերից կկազմուի անապական մարմին:

Երրորդ՝ այժմ ստեղծուած ենք ժամանակի մէջ, իսկ ժամանակը փոփոխական է, ուստի ժամանակի յետ էլ մենք ենք փոխւում: Մինչդեռ յարութեան ժամանակ անփոփոխ յաւիտենութեան մէջ ենք ծնուելու, ըստ այդմ՝ «յարութեան որդիներ են» (Ղուկ. Ի 36), ուստի յաւիտենականութեան յետ անմահ եւ անփոփոխ ենք մնալու:

Չորրորդ՝ այժմ ծնւում ենք քայքայուող ծնողներից, ուստի մենք էլ

քայքայւում ենք, իսկ այնժամ անապական ծնողից՝ Աստծուց ենք ծնուելու, ըստ այդմ՝ «Աստծոյ որդիներ են» (Ղուկ. Ի 36), ուստի անապական ենք մնալու:

Հինգերորդ՝ մարդը ստեղծուեց հրեշտակին հաւասար եւ երբ մեղանչեց, հաւասարուեց անասուններին՝ ըստ Դաւթի (տե՛ս Սղմ. ԽԸ 13), եւ նրանց յետ եղծուեց եւ պատժուեց, որի պատճառով էլ յարութեան ժամանակ հրեշտակներին հաւասար է յարութիւն տալու՝ անմահ եւ անկարօտ [որեւէ բանի], ըստ այդմ՝ «հաւասար են հրեշտակներին»,- ասում է Տէրը:

Վեցերորդ՝ կեանքը երկուսն է՝ մահկանացու եւ անմահ, մարդն էլ երկուսն է՝ մահկանացու եւ անմահ, եւ ինչպէս այժմ հոգով եւ մարմնով մահկանացու կեանքն են վայելում, այդպէս էլ այնժամ հոգով եւ մարմնով անմահ կեանք կժառանգեն, ուստի պէտք է յարութիւն առնի:

Եօթներորդ՝ մահը եւ քայքայումը մեղքի ծնունդ են, ըստ այդմ՝ «Ցանկութիւնը յղանալով՝ մեղք է ծնում եւ մեղքը՝ մահ» (Յակ. Ա 15): Իսկ այնժամ մեղք չի լինելու, ըստ այդմ՝ «երկրից կպակասեն մեղաւորները»:

Ութերորդ՝ կեանքը բարի է եւ անեզր, մահը՝ չար ու եզրագծուած: Եւ ինչպէս ելանք բարի կամքից եւ մտանք չար մահ, այդպէս էլ ելնելով մահից՝ մտնելու են անեզր եւ անվախճան կեանք եւ բարութիւն:

Իններորդ՝ հոգին եւ մարմինը [կազմում] են մարդու անձը, ուստի փոխադարձ կրում են մէկմէկու բարին եւ չարը: Եւ ինչպէս այստեղ հոգին մարմնինը կրեց, այդպէս էլ այնտեղ մարմինը հոգունն է կրելու՝ բարի թէ չար:

Տասներորդ՝ մարդու գործերն իր նման անցաւոր են, իսկ Աստծոյ հատուցումը մշտնջենաւոր, ինչպէս ինքը, ուստի յարութիւն է տալու անմահութեամբ, որ հատուցի ոմանց փառքով, ոմանց էլ՝ անմահ մարմնի տանջանքով:

ՈՐ ԲՈԼՈՐՍ ԵՆՔ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌՆԵԼՈՒ ՊՐԱԿ ԻԵ

Հարց. Բոլո՞րն են յարութիւն յառնելու մեռեալներից, թէ՞ ոչ:

Պատասխան. Վարդապետներն ասում են, որ բոլորն են յարութիւն առնելու, նոյնիսկ նրանք, որ մօր արգանդում են մահացել, եթէ ստացել են բանական հոգի:

Եւ այս է յարութիւն տալու պատճառը. բոլոր մարդիկ պէտք է ստանան վարձատրութիւն կամ պատիժ՝ կամ իրենց գործերին [ի պատասխան], կամ էլ՝ սկզբնական [մեղքի] պատճառով:

Այն մանուկները, որ մահացել են մինչեւ մկրտութիւն ստանալը, պատժուած են Ադամի մեղքի պատճառով: Նրանք, որ մկրտուած են մեռել, կստանան [իրենց] վարձքը՝ ըստ եկեղեցու խորհրդի եւ Քրիստոսի չարչարանքի, որի մէջ մկրտուեցին: Հետեւաբար, անհրաժեշտ է, որ բոլորը յարութիւն առնեն, ինչպէս Յոհաննու Աւետարանն է ասում՝ «Բոլորը կլսեն Աստծոյ Որդու ձայնը եւ դուրս կելնեն»

(Յովհ. Ե 25): Եւ Պօղոսն ասում է. «Բոլորն են կանգնելու Աստծոյ դէմ յանդիման, որպէսզի իւրաքանչիւրն իր մարմնով ստանայ իր գործածի դիմաց՝ բարի թէ չար (Բ Կորնթ. Ե 10):

Հարց. Իսկ ի՞նչ է, որ մարգարէն ասում է՝ «Ամբարիշտները յարութիւն չեն առնելու դատաստանի ժամանակ» (Սղմ. Ա 5) եւ այլն:

Պատասխան. Ասենք, որ սաղմոսի այս խօսքը հետեւեալ մեկնութիւնն ունի: Ամբարիշտները հոգեւոր յարութիւն չեն ունենայ, այսինքն՝ մեղքից շնորհի [չեն գայ], այլ յարութիւն կառնեն մարմնով: Եւ կամ՝ դատաստանի ժամանակ յարութիւն չեն առնի, այսինքն չեն կանգնի դատաստանի առջեւ, որովհետեւ կործանուած են մեղքով: Դարձեալ՝ չեն գայ դատաստանի, որովհետեւ բարութեան մաս չունեն, որ քննութեան առնուի, այլ կդատապարտուեն, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում:

ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆՈՅՆՈՒԹԵԱՄԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Բոլո՞ր անդամներով են յարութիւն առնելու:

Պատասխան. Վարդապետներն ասում են՝ բոլոր անդամներով են յարութիւն առնելու՝ անթերի, որովհետեւ մարդը կատարեալ է հոգով եւ մարմնով: Եւ ինչպէս հոգին զօրութիւն կունենայ առանց պակասութեան, այդպէս էլ մարմնի անդամները պէտք է անպակաս լինեն, որպէսզի կատարեալ մարդ լինի: Եթէ մազը, որ [ընդամէնը] մարմնի գեղեցկութիւն է, Տիրոջ յետ յարութիւն է առնելու՝ «Ձեր գլխից մի մազ անգամ չի կորչելու» (Ղուկ. ԻԱ 18), որքան առաւել եւս [մարմնի] անդամները, որ յարութիւն են առնելու [որպէս] մարմնի էութիւն:

Եւ պէտք է իմանալ, որ յարութեան ժամանակ երեք բան է ուղղուելու՝ [վերականգնելով] բնութիւնը: Նախ [լրացուելու է] պակասութիւնը, ինչպէս երեխայինը, անդամահատինը եւ կորցրած անդամների [դէպքում], ինչպէս չորս մատի [դէպքում] եւ այլն: Եւ կլցուեն սրանք ամբողջ մարմնով, ինչպէս գարու հացի բոլորակը:

Երկրորդ՝ կկարգաւորուեն աւելորդութիւնները՝ [բերելով] չափաւորի, ինչպէս աւելորդ եղունգները, մազերը, վեցամատը եւ այլն. սրանք կչափաւորուեն:

Երրորդ՝ կուղղուեն խաթարումները, որ անդամների [կենսագործութեան] խանգարումն են՝ իրար ախտահարած լինելով՝ բնութեան տկարութեան պատճառով: Եւ սրանք յարութեան ժամանակ կուղղուեն, որովհետեւ Աստծոյ կարող զօրութեան գործ է եւ ոչ թէ՝ տկար բնութեան:

Եւ եթէ մէկը հարցնի, թէ այն աղտը, որով լցուած են մեր անդամները, նա՞ էլ է յարութիւն առնելու, ապա ասենք, որ այն անդամները, որ լցուած են աղտեղութեամբ, այնտեղ կլցուեն չորս տեսակ լուսեղէն հեղուկներով:

Եւ եթէ, մէկն ասի, բազմաթիւ անդամներ կան կենդանական, ինչպէս սիրտը, լեարդը, թոքը եւ այլն, որոնք յարութեան ժամանակ պէտք չեն, քանի

որ կարիք չի լինելու մարդու կեն-դանութեան համար, ապա ասենք, որ թէպէտ այս անդամները յարութեան ժամանակ պէտք չեն, սակայն յարութիւն կառնեն կատարելութեան եւ գեղեցկու-թեան համար, ինչպէս ստինքը, որ կաթի համար պէտք չի լինի, սակայն յարութիւն կառնի՝ մարդու կատարելութեան եւ գեղեցկութեան համար, որովհետեւ մար-դիկ յարութիւն են առնելու ըստ գոյացութեան, ըստ գոյացութեան ամ-բողջութեան եւ ըստ գոյացութեան գեղեցկութեան: Գոյացութիւնը մարդու հոգին եւ մարմինն է: Ամբողջ գոյա-ցութիւնը բոլոր անդամներն են, իսկ գեղեցիկ գոյացութիւն, այսինքն ձեւով, մազերով եւ այլն, որ ասուեց:

Հարց. Բոլորն արո՞ւ են յարութիւն առնելու, թէ՞ արու եւ էգ:

Պատասխան. Ոմանք ասում են բոլորը արու են յարութիւն առնելու, ոմանք էլ, թէ՝ արու եւ էգ: Ասենք, որ երկու կողմն էլ սխալ են: Նախ, մարմնի անդամներով չեն ճանաչուելու արուն եւ էգը, այլ՝ յատուկ դիմագծերով, բարի գործերով, փառքով եւ անուամբ են զանազանուելու, ինչպէս կուսանաց դասը՝ հայրապետականից: Եւ ինչպէս հրեշտակներն են զանազանում, այդպէս էլ յարութեան ժամանակ՝ փառքով եւ պսակով:

Երկրորդ՝ եւ ո՛չ արական մասի երեւալով է նախապատուութիւն տրուելու եւ [ո՛չ էլ] էգն է անարգուելու, որովհետեւ մարմնի անդամներն այնտեղ զազրելի չեն: Այլ ինչպէս հրի կայծը կամ արեգակի անօթն համակ լոյս են, այդպէս էլ բոլոր անդամներն այնտեղ փայլելու են իբրեւ արեգակ: Եւ չնայած իւրաքանչիւր ոք ճշգրտութեամբ յարութիւն է առնելու իր անդամներով, սակայն չի երեւալու՝ սա տղամարդ է, նա՝ կին, սա ծեր, նա՝ երիտասարդ, այլ [լինելու են] ինչպէս երկնքի հրեշտակներ: Եւ ինչպէս դրախտի նախաստեղծները չէին ամա-չում, այդպէս էլ մաքուրները յարութեան ժամանակ, որովհետեւ ներսից ծածկուած են հոգու լուսաւորութեամբ, իսկ դրսից՝ պսակով եւ փառքով:

Իսկ դատապարտուածները ծան-րացած մասերով եւ զազիր անդամ-ներով՝ տղամարդ թէ կին, իւրաքանչիւրը [մեղք] գործած անդամով է կրելու իր պատիժը: Այլեւ խայտառակուելու են ամօթահար:

ԿԱՏԱՐԵԱԼ ՀԱՍԱԿԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԻԶ

Հարց. Ինչպիսի՞ հասակում են յարութիւն առնելու եւ քանի՞ տարե-կանում:

Պատասխան. Վարդապետերն ասում են, որ բոլորը կատարեալ հասակով են յարութիւն առնելու եւ բոլորը՝ երեսնամեայ: Եւ սա այն պատճառով, որ Աստուած ի սկզբանէ Ադամի բնութիւնն անթերի ստեղծեց, եւ վերջին օրն էլ նորոգելու է առանց թերութիւնների: Մինչդեռ մանկութիւնը թերի է եւ կատարեալ հասակ չէ, [նոյնպէս] եւ ծերութիւնը պակասաւոր է, որովհետեւ անցել է կատարելութիւնը, իսկ ման-

կութեան եւ ծերութեան միջակայքում երիտասարդութիւնն է՝ [իր] կատարեալ թուով, որը երեսնամեան է, այն թիւը, որով ստեղծուեց Ադամը:

Դարձեալ, երկրորդ Ադամն այս թուով յարութիւն առաւ մեռեալներից, ուստի մենք բոլորս էլ այդ տարիքով ենք յարութիւն առնելու, եւ ինչպէս ասում է Եփեսացիների թղթում, «Մինչ բոլորս հասնենք կատարեալ մարդու հասակի աստիճանին՝ ճիշտ Քրիստոսի հասակի չափով» (Եփես. Դ 13): Եւ այսպէս հաւասար տարիքով՝ համահասակ թուով եւ կատարելութեամբ [յարութիւն] կառնենք: «Համահասակը» քանակին չի վերաբերում, որովհետեւ այստեղ մէկը մեծ, միւսը փոքր է լինելում՝ նրանց մէջ եղած անհաւասար ջերմութեան պատճառով: Այդպէս էլ այնտեղ. ովքեր առաւել խոշոր են եւ հսկայանդամ, կամ շատ փոքր եւ վտիտ, իրենց երեսնամեայ հասակի մէջ կչափաւորուեն:

Եւ «մեծ եւ փոքր»-ը յարութեան ժամանակ երեք կերպ է ասում: Նախ փառքի պատճառով. «Ինչպէս աստղը աստղից առաւել է փառքով» (Ա Կորնթ. ԺԵ 41),- ասում է առաքեալը:

Երկրորդ՝ մեծամեծ գործերի պատճառով, ինչպէս Տեսիլքում է ասում՝ «Տեսայ այնտեղ մեռածներին՝ մեծ, թէ փոքր» (Յայտ. Ի 12):

Երրորդ՝ հասակի մեծութեան պատճառով, որովհետեւ իւրաքանչիւրն իր երեսնամեայով է յարութիւն առնելու, թէ՝ հարիւրամեան, որ անցել է, թէ քառասնօրեայ մահացածը, որ պիտի լինէր երեսնամեայ, նոյն հասակով են յարութիւն առնելու, ինչպէս Յոբն է ասում՝ «Այնտեղ մեծամեծները եւ փոքրերն են» (Յոբ Գ 19):

ՓՈԽՈՒԵԼՈ՞Ի ԵՆ ԱՐԴԵՕՔ ԲՈԼՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ Պրակ Ի է

Հարց. Յարութիւնից յետոյ ովքե՞ր են մնալու գոյաւորներից:

Պատասխան. Անմարմիններից՝ հրեշտակները, դեւերը եւ մարդկանց հոգիները, իսկ մարմնաւորներից՝ երկնային մարմինները, չորս տարրերը եւ մարդկանց մարմինները, իսկ մնացեալը տարրալուծուելու եւ ժողովուելու են տարրերի մէջ: Իսկ այն, որ ըստ ոմանց խաչի նիւթը մնալու է, ապա սա ոչ թէ ըստ բնութեան կարգի է, այլ հրաշագործութեան կարգից, ինչպէս ցոյց կտանք առաջիկայում:

Հարց. Ի՞նչն է պատճառը, որ վախճանին միայն երեք մարմիններ են մնալու:

Պատասխան. Վերին մարմինները, երկինքը, լուսատուները բոլորովին անապական են, իսկ չորս տարրերը, չնայած ըստ մասի ապականւում են, սակայն ըստ ամբողջի չեն ապականւում, ինչպէս Ժողովողն է ասում՝ «Սերունդ է գալիս, սերունդ է գնում, բայց երկիրը մնում է յաւերժ» (Ժող. Ա 4): Իսկ մարդու մարմինը չնայած ապականացու է, սակայն հոգու առումով՝ անապական է, ուստի անապական կմնայ: Իսկ մնացեալ բոլոր մարմինները՝ շնչաւոր թէ անշունչ, տնկի թէ կենդանի, բոլորն ապականուելու են՝ երեք պատճառով: Նախ, որովհետեւ բոլորովին ապականացու են

եւ անապականութեան ոչ մի մաս չունեն: Երկրորդ՝ կենդանիները եւ բոյսերը բոլորը ստեղծուել են մարդու մարմնաւոր կեցութեան համար, իսկ մարդիկ յարութեան ժամանակ կերակրի կարօտ չեն լինելու, որովհետեւ անմահ են, ուստի սրանք չեն կենդանանայ: Երրորդ՝ իմաստուններն ասում են, որ կենդանիների եւ բոյսերի ծնունդը լինում է երկնային մարմինների շարժման հետեւանքով, իսկ վախճանի ժամանակ նրանց շարժումը կխափանուի, ուստի անբան կենդանիները եւ տնկիները կոչնչանան:

Հարց. Իսկ ի՞նչ է նշանակում Աւետարանի խօսքը, թէ՝ «Երկինքն ու երկիրը կանցնեն, աստղերը կընկնեն եւ լուսատուները կխաւարեն» (Մտթ. ԻԴ 29):

Պատասխան. Վարդապետերն ասում են՝ կան, որ էութեամբ են, սակայն կանցնեն պատահմամբ, ինչպէս կենդանիները, տնկիները, որ գոյացութիւն են չորս տարրերից: Եւ կան, որ պատահմամբ կանցնեն, սակայն էութեամբ կմնան, ինչպէս երկնային մարմինները, չորս տարրերը եւ մարդկային մարմինները. սրանք պատահմամբ կանցնեն, սակայն գոյաւորմամբ կմնան, որովհետեւ շարժուող երկինքը Դատաստանի օրը կանգ կառնի, եւ կհաստատուի այն կարգը, որ կար ստեղծուելու պահին՝ արեգակը արեւելքում եւ լուսինը՝ արեւմուտքում: Ինչպէս Եսային է ասում՝ «Արեգակը մայր չի մտնելու քո [երեսից] եւ լուսինը չի պակասելու [քո] աչքերից» (Ես. Կ 20): Եւ չորս տարրերից իւրաքանչիւրն իր տեղում կանշարժանայ եւ այլեւս չի փոփոխուի:

ԹԷ ՆՈՐՈԳՈՒԵԼՈՒ ԵՆ ԱՐԱՐԱԾՆԵՐԸ

Հարց. Ինչպէ՞ս են նորոգուելու արարածները:

Պատասխան. Երկու պատճառ կայ արարածների նորոգուելու համար: Նախ, որ տարրերը ապականուեցին մարդու յանցանքների պատճառով, ուստի անհրաժեշտ է, որ մարդու յետ նրանք էլ նորոգուեն: Երկրորդ՝ որպէսզի ստանան վաստակի վարձքը, քանի որ ծառայել էին մարդկանց: Եւ ըստ ոմանց կարծիքի կլինեն երեսնաւոր արդարների տեղը, ինչպէս առաջիկայում ցոյց կտանք:

Եւ հետեւեալ կերպ են նորոգուելու. Քրիստոսի գալստեան ժամանակ մեծ հուր է ընթանալու, եւ կվառուեն երկինքն ու երկիրը այդ հրով, ինչպէս ասում է Պետրոսը (տե՛ս Բ Պետ. Գ 10): Եւ քանի որ երկինքը կանշարժանայ, [ուստի] առաւել կպայծառանայ: Կմաքրուի նաեւ ողջ տիեզերքը, որովհետեւ երկրի երեսը կպայծառանայ՝ ինչպէս հայելի, եւ ջուրն այնպէս պարզ կլինի, ինչպէս բիւրեղ, եւ օրը այնպէս կպայծառանայ, ինչպէս եթեր, եւ հուրն այնպէս կփայլատակի՝ ինչպէս լուսին, եւ լուսինը [կլինի] ինչպէս արեգակը, եւ արեգակը եօթնապատիկ կպայծառանայ, ինչպէս ասում է Եսային (տե՛ս Ես. L 26):

Հարց. Տարրերի ո՞ր յատկութիւնն է մնալու, ո՞րը՝ ոչնչանալու:

Պատասխան. Գոյացական յատկութիւնները կմնան, պատահականները

դուրս կգան, ինչպէս ասուեց: Կամ՝ էութիւնը կմնայ, իսկ ներգործութիւնը դուրս կգայ. այսպէս՝ հրի ջերմութիւնը, ջրի ցրտութիւնը, օդի փոփոխութիւնները, ինչպէս ամպերն են, երկրի սեւութիւնը դուրս կգան եւ կժողովուեն երկրի ներսում՝ դառնալով մեղաւորների տանջարաններ[709], ինչպէս սուրբ Բասիլիոսն է ասում: Իսկ պարզ տարրերը գնդաձեւ յաւիտենապէս կանշարժանան իրենց տեղերում:

Եւ երկրի պարզութեան վերաբերեալ վկայում է Դաւիթը՝ «Լեռները կհալչեն իբրեւ մոմ» (Սղմ. ՂԶ 5): Նախ ինչպէս մոմն է արագութեամբ հալչում հրից, այդպէս էլ լեռները բարկ հրից: Երկրորդ՝ հալուող մոմը հաւասարւում է. այդպէս էլ լեռները եւ բլուրները հարթուելով՝ կհալչեն եւ կհաւասարուեն: Երրորդ՝ հալուող մոմը պարզւում է. այդպէս էլ երկրի սեւութիւնն ու թանձրութիւնը կժողովուեն դժոխքում, իսկ մարդկանց մարմինները երկրի վրայ: Չորրորդ՝ պնդութեան պատճառով թափանցիկ է, այդպէս էլ երկրի երեսը [կլինի] ապակու նման: Հինգերորդ՝ հալուած մոմը չունի նախկին պատկերը, սակայն [մնում է] էութիւնը, այդպէս էլ երկրի գոյացութիւնը չի կորչի, այլ կփոխուեն պատահական [յատկանիշները], այսինքն չի ճանաչուի, թէ այս այն է:

Այսպէս իմացի՛ր նաեւ միւս տարրերը:

ԵՐԿԻՆՔԸ ԳԱԼԱՐՈՒԵԼՈՒ Է ԵՒ ԹԱՓՈՒԵԼՈՒ ԵՆ ԱՍՏՂԵՐԸ Պրակ ԻԸ

Հարց. Ինչպէ՞ս են թափուելու աստղերը:

Պատասխան. Լուսատուների թափուելը կամ խաւարելը չպէտք է հասկանալ [ուղիղ], այսինքն թէ երկնքի կամարից պիտի թափուեն կամ փոխեն իրենց սկզբնական տեսակը: Լուսատուները [ստեղծուեցին] խաւարի [պատճառով], որպէսզի խաւար երկիրը լուսաւորուի: Վկայում է նաեւ մարգարէն՝ «Լինելու է նոր երկիր եւ նոր երկինք» (Ես. ԿԵ 17, Յայտ. ԻԱ 1), հետեւաբար պարզ է, որ ո՛չ ապականուելու են եւ ո՛չ էլ խաւարելու, այլ հետեւեալն է լինելու. իւրաքանչիւր սրբի մարմին եօթնապատիկ քան արեգակը պայծառանալու է, ինչպէս մեր Տիրոջ [մարմինը] Թաբօր լեռան վրայ: Երկրի վրայ կծաւալուի նաեւ հրեշտակների ինը դասերի լոյսը, որովհետեւ շարժուելու են երկնքի զօրութիւնները: Եւ Երրորդութեան համապայծառ լոյսը կծածկի բոլոր լուսատուների լոյսը. այս իմաստով է ասում արեգակի, լուսնի եւ աստղերի խաւարում, ինչպէս այն, որ ճրագի լոյսը խամրում է՝ վրան ընկած արեւի լոյսից:

«Ինչպէս որթի տերեւը» (Ես. ԼԴ 4),- ասում է մարգարէն, այսինքն ինչպէս տերեւն է իր ժամանակին թափւում, եւ նորից զարդարում է տերեւով եւ մրգով, այդպէս էլ Վերջին ժամանակում լուսատուները կխաւարեն, սակայն յետոյ կփոխուեն այլ ազնիւ տեսակի: Եւ ինչպէս

ասացինք, կդադարեն շարժուել, եւ չի լինի ամառ ու ձմեռ: Եւ դարձեալ որտեղ գիշեր չի լինելու, լուսին եւ աստղ էլ պէտք չեն լինի:

Հարց. Ի՞նչ է, որ ասում է՝ «Երկինքը գալարուելու է իբրեւ մագաղաթ» (Ես. ԼԴ 4):

Պատասխան. Ոմանք այսպէս են մեկնում, թէ՝ մէջտեղից վերանալու են [բոլոր] հաստատութիւնները, մինչեւ երեւայ վերին երկինքը: Սուտ է եւ ոչ ընդունելի, ինչպէս ցոյց կտանք: Նախ այն է երկնքի գալարելը, որ եթերը մագաղաթի նման ծաւալուելով՝ նուազելու է եւ խիստ թուլանալու՝ երկնքից երեւացած հրեշտակների եւ սրբերի ճառագող լոյսի առաւելութիւնից: Ինչպէս [լուսատուների] թափուելն էր, այդպէս էլ երկնքի գալարուելը:

Երկրորդ՝ երկինք հրեշտակներին է ասում, որ վայր ընկնելով՝ կխոնարհուեն բոլոր դասերը՝ կազմուած աթոռները եւ շրջապատած սպասաւորները:

Երրորդ՝ ցոյց է տալիս երկնային զօրութիւնների վշտանալը՝ մեր կործանուելու պատճառով. մեր պատճառով են գալարուելու եւ տրտմութեամբ են պատուելու՝ մեր կործանման պատճառով:

Չորրորդ՝ երկնքի գալարուելը Քրիստոսի գալուստն է նշանակում, քանզի գիրքն այն գիտութիւնն է Բանի:

Հինգերորդ՝ մարդկանց հոգիները երկնքից կխոնարհուեն եւ կմիաւորուեն իրենց մարմիններին:

Վեցերորդ՝ կգալարուի երկինքը՝ պատմելով Աստծոյ փառքի եւ նրա արարածների վրայ արդար դատաստան հաստատելու մասին:

Եօթներորդ՝ «երկինք»՝ ցերեկն է ասում եւ «երկիր» հաստատուած՝ գիշերը: Նրանց գալարուելն այն է, որ երկինքն ու երկիրը, ցերեկն ու գիշերը միաբանուելով՝ կվկայեն մարդկանց գործերի մասին, որովհետեւ մարդիկ որտեղ էլ որ գործեն, գիտեն երկինքն ու երկիրը: Եւ որ ժամին էլ, որ գործեն, վկայելու են ցերեկն ու գիշերը, ըստ այդմ՝ «Օրը օրուան միտք է հաղորդում, իսկ գիշերը գիշերուան ցոյց է տալիս գիտութիւն» (Սղմ. ԺԸ 3): Թէպէտ [նրանք] չունեն ո՛չ միտք եւ ո՛չ խօսք, սակայն ողջ երկրով կտարածուի նրանց վկայութեան խօսքը, որովհետեւ ամէն տեղ եւ բոլոր ժամանակներում նրանց յայտնի է մարդու մասին:

Այս է երկնքի գալարուելն ըստ խորհրդի:

Իսկ առարկայօրէն, ինչպէս ամպն է փակում արեգակի [լոյսը], այդպէս էլ օդի խաւարամածութիւնը արգելափակում է մեր տեսնելը արեւին, իսկ օդի պարզուելով՝ անարգել երեւում է արեւի լոյսը, ինչպէս ցոյց տուեցինք: Սա է երկնքի ծաւալուելն ու գալարուելը, եւ ոչ թէ վերին հաստատութիւններն են վերանում՝ համաձայն ոմանց:

Հարց. Ինչո՞ւ է մագաղաթ ասում եւ ոչ ուրիշ բան:

Պատասխան. Նախ որովհետեւ մագաղաթը հրին մօտեցնելիս գալարւում է. այդպէս էլ երկնայինները

այնժամ կխոնարհուեն, երբ հրով այրուեն երկինքն ու երկիրը[710]:

Երկրորդ՝ մագաղաթի գիրն անջինջ է մնում, այդպէս էլ՝ մեր հոգում գրուած գործերը, ինչպէս Թադէոս առաքեալն է ասում՝ ինչպէս գրուած տախտակ կամ դրոշմուած մագաղաթ[711], մեր ողջ էութիւնը գրուած է լինելու մեր գործերով՝ ներսի թէ դրսի, գրուած են լինելու [դրանք] նաեւ հրեշտակների մօտ:

Իսկ գրի եւ դպրութեան մասին կասենք առաջիկայում:

ԳԼՈՒԽ Խ՝ ՄԵԾ ՑԱՆԿԻՑ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԱՍԻՆ Պրակ ԻԹ

Հարց. Ի՞նչ է նշանակում Տեսիլքի խօսքը՝ «Ես շուտով գալու եմ» (Յայտ. ԻԲ 7):

Պատասխան. Նախ նշանակում է, որ կարճ է լինելու ժամանակը մինչեւ յաջորդ գալուստը, քանզի «Հազար տարին Տիրոջ աչքում ինչպէս երեկոյի մէկ օրն է» (Սղմ. ՁԹ 4): Երկրորդ՝ կեանքի ժամանակը յաւիտենականի համեմատութեամբ փոքր է եւ կարճ: Երրորդ՝ մարդու ժամանակը մինչ իր վախճանը փոքր է եւ կարճ: Չորրորդ՝ անսպասելի եւ կարճ ժամանակում է լինելու մարդկանց մահը եւ աշխարհի վախճանը, որի պատճառով էլ Տէրը գողի է նմանեցնում օրհասական մահը (տե՛ս Մտթ. ԻԴ 43): Եւ Պետրոսն ասում է՝ «Գողի նման կգայ Տիրոջ օրը» (Բ Պետ. Գ 10):

Եւ մարդը գողին երեք կերպ [պէտք] է դիմակայի: Նախ պէտք է արթուն լինի: Երկրորդ՝ լոյսը վառ պահի: Պատրաստ եւ գօտեւորուած լինի: Այդպէս էլ մենք պէտք է արթուն լինենք մեղք [չգործելու], որի համար Դաւիթը աղերսում էր՝ «Տէ՛ր, լոյս տուր իմ աչքերին, որ երբեք չննջեմ ի մահ» (Սղմ. ԺԲ 4): Այլեւ պէտք է մեր մտքի ճրագը վառ պահել եւ նայել մեր տունը, որի մասին Դաւիթն ասում էր՝ «Դու լուսաւոր ես պահում իմ ճրագը, տէ՛ր Աստուած իմ» (Սղմ. ԺԷ 29): Իսկ «գօտիով պնդուած մէջք»-ը (Ղուկ. ԺԲ 35) բարի գործերն են: Այս կերպ պէտք է հսկել եւ պահել մեր տունը, որպէսզի մահուան եւ վախճանի գողը մեզ անպատրաստ չգտնի մեղքերի մէջ եւ մեր հոգին տանի յաւիտենական տանջարան:

ԳԱԼՍՏԵԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Հարց. Որո՞նք են Փրկչի գալստեան նշանները:

Պատասխան. Քրիստոս իր գալստեան բազմաթիւ նշաններ թուարկեց: Նախ, որ ասաց՝ «Ինչպէս փայլակ, որ դուրս կգայ արեւելքից» (Մտթ. ԻԴ 27): Երկրորդ, որ ասաց՝ «Աւետարանը քարոզուելու է բոլոր հեթանոսների մէջ» (Մտթ. ԻԸ 19): Սա է, որ Պօղոսն ասում է, թէ՝ «Բոլոր լեզուները քեզ խոստովանելու են՝ Տէր Յիսուս» (Փիլիպ. Բ 11): Երրորդ՝ երեւալու է մարդու Որդու նշանը (տե՛ս Մտթ. ԻԴ 30), այսինքն՝ խաչը: Չորրորդ՝ [կգայ] Հօր փառքով եւ սուրբ հրեշտակներով: Հինգերորդ՝ կլինեն մեծամեծ նշաններ՝ արհաւիրքներ երկնքում, երկրում եւ ծովում: Վեցերորդ՝ կգայ Եղիան: Եօթներորդ՝ առաքելու է իր հրեշտակին մեծ փողով, ինչպէս Պօղոսն է ասում՝

«Իր՝ Տիրոջ հրամանով հրեշտակապետի ձայնով, Աստծոյ փողը կհնչի երկնքից» (Ա Թեսաղ. Դ 15): Ութերորդ՝ Նեռի առաջիկայ գալուստը, ինչպէս ասում է՝ «Ես իմ Հօր անունից եկայ եւ չընդունեցիք, իսկ նա, որ գալու է իր անունից՝ ընդունելու էք նրան» (Յովհ. Ե 43): Եւ դարձեալ՝ «Սուտ քրիստոսներ են առաջ գալու եւ սուտ մարգարէներ» (Մտթ. ԻԴ 24): Եւ առաքեալն ասում է. «Կապստամբի կորստեան որդին, մարդն անօրէնութեան եւ հակառակորդը ճշմարտութեան» (Բ Թեսաղ. Բ 3): Իններորդ՝ նշանը բոլորի ժողովուելու վերաբերեալ, ինչպէս առաքեալն է ասում Թեսաղոնիկեցիներին յղած [թղթում]՝ «Աղաչում եմ Քրիստոսի գալստեան համար եւ մեր բոլորի՝ նրա մօտ հաւաքուելու համար» (Բ Թեսաղ. Բ 1): Եւ Դաւիթ մարգարէն ասում է՝ «Նա վերեւից ձայն պիտի տայ երկնքին ու երկրին» (Սղմ. ԽԹ 4): Տասներորդ՝ բորբոքուելու է կրակ, ըստ մարգարէի՝ «Նրա առաջ բորբոքուելու է հուրը» (Սղմ. ԽԹ 3): Իսկ առաքեալն [ասում է]՝ «Ամէն ինչ փորձուելու է հրով» (Ա Կորնթ. Գ 13):

ԱՇԽԱՐՀԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Հարց. Որտե՞ղ է [այն] հուրը, որ գալու է Վախճանին:

Պատասխան. Ասում են հրեղէն ծովը հարաւում է, այդ պատճառով էլ նրա բոլոր մասերը տաք են: Եւ վախճանին տարրեղէն կրակը եւ հրեղէն ծովը եւ երկրի բոլոր կրակները հաւաքուելու են մի տեղում եւ այրելու են երկինքը, այսինքն՝ օդը, երկիրը[712], լեռները, դաշտերը, բուսականութիւնը, կենդանիներին եւ մեղքի ժանգը, ինչպէս Գրիգոր Աստուածաբանն է ասում: Եւ օդը կմաքրուի մեղաւոր դեւերից եւ գարշահոտութիւնից, երկիրն էլ՝ մարդու մեղքերից: Եւ կմաքրի սրանք, ինչպէս ասացինք:

Իսկ Քրիստոսի գալստեան ժամանակ ասում են երեք հուր են միաւորուելու՝ նախընթաց, համընթաց, վերջընթաց: Նախընթաց հուրը գալու է արեւելքից եւ այրելու է երկիրն ու տարրերը՝ կանգ առնելով արեւմուտքում: Համընթաց հուրը՝ հիւսիսից՝ իր մէջ առնելով մեղաւորներին: Վերջընթացը՝ հրեղէն ծովն է, հարաւում, ուր կուղարկի մեղաւորներին՝ յաւիտենական հրում [տանջուելու]:

ՀՐԵՂԷՆ ԾՈՎԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ է ասում, թէ հրեղէն ծովը հարաւում է:

Պատասխան. Նախ, որ ցածրադիր է հարաւային կողմը եւ ներքեւում, եւ լուսատուներն այնտեղ են շրջադարձ անում: Եւ երկրի աջ կողմում գտնուելով՝ ջերմ է: Իսկ հիւսիսայինը բարձր է, լուսատուները հեռու են, եւ աշխարհի ձախ կողմում է, ուստի այնտեղ ցուրտ է եւ սառնամանիք: Եւ քանի որ արեւելեան կողմում է բազմելու Դատաւորը, աջակողմը կլինի օդի հիւսիսային կողմը, իսկ ձախակողմը երկրի ներքեւի [հատուածը]՝ հարաւային կողմում: Եւ անմիջապէս Դատաւորի վճռից յետոյ [մեղաւորները

ներքեւ] կքաշուեն հրեղէն ծովի տանջարանը, որ յաւիտենական հուրն է:

Հարց. Ինչո՞ւ է Քրիստոս հրով գալու:

Պատասխան. Երկու պատճառով: Նախ աշխարհը ջրով եւ հրով է ոչնչանալու, ըստ Ենովքի մարգարէութեան[713]: Նախ ջրով եղաւ, քանի որ մարդիկ եռում էին մեղքի ցանկութեան մէջ, ուստի պատժուեցին ջրով: Իսկ վախճանին մարդիկ սառած կլինեն Աստծոյ սիրուց իբրեւ ծերացած աշխարհի [բնակիչներ], ուստի կպատժուեն ջերմ հրով:

Երկրորդ՝ հուրը երկու զօրութիւն ունի, այսինքն՝ լոյսն ու այրելը: Մարդիկ էլ երկու [տեսակ] են՝ արդարներ ու մեղաւորներ, ուստի հուրը Քրիստոսի առջեւից կգայ՝ ոմանց այրելով տանջելու, ոմանց էլ պսակելու լոյսով, ըստ մարգարէի՝ «Տիրոջ ձայնը բոց կհանի հրի միջից» (Սղմ. ԻԸ 7):

ԽԱՉԻ ՄԱՍԻՆ
Պրակ Լ

Հարց. Վախճանին երեւալո՞ւ է խաչը:

Պատասխան. Ասում է՝ «այո»՝ հաւաստելով ճշմարտութիւնը. «Մարդու Որդու նշանը երեւալու է երկնքում» (Մտթ. ԻԴ 30): Եւ ոչ միայն խաչը, այլեւ չարչարանքների բոլոր գործիքները՝ [խաչափայտի] բեւեռները, գեղարդը եւ այլն, որ կդրուեն Դատաւորի առաջ, եւ նրա մարմնի վրայ երեւալու են խոցուած [տեղերի] սպիները, ըստ Զաքարիայի՝ «Նայելու են նրան, ում խոցեցին» (Զաք. ԺԲ 10): Եւ սա երկու պատճառով: Նախ՝ ի պարծանք հաւատացեալների, որ խաչը երկրպագելու բերկրութիւն են ապրելու: Երկրորդ՝ որովհետեւ կործանուելու են ուրացողները եւ խաչօղները:

Եւ ապա յիշեցուելու է մարդուն Քրիստոսի չարչարանքները, եւ նրանցից պահանջուելու է Քրիստոսի մահն իբրեւ գին, որ տրուեց նրանց, իսկ սրանք իրենց զրկեցին նրանից:

Հարց. Ո՞ր օրն է երեւալու խաչը:

Պատասխան. Ոմանք ասում են ուրբաթ օրը, որում խաչուեց Քրիստոս, ոմանք էլ՝ կիրակի: Ինչպէս փայլակը դուրս է գալու արեւելքից՝ լուսեղէն ամպի վրայ եւ քառաձեւ լոյսով լցնելու աշխարհի չորս կողմը եւ կանգ առնելու Գողգոթայում, որտեղ խաչուեց Տէրը: Դրանից յետոյ կհնչի փողը, եւ ննջեցեալները յարութիւն կառնեն:

Այս խորհրդով ենք բարձրացնում խաչը խաչվառի վրայ, որին յաջորդում են ժամահարի [զանգերը]՝ [այն խորհրդով, որ] լուսեղէն ամպը խաչվառն է, վարշամակը՝ լոյսի ցոլքերը:

Հարց. Խաչի նշաններն ի՞նչ կերպ են արտայայտուելու:

Պատասխան. Նշանների նիւթը բազում եւ զանազան է, սակայն խաչի ձեւն ու զօրութիւնը մէկն է, ինչպէս այն, որ միեւնոյն պատկերը դրոշմւում է բազմաթիւ մոմերի վրայ եւ մոմի հալուելով՝ դրոշմի պատկերը հաւաքւում եւ մնում է մատանու վրայ: Կամ էլ, ինչպէս որ բազմաթիւ ստուերներ միաւորւում են մի մեծ ստուերի մէջ: Կամ ինչպէս շողի

բազմաթիւ ճառագայթներ միաւորուում են արեւի լոյսի մէջ, ինչպէս շարականի երգն է ասում՝ «Վերջին օրը հաւաքելու է իր կարծեցեալ ճաճանչները»[714]. այսինքն՝ երբ սուրբ խաչը բազմաթիւ հրաշքների ճառագումներն իր մէջ հաւաքի, այնժամ կվերանան բոլոր թուացեալները:

Հարց. Այնտեղ երեւալո՞ւ է այն խաչափայտը, որի վրայ Տէրը խաչուեց:

Պատասխան. Ոմանք ասում են, թէ խաչաձեւ լոյս կերեւայ: Ոմանք էլ, ասում են, թէ՝ լուսաւորուած խաչը ճառագելու է ինչպէս գամերն ու գեղարդը: Եւ այս տարաձայնութիւնն այն պատճառով է, որ ոմանք տէրունական խաչը համարում են ապականացու՝ առարկելով երկու ձեւով. Նախ՝ այն ամէնը, ինչ չորս տարրերից է՝ ապականացու է: Արդ խաչը փայտից է, սա էլ՝ չորս տարրերից, ապա ուրեմն ապականութիւնը սրան էլ կապականի: Երկրորդ՝ եթէ մարդու մարմինը, որ բնական եւ կենդանի է, ապականուելու է մահուամբ, ապա ուրեմն խաչն էլ կապականուի, որ ո՛չ կենդանի է, ո՛չ էլ՝ բանական: Եւ կենդանութեան քայքայիչն է, որովհետեւ մահուան գործիք է:

Սրանց պատասխանենք այսպէս. նախ, հակադրուելով ասենք, որ բնութեան օրէնքներով չէ նրա անապական մնալը, այլ աստուածային հրաշքով, ինչպէս անսերմ յղանալու եւ կուսութեամբ ծնուելու օրինակն է, որ բնութեամբ [հնարաւոր չեն], սակայն Բանն-Աստուած հրաշքով իրագործեց: Այդպէս էլ սա բնութեան կարգով չէ, որովհետեւ նոյն Բանն-Աստուած սրա յետ է միաւորուած անբաժանելիօրէն:

Իսկ երկրորդին ընդդիմակայելով՝ այսպէս պատասխանենք. մարդու մարմինը քայքայւում է, որովհետեւ նրանից բաժանւում է կենդանութիւն տուող հոգին, ըստ այդմ՝ «Մարմինը կդառնայ հողին, որտեղից վերցուեց, իսկ հոգին կգնայ Աստծոյ մօտ, ով տուեց այն» (Ժող. ԺԲ 7): Իսկ խաչի կենդանութիւնը Քրիստոս է, որ չի բաժանւում նրանից, ըստ այդմ՝ «Բնակուելու եմ նրանում, որովհետեւ սիրեցի այն» (Սղմ. ՃԼԱ 14):

Ա՛րդ, ցոյց տանք, որ ճշմարտապէս անապական է Սուրբ խաչը՝ բնական քննութեամբ եւ Սուրբ գրքի վկայութիւններով: Նախ, բնական քննութեամբ: Բոլոր արարածները Աստծոյ ձեռքի գործն են, ըստ այդմ՝ «Մի՞թէ իմ ձեռքը չարարեց այս բոլորը»: Արդ, ինչպէս հրեշտակները գոյացան ոչ գոյից եւ անապական են ու անմահ՝ Աստծոյ կամքով, այդպէս էլ չորս տարրերը ինքնըստինքեան անապական են, որովհետեւ մասերը տարրալուծւում են նրանցից եւ [սակայն] նորից խառնւում նրանց, եւ սրանք Աստծոյ կամքով են եւ կան մշտապէս: Այդպէս էլ, խաչն Աստծոյ կամքով է եւ նրա ցանկութեամբ է, որ կամեցել է այն անապական [անել], որովհետեւ նրանով արեց մարդկային ազգի փրկութիւնը:

Երկրորդ՝ որովհետեւ Աստուած բոլոր արարածներին հաստատ է պահում իր խօսքի զօրութեամբ» (Եբր. Ա 3), ասում է առաքեալը եւ պահում

նոյնութեամբ, եւ սրանք պահպանւում են՝ առանց միաւորուելու նրա էութեանը, հետեւաբար առաւել եւս Խաչը մնալու է անապական, որովհետեւ Աստծոյ էութիւնն է [միախառնուած] նրան, այսինքն՝ Բանն-Աստուած մարմնով բեւեռուած նրա վրայ:

Երրորդ՝ Խաչն այն թաթախուած է աստուածային արեամբ, որովհետեւ գամուեց նրա վրայ, ուստի եթէ խաչն ապականուի, [կապականուի] նաեւ նրա վրայի արիւնը, ուստի ակնյայտ է, որ մարմինը Բանի ապականացու խոստովանողները նրանք են, [ովքեր] խաչը ապականացու են ասում: Եւ սրանք նեստորականներն են: Իսկ նրանք, ովքեր ընդունում են Բանի անապական լինելը, պարտաւոր են Աստուածընկալ խաչը անապական խոստովանել:

Չորրորդ՝ օրինակներով էլ փաստւում է [դա], որովհետեւ թէ Ահարօնի գաւազանը, որ ծաղկեց՝ խաչի օրինակ էր, թէ՛ պատուիրանների տախտակը, թէ՛ Կենաց ծառը դրախտի մէջ: Եւ եթէ սրանք անապական էին յետոյ եւ հետագայում, որ [ընդամէնը] օրինակ էին, ապա ուրեմն անապական է ճշմարտութիւնը, որ Աստուածընկալ խաչն է:

Հինգերորդ՝ որովհետեւ ապականացուն չի կարող մէկ ուրիշի ամբողջութիւնը պահել, ինչպէս յայտնի է բոլոր նիւթական իրերից: Արդ, նա, ով բոլոր գերեզմանները կնքած է պահում, օրհնում եւ հաստատում է եկեղեցին, բոլորին զօրաւիգ է փորձութեան մէջ, [միայն] նա կարող է անապական լինել, որովհետեւ աստուածային նշան է:

Վեցերորդ՝ աստուածային գործ է տկար եւ փոքր իրով մեծամեծ գործեր անել, ինչպէս կաւով կոյրի աչքերը բացեց, ժայռից ջուր բխեցրեց, տասներկու եւ այլ բազում բաներ, այդպէս էլ հասարակ փայտն առնելով՝ տիեզերքի փրկութիւնն արարեց եւ դարձրեց անապական:

Եօթներորդ՝ Սողոմոնն ասում է՝ «Օրհնեալ է փայտը, որով իրագործւում է արդարութիւնը» (հմմտ. Առակ. Գ 18), որ փրկչական խաչն է: Արդ, գտնուած է նա եւ տարորոշուած բոլոր փայտերից՝ լինելով արմատ արդարութեան, որով փրկուեցինք բանսարկուից: «Արդ, ում գործը յաւիտենական է, ինքն էլ անքայքայելի է»[715],- ասում է փիլիսոփան, ապա ուրեմն անապական է Սուրբ խաչը:

Ութերորդ՝ այն, ինչ մահ է առաջ բերում, նա է ապականացու, իսկ խաչի վերաբերեալ ասում է՝ «Բոլորի կենաց փայտն է»: Եւ ինչպէս գիտութեան փայտը մահուան պատճառ եղաւ, իբրեւ պատասխան դեղ ցաւի [սա] մայրն է կենդանութեան, եւ նա անապական է, այսինքն՝ Սուրբ խաչը:

Իններորդ՝ որովհետեւ դեւերը հալածւում են աստուածային նշանի զօրութիւնից, իսկ հրեշտակները սպասաւորում են նրան, ինչպէս յայտնի սերովբէներից, որ փառքի Աթոռի հովանու տակ, այսինքն՝ խաչի ներքեւում՝ թեւերով ծածկուած, վերածայնում էին Երեքսրբեանը: Արդ, եթէ նա ապա-

կանացու լինէր, դեւերը չէին երկնչի նրանից, ինչպէս [չեն երկնչում] անասուններից կամ անշունչ [էակներից], ապա ուրեմն անապական է խաչը:

Տասներորդ՝ որովհետեւ սա Տէրը տուեց մեզ՝ իբրեւ իր գալստեան նշան, ըստ այդմ՝ «Ապա երեւալու է մարդու Որդու նշանը երկնքում»: Եւ սա ոչ թէ սոսկ լոյս է, քանի որ լոյսը մեզ իբրեւ նշան չտուեց, այլ փայտե խաչը, որի վրայ իր ձեռքերը տարածեց Միածին Բանը: Իսկ լոյսը երեւալու է ի փառս Խաչի, քանի որ ինչպէս խաչելութեան ժամանակ խաչեալը տգեղ երեւաց, իսկ միւսանգամ գալստեանը [երեւալու է] Հօր փառքով եւ [լուսեղէն] ամպով, այդպէս էլ իր խաչն այստեղ տգեղ է երեւում, իսկ իր գալու աւետմանը՝ արեգակնափայլ ճառագայթելու է:

Ապա ուրեմն անապական է Սուրբ խաչը:

ԴԱՏԱՍՏԱՆԻ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ Պրակ ԼԱ

Հարց. Ո՞ր ժամին է լինելու Դատաստանը:

Պատասխան. Կէսգիշերին, երբ հրեշտակը հարուածեց Եգիպտոսին եւ Տէրն աւերեց դժոխքը, այդ ժամին էլ իր ընտրեալներին աշխարհից կազատի: Քանզի Աւետարանն ասում է. «Գիշերուայ մէջ գոչելու է հրեշտակը՝ ահա՛ գալիս է փեսան, եկէ՛ք ելէք նրան ընդառաջ» (Մտթ. ԻԵ 6): Իսկ Դաւիթ մարգարէն ասում է. «Առաւօտներն սպանում էի երկրի բոլոր մեղաւորներին» (Սղմ. Ճ 8):

Հարց. Տէրն ինչպէ՞ս է գալու Դատաստանի:

Պատասխան. Ինչպէս կայսրը, երբ քաղաք է մտնում, թագը եւ այլ նշանները տարւում են նրա առջեւից, որպէսզի աւետեն նրա գալուստը, այդպէս էլ Քրիստոս այն կերպարանքով, որով համբարձուեց՝ հրեշտակների բոլոր դասերով կգայ դատաստան [անելու]: Եւ հրեշտակները խաչը բարձրացրած՝ առջեւից կգնան, իսկ ննջեցեալները՝ փողով եւ ձայնով կյառնեն նրան ընդառաջ:

Այլեւ խռովուելու են բոլոր տարրերը՝ ձմռան եւ ցրտի մրրիկը՝ ամենուրէք սաստկացած եւ հրախառն, ինչպէս ասում է՝ «Նրա առաջ բորբոքուելու է հուրը, եւ նրա շուրջը սաստիկ մրրիկ է [լինելու]» (Սղմ. ԽԹ 3), ինչպէս Սինա լեռան վրայ: Եւ մի այլ տեղ մարգարէն ասում է. «Յանուն նրա մարտի է դուրս գալու երկրի տիեզերքն ընդդէմ անզգամների» (հմմտ. Ես. ԺԳ 4-5):

Հարց. Ինչո՞ւ է ասում՝ «Հայրը չի դատելու, այլ ողջ դատաստանը տալու է Որդուն» (Յովհ. Ե 22):

Պատասխան. Բազմաթիւ պատճառներով է ասում: Նախ՝ սրանով յայտնում է նրա Աստուած լինելը, որովհետեւ բոլոր մարգարէներն ասացին դատաւորն աստուած է լինելու, ըստ այդմ՝ «Աստուած՝ դատաւոր արդար» (Սղմ. է 12):

Երկրորդ՝ հարկ է, որ կատարուեն մարգարէների գրուածները, որովհետեւ մարգարէն Որդու դատաւոր լինելու

մասին ասում է՝ «Աստուա՛ծ, քո իրաւունքը արքային տո՛ւր, իսկ քո արդարութիւնը թագաւորի Որդուն» (Սղմ. ՀԱ 2) եւ այլն, Իսկ Դանիէլը տեսաւ ծերունուն, ով Որդուն իշխանութիւն տուեց դատաստան անելու (տե՛ս Դան. է 13):

Երրորդ՝ քանզի Որդին է նման Հօրը, իսկ հրեշտակները եւ մարդիկ սխալ ընկալեցին այն նմանութիւնը, որով ստեղծուեցին, [ուստի] իրաւացի կլինի [որտեղ] անիրաւութիւն էր եղել, վրէժի դատաստան անել, չնայած Նրան Հայրն ու Սուրբ Հոգին գործակիցներ էին դառնում:

Չորրորդ՝ Հայրն անտեսանելի է եւ անմարմին, ըստ այդմ՝ «Աստծուն ոչ ոք երբէք չի տեսել» (Յովհ. Ա 18) եւ չի էլ կարող տեսնել, ուստի անպատշաճ կլինէր դառնալ խօսակից եւ չիմանալ որտեղից է, ուստի պատշաճ էր, որ Որդին լինի, քանզի մարմնով երեւացողն էր:

Հինգերորդ՝ քանի որ Որդին ծնուեց Կոյսից, շրջեց երկրի վրայ, քարոզեց եւ չարչարանքներով փրկեց [մեզ]՝ պատճառ դառնալով ընդհանրապէս մեր բնութեան յարութեան, ուստի նա պէտք էր դատաւոր լինէր եւ հատուցէր հաւատացեալներին եւ անհաւատներին՝ ըստ գործերի:

Վեցերորդ՝ Քրիստոս Հօր իմաստութիւնն ու գիտութիւնն է (տե՛ս Ա Կորնթ. Ա 24) եւ գիտէ իւրաքանչիւրի արժանիքները, որովհետեւ նրա մէջ են ծածկուած Աստծոյ իմաստութեան եւ գիտութեան բոլոր գանձերը, ուստի քննելու է իմաստութիւնը եւ դատելու:

Եօթներորդ՝ Քրիստոս չէր կրում այն ամէնը, ինչի պատճառով դատում էր այլոց, որովհետեւ՝ «Մեղք չգործեց եւ նրա բերանում նենգութիւն չգտնուեց» (Ա Պետ. Բ 22), իսկ այս երկու [հանգամանքը] շատ խիստ անհրաժեշտ են դատաւորին, այսինքն՝ իմաստութիւնն ու անմեղութիւնը, ուստի Քրիստոս է լինելու դատաւոր:

Ութերորդ՝ ովքեր խաչեցին ու սպանեցին Նրան, կտեսնեն այնժամ եւ կիմանան, որ աստուածասպան են եղել, ըստ այդմ՝ «Նայելու են նրան, ում խոցեցին» (Զաք. ԺԲ 10):

Իններորդ՝ որպէսզի մենք՝ քրիստոնեաներս, իմանանք, որ Քրիստոս է լինելու մեզ դատաւոր, ուստի նրան թողնենք [մեզ] չարչարողների եւ հալածողների մեր դատը, ուրախութեամբ տանենք լլկանքները, որպէսզի մեզ վրէժխնդրութեան մէջ չմեղադրեն, քանզի Տէրն ասում է. «Իմն է վրէժխնդրութիւնը»:

Տասներորդ՝ Քրիստոս մեր գլուխն է, մենք՝ անդամները, եւ քանի որ Քրիստոս է դատաւոր, պարտաւոր ենք միմեանց մեծարել եւ սիրել, ըստ այդմ՝ «Սիրի՛ր քո ընկերոջն իբրեւ քո անձը» (Պետ. ԺԹ 17), եւ մի՛ եղբօր անարգանքի պատճառով զրկուիր գլխից ու ընկիր մահուան դատաստանի մէջ:

ԱԹՈՌԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԲ

Հարց. Ի՞նչ է, որ ասում է. «Երբ գայ մարդու Որդին, նստելու է իր փառքի աթոռին» (Մտթ. ԺԹ 28):

Պատասխան. Աթոռի մասին երեք բան գիտենք: Նախ, որ աթոռ է կոչւում հանգստի իմաստով, ինչպէս բոլորը գիտեն:

Երկրորդ՝ աթոռ՝ թագաւորական բարձրութեան իմաստով:

Երրորդ՝ աթոռ՝ դատաւորի արդարության իմաստով:

Ա՛րդ, այս երեք իմաստով մեր Տէր Յիսուս Քրիստոս բազմել է ոչ միայն երկրում, այլեւ երկնքում, ըստ այդմ՝ «Երկինքն իմ աթոռն է, երկիրը՝ իմ ոտքերի պատուանդանը» (Ես. ԿՁ 1):

Առաջին աթոռի վերաբերեալ մարգարէն ասում է՝ «Աստուած նստեց իր սրբութեան աթոռին» (Սղմ. ԽՁ 9), որը հաստատելով՝ առաքեալն ասում է. «Մեր մեղքերը սրբելով՝ նստեց մեծութեան աջից բարձունքում» (Եբր. Ը 1):

Երկրորդի վերաբերեալ մարգարէն ասում է. «Աստուա՛ծ, քո աթոռը՝ յաւիտեանս յաւիտենից, արդարութեան գաւազանը՝ քո արքայութեան գաւազանը» (Եբր. Ա 8): Եւ վկայում էր Գաբրիէլը՝ «Տէր Աստուած նրան տալու է իր Հօր՝ Դաւթի աթոռը եւ թագաւորելու է Յակոբի տան վրայ յաւիտեան, եւ նրա թագաւորութեանը վախճան չի լինելու» (Ղուկ. Ա 32):

Երրորդի վերաբերեալ մարգարէն ասում է. «Իրաւունքը եւ արդարութիւնը նրա աթոռով են ուղղւում»: Ինչպէս Աւետարանն է ասում՝ «Նստելու է իր փառքի աթոռին» (Մտթ. ԺԹ 28):

Հարց. Կա՞յ այնտեղ աթոռ, որին նստելու է:

Պատասխան. Այն աթոռն է, որ մարգարէները տեսան: Դանիէլն ասում է. «Աթոռներ դրեցին եւ ծերունին նստեց» (Դան. է 9): Եւ Եսային տեսաւ Տիրոջը՝ նստած բարձունքի աթոռին (տե՛ս Ես. Ձ 1): Եզեկիէլը [տեսաւ] քառակերպ աթոռը հրեշտակների մէջ (տե՛ս Եզեկ. Ա 26): Սակայն տեսանելի օդից կազմուած Աթոռը հաւաստի է լինելու, որպէսզի ամէն ոք [նրան] նստած տեսնի. նոյնպէս եւ սուրբ առաքեալների լուսեղէն օդից տասներկու աթոռները:

Հարց. Ի՞նչ է նստելը:

Պատասխան. Այժմ «պահելն» է ասում եւ մարտնչելը հարս եկեղեցու համար, իսկ այնժամ՝ թշնամուն հաղթելով եւ հարսին իր մօտ տանելով՝ մեծութեան աթոռին նստելը, այսինքն՝ մարմնի բոլոր անդամներով աստուածութեան մէջ կհանգչի, որովհետեւ եկեղեցին բոլոր չարչարանքներից կհանգստանայ:

ԴԱՏԱՒՈՐԻ ՓԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է փառքի աթոռը:

Պատասխան. Որպէս Աստծոյ մեծութիւն՝ փառքն անչափելի է եւ անհասանելի է ըստ իմաստունի, որն ասում է՝ «Աստծոյ փառքը ծածկում է խօսքերը» (Առակ. ԻԵ 2): Եւ այն, ինչ մեզ փառաւոր է թւում, այն էլ կոչում ենք Աստծոյ փառք: Սակայն Քրիստոսի գալուստն առաջին փառքն է լինելու, որովհետեւ իր սիրելիներին փառաւոր է երեւալու՝ յայտնի դարձնելով մարմնին միաւորուած իր աստուածութեան փառ-

քը, ինչպէս երեւաց Թաբոր լեռան վրայ. ինչպէս ասում է Փիլիպպեցիներին [յղած թղթում]՝ «Ակնկալում ենք Փրկչի գալուստը, որ նորոգի մեր խոնարհուած մարմինները՝ ըստ նմանութեան իր փառքի մարմնի» (Փիլիպ. Գ 1):

Երկրորդ՝ փառքը [լինելու է, երբ] Հայրը եւ Հոգին նրա յետ Դատաստանի գան: Ըստ Դանիէլի՝ «Ծերունին նստեց» (տե՛ս Դան. է 13), որ Հայրն է: Իսկ Հոգու մասին ասում է Դաւիթը. «Ուղարկում ես քո շունչը եւ վերստեղծում նրանց ու նորոգում երկրի երեսը» (Սղմ. ՃԳ 30):

Երրորդ՝ երկնային զօրքերի բազմութիւնը նրա յետ իջնելու է, քանզի «Շարժուելու են երկնքի զօրութիւնները» (Մրկ. ԺԳ 25)՝ հազար-հազարաց եւ բիւրբիւրուց, ըստ Դանիէլի (տե՛ս Դան. է 10):

Չորրորդ՝ որովհետեւ նրան են հնազանդուելու բոլոր արարածները, ըստ այդմ՝ «Նրան են ծնրադրելու բոլորը, եւ բոլոր լեզուները խոստովանելու են, որ Տէրը Յիսուս Քրիստոս է՝ ի փառս հայր Աստծոյ» (Փիլիպ. Բ 10):

Հինգերորդ՝ որովհետեւ դնելու է իր թշնամուն ոտքերի տակ, այսինքն կորստի է մատնելու Նեռին եւ սատանային եւ մարդկանց բոլոր գայթակղութիւնները՝ մեղքը եւ մահը, ըստ այդմ՝ «Ո՞ւր է մահ քո յաղթութիւնը, ո՞ւր է դժո՛խք, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55):

Վեցերորդ՝ գալու է մեծագոյն փառքով՝ մեծ փողով եւ ամպախաղաց որոտմամբ, շարժումով եւ բորբոքուած հրով, ինչպէս Սինա [լեռան] վրայ:

Եօթներորդ՝ մեղաւորներին ահագնակերպ է երեւալու, այն [աստիճան], որ լեռներին ասեն՝ «Ընկէ՛ք մեզ վրայ» եւ բլուրներին՝ թէ՝ «Ծածկեցէ՛ք մեզ Աստծոյ բարկութեան երեսից, որ նստած է Աթոռին (Յայտ. Զ 16):

Ութերորդ՝ այնտեղ ահաւոր է դառնագոյն վճիռը, ըստ Յոբի. «Մի անգամ է խօսում Աստուած եւ նոյնը չի երկրորդելու», այսինքն՝ «Գնացէ՛ք, անիծեալներ, յաւիտենական հուրը» (Մտթ. ԻԵ 41):

Իններորդ՝ փառք է Դատաստան անելը, որովհետեւ նրան է տրուած իշխանութիւն, ասում է Դանիէլը, եւ Հայրը չի դատելու ոչ մէկին, քանզի ամէն ինչ տուեց Որդուն, ինչպէս ցոյց տրուեց:

Տասներորդ՝ պսակադրելու է իր սրբերին եւ փառաւորուելու նրանց մէջ, ինչպէս ասում է Թեսաղոնիկեցիներին [յղած թղթում]՝ «Երբ գայ, փառաւորուելու իր սրբերի մէջ» (Բ Թեսաղ. Ա 10): Եւ Տէրն ինքն ասում էր՝ «Կամենում եմ, որտեղ ես լինեմ, այնտեղ էլ սրանք լինեն ինձ յետ, որպէսզի տեսնեն իմ փառքը» (Յովհ. ԺԷ 24):

Այսքանը Փառքի աթոռի մասին:

ԴԱՏԱՍՏԱՆԻ ՏԵՂԸ
Պրակ ԼԳ

Հարց. Որտե՞ղ է լինելու դատաստանը:

Պատասխան. Յովսափաթի ձորում, քանզի Յովէլ մարգարէն ասում է՝ «Ժողովեցէ՛ք ինձ մօտ բոլոր ազգերին՝ Յովսափաթի ձորում, որովհետեւ այնտեղ

եմ նստելու եւ դատելու,- ասում է Տէրը» (Յովէլ Գ 2):

Եւ սա երկու իմաստով է: Նախ, որ դատաստանի տեղը երկնքում չէ, որտեղ մեղաւորները չեն կարող բարձրանալ, ոչ էլ՝ դժոխքը, ուր արդարները չեն կարող իջնել, այլ միջանկեալ տեղում աշխարհի, որ երկիրն է, որովհետեւ այս աշխարհը ձոր է, երկինքը՝ լեռ, իսկ դատաստանը ձորում է լինելու, այսինքն այս աշխարհում՝ օդի վրայ:

Եւ Յովսափաթի ձորը կոչւում է Դատաստանի ձոր, որ Ուռնայի կալն է, ուր Դաւթին խոստացաւ դատաստան անել (տե՛ս Բ Թագ. ԻԴ), երբ սեղան պատրաստեց եւ զոհաբերեց եզներին ու վերացրեց մահը, ուր Սողոմոնը տաճարը կառուցեց, ուր Տէրն ինքը խաչուեց եւ յարութիւն առաւ: Եւ սրանք բոլորը կոչւում են Յովսափաթի ձոր, որ Երուսաղէմում երկու ձորերի միջեւ է:

Եւ սա երեք պատճառով է: Նախ, անհրաժեշտ է, որ դատաստանի տեղը հանրածանօթ տեղ լինի, իսկ Երուսաղէմը աշխարհի կենտրոնն է: Երկրորդ՝ դատաստանի [վայրը] պէտք է յայտնի լինի, իսկ Երուսաղէմը ամենայայտնին է, որովհետեւ փրկութիւնն այնտեղ կատարուեց: Երրորդ՝ այն տեղը պէտք է պատշաճ լինի Աստծոյ դատաստանին, որ լինելու է, այսինքն՝ ողորմութեան եւ արդարութեան գործերին, որովհետեւ այնտեղ արդարութիւնը ծածկում է ողորմութիւնը, ինչպէս այստեղ ողորմութիւնն է ծածկում արդարութիւնը եւ Ձիթենեաց լեռը, որ մօտ է այն ձորին, խորհրդանշում է ողորմութիւնը, իսկ Յովսափաթ նշանակում է «դատաստան»[716], որ արդարութիւնն է:

ԱՋ ԵՒ ՁԱԽԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ են [նշանակում] Քրիստոսի աջ եւ ձախ կողմերը:

Պատասխան. Քրիստոս նստելու է բարձրագոյն աթոռին՝ օդից վերեւ, սրբերը՝ աջից, այսինքն փառքի բարձունքին՝ օդից վերեւ՝ հաւատի եւ գործի թեւերով վեր սաւառնելով՝ ինչպէս արծիւ, իսկ մեղաւորները՝ ձախից, այսինքն դէպի ներքեւ՝ երկիր, ծանրացած մեղքերով, ինչպէս կապար դէպի ներքեւ թեքուած, ինչը սիրեցին ամբողջ սրտով:

Եւ աջը արեւելքն է, ձախը՝ արեւմուտքը: Եւ այսպէս են բաժանւում միմեանցից՝ տեղով եւ փառքով, իբրեւ գառներ ու այծեր՝ Քրիստոսի աջից եւ ձախից: Եւ տե՛ս, թէ որքան անձուկ եւ ահագնատեսիլ են մեղաւորների բոլոր կողմերը, որովհետեւ գլխավերեւում դատաւորն է, ներքեւում՝ բացուած դժոխքը, աջից՝ մատնիչ մեղքը, ձախից՝ վիթխարի դեւերը. ներսից խածոտող խղճմտանքը, դրսից՝ ալեկոծուած աշխարհը, իսկ չորս կողմը՝ բարի հրեշտակներ, որ հրում են դէպ դժոխք:

ԴԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԴ

Հարց. Ո՞վքեր են դատաւորները:

Պատասխան. Չորսն են դատաւորները:

Նախ դատելու է Քրիստոս՝ աստուածութեամբ եւ մարդկութեամբ,

որովհետեւ ողջ Երրորդութիւնն է դատելու մեղաւորներին, իսկ մարդկութեամբ նրանց հետ խօսելու է Քրիստոս:

Երկրորդ՝ Քրիստոսի աթոռակիցները, որ առաքեալները, մարգարէները եւ կատարեալներն են, իբրեւ Աստծոյ օրէնքի գիտակներ, դատելու են մեղաւորներին, ովքեր վայելեցին Աստծոյ խնամածութիւնը՝ արեւն ու անձրեւը, բնակուեցին մի վայրում եւ մի խնամածութեամբ բազմացան, սակայն նրանք տուօղին չճանաչեցին:

Երրորդ՝ հաւաստի արդարութեամբ, որով բոլոր սրբերն ու հրեշտակները դատելու են նրանց, ովքեր յանցաւոր գտնուեցին նոյն շաւղում:

Չորրորդ՝ յայտնելով մեղքերը. այդպէս մեղաւորներն ու չարերը դատելու են իրար:

ԴԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչպէ՞ս են դատելու:

Պատասխան. Երկուսն է դատաստանը. նախ քննութիւնն է, ապա՝ հատուցումը: Եւ դատաստանի հատուցումը բոլորինն է, մինչդեռ դատաստանի քննութիւնը՝ ոչ [բոլորինը], որովհետեւ չորս [խմբի են] բաժանուելու բոլոր դատուողները:

Ոմանք չեն դատուելու, այլ դատապարտուելու են, ինչպէս բուն չարերն ու մեղաւորները, որոնց մասին մարգարէն ասաց. «Դատաստանի ժամանակ ամբարիշտները յարութիւն չեն առնելու» (Սղմ. Ա 5):

Ոմանք դատուելու եւ դատապարտուելու են, որոնք [այն] միջակներն են, որ հաւատ ունեն, սակայն գործեր [չունեն]. կամ չար հաւատացեալները, որ գործ ունեն, սակայն չունեն հաւատ, որովհետեւ այստեղ հատուցուեց նրանց:

Ոմանք ո՛չ դատուելու, ո՛չ էլ դատապարտուելու են, ինչպէս բուն արդարներն ու կատարեալները, որոնց մասին Տէրն ասում է. «Դատաստանի չեն ենթարկուելու, այլ մահից փոխադրուելու են կեանք» (հմմտ. Ղուկ. Ե 24):

Ոմանք էլ դատուելու են, սակայն չեն դատապարտուելու. սրանք միջակ արդարներն են, որոնք ունեն ներելի եւ մասնակի մեղքեր:

Հարց. Ովքե՞ր են առանց դատաստանի կորչելու:

Պատասխան. Ովքեր մեղանչեցին օրէնքից դուրս. սրանք կռապաշտներն ու հրէաներն են, ովքեր Քրիստոսի խաչելութիւնից յետոյ են, որովհետեւ խաչելութիւնից յետոյ [հին] օրէնքի պահպանութիւնը նրանց համար կհամարուի կռապաշտութիւն:

Հարց. Ովքե՞ր են, որ դատաստանով կկորչեն:

Պատասխան. Ովքեր ստացան օրէնքները, սակայն չպահեցին. սրանք չար քրիստոնեաներն են նորում եւ չար հրէաները՝ հին [օրէնքի] ժամանակ. նրանց ասելու է. «Գնացէ՛ք ինձնից, անիծեալներ, յաւիտենական հուրը» (Մտթ. ԻԵ 41):

Հարց. Ովքե՞ր են, որ կփրկուեն առանց դատաստանի:

Պատասխան. Ովքեր օրէնքից էլ վեր գործեցին, ինչպէս առաքեալները, մարգարէները, մարտիրոսները, կոյսերը եւ այլք:

Հարց. Ովքե՞ր են, որ կփրկուեն դատաստանով:

Պատասխան. Հաւատացեալ արդարները, ովքեր արդարութիւն գործեցին հին կամ նոր օրէնքներով, կամ էլ ովքեր սխալուեցին եւ իրենց մեղքերն ապաշխարեցին զղջմամբ, խոստովանութեամբ, պահքով, աղօթքով, ողորմածութեամբ եւ այլն: Նրանց մասին ասում է. «Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալներ» (Մտթ. ԻԵ 34):

Հարց. Այնտեղ հնչելո՞ւ է լսելի խօսք:

Պատասխան. Քանի որ դատաստանը երկրի եւ օդի մակերեւոյթին է լինելու, հնարաւոր է նաեւ ձայնաւոր խօսքի լինելը: Ու նաեւ՝ ինչպէս վերեւում հրեշտակների մէջ «բանը» բաժանուեց երեք [տիպի], այսինքն՝ բանը [որպէս] միտք, բանը [որպէս] խօսք, բանը [որպէս] գործ, արդ, մտքի լեզուով խօսելու է բուն արդարների եւ հրեշտակների յետ, որոնք դատելու են այլոց: Գործի լեզուով խօսելու է բուն չարերի եւ դեւերի յետ, որոնց ուղարկելու է տանջանքի: Իսկ բերանի խօսքով խօսելու է միջակ արդարների եւ մեղաւորների յետ, ասելով՝ «եկէ՛ք օրհնեալներ» կամ՝ «հեռացէ՛ք անիծեալներ» (տե՛ս Մտթ. ԻԵ 34, 41):

Հարց. Մի խօսքո՞վ է դիմելու երկու դասերին, թէ՝ երկու:

Պատասխան. Դաւիթն ասում է. «Աստուած խօսեց մէկ անգամ, եւ երկուսն էլ այն լսեցին» (Սղմ. ՀԱ 12), ինչպէս առաքեալներն էին մի լեզուով քարոզում, սակայն իւրաքանչիւրն իր լեզուով էր լսում: Այսպէս էլ նոյն խօսքը մէկը [որպէս] օրհնութիւն կլսի, միւսը [որպէս] անէծք, [ճիշտ] այնպէս, ինչպէս մի օդի փչելով՝ ցորենը հաւաքւում է, իսկ յարդը գնում: Այսպէս էլ նոյն վճիռը կլսեն՝ «եկէ՛ք» եւ «գնացէ՛ք»:

Հարց. Ի՞նչ է նշանակում «օրհնեալ» կամ «անիծեալ» ասելը եւ ոչ թէ՝ «ես օրհնում եմ» կամ՝ «անիծում»:

Պատասխան. Սուրբ Հոգին առաջներում սիրելիների եւ թշնամիների բերանով օրհնեց արժանաւորներին, ասելով՝ «Օրհնեալ էք դուք Տիրոջ կողմից», իսկ անարժաններին անիծեց՝ ասելով «անիծեալները խոտորուեցին քո պատուիրաններից» (Սղմ. ճԺԸ 21):

Հարց. Ի՞նչ է նշանակում դատաստանի վճիռը:

Պատասխան. Վճիռը, որ յանուն բարիքի է, իր մէջ օրհնութեան եօթ մաս է պարունակում: Առաջին՝ սիրալիր կանչն է, որ ասում է՝ «եկէ՛ք»: Երկրորդ, աստուածային օրհնութիւնն է, որ ասում է «օրհնուածներ»: Երրորդ՝ հայրական սէրն է, որ ասում է՝ «իմ Հօր»: Չորրորդ՝ բարութեան հատուցումն է, որ ասում է՝ «ժառանգեցէ՛ք»: Հինգերորդ՝ թագաւորութեան մեծութիւնն է, որ ասում է՝ «արքայութիւնը»: Վեցերորդ՝ փառքի նախապատրաստումն է, որ ասում է՝ «որ պատրաստուած է ձեզ համար»: Եօթներորդ՝ յաւիտենականութիւնն է, որ ասում է՝ «աշխարհի սկզբից»:

Իսկ չարերի դէմ վճիռն ունի վեց մաս: Առաջինը հեռացումն է Աստծուց, որ ասում է՝ «գնացէ՛ք ինձնից»: Երկրորդը՝ անէծքն է, որ ասում է՝ «անիծեալներ»: Երրորդը՝ բանտարկուած լինելն է, որ ցոյց է տալիս նախդիրը [յինէն]: Չորրորդը՝ տանջանքի դառնութիւնն է, որ ասում է՝ «հուրը»: Հինգերորդը՝ յուսահատութիւնն է ազատութեան համար, որ ասում է՝ «յաւիտենական»: Վեցերորդը՝ ընկերակցութիւնն է դեւերի յետ, որ ասում է՝ «պատրաստուած է սատանայի եւ նրա հրեշտակների համար»:

Հարց. Ի՞նչ է [նշանակում] ասելը՝ «դատելու ողջերին եւ մեռածներին» (Ա Պետ. Դ 5):

Պատասխան. Երեք կերպ պէտք է իմանալ: Նախ նրանց, որ այդժամ ողջ կլինեն, ինչպէս առաքեալն է ասում՝ «Մենք, որ ողջ մնանք, չենք կանխելու ննջեցեալներին» (Ա Թեսաղ. Դ 14), այսինքն մի ակնթարթ կմեռնեն եւ կյառնեն, եւ նրանց ու ննջեցեալներին առաջինը կդատի: Երկրորդ՝ ողջ են արդարները եւ մեռած՝ մեղաւորները: Երրորդ՝ կենդանի են դեւերը եւ մեռած՝ մարդիկ, որոնց կդատի Աստուած եւ բոլոր սրբերը:

Հարց. Սրբերը ինչպէ՞ս են դատելու արդարներին:

Պատասխան. Ցոյց են տալու իրենց վարդապետութեան եւ օրինակին հետեւորդ լինելը [նրանց] եւ վկայելու արքայութեան արժանի [լինելը]:

Հարց. Ի՞նչ կերպարանքով է երեւալու Տէրը:

Պատասխան. Ընտրեալներին երեւալու է այն կերպարանքով, ինչպէս երեւաց Թաբոր [լեռան] վրայ, քանի որ անարժանները Քրիստոսի աստուածութիւնը չեն տեսնի՝ երկու պատճառով: Նախ, որ Աստծուն տեսնելը յաւիտենական կեանք է, ըստ այդմ՝ «Այս է յաւիտենական կեանքը, որ քեզ միայն խոստովանեն ճշմարիտ Աստուած եւ որ առաքեցիր Յիսուս Քրիստոսին» (Յովհ. ԺԷ 3):

Երկրորդ՝ շնորհի լոյս չունեն, որով տեսնեն Աստծուն, որովհետեւ նրանք, ովքեր այստեղ հաւատով չեն տեսնում, այնտեղ էլ չեն տեսնի իմացումով: Իսկ [ովքեր] կտեսնեն Քրիստոսի մարդկութիւնը, [կտեսնեն նաեւ] խոցուած [տեղը] երկու պատճառով: Նախ, որ մարդեղութիւնը տեսնեն եւ վախենան, եւ չեն տեսնի աստուածութիւնը, որ չուրախանան, որովհետեւ խստութեամբ է նայելու մեղաւորներին, ըստ այդմ՝ «Նրա բարկութիւնից ծուխ է ելնելու, եւ բորբոքուելու է նրա երեսի հուրը» (Սղմ. ԺԷ 9):

Երկրորդ՝ տեսնելու են եւ սրտաբեկուելու, որ չհաւատացին յանուն մեզ խաչուածին: Առաւել եւս նրանք, որ չարչարեցին, որպէսզի զանազան բաներ չմտածեն: Ասուածներից հետեւում է, որ արդարներին Քրիստոս երեւալու է քաղցրատես, իսկ մեղաւորներին՝ դառնատեսիլ, որ խորհրդանշուեց ցերեկային ամպի սիւնով, իսկ գիշերը՝ հրով, ինչը լոյս էր Իսրայէլի [համար] ու խաւար՝ Եգիպտոսի (տե՛ս Ելք ԺԳ 21):

Հարց. Արդարների փառքը մեղաւորները տեսնելո՞ւ են, թէ ոչ:

Պատասխան. Մինչեւ դատաստանի օրը մեղաւորները ընդհանուր առմամբ կտեսնեն արդարների փառքը, սակայն ոչ մասնաւորաբար, որովհետեւ տեսնելու են նրանց մեծ փառքի մէջ, սակայն՝ ոչ ինչպիսին լինելը: Եւ նոյնիսկ այս տեսութեամբ չեն ուրախանայ, այլ կտրտմեն, որովհետեւ այլոց բարեբախտութիւնը նրանց նախանձն է [շարժելու]: Իսկ դատաստանից յետոյ այս տեսնելուց էլ կզրկուեն, երբ տանջանքների մէջ լինեն, երբ անարժան կհամարուեն անգամ այն տեսնելու համար:

ԿԵՆԱՑ ԳՐՔԻ ԵՒ ԳՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԵ

Հարց. Ի՞նչ է [նշանակում], որ Դանիէլն ասում է. «Գրքերը բացուեցին» (Դան. է 10):

Պատասխան. Երկուսն են գրքերը:

Մէկը յաւիտենականն է՝ Աստծունը, ըստ այդմ՝ «Քո գրքում բոլորը գրուեցին» (Սղմ. ՃԼԸ 16): Եւ գիրն այս անջնջելի է Աստծոյ տեսութիւնից՝ թէ՛ չարերի եւ թէ՛ բարիների համար, ինչպէս ասուեց [այս] գրքի սկզբում, երրորդ համարում:

Իսկ միւս գիրքը՝ փոփոխական գործերինն է եւ ժամանակի մէջ՝ ջնջելի: Մեր գործերի այս գիրքը գրւում է մեր հոգում եւ մարմնում, ինչպէս մագաղաթի վրայ, [որը] կարդալու է դատաւորն ի տես եւ ի լուր հրեշտակների եւ սրբերի: Եւ իւրաքանչիւրն իր գործը կկարդայ հրապարակաւ եւ չի կարող ուրանալ կամ մոռանալ: Ուստի պարզ է, որ կտեսնենք մեր ներսը եւ միմեանց եւ դատաւոր Աստծոյ կողմից:

Հարց. Մեր գործերը ինչպէ՞ս են գրուելու:

Պատասխան. Հոգին եւ մարմինը մագաղաթն են, կամքը եւ իմացումը՝ դպիր եւ գրող, հաւատը՝ գրիչ, արտասուքը՝ թանաք, իսկ գիրը՝ բարի գործերը կամ աղօթական խօսքերը: Առաւել եւս, երբ գրող դպիրը Սուրբ Հոգին է, ճշմարտութիւնը՝ գրիչ գործիքը, եւ որքան շատացնում ենք թանաքն ու մագաղաթը, մաքուր անկեղծ գործերն ու օրինաւոր աղօթքի խօսքերը, այնքան առաւելապէս գրւում ենք Կենաց գրքում:

Այսպիսինն է ընտրեալների գիրը: Իսկ անպէտք [մարդկանց] գրի մէջ դպիր է պիղծ դիւական հոգին, չար կամքը նրանց, խորհուրդները, իսկ ցանկասիրութիւնը նրանց թանաքն է, եւ ըստ իրենց գործերի աւել կամ պակաս գրւում են դատապարտութեան գրքում:

Սրանք են չարի ու բարու, մահուան եւ կենաց երկու գրքերը:

Գիրք են նաեւ մարգարէները, առաքեալները, ընտրեալները, որոնք ինչպէս գիրք այնժամ բացուելու են, որովհետեւ նրանց վարդապետութիւնը յայտնի կդառնայ բոլորին, որոնց մէջ, ինչպէս գրքի մէջ բոլորը կտեսնեն, թէ ի՞նչ էր պէտք անել եւ [հակառակը]՝ ինչի՞ց էր [պէտք] հրաժարուել:

Իսկ Կենաց գիրքը Քրիստոսի գիրքն է, որի մէջ բոլորը կկարդան, թէ նրա պատուիրաններից ո՞րն են կատարել:

Կենաց գիրք է նաեւ աստուածային ամենատեսութիւնը, որի մէջ իբրեւ գիր իւրաքանչիւրը տեսնելու է իր խղճմտանքը:

Հարց. Անփոփոխ գիրը ինչպէ՞ս կարող է փոփոխուել:

Պատասխան. Գիրը չորս պատճառով է փոփոխւում: Նախ՝ ժամանակի: Երկրորդ՝ մեր բնոյթի, որովհետեւ մենք էլ ենք փոխւում: Երրորդ՝ վկայութիւնների դէպքում, որ այժմ կարողանում ենք փոփոխել: Չորրորդ՝ դատաւորի [պատճառով], որ նստած է շնորհների աթոռին, ըստ առաքեալի, որ ասում է Եբրայեցուց [թղթում]. «Երկրպագե՛նք նրա շնորհների աթոռի առջեւ եւ ողորմութիւն գտնենք հարմար ժամանակին» (Եբր. Դ 16):

Իսկ սրա հակակշիռը անփոփոխ գիրն է: Նախ անփոփոխ է, որովհետեւ յաւիտենական է, ինչպէս մեր էութիւնը եւ վկաները: Իսկ արդարութեան աթոռին նստած դատաւորը արդարութեամբ հատուցելու է ըստ գործերի, եւ [յիշենք,] թէ ինչպէս յիմար կոյսերի առջեւ փակուեց դուռը եւ չստացան խնդրածը:

ԴԱՏԱՍՏԱՆԻ ՎԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԶ

Հարց. Ի՞նչ է [նշանակում], որ ասում է՝ «Երկու կամ երեք վկաներով հաստատւում է ամէն ինչ» (Բ Կորնթ. ԺԳ 1):

Պատասխան. Օրէնքը հրամայեց երկու կամ երեք վկայութեամբ սպանել եւ [ընդհանրապէս հաստատել] ամէն ինչ:

Նախ՝ որ մարդը եռակի կազմութիւն է՝ հոգի, մարմին, շունչ, եւ սրանք տրոհուելիս երեք վկայ է անհրաժեշտ:

Երկրորդ՝ երկուսն ու երեքը [միասին] դառնում են հինգ, որի մասին Քրիստոս ասաց՝ «Որտեղ երկուսը եւ երեքը հաւաքւում են իմ անունով, այնտեղ ես նրանց մէջ եմ» (Մտթ. ԺԸ 20):

Թաբօր լեռան վրայ Մովսէսն ու Եղիան վկայեցին նրա մահուան մասին: Եւ Պետրոսն ու Զեբեդեոսի որդիները, երբ լսեցին Հօրից, թէ՝ «Դա է իմ սիրելի որդին, նրան լսեցէ՛ք» (Մտթ. ԺԷ 5) նրանք եւս վկայեցին, երբ խաչուեց Քրիստոս:

Երրորդ՝ դատական ատեանում երեք վկայ են պահանջում, քանի որ մէկը կարող է խաբել եւ սուտ վկայել, երկուսը եւ երեքը՝ ոչ:

Չորրորդ՝ դատարանում երեքն են՝ մի դատաւոր, երկու դատախազ, վկաներն էլ երեքը [պէտք է] լինեն:

Հինգերորդ՝ ճշմարիտը կամ սուտը երեւում են երկուսի միջեւ, այսինքն՝ դատաւորի եւ հակառակ [կողմի]:

Վեցերորդ՝ երեք գործօն կայ՝ դատաւորի միտքը, եւ դաւ նիւթողների լսելիքները:

Եօթներորդ՝ երեքն են նաեւ մտքի գործիքները՝ խելքը, որ ծնում է [այն], սիրտը, որ խորհում է, լեզուն, որ արտաբերում է:

Ութերորդ՝ եւ երեք զգայարանները հաստատուն վկաներ են՝ աչքը, ականջը, ըմբռնումը:

Իններորդ՝ երեք վկաներ ունի իսկագոյն օրէնքը՝ խօսքը, գիրը եւ Աւե-

տարանը, որ տուեց նահատակներին, մարգարէներին եւ առաքեալներին:

Տասներորդ՝ դատաստանի օրն էլ երկու վկայ է լինելու՝ երկինքն ու երկիրը եւ երկնային զօրքը: Լինելու են եւ երեք վկաներ՝ Աստծոյ արդարութիւնը, պահապան հրեշտակները եւ իւրաքանչիւրի խղճմտանքը. դատաւորը՝ Քրիստոս, ոսոխը՝ դիւականների գունդը: Եւ կլինեն այնտեղ բարու երկու վկաներ՝ կենդանի եւ անկենդան: Կենդանի՝ հոգին ու մեր մարմինը, սրբերը, հրեշտակները եւ գրի առնողը՝ Սուրբ Հոգին: Իսկ անկենդան՝ մեր գործերը, երկինքն ու երկիրը, ցերեկն ու գիշերը:

Սրանք են երկու եւ երեք վկաները:

Այս կերպ եւ չարի վկան է՝ մեր ոսոխը՝ սատանան ու [նրա] գործակիցները եւ խղճմտանքը, որով միշտ տանջւում ենք:

Դարձեալ երկու վկայ այնտեղ՝ նախ ինքը՝ Քրիստոս, ինչպէս Երեմիան է ասում՝ «Ես եմ վկան ու դատաւորը,- ասում է Աստուած» (Երեմ. ԽԳ 10), ապա Աստծոյ պատուիրանները եւ օրէնքը, որոնք կվկայեն պահողներին եւ անարգողներին:

ՈՍՈԽԻ ՄԱՍԻՆ

Պէտք է իմանալ, որ այս կեանքի ճանապարհին երկու ոսոխ, այսինքն՝ դատախազ կայ (տե՛ս Մտթ. Ե 25): Նախ հոգին ու մարմինը, որովհետեւ իրար հակառակ են ցանկանում, ինչպէս այրի [կնոջ] եւ անիրաւ դատաւորի առակում (տե՛ս Ղուկ. ԺԸ 1-8): Երկրորդ՝ հոգեւոր եւ մարմնաւոր մտքերը, որոնց մասին ասւում է Մատթէոսի [աւետարանում]՝ «Իրաւախոհ եղի՛ր քո հնագոյն ոսոխի յետ, քանի դեռ նրա յետ ճանապարհին ես» (Մտթ. Ե 25), ինչպէս ցոյց տրուեց վերեւում: Իսկ հանդերձեալում առաջին ոսոխը խղճմտանքն է, որի մասին Դանիէլն ասում է՝ «Բացուեցին գրքերը» (Դան. է 10):

Երկրորդ՝ հրեշտակները, որ կնետեն կրակի մէջ, ըստ այդմ՝ «Առաքելու է հրեշտակներին՝ ժողովելու գայթակղութիւնները եւ նետելու դրանք բորբոքուած կրակի հնոցը» (Մտթ. ԺԳ 42):

Երրորդ՝ բոլոր սրբերը, ինչպէս առակն է ասում՝ «Այնժամ արդարները մեծ համարձակութեամբ կկանգնեն իրենց նեղողների դէմ» (Իմաստ. Ե 1):

Չորրորդ՝ երկինքն ու երկիրը, ըստ Յոբի՝ «Երկինքը կյայտնի նրանց անօրէնութիւնները, երկիրը կմեղադրի նրանց» (Յոբ Ի 27):

Հինգերորդ՝ դեւերը, ինչպէս Սիրաքն է ասում. «Կան վրէժխնդրութեան համար ստեղծուած հոգիներ, որ վախճանին թափելու են զայրոյթը»[717]:

ՈՒՂԻՂ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ Լէ

Եւ որ արդար է Աստծոյ դատաստանը, յայտնի է Սուրբ Գրքի վկայութիւններից: Դաւիթն ասում է. «Արդար է Տէրը եւ սիրում է արդարութիւն, նրա երեսը տեսնում է արդարութիւնը» (Սղմ. Ժ 8): Եւ կամ՝ «Նրա ձեռքի գործերը արդարութիւնն ու իրաւունքն են» (Սղմ. ճԺ 7): Եւ կամ՝ «Նրա աթոռը հաս-

տատուած է արդարութեան եւ իրաւունքի վրայ» (Ս»մ. ՂԶ 2):

Եւ Մովսէսն ասում է. «Աստուած հաւատարիմ է, եւ անիրաւութիւն նրա մէջ չկայ, արդար եւ ճշմարիտ է Տէրը» (Բ օր. ԼԲ 4): Եւ ինքը՝ Տէրն ասաց. «Հա՜յր արդար, եւ աշխարհը քեզ չճանաչեց» (Յովհ. ԺԷ 25): Ու նաեւ՝ «Ես եմ ճշմարտութիւնը» (Յովհ. ԺԴ 6): Եւ կամ՝ «Հոգին ճշմարտութեան, որ ելնում է Հօրից» (Յովհ. ԺԵ 26): Ապա ուրեմն ճշմարիտ է նրա դատաստանը:

Ցոյց տանք նաեւ օրինակներով:

Երկրի դատաւորները չորս պատճառով են սխալ դատաստան անում՝ տգիտութեան, վախի, խտրականութեան, կաշառքի: Այս բոլորն օտար են երկնաւոր թագաւորին:

Առաքեալն ընդդէմ առաջինի ասում է՝ «Նրա մէջ են պարփակուած իմաստութեան եւ գիտութեան բոլոր գանձերը» (Կողոս. Բ 3):

Ընդդէմ երկրորդի [մարգարէն] ասում է՝ «Ո՞վ է նայում երկրին եւ դողալ տալիս սրան» (Սղմ. ճԳ 32):

Ընդդէմ երրորդի Գաղատացիներին [յղած թղթում] առաքեալն ասում է. «Աստուած մարդկանց աչառութիւն չի անում» (Գաղ. Բ 6):

Ընդդէմ չորրորդի մարգարէն ասում է. «Իրաւունքի համար նա կաշառք չի վերցնում» (Սղմ. ԺԴ 5): Ապա ուրեմն նրա դատաստանն ուղիղ է:

ՄԵՂԱՒՈՐԻ ՅԱՒԻՏԵԱՆ ՏԱՆՋՈՒԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարց. Ապա ինչո՞ւ է ժամանակի մէջ գործած մեղքի համար Աստուած յաւիտենապէս պատժում:

Պատասխան. Վարդապետներն ասում են, որ արդարացիօրէն է մեղաւորը պատժւում յաւիտենապէս: Որովհետեւ նա մեղանչում է «իր յաւիտենականի» մէջ, [ուստի] արժանիօրէն է պատժւում Աստծոյ յաւիտենականում:

Նաեւ՝ մեղաւորի չար կամքը յաւիտենական է, որովհետեւ կամենում է, թէ հնար լինէր, մշտապէս մնալ մեղքի մէջ, ապա ուրեմն պատիժն էլ յաւիտենական է լինելու:

Եւ մեղանչում են Աստծոյ յաւիտենականի դէմ, ուստի պատժում է սրանց յաւիտենապէս:

Ու քանի որ հրի նիւթը, որից մեղքի ախտն է, յաւիտենական է, յաւիտենապէս էլ տանջւում են մեղաւորները:

Դարձեալ հինգերորդ՝ մեղքը բաժանում է յաւիտենական կեանքից, ուստի յաւիտենական մահուան էլ արժանանում է: Եւ սա երեւում է բազմաթիւ օրինակներից, ինչպէս այն, որ գնումը կատարւում է փոքր ժամանակի մէջ, սակայն գնուածը մնում է յաւիտենական: Խոցումը կատարւում է վայրկեանների ընթացքում, սակայն բերում է յաւիտենական մահ: Խորխորատ գահավիժում են [կարճ] ժամանակում, իսկ մնալն այնտեղ յաւիտենական է: Եւ կամ աչք հանելը ժամանակի մէջ է, սակայն բերում է յաւիտենական կուրութիւն: Մահադեղ ընդունելը մի րոպէ է, որ դարձեալ բերում է յաւիտենական մահ:

Ապա ուրեմն իրաւամբ եւ արդարապէս է Աստուած հատուցում չարը չարով, այսինքն՝ պատիժ նրանց անի-

ռաւութեան համար, որովհետեւ Աստուած արդար է: Իսկ բարութիւնը բարութեամբ է փոխհատուցում եւ շնորհը՝ շնորհով, որովհետեւ բարի եւ արդար է: Եւ չարով բարութիւնը երբեք չի փոխհատուցում՝ ո՛չ այս կեանքում, ո՛չ էլ՝ հանդերձեալում, որովհետեւ անիրաւ չէ, այլ ամէն ինչում արդար եւ ճշմարիտ:

ԿՇՌԻ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հարց. Ո՞րն է արդարութեան կշռաչափը:

Պատասխան. Յայտնի է մեզանում, որ կշռելու գործիքը մեր ձեռքի արդար հաւասարութիւնն է նշանակում: Իսկ մարգարէն ասում է մեր մասին՝ «Մեղանչում են իրենց կշռաչափի մէջ» (Սղմ. ԿԱ 10): Եւ այսպէս է համեմատւում: Նժարը մեր անձնիշխան կամքն է, լծակը՝ խոհական իմացումը, երեքթելեան լարը, հոգին եռամասնեայ եւ մարմինը՝ չորս տարրերով: Կամ էլ՝ տնկականը, զգայականը եւ շնչաւոր լինելը: Կշեռքի երկու թաթերը՝ հոգին եւ մարմինը: Իսկ կշռաքարերը՝ աստուածային օրէնքներն են եւ դրանց հաւասարեցուած ու հաւատով ուղղորդուած մեր գործերն են:

Այսպէս պէտք է իմանալ կշիռը մեր առումով:

Իսկ արդարութիւնն այստեղ չորս եղանակով է դրսեւորւում: Նախ՝ հոգու եւ մարմնի բնականոն հաւասարուելն արդարութեամբ: Երկրորդ՝ մեր գործերը հաւասարակշռելը: Երրորդ՝ մեզ այլոց յետ դատակշռելը, այսինքն՝ վերիններին, ստորիններին եւ հաւասարների յետ: Չորրորդ՝ մեր բարի եւ չար գործերը զուգադրուելը, կամ միտումը դէպ չարը կամ դէպ բարին:

Եւ ինչպէս մեզ, այդպէս էլ Աստծուն տեսանելի է իրաւունքի կշեռքը, ինչպէս Առակն է ասում՝ «Կշռաքարի արդարութիւնը Տիրոջից է. արդար նժարներն են նրա գործերը» (Առակ. ԺԶ 11):

Եւ պէտք է իմանալ, որ Աստծոյ բարութեան լոկ մի տեսակից մեզ ընդառաջ են գալիս ողորմութիւնը եւ արդարութիւնը՝ գործերի կամ զօրութիւնների երկու տեսակ, ինչպէս մեր մարմնի երկու ձեռքերն են, ինչպէս իմացումը եւ հոգու կամքը:

Նոյնպէս մեր բարի կամ չար գործերը: Ա՛րդ, մեր բարի գործերը նայում են դէպ ողորմութիւն, իսկ չար գործերը՝ դէպ Աստծոյ արդարութիւն: Եւ ինչպէս մենք ենք մշտապէս հակուած դէպ բարի կամ չար գործերը, այդպէս էլ նրա գործերն են հակւում դէպ ողորմութիւն կամ արդարութեան հատուցում: Այս իմաստով է ասւում՝ «Կշռաքարի արդարութիւնը Տիրոջից է» (Առակ. ԺԶ 11), որովհետեւ ինչպէս արդարութեամբ կշռելիս մի փոքր յաւելումը ծանրացնում է դիմացի կողմը եւ ներքեւ տանում, այդպէս էլ Աստծոյ դատաստանն է. դէպ բարի գործը հակուած մարդուն արդարութիւնը յօգուտ ողորմութեան է խոնարհում, իսկ եթէ չարին ենք հետեւում, ողորմութիւնը՝ արդարութեանը:

Եւ տե՛ս օրինակներով, մի չնչին գողութեան պատճառով Աքարը քարկոծուեց իր ազգակիցների հետ (տե՛ս

Յես. Զ 18, է 1-26), [կամ]՝ մանրախոհիւ հաւաքող այրին (տե՛ս Գ Թագ. ԺԷ 12): Այսպէս, անգամ քիչ հակուելով դէպ չարը՝ հարստահարւում է արդարութիւնը: Նմանապէս նրանք, ովքեր փոխւում են դէպ բարի գործեր. պոռնիկը մի փոքր արտասուելով՝ վերադարձաւ խաղաղութեամբ. աւազակը մի խոստովանութեամբ՝ դրախտ մտաւ (տե՛ս Ղուկ. ԻԳ 43), այսինքն հակուելով դէպ բարին՝ յաղթում է ողորմութիւնը: Եւ ինչպէս այստեղ, այնտեղ էլ՝ արդարութեան կշիռն է:

Եթէ կամենում ես մարմնով ուղղուել, [ընդունի՛ր] Դատողի ամենակալ իշխանութեան նժարը, ուղիղ եւ անաչառ քննութեան լուծը, երեքթեւեան առասանն [իբրեւ] Երրորդութեան արդարութեան եւ ողորմութեան մեր կողմը խոնարհուած զօրութիւններ՝ յիշելով մեր բարի եւ չար գործերը:

Այսպէս է համեմատւում «կշեռքի» նշանակութիւնը, եթէ մէկին հաճելի է այդ:

Իսկ արդարութեան կշեռքը, ուղղակի նշանակում է համապատասխան հատուցումը, իսկ թեքուելը՝ երկու կողմին՝ բարուն կամ չարին այս կամ այն չափ հակուելը:

Դարձեալ արդարութեան կշեռքը մեր Տիրոջն է ակնարկում՝ չորս առանձնայատկութեամբ: Նախ, գոյաւորմամբ, որովհետեւ ինչպէս անսկիզբ է աստուածութեամբ, այդպէս էլ հաւասարապէս անվախճան է մարդկութեամբ: Երկրորդ՝ որովհետեւ միջնորդ է Հայր Աստծոյ եւ մարդկանց հաշտութեան: Երրորդ՝ արդարութեան կշեռքով դատեց հրէաներին եւ հեթանոսներին, մարդկային ցեղը եւ սատանային: Չորրորդ՝ որովհետեւ նա արդարութեամբ է հատուցելու վախճանին, որի պատճառով էլ կոչւում է «Արդարութեան կշեռք»:

Նմանապէս, արդարութիւնը չորս տեսակ է: Նախ ինքն իր նկատմամբ՝ ի դէմս Սուրբ Երրորդութեան՝ ըստ ամենայնի ընդհանուր լինելով աստուածութեամբ, բնութեամբ, կամքով եւ այլն, իսկ միտումը դէմքերի առանձնութիւնն է, որ անծինն է, ծնեալը եւ բխեալը:

Երկրորդ՝ ի միջի ունեն միեւնոյն բարերար կամքից առաջ եկած գործերը՝ աստուածային, արարչական, արքունական, որ ստեղծման եւ նախախնամութեան [գործերն են, որտեղ] հաւասարութիւնը պահում է ողորմութեան եւ արդարութեան գործերով՝ երբեմն հաւասարակշռութիւնը խախտելով կամ տեղ-տեղ մէկը միւսով հաւասարեցնելով՝ հետեւեալ կերպ. երբեմն ողորմութիւնը ծածկում է արդարութեանը, եւ երբեմն արդարութիւնը՝ ողորմութեանը, երբեմն էլ հաւասարապէս երկուսով են՝ ակնյայտ կամ ծածուկ, ինչպէս ասուեց վերը՝ ութերորդ հատորի երեսուներորդ համարում:

Եւ այստեղ արդարութեան համար ինքնին կշեռք կայ, ինչպէս մարգարէն է ասում՝ «Արդարութեան եւ իրաւունքի վրայ է հաստատուած նրա աթոռը» (Սղմ. ՁԸ 15), որովհետեւ իրաւունք է՝ բարին բարով հատուցելը եւ արդարութիւն՝

չարին՝ չար: Եւ սրանք երբեմն հաւասարակշռում են, ինչպէս որ, երբ արդարապէս է հատուցում բարին ու չարը եւ հաւասարակշռելով՝ անվախճան պատւում կամ պատժում է:

Եւ ողորմութեան կշեռքն էլ ինքնին մարմնաւոր եւ հոգեւոր է, որովհետեւ այստեղ մարմնաւորն է կշռում, իսկ այնտեղ՝ հոգեւորը եւ՝ հաւասարակշռում: Սակայն այստեղ էլ երբեմն հաւասարւում են արժանաւորներն ու ոչ արժանաւորները, ինչպէս արեւի ծագելու [պարագան է]: Իսկ երբեմն էլ թեքում է դէպ բարին կամ դէպ չարը, օրինակ [նրանց] փրկելիս, կամ բարուն եւ չարին հարստացնելիս: Սակայն այնտեղ հաւասարեցնում է կշեռքն ըստ յոյսի եւ կարգաւորում ողորմութիւնն ըստ սիրոյ: Եւ երբ աւելի է պատւում սրբերին ու այդքան էլ սաստիկ պատժում է մեղաւորներին, այս կերպ հաւասարեցնում եւ կարգաւորում է ողորմութեան կշեռքն ինքնըստինքեան՝ նմանի եւ այլոց նկատմամբ:

Երրորդ՝ մանրամասն քննութեամբ միտուած է հատուցել բարիքն ու չարիքը, ովքեր դրանք ունեն առաւել կամ նուազ չափով, կամ [ունեն] երկու կրքերը հաւասարապէս: Ըստ այդմ հատուցում է առաւել կամ նուազ, կամ էլ՝ հաւասարաչափ՝ ոչ միայն ըստ գործի բնոյթի, այլեւ ըստ տեսակի, քանակի եւ որակի: Ըստ բնոյթի՝ հատուցում է բարուն բարի եւ չարին՝ չար: Ըստ տեսակի՝ հատուցման ձեւն ըստ վկաների եւ կոյսերի հաւատի եւ գործերի է: Իսկ ըստ քանակի՝ գործերի չափով է՝ առաւել կամ նուազ՝ [համաձայն] իւրաքանչիւրի խորհրդի, խօսքի, գործի: Իսկ ըստ որակի՝ կամայ թէ ակամայ, գիտութեամբ, թէ անգիտութեամբ [գործածի]: Եւ Աստուած հատուցում է ըստ գործերի արդիւնքի, ինչպէս առաքեալն է ասում՝ «Իւրաքանչիւրը կստանայ ըստ իր վաստակի» (Ա Կորնթ. Գ 8):

Իսկ վաստակի մասին Յովհաննէսն ասում է՝ «Շնորհ փոխանակ շնորհի» (Յովհ. Ա 16): Եւ առաւել քան արդիւնքը՝ ըստ այդմ՝ «Ձեր գոգը կլցուի առատ չափով՝ թաթաղուն, շարժուն...» (Ղուկ. Զ 38):

Այս է նշանակում կշեռքի հաւասարակշռութիւնը եւ թեքուելը:

Չորրորդ՝ կշեռքը նշանակում է [նաեւ] մարդկանց գործերը, որ օրէնքների կշեռքով են հաւասարակշռում եւ հատուցում՝ թէ բնութեամբ, թէ ըստ Գրքի եւ Աւետարանի, [ըստ որի, եթէ] շատ է տրուել՝ շատ էլ պահանջուելու է (տե՛ս Ղուկ. ԺԲ 48), [եւ] թէ՝ [արդեօ՞ք] ունեն օրէնքներին համապատասխան գործեր, կամ հաւատ, թէ՞ շեղուած կամ նուազած են [եղել], ըստ այդմ էլ օրէնքի հատուցումը կլինի, կամ՝ անօրէն լինելու պատճառով կկորչեն. այս կերպ է կշեռքի հատուցումը:

Եւ եթէ մէկին տրուած լինի ընդհանրական կամ յատուկ շնորհ, ինչպէս [ասենք] մկրտութիւն եւ հաւատ, քանքար եւ տաղանդ, իշխանութիւն կամ առաջնորդություն, մեծութիւն եւ հարստութիւն, կեանք, լոյս, երկարակեցութիւն եւ այլ

ամէնը, ըստ սրանց էլ կլինի կշեռքի հատուցումը: Այս ձեւով կդրուի արդարութեան կշեռքը, ինչպէս ցոյց տրուեց:

ՀԱՐՑ ՀԵՏԵՒԵԱԼԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է նշանակում ասելն՝ «Իմ ողորմութիւնը կդնեմ կշեռքին» (Ես. ԻԸ 17):

Պատասխան. Տիրոջ ողորմութիւնը երեքն է: Նախ՝ ընդհանրապէս: Երկրորդ՝ առանձնայատուկ, երրորդ՝ հաւասարակշռուած: Ընդհանրապէս է, ինչպէս՝ անձրեւ բերելը [բոլորի]՝ ե՛ւ չարերի, ե՛ւ բարիների վրայ: Առանձնայատուկը զղջացողների համար է, ըստ այդմ՝ «Ողորմելու եմ, ում ողորմելու եմ» (Ելք ԼԳ 19) եւ այլն: Իսկ հաւասարակշռուածը՝ երկու կողմերին արդարութեամբ է կշռում, ինչպէս երբ մէկին ողորմելով՝ նրա հակառակորդին պատժում է. այդ կերպ փրկուեց Իսրայէլը եւ պատժուեց Եգիպտոսը, ազատուեց մարդու բնութիւնը եւ պատժուեց սատանան:

Ա՛րդ, առաջին [ողորմութիւնը] խառնուած չէ արդարութեանը, երկրորդը՝ պակաս է, երրորդը՝ հաւասար:

Կամ՝ առաջինը բնութեանն է, երկրորդը՝ շնորհներինը, երրորդը՝ փառքինը:

Կամ՝ առաջինը չարերի համար է, երկրորդը՝ բարիների, երրորդը՝ չարերի եւ բարիների:

Կամ՝ առաջինը կամքինն է, երկրորդը՝ սիրունը, երրորդը՝ գործերինը:

Հարց. Որքա՞ն է տեւելու դատաստանը. երկա՞ր, թէ՞ կարճ:

Պատասխան. Մարդկանց յարութիւնը ժամանակի մի վայրկեանում է լինելու եւ՝ յանկարծակի, ինչպէս ցոյց տրուեց վերը, սակայն դատաստանի քննութեան ժամանակի տեւողութիւնը ոմանք մի ժամ են ասում, որքան տեւեց Ադամի հարցաքննութիւնը՝ նրա յանցանքից յետոյ: Սակայն ուղիղ տեսակէտն այն է, որ յարութիւնից յետոյ ժամանակը կփոխուի յաւիտենականութեան եւ չի լինի մաս, որպէ կամ ժամ, որովհետեւ երկնային մարմինները կդադարեն շարժուել, որոնց շարժումից եւ գոյանում է ժամանակը: Սակայն, որպէսզի ողջ մարդկութեան դատաստանի եւ յարութեան իրողութիւնը ուրուական կամ տեսիլք չթուայ, ուստի վարդապետերն ասում են, թէ յարութիւնից մինչեւ գալուստը եւ քննութիւնը, ապա՝ հրով նորոգելը կտեւի վեց ժամ, որովհետեւ ինչպէս վեց օրում կազմեց աշխարհը եւ կայացրեց վեց ժամանակաշրջաններով, այդպէս էլ կնորոգի [աշխարհը] վեց ժամում:

Եւ այս մասին յայտնում է Սուրբ Գիրքը, որովհետեւ Աւետարանը գիշերուայ մէջ է ասում յարութեան ժամը՝ «Ձայն լսուեց ահա, փեսան է գալիս, ելէ՛ք» (Մտթ. ԻԵ 6): Իսկ մարգարէն յանձին Քրիստոսի ասում է՝ «Առաւօտեան սպանում էի բոլոր մեղաւորներին» (Սղմ. Ճ 8): Ուստի, երեւում է, վեց ժամ է յարութիւնից մինչեւ հատուցման վճիռը եւ չարի կորուստը՝ քառակի, այսինքն՝ չարի գործերը, նրանց պատիժը, դեւերի պատճառած վնասը եւ մարդկանց հետեւելը: Այս է, որ ասում է՝

«Երկրից պակասելու են մեղաւորները, ամբարիշտները նոյնպէս չեն գտնուի նրանում, այնժամ ուրախ կլինի Տէրն իր արարածներով» (Սղմ. ՃԳ 35):

Իսկ Աստծոյ ուրախութիւնը չորս կերպ պէտք է իմանալ. նախ՝ առաջ, քան աշխարհի լինելը՝ Որդին Հօրից եւ Հայրը՝ Որդուց: Երկրորդ, արարչագործութեան ժամանակ Տէրն ուրախ եղաւ իր արարածներով եւ մարդու որդիներով՝ ըստ Սողոմոնի (Սղմ. ՃԳ 31): Երրորդ՝ մարդկանց փրկութեամբ՝ Բանի մարդանալու շնորհիւ: Չորրորդ՝ վախճանին, երբ բոլորը հնազանդուեն Նրան եւ պսակադրի իր սրբերին, ուրախ կլինի Տէրն իր արարածներով:

ՀՆՁԱՆԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԸ

Հարց. Ի՞նչ է, որ Տեսիլքում ասում է. «Քաղի՛ր խաղողը եւ լցրու Աստծոյ մեծ հնձանը» (Յայտ. ԺԴ 19):

Պատասխան. «Այգի»-ն եւ «Հնձան»-ը երբեմն չարը, երբեմն էլ բարին են խորհրդանշում, ինչպէս այն, որ՝ «Նրանց տունկը Սոդոմի այգուց էր եւ խաղողը դառնութեան» (Բ օր. ԼԲ 32). սա չարի վերաբերեալ է: Եւ՝ «Այգին Եգիպտոսից փոխադրեցիր» (Սղմ. ՀԹ 9). սա էլ բարու վերաբերեալ է:

Այդպէս էլ «հնձանն» է ասւում չարի կամ բարու [իմաստով]: Չարի հնձանը երեք կերպ է դիտարկւում: Նախ «հնձան» է կոչում մեղաւորի սիրտն ու անձը, որտեղ հաւաքւում են չարի բոլոր գործերը, որ [իբրեւ] դառնութեան խաղող իր մէջ ամփոփուած պահում է [դրանք] եւ ցանկասիրութեամբ անվերջ ճմլում է եւ արբում մեղքի գինով:

Երկրորդ՝ «հնձան» է անուանում Աստծոյ ցասումը, ինչպէս մարգարէն է ասում՝ «Մի՞թէ այս ամէնը չի պահւում իմ գանձերի մէջ», ինչպէս հնձանում, [այդպէս էլ] Աստծոյ գիտութեան մէջ հաւաքուած է մեղաւորների պատիժը, որ թափում է նրանց վրայ, ըստ մարգարէի՝ «Մեղաւորների վրայ տեղալու է որոգայթ, հուր եւ ծծումբ» (Սղմ. Ժ 7):

Սրա մասին Տեսիլքն ասում է՝ «Կճմլի նրան ամենակալ Աստծոյ բարկութեան գինու հնձանում» (Յայտ. ԺԹ 15):

Երրորդ՝ «հնձան» է կոչում դժոխքը, որտեղ կհաւաքուեն ամբարիշտները եւ կճմլուեն, ինչպէս Տեսիլքն է ասում՝ «Քաղաքից դուրս հնձանում ճմլում էր, եւ հնձանից արիւն էր ելնում» (Յայտ. ԺԴ 20), այսինքն երկնային Երուսաղէմ քաղաքից դուրս է տեղը, ուր հաւաքուելու են մեղաւորները: Սա է մեծ հնձանը, որ ընդունելու է իր մէջ բոլոր մեղաւորներին:

Այս երեք դէպքում է կոչւում չարերի հնձան:

Բարու հնձանը եւս երեք կերպ է ասւում: Նախ, «հնձան» է կոչւում Աստծոյ կանխածանօթ տեսնելը, որով ընտրում եւ հաւաքում է իր սրբերին՝ առաջ, քան նրանց լինելը, ըստ առաքեալի՝ «Առաջ, քան աշխարհի լինելն ընտրեց մեզ, կանչեց եւ արդարացրեց» (Եփես. Ա 4): «Հնձան» է կոչում երկնքի արքայութիւնը, որտեղ հաւաքւում են պսակն ու փառքը սրբերի հանգստի, որ Աստուած պատ-

ռաստել է իր սիրելիների համար՝ ըստ առաքեալի (տե՛ս Ա Կորնթ. Բ 9):

Երրորդ՝ «հնձան» են իւրաքանչիւր արդարի սիրտը եւ անձը, որ հաստատուած են ճշմարիտ հաւատի որթին եւ պտղաբերում են բարու ողկոյզներ՝ չարչարանքներով ճմլելով իրենց մէջ հրեշտակների եւ մարդկանց ուրախարար գինին. սրանով էլ բարու հնձան են:

Եւ եօթներորդ՝ հնձան է կոչւում սուրբ եկեղեցին, որտեղ հաւաքւում են մեր բոլոր առաքինութիւնները, որ ճմլում է ապաշխարութեամբ եւ բաշխում շնորհի գինին: Այս հնձանի մասին է ասում Եսային. «Հնձանի փոս փորեցի նրա մէջ» (Ես. Ե 2):

Ութերորդ՝ «հնձան» է կոչւում նաեւ սուրբ աւազանը, որովհետեւ նրա մէջ են ճմլւում եւ կորչում մեր բոլոր մեղքերը. «Խաղողի արեամբ լուացուած մեր հանդերձները» (Ես. ԿԳ 3)՝ զարդարուած Հոգու շնորհների զանազան պարգեւներով:

Իններորդ՝ «հնձան» է կոչւում նաեւ փրկչական խաչը, որի վրայ անապական Ողկոյզը ճմլուեց եւ տուեց մեզ ուրախարար գինին՝ իր անապական արիւնը: Այս հնձանի մասին էր ասում Եսային. «Հնձանը միայնակ էի ճմռում եւ հեթանոսներից ոչ մէկը չկար ինձ յետ» (Ես. ԿԳ 3):

Տասներորդ՝ հնձան են ասւում նաեւ սուրբ Կտակարանները, որտեղ՝ գինու խառնարանում՝ ժողովուեցին հին եւ նոր իմաստութիւնները, որի բաժակից խմեցին առաքեալները սուրբ Վերնատանը եւ խմեցրին ողջ աշխարհին, որի մասին մարգարէն ասում է. «Քո անապակ բաժակն ինձ յագեցրեց» (Սղմ. ԻԲ 5):

Տասնմէկերորդ՝ «հնձան» է կոչւում նաեւ սուրբ հաւատը, որովհետեւ նրա մէջ են հաւաքւում մեր բոլոր մտքերը եւ գործերը՝ ճմլուելով, այսինքն քննութեամբ դառնում են Աստծոյ եւ հրեշտակների ուրախարար գինի:

Տասներկուերորդ՝ «հնձան» է կոչւում նաեւ Վերջին դատաստանի օրը, որովհետեւ այնտեղ են հաւաքուելու բոլոր բարիներն ու չարերը, նրանց գործերը. չարերը մամլուելով՝ կարտաքսուեն տանջարան, իսկ բարիները՝ [յաւիտենական] կեանք:

Այսքանն այս մասին:

ԾԽԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է, որ ասում է՝ «Նրանց ծուխը բարձրանալու է յաւիտեան» (Յայտ. ԺԹ 3):

Պատասխան. «Ծուխը» տարբեր տեղերում տարբեր կերպ է հասկացւում, որովհետեւ սեղանի վրայի խնկի ծուխը նախ խորհրդանշում է [որ] սեղանը Քրիստոս է, ծուխը՝ սրբերի աղօթքը, որ անուշ բուրմունքով բարձրանում է Հօր մօտ: Երկրորդ՝ խորհրդանշում է սրտի ծածուկ սէրը, ինչպէս ծուխը հրի [մասին է վկայում]:

Իսկ Աստծոյ երեսից բարձրացող ծուխը, նախ խորհրդանշում է տանջանքների սաստկութեան ահագնակերպ սպառնալիքը, ինչպէս, նախ ծուխն է, յետոյ՝ հուրը եւ նախ սպառնալիքն է,

յետոյ՝ տանջանքը: Կամ՝ խորհրդանշում է մեղաւորների չափաւոր տանջանքը, ովքեր այստեղ տանջւում են չափով եւ չափով են կրում նաեւ հանդերձեալ պատիժը, որովհետեւ ծխի պակասելով՝ պակասում է նաեւ հուրը:

Իսկ երբ ասում է՝ «Ծխով լցուեց տաճարը» (Յայտ. ԺԵ 8), նախ խորհրդանշում է անհաւատների մեղքով լցուած Աստծոյ ներողամտութեան տաճարը, որ լցուած է, [սակայն նրա] ողորմութիւնն անցնում է արդարութիւնից:

Երկրորդ՝ տանջող բարկութիւնը, որ թափում է մեղաւորների վրայ:

Իսկ որ ասում է՝ «Նրանց ծուխը ելնելու է յաւիտեան» (Յայտ. ԺԴ 11), նախ նկատի ունի տանջուողների ներքին, խորը հառաչանքը եւ երկրորդ՝ անընդմէջ հրով այրուելը, ինչպէս հրին մերձեցած փայտանիւթը:

ԱՆՎԱԽՃԱՆ Է ՀՈՒՐԸ

Հարց. Ինչո՞ւ է հուրն անվախճան:

Պատասխան. Չորս պատճառով: Նախ՝ որովհետեւ այրուելով՝ բաժանւում է լոյսից եւ անփոփոխ մնում հրի մէջ: Երկրորդ՝ ժամանակի առումով, որ փոխւում է յաւիտեանի: Երրորդ՝ որովհետեւ թէ՛ հրի նիւթը եւ թէ՛ այրման [նիւթը], որ մեղքի աղտն է, ինչպէս նաեւ մեղաւորները [նոյնպէս] յաւիտենական են լինելու: Չորրորդ՝ որովհետեւ Աստծոյ բարկութեան բորբոքումը յաւիտենական է:

ԱՆԴԱԴԱՐ Է ՏԱՆՋԱՆՔԸ

Հարց. Ի՞նչ է [նշանակում], որ ասում է Տեսիլքը. «Չեն հանգստանալու տանջանքից՝ ո՛չ օր, ո՛չ գիշեր» (Յայտ. Ի 10):

Պատասխան. Չորս պատճառով են մեղաւորները յաւիտեան տանջուելու, որ տեսնում ենք նաեւ մարմնական տանջանքների [օրինակով]: Նախ, որովհետեւ տանջանքներից քնելով են հանգստանում, իսկ այնտեղ նրանց աչքը զրկուած է լինելու քնից: Երկրորդ՝ մահուամբ են ազատւում [տանջանքներից], իսկ այնտեղ վերացած է մահը, որովհետեւ ասում է՝ «Մահ կխնդրեն եւ չեն գտնի» (Յայտ. Թ 6): Երրորդ՝ տանջանքի գործիքները [երբեմն] նուազում են, իսկ այնտեղ հուրը յաւիտենական է, որը չի պակասում: Չորրորդ՝ երբեմն տանջողը դադար է տալիս, իսկ այնտեղ Աստծոյ հրամանն է տանջողը, որ երբեք չի դադարում: Ուստի պարզ է, թէ որքան անդադար է դատապարտուածների տանջանքը [լինելու]:

ՕՐ ՈՒ ԳԻՇԵՐ

Հարց. Ո՞րն է հանդերձեալի օր ու գիշերը, ինչպէս Տեսիլքում է ասում՝ «Չեն դադարի օր ու գիշեր» (Յայտ. Ի 10):

Պատասխան. Այնտեղ ցերեկ, գիշեր կամ սրանց մասերը չեն լինելու, որովհետեւ ժամանակն անցնելու է, եւ մնալու է յաւիտեանը: Այլ նախ միշտ ցերեկ է ասւում երկրի երեսի [իմաստով], որտեղ արեգակն ու լուսինը առնուած կլինեն իրենց տեղից, իսկ ներքեւը՝ միշտ գիշեր եւ անփոփոխելի խաւար:

Երկրորդ՝ «ցերեկ»-ը յարկ է իմանալ երկնքում սրբերի կեանքի [իմաստով], իսկ «գիշեր»՝ գարշելիների տանջանքը՝ դժոխքում: Երրորդ՝ «ցերեկ» ասւում է գիտութեան պայծառ լոյսին հասնելը, «գիշեր»՝ Աստծոյ ծածուկ անհասանելի խորքերի [վերաբերեալ] անգիտութիւնը:

ՉԱՐԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Հարց. Եսայի մարգարէն մեղքերի երկու հատուցում է ասում, նոյնը եւ՝ Տեսիլքը (հմմտ. Յայտ. ԻԲ 12): Իսկ ինչո՞ւ է Դաւիթ [մարգարէն] եօթնապատիկ հատուցում ասում (տե՛ս Սղմ. ՀԸ 12):

Պատասխան. Երկու կերպ պէտք է իմանալ: Նախ, մարդու առումով, որ մի մեղքի համար կրկնակի է հատուցում. այստեղ հոգով եւ մարմնով, իսկ եօթնապատիկը յաւիտենական հրովն է:

Երկրորդ՝ մարդկային ցեղը կրկնակի է հատուցում, այսինքն՝ այժմեան կեանքում եւ հանդերձեալում, իսկ դեւերի հատուցումը եօթնապատիկ է իրենց եօթնակի յանցանքի եւ եօթ գլխաւորագոյն մեղքերի պատճառով:

ՏԱՆՋԱՆՔԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԼԹ

Հարց. Որքա՞ն են դժոխքի տանջանքները:

Պատասխան. Այնտեղ տանջանքներ կրելու չափը հնարաւոր չէ նկարագրել, որովհետեւ այստեղի նեղութիւններն իբրեւ ծովի կաթիլ կամ մի կայծ են հնոցից՝ այնտեղի համեմատ: Իսկ ըստ քանակի, ոմանք ասում են տասն է՝ ըստ Եգիպտոսի հարուածների (տե՛ս Ելք Է-ԺԱ)՝ ո՛չ մարմնապէս նոյնական, այլ հոգեպէս նման՝ ծարաւ, խաւար, հրախառն կարկուտ, գարշահոտութիւն եւ այլն: Ոմանք էլ ըստ քաղաքացիական օրէնքների՝ ութն են ասում պատիժները: Առաջինն՝ ինչքի կողոպուտ: Երկրորդ՝ բանտ: Երրորդ՝ ծեծ: Չորրորդ՝ նման անդամի հատում, ինչպէս աչքի դիմաց՝ աչք: Հինգերորդ՝ անդամների խայտառակ մերկութիւն: Վեցերորդ՝ աքսոր հայրենիքից: Եօթներորդ՝ ծառայութիւն: Ութերորդ՝ գլխովին մահ:

Եւ սրանց համեմատւում են դժոխքի պատիժների հետ: Ըստ առաջինի ամբարիշտները կկորցնեն Աստծուն, բոլոր բարի շնորհները, փառքը, եւ չեն ունենայ Աստծոյ ողորմութեան յոյս, ինչպէս Եսային է ասում՝ «Խեցի չմնաց, որ ջրհորից ջուր հանի» (Ես. Լ 14), այսինքն՝ [չմնաց] Աստծոյ ողորմութիւն. կամ՝ «Մի փոքր հուր հնոցից» (Ես. Լ 14), այսինքն՝ Աստծոյ սիրուց, որովհետեւ ըստ Երեմիայի՝ «Աւարտուել է ամառը եւ սպառուել հունձը» (Երեմ. Ը 20): Երկրորդի վերաբերեալ Տէրն ասում է՝ «Դատաւորը դահճին կյանձնուի, բանտ կընկնի եւ դուրս չի գայ այնտեղից» (Ղուկ. ԺԲ 58), որովհետեւ չի լինի մեղքի հատուցում եւ տանջանքների վախճան: Երրորդի վերաբերեալ Առակն ասում է. «Ամբարիշտների մարմինը կեռեր կմտցնեն», որ զանազան տանջանքներն են, որ այնտեղ կրելու են ամբարիշտները: Չորրորդի մասին Տեսիլքն ասում է. «Որքան ցանկասիրութեան մէջ մնաց, այնքան տանջանք տուէ՛ք նրան»:

Հինգերորդի մասին ասում է Եսային. «Նրանց երեսներն այրուած են»: Եւ այնպէս խայտառակ կարուի մեղաւորի մարմինը, մինչեւ իսկ հոգին կգարշի նրան ընդունել, եւ իբրեւ բորոտի եւ որդնածի չի կամենայ ընդունել նրան: Վեցերորդի վերաբերեալ ասում է Տէրը. «Դուրս հանէ՛ք դրան արտաքին խաւար» (Մտթ. ԻԵ 30): Եօթներորդի մասին ասում է Ողբի մէջ՝ «Գաւառների իշխանը դարձաւ հարկատու» (Ողբ Ա 1), որովհետեւ ինչպէս այստեղ էր ծառայում մեղքին, այնտեղ էլ հարկերը կտայ պատժով: Ութերորդի մասին Տեսիլքն ասում է. «Այնտեղ կլինի երկրորդ մահը» (Յայտ. ԻԱ 8), այսինքն՝ յաւիտենականը, որովհետեւ այստեղ մահը ժամանակաւոր է եւ անցաւոր, այնտեղ մահը յաւիտենական է եւ անմահ:

Ա՛րդ, նախկին ասածներս ի մի բե՛ր, եւ այնտեղ կլինի՝ հրի Ջերմութիւն. ցրտից ատամների Կրճտոց, Խաւար, Ծուխ, ներքին Արտասուք, դեւերի Տեսիլքներ, Աղաղակ, Նախատինք, ծարաւից Պապակում, ծծմբի Հոտ, խղճմտանքի Որդ, Կապանքներ, Երկիւղ, Ցաւ, Ամօթ, Նախանձ, Տենդ, Տրտմութիւն, Աստծուն տեսնելու Զրկուածութիւն, յոյսի Կորուստ եւ [ոչ մի ակնկալիք] որեւէ փրկութեան: Եւ նոյնիսկ այն գոյութիւնը, որ տենչում է ցանկացած արարած, նրանց համար պատիժ է լինելու, ուստի մահ կխնդրեն եւ չեն գտնի, եւ այնտեղ կտիրի երեւակայածի չար ակնկալութիւնը, յիմարական ցանկութիւնը, ցասումնալից տրտմութիւնը:

Այսպէս են ասում ոմանք:

Իսկ որոշներն էլ ասում են յատկապէս ինն են դժոխքի տանջանքները: Առաջին՝ այրող հուր, այնպիսին, որ եթէ անգամ մի ամբողջ ծով վրան լցնեն, չի մարի: Եւ այնպէս է այս հուրը ոչնչացնում նիւթականը, իբրեւ կրակի ճարակ դարձած պատկեր: Այլեւ վառւում է, սակայն լոյս չի տալիս:

Երկրորդը՝ անտանելի ցուրտ, որ նոյնիսկ եթէ հրեղէն լեռը մէջն ընկնէր՝ կսառէր: Այս երկուսի պատճառով է ասում՝ աչքերի լաց եւ ատամների կրճտոց (տե՛ս Մտթ. Ը 12), որովհետեւ հրի ծուխն աչքի արցունքի պատճառ է, իսկ ցուրտը՝ ատամների կրճտոցի:

Երրորդ՝ անվախճան որդերը, այսինքն՝ օձեր, վիշապներ՝ ահաւոր տեսքով եւ շաչիւնով: Որովհետեւ ինչպէս ջրում ձկներ կան, հրում էլ՝ նրանք:

Չորրորդ՝ անտանելի գարշահոտութիւն:

Հինգերեորդ՝ գանակոծողների ծեծ, ինչպէս դարբնի կռաններն են ծեծւում:

Վեցերորդ՝ թանձր խաւար, որի մասին ասում է՝ «Երկիրը խաւար ու մթին, որտեղ մի կարգ չկայ եւ բնակեցուած է մշտնջենական արհաւիրքներով» (Յոբ Ժ 21):

Եօթներորդ՝ մեղքի ամօթահարութիւն, որոնք բոլորն այնտեղ բացայայտ կդառնան եւ չեն կարողանայ թաքցնել իրենց:

Ութերորդ՝ ահագնատեսիլ դեւեր ու վիշապներ, որ հրեղէն բոցերի մէջ

կերեւան, եւ կլինի ողորմելի աղաղակ լացի եւ ոտնատակ գնացողների:

Իններորդ՝ հրեղէն կապանքներ, որոնցով իւրաքանչիւր անդամ կկապկպուի:

Հարց. Ինչո՞ւ են այդքան թշուառութիւններ կրելու:

Պատասխան. Որովհետեւ ապերախտութեամբ [զանց] առան հրեշտակների ինը դասերի ընկերակցութիւնը, [ուստի] արդարապէս ինը տանջանքների կարժանանան:

Առաջինի վերաբերեալ՝ նրանք, ովքեր այստեղ ցանկութեան հրով վառուեցին, արդարապէս էլ [այնտեղ] կվառուեն:

Երկրորդի վերաբերեալ, ովքեր չարութեան ցրտով այստեղ կարծրացան, այնտեղ արդարապէս տանջող ցրտից կկրճտեն իրենց ատամները, ինչպէս որ ասում է՝ դրսից կայրուեն հրով, որպէս հնոցի մէջ խոտը, իսկ ներսից՝ կսառեն, ինչպէս ասում է՝ «Կանցնեն սառնասառոյց ջրից սաստիկ ջերմութեան մէջ» (հմմտ. Յոբ Զ 17):

Երրորդի վերաբերեալ, նախանձն ու ատելութիւնն այստեղ իբրեւ որդեր խայթեցին ընկերներին, արժանիօրէն սողուններն այնտեղ կխայթեն նրանց:

Չորրորդի վերաբերեալ, ովքեր այստեղ պոռնկութեան գարշահոտ նեխութիւնը վայելեցին, այնտեղ արդարապէս դառնութեամբ կտանջուեն:

Հինգերորդի վերաբերեալ, ովքեր այստեղ չուզեցին ընդունել խրատները եւ արժանի չդարձան տանջուել մարդկանց հետ, արդարապէս այնտեղ կգանահարուեն մուրճերով, ինչպէս ասում է՝ «Պատրաստուած են հայհոյողների դատաստանը եւ յիմարների մարմինը ծեծող մուրճերը»:

Վեցերորդի վերաբերեալ, ովքեր այստեղ մեղքի խաւարը սիրեցին եւ չկամեցան գալ դէպի Քրիստոսի լոյսը, այնտեղ ահագնածաւալ խաւարով կճզմուեն. ինչպէս ասում է. «Յաւիտեան լոյսը չեն տեսնի» (հմմտ. Ես. Ը 10):

Եօթներորդի վերաբերեալ, ովքեր չկամեցան խոստովանել մեղքերը, որ չպէտք է կատարէին, այդ պատճառով այնտեղ մերկացած բացուած անդամներով յաւիտենապէս ամօթահար կլինեն:

Ութերորդի վերաբերեալ, նրանք, ովքեր այստեղ խուսափեցին տեսնել բարին եւ լսել, արդարապէս սարսափելի տեսիլքներով եւ լսելիքներով թշուառութեամբ կզարհուրեն իւրաքանչիւրի հետ:

Իններորդի վերաբերեալ, նրանք, ովքեր այստեղ ապրում էին մեղքի յետ շաղախուած, արդարապէս այնտեղ իւրաքանչիւր անդամը կշղթայուի, եւ կցանկանան մեռնել, սակայն մահը կփախչի նրանցից:

Հարց. Ի՞նչ դիրքով են այնտեղ:

Պատասխան. Գլխիվայր, միմեանց՝ թիկունքով, ոտքերը դէպ վեր, եւ համապատասխան տանջանքի մէջ, ինչին հակուած են եղել:

ԱՐՏԱՔԻՆ ԽԱՒԱՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է արտաքին խաւարը:

Պատասխան. Նախ՝ այստեղի խաւարի նման չէ, որը լոյսի պակասութիւն է, այլ այն խաւարը բարու պակասութիւն է: Երկրորդ՝ դուրս է Աստծոյ ներկայու-

թիւնից: Երրորդ՝ այս խաւարը օդեղէն է, այն՝ հրեղէն: Չորրորդ՝ այս խաւարը երբեմն է եւ տեղ-տեղ, իսկ այն՝ միշտ եւ ամենուր:

ԱՆՔՈՒՆ ՈՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ի՞նչ է [որ ասում է] «նրանց որդերը չեն սատկում»[718] (Ես. ԿՁ 24):

Պատասխան. Ոմանք «որդ» անուանում են խղճմտանքը, ինչպէս վերեւում անդրադարձանք: Այլք [ասում են]՝ ներսից խղճմտանքը, դրսից՝ հրեղէն անքուն որդերը: Իսկ «անքուն» են ասում, որովհետեւ անդադար տանջում են:

Եւ չորս յատկութիւն ունեն որդերը, որ երեւալով՝ ցոյց են տալիս չերեւացողը: Նախ մեր մէջ են: Երկրորդ՝ ապականուած մասում են: Երրորդ՝ մեր մէջ կենդանի են մնում: Չորրորդ՝ երբ դուրս է ելնում, այլոց մէջ չի մտնում: Այդպէս էլ հրեղէն որդերը մեր մէջ են ծնւում: [Ծնւում են] մեղքի աղտեղութիւնից: Մեր մէջ են մնում: Եւ սատկում են մեղքի խոստովանութեամբ:

Հարց. Յարութիւնից յետոյ կլինե՞ն զգայական կենդանիներ:

Պատասխան. Չեն լինի: Սակայն այդ որդերը զգայական կենդանի չեն, այլ հրեղէն տանջողներն են զգայական մասի: Եւ ինչպէս այս, այն հրեղէն որդերը չունեն զգայարաններ:

Հարց. Ինչպէ՞ս են գտնում մարդուն:

Պատասխան. Ինչպէս գառն է գտնում մօրը, այդպէս էլ նրանք իրենց ծնօղ [մարդուն]: Որովհետեւ վարդապետներն ասում են, երբ մէկը մտքում մեղքի խորհուրդ է յղանում, սատանայից սերմ է առնում, ինչպէս կինը տղամարդուց[719], եւ մեղքի ծնուելով՝ ծնւում են նաեւ որդերը հրեղէն ծովում, որ հարաւում է: Եւ որքան մեղք ենք գործում, այնքան բազմանում է նրանց ծնունդը, եւ մեր ծուլութիւնն ու ցանկասիրութիւնը նրանց սնունդն են: Եւ երբ մեղաւորները քշուեն յաւիտենական հրի մէջ, կգտնեն իրենց ծնօղներին, ինչպէս գառները մայրերին, եւ յաւիտեանս կկրծոտուեն նրանց կողմից:

Հարց. Այդ տանջանքներում արդարները տեսնելո՞ւ են մեղաւորներին, թէ՞ ոչ:

Պատասխան. Արդարները տեսնելու են նրանց տանջանքները եւ ուրախանալու տանջանքներից ազատուելու համար, ինչպէս ցոյց կտրուի առաջիկայում: Սակայն դատաստանից յետոյ թէպէտ բարիները կտեսնեն չարերին տանջանքների մէջ, սակայն չարերը այլեւս երբեք չեն տեսնի բարիներին, ինչպէս ցոյց տրուեց:

Հարց. Արդարները ցաւ չե՞ն ապրելու՝ տեսնելով նրանց այդպիսի տանջանքների մէջ:

Պատասխան. Բնաւ ոչ: Թէպէտ հայրը կտեսնի որդուն կամ մայրը՝ դստերը կամ եղբորը եւ այլն, ոչ միայն չեն ցաւի, այլ այնքան թեթեւ կլինեն, ինչպէս տեսնում ենք ձկներին ջրի մէջ խաղալիս: Ինչպէս Դաւիթն է ասում՝ «Արդարն ուրախ կլինի, երբ տեսնի մեղաւորների հատուցումը» (Սղմ. ԾԷ 11):

Հարց. [Ներում] չե՞ն խնդրելու Աստծուց նրանց համար:

Պատասխան. Մինչեւ Դատաստանի օրը կաղօթեն արդարները մեղաւորների համար, սակայն դրանից յետոյ դատապարտուածների համար ոչինչ չեն խնդրի, որովհետեւ նրանց համար խնդրելը կհամարեն Աստծուն հակառակուել: Եւ բացի այդ, այնքան միաւորուած կլինեն Աստծուն, որ Աստծոյ դատաստանն ամէն ինչով հաճելի կթուայ նրանց, ուստի եւ ուրախ կլինեն դրանով:

Իսկ դժոխքի տեղի մասին ասուել է վերը՝ երեսուներորդ գլխի քսանութերորդ համարում:

Այսքանը մեղաւորների եւ նրանց տանջանքների մասին:

ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Պրակ Խ

Պէտք է իմանալ, որ «արքայութիւն» բառը չորս նշանակութիւն ունի: «Աստծոյ արքայութիւն» է կոչում Որդին վերին արքային: «Արքայութիւն» է կոչւում սուրբ եկեղեցին: «Արքայութիւն» է կոչւում եւ աստուածային Գիրքը: «Արքայութիւն» է կոչւում նաեւ յաւիտենական կեանքը:

Առաջինի վերաբերեալ ասւում է՝ «Ապաշխարեցէ՛ք, քանզի մօտեցել է երկնքի արքայութիւնը» (Մտթ. Գ 2), այսինքն՝ Աստծոյ Որդին: Եւ «արքայութիւն» է ասւում, որովհետեւ թագաւորելու ենք երկնայինների հետ:

Երկրորդի միջոցով աւետարանական ճշմարտութիւնն է ասւում՝ «Երկնքի արքայութիւնը նման է ծովը նետուած ուռկանի» (Մտթ. ԺԳ 47) եւ այլն: Եւ արքայութիւն է կոչւում եկեղեցին, որովհետեւ ներկայիս այս եկեղեցին, որտեղ արքայութիւնն է խորհրդակերպում եւ գործում, ունի մեծ փառքի վախճան:

Երրորդի վերաբերեալ ասւում է. «Կվերանայ ձեր միջից արքայութիւնը» (Մտթ. ԻԱ 43), այսինքն՝ Աւետարանը կամ աստուածային այլ գրքերը: Եւ Աստծոյ արքայութիւն է կոչում, որովհետեւ Աւետարանում կամ այլ սուրբ գրքերում գտնուող պատուիրանների պահեցողութեամբ է, որ արքայութեան մուտքը կբացուի, եւ ներքին մարդը ամրանալով՝ կհաստատուի:

Չորրորդի վերաբերեալ ասում է «Երանիների մէջ»՝ «Երանի հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը» (Ղուկ. Զ 20): Եւ մի այլ տեղ՝ «Իմ թագաւորութիւնն այս աշխարհից չէ» (Յովհ. ԺԸ 36): Եւ այն պատճառով է ասում արքայութիւն, որովհետեւ բոլոր երանութիւնների եւ փառքերի կատարումն է եւ ծայրագոյն կէտը:

Առաջին արքայութիւնն է Բանն Անճառելի: Երկրորդը՝ զինավառեալ խորանը: Երրորդը՝ հոգու զմայլումը: Չորրորդը՝ երկուսի բարձրագոյն միաւորումը:

Առաջինում գտնում ենք ողորմութիւն: Երկրորդում՝ պանդխտում ենք, երրորդում՝ հմտանում, չորրորդում՝ թագաւորելու ենք փառքի մէջ: Առաջինում՝ լուսաւորեալներն են: Երկրորդում՝ մարմնի ծանրութեամբ թանձ-

ռացածները: Երրորդում՝ սնուցուածները: Չորրորդում՝ դառնալու ենք լիովին կատարեալ:

Դարձեալ առաջին արքայութիւնն այն ծառն է, որի մասին մարգարէն ասում է. «Ընկած է ջրերի հոսանքի մէջ, եւ պտուղն իր տալիս է ժամանակին» (Սղմ. Ա 3): Եւ սա նմանեցւում է Կենաց փայտին, որ դրախտի մէջ էր, այսինքն՝ Քրիստոս, որ կարգուած է եկեղեցու մէջ: Որովհետեւ դրախտի այդ փայտի մասին ասւում է, թէ կանաչագոյն է, քան միւս փայտերը, այդպէս էլ Քրիստոս առաւել, քան միւս բոլոր սրբերը առատագոյն պարգեւներ ունի, որին Հոգին անչափ է տուել: Եւ՝ «Նրա լրումից մենք բոլորս շնորհներ առանք» (Յովհ. Ա 16), «Նրանում են գանձերը եւ Աստծոյ գիտութիւնը» (Կողոս. Բ 3):

Ուղղակի է ուրեմն ասում, որ այս ծառը տնկուած է ջրերի հոսանքի մէջ, քանի որ մեղաւոր մարմնի ձեւով աշխարհ եկաւ եւ մեր բոլոր նուաստութիւններն իր մէջ առաւ: Ինչպէս ասում է վարդապետներից [մէկը]՝ «Բոլորին ամբողջապէս իր մէջ առաւ, որպէսզի ամբողջապէս փրկութիւն շնորհի ինձ»[720]: «Եւ պտուղը տալիս է իր ժամանակին», [այսինքն] սա այն ցորենի հատիկն է, որ ընկնելով հողի մէջ՝ աշխարհի համար բազում պտուղներ պտղաբերեց, որովհետեւ՝ «Եթէ Զօրութիւնների Տէրը մեզ չթողնէր սերմը, ապա Սոդոմ կլինէինք եւ Գոմորի նման» (Հռոմ. Թ 29): Սոդոմը՝ «համր», Գոմորը՝ «խիստ» է թարգմանւում: Ուրեմն պէտք է ասել, եթէ Սաբաւովթ Տէրը, այսինքն՝ Զօրութիւնների, չթողնէր մեզ սերմը [ի դէմս] առաքեալների, մարգարէների եւ այլ սրբերի եւ Աւետարանի վարդապետութեամբ, ապա համր եւ մեղքի մէջ խստացած կլինէինք:

Այս ծառի ոստերն են եկեղեցու երեք կարգերը, այսինքն՝ ամուսնացողները, պահեցողները, կոյսերը: Այս երեք կարգերի նախագուշակները երեք այրերը եղան, որոնց մասին Եզեկիէլը մարգարէացաւ. փրկութիւնը Նոյով, Յոբով եւ Դանիէլով: Նոյով, որ կառավարեց տապանը՝ ամուսնացողների, Յոբով՝ պահեցողների, Դանիէլով՝ կոյսերի դասն է ծանուցւում:

Այս երեք բազուկներն են հանգուցւում, ինչպէս խաղողի որթը, որն Աւետարանն անուանում է «ճշմարիտ». «Ես եմ ճշմարիտ որթը, իսկ դուք՝ ճիւղերը» (Յովհ. ԺԵ 1):

Կամ այս ծառի ոստերը կարող են կոչուել Քրիստոսի միաւորուած բնութիւնները, այսինքն՝ աստուածութիւնը, հոգին, մարմինը: Եւ կամ այս ծառի եօթ ոստերը կարող են կոչուել Քրիստոսի ծնունդը, մկրտութիւնը, չարչարանքը, դժոխք իջնելը, յարութիւնը, երկինք համբարձումը եւ Սուրբ Հոգու պարգեւները, որոնց վրայ իբրեւ երկնային թռչուններ հանգրուանել եւ բնակւում են սրբերը:

Իսկ երկրորդ արքայութիւնը խորհրդանշւում է ազատ Սառայով, որ ոչ թէ մարմնի զօրութեամբ, այլ միայն Աստծոյ շնորհով ծնեց: Սա մեր մայր

եկեղեցին է, որ ամէն օր ծնում է Աստծոյ հոգեւոր զաւակներ, ովքեր կհասնեն ժառանգութեանը՝ դուրս թողնելով աղախնին[721] եւ նրա որդուն, ինչպէս համեմատութեամբ ցոյց տուեցինք վերը՝ տասնիններորդ գլխում, տասներկուերորդ համարում:

Սա է այն ձորը, որտեղ լսուեց կացնի ձայնը եւ այլ գործիքների, որովհետեւ տակաւին Իսմայէլը Իսահակի յետ է, Յակոբը՝ Եսաւի՝ նոյն արգանդում. ցորենը՝ յարդի յետ, ճմռուածքը՝ գինու, մրուրը՝ ձէթի, Յուդան՝ առաքեալների մէջ, Նիկօղայոս հերետիկոսն[722]՝ աշակերտների մէջ, շուշանը՝ փշերի մէջ, սիրելին՝ աղջիկների, խոտան ձկները՝ լաւերի հետ՝ ուռկանում, որոմը՝ ցորենի յետ՝ տանտիրոջ ագարակում:

Իսկ երրորդ արքայութիւնը խորհրդանշուեց պղնձի աւազանով, որ Մովսէսը հրամայեց պատրաստել կանանց հայելիներից (տե՛ս Ելք Հ 18), որոնք նստում էին խորանի դռան առջեւ, եւ որոնցում լուացւում էին Ահարօնի որդիները՝ մինչեւ Սրբութեան սրբոց մտնելը: Պղնձի աւազանը աստուածային խօսքն է: «Աւազան» է ասւում, որովհետեւ բարեպաշտ սրբերը [նրանից] ստանում են առատօրէն: Իսկ «պղնձի» է ասւում, որովհետեւ յաղթահարում է ախտերը եւ զօրացնում:

Ու նաեւ Մովսէսը, որ «ջրային» կամ «ջրից հանուած է» թարգմանւում[723], թէպէտ երբեմն՝ «օրէնք», երբեմն էլ «տէր» է նշանակում, սակայն այստեղ ոչ թէ «օրէնք», այլ «տէր» է նշանակում, որովհետեւ մարդու բնութիւնը ջրերի մէջ ընդունուեց, պղնձի աւազանը կազմեց կանանց հայելիներից, այսինքն՝ աստուածային խօսքը հաստատուեց սրբերի մէջ՝ օրէնքներով: Խորանի առջեւ նստած կանայք՝ հաւատացեալներն են, որ ակնկալութեամբ սպասում են երկնաւոր պալատի դռան բացուելուն:

Ահարօնի որդիները սրբերն են, որոնք մինչ վերին արքայի սենեակ փոխադրուելը, աստուածային խօսքով մաքրւում են հպարտութեան բոլոր մեղքերից: Սրանք հին եւ նոր խնձորներն են, որոնք հոտով ուրախացնում են եւ համով զմայլում, որոնց մասին հարսն ասում էր, թէ պահուած են իր սիրելիի համար. «Բոլոր հին եւ նոր խնձորները պահել եմ քեզ համար, սիրեցեալ ի՛մ»[724] (Երգ է 13):

Հին եւ նոր խնձորները աստուածային գրքերն են. հինը՝ օրէնքները եւ մարգարէները, նորը՝ Աւետարանը եւ առաքելական գրքերը:

Սրանք ջրերի լիառատ հոսանքներն են, որոնց մէջ «Երգ»-ում սիրելիի գտնուելն է [ասում], աղաւնու հայեացքի խորութիւնը, որ զգուշանում է բազէի գալստից (հմմտ. Երգ Ե 12): Սա է աղի ջուրը, որ Մեռայի դառը ջրերը քաղցրացրեց (տե՛ս Ելք ԺԵ 23-25):

Իսկ չորրորդ արքայութիւնն է յաւիտենական գաւառը, որից զրկուել ենք առաջին մարդու մեղքի պատճառով եւ տառապանքների այս հովտում, կաւի ցեխի մէջ անարգուած՝ դեգերում ենք արտասուքների հովտում: Անապատում

ենք եւ ոչ ճանապարհի վրայ՝ օտարացած այն ճանապարհից, որ մեծապէս տենչալով՝ մարգարէն ասում էր. «Մի բան եմ խնդրում Տիրոջից եւ աղաչում նոյնի համար՝ բնակեցրու ինձ Տիրոջ տանը երկար օրերով» (Սղմ. ԻԲ 6): Սա այն յարկն է, որտեղ մարգարէն մտնելով՝ իրաւամբ ասում էր. «Մտայ քո տունը, երկրպագեցի քո սուրբ տաճարում» (Սղմ. Ե 8):

ԴԱՐՁԵԱԼ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Դարձեալ, երկնքի արքայութիւնը երբեմն «ընթրիք» է կոչւում՝ անպատմելի բարիքներ վայելելու պատճառով (տե՛ս «Ղուկ. ԺԴ 16): Երբեմն էլ՝ «արքայութիւն» է կոչւում՝ պատուական լինելու պատճառով, երբեմն «դրախտ»՝ պէս-պէս եւ զանազան բարիքների պատճառով (տե՛ս Ղուկ. ԻԳ 43, Բ Կորնթ. ԺԲ 4), երբեմն՝ «Աբրահամի գոգ»՝ հօրն հաւատացող որդիների հանգստեան տեղի [նմանութեամբ] (տե՛ս Ղուկ. ԺԶ 22): Երբեմն՝ «փեսայ» եւ «հարսանիք»՝ անտրտում ուրախութեան պատճառով (տե՛ս Մտթ. ԻԵ 10): Եւ յատկապէս [«դրախտ» է կոչւում] Աստծոյ եւ ծառաների սիրով միաւորութեան պատճառով, որ այնքան գերազանց է, [որքան] Քրիստոսի միաւորութիւնը եկեղեցու յետ, քան մարմնական հարսանիքն է, որքան լոյսը, քան խաւարը, անուշ իւղը, քան գարշահոտութիւնը: Այլեւ գերազանց է, քան անմարմինների միաւորութիւնը:

Նախ՝ որովհետեւ նրանց հետ Քրիստոս միաւորուած է, ինչպէս տէրը՝ ծառաների հետ, իսկ եկեղեցու հետ միաւորուելու է, ինչպէս փեսան հարսի հետ եւ գլուխն անդամների հետ: Երկրորդ՝ նրանց հետ [ինչպէս] օտարի հետ է միաւորուած, իսկ եկեղեցու հետ՝ որպէս բնութենակից եւ համագոյակից: Երրորդ՝ Քրիստոսի միջնորդութեամբ է եկեղեցին միաւորուելու Հայր Աստծուն, եւ Աստուած միաւորուած կլինի աստուածների հետ, ըստ այդմ՝ «Ինչպէս դու Հայր, իմ մէջ ես եւ ես քո մէջ եմ, որպէսզի մի լինեն, ինչպէս եւ մենք մի ենք, որպէսզի կատարեալ լինեն միութեան մէջ» (Յովհ. ԺԷ 21-23), որ եւ անբաժանելի եւ անքակտելի միութեամբ կմիաւորուեն Քրիստոս գլխի յետ՝ անվախճան յաւիտենութեամբ:

ԵՐԵՍՆԱՒՈՐ ԵՒ ԱՅԼ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԱ

Հարց. Ի՞նչ է [նշանակում] Աւետարանի առակի «երեսնաւոր», «վաթսունաւոր» եւ «հարիւրաւոր» [ասուածը] (տե՛ս Մտթ. ԺԳ 8):

Պատասխան. Զանազան կերպ պէտք է իմանալ:

Նախ, Աւետարանի խօսքերն ու քարոզները սերմ են, իսկ հաւատացեալների սիրտը՝ արգաւանդ եւ պարարտ հող, երբ Աստծոյ հրամանով ընկած եւ պտղաւորուած սերմը մեր մէջ պտղաբերում է երեսնապատիկ, վաթսունապատիկ, հարիւրապատիկ, որ մեր մարմնի, հոգու եւ մտքի առաքինութեան պտուղն է:

Երկրորդ՝ հաւատը «երեսնաւորն» է, յոյսը՝ «վաթսունաւորը» եւ կատարեալ սէրը՝ «հարիւրաւորը»:

Երրորդ՝ կոյսերը «հարիւրաւորն» են, ամուսնացածները՝ «վաթսունաւորը» եւ մեղքից դարձածները՝ «երեսնաւորները»:

Չորրորդ՝ նաեւ՝ մարտիրոսները եւ ճգնաւորները «հարիւրաւորն» են, ուսուցիչները՝ «վաթսունաւորները», ուսեալները՝ «երեսնաւորները»:

Հինգերորդ՝ քահանայապետերը՝ «հարիւրաւորը», քահանաները՝ «վաթսունաւորը», ծառայողները՝ «երեսնաւորը»:

Վեցերորդ՝ այլեւ բարեպաշտ թագաւորները, իշխաններն ու իշխանաւորներն ունեն այս կարգը, եթէ օրէնքով են կենցաղաւարում՝ համաձայն Աստծոյ հրամանների:

Եօթներորդ՝ ովքեր մանուկ հասակից աստուածապաշտութեան մէջ են եւ պտղաբերում են իբրեւ դալար խոտ՝ «հարիւրաւոր» են: Ովքեր միջին հասակից են՝ «վաթսունաւոր» են: Ովքեր ծերութեան [հասակում] են ճշմարտութեան գալիս, դալարում են իբրեւ սեզ եւ պտղաւորում՝ «երեսնաւորն» են, որովհետեւ եթէ անգամ քիչ ժամանակ է մնացել ապրելու, ինչպէս աւազակին վերջին շնչում, նա եւս առաջ, քան բոլոր արդարներն Աստծոյ դրախտը մտաւ Տիրոջ յետ:

Ութերորդ՝ այլեւ զղջացողները «երեսնաւորն» են, խոստովանողները՝ «վաթսունաւորները», հատուցելով ապաշխարողները՝ «հարիւրաւորները»:

Իններորդ՝ եւ մինչեւ օրէնքը եղողները՝ «երեսնաւորը», օրէնքի տակ մնացածները՝ «վաթսունաւորը», շնորհի ստացածները՝ «հարիւրաւորները», որոնք պտուղ են տալիս:

Տասներորդ՝ այս կեանքում սրբերը ստանում են «երեսնաւորը», այսինքն՝ մտքի խնդութիւն, յետմահու՝ «վաթսունաւորը», այսինքն՝ հոգու հանգիստ, իսկ յարութիւնից յետոյ՝ «հարիւրաւորը»՝ երկնքի արքայութիւնը:

Այլեւ ոմանք ասում են՝ մաքրուած երկիրը «երեսնաւորն» է, դրախտը՝ «վաթսունաւորը», Վերին Երուսաղէմը՝ «հարիւրաւորը»: Սակայն ընդհանուր կարծիքն այս չի ընդունում, որովհետեւ երկնքի արքայութիւնը մէկն է, սակայն փառքն ու պսակը զանազան են՝ առաւել կամ պակաս:

Հարց. Ինչո՞ւ չենք ասում «երեսնաւոր» երկրի արքայութիւնը եւ այլն:

Պատասխան. Որովհետեւ մէկն է արքայութիւնը եւ մէկը նրա հակընդդէմը՝ դժոխքը: Եւ որքան ասւում է հակադրութեան մի կողմի համար, այնքան էլ՝ միւս կողմի: Արդ, եթէ երկնքի արքայութիւնը մէկն է, իսկ փառքերը՝ երեք, [սակայն] եթէ ասեն դժոխքն էլ երեքն է, սուտ է, որովհետեւ մի արքայութիւն է եւ մի դժոխք:

Եւ նրանք, ովքեր շատ դժոխքներ են ասում եւ մի արքայութիւն, պատճառաբանում են, թէ բարին մէկն է, իսկ չարերը՝ բազում: Ասենք սակայն, որ

բնութեամբ չնայած բարին մէկն է, ինչպէս մեծ Դիոնէսիոսն է ասում, բայց նրա ներգործութիւնները տարբեր են [իբրեւ] զանազան կամքերից առաջ եկածներ:

Եւ դարձեալ տեսնում ես, թէ բարին ըստինքեան առաւել է եւ բազում, քանզի բնութեամբ բարի է, ինչպէս Աստուած եւ ներգործութեամբ բարի է, ինչպէս բոլոր արարածները: Իսկ չարը թէպէտ անձնիշխան կամքի ներգործութեամբ է[725], սակայն բնութեամբ ինքնին չար չէ, որովհետեւ ոչ թէ էութիւն է, այլ բարու պակասութիւն, ինչպէս ցոյց տրուեց վերը՝ հինգերորդ համարում:

Ուրեմն մէկն է բարի արքայութիւնը եւ մէկն է դժոխքը՝ նրա պակասութիւնը:

Հարց. Ի՞նչ նկատի ունեն վարդապետները, երբ ասում են, թէ դրախտի առաջին կեանքին պիտի բարձրանանք:

Պատասխան. Ասենք, որ դրախտի առաջին կեանքը վարդապետները չեն ասում Ադամի ունեցած [դրախտի] իմաստով, այլ՝ որ խոստացուել էր Ադամին, եթէ պահէր պատուիրանը, որ նոյն ինքն է՝ երկնքի արքայութիւնը՝ ընկած հրեշտակների փոխարէն:

Ասենք նաեւ, որ առաջին մասնաւոր կեանքը, որ [Ադամն] ունէր մինչեւ յանցանք գործելը, ի մասնաւորի՝ անկարօտութիւնը, լոյսը, անծերանելի հասակը, անմահ կեանքը եւ այլն, որոնց մասին խօսուեց վերը՝ տասեօթներորդ գլխի երեսունվեցերորդ համարում, դրախտի նոյն կեանքը պարզապէս չպէտք է իմանալ յարութեան իմաստով: Ապա թէ ոչ դա կդառնայ Կերինթոսի[726] եւ սադուկեցուց աղանդը, որոնք մարմնական են հասկանում արքայութիւնը: Նախքան յանցանք գործելը Ադամը բնական եւ ներելի տկարութիւններ ունէր, ինչպէս ուտելը, քնելը եւ այլն: Մինչդեռ սրբոց հոգիները, որ այժմ երկնքում են, ինչպէս ցոյց տրուեց, ակնկալում են [յարութեան] օրերին փառքից փառք բարձրանալ: Արդ, եթէ այժմ երկնքում են, իսկ յետոյ մաքրուած են լինելու երկրում, [այլեւս] ո՞րն է «փառքից փառքը» (Բ Կորնթ. Գ 18):

Եւ դարձեալ՝ վերջին դատաստանը լինելու է երկրի վրայ՝ օդում: Ա՛րդ, դատաստանից յետոյ, երբ ասի «եկէ՛ք…», էլ ինչո՞ւ պէտք է իջնեն երկիր կամ բնակուեն դրախտում: Եւ առաքեալն ինչո՞ւ է ասում՝ «Ելնելու ենք ամպով Տիրոջն ընդառաջ՝ օդում, եւ այնպէս ամէն ժամ կլինենք Տիրոջ յետ» (Ա Թեսաղ. Գ 16):

Եւ ինքը՝ Տէրն ասում էր. «Որտեղ ես եմ, այնտեղ՝ իմ հաւատացեալները» (Յովհ. ԺԲ 26)՝ կարծես մատնացոյց անելով տեղը: Եւ ասում է նաեւ՝ «Իմ հօր տանը բազում են օթեւանները: Եւ ես, երբ բարձրանամ, բոլորին բարձրացնելու եմ ինձ մօտ» (Յովհ. ԺԴ 2):

Եւ բազմաթիւ այլ վկայութիւններով կարելի է հաստատել, որ մէկն է երկնքի արքայութիւնը, որ յաւիտենական կեանքն է:

Եւ քանի որ ասուածը հաստատուած է մեր վարդապետների եւ մեծերի կողմից, չենք հակառակւում: Ու քանի որ ընդհանրական կարծիք էլ չէ,

նաեւ չենք հաստատում, այլ մեր կամքի մէջ ապաստան ենք տալիս հաւանութեան արժանացած ճշմարտութեանը եւ ապաւինում նրան, ուր ծածկուած են իմաստութեան բոլոր գանձերը, ով քննում է Աստծոյ խորքերը (հմմտ. Ա Կորնթ. Բ 10):

Եւ մեզ հարկ է ակնկալել համաձայն Դաւթի, որ ասում է. «Երկնքում տեսայ քո ձեռքերի գործը» (Սղմ. Ը 4) եւ չի ասում «տեսնելու եմ» այն, ինչ կերեւայ: Նրա նման մենք էլ յուսանք արժանանալ Քրիստոսի տեսութեանը: Եւ եթէ անգամ դժոխքում լինենք, այն է մեր արքայութիւնը եւ ոչ թէ երկրի վրայ կամ այլ վայրում՝ ըստ սուրբ Ոսկէբերանի:

ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
Պրակ ԽԲ

Հարց. Դրանից յետոյ ի՞նչ բնակութիւն է լինելու աշխարհում:

Պատասխան. Փոխուելու է բնութիւնը եւ աշխարհի բնակութիւնը, ինչպէս որ ասում է. «Փոփոխելու ես նրանց, եւ փոխուելու են»: Որովհետեւ փոխուելու են արտաքինով, որ ունեն եւ նորոգուելու են ուրիշով, ինչպէս որ ասում է՝ «Լինելու են նոր երկինք եւ նոր երկիր, որ ես կդնեմ իմ առջեւ» (Ես. ԿԵ 17):

Ա՛րդ, կնորոգուի երկիրը, որ իր ծոցում ընդունեց տէրունական մարմինը եւ ոռոգուեց սրբերի գործերի պտուղներով: Եւ կլինի իբրեւ Աստծոյ դրախտ՝ անուշահոտ ծաղիկներով եւ մանուշակներով՝ զարդարուած գեղեցկացած մարդկանցով: Այդպէս էլ ջուրը, որ հպուեց փրկչական մարմնին եւ մարդկանց ծնեց իբրեւ Աստծոյ որդիներ, կնորոգուի եւ կպայծառանան աւելի, քան ամենագեղեցիկ ակնեղէնը:

Նոյնպէս եւ օդը, որտեղ Փրկիչը յարութիւնից յետոյ էր, կփոխի իր բնական թոյլ [լոյսը] եւ կպայծառանայ, ինչպէս եթեր: Եւ հուրը, որով [իբրեւ] հրեղէն լեզու երեւաց Սուրբ Հոգին՝ կառանձնանայ այրումից եւ մշտափայլ լոյսով կփայլի որպէս արփի եւ արեգակ:

Եւ այսպէս կմնան յաւիտենապէս, ինչպէս ցոյց տրուեց վերը:

Հարց. Յարութիւնից յետոյ որտե՞ղ եւ որքա՞ն են լինելու բնակութեան տեղերը:

Պատասխան. Երկու [տեղում], այսինքն՝ երկնքի արքայութիւնում հրեշտակները եւ հրեշտակացած սրբերը, եւ դժոխքը՝ դեւերի եւ չարագոյն մարդկանց տեղը: Եւ այս երկու տեղը ճշմարտապէս մատնացոյց է արւում. «Արդարները գնալու են յաւիտենական կեանք, իսկ մեղաւորները՝ յաւիտենական տանջանք» (Մտթ. ԻԵ 46):

Եւ չնայած, սրբերի արքայութիւնը մէկն է լինելու, սակայն զանազանուելու են փառքով, պսակով եւ հանգստով, ինչպէս որ մի երկնքում մի աստղը առաւել է փառքով քան միւս աստղը (հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 41):

Այսպէս էլ պէտք է իմանալ դժոխքի վերաբերեալ, որտեղ զանազան տանջանք եւ տանջարաններ կան. ոմանց՝ հուր եւ ծծումբ, ոմանց՝ միայն խաւար, այլոց՝ հուր, խաւար եւ տարտարոս, լաց

եւ ատամների կրճտոց եւ այլն, որոնցից փրկի մեզ բոլորի Փրկիչը եւ առհասարակ բոլոր իր անուանը հաւատացողներին եւ տեղ տայ լոյսի եւ հանգստեան մէջ: Ամէն:

ԸՆՏՐԵԱԼՆԵՐԻ ԹԻՒԸ

Հարց. Որքա՞ն է ընտրեալների թիւը:

Պատասխան. Որքան երկնքում հրեշտակներ են մնացել, այդքան էլ մարդկանց բազմութիւնից կընտրուի:

Հարց. Ընկածների տեղը ի՞նչ է լինելու:

Պատասխան. Ոչ թէ որոշակի դաս ընկաւ, այլ ինչ-որ թուով, որ ինը դասերից դուրս էր: Նրանցից ընկաւ, ինչպէս ցոյց տրուեց իններորդ գլխի քսանչորսերորդ համարում:

Ա՛րդ, հրեշտակների ընկած տեղում՝ նրանց թուին համապատասխան խառնուելու են սուրբ կոյսերի դասերը:

Եւ երկու խումբ են լինելու երկնքի արքայութիւնում: Մէկը հրեշտակների բոլոր դասերը: Եւ սա խորհրդանշւում է Տեսիլքի մէջ, որտեղ ասւում է՝ նրա աթոռի շուրջը քսանչորս երէցներ էին (տե՛ս Յայտ. Դ 4), որոնցից յետոյ բոլոր ազգերից հաւաքուած բազմութիւնները, ովքեր աշխարհի բազում վշտերից էին եկել, այսինքն՝ ովքեր զանազան առաքինութիւններով եւ բազում նեղութիւններով մտան հանգստի: Այս իմաստով է, որ այժմ եկեղեցում երկրպագութեան երկու դաս կայ, եւ վերին Սիօնի անդրանիկների եկեղեցում էլ է [այդպէս] լինելու:

ԸՆՏՐԵԱԼՆԵՐԻ ԼՈՅՍԻ ՄԱՍԻՆ

Հարց. Ինչո՞ւ արեգակի լոյսը չի լուսաւորելու սրբերին:

Պատասխան. Երեք պատճառով:

Նախ՝ կարիքը չունենալու պատճառով, որովհետեւ սրբերն ունեն իմանալի Լոյսին՝ Քրիստոսին եւ զգայական լոյսի կարիք չունեն: Երկրորդ՝ տեղի պատճառով, քանի որ Վերին Երուսաղէմը [աւելի] բարձր է, քան արեգակը: Երրորդ՝ պայծառութեան պատճառով, որովհետեւ արդարների մարմինն աւելի լուսաւոր է լինելու, քան արեգակը՝ ըստ Տիրոջ [խօսքի]՝ «Արդարները փայլելու են իբրեւ արեգակ» (Մտթ. ԺԳ 43): Ինչպէս Թաբօր լեռան վրայ նրան ծածկեց լոյսը, այդպէս էլ յարութեան ժամանակ [արդարներին]: Այս իմաստով պէտք է հասկանալ լուսաւորների թափուելը, որովհետեւ [արդարների] ուժեղ լոյսը նրանց կծածկի եւ [նրանք] կգունաթափուեն:

Եւ [այն] որ ասում է՝ «Այնտեղ գիշեր չկայ» (Յայտ. ԻԲ 5), [այն է], որ զգալի գիշեր չկայ այնտեղ կամ իմանալի՝ մեղք, անհաւատութիւն կամ տգիտութիւն:

ԸՆՏՐԵԱԼՆԵՐԻ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ՓԱՌՔԻ ՄԱՍԻՆ
Պրակ ԽԳ

Հարց. Ո՞րն է սրբերի ուրախութիւնը եւ փառքը:

Պատասխան. Երրորդ երկինքը տեսնելու արժանացածը եւ հոգու ընտիր անօթը, որն իր մէջ կրում էր էութիւնների կրողին, [որի մասին] Պօղոս առաքեալն ասում էր. «Այն, որ աչքը չի տեսել, եւ

ականջը չի լսել, մարդու սիրտը չի զգացել, Աստուած այն է պատրաստել իր սիրելիների համար» (Ա Կորնթ. Բ 9), որը յաւիտենական կեանքն է, մշտնջենաւոր երանութիւնը, բոլոր բարիքների անմնացորդ բաւականութիւնը:

Հարց. Եւ ի՞նչ են դրանք, ընդարձակօրէն մեկնի՛ր:

Պատասխան. Հարսի եօթ զարդերն են, ինչպէս ցոյց տրուեց, եւ յաւիտենական կեանքն [իբրեւ] օժիտ՝ պսակը եւ զգեստները, որ ասացինք մի փոքր առաջ՝ սրբերի մասին խօսելիս:

Եւ դարձեալ ինչպէս վարդապետներն են ասում՝ եօթ առանձնայատուկ փառքեր ունեն մարմինները, եօթ՝ հոգիները: Քանզի մարմինն ունենալու է Գեղեցկութիւն, Արագութիւն, Ուժեղութիւն, Ազատութիւն, Կամք, Առողջութիւն եւ Անմահութիւն, իսկ հոգին՝ Իմաստութիւն, Սիրառատութիւն, Միաբանութիւն, Իշխանութիւն, Պատիւ, Անհոգութիւն եւ Ուրախութիւն:

Եւ չնայած այս փառքերը գերազանցում են նրանց, որ կան երկրի վրայ, սակայն օրինակներով մի քիչ պարզաբանենք:

Հաճելի կլինէր, եթէ գեղեցիկ լինէիր ինչպէս Աբիսողոմը, որի մարմինը ոչ մի արատ չունէր (տե՛ս Բ Թագ. Գ, ԺԴ):

Կամ թէ՝ արագավազ Ասայէլի նման, որ հասնում էր այծեամներին (տե՛ս Բ Թագ. Բ):

Կամ՝ Սամփսոնի պէս ուժեղ, որ էշի ծնօտով սպանեց հազար հոգու (տե՛ս Դատ. ԺԵ):

Կամ ազատ, ինչպէս Օգոստոսը, որին ծառայեց ողջ աշխարհը:

Կամ լինէիր իղձերով հարուստ, ինչպէս Սողոմոնը, որին տրուեց ամէն բան, ինչ կամեցաւ սիրտը:

Կամ առողջ, ինչպէս Մովսէսը, որի աչքերը չտկարացան եւ ոչ մի ատամը չշարժուեց:

Կամ երկարակեաց, ինչպէս Մաթուսաղան, որ հասաւ գրեթէ հազար տարեկանի (տե՛ս Ծննդ. Ե):

Եթէ սրանցից իւրաքանչիւրն իսկ տրուէր, կհամարուէր թագաւորութեան փոխարէն, այլ եթէ բոլորը տրուեն, ողջ աշխարհի գերագոյնը կհամարուէր:

Եւ դարձեալ, սրանցով հանդերձ, եթէ իմաստուն լինէիր ինչպէս Սողոմոնը, որի նմանը երկրի վրայ չգտնուեց, կամ իրարից սիրուած, ինչպէս Յովնաթանի եւ Դաւթի կողմից, որին սիրեց, ինչպէս իր հոգին: Կամ միաբան, ինչպէս առաքեալները, որոնց սիրտն ու անձը մէկ էր: Կամ ունենայիր Աղէքսանդրի իշխանութիւնը, որ Ասիան, Եւրոպան, Լիբիան դրեց իր իշխանութեան տակ: Կամ պատուի արժանանայիր, ինչպէս Յովսէփը, որին երկրպագեցին եգիպտացիք, ինչպէս աստծոյ: Կամ անհոգ լինէիր Ենովքի եւ Եղիայի նման, որոնց չանհանգստացրեց ո՛չ մահը, եւ ո՛չ էլ ուրիշ դիպուած: Կամ այնպէս ուրախ լինէիր, ինչպիսին [կլինէր] նա, որին կախաղան պիտի բարձրացնէին, սակայն յայտնուէր թագաւորութեան մէջ, ինչպէս Սաւուղի դէպքում եղաւ՝ կորցրեց էշը, թագաւորութիւն գտաւ (տե՛ս Ա Թագ. Թ):

Ա՛րդ, սրանք բոլորը մասամբ են, փոփոխական եւ ներհակ, [մինչդեռ] ի՞նչ ասենք այնտեղի երանութեան մասին, որ լիարժէք է, անփոփոխ եւ առանց հակոտնեայի՝ յաւիտենական:

ԴԱՐՁԵԱԼ ՍՐԲԵՐԻ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եւ երանելիների ուրախութեան մասին Տէրն ասում է. «Նորից տեսնելու եմ ձեզ, եւ ուրախ էք լինելու, եւ ոչ ոք չի խլելու ձեզանից ձեր ուրախութիւնը» (Յովհ. ԺԶ 22):

Եւ Մատթէոսի [աւետարանում] ասում է. «Ծառայ բարի եւ հաւատարիմ, մտի՛ր քո տիրոջ ուրախութեան մէջ» (Մտթ. ԻԵ 21), որը յաւիտենական կեանքն է, ուր տեղ չունեն ցաւը, տրտմութիւնը, հեծեծանքները: Եւ Եսային ասում է. «Տէրը կմաքրի բոլորի երեսից բոլոր արցունքները եւ իր ժողովրդի նախատինքը, որովհետեւ կմոռանան նախկին նեղութիւնները, եւ յաւիտենական խնդութիւն կտիրի նրանց գլխավերեւում» (Ես. ԻԵ 8):

Եւ մնացեալ ամենայն ինչ, որ լսւում է Սուրբ Գրքում, այնտեղ կատարուելու է:

Եւ պէտք է իմանալ, որ ընտրեալների ուրախութիւնը վեց կողմից է լինելու: Նախ երանելի Սուրբ Երրորդութիւնից: Երկրորդ՝ տեղի բարձրութիւնից: Երրորդ՝ վայելուչ ընկերակցութիւնից: Չորրորդ՝ մարմնի փառաւորութիւնից: Հինգերորդ՝ դժոխքից: Վեցերորդ՝ աշխարհից:

Առաջինի վերաբերեալ Եսայի [մարգարէն] ասում է. «Թագաւորին իր վայելչութեան մէջ կտեսնեն» (Ես. ԼԳ 17): Իսկ ժողովողն [ասում է]՝ «Քաղցր է լոյսը եւ հեշտալի է կենդանի աչքերի համար արեգակը» (Ժող. ԺԱ 7): Թագաւորին տեսնելը եռապատիկ ուրախութիւն կպատճառի նրանց: Նախ, աստուածային երեսը տեսնելը անճառելի ցնծութիւն է, որ ինչպէս վարդապետներն են ասում՝ նա է ճշմարիտ եւ միակ ուրախութիւնը, որ ոչ միայն ստեղծուածների, այլեւ ստեղծողի համար է լինելու, իսկ երբ ստանաս, ոչ ոք չի խլի քեզանից:

Սրա համեմատութեամբ մնացեալ բոլոր հրճուանքները տրտմութիւն են, ամենայն վայելքները՝ ցաւ, ամէն քաղցրութիւն՝ դառնութիւն, ամէն վայելչութիւն՝ զազրութիւն եւ ամէն ինչ, որ փափկակենցաղութիւն է բերում՝ չարչարանք, մինչեւ, որ Աստծոյ բարութիւնը գերազանցի բոլոր ստեղծուած բարութիւնները: Որովհետեւ չնչին կթուան այն բոլոր վայելքները, որ կլինեն աշխարհում՝ մինչեւ դատաստանի օրը՝ այն քաղցրութեան հետ համեմատած, ինչպէս մի կաթիլ ջրի բաղդատութիւնը ամբողջ ծովի հետ:

Եւ եթէ այսքան վայելքներ են գտնւում ստեղծուած մասնիկների մէջ, որքա՜ն [առաւել] կգտնուեն Ստեղծողի մօտ, որովհետեւ եթէ աստուածային բարութեան շաւիղները այսքան քաղցրութիւն ունեն, որքա՞ն կունենայ ինքը՝ քաղցրութեան աղբիւրը՝ Աստուած: Դաւիթն ասում էր. «Ծարաւի է անձն իմ

առ քեզ, Աստուա՛ծ, աղբիւր կենդանի» (Սղմ. ԽԱ 3), որովհետեւ աշխարհի բոլոր բարութիւնները նրանից դուրս եկող վտակներ են: Եւ վա՜յ Աստծոյ թշնամիներին, որ երկրի վրայ լիզում են այդ վտակները, սակայն արհամարհում քաղցրութեան աղբիւրը: Ինչպէս Երեմիան էր ասում՝ «Թողեցին ինձ՝ կենդանարար ջրի աղբիւրին» (Երեմ. Բ 13):

Եւ այնքան քաղցր է Աստծուն տեսնելը, որ նոյնիսկ չարերը, եթէ հնար լինէր, կնախընտրէին դժոխքում լինել եւ Աստծուն տեսնել, քան տանջանքներից զերծ լինել եւ չտեսնել: Ինչպէս Ոսկէբերանն է ասում՝ «Առաւել ծայրագոյն կսկիծ, քան գեհէնն է, համարում եմ Աստծուն տեսնելուց զրկուելը», որովհետեւ ասում է՝ «Յաւիտենական կեանքն այս է, որ քեզ ընդունեն միակ ճշմարիտ Աստուած, եւ որ [դու] ուղարկեցիր Յիսուս Քրիստոսին» (Յովհ. ԺԷ 3): Երկրորդ ուրախութիւնը լինելու է Քրիստոսի մարդեղութիւնը տեսնելը: Ինչպէս վարդապետներն են ասում՝ այդ պահին լցուած ամենայն անուշ եւ քաղցր ուրախութեամբ՝ կտեսնեն մարդուն՝ մարդկանց Արարիչ: Երրորդ ուրախութիւնը կլինի, երբ տեսնեն մարդկային բնութեան միաւորումը աստուածայինին, որովհետեւ սքանչելի ուրախութիւն կապրեն ընտրեալները, երբ կտեսնեն, որ իրենց մարմնակից եղբայրը ճշմարիտ Աստուած է: Այս ուրախութեան չափը մտքով կարելի է պատկերացնել այն [օրինակով], որ սովորաբար ունենում են ծնօղները, երբ նրանց զաւակները դառնում են եպիսկոպոսներ կամ թագաւորներ: Այն աստիճան կլինի գլխի եւ անդամների միաւորումը, որ անդամները գլխի պատիւն իրենցը կհամարեն: Ինչպէս մարդու գլուխն՝ իր անդամների համար բարի կամ չար հատուցումը իրենն է համարում, այդպէս առաջին ուրախութիւնը լինելու է Աստծոյ երանելի տեսութիւնից:

Երկրորդ՝ ընտրեալներին վիճակուելու է եռակի ուրախութիւն՝ ըստ տեղի բարձրութեան: Նախ տեղի պայծառութեան պատճառով, ինչպէս Տեսիլքն է ասում՝ «Այլեւս գիշեր չի լինի» (Յայտ. ԻԲ 5): Եւ ըստ իմաստասէրի՝ առաջ քան մարմնինը, որում կայ լոյսի զանազանութիւն, վերեւում՝ կայ լոյսի միակերպութիւն, որովհետեւ ողջ մարմինն այնտեղ է՝ հրեղէն երկնքում, որտեղ յաւիտենական լոյս է: Երկրորդ՝ տեղի մաքրութեան պատճառով: Տեսիլքն ասում է՝ «Այնտեղ չի մտնի ոչինչ, որ պղծի կամ գարշահոտութեան պատճառ դառնայ» (հմմտ. Յայտ. ԻԱ 27): Երրորդ՝ տեղի ընդարձակութեան պատճառով: Ինչպէս Բարուքն է ասում՝ «Ո՜վ, Իսրայէլ, որքան մեծ է Աստծոյ տունը եւ ընդարձակ նրա ունեցուածքի տեղը» (Բար. Գ 24): Ինչպէս վարդապետներն են ասում՝ Իսպանիայի վերջին ծովից մինչեւ Հնդկաստան քիչ օրերի տեւողութիւն կայ, եթէ քամին վարի նաւը: Եւ երկնաւոր այն գաւառը երեսնամեայ արագընթաց աստղի ճանապարհ է շնորհելու:

Այսքանը տեղի մասին:

Եւ եռակի ուրախութիւն է լինելու նաեւ ընկերակցութեան պատճառով: Նախ, բազմութեան պատճառով, որի մասին Տեսիլքն ասում է. «Տեսայ շատ բազմութիւն, որ հնարաւոր չէր համրել» (հմմտ. Յայտ. Ե 11): Երկրորդ՝ ազնուական ընկերակցութեան պատճառով, որովհետեւ այնտեղ են լինելու երանելի Կոյսը, հրեշտակները, սրբերը, սրբուհիները, բոլոր թագաւորներն ու թագուհիները, ուր կժամանի Աստծոյ Որդին՝ թագաւորական աթոռով, եւ բոլոր թագաւորակիցները նրա յետ կլինեն:

Մարդկանց հարկ էր առաւելագոյնս չարչարուել՝ միայն կարողանային նոյն օրը լինել երանելի սրբուհի Աստուածածին Կոյսի յետ, քան բազում վաստակներ կուտակէին՝ յաւիտենական փառքի համար:

Ինչպիսի՞ն է լինելու այն օրը, երբ Տիրոջ մայրը՝ Մարիամն ընդառաջ կգայ քեզ՝ կոյսերի խմբերով: Ինչպէս Կարմիր ծովում փարաւօնի՝ զօրքի հետ ընկղմուելուց յետոյ՝ թմբուկով այս երգն էին երգում. «Օրհնեցէ՛ք Տիրոջը, որովհետեւ փառաւորեալ է փառքով» (Ելք ԺԵ 21) եւ այլն:

Երրորդ՝ ընկերների մէջ այնտեղ ունեցած սիրոյ պատճառով. այնքան սէր է լինելու նրանց մէջ, որ նրանց ուրախութիւնը իրենցն են համարելու: Ինչպէս ասում է Եսային՝ «Ասաց Տէրը, որի հուրը Սիօնի մէջ է»: Այդ մեծ սիրոյ պատճառով այն ժառանգութիւնը նոյնն է բոլորի համար եւ իւրաքանչիւրի եւ ոչ մասնաւոր:

Այսքանն ընկերների մասին:

Չորրորդ՝ մարմնի փառաւորութեամբ քառակի կլինի ուրախութիւնը: Նախ մարմնի գեղեցկութեան պատճառով: Երկրորդ՝ նրա նրբութեան պատճառով: Երրորդ՝ նրա թեթեւութեան պատճառով: Չորրորդ՝ նրա անչարչար լինելու պատճառով, ինչպէս ասացինք նախապէս: Իսկ հիմա՝ համառօտ:

Նախ կլինի ուրախութիւն մարմնի մէջ, երբ կհամեմատի իր մօտ եղածին, այսինքն՝ երբ այլ մարմիններ փառաւորուելով՝ նրա առջեւ կհրճուեն:

Երկրորդ՝ իր ներսում գտնուածի համեմատութեամբ, այսինքն՝ երբ ներքին մարմինը տեղի է տալիս՝ փառաւորուելու մարմնին: Երրորդ՝ իրենից վեր գտնուածի համեմատութեամբ, որպէսզի իր հոգու համեմատութեամբ կարողանայ կատարեալ հնազանդութիւն ունենայ: Չորրորդ՝ այն հանգամանքը, որ ինքն իր դէմ է լինելու, չի կարող որեւէ մէկի կողմից վտանգուել:

Այսքանն էլ մարմնի փառքի մասին:

Հինգերորդ՝ դժոխքի պատճառով ընտրեալների ուրախութիւնը եռակի կլինի: Նախ այն պատճառով, որ դժոխք չընկան: Երկրորդ, որ նրանց թշնամիները տանջւում են, ինչպէս Դաւիթն է ասում՝ «Ուրախ կլինի արդարը, երբ տեսնի հատուցումը» (Սղմ. ԾԷ 11): Երրորդ՝ նրանով, որ մեղքը, որ խիստ վտանգեց մարդկանց, փակուած կլինի դժոխքում՝ դատաստանի օրուանից յետոյ, որովհետեւ կլինի դժոխքում իբրեւ իր տեղում,

եւ չի կարող մնալ ո՛չ երկնքում, ո՛չ էլ՝ երկրի վրայ, այլ կիջնի ներքին դժոխք:

Վեցերորդը եւ վերջինը՝ աշխարհի ընտրեալները եռակի ուրախութիւն կունենան: Նախ նրանով, որ տանջանքների թշուառութեան այս տարագիր [վիճակից] քայքայուած [լինելով] եւ անցած լինելով մահուան միջից դէպ կեանք՝ [նրանց] կեանքի ուրախութիւնը կրկնապատիկ կլինի:

Արդարեւ, յոյժ ուրախութիւն է այն ազատութիւնը, որի վերաբերեալ ասում էր՝ «Վա՜յ ինձ, որովհետեւ խիստ երկար եղաւ իմ պանդխտութիւնը» (Սղմ. ՃԺԹ 5):

Երկրորդ՝ նրանով, որ փրկուած կլինեն նաւաբեկութիւնից: Եթէ նաւաբեկեալները ծովից դուրս գալով՝ այդչափ ուրախանում են, որքա՞ն աւելի կուրախանան նրանք, ովքեր փրկուած կլինեն այս աշխարհի վշտագին ծովի նաւաբեկութիւնից: Այդ վշտի չափը կերեւայ [ծովն] անցածների նուազութեամբ եւ կորուսեալների բազմութեամբ:

Եթէ ծովի ալիքներից չորս նաւից մէկը կործանւում է, ապա այս աշխարհի ծովում չորս նաւից հազիւ մէկն է հասնելու փրկութեան նաւահանգիստ:

Եւ այնտեղ երրորդ [ուրախութիւնը], որովհետեւ նրանք, որ իբր տկար էին, սակայն այդպիսի թշնամու դէմ յաղթանակ տարան՝ ըստ Յոբի: Չի կարող համեմատուել երկրի որեւէ իշխանութիւն նրանց ունեցածի յետ, որովհետեւ չեն երկնչելու որեւէ մէկից:

Մենք նման ենք մարախի, թշնամին՝ հսկայի, եւ որքան մեծ եղաւ վիշտը պատերազմում, այնքան մեծագոյն է յաղթանակի ուրախութիւնը:

Այսպէս էլ նաւարկողների դէպքում. նաւաբեկութեան վշտից յետոյ յոյժ ուրախանում են, որովհետեւ սարսափելի վախ էին ապրել:

Ինչպէս վարդապետներն են ասում, այնպիսի երջանկութիւն է լինելու, որտեղ ոչ մի չար չի լինելու, եւ բարուն ոչինչ չի յաղթելու, ծուլութիւնը չի տիրի, կարօտութիւնը նեղութիւն չի տայ:

Այնտեղ իրական փառք է լինելու, որտեղ որեւէ մէկը չի գովերգուի մոլորութեամբ կամ չի գովերգուի քծնութեամբ: Իրական պատիւ, որ առանց խնայելու [կտրուի] արժանաւորին:

Այսպէս վեց կողմից կլինի սրբերի ուրախութիւնը, որոնք հաւաքուեցին սուրբ վարդապետներից:

ԿԵՆԱՑ ԾԱՌԻ ԵՒ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏԵՍԻԼՔԻ ՎԵՐՋՈՒՄ Է ԸՆԹԵՐՑՒՈՒՄ Պրակ ԽԴ

Հարց. Ի՞նչ են կենաց ծառը եւ տասներկու պտուղները, որ ասում է Տեսիլքը (տե՛ս Յայտ. ԻԲ 2):

Նախ Կենաց ծառ են Հոգու վտակում աւազանի ջրով տնկուած հաւատացեալ անձինք՝ յաւիտենական կեանքի հետեւորդները՝ ունենալով Սուրբ գրքի գիտութիւնը, հաւատի ծաղիկը եւ բարի գործերի պտուղը: Եւ տասներկու ամսում՝ մեղքերից յետոյ ապաշխարութեամբ վերստին պտղաբերում են, որի մասին Դաւիթն ասում է. «Նման կլինի նա ծառի, որ տնկուել է

ջրերի հոսանքի մէջ, որ իր ժամին պտուղ է տալիս, եւ նրա տերեւները չեն թափ-ւում» (Սղմ. Ա 3):

Եւ կեանքը երկու ունակութիւն ունի. նախ, որ ինքն իրենով ունի կեանք, ապա, որ ուրիշին էլ է տալիս:

Երկրորդ՝ «կենաց ծառ» են վերին Սիօնի բնակիչները՝ տնկուած կենաց աղբիւրի մէջ, որ իջնում է նրանց մէջ Աստծոյ աթոռից՝ ունենալով յաւի-տենական անմահ կեանք. տերեւները Հոգու գիտութիւնը, ծաղիկը՝ Բանի ծա-գումը, պտուղը՝ Հօր արդիւնքը: Եւ տասներկու պտուղներ, որովհետեւ դադար չի լինելու մեղքի ձմռան պատճառով: Եւ կանաչագեղ կենաց տերեւներ՝ ծաղկած առաքինութեամբ՝ հանապազօրեայ վաստակած պտուղ-ներով, որի մասին Դաւիթն ասում է. «Արդարները ծաղկելու են իբրեւ արմաւենի» (Սղմ. ՂԱ 13): Նախ, որով-հետեւ արմաւենու պտուղները բարձ-րադիր են, եւ արդարներն էլ երկնքում կգանձեն [իրենց] առաքինութիւնը, ըստ այդմ՝ «Մեր առաքինութիւնը երկնքում է» (Փիլիպ. Գ 20):

Երկրորդ՝ բարձր են մայրին եւ արմաւենին. արդարներն էլ անխոնար-հելի են մեղքի մէջ. միշտ՝ «Խորհում են բարձրի մասին, որտեղ նստած է Քրիստոս՝ Հօր աջ կողմում» (Կողոս. Գ 2):

Երրորդ՝ արմաւենին ուշ է պտուղ տալիս եւ մայրին յետոյ է պնդում. արդարների փառքն էլ աշխարհի վերջում է եւ պնդելը՝ անմահութեամբ:

Չորրորդ՝ արմատի խոշոր լինելը: Եւ խոշորութիւնը երկու կերպ է՝ մէկը մտքի խորհուրդների պատճառով է, ըստ այդմ՝ «Խորհեցի իմ առաջին տարիների դառնութեան մասին» (Սղմ. ՀԶ 6):

Հինգերորդ՝ ամուր է կեղեւը. այդ-պէս էլ արդարներն են խստակրօն, ըստ այդմ՝ «Եթէ մարդիկ ձեզ անիծեն, ցնծացէ՛ք, որովհետեւ բազում է ձեր վարձքը երկնքում» (Մտթ. Ե 12):

Վեցերորդ՝ արմաւենին երկարա-կեաց է, եւ ասում է՝ «Արդարի յիշատակն յաւիտեան է լինելու» (Սղմ. ՃԺԱ 6):

Եօթներորդ՝ մշակների ջանքերով բարձր լինելու պատճառով, որովհետեւ որքան խորն են փորում հողը եւ քար դնում, այնքան աւելի բարձր է լինում: Այդպէս էլ միշտ արդարն է զգուշանում, որ չընկնի, ըստ այդմ՝ «Հնոցը փորձում է բրուտի անօթը» (հմմտ. Ես. ԽԱ 25): Եւ «Օրը եօթ անգամ է ընկնում արդարը» (Առակ. ԻԴ 16): Եւ առաքեալն ասում է. «Վախեցի՛ր, որ կանգնած ես, որպէսզի չլինի թէ ընկնես» (Ա Կորնթ. Ժ 12):

Ութերորդ՝ վարսի գեղեցկութեան պատճառով, եւ արդարների համար ասում է՝ «Անզգամների աչքին թուաց, թէ չարչարւում են, բայց նրանք խաղա-ղութեան մէջ են» (Իմաստ. Գ 2-3):

Իններորդ՝ պտղի ուշանալու պատ-ճառով, որովհետեւ ասում են մինչեւ հարիւր տարեկանը չի կարողանում պտղաբերել: Եւ արդարների մասին ասում է. «Գալով գալու են ու ցնծալու» (Երեմ. ԼԱ 12): Եւ Սողոմոնն ասում է.

«Շտապող մարդու ժառանգութիւնը ներկայում չէ»[727]:

Տասներորդ՝ պտղի քաղցրութեան պատճառով, ըստ այդմ՝ «Ներկայի ամէն մի խրատ յիմարութիւն է թւում, սակայն ապագայում խաղաղութեան պտուղ է դառնալու»[728]:

Այսպէս են արդարները կոչւում կենաց ծառ:

Իսկ ընտրեալների տասներկու պտուղները հանդերձեալում հետեւեալն են:

Առաջինը՝ առողջութիւն՝ առանց հիւանդութեան: Սաղմոսն [ասում է]՝ «Բժշկելու է քո բոլոր հիւանդութիւնները» (Սղմ. ճԲ 3), իսկ Եսային՝ «Փրկութիւնը պատելու է քո պարիսպը» (հմմտ. Ես. Կ 18):

Երկրորդ՝ անծերանալի երիտասարդութիւն: Սաղմոսն [ասում է]՝ «Կնորոգուի իբրեւ արծուի մանկութիւն» (Սղմ. ճԲ 5): Ի տարբերութիւն [ներկայի] կմնան միշտ երեսունամեայ. Եփեսացիների [թղթում]՝ «Կհասնենք կատարեալ մարդու աստիճանի՝ ունենալով միշտ Քրիստոսի հասակի չափը» (Եփես. Դ 13), Թեսաղոնիկեցիների [թղթում]՝ «Կյափշտակուենք երկինք Քրիստոսին՝ ընդառաջ օդում եւ այդուհետ ամենայն ժամ Տիրոջ յետ կլինենք» (Ա Թեսաղ. Դ 16):

Երրորդը յագենալն է՝ առանց ձանձրանալու: Ժողովողն [ասում է]՝ «Աչքը չի յագենալու տեսնելուց եւ ոչ էլ ականջը՝ լսելուց» (Ժող. Ա 1), եւ այնժամ ցանկութիւնը կլինի բարութեամբ լիալիր:

Սաղմոսն [ասում է]՝ «Յագեցայ քո երեսի փառքի երեւալով» (Սղմ. ԺՁ 15): Եւ Եսային՝ «Չեն քաղցելու եւ ծարաւելու դրանից յետոյ»: Ինչպէս վարդապետներն են ասում՝ յագենալով՝ կցանկանանք, որովհետեւ յագենալը չի ծնելու տաղտկութիւն, ցանկանալով՝ կյագենանք, որովհետեւ ձանձրութեամբ չի լինի ցանկութիւնը:

Չորրորդն ազատութիւնն է, որ կարտայայտուի մարմնի թեթեւութեամբ եւ նրբութեամբ, որովհետեւ մարմինը անշօշափելի է լինելու՝ առանց ծանրութեան եւ զերծ այլ մարմնի դիմահարութիւնից, եւ հոգին ուր ուզի՝ այդ պահին, կյայտնուի նաեւ մարմինը:

Հինգերորդը՝ գեղեցկութիւնը [կլինի] առանց տգեղութեան: Իսկ մարմնի գեղեցկութիւնը բաղկացած կլինի երեքից, այսինքն՝ մաքրութիւնից, համաչափութիւնից եւ անդամների կերպաւորուածութիւնից:

Եւ «Իմաստութեան» մէջ ասում է՝ «Արդարները փայլելու են»: Եւ Մատթէոսի [աւետարանում]՝ «Այնժամ փայլելու են արդարներն իբրեւ արեգակ Հօր արքայութեան մէջ» (Մտթ. ԺԳ 43): Իսկ Փիլիպպեցիներին յղած [թղթում ասում է]՝ «Ակնկալում Յիսուս Քրիստոսին, որ մեր խոնարհուած մարմինը նորոգելու է ըստ իր մարմնի փառքի նմանութեան» (Փիլիպ. Գ 21):

Վեցերորդը՝ անչարչարութիւն է, որ վերաբերում է անմահութեանը, [ինչպէս] Եսային է [ասում]՝ «Արեւահար եւ տօթակէզ չի լինի եւ յաւիտեան կազատագրուի մահից» (հմմտ. Ես. Դ 6):

Եօթներորդը՝ առատութիւնը եւ որեւէ բանի կարիք չունենալը: [Ինչպէս] Երկրորդ օրինացում է [ասում]՝ «Վայելելու են բոլոր էութիւնների առատութիւնը»: «Դատաւորաց»-ում՝ «Տէրը ձեզ տեղ է տալու, ուր ոչնչի պակասութիւն չկայ» (Դատ. ԺԸ 10): Որովհետեւ չի լինի արտաքոյ կարգի մի բան, որին փափագեն, չի լինի ներքին մի բան, որ ձանձրոյթ պատճառի:

Ութերորդն անխռով խաղաղութիւնն է, [ինչպէս] սաղմոսն է [ասում]՝ «Ո՞վ դրեց քո խաղաղութեան սահմանները» (Սղմ. ՃԽԷ 14): Եւ Տէրն [ասում է]՝ «Տալու եմ ձեզ իմ խաղաղութիւնը եւ արձակեմ» (Յովհ. ԺԴ 27):

Իններորդ՝ անհոգութիւն առանց երկիւղի: Եսային [ասում է]՝ «Ժողովուրդը նստելու է խաղաղ գեղեցկութեան մէջ լիացած, յոյսի եւ հանգստեան խորանում (հմմտ. Ես. ԼԲ 18):

Տասներորդն է ճանաչելն առանց տգիտութեան: Յովհաննէսն [ասում է] «Կաթողիկէ»-ում. «Տեսնելու ենք նրան, ինչպէս որ է» (Ա Յովհ. Գ 2): «Կորնթացիներ»-ում [ասում է]՝ «Հիմա տեսնում ենք ինչպէս հայելու անդրադարձ, իսկ այնժամ [կտեսնենք] դէմ յանդիման: Այժմ ճանաչում ենք փոքրիշատէ, իսկ այնժամ կճանաչենք ինչպէս ճանաչուել ենք նրանից» (Ա Կորնթ. ԺԳ 12):

Տասնմէկերորդն անթերի փառքն է: Կողոսացւոց [թղթում ասում է]՝ «Երբ Քրիստոս յայտնուի մեր կեանքում, այնժամ մենք էլ նրա յետ կերեւանք փառքով» (Կողոս. Գ 4):

Տասներկուերորդ՝ ուրախութիւն՝ առանց տրտմութեան: Տեսիլքն ասում է. «Աստուած ջնջելու է բոլոր աչքերի արտասուքները» (Յայտ. ԻԱ 4), որովհետեւ դա այն կեանքն է, որտեղ չկան ցաւ, տրտմութիւն, հեծեծանքներ:

Սրանք են Կենաց ծառի տասներկու պտուղները:

Եւ նորից վերադառնանք մեր առաջին խօսքին, որ դրախտի Կենաց ծառի [մասին] էր:

Երրորդ՝ Կենաց ծառով հասկացւում են բանական դրախտի տնկիները, այսինքն՝ երկնային զօրութիւնների բանակը, որ մշտատեւ յարազուարճ բերկրանքով բարձրացած են փառքի [գագաթները], ովքեր ոռոգուած են Կենարար գետի բխմամբ, որ նրանց վրայ հեղւում է անսպառ կերպով եւ ունեն տերեւ, ծաղիկ, պտուղ, այսինքն՝ մաքրում, լուսաւորում եւ կատարելացնում են՝ ըստ մեծն Դիոնէսիոսի[729]:

Իսկ «տասներկու պտուղ» Տէրն ասում է ըստ տասներկու առանձնացուած գնդերի, որոնք ամէն տարի եւ ամէն ամիս բոլորաձեւ մշտապէս շարժւում են: Եւ գիշեր ու ցերեկ է [ասւում], այսինքն՝ արեւապէս հասանելիութիւնը ցերեկ է համարւում, իսկ գիշեր՝ Աստծոյ անհասանելի խորութիւնը:

Իսկ առաւօտը եւ երեկոն սրանք են. տեսնելը Բանն Աստծոյ աստուածային եւ բարձրագոյն իմաստը՝ առաւօտեան ճանաչումն է, իսկ նոյն բանի տեսնուելը արարածների իմացութեան մէջ՝ երե-

կոյեան ճանաչումն է: Այսինքն՝ սա երկնային եւ իմանալի տնկիների մասին է, որ Կենաց ծառ են կոչւում՝ ինքնին ունենալով կեանք եւ բաշխելով բոլոր արարածներին խնամք:

Չորրորդ՝ Կենաց ծառ է կոչւում մեր Տէր Յիսուս Քրիստոս, ընդ որում՝ դալար փայտ էր աստուածութեամբ (հմմտ. Ղուկ. ԻԳ 31), մեզ կեանք եւ կենդանութիւն եղաւ իր յարութեամբ, զօրացած Հոգու ընթացքով, որովհետեւ տնօրինութեան խորհրդի համաձայն միշտ ներգործում է Սուրբ Հոգու զօրութեամբ՝ ունենալով աշխարհապահպան վարդապետութեան տերեւը, որով զովացան բոլոր ազգերը եւ բժշկուեցին մարդկային հոգու վէրքերը: Եւ ծաղիկ էր պայծառ եւ անուշահոտ առաքինի վարքը, պտուղ՝ գործերի արդիւնքը, որոնցով եղաւ փրկութիւնը եւ երկնքի արքայութեան վայելումը:

Դարձեալ՝ տասներկու պտուղները տասներկու առաքեալներն են, որոնք պտղաբերեցին տնօրինութեան տարիներին եւ ամիսներին:

Հինգերորդ՝ Կենաց ծառ է սուրբ Խաչի կենդանարար փրկչական փայտը, որ [դրախտի] գիտութեան մահաբեր փայտի փոխարէն մեզ յաւիտենական կեանք պարգեւեց, ըստ Սողոմոնի՝ «Կենաց փայտ է բոլորի համար, ով կպատսպարուի նրանով»: [Այն] ոռոգուեց եւ զօրացաւ կողից բխած հոսող [արեան] առուակներով՝ ունենալով մշտասաղարթ ծաղիկը, որ գոյնի կարմիր երանգն էր՝ զարդարուած երկնագոյն հիւթով, որ մեզ տուեց անմահական Կենաց պտղին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսին:

Եւ տասներկու պտուղները՝ տասներկու ամիսներն են, որովհետեւ Կենաց փայտի անմահական պտուղը երբեք չի նուազում՝ ո՛չ անցաւոր ամիսներում, ո՛չ էլ՝ մշտնջենական տարիներում, որովհետեւ այստեղ մարմնապէս է, այնտեղ՝ հոգէպէս: Այդպէս էլ հանապազօրեայ վայելումն է:

Եւ Կենաց ծառն ու անմահական պտուղ են սուրբ մարմինը եւ արիւնը, որոնք անընդմիջաբար ճաշակելով՝ մեզ անմահ կեանքին է հաղորդակցում, ըստ այդմ ասում է Տէրը. «Ով ուտի իմ մարմինը եւ խմի իմ արիւնը, յաւիտեան մահ չի տեսնելու», որի մասին Տեսիլքն ասում է. «Որ յաղթում է ախտերին, ուտում է Կենաց փայտից» (հմմտ. Յայտ. ԻԱ 14):

Կենաց ծառ է նաեւ սուրբ Աւետարանը՝ տնկուած եկեղեցու դրախտում՝ տալով երկնաւոր իմաստութիւնն [իբրեւ] կենաց պտուղ, որ կեանք է տալիս ճաշակողներին, մշտական բժշկութեան շնորհ եւ թողութիւն մեղքերին:

Կենաց ծառ է նաեւ Աստուածածին կոյս Մարիամը՝ ծլարձակած Յեսսեի արմատից՝ երկնասլաց զարգացմամբ մշտասաղարթ սրբութեամբ՝ ծաղկած եւ պայծառացած Սուրբ Հոգու գալստեամբ, պտղաբերած մեզ համար մարմնացեալ Աստծոյ անմահ պտուղը, որին վայելելով [թէ] երկնաւորները եւ [թէ] երկրաւորները՝ նրա շնորհից ժառանգելու են յաւիտենական կեանք:

Եւ Կենաց ծառ է իմաստութեան տունկը, որ տնկուել է երկնքից մարդու մէջ, եւ ինչպէս կենդանարար ջուր դալարեցնող ունակութիւն ունի՝ ծաղկած այստեղ եւ պտղաբերելու ապագայում, ինչպէս Ահարոնի ծաղկած գաւազանն (տե՛ս Թուեր ԺԷ, 8) էր խորհրդանշում իմաստութեան խորհուրդը, որով զարդարել է տալիս լուսաւոր նիւթի պտուղը [իբրեւ] ոգու կերակուր:

Եւ Կենաց ծառ է երկնային տնկին՝ կենդանարար հաւատը, որի արմատը Հայրն է, ոստերը՝ Որդին, ծաղիկը եւ պտուղը՝ Սուրբ Հոգին: Այլեւ՝ տերեւն է հաւատի մշտասաղարթ գիտութիւնը՝ ծաղկած դաւանումով եւ պտղաբերած առաքինի գործերով, որովհետեւ բարեգործութեան բոլոր ծիլերը հաւատի սերմերից են ծլարձակում եւ պտղաբերում: Իսկ տասներկու պտուղները՝ հաւատի տասներկու աստիճանն են, որոնք սրտում եւ լեզուով անդադար, մշտապէս դաւանւում եւ արտաբերւում են:

ՀԱՒԱՏԻ ՄԱՍԻՆ

Մեր ազգի մեծերից մէկը, հաւատը ներբողելով, ասել է՝ Հաւատը սկսելով Հօրից հասնում է Որդուն եւ Հոգուն: Հաւատը մի աստուածութիւնից շնորհւում է մարդկանց: Հաւատը Որդու տնօրինութիւնից սփռւում է մարդկանց մէջ, եւ դարձեալ մարդուց՝ ի Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի: Հաւատն ի միասնական Սուրբ Երրորդութիւնն է, Հաւատն ի Որդու տնօրինութիւնն է:

Դիոնէսիոսը հաւատը «տիպ» է կոչում, Ալէքսանդրը՝ «կնիք», Պօղոսը՝ «աներեւոյթ իրերի պատկեր», Յօհան Ոսկէբերանը՝ «անյայտ իրերի լոյս»[730]: Ինչպէս միտքը հոգունն է, խօսքը՝ մտքինը, աչքը՝ մարմնինը, լոյսը՝ աչքինը, այդպէս էլ հաւատը լոյս է, որով տեսնում են:

Հաւատն այստեղ՝ սկիզբ, այնտեղ՝ գործերի զօրութիւն է: [Ինչպէս] օրինակ՝ Աստուած՝ մատանի է, միտքը՝ մոմ, հաւատը՝ մատանու դրոշմ. այս է Սուրբ Երրորդութիւնը: Ինչպէս Պորփիւրն է ասում, թէ մատանին Աստծոյ օրինակն է, որ մէկն է՝ բազումների վրայ դրւող եւ բազմիցս [դրւող], սակայն բազումներից չէ:

Առանց «հոյ» հնչիւնի [հաւատը]՝ «աւատ» է դառնում. ամէն առիթով ասում են, թէ «աւատ կայ», ինչպէս «առաւօտ» են ասում օրուայ սկիզբը՝ «առաւօտ»՝ արեգակի գալը[731]:

Տէրը՝ մատանիով դրոշմուած գանձը տալիս է ծառաներին, եւ մատանին ձեռքին է, երբ [ետ է] խնդրում՝ թերութեան [դէպքում] յանդիմանում է: Մեր գործերը եւ աստծոյ կողմից տրուած բարին կնքւում են հաւատով, իսկ պակասութիւնը յանդիմանւում է, այստեղ՝ խղճմտանքով, որպէս գրաւոր [հետք] եւ այնտեղ՝ դատաւորից, որ «չար ծառայ» է անուանում:

Ոչինչ չունենք աւելի վեհագոյն, քան հաւատն է. աստուածային ճշմարտութեան օրինակը դրոշմուած է մեր մէջ ի բնէ, որ մեր հրահանգն ու զարդն է:

Հաւատի երկու ենթակայութիւն ունենք՝ մերձաւոր եւ հեռաւոր: Մերձաւորը՝ Տիրոջ տնօրինութիւնն է, իսկ հեռաւորը՝ արարչագործութիւնը: Եւ երկու կատարում [ունենք]՝ մկրտութիւնը եւ յարութիւնը, որին ակնկալութեամբ սպասում ենք եւ խոնարհ թողնելով ամէն անցաւորը՝ անցնում ենք:

Հաւատը Աստծուց ծագած շող է՝ երկնքից կախուած մի լուսեղէն լար, որին ձեռքերը գցած՝ փոփոխելով՝ բարձրանում ենք երկնային սքանչելի ծով եւ օդ՝ մեր սրտում դնելով ելարանը, առաջնորդուելով սրա լոյսով Սրբութեան սրբոց մտնելիս:

Իսկ հաւատը Որդու մարդեղութեան հանդէպ՝ Կոյս մօրից ծնուած անհայր, ինչպէս որ անմայր՝ [ծնուած] Հօրից, նոր եւ սքանչելի խառնումով[732]՝ միաւորեալ բնութեամբ, [ինչպիսին] մտքին միացած ձայնն է կամ գիրը, լոյսը՝ [միացած] օդին, տեսողութիւնը՝ աչքին, երկաթը՝ տաքութեանը՝ պողպատի մէջ: Եւ չի շփոթւում Բանը եւ չի սպառւում մարմինը. ո՛չ որպէս միտք [նման] կաղապարի հալոցքին եւ կամ մարմին՝ նման հրի բոցի կամ օդում անհետացող թեթեւ ծխի, այլ հզօրագոյնին յաղթող, ինչպէս արեգակի լոյսն է ներառում բոլոր լոյսերը՝ անշփոթ եւ անվախճան: Այսպիսին է բնութիւնը:

Այդպէս էլ կամքը, կիրքը եւ ներգործութիւնն է՝ մարդկայինը միաւորուած աստուածայինի յետ, բանական Հոգով միջնորդելով՝ աստուածութիւնն ու մարմինը, որ ներգործութեամբ միշտ աստուած է, իսկ բնութեամբ՝ Փրկիչ, Քրիստոս, Նոր Ադամ, ճշմարտապէս էմմանուէլ, որ չի բաժանւում կամ առանձնանում Հօրից եւ Հոգուց, ինչպէս [չի առանձնանում] ջերմութիւնը հրից կամ լոյսից, կամ էլ՝ նկարագիրը էութիւնից:

Եւ Քրիստոս Աստծոյ զօրութիւն ու Աստծոյ իմաստութիւն է՝ Հօրից, ըստ սուրբ Դիոնէսիոսի, ու եթէ մի տան լապտերներից մէկը շարժուի, լոյսը չի զատուի եւ չի բաժանուի նրանից, եթէ նրանցում անջրպետ չկայ, եւ չկայ տարածք, եւ օրինակը չի կարող յայտնել էութիւնը:

Մարդեղութեան ընթացքը երեք դէմքով է յայտնում. մէկով հաստատում է աստուածութիւնը, միւսով՝ կատարեալ մարդուն, ապա՝ անքակտելի, անշփոթելի եւ անբաժան միութիւնն է յայտնում[733]:

Երրորդութիւնից մի դէմքը Որդին է, մի դէմք է Կոյսի մարդկութիւնից առնուած մարդկութեան բնութեամբ եւ համակ աստուածութիւնն անհասանելի միաւորութեամբ՝ ըստ Յովհան Ոսկէբերանի: Ծնունդը, զօրութիւնը, մահը, Հօր աջ կողմում նստելը եւ մնացեալ ամէն Բանն Աստուած մարդու մէջ եւ մանաւանդ՝ մարդ՝ աստծոյ մէջ՝ ըստ Գրիգոր Սքանչելագործի պարզաբանմամբ[734]: Այս պատճառով է, որ Որդու սպանողները Հօր եւ Հոգու թշնամիներն են:

Այս Հաւատը մեծ յոյսով եւ սիրով է իրականանում, որին Պօղոս [առաքեալը] վահան է անուանում: Եւ եթէ վերեւում

անձրեւաթափ փորձութիւնների պատերազմ է, ապա հաւատի ծածկի տակ կարող ես դիմակայել եւ փրկուել: Իսկ եթէ ներքեւում ապականութեան շաղախ է, ապա հաւատի վրայ հենուելով՝ չես ընկնի: Եւ եթէ զգայութիւնները կանխես, հաւատը պատնէշ դարձնես՝ չես սխալուի: Եթէ թիկունքից են սատանայի դաւադիր նետերը, սրանով զգուշացիր եւ անվնաս կմնաս: Եթէ աջից է ցանկասիրութիւնը խեղդում, վերին ցանկութիւններին հաւատայ եւ չես խաբուի: Եթէ ձախողած սխալները ամբոխուած են տրտմութեամբ, կսփոփուես հաւատով եւ չես ընկնի յուսահատուելով:

Եթէ միտքն ու ցնորամիտ խորհուրդները եւ զայրոյթը տանջում են խայթոցներով, հաւատով կբժշկուես՝ ըստ մարգարէի՝ պայծառացած՝ վազանցիկ եւ ունայն համարելով ամենայն անցաւորը: Եւ պատերազմի շեմին Անմահի դուրս գալու եւ մահկանացուի մայրամուտի ժամանակ բերանիդ հսկողութիւն դիր եւ շուրթերիդ կարմիր լար՝ այսինքն՝ եղիր հաւատով, սիրով զօրացած, եւ ոչ թէ տրոհուած քնասիրութեան, արծաթասիրութեան, առաքինասիրութեան, եւ ախտասիրութեան, ընկերասիրութեան, արատասիրութեան մէջ, այլ միշտ եւ հանապազ փառաւորիր ամբողջապէս համագոյ, ամփոփ եւ անթերի Երրորդութիւնը:

Եւ ա՛րդ, ո՞ հաւատ, մեծ եւ պաշտելի լոյս իմ եւ դրոշմակնիք, գանձ անկողոպտելի, ինձ յետ եղի՛ր, քանզի իմ մօր արգանդից խուսափում եմ քեզանից: Իմ տկարութիւնը [իր վրայ վերցրած] զօրաւոր գաւազան ես դու: Եւ քեզանով է իմ անբաւելի եւ անճառելի բարիքը, որին չեմ համարում, թէ անձն իմ հասու է:

Եւ այժմ աղաչում եմ քեզ, մի՛ բաժանուիր ինձնից, ինձ մերձեցնողդ: Աչքերիս արատաւոր հայեացքը թող մերժուի քո լոյսի տեսութեամբ: Եւ լսելիքիս հեշտանքը թո՛ղ մերժուի քո ձայնով, հոտոտելիքիս մեղկութիւնը՝ իւղիդ անուշ հոտով, ճաշակելիքս եւ շօշափելիքս՝ Բանին հպուելով՝ ախորժելի ճաշակումով, ուրախարար նարդոսով եւ անմահ կերակուրով:

Տէ՛ր, տէ՛ր հաւատարիմ Յիսուս, անբաժան եղիր զգայութիւններիցս եւ այս կեանքիս ամբողջ գոյութիւնից՝ ողողուած խոստովանութեամբ եւ շնորհներով՝ հոգիս, մարմինս, մկաններս ու ոսկորներս եւ որպէսզի քեզնով գեղեցկացած գերեզմանով Քո յարութեանը հասնեմ եւ անդատապարտ դառնամ Քո ատեանում՝ Հօր եւ Սուրբ Հոգւոյդ առջեւ, որ միշտ օրհնեալ ես եւ գովեալ յաւիտեան:

Ահա սրանք են երկնքում եւ երկրում տնկուած Կենաց ծառերը՝ Եդեմի՝ դրախտի Կենաց ծառի փոխարէն, որից հրաժարուեցինք եւ որի ճանապարհը պարսպուեց բոցեղէն սրով (տե՛ս Ծնն. Գ 24):

Այսօր վերստին հրամայել է իր հաւատացեալներին ճաշակել Կենաց պտղից եւ յաւիտեան անմահ կենդանի մնալ՝ Քրիստոս Յիսուսի՝ մեր Տիրոջ մէջ, որի միջոցով եւ որի մէջ հաւասարապէս Հօրն ու Սուրբ Հոգուն վայելում է փառքը,

պատիւը, իշխանութիւնը եւ զօրութիւնը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սրանով իրապէս թող աւարտին հասնի Գիրք Հարցմանցի շարադրանքը, իբրեւ վախճան եւ լրումն Բանի պարգեւների փառքի եւ նոյն Հոգու շնորհների՝ Աստծոյ հայրական բարեխնամ գթութեան, որին գոհաբանական օրհնութիւն եւ բարեբանեալ փառաբանութիւն՝ բոլոր գոյեղէն բնութիւններին՝ վեհագոյնից մինչեւ ամէնավերջինը, իմանալիների սեռին եւ զգայականների տոհմին:

Միայն միակին եւ միշտ էին՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն: Այժմ եւ մշտակայ յաւիտենութեամբ, Ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
Պրակ ԽԵ

Ա՛րդ, ես՝ վերջին ծնունդս եկեղեցու եւ նուաստ ուսումնականս, Գրիգոր պիտակ անուամբ, հետամտողը խնդրի, շարադրեցի «Գիրք հարցմանց»-ը՝ եկեղեցու վարդապետների լուսաւոր գրքերից, Ատոմի՝ ուղղադաւան բանասէրի խնդրանքով, որը վաղուց ի վեր բազմիցս թախանձում էր: Եւ իմ տկարութեան ու ժամանակի վրդովուած պատճառով յապաղում էի կատարել խնդրանքը: Ապա ի սէր նրա եւ անձկագին պնդումների՝ ապաստանելով նրա մօտ, որ զօրացրեց տկարիս, ձեռնարկեցի եւ աւարտեցի [գիրքն այս] շատ ջանքերով, տեղից-տեղ փախչելով՝ մեծ ճիգ թափելով:

Սակայն վերոնշեալ պատուիրատուն չհասաւ գրքի աւարտին, այլ [այն ժամանակ, երբ գրուած էր գրքի կէսը, կիսուեց եւ նրա երկրային կեանքը, որտեղ նա հասել էր իմաստութեան գանձին ու գիտութեան աղբիւրին, որի յիշատակը օրհնութեամբ լինի, Ամէն:

Ա՛րդ, գիրքն այս աւարտուեց Հայկազեան տոմարի 846 թուականին (1397), Սիւնեաց նահանգի երկնամատոյց մեծայարգ ուխտի, Սուրբ առաքեալների առաքելական աթոռի եւ շրջակայ միւս հրեշտակաբնակ սուրբ մենաստանների հովանու ներքոյ, որոնց խնամածութեամբ ամրանալով՝ փրկւում ենք բոլոր փորձութիւններից, ամէն:

Իսկ Հարցումների այս գրքում ամէն մի աւելորդ օտար բան չէ, որ խուզել ենք, ոչ էլ յարմարեցրել գեղջուկ աշխարհական խօսքին, այլ հոգ ենք տարել միայն եկեղեցուն եւ վարդապետների համար պիտանիին՝ հաւատի խնդրի համար՝ ուղիղ եւ ճշգրիտ, անթերի գիտութեան համար՝ շարադրելով ոչ թէ այն, որ բոլորը գիտեն, այլ բազմապիսի բաներ, որ շատերին է պիտանի ու ցանկալի:

Ա՛րդ, սրա մէջ կան բաներ, որոնք քաղուած են սուրբ վարդապետների լուսաւոր խօսքերից՝ ըստ գրքերի, կամ՝ ըստ իմացութեան: Եւ բաներ էլ կան, որոնք [շարադրուել են] Աստծոյ Հոգու շնորհների ներգործութեամբ, որոնք իմաստուններից թաքցնում եւ ժամանակ առ ժամանակ մանուկներին է յայտնում՝ ըստ իր կամքի: Եւ թէ՛ սա, թէ՛ նա, դու ընկալի՛ր առանց երկբայելու քո մտքում,

իբրեւ միեւնոյն կենաց կենդանարար արբիւրից՝ զօրացած եւ պտղաւորուած ի փառս եւ ի գովեստ նոյն Տնկագործի եւ Առաջնորդի, որը ես բազմաթիւ պտուղներ հաւաքող մշակի նման, իբրեւ անուշահոտ բազմերանգ ծաղիկների մի փունջ, կամ իբրեւ փոքրիկ թռչնի՝ մեղուի մեղրահաց, կամ իբրեւ տառապալից կեանքով [ապրող] այրու մանրադրամ, աղերս ընծայեցի Ձերդ մեծութեան ճոխ գանձանակի մէջ՝ Հայաստանեայց իմաստասէր, ճշմարտասէր եկեղեցուն եւ ընթերցասէր մտքերին, որի համար աղաչում եմ բարեմիտ ընթերցողներիդ հաւանութիւն տալ եղբայրական սիրով, պակասը լրացնել, իսկ աւելորդը մի կողմ թողնել եւ պիտանիի համար փառք տալ նրան, ով փառաւորուած է իր պարգեւների մէջ, իսկ անպիտանի համար ներել ինձ՝ փոքրընկալ անօթ եւ ծանրամիտ լինելու համար:

Դարձեալ՝ արտասուալից դէմքով երեսնիվայր ընկած՝ հողս եւ փոշիս, ձեր սուրբ ոտքերի առջեւ, ի խորոց սրտի աղերսում եմ ձեր գութը՝ իմ հարազատ հոգեւոր հայրե՛ր ու եղբայրնե՛ր, մի կաթիլ փոքրիկ արտասուքով ցողէ՛ք իմ տառապալից հոգու գերեզմանը եւ թրջէ՛ք մեռելային մեղքերով պղծուած իմ թարախալից ոսկորները, որ միգուցէ ձեր գթառատ մաղթանքների շնորհիւ կարողանամ ողորմութիւն գտնել ամենաողորմ մեր Փրկչից:

Այլեւ իմ վարդապետի եւ հայոց մեծ հռետորի՝ Յոհան Որոտնեցու յիշատակի մաղթանքները թո՛ղ օրհնութիւն լինեն եւ սրբոց ժառանգութեանը վիճակուի որպէս լոյսի, քանզի նա ծնեց մեզ Խօսքի նմանութեամբ՝ բազմաջան չարչարանքով՝ կրթելով դպրութեան եւ կենդանի յոյսի համար:

Եւ ձեզ եւս՝ յիշողներիդ եւ մեզ առհասարակ յուսացողներիս թո՛ղ ողորմի բարերար եւ բազումողորմ մարդասէր Աստուած եւ Տէրը մեր Յիսուս Քրիստոս, ամէն:

Այլեւ երջանիկ ընդօրինակողներիդ, ովքեր կընդօրինակեն այս «Գիրք հարցմանց»-ը, մաղթում եմ, այս փոքրիկ յիշատակարանն էլ արտագրել, որպէսզի դուք էլ գրուէք Կենաց գրքում, ամէն:

Այստեղ շարադրում եմ նաեւ «Գէորգի հարցմունքները»՝ բազում վկայութիւնների կապակցութեամբ, որոնք բերւում են գրքում, որ տարակոյսներ չմնան:

Իսկ հարցերը բոլոր տասնչորս գլխով են, որ հասկանալի է շարադրանքից:

ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՐՑԵՐԸ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ՝ ՆՐԱ ՀԱՐԱՁԱՏԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Պրակ ԽԶ

Քո վսեմամիտ խոհեմութեան գիրը, ո՞վ արփիածին հարազատ եւ Վերին Սիօնի նազելի զաւակ, Գէորգէոս Ռաբունապետ, միանգամայն՝ ե՛ւ փրկութեան փափագը, ե՛ւ պարտադիր կատարելու հրամանը հասան ստորացեալ ոգուս, թաւազարդ թզենուս, որ եւ առանց յապաղելու ապաստան գտան մեր մէջ՝ օժանդակելու խնդրանքիդ:

[Սա եղաւ] ոչ թէ [այն պատճառով], որ բազմաց բաշխողը [դրա կարիքն] ունէր, կամ փորձողի համար սիրելի փորձ էր, այլ իմաստների պատճառները [բացայայտելը], որը տեսնելով՝ աչքը չի յագենում՝ լինելով իմաստունի գլուխը եւ մանաւանդ ի շահ բանասէր մտքի միակամ եղբայրների: Եւ սա գլխակարգուած է կրկնակի եօթ կարգաւոր հարցումներով:

Հարց առաջին

Իմաստասէրների [սահմանած] կանոն է. եթէ իրը բնութեամբ է՝ պէտք է պատկանի [տուեալ] տեսակին: Սակայն մարդկային տեսակի մէջ բնաւորեալ մի բան կայ, որ բնութեամբ չէ, ինչպէս հետեւեալը՝ կատարեալ, թէ անկատար բոլոր մարդկանց յատուկ է, որ յանդիմանուելիս յանդիմանուողը սկզբում դժկամ է երեւում, թէպէտ ընտրողութեամբ ընդունում է լաւ խրատը:

Պատասխան. Այս մասին ասենք, թէպէտ ամէն մի իր [մասնաւոր] բնութեամբ է, բայց եւ ընդհանուր է, ինչպէս ագռաւի սեւութիւնը, սակայն՝ ոչ հակառակը, քանի որ կարող է լինել բնութեամբ, սակայն ոչ ընդհանուր, ինչպէս ճաղատութիւնը: Այսպէ՛ս իմացիր եւ հակառակութեան [պարագայում], քանի որ չնայած բոլորին է յատուկ դժգոհել յանդիմանութեան դէպքում, սակայն այն բնութեամբ չէ: Իսկ առաքեալի խօսքը՝ «Իւրաքանչիւր խրատ՝ Աստծուց լինի, թէ մարդուց՝ այդ պահին դժուարընկալ է» (հմմտ. Եբր. ԺԲ 11), բայց թէ ում է ուղղուած, այս զատորոշում է առակախօսը. «Խրատի՛ր իմաստունին, եւ կսիրի քեզ. [խրատի՛ր] անմիտին եւ կատի քեզ» (Առակ. Թ 7): Եւ մարգարէն երանի է տալիս [այն] մարդուն, որին Տէրն է խրատում (տե՛ս Սղմ. ՂԳ 12):

Այսպիսով դժգոհներն ընդհանուր չեն:

Իսկ ուղղակի առումով [այն է, որ] մոռանալը յատկանշական է մարդու բնութեան խառնուածքին, բայց խրատը յանդիմանութիւն է՝ ի ցոյց իրեն, որի պատճառով էլ թւում է, թէ առհասարակ դժգոհ է, մինչեւ զատորոշւում են իրարից, որովհետեւ դրանք զանազանողներն իմաստուն են:

Կայ նաեւ մի այլ [հանգամանք]. բնութեամբ հաճելի է մարդուն գովասանք ստանալը, երբ մեծարւում է տիրական պատուով. եւ սա համընդհանուր է: Այս պատճառով յանդիմանուողները սովորաբար դժգոհ են լինում:

Դարձեալ մէկ այլ [պարագայ]. ընդհանուր է եւ բնութեանն է [վերաբերում], քանզի առաջին մարդու բնութիւնը մեր մէջ է եւ ընդհանուր, ու մեր նախնիները յանդիմանուելիս դժգոհ երեւացին, ուստի մէկմէկու յանդիմանեցին:

Նաեւ յանցանք թաքցնելը [սկսած այն] տերեւի [պատմութիւնից] յատուկ է մեզ, իսկ յանդիմանութիւնը քօղարկուածի բացայայտումն է, որի պատճառով էլ դժգոհ են երեւում:

Հետեւաբար, պարզ է այս հարցի պատասխանը:

Հարց երկրորդ

Ովքեր Աստծոյ տնօրինութեամբ մեռեալներից յարութիւնն առնելու հաստատումն ընդունեցին, ինչո՞ւ այն

կեանքի մասին ծանօթութիւն չունէին, խնդրում ենք պատմել մեզ:

Պատասխան. Պէտք է տեսնել, թէ արդեօք ի՞նչ է մտքում չունենալը, որ մոռանալն է, այսինքն՝ անցեալը չյիշելը, ապագան չտեսնելը, ներկան չիմանալը: Եւ սրանք այսպէս են յարմարւում մեր երեք կեցութիւններին: Այս կեանքում երբեմն զուգորդւում են յիշելն ու ներքին եւ արտաքին [անցուդարձը] մոռանալը, ընդ որում, երեք ժամանակների գիտելիքները մեզ փոխանցուելով են տրւում: Մինչդեռ մահից յետոյ միայն ներքին յիշողութիւնն է, քանի որ նիւթական երեւոյթները վերացած են: Եւ հատուցումը՝ ապագան տեսնելն է: Եւ [այստեղ] ներկայից ոչինչ չկայ, որովհետեւ մոռացուած է յետոն: Իսկ հրեշտակների կեանքում հրաշափառ իմացումն է եւ միշտ չմոռանալը, ըստ որում՝ անցեալն ու ապագան կրում են ներկայի մէջ՝ ամբողջութեամբ եւ կատարելապէս, որովհետեւ ասում է՝ «Այլեւս չեն յիշուելու առաջին նեղութիւնները» (Ես. ԿԵ 17):

Ահա այսպէս են կարգաւորւում ընդհանրութիւնները: Իսկ նրանք, ովքեր Աստծուն տեսնելով՝ թերահաւատութեամբ ընկալեցին յարութիւնը, [այն պատճառով,] քանզի գերբնական էր, որովհետեւ՝ «հոգին, որ դուրս է գալիս, այլեւս չի վերադառնում» (Սղմ. ՀԷ 39), մինչեւ կրկին վերանորոգումը: Սա չորրորդը լինելով՝ բնութեամբ դէմ է [վերոնշեալ] երեք կացութիւններին՝ մտքում չունենալը, անընդհատ մոռանալը, չիմանալը եւ այն կեանքից ոչինչ չյիշելը:

Կայ նաեւ մի այլ [հանգամանք]. այս կեանքը երազ է համարւում հանդերձեալի համեմատ. ըստ Դաւթի. «Ինչպէս արթնացածին՝ երազը» (Սղմ. ՀԲ 20), ի հաստատումն որի, ոմանք այս կեանքը տրտմութեան սուգով են անցնում, որպէսզի [այնտեղ] ուրախութեան հասնեն: Եւ սա ոչ թէ կարճատեւ կեանքի [պատճառով], կամ, ինչպէս սովորութիւն է, հակառակ հատուցման, այլ [որովհետեւ] ոչինչ չեն կարող տանել իրենց հետ, բացի մի նշխարի չափ ստուերատիպ յիշատակի տեսիլքից:

Յիրաւի, ըստ այս օրինակի, ովքեր մշտնջենականը փոխարինեցին մի սնոտի երազով, մտքում ոչինչ չունեն, չնայած այստեղին հակառակ այնտեղ ինչ-որ յիշատակութիւն մնում է, ինչպէս ասուեց:

Ու նաեւ՝ Աստծոյ մարդասիրութեան խնամածութիւնն է, որ ամէն, ամէն ինչ տնօրինում է, թոյլ չի տալիս յիշել մեռեալներից յարութիւն առնելը, այլապէս եթէ ի սկզբանէ չարը եւ մարդասպանը, որ բազում եւ զանազան չարիքներ, մեռելային մարմնով անթիւ խարդախ ոճիրներ գործեց, կունենար այնտեղի այն կեանքի յարութեան յոյսը եւ կմոռանար գործերի հատուցումը, [նաեւ՝]՝ դժոխքի երկիւղը, արքայութեան սէրը եւ ամէն ինչ, որ հոգեւոր բարութիւնից է:

Ինչպէս որ պատմում են, ժամանակին հռչակաւոր Կոստանդնուպօլիս քաղաքում մոլորեալ յոյները՝ մոլորուած մի երիտասարդի կողմից, եկեղեցուց հանեցին «Երեքսրբեան»-ը: Էլ ո՞ւր մնաց հաւատի վարձքը, կամ ինչ

ամեհի սաստում է պէտք, եթէ մէկն անտեսում է Սուրբ Հոգու խօսքը Սուրբ գրքում՝ զատելով մեռեալներից յարութիւն առած մէկին՝ հաստատելով առակաւոր խօսքը, որ՝ «Եթէ չեն լսում Սուրբ գրքին, մի՞թէ պէտք է մէկը մեռեալներից յարութիւն առնի, որ հաւատան»:

Հարց երրորդ

[Սուրբ] գիրքը բազմաթիւ վկայութիւններ ունի, որ մեր նախահայրը՝ Ադամը, ազատուեց դժոխքից: Ըստ այդմ՝ «Նայեց նա երկնքի իր սրբութիւնից, լսեց կապուածների հեծեծանքը եւ արձակեց մահապարտների որդիներին» (հմմտ. Սղմ. ՀԸ 11):

Ու նաեւ՝ Անառակ [որդու] առակում, կորցրած դրամի եւ մոլորուած մի ոչխարի, աւազակների ձեռքն ընկածի [մասին առակներով] նոյնն են ուսուցանում հայրերը՝ լինել հոգով լեցուն: Իսկ նա, որ բոլորի կորստեան սկիզբը դարձաւ եւ բոլորի մեղքի պատճառը, փրկուեց Քրիստոսի շնորհիւ, մէկը կարող է հարցնել, թէ ինչո՞ւ նրա ծնունդները նրա յետ բանտից ազատուեցին՝ պատժապարտք լինելով. ասում է՝ «Մեղաւորները վերադառնալու են դժոխք» (Սղմ. Թ 18): Եւ դարձեալ՝ «Թերահաւատները նոյնպէս բնակութիւն են հաստատելու նրա մօտ» (Սղմ. Կէ 19):

Իսկ եթէ մէկը համեմատելով ասի, թէ մարմնի մէջ լինելով՝ ապաշխարութեամբ մաքրուել էին իրենց ներգործական մեղքերից, սակայն սա ոչ մի տեղ չի երեւում Սուրբ գրքում, խնդրում եմ հոգածութեամբ նայել խնդրի պարզաբանմանը, մե՛ր հարազատ:

Պատասխան. Նախ անհրաժեշտ է իմանալ, թէ ինչո՞ւ նախահօր յանցանքների պատճառով պատժապարտ դարձան նաեւ որդիները եւ արդեո՞ք մի օր ազատուելու են նրա յետ:

Եւ յետոյ կլինի հարցի պատասխանը:

Առաջինի վերաբերեալ ասենք, որ Արարչի պատկերով ինքնիշխան տէրութեամբ եւ անմեղութեամբ ստեղծուեց առաջին մարդը: Եւ մեծարուեց երկու զարդով՝ տրուած եւ խոստացուած պատուիրաններով: Իսկ դրանք զանց առնելով՝ ամէն ինչ ի չիք դարձրեց՝ ոչ միայն խոստացուածը, այլեւ՝ պարգեւ տրուածը, ըստ որում անմեղը մեղաւոր գտնուեց՝ ենթարկուելով մահուան ու ապականութեան: Ուստի ասաց՝ կմեռնես մահով, եւ ոչ թէ մէկ, այլ երկու մահ ակնարկելով, այսինքն՝ մարմնի մեռնելով եւ հոգու պատժուելով: Եւ յիրաւի, մէկը որ անում է չթոյլատրուածը, արդարացիօրէն կրում է այն, ինչ պարտաւոր է, որովհետեւ մեղքը կատարելն է, պատիժը՝ կրելը:

Եւ այս մեղսագործ որդին ծնուեց ապականացու եւ մահկանացու՝ առաջ գալով նմանից, ինչպէս աղբիւրի ակունքում ինչ որ խառնուի՝ կապականի նրանից դուրս եկող առուներն էլ. երբ ծառի արմատն է փչանում՝ չորանում են նաեւ ճիւղերը: Այս կերպ ամբողջ մարդկութիւնը կրեց Ադամի մեղքը՝ ծնունդը լինելով նրա ցանկութեան:

Եւ այդպէս մենք ընկանք սկզբնական մեղքի մէջ՝ հոգու անհնազանդութեան եւ մարմնի ցանկութեան պատճառով՝ անցնելով նոր ծնուածներին՝

նիւթապէս մարմնին, տեսակով՝ հոգուն: Եւ այսպէս նրա պատիժը փոխանցուեց մեռելային մահով ընդհանրապէս բոլորին, ինչպէս ասուեց:

Իսկ մարդասէր Աստուած տեսնելով իր պատկերը խունացած՝ կամեցաւ նորոգել այն: Նախ խոստացաւ հրեշտակների [միջոցով], աւետեց՝ մարգարէներով, դաստիարակեց օրէնքներով եւ ի լրումն սրանց՝ յետոյ [ինքը] երեւաց: Նոյնպէս, որ դատապարտեց, մեզանով տուեց մեր ազատութիւնը, որովհետեւ անապական մարմնով դրուեց գերեզման՝ վերացնելով նախնու ապականութիւնը: Եւ իջնելով դժոխք՝ վերացրեց նրա պատիժը: Եւ սա յայտնի է բազմաթիւ վկայութիւններով վերեւի հարցումներով:

Իսկ որ նախահօր ազատուելով, որդիներն էլ ազատուելու են, ակնյայտ է շատ բաներով: Նախ, ինչպէս վերն ասուեց, եթէ Ադամը, որ սկիզբն ու պատճառն էր մեղաւորների, ազատուեց, ուրեմն որդիները եւս, որ նրա յանցանքով են, ազատուելու են:

Երկրորդ՝ դժոխքը մեր բնութեան պատժի համար էր, ոչ թէ՝ առանձին գործերի, եւ որովհետեւ նշանակեց մի օր, երբ բոլորին դատելու է՝ ըստ Պօղոսի (տե՛ս Հռոմ. Բ 16): Արդ, Քրիստոս արդէն նախահօր պատիժը կրեց եւ վճարեց նրա բնութեան պարտքը:

Երրորդ՝ ա՛րդ եթէ սատանան, որ ամենայն չարեաց գիւտարարն է, դեռեւս չի [դատապարտուել] յաւիտենական տանջանքի, ըստ այդմ՝ «Մի՛ տանջիր մեզ ժամանակից առաջ» (Ղուկ. Ը 28), ապա ուրեմն [դժոխքում] չի տանջւում նաեւ մարդկային ցեղը:

Չորրորդ՝ ինչպէս Ադամով մեռան բոլորը՝ արդարները եւ մեղաւորները, այդպէս էլ Քրիստոսով բոլորը կենդանացան, այսինքն՝ ազատուեցին:

Հինգերորդ՝ մարգարէն ասում է՝ «Արձակելու ես մահապարտ որդիներին» (Սղմ. ՀԸ 11), այսինքն՝ մահու չափ մեղաւորներին:

Վեցերորդ՝ Եսային ասում է «Իւրաքանչիւր մարմին տեսնելու է մեր Աստծոյ փրկութիւնը» (Ես. Խ 5):

Եօթներորդ՝ Պետրոսն ասում է՝ «Դո՛ւք, որ կապանքներում էք, դուրս եկէ՛ք եւ որ խաւարի մէջ էք, յայտնուէ՛ք» (Ես. ԽԹ 9):

Ութերորդ՝ մարգարէն ասում է. «Գերեց գերութիւնը եւ աւար առաւ» (Սղմ. ԿԷ 19), իսկ Աւետարանն ընդհանրականն է ցոյց տալիս:

Իններորդ՝ սատանայի բռնութիւնն էր նրանց կապել, իսկ մեր Տէրը սատանային կապեց խաչափայտին, որն ինքը՝ դժոխքի դուռն էր, ուրեմն ազատուեցին այնտեղից:

Տասներորդ՝ մարգարէն ասում է. «Մեղաւորները վերադառնալու են դժոխք» (Սղմ. Թ 18), ուստի պարզ է, որ մի ժամանակ դուրս են եկել եւ նորից վերադառնալու են: Այսպէս է ասում նաեւ մեծ Եպիփանը:

Իսկ թէ ինչո՞ւ: Ասենք որ, արդարապէս, որովհետեւ մեր Տէրը երեւաց՝ ի փրկութիւն ընտրեալների՝ ըստ Ամբակումի. նախահայրը [փրկուեց] յաւիտեան, իսկ միւսներն ազատուեցին՝ ժամանակաւորապէս: Որովհետեւ չնայած Ադամի մեղքը սկզբնապէս առհասարակ բնութեան վրայ տարածուեց,

սակայն ոչ առաւել, քան այլոցն, այսինքն՝ նրա որդիներինը, քանի որ սկզբնաչարը եւ բոլոր մեղքերի պատճառը սատանան է, իսկ Ադամի [մեղքը] այնքան էր, որ առաջինը դարձաւ մեղաւոր նրա պատճառով: Ինչպէս այն, որ եթէ փայտի արմատը դրուի կրակի մէջ, նախ ինքը կայրուի, ապա ճիւղերը: Եւ չնայած [խրձի մէջ] բոլորը կախուած են մէկից, սակայն երբ մէկն առաջինն է անջատւում, միւսները բոլորն առաջինի նման թափւում են, չնայած առաջինը նրանցից մէկն էր: Այսպէս էլ սատանան է մեղադրելի որպէս մարդկային բնութեան չարի պատճառ եւ գիւտարար, եւ ոչ թէ Ադամը: Աւելին, Ադամի մեղքը նուազ է, քան ծնունդներինը՝ հետեւեալ օրինակներով. քանակապէս, օրինակով, որքանութեամբ, ըստ պարագայի եւ համեմատութեամբ:

Քանակապէս, որովհետեւ նրանը միայն գործով էր, յետնորդներինը՝ գործով եւ հասուն մեղքերով:

Օրինակով, որովհետեւ նրա համար մինչ այդ չկար օրինակ, որ [խուսափէր], իսկ սրանք տեսել էին նրա պատիժը:

Որքանութեամբ, որովհետեւ նրանը մէկն էր եւ մի անգամ, իսկ նրանցը՝ շատ եւ բազում անգամ:

Ըստ պարագայի, որովհետեւ նրանը ակամայ էր եւ տգիտութեամբ, ուստի՝ բարու եւ չարի անգիտութեամբ, իսկ նրանցը՝ կամաւոր էր եւ գիտակցաբար:

Համեմատութեամբ՝ ինչպէս սկզբնականն է [բաղդատելի] ներգործականին, այդպէս էլ Ադամի [մեղքը՝] նրա որդիների [մեղքին], ինչն ակնյայտ է գործերով եւ պատճառով: Հետեւաբար, արդար է, որ առաւել մեղք գործածները առաւել պատժուեն:

Եւ մի այլ հանգամանք եւս. ինչպէս ասուեց, մեղքը կրկին է. սկզբնական եւ ներգործական: Ուստի պատիժն էլ կրկին է. առաջինը նախնուց ստացածի համար, երկրորդը նշանակուած մի օրուայ համար՝ ըստ առաքեալի (տե՛ս Հռոմ. Բ 16): Ա՛րդ, ինչպէս ժառանգած պատժին հաղորդուեցին, այդպէս եւ ժամանած շնորհով ազատուեցին: Եւ արդարապէս յետոյ դարձեալ պատիժ կընդունեն՝ [իրենց] անձնիշխան կամքի ներգործական մեղքի [պատճառով]:

Մէկ այլը եւս. Աստծոյ ձեռքով առաջինը նա արարուեց, եւ նա միայնակ յանցանք գործեց, եւ նրան փրկութիւն խոստացուեց, որի համար Դաւիթ [մարգարէն] ասաց. «Յիշել ծառայի խօսքը ի յուսադրութիւն նրա» (Սղմ. ճԺԸ 49):

Իսկ միւսներինը՝ նրան հետեւելով է: Եւ բոլոր վերոյիշեալ առակները՝ անառակի, մոլորուածի, կորածի եւ այլն, այսպէս են հերթագայում՝ նրան, նրա համար, ինչպէս նրան: Առաջինը Ադամինն է, որին ճշմարտապէս է յարմարւում, երկրորդը նրան հետեւող մեր ընդհանուր բնութիւնն է, երրորդը իւրաքանչիւրի նմանողութեամբ դարձը:

Եւ դարձեալ՝ Ադամի մեղքն ինքնին ներգործական էր, սակայն ապաշխարեց, երբ դեռ մարմնում էր: Եւ եթէ այս գրուած չէ, [գրուած չէ] նաեւ այն, որ մէկից բացի իր ամբողջ կեանքում այլեւս մեղանչեց, եւ կրկին չմեղանչելը [արդէն] ապաշխարութիւն է առաջինի համար:

Եւ վկայում է Սիրաքը, թէ զղջացել է Ադամը՝ ասելով. «Նա հաստատուն

պահեց միայն աշխարհի նախաստեղծ հօրը եւ փրկեց նրան իր յանցանքներից» (Իմաստ Ժ 10):

Այլեւ՝ սրբերի պատմութիւնները եւ մեկնութիւնները նրա հոգու վերաբերեալ են, որ մեզ ուսուցանում են նմանատիպը: Ապա ուրեմն՝ ողորմութեամբ եւ արդարութեամբ յաւիտեան ազատուեց նախահայրը, իսկ մնացածն առժամանակ՝ ողորմութեամբ, յանուն նրա, ինչպէս ասուեց:

Հարց չորրորդ

Եթէ ներկայ ժամանակում հաւատարիմ է, որ ով էլ լինի յանցաւոր, եթէ զղջայ եւ ատի մեղքը, համաձայն մարգարէի՝ խոստովանութեամբ մաքրութիւն կստանայ եւ ապաշխարութեան վարձքը, ըստ այդմ՝ «Եօթանասուն անգամ եօթը լինի էլ՝ ներելի է» (Մտթ. ԺԸ 22), եւ՝ «Չեկայ կանչելու արդարներին, այլ՝ մեղաւորներին» (Ղուկ. Ե 32) եւ այլն, ապա ինչո՞ւ հանդերձեալում բազում անգամ զղջալու դէպքում էլ չեն ստանում թողութիւն՝ ըստ Գրքի: Եւ կամ՝ «Ահա ընդունելի ժամանակը» (Բ Կորնթ. Զ 2) եւ այլն:

Եթէ սրան մէկը [պատասխանի] եւ ասի, թէ Աստուած ողորմութեան կամքը այնժամ փոխում է անողորմութեան աթոռի, եւ այս փոփոխումը ցոյց է տալիս անեղ բնութիւնը, ապա [սա] հերձուածողութեան անդունդ է: Իսկ եթէ մէկն այս փոփոխութիւնը մեր մէջ նմանեցնի արեգակի օրինակին, որ չորս եղանակներ է ստեղծում, սակայն ինքը մնում է անփոփոխ, ապա ինչպէ՞ս [բացատրել], որ նա միշտ նոյնն է մնում, իսկ սա այստեղ ողորմում է զղջացողներին եւ ոչ՝ չզղջացողներին, իսկ այնտեղ՝ ո՛չ ողորմում է զղջացող մեղաւոր մարդկանց, ո՛չ էլ՝ անզեղջ շեղուած անմարմիններին:

Պատասխան. Որովհետեւ ինչպէս Աստծոյ զօրութիւնը երեւում է արարելիս եւ ողորմութիւնը՝ բարերարութիւն անելիս, այդպէս էլ արդարութիւնը՝ հատուցելիս, որպէսզի երբեք չասեն անկար, անգութ եւ անիրաւ է, որովհետեւ «Ողորմութեամբ եւ արդարութեամբ է հաստատուած նրա աթոռը» (Սղմ. ՁԸ 15):

Եւ սրանք, որ հակակայ են երեւում միմեանց, կամ հակառակ են այլոց, կամ երբեմն են հակառակ, ոչ թէ անփոփոխի փոփոխելն են ցոյց տալիս, այլ մեզ՝ փոփոխելիներիս նկատմամբ գութ եւ հատուցում, ըստ արժանւոյն, թէ՛ այստեղ, թէ՛ հանդերձեալ [կեանքում], ինչպէս այն, որ քարոզուեց Նինուէի կործանումը կամ կանխագուշակուեց Եզեկիայի մահը, սակայն սրանցից ոչ մէկն էլ տեղի չունեցաւ: Եւ Աստուած ոչ թէ փոխեց իր խորհուրդը, որ յաւիտենական է, այլ վճիռը, որ արել էր նրանց պատժին համապատասխան: Որովհետեւ երբ փոխուեցին իրենք, փոխուեց եւ նրանց սահմանուած պատիժը:

Այսպէս կտեսնեն ամենուրէք:

Միջօրէին արեգակի փոխուած լինելը չի նշանակում նրա այլափոփոխ լինելը, երբ արձակում է լոյս կամ ստուեր, որովհետեւ ինքը լոյս լինելով՝ երբեք չի փոփոխւում: Եւ երբ մտքով ես դատում, [հասկանում ես,] որ թէեւ իրար են յաջորդում գիշերը եւ ցերեկը, սակայն արեգակը առանց ընդհատումների է կազմում ցերեկը եւ գիշերը: Այսպէս էլ ողորմութեան եւ արդարութեան ան-

ընդհատութեամբ է բարիք պատճառելը կամ պատժելը նրա նախասահման ճանաչողութեան մէջ՝ նախքան էակների լինելը, ըստ առաքեալի (տե՛ս Եփես. Ա 4):

Մի այլ օրինակ եւս. լոյսն ու ջերմութիւնը նրա էութեան երկու անբաժանելի յատկութիւններն են, սակայն երբեմն մէկն է երեւում, երբեմն՝ երկուսը միասին եւ հակառակը: Այդպէս էլ Աստծոյ բոլոր գործերն են արդարութեամբ եւ ողորմութեամբ, ինչպէս ոմանք են ասում, սակայն երբեմն արդարութիւնը չի երեւում, եւ երեւում է ողորմութիւնը, ինչպէս ամբարշտին արդարացնելու մէջ, եւ Քրիստոսի առաջին գալստեամբ:

Երբեմն էլ ողորմութիւնը չի երեւում, եւ երեւում է արդարութիւնը, ինչպէս անկնունք մեռած մանուկներին պատժելը, եւ երկրորդ գալուստը:

Երբեմն էլ՝ երկուսն էլ ծածուկ են, ինչպէս իւրաքանչիւր արդարի եւ անմեղի նեղութեան ժամանակ:

Եւ երբեմն էլ՝ երեւում են երկուսն էլ, ինչպէս իւրաքանչիւր արդարի եւ մեղաւորի հատուցման ժամանակ, որովհետեւ փառաւորում է նրանց աւելի, քան արժանի են, եւ դատապարտում աւելի պակաս, քան արժանի են. եւ [հենց] այս է ողորմութիւնը: Իսկ իւրաքանչիւր հատուցումը, այսինքն՝ բարուն բարի, չարին՝ չար, սա արդարութեան գործն է: Եւ սրանք մեզանում փոփոխական են եւ անեղ բնութեամբ չեն, որովհետեւ այն, ինչ ժամանակի մէջ է, փոփոխական է, իսկ անեղը ժամանակի յետ չի փոփոխւում, ըստ այդմ՝ «Դու նոյնն ես եւ չես փոխւում»: Եւ սրանով յայտնի է դառնում, թէ Աստուած միշտ անփոփոխ է, իսկ ժամանակը միշտ փոփոխական է, մինչդեռ մենք երբեմն փոփոխուող, երբեմն անփոփոխ ենք, որովհետեւ անփոփոխի նկատմամբ անփոփոխ են լինում նախօրինակի [համաձայն], իսկ ժամանակաւորի մէջ՝ փոփոխական: Բայց, երբ ժամանակը փոխուի յաւիտեանի՝ մենք էլ կդառնանք անփոփոխ եւ յաւիտենական:

Իսկ «ընդունելի ժամանակն» ըստ վարդապետների խօսքի՝ երեքն է: Նախ աղօթական ժամը՝ ոչ միայն երեկոյեան, այլեւ վաղ առաւօտ, կէսօրին, կամ եօթն անգամ, ըստ մարգարէի (տե՛ս Սղմ. ՃԺԸ 164): Իսկ ընդհանրապէս, որքան կարողանաս միտքդ ուղղել [Աստծուն] եւ խօսես նրա յետ, հաճելի է Աստծուն, մինչդեռ դատարկ անցկացրած ժամերդ հաճելի չեն նրան:

Երկրորդ՝ ընդունելի է ապաշխարութեան ժամանակը, իսկ որքան մարդը մեղքի մէջ է, հաճելի չէ Աստծուն:

Երրորդ՝ Աստծոյ համար ընդունելի ժամանակը մինչեւ մահն է, ըստ որում՝ բազմել է շնորհների աթոռին՝ ըստ առաքեալի, իսկ դրանից յետոյ՝ ոչ, որովհետեւ աթոռը փոխուելու է դատաստանի աթոռի՝ ըստ Աւետարանի:

Առաջինի վերաբերեալ մարգարէն ասում է. «Ես աղօթում էի ընդունելի ժամանակում» (Սղմ. ԿԸ 14): Երկրորդի վերաբերեալ Եսային ասում է. «Քեզ լսեցի ընդունելի ժամանակում» (Ես. ԽԹ 8): Երրորդի վերաբերեալ առաքեալն ասում է. «Ահա ընդունելի ժամանակը, ահա փրկութեան օրը» (Բ Կորնթ. Զ 2): Եւ Աստծոյ ողորմութիւնը ոչ թէ հետեւում է ժամանակին, այլ՝ կամքի քաղցրու-

թեանը: Իսկ մենք հետեւելով ժամանակին՝ գտնում ենք քաղցր կամքի ողորմութիւնը: Եւ ժամանակի միջամտութիւնը կարգաւորում է բոլոր գործերը:

Ակնյայտ է աշխարհակազմութեան [օրինակով], որ ամէն ինչ իր կարգով եղաւ: Եւ կայ լինելութեան ժամանակ եւ կայ տրոհման ժամանակ. նոյն ժամին հնարաւոր չէ ե՛ւ սերմանել, ե՛ւ հնձել: Այս կերպ, կարգաւորուած՝ ամէն տեղ կարող ես տեսնել ինձ՝ ժամանակի ընթացքին ներդաշնակ, որի պատճառով պատուիրեց. «Կգայ գիշերը, երբ չէք կարող գործել» (Յովհ. Թ 4):

Եւ նրանք, ովքեր այս կեանքում կզղջան՝ ատելով մեղքը եւ կխոստովանեն, կառնեն ապաշխարութեան վարձքը, որ մեղքերի թողութիւնն է: Սա աներկբայելի է: Նախ՝ մեր կազմուածքն է այդպիսին՝ ըստ Նիւսացու խօսքի: Ապա ըստ մարգարէի՝ «Ասա՛ քո մեղքը, որպէսզի արդարանաս» (Ես. ԽԳ 26):

Եւ ըստ առաքեալի՝ «Խոստովանե՛ք միմեանց ձեր մեղքերը» (Յակ. Ե 16):

Եւ Տէրը՝ «Ապաշխարե՛ք» (Մտթ. Դ 17) եւ «Եթէ թողնէք, կթողնուի ձեզ» (Մտթ. Զ 14):

Իսկ յետմահու չի լինելու թողութիւն, ինչպէս եւ դեւերին:

Եւ այո՛, որովհետեւ նրանց անկումը հաւասար է մահուան: Սակայն տարբերւում են, որովհետեւ դեւերը բոլորովին չեն զղջում, եւ չեն էլ կարող, ուստի թողութիւն չեն ստանում, իսկ մեղաւորը ունի զղջման հնարաւորութիւն, սակայն թողութիւն չի ստանում, նախ՝ որովհետեւ ամբողջութեամբ մարդ չէ, այլ՝ մասամբ: Երկրորդ՝ զղջման գործեր չունի: Երրորդ՝ կարիք ունի ապաշխարութեան նիւթի: Չորրորդ՝ ակամայ է ցաւ կրելը, ինչպէս աւազակների հատուցման պարագան է: Հինգերորդ՝ տեսակով այլ տիպի մարդ է: Վեցերորդ՝ անցել է այն ժամանակը, երբ պէտք է ապաշխարէր:

Եւ շարադրանքից երեւում է, որ զղջման համար չորս բան է պահանջւում, այսինքն՝ որպիսութիւն, ժամանակ, ինչից եւ յանուն ինչի:

Որպիսութիւն՝ է պահանջւում, որովհետեւ փոխուելու է կեանքով: Ժամանակ, որովհետեւ [զղջումն] առաջ է, քան հատուցումը: Ինչից՝ որովհետեւ յօժար կամք պէտք է լինի: Յանուն ինչի, այսինքն՝ թողութեան ակնկալիքով:

Իսկ դժոխայինները, թէեւ զղջում են կամ խոստովանում, սրանցից դուրս է, ուստի թողութիւն չեն ստանում. ըստ մարգարէի՝ «Ոչ մէկը, որ դժոխքում է, չի խոստովանելու քեզ» (Սղմ. Զ 6) եւ այլն:

Հարց հինգերորդ

Ի՞նչ նկատի ունի առաքեալը Կողոսացիներին յղած թղթում՝ ասելով. «Քրիստոսի չարչարանքների պակասութիւնը ես կրում եմ իմ մարմնում»[735] (Կողոս. Ա 24), մինչդեռ Քրիստոս իր չարչարանքների մասին ասաց, թէ՝ «Այն ամէնը, որ իմն էր, կատարուեց» (Յովհ. ԺԹ 30): Այդ դէպքում, ինչո՞ւ է առաքեալն ասում՝ «չարչարանքների պակասութիւն»: Կամ եթէ ասում է «չարչարանքների պակասութիւն», այն չի կարող ասուել Քրիստոսի պակասութիւն, որովհետեւ «Նրա մարմինն ապականութիւն չտեսաւ» (Գործք Բ 31),- ասում է Գիրքը:

Ինչպէ՞ս պէտք է հասկանալ, խնդրում եմ պարզաբանի՛ր:

Պատասխան. Սրա վերաբերեալ տարբեր են հայրերի տեսութիւնները: Ոմանք ասում են պակասութիւնը քաղցն է, ծարաւը, երկիւղը եւ այլն, որոնք բնական պակասութիւններ են, որոնք Քրիստոս կրեց, որովհետեւ ոչ միայն առաւ բնութիւնը, այլեւ դրա շուրջը գտնուածը, որպէսզի ճանաչուի առաքինութեան կատարելութիւնը եւ ճշմարիտ մարդ լինելը: Եւ Քրիստոս բոլոր պակասութիւնները չկրեց, ինչպէս՝ մարմնի հիւանդութիւն կամ ապականութիւն, կամ հոգու մեղք եւ տգիտութիւն: Եւ ոմանք, որոնցից էր մեր սրբազան առաջնորդը, «պակասութիւն» ասաց, որ յետոյ կրեցին նրա անդամները, այսինքն՝ անդամահատումը, հրով այրուելը եւ բազմաթիւ այլ տանջանքներ, որոնց թիւը պակաս էր Քրիստոսի մէջ, սակայն աւելացան իր անդամների մէջ: Ինչպէս եւ ասում է՝ «Մեր մէջ աւելացան Քրիստոսի տանջանքները՝ մխիթարութեան յետ միասին» (հմմտ. Բ Կորնթ. Ա 5):

Եւ դարձեալ Քրիստոսի մարմինը խորհրդաւորապէս եկեղեցին է, եւ պէտք է կիսեն նրա չարչարանքները՝ հետեւելով նրան:

Այլ չարչարանքները կրողների [մասին] առաքեալն ասաց՝ «Քրիստոսի մարմնի չարչարանքների պակասութիւնը ես կրում եմ իմ մարմնում՝ ի լրումն անդամների Քրիստոսի գլխի» (Կողոս. Ա 24):

Տեղին յարմար իմանալու է նաեւ այս. առաջին սուրբ հայրերը աւելի պակաս չարչարանքներն էին կրում, որովհետեւ չէին կարող փրկուել: Իսկ Քրիստոս ըստ մարմնի լինելով նրանց որդին, հայրերի չարչարանքի պակասութիւնն իր մարմնով լրացրեց: Իսկ նրանց չարչարանքները հատուցելու մասին ասաց. «Ամէն ինչ կատարուեց», այսինքն՝ հատուցուեց: Ուստի Քրիստոսի չարչարանքը ասւում է «պակասութիւն»՝ հայրերի պատճառով, իսկ «կատարուածն»՝ իր պատճառով:

Դարձեալ ասեմ, թէ այս «պակասութիւն» բառը նոյնն է, որ ասւում է «չարչարանք», որովհետեւ երբ մէկը կրում է այս կամ այն չարչարանքը, նրանից պակասում է այս կամ այն բանը, այսինքն՝ առողջութիւն, կեանք եւ այլն: Եւ ինչպէս առաքեալը մի տեղ ասաց. «Քրիստոսի չարչարանքները կրում եմ իմ մարմնում», այսպէս էլ այստեղ «պակասութիւն» է ասում, որը նոյն չարչարանքի փոխարէն է:

Իսկ մեծն Ներսէսն ասում է՝ «պակասութիւնն» այն է, որ Քրիստոսի չարչարանքներ կրելը թուով եւ տեսակով պակաս էր, քան Պօղոս առաքեալինը, այսինքն՝ խաչով, գամերով եւ այլն, որովհետեւ նա իր քարոզութեամբ լիալրեց եկեղեցու մարմինը: Եւ ինչպէս Քրիստոս իր չարչարանքով փրկեց եկեղեցին եւ հարսնացրեց [նրան], այդպէս էլ առաքեալը քարոզութեամբ, իբրեւ սուրբ մի կոյս [նրան] կանգնեցրեց Քրիստոս փեսային դէմ յանդիման:

Իսկ վարդապետների տարբեր կարծիքները հակառակ չեն միմեանց, այլ

ինչպէս օրինակ մէկի համար պատուա-կան քար է, մէկ ուրիշի՝ բնութիւն, կէսի համար՝ ներգործութիւն, եւ ոմանք էլ նոյն քարի որակների գեղեցկութիւնների համար են պատմում: Այսպէս էլ Սուրբ գրքի վերաբերեալ կարծիքներն են [տարբեր], ոմանք՝ այսպէս, ոմանք էլ այնպէս՝ հետեւելով թերեւս ոչ թէ սեփական կարծիքին, այլ ուղիղ իմաստի հաւանական լինելուն:

Հարց վեցերորդ

Այսպէս ենք սովորել մեր սրբազան վեհից[736]՝ ըստ սրբերի աւանդութեան, թէ՝ իւրաքանչիւր իրին բնութեամբ տրուած պարգեւը անբաժանելի է նրանից: Եւ այս յայտնի է դեւերից, որ չկորցրեցին անմահութիւնը, անձնիշխանութիւնը եւ այլն: Իսկ այն, ինչ շնորհով է ստացել, կարող է կորցնել, ինչպէս Ադամը՝ եռակի շնորհը, կամ՝ ջրհեղեղի ժամանակ՝ «Իմ հոգին չի մնալու դրանց վրայ՝ դրանց մարմին լինելու պատճառով» (Ծննդ. Զ 3): Այդ դէպքում, ինչպէ՞ս է, որ աւազանի շնորհը՝ ո՛չ ուրացութեամբ եւ ո՛չ ուրիշ կերպ չի կորչում: Եւ սա յայտնի է ուրացողներից, որոնց դարձի գալով՝ նորից չենք մկրտում[737]: Եւ եթէ հաղորդում է անարժանութեամբ, հաղորդում է ի դատաստան իր անձի: Այս կերպ եւ չեն կարող քահանայութիւնը վերցնել անարժանից[738]:

Ինչպէ՞ս հասկանալ:

Պատասխան. Իւրաքանչիւր իրի բնոյթը նրա գոյացական [յատկանիշն է], իսկ շնորհը՝ պատահական է՝ իբրեւ զարդ: Ուստի գոյացականները չեն վերանում, ինչպէս դեւերի անմահութիւնը, մարդու բանական լինելը: Սակայն կորչում են շնորհները, ինչպէս Ադամի համար ասուած եռակի [շնորհը], մտքի պայծառութիւնը եւ դեւերի երանելի լինելը:

Դարձեալ գոյացականները շաղկապուած չեն, մինչդեռ շնորհականներն անմեղութեամբ են [կապակցուած]: Յիրաւի, շաղկապի վերանալով, վերանում է նաեւ կապակցութիւնը: Սա բնականաբար: Իսկ այս հարցին պատասխանելու համար՝ [հարցնենք.] ինչո՞ւ նոր շնորհի պարագայում, ինչպէս աւազանի եւ կարգի, չեն վերանում [շնորհները] շաղկապի կորստով, մինչդեռ հների մօտ՝ վերացաւ Ադամինը եւ ուրիշներինը, ինչպէս վերն ասացինք:

Նախ ասենք, որ բնութեամբ տրուած շնորհը, ինչ էլ որ լինի, չի կորչում նրանից, թէպէտ երբեմն կարող է մեղքի պատճառով քօղարկուել: Որովհետեւ ինչպէս պատկերի խօսքը, այնպէս էլ շնորհի խօսքը եռակի է, եւ սրանք մեղքերով հաւասարապէս եղծւում են, ու այդպէս էլ մաքրուելով՝ ի յայտ են գալիս, ում մօտ էլ որ լինեն: Որովհետեւ, եթէ կորել, այսինքն՝ վերացել է Ադամի ազգից, ինչպէ՞ս է երեւում նրա որդիների մէջ, կամ ինչպէ՞ս ջրհեղեղից յետոյ երեւաց վերացածը: Ուստի ակնյայտ է, որ հին շնորհը վերածեւուել է նորում:

Ասենք նաեւ, որ շնորհը, ում մօտ էլ որ լինի, վերանում է մեղքի պատճառով՝ ոչ թէ ըստ ունակութեան, այլ ըստ գործի կամ նշանակութեան: Ինչպէս օրինակ, հայելու ժանգը ոչ թէ վերացնում է նրա

ընդունակութիւնը, այլ տեսանելիութիւնը, իսկ սրբելուց յետոյ նորից ցոյց է տալիս նոյն ծածկուածը: Այդպէս էլ մկրտուածների եւ քահանաների յանցանքի ժանգը վերացնում է գործը կամ շնորհների բովանդակութիւնը, սակայն զղջմամբ սրբուելուց յետոյ ինչպէ՞ս է վերականգնւում նրա մէջ: Սրան նման նաեւ մեր նախնին՝ Ադամը: Ինչպէս տերեւաթափ եղած ծառը չի կորցնում ունակութիւնը, այլ նոյն ունակութեամբ վերստին պտղաբերում է, այսպէս եւ Ադամն իր զղջմամբ տեսաւ իրեն, այսինքն՝ ցոյց տուեց իր մէջ կորած շնորհը: Ուստի ինչպէս վերացնում է մեղքի պատճառով, այդպէս էլ տալիս է զղջալու միջոցով:

Հարցի խրթին լինելը բերում է անուանումների անորոշութիւն, որովհետեւ [երբեմն] շնորհ է կոչւում իջած պարգեւը, ինչպէս մարգարէութիւնը: Շնորհ է կոչւում նաեւ նրա գործը, ինչպէս մարգարէանալը: Եւ կորցնելով շնորհ գործելու ընդունակութիւնը՝ վերանում է իջած շնորհը:

Ասենք նաեւ, որ երկու [տեսակ] է շնորհը. հասարակ եւ յատուկ: Հասարակ շնորհ է, երբ անձնիշխան կամքի թելադրանքով [մարդն] իրեն պատրաստում է փրկութեան՝ շնորհի օգնութեամբ: Եւ սա անբաժանելի է կամքի ընտրութիւնից, որի պատճառով էլ ասաց՝ «Իմ հոգին չի մնալու դրանց վրայ» (Ծննդ. Զ 3): Իսկ յատուկ շնորհը Աստծոյ ընտրութեամբ է, որ փառք է նուիրում տարբեր ներգործութեամբ: Իսկ սա արդէն անքակտելի է Տուողի կողմից տրուած անզեղջ խոստումից, ինչպիսին է մեզ տրուած աւազանի շնորհը:

Դարձեալ. շնորհները, որ տրուեցին Ադամին, փոփոխական էին ինչպէս ինքը, որովհետեւ կարող էր մեղքով կորցնել եւ կարող էր անմեղութեամբ պահել, ինչպիսին անմահութիւնն էր եւ միւս [շնորհները]: Իսկ նորում Քրիստոսից տրուած շնորհը փոփոխական չէ, որովհետեւ նորից վերանորոգուելու է եւ անապականութեան շնորհ է:

Բացի այդ, հինը ինչ եւ ինչպիսին էլ, որ կար փոփոխական, նորի օրինակն էր, որպիսին քահանայութիւնն էր եւ մնացեալը: Իսկ նորում՝ շնորհը հաստատուն է եւ անփոփոխ՝ ճշմարիտ Քահանայապետից՝ անփոխանցելիօրէն պարգեւուած:

Սա էլ ասենք: Նոր խորհրդում շնորհների մի մասը անբաժանելի է [կրողից], որովհետեւ իբրեւ կնիք դրուած է հոգու վրայ՝ նրա յետ մնալով անփոփոխ, ինչպիսին դրոշմի կնիքի եւ կարգի շնորհներն են, իսկ մնացեալ [շնորհները] կնիք չունեն, այլ զարդարում են մնացած պակասութիւնները, ուստի եւ փոփոխական են:

Եւ կան Հոգու պարգեւներից մասնաւոր շնորհներ, ինչպիսին մտքի իմաստութիւնն է եւ այլք, որոնց սկիզբը մկրտութեան նկատմամբ եղած հաւատն է, իսկ աւարտը՝ գործին է նայում: Եւ սրանք փոփոխական են՝ ըստ շնորհների արժեւորելու կամ պակասեցնելու: Իսկ ովքեր կորցնում են հաւատի կամ

մկրտութեան շնորհի մէկ քանքարը[739], ոչ թէ խորհրդական կնիքն են [կորցնում], այլ արժանանում են իրական վարձքին: Իսկ կնիքի յարամնայութիւնը ոմանց համար [դառնում է] գերագոյն պատիւ, ոմանց համար էլ՝ խստագոյն պատիժ, ըստ առակի պատմած բազում գանակոծումների (տե՛ս Ղուկ. ԺԲ 47-48):

Հարց եօթներորդ

Գրքում ասւում է, որ վախճանին բոլորն են ծնրադրելու Յիսուս Քրիստոսի անունով, եւ բոլոր լեզուները խոստովանելու են նրան Աստուած (Փիլիպ. Բ 10):

Ա՛րդ, եթէ [միայն] վախճանին հրաշքների պատճառով հաւատան, վարձատրուելո՞ւ են, թէ ոչ: Եթէ մէկն ասի՝ վարձատրուելու են, ապա ինչո՞ւ հարկադրաբար հաւատացողները չվարձատրուեցին, ինչպէս հալածուեցին դեւերը, Սկեւեոսի որդիները (տե՛ս Գործք ԺԹ 14-16), Սիմոն կախարդը (տե՛ս Գործք Ը 9-24) եւ սրանց նման ուրիշներ: Իսկ եթէ չեն վարձատրուելու, ապա ինչո՞ւ նրանց անհնազանդութեան պատճառով անհնազանդ է կոչւում եւ ինքը՝ հօր որդին (տե՛ս Առակ ԺԳ 1): Ի՞նչ օգուտ է նրանց հաւատալը:

Փափագում եմ իմանալ [պատասխանը]:

Պատասխան. Յայտնի է, որ դեւերը իրական հաւատ չունեն, եւ սա յայտնի է բազմաթիւ [բաներից]: Նախ վերին գաւառում, որտեղից դեւերն էին, հաւատ չկայ, այլ՝ դէմ յանդիման տեսնելն է: Իսկ եթէ հաւատ լինէր, ապա միամտաբար կարելի էր կարծել, թէ նրանց անկումը եղաւ հաւատի պատճառով, որը սուտ է:

Երկրորդ՝ դեւերի անկումը նրանց մահն էր, իսկ յետմահու հաւատ չկայ, ուրեմն դեւերն էլ չունեն:

Երրորդ՝ հաւատը մտքի լոյսն է՝ հեղուած Աստծուց՝ ճանաչելու հոգեւոր բարին, իսկ դեւերը ոչ մտքի լոյս ունեն, ոչ էլ՝ շնորհների հեղում, որի պատճառով էլ չեն ճանաչում հոգեւոր բարին:

Չորրորդ՝ հաւատը աստուածային առաքինութիւն է, իսկ դեւերը, քանի որ դաժանացած են չարից, չունեն զղջում, որը բարոյական [բնոյթ] ունի, հետեւաբար չունեն նաեւ հաւատ, որ աւելի բարձր է եւ բարի կամքի խորհրդածութիւնն է առ Աստուած:

Հինգերորդ՝ հաւատով են տեսնում Աստծուն եւ երանելի դառնում, ըստ այդմ՝ «Երանի, որ հաւատում են» (Մտթ. Ե 8), իսկ դեւերը չեն տեսնում եւ թշուառական են:

Վեցերորդ՝ հաւատով փրկւում են, ըստ այդմ՝«Քո հաւատը քեզ փրկեց» (Ղուկ. Է 50), այլ արդ՝ դեւերին փրկութիւն չկայ:

Եօթներորդ՝ հաւատով արդարանում են, ըստ այդմ՝ «Հաւատաց Աբրահամն Աստծուն եւ նրան արդարութիւն համարուեց» (Հռոմ. Դ 9), իսկ դեւը չի կարող արդարանալ:

Ութերորդ՝ հաւատով կատարւում է մարդու կամքը, ըստ այդմ՝ «Մեծ է քո հաւատքը, թող լինի, ինչպէս կամենում ես» (Մտթ. ԺԵ 28): Իսկ դեւի ամբարշտացած կամքը անկատար է մնում:

Իններորդ՝ հաւատով են հնազանդւում Աստծոյ օրէնքներին, իսկ դեւը

հակառակ է օրէնքներին եւ Աստծուն. թէպէտ գիտէ իր չար լինելը, սակայն իմանալով՝ մեղանչում է:

Տասներորդ՝ հաւատը հաւատալու աստիճանն է, որին սակայն դեւը չի հաւատում: Ուրեմն ասածներից պարզ է, որ դեւը վարձատրուող հաւատ չունի, այլ ունի մանրակրկիտ իմացութիւն, որի պատճառով սարսափում են տանջանքից առաջ:

Եւ նրանց իմացութիւնը խորաթափանց է, որովհետեւ, նախ՝ բնութեամբ մաքուր են: Երկրորդ՝ հմուտ են ժամանակներին, որով իմանում են ներկան, ապառնին եւ նախընթաց են գործերին, ուստի աղաչում էին.՝ «Գիտենք քեզ»՝ [որը], ոչ թէ հաւատի գիտութեամբ էր, այլ տանջանքներին քաջատեղեակ լինելով՝ սարսափած ասում էին՝ «Մի՛ տանջիր մեզ» (Մրկ. Ա 24): Եւ ոչ միայն այս, այլեւ կոչման զօրութեամբ Սկեւեոսի որդիներով հալածում էին նրանց (տե՛ս Գործք ԺԹ 14-16):

Իսկ հաւատը ուղղակի է եւ վարձատրելի մարդկային ազգի համար՝ այս կեանքի ընթացքում եւ դրսեւորւում է չորս կերպ:

Նախ, ըստ փիլիսոփաների՝ ընկալումների բնական առարկութեամբ, որ կոչւում է գիտութիւն:

Երկրորդ՝ Սուրբ Գրքի վկայութիւններով եւ խորհուրդների քարոզութեամբ:

Երրորդ՝ աչքի տեսած գործերով, որ պարզագոյն հաւատ է:

Չորրորդ՝ շնորհների հեղմամբ, ըստ այդմ՝ «Մարմինն ու արիւնը չբացայայտեցին, այլ՝ իմ Հայրը» (Մտթ. ԺԶ 17), եւ սա իրական հաւատն է:

Եւ նրանք մէկը միւսից գերագոյն են եւ վարձատրելի, որովհետեւ առաջինն անկատար է, միջին երկուսը՝ կատարեալ, վերջինը՝ գերակայ: Արդ, ինչպէս բոլոր ժամանակներում սրանցով են գալիս ուղիղ հաւատի, եւ վարձատրելի են, այդպէս էլ վերջին ժամանակներում՝ Նեռից յետոյ [հաւատի են գալու]՝ ոչ միայն հրաշքներով պարտադրուած, այլեւ իջած երկու սուրբ վկաների քարոզելու պատճառով, որոնք քարոզելու են հազար երկու հարիւր վաթսունվեց օր (Յայտն. ԺԱ 3): Սրանք հայրերի սիրտը կդարձնեն դէպի որդիներն՝ ըստ Մաղաքիայի (տե՛ս Մաղ. Դ 5), այսինքն կուսուցանեն Փրկչի հաւատը, որ ունէին հայրերը, ինչը վարձատրելի եւ չափազանց քաջարի է, եւ այսպէս թէ այնպէս՝ Քրիստոս է քարոզուելու: Եւ շատերը, որ արեւապաշտ էին՝ լսելով աստուածային խօսքը եւ տեսնելով հրաշքները, դարձի կգան, որովհետեւ մարգարէն ասում է՝ «Հրաշքներով էր կատարում իմ ողջ կամքը՝ նրանց մէջ», ինչը մարդկութեան փրկութիւնն է:

Եւ ինքը՝ բոլորի Տէրը, իբրեւ քարոզութեան վկայ, գործեր էր կատարում, որովհետեւ մարդու սովորութիւնն է ականջի լսելուց առաւել վստահել աչքի տեսածին, քանզի եզրակացութիւնը մեծ է քան առաջադրուածը, եւ փրկութիւնը ոչ թէ երկմտութեամբ է, այլ հաստատութեամբ: Իսկ Սիմոնի եւ միւսների՝ փորձով եւ թերութեամբ էր հաւատը:

Եւ դարձեալ՝ [աշխարհի] վախճանին կխոստովանեն ե՛ւ ողջերը, ե՛ւ

մեռածները, որ կոչւում են սանդարամետք: Ա՛րդ, ողջերի ծնրադրելը վարձատրուելի է, իսկ մեռեալներինը՝ ոչ, ինչպէս որ այժմ էլ մեռածների զղջումն ու խոստովանութիւնն ամենեւին վարձ չունի եւ ակամայ է:

Հարց ութերորդ

Ի՞նչ պատճառով է, որ բոլոր անդրանիկ ծնունդները հինգ օր աւել են մնում արգանդում:

Պատասխան. Ասում են պատճառը սնուցողի ընտելացած չլինելն է, ուստի յապաղում է՝ աւելի պահելով: Միւսներն էլ [ասում են], թէ պատճառը արգանդի խոռոչում է բնաւորուած, որ հինգ օրերից իւրաքանչիւրում երկունքով բացւում, ապա թոյլ է տալիս ծնունդը:

Նոյնն է նաեւ առաջին ամուսնացողների պարագայով [բացատրելը]: Ոմանց կարծիքով նախնի մարդու կազմութեան օրերը պակաս են եղել, որի տիպն իր մէջ նկարելով՝ այժմ անդրանիկ ծնունդները յապաղելով են աշխարհ գալիս:

Տարուայ պտոյտն էլ իր մէջ այս [հինգ] օրերի խորհուրդը պահում է:

Իսկ լիակատար տեսութիւնը տրուած է վերը՝ տասնվեցերորդ գլխում քսանչորսերորդ համարում, որտեղ [կտեսնես] ինչո՞ւ են իննամսեայ ծնւում, կամ ինչո՞ւ քառասնօրեայ են շնչաւորւում եւ նրանց ինչպիսին լինելը:

Հարց իններորդ

Ըստ իմաստասէրի արարիչը, բնութիւնը, արուեստը ոչինչ անտեղի ու վայրիվերոյ չեն ստեղծում, իսկ բոլոր զգայական կենդանիների էգերը ստինք ունեն, որ կերակրեն ձագին, սակայն արուներին արարչի կողմից տրուած նոյն անդամը ի՞նչու է ստեղծուել, հարկ է իմանալ:

Պատասխան. Բարի համարուեց՝ Արարչից, որովհետեւ եթէ բնութիւնն առանց երեւակայութեան է [գործում], արհեստը՝ երեւակայութեամբ հանդերձ, արարչական կամքը, սակայն, տալիս է նրանց բնական եւ բանական կարողութիւն, եւ ոչինչ աննպատակ չի կազմում գոյացական կամ պատահական տեսակ՝ մերթ պահանջելով պարզ նիւթ, մերթ էլ՝ տեսակաւոր:

Իսկ ստինքը բնութեան գործիք է, յատկապէս կերակրելու այն ծնունդներին, որոնց օրինակով սերմանեց երկիրը: Սրանց մէջ գոյացած արեան հիւթը երակների խողովակներում գունաթափւում եւ որակապէս փոխակերպւում է կաթի: Եւ չնայած արուինը սրան չի ծառայում, սակայն անտեղի չի ստեղծուել, այլ՝ ի լրումն տասներկու [այն] անդամների, [որոնք] ներս են թողնում եւ դուրս բերում պակասն ու աւելորդը՝ անվնաս պահելով կենդանուն: Եւ ինչպէս միւսները, սա էլ սրտի ծխատեսակ ջերմութիւնը ծակոտիների միջոցով դուրս է քաշում՝ երկու կողմերից, ինչպէս բժիշկներն են ասում[740]:

Բացի այդ, ըստ աստուածային տարրերի՝ էգին արարեց արուից՝ ամէն ինչով նրան նման եւ օգնական: Եթէ արուն ստինք չունենար, ապա նրանից ստեղծուած կինն էլ չէր ունենայ: Եւ անդամները զանազանուելով տեղադրութեամբ՝ զանազանում են եւ նման

չեն գոյաւորուած տեսակներով, որի պատճառով այն, ինչ մէկի մօտ տեսանելի է եւ գործածական, միւսի մօտ՝ բնութիւնից ծածուկ է եւ ներազդող: Իսկ կենդանիների ստինքների քանակը համապատասխանում է տուեալ տեսակի ծնունդների քանակին:

Հարց տասներորդ

Սրանց առնչուող. ինչո՞ւ է աչքից թափուող արտասուքն աղի: Ոչ միայն «ինչո՞ւ»-ին, այլեւ խնդրում եմ [պատասխանել] «Ինչպէ՞ս է աչքի երակներում աղի դառնում» [հարցին]:

Հարց տասնմէկերորդ

Եւ թէ՝ ինչո՞ւ է ծիծաղի արտասուքը քաղցր, իսկ տխրութեանը՝ աղի:

Պատասխան. Արտասուքի բնոյթի մասին սովորեցնում են «Գիրք կազմութեան»-ը եւ բժիշկները, համաձայն կերակուրների մէջ բնաւորուած երեք բաժանումների. որովայնում ստամոքսը եւ լեարդը, գլխում ուղեղը՝ առանձնացնելով տարրերը՝ լաւի եւ վատի, որոշ մասը պահում են, միւս մասը՝ դուրս մղում: Այսպէս՝ աչքի երակները հրատեսակ [նիւթը], լսելիքները՝ օդատեսակը եւ այդ կերպ՝ միւսները: Իսկ սրանց նրբագոյն մասը սնում է ուղեղը՝ չվնասելով զգայարանները: Եւ սրանց աւելորդ մասը մղւում է դուրս. ծխատեսակը՝ դէպի մազեր, դառնութիւնը՝ ականջներ, թթուայինը՝ ռունգեր, աղին՝ աչքի արցունքների մէջ:

Նախ, որպէսզի մաքրուեն զգայարանները, ապա մուտքերը պահպանեն վնասակար զեռուններից: Իսկ արտասուքը աղի է եւ հեղուկ, որպէսզի մի կողմից թուլացնի հրի ջերմութիւնը, միւս կողմից՝ թոյլ չտայ նեխել աչքի թաղանթը, որ շրջապատում է լոյսի երակները:

Իսկ արտասուքը հոսում է ներքին կամ արտաքին պատճառով, ինչպէս ծխի, փոշու եւ այլնի, որոնք խաթարելով տեսողութիւնը՝ ներս ընկնելով մրմռացնում են աչքը: Իսկ բիբը, որ պահապան է կոչւում, առաջինի անզգուշութեան պատճառով օգնութեան է հասնում՝ դուրս մղելով օտար մարմինը արտասուքով, այսինքն՝ «արտաքսելով»:

Իսկ ներքին պատճառի դէպքում տրտմութեան ժամանակ խուճապահար մարմնում դառը մաղձը հոսում է դէպ ստամոքս, առանձնացած գոլորշին տաք օդեղէն անօթի նման հասնում է գլխուղեղ, որտեղ ծանրանալով՝ ջրազատւում է դէպ բիբը կամ այլ կերպ՝ աչքի ակը՝ դառնալով չոր, աղի սեւագոյն մաղձ:

Այդպէս էլ ուրախութիւնից յուզուելու ժամանակ երկփեղկի թոքից շունչը կտրելով՝ լեարդի թաղանթից հիւթ է բարձրանում դարձեալ նոյն տեղը՝ վերը նշուած գոլորշու նման, եւ լինում է քաղցր արտասուք, քանի որ հիւթը քաղցրորակ անօթից է գալիս[741]:

Սա էլ երկրորդի պատասխանը:

Հարց տասներկուերորդ

Ըստ այսմ, որ ասուեց ձեր կողմից, ինչո՞ւ է բացառման բացառումը դառնում հաստատում, իսկ երկու հաստատումը չի հանգում մի բացառման:

Պատասխան. Նախ դատողութիւն է, եւ ոչ՝ հաւանութիւն, որովհետեւ բա-

ցառումը բացառում է ամէն ինչ՝ լինի էութիւն, թէ՝ ոչ էութիւն: Իսկ հաստատումը սրան հակառակ, հաստատում է ամէն ինչ: Հասկանալի է, որ ոչ էութեան բացառումը հաստատում է էութիւնը՝ կրկնակի բացառումով, իսկ հաստատումը մնում է նոյնը:

[Ասենք] նաեւ, որ բացառումը ինքն իրեն բացառում է՝ կրկնելով, իսկ հաստատումը՝ ոչ: Հետեւաբար, ներհակի բացառումը հակառակի գոյութիւնն է [փաստում]: Կամ ասենք, երկու անկատար կազմում են մի կատարեալ, սակայն կատարեալը կրկնուելով՝ անկատար չի դառնայ. այսպէս էլ վերոնշեալները:

Ասենք նաեւ, որ ստի բացառումը հաստատում է ճշմարիտը, որ լրացնում է վերոասացեալը: Իսկ կրկնելով ճշմարիտը՝ մնում է նոյնը, որովհետեւ չի փոխւում ստի: Եւ ըստ այլ կերպի, սրանք փոխարինում են իրար, հաստատումը դառնում է բացառում եւ բացառումը՝ հաստատում: Երբ պարոյկով, այսինքն՝ հարցումով ասում է՝ «Ես չասացի՞ քեզ»՝ ահա եղաւ հաստատում, այսինքն թէ՝ «ասացի»: Եւ կամ՝ «Ո՞վ ասաց քեզ», այսինքն՝ ոչ ոք:

Եւ պարզորոշ խօսքի կատարեալ տեսութիւնը յայտնի է աշխատասէր մտքերին՝ «Յաղագս մեկնութեան»[742], «Լուծումն գրոց» [երկերից], որ քեզ մօտ են:

Հարց տասներեքերորդ

Իսկ ի՞նչ է «սահման հաստատութեան» ասելը, որ մի մասը զօրութեամբ է, միւսը՝ ներգործութեամբ: Ո՞ր մասն է զօրութեամբ, ո՞րը՝ ներգործութեամբ:

Պատասխան. Տե՛ս, երկնքի առաջին եւ երկրորդ սահմանները, քանզի առաջինի վերաբերեալ ասում է՝ բարձր մարմին՝ լուսաւորուած հրեղէն ներգործութեամբ, որ լուսաւոր երկինքն է: Երկրորդը՝ լուսաւոր թափանցիկ զօրութեամբ՝ ջրեղէն կամ ըստ ոմանց՝ բիւրեղեայ: Իսկ երրորդը՝ մասամբ լուսաւոր է եւ մասամբ թափանցիկ, որի պատճառով էլ ասւում է՝ զօրութեամբ եւ ներգործութեամբ:

Իսկ երկնքի շարժումը կարելի է ասել շրջանաձեւ է՝ մասամբ զօրութեամբ, մասամբ՝ ներգործութեամբ, որովհետեւ այն մասը, որ արեւելքում է՝ ելման կէտն է՝ ներգործութեամբ, իսկ զօրութեամբ է արեւմուտքում:

[Ասում է նաեւ] արեւմտեան կէտից է սկսում. այդպէս էլ ներքին եւ վերին կիսագնդերը:

Սակայն ճիշտ է առաջին [պատասխանը]:

Հարց տասնչորսերորդ

Սրբերից մէկն ասում էր, որ դողում էին աշխարհի սիւները (հմմտ. Յոբ Թ 6):

Որո՞նք են աշխարհի սիւները, որ դողում էին Քրիստոսի՝ մեռեալներից յարութիւն առնելու ժամանակ:

Պատասխան. Թողնելով այն ամէնն, ինչ առասպելախօսում են հեթանոսները, աշխարհի սիւները ոչ թէ զգայական են, այլ միայն լեռների ու քարերի բազմութիւնն են, ինչպէս տան սիւները, մարմնի ոսկորները, աշտարակի քարերը: Այդպէս էլ երկրի հաստատուն քարերն են,

որ մասնակիօրէն աշխարհ ենք կոչում: Ոմանք էլ ասում են՝ Սողոմոնի տաճարի նիւթապէս կառուցուած եօթ սիւներն են, թէպէտ այլ է հոգեւոր իմաստը: Այսպէս թէ այնպէս՝ նոյնն ենք հասկանում, ինչպէս որ «Երգ երգոց»-ում բազմաթիւ անգամ ասում է՝ «վէմք պատառեալ», «երկիր շարժեալ»[743], որ վերաբերում է Քրիստոսի խաչելութեանը:

Երկրի հիմք են ասւում նաեւ ներքին ջրերը, ըստ այդմ՝ «Ծովի վրայ գցեց նրա հիմքերը» (Սղմ. ԻԳ 2): Իսկ այս սիւները օդի շիթերն էին՝ ըստ Նիւսացու[744]:

Երկիրը երկփեղկուելով՝ ներքին եւ վերին կիսագնդերի՝ միջին մասում հաստատուն է: Եւ երբ երկիրը շարժուեց, վէմերը պատռուեցին, այդպէս էլ երկրի հիմքի ջրերը տատանուեցին, այդպէս էլ ասուած օդեղէն սիւները դողացին եւ լուսատուները խաւարեցին:

Եւ ընդհանրապէս իւրաքանչիւր տարր իւրովի կրեց այդ սուգը՝ չարչարակից դառնալով իրենց Արարչին:

Եւ այս մասին այսքանը:

Սպառիչ չէին մեր մեկնութիւնները, այլ մեր տկար մտքին համապատասխան, մանաւանդ հարկադրուած քո եղբայրական սիրով խնդրանքից:

Եւ սա փոթորկայոյզ ժամանակներում եւ նեղ տեղում, որովհետեւ պաշարուած էինք դարձեալ նետողների ազգի կողմից, որին ժողովուրդները «խորազմ» են կոչում[745], որոնք անթիւ բազմութեամբ ասպատակեցին՝ աւերելով հայոց, պարսից, վրաց աշխարհները եւ ընդհանրապէս՝ արեւելեան կողմերը: Ոմանք՝ կին եւ տղամարդ, գերութեան տարուեցին, ոմանք գալարւում էին սրախողխող, ոտքի տակ տապալուած՝ քահանայ, թէ աշխարհական՝ զազրելի դիակներով անթաղ ընկած: Շատերն էլ տանջահար եղած խոշտանգումներով: Ոմանք՝ կիսաայրուած հրից՝ տոչորուած: Ուրիշներ՝ սովի պատճառով գազաններից պատառոտուելու վտանգուած: Շատերը խստագոյն չարչարանքներ կրելով, ոմանք էլ՝ ահաբեկուած վախից:

Մենք դիպուածով Շահապօնք կոչուող ամրոցում էինք՝ նման մետաղի մէջ նստելուն՝ ոչնչով չտարբերուելով մեր յանդէպ իբրեւ օրինակ լինելիք մեծ ահասարսուռ դատաստանից: Նախ [նման այն բանին], որ երբ ողջոյն են տալիս՝ խաղաղութեան եւ շենութեան համար, յանկարծակի վրայ է հասնում բարկութիւնը: Նմանապէս այստեղ կիրակի օրը, կրկնազատկին, յանկարծ վրայ հասաւ խռովութեան հեղեղը. սաստկագին գոչմամբ, ահագնատեսիլ, սուսերամերկ նետողների [ազգի] ջլապինդ [յարձակուողները] պաշարեցին մեզ:

Նոյնը կատարւում էր այստեղ, ոչ միայն հեռաւոր յանդում, կամ՝ որտեղ երկանք էին աղում, այլեւ ամրոցի մօտ. մի փոքր դանդաղելու պատճառով մէկին [վիճակուեց] փրկուել, միւսին՝ գերուել: Եւ ամէն տեղ ահագնասարսուռ տեսարան էր՝ միայն արտասուալից դէմքեր, կականաբարձ հառաչանք, ազգականներ եւ սիրելիներ, ծնօղներ եւ եղբայրներ:

Սակայն հնար չկար օգնելու գերեվարուածներին, ինչպէս որ [չի լինելու] կորստի մատնուելու օրը[746]: Այլեւ անօգուտ էր զղջալը, ինչպէս այնտեղ [անօգուտ] կլինի չլսողների բերանի անկարողութիւնը, եւ հնարաւոր չէր այնտեղից վերադառնալ, ո՛չ չափազանց փափագողների տուրեւառը, ո՛չ հնարքը, ո՛չ էլ յիմար կոյսերի նման աղերսը (տե՛ս Մտթ. ԻԵ 11): Անգամ բարեկեցիկ կեանք ունեցողները, սովամահութեան [մատնուած]՝ տուայտւում էին:

Սպառուել էր սէրը, հատել յոյսը, բազմացել անօրէնութիւնը, տիրել անզղջութիւնը, նաեւ՝ անհանգիստ խղճահար մտքեր եւ շրջապատուած մուտքի մօտ՝ սափրագլուխ ճիւաղներով:

Եւ ապա եկաւ մեծ սովը՝ հաւասարաչափ բոլորի համար՝ հարուստ թէ աղքատ, որոնց ինչ տրուել էր, աւելին պահանջուեց, եւ հպարտութեամբ փքուածները՝ կոտրուել էին փշրաբեկ:

Ուրախութեան փոխարէն՝ աղաղակի ճիչեր, մարմնական հեշտանքի անհանգիստ անկողնում՝ երեկոյեան առաւօտի գալն էինք աղերսում եւ սպասում երանելի ուժերի վերականգնմանը: Եւ սա ոչ թէ շաբաթներով կամ օրերով, այլ՝ երեք ամիս տեւողութեամբ, եւ ոչ մի հակակշիռ վրէժի հատուցում:

Եւ տարակոյսներով մեզ պաշարած այս անզերծ աղէտը եղաւ Հայկազեան տօմարի հարիւր, կրկնակի քառասուն եւ վեցեակ վեցերի [ժամանակ][747], [1397թ.] երբ եղաւ յոյների ծռազատիկը, մեր նկարագրած կիրակի օրը:

Եւ ահա՛, այսպէս տրտմած սգով ու թախծոտ մտքով ընծայեցի պակասաւոր ձեռքով բանաւոր անարժան նուէրս, իբրեւ այրի կնոջ լումայ (տե՛ս Ղուկ. ԻԱ 2-3)՝ քո գանձարանին:

Եւ մաղթում եմ եղբայրական սիրով, որ քո բնածին բարի բնոյթով, աշխոյժ մտքով ուղիղը որոնե՛ս, թերին լրացնե՛ս, իսկ աւելորդը թողնե՛ս: Հաւանածդ [վերագրի՛ր] Տիրոջ շնորհներին, սխալներն իմ տկարամիտ անօթ լինելուն:

Միայն բարեսէր կամքով բարի յիշատակդ թո՛ղ արձանագրուի Տիրոջ մօտ:

Ողջ եղի՛ր:

Ամէն:

Ա

Աբէլի եւ պատարագի մասին (373)
Ադամի անկման տասն աստիճանների մասին (366)
Ադամի իշխանութեան մասին (300)
Ադամի ձեռքի գիրքը (605)
Ադամի պատուիրանի մասին (363)
Ազգակցութեան մասին (754)
Աթոռի մասին (895)
Ալֆա եւ օմեգա (196)
Ակների, նահապետների եւ առաքեալների անունները (449)
Աղօթքի մասին (763)
Ամպի, անձրեւի, ձեան, կարկտի եւ այլնի մասին (282)
Ամպի յատկութիւնների մասին, որ համեմատւում է մեղքի հետ (284)
Այժմ հարց պահքի վերաբերեալ (798)
Այն մասին, թէ այս աշխարհը զօրութեամբ չէր աստծոյ մէջ (241)
Այն մասին, թէ ինչպէ՞ս է մարդն աստծոյ պատկեր եւ նման (358)
Այն մասին, թէ ինչո՞ւ մեր մարմինը մաշկեղէն է կոչւում (368)
Այն մասին, թէ ինչո՞ւ չգիտենք մահուան եւ աշխարհի կործանման օրը (380)
Այն մասին, որ անկարելի է աշխարհը դարձնել անէ (234)
Այն մասին, որ աստծոյ մէջ պատահականութիւն չկայ (243)
Այն մասին, որ դրախտի պտուղն անթափելի է (305)
Այն մասին, որ դրախտում ծնունդ չի լինում (306)
Այն մասին, որ դրախտում միշտ լոյս է (303)
Այն մասին, որ հաւատարիմ է Աստուած (576)
Այն մասին, որ մարդը նման է ամբողջ աշխարհին (313)
Այն մասին, որ միածին է որդին (594)
Այն մասին, որ միայն հայերն են առանձնացել (684)
Այն մասին, որ ոչխարը եկեղեցի [չի մտցւում] (761)
Այն մասին, որ չէին ամաչում (364)
Այն մասին, որ չէր կարող ծեր լինել (603)
Այն մասին, որ Քրիստոս եկեղեցու գլուխն ու հիմքն է (663)
Այրու որդու մասին (562)
Անբան կենդանիների զոհաբերութիւն պահանջելու մասին (458)
Անդրանիկների մասին (400)
Անկատար հասակի մասին (603)
Աններելի մեղքի մասին (703)
Աշխարհի ստեղծման մասին (255)
Աշտարակի մասին (386)
Աչքի մասին (321)
Ապաշխարութեան մասին (743)
Առանձնական աղօթքի մասին (768)
Առաջաւորութեան հացի եւ սեղանի խնկի մասին (446)
Առաւօտուայ տասը յատկանիշները (273)
Առիւծի եւ մեր տիրոջ յատկութիւնները (409)
Աստծոյ երախտիքների մասին (509)
Աստծոյ եւ մարդու գործերի զանազանութեան մասին (228)
Աստծոյ զարմանքի եւ նախանձի մասին (194)
Աստծոյ խօսքի մասին (660)
Աստծոյ հացը եւ խօսքը (507)

Աստծոյ ողորմութեան եւ արդար գործերի մասին (577)
Աստծոյ պարզութեան եւ նիւթական գոյացութիւնների մասին (250)
Աստծոյ սիրոյ մասին (506)
Աստծոյ տասը ստորոգութիւնների մասին (245)
Աստծոյ տեսնելու մասին (182)
Աստծոյ օրհնութեան մասին (519)
Աստուածաբանութեան տեսակների մասին (188)
Աստուածային առաքինութիւնների տարբերութիւնների մասին (716)
Աստուած անժամանակ եւ յաւիտենական է (179)
Աստուածաշունչ գրքի մասին (569)
Արարչի անունների մասին (525)
Արգանդից ծնուելու մասին (590)
Արեգակի յատկութիւնների մասին (262)
Արքայութեան մասին (917)
Աւագ շաբաթուայ մասին (637)
Աւարի մասին (499)

Բ

Բաղաամ մոգի մասին (496)
Բանի մարդեղանալու մասին (589)
Բարու եւ չարի մասին (33)
Բեղմնաւորուելու եւ ծնելու մասին (348)
Բերսաբէի առաջին զաւակի մեռնելու մասին (549)
Բնակութեան վերաբերեալ (923)
Բոլոր մարդկանց մարմինների յարութեան մասին (871)
Բոյսերի եւ տնկիների մասին (291)
Բորոտութեան մասին (471)
Բուրվառի մասին (793)

Գ

Գազանների պիտանութեան մասին (297)
Գարնան եղանակի մասին (274)
Գեղմի եւ ցօղի մասին (535)
Գետը բաժանելու մասին (528)
Գերութիւնների մասին (565)
Գեւորգի հարցերը (154)
Գէորգ վարդապետի հարցերը եւ Գրիգորի՝ նրա հարազատի պատասխանները (938)
Գիրքն ընթերցելու մասին (791)
Գլխաւոր արարչագործութիւնների մասին (308)
Գլխի եւ այլ անդամների մասին (322)

Դ

Դանիէլի եօթնեակները (568)
Դատաստանի կարգի վերաբերեալ (894)
Դատաստանի վկաների մասին (903)
Դատաստանի տեղը (897)
Դատաւորների մասին (898)
Դարձեալ Ադամի շնորհների եւ յանցանքի մասին (365)
Դարձեալ աղօթքի մասերի վերաբերեալ (769)
Դարձեալ այն մասին, որ պատահականութիւն չկայ աստծոյ մէջ (244)
Դարձեալ եկեղեցու միաբանութեան եւ բաժանման մասին (687)
Դարձեալ հարցում օրերի նշանակութեան մասին (272)
Դարձեալ պահքի մասին (802)
Դարձեալ տարիների թուագրութեան մասին (573)
Դարձեալ տարիների թուի մասին ըստ եօթանասնից կարգի (571)
Դարձեալ տնկիների եւ ծառերի մասին (293)

Դաւթի եւ մեր տիրոջ համեմատութիւնը (551)
Դաւթի յանցանքների մասին (547)
Դաւիթը կերաւ սուրբ հացը (543)
Դեւերի մասին (216)
Դժոխքի մասին (630)
Դիմագծերի մասին (328)
Դրոշմի մասին (735)

Ե

Եգիպտոսի տասը հարուածների մասին (430)
Եկեղեցու նախկին սպասաւորների մասին (667)
Եկեղեցու օրհնութեան մասին (759)
Եղիայի մասին (562)
Եղիսէի ցուպի մասին (565)
Ենովսի մասին (376)
Երազի մասին (352)
Ե՞րբ են ներգործում հոգու երեք զօրութիւնները (344)
Երեսնաւոր եւ այլ արդիւնքների մասին (920)
Երեւոյթների մասին, որ դիտւում են օդում, այսինքն՝ ծիածանի, վարսաւոր աստղի եւ այլնի վերաբերեալ (281)
Երեք ծնողների՝ Սառայի, Մարիամի, եկեղեցու եւ [նրանց] ծնունդների համեմատութեան մասին (398)
Երեքսրբեանի մասին (777)
Երինջների մոխրի մասին (491)
Երկաբնակների հարցերը մեզ: Նրանք, ովքեր մի անձ են ասում եւ երկու բնութիւն եւ բաժանում են Քրիստոսին (143)
Երկաբնակների հերձուածողութիւնը բանի մարդեղութեան խնդրում (157)
Երկինքը գալարուելու է եւ թափուելու են աստղերը (887)
Երկնքի ձեւի մասին (258)
Երկնքի յատկութիւնների մասին (260)
Երկրի անշարժ լինելու մասին (257)
Երկրի մասին (289)
Երկրի յատկութիւնների մասին (290)
Երկրպագութեան եւ դասերի մասին (783)
Երրորդ օրուայ մասին (833)
Եւագրիոսը ութն է ասում մտքի մեղքերը (695)

Զ

Զանազան հողմերի մասին (283)
Զգայարանների դիրքի մասին (316)
Զգեստ է կոչւում մարմինը (412)
Զոհաբերութեան արատները (476)
Զոհաբերութեան տեսակները (461)

Է

Էակների ստեղծման մասին (247)
Էի եւ ոչ էի մասին (175)
Էութեան, բնութեան, անձի եւ անհատի մասին (249)

Ը

Ընդդէմ նրանց, ովքեր բախտ եւ ճակատագիր են ասում՝ տասն առարկութիւններով (20)
Ընդդէմ նրանց, ովքեր բարին եւ չարը աստծուն են վերագրում՝ տասներկու առարկութիւններով (24)
Ընդդէմ մանիքեցիների՝ տասը հարցադրումներով (32)

Ընդդիմախօսութիւն «Պարապմանց գրքից» (122)
Ընդհանրապէս աղօթքի մասին (765)
Ընտրեալների ուրախութեան եւ փառքի մասին (924)

Թ

Թէ աստուած ինչպէս է բարկանում (520)
Թէ ինչպէս է արեգակն աստուած կոչւում (191)
Թէ ինչպիսին է կեանքը (364)
Թէ ինչու արու ծնուեց Քրիստոս (604)
Թէ ինչո՞ւ երեխան անմիջապէս ոտքի չի կանգնում (350)
Թէ ինչո՞ւ է առաքեալների գլուխ ասւում Պետրոսը (680)
[Թէ ինչու է] գիրքը ձեռքին եւ խաչը գլխին [պատկերւում] (604)
Թէ ինչու մարդը յետոյ եղաւ (311)
Թէ ո՞րն է առաջին մեղքը (697)
Թէ քանի անգամ խօսեց աստուած (525)
Թէ քանի՞ ծնունդ ունեցաւ Քրիստոս (593)
Թլփատութեան մասին (529, 609)

Ժ

Ժամահարի մասին (762)
Ժամանակի մասին (276)
Ժամատեղիների եւ կանոնագլխի մասին (772)
Ժողովների մասին (676)
Ժողովրդի բանակելու մասին (485)

Ի

Իմաստութեան մասին (353)
Իմացութեան պտղի մասին (304)
Ինը երանութիւնների մասին, որոնք ոմանք եօթն են ասում (723)

Լ

Լոյսի մասին (261)
Լուսատուների կանգ առնելու մասին (530)
Լուսնի յատկութիւնների մասին (263)
Լրտեսների մասին (488)

Խ

Խաչի մասին (614, 891)
Խառնուած սերմերի մասին (351)
Խորանի մասին (441)

Ծ

Ծառայելու եւ դուրս գալու մասին (435)
Ծննդեան տօնի մասին (606)
Ծնունդ եւ արարած կոչուելու մասին (254)

Կ

Կախարդների մասին (433)
Կախուած կեանքի մասին (517)
Կանանց արձակելու մասին (512)
Կապելու եւ արձակելու մասին (672)
Կապերի մասին (411)
Կատարեալ հասակի մասին (884)
Կեանքի մասին (181)
Կենաց գրքի եւ գրի մասին (902)
Կենաց ծառի եւ տասներկու պտուղների մասին, որ տեսիլքի վերջում է ընթերցւում (929)
Կենդանիների անունների մասին (299)
Կենդանիների բեղմնաւորման մասին (346)
Կենդանիների բնական զգեստի մասին (296)
Կենդանիների նշանների մասին (468)
Կենդանիներին մորթելու մասին (384)
Կենդանու զոհաբերութեան եւ նրա նշանակութեան մասին (463)
Կենդանու զոհաբերութեան մասին (469)

Կերակուրի եւ սեղանի մասին (804)
Կնոջ մասին (361)
Կոյսի եւ Յովսէփի ազգաբանութիւնը (580)
Կոյսի եօթ խօսքերի մասին (586)
Կոյսի սրբութեան մասին (582)
Կոյսն աստուածածին է (587)
Կորխի եւ Դադանի մասին (489)
Կտակի մասին (521)
Կրակի քաւարան չլինելու մասին (852)
Կրկնակի իշխանութեան մասին (671)

Հ

Հակառակորդների վկայութիւնները եւ նրանց պատասխանները (849)
Հակառակորդների վկայութիւնները քաւարանի մասին եւ նրանց պատասխանները (856)
Հաղորդութեան մասին (736)
Հայոց առանձին ժողովների մասին (678)
Հարաւի թագուհու մասին (560)
Հարց աստծոյ ներգործութեան մասին (248)
Հարց գերեզմանի եւ թաղման մասին (829)
Հարցեր երկաբնակներին, ովքեր հրաժարւում են մէկ Քրիստոսին մարդացեալ աստուած համարել, այլ բաժանում են կատարեալ աստծու եւ կատարեալ մարդու (124)
Հարց երկրորդ օրուայ մասին (832)
Հարց եօթներորդ օրուայ եւ այլնի մասին (836)
Հարց մեռեալներին սգալու մասին (821)
Հարցում բոլոր կենդանիների մասին (294)
Հեթանոսներին օրէնքներ տալու մասին (514)
Հնձանի մասին (910)
Հոգիների կայանի մասին (839)
Հոգին ճանաչելու մասին (876)
Հոգու եւ հրեշտակների տարբերութիւնը (210)
Հոգու եւ մարմնի միաւորման մասին (600)
Հոգու եօթ պարգեւների մասին, որոնք եօթնաճաճանչ շնորհներ են (722)
Հոգու զօրութիւնների մասին (330)
Հոգու մասերի մասին (332)
Հոգու տարբերութիւնների մասին (601)
Հոդերի եւ ոսկորների մասին (325)
Հրեղէն վիշապի մասին (222)
Հրեշտակի աւետիս տալու մասին (584)
Հրեշտակների անունների մասին (204, 214)
Հրեշտակների դասերի կարգի մասին (203)
Հրեշտակների դասերի մասին (201)
Հրեշտակների երեւման մասին (199)
Հրեշտակների ընդհանուր [յատկանիշների] եւ առանձնայատկութիւնների մասին (206)
Հրեշտակների թուի մասին (210)
Հրեշտակների խօսելու մասին (214)
Հրեշտակների շարժուելու մասին (211)
Հրեշտակների փառաբանութեան մասին (214)

Ձ

Ձայնի մասին (787)

Ղ

Ղովտի եւ Սոդոմի մասին (393)

Ճ

Ճանապարհի մասին (816)

Մ

Մահուամբ կոտորելու մասին (550)

Մահուան եւ յարութեան համեմատութիւնը (407)
Մանանայի մասին (437)
Մաշկեղէն հանդերձի մասին (368)
Մասերի գործունէութեան մասին (333)
Մատաղի մասին (807)
Մարգարէների նշանների մասին (510)
Մարդեղանալու ժամանակի մասին (588)
Մարդկային առաքինութիւնների մասին (717)
Մարդկանց կեանքի եւ տարիների մասին (378)
Մարդկանց մեղքերի մասին (700)
Մարդու դէմքի միակողմանիութեան մասին (315)
Մարդու հոգու մասին (333)
Մարդու ձեւի մասին (314)
Մարդու մէջ եղած չորս հողմերի եւ չորս ջրերի մասին (322)
Մարդու յատկութիւնների մասին (360)
Մարդու փոփոխուելու մասին (814)
Մարդուն ճանաչելու մասին (333)
Մարդուն տրուած տասներկու պարգեւների մասին (365)
Մելքիսեդեկի մասին (390)
Մեղքերի զանազանութիւնների մասին (704)
Մեղքերի թողութեան մասին (493)
Մեղքերի մեծութեան մասին (702)
Մեղքերի սահմանումների մասին (707)
Մի օրուայ մասին (270)
Միաւորութեան եղանակների մասին (598)
Միաւորութեան եւ բաժանման մասին (167)
Միւս մարգարէների մասին (561)
Մկրտութեան մասին (729)
Մշտնջենաւոր լեռների մասին (414)
Մովսէսի երեսի լուսաւորուելը (453)
Մովսէսի երկիրը տեսնելու եւ այնտեղ չմտնելու մասին (504)
Մովսէսի մարմնի մասին (523)
Մորենու մասին (427)

Յ

Յակոբի հետ գօտեմարտելու մասին (403)
Յարութեան համընդհանուր լինելու մասին (873)
Յաւիտենականների մասին (180)
Յեսուի եւ տիրոջ համեմատութիւնը երեսուն կէտով (531)
Յիշատակարան (937)
Յիսուս է կոչւում եւ փրկիչ (595)
Յղիանալու եւ ծնուելու եղանակների մասին (400)
Յոբի մասին (415)
Յոյսի մասին (712)
Յովսէփի մասին (406)

Ն

Նախահայրերի անունները (389)
Նախօրինակի մասին (176)
Նշանների մասին (429)
Նոյեան տապանի մասին (381)
Նոր խորհրդի մասին (464)
Նոր պատարագի մասին (465)
Նուիրաբերութիւնների իմաստը (480)

Շ

Շաբաթ [օրուայ] տօների մասին (796)
Շաբաթների մասին (477)
Շնորհների մասին (208)

Ո

Որ բոլորս ենք յարութիւն առնելու (882)
Որ մէկն է մեր տէր Յիսուս Քրիստոս եւ Աստուած է՝ մարմնապէս՝ ծնուած կոյսից (129)
Որ յարութիւնից յետոյ անմահ ենք մնալու (881)

Պ

Պատկերի եւ նմանութեան մասին (357)
Պատուհասի մասին (482)
Պղնձէ օձի մասին (495)
Պսակի մասին (753)

Ջ

Ջրայինների մասին (295)
Ջրերի նշանակութեան մասին (288)
Ջրի յատկութիւնների մասին (285)

Ս

Սամսոնի համեմատութիւնը մեր տիրոջ՝ Յիսուսի հետ (536)
Սատանայի մեղքի մասին (699)
Սատանայի յանցանքների մասին (217)
Սաւուղի մասին (541)
Սերմերի մասին, որ չորս եղանակներում են (275)
Սերմի օրինակի մասին (878)
Սերմնահոսի մասին (473)
Սիրոյ եւ բարու մասին (195)
Սիրոյ եւ սիրելու կապի մասին (213)
Սիրոյ մասին (713)
Սողոմոնի եւ տիրոջ համեմատութիւնը (558)
Սուրբ գրոց վկայութիւնները Քրիստոսի ճշմարիտ աստուած լինելու մասին (127)
Սուրբ հոգու գալստեան մասին (651)
Ստամոքսի մասին (324)
Ստեղծման եւ նախախնամութեան մասին (229)

Վ

Վերադարձի մասին (567)
Վերջին օծման մասին (747)
Վեց օրերի մասին (269)
Վէմի մասին, որ խորհրդանշում էր Քրիստոսին (493)
Վհուկների եւ դիւթողների սուտ լինելու մասին (543)

Տ

Տաճարի մասին (557)
Տանջանքի չափի մասին (913)
Տապանակը վերադարձնելու մասին (547)
Տապանակի գերեվարութեան մասին (540)
Տապանակի մասին (444)
Տասնաբանեան օրէնքների մասին (439)
Տասներկու անդամների բաժանման եւ եօթի մասին (323)
Տասներկու կենդանակերպերի մասին (265)
Տարեմուտի մասին (278)
Տարիների թուի մասին (571)
Տարրերի մասին առհասարակ (256)
Տաք ջրերի մասին (287)
Տիրոջ համբարձման մասին (649)
Տիրոջ մկրտութեան մասին (611)
Տղամարդու եւ կնոջ զանազանութեան մասին (327)
Տների թուի մասին (571)
Տուրքերի եւ արծաթի մասին (482)
Տօների մասին (478)

ՈՒ

Ուխտաւորների մասին (498)
Ուղիղ դատաստանի մասին (904)
Ուղղափառների հարցերը երկաբնակներին (146)
Ուղղափառների վկայութիւնների մասին (845)

Փ

Փոխուելո՞ւ են արդեօք բոլոր մարմինները (885)
Փողի հնչելու մասին (869)

Ք

Քահանայաքաղ (823)
Քահանայական կարգի մասին (749)
Քահանայապետութեան մասին (207)
Քահանաների արատները (475)
Քահանաների իրաւունքների մասին (466)
Քահանաների մասին (486)
Քաղաք-ապաստանների մասին (501)
Քարէ տախտակների մասին (450)
Քսանչորս երէցների մասին (867)
Քրիստոսի անապական մարմնի մասին (624)
Քրիստոսի յարութեան մասին (640)

Օ

Օդի երեսուն յատկութիւնները (280)
Օծեալ եւ Քրիստոս (597)
Օձի իմաստութեան, այլեւ սպանելու մասին (298)
Օրէնքի մասին (659)
Օրհնութեան կարգի մասին ցուցում (809)
Օրուայ սկզբի մասին (271)
Օրուայ, ամսուայ, տարուայ մասին (266)

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Սահմանումը քաղուած է Փիլոն Եբրայեցու ժառանգութեան հայերէն թարգմանութիւնից. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 433 («բանական»):

2. Միտքը բերուած է Արիստոտէլի «Յաղագս մեկնութեան» (Պերիարմենիաս) երկից. տե՛ս «Դաւթի Անյաղթի փիլիսոփայի մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ», Բ տպ. Վենետիկ, 1932, էջ 371-397:

3. «Մարդու բնութեան մասին» երկը միջնադարում շրջանառուել է գերազանցապէս ս. Գրիգոր Նիւսացու (335-394 թթ.) անունով. մինչդեռ այն իրապէս պատկանում է Նեմեսիոս Եմեսացու (Դ դար) գրչին. բաժինը շարադրուած է համաձայն Նեմեսիոսի երկի՝ ճակատագրին ու նախախնամութեանը նուիրուած գլուխների. տե՛ս «Նեմեսիոսի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», Վենետիկ, 1889, էջ 123-161:

4. «Մանիքէոս»-ը (Մանին) գնոստիկեան հզօրագոյն հոսանքներից մէկի՝ մանիքէական աղանդի պարագլուխն է (216-276 թթ.): Տաթեւացին ակնարկում է նրա աղանդին բնորոշ երկմատեան (դուալիստական) ուսմունքը, ըստ որի բարին եւ չարը գոյաբանօրէն հաւասար սկիզբներ են:

5. «Չարի գիւտարար» արտայայտութիւնը, որ գալիս է ս. Աթանաս Ալեքսանդրացու ժառանգութիւնից, կիրառուած է Խոսրով Անձեւացու Պատարագի եւ ժամակարգութեան մեկնութիւններում, Ներսէս Լամբրոնացու Ատենաբանութեան, Կիրակոս Երզնկացու՝ Եւագր Պոնտացու Ութ խորհրդոց մեկնութիւնում. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 583 («գտակ»): Սրա վերաբերեալ մասնաւոր բացատրութիւն է տալիս Գրիգոր Տաթեւացին իր Սաղմոսաց մեկնութեան մէջ. «Զի՞նչ է գտակ չարեաց եւ մայր» հարցին նա պատասխանում է. «Սատանայ է, զի ինքնագիւտ չարիւ նախ ինքն չարացաւ, որ ասի գտակ, եւ ապա զայլս չարացոյց, որ ասի մայր, որպէս սկիզբն եւ սերմանող չարեաց ի յայլս, որ եւ անկմամբն իւր չարչարեաց զվերին դասս սրտմտութեամբ եւ զներքինսն չարչարեաց սասանմամբ, եւ զհամակամսն ընդ ինքեան քարշեաց…». տե՛ս Գրիգոր Տաթեւացի, Մեկնութիւն Սաղմոսաց (համառօտ տարբերակ), աշխտ. Ա. Քյոշկերյանի, Եր., 1993, էջ112:

6. Միտքը քաղուած է «Բարոյախօս»-ից. տե՛ս Physiologus. The Greek and Armenian Versions with a Study of Translation Technique by G.Muradian, Peters, 2005, p. 136-137, նաեւ՝ ԲՄ, թիւ 23, 2016, էջ 325, հմմտ. Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցօրեայ արարչութեան, աշխտ. Կ. Մուրադեանի, Եր., 1984, էջ 252, 272, նաեւ՝ Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն Կաթողիկեայ թղթոց, Դ տպ. Երուսաղէմ, 1998, էջ 415:

7. Միտքը քաղուած է Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկի «Յաղագս բարւոյ, լուսոյ, ազնուի, տռփման, զարմացման, նախանձու եւ եթէ չար ոչ գոյ է եւ ոչ ի գոյից եւ ոչ ի գոյսս», «Նորին ի տռփականացն աւր հնաբանութեանց» գլուխների համապատասխան տեղիներից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 153-183:

8. Միջնադարի հայ ձեռագրական աւանդոյթը այս գրութիւնը յիշատակում է Դաւիթ Անյաղթի անունով, քանզի այն յաճախ յաջորդում է նրա երկերին (Դաւիթ Անյաղթի Իմաստասիրական սահմանումները՝ «Ամենայն չար տանջելի». տե՛ս Առաքել Սիւնեցի, Ամբողջ չարը տանջանքի ենթակայ է, Ս. Էջմիածին, 1996, էջ 58-59) մինչդեռ իրապէս այդ գրութիւնը պատկանում է Գրիգոր Նիւսացու անունով յունարէն ձեռագրերում կենցաղավարող անվաւերների շարքին. տե՛ս PG, t. 46, 541:

9. Ս. Գրիգոր Աստուածաբան (Նազիանզացի. 328-390 թթ.). Կապադովկեան շրջանակի երեւելի դէմքերից մէկը, որի երրորդաբանական խոր դիտումները նրան արժանացրել են «Երրորդութեան աստուածաբան» պատուանունին:

10. Արուսեակը երկնքից երկիր գահավիժած ապստամբ հրեշտակի անունն է. տե՛ս Եսայի ԺԴ 12: Այս տեղիի բանաստեղծական վերարտադրութիւնը ս. Ներսէս Շնորհալու հետեւեալ տողերն են. «Հպարտութեամբ շինեալ քարամբք /Ամբարտաւան ամբարտակին/ Որոյ հմուտ ճարտարապետ/ է Արուսեակն անդնդային». «Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց», գիրք Ա, տե՛ս «Բանք չափաւ», Վենետիկ, 1830, էջ 18:

11. Տեղին բացակայում է Ժողովողի հայերէն ընկալեալ թարգմանութեան մէջ. ինչպէս երեւում է, այն քաղուած է թարգմանական մէկ այլ տարբերակից. այս մասին տե՛ս **Ն. Ծովական,** Ժողովողի հին հայերէն թարգմանութիւնները, «Սիոն», 1936, էջ 45-48:

12. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Բ. տե՛ս աշխրհ. թրգմ. ներած. եւ ծանօթ. Ա. Ա. Աբրահամեանի, Եր., 1970, էջ 34:

13. Արիոսը քահանայագործում էր Ալեքսանդրիայում: Իր վարդապետական ըմբռնումները նա շարադրել էր Qavleia («Խրախճանք») աշխատութեան մէջ եւ 318 թ. այն ներկայացրել Ալեքսանդրիայի եպիսկոպոս Ալեքսանդրին: Նա պնդում էր, թէ Որդին յաւիտենակից չէ Հորը, անսկիզբ չէ: Ըստ նրա՝ ասել, թէ Որդին «համագոյ» է Հորը, նշանակում է համարել, թէ Հայրը «բարդ, տրոհելի ու փոփոխական» է: Ս. Ալեքսանդր Ալեքսանդրացին, յետագայում ս. Աթանասը ու եկեղեցու միւս հայրերը խստագոյնս դատապարտել են այդ ուսմունքը:

Ըստ վաղնջական մի աւանդութեան, Կերինթոսն իր կրթութիւնը ստացել է Եգիպտոսում, ապրել է առաքեալների ժամանակ, համարւում է առաջին գնոստիկներից: Նա զանազանում էր Քրիստոսին եւ Յիսուսին որպէս երկու մասնաւոր անհատականութիւններ: Յիսուս ծնուել է իբրեւ հասարակ մի մահկանացու, որը սակայն օժտուած էր առաքինութիւններով: Մկրտութեան ժամանակ նրա վրայ աղաւնու կերպարանքով հանգչեց երկնաւոր էակ՝ Քրիստոս, որի շնորհիւ Յիսուս կատարում էր հրաշքներ, իսկ խաչելութիւնից առաջ, լինելով չարչարանքներին անհաղորդ, Քրիստոս զատւում է նրանից (Իրինեոս Adv. Haeres. I, 26, Հիպոլիտոս, Filos. VII, 33) տե՛ս **Соловьев Вл.,** Керинф, Христианство энц. т. 1, с. 727: Կերինթոսի գնոստիկեան գաղափարների հեռաւոր արձագանքները լսելի են «մանկութեան աւետարան» սուրբգրային պարականոնում (տես **Մ. Գ. Մամյան**, «Մանկութեան աւետարան» պարականոնը [պատմա-քննական վերլուծութիւն]. սեղմագիր, Եր., 2018, էջ 12-13): Ի դէպ, իբրեւ հերձուածողի Կերինթոսի անունն յիշատակուած է Յովհան Օձնեցու «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից» երկում. ՄՀ, հտ. Է, էջ 157 [15]: Սամուէլ Անեցու ժամանակագրութեան մէջ Մահմեդը համարւում է Կերինթոսի աղանդի հետեւորդ. տե՛ս **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, ժամանակագրութիւն, աշխտ. Կ. Մաթեւոսեանի, Եր., 2014, էջ 83:

14. Սաբէլ Լիբեացին Գ դարի հերձուածող է. Իր վարդապետական հայեցակարգի մէջ ներմուծելով Ս. Հոգու գաղափարը՝ ամբողջացնում է մոնարխիական - մոդալիստների համակարգը. ըստ նրա ուսմունքի, Աստուած բացարձակ միակութիւն է, որ գտնւում է լիակատար լռութեան մէջ, սակայն յանուն արարչութեան նա խախտում է այդ լռութիւնը, ու դառնալով բարբառող Խօսք՝ Բան՝ նա արտայայտւում է Հոր, Որդու եւ Հոգու երեք տարբեր ձեւերով: Երբ գործում էր Հայրը, տակաւին չկար Որդին եւ Ս. Հոգին, երբ գործում էր Որդին՝ չկար Հայրը, իսկ երբ գործում է Ս. Հոգին, դադարում է գործել Որդին, կգայ ժամանակ, երբ իր գործը կաւարտի նաեւ Ս. Հոգին, եւ Հոր ու Որդու նման աւարտելով իր յայտնութիւնը, կվերադառնայ աստուածային անդէմ միակութեանը: Սաբէլի հերձուածը դատապարտուել է ս. Դիոնիսիոս Ալեքսանդրացու կողմից:

15. **Ա ձեռագիրն ունի այս ընթերցումը**. «Եւ առարկեն նախ այսպէս, եթէ ծայրագոյն պարզութիւնն ոչ կարօտանայ բազմութեան: Այլ է Աստուած ամենեւին պարզ, վասն որոյ ոչ ունի բազմութիւն անձանց: Դարձեալ՝ մի անձն պարզագոյն է, քան զբազմութիւն անձանց. ապա ուրեմն այն, որ է պարզագոյն, Աստուծոյ վայել է»*:

16. Ա ձեռագիրն ունի հետեւեալ յաւելումը. «յաշխատասիրութենէ ոմանց վարդապետաց: Առաջնոյն ասացեալ է, թէ ծայրագոյն պարզութեանն է ընդդէմ էութեան եւ ոչ աստուածային անձանցն, քանզի աստուածային անձինքն են մի էութիւն ըստ թուոյ: Երկրորդ՝ ասացեալ է, թէ միութիւն անձինն պարզագոյն է ի ստեղծուածս եւ ոչ ի ստեղծողն, զի անձինք ստեղծուածոց թէպէտ մի էութիւն են, այլ ոչ ըստ թուոյն: Իսկ աստուածայինքն են մի եւ նոյն ըստ թուոյն, եւ մի անձն ոչ ունի նուազ քան զերիսն, եւ ոչ երեքն աւելի քան զմինն, քանզի ոչինչ յաւելնու ի յէութիւնն, բայց միայն յառնչութիւնն: Զոր օրինակ նմանութիւնն ոչինչ յաւելնու ի սպիտակութիւնն. զի թէ լինէր յաշխարհի միմիայն սպիտակ, եւ չլինէր այլ սպիտակ, այլ եւ ոչ նման, եւ եթէ լինի այն սպիտակ ոչինչ յաւելնու յառաջնոյն, բայց զի յառաջն ոչ էր նման, եւ յետոյ է նման: Դարձեալ ասում են. ի սահման անձինն դնի գոյացութիւնն, քանզի անձն է բանական բնութեանն անբաժանելի գոյացութիւն, եւ թէ երէք են անձինք, ապա եւ երեք են գոյացութիւնք: Ասեմք առ այս, թէ գոյացութիւնն ոչ գծի ի սահման անձինն վասն բացարձակ էութեանն, այլ վասն անձինն, որ է մի էութիւն նոյն անձինն: Դարձեալ ասեն, թէ Աստուած է ծնունդ, ապա եւ

---

* «Ընդդէմ տաճկաց»-ի հատվածի ծանոթագրություններում բերվում են նաև «Ընդդէմ տաճկաց»-ի 1930 թվականի Վիեննայի հրատարակության մանրամասները. տե՛ս ***«Իսլամը հայ մատենագրութեան մէջ»,*** Վիեննա, 1930:

ապականութիւն, զի ծնունդ միոյն ապականութիւն է միւսոյն, եւ այս գարշութիւն է յԱստուած, ապա ոչ է յԱստուած ծնունդ: Ասեմք առ այս, թէ յիմանալի ծնունդն…

17. Ա-ն ունի. «Բնութեամբ է բարոյն հաղորդել զինքն այլոց, որոց պատճառ է, զի ըստ Արիստոտէլի բարի է, որում ամենեքեան ցանկան: Արդ, ընդունայն լինէր ցանկալ, թէ ոչ հաղորդէր, եւ թէ բնութեամբ է բարոյն հաղորդել զինքն, ապա ուրեմն որչափ առաւել բարի է հաղորդէ զինքն, որպէս արեգակն հաղորդէ զլոյս իւր քան զաստեղս: Այլ գերագոյն եւ անվախճան բարի է Աստուած, եւ ոչ կարէ զբնութիւն իւր բովանդակ հաղորդել ստեղծուածոց ուրուք, զի ունին վախճան: Ապա ուրեմն պարտ է, զի գերագոյն բարին յառաջ ածէր զգերագոյն բարին յինքենէ, որ լինէր Աստուած, որոյ հաղորդէր զինքն բոլորովին, ապա ուրեմն ի յԱստուած է բազմութիւն անձանց, զի յառաջ ածողն եւ յառաջ ածեալն ոչ է մի անձն, թէպէտ լինի մի բարի եւ մի Աստուած:

Դարձեալ, պատուական եւ լաւագոյն է այն, որ բարի է եւ զբարին առնէ, եւ անվախճան, որ զանվախճանն առնէ քան զայն, որ միայն բարի է եւ անվախճան, եւ ոչ առնէ, ապա թէ ոչ զօրութիւնն պատուականագոյն [է] քան զներգործութիւնն: Այլ Աստուած է պատուականագոյն եւ լաւագոյն քան զամենայնէ, ապա ուրեմն յառաջ էած յինքենէ զանվախճան բարին, որ է Աստուած:

Դարձեալ, պարզ եւ յաւիտենական եւ անհուն ներգործութիւնն, ներգործէ յաւիտենական եւ անհուն, ապա թէ ոչ՝ ոչ լինէր զատ ներգործութիւն, ապա ուրեմն առնէ զյաւիտենական եւ զանհուն բարին:

Դարձեալ, ամենայն արարածք տրամատին յերկուս պատկերս, այսինքն՝ զի ոմանք պարզ են եւ ոմանք բաղադրեալք ի նիւթոյ եւ ի տեսակէ: Այլ արարիչն ոչ է մի պատկեր, զի մի՛ լիցի պակաս քան զարարածս, եւ ոչ է երկուս, զի մի՛ արարածոցս հաւասարեսցի, այլ են երեք, զի լիցի բարձր քան զարարածս, եւ ոչ են չորս, զի մի՛ լիցի բազում աստուածս:

Դարձեալ, էիցս ոմանք են պակաս եւ կատարեալ, որպէս խառնուածք, եւ ոմանք անպակաս եւ անկատար, որպէս բան մեր, եւ ոմանք անպակաս եւ կատարեալ, որպէս Աստուած:

Դարձեալ, երեք են պատճառք՝ նիւթական, որպէս նիւթ մարմնոյ, արուեստական, որպէս հիւսն աթոռու, բնութենական, որպէս հայր՝ որդոյ: Եւ զի պատճառ է Աստուած պարզիցն աննիւթապէս եւ խառնիցն՝ արուեստաբար. պարտ է գոլ նմա եւ պատճառ բնութենապէս Որդոյ եւ Հոգոյ, զի մի՛ գտցէ պակաս անպատճառ պատճառն յամենայն պատճառաց:

18. Ա-ն ունի. Դարձեալ, ամենայն իր մարմին կամ անմարմին, ունի էութիւն, զօրութիւն եւ ներգործութիւն: Եւ զի խոստովանեալ գոյ է Աստուած, ապա ուրեմն զօրութիւն իւր է Որդին, եւ ներգործութիւն՝ Հոգին Սուրբ:

19. Ա-ն ունի. Այլ Աստուած կամելով զինքն բղխէ զՀոգին, իմանալով զինքն՝ ծնանի զՈրդի, ըստ այսմ օրինակի. զի ամենայն իմացող ունի նմանութիւն ինչ յիմացեալ իրին, եւ նմանութիւն այն կոչի բան մտաց եւ պատկեր իմացեալ իրին, որպէս իմանալով զքար, ունիմք զնմանութիւն ի միտս, որ կոչի պատկեր եւ բան քարի: Այսպէս եւ Աստուած նախ իմանա[յ] զինքն եւ ինքեամբ զայլս, իսկ իմանալով զինքն ծնանի զնմանութիւն իւր, եւ նմանութիւն այն ծնեալ՝ է պատկեր եւ բան Աստուծոյ, եւ զի յԱստուած ոչ գոյ բնաւ պատահումն, վասն այն նմանութիւնն այն եւ բան է գոյացութիւն, եւ զի Աստուած է ամենեւին պարզ, վասն այն ծնեալ բանն այն է՛ ամենեւին պարզ, վասն այն ծնեալ բանն այն է՛ նոյն էութիւն եւ գոյացութիւն ծնողին, եւ զի ի մէջ ծնողին եւ ծնելոյն է առնչական հակակայութիւն, վասն այն հակակայութիւնս այս պատճառէ զանձն այլ, ապա ուրեմն պարտ է, զի Բանն Աստուծոյ լինէր այլ անձն ի ծնողէն, եւ երկրորդ անձն այն է, որ է նմանութիւն բնութեան ծնողին, է նոյն բնութիւն, վասն այն կոչի Որդի:

Եւ դարձեալ, որպէս Աստուած է իմացող, նոյնպէս եւ կամեցող է, եւ որպէս իմանալովն զինքն յառաջ էած զԲանն, այսպէս սիրելովն զինքն՝ յառաջ էած յինքենէ զՀոգին Սուրբ, որ է նոյն գոյացութիւն եւ էութիւն, որ է երեք անձն, ապա ուրեմն են պէտք յԱստուած երեք անձինք:

20. Ա-ն ունի. Եւ թէ Սուրբ Գրոց ոչ հաւատան, այլ ցուցից ի նոցին գրոց զվկայութիւն երից անձնաւորութեանց: Նախ որ ասեն ի լեզուս իւրեանց **Հայր, Որդի, Հոգի Սուրբ. Ապն, Ըիբն, Ռօհալ Ղըդուսա - Որդի, Հոգի, Հայր, Յիսա, Ռօհ, Ալլահ**: Դարձեալ՝ **Վալլահի, Բիլլահի, Թալլահի - Հայր, Հոգի, Որդի: Բիսմիլլահ, Ռահման Ռահիմ**: Դարձեալ՝ **Հայր, Որդի**, **Հոգի** - **Հաքաար,** Ալլահ **Աքպար**: Դարձեալ՝ **Հայր, Որդի, Հոգի - Այ, Լը, Ըֆ**: Դարձեալ՝ **Հայեաթ, Ըլմն, Ռոհիփաք - Տեսութիւն, Բան, Հոգի:**

Եւ ի լեզուս նոցա անձն կոչի **Շաղսիաթ** եւ Բնութիւնն՝ **Տաբիաթ**, եւ էութիւնն՝ **Ուադ,** եւ գոյացութիւնն՝ **Զոհար**:

21. Ա-ն ունի. ջերմութիւն իւր որպէս ճրագն, եւ կամ որպէս երեք լոյսք ի մի խառնեալ լապտեր: Դարձեալ մի բնութիւն ջրոյ է. ծովն, գետն, աղբերն: Դարձեալ մի է արմատն եւ ծառն եւ պտուղն:

22. Ա-ն ունի. Դարձեալ մի է խնծորն եւ հոտն եւ համն եւ գոյնն իւր:

23. «Ընդդէմ նրանց, ովքեր բարին եւ չարը Աստծուն են վերագրում՝ տասներկու առարկութիւններով». տե՛ս Գիրք Հարցմանց, պրակ Երրորդ (էջ 12-20):

24. Թաւրէթ = Հնգամատեան:

25. Փեղամբար - պրսկ. paygambar, peyam - bar = մարգարէ. տե՛ս Միջին հայ. բառ. Բ, էջ 415:

26. Ա-ն ունի հետեւեալ ընթերցումը. Վասն որոյ բանիւք նոցա խօսեսցուք ընդ նոսա. նախ այսպէս հարց զջհուտն, որք միախոհ են տաճկաց, զի ջհուտն զՄեսիայն գալոյ ասէ եւ Աստուած, եւ տաճիկն՝ եկեալ եւ մարդ: Երկրորդ՝ **Փուրղանն** իւրեանց ասէ. **Յիսէ, Ռուհ, Ալլահ** եւ **Քալիմաթու**, որ է Քրիստոս, Հոգի, Աստուած եւ Բան: Արդ, կրկին է տեսութիւն բանիս. նախ՝ ուղղական, այսպէս՝ **Յիսէ**, որ է Քրիստոս՝ Հոգի, Աստուած եւ Բան: Ահա յայտնի խոստովանութիւն: Երկրորդ՝ հոլովական այսպէս. եթէ Քրիստոս Հոգի կամ Լոյս եւ Բան Աստուծոյ: Եւ այս եւս յայտնի է, թէ Քրիստոս Հոգի է Աստուծոյ եւ Բան, ապա ուրեմն Աստուած է, զի Աստուծոյ Հոգին եւ Բանն Աստուած է:

27. Ա-ն ունի. Դարձեալ ամենայն արուեստաւոր ի գործոյն իւր ճանաչի, այլ զի Աստուած է ճշմարիտ Քրիստոս, ի գործոցն ճանաչի, եւ նախ սքանչելիքն գործ Աստուծոյ է, զի ի վեր է քան զբնութիւն: Արդ, դուք ասէք, եթէ քարամաքթար է Յիսէն, այսինքն՝ սքանչելագործ, որ զմեռեալս յարուցանէր եւ զկոյրս լուսաւորէր, ապա ուրեմն Աստուած է Քրիստոս:

28. «Մարգարէ»-ի «տեսանող» ստուգաբանութիւնը տրուած է նաեւ Գրիգոր Տաթեւացու Եսայա մարգարէութեան մեկնութեան մէջ. «մարգարէն տեսանող լսի ըստ եբրայեցոցն». տե՛ս տպ. աշխտ. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 17:

29. Մանրադրուագը քաղուած է «Գիրք տղայութեանն Քրիստոսի» սուրբգրային պարականոնից. տե՛ս «Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց. Բ, Անկանոն գիրք Նոր կտակարանաց», աշխտ., հ. Ե, Տայեցի, Վենետիկ, 1898, էջ 82:

30. Ա-ն ունի. Այսչափ ընդդէմ այլազգեացն յայտնի բառիւք ցուցաք զՔրիստոս Աստուած ճշմարիտ վասն ռամկաց: Այլ վասն հաւատացելոց եւ կատարելոց վկայութեամբ Սուրբ Գրոց բազում գլխով այլ ուրեք արտայայտեցաք, զի է ճշմարիտ Քրիստոս Աստուած եւ փրկիչ մեր եւ կեցուցիչ, որում փառք, պատիւ ընդ Հօր եւ Սուրբ Հոգոյն. ամէն:

31. Նկատի ունի Ղուրանը:

32. Ա-ն այստեղ շարունակւում է հետեւեալ բառերով. «Օրինակն փոխի ի ճշմարտութիւնն, այլ ճշմարտութիւնն ի յօրինակն՝ ոչ երբեք, ապա թէ ոչ ներգործութեամբն լինի զօրութեամբ, որ է սուտ: Եւ Կովու օրէնքն ճշմարիտ. որ այսպէս գրեալ է ի վերնագիրն ի Ֆուրղանին ձեր. Մսաֆ. որ է Կովու օրէնքն, զոր գրէր Մահմէտ եւ կապէր ի ճակատս երնջի, եւ նա բերէր ժողովրդեանն»:

33. Ա-ն ունի. պատմութենէ որ վասն Աբրահամու, ապա եւ զապագայն սուտ ասէ, թէ ասէ, որ եւ ոչ խօսի վասն ապագային բան ինչ, այլ եւ զներկայն անգիտանայ: Որպէս եւ գրեալ է ի **Խտր (արաբ.** քող, ծածկոյթ.տե՛ս «Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ ի պէտս դպրոցաց յօրինեալ ի Յակովբոս վ. Պօզաճեան», Վիեննա, 1841, էջ 394. **այստեղ**՝ ծածուկ) **գիրս** իւրեանց, թէ զԱլի կարծէր ընդ կնոջ իւրում, եւ հանեալ ի ծառ, զի յանգէտս նետս հարցէ ի նա, եւ տեսեալ զերկուորիսն հատեալ, ապա **շուքր** (= արաբ. թուրք. sukur, sukr պարսկ. sokr. գոհութիւն, շնորհակալութիւն. տե՛ս Միջին հայ. բառ. Բ, էջ 225) ետ Աստուծոյ, թէ՝ ես արունտէր ոչ եղէ: Ապա յայտ է, որ զիւր կնոջն ստուգութիւնն ոչ գիտէ, ոչ է մարգարէ:

34. **Ա-ն ունի հետեւեալ ընթերցումը.** Եւ յայտ է ի կերակուրս եւ զազգապղծութիւնս, զոր ինչ Մովսէս արգել, Մահմէտ հրաման ետ. որպէս զուղտ, զձի, զնապաստակ կամ զճագար, եւ զայլսն: Նոյնպէս եւ զազգականն, մերձաւորսն հրամայեաց առնուլ, այլեւ բազում կանայս, որ ոչ գտանի ի գիրս մարգարէից, ապա ուրեմն ոչ է մարգարէ:

35. «Սրի կոտորածով... բռնակալ»-ի **փոխարէն Ա ձեռագիրն ունի հետեւեալ ընթերցուածը.** եւ մահուամբ, որպէս ի մեր ժամանակ Թամուրլանկն. զի ոչ միայն

մարգարէ տայ ասել զինքն, այլեւ՝ չաստուած տայ պաշտել զինքն. եւ յայտ է, զի նշան եդեալ է յամենեցունց գլուխ:

36. «Քարամաթ» = սքանչելիք, հրաշք:

37. «Դունիայ» = **արաբ.** ա/ աշխարհ, յաւիտեանք, բ/ ստացուածք, կեանք, ինչք, մեծութիւնք, գոյք. տե՛ս «Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ…», էջ 914:

38. «Զաքաթ» /զէքէթ/ = արաբ. zekat, պրսկ. zakat = ողորմութիւն՝ տրուած մեռած սիրելիի հոգու համար. տե՛ս Միջին հայ. բառ ., հտ. Ա, էջ 215:

39. Ա-ն ունի. եւ այս ամենայն ոք եւ կարի յետինքն կարեն առնել: Ապա ուրեմն գող է եւ ոչ մարգարէ: Զի թլփատութիւնն ի Մովսէսէ էառ, եւ զլուացումն, եւ **զաքաթն,** որ է տասանորդ, եւ այլ ամենայն, եւ ոչ ունի նոր ինչ **փեղամբարի**, վասն որոյ ոչ է **փեղամբար**:

40. Ա-ն ունի. զի վասն այն ստեղծ Աստուած զկին վասն պոռնկութեան, զկերակուր վասն ագահութեան: Որ եւ կարի ամբարշտութիւն է զԱստուած ասել պատճառ չարեաց:

41. **Ա-ն** «ի՞նչ է հատուցելու Աստուած… մարգարէ չենք ասում» **հատուածի դիմաց ունի**. զի՞նչ հատուսցէ Աստուած. ապա ուրեմն սուտ մարգարէ է: Եօթներորդ՝ զի ոչ ոք մարգարէ մեղս ուսուցանէ, եւ ոչ ոք մեղօք հաճոյանալ Աստուծոյ. զայս եւ դուք ասէք: Իսկ Մահմէտ զմեղս ուսուցանէ, զոր Աստուած արգել. Մի՛ շնար: Իսկ նա հրաման տայ խառնակել ընդ բազումս: Եւ ինքն՝ Մահմէտ ոչ եթող չար յաշխարհի, զոր ոչ արար անձամբ իւրով, որ եւ ազգն իւրեանց վկայեն, թէ այսչափ կին արար, եւ այսչափ արտաքոյ բնութեան գնայր, ապա ուրեմն չարագործ է եւ ոչ մարգարէ: Ութերորդ՝ ամենայն ոք որ արտաքոյ ելցէ ի ճանապարհէն, որ տանի ի քաղաքն, ոչ հաւանի ի նա: Իսկ Մահմէտ եթող զկամս Աստուծոյ եւ ըստ կամաց իւրոց շրջեցաւ. յայտ է ի ժողովրդենէ նորին, զի ամենայն ոք զհեշտութիւն մարմնոյ սիրէ եւ ըստ կամաց իւր գնայ: Իններորդ՝ անասունք ոչ են պատկեր Աստուծոյ, զի անբանք են եւ անիմաստք, նմանապէս եւ որք անասնաբար շրջին, իսկ Մահմէտ եւս վատթար է քան զանասուն ըստ կրկին պատճառի: Նախ՝ զի նոքա միանգամ ի տարոջն շաղաշարին, եւ նոքա ի բոլոր ամն, եւ ապա զի նոքա ըստ բնութեան կարգին, եւ նա՝ արտաքոյ բնութեան, որ եւ քան զշուն եւ քան զգայլ եւ քան զայլ պիղծ կենդանիս վատթար գտանի: Տասներորդ՝ ամենայն ոք սիրէ զնմանն իւր, որպէս սիրէ անասուն զանասուն եւ այր զընկեր իւր, այսպէս եւ Աստուած զոչ ոք սիրէ եթէ զնմանն իւր. իսկ Մահմէտ ի նմանակցութենէն Աստուծոյ հեռի է այնքան որքան Աստուած ճանաչէ զմարդն, ապա ուրեմն եւ ոչ Մահմէտ ճանաչեաց զԱստուած. ուրեմն ոչ է մարգարէ:

Եւ եթէ ասեն. յԱւետարանն ձեր ոչ է գրեալ. ասեմք ոչ այլ ինչ բայց միայն այս, թէ յարիցեն սուտ Քրիստոսք եւ սուտ մարգարէք. արդ, սուտ քրիստոս է Նեռնն, ապա եւ սուտ մարգարէ Նեռինն եւ կարապետ իցէ **փեղամբարն** ձեր:

42. Ա ձեռագիրն այստեղ ունի հետեւեալ յաւելումը. Դարձեալ. թէ Մահմէտն ի ձեր **Մսաֆն** (= Կովի օրէնք) ի յարապ գիրն այլ չէ գրած, թէպէտ այլ ցեղ անուն կայ: Եւ թէ ասեն. Եսայի մարգարէն. «Տեսի հեծեալ մի իշոյ եւ հեծեալ մի ուղտոյ» (Ես. ԻԱ 9), որ է Քրիստոս ի վերայ իշոյ նստեալ եւ Մահմէտ ի վերայ ուղտոյ: Ասեմք, եթէ հեծեալն ի վերայ իշոյ էր Քրիստոս եւ հեծեալն ի վերայ ուղտոյ՝ Յովանէս, որ ստեւ ուղտոյ զգենոյր: Եւ յայտ է յերկուց. նախ զի ի մի եւ ի նոյն տեսնելն համանգամայն յիշէ զհեծեալն յուղտ եւ յէշ, որ է Քրիստոս եւ Յովանէս ի միում ժամանակի: Երկրորդ՝ զի նախ յիշէ զուղտն եւ ապա՝ զէշն (տե՛ս եւ հմմտ. Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց. բնագիրը հրատարակութեան պատրաստեց, աշխարհաբար թարգմանեց եւ ծանօթագրեց Վ. Մ. Վարդանեան, Եր., 1985, էջ 164): **Այս տեղիի վերաբերեալ հետեւեալ ծանուցումն է տալիս Բ. Կիլէէրեանը. Երուսաղէմի Ս. Յակոբայ Մատենադարանի թիւ 1288 ձեռագրին մէջ (եր. 135) հետեւեալ կերպով մեկնուած է Եսայեայ այդ համարը.** Հրց. Եսայի տեսանէր հեծեալ երկձի. մինն իշոյ եւ մինն ուղտոյ: - Պտսխ. Առ տեղեաւն զԲաբելացիս եւ զՄարս, գերիչս Երուսաղէմի ասէ: Այլ հրէայ ոմն, ծառայ Մահմէդի, իշով զՔրիստոս ասաց եւ ուղտով զՄահմէդ, եւ չափով կենդանեացն մեծ ասաց զՄահմէդ: Բայց այս է. հեծեալ՝ սատանայ, եւ հրէայքն՝ էշ, որ ոչ ծանեան զմսուր տեառն իւրեանց. ուղտ ծամածուռ ազգք, որ ոչ անաստուածք են եւ ոչ աստուածապաշտք, որք մոլորեցան ի Մահմէտէ: Իսկ Եսայեայ խօսքերն են. «Եւ տեսի հեծեալս երկուս. հեծեալ մի իշոյ եւ հեծեալ մի ուղտու» (Ես. ԻԱ 7) «Եւ տեսի, զի գայր նոյն հեծեալ երկձի» (Ես. ԻԱ 9): **Համապատասխան բացատրութիւն ենք գտնում Գրիգոր Տաթեւացու Եսայու մեկնութեան մէջ.** «Ըստ Գրին հեծեալն յէշ առակէ զթագաւորն Մարաց, եւ հեծեալն յուղտ՝ զԵլիմացւոցն, որք աւերեցին եւ գերեցին զԲաբելոն ի ձեռն անարգ զօրաց կործանեցան: Նաեւ իշովն զխառնակեցութիւն բաբելացուոցն նշանակէ եւ ուղտովն՝ զբարձր հպարտութիւնն: Դարձեալ

հեծեալն ի յէշ նշանակէ զՔրիստոս, որ նստաւ ի վերայ աւանակի եւ իշոյ, ըստ մարգարէութեանն Զաքարիա. «Ահա թագաւոր քո գայ նստեալ ի յաւանակի» (Զաք. Թ 9-10), իսկ հեծեալն յուղտու նշանակէ զՅովաննէս, որ զգեցեալ էր զստեւ ուղտու» (տե՛ս Մեկնութ. Եսայեայ, էջ 60):

43. Մուհամմեդը մահացել է 632 թ. հունիսի 8-ին. տե՛ս **А. Массэ,** Ислам. Очерки истории, перевод с франц., М., 1982, с. 35:

44. Այս տեղեկութիւնն առկայ է Թովմա Արծրունու Պատմութեան մէջ. գլ. Դ. տե՛ս Թովմա Արծրունի, Անանուն, Պատմութիւն, էջ 158:

45. Ա-ն ունի. Հաւատաց Արիոսի եւ Կերինթոսի աղանդով /աղանդո՞ցն/. այն որ մարմնաւոր ասաց զարքայութիւնն ի վերայ երկրի, կերակուր պորտոյ, եւ ամուսնութիւն՝ յետ յարութեանն, իմանալ զարժանս եւ խօսող /խօսե՞լ/ զանուղղայս:

46. Ա-ն ունի. օրինացն, խայտառակեաց եւ զուխտն Աբրահամու, որպէս եւ գրեալ է. «Եւ յաւուր ութերորդի արու մանուկ ձեր թլփատեսցի» (Ծննդ. ԺԷ 11-12): Եւ սա ոչ միայն զարուս, այլ եւ զկանայս: Եւ այսպէս գարշելի այպանեաց զնշանակ ուխտին Տեառն: Այլ եւ ջրով ողողիլ հանապազ, փոխանակ մկրտութեան աւազանին, եւ այլ եւս բազումս անարժան եւ մոլեկան, եւ ծիծաղելիս աւանդեաց ի կորուստ անձին իւրոյ եւ հետեւողաց նորին: Որ եւ ութ ամօք յառաջ քան զՄահմէտ, իշխան ոմն անուն Քաղըրդ, առաջին նստեալ գլուխ Իսմայէլացւոցն, եւ զօրացեալ աւերեաց զԴամասկոս, որ է Դմշխ, եւ ելեալ ի Հայս, բազումս ի Պարսից եւ ի Հայոց ի սուր սուսերի արկ, որպէս ասէ Սուրբ Գիրն, թէ քաղրդաշուրթն ժողովուրդն յագեցուսցեն զսուսերս իւրեանց յարեան: Սա կամեցաւ շրջել զհաւատս նոցա, եւ նոքա ոչ հաւանէին, եւ յորժամ ոչ կարաց, գտեալ իւր խորհրդակից զոմն Մահմէտ անուն, գլուխ վաճառականացն՝ եգիպտացի, սակաւ ինչ տեղեակ օրինացն Մովսէսի, եւ հաւատովն եւ աղանդովն Արիոսի եւ Կերինթոսի, որպէս ասացաւ ի վերոյ: Զսա ասացեալ օրէնսդիր եւ պատգամաբեր եւ զօրավար լեալ յետ քաղրդի ամս, որ յետ կոտորելոյն եւ տիրելոյն բազմաց՝ Մահմէտս այս արգել զսուր եւ բանիւ խրատոյ հնազանդեցուցին ինքեանց մեծ մասն տիեզերաց:

47. Տուեալները քաղուած են. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխարհաբար թրգմ., առաջաբանը եւ ծանօթագրութ. Վ. Առաքելյանի, Եր., 1982, էջ 57-58:

48. Ա-ն «զառաջարկութիւն» ընթերցման փոխարէն ունի՝ «զառարկութիւն»:

49. Ա-ն ունի . Ասենք, եթէ դուք զԳիրս Սուրբս ոչ ընդունիք, զի ոչ զգիրս գիտէք եւ ոչ զզօրութիւն նորա, այլ զամենայն ինչ մարմնաւոր եւ զգալի կարծէք: Եւ զի՞նչ ասէք զայն. «Երկինք աթոռ իմ են եւ երկիրս՝ պատուանդան». այնպէս նստոյ տեղեաց եւ ոտք երկայն մինչեւ յերկիրս հասեալ, կամ որ ասէ ձեռն եւ բերան եւ աչք եւ ականջ Աստուծոյ, այսպիսի կարծէք զգալի եւ մսակերութիւն, եւ խառնարան եւ գինըմպութիւն, ապա հաւասար էք դուք Սադուկեցոցն եւ Ստոյիկեանցն, որ զամենայն ինչ մարմնաւոր ասացին, եւ անմարմին իրաց ոչ հաւատացին, եւ զյարութիւնն եւս ուրացան: Այլ միտ դիք մեկնութեանս եւ իմաստութեան գրոցն, զի աներեւոյթն:

50. Հուրիներ = փերիներ, գեղեցկատես կանայք, որոնք կենցաղավարում են նիւթական զգայականութեամբ աչքի ընկնող դրախտում (տե՛ս Ղուրան, սուրահ 37, 38 եւ այլուր): Հուրիները վայելք են պատճառում դրախտում գտնուող ընտրեալներին, սակայն չեն կորցնում իրենց կուսութիւնը: Ղուրանը նրանց ներկայացնում է իբրեւ բարոյական արատից զերծ էակներ. տե՛ս **А. Массе**, Ислам, Очерки истории, с. 89:

51. Քաղուած է Արիստոտէլի «Յաղագս աշխարհի» երկից. տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի… մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 604-607: Այս տեղին է ակնարկում Խոսրովիկ Թարգմանիչը, որ նկատում է. «Հաստատութիւնդ, զոր հինգերորդ տարր ասացին արտաքինքն». տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 99 («հինգերորդ»): Այն վկայակոչուած է նաեւ Յովհան Որոտնեցու ճառերում. տե՛ս Մեկնողական - իմաստասիրական ճառեր, աշխտ. Ա. Մինասեանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 126, 240:

52. Բնագրում՝ «Բէհեշտ». պրսկ. behest. = դրախտ. տե՛ս Միջին հայ. բառ., Ա, էջ 123:

53. Այս ամբողջ հատուածի փոխարէն Ա-ն ունի. Զոր ձեզ լիցի բաժին այնպիսի բեհէշտն, եւ տեղիք պղծութեան ի կեանս յայս եւ ի հանդերձեալն:

54. Ա-ն ունի. Առ որս ասեմք. նախ՝ եթէ հարկ է ամենայն որ ոչ ունի սկիզբն, ոչ գոլ վախճան, այսինքն՝ յաւիտեանն, ընդդէմ է բացորոշեալ ժամանակին, որ սկիզբն ունի եւ վախճան. այլ ոչ է հարկ, թէ ամենայն անվախճան եւ անսկիզբն է: Որպէս մշտնջենաւորն, զի սկսեալ է եւ անվախճան, ապա ուրեմն կարէ լինել հրեշտակք եւ հոգիք սկսեալք եւ անվախճանք:

55. Ա-ն ունի. զոր ի վերոյ ասացաւ. Առ որս ասեմք, ըստ առաջին կարգին, թէ ամենայն մարմին յերկուս սեռս տրամատին. ի կարելին եւ ի հարկաւորն: Եւ է կարելին փոփոխական, որպէս ջրոյ ցուրտ գոլ եւ ջերմ, եւ է հարկաւորն անփոփոխ, որպէս հրոյ ջերմն գոլ: Արդ, որ հարկաւոր է գոլ, անկարելի է ոչ գոլ, ապա ուրեմն գոյ եւ յանմարմին էութիւնս հարկաւորի գոլն, եւ անկարելի յոչ գոլն, որպէս հրեշտակք եւ հոգիք:

Դարձեալ գոյացութիւնն բաժանի ի մարմին եւ յանմարմին, եւ մարմինն՝ ի կարելին եւ (ի) ներընդունականն: Եւ անմարմին ի հարկաւորն եւ ի միշտն: Արդ, հոգին է անմարմին գոյացութիւն, որ է հարկաւոր եւ միշտ գոյ:

56. Միտքը բառացիօրէն քաղուած է Դաւիթ Անյաղթի «Սահմանք»-ից. պրակ ԺԳ. տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկեր, աշխր. թրգմ., էջ 97:

57. Ա ձեռագիրն այստեղից շարունակւում է հետեւեալ բառերով. Դարձեալ, թէ հոգին մարդոյ մահկանացու է, որպէս դուք ասէք, եւ շունչ անասնոցն ապականացու է, որպէս մեք ասեմք, ապա ոչինչ առաւել է հոգի մարդոյ քան զանասնոյ:

Դարձեալ. թէ հոգին մահկանացու է եւ մարմինն մահկանացու, ապա ուրեմն ոչինչ է զանազանութիւն հոգոյ եւ մարմնոյ:

58. Ա-ն «միաւորութեամբ կենդանանայ» **բառերից յետոյ շարունակում է.** Դարձեալ կեանք եւ մահ ներհակ հակակայ են, որպէս լոյս եւ խաւար: Արդ, որպէս փոփոխել ի կենաց հետեւի փոփոխել ի մահ, պիտոյ է հետեւել անփոփոխ կենաց եւ անփոփոխ մահ, ապա ուրեմն սուտ են, որ ասեն թէ հրեշտակք ի նոյն կէտն մահանան եւ կենդանանան:

59. Ա-ն ունի. Դարձեալ թէ հրեշտակն է մահկանացու, ապա իցէ հրեշտակն մեղանչական, զի մահ վասն մեղաց է պատիժ:

60. Ա-ն ունի հետեւեալ ընթերցուածը. զխաչն ոչ պատուեմք, որ է նշան: Եւ թէ այդպէս փախչիք ի նշանէ խաչին, վասն է՞ր զթուրն ի ձեռն առնոյք, զի ըմբռնելիքն խաչ է, եւ ձեռաց մատունք քո խաչ է, հատ ի քէն: Նոյնպէս մարդն զխաչին ունի զձեւ յոտից մինչեւ ի գլուխ, եւ թեւէ ի թեւ, այսպէս եւ բերան մարդոյն խաչ է: Այլ եւ երեսքն եւ դէմքն խաչաձեւ է: Եւ բազէն ի վերայ ձեռացդ խաչաձեւ է, եւ խաչաձեւ թռչի յօդս, նոյնպէս եւ ամենայն թռչունք: Եւ տունն, որ բնակեալ ես, խաչաձեւ է, քառանկիւնի, եւ աշխարհս չորեքկուսի է եւ խաչ: Եւ խաչաձեւ են եզինք լծեալք: Այլ եւ խաչ է գրակալքն, որ ընթեռնուք զօրէնսն ձեր: Այլ եւ խաչ է սանդալայն, որ դնէք ի վերայ զգէնսն, եւ զթշնամին սպանանէք: Այլ եւ խաչաձեւ է նետն ի վերայ աղեղանն եդեալ: Այլ եւ աթոռ արքայութեան եւ դատաւորաց խաչաձեւ է, որ նշանակէ զխաչն եւ Տէրն բազմեալ ի վերայ, եւ այսպէս ի կատարածի նստի նստի յաթոռ դատաստանի, եւ դատի զամենայն ազգք եւ ազինս: Այլեւ խաչաձեւ կրկնի ամենայն ծունր, որպէս դուք զծունկն եւ զձեռս եւ զգլուխ ի գետին դնէք, եւ կանգնեալ յասկոյս եւ յայնկոյս **սալամ** տայք, նաեւ զձեռս տարածէք խաչանման:

Զայս վասն այն ասեմ, զի դու կարի խիստ փախչիս ի նշանէ խաչին, եւ ահա միշտ ընդ քեզ կրես:

Եւ թէ ոք չար խորհրդով զմարդն անարգէ, իբր զխաչին ձեւ ունել, ասա, թէ մարդն ի կիսոյն ի վեր խաչ է, այլ ի կիսոյն ի վայր **միրէպ** է, զոր անարգես:

Եւ թէ ոք անզգամ մտօք, **թասըմպութեամբ** խօսի, թէ խաչն ձեր ի վերայ թիկանց իշոյն կայ, ասա նմա, թէ **նալն** ձեր ի յոտներն կայ:

Եւ թէ ասեն. զխաչն ձեր յոստանի նկարեմք, ասա նմա, թէ մեք **զնալն** ձեր **ալչայվանդ** ի **բաբուճի** (= պրսկ. pa-push. հողաթափ. տե՛ս Միջին հայ. բառ., Ա, էջ 105) դնեմք եւ **զմէհրիպն** անդրավարտիս զգենումք:

Այսքան վասն խաչին. որք ուղիղ խօսին, զուղիղն պատասխանէ, առ թիւրսն՝ թիւր, զի մի՛ յաղթեսցիս:

61. Ա-ն ունի. Իսկ պատկերամարտքն որպէս խաչամարտ հակառակին ընդ մեզ (հմմտ. «որք չարեաց ի չարիս վերացեալ ելին. ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն եւ ի քրիստոսատեցութիւն…». Յովհան Օձնեցի, Ընդդէմ պաւղիկեանց. ՄՀ, հտ. է, էջ 37 [2])

62. Ա-ն ունի. Արդ, այլ է Աստուած եւ այլ՝ դեւն, ապա այլ է պատկերն Աստուծոյ եւ այլ՝ դեւին:

63. Ա-ն որպէս շարունակութիւն ունի. Դարձեալ, զմի կնդրուկն ոմանք խնկեն Աստուծոյ եւ ոմանք կռոց, եւ զանասունս ոմանք պատարագեն Աստուծոյ եւ ոմանք զոհեն կռոց:

64. Ա-ն «նկարչից էլ… ասենք, որ»-**ի փոխարէն ունի.** ի պատկերակերտէն, ասեմք, եթէ ուստի՞ ուսայք զայդ առասպել եւ յո՞ր գրոց:

65. Ա-ն ունի. եւ թէ զծառս նկարէք՝ պարտիք տնկական հոգոյ: Ո՛վ յիմարութեանդ. Գիրք սուրբք ասեն, որ զմարդն սպանանէ՝ պարտական է արեան նոցա, այլ ոչ թէ՝ որ զպատկեր նկարէ՝ պարտական է հոգոյ: Եւ ընդէ՞ր կենդանակերպք յերկինս առանց հոգոյ մարդոյ, եզին, առիւծոյ եւ այլն:

66. Ա-ն իբրեւ շարունակութիւն ունի. Դարձեալ Մովսէս արար երկու քերովբէս մարդակերպ ի վերայ քաւութեանն, եւ երկու հսկայածեւ պատկերք մարդոյ ի վերայ աշտանակին ձեւացոյց Մովսէս, նոյնպէս եւ յետոյ Սողոմոն ի տաճարին արար զնոյն քերովբէսն եւ հսկայածեւսն:

Դարձեալ հրեշտակք անմարմինք են, եւ մարդակերպք երեւացան մարդոյ, եզին, արծուոյ եւ այլոցն, երկթեւեան, վեցթեւեան, ութթեւեան եւ այլն: Եւ որպէս տեսին մարգարէքն, այնպէս նկարեցին հետեւողքն:

67. Քրիստոսի եւ Աբգար թագաւորի թղթակցութիւնը եւ դաստառակի պատմութիւնը տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն, Գիրք Բ, լա, լբ: Ս. Եպիփան Կիպրացի, «Յաղագս սուրբ եւ նկարագրեալ տէրունական պատկերին ի դաստառակի սրբոյ», «Արարատ», 1869, էջ 185-190, 214-220, 1870, էջ 214-243:

68. Ա-ն ունի. Եւ այսմ պատճառք բազում են, այլ զսակաւն ասացից ձեզ: Դաւիթ մարգարէն ասէ. Աստուած մեր նստի յերկինս յերկնից ընդ արեւելս:

Դարձեալ, Ադամ դէմ դրախտին բնակեցաւ եւ աղաղակէր. ուստի ել. է եւ դրախտն յեդեմ ընդ արեւելս: Վասն որոյ եւ մեք զնոյն խնդրեմք:

Դարձեալ, պատուական եւ աջակողմ աշխարհիս է արեւելք, եւ դարձեալ յայնմ կողմանէ գայ երեւելի լոյսք աշխարհի, ուստի եւ մեք զիմանալին խնդրեմք:

Այլ եւ Տէր Քրիստոս:

69. Ա-ն ունի. Եւ թէ ասեն. դուք զխոզն վասն է՞ր ուտէք, ասեմք, թէ վասն երկու պատճառի. նազ՝ զի կիսասուրբ է, ունի նշան ի կճղակն, ի պորտն, ի յատամն, եւ փոխանակ եղջիւրին լեարդն խաչ է, միայն որոճն է պակաս: Երկրորդ՝ Քրիստոսի առաքեալքն սրբեցին եւ հրամայեցին մեզ ուտել, զի բաժանեսցուք ի ջիտէն, որ են **նալաթ** (= արաբ. lanat, nalat, nalet, թուրք. lanet՝ անէծք, նզովք, բանադրանք. տե՛ս Միջին հայ. բառ., Բ, էջ 180-181) ամենայն ազգի:

Այլ առաւել բժշկական է խոզն. զի ատամն դեղ է ցեցի, հանդերձի, եղն դեղ է **շաւղախի** (արաբ. siqaq. բժշկ. հիւսուածքի ճեղքուածքներ. տե՛ս Միջին հայ. բառ., Բ, էջ 223) ձիոյ, եւ արիւնն՝ ղունղունի, միսն՝ ջերմնոտի, եւ մազն՝ թիթեղն ցաւոց ոչխարաց է դեղ: Եւ այսպէս ըստ բնական օրինացն ընտրելի է խոզն, նաեւ ըստ Մովսէսի կիսասուրբ ցուցաւ, եւ ի նոր օրէնս սրբեցաւ եւ հրամայեցաւ ուտել քրիստոնէից: Եւ թէ ոք խտրէ զմիս խոզենի, ոչ է ի կարգ քրիստոնէութեան: Իսկ դուք զձի վասն է՞ր ուտէք. զի ոչ մի նշան ոչ ունի. ոչ եղջիւր, ոչ որոճ, եւ ոչ ատամն, եւ ոչ կճղակ, եւ ոչ ի պորտն, ապա ուրեմն **մուրտառ** (պրսկ. mordar, թուրք. murder, mirdar = ա/ գեշ, լեշ, մեռելոտի, բ/ կեղտոտ, գարշելի. տե՛ս Միջին հայ. բառ, Բ, էջ 152) է: Ասեն նոքա **փեղամբարն** մեր հրամայեաց մեզ ուտել: Ասեմք. ոչ ուրեք երեւի բանդ այդ եւ ի գիրն ձեր, բայց միայն ի մի ժամանակ ձմեռան եւ սաստիկ սովոյ ասաց ուտել եւ ապրել, եւ ոչ յամենայն ժամու սրբեաց:

Դարձեալ. թէ Մովսէս մարգարէն պիղծ ասաց զձի եւ զուղտ եւ զնապաստակ, եւ Մահմէտն ձեր՝ սուրբ, ապա հակառակ է Մովսէսի եւ ոչ փեղամբար: Եւ զոր առաքեալքն սրբեցին զխոզն, Մահմէտն ձեր պիղծ ասէ, յայտ է, զի եւ հակառակ է Քրիստոսի օրինացն, ապա որպէ՞ս ընդունիք դուք զչորս գիրսն ի յերկնից իջեալ, յորժամ հին օրինացն եւ նորոյս հակառակէք:

70. Ա-ն ունի. Դարձեալ թէ ձին **հալալ** (արաբ. halal պրսկ. halal, թուրք. helal = արդար, ազնիւ, անխարդախ, օրինաւոր. տե՛ս Միջին հայ. բառ. Բ, էջ 5) է, ընդէ՞ր **ղուրպան** (արաբ. թուրք. qurban, պրսկ. gorban **=** զոհ, մատաղ. տե՛ս Միջին հայ բառ., Բ, էջ 77), որ է մատաղ, ոչ առնէք զձին, որպէս զուղտն:

71. Ա-ն ունի. Դարձեալ զգինին պիղծ ասէք, զի պատճառ է չարեաց, նոյնպէս եւ ձին պիղծ է եւ պատճառ բազում չարեաց: Զի **հարամ**ութիւն (արաբ. haram = ապօրինի, անմաքուր, անազնիւ, պիղծ, նզովեալ. տե՛ս Միջին հայ. բառ. Բ, էջ 24), **թալան**, (թաթար. talan = կողոպուտ, աւարառութիւն. տե՛ս Միջին հայ. բառ. Ա, էջ 243) աւերք, պատերազմ եւ սպանումն նովաւ գործի, եւ որպէս դուք ասէք, թէ առաջքն ձիոյն պիղծ է, զի երկիւղ բերէ, եւ վերջքն՝ **հալալ,** զի բարձեալ է զահն:

Եւ յայտ է, զի վասն հինգ պատճառի **հարամ** է ձին. նախ՝ զի մարգարէքն ամենայն եւ Աւետարանն անսուրբ ասացին զձի, երկրորդ՝ զի ոչ մի ինչ ոչ ունի նշան սրբոյ, երրորդ՝ զի

նմանք նորա էշն եւ կիսէշն անսուրբ են, չորրորդ՝ զի **ղուրպան** ոչ լինի, հինգերորդ՝ զի պատճառ է սպանութեանց եւ բազում չարեաց:

Եւ թէ ասեն. Ընդէ՞ր դուք զձիոյ մազն առնէք մաղ, եւ զկաշին մաշէք, ասեմք, թէ եւ դուք խոզի մազով զձիթաղացի մաղն սրբէք, եւ զձէթն ուտէք, դուք զիշոյ եւ զջորոյ կաշին ոչ մաշէք. ահա փեղն պիղծ եւ ոսկրն՝ սուրբ. նոյնպէս գայլն, շնջրին, մուկն եւ այլք պիղծք են եւ միսն **մուրտառ,** եւ զմորթն զգենումք: Այս է պատճառն, զոր ինչ արուեստն գործէ, սուրբ է եւ պիտանի, նոյնպէս ձիենին եւ ձարն սրբին արուեստիւն:

72. Ա-ն ունի. Եւ թէ ասեն, թէպէտ զհոգւոյ մեղս ոչ սրբէ ջուրն, այլ զմարմինն կարէ սրբել: Ասեմք. մեղքն թէ հոգոյ է եւ թէ մարմնոյ ըստ ներգործութեանն ոչ մնայ ոչ ի հոգին եւ ոչ ի մարմինն, զի անցեալ է եւ գործեալ, իսկ ըստ ունակութեանն մնայ միայն ի հոգին, այլ ոչ ի մարմինն:

73. Բնագրում՝ ի **հաճն**:

77. Բնագրում՝ **զաքաթն**:

75. Ա-ն ունի. Այլ եւ ի գալ ճշմարտութեանն եւ լուսոյ, անպիտան է օրինակն եւ ստուերն: Դարձեալ՝ այլ էր սրբութիւն նոցա եւ այլ՝ լուացումն ձեր. նախ զի նոցա քահանայքն միայն սրբէին, եւ դուք առհասարակ ժողովուրդք այր եւ կին: Երկրորդ՝ եւ յորժամ ի սրբութիւնն մտանէին, եւ դուք՝ յարաժամ: Երրորդ՝ նոքա զձեռս եւ զոտս միայն, եւ դուք զայլ անդամսն: Չորրորդ՝ եւ զմեղս խոստովանէին ընդ ջրոյն, եւ դուք՝ ոչ: Հինգերորդ՝ նոցա այն մարմնոյ էր սրբութիւն, եւ դուք հոգոյ ասէք սրբութիւն, ապա ուրեմն ոչ է նման սրբութիւն նոցա եւ լուացումն ձեր: Դարձեալ՝ թէ զնոցայն ունիք լուացումն, զհին օրէնքն ունիք, եւ ջիտին էք հաւասար, ապա ոչ է օրէնք ձեր նոր, որպէս դուք ասէք: Եւ թէ ասեն. ապա ընդ հնոյն եւ մարգարէիցն ունիմք զօգուտն ի լուանալն, ասեմք, թէ ոչինչ է օգուտ, զի հինն էանց, եւ անպիտան է, որպէս այժմ ջիտին լուացումն, եւ զնոր մկրտութիւնս ոչ ունիք, ապա ուրեմն ոչինչ է օգուտ լուացումն ձեր:

76. Ա-ն ունի. Դարձեալ՝ ութօրեայ թլփատութիւնն նշանակէր զութերորդ դարն, որ դասք մեղաւորացն հատանին եւ ի հուրն ընկենուն, եւ արդարքն ամբողջ մնան, եւ յայտ է յայնմանէ, զի նշանն ի ձեռս, կամ յականջս կամ յընդընկունս, կամ այլ ինչ մասն ոչ հրամայեաց դնել, այլ ի մասն այն, որ ուն զաւելորդ մորթն, ապա ուրեմն թլփատութիւնն նշան է եւ ոչ արդարութիւն: Դարձեալ՝ նշան է բազմութեան զաւակաց, զի մի ցրեսցի սաղմն եւ վիժեսցի, ուստի յայտ է, զի օրէնք բազում կանայս եւ հարճս հրամայեաց առնուլ, եւ ամուլն խոտան էր ի նոցա մէջն: Իսկ մեզ կուսութիւն եւ պարկեշտութիւն պատուիրեաց հոգեւոր զաւակ եւ ոչ մարմնաւոր:

77. Այս կապակցութեամբ Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան մէջ կարդում ենք, թէ Մահմեդը թլփատում էր ոչ միայն արուներին, «այլեւ զկանայս անգամ, որով գարշելի այպանեաց զնշանակ ուխտին Տեառն» (տե՛ս **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ,** Ժամանակագրութիւն, էջ 150): Ի դէպ, որոշ մուսուլմանական երկրներում պահպանուել է աղջիկներին թլփատելու նախահիսլամական սովորոյթը. տե՛ս Ислам. Краткий справочник, с. 107:

78. Ա-ն ունի. Որպէս Մովսէս օրէնս եդ՝ բաղարջ հաց ընդ եղեգի ուտել ի պահքն, եւ գառն զենուլ ի զատկին, եւ այս օրէնք մեզ ի նորս աւանդեցաւ:

79. Ա-ն ունի. իսկ Եղիա պահեաց քառասուն օր, այլ բաղարջ ի հաճարէ եկեր միանգամ, եւ ջուր միայն:

80. Ռամատան /Ռամազան/. մուսուլմանական օրացոյցի իններորդ ամիսը, որ նուիրուած է պահքին: Ըստ աւանդութեան այդ ամիս Մուհամմեդին տրուեց առաջին յայտնութիւնը: Պահքի ժամանակ ցերեկը արգելւում է ուտել, խմել, զուարճանալ, իսկ մայրամուտից յետոյ եւ արեւածագից առաջ թոյլատրւում է. տե՛ս Ислам. Краткий справочник, М., 1983, с. 96: Այս պարագան արձանագրուած է նաեւ Պօղոս, Սամուէլ, Գրիգոր վարդապետների անունով կենցաղավարող «Յաղագս բուն բարեկենդանին» երկում. ՄՀ, հտ. Ժ, էջ 738 [18]:

81. Ա-ն ունի. Դարձեալ՝ պահք եդաւ վասն խստութեան մարմնոյ, զի զսպեսցի ի փափկութենէ եւ ի գիրութենէ, այլ ի պահքն ձեր առաւել փափկանայք եւ գիրանայք զանազան կերակրովք եւ յաճախ ուտելով:

Դարձեալ՝ պահքն ապաշխարութիւն է գործեցեալ մեղաց, այլ ի պահքն ձեր գործէք զամենայն **ֆասատ**ութիւն (= արաբ. ֆեսատաթ. ա/ ապականութիւն, ախտ, բիծ, պակասութիւն, բ/ օրինազանցութիւն, անկարգութիւն, չարութիւն, ժանտութիւն, չարիք, ոճիր.

տե՛ս «Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ…», էջ 1009) եւ զանիրաւութիւն, եւ զամենայն պղծալից գործս:

Դարձեալ՝ պահքն է պահպանութիւն խորհրդոց, բանից եւ զգայարանացն: Արդ, ի պահքն ձեր նոյնպէս ունիք զչար խորհուրդն ի միտս ձեր ու զչար խօսս ի լեզուս եւ զիւրաքանչիւր զգայարանս անխափան ի գործս իւր, զձեռս ի զրկանաց եւ ի կաշառոց, զոտս ի չար գնացս, զաչս ի հայեցուածոց եւ զականջս ի լուր: Ոչ, ուրեմն, ունիք սրբութեամբ պահք:

82. Բսմիլա – բիսմի – լյահի – ռ – ռախմանի – ռ - ռահիմ = «Ողորմած, գթասիրտ Ալլահի անունով»: Ղուրանի գրեթէ բոլոր սուրահները սկսւում են այս բանաձեւով: Այն արտաբերւում է աղօթքից կամ իւրաքանչիւր գործ սկսելուց առաջ. տե՛ս Ислам. Краткий справочник, с. 42:

83. «Դմշխ»-ը Դամասկոսն է:

84. «Սունի = սուննա». արաբ. «ճանապարհ», «օրինակ»: Իսլամի հոսանքներից մէկը, որը ծայրայեղ պահպանողական վերաբերմունք ունի Մուհամմեդի անուան հետ կապուած աւանդութիւնների եւ ասոյթների (= խադիսներ) նկատմամբ: Սուննիզմի հետեւորդները կրում են աքլ - սուննա (= սունիի մարդիկ) անունը:

85. Ա-ն ունի. Այլ եւ Մահմէտն ձեր գրեալ եւ աւանդեալ, թէ յոր վայր որ իցէ հայ մարդ, զամենայն զենմունքն նա առնէ, եւ **հալալ** է, եւ թէ **ֆարսանգ** մի հեռի ի չորս կողմանց ոչ իցէ քրիստոնեայ, ապա տաճիկն զենցէ: Ապա եթէ դուք ուրանայք զայս եւ ծածկէք, այլ ի Դմշխ:

86. Բնագրում՝ **թասուպ**ութիւն. արաբ. ta, ssub, որ նշանակում է մոլեռանդութիւն, անհանդուրժողութիւն. տե՛ս Միջին հայ. բառ. Ա, էջ 250:

87. Ա-ն ունի. Եւ դարձեալ թէ այսպէս խտրող էք զենմանց, զձուկն զոր քրիստոնեայք հանեն ի ջրոյ, ընդէ՞ր դուք ուտէք: Զոր ահա խաչ կայ ի գլուխն, եւ ի ձեռն քրիստոնեայ մարդոյ մեռանի ի բազում տեղիս:

88. Ա-ն ունի. Զի ասէ իմաստասէրն, թէ սուտ է, որ ոչ համաձայնի իրն ընդ ձայնին, որպէս ասելն ոսկի քարին: Այսպէս եւ ասելն օրինաց նոցա **մուսուլման** (արաբ. «մուսլիմ», որ բառացիօրէն նշանակում է՝ իրեն նուիրած Ալլահին. տե՛ս Ислам. Краткий справочник, с. 82), այսինքն՝ սրպիկ հաւատ, ոչ համաձայնի իրի նոցա, քանզի անուամբ միայն են եւ ոչ գործով, որպէս գերեզման բռեալ (տե՛ս Մտթ. ԻԳ 27):

Երկրորդ՝ զի զոր ինչ կարէ ոք առնել, զայն արժան է ուսուցանել. այսմ եւ Տէր վկայէ, որ արասցէ եւ ուսուսցէ (տե՛ս Գործք Ա 1): Իսկ ազգն այն ամենեքեան միաբան գովեն զարդարութիւն եւ զխաղաղութիւն, եւ ոչ ոք առնել կամի ամենեւին: Զի ոմն ի նոցանէ մի մասամբ չար եւ այլք զբովանդակն ունին, եւ ոչ մի ի նոցանէ ոչ խոտեցան յազգն իւրեանց:

Երրորդ՝ զի ոչ երբեք ի խաւարէ լոյս եւ ոչ ի չարէ՝ բարի: Արդ, ասեն նոքա եթէ ոք քրիստոնեայ կողոպտէ կամ սպանանէ՝ արքայութիւնն նմա է, զոր եւ ոչ կարի կռապաշտքն ասէին յառաջքն: Ըստ այնմ եւ ոմանք ի նոցանէ ոչ ուտեն զայլոցն՝ **հարամ** ասելով, որ եւ այս կարի հակառակ երեւի այնմ:

Չորրորդ՝ զի ամենայն ոք զայն ասէ Աստուած, յորոյ անունն երդնու եւ ի յՕրէնսն եւս գրեալ է. Երդնուցուս յԱստուած ճշմարիտ (տե՛ս Բ Օր, Զ 13): Իսկ ազգն Տաճկաց զխորոպճին կնոջ աստուած պաշտեն: Եւ յայտ է յերդումն իւրեանց, զոր **թալեղ** կոչեն նոքա, եւ այն ըստ նոցա անքակելի, զոր եւ քրիստոնեայք զերդումն, որ առ ճշմարիտն Աստուած, ոչ այնպէս պահեն որպէս եւ նոքա:

Հինգերորդ՝ զի ամենայն ոք զԱստուած իւր պաշտէ եւ երկիր պագանէ, որ եւ կռապաշտքն նոյնպէս երկիր պագանէին, յայտ է յԱստուածաշունչ գիրն: Իսկ ազգն Տաճկաց զայն որ պաշտեն եւ երդնուն, պղծեն՝ յամենայն ժամ չար առնելով ընդ նոսա:

89. Ա-ն ունի. Եօթներորդ՝ զի ամենայն օրէնք սակս այն գրեցան, զի պարկեշտասցին մարդիք ի յանյագ ցանկութեանց. եւ յայտ է, զի յոչ լինել օրինացն եւ պարկեշտութեանն, ջրով կորեան, որպէս ասէ Գիր. «ուտէին եւ ըմբէին, կանայս առնէին եւ արանց լինէին, մինչեւ» (Ղուկ. ԺԷ 27): Իսկ ազգն Տաճկաց, թէ ոք բազում ուտէ՝ քաջ ասեն եւ հռոգս տան, եւ հրապարակաւ չարիս առնելով ընդանի ասեն լինել Աստուծոյ:

90. բնագրում՝ «հաճն». արաբ. haji. նշանակում է ուխտ, ուխտաւոր. տե՛ս Միջին հայ. բառ. Բ, էջ 8:

91. Բնագրում՝ «մահր». արաբ. mahr. նշանակում է ամուսնական ընծայ, որ փեսան տալիս է հարսնացուին. տե՛ս Միջին հայ. բառ. Բ, էջ 102:

92. Բնագրում՝ «ղիամաթ». արաբ. qiamat, պրսկ. giyamat, թուրք. kiyamet. աշխարհի վերջ, աշխարհի վախճան, նաեւ՝ մեռեալների յարութիւն, ահեղ դատաստան. տե՛ս Միջին հայ. բառ., Բ, էջ 73:

93. Ա-ն ունի. Եւ թէ Մահմէտին անունն՝ զայլն ամենայն յերկինս տանի, ինքն Մահմէտ ընդէ՞ր յերկրի եւ ոչ յերկինս: Այսպէս եւ զայլ ամենայն չարիս եւ զհայհոյիչ ստութիւն նոցա, զոր բանիւ եւ զոր գործով ունին, խնայեմ ի թղթի գրել, զի մի՛ տաղտկասցին սուրբ լսելիք ձեր: Այլ այս փոքր ի շատէ, զի ծանիցէք զմոլար օրէնքն նոցա, եւ բան առ բան պատասխանիցէք, եւ մի՛ յաղթիցիք:

94. «Ջհուդ»-ի այսօրինակ ստուգաբանութիւնը հաւանաբար քաղուած է «Բառք եբրայեցւոց» բառարանի վաղնջական մի տարբերակից, որ կիրառուել է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ում, ուր «Յուդաս» անունը, որի այլափոխեալ տարբերակը «ջհուդ»-ն է, թարգմանուած է՝ «խոստովանութիւն կամ գովութիւն» («Բառգիրք», էջ 232): Գրիգոր Տաթեւացուց առաջ նոյն ստուգաբանութիւնը տուել է Ներսէս Լամբրոնացին իր Երկոտասան մարգարէից մեկնութեան մէջ. «Այլ եկեղեցի խոստովանող Քրիստոսի, զի Յուդան խոստովանութիւն լսի». տե՛ս «Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից՝ արարեալ երանելւոյն Ներսիսի Լամբրոնացւոյ… աշխատասիրութեամբ Անդրեաս վրդ. Նարինեան Ակնեցւոյ», Կ. Պոլիս, 1826, էջ 115:

95. Տաթեւացին ամենայն հաւանականութեամբ նկատի ունի Թալմուդի նշանաւոր մեկնիչ Իմ-Թոբ բեն Աբրահամ Իշբիլին (մահ. նախքան 1329 թ.): Նրա անունով յայտնի է եղել նաեւ Հնգամատեանի դաւանական, բարոյախրատական ուղղուածութեան մի մեկնութիւն, որ չի հասել մեզ. տե՛ս **А. Драбкин,** Иом-Тобь б. Авраам Ишбили. «Еврейская энц.» т. 8, с. 804-805:

96. Նկատի ունի ս. Կիւրեղ Ալեքսանդրացուն (+444 թ.):

97. Տե՛ս տպ. «Գիրք Պարապմանց», Կ. Պոլիս, 1717:

98. Առաքեալների մէջ Պետրոսի գերագահութեան վերաբերեալ կաթոլիկեան գաղափարը մասնաւոր առարկութեան է արժանացել Մխիթար Սկեւռացու կողմից (1263 թ.). տե՛ս «Պատասխանիք Մխիթարայ քահանայի Սկեւռացւոյ՝ յաղագս համապատուութեան երկոտասան առաքելոց», Երուսաղէմ, 1865. աշխրհ. թրգմ. Ա. Բոզոյանի, «Գանձասար». Աստուածաբանական հանդէս. Ե, Եր., 1994, էջ 138-157, Զ, Եր., 1996, էջ 403-420:

99. «Նեռ» անուան տաթեւեան ստուգաբանութիւնը. «Յօժարակամ ուրանում եմ երկնքի եւ երկրի Արարչին եւ քեզ եմ հաւատում»: Գրաբարում՝ «Ուրանամ Կամաւ զԱրարիչն…», որոնց առաջին տառերը՝ ՈԿԶ = 666՝ «Նեռ» անուան թուային արժէքն են կազմում. տե՛ս **Ս. Գրիգոր Տաթեւացի,** Ոսկեփորիկ, աշխրհ. թրգմ. ծանօթ. Հ. Քյոսեյանի, Եր., 1995, էջ 141:

100. Քրիստոսի մարմնի աստուածայնութեան վարդապետական դրոյթը պատկանում է ս. Կիւրեղ Ալեքսանդրացուն:

101. Յովհան Դամասկացի (+749). դասական հայրախօսութեան վերջին ներկայացուցիչը, ով ի մի բերեց Արեւելաքրիստոնեական աստուածաբանութեան դարաւոր աւանդները: Նրա երկերի («Իմացութեան աղբիւր», «Սրբազան զուգահեռներ», «Սուրբ Երրորդութեան մասին», «Աստծոյ պատկերի մասին», «Մարդու բնութեան մասին», «Ընդդէմ սրբապատկերները նշաւակողների» եւ այլն. տե՛ս PG, t. 94-96) ճնշող մեծամասնութիւնը հայերէն է թարգմանուել վրացերէնից միարարական միջավայրում Սիմեոն Պղնձահանեցու ջանքերով (1248 թ. առաջ): Միտքը քաղուած է Դամասկացու «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» երկի ԺԶ՝ «Վասն հրեշտակաց» գլխից:

102. Միտքը քաղուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Ի սուրբ Պասքայ» ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 948, թ. 204 բ:

103. Արիոսյան վարդապետութեան համար հիմք դարձած այս տեղիի (Առակ. Ը 22) դասական բացատրութիւնը տրուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Աստուածաբանութեան մասին» ճառաշարի Դ ճառում, ուր նա հաստատում է, թէ «ինձ ստեղծեց»-ը վերաբերում է մարդկային բնութեան ստեղծմանը, «իր գործերի համար»-ը մատնացոյց է անում մարդացման նպատակը, իսկ «յաւիտենութիւնից էլ առաջ ստեղծեց ինձ» խօսքը ակնարկում է նախայաւիտենական ծնունդը. տե՛ս **Հ. Քյոսեյան,** Եկեղեցու հայրեր, վարդապետներ. IV-VIII դդ. Եր., 2007, էջ 110:

104. Յունարէն ձեռագրերում ս. Անտոնի (+356) անունով կենցաղավարում են նամակներ, կանոններ, ճառեր եւ այլն (տե՛ս PG, t. 40, 953-1102): Հայ մատենագրութեան մէջ առկայ են ս. Անտոնի օրինակարգած վանական «կարգերը»: Նրա հոգեւոր իմաստա-

խօսութիւններից բազում վկայութիւններ են բերուած Հարանց վարքերում («Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին, ըստ կրկին թարգմանութեանց նախնեաց», հտ. Ա-Բ, Վենետիկ, 1855): Ս. Անտոն Անապատականի վարքը շարադրուած է ս. Աթանաս Ալեքսանդրացու կողմից: Այն հայերէն է թարգմանուած Ե դ. («Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899, էջ 533-614). տե՛ս **Հ. Ս. Անասեան,** Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Եր., 1959, էջ 969-971:

105. Նկատի ունի Երկրորդ՝ Կ. Պոլսի (381) տիեզերաժողովը, երբ հռչակուեց Ս. Երրորդութեան հրամանակարգը (դոգման):

106. Ինչպէս երեւում է, քաղուած է Սիրաքի Իմաստութեան հայերէն թարգմանութեան մեզ անյայտ մի տարբերակից. այս մասին առհասարակ տե՛ս **Գ. Վ. Աբգարեան,** Սիրաքի գրքի հնագոյն թարգմանութեան նորայայտ հատուածներ, «Էջմիածին», 1966, ԺԱ-ԺԲ, էջ 59-70, Սիրաքի գրքի հնագոյն թարգմանութեան առթիւ, «Էջմիածին» /լրացում/, 1968, Բ, էջ 62:

107. Շարադրուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Առ Կղեդոնիոս» Առաջին թղթի եւ «Յաղագս Որդւոյ» Առաջին ճառի համապատասխան տեղիների վերապատումով. տե՛ս ՄՄ, ձեռ. 4149, թ. 146ա -147ա, 31աբ, 55բ - 57ա:

108. Այսինքն՝ եղական աշխարհի: Այս մտածումի հիմքում ընկած է աստուածաբանական այն ճշմարտութիւնը, որ եթէ Որդին **ծնուած** է (ոչ թէ արարուած է) Հօրից անհրաժեշտապէս, ապա նիւթական աշխարհը **արարուած** է Հօր կամքով եւ կամքից:

109. Իմաստային ամփոփ վկայութիւնն է Ս. Կիւրեղ Ալեքսանդրացու անուամբ յայտնի «երկոտասան» նզովքներից Գ նզովքի. տե՛ս «Գիրք Պարապմանց», էջ 480:

110. Վկայութիւնը Ս. Աթանաս Ալեքսանդրացու (+373) «Առ Արիոս» եւ «Յաղագս մարմնաւորութեան Որդւոյն եւ Սրբոյ Երրորդութեան» ճառերի համապատասխան հատուածների իմաստային վերապատումն է. տե՛ս «Սրբոյն Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899, էջ 34, 236:

111. Քաղուած է. Դաւիթ Անյաղթ, Փիլիսոփայութեան սահմանումները, պր. Գ տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկեր, աշխրհ. թրգմ. եւ ծնթ. Ս. Արեւշատյանի, Եր., 1980, էջ 49:

112. «Աստուած»-ի այսօրինակ ստուգաբանութիւնն առկայ է Խոսրով Անձեւացու Ժամակարգութեան մեկնութեան (էջ 99), Պատարագի մեկնութեան (էջ16), Վանական վարդապետի Ամբակումի աղօթքի բացատրութեան, նրա «Հարցմունք եւ պատասխանիք» երկում, Ներսէս Լամբրոնացու Պատարագի մեկնութեան (Լամբ. Մատեն., էջ 349) մէջ եւ այլուր. տե՛ս Արմ. բառ. Ա, էջ 280-282:

113. Ակնարկում է Աբրահամ նահապետի՝ Մելքիսեդեկին տասանորդ տալը. տե՛ս Ծննդ. ԺԴ 20:

114. Նկատի ունի Պօղոս Թեբայեցուն (+341), Անտոն Անապատականին (+356), որոնց ճգնական սխրանքի մասին է պատմում Հարանց վարքը. տե՛ս «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին ըստ կրկին թարգմանութեանց նախնեաց», հտ. Ա-Բ, Վենետիկ, 1855:

115. «Լցուած երկնքի փորուածքներում» արտայայտութիւնն առկայ է Զաքարիա Ջագեցու ճառերում. տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 957 («փորուած»):

116. Միտքը քաղուած է Դաւիթ Անյաղթի Պորփիւրի Ներածութեան Վերլուծութիւնից. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 657 («եղջերուաքաղ») հմմտ. «Որովհետեւ Պլատոնը ասում էր, թէ չգոյը գոյութիւն չունի ոչ մտածօրէն, ոչ էլ իրականում. դրա համար էլ եղջերուաքաղի մասին նա ասում էր, թէ այն ոչ մի ձեւով չունի գոյութիւն, որովհետեւ նա գոյութիւն չունի նոյնիսկ մտածօրէն». տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկեր, աշխրհ. թրգմ., էջ 212:

117. Փիւնիկ թռչունի մասին այս պատումը (տե՛ս եւ հմմտ. Physiologus, p.103-104, 174-175, ԲՄ, թիւ 23, 2016, 312-313) ինչպէս երեւում է քաղուած է Տաթեւացու երդուեալ հակառակորդի, միարարական շարժման հետեւորդ Մխիթարիչ Ապարանցու տրամախօսական երկից. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 369 («արմաւ»):

118. Նկատի ունի Մակեդոնի (Կ. Պոլսի եպիսկոպոս 342-360 թթ.) եւ նրա հետեւորդների վարդապետութիւնն, ըստ որի Ս. Հոգին համագոյ չէ Հօրը, ուստի Աստուած չէ: Այս վարդապետութեան հերքումը տրուած է ս. Աթանաս Ալեքսանդրացու՝ Սերապիոն Տմուիդցուն յղուած Ա թղթում. տե՛ս Св. Афанасий Великий, Творения, т. 3, նաեւ՝ «Նորին ի բանէն որ յաղագս Սրբոյ Հոգւոյն». «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրիոյ հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», աշխտ. Կարապետ Ծ. վրդ. Տէր-Մկրտչեան, Երուանդ վրդ. Տէր-Մինասեան, էջմիածին, 1908, էջ 13:

119. Միտքը քաղուած է Դաւիթ Անյաղթի Պորփիւրի Ներածութեան Վերլուծութիւնից. «Կենդանի՝ գոյացութիւն ներշնչական զգայական...». տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 420 («ներշնչական»):

120. Այս ընդարձակ վկայութիւնը քաղուած է Յովհան Ոսկեբերանի «Յաղագս հաւատոյ» (որ ՄՄ, թիւ 988 ձեռագրում՝ թ. 121ա - 139բ՝ կրում է «Յաղագս Յարութեան» խորագիրը) ճառից: Վկայութիւնը խմբագրումն է ճառի համապատասխան հատուածի: Այն վկայակոչուել է նաեւ «Կնիք հաւատոյ» դաւանաբանական ժողովածուի մէջ՝ «Ի սուրբ Երրորդութիւն» խորագրով. տե՛ս տպ. 1914, էջ 47-48:

121. Մինչդեռ հայ. ընկալեալ թարգմանութեան մէջ. «թլփատութիւնն մեք եմք, որ Հոգւովն Աստուծոյ պաշտեմք» (= «թլփատութիւնը մենք ենք, որ Աստծուն ծառայում ենք Հոգով...»):

122. Քաղուածքն ակնարկում է Յովհան Ոսկեբերանի՝ Հռոմայեցիներին յղուած թղթի մեկնութեան հետեւեալ հատուածը. «Պէս-պէս եւ ազգի ազգի պարգեւս բաշխէր Աստուած մկրտելոցն յայնժամ, զոր եւ հոգի իսկ կոչէին. «Քանզի եւ հոգիք մարգարէից, ասէ, հնազանդէին»: Ոմն ունէր մարգարէութեան շնորհս, եւ յառաջագոյն ասէր զհանդերձեալսն եւ միւսն իմաստութեամբ ուսուցանէր զբազումս, եւ այլ ոմն զբժշկութեան, եւ ողջացուցանէր զախտացեալսն...». տե՛ս «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի», հտ. Բ, Վենետիկ, 1862, էջ 184:

123. Վկայութիւնը քաղուած է Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 144 (II, 7) տող 16-19:

124. Բառացիօրէն վկայաբերուած է Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 142 (II 5) տող 10-11:

125. Նկատի ունի Նիկիայի (325), Կ. Պոլսի (381), Եփեսոսի (431) Տիեզերաժողովները:

126. Վկայութիւնը քաղուած է Յովհան Դամասկացու «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» երկի Ը՝ «Վասն Սուրբ Երրորդութեան» գլխից. Յովհան Դամասկացու երկերից բերուած այս եւ միւս վկայութիւնների աղբիւրները մատնացուցուած են նրա երկերի հայերէն թարգմանութիւնների քննական բնագրերը պատրաստած բանասիր. գիտութ. դոկտոր Գոհար Մուրադեանի օգնութեամբ:

127. Վկայութիւնը բերուած է Գրիգոր Աստուածաբանի «Յաղագս Որդւոյ» ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 1500, թ. 806բ-810ա:

128. Վկայութիւնը քաղուած է Գրիգոր Աստուածաբանի «Յաղագս Որդւոյ» Ա ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 4149, թ. 19ա:

129. Վկայութիւնը քաղուած է Գրիգոր Աստուածաբանի «Առ որս» ճառաշարի «Խաղաղական երկրորդ» ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 1500, թ. 839ա - 941բ:

130. Վկայութիւնը քաղուած է Գրիգոր Աստուածաբանի «Առ որս» ճառաշարի «Յաղագս հաւատոյ» ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ.4149, թ. 13 ա:

131. Քաղուած է Գրիգոր Աստուածաբանի «Յաղագս հաւատոյ» ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 4149, թ. 16 ա:

132. Քաղուած է Դաւիթ Անյաղթի «Սահմանք»-ից. պր. Դ. տե՛ս Երկեր, աշխրհ. թրգմ. էջ 55, նաեւ՝ Ժղլանք, թ. 52 բ:

133. Բնագրի «ոչ փոխարկաբար, այլ՝ փոխատրապէս» արտայայտութիւնը բառացիօրէն քաղուած է Բարսեղ Կեսարացու «Ի ծնունդն Քրիստոսի» ճառից. «Որպէս երկաթ ընդ հրոյ միաբանեալ՝ ընդունի զհուրն, **ոչ փոխարկաբար, այլ՝ փոխատրապէս (փոխադրաբար)».** տե՛ս ՀԱ, 1968, էջ 422, տող 44-61:

134. Դաւանաբանօրէն տարողունակ այս արտայայտութիւնը՝ «եկաց մնաց որ ինչ էրն, եւ եղեւ, որ ինչ ոչն էր»՝ առկայ է Յովհան Ոսկեբերանի Փիլիպպեցւոց թղթի մեկնութեան մէջ. «Մնալով այն, ինչ էր, Նա եղաւ այն, ինչ չէր». տե՛ս **Հ. Քյոսեյան,** Եկեղեցու հայրեր, վարդապետներ, էջ 177:

135. «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» քրիստոսաբանական յայտնի բանաձեւը կիրառուած է ս. Կիւրեղ Ալեքսանդրացու Սեկունդոսին յղած Առաջին թղթում. տե՛ս «Գիրք Պարապմանց», էջ 409:

136. Քաղուած է Գրիգոր Աստուածաբանի «Խօսք ի ծնունդն Քրիստոսի» ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 1500, թ. 724բ-727ա. Այս տեղին («յորոց մինն աստուածացոյց եւ մին աստուածացաւ») վկայակոչում է նաեւ Յովհան Դամասկացին. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 325 («աստուածակից»):

137. Միտքը քաղուած է Գրիգոր Աստուածաբանի «Ի սուրբ Պասքայ» ճառից. ՄՄ, ձեռ. 946, թ. 107բ-108ա:

138. «**Բնութիւնք երկուք**, քանզի Աստուած եւ Մարդ եւ զի հոգի եւ մարմին, բայց Որդիք ոչ երկուք». տե՛ս Առ Կղեդոնիոս Ա թուղթ, ՄՄ, ձեռ. 4149, թ. 142 ա:

139. Քրիստոսաբանական այս յայտնի բանաձեւը քաղուած է ս. Աթանաս Ալեքսանդրացու «Արտադրութիւն առաքելական՝ յաղագս աստուածայնոյն մարմնաւորութեան Աստուծոյ Բանի» ճառից. տե՛ս «Սրբոյն Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899, էջ 281:

140. Մարկելոս Անկիւրացին (+շուրջ 374 թ.). եղել է արիոսականների ոխերիմ հակառակորդն ու ս. Աթանաս Ալեքսանդրացու խոհակիցը, ով Առաջին Տիեզերաժողովի հռչակած համագոյութիւնը ջատագովում էր այնպիսի հիմնաւորումներով, որոնք ստիպում էին արեւելեան հայրերին նրան կասկածել սաբելականութեան մէջ: Մինչդեռ արեւմտեանների համար այդ հիմնաւորումները միանգամայն ընկալելի էին, քանզի դրանք յիշեցնում էին Տերտուղիանոսի հայեացքները: Մարկելոսին է աշակերտել Զմիւռնիայի Փոտինոս եպիսկոպոսը: Ի տարբերութիւն իր ուսուցչի, հետեւելով Պօղոս Սամոսատցուն, Փոտինոսը պնդում էր, թէ Որդին չունի անձնական կեցութիւն, յաւիտենականութիւնից առաջ չի ծնուել Հորից, այլ Աստծոյ Խօսքով ներշնչուած հասարակ մարդ է: Փոտինոսը դատապարտուեց ոչ միայն Անտիոքի (345) եւ Միլանոյի (347) ժողովներում, այլեւ՝ Զմիւռնիայի ժողովում (351): Մահացել է աքսորում, 375 թ. տե՛ս Христианство, энц. т. 2, с. 88, т. 3, с. 142:

141. Պօղոս Սամոսատցի (Գ դար). հակաերրորդական հերձուածի պարագլուխ. եղել է Անտիոքի եպիսկոպոսը (260-262): Ըստ նրա ուսմունքի Յիսուս եղել է պարզ մի մարդ, Բանը՝ Խօսքը նրա մէջ բնակուել է այնպէս, ինչպէս Մովսէսի եւ միւս մարգարէների մէջ՝ մի փոքր աւելիով: Թէպէտ նա Աստծոյ Որդի է կոչուել, սակայն Աստծոյ հետ չի ունեցել անձնաւորական յարաբերութիւն: Ս. Երրորդութեան մէջ անձերը տարբեր չեն. Բանը եւ Ս. Հոգին իրարից չեն զանազանւում այնպէս, ինչպէս մարդու բանականութիւնն ու հոգին: Նրա ուսմունքը դատապարտուել է ս. Դիոնիսիոս Ալեքսանդրացու կողմից. տե՛ս Христианство, энц. т. 2, с. 269-270:

142. Դիոդորոս Տարսոնացի (+391/ 392).Աստուածաշնչի մեկնութեան Անտիոքեան դպրոցի խոշորագոյն ներկայացուցիչներից մէկը: Եղել է Թեոդորոս Մոփսուեստացու եւ Յովհան Ոսկեբերանի ուսուցիչը, Նիկիական դաւանութեան հետեւողական պաշտպանը: Որպէս Տարսոնի եպիսկոպոս (378) մասնակցել է Երկրորդ Տիեզերաժողովին (381): Նրա կարծիքը համարուել է ուղղափառութեան չափանիշ: Այսուամենայնիւ նրա ժառանգութիւնից պահպանուած որոշ հատուածներ ենթադրել են տալիս, թէ նա շեշտը դրել է Քրիստոսի մարդկային բնութեան վրայ: Այդ են վկայում հետեւեալ տողերը. «Մարիամի Որդին իրեն դրսեւորում էր իբրեւ մարդ: Նա յոգնում էր եւ հագնում հագուստ: Նա քաղցած էր եւ ծարաւ: Նա խաչուեց: Նրա կողը խոցուեց եւ այնտեղից դուրս հորդեց արիւն եւ աւիշ: Եւ նա մահացաւ ու մաքրագործուեց…»: Դիոդորոսը տարբերում էր Դաւթի որդուն Աստծոյ Որդուց. ըստ նրա «Դաւթի որդին Աստծոյ Որդու հասարակ տաճարն է, բնակութեան վայրը»: Լոգոսը ոչ թէ Դաւթի որդին է, այլ Դաւթի Աստուածը: Ինչպէս երեւում է, Դիոդորոսի քրիստոսաբանական դիրքորոշումը պատճառ է դարձել նրան մեղադրելու «երկու Որդու» մասին հերետիկոսական ուսմունքի մէջ: Ուստի պատահական չէ, որ Կիւրեղ Ալեքսանդրացին նրան համարել է Նեստորի նախակարապետ (Contra Diodorum et Theodorum): Դիոդորոս Տարսոնացու ուսմունքը դատապարտուեց 499 թ. Կ. Պոլսի եկեղեցաժողովում. տե՛ս **Հ. Հովհաննիսյան,** Դիոդորոս Տարսոնացու քրիստոսաբանական հայացքները («Աստվածաբանության ֆակուլտետ. Տարեգիրք», 2012, էջ 58-67):

143. Քաղկեդոնական դաւանութեան վարդապետական հիմքերը նախանշուած են Լեւոնի Տոմարում («Սկզբնագիրք Տումարի սրբոյն Լեւոնի եւ սահմանի սուրբ ժողովայն Քաղկեդոնի, անաչառ եւ հաւատարիմ թարգմանութեամբ ի լոյս ընծայեալք, աշխատասիրեալ յաշակերտաց մեծին Մխիթարայ Աբբահօր», Վենետիկ, 1805), որի հայերէն միջնադարում յայտնի թարգմանական տարբերակների վերաբերեալ մանրամասն տե՛ս **Գ. Մուրադեան,** Քրիստոսաբանական վեճերին առնչվող երեք թարգմանական բնագիր. Ա. Լեւոնի տասնչորս գլուխները (հայհոյութիւնները), կամ Տոմար Լեւոնի, Բ. Լեւոնի նամակը Փլաբիանոսին կամ բուն Տոմար Լեւոնի, Գ. Զենոնի «Միաւորութեան գիր»-ը, ԲՄ, թիւ 22, Եր., 2015, էջ 402-472:

144. Եփեսոսի տիեզերաժողովը տեղի է ունեցել 431 թ.: Այն նախագահում էր ս. Կիւրեղ Ալեքսանդրացին: Ժողովը գումարուել է ընդդէմ Նեստորի քրիստոսաբանական հերձուածի, ըստ որի Քրիստոսի բնութիւնները երկատուած են. ուր ներկայ է Աստուած՝ բացակայում է մարդը, ուր բացակայում է Աստուած, այնտեղ ներկայ է մարդը:

145. Վկայութիւնն իրապէս քաղուած է ս. Աթանասի «Արտադրութիւն առաքելական յաղագս աստուածայնոյն մարմնաւորութեան Աստուծոյ Բանի» ճառից. քաղուածքը համառօտումն է ճառի համապատասխան մասի. տե՛ս «Սրբոյն Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899, էջ 281:

146. Բերուած է ս. Կիւրեղի առ Սեկունդոս Առաջին թղթից. տե՛ս «Գիրք Պարապմանց», էջ 409:

147. Բառացիօրէն քաղուած է «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան» երկի երրորդ գլխից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 84 (III, 3, 13) տող 15-17:

148. Բառացիօրէն քաղուած է «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան» երկի երրորդ գլխից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 83-84 (III, 3, 12) տող 23-24:

149. Բառացիօրէն քաղուած է «Յաղագս աստուածային անուանց» երկից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 146 (II, 10), տող 9-11:

150. Քաղուած է Դիոնիսիոս Արիսպագացու՝ Գայիոսին յղած Չորրորդ թղթից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 232 (IV), տող 12-15:

151. Քաղուած է Դիոնիսիոսի՝ Գայիոսին յղած Չորրորդ թղթից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 232 (IV), տող 15:

152. Քաղուած է Դիոնիսիոսի՝ Գայիոսին յղած Չորրորդ թղթից. տես Դիոնիսիոս, էջ 232-233 (IV), տող 19:

153. Քաղուած է Դիոնիսիոսի՝ Գայիոսին յղած Չորրորդ թղթից. տես Դիոնիսիոս, էջ 233 (IV), տող 1-2:

154. Քաղուած է Դիոնիսիոսի՝ Գայիոսին յղած Չորրորդ թղթից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 233 (IV), տող 8-10:

155. Քաղուած է Դիոնիսիոսի՝ Գայիոսին յղած Չորրորդ թղթից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 233 (IV), տող 10-13:

156. Իմաստային վերապատումով վկայաքաղուած է «Յաղագս աստուածային անուանց» երկի «Սրբոյն Յռեթեոսի յաղագս աստուածաբանականացն տարրութեանց» գլխից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 146- 147, տող 22-24:

157. Իմաստային վերապատումով վկայաքաղուած է «Յաղագս աստուածային անուանց» երկի «Սրբոյն Յռեթեոսի յաղագս աստուածաբանականացն տարրութեանց» գլխից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 148, տող 13-15:

158. Քաղուած է Դիոնիսիոսի՝ Գայիոսին յղած Չորրորդ թղթից. տե՛ս Դիոնիսիոս, էջ 233 (IV), տող 10-13:

159. Վկայաբերուած է Գրիգոր Աստուածաբանի Առ Կղեդոնիոս Երկրորդ ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ.1500, թ. 830ա - 831ա:

160. Բերուած է Պորփիւրի Ներածութիւնից. տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի… մատենագրութիւնք», էջ 228:

161. Քաղկեդոնի ժողովը տեղի է ունեցել 451 թ.: Այն գումարուել է ընդդէմ Եւտիքեսի ուսմունքի, որը բացարձակեցնում էր Որդու աստուածային բնութիւնը՝ աննշան տեղ յատկացնելով մարդկայինին: Սրան հակառակ Քաղկեդոնը շեշտում էր աստուածային եւ մարդկային բնութիւնների բացարձակ ինքնակայութիւնը:

162. Հուն. litaneia. «հաւուր պատշաճի աղօթք յոյն եւ լատին եկեղեցիներում». տե՛ս Միջին հայ. բառ., Ա, էջ 306:

163. Իմաստային ամփոփ վերապատումն է Կիւրեղ Ալեքսանդրացու «Առ բարեպաշտ թագաւորն Թէոդոս յաղագս ուղղափառ հաւատոյ, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս» երկի հետեւեալ տողերի. «Մի եւ նոյն էր Տէր Յիսուս Քրիստոս յերկրպագուես մարդկութենէ եւ յերկրպագելոյն Աստուածութենէ գոլ եւ անուանիլ Աստուած համանգամայն եւ մարդ ճշմարտապէս ունելով ի վերայ ինքեան». տե՛ս Գիրք Պարապմանց, էջ 260:

164. Բերուած է Գրիգոր Աստուածաբանի «Ի սուրբ Պասքայ» ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 946, թ. 107թ-108ա:

165. Ս. Կիւրեղի անունով բերուած այս միտքը քաղուած է նրա «Առ բարեպաշտ թագաւորն Թէոդոս Յաղագս ուղղափառ հաւատոյ, որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս» թղթից. տե՛ս Գիրք Պարապմանց, էջ 260:

166. «Քրիստոսածին» եզրը պատկանում է Կ. Պոլսի պատրիարք Նեստորին (428-431). փորձելով միջին գիծ որդեգրել ապողինարյան եւ արիոսյան տարընթաց հոսանքների մէջ (ապողինարականները Կոյս Մարիամին անուանում էին Աստուածածին, իսկ արիոսականները՝ մարդածին)՝ նա առաջարկում է «Քրիստոսածին» եզրը՝ չանտեսելով, սակայն, «Աստուածածին»-ը, որպէսզի գոնէ բացառուի այն մտայնութիւնը, թէ «Միածնի աստուածութիւնը սկիզբ է առել սուրբ Կոյսից»: Նեստորի հետեւորդներից մէկը պարզի-պարզո յայտարարեց, թէ Մարիամին չի կարելի Աստուածածին համարել, «քանզի Մարիամը մարդ էր, իսկ մարդուց չի կարող Աստուած ծնուել». տե՛ս Христианство энц. т. 2, с. 197-199:

167. Ալբերտ Մեծ (1193-1280). Լատին եկեղեցու նշանաւոր հայրերից մէկը: Եղել է Թովմա Աքվինացու ուսուցիչը: Թողել է բազում աշխատութիւններ, որոնք հրատարակուել են դեռեւս ԺԷ դ.: Հայերէն թարգմանութեամբ յայտնի են նրա «Յաղագս գաղտնեաց կանանց», «Գիրք գաղտնեաց յաղագս խոտից, ականց եւ կենդանեաց», «Դրախտ հոգւոյ յաղագս առաքինութեանց», «Համառօտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան», աշխատութիւնները: Վերջինս (Compendium theologicae veritatis) որ թարգմանութեան օրօք իսկ յայտնի է եղել գերազանցապէս «Ալբերտ – գիրք» անունով, իրապէս պատկանում է Հուգո Ռիպելինին: Երկն ունեցել է մի հին թարգմանութիւն, որից միայն մի փոքր հատուած է պահպանուել, ինչը հիմք է դարձել երկրորդ թարգմանութեան համար, որ իրականացուել է 1344 թ. Պետրոս Արագոնացու եւ Յակոբ Թարգմանի ձեռքով՝ Քռնա վանքում, որը յետագայում սրբագրուել ու տպագրուել է Մխիթար Սեբաստացու կողմից (տե՛ս **Յ.Անասեան,** Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Եր., 1959, էջ 389, **С. Аревшатян,** К истории философских школ средневековой Армении, Е., 1980, с. 21):Հաւանաբար Տաթեւացին իր ձեռքի տակ է ունեցել երկի հայերէն թարգմանութիւնը, որից եւ վկայաբերել է. տե՛ս «Համառօտութիւն աստուածաբանութեան երանելւոյն Մեծին Ալպերտի…», Վենետիկ, 1715, էջ 247-248:

168. Ըստ երեւոյթին նկատի ունի վաղ միջնադարի իսպանացի եկեղեցական գործիչ, աստուածաբան Իսիդորոս Սեւիլիացուն (մօտ 560-636) եւ նրա նշանաւոր «Ստուգաբանութիւններ»-ը (Etymologiae կամ Origines), որի հայերէն թարգմանութեան մասին որեւէ տեղեկութիւն չի պահպանուել: Հաւանաբար Տաթեւացին օգտուել է միարարական գրականութեան մէջ նրա մասին եղած տուեալներից կամ նրա յիշեալ երկի հատուածական մի թարգմանութիւնից:

169. Քաղուած է Յովհան Դամասկացու «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» երկի հայերէն թարգմանութիւնից:

170. Օգոստինոս Երանելին (354-430) լատին եկեղեցու հզօրագոյն սիւներից մեկն է: Թողել է աստուածաբանական պատկառելի ժառանգութիւն: Նրա երկերից մի քանիսը հայերէն են թարգմանուել միարարական միջավայրում ԺԳ-ԺԴ դդ.: Ըստ խորագրի, միտքը քաղուած է նրա De Trinitate աշխատութիւնից (PL t.42)՝ ըստ երեւոյթին դարձեալ միարարական թարգմանութիւնների միջնորդութեամբ:

171. Օգոստինոս Երանելուց յետոյ լատին եկեղեցու միւս խոշորագոյն հեղինակութիւնն է Թովմա Աքուինացին (1225-1274): Կաթոլիկ եկեղեցու պաշտօնական ուսմունքի բոլոր հանգուցակէտերը (1879 թ-ից ի վեր) հիմնուած են Աքուինացու սքոլաստիկ աստուածաբանութեան վրայ: Թողել է բազմաթիւ աշխատութիւններ, որոնց մէջ գլխաւորը հեղինակի Summa Teologiae («Հաւաքումն աստուածաբանութեան». տպ. Parm, 1825-74. t. 10-12) երկն է:Նրա աշխատութիւններից մի քանիսը հայացուել են միարարական միջավայրում ԺԴ դարի 20-40-ական թթ. (**С. Аревшатян,** К истории философских школ средневековой Армении, с. 20): Ամենայն հաւանականութեամբ միտքը քաղուած է Աքուինացու «Հաւաքումն աստուածաբանութեան» երկի մաս կազմող «Յաղագս տնօրինութեան Քրիստոսի» աշխատութիւնից:

172. Քրիստոսի Աստուածութեան եւ մարդկութեան անճառելի միաւորութիւնը ցոյց տալու նպատակով կիրառուած այս օրինակը, որի ակունքը Բարսեղ Կեսարացու «Ի ծնունդն Քրիստոսի» ճառն ու Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկն է, լայնօրէն օգտագործւում է հայ դաւանական գրականութեան մէջ. տե՛ս «Գանձասար». Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի աստուածաբանական հանդէս, Բ, Եր., 1992, էջ 218, ծնթ. 66ա-բ:

173. Քաղուած է Գրիգոր Աստուածաբանի «Ի սուրբ Պասքայ» ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 946, թ. 107բ-108ա:

174. Դիոնիսիոս Արիսպագացու աստուածաբանութիւնը ներկայ է միջնադարի քրիստոնէական մտքի գրեթէ բոլոր բնագաւառներում: Իր աշխատութեան մէջ Գրիգոր Տաթեւացին մասնաւոր բաժին է յատկացնում նրա աստուածաբանութեանը. իր գոյաբանական դիտումները հաստատելու համար երկի Գ հատորն ամբողջապէս հիմնում է Արիսպագացու ժառանգութեան վրայ: Վերջինիս աստուածաբանական վաստակի այսօրինակ կարեւորումն ուղղակիօրէն աղերսուած է Թովմա Աքուինացու աստուածաբանական ժառանգութեան հետ: Մասնագիտական գրականութեան մէջ (J. Durantel) հաստատուած է, որ Աքուինացին իր ժառանգութեան մէջ 1702 բանաքաղում է կատարում Արիսպագացուց. ըստ որում բանաքաղումներից աւելի քան 50-ը կրկնւում են: Սակայն, ինչպէս պարզուած է, բանաքաղումների մէջ համամասնութիւն չկայ. միայն «Յաղագս աստուածային անուանց» երկի Դ գլխից բերուած է 563 վկայութիւն, մինչդեռ Զ գլխից՝ 3, Գ-ից՝ 7. այս մասին տե՛ս **А. Ф. Лосев,** Начальные стадии неоплатонической эстетики ренессанса, «Типология и периодизация культуры Возраждения», М., 1978, с. 69-70: Ինչպէս դժուար չէ հասկանալ, պայքարելով կաթոլիկ աստուածաբանութեան դէմ, Գրիգոր Տաթեւացին նպատակադիր հետեւողականութեամբ օգտագործել է այն զինանոցը, որը կիրառուած էր սքոլաստիկ աստուածաբանութեան, մասնաւորաբար Թովմա Աքուինացու վարդապետական ժառանգութեան մէջ:

175. «Զինչ են ճառելիքն աստուածաբանութիւնքն զինչ անճառելիքն». «Յաղագս խորհրդականի աստուածաբանութեանն». տե՛ս Դիոնիսիոս, էջ 227-229:

176. «Յաղագս միաւորեցելոյ աստուածաբանութեանն, եւ թէ զի՞նչ է աստուածայինն միութիւն եւ անջատումն». «Յաղագս աստուածային անուանց». տե՛ս Դիոնիսիոս, էջ 136-147:

177. Վկայութիւնը բերուած է Գրիգոր Աստուածաբանի «Առ Որս» ճառաշարի «Խաղաղական Երկրորդ» ճառից. տես ՄՄ, ձեռ. 1500, թ. 839բ:

178. «Յաղագս աստուածային անուանց» II 5, 7. տե՛ս Դիոնիսիոս, էջ 142, 144:

179. Այս միտքը վարդապետօրէն յարաբերւում է որոգինեան այն տեսութեանը, թէ մարդը Բանի պատկերն է, այսինքն՝ Աստծոյ պատկերի պատկերը. տե՛ս **Եզնիկ ծ. վրդ.** Հայրաբանութիւն, Ա, Ս. Էջմիածին, 1996, էջ 153:

180. «Յաղագս էի, յորում եւ յաղագս յարացուցից». «Յաղագս աստուածային անուանց».V. տե՛ս Դիոնիսիոս, էջ 183-190:

181. «Յաղագս ամենակալին հնոյն աւուրց, յորում եւ յաղագս յաւիտենի եւ ժամանակի». «Յաղագս աստուածային անուանց». X. տե՛ս Դիոնիսիոս, էջ 209-211:

182. Հմմտ. «Փիլոնի կեանք իմաստնոց» տե՛ս «Փիլոնի Հեբրայեցւոց ճառք՝ թարգմանեալք ի նախնեաց մերոց որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ», Վենետիկ, 1892 էջ 65:

183. «Յաղագս ամենակալին հնոյն աւուրց, յորում եւ յաղագս յաւիտենի եւ ժամանակի». «Յաղագս աստուածային անուանց». X. տե՛ս Դիոնիսիոս, էջ 209-211:

184. «Յաղագս կենաց». «Յաղագս աստուածային անուանց». IV. տե՛ս Դիոնիսիոս, էջ 190-192:

185. «Յաղագս իմաստութեան մտաց, բանի, ճշմարտութեան, հաւատոյ». «Յաղագս աստուածային անուանց». V. տե՛ս Դիոնիսիոս, էջ 192-198:

186. Ակնարկւում է Գրիգոր Աստուածաբանի՝ Ս. Հոգուն նուիրուած ճառի հետեւեալ տեղին. «Եւ մանաւանդ Գրոց սովորութեան իրացն ոմանք ոչ են եւ ասին, ոմանք են եւ ոչ ասին եւ կէսք ոչ են եւ ոչ ասին, եւ այլք երկոքումբք եւ են եւ ասին». տե՛ս ՄՄ, ձեռ. 4149, թ. 86աբ:

187. Միտքը քաղուած է Արիստոտէլի «Յաղագս մեկնութեան» երկից. տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի… մատենագրութիւնք», էջ 463 (Յաղագս բայի), էջ 473 (պր. ԺԳ):

188. «Սփռուած» լոյսի անեղական, աստուածային բնոյթի մասին է ակնարկուած Սեբերիանոս Գաբաղացու Զ, է ճառերում. «Լոյս այն պարզ եւ սփիւռ է բնութեամբ»: «Աստուած, ասէ, պարզ եւ սփիւռ է էութեամբ» («Սեբերիանոսի Եմեսացւոյ Ճառք», Վենետիկ, 1830) տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 765 («սփիւռ») հմմտ. «այլ լոյսն էր ցիր ծագմամբ». **Բարսեղ Կեսարացի,** Յաղագս Վեցօրեայ արարչութեան, աշխտ. Կ. Մուրադյանի, Եր., 1984, էջ 58:

189. «Յաղագս բարւոյ. լուսոյ, ազնուի, տռփման, զարմացման, նախանձու…». տե՛ս Դիոնիսիոս, էջ 153-159, «Յաղագս զարմացման». տե՛ս Դիոնիսիոս, էջ 166-167:

190. Այսինքն՝ պահպանելով իր բնէութիւնը՝ միաւորուել եղականներին:

191. «Զի՞նչ նշանակէ հրեշտակաց մականունութիւնն». «Յաղագս երկնային քահանայապետութեանն». տե՛ս Դիոնիսիոս, էջ 13-16:

192. Միտքը քաղուած է ս. Իրինեոս Լուգդունացու (+202) «Ընդդէմ հերձուածոց» երկից (Adv. haer. III, I, I – PG, t. 7, 844-845) տե՛ս **С. А. Епифанович**, Лекции по патрологии (Церковная писменность I-III веков), С. Пбг, 2010, с. 385-386:

193. «Վասն է՞ր ամենայն երկնային էութիւնք ըստ հասարակաց հրեշտակք կոչին». «Յաղագս երկնային քահանայապետութեանն». տե՛ս Դիոնիսիոս, էջ 17-18:

194. Փիլոնի Ծննդոց մեկնութեան մէջ կարդում ենք. «…քանզի, արդարեւ, էիւ երիւք չափին բոլորքն՝ սկիզբն կալեալ, եւ մէջ, եւ վախճան». տե՛ս «Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի հայս, որ են մեկնութիւն Ծննդոց, եւ Ելից, Ճառք ի Սամփսոն, ի Յովնան, եւ յերիս մանկունս, կամ ի հրեշտակս», աշխտ. հ. Մ. վրդ. Աւգերեանի, Վենետիկ, 1826, էջ 250:

195. Ակնարկում է Իրինեոսի «Ցոյցք առաքելական քարոզութեանց» երկի հետեւեալ տեղին. «Իսկ մեր աշխարհը եօթ երկինքներով է շրջապատուած, ուր Զօրութիւնները, Հրեշտակները եւ Հրեշտակապետերն են, որոնք սպասարկում եւ երկրպագում են ամենակալ արարիչ Աստծուն». պարբ. 9. տե՛ս «Ընթերցումներ եկեղեցու հայրերի եւ վարդապետների մատենագրութիւնից», Եր., 2008, էջ 11:

196. «Վասն է՞ր ամենայն երկնային էութիւնք ըստ հասարակաց հրեշտակք կոչին». «Յաղագս երկնային քահանայապետութեան». տե՛ս Դիոնիսիոս, էջ 17-18:

197. «Զի՞նչ է քահանայապետութիւնն եւ զի՞նչ քահանայապետութեանն իմացուածք». «Յաղագս երկնային քահանայապետութեանն». III, 1. տե՛ս Դիոնիսիոս, էջ 10-12:

198. Տե՛ս Դիոնիսիոս, էջ 10:

199. «Զի՞նչ նշանակէ աւանդեալն հրեշտակական թիւ». «Յաղագս երկնային քահանայապետութեան». XIV. տե՛ս Դիոնիսիոս, էջ 43-44:

200. «Զի՞նչ նշանակէ հրեշտակաց մականունութիւնն». «Յաղագս երկնային քահանայապետութեանն». տե՛ս Դիոնիսիոս, էջ 13-16:

201. Հրեշտակների անունների ստուգաբանութիւնը համապատասխանում է Երեմիա Մեղրեցու անունով յայտնի «Բառգիրք հայոց»-ի մէջ եղած բացատրութիւններին. տե՛ս Բառգիրք, էջ 7, 51, 60, 72, 323 եւ այլուր:

202. Օդի դիւաբնակ լինելու վերաբերեալ վարդապետութիւնը գալիս է Պօղոս առաքեալից. «Յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենի աշխարհիս այսորիկ, ըստ իշխանին իշխանութեան օդոյս, այսոյ, որ այժմս ընդմտեալ է յորդիսն ապստամբութեան», «Եւ զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այսս չարութեան, որ ի ներքոյ երկնից». տե՛ս Եփես. Բ 2, Զ 11-12:

203. Տե՛ս Աստուածաշունչ. Զոհրապեան հրատ. Վենետիկ, 1805, Յաւելուած, էջ 26, Բագրատունու հրատ., Վենետիկ, 1860, էջ 1220:

204. Տե՛ս Ս. Գրիգորի վարդապետութիւնը, ԻԵ, պարբ. 280:

205. Մեթոդիոսի (Պատարացի կամ Օլիմպիացի +311) անունով այս վկայութիւնը, որը բացակայում է նրա Տեսիլքի մեզ յայտնի տարբերակներում (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, աշխր. թրգմ. եւ ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, 156-165, **Ա. Թոփչյան,** ԲՄ, թիւ 23, 2016, էջ 344-378) բառացիօրէն քաղուած է Վանական վարդապետի «Ի ՃԳ սաղմոսն. Այս ծով մեծ» բնաբանով ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 2273, թ. 54ա-57ա, 1398, թ. 335ա-340բ:

206. Հմմտ. **Նեմեսիոս Եմեսացի,** «Յաղագս բնութեան մարդոյ», էջ 20:

207. Գլ. ԽԸ. Զի ի ձեռն երրորդ հարուածոցն գետք յարիւն դարձան». տե՛ս Անդրեաս, Արետաս, էջ 217 («Մի է այս ի հրեշտակացն, որ ի վերայ տարերցս կարգեալ են, ըստ որում եւ ասացաք. զի ի վերայ ջրոյ են եւ ի վերայ հրոյ, եւ ի վերայ այլոց տարերց»):

208. Միտքը քաղուած է Յովհան Դամասկացու «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» երկի ԺԶ՝ «Վասն հրեշտակաց» գլխից («Ոչ կարէ առնուլ զապաշխարութիւն, վասն զի անմարմին է»):

209. Միտքը քաղուած է Վարդան Արեւելցու «ի Յայտնութեանց Յովհաննու մեկնութիւն Անդրէի եւ Արեթուսայ եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոյ վասն խռովութեան եկեղեցւոյ, յոր ի սկզբանէ եւ որ ի ձեռին Նեռինն…». տե՛ս **Վարդան Արեւելցի**, Ճառք, Ներբողեանք, աշխտ. Հ. Քյոսեյանի, Եր., 2000, էջ 239:

210. Նկատի ունի Յովհաննու Յայտնութեան մեկնութեան ԼԴ գլուխը. «Պատերազմ ի յերկինս հրեշտակաց, եւ կործանումն դիւաց». տե՛ս Անդրէաս, Արետաս, էջ 164, ուր սակայն՝ «անկաւ վիշապն մեծ»:

211. Յուստինոս Վկայի (+161) այս միտքը, որ առկայ է նրա մեզ չհասած «Ընդդէմ Մարկիոնի» երկում, վկայակոչում է ս. Իրինեոսն իր «Ընդդէմ հերձուածոց» աշխատութիւնում (Adv. haere. IV. 6, 2). այն բերուած է նաեւ Եւսեբիոս Կեսարացու Եկեղեցական պատմութեան մէջ (դպ. Դ, 18, 9): Ինչպէս երեւում է այս տեղին վկայակոչուած է Յայտնութեան մեկնութեան միջնորդութեամբ. տե՛ս անդ, էջ 167:

212. Անտոն Անապատականի վարքը տե՛ս «Ս. Աթանասի Աղէքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք, ընդդիմասացութիւնք», էջ 533-614:

213. Հմմտ. **Ս. Եպիփան Կիպրացի,** ճառք, աշխտ. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2013, էջ 586:

214. Տե՛ս **С. Л. Епифанович,** Лекции по патрологии, с. 404:

215. Ի դէպ, անդենական կրակի մաքրագործող յատկութեան մասին այդ վարդապետութիւնը, որ գալիս է Որոգինեսից, ներկայ է կապադովկեան հայրերի ժառանգութեան մէջ. տե՛ս **Հ. Քյոսեյան,** Եկեղեցու հայրեր եւ վարդապետներ, էջ 118:

216. Տե՛ս «Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», էջ 137:

217. «Զի՞նչ նշանակէ հրեշտակաց մականունութիւնն». «Յաղագս երկնայնոց քահանայապետութեանց». IV 1. տե՛ս Դիոնիսիոս, էջ 13-16:

218. Միտքը քաղուած է Արիստոտէլի «Ստորոգութիւնք»-ից. տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի.... մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 396:

219. Հաւանաբար նկատի ունի Շահապիվանի ժողովի Ա կանոնը, որ ասում է. «Եթէ եպիսկոպոս ոք գտցի ի պղծութեան կամ ի պոռնկութեան... յաթոռոյն եւ յիշխանութենէն մերժեսցի եւ զքահանայութիւն մի՛ պաշտեսցէ». տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 429:

220. «Եթէ վայելչաբար աստուածայինքն եւ երկնայինքն եւ ի ձեռն աննմանից նշանակաց երեւին». II, 4. տե՛ս Դիոնիսիոս, էջ 7:

221. Խօսքը Կիպրիանոս Անտիոքացու մասին է, որ ըստ աւանդութեան մոգ լինելով, դարձի է գալիս Յուստիանոս կոյսի քարոզութեամբ, անցնում եկեղեցական նուիրապետութեան բոլոր աստիճանները, ձեռնադրւում եպիսկոպոս, նահատակւում Դիոկղետիանոս կայսեր (284-305) հալածանքների ժամանակ: Նրա անունով լայնօրէն կենցաղավարել է նշանաւոր Աղօթագիրքը («Աղօթագիրք Կիպրիանոս, որ կոչի նաեւ Հազար եւ մէկ անուն», Պէյրութ, 1974). նրա մասին տե՛ս Յայսմաւուրք, Հոկտ. Բ:

222. Անարժան հաղորդութեան մասին սահմանուած է օրինակ Սարդիկեի ժողովի ԺԴ, Բարսեղ Կեսարացու ԺԷ կանոններում. տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 267, 347[1]:

223. Աստուածաշունչը մեղաւոր մարդկութեանը հասցէագրած նամակ է. այս միտքը ինչպէս երեւում է քաղուած է Յովհան Ոսկեբերանի Արարածոց մեկնութիւնից. ուր կարդում ենք. «Այլ սկզբանն ընդ մարդկան խաւսէր Աստուած, որպէս եւ կարողութիւն է մարդոյ լսել. առ Ադամայն, նոյնպէս եւ սաստեաց Կայէնի, այնպէս խաւսեցաւ ընդ Նոյի, այնպիսի հիւրասիրութեամբ եկն առ Աբրահամ: Իսկ յորժամ ի չարութիւն խոտորեցաւ բնութիւնս մեր եւ իբրեւ յարտաքին սահման իմն զինքն խառնեաց, յայնժամ իբրեւ ի հեռաւորութենէ որոշելոյ գիր առաքէր, որպէս զի ի ձեռն թղթի ուրուք գիր առաքելով զառաջին սէրն նորոգեսցէ ի մեզ: Եւ զգիրս զայս առաքեաց, իսկ եբեր Մովսէս». տե՛ս **Ս. Յովհան Ոսկեբերան**, ճառք, Նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց, աշխտ. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 264:

224. «Աշխարհ է կոչւում աշխարհարարը... ու զգայական աշխարհը» հատուածը բառացիօրէն քաղուած է «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս. Սահմանք» երկից (աշխտ. Հ. Մանանդյանի, ԲՄ, թիւ 3, 1956, էջ) ու Եղիշէի Արարածոց մեկնութիւնից. տե՛ս **Լ. Խաչիկյան,** Եղիշէի «Արարածոց մեկնութիւնը». խմբ. Լ. Տեր-Պետրոսյանի, Եր., 1992, էջ 137:

225. Քաղուած է «Հարցմունք դշխոյին եւ պատասխանիք Սողոմոնի որդւոյ Դաւթի» սուրբգրային պարականոնից. տե՛ս Թանգարան հին եւ նոր նախնեաց. Անկանոն գիրք Հին Կտակարանաց, Վենետիկ, 1896, էջ 230:

226. Միտքը քաղուած է ս. Բարսեղ Կեսարացու Վեցօրէից մեկնութիւնից. Ճառ Ա, տե՛ս տպ. աշխտ. Կ. Մուրադյանի, Եր., 1984, էջ 15-17:

222ա Նկատի ունի Ադամի որդիների՝ Աբելի եւ Կայենի պատարագը. տես Ծննդ. Դ 3-5:

227. Կրետէի Կրիտես արքայի գործադրած այս հնարքի վերաբերեալ մէկ այլ պատում է բերուած Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն» երկում, ուր կարդում ենք. «Բերում են դարձեալ ադամանդեայ գմբեթի օրինակը, որը գտնւում է Կրետէ կղզում: Երկաթի արձանը կախուած է օդի մէջ առանց որեւէ բանի հենուելու, որովհետեւ երկաթի ծանրութիւնը ձգտում է ցած իջնել, իսկ ադամանդի ուժը քաշում է նրան դէպի վեր, եւ այդպէս շնորհիւ ճարտարագէտի հնարամտութեան, արձանը կախուած է մնում օդում: Սա նախկինում կրետացիների գլխաւոր մեհեանն էր հանդիսանում». տե՛ս **Անանիա Շիրակացի,** Մատենագրութիւն, աշխրհ. թրգմ. առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ա. Գ. Աբրահամյանի եւ Գ. Բ. Պետրոսյանի, Եր., 1979, էջ 72-73: Այս պատումը վկայակոչուած է Յովհաննէս Երզնկացու «Յաղագս երկնային շարժման» երկում. տե՛ս **Յովհաննէս Երզնկացի,** Մատենագրութիւն, Ա, Ճառեր եւ քարոզներ, Բնագիրը հրատարակութեան պատրաստեցին Ա. Երզնկացի-Տէր-Սրապեանը եւ էդ. Բաղդասարեանը, Եր., 2013, էջ 238:

228. Տե՛ս **Ս. Գրիգոր Նիւսացի,** Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն, էջ 45-50:

229. Նկատի ունի Արիստոտէլի «Յաղագս աշխարհի» երկը. տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի… մատենագրութիւնք», էջ 603-628:

230. Միտքը քաղուած է Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն» երկից. տե՛ս Անանիա Շիրակացի, Մատենագրություն, աշխր. թրգմ., էջ 71-72:

231. Տես Անանիա Շիրակացի, Մատենագրություն, աշխր. թրգմ., էջ 69:

232. Բերուած է Արիստոտէլի «Յաղագս աշխարհի» երկից. տե՛ս «Կորիւնի վարդապետի, Մամբրէի Վերծանողի… մատենագութիւնք», էջ 605:

233. Տե՛ս **Գրիգոր Նիւսացի,** Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն, էջ 48:

234. Շրջանագծի կատարելութեան եւ բոլոր հնարաւոր ձեւերն ի մէջ բովանդակելու վերաբերեալ այս դրուագը, որի ակունքը Արիստոտէլի «Բնագիտութիւն» երկն է (Физика, М., 1936, с. 166), բառացիօրէն քաղուած է Յովհան Որոտնեցու «Դրուատ բանի սոփերական պայծառատես եւ յոգնահանճար ի բան մարգարէին, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր եւ գործք ձեռաց քոց երկինք են» ճառից. ՄՄ, ձեռ. 2017, թ. 354ա-355ա, նաեւ՝ տպ. Յովհան Որոտնեցի, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, աշխտ. Ա. Մինասյանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 118-181:

235. «Արդ, առաջին երկին հրեղէնն է, որ ասացաւ՝ զոր եթեր անուանեն, իսկ որ ի հետ սորա երկրորդ երկինք՝ հաստատութիւնն…». տե՛ս **Յովհաննէս Երզնկացի,** Մատենագրութիւնք, Ա, էջ 236:

236. «Արիստոտէլէս՝ եւ հինգերորդ մուծանէ մարմինս. զեթերային եւ զշրջաբերականն, ոչ ախորժեալ զերկին ի չորից տարերց լինել: Եւ շրջաբերականն ասէ զհինգերորդ մարմին, զի շուրջանակի յինքն բերեալ լինի…». Նեմեսիոս Եմեսացի, էջ 66: Այս հիմամբ Ժղլանքում արձանագրուած է. «Արտաքինքն զառաջին երկինն հինգերորդ էութիւն ասեն եւ ոչ ի չորից տարերց, նոյնպէս եւ զհաստատութիւն եւ զլուսաւորսն». անդ, թ. 58ա: Այս գաղափարի քերթողական վերարտադրութիւնը ս. Ներսէս Շնորհալու «Յաղագս երկնից եւ զարդուց նորա» երկի հետեւեալ տողն է. «Հինգերորդ՝ ծածկոյթ քառից, որոց ծնան…». տե՛ս «Բանք չափաւ», Վենետիկ, 1830, էջ 282:

237. Ըստ միջնադարի աստղաբաշխութեան, Արեգակն իր լոյսը ստանում է գերհզօր լուսատուից՝ Արփիից (տե՛ս Անանիա Շիրակացի, Մատենագրություն, աշխր. թրգմ., էջ 104, 119): «Մեծն Իգնատիոս»-ը հաւանաբար ս. Իգնատիոս Անտիոքացին (Աստուածազգեացն) է: Սակայն նրա անունով յայտնի նամակների հայերէն թարգմանութեան մէջ (տպ. Կ. Պոլիս, 1783, Եր. 2003) այս վկայութիւնը բացակայում է:

238. Վկայութիւնը բացակայում է ս. Բարսեղ Կեսարացու Վեցօրեայ արարչութեան մեկնութեան ենթադրուող մասում (տպ. 1984, 171-216): Այն վկայակոչել է նաեւ Վարդան Արեւելցին իր Արարածոց մեկնութեան մէջ (տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 691. «երկբերան»), ինչպէս նաեւ «Յաղագս եւթն աւուրն արարչութեան» մեկնողական ճառում. Վարդան Արեւելցի, Ճառք, Ներբողեանք, էջ 29:

239. Հմմտ. **Ս. Բարսեղ Կեսարացի**, Յաղագս Վեցօրեայ արարչութեան, էջ 86-87, 118:

240. «Տարի»-ի այս ստուգաբանութիւնը համապատասխանում է Վանական վարդապետի («Յաղագս տարեմտին». **Լ. Խաչիկեան,** Աշխատութիւններ, Ա, էջ 181) Վարդան Արեւելցու բացատրութեանը: Նոյն ստուգաբանութիւնը տրուած է նաեւ Տաթեւացու քարոզգրքի Ձմեռան հատորի Ա քարոզում. տե՛ս Արմ. բառ., Դ, էջ 386: Գրիգոր Տաթեւացու ստուգաբանական դիտումների վերլուծութիւնը տե՛ս **Ս. Գրիգորեան,** Պատմական քերականութեան հարցեր. Գրիգոր Տաթեւացի (14-15-րդ դդ.), Եր., 2002, էջ 95-103:

241. Տե՛ս «Ս. Եփրեմի մատենագրութիւնք», հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 6 («Արդ, մետասան աւուրքն առաջի, զի երէց էր լուսին քան զարեգակն, որ յաւելաւ լուսնի յամին առաջնում…»): Ս. Եփրեմի այս բացատրութիւնը բերում է նաեւ Յակոբ Ղրիմեցին «Ի խնդիրս հասարակաց օգտի» երկում. տե՛ս **Յակոբ Ղրիմեցի,** Տոմարագիտական աշխատություններ, աշխտ. Ջ. Էյնաթյանի, Եր., 1987, էջ 154-155:

242. «Նիսան»-ի «կազմութիւն» ստուգաբանութիւնը տրուած է Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» երկում. «նիսան ամսոյ, որ թարգմանի կազմութիւն, զի ի հողոյ կազմեաց զԱդամ». տես **Լ. Խաչիկեան**, Աշխատութիւններ, Ա, էջ 182, նաեւ՝ Բառգիրք, էջ 241:

243. Ռոպէն ըստ միջնադարեան ընկալման հաւասար է երկու վայրկեանի:

244. Ռոպէի վերաբերեալ տեղեկութիւնները քաղուած են Բարսեղ Կեսարացու (Յաղագս Վեցօրեայ արարչութեան. ճառ Ջ), Անանիա Շիրակացու (Մատենագրութիւնը, էջ 84-85) եւ Յովհաննէս Սարկաւագի (Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, աշխտ. Ա. Աբրահամյանի, Եր., 1956, էջ 208) երկերից:

245. Այս բաժինը շարադրուած է ըստ Անանիա Շիրակացու՝ Լուսնին նուիրուած տոմարագիտական երկերի. տե՛ս Շիրակացի Մատենագրություն, աշխր. թրգմ., էջ 142-147:

246. Չորրորդ, Հինգերորդ կէտերը մասնաւորաբար քաղուած են Բարսեղ Կեսարացու («Յաղագս Վեցօրեայ արարչութեան», էջ 62) եւ Վարդան Արեւելցու «Յաղագս եւթն աւուր արարչութեան» (ճառք, Ներբողք, էջ 25) երկերից:

247. «Գիշեր»-ը հետեւեալ կերպ է ստուգաբանւում Վարդան Արեւելցու Ծննդոց մեկնութեան մէջ. «Յորժան գոյն գէշ եւ թուխ զգենուն օդ եւ երկիր, գիշեր կոչի». ՆԲՀ, Ա, էջ 554, նաեւ՝ «խաւար ժամանակ, կամ գէշ, կամ մութն, կամ կերպ, որ է գարշ իրն». տե՛ս Բառգիրք, էջ 67:

248. Այս ստուգաբանութիւնն առկայ է նաեւ Վանական վարդապետի մօտ. տե՛ս Արմ. բառ., Ա, էջ 524:

249. Նոյն ստուգաբանութիւնն առկայ է նաեւ Վանական վարդապետի մօտ. տե՛ս Արմ. բառ., Ա, էջ 146:

250. Այս ստուգաբանութիւնն առկայ է նաեւ վանական վարդապետի մօտ. տե՛ս Արմ. բառ, Ա, էջ 220:

251. Այս ստուգաբանութիւնն առկայ է նաեւ Վանական վարդապետի մօտ. տե՛ս Արմ. բառ., Գ, էջ 156:

252. Քաղուած է Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» երկից. տե՛ս **Լ. Խաչիկյան,** Աշխատութիւններ, հտ. Ա, էջ180-188:

253. Հմմտ. «Վարք երանելւոյն Բասիլիոսի Կեսարու եպիսկոպոսապետին». «Յայսմաւուրք տէր Իսրայէլի. Ա Յունուար», Ս. Էջմիածին, 2008, էջ 39, նաեւ՝ «Համաբարբառ Յայսմաւուրք», Ա. Յունուար, աշխտ. Եզնիկ Արք. Պետրոսյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 22:

254. «Ուրբաթ»-ի «կազմութիւն» եւ «ուր» (= օր) «բօթ»-ի բացատրութիւնները տրուած են Բարսեղ Մաշկեւորցու Մարկոսի Աւետարանի մեկնութեան (տպ. Կ. Պոլիս, 1825, էջ 376), Վանական վարդապետի «Հարցմունք եւ պատասխանիք» երկում, ինչպէս նաեւ՝ Տաթեւացու Քարոզգրքի Ջմեռան հատորի ԾԷ, ՃԹ քարոզներում. տե՛ս Արմ. բառ., Գ, էջ 615-616, նաեւ՝ Բառգիրք, էջ 262:

255. «Նաւասարդ», «Հոռի», «Սահմի», «Տրէ», «Քաղոց», «Արանց», «Մեհեկի», «Արեգի», «Ահկի», «Մարերի», «Մարգաց», «Հրոտից» ամսանունների ստուգաբանութիւնը բերուած է Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» երկից (տե՛ս **Լ. Խաչիկեան,** Աշխատութիւններ, Ա, էջ 182-183). նաեւ՝ Արմ. բառ., Գ, էջ 435, 114, Դ, էջ 163. մինչդեռ Ջմեռան Ա քարոզում ստուգաբանւում է. «Սահմի՝ զերեւումն սահմանաց…»), էջ 436 (մինչդեռ Ջմեռան Ա քարոզում տրուած է այլ ստուգաբանութիւն. «Տրէ՝ զտէրունական խորհուրդն ասէ, յորժամ տիրեաց Աստուած ի վերայ արարածոց»), էջ 544, Ա, էջ 298 (մինչդեռ Ջմեռան Ա քարոզում. «Արանց՝ առ ի յօրինել զայրն Աստուծոյ զԱդամ, որ իբրեւ զաման բրտի այրեաւ թրծեաց սիրով հոգւոյն») էջ 312, 114, հտ. Գ, էջ 281 (մինչդեռ Ջմեռան Ա քարոզում. «Մարերի՝ զմարմնանալն ի Կուսէն…»), էջ 278 (մինչդեռ Ջմեռան Ա քարոզում. «Մարգաց՝ մարդ ծնեալ եւ Աստուած…»), էջ138, (մինչդեռ Ջմեռան Ա քարոզում. «Հրոտից՝ խորհրդակցութիւն եւ զկատարումն ժամանակացն ասէ, մանաւանդ զգալուստ Հոգւոյն եւ զերկրորդն ահագին փառօք, ըստ Դանիէլի…»):

256. Տեղեկութիւնը քաղուած է. «Յաղագս երկնային շարժմանն՝ նուաստ Յոհաննիսի Երզնկացւոյ շարադրեալ յիմաստնոցն բանից, ի խնդրոյ բարեպաշտ եւ երկեղա-

զարդ պատանւոյն պարոն Վախթանկայ». տե՛ս **Յովհաննէս Երզնկացի,** Մատենագրութիւն, հտ. Ա, էջ 251:

257. Բաժինը շարադրուած է ըստ Անանիա Շիրակացու «Երկնային երեւոյթների մասին» աշխատութեան. տե՛ս Անանիա Շիրակացի, Մատենագրություն, աշխր. թրգմ., էջ 123:

258. Բաժինը շարադրուած է ըստ Շիրակացու «Երկնային երեւոյթների մասին» աշխատութեան. տե՛ս Անանիա Շիրակացի, Մատենագրություն, աշխր. թրգմ., էջ 123-124:

259. Բաժինը շարադրուած է համաձայն Յովհաննէս Երզնկացու «Յաղագս երկնային շարժման…» երկի մաս կազմող «Վասն ձիւնի եւ անձրեւի» ենթաբաժնի. տե՛ս Յովհաննէս Երզնկացի, Մատենագրութիւն, Ա, էջ 248-249:

260. Բաժինը շարադրուած է ըստ Արիստոտէլի «Յաղագս աշխարհի» երկի. տե՛ս «Կորիւնի վարդապետի, Մամբրէի Վերծանողի… մատենագրութիւն», էջ 603-628:

261. «Ամպ = Աստուածածին» խորհրդաբանութիւնը, որը տրուած է տակաւին Պետրոս Սիւնեցու Տիրամօր նուիրուած ներբողում (Հատընտիր հայ եկեղեցական մատենագրութեան, աշխտ. Պ. Խաչատրյանի, Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 68), բաւական ընդարձակօրէն բացատրուած է Գրիգոր Տաթեւացու Եսայու մեկնութեան մէջ, ուր բերուած հասկացութային թուակարգը կրկնւում է «Գիրք հարցմանց»-ում. տե՛ս **Ս. Գրիգոր Տաթեւացի,** Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ, աշխտ. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 53- 55:

262. Այս ստուգաբանութիւնը համապատասխան է Յովհաննէս Պլուզ Երզնկացու բացատրութեանը. տե՛ս Արմ. բառ., Բ, էջ 63:

263. Այս ստուգաբանութիւնը հաւանաբար քաղուած է Վարդան Արեւելցու Ծննդոց մեկնութիւնից (Ա 12) . տե՛ս Արմ. բառ., Դ, էջ 478:

264. «Գազանի» այսօրինակ ստուգաբանութիւնը համաձայնում է Վարդան Արեւելցու Ծննդոց մեկնութեան մէջ տրուածին. տե՛ս Արմ. բառ., Ա, էջ 498:

265. Տե՛ս եւ հմմտ. Փիլոնի Մնացորդք ի հայս. Մեկն. Ծննդոց, էջ 31-32:

266. Օձի հինգ գալարների՝ մարդկային հինգ զգայարանների հետ խորհրդաբանօրէն համերաշխուելու վերաբերեալ այս միտքը, որ գալիս է Փիլոն Եբրայեցու Ծննդոց մեկնութիւնից («Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի հայս…», աշխտ. հ. Մ. վրդ. Աւգերեանի, Վենետիկ, 1826, էջ 25-26), կիրառուած է Անանիա Սանահնեցու Հակաճառութեան (Անանիա Սանահնեցի, Մատենագրութիւն, Ս. Էջմիածին, 2000, էջ 238) եւ Վարդան Արեւելցու Ծննդոց գրքի խմբագիր մեկնութեան մէջ. տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 202 («ման»):

267. Բառացիօրէն քաղուած է Դաւիթ Անյաղթի «Սահմանք»-ից. պր. Գ. տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկեր, աշխր. թրգմ., էջ 49:

268. Ըստ միջնադարի մարդաբանութեան, հոգին կազմուած է երեք տարրերից. բանականից, ցասմնականից եւ ցանկականից, որոնք համաձայն Խոսրովիկ Թարգմանչի, յարաբերակից են հոգէմտաւոր երկու պահերի. «ցանկականն եւ ցասմնականն զգայականին յարեւանայ, զոր աւրինակ խոհականն՝ բանականին». տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 908 («ցանկական»):

269. Եղիային սպասաւորում էին ագռաւները (տե՛ս Գ Թագ. ԺԷ 6), Պօղոս Թեբայեցուն եւ Անտոն Անապատականին՝ ագռաւը (Վարք Պօղոսի Անապատականի տե՛ս Վարք հարանց, հտ. Ա, Վենետիկ, 1855, էջ 11), Գրիգոր Լուսաւորչին՝ ջորիները. տե՛ս **Ագաթանգեղոս,** Պատմութիւն, ճԺԴ, պարբ. 811: Այս նիւթի վերաբերեալ առհասարակ տե՛ս **Ե. եպս. Դուրեան,** Սուրբերն ու անասունները, «Սիոն», 1928, էջ 149-152:

270. Հմմտ. «Մեկնութիւն սակս տասն խորանացն», տե՛ս Ս. Ներսէս Շնորհալի, Մեկնութիւն Մատթէի, Կ. Պոլիս, 1825, էջ 8, նաեւ՝ Մեկնութիւնք խորանաց, աշխտ.Վ. Ղազարյանի, Եր., 1995, էջ 50, 51:

271. Այլաբանական բացատրութեան բնորոշ օրինակ է Որոգինեսի խորհրդական բացարձակաբանութիւնը: Ըստ նրա Վեցօրէից մեկնութեան, Աստծոյ ստեղծած հաստատութիւնը խորհրդանշում է մարմինը, փոքր ու մեծ լուսատուները՝ Քրիստոսին ու Եկեղեցուն, աստղերը՝ հրէից նահապետներին, ձկներն ու սողունները՝ ստորին մտքերը, թռչունները՝ վեհ մտքերը. տե՛ս **А. И. Саврей,** Александрийская школа в истории философско-богословской мысли. М., 2011, с. 541:

272. Այս կապակցութեամբ ս. Գրիգոր Նիւսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկում կարդում ենք. «Եւ եղիցի մեզ այսպիսի իմն բանին բաժանումն էիցն, քանզի է, ինչ որ իմանալի է, եւ է որ մարմնաւոր է ամենայն իրաւք». անդ, էջ 71:

273. Օգտուել է Օգոստինոսի (+430), Դամասկացու (+749), Բեդայի (+735) երկերի հայերէն թարգմանութիւններից, որոնք իրականացուել են միարարական միջավայրում: Մասնաւորաբար Յովհան Դամասկացու այս տեսակէտը կենցաղաւարում է նրա «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» երկի ԻԴ՝ «Վասն դրախտին» գլխում, որտեղից Տաթեւացին քաղել է այն մտածումը, թէ՝ «ոմանք զգալի ասացին գոլ դրախտն, եւ ոմանք՝ իմանալի», հմմտ. Библейские комментарии отцов Церкви и других авторов. Ветхий Завет, т. 1, пер. с анг., греч., лат., сир., под ред. Э.Лаута, Тверь, Герменевтика, 2004, с. 79: Այլաբանական բացատրութեան դէմ իր յստակ դիրքորոշումն է արտայայտում ս. Եփրեմ Ասորին. «Մի՛ հաւատայ այն խօսքին, թէ վեցօրեայ արարչութեան մէջ պէտք է այլաբանութիւն փնտռել, ասում է նա, Չի կարելի մտածել, թէ վեց օրերի արարչագործութիւնը կատարուել է վայրկենապէս, թէ այդ բոլորը միայն անուանումներ են առանց առարկայի, կամ թէ չեն նշանակում այն առարկաները, որոնք արտայայտուած են բառերով». տե՛ս **Հ. Քյոսեյան,** Եկեղեցու հայրեր, վարդապետներ, էջ 77:

274. Տե՛ս «Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացւոյ», Վենետիկ, 1842:

275. Տե՛ս Ս. Գրիգոր Նիւսացի, Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն, էջ 145:

276. Հմմտ. Փիլոնի Մնացորդք ի հայս. Մեկնութ. Ծննդոց, էջ 6-7:

277. Այս մտածումը առարկութիւնն է Օգոստինոս Երանելու հետեւեալ բացատրութեան. «Թէպէտեւ նկատւում է, որ նրանք (Ադամն ու Եւան - Յ. Ք.) մերձեցան եւ որդիներ ծնեցին արդեն դրախտից արտաքսուելուց յետոյ, այդուամենայնիւ չեմ տեսնում մի հիմք, ինչը կարող էր մեզ զերծ պահել այն մտքից, որ տակաւին դրախտում նրանց «ամուսնութիւնն ըստ ամենայնի յարգելի էր, եւ ամուսնական անկողինը՝ սուրբ» (Եբր. ԺԳ 4): «Եթէ նրանք ճիշտ, արդար եւ հնազանդ ապրէին, եւ սրբօրէն ծառայէին Աստծուն՝ նրանց սերմից, Աստծոյ թոյլտուութեամբ, կարող էր ծնուել սերունդ առանց կրքոտ ցանկասիրութեան եւ առանց որդեծնութեան դժուարութեան ու հիւանդութեան…» (De Genesi ad Litteram, 9, 13) տե՛ս Библейские комментарии… т. 1, с. 50: Թերեւս այս միտքն է ակնարկում նաեւ ս. Գրիգոր Նիւսացին՝ ասելով, թէ Աստծոյ «աճեցէք» խօսքն ի մտի ունէր այն, որ «ոչ իւիք այսպիսւոյս ծննդեան տեսակի կարօտեալ լինէաք, որով ծնանին անասունքն». Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն, էջ 153:

278. Տե՛ս եւ հմմտ. **Ս. Գրիգոր Նիւսացի,** «Տեսութիւն ի մարդոյ կազմութիւն», էջ 59-60:

279. Հրեշտակների աճի վերաբերեալ այս միտքը մասամբ համապատասխանում է ս. Գրիգոր Նիւսացու այն մտածումին, թէ սկզբնապէս արարուած հրեշտակները բազմացել են (**Л. П. Карсавин,** Святые отцы и учители церкви /раскрытие православия в их творениях/, М., 1994, с. 124): Մինչդեռ ս. Բարսեղ Կեսարացին արձանագրում է, թէ հրեշտակները չեն բազմանում, քանզի նրանց քանակն անփոփոխ է. «նրանց մէջ չկան ոչ մանուկներ, ոչ պատանիներ, ոչ ծերեր, այլ ինչպէս որ ստեղծուել են ի սկզբանէ, այնպէս էլ մնում են…». տե՛ս Հ. **Քյոսեյան,** Եկեղեցու հայրեր, վարդապետներ, էջ 103:

280. Միտքը համապատասխանում է ս. Յովհան Ոսկեբերանի Ծննդոց մեկնութեան հետեւեալ տեղիին. «**Հող էիր եւ ի հող իջցիս»**. Հաւասար հրեշտակաց էիր, եւ աստուածանալ խորհեցար: Արդ, «ծանիր զբնութիւն քո, թէ ի հողոյ էիր եւ ի հող դարձցիս». տե՛ս Ս. **Յովհան Ոսկեբերան,** Ճառք, Նշխարք ի մեկնութեանց Ս. Գրոց, էջ277:

281. Բաժինը շարադրուած է համաձայն ս. Գրիգոր Նիւսացու «Տեսութիւն ի մարդոյ կազմութեան» երկի «Ընդէր ի վերջէ յետ արարածն մարդն» գլխի . տե՛ս անդ, էջ 51-53:

282. Մարդ = աշխարհ խորհրդաբանութիւնը ծագում է «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք» երկից. աշխտ. Հ. Մանանդյանի. ԲՄ, թիւ 3, 1956, էջ 298:

283. Տե՛ս **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, Ա, էջ 171:

284. Հմմտ.**Նեմեսիոս Եմեսացի,** Յաղագս բնութեան մարդոյ, էջ 58:

285. «Մարդ-աշխարհ», «առարկայական» համաբանութիւնը կատարուած է ըստ հետեւեալ աղբիւրի. Վանական [վարդապետի] Նախերգան, ՄՄ, ձեռ. 2273, թ. 1ա-9բ:

286. Բաժինը շարադրելիս Տաթեւացին ամենայն հաւանականութեամբ աչքի առջեւ է ունեցել ս. Գրիգոր Նիւսացու «Տեսութիւն ի մարդոյ կազմութեան» երկի «Ընդէր ուղղորդ է մարդոյն ձեւն…» գլուխը. տե՛ս անդ, էջ 69-76:

287. **Խորենացի**, Պատմութիւն, Ա, ժե . տե՛ս ՄՀ, հտ.Բ, էջ 1795:

288. Թռչունների բնոյթի մասին այս դրուագը քաղուած է Բարոյախօսից. տե՛ս Physiologus, p. 136-137, ԲՄ, թիւ 23, 2016, էջ 325:

289. Դարի բժշկագիտական տուեալները շարադրելիս Տաթեւացին ամենայն հաւանականութեամբ աչքի առջեւ է ունեցել Աբուսահդի «Յաղագս կազմութեան մարդոյն» երկը (աշխտ. Ս. Վարդանյանի, Եր., 1974):

290. «Մարդն, որ ճաղատ լինի, ի մէջ գլխոյն, ի խարտէշ մաղձէ լինի». տե՛ս **Աբուսահդ,** «Յաղագս կազմութեան մարդոյ», էջ 122:

291. «Յաղագս երկնային շարժման՝ նուաստ Յոհաննիսի Երզնկացւոյ…». տե՛ս **Յովհաննէս Երզնկացի,** Մատենագրութիւն, Ա, էջ 241:

292. Քաղուած է Մխիթարիչ Ապարանցու տրամախօսական երկից. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 1101 («կլէմ»):

293. Մարդու՝ 365 հոդերից կազմուած լինելու վերաբերեալ միտքը քերթողական վերացարկումով շարադրուած է ս. Գրիգոր Նարեկացու Աղօթամատեանի ԽԶ, բ բանում («երից հարիւրոց եւ տասանց վեցից յօդիւք շաղկապեցար… եւ պատշաճական մասունս չափոց ազդողականաց հինգ զգայութեանց»): Ինչպէս երեւում է, միտքը քաղուած է ս. Գրիգոր Նիւսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» (տես անդ, էջ 143-146), Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» երկերից. տե՛ս **Լ. Խաչիկեան,** Աշխատութիւններ, Ա, էջ 186:

294. Գրիգոր Տաթեւացու բժշկագիտական դիտումների լուսաբանութիւնը տրուած է. **Ս. Գրիգորյան,** Գրիգոր Տաթեւացու բժշկագիտական հայացքները, Եր., 2015:

295. Միջնադարում կենցաղավարող դիմագիտութիւնը (ֆիզիոգնոմիկա), որի նկատմամբ եկեղեցին վերապահ մօտեցում է ունեցել, սնուել է Արիստոտէլին վերագրուած ձեռնարկից (Դ-Գ դդ. Ն. Ք.) [հմմտ. «Համառօտ բնազննութիւն մարդկային մասանց, հաւաքեալ ի գրեանց Արիստոտէլի եւ այլոց հեղինակաց, առ ի ճանաչել զբնական բարս, եւ զյօժարութիւն նոցին». «Գրկուկ, որ կոչի էֆիմերտէ», Վենետիկ, 1752, էջ 166-183], Ադրիանոս կայսեր օրօք (Բ դ.) գործած Պոլեմոն Լաոդիկեցու ճառից, Դ դարի բժիշկ, սոփեստ Ադամանտիոսի աշխատութիւնից եւ լատիներէն անանուն մի ճառից՝ De physiognomonia (Դ դ.). տե՛ս **И.М.Нахов,** Физиогномика как отражение способа типизации в античной литературе (к постановке проблемы) - Вопросы классической филологии. IX. «Живое наследие Античности», М., 1987, с. 69-88:

296. Սահմանք իմաստասիրութեան, պր. ժԵ. տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկեր, աշխր. թրգմ., էջ 102:

297. Մաքսիմոս Իմաստասէր (Խոստովանող. 582-662). բիւզանդական աստվածաբանութեան խոշորագոյն դէմքերից մէկը, ջատագովը քրիստոսաբանութեան մէջ յայտնի երկամեայ վարդապետութեան, որ քննադատուել է Յովհաննէս Երզնկացու կողմից (տե՛ս Մատենագրութիւն, Ա, էջ 200): Յայտնի է նրա երկերից մի քանիսի հայերէն թարգմանութիւնը:

298. «Առ այնոսիկ, որք ասենն յառաջագոյն գոյանալ քան զմարմինս ոգիք եւ կամ անդրէն ընդդէմ յառաջ քան զոգիսն հաստատեցաւ մարմին…». տե՛ս **Ս. Գրիգոր Նիւսացի,** «Տեսութիւն ի մարդոյ կազմութիւն», էջ 183-188:

299. Թերեւս նկատի ունի Փիլոնի Ծննդոց մեկնութեան հետեւեալ տեղին. «Քանզի կենդանասիրութիւն՝ քառասնեակ, յորում ասեն բժիշկք զյարգանդն ընկեցեալ սերմն ստեղծանիլ, եւ մանաւանդ յորժամ արու իցէ ստեղծուածն». տե՛ս Փիլոնի Մնացորդք ի հայս. Մեկնութ. Ծննդ., էջ 362:

300. Այս միտքն առկայ է Տերտուղիանոսի De anima («Հոգու մասին») աշխատութեան մէջ. տե՛ս **Եզնիկ Ծ. վրդ.,** Հայրաբանութիւն, Ա, էջ 201:

301. Տե՛ս **Ս. Գրիգոր Նիւսացի,** «Տեսութիւն ի մարդոյ կազմութիւն», էջ 113, 124:

302. Միտքը բերուած է Դաւիթ Անյաղթի «Սահմանք»-ից. պր. ԺԴ. տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկեր, աշխրհ. թրգմ., էջ 100 («եօթ թիւը կուսական է կոչւում ինչպէս Աթենասը», «Աթենասը կոյս է կոչւում, որովհետեւ հեթանոսներն Աթենասի մասին ասում էին, թէ նա ծնուեց Արամազդի գլխից»):

303. Համեմատութիւնը բերուած է ըստ Ս. Գրոց մեկնաբանական աւանդոյթի. տե՛ս **Հ. Քյոսեյան**, «Արթուն կացէք» բնաբանով քարոզը եւ նրա հեղինակը, «Էջմիածին», 2003, Բ, էջ 42-55: Միտքը առկայ է նաեւ Տաթեւացու Ձմեռան հատորի քարոզներից մէկում. տես անդ, էջ 411-415:

304. Պիղատոսի կնոջ երազի վերաբերեալ հետեւեալն ենք կարդում Ժղլանքում. «Այն, որ Պիղատոսի կնոջն երեւեցաւ եւ չարչարեաց, ասեն, թէ սատանայ էր եւ ոչ

հրեշտակ, զի սակաւ մի կասկածեաց ի կամաւ գալոցն ի Խաչ, թէ Աստուած է, եւ ջանայր խափանել, զի ժամանակն եկեալ հասեալ էր, չէր պարտ խափանել…». անդ, թ. 38աբ:

305. «Վասն այնոցիկ որ ընդ քուն ցնորք անցանեն». տե՛ս Եւագր, էջ 41-42:

306. «Յաղագս քնոյ եւ յօրանջմանն եւ երազոց…». տե՛ս **Ս. Գրիգոր Նիւսացի,** Տեսութիւն ի մարդոյ կազմութիւն, էջ 99-109:

307. «Հակառակ» որակումը տրուած է պիհռոնացի ճեմականներին հաւանաբար այն պատճառով, որ նրանց պարագլուխը՝ Պիհռոն Էլիդացին (Ն. Ք. 365-275) ժխտում էր աշխարհը ճանաչելու հնարաւորութիւնը (ագնոստիցիզմ):

308. Այս ստուգաբանութիւնը, որ կրկնւում է Տաթեւացու Ձմեռան Լ քարոզում, համերաշխ է Ներսէս Լամբրոնացու բացատրութեանը. «հանճար… ստուգաբանի անճար, այսինքն թէ՝ ոչ առանց խափանածոյ իրիք կատարի: Եւ հանճար ասի, զի զկատարումն առ յապայ ունի…» (Առակ. Ա 7 Ը 14). «Ներսիսի Լամբրոնացւոյ՝ Տեսութիւն Առակաց Սողոմոնի, գերմ. թրգմ. Erklärung der Spruchwörter Solomos, իշխան Max, Leipzig, 1919 - 21, էջ 135-136. տե՛ս Արմ. բառ., հտ. Գ, էջ 41:

309. Նկատի ունի Ներսէս Լամբրոնացու «Տեսութիւն Առակաց Սողոմոնի» երկում առկայ բացատրութիւնը. տե՛ս նախորդ ծանոթ.:

310. Ակնարկում է Գրիգոր Նիւսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի «Զի նման աստուածային արքայութեանն է մարդն» գլխի հետեւեալ տողերը. «Այլ փոխանակ այսոցիկ՝ մաքրութիւն, անախտութիւն, անցից երջանկութիւն, ամենայն չարի աւտարութիւն, եւ որ միանգամ այսր ազգի է». տե՛ս անդ, էջ 59-60:

311. Տե՛ս **Ս. Գրիգորի վարդապետութիւն,** պարբ. 271 («Քանզի նմանութեամբ մարդոյ երեւեալ Աստուծոյ ի ստեղծանել զմարդն հող յերկրէ…»):

312. Տե՛ս **Ս. Կիւրեղ Ալեքսանդրացի**, Գիրք Պարապմանց, էջ 101 («քանզի որպէս եմք մեք, զի ոչ ինչ այլ յայտնէ զըստ պատկերին, բայց միայն ըստ նմանութեան, նոյնպէս եւ զըստ նմանութեան ըստ պատկերին»):

313. Այս միտքը պատկանում է Որոգինեսին. տե՛ս **Եզնիկ Ծ. վրդ.,** Հայրաբանութիւն, Ա, էջ 153:

314. Տե՛ս **Ս.Կիւրեղ Ալեքսանդրացի**, Գիրք Պարապմանց, էջ104:

315. Տե՛ս **Ս. Գրիգոր Նիւսացի**, Տեսութիւն ի մարդոյ կազմութիւն, էջ 57-58:

316. Տե՛ս «Յորդորումն մանկանց ի կուսութիւն. նորին յաղագս կուսութեան, եթէ սեպհական է…». ՄՄ, ձեռ. 1013 թ. 176ա - 200բ:

317. «Կօշիկ = մեռելութիւն» խորհրդաբանութիւնը տրուած է Փիլոն Եբրայեցու Ելից մեկնութեան մէջ, ուր կարդում ենք. «Քանզի անշունչ են կօշիկքն» (Մնացորդք ի Հայս, էջ 462): Իր «Մովսէսի կեանքը» երկում (որի հին հայերէն թարգմանութիւնն, ի դէպ, անյայտ է) ս. Գրիգոր Նիւսացին Մովսէսի կաշուէ ոտնամանները այլաբանութիւնն է համարում մեռելութեան (Բ, 22. տե՛ս Մովսէսի կեանքը, թրգմ. ֆրանս. Պ. Շահբազյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 51): Մաշկեղէն - կաշուէ հանդերձանքի այս այլաբանութիւնն է ակնարկուած Ներսէս Շնորհալու «Յիսուս Որդի» երկում. «Եւ մաշկեկաւ մեռելութեան անցո ընդ գետս այս երկրային». տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 209 («մաշկեակ»):

318. Այսինքն՝ մարմնաւոր, զգայական խորհուրդներ ունեցողներ:

319. «Մաշկեղէն հանդերձ = մարմին» խորհրդաբանութիւնը տրուած է ս. Ներսէս Շնորհալու «Յիսուս Որդի» («զինեւ արկի մաշկեղինին») երկում (Կ. Պոլիս, 1824, էջ 6, նաեւ՝ «Բանք չափաւ», էջ 12), ինչպէս նաեւ՝ Ներսէս Լամբրոնացու Հանգանակի մեկնութեան մէջ. «մարմնանայ ոչ յեղափոխմամբ, այլ ի մարմին մաշկեղէն բովանդակի». տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 209 («մաշկեղէն»):

320. Աստուածաբանական այն ընկալումը, թէ պատուիրանի կատարումով կամ, ընդհակառակն, անտեսումով է պայմանաւորուած ադամորդու անմահութիւնը կամ մահկանացու լինելը, առկայ է Առաքելական հայրերից Թեոփիլոս Անտիոքացու «Առ Ավտոլիկոս» երկում. տե՛ս **Եզնիկ Ծ. վրդ,** Հայրաբանութիւն, Ա, էջ 82:

321. Աբէլի սպանութեան մանրամասները պատմում է Եպիփան Կիպրացին Ծննդոց գրքի ճառական մեկնութեան մէջ. **Ս. Եպիփան Կիպրացի,** ճառք, էջ 93-107:

322. Եպիփան Կիպրացու բերած աստուածաշնչական պարականոնում ասւում է, թէ Կայէնը «եղեւ իսկ կացեալ յապաշխարութիւն երերանաւք հանդերձ զամս քառասուն եւ ինն, վասն զի եւթն յանցանաւք մեղաւ Աստուծոյ, եւ եւթնեկին եւթն ամաւք երերեալ եկաց անտանելի չարչարանաւք…». **Ս. Եպիփան Կիպրացի,** ճառք, էջ 107:

323. «Ենովս»-ի վաղագոյն ստուգաբանութիւնը տրուած է «Փիլոնի Յաղագս վարուց կենաց տեսականի» երկում, ուր կարդում ենք. «Քանզի քաղդէացիք զմարդ Ենովս կոչեն, իբրու միայն ճշմարտութեամբ իցէ մարդ այն, որ բարեաց ակն ունի…». տե՛ս «Փիլոնի Հեբրայեցւոյ ճառք՝ թարգմանեալք ի նախնեաց մերոց, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ», Վենետիկ, 1892, էջ 35, տե՛ս նաեւ՝ Բառգիրք, էջ 90:

324. «Աստուած» - աստ էած (= այստեղ բերեց) ստուգաբանութիւնն առկայ է Խոսրով Անձեւացու, Վանական վարդապետի, Ներսէս Լամբրոնացու ժառանգութեան մէջ. տե՛ս Արմ. բառ., հտ. Ա, էջ280:

325. Ենովքի մասին. Книга Юбилеев или Малое Бытие. տե՛ս Ветхозаветные апокрифи, пер. Е. В. Виткинского, М., 2001, с. 24-25:

326. Հմմտ Ս. Եփրեմի մատենագրութիւնք, հտ. Դ, էջ 79-97 (Յենովք եւ յեղիա):

327. Այս տեղին խմբագրուած արձագանքն է այն պատումի, ըստ որի Ղամէքը սպանել է Կայէնին («Ղամեք Ե [հինգերորդ] ծնունդն Կայինի սպան զԿային վասն նախատանաց ազգին: Բայց Եփրեմ ասէ, թէ նշան եդ Աստուած չսպանանել զԿային, եւ ոչ ոք սպան, այլ գահավէժ եղեւ: Իսկ Ղամեք Ենոքայ Բ [երկու] եղբայր եսպան, եւ առ զկանայս նոցա՝ զԱդդա եւ զՍելլեա, կամէր եւ զԵնոք սպանանել, եւ Աստուած փոխեաց զնա» [Ժղլանք, թ. 94 ա]: «Ինքն Թոբելայ կինն ասէ որդւոյ Ղամեքայ սպան զԿային…». Եփրեմի Մեկնութ. Արարածոց. տե՛ս մատենագրութ., Ա, էջ 39, սակայն «Յենովք եւ յեղիա» ճառում ս. Եփրեմը նկատում է. «Ոչ եթէ Ղամէք սպան զԿային, այլ հեծեծութեամբ եւ երերանօք մեռաւ…». Մատենագրութ., Դ, էջ 81), եւ ոչ թէ Ենովքին, ինչպէս ակնարկում է Տաթեւացին. տե՛ս Ս. **Եպիփան Կիպրացի**, ճառք, էջ 107:

328. Միտքը, ինչպէս երեւում է, քաղուած է «Զոր Փիղոնի ասացեալ է ի սակաւուց» խմբագիր մեկնութիւնից. «Աւրինակ էր տապանն մարմնոյս մերոյ…». տե՛ս ՄՀ, հտ. Ժ, էջ 923 [42]: Արտայայտութեանս հիմքում ընկած են Փիլոնի հետեւեալ տողերը. «Զտապանս զայս, եթէ կամիցի ոք բնականագոյն ի հարց առնուլ, գտցէ մարդկային մարմնոյ զկազմածն». տես Մեկնութ. Ծննդոց, էջ 74:

329. Այս միտքը համերաշխ է Նեմեսիոս Եմեսացու «մարմինք եռակի տարորոշք» սահմանումին. տե՛ս անդ, էջ 28:

330. «Նոյեան տապան = եկեղեցի» խորհրդաբանութիւնը համերաշխ է Յովհան Օձնեցու բացատրութեանը, որի վերաբերեալ տե՛ս **Հ. Քյոսեյան,** Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 142-143:

331. Եկեղեցու այսօրինակ բնորոշումն արձագանքն է Յովհան Մանդակունու նշանաւոր ճառի. «զթագաւորս քաղցրացոյց եկեղեցի, զգազանս ընդելացոյց» բառերի. տե՛ս **Ղազար Փարպեցի,** Պատմութիւն, Ճ. տե՛ս ՄՀ, հտ.Բ, էջ 2372 [9]:

332. «Նոյեան տապան = Խաչ» խորհրդաբանութիւնը համաձայն է «Զոր Փիղոնի ասացեալ է ի սակաւուց» խմբագիր մեկնութեան (ՄՀ, հտ. Ժ, էջ 923 [43]) եւ Յովհաննէս Կոզեռնի «Պատմութիւն տանն Բագրատունեաց» երկում կենցաղավարող բացատրութեանը. տե՛ս ՄՀ, հտ. ԺԶ, էջ 70-78:

333. Սա արձագանքն է այն աւանդազրոյցի, ըստ որի «կացեալ սուրբ խաչն Տեառն որպէս ի պահեստի ամս իբրեւ երեք հարիւր, մինչեւ յաստուածապատիւ արքայն Կոստանդիանոս, որ հրեշտակաւք սպասաւորէր… եւ զգիշերն ամենայն հայէր ընդ աստեղս երկնից, եւ տեսեալ զխաչն աստեղեայ, որ կոչի Կոստանդեայ…». տե՛ս Ս. **Եպիփան Կիպրացի,** ճառք, էջ 737:

334. Խաչի լուսափայլ երեւման (351 թ. մայիս 7) մասին պատմում է ս. Կիւրեղ Երուսաղեմացու Կոստանդիոս կայսերը (337-361) յղած նամակում. այն ընթերցւում է Ս. Խաչի երեւման տօնին. տե՛ս Ճաշոց, Բ տպ., 1872, էջ 368-370 նաեւ՝ **Վ. վրդ. Ինգլիզեան,** ՀԱ, 1965, էջ 1-16: Ս. Խաչի երեւումը յիշատակւում է Ս. Եպիփան Կիպրացու անունով ճառերից մէկում. տե՛ս անդ, էջ 740:

335. Ակնարկուած է այն փաստը, թէ Մեծն Թէոդոս կայսեր օրօք (379-395) մասնաւոր հոգածութիւն է ցուցաբերուել քրիստոնէական արժէքների, եկեղեցու նկատմամբ. նրա վարքը տե՛ս Յայսմաւուրք տէր Իսրայէլի. Յունուար ԺԹ, էջ 165-166:

336. «Արարատ» համանուն տապականակիր լեռան Կորդուքում գտնուելը վկայուած է Աստուածաշնչի ասորերէն Պեշիտտո թարգմանութեան, Ոնքելոսի Թարգումի, Յոբելեանների գրքի, Մար Ավգինի ասորերէն վարքի մէջ. տե՛ս **Պ. Բետերս**, Ս. Յակոբ Մծբնացւոյն զրոյցը, «Բազմավէպ», 1921, էջ 35 [թրգմ. հ. Ք. Չրաքեան], **Հ . Մելքոնյան,** Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Եր., 1970 էջ 76-77: Այս տեղե-

կութիւնը կրկնուած է Փաւստոս Բուզանդի Պատմութեան մէջ (Դպ. Գ, գլ. Ժ), որի վերաբերեալ տե՛ս Ստ. Մալխասեանցի թրգմ. ծանոթ. Եր., 1968, էջ 315, ծնթ. 26: Տապանի՝ Կորդուաց լեռներում հանգչելու վերաբերեալ արձանագրուած է նաեւ ս. Ներսէս Շնորհալու Մատթէի Աւետարանի մեկնութեան Նախադրութեան մէջ, ուր կարդում ենք. «...Եւ միւս ասէ Նոյի սեղանովն, զոր շինեաց ի լերինն Կորդուաց» (տե՛ս տպ. Կ. Պոլիս, 1825, էջ 14): Տե՛ս նաեւ՝ **Հ. Պետրոսյան,** Տապանի իջման հինկտակարանյան դրվագը եւ Մասիսը Արարատ վերանվանվելու պատմական եւ առասպելական հանգամանքները - «Աստվածաշնչական Հայաստան» (հոդ. ժող.), Եր., 2005, էջ 91-99:

337. Արարատ = Մասիսի վերաբերեալ աւանդազրոյցները բերուած են. **Ս. Եպիփան Կիպրացի**, Ճառք, էջ 117, **Գ. Աբգարյան,** Մասիսի անուանադրութեան աւանդութիւններն ըստ Մովսէս Խորենացու եւ Անանունի, «Էջմիածին», 1971, 12, էջ 25-30, **Էդ. Դանիելյան,** Հայաստանն Աստվածաշնչում եւ Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը» երկը - «Աստուածաշնչական Հայաստան» (հոդ. ժող.) Եր., 2005, էջ 157:

338. Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի, Արկուռի գիւղի, Նախիջեւանի եւ յարակից այլ պարագաների վերաբերեալ տեղեկութիւնները բերուած են Փաւստոս Բուզանդի Պատմութիւնից (դպ. Գ, գլ. Ժ), Յայսմաւուրքից. «Պատմութիւն վարուց սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետի, զոր գրեաց Մեղիգէ աշակերտ Մարուգէի միայնակեցի». տե՛ս «Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց», հտ. Բ, Վենետիկ, 1874, էջ 83, «Պատմութիւն սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին». «Սոփերք», ԻԲ, Վենետիկ, 1861, էջ 5-63, նաեւ՝ «Վարք հարանց», Բ, Վենետիկ, 1855, էջ 485-487: Աւանդազրոյցները մեկտեղուած են. **Ղազար Ջահկեցի,** «Գիրք աստուածաբանական, որ կոչի դրախտ ցանկալի», Կ. Պոլիս, 1735, էջ 540, **Մեսրոպ սրկ. Թաղիադեանց,** Ուղեւորութիւններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Եր., 1975, էջ 106-111:

339. «Եւ բարձրացրին... ճանապարհ» հատուածը գրեթէ բառացիօրէն քաղուած է Եղիշէի Արարածոց մեկնութիւնից. «Տասն ամսեայ ճանապարհ, որպէս ասեն, ընդ ելանելն եւ ընդ իջանելն». տե՛ս **Լ. Խաչիկյան,** Եղիշեի Արարածոց մեկնութիւնը, էջ 248:

340. «Եւ քառասուն տարի... նրանց որսորդը» դրուագը քաղուած է Եղիշէի Արարածոց մեկնութիւնից. «մինչեւ ցԽ ամն ոչ դադարեալք... անկանին յերկիր». **Լ. Խաչիկյան**, Եղիշեի արարածոց մեկնութիւնը, էջ 248:

341. «Եկէք իջնենք եւ խառնեցէք... խառնուելը» հատուածը քաղուած է Եղիշէի Արարածոց մեկնութիւնից («Եկայք իջցուք եւ խառնակեսցուք... բառ եւ բան եւ անուն»). **Լ. Խաչիկյան,** Եղիշէի Արարածոց մեկնութիւնը, էջ 249:

342. Եւ յիրաւի. «գաւազան»-ը «փոխառեալ է իրանեանից». կայ պրս. abzan, արաբ. abzan, basan., վրաց. աբազանա (տես Արմ. բառ., Ա, էջ 352), «գաւազան»-ը փոխառեալ է պիլ. gavazan ձեւից (անդ, էջ 526): «Ամէն»-ը տառադարձումն է հուն. ajmh'n ձեւի, որը գալիս է եբր. amen-ից. անդ, էջ 155: «Սապոն»-ը պատճենումն է հուն. savpwn, sapwvnivon բառի, որը փոխառեալ է լատ. sapo, saponis ձեւից. անդ, հտ. Դ, էջ 175:

343. Բառացիօրէն քաղուած է Եղիշէի Արարածոց մեկնութիւնից. **Լ. Խաչիկյան,** Եղիշեի Արարածոց մեկնութ., էջ 249:

344. «Ո՞ր են ազգք, որ դպրութիւն գիտեն...». տե՛ս Ժղլանք, թ. 115ա:

345. Եղիշէի Արարածոց մեկնութեան մէջ՝ «գութն» կամ «գունդն». պէտք է լինի թերեւս «գոթն»:

346. Անունների ստուգաբանութիւնը համապատասխանում է Երեմիա Մեղրեցու Բառգրքի բացատրութեանը. «Ադամ» (էջ 6), «Սեթ» (287), «Ենովս» (90), «Կայնան» (157), «Յարեդ» (226), «Ենովք» (90), «Մաթուսաղա» (204), «Ղամեք» (196), «Նոյ» (243), «Յաբեթ» (222), «Քամ» (329), «Քանան» (330):

347. Մելքիսեդեկի այս պատմութիւնը խորհրդաբանական բազմաթիւ մանրամասներով բերուած է ս. Եպիփան Կիպրացու մօտ. տե՛ս Ճառք, էջ 123-130:

348. Բերուած է ս. Եփրեմի Թ կցորդից. «Ես ծնայ զՍեմ որդի նորա, այն որ Մելքիսեդեկն կոչեցաւ». տե՛ս «Կցուրդք ս. Եփրեմի Խուրին Ասորւոյ», հրատ. հ. Ն. վրդ. Ակինեան, Վիեննա, 1957, էջ 24 [11]:

349. Հմմտ. Ս. Իրինեոս, Ցոյցք առաքելական քարոզութեանց, պարբ. 21, 24. տե՛ս «Ընթերցումներ եկեղեցու հայրերի եւ վարդապետների մատենագրությունից», էջ 17, 19:

350. «Մելքի»՝ թագաւոր, «Սեդեկ»՝ արդար, «Սաղիմ»՝ խաղաղութիւն ստուգաբանութիւնը համապատասխանում է Երեմիա Մեղրեցու Բառգրքին, էջ 212, 286, 282:

351. Ստուգաբանութիւնը համապատասխանում է Երեմիա Մեղրեցու Բառգրքի բացատրութեանը. անդ, էջ 130:

352. «Սառա»՝ առաքինութիւն, «Մարիամ»՝ լուսաւորութիւն, «Իսահակ»՝ ծաղր. ստուգաբանութիւնը համապատասխանում է Երեմիա Մեղրեցու Բառգրքի բացատրութեանը. էջ 284, 211, 130:

353. Քաղուած է Եղիշէի Արարածոց մեկնութիւնից. «Ասեն, թէ զպատկերն եւ զյոյժն Եսաւայ զգեցաւ, թէ որչափ է զօրութիւն նորա…». տե՛ս ՄՀ, Ա, էջ 856 [12]:

354. «Անունը կարճ սահմանում է…» միտքը քաղուած է Դաւիթ Անյաղթի «Սահմանք»-ից. պր. Գ. աշխր. թրգմ. էջ 49:

355. Առիւծի յատկութիւնները նկարագրուած են Բարոյախօսում. աշխտ. Գ. Մուրադեանի. ԲՄ, թիւ 23, էջ 303-305:

356. «Առիւծ» = առնել, ի յառնելոյ = առնել, յափշտակել. ստուգաբանութիւնը քաղուած է Վարդան Արեւելցուց եւ Տօնական ժողովածուներից. տե՛ս Արմ. բառ., Ա, էջ 259:

357. Այս բաժնի տուեալները քաղուած են Ստեփանոս Սիւնեցու «Մեկնութիւն եւ սկիզբն Յոբայ» երկից. տե՛ս ՄՀ, հտ. Զ, էջ 112-113:

358. Ակնարկում է հետեւեալ երկը. «Ընդդէմ պատասխանի ի Գրոց սրբոց առ դեւսն որ փորձեն զմեզ». տե՛ս Եւագր, էջ 217-323:

359. Ըստ հայրախօսական աստուածաբանութեան եօթ դարը ժամանակային հասկացութիւն է, իսկ ութերորդը՝ վերժամանակային, երբ մարդը ձերբազատուելու է բնութեան կապանքներից: Այս առնչութեամբ բնորոշ են Տօնականի հետեւեալ տողերը. «Եօթն՝ կենցաղս չարչարանք է մեզ իւրաքանչիւր. մինչեւ ժամանեսցուք յութեակն, որ է արքայութեանն հանգիստ». տե՛ս ՆԲՀ. Բ, էջ 539 («ութեակ», «ութերեակ»): «Արդ, մարդոյ երկայնութիւն ութ թիզ, կարդում ենք Եղիշէի Ծննդոց մեկնութեան մէջ, աւրինակ հանդերձեալ արքայութեանն». ՄՀ. հտ. Ա, էջ 920 [23]:

360. «Մովսէս = Քրիստոս», «պղնձէ օձ = Խաչ» տիպաբանական մեկնութեան վաղագոյն օրինակը գտնւում է «Բառնաբասի նամակ»-ում. (ԺԲ). տե՛ս «Գանձասար». Աստուածաբանական հանդէս, Ը, Եր., 2010, էջ 191-192: Այս գաղափարն իր քերթողական արտացոլումը գտել է ս. Ներսէս Շնորհալու հետեւեալ տողերում. «Մինչ տարածմամբ Մովսէս ձեռին/ Գոյր օրինակ քեզ ի Խաչին…». «Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց», գիրք Ա, տե՛ս «Բանք չափաւ», էջ 34:

361. Այս կապակցութեամբ ժղլանքում կարդում ենք. «Մովսէսի սնուցողին անունն Հռաքուսայ է, այլք Թերմոթիս կոչեն եւ կէսք՝ Մառի». անդ. թ. 103 բ:

362. Հայոց Արշակունիների՝ Քետուրա աղախնից սերելու վերաբերեալ այս միտքը բերուած է Մովսէս Խորենացու Պատմութեան մէջ (Բ, կը. տե՛ս ՄՀ, Բ, էջ 1953[3-4]), Եպիփան Կիպրացու անունով յայտնի ճառերից մէկում. տե՛ս Ս. **Եպիփան Կիպրացի,** Ճառք, էջ 261-262, 721:

363. «Մորենի = Մարիամ» խորհրդաբանութիւնը միջնադարում լայնօրէն տարածուած տիպական մեկնութեան բնորոշ օրինակ էր. դրա վաղագոյն կիրառութիւնը գտնում ենք ս. Գրիգոր Նիւսացու «Մովսէսի կեանքը» երկում, ուր կարդում ենք. «Անկէզ մորենին մեզ սովորեցնում է նմանապէս սուրբ Կոյսի խորհուրդը. աստուածային լոյսը, որ սկզբնաւորուելով նրանից, լուսաւորեց մարդկութեանը…» (Բ 21, անդ, էջ 51): Համաբնոյթ բացատրութիւն տրուած է Յովհան Դամասկացու սրբապատկերների մասին Խօսքում (Библейские комментарии… т. 3, Тверь, Герменевтика, 2010, с. 18), ինչպէս նաեւ՝ Յովհան Մանդակունու նշանաւոր ճառում («Բազում կերպարանաւք եւ ազգի ազգի ցուցակութեամբ Փրկիչն մեր… յայտաբերէր մեզ զօրինակն ի սկզբանէ. մորենեաւն՝ զերանելի Կոյսն…». տե՛ս **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն, Ճ) Պետրոս Սիւնեցու «Գովեստ ի սուրբ Աստուածածին» երկում («Ուրախ լեր Մարիամ, Մորենի սխրալի, որ Աստուածութեանն հրով վառեալ ոչ այրեցար…». տե՛ս Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան, էջ 167 [Գ]), Զաքարիա Ջագեցու «Յաւետիս ամենօրհնեալ Աստուածածնին» ճառում («Ուրախացիր ամենօրհնեալ Աստուածածին՝ անկէզ մորենի բորբոքեալ եւ ոչ բոցակիզեալ»). տե՛ս ՄՀ, հտ. Թ, էջ 346 [108]: Եկեղեցաբանական գրականութեան մէջ սրա հետ սերտօրէն աղերսուած է «խնկանոց – բուրվառ – Աստուածածին» խորհրդաբանութիւնը. տե՛ս Ստեփանոս Սիւնեցի «Ի խորհուրդ եկեղեցւոյ». ՄՀ, հտ. Զ, էջ 498 [95, 97]:

364. Այս միտք համապատասխանում է ս. Գրիգոր Նիւսացու «Մովսէսի կեանքը» աշխատութեան նոյնաբնոյթ բացատրութեանը. տես Բ, 22 (անդ, էջ 51):

365. Դաւիթ Անյաղթ, Սահմանք, պր. Բ. տե՛ս Երկեր, աշխր. թրգմ. էջ 45-46:

366. Այս միտքը յարաբերւում է «երանելի տեսութեան» (visio beatifica) վերաբերեալ միջնադարեան ուսմունքին, որը սնւում է ս. Գրիգոր Աստուածաբանի վախճանաբանութիւնից, ըստ որի անդենականում մարդը կարող է տեսնել Աստծոյ էութիւնը. տե՛ս **Հ. Քյոսեյան,** Եկեղեցու հայրեր, վարդապետներ, էջ 114:

367. Հաշուարկը քաղուած է հետեւեալից. **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ,** Ժամանակագրութիւն, էջ 83:

368. Փարաւոնի անուան «Կան[ա]քարիս» ձեւը յիշատակուած է Սամուէլ Անեցու մօտ. «Կանքարիս կոչէր ընգղմեալն փարաւոն». տե՛ս Ժամանակագրութիւն, էջ 88:

369. «Մանանայ = զի՞նչ է այս». տե՛ս Բառգիրք, էջ 207, Արմ. բառ., հտ. Գ, էջ 250: «Մանանայ» բառի այս ստուգաբանութիւնն առկայ է նաեւ՝ «Հարցումն Վահրամայ իշխանաց Իշխանի եւ պատասխանի Վանական գերալոյս վարդապետի». ՄՄ, ձեռ. 1764, թ. 377ա – 379ա, որտեղից եւ քաղուած է այն:

370. «Կոյս = ոսկէ սափոր» խորհրդաբանութիւնը տե՛ս Պետրոս Սիւնեցի, «Գովեստ ի սուրբ Աստուածածինն…». Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան, էջ 167 [է], նաեւ՝ Զաքարիա Ձագեցի «Յաւետիս ամենօրհնեալ Աստուածածնին». ՄՀ, հտ. Թ, էջ 347 [113]:

371. Ինչպէս երեւում է, քաղուած է Վարդան Արեւելցու ելից գրքի մեկնութիւնից, ուր կարդում ենք. «Ի ծովէն ելանէր կոնքիւլն, յորմէ ծիրանին». տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 1115 («կոնքեղ» կամ «կոնքել», «կոնքիւլ»):

372. Միտքը քաղուած է Փիլոն Եբրայեցու ելից մեկնութիւնից. «Ձերկիր առակէ ի ձեռն բեհեզին, քանզի վուշ երկրաւոր է եւ յերկրէ». տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 480 («բեհեզ»):

373. Միտքը քաղուած է Վարդան Արեւելցու ելից մեկնութիւնից, ուր կարդում ենք. «Եւ էր ձեւ խորանին որպէս զսագաշէն եկեղեցի». տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 683 («սագաշէն»):

374. Միտքը քաղուած է Վարդան Արեւելցու ելից գրքի մեկնութիւնից, ուր կարդում ենք. «Երկու գարու կշիռն դանգ մի է». տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 593 («դանգ»):

375. Խորանի ճարտարապետների եւ խորանի խորհրդաբանութեան վերաբերեալ կարդում ենք Ստեփանոս Սիւնեցու «Պատճառ աղօթից» երկում. «Բեսելիէլ որդի Յովրայ յազգէ Յուդայ, եւ Եղիսամ որդի Աքիսամայ յազգէ Դանայ՝ խորանն նկարակերտ ասղնագործ՝ աւրինակ մարմնոյն Քրիստոսի, զնիւթն յաւրինէին սրբապէս…». տե՛ս ՄՀ, հտ. Զ, էջ 486 [22]: Յարկ է ենթադրել, թէ «Եղիաբ»-ը «Եղիսամ»-ի աղաւաղուած տարբերակն է:

376. Այս տեղին շարադրելիս Տաթեւացին, թւում է, աչքի առջեւ է ունեցել Եսայի Նչեցու Եզեկիէլի մեկնութեան հետեւեալ բառերը. «Ձձեւ տանն ասէ չափեաց չորեքկուսի ըստ կազմուածոյն. քանզի կիբիկոն ըստ կողմանց աշխարհիս ունէր զձեւն վասն հաստատութեան». տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 1095 («կիբիկոն»):

377. Քաղուած է Արիստոտէլի «Ստորոգութիւնք»-ի մաս կազմող «Յաղագս Քանակի» բաժնից. տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի… մատենագրութիւնք», էջ 372:

378. «Տապանակ = Աստուածածին» խորհրդաբանութիւնն՝ ըստ Պետրոս Սիւնեցու Աստուածածնի ներբողի. տե՛ս Ընտրանի հայ եկեղեց. մատենագրութեան, էջ 167 [Թ]:

379. Նկատի ունի հայ թարգմանական մատենագրութեան մէջ ս. Կիւրեղ Ալեքսանդրացու անունով յայտնի Ութամատեանի մեկնութիւնը, որն իրապէս պատկանում է Եւսեբիոս Եմեսացու (+359) գրչին (տե՛ս **Եւսեբիոս Եմեսացի,** Մեկնութիւն Ութամատեան գրոց Աստուածաշունչին, աշխտ. հ. Վահան վրդ. Յովհաննիսեան, Վենետիկ, 1980): Տապանակի խորհրդաբանութիւնը տրուած է նաեւ Մովսէս Քերթողի Վարդավառի ճառում, ուր կարդում ենք. «Տապանակն յանփուտ փայտից նշանակէր զանապական մարմինն Քրիստոսի, իսկ պատեալն ներքոյ եւ արտաքոյ ոսկով սրբով՝ զմիաւորութիւն Աստուածութեան ընդ մարմնոյն…». ՄՀ, հտ. է, էջ 716 [14]:

380. «Տապանակ = Խաչ» խորհրդաբանութիւնը գալիս է Եղիշէի Ծննդոց մեկնութիւնից («տապանն… դարձեալ եւ սուրբ խաչին նմանեալ». ՄՀ, հտ. Ա, էջ 920[12-13]), Դաւիթ Անյաղթի «Ներբողեան ի Սուրբ Խաչն աստուածընկալ» երկից (Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան, էջ 162), ինչպէս նաեւ՝ Մովսէս Քերթողի Վարդավառի ճառից, ուր կարդում ենք. տապանակի «փայտն Խաչին էր տիպ». ՄՀ, հտ. է, էջ 718 [43]:

381. Բերուած է «Մահ Երեմիայի մարգարէի» հինկտակարանեան պարականոնից. աշխտ. Կ. Տեր-Մկրտչեանի, «Արարատ», 1895, յաւելուած մարտի, էջ 8, նաեւ՝ Անկանոն գիրք Հին կտակարանաց, էջ 223:

382. Տե՛ս «Սրբոյն Եպիփանի ասացեալ անունս վասն ականց պատուականաց», աշխտ. հ. Ղ. Ալիշանի, «Բազմավէպ», 1856, էջ 46-50, քննական բնագիրը աշխտ. **M. E. Stone,** An Armenian Epitome of Epiphanius's De gemnis, «Harvard Theological Review», 82, 4, 1989, p. 467-476: «Վասն հրեշտակին որ ցուցանէր նմա զսուրբ քաղաքն հանդերձ դրամբքն չափեալ». Ճառ ԻԳ. տե՛ս Անդրէաս, Արետաս, էջ 298-302, **С. С. Аверинцев,** Двенадцать апостолов, «Мифы народов мира», т. 1, М., 1991, с. 355-357:

383. ՄՄ, թիւ 605 ձեռագրում (թ. 30բ) ի շարս Տաթեւացու Հարցմանց գրքից բերուած հատուածների (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ, կազմեց Օ. Եգանեան, խմբ. Փ. Անթաբեանի, Յ. Քէօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քհն. Հայրապետեանի, Եր., 2007, էջ 25) առկայ է նաեւ հետեւեալ բնագիրը, որը տարբերւում է իւղի վերաբերեալ խնդրոյ առարկայ դրուագից. «Իւղն, որ ի հնումն աւծանէին քահանայք եւ թագաւորք, ի ծաղկանոցս էր եփեալ. հիրիկն, եղեգն, կինամոն, զմուռ: Հիրիկն ծաղիկ է՝ Եթովպիա գտանի, յեզր Փիսոն գետոյն, եւ ունի զաւրութիւն, որ դեւք հալածին ի հոտոյն: Իսկ եղէգն ի Սինա գտանի, կարի անուշահոտ է եւ նորասքանչ ի մարդկանէ, զցաւս բժշկէ, մանաւանդ՝ զքոսս եւ զսունկ: Եւ կինամոն ծաղիկն ի Թեբայիդ գտանի, կարի սքանչելատեսիլ է. յորժամ քուն մարդոյն սրտին վրայ դնես՝ նա ամենայն ինչ, որ ի սրտին է, պատմէ թարց գիտելոյ, եւ թէ եռման ջուր ձգես, առժամ ցրտանայ: Զմուռն ի Բաբելոն գտանի՝ որպէս զհալուայ է եւ իբրեւ զխունկ. յորժամ մեռեալ մարմին աւծանեն՝ անապական պահէ, անփտելի: Դառն է որպէս զլեղի. քացախով կամ գինով տաս՝ թմրեցուցանէ»:

384. Անդենականում Աստծուն տեսնելու վերաբերեալ վարդապետութիւնը տարածուած էր մասնաւորաբար Արեւմուտքի աստուածաբանական աւանդոյթի մէջ. տե՛ս **В. Лосский**, Боговидение, М., 2003, с. 314-326:

385. Քաղուած է Վարդան Արեւելցու Ելից գրքի մեկնութիւնից. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 415 («բազմապարտ»):

386. Հմմտ. Բան հաւատոյ. Ս. Ներսէս Շնորհալի, «Բանք չափաւ», էջ 182:

387. Զոհաբերութիւնների խորհրդաբանական մեկնութիւնը տրուած է Որոգինեսի, Կիւրեղ Ալեքսանդրացու եւ այլոց Ղեւտիկոնի մեկնութիւններում. տե՛ս «Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի». Հայերէն թղթեայ հնագոյն ձեռագիր. 981 թ. աշխտ. Ա. Մաթեւոսյանի, Եր., 1997, էջ 468-528, 551-556, Ընթերցումներ եկեղեցու հայրերի եւ վարդապետների մատենագրությունից, էջ 289-301, նաեւ Պրոկոպիոս Գազացու Ղեւտիկոնի խմբագիր մեկնութիւնը. PG, t. 87 [1], 690-793:

388. Նկատի ունի մկրտութեան նախապատրաստուողների՝ երեխաների նախամկրտական սերտողութեան շրջանը (որի վարդապետական ուսուցումները շարադրուած են ս. Կիւրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկում, տպ. Վիեննա, 1832), ինչը համապատասխանում էր Մեծի պահոց ժամանակին, որի աւարտին՝ Ս. Զատկի տօնին՝ կատարւում էր մկրտութեան խորհուրդը:

389. «Ըշտռտուրմուղն» = իշտումուղն. պրսկ. usturmurg - ջայլամ. Միջին. հայ. բառ., Ա, էջ 289:

390. «Երկու թռչուններ = Քրիստոս», «ջուր = մկրտութեան աւազան» խորհրդաբանութիւնը ընդհանուր առմամբ համապատասխանում է ս. Կիւրեղ Ալեքսանդրացու Ղեւտացւոց գրքի բացատրութեանը. տե՛ս Ընթերցումներ եկեղեցու հայրերի եւ վարդապետների մատենագրությունից, էջ 281-282, 296-297:

391. «Մարիամ = լուսաւորեալ». ստուգաբանութիւնը կենցաղաւարում է ս. Յովհան Ոսկեբերանի («երջանիկն Մարիամ, որ թարգմանի լուսաւոր իմ սուրբ անուն նորա». «Սրբոյ Յովհաննու Ոսկեբերանի ասացեալ ի ննջումն ամենօրհնեալ Աստուածածնին». Թ. Տասնապետեան, Տիրամայր - 3, Անթիլիաս, 1997, էջ 194), Յովհաննէս Աշխարհի երեցի՝ («Կոյս ոմն Մարիամ անուն ամուլ ծնողաց զաւակ, յորմէ **լուսաւորութիւն** անուանի») երկերում. «Էջմիածին», 2011, Զ, էջ 91, տե՛ս նաեւ՝ Բառգիրք, էջ 211:

392. Նկատի ունի «Խաչեցարիւ»-ը («Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»), որ Հայոց պատարագի քրիստոսաբանական խտացումն է:

393. Բնագրում, գրչական վրիպումով՝ «կենդանածինքն». մինչդեռ պէտք է լինի՝ «քետուրածինքն»:

394. Արտայայտութիւնը («Խորհուրդք ծերոց զքարինս պատառեն») բառացիօրէն քաղուած է Վանական վարդապետի «Վասն սաղմոսի». «Քահանայք քո զգեսցեն զարդարութիւն [Սղմ. ճԼԱ 9]» մեկնողական ճառից. ՄՄ, ձեռ. 2273, թ. 52բ:

395. Նկատի ունի Դանիէլի մարգարէութեան հետեւեալ տեղին. «Նայում էի, մինչեւ որ աթոռներ դրուեցին, եւ մի Ծերունի նստում էր այնտեղ» (Է 9):

396. «Երինջ = Մարիամ Աստուածածին» խորհրդաբանութիւնը տրուած է հետեւեալում. «Սրբոյն Եպիփանու Կիպրացւոյ Ներբողեան ի սուրբ Աստուածածինն Մարիամ». տե՛ս **Թ. Տասնապետեան,** Տիրամայր - 3, Անթիլիաս, 1997, էջ 223 («Երինջ անփորձ ի լծոյ ամուսնութեան, որ զորթն զՔրիստոս ծնար»):

397. Սուրբ Հոգու կողմից նախամաքրուած (prokqarqeiths) ծնուելու վերաբերեալ միտքը պատկանում է ս. Գրիգոր Աստուածաբանին. տե՛ս **Թ. Տասնապետեան,** ՀԱ, 1989, էջ 132:

398. Տես Փիլոնի Մնացորդք ի հայս. Մեկնութ. Ելից, էջ 25-26:

399. Տես Փիլոնի Մնացորդք ի հայս, Մեկնութ. Ելից, էջ 25-26, Եղիշէ, Մեկնութ. Յեսուայ եւ Դատաւորաց. (Աւանդութիւններ, Մեկնութիւններ, ճառեր, աշխտ. Հ. Քյոսեյանի, Եր., 2017, էջ 31), նաեւ՝ Անանիա Սանահնեցի, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց **Հ. Քյոսեյան,** Աստվածաբանական բնագրեր. Ուսումնասիրություններ. Ա. Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 238:

400. Տես Փիլոնի Մնացորդ ի հայս. Մեկնութ. Ելից, էջ 25-26:

401. «Հազիմաթ» - «հազիմէթ». **արաբ.** չարիք, աղէտք. տե՛ս «Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ… յօրինեալ ի հ. Յակովբոսէ վ. Պօզաճեան», Վիեննա, 1841, էջ 433:

402. Այս տեղիի յանգամանալից մեկնութիւնը տրուած է Եւստաթէոս Անտիոքացու (+345) «Որկրագուշակի մասին» կամ «Աէնդորեան գուշակի մասին» երկում (PG, t. 18), ուր, ի դէպ, սկզբունքօրէն մերժւում է Որոգինեսի՝ այս տեղիի խորհրդաբանական բացատրութիւնը:

403. «Վկայութիւն սրբոյ առաքելոյն Փիլիպպոսի որ է մի յերկոտասանիցն եւ քեռն իւրոյ Մարամնի եւ Բարթուղիմէոսի որ էր յեւթանասնից անտի». տե՛ս Անկանոն գիրք առաքելականք, էջ 326:

404. Միջնադարեան բնագիտութեան համաձայն «եօքներորդ գօտին» նոյնական է եօքներորդ երկնքին, որ տարածքն է համարւում Երեւակ մոլորակի. տե՛ս **Յովհաննէս Երզնկացի,** Մատենագրութիւն, Ա, էջ 245-246:

405. «Եղիազար = Աստուծոյ զօրութիւն, կամ օգնութիւն». տե՛ս Բառգիրք, էջ 87:

406. «Ապաստանի քառասունութ քաղաքներ» = «Մեծ պահքի եօթ շաբաթներ» խորհրդաբանութիւնը յանգամանալից բացատրուած է Գրիգորիս Արշարունու ընթերցուածոց մեկնութեան մէջ (ՄՀ, հտ. Զ, էջ 44 [13]) եւ Սամուէլ Կամրջաձորեցու «Յաղագս տօնից տէրունականաց» երկում (ՄՀ, հտ. Ժ, էջ 722-723 [12-13]), որոնց վրայ է թերեւս հիմնուած Տաթեւացու բացատրութիւնը:

407. Ակնարկուած են մաքսատները, որոնց մասին հետեւեալն է ասում ճգնակեաց հայրերից մէկը՝ Սիմեոն Սիւնակեացը (356-459). «Երբ հոգին դուրս է գալիս մարմնից եւ սկսում է երկինք բարձրանալ, նրան հանդիպում են դեւերը ու ենթարկում են շատ դժուարութիւնների ու չարչարանքների: Նրանք մեղադրում են նրան ստի, բարկութեան, նախանձի, յիշաչարութեան, գոռոզութեան, չարախօսութեան, անհնազանդութեան, արծաթասիրութեան, հարբեցողութեան, որկրամոլութեան, մոգութեան, սպանութեան, գողութեան, անգթութեան, անառակութեան մէջ: Հոգու երկինք բարձրանալու ժամանակ սուրբ հրեշտակներն իսկ չեն կարող օգնել նրան. նրան օգնում են միայն խոստովանութիւնը, բարի գործերը եւ առաւելապէս ողորմութիւնը: Եթէ յիշեալ մեղքերը մոռանանք խոստովանել, ապա ողորմութեամբ կարող ենք ազատուել դիւական մաքսաւորութեան բռնութիւնից» (տե՛ս Мытарства блаженной Феодоры, Свято-троицкий Ионинский монастырь. Киев, 2011, с. 6-7): Հոգիների անդենական վիճակի վերաբերեալ պատմում է Վարդան Այգեկցու «Հոգիների մասին, թէ ինչպէս են ապրում, եւ կամ ինչպիսին է նրանց հանգիստը» խրատում. տե՛ս Վարդան Այգեկցի, Խրատներ, աշխր. թրգմ., Տ. Շահէ քհն. Հայրապետեանի, Եր., 1999, էջ 37: Հոգիների կայանների մասին վարդապետութիւնը բացատրուած է. **Միք. Ծ. վրդ. Յակոբեան-Սալլաթեանց,** Կրօնագիտութիւն քրիստոնէական, Մոսկով, 1831, պարբ. 178, 179, **Ս. Ստամբոլցեան,** Մեղայ

Աստուծոյ /Բացատրութիւն «Հրաժարիմքի» եւ մեղքերի ընդհանրական խոստովանութեան աղօթքի խօսքերի/, Ս. Էջմիածին, 2001, էջ 23-24, նաեւ՝ **Ա. Տէր-Միքելեան,** Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը, Բ հրատ., Արդի հայերէնի վերածեց եւ ծանօթագրեց Յ. Քէօսէեանը, Թեհրան, 2003, էջ 564-566, ծնթ. 183ա:

408. «Լսիր Իսրայէլ, որ քո Տէր Աստուած միակ Տէրն է» (Բ օր. Զ 4) տեղիի միջոցով Ս. Երրորդութեան հրամանակարգ տեսութեան հաստատումը տրուած է Վարդան Արեւելցու «Ի Տասնաբանեան աւրէնսն…» ճառում. տե՛ս ճառք, Ներբողեանք, էջ 45:

409. Աստծոյ հանդէպ վարձկանական եւ որդիական սիրոյ վարդապետական բացատրութիւնը ներկայացուած է Յովհաննէս Արճիշեցու «Վասն երից կարգացն փրկելոց եւ ապրելոցն եւ երից հակառակաց նոցին եւ դիմակացն» խորագրով երկում. տպ. աշխտ. Հ. Քյոսեյանի. Աստվածաբանության ֆակուլտետ. Տարեգիրք, 2007, էջ 223-233:

410. «Նայիր քեզ» խօսքի հանգամանալից բացատրութիւնը տրուած է ս. Բարսեղ Կեսարացու կողմից (հին յուն-ից թարգմանութիւնը պրոֆ. Ս. Կրկեաշարեանի, «Գանձասար», է, Եր., 2002, էջ 218-228): Խօսքի հին հայ. թրգմ. մաս է կազմում ս. Բարսեղի «Պահոց» գրքի. տե՛ս տպ. աշխտ. Կ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 109-123:

411. «Դեւդաս»-ը թերեւս աղաւաղումն է «Դիմաս»-ի, ով Քրիստոսի հետ խաչուած ձախակողմեան աւազակն էր, որ «դիմաբանեալ Տեառն, հայհոյէր զնա՝ իբր շնորհուկս առնելով խաչահանուացն, թերեւս այնու զերծանել կարասցէ». տե՛ս Ս. **Եպիփան Կիպրացի,** ճառք, էջ 515:

412. «Գեբաղ» = «Հին ձոր», նաեւ՝ «ունայնութիւն». Բառգիրք, էջ 63:

413. Խօսքը ժամագրքի մաս կազմող հրաժարման 4 կարգերից մէկի՝ «մեղաների» մասին է. այստեղ նրանցից մէկի՝ «վեցեկի» շարժման վերաբերեալ ասւում է. «եւ վեց շարժմամբս. ի վեր՝ հպարտութեամբ, ի վայր՝ տրտմութեամբ, յառաջ՝ յանդգնութեամբ, յետուստ՝ սրտմտութեամբ, յաջ՝ հոգեկան մեղօք, ի ձախ՝ մարմնական մեղօք». տե՛ս **Ն. Արք. Պողարեան,** Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 8:

414. «Մովսէս = ի ջրոյ վերաբերեալ». տե՛ս Բառգիրք, էջ 220:

415. Մովսէսի մասին աւանդազրոյցի այս դրուագը տե՛ս Թանգարան Հին եւ նոր նախնեաց. Ա. Անկանոն գիրք Հին կտակարանաց, Վենետիկ, 1896, էջ 205:

416. Տե՛ս «Վարք սրբոց հարանց եւ քաղաքաւարութիւնք նոցին, ըստ կրկին թարգմանութեանց նախնեաց», հտ. Ա, Վենետիկ, 1855, էջ 17-80:

417. Մովսէս նախամարգարէի Հնգամատեանի վերաբերեալ այս տեղեկութիւնը քաղուած է Եւսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից. տե՛ս եւ հմմտ. «Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակականք երկմասնեայ ի հայերէն թարգմանութենէ եղելոյ ի յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց՝ թարգմանեալ ի լատին բարբառ աշխատասիրութեամբ հ. Մկրտիչ վարդապետի Մխիթարեան Աւգերեանց…», Վենետիկ, 1818, էջ 108, 110:

418. «Երիքով = դժոխք», «Ռահաբ = եկեղեցի» խորհրդաբանութիւնը տրուած է Եղիշէի Յեսուայ եւ Դատաւորաց մեկնութեան մէջ. ՄՀ, հտ. Ա, էջ 939 [17], [13] («դժոխոցն նմանութիւն ասաց զերիքով», «հաւատք կնոջն առաքինւոյ նշանակ է եկեղեցւոյ»): «Երիքով = դժոխք» խորհրդաբանութիւնն իր քերթողական հետեւեալ դրսեւորումն է գտել ս. Ներսէս Շնորհալու տողերում. «Պարիսպն եւթն Երիքովին / Ի նմանութիւն խոր դժոխին…». Ողբերգութիւն, գիրք Ա, տե՛ս Բանք չափաւ, էջ 35:

419. Ս. Եփրեմի Մեկնութ. Ա, Բ Թագաւոր. տե՛ս Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Ա, էջ 396-398:

420. «Յեսու = առնէ յարութիւն, Տէր եւ Փրկիչ». տե՛ս Բառգիրք, էջ 229:

421. Այսինքն՝ անմարմին, հոգեւոր թշնամուց՝ սատանայից:

422. «Հինգ թագաւորներ = մարդկային հինգ զգայարաններ» խորհրդաբանութիւնը համաձայն է Եղիշէի բացատրութեանը. տե՛ս Եղիշէ, Մեկնութ. Յեսուայ եւ Դատաւորաց, ՄՀ, հտ. Ա, էջ 941:

423. «Թովլա»-ն թերեւս գրչական վրիպակ է. Աստուածաշնչում՝ Թողա. տե՛ս Դատ. Ժ 1:

424. Պրակ Զ-ն խորհրդաբանօրէն հիմնուած է Եղիշէի մեկնութեան վրայ. «Վասն գեղմանն Գեդէօնի, որ կրկին ունէր զապացոյցն». տե՛ս ՄՀ, հտ, Ա, էջ 942-944, նաեւ աշխր. թրգմ. Աւանդութիւններ, Մեկնութիւններ, Ճառեր, էջ 33-35 հմմտ. «Գեղմն լուսակիզն եւ անթանալի». Թէոդորոս Քռթենաւոր, Գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մարիամ. ՄՀ, հտ. Ե, էջ 1267 [70], «Ուրախացի՛ր անարատ Աստուածածին… զԲանն Հաւր

որովայնի քում կրեցեր, որպէս զցօղ իջեալ ի վերայ գեղմանն…». Զաքարիա Ձագեցի, ՅԱւետիս ամենաւրհնեալ Աստուածածնին. ՄՀ, հտ. Թ, էջ 347 [121]:

425. «Սամսոն = արեգակն նորա կամ փրկութիւն». տե՛ս Բառգիրք, էջ 283:

426. Խօսքը եօթներորդին յաջորդող ութերորդ՝ վերժամանակային իրականութեան մասին է, երբ տիրելու է լիակատար ներդաշնութիւն:

427. Ս. Եփրեմի Մեկնութ. Դատաւորաց. տե՛ս Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Ա, էջ 343-344:

428. «Սամսոն = Քրիստոս» այլաբանութիւնը տրուած է ս. Եղիշէի Դատաւորաց մեկնութեան մէջ՝ «Առ Սամփսոն». տե՛ս ՄՀ, Ա, էջ 948-954, նաեւ՝ աշխր. թրգմ. «Աւանդութիւններ, Մեկնութիւններ, Ճառեր», էջ 45:

429. Այսինքն՝ տան թալիսմանը, պահապանը:

430. «Սաւուղ = խնդրեալ, հայցելի, կամ՝ պարտաւոր». տե՛ս Բառգիրք, էջ 285:

431. Ս. Եփրեմի Մեկնութ. Ա, Բ Թագ. տե՛ս Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Ա, էջ 396-398:

432. «Յեսսէ = էակ կայացօղ, կամ է ինչ կղզոյ պտուղ». տե՛ս Բառգիրք, էջ 229:

433. «Դաւիթ = բաւականաձեռն, կամ՝ սիրելի». տե՛ս Բառգիրք, էջ 76:

434. Տե՛ս «Մեկնութիւն Թագաւորութեան վասն Դաւթի եւ Սաւուղայ…», աշխտ. Յ. Քէօսէեանի, «Գանձասար», Գ, էջ 233 (ՀԸ):

435. Դաւթի եւ Քրիստոսի բաղդատութիւնն, ինչպէս երեւում է, բերուած է համաձայն ս. Եփրեմի բացատրութեան. տե՛ս Ս. Եփրեմի Մատենագրութ., Ա, էջ 396-398, Գ, էջ 238, հմմտ. «Գանձասար», Գ, էջ 237-238 (ՃԸ-ՃԹ բ):

436. «Սողոմոն = խաղաղարար». տե՛ս Բառգիրք, էջ 290:

437. «Ջորի = Ջուարի». ստուգաբանական վերացարկումը հիմնուած է լոկ հնչական նմանութեան վրայ, որովհետեւ վրաց. «ջորի»-ին (Արմ. բառ. Դ, էջ 132) ոչ մի կապ չունի «ջուարի = խաչ» իմաստի հետ:

438. Տաթեւացին արձանագրում է պատկերագրական ընկալեալ յօրինուածքը, որ լայնօրէն կիրառուել է միջնադարեան կերպարուեստում:

439. Ս. Եփրեմի Մեկնութ. Գ Թագ. տե՛ս Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Ա, էջ 432-433:

440. Բնագրում՝ «զբանականն», որ ինչպէս երեւում է գրչական վրիպակ է, ուստի թարգմանուած է ըստ պահանջուող իմաստի. տե՛ս Ժղլանք, թ. 96աբ («Քանի՞ օրէնք է: **Պատ**. Սեռական Գ է. **բնական,** գրաւորական, աւետարանական»):

441. Հաշուարկը քաղուած է. **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ,** Ժամանակագրութիւն, էջ 94:

442. Դանիէլի մարգարէութեան եւթնեակների հաշուարկը համապատասխանում է Դանիէլի մարգարէութեան մեկնութիւններին. տե՛ս եւ հմմտ. Վարդան Արեւելցի, Յովհաննէս Օրդոորեցի, Թովմա Մեծոփեցի, Մեկնութիւնք մարգարէութեանն Դանիէլի, աշխտ. Մ. Արաբյանի, Գ. Ներսիսյանի, Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 103-104, 255:

443. Նկատի ունի «Ողբք Երեմիայն»:

444. «Թուղթ Կորնթացւոց առ Պօղոս», «Երրորդ թուղթ Կորնթացւոց…». տե՛ս «Արարատ», 1895, հոկտեմբեր, յաւելուած, էջ 3-8, նաեւ՝ ՀԱ, 1894, էջ 280-286, 301-306, 346-350, 365-366:

445. Այս տեղեկութիւնը («Եւ Կղեմ գրեալ է. Ես եւ Անանէ Դամասկացի Ա գիրքն Յակոբայ եւ զընթերցուածն ասէ Բ կանոնք Առաքելոցն…») քաղուած է Ժղլանքից, թ. 99ա:

446. Թուարկուած գրքերը դուրս են մնում Եբրայական կանոնից. դրանք մաս են կազմում Աստուածաշնչի Եօթանասնից թարգմանութեան, եւ յայտնի են «Երկրորդականոն» անունով: Ի դէպ նկատենք, որ այդ գրքերն իբրեւ աստուածաշնչական հեղինակութիւն ունեցող մատեաններ վկայակոչուել են վաղ եկեղեցական մատենագրութեան մէջ:

447. Քաղուած է հետեւեալից. «Անանիայի Շիրակունւոյ թիւք որչափութեան տանց Հին եւ Նոր Կտակարանացն». տե՛ս ՄՀ, հտ. Դ, էջ 790-791:

448. Հմմտ. Անանիա Շիրակացու տոմարական պատառիկը. ՄՀ, Դ, էջ 703:

449. Այս բաժինը շարադրելիս Տաթեւացին աչքի առջեւ է ունեցել Սամուէլ Անեցու Ժամանակագրութիւնը:

450. Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, Ժամանակագրութիւն, էջ 113: «Տարիների թուագրութեան» մի մասը համապատասխանում է Ժղլանքի տուեալներին. տե՛ս անդ, թ. 98ա:

451. «Փիլոնի Յաղագս յառաջախնամութեան առ Ալեքսանդրոս». տե՛ս «Փիլոնի Եբրայեցւոյ բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք», աշխտ. հ. Մ. վրդ. Աւգերեանց, Վենետիկ, 1822, էջ 1-43:

452. Նիւսացու անունով բերուած տեղին իրապէս քաղուած է «Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ» երկից (գլ. ԽԱ-ԽԴ, էջ 140-161):

453. Նկատի ունի Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկի համապատասխան մասը. III, 1 («Արդ նախ, եթէ թուեսցի զամենակատար եւ զբոլորիցն Աստուծոյ յառաջ ճանապարհաց յայտնաբանական բարի անունութիւն տեսցուք… զյայտնողն բոլորից իւրոց բարեաց նախախնամութեանց») տե՛ս Դիոնիսիոս, էջ 149:

454. Ակնարկում է Մարիամի՝ ջրհորից ջուր վերցնելու պահին հրեշտակից աւետիս ստանալու վերաբերեալ սուրբգրային պարականոնը, որ առկայ է «Գիրք տղայութեան Քրիստոսի» երկում. տե՛ս Անկանոն գիրք Նոր կտակարանաց, էջ 14:

455. Ծննդաբերելուց յետոյ Տիրամօր կուսութեան պահպանութեան վերաբերեալ վարդապետական տեսութիւնն Արեւելաքրիստոնեական եկեղեցին խտացրել է նրան տրուած «մշտակոյս» (j jAeiparqevnos) որակումի մէջ. «…Իսկ ապա անհոսանուտ մարմնաւորութիւն էմմանուէլի, որ ի Մարիամայ Աստուածածնէ՝ անմեղանչականէ, վասն զի եւ յանամուսնական որովայնէ մշտակուսէն». Ս. Աթանասի անունով այս հատուածը տե՛ս **Ս. Կիւրեղ Ալեքսանդրացի,** Գիրք Պարապմանց, էջ 459: «Միշտ կոյս» որակումը կիրառուած է նաեւ հետեւեալ ճառերում. «Երանելւոյն Աթանասի Աղեքսանդրի եպիսկոպոսի Խօսք ի սուրբ Աստուածածինն եւ յողջոյն Եղիսաբեթի», «Երանելւոյն Կիւրղի սրբոյ եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ Գովեստ ի սուրբ Աստուածածինն, զոր ասացեալ է յԵփեսոս ժողովն». տե՛ս Թ. Տասնապետեան, Տիրամայր - 3, Անթիլիաս, 1997, էջ 203, 205, 217: Այս գաղափարի քերթողական հայելացումն են ս. Ներսէս Շնորհալու հետեւեալ տողերը. «Եւ որպէս մարդ զԱստուած ծնաւ / Եւ կուսութիւն ոչ խախտեցաւ. Բան հաւատոյ». տե՛ս «Բանք չափաւ», էջ 179:

456. «Յերրորդ ժամու պատրեալ օձին / Զմիտս նախնոյ մօրն Եւային / Ի վեցն անկեալ մարդն առաջին / Հաւանական բանիւ նորին / Ի սոյն ժամու Տէրն ի Խաչին / Զի քաւեսցէ զմեղս նոցին». «Բան հաւատոյ», տե՛ս Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, էջ 209:

457. Քաղուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Ի ծնունդն Քրիստոսի» ճառից. տե՛ս ՄՄ, ձեռ. 1500, թ. 724 բ:

458. Իրապէս քաղուած է Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս Եկեղեցական քահանայապետութեան» III, 3, 13 տեղիից («յաստուածայնոյն թաքնութենէ ամենակատար եւ անշփոթ մարդանալովն ըստ մեզ մարդասիրապէս ի բնութիւնս մեր տեսակացեալ եւ առ բաժանականսս մեր անայլայլաբար ըստ բնութեամբ միոյ յառաջ եկեալ…») տե՛ս Դիոնիսիոս, էջ 84:

459. Եթէ Տաթեւացու քարոզ գրոց Ամառան հատորի ԾԴ քարոզում «այր»-ը ստուգաբանւում է «պատկեր», ապա միջնադարեան լուծմունքներից մէկում՝ «արի», «առաքինի», «յառնել». տե՛ս Արմ. բառ. հտ. Ա, էջ 173:

460. ԻԱ, ԻԲ պրակների նիւթը հիմնուած է. «Տեառն Յովհաննէսի բարձրատոհմի եւ մեծազարմ եպիսկոպոսի Դաւթի թոռն կոչելոյ առաքելազարդ եւ իմաստախոհ գլխոյ եկեղեցւոյ հարցումն բանից առ նուաստ Յոհաննէսի Երզնկայեցին եւ պատասխանիք ըստ թուոյ գլխոյ բանիցն հարցման», աշխտ. Յ. Քէօսէեանի, «Էջմիածին», 2009, ԺԲ, էջ 105-119:

461. ԻԳ պրակի տուեալները բերուած են համաձայն՝ «Մաթեմատիկոս Անանիա Շիրակացու [աշխատութիւնը] մեր Տիրոջ եւ Փրկչի յայտնութեան առթիւ» երկի. տե՛ս Անանիա Շիրակացի, Մատենագրութիւն, աշխր. թրգմ., էջ 148-160:

462. Տե՛ս «Գրիգորի Աստուածաբանի Անձիանձու եպիսկոպոսի՝ Խաւսք ի Ծնունդն Քրիստոսի». ՄՄ, ձեռ. 1500, թ. 724բ -727ա:

463. Տե՛ս «Երանելւոյն Բարսեղի եպիսկոպոսի Կապադովկացւոյ ասացեալ ի ծնունդն Քրիստոսի», աշխտ. հ. Պ. Տէր-Պօղոսեանի, ՀԱ, 1968, էջ 419-438:

464. Արտեմոնը Բ դարի աղանդաւոր է, ով չէր ընդունում Յիսուս Քրիստոսի աստուածութիւնը՝ նրան համարելով լոկ մարդ: Ըստ այսմ Անտիոքի 254 թ. ժողովի եւ Եւսեբիոս Կեսարացու կողմից նկատուել է Պօղոս Սամոսատցու նախակարապետ: Նրա վերաբերեալ Եւսեբիոս Կեսարացու Եկեղեցական պատմութիւնից քաղուած մի դրուագ (դպ. Ե. իր) կենցաղավարում է հայերէն ձեռագրերում (ՄՄ, ձեռ. 6453, թ. 181բ-183բ. **Հ. Անասեան**, Հայկ. մատենագիտ. Բ, էջ 928-929): Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ»-ում Արտեմոնի մասին հետեւեալն ենք կարդում. «Արտեմոն յետ խաչելութեան Տեառն

երեսուն եւ չորս ամի անցելոյ աշակերտեցաւ Յոհաննու աւետարանչի եւթն ամիս եւ ոչ եկաց հաստատուն յուղիղ հաւատս, զորմէ ասէ Յոհաննէս. Ոմանք առ ի մէնջ ելին: Եւ յետ մահուան առաքելոյն ասէ Արտեմոն. Վասն նախանձու առաքեալքն զծնունդն Տեառն ոչ ասացի, իսկ այժմ ինձ յայտնեցաւ եւ ես ձեզ ծանուցանեմ: Եւ ընդ հակառակս ելեալ՝ գրէ ընթերցուածս եւ բաժանէ յերկուս բնութիւնս զմի Քրիստոսն եւ երկու որդիս, եւ կարգէ երկուս տաւնս բաժանեալս ըստ երկուց որդւոցն. քսան եւ հինգն դեկտեմբերի կարգէ զծնունդն ի Սրբոյ Կուսէն եւ զծնեալն սոսկ մարդ ասէ, եւ ի վեցն յունուարի սահմանէ զմկրտութիւնն, եւ զայն Բանին Հաւր ասէ, եւ բաժանէ զԱստուած Բանն յիւր միացեալ եւ աստուածացեալ մարմնոյն». **Արմատ հաւատոյ**, էջ 238-239:

465. Այս պատմութիւնն առկայ է «Ի թղթէն Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի զոր գրեաց յերուսաղէմայ ի Հայք» խորագրով քաղուածքում, որ բերուած է «Կնիք հաւատոյ» դաւանաբանական ժողովածուի մէջ. տե՛ս անդ, էջ 239-240:

466. Մակար Երուսաղէմացի. աթոռակալել է 324-335 թթ.: Յայտնի է նրա՝ 335 թ. Հայոց Վրթանէս եպիսկոպոսին յղած թուղթը հետեւեալ խորագրով. «Վասն կանոնադրութեան Կաթողիկէ եկեղեցւոյ կարգաց, զոր չէ արժան ընդ հրամանաւ անցանել…». տե՛ս Կանոնագիրք, Բ, էջ 216-239, նաեւ անգլ. թրգմ. բանասիրական շահեկան ճշտումներով. **A. Terian,** Makarius of Jerusalem. Letter to the Armenians, AD, 335, N-Y, 2008:

467. Թլփատութեան աստուածաբանական նրբախոյզ բացատրութիւնը գտնում ենք Ղուկասու Աւետարանի խմբագիր մեկնութիւններից մեկում՝ ս. Կիւրեղ Ալեքսանդրացու անունով զետեղուած մի քաղուածքի մէջ. «Բանն այն է, որ թլփատութիւնը, ինչպէս թւում է ինձ, ունէր եռակի ներգործութիւն: Նախ՝ այն իբրեւ մի նշանով ու դրոշմով կարգազատում է Աբրահամի սերունդը եւ այն բաժանում այլ ժողովուրդներից: Երկրորդ՝ ինքն իր մէջ այն ներկայանում է իբրեւ աստուածային Մկրտութեան շնորհի ու զօրութեան նախօրինակ, մասնաւորաբար, թէ ինչպէս հնում թլփատուողը այդ նշանի միջոցով հռչակւում էր որպէս Աստծոյ ժողովրդին պատկանող մէկը, այնպէս էլ մկրտուողն իր վրայ դրոշմելով Քրիստոսի կնիքը, ենթակայ է դառնում Աստուծոյ որդեգրութեանը: Եւ երրորդ՝ այն խորհրդանշանն է շնորհի մէջ գտնուող հաւատացեալների, ովքեր հաւատի սուրսայրի խօսքով եւ ճգնական սխրանքներով հատում եւ սպանում են մարմնական քաղցրութիւնների եւ կրքերի ապստամբութիւնը՝ ոչ թէ մարմինը հատելով, այլ մաքրելով սիրտը, ընդունելով թլփատութիւնն ըստ հոգու եւ ոչ թէ ըստ գրի: Եւ դրանց դրուատանքը չի պահանջում մարդկային դատողութիւն, այլ որոշարկուած է վերին վճռով, ինչպէս վկայում է աստուածային Պօղոսը (Հռոմ. Բ 29)». տե՛ս PG, t. 72, 500 A:

468. Քրիստոսի մկրտութեան խորհրդաբանութիւնը հանգամանալից տրուած է Անտիպատրոս Բոստրացու «Խօսք ի մկրտութիւն Տեառն» ճառում. աշխտ. Յ. Քէօսէեանի. «Գանձասար», 1992, Ա, էջ 35-42:

469. Քրիստոսի եւ Յովհաննէս Մկրտչի այսօրինակ համեմատութիւնը կատարուած է ս. Եփրեմ Ասորու «Ի Մկրտութիւն Քրիստոսի եւ յընդդիմանալն Մկրտչին» ճառում. տե՛ս ՄՄ, ձեռ. 4774, թ. 101ա - 106բ, 1520, թ. 266ա - 269ա:

470. Աստուածաբանական այս խնդիրն իր հետեւեալ լուծումն է ստացել ս. Գրիգոր Նիւսացու կողմից. ըստ նրա Քրիստոս զոհաբերւում է թէ՛ սատանային, թէ՛ Աստծուն. բովանդակ մարդկութեանն իշխող սատանային անհրաժեշտ էր մի մեծ զոհ, որպէսզի նա զիջէր այն. այդ մեծ զոհը դարձաւ Քրիստոս ինքը, ով իր կարծեցեալ տկարութեամբ խաբեց սատանային ու փրկեց մարդկութեանը: Բայց սա չի հակասում այն բանին, որ դա միաժամանակ Աստծոյ բերած հնազանդութեան եւ սիրոյ զոհ է. տե՛ս **Հ. Քյոսեյան,** Եկեղեցու հայրեր, վարդապետներ, էջ 129:

471. Այս խորհրդաբանութեան վաղագոյն վկայութիւնը գտնում ենք Բառնաբասի նամակում (ԺԲ). տե՛ս «Գանձասար», Ը, էջ 191:

472. Հաւանաբար յիշողութեամբ վկայակոչուելու պատճառով բնագրում սխալմամբ. «Արկցուք հաց ի փայտ նորա». մինչդեռ պէտք է լինէր. «Եկայք արկցուք փայտ ի հաց նորա»:

473. Այս մանրամասներն առկայ են. Անկանոն գիրք Նոր կտակարանի, էջ 344, Վանական վարդապետ, «Հարցմունք եւ պատասխանիք», ՄՄ, ձեռ. 2752, թ. 13բ, նաեւ՝ սրա համառօտ տարբերակը. ՄՄ, ձեռ. 1764, թ. 377ա – 379ա, Վարդան Արեւելցի, Ժղլանք, թ. 38բ - 39բ, Ս. Եպիփան Կիպրացի, Ճառք, էջ 518: Ի դէպ, ս. Եպիփանի մօտ ձախակողմեան աւազակը Դէմասն էր, իսկ աջակողմեանը՝ Կոստասը (Գեստաս). անդ, էջ 515:

474. Ինչպէս երեւում է, համառօտումն է Ստեփանոս Սիւնեցու «Վասն անապականութեան մարմնոյն...» դաւանաբանական երկում առկայ նզովքի. «Արդ, որ ոք ասէ զմարմինն Աստուծոյ ապականացու յետ միաւորութեանն... եղիցի նզովեալ». տե՛ս ՄՀ, հտ.Զ, էջ 457 [18]:

475. Հմմտ. «Վասն անապականութեան մարմնոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ». ՄՄ, ձեռ. 2335, թ. 85ա:

476. Մինչդեռ Ս. Գրոց համապատասխան տեղիում. «բարձրանամ երկրից»:

477. Նկատի ունի Բենեդիկտոս Նուրսիացուն (շուրջ 480-550) եւ նրա «Սահման վանաց» երկի հայերէն թարգմանութիւնը, որ կատարուել է 1179 թ. Ներսէս Լամբրոնացու ձեռքով. ՄՄ, ձեռ, 4947, թ. 114ա-163ա. տե՛ս **Հ. Անասյան,** Հայկ. մատենագիտ., Բ, էջ 1460-1461:

478. Լիմպոս - լատ. Limbus. հին արդարների հոգիների, իսկ այժմ անկնունք մեռած մանուկների հոգիների կայաններն են. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 886:

479. Դժոխ - «դժուար կամ անհանգիստ». տե՛ս Բառգիրք, էջ 78:

480. Ըստ այսմ պէտք է ենթադրել, որ Զատկի նաւակատիքը Գրիգոր Լուսաւորիչը կարգել է 325 թ.:

481. Վիջիլ /Վիճիլ/ – լատ. Vigiliae. հսկումն, գիշերային ժամասացութիւն, որ կատարւում է եկեղեցական տօների նախատօնակներին. տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 822, Միջին հայ բառ., Բ, էջ 368:

482. Նաւակատիք - «նորոգութիւն կամ խնդութիւն, կամ տօն մեծ». տե՛ս Բառգիրք, էջ 236:

483. Քարթոշ քարաթոշ, քարաթոթոշ - մողէսի տեսակ. տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 995:

484. Նկատի ունի Ներսէս Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութիւնը, որի գրչագիր վաղագոյն օրինակը Վենետիկի թիւ 92 (թ. 1ա - 663բ) ձեռագիրն է՝ ընդօրինակուած հեղինակի կենդանութեան օրօք՝ 1190 թ:

485. Տիրոջ յարութեան ժամի վերաբերեալ ուշագրաւ հաշուարկ է անում ս. Գրիգոր Նիւսացին. ըստ նրա, Քրիստոս իր հոգին աւանդել է ոչ թէ ուրբաթ օրուայ 9-րդ ժամին, այլ հինգշաբթի երեկոյեան: Ուրբաթը բաժանում է երկու օրուայ, որովհետեւ 6-րդ ժամից մինչեւ 9-րդ ժամը մթնեց: Ուստի շաբաթ օրուայ հետ միասին ստացւում է 3 օր: Նոյնպէս ունենք 3 գիշեր՝ հինգշաբթիից ուրբաթ գիշեր, ուրբաթ օրուայ երեքժամեայ խաւարը, եւ ուրբաթից շաբաթ գիշերը: Նիւսացին իր տեսակէտը, սակայն, համարում է մի պարզ վարկած. տե՛ս PG. t. 46, col. 600-689 = «Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ արարեալ ի սուրբ Զատիկն եւ ի կենսաբեր յարութիւն Քրիստոսի՝ միաբանութեամբ աւետարանչացն բանից եւ ի բացայայտումն կանանց իւղաբերից», ՄՄ, ձեռ. 2124, թ. 542 բ - 553բ:

486. Հմմտ. «Ի խաչանիշ փայտէն դղրդեցան դժոխք». Շարական. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 923:

487. Բնագրում, սակայն, «Գեղարդն արքայի եւ կուժ ջրոյն ո՞ւր է». Ա Թագ. ԻԶ 16:

488. Տե՛ս Յովհան Ոսկեբերան, ճառք, Վենետիկ, 1861, էջ 122-134: «Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ արարեալ ի սուրբ Զատիկն եւ ի կենսաբեր յարութիւն Քրիստոսի...», ՄՄ, ձեռ. 2124, թ. 542բ-553բ: Գրիգոր Սկեւռացի. «Ճառ ի Յարութիւն Տեառն», Երուսաղէմ, ձեռ. 35, թ. 397-430, ըստ ՄՄ, ձեռ. 993, թ. 753ա- 754ա մի հատուած հրատ. Ընտրանի հայ եկեղեց. մատենագրութեան, էջ 542-545:

489. «Կիւրղի՝ ի Պարապմանց գրոց, ի Թէոդոսի թղթէն զի պարտ է ուտել երեկուն ճրագալուցին». տե՛ս Արմատ հաւատոյ, էջ 225, 398 («խոր երեկոյ եւ առաւօտն վաղ ի մի եւ ի նոյն ընթանան ժամանակք»), նաեւ՝ Ժղլանք, թ. 50ա:

490. Այս բացատրութիւնը մասամբ համաձայն է Զաքարիա Չագեցու եւ Եփրեմ Ասորու հետեւեալ մեկնութեանը. **«Տեսանէին զկտաւսն, զի կային անդ».** Զի թէ հրէիցն կամ զինուորացն բարձեալ էին՝ պատանաւքն տանէին, իսկ եթէ գողոց յափշտակեալ՝ ոչ կարէր զզմռսեալ եւ զսոսնձեալ պատանսն, քանզի արկեալ էր ընդ ամենայն անդամս մարմնոյն, եւ մաքուր եւ սպիտակ զերծանել ի նմանէ զկտաւսն ոչ էր հնար...: «**Վարշամակն, որ էր ի գլուխն**... աւրինակ Քրիստոսի էր, որ է աւրինակ եւ գլուխ եկեղեցւոյ: Եւ աներեւոյթ՝ ի մէնջ ծածկեալ ընդ աջմէ Հաւր, եւ երկրորդ գալստեանն յայտնի եւ խառնի յեկեղեցիս, յորժամ համբառնայ զսա ի փառս իւր». տե՛ս **Սարգիս Կունդ,** Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխտ. Եզնիկ արք. Պետրոսեան, Ս. Էջմիածին, 2005, էջ 593-594:

491. Նկատի ունի Ներսէս Շնորհալու «Յիսուս Որդի» քերթուածի հետեւեալ հատուածը. «Կարծէր զնա անյուսալի /Բարձող մարմնոյն Տիրականի/ Ծանօթս տայր ընտել ձայնով /Ի յանուանէ զնա կոչելով/ Զոր Մարիամ բաղձմամբ սիրով /Հպիլ ի նա

փափաքելով/ Տէր արգելու զնա ասելով /Մի՛ մերձենար զգալի գթով/ Զի չեմ ելեալ առ Հայր ամպով… Այլ զյարութիւն պտուղս առաջին /Պարտ է նուիրել Հօրն վերին/ Որ իմ բնութեամբ է Հայր յերկին եւ ձեր՝ շնորհօք աւազանին /Աստուած կոչի իմ ըստ մարմնոյ/ Զի է սա մասն արարածոյ /Եւ ձեր Աստուած բնութեամբ բարւոյ…». տե՛ս «Գիրք որ կոչի Յիսուս Որդի՝ շարադրեալ ներչափական բանիւք ի մերս Շնորհալի հայրապետէ ի Ներսիսէ Կլայեցւոյ», Կ. Պոլիս, 1824, էջ 245-246:

492. Հմմտ. «մտանելով եօթնաստեղեան խորանս», «ընկալ եւ հանգո զհրաժարեալ հոգիս յեօթնաստեղեան լուսեղէն խորանսն». Շարական. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 707:

493. Պենտեկոստէ - «յիսներեկ, կամ Ե տօն». տե՛ս Բառգիրք, էջ 273:

494. Նկատի ունի «Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ» ծիսական խօսքը, որի բացատրութիւնը տրուած է Ստեփանոս Սիւնեցու ժամակարգութեան մեկնութեան մէջ. ՄՀ, հտ. Զ, էջ 465:

495. Միտքը քաղուած է Տիբերիոս քահանայի չորրորդ հարցումի «լուծմունք»-ից. տե՛ս **Կիւրեղ Ալեքսանդրացի**, Գիրք Պարապմանց, էջ104:

496. Մարգարէութեան տեսակների մասին այս դրուագը բերուած է ս. Յովհան Ոսկեբերանի Երեմիայի մեկնութիւնից. տե՛ս Ս. **Յովհան Ոսկեբերան,** Մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայ, աշխտ. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2015, էջ 28-33:

497. «Առ Դիմոփիլոս սպասաւոր, յաղագս անձնիշխան գործոյ եւ քաղցրութեան». տե՛ս Դիոնիսիոս, էջ 237-249:

498. Չորս աթոռներն են. «առաջին աթոռն Մատթէոսի՝ յԵրուսաղէմ, իսկ երկրորդն՝ Մարկոսի՝ յԱղեքսանդր, իսկ երրորդն՝ Ղուկայ՝ յԱնտիոք, իսկ չորրորդն՝ Յոհաննու՝ յԵփեսոս, որ այժմ ունի Կոստանդինուպաւլիս…». «Վասն չորից աթոռոցն». «Անանիայի վարդապետի հայոց բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի». տե՛ս **Հ. Քյոսեյան,** Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 297:

499. «Հայոց կաթողիկոսը երանելի Հովհան Օձնեցին էր, որ երկիրը մաքրել էր Եզրի աղանդից». տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թրգմ., ներած. եւ ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, [ԼԱ] էջ 151:

500. Նիկիայի՝ Ա Տիեզերաժողովը տեղի է ունեցել ոչ թէ 318 կամ 330 թթ., այլ՝ 325-ին:

501. Կ. Պոլսի՝ Բ Տիեզերական ժողովը գումարուել է 381 թ., եւ ուղղուած է եղել Կ. Պոլսի եպիսկոպոս (342-360) Մակեդոնի հոգեմարտական հերձուածի դէմ, ըստ որի Ս. Հոգին համագոյ չէ Հորը եւ Որդուն, Աստուած չէ, այլ՝ արարած:

502. Ծայրայեղ մօտեցումից խուսափելու նպատակով Նեստորը Աստուածածնին անուանում է ոչ թէ մարդածին, այլ՝ Քրիստոսածին:

503. Եփեսոսի՝ Գ Տիեզերաժողովը տեղի է ունեցել 431 թ.:

504. Բնագրում, հաւանաբար գրչական վրիպակով՝ «Փալանացի»:

505. «Սուրբ Սիմոն Սիւնակեացի» եւ «սուրբ Ղուկիոս սքանչելագործի» վերաբերեալ այս մանրամասներն առկայ են Պօղոս Տարոնացու «Խօսք ընդդէմ չարաբար երկաբնակաց հոռոմոց» երկում. տե՛ս ՄՀ, հտ. ԺԷ, էջ 575:

506. Տե՛ս Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 190-223, Երուսաղէմ, 1871, էջ 166-175, 199-205, 239-242: Հակաքաղկեդոնական ուղղուածութիւն ունեն նրա անունով հետեւեալ երկերը. «Վկայութիւնք պատմողաբար եւ յանդիմանութիւնք վասն չարաժողովոյն Քաղկեդովնի», «Սրբոյն Միխայէլի պատրիարքի Ասորւոց, զոր առ հասարակ քաղկեդոնականսն գրեաց»:

507. Հայաստանում գումարուած եւթն տեղական եկեղեցաժողովների վերաբերեալ տե՛ս **Ա. Մխիթարեան,** Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874:

508. Ակնարկուած են Շահապիվանի, Կարինի, Դւինի, Մանազկերտի, Պարտավի Վաչագան արքայի եւ Սիմէոն կաթողիկոսի ժողովները, որոնց մասին տե՛ս **Ա. Մխիթարեան,** Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, էջ 68-99:

509. Նկատի ունի Շահապիվանի ժողովը (447 թ., որի կանոնները. տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 422-466):

510. Քաղկեդոնի եկեղեցաժողովը տեղի է ունեցել 451 թ.:

511. Թէոդուպոլսի (Կարին) եկեղեցաժողովը տեղի է ունեցել 632 թ., նրա կանոնները (Կանոնագիրք Բ, էջ 244-257), սակայն, ըստ գիտութեան մէջ շրջանառուող վարկածի, իրապէս կազմուել են Ժ-ԺԱ դդ.:

512. Ներսէս Շինող հայրապետի հրամանով գումարուած Դւինի Ե ժողովը տեղի է ունեցել 648 թ.: Նրա կանոնները տե՛ս Կանոնագիրք, Բ, էջ 258-263:Ի դէպ Վ. Յակոբեանն այս կապակցութեամբ նկատում է, թէ «Դւինի այս ժողովի մասին թէեւ անագան, բայց մատենագրական միակ վկայութիւնն է սա: Մեզ թւում է, որ Գրիգոր Տաթեւացին այս տեղեկութիւնը վերցրել է ոչ թէ հնագոյն պատմիչների երկերի վկայութիւններից, այլ՝ Կանոնագրքից». տե՛ս Կանոնագիրք, Բ, Ներածութ. էջ LXXV:

513. Յովհան Օձնեցի հայրապետի նախաձեռնութեամբ գումարուած Մանազկերտի ժողովը տեղի է ունեցել 726 թ.: Նրա կանոնները տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 514-537:

514. Նկատի ունի Յովհան Օձնեցի հայրապետին (717-728), ով յայտնի դարձաւ հերձուածների դէմ իրականացրած անտեղիտալի պայքարով, եկեղեցավարչական, բարենորոգչական, աստուածաբանական լայն գործունէութեամբ: Քաղկեդոնական ուսմունքին հետեւող վեց կաթողիկոսների վերաբերեալ այս տեղեկութիւնը քաղուած է Օձնեցուն վերագրուած «Սակս ժողովոց» երկից. տե՛ս ՄՀ, է, էջ 101-103:

515. Այս գրութիւններն իբրեւ մերժելի մատեաններ յիշատակուած են արգելուած գրքերի ցանկում. «Այս են անուանք ԺՁ սուտ գրոցն, որ եկեալ ի հերձուածող Ասորոցն եւ ոչ ի յուղղափառ Ասորոցն իմանայք…». տե՛ս **Հ. Անասյան,** Հայկական մատենագիտություն, Ա, էջ XXXIX:

516. Սիոն կաթողիկոսի նախաձեռնութեամբ գումարուած Պարտավի եկեղեցաժողովը տեղի է ունեցել 768 թ.: Այդ ժողովի կանոնները տե՛ս Կանոնագիրք, Բ, էջ 3-18:

517. «Սահմանադրութիւն կանոնի Վաչագանայ Աղուանից արքայի եդեալ ի ժողովն, որ յԱղու[է]նս եղեւ. գլուխ[ք] ԻԱ». տե՛ս Կանոնագիրք, Բ, էջ 91-100:

518. Աղուանից Սիմէոն կաթողիկոսի գումարած եկեղեցաժողովը տեղի է ունեցել 717 թ.: Կանոնները տե՛ս ՄՄ, ձեռ. 656, թ. 12բ - 109բ:

519. Միտքը քաղուած է «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան» ոչ թէ Վեցերորդ, այլ Հինգերորդ գլխից. V.3.3 («Այլ եւ ինքն աշակերտացն գլխաւորն հանդերձ համակարգիւ քահանայապետականաւն իւրով տասնեկիւ, ի երկոտասաներորդի աշակերտին եկեալ կատարումն զընտրութիւնն…»):

520. Նկատի ունի Միխայիլ Ասորու Ժամանակագրութիւնը, տպ. Երուսաղէմ, 1870, 1871:

521. Այս զրոյցը, որ առկայ է Մովսէս Խորենացու Պատմութեան մէջ (տպ. Տփղիս, 1913, էջ 212 . «եւ անդ ասեն զյղութիւն մօր սրբոյ եւ մեծի մերոյ Լուսաւորչին»), քաղուած է «Վանական վարդապետի ասացեալ՝ Բան հաւատալ ազգիս մերում» երկից. աշխտ. Մ. արք. Մութաֆեանի. «Շողակաթ». Եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդէս. 1995. Պատրիարքութիւն Հայոց, Ստանպուլ, 1995, էջ 162:

522. Ըստ վաղնջական մի աւանդութեան, Մարթայի եւ Մարիամի եղբայր Ղազարոսը եղել է Կիպրոսի առաջին հայրապետը, եւ պաշտօնավարել տասնհինգ տարի: Նա «քարոզելով զՔրիստոս, եւ նշանս բազումս արարեալ փոխեցաւ առ Քրիստոս հանգստեամբ, որպէս ի քուն լինելով». տե՛ս **Ս. Եպիփան Կիպրացի,** Ճառք, էջ 401:

523. Հմմտ. **Ագաթանգեղոս**. ճԻԵ. տե՛ս ՄՀ, հտ. Բ, էջ 1719:

524. «Եւ կենսաբուխ սուրբ Աւետարանը մեր Թադէոս առաքեալի համար ասում է... Իսկ ուրիշ ինչ ազգ կարող է պարծենալ դրանով» հատուածը բառացիօրէն քաղուած է «Վանական վարդապետի ասացեալ Բան հաւատալի ազգիս մերում» երկից. աշխտ. Մ. արք. Մութաֆեանի. «Շողակաթ» Եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդէս. 1995. Պատրիարքութիւն Հայոց, Ստանպուլ, 1995, էջ162-163: Տիրոջ կողմից օրհնուած իւղի եւ Աստուածամուխ գեղարդի պատմութեան մանրամասները տե՛ս նաեւ՝ «Սոփերք Հայկականք», հտ. Ը, աշխտ. հ. Ղ. Ալիշանի, Վենետիկ, 1853, էջ 9-58:

525. «Ներածութիւն Պորփիւրի». տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի… մատենագրութիւնք», էջ 242-243:

526. Լատին. բուրգաթուր. purgatorium. նշանակում է քաւարան: Տաթեւացու՝ Սաղմոսաց համառօտ մեկնութիւնն ունի հետեւեալ խորագիրը. «Հաւաքումն բանից ի մեկնութենէ Սաղմոսին Աստուածահօրն Դաւթի մարգարէին, ընդդէմ մոլորութեան նոցա, որք ասեն Բիւրքաթուր». տե՛ս տպ. աշխտ. Ա. Քեոշկերեանի, Եր., 1993, էջ 7:

527. Սա ակնարկ է ֆիլիոքուէի (Filiocue) տեսութեան վերաբերեալ: Իր Ոսկեփորիկում Տաթեւացին մասնաւոր անդրադարձ է անում այս խնդրին. տե՛ս անդ, էջ 56-59:

528. Աւագ ուրբաթի պահոց կարգը խախտող այս սովորոյթի մասին յանգամանալից լուսաբանւում է Գրիգոր Աւագ Վկայասէր հայրապետի «Թուղթ յաղագս Օռազատկի»

երկում (Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 288-292, քնն. բնագիրը աշխտ. Գ. Մուրադեանի. ՄՀ, հտ. ԺԷ, էջ 85-88), նաեւ՝ «Վկայութիւնք յԱստուածաշունչ գրոց վասն ուրբաթազելի, զի սուտ է յամենայնի». տե՛ս **Արմատ հաւատոյ,** էջ 279-285:

529. Տե՛ս **Ագաթանգեղոս,** Պատմություն, գլ. ճԲ, պարբ. 731-755:

530. Նկատի ունի Թադէոս, Բարթուղիմէոս, Թովմաս առաքեալներին, որոնց մասին տե՛ս «Սոփերք Հայկականք», հտ. Ը, Վենետիկ, 1853, էջ 85-96, հտ. ԺԹ, 1854, էջ 5-30, նաեւ՝ Անկանոն գիրք առաքելականք, էջ 369-436:

531. «Վասն ութ խորհրդոցն». տե՛ս PG, 79, 1145-1164 = Եւագր, էջ 31-41: Ութ խորհուրդների վերաբերեալ մասնաւոր աշխատութիւններ ունեն Կիրակոս Երզնկացին (ՄՄ, ձեռ. 228, թ 208բ-241բ) եւ Տաթեւացու աշակերտ Մատթէոս Ջուղայեցին (տպ. Կ. Պոլիս, 1750):

532. Խօսքը թերեւս Ամոն Նիտրիացու (+350/357) մասին է, որին վերագրւում են «Ճգնաւորական կանոններ», ինչպէս նաեւ՝ «թղթեր տպ. Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նոցին…», հտ. Բ, Վենետիկ, 1855, էջ 597-603, նաեւ՝ «Վասն արբեցողաց՝ Ամոնի ասացեալ». ՄՄ, ձեռ. 3854, թ. 77բ - 79ա. տե՛ս **Հ. Անասյան,** Հայկ. մատենագիտ., Ա, էջ 676- 678, Христианство. энц. т. 1, М., 1993, с. 68:

533. Սահակ Միայնակեացի եւ նրա մի երկի վերաբերեալ տե՛ս **Հ. Քյոսեյան,** ԺԴ դարի նորայայտ մատենագիր Սահակ Միայնակեացի աստուածաբանական երկը, «Էջմիածին», 2010, Ժ, էջ 94-118:

534. Տե՛ս Եւագր, էջ 221-323:

535. «Առ խորհուրդսն որկորստութեան». տե՛ս Եւագր, էջ 221-233:

536. Այս միտքը քաղուած է Յովհան Դամասկացու Պօղոս առաքեալի թղթոց մեկնութիւնից (j'Esti de pivstis ejlpixomevnwn uJpovstasis, pragmavtwn elegcos ouj blepomevnwn. PG. t. 95, col. 980), որի հայերէն թարգմանութիւնը մեզ անյայտ է:

537. Արտայայտութիւնս բացակայում է Ոսկեբերանի անունով յայտնի «Յաղագս հաւատոյ» ճառում. տե՛ս «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն թղթոցն Պօղոսի», հտ. Բ, Վենետիկ, 1862, էջ 783-791:

538. Ասոյթներն ամենայն հաւանականութեամբ քաղուած են միջնադարում քաջ յայտնի «Բանք իմաստնոց» ժողովածուներից:

539. Սահմանումները բացակայում են «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկում:

540. Հմմտ. Արիստոտէլ, Յաղագս աշխարհի. ՆԲՀ, Բ, էջ 884:

541. Տե՛ս Ս. Կիւրեղ Երուսաղէմացի, Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 48-67:

542. Այս եւթն խօսքերը Հաւատոյ հանգանակից են, որի բացատրութիւնը տե՛ս Եւագր, էջ 134-141:

543. Նկատի ունի «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի «Յաղագս տռփման». IV 10, «Սրբոյն Յռեթէոսի ի տռփականացն աւրհնաբանութեանց». IV. 15, «Նորին ի տռփականացն աւրհնաբանութեանց». IV, 16. բաժինները. տե՛ս Դիոնիսիոս, էջ 163-168:

544. Քաղուած է Ջոն (Հովհան) Սուինֆորդ Անգլիացու (Անգլուս՝ Ը դ.) «Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյ» երկից, որ լատիներէնից հայերէն է թարգմանել Յակոբ Քռնեցին 1337 թ. տե՛ս ՄՄ, ձեռ. 868, թ.193ա-244ա, 1153, թ. 59ա-106ա, 2297, թ. 183ա-225 բ:

545. Արիստոտէլի անունով վկայակոչուած հատուածները քաղուած են նրա անունով յայտնի «Յաղագս առաքինութեան» երկից. տե՛ս «Կորինի վարդապետի, Մամբրէի Վերծանողի… մատենագրութիւնք», էջ 629-633: Արիստոտէլի այս երկի առաւել հանգամանալից բացատրութիւնը տրուած է Տաթեւացու «Համառօտ լուծմունք առաքինութեանցն Արիստոտէլի» աշխատութեան մէջ. տե՛ս ՄՄ, ձեռ. 5674, թ. 229բ - 238ա:

546. Ի տարբերութիւն Տաթեւացու վկայութեան («Ջօրաւոր է իբրեւ զմահ սէր») ընկալեալ թարգմանութիւնը. «Զի բուռն է իբրեւ զմահ սէր»:

547. Ի տարբերութիւն Տաթեւացու վկայութեան («Պատերազմ են կեանք մարդոյ…») ընկալեալ թարգմանութիւնը. «Ստուեր են կեանք մեր ի վերայ երկրի»:

548. Ս. Հոգու եւթն շնորհների մասին է ակնարկուած Եղիշէի Դատաւորաց մեկնութեան մէջ, ուր Սամսոնի եւթնագիսակը խորհրդապատկերն է նկատւում Ս. Հոգու եւթն շնորհների. տե՛ս «Աւանդութիւններ, Մեկնութիւններ, Ճառեր», էջ 46-47: Ս. Հոգու եւթն շնորհների աստուածաբանական քննութիւնը տե՛ս **Ա. Տէր-Միքէլեան,** Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը, էջ 220-234:

549. Հմմտ. Եւագր, էջ 71-72:

550. Բնագրում. «ոչ կրէ», այսինքն՝ չի ենթարկւում կրքերի պատճառած հոգեկան վայրիվերումներին:

551. Ինն երանութիւնները լուսաբանուած են Տաթեւացու մասնաւոր աշխատութեան մէջ. «Յաղագս Թ երանութեանց». ՄՄ, ձեռ. 6102, թ. 65ա - 94ա:

552. Մկրտութեան խորհրդակատարութեան վերաբերեալ Տաթեւացու դիտումները կաթոլիկ վարդապետութեան դիտանկիւնից մասնաւոր քննադատութեան են ենթարկուել Կղեմես Գալանոսի (ԺԷ դ.) կողմից. տե՛ս «Եկեղեցու հայրերը եւ վարդապետները Սուրբ Մկրտութեան խորհրդի մասին», Ա, աշխտ. Հ. Քյոսեյանի, Եր., 2015, էջ 298:

553. Տե՛ս **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն, Բ, ձգ. տե՛ս ՄՀ, հտ. Բ, էջ1983 [8]:

554. Տե՛ս **Ագաթանգեղոս**, ճԺԸ . ՄՀ, Բ, էջ 1700-1701:

555. Միտքն առկայ է ոչ թէ նիկիական կանոններում, այլ Կղեմեսի անունով «Երկրորդ առաքելական» կանոններում. ՀԶ. տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 95-96:

556. Այս միտքն է ակնարկուած Նէոկեսարիայի Զ կանոնում. տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 181:

557. «Խորհուրդ կատարողութեան մեռոնին» - «Յաղագս եկեղեց. քահանայապետ». IV, 2. տե՛ս Դիոնիսիոս, էջ 86:

558. Այս հարցի աստուածաբանական հանգամանալից քննութիւնը տե՛ս **Զ. վրդ. Բաղումյան,** Անապակ բաժակի խնդիրը Հայոց եկեղեցում, Ս. Էջմիածին, 2013 (ուր եւ մատնացուցուած են մատենագրական համապատասխան սկզբնաղբիւրներ):

559. Տե՛ս «Համառօտութիւն աստուածաբանութեան երանելւոյն Մեծին Ալ-պերտի…», Վենետիկ, 1715, էջ 29, 273-274:

560. Տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 28, 46 («Կանոնք առաքելականք», Բ, ԼԱ), Կանոնագիրք, Բ, էջ 227 («Կանոնք Մակարայ Առաջնոյ. ՌՄԾԴ»):

561. Նկատի ունի նրանց անունով Պատարագամատոյցները, որ կենցաղավարել են հայ միջնադարում. տե՛ս «Սրբազան պատարագամատոյցք Հայոց», աշխտ. Յ. վրդ. Գաթրճեան, աշխատակցութեամբ Յ. վրդ. Տաշեան, Վիեննա, 1897:

562. «Յաղագս միաւորեցելոյ եւ անջատեցելոյ աստուածաբանութեանն, եւ թէ զի՞նչ է աստուածայինն միութիւն եւ անջատումն» - «Յաղագս աստուածայ. անուանց». II. տե՛ս Դիոնիսիոս, էջ 137-140:

563. «Տիտոսի քահանայապետի Կրեացւոց խնդրեալ ի նմանէ ի ձեռն թղթոյ, թէ զի՞նչ է իմաստութեանն տունն, զի՞նչ խառնարանն, եւ զի՞նչ կերակուրն նորա եւ ըմպելիք». IX, 3. տե՛ս Դիոնիսիոս, էջ 254 -255:

564. Այսինքն՝ հինկտակարանեան իրականութեան մէջ:

565. Այսինքն՝ նորկտակարանեան իրականութեան մէջ:

566. Տե՛ս «Սրբազան պատարագամատոյցք Հայոց» աշխտ. Յ. վրդ. Գաթրճեան, աշխատակցութեամբ Յ. վրդ. Տաշեան, Վիեննա, 1897, էջ 275-299, 519-556, 617-721 (որոնք բերուած են «Աթանաս»-ի անունով):

567. Նկատի ունի ս. Բարսեղ Կեսարացու վարքում նկարագրուած մանրադրուագը. տե՛ս Յայսմաւուրք տէր Իսրայէլի, Ա, յունուար Ա, Ս. Էջմիածին, 2008, էջ 37:

568. Այսպիսի մի բացատրութիւն, իրեն բնորոշ խորհրդաբանական վերացարկումով, տալիս է ս. Եփրեմ Ասորին իր Համաբարբառ Աւետարանի մեկնութեան մէջ, ուր կարդում ենք. «կամ վասն այսորիկ եթաց զնա, զի մի՛ տացէ ընդ նմա զկտակարանս. լուաց զնա, եւ ապա ետ նմա… եւ ի ձեռն ջրոյ որոշեաց նա զՅուդայ յառաքելոց անտի, իբրեւ եթաց զհացն ջուրբ եւ ետ նմա, քանզի ոչ եղեւ նա արժանի հացին, որ տուեալ լինէր հանդերձ գինովն երկոտասանիցն…». տե՛ս Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Բ, Վենետիկ, 1836, էջ 202:

569. Քանի որ յիշեալ մի «գիրք» անյայտ է Օգոստինոսի անունով, ուստի ենթադրելի է, որ Տաթեւացին իրապէս նկատի ունի Թովմա Աքուինացու «Հաւաքումն աստուածաբանութեան» երկի երրորդ մասի երկրորդ հատորը, որն ունի «Յաղագս խորհրդոց եկեղեցւոյ» խորագիրը. այն հայերէն ձեռագրերում շրջանառուել է իբրեւ ուրոյն երկասիրութիւն. տե՛ս **O. P. van Oudenrijn,** Linguae Haicana, Bern, 1960, էջ 205 [թիւ 483]:

570. Վկայութիւնը բացակայում է Ս. Գրոց ընկալեալ հայերէն թարգմանութեան մէջ: Այն ամենայն հաւանականութեամբ բերուած է Սողոմոնի անունով Իմաստութեան գրքերի մեզ անյայտ մի թարգմանութիւնից:

571. Այս տեղին յարաբերւում է Մաշտոց ծիսամատեանի համապատասխան հատուածին. տե՛ս «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ յորում հաւաքեալ աւանդին ըստ մեծի մասին կարգք կանոնք արարողութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ», Կ. Պոլիս, 1807, էջ 251:

572. Խոստովանահայրերին է նուիրուած Տաթեւացու Քարոզգրքի Ամառան հատորի ԽԳ քարոզը, որի՝ Ս. Ստամբոլցյանի կատարած աշխարհ. թրգմ. տե՛ս «Գանձասար», Ը, էջ 511-516: Խոստովանութեան եւ խոստովանահայրութեան վերաբերեալ առհասարակ տե՛ս **Ա. Սոլովյով**, Խոստովանահայրերի անհրաժեշտութիւնը սուրբ հայրերի ու ճգնաւորների ուսուցումների համաձայն, թրգմ. Ա. սրկ. Թանդիլյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Լուսարարապետություն, 2001:

573. Ննջեցեալ քահանայի օծման վերաբերեալ կարդում ենք Մայր Մաշտոցում. «Զի ի ձեռն օծմանս այսորիկ, զոր յանուն քո օծանեմք սուրբ իւղովս այսուիկ, ընկալցին սուրբ նշխարքս ոսկերաց սորա զօրութիւն բժշկութեանց, եւ զհալածումն սեւագունդ դիւաց…». տե՛ս Մայր Մաշտոց, Կ. Պոլիս, 1807, էջ 369 նաեւ՝ Ջմեռան քարոզգիրք, էջ 247-250 (ուր ննջեցեալ քահանան օծւում է իբրեւ ըմբշամարտիկ):

574. Հիւանդաց օծման խորհրդի վերաբերեալ Տաթեւացու հայեացքների հանգամանալից քննութիւնը տե՛ս **Բ. եպս. Գալստանեան,** Օծումն հիւանդաց խորհրդի խնդիրը հայ եկեղեցում, «Գանձասար». Աստուածաբանական հանդէս, Ը, Եր., 2010, էջ 82-93:

575. Այս մասին տե՛ս վերը:

576. «Յաղագս միայնակեցաց, այսինքն՝ կամարարացն կարգի: Ասէ զԳայիոս կամարար, եւ կամարարդ անուն ի վերայ միայնակեցաց». Մաքսիմոս Խոստովանող. Լուծմունք Դիոնիսիոսի. տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 1041(«կամարար»):

577. «Յաղագս նուիրեցելոցն կարգաց». տե՛ս Դիոնիսիոս, էջ 108-110:

578. Տե՛ս եւ հմմտ. «Սահմանք եւ կանոնք կարգի եկեղեցւոյ սրբոյն Ներսիսի հայրապետի Հայոց. ՌՄՁԹ. ԻԲ. Վասն զազգական կին առնելոյ. ցիինգերորդն մի՛ իշխեսցէ, եւ զչորրորդն ապաշխարեսցէ եւ երրորդքն մեկնեսցին եւ ապաշխարեսցեն». Կանոնագիրք, Բ, էջ 260-261 նաեւ՝ «Գիր կանոնական սրբոյն Բարսղի… Վասն ամենեւին հեռանալոյ եւ զազգային կին ոչ առնելոյ». ԾԱ (Կանոնագիրք, Ա, էջ 360-362), «Բարսղի գիր կանոնական վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից…». ՄԺԵ.Կանոնագիրք, Բ, էջ 159:

579. «Կանոնք Նէոկեսարեայ». Թ (Կանոնագիրք, Ա, էջ 182), «Կանոնք Բարսղի Կեսարացւոյ». Դ. տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 337:

580. Տես նախորդ ծանոթ.:

581. «Եկեղեցի = Ժողովարան» ստուգաբանութիւնը, որ կապուած է Առաքելական հայրերի եկեղեցաբանական ընկալումներին (տե՛ս **Հովհ. սրկ. Բալայան**, Եկեղեցու ընկալումն ըստ Առաքելական հայրերի, մագիստ. թեզ, Ս. Էջմիածին, 2018. անտիպ), համապատասխանում է Կիւրեղ Երուսաղէմացու, Եղիշէի, Հովհան Օձնեցու, Գրիգոր Մագիստրոսի, Ներսէս Շնորհալու, Յովհաննէս Երզնկացի - Պլուզի եւ այլոց տուած բացատրութիւններին. տե՛ս Արմ. բառ.Բ, էջ 13:

582. «Ինչ կամենում ես թող լինի»:

583. «Օրինակի», այն է՝ հինկտակարանեան իրականութեան, որ Ճշմարտութեան (=Նոր Կտակարան) լոկ ստուերն է:

584. Ադիաբենի (Եդեսիա) Հեղինէ թագուհու վերաբերեալ այս տեղեկութիւնը քաղուած է հետեւեալից. «Ղերուբնա Եդեսացի, Թուղթ Աբգար թագաւորի Հայոց, եւ քարոզութիւնք սրբոյն Թադէի առաքելոյ», Երուսաղէմ, 1868, էջ 60-71, նաեւ՝ աշխրհ. թրգմ. Աւանդութիւններ, Մեկնութիւններ, Ճառեր, էջ 16-21:

585. Արտասուքի բնախօսութեան վերաբերեալ այս միտքը համերաշխ է Սարգիս Շնորհալու Կաթողիկէ թղթոց մեկնութեան հետեւեալ բացատրութեանը. «Ի սաստիկ տառապանացն եւ ի սգաւորութենէն առուք երակացն զջուրն, որ զսրտիւն յաչսն ի վեր տայցեն, եւ այն կաթիլք արտասուք անուանին». Մեկնութ. Յակոբ. Թ. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 379 («արտասուք»):

586. Ստուգաբանութիւնն է «յիսուն»-ի, որ եբր. «յոբելեան»-ի թարգմանութիւնն է, ինչը նշանակում «ազատութիւն». տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 363, Բառգիրք, էջ 230:

587. Ժամակարգութեան բանասիրական հանգամանալից քննութիւնը տե՛ս **Ն. Արք. Պողարեան,** Ծիսագիտութիւն, էջ 9-27:

588. Գիշերուայ չորս պահերի (մարդու չորս հասակներին զուգորդուող) խորհրդաբանական այս բացատրութիւնը համապատասխանում է Յովհաննէս Ծործորեցուն

վերագրուած մի քարոզի մեկնութեանը: Այն կիրառուած է նաեւ Տաթեւացու Ձմեռան քարոզգրքի քարոզներից մէկում. տե՛ս **Հ. Քյոսեյան**, «Արթուն կացէք» բնաբանով քարոզը եւ նրա հեղինակը, «Էջմիածին», 2003, Բ, էջ 41-55:

589. Աղօթքի այս դասակարգումը մասամբ համապատասխանում է Որոգինեսի կարգադասմանն, ըստ որի կենցաղավարում է աղօթքի չորս տեսակ. փառաբանական, գոհաբանական, խոստովանական, պատճառական. տե՛ս Որոգինես, Աղօթքի մասին, 31-34. տպ. Ս. Էջմիածին, 2007:

590. Տե՛ս Եւագր, էջ 27-30՝ Է-ԺԵ, նաեւ աշխր. թրգմ. Ս. Ստամբոլցյանի. «Գանձասար», Ը, էջ 269-283:

591. Ակնարկում է Մեծ Պահքի՝ երախայից համար սահմանուած հոգեւոր ուսուցման եւ ապաշխարութեան շրջանը, որին յաջորդում է Մեծ Ձատիկը: Վաղնջական այս կարգը վարդապետօրէն հաստատագրուած է ս. Կիւրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» երկում:

592. Այս բաժնի մի շարք տեղիներ բառացիօրէն քաղուած են Պօղոս Տարոնացու անունով յայտնի «Բացայայտութիւն ժամուց աղօթից» երկից. տպ. աշխտ. Միք. եպս. Աջապահեանի, «Գանձասար», Ը, էջ 326-344: Առաւել ակներեւ է հետեւեալ տեղիների համապատասխանութիւնը.

Պօղոս Տարոնացի	Գրիգոր Տաթեւացի
Իսկ սաղմոսացն կանոն եւթն գուբղայ ասացեալ Ձ ըստ գործոց կատարման եղելոցս աւուրց, եւ եւթն՝ աւրհնել Արարչին յեւթներորդն աւուր զեղեալսս եւ ի նմա հանգչել յամենայն գործոց: Եւ դարձեալ Յեսու խորհուրդ Տեառն իւրոյ վեց աւր լռութեամբ գայր շուրջ պատելով զերիքով. այս վեց գուբղայիցն նուաստերգութիւն: Իսկ եւթներորդին աղաղակ եւ փողոցն հնչումն կործանէ զպարիսպն, որպէս եւ Յիսուս նմանապէս զաւրավարելով մեզ՝ յեւթներորդ գուբղային գոչումն կործանէ զամուրսն սատանայական, ուստի եւ յաղթողին կցէ ի նոյն ասելով «ալէլուիա» /էջ 330/:	Իսկ զոր կանոնգլուխ կոչեմք ասելով Ձ գուբղայ հանդարտի թիւ եւ զեւթներորդն ձայնիւ՝ յօրինակ Յեսուայ, որ տապանակաւն եւ քահանայիւք եւ ժողովրդովք զվեց օր շրջեցաւ լռութեամբ եւ յեօթներորդ օրն ի յեօթն նուագին բարձրաձայն փողովք հնչեցին քահանայքն, եւ ժողովուրդն բարձրաձայն աղաղակեաց, յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն Երիքովի /Գիրք Հարցմանց, էջ 627/:
Պօղոս Տարոնացի Իսկ ութերորդն «Աւրհնութիւն» ասացեալ, որ ի հանդերձելումն ակնարկի: Եւ զի աւրն այն ուրախութեան արդարոց է եւ կործանման ամբարշտաց: Նոյնպէս ութերորդ գուբղայս երգ, ուրախութիւն Իսրայէլի, սուգ Եգիպտոսի: Երկրորդն. նոյն խնամակալութիւն իսրայէլացւոցն եւ կշտամբութիւն յանդիմանութեան: Երրորդն. հրոյ սպառնութիւն եւ սատակումն, եւ դարձեալ աւետեաց հրաւէր: Չորրորդն. պարծանս գոհութեան վասն հրաշից փոփոխմանց եւ ոմանց ամաւթ պատկառութեանց: Հինգերորդ. բարձումն ամբարշտաց եւ հրոյ կիզումն հակառակորդաց: Եւ ոմանց բժշկութեան ցաւղ ի Տեառնէ ցաւղեալ եւ մտանել ի շտեմարանս փրկութեան, մինչեւ անցցէ խրատն:	Գրիգոր Տաթեւացի Դարձեալ եւ ըստ մերոց վարդապետաց առաջին կանոնին Ը-րորդ գուբղայն օրհնութիւն ի հանդերձելումն ակնարկէ, զի օրն այն ուրախութիւն է արդարոց եւ կործանումն ամբարշտաց, որպէս երգն այն ուրախութիւն է, եւ սուգ Եգիպտոսի: Երկրորդն. նոյն խնամակալութիւն եւ կշտամբութիւն: Երրորդն. հրոյ սպառնալիք եւ սատակումն, եւ դարձեալ աւետեաց հրաւէր: Չորրորդն. պարտապան գոհութեան վասն էից փոփոխման եւ ոմանց ամօթ պատկառանաց: Հինգերորդն. հրոյ կիզումն եւ բարձումն ամբարշտաց, եւ ոմանց բժշկութեան ցօղ ի Տեառնէ ցօղեալ: Վեցերորդ. չարչարանաց պատիժ

Վեցերորդն. չարչարանաց պատիժ չարացելոց եւ ապաշխարելոց թողութիւն յասելն «ընկեց յետս զամենայն մեղս իմ» եւ «ոչ դադարեցից աւրհնել զքեզ զամենայն աւուրս»: Եւթներորդն. աւրհնութիւն հրեշտակաց եւ փրկութիւն մարդկան, եւ դարձեալ ընկղմութիւն ի դժոխս, հեղուլ ուղխից մեղաց մինչեւ յանձն. «որք պահեն զունայնութիւն եւ զստութիւն, ի յողորմութենէ զրկին» ի յաւուր հատուցման ամբարշտաց: Ութերորդն. նոյնպէս զերկուց կողմանց յայտնէ զփրկելոց եւ զկորուսելոց: «Աւրհնութեամբ նորա լցան տիեզերք», արդարք ամենայն: «Բարկութեամբ զարթիցես ի վերայ երկրի, դողութեամբ կալցի զհեթանոսս: Երեւեցար ի փրկութիւն ժողովրդեան, նետաձիգ եղեր ի գլուխս մարդկան ամբարտաւանից» /էջ 330-331/:	չարչարեցելոց եւ ապաշխարողաց թողութիւն յասելն. «Ընկեցեր յետս զամենայն թշնամիսն իմ»: Եօթներորդն. օրհնութիւն հրեշտակաց եւ փրկութիւն: Ութերորդն. նոյնպէս երկոցունց կողմանց յայտնէ զփրկելոց եւ զկորուսելոց. «Օրհնութեամբ նորա լցան տիեզերք», եւ դարձեալ. «Նետաձիգն եղեր ի չարս» /անդ, էջ 630/:

593. «Ամբիծք»-ի վերաբերեալ տե՛ս «Զի՞նչ մտօք ասեմք մեռելոցն՝ Ամբիծք: **Պտսխ**. ՅԱդամայ գերեզմանին վերայ ասացեալ է Դաւիթ…». ՄՄ, ձեռ. 4251, թ. 15բ-17ա, որը ոչ այլ բան է քան մէկ հատուածը Տաթեւացու Սաղմոսաց համառօտ մեկնութեան. տե՛ս տպ. աշխտ. Ա. Քեռշկերյանի, 1993, էջ 48-49: Բառացիօրէն քաղուած է Ժղլանքից. տես անդ, թ. 110բ:

594. Երից սրբասացութեան մասին. «Վկայութիւնք զի պարտ է զԽաչեցարն ասել ամենայն աւուր ի դէմս Որդւոյ». տե՛ս Արմատ հաւատոյ, էջ 265-78, նաեւ՝ **Օրմանեան**, Ծիսագիտութիւն, էջ 49-53, **Պողարեան,** Ծիսագիտութիւն, էջ 15-18:

595. Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, 331, 466-468, Արմատ հաւատոյ, էջ 265-266, նաեւ՝ Ժղլանք, թ. 160ա:

596. Տե՛ս «Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն…», աշխտ. Մ. վրդ. Տէր-Մովսիսեանի, Վաղարշապատ, 1897, էջ 524-527:

597. Տե՛ս Արմատ հաւատոյ, էջ 273-274:

598. Տե՛ս Դւինի Ե ժողովի Ի կանոնը. Կանոնագիրք, Ա, էջ 524 նաեւ՝ Արմատ հաւատոյ, էջ 270-271:

599. Բերուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Ի սուրբ Պասքայ» ճառից. տես ՄՄ, ձեռ. 946, թ. 126 ա:

600. Վկայութիւնը բառացիօրէն քաղուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Ի Բասիլիոս Կեսարացի» թղթից. «Եւ սակայն զի՞նչ քան զայս հրաշափառագոյն՝ զԱստուած խաչեալ տեսանել եւ զնոյն ընդ աւազակս, եւ ի մերձ անցողաց ծաղր լեալ…». տե՛ս «Кавказ и Византия», т. 2, Ереван, 1980, с. 204:

601. Քաղուած է «Ի հաւատոյ թղթէն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց պատասխանի Անտիոքայ պատրիարքին». տե՛ս Արմատ հաւատոյ, էջ 271-273:

602. Ս. Աթանասի անունով վկայաբերուած այս հատուածն առկայ է ս. Գրիգոր Լուսաւորչին վերագրուած բարսեղեան Պատարագամատոյցի մէջ. տե՛ս **հ. Յովս. վրդ. Գաթրճեան**՝ աշխատակցութեամբ **հ. Յ.վրդ. Տաշեան,** Սրբազան պատարագամատոյցք հայոց, էջ 130, տող 55-56:

603. Մեղմելու համար դաւանական այսօրինակ խստորոշ կեցուածքը ժամանակին ս. Ներսէս Շնորհալին իրեն բնորոշ լայնահայեաց իմաստութեամբ «Հայաստանեայց եկեղեցու խոստովանութեան հաւատոյ գիր» թղթում տալիս է հետեւեալ բացատրութիւնը. «Երեք սրբասացութիւնների մասին գրուած էր, թէ **խաչեցար** ենք ասում, եւ թէ մենք այս սրբասացութիւնները երգում էինք Երրորդութեան համար, ինչպէս դուք, չար ու խոր մոլորութիւն էր **խաչեցար** ասելը: Բայց քանի որ Որդու մի անձնաւորութեան նկատմամբ ենք ասում սրանք, այդ պատճառով նրա կողմից մեր հանդէպ եղած մեծագոյն երախտիքն ենք մատուցում նրան, թէ՝ «Աստուած եւ հզօր, եւ անմահ, որ մարմնով խաչուեցիր մեզ

համար, ողորմիր մեզ»: Նրան առընթեր Աստծոյ Խօսքի [Քրիստոսի] Մօրը բարեխօս եւ միջնորդ ունենք իր Միածնի մօտ, երբ ասում ենք, թէ՝ «Մատուցիր մեր աղաչանքները քո Որդուն՝ մեր Աստծուն»: Այդ պատճառով թէ որեւէ մէկը Երրորդութեան համար ասի, ինչպէս դուք, կամ միայն Որդու համար, ինչպէս մենք, երկուսն էլ հաճելի են Աստծուն, երբ ասածները միմեանց չեն հակասում: Սակայն թէեւ այստեղ Որդու համար ենք սրբասացութիւնները ասում, բայց սուրբ Պատարագի մէջ երեք անձնաւորութիւնների վերաբերեալ ենք երգում սերովբէների երգերը». տե՛ս **Կիրակոս Գանձակեցի,** Հայոց պատմութիւն, աշխրհ. թրգմ., էջ 105 հմմտ. Թուղթ Ընդհանրական, տպ. Երուսաղէմ, էջ 138-139:

604. Այս մասին Օձնեցին խօսում է իր «Յաղագս կարգաց եկեղեցւոյ Քրիստոսի» երկում. տե՛ս ՄՀ, է, էջ 72-73, նաեւ՝ **Մ. արք. Օրմանեան,** Ծիսագիտութիւն, էջ 51 /թիւ 222/:

605. «Փառք»-ի եւ «Այժմ»-ի վերաբերեալ Օրմանեանը հետեւեալն է ծանուցում. «Փառք»-ը եւ «Այժմ»-ը պատշաճի օրհնութեանց մէջ բուն շարականին երկու տուներուն վրայ կըսուին ուրոյն. «Փառք»-ը սկսող աշակերտի դասուն եւ «Այժմ»-ը աւագերէցու դասուն: Երբ Օրհնութիւնք քաղուածոյ են «Փառք»-ը կըդրուի տնօրինականաց վերջին պատկերին, այսինքն՝ Խաչի պատկերին վերջին տան վրայ, պահելով զայն միշտ աշակերտի դասուն, իսկ «Այժմ» պատշաճի շարականին վերջին տան կըդրուի. տե՛ս **Օրմանեան**, Ծիսագիտութիւն, էջ 25 /թիւ 110/:

606. Տե՛ս «Տեսութիւն Անթառամ ծաղիկ մեծասցուսցէին՝ արարեալ մեծի Վարդանայ վարդապետի», Երուսաղէմ, 1834:

607. «Վառին», այսինքն՝ «ԶՅարութեան վառ ձայնին աւրհնութիւնն». տե՛ս **Անասեան,** Հայկ. մատենագիտ., Ա, էջ LXVI:

608. Համեմատելի Շարականների հեղինակների մատենագիտական ցուցակի՝ Սարգիս երեցի խմբագրութեան հետ. տե՛ս **Անասեան**, Հայկ. մատենագիտ. Ա, էջ LXV-LXVI:

609. «Ամլորդին» Յովհաննէս Մկրտիչն է, ով ամուլ համարուած Եղիսաբեթի որդին է:

610. Քաղուած է Վանական վարդապետի Հարցուպատասխանից. տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 251 («անփակ գիր»):

611. «Զզորս ըստ պատկերին» շարականը տե՛ս ՄՀ, Ը, էջ 318-319:

612. Ս. Գրիգոր Լուսաւորչի՝ Հռոմի աթոռից «պատուի» արժանանալու վերաբերեալ այս միտքն արձագանքն է Դաշանց թղթի. տե՛ս տպ. Մատթէոս սրբազան կաթողիկոս Ամենայն հայոց, «Հաստատութիւն ստուգութեան Դաշանց թղթոյն, զոր Կոստանդիանոս Մեծ ինքնակալն Հռովմայ եւ սուրբ Սեղբեստրոս հայրապետն Հռովմայ տուած են Տրդատ թագաւորին եւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայրապետին», «Ճռաքաղ» բանասիրական եւ ազգային գիտելեաց, Մոսկուա, 1860, էջ 237-244, 253-260:

613. Տիրամօր «կենդանագրի»՝ պատկերի վերաբերեալ աւանդազրոյցներից վաղագոյնը Մովսէս Խորենացու «Պատմութիւն սրբուհւոյ Աստուածածնի եւ պատկերի նորա» երկն է (տպ. Եր., 1994): Տիրամօր պատկերի պատմութիւնը բերուած է Մովսէս Սիւնեցու «Պատասխանի թղթոյն Սահակայ յորում եւ բանք մարգարէականք եւ վասն փոխման Աստուածածնին, թէ որպէս եղեւ կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտն եւ թէ յոյր ձեռն եւ զինչ եղեւ պատճառք խնդրոյն կամ թէ յումմէ բերաւ ի Հայս». տե՛ս ՄՀ, հտ.Դ, էջ 441 [77]-444 [124]:

614. «Դժուարիմաց շարականների մեկնութեան» բաժնում բերուած շարականային տողերը հետեւեալ կանոններից են. «Ովսաննա ի բարձունս»՝ Կանոն Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Ե աւուրն, Տէր յերկնից. Դկ, «Զորեքկերպեան կենդանեացն զխորհուրդ քարոզեաց ամլորդին»՝ Կանոն Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Ը աւուրն, Ճաշու, Ամ, «Ծագեաց մեզ Տէր զեղջիւր ի Դաւիթ»՝ Կանոն Դաւթի մարգարէին եւ Յակոբայ առաքելոյն. Տէր յերկնից, Դձ, «Ոստաքանց եղէ ես որպէս զարմաւենի»՝ Ապաշխարութեան կարգ, Զ, Ողորմեա, Գձ, «Անփակ գրով հաստատեալ»՝ Աւագ Շաբաթ օրուայ հարց շարական, Գձ, «Հոլաթեւեան սերովբէն»՝ Հարցք Յարութեան, է, Տէր յերկնից, Գձ, «Ողջոյն տուր փողոցն»՝ Հարցք Յարութեան, Ե, Տէր յերկնից, Գձ, «Ի յարաշարժ յաղբերէն»՝ կանոն Հոգեգալստեան Ա աւուրն, Ճաշու, Բձ, «Աղիւսանման ակն պատուական»՝ Կանոն վերացման Սրբոյ Խաչին Զ աւուրն, Օրհնութիւն Բձ, «Դասք անմարմին առ էիցն»՝ Կանոն Վերացման Սրբոյ Խաչին Զ աւուրն, Տէր յերկնից, Գձ, «Զորս ըստ պատկերի քում»՝ Կանոն վերացման Սրբոյ Խաչին Ե աւուրն, Ողորմեա, Գձ, «Ժողովէ զկարծեցեալ ճաճանչն»՝ Կանոն Վերացման Սրբոյ Խաչին Դ աւուրն, Օրհնութիւն Գ, Գձ, «Ընդդէմ աստեղաց կնքէր»՝ Աւագ Օրհնութիւն Յարութեան Բկ, Ժ, «Անտրամադրելի տառիցն»՝ Աւագ Օրհնութիւն Յարութեան, Բկ, Թ, «Դուռն երկնից եւ ճանապարհ

արքայութեան»՝ Կանոն համօրէն մարտիրոսաց. Մանկունք Աձ: Փաստական նիւթը սիրայօժար տրամադրեց երաժշտագէտ, արուեստագիտուք. թեկնածու Աստղիկ Մուշեղեանը, որին յայտնում եմ շնորհակալութիւն:

615. «Ձայների» խորհրդական բացատրութեան մէկ այլ տարբերակ է ներկայացնում «Մովսէսի Քերթողի Յաղագս կարգաց եկեղեցւոյ բացայայտութիւնք» երկում տրուածը. տե՛ս ՄՀ, Դ, էջ 445-447:

616. Ձայների «արարիչների» վերաբերեալ այս տեղեկութիւնը քաղուած է Ժղլանքից. տե՛ս անդ, թ. 113 ա - 115 բ:

617. Ձայնի փոփոխման վերաբերեալ մանրամասն տե՛ս **Օրմանեան,** Ծիսագիտութիւն, էջ 14-17:

618. «Ֆարտ». արաբ. պրսկ. fart = կենտ, ոչ զոյգ, կոճատ. տե՛ս Միջին հայ. բառարան, Բ, էջ 464:

619. Նկատի ունի ս. Ներսէս Շնորհալուն, որ յայտնի է որպէս հեղինակ բազում հոգեւոր երգերի: Նրա շարականների մատենագիտական ցանկը տե՛ս **Հ. Անասեան,** Հայկական մատենագիտ. Ա, էջ LXIV:

620. «Թագաւորք»-ի վերաբերեալ մանրամասն տե՛ս **Օրմանեան,** Ծիսագիտութիւն, էջ 31-32:

621. «Հանգստեան» վերաբերեալ տե՛ս **Օրմանեան**, Ծիսագիտութիւն, էջ 30-31:

622. «Մեծասցուսցէ»-ի ամենօրեայ կատարումն օրինակարգել է Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսը (1294-1307). տե՛ս **Օրմանեան,** Ծիսագիտութիւն, էջ 40 /թիւ 169/:

623. Այս տեղին բառացիօրէն քաղուած է Ժղլանքից. «Եւ կարդացողին նմանեցնել պիտի զիւր խաւսքն Գրոցն տեղին եւ պատճառին. թէ՛ խրատական է, թէ՛ աւաղական է, թէ՛ ըղձական է, թէ՛ սպառնական է, թէ՛ ողոքական է, եւ այլ այսպիսիք». տե՛ս անդ, թ. 114ա: Ծիսական ընթերցողութեան առոգանութեան վերաբերեալ յորդորներ տրուած են նաեւ Մովսէս Քերթողի «Յաղագս կարգաց եկեղեցւոյ բացայայտութիւնք» երկում. տե՛ս ՄՀ, Դ, էջ 445-447:

624. Դաւիթ մարգարէն Աստուածահայր (Qeopavtwr) է կոչւում Հեսիքիոս Երուսաղեմացու (Դ-Ե դդ.) երկերում, Դիոնիսիոս Արիսպագացու Ը թղթում, Թէոփիլոսի Քառասուն մանկանց նուիրուած ճառում, Ներսէս Շնորհալու Ընդհանրական թղթերում եւ այլուր. տե՛ս Христианство. энц.т.1, с.274, ՆԲՀ, Ա, էջ 525 («Աստուածահայր»):

625. Սաղմոսների առանձնայատուկ, բազմաբնոյթ զօրութեան վերաբերեալ ս. Աթանաս Ալեքսանդրացին գրում է «Սաղմոսների մեկնութեան մասին» Մարչելինոսին յղած նամակում. թրգմ. Մ. Ղազարեան, Եր., 2000:

626. «Ալէլուիայ»-ի վերաբերեալ հետեւեալն է ծանուցում Վարդան Արեւելցին. «Եւ ալէլու ընդէ՞ր չէ պատեհ ասել: **Պատասխան.** Զի վասն մեղաց պատարագն հրէից չունէր խունկ. ալէլուն խունկ է» (տե՛ս Ժղլանք, թ. 111ա): Մ. Արք. Օրմանեանը նկատում է, թէ՝ «երկու տեսակ են Ալէլուք. միոյն մէջ ունի փառաբանութիւն, որ կյարմարի տէրունի տօներուն, իսկ սրբոց համար մաղթանք՝ բարեխօսութեան սրբոց». տե՛ս **Օրմանեան,** Ծիսագիտութիւն, էջ 31, նաեւ՝ էջ 33 (թիւ143-145):

627. «Ալէլուիա»-ի այս ստուգաբանութիւնը, որ տրուած է նաեւ Տաթեւացու Ձմեռան հատորի Ե քարոզում, քաղուած է «Հարցումն Վահրամ իշխանաց Իշխանի եւ պատասխանի Վանական գերալոյս վարդապետի» երկից. ՄՄ, ձեռ. 1764, թ. 377ա - 379ա: Նման ստուգաբանութիւն տրուած է նաեւ Եպիփան Կիպրացու, Ներսէս Լամբրոնացու, Յովհաննէս Արճիշեցու երկերում. տե՛ս Արմ. բառ.Ա, էջ 92-93 հմմտ. Բառգիրք, էջ 8:

628. «Ովսաննայ»-ն «փրկութիւն» իմաստով է ստուգաբանուած Բարսեղ Մաշկեւորցու, Յովհաննէս Ծործորեցու մեկնութիւններում, ինչպէս նաեւ Գրիգոր Տաթեւացու քարոզգրոց Ձմեռան հատորի ԵԶ, ԵԷ քարոզներում. տե՛ս Արմ. բառ. Գ, էջ 573, նաեւ՝ Բառգիրք, էջ 257:

629. «Պռօսխումէ» - ուղիղ առաջիկայդ նայեցարուք, կամ ի վեր համբարձէք զձեռս ձեր. տե՛ս Բառգիրք, էջ 276:

630. «Բուրուառ = Մարիամ Աստուածածին» խորհրդաբանութիւնը համապատասխանում է Ստեփանոս Սիւնեցու, Յովհան Մայրագոմեցու, Յովհան Օձնեցու եկեղեցաբանական երկերում ներկայ բացատրութեանը. տե՛ս ՄՀ, հտ. Զ, էջ 498 [95-97]:

631. «Ութօրէքի» հանգամանալից վերլուծութիւնը տրուած է Սամուէլ Կամրջաձորեցու «Յաղագս տաւնից տէրունականաց» երկում տե՛ս ՄՀ, հտ. Ժ, էջ 707-717:

«Ութօրէք»-ի վերաբերեալ հրահանգ ունի Հովհան Օձնեցի հայրապետն իր Ատենաբանութեան մէջ. տե՛ս ՄՀ, հտ. Է, էջ 21 [11], էջ29 [99]:

632. Առաջաւորաց պահքի մանրամասն բացատրութիւնը տրուած է Գրիգորիս Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոց» երկի «Թէ զի՞ անընթերցուած առաջաւոր պահքն…» գլխում. տե՛ս ՄՀ, հտ. Զ, էջ 43-44:

633. «Տէր ամենակալ»-ի վերաբերեալ հետեւեալն է ծանուցում Օրմանեան սրբազանը. «Մեծ Պահոց մէջ միայն, եւ այն ալ առաջին Չորեքշաբթիէն սկսեալ, իբր քսան եւ ութ օր, անմիջապէս յետոյ կզրուցուի «Տէր Ամենակալ» աղօթքը: Սա պարականոն մէ Հին Կտակարանի, որ թէպէտ ուրիշ ազգաց մէջ ալ կը գտնուի, այլ առ մեզ աւելի պատիւ եւ յեկեղեցեւոջ սովորական գործածութիւն մը ունեցած է: Սոյն աղօթքը կարծես կը բովանդակէ յԱստուածաշունչի (Բ Մնաց. ԼԳ 18): Ըստ հին աւանդութեան սոյն աղօթքն ըսած է Մանասէ թագաւոր Յուդայի, յետ կռապաշտելոյն, երբ գերի գնաց յԱսորեստան, ուր ի դիպահոջ ապաշխարելով դարձաւ յաթոռ թագաւորութեանն, իւր կեանքն անցուց սրբութեամբ (տե՛ս եւ Դ Թագ. ԻԱ): «Տէր Ամենակալ»-ը կը բաղկանայ 18 տուներէ, որ բուն Մանասէի աղօթքն է». տե՛ս **Օրմանեան,** Ծիսագիտութիւն, էջ 54 (թիւ 237-238):

634. Նկատի ունի Գրիգորիս Արշարունու Ընթերցուածոց մեկնութիւնը. տե՛ս ՄՀ, հտ. Զ, էջ 31-91:

635. Երկուշաբթի եւ հինգշաբթի օրերին պահք պահելու վաղնջական սովորոյթի մասին ակնարկ է պարունակում Դիդախեն (= «Վարդապետութիւն երկոտասան առաքելոց») գլ. Ը. տե՛ս «Գանձասար», է, Եր., 2002, էջ 147:

636. Կանոնք առաքելականք, Դ. տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 30:

637. Քաղուած է ս. Բենեդիկտիոս Նուրսիացու «Սահման վանաց» (= Regula monasteriorum) երկից. ՄՄ, ձեռ. 4947, թ.114ա-163ա հմմտ. «Սրբոյ հօրն Բենեդիկտիոսի Կանոնք, զոր թարգմանեալ է աշակերտաց մեծի հօրն Մխիթարայ», Վիեննա, 1842:

638. Քաղուած է «Հաւատք որ ի Նիկիայ» երկից. տե՛ս Եւագր, էջ 139:

639. Կանոնք Եփրեմի Ասորւոյ, Բ. տե՛ս Կանոնագիրք, Բ, էջ 56, տե՛ս եւ հմմտ. «Շաբաթ աւր Քառասնից ճաշոյն երանելոյն Եփրեմի Ասորւոյ ասացեալ վասն չուտելոյ զչորեքշաբաթն եւ զուրբաթն եւ վասն ուրացողացն եւ պիղծ յիշոցնատուացն», աշխտ. Հ. Քյոսեյանի, «Էջմիածին», 2006, Է-Ը, էջ 68-89:

640. «Քառասնորդական պահք = ապաստանի քաղաքներ» խորհրդաբանութիւնը քաղուած է Գրիգորիս Արշարունու Ընթերցուածոց մեկնութիւնից (ՄՀ, հտ. Զ, էջ 44[13]) եւ Սամուէլ Կամրջաձորեցու «Յաղագս տօնից տէրունականաց» երկից. ՄՀ, հտ. Ժ, էջ 722-723[12-13]:

641. «Ուրբաթ»-ի «բօթ» ստուգաբանութիւնն առկայ է նաեւ Գրիգոր Տաթեւացու Ճմեռան Օէ, ՃԹ քարոզներում. տե՛ս Արմ. բառ., Գ, էջ 615:

642. Ակնարկում է մեղաւոր վեցեկի շարժումները, որոնց մասին տե՛ս վերը:

643 «Հինգերորդ էութիւնները» երկնային քահանայապետութեան «Զօրութիւններից» վեր գտնուող դասերն են (Տէրութիւններ, Սերովբէներ, Քերովբէներ, Աթոռներ):

644. «Հաւատք որ ի Նիկիայ». տե՛ս Եւագր, էջ 140:

645. «Մատաղ = մատո աղ» ստուգաբանութիւնն, ինչպէս երեւում է, Տաթեւացին քաղել է Վարդան Արեւելցու Օննդոց մեկնութիւնից. տե՛ս Արմ. բառ., Գ, էջ 268:

646. Ըստ Սահակ Մռուտ վարդապետի (Թ դար), մատաղի օրհնութեան կարգը հաստատուած է Գրիգոր Լուսաւորչի կողմից. տե՛ս Արմատ հաւատոյ, էջ 288-289:

647. «Օրհնութեան վերաբերեալ ցուցում»՝ ՕԶ պրակի տուեալները համապատասխանում են «Օրհնութիւնաբեր» ցուցակին. տե՛ս հ. **Գ. վրդ Զարբհանալեան,** Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 247:

648. Տե՛ս Դիոնիսիոս, էջ 66-68:

649. Յովհաննէս Մկրտչի աղօթքի վերաբերեալ այս տեղին քաղուած է հետեւեալից. «Հարցումն Վահրամայ իշխանաց իշխանի եւ պատասխանի Վանականի գերալոյս վարդապետի». ՄՄ, ձեռ 1764, թ. 377ա - 379ա:

650. Այս բաժինը բառացիօրէն համապատասխանում է Տաթեւացու Սաղմոսաց համառօտ մեկնութեան ԼԶ հարցումին. «Վասն է՞ր է, զի Աստուած նախ զայս եւ ապա զայն կեանքն տայ մարդոյ…: **Պատասխանի**. Ամենայն ինչ զոր արար Աստուած, բարի են եւ օգուտ մեզ… տուր իմաստնոյն պատճառ եւ իմաստնագոյն լինիցի». տպ. աշխտ. Ա. Քյոշկերյանի, Եր., 1993, էջ 44-45:

651. Նկատի ունի Պօղոս առաքեալի (Սողոս) կուրանալը Դամասկոսի ճանապարհին. տե՛ս Գործք, ԻՁ 15, Ա Կորնթ., ԺԵ 8:

652. Տե՛ս Դիոնիսիոս, էջ 114-117:

653. Իրականում քաղուած է Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկից. տես անդ, էջ 20:

654. «Յաղագս ի վերայ ննջեցելոցն կատարմանց» - «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան», VII, 1. տե՛ս Դիոնիսիոս, էջ 114-115:

655. Տե՛ս **Կիւրեղ Ալեքսանդրացի,** Գիրք Պարապմանց, էջ 110:

656. Կանոն Քահանայաթաղի. տե՛ս Մայր Մաշտոց, Կ. Պոլիս, 1807, էջ 344:

657. Ըստ Եւագր Պոնտացու ուսմունքի, օդային թշնամիները, դիւական ուժերը՝ չարքերը կամ այսերն են, որոնց բաղադրանիւթը եւ բնակատեղին օդն է, ստորին ոլորտը. տե՛ս «Գանձասար», Ա, էջ 9:

658. «Կանոն հիմնարկութեան եկեղեցւոյ». տե՛ս Մայր Մաշտոց, էջ 155-166:

659. Տեղեկութիւնը քաղուած է մի Տօնապատճառ ժողովածուից կամ Վարդան Արեւելցու Աշխարհացոյցից (տպ. աշխտ. Հ. Պերպերեանի, Բարիզ, 1960). տե՛ս ՆԲՀ, Ա, էջ 1095 («կիբիկոն»):

660. Ստուգաբանութիւնը բառացիօրէն քաղուած է Վանական վարդապետից: Նոյն ստուգաբանութիւնն առկայ է Տաթեւացու Ձմեռան ՕԸ քարոզում. տե՛ս Արմ. բառ., Ա, էջ 542:

661. «Շիրիմ = յիշատականոց, կամ գերեզման, կամ դամբարան». տես Բառգիրք, էջ 249:

662. «Դիրք»-ը «գերեզման» իմաստով է հանդիպում Խորենացու եւ Փարպեցու մօտ. տե՛ս Արմ. բառ., Ա, էջ 675-676, Բուզանդի մօտ՝ «փակել»-ու. անդ:

663. «Դժոխք»-ի «դժուար», «դժուարին» իմաստային կիրառութիւնը, համաձայն Հր. Աճառեանի, «գտնւում է միայն բարդութեանց մէջ». Արմ. բառ., Ա, էջ 664:

664. Դժոխքի՝ մեղսասէրների կողմից վերակառուցուելու մասին գաղափարը կայ Վարդան Այգեկցու «Պատմութիւն եւ խաւսք վասն դժոխոցն, թէ ստոյգ կայ դժոխք Աստուծոյ վկայութեամբ եւ ամենայն սրբոցն…» երկում. ՄՄ, ձեռ. 3940, թ. 254ա - 263ա:

665. «Տանջարաններ» ասելով Տաթեւացին թերեւս նկատի ունի մաքսատները, որոնցում հոգին ենթարկւում է տանջալի հարցաքննութեան: «Վեց կողմից ապշում եւ զարհուրում են հոգիները, կարդում ենք Տաթեւացու քարոզներից մէկում. նախ որովհետեւ միայնակ է մնում հոգին, եւ բոլոր բարեկամներն ու ծանօթները թողնում են նրան, այլեւ բաժանւում են մարմնից, երկրորդ՝ ճանապարհը հեռու է, այսինքն՝ դէպի երկինք՝ այս աշխարհից դէպի այլ աշխարհ, եւ ոչ թէ ինչ որ մօտիկ տեղ, երրորդ՝ դժուարին եւ անտեսանելի է այդ ճանապարհը, չորրորդ՝ հրեշտակի ահեղ տեսքից եւ ձայնից, որովհետեւ նրան ոչ ոք չէր տեսել կամ լսել, հինգերորդ զարհուրում են դեւերի բազմութիւնից, որ դառն ու դաժան կերպարանքով շրջապատում են հոգուն եւ պատերազմում նրա դէմ, վեցերորդ՝ ապշում են, եւ քանզի իրենց բոլոր մեղքերը տեսնում են, եւ դեւերը դրանք առաջ են բերում մանրազնին քննութեամբ. [մեղքեր], որոնք գործուած եւ մոռացուած են»: «Մաքսատների» կամ «առանձնական դատաստանի» գաղափարը կաթոլիկ վախճանաբանութեան տեսակէտն են համարում Ա. Տէր-Միքէլեանը եւ Մ. արք. Օրմանեանը. տե՛ս **Ա. Տէր-Միքէլեան,** Հայաստանեայց սուրբ եկեղեցու քրիստոնէականը, Դաւանաբանութեան ձեռնարկ, Բ հրատ., Արդի հայերէնի վերածեց եւ ծանօթագրեց Յ. Քէօսէեանը, Թեհրան, 2003, ծնթ. 183ա, էջ 564- 565: Մինչդեռ «Յաճախապատում» ճառերից մէկում (ԺԵ) կարդում ենք. «Եւ այս ամենայն սպառնալիք յանցաւորաց յոյժ ի տրտմութեան ունին զոգիս մեղաւորացն ի կայանս, որ ըստ իւրաքանչիւր մեղացն բաժանեալ եւ որոշեալ ի տխրական տեղիք». տե՛ս ՄՀ, հտ. Ա, էջ 97:

666. Ըստ եկեղեցու վարդապետութեան, ադամորդին ունի երկու սպասաւոր հրեշտակներ, որոնցից մէկը նրան սպասաւորում է այս կեանքում, միւսն այն ժամանակ, երբ նրա հոգին զատւում է մարմնից եւ իր ընթացքը շարունակում օդային ճանապարհով. հմմտ. Ս. Ներսէս Շնորհալի, Ներբող սրբոց հրեշտակապետաց եւ երկնային զօրաց, Կ. Պոլիս, 1780, նաեւ նոյնի Տաղեր եւ Գանձեր, աշխտ. Ա. Քյոշկերյանի, Եր., 1987, էջ 320-321:

667. Մինչդեռ ս. Գրիգոր Նարեկացու Աղօթամատեանում արձանագրուած է մարմնի 360 հոդերից կազմուած լինելը. Բան ԽՁ, բ:

668. Եփեսոսի եօթ մանուկների մասին տե՛ս Յայսմաւուրք, Սահմի ԺԵ. Վիեննա, ձեռ. 219, թ. 213բ:

669. Թադէոս առաքեալ, «Վասն յարութեան մեռելոց». տե՛ս Անկանոն գիրք առաքելականք, Վենետիկ, 1904, էջ 462-463:

670. Մեղաւորների՝ հոգիների աներեւոյթ լինելու վերաբերեալ այս միտքը ընդհանուր եզրեր ունի Որոգինեսի այն մտածումի հետ, թէ սատանաներն իրենց մարմնի սեւութեան պատճառով անտեսանելի են. De princip. II, 8, 3. տե՛ս **С. А. Епифанович,** Лекции по патрологии, с. 542:

671. Նկատի ունի ս. Ներսէս Շնորհալու՝ Հրեշտակապետաց նուիրուած ներբողը. տպ. Կ. Պոլիս, 1780:

672. Կալիստրատոսը եղել է հռոմէական բանակի զինուոր, ով դարձից յետոյ ձերբակալուել է, ենթարկուել սոսկալի տանջանքների ու 49 ընկերների հետ նահատակուել Դիոկղետիանոս կայսեր հալածանքների ժամանակ 304 թ.: Նրա մասին մանրամասն տե՛ս Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ 111-119 (Սեպտ. Իէ), նաեւ՝ **հ. Մկ. վրդ. Աւգերեան,** Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հտ. Զ, Վենետիկ, 1813, էջ 570-594: Նրա ճառը (Սրբոյն Կալիստրատոսի՝ Յաղագս հոգւոց մարդկան, թէ ո՞ւր իցեն) տե՛ս «Վարք եւ վկայաբանութիւն սրբոց», հտ. Ա, Վենետիկ, 1874, էջ 669-683:

673. Նկատի ունի Վարդան Այգեկցու «Վերին Երուսաղէմի եւ արդարների անճառելի խնդութեան ու հանգստի մասին», «Հոգիների մասին, թէ ինչպէս են ապրում, եւ կամ ինչպիսին է նրանց հանգիստը» խրատները. տե՛ս **Վարդան Այգեկցի**, Խրատներ, էջ 21-43:

674. Նկատի ունի Անդրեաս եւ Արեթաս Կեսարացիների Յովհաննու Յայտնութեան մեկնութիւնը, Իրինեոս Լուգդունացու, Եպիփան Կիպրացու, Բարսեղ Կեսարացու համապատասխան աշխատութիւնները:

675. Նկատի ունի Գրիգոր Սկեւռացու «Բան գովեստի պատմագրաբար յաղագս ծննդեան, քաղաքավարութեան եւ վերափոխման ամենասուրբ կուսին Մարիամու» (Երուսաղէմ, ձեռ. 71, էջ 3-149), Ներսէս Շնորհալու «Ներբող սրբոց հրեշտակապետաց եւ ամենայն երկնային զօրաց» (տպ. Կ. Պոլիս, 1780), Ներսէս Լամբրոնացու «Մեկնութիւն հանգստեանն Յովհաննու» (տպ. Կ. Պոլիս, 1736, աշխրհ. թրգմ. Ս. Ստամբոլցեանի. «Գանձասար», Զ, էջ 487-549) եւ Կալիստրատոսի ճառը. տե՛ս «Վարք եւ վկայաբանութիւն սրբոց». հտ. Ա, Վենետիկ, 1874, էջ 669-683:

676. Տե՛ս «Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ եւ աւետարանչի», է. տե՛ս Աստուածաշունչ, Վենետիկ, 1860, էջ 1222 («Աստուած իմ Յիսուս, ո՛ որ հայրդ ես, որոց ի վեր քան զերկինս»):

677. Թերեւս քաղուած է «Երգ երգոց»-ի մեզ անյայտ մի թարգմանութիւնից:

678. Գլ. Ի. «Վասն անթիւ բազմութեան, որք ի հեթանոսաց պայծառազգեցեալ կային առաջի Աստուծոյ». տե՛ս Անդրէաս, Արետաս, էջ 110:

679. Տե՛ս Կիւրեղ Ալեքսանդրացի, Գիրք Պարապմանց, էջ 110:

680. «Յաղագս ի վերայ ննջեցելոցն կատարմանց» - «Յաղագս եկեղեցական քահան.», VII 1-V 1, 3. տե՛ս Դիոնիսիոս, էջ114-116:

681. Քաղուած է Թադէոս առաքեալի անունով յայտնի «Յաղագս յարութեան մեռելոց» երկից. տե՛ս Անկանոն գիրք առաքելականք, էջ 462-463:

682. Եպիփան Կիպրացու այստեղ յիշատակուած «Հաւատոյ գիրը» նրա նշանաւոր «Դեղատուփ» (= «Պանարիոն») երկն է. տե՛ս PG, t. 41, 156-1200, t. 42, 9-832: Սրա հայերէն թարգմանութիւնն, ինչպէս երեւում է, կենցաղավարել է Ե դարում: Եզնիկ Կողբացին իր ձեռքի տակ է ունեցել Եպիփանի այդ երկը: Այն յետագայում կորստեան է մատնուել: Այդ հսկայածաւալ երկից հայերէն թարգմանութեամբ պահպանուել է միայն նիւթերի ցանկը. տե՛ս **հ. Յ. վրդ. Տաշեան,** Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հետազոտութիւնք եւ բնագիրք, մասն Ա, Վիեննա, 1895, էջ 90:

683. Ակնարկում է ս. Գրիգոր Աստուածաբանի վախճանաբանական վարդապետութեանը բնորոշ «երանելի տեսութեան» ուսմունքը

684. Ակնարկում է Որոգինեսի վախճանաբանական վարդապետութեան մէջ կենցաղավարող համընդհանուր փրկութեան, նախամեղսական վիճակը վերականգնելու (ajpokatavstasis = rrestitutio) վերաբերեալ ուսմունքը. De princip. III, 6, 1, I, 6, 2 տե՛ս PG, t. 11, 168A:

685. Կիւրեղ Ալեքսանդրացի, Գիրք Պարապմանց, էջ 110:

686. Հմմտ. Բան հաւատոյ. Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, էջ 220:

687. Քաղուած է Անդրէաս, Արետաս, էջ 110-111:

688. Քաղուած է Անդրէաս, Արետաս, էջ 110:

689. Տե՛ս Իգնատիոս Սելեւռնցի, Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, Կ. Պոլիս, 1824, էջ 195-196:

690. Արեւմտեան վարդապետներից առաջինն Օգոստինոս Երանելին է կարծիք յայտնել, թէ հոգիները ենթարկւում են մաքրագործող կրակի ազդեցութեանը ոչ թէ աշխարհի վախճանին, այլ մահուան եւ Ահեղ դատաստանի միջակայ շրջանում: Կեսարիոս Սոլացին սա ընդունեց իբրեւ հրամանակարգ տեսութիւն, իսկ Գրիգոր Մեծ պապն այն հռչակեց Արեւմտեան եկեղեցում: Այդ ուսմունքը տեսականօրէն հաստատագրուեց Թովմա Աքուինացու կողմից. տե՛ս Христианство. энц. т. 3, с. 233:

691. Նկատի ունի Սարգիս Շնորհալու Կաթողիկէ թղթոց մեկնութեան համապատասխան տեղին. տես անդ տպ. Երուսաղէմ, 1998, էջ 447:

692. Իրապէս քաղուած Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկից. տես անդ, էջ 20:

693. Ակնարկում է Օգոստինոս Երանելու այն մտածումը, թէ քաւարանը գործում է մահից յետոյ եւ Ահեղ դատաստանից առաջ. տե՛ս վերը:

694. Տե՛ս Գրիգոր Աստուածաբան, «...Ի Մաքսիմոս իմաստասէր եկեալ յարտաքս սահմանելոյ». ՄՄ, ձեռ. 1500, թ. 851ա-854 ա:

695. Հմմտ. «Ի փորձանս օրինականին». Ոսկեբերանի Մեկնութ. թղթոցն Պօղոսի, հտ. Բ, Վենետիկ, 1862, էջ 907-910:

696. Տե՛ս Անդրէաս, Արետաս, գլ. ԼԴ, ԽԲ, ԽԵ, էջ 164-178, 200-204, 209-214:

697. Մինչդեռ «Պատմութիւն Մովսէսի» հինկտակարանեան պարականոնում լոկ արձանագրուած է, թէ Մովսէսին «թաղեաց Միքայէլ հրեշտակապետն, եւ ոչ ոք գիտաց զգերեզման նորա». տե՛ս Անկանոն գիրք Հին Կտակարանաց, էջ 205:

698. Քաղուած է ս. Յովհան Ոսկեբերանի Ղուկաս Աւետարանի ԺԸ 2-3 տեղիի մեկնութիւնից. տե՛ս Ս. Յովհան Ոսկեբերան, Ճառք, Նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց, էջ 398-403:

699. Տե՛ս Եւագր, էջ 80 («յորժամ նա ի հուր գեհենին կապեսցի ի քէն եւ զյետին նաքարակիտն պահանջիցեն»):

700. «Եւ ժողովի այժմ մեզ որքան ինչ են սուրբ կատարողութիւնք մաքրութիւն են եւ լուսաւորութիւն եւ կատարումն». «Յաղագս եկեղեցական քահանայ». VI, 3, 5. տե՛ս Դիոնիսիոս, էջ 112:

701. Նեռի վերաբերեալ տուեալները համապատասխանում են Մեսրոպ Վայոց-ձորեցու «Պատմութիւն սրբոյն Ներսէսի հայոց հայրապետի» երկում բերուածին. տե՛ս ՄՀ, հտ. ԺԱ, էջ 722:

702. «Նեռի» այսօրինակ «ստուգաբանութիւն» տրուած է «Ոսկեփորիկ»-ում. տես տպ. աշխր. թրգմ. էջ 141:

703. «Ոսկեփորիկ»-ում նշուած է այս տեղիի աղբիւրը. «Սարգիս վարդապետն ասում է. Վեց հարիւրաւոր, վեց տասնաւոր, վեց միաւոր, որոնք միասին վեց հազարի ապստամբութիւնն են ցոյց տալիս: Քանզի քանի օրուայ ընթացքում որ աշխարհը եղաւ՝ այնքան տարուայ ընթացքում էլ կաւարտուի». տես Ոսկեփորիկ, էջ 141: Յիշատակուած Սարգիս վարդապետը Սարգիս Շնորհալին է, իսկ 666-ի բացատրութիւնը քաղուած է նրա «Կաթողիկէ թղթոց» մեկնութիւնից. տե՛ս տպ. Երուսաղէմ, 1998, էջ 521:

704. Ս. Եպիփան Կիպրացու անունով ճառերից մէկում Գօգը եւ Մագօգը յիշատակուած են իբրեւ թագաւորութիւններ, որոնք դարձի են եկել Թադէոս առաքեալի աշակերտ Ադդէի քարոզութեամբ. տես **Ս. Եպիփան Կիպրացի,** Ճառք, էջ 299: Գօգի եւ Մագօգի հետ կապուած վախճանաբանական գաղափարների վերաբերեալ տե՛ս **С. Аверинцев,** Гог и Магог - «Мифы народов мира», т. 1, с. 307:

705. Տե՛ս Վարդան Արեւելցի, Մեկնութիւն Դանիէլի մարգարէութեան, Ս. Էջմիածին, 2007, էջ 151-152:

706. Տե՛ս Դաւիթ Անյաղթ, Սահմանք, ԺԳ . Երկեր, աշխր. թրգմ., էջ 97:

707. Միտքը քաղուած է ս. Գրիգոր Նիւսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկից. տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 725 («սնդիկ»):

708. Սրանով թերեւս ակնարկւում է Որոգինեսի վախճանաբանական այն համոզումը, թէ Քրիստոսի երկրորդ գալստեան եւ մարդկանց յարութեան ժամանակ մարդիկ ունենալու են ոչ թէ նիւթական, այլ ոգեկան մարմիններ. տես De Princ. I, 6, 1, III 4, 6, 6, 3, Adv. Cels. VIII, 72: Հաւանաբար հետեւելով Որոգինեսին՝ Նիւսացին այն միտքն է արտայայտում, թէ համընդհանուր յարութեան ժամանակ «մահուան պատճառով աւերուած մարմնական ծածկոյթը դարձեալ կիհւսուի նոյն նիւթից... բայց ոչ թէ այս կոպիտ եւ ծանր բաղադրութեամբ, այլ այնպէս, որ նրա թելը կազմուած կլինի ինչ-որ

թեթեւ օդեղէն բանից, որի շնորհիւ այն կվերականգնուի լաւագոյն եւ ամենացանկալի գեղեցկութեամբ». տե՛ս **Հ. Քյոսեյան**, Եկեղեցու հայրեր, վարդապետներ, էջ 132:

709. Հմմտ. **Գրիգոր Տաթեւացի,** Մեկնութ. Սաղմոսաց /համառօտ տարբերակ/, էջ 7:

710. Նկատի ունի ս. Բարսեղ Կեսարացու «Հարցողաց» գրքի համապատասխան տեղին. Basilio di Cesarea. Il Libro Delle Domande. ed. G. Uluhogian, Lovanii, 1993. CSCO, v. 536. Scr. Armen. t. 19. տե՛ս ՆԲՀ, Բ, էջ 844 («տանջանարան»):

711. «Մագաղաթ «ասէ եւ ոչ այլ ինչ, զի մագաղաթն ի մերձիլ հրոյն գալարի: Եւ երկինքն յայնժամ գալարի, յորժամ վառեսցի երկինք եւ երկիր հրով, ասէ». տե՛ս **Գրիգոր Տաթեւացի,** Մեկնութ. Եսայեայ, էջ 79:

712. Տե՛ս Անկանոն գիրք առաքելականք, էջ 462-463:

713. Ենովքի մասին տե՛ս Книга Юбилеев, с. 24-25:

714. «Ի վերջնումն աւուր ժողովէ զիւր զկարծեցեալ ճաճանչն». հմմտ. Դաւիթ Անյաղթ, Ներբող Խաչի («Բարձրացուցէք») ՄՀ, հտ. Զ, էջ 1029 [139] («ճառագայթարձակ յարեւելից լուսածագեսցիս ի սպառ լուսաւորացն լռեցուցանել զկարծեցեալ ճաճանչն»):

715. Տե՛ս Դաւիթ Անյաղթ, Ներբող Խաչի, ՄՀ, հտ. Զ, էջ 1025 [96], [99]:

716. «Յովսափաթ» - Տէր դատաւոր, կամ Դատաստան Տեառն. տե՛ս Բառգիրք, էջ 231:

717. Ինչպէս երեւում է, քաղուած է Սիրաքի հայերէն թարգմանութեան մի տարբերակից:

718. Անքուն որդերի մասին մասնաւոր ճառ ունի Վարդան Այգեկցին. ՄՄ, ձեռ. 941, թ. 20ա - 22բ. տպ. հատուածաբար Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան, էջ 550-552:

719. Մեղքը սատանայի հետ ամուսնութիւն է որակում ս. Մակար Եգիպտացին. **Պ. Минин,** Главные направления Древне-церковной мистики - «Мистическое Богословие», Киев, 1991, с. 369-370:

720. Վկայութիւնը բերուած է Դիոնիսիոս Արիսպագացու մի թղթից. ՆԲՀ, Ա, էջ 501 («բոլոր զբոլորսն»):

721. «Աղախին» ասելով ակնարկւում է Հագարը, ով խորհրդանշում է հրէից եկեղեցին կամ օրէնքը, որի հակապատկերը Սարան է, ով խորհրդանշում է շնորհը՝ Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին. Գաղատ. Դ 24. տե՛ս Բառարան Սուրբ Գրոց, էջ 290:

722. Նիկողայոս հերետիկոսը համարւում է «Գործք առաքելոց»-ում յիշատակուած եւթն սարկաւագներից (հմմտ. Յայտ. Բ 6, 15): Նրա մասին տեղեկութիւններ են բերուած Իրինեոսի (Adv. Haeres. I, 26, 3), Եպիփան Կիպրացու (Panarion. XXV), Հիպպոլիտոս Հռոմեացու (Filosofumena, VII, 36), Եւսեբիոս Կեսարացու (Պատմութ. Եկեղեց. Գ 29) երկերում: Նիկողայոսականները համարւում են գնոստիկեան աղանդների նախակարապետները. Христианство, энц. т. 2, с. 207:

723. «Մովսէս»-ի ջրոյ վերաբերեալ, կամ շօշափող զսահման Տեառն. տե՛ս Բառգիրք, էջ 220:

724. Վկայութիւնը տարբերւում է ընկալեալ թարգմանութիւնից, որ է. «Զնոր առ հնով, զոր ետ ինձ մայր իմ, պահեցի քեզ, եղբօրորդի իմ»:

725. Հաստատումն է եզնիկեան «Չիք ինչ, որ բնութեամբ չար է», «Չիք ինչ չար բնութեամբ» սահմանումի. Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, 68, 65:

726. Կերինթոսի մասին տե՛ս վերը:

727. Թերեւս քաղուած է Սողոմոնի իմաստութեան գրքերի մեզ անյայտ մի թարգմանութիւնից:

728. Թերեւս քաղուած է Սողոմոնի իմաստութեան գրքերի մեզ անյայտ մի թարգմանութիւնից:

729. «Յաղագս եկեղեց. քահանայապետ.», VI 3, 5. տե՛ս Դիոնիսիոս, էջ 112:

730. Հաւատի այս սահմանումներն, ինչպէս երեւում է, քաղուած են «Բանք իմաստնոց» ժողովածուներից:

731. «Ստուգաբանութիւնը» համեմատելի է Տաթեւացու Ճմեռան քարոզաշարի քարոզներից մէկի բացատրութեանը. «որպէս առաւօտն է սկիզբն ամենայն մարմնական գործոց…». տե՛ս անդ, էջ 414:

732. «Նոր եւ սքանչելի խառնումով». արտայայտութիւնը յարասումն է ս. Գրիգոր Աստուածաբանի «Ի Յայտնութիւն Տեառն» ճառի «Ո՛վ նոր խառնմանն, ո՛վ սքանչելի խառնուածոյն» խօսքի. տե՛ս ՄՄ, ձեռ. 948, թ. 183 բ:

733. Քաղուած է «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկից. «Զոր աւրինակ լոյս լապտերաց գոլով ի տան միում, եւ ամենեքեան միմեամբք ամենեցուն կալով ստուգութեամբ զմիմեանց առանձին յայտնելով անջատմունս, միաւորեալք անջատմամբքն եւ միութեամբ անջատեալք: Եւ տեսանեմք ի տանն բազում լապտերս, եւ առ մի լոյս միացեալ ամենեցունց լոյսն եւ մի փայլումն անորոշելի ճաճանչեալ, եւ ոչ ումեք արդեաւք, որպէս վարկանիմ՝ զմիոյն լոյսն յայլոց լապտերացն որոշեալ զամենեցունց զլոյսն աւդոյն պարունակելով որոշել եւ տեսանել առանց միոյ զմիւսն բոլորիցն բոլորովիմբ անխառնաբար խառնեցելոց». II, 4. տե՛ս Դիոնիսիոս, էջ 141:

734. Տե՛ս եւ հմմտ. «Արարատ», 1895, էջ 10 (ապրիլ յաւելուած):

735. Նկատի ունի ս. Հաղորդութեան խորհուրդը, որն անմահութեան դեղ է որակուած ս. Իգնատիոս Անտիոքացու Եփեսացիներին յղած նամակում (20):

736. «Սրբազան վեհ» ասելով թերեւս նկատի ունի մեծանուն ուսուցչին՝ Յովհան Որոտնեցուն:

737. Արդեն հին եկեղեցին մերժում էր կրկնամկրտութիւնը: Համաձայն ս. Դիոնիսիոս Ալեքսանդրացու (+265) եւ ս. Կիպրիանոս Կարթագենացու (+258) օրինակարգման, եկեղեցում մկրտուածներից նրանք, ովքեր հալածանքների պատճառով ուրացել էին իրենց հաւատը, դարձի գալու դէպքում պէտք է վերստին եկեղեցու ծոցն ընդունուէին միայն ձեռնադրումով:

738. Բացատրելով «Որ ուտէ եւ ըմպէ զբաժակն Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեան Տեառն» տեղին (Ա Կորնթ. Դ 19)՝ Ոսկեբերանը նկատում է. «Ընդէ՞ր ասէ զի զաւրաւրինակ, որ յայնժամ խոցեցինն, ոչ կերիցեն, այլ զի հեղցեն անարգաբար, նոյնպէս եւ որք աստ անարժանութեամբ մերձենան, ոչ ինչ շահին, այլ՝ դատապարտին: Եւ ոչ, զի շնորհաւք տուաւ մեզ, անարգանաւք ուտիցեմք անսրբաբար». տե՛ս **Ս. Յովհան Ոսկեբերան,** Ճառք, Նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց, էջ 450:

739. Այս խնդիրը մասնաւոր քննութեան նիւթ է դարձել Օգոստինոս Երանելու համար նրա՝ Պելագիոսին եւ պելագիոսականութիւնը պախարակող երկերում, ուր աստուածաբան հեղինակը խօսում է շնորհի ինքնաբացարձակ նշանակութեան մասին (De gestis Pelagii, De gratia Christi et de pecato originali contra Pelagium et Coelestium. տե՛ս PL, t. 44): Ըստ այսմ երկնային շնորհն իր զօրութիւնը չի կորցնում նոյնիսկ անարժան պաշտօնեայի խորհրդակատարութեան ժամանակ: Շնորհի անխախտ լինելն է ակնարկւում նաեւ ս. Բարսեղ Կեսարացու անունով կանոնում. այն պատուիրում է աղանդաւորներից հեռացած քահանային ապաշխարութիւնից յետոյ ընդունել եկեղեցի, քանզի նա «ձեռնադրութեան շնորհ ունէր». տե՛ս Կանոնագիրք, Ա, էջ 336:

740. Հաւանաբար քաղուած է ս. Գրիգոր Նիւսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկից. տե՛ս ՆԲՀ, Ա, 1018 («ծխատեսակ»):

741. Ժ, ԺԱ հարցերի պատասխանները համապատասխանում են ս. Գրիգոր Նիւսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկի ԺԳ գլխին՝ «Հարցումն քննութեան, յորում իմիք առաջինն եւ իշխանականն համարելի է, յորում եւ յաղագս արտասուաց եւ ծաղու բնախաւսութիւն». տե՛ս անդ, էջ 87-93:

742. Թերեւս նկատի ունի Դաւիթ Անյաղթի «Մեկնութիւն ի «Վերլուծականն» Արիստոտէլի» երկը, ուր լուսաբանւում են տրամաբանութեան ու հաւաքաբանութեան հետ կապուած խնդիրներ:

743. Հաւանաբար քաղուած է «Երգ երգոց»-ի մեզ անյայտ մի թարգմանութիւնից:

744. Հմմտ. «Յորդորումն մանկանց ի կուսութիւն. Նորին յաղագս կուսութեան, եթէ սեպհական է աստուածայնոյն եւ է անմարմին բնութեանն կուսութիւն, Գրիգորի Նիւսացւոյ», ՄՄ, ձեռ. 1013, թ. 176ա – 200բ:

745. «Խորազմ» - Խորեզմը, որը գտնւում էր Միջին Ասիայում, «Նետողաց ազգի»՝ մոնղոլ-թաթարների պետութեան անուանումն էր:

746. Նկատի ունի Ահեղ դատաստանի օրը:

747. 100+40+40+666+551, այսինքն՝ Փրկչական 1397 թ.:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ

Գրաբարից աշխարհաբար թարգմանեց
բ. գ. թ. Սուսաննա Գրիգորյանը

Խմբագիր՝ փ. գ. դ., պրոֆ. Հ. Քյոսեյան

Ծանոթագրությունները՝
փ. գ. դ., պրոֆ. Հ. Քյոսեյանի

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ Էմմա Մելքումյանի

ISBN 978-99941-0-962-3

9 789994 109623

Պատվեր՝ : Տպաքանակ՝ :
Չափսը՝ 60x84/8: 127 տպ. մամուլ:

Տպագրված է **«Տիգրան Մեծ»** հրատարակչություն ՓԲԸ տպարանում